Azgapatum : Hay ughghapʻaṛEkeghetsʻwoy antsʻkʻerĕ skizbēn minchʻew mer ōrerĕ yarakitsʻ azgayin paraganerov patmuats / gretsʻ Maghakʻia Ōrmanean. v.2

Ōrmanean, Maghakʻia, 1841-1918.
Kostandnupolis : Hratarakutʻiwn V. ew H. Tēr-Nersēsean, 1912-1927.

http://hdl.handle.net/2027/mdp.39015029133959

Public Domain, Google-digitized
http://www.hathitrust.org/access_use#pd-google

This work is in the Public Domain, meaning that it is not subject to copyright. Users are free to copy, use, and redistribute the work in part or in whole. It is possible that heirs or the estate of the authors of individual portions of the work, such as illustrations, assert copyrights over these portions. Depending on the nature of subsequent use that is made, additional rights may need to be obtained independently of anything we can address. The digital images and OCR of this work were produced by Google, Inc. (indicated by a watermark on each page in the PageTurner). Google requests that the images and OCR not be re-hosted, redistributed or used commercially. The images are provided for educational, scholarly, non-commercial purposes.

Ormaneanc Maghak'ia

ԳԱՊ ՈՒՄ

Azgapatum

ՀԱՅ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՑՔԵՐԸ

ՍԿԻԶԲԷՆ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

ՅԱՐԱԿԻՑ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՎ ՊԱՏՄՈՒԱԾ

ԳՐԵՑ

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

ՆԱԽԿԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Վ. ԵՒ Հ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

1914

BX
1237
.07
1912
V.2

ՄԱՍՆ Բ.

1221 ՏԱՐԻՆ ՄԻՆՉԵՒ 1808

ԿԱՄ

ԿՈՍՏ. ԲԱՐՁՐԲԵՐԴԻՆ ՄԻՆՉԵՒ ԴԱՆ. ՍՈՒՐՄԱՒԵՑԻ

Տ. ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. ԲԱՐՋՐԲԵՐԴՑԻ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԱԽԸՆԹԱՑ

1101. Յովհաննէս կաթողիկոսի մեռնելով կաթողիկոսական աթոռը նախորդ յաջորդ մը չունէր։ Պահլաւունի եպիսկոպոսներուն վերջնալէն նայելն ետքը գոնէ Հեթումեանց տունին դարձած էր ընդհանուր մտադրութիւնը (§ 1072), բայց անկէ ալ պատրաստ եպիսկոպոս չկար, և բացէն մէկը ընտրելու պէտքը յայտնի էր։ Շահլուն աչքը Գրիգոր Սկեւռացիին վրայ էր, իրը ղի ոչ միայն արժանաւոր ձիրքեր ունէր, այլ և Լեւոն թագաւորի խոստովանութեան հայրն, կամ ուրիշ անունով արքունեաց ծխատէրն էր, և գոնէ թագաւորական տունին հետ յարաբերութիւն ունէր (§ 1096)։ Սակայն Ռուբինեանց տունը այլ եւս իր նշանակութիւնը չունէր, որչափ ալ Զապէլ աղջնակը Հայոց թագուհի կը կոչուէր, սակայն իշխանութիւնը Կոստանդին խնամակալին ձեռքն էր, որ իր երկու ընկերներուն Սիրուդանի և Յովհաննէսի մեռնելէն ետքը, միանձնան խնամակալ և թագաւորութեան տէր մնացեր էր, և անոր կամքը կ'իշխէր այլ եւս։ Կաթողիկոսական յաջորդութեան մէջ անոր հաճելի անձը պիտի նախապատուէր հարկաւ, և Դոնիեմք ամենայն էլեռնաց և եպիսկոպոսաց ընթերցաւ յամենեցուն զէր Կոստանդէն (ՄԻԽ·516), բնիկ Բարձրբերդցի· որ Մամլռիանցի ալ կը կոչուի, հաւանաբար Մամլռիանի գիւղացի կամ թէ Մամլռիանի վանական ըլլալուն համար։ Հայրն ալ սոսկական անձ մը եղած էր վանրամ անունով։ Կոստանդին ուսմամբ և արժանիւք կրցած էր բարձրանալ եկեղեցական ասպարէզին մէջ, և կը գանուէր եղեսեոս Մլէից (ՄԻԽ·516), բայց որովհետև Մլեհ վանք մըն է և ոչ վիճակ, Պապևանի և Բարձրբերդի մօտերը, մենք հաւանական կը տեսնենք որ Կոստանդին միանգամայն Բարձրբերդի ալ եպիսկոպոս էր։ Արդ Կոստանդին խնամակալ Պապևանեցւոց առնէին ու Բարձրբերդի իշխանն ու տէրն էր, ինչ որ մեզի կ'առաջնորդէ երկու Կոստանդիններու յարաբերութիւնը ճշդելու և անոնց մտերմութիւնը հաստատելու, և իրարու բարեկամ և ձեռնտու գործակցութիւնը բացատրելու։ Վարդան կը գրէ թէ Կոստանդին ընտրուեցաւ ոչ յաջենէ և կամ է պատուոյ, կամ է մամոնայէ, այլ է ընդհաց Հոգւոյն կոչեցեալ, և յամենայն լեզուաց վկայեալ (ՎԱՐ·141), որով կ'ուզէ ակնարկել, որ իր արժանաւորութեամբ բարձրացաւ, և ոչ իր ազգատոհմիկը, ինչպէս իր նախորդները։ Բայց մեր դիտողութիւնը նորէն կողմնակցական պաշտպանութեան դեր մը ունեցած ըլլալը կը ցուցնէ, որ սակայն արժանաւորութեանը չհակասեր, քանի որ ազգատոհմի առաւելութեամբ բարձրացող Պահլաւունիներն ալ անարժաններ չեղան երբեք։ Տոհմային առաւելութեան բացակայութիւնը կը թելադրէ Կոստանդինը չսա երիտասարդ չկարծել ընտրուած միջոցին, և թէպէտ 46 տարի աթոռի վրայ մնաց, բայց տակաւին կրնանք 35'է 40 տարիք ընծայել իրեն 1221'ին, երբ հայրապետական աթոռ բարձրացաւ։ Որովհետև Կոստանդին խնամակալին պաշտպանութիւնը ենթադրելով ալ, Կոստանդին կաթողիկոսին արժանիքը նուազած չենք ըլլար, կրնանք ընդունիլ, թէ իրաւցնէ այս ընտրութեամբ եղեւ ուրախութիւն մեծութեան յաղթ առաւէնէ և քաջերաց և խոշորաձեր տղոցն, որով ամենեցուն հաճոյացաւ լինէր (ՄԻԽ·517), ղի վերջապէս լոկ անձնական ձիրքերովը զարդարած և պատրաստուած անձ մը հայրապետական գահուն կը բարձրանար։

ՓԻԼԻՊՊՈՍԻ ԹԱԳԱՒՈՐԵԼԸ

1102. Դրեթէ երկու տարի էր որ կիլիկեան Հայ թագաւորութիւնը առանց թագաւորի կը մնար, և մանաւանդ կանոնաւոր աղջկան մը թագուհիութիւնը արեւելեան ժողովուրդներու ճաշակին չէր պատասխաներ։ Ինքնամակալն ալ որչափ խոհական և կարող, վերջապէս դժուարին կացութիւն ունէր, ղի երկրին մինակ մնացած էր, և հարկաւ չտեսեր լսեր չէին տեսներ անոր միտքն ալ։

կոստանդին խնամակալ ինքն ալ ղգաց այդ անպատեհութիւնները, և իրեն համամիտ օգնական ունենալով նորընտիր կոստանդին կաթողիկոսը, ուզեց կացութիւնը դարմանել։ Փոքվիչոյ ըսին ելլեզեանն և ըսէն, այսինքն զօրավարքն Հայոց և ասաց. Պարոն այ, դուք ինչ ըրիք մեր չինչ նեղութեան համար ըսաւ, և ըսէ պարոնին յետոյնայն, այսինքն Լեւոնի ազգականները, ու Աթոռոյն ինչ է այս բերէ։ Կոստանդին իր գործունէութեան արդիւնաւորութիւնը կը հաշուակ որով անտեսանելի երկիրը կառավարեց, ու կը յաւելու. Մեր պարոնի դատաստանը ըրաք, ահիկ նապոլիտեցիք ու ձեզ պարոն բերիմ (ՍՄՌ. 120)։ Ամուսնանալու տարիքին հասած ըստ ոդ աղջիկը Զաքէն էր, 1215'ին ծնած (§ 1088), որ հազիւ 7 տարեկան կրնար եղած ըլլալ, և անոր բնութիւնը փեսան ալ չատ մեծ չէր կրնար ըլլալ, հետեւաբար կոստանդին ալ պիտի չկարենար բոլորովին խնամակալութենէ քաշուիլ, թէպէտ ինքը կը յայտարարեր թէ, ես ասիկ ու իմ գաւ և իմ որդուցն անդորրութիւն առնեմ (ՍՄՌ. 121)։ Երբոր կոստանդիններ այդ առաջարկը կը բերէին, հարկաւ փեսացուին մասին պատրաստութիւններ ունէին, սակայն խորհրդակցութեան հրաւիրուածները ըսաւ ըսէն, և համամիտ գտնուցան որ ան է յայ ձեզ ասց բերէն պարոն, ինչ որ կը յայտնէ թէ փոխադարձ նախանձը չնորհց Հայ իշխանի մը անուանին վրայ համաձայնիլ. և անչուշտ կոստանդին այդ առանձին կը փափաքէր իւր զաւակներէն մէկը բարձրացնել Հայոց թագաւորութեան։ Խորհրդակցութիւնը վերջացաւ և Զաքէլի փեսացութեան ընտրուեցաւ Անտիոքի դուքս Բոյեմոնդոսի երկրորդ որդին Փիլիպպոսը, իբր 18 տարեկան երիտասարդ մը։ Բոյեմոնդոսը նոյն ինքն Տրիպոլսեցին էր, Լեւոնի հակառակորդը և Ռուբէնի մրցակիցը, որ վերջապէս արիւցած էր Անտիոքի (1096), և զարմանալի պիտի երեւէր նոյնին որդին Հայոց թագաւորութեան կոչուիլը, եթէ չդիտէինք, թէ Հայեր այս կերպով Լեւոնի հին զաղափարը կը չօշափէին, Կիլիկիոյ և Անտիոքի իշխանութիւնները միացնելով կամ մանցնելով իրենց դիրքը ամրացնել, և կ'ըսէին ալ թէ Անտիոք է ասոնց է, և ըստ կրնէ օգնել ձեզ է ձեզ ասկն կըսէ։ Բանակցութիւնները տեւեցան, և ամուսնութիւնը տեղի ունեցաւ 1222'ին (ՍՄՌ. 121)։ Փիլիպպոս հռոմէադաւան լատին էր, բայց Հայեր չուզեցին իրենց գահին վրայ օտարազգաւան մը ունենալ. և ըստ պայման (ՍՄՌ. 154), որ Փիլիպպոս հայնոյ կենոյր, ու վկեցեցէն ու ըսեցան հայնոյ պանէր, որ է ըսել հայադաւանութիւնը ընդունէր, և ըստ ոչդ չէր էրասանէն պահէր (ՍՄՌ. 121), որով կ'ակնարկուի Հայերը չզրկել և լատիններ առջեւ չքաշել։ Ամուսնութենէ Հաքն ալ կոստանդինի խնամակալութիւնը անմիջապէս դադրած պիտի չըլլայ, և ոչ ալ Փիլիպպոս նոյնհետայն աղիկամի գործերը կատարած պիտի ըլլայ, որովհետեւ անոնցի գործերը սկսան երբ ծծոցա և եղե ասն պոյոյ (ՍՄՌ. 121), որով չափահասութեան տարիքը հասնելէն ետքը աղիկամի գործերու սկսած ըլլալը կը հաստատուի։

1103. Երբ այդ կարգադրութիւնք կը կատարուէին արեւմտեան գաւառներու մէջ,

ԹԱԹԱՐՆԵՐ ԵՒ ՎԿԱՆԵՐ	անհնարին տագնապ մը վերիվայր կ'ընէր արեւելեան երկիրները, զի Աախոյ միջնաչխարհին թաթարները, որ Մոնղոլ և Թուրք ալ կը կոչուին, դէպ արեւմուտք սկսեր էին արշաւել։ Իրենց նախկին պատմութիւնը ոչ պայծառ է, և ոչ մեր նպատակին մէջ կը մտնէ։ Ընդհանրապէս կ'ընդունուի թէ նոքա ժողովուրդներ կամ տէրութիւններ էին (ՀԵԹ. 31), երբ անոնցմէ մէկուն պետը Թէմուճին, որ Ճէնկիզ կոչուեցաւ, և Ջէնկիզ կամ Զանկզ կամ Կոնգիոս ալ կը գրուի, միացաւ վրայ զօրացաւ, և ամէնքն ալ զայն իրենց գլուխ ճանչցան (ՀԵԹ. 32), և անոր հրամանին ներքեւ ամէն կողմ յարձակեցան, և գլխաւորապէս Պարսից կողմերը, և բոլոր անոնց հպատակ երկիրները աւերեցին, և Մա համմէտ Ճէլալէտտինն տուլտանը վռնտեցին, թէպէտեւ ան կրցաւ նորէն դառնալ, երբ Թաթար տագնապը քաշուեցաւ։ Այս եղելութիւնք տեղի ունեցան 1176էն մինչ 1226 տարիներու միջոցին։ Թաթար տագնապին մէկ մասն ալ չորրդ 1220'ին Սարտատ կամ Սուլթան զօրավարին առաջնորդութեամբ Կովկասներէն անցնելով Վրաց թագաւորութեան վրայ հնկաւ, և աւերած-

ները սկսան, Փէորզ կաչա թագաւոր և Իւանէ Օրբելեան սպարապետ, չկրցան անոնց դիմադրել, և նոյն իսկ Տաչէնի Հայ իշխան Գրիգոր Հազրակեան գերի բնկաւ, և անոր եղբօր Վասակի որդին Պապուք իշխան պատերազմին մէջ մնաւ, և Մկդեմ ու Հասան՝ Վասակի միւս որդիները հազիւ ազատեցան (ԿԻՐ. 105)։ Զայն ևս ասած էր թէ Թաթարները քրիստոնեայ են և իսլամներուն դէմ կռւգան, որով մինչեւ իսկ խոչով ու թափօրով զիրենք դիմաւորողներ ալ գտնուեցան (ԿԻՐ. 103), և իրօք ալ քրիստոնէութեան Թաթարներուն մէջ կանուխէն մտած ըլլալը պատմողներ կան (ՁԱՒ. Գ. 197)։ Սակայն ճիներիզի արշաւանքը յայտնապէս քրիստոնէութեան ալ դէմ էր, ուստի խոչով դիմաւորողներն ալ կոտորուեցան, և քրիստոնէական արբանեակներ պղծուեցան (ԿԻՐ. 103), և քրիստոնեայ գերիներ ուրացութեան ստիպուելով կը նեղուէին ձանձրանօթ, տաղտկալի և ծանրաւոր հրէլոնիեմբ (ԿԻՐ. 105)։ Աւելի խաւարչին բանեցուցին Գրիգոր իշխանի վրայ, զոր նեղեցին բաղաքէ քաղաքանօթ, տարլեցին հրկի վերայ երկար, և տաշտ տանջեցին զինեալ մարդին, ինչ է գանել նորա սահեցոյ վճռին, և ընկալաւ է հրէլոնեմբ պատն (ԿԻՐ. 105)։ Ժամանակակից է համանուն մարտիրոս մըն ալ, Գրիգոր Կնչորցի, որուն գերեզմանը 1222 թուականը կը կրէ (ՆՈՐ. 95)։ Իսկ Իւանէի և Վրաց յաղթութիւը իրր աստուածային պատիժ կը մեկնուի, որովհետեւ անարգած էին Պարկևչտ Բջնեցի արքակրօն Հայ քահանային գերեզմանը, զոր անդադրիք իրր ուխտատեղի կը պատուէին, իսկ Իւանէի կինը յանդգնութեամբ Պարկևչտին ոսկրները հանել ու այրել տուած էր, և հրամայած ըլլալ գերեզմանը փեղկել է (ՎԱՐ. 143)։ Երբ Թաթարներ կը քաշուէին, պահ մը Իւանէ հետապնդեցան անոնց ետեւէն, բայց անոնք նորէն պարձան և իրենց ետևրածները չարտնակեցին, և այսպէս Հայաստան բովանդակ ոտնակոխ եղաւ, մի մասը Վրաց և միւս մասը Պարսից ձեռքը գանուելով, և երկիրդմանի արշաւանքներուն չարաչար հետեւանքները կրեց։

1104. Արեւմտեան գաւառներ տակաւին Թաթարներու արշաւանքէն ազատ էին, բայց հանդարտ չէր իրենց ներքին վիճակը։ Փիլիպպոս Բոյիմոնդոսի գաւակն էր, և չատ դիւրահաւատ միտք մը ևս

ՓԻԼԻՊՊՈՍ ՏԱՐԱՍԻ ԳԱՇԱՋՈՒԿ

ցած էր անոր ձեռքով Հայոց չահերը պաշտպանել։ Հազիւ թէ Փիլիպպոս քրիստոնէական կ'ըլլար, և իրաւունք կը զգար ինքն իրեն պետական գործերը վարել, չտալով գործս կատար իր ներքին պիտոյքը, զի սոսկալի էր նմա ազգս Հայոց, և երբեմնացեալ եղեալ է չեչեալ սոխակն՝ որ էր հայածասան և հայոսէր կոչեալ (ՎԱՐ. 141), յատին և հռոմէականութեան սակրատիճնները կը պահէր, և Հայ իշխանները ծաղր առնէր (ՍԱՄ. 148) յատինամիտ երդիծանօք, և էր հօրն նապորով, կ'ուզէր որ չքեր ընդ Հայոց ըստ ընթացից, և չէրոյն գներ (ՍՄԲ. 121)։ Նոյն իսկ Լևոնէ Մեսցած ղեպատական ընթ (ՎԱՐ. 141) և ղեպղեպան ապուռնահան, ըզ չերեսելի սուրբ կանգնէին, և զոր չատմար է մեծ հանդէսներու օրով գործածուելիք սրբազնական վրան իսմանալ, և այլ ծանր սովոյ և աբծոնոյ (ԿԻՐ. 141), սատկեր է պատ հոր էրոյ Աստիոք քաղաքը։ Այդ կերպով կը յառաջէր այնըչ, որ Հայ իշխաններ չկարացին ծառել երբեմն (ՍՄԲ. 121), և երբոր խնացան որ գազանին նուէրն ինքն ալ փեսայ չԱնպատ, և առնէր ընդ էր և ղՋապել ընթացին, եւեւէն հասան և ըմբռնեցին զինքն ի Ֆիլիպ չայնկոյս գեղոյն Զահանայ, որ է ընդ Համատան գաւառին մէջ, և անմիջապէս կապեալ ընծ եղին է զընդան (ՍԱՄ. 149), նոյն իսկ է թիլն Հոմանոյ, և չարաչար չկեցին (ՍՄԲ. 121)։ Ընդ այս թագաւորական գահը նորէն դատարկ հռչակուեցաւ, և նորոգուեցաւ Կոստանդինի խնամակալական պաշտօնը, Զապէլ թագուհիին անունին ներքեւ, որ դեռ մինչ կը տարիկան էր։ Ժիլիպի բանտարկութեան պայմանամամ նշանակուեցաւ մինչ քերեզ զինքն և զինքն ընդ պարան, և կը յուսացուէր որ հայրը առածնները դարձնէր որպէսզի ազատութեան համար, սակայն նա ոչ եկ և ոչ ընդ, այլ և ոչ օգնել կարաց որբոյ էրամ, ուստի խնամակալն և իշխանները ընդ ընծ անդ Թիլի բանտին մէջ, մինչ է նմին դեռս (ՎԱՐ. 94)։ Անցուած չէ թէ որչափ ապրեցաւ Փիլիպպոս բանտին մէջ, սակայն պիտի որ Կոստանդինի խնամակալութիւնը երեք տարի չտևեցնակեց, և միայն 1226'ին

ական խորհիլ Զապէլի երկրորդ ամուսնութեան մասին, յարմարագոյն կ'ըլլայ ըսել, թէ երկու տարի և աւելի ալ մնացած ըլլայ նա Թիլի զընտանին մէջ, և բանտարգելութեան մէջ մնացած, քանի որ հայրը նախատեսեց Հայոց արքունիքին թագն ու գանձերը իւրացնել, քան թէ որդւոյն կեանքը ազատել։ Բնական էր որ Փիլիպպոսի ընթացքը Հայերը զայրացնէր Լատիններուն դէմ, հետեւաբար կրկին նորոգեցին Լեւոնի օրով Լատիններուն դէմ բացուած հալածանքը (§ 1090), ամէնքը կիլիկիայէ հեռացուցին, նոյն իսկ վտարեցին Տարսոնի և Մամիստիոյ լատին եպիսկոպոսները, որոնք Լեւոնի օրէն դրուած էին։ Ասոնց դարձին հաստատ Հոնորիոս Գ պապը, ուղղակի Կոստանդին կաթողիկոսին դիմեց, և 1223 դեկտեմբեր 17 թուակիր գրութեամբ ներսաղէմի լատին պատրիարքին ալ դրեց, նոյն նպատակին համար աշխատելու (ՍԻՍ·528)։

ՀԷՔՈՒՄԻ ԹԱԳԱՒՈՐԵԼԸ

1105· Փիլիպպոսի գահընկեցութենէն ետքը Հայոց նոր թագաւոր մը տալու կերպը՝ Զապէլի նոր ամուսին մը տալն էր, որով հարկ եղաւ սպասել մինչեւ որ անուանական թագուհին այրիանայ, ինչ որ վերջապէս տեղի ունեցաւ։ Փիլիպպոսի մեռնելով բանտարգելութեան հետեւանքով, եթէ չուզենք անուղղակի միջոցներու կիրառութիւն ենթադրել, ինչ որ այն գարերուն մէջ սովորական միջոց մըն էր։ Կոստանդին որ թագաւորութիւնը իր ձեռքն առած էր, կ'ուզէր զայն իր տոհմին պահել, բայց քանի որ Զապէլ թագաւորութեան տէր հռչակուած էր, հնար չէր որ իրեն թագաւոր հռչակելուն կերպը գտնէր, ուստի պատրաստուեցաւ այդ անունը իր զաւակներուն մէկուն վրայ անցընել։ Իւթրինանոց չատաիլէն սրսկան սերունդին Իւթրէն-Իւհմանովով վերջանալէն ետքը (§ 1097), ինքն Կոստանդին մերձաւոր ժառանգ կրնար սեպուիլ Լեւոնին մօրեղբօրորդին ըլլալով (§ 1096)։ Կոստանդին խնամակալ պատուէրը հաստատ կարծեց իր միտքը իրագործելու, և նախապէս հաճախեցաւ վերոյիշեալ, որ հարկաւ պիտի օգնէր բարեկամին, որ իր բարձրանալուն օգնած էր, և երկուքը իրարու մտերիմ էին։ Երկու Կոստանդիններ հանդիպեցան Ղալաթիոյ (ԿԻՐ·95), որոնք փոթոռով տեսած էին օտարազգիի երեսէն յառաջ եկած վատ հետեւանքները։ Կոստանդինի զաւակները բազմաթիւ էին, բայց ընարութիւնը պզտիկին վրայ կայացաւ, հաւանաբար Զապէլի հետ տարիքի համաձայնութիւնն ալ նկատի առնելով։ Այսպէս Զապէլի փեսացու և Հայոց թագաւորացու հռչակուեցաւ Հեթում, հազիւ երկու տարի հարազատ էն մնած, որ 11 տարեկան եղած էր, և անոր հետ վեցերորդ ամսիանի ազգակից։ Հեթում նկարագրուած է իբրեւ ծնծաղէն և հանճարեղ պատանեակ, անդեայ և ընկնեղ, և գեղեցկադէմ երէսաւորդ (Վ.ԱՐ·141), ճանաչ գէօ, բայց առոյգ մտքով և գեղեցիկ պեառնելով (ԿԻՐ·95)։ Պատկառութեան և թագաւորութեան կրկնակ հանդէսները փառաւորապէս կատարուեցան Տարսոնի մէջ, ուր ժողովեցան գէր Կոստանդին եպիսկոպոս և եպիսկոպոս և էշխան, 1226 թուականին (ՍՄՐ·121), Հոգեգալստեան տօնին (ՍԻՍ·528), որ այն տարի կ'իյնար յունիս 7'ին։ Կոստանդին կաթողիկոս տնձամը հանդիսաւոր եղաւ բարեգուշակ սրսկազութեան, որ եղեւ առաքեալներէն Հայոց (ՍՄՐ·121), զի վերջապէս թագաւորական ազգատոհմին կանոնաւոր ձեւ մը կը տրուէր, այն ալ ազգային չրջանակի մէջ, և պահելով միշտ Կոստանդին խնամակալին պետական գործունէութիւնը, որ երբ խնամակալ ըլլալէ կը դադարէր, թագաւորահայր կը դառնար, և իր որդւոյն ու հարսին հովանաւորն ու առաջնորդը կը մնար։ Իսկ հանդէսին Տարսոնի և ոչ Սիսի մէջ կատարուիլը, հետեւանք պիտի ըլլայ համախմբութեանց յարմարագոյն կէտ մը ըլլալուն, քանզի, եթէ ոչ պաշտօնական գոնէ բարոյական և նախնական մայրաքաղաք էր Տարսոն՝ կիլիկիայի համար։

ԱՌԱՋԻՆ ՋԱՆՔԵՐ

1106· Հեթումի թագաւորութեամբը նոր դիրք մը կը սկսէր Սիսի արքունիքին մէջ, ուր յանկարծ բազմաթիւ արքայազուններ կը գային, որք իրենց ազգակցին հանդիսաւոր դիրքեր ալ պիտի ունենային։ Կոստանդինի զաւակներէն Ամբատ սպարապետ անուանեցաւ, Գոնդոփոդլ պատ-

ուանուանով, որ է նոյն ինքն Սմբատ պատմիչը. Բարսեղ՝ որ նկնզեցականութեան մրուած էր, Դրազարկի առաջնորդ և Սիսի արքեպիսկոպոս եղաւ. Լեւոն՝ իշխանաց իշխան կամ մաքսէթէփ պատուանունով արքունեաց հազարապետ նշանակուեցաւ. և Օշին՝ պայլ պատուանունով Կոռիկոսի իշխան և տէր եղաւ: Ուրիշ ազգի պզտիկ զաւակներ ալ ունեցած է Կոստանդին, որունք ժամանակին պատշաճաւոր պաշտօններ ունեցան: Իսկ ինքն Կոստանդին իբրեւ թագաւորահայր, զմինայն հոգ աբեղայութեան յանձն առեալ խոտոնաբար կ'ապրէր, և ընդհանուր հսամնձայնութեան հաստատելու կ'ուչխատէր, չկեան ձեռնադրէր ալէվ, և եթէ սիրով հսամնձայնութեան չեկողներ ըլլային՝ զոչ ձեռնադրեր քառասուր է ինչ, զոմանց փախուստան առնելով, և զայլս հանուամբ (ԿԻՐ. 95), որով ի հարկին խաւութիւնն ալ ձեռք առնել չէր քաշուեր: Նկնզեցական գաւակարգին հաստկրութիւնն ալ չանելու համար, զմինայն վանքերու եղբայրն անոնք առնէր յոմինայն մարմնական պէտքէն, և ինչ պայր նոցա զմարմնաւոր պէտս նոցա, որպէս զի նուա ինչն ազգին և պաշտամն պարագաներն (ԿԻՐ. 95), զանց չընելով հարկաւ ուսումնական աշխատութիւնները, որունք այդ միջոցին ալ ծաղկեալ վիճակ ունեցան, ինչպէս ունէին նախորդ կաթողիկոսաներուն օրով: Կոստանդին թագաւորահօր օրով Կիլիկիոյ հայասնակութիւնն ալ երթալով չատցաւ, և լցաւ եղեալն քաղմութեամբ մարդկան՝ անարուեստից և արուեստաւորաց, որունք Հայաստանի ներքին գաւառներէն դէպ Արեւմուտք խաժեցին, փախուցեալ յահեղմանէ Թաթարէն (ԿԻՐ. 95): Աշխատեցաւ սիրալիր յարաբերութիւններ հաստատել Իկոնիոնի դրացի սուլտանին հետ, որ այն ատեն Ալաէտտին Քէյքոպատ էր, 1219ին գահ բարձրացած: Հայոց թագաւորութեան նախահաստատ ձեւին համեմատ (§ 1055), նոր թագաւորը պէտք էր իր յարդանքները ընծայէր հռոմէական գերիշխանութեան, և Կոստանդին զանց չըրաւ զայն կատարել, և եղբէն դէպ արեւ ընդ Հռոմայ պապն և ընդ Ալեմանաց թագաւորն (ՍՄՐ. 121): Կը գիշուի գիր մըն ալ 1226 յունիս 29ին գրուած, որով Հոնորիոս Գ կրկին կը պատուիրէ լատին եպիսկոպոսներու վատրման վրայ, և անոնց տեղերնին դառնալը կը խնդրէ կոստանդին թագաւորահօրէն (ՍԻՍ. 553): Մէկ խօսքով Կոստանդին թագաւորահայր մանուկ թագաւորին առաջնորդեալ, կիլիկիոյ մէջ բարեկեցիկ և խաղաղական կացութիւն մը կը ջանար հաստատել, և գոհացուցիչ կերպով ալ կը յաջողէր:

1107. Ընտանեկան միջադէպ մը՝ պատմիչը խանգարեց միաքերու հանդարտութիւնը, և զբաղեցուց Կոստանդին թագաւորահայրն ալ: Զապէլի ընթացքը պէտք արդէն 12 տարեկան եղած, բայց տարիքին պատճառէն ունայնասէր և քաղաքական գործերու փորձառու դարձած, սկսաւ դժգոհութիւն յայտնել Հեթումի կենակցութենէն: Ըսենք որ նախնական գաղտնութեամբ ու արտաքին յարգանք մը կապած էր Փիլիպպոսին, բանզի որ խոտոված էր բանի կերպով անկէ բաժնուելէն, կամ թէ վշտացած էր անոր տատապագին վարմանին վրայ, բանզի ալ թէ պատմիչին ակնարկածին համեմատ մայր նոր ֆրանկ էր ազգաբ (ԿԻՐ. 95), կամ թէ Միսիլ Լուսինեան (§ 1088) Լատինաց հակամէտ և Հայերուն հակակիր զգացումներ կը թելադրէր իր աղջկան՝ քանի որ Լատիններուն չտհերը վատատած կը տեսնէր, վերջապէս ինչ ալ ըլլայ պատճառը, Զապէլ եղանակը գտաւ և յանկարծ արքունիքը թողլով, ու մայրը տանելու պատրաստակով Իսաւրիոյ Սելեւկիա քաղաքը գնաց, ուր կը գտնուէր Միսիլ այն միջոցին, իսկ Սելեւկիա՝ Հիւրընկալ լատին տապանութեան իշխանութեան ներքեւ կը գտնուէր: Սմբատ ալ Զապէլի հետեւանքն պատճառ կը տեսնէր բանալ, թէ չբաժնուելու պէտքան բարեկամն է ընդհանուր Զապէլ, և խոտվեցաւ ընդ ընդհատուն և ընդ ազն Հայ (ԿԻՐ. 121): Կիրակոս եղելութիւնը չափով կերպով մը կը յիշէ, թէ ընդհանուր ալ հաստատել կ'ուզեն հետեւ Հեթումի (ԿԻՐ. 95), ուսկից ամենք հետեւցուցին իբր թէ Զապէլի ամուսնութենէն առաջ տեղի ունեցած բլլոյ Սելեւկիա փախչիլը (ՉԱՄ. Գ. 194). սակայն Սմբատ, որ Զապէլի տարբն ալ է, չատ յստակ կերպով կը չիշտէ ամուսնութենէն հետք հետացած բլլալը: Խաղաղական բանակցութիւններ արդիւնք չունեցան, մայրը չկրցաւ աղջիկը դրկել, տապանները ալ չկրնցան յատուկ բերին թէ չեն կրնար բռնադատել,

և իրենց ապաստանած մէկը իւր կամքին հակառակ յանձնել։ Պարսն Կոստանդէն պարտաւորուեցաւ բռնի միջոցներու դիմել, ժողվեց հեթէ՛ւ և ինչ էլ՝ ասելիք Սելիւկեայ։ Ապահաներ, որ բերդը լեւոնէն պարգեւատացած էին, և զայն պահպանելու համար կողմնէն է յԱլպէն ասլանն, և Հայոց պաշտպանութեան պէտք ունէին, թէ՛ Զապէլը յանձնած և թէ՛ Հայոց ընդդիմացած չըլլալու համար, առաջարկեցին որ իրենք բերդէն ելնեն, և Կոստանդին ինքն մնէ ու առնէ զբերդն — ինչն, և իրօք ալ Հայեր այս կերպով — էն ելեալ։ Բայց երբ Հայեր մեկնեցան, Հիւբընկալ ապահաներ նորէն իրենց բերդը մտան և իրր թէ այս կերպով ապաստանի իրաւունքը ոտնակոխ ըրած չեղան։ Զենք գիտեր թէ Կոստանդին կաթողիկոս ինչ դեր վարեց Զապէլի հանդէպ, որ եկեղեցականապէս ամուսնութեան, և քաղաքականապէս թագաւորութեան համար վտանգաւոր միջադէպ մը կը ստեղծէր։ Կը սիրենք ենթադրել որ իւր հայրական և հայրապետական խրատները ազդեցին վերջապէս Զապէլի վրայ, որ այնուհետեւ օրինակելի ամուսնոյ տիպար մը եղաւ, և ընտանեկան երջանկութեան հնդիկնակ եղաւ Հայոց արքունիքին, և հետզհետէ երեք մանչ, Լեւոն և Թորոս և Ռուբէն, և հինգ աղջիկ՝ Իզապէլ, Մարիամ, Ռիթա, Սիպիլ և Ֆիւմի, զաւակներ առաւ Հեթումի (ՎԱՀ. 219), որոց առաջինը, թագաժառանգ Լեւոնը, ծնաւ 1236ին, Զապէլի 20 տարեկան ըլլալէն ետքը։

ՋԱՊԷԼԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1108. Զապէլի նկարագիրը բարեպաշտ և բարեգործ և բարեսէր հնոյ տիպարը կը կազմէ անկասկած, և պատմութիւնն ալ մեզ զայն ոչ միայն արդարացաւ, այլ և կատարելապէս սուրբ անձի մը պէս կը ներկայացնէ, չտրտնակ պատմելով անոր գթասիրտ բարութիւնը, կարօտեալներու և հիւանդներու ցուցուցած խնամքը, և անբասիր և անբիծ կեանքը։ Սակայն առանք կատարեալ հասակի մէջ իւր գործին տէր եղող հնոյ մը ձիրքերն եղան, որոնք չեն եզծուիր առանամանալ աղջկան մը խեղճ ուրիշներով։ Ամենք Զապէլի անունին առաւելած չրնկերակցին միաքով ենթադրեցին թէ երբ Հեթումի կենակցութենէն կը խուսափէր, խոհեր կրծածէլ է ըստ կոստանց (ՉԱՄ. Գ. 194), որ հինէրկէն պատմուած չէ, և մեզ այս եղած ըլլար պատճառը, հարկաւ Սմբատ պիտի չկրնար գրել թէ շոթեցաւ գլուխն քովնէն է ընթանալ Զապէլ (ՍՄԲ. 121), և առասպելական անուանել կրնանք երեւակայական պատմութեան նպատակը, քանի որ յայտնի են Սմբատի ալ բնական զգացումները։ Պատմութեան ընթացքին մէջ այնուամենայնիւ Զապէլի պետական կամ ազգային գործունէութենէն յիշատակ չունինք. մինչ անոր մանկութիւնը սերտ կերպով կապուած տեսանք քաղաքական գործողութեանց հետ։ Իւր անունը հաչախաւոր ընողը Սիսի հիւանդանոցն է, զոր ոչ միայն ինքն կառուցանել տուաւ, ինչպէս արձանագրութիւնը կը վկայէ (ՍԻՍ. 539), այլ և անոր հոգաբարձուն և մատակարարը եղաւ, արքունական միջոցներով զայն պահպանեց ու հարստացուց, և ինքն անձամբ անոր մէջ աշխատեցաւ, ու իրր հասարակ հիւանդապահ կին մը ախտացելոց ծառայութիւնները կատարեց, գուարթաւատ ողորմութեան և գթասիրտ առաքինութեան օրինակը տալով ամէնուն, մինչեւ իւր կեանքին վերջը, որ երկար չեղաւ, զի 37 տարեկան վախճանեցաւ 1252ին, և Ցայսմաւուրքը սրբահոյ յիշատակի պէս կ'արձանագրէ անոր անունը յունուար 22ին (ԾԱՍ. Ա. 42)։ Կոստանդին կաթողիկոս գլուխ կանգնեցաւ փառաւոր յուղարկաւորութեան, որ տեղի ունեցաւ ընդհանուր սուգի արտայայտութեանց մէջ, և մարմինը ամիրսփուեցաւ Դրբատազարկի վանքը, Ռուբինեանց հարստութեան արքայազուններուն գերեզմանատեղին։ Չէ յիշուած հիւանդութեան անունը, որ այսպէս վազաժամ կը խլէր ամէնուն սիրելի անձ մը իրենցմէն գիրկէն, և ուշադրութեան արժանի կ'ընկղմիլ։ Ուզեցինք այստեղ վերջացնել Զապէլի մասին ըսուելիքը, պատմութիւնը ընդհատակով չվերապատնուելու համար։

1109. Հեթումի թագաւորութեան և Կոստանդինի կաթողիկոսութեան առաջին ժամանակները ընդհանրապէս խաղաղութեան միջոց մը կրնան նկատուիլ, հետեւանք այն հաշտարար յարաբերութեանց զոր Կոստան-

դին թագաւորանայր չանաց հաստատել բոլոր պետութեանց հետ։ Մինչեւ իսկ ամանք

ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ ԽԼՐՏՈՒՄԸ

Պաղատատի ամիրապետ Տահերի կամ Թահիրի հետ դաշնադրութեան՝ և Հեթումի ամիրապետին երթալուն խօսքը կ'ընեն (ՍԻՍ. 553), սակայն ոչ պատմական պարագաներ այդ յարաբերութիւնը կ'արդարացնեն, և ոչ Հեթում 1226 թուականին այդպիսի ծանր և հեռաւոր գործառնութեանց ձեռնարկելու յարմարութիւնն ու տարիքն ունէր։ Հանդարտութիւնը կը նպաստէր ներքին գործերու զարկ տալ, ինչպէս էին Սիսի Ս. Սոփիա եկեղեցւոյն չինութիւնը, Սիսի և Տարսոնի պարիսպներուն նորոգութիւնը, առեւտրական յարաբերութեանց զարգացումը, Եւրոպացւոց՝ և յատկապէս Գենուացւոց և Վենետկացւոց հետ վաճառականական դաշնադրութիւնները և յատուկ չնորհումները, և ասպետական կարգերուն նպաստաւոր բարեկամութիւնը ու մանաւոր պարգեւները։ Եթէ քիչ մը չփոթութիւններ ծագեցան, անոնք ալ տեղի ունեցան՝ Լամբրոնի իշխան Կոստանդինի երեսէն, որ Հեթում-Հեղիի որդին էր և թագաւորանոր աներձագը։ Թագաւորանայրը ուզած էր իւր դիրքը զօրացնել, և որպէս զի յաջողի Լամբրոնացին ալ ընկճել օգնականութեան իւր առնել, տուած էր անոր վիմբըն, զեբելան եւ բերնոյ, զոր Լեւոն թագաւոր գրաւած էր, և նորէն չվերադարձնելը պայմանագրած (§ 1069)։ Այլ և իւր աներձագին գնդապետ պատիւ մըն ալ չնորհած էր, ընկալ զայն ետ տալով Հեթումի։ Բայց կարծես թէ ըմբռստութիւնը ժառանգական էր Լամբրոնացւոց առնին, և այդչափ բարիքներէն ետքն ալ Կոստանդին Լամբրոնացին ըսո հայրեն եւ աներոջմանէ ետքն, ինչպէս յատկապէս կը չեշտէ պատմիչը, ապստամբեցաւ եւ տեղերը յետոյ Հեթում. և Հայոց թագաւորութեան դէմ չէտ եւ ետ եւ տալոն Հոռոմոց կամ Իկոնիոնի։ Բնական էր որ ցորչափ կայր նա ապստամբ (ԿԻՐ. 157), թագաւորն ու թագաւորանայրը չկարենային սէր և խանդակատանք ցուցնել անոր, իսկ սա իրր անկրնալ մինչեւ պապին բազքները կը սկսէր բարձրացնել, որով Գրիգոր Թ, որ 1227'ին Հոնորիոս Գ'ի յաջորդած էր, 1237 յունուար 19'ին, Հայոց թագաւորին և անոր հօրը գրելով կը յանձնարարէր Կոստանդին Լամբրոնացին չնեղել, որ ինքզինքը ըստ ամենայնի Հռոմի հնազանդ կը ձեւացնէր (ՍԻՍ. 554)։

1110. Նոր խաչակրութիւն մը, որ է վերջերորդը, Ասորիք եկած էր 1228'ին, Գրիգոր Թ պապին յորդորանօք և Փրեդերիկոս Բ Գերմանիոյ կայսեր առաջնորդութեամբ։ Մէլիք-էլ-Քամիլ, որ է Մելեմին, եգիպտոսի սուլտանը, անոր օգնականութեան դիմաց իւր եղբայրներուն ապստամբութիւնը ճնշելու, բայց վերջէն պարտաւորուեցաւ կոյսերը ձեռքէն ազատելու համար՝ երուսաղէմը անոր յանձնել, որ 1229'էն նորէն քրիստոնէից իշխանութեան ներքեւ անցաւ առանց պատերազմի, և 12 տարի մնաց, մինչեւ որ 1241'ին նորէն եգիպտացիներէն գրաւուեցաւ Մելիք-էլ-Սալէհ սուլտանին ձեռքով։ Գրիգոր Թ պապին տիրապետութեան պարագային օգտուելով կոստանդին կաթողիկոս փափաքեցաւ ուխտի այցելութիւն մը ընել երուսաղէմ, զոր և կատարեց 1238'ին, Ասորւոց կաթողիկոսին ընկերակցութեամբ (ՍԻՍ. 554), ինչ որ առիթ ընծայեց Լատինաց հետ բարեկամական յարաբերութիւնները յաճախելու։ Այդ պարագային, և երուսաղէմի գրաւումով Լատիններուն խրոխտացքին ուշնալը, նորէն քաղաքներուն Անտիոքի Լատին պատրիարքներուն յանձնութիւնը Հայոց կաթողիկոսութեան վրայ, պահանջելով որ անկախ իրենց հպատակի, քանի որ բովանդակ ազգն Հայոց բնակէր է ՚ի պոքէրօ-ՐԵՆ նոր, կամ լատիններէնին աւելի հաւատարիմ թարգմանութեամբ, բովանդակ Հայաստան պոքաղաքացի էր է պոքէրօ-ՐԵՆ Անտիոքայ (ԿԱԼ. 374)։ Ասիկայ հին պահանջ մըն էր՝ կիլիկիոյ գաւառներուն Անտիոքայ սեպհուին հպատակ մնարապետութիւններ ըլլալէն, յանուական նախիրապետութեան համեմատ։ Անտիոքի պատրիարքին բազդը կանոնական և իրաւացի դատուեցաւ. Գրիգոր Թ պապէն, անպարտ լինելով ետ վերջը ելքը ՚ի ՀԵՆ պոքէրօ-ՐԵՆ, ուստի 1238 յունիս 26'ին գրութեամբ պաշտօն յանձնեց Կիպա-

կոպտներու փնալ և բեքռնով խրոփել պեռ-
ղամենիմբ զայն կոնոպկան, զի ըստ պարթև խո-
բսամ խանարհաբար հնազանդեցոյ Անթիոքոյ պար-
բիւթին (ԿԱԼ. 374), որով Հայոց հայրապե-
տութիւնը մետրոպոլտութեան իջած պիտի
ըլլար։ Եպիսկոպոսներուն եկած ըլլալը և ինչ
խօսած ըլլալը չենք գիտեր, միայն Գրիգորի
նամակներուն մէջ կը գտնուի 1239 մարտ
1'ին գրուած ուրիշ գիր մը, որով կը գի-
ջանի թագաւորին և թագուհիին միջնոր-
դութեան, և կը հաստատէ ջոպէին հաստա-
կան սովորութիւնները, զորս ներկայած են Հայե-
րը իրենց պաշտպանութեան համար։ Նոյն
գիրով կ'ընդունի թէ այսպիսի սովորու-
թիւնները են պահել անշեղակես և ասանդ-
եալ գնէք է ժամանակէ սրբոյ նախնոյն մերոյ
Սեղբեստրոսի պապին, և սրբոյն Գրիգորի՝ ժամանա-
կակից նորա և Հայաստանեայց հայրապետին (ԿԱԼ.
375)։ Այդ վերջին ակնարկը ուղղակի մեզ
կը տանի հռչակաւոր Դուչանց Թուղթին ծա-
գումին, և իրր փաստ կը ծառայէ անոր յօ-
րինուածին ժամանակն ու նպատակը ճշդելու
(§ 176)։ Կոստանդին կաթողիկոս, Հեթում
թագաւոր և Կոստանդին թագաւորանայր,
որչափ ալ իրենց ազգը սիրող ու եկեղեցին
պաշտպանող, սակայն չունէին այն կորովը
զոր պահանջ պարագաներուն ցուցուցին
Ծովհաննէս կաթողիկոս և Լեւոն թագաւոր,
ուստի Հայկական եկեղեցին Անթիոքի իրա-
ւասութենէ ազատ պահելու համար ուզեցին
օգտուիլ այն անորոշ ուանդութենէն, որով
Լուսաւորչին Հռոմ գացած ըլլալը կը պատ-
մուէր, և այս հիմամբ կապմեցին պապական
չնորհման մը պաշտօնագիրը, առանց զգու-
շանալու իակ որ գտնէ հին լեզուի ոճը պա-
հէին, և չգործածէին լեզու մը, որ կատա-
րելապէս Սմբատ պատմագիրին ոսկիօրէնը
կը չօշափէ։ Այդ առթիւ Անթիոքի պատ-
րիարքէն ալ բարձր գիրք մը գրուելու հա-
մար, ոչ միայն գրեցին թէ Հայոց կաթողի-
կոսներ ինծոցեալ եղէին, այլ և թէ պատ-
րիարքէն երբէք, նբռաւոչեմ և Անթիոքոյ և Աղեք-
սանդրիոյ, յորմէ պարբերաբար ձեռնադրին, կամա
և ընդրութեամբ Հայոց հայրապետին լինէր (ԴԱՇ.
25)։ Պէտք է ըսել, որ նիմ կոստանդիններ
կորով ունեցած չեն բայէն դիմադրելու,
ճարտար եղած են Հռոմի ոգին ճանչնալու,
որ միշտ դիւրահաւան եղած է իրեն անձնա-
սիրութիւնը փայփայող քաղքաղանեւրու հա-
ւատալու։

1111. Գրիգոր Թ. պապը, այնչափ գոհ
մնացած է որ Հայոց Հռոմի չնորհման փաս-
տով կը պաշտպանեն ի-
րենց եկեղեցւոյն անկա-
խութիւնը, և զինքն ալ
կ'ազատեն անկումնեի և
դժուարին պարագայէ մը, յոր բռնուած էր
Անթիոքի Լատին պատրիարքին անխորհուրդ
յաւակնութեամբ, որ Հայոց առաջարկը ըն-
դունելէն զատ, կոստանդին կաթողիկոսին
նուէր կը ղրկէր պալիում կոչուած լաթին և-
միփորոնը, խոյր, ուրար ու մատանի առ է
նշան իւր առաքելական սիրոյն (ԿԱԼ. 376), և
բոլոր Հայ հաւատացեալոց ալ ծեզց ընդառնիկ
կը չնորհէր, ընդարձակ և ընդհանուր կեր-
պով, երբ տալընեմբ վերծանէին է պարբերաշ
ղինելով ընդդէմ Սարկինեոսց (ԿԱԼ. 375)։ Թէ-
պէտեւ նոյն միջոցին նոր խաչակրութիւն մը
կազմելու խօսքեր չկային, սակայն միշտ
քրիստոնէից վիճակը պաշտպանութեան կը
կարօտէր Արեւելքի մէջ, և երուսաղէմի վե-
րանորոգեալ թագաւորութիւնը չարունակ
յարձակմանց ենթակայ էր, և պապեր ու
լատիններ կը ջանային Հայերու օգնութեամբ
իրենցները պաշտպանել։ Այս միջադէպներէն
ետքը միջոց մը նորէն կը դադրին լատին-
ներու հետ յարաբերութեանց պարագաներ,
և այդ դադարը առիթ կ'ընծայէ Յոյներուն,
որ կը սկսին փորձ փորձել Հայերը իրենց
կողմը ձգելու, թէ իրենք զօրանալու, և թէ
լատիններուը ակարացնելու դիտմամբ։ Երբ
Կոստանդնուպոլիս Լատին կայսրութիւն ևս
դաս 1204'ին (§ 1068), թէպէտ Յոյները ար-
կաղացան, բայց իրենց դիրքը բոլորովին չը
կորնցուցին, և քիչ ետքը 1206'ին Թէոդո-
րոս Լասկարիս մնացեալ զօրութիւնները ամ-
փոփելով և կարգադրելով յունական կայս-
րութեան չարունակութիւնը հռչակեց Նիկիոյ
մէջ, ուր 1222'ին իրեն յաջորդեց Յովհան-
նէս Վատակէս, որ հնազհնաէ զօրացուց իր
իշխանութիւնը, Փոքր Ասիան նուաճեց, Թե-
սալոնիկոյ ալ տիրեց, և լատիններուը Բիւզան-
դիոնի մէջ փակեց, և քանիցս զայն գրաւե-
լու ալ պատրաստներ բացաւ։ Վատակէսի
հետ նոյն ատեն և Նիկիոյ մէջ՝ պատրիարք-
քական աթոռը բարձրացած էր Թեոդոսիոս Բ,

որ կատարեալ գործակից մըն էր անոր իր ձեռնարկներուն մէջ։ Այս եղելութեանց հետեւանքն էր Գերմանոսի Հայերուն մօտենալը, և անոնց հետ միաբանական բանակցութեանց մտնելը (ՍԻՍ· 554)· որոնք սակայն քաղաքական նպատակ ունէին, և եկեղեցական ձեւը՝ քաղաքականին հասնելու միջոցն էր միայն։ Հայերուն Յոյներուն հետ բանակցութեանց սկսելը նշան է այն անտարբեր ըմբռնումին, զոր Հայեր ունեցան և ունէին միշտ իրենց միաբանական ձգտումներուն մէջ, պարզապէս զօրաւոր քրիստոնեայ նեցուկ մը գտնելու դիտումով, և ոչ թէ միայն կամ միւսին ճշմարիտ ուղղափառութիւնը ճանչնալով։ Բայց Յոյներու հետ այս անգամ չատ առջեւ չգացին, վասնզի դեռ զօրաւոր չէր անոնց դիրքը, քանի որ կոստանդնուպոլիսէ դուրս կը մնային, և Վատակէսի բոլոր ձեռնարկներն ալ յաջողութեամբ պսակուած չէին, իսկ Եւրոպան ուլտիմաներ չատ ուելի զօրաւոր կ'երեւային Յոյներու բազդատմամբ։ Լատիններու աչքին Հայերը գնահատելի ոյժ մը և կարեւոր օգնութիւն մըն էին, ուակից զրկուիլ չէին ուզեր, և իրօք ալ այլազգիներէ չաղթուած և պատերազմէ ազատած գունդերու մնացորդներն իրենց ապաստանի տեղ կը գտնէին Կիլիկիոյ, կամ ինչպէս իրենք կ'ըսէին Փոքր Հայոց թագաւորութեան մօտ, և նոյն իսկ լատինաց ապաստանական կարգերը Հայոց հովանաւորութիւնը կը խնդրէին (ՍԻՍ· 533)։

ԲԵԼԼՈՎԱԿԵՑԻԻՆ ԳՐԱՑՆԵՐԸ

1112. Այս տեղ իբր հետաքրքրական ինչ կ'ուզենք չատով բերել ինչ որ Վինկենտիոս Բելլովակեցին գրած է Հայոց եկեղեցւոյն վարդապետութեանց վրայ։ Բելլովակիա (Beauvais) Փարղիոյ քաղաքներէն է, և Վինկենտիոս՝ ԺԴ դարու լատին մատենագիրներէն է, որ Հայելի մեծ անունով, և Հայելի քնարեան, Հայելի վարդապետական, Հայելի բարոյական և Հայելի պարտական բաժիններով աշխատութիւն մըն ալ ունի, ուր հատաքած է իր դարուն տեղեկութիւնները։ Առանց ուզելու Բելլովակեցիին գրական արժէքը փնտռել, Հայերուն վրայ գրածները բաւական են ցուցնել, թէ ինչպէս անհին և խառնակ գրույցներու վրայ հիմնուած են իրեն տուած տեղեկութիւնները։ Բելլովակեցիին կարծիքով թէպէտ Հայեր բաւական մոլորութիւններ ուզած են Նիկոն Պոնտացիի քարոզութեամբ (§ 817), և պապերու խրատիչ նամակներով, բայց տակաւին չատ մոլորութիւններ ունին, և այս պատճառով հանապազ և չբռատանչէբ ժամանակ էրափեցան չԱռոռծոյ ղնոզան չբչղռնօռ (ԿԱԼ· 370)։ Ապա Հայերուն կարծեցեալ մոլորութիւնները համրելով կը յիշէ, թէ Աւագ չաբաթ երեկոյին հաւկիթ և պանիր կ'ուտեն, թէ Զատիկէն առքը մինչեւ Պենտեկոստէ եղող ուրբաթները միս կ'ուտեն, թէ Մեռնդի օրը չեն գիտեր, թէ սրբոց ոճներ չեն ըներ, թէ առաքելոց պահքերը չեն պահեր, թէ եղանակաց պահքեր չունին, թէ մեծ պահքին մէջ չեն պատարագեր, թէ Սուրբ Աբեան անունով՝ խիստ և ծոմեայ չաբաթապահք մը ունին՝ որով Աւագուրին կ'ակնարկէ, թէ պահք օրեր ձէթ ու ձուկ ուտելը ու դինի խմելը պուրկութիւնէ ծանր մեղք կ'ըսուին, թէ երկամեայ տղայոց հաղորդ կուտան, թէ բաժակին ջուր չեն խառներ, թէ կենդանիներու մէջէն պիղծեր կը գատեն, թէ ապակեղէն և փայտեղէն սկիհ կը գործածեն, թէ առանց քահանայական զգեստի կամ լոկ ուրարով կը պատարագեն, թէ չաբաթ ու կիրակի՝ սրբոց ոճն չեն ոճներ, թէ հանդերձեալին մէջ մաքրարանի վարդապետութիւնը չեն ընդունիր, թէ եպիսկոպոսներ պոնտկութեան պատճառով ամուսնութիւն կը վճռեն, թէ եկեղեցականներ արբեցութեան ու վաչխառութեան ու սիմոնականութեան ու հմայողութեան կը հետեւին, թէ այրի երէցկիները կրկին չեն ամուսնացներ, և թէ երկու բնութեանց վարդապետութիւնը չեն ընդունիր (ԿԱԼ· 372)։ Բելլովակեցիին չատով բերած խառնուրդը, զանոնք և բացատրելու իսկ պէտք չենք տեսնար. դի ոմանք սխալ տեղեկութիւններ են, ուրիշներ թիւրիմացութիւններ, և չատեր լատինամոլ միտքի տրտղրութիւն, որ մոլորութիւն կը կարծէ ամէն ծէս ու սովորութիւն որ լատինականին համաձայն չէ։ Սակայն պէտք չէ այդ խառնակ ծանօթութեանց վրայ զարմանալ, քանի որ միւս կողմէն կը տեսնենք, որ Լեւոն Թագաւորը տակաւին կենդանի կը կարծէ 1239'ին (ԿԱԼ· 377), և մինչեւ 1242

կը յետաձգէ անոր մահը (ԿԱԼ. 376), և Լեւոնը Հայոց իշխանութեան յափշտակիչ կը նըկարագրէ, և թագաւորութեան սկզբնաւորութիւնը 1242'ին կը դնէ (ԿԱԼ. 377), և Կոստանդին թագաւորահայրը՝ 72 Հայ իշխաններ մեռցնելով իւր որդին Լեւոնի տղջկան ամուսնացուցած կ'ըսէ (ԿԱԼ. 378)։ Երբոր պատաքին եղելութիւններն ալ այսպէս կը ծամածռէ, պէտք չէ չատ տենդալ՝ ինչ որ Հայերուն կարծեցեալ մոլորութեանց մասին կը գրէ։

ԹԱԹԱՐԱԿԱՆ ԱՐՇԱԻԱՆՔՆԵՐ

1113. Թաթարներու յարձակումները, կամ լաւ եւս հրոսակները, որոնց սկզբնաւորութիւնը պատմեցինք (§ 1103), պահ մը դադար առած էին Ճինկիզի իւր երկիրը դառնալով, ուր 1227'ին մեռաւ, և իրեն յաջորդեց որդին Ուխաթա (ԿԻՐ. 122), որ 5 տարի հանդարտ մնաց, և ներքին երկիրներով զբաղեցաւ, և միայն 1232'ին, մտածեց դէպ Ասիոյ արեւմուտքը արշաւել, 15 ճիւղերու բաժնելով իւր անթիւ բանակը, որոց գլխաւոր պետերն էին Բինալ և Մուլար զօրավարներ, Նոյին ատիճանով, իբր օգնականներ Ջարմաղանի, զոր ընդհանուր հրամանատար նշանակեց։ Մուգանի ընդարձակ դաշտը, որ կասպից ծովին արեւմտեան կողմը կը տարածուի, և մեղմ օդովը, յուրթի արօտներովը ու առատ փայտովն ու ջրովը հանգիստ ձմերոց կը կազմէ, Թաթարները զայն իրենց կեդրոն ընտրեցին, ուսկից կը խուժէին իւրաքանչիւր գարնան բացուելուն, և գերելով ու գերիներով, աւերելով ու աւարելով ձմեռը հանգիստ անցնելու համար նոյն տեղ կը դառնային (ԿԻՐ. 123)։ Ջմռանք որ Թաթարներու արշաւանքները հիւսիսէն ալ Ռուսիա և Լեհաստան և Հունգարիա, և հարաւէն Հնդկաստան հասած էին (ՕՐՔ. Բ. 147), այլ մենք մեր նպատակէն կը հեռանայինք նթէ միտքի ուզէինք յիշել նոյն իսկ Հայաստանի մէջ գործուած աւերները, զոր ընդարձակ կը պատմեն ականատեսներ կիրակոս և Վարդան, և կը նկարագրեն Գանձակ (ԿԻՐ. 124), Շամքոր (ԿԻՐ. 125), Լոռի (ԿԻՐ. 135), Անի (ԿԻՐ. 138), ու Կարս (ԿԻՐ. 140) քաղաքներու կոտորածները. ընդհանուր տեղեկութիւններ ալ տալով ամենուրեք կատարուած վայրագութեանց վրայ (ԿԻՐ. 125)։ Ուխաթա մեծ խանը 1241'ին մեռաւ. և անոր յաջորդից Քիւք կամ Խայուխ, և անոր օրով Ջարմաղան ալ համրացաւ և անկարացաւ, և 1242'ին իրեն յաջորդեց Բաչու (ԿԻՐ. 152), որ անդրագոյն եւս մղեց արշաւանքը, գրաւեց Կարինը, Երզնկան, Կեսարիան ու Սեբաստիան (ՎԱՐ 147), որք Իկոնիոնի սուլտանութեան ներքեւ էին։ Նոյնպէս Կոթոխեցին և Եփեցին ըսյլ աշխարհս և դիտաւոր, ուր մանաւանդ ազգ Հայոց վտարեալ քնակեալ էին, իսկ վիշտերը չիրենց գագաթնակէտը հասան 1243'ին, զի համաբանէր ընդհանուն ՈՂՐ էր, և ըստ այն էսդենեան արդիւնն արձանաւոր ոգւոց, կը գրէ Վարդան (ՎԱՐ. 147), հայկական ՈՂՐ=692 թուականին տասերուն իմաստ տալով։

ՎԱՆԱԿԱՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ

1114. Թէպէտ մանաւոր դիպուած մը, բայց յիշատակից արժանի է Վանական վարդապետի գերութիւնը, որ այս չփոթութեանց միջոցին տեղի ունեցաւ, և զոր մանրամասնօրէն կը պատմէ Կիրակոս, գերութեան ընկերը (ԿԻՐ. 129–135)։ Ծովհաննէս վարդապետ Տաւուշեցի, առաջին Ծովհաննէս Տաւուշեցիէն տարբեր (§ 1080), և աւելի ծանօթ Վանական մականիր անունովը, 1181'ին ծնած է և Մխիթար Գոշի աշակերտած, և Մխիթարէն ետքը գլխաւոր և հռչակաւոր եղած է դարուս Հայ վարդապետներու մէջ։ Երբոր ինքն գործի դլուխ եղաւ, Խորանաչատ վանքը հիմնեց ու պայծառացուց իւր հայրենական Տաւուշ գիւղին մօտ, Գանձակի գաւառին մէջ, և վերջէն աւելի ապահովութեան և առանձնութեան համար, անկէ քիչ հեռու Լօրուտ գիւղին բարձունքը քարաժայռերու մէջ եկեղեցի և վանք մըն ալ չինեց, և հաստատուպէս հոն կը մնար, երբ Խորանաչատը Ճէլալէտտինի ապստամբէն վնասուեցաւ (§ 1103)։ Երբոր Մուլար զօրավար (1113), այլ կողմերը հասաւ, և վախրամ իշխան որդի Բըլու Ջաքարի և ազգական Օրբելեանց, որ գաւառին կ'իշխէր, իւր Աղբուղա որդւոյն հետ տեղի տուաւ, Լօրուտէ և Տաւուշէ և չրջակայ գիւղերէ բազմութիւն մը վանականի լեռնային վանքը ապաւինեցաւ, սակայն վանքը բաւական չէր այդ բազմու-

թիւնը ապրեցնել, և առանց ջուրի և առանց կերակուրի մէյ էյն է մեռանել։ Պաշարող Թաթարներ բազմութիւնը կը հրաւիրէին անձնատուր ըլլալ, և ամէն դիւրութիւն կը խոստանային, և բազմութիւնն ալ վարդապետին կը թախանձէր, ջնեա՛ ըրէն մէզ ապենցա՛ն, էվ ա՛ռ նոա՛, և ա՛ռ մեր ընդ նոա՛։ Վանական վատահ չէր որուած խոստումներուն անկեղծութեան, բայց յանձն առաւ երթալ, ըանի՛ մ՚ալ խնայեցէք ձեր ձեր՝ յայտարարութեամբ, և Սոսթենէս ու Մարկոս արեղաներուն հետ իջաւ Մուշարին մօտ, և օրը վարդավառի ատն էր կ՚ըսէ պատմիչը, որ յուլիսի 27՚ին եղած կ՚ըլլայ, ետէ 1242՚ին ջնեանք պատահարը, ինչպէս ոմանք կը հաշուեն, այլ հաւանականագոյն է դնել 1236՚ին Ուխթայի օրով, քանի որ մահուընէ ա՛մ ընթերցաւն յառաջ եղած կ՚ըսուի (ՎԱՐ. 146), և այդ հաշուով յուլիս 6՚ին հանդիպած կ՚ըլլայ, և միշտ կ՚արդարանայ այդ առթիւ յիշուած առաքէլ պօլն։ Երբոր ղօրավարին ներկայացան ատիպեցին եըկէրպէսենել է վերայ ձնեցաւ, էքըե՛ առաջ է ձա՛մ գնելըն։ Ջօրավարը չատ մը անոյշ խօսքերէ եւաքը, կը հրամայէ որ լեռ ապաստանողներն իջնեն, և այնպէս ալ կ՚ընեն արեղաներուն ձայնելուն վրայ, ետէ՛ետև միշտ վախով և հաղորդութեամբ յառաջ կ՚ելլեն։ Իջնողներուն ջուր ու հաց կու տան, բայց պահպանութեան ներքեւ կը դնեն, միւս օր լերան վանքը կ՚ելլեն և կը թալնեն։ Վանական վարդապետը, Մարկոս ու Սոսթենէս արեղաները, Վանական եղբօրորդին Պօղոս քահանան, Կիրակոս վարդապետ պատմիչը, և ուրիշ չատեր որ կարող էին չըլլալ ընդ նոա՛, գերի կը պահեն իրենց մօտ, իսկ մնացեալները իրենց տեղերը կը դրկեն։ Անհնարին նեղութեանց մատնուած էին գերի մնացորդները, ամբողջ ամիսը բանակին եռեւէն տարուելով, հետի և բոկոտն, և գոնեալից բռնադատուած, գինի կ՚ի դէօշ անգամ ալ կոչէին հանել յօրէցն, և գիչկրնները նեղ նկուղներու մէջ խիստ պահպանութեան ներքեւ էին, այնպէս որ մինչեւ իսկ ալ պայն ա՛մէ՛ եըմանել արգել է պէտ կոչեցաւ մարթոյ։ Ակդ խումբին մէջէն ինքն Կիրակոս, և ընկերներէն ոմանք գատուած էին Թաթարներուն իբր գրագիր ծառայելու, գրել նուագ և ընդհանուր, բայց առելի հանդիստ չէին վայելեր։ Երբոր այնան յառաջանալուն Թաթար գունդեր իրենց ճմերցը դարձան, գերիները էն ալան ա՛ա ա՛ա՛ ա՛ա՛ ֆոխէլ է էէչէլ, բայց երկու քահանաներ փախչելու առիթին բռնուեցան, և ուրիշներուն այլեւս սպանուեցան չերկիւղ և ընդ ցաւոյ, և մնացեալներուն առաջարկուեցաւ իրենց անձին փրկանքը վճարել, որ ազատին։ Առանձինն վանականի վրայ պնդեցին, կարծելով թէ հարուստ է, բայց նա պատասխանեց թէ ինչ ունէին արդէն առին, քաց չանմնանէ մեր այլ ինչ ալ էյ, և առաջարկեց որ չրջակայ քրիստոնեաներուն վաճառեն զիրենք. և այսպէս ալ ըրին, և քրիստոնեաներ վանական վարդապետն ալ գնեցին ա՛նաա՛ գոհէնէն, բայց յազատութիւն և ոչ ի ծառայութիւն։ Միայն Կիրակոսը պահեց զօրավարը՝ իբր զի գրագրութեան համար պիտանի էր, բայց նա ալ խնամօք Աթաբէյ յայլոզեցաւ ֆալըգինէյ լինել և վերթանել, և Գևտիկ վանքը ապաւինեցաւ, թէպէտ ասերեալ եր է նա՛ նէ և այրեալ (ԿԻՐ. 135)։ Ասկէ ետքն է որ վանական վարդապետ նորէն Հորանաւատի մէջ հաստատուեցաւ, և իւր ժամանակին պատմութիւնն ալ գրեց, որ դժբախտաբար մեզի հասած չէ, ասկայն Վարդան (ՎԱՐ. 147) և Կիրակոս օգտուած են իրենց վարդապետին աշխատութենէն։

ՀԵՔՈՒՄ ԵՒ ՔԱՔԱՐՆԵՐ

1115. Թաթարական արշաւանքին վերանայքը հետզհետէ Հայոց թագաւորութեան սահմանները կը մօտենար, և կորուստը ակներեւ էր, ետէ Իկոնիոնի սուլտանութիւնը իյնար։ Դիւանատին Քէյխուսու սուլտանը, որ Ալայէտտին Քարքաուզի յաջորդած էր 1237՚ին, ուզից գնել իւր ընտանիքը ապահովել, ուստի ա՛ալտանին մայրն և ա՛ր քոռորն և ֆոխա՛ է կէչկին (ՍՄՐ. 222), երբոր Բայկու Իկոնիոնի վրայ քալից, և պըթեցա՛ ա՛ալտանն (ԿԻՐ. 156)։ Հայոց թագաւորն ու թագաւորանոյն բարեկամական յարաբերութիւններ չանացին հաստատել Թաթարներու հետ, և Կոստանդին թագաւորանոյն անձամբ կնաբերթ գնաց Թաթարներու հետ բանակցութիւնները վարելու, որուն կողմէն Սիմկոն Ատրի վարդապետ, Իսահան Ալթա կոչուած (ԿԻՐ. 150), Գևսան եկաւ Հեթում

մին։ Այդ Սիմէոն յաջողեր էր մնծ խանին համակրութիւնը շահիլ, և անոր համոզել որ պէտք չէ կոտորել քրիստոնեաները, որ իրեն կը խոնարհին և կը հնազանդին և հարկ կը վճարեն, և խանն ալ նոյն ինքն Սիմէոնը միջնորդ կը գործածէր քրիստոնէից մօտ, այդ պայմանները գործադրելու համար (ԿԻՐ. 151)։ Լատիններն ալ կը յիշեն այդ միջոցին Յովհաննէս Կարպինեցի եպիսկոպոսին պապին կողմէն Թաթար զօրավարին մօտ գալը, քրիստոնէից պաշտպանութիւնը խնդրելու համար։ Ըստ այմ Սիմէոն Հեթումի մօտ կու գար սովորական պաշտօնով, բայց Բաչու կը պահանջէր միանգամայն որ սուլտանին ընտանիքը իրեն յանձնուի, ինչ չէ, կ'ըսէր, «ես ամէն ակռն, որ հեպ ունիմ, ոսոխ է (ՍՄՌ. 122)։ Ծանր եկաւ Հեթումի պահանջուած պայմանը, մինչեւ ըսել, թէ լաւ էր ինչ եղեր ըղջէն իմ վիճան ինդրէին չինեն, «ան ինչ ընտա, այլ հնար չեղաւ Բաչուի միտքը փոխել, և ոչ ալ հնար էր Թաթարներու զօրութեան դիմադրել, ոսոխ ախոյեան կոտա՛ եւ է յետոյ նոցա, վի ի ինչ ըղեցոյ պոռճա՛ լեզի։ Հեթում զանց չըրաւ սովորական ընծաներն ալ, և փոխարէն Թաթարներ հասպոպեցին սեր ընդ սբոյին Հայոց. եռան և ջէր ըսա ջենին խրեանց, ըղ էլտմիշ կուչին (ԿԻՐ. 156), Այս կերպով միայն կրցաւ Հեթում հեռացնել Կիլիկիոյ վրայէն այն ահեղ փորձանքը, որ սրղէն բոլոր աշխարհը քարուքանդ ըրած էր։ Բեկլարակեցին կը խղճահարի Հեթումի ընթացքին վրայ, թէ անէքսաՏլնեմբ ինչ սպրեալ յանձնեց՝ սուլտանի ընտանիքը է յետոյ թաթարոց, վասն չհնչց գերբեկոսՏլնեան էրեանց, բայց չենք գիտեր թէ որչափով պիտի պատասխանէր Հեթումը իր ազգն ու եկեղեցը զոհել սուլտանին սիրոյն, որ այնչափ անգամներ մնծամնծ վնասներ հասուցած էր Հայերուն։ Բեկլարակեցիին պատմելովը Հեթում սուլտանի կիները սարած սանները ինչ է նոին ճանապարհ (ԿԱՀ. 378), իրը թէ Աստուած պատժած ըլլայ գործած անիրաւութիւնը, սակայն Հեթում մեռած է 1270'ին, և այդ եղելութիւնը 1244'էն հաբը չէ, և ըստ այնմ պէտք կ'ըլլայ իմանալ բաբոյական տնտակէտէն յայտնուած միտքն ալ։ Անտարակոյս Հեթում ապստամբած կիները յանձնելէն առաջ, կաթողիկոսին հետ խորհրդակցած է, և անոր հաւանութեամբ տրուած է յանձնելու որոշումը։ Բայց կաթողիկոսն ալ չէր կրնար բանադատիչ պայմանին առջեւ Թաթարներու վայրագութեան զոհ սալ Կիլիկիոյ ժողովուրդը, և երկիրին վրայ հրաւիրել ուրիշ տեղեր կատարուած կոտորածներն ու տառապանքները։ Անցողաբար աւելցնենք թէ անչուշտ այս առթիւ տեղի ունեցած՝ Սիմէոն Աարիին դնապանութեան և միջամտութեան արդիւնքն եղած է, Սիսի մէջ Աարուց եկեղեցիին չինութիւնը (ՍԻՍ. 534)։

ՀԵԹՈՒՄ ԵՒ ՍԵԼՃՈՒՔՆԵՐ

1116. Եթէ Հեթում և Կոստանդիններ կրցան Թաթարներուն սպառնալիքէն ազատիլ, յանձնելով Ղիւէտտին սուլտանին մայրն ու քոյրը (§ 1115), սակայն անոր վրէժխնդրութիւնը չարժեցին, երբոր Թաթար սպասատակը ետ գնաց, և Ղիւէտտին իր իշխանութեան դարձաւ, և 1245'ին Կիլիկիա յարձակեցաւ, ոչ այլեւս ղանին, նորէն իրեն օգնական և սուսկնորդ ունենալով Լամբրոնի Կոստանդին իշխանը (§ 1109)։ Կոստանդին թագաւորահայր և որդին Սմբատ սպարապետ՝ Տարսոնի մէջ ամրացան, և Հեթում Ատանան բռնեց։ Սելճուքներ Տարսոնի պաշարումը չյաջողցնելով, Կիլիկիոյ կամ Կուկկայ կողմանէն, այժմեան Կիւլէկ-Պօղազէն ետ կը դառնային, երբ Հայերը ետեւնէն պնդեցան, և Մայծաւի ճակատամարտին մէջ, «եւ պէսպէս անոնց, կ'ըսէ Սմբատ, ոսոխ Աստուածով խոնէբեցաւ և կոտրելով վռեցաւ (ՍՄՌ. 123)։ Միւս տարին 1246'ին Սելճուքներու յարձակումը նորոգուեցաւ, և թագաւորահայրն ու սպարապետը Տարսոնը լաւ պաշտպանեցին, բայց երբ պարիսպէն Նեռընկեց մի քլոցին թշնամիք, վհատեցան, և Պռակունա բերդը տալով հաշտութիւն խօսեցան։ Սակայն նոյն միջոցին սուլտանն, երբ նոյ խմէր, լուկ ասաց «ովս ովս, ոսոխ Աստուած։ Իսկ մենք, կը գրէ Սմբատ, վեսա նմացեր զսուլտանին մահն, թէ ոչ՝ կռեսա նեղել և հաշտութեան չէինք գիջանիր։ Ասոր հետ մէկտեղ, կ'ըսէ, եան զարձող Սելճուքներէն հարեր հաղար մարդ ասեպ ջրաներգ ասպակեցան՝ յորդահոս անձրեւներուն պատճառով, և չեռ երկոսս պարսոյ քոլցոսա չՊռակունա, այսինքն բերդը եան ասած են 1248'ին։ Երբ

այս անցքերը կը դառնային Կիլիկիոյ կողմերը, Հայաստանի գաւառները, կրկին չարաչար նեղութեանց կը մատնուէին, վանդի Բայսուն և այլ աւազանին Թաթարաց, կոչնէ առին ամբարտաւանութեան և ապստամբութեան վրայ. Դաւիթ թագաւորը և մեծամեծները ձերբակալեցին, կապեցին և հարին ընդհանուր, սակայն վերջէն անոնք արձակեցին ի հանուանէ, բայց անոնք կորսընցին. ընդհուպ և ափրակ, ընթանային խայտառակաբար ի կոնայս, այնպէս որ պատմիչը իրաւունք ունենայ ըսելու, թէ այն ՈՂՔ կրկնեցաւ ի ՈՂՔ ըսին (ՎԱՐ·148), այսինքն է 1249'ին:

1117. *Մինչ այս անցքեր կը դառնային, և Հայութեան բոլոր բաժինները, թէ Թաթարներու և Սելճուքեան*

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ՎԱՐԴԱՆ

*ցեղերու ձեռաց նեղքեր, և թէ Կիլիկիոյ ազգային թագաւորութեան մէջ՝ սպանէ ու վիշտ գլուխ չէին կրնար վերցնել, վարդան վարդապետ Արեւելցին, նոյն ինքն վարդան պատմիչը, Մեծ մականուանեալ, և աշակերտ Մխիթար Գօշի ու Ցովհաննէս Վանականի, 1240'ին տեսնելոց ապրեցաւ ընդ ազգս երուսաղէմ էր գացած (ԿԻՐ. 162), Կոստանդին կաթողիկոսին ուխտագրութենէն քիչ հաքը, երբ տակաւին երուսաղէմ լատիններու ձեռքն էր: Երուսաղէմէ դառնալուն վարդան Հռոմկլայ կը հանդիպի 1241'ին կաթողիկոսին հետ տեսնուելու համար: Կոստանդին երբ զայն կը ճանչնայ, չուզեր անկէ բաժնուիլ, կը կապէ զայն ինքնագրութեամբ Աթոռոյն ընդ անյին իւրոյ կենօք և մահուամբ, ընծա հրէից և սէրով բնախելալ ընդ նա յաւիտեան (ԿԻՐ·165): Կոստանդինի և վարդանի խորհրդակցութիւնները խնդմ ազգին և եկեղեցւոյն ողբալի վիճակին վրայ կը դառնային, և մտածեն եղեալ խորհեցան, ինչ ձեւէն են այժմ ազեանչէ պատճառ, զի ազեանչ մարդ խնամով խօսէր է ընթերցող կամաց կամաց: Ժամանակին զեղծումները համրուած ատեն կը յիշուին մերձաւորներու հետ ամուսնութիւն, ամուսնութիւնը, ապօրինի կենակցութիւն, պահքերու անզգուշութիւն, և հեթանոսական կենցաղ, և որ ինչն է եան զանազան ըսելս, կաչառով ձեռնադրութիւններ անարժաններու, ազգականներու և մանկահասակներու, և եկեղեցականներու խառնակեցութիւն (ԿԻՐ·162): Այդ զեղծումներու դարման մը հոգալու համար կաթողիկոս ու վարդապետ, դրան ապաստանեցաւ լրմամբ, այսինքն հայրապետանոցին վարդապետներով. 1243'ին Հռոմկլայէ կու գան յաշխարհն Կիլիկեցւոց Սիս մայրաքաղաքը, և Հեթումի հրամանաւ և չեռնարկութեամբ (ԿԻՐ. 168), կամ ըստ այլոց Կոստանդինի հրամանաւ և Հեթումի չեռնարկութեամբ (ՍԿԿ·287), ժողովի կը գումարուին վեհափառաւոնաւ, վերջապէս, գիտնոնաւ և վանաց աստիճանաւ, գնչխանաւ և գլխեցողք (ԿԻՐ·168), և տիրող զեղծումներուն համեմատ ամենեցուն կամակցութեամբ և չեռնարկով կը հաստատուին ամման և կանոն ընթացք և պարբերիս և կարելի ջոջերն, և անոնց վրայ կ'ուխտուն ժողովով չանչն առնալ ամենուն կարգադրութեամբ վերհալ ամման (ԿԻՐ·169):

1118. *Ժողովական կանոններուն վերլուծութեան չանցած, պէտք է դիտել տանք թէ Սիսի գումարումը*

ՍԻՍԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

կատարեալ ազգային ժողով մը չկրցաւ ըլլալ, որովհետեւ միայն Կիլիկիոյ ներկայացուցիչներով կազմուեցաւ, և անկէ դուրս եղող Հայաստանի և Փոքր Ասիոյ եպիսկոպոսներուն և վարդապետներուն և ոչ իսկ հրաւէր ղրկուեցաւ: Կոստանդին կաթողիկոս մտադիր էր գալ անչմէ և այդպէս, այսինքն արեւելեան գաւառները, և ընդ վերահաս կարգադրութեան իւրոյ, և միանգամայն այն կողմերու եպիսկոպոսներէն և վարդապետներէն պահանջել չեռագիր ամմանէ եղելոյ (ԿԻՐ·169), որ է ըսել, Սիսի ժողովին որոշումներուն կատարեալ ազգային կանոնի ոյժը տալ ընդհանուր համաձայնութեամբ: Կոստանդին իւր փափաքը չկրցաւ լրացնել և անդէն չարժուիլ, ոչ միայն վի ծերացեալ էր նա (ԿԻՐ·163), այլ վի նաեւ ժամանակն կաճած և պատրաստ էր (ԿԻՐ·165): Այս պատճառով վերջապէս ամ ապստակէ հաքը (ԿԻՐ·168), վարդան վարդապետը ճանապայ հանուց, որ է հինգ ամաց հեռի իւր մտան էր (ԿԻՐ·165), և կատարեալ մտերիմն էր, և ունէր վերջապէս և վերջն իւր չանչնայն էր, որպէսզի գլխաւոր վիճակները պատի, եպիսկոպոսներուն և վարդապետներուն համաձայնութեան ատենագրութիւնը տանէ, և հաստատէն հաքը

բոլորը մէկտեղ կաթողիկոսին բերէ (ԿԻՐ. 166)։ Այդ մանրամասնութիւնները չատ իսկ են ցուցնել, թէ Սիսի 1243 տուրուց ժողովին որոշումները չեն կրնար ազգային ժողովական կանոնի հեղինակութիւնը վայելել, քանի որ իրենց կազմութիւնը կիսովի էր եղած, և լրացումը երեք տարիներէ ետքը պիտի կատարուէր, և այն ալ ամբողջական կերպարան մը չկրցաւ առնել։ Բաց ասոր կանոններու վերլուծութիւնն ալ պիտի ցուցնէ, որ անոնք դատաստական և կանոնական գլխաւոր նիւթերու չուրջը չեն դատնոր, այլ պատահական և ժամանակին պէտքերուն պատշաճեալ առաջարկ կարգադրութիւններ են, որոնք չտրուելնուն փոփոխման ենթարկեալ կէտեր են։ Պէտք է դիտել եւս, որ ձեռնադրիս չունինք ժողովական որոշմանց վաւերական պատճէնը, եպիսկոպոսներուն և վարդապետներուն իշխանութիւնը թուովը և առարգրութիւններովը, որ կարևոր ունենց արժէքը օրինաւորապէս գնահատել։ Իսկ Կիրակոսի յառաջ բերած չրջաբերականին մէջ (ԿԻՐ. 167-173) Կոստանդին այնպիսի, բացատրութիւններով կը հաղորդէ ժողովական որոշումները, որ պէտք իւր անձնական առաջարկութիւններ կ'երեւան, քան թէ ժողովականն ոճով խմբագրուած հրամաններ։ Աւելորդ մեզի իրաւունք կու տայ ըսելու, թէ Կոստանդին կրցաւ Սսոյ գումարման կէտերը իւր կողմէն ընդլայնել, կամ իւր կողմէն ալ կէտեր աւելցնել, զորօրինակ երբ կ'ըսէ ըստ եմ հոգացեալ առաջ արտային Հեթմոյ և հօր իւրոյ Կոստանդեայ (ԿԻՐ. 171), և կամ է Ֆռանկաց գրեալ են առ Ռէդ (ԿԻՐ. 173), և ուրիշ նմանօրինակ դարձուածներ։

1119. Գալով Կոստանդինի չրջաբերականին մէջ ցուցուած 25 գլուխներուն, զորս ուրիշ օրինակներ 23'ի կը վերածեն՝ երկուքը իրարու խառնելով (ԿԻՐ. 289), առաջին չորսերը ձեռնադրութեանց մասին են։ Ա. Արժանաւորներ միայն ձեռնադրուին և առանց աբծովոյ, որ է գիշեր գիշեր խստիւ պահուած չէ վասն ազգակցութեան և փաթաթութեան։ Բ. Եպիսկոպոսութեան կոչումն աբծանաւոքն դպան և գիտանն, այն ալ հնձաս հննդութեամբ և վկայութեամբ և ընդհանրին կամակցութեամբ, որ ընտրութենէ առեալի՝ հատանութիւն կը ցուցնէ. տարիքն ալ ի՛ պակաս չան վեցեսան ամի։ Այս երկու կանոնները ոմանք մէկի կը վերածեն (ԿՐԿ. 289)։ Գ. Իբր առաջին գործ եպիսկոպոսին, կը հրամայէ առնմանել ղաստացիս և ղաստաճեալս աման եկեղեցւոյ, և կը պահանջէ որ անհայնիկ և գիտուն կինդին աստացիս գայցեն։ Դ. Ձեռնադրութիւն ընդունողներուն՝ ամօքն և սրբութեամբ օժտուած ըլլալնին, և անյանց խրեանց և անաշղաթի վկայութեամբ հաստատուած, և առանց սրբոնոյ նչանակուած ըլլալնին ստուգելէ զատ, կը պահանջէ եւս որ տուրիքով ալ ըլլան, մ՛ պակաս չան վեսանհինգ ամի եղեցն, և սարկաւագն չան ամ։ Ուրիշ օրինակներ կը գրեն մ՛ պակաս չան վեսան եօթն ամի եղեցն և սարկաւագն (ԿՐԿ. 289), որ յարմարագոյն չերեւիր երկու աստիճաններուն նոյն տարիքը տալովը։ Զորս եւս կանոններ քահանայագործութեանց համար են. ե. Պահակ և կնունք նչանակեսցէ և չեկեղեցւոյ պիտի կատարուին, և ընդունողներ պիտի հաղորդուին։ Միայն կնունքը կրնայ ըլլալ չորեքամ և իսկ. եթէ հանգամանք եղեալ իցէ եբեխայի. խորհուրդները պիտի պաչտուին միչտ առանց պղտիի։ Զ. Ամէն քահանայագործութիւններ, կնունք և պահակ և թաղումն, պիտի կատարուին առանց զգեստի և ծաղոս, այլ եղիւղ և աղընիւղ վերչինչոյ, այսինքն թէ հանդիսաւոր ծառայութեանց մասնակցութիւն պիտի ընեն երկու ուսածութեամբ։ Է. Մկրտութեան աւազանը հաստատուն և անշարժ և վրան ծածկոյթ պիտի ըլլայ, որով չարժական աւազանները կ'արգելուին. նախընթաց կանոնով ալ կնունքը չեկեղեցւոյ ընել հրամայած էր, ինչպէս և պահակը։ Ը. Պատկուելիքները պիտի ըլլան վիզ ծածկուած հեռացեալ չպզեղոյնութենէ սրբան, և վերնայն ընդեղտաան և հարսը եղիսաան տարեկանէ պահպան պիտի չըլլան։ Տարիքները յատին կանոններով և այժմեան սովորութեամբ չատ նշուղ են, որովհետեւ այդ տարիքներու մէջ կատարեալ խնդահասութիւն չենթադրուիր։ Իսկ հատի ճիւղերը մինչեւ վեց բարձրացած են, միչտ երկու կողմերու ծնունդները գումարելով, և հօրինուորդի սրգելք յիշուած չէ։ Իսկ խնամութեան ճիւղերու բնաւ խոսք չըլլար, և միայն ու միայն սրբան ազգակցու-

ՐՆԱ կը յիշուի։ Շահապիվանի ժողովին մէջ տեսանք երիք ճիւղերու արգելքը երկու գիծերը միանգամայն առնելով (§ 230), այս տեղ երիքը երկու գիծերու վրայ զատ զատ առնուելով, ճիւղերը վեցի բարձրացած են, և այս ալ յայտնապէս Լատիններու նմանողութեան արգիւնք է, որոնք իւրաքանչիւր գիծը մինչեւ չորս տանելով ութը ճիւղերու արգելք կ'ընդունէին, Հայերը կերպով մը անոնց մօտեցած կ'ըլլան՝ իրենց համագումար երկքը իւրաքանչիւր գիծի վերաբնելով։

ԲԱՐԵԿԱՐԳԱԿԱՆ ԳԼՈՒԽՆԵՐ

1120. Ծաչորդով կանոններ ընդհանուր կերպով զանազան բարեկարգական կէտեր նկատի կ'առնեն։ Թ. Եպիսկոպոս կամ վարդապետ կամ երէց կամ դերդ պէտ, թէ՛ իւր գլուխի քահանայ, կամ թէ գերիներու հետ եղող քահանայ, չօրոք աշխարհի սկսած՝ կ'արգելուի չդիլ ու չինել, բայց եթէ ընդ եպիսկոպոսին հրամանաւ, բայց ճշմարտան մ' հանդուգնեցեր։ Վերջին պայմանը ոմանց մօտ կը պակսի (կիկ. 290)։ Այդ կանոնին մէջ յիշուած օգուտը, մինչ տակաւ սկսեցիկ եղողներուն, իսկ ճշմարիտը Հայ սկսեցիկ եղողներուն վրայ կը սիրելիք իմանալ, ապա թէ ոչ ճշմարիտի դէմ տուտակը պիտի իմանայինք, և կանոնը իմաստ զուրկ կը մնար։ Ժ. Իրաց գտածոյ և երաց աշխէրհ վկայութեամբ ընտրուած պիտի ըլլան, և առաջինները եպիսկոպոս, և երաց էրիցս և գեղեցիկ և փոյթ պէտք է ըլլան, կ'ըսէ կանոնը, որ յայտնապէս աստը գրաց ուսման համար է։ ԺԱ. Նոյն իսկ աշխարհ երաց եկեղեցոյ երել, միայն արուեստագոյց և եպիսկոպոս և աշխարհագոյց պիտի թոյլատուի, վասն զի կրնային ձախող հանգամանքներ բղխիլ անվարժ և անուղիղ ընդօրինակողներուն գրիչէն։ Այս ալ տեսակ մը գիտական գրաքննութիւն է, որ չատ կարեւոր էր երբ լատինասիրութիւնը կը սկսէր ընդարձակուիլ։ ԺԲ. Եպիսկոպոսներուն կը հրամայուի երկեցոյ անգամ է գործել չկրկնել չէ՞ր ընծա, և ուրիշ կարգադրութեանց հետ, աստէ և եպիսկոպոս տրեպիսկոպոս դնել, որ չկիսեցոյ գործածան ըստ կանոնոց առնել տրկուցի, երկեցի և անգամ։ Քորեպիսկոպոսներ եպիսկոպոսի օգնականներ են, որ երբ եպիսկոպոս քաղաքի մէջ կը գործէ, կը հովուէ ու կը դատէ, անոնք ալ վիճակին գիւղական չորջանակներուն մէջ միեւնոյն գործերը կը կատարեն։ Միւս կողմէն յայտնի է որ հին ատեններ դատական գործերէն չատերը եկեղեցական ատեան կը հանուէին, ինչպէս կանոններու մէջ յիշուած նիւթերէն ալ կը քաղուի։ ԺԳ. Կանոնը նոր և ասկէ առաջ չյիշուած պաշտօն մը կը յիշէ, որ է խոսքավանդիչ։ Իշխաններէն ոմանց խոստովանութեան հայրեր յիշուած էին, որոնք պարզ ծխատէրներ էին, բայց ընդհանուր խոստովանահայրեր, որ ամէն կիրակի ժողովուրդը պիտի խոստովանցնեն վասն շքեղութեան չանգանաց, և քահանաներն ալ նոյն խոստովանահայրներու հրամանով միայն շքեղութեան ծոցվզիչ ընծայեն պիտի հաղորդեն, բոլորովին նոր դիւրութիւն մըն է՝ որ Լատինէ ալ փոխանցում մը չէ, անցեալին մէջ յիշուած չէ, և ապագային մէջ հետք թողած չէ։ Միւս կողմէն Կոստանդինի և Սիսի ժողովին մէկ նոր կարգադրութիւնն է ըսելու ալ փաստ չունք գտներ։ Նկատելի է դիմաւորապէս առանց զրկի ընելու կրկին և կրկին հրամանը։ Թերևս դրամ չորթելու կերպ մըն էր, տեղ տեղ մուծուած, զոր կանոնը կ'ուզէ կարգի բերել, և կը հրամայէ որ խոստովանահայրները ծէր և եպիսկոպոս քահանայութեան առնուին, և գործադրութիւնը առանց զրկի կատարուի։ ԺԴ. Կանոնը կը հրամայէ հաղորդը հիւանդներուն առանց քօղքաթի և մոմեղէն չտանիլ, ինչ որ դիւրին պիտի չըլլար կիլիկիայէ դուրս։ Աւելի կարեւոր է նոյն կանոնին երկրորդ մասը, որ իբր զատ կանոն մը կրնար համարուիլ, ինչպէս ոմանք բաժնած են (ԶԱՄ. Գ. 228), և որ ծխատիրութեան կէտը կ'որոշէ, թէ ծխատէրի ընտրութիւնը պէտք է եպիսկոպոսի հրամայեցէ, և ոչ թէ ժողովուրդը որոշէ ամ և նմին ծախ լինել։ Ծուխերուն հիմնապէս ազգութեան ըլլալուն սկզբունքն է, որ մինչեւ վերջի ատենները քաղաքներու մէջ ալ հաստատուն կը պահուէր, և որ այժմ բոլորովին մոռացութեան տրուած կը տեսնուի։

1121. Ասկէ ետքը եկող կանոնները պարզ բարոյականութեան գործերու կը պատկանին։ ԺԵ. կանոնը կ'ուզէ որ եպիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ ուղղեն զոռնիկ,

ղնացուղը, ղհմայս և ղոմենայն յանցաւորան։ Նախ ջանան երկիւղիւ զհնութին ի ծոյլ ածել, իսկ եթէ այն չգաւէ, մարճաւոր պատահմամբ ալ վարուին, և փոփանել ալ չգիւշուին, մանաւանդ անբարոյնե-

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԳԼՈՒԽՆԵՐ

րը, որունք այր և կնոջ մէջ կը մտնեն, բող կին ունին, օրինաւոր կիներնին կը թողուն ու բողերուն կ'երթան, կամ ապերախնիան պատճառաւ բնական զկնայս առանց բանի պահնկատնիան։ Այսպիսիներէն երիւ պատահար է մարդն, անզգամ փոփանօք խրախուցին, և եթէ մեղաւորը այր է՝ թագաւորը ալանի մէջէը և իշխանը մեղադրանօք խրախուցի, իսկ եթէ կին է յանցաւորը՝ երէցն խրախուցի։ Սրատեսը այս տեղ գանատկածութիւնն է, ինչպէս Պիղատոս ալ կ'իմանար Քրիստոսի համար խօսած առնը (Ղ.ԿՍ. ԻԹ. 16)։ Իսկ ալանի մէջէ և մեղադրանօք բացատրութիւնը յայտնի և գաղտնի չնութեանց զանազանութիւնը կը ցուցնէ։ ԺԶ. կանոնը պահոց համար է. ուտելիքի մասին կ'ըսէ որ առանց յիւղ և յիւղոյ և քիւրդ եղիցի, իսկ օրերու մասին, աղտահացին և ածիւղ և ըղեւ-ըղեւիւն կը յիշէ, ու չարաբաստիկներուն վրայ չխօսիր, և է հարկէ հիւանդութեան բացատրութիւնը կ'ընդունի, իսկ անոնց որ պահքը կը լուծեն, իրր պատիժ կը հրամայէ որ փոփանեցին և յոտաբոս փոցին, և պահօ վճռեցին, որով պահոց օրէնքը արտաքին պատիժով միայն ստիպուած կը մնայ, տուգանքով վճռելի ի նպաստ աղքատաց, և լուծած օրին տեղ ուրիշ օր պահել։ Ուրբաթը և չորեքշաբթին հատատարապէս Քրիստոսի չարչարանաց առաջ կ'անուանէ, և թերևս կ'ակնարկէ Յուդայի մատնութեան չորեքշաբթի օր տեղի ունեցած ըլլալուն, սակայն չորեքշաբթին բուն չարչարանաց օր չէ, և կը պատուիրէ իրր Աւետումի օր և Մարդեղութեան խորհրդոյն յիշատակ, իրր զի է ընդդէմ օր դատիլ հրեշտակն եա ըսելոյն կատարեալ (ԺԱՄ. 294)։ ԺԷ. կանոնը յիշոյնպէս դէմ է, անունք որ ամէն նուիրական բան, հատաք, սանդոտ, կնունք, հրեշտակ, քահանայ, բնրան, երէց, գերիզման, և այլ այսպիսի կը հայհոյեն։ Կը յայտարարէ որ Հեթում թագաւորի և Կոստանդին թագաւորանօր տնտ համաձայնութեամբ՝ չէզոքաբար պիտի դրուին ամէն տեղ, քաղաք ու գիւղ, բնդդ ու դարպաս, որ հայհոյիչներուն ղեղան հագցեն կամ լեզուն ծակեցին և ըստ էնէրս ածեն, և ծեծելով է ըստղ ածեն օր մ, և ըստ էոյն փոփանս առցեն և յոտաբոս պացեն։ Այդ խիստ օրէնքը, որ իւր քնութեամբ արևելեան խստութեանց նմանութիւնն ունի, ուելի արևմուտքի մէջ սկսած հատատաքննական խստութեանց հետեւողութիւն պէտք է նկատուի։ Այս տեղ ալ ամանք պահոց և հայհոյութեան կանոնները մէկ գլուխի վերածած են (ԿՐԿ. 291)։

1122. Կը հետևին քանի մը կանոններ յատկապէս քահանայից կենցաղին և պատուսրութեանց մասին,

ՔԱՀԱՆԱՅԻՑ ԳԼՈՒԽՆԵՐ

ԺԸ. կանոնը ընդհանրապէս կը տրտմադրէ որ եթէ վերոյիշեալ յանցանքներուն մէջ իճկուղը քահանայ է, կրկին պատահաբար պատժեցի, հանդերձ կոչիւն, կամ թէ կրկին պատիժ ընդունի և պանդիցի կոչուան հանդերձ (ԿԻՐ. 292), և յարմարագոյն կ'երևի իմանալ թէ կարգն ալ վրայ պիտի տայ, քան թէ ըսել թէ պիտի պատժուի կարգը վրան մնալով։ ԺԹ. Քահանաներուն կ'արգիլէ շատ եղելացոյց գործեր կատարել, ինչպէս նօտարութիւն կամ որսորդութիւն, որով պիտի իմանանք հանրային գործերը, և ոչ սանձէնն և անուկան աշխատութիւններնին կամ անփութան հոգատարութիւնը։ Այնպիսի գործ ընողներուն և անառաջ և անաբժան քահանայներուն համար կը հրամայէ որ անոնց ձեռնադրողը ի բաց արցեն, այսինքն ծխատէրութեան իրաւունքներէ զրկեն։ Ի. Քահանայները կը պարտաւորէ, որ այրերը ու կիները զատ, կուսան աղջիկները զատ, և մանր տղոնները զատ եկեղեցին ժողվեն, ուսուցանեն, խրատեն, սաստեն, և անոնց բարեյաջողին հսկեն։ Իսկ եթէ անկարող մէկը գտնուի, է յետ այլ կոպտերէց աբացէ նոյն գործը։ ԻԱ. Փոխադարձաբար ժողովրդականներուն ալ կը հրամայէ, որ քահանաներուն իրաւունքը չխորհին և յօժարութեամբ վճարեն իրաւունքները, ինչպէս են արմենաց պատաղ, բաժին մատակ, պատկի ընծայ, ընծան հանդերձ, և ծամա բրամ։ Ժամու դրամին վրայ անդրադառնալով կը յայտէ, թէ պէտք չէ ուզուի ու վճարուի իրր բան պատարտելի, այլ լոկ իրր հանդերձ և ընծայաբար երթայան։

իր. Քահանանեուն ալ պարտք կը դնէ, որ ժողովուրդէն առածնուն մէջէն եպիսկոպոսին իրաւունքը տուն առնաելիք հասկնալ և ընծայել։ իժ. Կանոնով ալ կը յիշեցնէ հայրապետին եպիսկոպոսներէն առանալիք իրաւունքը, և յաւելլ կը բերէ Լուսաւորչեան կանոն մը, Քահանայ չդողվոբդն պատուիրէ, և եպիսկոպոսն չքահանայ, և հայրապետն չեպիսկոպոսառնե։ կը յանձնարարէ որ վճարումները յօժարութեամբ և խնդութեամբ ըլլան և ոչ ապառնութեամբ, որ անոնք հատոյց և անլոբի ծան, և եկեղեցիէն պայծառ, և Աթոռոյ օգնականի խառնի չորբէնս արբառնեան։

1123· Վերջին երկու կանոնները, Լատիններուն սիրաը չհնելու համար զիջողութիւններ են։ Կոստանդին կաթողիկոսին և Հեթում թագաւորին չրջանը, Լատինականութեան հանդէպ զիջողութեան նախապայմաններուն ժամանակն է, այն ակնկալութեամբ թէ Արեւմտեաններուն զինուորական օգնութիւնը և քաղաքական հովանաւորութիւնը թոյլ պիտի կանգնէին արեւելքի թաթարներուն և Տարսոնի եպիսկոպոսներուն դժպհի դրութեան դէմ։ Պահպանողականներուն օրով ինչինչ լատին արարողութիւններ կրցան ասկէցուիլ իրենց նորութիւն, այլ փոփոխութիւններ տեղի չունեցան։ Բարձրբերդցիին օրով փոփոխութիւններու քայլն առնուիլ սկսաւ։ Թէպէտ գործը աննչանակ և երկրորդական կէտերու վրայ ամփոփուեցաւ, բայց այն դուռ բացաւ, որ հետզհետէ զիջողական փոփոխութիւններ կարեւորագոյն կէտերու վրայ ալ տարածուին։ Բարձրբերդցիին զիջողութիւնները Սսոյ դպրանոցին վերջին երկու գլուխներն են։ իժ. կանոնը Սոբբ Աթոռոյ՝ որ խնդրոյ՝ նման է, որուն համար, օտարներ կը պնդէին թէ երրորդութեան վրան կ'իմացուի, մինչ Հայերը կը յայտարարէին թէ իրենք ի դէմս Որդւոյն Աստուծոյ կ'երգեն։ Բայց դիտողութիւն ընողներ կային, թէ Սոբբ Աթոռոյ՝ էն առաջ եղող Տնտնամէտ դէն և Լոբ յայնց ազօթքներու՝ հանգիստներուն վերջաւորութիւնները, է Հայբ և յՈրբէ և է սոբբ Հոգին ստարակոյս, յաւարտ երգը ի դէմս երրորդութեան կը տանին։ Դիտողութիւնը լուսաւ նշանակութիւն չունէր, վասնզի ոչ երբեք նախընթաց ազօթքը երկրորդին ուղղութիւնը կրնայ բանադատել, թէ ոչ ամբողջ ժամերգութեան մէջ հնար պիտի չըլլար դէմքը փոխել։ Սակայն Բարձրբերդցին խնդիր մը պակաս ընելու նպատակով կը հրահանգէ, որ առաւօտուն Խաղաղութիւն վրայ հանգիստը աւարտի, քանի որ ինքնաբերաբար էնէ ընդ Հոր և սոբբ Հոգւոյդ Քրիստոս Աստուած վրայ՝ վերջաւորութեամբ (ԿՐԿ. 293), և երեկոյին Քեզ երկրպագանելով հատ գիտան ալ աւարտի, դէմ է քարոզեան առաւեցուստ ամենազօր տէրութենդ Քրիստոս Աստուած վրայ՝ վերջաւորութեամբ (ԿՐԿ. 294), ինչպէս որ սովորութիւն դառնալով մինչեւ այսօր ալ կը գործածենք (ԺԱՄ. 253, 471), թէպէտ այն էական պայման մը չէ։ Միւս խնդիրը որ իժ. կանոնին նիւթ կը կազմէ Հիւանդաց խնդն է։ Լատիններ մեծ կարեւորութիւն տուած են այդ խնդին, զոր ևօքին խորհուրդները լրացնելու համար թիւի անցուցած են վերջին օծումն անուանով, և հիմնուելով Յակոբոս առաքեալին խօսքերուն, Հիւանդանայէ՞ ոք ի ձեզ. կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն և աւետիքն ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն Տեառն, և աղօթքն հաւատովք փրկեսցեն զչիւանդն (ՅԱԿ. Ե. 14)։ Առաքեալը ամէն հիւանդութեան առթիւ ըլլալիք օծումը կը յիշէ, և զօրութիւնը ազօթքին կուտայ և ոչ օծումին, մինչ Լատիններ յատուկ և վերջին օծումը կազմած են, զօրութիւնն ալ օծումին վերագրած, ինչ որ Հայեր իբր վարդապետական կէտ չեն կրցած երբեք ընդունիլ։ Այսուհանդերձ իբր բարեպաշտական մի գործ օծումը տարգելու ալ պէտք չեն զգացած, և այս հոգւով վարուած է Օձնեցին, երբ գրած է թէ աբեան է ընդառաջն չնէն հանապազ օրհնել ըստ խրատ ազգինդ, մինչ մի առնին համար կը գրէ թէ պարտ և աբեան է (ՕՁՆ. 26)։ Օձնեցիին կանոնէն կ'օգտուի Բարձրբերդցին, Լատիններուն դիտողութեան առջեւը առնելու, և կը յանձնարարէ հիւանդաց ձէթ օրհնել, զոր պահեն ի գործ կ'ըսէ և ի բեցոյ։ Յետոյ կ'աւելցնէ և հաբեաբար, բայց պատահութեան հարկաւորութիւն միայն, լսելնելու համար այն դիտողութիւնը՝ զոր ի Ֆառնկաց ի բեբալ են, և այս առաքեալին կ'իմացուի նաեւ բառը, թէ պարտ

ՋԻՋՈՂԱԿԱՆ ԳԼՈՒԽՆԵՐ

է առնել, և աբբէտ ապօքէ» (կիւ. 173)։ Բարձրբերդցին ոչ յաւուկ և վերջին օծումի խօսք կ'ընէ, և ոչ խորհուրդի ակնարկ ունի, հետևաբար հնար չէ հետևցնել, թէ Սիսի ժողովին կամ Բարձրբերդցիի չրջաբերական-նին մէջ վկըչին օծման խորհուրդ մը հաստատած կամ ընդունած ըլլայ, այլ ընդհանուր կերպով հիւանդներու վրայ աղօթքի առնն օծում ալ գործածելու յանձնարարութիւնն է, զոր Օձնեցին ալ ունած էր, և Բարձրբերդցին ալ պահել կը տեսնէ լատիններու հետ խնդիրը կարճելու համար։ Մնայուն և խորհրդական բան մը չընկալը կը հետևի նաև այն յանձնարարութիւնէն որով կը պատուիրէ, որ քահանայն օրհնէ ձէթը, իւրաքանչիւր անգամ պէտք եղածին չափ որ աւելի չգայ, և ոչ թէ եպիսկոպոսական օրհնութեամբ մէկ անգամէն պատրաստուի, և անկէ ցետի միւռոնի նման, ինչպէս կ'ընեն լատինները։ Օձնեցիին համար ըսուածը, թէ ըստեղ է ընդ յաղթօդ (կիւ. 173), պատմական ստուգութիւն չէ, ինչպէս որ մենք ալ իւր կարգին դիտեցինք (§ 575), և Բարձրբերդցին անորոշ և անհիմն ղրոյցի մը արձագանգ եղած է, և պատմական վկայութիւն չկազմիր։

1124. Վարդան վարդապետ, իբրև կաթողիկոսական նուիրակ, իրեն հետ ունենալով հետևորդներ, ընդ նմա առաքեալ է կաթողիկոսն, ուղևորեցաւ յԱխթամար՝ Հայոց ներքին գաւառներուն մէջ չրջան մը ընել, յեղեղոց և վանօրայս և յէշխան, ամէնուն ներկայելով կաթողիկոսին չրջաբերականը, և պահանջել յոմեններէ Յեսուէնց հաստատութեան։ Բարձրբերդցիին առաջարկները կամ Սիսի պատուիրները լաւ ընդունելութեան չարժացնացան, ձանր ընթեցաս հրամանն, զոր պատմիչը ոգեհոգեան և արձակութիւնն կը վերագրէ, առանց դրժի կասարելիք քահանայագործութեանց ակնարկելով, այլ կրնար վերագրել գիրին մէջ եղող յանկնամիա պիտոյից թեանց, ուսկից չատ հեռու էին Արեւելեցք. բայց դժբախտաբար իրենց գիրքը խախտած էր, թարգմանիչներու ու վրացիներու փոխադարձ պատերազմութեան և հանամիա հատածանքներուն երեսէն, ամէն կազմակերպութիւն կորսուած, և հանգամանքներ բան մը խորհելու պատեհէն իսկ զրկուած էին։ Ուստի զատ զատ հնարաւոր չէր ինքնին ուհամբերել. այլ և վերէն երեսս դնդացուցին, և եպատ Յեսուէէր, ոչ թէ հաստատեցան, այլ պարզ հնազանդեցան, առնել ընծան (կիւ. 173)։ Ընդհակառակն պէտք էր, որ Հայաստանի եպիսկոպոսութիւնը, իբրև մեծագոյն մասը հայրենակցութեան և Հայ նուիրապետութեան, իւր համաձայնութիւնը բերէր Սուր ժողովական որոշումներուն, ընդհանուր և սղգային կանոնի այժ տալու համար (§ 1117)։ Սաղաքրութիւն տուող եպիսկոպոսներէն կը յիշուին Սարգիս Կարնոյ, Սարգիս Անեայ, Յակոբ Կարնոյ, Գրիգոր Բջնոյ, Մկրտիչ Հանքերդի, Համազասպ Հաղբատի, և այլ եպիսկոպոսներ է կոչեցեալ։ Համաձայնութիւն յայտնող վանքերէն կը յիշուին Սանահին, Գնարիկ, Հաղարծին, Կեչառիս, Հաւուցքար, Այրիվանք, Յովհաննավանք, Սաղմոսավանք, և ոչ ըստ ընտ։ Աւանձինն կը յիշուին Ներսէս Ալաւանիոյ կաթողիկոս, Յովհաննէս Տուեցի եպիսկոպոս, Յովհաննէս Վանական վարդապետ, Աւագ Օրբելեան իշխան՝ Իւանէի որդին, որ Թաթարներուն հաւատարիմ էր դարձած և Հայերու պաշտպանութիւն կ'ընէր, և կ'երևի որ Հօրը յանձնարարութեան ալ չէր հետևեր, քանի որ այլուս Վրացիներէն ակնկալութիւն չունէր։ Վարդան վարդապետ պաշտօն ունէր հաստատութեան ձեռագիրները հաստատելով՝ անձամբ Բարձրբերդցիին ներկայել. բայց կ'երևի թէ արդիւնքը զոհացուցիչ չըլլալուն, չուզեց Հռոմկլայ դառնալ, և ստացած գիրերը ղրկեց կաթողիկոսին, և ինքն գնաց իւր վանքը, որ է Կայանի Սուրբ Անդրէասը, կամ չէնի բերդին մօտ, որ Աւագ իշխանի կեդրոնն էր, և հոն մնաց աւարտանել ջերմեռանդ (կիւ. 174)։

1125. Վարդանի ձեռք բերած արդիւնքը, որչափ և չափաւոր և դիմել բռնադատելով, գոհացուցիչ եղեւ Բարձրբերդցիին, ըստ իւր իշխանութեան ամէնէն ընդունելութեան և իրեն անձին համար յարգանքի նշանակ սեպեց։ Հազիւ թէ Վարդանէն եկած գիրերը

ՎԱՐԴԱՆ ՆՈՒԻՐԱԿ

ատացաւ 1247'ին, իբրեւ իր կոչմէն սիրոյ և գոհունակութեան արտայայտութիւն՝ փութացաց հարուստ ընծաներ դրկել եկեղեցւոյն յԵրեւան, և դիմաւորուեցաւ պատուով վանքոյս, և պատրաստուց ինքնին նոխազոյն ոչխարն ընծայել, զոր տարաւ ի կերակուրս ի սեղան հայրապետանոցին ապաւոր Թէոդոս վարդապետի ձեռքով, որ չորի և իւրացանչիւրը իր տեղը յանձնել բան պատշաճի (ԿԻՐ. 174)։ Այդ միջոցին էր, որ Հեթում թագաւոր ալ ուշադրութիւն դարձուցած էր արեւելեան գաւառներուն վրայ, որոնց բախտը այլ եւս թախտներուն կամքէն կախում ունէր, և մտածեց եւս քանիցս մչակել անոնց հետ բարեկամութիւնը, իբր իւր թագաւորութեան ապահովութիւնը ձեռք բերելու, և իբ ներքին գաւառներու Հայկազուն բարօրութեան նպաստելու համար։ Իւր փափաքն էր անձամբ տեսակցութեան երթալ Քիւրք մեծ խանին և անոր միտքը դրսեւ իմաստուն տեսակցութիւններով, և քրիստոնէից պաշտպան դարձնել իսլամութեամբ զօրացած ազգերուն դէմ, մինչեւ իսկ թախտարները քրիստոնէութեան աչակերտել։ Վասն զի տեսած թախտերը քաղաքական և կրօնական անորոշ վիճակ մը ունէին, իրենց երկրին մէջ ունեցած սովորութիւններն և հաստատքներն հետզհետէ փոխակերպուելու վրայ էին իսլամներու և քրիստոնեաներու հետ ունեցած չփումներով, բայց դեռ որոշ կէտի վրայ կայացած չէին։ Կիւրակոս պատմիչ, որ իրենց հետ կենակից եղաւ և մտաւէն տեսաւ անոնց նիստուկացքը (§ 1114), հետաքրքրական տեղեկութիւններ կու տայ անոնց վրայ (ԿԻՐ. 147–150), և դիմաւորութեան կրօնքին մասին կը գրէ, իբ ոչ պղծոն ինչ ոչ ջուր առ նոսա կամ երէցպետութիւն, բայց ոչով զանոնն Աստուծոյ չէչէին յամենայն էրս, բայց ըն ղնէն Աստուծոյ փոհանային, կամ ըն ղյլ ոճ Աստուած կոչէին, ուր ոչ էիեմ և ոչ ինչեանւ եւս (ԿԻՐ. 148), տանդ կոչէին զանոն Աստուծոյ՝ Թանկրէ (ԿԻՐ. 149)։ Հեթում իբ փափաքած այցելութեան իրը սկզբնաւորութիւն որոշեց նախ դրկել իբ եղբայր Սմբատ Գունդստապլը, ապարտպետ պատմիչը, որուն ուղեւորութիւնը իբ 697=1248'ին կը կարդանք (ՍՄՐ. 124), այլ օրինակներու և ժամանակագրութեան ուղղութեամբ 1247'ին եղած կ'ընդունուի (ՍԻՍ. 554), և ըստ այմ յարմար կու գայ ըսել, իբ կաթողիկոսին պատուիրակը և թագաւորին դեսպանը միասին մեկնեցան Կիլիկիայէ, Արեւելք երթալու համար, Թէոդոս մինչեւ Հայաստան, և Սըմբատ մինչեւ ներքին Ամրպանտ, մեծ խանութեան մայրաքաղաքը, ուակից ուղղած է Սմբատ՝ Կիպրոսի թագաւոր Հուկոն Դ'ի 1248'ին գրած նամակը (ՍԻՍ. 554)։

1126· Կաստանդին կաթողիկոսի առանձնին մատենադրութեան առարկայ եղաւ Արտազ Ա. Թագէոս վանքը, որ է այժմեան Մահկաս վանքը, Հայոց Առաջին Լուսաւորչին չիրիմը, որ միշտ նշանաւոր եղած էր Հայկազուն, և անտարբեր չէր կրնար ըլլալ Հայոց հայրապետին, մանաւանդ որ յԱ- ՅՈՎՍԷՓ ԱՐՏԱԶԵՑԻ բերծնեան որ է Թորգոմ Ե է հինէն վերջ, յոլով ժամանակ անբնակ եր է մնացեր Ե ամայի։ Վանականաց աչակերտութենէն Յովսէփ Արտազեցի վարդապետը, ձեռնարկած էր վերստին չէնցնել նոյն վանքը, որ չորս մեծ աթոռներէն մէկը, կամ նոյն իսկ չորսերուն առաջինն էր (§ 930), և ամէն կողմէ եկած օգնութիւններուն մէջ դլխաւոր տեղը կը գրաւէր Հայոց կաթողիկոսին նպաստը։ Կաստանդին ոչ միայն յղաց ոսկի յոլով է շինութիւն, այլ և շրջաբերական դիր ալ յղաց նպաստներ հաւաքելու, վիճակն ալ ընդարձակեց, դքեղակայ եպիսկոպոսներ և դիակոններ անոր քով նշանակելով։ Հարկաւ այդ ամէն կարգադրութիւններ Թէոդոս պատուիրակին ձեռքով հաղորդուեցան։ Յովսէփ վարդապետ այդ պաշտպանութիւններով քաջալերուած, համարձակեցաւ անձամբ ալ ներկայանալ Թագաւորաց Անգտն դօրավարին, որուն էքեանէն յաւելու ամբոխոյ հոգ էր վանքին, և ամէն տեսակ դիւրութիւն առնելով, անչուչ չնորհիւ Սմբատի դեսպանութեան ապդած նպաստաւոր տպաւորութեան, կրցաւ վանքը չինել, եկեղեցին արձել, հանդիսաւոր նոյ ակատիք կատարել, միաբանութիւն հաստատել, կթնաւոր բազմաժողովել, և Արտազի աթոռոյ նախկին պայծառութիւնը վերադարձնել։ Անգտն զօրավար, այդ ընթաց, ուխտադնացութիւնն ալ կը քաջալերէր (ԿԻՐ. 474), և կը ներէր

անելիք-ը ել սխփա-ուց, ընդ ինչ ըլուց իւրոց, հրամայելով ի՛ ը+ ղը-ել և նեղիլ։ Սուրբ առաքելոյն գերեզմանէն կաւտուած քմըյկութեան չնորհիւ, Թաթարներ անգամ ընծայս տպաւորանէին, և մինչեւ իսկ կը գանուէին որ ջայլ և մկրտէին ը-ա-ը-ա-ը և ը-ա-ը-ա-ը էնեանց (կԻՐ· 175), զի օտար ազգերու մէջ չատ ընդարձակուած է մկրտութեան վրայ հաւատքը, իրրեւ աղայոց վաղամնիկ չըլլալուն զօրաւոր միջոց մը։ Յովսէփ Արտազեցիի ձեռնարկը և Բարձրբերդցիին հոգածութիւնը յատուկ յիշատակութեան արժանի էին, զի յատկիկային պիտի տեսանենք թէ Արտազու աթոռը նշանաւոր դեր ունեցած է ազգային եկեղեցւոյ գործառնութեանց մէջ։

ԴԱՒԻԹ ԾԱՐԵՑԻ

1127. Պատմութեանց մէջ այնպիսի մտաւոր դիպուածներ կան, որ թէպէտ ընդհանուր եղելութեանց հետ կապ չունին, այլ մեծապէս կը նպաստեն դարուն հոգին ու նկարագիրը կշռելու։ պատմութիւնը պէտք չէ անտես ընէ այդ եղելութիւններն ալ։ Մոյն տեսակէն է Դաւիթ Ծարեցի մոլորեցուցիչին պատահարը (կԻՐ· 182–185)։ Ծար գիւղի մէջ ջաղացպան մըն էր Դաւիթ, Դեղամայ լիճին եղերքը, և Հանգաբերդի մօտ ջրաղաց ունէր, և հազիւ թէ չքաւոր և անանկ կերպով կրնար պահել իւր կինն ու զաւակները։ Օրին մէկը իրրեւ թէ Քրիստոս իրեն երեւցած և հրամայած ըլլայ, ճգնաւոր կը դառնայ, մեղաւորները դարձի բերելու և բժշկութիւններ կատարելու իշխանութեամբ։ Փիւղին ձիթահանքին գնացած կը հանէ, և բարձրաբերձ խաչ մը կը կազմէ, քարոզութեան կը սկսի, հրաշագործի հռչակ կը հանէ, խաչին ուժովն մատաղներ կը սկսի կտրել տալ, որոնք իրեն կը մնային, և միւս կողմէն մատաղի ոսկորներէն և խաչին տաշեղներէն կտրուկներ և կորեկի հատիկներ կը բաշխէր, իրրեւ նշխարս օծնոխեան, և անոնց փոխարէն չատ նուէրներ կ'ընդունէր ոսկով և ոչխարով, ղօռբանա և պիտրա (կԻՐ· 184)։ Իւր բժշկութեանց համբաւը այնպէս զօրացաւ, որ մինչեւ իսկ երէցանէ եկէն և չորեցան է նա, ընչից և զշտռնիեան ազգա, և միտնեու բազմութիւնը գիւղին մէջ տեղ չգըտնուելէն, չրջակայ լեռներ ու պուչտեր լեցուեցան։ Ամէն կողմէ ամբոխներ կուգային, ոմանք հիւանդութենէ ազատելու համար, ոմանք ալ հոգեւոր խրատ առնելու։ Ամէն տեսակ խաւերու մարդիկ կը գործուէին, և այս հրապոյրը եւս աւելի կը չատցնէր բազմութիւնը։ Բժշկութեան տարօրինակ կերպեր ալ ունէր, դիւանաւորները հատ բիրով անխնայաբար կը ծեծէր, կամ ոտքովը վիզին վրայ կը կոխէր, հոչմանդամները խաղալ ու պարել կը տիրէր, անդամալոյծները ձեռքերէն ու ոտքերէն չորս հոգիներու քաշկռտել կուտար, և այլ նմանօրինակ կերպեր, որոց մէջ նոյն տեղ մնանողներ ալ կ'ըլլային, և այն տեսնն սովոր էր ըսել թէ — վաղուց էր գեռեալ, և այն ոչ չքնեցոյանէր ընդ՝ պեռն էր (կԻՐ· 183), և այսպէս կը հաւատացնէր։ Իրեն պայմաններն էին, վերկոչբիլ օրն պահեցէք, չերեքշ+ ի՛ ուշ, եկայ+ և հաւքուրեցէ+ վը, և ընդել լեցին գեղ չեր և աշ ջին չեր գնալ- չեօրն ազգ (կԻՐ· 182), և կամ, եկայ+ հաւքուրեցէ+ վը և դին չմ, և երթայ+, և այլ ի՛ երկնէ+ (կԻՐ· 183)։ Ծարի սմբոխը և պայծակղութիւնը չէր կրնար մտադրութիւն չչարժել, և տեսչին վանական վարդապետը նկատ որ Յորանաչատէն ձայն բարձրացուց թէ պէտք է վերջ տալ այդ պայծակղութեան և բանադրել Ծարեցիէն տաչեղներ կամ կորեկներ առնողները։ Նոյն իսկատով գրեցին Համազասպ Հաղբատի եպիսկոպոսը, և ինքն կիրակոս Գետիկի տեսչնորդը։ Ասոր վրայ երկու անձեր, Գրիգորիս Դադեվանքի եպիսկոպոսը և վարդան Ծօժորդիք մականուն անհայ վարդապետը, որոց վիճակին մէջ կը մնար Ծար գիւղը, խաչով և տեսարանով և պաշտօնէից և հաւատացելոց բազմութեամբ գիւղը եկան, նախ գիշերապաշտօն ըրին, յետոյ Դաւիթը հարցափորձեցին, վերջէն անոր խաչը վար առնելու ձեռնարկեցին, և ղէմ դնող գիւղացիները զսպեցին, զղջացողները սփոփեցին, և Դաւիթ Ծարեցին ալ մէկդի առնելով դարձան։ Ասոր վրայ Գառնեցիները ոմանք Դաւիթը ուզեցին՝ իրը իրենց հին գիւղացին, և խաւտացան գոյն զգուշութեամբ պահել, չէ՛ որ մոլորեցուցչէ ըմբռնէ, և այսպէս վիճակեցաւ Ծարի մոլորեցու ցիչին միջոցիլը, զոր ի գէպ է դնել 1249 տարւոյ ամառնային միջոցին, վանականի մահուընէ քիչ առաջ։

ՀՈԳԻՈՑՆ ՍՐԲՈՑ ԽՆԴԻՐԸ

1128. *Կիլիկիոյ առաժամեայ հանդարտութիւնը, և ապագայ ապահովութեան հաստատ Արեւմուտքի հետ մշակուած յարաբերութիւնները, նորէն մէջտեղ բերին եկեղեցական միութեան բանակցութիւնները, որք անհրաժեշտաբար կը նորոգուէին քանի անգամ որ Հայեր պէտք կը զգային Ակնարուածքի քրիստոնեաներէն իրենց թնդիրներուն լուծում ընել, Արեւելքի տապատակնեալն դէմ։ Անգամ մըն ալ նորոգուեցան այդ չարժումները, և անոր առիթ ընծայեցին Հոգւոյն Սրբոյ մասին Լատիններուն և Յոյներուն մէջ յուզուած վէճերը։ Կոստանդնուպոլսոյ տեղի ժողովին հանդանակին մէջ Հոգւոյն Սրբոյ համար ԵԼԸԼ է Հօրէ, կամ ԲՂԽ է Հօրէ բացատրութիւնը ընդունուած էր, համաձայն աւետարանին (ՅՈՀ. ԺԵ. 26), որուն վրայ վերջերը Լատիններ Ե յՈրդւոյ յաւելուածը կցեր էին, և Յոյներ այդ մասին պիրենք կը մեղադրէին, և այս կէտը երկու եկեղեցիներուն բաժանման առիթ ալ յուզուած էր։ Նոյն խնդիրը անգամ մըն ալ նորոգուեցաւ այս միջոցներուն, և Ինոսէնկենտիոս Դ պապ Հայ եկեղեցւոյ տեսութիւնն ալ իմանալու համար գրեց Կոստանդին կաթողիկոսին և Հեթում Թագաւորին (ԿԻՐ. 186)։ Ինոսէնկենտիոսի առաջին նամակը կը գրուի 1248'ին, և յաջորդ պատգամաւոր մըն ալ կը յիշուի Տիմանջ անունով (ՍԻՍ. 554), բայց խնդիրը քանի մը տարի երկարած է։ Նոյն միջոցին Յունաց եկեղեցին ալ զանց չէ ըրած Հայ եկեղեցւոյ կարծիքին դիմել, և Մանուէլ պատրիարք Նիկիայէ դիմած է Հայերուն (ՍԻՍ. 554), որպէսզի իրենց համախոհ գըտնուին սոյն խնդիրին մէջ։ Կաթողիկոսն և Թագաւորն մեծ կարեւորութիւն տուին դարձին, Սիսի մէջ գումարեցին Կիլիկիոյ մէջ գտնուող և զանազան դաւանութիւններէ եղող քրիստոնեաները, Հայ, Յոյն, Ասորի, Վրացի և Լատին, բայց համաձայնութիւն չի գոյացաւ, և տարի անցեցին Արեւելք եղող վարդապետական կեդրոններուն և հետեւորդներուն դիմել, և անոնց կարծիքն ալ առնել։ Յատուկ կը յիշուին Ասրանեշատի Վանականը և Ապատպի Յովսէփը, և որովհետեւ Ե ա՛յլ ալ կ'աւելցուի (ԿԻՐ. 187), ի դէպ է Կայէնի Վարդանը և Գևոփկի Կիրակոսը ևս դնել նոյն չարքին մէջ, քանի որ Վարդան ալ (ՎԱՐ. 148), Կիրակոս ալ (ԿԻՐ. 189), կը վերաբան իրենց կարծիքը յայտնել նոյն խնդիրին մասին։ Կիրակոս մանաւանդ երկարօրէն կը գրէ, նախապէս զանազան վկայութիւններ կուտելով (ԿԻՐ. 187–189), յետոյ Խոսովանութեան հաստատ սպղծեալոց մակագրութեամբ գրուած մը յառաջ բերելով (ԿԻՐ. 189–193), որ իւր իսկ գրութիւնը կ'երեւի, և վերջէն վանական վարդապետի խոր պատանութեան գրուածը նոյնութեամբ արձանագրելով (ԿԻՐ. 193–197)։

ԴԱԻԱՆԱԿԱՆ ԳՐՈՒԱԾ ՄԸ

1129. *Այս տեղ պէտք կը կարծենք յառաջ բերել Տիմանջ լինելին կամ պապական նուիրակին պաշտօնին մասին գրութիւն մը, զոր կը գտանենք հին հատաքածոյին մէջ (ԹՂԹ. 503), վարդանէ պատրաստուած, և Կոստանդին Կաթողիկոսի կողմէ Հեթումի ղրկուած, իբրեւ պատախանի ընդդէմ որ է պապին Հռոմայ քերթուածոյն Հայոց Հերետ (ԹՂԹ. 504–508), որ Տիմանջի ձեռքով բերուած կ'ըսուի 1248'ին (ԹՂԹ. 503). իբրեւ հիմնադիր միաբանութեան։ Նամակին սկիզբը հնգաբար կը յիշուի, թէ պապը նուիրակ յղած է գրանել ղեղ, այսինքն հաւատքի բերել, մինչ 1248 տարիներ են կ'ըսէ գրանելոյն ժերոյ է Տէրունէ, այսինքն քրիստոնէութիւն ընդունելուս։ Այդ տարիքիւը գործածական Քրիստոսի քառակոնը պիտի ըլլայ, և այս պատճառով հարկ զգացինք Տիմանջի գալուն ՈՂՆ քառակոնը (ԹՂԹ. 505) ՈՂԻ կարդալ, և 1248'ին Կիլիկիա եկած և պապին դիրը բերած ըսել։ Պապական նամակին մասին համարձակ կը յայտարարուի, թէ յոյս ԲՂԲ գրաւ ՆԲԲՈՒԱՆ ԽԱԼ Ե ԱՆԸՆԴՈՒՆԱԿ ԲԱՆ, որոնք կարգաւ յառաջ կը բերուին և կը հերքուին։ Այս 15 կէտերն են, 1. Հռոմայ ԱՐՈՒԱ ԴԱՅՆ ՈՒՆԻ ՀԱՆԴԱՆԱՐԻՆ կոչելը Ե ՊԱՅԾԼԸ։ 2. Հրէին է Հօրէ Ե յՈրդւոյ ԲՂԽԻ։ 3. ԱՐԼՈՒ ԲՆՈՒՐԻՆ ԵՆ Ի ՄԱՐԴԻՆ։ 4. Մէկը ՆՈՐ ՈՒԽՏԱՆԻՆ ՀՈԳԻՒ ՀԱՆԱՊՈՂԶԸ։ 5. Մարքամ կին Ե կոյս է ԲԲԼ, Ե ՈՉ ԵՐԲԵՔ ԱՒՐՈՒԱԾԱԾԻՆ Է ՀԱՂԼԸ։ 6. ՔՀ ԲՈՒՆ ԵՂԱՒ ՀԱՒԱՏԱՒ ՀՈՐ։ 7. ՔՀ ԱՂՔ ՄԱՐԴ ՈՐՈՎ ՓՈՓ Է ՓՈՒՆ ՂՀԱՅՐ։ 8. ԱՐԼՈՒ ԲՆՈՒՐԻՆ Ե ԵՐԼՈՒ ԿՄՓ

Քրէտոսէ։ 9. Քրէտոս զբդեսաւն դէպն եհան է դժոխոց։ 10. Ձէպ յարուներեան առաքել քառասնեքսան մարդին Տեառն։ 11. Քահանայ մկրթէ և եպիսկոպոս դառնէ։ 12. Մոռացեալ են յեօթն տահանայապօքսնեներեն ընծաան օրհնելը։ 13. Չերդրդէ և ղերդրդէ ամառնասաւան օրհնաւոր ընն էրել։ 14. Գրեր են յառաջ քան զօրն զաստատանի առնալ զկոչ արքարոց և անապաշխար դնելոցն տպանել և քէրկոնիոբ։ 15. Որ ընդ նրեշտակս և որ ի քէրկոնիոբն դեպս քառասնից (ԹՂՓ.504–508)։ Մեր նպատակը չէ այդ կէտերը քննել, զորս միայն իբր տեղեկութիւն քաղեցինք, այլ բաւական կը սեպնինք դիտել տալ, թէ որչափ հեռու են կաթոլիկոսն ալ և վարդապետն ալ հռոմէադաւան վարդապետութիւնէ, և թէ ինչպէս կը հերքեն այն կէտերը, որք Հռոմէ պահանջուներ են, իբրև էական դաւանութեան կէտեր։ Գիրին մէջ բառած է թէ այս վարդապետութիւնները ոչ Պետրոսի են, ոչ Սկզբնարոսի, ոչ կեղեմենտոսի, և ոչ Յուլիոսի, զորս Հայոց եկեղեցին ուղղափառ կ'ընդունի, ապա թէ ոչ, կ'ըսեն, ղնբեանց արտաքսուելոյ առաքելոն խոչ ղընդառնիմ։ Եթէ, կը յարեն, Հայերու վրայ դուխ ու սէր ունին, ահա վերադրեալ և տառ գառաս են Հայ յիշեցնելոյն է վեր, և կան որ սաեր են, և կան որ է ձառայութիւն. ըստ կարգաւին ընդ Հայոց, ըստ երբան ալոքին (ԹՂՓ. 509)։ Ուսմունքէն լեզուն պէտք չէ միտքերը չփոթել, զի գրուածը Հին Ուխտի ուղղուած մեկնական գիր մըն է, և ոչ պաշտօնական վաւերագիր։ Իսկ մեր տեսութեամբ մեկնական գրուածներ աւելի զօրաւոր են իրաքանչիւրին ներքին համոզում մը խնամելու համար, քան պաշտօնական գրութիւններ։

1130. Մերոյգի հռոմէադաւաններ հաստատակ կը յայտարարեն այդ առթիւ, թէ

ՀԱՑՈՑ ԿԱՐԾԻՔԸ

Հայեր ըստ ամենայնի հաստակեպության Հռոմի վարդապետութեան, և ընդունեցան ե՛ յՈրբոյ յաւելուածը հանգանակին մէջ (ՁԱՄ·Գ·236)։ Սակայն բոլորովին տարբեր է Հայերուն տեսութիւնը, ինչպէս քննական հետազոտութեանց արդիւնքը կը ցուցնէ։ Բոլոր խնդիրը առաքեալներու երկու խօսքերը։ Որ է Հօրէ ելանէ (ՅՈՀ.ԺԵ·26), և Յիմէ անոյ առնու (ՅՈՀ.ԺԶ·15), իրարու հետ կապակցելու վրայ է։ Ասկէ կը ծագին, ելանել, գնանել, բղխել, և առնալ բառած առնչութիւններուն տարբերութիւնները։ Ելանել ընդհանուր իմաստով կ'առնուի, իսկ գնանել Որդւոյ առ Հայր, բղխել՝ Հոգւոյն առ Հայր, և առնալ՝ Հոգւոյն առ Որդի՝ առնչութիւններուն կը պատշաճեցուին, քանի որ Երրորդութեան գոյութիւնը բացատրելու համար պէտք է իւրաքանչիւր առնչութեան առանձնայատկութիւնը ճշդել, և երկու նոյնանմանութիւններ չընդունիլ, կամ որ նոյն է, առնչութիւնները չշփոթել։ Դարձեալ պէտք է ետքեան խնդիրը տարբերել ելման խնդիրէն, զի եթէ երից անձանց մէջ էութեան տարբերութիւն դնել անկարելի է, ելման տարբերութիւն դնել անհրաժեշտ է, առանց որոյ երեքանձնեայ դրութիւնը կը չնջուէր։ Ըստ այսմ Լուսաւորիչի հաստատուր դարձած բացատրութիւնը, Հոգի է նոցանց է նոյն (ԱԳԹ·181), պարզապէս էութեան մասին կ'իմացուի, կամ առ առաւելն ընդհանուր ելման իմաստն ունի, քանի որ նոյն Լուսաւորիչ առէպ կը կրկնէ, թէ Հայրն է բղխոցն Հոգւոյն Սբբոյ (ՁԱՃ·3)։ Ըստ այսմ չորս տարբեր են ետքեան, և ելոցն, և բղխոցն, և Հայերն ալ կը զատեն այդ բացատրութիւնները եկեղեցական գրութեանց մէջ, և երբ կը դաւանին Հոգին բղխոցն Հօր անեղաբար. առ յՈրբոյ անճառաբար (ՇԱՐ·393), երբեք բղխոցն է Հօրէ և յՈրբոյ չեն իմանար։ Այդ տարբերութիւնը Արեւելեան վարդապետներուն գրութեանց մէջ ալ չնչուած կը գտնենք։ Կիրակոս կը գրէ· Համաչեմ որթան է տարաձել զՀոգին է Հօրէ ելեալ և յՈրբոյ երբեմն (ԿԻՐ·189), և Հոգին ճանչնալ, բղխոցն է Հօրէ և երբեմն յՈրբոյ (ԿԻՐ·190)։ Վանական ալ երբ Հոգւոյն տառաւածութիւնը կը պաշտպանէ, Հօր և Որդւոյ հետ առնչութիւնները կը տարբերէ, և Հոգւոյն հետ առաւ կերպով ի Հօրէ և յՈրբոյ բղխումը չհաստատէր, և իւր միտքը կը պարզէ առ խոսքերով· Հայր անձին ասէ՝ զի ոչ յոչ է, և Որդին ձնեալ զի է Հօրէ, և Հոգի ոչ ասէ Որդի կամ ձնեալ զի ի երկոքեան ընտրեցին, և ոչ երկոքան ընդ Որդոյ՝ զի ի պատարագ կոչեցեալ, և ոչ յՈրբոյ դայն՝ զի ի նոսա համարեցալ (ԿԻՐ·196)։ Հետևաբար Հայերը երբ Հոգւոյն համար յՈրբոյ առնչութիւն մը կ'ընդունին, և ըստ այսմ իրենց միտքը կը

յայտնին Լատիններէն եկած հարցումին մասին, երբեք է Հռիփսիմէ ընդունած չեն ըլլար, եւս առաւել ե՛ Այբդատ յաւերժածին հաստատած չեն ըլլար, և Լատիններուն համակերպած չեն կրնար ըսուիլ։ Այլ միջադէպ մը լատիններուն հակառակած երեւնալ չեն ուզեր, որպէս զի բանակցութիւնները չխանգարուին։ Միւս կողմէն Յունարէն ալ պատած չեն ըլլար, քանի որ ոչ ե՛ Այբդատ յաւերժածին հաստատած, և ոչ ալ զայն հանգամանակին մէջ ընդունած կ'ըլլան։ Վարդան Պատմիչ Հռիփսիմէ կ'ըսէ (ՎԱՐ. 148), և Հռոմի պատասխան արուած ըլլալը չգիտեր, իսկ Կիրակոս կը կրէ, թէ ըստ պատմութեան Ներսէս Ընդունելութենէ (ԿԻՐ. 189), իրենց կողմէ կաթողիկոսին գրուած պատասխանը կ'իմանայ, և ոչ կաթողիկոսին կողմէ Հռոմի արքունի պատասխանը, որ կ'երեւի բնաւ արքունի չէ, զի ոչ մեր պատմագիրք կը յիշեն, և ոչ պապական գրութեանց կարգին կը դանուի, և ոչ ալ Մխիթար կաթողիկոս՝ պատասխան արուած ըլլալը կը գրէ (ՁԱՄ. Գ. 239), ուստի նոյնպէս ըսք ասիմ եթէ պատմութեան Հռոմայեցոց խօսքը (ՁԱՄ. Գ. 239), կամ առանց ընդդիմանալու երբոյ ընդդէմ եղեց ըսելը (ՄՈՎ. 217), պատմական հաստատութիւն չունին։

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ

1131. Ամբաւի Թաթարներու մօտ երթալն ու դառնալը (§ 1125), իրր երկու տարի տեւեց, ինչպէս ինքն ալ կը նշանակէ (ՍՄՔ. 124), և հազիւ 1250'ին կրցաւ եղբօրը մօտ դառնալ։ Քիւրք խան սիրով ու պատուով ընդունեցաւ Հայոց թագաւորին դեսպանը, երբեմն ֆռռօ և հառաջմունք նշուլթօխօ մնծութեց, և հաստատեցաւ որ Հայերուն յանձնուին այն քաղաքները, որոնք երբեմն իրենց էին և վերջերս անոնց ձեռքէն առնուած էին։ Իսկ գլխաւոր հաճութիւնն եղաւ, որ հաստատեցաւ Հայոց թագաւորին անձամբ իրեն գալուն, և քրիստոնէից գործերուն մասին բանակցելուն։ Սակայն Քիւրք խան երկար չապրեցաւ և մնաւ նոյն տարին, որ Ամրաւ Կիլիկիա կը հասնէր, և իրեն յաջորդեց Մանկու խան, Թուլիի որդի և Ճինգիզի թոռ, որ սկիզբէն փառասէրն ու նշանաւորն եղաւ Թաթար խաներուն մէջ, քանի 9 տարի միայն իշխանութիւն վարեց, 1250'է մինչեւ 1259։ Նոյն 1250 տարին էր որ Լուդովիկոս Թ Սուրբն՝ Գաղղիոյ թագաւորը, Պաղեստին կ'անցնէր։ Լատիններ նոր ընդհանուր ժողով գումարած էին Գաղղիոյ Լուգդուն (Lyon) քաղաքը 1245'ին, որ է իրենց ԻՓ սիեզերականը, ուր որոշուած էր նոր խաչակրութիւն մը եւս կազմել։ Բայց հազիւ 1248'ին Լուդովիկոս թագաւոր՝ ամէնեցուն խաչակրութեան գլուխ անցած ուղղակի Եգիպտոս արշաւած էր, և առջի բերան յաջողութիւններ ալ ունեցած էր՝ Մանսուրայի և Տամիաթի պատերազմներուն մէջ, բայց վերջէն ձախողելով ինքն ալ գերի ինկած, և հազիւ գրաւած տեղերը թողուով և ծանր փրկանք վճարելով, ազատութիւն առած, և 1250'ին Պաղեստին էր անցած, խորհելով Կեսարիոյ, Յոպպէի, Սիդոնի, Պաղամայիսի և Անտիոքի լատին իշխանութիւններուն այժերը միացնելով Երուսաղէմի գրաւման աշխատիլ։ Այդ առթիւ Հայոց թագաւորութեան հետ ալ յարաբերութեան մտաւ, թէպէտ Հայեր Լուգդունի ժողովին մասնակցութիւն ունեցած չէին։ Անտիոքացիներու և Հայերու մէջ տիրող հակառակութիւնն ալ չկանգնց վերջացնել իր միջնորդութեամբ (ՍԻՄ. 554), որպէսզի կարենայ Հայոց այժերն ալ միացնել իր նպատակին, որ էր Երուսաղէմի առումը։ Սակայն փոթձելու իսկ չհամակերպեցաւ, թէպէտ և մինչեւ 1254 Պաղեստինի և Ասորիքի մէջ մնաց։ Շատ հետաքրքրական է, որ Լատիններուն Հայերէ ապահով օգնութեան պատրաստն էր, որ կրօնական խնդիրները լեցուց, և Հոգւոյն Սրբոյ խնդիրը մոռացութեան մատնուեցաւ, և Հայերու հարկ չեղաւ պաշտօնապէս հետաւոր դիր դրել Հռոմի պատրաստութեան (§ 1130)։ Հեթումի յաջողութեանց կարգին պէտք է անցընել Կոստանդին Լամբրոնացիին ձեռքէն ալ ազատիլը, որ միանգամ (§ 1109), և երկրորդ (§ 1116) Հայոց թագաւորութեան դէմ Իկոնիոնի սուլթաններուն հետ միանալէ ետքը, նորէն ու նորէն կրկնուց իր թշնամութիւնները, չարաշահ Սելճուկներու օգնութեան դիմելով։ Սակայն Հեթում կրցաւ միշտ դէնքի զօրութեամբ

անար ջանքերը ապարդիւն հանել, և Լամբրոնացի իշխանը եօթն անգամ հարաւ է նմանէ, մինչեւ որ այլ ոչ էշխէր հարձակիլ յոչ կամ յահէն (ԿԻՐ. 158)։ Սակայն Հեթում վստահ չէր կրնար ըլլալ անար վրայ, և վերջապէս 1250'ին զայն ապանձնել տուաւ (ՍԻՍ. 554) իւր բերդին մէջ, որպէս զի միանգամ ընդ միշտ երկիրն ալ խաղաղի։ Սոյն միջոցին կաթարուած եղելութեանց կարգին յիշենք Զապէլ թագուհիի մահը, զոր արդէն պատմեցինք (§ 1108), և Աարուց կաթողիկոսական աթոռին Հռոմկլայի մէջ հաստատուիլը, Հայոց թագաւորութեան պաշտպանութիւնը վայելելու համար, որուն իւր առհաւատչեայ Իգնատիոս կաթողիկոս 1253'ին մեռած ատեն իւր ջորին ու զրամի գումար մը կը կտակէր Հեթումի (ՍԻՍ. 554)։

1132. Վերջապէս Հեթում պիտի ձեռնարկէր իւր վաղուց մտադրած ուղեւորութեան, և թախտր խաՀԵԹՈՒՄ նէին հետ ուղղակի բաԽԱՆԻՆ ՄՕՏ նակցութեամբ, թէ՛ իւր թագաւորութեան և թէ՛ ընդհանուր Հայոց համար ապահովութիւն մը ձեռք բերել։ Իրաւ մեռած էր Քիւրք, որ հաւանութիւնը տուած էր, սակայն անկէ աւելի կը գովուէր Մանկու իւր յաջորդը, և Հեթում ճանապայ չելած, պէտք տեսած էր Մանկուի միտքն ալ չօչափել և վստահութիւն գոյացնել, զոր պատմութիւնը զանց ըրած է յայտնապէս գրել, սակայն կը քաղուի Բարսեղ քահանային Բաթու զօրավարին մօտ դեսպան երթալէն (ԿԻՐ. 213), և Մանկու խանի կողմէ Բաթուի տրուած հրամանէն, Հեթումի ճանապարհ ապահովութեան հակիրճ (ԿԻՐ. 211)։ Սմբատ թագաւորեղբօր և Հեթում թագաւորին ուղեւորութեանց մէջտեղը 1251'ին (ՕՐՌ. Բ. 161) կ'իյնայ Սմբատ Օրբելեանի ալ Մանկու խանի մօտ երթալը, զոր երկար կը պատմէ Օրբելեան (ՕՐՌ. Բ. 151–158)։ Սմբատ՝ վրացի Օրբելեանց կատարածէն ազատած Լիպարիտի ցեղէն էր, որ Հայոց հետ խնամութեամբ խառնուելով, Հայ անուանդ ունեցաւ, և Լիպարիտի թոռ Լիպարիտի գաւ տկներն էին՝ Ելիկում, Սմբատ, Իւանէ, Փախրադին և Տարսայիճ (ՉԱՄ. Գ. 218)։ Ելիկում պատերազմի մէջ մեռած էր, թերևս գեղեցիկ (ՕՐՌ. Բ. 150), միւս եղբայրներն ալ հալածուած էին, բայց Սմբատի յաջողեցաւ Մանկուի հաճոյանալ, որուն մօտ մնաց գոնե երեք (ՕՐՌ. Բ. 155), և պաշտպանութիւն առնալով եկաւ և իւր իշխանութեան մէջ հաստատուեցաւ (ՕՐՌ. Բ. 158)։ Սմբատ Օրբելեանի յաջողութիւնը կրնայ քաջալերած ըլլալ Հեթումը այցելութեան նպատակին մէջ։ Հեթումի ուղեւորութեան թուականը պէտք է քաղենք ինչ ինչ ակնարկներէ, որոց գլխաւորն է, թէ Մանկուէ մեկնելէն 8 ամիս ետքը Հայաստան դարձաւ 1255'ին (ԿԻՐ. 217), իսկ Մանկուէ մեկնած էր նախընթաց 1254 նոյեմբեր 1'ին (ԿԻՐ. 213), որով Հայաստան հասած կ'ըլլայ 1254 յունիսի սկիզբը, և 8 ամիս ալ երթալուն դնելով, 1254 մարտէն առաջ եղած պիտի ըլլայ Կիլիկիայէ մեկնիլը։ Հայաստան դառնալէն ետքն ալ միջոց մը նորէն հոն մնաց, և 1256 յունիս 5'ին կը դրուի Կիլիկիա հասնիլը (ՍԻՍ. 554)։ Ըստ այսմ երկու տարի և աւելի կ'ըլլայ թագաւորին բացակայութիւնը, և չափազանցեալ կը կարծենք երեք և կէս ամաց ժամանակով (ՀԵԹ. 44), կամ ըստ ըբս (ՎԱՀ. 220) երկարել զայն։ Այդ միջոցին անչուշտ կոստանդին թագաւորահայր պէտք էր առանձնէր երկրին կառավարութիւնը, սպարապետ Սմբատ և իշխանապետ Լեւոն արդիներն ալ (§ 1106) իրենց պաշտօնները կը չարունակէին։ Իսկ պատմիչը Լեւոն ու Թորոսը կը յիշէ, թէ Հեթում երթալ ֆոխտաւ էր, կոստանդին թագաւորահօր հետ, որ ծեր ֆոլով մինակ չէր կրնար գործել, մինչ Ըֆֆոհէն Զապէլ ալ ֆոխեալ էր — Քրէսթոս (ԿԻՐ. 212)։ Ըստ այսմ պիտի ըսուի թէ արքայորդիներն եղան թագաւորութեան պաշտօնական խնամակալները իրենց մեծ հօր հետ։ Լեւոն 18 տարեկան էր արդէն և Թորոս ալ քիչ պակաս, և կրնային պաշտօնական դեր վարել։ Կոստանդին կաթողիկոս ալ հարկաւ իւր մասնակցութիւնը ունեցած պիտի ըլլայ այդ խնամակալութեան մէջ, ինչպէս երբեմն Յովհաննէս կաթողիկոս առաջին խնամակալութեան ատեն (§ 1096)։ Իսկ Հեթումի ուղեկիցները քիչ եղած չեն, զի էշխան ֆոլվէ կը յիշուին առանց անունի (ԿԻՐ. 213)։ Եկեղեցականներէն իրեն հետ եղած են Սեբաստոս եպիսկոպոս, Մխիթար վարդապետ

Սկեւռացի, Բարսեղ քահանայ, Թորոս կուսակրօն քահանայ, կարապետ դրանիրէց արքային (ԿԻՐ·212), և Յակոբ վարդապետ մըն ալ (ԿԻՐ·216), զոր Յակոբ Կլայեցիի հետ նոյնացնելու չենք։ Ասոնք որչափ ալ իբր դործունեայ անձեր ընտրուած ըլլան, սակայն անոնց մականունը և ինքնութիւնը անծանօթ կը մնայ մեզի, Սկեւռացի Մխիթարէն զատ։ Կիրակոս Գանձակեցի պատմիչ, անվերապահ և անուննելու և օրերու այնչափ մանրամասնութիւններ կուտայ, որ անձամբ Հեթումի ընկերացած ըլլալուն կասկածը կը զարթնու, եթէ ընկերացողներէն մէկուն մօտ մանրամասնօրէն հետաքրքրուած չըսենք։

ՈՒՂԵՒՈՐԻԼԸ ԵՒ ԴԱՐՁԸ

1033. Հեթում իբր ուղեւորութեան առաջին մասը յանծանօթս ուղեց ընել և 1254'ին (ՎԱՐ·148) ընկերը, առանց գաղափարն ալ ընելու, որ այն՝ մարի սպրիլ 12'ին կ'իյնար, ձմեռայ եւու փետրուար 4'ին (ԶԱՄ·Գ·248), էլչոփոխ այլակերպել չկրնալ ուրեմն, որմէ մարէրէ ոչ մրնէլ առնէր (ԿԻՐ·211)· սուլտանին ընծանիքը թաթարներու յանձնելուն համար (§ 1115)։ Հեթում արագ ընթացքով յաջորդ էլչոփոսան Սիսէ կարաս հասաւ, Բայտ զօրավարին հետ առաջին տեսութիւնն մը ունեցաւ, որուն հետ կանոնաւ յարաբերութիւն ունեցած էր Իկոնիոնի արշաւանքին առթիւ (§ 1115), ապա դեռևս ալ գնաց տեսնուեցաւ, և անկէ վարդենիս գիւղը հանգստացաւ, Արտագածի ստքը, Բուրդ անուն հայազդի իշխանին ապարանքը, որ ամուսնացած էր Մարզպան Մամիկոնեանի դստեր՝ Խորիշահի հետ, ուսկէ ունեցած էր վայէ և Հասան որդիները (ԿԻՐ·211)։ Հեթում վարդենիս ապատեց մինչեւ որ հասնին ինչ է պանէ իրմէ է պէտս ընծայից և պատրաստ (ԿԻՐ·212), զորս չէր կրցած մէկտեղ առնել պատուհասած ըլլալով ծածկաբար երթալ (ՀԵՌ·42), և զորս հոգացած էին յղել հայր Նորա և որդի Նորա (ԿԻՐ·212)։ Երթալ ամէն բան պատրաստ և դատ, ինքն և իր հետեւորդները Աղուանից աշխարհէն անցնելով, եկան Ծորայ Պահակը, Բաթու զօրավարին մօտ, որուն Մանկուի կողմէ յանձնարարութիւն եղած էր, և առաջին որդին Սարթախ էլչոփոխ էր հաստատված։ Մայիս 13'ին Բաթուին քովէն մեկնեցան, որ է ըսել թէ փետրուար 16'էն մինչեւ մայիս 13 երեք ամիս Հայաստան անցած էին, մեծագոյն մասը վարդենիս, և քիչ մըն ալ Բայուի և Բաթուի մօտ։ Հարկաւ այդ միջոցին Հեթում մօտէն ծանօթացաւ երկրին վիճակին, որպէսզի լաւագոյն կերպով կարենայ միջնորդել։ Բաթուի մօտէն մինչեւ Մանկու խանին նստակայանարնին տեւած է չորս ամիս, Այսիս և Երթիճ գետերն անցնելով և յաջորդ Թուլան Կաապէց՝ Թաթարիստան երկիրը մտնելով։ Մանկուի ներկայացած են սեպտեմբեր 13'ին զոր իբր թէ նաւակոթոց խոչ կը յիշէ պատմիչը (ԿԻՐ·213), թէպէտ այն տարին սեպտեմբեր 13'ը կիրակի և Խաչվերացի տօն կ'իյնայ, բայց կ'երեւի թէ այն կողմեր կը տրէրը Զաքարէ Օրբելեանի ուղած ձեւը՝ Խաչվերացը հատուցապէս սեպտեմբեր 14'ին տօնելու (§ 1082), կամ թէ կիրակոս տօնը յիշած տեղն՝ պարզապէս Յայտաւուրքին կը հետեւի (ՅԱՍ·Բ·141)։ Պէտք է դիտել նաև թէ կիրակոս հայ և հռոմէական ամսաթիւերը Սարկաւագապէր անշարժ տոմարին կարգով համեմատելու սկսած է այդ եղելութենէն առթիւ, որով Սարկաւագապէր կարգադրութեան կիրառութեան մտած և ընդարձակութիւն ստացած ըլլալը կը հետեւի։ Մանկու խան երթեւեկէ ետոյ Նախիջեւան ընդունեցաւ Հեթումը, որ իր ընծաները ներկայացուց, և դեռ բեռ է նշանէ ըսի աբեղաւոյն, միաց յօրդոն, այսինքն բանակին մէջ, ինչպէս կը կոչուէին հին տեղներ արեւելեան արքունիքները (ԲԶՆ·190), միաց ասոր յետոյ, և ճիշդ սեպտեմբեր 13'էն հաշուելով յաջորդ չէնեբրդրդէ, այսինքն է դ նոյեմբերէ եւ է նշանէ, և ետ դառնալու ճանապարհ բռնեց։

ԽԱՆԻՆ ՇՆՈՐՀՆԵՐԸ

1034. Հեթումի այցելութեան և առաջած յաջողութեան ուեւիսը տարօրինակ կերպով տուած է ժամանակին, և որոց արձագանգ եղած է Հեթում պատմիչ, Հեթում Թագաւորին եղբօր Օչինի որդին (ՍԻՄ·337), որ ներողութեան համար գրելով, չէ քաշուած պարզ գրոյցներ ալ խառնել իր պատմութեան, թէպէտ ինքն այս մասերը իբր

է ֆեոդոյ էջմէ լսած յաւագ կը բերէ (ՀՆՓ. 68), իսկ մենք յաւագ կը բերենք իբր պարզ անգնահատելի: Այդ պրոյցներու համեմատ Հեթում Մանկու խանի հօքը խնդիր կ'առաջարկէ. 1. Մանկու ինքն և բոլոր թաթարներ քրիստոնեայ ըլլան և մկրտուին. 2. Թաթարներու և Հայերու մէջ միջնորդ նուագ բարեկամութիւն հաստատուի. 3. Հայեր կարենան բոլոր Թաթարաց երկիրներուն մէջ եկեղեցի չինել, և կապանքէ ու տուրքերէ ազատ ըլլան. 4. Թաթարները երուսաղէմը ու սուրբ Գերեզմանը Թուրքերէն առնեն և քրիստոնեաներուն տան. 5. Թաթարներ Պաղտատի խալիֆայութիւնը ջնջեն. 6. Թաթարները երբոր պէտք ըլլայ Հայոց թագաւորութեան զէնքով օգնեն. 7. Ինչչափ տեղ ու քաղաք որ Թուրքերը Հայերէն առած են, Թաթարները նա առնեն և Հայերուն տան (ՀՆՓ. 43): Այդ խնդիրներուն մասին Մանկու խան իրեն իշխաններուն հետ խորհրդակցելով պատասխանած կ'ըլլայ, 1. Ինքն քրիստոնէութիւնը կ'ընդունի, և իրենները կը յորդորէ որանոց քահանաներ. 2. Միջանձնաւոր բարեկամութիւն կը չնորհէ ընտրելոց և պալպանոլոց. 3. Կը հաւանի որ քրիստոնեայ եկեղեցիներ և եկեղեցականներ և աշխարհականներ ինան է ընդհանրապէս. 4. Երուսաղէմի առումը և քրիստոնէից գերութիւը կը յանձնէ հոգւոյը Հուլաւունի. 5. Պաղտատի խալիֆայութիւնը ջնջել կը յանձնէ Պայտոն զօրավարի. 6. Ամէն ձեռնտուութիւն կը խոստանայ Հայերուն. 7. Կը հրամայէ որ ինչ որ Հայոց էր անցապէ պոյին նոցա անդրէն: Ասոր վրայ Մանկու կը մկրտուի, և իրեն հետ գոնէ նոքա, և քաղամ ասէ և կռնայէ պատասխանէ և ծածկէ (ՀՆՓ. 44): Մանկուի քրիստոնեայ ըլլալը ժամանակին տարածուած գրոյց մըն էր, և լատիններուն մէջ ալ խօսուած է, մինչեւ իսկ պապական դիւանին մէջ այդ մասին յիշատակներ գտնուիլը կը խոստի (ԿԱԼ. 387), և կը պատմուի նա Լուդովիկոս Թ Գալղիոյ թագաւորին կողմէ այդ առթիւ դեսպանութիւն յղուիլը, գլխաւորութեամբ Գուլիէլմոսի Ռուբրուկեցւոյ և Բարթողիմէոսի Կրեմոնացւոյ, որոնք իրենց ապարդիւն ուղեւորութեան տեղեկագիրն ալ մատուցած են 1255ին: Սակայն ասկորդ զբոյցներէ մերկացնելով ալ՝ Հեթումի այցելութիւնն իւր արդիւնքը ունեցաւ: Կիրակոս կ'ըսէ, թէ Մանկու տուաւ հրովարտակ նշանաւոր, զի ոչ էլեւոյե նեղել ընոա և զչխարհն նոքա, և եթ էէր աղաւնեան եկեղեցւոյ ընդ ամենայն պեղէս (ԿԻՊ. 213), վանրամալ կ'ըսէ, թէ Հեթում եկաւ քանը պէրյ և էէր առեալ, ապա ֆոօե յեոքը գոբյեալ, և ընքազամ ֆոոաոս առեալ (Վ.Ա.Հ. 220):

ՅՈՒՆԱՑ ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ

1135. Հեթումի բացակայութիւնն միջոցին, Կոստանդին կաթողիկոս ուզեց օգտուիլ Յոյներու հետ բանակցութիւնը նորոգելու և համաձայնութեան մը յանգելու: Թերևս Հեթում կատարելապէս լատիններու կողմը վաստկուած՝ չատ չէր սիրեր Յոյներու հետ յարաբերութիւնները, որ Կոստանդին Յոյներու հետ բանակցութեան մտաւ, էջբեր էկաց, երբ Հեթում գնաց խաղաղութեամբ և գոգրեալ է էմեծն Հայ, ինչ որ եթէ մէկ կողմէն անվտանգ կարս հասած ըլլալուն կ'ակնարկէ, միւս կողմանէ ալ չուտով դառնալիք չըլլալը կը նշանակէ: Բանակցութեան պատուիրակն եղաւ Յակոբ մեծ վարդապետը, այլ քահանայ և խոստոան, զոր առաքեալ էին յաոալֆոյն վան սէրյ և գեքանոնեան ա՛ր ընտեսորն Յոհաննէս, որ առնէր գնդմանս Աոէյ: Ապրէն յիշեցինք (§ 1111), առաջին բանակցութիւն մը՝ Նիկիա նստող Յունաց կայսր Յովհաննէս Վաթակէսի հետ, նոյն Յովհաննէսն էր տակաւին Նիկիոյ կայսրը, որուն այն ատեն ալ անոր այս Յակոբ վարդապետը բանագնաց ղրկուած էր: Յարաբերութեանց կրկնուելուն պատճառը միշտ քաղաքական էր, զի Վաթակէս գնացեալ էր յաոաջան, և կրնար Կիլիկիոյ թագաւորութեան ալ ոպառնալ: Իսկ Յակոբ վարդապետը անխտիր Կայեցի, Սանկի և Տարսոնացի մականուններով կը յիշուի, և մենք առաջինը աւելի գործածական կը գտնենք: Նմանապէս Գիանական և Հռիտոր մակդիր անուններն ալ կը կրէ, որք իւր մտաւորական կարողութեան փառը կը կազմեն: Յակոբ Սիսէ կամ Հռոմկլայէ Նիկիա գալով Յունաց վարդապետներուն հետ վիճաբանութեան մտաւ, որոց դլուխը կը գտնուէր Մանուէլ պատրիարք: Գլխաւոր նիւթը

Քաղկեդոնի և քնա-քհանց խնդիրն էր, որով Յոյներ բռնաբռնեին ղրել նոթէեաներ լինել, կրկնելով միշտ զարերէ իվեր իրենց բկրնին ծամուց եզած մեղադրանքը։ Սակայն Յակոբի դժուար չէր բուն հայազատ վարդապետութիւնը պարզել, և գնաբրնել զ քնաննէն զատանութեան, կիւրեղեան և ոչ նեստորական սկզբունք մը լինելը համոզել։ Գաղմիչը կը վկայէ թէ Յակոբ Գիրանական ապօրինաբար բանէ և իշոյ վկայութեամբ հաստատեալ չընաց ղինոց նոցա է սեր և է գնաբանութեն ընդ ազգ մեր, բայց մենք պիտի չկարենանք գործին վերջնական և հաստատուն լուծում տրուած ըսել։ Վանդի Յոյներու հակառակութիւնը և աստիքականութեան կարծեցեալ մեղադրանքը այս անգամ ալ չդադրեցաւ, և Յոյներ դարէդար միշտ նոյն խօսքերը կրկնեցին, պահանջելով ոչ թէ ուղղափառութեան վրայ կանգ առնել, այլ ամէն կերպով իրենց նմանիլ և իրենց հետեւիլ։ Ինչ ալ ըլլայ իսկական վերջաւորութիւնը, գոնէ ժամանակ հանդարտութիւն մը տեղի ունեցած պիտի ըլլայ, վասն զի Յակոբ գոչյ է նոցանէ պատուով (ԿԻՐ. 212), միևնոյն գացած տարին, 1254ին։

¶ 1936. Հռոմի Մանկուի քովէն մնկնած էր 1254 նոյեմբեր 1ին, և 30 օրէն հասաւ Դուռմողուբ, զոր ի ղէպ է նոյնացնել Գարագօրումի հետ, և անկէ ալ ղէպ Տարաս-արեւմուտք ուղղուելով և բաւական երկար, և ձմեռնային միջոցին ստիպական ուղևորութեամբ հասաւ Թալաս, Հուլաւունի տեսութեան, որ սաստիկ էր իւր քաջին պնդմանս, ուր ասկի էին հայութեամբ յարաբերութիւնները (ԿԻՐ. 214), և Մանկու յանձնարարութիւնները բրած էր Հուլաւունի, ի նպաստ քրիստոնէից (§ 1134)։ Կիրակոս չատ մը գեսերու և քաղաքներու անուններ կու տայ, զորս դժուար է նոյնացնել այժմեան անուններու հետ, և տարօրինակ անաստանները ալ կը յիշէ նոյն տեղերու մասին, մոբրչի վայրենի, ծերի և անքանի, մոլ սանելով գնոյն է բլուրն, սոխի կանանց գեղ և երկայն, յեի վայրենի, ջրէի գեղ տան գյէ, սալի վայրենի՝ երկոս կոտրկինս ուսնելով (ԿԻՐ. 214), որպէսի բաներ միշտ կը պատմուին երբոր նոր երկրի մը վրայ կը խօսուի։ Միջոց մը մնաց Հեթում Հուլաւունի մօտ, ուր հասած պիտի ըլլար 1255ի սարեկլատին սահնները, և անոր հետ կարգադրեց բարեկամութեան պայմանները (ՍԻՄ. 554), քանի որ նա էր արևմուտքի կողմը ղանայիս գեղն է ղբրավոս (ԿԻՐ. 218)։ Անկէ մնկնած սահն ուղղութիւնը է հնօրէն աբեղտէր փոխելով Հայաստանի ճանապհն բռնեց, հանդիպեցաւ Բաթուի որդի Սարթախ զօրավարին, որ երէկոյ ատ Մանկու ղրկն, և միշտ յառաջկալով ու երասխը անցնելով մտաւ է Այրեան կամ Սիսական, որ է Սիւնեաց հնահանգը, ուր կը մնայր Բոչաս զ-բալար։ Բաւական աւելի աշխարհագրական տեղեկութիւններ կը յիշէ կիրակոս ճանապորդութեան այդ երկրորդ մասին մէջ, որոց ուղղագրութիւնը ու համեմատութիւնը սահեղծուածային աշխատանք մըն է, իսկ հետաքրքրութիւններն ալ կատարեալապէս չէ յիշած, զի միայն Դիզակէ Սմբղանդ 30 օր, Միանայէ Թավրէժ 12 օր, և Թավրէժէ Սիսական 26 օր կը նշանակէ (ԿԻՐ. 215), իսկ չեմ հետևելը է Մանկու ղրկն, մինչև որ եհաս չերքէզս Հայոց, յորմ ոմն կատարեց կ'ըսէ, և 1255 թուական կը դնէ (ԿԻՐ. 217), որով նոյեմբեր 1'էն կը հասնինք յուլիս 1'ին։ Անգամ մը Հայաստանի մէջ՝ Հեթում երկար դադար մը կ'ընէ այն տեղ, և կը սկսի իւր հոգածութիւնը տարածել իւր ազգայիններուն, թէ ոչ իրբև անոնց թագաւոր, գոնէ այն համարձակութեամբ զոր առացաւ մնծ խանէն, իրբև գլուխ և ներկայացուցիչ Հայ քրիստոնէութեան, մանաւանդ թէ բովանդակ քրիստոնէութեան։ Իրեն հաստատուն քնակավայր իրաս նուիրն վարդենիս գիւղը, Քուրդ իշխանին ապստանքը (§ 1133), և ուր թողած էր ղրկն նէ և գործոնէ, որով սկսած էր կիլիկիայէ, վասն զի անկէ անդին կ'երևնի թէ ամէն պէտքերը թախտրները հոգացին, և անոր աւաչնորդեցին իրբև մնծ խանին հիւրը։ Վարդենիսէն նուիրն ճանապհ հանեց Բարանգ քահանայն կրկին անգամ Բաթուին ներկայացաւ, գի ցոյցէ նմա գէրբան և ընդառաջ Մանկու ղրկն, գի և նա ըստ նմին օրինակի գրեցէ հրամանս իւր իշխանութեան ներքոյ գտնուող Հայաստանի գանազան մասերու զօրավարներուն։ Հետև որդիներէն Յակոբ վարդապետ Հայաստան թողած էր է պէտս գործոյ

եկեղեցւոյ, Մխիթար Սկևռացին ալ Բաթումի հետ տեսնուելէն ետքը ետ դարձուցեր էր, տեսակցութեան հետեւանօք պատչաճ եղած հրահանգները եպիսկոպոսներուն հաղորդելու համար, և երկուքն ալ դարձան նկատ Հեթումի մօտ։ Նաեւ բոլոր եպիսկոպոսք և վանականք և էշխանք ընդհանրապէս, Հայաստանի սահմանէն կողմներէն գային առ նա, և ինքն սիրով ընդունէր զամենեսին, պայր պարգեւս և առաքս աբյոկէր զամենեսին, եւս և պայր պարգեւս և հանդերձս տանականաց ի զարդ եկեղեցւոյ, և զամենայն ազգաց տէրապանեալ իւր ներկայութեան ընդունելով ազնիւ սիրով կալ առնէր զնոսա (ԿԻՐ. 216)։ Ըստ այսմ Հեթում թագաւոր, այր տպաւոր և խմաստուն և գիտնաւոր գրոց, կրօնաւոր և կրօնագէտ և բարեպաշտ, սակայն աշխարհական և հայրապետական զբաղմանց տուած էր ինքզինքը Հայաստանի մէջ, քան թէ քաղաքական և իշխանական գործոնութեանց։

1137. Երբ տակաւին Հեթում Հայաստան կը գտնուէր, 1256'ին սկիզբները մեռաւ Բաթու զբաղեցեր հեծոյ, իսկ որդին Սարթախ հօրը մահը լսելով ալ՝ ետ չդարձաւ, և Մանկու մօտ գնաց, ըստ որ յայտ սրտախոցեալ Մանկու էշխանն, զայն հօրը յաջորդ նշանակեց և պատուեց իբր եղբայրդ էր, և տեղը դարձուց։ Սարթախ քրիստոնեայ էր և Արղունի տաճկահաւատ, և երկու զօրավարներուն մէջ թշնամութիւն կը տիրէր։ Հասան Ջալալ, Այաչէնի իշխանը, հալիւ կրցաւ Արղունի ձեռքէն ազատիլ, և Սարթախի մօտ պաշտպանուիլ, սակայն Բարաքա և Բարքաշ տաճկահաւատ ազգականներ՝ Սարթախը թունաւորեցին, և Արղունի դիրքը զօրացաւ։ Օրբելեան կը պատմէ, թէ Արղուն ալ վան մոգոնութեան ընկ սմբատանուեցաւ մնծ խանին առջեւ, և թէ Սմբատ երկրորդ անգամ (§ 1132), 1256'ին (ՕՐԲ. Բ. 161) Մանկուի մօտ երթալով Արղունի պաշտպան կայնեցաւ և ազատեց, որով զայն իրեն չնորհապարտ ըրաւ, և ալ ջիթեր Աղբուն երթ սրով պատուեցաւ ընծաւ (ՕՐԲ. Բ. 160)։ Նոյն միջոցին Հուլաւուն մնծ զօրավար ուղեց ինքն իջնել Մուզանի դաչտը, Թաթարներուն մնծ ձմերոցը, և Բաչու զօրավարի հրամանի եղաւ, դէպ արեւմուտք Սելճուքներուն վրայ քալել (ԿԻՐ. 218)։ Թաթար հրամակը կարին, Երզնկա, Սեբաստիա, Կեսարիա և Իկոնիոն հետզհետէ գարկաւ մինչեւ Պոնտոսի ծովին և Միջերկրեայ ովկիանին եզերքները։ Բայց ու բանակին օգնական էր Հեթում թագաւոր, և քաղաք ընծայէ և ղբօ պատասխանի կտակեր, մինչեւ որ Բաչու քաղաք ղբօ տասէից ըն չերէկէր էր է կելլէր, է Սեբ, ընդ ջոհնիեան և գովնիեան ջրեալ Հալասան վան նոր (ԿԻՐ. 219)։ Հեթում Սիս հասնելով, 1256 յունիս 5'ին մեծանանդէս մուտք կատարեց, զի կարար բացակայութենէ և յապղ ձեռնարկներէ կը դառնար, և քիչ մը գործելու և հոգերու մտադրութիւն դարձնել չհասց սեպտեմբերին Բարձրբերդ գնաց, յատկապէս իւր ծննդեան հօրը մօտ ներալու (ՍԻՍ. 554), որ գրեթէ գործէ քաչուելով հանգիստ ընելու իրաւունքը առացած էր։ Քիչ օր ետքը, նոյեմբեր 17'ին, մնծաւ չքեղութեամբ Մամեստիոյ մէջ, Հեթում կատարեց իւր անդրանիկ Լեւոնի չէսօրեցոյանելոյ հանդէսը, որ էր ապագային աստիճանի բարձրացնելու առարոզութիւնը, Արեւմտեայց սովորութեան համեմատ։ Կոստանդին թագաւորահայր կը նախագահէր իւր քառնամեայ և թագաժառանգ թոռին պաշտօնական բարձրացման, ահնայն ըստ ի և ժողովոյն (ՍԻՍ. 248), որոց մէջ էին նաեւ Կոստանդինի աղջիկը Մարիամ և ամուսինը Ծոպպէի կոմսը, և Հեթումի աղջիկներէն Սիպիլ ու ամուսինը Անտիոքի Բոյեմոնդոս իշխանը, և Ֆիմի ու ամուսինը Ծուլիանոս Սիդոնի կոմսը։ Մասնաւոր դէպքերէն անցողակի յիշենք նաս Հեթումի Լեւոն եղբօր մահը 1258'ին, և անկէ ետքը Հեթումի մինչեւ Տրիպոլիս երթալը տեղւոյն կոմսին և Անտիոքի իշխանին մէջ տեղի ունեցած գժտութիւնը հաչտեցնելու, և 1259'ին Տարսոնի մէջ Հոգեգալստեան տօնին օրը՝ որ կը հանդիպէր յունիս 1'ին, Հեթումի կրտսեր եղբայրներէն Պաղտինի, Գոնիոյ վանքին եպիսկոպոս ձեռնադրուիլը Յովհաննէս անունով, իւր երէց եղբօր Բարսեղ եպիսկոպոսի ձեռաց ներքեւ կրթուելէ ետքը (ՍԻՍ. 144)։

1138. Այդ հանդիսութենէն ետքը պէտք է դնել Հեթում թագաւորին և Կոստան-

դին կաթողիկոսին միասին Միջագետք երթալը Հուլաւունը ողջունելու նպատակով, զոր 1259'ին հանդիպած կը նշանակէ պատմիչը (ՎԱՐ. 151)։ Հուլաւուն նախընթաց տարւոյն մէջ կատարած էր Պաղտատի արշաւանքը, և քաղաքը առած բուռն գօրութեամբ։ Պաղտատ կը չարունակէր Ապպասեան ամիրապետներուն քաղաքամայրն ըլլալ, ուր 1226'ին Տահէր-Պիլլահ եռքը իշխանութեան բարձրացած էր Մըսթանսըր-Պիլլահ, 1242'ին իրեն յաջորդած էր Մըսթազէմ-Պիլլահ, լոկ անուանական կամ կրօնական իշխանութեամբ, և այս վերջնոյս ամենիշխան փոխարքան էր Մունամմէտ Էլքամի, ինքն Ալիեանց պաշտպաններէն և հետեւաբար Ապպասեանց ամիրապետութեան ներքին թշնամի։ Մանկու խան, Հեթումի կարծեցեալ յանձնարարութենէն առելի (§ 1134), իրեն ազգատոհմին նախնական նպատակին հետեւելով, Հուլաւուն եղբօրը յանձնարարած էր վերջ տալ Պաղտատի ամիրապետութեան, և նա թէ իւր զինուորական ոյժով և թէ էլքամիի համակցութեամբ 1258 փետրուար 5'ին, իւր դրօշը կանգնած էր Պաղտատի աշտարակներուն վրայ, և Մըսթազէմ անձնատուր ըլլալու ստիպուած, զոր առաջ բանտարկել, և քանի մը օր ետքը փետրուար 10'ին բանտին մէջ սպաննել տուած էր (ՎՍՐ. 468), թէպէտ նոյն ինքն Հուլաւունի ձեռքով սպանուած կ'ըսեն մեր պատմիչները (ՎԱՐ. 150, ԿԻՐ. 223)։ Անեղ և անդնդի եղաւ Պաղտատի կոտորածն ու կողոպտումը, և միայն ապէցան էրէսոփոնեայք որ կային անդ (ՎԱՐ. 150), և այն ալ Հուլաւունի Տօղուզ տիկնոջ բարեխօսութեամբ։ Տօղուզի համար գրուած է թէ քրիստոնեայ էր նեստորական աղանդէ, բայց դաւանական տարբերութենանց անտեղեակ՝ անխտիր էրէսով մեծարեր ըմբնայն ազգ էրէսոփոնեայ, և Հուլաւունի հաւանութեամբ, չարժական եկեղեցի և քահանաներ և պաշտօնեաներ կը չրջեցնէր բանակին հետ, որք է յոյն ժամերէք պաշտամունք կը կատարէին։ Տօղուզի միջնորդութեամբ չատ անգամ քրիստոնեաներ Հուլաւունէ ազատութիւն և խաղաղութիւն կը առանային (ՎԱՐ. 149)։ Պաղտատէ ետքը

ՀԵՔՈՒՄ Ի ՄԻՋԱԳԵՏՔ

նչանաւոր եղաւ Մուֆալրիճի առումը, որուն սուլտանը երկար պաշարման դիմացաւ, բայց Հուլաւուն այնչափ նեղեց, որ պաշարեալներ մինչեւ իսկ ընտանեաց անասունս, և ապա ընտանեաց իրենց ուտել ստիպուեցան (ՎԱՐ. 150), բայց քաղաքը վերջապէս գրաւուեցաւ 1259 տարւոյ մնծպահքի միջոցին, և մնացեալներն ալ կոտորուեցան (ԿԻՐ. 226)։ Այդ պաշարման միջոցին Հուլաւունի բանակները ամէն կողմ ցրուած՝ աւերածներ կը հասցնէին, և բանի հարկահաւաքութեամբ ժողովուրդը կը նեղէին։ Իսկ Հայոց թագաւորին և կաթողիկոսին Միջագետք երթալը, ոչ միայն պարտաւորութեան արդիւնք էր, այլ և քրիստոնէից մասին դիւրութիւններ առնելու պիտի ծառայէր։ Զի եթէ մեր պահաւորն Հեթում մէկ կողմէ Հուլաւունի կ'օգնէր Եգիպտացւոց դէմ, և ընդ նմա էր յառնալ ընդ ամենայն աշխարհն Շամայ, իմա՛ Ասորիքը, միւս կողմէն արդիւնաւոր կ'ըլլար աղաչելով է մահմետական էրէսոփոնեայն, վեհերեցոնաս և ընդհանուր (ՎԱՐ. 151)։ Զենք գիտեր թէ Հեթում կը յուսար արդեօ՞ք որ Հուլաւուն մինչեւ Երուսաղէմ ալ յառաջէ. բայց սա պարտաւորուեցաւ ետ դառնալ, զի Մանկու խանին մահուան լուրը եկաւ, և ինքն յաջորդութիւնը ձեռք ձգելու փութաց, Քիթբուղա զօրավարին յանձնելով նոր գրաւուած տեղերու պահպանութիւնը։ Իսկ Հեթում կիլիկիա կը դառնար, կաթողիկոսն ալ միասին։ Սակայն Եգիպտոսի սուլտանը առաւելագոյն զօրութեամբ կը յարձակէր միւս տարի 1260'ին (ԿԻՐ. 228), և Թաւրոսի ճակատամարտին մէջ յաղթական կ'ըլլար, և փախստական Թաթարներ կիլիկիա կ'ապաւինէին, ուր Հեթում պիրինք կը հոգար, և հանդերձ և երիվար և ռոճիկ տալով առ աչքն իւրեանց կը դարձնէր, ինչ որ Թաթարներուս աչքին կը բարձրացնէր Հեթումի և Հայերուն պատիւը (ՎԱՐ. 152)։

1139. Հուլաւուն խան յաջողած էր մնծ խանութիւնը ձեռք անցընել, թէպէտեւ անդադար պատերազմի վրայ ըլլալով ընտանեկան չրջանակի մէջ ժառանգական վէճերով (ԿԻՐ. 231), որ 1259'էն մինչեւ 1265, մինչեւ Հուլաւունի իշխանութեան վերջը տեւեցին։ Այդ պատճառով մնծամնծ ար-

չաւանքներ տեղի չունենցան Թաթարներու կողմէն, բայց պակաս չեղան Ասորիքի կողմերը Եգիպտացիներուն և Թաթարներուն պատերազմները, որոց ստիպեալ մասնակցեցան Հայերն ալ՝ իբր Թաթարներու դաշնադիր նիզակակիցներ, ինչ որ միւս կողմէն կ'ատելցնէր Եգիպտացիներուն թշնամութիւնը Հայերուն դէմ։ Մեր նպատակէն դուրս կը մնայ մանրամասնութիւններ տալ, որոնց մէջ յիշատակութեան արժանի են Անտիոքի պաշտպանութիւնը Եգիպտացիներուն դէմ 1262'ին, Այնթապի վրայ կրկին յարձակումները 1263'ին, և Բերիոյ աւարառութիւնը նոյն տարին։ Իսկ ներքին պարագաներէն, պիտի յիշենք 1262'ին վերջերը Թագաժառանգ Լեւոնի ամուսնութիւնը ապստամբ Կոստանդին Լամբրոնացիի որդւոյն Հեթումի դստեր Անննայի հետ, 1263'ին արքայաքոյր և Ծոպպէի կոմսուհի Մարիամի մահը, 1264 դեկտեմբեր 26'ին Թագաւորեզբայր ու Կոռիկոսի իշխան Օշինի մահը՝ Ղաղոմայիսէ պապական նուիրակին տեսութենէ դառնալէն ետքը։ Կը յիշուի եւս թէ 1263 ամառուան Հեթում նոր ճանապարհութիւն մը բրած ըլլայ մինչեւ Ատրպատականի Դաւրէժ քաղաքը, Հուլաւուն հրաւէրին համեմատ և անոր ինքնակալութիւնը մեծարելու դիտմամբ (ՍԻՍ· 554), բայց այդ մասին մանրամասնութիւններ կը պակսին, և ամէն պատմագիրներն ալ զայն չեն յիշեր։

ՊԱՊԻՆ ՆՈՒԻՐԱԿԸ

1140· Պապական նուիրակ մը Ակեւելք կը հասնէր Կոստանդին կաթողիկոսի 42'րդ տարին (ՍԿՆ· 7), որ կը պատասխանէ 1263'ին։ Կոստանդին բաւական սեպած էր Ասորւոց ծովեզերեայ քաղաքները դանուող Հայերուն յանձնարարել, որ նուիրակին պատիւ ցուցնեն անցած տեղը, իսկ սա նոյն իսկ կաթողիկոսին գալուն սպասելով (ՍԿՆ· 10), մերժած էր Հայերու այցելութիւնները, և գանգատած էր Օշին արքայեղբօր՝ որ Հեթումի կողմէն կը ներկայանար, ինչպէս յիշեցինք։ Ասոր վրայ, ըստ բնական բարոյ ազգէն մերոյ, ըլլալ բարյարոյանողաց և զինեալոն նոասպարոյանողաց (ՍԿՆ· 8), որչուհետեւ Մխիթար Սկեւռացիին պատգամաւորութիւնը, որ յանձն առաւ այն պայմանով, չի հնազանդութեան անառ քնա ի չէլեսչէ, և ընկերնեւրու հետ ձանրանալով, և Երուսաղէմի Հայ եպիսկոպոսն ալ միասին առնելով Ղաղոմայիս հասաւ։ Իչէն պետիմբերէ ամոյ, ուր նուիրակը ցաւմամբ նշաններ կը ցուցնէ գլուխին ու ընծաները մերժելով, և Մխիթար ու ընկերներ հազիւ կրնան զայն ողոքել (ՍԿՆ· 10)։ Իսկ յաջորդ 1264 յունուարի առաջին օրերը, ՝ՔՐէ- ԿԵ ընդՔՔՔ-, տեղի ունեցան այն վիճաբանութիւնները (ՍԿՆ· 12), զորս յետոյ Մխիթար գիրի առած է։ Նոյն առենները Եգիպտացիներ հետզհետէ աւելի կը զօրանային Ասորիքի մէջ, ինչ որ վտանգ կը սպառնար Անտիոքի և ուրիշ Լատին իշխանութեանց, որոնք Երուսաղէմը կորնցնելէ ետքն ալ կը մնային, գլխաւորապէս ծովեայ քաղաքներու մէջ, ինչպէս էին Ղաղոմայիս, Տրիպոլիս, Սիդոն և Ծոպպէ։ Առնք մեծ յուսադրութիւններ ունէին Հայոց թագաւորութեան վրայ, որ կարևորագոյն քրիստոնեայ իշխանութիւնն էր Ակեւելքի մէջ, և՝ փոխադարձ ամուսնութիւններով ալ անոր պաշտպանութիւնը ապահովել կ'աշխատէին։ Կղեմէս Դ պապն ալ, որ Իննովկենդիոս Դ'ի յաջորդներէն՝ Ադեքսանդր Դ'է և Ուրբանոս Դ'է ետքը աթոռ բարձրացած էր 1265'ին, իւր նախորդներուն նմանողութեամբ նորէն խաչակրութիւն մը կը խորհէր պատրաստել, Լատիններու պաշտպանութեան և Երուսաղէմի առման նպատակով, և իբր սկզբնաւորութիւն և նախապատրաստութիւն Հեթումի կը գրէր յուլիս 26'ին, որ օֆոխոչ եղիչե խոսոխ և օֆնոխնեոմՔ+ ի ՔէԽոխ ձամանէչ (ԿԱՀ· 389)։

ՎԱՐԴԱՆ ԽԱՆԻՆ ՄՕՏ

1141· Հեթումի նորէն գործի ձեռնարկելը և թշնամութեանց կրկին գրգռութիւնը չպատմած, պէտք է յիշենք Վարդան վարդապետին Հուլաւունի ներկայանալը, զոր ինքն իսկ նկարագրած է հետաքրքրական մանրամասնութիւններով (ՎԱՐ· 155–161)։ Հուլաւուն ուզած պիտի ըլլայ Հայոց վարդապետներէն գլխաւոր մը անձամբ ճանչնալ, որ Շնորհնաւոր անուն ֆոսոսոխնեչ ոսո ձեռքով իրեն մօտ հրաւիրեց Վարդան Ակեւելցին, որ ժա-

մանակին վարդապանելէն նչանաւորագոյնն էր։ Վարդանի ընկերացան Սարգիս և Գրիգոր վարդապանները, և Տփղիսի սաֆէրէց պէրպէր, զորս Շնորհաւոր փաթա խըվ ձախէ և էջմածէ։ Վարդան հաւանաբար մնկնեցաւ իւր կոչանի վանքէն (§ 1124), այլ թէ ուր հանդիպեցաւ Հուլաւունի որոշ չգրեր։ բայց պէտք է պաշտօնական քաղաքին մէջ եղած ըլլայ, զի Թաթարներուն տալեմուտի հանդէսին ներկայ եղած է, որ կը հանդիպէր 1264 յունիսին, և Հայոց 713 արացին, իսկ արացը չարժական տոմարով կը սկսէր յունիս 13'ին, որով յունիսի առաջին և արացի վերջին օրերուն կ'իյնայ Թաթար ամանորը, Խաաաանլը կամ Գուրկիթայի կոչուած, որ ամէն համախտամբ աշխարհատօնակատու անուն ալ եղած է։ Տօնը էջը լսան ի կը տեւէ եզեր մեծ չուքով, և ամենէն նոր զգեցեալ, և խոփաւոր և սալտաղ նուէրներ ղրկած են եզեր, և յանուանէ կը յիշէ Հայոց Հեթում և վրաց Դաւիթ թագաւորներուն և Անտիոքի Լատին իշխանին ընծաները։ Հուլաւուն թող չտար որ Վարդան երկրպագութիւն ընէ, գիտնալով թէ պրսաստ կամ քրիստոնեայք Աստուծոյ միայնոյն կը պահեն այդ ձեւը։ Հուլաւունի առաջին յայտարարութիւնը կ'ըլլայ, կոչել եմ զինք որ գնաներ գնա և ճանապէ, և է պրոց պըղնես վան իմ, և իւր խնկու գինին ալ վարդապետին օրհնել կու տայ։ Եղած խօսակցութեանն մասին Վարդան կ'ըսէ։ Աւելորդ է ըսելը, որ խօսեցաւ, և կը պատմէ թէ չարակարներ երգեցին, նոյնը ըրին հոն եղող Վրացիներ, Ասորիներ ու Հռոմներ ալ, բայց միշտ առաջին պատիւը Հայերուն է եղած։ Հուլաւուն Վարդանի հետ առանձին խօսակցութեանց ալ մտած է բարոյական կէտերու վրայ, և Վարդան պատչաճ խրատներ տուած է, ի որ գրուածն հետը մտքը կոյս որ յԱստուծոյ երկնչի և զինք, նոյնը ըրէ, կոյրանայ ը՛չ կոչուիս, և հետ ասէ զիրաւն։ Բրիստոնեաներու վրայ խօսելով, Վարդան վրաստանացուցած է, թէ Աղնոյ պէրս հեռ հետ լաւ է, և հետ պըղխ են առնուտ, և Հուլաւուն ըսած է, Մենք հրէաներէն ենք և հրէաներէն կայ է ըր գանս։ Ուրիշն ալ յիշեցինք Տօղուզ սիկինը (§ 1137)։ Տեսնելով որ Վարդան պէտքենի էր հագած, կ'ուզէ անոր ասիլ զգեստ և շապ ասիլ տալ, բայց Վարդան պատճառելով թէ պէտքայ է, կը խնդրէ միայն պըղտնիէն է վերայ պէտքէն։ Բայց Հուլաւուն իրեն պզտիկութիւն կը սեպէ առանց նուէրի ճանպել, ուստի անոր կ'ընծայէ երկու հանդերձ իրեն յարմար և բալիշ մի ոսկի. և չնորհքներու հրամայական մըն ալ կու տայ, ասկնկնելով, թէ գինի ո պրոտ պէտ սաելէ՝ ղրկ սալ երթալ պատ։ Իսկ ոսկի բալիշը փաթրակայեր ձայլ ոսկի մըն էր, է լատ ինչ գոյ և կնեռ լսեր գոյ (ՕՐՔ. Բ 170), որ Թաթարներուն համար ամէնէն մեծ պատիւն էր։ Վարդան բաւական երկար կը մնայ հանին մօտ, զի տակաւին հոն է եղեր 714 ամանորին, որ կ'իյնար 1265 յունուար 14'ին, և հարկաւ գարունին պատասխան էր ապասել դառնալու համար, և ճիշդ այդ միջոցին փետրուարի մէջ Հուլաւուն կը մեռնի, և Վարդան կը դիտէ, ինչ կատարեցա՞ւ, այն Աստուած երթ, զի համբաւեցին նախ ինչ երեսվ և հնարքս պանին, և յետոյ ծածկեցին զգոյցն, և այս կասկածը ծագած է հիւանդութեան առեն գործածուած կախարդական հնայքներէն։ Թիւնաւորելուն խօսքը ուրիշներ ալ կ'ընեն, և կ'ամբաստանեն Մօղա անուն դիւանապետը, որ էր էլտեր և վերակացու հնդնային, թէ գերեզման ըրաւ Հուլաւունը, ինչպէս յետոյ Տօղուզ սիկինն ալ (ՕՐՔ. Բ. 165)։ Տօղուզ ուզած է պատրաստ առնել տալ Հուլաւունի համար, որուն Ասորիներ հաւանած են, այլ Վարդան դիտողութիւն է ըրած, և յանձնարարած է ոզորմութիւն և հարկոյ ինչութիւն առնել։ Հուլաւունի յայտնած է որդին Ապաղա, և ևնք ամիս նստքը Տօղուզ սիկինն ալ վախճանած է, բայց Թաթար ազգութեանց մէջ քրիստոնէից պաշտպան մնացած է Թուխմանի սիկին, Տօղուզի ազգական մը։ Նոյն իսկ Ապաղա քրիստոնեայ կին առած է, Յովհաննէս Վանդակեցի կամ ըստ այլոց Միքայէլ Պալէոլոգ՝ Դեսպինա աղջիկը (Վ.Ա. 161)։ Իսկ Ապաղայի մկրտութիւը Երզնկայի եպիսկոպոս Սարգիսի ձեռօք և այնպէս պատկութիւը (ԿԻՐ. 234), պարզ զրոյց մըն է, և Հեթում պատմիչ Ապաղայի քրիստոնէանալն ալ կը հերքէ (ՀԵԹ. 51)։ Վարդան նա եկած է տարի մը առաջ ուղեւորութենէ վերջը։ Ջանց կ'ընէնք քաղել Վարդանի Թաթարներուն վրայ

տուած ծանօթութիւնները, որք բաւական հնաոքրքրական են ազգաբանական ուսումնասիրութեանց համար (ՎԱՐ. 160)։

ՄԱՌԻԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1142. Կղեմիա Դ պապին յորդորը, և Հայաստանի մահուան վրայ Եգիպտացւոց քաջալերութիւը, և Լատին ու Հայ իշխանութեանց ապառնալը, պաշտպանութեան պարտաւորեցին Հեթում, և հարկ եղաւ որ անձամբ երթայ թախտր զօրավարին հետ տեսակցելու, և պատերազմին կարգադրութիւններն ընելու։ Վախրամ կ'ըսէ թէ Հեթում ինքն առ Մաղաղն յոգի անկեալ գնաց, այսինքն Մուղալ-ներու կամ Մոնկոլներու զօրավարին, բայց չենք կարծեր թէ մինչեւ Մուղալի դաշտը գացած ըլլայ, այլ միայն արեւմտեան բանակին հրամանատարէն օգնութիւն առնել դառնալու համար։ Բայց Փնդուխդարի կամ Պիլպարսի զօրավարը փութաց՝ թախտր բանակը չհասած գործը աւարտել։ Նախ ի յԱնփոյ ծածկն հասեալ, և ընդ հրոյ ճարակ պոռնոյ, անկէ ի Կէլկէա առաքեալ Հեթումի դէմ եկաւ, այլ դիպեալ չէր նմա ժամանել, պատերազմը աստակացուց և Հայոց բանակը ցրուեց (ՎԱՐ. 223), նոյն իսկ Սիս քաղաքն ալ գրաւեց, և առեմաէ և հրով տկնել քանդեց, և հրաշեղէն պատճառ այրեալ աւերեց, և այնպէս յաղթութեն էրեանց անդրէն դարձեալ գնաց (ՎԱՐ. 224)։ Հեթումի բացակայութեան Լեւոն և Թորոս արքայորդիներ պատերազմին կը հրամայէին, բայց Թորոս բաժանուեցաւ և Լեւոն գերի ինկաւ։ Եգիպտացիք հնձեցաւան օր յարձակ Կիլիկիոյ մէջ, և ամէն կողմ ընդ ալեբեր, ետ դարձան առաջաս և ջերմեռանդութեամբ խաչատան հաղթութ, Լեւոն արքայորդին ալ մէկտեղ առնելով (ՎԱՐ. 163)։ Աւարին մէջ եղած կ'ըլլայ արքունական գեղանախրոյ գանձին պարունակութիւնն ալ, որ վերջաւ հարիւր հազար կոշիկ գրուած է, և վեց միլիոն ոսկի ըսել կ'ըլլայ, զոր երբէք չափազանցուած անպակք, աւարը միշտ մեծագումար կ'ըլլայ, երբէք վեց հարիւր հազար ալ կարդացուի, ինչպէս ոմանք ուզած են ուղղել (ՎԱՐ. 162)։ Պատերազմը անկի ան-նեցաւ. Մաճի կոչուած կապանին ներքեւ, Ամանոս կամ Սիաս-Լիւսանց սարուար, 1266 տարին, Յունի եղեանին (ՎԱՐ. 162), որ ըսել կ'ըլլայ սեպտեմբերի մէջ, քանի որ Եգիպտացւոց կիլիկիա մտնելը օգոստոս 3'ին (ՍԻՍ. 401), կամ 12'ին կը նշանակուի (ԿԱՀ. 390)։ Յայտնաւորքը յունուար 23'ին կը դնէ Թորոսի սպանութիւնը (ՃԱՍ. Ա. 47), որ դժուարաւ կը համաձայնի վերոյիշեալ տեղեկութեանց, նոյն իսկ եթէ չարժական տասարի վերածենք, զի արացի 16'ը կը պատասխանէ 1266 յունիս 28'ին։ Երբոր Հեթում Կիլիկիա դարձաւ, աւերածին և կոտորածին ականատես լինել պարտաւորուեցաւ, և ինչպէս լացեալ և օթոցեալ էր, այլ ի յոյսոյ ալ պակաեալ ակաւ առնելը միխիթարել, առնուն օգնել, աւերածը վերաշինել, կաթոտանները յանձնառնել, գերիները գնելով ազատել, և աքսորեալներ դարձ տալ ազէտին դարմանը հոգալ (ՎԱՐ. 225)։ Ինչ որ աւելի ծանր էր, թախտրներուն դանդաղութիւնն էր, զի Ապոլ վան տեղին ընդ առնմանակից, հրամբերաց յոլովիկ Եգիպտացւոց դէմ եկլալ (ՀԵԹ. 52)։ Այդ տխուր կացութիւնը տեւեց բաւական ժամանակ, և առ ի և գան ատ տեւեց Լեւոնի գերութիւնը (ՎԱՐ. 226), և վարդան որ այդ միջոցին կը վարէ իր պատմութիւնը, իրաւունք ունեցաւ հաւաչանօք գրել, կատ ընդերձել և յերեման (ՎԱՐ. 163)։ Հեթում վերադաս ազէտին մասին փութացած էր կղեմէս պապին ալ գրել, քանի որ աւաւելապէս անոր յորդորներն էին եղած տատապանքին չարժաւորները, Եգիպտացւոց զայրոյթը գրգռելով, և պարտ ու պատշաճ օգնութիւնը պահանջած էր պապէն, որ միայն յաւաղրութեան և միխիթարութեան գիր մըն էր ուղղած տարի մը առաջ, 1267 մայիս 17'ին, Հեթումի արդիւնքներն ալ յիշելով, թէ ազատից բազմամ անգամ ղրկուելոյն ձողովուրդն, Անտիոքի օգնելց, ընդդիմացաւ ընդառաջ ասոր քաշն, և սիրելց ջերեկոյթներն Ֆրանկաց (ԿԱՀ. 392)։ Սակայն դժբախտաբար այդ բարեկամութիւնն էր, որ ազէտը հրաւիրեց, այլ զարմանը չպատրաստեց։

1143. Կաստանդին կաթողիկոս ալ խառնած էր անչուչա իր ձայնը Հեթումի ազատչանքներուն, յոյս դնելով Արեւմուտքին զօրութեան և քրիստոնէութեան վրայ, բայց նա պապին պատասխանն ալ լսելու չէ տասաւ։ Վանդի քիչ օր առաջ կնքած էր նա իր

իւր բազմօրեայ կեանքը և երկարամեայ պաշտօնավարութիւնը. 1267 ապրիլ 9'ին, որ չորեքշաբթի առաջուն կը համապատասխանէ 716 տոնի 26'ին, և օրն ալ չափած, Ղազարու յարութեան յիշատակ, է. կոփրման ֆոռանեբդրդոց ազնուագէն, ինչպէս ամենայն ճշդութեամբ կը նշանակէ Վարդան (Վ.Ա.Ր. 163), միշտ չորեքշաբթի առաջուն գործածելով, մինչ կիրակոս ակած էր անշարժ տոմարով թուականները դնել (§ 1133). Կոստանդին Բարձրբերդցի 1220 ամառէն մինչեւ 1267 գարուն, քիչ օրերու տարբերութեամբ, 47 լրացնալ տարիներ հայրապետական աթոռին վրայ մնաց, մինչեւ վերջին վայրկեանը իրական և գործնական պաշտօն վարելով։ Իրմէ առնլի երկարատեւ հայրապետութիւն վարողներ եղան միայն Իլիգոր Պահլաւունի 1113'էն 1166, և Սահակ Պարթեւ՝ 387'էն 439, և յիշնամնականներ լրացուցին, սակայն Գրիգոր չատ երիտասարդ աթոռ բարձրացած էր, և Սահակ մի մեծ մասը վատանդի և պաշտանէ հեռու անցուց։ Որչափ ալ Կոստանդինի հայրապետութեան առաջին ժամանակները համեմատաբար խաղաղ էին. սակայն վտանգները անպակաս եղան և դժուարութիւնները չարունակ, այնպէս որ իրատամբ գրուած է իրեն համար, թէ կռնկէ և վշտակէ և ոխակէ եղաւ ազէն, է ծեղբէր և է ցասմահար գարոս (Վ.Ա.Ր. 163), այլ չատ աւելի գառն եղաւ վերջին տարին Փոքր Խաստրի արշաւանքովը և Մաւթի ճակատամարտին ձախողութեամբը, որնք ծերչ բերէն ղջհաս նորա, և աբաբին փոքնապէլ ոչխոման ընդդէմ (Վ.Ա.Ր. 164)։ Կոստանդին լսկ իւր ձիրքերով ընդ ոչնայն ասպետնա չատաջնալով բարձրացաւ, իւր արդիւնաւորութեամբը ազնիւ հռոմկլայեալ եղաւ, և չոչնայն ազէց և ծեղ ի վայելել սիրուեցաւ։ Իրաւ, ոչ ինքն իւրովի մեծագործ բան մը կատարեց, և ոչ ալ իւր նախնի գրական երկասիրութիւն մը թողուց, որով վկայուցնց հանճարի մը առնաւ ասչնայն աւած բլլար, սակայն հաստատուիմ կանոնաւորութեամբ, հաստատուն ուղղութեամբ, աչխատչ արմնութեամբ և անվհատ ատենութեամբ 47 ամրողջ տարիներ պաշտօնի գլուխ գանալ, և իր մահին մեղադրանքի կամ բամբասանքի առիթ առած չըլլալն ալ, բացառիկ արժանիք կազմող պարագաներ են, զոր պէտք է հաստատական վկայէ պատմութիւնը Կոստանդին Բարձրբերդցիին նկատմամբ։

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԱՀԸ

1144. Կրօնական և եկեղեցական իշնդիրներու մասին պահած ուղղութիւնը ընդհանուր եղաւ, և օտար եկեղեցիներու հետ բանակցութեանց, ինչպէս որ պատմուած եղկութիւններն ալ ցոյց տուին, իրեն համաձիտ ընկեր ունենալով այդ մասին Հեթում թագաւորը, և թերևս երկուքն ալ միասին Կոստանդին թագաւորահօր ազդեցութիւնը կրելով։ Սակայն իրերը մօտէն քննած ատեննիս ուրիչ բան չենք տեսներ, բայց եթէ անպայման հաւատք մը Լատին աչխարհին զօրութեան և կարողութեան վրայ, և հաստատ համոզում մը Լատին աչխարհին մէջ պապին վայելած գերիչխանութեան վրայ։ Երկրորդը իրականութիւն էր, իսկ առաջինին մէջ իրականը կարողութեան հետ գործնական կապնդութիւնը չկար, բայց այդ կէտը Հայոց թագաւորին և Հայոց կաթողիկոսին մտադրութեան առարկայ չեղաւ, մինչ պէտք էր նախապէս այդ կէտը ապահովել և երաչխաւորել։ Առանք իրենց համոզման հետեւելով՝ ուզեցին չսկել ու դադրել պապին անձնասիրութիւնը, չգալու զրնել ատնոր խրոխտ բացատրութիւնները, կռնկակի կերպարով գլխ եկած դժուարութիւնները, առանց Լատիններն վչտացնելու, բայց և առանց ստորնանալու։ Այդ կէտին մէջ մեղադրելի բան չենք տեսներ Կոստանդինի և Հեթումի վրայ։ Պապին ուղղուած նամակներուն մէջ փիչ մը աւելի մղուած չողոքարկ բացատրութիւններ, ոչ հաւատոյ դաւանութիւն կը կազմին, և ոչ վարդապետական դրութիւն, և եթէ անունք փիչ մը աւելի ատատացան, երբնք այդ պատճառով հայրապետական եկեղեցին իր սկզբունքէն չեղած չըլլար։ Անտիոքի պատրիարքներուն յաւակնութիւնը Դաչանց թուղթին պատրուակով ակարացնելնին (§ 1110), աւելի ճարտար քաղաքագէտի զգեստ կը կազմէ, քան թէ դիմացինին հանդէպ ատրնացում։ Իսկ Լատիններու հետ յարաբերութեան մէջնցին,

անանցմէ եկեղեցականապէս անջատուած Յոյներուն հետ բանակցութեան մանելնին (§ 1111), և կաթողիկոսին զոյն երկրորդելը (§ 1135). յայտնապէս կը ցուցնէ թէ երկուքն ալ լատինականութենէ կը խորշէին։ Իսկ Ս. Յովհաննու՝ Պոլսոյ (§ 1130), և Սուրբ Աթոռոյ՝ և հիւանդաց իւղին խնդիրներուն (§ 1123) մասին՝ բուսական խօսեցանք իրենց կարգին, թէ երբեք Հայոց լատիններու համակերպած թիւնը չեն ընդունած, որով Կոստանդինը հռոմէադաւան նըկատելու քնաւ փոյթ չեն ըլլար, և իւր լատինասիրութիւնն ալ չափաւոր տասիճանի մը մէջ կը պահեն։ Ստոյգ է որ Պահլաւունիներու ժամանակին յարաբերութիւնները, Բարձրբերդցիին ժամանակ ունի զօրացան և ընդարձակուեցան, բայց չունեցան այն տասիճանը, զոր հռոմէադաւանները կը փափաքին տալ անոնց, և չհասան այն կէտին որ ունի հաքի ժամանակներու մէջ տեսնուեցաւ։ Թերևս յետիններուն քաջալերութիւն տուած եղան՝ ունի ընդարձակելով յարաբերութենց դուռները, սակայն մենք առ այժմ կը բաւականանք չնչտել, թէ Կոստանդին Բարձրբերդցիին և Հեթում Առաջինին ժամանակ գործեր օտրացեալ տասիճանին հասած չէին։

1145. Համաձայն մեր հետևած ոճին, անցնինք քանի մը հոմսուօտ տեղեկութիւններ տալ ժամանակին նչատ նատուր անձնաւորութենանց վրայ։ Առաջին այդ չարքին մէջ կը ներկայանայ Յովհաննէս Վանական վարդապետը, որուն նախընթացը ցուցուցինք, և գերութիւնը պատմեցինք (§ 1114), և Հոգւոյն Սրբոյ խնդիրին մասնակցութիւնը յիշեցինք (§ 1128), և որ իւր կեանքին ինացորդը անցուց Խորանաշատ վանքը, մինչև իւր մահը, որ տեղի ունեցաւ 1251 մարտ 18'ին, որ ըստ նոր եղանակի ճշմարտութեան, այսինքն ըստ Սարկաւագապիր անշարժ տոմարին կը համեմատի յօթնեք ամսոյ պատ (ԿԻՐ. 199), մինչ ըստ չարժական տոմարին պիտի համեմատէր հոկտ 30'ին։ Յայտնութիւնը յունուար 29'ին կը դնէ Վանականի մահը, 70 տարեկան հասակին մէջ (ՁԱՍ. Ա. 56), որ պատմիչներուն գրածին չհամաձայնիր, նոյն իսկ չարժական տոմարի վերածելով, դի ապրած 22'ը, 1251'ին կը հանդիպէր յուլիս 8'ին։ Վանականի պատմութիւնը դեռ երեսան եկած չէ, իրեն վերագրեալ մեկնութիւններուն մասին կասկածներ կը յայտնուին, իսկ ճառընտիրներու և հատուածոնկներու մէջ բաւական դրութիւններ կը գտնուին իւր անունով։ Այս կարգէն են երկու հատուածներ, որոնց մէջ կը խօսուի Հայոց Առաջին Լուսաւորիչներուն և անոնց հետևողներուն վրայ (ԹՂԹ. 533–536)։ Հիմնաւոր և կանոնաւոր տեղեկութիւններ չեն տրուածնները, գուցէ Վանականի վարքական գրութիւններ ալ չեն։ Մեզի բաւական ըլլայ դիտել, թէ Հայոց Թադէոսին՝ Ծուդա Թադէոս կամ Թադէոս Ղևբէոս ըլլալը, զոր իւր կարգին պաշտպանեցինք (§ 6·7), չատ կանուխէն ալ ազգին ծանօթ կէտ մըն էր։ Վանականի յօդուածութիւնը քաջնուեցաւ իր մանուանէն ետքը, Կորնեղացւոյ առաջնորդութիւնը առանձնաց իւր եղբօրորդին Պօղոս վարդապետ, իսկ ուսուցչութիւնը իր ազգականներէն Գրիգորիս վարդապետ (ԿԻՐ. 200)։

1146. Վանականի աշակերտներուն գլխաւորն է Վարպան վարդապետ Արեւելցին, զոր յիշեցինք կաթողիկոսին մօտ գալուն (§ 1117), և իբր կաթողիկոսական պատուիրակ Հայաստան երթալուն (§ 1118), և Հուլաւունի այցելութեան առթիւ (§ 1141)։ Կանքին ինացորդը ինաց դլխաւորապէս Կայէնի ու Վիրապի ու Թղենեաց վանքերը, Սաղմոսավանք ալ աաեն անցուց (ՍԻՍ. 102), և վերջապէս Հաղբատ երթալով մեռաւ 1271'ին։ Վարդանէ ինացած գործեր չատ ունի են, վասն զի պատմութենէն զատ՝ ունինք այնչատ օգտուեցանք, և առանձնաբար զատ՝ որ այնչափ նչանաւոր են իրենց նպատակաւորը, ունի զանազան մեկնութիւններ Սաղմոսի, Դանիէլի, Հնգամատեանի և Երգոց-երգոց, և չատ մը ճառեր և մանր գրուածներ, թէպէտ անոնց մասին երկբայութիւններ կը յարուցուին։ Վարդանէ քիչ ետքը, 1272 յունուարին մեռաւ նորա աշակերտակիցը Կիրակոս Գանձակեցին, նա ալ պատմութեան մը հեղինակ, որուն մէջ սակայն չատ ընդարձակ տեղ տրուած է դէպքերու և հրաչալիքնե-

րու։ Ասոնց ընկերակից ճանչցուած է նաեւ Մաղաքիա Ալենեցի, Ակնոր վանքի սրբադան, որ Նեստոր ազգին՝ այսինքն Թաթարներուն համաուսո պատմութիւնն է գրած։ Աչակերտակից է Յովսէփ Արտազեցին ալ, որուն վրայ արդէն խօսեցանք (§ 1126), բայց իբր մատենագիր ճանչցուած չէ։

1147. Ժամանակակից է Մխիթար Սկեւռացին ալ, որ առաջ 1254'ին Հեթումի ընկերացաւ մինչեւ Բաթուի մօտ երթալը (§ 1136), և երկրորդ անգամ 1263'ին վերջերը պատուիրակ գըրնաց Պաղատիայի՝ Ուրբանոս Դ պապի կողմէ պատգամաւոր եկող Տիրոսի արքեպիսկոպոս Գուլիէլմոսի մօտ (§ 1140), ուր աւելի ունեցաւ հեռուէտես անութեան խընդիրներուն վրայ վիճաբանութեան մտնելու, զոր յետոյ դիրքի ալ առնելով Հեթումի ներկայեց (ՀԻՆ· 752)։ Ան ալ նշան մըն է Հեթումի և Կոստանդինի ուղիղ հայապատանութեան մասին, զոր վերեւ չմոռցինք պարզաբանել (§ 1144), մինչեւ իսկ Կոստանդին յանձն չէր առած անձամբ երթալ նուիրակին, հետեւելով հոգեւոր և օրինաւոր կարգի (ՍԿՆ· 10), թէպէտ նա կը պահանջէր իր նշան հպատակութեան։ Սկեւռացին ալ, զոր իւր տեղ դրկած էր, պահանջեց որ ընդունելութեան անոն քնաւ ձ՛ չէչեցէ (ՍԿՆ· 9)։ Սկեւռացիին ամբողջ գրութիւնը, որ ընդդիմաբանութիւն է Հռոմի յաւակնոտ գլխաւորութեան, պատրաստուած է ի հրամանէ ընդհանուր Հայոց Հէյթոյ (ՍԿՆ· 1), և յայտնապէս կը վկայէ հեղինակը, թէ վճռ եր խնդիրն ի ժողովն Հայոց (ՍԿՆ· 69)։ Սկեւռացիին պատճառաբանութիւնները Հռոմայեցւոց Պետրոսական դրութեան դէմ, շատ գեղեցիկ և զօրաւոր մասեր ունին, իսկ տակաւ երեւցած մասերը համապատասխան են Լատիններու քաղկեդոնական պատճառաբանութեանց, որոց մօտն տեղեակ եղած կ'երեւի Սկեւռացին, որ նմանօրինակ զէնքերով ալ կը կռուի անոնց դէմ։

1148. Յիշատակութեան արժանի է նաեւ Յովհաննէս վարդապետ Տուեցի, որ առաքինական ձիրքերովը թէպէտ քահանայութեան և վարդապետութեան և յետոյ Թարգմանչի արքեպիսկոպոսութեան ալ բարձրացաւ, բայց առջին վերէն չկրնաց անհաց և անջուր կատարելու սովորութիւնը չհետեւիլ։ Վերջին առիթներ եղած ատեն Երուսաղէմ գնաց, ուր բոլոր մնացած մեծ Յարութիւն եկեղեցւոյն մէջ յոգն կլլով և անհաց, այլ և լուռ ընթացք, զարմացոյց զգիր փառեցոյց։ Երուսաղէմէ դարձին Նորբերդի անապատին մէջ ճգնեցաւ մինչեւ ի խորին ծերութիւն (ՎԱՐ· 155), և վախճանեցաւ 1263'ին (ՎԱՐ· 153)։ Նշանաւոր եղած է նաեւ Յովհաննէս Գաւառնեցի վարդապետը, իւր խստակրօն ճգնութեամբ և Երուսաղէմի մէջ կատարած հրաչալիքներով, որով Տաճիկներէն ալ քրիստոնէութեան դարձողներ եղած են։ Երուսաղէմէ դառնալուն Ասորիք և Փոքր Ասիա չլռեցան, կողոպտեցին քաղաքին մէջ Տաճիկներէ հալածուելով կրակի նետուելու եղան, բայց վառարանէն ազատելով Հռոմկլայ եկաւ կոստանդին կաթողիկոսի մօտ, ուր և մեռաւ մինչեւ իւր մահը ի խոր ծերութեան (ԿԻՐ· 205)։ Կը յիշուի նաեւ երրորդ Յովհաննէս Արմանեցի վարդապետ մը, որ Մխիթար Գօշի սակաւօրեայ յաջորդներէն, Մարտիրոս, Մխիթար, Յովաաիէ և Աբրահամ եօթը, Մխիթարէ, Յովաաիէ և Աբրահամէ ետքը, Գետիկի առաջնորդ եղած է, Հազարծինի վանքէ հան փոխադրուելով 1256'ին, և ապա եպիսկոպոս ձեռնադրուելով անցած է ի Դեդ աթոռն ի Հաղբատ (ԿԻՐ· 116)։

1149. Յիշենք եւս Սահմանոս Արտազեցւոյ վարդապետը, ուսեալ ծանօթ Տէր Յուսկանորդի մականունովը։

ՍՏԵՓԱՆՈՍ ՏԷՐ ՅՈՒՍԿԱՆՈՐԴԻ

Տէր Յուսիկ Արտամետի քահանայ էր, որուն եւ ըէկսկինը թաթարներ գերեցին և վաճառեցին քրիստոնեայ կնոջ մը, Բիբի անուն, որուն քով վերջապէս գտաւ քահանայն իւր ուէկսկինը, և ազատութեան ու պարգեւի գումար մըն ալ առնելով Արտամետ գարձաւ, պայմանով որ նեմ տէր Յուսիկի որդին քահանայանայ, առաջին պատարագը Բիբիի հոգւոյն համար մատուցանէ։ Անկէ ետքը ծնաւ ու մնծցաւ Ստեփան Տէր Յուսկան Որդին, որ հօրը ցրութենը ազգականներու բամնելուն համար, Արտամետէն կը հեռանայ, և Բերկրիի մօտ լերան մը վրայ ճգնարան կամ Արգելան մը կը կազմէ

իրեն։ Աաեն անցնելով Սանփան պանտուած է հօրմէն, բայց ճգնարանը այլ եւս չէ թողած, եւ քահանայանալով մօրը ազատութեան պայմանը գործադրած է, եւ յետոյ վարդապետ եղած, եւ աշակերտութիւն կազմած միեւնոյն Արղեանի վանքին մէջ։ Արքեպիսկոպոսական վախճանած է 1251'ին, եւ իւր յիշատակը Ցայսմաւուրքի մէջ անցած է իբր սուրբ, յունուար 3 օրուան նկատմամբ (ՃԱՍ. Ա. 8), որ իւր մահուան օրը կրնայ ընդունիլ, իսկ ֆէբէճման նոթա չեք մահուանն՝ թէեղէ էր ամենայն ախոյեանց (ԿԻՐ. 91)։ Մինչեւ այսօր կը մնան Բեկկրիի մէջ Տէրյուսկանորդի վանքը, եւ մեր ձակատայ լերան վրայ Արգելանի վանքին աւերակը։

1150. Յիշեցինք Խաչէնի իշխան Հասան Ջալալը, թէ ինչպէս Արղունի ձեռքէն ազատուելով Սարթախի հովանաւորութեան ապաստնած էր, եւ թէ Սարթախի տասնհատասը ազգականներէն սպաննուելովը՝ Արղուն կը զօրանար (§1137)։ Հասան Ջալալ, Զաքարէ եւ Իւանէ Օրբելեաններուն քրոջ եւ Վախթանկ Տանկիկ իշխանի որդին էր, որ մօրը եւ Զաքարէ ու Իւանէ եղբայրներուն հետ Լոռւսաղէմի ուխտագնացութիւնն ալ կատարած էր, եւ չատ բարեպաշտ կեանք մը կ'անցընէր (ԿԻՐ. 145)։ Արղուն անգամ մը չատ նեղած էր զայն եւ ընդ քաղաք պաշարած էր արքեպիսկոպոսական պատրուակով (ԿԻՐ. 175), բայց Հասան Ջալալ յաջողած էր Սարթախի պաշտպանութիւնը վայելել, որուն մօտ ապաստնած էր, եւ իրեն հետ նաեւ Գրիգոր Տղայ ծերունի իշխանը, Դեսում երիտասարդ իշխանը, Մարկոս վարդապետ եւ Գրիգոր եպիսկոպոս (ԿԻՐ. 207)։ Երբոր Արղուն կրկին զօրացաւ, պաշտօնապէս պարսից Ղոնղոր վրաց թագուհին, Խօշաք անոր աղջիկը, Շահնշահ Օրբելեանը՝ Զաքարէի որդին, եւ Հասան Ջալալ Խաչէնի իշխանը։ Առաջինեալը աղաւնեց ծանր փրկանքներով, իսկ Հասան Ջալալը չուզեց թողուլ, ու նեղեր անհաբէն կոպանօփ, եթեալ ֆայ է պարանոցնոցա, և երկոքեան յոպան, և այս գլխաւորապէս վասն աաաեալ էրէսպանէսըլեանն, որուն մեծ պաշտպան էր Հասան Ջալալ, և այս պատճառով ընդունփ էին նմա ամենայն պաճկանաապփ, և յորդորէին վերջապէս ի պատասխան նորա։ Հասան Ջալալի աղջիկը Խուզուքան, ամուսնացած էր Զաքարեանի որդւոյն Բաւրա զօրավարին հետ, և համարձակութիւն ունեցաւ Հուլաւունին դիմել, որ Տօղուզ սիկնոյ միջնորդութեամբ հօրը ազատութիւնը ընդունի։ Սրտնեղած Հասան Ջալալ Խուզուքանի միտքը լսեց, անմիջապէս Հասան Ջալալ Խաչէնցին հրամայեց սպաննել, և երթեալ Տաճկաց անապատ յօշեցին վրայ, և այսպէս մարտիրոսացաւ քրիստոնէութեան հաստատին համար (ԿԻՐ. 229), իսկ մարմինը նետուած տեղէն հաւաքուելով Գանձասարի մէջ թաղուեցաւ (ՎԱՐ. 153)։ Թուականը 1261 գրուած է կիրակոսէ (ԿԻՐ. 230), և թէպէտ Վարդանի մէջ 1251 կը նշանակուի (ՎԱՐ. 152), սակայն պարզ գրչագրութեան սխալ պէտք է ըլլայ, վասն զի քիչ մը ետքը կը գրէ, Ընթ. Խորհըրդոյ Զ որ է կոտրեալ հանգիսաւ, և ժ սուրբ, և յայսմ ընաքեբոնեան եղած է կ'ըսէ երանելոյն հանգիստը (ՎԱՐ. 153)։

1151. Մխիթարի 1261 տարին տեղի ունեցաւ մեծ Զաքարէի որդի Շահնշահ Օրբելեանին մահն ալ։ Շահնշահ ունէր հինգ որդիներ՝ Զաքարէ՝ երիցագոյնն էր Աւագ և Արտաշիր և Իւանէ եղբայրներուն վրայ, և ձեռք առած էր հօրը իշխանութիւնը։ Ամուսնացած էր Ուխտիքի Սարգիս իշխանին աղջկան, իսկ Սարգիս ապաստամբ կը նկատուէր։ Զաքարէի՝ իբր տեղապահ տունը կնոջը տեսութեան երթալը առիթ տուաւ Արղունի՝ Զաքարէն ալ ամբաստանել Հուլաւունի առջեւ, և զնազան քաջութ կուտալով մահուան դատապարտել տալ, անդամ անդամ յօշել և պլոնել ջանց։ Շահնշահ որդւոյն ապաստնութեան գոյժը առնելուն՝ այնչափ յուզուեցաւ, որ է պրոմ-ընենն մնաւ, և Օձուն գիւղը թաղուեցաւ (ԿԻՐ. 231)։ Աանց մահերն ալ քրիստոնէութեան համար նահատակութիւններ նկատուած են։ Սեւադա իշխան մըն ալ, որդի Գրիգոր Տղայ ծերունի իշխանին, զոր վերեւ յիշեցինք, Մուֆարղինի պատերազմին մէջ ապստնեցաւ, և անոր համար ալ գրուած է թէ ման հասչ արեամբ նահատակեան Քրիստոսի (ՎԱՐ. 152)։ Նահատակներուն կարգին պիտի յիշուի նաեւ Սանփանոս վարդապետ, Գեւրե-

քինի ծնրատնի վանահայրը, որ չատ կկրա-
կուբնելով ու ըմպելիներով մեծցած էր
թաթարներու գունդ մը, սակայն նոյն գիշեր
գլխաւորը վատ խոթեր և անոթ ոռթելչեն և
ըմպելչեն կը հիւանդանայ, և իբր թէ վար-
դապետը զայն թունաւորած ըլլայ, չորս ցի-
ցերու պրկելով սրբեցին և խոթվելչեն, ինչ-
ուանթեաց վճռին (ՆՈՒ. 99)։ Մաղաքիա սար-
գայ որ զայդ կը պատմէ, 1257'ին կը դնէ
Ատեփանոսի նահատակութեան թուականը
(ՄԱՂ. 23)։

Տ. ՅԱԿՈԲ Ա. ԿԼԱՅԵՑԻ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՈՒ ՆԱԽԸՆԹԱՑ

1152. *Կաթողիկոսական ընտրութիւնը քիչ մը ատեն ուշացաւ, որովհետեւ այնչափ մեծ էին կրկրին տակնուվրայութիւնը, և մայրաքաղաքին աւերածը, և ազգայնոց չփոթութիւնը ու Հնթում մի սուգը, որ դատարկուած աթոռին մատղցութիւն դարձնել չատ հաւս կը մնար։ Հնթում չարունակ՝ մէկը ապտնուած, միւսը գերութեան դացած զաւակներուն ցաւովը տոգորեալ էր, և Ակների վանքը կը յաճախէր հոգևորական միխթարութիւն գտնելու (ՀԱՑ. 474)։ Աստուածայայտնութեան ատենն ալ՝ Մամնատիոյ մէջ, ո՛ր են Լեւոն ու Թորոս՝ հնծկատանքներովը. բոլոր ներկայ եկեղեցականներն ու իշխանները կը լացնէր (ՀԱՑ. 475)։ Ինն ամիսներ կը լրանային Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսին 1267 տարիին վախճանելէն ի վեր (§ 1143), բայց ընդհանուր սուգին հետ խառնուելովը, յաջորդի ընտրութեան հոգածութիւնը մոռցուած էր, բայց իսպառ ալ աթոռը պարապ թողուլ հնար չէր։ Գործնական պահանջը սահպից ընտրողական ժողով գումարել Մբահ մէջ, որ է նոյն իսկ Մամնատիա քաղաքը, և որ Սիսի տեղածէն նաքը պետութեան կեդրոն էր եղած։ Ժողովին եկողներուն համար յաբէթելչ ինչե- ցկէկէ բաւիլը (ՍԻՍ. 249), արեւելեան եպիսկոպոսներուն ալ մատնակից եղած ըլլալը կը ցուցնէ, և գոյէ անոնց ապտահներին ալ յապաղման պատճառներէն մին եղած էր։ Ժողովը գումարուելու ատեն և կաթողիկոս ընտրելու ատ- ֆանեսոր էրբոպէեան Յակոբ, և հանդիսապէս օծուելու 1268 փետրուար 12'ին, Բաւն Բարեկենդանի նախընթաց, Սահակ Պարթևի և Դևոնդեանց ու վարդապետաց տեղերուն մէջտեղ հանդիպող կիրակին (ՍԻՍ. 249)։ Նորընտիր կաթողիկոսը յիշած ենք արդէն երկրին կատաղդնուպոլիս Յոյներու հետ միաբանական բանակցութեանց երթալուն ատթիւ (§ 1135)։ Իրեն անխտրաբար արուած Սսեցի, Տարսոնացի և Կլայեցի անուններուն չեն ներեր որոշել թէ որը իր ծննդավայրն և որը իր պաշտօնավայրն եղած է, բայց աւելի գործածական եղած է Կլայեցի կոչումը (ՏԱՔ. 638), և զայն մենք ալ ընդունած ենք։ Իսկ այս կոչման հիմ կը նկատենք Հռոմկլայի հայրապետանոցին մէջ մնայուն պաշտօնավարելը, իբր կաթողիկոսին օգնական, մեծ բանագնացութեանց պատրաստիկ (§ 1090), բացակայութեան ատեն տեղը բռնող (§ 1138), և անչատ կաթողիկոսութեան ալ տեղակալ՝ աթոռին 10 ամիսներ պարապ մնացած միջոցին։ Նա անխտիր կոչուած է Գէֆնէկան (ՍԱՄ. 151) և Հռեփոր որ իր ուսումնական կարողութեան ապացոյցն է, և որով գերբերդի յօժոնց կոչել ըսուելու արժանացած է (ՎԱՀ. 227)։ Արդէն Մեծքարի վարդապետանոցին աստղնորդ եղած ըլլան ալ (ՍԻՍ. 196), նոյն բանը կը հաստատէ։ Իսկ Արեւելեայց մատենագութեամբ ընտրութիւը՝ անխարդախ և անկեղծ հայագուսան ուղղութեան յայտարարն է։*

ԱՐԴԻՒՆՔ ԵՒ ԱՐԺԱՆԻՔ

1153. *Յակոբի համար կը կարդանք, թէ ոբ ղբ-ձոռնս ֆչեռնցն գ-ռ-ոբգիոյն քնէցն (ՍԱՄ. 151), բայց իրմէ գրուած այսպիսի աչխատութիւն մը մեզի հասած չէ, և իբր իւ գրական կարողութեան նմոյշ ունինք միայն Աստուածնայ ծննդեան Եբֆեթե+ չարականը*

(ՏԱՔ·638), որ իբր գեղեցիկ ոճովն ու վսեմ իմաստներովը մեծ փոստ մը կ'ընծայէ Յակոբի արժանիքին։ Սոյն չարականին յօրինուածը կը ցուցնէ միանգամայն Աստուածածնայ ծննդեան տօնին սկսելուն ժամանակը, վասնզի Աստուածածնայ տօներէն միայն անոր Ննջման կամ Փոխման կամ Վերափոխման յիշատակութիւնն էր, որ նախապէս Հայ եկեղեցւոյ մէջ կը կատարուէր, իսկ Աւետումն ու Տեառնընդառաջը իբր Աստուածայայտնութեան յարակից կը նշանակուէին։ Այլ թէ Յակոբ իբր կաթողիկոս զայն կարգադրեց և չարականն ալ յօրինեց, թէ կոստանդին կարգադրեց և Յակոբ պատշաճը գրեց, ճշդել դժուար է, պոշակի գլուխ յիշատակ մը չգտնուելուն։ Յակոբի պէս ուսումնական անձի մը վայել էր Ընդհանրական գիր մըն ալ պատրաստել, և պարտաւորաշունչ հրամանգներն ու հրամաններըը տալ եկեղեցական բարեկարգութեան կանոններըը յիշեցնելով, և այդ միտքը ունեցած ըլլալը պատմական յիշատակներէ կը քաղուի։ Միայն թէ հայրապետանոցի դիւանին մէջ գտնելով Ներսէս Կլայեցիի նշանաւոր Ընդհանրականը (§ 963), և հիանալով անոր պարունակութեան վրայ, պէտք չէ տեսած իբր կողմէն նոր մը խմբագրել, և գոնացած է զայն արտագրել տալ բազմաթիւ օրինակներով, և զայն հատատող և անոր ընթերցումը հրամայող թուղթ մը իր կողմէն աւելցնելով ցրուած է բոլոր դվնաւոր վիճակները և հայրապետութեան կեդրոնները (ԶԱՄ·Գ·268)։ Յակոբ կայեցիին կողմէ Ներսէս Կլայեցիի մասին ցուցուած այս յարգանքը, պէտք չէ երբեք ձախողակի մեկնութեան տանիլ, իբր թէ նոր սչխատութենէ խուսափելու նպատակով ևղած ըլլայ, որովհետև այդպիսի աշխատութիւն մը երբեք ծանր պիտի չգար Գիանացի կաթողիկոսի մը։ Մինչ միւս կողմէն մնծապէս դուսաւելի պէտք է ըսուի, նախնեաց յիշատակին հանդէպ ցուցցած ակնածանքը, և ճշմարիտ արժանաւոր համար վկայած անկեղծ գնահատումը։

1154· Երբ այդ ամէնը կիլիկիոյ մէջ տեղի կ'ունենար, Թագաժառանգ Լեւոնը Եգիպտոսի մէջ դերի կը մնար։ Եգիպտացի քանակը 15 օր կիլիկիան ամբողջ աւերելէ և աւարելէ ետքը ճանպայ եղած էր, Լեւոնն ալ կալանաւոր տանելով (§ 1142), որպէս զի փնտռուքատար ՍուլտանինՍուլտանին ներկայացնէ, ԳԵՐԵԳԱՐԶԸ որ չէր ընդ ղբօքն եկեալ։ Սուլտանը Լեւոնի գնոտոպոն քանս լսեալ, ընա ոչըվ հեծաս պատռեալ էր, և հրաման ալ տուած էր որ Երուսաղէմի ուխտագնացութիւնը կատարէ իբր կալանաւոր, և անկէ յԱլէքսոս յառաջացեալ էր, և անդառնալ է քանս ածեալ էր չղթայակապ արքայորդին (ՎԱՀ·225), որ երեսնամեայ էր եղեալ այդ միջոցին։ Լեւոն քանտին մէջ հանգիստաւոր և հոգեսէր կեանք մը ունէր, որ ղսալտանն է ֆօքն չարժեց, և է կապանաց ընա ածեալ, և գէշ սա ինչն հեծաբեալ պահեց (ՎԱՀ·226)։ Կ'ուզէր իսկ անոր ազատութիւնը չնորհել, բայց կը սպասէր որ առաջին քայլը Հայոց Թագաւորին կողմէն ըլլար։ Հեթում ընդհակառակն յուսալով որ Արեւմտեան ու Արեւելքէն, Լատիններէն ու Թաթարներէն օգնութիւն պիտի հասնի, և Եգիպտացւոց վրայ յաղթութեամբ մը պիտի կարենայ զաւակին ազատութիւնը կարգադրել· երկար տանն դիմումի պաղատիքը չունեցաւ, մինչև որ տարիներէն անցաւ վրան, և այնուս յուսահատելէ եղաւ երկու կողմէն ալ գալիք օգնութեանց վրայ։ Այն ատեն միայն սկսաւ Հեթում, իր զաւկին ազատութեան համար Եգիպտոսի սուլտանին դիմումներ ընել։ Փնտռուքատար Պաղատատ գտնուած էր, քաղաքին Հուլաւունէ գրաւուած միջոցին (§ 1137), այլ յաջողած էր փախչիլ Սղըր անուն երիտասարդ ազգականին հետ։ Թաթարներուն հետապնդած ատենը՝ Սղըր իր լաւ ձին փնտռուքատարի էր տուած արագ փախչելու համար, վստահանալով որ նոյն ինքն տկար ձիով գերի ալ իյնայ Թաթարներ իրեն մանկութեան կը խնայեն և չեն սպաններ, և այսպէս ալ եղած էր։ Բայց փնտռուքատար իրեն պարտք մը կը սեպէր Սղըրը գերութենէ ազատել (ԶԱՄ·Գ·265), և երբոր Հեթումի դիմումը առարար, պայման դրաւ փոխանակել զայն Սղըրի հետ, որուն անունը Սղուր (ԶԱՄ·Գ·255), և Անգաղըսար (ԶԱՄ·Գ·268), և Սանկոլսար (ՀԹ·52) և Անգալչար ալ (ԿՒՀ·395) գրուած է։ Հեթում

պատասխանցաւ դիմել Ապաղա խանին Պղրի պատերազմի համար, զոր խանը սիրով չնորհեց բարեկամը միխիթարելու համար, և այս փոխանակութեամբ և բերդ մը տալով ու երկուք ալ քանդելով, ու եղբարբ դաշինս եղեալ, և ընծայասիրեցան կատարեալ (ՎԱՀ. 226), յայղոցաս Հեթում իւր թագաժառանգ որդին պատանի կալանաս կը հանդարձակի ընտրել և անէաս կոչել այդ դաշինքը (ԿԱՀ. 394). որով Հայերը Լատիններու հետ ունեցած դաշինքին խզած պիտի նկատուէին, սակայն մենք աւելի վեհասակար և անիրաւ կը դանենք, Հայերուն Լատիններէն հրապուրուելով նորէն եգիպտացւոց հետ թշնամանալնին, որով հետզհետէ իրենց վտանգը և կործանումը պատրաստելին եգիպատցիներուն երեսէն։ Երանի թէ այն դէպ ատրեսրիեան, որ եղէ հոգւոյն և աչխարհիս Հայոց (ՍԱՄ. 151), և որով Հայեր բովանդակ ընդդէմ երթեալ և ցնծութեամբ Լեւոնը պեռելու կ'ուրախանային, անփոփոխ մնացած ըլլար, և անգամ մը որ եգիպատցւոց կողմէ հալածուած էին, կրկին անոնց գաւառը չհրաւիրէին։ Լեւոնի գերութեան տեւողութիւնը ամ մի և փառ ամիս եղած (ՎԱՀ. 226), և գերութիւնն ալ 1266 անպատմերին հանդիպած ըլլալով (§ 1142), 1268 յուլիսին պէտք կ'ըլլայ դնել անոր ազատութիւնը, և աւելի ճշդութեամբ, յունիս 24'ին կը դրուի Դամասկոսէ ազատ խոտորիլը (ՍԻՍ. 555)։

ՀԵԹՈՒՄԻ ՄԱՀԸ

1155. Յակոբ կաթողիկոս դեռ քանի մը ամիս առաջ սիրտ բարձրացած էր, և բարեպատեհ պատրազոյով մը կը սկսէր իւր հայրապետութիւնը։ Հեթում որդին չատ յոգնած, և վերջին արկածներէն աւելի եւս զգածուած, հոգւով թէ վէրան չկենդանանալ, անմիջապէս ընդդատելով յաջորդ կոչել։ այն որ Յակոբ էր անհանգիստ, կ'առաջարկէր և կը տոիպէր, որ ինքն բոլորովին գործէ քաչտի, և թագաժառանգը նոքա՝ որ լինի ծերել, ինչ որ առկայն Լեւոն, ընդ քաղաք անգամ արկել չընդունցաւ և քնաւին չկրնար ելանել մերժեց (ՎԱՀ. 227)։ կաթողիկոսին ալ հնար չէր կատարել այնպիսի առաջարկ մը, որ ազգը կրնար զրկել կարող և փորձառու վեհապետի մը հովանաւորութենէն։ Սակայն Հեթում Ապաղայի այցելութեան և չնորհակալութեան երթալու պատրաստով Կիլիկիայէ մեկնեցաւ դէպի Դամբէժ, ուր կը գանուէր Թաթար խանը, և Լեւոնի հարկ եղաւ քաղաքավարութեան գործերը ատանձնել, նախ ոչ թագաւորի անունը։ Հեթումի դատնալէն ետքը նորէն կը կրկնուէին հրաժարելու առաջարկները, բայց այս անգամ ալ պատշաճ դատեցաւ, որ Լեւոն ինքն ալ Ապաղայի մօտ երթայ, թէ չնորհակալութիւն յայտնելու և թէ իրը ապագայ թագաւոր Հայոց, անոր հետ անձնապէս բարեկամական յարաբերութիւններ հաստատելու, և այսպէս 1269'ին Լեւոն ալ Կիլիկիայէ մեկնեցաւ, և երկրին կառավարութիւնը Հեթումի ձեռքը մնաց։ Միայն Լեւոնի վերադառնալէն ետքն է, որ Հեթում վերջնականապէս ձեռք քաշեց թագաւորական և աչխարհական գործերէն, և հրաժարեալ է ըստ կենցաղոյս եմոտ է կրօն (ՀԵԹ. 52), և դեռ ղղկմաբ կրօնաւոր եղեալ Մակոբ անուանեցաւ (ՍԱՄ. 151)։ Որչափ ալ Հեթում կրօնաւորի սքեմ հագնելով և անունն ալ փոխելով իապաս հրաժարած և զաս թագաւորութենէ, սակայն Լեւոն ոչ մի կերպով յանձնառաւ չեղաւ թագն ու անունը ատանձնել, այլ պարզապէս Աւոթ պրն անունով սկսաւ վարել թագաւորական իշխանութիւնը, իբրեւ ինամակալ կամ տեղակալ որքանական գահին։ Հեթումի ատանձնացած տեղը Ակների վանքն էր (ՍԻՍ. 154), Հեթումի անկողջ մնծին Լեւոնի ծագկեցուցած պրքավայրը (§ 1096), ուսկից կը յայտնուի թէ պարզ հայկական վանականութիւնն էր Հեթում Աւագինի ղեկանոյն կոչէ ընկալեալ (ՎԱՀ. 227) կրօնաւորիլը։ Կարծես թէ նախապգացութեամբ մը Հեթում մօտալուտ տեսած էր իր վախճանը, զի վանք ատանձնառաւէն չետ տակաւ ժամանակ հանգեաս խաղաղութեամբ չորն 1270, ինչպէս կը գրէ Հեթում պատմիչը (ՀԵԹ. 52), և կը ձայնակցին թուականին մասին Սմբատ ալ (ՍՄԲ. 125). Անեցիին չորանակարն ալ (ՍԱՄ. 151), թէպէտ Յայամաւորքը 1271 կը դնէ։ Օրուան մասին ալ Յայամաւորքը մայիս 22, չորեքչաբթի կ'ըսէ (ՅԱՄ. Ա. 229), զոր ուրիշներ հոկտեմբեր 25ին (ԹՈՐ. Բ. 382) կը դնեն. սմանք ալ, ինչպէս և Յայամաւորքը ուրիշ տեղ (ՅԱՄ. Բ. 209) հոկտեմբեր 28'ին

նշանակեն, կրօնաւորին ալ միայն ութն օր առաջ հոկտեմբեր 20'ին հաչուելով (ՍԻՍ. 555), որ չատ չյարմարիր պատմիչին յեր առաջ ժամանակի բացատրութեան։ Այդ վերջին թուականները ստուգելու միջոցները չունինք, սակայն, թէ 1270'ին և թէ 1271'ին մայիս 22'ը չորեքշաբթիի չինար, այլ 1270'ին Համբարձման հինգշաբթի օրն է, և 1271'ին Հոգեգալուստին նախընթաց ուրբաթին կը հանդիպի, նոյնպէս 1270 հոկտեմբեր 28'ն ալ երեքշաբթիի կ'ինկնայ։ Ուստի մահուան օրը ճշդելը նոր հետազօտութեանց թողլով, իբր հաւանական կ'ընդունինք 1270 մայիսին կրօնաւորիլը, և հոկտեմբերին վախճանիլը։ Իսկ թաղումը եղաւ Դրազարկի վանքը արքայական դամբաններուն կարգը. ուր օշնեցիներէն երբեմ բերին (ՎԱՀ. 227), և մեծահանդէս յուղարկաւորութիւն կատարեցին։ Հեթում Զապելի հետ ամուսնանալով 1226'ին թագաւորութեան բարձրացած էր (§ 1105), որով 45 ամբողջ տարիներ իշխանութիւն վարեց, և պարզ գըրչագիրի սխալ պիտի ըսուի տեղ մը ըսել հընգեակաան ԹագաւորեաՑ՝ գրուած ըլլալը (ՀԱՒ. 52)։ Յակոբ կաթողիկոս որ քիչ առաջ, Լեւոնի գերեզմանին նախագահած էր, Հեթումի մահուան տխուր յուղարկաւորութիւնը պարտաւորուեցաւ կատարել, որ ատրաժամ նկատուելու, դի հակառակ երկարատեւ իշխանութեան, տակաւին 58 տարեկան էր Հեթում, և դեռ կրնար երկրին բարօրութեան ծառայել։

1156. Բոլոր պարագաները կշռելով, անտեղի չէր արքայորդի Լեւոնին անմիխիթար տխրութիւնը, որ

ԼԵՒՈՆԻ — այնքան առաջ առեալ, դինչ
ՕՇՈՒՄԸ — հանուլ չէ հնարաւորեալ,
չէր հաւանական առժամեայ

ընթացքել, այլ վերջը ամէն առաջ առեալ. փոր անյամբ և վշտացեալ օրերը կ'անցընէր, ընդհանրապէս իւրայնոց ալ՝ որք թագաւորութեան և օժտման փոխարէնը կը պահանջէին, նայն իսկ պետական գործոց կանոնաւորութեան և արտաքնոց ապահովութեան համար։ Երբոր ամէն կողմէ խոհանձանքներ կը չտանային, նամանաւորելով յորդորներ կը յղէին նաև վճռաւ խոսար ոք յիշիցիոս առաքան կոչել, և Ապարա ոք խանն էր անառաքել, եւս և Միքայէլ Պալէոլոգ որ 1261'ին յունական կայսրութիւնը վերանորոգած էր Կոստանդնուպոլսոյ մէջ՝ Լատինները հեռացնելով։ Վերջապէս Լեւոնի դըժկամակութիւնը յաղթուեցաւ, և Յակոբ կաթողիկոս գլուխ կանգնեցաւ հաստարակաց բազձանքին կատարման, և զՊովհաննէս Հայթոնեան կոչել, և գնացեալ լուրերն բերել հասուածոց Տարսոնի մէջ, և անդառնալ ընդ ծովեալ, արքունի գահին վրայ նստեցուց Ռուբինեան հարատութեան երրորդ թագաւորը՝ Լեւոն է և Հեթումէ ետքը (ՎԱՀ. 228), ինքն ալ բախտակից ըլլալով Գրիգոր Ապիրատի, (§ 1064) և Կոստանդին Բարձրբերդցիի (§ 1105) զգացած մխիթարութեան։ Լեւոնի օծման օրը կը նշանակուի 1271 յունուար 6 (ՍԻՍ. 270), և եթէ գերեզման առաջ բռնած ըլլալը հաչուի առնենք, կը հաստատուի Հեթումի նախընթաց հոկտեմբերին վախճանած ըլլալը, Միանգամայն կրնայ արդարանալ պատմագիրներուն 720 Հայոց թուականի յիշելն ալ (ՍՄԲ. 125. ՍԱՄ. 152), զի հօքին օր ետքը 1271 յունուար 13'ին կը սկսէր Հայոց ամանորը լատինական կազանդէն չատ քիչ տարբերութեամբ։ Լեւոն Հեթումեան նոր պատմութեանց մէջ երբեմն Բ և երբեմն Գ թուանամարով կը կոչուի։ Հինները չունէին համանուններուը թուանամարով որոշելու սովորութիւնը, և նոր պատմութիւն գրողներ սկսան պատշաճեցնել զայն հինեւրուն վրայ։ Ռուբինեանց մէջ երրորդ Լեւոն էր Հեթումեանը, Կոստանդինեանէն (§ 934) և Սեւբեանեանէն (§ 1019) ետքը, և այդպէս ալ Լեւոն Գ անուանով կոչեցին առաջիններըը (ՋԱՄ. յա. 85), այլ վերջէն նորեր Կոստանդինեանէն լոկ իշխանապահ և Սեւբեանեանին առաջին թագաւոր ըլլալը նկատողութեան առնելով, Լեւոն Բ կոչեցին Հեթումեանը (ՍԻՍ. 555), թէպէտ և ուրիշ տեղ ալ զանց չեն ըրած Լեւոն Ա նոյնպէս Կոստանդինեանը (ՍԻՍ. 45)։ Մեզի լատագոյն կ'երեւի Կոստանդինեանը թուանամարէ չհանել, և Լեւոն Գ կոչել Հեթումեանը, և այսպէս չսրտնակել յաջորդ Լեւոնները։ Լեւոն Գ ալ ոչ նուազ նշանաւոր եղաւ իր գործունէութեամբ, քան Լեւոն Բ Սեւբեանեան առաջին թագաւորը, և արչափ ալ իրեն մերձաւորին ըլլայ իր գործերուն վախճամ Բա-

բանին, սակայն պատմած իրողութիւնները ճշմարիտ արդիւնքներ կը պարունակեն (ՎԱՀ. 229—230), զոր համառօտելով կը կրկնէ տարեգրողը, թէ էր այր հեղ ի երկիւղս եւ ի ժառանգել, տպզրաբեալ ի պրկեալ, ուղղաճ եւ առնիպէէ բռնութեցոյ, ոչխէ վկնեղեցէ, վճռօքայ եւ վկնեղեցականս։ Եւ իրրեւ յատուկ արդիւնք կը յիշուի, թէ Մնծքարի վանքը տուն նոցին վարդապետաց վանք վարձել վճռնուս (ՍԱՄ. 152), կամ ուրիշ բացատրութեամբ, նոր վարդապետանոց կամ դպրեվանք մը հիմնարկեց Մնծքարի մէջ, ինչ որ կանուխէն ըրած մի գործը պիտի ըլլայ, վասնզի Յակոբ անոր առաջնորդն էր նշած կաթողիկոսութենէ առաջ (§ 1152)։ Հարկաւ այդ վերջին կարգադրութեանը համար իրեն թելադրող նգաւ ուսումնասէր և ուսումնական կաթողիկոսը։ Դիտուած է որ մեղի հասած գրչագիրներէն չատեր այդ միջոցին կը պատկանին, և հին յիշատակներն ալ կը նշանակեն գիրքերու օրինակներ չատցընելու և ամէն կողմ, մինչև իսկ Իտալիոյ Հայ գաղթականութեանց (ՀԱՒ. 485), արրուելու համար Լեւոնի և Յակոբի համաձայնքները, որ հաւատարմագիս պատիւ կը բերեն Գրոեբ թագաւորին և Գլխնական կաթողիկոսին (ՍԻՍ. 519)։

1157. Լեւոն Գ բանական գժուար կացութեան ներքեւ կը գտնուէր, քաղաքագիտական տեսակէտէն ՔԱՂԱՔԱԿԱՆ երեք տարբեր և ներհակ ԿԱՑՍԻՒԹԻՒՆ ազդեցութեանց ներքեւ ճնշուելով։ Եգիպտացիք յայտնի թշնամիներ էին, և լատին քրիստոնեայ իշխանութիւնները Ասորիք բնակիչ ընելու ուխտադրած տեղերնին՝ ոչ ոք չէին վրիպեցնար Հայերն ալ, որ քրիստոնեայ ու լատիններու հետ սերտ յարաբերութեան մէջ էին, և անոնց ձեռքին ներքեւ կը նկատուէին՝ Լեւոն Բ'ի օրէն հաստատուած տուտական և գերիշխանական դրութեան զօրութեամբ (§ 1055)։ Բայց միւս կողմէն բարեկամական դաշնադրութիւն մը կնքուած էր Փիլոմետորի և Հեթումի միջև, և տակաւին միայն կրցած էր Լեւոն գերութենէ ազատուիլ և իշխանութեան անցնիլ (§ 1154), և չէր կրնար երթալ զայն մատնացոյց ընել։ Միւս կողմէն թաթարներու և Հայերու միջև կանխաւ հաստատուած բարեկամութիւն և պաշտպանութիւն մը կար, որ նորոգուած ալ էր նոյն իսկ Լեւոնի ազատութենէն և եգիպտացիներու հետ հաշտութիւն և բարեկամութիւն կնքելէ առաջ։ Սակայն թաթարներ միշտ թշնամի մնացած էին եգիպտացիներու, և Հայերն ալ իրենց նիզակակից գիտնալով, պահանջ հրաւիրած էին զինուիլ 1269'ին, երբ Ապաղա խան եգիպտացիներու հետ պատերազմը նորոգել կը մտածէր (ՍԻՍ. 555)։ Լատիններ միշտ ինքզինքնին Հայերուն վրայ գերիշխան կը ճանչնային Լեւոն Բ'ի թագադրութեան ատեն ընացած իրաւունքով, և իրենց կէս նպատակի ունենալով երուսաղէմի ազատութիւնը և իսկամ սիրապատութեան արեւելքէն, գոնէ Պաղեստինէն և Ասորիքէն հեռացուիլը։ Միշտ կը մտածէին խաչակրութիւնները նորոգել, և իրր քրիստոնեայ բանակին յատկամարտիկ և օգնական կը նկատէին Հայոց կիլիկեան թագաւորութիւնը։ Հայերէն ալ կը պահանջէին եգիպտացիներու դէմ պատերազմի ելլել, բնաւ կարեւորութիւն չտալով Հեթումի կնքած հայեգիպտական դաշնադրութեան, զոր ընտակ ընդդէմ կը դատէին (ԿԱՂ. 394), և այս տեսութեամբ պատը դէն իրր չեղեալ, և Հայերն ալ անոր պահպանութեան պարտաւորութենէն ազատ կը նկատէր։ Եգիպտացիներ՝ թէ Թաթարներէն և թէ Լատիններէն հաւատարմագիս թշնամի նկատուած տեսն, անուղղակի բարեկամութիւն մը կը ծագէր այս վերջիններուն միջև, չտեսի նոյնութեան տեսակէտէն, թէպէտ չատ հեռու էին կրօնի և ազգի, կրթութեան եւ նպատակի տեսակէտով։ Յոյներ այդ միջոցին տասնաձինն ուղղութիւն չունէին։ Միքայէլ Ը Պալէոլոգ, որ յաջողած էր կայսերական գահը դրաւել 1260'ին Յովհաննէս Դ Լասկարիս մանուկ կայսրը կուրացնելով, և յաջորդ տարին ալ Նիկիայէ կոստանդնուպոլիս փոխադրուած էր, Բազդավինոս Բ լատին կայսրը հալածելով բոլոր մնացորդ խիները դարձուցած էր հաչտարար յարաբերութիւններով իր դիրքը ամրացնել, և այս նպատակով Հեւոմի հետ ալ միարանութեան բանակցութիւններու սկսած էր, որպէսզի Լատիններու դրգռութեան առջև տնէ, և այնպես կոստանդնու-

պոլսոյ կայսրութեան վրայ այլ չդարձնեն։ Ըստ այսմ յունական ուղղութիւնը կնպաստ մը լատինականին կը խառնուէր, և Լեւոնի և Հայերու համար չորրորդ տեսակէտ մը չէր կազմեր։

1158· Լուդովիկոս Թ Գաղղիոյ թագաւորը, 1248'ին փորձած խաչակրութեան ձախողեալէն ետքը (§ 1131),

ԼՈՒԳԴՈՒՆԻ ԺՈՂՈՎԸ

Սուրբ Տեղեաց ազատութեան խորհուրդը չէր լքած, ուստի նոր խաչակրութիւն մըն ալ ձեռնարկեց 1270'ին, որ ութերորդն ու վերջինը եղաւ։ Այս անգամ ալ արշաւանքը Թունուզէն սկսաւ, բայց ժանտախտի բռնուելով մեռաւ օգոստոս 25'ին, քաղաքին պաշարման ատեն, և խաչակրութիւնը ապարդիւն մնաց։ Սակայն Սուրբ Տեղեաց խնդիրը դեռ արեւմտեան եկեղեցական գործիչները կը զբաղեցնէր։ Գրիգոր Ժ պապ 1271'ին աթոռ բարձրանալով, սկսաւ մեծ եռանդով նոյն նպատակին հետեւիլ, և 1273'ին մեծ ժողով մը հրաւիրեց Լուգդունի մէջ գումարուելիք, որուն մէջ պիտի յուղուէին Արեւմուտքին եկեղեցական բարեկարգութեան խնդիրէն զատ, Յոյն և Լատին եկեղեցիներու միաբանութեան, և Սուրբ Տեղեաց ազատութեան հարցերը։ Գրիգոր պապ ամբողջ արեւելքն ալ այդ ժողովին հրաւիրեց, ուր Յոյն կայսրութեան և Յունական եկեղեցւոյ ներկայացուցիչներէն զատ՝ կ'ուզէր որ գանուէին Հայոց թագաւորն ու կաթողիկոսն ալ, որոնց առանձինն առանձինն գրեց (ԿԱԼ· 397), և մինչեւ իսկ Թաթարաց խանին հրաւիրագիր ուղղեց։ Լուգդունի Բ'րդ ժողովը, որ Լատիններուն մէջ տիեզերական կը սեպուի, բացուած է 1274 մայիս 7'ին պապին նախագահութեամբ, և 500 եպիսկոպոսներու և 1000 վանահայրերու և վարդապետներու ներկայութեամբ, և Սպանիոյ ու Գաղղիոյ թագաւորներուն և Յունաց կայսեր և Թաթարաց խանին պատգամաւորներուն մասնակցութեամբ։ Առաջին նիստին մէջ որոշուեցաւ եկեղեցական հասոյթներուն տասանորդը վեց տարի չարունակ Սուրբ Տեղեաց ազատութեան գործածել։ Մայիս 18'ի և յունիս 7'ի նիստերը լատինական բարեկարգութիւններով զբաղեցան։ Յունիս 29'ի առաքեալաց տօնին Պետրոս Թարանտազ Օրդրէհանի եպիսկոպոսը և յուլիս 6'ի նիստը Յունաց հետ միաբանութեան կէտերը որոշելու և հրատարակելու անցան։ Յուլիս 6'ին Թաթարաց խանին պատգամաւորներէն մէկը մկրտուեցաւ, և վերջապէս նոյեմբեր 1'ին հանդիսաւոր փակումը տեղի ունեցաւ։ Այդ մանրամասնութիւնները յիշելով նպատակ ունիմ դիտել տալ, թէ ժողովական գործերու մէջ (գիւղ· Ա· 1194—1202) քանի Հայերու անունը յիշուած չէ, և չենք գիտեր թէ ուստի քաղուած է Լեւոնի պատգամաւորներուն Լուգդունի ժողովին գոնուիլը (ՍԻՍ· 555), զոր ոչ ոք, նոյն իսկ Կալանոս ալ (ԿԱԼ· 397) չյիշեր, և ուրիշներ ալ գրած են, թէ Հայոց կողմէ ընդ պատահաճ էին, ալ ելեւէմտ (ՉԱՄ· Գ· 271)։ Բայց ևթէ ընդունինք ալ, թէ Լեւոնի արքունի պատգամաւորները կիլիկիայէ Լուգդուն գացած ըլլան, յայտնի կը վկայուի, թէ Հայեր լոկ քաղաքական պարծանէլութիւն մը նկատած են Լուգդունի ժողովը, և եկեղեցական կերպով չեն մասնակցած և եկեղեցական կարեւորութիւն չեն տուած։ Այս տեղ հնար չէ առանց դիտողութեան անցընել Յակոբ Բ կաթողիկոսի զգուշաւոր և ճարտար ընթացքը, որ հեռուէն զննելով Լատիններուն և Յոյներուն միջեւ մշակուած միաբանական յարաբերութիւնները, և տեսնելով Միքայէլ Պալէոլոգ կայսեր համարձակ կերպով Լատիններուն մօտենալը, խոհեմաբար սեպած է լռութեամբ անցընել պապական հրաւէրը, ոչ պատասխանել և ոչ պատուիրակ ղրկել, և ոչ ալ ժողովին մասնակցիլ, և այսպէս անցընել պարագաներու ստիպողականութիւնը և հարկեցուցիչ բռնադատութիւնները, որոնց Յոյներն ալ գլուխ ծռելու կը պարտաւորուէին, վերահաս վտանգներէ զերծ մնալու համար։ Նոյն եղած է Լեւոնի ալ ընթացքը, որ ըստ սմինեան հաւանականութեան հասնձայնած է հայրապետին՝ ներկայացուցիչ չղրկելու մասին, բայց ևթէ ինքը ղրկած ալ ըլլայ, առանձինն եւ լոկ քաղաքականապէս մասնակցելով, խուսափած է եկեղեցական միութեան վտանգէն, և ազատ և անխոտան պահած է Հայաստանեայց եկեղեցւոյ սիրտը։ Այս եղած է Յակոբի և Լեւոնի օրերուն տիրող ուղղութիւնը։

1159· Պատմած ենք Սմբատ Օրբելեանի

Թաթարաց հովանաւորութեան ներքեւ Միւնեաց նահանգին վրայ իշխանութիւն վարեցը (§ 1132)։ Ամրաստի եղբայրներէն մնացած էին Իւանէ և Ելիկում, մէյմէկ զաւակներ թողլով, Բուրթել Իւանեան և Լիպարիտ Ելիկումեան, փախրադուլ ալ վաղամեռիկ եղած էր անորդի, Բուրթել ալ 1261'ի պատերազմին ըսպանուած էր, Լիպարիտ չատ պզտիկ էր, և ծայր Ամբաղայ յԱղուանից՝ դէպի կրկնեբ եղբայրն իր Տարսայիճ, որ ամուսնացած էր արաբացի իշխանի մը Արուզ կամ Արուսակ աղջկան հետ, որ եղեր էրէոպանեայ և երեւելի հաւատով և երկիւղած յԱստուծոյ։ Տարսայիճի զաւակներն եղան Ելիկում, Սահփանոս և Փախրադուլ (ՕՐՔ. Բ. 162), որոնցմէ Սահփանոսը, Ամբատ արքեպիսկոպոսեալ էրեան, պայ չատուածն էրց և ի հրահանգս տհանայուրեան (ՕՐՔ. Բ. 166), և սա է Սահփանոս Օրբելեան, արքեպիսկոպոս և պատմիչ Միւնեաց։ Ամբատ հաւատարապէս սիրելի էր Հուլաւուն և Ապաղա խաներուն, ասէպ անոնց մօտ կը գանուէր, և այդ յարգելութիւններէն միոյն ատեն վախճանեցաւ Դավրէժի մէջ, իւր մօտ ունենալով վերջին պահուն Շալուէ վարդապետ մը (ՕՐՔ. Բ. 166), իսկ մարմինը փոխադրուեցաւ Թալուեցաւ Նորավանքի մէջ 1273'ին (ՕՐՔ. Բ. 167), և անորդի ըլլալուն իշխանութիւնը անցաւ Տարսայիճ եղբօրը։ Ամբատի նշանաւոր գործերէն մին կը սեպուի, ոչ միայն Թաթարներուն, այլ նոյն իսկ վրաց Դաւիթ թագաւորին, Գէորգ Լաչայի որդւոյն ալ համակրութիւնը գրաւած ըլլալը, որով կրցաւ ազել ու ջնջել աւել այն նզովքը անժառանգութիւնը, որ Գորգի թագաւորին օրով գրուած էր Վրաց Օրբելեանց ազգատոհմին վրայ (§ 1021)։ Գալով Տարսայիճի, չատ յաջող ու փառաւոր եղաւ անոր իշխանութիւնն ալ։ Այր ուժեղ և արիւծ և պարթամբ, և հասկաս ահաբեկ, որ ամէն պատերազմներու մէջ անպարտելի զբօսնիւնս ցոյց նէր, և ինն անգամ վտիտալ անձամբ ղպարեբաղմ, թէ հիւսիսային ազատատեղներու, թէ Հուսմոց թուրքերու և թէ Ասորիքի եգիպտացիներու դէմ յաղթական եղած էր՝ թաթարաց հետ միասեղ պատերազմելով, որոնցմէ ոչի բալէշ պարգեւին ալ արժանացած էր, վ այն իսկ էր յաղնուեան պարճան (ՕՐՔ. Բ. 170)։ Ուրիշ տեղ ալ յիշեցինք թէ բալիշը տափարակաձեւ և չատ մեծ տակի մետալ մըն էր, թիղ մը արտաքինով և վրայ մը կշխտով (§ 1148)։ Տարսայիճի յաջողութեանց աւետած բերող պարագայ մը եղաւ, որ աս կենսաստուածն ամառնան, Խալէնի նահատակ իշխանին Հասան-Ջալալի աղջիկը ու Աթաբէգ իշխանին քոյրը՝ Մինա խաթունը առնոյ է նորին, ընդ որ ալ հաճեցան օրէնք և վարդապետք եկեղեցւոյ (ՕՐՔ. Բ. 170)։ Օրբելեան այսչափով կը վակէ իր հոր կրկնամուսնութեան մեզադրանքը, առանց բացատրելու թէ ինչ պատճառանք յարմարցուց նա իր դործին, և թէ ինչ եղաւ Արուզ խաթունին վիճակը, ու երբ անոր վախճանը։ Ընդհակառակն երկարօրէն կը յիշատակէ Տարսայիճի ազդեցութիւնն ու բարեբերիւնը, որ ջնարբէթոնեան աշխարհին Հայոց ձեռք անցընելով, բազում գերեզմանին և ազբմանին առնէր նեղեալ ազգին Հայոց, 150 և աւելի եկեղեցիներ ու վանքեր՝ աւերակել կ'ազատէր, և իբր ազբմած և գերած այնչափ հազար հանած էր, որ Նախիջեւանի մէջ, խալ կանգնելէն և անառաջ նորա կոչէին (ՕՐՔ. Բ. 173)։ Երեւի թէ Արուզի մահուամբ ազգրինութիւնը դադրած և կրկնամուսնութիւնը չատով երկրորդ ամուսնութեան կերպարան առած է, որ ժողովրդական գայթակղութիւնը չէ զօրացած։

1160. Երբոր փոքրիչատէ հանդարտ էր Հայաստան, հանդարտութիւն չունէր Կիլիկիա, հարատէն եգիպտացիներէն և հիւսիսէն Սելճուքներէն յարձակումներ կրելով։ Սիսի 1266'ի աւերումէն առքը (§ 1142), հետզհետէ նորոգութիւններ կատարուած էին քաղաքին մէջ՝ և պրիսէ քաղաքն ու եկեղեցիներ իրենց առաջին պայծառութիւնը կը վերատանային, երբ 9 տարի առքը 1275'ին՝ աւերածը նորոգուեցաւ։ Հայկազիպատական հայրապետութիւնը, զոր կնքած էին Հեթում և Փիլոսթորգ 1268'ին (§ 1154), և որ բանագատական գործ մը եղած էր, իբր Լեւոնի ազատութեան միակ պայման, գրեթէ մեռեալ տար մնացած էր, հակառակ չահերու բազմութեան (§ 1157)։ Եգիպտացիք չէին կրնար զայն անտեսել, և հայոց աչքով չէին տեսներ հայե-

ՕՐԲԵԼԵԱՆՔ ԵՒ ՏԱՐՍԱՅԻՃ
ԵԳԻՊՏԱՑԻՈՑ ԱՐՇԱԻԱՆՔԸ

բուն՝ մէկ կողմէ Թաթարներուն և միւս կողմէ Լատիններուն մօտենալը, ուստի հաշտութիւնը եղծուած սկսելով, որոշեցին արշաւել Կիլիկիա։ Վահրամ Եգիպտոսի սուլտանը կը մեղադրէ, թէ ինք երբեմն ոտքնքանել, և ալ նախկին ազդ պղծել, այլ ներքնքաբ ապստամբել Կիլիկիոյ վրայ յարձակած ըլլայ, ինքն ալ անյոյսին ընծա զբօսն եղել (ՎԱՀ. 231)։ Իրօք ալ Փետրուար 1'ին Եգիպտոսէ մեկնելով, մարտին մէջ Կիլիկիա հասաւ իր գունդերով (ՍԻՍ. 555), որոնք գիւղեր և քաղաքներ այրեցին, չատ մարդիկ կոտորեցին, Մամեստիոյ մեծ կամուրջը կործանեցին (ՍԱՄ. 152), Տարսոնի տաճարը քանդեցին (ՎԱՀ. 232), և Միս ալ մտան, եկեղեցի և ապարանք աւերեցին, և Լեւոն չկրցաւ անոնց դիմադրել։ Միայն Սիսի բերդը չգրաւուեցաւ, որուն պաշտպանութեան գլուխ կանգնած էր եղէց ծ, դժբախտաբար անունը անյիշատակ մնացած, որ թշնամիներուն դիմաւորը, ընչ է ասլանեանց ոտքնքէց, և յարձակողներէն այլն պերճանքամ փնացին ու հեռացան, թէպետ ինչ քաջարի երէցն ալ անդին նահատակեցաւ (ՀԱՁ. 481)։ Եգիպտացիք ասկի արշաւանքի և ապստամբի ձեւով կը պատերազմէին, ուստի միւս տարւոյն 1276'ի սկիզբը նորէն Կիլիկիա եկան, բայց այս անգամ Լեւոն պատրաստ գտնուեցաւ դիմադրութեան, իր հօրեղբօրն Սմբատ սպարապետի հրամանատարութեամբ, որ Սարուանդիքարի ճակատամարտին մէջ թշնամիները հալածելէն ետքը (ՍԻՍ. 210), դառնալու ատեն երէվրէն հաբեալ ընդ ձաւոյ ժողջ չարաչար վիրաւորուեցաւ մահացու հարուածով, և հազիւ թէ Սիս հասաւ, առնոյ ինչ ապրեալ վախճանեցաւ մարտ 6'ին, 70 տարեկան հասակին մէջ, որ չոյժ ձերբացել ըսուելու չափ չէ (ՀԱՁ. 481)։ Միևնոյն միջոցին թաթարներ վերջին հարուածը կու տային Սելճուք Թուրքերուն՝ Իւսմի կամ Հռոմ ըսուած սուլտանութեան, և պաշտպան կը կանգնէին Հայերուն, մինչեւ իսկ Թուրքերուն գաւառները անոնց յանձնելու չափ, եթէ Լեւոն խոտորուն և խռհական մտածմունքով հրաժարած չըլլար ընդունիլ, Ապաւոյժ խնդրելով միայն վան ազատութեան առջեւ երկրէն աչխատիլ (ՀԱՁ. 54)։ Ասոր եգիպտացւոց ոյժն ալ կոտրած պիտի ըլլար և Լեւոն ալ ապահովութիւն պիտի ստանար։ Վահրամ կը գրէ, թէ «Լատինն ջոյս լսել՝ ոչ յինքէ պատ լինէր պէրեալ, յարևոյն Լեւոն պատճառ չղեալ, երդուաձ և սէր ընդ առ եղեալ (ՎԱՀ. 234)։ Սակայն Թաթարաց բարեկամութիւնը արգելք եղած պիտի ըլլայ անմիջապէս եգիպտացւոց հետ հաշտութիւն կնքելու, զի Լեւոն 1277'ին Թաթարաց հետ կը գտնուի Բերիոյ պատերազմին մէջ, 1279'ին եգիպտացւոց դէմ կը պաշտպանէ Հռոմկլայի բերդը, 1280'ին Թաթարներու օգնութեամբ յաղթութիւն կը տանի Հոմսի կամ Եմեսոյ ճակատամարտին մէջ, բայց եգիպտացիներ կրկին կը զօրանան (ՀԱՓ. 55) և վերջապէս հայեգիպտական դաշնադրութիւն մը կը հաստատուի 1282'ին (ՍԻՍ. 556)։

1161։ *Ցակոբ կաթողիկոսի հայրապետական գործունէութենէն մանրամասնութիւններ կը պակսին պատմութեանց մէջ, թէ վերևյիշուած միջոցին համար՝ Լուգդունի ժողովէն մինչեւ հայեգիպտական դաշնադրութիւնը, և թէ անկէ մինչեւ իր մահը, ընդամէնն 13 տարիներու միջոցին։ Դիտնալով Ցակոբի վարչական և ուսումնական կարողութիւնները, չենք կրնար այդ դատարկութիւնը կամ տկարութեան կամ անփութութեան վերագրել, և եթէ պարզապէս պատմութեանց պակասութեան արդիւնք չէ, ուստիւ խոհական ընթացքի մը հետևանք է, որ չփոթ և փափուկ պարագաներու ներքեւ, սիրած է խնդիրներ չգրգռել և տարաձայն գործերու առիթ չտալ։ Քաղաքականապէս անկայուն և անորոշ կացութեան նկարագիրը գծեցինք (§ 1167), եկեղեցականապէս ալ ոչ նուազ փափուկ էր պարագան։ Եգիպտական բարեկամութենէն վախնալով և լատինական բարեկամութենէն կասկածելով, երկուքին մէջ տարուբերելով կը մնայր Կիլիկեան Թագաւորութիւնը, այնպէս որ եթէ բացարձակապէս Լատիններուն կրթնէր կրօնական և եկեղեցական ծանր պայմաններու ներքեւ պիտի իյնար, ինչպէս քիչ ետքը ճշմարտուեցաւ Հեթում Բ'ի օրով։ Իսկ եթէ բացարձակապէս Եգիպտացիներուն կրթնէր, կը վախնար դարանակալ ննդգութեան զոհ կերթալ։ ուստի միջակ[illegible]*

թանաք, երկու կողմերն ալ գործածելով պիտի կարենար Կիլիկեան Հայոց թիւնը իր ազատութիւնը երաչխաւորել։ Լեւոն այդ ճամպուն հետեւեցաւ, Յակոբ ալ զայն այդ ճանապարհի մէջ քաջալերեց, և չուզեց ծանր խնդիրներ յուզել, և եկեղեցական խնդիրներ առնղծել, և լաւ սեպեց աւելորդ վիճաբանութիւններէ խորշիլ, և բռնադատական գիջողութեանց առիթ չտալ։ Յակոբի և Լեւոնի գործակցութեան միջոցը Հայ եկեղեցւոյ ինքնութիւնն և ուղղութիւնը անփոփոխ և հաստատուն պահելու չրջանն մը եղաւ։ Հետամ Առաջինի և Կոստանդին Առաջինի չրջանին վրայ, պահպանողական բռնութեան առաւելութիւն մը կը գտնենք, որ իրօք վերջին մտան է Կիլիկիոյ պահպանողական չրջանին, վասն զի քիչ ետքը սկսաւ Հեթում երկրորդի և Անաւարզեցիի թոյլ ու զիջողամիտ չրջանը, որ նիւթ Հայ եկեղեցւոյ կերպարանք իսկապէս և տիրապէս չկրցաւ այլայլել, սակայն նախ լատինասէր, և ետքէն լատինազգի թագաւորներու օրով, լատինամիտ հայրապետներու գործունէութեան ալ ապարէզ բացաւ։ Այդ դիտողութիւններու հիմնուելով է, որ իրական եղկութեանց փաստերով իրարու հակառական չենք դտներ Յակոբ կաթողիկոսին՝ մէկ կողմէն տառել կարողութեան և միւս կողմէն նուազ գործունէութեան եղրերը։ Մեր այս տեսութեան իրր հաստատութիւն կը նկատենք նաև Անտիոքի յոյն պատրիարք Եւտիմէոսին դիմադրելը, որ Լատին պատրիարքներուն յարուցած պահանջին հետեւելով (§ 1110), Հայոց կաթողիկոսին վրայ գերիշխանութիւն ունենալ կը ձգտէր, և յանդուգն ձեռնարկներու յուսահատութեան պատճառով՝ Լեւոնի ձեռքով կ'աքսորուէր ալ (ԶԱՄ. Գ. 270)։ Պէտք է յիշել, որ Անտիոքի Լատիններու անցնելէն ետքը՝ յոյն պատրիարքներ երբեմն Կոստանդնուպոլիս (§ 1000), բայց տակաւ Տարսոն կամ Կիլիկիոյ ուրիշ մէկ փողոքի մէջ կը մնային։

1162. Պատմական յիշատակութեանց պակասութեան մէկ պատճառ ալ մտքի է համարիլ խառզաղութեան աւերածութիւնը, որ 1282ի Հայեզիպտական դաչնադրութեան հետեւանքն եղաւ, և չարաշունչ մինչեւ Լեւոն Գ'ի մահուան թուականը, ինչ որ նոյն թագաւորին ճարտար քաղաքականութեան արդիւնք պէտք է սեպել։ Լեւոն եղիպտացւոց հետ խաղաղութիւնը հաստատելէն ուր տաքը, սկսաւ իր մասդրութիւնը դարձնել Հայաստանի կողմը, և այնտեղի հետ յարաբերութեանց առիթներ առնղծել, հարկաւ միեւնոյն դիտումներով, զորս իր մեծ հայրն Լեւոն Բ ալ ունեցած էր, Կիլիկեան թագաւորութիւնը Հայաստանի վրայ ալ տարածել։ Առ այս բարեդէպ պատեհ սեպեց Տարսոնի արքեպիսկոպոս Հայրապետին իրեն այցելութեան գալը, երբ ծերութեան տարիքին մէջ երուսաղէմի ուխտագնացութենէն կը դառնար։ Լեւոնի կողմէն Տարսոնի արքեպիսկոպոսին առհմանուած ընծաներ եղան, զիեսք սեղանոյն յարդոնական ոգոգէից, գործ ճոնաց ճաշոցաց աննման կիսոսածոյ, իսկ պարսակն է ոսկիազործ և ադամանդազարդ, սկիհ պարսակն է ջուխ արծաթոյ, և այլ քաղաք ընծաներ։ Ձիշատակարանը 1282 թուական կը կրէ, զոր իւրովհետ գրած է Լեւոն (ՕՐԹ. Բ. 181), և Օրբելեան զայն ամբողջապէս յառաջ կը բերէ, և կը յուսալու թէ զուտկի օրուան պատարագները կոքիեցան յիշատակ նմա (ՕՐԹ. Բ. 183)։ Այդ ընծայաբերութեան բոլոր պարագաները՝ բնիկ Հայոց թագաւորի մը յիշատակը կը նորոգեն Տարսոնի մէջ, և այս միտ կը յորդորէ Լեւոնի գործին մէջ բարեպաշտութեան տեսակէտ մըն ալ նկատել։ Արտաքին պարագաներն ալ կրնային Լեւոնի այդ հետապատակերը քաջալերել։ Նոյն միջոցին էր որ Ապաղա խան, և եղբայրը Մանգուտան զօրավար՝ թունաւորութեամբ մեռած էին, և իշխանութեան բարձրացած էր Տանգուտար եղբայրներն, յատուկ տանկուբեան մկրտուած Նիկողայոս անուամբ, բայց վերջէն իսլամութիւնը ընդունած Մահմուտ կոչմամբ (Հեթ. 56)։ Թէպէտ ուրիշ ծանօթ է Անմէա անուանուած (ՕՐԹ. Բ. 172. Հեթ. 84)։ Անմէա մոնղոլական նախնական մը յայտնուելուն իր նոր կրօնքին մէջ, և նոյն իսկ եղիպտացիներու հետ հաստատեալ գաշն և ուխտ խաղաղութեան, և ձեռնարկից զմնոյն ընդհանուր ընդհանուր պերոս-

ընեան էրոյ սպիպել է սարկինոսոլիճն, որ է խալամուխին, և մինչեւ իսկ համարձակեցաւ նոյնը առաջարկել Հայոց ու վրաց թագաւորներուն (ՀՆԹ. 57)։ Բայց ներքին խառվամիններն ծագեցան Թամթարներու արեւմրտեան պետութեան մէջ։ Արդուն՝ Աղմէի եղբօրորդին, անոր դէմ ելաւ, և թէպէտ անգամ մը յաղթուեցաւ ու գերի ինկաւ, բայց հնարքով ազատեցաւ, և նորէն զօրացաւ ու Աղմէսը դէպ-ի-ս-որ սպաննեց, և ինքը սիրացաւ իշխանութեան 1284'ին (ՀՆԹ. 58)։ Հայաստանի գաւառները յուզուեցան այդ ներքին չփոթութենց երեսէն, և Լեւոն կրնար իրաւամբ հետեւէն դիտել Թամթարներու իշխանութեան տկարանալը, և իւր թագաւորութեան յաջողութիւն մը սպասել այդ երեսէն։ Սայն նպատակով էր անշուշտ, որ ինքն ալ նոյն տարին եգիպտացւոց հետ խաղաղութեան դաշինքը կը նորոգէր (ՍԻՍ. 384)։ Սակայն իրական օգուտը քաղեց Դեմետրէ վրաց թագաւորը, ըր էրէթաց Աբղասն, և եղ նմա զամենայն սահմանս Հայոց, և Դեմետրէ ալ Տարսայիճ Օրբելեանը պատուեց, և եղ աթոռեն է վերայ ամենայն թէրութեան էրոյ գինչ է Տէղի և յԱռն է և կաթ (ՕՐՔ. Բ. 173), ինչպէս անգամ մը յիշեցինք (§ 1159)։

1163. Յակոբ արդէն կաթողիկոսութենէ առաջ գործունեայ դեր ունեցած էր, և հարկաւ երիտասարդ մը չէր՝

ՅԱԿՈԲԻ ՄԱՀԸ

երբոր կաթողիկոսութեան բարձրացաւ, և 20 տարիէ իվեր հայրապետական աթոռին վրայ կը պաշտօնավարէր։ Հետեւաբար ծերացեալ տարիք ունէր, և ուխտաւորութենէ ալ յոգնած, և յուզմունքներով ալ տարտամած պիտի ըլլար, երկրէն ձերբազատիլ պահել կուզեր չափ (ՀԱՁ 496), որով հաստատեցեալ մահ մը եղաւ իր վախճանը։ Մահուանը մասին ոչ մի մանրամասնութիւն չունինք, բայց Հռոմկլայի մէջ հանդիսացած պիտի ըլլանք, և հետեւաբար նոյն տեղ ալ թաղուած։ Հայրապետանիստ դղեակին 1279'ին պաշարումը (§ 1160), հարկաւ յուզեց ու նեղեց ծերունի կաթողիկոսը, ասկայն թողած ու հեռացած ըլլալը գրուած չէ, և ենթադրելու հարկ չունինք տեսնելը։ Մահուան թուականը 1286 գրուած է Սմբատի շարունակողէն (ՍՄԲ. 125), և Օրբելեան ալ 1280'էն հաշուելով չեռ հինգ տի կը դնէ, իւր Սիւնիքէն մեկնիլը (ՕՐՔ. Բ. 174), որով 1286'ին սկիզբը կը ճշմարտուի Յակոբի մահը, որուն հիշդ օրն ալ փետրուար 12 նշանակուած է (ՀԱՁ 492)։ Ուրիշներ 1287 յաւելուած աղբհաջէց գրած են մահը (ՁԱՄ. Դ. 283), բայց ոչ իրենց աղբիւրն է յայտնի, և ոչ առաջին վկայութիւնները ջնջելու ոյժ ունի։ Իսկ 1286 փետրուար 12 օրը, Առաջնորդի երկրորդ երկաբեթին, Սուքիասեանց տօնին կը հանդիպի, և ոչ տաղտկացից մէջ Յակոբի անձին և կարգութեան (§ 1153) և ուղղութեան վրայ (§ 1161) բաւական խօսեցանք, հետեւաբար պէտք չենք տեսներ անդրադառնալ, և իրեն վրայ մեր տեսութիւնները ամփոփել։ Իբր գրական արդիւնք ալ, թէպէտ գանազան լուծմունքներ գրած ըլլալը յիշուած է (§ 1153), ասկայն մեր ձեռքը իւր գրական արժանիքին իբր նմոյշ միայն Սբբեցեր չարականը հասած է, Աստուածածնայ ծննդեան ամբողջ կանոնը (ՇԱՐ. 5—10)։ Յակոբի ժամանակը հայ գրականութեան համար նշանաւոր չրջան մը եղած է, թէ գիրքերու բազմանալովը և ընտիր գրչագրութեան օրինակներ արտադրելովը, և թէ նոյն ժամանակին ծաղկած վարդապետներու և մատենագիրներու ընտիր խումբովը։

1164. Յակոբի մահը տարաժամ պատահար մը կը լինէր Ստեփանոս Օրբելեանի, որ արքեպիսկոպոս ձեռնադրելու համար Սիւնիքէն կիլիկիա եկած ատեն, երբոր Սիս կը հասնէր, կաթողիկոսին վախճանած ըլլալը կը լսէր, և նոր ընտրութեան պատեհութիւն կը պարտաւորուէր (ՕՐՔ. Բ. 227)։

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼԵԱՆ

Ստեփանոսի անունը տուած ենք արդէն, իբր Տարսայիճ Օրբելեանի որդի, և Սմբատ Օրբելեանի որդեգիր (§ 1159), որ չոբճանչե մոզ գինչն օրալեալ և ընծայեալ է պատ Տեառն կ'անուանէ, չատ պզտիկութենէ նկեղեցական ուսմանց և կոչման նուիրած ըլլալով Հայրապետ արքեպիսկոպոսի ընտանեաց ներքեւ։ Հետզհետէ յառաջացած էր նկեղեցական աստիճաններու մէջ, և փաղաղ և անգամանալ ըլլալէետք, կոչուած էր է պղրոնէն և է

ոբխոտփոխին, և վերջապէս քահանայացած (ՕՐԲ. Բ. 226), ինչ որ կատարուած է 1280'ին, է ֆէրֆոա ոխորն Նրվանէից, և ոչխարհաւոմբ հանդիւխ (ՕՐԲ. Բ. 174)։ Ծիչուած ստահճաններըը կը հաստատեն թէ տակաւին հինգ աստիճաններու դրութիւնը պահուած էր Հայոց եկեղեցւոյն մէջ, և մանաւանդ Հայաստանի բնիկ վիճակներու մէջ, թէպէտ և հօմնի բարձրացումը հարիւր տարի առաջ մուտ գտած ըլլալուն յիշատակութիւնը ըրինք (§ 1020)։ Պատմութիւնը այդ մասին որոչ եղելութիւններ հաստատած չթնելուն, կը յորդորուինք ըսել, թէ փոփոխութիւնը վճռական կերպով չհրամայուեցաւ, այլ նախապէս կիլիկիոյ մէջ հնազհնակ տարածուեցաւ, և չատ ուշ Հայաստանի մէջ ալ դարձած ակաւ։ Դիտելու արժանի կը սեպենք նաեւ եկեղեցական կոչման տրուած յարգանքը, որով իշխանական տուներ պատիւ կը սեպէին իրենց մէջէն եկեղեցական մըն ալ ունենալ, և անով եկեղեցւոյն պաշտօններն ալ իրենց ազգատոհմին սեփականել։ Այդ սովորութիւնը միջին դարու մէջ ընդհանրացած էր Եւրոպիոյ աստանական ցեղերուն մէջ, որոնց գաւակներէն՝ աստիճանը ազգատոհմին տանտէրութեան, երկրորդը եկեղեցական կոչման, և երրորդը զինուորական ծառայութեան կը տանէին սովորաբար։ Սահմանոսի վրայ դարձնելով խօսքերնիս, տեսնենք թէ կուգայ քահանայութենէ եարը չարտնաճած է վարժիլ է էրնարէ ոսոհոճեղէն պոհէց, որ է Տաթեւու վարդապետութիւնը, ուսկից եարը, կը գրէ, ոսէ հրման և նոյ յոնոա վերջապէսոն, այսինքն է գաւազանի իշխանութիւն առած է յոսոհոճեղէից և յաշխարհս բռնաւոյ նէրթէ (ՕՐԲ. Բ. 226), որ է Գլաձորեցի Ներսէս վարդապետը (ՀԱՁ. 492)։

1165. Սմբատ իշխան իւր հզօրագրին եկեղեցականաց թեան նայրած, և անոր դաստիարակութիւնը հաստատած տանն, հարկատուզան տարին տաճիճանի մէջ թողլու նպաստակ չունէր, և Տարտային ալ իւր արդ՝ ոյն համար տարիներ դիտմամբ չէր կրնար ունենալ։ Քահանայական ձեռնադրութենէն 5 տարի եարքը։ այսինքն 1285'ին, պատճառ յղել պոյն կիլիկիա, սա ժեր կոնոզիկոն փէր Յակոբ է յեռնոգրոնիւն եպիսկոպոսութիւն (ՕՐԲ. Բ. 174) Այսանդ յայտնի ըսուած չէ. թէ Տաթեւի արքեպիսկոպոսական աթոռին պատգամելութեան ատիթ՝ յաջորդութեան համար էր ձեռնադրութիւնը, ինչպէս ունինք կը մեկնեն (ԶԱՄ. Գ. 283), թէ ոչ պարզապէս եպիսկոպոսական ձեռնադրութիւն սահցած ըլլալու նպատակով էր, պարզային աթոռի տէր ըլլալու համար։ Օրբելեան ուրիշ տեղ կը գրէ, թէ ֆոզվէսել մերոց եպիսկոպոսաց սա հայբն է՛, հրաւէրեցին զիս սահոզ յեռնոգրոնիւն գերդաստանէն է վերոյ պոնոզս Սիւնեաց (ՕՐԲ. Բ. 227), որ դատարկացնել աթոռին յաջորդութիւն մնկնուած է. սակայն նոյն ինքն կը պատմէ, թէ իւր ձեռնադրութենէ դառնալէն ետքը խոդոցեալ եպիսկոպոսոյն որ է Տաթեւ, յոլով վիշտ հասոցին եկեցեցւոյ, և թէ դնդ է վերհան էրեսոնոյ, փէր Հայրապետին և փէր Յովհաննէսին, ալ գոգոբեաց խոզճ և խռովութիւն (ՕՐԲ. Բ. 175)։ Իսկ այս երկուքը Տաթեւի աթոռին եպիսկոպոսքն են (ՕՐԲ. Բ. 248), որք կենդանի կ'ենթադրուին իւր ձեռնադրութենէ ետքն ալ։ Մենք պիտով որ մէկ կողմէն՝ յեռնոգրեն վերհան դերգոգէք ժեր ոխորն Սիւնեաց (ՕՐԲ. Բ. 174) և միւս կողմէն նախորդ մեսրոպականք Հայրապետ և Յովհաննէս, կենդանի կը գտնուին Տաթեւի ձեռնադրութենէն ետքն ալ (ՕՐԲ. Բ. 175), պիտի եզրակացնենք, թէ Տարսայիճ իշխան յաջողած էր իւր որդւոյն ձեռնադրութիւնը ընդունելի ընել տալ եպիսկոպոսներուն, ոչ թէ իւր դատարկացնալ աթոռի մը յաջորդ, այլ Սիւնեաց բաժանելու աթոռներուն վրայ գերագոյն գլուխ մը, ինչպէս որ իւր կարգին ընդունակօրէն պիտի բացատրենք։ Իսկ Հայրապետի և Յովհաննէսի՝ մէկէն բուն եպիսկոպոսը որն էր, երկար պնդութեան պէտք չենք տեսներ, վասնզի ցուցակին մէջ Սոզոմեն մըն ալ կը գիտենք, որ պատմութեան մէջ չգիտենք, իբրև է գոհէն (ՕՐԲ. Բ. 248) պատճառն վարդ, և կ'երեւի թէ Հայրապետի ձերդոն աջօթ ակարացած ըլլալուն (ՕՐԲ. Բ. 181), և ոխորդնայութեանց պատերն պատճառով (§ 1162), սահն մը Սոզոմեն տեսր աթոռակից եղած է, և վերջէն ալ Յովհաննէս։

ՍԻՒՆԵԱՑ ԱՔՈՌՆԵՐ

Սանիանոս՝ մնալով գաւառ կաթողիկոսը, և պարտք սեպեց թագաւորը տեսնել. և Ատանա քաղաքը երթալով անկէց մեծ պոխ-գաւառ է վեր ի ծո ղբյանն, և ոչ՝ էր թագաւորին մօտ մեռաց (ՕՐՌ. Բ. 228), զոր պէտք չէ իբր տեւողութեան չափ առնել, այլ միայն 3 ամիսներէ մտաց, դի Յակոբ փետր. 12'ին վախճանած ըլլալով, Սանիանոս ապրիլ 14'ին ձեռնադրուեցաւ, ճիշդ 60 օր նաքը։

1166. Յակոբի օրով ծագկած մատենագրութեան սկիզբը կը սերենք յիշել Սմբատ Գունստապլը, իբր դի Գրիգոր Մագիստրոսէ (§ 866) և Մխիթար Հերացիէ նաքը (§ 1027), երրորդ աշխարհական հեղինակի անունն է, զոր կ'ուրձանագրենք։ Սմբատի գործունէութեան յիշատակները պատմութեանս կարգին յիշեցինք մինչեւ իր մահը (§ 1160)։ Աւելի խօսուած երկասիրութիւնն է պատմութիւնը կամ Տարեգիրքը, ուսումից չարունակ օգտուեցանք։ Անկէ զատ ունի Անտիոք Անտիոքայ, և Մաղկաքաղ Օրինագիրք գործերը, որոնք կը յուշնեն, թէ ոչ միայն ղէնքով ծառայեց իր ազգին իբր սպարապետ, այլ և գրիչով, իբր օրէնագէտ և վարչագէտ։ Օրինագիրքը կազմած է 1265'ին Դօշի դատաստանագիրքը և Լամբրոնացիի բիւզանդական օրինագիրքը կարգաւորելով և համառօտելով։ Անոնցմէ զատ կը գտնուին նաեւ Սմբատէ մնացած թուղթեր ու յիշատակարաններ (ՀԻՆ. 774)։ Սմբատի ոճը տալի ոամիկականի մօտ է, իր միտքն ըլլալով հասարակ ժողովուրդին օգտակար ըլլալ։ Եկեղեցական դատակարգէն յիշատակութեան արժանի է, վահրամ Բարձրն, որ Լեւոն Բ'ի տանուտէրն էր, և անոր խնդրանօք գրած է Ներսէս Շնորհալիի տանուտէրը պատմագրութեան չարունակութիւնը (§ 962), և 770 տողերով հասուցած է մինչեւ Լեւոնի վերջին պատերազմները (§ 1160), միշտ առատացնելով անոր դիվանները։ Պատմութենէն զատ գանազան ճառեր ալ կը վերագրուին նոյն վահրամ վարդապետի (ՀԻՆ. 792), որ իր ինքնութեան վրայ տրիչ անկարկատութիւն առած չէ, և միայն Բարձրի մականունովը կը յիշուի։

1167. Կիրակոս վարդապետ Գանձակեցի, տարբեր (§ 1146), թէպէտ ան ալ Գանձակեցի կը կարծուի, որուն գլխաւոր գործն եղած է Յայսմաւուրքի կարդադրութիւնը 1269'ին, 170 նոր կտորներ աւելցնելով (ՀԻՆ. 754)։ Շարականին կարգադրութեան ալ աշխատած է, իրմէ աւելցնելով Աբէ-եէ էեբ-եէէն (ՇԱՐ. 741—747) Աստուածածնայ չարականը, որ բարձր գաղափար մը չներչընչէր հեղինակին վրայ։ Կիրակոսի մահը տեղի ունեցած է 1272 յունուարին (ՍԻՍ. 555) կիլիկիոյ մէջ, ուր անցուցած էր իր կեանքը։ Նախէս վարդապետ Մչեցի, քնիկ Մուշ աւանէն, Առաքելոց վանքին աշակերտ էր և վերջէն առաջնորդը եղաւ։ Թէպէտ ուսմամբ և հմտութեամբ նշանաւոր էր, բայց վերջին տարիներ ուզած է վարդան Արեւելցիին մօտ երթալ (§ 1099), աւելի զարգանալու դիտմամբ, և այն տեղ վախճանած է 1284'ին, բայց իրմէ գործ մը չէ հասած մեզի։ Նախէսի աշակերտն է Յովհաննէս վարդապետ Արճիշեցի, Ոսպնակոյ մօտ կանուխ անուանի, 17 տարի չարունակ միայն ոսպով անանկուն համար։ Իրմէ մնացած է պատարագի մեկնութիւն մը Անձևացիէ և Լամբրոնացիէ քաղուածներով։ Մխիթար վարդապետ Սասունցին ալ Ներսէս Մչեցիի աշակերտ կը սեպուի, թէպէտ Ներսէս Գլաձորեցիին ալ հետեւեցաւ երկար ժամանակ։ Իր արդիւնաւորութեան գլխաւորն եղած է չրջուն քարոզչութիւնը Հայաստանի գաւառներու մէջ, և նեղլոց օգնութիւն հասցընելը, և երկարակաց ալ եղաւ մինչեւ 1337 ապրելով, որ տարին վախճանած է փետրուար 11'ին Մեծոփայ վանքը։ Յովհաննէս վարդապետ Գանձակեցի հեղինակ ժամանակագրական հատուածի մը, զոր կազմած է աւագին վարդապետներէն քաղուած հատուածներով, և իրմէ ալ կտորներ աւելցընելով (ՉԱՄ. Գ. 275)։ Զաքարիա Մոծոբեցի, Արատոց արքեպիսկոպոսն ալ, որ Յովսէփ Արատոցեցիի յաջորդած էր (§ 1126), արդիւնաւոր եղաւ իր սիրուն պայծառացնելով, և ուսում ընական վարդապետներուն դլխաւորապէս Յովհաննէս Երզնկացիի ասպնջական և պաշտպան կանգնելով։ Այս

ՍՄԲԱՏ ԵՒ ՎԱՀՐԱՄ

ՈՒՐԻՇ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ

առիթէն է ելեղնկացիին երբեմն Մոծորնցի կոչուիլը (ԶԱՄ. Դ. 274), բայց անոր վրայ խօսիլը աւելի վերջը կը թողունք։ Իսկ Զաքարիայի անունը չատ կանուխէն տուած ենք Արտազեան յիշատակարանի վրայ խօսած առիթներս (§ 20)։ Պէտք էր այստեղ Հայոց մէջ մուտ գտնող լատին վանականութեան վրայ ալ խօսիլ, բայց այն ալ կը յետաձգենք, ամիսի անկախ թիւններ տալու համար իւր կարգին։

Տ. ԿՈՍՏԱՆԴԻՆ Բ. ԿԱՏՈՒԿԵՑԻ (1286 – 1307)

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

1168. Յակոբի յաջորդութեան խնդիրը, անհամաձայնութեանց առիթ տուած պէտք է ըսենք, նկատելով որ նոր կաթողիկոսը պէտք է ընտրուէր ըստ ժողովով ընթացքի (ՕՐԲ. Բ. 228)։ Այլեւս գաղտնի էր տոհմային յաջորդութեան դրութիւնը, եւ արժանաւորագոյնին ու յարմարագոյնին տեսակ եղած տանելու, հակառակ կարծիքներու բաղխումը անհրաժեշտ էր, ինչպէս որ այս անգամ ալ հանդիպած է։ Եթէ ընտրելիներուն առաջինը, նոյն ինքն ընտրուած Կոստանդինն էր, ուրիշ նշանաւոր ընտրելի մըն էր Գրիգոր Անաւարզայ եպիսկոպոսը, այն որ վերջէն կաթողիկոս եղաւ, եւ հաչակաւոր հանդիսացաւ իւր լատինամոլութեամբ։ Այդ պարագան բաւական է մեզի ցուցնելու, թէ ընտրողական պայքարին հիմը կը կազմէր լատինական յարաբերութեանց կէտը, մաս մը համակրելով եւ մաս մըն ալ հակակրելով զանոնք ընտրողական ժողովին մէջ։ Եւ որովհետեւ չատ յայտնի է Անաւարզեցիին ուղղութիւնը իւր կատարեալ լատինամոլ, դիւրին կ'ըլլայ հետեւցնել թէ Կոստանդին հակառակ ուղղութեան ընտրելին էր։ Լեւոն Թագաւոր հաչտարար ընթացք մը կը բռնէր միշտ, լատինամոլ չէր, բայց հակառակիլ ալ չէր ուզեր, ուստի պատճառ կ'երեւակայենք կը ջանար լատինաց հանդէպ զիջողական պարագաները հետացնել։ Ըստ այսմ բոլորովին անդիման է անոնց կարծիքը իւր թէ Լեւոն Անաւարզեցիին պաշտպան եղած ըլլայ (ԶԱՄ. Դ. 283)։ Օրբելեան կը գրէ, թէ այն միջոցին որ ինքն Կիլիկիա կը գտնուէր և ընտրողական վէճը կը տեսնուէր, վանական կաթողիկոսներէն Գրիգոր Անաւարզեցիին լատինամոլութիւնը մէջտեղ գնելով, և թէ չուզելէ բոլքաղանց ետեւ տալ ապուռաթափուկ ընտրութիւն և քնարէն ժողովեան, ու ծածկ Անաւարզեցին (ՕՐԲ. Բ. 199)։ Այդ խօսքերը յայտնապէս կը վկայեն թէ Լեւոն երբեք պաշտպանած չէ Անաւարզեցիին ընտրելիութիւնը, այլ մանաւանդ անոր դէմ եղած է։ Լեւոնի հետաքրքրութեան արդիւնքը եղած պիտի սեպենք, երկու ընդդիմամարտ ընտրելիներն ալ մէկ կողմ դնելով՝ երրորդ մը առաջ անցընել, իսկ այս նպատակին յարմար տեսած էր առաջարկել բոլորովին օտար մը, հեռուէ եկած և կիլիկիոյ խնդիրներուն մէջ մաս չունեցող, Սիւնեաց ընտրեալ մետրապոլիտը, և այդ միտքով յղած էր նախանձան առնէ նմա ծառայ անպէն, և նորէ յիշեա կաթողիկոսութեան Հայոց։ Բայց Օրբելեան Սահմանաց ոչ առնոյր չանի (ՕՐԲ. Բ. 174)։ գուցէ և լատինասէրներն ալ աւելի կը զգուշանային Արեւելեանները կաթողիկոս մը ունենալ, և այսպէս թոքթալ ժեռ աչերեցհաժողով, և քաղաք ընդունելեաց, որ քան էից մնծամանութեան իմաստն ունի, կոստանեն կաթողիկոս Հայոց ղրեր կոստանդին (ՕՐԲ. Բ. 174)։ Բոլոր մնծպահքը վէճերու մէջ անցուցած ըլլալով, վերջապէս կոստանդինը օծեցին Սիսի մէջ, յամսեանն Սեպտեմբերի Սահ (ՕՐԲ. Բ. 184), ի ժեռ ծրագրեալ ղաւին, որ կը հանդիպէր 1286 ապրիլ 13'ին, և ի վաղեան առաւն, պատկի օրը՝ ապրիլ 14'ին, Սահմանաց Օրբելեանը չեռնադրեցին և պատրիարք ընդ առաջ և առաքելական եկեղեցւոյն Աղանեաց (ՕՐԲ. Բ. 228), և երկու նշանաւոր հանդէսներ միացուցին գործական հրաշափառ տոնախմբութեանց։

1169. Կոստանդին Բ ընտրութենէն առաջ յիշուած և գործի վրայ գտնուած չէր,

և Օրթիլեան նորա անձնասուրութիւնը ճըշդելու համար կը դրէ, թէ էր ասոնցմէ ասոր և ֆերհաղլէ ինասփանէն խոչին կոչեցեալ (ՕՐԲ· Բ· 184), որ էր ծերչ է ահման Բոչիքբերթոյ և Լեռնկլայն՝ անուն պղնկան, և նշանաւոր առաջնորդներ ալ ունեցած էր (ՍԻՍ· 151)։ Կոստանդին իւր ծագմամբը կը կոչուի Կատուկեցի (ՍԱՄ· 152), թէպէտեւ Կիլիկիոյ Կատուկ աւանը (ՁԱՄ· Գ· 284) Սիսուանի տեղագիրը չյիշեր, անոր դիրքը գտած չըլլալուն, և ոչ իսկ կը հաւանի նոյնացնել Կաւէնի հետ, որ Խորին վանքին մօտ և Բարձրբերդի չրջանակին մէջ կը գտնուէր (ՍԻՍ· 147)։ Կոստանդինի կանուխէն առանձնացած վիճակը և Կատուկի անծանօթ դիրքը պատճառ եղան անչուշտ, որ Անեցիին չարունակողը և ասֆ Կիւրեղեան յաւելուածը դրաւ Կատուկեցի կոչումին մօտ (ՍԱՄ· 152), և պատճառ եղաւ անունները և անձերու չփոթութեան։ Անոր հետեւողութեամբ յետագանները ալ ընդունեցան, թէ Կոստանդին կեսարացին, միեւնոյն Կոստանդին Կատուկեցին է, որ 3 տարիէ գահազուրկ ըլլալով, իբր թէ 18 տարի հոգը նորէն աթոռ դարձած և 15 տարի եւս կաթողիկոսութիւն վարած ըլլայ։ Այդ չփոթութիւնը բոլոր նոր պատմագիրներէն ընդունուած ու կրկնուած է, բայց մեր յատուկ հետազօտութիւնք ա. առաջնորդեցին մեզ Կատուկեցին կեսարացիէն զատել, և Կոստանդին Բ և Կոստանդին Գ անունով տարբեր կաթողիկոսներ ընդունիլ հայրապետական աթոռին վրայ, ինչպէս արդէն ցուցած ենք մեր կազմած ցուցակներուն և պատմական յիշատակներուն մէջ (09 ՕՐԱ· 277· և 09· ԼԱՒ· ՆՈՑ· 46), և այդ մասին հակառակ կարծիքի մը չենք հանդիպած, որ մեր տեսութիւնը հերքած և փաստերը ցրած ըլլայ։ Կրնար մտածուիլ, թէ մի՛ գուցէ Կատուկեցին՝ Կապադովկեցի իմացուած և կեսարացիի փոխուած ըլլայ· սակայն անհիմն ենթադրութեան մեւելի չէր ըլլար։ Իսկ Կատուկեցիին կեսարացիէն տարբեր ըլլալը հետեւեալ պիտի ցուցնենք, պատմական պատրագանները բազդատած առնելիս։ Կոստանդին Կատուկեցի՝ Պրօնտոդոթ (ՍՄՐ· 125) կամ Պրոնդոթ (ՍԱՄ· 152) մականունով ալ կը

ԿԵՍԱՐԱՑԻԷՆ ՏԱՐԲԵՐ Է

յիշուի, որ կը նշանակէ պրօն կամ այծի բուրդ գործող արհեստաւոր մը, ինչ որ կըրնայ՝ կամ Կոստանդինի հօրը արհեստը եղած ըլլալ, կամ թէ նոյն իսկ Կոստանդինի վանական առանձնութեան մէջ՝ ձեռագործ գբաղումը ենթադրուիլ։ Պատմութիւնը մակաբանութեան ծագումը չտար։

1170· Ընտրողական պայքարին հոգին բաւական է ցուցնել, թէ Կատուկեցին նրբակիր յատկանշով մը եղած

ԿՈՍՏԱՆԴԻՆԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

չէր կրնար ըլլալ· կթէ Անաւարզեցիին ընդդիմադիր ընտրելի մըն էր։ Հետեւաբար մատացածին և անհիմն է Անեցիի չարունակողին մեղադրանքը, թէ ա. եպիսկ. պիւթմայ է Սէ. (ՍԱՄ· 152)։ Այդ տեղեկութեամբ կ'իմացուի ուղղափառ հայադաւանութենէ հեռանալու մտադրութիւն ունեցող մը, հետեւաբար տաճկերէն ափիւթմա բառին իմաստով, որ նաեւ մը ուրիշ նաեւ փոխադրութիւնը կը նշանակէ։ Բայց ի դէպ է դիտել, թէ ապիւթմա բառը, տարի մը տեղափոխութեամբ նման է ապիւթմայ անունին, և ապիւթմա բառը աւելի ուշ ժամանակներ գործածական եղած է, երբ Արեւելեայք Աղթամարի աթոռը գլուխին ունենալով զուտ և կատարեալ հայադաւանութիւն կը պաշտպանէին, մինչ Արեւմտեայք կիլիկիոյ աթոռին գլխաւորութեամբ հետզհետէ լատինականութեան կամ հռոմէադաւանութեան կողմը կը հակէին, ինչ որ աւելի տուած էր Ապիւթմայեան և Ապիւթմայեան նմանանունչին կոչումները։ Իսկ թէ Կատուկեցին երբեք այսպիսի միտում մը չունեցաւ, հաստատապէս կը քաղուի Օրթիլեանի վկայութենէն, որուն անխտիր հայադաւան ուղղութիւնը կասկածի չկրնար ենթարկուիլ։ Այդ Օրթիլեան ոչ միայն այսպիսի կասկած մը չտար Կատուկեցիին նկատմամբ, ոչ միայն համաձայնաբերան գովեստներ կը գրէ անոր վրայ, այլև Անաւարզեցիին ուղղած թուղթովը (ՕՐԲ· Բ· 197), անոր յատկանշող ընթացքը պախարակած առնելն, բնաւ ակնարկ չունի Կատուկեցիին մասին, որուն պաշտպանութեան ալ ձեռնարկած էր, երբ Կիլիկիոյ մէջ դէմ գահազուրկ հռչակեցին։ Գործերու ընթացքն ալ միեւնոյն բանը կը հաստատէ, որովհետեւ Կոստանդինի կաթողիկոսական

աթոռին վրայ ունցած երկար տարիներու միջոցին, հայրապետին յարաբերութեանց հետքին անգամ չտեսնուիր, և ոչ ալ այդ ուղղութեամբ կարգադրութիւն մը եղած կը գտնուի։ Լեւոն թագաւոր ինքն ալ զգուշաւոր ուղղութիւն մը կը պահէր միշտ, և միայն Նիկողայոս Դ պապէն Հայոց թագաւորին ուղղուած գիր մը կը տեսնուի 1288 Հոկտեմբեր 1'ին գրուած, բայց բոլորովին արտաքին և կրօնականէ տարբեր խնդիրի վրայ (ՍԻՍ 556)։ Երկրին կացութիւնն ալ խաղաղական էր չնորհիւ Լեւոնի քաղաքագէտ կառավարութեան, որ Եգիպտացիներու հետ հաշտութեամբ, Թաթարներու հետ բարեկամութեամբ, և Լատիններու հետ զգուշաւորութեամբ, Կիլիկիոյ հանդարտութիւնը և խաղաղութեանց հաստատումը կը հոգար։

ՍՏԵՓԱՆՈՍԻՆ ՊԱՏԻՒՆԵՐ

1171. Ստեփանոս Օրբելեան, Սիսի մէջ, գահի օրը նոր ծնուած կաթողիկոսէն եպիսկոպոսական ձեռնադրութիւն առնելով, յատուկ պատուասիրութիւններու ալ առարկայ եղաւ։ Ժամանակէ մը իվեր Անիի եպիսկոպոսներն էին, որ գերազոյն դիրք ստացած էին Հայաստանի մէջ, մինչ հնուանդ սովորութեամբ Սիւնեաց եպիսկոպոսն էր, որ նախապատիւ դիրք ունէր Հայ եպիսկոպոսութեան մէջ (§ 417)։ Բայց Անին հետզհետէ կորսուած էր իր կարեւորութիւնը, և Սիւնիքի դիրքը նորէն բարձրացած էր Օրբելեաններուն՝ Սմբատի և Տարսայիճի չնորհիւ։ Ուստի երբոր Ստեփանոս ձեռնադրութեան կոչուեր, դէպքեր ընդունէ և ընծայէ դիմած էին սա կաթողիկոսն վան նորոգման առթիւ ընտրուած էին պապասյ և ասպիճանին, որ բաղկանալ էր ի վերջոյ վան եպերման և կրթանման պետութենէ (ՕՐԲ. Բ. 174)։ Թէ հնուանդ իրաւունքը և թէ Տարսայիճի ազդեցութիւնը զօրաւոր փաստեր էին Սիւնեաց խնդրանքին համար, ուստի կաթողիկոսը իր կողմէն գրեց շրջաբերական նամակ ուղեկից մատենագրաց, դնդրեվ բանէ և հաստատուն պայմանաց, և նորոգելով զգուշութիւն ընդհանրական։ Օրբելեան, որ զանազան պատճէններ յառաջ բերած է իր պատմութեան մէջ, կը մոռնայ այդ կարեւոր կոնդակին պատճէնը արձանագրել։ Կաթողիկոսը արտաքին կերպով ալ կը չգնդէ չնորհուած ուսիճանը, և դէնցոցանէն Սպեհանոյ ընդրպետական դէնքեն ուկերիչ հիւսածով, և դնեն ընդ պատուական է ելեկ նը. պայն և ընդհանրն դնդանորհուրդ վերեւ կրկին, որ դեղոպետացն է։ Լեւոն ալ իր կողմէն ուղղ պատուել և փառաւորել Տարսայիճի որդին, և դէնցոցանէ անոր է ընտանեական դէնքերոց ըստ հայրապետական չնորհի, և դնեն կրկին անգամ ընդ պատուական է համակ ուխտ է ելեկն, որ և զանուն ընդհին ինքեանք դիմեր կոչեին (ՕՐԲ. Բ. 175)։ Այդ երկու թագերը, զոր ուրիշ անգ ալ կը յիշէ Օրբելեան, թէ զինքն պատուեցնի կրկին ընդէ (ՕՐԲ. Բ. 228), և դիեր անունն ալ, զոր չնչանելով կը նշանակէ, մեզի կ'ապացնորդեն հետեւցնելու, թէ այս երկու քէն մէկը, որ կամոզիկոսէն նուիրուեցաւ, յունածէս եպիսկոպոսական թագն էր, որ էր Հայ եպիսկոպոսներու հատուկանգ զարդը, և միւսը յատնուածէս եպիսկոպոսական խոյրն էր, իր յատին անունովը դիեր կոչուած, որ Կիլիկիոյ մէջ սկսած էր գործածական դառնալ Դաւիթ պապէ Գրիգոր Տղայ կաթողիկոսին դրկուած ընծային հետեւանքով (§ 1020), որև կ'երեւի թէ այս կերպով աւագին անգամ Կիլիկիայէ Հայաստան կ'անցնէր։ Կաթողիկոսն ու թագաւորը նախ այլ բաղաք պարքեր դնդաձեւ կը նուիրեն Ստեփանոսի, որ հարկաւ չատ աւելի մնծերն ալ ինքն բերած էր, և այնպէս բարեյաջող ճառէ պարզոցանէն զայն իր աթոռը, ուր կը հաստի 1287'ին (ՕՐԲ. Բ. 175), տարի մը և աւելի՝ ատեն անցուցած ըլլալով ձեռնադրութեան երթալու և տեղը դառնալու համար։

ՏԱՔԵՒ ԵՒ ՆՈՐԱՎԱՆՔ

1172. Սիւնեաց աթոռը ոչ միայն իր կարեւորութիւնը կորսուած էր, այլ և երկփղկած ու բաժնուած էր երկու աթոռներու, մէկը Տաթեւի և միւսը Նորավանքի մէջ։ Սիւնեաց Յովհաննէս եպիսկոպոսը տեսնելով որ Տաթեւի հին աշոռն աւերեալ էր և ապականեալ, եկաւ բնակիլ Նորավանք (ՕՐԲ. Բ. 96), և երբ վախճանեցաւ 1214'ին (ՕՐԲ. Բ. 95) իր յաջորդն Ստեփանոս Փախրըմանէ, կամ Ֆախր-էլ-Մէսին, Նորավանքը իրրեւ եպիսկոպոսական չակեց ու հաստատեց։ Բայց երկու տարիէն վախճանեցաւ 1216'ին,

և իրեն յայնդհետ Սարգիս որ առ կենօք նախորդին եպիսկոպոս եղած էր, և ինքն ալ քնացեր է Նոբավանս (ՕՐՔ. Բ. 97)։ Ասոր ժամանակ Յովհաննէս հյրեպիսկոպոսի պետն Սթեփանոսի, ուզելով վրէժ լուծել սրնորհալ Սկեռնեցոյ, Աղթամարի կաթողիկոսէն ձեռնադրուելով և կու Տաթեւ նստաւ, և այն օրէն բաժանումը սկսաւ։ Իսկ Սարգիս, երբոր եկաւ է հայրապետ, վասն զի չէրնար ընդդիմանալ, այլ իրեն պահեց Վայոցձոր և Ջահուկ և Նախջաւան գաւառները, իբր սեպհական թոռանը Նորավանքի սիրուն (ՕՐՔ. Բ. 99), և մնացածը Յովհաննէսի, և կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսին ալ բաժանումը հաստատել տուաւ անխախտելի պայմանով (ՕՐՔ. Բ. 100)։ Սարգիս այդ առիթու անձամբ ալ գացած էր կաթողիկոսին, անկէ ալ երուսաղէմ ուխտի անցած էր, վասնզի գրուած է թէ մարդիրոսցոց յՍրբոյ աղեմ (ՕՐՔ. Բ. 97), թէպէտ պարագանները ծանօթ չեն պատմութենէն։ Այս բաժանումը կը չարունակէր մինչև Օրբելեանի ձեռնադրութեան ատենը, և երկու սիրոներու եպիսկոպոսներուն կենդանութեան՝ իրեն ձեռնադրութիւը, յայտնի կը ցուցնէ թէ Տարսայիճի միաքը Հայաստանի մէջ դերագոյն սիրու մը հաստատել էր (§ 1164), մեծապատիւ մեծ սրնորհալ Սկեռնեցոյ է վերջ այլոց եպիսկոպոսացն, որ կոչի ասք և անք, ամանք վայոցձոր, որ է Նորավանքը, և ամանք է Տաթեւ (ՕՐՔ. Բ. 174)։ Միեւնոյն եղած էր կաթողիկոսին միաքն ալ, երբոր կը համձէր Օրբելեանին համար կոչել պատուաբերելու Հայոց, այսինքն նախանձ ընել և ելած ամենայն եպիսկոպոսաց Հայոց, (ՕՐՔ. Բ. 228)։ Անոր բացայայտ խօսքով, Հայաստանի վրայ կաթողիկոսական ներկայացուցիչ մը կը հաստատուէր, քանի որ կիլիկիոյ սիրուն դժուար էր հետեւոր վիճակներու վրայ անմիջական հսկողութիւն ընել։

1173. Տարսայիճ իր միաքը ամենուն ընդունելի ընել տուած էր, և Սահմանոս պետ բան ընդհակառակ եղած էր (ՕՐՔ. Բ. 174)։ Բայց մինչև որ դասնար միաքերը չփոխած էին, և իր գալէն չեր առաջուց, խանգարեալ եպիսկոպոսն ոչ է Տաթեւ, փնտրելն առ այլ գիւղեր և բաղմ աճելս սերմանելոյն (ՕՐՔ. Բ. 175)։ Նախանձին անբաժան ընկերն եղող դատաճանութիւնն էր, որ նորէն մէջտեղ կ'ելլէր, քաղաքական տակէտներ վերագրելով Սահմանոսի տրուած պատիւին, կ'ուզէին զայն կասկածելի ընել Թաթար պետութեան և Արղուն խանին աչքին։ Բայց մեծ էին Տարսայիճի ազդեցութիւնը և Սահմանոսի ճարտարութիւնը։ Նոր մետրապոլիտը անձամբ գնաց Արղունի մօտ, ներկայացուց ընծայ կոնդակին, զոր Արղուն եր թոքմանել և ընդհանուր առաջի էր (ՕՐՔ. Բ. 230)։ Սահմանոս նոյն առիթու ձանայց վերնայ պարոնէն։ Արղուն հաստատեցուտրուած բացատրութեանց, յարգեց ալ Տարսայիճի ազդեցութիւնը, յայտ հաճեցաւ Սահմանոսի պաշտօնին, հրամայեց բրել նմա ըստ էութեանց օրինի եռալէն, և հաստատեց վերնայն ներկայն և վերջերն և վերինպատուանն է պէր Սթեփանոս, և եր նմա այր է պրանէն և փայլեայ, և այնպես յոյժբրիեց յամառ էր (ՕՐՔ. Բ. 176)։ Օրբելեան կը յիշէ հոս թէ ինքն այս առիթու Արղունի ներկայացուց վերնայն, որ է կնիք, հայրենեաց մարմաւոր ժառանգութեան զոր եր հայրն իր, որ իրեն իբրեւ իշխանորդւոյ հանելու էր բաժին ժառանգութենան՝ Տաթեւ, Նորավանք, Ծաղացքար և Արատես վանքերը, որով ոչ թէ լոկ իբր մետրապոլիտ, այլ և իբր տէր՝ իշխանութիւն կ'ունենար Տաթեւի և Նորավանքի սիրուներուն վրայ, և երկին երկանաւորեամբ հոգեւոր և մարմաւոր իշխող կը լինէր Սիւնեաց եպիսկոպոսարաններուն (ՕՐՔ. Բ. 230)։ Իբր հետագրքրական պարագայ յիշենք, թէ Արղունի մօտ եղած ատեն, Օրբելեան հրաւիրուեցաւ Գաղղէացւոց ներսեսական կաթողիկոսին և անոր երկոտասան եպիսկոպոսներուն հետ օրհնել չերկեղեցին է պրանն սրբոսնի զոր առաջեալ եր մեծ պոռն Հոոմայ (ՕՐՔ. Բ. 230)։ Թաթարներ սրեւմտուտ յարձակած ատենին, լոկ հեթանոսական կրօնք մը ունէին, բայց քրիստոնէութեան և իսլամութեան հետ չփոխելով անորոշ միջոց մը անցուցին, և իրենց պետերէն մէկը այս, և միւսը այն կրօնքին պատիւ և սիրաձաւորութիւն կը ցուցնէր։ Ապագա մինչև իսկ Լուզունի մոգոլին պատգամաւոր էր ղրկած (§ 1158), Անհիա ընդհակառակն

քրիստոնէութեան հալածիչ մըն էր եղած (§ 1102), իսկ Արշուն նորէն քրիստոնէից բարեկամ էր դարձած, որպէսզի անոնց օգնութեամբ Եգիպտացիները նուաճէ։ Քրիստոնեայք ալ կը յուսային առիթէն օգտուելով թաթարները քրիստոնէութեան դարձնել, և պապիր քանիցս քարոզիչ եկեղեցականներ էին ղրկած անոնց մէջ (ՕՐՔ. Բ. 368)։ Բայց լատիններէն աւելի Նեստորականներ յաջողած էին իրենց քարոզութիւններով, քանի որ աւելի մօտ էին Թաթարներուն, և դիւրութիւններ ունէին ժողովուրդը չսնհարու, մինչ լատիններուն յարաբերութիւնները լոկ քաղաքական կերպարան ունէին։ Բաւական նչանակելի է, որ հռոմէադաւան պապին ղրկած չարժական սեղանն ու մատուռը՝ հայադաւան եպիսկոպոս մը և Նեստորական կաթողիկոս մը կը նուիրագործէին։ Օրհնութիւնը կատարեցին է Դաւին ձեռա՝ հանդիսաւ, և Արշուն պատուհասական յաւուկ նուէրներով, որ իւրաքանչիւրին չքեղացուցեր էր՝ով չեռաքն չքեղաձև հայրապետական, ըր ինչ էր սահմանել, միւս կողմէն ալ սաթալ է չեռն չամհարն չըրչեր է ձեզ բանակին, և հարկանէր, և օրհնէր ըստ ձեռնայն (ՕՐՔ. Բ. 230)։

1174. Սահմանուս իւր հօր ազգակցութեամբը պաշտպանուած, և Թաթար խնամիներէն հաստատութեամբը զօրացած, հոգեւոր իշխանութեան գլուխն անցաւ, և սակայն չարուեստակից քաղաք վիշտ կրել չեպիսկոպոսն ոչ է Տաճիս (ՕՐՔ. Բ. 228), որոնք ոչ միայն Սահմանուս, այլ և յօրվ վիշտ հաստատին եկեղեցւոյ, և ինչ է վախճան իւրեանց եկեղեցւոյն՝ տէր Հայրապետին և տէր Յովհաննէսին, ալ քաղաքեցոց խաղ և խռովութեան (ՕՐՔ. Բ. 175)։ Ալ քէ ինչպէս ևս ապրեցան այդ երկուքը գրուած չէ, սակայն երկարակեաց եղած պիտի չըլլան, զի Օրբելեան կը գրէ իրեն հանաք, քէ Արշունի քովէն եկած էր ձեռնադրելու Ասոցոյ, և քէ կային հնազանդութեամբ է նեղուոց Նոր տէր Գրիգորէն, որ էր ազգական տէրաց Յովհաննէսի, և տէր Սարգիս որ է Նորավանք (ՕՐՔ. Բ. 176)։ Տէր Գրիգորը պէտք է Տաճիսի մէջ նոյն իրեն Սահմանուսի մէկ վոխանորդը անգլ, միւս երկու քին մահուընէ ետքը այնտեղ հաստատուած, իսկ Սարգիսն ալ Նորավանքին եպիսկոպոսն էր, որ կը դովուի իբր քաղաք ազգքն ոչ է Նորավանք, և գլխաւորապէս Արփա գետին վրայ Արփա դիւղին մօտ չինել տուած ղբմանալէ, յոյժ քաջ և ընդարձակ և լայն կոտորվիը (ՕՐՔ. Բ. 175)։ Սահմանուս թէպէտ կրցաւ բոլոր Սիւնիքի վրայ իշխել դաւեհաքել ղբաժանել ճշմարիտ աքոյս, բայց Նորավանքի սաթուր չկրնայ, վասն հրամանաւ նղվիցն, որ բաժանմունքը վաւերացնող ասոյն կաթողիկոսց, այսինքն կոստանդնի Բարձրբերդցիի և Յակոբ Կլայեցիի կողմէն գրուած էին, և միանգամայն Նորավանքի սաթուսկալ եղող, Յովհաննէս, Սահմանուս, Սարգիս, միւս Սահմանուս, Գրիգոր, և վերջին Սարգիս, ասոյն եպիսկոպոսց կողմէն հաստատուած էին (ՕՐՔ. Բ. 228)։ Երկու սաթոնեքրուն սահմանի իրաւունքները և կալուածները չվախանց, այլ որոշեց որ ի լեռէ երկոցունց ասոյ եպիսկոպոսութիւն, և ի ասոյնէրէ և էլեկեցոյ, այսինքն ընդհանուր մետրապոլիա մը, և բոլոր Սիւնեցիք էբրեր ի անոն և ի սէրտ եպիսկոպոսէ, և այնուհետև իրարու մէջ չըսեն, երէ դաս Տաթեւացի, և կամ Նորավանեցի ևս, իսկ եթէ ապագայ ժամանակներու մէջ կրկնուսաթոնեքրէն որևէ մէկին սաեր հասցէ և դադարի, միւս սաթուր ժառանգէ ղասցոյ Նորա (ՕՐՔ. Բ. 219)։

1175. Օրբելեաններու և Սիւնիքի պատկանեալ տեղեկութիւնները ամփոփ պահելու նպատակով, կոստանդին կաթողիկոսի վրայ խօսելու չդարձած, կ'ուզենք հետաքրքրական անոնց պատկանեալ տեղեկութիւնները։ Արշունի իշխանութիւնը միշտ խաղաղութեամբ չպրսնակից, սակայ անոր չքնաղ դէմ և դէմ դիմադիմաց, և Արշուն կասկածելով քէ խռհոգը նենգաւորեն էին խորհել նմա, իւր զօրապետներէն չսակրը հետզհետէ սպաննել տուաւ։ Այդ սաթիս ոմանք եղեն բարեաց հանաք նահատակ թագաւոր Դիմիտրէի վրայ, և սպանին պատերազմ՝ Մոզկան կամ Մուզան դաշտի մէջ, 1289'ին (ՕՐՔ. Բ. 179)։ Սակայն Արշուն ինքն ալ չսաց չսպրնցաւ, և ինքն ալ մեռաւ 1289'ին (Ձնե. 85), պեղերով բլլալով հարճերուն մէկէն, Մուզան դաշտին մէջ, և գնդ

Թեոդորոսէ, որ Յայսմաւուրքի կարգով յունիս 8'ին կը նշանակուի։ Իրեն յաջորդեց եղբայրը Քեզաթուն, կամ Գանճիսթու, կամ Իէզայիա (Հեթ. 59), որ Էջնէլ-Թոքնէլ մականունն ալ առացած է, Գոտ՝ գնդապետելն իմաստով։ Ստեփանոս Օրբելեան փութաց անոր ալ այցելել, և ընդունիլ պարէ-ոզոխ յեղջերէն, միանգամայն աւտ նոր հրովարտակ հրամանէ վերջին հաստատութեամբ (ՕՐՒ. Բ. 231)։ Տարսայիճի ալ այցելութեան գացած ըլլալը չպատմուիր, և կ'երևի թէ արգելուած է ծերութեան և տկարութեան պատճառով, վասն զի ինքն ալ վախճանած է 1290'ին, Արիս աւանին մէջ չեթ քաղաք քրիստոնեից և երեւելի տոհմէ (ՕՐՒ. Բ. 177), զորս իւօք առատացուց Տարսայիճ, թևևս երկկնութեան ապօրէն գործն ալ քաւելու դիտաւորութեամբ (§ 1159)։ Տարսայիճի մահուանէ ետքը յաջորդութեան խնդիրը գըժտութեանց առիթ եղաւ իւր գաւակներուն մէջ, և գործը աչխարհակալ խանին որոշման եւաւ, որ Արղունն անունով յիչուած է (ՕՐՒ. Բ. 177), եթէ չփոթութեան վերագրելի չէ, զի Արղունի մահը 1290'ին, և 1289'ին, և մինչեւ 1287'ին կը նշանակուի անխտիր, և եթէ պնդուի Օրբելեանի յիչած անունին վրայ, Տարսայիճ Արղունէ առաջ մեռած կ'ըլլայ, և Արղունի մահը հարկ կը լինի յետաձգել մինչեւ 1290 յունիս ամիսը։ Ինչ ալ ըլլայ թուականի խնդիրը, վերջապէս խանին վճռովն էր, որ Տարսայիճի աւագագոյն որդին Ելիկումը կ'անցնէր է թեղէ հօրն, իշխան է վերայ ամենայնի։ Բայց սա իշխանութիւնը ձեռք ձգելով, բոլոր կալուածները չանփանկանց, և եպիսկոպոսէ և վերջապետէ և ազատէ խորհրդակցելով, քահանայ զամենայն ժառանգութենն եղբայրներուն հետ (ՕՐՒ. Բ. 178)։ Տարսայիճ առաջին կնոջմէն Ելիկումէ զատ ունէր Ստեփանոս ու Փախրադուլը, սակայն Ստեփանոս՝ եպիսկոպոս եղած, և կալուածոց բաժին մըն ալ առացած էր հօրմէն (§ 1172), իսկ Փախրադուլ վաղամեռիկ եղած էր պատանեկան հասակին մէջ, զինչ պէտ ծերացած թողլով ի նեղ ընթացիկ պետական ընթերցել զաղագաց ճգնելն (ՕՐՒ. Բ. 244)։ Կը մնայ Ջալալ եղբայրը՝ զոր Տարսայիճ առացած էր երկրորդ կնոջմէն, և Լիպարիտ հօրեղբօրորդին՝ Ելիկումի Սմբատեանի զաւակը (§ 1159), որոնց նոր իշխանը բաժիններ սահմանեց։ Ելիկումի օրով խաղաղութիւնն ու բարօրութիւնը կը տիրէին Սիւնիքի մէջ, երբ ամենայն ազնաբոհ Հայոց առելել և պատանել էր։ Այնպէս որ ամենեան առհասարակ պէտել գային ի պերսիկան նորա, և անոր մօտ հանդիպ առել ընծեցէին, և մինչեւ իսկ Ալտունից կաթողիկոսն Ստեփանոս, և քաղաք եպիսկոպոս և վերապետ, իրենց ապաստանի տեղ կ'ընտրէին Սիւնիքը, և Ստեփանոս մետրապոլիտին հիւրընկալութիւնը կը վայելէին (ՕՐՒ. Բ. 178)

1176. *Կոստանդին Կատուկեցի կաթողիկոսին պաչտօնավարութիւնը հանդարտ ու կանոնաւոր կը յառաջէր, ցորչափ Լեւոն Գ կը թագաւորէր. վասնզի երկուքին մէջ տեսութեանց համաձայնութիւն կար, և իրար հասկնալով խոհական ընթացք մը ունէին ծայրայեղութիւններէ խորչելով, և գրգռիչ խնդիրներ չյուզելով։ Այս պատճառով 1286 ապրիլ 13'էն, որ Կոստանդին օծուեցաւ, մինչեւ 1289 փետրուար 6, որ Լեւոն վախճանեցաւ, պատմութիւնը միջադէպ մը չյիչեր, խնդիր մը չնշանակեր, եղելութիւն մը չպատմեր։ Կանոնաւոր օրեր պատմութեան նիւթ չեն մատակարարեր, խռովութիւններ և չփոթութիւններ են որ միջադէպներ կը ստեղծեն, և պատմութիւնը կը հարստացնեն։ Լեւոնի մահուան պարագաները չունինք, միայն կ'ըսուի թէ երեք եղբ պղտ և երեք պոռոտ (ՍԱՄ. 153)։ երկու մանչ և աղջիկ մըն ալ վաղամեռիկ եղած էին, իսկ թագուհին Աննա, կիւան կոչեցեալ իբր կիր-Ան, որէ Աննա Տիկին, վախճանած էր 1285'ին և Դրազարկ թաղուած (ՍԱՄ. 152)։ երբ Լեւոն Արղունի այցելութեան գացած էր (ՉԱՄ. Գ. 282)։ Դառնալէն ետքը անոր աւագը կատարեց, և միւս տարին 1286'ին իւր երկրորդ որդին Թորոսը ամուսնացուց Կիպրոսի Հուգոն Գ թագաւորին աղջկան Մարգարիտի հետ, քանի որ անդրանիկին Հեթում չէր ուզած ամուսնանալ։ Հեթում թագաժառանգ արքայորդին կանոն խէն ինքզինքը լաթինպաչտական կենցաղի նուիրած էր, աւագնորդու թեամբ Լատին կրօնաւորաց, որոնք հաստատուած ու տարածուած էին*

կիլիկիոյ մէջ, և որոց զարգացման արգելք չէին եղած նախորդ կաթոլիկոսներ և թագաւորներ, չուզելով Լատիններու հակառակութիւն ցուցնել· ինչպէս նաեւ յորգելով անհատական խիղճի ազատութիւնը, թէպէտ և իրենք երբեք չեղած չէին իրենց ազգային եկեղեցւոյն ուղղափառութենէն։ Այնչափ եղած էր Լատինի ազատամտութիւնը, որ մինչեւ իսկ իւր թագաժառանգ որդւոյն նպատակ էր կատարելապէս որդեգրիլ հռոմէական դաւանութեան, և կրօնաւորիլ Փրանկիսկեան խոչորազգեստ միաբանութեան մէջ եղբայր Յովհաննէս անունով։ Այս էր պատճառը որ Հեթում իբր կռապաշտութեան նուիրուած կրօնաւոր՝ չէր ուզած ամուսնանալ, ինչպէս որ ալ մնաց մինչեւ վերջը։ Լատինական կրօնաւորութիւնը կը պահանջէր որ իւր հետեւողները ընտանեկան բնակութիւնը թողլով վանական կենցաղին նուիրուին, և բոլոր աշխարհային հոգերէ և զբաղումներէ ձեռք քաշեն։ Արդ եթէ Հեթում կրօնաւորութեան հրաւիրուելով վանական կեանք չունէր, և արքունիքին մէջ կը մնար, և պետական գործերով կը զբաղէր, պէտք է ըսել որ կամ ինքն միաբանութեան Երրորդական կոչուած դասակարգին կը պատկանէր, որով վանական կենցաղէ ու աքսէ ազատ էր, և կամ միաբանութեան վարչութիւնն ու պատուիրութիւնը իրեն համար բացառութիւն ըրած էին, որպէսզի անոր ձեռքով ուելի դիւրաւ կարենան Հայերու մէջ սողոսկիլ, և զանոնք հռոմէադաւանութեան և լատինականութեան վստակիլ։ Այն և ըլլայ սակայն եղելութիւնը, այսինչ սակայն է, թէ հօրը մահուընէ ետքը Հեթում կրօնաւոր անար իշխանութեան յաջորդեց, և թագաւոր հռչակուեցաւ, թէպէտ չուզեց թագ դնել և օծուիլ, ինչ որ չէր կրնար լծորդուիլ իւր կրօնաւորի կոչումին հետ։ Այս է պատճառը որ Հեթում, թէպէտ առաջնորդութեան Հայոց, բայց ոչ անուանական ընդունած օրհնութեան աստուծոյ, այլ առանց ինքն ձեռնադրելու դիմեաց դիմեաց կրօնաւորի, այնպես կոչեալ առաքեալ (ԱՄՄ· 153)։

1177· Լատին կրօնաւորութիւնն յիշատակութիւնը կը պահանջէ, որ հետեւեալ տեղեկութիւնը մը անոր անուն ծագման վրայ։ Հեթումի մեռած Փրանկիսկեան միաբանութեան հիմնադիրն է Փրանկիսկոս Ասիզացին 1182'ին ծնած, Իտալիոյ Ասիզիա (Assisi) քաղաքը, առաջին անունով Յովհաննէս Բեռնարդոնէ (Giovanni Bernardone) որուն Փրանկիսկոս կոչումը իբրեւ մակդիր անուն որուած էր, փրանկերէն խօսիլ գիտնալուն համար։ Երիտասարդութենէ առեւտրական գործերով զբաղուած, բայց հոգեսէր զգացումներով ազդուած, և բարոյական ապականութեանց տարածուելէն զզուած, 1206'ին ճգնաւորական կեանքի առաւ ինքզինքը, կատարեալ աղքատութեամբ և անբնչութեամբ, միանգամայն նուիրուելով աւետարանական առաքինութիւններ քարոզել խօսքով և օրինակով։ Երկու տարի ետքը հետեւողներ ալ սկսած էր ունենալ, և 1209'ին արդէն 129 աշակերտներ ունէր, ամէնքն ալ իրեն պէս բոկոտն ու բացագլուխ, և քուրձ կապած մը ու չունէր գօտի մը իբր զգեստ, կեդրոն ունենալով Բորձիունքուլա (Porziuncula) վանքը Ասիզիոյ մօտ։ Իւր միաբանութեան կանոնագիրը նախապէս բերանացի միայն ընդունուեցաւ Իննովկենտիոս Գ պապէն 1210'ին, բայց Փրանկիսկոսի աշակերտութիւնը արագ տարածեցաւ բոլոր Եւրոպիոյ մէջ, այնպէս որ 10 տարի ետքը, 1219'ին գումարուած համախմբութեան 5000 կրօնաւորներ ներկայ էին, թողլով իրենց անդը մնացածները, որուն վրայ միաբանութեան կանոնագիրը պաշտօնապէս ալ կը հաստատուէր 1223 Նոյեմբեր 20'ին Հոնորիոս Գ պապէն։ Վարդապետութեան յատկութիւնը կազդար վանական դրութեան մէջ մտնելն էր։ Մինչեւ այն աստիճան Արեւմուտքի վանականութիւնն ալ, որ բովանդակ Բենեդիկտոս Նուրսիացիի արբայրին 529'ին հիմնած հաստատութեան ճիւղաւորութիւններէն կը բաղկանար, արեւելեան վանականութեան նման էր, և իւրաքանչիւր վանք առանձինն մարմին մը կը կազմէր և քեմական կառավարութենէն կախում չունէր։ Փրանկիսկոսի առաջարկած կանոնագրութեամբ, ամէն կողմ ցրուած ու սփռուած վանքեր մէկ ընդհանուր միածնորի իշխանութեան ներքեւ պիտի գանուէին, և քեմական կառավարութիւններէ անկա-

խաբար՝ ուղղակի Հռոմի պապին պիտի հպատակէին։ Փրանկիսկեանց հիմնական կանոններն էին անընչութիւն, ողորմութեամբ կամ մուրալով ապրիլ, խոշորակաց կենցաղ ունենալ, և քարոզութեան զբաղիլ։ Առաջին նպատակը՝ Եւրոպիոյ քրիստոնէից մէջ առաքելական առաքինութեանց քարոզութիւնն էր միայն, բայց վերջէն ոչ-քրիստոնեաներու քարոզութիւնն ալ ուելցուց, ուղղակի նպատակ ունենալով մահմետական կանոնները։ Այս դիտմամբ Ասորիք երթալու համար ճանապարհ ելաւ 1212'ին, բայց սրեկոծութենէ Դալմատիոյ ծովեզերքը ինկաւ, և պարտաւորուեցաւ ետ գալ։ Երկրորդ անգամ 1214'ին ուզեց Մարիտանիա երթալ, բայց Սպանիոյ մէջ հիւանդացաւ և Ափրիկէ չկրցաւ անցնիլ։ Վերջին անգամ 1219'ին յաջողեցաւ Եգիպտոս հասնիլ և Եգիպտացւոց բանակը մտնել. որով Մէլիք-էլ-Քնամիլ սուլտանին առջև հանուեցաւ, և քրիստոնէութեան պաշտպանութեան համար խօսեցաւ, բայց երկրէն հեռացուեցաւ։ Անկէ ետքը այլեւս ինքն չանզափոխուեցաւ, և աշակերտները յրուեց թէ Եւրոպիոյ քրիստոնեայ տէրութեանց և թէ Ասորիքի, Պաղեստինի, Եգիպտոսի և Մարիտանիոյ մահմետական պետութեանց մէջ։ Ինքն վախճանեցաւ 1226 Հոկտեմբեր 4'ին 44 տարեկան, լոկ սարկաւագութեան աստիճանով. բայց ընդարձակ գործի մը հիմնադիր եղած, որ հետզհետէ աճեցաւ և զօրացաւ։

ՓՐԱՆԿԻՍԿԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

1178. Փրանկիսկեան վանականութեան պաշտօնական անունն եղաւ Կրօնաւոր Եղբարց կոչումը, որ լատին հնչմամբ մեր պատմագիրներն կ'ըսեն Մինոր (Minor), Մինորէ, Մինորիթ կամ Մինորիտ գրուած է։ Ասկից միաբանութենէն զատ, կանոնց վանականութիւն ալ հաստատեց Փրանկիսկոս 1212'ին, քրմապզեստ կուսանաց միաբանութիւն մը, և անոր պլուխը դրաւ Կլարա (Clara, Chiara) կամ Պայծառ Ասիզացին, որուն անունով Փրանկիսկեան կուսանաց ուխտի սակաւ Աղքատ Կարգաւոր կը կոչուին։ Նպատակը ուխտի ընդարձակելու համար ուզաւ պատակարգ մըն ալ հաստատեց Փրանկիսկոս 1221'ին, որ Եբբրդոն կոչուեցաւ, իբր զի այր Փրանկիսկեան, և կին Կլարեան միաբանութիւններէ եաքը կու գար։ Ասոր մէջ անխտիր կ'ընդունուէին այր կամ կին աշխարհականներ, որոնք աշխարհի կենցաղ կը վարէին, բայց կը պարտաւորուէին վանական կանոններու հետեւիլ որչափ որ կրնային, և իւրաքանչիւր օր ինչինչ որոշեալ բարեպաշտութիւններ կատարել, որով մասնակից պիտի ըլլային միւս միաբանութեանց, այսինքն Փրանկիսկեանց և Կլարեանց, բոլոր հոգեւոր արդիւնքներուն։ Այդ երրորդականներուն կ'ակնարկէինք, երբոր Հնթաւմի ամուսնութենէ և թագաւորական սծուխէ խօսափիլը յիշեցինք (§ 1176)։ Թէպէտ ամուսնութիւնը երրորդականներուն արգիլուած չէր, բայց կ'երեւի թէ Հնթաւմ անդր եւս մղած էր իւր բարեպաշտութիւնը, կամ թէ, ինչպէս ըսինք, առաջին դասակարգին պատկանելով ալ բացառութիւն կը վայելէր։ Փրանկիսկոսի նպատակը ոչ-քրիստոնեաներու քարոզութիւնն էր միայն, երբ որ Եւրոպացի դուրս քարոզութեան ձեռնարկեց. սակայն իւր աշակերտները առաւելապէս զբաղեցան Արեւելեան Քրիստոնեաները հռոմէադաւանութեան դարձնելու, և պապական իշխանութեան ձեռքը զօրաւոր գործիք եղան Հռոմի ազդեցութիւնը տարածելու։ Կրօնաւորները դիւրութիւն ստացան ամէն եղանակ գործածելու, և քաղաքական, տնտեսական, կրթական, ուսումնական, բարեպաշտական, տեսակ տեսակ միջոցներով պապութեան ազդեցութիւնը ընդարձակելու։ Կիլիկիոյ Հայ թագաւորութեան մէջ ալ լատինականութեան տարածուելուն մեծ միջնորդը Փրանկիսկեան կրօնաւորները եղան. որոնք նոյն ինքն արքունեաց մէջ՝ գործ և պաշտօն ստանձնեցին, և օգտուելով լատիններու հետ խնամութիւններէն, ու լատին սիկիններու գործակցութենէն, հետզհետէ լատինասիրութիւնը ազնուացին Կիլիկիոյ արքունիքին և ժողովուրդին մէջ, վերջէն ուղղակի Հայ Եկեղեցիին մէջ մտնելու համար։ Ասորիք արդէն Փրանկիսկոսի կենդանութենէն իրենց նպատակակէտ ընտրուած էր, և Ասորիք Կիլիկիա անցնիլը չատ պիտի եղաւ։ Փրանկիսկեանց մտքին տեղեկ թիւնները լրացնելու համար ուելցնենք, թէ երբ Փրանկիս-

կան աշակերտութիւնը տարապայման աճեցաւ, և հետզհետէ հարիւր հազարէ աւելի եղաւ, այլեւս անդրաժիշտ դարձաւ անոր ճիւղաւորումը, որով տասնէ աւելի միաբանութիւններ կան այսօր, որոնք հատատարապէս իրենց նախահայր կ'ընդունին Փրանկիսկոս Ասիզացին, բայց կանոնադրութեան, ոգիին, կենցաղի և գործունէութեան անասկէանալով քովրովին կը տարբերին, և իրարմէ անկախ մարմիններ կը կազմեն, որոնց թուարկութիւնն ու բացատրութիւնը մեր նպատակէն դուրս կը մնայ:

1179. Փրանկիսկեանց հետէն համաձայն անկախութիւն մըն ալ տանք Դոմինիկեանց վրայ, որոնց գործունէութեան տապարէզ դարձաւ Հայաստան, երբ Փրանկիսկեանք Կիլիկիոյ մէջ կը գործէին: Դոմինիկեանց հիմնադիրն է Դոմինիկոս, ազգանուն կուզման, (Dominicus Guzman), 1170'ին ծնած Սպանիոյ Կալագորիա (Calahorra) քաղաքը, որ մանկութենէն եկեղեցական ուսմանց և բարեպաշտական կրթութեանց հետեւեցաւ, մինչեւ որ Ոքսոմիոյ (Osma) եպիսկոպոսարանին մէջ քահանայ ձեռնադրուեցաւ, և ուսուցչութեան կոչուեցաւ: Սպանիայէ դուրս ուղեւորութեանց առիթ, հանդիպեցաւ Գաղղիոյ Ոկիտանիա (Languedoc) նահանգը, ուր Ալբիգեան աղանդաւորներ զօրացած և արտաքին բռնութեանց ալ ձեռնարկած էին, նման Պաւղիկեանց (§ 675), որոնցմէ ծագում առած կը կարծուին: Այս պարագային թելադրեց Դոմինիկոսի աղանդաւորներու դէմ քարոզչութեան գաղափարը, զոր առաջ ինքն անձամբ սկսաւ, յետոյ իրեն ընկերներ սկսաւ ունենալ, որոնք 1206'ին Փանամ (Fanjeaux) քաղաքի մօտ վարժարան մըն ալ բացին աղանդաւորաց աղջիկները ուսուցանելու, և 1211'ին միաբանութեան ձեւ տուին, և 1225'ին Ինոսկենտիոս Գ պապին հաստատութիւնը առացան, միեւնոյն ձեւով և կազմութեամբ՝ զոր Փրանկիսկոս տուած էր իր կազմած միաբանութեան: Դոմինիկոս իրենները ուղարկեց իր պաշտօնական անուն որոնց Քարոզիչ Եղբայր կ'ըսուի, և միաբանութիւնը հետզհետէ տարածուեցաւ ի բա-

ՏՈՄԻՆԻԿՈՍ ԴՈՄԻՆԻԿԵԱՆՑ

պից մէջ, կիզման ունենալով Իտալիոյ Բոնոնիա (Bologna) քաղաքը, ուր Դոմինիկոս ինքն ալ հաստատուեցաւ: Իսկ 1216'ին Հռոմ երթալով, Հոնորիոս Գ պապէն իր միաբանութեան վաւերացումը առացաւ դեկտեմբեր 26'ին: Անկէ ետքը աւելի ազատօրէն սկսան գործել Քարոզիչ Եղբայրները ուղղակի պապական իշխանութեան զօրութեամբ, առանց միջոցներ գործածելով աղանդաւորներու դէմ, ինչպէս որ ինքն Դոմինիկոս 1213'ին անձամբ գործակցած էր Կաչակիր բանակին, որ Մոնտեւորտիոյ (Monfort) կոմսին հրամանատարութեամբ Ալբիգեանց դէմ քալեց, և սեպտեմբեր 12'ին 16,000 հոգի կոտորեց: Դոմինիկոս ալ Փրանկիսկոսի նման Դոմինիկեան կուսանաց և Դոմինիկեան երրորդականաց կարգեր հաստատեց, իսկ աքսէմի համար նշանակեց հասարակ ատաղ ճերմակ կապայ սեւ կրկնոցով: Դոմինիկոս ալ ճգնութիւններէ հիւծած էր, և վախճանեցաւ Բոնոնիոյ վանքը 1221 օգոստոս 6'ին, 51 տարեկան: Նա իր կենդանութեան սկսած էր աշակերտներ յղել Յունաստան և Ասիա, աղանդաւորներու դէմ մաքառելու համար՝ տարածելով հռոմէադաւանութիւնէ դուրս գտնուղ եկեղեցիներու վրայ, բայց այս դիտումը աւելի ընդարձակուեցաւ իր մահուանէ ետքը, մանաւանդ երբ Գրիգոր Թ պապ 1229'ին աղանդաւորաց դէմ մաքառելու համար հաստատչութեան տեսողները հաստատեց, և 1232'ին այդ տեսողներուն նախագահութիւնն ու դատաւորութիւնը յանձնեց Դոմինիկեան կրօնաւորներուն: Ինչ որ հաստատչութիւնը Արեւմուտքի մէջ գործեց, մեր նպատակէն դուրս կը մնայ, միայն յիշենք թէ Դոմինիկեանք սկսան դէպ Հայաստան ալ ուղղել իրենց կրօնական արշաւանքը, ինչպէս որ չատ մը պարագաներ և յիշատակներ կը հաստատեն (ՍԻՍ· 383), և գոյն հետզհետէ ընդարձակեցին, մինչեւ որ Յովհաննէս ԻԲ պապը 1318'ին Լատին արքեպիսկոպոս մը կը հաստատէր Արեւելեան գաւառներուն մէջ, վեց ենթակայեալ եպիսկոպոսներով: Այդ ամէն քարոզիչները Դոմինիկեան միաբանութենէ էին, և իրենցմէ գլխաւոր գործիչ եղաւ Բարթողիմէոս Բոնոնիացի (Bartolomeo di Bologna) Մարաղայի եպիսկոպոսը, որ տեղական լեզուներ

թու. ախրանալով, և քարոզելով և ուսուցանելով գիանականի հռչակ ստացաւ, մինչեւ Հայ վարդապետներէն ալ չատեր սկսան իրեն դիմել լատին լեզուի և Լատինաց մէջ ծաղկող ուսումնարուս հետեւելու համար։ Այդ Բարթուղիմէոսէ սկսաւ Հայաստանի Ունիթարներու (Unitor) կամ միաբանողներու գործունէութիւնը, որուն պարագաները հետզհետէ պիտի պատմենք։

1180· Այս էր ընդհանուր կացութիւնը, երբ լատինականութեան վատակուած Փրանկիական կրօնաւորն ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ԹՈՒՂԹԵՐԸ Հռոմ, Հայոց թագաւորական գահին կը տիրանար, երբ ուրիշ Փրանկիական կրօնաւոր մըն ալ, Հերոնիմոս Ասկուլեցի (Girolamo d'Ascoli), Նիկողայոս Դ անունով, տարի մը առաջ, 1288'ին, պապական աթոռ էր բարձրացած։ Հռոմի առաջին գործը կ'ըլլար, իր միաբանակից կրօնաւորներէն Յովհաննէս Մոնտեկորվինացին (Giovanni da Montecorvino), ի Կըթէ Ֆրաճօջ (Fratres Minores), այսինքն Կրաւոր Եղբարց, իբրեւ դեսպան Հռոմ ղրկել, խընդրելով ընդունիլ ի հաղորդութիւն հռոմէական սուրբ Եկեղեցւոյն (ԿԱՀ· 403)։ Սակայն Հռոմի արքէն ընդունուած պէտք էր ըլլար, և եւեւի թէ իր թագաւորութեան մասին էր խընդրանքը, սակայն չենք կրնար ճշդել, գրութեան պատճէնը չունենալով։ Նիկողայոս Դ առանց ժամսվաճառ ըլլալու 1269 յունիս 7'ին կը պատասխաներ Հռոմի արտագին խնդակցութեամբ, և անոր կը հաղորդէր հռոմէական պատանութեան ընդարձակ հանգանակ մը, որուն համար կալանոս լատինաբէն էջին մէջ կ'ըսէ, թէ նոյնն էր զոր կղեմէս Դ պապը Միքայէլ Պալէոլոգ կայսեր առաջարկած էր (ԿԱՀ· 404)։ Նիկողայոս կը յանձնարարէ, որ երբ կաթոլիկ էլլան, ինչպէս լատիներէնին մէջ գրուած է, և ոչ աղաղաո, ինչպէս կալանոս կը թարգմանէ (ԿԱՀ· 404), զանոնք հոգեպէս ածել է ոչն զմիոնոյն հայրապետս և ժողովուրդս Հայոցաքանչ (ԿԱՀ· 405)։ Պապին առաջարկած հանգանակին մէջ (ԿԱՀ· 406-410), երրորդութեան և Մարդեղութեան կէտերէն առաջ, կը խօսուի եկեղեցւոյ վրայ, կը յիշուին զատ զատ եօթն խորհուրդներ, պսակի համար որեւէ լուծումն չընդունուիր, բայց կ'ընդունուին երկրորդ և երրորդ և ջյլը հետեւաբար պսակներ, և ընդարձակօրէն կը խօսուի Հռոմի պապութեան վրայ, իբրեւ եպիսկոպոսն և յ պետրոսէն և իշխանութենէ է վերոյ ընդհանուր եկեղեցւոյ, որուն ամենայն եկեղեցիք և աւանդութիւնք նոցա պարտին պատիւ և հնազանդութիւն ցուցանել, որուն ապետան և գործադրութեան կոչ հաստատել զմիոնայն քրիստոնեից, և մինչեւ իսկ կ'ըսուի թէ պապութիւնն է, որ կոչեցաւ ընդհել զնաւեան յաթոռ եկեղեցութեան քաղաք այլ եկեղեցիաց, մանաւանդ նոցա, որ են պարբերապետական։ Նիկողայոս Դ Հռոմի գործը դիւրացնելու, և կիլիկիոյ Հայերուն ազգովին հռոմէադաւանութեան անցնիլը յաջողցնելու համար, տէրութեան գլխաւորներուն ալ զատ զատ նամակներ կ'ուղղէ, ինչ որ անշուշտ Մոնտեկորվինացիին թելադրութիւնն էր, նոյն իսկ Հռոմի կողմէ կարգադրուած։ Կալանոս կը յիշէ Մարիամ իշխանուհին, Հայոց թագուհիին քոյրը, որ պէտք է ըլլայ հանգուցեալ Աննա թագուհիի քոյրը, Հռոմ Լամբրոնացիին դեսպանը, բայց չենք գիտեր թէ որուն ամուսինը և ինչ դիրքի տէր էր։ Կը յիշէ եւս Թորոս արքայկայրը, Լեւոն սպարապետը, Օշին մարաջախտը, և կը յարէ թէ գրեց և ա՛ այլ էլեան, և եա՛ ա՛ ամենայն ժողովուրդն (ԿԱՀ· 411)։ Ինչպէս կը տեսնուի ընդարձակ ծրագիրով մը կը պատրաստէր հայադաւանութեան դէմ յարձակումը։

1181· Հռոմ արդէն պատրաստ էր պապական հրամանին հպատակելու, բայց պէտք էր նախապէս կաթողիկոսն ալ համոզել նոյն հպատակին, և ահա՛ այս կէտէն կը սկսի Հռոմի ԿԱՏՈՒԿԵՑԻՆ ԵՒ ՀԵԹՈՒՄ կողմէ կաստանդին կաթողիկոսին դէմ յայտնուած հակառակութիւնը, և Օրբելեան կը վկայէ, թէ ա՛ նախանձ հակառակութեան բերեալ է զբոլն ընդ կաթողիկոսին կաստանդեայ (ՕՐԲ· Բ· 184), քրիստոնական դաւանանութեանց ձեռնարկից։ Ամէն պարագաներ կը համաձայնին հաստատել թէ հռոմէադաւանութեան խնդիրն էր այդ հակառակութեան պատճառը, և թէ կաթուղիկոսին չէր համակերպեր պապական հանգանակին ընդունելութեան, որուն Հեթում կանխելէն պատրաստուած էր. մինչ հակառակութեան առիթ չէր ծագեր՝ եթէ

կաթուղիկոսին եղած ըլլալը առաջին ապացոյց է Սիս (ՍԱՄ·152)։ Արդէն կոստանդնի ընտրութիւնը՝ հակառակ կուսակցութեանց պայքարի ատիթ տուած էր, և լատինամիտներու պարագլուխ Գրիգոր Անաւարզայ եպիսկոպոսը կաթողիկոսացնելու համար չարժուած մը եղած էր, զոր հաղիւ կրցեր էին խափանել Կարմիր-Վերան վանականները, Լեւոնին յայտնելով Անաւարզեցիին ապրուածքին (ՕՐԲ·Բ·199)։ Այժմ Լեւոնի անդ Հեթում էր, բոլորովին տարբեր վիճակ մը ստեղծած, Անաւարզեցիին ապրուածքին թագաւորին ընդդիմած ընթացքը էր, ուստի դիւրին եղաւ Հեթումի կաթուղիկոսին հակառակորդները իրեն միացնել, և սոսկ ընթեան խորհրդակից՝ չեպիսկոպոս և չէնքառոց ղեկաւարութեան, նաեւ է վերապետոց եկ։ Թէպէտ անունը տրուած չէ, բայց անկասկած է, որ Անաւարզեցին է եղած այդ խմբակին գլուխը։ Ինչ բանակցութիւններ և առաջարկներ և ընդդիմութիւններ եղան այդ միջոցին՝ մանրամասնօրէն պատմուած չունինք, բայց պէտք է ըսել թէ կարի չտապաւ մըղուեցան գործերը, զի 1289 յունիս 7ին էր պապին նամակը, և տարին չվերջացած, միեւնոյն 1289 տարին, ինչպէս կը գրէ Օրբելեան (ՕՐԲ·Բ·186), և կը կրկնէ Սմբատ չորոնակոդը (ՍՄԲ·125), խնդիրը իր լուծումին յանգեցաւ կաթուղիկէութեամբը։

1182· Այդ նպատակին համար Հեթում հրապուրեալ ըմբռնեալ փչրանքէ խորհրդով, առնէ ժողով է Սիս հայրապետական աթոռոյ համար, և այդ ժողովին մէջ յառաջ կոչէ ըլլալը ըսելու, որոնք գնան քարոզ քրիստոնէութեան ի վերայ հայրապետին (ՕՐԲ·Բ·184), և զոր յայտնապէս առաջ վիճայ կը կոչեն ուրիշներ (ՍՄԲ·123)։ Ինչպէս պատմիչին բացատրութիւններէն կը քաղուի, կ'երեւի թէ քանի դատանական կամ վարդապետական խնդիր մը յառաջած չէ, որ կատարելու անհրաժեշտ պիտի ըլլար Հեթումի նպատակին, և կաթուղիկոսին իր նկեղեցւոյն հաստատելիք պաշտպանը և փոխանորդը պիտի երեւար։ Ուստի բոլորովին արտաքին և բարոյական կէտերու վրայ ուշած են կենալ, զոր անաչառ և անպաշտօն լսողը կ'անուանէ Օրբելեան (ՕՐԲ·Բ·184), և կ'որակէ ինչ ընդհատոց յոգնեալոց, և որոց խիլը դիւրաւ չերեւոյթ հաստատ կ'ըսէ, բայց այն երեւոյթը բազմաղեալ հայհոյութեամբ մարդոյ չյիշեր, և միայն երկուքը առջեւ կը բերէ իրրեւ նմոյշ։ Առաջինէ մէկն է թէ յառաջ ան ղեպատրաքն ըմպել ընդքան, որուն Օրբելեան չհաստատար, բայց ևթէ ըրած ալ ըլլայ, վան պիտրիեան մարդոյ ըրած պիտի ըլլայ, կ'ըսէ, որով հայրապետական հանդիսութիւնը մը խափանելէ խորհելով, դեղ մը տուած ըլլալը կը պաշտպանէ։ Երկրորդ ամբաստանութիւնն է թէ առնոս հոգիս է լեփռնոցն ոչ է Հռոմկլային, և այդ կէտը կ'արդարացնէ՝ թէ է հայրապետական կանոնաց օրինադրուած է է պռոնկոց և է ընացողաց և յաղնայն ընտանեաց փոքոն փոխիանաց պոլ չեկնէնէն, և թէ այսպէս առհասն է յամենայն ընդհանրական խորհուրդս Հայոց և Յունաց և ամենայն ազգաց։ Մանաւանդ որ կաթողիկոսը այդ տուգանքի գումարները ոչ երբեք պարբերաբար էր եղեր Տեառն, այլ պարբերաբար էր հոգեպարկեշտ քերդողական, այսինքն է Հռոմկլայի բերդապահ զինուորներուն առաջիկին կը գործածէր (ՕՐԲ·Բ·187)։ Սակայն այդպիսի զիաղաքութիւններ աւելորդ էին Սիսի ժողովականին գումարումներուն, անոնք ոչ միայն բարոյականներուն անհիմն, այլ զրպարտութիւն լինելն ալ զիտէին, և միայն կաթուղիկոսին հնազանդել կը ջանային, որպէս զի հաստատուն իրենց նպատակին ծառայեն։ Բայց այսմ չհաստուած վճռեցին, ինչ որ նախապէս որոշած էին, թէ կաթուղիկոսին հայրապետութեան անարժան է, և պէտք է զայն աթոռէն վար առնել։ Իսկ կաթողիկոսը ոչ ժողովին գնաւած է, և ոչ որոշումէ առաջ իրմէ բացատրութիւն ուղած է, որովհետեւ պատուիրակներու ձեռքով հաղորդած է իրեն տրուած որոշումը, և ինքն իւր պատասխանը տուած է գոգոփաճաոցն (ՕՐԲ·Բ·186), և ոչ թէ ժողովի առջեւ։

1183· Հայրապետական աթոռը Հռոմկլայ էր միշտ, և այնտեղ էր կաթողիկոսանիստ ժողովի պատուիրակներ

ԿԱՏՈՒԿԵՑԻՆ ԳԱՀԸՆԿԷՑ

ԺՈՂՈՎԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐ

բու սովորական բնակութիւնը, սակայն պատմութեան կարգէն կը տեսնուի, թէ ժողովին վերջը կաթուղիկոսին կը դանուի Սիսի եպիսկոպոսարանին տունը, որ էր մէջն է Սիս, ըր

Գլխաքաղէ կոչէն (ՕՐԲ. Բ. 186), և հիմայ ալ Հին Կռնդիկոսոբան անունով կը ցուցուի քաղաքին հարաւային ծայրը (ՍԻՍ. 216)։ Զինք գիտեր թէ հանդիպմամբ այնտեղ կը գտնուէր Կոստանդին, վասն զի առէպ կը պատահէր կաթողիկոսներուն թագադրութեան մօտ գալը, կամ թէ պատրուակով և կամ հրամանով այնտեղ բերուած էր։ Ամէն առթի մէջ ծանրացուցիչ պարագայ մը պէտք է նկատել, որ Սիսի մէջ առանց կաթողիկոսի և կաթողիկոսի դէմ ժողով կը գումարուէր, երբ կաթողիկոսը Սիսի մէջ էր, տնէն եղեալ ձառայն՝ փեսան, և հօրն՝ հովսէփ, ինչպէս զայրացմամբ կը դիտէ Օրբելեան (ՕՐԲ. Բ. 184)։ Մեզի տարօրինակ պիտի չթուէր կաթողիկոսի մը դատաստանի ենթարկուիլը, եթէ ժողովը օրինաւոր լինէր, եթէ բոլոր եպիսկոպոսներ ու իշխաններ հրաւիրուած ըլլային, և եթէ չարժառիթը ստոր և օտարոտորթ նպատակ մը չըլլար, մինչ այս տեղ ափսոսով գումարուած կռնակիցներու խըմբակ մըն էր կաթողիկոսը դատելու յանդըգնող ժողովը։ Մենք բացարձակապէս անանունի պիտի հաչակէինք անոր որոշումը, և ապօրինի Կատուկեցիին գահազրկութիւնը, և անվաւեր նոր կաթողիկոսի ընտրութիւնը, եթէ Կոստանդին ինքն կնճիռը լուծած չըլլար իր յօժարակամ հրաժարելովը։ Ժողովին կողմէ պատգամաւորութիւն մը անմիջապէս կաթողիկոսին կը ներկայանայ Գրիգորիսի տունը, և կը հաղորդէ իրեն դէմ եղած ամբաստանութիւնները և ժողովականին վճիռը։ Իսկ հեզն այն և հանգարտն Կոստանդին, ոչինչ ընդդիմացար իր յանկարծականի նկած, և ոչ ալ պաշտպանութեան կը ձեռնարկէր, և խոնարհամիտ կերպով կը պատասխանէր, թէ դուք յայտնի բաները տեսեր էք, բայց մոռցեր էք զձեռնոցն, որով վիրաւորեալ ձեռն ձեռնոցիկ, զի իրօք քիւրոպոպոլի էտն զքոյն առնէր ամբաւել չգիտէս չանցաւ, և գիտեմ թէ ձեր արժանի այսմ ասպիճանի։ Աւսր վրայ կը դառնայ պատգամաւորներուն հարցնել, թէ ինչ պէտք է որ ընէ, և անոնք կը պատասխանեն ինչ որ որոշած էին ընթացաւն և ժողովն, և կ'ըսեն. Ի քաց հան է էն գլխաղէնոսութիւն և փառ ցնծել (ՕՐԲ. Բ. 184)։

1184. Կոստանդին հակառակութիւն չի յայտներ, և չանչն առնոյր չժամբոնելոմբ, միայն գործին հայրապետական և վեհանձն ձևը մը կուտայ։ Կաթողիկոսական զարդերը ամբողջութեամբ կը հագնի,

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՄԱԿԵՐՊԻԼԸ

նախորդ բազմահաչ, եմիփորն հինգկրկին, թագ պատուական, գաւազան հայրապետական, և մատանի մեծագին։ Կ'ելլէ, կը կանգնի, և առեալ է չեռն ըմբռնոյն Գրիգորէ, օրհնութիւն մը կը կարդայ Հայոց թագաւորութեան և աչխարհին վրայ, և վերջէն խօսքը իր վրայ դարձնելով կը յանդիմանէ. Գոհանամ զքեզ Տէր իմ Յիսուս, որ մարթեցեր զիս մարմնաւոր պատասխանոյ և անցաւոր պատժոյ և ամօթոյ, և ոչ պահեցեր յօրն դժոխոյ պատասխանոյ անկող և պատիժն անչքոյ և ամօթն յաւիտենական։ Տուր սոյա առաքեալդ քարի և հովիւնըդէր, զի ըստ կամաց քո հովանաւոր հօտս քո։ Այլ արանց այսոցիկ որ առին զպատասխան իմ և նախ քան զըրն իմ ապաստանեցան պատճառին զիս, պատ արասցես էբաւանս ընդ իս և ընդ նոսա։ Այս տեղ միջանկեալ դիտողութիւն մը լատատարչի սկզբ ձևը առնելուն վրայ, որուն պէտք պիտի ըլլար փոխանակ բառական իմաստ տալ, եթէ չուզէինք ենթադրել, թէ կաթողիկոսները նուիրական Սկզբ հայրապետանոցէ դուրս ալ միտքին կը պատճնէին, զի Կատուկեցին Հռոմկլայէ դուրս կը գտնուէր։ Օրհնութենէն ետքը կը սկսի մէկիկ մէկիկ հանել հայրապետական զարդերը, զորս կը դնէ ի վերայ աթոռին սեղանոյ, որ կ'երևի թէ գեհաններն պարունակող սկուտեղն էր։ Եպիսկոպոսութեան սքեմն ալ կը հանէ և զարդերուն վրայ կը դնէ, և կը հագնի մաղեղն մի սեւ և յոյժ խոշոր, և գլուխն ալ փոքրիկ կամ գաւակ մը կը դնէ ի նոյն մաղեղնէն, մատանին ու գաւազանն ալ կուտայ ցպագիմաւորաբ ընելով. ահա ըզբ ինդրեր, և այսպէս կը փակուի արտաչարժ տեսարանը, որ կատարեալ տաւաքինութեան առոյգ ուսհատաչեալ մըն էր։ Կը նայի չորս կողմը և պղտանելով ըմբնոյնն, կ'ելլէ Գրիգորացի եպիսկոպոսարանէն, և դիմն ու լուէ (ՕՐԲ. Բ. 186) կ'երթայ տանձնատուն, հանդարտ իր սիրելի Հորին վանքը, և վարել նոյն վանական կեանքը զոր կաթողիկոսութենէ առաջ ունէր։ Կատուկեցիին անընդդիմադիր համակերպութիւնը, փոխանակ իր հակառակորդները ուշադրութեան յորդորելու,

նոր կաթողիկոսի ատիթ կը դառնայ։ Կը կարծեն թէ դուցէ ելևէջի յայտ չլլնալու-ընէն, այսինքն Կիլիկիոյ թագաւորը թոնէն, և երթալ է վերին աշխարհն Արեւելից, անդ ընկալեալ լայն պատուով կաթողիկոսութեան։ Ուստի անմիջապէս եռեւէն պաշտօնեաներ յղուելով, ըմբռնեն զնա, և տանելով է բերդն Լամբրոն զնեն է հետաղ երկաթի կապանս (ՕՐԲ. Բ. 186)։ Այսպէս վարուեցաւ այն և Ջեհանգիր նախանձոտ և հերձ, ինչպէս կ'որակէ Օրբելեան կաթուղիկոսութեան հակառակորդները, ալ ըստ ոչ յօգնեան այնոց, որ զրպարտութեամբ զայն գահընկէց ըրին, այլև չկրնայ կատարել զայն ազնիւ գործին (ՕՐԲ. Բ. 186)։ Անա մոռնալով հոգեկան զգացումը, և Արեւմուտքի մէջ սկսած հաւատաքննութեան մէկ օրինակը Արեւելքի մէջ։

ԱՐԵՒԵԼԵԱՑՑ ԸՆԹԱՑՔԸ

1185· Մեր այդ դիտողութիւնը ձրի նզովակացութիւն մը չկարծուի, զի այն ուղղակի կը հետեւի վերոյիշեալ կաթողիկէն, զոր ունեցան լատինամիտ խմբակին գլխաւորները, թէ կաթուղիկոսը Հայաստան երթալ և միանալ Արեւելեան վարդապետներուն խումբին հետ, որոնց հաստատամիտ հայազգեանութիւնը աչխարհաքարող էր։ Այնտեղ կրնար իբրեւ կաթողիկոս պատիւ գտնել և պաշտօն վարել, և տկարացնել Կիլիկիոյ սխռուն ու իշխանութիւնը։ Ուրեմն յայտնի էր թէ կաթուղիկէն Արեւելեայց համամիտ էր, Հայ եկեղեցւոյ աւանդութեանց վրայ հաստատամիտ էր, հոմէական կամ լատինական մերձեցումներէ հեռու էր, և Հեթումի ու Անաւարզեցիի ուղղութեան և ընթացքին հակառակորդ եղած էր, և անոր համար կը կրէր լատինամիտներուն հալածանքը, երկրորդ զոհ մը Գրիգոր Բարաւէժէ եաքը (§ 1037)։ Անտարբեր պէտք չէ նկատուի կաթողիկոսէն իրեն առաջնորդ ընտրուած լատինամիտ պատմագիրին (ԿԱՀ. 403), և նոյն ինքն կաթողիկոսի (ԿԱՀ. 411), Կոստանդինի հանդէպ պահած լռութիւնը, որով Յակոբի անմիջական յաջորդ կը նշանակէն Սահփանոսը, Կոստանդինի անունը կաթողիկոսական շարքէն իսկ ջնջելով։ Այսչափ անախորժ երեւցած է հոմէադաւանութեան աչքին կաթուղիկէի խոնարհամիտ, այլ հաստատամիտ հայրապետը։ Կիլիկեան խմբակը զգաց, թէ Արեւելքի մէջ լաւ տպաւորութիւն պիտի չընէր՝ ինքնագլուխ գահընկէց ընելնին կաթողիկոս մը, որ լաւ անուն կը վայելէր, ուստի առ ժամս զանց ըրին նոր կաթողիկոս մը ընտրել, և Սահփանոս Ակներացի վարդապետը պատուիրակ նշանակեցին, իբր զի Տաթեւի վանքին մէջ վերջանալ և ասել մէկն էր, և կրնար աւելի ընդունելի երեւալ Արեւելեայց մօտ։ Անոր յանձնեցին իրենց ժողովական գիրը, յորմէ երթալ էին զգաստաս-տօրման կաթողիկոսին, միաւորի թուղթով կազմուած երեսուն գլուխ ամբաստանութիւնները, ամէնն ալ ոտնակոխ բանիւ բազբազալ հայհոյանաց, և միանգամայն հրաւիրական նամակով կ'առաջարկէին Արեւելեան եպիսկոպոսներուն (ՕՐԲ. Բ. 186), գնալ է ժողովն նորոգ ընդրութեան հայրապետի (ՕՐԲ. Բ. 187)։ Սահփանոս Օրբելեան, որ իբր մետրապոլիտ Սիւնեաց և ներկայացուցիչ պատրիարքին Հայոց, երթալ էր ամենայն եպիսկոպոսաց Հայոց որ յԱրեւելս (ՕՐԲ. Բ. 228), նա գլխաւորապէս կարգաց Սկեւռացի Սահփանոսի բերած գիրերը, և լսեց անոր բացատրութիւնները, և տեսաւ որ եղած ամբաստանութիւնները երբեք ալ պոյն կոթող ընաոս ինչ է հասած կամ յեկեղեցի (ՕՐԲ. Բ. 187)։ Ասոր վրայ խորհրդակցութիւն ալ տեղի ունեցաւ, և տանուտեցաւ որ բողոքելու և գործին անվաւերութիւնը մէջտեղ դնելու ալ պէտք չէ մնացած, քանի որ Կաթուղիկէին կամաւոր հրաժարականովը կատարուած գործողութեան կերպարան մը տուած էր եղելութեան, և բողոքի տեղի չէր թողած։ Ուստի պատգամաւորին պատասխանեցին, թէ դէ ալ եմ հասած կամ խորհրդակից եղծման, զի և նորոգման հաղորդեցաւած, և կատարեալ չէզոքութեան գիրքը առնելով որոշեցին, որ և ած որ յետնահաս կամ եղծած աթոռ, նոյն և ընտրեալ ընտրութենն հաստատէ (ՕՐԲ. Բ. 188)։ Այսպէս Կոստանդինի հայրապետութեան վերջանալը, իրական և գործնական հաստատութիւն ստացաւ, տասը իր հրաժարականով, և վերջէն Արեւելեայց չէզոքութեամբ։ Կաթուղիկէին կաթողիկոսութիւնը տեւեց ամ երեք (ՕՐԲ. Բ. 184), 1286'էն 1289։ Ընտրութիւնը տեղի ունեցած էր ապրիլ 13'ն, իսկ գահընկէցութիւնը կամ հրաժարականը կ'իյնայ 1289'ին վերջերը։

Տ. ՍՏԵՓԱՆՈՍ Դ. ՀՌՈՄԿԼԱՅԵՑԻ 1289-93

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

1186. *Անտարակոյս է որ կաթուղիկոսարանի գործերէն հեռանալովը, անոնց ղեկը մնաց Անաւարզեցիին ձեռքը, որ Սիսի մէջ և Հեթումի մօտ՝ պէտք եղած կարդադրութիւնները կը կատարէր։ Նոյնպէս ատոյգ պէտք է ընդունիլ, որ եթէ 1286'ի ընտրութեան ատեն ալ ջանքեր եղան Անաւարզեցին կաթողիկոսութեան բարձրացնելու, և միայն Լեւոնի իշխանութեամբը այն խափանուեցաւ (§ 1168), հարկաւ միևնոյն նպատակը կար այս անգամ ալ, երբ Հեթում լատինամոլը կը թագաւորէր, և այնչափ ջանքեր եղած էին կաթուղիկէին գահընկէց ընելու։ Սակայն երկու բարեկամները մտածած էին, թէ չատ յայտնի պիտի ըլլայ դիտումին, եթէ այդ կէտն ալ իրականանայ, և հարկաւ լուր ալ առած էին թէ Աբեւելքի մէջ լատ. տպաւորութիւն ըրած չէր իրենց գործը, և լատ. ընդունելութիւն գտած չէ Սկեւռացի Ստեփանոսի պատգամաւորութիւնը։ Ուստի լուագոյն կը սեպեն այնպիսի կաթողիկոս մը դնել, որ անունը միայն ունենայ, և գործը միշտ իրենց երկուքին ձեռքը մնայ։ Այս նպատակով ուռանց ապաւինու որ պատգամաւորը գտնայ և Արեւելեայց պատասխանը պաշտօնապէս հաղորդէ, կը կանխեն կաթողիկոսական ընտրութեան ձեռնարկել, և աթոռ կը բարձրացընեն Վաչէ՝անս ած անապատաւոր (ՕՐՔ. Բ. 188)։ Կիլիկեան խմբակին այդ հնարքը՝ մէկերկու տարիով կը կանխէր Հռոմի մէջ կատարուած նոյնօրինակ գործուածէն, որ երբ Նիկողայոս Դ'ի 1292'ին մնռնելէն ետքը, յոյսդուքեան պայքարներով երկու տարի պարապ կը մնար սիմոնը, 1294'ին պապական աթոռը կը բարձրացուէր Պետրոս Մորոն (Pietro di Moron) անապատաւորը, որ կեղեստինոս Ե կոչուեցաւ։ Ստեփանոսի ընտրութիւնը տեղի ունեցաւ 1290'ին (ՍՄՐ. 125), անշուշտ տարուան սկզբի օրերը։ Ինչպէս ըսինք էր եկեղեցւոյ կամ երջանկ. գահ. հրովմի արքունական խոհ (§ 153) գիւղէն (ՍԱՄ. 163), բայց կանոնախէն կիլիկիա եկած, Հռոմկլայի հայրապետանոցին մէջ մնացած, և եաքէն անապատական կեանքի նուիրուած, և սովորաբար Հռոմկլայեցի մականունով ճանչցուած (ՍՄՐ. 125), որ կրճատութեամբ Հռոմայեցի (ՍԱՄ. 152), և երբեմն ալ Կլայեցի գրուած է։ Օրբելեան կը կոչէ գայն, ոչ լա՛ և լի ամենայն առաքինութեամբ (ՕՐՔ. Բ. 188), և յայտնի ըլլալով Օրբելեանի տեսլութիւնը՝ կաթուղիկէին հակաւակորդներուն մասին, զորս վաշլաբէ և ջհաբալ նահանջս և հեռս կը կոչէ (ՕՐՔ. Բ. 186), կը հետեւցընենք թէ Ստեփանոս Հռոմկլայեցին մաս չէր ունեցած անոնց հետ, այլ միամիտ ու ապիկար լինելուն համար կաթողիկոսանալու արժանի նկատուած է։ Ասկա կերպով հայրապետական իշխանութիւնը, թէ ոչ իրաւապէս, բայց իրապէս Անաւարզեցիին ձեռք մնացած է, Հեթումի հետ համերաշխ գործակցութեամբ լատինամոլ ուղղութիւնը յառաջացնելու համար։ Ստեփանոս Սկեւռացին երբ պատգամաւորութենէն դարձաւ, տեսաւ որ նախ քան զպատահանքան Արեւելեայց գործը վերջացած, և նորընտիր Ստեփանոսը՝ է հատարել յոնոս կոնոզիկոսութեան (ՕՐՔ. Բ. 188), և գործը լրացած է առանց Արեւելեայց մասնակցութեան։*

ԼԱՏԻՆՆԵՐՈՒ ՀԵՌԱՆԱԼԸ

1187. *Պէտք չէ որ Ստեփանոսի գործունէութենէն գան մը սպասենք, ոչ միայն անոր համար, որ ինքն գրեթէ իւր առաջին անապատական առանձնութիւնը կը չարունակէր Հռոմկլայի մէջ, երբ բոլոր գործերը Սիսի մէջ կը կարգադրուէին Անաւարզեցիի և Հեթումի ձեռքով, այլեւ անոր համար որ չատ հնամառօտ եղաւ իւր իշխանութեան տեւողութիւնը, և այն ալ փոթորկալից արկածներու մէջ։ Եղիպտոսի սուլտանները նոր արշաւանքներ բացած էին Ասորիքի վրայ,*

վերջնական կնիքով քնացիկ ընելու համար Լատին կամ քրիստոնեայ ազգութիւնները, որոնք Երուսաղէմն ու Անտիոքն ալ կորնչելէ ետքը, տակաւին իրենց ձեռքը կը պահէին Տրիպոլիսը, Պաղոմայիսը, Տիւրոսը, Սիդոնը ու Վերիտոսը։ Ալփի սուլտան (ՀՆԹ. 85), որ Նլչի-Կաւման (ՀՆԹ. 74) և Մէլէք-էլ-Մանսուր ալ կոչուած է, 1289'ին առաւ Տրիպոլիսը Փառնէ գնդէ կամ Լատին կոմսի մը ներկայութեամբ, և անոնց և անհամբ ոչնչացուց կոտորեց ու գերեց, և եկեղեցիներ ալ քանդեց ու այրեց (ՕՐԲ. Բ. 188), և ասոր վրայ Լատիններ կեդրոնացան Պաղոմայիսի մէջ, որ է Ակքիա, Ակքայիա (ՕՐԲ. Բ. 189) և Ակքոն (ՀՆԹ. 74) ալ գրուած։ Ալփի սպասնալեցաւ յաջորդ տարին՝ արշաւանքը չնորոգած. և իրեն յաջորդեց որդին Աչրաֆ, որ Խալիլ-Աչրաֆ, կամ Մէլիք-Աչրաֆ կամ Մէլիք-Ափէրան (ՀՆԹ. 74) ալ կոչուած է։ Սա միւս տարին, 1291'ին արշաւեց Ասորիք Պաղոմայիսը գրաւելու, ուր կեդրոնացած էին բոլոր Լատիններուն մնծամեծները, Երուսաղէմի և Անտիոքի իշխանները և պատրիարքները, և երկ տասնամեայ կարգադրուն, Թամփլեան և Ըոպէրթսըն և Ալմանտոն (ՕՐԲ. Բ. 189), այսինքն Տաճարական և Հիւրընկալ և Տեւտոնեան տասնատուհանց հրամանատարները։ Պաղոմայիս ալ ինկաւ եգիպտացւոց ձեռքը նոյն 1298 տարին, և բնիկ Լատիններուն վերջին յոյսը, որոնք նոպէն առաջ պոհերցրի ըՍոբ, ըՍայոխ, ըՊերոն, այսինքն, Տիւրոսն ու Սիդոնն ու Վերիտոս բերդաքաղաքները, և յոյսի ամէն ընկերութիւնն ի սկզբն (ՀՆԹ. 85), այսինքն արեւմտեան քրիստոնեաներուն իշխանութիւնը Ասորիքի ծովեզերքէն ջնջուեցաւ։ Իբրև քրիստոնեայ իշխանութիւն կը մնար այդ կողմերը, միայն Հայոց թագաւորութիւնը, և այն պիտի ըլլար այնուհետեւ եգիպտացւոց յարձակումներուն նպատակակէտը։ Քանի որ Հայոց թագաւորութիւնը Լատիններուն հետ սերտ յարաբերութիւններով, խնամիական կապերով, և կրօնական ու եկեղեցական համաձայնութիւններով, եգիպտացւոց աչքին առջեւ իբր Լատին իշխանութեանց մաս կը նկատուէր։ Հետեւապէս ալ պիտի չխնդրուէին, մինչեւ որ զայն ալ կործանեն, ինչպէս որ չարունակեալ հարուածներով և հետզհետէ տկարանալով և ամփոփուելով, վերջնապէս ինկաւ 1375'ին 84 տարի ետքը։ Արդիօք տարբեր պիտի ըլլար Հայոց Կիլիկեան թագաւորութեան բախտը, եթէ լատինական կապակցութիւններէ քաժնուելով, բարեկամական յարաբերութիւններ մշակէր իր հարեւան պետութեանց հետ։ Եղելութեանց չարքը ներքին դրական մակաբերութիւններով լուծել դիւրին չէ, բայց իրական և դրական է որ լատինական յարաբերութիւններ զրգռեցին եգիպտացւոց թշնամութիւնը, որ չվերջացաւ մինչեւ որ Հայոց իշխանութիւնն ալ չկործանեցաւ։

ՕՐԲԵԼԵԱՆՔ ԵՒ ԹԱԹԱՐՆԵՐ

1188. Երբ այս արկածները տեղի կ'ունենային Ասորիքի մէջ, լատագոյն կացութիւն մը կը տիրէր Սիւնիքի կողմերը, որ Արեւելեան Հայաստանի կեդրոն դարձած էր Օրբելեանց իշխանութեան ներքեւ։ Տարասիճի որդիներ և եղբօրորդին յետեւէ-էրով ընդդիմանա կային հանգարտութեամբ, եվիկում և Ջալալ և Լիպարիտ մրցակցական էշխանութեամբ պայծառանային, և եղբայրն էրէանց պէք Սոխանոյ հոգեւոր ընդհոյ և քաղքը պէրպերութեամբ ղեկավարէր (ՕՐԲ. Բ. 179)։ Եվիկում երկու որդի ունեցած էր, Բուրթել ու Բուղտայ անուն, և դուստր մի զոր ամուսնացուցած էր Էսայի Պուշեան իշխանին հետ։ Հինգ որդի ալ Լիպարիտ ունէր, որոց երէցն էր Սմբատ, Սադունանց վեհապետած, իսկ երկրորդը Յովհաննէսը Սանփանոս մեսրոպական իրեն քովն առած էր աշակերտութեան, իրեն յաջորդ պատրաստելու համար, և այս նպատակով անոր զայն և վրթեաց սահմանը և ան է Հանանոյ-ՐՆան (ՕՐԲ. Բ. 179)։ Օրբելեան կը յիշէ Մամքան քոյր մըն ալ ունենալը, բայց անձնական տեղեկութիւն մը (ՕՐԲ. Բ. 238)։ Իսկ այդ վիճակութիւնները տասն տասն կը յայտարարէ, թէ պէտք չէ կարծել իրարու մէկը որ չըլլար ետքէն և պատահ, վասնզի ինքն է քաղքը գնահատ և չքնքշագրած է (ՕՐԲ. Բ. 179)։ Սիւնեաց խաղաղ կացութեան հովանաւորն էր եղած Արղուն խան, և կացութիւնը չատ չէր փոխուած իր յաջորդին Ղազանի կամ Ղազայիի օրով (§ 1175), թէպէտ անդնապատ էր քաղքովին ի գլխովրէնս,

և վերջէն Եգիպտահ եղեալ յաւուրց Յովհ 1292՝ ին, և իրեն յաջորդեց Պայրու կամ Պայտուն իւր ազգականը, որուն համար կը գրէ Հեթում, թէ աւել քաղաք ընդհս էրէսթանէից, (ՀԵԹ. 59)։ Բայց իսլամութեան յարողներ դժնհակ եղեր իրեն դէմ, և իրենց կողմը վատակելով Ալդունի որդին Ղազանը, զայն հալածեցին, և Ղազանը նստեցուցին նոյն 1292 տարին։ Սակայն Օրբելեան որ աւելի մօտէն անտած է անձերն ու գործերը Պայտունին համար ալ կ'ըսէ, թէ եղեալ Մահմէթ օբինօֆն, և վերէր զաբէտյոմբինեան իւր ինայ և վարձու և անարի փաբբտոմբնեմբ։ Նա ինքն Պայտուն սպանած է Զալալ Տարտայիճանը, Օրբելեանի եղբայրը, որ իրեն բնկէր Ամարտսի մէջ պահուած Ս. Գրիգորիսի գաւազանը (§ 98), և 36 ակերով հնհակ ոսկի, ասպառնալից խաչը, զոր յետոյ Ապաղա խանի կինը Տեսպինա (§ 1141) ձեռք ձգած և կոստանդնուպոլիս է յղած (ՕՐԲ. Բ. 218)։ Պայտունի իշխանութիւնը տեւած է միայն զաւուներէ աշուն, և ինքն ալ Ղազանի ձեռք իյնալով սպանուած է (ՕՐԲ. Բ. 220)։ Իսկ Ղազանի յաղթանակին հրամանատարն եղած է Նէվրուզ կամ Նաւրոզ, որ ընդհանէ Նաւռուզ (ՕՐԲ. Բ. 219), որուն բանակը ձեռնարկած է ամէն կողմ եկեղեցիներ քակել, քրիստոնեաներ կողոպտել, քահանաներ թըլփատել, ժողովուրդը կոտորել, կին ու աղայ գերել։ Նոյն բաները Նախիջեւանի կողմերն ալ ըրած է, իսկ Տաթեւը Օրբելեան սպասած է կռնօտ և քաջութեամբ, մինչ Սիւնեաց եպիսկոպոս աէր Տիրացուն չյարձակուած ու նախատուած ու կողոպտուած է անոնցմէ (ՕՐԲ. Բ. 221)։ Այսուհանդերձ Ղազանի հաւատ գրուած է, որ թէպէտ աւել խնամ ենոյց զանն ան էրէսթանէայս, այլ չեր հաւատթելց զբերութիւնն սիան պատել և գերել զէրէսթանէայս (ՀԵԹ. 60)։

1189. *Եթէ ուզենք ալ կարծել թէ Ղազան իւր քաղաքականութեամբ*

ԹԱՔԱՐԱՑ ՀԵՏ

կատարած է այդ փոփոխութիւնը, սակայն հնար չէ մատնութիւն չգտնել Հայոց կողմէ եղած ջանքերուն ալ։ Հարկ թէ Ղազան իշխանութեան սիրացաւ՝ Ստեփանոս փութայ անոր այցելել, և ինքն կը վկայէ թէ բոլ-

*բոքոյն է նմանէ ընկալեալ զաւս ան յայնցն, ինչ որ հարկաւ Ստեփանոսի անձին և խօսքերուն գործած տպաւորութեան արդիւնքն էր։ Ղազանի տուած չնորհներուն մէջ կար նաեւ Ստեփանոսի տրուած արտօնութիւնը, որ կարենայ է ըզքէն վեր զաւօքս անել և բոլորքոյն ըզքեզաւոցանել, միանգամայն պատգեւեց անոր ֆալէղա ոսկի, որ էր փախած է ըստ ընդ դիւ և կիւոյ, էրեալ է վերայ զանանն Աւոտծոյ և ըզնէն, ինչ որ կ'երեւի թէ ուրիշ տեղ բալէղ կոչուած նշանին հետ միեւնոյն բանն էր (§ 1141)։ Օրբելեան իւր այցելութեան եղբը անհնել ազբմոբնէն կ'անուանէ (ՕՐԲ. Բ. 231), և տասը քիչ աւել Նէվրուզի ձեռօք կատարուած բռնութեանց կ'ակնարկէ։ Հեթում թագաւորն ալ իւր մտանակցութիւնը ունեցած կ'երեւի այդ գործին մէջ։ Նա կանուխէն մնկնած էր կիլիկիայէ որ փեղեթութին յաջորդ Պայտունը չնորհաւորէ, սակայն սա որդէն Ղազանի յարձակումովը զբաղած էր, և Հեթում պատասխանեցաւ Մարզպայի մէջ ապասել Քաղդէացի պատրիարքին մօտ, մինչեւ որ գործը յստակուի։ Իսկ երբ Պայտունն ինկաւ և Ղազան գահին տիրացաւ և բարձրացաւ, փութաց անոր մատուցանել իւր մեծարանքը։ Այս առթիւ Ղազան հնազնօրէն դիտել տուաւ, թէ նա ոչ իրեն, այլ Պայտունի համար ճանապայ եւած էր, որուն Հեթում կը պատասխանէ, թէ իրենք թագաւորաց գերագահ իշխանութիւնը կը պատուին, ով ոք ալ ըլլայ զայն վարողը, ինչ որ Ղազանին չատ հաճելի կու գայ և մեծաշուք պատուով կ'ընդունի Հեթումը։ Սա ալ համարձակութիւն կ'առնէ խնամոցանել աբտյէի զանց ալէքէյ էրէսթանէից, որուն Ղազան կը պատասխանէ, թէ նա ալ էյնբեմ ըզբէ, այլ Նաւռուզն էրբենաց զանէնայն. և Հեթումի խնդրանօք կը հրամայէ աւթոման էրել հրովարակ ընդ ամենայն ալէքերն իւր իշխանութեան, զի ոչ էչնեսցեն չեռանբիել չեկեղեցիս և է էրէսթանեայս, այլ խաղաղութեամբ քնակեսցէ ամենայն ազ, զնբ հաւատ և պաշտօն համբչակ առնելով։ Ըստ այսմ ալ կը սկսի խաղաղութիւն տիրել երկրին մէջ, և գլխաւորապէս Հայկազն մէջ։ Իսկ Հեթում ղեծաւ պատուով և ըզեզբոյս ֆաւօք կը մնկնի Ղազանի մօտէն, և կը գասնայ յաչերն իւր Կիլիկիա (ՕՐԲ. Բ. 222)։ Նէվրուզի մասին ալ անտարբեր չմնաց Ղազան,

ոչ միայն զայն պաշտանակ ըլլաւ և տեղը նչանակեց Խուխլուչան իչխանը, այլ քաբէն, և յոյժ քաբեկամ և օգնական էրէաց, այլ և իմանալով Նէվրուզի դաւաճանութեան խորհուրդները, հալածեց զայն ի Խորասան, և անկէ ի ներքսագոյն Խորասան, մինչեւ որ անձամբ էրթալով ընդ ձեռս չերէքէ։ Նէվրուզը հալածող գունդերուն մէջ էին նաեւ Լիպարիա և Էսէի (§ 1188), որոնք ետ դարձեալ չերէօն Նահապետին դէմ ամբոստանեցան։ Արեւելեան Նէվրուզի այս վախճանը պատմելով, կը հաստատէ. Ահա թէեւ զէշլիր եկեղեցւոյ, և կը կնքել բարեբացնելով ֆռանկերէն և էտ այոպէտ խոտորին զեկեղեցի էր (ՕՊՒ. Բ. 223)։

ՍՏԵՓԱՆՈՍԻ ԸՆԹԱՑՔԸ

1190. Կիլիկիոյ կողմն գործերուն ընթացքը չատ հանգարտ վիճակ չունէր, վասն զի Տրիպոլիսի և Պաղտիայի հետզհետէ անկումը՝ յայտնի ապացոյցներ մըն էր Հայոց համար՝ որոնք ինչպէս ըսինք, լատին իչխանութեանց չքնաղակին մէջ կը նկատուէին, և Լատիններն ալ Ասորիքը ամրապնդած պարսպելէն առքը՝ իրենց միակ ապաւէն և յենարան կը նկատէին Կիպրոսի թագաւորութիւնը ծովին մէջ, և Կիլիկիոյ թագաւորութիւնը ցամաքի վրայ, և անոնց մէջ կը հաստատէին իրենց մնացորդները։ Հեթում Բ ալ կանխած էր, և իրաց նոր կացութիւնը յայտնելով, նոր օգնութիւններ խնդրած էր Նիկողայոս Դ պապէն, և պապն ներողութիւն իչխաններուն յորդորներ ուղղած էր նոր խաչակրութիւն կազմել և Արեւելեան քրիստոնէից օգնութիւն հասցնել։ Մինչդեռ նպաստակով էր անչուչ Հեթումի այցելութիւնը թախտնելու իսանին, զոր արդէն յիչեցինք (§ 1189)։ Եկեղեցական գործերուն պատճառ, կ'երեւի թէ Սահեռնոս այնչափ հրահրատակ չէր ըլլար Անտիոքեցիին և Հեթումի հրահանգներուն, որ կարծես կը դրդէ թէ ուչիմբերէ փէթրոնիմէ և հոգեռոնիմէ մեծաս (ԿԱԼ. 411), ինչ որ կարծեսէ բերանը Հեթումի հանդէպ սարկական ընթացք չտեսնել կը նչանակէ։ Իսկ իրրեւ ազգասէր քհանայ և հայրապետ վաստակ կը դնէր թէ հրամանն առնէր և հայրապետական գործերուն մէջ իչխանի մը ամուսնանալ իւր ազգէն Յունաստանի Գաւիտան իչխանին դստեր Զապէլի հետ։ Լատինաբէնին մէջ ըսուած է թէ ազնուականներն երբեմն ասպետնէ ազգակից են եղեր, և Սահեռնոսի ընթացքին համար լքենէ բաներ ալ աւելցուած է, զոր կարծես չէ հաճոյանալ հայերէնին մէջ ալ դնել, գոնանալով պնդել, թէ արենակցութեան արուեստին տալը պարտճչ մէյն ֆլեռուր հայրապետին ընդհանուր եկեղեցւոյ, որ է մեծ հայրապետն Հռոմայ (ԿԱԼ. 412)։ Աւելի յայտնի և նչանակալից փաստ պէտք չմնար իմանալու համար, թէ ինչ տարբեր զգացումներ կը տածէին լատինամիտներ և հռոմէադաւաններ Հայ եկեղեցւոյն նկատմամբ։

ՄՐԱՋԱՏԻԿԻ ԽՆԴԻՐԸ

1191. Ուրիչ պարագայ մըն ալ եկաւ յիչեցնել 1292 տարին լատինամիտներուն չհաստատութեանց տպաւորիլը, որ է ծռազատիկը, որ անդամ մըն ալ կը հանդիպէր 1197 թուականէ 95 տարի ետքը, որուն վրայ խօսած ենք իւր տեղը (§ 1053)։ Թէ տումարական անճարտարութիւնը հաչիւը, և թէ ժամանակակիցներէն Հեթում պատմիչի (ՀԵՌ. 519), և Հեթում պատմիչի (ՀԵՌ. 85) վկայութիւնները։ 1912 տարին կը ցուցնեն իրրեւ ծռազատիկի տարի, ուստի Օրբելեանի պատմութեան մէջ չերէքէդէ ամէն տօ եղեչերտասն ըսածը, որ կարծես թէ Անտիոքեցիի կաթողիկոսութեան երկրորդ տարին կ'ակնարկէ, պէտք է իմանալ քիչ վերը յիչուած Սահեռնոս կաթողիկոսի երկրորդ տարին վրայ, և էն չեռ տօէ փոքրիկ հատուածը միջանկեալ անգլ (ՕՊՒ. Բ. 193), վասնզի անհնար է 1295'ին տանիլ ծռազատիկի տարին, որուն տումարական հաչիւէն զատ՝ պատմական պարագաներն ալ կը հակառակին։ Ծռազատիկի հաչիւը ոչ միայն Հայերը Յուներէն կը զատէր, Լատեան և Իրիտնեան տումարներուն տարբերութեամբը (§ 383), այլև Լատիններէն ալ, որոնք Իրիտնեան տումարով կ'ընթանային։ Լատիններ ևսյտն էին Կիլիկիոյ մէջ, լատինամիտներ կ'իչխէին Հայերուն վրայ, և տարբեր սկիզբներէն մեռտալու զատիկի տարբերութիւնը մեծ յուզմունքներու տեղի տալ կրսած էր, որ Լատիններ կը պատրաստուէին տարին 6'ին զատիկ տանիլ, մինչ Հայերը

զայն պիտի տանէին ապրիլ 13'ին։ Հէթում թագաւոր կանխեց գործը քննութեան ենթարկել ասլ, հրամայեց լինել խռով (ՀԱՑ. 519), որուն ոմանք Սանիանոս կոթողիկոսն ալ նկրկայ եղած կ'ուզեն ըսել (ՉԱՄ. Գ. 286), սակայն Հէթում իւր յիշատակարանին մէջ անոր անուն չտար, և Օրբէլեան Անաւարզեցիին կը վերագրէ գործը. ըստ հայրապետ մը պէր Գրէգոր՝ ասոնոր սխալեցոյ գնդապետ և է քաց եկաց է ճշմարտութենէն (ՕՐԲ. Բ. 194)։ Հետևապէս կաթողիկոսի նախագահութեամբ կատարուած ժողով մը չեզոք որոշում առաջը, այլ Անաւարզեցիին նախագահութեամբ ուսումնասիրութեան խորհրդակցութիւն մը, որ որոշում առաւ ապրիլ 6'ին Զաւիկ ասնելու։ Իսկ այս առթիւ Անաւարզեցիին հայրապետ կոչելը, ոչ թէ նոյն միջոցին հայրապետ գանուած, այլ յետոյ հայրապետ եղած ըլլալուն իմաստն ունի, և չատ սովորական է ամէն հեղինակներու՝ յետագայ տարիճանին անունով յիշել նախընթաց գործողութիւնները, մինչև իսկ կաթողիկոսի մը համար ծնած կ'ըսեն ք, և չենք իմանար թէ կաթողիկոսութիւնը վրան ծըննած ըլլայ։ Հէթում երկարօրէն կը պատճառաբանէ թէ ուղիղը յունարտին հաշին էր, և թէ Հայոց հաշիւը է սոբբ ղաիկն տըղրոնիւն էր, և իրր հատատութիւն կը յանգատ, յետոյ ղլոխին ալօ տնտաք (ՀԱՑ. 519), իրրև թէ կարենար իւր աչքով կըշռել լուսնի լման վայրկեանը, մինչ Էսաեան և Իրիանան տումարներու տարբերութիւնը, քանի մը վայրկեաններու վրայ հիմնուած հաշիւ է, թէ լուսմը չաթաթ օրուան վերջը, թէ ոչ կիւրակի օրուան սկիզբը կը հանդիպի։ Ինչ ևիցէ, Անաւարզեցիի և Հէթումի կարծիքը զօրացաւ, և թագաւորը բառնալով ոտնէն ամենայն ալխոչին Կիլիկեցւոց ղբ Մոռղըդրէնի՝ իրր ասն ճարտարեան, և սրբ Զաքէ։ Բայց ոչ միայն Հայաստանի վիճակները, և Երուսաղէմի Հայերը ապրիլ 13'ին կատարեցին Զաւիկի ասնը, այլ նոյն իսկ Կիլիկիոյ մէջ ալ պարկեշտ վանքեր ալ ընկալան, նաև բազմաթ չեպիսկոպոսաց և ի վերջաբերաց ալ հաւանեցան Հէթումի կարգադրութեան, և որոնք որ առլի երկիւղ ալից էին, ի ձեռն պահեցին, այսինքն Զաւիկ ընկալէ նորը աւազ չարաթ ըրին, և նորէն պազատնի պատիկ ասնեցին։ Իսկ դէմ դնողներէն բազմաթ քանեալ և ատոբեալ հալածանաց եղեն (ՕՐԲ. Բ. 195)։ Օրբէլեան իրր մը խիթարական և Հայոց դրութեան այժ տուող պատգամ մը կը յիշէ, թէ Երուսաղէմի մէջ տւազ չարաթ երկոյին իջնալ լոյսը, է ինչ ճշմարտիւ է ճրագալոցի ատոբն, ինչպէս հաստատած են Երուսաղէմ դանուղ և ամենատես եղող Հայոտատնցի վարդապետներ (ՕՐԲ. Բ. 194)։

1192. Սակայն Կիլիկեցւոց բարեբախտ չեզոք յունարտին պատիկին հետևողութիւնը։ Զաւիկէն քիչ օր

ՀՌՈՄԿԼԱՑԻ ԱՌՈՒՄԸ

ետքը Աչրաֆ սուլտան անով զօրութեամբ Ասորիք գալով, այս անգամ ալ Լատիններուն վերջին ապաւէն եղող Կիլիկիոյ թագաւորութիւնը ջնջելու միտքով. և յայտնէ ատթեալ երկիր Կիլիկեցւոց՝ ծաղ ընեցան է լերինս և յորդոր քերդին (ՀԱՑ. 501)։ Իսկ եգիպտական բանակը ամէն կողմ աւերած և կոտորած սփռելով, ուղղուեցաւ չիտակ Հռոմկլայի հայրապետանիստ քերդին վրայ, որ Հայոց նշանաւոր ամրութիւններէն մէկն էր, և յարմար չէր Աչրաֆի զայն տևելէն թողուլ. Կիլիկիոյ ներսերը արշաւած ատեն։ Այլ և այս եգիպտացի սուլտաններուն նպատակը լոկ ասպատակութիւն չէր, այլ իրենց սիրապետութիւնն ալ ընդարձակել։ Պատմիչները բնաւ յիշատակութիւն մը չտեսին թէ Հայոց թագաւորական գունդեր Հռոմկլայի պաշտպանութեան փութացած ըլլան, բայց Հռոմկլայ ինքն իրեն ալ ինացած, բաւական երկար դիմադրութիւն ըրաւ. եգիպտացիներուն՝ իւր անառիկ դիրքովը և ճարտարարուեստ օջինպարական ամրութիւններովը։ Պաշարման տեւողութիւնը քառասն ասոբ (ՍԱՄ. 153) կամ շատ օրեր ըսուած է (ՍՄՐ. 126), իսկ Օրբէլեան հետ է լսելով ամօրեայ ժամանակ պատնրազմէ ետքը գրաւուած կ'ըսէ ղազաւն, և ապա ընդ՚ին քերդն, և ապա զբաչքաբեղն կլան (ՕՐԲ. Բ. 190), չարունակ պատնրազմելով քաչքայնէ քաքանօթ ձանր տրանց, տրահատ արտախտականօ և քազմաբոյ զբաանամօթ (ՀԱՑ. 501)։ Իսկ կոտորածալ գրուածը կ'ըսէ ցոյցուած է յուլիս 28 օրը (ՍԻՍ. 556), որ է ըսել Զաւիկէն սկսեալ

ամիս ևաքը։ Հևթում թագաւորը իւր յիշատակարանին մէջ այնպէս իմն կը ցուցնէ թէ ինքն կիլիկիա եղած ըլլայ Հռոմկլայի պատերազմին միջոցին, և Թաթարները կը մեղադրէ թէ ազէ նեռոլացի հեղինակին, և անոր համար եգիպտացիք առաքելոյ չարչարողացի ըսելու տեղ ըսած են։ Բայց չըսեր թէ ինչ ինչ ըրած է Հռոմկլայի պաշտպանութեան համար (ՀԱՑ. 518), և ոչ ալ կը յիշէ թէ ինչ օգնութիւն տեսաւ Լատիններէն, որոնց այնչափ յարած էր։ Վերագոյն պատմեցինք Հևթումի Թաթարներուն ասած այցելութիւնը, ուր գտնուեցաւ Պայասնի իյնալուն և Ղազանի բարձրանալու միջոցին (§ 1189), ինչ որ չաշնաձոյն ժամանակն անկի ունենայ (ՕՐԲ. Բ. 218), և սակէ կրնանք հետևցնել, որ Հռոմկլայի իյնալէն հաքն էր, որ Հևթում Արևելք գնաց, Թաթարներու հետ բարեկամութիւնը պնդելու և եգիպտացւոց ղէմ օգնութիւն փութացնելու համար։

1193. Սոսկալի եղաւ Հռոմկլայի աւերումն ազէտը, զոր ժամանակակիցներ Եբուսաղէմի կործանումին կը նմանցնեն։ Բազոր ապարանքներ կործանեցան և եկեղեցիներ կոխան եղան, որոնցմէ Թովմաս Հռոմկլայեցի քահանայն անունով կը յիշէ Ս. Գրիգոր, Ս. Աստուածածնին և Ս. Փրկիչ չորեքտասը սուրբ տաճարները, բնակիչները է պէս պէս հոն չարչարեցան, և չատ չատեր է փերթեան վրէժն (ԹՂՔ. 537)։ Գերի ինկողներուն մէջ էին եւս Սահմանոս կաթողիկոս, 12 եպիսկոպոսներ, բազում քահանաներ և սարկաւագներ։ Կոտորածին չափ մեծ եղաւ աւարառութիւնն ալ, որ կոպեցին, յողոպեցին զմենայն ապառ ինչեցոյն և զմենայն ըստացուածն։ Եւ այս կարգին կը յիշուին Ալբրեայն Գրիգոր Լուսաւորչի, և քառասնից և մինոն և ոեղանն, յորոյ վերայ պատուիրեր չորեքտասը, և հոգևորին նոյնպէս չորեքն որ է պատուական սրբոյն Հռիփսիմեայ, և պարեգօտն ներկեալ արեամբ, եւս և նշխարք առաքելական և նշխարք պետական և մենայն ընտրեալ մարդկեղոյց (ՕՐՐ. Բ. 190), ինչպէս նաև հոգևորապէս նշանն սրբոյ վանիցէ (ԹՂՔ. 537)։ Հարկաւ այդ սրբութիւնց մեծամասնութիւնն կամ պատահաններն էին որ աւերուածներու քաղցը չարժեցին, բայց կրնային ալ յատուկ սրբանկարչական քրիստոնեականութիւն ունենալ։ Երբոր Սահմանոս կաթողիկոս Աղբաթիի առջև կը հանուի, առտնանը դիտել կուտայ, որ իրենք հարիւր տարիէ իվեր Հռոմկլային գերութեան կ'աշխատէին և չէին յաջողեր, և կը հարցնէ թէ ընդհէ եղեւ այս, զի այժմ է ոչ կռնոզիկոսութեան այսպէս բերեալ է զնոսա։ Կաթողիկոսը խոնարհաբար կը պատասխանէ, թէ կ'երևի որ վասն մեղաց մերոց եղեւ, և առտնանը վրայ կը բերէ, թէ իրաւ ալ ինքը երկար անգամ յուսահատելով ևս դատել կը մտածէր, բայց երկար անգամ ալ արգելուեցաւ, որով յայտնի կ'ըլլար թէ Աստուածն չէր ուզեր զինքը դերբերդ է չեռնի (ՕՐՐ. Բ. 191)։ Պատմիչն այդ խօսքերը չիչելով, անուղղակի կ'ուզէ ակնարկել Հևթումի հետևած բռնութեամբ կամ հնազանդութեան ուղղութեան։ Աչրաֆ Հռոմկլային մէջ բերդապահներ դնելէ, և ամրութիւնները նորոգելէ ետքը, երբ կը պատրաստուէր տաճիկ երթալ, և ընթեր ածնեցին կիլիկիոյ թագաւորութիւնը (ՀԱՑ. 519), ևսեւէն լուր եկաւ թէ Եւրոպայի բանակ մը հասած է Եգիպտոս և Ալեքսանդրիան պաշարած։ Եկողները Նիկոզիայոս պապին յորդորմանէն վրայ ճանպայ եղող խաչակիրներն էին, որուն համար ալ Հևթում յատուկ խնդրանք հասուցած էր պապին քովը փրանկիսկեան կրօնաւորներու դեսպանութեամբ (ԿԱԼ. 416)։ Այս պատճառով Աչրաֆ ատիպանեցոյ կիլիկիոյ արշաւանքը ևս թողուլ, և իւր երկրին պաշտպանութեան դիմել, որով, կ'ըսէ Հևթում, իսկ մեր ընդհէ պահել եղեւ, որպես ճնճղուկ յորոյ վերծաւ (ՀԱՑ. 519)։ Աչրաֆի Հռոմկլայի գերիները և աւարները մէկտեղ կը տանէր, Դամասկոսի մէջ յոյժ տղտոյեաց վերոգրեալ ըրէշոյցանելով ընդ հրապարակաւ, և Եգիպտոս հասնելով կը քանտարիկէր երկաթի կապանօք (ՕՐՐ. Բ. 191)։

1194. Ամբատի չարունակուր Հռոմկլայի աւերումը և Սահմանոսի գերութիւնը պատմելէն ետքը կ'աւելցնէ. ԱՐԿԱԾԻՆ ՇՈՒՐՋԸ Կործեմ ընե յանէբաւ էրաւեց եղեւ, վասն որը Կոռոնոպեայ ասորըւոյն, զի այսմենէն վասն նախանձու եղեւ (ՍՄԲ. 126), և պատճառ ասած անիրաւութիւնն հանդէպ՝ աստուա-

ծային պատիժ մը կը համարի վերահաս ար-
կածը։ Միևնոյն միտքը առանց երկուանոց
յայտնած էր Օրթելեան, երբոր Հռոմկլայի
առնուելուն պատմութիւնը կը սկսէր ըսե-
լով, Թէ Բուկայս Տէր է վերայ Ասթանացեան
ազնիւ Հայոց, չէզոց ղպտերուն կոպտա-
գիծ, և ըմբիռս է վրէժխնդրութեան իբր երէ-
ցեաց (ՕՐԲ. Բ. 190)։ Իսկ պատմութիւնը ա-
ւարտելէն ետքը, յուզեալ բարեանութեամբ
կը սկսի յանդիմանել անձ մը, զոր՝ «Վ դա-
տաւոր և զպտերուկ հայրապետին ես կոչելով,
յայտնապէս կ'ակնարկէ Հեթում Բ թագա-
ւորին, այլ անունը տալ չհամարձակիր (ՕՐԲ.
Բ. 192), զի դեռ եւս Հեթում կենդանի էր
և կը թագաւորէր, երբ ինքը կը գրէր (ՕՐԲ.
Բ. 256)։ Արկածին պատասխանները ալ մանրա-
մասնելով, անոր ըրածը և կրած վնասը դէմ
դէմի դնելով կը չարունակէ. Զոր դա՛ ի
Գլաձորայ եկեղեցւոյն արտաւէտեր, նա զէտրն
արտաւետաց ի դէպ անտառ Հռոմկլային։ Զոր դա-
ւ յեռամբ ծերեցուցեր է զեկտասն, նա ծերե-
ցոյց յեռամբ տասներն Մըռայ զէտ եղեալ հայ-
բապետն։ Զոր դա՛ ի կապան և ի բանտ առաւե-
ցեր է Լամբրն քեզդ, նա զէտն առաւետաց ի կա-
պան և ի բանտ անվերծանելի զընտանին Մըռայ։
Անկէ ետքը եղած կորուստներն ալ թուե-
լով, հայրապետական զարդերը, պատուա-
կան թագը, Լուսաւորչի Աջը, կաթողիկո-
սական գաւազանը, և նոյն իսկ աթոռա-
նիստ հայրապետանոցը, կը հառաչէ. Ա՜ո՜ղ
անմոռնելոյ ծերդ, երէ յոչնչէ գոյացան և պա-
պահաս մոռնցաւ (ՕՐԲ. Բ. 192)։ Այդ արտա-
ւուչ խօսքերը պիրճախօս յայտարարութիւն-
ներ են այն զգացմանց, որոնք կը տիրէին
նոյն ատեններ կաթուղիկոսին դանընկէցու-
թեան վրայ, և այն աննպաստ տեսութեանց՝
որով կը նկատուէին Հեթումի և Անաւար-
զեցիի լատինամիտ գործերը։ Օրթելեան Հռոմ-
կլայի հայրապետանոցին վրայ խօսելով, ա-
նոր հիմնարկութիւնը կը վերագրէ Գրիգորիս
կաթողիկոսի, որ և Վկայասէր կոչեցաւ (ՕՐԲ.
Բ. 192), զոր իբր սխալ կը կարծէ հրա-
տարակիչը՝ Գրիգոր Բ Վկայասէրի վրայ իմա-
նալով (ՕՐԲ. Բ. 358), զի Օրթելեանի խմա-
գրածն նոյն ինքն Գրիգոր Գ Պահլաւունին է,
Ներսէս Շնորհալիի եղբայրը (ՕՐԲ. Բ. 193),
որուն վկայասէր ալ կոչուած ըլլալը իր
տեղը յիշած ենք (§ 953)։ Իսկ հայրապետա-
նան աթոռին Հռոմկլայի մէջ մնալը 140
տարի կը հաշուէ (ՕՐԲ. Բ. 193), ինչ որ կը
համապատասխանէ մեր ժամանակագրութեան
ալ, որ 1149'ին գրինք անոր սկիզբը (§ 944),
և անկէ մինչեւ 1292, ճիշդ 143 տարի անց-
ած է։ Իսկ Հռոմկլայ նստող հայրապետները
կը համրէ պատ ինչպէս որ մենք ալ գրինք,
Պահլաւունիէն մինչեւ Հռոմկլայեցին, երկու
ծայրերն ալ մէջը համրելով։

ՍՏԵՓԱՆՈՍԻ ՄԱՀԸ

1195. Որչափ ալ Աչրաֆ հապճեպ եա
դարձաւ, սակայն Կիլիկիոյ մէջ ահ ու դողը
չվերջացաւ, մանաւանդ
երբ լսուեցաւ, թէ Աչրաֆ
յաջողեցաւ Ադեքսանդ-
րիոյ վրայ յարձակող Եւ-
րոպացիները վանել, որով ահի և փոշլով
էր հանապազ ի լեռն ամենեցուն՝ հալած երկի-
ւղ փալոփան նորա, և յոյժ ի նեղութիւն և ի պա-
ռապան էր յոյժ ահ ազգս Հայոց, ինչպէս կը
գրէ Բաղնեկունքցի Նորոզ քահանայ 1292'ին
(ԹՈՐ. Բ. 436)։ Սակայն Աչրաֆի չյաջողե-
ցաւ յարձակումը նորոգել, որովհետև պա-
նաս է ծառայ իւրմէ, որ սկսի առնել սուլտան-
նալ, այլև ինքն յոյզ պահաս, և սուլտանու-
թիւնը անցաւ Մէլիքնասիրի, կամ Նասըր-
Մուհամէտի, Աչրաֆի եղբօր։ Բայց դանդ կոչ
մանուկ էր, քնամակալ անուանուեցաւ Կիպո-
ղա, կամ Քէթպողա Թաֆարը, որ ծառայ
փնեալ եղած էր, բայց Նասըրը բանտարկել
տալով, սուլտանութիւնը սեփականեց Մէ-
լիքհատէլ կամ Մէլիք-էլ-Ատիլ անունով։
Այդ եղելութիւնք տեղի ունեցան 1293'ին,
որ տարին եղև այնքան ավ, զի ամենայն Սա-
բեկինոյ դառանէին, երէ երկոտնեայ ոտ սեր
շունչ չտճաքէին պոչին (ՀԵԹ. 74)։ Այդ պա-
տահանեալն կ'ակնարկէ Հեթում Թագաւոր,
երբ եգիպտացիներուն վրայ խօսելով կ'ըսէ,
Թէ այժմ կան գէտ հարուածելը, անյամբ յան-
չինը քաշանելը, իսկ մէտ ընդհէտ պահել եղած
(ՀԱՑ. 519)։ Այդ խառնակ միջոցին էր որ
երջանիկ և փառաւորեալ կաղնչեցիան Աթեփանոս,
ինչպէս Օրթելեան կը կոչէ Հռոմկլայեցին,
եղեալ ամէն ի բանակ վերծանեցաւ ի նմին։ Եգիպ-
տոսի մայրաքաղաքին։ Քայիրէ կամ Գահի-
րէի մէջ եղող քրիստոնեաներ, զորս անզգայի
Ղափիներէն աւելի այնտեղ գանուող Հայե-
րուն վրայ ի դէպ է իմանալ, յաջողեցան
հրաման առանալ բանտարկեալ կաթողիկոսին

արժանաւոր քաղաքին ընելու, և փոքր չեն կեղծել Հռոմէացւոց, և այն տեղ պոռոտով եկին է հանէթով (ՕՐԲ. Բ. 192)։ Որոշ տեղեկութիւններ կը պակսին յիշուած եկեղեցիին և Մաւփանոսի գերեզմանին վրայ, իսկ մահուան թուականը պէտք է նշանակել 1293, գերութենէ տարի մը ետքը։ Օրբելեանի կողմէ տրուած պատուաւոր կոչումները նորէն կը հաստատան, թէ ամէնուն համոզմամբ Մաւփանոս մանակցած չէր կաթուղիկեցիին դէմ գործուած անիրաւութեան, թէ անիկայ քէպէտ պարզամիտ անապատական, հրաշագործութիւն ալ չէզոք Անաւարզեցիին ձեռքը (§ 1130), և թէ պարզապէս անմեղ զոհ մը եղաւ ուրիշներու տպօրինի գործունէութեան։ Անտարակոյս է, որ իրը արդարեան անապատաւոր մը, համբերութեամբ կրեց նա նաեւ չդիմացկուպ բանտարկութիւնը, և գրեթէ մտարիրոս մը եղաւ իր բազմաչարչար վախճանովը, և միայն կալանաւոր պէս մտերմանդի մը անօրինակ զգայուքը կրնայ գրել, թէ «ահեղ յոյսով՝ բերկրանքն ըղձալի հոգւոյն երից, ուստի է նեղից ընդարձակ և գառնալի ծերութեան (ԿԱԼ. 416)։

Տ. ԳՐԻԳՈՐ Է. ԱՆԱԽԱՐՁԵՑԻ 1293 – 1307

1196. *Մաւփանոսի գերութեան մէջ եղած տարին, նոր կաթողիկոս դնել տալու միտք չունեցաւ Հեթում,*

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸԼԼԱԼԸ

*վասնզի ոչ միայն եկեղեցւոյն կանոնը, այլ և ազգային պատիւն ալ կը պահանջէր, առանց երկար չընել և չձանձրացնել իր պաշտօնին զոհ եղած, և օտարներէ հալածուած ու բանտարկուած կաթողիկոսը։ Սակայն հիւ կաթողիկոսի անունը կրող մէկ մը չկար ձեռքի տակ, կաթողիկոսութիւն վարողը կար։ Անդամին կաթուղիկեցիի ընտրութեան օրէն գործի վրայ էր Անաւարզեցին, որ Հռոմկլայեցիին օրով գործերու ալ սիրացած էր, և անհանգստակ կը չորանայէր պաշտօնական անզգուշութիւնը, երբ սխալը անսխալունչ էր, և միտքերը յուզուած էին, Հռոմկլայի սրկածը ամէնուն ուշը գրաւած էր։ և վերջապես նոր վանդի երկիւղն ալ վարատած չէր։ Եթէ Մաւփանոսի կենդանութեան պաշտաճախութիւնն ալ կը պահանջէր նոր կաթողիկոս չնանգնել, ամէն ինքնագործութիւն կրը դադրէր, երբ Մաւփանոսի մահուան լուրը կը հասնէր, և այն որ արդէն կաթողիկոսութեան ընդհանրական վարիչն էր, պաշտօնական կերպով անունն ալ կ'առնէր վրան։ Կարծես նոր ընտրողական պարծողութեան ալ պէտք չէ տեսնուած, դի Օրբելեանի լռութեան համեմատ, չեթոյ ամենայն գիտողաց, առնէ ձայնվ ընդհանուր Հեթում և փոյ չեռանդրեալ կաթողիկոս Հայոց ընդեր Գրիգոր Անաւարզայ եպիսկոպոս (ՕՐԲ. Բ. 193)։ Միայն հրամայական ձեռնադրութիւն մը կը յիշուի, և կը ցուցնէ թէ եպիսկոպոսներու ժողովը եղած է, ոչ թէ ընտրելու, այլ ձեռնադրութիւն կատարելու համար։ Շատունց էր որ յաճախամիտ կաթուղիկոսութիւնը, որուն հովանաւորն էր Հեթում, յաճախ միաբանութեան անդամակից կրօնաւորը, կը ջանար Հայ եկեղեցւոյ գլուխն անցընել իր կաթուղիկոսութեան պատ Գրիգորը, սակայն անգամ մը Լեւոն Քաղաւորի կամքն էր արգելք եղած (§ 1168), անգամ մըն ալ Աբեւելեայց հանդէպ ակնածութիւնն էր արգելած (§ 1186), իսկ այս անգամ ոչ միայն արգելք մը չկար, այլ եւ չափազանցները պատան կու տային Հեթումին ազատօրէն գործել, և ամենուն ալ մտադրութիւնը անձնական և պատահական իղդիմնարէ հեռացած, միայն կաթողիկոսական աթոռին պահպանութեամբ ու պաշտպանութեամբ էր դրաւուած։ Ահա թէ ինչ պարագաներու մէջ կը յայտնէր Անաւարզեցին՝ այնչափ տարիներէ իվեր հետապնդած և երկու անգամ յաջողած եղած, հայրապետական աթոռին տիրանալը։

1197. Գրիգոր անձնական յատկութիւններովը կարող անձ մը ճանչցած էր, և իր հակառակորդ Օրբելեան ալ կը վկայէ, թէ եր այր իմաստուն և առաքինի, սիրող

եկեղեցւոյ, պծնաբէր և պծնախմբել պծնչ պերա-
նականաց, և պայծառացուցիչ չէշտակաց մոլոր-
բուաց, ֆէխեբէ և ղևեղա և
ԱՆՁՆԱԿԱՆ ղբպբրնիւն լոքին և յոյն ար-
ՀԱՆԳԱՄԱՆՔ ֆէն (ՕՐԲ. Բ. 193)։ Ասուա-
բանի ալ հմուտ ըլլալ կը
կարծուի, զի է Հռոմայեցւոց, է Յունաց և յԱսորւոց
հատատրապէս քաղաք պոպոնիւն ասոք
վկայէց ներբմանեաց կ'ըսուի (ԿԱԼ. 419)։ Աստ-
ջին ձիրքը ուսումնականութիւն ու դիտ-
նականութիւնն է, որ նկատողութեան պիտի
առնուի, և երկրորդ կը մնայ եկեղեցասի-
րութիւնը. զոր սակայն իւր անձին անհատ-
ական տեսութեամբ, և ոչ իւր եկեղեցւոյ
ուսողական սկզբունքով կը գործադրէր։
Իսկ տաքնութիւնով կ'իմանանք թէ զկնի
ու զկղա կեանքէ զերծ էր։ Իւր ծննդավայրն
ու առաջին կեանքը անծանօթ մնացած են,
հակառակ իւր չատ ծանօթ անձ մը լինելուն,
եթէ չուզենք իրեն է Սոյ կոչականէն (ԿԱԼ.
419) հետեւցնել, թէ Սիս քաղաքը ծնած
ըլլայ, և Մեծոփեցի կոչումէն ալ հետև-
ցընել՝ թէ Մեծքարի աշակերտութենէն եղած
ըլլայ տեղ վարդապետանոց մը կար (§ 1156)։
Անաւարզեցի մականիւ անունը, որով ընդ-
հանրապէս կը ճանչցուի, պարզապէս Անար-
զաբա քաղաքի կամ Անազարբայ եպիսկո-
պոս ըլլալէն առնուած է (ՕՐԲ. Բ. 252)։ Ուրիչ
անոյ իրեն տրուած է Տարբերիացոց մա-
կանունը (Հեթ. 85), որուն ոչ բացատրու-
թիւնը ունինք և ոչ մնկնութեամբ կը գրա-
նենք. զի եթէ եբէյոս պոպէ կամ քահանայի
որպէս իմանանք, անմնկնելի կը մնայ եբէյոնց
յոգնակի կիրառութիւնը։ Այս կոչումներէն
զատ ուրիչ մականիւ անուններ ալ արուած
են իրեն զանազան պարագաներու համե-
մատ, և կոչուած է Երզնկայ (ՋԱՄ. Գ. 284)
քանի երզիզ ու երզնկան ըլլալուն համար,
Հռոմ (ՕՐԲ. Բ. 179) տասարակ ատենու թեան
յարած ըլլալուն համար, և Ջրոյ պատարագի
խորհրդական բաժակին ջուր խառնելու սկսե-
լուն համար։ Իւր կաթողիկոսութեան բար-
ձրանալն արդ օրն ալ յայտնի չէ, զի
հաշիւը հին ըլլալիք պարագայ մը չենք
գտներ, և Սահմանագիր տարի մը բանագա-
կութիւն կրնայ ալ օրը օրին 1292 յունիս
28'էն հաշուել ալ հնար չէ։ Հետևաբար
պիտի պատանենք 1293 ամառուան մինչդեռ
գնել Անաւարզեցին պաշտպանէր կաթո-
ղիկոս ծածկելը։ Դիտելու թեան արժանի է,
որ Անաւարզեցին ուղղութիւնը յայտնի,
և ինքն կանուխէն ընդդիմութեան առար-
կայ եղած, և առանց ժողովական ընդհա-
թեան և առանց Արեւելեայց համաձայնու-
թեան կաթողիկոս հռչակուած ըլլալով ալ,
Արեւելեայք չեն ուզած անոր կաթողիկո-
սութեան դէմ բողոքել, և ոչ ալ Ապիրատի
դէմ ըրած ցոյցերնին կրկնել՝ իրենց համար
զայն կաթողիկոս մը դնելով (§ 1040)։ Այդ
դղուշատար ընթացքը իրաւունք ունինք վե-
րագրել Արեւելեայց պետն ու դլխաւորն և-
դող Սահմանաց Օրբելեանի խոհականու-
թեան, որ զգացած է անչուշտ թէ հայրա-
պետութեան պատակոտմը վտանգաւոր ու
կարի վնասակար կ'ըլլար ազգային եկեղեց-
ւոյն, երբ կաթողիկոս մը՝ սխալէն հետև-
գնելու թեան մէջ կը վտանգէր։ Արեւելեայք
ալ զգացած կ'ըլլան, թէ ամէն զոհողու-
թիւն պէտք էր ընել, որպէսզի սխալին
գոյութիւնն ու հետևանքները չմնան-
գան։ Սակայն Անաւարզեցին կաթողիկո-
սութեան չընդդիմանալով մեկնել, Օրբել-
եան համարձակ ընդդիմացած է անոր ու-
զղութեան և գործնական, ինչպէս հետդհետէ
պիտի տեսնենք։

1198. Անաւարզեցիին կաթողիկոսու-
թեան սկիզբը յայտնութեան նշոյլ մը եղաւ
եգիպտացւոց կողմէն հռչ-
ԱՋԻՆ ակութեան առաջարկ մնա-
ԴԱՐՁԸ ացորդը, ինչ որ Հա-
յկազեան համար մնծ միսի-
թարութիւն եղաւ։ Քէթպողա որ բանա-
թեամբ աւետարանութիւնը գրուած էր (§ 1195)
և նեստորին թշնամութիւններէ կը վախնար,
ուխտած էր օրագրին թշնամութիւնները
կարճել, և միանգամայն չէր համարձակեր
իւր անձէն հետանալ։ Եգիպտոսի մէջ ակած
ամէն ու անոր հետևանքը եղող ժանտամահն
ալ մեծ ազգեցութիւն գործած էին
ընդհանրապէս, և ժողովուրդին միտքին մէջ
քրիստոնէից դէմ գործուած բռնութեանց
համար երկնային պատուհաս կը սպասէին։
Անա զանազան պարագաները, որք իրարու
հետևանք եղած Քէթպողան համոզեցին հան-
գրաւ ձգել Հայերը, ինչ որ Հայոց ալ վնաս-
ուած կ'ըլլան էր։ Հետևաբար չատ մտքի իրարու-

համաձայնեցան, Հայոց կողմէն ինչ ինչ տեղի թողուցան, եթան պրպտուելոմբ գնացին և գալջէս. և վան մէրոյ եպ ընտասրն գանտուելէ դղեակն Պեհեռնէ (ՀԱՔ. 85) և գԴևկմանիկիա որ է Մալաչ (ՍԻՍ. 556), իսկ եգիպատացիք դարձուցին իրենց տարուան նաւիրական պրատիճնները, որոնց գլուխը Մալք Ալը. ինչպէս որ գրուած է, թէ սոյն ատեն պատ Հայոց Հէրնոմ՝ գնաց գալը վանդրէն և գտնան մասան է յանորինց, և եբեր է Սիս (ՍՄԲ. 126)։ Հաչտութեան դաշինքին հետ Ալին և ուրիշ պրատիճնոց դարձը Հայերու համար մխիթարական պարագայ մըն էր. և անհնար էր որ ամէն կողմ հրաչակուած չըլլար։ Այսու հանդերձ Օրբելեան որ Հայոց 746'ին, այսինքն 1297'ին կը կնքէ իր պատմութիւնը (ՕՐԲ. Բ. 257), Հռոմկլայի առնուելուն ատեն կը գրէ. «Ի Ալէ և Գաղաղան և Անեան տէրն Գրիգոր ոմն պատճէ» (ՕՐԲ. Բ. 192), ուսկից կը հետևի թէ Ալին գառնալէն յետը չունէր։ Սակայն Օրբելեանի պատմութիւնը հետզհետէ գրուած ըլլալով, պէտք չէ պնդել, թէ այդ խօսքն ալ 1297'ին գրուած ըլլայ. միւս կողմէ Սմբատի չորսնակորդին է սոյն ատեն բացատրութիւնը՝ 1292 և 1297 թուականներուն մէջ կ'իյնայ անորոշ կերպով (ՍՄԲ. 126), որով կրնանք ըսել թէ Ալին դարձը 1293'է մէկ երկու տարի առաջ տեղի ունեցած է. և Օրբելեան այն հատուածը գրած ատեն տակաւին Ալին ապատուելուն լուրը առած չէր։ Ամէն տարի մէջ պէտք է ընդունիլ թէ Ալին գերեզմանը տեղի ունեցաւ Անաւարզեցիին առաջին տարինները, և պահուեցաւ Սիսի մէջ, ուր Անաւարզեցին հաստատուց իր հայրապետանոցը, քանի որ Հռոմկլայ քանդած էր և եգիպտացւոց անցած. և միանգամայն ազգային սովորութեան համաձայն էր՝ քաղաքական իշխանութեան կեդրոնին մէջ հաստատել հայրապետանոցն ալ։ Սիմէոն Երևանեցի կաթողիկոս, կը կարծէ թէ Ալը եգիպտացիներէն Պարսիկներուն անցած, և անոնցմէ 1461'ին Ալեմանդրի Զաքարիա կաթողիկոսին նուիրուած ըլլայ (ՋԱՄ. 8), և իր կարծիքը հաստատելու համար կը դիտէ թէ՝ դիեբէլը Ալըն է Մր պատճէն ոմն պատճէր, բայց դարձեալ ինչ ալ բնաւ (ՋԱՄ. 9). բայց կ'երևի թէ չէ անած Սմբատի չորնակորդին պատմութիւնը, ուր յայտնապէս գրուած է թէ Հեղնամ գնաց գալը վանդրէն և եբեր է Սիս (ՍՄԲ. 126)։ Մենք ուրիշ տեղեր ալ պիտի ունենանք Ալին վրայ գրելու։

1199. Անաւարզեցին երբոր կաթողիկոսական աթոռը դրաւեց, և անհնազանդ տիրապետութիւնն ալ ապահովեց, Արեւելեայց ընդդիմութեան չի հանդիպելով, և անոնցմէ ալ իրեն կաթողիկոս ճանչցուելով, այլ նաև վաւերութիւն կրցաւ ունենալ թէ կաթուղիկեցիին կողմէն իրեն դէմ որևէ չարժուժում պիտի չըլլայ, կամ եթէ ըլլայ ալ՝ իրեն պիտի չվնասէ, ուստի Հեթումի հաւանեցաւ, և համաձայնեցան անոր դիւրագոյն կեանք մը պատրաստել Աւագին անգամ կաթուղիկեցին Լամբրոնի մէջ (§ 1184) չղթայակապ բանտարկելէն յետոյ, թէպէտ չենք գիտեր թէ որչափ ատքը, քաշչին վճռած, բայց ալ հանչի չորեքլանոցէն, և անկէ մինչև այս ատեն ալ ոչ մի կաթուղիկեցի կաթողիկոսը կը մնայր Լամբրոնի բերդը փակուած (ՕՐԲ. Բ. 186)։ Բանտարկութիւնը տեղի ունեցած էր 1289'ին, կը տեւէր ուրեմն մինչև 1293, Անաւարզեցիին կաթողիկոսացած տարին։ Միևնոյն թուականը կը գտնուի արձանագրուած նշանաւոր արքայանին կամ մատանեքնելու պահարանին վրայ, որ կը պատուէր հիւսիսային Իտալիոյ Ալեքսանդրիա (Alessandria della Paglia) քաղաքին մօտ, Պօսքօ Մարէնկօ (Bosco Marengo) գիւղը, Դոմինիկեանց վանքը, և այժմ կը գտնուի Թուրինոյ կայսերական թանգարանը (ՀԱՔ. 498)։ Արքայանը ընդարձակ յիշատակարան մըն ալ ունի կոստանդին կաթողիկոսի մը կողմէ գրուած, և իբրև արհեստի նմոյշ մը յաւուր մատղութեան առարկայ եղած է Լէյտոս (Leijden) գումարուած 1883 տարւոյ հնաբանից համաժողովին մէջ (ՍԻՍ. 107–112)։ Ձիչատակարանին գլուխը նշանակուած տարին, չեօթ հարիւր Հայոց ընտրեալ ընդ տասնամեայ ամաց լրման, եթէ և երեսոյ է սոյն պատճառ, որ է Հայոց 742, կամ 1293 տարին, կաթուղիկեցիին գոնէ ուրիշ կաթուղիկոսի մը չկրնար պատչաճիլ, սակայն միւս կողմէն պիտանի թէ նոյն տարին կաթուղիկեցին այլ եւս կաթողիկոս չէր, միայն

թէ անոր բանտարկութենէ ազատուելուն առիթն էր, որով իբրեւ ուխտի յիշատակ մը նուիրուած կ'ըլլայ այն կօշտանդինի կողմէ։ Ըստ այսմ 1293 թուականը իւր ազատութեան եւ ուխտին տարւոյն պէտք է վերաբերել, քան թէ չինութեան, որ կրնայ տարի առքն ալ սուրատած ըլլալ։ Յիշատակարանին մատղիր ուսումնասիրութեամբը կը տեսնենք, որ կօշտանդին անչ փոքրամ, անեալ է Կլայն Հռոմայոյն, եղեր է կաթողիկոս, բայց չըսեր թէ այժմ ալ կաթողիկոս է, եւ կը յայտնու թէ ոչ, այսինքն է հինայ ու կաթողիկոսութենէ հոքը, Այնհոտ վանոց է հովհաննէն, եթէ պետրոս այն ոչխն պան, և վճռէին իւր պեպհոն։ Ասկէ ամենայն իրաւամբ կը հետեւցնենք, թէ կատուկեցին չորս տարի բանտարկութենէ հոքը, Լամբրոնի բերդէն հանուեցաւ, բայց չնորհեցաւ իրեն անկէ հեռանալ, և իւր Խորին վանքը երթալ Բարձրբերդի կողմերը, այլ իրեն իբրեւ բնակութիւն ու պաշտօնավայր նշանակուեցաւ Սկեւռայ վանքը, որ էր առընթեր հայբենաբեր ամրոցի պերճին Լամբրոնի (ՍԻՍ. 97)։ Յովսէփեանց հայրապետը, որ անտրտունջ խոզեր էր իւր սիրտը, ուրախութեամբ ընդունած է Սկեւռայ առաջնորդութիւնը, բանտարկութենէ հոքը, և ոչ թէ կաթողիկոսութենէ առաջ վարած է այդ պաշտօնը, ինչպէս սխալ կարծեցին (ՀԱՒ. 498), զի կաթողիկոսութենէ առաջ Խորին վանքի առաջնորդ էր (ՕՐԲ. Բ. 184)։ Կատուկեցին չյիշատակեր իրեն դէմ եղած անիրաւութիւնը, բայց երկու նշանակելից տողեր կարծես թէ խափանցիկ կերպով կը ցուցնեն անոր սիրտին ցաւը, զի կը գրէ. Այլ եբաղէ ընդ առ վախճան առնայր զբոյս պարծանեան, և ի'նչպէս պատմել Հռոմկլայի առաւմը և հայրապետին դէրսութիւնը։ Նոր ցաւեր ալ ունեցանք՝ ընկլը, առաջուընէ ցաւ մը ունեցած ըսել է, մինչ ցաւ մը պատճառ չէր. ուստի անչուշտ միտքին մէջ իւր դատնկեցութեան յիշատակները կը նորոգուէին, որ նոր ցաւերու կ'ակնարկէր նոյն յիշատակարանին մէջ իրեն վրայ խօսելով, կը գրէ թէ վերեւէն եմ է Այնհոտ (ՍԻՍ. 108), ինչ որ բառական նշանակելով է, թէ ոչ իրեւ պատիւ մը, այլ իրեւ բանտապատիւ բնակութիւն մը նշանակուած է իրեն Սկեւռայ վանքը։

1200. Դիտելու արժանի է, որ յիշատակարանին մէջ նոյն տանեի կաթողիկոսին անունը դրուած չէ, թէպէտ երկու անգամ դատեմբ եւ օրհնութեամբ յիշուած է Հեթումի անունը։ Չենք կրնար ըսել թէ կաթողիկոս մը չգտնուած տեղն գրուած է յիշատակարանը, որովհետեւ յայտնապէս կ'ըսէ թէ Հռոմկլայի առաւմը տեղի ունեցաւ ամօթ յոռոջ էան վրոսական, այսինքն Սրբատանին չհնութենէն տարիներ առաջ, մինչ հազիւ տարի մը հոքը արդէն Անաւարզեցին կաթողիկոս եղած էր, որով կասկածոտ դիտում կը տեսնուի Անաւարզեցիին անունը չտալու մէջ։ Իսկ Հեթումի անունին պատուով յիշուելիները, բնաւ իրաւունք չեն տար հետեւցնել, թէ ուրեմն անհետանական է որ Հեթում յօժարած ըլլայ ընա աթոռէն հրաժարեցնել (ՀԱՒ. 498), քանի որ պատմութիւնը յայտնի է, և Օրբելեանի կծու ակնարկը (ՕՐԲ. Բ. 192) երկբայելու տեղի չթողուր։ Ուսահ Հեթումի համար ազօթքը՝ նուիրել ընդ առաքս յոբելեան, և եբաթեցաւ որ չէս հասան՝ խոստովանութիւնը (ՍԻՍ. 109), քաջ հոգեի պատայայտութիւններ են։ Իսկ ըսելը թէ քաջաց Հեթմայ յոբելեանին, եթէ պետրոս այն ոչխն պան, որ է Սկեւռայի առաջնորդ ըլլալուն յիշատակութիւնը (ՍԻՍ. 108), կը ցուցնէ թէ այդ եղած է բանտարկութենէ հոքի միջոցին։ Այս պիտակութիւններէ կը հետեւի թէ առաւելապէս Հեթումի կամքով եղած է կատուկեցիին ազատութիւնը, քան թէ Անաւարզեցիին նախանձոտութեամբը, որ թերեւս տակաւին չէր սիրեր ազատ վիճակի մէջ տեսնել կատուկեցին, որ մի' գուցէ իրեն ծրագիրներուն դէմ արգելք մը յարուցանէ։ Իսկ Հեթում, որ իւր լաւնումիտ ազգութեան հետ, իզձանալ բարութիւն մըն ալ կը տեսցանէր իրեւ փրանկիկեան կրօնաւորութեան նուիրուել լարնպայծ մը, բանական իզձի յարգում տնեցած պիտի ըլլայ, չորս տարի չարտնակ Լամբրոնի դղեակին մէջ փակուած պահելով խնդձ կատուկեցին, և Անաւարզեցին ալ համոզուած է Լամբրոնի դղեակէն Լամբրոնի վանքը փոխադրել զայն, և եկեղեցական միխիթարութեան ալ դիւրութիւն տալ՝ Սկեւռայ առաջնորդութեամբը։

1201. Երբոր Հեթում կը տեսնէ թէ այլ եւս ամենայն ինչ կարգի մտած և կանոնաւորութեան ենթարկուած է՝ Դրիդոր կաթողիկոսութեամբ և Եգիպտացւոց հետ հաշտութեամբ, ամենը հաստատ կը կարծէ քաղաքական գործերէ բոլորովին քաշուիլ, և այն կրօնաւորութիւնը զոր իրը երիտասարդական մը կամ իրեն արտանալ մը աչքերուն մէջ կը վարկէր, իր ամբողջական կատարելութեան հասցնել, փրանկիականց քարթէ կապան հագնիլ, և չուան գօտին պատել և վանական կեանք վարել։ Արդէն իրմէ զատ վեց եւս որդիներ թողած էր Լեւոն Գ., ամենն ալ գործի տէր և կարող անհատներ, որք կրնային թագաւորութիւնը կառավարել։ Այդ նպատակով եւ ղեռաձոնչեան չէր եղբայրն է պարտ Թորոս, և ինձ եմաւ է կոչէ և կրճատութեամբ, և փրանկիականց վանքը մտաւ, որուն ուր ըլլալը և ինչ անուն ունենալը նշանակուած չէ։ Պատմիչը այդ եղելութիւնը կը դնէ 1293 թուականին, որ է նոյն իսկ Անաւարզեցիին կաթողիկոս եղած տարին (ՀԹ. 85), սակայն վէնետիկի փրանկիականց վանքին մէջ նկարուած պատկերին ներքեւ 1294 տարին ցուցուած է՝ իրր թուական Հայոց թագաւոր Երանելի Եղբայր Յովհաննէսին, որ քիչ ատեն, այսինքն փրանկիականց տարին աւարտուն (ՀԱՅ. 516)։ Միգի ալ ունի յարմար կը թուի այդ 1294 թուականը, որ միջոց մը կը խոզ. Դրիդորի կաթողիկոսութենէն և Եգիպտացւոց հաշտութենէն ետքը պէտք եղած կարգադրութեամբ զբաղելու։ Իսկ պատմիչին տարի չփոխած ըլլալը նշանակութիւն չունենար, քանի որ Հեթումի իրր կրօնաւոր ունեցած Յովհաննէս անունն ալ կը չփոխէ, և Մակար կոչեցեալ կ'ըսէ (ՀԹ. 85), մինչ Մակար անունը, Հեթում Ա.ին առած անունն է (§ 1155)։ Թորոս Հեթումի ետքը երիցագոյն եղբայրն էր, և կարգով անոր կ'իյնար յաջորդութիւնը, այսու հանդերձ Թորոս իրրեւ թագաւոր չի ճանչցուեցաւ, այլ իրրեւ անգործակալ կամ խնամակալ առանձնաց պարտութիւնը, այսինքն իշխանութիւնը, որով կարծես թէ Հեթում զործէ քաշուած չըլլար, այլ եղբայր Յովհաննէս անուանուելը և փրանկիական կրօնաւորի առաջնորդը կը չարունակէր հակել թագաւորութեան գործերուն։ Այս միջոցներուն պէտք է դնել, Հեթումի քոյրերէն Ռիփայի՝ Յունաց կայսեր Անդրոնիկոս Բ Պալէոլոգի միքայէլ որդւոյն հետ ամուսնանալը, և Զապլունի Տիւրոսի կոմսուհի կոչուիլը՝ ամուսնանալով կիպրոսի Հենրիկոս թագաւորին եղբօր՝ Ամաուրի Լուսինեանի հետ (Amaury de Lusignan)։

ՀԵԹՈՒՄԻ ԿՐՕՆԱՒՈՐԻԼԸ

1202. Անաւարզեցիին ապրելու ապագան էր, այնչափ տարիներէ ի վեր իրեն նպատակ ըրած փոփոխութիւնները մտածելով Հայոց եկեղեցւոյն մէջ, տարեկաբար ընդդիմելով Լատինացւոց ծէսերն ու սովորութիւնները ալ։ Ինչ կաթողիկոս էր, Հեթում թագաւոր իր պաշտպանն էր, զանազան մնջոյներով իրեն կողմը չտնուած խումբ մըն ալ ունէր, թէպէտ ամբողջ կիլիկիան չունէր. իսկ Հայաստան իրեն միաքին հակառակ էր։ Դրիդոր անդիտակ չէր այդ կացութեան, ուստի կ'աշխատէր տակաւ տակաւ մոռնալ իր մտածած նորութիւնները, և առանց ալմուկի ու չփոթի ամէն բան փոխոխել։ Այս նպատակին համար նախ ինքն կը սկսէր անձամբ կատարել իր ծրագիրները, անկէ կաթողիկոսարանին մէջ դործադրել կու տար, միևնոյն ժամանակ արքունեաց պէտքերն ալ կը համակերպէին Հեթումի հրամանին ներքեւ։ Անկէ կը սկսէր վանահայրներէն և եպիսկոպոսներէն իրեն համաձիանալ գտնել, և մինչեւ իսկ ընդդիմադիրները համոզելու համար հակաճառութեան կը մտնէր. և հետաւոր տեղեր ալ իր համաձիանալէն և մտերմութիւնէն նուիրակներ կը զրկէր, ճարտար կերպով իրեն կողմը գործակիցներ կազմելու։ Ըստ այմ Անաւարզեցին կը զգար չանար քայլարձակ հրամաններ արձակել և որոշումներ տալ, այլ կը սպասէր գինչ հաստատուն ժողով կընէ. որ ընթերցուածն (ԿԱԼ. 440), վանդի համոզուած էր ու պէտք կը զգար, որ ընդհանուր փոփոխութիւնը ժողովով հաստատուէր (ԿԱԼ. 438)։ Հետևաբար վստահօրէն կրնանք եզրակացնել, թէ ինչ ալ ըլլան Անաւարզեցիի մտածածները, բաժնները և բրածները, անոնք ոչ օրէնքի և կանոնի, և ոչ ալ աւանդութեան

և սովորութեան այժը ունին, և կը մնան լոկ անհատական գործողութիւններ, որոնց մասին ինքն ալ կ'ընդունի, թէ իրեն հնար է լսել, Մէ՛ ֆոխեր ըահմանա՝ ըբս եդին հոբէն ֆո (ԿԱԼ. 448)։ Ըստ այսմ յատինամիութիւն կամ յատինաէրնել, որունք կը կարծեն կաթոլիկական իշխանութեան հպինակութեամբ ճոխանալ Անաւարզեցիին վրայ կըրթընկով, իրաւունք չունին այդ կողմէն փառա մը քաղել, քանի որ ինքն Անաւարզեցին կը խոստովանի թէ ժողովի հաստատութեան պէտք կայ. և միւս կողմէն ալ յայտնի է թէ իւր օրով մնաւ ժողով գումարուած չէ։ Այս դիտողութիւնը կ'ընենք Անաւարզեցիին գործը Անաւարզեցիին միտքով կշռադատելու համար, զի մեր համոզմամբ ժողով մը եղած ատեն ալ, պէտք է ոչ թէ նիւթական գումարումով զոհանալ, այլ ժողովին օրինաւորութեան և հպինակութեան պայմաններն ալ քննել, ու այնպէս եզրակացութեան յանգիլ։

1203. Անաւարզեցին յատինամիտ վերոխութեանց մասին ընդարձակօրէն խօսելու չափած, անցողակի կերպով միայն Սիսի և Աղթամարի ԱՂՔԱՄԱՐԻ ԱՐՁԱԿՈՒՄԸ աթոռներուն յարաբերութեանց տկնարկ մը, որ կը պատուի Անաւարզեցիին գրութեան մէջ, ուր Հեթումի ուղղակի խօսքը կ'ըսէ. ԶԱղթամարն օրհնել եթոբ (ԿԱԼ. 439), առանց ուրիշ բացատրութիւն մը աւելցնելու։ Այս խօսքերը հիմ եղած են կարծելու թէ Անաւարզեցին Աղթամարի աթոռին վրայէն վերաց այն բանադրանքը որ Սիսու-Վկան ժողովով դրուած էր (§ 929), և հրամայած աւաւ անոր որ անարգել իր իշխանութիւնը վարէ, ու քաղաքին մէջ եղոյց յայնմհետէ աթ նայն ոլոա (ԶԱՄ. Գ. 289), մինչ այս մասին ոևէ պատմական յիշատակ չկայ։ Յիշատակարանի մը մէջ այս միջոցին իբր Աղթամարայ կաթողիկոս կը նշանակուի իրաբաս հաւէն Ակֆէսին իշխանի երկու որդիքը, Սահմանաս և Զաքարիա (ԱՐՔ. 363), մինչ Հաւաքարանը Սահմանասէ հաքը կը դնէ եղիլ Ագրակեցին 1292'էն 1300, և անկէ հաքը Զաքարիա Ակֆէսեանները 1300'էն մինչեւ 1334 (00 ԲԻԶ. 1193)։ խակ Յիշատակարանը Զաքարիայի մահը կը դնէ 1321'ին (ԱՐՔ. 365)։ Բայց ով ալ ըլլայ Անաւարզեցիին ժամանակակից Աղթամարցին, հնար պիտի չըլլայ բոլորովին հերքել Անաւարզեցիին վերագրուած պնդակումն ու օրհնութիւնը, բայց և ոչ ուեւէական արդիւնք մը տալ անոր։ Թուականէն իբր 40—50 տարի ետքը, Մխիթար կաթողիկոս կը գրէ, թէ Աղթամարի աթոռը՝ յաճախել հնարէնէ էր կաթողիկոսին, այլ սակս ձմեռնոյ է, զի եթ անդէն անօտ կաթողիկոսէ, վտանգով քանզգրեցաւ է կաթողիկոսին Հայոց, և թէ յորժեհեւ արեւելեան Աղթամարայ ազատագրեցաւ է ձեռք, քանզգրեցաւ հանգերձ վճռակոցն նոր (ԶԱՄ. Գ. 396)։ Բանի որ Մխիթարէն սակս ժամանակ աւաջ տեղի ունեցաւ Աղթամարի դէմ նոր բանադրանք մը, հնար չէ զայն նոյնացնել մօտ 200 տարի աւաջ 1114'ի վճիռին հետ, և պէտք է ըսել թէ Անաւարզեցիի պնդակումէն հաքը, նորէն խնդիր յարուցաւ և Անաւարզեցիի պնդակումը չկրնալ նկատուեցաւ։ Բայց թէ Գրիգորի և Մխիթարի միջոցին կաթողիկոսներէն ով եղաւ բանադրանքը նորոգողը, պատմութիւնը մեզի չյայտներ։ Եղելութիւնը վատանգաւոր և անհետեւանք քան մը եղած ըլլալուն, հարկ չենք սեպեր տեղի հետաքննութիւնները, թէ ինչ պատգամներու միջ և ինչ պայմաններու ներքեւ տեղի ունեցան Սիսի և Աղթամարի աթոռներուն հաշտարար յարաբերութիւնները Անաւարզեցիի օրով, և կրկին հակառակութիւնները Անաւարզեցիէ հաքը։

1204. Անաւարզեցին կը խոստովանի, որ երբ տաւջին անգամ Լատիններուն կոչուեցաւ՝ իբր նմանողութեան ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ նախընծայ պայման, պատարագի լուժակին ջուր խառնել, ինչ անմիջապէս չհասանեցաւ. զի կը գրէ, երբ ֆոանբէ՛ խնդրեցին ըշտ չենէն, ես հակառակ կեցայ, զի ֆէրեէ ատոֆոպէս, որ չէր ըլա (ԿԱԼ. 438)։ Ակէ կը հետեւի թէ որչափ ալ սիրաւով պատրաստ ըստ սմինոյնի Հռոմի ծէսերն ու սովորութիւնները ընդունել, սակայն խոհական խղճահարութիւն մը ունեցած է յամառօն չգտանելու, և պատշաճ կեպով դիմելու իր միաւորը իրականացնելու համար։ Իր կողմէն յայտնուած

պատրաստականս խիղճը քաջալերած է լսել ի նմանէ հրամայողական ձևերով և զարմանալով պատճառաբանութիւններով դրած իւր միտքը, որ զրկէն Ակեւմահայոց դիտական առաքելութիւնէն նախապաշարեալ էր։ Պատարագի բաժակին չուր խառնելը՝ հայոց առանձնաշնորհ դէմ պայքարին դիմաց որ մեկնակէտը եղած է, որովհետև Անաւարզացիին մեղի հասած դաւանաբանական գրութեանց, ոչ թէ միայն մեծագոյն պարունակութիւնը, այլ գրեթէ ամբողջութիւնը այդ խնդիրին չուրջը կը դառնայ, և յարմար անյարմար վկայութիւններ կատարած են ջրախառն բաժակը պաշտպանելու համար։ Եթէ յառաջ բերուած վկայութիւնց մէջ Ամանաի և Բարսեղի, Ասկէպերանի և Աստուածատրի անուններն ալ կան, որոնք կրնան Հայերուն ծանօթ ներկայացիլ, սակայն Ազգքաջդր Ա և Յուլիոս Ա պապերէն, Կիպրիանոս Կարթեդոնացիէ և Ամբրոսիոս Մեդիոլանացիէ (ԿԱՀ. 436), Հերմիոս Դալմատացիէ և Բեղատ Աստղիացիէ (ԿԱՀ. 444) քաղուած վկայութիւնները, զորս Անաւարզացին ջրախառն բաժակի պաշտպանութեան համար կը յիշէ, յայտնապէս կը ցուցնեն թէ որոնք եղան Անաւարզացիին խորհրդատուները ու համոզողները, որ մինչև իսկ իրմէ գերագոյն փառս կը դիմէ չոգնչ Ֆոռնէ առջի հայրն, որ ի հարկին յառաջ բերել և ցուցնել չհամոզուողներուն (ԿԱՀ. 444)։ Անաւարզացիին մեծ խրոխտ եղած է որ Լատին եկեղեցւոյ մէջ նոյնիսկ կայ եղեր բաժակի չուր չխառնողներուն վրայ։ Ես, կ'ըսէ, ոչ ես ինչ ի ձայնէ և հայրապետէ ձեզ բանադրեալ է, և բոլոր չունքն այն է, որ այդ բանադրանքին զինքն ազատէ, և իրմէ ապահովութիւն, արդէն սահմանեալ եմ, կ'ըսէ, որ երբ պատրաստ կա առնեմ, զա՛, զոր դնեմ ի ձեռն (ԿԱՀ. 438)։ Որով կ'արդարացնէ իրեն տրուած Ջրով մատանեանը։ Բայց չատ զօրաւոր հարց չէր չհանդիսանար, երբոր ծածկեն բաժակը չրելով, ինքզինքը կը կարծէ պաշտպանել, իսկ իւր եկեղեցւոյն պաշտօնեաներուն կը նայի որ անչուր պատարագին, և համարձակ կը գրէ, ով ոչ առնէ, և ոչ չոգէ, ըստ ինձ դնէ ի ձեռն (ԿԱՀ. 448), քանի որ պէտք չէր որ անհարկեր մնար, եթէ իրեն համոզում գոյացուցած էր, թէ քանդրանքի նպատակը կը մնայ չկրնար։

1205. Ջրախառն բաժակի խնդիրին մասին համոզում գոյացնելէ առքը, պիտին էր ուրիշ լատինական նմանաձև կէտերն ալ ընդունիլ տալ Անաւարզացիին, որ կը սկսի ձեռք տանել ուրիշ կէտերն ալ, զորս կ'ուզէ լատինին նմանցնել, և Հայ եկեղեցւոյ աւանդական կարգերը ջնջել։ Իւր փոփոխած փոփոխութիւններն են. 1. Ընդունիլ Յորնակէ և Լատիններէ ընդունուած հօքի ժողովները, բայց չյիշել թէ Լատիններուն ընդունած ուրիշ հօքի ժողովները, որոնցմով Ակեւմահայոց սիեկերտական ժողովները 14'ի հասած էին։ 2. Համարձակ դառնալ երկու քնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւն ի Քրիստոս, պնդելով թէ Հայոց կաթողիկոս մըն ալ և Ազուանից կաթողիկոս մըն ալ պայն ընդունած են, բայց անուն չտար, և յայտնի չէ թէ որոնց կ'ակնարկէ։ 3. Ծնունդը դեկտեմբեր 25'ին ածել Յայտնութենէ պատելով։ 4. Զատկի Արտ ալոյցին երեկոյին կաթնեղէնով նաւակատիք չընել։ 5. Ծիանուց ուրբաթներուն պահքը չլուծել։ 6. Բոլոր աէբուհի և արբոց տօներուն և պահոց օրերը Լատիններուն հետ ընել, և Հայկական եկեղեցւոյ հնախնկական դրութիւնը ջնջել։ 6. Սուբ Աթոռոծ'ին մէջէն կամ խաչեցաւ բառը վերցնել, կամ Բէթոռա բառը աւելցնել։ 8. Եկեղեցական զգեստները գործածել, թէպէտ չատ նշաններ որ Լատիններուս ձեռնէն ալ ընդունելու է։ 9. Ժամերգութիւնները եկեղեցւոյ մէջ կատարել։ 10. Քահանայական աստիճաններուն Լատինաց հետևեալ ընել։ 11. Պատկերները ընդունիլ Լատինաց պէս, անխտիր և առանց պարտիկնոյ։ 12. Բաժակին չուր խառնել, ինչ որ արդէն գլխաւոր խնդիրն էր (ԿԱՀ. 439)։ Այդ կէտերը գնուած առներնիս, կը տեսնենք անոնց մէջ քանիներ, որոնք առջի դարերէն Յայնակաս կողմէ իրը միաբանութեան պայմաններ առաջարկուած էին, բայց երբեք պաշտօնապէս ընդունուած չէին։ Սակայն Անաւարզացիին յիշած գրութիւնը նոր կէտեր ալ կը պարունակէին, տեսնելով անչուշտ Լատին կրօնաւորներուն քիւպրութենէն, որոնց կը հպատակէր կրօ-

նաւոր թագաւորը, և որոնց աչակերտած էր օտարաւէր կաթողիկոսը։ Եթէ կային կէտեր որոնք սկիզբէն իվեր դաւանական կամ կարևոր տարբերութիւններ պարունակէին՝ ուրիշ եկեղեցիներէ առեն առեն պահանջուած էին, սակայն Անաւարզեցիին օտարաւէր եռանդը այնչափով ալ չէր բաւականանար, և քոլորովին նոր փոփոխութիւններ ալ կ'առաջարկէր, որք թերևս պահանջուած ալ չէին, ինչպէս է տօներուն մասին եօթնեկ սկսան դրութեան ջնջումը, Հրագալոյցի կամ Ցինանց ուսելիքները, և ուրիշներ ալ։

ՇԱՐԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

1206. Անաւարզեցին նորութեանց տենդով տոչորեալ անձ մը կ'երևի, վասն զի փափաք ունեցած է եկեղեցւոյ մէջ փոփոխութիւններ մտցնել, նաև անկախաբար լատինական նմանողութիւններէ։ Այդ կարգէն է աւանդաւոնի ժամերգութեան մէջ Մեծաց-ոյծ կարգը հանապազօրեայ ընել, ամբողջապէս իւր փոխով ու չարականով, քարոզով և աղօթքով։ Ժամերգութեան այդ մասը որ Քրիստոսի Մարդեղութեան կամ Ցայտնութեան նուիրուել էր, հայկական հին ծէսին համեմատ, կիրակնօրեայ պաշտօն մըն էր և Ցարութեան նուիրուել իւղաբերից կանանց մաս կը կազմէր։ (ՕԶՆ. 29)։ Անաւարզեցին, անչուշտ լատիններէ թելադրուելով, թէ Հայոց ժամերգութեան մէջ Աւետաւածնայ պաշտամունք բաւական մրաւորութիւն դարձուած չէ, որուհետ որ Մեծաց-ոյծ կարգը, Ցարութեան կանոնէն զատ ունենալով հանապազօր կատարուի տաւնաւանն ժամերգութեան մէջ։ Այդ նպատակով բազմաթիւ Մեծաց-ոյծ չարականներ ալ յօրինեց, իւրաքանչիւր օրուան պատշաճին համար, որոնցմէ քանիներ գրչագիրներու մէջ կը տեսնուին, սակայն հաստատուն կիրառութեան մտած չեն, թէպէտ և Մեծաց-ոյծ կարգին սովորական դարձած է, և այսօր ալ կը կատարուի։ Անաւարզեցին իւր երթեցող մականունն ալ արդարացուցած է նոր չարականներ յօրինելով, որոնցմէ 33 կանոն ցուցակագրուած կը գտնենք (ՍԻՍ. 242)։ Անոնցմէ 9 հատը Աստուածայայտնութեան տանին կը պատկանին, որուն ինն օրերը բաժնած է երկու հրաշագոյցներու, երկու եւօրեանցներու և Թլփատութեան տօնի մը։ Երկք կանոններ դրած է Աւագ չաբաթի առջի երեք օրերուն համար։ Ցատուկ կանոններ յօրինած է, Անդրէասի, Թովմասի աւագաբանիներու, Մատթէոս ու Մարկոս աւետարանիչներու, 72 աչակերտներու, Նիկողայոս, Բարսեղ, Աստուածածան ու Ոսկերերան հայրապետներու, Գէորգ, Մերկեափոս, Թէոդորոս ու միւս Թէոդորոս զօրավարներու, և կանոն մըն ալ Տարագահան մարտիրոսներու՝ որք Անարզաւայի յատուկ սուրբեր են։ Ըստ այսմ Աստուածայայտնութեան 9 կանոններէն զատ 18 ալ կանոններ յօրինած է Հայ եկեղեցւոյ ընդունած տօներուն, թէպէտ անոնցմէ ոմանք արդէն իրենց չարականները ունեցած են։ Մնացեալ 6 կանոնները տօներն իսկ նոր են եղած, և իւր կողմէն մուծուած, որք են, Երրորդութիւն, Անարատ Ցղութիւն և Ընծայումն Աստուածածնի, Ամենայն Սրբոց, Եօթնորդի Յողով որ է Նիկիոյ Բ, և Լևոն պապ։ Իւր գրած չարականները հաւանաբար յիշուածներէն ուելի ալ եղած պիտի ըլլան, զի 33 կանոնները միմիայն յուցակագրողին ձեռքը հասած գրչագիրներուն մէջ անհետացածներն են։ Անաւարզեցիին գրական արժէքը չատ չբարձրանար այս չարականներով, որոնց մէջ իւր պաշտպանները ալ կը պարտաւորին խոստովանիլ թէ չէ վեհական ճոնաներ ըրած (ՍԻՍ. 242)։ Անոր գրած չարականները և ոչ մէկը գործածական է այլևս, և խափանմանը պատճառ եղած է անչուշտ Տաթեւացին, որ ընդունելի չարականներու ցուցակը կազմելէն առքը, աւելցուցած է. Այսոհան ըրթոհանս ընդունելի է յիւելեցէք, և առելի ոհան ըսյս խոտելի է և անպիտան (ՏԱՔ. 638)։ Հարկաւ Տաթեւացին չէր կրնար ներել որ Անաւարզեցիին գրուածները կիրառութեան անցնէին։ Շարականագրին հետ Ցայտնութեան վրայ ալ յատուկ աչխատութիւն ունեցած է Անաւարզեցին, նորանոր յիշատակներ աւելցնելով անոր մէջ, և անչուշտ անկէ ետեցած պիտի ըլլան Ցայտնութեան մէջ անցած լատին սուրբերու յիշատակները, զոր օրինակ Ամբրոսիոս Մեդիոլանեցի (ԾԱՍ. Բ. 275), Գրիգոր Հռոմայեցի (ԾԱՍ. Ա. 117),

Դարթիկոս Տիրացի (ՅԱՍ. Ա. 243), Եօթնեղբայր Ժողով (ՅԱՍ. Բ. 165), Լատինախառն և Քահանաս Հռոմայեցիք (ՅԱՍ. Բ. 72) և այլք։ Յայտնաւորքը պէտք էր յատուկ ատարկայ ըլլար Անաւարզեցիի մատրութեան, որովհետեւ կ'ուշիատէր ջնջել տեղւոյն մասին Հայ եկեղեցւոյ եօթնեկական դրութիւնը, և զրոյց տեղերը կատարել ամսաթիւի դրութեամբ և Յայտնաւորքի կերպով։

1207. Անաւարզեցիի լատինասէր ծրագիրին մասին պէտք եղած տեղեկութիւնները տալէն ետքը, տարի կ'ըլլայ յիշել անոր իրագործման մասին իր ճիդերը։ Ինչպէս կանխեցինք ըսել (§ 1204), նա առաջին անգամ կը սկսէր ինքը գործադրել իր միտքը, չսպասելով ալ որ նախապէս իր ծրագիրը կատարապատշաճ քննութեան ու ընդունութեան և ժողովական որոշմամբ հաստատուի։ Միևնոյն ժամանակ հրաման կու տար, որ ով որ ուզէ իրեն նամանիլ, ազատ ըլլայ հետեւանդ ձևը դանդ ընել, և նոր ոճը գործադրել, և հետզհետէ կը դրէր, հրաման կու տար և կ'ըսէր՝ որ Յեր այսինքն Հեհումի երէցներն ևս խոնարհ է նայ առաքէ խոչհարդն, և միանգամայն կը խնդրէր, որ ուրիշներ ալ առնեն հետեւին, այսինքն նշանակ գրացին և ետքառաքէ երէցներն, և Յեր եղբարցն, և էշխանացն (ԿԱԼ. 439)։ Այդ գործադրութիւնները պիտի սկսէին որևէ պաշտօնական որոշումէ առաջ, փոփոխութիւնները անզգալաբար կատարելով իրողութեան վիճակի վերաձևման դիտմամբ, յօգուտ գործածելով ակնածութեան, չհանդիսութեան և չաղաքարմութեան անուանի միջոցները։ Այդ կերպերը կը գործածէր նա Կիլիկիոյ մէջ, իսկ անկէ դուրս, Հայաստանի վիճակներուն համար, յատուկ պատգամաւորութիւններ դրկելու ձևն էր նախընտրած։ Այդ պատգամաւորութիւններէն մէկը կը յիշէ Սամփատաս Օրբելեան, որ իր օրովն էր եղած (ՕՐԲ. Բ. 196), իսկ ուրիշ երկու պատգամաւորութիւններ ալ Անաւարզեցիին նամակին մէջ կը յիշուին (ԿԱԼ. 441)։ Առանցմէ առաջինը դրկած է Բջնեցւոյն և Վարագեցւոյ, այսինքն է Այլարատի և Վասպուրականի վարդապետներուն, որոնց հանդիսակատարութեան վրայ տալի վատահութիւն ունեցած պիտի ըլլայ։ Միւս տարին դիտած է թէ Յովհաննէս Աւետեցոյ եպիսկոպոսէ և երկրորդը դրկած է Սամփատաս յաջորդով, Յովհաննէս Օրպելեան, որ է Սիւնեաց արեւելապոյս, որպես հոգեւոր էշխան ֆալէվ, նոյնպես և տարեդարձ, և իր ընկերոջն։ Անաւարզեցին կ'ուզէ հաստատել թէ ցոյցէ զիջէն և հաւատոյ (ԿԱԼ. 441) իրը այն թէ զանազան վիրքերէն իրեն հաւատած, կամ լատ. հետ Լատին կրօնաւորներէն իրեն ցոյց արուած վկայութիւնները, նոյն իսկ բնագիր կամ թարգմանուած վիրքերու վրայ իր պատուիրակներուն ձեռքով պատրաստած և իր խօսքը հաստատած ըլլայ։ Սակայն ուրիշ կողմէ մեր ձեռք հասած տեղեկութիւններ, և գլխաւորապէս Օրբելեանի պատմութիւնը, կը վկայեն թէ բնաւ ազդեցութիւն չեն ունեցած իր ճիդերը, և ընդհակառակն բուռն ընդդիմութիւն չարժած են Արեւելեայց կողմէն։ Անաւարզեցիին դրկած պատգամաւորներուն քաւականները ճշդել դիւրին չէ։ Օրբելեան Սամփատաս դրկուածը 1297'էն առաջ պէտք է դնել, վի այն տարին փակած է Օրբելեան իր պատմութիւնը (ՕՐԲ. Բ. 257)։ Հեհումին դրած նամակին մէջ կ'ըսէ, թէ Օրբելի յղածը այս փոքր էր, Յովհաննէսի անցեալ փոքրն, և Բջնեցիին ևս այլ ոմն (ԿԱԼ. 441), բայց իրողիր է Հեհումին գրուած նամակին քաւականը ճշդել, որ նշանակուած չէ։ Ամենէ զայն 1306'ին կը դնեն (ՍԻՄ. 557)։ մինչ ուրիշներ մինչև 1294 կը տանին (ՋԱՄ. Ե. 291), սակայն հարկ ունենալով Անաւարզեցիին 1293'ին կաթողիկոսանալը, և նամակէն 3 տարի առաջ վերջին պատգամաւորներուն յղուած ըլլալը, յարմար կըլլայ գնել մինչև 1304 յետաձգել Անաւարզեցիէն Հեհումին գրուած նամակը։

1208. Այս անգ Անաւարզեցիի ճիգերուն և յարաբերութիւններուն չարաշահութիւնը չպատմած, պէտք է անդադարի տեղեկութիւններ տալ Կիլիկիոյ քաղաքական գործերուն, և արքունիքին ներքին կացութեան վրայ, ժամանակին պատմութիւնը պարզած ըլլալու համար։ Հեհումի արքունիքին հետացած էր 1294'ին, պետական գործերը յանձնելով Թո-

ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՁԱՆՁԵՐ

ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐՔՈՒՆԻՔԸ

րաս եղբօրը, և ինքն ալ ատանձնացած էր Փրանկիականց վանքը, բայց անկէ ալ և կրօնաւորական ազգմանէ ալ կը հետեւէր երկբին գործելուն, և միշտ ուղղիչն էր Թորոսի քաղաքական ձեռնարկներուն, և Անտ ւարզացիին եկեղեցական ծրագիրներուն (§ 1201)։ Բայց Հեթումի այդ ընթացքը ամենուն հաճոյ չէր, իւր ազգականներէն և արքունի իշխաններէն ալ շատեր լսա ոչխով չէին դիտեր քրձազգեաց թագաւորը՝ որ սուրբ ազգի մը ոչ հետեւող մըն էր, և կրօնաւորութիւն ու կառավարութիւն իրարու կը խառնէր։ Մինչեւ իսկ անկէ ազատելու համար դաւաճանութեան խորհուրդ մըն ալ կազմուեցաւ, որուն գլուխը գտնուած են Հեթում և Օշին, Յովհաննէս Իպլինոսի և Հեթում Ա'ի Մարիամ քրոջ որդիներ (ՍԻՍ· 194)։ Դաւաճանութիւնը ճնշուած է, բայց Հեթում պարտաւորուած է նորէն վանքէն ելլալ, և պաշտօնապէս գործի գլուխ անցնիլ։ Նոյն միջոցին Իկոնիոնի սուլտանութեան՝ Թաթարներու ձեռքով կործանուելուն առթիւ՝ Հեթում կը ստիպուի Ղազան խանի մօտ ալ երթալ, յարաբերութիւնները ամրապնդելու համար, և 1295 Հոկտեմբեր 19'ին անոր մօտէն մեկնելով յաջողութեամբ Կիլիկիա կը դառնայ (ՍԻՍ· 556)։ Սակայն Թորոս ալ, Հեթումէ ոչ նուազ հետաքրքիր պետական գործերէ, մանաւանդ իւր կնոջ Մարգարիտա Լուսինեանի մեռնելուն վրայ, ուստի համաձայնութեամբ թագաւորութեան իրաւամտութիւնը կը յանձնեն իրենց երբորդ եղբօր Սմբատի, և միասին ճանապարհութեան կը ձեռնարկեն դէպի Կոստանդնուպոլիս 1296'ին ամառնամիջի առաւօտը, նպատակ ունենալով ։ոչն էրեանց Ութեան է փոս երթալ (ՍՄՐ· 126), բայց և միանգամայն Լատիններու և Յոյներու հետ միութեան գործունէութիւնը մշակելու համար։ Հեթումի հեռանալը քաղաքականութիւնը կը ներշնչէ թագաւորութեան անկիպատրան վիճակէն դժգոհներուն, որոնց փափաքելի էր արքունական փոփոխութիւններ տեսնել, և իրենք ալ փոփոխուիլ։ Սմբատ ալ տարիներ էր իւր եղբայրներուն սխորժակէն, ուստի համամիտ գտնուեցաւ, Հեթումին ու Թորոսը բոլորովին ձեռնթափ ընելով, յաջողութեան իրաւունք սեփականաց, և Խոշկ-Կոնղէլոէն և էշխանաց, որոշուեցաւ որ թագաւորական օծման արարողութիւնն ալ կատարուի (ՍԱՄ· 154)։ Հանդէսին համար նշանակուեցաւ 1299 յունուար 6, Աստուածայայտնութեան տօնին օրը։ և ժողովեցան Բաբաոորդիք և Բաբաոորեանք և էշխանք և աշխարհազօրով բազմութիւն, և արքեպիսկ Կոստանդիոն Հայոց տէր Գրիգոր՝ տէրն եկեղեցւոյ և համաբոմբ ժողովով և բոլոր տախտեղեցեաց, և ազգ արքայ Գրիգորի, և ասպատածին տեղեակաւան, յետ է վերայ եղեալ տանդեաց նմա զաթոռն և զձեռնադրութիւնն (ՍԻՍ· 225)։ Դիտելու արժանի է Ակին յիշատակութիւնը, որ տնօր գերութենէ դարձած ըլլալը կը հաստատէ (§ 1198)։

1209· Զարմացման արժանի է Անտարզեցիի ընթացքը Հեթումի հանդէպ, որուն հետ այնչափ արտակարգ

ԿԱՔՈՂԻԿՈՍ ԵՒ ԹԱԳԱՒՈՐ

կապուած էր, և որուն պաշտպանութեամբ իւր լատինամոլ ծրագիրին գործադրութեան կ'աշխատէր։ Հեթում բազմակի հրաժարականով թագաւորութենէ չէր քաշուած, և Սմբատին յաջորդութեան իրաւունք չէր տուած, որպէսզի Հայ թագաւորութեան և Հայ եկեղեցւոյն վրայ ազդեցութիւն բանեցնելէ զրկուած չըլլար, և Սմբատը պարզ խնամակալ նչանակած էր, ինչպէս երբեմն եղած էր Թորոսը (§ 1201)։ Ատոր հակառակ Գրիգոր՝ իւր խոհեմութեամբ կը քաջալերէ Սմբատը, որ թագաւորութիւնը իւրացնէ, և պլուխ կը կանգնի Հեթումէ դժգոհ մնացող խումբին և Սիսի Ս· Սոփիա հայրապետանիստ տաճարին մէջ մեծաշուք հանդիսութեամբ Սմբատը թագաւոր կ'օծէ, երբ Հեթում և Թորոս բանէ մը տեղեկութիւն չունէին։ Պէտք է ուրիշն հետաքրքիր թէ Սմբատ Հեթումէ առնլի վատահութիւն ներշնչած է Անտարզեցիին վրայ, թէ պիտի օժանդակէ անոր ծրագիրներուն. և Անտարզեցին ալ իրեն տուած նպաստաւոր տեսած է պատկառել և օծնել և ազգէն հաւատարմութիւն մը օժանդակութիւնը, քան կրօնաւորութեամբը իշխանութիւնը լքանող, և իշխանութեամբը կրօնաւորութիւնը խանգարող թագաւորի մը գործակցութիւնը։ Այս մեր տեսութեան հաստատութիւնը կը գտնենք նորէն՝ Անտարզ-

զնդին Սմբատայ զրած չիշատակ ենդրոյ թուղթին մէջ (ՍԻՍ. 556), եթէ պատճէնը ունենայինք։ Սմբատ տաիի ատենով եգիպատցիներուն Աարիքի մէջ նոր խլրտումներէն, ուղղակի ալ դիմումներ կ'ընէ Վանիփակիոս Ը պապին, այն որ ճարտար մեքենայութիւններով կրցեր էր տնօրինել Կղեմատինոս ե անուպատական պապը (§ 1186), և զայն հրաժարելու տարակոյսով լինքն գրաւել պապական աթոռը 1294 դեկտեմբեր 24'ին։ Միևնոյն տաիին կը գրէր Անգղիոյ եգուարդ Ա թագաւորին, և այս կերպիով կ'ուզէր իր իշխանութիւնը ճանչցնել տալ ենթակոյ իշխանաւորներուն։ Կաթողիկոսի և թագաւորի համաձայն քանի և լսութեանը ընթացքին իրրև նշան պիտի յիշենք Սմբատ իշխանի մը ամուսնութեան պարագան, որուն Ստեփանոս կաթողիկոս նեցած էր կրկրդ տաիճանի ազգակցին հետ պսակ իլ (§ 1190)։ Այս Սմբատ, որ Մամիկոնեայ գաւառին Բօխտ կամ Բոլդա բերդին իշխան կոչուած է (ԿԱԼ. 412), և ուրիչ կողմէ մեզի ծանօթ չէ, չորջ 19 տարի առաջ պսակուած և զաւակներու ալ տէր եղած էր, այլ Գրիգոր ու Սմբատ իրեն կը համոզեն, թէ Հայոց կաթողիկոսը չէր կրնար այդ ամուսնութեան պատճառը թիւրը տալ, թէ իր պսակը պինդ է, թէ ինքն ապօրէն կենակցութեան մէջ կը գտնուի, թէ զաւակները պոռնկորդիներ են, և թէ պէտք է պապին դիմէ որպէս զի տնօր իշխանութեամբ օրինաւոր ամուսնութեան պատճառը թիւրն առնուայ։ Ինչ Սմբատ իշխան կը պատրաստուի այդ դիմումին ընել, քանի որ իր ազգին կրկին իշխանաւորներն ալ չէին ուզեր իր օրինաւոր պսակը ճանչնալ։

ՍՄԲԱՏ ԹԱԳԱՒՈՐ

1210· Հեթում ու Թորոս նոպիս թէ Սմբատի թագաւորը օծութիւնը կը լսեն. կը վախնան Կիլիկիա դառնալ, բայց Սիսուոյ երեսէն չերթեն, ոչ երեղ ընաա է պառնն իրենց հայրենի, ուրկէ տրտունաւորութեան նպատակով Կիլիկիոյ հետ առնուլ, ու պարյան անդրեն ու կ'ուզեն Անգլիա և Պալէստին, և իմանալին օգնութիւն խնդրելնին։ Սմբատ օգտուելու առնուց հետաքննելէն, և դիմեց է Թորոս, այսինքն Ղազան խանին, քաղաք ըանչէ, որ Հայոց հետ ունեցած բարեկամութիւնը՝ իր վրայ դարձնէ, և մինչև իսկ է ըանչ ոչխեն, կամ ըստ այլոց է ըանչ ոչխարնոց կին մըն ալ առաւ։ Երբոր Սմբատ Ղազանէ կը դառնար, ու է առնուա Կեսարիոյ հասած էր, հանդիպեցան նմա երկու եղբարն իր Հեթում ու Թորոս, որոնք Անգլունիկոսէ առեալ ոսկի քաղաք Ղազան խանին կը դիմէին, որին Հեթում նախաձեռնօրէն էր ուղէին։ Սմբատ թագաւորական հետևորդներով կու գար, ուստի եղբայրներուն չէմ կրաւ բանալ, և կալեալ զնաա, և փաթեալ է բանալ է Բաբլբեբերդ։ Բայց ձերբակալելով ու բանտարկելով ալ դինքն ապահով չզգաց, ու չեկաա առաջ, խորհրդով նենգաւոր էշխանացն, եպան ղեղբայրն իր զԹորոս, և եհան զաչս Հեթմի (ՍԱՄ. 154), և փակեց զայն Բարձրբերդի մօտ Մոլեւանի բերդը (ՍՄՐ. 127)։ Սմբատի եղբայրասպանութիւնն քառասուն կը ցուցուի 1288 յունիս 23 օրը (ՍԻՍ. 596)։ Այդ եղելութեան մէջ մեր զըլխաւոր դիտելիքը Անտիոքցիին գայթ ի գայթ ընթացքն է, որ եթէ ոչ խորհրդակցութեամբ, գոնէ անտրակերպ լուռ մնամբ կը քաջալերէ Սմբատի անօրէն գործերը։ Սմբատ թագաւորութիւնը յոյժ չատ տևեց։ Երկրորդ կոնդակին և իշխանաց գործած էր, և միևնոյն գործին չարաճակատ մնացին էր եղբայրներուն դէմ լուռ մնալ մը, որ թէպէտ լսկ խորհրդով իշխանաց կատարուած կ'ըսուի, և կաթողիկոսին անունը նոքին չարուի էր, բայց և ոչ դէմ գրած կամ բողոքած ըլլալը կը յիշուի, մանաւանդ թէ կը չարաճակէ Սմբատի թագաւորութիւնը հաստատելու։ Վանիփակիոս պապն ալ չատ հոգածու չեղաւ իր կատարած գործոց մնաց մասին, գոհանալով անշուշտ որ իրեն անձնուէր մէկ մը ըլլայ Հայոց գահին վրայ, ալ ալ ըլլայ գահակալը։ Ըստ այսմ 1298 նոյեմբեր 5 թուականով, նամակ մը կը գրէ առ Սմբատ, առ որ երբեք որդիդ ձեր է Քրիստոս, գոհունակութիւն յայտնելով անոր, թէ որպէս հնազանդեցան որդի՝ որդիս և պատրաստ ըմայր ոչ ըստ ընդունելոյ Հռոմայ (ԿԱԼ. 421), իսկ խնդրուած օգնութեան մասին կը բաւականանայ յորդորել, որ ուշադրութեամբ հոգաբարձութեանդ դնէ եկեղեցի պետուն ժամանակ օգնութեան (ԿԱԼ. 422)։ Միևնոյն տարի նոյեմբեր 26 թուականով կը գրէ Գրիգոր կաթողիկոսին ալ, նոյն յիշատակութիւնն չընելով Սմբատի եղ-

թայրապան ձեռնարկին նկատմամբ, և բա-
ւականանալով անոր ալ յորդոր կարդալ, թէ
զբաղի ինքն ալ Տէր, համբերէ և պահէ ընծա-
պարհս Տեառն, դնէ և եկեղեցւոյդ և ըն-
օրհնեան Հայոց հաւանիցէ ժամանակ ջնորհեան
(ԿԱԼ. 424):

1211. Այս պիտոյտն հետ դրկուած է նաեւ առ Սմբատ իւ Բագրատ և առ Իսպե-
լա կամ Զապէլ անոր ա-
մուսինը՝ հոկտեմբեր 11'ին
գրուած նամակ մը, որով
օրհնաւոր կը ճանչցուի և
կը վաւերացուի անոնց ամուսնութիւնը (§
1209), բայց այնպիսի խրոխտ և Հայոց հայ-
րապետութեան հանար ատոնացուցիչ խօս-
քերով, որ հնար չէ նկատողութենէ վրի-
պեցնել: Վռնիփուկիոս կը համարձակի յայ-
տարարել, թէ առջի անգամ Հռոմայ գրին՝
հաւատքեց զերծաւ այլոց պատրիարքաց և գերե-
պետից և եպիսկոպոսաց, և կը յաւելու թէ
զայս մանաւանդ գաւառիս ի չեփն առաջս ՅԲէ
կոնդակեան Պրիգոր: Սմբատի և Զապէլի ա-
մուսնութեան վրայ խօսելով կը յայտարարէ,
թէ թէպէտ ամօթացեալ եմ հրամանաւ տէր
Սիփանոս կոնդակեցի Հայոց, սակայն այն հրա-
ման առնայ եղեալ, չէ գտեալ երբ ինձմէ, որ ոչ
առնէր դիշանաւորութեան պարշտաւոր վասն այնր:
Ուստի կը յաւելու, թէ նախասացեալ տէր Սի-
փանոս, ոչ ըստ օրինաւոր հրամայոյ էրէ, այլ առա-
ւել խաբող, և ըստ այմ ճառին առերուշ զբաղութեան
կանանաց: Այդ յայտարարութեան իբր կնիք
կը նկրէ որ Սմբատի և Զապէլի ամուսնա-
կութիւնը և զաւակները օրինաւոր համարուին,
է խնդրոյ և յաղագանոց ազգին Հայոց, որ է
ազգապատան Սմբատայ (ԿԱԼ. 412–416): Վռ-
նիփուկիոս Ը նշանաւոր է պատկառն չար-
քին մէջ, իւր բուռն և անկոպար յոխոր-
տանքովը, վերանորոգելով Գրիգոր Լ'ի և
Իննովկենտիոս Դ'ի խիզախ ընթացքները,
որոնք ոչ թէ լոկ պատրիարքութենէն, այլ
և թագաւորութենէն և կայսրութենէն բա-
ցարձակ ազդ և տիրապետ կը կարծէին պա-
պութիւնը: Վռնիփուկիոս այդ յաւակնո-
կութիւններն կը գործադրէր հաստատուն կեան
առանձնաւորով և նպատակներու չտնկելով:

1212. Սմբատ կը կարծէր որ Թագաւոր
մնալնալով և Հեթում մը կուրացնելով ու բան-
տարկելով, ինքն ազատօրէն ազգ կը մնայ
թագաւորական գահին, սակայն իւր տկարու-
թիւնը չարդարացուց: Իրեն դէմ ելաւ
ԿՈՍՏԱՆԴԻՆ ՈՒ ՍՄԲԱՏ
Կոստանդին Կապանի իշ-
խան և Լեւոն Գ'ի որդինե-
րուն չորրորդը, կոչնակ-
կիլիկեան գոռ և ժողվեալ
զբօ բազմաց Սմբատի վրայ յարձակեցաւ, որ
պարտաւորուեցաւ տեղի տալ ու փախչիլ
է Հռոմա: Բայց առժամայ եղած է յաւնա-
կան կայսրութեան տնտեսները ապատինելը,
որովհետեւ քիչ ետքը կրցաւ Կոստանդին
զայն ձերբակալել, և կալաւ զՄբատ եղ է
բանդի է նմին (ՍԱՄ. 154), այսինքն է, նայն
այն Մոլեւորնի բերդին մէջ, ուստից եհան զա-
ազատ եղբայրն էր Հեթում (ՍՄՌ. 127): Այսպէս
Լեւոն Գ'ի զաւակներ իրարու դէմ կը մըր-
ղէին, և իրարու վրայ կը բանտարկին թա-
գաւորական իշխանութեան համար: Հեթում
կայր կրնաւորը՝ իշխանութիւնը ձեռք առ-
նելու յարմար չէր, ուստի հրամանաւ նոր ինչ
Կոստանդին ընտրեցաւ (ՍՄՌ. 127), սակայն
թագաւոր օծուելուն յիշատակութիւն չտ-
նինք, ուստի ասկի ճիշդ կ'երեւի ի կեցել պա-
րան Կիլիկիոյ բայտարութիւնը, որ Կոստան-
դինի կը տրուի, մինչ Սմբատի ընտրուած ա-
նունը տրուած է միշտ (ՍԱՄ. 154): Թէպէտ
և Սմբատի համար ամ ի թագաւոր եղած կը
գրուի (ՍԱՄ. 154), սակայն ժամանակագրու-
թիւնը ասկի երկար անուղղութիւն կը պա-
հանջէ, դի 1296'ին էր իւր խնամակալ ան-
ուանուելը, և 1298'ին սկիզբը թագաւոր
օծուիլը (§ 1208), և 1299 տարւոյ սկսելէն
կանուխ հնար չէ դնել իւր գահընկեցու-
թիւնը, որով գոնէ երկու-քառկէս տարի իշ-
խանութիւն վարած պէտք է ըսենք Կոս-
տանդինի իշխանութիւնն ալ փոքի ի բաւած
է (ՍԱՄ. 154), մինչ ուրիշ պատմիչ մը միայն
ամիս աւուրց տեւողութիւն կը նշանակէ
(ՍՄՌ. 127): Ամէն տեսի մէջ Կոստանդինի
ալ գահընկեցութիւնը պէտք է 1299'ին վեր-
ցնելը դնել: Այս կոստակցական ձգտումները,
որոնք կը տիրէին այս միջոցին Հայաստան
մէջ, և այն պայմանագրուելոց երկպատակու-
թիւնը՝ որով վարակուած էին Լեւոն Գ'ի որ-
դիները, Կոստանդինն ալ հանդարտ չթողու-
ցին իւր իշխանութեան մէջ, թէպէտ և որոշ
ակնարկ մը չտնինք անոր դէմ կամ վատ
գործերուն կամ կառավարութեանը վրայ:

երկու եղբայրներն ալ, Հեթում և Սմբատ ազդեցիկ և կարող բարեկամներ ունէին հարկաւ՝ որ անգործ չէին, երբ անակնկալ պատգայ մը նոր զարկ տուաւ ձգտումներուն, և այս եղաւ երբ Հեթում վերջին եօթ ամիսներուն ընդհօդն Աստուածոյ և սէնեքերիմ (ԿԱԼ. 425)։ Հեթումի կուրութեան բժշկութիւնը անհնար եղած պիտի ըլլար, եթէ բառացի իմանայինք Սմբատին համար եհան ըսը Հեթումին գրուածը (ՍԱՄ. 154), այլ չուտով կը մեկնուի, երբոր դիտնանք, որ միայն եօ ղտրան Հեթմայ ալն խոթել (ՄՐԲ. 127), որ ժամանակով և խնամքով կրնար բժշկուիլ, մանաւանդ եթէ խարելու գործողութիւնը թեթեւակի կատարուած էր, և Հեթումի բժշկութիւնն ալ քիչ չատ անհնելու չափ բան մըն էր միայն, այն ալ միայն մէկ աչքին վրայ, որուն համար Միխայէլի մակդիր անունը տրուած է Հեթումի (ԴԱՐ. 24)։

ՀԵԹՈՒՄԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1213· Բոլորովին տարօրինակ, և գրեթէ անմիկնելի նկարագիր մը կը ներկայանայ Հեթում Բ, որ ոչ վանական փափաքէն կը հեռանայ, ոչ կրօնաւորական կոչումէն կը հրաժարի, ոչ ալ Փրանկիսկեան սքեմը կը թողու, և միշտ ալ զինուորական և պետական հոգիերով կը զբաղի, ոչ զէնքը կը թողու և ոչ ալ արքունի մականը, ոչ թագաւորութենէն ձեռք կը քաշէ, և ոչ կատարելապէս և տիրապէս կը վարէ զայն։ Տարօրինակ է Փրանկիսկեան միաբանութեան և Հռոմէական պապութեան ալ ընթացքը, որոնց սկզբունքին համեմատ՝ կրօնաւորի մը աշխարհի հոգերէն պարտ է քաշուիլ, և ամէն վանականի պարտ է իր վանական կենցաղը չլքանել։ Աւոր հակառակ Փրանկիսկեան կրօնաւոր եղբայր Յովհաննէս, երբեք Հեթում թագաւոր ըլլալը ձեռքէ չձգեր, և կարծես թէ այդին կուրութիւնը և Մոլևոնի բանտարկութիւնը աւելի սրած են իր թագաւորական ախորժակը, որ հազիւ թէ աչքի սեւսպիտիւնը քիչ մը կը բարւոքի, գլուխ կը կանգնի կոստանդնի դէմ ելլող խմբակին, եղբայրը կը զրկէ իշխանութենէն, և ձեռք կ'առնէ նորէն թագաւորութիւնը առանց աքսիր թողլու։ Իր ապահովութեան համար Սմբատ ալ, կոստանդինն ալ եհան յեղկէ խոժոռ (ՄՐԲ. 127), և ասոր եղբայր կոստանդին կայսրն է կոստանդնուպոլիս (ՍԱՄ. 154) ընդ հաստատիմ պահանջմամբ, ազատել զնա, զի ի փոյթ ջրհել զնոսա (ԿԱԼ. 425)։ Անհաւատալին անտարբեր կերպով կը համակերպի այդ ամէն փոփոխութեանց, կարծես թէ ինքն ուրիշ կամք չունի, բայց եթէ քաղաքական իշխանութեան գլուխը իր ծրագիրին համաձայն կրող կամ օժանդակող անձ մը ունենալ, բոլորովին անտարբեր մնալով որ Հեթում ըլլայ այն կամ Թորոս, Սմբատ կամ Կոստանդին։ Հեթում իշխանութիւնը ձեռք առած առեն, խաղաղութիւնն ալ խանգարուած կը գտնէ արտաքիններէն։ Եգիպտացիք նորէն սկսած էին Ասորիքի մէջ արշաւանքներ ընել, տիրապետութիւննին ընդարձակելու համար, Թաթարներն ալ անոնց դէմ կ'ելլէին, Հայերն ալ կը պարտաւորուէին պատերազմին խառնուիլ, իրր դաշնադիր նիզակակիցներ։ Եգեսիոյ ճակատամարտին մէջ 1299 դեկտեմբեր 25'ին, և Ակլահիէի պատերազմին մէջ 1300 յունուար 9'ին, Հեթում ալ Հայ գունդերով Թաթարներուն կ'օգնէր, և եգիպտացիները հալածելով մինչև Երուսաղէմ կը հասնէր, և առիթէն օգտուելով ուխտ մըն ալ կը կատարէր Քրիստոսի գերեզմանին, և փետրուար 3'ին Երուսաղէմէ կը մեկնէր Կիլիկիա դառնալու, վասն զի Թաթարաց խանն ալ կատարած յաղթութեամբը բաւականացած, ետ կը դառնար իր երկիրը (ՍԻՄ. 557)։ Եգիպտացիներուն ընկրկելովը և Թաթարներու յաղթութեամբը, Կիլիկիոյ կացութիւնը ապահովուած կրնար ըսուիլ. Իկոնիոնի սուլտանութիւնն ալ քայքայուած էր արդէն, և զայն նորոգելու աշխատող Ալայէտտինը՝ Հեթումի ձեռք կ'իյնար, որ զայն Ղազան խանին կը ղրկէր, և այսպէս այս կողմէն ալ վտանգը փարատած կ'ըլլար (ՍԻՄ. 557)։

ԼԵՒՈՆ Դ ԹԱԳԱՒՈՐ

1214· Հեթում կրօնաւոր-թագաւորը իր պարտքը լրացուցած կը կարծէ, ներքին և արտաքին գժուարութեանց վերջ տուած ըլլալով, և կը մտածէ նորէն վանք քաշուիլ, և գոնէ արտաքնապէս պետական գործերէ ձեռք քաշել։ Արտաքնապէս կ'ըսէնք, զի

ԱՆԱՒԱՐՉԵՑԻՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՑՔ

եթէ տիրապէս անզբաղ մնալու միտք ունէր, պէտք էր կարող և գործունեայ անձ մը նշանակել պետութեան գլուխը, և բնական կարգով իւր եղբայրներէն մէկուն կից նար արքունական իշխանութիւնը։ Եթէ Սմբատ և Կոստանդին աքսորուած էին, կային տակաւին Ալինախ և Օշին, չուզելով ներքսէն ալ հաշիւ առնել, քանի որ քահանայացած էր արդէն, և թերևս ալ արդէն հիւանդագին։ Հեթում ետ կը թողու իւր եղբայրները, և սպանուած Թորոս եղբօր որդին, 12 տարեկան Լեւոնը թագաւոր հռչակել կու տայ 1301 տարւոյ սկիզբները, հանդիսական արարողութեամբ և օծմամբ։ Այդ պարագաները կ'ապացուցանեն թէ Հեթում պետական գործերը ձեռքէ հանելու դիտումը չունէր, և վանք քաշուիլն ալ արտաքնապէս կազմակերպուած գործ մըն էր։ Նոյն առիթով մանուկ թագաւորին մօտանալու թիւնն ալ կը կատարուի, և Լեւոն կը պսակուի հօրաքրոջ կողմէ ազգական Ագնէսի հետ, որ Ամաւրի Լուսինեանի և Զապելունի դուստրն էր (§ 1201), և հազիւ 7 տարեկան կրնար եղած ըլլալ։ Պատուիրութիւնը չուսաբանէր, թէ կաթողիկոսն էր արդեօք, որ չորրորդ աստիճանի ազգակիցին և անչափահաս աղջկան հետ պսակութիւը կը նախէր, թէ ոչ պապական արտօնութեան կը դիմէին, Սմբատ Բուլղացւոյն բախտակից չըլլալու համար (§ 1211)։ Երբոր ռուբ կերպով Հայ թագաւորազունններուն նկրքին երկպառակութիւնները կը հանդարտէին, արտաքին խաղաղութիւնն ալ կ'ապահովուէր, և նոյն իսկ Թաթարներու և Եգիպտացիներու մէջ հաշտութեան բանակցութիւններ կը սկսէին 1301 օգոստոսին (ՍԻՍ· 557), Անաւարզեցին ձեռք կ'առնէր վերստին իւր լատինամիտ փոփոխութեանց ծրագիրը, մանաւանդ որ քաղաքական ազդեցութիւնը նորէն ամբողջապէս լատին կրօնաւոր Հեթումի ձեռքն էր անցած։ Այդ տեսութեամբ պէտք է սոյն միջոցին դնել այն վերջին պատգամաւորութիւնները, զորս երեք տարի յաջորդաբար ղրկեց Հայաստան, իւր ծրագիրը անոնց ընդունելի ընել տալու համար (§ 1207), և հաւանաբար 1302'էն ետքը կատարուած կ'ըլլան անոնք (ԿԱՂ· 441)։

1215։ Նորէն մեր մտադրութիւնը Անաւարզեցիին ծրագիրին վրայ դարձնելով, և այդ մասին տեղի ունեցած եղելութիւնները իրարու մօտեցնելով, նախ պիտի խօսինք այն առաջին պատգամաւորութեան վրայ (§1207), որուն մանրամասնութիւնները Օրբելեան ինքն կու տայ մեզի, և որոնք չատ հետաքրքրական են Անաւարզեցիին ընթացքը լուսաբանելու համար։ Շատոնց էր, կը գրէ Օրբելեան, որ այլընդայլոյ լուրեր կը հասնէին կիլիկիայէ, և կաթողիկոսին անկրէ պատուածոյ քաղմոց վրայ կը խօսուէր, թէ ճրագալոյցները չեղ Ե է ըլան լուծելու կ'արգիլէր, նաւակատիքները կը խափանէր, հիւանդաց և երախայից ձէթեր կ'օրհնէր, և կ'ուզէր ա- ակա- ակա- ղտիներն ատանդատրիները Հռոմոյ եկեղեցւոյ պղպեղ մոծանել է տէր եկեղեցի, և է տէրոյ է քոյ տեցել ի ի։ Օտար եկեղեցիներու հետ բանակցութեան ալ կը մտնէր, կ'ըսէ, և խոստանայր յանձն առնուլ ղոր ինչ Ե ենդրեցին, և յանձնառական տիքանատրիան թուղթեր ալ կը գրէր, ըղ տեւ իւ փեստ։ Ատոնք կը լսէինք, կը գրէ, սակայն կաթողիկոսը տեղ Աբեւելից կոչմանցն ինչ է վեր քերել ծանուցանել, և հարցում եղած ատեն կը բաւականանար ըսել, թէ վան նուազել ժամանակիս կարիք ղիքանատրիան Հռոմոյ ընդ տեղ Ե ղտիանոյ ապեց, և իբր խայծ կը ցուցնէր թէ ենդրեմ ղներան Անգլուոյ տեղ լինել (ՕՐՔ· Բ· 195)։ Անաւարզեցիին այդ ընթացքը պէտք է պատշաճեցնել իւր ընտրութենէն ետքը անցնող առաջին տարիներուն, որոց մէջ իւր մտադրութիւնը ծածկած էր Արեւելեայներէն, և Հռոմէ ու Հռոմէ չփոթութիւնն ալ դիտմամբ կը մշակէր միտքերը ցրուելու համար։ Բայց երբ իւր գործունէութեան աւելի ոյժ և ընդարձակութիւն տալու ձեռնարկեց, գործին խնկութիւնը սկսաւ մէջ տեղ ելլել, այնպէս որ չեկելոցն հոգ պատուոգծան տալիքն երթեալ լինէր է պեղէս պեղէս։ Օրբելեան կ'աւելցնէ, թէ ամէն ետ է տէրոյ ալէքսիոս հաճեալ հաստատեցան, և ոչոն եպերել ընծիներն տէր, և առնել նոյնետրիանս և այլետրիանս (ՕՐՔ· Բ· 196)։ Օրբելեանի սիրտը կը սկսի բորբոքիլ, որպէս զի ախոյեան կանգնի ընդդեմ նոյ հոգեոր տրօքին։ Հանապազ, կը գրէ, ապ-

ցա՛ և լերդախոց լինելով, հալել հալած ծփան խոչդրվէ, սակայն չէր համարձակեր նախայարձակ լինել, և Հայաստանի ու Կիլիկիոյ Հայութեանց մէջ հակառակութիւն դրգռել։ Ժամանակը փափուկ էր, Հայութիւնը պառակտեալ, և ազգային կանգին վերջին ապաւէնն եղող Կիլիկիոյ Թագաւորութիւնն ալ վտանգի ենթարկուած, որուն դէմ նոր դժուարութիւններ հանել, կրնար վտանգը սաստկացնել։ Ելնելէ՛ս, կ՚ըսէ, երե յոյսը ձեր ընդունա՛ր չէն է պոռելու ընդ եկեղեցւոյ, և յորոցանէ տրէն խոովընդան է ձէր ձէր, և ընդդրեալ կրծանե ընկալեր ծաղոած ոգին (ՕՐԲ. Բ. 196)։ Յոհական ազգասիրութիւնն արդիւնք էին Օրբելեանի այդ զգայումները, որ իւր եկեղեցասիրութեան բորբոքն ալ կը զսպէր, որպէս զի չըլլայ թէ կրծանե ընկալեր ծաղոած ոգին, այսինքն, Տաւրոսի վրայ ամիսփուած փոքրիկ թագաւորութիւնը, որ Թաթարայ և Եգիպտացւոց, Ցունաց և Լատինաց ձեռք խաղալիք դարձած էր, չկարենալով իսկ որոչ և յստակ քաղաքականութիւնն հետեւիլ։

1216. Երբոր Օրբելեան այս ընդդիմամարտ մտածումներով կը յուզուէր, և ահա Սիւնիք կը հասնի,

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿԵՍԱՐԱՑԻ

Անաւարզեցիէն ղրկուած պատգամաւորը, որուն անունն ալ յայտնի է, Կոստանդին Եպիսկոպոս Կեսարու (ՕՐԲ. Բ. 196)։ Այս պատգամաւորութեան թուականը ի դէպ է դնել 1297'ին առաններուն երբոր Սմբատ տիրապետած էր պետութեան, և հաւնմատարար հանդարտ կացութիւն մը կը տիրէր։ Իսկ պատգամաւորութեան նպատակին չանցած, պատգամաւորին անձին վրայ պէտք է դարձնենք մեր մտադրութիւնը, որովհետեւ ընդարձակ գործունէութեան գլուխ պիտի տեսնենք այսուհետեւ Կոստանդին Կեսարացին։ Սա բոլորովին նոր անձ մըն է, որ հրապարակի վրայ կը սկսի երեւիլ, և որ ըստ ամենայնի համամիտ և համաձայն Անաւարզեցիի նպատակին, անոր աջ բազուկը կը դառնայ յատնինամիտ ծրագիրը գործադրելու համար։ Ըստ այսմ անհաւանական չենիր կարծել, թէ միեւնոյն Կոստանդին Կեսարացին չատ նշանաւոր է ներքին գաւառներու տարուէ տարի պատգամաւորական ուղեւորութիւն կատարելու պաշտօնը։ Իրեն այդ դիրքը ու այդ գործունէութիւնը նոր փաստ մըն է մեզի, հերքելու Անեցւոյն չարունակողէն ծագում առած թիւրիմացութիւնը, որ կատուկեցի գահընկէց կաթողիկոսը նոյնացուցած է կեսարիոյ եպիսկոպոսին հետ (ՍԱՄ. 152), թերեւս անունց համանուն ըլլալէն խարուելով։ Կատուկեցին կանուխէն Յորին վանքի վանահայրն էր, և բանտարկութենէն ետքը Սկեւռայ վանքի առաջնորդն եղաւ (§ 1199), և կեսարիոյ եպիսկոպոս բնաւ չեղաւ։ Արդէն ալ կատուկեցին երիտասարդ մը չէր կաթողիկոս ընտրուած ատեն 1286'ին, Հեթումի և Անաւարզեցիի վատահութիւնը չվայելելուն համար գահընկէց եղաւ 1289'ին, չորս տարի բանտարկութենէ ետքը՝ իբրեւ չնորհք մը Սկեւռայ վանքին առաջնորդութիւնը ստացաւ 1293'ին։ Տարիքը առած, նեղութիւն քաշած ու ակարացած անձ մը, որ եկեղեցական և քաղաքական իշխանաւորներուն վատահութիւնն ալ չէր գրաւեր, երբեք չպիտի կարենար այնքան պատգամաւորութիւն մը կատարել, նմանապէս անվստահութեան պատճառով գահընկէց եղողին՝ չպիտի կարենար յանձնուիլ Անաւարզեցիին ծրագիրին պաշտպանն ու տարածողը ըլլալ։ Աւելցնենք եւս, որ կատուկեցին Օրբելեանի անծանօթ մէկը չէր, իւր ձեռնադրողն էր եղած, որուն գահընկէցութիւնը մեղադրած էր, և գահընկէց կաթողիկոսին հանդէպ միշտ սէր ու պատկառանք պահած էր։ Եթէ նոյն կատուկեցին ըլլար, որ իբր Անաւարզեցիի պատգամաւոր Օրբելեանին կը ներկայանար, նա չպիտի կարենար չճանչնալ, և առանց դիտողութեան ու առանց ակնարկի՝ Կոստանդին Եպիսկոպոս Կեսարու անունով գայն յիշել, մինչ Օրբելեան առանց բան մը կամ բացատրութիւն մը աւելցնելու Կոստանդինի անունը կու տայ, և ոչ ալ կը մեղադրէ իւր հոգեւոր ծնողը, եթէ իրեն դէմ գինուած կու գար, գինքն իւր միտքէն եւս դարձնելու։ Կարծենք թէ ուրիշ պատճառաբանութեան պէտք չենիար այլեւս, վճռապէս ընդունելու թէ Կոստանդին Կատուկեցի և Կոստանդին Կեսարացի, տարբեր անձնաւորութիւններ են, և զանոնք չփոխելը պարզ թիւրիմացութիւն մըն է։

Զարմանալի ալ է՝ թէ ինչպէս նոր պատմագիրներ առանց մտադրութեան ընդգրկած են անանունի մը չփոթութենէ ծագումն առած թիւրիմացութիւնը։

ՍԻՒՆԵՑՈՑ ԽՈՐՀՈՒՐԴԸ

1217. Հարկաւ կեսարացին ձեռքը պաշտօնական ծրագիր մըն ալ ունէր՝ որով պիտի ներկայանար Սիւնեաց եպիսկոպոսներուն, և պարտաւորուած առաջարկները բերանացի պիտի պաշտպաններ։ Հնար չէր որ Անաւարզեցին իւր հաւաքած վկայութիւնները (§ 1204), և կարծեցեալ փաստերը, որոնց այնչափ կարեւորութիւն կու տար, պաշտօնական գրութեամբ մը չհաղորդէր Արեւելեայց։ Այսու հանդերձ ոչ գիրի մը պատճէնն ունինք, և ոչ իսկ Օրբելեան գրուածի մը լիշատակութիւնը կ'ընէ, թէպէտ դանազան խնդիրներ հետզհետէ առիթ կը բերէ, գրութենէ մ'ի քաղելու ձեւով։ Օրբելեան պէտք սեպեց խորհրդակցութեան գումարել ներկայ եւ մերձաւոր կարեւոր անձերը, որպէս զի ոչ իւր կողմէն անհատապէս, այլ խորհրդով եպիսկոպոսաց աշխարհի և իշխանաց պատասխանուած ըլլայ կաթողիկոսին։ Հաւաքուած անձանց և ժողովական գործոց որոշ յիշատակներ չեն պատմուած, միայն կաթողիկոսին ուղղուած նամակին ներքեւ քանի մը ստորագրողներու անուններուն ունինք, որոնք հին ոչ ժողովականաց ամբողջութիւնը, գոնէ գլխաւորները կազած են։ Ասոնք են. 1. Ինքն Ստեփանոս Օրբելեան՝ Սիւնեաց մետրապոլիտը, 2. Տէր Սարգիս և 3. Տէր Գրիգոր երկու Նախիջեւանի եպիսկոպոսներ եղած ըլլան, 4. Տէր Յովհաննէս Ալոռոյ Բիշոյ, 5. Գրիգոր Բիշնեցի, հրամանատար այժմ Ալոռոյ, որ կ'երեւի Բիշոյ ուսուցիչ վարդապետն էր, 6. Տէր Յովհաննէս եպիսկոպոս Հաբեթոյ, 7. Տէր Մխիթար Հաղպատոյ եպիսկոպոս, 8. Տէր Մարգարէ՝ եպիսկոպոս Վահանի վրդովեցին, 9. Տէր Սարկաւագ՝ եպիսկոպոս Գողթան, 10. Նայի քահանայ վարժապետ, որ է նոյն ինքն նչուցին, 11. Դաւիթ վրդովեալ Հայոցմանց եկեղեցւոյ, որ իբր Այրարատցի կը մեկնուի։ Այս տասնեւմէկ եկեղեցականներէն զատ ստորագրեցին նաեւ չորս մեծ իշխաններ, Ելիկում Օրբելեան՝ Տաւսպիսի որդին, Լիպարիտ Օրբելեան՝ Իւանէի որդին, և Պապաք ու Էսայի Գոչեան Հասանի որդիք (ՕՐԲ. Բ. 208—210)։ Ամէնքը միաձայն որոշեցին բացարձակապէս մերժել Անաւարզեցիին առաջարկուած որեւէ նորութիւն, անփոփոխ պահել հնաւանդ դաւանութիւնն ու արարողութիւնները, պարտուպատշաճ կերպով իրենց որոշումը հաղորդել կաթողիկոսին, և Ստեփանոսի յանձնեցին թուղթին պատասխանութիւնը։ Ընդդրկեցին նաեւ այն տեսութիւնները, զորս Օրբելեան կանխաւ նկատողութեան առած էր, այն է ընդդիմութիւնը չտանիլ մինչեւ կաթողիկոսը չճանչնալու կամ կիլիկեցիներէ բաժնուելու կէտը, որպէս զի ազգին մէջ պատակտում չյիշեայ, կամ ինչպէս Օրբելեան կը մտածէր, որպէս զի չըլլայ թէ խռովութիւնը ընթերցեալ ղեկղէտոր ծագումն ազգէն (§ 1215)։

ՕՐԲԵԼԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

1218. Օրբելեանէ ամբողջապէս յառաջ բերուած է օրինակ նամակէն (ՕՐԲ. Բ. 197—215), որ Անաւարզեցիին յղուեցաւ, և կ'արժէ զայն վերլուծել իբրեւ կարեւոր գրուած մը։ Սկիզբը Հայ եկեղեցւոյ փառաւորութեան բարեմաղթանքներ կան, իսկ կաթողիկոսին համար յարգանաց և մեծարանաց բացատրութիւններ մինչեւ չափազանցութիւն մղուած են, որպէս զի զայն չահին ու չգայրացնեն։ Մեծարանաց ողջոյնը կու տան ընդհանրապէս քահանայք, որ է կատարեալ երկրպագութեան ձեւ, և կաթողիկոսը կը կոչեն ելոյն պանծալի, սքանչելի քնարէդ, ընտիր և նորոգ ջերմեռանդութեամբ է Հոգւոյն, հայր հանճարոյ սքանչելի Հայկայ, կանոնիկոս պիղծքարեան՝ է գրոնի Հռոմոյ և Լքենոյ, է ծովի Կասպից և է լճանի Կովկասեցոյ մինչ է սահմանս Եգիպտական և է ծովն արեմտեայն (ՕՐԲ. Բ. 198), և ուրիշ նմանօրինակ պատուադիր բացատրութիւններ ալ կը կրկնուին նամակին մէջ։ Այդ բացատրութիւններէ ետքը հասարակ կը յայտնեն թէ ամէն կողմ կը լսուի, թէ Հռոմ է մեր կանոնիկոն, և ընդ նոսա գոչեսցէ, ինչ որ, կը յարէ Օրբելեան, ես ալ ականջովս լսած եմ երբ ձեռնադրութեան համար կիլիկիա եկած էր, և այս պատճառով թագաւորն ու ժողովը այն աստեն կաթողիկոս ըլլալուն չհաւանեցան (ՕՐԲ. Բ. 199), որ է կատուկեցիին ընտրու-

թեան պարագայն (§ 1168)։ Ասոր վրայ երկու տեսակ հայցուածներ կ'առաջարկեն Անաւարզեցիին, զոհ հրաժարական և զոհ յանձնառական, զիայնակցութիւն բազմոց քառնալոյ և զիրե փորոց իժչելոյ նպատակով։ Եւ թէպէտ, կ'ըսեն, ալ է տրժան կոթողելոյդ չխոսիս զ ըսբ գիրք չելոփոխել պէտք եղած կէտերը, սակայն նորէն զանազան կէտերուն բացատրութիւնն կը մնանն։ Առաջ կ'անցընեն յանձնառական գլուխը, որ է ամենայն լրիւ պիտի առնել ընդդէմ սահմանս, որք գրուած են է տոքթ Յոզեֆոն Հայոց (ՕՐՔ. Բ. 200), և յառաջ կը բերեն տասը ժողովներու անուանները, որք են. 1. Շահապիվանի ժողով, կաթողիկոս՝ Յովհան Մանդակունի, Միաենաց մետրապոլիտ՝ Անանիա։ 2. Նոր Քաղաքի ժողով, կաթողիկոս Բարգէն, Միաենաց մետրապոլիտ Մուշէ։ 3. Դրւնայ ժողով, կաթողիկոս Ներսէս, Միաենաց մետրապոլիտ Պետրոս։ 4. Դրւնայ ժողով, կաթողիկոս Մովսէս, Միաենաց մետրապոլիտ դարձեալ Պ'տրոս։ 5. Դրւնայ ժողով, կաթողիկոս Աբրահամ, Միաենաց մետրապոլիտ Քրիստափոր։ 6. Պարտաւի ժողով, կաթողիկոս Եղիա։ 7. Թէոդուպոլսոյ ժողով, կաթողիկոս Եզր, զոր Սկենէ և այլ յոհոմակոլացն ալ ընկալան զաւանքն, այլ Ֆոյին ամբողջ ընդհօսն Ասփոնծոյ։ 8. Մանազկերտի ժողով, կաթողիկոս Յովհան Օձնեցի։ 9. Անուոյ ժողով, ուր ընկճան նեսթորականք որոշեցին նզովքն, և ընդունեցան զիրենք ի միութիւն։ 10. Անուոյ ժողով, Զաքարիա սպասալարի օրով։ Բոլոր այդ ժողովները յառաջ կը բերուին իրրեւ Քաղկեդոնի դաւանութեան դէմ փաստեր ու վճիռներ, յորոց ալ առնէ հնար արեամբ և մահու վախ՝ մասամբ դիմել ընդէմ, և այնպան նզովից պարտական լինել, և ի չեր հարանցն մտանկցուելնե հեռանալ (ՕՐՔ. Բ. 204)։ Օրթոդոքսեան ժողովները յիշած առնն, ընդհանրապէս գրուցուած պարագաներուն համեմատ կը իսօսի, որոնց մէջ կը գտնուին իսկականէն և մեր ցուցուցածէն տարբերող մանրամասնութիւններ ալ, ինչպէս է Շահապիվանի ժողովը (§ 228) Մանդակունիին օրով դնելը, և անոր հակաքաղկեդոնիկ ոգոյն վերագրելը։ Մենք պէտք չենք զգար այդ մանրամասնութիւնները գննել, բաւական է որ բազմաթիւ Հայ ժողովներ, քաղկեդոնեան դաւանութիւնը և երկաբնակ վարդապետութիւնը չուզեցին երբեք ընդունիլ, ինչ որ Անաւարզեցին ալ չէր կրնար և չկրցաւ ուրանալ։

ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԿԷՏԵՐ

1219. Հրաժարական անունով կոչուած են անընդունելի կէտերը, որոնցմէ նախ կը յիշեն պատարագի հացին խմորը և բաժակին ջուրը, զոր օտար կը գտնեն աւետարանէն։ Ցիսուսի կողէն արիւն և ջուր ելած ըլլալն ալ յիշելով, որ բաժակը ջրողներուն մեծ փաստ էր, զայն երկու կէտերու վրայ կը մեկնեն, որք են Մկրտութիւն և Հաղորդութիւն, և ոչ բաժակին խառնուրդին վրայ։ 2. Պատարագի առն ևկեղեցին բաց պահելը յիշելով պատշաճ չեն տեսներ սրբոխին իբր ի տրճատոր խորհրդոյ տոսել, կամ թէ զբօսանօք անփակ ընդոսել ի կոխան ընդ և խոզից, որպես և մեր ակնատես եղեաւ։ 3. Կը յիշեն ևս զի նշխարն յօրն և ի գաւն պատրաստ բժանել առաջարկ մը, որ է չատ քահանայից միանգամայն կատարելագործ լինել պատարագի և սրբազնագործել, մինչ հին ձեւով միայն մէկը կը լինի պատարագիչ, և միւսները կը մնան միայն հաղորդակից։ 4. Ցանձն չեն առնուր տեսնել ի հոսմ եկեղեցին և փոխանիլ լինել կամ հաղորդել, որով պարզ մուտքը չըլլար արդիւնածը։ 5. Չեն ուզեր ընդ նոսա տօնել զՄուսնդ կամ զԱւետիս, այլ տօնել Մուսնդը յունուար 6'ին, և Աւետումն ապրիլ 6'ին, ինչպէս որ ասոնք մը կը տօնուէր, և վերջինն ապրիլ 7'ին վրայ հատատուեցաւ։ 6. Կ'ուզեն ճրագալոյցներուն խմել չեզ և ի պանիր, և հինգ օր նաւակատեաց պահել անխափան։ 7. Թէպէտ առաքելոյ առն կատարուած կ'ընդունին զնէր օրհնել հիւանդաց և ձեղացելոց, սակայն զայն խորհրդական չեն կարծեր, և ոչ ալ կ'ուզեն քահանայրութիւն տալ, տակաւ պրծիլ տեսնել, և չնէր օրհնել և սրբազործել։ Վերջապէս կ'աւելցնեն թէ ընկեր քան և խորհուրդ շատ առնէ, այլ չեն ուզեր երկնել, յայտնելով թէ առնան խոտորնակ քառասնաօրեայ (ՕՐՔ. Բ. 204–206)։ Ակնկ կ'իմանանք թէ կեսարացիին բերած առաջարկներուն մէջ ուրիշ կէտեր ալ կան եղեր, բայց հարկաւ աւելի կարեւոր չէին որ յուսկեսամբ կ'անցնին։ Այդպէս իրենց կարծիքները յայտնելէն ետքը կաթողիկոսին կը դասկտութիւնը չուզեցին երբեք ընդունիլ, ինչ որ Անաւարզեցին ալ չէր կրնար և չկրցաւ ուրանալ։

իրեղրեն, որ ընդհանրական թղթով մը այդ ամէն կէտերը որոշակի յայտարարէ, և իրենց յուշարկէ, զի յայնժամ առաւել հաւատարմութեամբ և հլու հպատակութեամբ հնազանդ լինիցին առաքեալին ելեւոյթ։ Եւ կը յաւելուն, որ եթէ առնի ինչ կամ պակս կամի մտածանել յեկեղեցւոջ մէջ, ըր ոչ առնէ է հարցն, յայնժամ մի՛ ուշիւս լինիւ և մի՛ ընդուշիւս առնիւ, ըստ ՅԷր կամացդ լինի ուշիւրիդ այդ, այսինքն կիլիկիա, և ըմբռնի ընդէ է մէջ սպրոկ ֆերուենան, այսինքն նախնեաց հետեւողութեան մէջ, և մէ կացցուս ճաշցուս ան առնելով ջրէն այցելութեան։ Վերջին խօսքերնին ալ համարձակօրէն կ'արտասանեն. Հաւան եմ մէ ընդ մեր հարան է դժխես լլանել, և ուղղիդ Հառատոց յերկինս ելանել։ կաթողիկոսին կողմէ իշխանական վճիռի մըն ալ առջեւն առնելու համար՝ կը դիտուցանեն, որ եթէ ընտանեաւոր առաքեալ պարտ ըմբռնի, մէ պարտաւորեալ եմ է փանջան և յաւորս և է բանք, և է մառանել է վերայ սուրբ և առաւելական հարցն առանձին։ Այս սեռակ բուռն և կծու ընդդիմադրութիւնէ հարկն ալ, պատուհասից ձեւերը զանց չեն ըներ, և վերջին ողջոյնն ալ կու տան չատուչատ պատուադիր ոճով, ինչպէս սկսած էին։ Ողջ լեր ընտանեաւոր արքեպիսկոպոս Յնդէ է մայրդ սուղդափառութեան, ազգիդ հառատոյ, և անվախ ախոյեանդ առաքեալ եկեղեցւոյ Գրիգորիոս, կաթողիկոս Հայոց, և Տէրն պահ զանց հավանացի պէրկան ելիսյոյ (ՕՐԲ. Բ. 207-208)։ Միեւնոյն խոհական սկզբունքն է, զոր վերեւ բացատրեցինք (§ 1215), անձր ընդդիրէն պատել, անձր պատուասիրել և ընդդիրին ընդդիմանալ ամենայն համարձակութեամբ, մանաւանդ եթէ բաժանման իրաւունքակր հետացնել ազգին վտանգեալ վիճակը չծանրացնելու համար։

ՕՐԲԵԼԵԱՆԻ ԸՆԹԱՑՔԸ

1220. Նամակը թէպէտ խորհրդով եկեղեցական և էլեանոց (ՕՐԲ.Բ.196) որոշուած էր, բայց ուղղակի բերանավ Աթէոնոսի Ալանաց այցելութիւն գրուած լլալուն (ՕՐԲ. Բ. 198), միանգամ պարզ առարաքութեամբ չեն գոհացած, այլ քանի մը ապացոյցով իրենց համոզումն և համաձայնութիւնը յայտնած են, նպաստելով հակառակը մտածողներուն, թէ որ ոչ ժողովին այսօր հայրենասէր և հայրապետական հոգեհոգի գառանութեանց, նշանակել եղեցին (ՕՐԲ. Բ. 208), կամ համաձայնութիւն ուրիշ ձեւեր։ Իշխաններն ալ նպաստ կրկնած են, այլ ոչ իրենց անունով, այլ եկեղեցականներուն բերնով, թէ որ ոչ հաւանի նշանակել և որոշել լեցի է առաքեալ հարցն մերոց և յօգուտ բերել եղեկողացս (ՕՐԲ. Բ. 210)։ Այդ տարբերութիւնը նկատողութեան արժանի է և աշխարհականներուն կրօնական գործերու մասնակցութեան ձեւը կը ճշդէ։ Սիւնեցիք իրենց նամակին կցած են երկու հատուածներ, մէկը Գրիգոր Նիւկեսարացիէ և միւսը Աթանաս Աղեքսանդրացիէ, որով մէ քահանաները կը հաստատուի (ՕՐԲ. Բ. 211—215), և ասով անուղղակի հերքած կ'ըլլան Անաւարզեցիին ցուցմունքները՝ որ ինչինչ վկայութիւններ հաւաքած և իր պատգամաւորին ձեռքով կամ իր գրութեամբ ներկայացնելու հոգ տարած էր։ Օրբելեան իրենց գրութիւնը հաւանաբար թողլ մոլընդունց կ'անուանէ, բայց այստ հանդերձ կաւանդին կեսարացին ալ կամեր չունի առնել զարտառնի ընդունի՝ բաղդելով պարծանալ (ՕՐԲ. Բ. 196), սակայն վերջնապէս չէ կրցած ընդդիմանալ, ու յանդիման պարտաւորած է տանիլ զայն Անաւարզեցիին, ինչ որ իւր պատգամաւորութեան կատարեալ ձախողումն էր։ Ստեփանոս՝ նամակի ձեւով գրութիւնէն հարը ճառի ձեւով և Հայոց ճառնիչն ընդդեմ երկաբնակաց մակագրով գրած մըն ալ պատրաստած է հայադաւանութեան հնաւանդ սկզբունքները պաշտպանելու բաւական ամուր կերպով, զոր հռոմէադաւան պատմագիրը կը յանդգնի աղճատել պայծառ քանիչ անուանել (ՁԱՄ. Գ.292)։ Միեւնոյն այդ ընդդիմութեան յաջորդեցին կիլիկիոյ ներքին խռովութիւնները (§ 1212), և պահ մը ընդմիջեցաւ Անաւարզեցիին գործունէութիւնը, մինչեւ որ նորէն հանդարտութիւն տիրեց Լեւոնի թագաւորելովը 1301'ին, ուսկից հարը տեղի ունեցած կ'ըլլան վերջին երեք պատգամաւորութիւնները (§ 1214)։

1221. Այդ միջոցին ասպարէզէն կը պակսի Արեւելեայց քաջ ախոյեանը։ Օրբելեանի պատմութեան թէպէտ իւսական դրուած է 1299 փրկչական տարին, սակայն

հետը նշանակուած 746 Հայոց թուականը 1297'ին կը պատշաճի, որ պիտի նախադասուի, քանի որ նոյնը կը հաստատուի Սարկաւագապիր չորքանին 214 թուականովն ալ, որ նոյն տեղ նշանակուած է (ՕՐՔ. Բ. 257)։ Անկէ ետքը Օրբելեանի գործունէութիւնէն յիշատակ չունինք, հարկաւ տարիքի ու յոգնութիւնը զինքը ճնշած էին, մէկէտ 1304'ին կնքած է բազմաչխատ և բազմարդիւն կեանքը։ Իրեն յաջորդած է Յովհաննէս Օրբելեան, Լիպարիտ որդին, զոր ինքն կը պատրաստէր (§ 1188)։ Ձեռնադրութիւնը անչուշտ Անաւարզեցիէն առած է, բայց չենք գիտեր ստուգիւ թէ Ստեփանոսի մահուանէն առաջ կամ ետքը, թէպէտ մէզի հաւանականագոյն կ'երեւի ըսել, թէ Ստեփանոս նախանձոտ զգուշաւորութեամբ կանխաւ ձեռնադրել տուած է։ Նոյն միջոցներուն մեռած են Ելիկում և Լիպարիտ իշխաններն ալ, և Յովհաննէս իրրեւ Օրբելեանց գլուխ, Սիւնեաց իշխանութիւնն ալ միացուցած է մեծ բազդատութեան, և այս է Անաւարզեցիին ըսելը անոր համար, որպէս հոգեւոր էշխան ելած, նոյնպէս և մարմնաւոր (ԿԱՒ. 441)։

ԱՆԱԻԱՐՉԵՑԻԻ ՆԱՄԱԿԸ

1222. Անհնար էր որ Սիւնեցւոց ընդդիմութիւնը չդարմնակեր և իր ազդեցութիւնը չգործէր Ստեփանոսի մանուըննէն ետքն ալ, զի նոր պատգամաւորութիւններն ալ դժուարութեաց կը հանդիպէին, երբ Անաւարզեցին կ'աշխատէր իւր ծրագիրը աւելի տարնել։ Այդ կացութեան հետեւանքը կը կարծենք մենք այն հռչակաւոր թուղթը, զոր գրեց Անաւարզեցին առ կրճատաբ Քաթողիկոս Հեղնաց, հայր արժայն Հայոց Լեռնէ, ինչ որ պէտք է իրր պատասխանաբանութիւն համարել, զի Հեղնաց կուսակրօն էր, Լեւոն ալ Թորոսի որդին էր։ Այս նամակին սկիզբը կը յիշուի, թէ Հեղնաց հերոս փոքն է Սիս հասած, և թէ անկէ ետքը Հեղնաց դրաներէցը Ստեփանոս՝ երէց պատասխանի ընդունի Հեղնաց, և թէ Անաւարզեցին խնդրեց Հեղնաց ըն ջանայ և օգնէ, որ մինչ կենդանի կամ պիտանիմ է քանդրանց (ԿԱՒ. 435)։ Այդ վերջին բացատրութիւնը, մինչ կենդանի կամ, պատճառ եղաւ ոմանց կարծել, թէ Անաւարզեցին քուղթը, մեռնելու մօտ եղած ատեն գրուած ըլլայ, և իրրեւ կոակ մղուած Հեղնաց ձեռք, բայց մենք ընդհակառակն կը կարծենք, թէ աւելի կանուխ գրուած քուղթ մըն է, գործերուն կնճռոտած ատենը, բոլորովին մասերական ոճով, որուն մէկ նչանն ալ սովորական խօսակցութեան լեզուով գրուած ըլլալը, ոչ իրրեւ պաշտօնական գրութիւն մը, այլ իրր բերնէ բերան խօսակցութիւն մը, ինչ որ չատերէն ժամանակէն առմէօրէն կոչուած է, բայց աւելի ճիշդ կ'ըլլար ժամանակին աչխարհաբարը կամ խոսակցութեան լեզուն անուանել։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՋԱՔԱՐԻԱ

1223. Գործերուն կնճռոտիլը յիշեցինք, և իրօք ալ Անաւարզեցիին ծրագիրը տակաւին դժուարութեանց կը հանդիպէր։ Յովհաննէս Օրբելեան Անաւարզեցիին ծրագիրին կ'ընդդիմանար, և սաստիկ ոճով դիր մըն ալ ուղղած էր Արտազու արքեպիսկոպոս Զաքարիա Մարծպետեցիին, որ վասպուրականի կողմերը Անաւարզեցիին անսացողներուն կը միտէր։ Մէ՛ք ըսի մարդոյ և հոգեոյ մի եա՛, կ'սէ. գոռ ընծէ՛ր քաշանեցար, և ևթէ կ'սես թէ ծըռմարտութեանն հաւանեցար, հապա ջնէ ընծէ՛ր ըսրսէր խորհրդոյն (ՁԱՒ. Գ. 305)։ Զաքարիա երկրին կնիքով կը ջանար ինդիրին մէջէն ելլել, ոչ հնազանդ ձեռքը անարգելով, և ոչ կախազիկոսին դիմադրել ուզելով, դի արդէն ոչ Հայոց չէրէս մասնաւ քաշանել, բլլալով, Սսոյ և Աղթամարայ և Ագուանից կախազիկոսութեանց վրայ, չէր ուզեր նոր բանաւոր բաժանումներ ալ աւելցնել Սսոյ կախազիկոսին բաժանելով։ Մարծպետեցին միջադէպ մըն ալ կը յիշէ, թէ Յովհաննէսին հետ տեսակցութիւն ունեցեր է Խաչէն, է ֆոր ուեղեակ եկեղեցոյն, ուր ելոք խորհրդոյ եղեր է Յովհաննէս Օրբելեան. սակայն կը խոստովանի թէ պէտ, որ գոռ ալ ոնէէ կամ հնազանդել կամեցաւին, եակ մեծ ալ էշխեցաւ ապաստել է նմանե (ՁԱՒ. Գ. 307)։ Օրբելեան Յովհաննէսի և Մարծպետեցի Զաքարիայի քրիստոնեական հաղորդակցութիւնները չարունակեցին, Հայ վարդապետներու մէջ ներհակութիւն մը վէճերն ալ չատցան, այնպէս որ Հեղնաց ինքն ալ վարանմանց մատնուած պիտի բլլայ, որ Անաւար-

ղեցին հարկ կը սեպէ մտերմական թուղթով մը զայն իւր ծրագիրին ուղղութեան համոզել, և իրեն կուսակից մըն ալ ապահոված կարծելով՝ թագաւորահօր կ'առաջարկէ, որ ազգային ժողով մը գումարէ, և խնդիրները անոր մէջ հաստատուն որոշման յանգին։ Հետեւաբար անհիմն պիտի չըլլայ կարծել, թէ Սահիանոս դրանդեղցին Հեթումին բերած նամակները, ճիշդ այդ կէտերը կը չօշափէին, և Հեթում որոշ լուծումներ կը պահանջէր կաթողիկոսէն։ Իսկ Անաւարզեցին ալ իրական գործ կը պահանջէր Հեթումէն, զի նա էր տիրապէս թագաւորութեան վարիչը, և Լեւոն Դ հազիւ 15 տարեկան պատանի մըն էր տակաւին։ Ըստայսմ Հեթումի ուղղուած հռչակաւոր թուղթը՝ հաւանաբար 1303'ին գրուած կրնայ ըլլալ։ Հեթում ու Դրիգոր չատոնց իրարու խորհրդակից ու համամիտ ու գործակից էին, և Հեթում կատարելապէս համոզուած մըն էր Անաւարզեցիին ծրագիրին։ Արդ, ևթէ տարիներ ետքը Անաւարզեցին պէտք կը զգայ մտերմական նամակով մը Հեթումը համոզելու փաստեր գործածել, անհրաժեշտ է Հեթումի միտքին մէջ վարանում մը ենթադրել, զոր բուժելու կը ստիպուի Անաւարզեցին մտերմական, բայց պատճառաբանեալ նամակով մը։

ԲԱԺԱԿԻՆ ՋՈՒՐԸ

1224. Ծիշեալ նամակին պարունակութեան գրեթէ ամբողջութիւնը բաժակի ջուրին չուրջը կը դառնայ, և կ'երեւի թէ աւելի այս կէտն էր որ Հեթումի միտքը վրդոված էր, որ Անաւարզեցին բոլոր իւր ոյժը անոր վրայ կը թափէ, հարեւանցի անցնելով ուրիշ փոփոխութիւնները (ԿԱԼ. 439), զորս արդէն քաղցընք իւր կարգին (§ 1205)։ Բաժակի ջուրը հաստատելու համար Անաւարզեցին ունէր այն վկայութիւնները, զորս Լատինները իրեն թելադրած էին, բայց, կ'ըսէ, յոթամ երեկ յեր երեցն, ես ակիզբն սրբէ որ ժողվեալ է Հայ երջան վկայութիւնս, որվ զէրն հաստատեալ և երեկ յեղ (ԿԱԼ. 438)։ Ասկէ կը հետեւի, որ Հեթում բաւական չսեպելով օտարներու վկայութիւնը, Հայ գիրքերէն վկայութիւններ պահանջեր է ընդդիմաբաններու դիմադրելու համար։ Այս նպատակով նախ կը յիշէ Աթանասի հայերէն թարգմանութիւնը, և կ'աւելցնէ չատ մը օտարներու անուններ, զորս առիթ ունեցանք քաղելու (§ 1204)։ Սակայն ատոնց վկայութիւնները չէին կրնար մեծ ոյժ ունենալ Հայերու վրայ, վասն զի իւրաքանչիւրը իւր եկեղեցական սովորութիւնը կ'ուզէր լուսաբանել, և ոչ թէ ուրիշ եկեղեցւոյ սովորութեան դէմ գրել։ Անաւարզեցին Հայերէն վկայութիւն ու փաստ քաղելու համար կ'ըսէ, թէ Հայեր ամէն օր խոթլմ ջուր է նչխոն խառնեն, և զայն նշխոն ոգի է բերեն դնեն, որով բաժակին ջուր խառնուած ըլլալը կ'ուզէ հետեւցընել (ԿԱԼ. 437)։ Միթազուրի՝ չըսենք խըղճալի՝ պատճառաբանութիւն մը։ Կը յիշէ եւս թէ Խոյ է պէր Ներսես Լամբրոնացին այլ օգնոս Նարեկ (ԿԱԼ. 438), բայց գտածները չյիշեր, միայն աւելի վար կը պատմէ թէ պէր Ներսես, որ հանգչեցէր, հաղորդեր, զոր կալանոս Շնորհալիին վրայ կ'ուզէ խմանալ (ԿԱԼ. 441), սակայն անտարբեր հաղորդուողը Լամբրոնացին էր (§ 1061), որ այս կերպով ոչ թէ ջուր խառնելը պարտաւորիչ կը ցուցնէր, այլ խառնելը կամ չխառնելը անտարբեր կը գտնէր։ Իրրեւ փաստ կ'ուզէ գործածել եւս, որ Կոստանդին Բարձրբերդցիին և Հեթում Ա'ին օրով Անտիոքի Լատին պատրիարքը Սոյ'Ս. Սոփիա Հայ եկեղեցւոյն մէջ պատարագէր է, և հարկաւ ջրախառն բաժակով պատարագած կ'ըլլայ, ուրկէ Կոստանդին ալ հաղորդուեր է։ Սակայն այս ալ ըսել չէ թէ ընդ ջրոյն պոտոբեթոց հեծ էր (ԿԱԼ. 442)։ Հայեր անսպակ պատարագած ատեննին, երբեք նոյնը լատիններէն չպահանջեցին, որ Լատին պատրիարքին պատարագը արգիլելու պէտք զգային։ Հայոց անսպակ բաժակով պատարագելը կ'ուզէ մեկնել ըսելով, թէ յԱբէել զէ անոպակ կոս խմեն, անոպակ պոտոբեթեցին, ինչպէս որ Յոյներ ալ, որովհետեւ զէրեանց էնեն ընբման կոս խմեն, նա զէրեանց պոտոբեթ ընբման կոս առնեն ԿԱԼ. 447), իսկ Հրէայք ջրախառնն կը խմեն եղեր, վասնզի Սողոմոն գինիի համար՝ ըր խոտնեցէ չեղ ըսեր է, և Յիսուս ալ բաժակն է առեր, և ոչ կոթոս կամ պէճոր (ԿԱԼ. 445), որոնք անսպակ կ'ըլլան։ Առանց ուզելու պնդել, թէ խառնուած գինին պակասամիտներուն համար պատրաստուած է (ԱՒԿ. Թ. 4), դիտել կուտանք միայն, որ Անաւարզեցին

իւր խօսքով ընդունած կ'ըլլայ թէ իւրաքանչիւր ազգ իւր սովորութիւնն հետեւելու իրաւունք ունի։ Կը յիշէ ևս թէ Ազուանից պատմիչը, այսինքն կաղանկատուացին, գրած ըլլայ, թէ տասը եպիսկոպոսներ Դունի ժողովուելով մուծեր են մէ քնոռնիւն'ը, խաչեցու'ը, յունուար 6'ի Մոնունդը, և անապակ բաժակը, զորս յետոյ նզոյ խափաններ է, և հինգ կաթողիկոսներ անոր հետեւեր են, որոց մէջ նաեւ Սահակ, որ վան Հայեբոան առ Մամիէթ գնաց, և որբ ընտանեցեր, մեռնելէն ետքը դրօթեց և կորսոյ գնաց ընդդէմ, և որուն անապական աջը ինքն ալ տեսեր է Հռոմկլայի մէջ (ԿԱԼ. 442)։ Թէպէտ կ'ըսէ թէ Եսայի Նչեցիէն այսպէս լսած ըլլայ (ԿԱԼ. 444), սակայն կաղանկատուացին ասանկ պատմութիւն չունի, և ոչ ալ այն վեց կաթողիկոսները օտարոտի փոփոխութիւնները ընդգրկած են, և ոչ ալ տասը եպիսկոպոսներու խնդիրով հատուածած են հայագուսան և հայածէս կարգադրութիւնները։ Այսչափն ալ կը բաւէ իմանալու թէ ինչչափ տկար էին Անաւարզեցիին փաստերը, և ինչու չէր կրնար ընդդիմադիրները համոզել։

1225. Սոյն թուղթին մէջէն քանի մը ուրիշ կէտեր ալ կան բացատրելու արժանի։

ՆԱՄԱԿԻՆ ՄՆԱՑՈՐԴԸ

Անաւարզեցին կը գրէ, թէ կայ է մօտ իմ ենթադրութիւն, որ է Հռոմայ Աբմատ (ԿԱԼ. 436), և չգիտեր թէ իւր քնռնին ով է։ Ոմանք ուզեցին Յակոբ Ա կաթողիկոսն իմանալ (ՀԱՑ. Ա. 119), օգտուելով անոր ուրիշ անդ Յակոբ մը իրեն նախահայր անուանելէն, երբ կը գրէ, թէ էի ըսեալ է առաջ նախահարցն, է պէս Յակոբայ և է Դաւիթ վերապետէն և է պէս Նեբուխոյն (ԿԱԼ. 441), ուր և ոչ յայտնի է թէ Յակոբը կաթողիկոս մըն է, թէ ոչ իւր նախնիքներէն քահանայ մը, քանի որ ինքն ալ Տուրքերիցանց կը կոչուէր։ Աւելի անծանօթ կը մնայ Հռոմայ Աբմատ գիրքը, վասնզի հնար չէ որ Մայրագոմեցիին վկայութեանը դիմած ըլլայ (ՀԻՆ. 430)։ Անաւարզեցին իւր պատճառաբանութեանց կարգը բնդմիջելով կը գրէ Հերթումին, ապաչխ չունէ որ ալ իմանայ, ըստ որում վան չեր կոչեցեր, այլ վան այլոց որ պղծ են և պիղծ (ԿԱԼ. 444), բայց այս քաղաքավարի դարձուածը աւելի ևս կը հաստոյէ մեզ, թէ իրօք Հերթումի վարանումները փարատելու կ'աշխատէր։ Դարձեալ մէջ կը բերէ, որ ասկէ ցառնէ հայրենեաց՝ հարցէ ընտ օյ՝ առակը, և կ'ուզէ պինդ պաշտպանել, թէ հայրենաւանդ սովորութիւնները եղծանել չուզեր, այլ իրր թէ ժամանակով մուծուած զեղծումները կ'ուզէ ուղղել (ԿԱԼ. 448)։ Այդ առթիւ խօսքը առաջ տանելով կը յայտարարէ, թէ ինքն չուզեր բոլոր օտար սովորութիւնները ընդունիլ։ Ըստ այսմ բաժակին ջուրը ընդունելով, չուզեր ընդունիլ նաեւ խմորուն հացն ու թևրմոնը՝ այսինքն տաք գինին, Յոյնները հետեւելով։ Լատիններէն ալ ընդունելով եպիսկոպոսին խոյրը կամ միթրը և խաչ հանելու կերպը, չուզեր ընդունիլ աղուհացից մէջ ձէթ ու ձուկ ուտելը՝ Աւետման տօնէն զատ, սխալանաց մէջ ինկող քահանային պատարագելը, կամ աշխարհի տոհանայն ալ անկին լինելը (ԿԱԼ. 449)։ Կ'ընդունի ևս ըստ հինոյն ելբոպանեայ Հռոմայ եկեղեցւոյն, և ընդ պարբերն, որք են կոստանդնուպոլսոյ, Աղեքսանդրիոյ, Անտիոքի և Երուսաղէմի աթոռները, զիրենք առաջ անուամբն ելբոպանեայ, որ կալանոս կոչուին կը թարգմանէ լատիներէնին մէջ, փոխանակ պրնոպոպ։ Բայց չընդունիր Յակոբ կարգն զիս կոչուածները, այսինքն Յակոբիկ Աստրիները, որ տեղ տարօք խաչ հանեն, և առաքն առնեն, այսինքն ուրբաթ երեկոյէ պահք կը լուծեն։ Ընդունիր նաեւ թլփատուողները, ազգապղծութիւն ընդունողները, աւագ սարկաւագը ամուսնացնողները, Նեստորականները, և կը կնքէ ըսելով. ընդ նոսին անէծս ընդ նայն հերձուածողն, և զերազոցանէս է հերձուածողներն (ԿԱԼ. 450)։ Իսկ ատենցմէ դուրս կը հաւանի որ տեղ ալ տեղ ծածկ, որ գինին ցայժմ եկած է (ԿԱԼ. 449)։ Այդ կէտերը չատ բացատրութեան չեն կարօտիր, միայն նկատողութեան արժանի է, որ Անաւարզեցին իւր կատարեալ լատինամոլութեամբը չվարանիր յունադաւանները ալ իրրեւ ուղղափառ ընդունիլ, թէպէտ Լատին ու Յոյն եկեղեցիներ իրարմէ բաժնուած էին, ու զիրար կը նզովէին։ Եւ կ'երեւի թէ վերջապէս հայադաւան ազատամտութենէն և Հայ եկեղեցւոյ լայնախոհութենէն բան մը մնացեր է

Անաւարզեցիին միտքին մէջն ալ՝ Նոյնը կը քաղաքի նաեւ այն ազատութիւնէն զոր կ'ընդունի, թէ ով ուզէ՝ ուներ, և ով ըզէ՝ ընդ կնոջ մինչ է ծոցըն, մինչ ծոցելն հաստատ ընթացք և պրամաշանականընթացք լինի իրաւանց կանանց (կԱԼ. 448)։ Այս պատճառով էր որ պաշտօնապէս պառակտումը կը իսիանուէր Հայոց մէջ, հակառակ կաթողիկոսին և թագաւորահօր բուռն յանդիմանութեան։

ՆԱՄԱԿԻՆ ՋՕՐՈՒԹԻՒՆԸ

1226. Անաւարզեցիի հռչակաւոր նամակին պարունակութիւնը իրաւունք կուտայ եզրակացնելու, թէ այն բնաւ հեղինակուած գրուած մը չէ։ Մանրամասն ոճէն զատ, որ գրուածը պաշտօնական ոյժ կը զրկէ, ինքն նամակագիրն ալ միայն իր անհատական կարծիքը կը յայտնէ, առանց իսկ յաւակնելու զայն պարտաւորիչ ընել, և գումարութիւնք ժողովի մը որոշումին կ'ինքարկէ իր առաջարկին հաստատութիւնը, որով կը խոստովանի թէ առանց ժողովի իւր կարծիքը ոյժ չունի։ Արդէն Հայ եկեղեցւոյ ըմբռնումով և սկզբունքով կաթողիկոսի մը անհատական կարծիքը երբեք դաւանական զօրութիւն չունի, և իւր անձնական հեղինակութենէն աւելի չարժէր, և երբ Անաւարզեցին կը ճանչնայ թէ իւր ըրածը նորութիւն մըն է, նովին իսկ իր խօսքին հեղինակութիւնը ինքն կը ջնջէ։ Թէ ինչ եղաւ այդ թուղթին հետեւանքը՝ գրուած չէ, միայն կը տեսնենք, որ այլեւս այդ թուղթը մէջտեղ չերեւար, վիճաբանութեան նիւթ չկազմեր, խնդրոյ առիթ չլինիր, և ապագայ Սսոյ ժողովին մէջ ալ բնաւ առ Հեթում գրուած նամակին խօսքը չըլլար, այլ իրրեւ հիմ կ'առնուի, ուրիշ թուղթ մը, զոր Անաւարզեցին առաքեց առ ատեն և քրիստոնէական ընտանեաց Լեւոն (կԱԼ. 457)։ Որչափ ալ Լեւոն տակաւին պատանեկութեան տարիքին մէջ, և գործի տէր ըլլալու անբաւական, որչափ ալ ինքն Հեթում իւր վանքէն ալ պետական գործերուն ղեկը վարող, սակայն օրինաւորութեանց ձեւակերպութիւնները յարգելով իմացուցած պիտի ըլլայ Անաւարզեցիին, թէ մանրմասն ոճով և խոստակցութեան լեզուով իրեն ղրկուած նամակը հնար չէ իրր պաշտօնագիր ընդունիլ ուստի պէտք է որ պաշտօնական ձեւով գիր մը ուղղէ անոր՝ որ որչափ ալ տղայ, բայց թագաւորի անունը կը կրէ, և անկէ խնդրէ ժողովի գումարումը, և անոր ներկայէ ժողովական որոշմանց ենթարկուելիք նիւթերուն ծրագիրը։ Այս պատճառով Անաւարզեցին երկրորդ գիր մը ուղղած է Լեւոնի անունին, որչափ ալ ինչպէս ըսինք ու կը կրկնենք, նորէն Հեթում պիտի ըլլար գործը վարողը և պէտք եղածը կարգադրողը։ Այդ երկրորդ գիրը չունինք իր կատարեալ պատճէնով, սակայն դժուար չէ նկատել, թէ այն միեւնոյն գրութիւնն է, որ իբր Սսոյ ժողովի առնագրութիւն կամ վճիռ յաւելուած է կալանոսի, որ այդ գրութեանց պատճէնները նանած է հնագոյն արձանագրութիւններէ, ինչպէս լատիներէնն մասին մէջ կը գրէ (կԱԼ. 435)։ Իսկ Լեւոնի ուղղուած գրութեան թուական իդէպ է ընդունել դարձեալ 1305 տարին, զի երկրորդ գրուածը առաջինէն չատ ետք մեացած չի կրնար ըլլալ։ Այդ պաշտօնական գրութեան ալ հետեւանքը եղած է ժողովական գումարման մը համար որոշումը, որ է պետք եմս պիտի հաւաքուէր, որպէսզի ձեռնարկէ հաստատել յեկեղեցի Հայոց, ինչ որ Անաւարզեցին առաջարկած էր իւր պաշտօնական գրութեան մէջ (կԱԼ. 456)։ Նկատողութեան արժանի է, որ Անաւարզեցին չհամարձակիր իւր կաթողիկոսական իշխանութեամբ հրաւիրել եկեղեցական ժողովը, ինչ որ կանոնական ձեւը կը պահանջէ, այլ առաջ Հեթումի կը դիմէ մանրմասն նամակով, և յետոյ Լեւոնի կը գրէ պաշտօնական թուղթով, և թագաւորական իշխանութենէ կը սպասէ եկեղեցական գործերու հոգածութիւնը, ինչպէս են դաւանական և ծիսական խնդիրները։ Անտարակոյս Անաւարզեցին չէր կրնար անգիտանալ իրեն դէմ հղած հակակիր զգացումները եպիսկոպոսութեան մեծ մասին մէջ, և կը խիթար որ չյարգուիր իւր հրաւէրը, և կանխիկ դուռ կը բանար իշխանիներուն։ Այս պատճառով կ'ուզէր թագաւորական իշխանութեան հովանաւորութեամբ իւր ծրագիրը յաւաջացնել։ Եթէ այդ ժողովը չյողոցնես, կը գրէ Հեթումին, դուն Քրիստոս ես, ըմեզ ոչեմք է փոխոցն նոցն (կԱԼ. 440)։

ԻՆՁԻՆՁ ԴԻՊՈՒԱԾՆԵՐ

1227. Ժողով գումարելու համար պէտք ժամանէն (ԿԱԼ. 459) դժբախտաբար չկրցաւ ատացուիլ 1305 և 1306 տարիներու մէջ, որք այդ գրութիւնից հետեւեցան։ Եգիպտացիք թոյլ և դադար չտուին Հայերուն, և չարունակ արչաւանքներով և ասպատակներով կիլիկիան նեղեցին։ Տարի առաջ 1304'ին մնուած էր թագաւորու Ղազան խանը, և Հեթում պարտք սեպած էր անձամբ ողջունել անոր յաջորդ Ղարբանթա կամ Էօլչապտու խանը, և այդ պատճառով Դավրիժի ուղեւորութիւնը կատարած, քանի որ ուրիշ կողմէն օգնութիւն մը չէին գտներ Եգիպտացւոց դէմ, և Վռնիփակիոս Ը պապ կը գոհանար հաշտութեան յորդորներ կարդալով (§ 1210)։ Անչուշտ նոր խանին այցելութեան պատճառով էր՝ որ Յովհաննէս Օրբելեան և Զաքարիա Մործորեցին ալ իրարու կը հանդիպէին Դավրիժի մէջ (1223), բայց չենք գիտեր թէ Հեթումի ալ հանդիպեցան այնտեղ։ Հեթում գտնալէն ետքն ալ պարտաւորուեցաւ չարունակ դէմ դնել Եգիպտացւոց արչաւանքներուն, որոնք գաղտնի կողմերէն կիլիկիա կը յարձակէին և աւերածներ կը գործէին։ Թէպէտեւ քանիցս Հայեր կը յաջողէին լուռներկ և կիրճերէ օգտուելով անոնց դիմադրել, և բաւական թուով թշնամիներ ալ կոտորել, բայց արշաւանքները չէին դադարեր։ Ինչպէս ատէպ յիշած ենք, մեր նպատակէն դուրս կը նկատենք արտաքին դէպքերու և պատերազմներուն մանրամասնութիւնից մտնել։ Հայեր փութացին լատիններուն օգնութիւնն ալ խնդրել թախանձանօք, սակայն կզտնենք պատմելու ալ, որ Բենեդիկտոս ԺԱ'ի յոյժ հաւատաւոր պահակապետին ետքը աթոռ բարձրացած էր 1305'ին, Վռնիփակիոս Ը'ի ձեռով համբերութեան ու քաջալերութեան յորդորներով կը պատասխանէր 1306 յուլիս 2'ին։ Թագաւոր իսկ, որ Պարսկաստանի սիրապահուն էին և Դավրիժ կը նստէին, հետզհետէ իրենց կեդրոնին մէջ կ'ամփոփուէին, և հետաւոր երկիրներէն ձեռք կը քաշէին, որով այս կողմէն ալ կը պակսէր Հայերու ապատած օգնութիւնը։

1228. Այս միջոցին էր որ նոր պետութիւն մը, յանկարծական և արագ յաջողութեամբ կը սկսէր ընդարձակուիլ։ Թուրքերու նոր գաղթականութիւն մը 1227'ին մեկնած էր Անդրկասպեան երկիրներէն Եփրատի կողմերը հաստատուելու միտքով, և բաւական ժամանակ պատուէրէ հետքը տեղաւորուած էր Իկոնիոնի սուլտանութեան սահմաններուն մէջ։ Իսկ գաղութին մի մասին հետ գացած առնն, միւս մասը մնացած էր նոյն տեղը, և սուլտանութեան մատուցած ծառայութեանց ի վարձ՝ ստացած էր Սէօյիւտի գաւառը չուրջ 1242'ին։ Երթևեռուլ էր այդ ճիւղին պետը, որդի առաջին գաղութին գլուխը եղող Սիւլէյմանին, որ և յաջողեցաւ իր սահմանները հետզհետէ ընդարձակել, գլխաւորապէս Բոյներ կն քաղաքներ և բերդեր առնելով, և բաւական զօրաւոր դիրք մը ձգեց իր որդւոյն Օսմանին, երբոր մեռաւ 1288'ին։ Օսման աւելի ձգտեցաւ քան իր հայրը, աւելի ընդարձակեց իր իշխանութիւնը սուլտաններուն հովանաւորութեամբ, այնպէս որ երբ 1294'ին Իկոնիոնի սուլտանութիւնը ջնջուեցաւ Թաթարներու ձեռքով, և չատ մը մանր իշխանութիւններ կազմուեցան (§ 1208), Օսմանի իշխանութիւնը չատերէն աւելի զօրաւոր էր, որով Օսման 1299'ին համարձակեցաւ զինքն սուլթան կամ ֆոփչըհ նչակել, իբրեւ Իկոնիոնի սուլտանութեան յաջորդ։ Անկէ ետքը սկսաւ աւելի մեծ յաջողութեամբ և արագութեամբ իր իշխանութիւնը ընդարձակել, միւս փոքրիկները հետզհետէ հպատակեցնել և նուաճել, և այս կերպով կիլիկիոյ Հայոց թագաւորութեան դէմ նոր ոյժ մը կազմել, դէպ հարաւ ալ ուղղելով իր արչաւանքները։

ԱՆԱՒԱՐՁԵՑԻՒՆ ՄԱՀԸ

1229. Ահա այն պարագաները, որոնք չնպաստեցին Անաւարզեցիին մեծ փափաքին իրականացումը, զի Հեթում և Լեւոն հակառակ իրենց համակամ պատրաստակամութեան, ոչ պատեհը ունեցան և ոչ համարձակութիւնն ղգացին ազգային ժողով հրաւիրելու։ Միւս կողմէն Անաւարզեցին տարիքը առած, յուզմունքներէ և աչխատութիւններէ տկարացած, իր վախճանին մօտենալը կը տեսնէր,

ՕՍՄԱՆԵԱՆՑ ՍԿԻԶԲԸ

և տարի առաջ արդէն Հէթումի կը գրէր, թէ մինչ կենդանի կամ, զբօսնիմ ի բանտըրա-նոց (ԿԱԼ. 435)։ Իսկ մտահոգութիւն պատճառող բանագրանքը՝ բաժակին ջուր չխառնողներուն դէմ լատին հակեղեցւոյ բանագրանքն էր, որուն համար կը գրէր թէ ալ ի՛մ ինձ, ին ծողվօ և հայրապետօ մեծ բանագրեր էր (ԼԱԼ. 438)։ Իրաւ որ Անաւարզեցին իր գործը փոքրոգի խղճահարութեան հասուցած պիտի ըսուի, երբ անկեղծ յայտարարութիւններ են գրածները, ինչ որ չկրնք ուզեր կասկածի ներքեւ թողուլ, որովհետեւ իրեն երկեայլն մտօք հոգեոյն վկայողները չեն պակսիր։ Անոր մարմնոյ առողջութիւնը, կ'ըսեն, ջնջված էր յոգնից և ի պահց, ի հանելոյ ցքնաւորէր (ՍՄՐ. 160), որ բարեպաշտօն անձի գաղափարը կը թելադրէ իր վրայ։ Ուստի մենք ալ չենք ուզեր կարեւորութիւն ընծայել Ջահկեցիին վերջին դարերու մէջ գրածին, թէ երբ հայհոյէր ըստ ոչ ոքի հայրապետ պիտի չեր, աթոռէն ինկած ու ջնահարեցաւ, և մեռաւ գոռ մահուամբ (ՃԱՀ. 601)։ Ինչ ալ ըլլային Անաւարզեցիին զգացումն ու դիտումը, նա չկրցաւ զայն իրականացած տեսնել, և մահը վրայ հասաւ ու անոր գործունէութիւնը վերջացուց։ Մահուան օրը որոշ չէ, միայն թէ մահուընէ ետքն է որ ժողովը կը հրաւիրուի, և 1307 մարտ 19'ին ժողովը կը գումարուի, և երէկ ամիս մը կամ ամիսուկէս միջոց ուզենք տալ այդ գործողութեանց, 1307 յունուարի վերջը պէտք է դնել անոր մահը։ Մրատի և Անանցիի չարունակողներն ալ որոշ թուական չեն ցուցներ, և կը մնայ յիշել մակաբերական հաշուով գոհանալ։ Անաւարզեցիին վրայ դիտողութիւններս ու անոր ընթացքին գնահատումը՝ քանիցս առիթ ունեցանք յայտնել եղելութեանց կարգին, և նորէն կրկնել չենք ուզեր։ Կրնանք ըսել թէ նա հաւատզմամբ հռոմէադաւանութեան կուսակից մըն էր, և թէ աշէն ճիգ թափեց իր համոզումը Հայ եկեղեցւոյ մէջ ալ ընդհանրացնել, սակայն պաշտօնապէս հռոմէադաւան մը չկրցաւ ըլլալ, նաև առաւել Հայ եկեղեցին հռոմէադաւան չկրցաւ ընել։ Մարդ մը, որ կը յայտարարէ թէ բաժակին ջուր գնեմ է ծածուկ (ԿԱԼ. 438), նովին իսկ վկայած կ'ըլլայ թէ պաշտօնապէս հռոմէադաւան ճանչցուելէ խուսափած է։ Եւ նա՝ որ կրկին կրկին կը պնդէ թէ՝ պէտք է ապաստել, մինչ ինքը ծաղուվ հաստատուեր (ԿԱԼ. 438), և թէ ի ծածկի՛ մինչ ծաղվ լինի (ԿԱԼ. 444), կ'ընդունի թէ պէտք է որ ծաղվով, հաստատ ընծայ և պատճառականութեամբ լինի էքստատ ըստ կանոնաց (ԿԱԼ. 448), և այնպիսւոյն համար հնար չէ հաստատել, թէ նա ինքնին հայադաւան հակեղեցին հռոմէադաւանութեան փոխարկած ըլլայ։ Այսպէսով կ'ոչնչանան Անաւարզեցիին հնդինակութեամբ Հայերը կաթոլիկ դարձնողներուն ճիգերը, քանի որ Անաւարզեցին ժողով չըրած և ժողովով իր դիտումը չիրագործած աչխարհէ մեկնեցաւ։

ՍՍՈՑ ԺՈՂՈՎԱԿԱՆՔ

1230. Սակայն իր գործակիցն, գուցէ և թելադրիչն, Հէթում-Յովհաննէս կրօնաւոր-թագաւորահայրը, չուզից անգոյն մնալ, և այն յուզումնալից միջոցին մէջ, երբ մէկ կողմէն քաղաքականապէս հրկիրը կը վրդովուէր, և միւս կողմէն աթոռին պարապութեան հրեւոյն մտահոգութիւն կը տիրէր, ուզից գործին պաշտօնական կ'երպարան տալ, և օգուտ քաղել կաթողիկոսական ընտրութեան համար գումարուելիք ժողովէն։ Հրաւէրները ցրուեցան Լեւոն թագաւորի անունով, որ 18 ասրէկան հզած ըլլալով և գործի տէր նկատուելով, պարշճ համաբերա ծաղվ առնել եպիսկոպոսաց, վարդապետաց և հաց (ԿԱԼ. 458), սակայն միշտ կը չարունակէր հօրեղբօրը թեւարկութեան և թելադրութեան ներքեւ գործել։ Հարկաւ քառասուն օրի չափ միջոց մը պէտք հզած է, մինչեւ որ կաթողիկոսներ ղրկուին և եպիսկոպոսներ ու վարդապետներ հաւաքուին, որչափ ալ իւ և իւ ծաղվով ընդունած ըլլայ (ԿԱԼ. 458)։ Իրաւ եկողներու մէջ հնուաւորներ չկան, և գրեթէ բոլորը կիլիկիոյ կամ անոր չրջակայից մէջ հզող եպիսկոպոսներ են, սակայն անոնք ալ հարկաւ առնի մը պէտք ունէին։ Ներկաներուն ցուցակին մէջ կը գտնենք միայն 26 եպիսկոպոսներ, որոնցմէ 16'ը կիլիկիացին են. Կոստանդին Սսոյ, Յովհաննէս և Ստեփանոս Տարսոնի, թերեւս մէկը միւսին օրնական, Յովհաննէս Անաւարզայ, Յովհաննէս Այասի, Ստեփանոս Բարձրբերդի, Բասիլիոս կապանի, Գրիգո-

բիոս Մարաչի, Թորոս Մաչկեւորի, Անդրէաս Հարքանի, Սիմէոն Կոպիտաւի, Հայրապետ Ռոբանի, և Նիկողայոս Կիպրոսի. երեք ալ կաթողիկոսարանի եպիսկոպոսներ, որոնցմէ Ստեփանոս դրան կաթողիկոսարանի կը կոչուի, Յակոբ քուէորդի կաթողիկոսի կ'ըսուի, իսկ Գէորգ առանց ուրիշ անունի կը յիշուի: Հինգ ալ կիլիկիոյ չրջակայից մէջ Իկոնիոնի սահմաններէն ներսերն էին, որք են. Կոստանդին կեսարիոյ, նոյն իսկ Սիւնիք գացող պատուիրակը (§ 1216), Ստեփանոս Սեբաստիոյ, Ներսէս Տիանայի, Վարդան Եւդոկիոյ և Լեւոն Մաճիդաւի, որով 21 եպիսկոպոսներ ամէնն ալ մէկ չրջանակի մասլիկներ են: Անոնցմէ դուրս եղողներն են, Յովհաննէս Մարանդունեաց, կարապետ Մեծկերտի, Վարդան Անիի, և Փիլիպպոս Խորձանի: Այս չորսերը Հայաստանի ներկայացուցիչներ պէտք է համարուէին, սակայն Մարանդունի գաւառ չունինք, միայն Մարանդ գիւղ մը կը գիտցուի, իսկ Անիի եպիսկոպոս ըսուածը, եթէ բուն Անիի արքեպիսկոպոսն ըլլար՝ 25'րդ տեղը չէր կրնար: Իսկ Մեծկերտ և Խորձան, այժմեան Մազկերտն ու Գղին, Արեւելեայց կեդրոնէն հեռու տեղեր են, և գուցէ հանդիպմամբ միս գտնուած են:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԹԻՒԸ

1231. Յիշուած անուններէն յառաջ բերուած առեն կարծես յատնի կ'ըլլայ թէ զայն քառասուն քառասնից քաղած է ամենայն հաւանականութեամբ, որովհետև միայն 26 եպիսկոպոսներու անուններ կը յիշէ իբր ներկայ (ԿԱԼ. 455), և չենք իմանար թէ ինչպէս վերջէն 36 եպիսկոպոսներու ցուցակ մը կու տայ, առանց տարբերութիւնը բացատրելու (ԿԱԼ. 469): Այս երկրորդ ցուցակին մէջ կիլիկեցիներէ կը պակսին Տարսոնի երկրորդը, և Այասի, Ռոբանի ու Կիպրոսի եպիսկոպոսները; և աւելցուած են Ստեփանոս Առաջնայի, Յովհաննէս Բերիոյ, Վարդան Մաչարդի, և Մարտիրոս Ուռքայի եպիսկոպոսներ: Շրջակայից եպիսկոպոսներէն կը պակսի Մաճիդաւի եպիսկոպոսը, և աւելցած է Ներսէս Նէոկեսարիոյ եպիսկոպոս: Գաղթականութիւններէն կը յիշուի Բասլի Թեսազոնիկէի եպիսկոպոս մը: Իսկ աւելի մեծ տարբերութիւնը Հայաստանի եպիսկոպոսներուն մէջն է, որոնցմէ կը պակսին Մարանդունեաց և Անիի եպիսկոպոսները, և աւելցուած են 11 նոր անուններ, որք են. Սարգիս Եղնիկի՝ հաւանաբար Երզնկայի, Սահակ Բաբերդի, Տիրատուր Բասենի, Ներսէս Կամախի, Աւետիք Նիրկերտի, Վարդան Սասունի, Սերոբէ Ճապաղջուրի, Գրիգոր Վահանաչէնի, Հայրապետ Զմկածագի, կիրակոս Մեծկերտի դաչտին, և Շմաւոն Օծոպի եւ պիսկոպոսներ: Քանի որ ատոնց բացատրութիւն չկայ, կրնանք ըսել, թէ պակաս եղողները չհաւանելով մեկնողներ են, իսկ աւելցուածներ՝ վերջէն հաննելով կամ ձեռնադրուելու գալով ստորագրելու պարտաւորուեր են: Սոյն ժողովականներուն կարգին առեղծուածական անձ մը եղած է Յոհաննէս Եպիսկոպոս Սպինդոլոյ (ԿԱԼ. 459), զոր նորերէն չատեր հաւարձակօրէն իբր կոստանդնուպոլսոյ եպիսկոպոս իմացած են (ՉԱՄ. Գ. 309), սակայն կոստանդնուպոլսոյ եպիսկոպոս մը՝ իւր փառաւոր կոչումը աղաւաղ անունի մը չէր փոխեր հարկաւ՝ և կոստանդնուպոլիան ալ գիտ. Օսմանեան տարեցոյցներէն գրաւուած չէր, որ Սպոնդոլ անունը գործածական ըլլար: Ուստի քանի որ աղաւաղ անունի մը դիմաց կը գտնուինք, և կոստանդնուպոլսոյ մէջ Հայ եպիսկոպոսական աթոռ մը գտնուիլն ալ՝ բնաւ հաւանականութիւն չունենալով, ոչինչ կ'արգիլէ ըսել՝ որ Իաւարիոյ Սպրինթայի, կամ Փոքր Ասիոյ Սաւրոպոլի կամ Սեբաստիայի, կամ ուրիշ քաղաքի մը անունին չարաչար աղաւաղումին դիմաց կը գտնուինք:

ՎԱՐԴԱՊԵՏՔ ԵՒ ԻՇԽԱՆՔ

1232. Եպիսկոպոսներէն զատ վարդապետներու անուններ ալ ունինք ցուցակին մէջ, ամէնն ալ կիլիկեցի վարդապետներ: Ասոնցմէ 10 հատը, պարզապէս իբր վըրտապետ կը յիշուին իրենց ուսումնական առաւելութեան համար, ու են. Յովհաննէս Մեծքարեցի, վրտապետ կոչուած իբրեւ Դպրեվանքին ուսուցչապետ, Մարկոս Սկեւռացի, Վարդան Անարզաբացի, Գրիգոր Գելիմազբերցի, Գրիգոր Մեծքարեցի, Թորոս Կրակեցի, Վարդան Ակներցի, և Մարկոս կաթողիկոսարանի վարդապետ, ինչպէս պիտի ըլլան նաեւ

Գրիգորիս և անապատաւոր կիրակոս՝ որ աւանց տեղի անունի կը յիշուին։ Վարդապետներէն 7 հատն ալ իրրև վանից հայր կը յիշուին իրենց պաշտօնական առաւելութեան համար, բայց միւսներէն չետազաս։ Ասոնք են. Սարգիս Ակնեցի, Գրիգոր Թիւրքիւրի, Բարսեղ Յորինի, Թորոս Մնձքարի, Կարապետ Մոմախնոցի, Ծովսէփ Քելեզականի, և Թորոս Զորոյվանքի։ Ասոնցմէ հատը կարգը կու գայ աչխարհական իշխաններուն, որոնց գլխաւորները միայն կը յիշուին, վերջէն աւելցնելով այլեւ էլեանք և ազատրդիք Հայոց։ Ասոնցով յիշուածներն են. Լեւոն թագաւոր, Հեթում թագաւորհայր, Օշին տէր Կապանի, և Ալինախ տէր Լամբրոնի ու Տարսոնի՝ Հեթումի եղբայրներ, Օշին տէր Կանչայ սպարապետ, Սմբատ տէր Ակռուռայ՝ մարաջախտ, Ռիմոնդ տէր Միքայէլկուի՝ սենեկապետ, Թորոս Զռիկ՝ թագաւորին դարպասին գլխաւոր, և Թորոս տէր Ճոճիէլկայի՝ պրաքսիմոս։ Այս պալատականներէն զատ նաեւ կայ եղած են Վասակ Բիւրգիկի, Սմբատ Սմբատակայի, Օշին Կոպիտաւի, Լիկոս Կիստաւամի, և Լիկոս Կ՚Ապտնեցի բերդակալ իշխանները։ Ամենէն վերջը կու գայ քաղաքին հռհռայէց և կրճատօրց, որոնց գլուխը յանուանէ կը յիշուի միայն կոստանդին ասազկերց թագաւորին (ԿԱԼ. 460)։ Այս է Սսոյ ժողովին կազմակերպութիւնը։

ՍՍՈՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1233. Սսոյ ժողովը կը գումարուի Մաղկապարզի օրը 1307 մարտ 19'ին, Միսի Ս. Սոփիա եկեղեցւոյն մէջ, և մի՛ւնոյն օրը կը վերջացնէ, իւր գործը, ուսնական օր մը բլլալով մէկտեղ։ Այդ հաստնող գործողութիւնը կ՚ապացուցանէ բռնուած ձեւը, վասն զի յայտնապէս գրուած է, թէ առաջի եպեսկոպոսներուն ուղղուած թուղթը, որպես չէ ինքնագիր եղած չէ, և բլլալն ալ բուսած չէ, այլ ժողովականք փութացած են հաստակիլ, ինչպէս կը յայտարարին, թէ ըստ էթէ պեսպես, ծանեալ զրգռութիւն զրպես առաքելական կանոնագրութիւնն և ըստ էնոյն (ԿԱԼ. 461)։ Սակ այդ պարագան բաւական է ցուցնել թէ օրինաւոր ժողով մը չէ եղած Սսոյ գումարումը, այլ հանդիսականներ արարողութիւն մը, ուր թագաւոր մը և թագաւորհայր մը թուղթ մը կը դնեն մէջտեղ, և քանի մը եպիսկոպոսներ ու վարդապետներ առանց գլուխի և առանց կաթողիկոսի, հրաւ հպատակութեամբ կը ստորագրեն իրենց առջեւը դրուած թուղթը։ Այս հնազանդ հաւանութեան զօրութեամբ կ՚որոշուի. 1. Զերկոս քննութիւնս և զխոս և ընդդիմաբանութիւնս ասել, պարզապէս այն պատճառով թէ այսպէս առհանեաց չմեզ երանելի հայրն մեր՝ Գրիգոր Անաւարզեցին։ 2. Ի պոնախթութիւնս պերճանական փոխ համայն էսնել այլեւս էրիսթոնէից, և յատկապէս է յԱնթիոքէն, է Մնուանքն, է Մկրտութիւնն և է Քառասնօրեայ էլեսուքն, որ է ըսկ մարտ 25, զկատիմերս 25, յունուար 6 և փետրուար 2 օրերը ընդունիլ, ինչպէս նաեւ օգոստոսի 15'ին ջրվեքթոխոն, և սեպտեմբեր 14'ին վնովվերացն։ Ասոնցմէ զատ ուրիշ սօնիր յիշուած չկան. իսկ փոխոխութեանց վասն ցուցուած է, թէ այսպէս սասոյց մեզ նոյն Անաւարզեցին։ 3. Զէ ըսք ծայոմասոբացն պոնեցոս զրնս վկայէն, որ է Հայ եկեղեցւոյ յատուկ եօթնեկական դրութեան ջնջումը։ 4. Զէ տհանայական զէնոն ըսք էրթոանէր սոպճանէ լեզէ չեկեղեցէն. որ է եկեղեցական զգեստներու կիրառութիւնը։ 5. Զէ է զէնոս օրնոյ սեղանայն լեզէ էորնորայն անպոճոս. որ է Լատիններուն գործածած քառակուսի ճերմակ կտաւը, զոր սկիհին ներքեւ կը սփռեն, և սրբագործութենէ հետքը նչխարը անոր վրայ կը դնեն, մինչ Հայեր մաղզմային մէջ կը պահեն մինչեւ վերջը։ Գօրքոյ (corporale) յատին բառը մրցանակել կը թարգմանուի սովորաբար։ 6. Մինդեան չարաթապահքը զեկտեմբեր 19'էն սկսիլ, որ 24'ին ճրագալոյցի օրը վերջանայ։ 7. Ի ճրագալոյցն յիմբ և յեղեվ հինայ քառասնանալ, որ է ըսկ կաթեղէն ու կթեղէն չգործածել։ 8. Ամենէն վերջը կը դնեն ղբրին բանն, ըստ հրամանաց Քառանել է սոբք խորհուրդն (ԿԱԼ. 461)։ Այս չափը որոշմանց կարգին. իսկ նախընթաց տեղեկագրութեան մէջ յիշուած է եւս, 9. Ընդունիլ զբերն ժողովն, և զոս է նոսա հաստատելոն է սրբոց հարցն (ԿԱԼ. 456), և 10. Սոբք սոսոսածն այսպէս ասել. Սոբք Աստուած, սոբք և հղբր, սոբք և անմահ, Քրիստոս, որ խաչեցար վասն մեր զերմեռ մեզ (ԿԱԼ. 457)։

ԺՈՂՈՎԻՆ ՆՊԱՏԱԿԸ

1234. Վերոյիշեալ որոշումներէն իւրաքանչիւր վրայ քնաւ ընդարձակ բացատրութիւն կամ պաշտպանողական փաստաբանութիւն աւելցած չէ. և իրրեւ գլխաւոր հաստոցիչ փաստ, յիշուած է միայն, «զի ես չէի ընդ մեծի եկեղեցւոյն Հռոմայ և այլ սուղաբոա եկեղեցեացն Քրիստոսի, և հաղորդութեան սահմանք եկեղեցի կոյսէ հաղորդութենէն առանձնացեալ և փճիլ» (ԿԱԼ. 456). Որչափ ալ գլուխը Հռոմի հետ միաբանութիւնն է գրուած, բայց և այլ սուղաբոա եկեղեցեացն Քրիստոսի յաւելուածը, որով սրբոգոս, և ոչ թէ կ'ընդլէ եկեղեցիներ կ'իմացուին հակառակ Կալանոսի թարգմանութեան. բաւական բացայայտ կը ցուցնէ հայրապետական սկզբանց ներողամիտ և խոյտատու դիպուածը, որով չէն վարանիր յունադաւան եկեղեցիներու հետ միութիւն ընդունել, երբ Հռոմ իրր հերձուածող և հերետիկոս կը նզովէր որթոդոքս եկեղեցիները: Հայերուն դէմ հատուր նպատակն եղած էր և էր տակաւին, եկեղեցական կղզիացումէ հեռանալով, և ուրիշ եկեղեցիներու հետ միաբանելով, անոնցմէ քաղաքական և զինուորական օգնութիւն գտնել. քանի որ ժամանակին մոլեռանդ հոգին չէր ներեր արեւմտեան քրիստոնեաներուն որեւէ յարաբերութիւն պահել կամ օգնութիւն հասցնել, նոյն իսկ քրիստոնեաներուն, եթէ իրենց հետ դաւանութեամբ և ծէսով հաւասար չէին: Այդ դիտումն է զոր Հայեր կը մշակէին առաջ Գահլաւունի կաթողիկոսներու և յետ Ներսէս Շնորհալիի իշխաններու ժամանակ, խոհական և զգուշաւոր կերպով. այլ անոնց յաջորդող Պապկենեան կամ Կոռիկոսեան իշխաններու և կամակատար կաթողիկոսներու ժամանակ՝ գործը անխորհուրդ և անզգոյշ նահանձայուզութեան հասաւ, մինչեւ որ Լուսաւորչեան իշխաններու ներքեւ կաթոլիկոսները ձեւի մը չանգլելու մօտեցաւ: Իսկ Սսոյ ժողովոյն պաշտօնական որոշմանց մէջ, մինչ բոլոր ուրիշ կէտերը լոկ յիշատակութեամբ կը թողուին, բաժակին ջուր խառնելու կէտը ընդարձակ պատճառաբանութեանց առարկայ եղած է (ԿԱԼ. 461—467), զոր անգամ մըն ալ վերլուծել աւելորդ կը սեպնէք, վասնզի միեւնոյն վկայութիւններն (§ 1204) և նոյն դիտողութիւններն են (§ 1224), որոնք կը պարունակուէին Հնութեան գրուած մոնոբմական թուղթին մէջ, զոր դարձեալ նոր ձեւով կրկնած է Անաւարզեցին Լեւոնի ուղղած պաշտօնական թուղթին մէջ, ինչպէս ժողովականք ալ կ'ըսեն, թէ ինչ բովանդակեալ լեւ է նոյն սահմանքն հօր մերոյ Գրիգորիոս (ԿԱԼ. 467): Ցիշեալ նամակն ալ այն է, զոր առաքեաց առ սուրբ և քաջալեզ ընտրեալն Լեւոն (ԿԱԼ. 457), և ոչ այն զոր Հնդուսի յիշէ, որ երբեք իւր մոնոբմական չորգանակէն գուրս չելաւ, և պաշտօնական գործողութեանց հիմ չհդաւ (§ 1226):

ԺՈՂՈՎԻՆ ԱՆՋՕՐՈՒԹԻՒՆԸ

1235. Այժմ կը մնայ ակնարկ մը նետել 1307 տարուոյ Սիսի ժողովին վրայ, և անոր գործութիւնն ու հեղինակութիւնը ճշդել: կալանոս այնպէս զմայլած է յիշեալ ժողովին արդիւնքովը, որ գայն միայն՝ իրր միակ հեղինակաւոր և վճռական ժողով կ'ուզէ ցուցնել Հայոց համար, և անոր որոշմանց հպատակեցնել Հայոց եկեղեցին: Ցաղթական պարծենկոտութեամբ մը կը հռչակէ, թէ ոչ որ այսոհետեւ կարող լինիցի անուն քննուի կամ խոքեական պատճառով փոքացուցանել ընդեղիայական գերութիւն Սսոյ ժողովին այսորիկ, զի նա եղեւ Հայոց ընդհանուր սինհոդոս և մեծագոյն ման զոյզ ամենայն, որ ժողովեցան ի Հայսպահս (ԿԱԼ. 453): Սակայն չհասուսուի թէ ինչով Հայոց եկեղեցւոյն բազմաթիւ ժողովները, որոնցմէ ասոր հատը յիշած էին Սիւնեցիք (§ 1218), մէկ Սիսի ժողովով կրնան ոչինչ հաւարուիլ, և Հայ եկեղեցւոյ հաղար տարուան անփոփոխ դաւանութիւնն ու աւանդութիւնը կրնայ ջնջուիլ Սիսի մէջ գումարուած մէկ օրուան ժողովով մը, որ օրինաւորութեան պակաք եղած պայմաններէն ալ զուրկ էր: Իսկ մեծագոյն լինելուն իրր բացատրութիւն ժողովականներուն քաղած եղած ըլլալը կը գնէ հայերէնին մէջ, իսկ յատիներէնին մէջ ժողովականներուն եպիսկոպոսներով և վարդապետներով 56 եղած ըլլալը կը ճշդէ, որ իր տուած կրկին ցուցականելն առաջինին կը պատասխանէ (§ 1230): Սակայն պահ մը իւր յատիներական սկզբունքն ալ կը մոռնայ, որ եպիսկոպոս-

ներէ զատ ուրիշներու վրայ որոչիչ ձայնի իրաւունք չճանչնար. և թիւը մեծ ցուցնելու համար 26 եպիսկոպոսներուն հետ կը խառնէ 30 վարդապետները և վանահայրները և իշխանները, իբրև հեղինակաւոր ժողովական։ Աւելցնենք եւս, որ նոյն ինքն կալանոսի երկու իրարու անյարմար ժողովականաց ցուցակ տալը (ԿԱԼ. 458, 469) այնչափ նշանակելի թերութիւն մըն է, որ նոյն իսկ ժողովին գումարման վաւերականութեանը կը վնասէ և հեղինակութիւնը կը կոտրէ։ Կալանոս որպէս զի ժողովին այժ մը տայ հրամանաբեռան Գրիգորէ Լուսոլիկոսի գումարուած կը մակագրէ (ԿԱԼ. 465), սակայն Գրիգոր ժողով չհրաւիրեց, այլ Հեթումի և Լեւոնի միջնորդեց որ հրաւիրեն, և չհրաւիրած ինքն մնաւ, և ժողովը պարզապէս ընթացքին հրամանով գումարուեցաւ, և ժողովականք ալ կ'ընդունին թէ մեծ և էքսփոսաէր ընթացքն Լեւոն պոլշոճ համբերեցաւ ժողովառնել (ԿԱԼ. 458)։ Ինքը կալանոս ալ կը պարտաւորուի աւելցնել թէ ժողովը հրամանաբ Հայոց ազգային Լեւոնի եղաւ (ԿԱԼ. 455), և չանդրադառնար որ իր պաշտպանած լատինական սկզբունքը՝ օրինաւոր չընդունիր թագաւորական հրամանով գումարուած ժողովը, և եկեղեցական իշխանութիւն կը պահանջէ։ Իսկ Սսոյ ժողովին գումարուած ատեն եկեղեցական իշխանութիւնն ալ կը պակսէր, և ժողովը կաթողիկոս նախագահ չունէր, վանդի Կոստանդին Կեսարացին, որ առաջին կը ստորագրէ, լոկ եպիսկոպոս Կեսարու կերպարանէն աւելի բան մը չառներ վրան (ԿԱԼ. 459), և ոչ իսկ իբր պեղապահ կաթողիկոսական աթոռոյ կը ներկայանայ։ Ուրեմն ոչ միայն հեթոպոն ժողով մը չէ, այլ և ոչ օրինաւոր և վաւերական ժողով մըն է, և պարզապէս անբնական և անկանոն հաւմախմբութիւն մըն է, ուր թագաւորական ճնշման և ազդեցութեան ներքեւ քանի մը ժամուան մէջ, պարզ հանդիսական տօնախմբութեան ձեւով, առանց քննութեան և առանց վիճաբանութեան համակերպուելու կը յայտնուի, որպէս զի ստորագրութեամբ մը ազատին և մեկնին, ետքէն ուզածնուն պէս վարուելու և վերաբերուելու համար։

1236. Աննշանակ ձեւակերպութիւն եղած ըլլալուն մասին դիտողութիւնեխ, պարզապէս մեր մտածմունքը չէ, զի նոյն ատեն ձայն բարձրացուցին Արեւելեան աթոռանեբը, որոց բերնով կը գրէ Մովսէս Երզնկացի վարդապետը, որ կիլիկեցւոց գրոյն մէջ կարդալով թէ Բալմ-Ընէ ժողովքան, կը բողոքէ. Սոսք ասե, կը գրէ, չէ սակաւ էին և ոչ քաղմէ, և զարձեալ թէ պէտ էր յամենայն հայոցանէ առաքել և ժողվել, և անկէ ետքը ընդունիլ, եթէ ամենեւեան հաւանեալ էին։ Որ իրաւունք է այդ, կը գրէ Մովսէս զայրացկոտ չէշտով, ինչնահաճոյ մտաց աներժակ էրել, և գրածնին առ ամենեւեան առաքել ըն՝ ընկալաբուք (ՍԱՄ. 298)։ Ահա թէ ինչ դատաստան ըրած են ժամանակակիցները Սսոյ ժողովին նկատմամբ։ Քանի մը կիլիկեցի եպիսկոպոսներ, հապճեպ գումարուած, առանց կաթողիկոսի, քանի մը ժամուան մէջ որոչում կու տան։ Հայոց եկեղեցւոյ եպիսկոպոսութեան մեծ կէսը ոչ կը հրաւիրուի և ոչ կը մասնակցի, ոչ ոք Սիւնիքէն, ոչ ոք Վասպուրականէն, ոչ ոք Տարոնէն, և միայն չորս անունները, որոց երկուքն ալ ստորագրութիւն տալէ կը խուսափին։ Արդէն դիտեցինք՝ թէ երկրորդ ցուցակին մէջ աւելցուած անուններուը իբրեւ ներկայ հնար չէ ընդունիլ (§ 1231), թող որ եթէ ընդունինք ալ, գլխաւոր եպիսկոպոսներ չեն անոնք, ոչ Յովհաննէս Օրբելեանը Սիւնիքի կողմէ, և ոչ ալ Զաքարիա Խոռոծորեցին, որ այնչափ միտեալ էր Անաւարզեցիին կողմը (§ 1223)։ Մովսէս Երզնկացի կը վկայէ եւս, թէ նոյն ինքն է փեղին քաղմէ հաւաքեցան, ինչ որ ներկաներէն ոմանց ստորագրութեանց մէջ չգտնուելուն առիթով դիտեցինք, և կը յաւելու թէ չէ փախեն եւս հաւաքէին, և տրուած որոչումին մասին կը հետեւցնէ, թէ ալ է ճշմբէք, այլ սոսք է (ՍԱՄ. 298)։ Հետեւապէս կալանոսի խրոխտանքին հետ անհիմն կը դատուին, ուրիշ հռոմէադաւանութեան տեսութիւններն ալ, որ Սիսի Ս. Սոփիա եկեղեցւոյն մէջ 1307 մարտ 19'ին գումարուած ժողովին հեղինակաւոր ժողովի արժէքը կու տան, և անկէ Հայաստանի եկեղեցւոյն հռոմէադաւանութեան անցած ըլլալուն եղրակացութիւնը կը

ԸՆԴՀԻՄԱԴԻՐ ՇԱՐԺՈՒՄ

քազին (ՁԱՄ. Գ. 310)։ Այո՛ կրցան թագաւորն ու թագաւորահայրը իրենց իշխանական և արտաքին ազդեցութեամբ և յուսադիր հրապոյրներով՝ քանի մը եպիսկոպոս ներէ այս տխուր ստորագրութիւն մը կորզել, բայց Հայ եկեղեցւոյ դրութիւնը անով չփոխուեցաւ։ Նոյն իսկ ստորագրողներն ալ տեղերնին դառնալնէն ետքը գործադրութեան չձեռնարկեցին (ՁԱՄ. Գ. 311), և յայտնապէս իսկ մերժեցին (ՄՈՎ. 221)։ Մենք պէտք չենք զգար ուրանալ գրուածին վաւերականութիւնը, և երկբայիլ թէ Անաւարզեցին իսկապէս գրած ըլլայ իրեն վերագրուած նամակները, ինչպէս կասկածողներ կան (ՁԱՄ. Ա. 257), որովհետեւ չատ յստակ են պատմական կապակցութիւնները, և ոչ ալ անկէ հետեւանք մը կրնայ քաղուիլ, քանի որ ինքն Անաւարզեցին հռոմէականութեան համակիր մը եղաւ, բայց պաշտօնապէս հռոմէական չեղաւ (§ 1229)։ Սակ ժողովը գումարուեցաւ և փակուեցաւ մինուճին օրը, 1307 մարտ 19'ին, իսկ չորս օր ետքը, մարտ 23'ին, աւագ հինգշաբթի օր ընտրողական նիստ ըրաւ, և նոր կաթողիկոսը ընտրելու հասատատեց (ԿԱԼ. 452), բայց մենք այդ ընտրութեան չանցած, պէտք է խօսինք Անաւարզեցիին ժամանակակիցներուն վրայ, որոց գործերը պատմութեան ընդհանուր եղելութենէն հետ կապ չունէին։

1237. Կիլիկիոյ արքայազուն եկեղեցականաց կարգին յիշենք նախ Հեթում Ա թագաւորին կրտսեր եղբայր

ԱՐՔԱՅԱԶՈՒՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

Ծովհաննէս եպիսկոպոսը, որ Գռնեցի վանքին առաջնորդ եղաւ, և տէտէ-եղբօր և բռնաւոր կոչումները ինքն ալ իրեն մականքը անուն կը գործածէ (ՀԱԳ. 486)։ Մեծ գործունէութիւն ունեցած չենք եւ իր, բայց ուսումնասէր և գրասէր եղած ըլլալուն նշաններ են իրեն համար գրել տուած գիրքերը, որոց վերջինը 1287 թուականն ունի (ՀԱԳ. 490)։ Իսկ գրական կարողութեանն ալ նմոյշ պէտք է ընդունուի իր թագաւոր եղբօր նուիրած ոտանաւոր դրուագը (ՀԱԳ. 490)։ Մահը տեղի ունեցած է 1289'ին (ՍԻՍ. 556)։ Հեթում Ա իրմէ մեծ եկեղեցական եղբայր մըն ալ ունեցած էր, Սիսի արքեպիսկոպոս և Դրազարկի առաջնորդ Բարսեղը (§ 1105), որ վախճանեցաւ 1275 (ՍԻՍ. 233) ապրիլ 19'ին (ՃԱՍ. Ա. 175)։ Հեթումէ ալ եկեղեցական եղբայր մը ունեցաւ, Ներսէսը (§ 1214), որ լոկ «հոհաննայ կոչումով կը յիշուի, ոչ մի ամուսնացեալ եկեղեցականութեան կը պատկանէր, այլ մի հազիւ նոր քահանայացած 22 տարեկան վախճանեցաւ 1301 մայիս 26'ին (ՍԻՍ. 557), կամ մայիս 7'ին (ՃԱՍ. Ա. 205), քանի երաժիշտի համբաւով, և հետեւաբար Արքակազին վանքի միաբան եղած (ՍԻՍ. 517)։ Արքայական տոհմէն է նաեւ Հեթում պատմիչը, իշխան կոռիկոսի, և Հեթում Ա'ի Օշինի եղբօրը որդին, որ աշխարհի կեանք վարեց, և զինուորական բարձր դիրք և արդիւնքներ ալ ունեցաւ։ Գրական ախորժակով և կարողութեամբ ալ ճոխացած, թէ իրեն համար չատուկ գիրք՝ պատրաստել տուաւ, զորօրինակ տումար մը 1287'ին, և բժշկարան մը 1294'ին, այլ և ինքն ժամանակագրութիւն մը պատրաստեց 1076'է 1296 մինչեւ հասար կատարեալ աշխարհաբար լեզուով (ՀԱԹ. 97-85)։ Կրօնաւորութեան փափաք մըն ալ կանուխէն ծագած էր սիրտին մէջ, բայց Լեւոն Բ-ոյն անդէն Նեփտուրնեան չէր ուզեր ապարպետութեան գործը լքանել, մինչեւ որ 1305'ի չաղութենէն ետքը, չարմար միջոց գտնելով, և որդին Օշինը իր տեղը անցընելով՝ կիպրոս անցաւ, և Պրեմոնսթրատենսեանց (Praemonstratenses) լատին միաբանութեան մէջ մտաւ (ՀԹ. 67), որ Օգոստինեան կրօնաւորներու մէկ նոր ճիւղն էր 1120'ին կազմուած, և բաւական ծաղկած կացութիւն էր ստացած։ Պրեմոնսթրատենսեանց սկզբնական ճգնութեան ձգտումով նկարուած կը տեսնուի Հեթում Բ-ոյի մեծ մատենադարանին մէջ պահուած գրչագիրի մը վրայ։ Հեթում սքեմին հետ Անտոն անուն ալ առած էր (ՍԻՍ. 340)։ Միւս տարին Հռոմ գնաց ուխտի նպատակով; ուստից 1307'ին Աւինիոն անցաւ կղեմէս Ե պապի հրաւէրով, և անոր յանձնարարութեամբ թաթարաց պատմութիւն մը գրեց, ու Ֆուլկոն անուն անձի մը օգնութեամբ գաղղիերէնի վերածեց, որ չուտով լատիներէնի ալ թարգմանուեցաւ, և վերջերս հայերէն հրատարակուեցաւ։ Իսկ Հեթումի հայերէն բնագիրը դէռ գտնուած

չէ (ՍԻՍ. 338)։ Մահուան թուականն ու տեղը յայտնի չէն, միայն կը գիտցուի թէ Գաղղիոյ Փիկտաւիա (Poitiers) քաղաքի վանքը կը բնակէր։ Յայտնութեան մէկնութիւն մը և ուրիշ եկեղեցական գրուածներ ալ ունեցած ըլլալը կը գրուցուի (ՍԻՍ. 339)։

ՄԱՏԵՆԱԳԻՐ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

1238. Ժամանակիս կիլիկեցի վարդապետներուն մէջ առաջին տեղը պէտք է տնօրէն Գէորգ Սկեւռացիին, այսպէս կոչուած իր միաբանութեան վանքէն. բայց Սկեւռացին չատ Գէորգ վարդապետներ եղած ըլլալուն (ՀԻՆ. 708), սա աւելի Լամբրոնացի կը կոչուի իր ծննդավայրին անունով։ Ուստի համար Արեւելեան վանքերը չրջելէն ետքը Սկեւռայ վանքը հաստատուեցաւ, և գրական երկասիրութեանց հետեւեցաւ, որոց մէջ գլխաւոր են Աբուխոպ էլլուրեան գործը՝ Ափիստակէս հռետորի հետեւողութեամբ, և Եսայիի մեկնութիւնը Հերթում Բ'ի խնդրանօք գրուած։ Ունի և Գործոց մեկնութիւն մը և զանազան ճառեր։ Մահը տեղի ունեցած է 1301 յունուար 11'ին, չորեքշաբթի օր, և իրեն վրայ չատ փայլուն յիշատակարան մը և տաղաչափական ողբ մը գրած է, իր աշակերտներէն Մովսէս Սկեւռացի (ՀԱԹ. 504)։ Գէորգի քեռին էր Գրիգոր Սկեւռացի, սա ալ Լամբրոնացի հետ կոչուած ծննդավայրէն առնելով, զոր յիշեցինք Լեւոն Բ թագաւորի մահուան պահուն փոխը գտնուելուն առիթով (§ 1096)։ Գրիգոր ալ գրած է ճառեր և մեկնութիւններ (ՀԻՆ. 716) և Յովհաննու կարապետի Աբեթեանն չարաչանը (ՏԱՔ. 638), բայց իր մահուան թուականը որոշ չէ։ Սկեւռացւոց հետ պէտք է յիշուի Ստեփանոս քահանայ Գոյնեցիացոց, որ եթէ հեղինակ մը չէ, բայց հեղինակներու գործերուն ճարտար և ուղղագիր և անխոնջ ընդօրինակող մըն է, և իր յիշատակարանով մեզացած գրչագիրներ բազմաթիւ են (ՀԱԹ. 503), այնպէս որ անտեղի պիտի չըլլար կարծել թէ ընդօրինակութեան գործատունի մը գլուխն էր։ Ինքն եղած է Գէորգ Լամբրոնացին Աբուխոպ էլլուրեան գիրքը գրելու յորդորողը։ Յովհաննէս Ձկուղ վարդապետ մըն ալ կը յիշուի 1293 տարին, որ թէպէտ միայն մէկ համառօտ ոտանաւորով յանօթ (ՍԻՍ. 154), սակայն նոյնը իրաւունք կու տայ այդիւնաւոր մէկը ճանչնալ զինքն։ Ձիշնէք և Մովսէս Երզնկացի վարդապետը, որուն անունը արդէն անգամ մը տուինք Սսոյ ժողովին մասին ըրած քննաղատութեան առիթով (§ 1236)։ Երզնկացի մականունը առած է տովորաբար, թէպէտ ընիկ Դարանաղեաց Անի քաղաքէն էր, որ է այժմեան Կամախը. Ներսէս քահանայի մը զաւակ, և ազգա- մեծաւոհմ և երեւելի։ Զօրաւոր ախոյեան մը եղաւ հայադաւան ուղղութեան երեք ժողովներու հիման վրայ հաստատուած, Ոսկիբերէն գիրք մը, և Պատարագի մեկնութիւն մը, և չատ թուղթեր ու ճառեր գրեց, և պայծառացուց Սեպուհի վանքերը։ Կեանքը երկարեցաւ մինչեւ է Խոլին հասնիլ Յերուսաղէմ (ՀԱԹ. 508), և վախճանեցաւ 1323'ին ինչպէս կը դնէ Անեցիին չարունակողը (ՍԱՄ. 167), և ամսաթիւով մայիս 28'ին, ըստ ի վիրապէ տօնին (ՀԱԹ. 509)։ Մովսէսի պէս վերի յիշուած վարդապետներն ալ, Անաւարզեցիին ծրագիրին պաշտպաններէն չեղան, թէպէտ ոչ ամէնքը Մովսէսի համարձակ դիմադրութիւնն ունեցան։

ՆԵՐՍԷՍ ՄԵԾԻ ՆԵՒԱՐՔԸ

1239. Նշանաւորագոյն է ժամանակակիցներուն մէջէն Յովհաննէս Երզնկացի վարդապետը, իր գրիչին ներքեւ Եզնկայեցի դրուած, Երզնկա ծնած չուրջ 1250'ին։ Երզնկացին կոչուած է նաև Մոծոծեցի, երկար ատեն Արտազ գաւառի Մոծոծոր վանքին մէջ ապրած ըլլալուն համար, Գաղթէկ՝ իր գրած ներդաչնակ երգերուն ու չարականներուն համար, Գլուխ՝ ըստ ոմանց կապոյտ աչուի ըլլալուն (ՉԱՄ. Դ. 271), բայց աւելի հաւանարար մանրուկ և կարճահասակ ըլլալուն համար (ՀԱԹ. 514), և Մաշտէնց՝ (ՀԱԹ. 513) որուն ոչ միայն պատճառը այլ և իմաստն ալ անծանօթ կը մնայ։ Առաջին ուսումնքն Սեպուհի վանքերը առնելով, լրումը ուսաց վարդան վարդապետի մօտ Կայէնի վանքը (§ 1141), ուսկից նորէն իր հայրենիքը դարձաւ։ Ս. Ներսէս Պարթեւ հայրապետին նչխարաց յայտնութիւը, Երզնկացիին առաջին անգամ փայլելու առիթը ընծայեց, և այս առիթով գրեց գիւտին պատմութիւնը,

և սրբոյն պատուոյն ներքողեան մը (ՍՈՓ. Է.) և գեղեցիկ չարական մը (ՇԱՐ. 434)։ Այդ գիւտին պատմութիւնը անցողակի միայն յիշած ենք Ներսէսի մահուան առթիւ (§ 155), և աւելորդ չենք սեպեր քանի մը խօսք եւս աւելցնել։ Եկեղեաց Թիլ աւանը, ուր էր Ներսէսի գերեզմանը (§ 155), աւրուած էր զանազան արկածներու երեսէն և գերեզմանի տեղն ալ անյայտացած, բայց վանք մը կը մնար այնտեղ։ Պատուական անուն սարկաւագի մը, յունուար 26 հինգշաբթի օր մը, առաջին անգամ տեսիլքի մէջ գերեզմանին տեղը կը ցուցուի (ՍՈՓ. Է. 47), յաջորդ գիշեր յոթամ ոքթեն լոսանայք (ՍՈՓ. Է. 48) տեսիլքը կը կրկնուի, և երբ վանականներուն կը հաղորդէ, կ'որոշեն երրորդ տեսիլքի սպասել, ինչ որ տեղի կ'ունենայ միւս գիշեր, յոթամ ինալթեն լոսանայք (ՍՈՓ. Է. 49)։ Ասոր վրայ Թիլայ վանքին առաջնորդ Ներսէս վարդապետ կը դիմէ երզընկայի արքեպիսկոպոս Սարգիսի, որոյ որդին Յովհաննէս քաղաքին իշխանն էր, և ցուցուած տեղը բացուելով Ներսէս Մեծի ամբողջ մարմինը կը գտնուի կրմած փոխ ծածկուած, քաղցել յոխա ձեւի մէջ (ՍՈՓ. Է. 52), օրն էր՝ ոսա ֆեբրուարէ ամայ (ՍՈՓ. Է. 5)։ Սարգիս եպիսկոպոս մեծ հանդէսով նշխարքները ամփոփել կու տայ Տիրաշէնի վանքը, ալը առանձին քաղաքին եկեղեցին կը դնէ, և գլուխը ժողովուրդին բարեպաշտութեան կը թողու, յատուկ և հարուստ մատնաւուփներ ալ պատրաստել տալով։ Այդ գիւտին թուական ցուցուած է Քրիստոսի ծնունդէն 1275 տարի, Լուսաւորիչէ 968, Ներսէսի մահէն 872 (ՍՈՓ. Է. 45), և Արշակունեաց իյնալէն 824 (ՍՈՓ. Է. 39), Հայոց թուական 721, Յակոբ Կայենցի կաթողիկոսին, և Լեւոն Հեթումեան թագաւորին օրով (ՍՈՓ. Է. 45)։ Բայց այս թուականները դժուարաւ կրնան իրարու հետ հաւասարուիլ, ինչ որ հին ժամանակագրութեանց անճշդութեան հետեւանք է։ Քրիստոսի 1275 տարին, Հայոց 724'ին և ոչ 721'ին կը համապատասխանէ, և յունուար 26 հինգշաբթի մը՝ 1273'ին կը հանդիպի, որով փետրուար 1, դիւտի օրն ալ չորեքշաբթի կ'իյնայ։ Թէպէտեւ այս տարբերութիւններէն մին կամ միւսը նախադասելու զօրաւոր պատճառներ կը պակսին, բայց յարմարագոյն կը սեպենք 1273 թուականը ընդունիլ, երբ Երզնկացին դեռ նորահաս երիտասարդ էր չուրջ 23 տարեկան։ Երզնկայի Սարգիս եպիսկոպոսի մը անունը 1307 տարւոյ ժողովին յաւելուածական ցուցակին կարգը անցած է (§ 1177), սակայն նա վերոյիշեալ Սարգիսը չկրնար ըլլալ, որ որդւոյն Յովհաննէս իշխանին հետ 1276'ին անպատճառ մահուամբ սպանուած էն (ՀԻՆ. 756)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ

1240. Յովհաննէս Երզնկացիի գործունէութեան դառնալով, 1280'ին առեններդը Երզնկայի վանքերուն համար կանոն և սահման կը պատրաստէ, 1281'ն երուսաղէմ ուխտի կ'երթայ, դարձին Յակոբ Կայենցի կաթողիկոսին կ'այցելէ Հռոմկլայ, զոր կը կոչէ հեգինալ հոթոց և հանճարոյ խոտորումեամբ, վրէժ ապստամբելոնէ էրոց, աննախանձաբար սէրոլ և պատրոզ սատանոյէրոց (ՍՐՋ.)։ Երզնկացի այնտեղ կը մնայ իբր ուսումնարանին վերակացու, և կաթողիկոսին հրամանով կը սկսի պատրաստել իւր մեծ երկասիրութիւնը, որ է Մեկնութիւն եբեհանէ (ՀԱԹ. 509), որ հայերէն լեզուի վրայ նշանաւորագոյն աշխատութիւնն է։ Սակայն լրումը 1293'ին է եղած (ՍԻՍ. 549)։ Միսի մէջ յատուկ առենաբանութիւն մըն ալ խօսած է 1284'ին, Հեթում ու Թորոս արքայորդիներուն ապահատական աստիճան բարձրացած օրը (ՀԻՆ. 757։ Միեւնոյն տարին եղած է Տփղիս (ՀԱԹ. 512), ուր պատրաստած է Յաղթս երէնայէն ղաբխմանց գիրքը, վախթանկ Ումիկեան իշխանազունին հնդրանքով և Յովհաննէս եպիսկոպոսի մը յորդորներով (ՀԻՆ. 761)։ Որոշ չենք գիտեր թէ երբ Տփղիսէ Արտազ անցաւ Զաքարիա Մորթոռեցիի մօտ, և թէ ուր տեղեր պտտեցաւ մէկ տեղէն միւսը անցած առեն, միայն գիտենք, թէ երկար տեւեց Մորթորի վանքը մնալը, Մորթորեցի մականունը առանալու չափ։ Այն տեղ էր 1307'ին Սսոյ ժողովին առենը, բայց ոչ Զաքարիա և ոչ Յովհաննէս չեն ուղած Սիս գալ, որչափ ալ Զաքարիա համակիր մըն էր Անաւարզեցիի ծրագիրին, և Յովհաննէս ալ հետաքրքրուած ուսումնական առաւելութեանց ծանօթանալ, և անոնցմով զարգանալ։ Մորթորի

մէջ գրած է 1316'ին (ՀԱՁ.513) Մատթէոսի աւետարանին մեկնութիւնը, զոր պատրաստած է իբր չարունակութիւն և լրումն Շնորհալիին թերի թողած աշխատութեան (988), իսկ թերի մնալուն պատճառը ինքն Երզնկացին ալ չէ գտած (ՀԱՁ.512)։ Մեր տեսութեամբ հաւանական չէ որ Երզնկացին 1309'ին Առանայի ժողովին ներկայ ըլլայ, ինչպէս իր կարգին դիտել պիտի տանք։ Երզնկացիին ուսումնասիրութիւնը փափաքը դինքն մօտեցուց Դոմինիկեան լատին կրօնաւորներուն ալ, որոնք սկսած էին տարածուիլ Հայաստանի մէջ, և 1318'ին եպիսկոպոսներ և եպիսկոպոսարաններ ալ ունենալ սկսած էին։ Երզնկացիին կը վերագրուի՝ միջնադարեան լատին աստուածաբաններուն նահապետ սեպուած Թովմաս Ակուինացիին գործ՝ բէն մէկ մասին լատիներէնէ հայ՝ բէնի թարգմանութիւնը (ՀԻՆ.758)։ Երզնկացիի կեանքը մինչեւ 1326 երկարաձգուեցաւ հաւանաբար (ՀԻՆ.754), սակայն չարունակ Մոր ծոր մէջ մնացած պիտի չըլլայ։ Ժողովրդական աւանդութիւն մը անոր անունը կը կցէ 1319 տարուոյ մեծ երկրաշարժին, որուն մէջ Անի ալ մեծապէս վնասուեցաւ, թէպէտ տակաւին անբնակ չըքնաւեցաւ (ԵՓՐ.Ա.182)։ Ջրոյցը կը պատմէ թէ Երզնկացին Անի եկած էր ապաշխարութիւն քարոզելու, իսկ քաղաքացիք կը ծաղրէին զայն, նոյն իսկ եկեղեցականներ յետին տղին կու տային եկեղեցւոյ մէջ, և բարձր դրակալ կը դնէին տակը, մինչ նա կարճատակ էր։ Երբոր ժողովուրդը իր խէնիչ կեանքին չէր պատրաստ, ահ սոսկէ և գազաններու վտանգներ ժողովուրդը կը կոտորէին, որոնցմէ ազատելով ժողովուրդը զղջումի կու գար։ Բայց երեք տարիէն նորէն առջի անառակութեանց կը դառնար։ Երզնկացին նորէն կու գայ ապաշխարութիւն քարոզելու, բայց Անիցիք վերահաս չարիքներու պատճառ նկատելով զայն, թմբրափղով կը մարեցնեն, և մերկացնելով քաղաքին մէջ կը պտտցնեն, և գամբիւղի մէջ դնելով աւազ եկեղեցւոյ դուռը կը կախեն, մինչեւ սպառի, ուսկից հոգը ջրածեծ ոջիլներ կ'ափսորեն, սպառնալով որ չդառնայ։ Ասոր վրայ Երզնկացին բարձր բլուր մը հելլելով քաղաքը անիծած կ'ըլլայ, և իսկոյն երկրաշարժը կը սկսի (ՀԱՁ.515)։ Որչափ և պարզ զրոյց մը, բայց հարկ սեպհականք յառաջ բերել իբրեւ ժամանակին զգացումի՝ բուն նմոյշ։ Ընդհակառակն երզնկացիին նկարագիրն ու հոգին յայտնի կը լինի անով, որ ուրիշներ իրենց յիշատակարաններուն մէջ անէծքներ և նզովքներ կը գրեն, նա կը բաւականանայ ըսել։ Որ ծոլանայ և ծուլ, ալ լեցի ասանց պատճոց, (ՀԱՁ.512)։ Երզնկացին սովորաբար Մոր ծորի վանքը մնաած և թաղուած կը կարծուէր, այլ Սրուանձտեան անոր գերեզմանաքարը տեսեր է Երզնկայի Ս. Նշան եկեղեցին, առաջնորդական աթոռին ներքեւ (ԹՈՐ.Բ.50)։

1241. Երզնկացիին ոչ միայն ժամանակակից, այլ և կրտսեր աշակերտակից եղած է Եսայի Նչեցի վարդապետ, և Վարդան վարդապետ Նշեցի՝ որ մահուընէ ետքը դարպացած է Ներսէս Տարսնեցի վարդապետին մօտ, որ Մշոյ Առաքելոց կամ Ղազարոս վանքը հաստատուած էր։ Եսայի Սասունցի էր Նիչ աւանէն, և Տարսոնոյ մէջ Ն՛ըսէսի մօտ զարգանալէն ետքը՝ նորէն դարձաւ Սիսնիքի կողմերը, և հաստատուեցաւ Գայլձորի վանքը, և մեծ համբաւ ստացաւ իբրեւ վարդապետաց վարդապետ, այնպէս որ մինչեւ 363 կը հանէին իրեն հասուցած աշակերտներուն թիւը (ՁԱՄ.Գ.316)։ Ն՛ըսէսի ալ գրեց քերականի և մարգարէաբանից մեկնութիւններ, ինչ որ ժամանակին վարդապետներուն գլխաւոր նեցուկն էր իր՛ենց գլխաւոր աշխատութեանց համար։ Այդ աւետարանները տակաւին կ'ընդարձակուէր Դոմինիկ՛ան լատին կրօնաւորներուն ազդեցութիւնը Հայաստանի մէջ, որ օտար լեզուի հետ Արեւելքի անձանօթ դրպրոցական ուսմանց ասպարէզը կը բանային Հայերուն առջեւ, և աստնք ալ իրենց բնական անյագ տենչանքով համարձակ կը մանէին որեւէ դարձացման օգնող դուռներէն ներս, նոյն իսկ չատ անգամ առանց դիտելու թէ ուր պիտի տանէր զիրենք ընդգրկած ճամպարնին։ Ասկէ ծագեցաւ Լատինաց հետ միաբանելու հոսանքը, որ աւելի լատին բառով կը յիշուի պատմութեան մէջ, Ունէթոր (Unitor) և Ունէթորիէն անուններով։ Լատիններ նախապէս հաստատուած էին Պարսկահայոց սահմաններուը, իրենց կեդրոն

ունենալով Սուլտանիա քաղաքը, և անոր հնազանդ յառաջացան դէպ հիւսիս, և իրենց կեդրոն ըրին նախիջեւանը, Միւռիքի Ջահուկ գաւառը, ուսկից ծագեցաւ ունիթորական Հայերու Ջահկեցի անունը։ Անաւարզեցիին ժամանակը տակաւին այնչափ զօրացած չէր ունիթորական չարժումը Սիւնիքի մէջ, թէպէտեւ սկսած էր յատինական գործունէութիւնը։

1242. Այստեղ պէտք էր առանձինն խօսիլ Ստեփանոս Օրբելեան մետրոպոլիտին վրայ, որ գարուս նշանաւորագոյն դէմքերէն մին եղաւ, սակայն պատմութիւնս կարգին հետզհետէ առջեւ բերելով անոր գործունէութիւնը ու կեանքը, և պէտք չեմնար նորէն անդրադառնալ։ Իր գլխաւոր երկասիրութիւնն է Պատմութիւն Նահանգին կամ Տանն Սիւնեաց, որուն մէջ վիճակագրական տեղեկութիւններ ալ խառնած է։ Շինարար եպիսկոպոս մըն ալ եղած է՝ Սիւնեաց վանքերն ու եկեղեցիները ծաղկեցնելով, զորս ինքն իսկ կը նկարագրէ (ՕՐԲ. Բ. 231—245), և որոց գըլխաւորներն են, Տաթեւի երրորդ չինութիւնը, Նորավանքին նուիրած Գլինայ խաչը, Ծակուտքարի կալուածը, Ջուայ գիւղը, և Արատեսի վանքին ընծայուած թիւերը։ Իր նուէրները յաճախակողներուն կարդացուած անէծքներուն մէջ նկատողութեան արժանի են այլազգիներուն մասին ըսուածները, որ ներ Տ-ծոյն եչխանութիւն ֆոխէ, և նա նէնգել և բանբասել խոհէ, յԱփոխոյ և յէր Մահմեթեն ոչխար լիցի, և իր հալալն հարամ եղիցի. և հարիր հաղար նալմն է վիրայ նորա և ոչխէն նորա և ըռակոց նորա եղիցի (ՕՐԲ. Բ. 240)։ Օրբելեանի մանուան պարագաները չեն յիշուած պատմութեանց մէջ (§ 1221)։

1243. Այդ միջոցին նահատակուած նոր վկաներէն է Գրիգոր Բալուեցի վարդապետը, որ առաջ ամուսնացեալ քահանայ է եղած, բայց երկու տարիէ այրի մնալով կ'երթայ աշակերտիլ վարդան վարդապետի մօտ Խորվիրապի և Կայէնի վանքերը, և վից տարի նոքա վարդապետական գաւազան ստանալով Բալու կը դառնայ, և Ս. Յակոբի վանքը հաստատուելով, քաղաքին և չրջակայից մէջ քարոզութեամբ կը զբաղի, ընդհանուր յարգանքի արժանանալով։ Գրիգոր Խարբերդ կը գտնուէր 1289'ին, երբ քաղաքը Եգիպտացիներէն յարձակում կրից, ու քաղաքին Խաբանդ իշխանին եղբայրը գերի տարուեցաւ։ Իշխանը իւր խորհրդակիցներով մտածից քրիստոնեաները բռնադատելով եղբօրը փրկանքը անոնցմէ հաւաքել։ Այս նպատակով չուն մը սպաննել կու տայ, և մղկիթին դուռը կը կախէ ու քրիստոնեաները ամրատանելով կը ձերբակալէ վարդապետն ու 45 այլ պատուաւոր է հալէպէն (ՆՈՐ. 119)։ Ասոր վրայ կը սկսին բռնադատութիւններ, որոնք իսլամութիւն ընդունելու պայմանին կը յանգին։ Վարդապետը համարձակօրէն կ'ընդդիմանայ, սպառնալիքները կ'անարգէ, այս պատճառով գանակոծութեամբ կը փորձուի, և 300 հարուածներու կը տակայ։ Իրեն հետ բռնուած կ'ըլլան իւր երկու աշակերտները Սիմէոն ու Կիրակոս, իրր վարդապետին գործակիցներ, և հարուածներու ներքեւ կը մնանին։ Կ'ուզեն միւս բանտարկեալներն ալ տանջել, այլ Թաթխաթա անուն զօրապետը դէմ կը դնէ և կ'ազատէ. իսկ վարդապետը քարկոծմամբ կը նահատակուի խառնիճաղանճին ձեռքով։ Նահատակութեան օրը նչանակուած է 1290 փետրուար 10 ուրբաթ, և Հայոց 739 տօմարի 4 չարժական տոմարով, որ ուղիղ կը պատասխանէ. միայն թէ այդ տեսակէտները կը պատասխանեն ուրբաթ օրուան, յորում Գրիգոր նահատակուեցաւ, և ոչ յաջորդ չաբաթ օրուան յորում մարմինն վրայ յայտ ի տեսնուած (ՆՈՐ. 117)։ Նոյնպէս ուղիղ չգար յիշեալ չաբաթ օրուան համար է ածէ ոչ Աբբան Սարգիս բուսիլը, վասնզի 1290 փետրուար 11 չաբաթ օր կատարեալ տարին ժողովին տօնը կը տանդիպի, և ոչ Ս. Սարգիսի։ Կ'երեւի թէ չփոթը յառաջ եկած է Ս. Սարգիսի պահքին չորեքշաբթի օրը բանտարկուելէն (ՆՈՐ. 110), և նահատակութեան ուրբաթի՝ անմիջապէս վրան եկողը կարծուած է, մինչ երկու չաբաթ, և ոչ երկու օր տեւած է Գրիգորի և ընկերներու բանտարկութիւնը և ուրացութեան բռնադատութիւնը։ Իրօք ալ տեղւոյն վրայ մէջ երկարել այդ տեսակ փորձութիւնները։ Բալուեցի նահատակ-

ներուն վկայաբանութիւնը գրողն եղած է Գրիգորի քեռորդին Դաւիթ Բալուեցի քահանան (ՀԱՑ. 117)։

1244. Ժամանակակից նահատակի մըն ալ յիշատակութիւնը կը գտնենք Սիւնեաց նահանգի վայոցձոր գաւառի ,Շատիկ վանքին մէջ, 1291 թուականով։ Արձանագրութիւնը կը գտնուի Ընգեղի մատուռին մէջ, թէ ընտրեալ սուրբ նահատակ, ընտրեցաւ Պլճնոյ յաղթ յիշէցէ, կնքաւ մխիթարն, ուր յայտնի

ԿԻՐԱԿՈՍ ՇԱՏԻԿՑԻ

չէ թէ կիրակոսը՝ նահատակն է, թէ նորոգողը։ Բայց որովհետեւ ուրիշ տեղ մատուռը Սուրբ Կիրակոս անունով կը յիշուի (ՍԻՆ. 160), նահատակն ալ կիրակոս անուանելը սովորութիւն եղաւ (ՆՈՐ. 119), և աւանդութեամբ կը յիշուի թէ պատարագելու ատենը սպանուած է։

Տ. ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ. ԿԵՍԱՐԱՑԻ 1307-1328

1245. Գրիգոր Է Անաւարզեցի կաթողիկոսին մահուընէետեւ (§ 1229), պէտք էր որ առաջին գործը նոր

ԿԵՍԱՐԱՑԻՆ ՀԱՅՈՑԿԵՑԻ ՉԷ

կաթողիկոսի ընտրութիւնն ըլլար, սակայն Հեթում-Ճոլհաննէս կրօնաւոր-թագաւորանայրը զայն յետաձգել տուաւ, և նախապէս աչխատեցաւ Անաւարզեցիին հետ պատրաստուած ծրագիրին պաշտօնական ձեւ տալ։ Կ'երեւի կասկածեցաւ թէ իրեն ոչ-համակիր կաթողիկոս մը կրնայ ընտրուիլ, և կանխեց աթոռոյ պարապութեան միջոցին իւր քաղաքական ազդեցութիւնը չհանգուցելէ, և ապագայ կաթողիկոսութեան յաւասդրութեամբ Կոստանդին կեսարացիի աջակցութիւնը ապահովել, որ նախապատիւ դիրք ունէր նէրկանեցւոց մէջ։ Այս եղաւ 1307 մարտ 19'ի միաբեայ ժողովին նչանակութիւնը, որուն վրայ արդէն խօսեցանք (§ 1235)։ Երրոր Հեթում ու Լեւոն իրենց մտադրութիւնը իրագործած կարծեցին, այն ատեն միայն կաթողիկոսութեան յաջորդութիւնը ձեռք առին, և կամակատար եպիսկոպոսներու ձեռքով, նոյն իսկ աւագ հինգշաբթի օր ,1307 մարտ 23'ին, խորհրդաւոր պաշտամանց մէջ կաթողիկոսական օծում կատարեցին Կոստանդին կեսարացիին վրայ (ԿԱԼ. 452), որպէսզի զատիկին օրը կաթողիկոս ունեցած ըլլան։ Կ'երեւի թէ աւագ երկուշաբթի և երիքշաբթի և չորեքշաբթի օրերը պատարագի կանոն չըլլալուն՝ հինգշաբթիի սպասած են օծումին համար։ Այս տեղ ալ առաջին անգամ նկատելիքնիս կեսարացի Կոստանդինին անձնաւորութիւնն է, որ ինչպէս կանխած ենք ցուցնել կատուկեցիէն տարբեր մէկ մըն է (§ 1169)։ Արդէն զանազան առիթներով ալ մեր այդ կարծիքը լուսաբանեցինք, Սկեւռայի սրբարանին կամ նչխարանոցին արձանագրութիւնը բացատրելով (§ 1199), և Անաւարզեցիին կողմէ Սիւնիք գացող Կոստանդինին ինքնութիւնը ճշդելով (§ 1216), բայց այս տեղ ուրիշ բացատրութիւններ եւս յարմար կը դատենք աւելցնել։ Սմբատի չափաւոր տարեգրողը պարզապէս կը դնէ. Մեծաւ փեր Գրիգոր կաթողիկոս, և զբին ջեր Կոստանդին կեսարոյ (ՍՄՐ. 127), կալանոսի պատմագիրն ալ կը գրէ. Եպա յետս կաթողիկոսութեան փեր Կոստանդին, որ էր եպիսկոպոս մայրաքաղաքին Կեսարոյ (ԿԱԼ. 452)։ Դավրիժեցին ալ կը դնէ, Տէր Կոստանդին Կեսարացին հերձուածող (ԴԱՎ. 335), առանց ուրիշ յաւելուածի, և իրեն կը հետեւի Երեւանեցին, պարզապէս Տէր Կոստանդին հերձուածող գրելով (ՋԱՄ. 17)։ Այդ գրողներէն առաջիններն որ ժամանակով չատ մօտիկներ են ,ոչ Պրօնագործ կոչուիլը և ոչ կատուկեցի ըլլալը կ'աւելցնեն ,որով Կոստանդին Բ կաթողիկոսի հետ նոյնանձ ըլլալուն նչան չեն տար։ Առաջինը մահուանը առիթով ալ, Տեսաւ փեր Կոստանդին Կեսարացին կրօնաւոր (ԿԱԼ. 458), և Կոստանդին եպիսկոպոս Կեսարոյ

(ԿԱԼ.469), և քնաւ ակնարկ չունի, թէ սա նոյնինքն երբեմն կաթողիկոս եղած անձն էր, ինչ որ իւր նպատակին ոյժ տալու համար կարեւոր պարագայ պիտի ըլլար։ Միւս կողմէն Օրբելեան մեզի մատնանիշ կ'ընէ, կոտանդին եպիսկոպոս Կեսարու անունով՝ Անաւարզեցիէն նաւէրակ ևկող անձը (ՕՐԲ.Բ.196), որ անհնար է թէ նախկին կաթողիկոս կատուկեցին ըլլար (§ 1216)։ Հետեւաբար Անեցիին չարունակողին յաւելուածը, որ ենոյն գրոնգոբն կոպոնկեցի, ատոթելն է Հերմոյ (ՍԱՄ.155), բոլորովին անհիմն և ինքնահնար բացատրութիւն մըն է, զոր պատմական պահանջը, և ժամանակագրական հաստատութիւնն ալ չկրնար ոչ մի կերպով յարմարցնել գործոց ընդհանուր ընթացքին հետ։ Եթէ երբեք կեսարացին նոյն ինքն կատուկեցին ըլլար, արդէն գործի գլուխ անցած և Սսոյ ժողովին մէջ նախաթոռ բազմած վայրկեանէն, իբր կաթողիկոս ճանչցուած պիտի ըլլար, և ոչ ալ հնար պիտի ըլլար արդէն օծեալ կաթողիկոսը ժողովէն ետքը կրկին օծել։ Այդ դիտողութիւնները մեզի համար այնպէս վճռական են, որ չենք կրնար ըմբռնել, թէ ինչպէս Ջամչեան մտադրութիւն չէ ունեցած այդ կէտին, և երկրորդած է Անեցիի չարունակողին յաւելուածը (ՋԱՄ.Գ.311), և իրեն հետեւած է Շահխաթունեան (ՇԱՀ.Ա.207), Անաւարզեցին չարքին դուրս ձգելու չափ, ինչպէս չատերու հետ, նաեւ Ալիշան (ՍԻՍ.557), և Մխիթարեան (ԱՒԼ.133) և Մովսիսեան (ՄՈՎ.221)։ Իսկ Ջամչեան վերջերս ընդունած է տարբերութիւնը (ՋԱՄ.Ա, 257), զոր մենք կանուխէն հրատարակութեան տուած էինք (99 ԱՐՐ.494, և 09 ԼՈՒ.ՆՈԳ.46), և կը կարծենք թէ այդ կէտը այլեւս ինդրոյ նիւթ չկրնար ըլլալ։

ԿԵՍԱՐԱՑԻԻՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

1246. Կոստանդին կեսարացին, և ոչ նա կատուկեցին, կրնայ իրաւամբ կոչուիլ, սակայն ապրեցայ է Սիս (ՍԱՄ.152), վասնզի նա առաջին անգամ, թէ ոչ կատարեալ, գոնէ կէս-պաշտօնական ձեւով՝ հռոմէադաւանութեան հետեւող մը եղած է։ Արդէն Սիսնիքի պատգամաւորութիւնը կատարած ժամանակէն, Անաւարզեցիին կատարեալ համամիտ մը յայտնուած էր, երբ անոր ծրագիրը յաջողցնելու համար Սուիփանոս Օրբելեանի մօտ կ'երթար, և ալ կարէր յանձն առնուլ պատասխանի ընդունիլ (ՕՐԲ.Բ.196), որ իրեն միտքին համաձայն չէր։ Հաւանաբար նոյն ինքն էր վերջին երկար պատգամաւորութիւնները կատարողը (§ 1216), և վերջէն Սսոյ ժողովին մէջ նախաթոռութիւն վարելով, նոյն ծրագիրին պաշտօնական ձեւ տալու աչխատած էր (§ 1235)։ Անաւարզեցին որչափ և հետամուտ, միշտ ժողովի պէտք կը զգար, իսկ ժողով չկրցաւ կազմել (§ 1229), և անձնապէս ինչ ալ խորհած կամ ծածուկ գործադրած ըլլար, իւր միտքը ո՛չ պաշտօնապէս հռչակեց, և ո՛չ յայտնապէս գործադրեց։ Կեսարացին հղաւ, որ Սսոյ որոչումները իրեն ուղղիւ ընդունեցաւ։ Գրուած է, թէ նախաթոռն Լեւոն, և նախաթոռահայրն Հերոմ, այլ և էչխանէն Հայոց, ինդրեցին ի սմանէ, զի նովիմբ կանոնս պատրաստեցէ նոցա անխափան (ԿԱԼ.452)։ Սակայն խնդրելու իսկ պէտք չկար, զի կեսարացին կազմ պատրաստ էր պաշտպան կանգնիլ Սսոյ ժողովի որոչումներուն, որ գրեթէ իւր գործը եղած էին։ Միայն դիտելու է, որ պալատականներն են Սսոյ գործին բուն պաշտպան կանգնողներ, եպիսկոպոսներու խօսքը չկայ այլ եւս։ Սսոյ ժողովին ամենաջերմ պաշտպաններն ալ կը խոստովանին, թէ եպիսկոպոսներ չհամաձակեցան ամէն տեղ գործադրութեան մրցնել անոր կանոնները, թէ վանքերու մէջ ինկաւ ղղլէն մեծ, և ժողովուրդին մէջ պղտոկ ղեղնի, և Սսոյ կանոնները ունեցան խաֆանոճ ֆոթճաղնեան, և թէ անունք պղտըեւ, քայց եղեռ է Սիս միայն կը պահուէին, և էրնճէլէն կը տարածուէր ամենուրեք, և թիչ նամութիւններ կը զօրանային Հերոմի և Լեւոնի և Կոստանդինի դէմ (ՋԱՄ.Գ.311)։ Կոստանդին Արեւելեաններուն ալ յանձնարարութիւններ ըրաւ Սսոյ ժողովին որոչմանց համակերպելու, Գրիգոր եպիսկոպոս մը կամ վարդապետ մը նուիրակ հանելով, սակայն Յովհաննէս Օրբել՝ Սիւնեաց մետրապոլիտ, և Սուիփանոս եպիսկոպոս և Դաւիթ և Եսայի վարդապետներ, այլն ամենայն վրդովեցաւ և վանեցաւ, չընդունեցան և կաթողիկոսին բացատրական նամակ ալ գրեցին, գլխաւորապէս բաժակի ջուրին և մը-

նունդի տօնին վրայ ծանրանալով (ՏԱՇ. 182)։ կաթողիկոսին անունը լոկ կոստանդին է յիշուած, որ նոյն ինքն կեսարացին է, զոր Տաչեան ալ տարածուած թիւրիմացութեան հետեւելով կաւուկեցի պրօնագործին վրայ կը մեկնէ (ՏԱՇ.1103)։ Վերեւ Սոյ ժողովին դօրութիւնը բացատրած առիթնիս յայտնեցինք անոր ներքին թերութիւնները, և հին կանոնական ժողով մը եղած չըլլալը ցուցուցինք (§ 1235), հետեւանքներն ալ կը հասատտեն թէ մեռեալ տառ եղան անոր որոշումները, որով ոչ միայն է նախընթացն, այլ և է հեթէոդոքսն անզօր և աննշանակ եղած րլլալը կ'ապացուցուի։

ՀԵԹՈՒՄ ԵՒ ԼԵՒՈՆ

1247. Սակայն այդ անպէտ ձեռնարկները չարագուշակ հետեւանքներ առաջ բերին ազգին վրայ։ Թաթարներու և Եգիպտացիներու թշնամութիւնները վերջացած չէին, և առաջինները պէտք ունէին միշտ իրենց սահմաններուն վրայ հսկել, և Եգիպտացիներուն դիմադրել Հայերու նիզակակցութեամբ։ Երբոր Սիսի մէջ կաթողիկոսական և ժողովական գործողութիւնները կը կատարուէին, Թաթարներու նոր գունդ մը կը ղրկուէր Վարբանթա խանին կողմէ (§ 1227), Պիլարդու կամ Բիլարդու զօրավարի մը հրամանատարութեամբ (ԴԱՐ.24), որ ըստ այլոց կիլիկիոյ մօտերը նստող Թաթար բանակին զօրապետն էր (ՉԱՄ.Գ.311)։ Թաթարներ և Հայեր իրարու բարեկամ և նիզակակից էին, և Պիլարդու Հայոց թագաւորութեան թշնամի չէր կրնար րլլալ. հետեւաբար իրր անլուծանելի առեղծուած մը կը մնայ՝ Պիլարդուի և Հայերուն մէջ ծագած թշնամութիւնը, դաւաճանութեան հասնելու չափ։ Հեթումի ժամանակագրութեան վերջը դրուած յաւելուածական ծանօթութիւնը, որ Հեթումի չկրնար րլլալ, դարձեալ կ'ըսէ, առանց պատճառ ցուցնելու (ՀԵԹ. 86)։ Սիսի մէջ Թաթարներուն կողմէ մզկիթ մը չինելու Հայոց ընդդիմութիւն ցուցնելը (ՍԻՍ.222), այդպիսի մեծ դաւաճանութիւն դրգռելու պատճառ չէր կրնար րլլալ։ Անեցին չարունակողը Պիլարդուի կը վերագրէ Հայերը խորամանկութեամբ՝ էքբե՛ն իբրեւ թէ Հեթում ինչն կոչած րլլալու դաւաճանութիւնը, և կը յաւելու, թէ երբ Հայերը հասան՝ չբե՛ն իբրեւ և ապան ջանեցին։ Իսկ Քշնամութեան պատճառ կը ցուցնէ թէ Խերէ վկէլկէ չինէն չեֆշակէլ (ՍԱՄ.156), Դարձել ալ Անարզաբան գրաւ'լու նպատակը մշլամշող կը դնէ, բայց ոչ թէ Հայերը առինքն կոչելով, այլ անտուկներու մէջ հարիւր զինեալներ դնելով, և անտուկները իրրեւ ընծայ ներս մտցնելով, բերդին մէջ սպանուած կ'ըսէ Հայերը (ԴԱՐ.24)։ Մեր տեսութեամբ Թաթար զօրավարը բարեկամ թագաւորութիւն մը ջնջելու նպատակ չէր կրնար ունենալ, իսկ Դարձէլի գրած ձեւը պարզ զրոյց մը կ'երեւի, որուն վրայ ուրիշներ ակնարկ չունին։ Այդ չփոթ տեղեկութեանց վրայ Զամչեան, Պիլարդուն չաղթէին թեցեալ կ'ըսէ, առանց ծագումը պարզելու, և վերջէն գրգռուիլը Սոյ կանոններուն պատճառով սարսափեցեալ սրբոյն և իշխանաց սմանց քսութեան կը վերագրէ (ՉԱՄ.Գ.311) և Զարինեանն ալ Հայերը Պիլարդուի մօտ ֆանֆարոնէ գացած կ'ընդունի (ՉԱՄ.Գ.257), մինչ Տէրմիքէլեան այդ տեսակ մեկնութիւնը ըղծիթ թիւադրութիւն կը կարծէ (ՍԱՐ.299)։ Մենք դժուարութիւն պիտի չզգանք ընդունիլ, թէ կրօնական վէճեր և կրօնապէս վիրաւորիչ խիղճեր կրնան ամէնէն ծանր ձեռնարկներու դիմել, և անկէ չափել Սոյ կանոններու դէմ Հայ խիղճերու մէջ զգացուած զայրոյթը։ Պիլարդուն Հեթումի և Լեւոնի դէմ գրգռողներ եղան միայն սմանք, անձնականատելութիւն խառնելով գործին, զի անոնց երկուքին սպանութիւնը կնճիռը վերջնականապէս չէր կրնար ջնջել, քանի որ կնատրացին տակաւին կաթողիկոս կը մնար, և Հեթումի ու Լեւոնի կը յաջորդէին Օշին ու Ալինախ։ Հետեւաբար չկրնալով վերջապէս փարատել այդ չարագուշակ գործողութիւնը պատող քօղը, պիտի դժուանանք ընդունիլ, թէ Պիլարդու նենգութեամբ իրեն մօտ հրաւիրեց Լեւոն թագաւորը և Հեթում թագաւորահայրը՝ իրենց իշխաններով, և անոնց հասնելուն անխնայ սպանել տուաւ երկուքը, ու 40 հոգի ալ մէկտեղ ևկող իշխաններէն։ Սպանութիւնը կատարուած է ի սորոճ Անդրեաս գրիչին, 1307 նոյեմբեր 17'ին (ՀԵԹ. 86), որ այն տարի Ցիանա-

կաց բարեկինդանին նախընթաց ուրբաթն էր, թէպէտ Ցայսմաւուրքը նոյեմբ՚ին 16՚ին կը դնէ (ՑԱՍ. Բ. 240)։ Սոյց ժողովէն միայն 8 ամիս անցած էր։

ՀԵՔՈՒՄԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1248. Հեթումի եղբայրական մահը, երբէք երբեք նախանձայոյզ Հայերու դրգռութեամբ եղաւ, պէտք կ՚ըլլայ ցաւիլ որ զոհ գնաց իր մոլեռանդ լատինասիրութեան, որով ոչ մի օգուտ կրցաւ պատրաստել իրենիներուն, այլ մանաւանդ խանգարեց ազգային եկեղեցին, վտանգեց ազգային թագաւորութիւնը, և իրեն ալ օգուտ մը չպատրաստեց։ Իրաւ հոգեւորութեան նուիրուած անձ մը կ՚երեւար, բայց իր հոգեւորութիւնն ալ առձգուածային զգացում մըն էր, քանի որ ոչ աչխարհքէ կը հեռանար, և ոչ իշխանութենէ ձեռք կը քաչէր, կրօնաւորի պիտոյք կը նատէր, և կրօնաւորական գօտիէն պատերազմողի սուրը կը կախէր։ Լատիններ զինքն Պէաննէլ (Beatus) մականունով պատուած են, որ Վենէրէպլ (Venerabilis) մատիճանէն վեր և Սանքթ (Sanctus) մատիճանէն վար, արքունեան միջին մատիճան կը նկատուի լատինական ծիսակատարութեան օրէնքով։ Իրր անոր չփոթ կացութեան նչանակ՝ նկարներու մէջ կրօնաւորական պիտոյքին վրայ արքունական կնգմնին կ՚աւելցնեն (ՀԱՁ. 516), և կրօնաւորի մը ձեռքը սուր ու նիզակ տալով (ՀԱՁ. Բ. 520), անոր տարօրինակ և առնդուածային կ՚ոնքը կը պատկերացնեն։ Իրաւ ալ ոչ թէ կեանքովը, այլ և գործունէութիւններովը տարօրինակ անձնաւորութիւն կը ներկայանայ Հեթում-Յովհաննէս, անթաղ թագաւորը, կրօնաւոր թագաւորաց հայրը, և առանց վանքի վանականը։ Անոր չի մնայ թէ քաղաքական նպատակն էր զինքն ոգեւորողը, որով Լատինաց միաբանութենէն գինուորական օժանդակութիւն կը սպասէր, թէ ոչ եկեղեցական նպատակն էր, որ բոլոր եկեղեցիներու հետ միութեան բարիքը կ՚երազէր, կամ թէ պարզ հոգեւորական նպատակ մըն էր, որով հռոմէական դասանութեան մէջ յաւիտենական փրկութիւն կը սպասէր։ Հնար չէ որոչակի բան մը քաղել իր գործերէն և իր ընթացքէն, որովհետեւ իր գործերը՝ այս նպատակներէն և ոչ մէկուն բոլորապատուղ ուղղուած կը տեսնուին, այլ խառնուրդ մըն են ամէն տեսակ, նոյն իսկ իրարու անյարիր դիտումներու։ Ուստի կը միտինք ըսել, թէ վարանոտ միտք մըն էր՝ որ զայն կը նեղչնչէր, ոչ մէկ կէտի վրայ հաստատապէս կը կանգնէր, այլ յարափոփոխ կը ձգտէր ուր որ առժամապէս նչոյլ մը կը տեսնէր։ Այլ ոչ մի ուղղութեան տիրապէս չէր ծառայեր։ Իրմէ մնացած միակ գրաւոր յիչատակ, աստուածաչունչի մը ինքնագիր յիչատակարանը կայ (ՀԱՁ. 517-520), որ զգայուն բարեպաչտութեան հետ եռանդուն ազգասիրութեան արձագանգներ ունի։ Միւս կողմէն արքունիքը ձգելով վանք քաչուիլն ալ իր նչանակութիւնը կը կորսնցնէ, երբ թագին հետամուտ եղբայրներր կ՚աքսորէ և թագաւորութեան անունը անչափահաս տղու մը յանձնելով, գործը իրեն կը պահէ (§ 1214)։ Շատ աւելի մեծ մարդ պիտի ըլլար նա, եթէ Հեթում Բ թագաւոր մնար, և կատարելագէս իր արքունական և պետական պարտաւորութեանց հետեւէր, և լատին կրօնաւոր եղբայր Յովհաննէս եղած չըլլար։ Լեւոն Բ թագաւորին գալով, չատ բան չունինք ըսելիք։ Անոնք իրրեւ թագաւոր յիչուեցաւ, և նչանաւոր գործերու կցուեցաւ, բայց անձնական արդիւնք և արժանիք չկրցաւ ունենալ, և 12 տարեկան անգիտակից կերպով գահ բարձրանալէ ետքը, առանց կրօնաւոր հօրեղբօրը աղաղակութենէն ազատելու, 18 տարեկան եղերական մահուամբ վախճանեցաւ։

ՕՇԻՆ ԵՒ ԱԼԻՆԱԽ

1249. Ոմանք կը պատմեն թէ Հեթումի եղբայր և Լեւոնի հօրեղբայր Օշինն ալ միւս իշխաններուն հետ Պիլարզուի ձեռքը ինկած, և զօրավարի մը պաչտպանութեամբ ազատած ըլլայ (ՍԻՄ. 550)։ Բայց հաւանականագոյն կ՚երեւի ուրիչի պատմածը, թէ Հեթում ոչ ոքու ընդ իւր ղերծաւչ իւր զՕշինն, ինչ որ է խնամոյն Ասողկայ յաջողութիւն մը եղաւ։ Վանդի Օշին, եղելութիւնը իմացածին պէս, իւկոյն կապանի բերդէն եկն է քեզդն Սսոյ, և Հայ իշխաններուն ու անոնց գունդերուն գլուխն անցնելով, Պիլարզուի վրայ յարձակեցաւ, որ չկրցաւ դէմ դնել և պարտաւորուեցաւ Անարզաբայէ ու Կիլիկիայէ հեռա-

նալ։ Օշին անտէրունջ թագաւորութեան տէր կանգնուցաւ և կիլիկիոյ կառավարութիւնը տանձնեց, բայց թագաւոր հռչակուելն ու օծուիլը յետաձգուց (ՍԱՄ·156)։ Միջադէպը կրնար ծանր հետեւանքներ ունենալ, և Հայերու ու Թաթարներու մէջ եղող բարեկամ յարաբերութիւնները եղծանել, ինչ որ Հայերուն վրայ փորձանքներ ալ կրնար հրաւիրել, քանի որ Եգիպտացիներէն նեղուած ու լատիններէն լքուած էին։ Ուստի կացութիւնը պարզելու համար, երբ Օշին զօրութեամբ կը գործէր, եղբայրը Ալինախ կը չտապէր Դավրէժ՝ մեծ խանին առջեւ իրողութիւնը լուսաբանելու, և վանգին առջեւն առնելու համար։ Պատգամաւորութիւնը յաջող ելք ունեցաւ, զի Ալինախ կրցաւ հաստատել Գիլարդուի նենգութիւնը բարեկամ Հայերու դէմ, և կ'արդարացնէր Հայերու ինքնապաշտպանութեան իրաւունքը Գիլարդուի դէմ, և Ղարիանթա կատարելապէս համոզուելով, Գիլարդուն մահուան կը դատապարտէր (ՍՄՌ·127), մինչեւ իսկ Ալինախը կը տիպէր իր ձեռքով սպաննել իրենց թշնամին (ԴԱՐ·26)։ Արդարութիւնը աւարտելէ ետքը տէրը տանելու համար ալ, Ալինախի կը յանձնէր նաեւ վէմէ անէլցն (ՍՄՌ·127), որ է սպանեալներուն արեան գինը, իսլամական օրէնքին համաձայն։ Երբոր Ալինախ յաջողութեամբ կը դառնար, և ամէն վախ ու կասկած կը փարատուէր, այն ատեն միայն Օշին թագաւորական օծումը կ'ընդունէր կեսարացիներ ձեռքէն, և կիլիկիոյ պիտութեան տէրը կը դառնար։ Հանդէսը կը կատարուէր Տարսոնի մէջ 1308'ին (ՍՄՌ·127), և թէպէտ օրը նշանակուած չէ, սակայն տարւոյն առջի ամիսները պէտք է դնել, որովհետեւ Ալինախի պատգամաւորութիւնը հազիւ երկու ամսուան մէջ կրնար վերջանալ, և հանդէսը կատարուիլ մեծ պահքէ առաջ, քանի որ նոյն տարին փետրուար 25'ին կ'իյնար Բուն Բարեկենդանը։ Դարձեալ կը կարծէ թէ թագաւորութիւնը Ալինախի կ'իյնար, և անոր վրայ կոպեալ վէմէն և անջատուիլ մեռնելովը թագաւորից Օշին, որ Եօթնեբոյդն, այսինքն կրտսերագոյնն էր իր եղբայրներուն մէջ, զորս Հեթումի որդիներ կը կոչէ չփոթութեամբ, փոխանակ Լեւոն Գ'ի որդիներ ըսելու (ԴԱՐ·26)։ Սակայն Դարձեալ այդ պարագաներուն մէջ ալ կը սխալի, որովհետեւ Ալինախ ներկայ եղած է Աստանայի ժողովին Օշին թագաւորի հետ (ԿԱԼ·504), և մահն ալ չատ տարիներ ետքը տեղի ունեցած է, 1317'ին (ՍԱՄ·156)։ Օշին և Ալինախ երկտրիակներ ծնած են 1283'ին (ՍԻՍ·556), բայց երկտրիակներու մէջ ալ առաջնութիւն կը ճշդուի, և այս կերպով նախապատուած է Օշին իր եղբօրը վրայ, և 25 տարեկան թագաւոր օծուած։

1250· Օշին կրօնական գործերու մէջ կատարելապէս իր եղբօրը Հեթում-Ծովհաննէսին հետեւողն էր, և թերեւս անկէ աւելի բուռն ու մոլեռանդ, իր տարիքին և բնաւորութեան բերմամբ։ Չինչ աւելի գրգռելու պատրաստ էր կոստանդին կեսարացին, նա ալ Անաւարզեցիին աւելի իր գործերուն մէջ խիզախ, քանի որ կը կարծէր թէ նորութիւնները ոչ հեա ծրագիր ընացած, այլ Սոյ ժողովով կանոնի այժ ստացած էին, և թէ իբր պարտաւորիչ կրնար տիպել իր ժողովուրդը անոնց համակերպիլ։ Սակայն ժողովուրդը ու եկեղեցականութիւնը չունէր այն լատինասէր զգացումը, զոր կաթողիկոս ու թագաւոր ձեռք ձեռքի տուած կ'աշխատէին տարածել, և կալանոսի պատմագիրին ալ կը խոստովանի, թէ ոմն հերձուածող ոմանց համոզել նոյն կանոնին, և այնպէս խռովին զօրը, զի չկրնալ անգամ լուծել լինելիք դժուարութիւնն այն (ԿԱԼ·472)։ Հոգ չէ թէ նա հակառակողները հերձուածող կոչէ իր միտքով, մեզի բաւական է որ խոստովանի թէ լուծել եղեր դժուարութիւնն այն, որ ուրիշ բացատրութեամբ կը նշանակէ, թէ Սոյ ժողովին մէջ հաստատուած հռոմէադաւանութիւնը, արդիւնք և գործադրութիւն չունեցաւ և չեղեալ նկատուեցաւ։ Արդ եթէ այս էր հետեւանքը, ապա հակառակողները միայն ոմանք չէին, այլ ընդհանուր էր դիմադրութիւնը։ Եւ այն ոչ միայն անհատական կերպով և կամ խօսքով, այլ յայտնի ցոյցերով և բուռն դիմադրութեամբ։ Չի ժողովուրդը և եկեղեցականները կոստանդինի և Օշինի բռնած կերպերէն զայրացած, ձայն տուին իրարու, և հաւաքուեցան Աստանայի մէջ 1308'ին, և մերժեցին Սոյ ժողովին

նորութիւնները ժողովական ձեակերպութեամբ։ Թագաւոր և կաթողիկոս չուզեցին նշանակութիւն տալ բողոքին և իրենց ընթացքը չարունակեցին, և այս անգամ բողոքը աւելի ուժգնութեամբ կրկնուեցաւ Սիսի մէջ 1309 տարին (ՍԱՄ·156), սբ խաչվեցեալ քաղաքին աբեղայից և կրօնաւորաց և աբեղաից, այլ և վերապետ և եպիսկոպոս և քաղաքին ժողովրդոց, արանց և կանանց, ծեր և պատ։ Հաւաքուած բազմութիւնը կը բողոքէր և կը գոչէր, վասն ալ առնել չունին արեանել ըստ է աստուծ եղբարց, և վասն այլ ես նորոյնս օրինացն (ՍԱՄ·156)։ Մանաւանդ ակնարկներէ կը քաղուի, թէ ոչ միայն ժողովրդականք քաղաքացիքն չուզեցին և ազգակ չխրման արկին (ԿԱՀ·474), այլ և եկեղեցականներ ժողովական նիստ կազմեցին, հարկաւ առանց կաթողիկոսի, կանոնեցին կանոն և ետուին առհաս, գլխաւորապէս պնդելով չերէս չայսոքիկ ալ առնել հաղորդութեան ընդ այլ ես եղբօրանեայսն, որք ևն, բաժակին ջուրը, Մնունդին ուօնը, և երես քննութեան բանաձեւը (ԿԱՀ·476)։ Մենք ալ չենք ուզեր կանոնական ժողովի զօրութիւն տալ յիչեալ գործողութեան, սակայն անուրանալի է ազգային խիզճին բողոքին նշանակութիւնը, և հայադաւան ժողովուրդին ինքնապաշտպանութեան ազդեցութիւնը։

1251· Այդ ցոյցերը կը ցնցեն կաթողիկոսն ու Թագաւորը, որք իրարու հետ խորհրդակցութեամբ, և իշխանները իրենց համաձայնելով, բուռն զօրութեամբ կ'ուզեն զսպել ժողովուրդին ձայնը։ Կ'երեւի թէ զինուորական այժ ալ գործածուած է հաւաքուած և ցուցարար ժողովուրդին դէմ, որովհետեւ գրուած է թէ Օշէն եպան չորեցաւ և է կանոնի զբաղմամ, որ աւելի զինուորական չարժումներու հետեւանք կը կարծուի, քան թէ հրամանով եղած մահապարտութիւններ, մինչեւ կիներու վրայ տարածուած։ Շարժումին գլուխները, այսինքն ղեկդրպետն, կաթողիկոսն է քանի է քերդն, իսկ ղաբեղայն եղէ է նաս, և առաւեց չորոս է կիպրոս իղձն, ուր թագաւորած էր Օշինի քեռայրը Ամաւրի, իբ Հեթումիկոս հղայրը գահէն վտարելով, և կիլիկիա դրկելով Օշինի պահպանութեան էր յանձնած։ Այս կերպով Ամաւրի ալ Օշինի հակառակորդ եկեղեցականները պահած պիտի ըլլար, անկէ գտած օգնութեան փոխարէն։ Այսպէս վերջացաւ Սսոյ ցուցարար հաւաքումը, որ չկրցաւ իրաւ կոստանդինն ու Օշինը իրենց ճանպլին հետ կեցնել, բայց բաւական հղաւ չեչտել հայադաւան ուղղութեան և հնաւանդ սովորութեանց անխախտ պահպանութիւնը։ Սսոյ 1307'ի կանոնները հպիւ թէ Սսոյ արքունիքին մէջ գործադրուած մնացին, և գրեթէ բոլոր կիլիկիա իր հայրերուն չաւիղին վրայ կը քալէր, իսկ Հայաստան և ոչ իսկ կարեւորութիւն կ'ընծայէր հնչակուած նորութեանց։ Պատմութիւնը կը վկայէ, թէ աքսորեալներէն քաղցր անբեն դեռ կիպրոսի մէջ (ՍԱՄ.156), հարկաւ նեղութեանց ալ ենթարկուած ըլլալով։ Անչուչտ միեւնոյն վախճանն ունեցան կիլիկիոյ մէջ բանտարկուած վարդապետներն ալ, որոնցմէ քանիները Օշին մահեցաց գաղտ է մահ, նոյն իսկ հոռմէադաւանները խոստովանութեամբ (ՁԱՄ. Գ.312)։ Այդ տգեղ հղելութիւնները, զոր հոռմէադաւանները ալ չեն համարձակիր ուրանալ, չատ պերճախօս կերպով կը դատապարտեն կոստանդինի և Օշինի բռնած ընթացքը, և ի դէպ է անձերէն ալ բարձրանալով, դատապարտութիւնը տարածել նոյն իսկ դրութեան վրայ։ Թերեւս հոռմէականներուն աչքին չատ տգեղ չերեւին Սիսի մէջ կատարուած բռնութիւնները, քանի որ իրենք աւելի մեծ ու հղեւնագործ բռնութիւններ ունին Արեւմուտքի մէջ կատարուած՝ հաւատոյ հնական առեանները ձեռքով։ Սակայն մենք չենք կրնար իրենց ձայնակից ըլլալ, ու բացարձակ կերպով կը մեղադրենք կատարուած բռնութիւնները։ Ակռ ալ աւելի կարեւոր է դիտել տալ, թէ այս գործերով բնաւ չհաստատուիր Հայ եկեղեցւոյ հայադաւանութենէ հեռանալը ու հոռմէադաւանութեան դառնալը, քանի որ Սսոյ կանոնները ոչ թէ ոմանց, այլ հանրութեան կողմէն կը մերժուին, և նոյն ինքն հոռմէականք կը խոստովանին, թէ ալ ոչ յոյնըստոյգ էլեթոց այնուհետեւ պահել էին զնոսա Սսոյ, այլ դիմն նոյն՝ որ էին է կիպրոսի և յարեանին (ՁԱՄ.Գ.313)։ Իսկ Թագաւորի մը և կաթողիկոսի մը անհատական գործե-

րը, եկեղեցւոյ լրումը չէն ներկայացներ երթեք։

ԺԱՄԱՆԱԿԻՆ ԴԷՊՔԵՐԸ

1252. Ներքին և արտաքին յուզումներու ալեկոծ միջոց մըն է կեսարացիին կաթողիկոսութեան և Օշինի թագաւորութեան ժամանակը։ Որչափ արտաքին վտանգներ կը չատնան, այնչափ աւելի երկուքն ալ լատինութեան կը փարին, և որչափ աւելի լատինութեան կը փարին, այնչափ աւելի ներքին յուզմունքները կը չատցո՛ն և երկիրը արտաքին վտանգներու կ՛ենթարկեն։ Օշին չարունակ դէսպանութիւններ կը ղրկէր պապին՝ որ էր կղեմէս ե, և Անգղիոյ թագաւորին որ էր Եդուարդ Բ, բայց պապէն իբր օգնութիւն վէց Փրանկիսկեան կրօնաւորներ միայն կ՛ընդունի 1311'ին (ՍԻՍ. 557), խորհրդատու ըլլալու, պ՛ոտական գործերու առաջնորդելու, կամ լաւ ևս լատինամոլութիւնը աւրացնելու. իսկ Անգղիայէ լոկ յուսադիր նամակներ՝ երեւակայեալ օգնութեանց մասին։ Լատինաց մերձաւորութեան հետեւանքներ էին նաեւ այս խարհականներուն առեւտրական նպատակով Իտալիա գաղթելը, և եկեղեցականներուն Իտալիոյ մէջ հայածէս եկեղեցիներ և վանքեր հիմնելու ձեռնարկները, որոնց մէջ յառաջընթաց կը տեսնէ Մարտիրոս Սեւաւորենեցի վարդապետ մը որ Գենուա (Genova) կ՛երթայ 1307'ին, և 1309'ին պապէն հաւատնութիւն կը առնայ Ս. Բարթողիմէոսի եկեղեցին չինելու։ Իրեն կը հետեւի Դաւիթ կիլիկեցի վարդապետ մը որ 1308'ին կը հիմնարկէ Պատաւիոն (Padova) քաղաքին մէջ Հայոց վանք մը։ Ներքին դիպուածներէն յիշատակելի է Օշինի երիցագոյն եղբօր և նախկին թագաւոր Սմբատի՝ Կոստանդնուպոլսոյ աքսորանքէն ազատելով (§ 1213), 1309'ին կիլիկիա գալը թագաւորութիւնը նորէն ձեռք ձգելու համար։ Սակայն Սմբատ կուսակիցներ չգտներ, և չուտով ետ կը դառնայ, և թափառական կեանքը կը կնքէ Եւբէա (Negroponte) կղզին, մարտի 6'ին, բայց տարին անորոշ (ՀԱՁ.543), զոր անյարմար չէր ըլլար 1311'ին դնել։ Սմբատի հետ աքսորուող Կոստանդին եղբայրն ալ ազատութիւն գտած էր Հեթումի մահուընէն ետքը, սակայն նա Կոստանդնուպոլսոյ մէջ վախճանած է մարտ 8'ին, տարին նոյնպէս անորոշ (ՀԱՁ.543), բայց Օշինի սեփական Ծայամասութքին մէջ նշանակուած ըլլալը կը ցուցնէ, թէ այդ տարիներուն մէկուն կամ միւսին մէջ եղած է երկուքին ալ մահը, որով Օշին ապահովուած է իւր գահին և թագին վրայ։ Եթէ մյացակից Եղբայրներուն մահը զինքը գոհացուց, Կիպրոսի թագաւոր Ամաւրիի սպանութիւնը 1310'ին զինքը մոտահոգ կ՛ընէր։ Հէնրիկոս Բ որ նորէն գահը կը գրաւէր, իրեն չատ համակիր չէր, և ոչ ալ Հայոց արքունի գերդաստանին բարեկամ, որով Զապլուն ալ, Ամաւրի Լուսինեանի այրին իւր հինգ զաւակներով կը ստիպուէր Կիպրոսը թողուլ և Կիլիկիա ապաւինիլ։ Այդ հինգ զաւակներն էին (ԴԱՐ.27), Հուգոն կամ Հիւգ, Հէնրիկոս կամ Հանրի, Գուիտոն կամ Գուի, Յովհաննէս կամ Ջիւան, և Բոյեմոնդոս կամ Պէմունդ (Hugues, Henri, Guy, Jean, Boemond), որոնք առաջիկային Հայոց արքունական գերդաստանը կազմեցին։ Մինուճոյն 1310 տարին էր որ Օշին թոռ զաւակ մը կ՛ունենար, ապրիլ 26'ին, զոր Լեւոն կը կոչէր, սակայն մայրը Զապէլ, կռոիկոսի իշխան և կրօնաւոր-պատմիչ Հեթումի դուստրը, երկունքի հետեւութեամբ քանի մը օրէն կը մեռնէր մայիսի սկիզբը։ Ժամանակին նկարագիրը լրացնելու համար յիշենք նաեւ անակնկալ ապստամբ մը Թաթարներու կողմէն 1314'ին, և Եգիպտացւոց արշաւանքները 1315'ին Մելիտինէ և 1316'ին Տարսոնիա քաղաքներուն վրայ, և Հայերու կրած չարաչար կոտորածները (ՍԻՍ. 558), որոնք նւազանդեցա կը զայրացնէին ներքին անախորժ կացութիւնը, տարբեր հոսանքներուն, և թագաւորին ու կաթողիկոսին տարօրինակ ուղղութեան և բուռն ընթացքին հետեւանքով։

ԱՏԱՆԱՑԻ ԺՈՂՈՎԸ

1253. Այդչափ խառնակութեանց մէջ, զորս քաղելով պատմիցինք, որպէսզի կայուքեան ճիշդ նկարագիրը տեսած ըլլանք, պէտք է դիտել տալ, որ թագաւոր ու կաթողիկոս չատ պարտաւորէին աւելի կարեւոր և օգտակար գործունէութեան մը հետեւիլ, քան թէ իրենց լատինամոլ ծրա

գիրին գործադրութեան համար ճիգեր թափել։ Զարմանալու կէտ մըն է, որ Օչին թագաւոր այդչափ յուզմանց ու չփոթութեանց մէջ յանձն կ'առնէ անձամբ Հայաստան երթալ, ներքին գաւառներու մէջ պտոյտ մը ընել, իւր մտադրութիւնը դարձնելով աւելի Տարոնի և Աղձնիքի եպիսկոպոսներու վրայ, և Բաղէշի մէջ գումարում մըն ալ կը կազմէ, որպէս զի անոնք համոզէ Լատիններու հետ համաձայնութենէն յառաջ գալիք օգուտներուն վրայ (ՉԱՒՐ. Գ. 312)։ Սակայն յաջողութիւն չի գտներ, և կը հաւանի որ ազգային ժողով մը գումարուի, ուր վերստին քննութեան ենթարկուին 1307 տարւոյ կանոնները, որոնց առանց կաթողիկոսի հաստատուած ըլլալն ալ անուշադրութեան կ'առնուէր։ Այդ յանձնառութիւնը, որով կ'ընդունուէր հաւատոյ համաձայնութիւնները խոստովանութիւնաւ իսկ, չէ վերջանար ըստ ընդհանրի է վերջ կանոնաց ժողովոյն Սսոյ, և որչէ՞ր ըն չինչ պարտ էին առնել (ՉԱՒՐ. Գ. 312), անդամ մը եւս կ'ապացուցանէ, որ Սսոյ ժողովը, եթէ որեւէ այժ մըն ալ ունէր. անիկայ ալ բոլորովին ջնջուելու, երբ թագաւորը, հարկաւ կաթողիկոսին հետ համաձայնութեամբ, յանձնառու եղաւ անոնք նոր քննութեան ենթարկել, և նոր կանոններ հաստատել։ Օչին չրջապատութենէ գաւառով իւր յանձնառութիւնը գործադրելու կ'աշխատէր, երբ պատուիրան կողմէն ալ նոր գրգիռ մը գինքն աւելի քաջալերից։ Կղեմէս ե մեռած էր 1314'ին, և Տաղիւ 1316'ին յաջորդած էր իրեն Յովհաննէս ԻԲ, կամ բուն այլոց ԻԱ, գործունեայ և հռանդուն գաղղիացի մը, որ աթոռոյ հաստատեց Աւինիոն։ Օրէնագիտութեան և բժշկութեան հմուտ, և գործառնութեանց մէջ ձեռներէց, ոչ միայն Արեւմուտքի մէջ նչանաւոր եղած է իւր յանգուգն գործերով, այլ և Արեւելքի վրայ աչք դարձուցած էր պապութեան աղդեցութիւնը ամրացնելու։ Կիլիկիոյ և նոյն իսկ արքունիքի և հայրապետանոցի մէջ գտնուող Լատին կրօնաւորներէ տեղեկանալով, Յովհաննէս կը գրէր Օչինի և Կոստանդինի (ԿԱՒ. 517), որ ջանան ժողով գումարել և վերջնական կերպով ամրացնել 1307'ի կանոնները։ Այդ չարժառիթներով կը հրաւիրուի Առանայի ժողովը։ Անոր գումարումը սովորաբար կը գրուի 1316'ին (ՍԻՍ. 258), սակայն դժուար պիտի բլլայ այդ թուականը ընդունիլ, քանի որ կը գիտցուի թէ ժողովը եղաւ Յովհաննէս ԻԲ պապին օրով (ԿԱՒ. 517), որ ձիշդ միւնոյն 1316 տարւոյն մէջներբ ընտրուեցաւ, և Ալյակերպութեան ուշն ալ, որ օր գումարուած է Առանայի ժողովը (ԿԱՒ. 503), յունիս 18'ին կ'իյնար, որով անհնար էր մէկ կամ երկու ամիսներու մէջ տեղի ունենալին պապին յորդորական նամակները, ժողովին որոչումն ու հրաւէրը, և ժողովականներուն գումարուիլը, ուստի աւելի հաւանական նկատեմք 1317 յունիս 10'ին Ալյակերպութեան ուշին պէտք է դնել Առանայի ժողովը Սսոյ ժողովէն 10 տարի ետքը։

ԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՆԵՐԸ

1254. Լատիններէն և լատինասէրներէն խորհուած միջոցը, որ է նոր ժողովի գումարումը, դիտուած նպատակին բնաւ համապատասխան չեղաւ, և չի կրցաւ արտադրել այն օգուտները որուն կը սպասուէր։ Հրաւէրին անսացողները չատ փիչ եղան, վասն զի եպիսկոպոսներ 18 են եղած կաթողիկոսով մէկտեղ, և վարդապետներ 7 միայն յիչուած են ներկայից ցուցակին մէջ (ԿԱՒ. 503), մինչ Սսոյ մէջ գումարուած էին 26 եպիսկոպոսներ և 17 վարդապետներ, նոյն իսկ առաջին ցուցակին համեմատ (§ 1230)։ Եպիսկոպոսներէն 10 հատը կիլիկիացին եղան, և առնուազն վեցը Սսոյ առաջին ցուցակին մէջ յիչուածներ, այսինքն Կոստանդին կաթողիկոս յառաջն կիսարիոյ եպիսկոպոս, Կոստանդին Սսոյ, Յովհաննէս Տարսոնի, Յովհաննէս Անաւարզայ, Սահմանուս Բարձրբերդի և Գրիգոր Մարաչի եպիսկոպոսները, և հատ մըն ալ երկրորդ ցուցակէն՝ Սահմանուս Առանայի։ Կապանի եպիսկոպոսը Յակոբ է, որ Բասիլիոսի յաջորդած պիտի բլլայ, և երկու նորեր կան Յովհաննէս Մամնասոյի ներքև Մոլեւոնի։ Փոքր Ասիոյ եպիսկոպոսներէն երկու նորեր կան միայն Կոստանդին Անկիւրիոյ և Սահմանուս Կողոնիոյ։ Իսկ Հայաստանի եպիսկոպոսներէն կայ Ասոտիք Ներկիւրի, որ երկրորդ ցուցակին մէջ յիչուած էր, և Կոստանդին Մարանդունւոյ՝ որ Յովհաննէսի յաջորդը պիտի բլլայ։ Երկ

ալ նորեր կան Յովհաննէս Տարոնոյ, Մարկոս կարսի և Յակոբ Սալմաստի: Իսկ 7 վարդապետներ բոլոր հիներ են, Յովհաննէս վարդապետը, Կիրակոս և Գրիգոր և Մարտիրոս կաթողիկոսապահներն, Գրիգոր Գետմազրեցի և Բարսեղ Մոքինի, և Հայրապետ Թիւրքմէնի՝ որ Գրիգորի յաջորդը պիտի ըլլայ: Քառնեցին իւր նամակին մէջ իրրեւ ներկայ կը յիշէ նաեւ Զաքարիա Մորթորնեցին՝ Արտազի արքեպիսկոպոսը (ԿԱԼ. 517), և Յովհաննէս Երզնկացի կամ Մորթորնեցի (ԿԱԼ. 518) ծանօթ վարդապետը (§ 1240): Սակայն երկուքին ալ անունները ցուցակին մէջ չեն գտնուիր, և անհնար էր որ մոռնալին, մինչ Քառնեցին վերջէն կը գրէ պարզ յիշողութեամբ: Յովհաննէս վարդապետը՝ որ վարդապետաց առաջինը յիշուած է առանց մակդիր անունի (ԿԱԼ. 504), ոչ թէ Երզնկացին է, այլ Սոյ ցուցակին մէջ ալ վարդապետներու դլուխը յիշուած Մեծքարի դպրապետն է (ԿԱԼ. 459), կամ Դպրեվանքի առաջնորդը, որ միշտ իւր առաջնութիւնը կը պահէ իրրեւ վարդապետաններուն դլուխ կամ վարդապետաց վարդապետ: Դալով ներկայ իշխաններուն, անոնք ալ նուազ են, 10 միայն, մինչ 14 էին անունով յիշուածները Սոյ մէջ: Աստղմէ ալ դրեթէ բոլորը հիներն են, Օշին Քաղաւոր, Ալինախ արքայորդին, Սմբատ Ակռուոյ մարաջախտ, Ռիմտունդ Մխքայլկուի անեւոյալ, և Թորոս Զոֆտէրկայի պրակտիմոս: Իսկ բերդապետներէն կան Սմբատ Սմբատկայի, Օշին Կոպիտասի, և Լիկոս Մնձորովիրի՝ որ նոյն իսկ կիւտաման է (ՍԻՍ. 64): Նորեր երկու հատ են միայն Հեթում սպարապետ Օշինի տէր, և Քագաւորին անբծագը Օշին Կոռիկոսի իշխանը: Բաղամիխան թոռնուկը և կրճատօրդ այստեղ ալ յիշուած են՝ Քագաւորին աւագերէց Թորոսի գլխաւորութեամբ (ԿԱԼ. 505), որ կոստանդինի յաջորդած պիտի ըլլայ (ԿԱԼ. 460), և կը կարծենք, բայց չենք կրնար պնդել, թէ նոյն այն Թաւրոնց մականունանայ հռոճաբեղէթիէն է, որ 1342 դեկտեմբեր 27'ին վախճանած է (ՀԱԲ. 545), ժողովէս 25 տարի ետքը: Այս ամէն տեղեկութիւններ կը ցուցընեն թէ Առանայի ժողովը՝ ներկայից թուով ու կարեւորութեամբ, Սոյ Ժողովէն չատ հետու կը մնայ, միւս կողմէն ներկաներն ալ միեւնոյն իրենց ըրածը հաստատել ուզողներ են, այն ալ նուազ թուով և նուազագոյն ազդեցութեամբ:

1255. կաթողիկոս պարծենցած է թէ Սոյ ժողովին մէջ ալ ած է Լաթինացւոց կամ ի ճանաց, կամ պէտք և իցէ այլ ազէ հայր, եմաստ է նա (ԿԱԼ. 453), ինչ որ կարծի տատրակուսական է, քանի որ գործին գլուխը կը գտնուէր Հեթում թագաւորահայրը, կամ լաւ եւս լատին կրօնասէր եղբայր Յովհաննէսը (ԿԱԼ. 475), որ հարկաւ զերծ չէր իւր միաբանակիցներուն ազդեցութենէն: Բայց Առանայի ժողովին համար այսպիսի ակնարկ մը ընելէ կը զգուշանայ, որովհետեւ Քառնեցին կը վկայէ թէ ի Քաղաղացս այսոցիկ, այսինքն Դոմինիկեանները ամենեւին չէին ներկայացած ի ֆերմանի պապն Յովհաննու Իբ'երդէ, վասն որոյ կոնդակեան ճոմարեցւոյ ընդհանուր եպիսկոպոսաց և վիճեցեալոյն՝ ժողովոյ այսր (ԿԱԼ. 517): Ժողովական գործերը յառաջ բերուած են կալանոսէ, հետեւելով նոյն բնագիրին ուակից Անաւարզեցիին նամակը և Սոյ ժողովին աւետարանութիւնը առած է (ԿԱԼ. 472): Պարունակութիւնք իրարմէ չեն տարբերիր, որովհետեւ նպատակն է կրկին անգամ հաստատութիւն տալ 1307'ի ժողովին որոշումներուն, և Անաւարզեցիին Լեւոնի գրած նամակով ըրած առաջարկներուն: Յայտնի բան է թէ ըստ սմանց ըստ եալ է ըստ այլոց անոյ քանաւելոյն, կանոնեցին կանոն և ըրեցին սահման չանելոյս ժողովս իւեանց (ԿԱԼ. 476), որով կ'ուզեն ակնարկել 1307'ի ժողովին դէմ Առանայի և Սիսի մէջ ժողովական ձեւով տրուած որոշումներուն (§ 1250), որով մեծ նշանակութիւն տրուած կ'ըլլայ այդ գումարումներուն, թէպէտ մենք ալ անոնց կանոնական զօրութիւն տալ չուզեցինք, բայց այս խօսքերով՝ այն ատեն ազդեցութիւն ունեցած ըլլալնին կը յայտնուի: Առաջին խնդիրը բաժակին ջուրն է, որուն մասին նորէն ընդարձակօրէն կը կրկնուին (ԿԱԼ. 477—487) նոյն վկայութիւնները՝ զոր Անաւարզեցին յիշած էր Հեթումի և Լեւոնի գրած նամակներուն մէջ, և որոնք անցած էին Սոյ ժողովին աւետարանութեան (§ 1234): Այդ վկայութիւններ այժ մը չունին, քանի որ Յոյներ և Լատիններ են գր-

ԲԱԺԱԿԻՆ ՋՈՒՐԸ

բողնելը, որ իրենց սովորութիւնը կը բացատրեն։ Իսկ Կոստանդնուպոլսոյ ժողովը ոչ է Գոմոպոլի պլաթին եղեր (ԿԱԼ. 485), Տըրուլեան կոչուած ժողովն է, որուն կանոնները Լատիններն ալ չեն ընդունիր։ Միայն չենք գիտեր թէ ինչ վկայութիւն է, զոր հեղն Նեբոս արքեպս կոմոպոլիոն չեզոքն գրած ըլլայ, Ծիսական կողէն եղած ջուրին մասին (ԿԱԼ. 483)։ Մեր գիտցածով Շնորհալին ջուրը միշտ Մկրտութեան խորհուրդին վրայ մնկնած է, թէ կրնավոր կոչին ազբերբ+ եկեղեցի էր հոռոմ, ջրէն հոգի, ջրէնն ըմպէ (ՇԱՐ. 285), թէ Ազբէր բուրեց բզիեց է սոբ կոչեն, ջուր է լուացուած սաղանին, սրբեան չեզոքն խորհրդին (ՁԱՓ. 126), և թէ կայլակ ազբերցն կրնայ, ջուր է լուանալ հեղոցելոց, է մահ սոբ հիւանդոց, սրբեան է անոնք հոգեոց (ՁԱՓ. 212)։ Չենք ուզեր հետեւցնել, թէ մի՛ գուցէ բոլոր միւս վկայութիւններն ալ այդպէս խարդախուած կամ աղաւաղուած ըլլան։

ՈՒՐԻՇ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1256. *Ծննդեան տօնին վրայ, թէ Անաւարզեցիին նամակները, և թէ Սոյ ժողովը չատ չէին պատճառաբանած, բաւական սակաւիկով Աստուածայայտնութեան տօնին բաժանումը հրամայել, պահքն ալ ճրագալոյցն ալ կրկնելով, իսկ Առանայ ժողովին մէջ ընդարձակ մաս մը կայ զայն պաշտպանելու (ԿԱԼ. 487—499), չատ մը քաչկռտուք պատճառաբանութիւններով, զորս քաղել խակ աւելորդ կը սեպնենք։ Պատմութիւն մըն ալ կը յօրինեն թէ Անաստաս պապին օրով, Հռոմ հրաման ղրկեր է Կոստանդնուպոլսոյ և Երուսաղէմի և Անտիոքի աթոռներուն որ Ծնունդը զատաբար տօնեն դեկտեմբեր 25'ին, և այն տեղն այդ պատրիարքութիւնները համակերպեր են։ Հայոց կաթողիկոս Մեծն Սահակի ալ նոյն հրամանը եկեր է, բայց նա նախարարներէն և Սուրմակէ ամրաստանուելով աքսորուած է եղեր, և անոր համար է հոռոմներ հրովարտակն Սահակ աքսորեալ ըլլալուն, այսպէս պատճառս նա ճեացեր է համայնաւորութեան Հայաստանեայց եկեղեցոյ ընդ մեծ եկեղեցւոյն Հռոմայ է փոխեր քաղքեան փերոնական փոնիցս (ԿԱԼ. 496)։ Գոնէ ժամանակագրական կապակցութիւնը արդարանար, զի Անաստաս 401'ին մեռած է, և Սահակ 428'ին աքսորուած։ Բաւական բան ալ գրուած է եղիս քնարերգութեան պաշտպանելու (ԿԱԼ. 497—502)։ Հետեւեալ կը քաղուին տօնական և ծիսական զանազան նորութիւններ, որոնք Սոյ մէջ ալ ոչոչուած էին (§ 1233), այսպէս են Աւետումը մարտ 25'ին, Ծնունդը դեկտեմբեր 25'ին, Մկրտութիւնը յունուար 6'ին, Տեառնընդառաջը փետրուար 2'ին, Վերափոխումը օգոստոս 15'ին, և Խաչվերացը սեպտեմբեր 14'ին տօնել, սրոց տօները Յայտնութեան խուսափանելով կատարել ու եղիս քնարերգութեան գործածել, պատարագի սեղանին վրայ գորգոյ դնել, աստիճանաւորներուն իրենց կարգն ու դիրքը ունենալ, Չաւիկի և Ծնունդի և Մկրտութեան ճրագալոյցներուն ձէթով ու ձուկով բաւականանալ, և Աթոռ Աթոռաց'ին մէջ Քէթոս աւելցնել (ԿԱԼ. 499)։ Ժողովական դրութեան վերջը նորէն կը յիշեն, թէ Սոյ ժողովէն հաքը, սաստանան չորոյ սրսման փէխս և ընդդիմացաց ճշմարտաբնեան, որոնք Հռոմ և կոյս առնէին, և ժողովարդը դարձուցանէին ի ճշմարտաբնեն (ԿԱԼ. 502), իր հասկացողութեամբ Սոյ կանոններէն, և թէ այս նպատակով դումարուեցաւ Առանայի ժողովը, Ս. Մինաս եկեղեցւոյ մէջ, Քէթոսի լուսաւորչեան այսինքն Պայծառակերպութեան տօնին որը (ԿԱԼ. 503), որուն հաշիւը վերեւ տարեցինք (§ 1253)։ Այդ հոգւով ու միտքով Առանայի 18 եպիսկոպոսները կը համարձակին վճռել, թէ անոնք որ չեն հաւանիր իրենց վճիռներուն, սրոչէմ և ի քաց հերձեմ ի կրօնաղիւն և առաքելական առաքն եկեղեցոյն Հռոմայ (ԿԱԼ. 506)։*

ԺՈՂՈՎԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

1257. *Եթէ պարզապէս Հռոմի եկեղեցին զատել ըլլար նպատակնին, բան մը չէինք ուզեր աւելցնել, որովհետեւ Հռոմայ եկեղեցին զատել չէր ըլլար։ Սակայն լատինամիտ կաթողիկոսին ու թագաւորին և սկարամիա 17 եպիսկոպոսներուն համար չատ անդօր էր Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյն հազարամեայ անփոփոխ դաւանութիւնն այ-*

լայլել, և անոր հնաւանդ ծէսը խախտել։ Աստանայի ժողովը քանի մը ժողովականներով հեղինակութիւն մը չէր կրնար ունենալ այդ մասին, և չունեցաւ ալ։ Արդէն ինքն Աստանայի ժողովը՝ Սոյ ժողովին ապարդիւն և անհետեւանք լինելը յայտարարելէն ետքը, նովին իսկ իւր գործին ալ դատապարտութիւնը վճռած է, վասնզի հռոմէականներ իսկ կը խոստովանին թէ Աստանայի կանոններն ալ ա֊բե֊ե֊ր֊ն է փրթ, թէ նոյն իսկ 17 եպիսկոպոսներ անկրնայէն պահել, և թէ վերջապէս Օչին ալ յուսահատած և պեհեղ ըե չէ հնար, զոզոբեցաւ է ոգիեըց, Աստանայի կանոններուն պահպանութիւնը (ՉԱՄ.Գ.314)։ Ահա այդ ժողովն է, որուն վրայ կը հիմնուին հռոմէականներ բոլոր իրենց փաստերը, իբր թէ Հայ եկեղեցին իւր ինքնուրոյնութիւնը կորուսած և հռոմէադաւան եղած ըլլայ։ Հայ եկեղեցին իւր զարաւոր կանոնքովը, իւր ուղղադաւան հայրապետներովը, իւր բազմաթիւ ժողովներովը, այնչափ յայտնի կերպով հռչակած ու պաշտպանած է իւր հաւատքն ու ծէսը, որ պետական ազդեցութեան և քաղաքական հրապուրանքին ներքին ոյժ բերնով հաւանող և գործով հակառակող 17 եպիսկոպոսներ չեն կրնար հակառակը հաստատելու փաստ ըլլալ։ Եթէ Օչին թագաւոր հռոմէադաւան մը եղած է բանն, ասիկայ մեր եկեղեցւոյն վրայ ազդեցութիւն չուներ, նոյնը կրնայինք ըսել Կոստանդին կեսարացի կաթողիկոսին համար ալ, որովհետեւ Հայ եկեղեցին անսխալ պետութիւն չվարդապետեր։ Սակայն երբ կը տեսնենք որ Կոստանդին չհակառակիր, երբ բոլոր Հայաստան ու Փոքր Ասիա, և նոյն իսկ Կիլիկիա՝ համաձայնութեան կը մերժեն նորութիւնները, պիտի համաձայնինք հետեւցնել թէ անոր լռութիւն ալ արտաքնայարդար կեղծիք մըն էր. և ոչ հաստատուն համոզում, զատապարտելի իբրեւ փոքրոգի ջիջողութիւն, և ոչ իբրեւ իսկական ուրացութիւն։

ՏԱՐԵԳԼՈՒԽՆԵՐ ՄԻԱՑԱԾ

1258. Աստանայի ժողովին թուական նշանակուած տարին՝ որ է Քրիստոսի 1317 և Հայոց 766 տարին, տումարական պարագայ մը կը ներկայէ, զոր չենք ուզեր անյիշատակ թողուլ։ Հայոց չարժական տումարի հիմ կազմող՝ վերջին Հայկայ չրջանին սկիզբը Յուլեան տումարին 428 օգոստոս 11'ին հաստատուած էր (§ 211), կամ որ նոյն է նաւասարդի 1'ը յիշեալ օրը կ'իյնար, որ սակայն չորս տարին օր մը Յուլեան տումարէն հետ մնալով, 552'ին տումարի նորոգութեան տարին յուլիս 11'ին հաստած էր (§ 385)։ Անկէ ասդին ալ կը չարունակէր չորս տարին օր մը հետեւ մնալու հաշիւը, որ հետեւանք էր Յուլեան տումարին նահանջներուն Հայկական տումարին մէջ ընդունուած չըլլալուն։ Սարկաւագ վարդապետ հոգացած էր նահանջները ընդունիլ նոր հինգհարիւրեակին սկիզբը (§ 900), սակայն անոր կազմած անչարժ տումարը կատարեալ ընդհանրացում չէր առած և պաշտօնական կիրառութեան չէր մտած, և չարժական ու անչարժ տումարներ խառն կերպով կը գործածուէին տարիթիւերու յիշատակութեանց մէջ, ինչպէս որ տեղ տեղ ակնարկելու ալ առիթ ունեցանք։ Միւս կողմէն երբոր Արեւմուտքի հետ յարաբերութիւններ չատցան, Հայկական ամիսներու տեղ Յուլեան կամ Հռոմէական ամսաթիւերն ալ սկսան գործածուիլ, առանց Քրիստոսի տարիթիւն ալ ընդունելու, որ արդէն սովորական էր Արեւմուտքի մէջ, և այսպէս խառնակ տումարակնութիւն մը տիրած էր Հայոց մէջ, ամսաթիւը հռոմէական և տարիթիւը հայկական, այն ալ երբեմն չարժական և երբեմն անչարժ տումարին հետեւելով։ Վերջին տասնեակներ հայկական չարժականը և հռոմէականն անչարժը իրարու չատ մօտեցած էին, և 1260'էն ասդին չարժական տումարն ալ յունուարի առաջին կէսին մէջ կ'իյնար, մինչեւ որ 1317'ին չարժական տումարին տարեսկիզբը կամ Հայկական նաւասարդին մէկը՝ ճիշդ ճիշդ Յուլեան յունուար մէկին իյնալ, և հայկական ու հռոմէական տարեգլուխները միացան։ Այդ զուգադիպութիւնը պատճառ եղաւ, որ այլեւս չարժական տարիթիւը և փոխոխական ամանորը գործածութենէ գրեթէ դադրեցան, և Յուլեան յունուար մէկը Հայկական տարիթիւին ալ ամանորը եղաւ, և կաղանդի օրն ու անունն ընդհանրապէս ընդունելի եղան, բայց միշտ հայկական տարեթիւը պահելով, դի արեւմուտքին գործածած Քրիստոսի տարիթիւը Հայերուն

գործածական չեղաւ, եթէ չուզենք ըսել, թէ անծանօթ ալ մնաց։ Այդ սովորութիւնը հաստատուն կերպով հասաւ մինչեւ վերջին ժթ դարը, մինչեւ մեզի մօտ օրերը, երբ այլեւս հեռմէական կամ արեւմտեան տարրը թեթիւը սովորական դարձաւ Հայոց մէջ, և Հայոց թուականը երբեմն իբր զարդ և երբեմն իբր պարզ տեղեկութիւն սկսաւ յիշուիլ։ Աւելի նոր տարիներու մէջ հին չարժական տոմարի հաշիւն ալ վերակենդանութիւն առաւ, բայց իբրեւ հայրենական հնութեանց նչխարք մը միայն (ՁՇԿ·Ա·76), որ օրացոյցներէն անդին չանցաւ։ Երկու համանորներու զուգադիպութեան օրէն իրեւ կանոն դարձած է, ոչ եւս երկու տոմարներու համեմատութեան համար նկատի առնել՝ նահանջներու պակասութենէն յառաջ եկող օրերը, այլ երկու տոմարներու մէջ 551 տարիներու անփոփոխ տարբերութիւն մը հաշուիլ։ Այս ձեւը կրնայ յարմարիլ 1317'է ետքը եկող տարիներուն, բայց անկէ առաջուան տարիներու պատշաճեցուած աւելն կրնայ տոմարական սխալներու աւելի ընծայել, ինչպէս չատերուն հանդիպած է։ Ուստի մենք սոյն պատմութեան կարգին ինամով մտադրութիւն դարձուցինք ամանորի օրերուն աստիճանաբար փոփոխութեան, և չանացինք ճիշդ օրերու համեմատութիւն գտնել, հետեւելով ամբողջական չրջանի օրըստօրեայ փոփոխութիւնները ցուցնող աղիւսակի մը, զոր այս նպատակով կազմած էինք ժամանակին։

1259· Օչին Թագաւոր այրի մնացած էր իւր անդրանիկին ծնած աւելնէն (§ 1252), տակաւին 27 տարեկան եղած աւելն, բայց երկրորդ ամուսնութիւնը չատ մինչեւ վերջին ժամերը, մինչեւ մեզի մօտ օրերը, երբ այլեւս հեռմէական կամ արեւմտեան տարրը թեթիւը սովորական դարձաւ Հայոց մէջ, և Հայոց թուականը երբեմն իբր զարդ և երբեմն իբր պարզ տեղեկութիւն սկսաւ յիշուիլ։ Աւելի նոր տարիներու մէջ հին չարժական տոմարի հաշիւն ալ վերակենդանութիւն առաւ, բայց իբրեւ հայրենական հնութեանց նչխարք մը միայն (ՁՇԿ·Ա·76), որ օրացոյցներէն անդին չանցաւ։ Երկու համանորներու զուգադիպութեան օրէն իրեւ կանոն դարձած է, ոչ եւս երկու տոմարներու համեմատութեան համար նկատի առնել՝ նահանջներու պակասութենէն յառաջ եկող օրերը, այլ երկու տոմարներու մէջ 551 տարիներու անփոփոխ տարբերութիւն մը հաշուիլ։ Այս ձեւը կրնայ յարմարիլ 1317'է ետքը եկող տարիներուն, բայց անկէ առաջուան տարիներու պատշաճեցուած աւելն կրնայ տոմարական սխալներու աւելի ընծայել, ինչպէս չատերուն հանդիպած է։ Ուստի մենք սոյն պատմութեան կարգին ինամով մտադրութիւն դարձուցինք ամանորի օրերուն աստիճանաբար փոփոխութեան, և չանացինք ճիշդ օրերու համեմատութիւն գտնել, հետեւելով ամբողջական չրջանի օրըստօրեայ փոփոխութիւնները ցուցնող աղիւսակի մը, զոր այս նպատակով կազմած էինք ժամանակին։

ՅՈՎՀԱՆՆԱ ԵՒ ԱԼԻՆԱԽ

եղած աւելն. բայց երկրորդ ամուսնութիւնը չատ պատահած էր, հարիւր քաղաքական տեսակէտով օգտակար զուգակցութիւն մը հաստատելու նպատակով։ Վերջապէս Օչին իրեն կենակից ընտրեց վէրճիօ դը Ռոբերտ Ըռ Ըռոպէրտին, որ է Նէապոլոյ Հռոբերտոս (Roberto re de Napoli) թագաւորին եղբօր, Տարենտոնի Փիլիպպոս (Filippo di Taranto) իշխանին դուստրը՝ Յովհաննա-Երինէ (Giovanna-Irene), զոր ...ղբիչ էքէր և պաղատեցաւ է Տարան Թուականը նչանակուած է 1316 (ՍՄՐ·128), և ըստ այսմ Աւտանայի ժողովին գումարումէն քիչ առաջ կ'իյնայ Օչինի երկրորդ ամուսնութիւնը, երբոր տեղի կ'ունենայ Յովհաննէս իր պապին հետ սերտ յարաբերութիւնները։ Օչինի ընտանեկան միխիթարութեան ցաւ մը կը յաջորդէր ժողովէն քիչ ետքը։ Իւր հարազատ և երկուորեակ եղբայրը Ալինախ, իչխան Տարսոնի և Լամբրոնի, որուն հետ միչտ սիրով ապրած էին, արկածի մը հետեւանօք կը մեռնէր 1317 օգոստոս 26'ին (ՀԱԹ·545), թէպէտ Ցայսմաւուրքը օգոստոս 2'ին կը դնէ (ՑԱՍ·Բ·56)։ Ալինախ Տարսոնի կիւղնոս գետին մէջ լողնալու իջած էր, իրեն հետ ունենալով փոչիկ չի դ, հարկաւ իւր անձնականը, որ եհաւ ջնոտքն է ֆլոխն, և հարուածը եղաւ պոչոտ մահու (ՍԱՄ·157), և այսպէս մեռաւ Բոլ չոռոլէն Ալինախ էրէսոսդը հասակ (ՀԱԹ·545), դի 34 տարեկան էր տակաւին, և թաղուեցաւ Դրազարկի վանքը, արքունական դամբարանը։ Անցողակի յիչենք թէ Ալինախ, Ռուբէն անունով յիչուած է ուրիշներէն (ՍԱՄ·212 և 243), կամ կրկին անուն ունենալուն, և կամ Ռուբէն բուն անունին փաղաքչական կոչում մը ասելցուած բլլալուն համար։ Սմբատի չարունակողը 1309'ին կը դնէ Ալինախի մահը (ՍՄՐ·128), սակայն յայտնի չփոթութեան պիտի վերագրուի, դի Ալինախ 1317 յուլիս 10'ին Աւտանայի ժողովին ներկայ էր (ԿԱԼ·504), և Աստանայէ Տարսոն դառնալէն ամիսուկէս ետքը տեղի ունեցած կ'բլլայ արկածը։

1260· Այդ միջանկեալ պարագաներէ ետքը կը տեսնենք որ Օչին կը փութայ Աւտանայի ժողովին արդիւնքը Յովհաննէս պապին ներկայել յատուկ դեսպաններու ձեռքով, որք են Յակոբ Կապանի եպիսկոպոսը, ժողովին ներկաներէն մին, և Սեբաստոս Նորբերդի իչխանը (ՍԻՍ·558)։ Բայց միւս կողմէն Հռոմ լուր տուողներ կային, թէ այդ որոշումները գործադրուած չեն. և թէ որոնք որ հաւանութիւն յայտնած են, անոնք ալ առերես միայն համակերպած են։ Այդ պատճառով պապը հարցափորձի կ'ենթարկէր Յակոբ եպիսկոպոսը, որ կը յաջողէր պապը համոզել ժողովական գրութեանց փաս-

ԵՒՐՈՊԱՑԻՈՑ ԴԻՄՈՒՄՆԵՐ

տերով, և անկէ ալ գոհունակութեան պատասխանագիրներ առնելով իւր տեղը կը գառնար։ Լատիններուն մօտենալնուն նպատակը զինուորական օգնութիւն ստանալն էր, իբր թէ Արեւմտեան քրիստոնէութեան հովանաւոր ներքեւ ապահով և տեւողական պիտի ըլլար Հայերուն թագաւորութիւնը, և այդ սեւեռեալ գաղափարին կը հետեւէին կիլիկիոյ քաղաքական և եկեղեցական իշխանութեանց գլուխը գտնուողները հաւատարապէս։ Թէ Օշինի պատգամաւորները և թէ պապն ալ իւրաքանչիւրն դիմումներ կ'ընէին Տաւրոսոնի իշխանին՝ որ Օշինի տէրն էր, Նէապոլսոյ թագաւորին՝ որ Ցովհաննա թագուհւոյն հօրեղբայրն էր, և Գաղղիոյ Փիլիպպոս Ե թագաւորին, որ պապին հովանաւորն էր. սակայն ոչ ուստեք չարժում մը չէր կատարուեր, և Ցովհաննէս պապ կը չառնար պատասխանել, թէ ջ-ջ-ջ-ջ է է-է-ջ ջ-ջ-ջ-ջ, ու կը խոստանար գունդ մը ճարել օգնութեան համար (ՁԱՄ.Գ.316), և կը փութար քանի մը Դոմինիկեան կրօնաւորներ ղրկել, լատին լեզուն սորվեցնելու (ՍԻՍ.367), հարկաւ լատին դաւանութիւնն ալ մէկտեղ։ Այս յարաբերութիւններ տեղի կ'ունենային 1318'ին։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱԹՈՌԸ

1261. Երբոր մէկ կողմէն Առանայի ժողովին չնորհիւ սպասուած օգնութիւնները չէին հասներ, միւս կողմէն անոր պատճառով ծագած երկպառակութիւնները կ'ընդարձակուէին, և ասոնցմէ մէկն էր Երուսաղէմի աթոռին բաժնուիլը։ Հայերուն Երուսաղէմի մէջ վանք ու եկեղեցի ունենալուն սկիզբը մինչեւ Լուսաւորչի ու Տրդատի օրերը կը հասնի (ԱՆԱ. 4), որոնք հնազհետ չատցան, այնպէս որ Անաստաս վարդապետ, ութերորդ դարուն մէջ Պաղեստին գտնուող Յօթանասունի չափ Հայոց վանքերու ցուցակ մը կրցած է կազմել (ԱՆԱ.9)։ Եկեղեցւոյ հին սովորութեան համեմատ միեւնոյն աթոռի վրայ կրկին եպիսկոպոսներ չէին գտնուեր. դաւանութիւնը նոյն էր, և տարբեր ծէսով ալ նոյն եպիսկոպոսի կը հնազանդէին, հետեւաբար Հայերն ալ տեղական Թեմակալին ներքեւ էին, և չատուկ Հայ Թեմակալ չկար, Թէպէտ կրնային վանքերու առաջնորդ եպիսկոպոսներ գտնուիլ։ Այդ պատճառով էր, որ մերթ ընդ մերթ Հայ վանականներ Ցոյն Թեմակալներէ նեղութիւն և հալածանք կը կրէին քաղկեդոնականութեան խնդիրին պատճառով։ Նախկի Արշարունիի համար ըսինք թէ սկսաւ Հայ գաղթականներուն Հայ եպիսկոպոսներ ղրկել (§ 785), բայց Երուսաղէմի Հայ եպիսկոպոսներ աւելի կանոնաւ ալ եղած պիտի ըլլան, վանքերու չատութեան և ուխտաւորներու չաճախութեան պատճառով։ Պատմութեան մէջ որոշակի յիչուած է թէ 637'ին, Էօմէրի Երուսաղէմին տիրելու պարագային, Հայ պատրիարք մըն ալ չաղթականին ներկայացած է (ԲԱՈ. 29), և չատուկ հրովարտակով ճանչցուած է իբրեւ պետ Հայոց, կամ լաւ եւս Ցոյներէն տարբեր դաւանութիւն ունեցող բոլոր արեւելեան քրիստոնեաներու (ԲԱՈ. 31)։ Էօմէրի հրովարտակին մէջ կը գտնուի Աբրահամի անունը, պատրիարք կոչումով, թէպէտեւ այդ կոչումը Հայոց կողմէ ընդունուած չէր, զի կրնար հերձուածի նչանակութիւն տալ՝ իբրեւ Հայոց հայրապետութենէ բաժանուած աթոռ, սակայն մահմետական պետութիւններ սովորութիւն ըրած են այդ անունով կոչել իրենց հպատակող քրիստոնէից եկեղեցական գլխաւոր պետերը։ Այս սովորութեան համաձայն էր Երուսաղէմի Հայ եպիսկոպոսներուն իրը պատրիարք ճանչցուիլը, և պատրիարք կոչուիլը մահմետական պետութենէն կողմէն։ Իսկ ազգային չրջանակի մէջ թէպէտ այդ անունը չունէին, բայց էին գլխաւոր պետ մը և գրեթէ կաթողիկոսական փոխանորդ մը Պաղեստինի և Ասորիքի մէջ՝ եգիպտոսի սուլտանութեան հպատակ գաւառաց վրայ։ Երուսաղէմի մէջ գտնուած չիշատակներէն 21 անուններ քաղուած են Երուսաղէմի Հայ եպիսկոպոսներուն, որոնք պահած են աթոռին յաջորդութիւնը է դարէն մինչեւ ԺԴ դարուն վերջերը (ԲԱՈ. 29—41), թէպէտեւ ցուցակը կատարեալ չէ, և ընդհատումներ ունի։ Լատիններու իշխանութեան ներքեւ ալ, որ 1099'էն մինչեւ 1187 Երուսաղէմի տիրեցին, Հայ եպիսկոպոսներու չարունակութիւնը պահուած կ'երեւի (ԲԱՈ. 36), բայց անոնց դիրքը աւելի բարձրացաւ Սալահետտինի տիրապետութենէն ետքը, որ Լատինաց

թչնամի և Յոհաննէ կասկածոտ, պէտք տե-սաւ համարձակութիւն տալ Հայերուն (ԲԱՒ. 38), քրիստոնէութեան թշնամի երեւցած չըլլալու համար։ Թուքինեան թագաւորներ մասնաւոր մտադրութիւն դարձուցին Երուսաղէմի մէջ Հայոց դիրքը բարձրացնելու կալուածներով և հարուստ ընծաներով, ո-րով նշանաւոր դիրք մը գրաւելին Հայերը Երուսաղէմի մէջ։ Իրենց կեդրոնն եղաւ Ս. Յակոբ վանքը՝ Սիոնի բարձունքին վրայ, որ աւելի ճչդութեամբ Ս. Յակոբեանք կը կոչուի, Տէառնեղբայր և Գլխադիր Յակոբ առաքեալներու անունին միանգամայն նուիր-ուած ըլլալուն համար։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐ

1262. Ս. Յակոբեանց վանքին վար-դապետները սկիզբէն իվեր նշանաւոր դէր մը ունեցած են Հայու-թեան համար, ոչ միայն Հայ եկեղեցւոյ անունը Յոհաննէս և Լատիններու հանդէպ պատշաճ պատուոյն վրայ պահել-նուն, և Հայոց ստացութիւնները հաւա-տարմութեամբ պահպանելնուն, և հետզհետէ ընդարձակելնուն համար, այլեւ ամէն պա-րագայի մէջ Հայ Ուղղափառ եկեղեցւոյ և հայազգաւոր դրութեան ամուր պաշտպաններ եղած ըլլալնուն համար։ Թէպէտ Երուսաղէմ ալ օտար դաւանութեանց հետ չիման մէջ էր, սակայն երբեմն անոնցմէ չազդուեցաւ օտարասիրութեան դգացումով, ընդհակա-ռակն աւելի քաջալերուեցաւ իր հնաւանդ դաւանութիւնը և սեփական ծէսն ու սովո-րութիւնները ամուր պահպանելու, մինչ հակառակը կը գործուէր Կիլիկիոյ մէջ։ Պատճառը յայտնի է։ Երուսաղէմի մէջ չի կար Արեւմտեայց օգնութեամբ քաղաքա-կան չահեր պաշտպանելու տեսակէտը, որ Կիլիկեցւոց գայթակղեցուցիչ հրապոյրը ե-ղաւ։ Երուսաղէմի աթոռը իր հաստատա-մտութիւնը ցուցուց Յոհաննէս առիքնե-րուն ալ, և յաղթանակաւ պահեցաւ իր դրութիւնը ճրագալոյցի լոյսին ցոլացումնե-րով (§ 1191)։ Կիլիկեցւոց ուղղութիւնը բնաւ արձագանգ չգտաւ Երուսաղէմի մէջ, և գործը իր գերագոյն նշանակութիւնը ստացաւ 1307'ի ժողովէն ետքը, երբ Սսոյ կանոնները հռչակուեցան։ Սարգիս էր այդ միջոցին Երուսաղէմի աթոռակալը։ 1281'ին աթոռ բարձրացած՝ Յակոբ Կլայեցիին օրով, ուղղամիտ և հաստատամիտ անձնաւորու-թիւն մը, ինչպէս իր գործերէն ալ յայտ-նուեցաւ։ Կոստանդին Կեսարացիի կաթողի-կոսութիւնը (§ 1246), և քիչ ետքը Օշինի թագաւորութիւնը, նոր զարկ տրուեցաւ Սսոյ կանոններուն (§ 1250), և յանձնաբարու-թիւններ ու բռնադատութիւններ (§ 1251) մինչեւ Երուսաղէմ ալ հասան, սակայն Սարգիսի և իրենները համարձակ դիմա-դրութեան հանդիպեցան, որոնք բացարձա-կապէս մերժեցին այդ որոշմանց հպատակիլ, և Սսոյ աթոռին հետ նկրքին յարաբերու-թիւնները խզեցին (ՁԱՄ.Գ.313)։ Այդ եղե-լութեան թուական դրուած է 1311 տարին, որուն կը համաձայնի Երուսաղէմի պատմա-գիրն ալ (ԱՍՏ.Ա.43)։ Սարգիս, որպէսզի կարենայ իր դիրքը ապահովել, յատուկ դիմում ըրաւ եգիպտոսի սուլտանին, որ Նասըր-Մուհամմէդն էր վերատին գահ բարձրացած, և նոր հրովարտակով զինքն ճանչցնել տուաւ իբր ինքնագլուխ պատ-րիարք Հայոց և եկեղեցական պետ Հայերու և անոնց դաւանակից ուրիշ Արեւելցիներու, ինչ որ դժուար չէր, քանի որ եգիպտացիք չէին կրնար բարեկամ ըլլալ Սիս նստող հայրապետին։ Այդ առթիւ Սարգիս սկսաւ պատրիարք անունը ազգային չրջանակի մէջ ալ գործածել, և կարմրադեղով գնիք դրոշ-մել (ԱՍՏ.Ա.201), և աւելի ընդարձակ իշ-խանութիւն վարել։

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԵՐԸ

1263. Սարգիսի գործը հերձուած մը չեղաւ, ինչպէս եղած էր Աղթամարի բաժ-նուիլը (§ 928), զի Սար-գիս չառաւ կաթողիկոս անունը, և ոչ ալ սեփա-կանից եպիսկոպոս ձեռ-նադրելու իշխանութիւնը, որուն բնաւ նշանը չկայ, և անշուշտ Սիսէ կը ձեռնադ-րուէին Երուսաղէմի եպիսկոպոսները, և ա-նոնց մէջէն կ'առնուէին պատրիարքները։ Սսոյ աթոռն ալ, որ արդէն համակերպած էր Սսոյ կանոններուն չհնազանդող վիճակ-ները իրմէ չօտարացնել, և Հայաստանի ու Փոքր Ասիոյ և նոյն իսկ Կիլիկիոյ մէջ ընդ-դիմադիրներու հետ յարաբերութիւններ չի խզել, կը բաւականանար գտնել ձեռնադրու-թեան ու միւռոնի պայմաններով յարաբե-

բութեան մէջ գտնուիլ, ներքին վարչական գործերու մասնակցութենէն ու հակողութենէն ձեռք քաշելով։ Այդ տեսութեամբ ոչ մի բողոք կամ ընդդիմութիւն կամ վերապահութիւն տեղի չունեցաւ. Սակայ աթոռին կողմէն Սարգիսի ձեռնարկին դէմ, որ գործնականապէս կատարեալ իրողութեան ձեւ ունէր արդէն, Էօմէր Խալիֆային օրէն Երուսաղէմի Հայ Հայրիարքներուն ստացած արտօնութիւններովը։ Այսպէս եղաւ Երուսաղէմի Հայ պատրիարքութեան սկզբնաւորութիւնը, որ հետզհետէ աւելի ամրացաւ և Հայ Եկեղեցւոյ նուիրապետութեան մասը կազմեց։ Իսկ պատրիարքական իրաւասութեան վիճակները կապուած մնացին Եգիպտոսի սուլտանութեան սահմաններուն հետ։ Սարգիսի պատրիարքութիւնը 32 տարի տեւած կ'ըսուի իր ընտրութ!նէն սկսելով, այլ երկու տարի միայն՝ իր պատրիարքութիւնը հռչակելէն ետքը։ Այդ միջոցին նա պարտաւորուեցաւ անգամ մըն ալ անձամբ Եգիպտոս երթալ, խափանելու համար Վրաց կողմէն եղած ոտնձգութիւնը, որոնք կ'ուզէին գրաւել Ս. Յակոբայ վանքը և տէր լինել Հայոց ստացութիւններուն։ Վրաց թագաւորին ինչ հիմամբ դիմում ընելը չգացատրեր Երուսաղէմի պատմագիրը (ԱՍՏ.Ա.202), սակայն դիւրին է նկատել, թէ Վրաց թագաւորութիւնը թափար խաներու հովանւոյն ներքեւ Հայաստանի հիւսիսային գաւառներու կը տիրէր, և այդ տեսութեամբ կրցած է ինքզինքը իբր Հայոց թագաւոր ցուցնել և Հայ ստացութեանց տէր լինելու ձգտիլ։ Բայց որովհետեւ Սարգիս իր ձեռքն ունէր Էօմէր Խալիֆային ատեն չնորհուած հրովարտակները, սուլտանն անոնց գործութեամբ հաւանեցաւ Սարգիսի պահանջին, և 1312'ին նոր հրովարտակով հաստատեց Հայոց իրաւունքները (ԱՍՏ.Ա.203)։ Միւս տարին Սարգիս կը կնքէր իր բազմաչխատ կեանքը, և Աստուածատուր կը շարունակէր անոր գործը։ Առանայի Ժողովի 1317 տարին, Աստուածատուրի մահուան և Դաւիթի յաջորդելուն թուականն է (ԲԱՒՐ.44)։ Սակայն Երուսաղէմի աթոռը միանգամ ընդ միշտ այդ խնդիրներէն մտադրութիւնը հեռացուցած էր, որով պէտք չունեցաւ զբաղիլ Կիլիկիոյ մէջ արծարծուղ լատինամոլ ձեռնարկներու հետ։ Մենք մտադիր ըլլալով Հայ Եկեղեցւոյն պատկանող բոլոր տեղեկութիւնները ամփոփել, Երուսաղէմի աթոռին գործերուն ալ տեղ պիտի տանք պատմութեանս մէջ, գլխաւոր և հանրութիւնը չհագրգռող պարագաները քաղելով։ Այսպէս է օրինակի համար Դաւիթի օրով վրաց ձեռնարկեցութեան կրկնութիւը, որ նոյնպէս վերջացաւ Հայոց նպաստաւոր կերպով, և 1319'ին տրուած նոր հրովարտակով մը հաստատուեցան Հայոց իրաւունքները (ԱՍՏ.Ա.204)։

1264. Առանայի Ժողովէն ետքը մինչեւ Օչինի մահը անցնող երեք տարիները խառն ու կցկտուր եղելութեանց միջոց մը կը ներկայեն, ուր զանազան դիպուածներ իրարու կը խառնուին, առանց իրական և կարեւոր օգուտ մը արտադրելու։ Հին Սելճուքեան սուլտանութեան բեկորներէն կազմուած տէրութիւն մըն ալ Գարամանի իշխանութիւնն էր, Հայոց թագաւորութեան դրացի, որ 1318'ին յանկարծական ասպատակ մը սփռեց մինչեւ Տարսոնի կողմերը. այլ պարտաւորուեցաւ յետս նահանջել Կոռիկոսի իշխան Օչինի գունդին առջեւ, որ կոտորեց զնոսա Աստուած և քրիստոնեայ թագաւորութիւնը (ՍՄՐ.128)։ Բայց անոնց հետեւէն կը հասնէին Եգիպտացիք, և բաւական աւերածներ կը գործէին, ու մինչեւ Սիս կը հասնէին 1319'ին։ Անգամ մըն ալ Օչին՝ պապին դէսպաններ ղրկելով օգնութիւն կը յուսար ստանալ, քանի որ անոր կամքը կատարած էր, լատինական հաւատք ու ծէս մուծանել ջանալով Հայոց մէջ, բայց այս անգամ ալ ձեռք ձգածը պարզ յանձնարարական մըն էր Գաղղիոյ թագաւորին ուղղուած (ՍԻՍ.558)։ Ծիշնիք եւս Օչինի և Կիպրոսի Հենրիկոս թագաւորի մէջ արծարծուած գժտութիւնը, հինէն տեղի ունեցած ընտանեկան վէճերու հետեւանօք (§ 1252), որք լաւ ազդեցութիւն չէին ըներ, դի քրիստոնեայ իշխանութեանց երկու մեծ յորդորները էին Հայոց և Կիպրոսի թագաւորութիւնները, և Արեւմուտք կը յուսար, թէ անոնք բաւական պիտի ըլլան վերականգնել Երուսաղէմի քրիստոնեայ թագաւորութիւնը, որչափ ալ ինքը պէտք եղած օգնութիւնը կը զլանար։ Ծովհաննէս պապ յորդորական-

ներով և քննիչներ դրկելով կ'աշխատէր առ-
ջեւն առնուլ այդ վտանգաւոր գժտութեանց,
սակայն հիմնական արդիւնք մը չէր ստանար
(ՍԻՍ· 558)։ Ծիլնք եւս անաւոր երկրաշարժը,
որ 1319'ին մեծամեծ վնասներ հասուց Ար-
եւելեան կողմերը։ Դիզարքունի գաւառին
մէջ ընկղմեց ջրաղաց մը մարդ, և Աթաթագու Ս. Թադէոսի մեծ վանքն ու
եկեղեցին ալ կործանեց, և զոռնս ելլոյ, և
չատեր աւերակներու ներքեւ թաղեց, սա-
կայն Զաքարիա արքեպիսկոպոս ջանաց ա-
ւերածները նորոգել (ՍԱՄ· 157)։ Այս այն
երկրաշարժն է, որուն մէջ Անի ալ վնաս-
ուեցաւ, և որ երդնակային անէծքին վերա-
գրուեցաւ (§ 1240)։ Կոստանդին կեսարացի
կաթողիկոսին և Օշին թագաւորին կողմէ,
յատուկ գործունէութեան նշաններ չեն երե-
ւիր այդ միջոցին։ Լատինամոլ ձեռնարկ-
ներէն յուսախաբ, և լատիններու օգնու-
թենէն ալ յուսահատ, միւս կողմէն իրենց
ուղղութենն ալ փոխելու արիութենէն
զուրկ, թերեւս և ամօթապարտ, քաչուած
և անգործ դիրք մը առած կը տեսնուին։

1265· Այդ կացութեան մէջ տեղի կ'ու-
նենայ Օշինի մահը 1320 յուլիս 20'ին (ՍԻՍ·
558), իսկ Ցայսմաւուրքի
ՕՇԻՆԻ համեմատ 19'ին (ՁԱՄ· Ա·
ՄԱՀԸ 262)։ Պարագաները յայտ-
նի չեն, այլ անողոք ախ-
տի մը հետեւանք եղած պիտի ըլլայ Օշինի
մահը, զի դեռ 37 տարեկան էր, և
ոչ ալ պատահական արկած մը կը յիշուի,
ինչպէս հանդիպած էր Ալինախ եղբօրը (§
1259)։ Միւս կողմէն Օշին իր մօտալուտ
մահը ինքն ալ զգացած պիտի ըլլայ, որ նա-
խահոգ զգուշութեամբ պէտք աւեսաւ յա-
ջորդութեան գործը կարգադրել։ Միակ զա-
ւակ մը ունէր իր առաջին կնոջմէն՝ Զա-
պէլէ (§ 1254), զի երկրորդ կնոջմէն Ծով-
հաննայէ ունեցած զաւակը սակաւակեաց եղած
էր (ԴԱՐ· 27)։ Լեւոն արքայորդին հազիւ 10
տարեկան էր (ՍԱՄ· 157), քէպէտ ումք տա-
րեկան կարծող ալ կայ (ԴԱՐ· 27), և անհնար
էր որ կարենար գլուխ կանգնել թագաւո-
րութեան, ուստի Օշին հոգայ զօրաւոր
խնամակալութիւն մը կազմել իր որդւոյն,
որ հոգան անուանել ըղձէն էր և ձառայել
հաւատարմութեամբ մինչեւ ի տան սմա, և ապա,
այսինքն քանի տարեկան եղած ատեն, յանձ-
նել զնոսա հասակաւորութեան և զգեցուցա
իւր Լեւոն (ՍԱՄ· 157)։ Ընտրուած խնամա-
կալներուն առաջինն էր Օշին իշխան Կոռի-
կոսի՝ Հեթում պատմիչի որդին և Օշին թա-
գաւորի անեղբայրը, որ այնուհետեւ Պայլ
անունը առաւ, իբրեւ առաջին և բուն խնա-
մակալ թագաւորութեան։ Խնամակալու-
թեան միւս անդամակիցներն էին Կոստան-
դին մարաջախտ՝ Օշին Կոռիկոսեանի եղբայ-
րը, և Հեթում Նղիրի իշխան՝ թագաւորա-
կան սենեկապետը (ՍԱՄ· 157)։ Ոմանք չոր-
րորդ անդամակից մըն ալ կ'աւելցնեն, Բաղ-
դովինոս կամ Բօքին կամ Պաղտին անու-
նով, այլ որովհետեւ մարաջախտութիւնը
անոր կը վերագրուի (ԴԱՐ· 28), կրնայ չփո-
թուիլ յատուկ եկած անուն մը երեւնալ,
այնպէս որ ոմանք կոստանդինի տեղ միւնակ
Պաղտինը կը նշանակեն իբր խնամակալ (ՍԻՍ·
558)։ Սակայն առաջիկային յատկապէս Պաղ-
տինի գաւակները պատմական դէպքերու մէջ
կը յիշուին։ Այսպէս Օշին յաջորդութեան
գործը կարգադրելով, կեանքը կը կնքէ տա-
կաւին երիտասարդութեան մէջ, լատինամո-
լութեամբը սերմանած գժտութիւնները, և
Հայոց դէմ դրացի տէրութեանց գրգռու-
թիւնները միայն թողլով իր եաեւէն։ Մար-
մինը սովորութեան համեմատ թաղուեցաւ
Դրազարկի մէջ (ՍԱՄ· 157)։ Օշին Կոռիկոս-
եան անմիջապէս ձեռք առաւ երկրին կա-
ռավարութիւնը, և տէր կանգնեցաւ մանուկ
թագաւորին և այրի թագուհւոյն։ Հանդի-
սապէս օծել և թագադրել տուաւ զբեռ-
քեան Լեւոն, Տարկաւ Սիսի մէջ, կեսարացի
կաթողիկոսին ձեռքով։ Թուականը թէպէտ
1321 ցուցուած է (ՍՄԲ· 128), սակայն չենք
կարծեր թէ չատ ուշացած ըլլայ, և առա-
ւաւելն յունուար 6'ին Աստուածայայտնու-
թեան տօնին թողուած կ'ըլլայ հանդիսու-
թիւնը, որ ուրիշ առիթներու մէջ ալ իբր
պատեհ օր նկատուած էր։ Օշին Պայլ իր
իշխանութիւնը աւելի զօրացնելու համար,
ամուսնացաւ այրի թագուհի Ծովհաննայի
հետ, որուն անձամբ ընկերացած էր Նէա-
պոլիսէ գալուն, և այն առենէն հաբա է ոէր
նորա (ԴԱՐ· 28), իսկ իր առջի կնոջմէն ու-
նեցած Ալիծ աղջիկը մանուկ թագաւորին
հետ ամուսնացնելով թագուհի հռչակեց, և

ինքն ալ թագաւորահայրի կերպարանք առաւ։

ՕՇԻՆ ԽՆԱՄԱԿԱԼ

1266. Օշինի ընթացքը իբրեւ խնամակալ, բանակալի հովիւ սկսաւ առնել անիրաւ գրաւումներով։ Կոռիկոսեանք շատ քէերէ ապրանք առին, որ չէր իւրեանց ահմանավաչառնէ (ՍԻՄ.340), և ինքն Օշին շահաձոյ չանքերուն, իրեն դէմ հզօրները եւ օգնականներ առնել, և շատը հալածել (ԴԱՐ.29), և իրեր հակառակութիւններուը կը չատնային, ինքն զօրութեամբ կը ճնշէր։ Քաղաքական ուղղութեամբ ալ կատարելապէս լատինամոլ ընթացքին կը հետեւէր, և Յովհաննէս պապ ուղղակի անոր հետ կը թղթակցէր, Օշին մինչեւ այն կէտը կը հասկնէր չողոքորթութիւնը, որ Կոռիկոսի եպիսկոպոս մըն ալ հաստատելու համար պապին կը դիմէր (ՍԻՄ.340)։ Այս ամէնը լեւոն Ե՛ի անուանական թագաւորութեան առաջին երկու տարիներուն մէջ կատարուած իրողութիւններ են։ Փափաքելի էր որ իրեր ներքինը բարեկարգ չէր, գոնէ արտաքինը հանդարտ ըլլար. մինչ ընդհակառակն, որչափ Հայերն դէպ արեւմուտք կը միտէին, այնչափ Եգիպտացիք իրենց թշնամութիւնը կը աստակացնէին, և նոյն փաստով թաթարներուն ալ աչքին կասկածաւոր կը ցուցնէին Հայերը։ Այս կերպով կը կազմուէր այլազգիներու համերաշխ գործակցութիւնը Հայերուն դէմ, Թիմուրթաշ Թաթարը հիւսիսէն, Ամիրօմար Թուրքը արեւելքէն, և Նասրը-Մուհամմէտ սուլտան հարաւէն։ Թիմուրթաշ առաջին անգամ քարոզանդ ըրաւ կիւիլիան, ուր նշանաւոր Հայ զօրավարներ ալ սպանուեցան, կիօղին տէր կանչոյ՝ Օշինի եղբայրը, Հեթում իշխան Զկիանոցի, Կոստանդին անոր եղբայրը, վահրամ Լօսիկ, Օշին՝ Կոստանդին մարաջախտի որդին, և ուրիշ 21 նշանաւոր ասպետներ (ՍՄԲ.130)։ Իսկ Եգիպտացիք Ասյաս զօրաւոր բերդին վրայ թափելնին իրենց ոյժը, և մնծամնծ աւերներ հասուցին, և աւարով ու գերութեամբ հետ դարձան։ Օշին խնամակալ և Կոստանդին կաթողիկոս Յովհաննէս պապին դիմելնին նորէն, իսկ սա ժողով գումարեց Հայոց օգնելու համար, ուր հարկաւ նախապէս անոնց դատաստութիւնը քննեցին իբր պայման։ Ապրիլեան հղաւ որ պապը 1322 դեկտեմբեր 26'ի կոնդաձով բոլոր քրիստոնեաները կը հրաւիրէր Հայոց համար աղօթելու (ՍԻՄ.558), բայց զինուորական և նիւթական օգնութիւն չէր հասցընէր։ Կաթողիկոսն ու խնամակալը չատ աւելի օգտակար գործ ըրած պիտի ըլլային, եթէ Հայոց ներքին անհամաձայնութեանց պատճառները վերցնելու աշխատէին, որով հետեւ օտարներուն խակ աչքին զարկած էր, թէ եկեղեցական իշխանութիւն էր ի ձեռ նոցա, և անիշխանութիւնն ընդ միմեանս՝ ընդ միմեանս կռուելին և ի միմեանս վնասելին (ՁԱՄ.Գ.321)։

ԿՈՍՏԱՆԴԻՆԻ ՄԱՀԸ

1267. Կոստանդին կեսարացի կաթողիկոս ծերացած էր արդէն, և չէր կրնար անընդդէմ մնալ այլ եղերականներու հանդէպ, զի խիղճն ալ պէտք էր վրդովուէր. թէ լաւ ծառայութիւն մը չէր ըրած ազգին և եկեղեցւոյն, իբր լատինամոլ ուղղութեամբը, և հրկպատակութեանց որոմը աճեցնելով։ Մահը տեղի ունեցած կ'ըլլայ 1323'ին, զի 16 տարի տեւողութիւն տրուած է անոր կաթողիկոսութեան (ՍԱՄ.155), որ սկսաւ 1307'ին (§ 1245)։ Ըստ այսմ 1323 տարին եղած է յայտորդին թուականը (ՍԱՄ.158), ինչպէս ալ ուրիշ տեղ 1322 գրուած ըլլայ (ՍՄԲ.130)։ Կը կարծենք թէ այդ տարբերութիւնը չուտով կը համաձայնի, կեսարացիին մահը 1322'ին վերջը դնելով, զի է փնի Մնձեան որ է յունուար 6'ին, կը դրուի յայտորդին կաթողիկոսանալը (ՍՄԲ.130)։ Կեսարացիին վրայ դատողութիւններս առիթ ունեցանք յայտնել պատմութեանս ընթացքին, թէ իրաւամբ իրեն տրուած է առաջին պլնբմ ի Սիս (ՍԱՄ.152) կոչումը, և Կոստանդին Հեթում-Յոհաննէսմակդիր անունը (ԴԱՎ.335), որովհետեւ ինքն եղաւ, որ պաշտօնական ձեւ և գործադրական ոյժ տալ աշխատեցաւ այն ամէն նորութեանց՝ զորս իւր նախորդը իբր ծրագիր և առաջարկ մէջ տեղ հանած էր։ Ընդհանուր կարծիքով Անաւարզեցին է, որ սաստիկ կը դատափետուի իւր լատինամոլ ընթացքին համար, սակայն սոյգը ուզելով ըսել, Անաւարզեցիին ըրածը չատ կը թեթեւնայ կեսարացիին գործին հանդէպ, զի գոնէ Անաւարզեցին չհամարձակեցաւ իւր

ծրագիրին գործադրութիւնը պահանջել ժողովական որոշումէ առաջ, ուր կը կարծէր միաժամաքար բոլոր եպիսկոպոսներն ու վիճակները համոզել, մինչ կեսարացին անկանոն ժողովներով և անտեղի ճանապարհներով ուզեց պաշտօնական գործութիւն կազմել, և անոնց կրճնելով քաջալերեց Օշինի բռնական ձեռնարկները (§ 1251)։ Այս առթիւ անգամ մըն ալ պիտի կրկնենք, թէ պէտք չէ կեսարացին կաթուլիկոսին հետ չփոթել (§1245), և ոչ ալ Կոստանդին Բ կաթուղիկոսին, առաքինի հայրապետին և խոնարհամիտ հրաժարողին, օրինակ յիշատակը աղարտել, Կոստանդին Գ կեսարացիին նման մէկու մը գործերը անոր վերագրելով։

ԳՐԻԳՈՐ ԿԱՐՆԵՑԻ

1268. Ժամանակին նշանաւոր անձնաւորութիւններէն պիտի յիշենք կարնոյ եպիսկոպոս Գրիգորը, որ վկայութեամբ նահատակուած է 1321 յունիս 20'ին շաբաթ օր, որ այն տարի ելն ի վիրապէ յիշատակը կ'իյնար, թէպէտ Ծայսմաւուրքը յունուար 29'ին դրած է, չարժական և անշարժ տոմարներուն համամասնութեան չփոթութենանց պատճառով (ՆՈՐ. 128)։ Թխմուրթաշ Թաթար գօրավարը, որ երկաթաքար կը թարգմանուի (ՆՈՐ. 122), կիլիկեան աւերիչն եղաւ (§ 1266), կեսարացիին վրայէն կարին անցաւ, և քաղաքին Գրիգոր եպիսկոպոսին և անոր հօրեղբայրը տէր Պապ քահանային վրայ սկսաւ բռնանալ եկեղեցիները կողոպտելու համար, և մինչեւ իսկ իւր հրամանով ըմբռնելէն ետքը կապել ընկճողին անունք (ՆՈՐ.123), իսկ եպիսկոպոսը մէկտ իւր հաստատամտութիւնը յայտնելէ չի կասեցաւ, այս պատճառով երկար տանջելին զայն սաստիկ գանակոծելով, չխղերը կտրելով, և աղով վէրքերը չիելով, որոնց արիւնքամբ համբերեց եպիսկոպոսը։ Բանտարկութեան աեւն գաղտնի կերպով յաջողեցաւ հաղորդ բերել տալ՝ ձաչակ առնել և մահուան պատրաստուիլ, ինչ որ տեղի ունեցաւ գլխատմամբ քաղաքին հրապարակը։ Մարմինը երեք օր բացի թողուելէն ետքը, հրաման եղաւ թաղել, և ամփոփուեցաւ Ս. Սարգիս եկեղեցւոյն գովը (ՆՈՐ.127), որ այժմ չկայ, բայց այս անունով այսօր ալ աւերակի տեղ մը կը ցուցուի քաղաքին մէջ։ Իսկ քաղաքին գլխաւոր եկեղեցին Ս. կաթողիկէ անունով կը յիշատակուի (ՆՈՐ.124)։ Ժամանակակից ուրիշ վկայ մըն ալ կը յիշուի, Զուտաս անունով, որ պոլսեցի հասակէ պատանի չանօթինց և խառնեցաւ ընդ մարդիկս, ինչպէս կը գրէ իւր եղբայրն Սարգիս աբեղայ, հաւաքածոյի մը յիշատակարանին մէջ, զոր գրած է 1317'ին Վայոցձորի Գայլնձոր վանքը (ՍԻՆ.133)։

Տ. ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ. ԼԱՄԲՐՈՆԱՑԻ 1323-1331

ՆԱԽԸՆԹԱՑՆ ՈՒ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

1269. Կեսարացիին յաջորդը համանուն մըն է, Սսոյ եպիսկոպոս Կոստանդին Լամբրոնացի, որ հռոմեադէմ նախընթացին փառքին նախանձ և շատ ի պէտս Սիսոյ կաթուղիկոս օծուած է ի փետ Մինգեան, զոր համեմատականք 1323 յունուար 6'ին (§ 1267)։ Լամբրոնացի կոչումը, ծննդավայրէ առնուի ազգատոհմի անուն կը կարծենք մենք, զի պաշտօնը յիշատակելէ ետքը ծնունդները չի յիշեր պէտք չէր ըլլար, և այն ալ ոչ թէ ի Լամբրոն փոքր իմաստով, որչափ պատուոյ մականունի ձեւով։ Դրազարկեցի ալ կոչուած է (ՀԱՔ.535), անշուշտ Դրազարկի առաջնորդ ըլլալուն համար, որ սովորաբար Սսոյ եպիսկոպոսութեան յարակից պաշտօն մըն էր։ Իսկ Սսոյ եպիսկոպոս ըլլալը կը ցուցնէ, թէ նոյնինքն է, որ Սսոյ (ԿԱՀ.458) և Ատանայի (ԿԱՀ.503) ժողովներուն մէջ նախապատիւ եպիսկոպոսներէն մէկը, և պաշտօնին բերմունքով և անձնական ձգտումով կեսարացիին գործակիցներէն եղած է, և անշուշտ այդ պարագային ալ կը պարտի անոր յաջորդութեան կոչումը։ Կաթողիկոսարանին Սսոյ մէջ հաստատուելէն ետքն ալ, Սսոյ մէջ թեմակալ եպիսկոպոս

մը գոնուիլը կը ցուցնէ, թէ կաթողիկոսներ Հռոմկլայէ բռնի հեռանալնէն ետքը, Սիսը իրր բուն աթոռանիստ չէին նկատեր, թէ ոչ Սսոյ մէջ ուրիչ թեմական գոնուելու չէր։ Կոստանդինի ուղղութեան գալով, ան ալ իւր նախորդին նման լատինասիրութեան հակամէտ մը պէտք ենք ճանչնալ, թէպէտեւ իւր օրով նախանձայոյզ գործունէութեան փորձեր եւ բռնադատութիւններ չկրկնուեցան։ Կոստանդին աւելի քաղաքական գործերու հետամուտ անձ մը կը տեսնուի, և պարագաներր կ'ուզեմով յարմարագոյն եւ օգտակարագոյն ընթացքին հետեւող։ Լատինական օգնութեանց վրայ վստահութիւնը նուազած ըլլալուն, և անոնց անզօրութեան համոզուելուն հետեւանքն է անշուշտ, որ Կոստանդին Լամբրոնացի, Ընդեր ծեզ և գոչ տեսիւ, այսու հանդերձ անմիջապէս ջանայ և հնարէ վերադարձնել զայն երթալ ի Մերձ սահմանն (ՀԱՒ.535), այսինքն է չեզէպոս սահմանն (ՍԱՄ.158), և իրր բանագնաց հաչտարար խաղաղութիւն կը կնքէ անոր հետ։ Խաղաղութիւնը կը հաստատուի 15 տարուց պայմանաժամով, Հայոց կողմէ հարկի գումար մը վճարելու, և եգիպտացւոց կողմէն քանդուած բերդերնին վերաշինելու պայմանով (ՍԻՄ.558)։ Բայց դժբախտաբար տեւական չըլլար այդ խաղաղութիւնը, որ կնքուեցաւ 1323'ին, Կոստանդինի կաթողիկոսութեան առաջին տարին։

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ԽՆԱՄԱԿԱԼ

1270. Օշին խնամակալին բռնական ընթացքը յիշեցինք արդէն (§ 1266), որ հետզհետէ կը չարունակէր և կընդարձակուէր, այնպէս որ արքունական անձերու վրայ ալ ձեռք պնելու կը յաւակնէր, և նոյն իսկ թագաւորին հօրաքոյրը, Օշինի քոյրը, Ամաւրի Լուսինեանի այրին Զապլուն տիկինը մնոտի բարուբանքներով չորս զաւակներուն հետ բանտարկել կուտար, մայրերնին կը հրամայէր խեղդել, և զաւակներէն Հուդոնր թունաւորել, և Հենրիկոսը անօթութեամբ և ծարաւով սպաննել, մինչեւ իսկ փոլ Նմա Ղէ յոբեոն, ևթէ պիտի հաւատանք Դարդէլի հաւաքած բերանացի լուրերուն։ Իսկ վերջին երկու զաւակները, որ չատ պզտիկ էին, Ջիւանն ու Պէմունդը աքսորել կուտար, և անոնք ալ կ'ապաւինէին Հռոդոս՝ Հիւրընկալ ասպետներուն մօտ (ԴԱՐ.29)։ Միջին զաւակը Գուիտոն, կիլիկիայէ դուրս կոստանդնուպոլիս կը գոնուէր (ԴԱՐ.32), իւր մօրաքրոջ Ռիթա կայսրուհուոյն մօտ, որով ազատ կը մնար Օշինի բռնութենէն։ Բայց ինքն Օշին խնամակալն ալ ցաւերէ ազատ չէր ըլլար, իւր սիրուհուոյն ու ամուսնոյն Յովհաննայի մուռնելովը, ուակից ազգիկ մը միայն ունեցաւ Մարիամ անունով։ Այդ եղելութիւնք տեղի ունեցան միեւնոյն 1323 տարին։ Այդ միջոցին չէին դադրած Հայերու և Լատիններու յարաբերութիւնները, փոխոխ դեսպանութիւնք և խղճակցութիւնք կը չարունակէին, ինչ որ չէր կրնար եգիպտացիներու աչքէն վրիպիլ, որոնք միտուրնին դրած էին Լատիններուն հետքերը Արեւելքէն ջնջել։ Ուստի խաղաղութեան դաչինքէն հազիւ տարի մը ետքը, 1324'ին, նորէն սկսան եգիպտացիներու կողմէն արչաւանքներ ու ասպատակներ, թէպէտեւ ոչ բնդհանուր կերպով։ Այլ պատահական յարձակումներն ալ բաւական էին Հայերը նեղելու, և խաղաղութեան արդիւնքները խանգարելու։ Պայմաններուն դրժել մրն էր այս եգիպտացիներուն կողմէն, որչափ ալ միւս կողմէն հնար չէ արդարացընել Հայերուն անհեռատես յարաբերութիւնները։ Կոստանդին Լամբրոնացին պէտք չէ հաճութեամբ տեսած ըլլայ իւր գործին խանգարումը, թերեւս համամիտ ալ եղած չըլլայ լատինական յարաբերութեանց, որոց դէմ բացարձակապէս ընդդիմանալու կ'արգելլուէր իւր նախընթացով։ Մենք կը բաւականանք նկատի առնել, թէ Հռոմի և Ալեքսանդրիոյ հետ յարաբերութեանց մէջ բնաւ Կոստանդինի անունը կամ մասնակցութիւնը չէիշուիր. և ամէն բան Լեւոնի և Օշինի անունով կը գրուի ու կը գործուի։ Ակռ կը համարձակինք հետեւցնել, թէ Կոստանդին Լամբրոնացին պէտք է իւր լատինասիրութենէն պաղած, և չեզոք դիրքի մէջ ամփոփուած ըլլայ ընթացիկ գործառնութեանց մասին։ Օշինի և Լեւոնի դրկած դեսպաններէն չատեր՝ իրաւ եկեղեցականներ էին, Բարսեղ եպիսկոպոս Տարսոնի, եղբայր Թադէոս կրօնաւոր, Թադէոս եպիսկոպոս կա-

ֆայի և ուրիշներ, սակայն անկէ չհետեւիր Կոստանդինի ալ գործակցութիւնը, զի եկեղեցականներն ալ ուղղակի արքունեաց տրամադրութեան ներքեւ էին, առանց հայրապետի միջնորդութեան։

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԱՀԸ

1271. Կոստանդին Լամբրոնացիի պաշտօնավարութիւնը երկար չեղաւ, հազիւ թէ չորս տարի, և այն ալ ալեւոր տարիքի մէջ, երբ իսկ մեծ գործունէութիւն ալ չէր սպասուեր։ Վախճանը առիթ ունեցած է բնական մահուամբ, զի ոչ մի մասնաւոր պարագայ յիշուած չէ այս մասին։ Սմբատի չարունակողը 1326'ին կը դնէ Կոստանդինի մահը, և 1327'ին յաջորդին ընտրութիւնը։ Անեցին չարունակողը 4 տարի կաթողիկոսութիւն կու տայ, հարկաւ թէ օրը օրին լրացած, որով կրնայ արդարանալ 1326'ին Կոստանդինի մեռնիլը, և յաջորդ տարւոյն սկիզբը յաջորդին նստիլը, ինչպէս որ Լամբրոնացին ալ 1323'ին առաջին օրերը կաթողիկոսացած էր (§ 1267)։ Ասոր ալ գերեզմանը եղած է Դրազարկի վանքը, որուն առաջնորդութիւնն ալ վարած էր։ Տարօրինակ պարագայ մը կը յիշէ Սմբատի չարունակողը թաղման առթիւ։ Երբոր, կ'ըսէ, բացին զնդանը փէր Կոստանդին Բաբգբերդցի կոնդակոսին, նա՛ փառ ղազարեան փառ, և ղողվին խայտին չին, և ջուռաղանն և ջուն, և ոսկր ոսկեին փառ։ Առաջին դիտելու կէտն այն է, թէ ինչո՛ւ և ինչպէ՛ս յառաջագոյն վախճանած կաթողիկոսի մը գերեզմանը կը բանան։ Պատմիչը չըսեր որ նոյն գերեզմանին մէջ նոր վախճանած կաթողիկոսը պիտի դնէին, ինչ որ հաւանական ենթադրութիւն մըն է, բայց տարօրինակ սովորութեան մը օրինակ կը ներկայանայ։ Միւս կողմէն դիւրին ալ չէ պարզ հետաքրքրական նպատակ մը ենթադրել, նախնեաց ոսկերոտիքը դնելու կամ տեղափոխելու համար, վասն զի այն ատեն պէտք չէր ըլլար ուրիշ կաթողիկոսի մը մահուան սպասել, մինչ Բաբգբերդցիին գերեզմանը բացած են, յօժար ժամ փէր Կոստանդին Լամբրոնացի կոնդակոս, և փառն է Դրազարկն։ Իսկ գերեզմանին մէջ եղած նիւթերէն ոմանց մնալը, իւրաքանչիւր նիւթին տեւողութեան հետեւանքն էր, թաղուելէն 60 տարի ետքը դիմանալու չափ։ Միայն սքանչելիք կարծուած է ոսկր չգտնուիլը։ Իրաւ ոսկրներն ալ կրնան հողին մէջ փտիլ, այլ դժուարաւ 60 տարուայ միջոցին մէջ. բայց նէթէ չատ տկարակազմ եղած ըլլան, ինչ որ չենթադրուիր Բաբգբերդցիին պէս երկարատեւ աշխատութեան դիմացող անձի մը վրայ (§ 1143)։ Ժամանակակիցներուն մասին ըսուած է, թէ ֆառ փառն Աստուածոյ, որ առնէ տանջելիս է առբս (ՍՄՐ. 139), որոնք թերեւս մարմնոյ վերափոխում մը մեկնած ըլլան։ Իսկ մենք անմիջականալի պարագայ մը կը տեսանենք, և անհիմն դրոյցի մը արձագանգ կը կարծենք պատմուածը։

Տ. ՅԱԿՈԲ Բ. ԱՆԱԻԱՐՋԵՑԻ 1337 – հին 1341

1272. Կոստանդին Լամբրոնացիի մահը 1326'ին, և յաջորդին ընտրութիւնը 1327'ին նշանակուիլը (ՍՄՐ. 130),

ՆԱԽԸՆԹԱՑՆ ՈՒ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

իրաւունք կու տայ հետեւցնել, թէ 1327'ին սկիզբները, և թերեւս նոյն իսկ Աստուածայայտնութեան տօնին, կատարուեցաւ Յակոբ Բ կաթողիկոսի օծումը։ Իւր նախընթացին համար կը յիշուի, թէ եր ֆոյբրդէ փէր Գրէգոր Տարսեցոյն (ՍՄՐ. 130), որով կը նոյնանայ նոյն այն Յակոբ եպիսկոպոսի հետ, որ ֆառեբրդէ փէր Գրէգոր կոնդակոսի կոչմամբ ներկայ եղած էր Սսոյ ժողովին (ԿԱՂ. 459), բայց չէ յիշուած Ատանայի ժողովին մէջ։ Թերեւս յետոյ վիճակաւոր ղրկուած է, և նոյն ինքն կապանի Յակոբ եպիսկոպոսն է (ԿԱՂ. 504), որ ստէպ Արեւմուտքի դեսպանութեանց ալ գործածուեցաւ (ՍԻՍ. 558)։ Իսկ վերջին պահուն կը ներկայանայ իբր պետեղնոպոս Անասար-

ը» (ՍՄՐ. 130), մինչ Ատանայի ժողովին մէջ՝ Յովհաննէս էր Անարզապայ եպիսկոպոսը (ԿԱԼ. 505) և Ծակոր անոր յաջորդը եղած պիտի ըլլայ։ Այդ տեսութեամբ Ծակոր նախ կաթողիկոսարանի ծառայած, յետոյ կապանի, վերջէն Անարզաբայ եպիսկոպոսութիւնները վարած ըլլալով, կը հաստատուի թէ Հայ եկեղեցւոյ նուիրապետութեան մէջ ընդունուած էր աթոռէ աթոռ անցնելով բարձրանալու դրութիւնը։ Ծակոբ սովորական կիրառութեան մէջ՝ Տարսոնացի և Սսեցի և Անաւարզեցի կոչուած է անխտիր, իսկ մինչ այդ վերջինը նախադասեցինք իբր մակդիր անուն, որ իւր վերջին թեմակալութեան հետ, Գրիգոր Անաւարզեցիի հետ ազգակցութիւնն ալ կը չօշափէ։ Ծակոբ կաթողիկոսութեան բարձրացած է անչուշտ Լեւոնի և Օշինի պաշտպանութեամբ. իսկ իբր արժանիք սեպուած են իրեն Անաւարզեցիին ազգակցութիւնը և լատինասէր ուղղութեան ծառայութիւնները, որոնց կարգին կը միտինք համարել Ակեւմուտքի դեսպանութիւնները։ Այսու հանդերձ Ծակոբ չէ եղած այն մոլեռանդ լատինասէրը, ինչ որ եղած են Կոստանդին կեսարացին, և պէտք եղած խոհականութիւնն ունեցած է անսանձ լատինամոլութիւնը զսպելու ձեռնարկելով։ Լատինասէր ուղղութիւնը ժամանակին իբր քաղաքագիտական միջոց մը ըմբռնուած էր երկրին և թագաւորութեան պաշտպանութեան համար, և այդ դիտումով լատիններուն տրուած համարձակութիւնները զանոնք աւելի ըրած էին արքունիքին և հայրապետանոցին և ընդհանուր կացութեան, չնորհիւ ազգակցութեանց և խնամութեանց, և զօրութեամբ ամէն կողմ ցրուած լատին կրօնաւորաց, մինչեւ իսկ արքունիքի խորհրդականութեան մէջ։ Այդ դրութեան ներքեւ աթոռ բարձրացող կաթողիկոսը, որ ինքն ալ այդ ուղղութեան ծառայողներէն եղած է իւր նախընթացին մէջ, չէր կրնար բացարձակապէս խզել իւր կապերը և փոխել իւր ընթացքը. և մեր տեսութեամբ իբր արժանիք կը պարտաւորինք նկատել Ծակոբի վրայ, եթէ կրցաւ մինչեւ մէկ աստիճան սորկաբար չծառայել լատինամոլ գաղափարին; և համարձակութիւնն ալ ունեցաւ աթոռէն ալ հրաժարիլ, իւր ժառանգրութիւնէն չչեզուելու համար։

1273. Երբոր Կիլիկիոյ մէջ այդ կացութիւնը կը տիրէր, լատինամոլ դրութեան նոր և աւելի բուռն հոսանք մը կը սկսէր Արեւելեան գաւառներէն, որ մինչեւ այն ատեն աւելի զերծ մնացեր էին անոր ազդեցութենէն, գոնէ Հայաստան մէջ։ Յովհաննէս իր պապէն կազմակերպուած հռոմէադաւան արշաւանքը, որչափ ալ հայազատանութեան դէմ ուղղուած, սակայն իւր կեդրոնը մի քիչ հեռու հաստատած էր Սուլտանիայի մէջ (§ 1241), ուրկէ հետզհետէ իւր ազդեցութիւնը կը տարածէր չրջակայ գաւառներու վրայ։ Բարթողիմէոս Գոնոնիացի, Մարազայի լատին էպիսկոպոսը, գիտութեան և կարողութեան մեծ հռչակ հանած էր այն կողմերը, ղի կրօնական ուսմանց կը միացնէր բնագիտական և աստեղագիտական հմտութիւններ ալ, այնպէս որ Գայլեռոր վանքը վարդապետող Եսայի Նչեցին ալ (§ 1241), կը հետաքրքրուէր անոր գիտութիւնէն օգտուիլ, և 1328'ին Գայլեռորէն Մարազա կը ղրկէր իւր աշակերտներէն Յովհաննէս Քոնեցի վարդապետը, որ երթայ ու ուղեկանայ, և ինչ որ օգտակար կը գտնէ, համբարէ ու դառնայ։ Ընդհանրապէս այդ քայլը Նչեցիին նախաձեռնութեան կը վերագրուի (ՉԱՄ. Գ. 326), սակայն նկատելով որ Քոնեցին չեր չորէր ---րդ, ա՛ն հնալեզուագէտ Հոմայ եկեղեցւոյն հոգով եր չինէն (ԿԱԼ. 510), անտեղի չէր ըլլար հետեւցնել, թէ Քոնեցին ներքին նախապատրաստութեամբ կ'երթար Մարազա, և բուն միտքը ծածկելով կը յաջողէր վարդապետին հանանութիւնը ընդունիլ, և կը մեկնէր հայրենակից Ծակոբ վարդապետին հետ։ Քոնեցիին այս ներքին մտադրութիւնը կատարելապէս կը քաղուի իւր իսկ գրիչէն եղած խոստովանով (ԿԱԼ. 518)։ Տարիուկէս մնաց Մարազա, և Բարթողիմէոսէ և անոր Պետրոս ու Յովհաննէս ընկերներէն սորվեցաւ լատին լեզուս և լատին աստուածաբանութիւն, ինչն ալ փոխադարձաբար անոնց հայ լեզուս սորվեցուց, և միանգամայն Հայոց մէջ հռոմէադաւանութիւն տարածելու

միտքը մչակեց և միջոցները հոգալու զբաղեցաւ։ Այդ միջոցներէն մէկն ալ իւր աշակերտակիցներէն իրեն համամիտներ որսալն էր, անոնց աչքին առջեւ փայլեցնելով արեւմտեան գիտութեան առաւելութիւնները, և լատին աստուածաբանութեան արուեստակեալ ձեւերը, որոց մէջ գլխաւոր տեղ կը բռնէին Բարթողիմէոսի քարոզնեբուն և գրուածներուն հայերէն թարգմանութիւնները։ Ջանեցին յաջողեցաւ իւր միտքին յանկուցանել, իւր քեռին Գէորգը, որ Ջուանայի գիւղաւագն էր, և տիկին էլ-թիկ քեռկինը, որպէս զի նիւթականով նպաստեն յատուկ Հայ վանք մը հիմնել, և համամիտներով անոր մէջ կեդրոնանալ, և անկէ տարածել իրենց գործունէութիւնը Հայաստանի ներքին գաւառներուն վրայ։ Այդ նախահոգ միջոցները կարգադրելէն ետքը, Յովհաննէս Ջանեցին առջեւ կ'իյնար և վատահօրէն Բարթողիմէոսը Ջանա կ'առաջնորդէր գործին ձեռնարկելու համար։ Իրեն հետ կը դառնար Յակոբ Ջանեցին, և Բարթողիմէոսի հետ էր Պետրոս Աբագռնացին, հայերէնի մէջ աւելի զարգացած լատին կրօնաւորը։ Այդ եղելութեան թուական նշանակուած է 1330 տարին (ԿԱԼ.510)։

ՈՒՆԻՔՈՐ ՄԻԱԲԱՆՆԵՐ

1274. Գէորգ իշխան, Ջուանայի գիւղաւագը, զինքն կատարելապէս իւր քեռորդւոյն և անոր բերած անձերուն սրամադրութեան ներքեւ դրած էր, անոնց բոլոր նիւթական պէտքերն հոգալով, այնպէս որ հնար եղաւ 60 օրուան մէջ, նոր եկեղեցի մը չինել յանուն Ս. Աստուածածնի, և յարակից վանք մը լատին ոճով, և այն տեղ հաւաքել Ջանեցիին չահուած վարդապետները, որոնցմէ 12'ը անունով յիշուած են, և են. Յակոբ Ջանեցի, Մարգար Օծոպեցի, Հայրապետ Եօթնաղբիւրցի, Յովհաննէս Ծուանցի, Սիմէոն Բասենցի, Ներսէս Տարոնեցի, Առաքել Արտաղեցի, Լալ Արտաղեցի, Գրիգոր Ապրակունեցի, Կոստանդին Կաղզուանցի, Յովհաննէս Կաղզուանցի, և Սիմէոն Խաչէնցի (ԿԱԼ.519)։ Այս առթիւ Բարթողիմէոս Մարազայի եպիսկոպոսութենէն Նախիջեւանի արքեպիսկոպոսութեան բարձրացաւ, և ճանչցուեցաւ իբրեւ գլուխ և առաջնորդ նոր կազմուած միաբանութեան, որուն լատին բառով Ունիթոր (Unitor) անունն ալ տուաւ, որ կը նշանակէ Միաբանող, Հայ եկեղեցին Լատինին հետ միացնելու իմաստով։ Յատուկ կանոնագրութիւն մըն ալ կազմեց Ս. Օգոստինոսի կոչուած կանոնին հետեւողութեամբ, որ Դոմինիկեանց կանոնին ալ նախատիպը եղած էր, որով Քարոզիչ Դոմինիկեանց ճիւղ նկատուեցաւ Միաբանող Հայոց միաբանութիւնն ալ, որոնք Դոմինիկեանց սքեմն ալ առին, ճերմակ կապայով ու սեւ փիլոնով, և պապական հաստատութեամբ ալ վաւերացուցին իրենց կանոնագրութիւնը (ԿԱԼ.512)։ Գլխաւոր և առաջին ջանքերնին եղաւ լատին գիրքեր հայացնել, թէ միտքերը գրաւելու, և թէ նոր դրութիւնը ամրացնելու համար, և ոչ միայն կրօնական գիրքեր թարգմանեցին, այլ և լատին ծիսարաններն ալ հայերէնի վերածեցին, և կիրառութեան մտցուցին իրենց չրջանակներուն մէջ։ Այդ աշխատութեանց մէջ Բարթողիմէոսի օգնեց Եղբայր Պորտիոս (Frater Portius) անուն հայագէտ փրանկիսկեան կրօնաւոր մըն ալ (ԿԱԼ.512)։ Իսկ Եսայի Նչեցին իւր ալեւորեալ տարիքին մէջ, ցաւով տեսաւ Ջանեցիին ընթացքը, և յատուկ գրութեամբ աչխատեցաւ զայն խրատել և անոր մոլեռանդութիւնը մեղմացնել, նիւթ ոչ իսպառ կասեցնել, յանձնարարելով «Լ նֆել չանֆլման էրէոզ չինակնոց» (ՁԱՄ.Գ.327)։ Ըստ այմ կամայական պէտք է կարծել ոմանց ըսելը, թէ Նչեցին իւր կեանքին վերջերը միտքը փոխած և լատին կրօնաւորի տարազ առած ըլլայ (ՍԻՆ.132), մինչ յայտնի են լատին եկեղեցին յատագովողներուն դէմ անոր դրած զանազան թուղթերը (ՍԻՆ.132)։

ՀԱԿԱՌԱԿ ՋԱՆՔԵՐԸ

1275. Յակոբ կաթողիկոս ալ պէտք տեսաւ գրել Ջանեցիին, 1332 մարտ 6'ին, ուր թէպէտ չդատապարտեր գիտութեանց փափաքով օտարներու դիմելը, այլ կը զգուշացնէ օտարամուտ ծէսերու և դաւանութիւններու կիրառութիւնը (ՍԻՆ.384)։ Հակառակ այդ խրատներու Ունիթոր միաբանութիւնը բուռն գործունէութեան ձեռնարկեց, անարգելով

ինչ որ հայածէս սովորութիւն էր, մոլորութիւն համարելով ինչ որ հայադաւան վարդապետութիւն էր, մինչեւ իսկ անվաւեր ու չհղեալ նկատելով ինչ որ Հայ եկեղեցիէ պաշտուած խորհուրդ էր։ Բարթողիմէոս եւ դաւ այդ սկզբունքներուն հիմնադիրը, բայց այդ երեսէն նեղութիւնից հանդիպեցաւ, և վերջէն ճարտար կերպով ջանաց ծայրայրդութիւնները աւժամաբար չափաւորել։ Այսպէս անցան Ունիթորներու առաջին երեք տարիները 1330'էն 1333, որ տարին վախճանեցաւ Բարթողիմէոս օգոստոս 15'ին, իրեն յաջորդ ցուցնելով Յովհաննէս Բունեցին։ Եսայիի մահն ալ նոյն միջոցին տեղի ունեցած է ալեւորեալ տարիքի մէջ (ՍԻՆ. 384)։ Թէպէտեւ ոմանք մինչեւ 1338 կը յետաձգեն նորա վախճանը (ՍԱՄ. 168)։ Կարեւոր լեհիկոպոս մըն ալ կը յիշուի Գրիգոր անունով, բաժակին ջուր խառնելու համար ժողովուրդէն սպանուած, 1326 տարին (ՍԱՄ. 167)։ Սակայն այդ թիւին դեռ Ունիթորներ ոյժ չունէին, ուստի կամ ուղղելու է գրուած թուականը, և կամ Գրիգորի ըրածը անձնական նախանձոտութիւն մը կարծելու է։

ԼԵՒՈՆԻ ՋԵՌՆԱՐԿՆԵՐԸ

1276. Երբոր Հայաստան նոր հղելու թեանց երեսէն կը յուզուէր, Կիլիկիա ալ աղմկալից դիպուածներու ասպարէզ կը դառնար։ Օշին Թագաւորի նշանակած խնամակալութեան տասնամեայ պայմանաժամը կը լրանար 1329'ին, և Լեւոն Թէ քանի՛երորդ տարին թեւակոխելուն պէս, բուռն կերպով ձեռք կ'առնէր գործերը, իբրու մէկ մը որ սասթիկ ճնշումէ ազատելով յախուռն գործերու կը ձեռնարկէ, և երկար տարի սիրտին մէջ զսպուած ցասումն ու վրէժխնդրութիւնը յանկարծ դուրս կը պոռթկացնէ։ Իւր առաջին գործը եղաւ ձերբակալել տալ խնամակալ Օշին Պայլը, որ իւր մօրեղբայրն ու աներն էր միանգամայն։ Խնդրակները անոր կը հանդիպին Առանայի մօտ, երբ Տալսոնէ Սիս կու գար, և կը բանտարկեն Մօօթու վանքը։ Անկէց կ'անցնին ձերբակալել միւս խնամակալ Կոստանդինը, Օշինի եղբայրը, Լեւոնի դիւղին՝ Թերեւս Լեւոնկլայի մէջ, և կը տանին եղբօրը փակուած վանքը Առանայի մօտ, և մէկ օր ապրին միասին, որ էր 1329 յունուարի 26 (ՍՄՌ. 131), հինգշաբթի օր։ Անեցին չարունակողը կ'աւելցնէ, թէ Լեւոն սպանդալներուն գլուխները ընծայ ղրկեց, Օշինինը Եգիպտոսի Նասր սուլտանին, և Կոստանդինինը Դաւիթի Գուսպիտ խանին (ՍԱՄ. 138) «ժամանակակիցներ կ'աշխատին Լեւոնը չքմեղացնել, թէ եթան է սպրթելոյ էլեանոյն և է տոս սրանց, ինչ խօսել են քառալ ըլլալ, և ինչեան ըսեփաորել (ՍԱՄ. 138), կամ թէ շատ բերդեր սպրանած էին, որ չէր խրճանց սահմանել սպրանած (ՍՄՌ. 131), կամ թէ սպանել էր զհոյդն սրեսյին, Օշին թագաւորը, սրբոցել նոա գիլ մահու (ԴԱՐ. 30)։ Բայց մենք առանց ուզելու Օշին խնամակալի կատարած բռնութեանց (§ 1270) պաշտպան կանգնիլ, պէտք է դիտել տանք, որ եթէ Օշին Լեւոնը մեռցնել ուզած ըլլար, առաջ առիթ չէր սպասեր՝ մինչեւ անոր չափահաս ըլլալը, և թէ նոյն իսկ զրոյցներու իրարու անհամաձայն ըլլալը կը ցուցնէ, թէ իրական չեն տրուած պատճառաբանքները, այլ իսկութիւնը ծածկելու համար կազմուած յերիւրանքներ ին։ Հետեւաբար պիտի չկարենանք համաձայնիլ յայտարարելու թէ, Լեւոն ըսեփաոր անել է ի նոցա սրենեն (ՍՄՌ. 131)։ Մանաւանդ որ անոնց գլուխները ընծայ ղրկելու պարագան, աւելի հետու միտքեր կը ցուցնէ, կերպով մը անոնք զոհելով, թշնամիներու առջեւ պինքն արդարացընելու, վերջին անգամ մղուած պատերազմներուն համար։ Բայց ասկէ ալ աւելի հաւանական կ'երեւի, ազդեցութեան լուծէն ազատ մնալու փափաքը, ազատ կերպով իւր կիրքերուն և ձգտումներուն ծառայելու համար։ Որովհետեւ անոնք սպանել տալէն ետքը, անոր աղջիկն ալ Եպոն, պեսեսհեն ի՞ր Ալիծը, յաղթ սղրելչ էոբծոց Նոբ (ՍԱՄ. 138), որոց ստուգութիւնը չատ կեղակարծ է։ Չի եթէ ճշմարիտ ալ ըլլար, սպանութիւնը չէր արդարանար, քանի որ ոչ մի պարագայ պատուճած չէ։ Նկատելի է նաեւ որ անմիջապէս սպանութենէն ետքը՝ 1331'ին երկրորդ ամուսնութեան կ'անցնի Լեւոն, Սիկիլիոյ Փրեդերիկոս Ա թագաւորին աղջիկ և Կիպրոսի Հէնրիկոս Բ թագաւորին այրի, Կոստանդիա-Ելէոնորայի հետ (ՍԻՍ. 363), որուն տրուած Ըռանֆար անունը (ՍՄՌ. 132) յայտնի չփոթութիւն է՝ հօրը Փրեդե-

բիկոս կամ Ֆրետերիք անունին աղաւաղմամբը։ Ամուսնութիւնը տարւոյն առաջին կէսին մէջ կատարուած պիտի ըլլայ, զի իբր կանուխէն եղած կ'ենթադրուի 1331 նոյեմբեր 24'ին գրուած պարգեւադիրին մէջ (ՍԻՍ. 363)։ Յակոբ կաթողիկոս դէր մը ուներած չերեւիր այդ գործողութեանց մասին, բայց և ոչ կրցած է Լեւոնը զսպել իր անառակի ձեռնարկներուն մէջ։

ԼԱՏԻՆԱՄՈԼ ՁԳՏՈՒՄՆԵՐ

1277. Լեւոնի կատարած սպանութեանց և ամուսնութեան հետեւանքն եղաւ քայլ մը եւս յառաջել Սիսի արքունիքին՝ լատինական կազմութիւն և կերպարան տալու մէջ, գրեթէ բոլոր, գոնէ գլխաւոր պաշտօնները բուն լատիններու յանձնելով, և լատին կրօնաւորներու առջեւ բանալով ամէն դուռները։ Ակէ առաջ եկած է քաղաքական իշխանութեան ձեռքով եկեղեցական գործերու վրայ բարդուած ազդեցութիւնը, քանի որ արտաքին վտանգներու ահեղով և ներքին օրութեան նուազելով, ամէնուն սիրտին վրայ ճնշող կէտ վտանգեալ կացութիւնը պաշտպանելու ջանքն էր, և միայն Արեւմուտքէ կը յուսային օգնութիւն գտնել։ Ազգէն լատիններու հետ սերտ կապուած բլլալով՝ դրացի արեւելեան պետութեանց հետ հաչտ կացութիւն մը կազմելու ակընկալութիւնն ալ կորսուած էին։ Լեւոնին առաջին գործերէն մին եղաւ, իր մօտ հրաւիրել իր հօրաքեղորդիները, Օշին Պայլէն աքսորուած Լուսինեան եղբայրները, որոնք Հեթում կր մնային (§ 1270)։ Ջիւանի կը յանձնէր պայլութիւնը, Գեմունդի տուաւ Կոռիկոսի իշխանութիւնը, իսկ Գուիտոն իր մօրաքրոջ Ռիթա կայսրուհւոյն պաշտպանութեամբ Ճունաց կայսեր կողմէ Աքայիոյ կուսակալ նշանակուած էր։ Բաղդին լատին իշխան մըն ալ մարաչախտ, և Գեմունդ մըն ալ սենեսչալ անուանուելուն, իբր թէ այս կերպով Հայեր պիտի կարենային լատինները չսիրել և փութաձգնել անոնց օգնութիւնները։ Բայց տակաւ Կիլիկիոյ Հայ թագաւորութիւնը՝ կերպարանափոխ կ'ըլլար, և թէ քաղաքականապէս և թէ եկեղեցականապէս իր իսկութիւնը կր մերկանար, լատինական երկրի մը կերպարանք կ'առնէր, առանց իսկ բոլորովին լատինութեան անցնելու, որուն կ'ընդդիմանար ազգային զգացումը, և ժողովուրդին սիրտին մէջ արմատացած ինքնութեան զգաստիարը։ Այդ ընդդիմութեան գլխաւոր գործիչներն էին, նոյն իսկ Հայոց կաթողիկոսները, որ չկարենալով քաղաքականապէս կազմակերպուած դրութիւնը ջնջել, կ'աշխատէին գոնէ հնարաւորութեան սահմանին մէջ եկեղեցական աւանդութեանց պահպանութիւնը ապահովել։ Նոյնինքն Յակոբ կաթողիկոս, Անաւարզեցիին քեռորդին և անոր հետեւողը, պահ մը կանգ կ'առնէր իր ուղղութեան մէջ, չհանդուրժելով մինչեւ վերջին ծայրը տանիլ լատինասիրութեան հետեւողութիւնը։ Այդ չափի և կէսաւակէս կացութիւն տուողացաւ Ագնեսմայ անունը, որ իսկապէս հռոմէադաւան ու կաթոլիկ բլլալէ տարբեր իմաստ մը ունի, և լոկ հակամիտ և չանացող բլլալ կր նշանակէ, որ է տիրապէս անորոշ կացութիւն մը, և այս անունով կոչուեցան կիլիկիոյ թագաւորութեան վերջին միջոցին Հայերը։ Անոնք տիրապէս հռոմէադաւան չէլան, ինչպէս ալ այժմեան հռոմէադաւանները չկրնան անոնք իրր իրենց նախնիքը ցուցնել, որովհետեւ Հայ եկեղեցիէն չելան, և ոչ ալ զայն հիմնապէս և ամբողջապէս ալլայլել յաջողեցան, լատիններու մօտեցան, անոնց հետ ապրեցան, անոնց գործակցեցան, հաստատանալու ձեռնարկեցին, բայց հայազգի և հայադաւան բլլալէ չդադրեցան, Հռոմէադաւան Հայեր չեղան ու չկոչուեցան, այլ իրենց անորոշ կացութեան յատկանիշն եղաւ Ագնեսմայ կոչումը։

ՔՈՆԵՑԻՒՆ ՑՈՒՑԱԿԸ

1278. Կատարեալ հռոմէադաւան եղան Ունիթօր կրօնաւորները, իրենց աչակերտներուն հետ, որք Յովհաննէսի դլխաւորութեամբ կր գործէին Հայաստանի մէջ, և նոյն իսկ Կիլիկիոյ մէջ ալ ճիւղ մը ունէցան Ալթաբանեաց տարբեր։ Բարթողիմէոս Բոնոնիացիի մահուընէ ետքը Քոնեցիին անձամբ Հռոմ գնաց, որպէս զի իւր մեծաւորութիւնը պապին հաստատել տայ, և իր միաբանութեան ընդարձակուելուն համար միջոցներ ստանայ։ Այնտեղ լատին կրօնաւորներու կ'նայատն ու

սովորութիւններն ալ տեսնելով, աւելի բուռն կերպով վառուեցաւ անոնց համեմատ կազմակերպել Հայ եկեղեցականութիւնը (ԿԱԼ. 520), որուն մէջ եթէ զեղծումներ ալ կային, անոնք ոչ թէ սկզբունքի կամ կանոնի, այլ պատահական հանգամանաց և դժուարութիւնց հետեւանքներն էին։ Յովհաննէս իր պապը, Բարթողիմէոսի օգնականներէն Տփղիսի եպիսկոպոս Յովհաննէս Անզղիացիին պաշտօն տուած էր Հայ Ունիթոր միաբանութեան վրայ հսկել, ուստի անոր առջեւ Հայ միաբաններ, յատին ձեւով ուխտադրութիւն կատարեցին, և Յովհաննէս Քռնեցին ճանչցուեցաւ քահանայ առաջնորդ կոչել Տփղիսոյ (ԿԱԼ. 521)։ Ասոր վրայ Քռնեցին հարկ տեսաւ չրջաբերական թուղթով մը պէտք եղած հրահանգները տալ առ Տէրէնեալ եղբայրն Հայոց, այսինքն Հայ Ունիթոր կրօնաւորներուն (ԿԱԼ. 513—522), զորս աւելորդ կը սեպենք վերլուծել, սակայն հետաքրքրական է 19 մոլորութեանց ցուցակը, զոր նա կը վերագրէ Հայ եկեղեցւոյն ու անոր հետեւողներուն։ Ասոնք են, 1. Մէկ քահանայ կ'ըսեն. 2. Ս. յՈրդւոյ բղխում չեն դաւանիր. 3. Վերջին դատաստանէ առաջ արքայութիւն և դժոխք չեն ընդունիր. 4. Բաւարար չեն ընդունիր. 5. Հռոմը ելած ատենն այլեւս եկեղեցեացն աշխարհի չեն ճանչնար. 6. Լեւոն պապը և Քաղկեդոնի ժողովը կը նզովեն. 7. Ծնունդն և ուրիշ տէրունական տօները Հռոմայ եկեղեցւոյ կոյսոցմանց համաձայն չեն կատարեր. 8. Պահքերը Հռոմի կարգադրութեանց համեմատ չեն պահեր. 9. Եօթը խորհուրդներէն Դրոշմը ու Վերջին օծումը չունին. 10. Բաժակին ջուր չեն խառներ. 11. Հաղորդութիւնը կրկին տեսակներու ներքեւ կը բաշխեն՝ մարմինը արիւնին մէջ թաթխելով. 12. Փայտեղէն և խեցեղէն սկիհներ կը գործածեն. 13. Ամէն քահանայ խոստովանութեան խորհուրդ կը պաշտէ, ըստ որում չունին. 14. Երկու պատրիարքներու կը հնազանդին, որոց երկուքն ալ պարբերաբար Ամենայն Հայոց կը ստորագրեն. 15. Արհնակցութեան բանութեամբ քահանայ և եպիսկոպոս կ'ըլլան. 16. Եկեղեցւոյ խորհուրդները դրամով կը վաճառեն ու կը գնեն. 17. Առանց հարիւրաց պատճառի ամուսնալուծումներ կը կատարեն. 18. Երախայից և հիւանդաց յաւուրս ձէթեր չեն օրհներ. 19. Տղայոց հաղորդութիւն կու տան (ԿԱԼ. 515)։ Ասոնք թուելէն ետքը, կը յաւելու, թէ այլ յաղով մոլորութեամբ, ոչ Հայոց ընթացել եղած ճշմարտութեան ճանապարհին քաղցր ձայնակ, և թէ վերջապէս Յովհաննէս իր պապէն ղրկուած յատին կրօնաւորներու ձեռքով Ասանայի ժողովը ուղղութեան դարձաւ (ԿԱԼ. 517)։ Բայց մենք արդէն տեսանք, թէ ինչպէս հեղինակութենէ զուրկ գումարում եղած է Ասանայի ժողովը (§ 1257)։

ՊԱՂՈՆ ԵՒ ՊԷԿ ՈՒՆԻԹՈՐՆԵՐ

1279. *Քռնեցին և իրեն ընկերները պապէն ստացած քաջալերութեամբ զեղծանելով իրենց քարոզութիւնները բռնադատութեամբ և Հայ եկեղեցւոյ նախատանաց ալ հասուցին, և ինչպէս կրնան չհանդուրժել և կրնան հրաժարիլ, նաեւ զայլ քաղցր կրնան հրաժարին և կրնան չհանդուրժին, հարկաւ հռոմէական դրութեան համեմատ, այսինքն թէական ձեւով, և այն ալ գաղտագողի կերպերով, ըմանս ի քաղաքէ, զայլ ի տուն, և զայլ յանդ ջրոց, և ի ծածուկ տեղիս* (ՁԱՄ. Գ.331)։ Այդ մոլեգնութեան ձեւերը, զոր առաւելաբար կը կատարէին Մարազայի, Նախիջեւանի, Սուլթանիայի և Տփղիսի կողմերը, և մանաւանդ կաֆայի մէջ, ուր Գենուացիք կը տիրէին (ՁԱՄ. Գ.328), հետզհետէ տարածուեցին կիլիկիոյ կողմերն ալ, ուր յատկապէս ևկած էին Ներսէս Պաղոն և Սիմէոն Պէկ, որոց առաջինը Որմիոյ և երկրորդը Կարնոյ եպիսկոպոս եղան։ Այդ երկուքը հաւանական կը դատենք նոյնացնել Քռնեցիին առաջին ընկերներէն Ներսէս Տարոնեցի և Սիմէոն Բասենցի վարդապետանուն հետ (§ 1274)։ Սիմէոնի Բասենցի ծագումը կը բացատրէ Կարնոյ մէջ ունեցած գործունէութիւնը, իսկ Ներսէս թէպէտ տեղի է Տարօն քաղաքէ ըսուած (ԿԱԼ. 519), բայց ուղղագոյն կ'երեւի յանձնարէն Տարօնոյ կարդալ, ինչպէս ուրիշ ժամանակակից յիշատակարան մը կը գրէ (ՍԻՆ. 375)։ Հետեւաբար հաւանական չէ Ներսէս Պաղոնի,

բնիկ Սսեցի ըլլալը։ Մագումէն անկախաբար կրնան ընդունիլ ունիթորութեան յարելով կրկին մկրտուած և դարձեալ քահանայ ձեռնադրուած ըլլալնուն մասին որուած տեղեկութիւնները (ՁԱՄ.Գ.346)։ Եղելութեանց կարգին դառնալով, Ներսէսի և Սիմէոնի երեսէն կիլիկիոյ ժողովուրդին մէջ սկսած չփոթութիւնները և վտանգաւոր երկպառակութիւնները Յակոբ կաթողիկոսն ալ զայրացուցին, որ Լեւոնն ալ համոզեց վերջ դնել այդ ոտնձգութեանց, և քաղաքական պաշտօնեաներուն միջոցով ձերբակալուեցան Ներսէս ու Սիմէոն և անոնց գործակիցները, և այս վերջիններէն ոմանք աքսորուեցան, ուրիշներ բանտարկուեցան, իսկ Ներսէս ու Սիմէոն կաթողիկոսին յանձնուեցան, որ խրատից ու յորդորից, չի ինչ ընթեցին յանյոյն ընդառաջ խօսէ՞ր, և ո՛չ լիցին պատճառ կռուոյ հոգւոյ (ՁԱՄ.Գ.331)։ Անոնք երեսանց հաւանութիւն յայտնեցին և արձակուեցան, բայց Ներսէս կանչի գնաց, և Մանաճիհր վարդապետի մը հետ սկսաւ այնտեղ ալ նոր չփոթութիւններ սերմանել։ կաթողիկոսը ստիպուեցաւ քննիչներ ղրկել, և Ներսէսի խաբէական ձեռնարկները յայտնուեցան, և հազիւ կրցաւ ժողովուրդին զայրոյթէն և քարկոծուելու վտանգէն ազատուելով կիլիկիայէ հեռանալ (ՁԱՄ.Գ.332), միշտ աւելի աւելութիւն չտացնելով սիրտին մէջ Հայոց եկեղեցւոյն դէմ։ Մէկ կողմէն Յակոբ կաթողիկոս պապին կը գրէր, որ խրատէ իրենները և գրգռութիւնները արգիլու (ՁԱՄ.Գ.332), իսկ միւս կողմէն Ունիթորները պապին կը գրէին, թէ Հայոց կաթողիկոսն ու թագաւորը հռոմէադաւանները կը հալածեն, և անոնց եկեղեցիները կը կործանեն (ՁԱՄ.Գ.328)։ Վերջին տարիներու մէջ պատերազմական ազէտներ ալ անպակաս եղած էին, և թէպէտ Հայեր պատահաբար յաջողութիւններ կ'ունենային, սակայն 1335'ին մեծ արչաւանք մը հանած էր Նասր սուլտան յԱլէպս հնոյց, և ի փոնէ Համբարձման Քրիստոսի, որ այն տարի մայիս 25'ին կ'իյնար։ Մամեստիան, Ատանան և Տարսոնը կ'աւերէր ու կը քանդէր, երբ Հայերը յանհաւ կային, և անհնարին կը կոտորէր ժողովուրդը, Լեւոնն ալ ձերբակալելու նպատակով (ՍԱՄ.159)։ Ատոր վրայ պապին կողմէն 30,000 ոսկւոյ նպաստ մը կը սահմանուէր, Գաղղիոյ թագաւորին տուած 10,000 ոսկւոյ հետ (ՍԻՍ.391)։ սակայն Ունիթորներուն ամբաստանութեանց վրայ, պապը կ'արգիլէր չի՛ երթան հաղորդ ընկալ՛ին զ՛ Քրիստոս, մինչեւ որ Հայերուն ընթացքը քննուի (ՁԱՄ.Գ.328)։ Աւելի խօսուն փաստ մը պէտք չէ պապերուն միտքն ու Հայերու պաշտպանութեան համար ցուցուած ջանքին, ներքին և իսկական իմաստը ճշդելու, և Ունիթոր միջնորդներուն հոգին նկարագրելու։

ՀԱՅԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

1280. Հայերու և Լատիններու յարաբերութեանց անպատմութեանց յակամայս կը վկայէ պատմիչն ալ խոստովանելով, թէ երբ Լատինները Ե լոկ կռնգաղերձութեամբ մաքառէին ընդ այլազգիս, եգիպտացիներ զբաղ և հզաւ անողորմ կոտորած առնէին ի Հայս (ՁԱՄ.Գ.334)։ Նասրի զօրավարները հետամուտ էին, զի ըմբռնել կարացեն զԼեւոն (ՍԱՄ.159), անոր համար սա կը պարտաւորուէր, Սիսը թողուլ, և անծանօթ կերպարով լեռները ու ձորեր թափառիլ. և միանգամայն նամակ նամակի և դեսպան դեսպանի հանէին հասցընել Յովհաննէս ԻԲ'ի յաջորդ Բենեդիկտոս ԺԲ պապին։ Իսկ պապը կը բաւականանար ցաւակցական և միխիթարական գիր մը յղել Կոստանդիա թագուհիին 1336 ապրիլ 16'ին գրուած, և լատին իշխաններէ ոմանց յորդորականներ կը գրէր, բայց տեղէն չարժուղ չէր գտնուիր։ Լեւոն վերջապէս յուսահատ և նեղուած, թէպէտև իր առաջին պատուիրակները մերժուած էին, և Բաղդին մարաջախտ դեսպանն ալ բանտին մէջ մեռած էր 1336 դեկտեմբեր 12'ին, բայց վերջապէս կը պարտաւորուէր, նորէն բանակցիլ և ծանր պայմաններով հաշտութիւն կնքել Նասրի հետ 1337'ին։ Այսու բերդ և Ջանան դաւառը տալէ զատ, յանձնառու կ'ըլլար, զի յայմհետէ ո՛չ առաքեցէ զբեղպան ոչ ի մի զիւրոցդ ինչ առհանայոցիկն Հառաջ, որ է ըսել, Լատիններու հետ յարաբերութիւնները խզէ, ինչ որ ոչիչեցաւ խոստանալ երդմամբ, և այս կերպով Սիս դարձաւ, և նորէն թագաւորութեան գործերը

ձեռք առաւ (ՉԱՄ. Գ. 337), գրեթէ երկամեայ աստանդական կեանքէ ետքը։ Այս եղելութեան նկատմամբ պապին ունեցած մեծ հոգատարութիւնը եղաւ 1338 մայիս 1'ին գրած նամակովը (ՍԻՍ. 559), լինուր երդումին կապէն քակել, պատճառաբանելով թէ «ալկոտ այլ է հաբիւ ըրած է այն երդումը, ուստի վատահութեամբ կ'ապահովցնէր Լեւոնը, թէ «աւել լեզու գոյ չերթանէ յայսմանէ, և «ալ լեզի ելլ ինչ դէպ է պահելոյ ըզայդ (ՉԱՄ. Գ. 328)։ Իսկ նիւթական և զինուորական օգնութիւն չէր հասներ տակաւին։ Այս կերպով Լատինաց յարաբերութիւնները նորէն յայտնի վտանգի կ'ենթարկէին Հայերը, որոնք երէկ հաւատարմութեամբ մչակած ըլլային Եգիպտացւոց հետ բարեկամական յարաբերութիւնները, կրնային նորանոր վտանգներէ զերծ մնալ, և ազգային իշխանութիւնը պահել սուլտաններուն հովանաւորութեան ներքեւ։ Բայց այլեւս արքունիքը Հայ տարրով կամ Հայ մտածմունքով չէր կառավարուեր, բուն Լատիններ էին որ գործի գլուխ անցած և տէր եղած էին քաղաքական իշխանութեան, և ճնշում կը բանեցնէին եկեղեցական իշխանութեան վրայ։ Բայց վերջապէս երեք տարուոյ չափ միջոց մը՝ քիչ ու չատ հանդարտ անցաւ նորին հաստատուած հաշտութեան, թէպէտ Լեւոն և իր պալատականներ Արեւմուտքի հետ յարաբերութիւնները չէին դադրեցներ, բայց կը զգուշանային յայտնի և հանդիսապէս ընել, և որչափ հնար էր՝ ծածուկ միջոցներ և գաղտնի կերպեր կը գործածէին։

ԱՂՔԱՄԱՐԻ ԱՔՈՒԸ

1281. Երրոր կիլիկիոյ մէջ այս անցուդարձերը կը կատարուէին, Հայաստան ալ հանդարտ չէր։ Պուսայիտ խան կը մեռնէր 1334'ին և կը յաջորդէր Արիւխան, որ քրիստոնեայ կ'բուի, և թերեւս այդ պատճառով, Պուսայիտի քեռին Ալի փաչա, զայն կը սպաննէր 6 ամիս ետքը, և Մուսա անուն անգոր մէկ մը խան անուանելով, ինքն կը սիրանար գործերու, և քրիստոնէից դէմ ատելութեամբ կը հրամայէր ֆոխել ջնջելով, ինչպէս որ տեղ տեղ ալ կը գործադրուէր։ Այս պատճառով Զաքարիա Սէֆէտինեան Ազթամարայ կաթողիկոսը, պարտաւորուեցաւ անձամբ երթալ Ալի փաչայի մօտ, և իր ազդեցութեամբ՝ ու հոգեկեր խօսքերով յաջողեցաւ հրամանին անտեղութիւնը ցուցնել, և եթող ղըր հոտ (ՍԱՄ. 159)։ Այդ եղելութիւնը պէտք է դնել 1335'ին, վասնզի յաջորդ տարուան 1336'ի սկիզբները Զաքարիա կը մեռնէր, և իրմէ կը յաջորդէր իր քեռորդին Սահփանոս, Հաւաքարանին համեմատ (ՕՕ.ՐԻՋ. 1193), մինչ ուրիշ յիշատակարանի համեմատ, Զաքարիա իր կենդանութեան, Դաւիթ եղբայրը ձեռնադրած է իրր յաջորդ, և նա իր կուրծքէն և Սէֆէտին եղբայրներովը աչխատած է աթոռին պաշտպանութեան և պայծառութեան (ԱՐՇ. 366)։ Մեր տեսութեամբ յոյժ տկար է Հաւաքարանի հեղինակութիւնը հնագոյն ժամանակներու համար։ Վերոյիշեալ Զաքարիայի կը վերագրուի կողոպուտի օրէնքը, որով եպիսկոպոսներու և վարդապետներու և իշխանաւորներու գիրքերը և եկեղեցական զգեստները ու բոլոր հագնելիքները աթոռին պիտի առնուէին իբրեւ հոգեբաժին։ Միեւնոյն 1336 տարին, Ալի փաչան ալ սպաննուեցաւ խալիֆ աղայէ մը, որ ընդունած է իրր նոյնինքն Հասան խան, Պուսայիտի որդին, որ թէպէտ իրր մեծ խան ճանչցուեցաւ, այլ տէրութիւնը բազմաթիւ ինքնիշխան խաներու մէջ բաժնուեցաւ, և անիշխանութիւնը տիրեց մինչեւ Լանկթիմուրի երեւնալը 1360'ին։

ՈՒՆԻՔՈՐՆԵՐ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄ

1282. Հայաստանի Հիւսիսային կողմերը տակաւ կը յառաջանային Ունիքորները, որոց հետեւած կ'բուի 3 քաղաքներ և 30 գիւղեր, (ՍԻՍ. 386)։ Իրենց մեծ գործունէութիւնը կայացած էր Թարգմանութեանց մէջ, որոնցմէ 20 կտորներու ցուցակը կազմած է Ալիշան (ՍԻՍ. 384), բայց ինքն ալ չէ կրցած չքնաւտուանիլ, թէ հայերէնի խանդարման աղբիւր եղած են այդ Թարգմանութիւնները։ Հայերէնագէտ Լատիններուն տկարութիւնը մէկ կողմէն, և լատինագէտ Հայերուն քնագիրներու բառ առ բառ հետեւելու խըղճմտութիւնը միւս կողմէն, տարօրինակ լեզու մը ստեղծած են, որ բաւական ընդար-

ձակութիւն գտած և տարաբախտ ազդեցութիւն ունեցած է դարուս մէջ և առյապայ։ Ակիշան կը ջանայ արդարացնել ըսելով, որ ինչպէ՞ ինքզինքն էրեանց և է հայրենի ձէնից, այլ ոչ սակս օգտից յիմասաց իրմանէ և քարոյական, զրվէ էերալանցկին էան ընհալը յամառելն (ՍԻՍ. 385), սակայն առաւելութիւնը միջին դարուն Դպրոցական կոչուած, այսինքն Սկոլաստիկեան ոճն էր, որ իմաստութենէ աւելի իմաստակութեան կ'առաջնորդէր։ Նոյն միջոցին Երուսաղէմի պատրիարքութիւնը հոգ կը տանէր ազգային ստացութեանց պաշտպանութեան և ուխտաւորներու մխիթարութեան, չարունակ նեղութիւններ կրելով Եգիպտացի պաշտօնակալներէն և տեղացի ժողովուրդէն։ Նակայն Նասր սուլտան չէր վարաներ իրաւացի դիմումներու անսալ, Ս. Յակոբի պարսպին նորոգութիւնը կ'արտօնէր 1339'ին, և Ս. Յարութիւն մտնողներէն ու ելլողներէն աւելորդ տուրք մը առնողները կ'արգելէր 1341'ին։ Երուսաղէմի պատմիչը այդ գործողութիւնները կը դնէ Բարսեղ պատրիարքի ժամանակ (ԱՍՏ. Ա. 207), մինչ ցուցակագիրը, Վարդան պատրիարք մը կը դնէ այդ միջոցին, և Յովհաննէս մըն ալ Բարսեղէ առաջ (ԲԱՒ. 45)։

1283. *Կիլիկիա տակաւ առ տակաւ իր առաջամէայ հանդարտութիւնը կը կորսնցնէր։*

ՅԱԿՈԲԻ ՀՐԱԺԱՐԻԼԸ

*Լեւոնի և իւրայնոց Արեւմուտքի հետ յարաբերութիւնները որչափ և գաղտնի, չէին կրնար խափան ծածկուիլ, և Եգիպտացւոց ականջը չհասնիլ, որոնք միշտ անվստահութեամբ կը նայէին Կիլիկեցւոց անհաստատ ընթացքին վրայ։ Հետեւաբար 1340'ին առիւծները զգաստաբար արշաւանք մը հասաւ Կիլիկիոյ կողմերը, որ սահմանագլուխին վրայ 16 բերդեր և աւաններ գարկաւ, և աւելին ալ սպառնացաւ ընել, եթէ Կիլիկեցիք ճչդիւ և խստիւ չի յարգեն հաշտութեան գլխաւոր պայմանը։ Ասկէ ծագեցաւ կարծիքներու տարբերութիւն մը և ներքին գժտութիւն մը, որ մինչեւ կաթողիկոսի փոփոխութիւնը յառաջեց։ Լեւոն արշաւանքին վախէն ու սպառնալիքէն ազդուած պահ մը, կը միտէր Արեւմուտքի հետ յարաբերութիւնները դադրեցնել, սակայն Լատին պալատականներ, Լատին կրօնաւորներ, և լատինամոլ Հայեր կ'ընդդիմանային։ Չէ՞ որ կրնար ըլլալ որ յարաբերութիւնները դադրեցնելնին՝ իբր Հռոմէ հեռանալ մեկնուէր։ Չէ՞ որ, կ'ըսէին, էքէր քաֆանէալը համարիմ, և խոփեն է վէրայ մը ամքասփանոնէն էքէր է վէրայ հերեթիկոսց։ Եպիսկոպոսներ և իշխաններ իրարմէ զատուեցան, քանի որ վերջիններըը բուն կամ կէս Լատիններ էին, մինչ եպիսկոպոսներուն սիրտին մէջ չէր կրնար բոլորովին մարած ըլլալ ազգային եկեղեցւոյ զգացումը։ Հակառակութեան հեռւանքը եղաւ Յակոբի կաթողիկոսութենէն դադարիլը, և նոր կաթողիկոսի ընտրութիւնը։ Այդ փոփոխութեան պատճառն ու հանգամանքները բոլորովին մթին կը ներկայանան, վասն զի չունինք ձեռնրնիս սկզբնագիր պատմիչ մը, որ զայն մեզ բացատրէ, գոնէ մակաբերութեան աղբիւրներ ներկայէ։ Ակիշան ալ որոշ բան մը չէ գտած, երբ կը գրէ, թէ Ներսէսէն Լամբրոնացի վճռ էրծնէց և ձէնէց է փոխնագէ կոչուցանելն զէրէնէն Լամբրոնացի պէրն՝ և զվճռելոն ընդ նուէր, վասն որոյ հարկ համարեցան էքլուցանել զՅունէք է կաթողիկոսութենէն (ՍԻՍ. 147)։ Անկէ առաջ Զամչեան գրած էր, թէ է ասպետնալ վճռանց և է յառնել ազգս պետէս էրքնաւորենց է քանարկս արանց, նշոմքեաց Յունէք կոնդակս զնեան ապա և ապառնացաս նմա, ընդ որ ցառացել Լեւոնի ընկեց զնա կոնդակ էշխանութենան (ՉԱՄ. Գ. 339)։ Երկուքն ալ աղբիւր մը չեն ցուցներ, որով միայն իրենց կարծիքը բացատրած կ'ըլլան, և մենք ալ իրաւունք կ'ունենանք մեր տեսութիւնները բացատրել։ Երբոր երկու ընդդիմադիր ուղղութեանց պաշտպաններ կը նկատուին Լեւոն ու Յակոբ, յայտնի կ'ըլլայ թէ Յակոբ պիտի ընդունուի իբր եպիսկոպոսներու խումբին գլուխը, այսինքն եգիպտական հաշտութեան պայմանը յարգելու՝ և Արեւմուտքի հետ յարաբերութիւնները խզելու կողմին հետեւող, ինչ որ Ունիթորներուն առիթ տուած է Յակոբը ամբաստանել իբր հռոմէադաւանութեան հալածիչ (ՉԱՄ. Գ. 344)։ Ասոր հակառակը Լեւոն չրջապատուած էր Լատին և կէս Լատին պալատա-

կանոներէ, որոնք իրենց ուղղութիւնը կը պնդէին։ Եթէ եկեղեցական խումբը Լեւոնի կողմը չէր, ուրեմն Լեւոնի դիւրին չէր իր սասեով ու զայրոյթով կաթողիկոս մը վար առնել, և ուրիշ մը օծել տալ, և լոկ քաղաքական իշխանութեան զօրութեամբ ճոխանալ։ Աւելցնենք որ Յակոբի համար հալածուած ու անարգուած ըլլալու պարագայ մը չկրնար, և ոչ ալ իր վրայ գործադրուած են բանտի և չղթայի խստութիւնները, զորս Հեթում գործածեց կաթուղիկոսին վրայ (§ 1184)։ Յակոբ իր պատուովը հեռացաւ աթոռէն, և նորէն իր պատուով աթոռ դարձաւ, երբոր իրեն տեղ անցնողը մեռաւ. հետեւաբար ոչ գահընկէցութիւն, այլ հրաժարական պէտք է ընդունիլ Յակոբի դադարելուն մէջ։ Եթէ գահընկէցութիւն ընդունէինք, պէտք էր ազգային եկեղեցական ժողով մըն ալ հնթադրել, որ բնաւ յիշուած չէ, և առանց ժողովական վճռոյ լոկ արքունի հրամանով գահընկէցութիւնը կանոնական չէր ըլլար, և տեղը անցնողն ալ օրինաւոր կաթողիկոսաց չարքը պիտի չանցնէր, ինչպէս չանցաւ Դիոսկորոս Սանահնեցին (§ 835)։

ՀՐԱԺԱՐԵԼՈՒԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

1284. Այդ տեսութիւններով և յառաջ բերուած պատճառաբանութիւններով՝ իրաւունք կ'ունենանք պընդել, թէ Յակոբ կաթողիկոս, ոչ գահընկէց, այլ հրաժարեալ մըն է։ Ինչպէս նախապէս Անաւարզեցիին հետեւողն ու չատ մօտէն գործակիցն եղած էր, անոր քեռորդին ըլլալով, և եթէ նոյնացնենք զինքն Կապանի եպիսկոպոս Յակոբի հետ, անձամբ Հռոմ գացած և յարաբերութեանց միջնորդ եղած էր։ Բայց հայրապետական աթոռ բարձրանալէն և պատասխանատու դիրք գրաւելէն ետքը, հետզհետէ փորձով տեսած էր այդ յարաբերութեանց անօգտակարութիւնը, մանաւանդ թէ վնասակարութիւնը, զի ոչ միայն նպաստ և օգնութիւն չէր պտղաբերեր, այլ և եգիպտացիները կը գրգռէր և երկրին աւերման և ժողովուրդին քայքայման և եկեղեցւոյն վնասներուն պատճառ կ'ըլլար։ Եգիպտացւոց հետ կրնքուած հաշտութենէն ետքը, որուն հարկաւ աշխատակցած էր իր նախորդին հետեւելով (§ 1269), Յակոբ նոր կացութեան պաշտպանն էր եղած, Լեւոնն ալ իր կողմը յանկուցանելու աշխատած, գուցէ և գայթակղած էր Բենեդիկտոսի թելադրած և նուիրագործած ուխտադրժութենէն, որով Լեւոնի տուած երդումը կը քակէր և կը լուծէր։ Յակոբի դժուար էր, առանց թագաւորին գործակցութեան արդիւնաւորութիւն մը ունենալ, գուցէ ալ իրեն կ'աւարկէին իր նախընթաց գործերը։ Հետեւապէս իրեն ուրիշ ճանապայ չէր մնար, բայց եթէ ձեռնուները լուալ և մէկ կողմ քաշուիլ, ինչպէս ալ կը գործադրէ 1341 տարուոյ սկիզբները, և կաթողիկոսութենէն հրաժարելով, աթոռէն կը հեռանայ, ապագային պատասխանատուութենէ զերծ մնալու համար, թողլով որ ուրիշները գիտցածնին ընեն և պատասխանատուութիւնն ալ ըստանձնեն։ Ծիշատակագիր մը Յակոբի համար կ'ըսէ, թէ էր յոյժ հնազանդ սոբք եկեղեցւոյն Հռոմայ, բայց յիշատակարանը գրուած է 1331'ին (ՏԱՇ-741), կաթողիկոսութեան առաջին տարիները, երբ տակաւին իր միտքը չէր պղտորած 1335'ին դաշն փոխադարձութենէն ետքը։ Արդէն նոյն իսկ հրաժարականով քաշուիլն ալ Հռոմի հետ բացարձակ պայքարէ խուսափելու միջոց մըն է եղած, որով եթէ կրնանք պաշտպանել Յակոբի ուղղամտութիւնը, չենք կրնար ծածկել անոր սկարամտութիւնը։

ԱՄԵՆԱՒԱԳ ԴԵՐՋԱՆՑԻ

1285. Ժամանակակից դէպքերէն առաջին կը ներկայանայ Ամենաւագի նահատակութիւնը, որ կատարուած է 1335'ին։ Ինիկ Դերջանցի էր Ամենաւագ, Գառնաբերդակ գիւղէն Թիմէրի և Ջամէնի որդի, հողագործութեամբ ապրող։ Պարտատէր այլազգի մը նորա գրաստը բռնի գրաւել ուզած պահուն, եղբօրմէն օգնութիւն կը խնդրէ, և աստր մերժելուն վրայ սիրտին ցաւը կը յայտնէ ըսելով. «ԵՂԷՔ ՎՃՌՈՒԹԻՒՆ Է ԱՅՍ, ԵՒ ՉԷ ԿԱՐԵՒՈՐ» (ՅԱՍ-Ա.114)։ Այս խօսքը կը բաւէ, որ այլազգին և ընկերները հետեւցնեն, թէ Ամենաւագ քրիստոնէութիւնը ուրացաւ և իսլամութիւնը ընդունեցաւ, և այսպէս կը վկայեն գաւառին Հասան գաւառապետին առ-

ջեւ։ Ամէնաւագ միջոց մը թաքչելէն ետքը, նորէն Գառնաերդակ կը դառնայ գործը մոռցուած ենթադրելով, բայց կը ճանչցուի, և դատաւորի առջեւ կը հանուի, իբրեւ իսլամութենէ ետ դարձող մը։ Քանի մը օրեր բանտարկութեամբ, ողոքանօք և սպառնալեօք կը ջանայ դատաւորը, որ իսլամութիւնը ընդունիլ տայ, բայց Ամենաւագի անդրդուելի հաստատամտութեան վրայ մահուան վճիռը կու տայ իբրեւ ուրացեալ։ Աւոր վրայ խըչտանգանօք կը տանին գայն աւանին հրապարակը, և հոն քարկոծելու կը սկսին, և երկաթ ուռով գլուխը ջախջախելով կը սպաննեն։ Մարմինը մերկացնելով փողոցները կը քաշկռտեն, և մինչեւ երրորդ օր անթաղ կը թողուն, ուրկէ վերջ հրաման կ'ըլլայ գայն թաղել։ Նահատակութեան օրը գրուած է մարտ 10 ուրբաթ (ՅԱՍ. Ա. 115), որ 1335'ին ճշդիւ կը պատասխանէ մեծ պահոց երկրորդ ուրբաթին, և յաջորդ կիրակին, մարտ 12 ևղած կ'ըլլայ թաղման օրը։ Միայն չէ յիշուած թէ որ աւանն էր գաւառին կեդրոնը, ուր դատաւորը կը նստէր և նահատակութիւնը տեղի ունեցաւ, և թէ ուր թաղուեցաւ մարմինը։ Ամենաւագի ծննդավայր գիւղը Գառնաերդակ մինչեւ այսօր կայ, բայց գերեզմանը յայտնի չէ Դերջանի մէջ։

1286. Նոր Ցայսմաւուրքը ապրիլ 4 օրուան, ներքեւ կը յիշատակէ Մխիթար Սասունցի վարդապետը (ՅԱՍ. Ա. 148), զոր հինը դրած է փետրուար 11'ին (ՅԱՑ. 364)։ Բնիկ Սասունցի ամբարիշտ մարդու մը զաւակ, անոր մահուընէ ետեւ կերմանցից գիւղը փոխադրուած, մօրը մահուընէն ետքն ալ Դայլեձորի վանքին մէջ Ներսէս Տարոնեցիի աշակերտած ՄԽԻԹԱՐ էր Մխիթար, ուսկից ՍԱՍՈՒՆՑԻ փոխադրուեցաւ Արճէշի կերմանից վանքը և վերջէն հաստատուեցաւ Մեծոփայ վանքը, և նշանաւոր քարոզիչ մը եղաւ չրջակայ գաւառներու մէջ. նշանաւոր ոչ միայն իր ազդեցիկ խօսքովը, այլ և ողորմած գործունէութեամբը, որուն կը գործածէր գիրքերու ընդօրինակութեամբ չահած գումարները։ Մխիթարի առաւելութիւններէն մին եղաւ հայադաւան ուղղափառութեան պաշտպանութիւնը, անոր համար իրեն դէմ ալ ամբաստանութիւններ յարուցին Ունիթորները, հոգեծնութեան մոացածին վարդապետութիւն մը վերագրելով (ՁԱՄ. Գ. 343)։ Սակայն Մխիթար չարունակեց իր քարոզութիւնները և սրբութեամբ վախճանեցաւ Հայոց 786 թուին հոռի 25'ին հին տոմարով, կամ մեհեկի 5 Սարկաւագի հաշուով, յետի բարեկենդանին չորեքշաբթին, ինչպէս կը գրէ հին Ցայսմաւուրքը (ՅԱԳ. 366)։ Արդ հոռի 25'ը ըստ հնոյն կը պատասխանէ փետրուար 19'ին, մինչ մեհեկի 5 կը համեմատի փետրուար 11'ին, իսկ չորեքշաբթին կը յաջորդի փետրուար 19'ին, և ճշդիւ Առաջաւորաց պահքին յաջորդող չորեքշաբթի։ Ըստ այսմ հարկ կ'ըլլայ 1337 փետրուար 19'ը, քան թէ փետրուար 11'ը, ընդունիլ իբր ճիշդ թուական Մխիթար Սասունցիի մահուան, որ կերմանցի անունով ալ յիշուած է (ՍԻՆ. 136)։

Տ. ՄԽԻԹԱՐ Ա. ԳԻՆԵՐՑԻ 1341–1355

1287. Երբոր 1341'ին Ցակոբի յաջորդ մը տալու պէտքը զգացուեցաւ, Լեւոնի կամքը և եպիսկոպոսանըՆԱԽԸՆԹԱՑՆ րու կարծիքը չուտով ՈՒ ՆՊԱՏԱԿԸ համաձայնեցան Մխիթար Գռնեցրի եպիսկոպոսի վրայ, որ Բարձրբերդ գաւառին, Գռնեցրի վանքն առաջնորդն էր (ՍԻՍ. 147), և ոչ երջնակ գաւառին Բռնայ գիւղէն (ՁԱՄ. Գ. . 339)։ Մխիթար ժողովրդական և ծանօթ անձնաւորութիւն պիտի ևնթադրուի, ժողովուրդին կողմէն իրեն տրուած Տէր Մխիկ փաղաքշական անունէն հետեւցնելով։ Միւս կողմէն ալ թագաւորին և արքունիքին մօտիկ և հաճոյական անձ եղած ըլլալը կը քաղուի 1335'ի աղէտներու միջոցին՝ Լեւո-

նի կողմէն նաեւ սուլտանին մօտ դեսպան ղրկուած ըլլալէն (ՍԻՍ. 559)։ Իսկ իւր գործելու կերպովը՝ Մխիթար ըստ ամենայնի մօտիկ եղած է լատիններու հետ յարաբերութիւն մշակելու դրութեան, ինչպէս որ գործով ալ ցուցած է իւր կաթողիկոսութեան բովանդակ ընթացքին մէջ։ Թուլէ իւր դէսպանութեան եգիպտացւոց հետ չյաջողիլը, զինքն ուծացուցած էր անոնց հետ գործ ունենալէ, որով լատիններու յարաբերութիւնները մշակելէ զատ միջոց չէր գտնէր։ Միայն պէտք է ընդունիլ թէ Մխիթար լատիններու հետ յարաբերութեան կողմը լինելով մէկտեղ, լատիններու մոլի հետեւող չէր, որովհետեւ ամէն առթի մէջ իւր յարաբերական ոճը՝ Հայ եկեղեցւոյ պաշտպանութեան վրայ հաստատուած է, ինչինչ կէտեր իբր մտացածին և անգոյ մերժելով, և ինչինչ ալ իբր լատիններուն համամիտ և համաձայն մնկնելով, և կերպով մը միջնասահման ուղղութիւն մը մշակելով, թէ լատինները գոհացնելու և թէ Հայերը չվշտացնելու համար։ Այս տեսութեամբ ժամանակին յարմար անձնասուրութիւն մը նկատուեցաւ, ինչ որ իւր ընտրուելուն տեսակէտն ալ կը պարզէ։ Նոյնը կը մնկնէ նաեւ Ունիթորներուն Մխիթարի մօտ նալուն չարժառիթը։ Ներսէս Պաղոն, որ կանչի պատահարէն ետքը խոյս տուած էր, (§ 1279), և Սիմոն Պէկ, որ Կիպրոս կը գտնուէր, կը քաջալերուին նորէն գործի ձեռնարկել և Մխիթարի մօտ կու գան, զայն իրենց կողմը չահելու ակնկալութեամբ։ Բայց յուսախաբ կը մնան, որովհետեւ Մխիթար թէպէտ Հռոմի հետ յարաբերութենէ չէր խորշեր, բայց լատին ծէսերն ու բանաձեւերը ու սովորութիւնները չէր ուզեր ընդունիլ, և իւր եկեղեցին իւր խնութեան մէջ պահելով, Հռոմի հետ հաշտեցնելու գաղափարը կ'օրօրէր։ Մինչեւ իսկ Մխիթար բացարձակապէս կ'արգիլէր ատոնց գործածել այն ծէսերը, զորս Ունիթորներ կազմած էին լատիններու հետեւողութեամբ։ Ներսէս ու Սիմոն յուսահատելով Մխիթարը համոզել, կը մեկնին Կիլիկիայէ և Աւինիոն կու գան Բենեդիկտոս ԺԲ պապին մօտ, իրենց գործունէութիւնը զօրացնելու նպատակով։ Հոն կը հանդիպին նոյն ատեն Լեւոնի պատուիրակներուն, Դանիէլ Մինոր, այսինքն Փրանկիսկեան կրօնաւոր, և Թորոս Միքայէլեանց պալատական (ՍԻՍ. 559), պաշտօն ունենալով պապը հաճեցնել, որ գինուորական օգնութիւն փութացնէ, քանի որ մօտալուտ էր եգիպտացւոց յարձակումը։ Ունիթորներու համար նպաստաւոր էր պարագան, Հայերը կասկածաւոր ցուցնելով՝ պապին միտքը պղտորել, և օգնութիւնը պայմանաւորելով Հայերը բռնադատել, և լատինականութեան տիրապետութիւնը ապահովել։

ՄՈԼՈՐՈՒԹԵԱՆՑ ՑՈՒՑԱԿ ՄԸ

1288. Բենեդիկտոս կ'ուզէ լուսաբանուիլ, և կը յանձարարէ որ իրեն գրաւոր ներկայացուին այն կէտերը, որոնց մէջ Հայոց եկեղեցին մոլորած կ'ըսուի։ Շուտով գործի կը ձեռնարկեն այնտեղ գտնուող լատինամոլ Հայեր, և կիլիկիայէ եկած հայատեաց լատիններ, որոնք հարկաւ պատրաստ ունէին իրենց պաշարը, և ահագին ցուցակ մը կը ներկայեն Հայ եկեղեցւոյ կարծեցեալ մոլորութեանց մասին, զորս մինչեւ 117 հասուցած էին (ՄՆՍ. ԻԲ. 1185)։ Այս խումբին իբր գլուխ ճանչցուած է Ներսէս Պաղոն, որ իբրեն աւելի կարեւորութիւն տալու համար, արքեպիսկոպոս Մանազկերտի անունն ալ առած էր (ՁԱՄ. Գ. 340)։ Պապին պատասխանը վճռական կ'ըլլայ Լեւոնի դեսպաններուն, թէ Հայեր ոչ մի օգնութիւն պէտք չէ յուսան, մինչեւ որ այդ ցուցակագրուած մոլորութիւններէն չհեռանան։ Այս կերպով պատգամաւորներ առանց յաջողութեանետ կը դառնան (ՄՆՍ. ԻԲ. 1185)։ Անտեղի չէր ըլլար խորհրդածել, թէ Բենեդիկտոս կրօնամոլ նպատակին հետ, ճարտար խուսափողութեան ձեւ մըն ալ կը գործածէր, վասնզի Արեւելքի քրիստոնեաներուն օգնութեան երթալու եռանդը մարած էր, և արեւմտեան իշխանները ոչ ոք նոր խաչակրութեան կը յորդորուէր, և ամէնքը ներքին պայքարներով զբաղուած էին։ Լեւոն տակաւին յուսալից Արեւմուտքէն հասնելիք օգնութեանց վրայ, նոյն ինքն դեսպանութենէ դարձող Դանիէլի ձեռքով, առաջարկեալ գլուխներու մասին բացատրական գրութիւն մը պատրաստել կու տայ, որ

հարկաւ չատ ընդարձակ չէր կրնար ըլլալ։ Այդ գրութիւնը դէռ տեսնուած չէ, որչափ ալ անոր գոյութիւնը վերջին ատեններ լրսուած է, բայց հրատարակուած չէ (ԴԱՐ. 42)։ Լեւոն գրութեան հետ Դանիէլէն ալ անմիջապէս պապին կը դարձնէր, որպէսզի գրուածը ներկայէ, բերանացի ալ բացատրէ, և պապը համոզէ օգնութիւնը փութացնելու։ Մխիթարի անունը չյիշուիր, բայց անհնար էր որ թէ՛ Լեւոնի կարգադրած գործողութեան մէջ, և թէ՛ Դանիէլի պատրաստած գրութեան մէջ՝ խորհրդակցութիւն և մասնակցութիւն չունենար կաթողիկոսը՝ որ յատկապէս այդ օրերը՝ կացութիւնը դիւրացնելու համար ընտրուած էր։ Երթեւեկներուն արագ կատարումը կը ցուցնէ, թէ ինչ մեծագոյս ջանքով կ'աշխատէին Լեւոն ու Մխիթար, հռոմէական յարաբերութիւններ մշակել և անով իրենց քաղաքական կացութիւնը ապահովել։ Դանիէլ նորէն Աւինիոն դարձած է 1342 տարւոյն սկիզբները, բայց առաջին անգամէն աւելի յաջողութիւն ունեցած չէ։ Իր բերած գրութիւնը անբաւական գտուած է, որուած բացատրութիւնները անկատար նկատուած են, և պահանջուած է որ Հայերը յատուկ եկեղեցական ժողով գումարեն, 117 գլուխները մէկիկ մէկիկ նկատողութեան առնեն, և իւրաքանչիւրին մասին իրենց լիակատար հպատակութիւնը յայտնեն, և յամենայնի ու ըստ ամենայնի լատինականութեան հետեւելու յանձնառու ըլլան։ Այդ վերջին դարձուածը կրկին կը հաստատէ մեր խորհրդածութիւնը, թէ Բենեդիկտոսի ընթացքին մէջ մեծ մաս ունէր խուսափողական նպատակը։ Իսկ Ունիթոր խորհրդատուները կը ջանային պատեհէն օգտուիլ Հայ եկեղեցին վերջնականապէս լատինականին ձուլելու համար։

ԼԵՒՈՆԻ ՄԱՀԸ

1289. Երկրորդ մերժումը չափազանց վշտացուց Լեւոնը, և հարկաւ մերկապարանոց յայտնութեամբ պատկ'րացուց անոր աչքին առջեւ Լատիններուն խաբէական ուղղութիւնը, բայց ինչ օգուտ, որ արդէն բացարձակապէս պարտաւոր մնացած էր նա Եգիպտացիներուն առջեւ, Արեւմտեաններուն հետ պաշտօնական յարաբերութիւններ կատարելով, և վերահաս կը տեսնէր իր թագաւորութեան սպառնացող վտանգը։ Նա իր ընթացքով պարտաւոր կը մնար իր ազգին ու ժողովուրդին առջեւ ալ, որ իրրեւ յատին ապաստան յանձնառու էղած էր եգիպտական հաշտութեան ծանր պայմանները (§ 1280), և զոր Լեւոն խախտած էր իր թեթեւամիտ ակնկալութիւններով։ Դանիէլ պատգամաւորին երկրորդ անգամ ձեռնունայն և անյաջող դարձը՝ լրումն եղաւ տագնապալից վիճակին, որովհետեւ այնչափ յանձնառութիւններէ ետքն ալ տակաւին ինքզինքին խաբուած ու վտանգուած կը գտնէին՝ թագաւորն ալ, կաթողիկոսն ալ, և իրենց համախոհներն ալ։ Այսու հանդերձ ուրիշ ելից ճանապարհ մը չունէին։ Լեւոն ու Մխիթար կը համաձայնին պահանջուած ժողովը գումարել և յարակից ձեւակերպութիւնները լրացնել, այդ կերպով պապը գոհացնելու և օգնութեան պարտաւորցնելու յոյսով։ Սակայն Լեւոն չհամներ իր մտածմունքին արդիւնքը տեսնալ, և կը մեռնի 1342 օգոստոս 26'ին (ՍԻՄ. 559)։ Պատմութիւնը անորոշ կը թողու Լեւոնի մահուան պարագաները։ Տարիքի խնդիր չի կրնար ըլլալ, վասն զի դէռ նոր թեւակոխած էր իր 33'րդ տարին, ուստի ոմանք ներքին յուզման և սիրտի ցաւի կը վերապրեն կանխահաս մահը, մինչ ուրիշներ ժողովրդական յուզումէ և լատինամոլ ուղղութեան դէմ կազմակերպուած չարժումէ յառաջ եկած սպանութիւն մը կը տեսնեն այդ պարագային մէջ (ՍԻՄ. 559), ինչ որ մեր տեսութեամբ ալ բոլորովին անհաւանական չերեւիր, քանի որ յառաջիկային ալ այդ տեսակ չարժումներու և սպանութիւններու օրինակները պիտի տեսնենք։ Լեւոնի մահր նոր տագնապ մը կը պատճառէր, վասն զի իրմով կը վերջանար Կոռիկոսեան կամ Պաղերոնեան ազգատոհմին արական ճիւղը, որ Ռուբինեան ազգատոհմին արական ճիւղին սպառելէն ետքը, իգական սերունդի իրաւունքով և Լեւոն Բ'ի Ջապէլ աղջկան հետ խնամութեամբ (§ 1105), Կիլիկիոյ թագաւորութիւնը ժառանգած էր։ Լեւոն անորդի կը մեռնէր, և իր հօրեղբայրներէն ալ ոեւէ զաւակ չէր մնացած, և ամէնէն մեր-

ձաւորներ կը նկատուէին Լեւոն Դ'ի Զապէլ կամ Զապլուն աղջկան Ամաւրի Լուսինեանէ ունեցած զաւակները, որոնցմէ երկուքը սպանուած էին, մէկը Ծունաստան կը մնար (§ 1270), իսկ վերջին երկուքը Սիսի արքունիքի մէջ գլխաւոր դիրքեր կը վայելէին (§ 1277)։ Այս անգամ նորէն Զապէլի մը միջնորդութեամբ կիլիկիոյ թագակապ ազգատոհմը կը փոխուէր, սակայն յաջորդողը այլեւս Հայ չէր, այլ բնիկ և ըստ ամենայնի Լատին, արեամբ և դգացմամբ և դաւանութեամբ, որ արդէն թագաւորութեան տկարանալուն պատճառն էր եղած, և որ զայն կործանման ալ հասուց։

1290 ։երիցութեան կարգով ժառանգութիւնը պէտք էր իյնար Գուիտոնի ,որ Ագայիոյ կուսակալութիւնը կը վարէր ,բայց երկար ժամանակի ու չատ գործողութեանց պէտք կար մինչեւ անոնց դայն ու գործի ձեռնարկելը, ուստի վերապահելով մէկտեղ Գուիտոնի իրաւունքը, Ջիւան Լուսինեան, որ պայլութեան պաշտօն կը վարէր, պետութեան գլուխը անդամ և թագաւորութեան տիրացաւ, և ոչ թէ ինամակալութեան ձեւով կամ թագադրեալ տիղոսով, ինչպէս ոմանք կը մեկնեն (ՍԻՍ· 559), այլ իսկական տիրապետութեան կերպով, և Ջիւան անսովոր անունն ալ կոստանդինի փոխելով, հռչակուեցաւ և ընդունուեցաւ, իբր ֆառաօղէթ պէք Կոստանդին, ընծէհ և ընթրոնեմբ Ասպոծոյ ըսֆաւոր ասֆնայ Հոյց (ՄՆՍ· ԻԲ· 1186)։ Լատին պատմիչը կ'ըսէ, թէ Գուիտոնի հրաժարելովը Ջիւան տիրացաւ թագաւորութեան (ԴԱՐ· 32), սակայն ուրիշներ այդ պարագան չեն յիշեր, և կ'երեւի թէ Ջիւանի հաստատ որոշման և Հայերուն հաստակերպութեան նպաստած է եգիպտացւոց կողմէն 1342'ին կազմակերպուած արշաւանքը, ձիշդ Լեւոնի մահուան միջոցին։ Այդէն պիտի երեւի թէ պաշտօնին բերմամբ Ջիւանի կ'իյնար, քանի որ դինուորական այն ալ իր ձեռքին տակ կը գտնուէր։ Սակայն արդիւնք մը չէ ունեցած իր հրամանատարութիւնը, և ոչ ալ կրցած է արգիլել Հայերուն կոտորածը և կիլիկիոյ աւերածը (ՍԻՍ· 559), որ տեղի ունեցան եգիպտացւոց երեսէն։ Միւս կողմէն եգիպտացւոց յայտնի թշնամութիւնը, աւելի եւս աստիճացուց Լատիններու օգնութեան անհրաժեշտութիւնը, հետեւաբար Լատինները համերաշխելու հարկն ալ, կամ որ նոյն է Բենեդիկտոսի պահանջած ժողովական վճիռը և անպայման հպատակութիւնն ու համակերպութիւնը, որուն համար ամենայն հաւանականութեամբ հրաւէրներն ալ Լեւոնին մեռնելէն առաջ ղրկուած էին։ Ժողովին թուական նշանակուած է սովորաբար 1342 տարին (ՄՆՍ· ԻԸ· 1185), սակայն նկատելով թէ նոյն տարւոյ օգոստոսի վերջը տեղի ունեցած է Լեւոնի մահը, թէ ժողովը գումարուած է Նոյ և Հոռոմկլեմբ կոստանդին թագաւորին (ՄՆՍ· ԻԸ· 1186), որ է Ջիւան Լուսինեանը, և թէ եգիպտացւոց արչաւանքն ալ պէտք էր գումարման յապաղելուն պատճառ ըլլար, յարմարագոյն է ժողովին թուականը դնել 1343'ին սկիզբները (ՍԻՍ· 559)։ Հետեւաբար պէտք կը զգանք այստեղ Միխիթարի գումարած Սիսի ժողովին պատմութիւնն ընել, և ժողովական դրութիւնը վերլուծել, և կարծեցեալ 117 մոլորութեանց քաղուածն ալ տալ։ Գիտենք թէ երկար և ձանձրալի պիտի ըլլայ այդ քաղուածը, և թէ պարունակութիւնն ալ այնչափ անկարեւոր և ստորին է, որ մինչեւ իսկ երկիւղած Ալիշանն ալ համաձակեցուցած է կոչել անունք 117 յօդուածս անյօդիր, և վկայել թէ անոնցմէ շատ քանոն էին ծեր ընդերցանելոց (ՍԻՍ· 147)։ Աւելի մէկտեղ կ'ուզենք հռչակաւոր 117 գլուխները բացատրել, որպէս զի միանգամ ընդ միշտ տեսնուի, թէ ինչ անտեղի կերպերով և անհիմն փաստերով կը վարուին հռոմէադաւանները երբ Հայ նկեղեցւոյն դէմ կը գինուին, և անոր մասին տեղեկութիւններ կու տան։ Միւս կողմէն այդ հռչակաւոր ցուցակը, ոչ հայերէն բնագիրով մը և ոչ լիակատար քաղուածով մը մեզ հասնելոց ծանօթացած չէ, և միայն յատնիներէն գրուածը կայ մէջտեղ, որ անշուշտ թարգմանութիւն է Ունիթորներու ձեռքով կատարուած, և գուցէ այն ալ մասամբ աղաւաղուած։

1291 · Մեր առջեւն եղած ժողովական գրութիւնը, գումարման տեղ և տարի և օր չնշանակեր, միայն 1342'ին Բենեդիկտոս ԺԲ

պապէն կարծեցեալ մոլորութեանց ցուցակին ղրկուած ըլլալը կը յիշէ, իսկ Բենեդիկտոս 1342 տարւոյն մէջ մեռած էր, և մայիս 19'ին իրեն յաջորդած էր Կղեմէս Զ, որուն անունն ալ սոյն գրութեան մէջ կը յիշուի (ՄՆԱ· ԻԵ· 1188)։ Գիտենք ալ որ Ժողովը Լեւոնի մահուընէ ետքը բացուեցաւ, որ օգոստոս 26'ին տեղի ունեցած էր (ՄԻՍ· 559), և եգիպտական արշաւանքն ալ նկատի առնելով 1343'ին սկիզբը դնելը յարմարագոյն հաւանեցինք (§ 1290)։ Իսկ տեղը անուշտ Սիս եղած է, և այնպէս ալ սովորաբար ընդունուած է (ՉԱՄ· Գ·341)։ Ներկաները կաթողիկոսով մէկտեղ 30 եպիսկոպոսներ են, 15 վարդապետներ, և 7 աւագերէցներ, և ուրիշ քահանաներ։ Առանց ցուցակը լսողներէն մէջ կը գտնենք աղաւաղուած անուններով, զոր Չամչեան նմանողութեամբ ջանացած է հայացնել։ Եպիսկոպոսներէն 20 հատը կիլիկեցիներ են, Բարսեղ Սիսի, Վարդան Տարսոնի, Ստեփանոս Անաբզաբայ, Բարսեղ Բարձրբերդի, Գրիգոր Ատանայի, Յովհաննէս Այասի, Ներսէս Կապանի, Յովհաննէս Մաչարդի, Գրիգոր Թերմանիկիոյ, Գէորգ Կոկիսոնի, Դաւիթ Համանի, և Գրիգոր Մաչկեւորի, իսկ ուրիշ ալ առանց թեմի՝ կաթողիկոսարանի եպիսկոպոսներ, Յովհաննէս, Կոստանդին, միւս Յովհաննէս, Ստեփանոս, Սարգիս, Բարսեղ, Գրիգոր և Բարսեղ աստնադպիր։ Առնցմէ ոմանց վիճակները անյիմանալի կը մնան նիւթ լսողին բառերուն հետեւինք, զի կապան մենաստանը՝ գրուած է Կամպանիա, Մաչարդը՝ Մաթիքար, Կոկիսոնը Կոգուանիա, Համանը՝ Կամանտիա, և Մաչկեւորը՝ Մասգուկիմիա։ Վեց եպիսկոպոսներ ալ Փոքր Ասիոյ մերձաւոր վիճակներէն են. Մարկոս Կեսարիոյ, Բարսեղ Իկոնիոյ, Սիմոն Սեբաստիոյ, Բարսեղ Անկիւրիոյ, Ստեփանոս Տրապիզոնի, և Գրիգոր Տիանայի, որուն վիճակը լսողներէն մէջ Տարսուինիա է գրուած։ Երեք եպիսկոպոսներ միայն Հայաստանէ կը կարծուին, Դաւիթ Տարոնի, Դանիէլ Ձմշկածագի և Մեսրոպ Խորձեանի, թէպէտ չատ կեղակարծ են, զի Ձմշկածագի փոխուածը լսողներէն մէջ Թեմիակիա կը կարդացուի, և Խորձեանը՝ Սարկանտիոս, և Ձամչեանի տուած մեկնութիւնը կամայական կը դառնայ, և միայն իրրեւ ճիշդ անուն կը մնայ Տարոնը իբր Հայաստանի վիճակ, և ինքնին նշանակութիւն ալ չունենար։ Ներկայ վարդապետներն են Դանիէլ Սեբոյ նոյնինքն պատգամաւոր գացող Փրանկիսկեան կրօնաւորը, Բարսեղ Մաչկեւորցի, Ներսէս Պոսինանդացի, և Յովհաննէս և Ստեփանոս կաթողիկոսարանի պաշտօնեաներ։ Մնացած տասները իրրեւ հայր վանաց կը նշանակուին, և են Յովհաննէս Ակներ, կարապետ Մեծքարի, Թորոս Մովսիսեանքի, Ստեփանոս Միակեցիրի, Յովհաննէս Բլուրի, Կոստանդին Լիսանկանի, Հայրապետ Իսամանոսի, Յովհաննէս Քելեղականի, Լեւոն Գերմաղբերի, և Դաւիթ Փրկիչի։ Այս տեղ ալ քանի մը անուններ բոլորովին տարբեր կը հնչեն լսողներէնին մէջ, Մեծքարը կը կարդացուի Կիրորիմ, Միակեցիրը՝ Կեսանան, Քելեղականը՝ Կայլգոյն, Գերմաղբերը՝ Կէմէրկէկոն, և Փրկիչը՝ Պերզեր։ Վերջապէս աւագերէցներէն կը յիշուին, Լեւոն արքունի պալատին, Յովհաննէս Սիսի, Բարսեղ Ատանայի, Ատուածատուր Տարսոնի, Կոստանդին փակակալ մեծ եկեղեցւոյ, Կոստանդին Սուրբ Սոփիայի, և Յովհաննէս Հերմումաչէնի, կամ աւելի ճիշդ Եփեսական։ Այդ անունները տալէն ետքը գլխաւոր դիտելիքնիս այն է, թէ պարզապէս կիլիկեցւոց դումարում մը եղած է Սիսի ժողովը բուսածը, և ոչ երբեք ընդհանուր Հայոց եկեղեցւոյ ժողով մը, ինչ որ կը տկարացնէ անոր կանոնական նշանակութիւնն ու հեղինակութիւնը։ Դիտուելու է եւս, որ թագաւորի և իշխաններու անուններ չեն յիշուիր, ինչ որ ազգային ժողովի սկզբունքին համաձայն չէ, և ասով աւելի կը չեչտուի լսողական սկզբունքի տեսութիւնը, որ աշխարհականները հեռու կը պահէ եկեղեցական գործերէ։ Ըստ այմ Սիսի ժողովը լոկ մասնաւոր խորհրդակցութեան համար գումարում մը եղած կ'ըլլայ՝ պատրաստելու պահանջած պատասխանները, և ոչ երբեք ազգային կանոնական ժողով մը։ Կամ աւելի ճիշդ, լսողները հաճեցնելու համար կազմակերպուած քաղաքական միջոց մը, և ոչ թէ Հայ եկեղեցւոյ

ՍՍՈՑ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

ւոյ դաւանութեան և ծէսին ազատ բացատրութիւնը։

ԳՐՈՒԹԵԱՆ ՈՃԸ

1292. Պարզապէս պատասխաններ պատրաստելու համար գումարուած խորհրդակցութիւն մը ըլլալը յայտնապէս ալ նշանակուած կը գտնենք Ժողովական Բացատրութիւն կոչուած գրութեան սկիզբը։ Ժողովականները կը յայտարարեն թէ մէկտեղ հաւաքուելով կարգացին և լսեցին սխալներու և ստութիւններու գրութիւնը, և զայն իւր բոլոր մանրամասնութեանց մէջ քննեցին, թէ անոր մէջէն գտնեցին ուղղափառ հաւատոյ և եկեղեցւոյ խորհրդոց ճշմարտութիւնները՝ առանց մոլորութիւններէն, և թէ Հռոմի տէր կղեմէս պապին, տէր Բենեդիկտոսի յաջորդին կը ներկայացնեն հաւատքի և խորհրդոց վարդապետութիւնները, ծէսերն ու սովորութիւնները, ինչպէս որ միշտ ունեցած է Հայոց եկեղեցին և ինչպէս այժմ ալ ունի։ Իսկ Հայերէն ոմանց մոլորութիւնները, որոնք պատահաբար խօսուած են, իրենք ընդունած չեն, և կը մերժեն ու կը դատապարտեն օտարազգի հերետիկոսական մոլորութիւնները։ Այդ բացատրութիւնները զոր Սոյ ժողովին գրութենէն կը քաղենք (ՄՆՍ. ԻԵ. 1188), բացայայտ կը ցուցնեն, թէ Մխիթար կաթողիկոսի և իրեն հետ եղողներուն բռնած ձեւը եղած է, չհեռանալ Հայոց եկեղեցւոյ դաւանութենէն ու արարողութիւններէն, այլ աչխատիլ անոնք Հռոմի պահանջած ձեւերուն մօտեցնել։ Իսկ այլանդակ կամ տարօրինակ գրելութիւնները, որոնք իրրեւ Հայոց եկեղեցւոյ մոլորութիւններ ցուցուած էին, մասնաւորներու խօսք կամ գործ ըսելով՝ վրանէրնէն հեռացնել։ Այս ուղղութիւնը բոլորովին տարբեր է Ունիթորներու հետեւած կերպէն, որոնք կ'աչխատէին Հայ եկեղեցին կատարելապէս լատին կաղապարին վրայ ձուլել, հապա թէ լեզուն հայերէն պահելով, և մինչեւ իսկ հայ լեզուն ալ լատինական ոճին ենթարկելով։ Հետեւաբար 117 գլուխները այդ գրութեան մէջ մի առ մի յառաջ բերուած են, հարց պատասխանի ձեւով, առաջարկուած կէտերը բառացի դնելով, անոնց պատասխանները դիմացը նշանակելով։ Մենք կրկնութենէ խորշելու համար առաջարկները և բացատրութիւնները միատեղ պիտի քաղենք, չանալով, որչափ հնար է, համառօտ կերպով էական իմաստները տալ, և ոչ թէ ընդարձակօրէն բացատրել, մի այն տեղն կատարեալ թարգմանութիւն մը տալու պիտի պարտաւորուինք ամբողջ գրութեան, որ 86 անգին էջեր կը գրաւէ լատիներէն բնագիրին մէջ (ՄՆՍ. ԻԵ. 1185—1270)։ Թէպէտեւ այս ամփոփ քաղուածն ալ բաւական տեղ պիտի գրաւէ մեր պատմութեան մէջ, սակայն անհրաժեշտ սեպհականք որ մերայինք անգամ մը այդ 117 գլուխներուն ցուցակը ամբողջաբար աչքի առջեւ ունենան։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ 1—5

1293. Առաջին կէտը կը սկսի Հոգւոյն Սրբոյ բղխման խնդիրով։ Ունիթորներու կազմած և պապին իբրեւ ցուցած ցուցակը կ'ըսէ թէ 1. Հայերը առանց Ե յՈրդւոյ բղխումը կ'ընդունին ուղղ, բայց իբր 612 տարի առաջ ժողովով մը մերժեր են, և հիմայ ալ կը մերժեն, և եթէ այս տեսակ բացատրութիւն մըն ալ կը գործածեն, ոչ թէ յաւիտենական բղխումին վրայ, այլ արարածոց սրբութեան համար ուղած ժամանակաւոր բղխումին վրայ կ'իմանան։ Պատասխանին մէջ, Ե յՈրդւոյ բացատրութիւնը գործածուած ըլլալու վկայութիւն կը բերեն Հոգեգալուստի օրուան երրորդ աղօթքին սկիզբը (ՄՆՍ. ԻԵ. 1188), սակայն այժմեան օրինակներ այս բացատրութիւնը չունին (ՁԱՇ. Բ. 55)։ Կ'ըսեն եւս թէ յիշուած ժողովը՝ Մանազկերտի ժողովը կրնայ ըլլալ, բայց անոր մէջ Հոգւոյն Սրբոյ խնդիր եղած չէ, իսկ բղխման վրայ խօսած տեղն տարբերութիւններ դրուած ըլլալը՝ անհիմն և ճշմարտութեան հակառակ կը հռչակեն։ 2. Թէ Հայեր հանգանակի մէջ Ե յՈրդւոյ բղխում չեն յիշեր, Յովհաննու աւետարանի բացատրութիւնը կը պնդեն, և եթէ մէկը ընդունի ալ, յայտնել չհամարձակիր, մինչ Քաղկեդոնի ժողովը Կոստանդնուպոլսոյ և Եփեսոսի վճիռները ընդունելով, Ե յՈրդւոյ բղխումը հաստատած է։ կը պատասխանեն, թէ իրենք աւետարանի վրայ կը հիմնուին, բայց յորմէհետէ Հռոմի հետ յարաբերութիւն հաստատեցին, Ե յՈրդ-

ով վարդապետութիւնը կ'ընդունին, իսկ Քաղկեդոնը չեն ընդունած, որովհետեւ Լեւոնի տումարը նեստորական միտք ունի, յայտնապէս ալ դրած ըլլալով, թէ Քանն Գալիլեայ եղեւ և փաղաքեցաւ է Ջեզ (ՄՆԱ·ԻԸ· 1190)։ Ասոր կատրին մէջ դիտել պիտի տանք թէ հանգամանակէն յառաջ բերուած հատուածը՝ ունի ՝ոբոզեաց յառաջեալն (ՄՆԱ·ԻԸ· 1180), և ոչ ըստացեալն։ 3. Թէ Հայեր նոյն ժողովին մէջ, այսինքն 612 տարի առաջ դումարուած ժողովին մէջ, դատապարտեցին Քաղկեդոնի ժողովը, և Լեւոնի տումարը, և դաւանեցին մի բնութիւն, մի կամք և մի ներգործութիւն, և հակառակը դաւանողները բանտարկեցին և սպաննեցին։ Գիոսկորոսն ալ իրը սուրբ հռչակեցին, և տարին երեք անգամ կը կրկնեն անոր փառաբանութիւնը։ Կը պատասխանեն, դարձեալ կրկնելով Քաղկեդոնի և Լեւոնի դատապարտութեանց համար տուած բացատրութիւնները։ Դատապարտութիւնը կը վերագրեն Մանազկերտի ժողովին, բայց զայն դադարած կ'ըսեն Սսոյ և Ատանայի ժողովներով։ Կը յաւելուն թէ Դիոսկորոսի պատուոյ երգը գործածութենէ դադրած է, և փոխարէն չարականի նոր տուն մը յօրինուած է, իրը երկու բնութեանց յայտարարութիւն։ Այդ տունը պէտք է Անաւարզեցիին անգործածական չարականներէն եղած ըլլայ։ Հնար չէ չդիտել, թէ ինչպէս ներքագրական ձեւերով կ'աշխատին Հռոմը գոհացուցած երեւնալ։ 4. Թէ Հայերը կը կարծեն թէ նախահայրերուն մեղքը անձնական էր, և թէ լոկ մեղքին ծանրութեան պատճառաւ՝ իրենց սերունդը դատապարտուեցաւ, թէ տղայ մեռնողները՝ Քրիստոսի գալուստէն առաջ դատապարտութեան ենթարկուեցան, թէպէտ իրենք մեղաւոր չէին, բայց թէ այն ալ վերջացած է Քրիստոսի գալուստէն և նախահայրերուն մեղքը ջնջելէն ետքը։ Կը պատասխանեն, թէ այսպիսի կարծիք ունեցան Պեղագեաններ և Կղեմտինեաններ, որոնք Հայ չէին, և որոնց կարծիքը Հայաստան չհասաւ։ Եւ երկար հատուածներ յառաջ բերելով մկրտութեան մասնորէն, կը ցուցնեն թէ Հայեր կը մկրտեն է ԹողՔնէն Ջեզ, որ հարկաւ տղայոց վրայ իրենց անձնական մեղքը չկրնար ենթադրուիլ։ 5. Թէ Մխիթար վարդապետ մը սորվեցուցած է՝ զաւակներու հօրերնուն հոգիէն ելլելը, ինչպէս ճրագը ճրագէ, և թէ Արճէլի դաւառի եօթը վիճակներ իրրեւ սուրբ կը պատուին Մխիթարը։ Կը պատասխանեն, թէ առանկ բան մը լսած չեն և զրպարտելնուս յօրինած սուտերուն կարգէն է, և թէ ընդհակառակն Մխիթար իւր կենդանութեան այդ կարծիքը հերքած է։ Մնդիրը Մխիթար Սասունցի վարդապետին վրայ է, ինչպէս արդէն յիշեցինք (§ 1286)։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ 6—12

1294. Կը չարունակէ կարծեցեալ մոլորութեանց ցուցակը։ 6. Թէ Հայերը կ'ըսեն որ քրիստոնեայ ծնողաց տղաներուն հոգիները Ադամի դրախտը կ'երթան, իսկ ոչ-քրիստոնեայ ծնողներու տղայոց հոգիները իրենց ծնողքերուն հոգիներուն մօտ կ'երթան։ Կը պատասխանեն, թէ Հայեր քրիստոնեայ և ոչ-քրիստոնեայ տղայոց հոգիներուն մէջ զանազանութիւն չեն դներ, այլ թէ ամէնքն ալ միատեղ կ'երթան տեղ մը՝ որ սրոչ չէ, և ուր առանց պատժոյ երանութենէ զրկուած կը մնան, և թէ այդ տեղին լիմպոս անուն տալն ալ Լատիններէն սորվեցան։ 7. Թէ Հայերը կ'ըսեն թէ բոլոր մեռածներու հոգիները օդին կամ երկրի մէջ տեղ մը կը մնան մինչեւ դատաստանի օրը, և անմիջապէս դժոխք կամ արքայութիւն չեն երթար, և թէ անկնունք տղայոց հոգիներն ալ յարութենէ ետքը արքայութիւն կ'երթան առանց երանութեան։ Կը պատասխանեն, թէ թէպէտ վարդապետներէն ոմանք Յոյն եկեղեցւոյ վարդապետութեան համաձայնեցան, սակայն Հայոց Եկեղեցին կ'ընդունի թէ մեռածներ այժմէն հոգւով, և յարութենէ ետքը հոգւով ու մարմնով արքայութիւն կամ դժոխք կ'երթան։ Իրենց բաժնին հաստատութեան համար չատ մը չարականի կտորներ յառաջ կը բերեն, որոնք սակայն անմիջական երանութեան ճշդիւ չեն պատասխաներ։ 8. Թէ Հայերը չեն ընդունիր, որ վերջին դատաստանէն ետքն ալ արքայութիւն դայողներ Աստուծոյ էութիւնը պիտի տեսնեն։ Կը պատասխանեն, թէ ատանկ վարդապետութիւն չունի Հայոց Եկե-

ղեցին, աստուածային տեսութիւնը կ'ընդունի, թէպէտ աստիճաններ կը դնէ երանելեաց արժանիքին համեմատ։ Ասելի յրատակ խօսած կ'ըլլայի եթէ աստուածային տեսութիւնը՝ անխմանալի էութիւնն կատարեալ խմացութիւնէն զանազանէին։ 9. Թէ Հայերը անկնունք ապացոյց և ոչ կատարեալ սրբացելոց հոդիներուն համար կ'ըսեն, որ ամէնքը դրախտ կ'երթան, իսկ կատարեալ արդարացեալներ միայն հրեշտակ լոյսի պսակներ ունին և խաչին լոյսով կը զուարճանան։ Կը պատասխանեմ, թէ այսպիսի անհիմնի բաներ Հայերուն մէջ և ոչ իսկ խօսուած են։ 10. Թէ Հայեր կ'ընդունին որ վերջին դատաստանէն ետքը, ոչ կատարեալ չարեր այս երկրի վրայ կը մնան առանց մեռնելոյ վիճակով, իրրև նուազ երանութիւն դրախտի մը մէջ։ Կը պատասխանեմ, թէ Հայ եկեղեցին դատաստանէն ետքը միայն արքայութիւնն և դժոխք կ'ընդունի, և ոչ մի միջակ կամ տարբեր կայան, և ոչ ամուսնական վիճակ։ 11. Թէ Հայերուն կարծիքներր չարերուն համար տարբեր են։ Ոմանք դատաստանէն ետքր կ'ընդունուին հրեղէն ովկիանոս մը ուր վիշապներ պիտի չարչարեն դատապարտեալներր, ինչպէս նաեւ սատանաները։ Իսկ ոմանք բնաւ դժոխք չեն ընդունուիր. թէ դատապարտեալներ իրենց մեղքերուն խիղճովը կը չարչարուին։ Կը պատասխանեմ, թէ հրեղէն ովկիանոսը և վիշապներր առասպելներ են, իսկ դժոխքին Քրիստոսի մահուամբր բոլորովին ջնջուած ըլլալր, քանի մը անխմաստներ կրնան բաած ըլլալ, ինչպիսիներ Լամենեականն մէջ ալ կը գըտնուին, այլ հեղեղին կ'ընդունի դատապարտեալց դժոխքր՝ Լատինացւոց վարդապետութեան նման։ 12. Թէ Հայեր կ'ըսեն, որ ամէնուն բարի և չար գործերր կչիռի երկու կողմերր պիտի դրուին, եթէ չարիրր ծանր կգտնեն, հրեղէն ովկիանոսր պիտի նետուին, եթէ բարի գործերր ծանր կգտնեն, այլ երկրին երանելւոյ դրախտր պիտի տարուին, իսկ եթէ հաւասար գտնեն, երկրի վրայ պիտի մնան առանց երանութեան։ Կը պատասխանեմ, թէ այդ խօսքերր առասպելներ են, և անտեղի տեսութիւններ։

1295. Կը չարունակէ, 13. Թէ Հայերը, որչափ ալ տղաքներր մկրտելու պէտքը կը ճանչնան, բայց կ'ըսեն թէ կը մկրտուին ոչ թէ մեղաց թողութեան համար, այլ քրիստոնեայ ըլլալու և փառաց արժանանալու համար։ Կը պատասխանեմ, թէ Հայերը մկրտութիւնը կը կատարեն ի ՆՂԹ-ԻՆ Ժղջ, ինչպէս 4'րդ յօդուածով բացատրուեցաւ, և նոր վկայութիւններ ալ աւելցնելով, առարկութիւնը սուտ ու զրպարտիչ կը կոչեն։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ 13—19

14. Թէ Հայերը կը դատանին որ Քրիստոս մահուընէ ետքը դժոխք իջաւ, և դատապարտեալներէն որոնք որ իրեն հաւատացին, արդարացուց, և չհաւատացողները տարբեր աստիճաններու վերածեց. ինչպէս վերը ըսուեցաւ, դժոխքր չնջեց, և ամէնուն վիճակը առկախ Քրիստոս մինչեւ դատաստանին օրը։ Կը պատասխանեմ, իւրաքանչիւր կէտի մասին՝ արդէն բացատրուած յօդուածներուն համեմատ, աւելցնելով ալ թէ արդէն դատապարտեալներու համար արդարացում չեն ընդունիր։ Իսկ մինչեւ աշխարհի վերջը հոգիներուն դատաստանի սպասելը Ցոյն եկեղեցւոյ հետ միաձայնութեամբ ընդունուած ըլլալը յայտնելով, այժմ Հռոմի եկեղեցւոյն համաձայնած ըլլալնին կ'աւելցնեն։ 15. Թէ Հայերը չեն ընդունիր որ սատանաներ զգալի պատիժներ կը կրեն, այլ թէ մինչեւ աշխարհի վերջը օդին մէջ կը մնան, սեւացած և երանութենէ զրկուած։ Կը պատասխանեմ, թէ այժմ Հռոմի կարծիքին դարձած են։ 16. Թէ Հայերը հրեշտակներուն ստեղծուելուն ժամանակին մասին տարակարծիք են, թէ՛ աշխարհի ստեղծումէ առաջ կամ թէ աշխարհի ստեղծման սկիզբը։ Թէ կը կարծեն որ բոլոր հրեշտակներ բարի ստեղծուեցան, թէ չորրորդ կամ վեցերորդ օրը մեղանչեցին, և երկինքին մէկ ծակէն վար ինկան, ուսկից բարի հրեշտակ մրն ալ ինկաւ, բայց Ս. Բարսեղի միջնորդութեամբ երկինք դարձաւ։ Թէ Ադամի մեղանչելու ատենր ոմանք նոյն օրր ժամը 6'ին կ'ըսեն, և ոմանք չարաթ մը ետքը։ Կը պատասխանեմ, թէ առասպելական յօրինուածներ են, քանի որ հրեշտակներ աննիւթական են, և Ադամին մասին Շնորհալին կը յիշեն, որ ժամը մէկին Ադամ, և երեքին Եւան ըս-

տեղծուած կը դնէ, վերջին ալ նախահայրերուն մեղքը։ 17. Թէ Հայերը Մոբբան կամ Քահանան չեն ընդունիր, և խոստովանութեամբ ամէն մեղքերը կատարեալապէս ներուած կը կարծեն։ Թէ սուրբերուն համար ալ կ'աղօթեն, և անհաւատներուն հոգիները իրենց գերեզմաններուն վրայ մինչեւ դատաստանին օրը կը մնան, կ'ըսեն։ Կը պատասխանեն, թէ այդ անունը չեն գործածեր, բայց ննջեցելոց համար կ'աղօթեն, որպէս զի իրենց մեղքերուն ներում չնորհուի, և թէ գիտեն որ մեղքերուն քաւութեան համար ապաշխարութիւններ կամ պատիժներ ալ պէտք են։ Կը յաւելուն, թէ սրբոց նկատմամբ պատարագամատոյցին աղօթքը սխալ մեկնուած է, և թէ անհաւատներուն համար ըսուածը առասպելարանութիւն է։ 18. Թէ Հայեր կը կարծեն, որ Քրիստոս մարդացաւ, ոչ թէ սկզբնական մեղքը ջնջելու համար, այլ իրմէ առաջ դժոխք մնացողները ազատելու, դժոխքը ջնջելու, մանուկները արքայութիւն տանելու, և մարդիկները զղջումի բերելու համար։ Կը պատասխանեն, թէ մկրտական մեղքին մասին 4'րդ յօդուածին մասին խօսեցան, մնացածներն ալ սխալ մեկնութիւններ են։ 19. Թէ Հայերը նախահայրերուն մինչեւ Քրիստոս՝ ամէնքը հոգւով և մարմնով մնած կ'ընդունին, և մարմնոյ ցանկութիւնը անոնց մեղքին հետեւանք կ'ըսեն, օրինաւոր ամուսնութեան ցանկութիւնն ալ մեղք կը նկատեն, և եթէ մեղանչած չըլլային, կ'ըսեն, մարդիկ առանց զուգաւորութեան և առանց ծերման պիտի չաճէին, ինչպէս ճրագը ճրագէ։ Կը պատասխանեն, մերժելով բոլոր ըսուածները իբր անհիմն զրպարտութիւն, կը յայտնեն թէ Զաքարիա կաթողիկոսի խօսքերը սխալ մեկնուած են։

1296. կը չարունակէ, 20. Թէ Հայերը Քրիստոսի մարդեղութեան մէջ, մարդկային

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ 20—33

բնութիւնը աստուածային բնութեան փոխարկուած կ'ըսեն, երկու բնութիւն ընդունողները՝ իբր անկումնք ներքանոնները նորէն կը մկրտեն։ Ինչ պատասխանեն, փոխարկութիւնը միաւորութենէն զանազանելով, Շնորհալիէն երկար հատուած մը բերելով, և կրկին մկրտութիւն չընդունելով վկայելով, նոյն իսկ Նեստորականաց վրայ։ 21. Թէ Հայերը մարդկային բնութիւնը աստուածային բնութեան փոխարկուած ընդունելով, նոյնը չարչարելի և անչարչարելի, մահկանացու և անմահ կ'ընդունին, և թէ մէկ կամք և մէկ ներգործութիւն կը դաւանին։ Կը պատասխանեն, միաւորութիւնը պաշտպանելով, և կատարեալ մարդ դաւանելով Քրիստոսը, և չատ երկար բացատրութիւններ կուտան այդ մասին, առանց ընդունելու երկու քնութիւն բանաձեւը։ 22. Թէ Հայերը կ'ըսեն որ Քրիստոս մահուընէն ետքը դժոխք իջաւ, դժոխքը ջնջեց և հոգիները դրախտ տարաւ, և անկէ ալ հանելով երկրին մէջ բերաւ, և այն տեղ կաթողիկոսին մէջ թողուց դրախտի մօտերը։ Կը պատասխանեն, թէ սուտ և անիմաստ և անհիմն առասպելներ են։ 23. Թէ Հայերէն ոմանք կը կարծեն որ աւազակին դրուցուած ՝ջօջ՛ը, դատաստանի օրուան համար պիտի խնայուի, իսկ ուրիշներ կը կարծեն թէ նոյն ուրբաթ օրը դրախտին դուռը գնաց, և երրորդ Քրիստոս ալ եկաւ, ճենովք ու Եղիա դուռները բացին, ու ներս մտան, բայց թէ նորէն Քրիստոս զայն դրախտէն հանեց ու երկրի մէջ բերաւ։ Կը պատասխանեն, թէ իրենք կը ճանչնան որ աւազակին հոգին ալ Քրիստոսի հետ դժոխք իջաւ, որ Գոգն Աբրահամու ըսուածն է, և ուրիշ հոգիներու հետ անկէ երկինք փոխադրուեցաւ։ 24. Թէ Հայերը կը կարծեն որ Քրիստոս մահուընէն ետքը դժոխքը ջնջեց, և այս պատճառով մարդիկներուն մնունդէն ետքը, հրեշտակներ բարիները կը տանին մինչեւ դրախտը, և սատանաներ չարերը կը տանին հրեղէն ովկիանոսը, և կը ցուցնեն, բայց չեն մտներ, և երկիր կը դարձնեն, որ դատաստանի օրուան սպասեն։ Կը պատասխանեն, թէ սրբէն յայտնած են որ ամէնքն ալ չինծու առասպելներ են։ 25. Թէ Հայերը Քրիստոսի վրայ մարդկային հոգի չեն ընդունիր, և երբ հակառակ փաստերու չեն կրնար պատասխանել, ծէծի և պատիժներու կը դիմեն, և թէ կ'ըսեն, որ Քրիստոս իր աստուածութիւնը մարդկութեան կէրպարանով ծածկեց։ Կը պատասխանեն, նորէն միաւորութիւնը բացատրե-

լով, և առաքելութեան երկու մասերուն մէջ հակասութիւնը ցուցնելով: 26. Թէ Հայերը Քրիստոսի վրայ, ոչ մարդկային հոգի և ոչ մարմին կ'ընդունին: Կը պատասխանեն, և կը հաստատեն թէ բոլորովին անհիմն ենթադրութիւն է: 27. Թէ Հայերը կը կարծեն որ յարութիւնը չափաթ երկոյ ժամը վեցին տեղի ունեցաւ, և ըստ այնմ տօն կը կատարեն և հաւկիթ ու պանիր կ'ուտեն: Կը պատասխանեն, տօնը նախատօնակէն զանազանելով, և նախատօնակի նշանակութիւնը, և Քրիստոսի կիրակի օրը յարութիւն առած ըլլալը երկարօրէն կը բացատրեն: 28. Թէ Հայերը չեն կրնար պատասխանել անոնց որ Քրիստոսի յարութենէն ետքը մարմին ունենալը կը ցուցնեն: Կը պատասխանեն, թէ երբեք հակառակը ըսած չեն, և արդէն ըսածներնուն վրայ նոր բացատրութիւններ կ'աւելցնեն: 29. Թէ Հայերը կ'ըսեն, որ Քրիստոսի աստուածային բնութիւնը իր կամքին կը հնազանդէր, որ զայն ուզածին պէս փոփոխէր և մարդկային կրից ենթարկէր: Կը պատասխանեն, և կը մերժեն իրենց վերոյիշեալ մարդութեան խօսքեր: 30. Թէ Հայերը կը կարծեն որ յարութենէ ետքը Քրիստոս մարդկային բնութիւն չունէր, թէ ոչ երկինք չէր համբառնար, այլ Ենովքի և Եղիայի պէս դրախտ կ'երթար: Կը պատասխանեն, մարդկային բնութեան ոչ թէ ջնջուած այլ միաւորուած ըլլալը լուսաբանելով: 31. Թէ Հայերը առաքելոց և մարգարէից խօսքերը, ուր Քրիստոսի համար գրուած է թէ հոգիները զերութենէ ազատից, այնպէս կ'իմանան՝ որ ոչ թէ դժոխքէն երկինք, այլ երկիր բերած ըլլայ: Կը պատասխանեն, միշտ իրենց կանխաւ ըսածները կրկնելով: 32. Թէ Հայերը կ'ըսեն որ Քրիստոս սատանաները կապեց, որ մարդիկներուն չվնասեն, սակայն 300 տարիէ իվեր կապանքներէ ազատեցան, և մարդիկները խաբեցին՝ Հայերէն զատ. բայց 30 տարուընէ իվեր Մեծ Հայոց Հայերէն ալ մաս մը խաբեցին որ բաժակին ջուր խառնեն և դեկտեմբեր 25'ին ծնունդ տօնեն: Կը պատասխանեն, պատմելով Քրիստոսի 1000 թուականին եղած չարժերը և խաւարումները, զորս Յովհաննէս կողեռն վարդապետը սատանային կապանքներէն արձակուելուն վրայ մեկնած է (§ 833), և վերջէն կ'ընդունին թէ իրենք ճշմարիտ հայադաւանութենէն մեղադրուած են լատինական ծէսերու համակերպած ըլլալնուն համար: 33. Թէ Հայերը կ'ըսեն որ Քրիստոս երկինքին մէջ մարդկութիւն ունի, այլ մարդկային բնութիւն և կամք չունի, և թէ կը կարծեն որ Քրիստոս համբառնալէն ետքը ամէն օր հրեշտակներուն մէկ դասակարգին հետ մնաց, և միայն տասներորդ օրը նստաւ ընդ աջմէ Հօր, և Հոգին Սուրբը ղրկեց: Կը պատասխանեն, աննշանակ ցուցնելով մարդկութեան մասին տարբերութիւնները, իսկ հրեշտակաց դասակարգներուն մասին կը պատմեն Լուսաւորիչին վիրապի մէջ ունեցած տեսիլքը, որ պարզ տօնախմբութիւններ կը յիշէր, և ոչ թէ օրէ օր տեղափոխութիւններ:

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ 34—44

1297. Կը չարունակէ. 34. Թէ Մեծ Հայոց Հայերը ինքզինքին բուն կաթողիկէ և առաքելական եկեղեցի կ'ընդունին, վասնզի նոյնութեամբ կը պահեն առաքեալներու քարոզած վարդապետութիւնը. իսկ Յունաց ու Լատինաց եկեղեցիները ոչ եւս, վասն զի երկու բնութիւն կ'ըսեն. բաժակին ջուր կը խառնեն և դեկտեմբեր 25'ին ծնունդ կը տօնեն: Իսկ Փոքր Հայոց Հայերէն՝ Թագաւորէն և քանի մը իշխաններէն դուրս ամենքը իրենց համամիտ կը կարծեն. ինչպէս նաեւ, թէ Հայոց եկեղեցին միայն պիտի մնայ աշխարհի վերջը: Կը պատասխանեն, աւելի փախուստ տալով, քան մերժելով, ոչ Մեծ Հայոց՝ այլ Ամենայն Հայոց եկեղեցին, առաքելական և կաթողիկէ կը հռչակեն, բաժակի ջուրը և դեկտեմբերի 25'ի Ծնունդը՝ Յոյներու մէջ վերջէն մուծուած կը յայտնեն, ուրիշներուն վրայ նախատական ակնարկները կը մերժեն, և կիլիկիան ընդհանրապէս Հռոմի հետ համաձայնած կը յայտարարեն: 35. Թէ Հայերը կաթողիկէ եկեղեցին միութեան մէջ կ'ընդունին մինչեւ Քաղկեդոնի ժողովը, բայց անկէ սկսելով Յոյները ու Լատինները ուղղափառութենէ հեռացած կ'ըսեն: Կը պատասխանեն, Հայոց Քաղկեդոնի ժողովը մերժելնուն պատճառը, որովհետեւ Եփեսոսի

ժողովին բանաձեւին հակառակ երկաբաժանութիւն ընդունած էր Նեստորի հետեւողութեամբ։ Կը պատմեն Եզրի ժամանակ կատոյ ժողովով Քաղկեդոնի ընդունուիլը, և Օձնեցւոյն ժամանակ Մանազկերտի ժողովով նորէն մերժուիլը, և վերջապէս Սսոյ և Ատանայի ժողովներով նորէն ընդունուիլը, որով այլ եւս խնդիր ընելու տեղի չմնար։ Ցայտնի կը տեսնուի որ կեղակարծ զրոյցներով կ'ուզեն դժուարութիւնէ ազատիլ։ 36. Թէ Հայերը ինքզինքնին միայն կաթողիկէ եկեղեցի կը ճանչնան, իբր ուղիղ հաւատքը անփոփոխ պահած, և հանգամանակին մէջ չեն ըսեր է թէ «ոչ» եւ չէ, այլ յայտնի եւ անով Հայոց եկեղեցին կ'իմանան։ Կը պատասխանեն, հանգամանակին մասին ըսուածն անհիմն և սուտ յայտարարելով, և բոլոր եկեղեցիներն ալ ընդունելնին վկայելով, որով Հայոց եկեղեցւոյ ներողամիտ սկզբունքը պաշտպանած կ'ըլլան։ 37. Թէ Հայերը երեք տարբեր կաթողիկոսներ ունին որոնք տարբեր հաւատք և տարբեր մկրտութիւն ունին։ Այս կարգին հնագոյն կոչուած է Աղուանից աթոռը, զոր Աղաննէս կը թարգմանեն լաւիներէնին մէջ. երկրորդ Աղթամարինը, զոր Աքսմար կը գրեն. և երրորդ Սսոյ աթոռը։ Գանի մը տարբերութիւններ ալ կը յիշեն. ինչպէս գլխով մկրտութիւն ընելը, և Յաղագ Հոր եւայլն բանաձեւը չգործածելը։ կ'առարկեն եւս թէ երրորդ աթոռը հազիւ 50 տարիէ ասդին թողած է Հայոց մոլորութիւնները։ Կը պատասխանեն, մերժելով տարբերութիւնները, կը վկայեն թէ Աղուանից և Աղթամարի հետ հաւատքով և մկրտութեամբ միացած են, միայն թէ իրենք ինչ ինչ կէտերու մէջ լատիններուն համաձայնած են։ 38. Թէ Հայերը ուրիշ եկեղեցիներու մէջ մեղաց թողութիւն տալու իշխանութիւնը կորած կը կարծեն, նոյն իսկ մկրտութեան մէջ. վասնզի անոնք Քրիստոսի կողէն բղխած ջուրը բաժակին ջուրին վրայ կը մեկնեն, և ոչ մկրտութեան վրայ։ Կը պատասխանեն, մերժելով ամբաստանութիւնը, և ամէն եկեղեցիներու խորհուրդները ընդունելնին կը վկայեն։ 39. Թէ Հայերը մէկ կաթողիկոսութեան հաւատացեալներուն ուրիշ կաթողիկոսութեան պաշտօնեաներէն առած խորհուրդները վաւեր կ'ընդունին, բայց պաշտօնէից ընդունածները անվաւեր կը ճանչնան։ Կը պատասխանեն, բացատրելով նուիրապետական յարաբերութեանց պահանջները, վասնզի Աղթամար հակառակ է Սսոյ դէմ, և Աղուանիցը կը խորչի Սիսի լատինասիրութենէն, թէ ոչ՝ հաւատքի և խորհուրդի տարբերութիւն չունին մէջերնին։ 40. Թէ Հայերը Լատին կամ Յոյն եպիսկոպոսներէ և քահանաներէ տրուած մեղաց ներումը՝ Հայերու համար անվաւեր կը նկատեն, և Հայ պաշտօնեաներէ առնել կը հրամայեն, իսկ ոմանք ալ կը պնդեն թէ Աստուած կը շնորհէ ներումը, և ոչ պաշտօնեաներ, և ատոր համար սովոր են կրկնել՝ Աստուած ներէ՛ ինծի ընծեցէ։ Կը պատասխանեն, պաշտպանելով թէ Հայեր պէտք է Հայ պաշտօնէից դիմեն, այլ կ'ընդունին ուրիշ եկեղեցիներու պաշտօնեաներէն տրուած ներումին վաւերականութիւնը, և միանգամայն պաշտօնէական իշխանութեան ձեռք։ 41. Թէ Հայերը անգամ մը չնորհքէ զրկուողներուն նորէն չնորհքի դառնալը անհնար կը կարծեն։ Կը պատասխանեն, ապաշխարութեան վարդապետութեան Հայոց կողմէն ընդունուած ըլլալը։ 42. Թէ Հայերը կը կարծեն որ միայն Քրիստոսի չարչարանքը բաւական է մեղաց թողութեան, առանց մարդկային գործակցութեան։ Կը պատասխանեն իւրեանց հաւատքը ուղիղ հանելով նենգաւոր մեկնութեանց կէտերը։ 43. Թէ Հայերը մարդկային ազատութիւնը բաւական չեն սեպեր մեղանչելու համար, այլ դիւական փորձութեանց կը վերագրեն մեղքը։ Կը պատասխանեն, մերժելով խարդախական ստութիւնները։ 44. Թէ Հայերը պատարագի մէջ ննջեցելոց համար չեն աղօթեր։ Կը պատասխանեն, թէ հիմնովին սուտ է։

1298. կը չարունակէ. 45. Թէ Հայերը երբոր իրենցմէ մէկը մեռնի, ոչխար մը կամ արջառ մը երեկոյեն

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ եկեղեցի կը բերեն, մոտաքէ զգեստներով կը

45—56 զարդարեն, պաշտօնեաները դուրս կու գան, աղ կ'օրհնեն, կենդանին կու տան, եաքէն կը մորթեն, և միսէն կ'ուտեն, միայն պատարագիչ քա-

հանայն չուտիր։ Թէ այս բանը կ'ընէն, ըսելով թէ մեռելին թողութեան համար պէտք է արիւն թափուի, իբր թէ Քրիստոսի արիւնը չբաւէր։ Սակայն Յովհաննէս Դամասկացին ալ զիրենք յանդիմանած է այս տեսակ հրէական և հեթանոսական սովորութեանց համար։ Թէ Հայեր իրենց բրածներուն մասին Հառաջաբոյս անունով գիրք մըն ալ պատրաստած են Մանազկերտի ժողովին մէջ։ Կը պատասխանէն, բացատրելով մատաղի սովորութիւնը, իբր ողորմութեան նուէր, և ոչ մեղաց թողութեան պատարագ։ Թէ Դամասկացիին վերագրուածը չեն ուսած, բայց եթէ հեթանոսական սովորութեանց վրայ կը խօսի, աւելի Լատիններուն ակնարկած պիտի ըլլայ։ Մանազկերտի ժողովն ալ չենք ընդունիր, կ'ըսեն։ 46. Թէ Հայերը ուտելիքներու մէջ սուրբի և անսուրբի խտրութիւններ կը դնեն Մովսիսական օրէնքներու հետեւողութեամբ, և թէ վանականներ խոզենի ուտելը դեւեր հալածելու արգիլք կը կարծեն։ Կը պատասխանեն, թէ ինչինչ բաներ չուտելը, ոչ Մովսիսական օրէնքի, այլ տեղական ճաշակի հետեւանք է, իսկ վանականներ բնաւ միս չեն ուտեր։ 47. Թէ Հայերը պահք օրերը, միս, ձուկ, հաւկիթ, պանիր, կարագ, կաթ ու ձէթ չեն ուտեր, այլ միայն հաց, բանջարեղէն և գինի, որչափ որ ուզեն, իսկ առաջ յիշուած բաներն ուտողները անիծեալ և անհաւատ կը կոչեն։ Կը պատասխանեն, իրենց հնաւանդ կանոնը բացատրելով, ձէթին պահոց օրեր ուտուիլը կը յայտնեն, և ուտելու ու չուտելու մասին Պօղոսի թողլատու վարդապետութիւնը ունենալնին կը վկայեն։ 48. Թէ Հայերը երկրորդ անգամ աններելի կը կարծեն։ Կը պատասխանեն, թէ սուտ է։ 49. Թէ Հայերը երրորդ և չորրորդ ամուսնութեան պնդողները անիծեալ և հեթանոս կը նկատեն, խորհուրդներէ կը զրկեն, մեռելին ոչ տունին դուռնէն, այլ պատէն ծակ բանալով դուրս կը հանեն, և անոնց համար աղօթք ու պատարագ չեն մատուցաներ. իսկ եթէ երրորդ կինը թողու և 15 տարի խիստ ապաշխարութիւն կրէ, ներման կ'ընդունին։ Կը պատասխանեն, երրորդ ամուսնութեան հին օրէնքով արգելուած ըլլալը, իսկ միւս պարագաները իբր մատացածին կը մերժեն։ 50. Թէ Հայերը մէկը ձեռնադրելէ առաջ խոստովանահօրմէն վըկայութիւն կ'առնեն, և եթէ նա յայտնէ թէ պոռնկութեան մէջ ինկած է, չեն ձեռնադրեր։ Նոյնպէս ձեռնադրութենէ ետքն ալ եթէ պոռնկութեան մէջ իյնայ, խոստովանահայրեր կը յայտնեն և արգիլել կուտան։ Կիներն ալ կը պարծենան թէ քահանաներ լուծել տուած են։ Անոր համար պոռնկութեան մէջ ինկողներ չեն խոստովանիր։ Կը պատասխանեն, թէ մանաւանդ պատահարներ կրնան հանդիպած ըլլալ, բայց ոչ կանոն է և ոչ սովորութիւն։ Իսկ բարի վկայութիւններ կը պահանջուին, բայց ոչ երբեք խոստովանութիւնները յայտնելով։ 51. Թէ Հայերը պոռնկութեան և հայհոյութեան մեղքերը աններելի կը համարին։ Կը պատասխանեն, տարբերելով աններելիութիւնը ծանր ապաշխարութեան պայմաններէն։ 52. Թէ Հայերը չնութեան, սոդոմականութեան, անասնապղծութեան, մարդասպանութեան, ուրացողութեան, և երկարեան դաւանութեան մեղքերուն մէջ ինկողները՝ թէպէտ կ'արձակեն, բայց մինչեւ մահը խորհուրդներէ կը զրկեն, և եթէ նորէն իյնան, այլեւս չեն արձակեր։ Կը պատասխանեն, մերժելով բացարձակ աններելիութիւնը, և երկարեան դաւանութիւնը նեստորականներուն կը պատչաճեցնեն։ 53. Թէ Հայերը կը ներեն քահանաներուն իրենց կնոջ հետ սոդոմականութեան մէջ գտնուիլ։ Կը պատասխանեն, թէ ինչպէս հնար է զայն գիտնալ, որ ներելու ալ առիթ ընծայուի, և առարկութեանն սուտ ըլլալը կը հետեւցնեն։ 54. Թէ Հայերը կը ներեն որ նաեւ առանց պատճառի կաթողիկոսներ և եպիսկոպոսներ բանադրանքներ արձակեն, և կ'ըսեն թէ մէկուն բանադրածը ուրիշէն չկրնար արձակուիլ։ Կը պատասխանեն, թէ օրէնք է որ եկեղեցական իշխանութիւններ իրարու դէմ չգործեն, այլ կաթողիկոս կրնայ եպիսկոպոսի բանադրածը արձակել։ 55. Թէ Հայերը չեն ընդունիր որ բանադրանքը արքայութենէ կը զրկէ, ինչպէս կը զրկեն պոռնկութեան, մարդասպանութեան, չնութեան, քահանայից երկրորդ ամուսնութեան, և երկարեան դաւա-

նութեան մեղքերը։ կը պատասխանեն, թէ առաջին մասը հակասական է նախընթաց առարկութեան, մեղքերը կը զրկին՝ եթէ անզղջ կը մնան, իսկ երկաբնակութիւնը կը մնկնին միշտ նեստորականութեան վրայ։ 56. Թէ Հայերը՝ մանմոնականութեան կամ հրէութեան գացող և նորէն Հայ եկեղեցին դարձողները չեն մկրտեր, այլ միայն ձակատէն կ'օծեն, և կը պատասխանեն որ ուրացած տեղերնին երթան և հրապարակաւ խոստովանին։ Իսկ Յոյն կամ Լատին եկեղեցին գացող և անկէ դարձող, կամ թէ ուղղակի այն եկեղեցիներէ եկողները նորէն կը մկրտեն։ Կը պատասխանեն, մերժելով թէ հրապարակաւ խոստովանութեան պարտաւորութիւնը, և թէ յունադաւանները կամ հռոմէադաւանները կրկին մկրտելու զրոյցը։

1299. կը չարունակէ. 57. Թէ Հայերը միւռոնի վաւերականութեան համար, չատ մը խունկեր ու նիւթեր և գինի կը խառնեն ձէթին, և կաթողիկոսի օրհնութիւնը անհրաժեշտ կը ցուցնեն, և առանց այդ միւռոնի մկրտութիւնը անվաւեր կը համարին, և երբոր քահանայ մօտը միւռոն չունենայ՝ մկրտութիւն ալ զանց կ'ընէ, իսկ անկնունք տըղաքները կը կարծեն թէ պիտի մկրտուին Քրիստոսի արիւնով, որ լուսնի մէջ պահուած է։ Կը պատասխանեն, ընդունելով միւռոնի պատրաստութեան ձեւը, բացի գինի խառնելէն. կը պնդեն թէ միւռոն չգտնուած միջոցին՝ լոկ մկրտութիւն կը կատարուի, իսկ լուսնի մէջ պահուած Քրիստոսի արիւնը անխիղճ առասպելներ կը նկատեն։ 58. Թէ Հայերը մկրտութեան վաւերականութեան համար միւռոնն ու հաղորդութիւնը անհրաժեշտ կը նկատեն. և թէ մկրտութիւնը ի թողութիւն սկզբնական մեղաց չեն կարծեր։ Կը պատասխանեն, թէ երեք խորհուրդ միասին կը պաչտեն, բայց մկրտութիւնը առանց միւռ երկուքի անվաւեր չեն կարծեր, ինչպէս որ ստիպողական պարագաներու մէջ ալ կը պաչտուի։ Իսկ մեղաց թողութեան խնդիրը քանիցս կրկնուած առարկութիւն մըն է։ 59. Թէ Հայերը միակերպ չեն մկրտեր, նիւթին համար գինի և կաթ ալ կը գործածեն, իսկ ձեւը ամէն պաչտօնեայ ուզած կերպովը կ'ընէ։ Այս տեղ տեսակ տեսակ ձեւեր ալ կը յիշեն։ Կը պատասխանեն, բացէբաց մերժելով այսպիսի տարբերութիւնները, և ընդարձակ բացատրութիւններ ալ կու տան։ 60. Թէ Հայերը յունադաւանութենէ և հռոմադաւանութենէ եկողները կրկին կը մկրտեն, իսկ մէկ կաթողիկոսի հպատակութենէն միւս կաթողիկոսին անցնողները նորէն իրենց միւռոնով կ'օծեն։ Կը պատասխանեն, թէ բոլորովին սուտ և չքսուած զրոյցներ են։ 61. Թէ Հայերը կ'ըսեն որ մկրտուածները ոչ թէ մեղքէ կը սրբուին, այլ միայն քրիստոնեայ եկեղեցւոյ անդամ և խորհուրդներ ընդունելու յարմար կ'ըլլան, և վերջին դատաստանէն ետքը արքայութիւն կ'երթան։ Կը պատասխանեն, վերջին կտորին մասին 7'րդ առարկութեան համար բսածնին կրկնելով։ 62. Թէ Հայերը 12 տարեկանէ վար եղողները անմեղ կը նկատեն, վասնզի մարմնական ցանկութեան ենթարկեալ չեն, և բաս այսմ անոնք ի թողութիւն մեղաց մկրտած չեն ընդունիր։ Կը պատասխանեն, 4'րդ, 13'րդ, և 58'րդ առարկութեանց հետ բաղդատելով, և հակասութիւնները ցուցնելով։ 63. Թէ Մեծ Հայոց և Փոքր Հայոց Հայերը դրոշմի խորհուրդ չունին, և թէ քահանայ ու եպիսկոպոսէ զատ անձէ տրուած մկրտութիւնը անվաւեր կը նկատեն։ Կը պատասխանեն, մկրտութեան հետ տրուած դրոշմը յիշելով, և ենթադրեալ անվաւերութիւնը մերժելով։ 64. Թէ Փոքր Հայոց կաթողիկոսը չընդունիր դրոշմին վաւերականութիւնը, և թէ ինքն կու տայ իր քահանաներուն այդ իշխանութիւնը։ Կը պատասխանեն, թէ բոլորն ալ նախնւոյ ենթադրութիւններն են։ 65. Թէ Հայերը մկրտութեան ատեն մարմինին ինը տեղերուն վրայ եղած օծումները, ամէն օծումներու տեղ կը նկատեն, և դրոշմի և վերջին օծումի, և քահանայութենէն և եպիսկոպոսութենէն օծումներ չունին։ Այլ երբ քահանայ մը կը մնայ, դլուխն ու ճակատը ու աչքը կ'օծեն, և ժողովուրդէն նուէրներ կը հաւաքեն առաջին պատարագի պէս, և դրան առջեւ կենդանիներ կը մորթեն, ինչպէս 45'րդ առար-

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ 57—65

կութեան մէջ ըսուելուս՝ կը պատասխանեն, թէ այն ինը տեղ օծումները դրոշմի խորհուրդ են, թէ Վերջին Օծումն Հայոց մէջ սովորութիւն եղած չէ, թէ քահանայից և հպիսկոպոսաց օծումներ՝ Շնորհալիէն սկսելով 200 տարիէ ասդին կը կատարուին, անկէ առաջ Ծունաց սովորութեան համեմատ չէին օծուիր։ Իսկ ննջեցեալ քահանաներու գլուխը չօծուիր, նուէր չհաւաքուիր, և կինդանիներ մորթելն ալ պարզապէս ողորմութեան նշանակութիւն ունի։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ 66—74

1300. Կը չարունակէ. 66. Թէ Հայերը չեն ընդունիր, որ Կաֆա կոչուած աղօթքի տունն, որ է Աւետ ջուռն խօսքերով սկսած հաւատացեալը, սրբագործութիւն կը կատարէ, այլ թէ այն կը լրանայ Հոգւոյն Սրբոյ վերակոչութեամբ, և միանգամայն պարզ փայտէղէն ու խեցեղէն սկիհով, հասարակ ղգեստով, և դուռերը փակելով պատարագ կը մատուցանեն։ Կը պատասխանեն, թէ վերակոչութեան ձեւը Ալեքսանդրի, Ռակեբերանի և Բարսեղի պատարագամատոյցներէն առնուած է, թէ սրբագործութիւնը կ'ընդունին Լատիններու նման, թէ վերջին պարագաները Մեծ Հայոց մէջ միայն աւղտէղ սինացած են անհաւատներուն վախէն, բայց վերացման առեն դուռերը կը բանան և ժողովրդեան ցոյց կու տան։ 67. Թէ Հայերը Հաղորդութեան խորհուրդը իբր նշանակ և օրինակ կը մեկնեն, և ոչ իբր փոխարկութիւն ու գոյացափոխութիւն. թէ Ներսէս վարդապետ մը ըսած է որ Աւետ Կեչէ ըսուած բառն Քրիստոսի մեռած մարմինը կ'ըլլայ, իսկ Ոչով աղօթքներուն առեն կենդանի կը դառնայ. և թէ Դամասկացին ըսած է՝ որ Հայոց եկեղեցին խորհուրդներ չունի։ Կը պատասխանեն, թէ իրենք իսկական ներկայութիւն կ'ընդունին և ոչ նշանակութիւն, և յառաջ կը բերեն պատարագամատոյցի կտորները։ Ներսէս վարդապետին, որ Լամբրոնացին պէտք է ըլլայ, առանկ բան մը ըսած ըլլալէն տեղեկութիւն չունենալնին կը յայտնեն. և Դամասկացիին համար չեն կարծեր, որ առանկ բան ըսած ըլլայ, որովհետեւ իրենք վեց խորհուրդները կը պաշտեն, դորս միասին կը բացատրեն. և թէ Վերջին Օծումն ալ յունական լատինական ձեւի վերածել կ'աշխատին։ 68. Թէ Հայերը կը կարծեն որ պատարագութեան մէջ ինկող քահանային պաշտած խորհուրդները չեղեալ կը նկատուին, և թէ բարեպաշտ աշխարհականներ կրնան սրբագործուած հաղորդութիւնը բաշխել։ Կը պատասխանեն, թէ Հայոց մէջ առանկ բան երբեք ըսուած չէ։ 69. Թէ Հայերը, թէպետեւ պատարագութեան մէջ ինկողները քահանայական իշխանութենէ զրկուած կ'ըսեն, բայց նոյնը չեն ընդունիր, եթէ քահանայն հերետիկոսութեան, հրէութեան, մահմետականութեան, մարդասպանութեան, սոդոմիութեան, և ուրիշ ոճրագործութեանց մէջ իյնայ։ Կը պատասխանեն, մերժելով այդ ենթադրութիւնները. միայն կը դիտեն, որ մարդասպանութիւնը մեղք չեն սեպեր, եթէ քահանայն անհաւատից դէմ պատերազմելով, կամ քրիստոնեաներուն վրայ յարձակողներուն դէմ ելլալով սպանութիւն կը գործէ։ 70. Թէ Հայերը Հաղորդութեան խորհուրդով մեղքերու կամ մեղաց պատիժներու թողութիւն չեն ընդունիր, այլ միայն կ'ըսեն թէ հաղորդուողին մարմինը Քրիստոսի մարմնոյն հետ կը միանայ, և անոր համար մինչեւ երեք օր արիւն հանել կ'արգիլեն, և միանգամայն կ'ըսեն թէ հաղորդութիւնը հիւանդութիւնները և արկածները կը պահպանէ։ Կը պատասխանեն, մեղաց թողութիւն ընդունելնուն համար վկայութիւններ յիշելով, և կը յաւելուն թէ Քրիստոսէ հոգեւոր բարութեանց հետ մարմնաւորներ ալ կը շնորհուին։ 71. Թէ Հայերը Մանազկերտի ժողովով արգիլեցին բաժակին ջուր խառնել, և թէ ջրախառն պատարագը չեղեալ, և անպէտ պատարագ մատուցուած եկեղեցին պղծեալ կը համարին։ Կը պատասխանեն, Մանազկերտի ժողովը մերժելով, բայց կը մերժեն նաև ջրախառն պատարագը չեղեալ և եկեղեցին պղծեալ կարծելու առարկութիւնը։ 72. Թէ Հայերը կը կարծեն որ յունադաւան կամ հռոմէադաւան հոգեւ քահանաներ պատարագելու կարողութիւնը կը կորսընցրնեն։ Կը պատասխանեն, մերժելով։ 73. Թէ Հայերը երկաբնակներ չեն հաղորդեր, եթէ նախապէս միաբնակութեան դարձած

և նորէն Հայոց կողմէ մկրտուած չըլլան, և թէ Հայ քահանաներ պատարագած ատենները կը նզովէին երկաբնակները և բաժակին ջուր խառնողները և պատկերապաշտները։ կը պատասխանեն, որ Նեստորականները և ուրիշ հերետիկոսներ չեն հաղորդեր, մինչեւ որ դառնան, այլ նորէն չեն մկրտեր. նզովքի խօքը կը մոռնան, և Հայերուն միշտ հաղորդիներուն մէջ պատկերներ ունեցած ըլլալը կը վկայեն։ 74. Թէ Մեծ Հայոց հաղորդիներուն մէջ խաչելութեան և սուրբերու պատկերներ չեն գտնուիր։ կը պատասխանեն, թէ միշտ եղած են և կան, բայց ոչ առատութեամբ, և երբեմն վերցուած են Սարակինոսներու վախէն։

1301. կը չարունակէ. 75. Թէ վարդապետ մը այսինչ տեղ մը եկած ատեն, քահանային հաղորդուԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ 75—78 թիւնը ժողովուրդին ցուցնելը տեսնելով, զայն յանդիմանած և արգիլած է։ կը պատասխանեն, թէ ատենկ հղելութիւն մը Ծակոբ կաթողիկոսին գրած էր Ներսէս Որմիոյ եպիսկոպոսը, որ ատենքեամբ Մանազկերտի արքեպիսկոպոս անունը առած էր։ Ասոր վրայ Բարսեղ Իկոնիոյ և Բարսեղ ատենադպիր եպիսկոպոսները քննիչ ղրկուեցան կանչի աւանը, որոնք ժողովուրդը, Մանաճիհր վարդապետը և Ցիրացու քահանան քննելէ ետքը երդմամբ հաստատեցին այժմեան Մխիթար կաթողիկոսին առջեւ, թէ Ներսէսի գրածը հիմնովին սուտ էր։ Ասոր պատճառով ժողովուրդը պիտի սպաննէր Ներսէսը ու իր գրագիր եղբօրորդին, եթէ չփախչէր և պապին մօտ չապաստանէր, ուր այդ ամէն սուտ առարկութիւնները յօրինած է։ 76. Թէ երեք Հայեր, որոնք Հայոց ծէսով մկրտուած էին, Պոլոնիոյ (Bologna) մէջ կրկին լատին ծէսով մկրտուեցան, և երբ Փլորենտիա (Firenze) եկան երկու Հայեր անոնց հարցուցին թէ իրաւ բաղնիքի լուացք ըրած են. և այդ բացատրութիւնը անոնց ընդունել տալու համար այնչափ ծեծեցին, որ մէկը մեռաւ, և երկուքը բանտարկեցին, մինչեւ որ հաւանեցան, և նորէն Հայոց ծէսով մկրտեցին, որպէսզի կարենան հաղորդուիլ։ կը պատասխանեն ատենկ հղելութիւն մը լսած իսկ չեն, բայց և կը զարմանան որ հռոմէադաւան Իտալիոյ մէջ կրկնամկրտութիւններ տեղի կ'ունենան եղեր։ 77. Թէ Փոքր Հայոց կաթողիկոսը ձերբակալել տուաւ լատին ծէսով մկրտուած եկեղեցականներ և աշխարհականներ, և զանոնք նախատեց գլուխնին և մօրուքներուն մէջտեղը ածիլել տալով, և հագուստին պատռելով, և բանտարկեց լատին մկրտութիւնը չուրանալնուն համար։ կը պատասխանեն թէ այդ անձերը պատժուեցան ոչ թէ լատին մկրտութիւն ընդունած ըլլալնուն համար, այլ չատ մը չիոթ ղրոյցներով ժողովուրդը խռովելնուն, և կրկնամկրտութիւններ և կրկնաձեռնադրութիւններ ընելնուն համար։ Բանտարկութիւնին ալ երկար չեղաւ, այլ ներսէս ատացան՝ երբոր օրէնքին հպատակեցան։ Այդ առարկութիւններ առանց անուն տալու Ծակոբ կաթողիկոսին կ'ակնարկեն, թէպէտ դիպուածներուն որոչ յիշատակները չունինք։ 78. Թէ իրենց մկրտութեան և ձեռնադրութեան վրայ կասկածող արքեպիսկոպոսներ, Փոքր Հայոց կաթողիկոսին մօտ եկան, նա անոնց հրամայեց Ա. լատինները ծէսով չպատարագել։ Բ. լատիններու օրէնքով պահք ու ծոմ չպահել։ Գ. կրկին մկրտութիւն չընել ըսելով թէ Հայոց մկրտութիւնը լատինականէն լաւ է։ Դ. Ընաւ հայ մը հռոմէադաւանութեան չդարձնել, ըսելով թէ լաւագոյն է իր Հայ դժոխք երթալ քան թէ իր լատին արքայութիւն երթալ։ Ե. Տղոց լատիններէն չսորվեցնել, և իրօք ալ վեց եպիսկոպոսներ ձեռնադրած ատենն անոնցմէ ստորագրութիւն առաւ, թէ իրենց վիճակներնուն մէջ լատիներէն չսորվեցնեն և լատին քարոզիչ պիտի չընդունին։ Զ. Թէ պապը Արեւելքի եկեղեցիներուն գլուխ պիտի չընդունին, որովհետեւ ծովէն ատղին մինչեւ Թախտարաստան ինքն է եկեղեցւոյ գլուխը։ Եւ երբոր վերոյիշեալ արքեպիսկոպոսները չհաւանեցան, անոնց մէկը կիպրոս անցաւ, ուր լսեց որ կաթողիկոսը թագաւորին գործակցութեամբ լատինականութեան անցնողները ձերբակալել տուաւ, և խիստ բանտերու մէջ փակեց, և ինչքերնին գրաւեց։ կը պատասխանեն, թէ երկու եպիսկոպոսներն են Սիմէոն Պէկ և Ներսէս Պաղտն, որոնք Ծակոբ կաթողիկո-

սի օրով կիլիկիա եկան, և երկրին մէջ խռովութիւն սերմանեցին՝ միտքերը չփոթելով և կրկնամկրտութիւններ կատարելով։ Կաթողիկոսը զիրենք խրատից, բայց իրենց լատինական ձեւեր գործածել չարգիլեց, ինչպէս ուրիշներուն ալ չէր արգիլեր, այլ միայն հրամայեց որ միտքեր չյուզեն և խռովութիւն չսերմանեն։ Այս կերպով մի ատեն մը կը հերքեն իրը Յակոբ կաթողիկոսէ տրուած վերոյիշեալ հրամանները, և վեցերորդ կէտին վրայ կ'ատելցնեն թէ իրեն ալ հարցուցինք, և ասանկ խօսք ըսած չըլլալը վկայից։ Կը վերջացնեն, թէ ոչ լատինութեան հետեւողներու, այլ խռովութիւն հաստողներու դէմ խստութիւններ գործածուեցան։ Այդ ամէնը կ'ակնարկեն Յակոբ կաթողիկոսի մասին պատմածներուս (§ 1279), բայց և կը հաստատեն Յակոբի ուղղութեան մասին գրածնիս (§ 1284)։

1302. ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ? 79—87

Կը չարունակէ. 79. Թէ Հայերը Յոյն կամ Լատին եկեղեցւոյ մէջ մկրտուողները երկարամեայ, իսկ լոկ հաղորդուողները հընգամեայ ապաշխարութեան կ'ենթարկեն, հրթամայելով չարունակ պահք պահել, ղգուշանալով միսէ, ձուկէ, կաթէ, պանիրէ և հաւկիթէ։ Կը պատասխանեն թէ ապաշխարութիւնը կը դնէին միայն անոնց որ յանարգանս Հայ եկեղեցւոյ նորէն կը մկրտուին։ Պահեցողութեան ձեւը, կը հաստատեն Հայոց եկեղեցւոյ սովորութեամբ, [illegible] ծոմի համար կ'ըսեն թէ միայն մեծպասնոց մէջ կը պահուի մինչև ժամը ինը, և ժամերգութենէ հետը կերակուր կը ճաշակուի։ 80. Թէ Հայերը մեծպասքի և ուրիշ տասը չարաթներու մէջ, միայն չարաթ և կիրակի կը պատարագեն, և թէ տարւոյն ուրիշ մասերուն մէջ այս երկու օրերէն դուրս պատարագել դանոց կ'ըսեն, և թէ գլխաւոր սրբոց տօները չարաթ օր, և վերափոխումը ու Յայտնութեան կիրակի օր կը կատարեն։ Կը պատասխանեն, թէ Մեծ Հայոց մէջ հին սովորութիւններ կը պահուին, թէպէտ փոքր Հայոց մէջ լատինաց նմանողութիւններ ընդունուած են։ Մեծպասքէ դուրս միայն Առաջաւորաց՝ և ոչ ուրիշ չարաթներու մէջ պատարագին լսելը կը յայտարարեն։ 81. Թէ Հայերէն անունք որ չարաթապահք պահած են Աստուածայայտնութեան ճրագալոյցին կը հաղորդուին, իսկ պահած չեղողներ տօնին առաւուն, և թէ կը նզովին դեկտեմբեր 25'ին Մեռնողը տօնողները, և թէ ոմանք աւագ հինգշաբթի և Զատկի ճրագալոյցին ալ կը հաղորդուին։ Կը պատասխանեն, մերժելով յիշուած նզովքին ստուգութիւնը, և յիշելով հնաւանդ սովորութեան պահպանութիւնը Մեծ Հայոց մէջ։ 82. Թէ Հայերը խոստովանութիւնը կը կատարեն ընդհանուր բացատրութիւններով, և ոչ իւրաքանչիւրը իւր մեղքը քահանային յայտնելով. թէ երբ կը խոստովանին, չեն ըսեր որ մեղանչեցին, այլ թէ ստոյգ նահ խաբեց. թէ կը վախնան խոստովանիլ որ քահանայն չյայտնէ. թէ քահանայն ընդհանուր արձակում կու տայ, թէ արձակումի հաստատուն ձեւ չունին, թէ ապաշխարութիւնը չըլրացուցած հաղորդութիւնը կ'արգիլեն, և կը կարծեն թէ ընդհանուր արձակումը նաև առանց զղջումի մեղքերուն թողութիւնը կը բաւէ։ Կը պատասխանեն, բոլորն ալ ստելով և հերքելով՝ ոմանց պատահական զեղծումները ընդհանուր կանոն և սովորութիւն չլինելը յայտնելով, և այսպիսի զրպարտութիւններ գըրողնե[illegible]ուն կը պատչաճեցնեն մարգաբէին խօսքերը, Անէծք և փառաբանութիւն ի նմին բերան չէ բերան այսպիսեաց, և չ նեբ+ց լեզուի նոցա ցաւ և վտանգ+ (ՍԱՂ. Թ. 7)։ 83. Թէ Հայերը հոգեվարքները կը հաղորդեն, բայց երբ վերջին վայրկենի մէջ են, լոկ բերանը կը դպցնեն, և կամ հաղորդութեամբ կը խաչակնքեն, և զայն բաւական կը սեպեն։ Կը պատասխանեն, թէ հաղորդութիւնը կը տրուի ուզողներուն, միայն թէ իրապէս կարենան զայն ընդունիլ։ 84. Թէ Հայերը կը կարծեն որ քահանաներ, եպիսկոպոսներ և կաթողիկոս՝ արձակելու և կապելու իշխանութիւն ունին հաւասարապէս։ Կը պատասխանեն թէ, վարչական իշխանութեան տարբերութիւններ կ'ընդունեն, իսկ կապելու և արձակելու մասին պատրաստակամութիւն կը յայտնեն լատիններուն համակերպելու, եթէ պահանջեն։ Անցողաբար կը յիշեն թէ Նիկիոյ ժողովը Հռոմի պապը բոլոր եկեղեցիներու գլուխ

վճռած ըլլայ, թէպէտ այս ճիշդ չէ։ Բայց ինչպէս ուրիշ գլուխներու մէջ ալ տեսնուեցաւ, ամէն տեսակ պրոյց առանց դիտողութեան կ'ընդունին Լատիններէն չվայտացնելու համար։ 85. Թէ Հայերը կ'ըսեն որ Հռոմի պապերը Նիկիոյ ժողովէն առաջ ուրիշ պատրիարքներու վրայ իշխանութիւն չունէին, և Նիկիոյ ժողովով առած են, Քալկեդոնի ժողովին պատճառով կորնգուցին, և թէ այժմ Հայոց կաթողիկոսը կը վայելէ այդ իշխանութիւնը։ Կը պատասխանեն, թէ հակառակասրութեան խօսքեր են, որոնք լսուած ալ չեն։ 86. Թէ Հայերը կ'ըսեն, որ Հռոմի պապը միայն Լատիններուն վրայ իշխանութիւն ունի։ Կը պատասխանեն, թէ պապին իշխանութիւնը ճանչցած են։ 87. Թէ երբ Հայոց թագաւորը կաթողիկոսին տպրցուց, որ Եթէ պապը դինքը բանադատէ, ինչ կը կարծէ, կաթողիկոսը պատասխանեց, թէ զայն բանադրուած չկարծեր, վասնզի պապը անոր վրայ իշխանութիւն չունի։ Կը պատասխանեն, թէ թագաւորը մեռած է, բայց Ծակոր կաթողիկոս կը վկայէ թէ ասանկ հարցում ալ իրեն եղած չէ, և թէ իրենք ասանկ բան լսած չեն։

1803. Կը չարունակէ։ 88. Թէ Հայերը տարօրինակ ձևեր ունին իրենց կաթողիկոսներուն ընտրութեան համար։ Աղաձէջ, այսինքն Աղուանից, և Աղթամարի կաթողիկոսները, իրենց կենդանութեան յաջորդներն կ'ընտրեն և կ'օծեն, այլ մինչև նախորդին մահը չեն պաշտօնավարեր, և մեռնելէն ետքը թաթարաց կայսեր կ'երթան և անկէ իշխանութիւն և հաստատութիւն կ'ընդունին, ինչ որ Պարսից Շահն թագաւորին օրէն սկսած օրէնք մըն է։ Թէ այս առաջին անգամ և թէ իւրաքանչիւր տարի մեծ գումարներ կը վճարեն թաթար կայսեր, իրենք ալ իրենց հպատակներէն թէ առաջին անգամ և թէ տարեկան գումար մը կը առնան, իւրաքանչիւր քահանայէ տարեկան գոնէ մէկ ֆլորէն, և իւրաքանչիւր հաստատութենէ տարեկան գոնէ վեց ղրուշ։ Իսկ Փոքր Հայոց կաթողիկոսներուն մեռնելէն ետքը, թագաւորը ուզած եպիսկոպոսները կը հաւաքէ, որոնք երեք թեկնածու կը ներկայացնեն, թագաւորն ալ ասոնցմէ աւելի վճարող կաթողիկոս կ'ընտրէ։ Այժմեան կաթողիկոսը առաջին անգամ 50 հազար ղրուշ վճարեց, և տարեկան տարի ալ 20 հազար կը վճարէ թագաւորին, որ երբ ուզէ կրնայ զայն պաշտօնանկ ընել կամ ուրիշ կերպով պատժել։ Կ'առարկին նաև 89. Թէ Աղուանից և Աղթամարի կաթողիկոսները իրենց իշխանութիւնը Արեւելքի կայսրէն կ'առնեն, որ անոնց կարգելու և արձակելու իշխանութիւն կուտայ, և կը հրամայէ որպէս զի տեղական կառավարիչներ ատիպեն և պատժեն կաթողիկոսին չհնազանդողները։ Թէ նոյնպէս կը կառարեալ Փոքր Հայոց կաթողիկոսին համար ալ իրենց թագաւորին կողմէ։ Այս թագաւորն է որ իրեն սահմանին եպիսկոպոսներն ու քահանաները ալ կ'ընտրէ, վճարմանց փոխարէն, և ձեռնադրութեան համար կաթողիկոսին և եպիսկոպոսներուն կը հրամայէ։ Թէ վերջապէս Հայերուն մօտ ամէն ընտրութիւն և ձեռնադրութիւն և խորհուրդներու մատակարարութիւն միայն դրամական վճարումով կը կատարուի։ Կը պատասխանեն, այդ ամէնէն ինչպէս ուզղակի և ինչպէս բացատրելով։ Թէ Աղուանից և Աղթամարի կաթողիկոսներ թախտաթոյ խաչնեն կը դիմեն, արտաքին կերպով իշխանութիւններն ճանչցնել տալու և ոչ թէ հոգևոր իշխանութիւն առնելու համար։ Որովհետև նոյն իսկ իրատուդիոն պանձելու համար պարտաւոր են թախտաթոյ խաչն արտօնուած ըլլալ։ Թէ դրամական վճարումները բանակալ սէրութեան բանադատական պահանջներ են։ Թէ Մայր կաթողիկոսի ընտրութեան համար երբէք դրամական վճարման խնդիր չըլլար, այլ ամէն արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ և աւագերէցներ, թագաւորի հրամանով կը հաւաքուին, և կնքելով տոմսով իրենց քուէն կուտան եպիսկոպոսներէն, վարդապետներէն, վանահայրերէն և վանականներէն որուն որ կ'ուզեն, և կը յանձնեն թագաւորին, որ երբ քուէները չատ ցրուած են, կը կրկնէ, որ երկուքի կամ երեքի վրայ համաձայնին, և անոնցմէ որն որ ուզէ թագաւորը կ'ընտրէ, ժողովին մէջ ծնրադիր անոր տասը

մատանին անցընելով, ուսկից ետքը օծումը կը կատարուի ըստ կանոնի։ Թէ թագաւորը չկրնար ինքնիրեն կաթողիկոս պատժել կամ պաշտօնէ ձգել, այլ խնդիր եղած ատեն եպիսկոպոսաց ժողով կը գումարէ, և անոնց որոչման համեմատ կը վճռուի։ Թէ թագաւորաց իսանը և Փոքր Հայոց թագաւորը երբեք հոգևորական իշխանութիւն չեն ունար, և ոչ ալ կապելու և արձակելու իշխանութիւն, այլ միայն սեփական իշխանութիւնին համաձայն գործածելու արտօնութիւն։ Թէ Փոքր Հայոց եպիսկոպոսաց թագաւորի հաւանութեամբ ընտրութիւը ներու հովանաւորութեան ներքեւ ըլլալուն, և վանքերուն ալ վիճակներու հետ կապուած ըլլալուն։ Իսկ Մեծ Հայքէ ընծայադիրով եկածները կաթողիկոսը համաձայ կը ձեռնադրէ։ Թէ անհին է բոլորովին որ թագաւորը քահանայից ընտրութեան միջամտէ և դրամ առնայ։ Թէ վերջապէս բոլորովին սուտ է որ Հայերը ամէն ձեռնադրութիւն և խորհուրդ դրամով կը կատարեն, ուրիշ բան եթէ երբեմն ձեռնադրելը ձեռնադրութենէն առաջ կամ ետքը եպիսկոպոսին նուէր մը ընէ, ոչ իբր գին կամ պայման, այլ իբր կամաւոր ընծայ։

1304. կը չարունակէ։ 90. Թէ Հայերը կը կարծեն որ Պետրոսին տրուած իշխանութիւնը անձնական էր, և յաջորդներու չանցաւ։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ 90—99

կը պատասխանեն, թէ յաջորդներու իրաւունքին մասին 84'րդ առարկութեան մէջ յայտարարած են։ 91. Թէ Հայերը կ'ըսեն, որ Հռոմի պապ'րը ընդհանուր իշխանութիւնը ոչ Քրիստոսէ, այլ Նիկիոյ ժողովէն առին, և ետքէն զայն իւրացուցին։ կը պատասխանեն, թէ ասանկ բան իրենց մէջ լսած չեն։ 92. Թէ Հայերը միայն երեք ատիճան կ'ընդունին, որք են դպրութիւն, սարկաւագութիւն և քահանայութիւն, թէ եպիսկոպոսները առանց դրամի ձեռնադրութիւն չեն ըներ, թէ կաթողիկոսէ զատ ոչ ոք կրնայ եպիսկոպոս ձեռնադրել, թէ կաթողիկոսն ալ առանց դրամի չձեռնադրեր, թէ Մեծ Հայոց մէջ ձեռնադրող և ձեռնադրեալ հաւասարակ զգեստներով կը մնան։ կը պատասխանեն, թէ դպրութեան մէջ կուտան դռնապանութիւն, ընթերցողութիւնն և ջահընկալութիւն, և թէ անկէ ետքը կիսասարկաւագ կը ձեռնադրեն, որուն մէջ կը միացնեն երգիչներցուցչութիւնը ու կիսասարկաւագութիւնը, որով կը լրանան հինգ աստիճանները, որոնցմէ ետքը կուտան սարկաւագութիւն և քահանայութիւն, և երկարօրէն կը բացատրեն ձեռնադրութեան ծէսերը և քահանայութեան օծումը։ կը հերքեն դրամով խորհուրդ պաշտելու զրպարտութիւնը, եպիսկոպոսական ձեռնադրութեան կաթողիկոսին վերապահուած ըլլալը իբր ազգային սովորութիւն կը պաշտպանեն, և Մեծ Հայոց մէջ եկեղեցական զգեստներու կիրառութեան տարածութիւը կը ծանուցանեն։ 93. Թէ Հայերը կը ներեն սարկաւագութենէ ետքը ամուսնանալ, և անկէ ետքը քահանայանալ։ կը պատասխանեն, թէ այդ ներումը կը տրուի միայն դպրութենէ ետքը։ 94. Թէ Մեծ Հայոց Հայերը սարկաւագի ձեռնադրութեան առեն աւետարան և ուրար չեն տար, և եպիսկոպոսի ձեռնադրութեան առեն աւետարանը պարանոցին վրայ չեն դներ, և գլուխն ու ձեռուընները չեն օծեր։ կը պատասխանեն, թէ իրենք այս բաները Փոքր Հայոց մէջ կը կատարեն, և Մեծ Հայոց կաթողիկոսներուն ըրածէն տեղեկութիւն չունին։ 95. Թէ Մեծ Հայոց կաթողիկոս մը քահանայի մը հրաման տուած է սարկաւագ ձեռնադրելու, և 96. Թէ Փոքր Հայոց կաթողիկոսներուն եպիսկոպոս ձեռնադրած առեն, ուրիշ եպիսկոպոսներ չեն մասնակցիր ձեռնադրութեան։ կը պատասխանեն և երկու կէտերն ալ իբր անհին կը հերքեն։ 97. Թէ Հայոց կաթողիկոսներ պաշտօնէ կը զրկեն այն եպիսկոպոսները որոնք տարեկան սակը չեն վճարեր, և ուրիշներ կը ձեռնադրեն, որով մէկ վիճակի վրայ մինչեւ երեք կամ չորս եպիսկոպոսներ կը գտնուին, բայց երբ վճարեն, նորէն կը հաստատուին։ Ինչպէս նաեւ չվճարողները կը բանադրեն և անոնց միւռոն չեն տար։ կը պատասխանեն, թէ եպիսկոպոսները պատժել կամ պաշտօնէ ձգել և ուրիշ ձեռնադրել կը հանդիպի ոչ թէ չվճարելնուն համար, այլ երբ անհաւատից երկիրները գտնուելով կ'անհաստեն, կամ ու-

բիչի վիճակ կը յափշտակեն, կամ մոլորութիւն կը քարոզեն, կամ ժողովուրդը կը գայթակղեցնեն, և կոչին չեն անսար։ Բայց եթէ յայտնուի որ զրպարտութեամբ և սուտ վկայութեամբ դատապարտուեցան, պարտք կը սեպեն աթոռնուն դարձնել։ 98. Թէ Փոքր Հայոց կաթողիկոսները եպիսկոպոս ձեռնադրած ատենին Լուսաւորչի Աջը կը դնեն անոր գլխուն վրայ, և անկէ կը կարծեն ձեռնադրութեան վաւերականութիւնը, և Մեծ Հայոց կաթողիկոսներէն ձեռնադրուած եպիսկոպոսները չեն ընդունիր, անոնց Լուսաւորչի Աջը չունենալնուն համար։ Կը պատասխանեն, թէ Լուսաւորչի Աջը ձեռնադրութեան ատեն կը գործածեն, բայց վաւերականութիւն չեն վերագրեր. Աղթամարի և Աղուանից եպիսկոպոսներն ալ իրր եպիսկոպոս կ'ընդունին, միայն չեն հաղորդուիր անոնց հետ ըմբոստ ըլլալնուն համար, բայց երբ կը հնազանդին՝ անմիջապէս իրր եպիսկոպոս կ'ընդունուին։ 99. Թէ Իտալիա եկող Հայեր ինքզինքնին հալածուած եպիսկոպոսներ կը ձեւացնեն, կամ արքեպիսկոպոս կը հռչակեն, մինչ Հայեր արք'եպիսկոպոս չունին, և դրամով եպիսկոպոսութիւններ կու տան, քահանաներ և սարկաւագներ կը ձեռնադրեն, և կը հալածեն այն Հայերը որ Հռոմէական ծէսով կը մկրտուին կամ Հռոմէադաւանութեան կը հետեւին։ Կը պատասխանեն որ եթէ Իտալիոյ մէջ զեղծումներ տեղի ունեցած են, ընողներու և ընդունողներու պատկանող մի բան է. կը հաստատեն թէ Հայոց մէջ արքեպիսկոպոսութիւն կայ, և թէ իրենց լալծին համեմատ՝ հայադաւան եղողներ Իտալիոյ մէջ կը հալածուին, և ոչ թէ կը հալածեն։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ 100—109

1305. Կը չարունակէ։ 100. Թէ Հայերը պսակի ատեն երկու կողմերուն հաւատնուիրը յայտնող բացատրութիւններ չունին, և ծնողաց ու ծանօթից բռնադատութեամբ նաեւ իրար չուզողներ կը պսակեն։ Կը պատասխանեն, թէ յայտնի բացատրութիւններ ունին, և յառաջ կը բերեն քահանայական խրատը, և «Ե՞ս հարցումները, իսկ բռնադատութիւն ընողները եկեղեցական և դրամական միջոցներով պատժելին կը յայտնեն։ 101. Թէ Հայերը թէպէտ եօթը աստիճանի ազգակցութիւն կ'ընդունին, բայց մինչեւ երրորդ և նուազագոյն աստիճանի մէջ պսակուողներն ալ չեն լուծեր։ Կը պատասխանեն, թէ ազգակցութեան արգելիչ աստիճանները մինչեւ հինգերորդ կը հաչուին, և եթէ սխալմամբ երկրորդ կամ երրորդ աստիճանի ամուսնութիւններ եղած են, կը լուծեն։ 102. Թէ Հայոց եպիսկոպոսներ և քահանաներ կը լուծեն ամուսնութիւնը, եթէ ամուսիններէն մէկը միւսին հաճելի չէ, և եթէ պատշաճապէս կը վճարեն։ Կը պատասխանեն, թէ այլ եւս այսպիսի լուծումներ իրենք չեն ըներ, թէպէտ Մեծ Հայոց մէջ երբեմն պատահի, այլ միայն ներքինիներուն և դիւահարներուն պսակը կը լուծեն եօթը տարի ետքը։ 103. Թէ Հայերը բազմակնութիւնը կը նկրեն, վաճառականութեամբ չրջողներ ամէն տեղ մէկ մէկ կին կ'ունենան, թէ միւնոյն տեղ երկու կին առնողներ ալ կ'ըլլան, թէ ապօրէն զաւակները իրր օրինաւոր ժառանգ կ'ընդունին, և մինչեւ իսկ այնպիսիները եպիսկոպոսութեան կը բարձրացնեն, և օրինակ կը բերեն Զաքարիայի եղբօր ապօրէն զաւակը, որ հօրեղբօր տեղը եպիսկոպոս ձեռնադրուեցաւ։ Կը պատասխանեն, թէ բազմակնութիւնը օրէնքով արգիլուած է, բայց ապօրէն կնակցութիւն ունեցողներ, կամ նենդութեամբ օտար տեղ ալ պսակուողներ կրնան եղած ըլլալ։ Ապօրէն զաւակներու մասին իրենց օրէնքն ալ նոյնն է, իսկ Զաքարիայի եղբօրորդւոյն ապօրէն եղած ըլլալը չեն իմացած, այլ միայն Ծովհաննէս կաթողիկոսի հրամանով ձեռնադրուած ըլլալը գիտեն։ Այդ անձերուն ով ըլլալը որոշուած չէ, և կ'երեւի թէ Ծովհաննէս Մեծաբարոյ կաթողիկոսի և Արտաղի Զաքարիա եպիսկոպոսին կ'ակնարկեն։ 104. Թէ Հայերը կ'ըսեն, թէ Քրիստոս վերջին դատաստանին ոչ մարդկային այլ աստուածային կերպարանով պիտի երեւի։ Կը պատասխանեն, թէ իրենք մարդկային բնութիւնը ընկղմած և ոչնչացած չեն ըսեր, և դատաստանին օրուան համար րուածը սուտ և զրպարտութիւն է։ 105. Թէ Հայերը կ'ըսեն որ դատաստանէն ետքը՝ հոգիները երկ-

նից արքայութեան և դրախտի և աչխարհի վրայ պիտի բաչխուին, և թէ երկնից մէջ աստուածային տեսութիւն պիտի չունենան։ կը պատասխանանն, թէ այդ կէտերը 8՝րդ առարկութեան մէջ լուսաբանած են։ 106. Թէ Հայերը կ՝ըսեն որ յարութենէ ետքը այր և կին մարդու սեռական տարբերութիւն պիտի չըլլայ։ կը պատասխանանն, թէ սեռական տարբերութիւն չեն ուրանար, այլ աչխատարանի համեմատ կ՝ըսեն թէ էբբեռ ընբեչոխ էցեն։ 107. Թէ Հայերը մահուան առեն երէկ չեն կրնար հաղորդ առնել, դեռևին վրայ խաչ կը գծեն, և անկէ կատր մը հող բերաննին դնելով հաղորդ կը համարին։ կը պատասխանանն, թէ պատաւանց խօսքեր պատասխանի իսկ արժանի չեն, և թէ այս տարի իսկ տասը հազար հոգի անհաւատներէ սրով կոտորուեցան, բայց այս տեսակ հաղորդուող մը եղած չէ։ 108. Թէ Հայ մեծամեծներէն ոմանք բսած են, թէ մարգիկներուն հոգիները անաստուածներուն պէս կ՝ոչնչանան և յարութիւն չեն առներ։ կը պատասխանանն, թէ Հայոց մէջ ասանկ բան լսուած չէ, այլ Արեւորդիներ են բսողները, որոնք հայերէն կը խօսին, բայց Հայ չեն։ 109. Թէ Հայերու մէջ երբեք յանցաւորներու պատիժ չորուիր։ կը պատասխանանն, թէ պատիժներ միշտ տրուած են, ինչպէս քաղաքական նոյնպէս կրօնական յանցանքներու համար։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ 110

1306. Կը չարունակէ։ 110. Թէ չատ ու չատ մոլորութիւններ նաև կը պարունակուին Հայոց ընդունած և գործածած գիրքերուն մէջ, որոնցմէ 18 հատ անունով կը յիշեն, բայց չատերը աղաւաղուած հնչումներով։ Յիչուած գիրքերն են 1. Տճնոպոփոլ կամ Տճնոփոլէն կամ Տճնոպոփոլ, հռոմէական և յունական հեկեղեցիներու դէմ գրուած մը, որ պէտք է ըլլայ Տճնոպոփճա։ 2. Անոթոբմոթ, որ է Հոռոմոբմոթ, արմատ հաւատոյ բսուած։ 3. Յովհաննէս Մանդակունեցի, որ է Մանդակունին։ 4. Յովհաննէս Օձնեցի, որ է Օձնեցի։ 5. Մխոփոռոբոխ կամ Մխոխոռոբոս, իբր Մխոքանռնեան կամ Մխոյնռնեան բնեան գէբ բացատրուած, գուցէ Շնորհալիի և Տղայի միաբանութեան թուղթերը։ 6. Մխէոյել պոռբէոբ Անոխոռոյ, որ է Միխայէլ Ասորի։ 7. Պօղոս Տրոնեցի։ 8. Ոչնեցի կամ Ոկռաեցի կամ Ցոկռանեցի, նմանաձայնութեամբ ճչդելն ալ դժուար։ 9. Մոբնեռս, որ պէտք է Ուռհայեցին ըլլայ։ 10. Կանոն առաքելոց, որոնց մէջ կ՝ըսեն, Հայոց մոլորութիւնները կը պարունակուին։ 11. Սբբէն, որ պէտք է ըլլայ Սարգիս Շնորհալին։ 12. Մբռոբէ վռբռպոխ, աւետարանները մեկնութիւնը, մեզի անծանօթ։ 13. Վանայ մեկնութիւն Ցովհաննու, որ Վանական կամ Վարդան վարդապետ պիտի ըլլայ, թէպետ Ցովհաննու մեկնութիւն գրած ըլլալնին յայտնի չէ։ 14. Իքնոփռս, որ է Իգնատիոս Շնորհալիի Դուկասի մեկնութիւնը։ 15. Գանոլան, որ է Գաւազանագիրք։ 16. Նեկկնս Պոռռոբբէն կամ Պոռռոբբէն Մեկբէնէ, իմա՛ Մեկնութիւն պատարագի Լամբրոնացւոյ գրածը։ 17. Տեյռոբբռնռ կամ Տեռոռոբկեր, Գիբր ԽՆՉոյեց թարգմանուած, ճըշդելը դժուար։ 18. Այոմռռոբբ, որ է Ցայսմաւուրք։ Կը փակեն ուրիշ չատ մը գիրքեր ալ յիչելով։ Կը պատասխանանն, թէ յիչուածներէն Տոկտանեցի, Մատթէոս և Միսակոսուրոս բսուածները իրենց անծանօթ անուններ են։ Օսթինեցի, Մանդակունեցի, Տարոնեցի, Մարուգէ, և Միքայէլ կոչուածներն ալ իրենցմէ ընդունուած չեն։ Իրենց ընդունածներն են Տճնապարքար, Հանատոսարմատ, Կանոնք առաքելոց, Սարգիս, Վանամ, Գանազան, Այսմաւուրք և Պատարագին Մեբեբէնէ, բայց երէք ասոնց մէջ ալ երկու բնութեան, բաժակի խառնման, Մնունդի տօնին, Քաղկեդոնի ժողովին, կամ ուրիշ կէտերու դէմ բան մը գրուած կայ, որ չեն յիչեր, այն ալ կը մերժեն։ Այդ առարկութեան վրայ չատ բսելիքներ կան, բայց անոնց վրայ երկարել չենք ուզեր, և երէք միասմի յատաջ բերինք, նպատակնիս պատմական էր, ժամանակին ինդրոյ նիւթ եղող գիրքերուն ցուցակը տուած ըլլալու համար։

1307. Կը չարունակէ։ 111. Թէ Հայերը կ՝ըսեն որ Քրիստոս բնական աւելորդներու արտաքսում չունեցաւ, որովհետև այդ ապականութիւնները մեղքի հետեւանք են։ Կը պատասխանանն, թէ ասանկ կարծիք մը երբեմն մասնաւորներ, և ոչ Հայ եկեղեցի յայտնուած է։ 112. Թէ Հայերը

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ 111—117

կ'ըսեն որ Քրիստոսի Քվփատութեան առեն, կոտր չվերցուեցաւ, այլ միայն ճեղքուեցաւ, ինչպէս անդրանիկներու վրայ ընել սովորութիւն էր։ Կը պատասխանեն, թէ այս ալ ոմանց կողմանէ տրուած բացատրութիւն մըն է, և իրենցմէ ընդունուած չէ։ 113. Թէ Հայերը կ'ըսեն որ Աստուած մարդուն սէրէն յաղթուեցաւ, և Ադամի ըրած սպառնալիքները չձգմարտուեցան, որովհետեւ Ադամ հոգւով չմեռաւ, մարմնով ալ 930 տարի ապրեցաւ, և կենդանիներ մարդուն դէմ չապստամբեցան։ Կը պատասխանուին, թէ և ոչ իսկ լսած են որ Հայոց մէջ ասանկ բաներ ըսող եղած ըլլայ։ 114. Թէ Հայերը կ'ըսեն, որ Աստուած կայէնի վրայ նշան դրած ըլլալով, որ մէկը զայն չսպաննէ, ճշմարիտ չկրնար ըլլալ որ Ղամեք զայն սպաննած ըլլայ, այլ նա գահավիժելով ինքզինքը սպաննած է։ Կը պատասխանուին, թէ և ոչ տեղեկութիւն ունին, որ ասանկ բաներ ըսող ապուշ մը գտնուած ըլլայ Հայոց մէջ։ 115. Աւարկութիւնը կը նկատէ եղեր երկու եպիսկոպոսներու խնդրանքով կաթողիկոս մը գահընկէց ընող քագաւորի մը գործը, սակայն յօդուածը կը պակսի, և անուններ յիշուած չեն։ 116. Թէ Հեթում քագաւորի օրով, ժողով մը եղած է ուր պապական նուիրակին ձեռքով քագաւորը Հռոմի հետ միաբանութիւնը ընդունած է, բայց եպիսկոպոսներ և վարդապետներ և իշխաններ չեն հաւանած, և Վահրամ Սեաւլխունեցի վարդապետ մը պապին դէմ գիրք մը գրած է, ուր պապը Փարաւոն, և մոլորութեանց մէջ ընկղմած կը կոչուի, և նուիրակը ամօթով ետ դարձած կ'ըսուի, և թէ Լատիններ Մեսենդի ոսկը և բաժակին ջուրը անիծեալ Արկոմանոսէ առած են, և թէ Հայոց վարդապետներ, եպիսկոպոսներ և քահանաներ այդ գիրքը իբր առաքելական կանոն կ'ընդունին։ Կը պատասխանեն, թէ Մեծ Հեթում քագաւորը պատուով ընդունած է պապական նուիրակը, և զայն Հռոմկլայ յղած կոստանդին կաթողիկոսին, և նա ալ սիրով ու պատուով մեծարած, և թէ վարդապետը աննշան մէկն է, և անոր գիրքը ընդունելի չէ։ 117. Թէ Հայերը չունին այն ուղիղ հաւատքը և խորհուրդները զորս Հռոմայ եկեղեցին ունի, թէ Հայերուն մէջ քագաւորէն և իշխաններէն զատ չատ քիչեր կան որ Հռոմայ եկեղեցւոյն դաւանութիւնը ունենան, և թէ Հայերը կ'ըսեն որ պապն ու կարտինալներ ամէն օր մահկերնուն քնելէն առելի մարդ կը սպանեն, թէ զանոնք հերձտիկոս կը հռչակեն, անոնց դէմ կը հայհոյեն, և ամէն հոգեւոր պաշտօն սիմոնականութեամբ կը կատարեն։ Կը պատասխանեն, իրենց ստախօսութիւնն մերժելով Հայերուն վերագրուած խօսքերը։ Իսկ իրենց դաւանութեան ուղղափառութիւնը հաստատելու համար, ամբողջաբար առջեւ կը բերեն Հոռոմոց հանգանակը, որուն մէջ և յՈրդւոյ ալ աւելցուցած են, և կը կցեն Իսկ ոչ ասեն, և Իսկ մի ի հոռոմոցի հատուածները։ Իսկ խորհուրդներու մասին կը յիշեցնեն 67'րդ առարկութեան տուած պատասխանին։ Պապերուն դէմ բան մը ըսուած ըլլալուն մասին կ'ըսեն, թէ այն ատենուան կաթողիկոսին ալ հարցուցին, և նա պատասխանեց. Ոչ ինչ։ Եւ պարզ ամէն մըն է Մխիթարի և իրեն հետ եղողներուն պատասխանագիրին փակումը՝ առանց վերջաբանի, և առանց վերջնական ընդհանուր դիտողութեան (ՄՆՍ. ԻԵ. 1270)։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

1308. Որչափ ալ երկար, ու թերեւս ձանձրալի ալ երեւայ յառաջ բերուած վերլուծութիւնը, մինք կը կարծենք թէ այն մեծ օգտակարութիւն ունի Ուենիորներու կամ հռոմէադաւանները միութեան ու գործը կշռելու, Հռոմի պապութեան բռնած ընթացքը ճանչնալու, և միանգամայն ժամանակին սովորութիւններուն նկատմամբ ալ ինչինչ տեղեկութիւններ քաղելու։ Մեզի զարմանալի պիտի չերեւար Ներսէս Պաղտնի և Սիմէոն Պէկի պէս կատաղի մոլեռանդներու ամէն տեսակ ծայրայեղութեանց դիմելը և ստութիւններ խօսիլը, այլ առանց զարմանքի և առանց տեսակ մը ցաւի չենք կրնար անցնիլ, տեսնելով որ Հռոմի աթոռը, որ իւր բարձրութեամբ և վեհութեամբ կը սիրէ պարծենալ, կը զիջանի իւրացնել ծանրակշռութիւն չունեցող զրոյցներ, անոնց

պաշտօնական նշանակութիւն կու տայ և կրկին ու կրկին անոնց մասին բացատրութիւններ կը պահանջէ։ Մեր այդ դիտողութիւնը իւր հաստատութիւնը կ'ընդունի նոյն իսկ Լատին հեղինակներու կողմէ, որոնք յատկապէս ուսումնասիրելով նշանաւոր 117 մոլորութիւնները, անոնցմէ չատը իրենց անհիմն ու ծիծաղական մէկ կողմ կը թողուն։ Կալանոս Թէադինեան կրօնաւոր հազիւ 30 հատ նկատողութեան արժանի կը գտնէ, Վիլլօթ Ցիստեան կրօնաւոր միայն 13, Լըպրիւն Աղօթականաց միաբանութենէն 8, Լըքիէն Դոմինիկեան կրօնաւոր 6, և Մանսի Սերվիտեան միաբանութենէն, գրեթէ և ոչ մէկ հատ նկատողութեան արժանի կը գտնէ (ՊՐՕ·837)։ Եւ ըսել, թէ պակ մը այս տեսակ անհիմն առարկութիւններուն կ'ենթարկէ, քրիստոնէութեան համար հալածուած ու նեղուած, և աւելի տեսակ վտանգներու և վնասներու ենթարկուած ժողովուրդ մը։ Այս պարագան ուրիշ կերպով չենք կրնար մեկնել, բայց եթէ ըսելով, որ օգնելու կամք ու միաք չունենալով, պապութիւնը կը ջանար այս դարձուածներով իւր չկամութիւնը կամ անկարութիւնը քօղարկել։ Մեր նպատակին հետեւողութեամբ, պէտք է աւելի մխիթար կաթողիկոսի և իրեն հետ եղողներուն պատասխանները կշռել, և տուած պատասխանները կշռելով հեղինակութիւնը ճշդել։ Կանուխէն յայտարարեցինք (§ 1292) թէ կատարեալ ազգային ժողով մը չէ Մխիթարի գումարածը, որ ոչ ընդհանուր հրաւէրով և ամէն բաժիններու ներկայացուցիչներով տեղի ունեցած է, այլ չուրջը գտնուողները հապճեպ հաւաքելով կատարուած խորհրդակցութիւն մըն է։ Նմանապէս ազատ կերպով կանոններ հաստատող ժողով մը չէ, այլ բարոյական ճնշման ներքո՝ արտաքին օգնութիւններ ընդունելու համար՝ պապին կողմէն կրկին և կրկին բռնադատութեամբ պահանջուած պայմանին գլուխ ծռած ըլլալու համար կատարուած գործ մըն է, որ երբեք ոյժ և հեղինակութիւն չպարունակեր։ Շատ առարկութիւններու հանդէպ տրուած պատասխաններն իսկ բաւական են հաստատել Հայ եկեղեցւոյ ընդհանուր ուղղութիւնը։ Երբ կ'ըսեն թէ առաջ տարբեր էր, կամ թէ Մեծ Հայոց մէջ տարբեր է, կամ թէ իրենք Հռոմի պահանջին կը համակերպին, կամ թէ այժմ այլեւս այնպէս չեն ըներ, կամ թէ պատրաստ են Հռոմի հրահանգները գործադրել. նոյնն իսկ կը հաստատեն թէ Հայ եկեղեցին իրեն յատուկ դաւանութիւնն ու կանոնները ունէր, և նոյները իւր ընդհանրութեան մէջ կը պահէր, որով հռոմէադաւան Լատին թագաւորի մը հրամանով և բռնադատեալ պարագաներու ներքեւ՝ կաթողիկոսի մը քանի մը եպիսկոպոսներու հետ տուած հաւանութիւնը, ոչ Հայ եկեղեցւոյ իսկութիւնը կը փոխէ, և ոչ Հայ հաւատացեալոց ընդհանուր հաւատքը կ'այլայլէ։ Լատին պատմիչն ալ կը վկայէ, թէ թագաւորն էր որ կը յորդորէր Հայերը, զի ֆայեն է հնազանդութիւն, և կը ցուցնէր ջնջելու ձեռագիր որ ոնէին յառաջ քան, և իբրեւ փաստ կ'աւելցընէր, թէ նոքա ոչ ունէին եւ չունէին սերնդէ ի ծնողէ եւ հպատակ եկեղեցւոյն Հռոմայ (ԴԱՐ·41)։ Նոյն իսկ հակառակորդներն են, որ կը վկայեն թէ Լատին թագաւորէն և իրեն կամակատար ու ազդակից քանի մը իշխաններէն զատ, ճշմարիտ հռոմէադաւաններ չկային Հայոց մէջ (§ 1307), և հակառակորդներու տուած այդ նպաստաւոր վկայութիւնը մեծ նշանակութիւն ունի ճշմարտութիւնը հաստատելու համար։

ԳՈՒԻՏՈՆ ԵՒ ՋԻՒԱՆ

1309. *Մխիթարի զիջողութիւնները նշանակութիւն մը ունեցած կ'ըլլային, եթէ գոնէ յաջողէր Լատինաբուն վստահութիւնը գրաւելով Կիլիկիոյ թագաւորութիւնը վերահաս վտանգէ ազատել, և զօրաւոր և արդիւնաւոր օգնութիւններ ստանալ Արեւմուտքէն։ Սակայն այդ ալ չճշմարտուեցաւ։ Ջամչեան գրած է, թէ ընդհակառակն մեծամեծ չփոթութիւններ տեղի ունեցած են Հայոց մէջ. և մինչեւ իսկ Ջիւան-Կոստանդին սպանուած է իւր լատինամոլ բռնադատութիւններուն համար, միայն տարի մը թագաւորելէ ետքը, այսինքն 1343'ին (ՁԱՄ·Գ·348)։ Սակայն Դարդել 1344 օգոստոս 17'ին կը դնէ Ջիւանի մահը, խաղաղական վախճանով. և գունստատապլի սատիճանով (ԴԱՐ·50), ուս-*

կից հետեւցուցած են նորեր, թէ Ջիւան, ոչ իբր թագաւոր, այլ իբրեւ թագապահ կամ տեղակալ վարեց իշխանութիւնը (ՍԻՍ. 559)։ Սակայն մենք տեսանք որ Սիսի ժողովական գրութեան մէջ, ժամանակին իշխող Ջիւանը՝ Կոստանդին անունով, և ընդհանրապէս ընդունելի Ասողիկ Թոխաթցի Ազգով Հայոց կոչումով յիշուած է (ՄՆՍ. ԻԵ. 1186)։ Ուստի պէտք է ըսենք թէ Գուիտոնի հրաժարելուն և Սիս չգալուն վրայ, Ջիւան իսկապէս թագաւորի անունն ու պաշտօնը ստանձնած է, բայց Երբ Ծովհաննէս ե Պալէոլոգ, Անդրոնիկոս Դ'ի որդին և Ռիթա Մարիամ կայսրուհոյ՝ այսինքն Գուիտոնի մօրաքրոջ թոռը, կայսր եղաւ, գժտութիւն ինկաւ Ծովհաննէսի և Գուիտոնի մէջ, որ պարտաւորուեցաւ Աքայիոյ կուսակալութենէն քաշուիլ (ՉԱՄ. Դ. 347) և Կիլիկիա դառնալ, և այդ կերպով թագաւորութիւնը ստանձնեց։ Ջիւանի յաժառակամ տեղի տալը կ'իմնայ, վերոյիշեալ 1343 տարւոյ սկիզբը, և ըստ այսմ ոչ եւս ապանութեամբ, այլ կամաւոր հրաժարմամբ դադրած կ'ըլլայ Ջիւան-Կոստանդինի թագաւորութիւնը, Սոյ ժողովէն քիչ ետքը։ Արդէն՝ 1343 մարտ 8 Թուականով Գուիտոն իբր Հայոց թագաւոր՝ Անգղիոյ Եդուարդ Գ թագաւորին դեսպան կը յղէ, ինչպէս յիշատակուած է պատմութեանց մէջ (ՍԻՍ. 559)։ Ջիւան այլեւս ուրիշ դեր վարած չէ պատմական եղելութեանց մէջ, բայց Երէք ազգակից և գործակից եղած է իւր եղբօր Գուիտոնի անոր քաղաքական ձեռնարկներուն և կրօնական մոլեռանդութիւններուն մէջ, և միայն քանի մի օրերու կանխահաս մահուամբ ազատած է այն եղերական սպանութենէն, որով մեռան իւր եղբայրները Գուիտոն թագաւոր և Գէմունդ կոռիկոսի կոմսը, 1344 նոյեմբեր 17'ին (ԴԱՐ. 49)։ Ջիւան երկու դաւակ թողուց, Գէմունդ 5 տարեկան, և Լեւոն 2 տարեկան (ԴԱՐ. 52), որ չիմանալեմ կամ թէ կրկին անուն ունեցած ըլլալուն՝ Գուիտոն ալ կոչուած է (ԴԱՐ. 61), և եղած է Կիլիկիոյ թագաւորութեան վերջին Լեւոնը։

1310. Մխիթարի ժողովին վերջանալը և Գուիտոնի թագաւորելը, իրարու գրեթէ կից գործեր են, և Գուիտոնի օրով կղեմէս Զ պապին ձեռքը հասան Սիսի մէջ խմբագրուած ընդարձակ բացատրութիւնները, և պահ մը գոնէ

ԳՈՒԻՏՈՆԻ ՆԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԵՑԻՆ ԱՆՈՐ, ԳԼԽԱՒՈՐԱՊԷՍ ՅԱՅՏՆՈՒԱԾ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԵԱՆ, ՔԱՆ ԹԷ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ։ Սակայն Պաղտն չարունակեց իւր բծախնդիր պրպտումները, և պատասխանները մեկնաբանելով նոր խմասաններ քաղել, Հայերուն վրայ կասկածներ բարդելով, ինչ որ դժուար պիտի չըլլար, քանի որ Մխիթար Ունլիթորներու նորաձեւութեանց համակերպող չէր, և մինչեւ աստիճան մը Հայոց եկեղեցւոյ ինքնուրոյնութիւնը պաշտպանող էր։ Պապին ալ չատ դիւր կու գային այդ դարձուածները, քանի որ կերպով մը օգնութիւնները ղէանալու իբր պատճառանք կը ծառայէին։ Գուիտոն թագաւոր և Մխիթար կաթողիկոս պապը հանդարտեցնել և օգնութեան յորդորելու համար նոր դեսպանութիւն մը յղեցին Աւինիոն, զոր կը կազմէին Ծովհաննէս կրակեցի եպիսկոպոս, և քանիցս գացող եկող Դանիէլ Մինոր, այսինքն է Փրանկիսկեան կրօնաւոր, և երկու ասպետներ։ Ասպետներ պապին յանձնարարականով գացին ներկայանալ Փիլիպպոս Զ թագաւորին՝ օգնականութեան յորդորելու համար, մինչ եկեղեցականները մնացին պապին մօտ, որ կոչեցաց եպիսկոպոսաց երկոս հրամանգիր գնաց է կոնդակիկայ հասաց, և ցուցանել ըստ չէ իր եր մոլորութեան (ԴԱՐ. 42)։ Եղածը 117 կարծեցեալ մոլորութեանց մասին արուած բացատրութեանց վերաքննութիւնն էր, և թերեւս նոյնինքն Պաղտն էր նշանակուած եպիսկոպոսներէն մէկը։ Երբոր այդ ձգձգումները տեղի կ'ունենային Աւինիոնի մէջ, անդին Գուիտոն եւս քան զեւս կը սաստկացնէր իր մոլեռանդութիւնը, ոչ միայն արքունիքը կատարեալ լատինականութեան վերածելով, այլեւ Հայերը ստիպելով կատարելապէս լատինական դաւանութիւն և սովորութիւն, ձէս և ձեւ ընդունելու, յանդգնելով և հեռացնելով այն Հայերը, որ լատինակերպ չէին գործեր, և բուն լատիններր յառաջացնելով պաշտօններու և գործերու մէջ։ Հայեր անսպրսելի աչքով

չէին կրնար նկատել այդ ընթացքը, և տակալ Լատինի մը մոլեռանդ և մոլեգին իշխանութիւն։ Անչուշտ ժժգոհութիւնն նչանաններ, դանգատանաց յայտարարութիւններ, և սպառնալից պահանջումներ կանխեցին, որ վերջապէս սպանութիւնն ծայրայեղ միջոցին դիմեցին, և 1344 նոյեմբեր 17'ին Աստանայի մէջ ժողվեցան քաղմութեամբ մեծաս, և վաճառել է ղէն ջրոհ եպոն, և սպանեցին Գուիտոն թագաւորը, Պէմոնդ եղբայրը, և քաղմութեան մեծ սրանց պաթերազմէ, ըստ քեբեալ էր սրտոյն է կոմսանցն Աբեռմոյց, որ է րսել արքունիքին և բանակին մէջ պաշտօնները անցած Լատիններըը (ԴԱՐ. 49), որոց միւս մինչեւ երիք հարիւր կը հաչուուի (ԴԱՐ. 73)։ Ասոնց հետ սպաննեցին նաեւ ղոն Հռհոնոյ պրոնեբեց սրտոյն՝ ինչ մոթոցոնեբ ղաթաթրթն (ԴԱՐ. 49), անչուշտ լսելենածէս նորաձեւութիւնով պատարագելուն համար։ Պարագաները կը ցուցնեն, թէ իշխաններէն ոմանց դաւադրութիւնն գործ չէր եղածը, այլ համախումբ ազգովին չարժուելու մի մը հետեւանք, և արդիւնք լատինական թիւնն դէմ զգացած հակառակութիւնն, ինչ որ չնպատեր կիլիկիոյ Հայոց հռոմէականութիւնն հնազանդած լինելուն կարծիքին, զոր կը սիրեն վայրկեալ հռոմէադաւանները, կաթոլիկոսական գրութիւնց հաճոյակատար և արտաքնայարդար բացատրութիւնց չնորով։

ՆՈՐ ՊԱՐԱԳԱՆԵՐ

1311. Թագաւորական դահին յաջորդութիւնն համար արքունի գերդաստանին ճիւղը սպառած էր (§ 1290), Լուսինեանց տունմէն ալ չորսմար ժառանգ չէր մնացած, քանի որ Ջիւան ալ երիք ամիս առաջ մեռած էր։ Գուիտոնէ միայն երկու աղջիկներ և Ջիւանէ երկու անառիական զաւակներ մնացեր էին (§ 1309), որք չէին կրնար կացութիւնն աւեր կանգնել, չնայելով ալ որ Լուսինեանց դիմ էր ազգային գայրոյթը։ Ուստի հարկ եղաւ բոլորովին նոր սերունդէ մէկ մը թագաւոր հռչակել չարժումի գլուխներուն ընտրութեամբ, և այս եղաւ Կոստանդին, որդի Բաղդուինոս մարաջախտի, Նդրկոց ազգատոհմէն, որ ըստ ոմանց չպէտք Լեւոնէ ընտիբերբէ էր (ՉԱՄ. Գ. 349), բայց ժամանակակից լատին պատմիչը կ'ըսէ թէ Օշին թագաւորի խնամակալ նչանակուած Բաղդուինոսի որդին էր (ԴԱՐ. 28), և թէ էր քահանայ, և ալ սերեալ յբոյական ազգէ (ԴԱՐ. 44)։ Արքայազարմ ըսողները թերեւս հիմնուած ըլլան Բաղդուինոսի մարաջախտին, և Օշին խնամակալին նդրայրներ կարծուելուն վրայ, որով Կոստանդին Լեւոնի մօրեղբօրորդի եղած կ'ըլլար։ Կոստանդինի ազգակցութիւնը կը հետեւի անոր ամուսնութենէն ալ, քանի որ իւր կինն էր Մարիամ, դուստր Օշին խնամակալին և Ծովհաննայի՝ Օշինի այրի թագուհիին, իսկ Օշին խնամակալ Լեւոնի մօրեղբայրն էր։ Շատ հաւանական է Կոստանդինը չարժումին գլուխ եղած ըսել, և այնպէս թագաւորութեան բարձրացած, որ նախապէս հռչակուած է Տարսոնի մէջ, ուր իւր անունով դրամ ալ հանած է Կոստանդին, և անկէ ետքը Սիսի տիրացած (ՍԻՍ. 380)։ Գուիտոնի սպանութիւնը նոր պատճառանք մը եղաւ կղեմէս Զ պապին ձեռք, խոստումները չգործադրելու համար, և ալ կոծցաս առնել մեծ ինչ ընծան և նպաստաւորութեան, և կոչնաց եպս ղժանպալոնեան ընթաստոց և էշխանաց էջնափանէչ (ԴԱՐ. 43)։ Լուսինեանց սպանութիւնը յայտնի դժկամակութեան նչանակ էր լատինասիրութեան և հռոմէադաւանութեան դէմ, ուստի պապը նորէն գլխաւոր նպատակին դառնալով, վերջէն եկող պատգամաւորները կը յանդիմանէր (§ 1310), և զանոնք ձեռնունայն ետ կը դարձնէր, իւր կողմանէ երկու նուիրակներ ալ ընկերացընելով անոնց, որպէսզի փնեցին ղհաստատ Հայոց և էրոզիացին ղկորնիկեայ հաստատ, իրրզի ըստ հպատակութեան ի հաստատ սղղակս և ընդունել ղհաստատ սրբոյ եկեղեցոյն Հռոմայ՝ պիտի տրուէին սպատուած օգնութիւնները և նպաստներ (ԴԱՐ. 44)։ Գալէն յղուած եպիսկոպոսներն էին, Անտոն Կայետոյ (Gaeta), և Ծովհաննէս Կորնիոյ (Coron), որոց առաքման թուական ցուցուած է 1346 օգոստոս 31 (ՍԻՍ. 559) որով իբր երկու տարի անցած կ'ըլլայ Գուիտոնի սպանութենէն։ Աւելկայ կը ցուցնէ թէ բաւական քննութիւնք և բանագնացութիւնք կատարուած են, մինչեւ այդ որոշումը, զոր ձեռք ձգած են Հայ պատգամաւորները չատ

մը խոնարհաբար յայտարարութիւններով (ԴԱՐ. 43)։

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՈՍՏՈՒՄ

1312. Կաստանդին Բաղդինեան, որ լաթինամոլութեան դէմ չարժումին հետեւանքով գահ բարձրացած էր, թագաւորելէն ետքը պէտք զգաց ինքն ալ լատիններուն բարեացակամութիւնը վաստկիլ՝ հաճոյակատար ձեւերով և հպատակութեան վկայութիւններով, մինչ սահմանն ընթացքով մը հայադաւան դրութեան և մոլեռանդ լատինականութեան միջև, Հայ եկեղեցւոյն ծէսն ու ձեւը պահելով, դաւանական և կանոնական զիջողութիւններ յանձն առնելով։ Նոյն էր Մխիթար կաթողիկոսի ընթացքն ալ, քանի որ երկրին և թագաւորութեան կացութիւնն ալ այնպիսի ձեւ մը առած էր, որ այլեւս զայն փոփոխել անկարելի էր։ Լատինաց հետ յարաբերութիւններ տիրապետած էին, և դրացի Արեւելեան պետութիւններն ալ կիլիկիան այլեւս իրենցմէ օտարացած և Արեւմուտքի կապուած կը նկատէին։ Կայետոյ և Կոլոնոյ եպիսկոպոսները ամէն ատեն մեծ ուշադրութեան կ՚արժանանային, որ է ըսել մինչեւ 1347 ամառուան սկիզբը, և այդ միջոցին հրահանգիչն ղեւոնդեան, չիլիչիոն, վարդապետ, և գործակից ուղեկից եղան։ Մխիթար Հերակլեացի, որ ի Հռոմէ դարձած էր, ի հասուն ճշմարիտ, ըստ Լատին պատմիչին, իմա՛ ի հռոմէադաւանութիւն, և այդ մասին անոնցմէ էր ոխի և երդմանց ուզեցին, և պահանջեցին զայն ետել մատանեաւ իւրեանց, և աւետիսել իւրեանց իւկ յեռամբ (ԴԱՐ. 45)։ Պէտք է դիտել տանք, թէ այս քանի անգամներ են, որ այսպիսի յայտարարութիւններ կը պահանջուին և կը տրուին, և վստահութիւն ազդելու չեն բաւեր, վասն զի երկու կողմերն ալ արտաքին ձեւակերպութիւններ ըլլալը կը զգան։ Ասիկայ կը հաստատէ թէ Հայ եկեղեցին հիմնապէս հռոմէականութեան անցած չէր և չանցաւ, ինչ ալ ըլլայ երկու կողմերուն զիրար խաբելու մէջ անպատեհ մրցումը։ Ըստ այսմ կղեմէս պապ ալ բաւականանալ ցուցուց այն յայտարարութեամբ, զոր երկու եպիսկոպոսները կիլիկիայէ բերին, իրենց հետ ունենալով Կոստանդինի արքունիքէն Կոստանդին կաթողիկոսի անուն ապաւէն մը (ԴԱՐ. 47)։ Պապը 1347 սեպտեմբերի 27՚ին խոստացաւ տալ ետեւէն 12,000 ոսկի և 1000 ձիաւոր յղել Հայերուն, բայց միշտ յեպ դաշնադրեալ պայմանով (ՍԻՄ. 559), որով Հայերուն յայտարարութեանցը տակաւին չգործադրուած ըլլալը կը հաստատուի։ Պապին խոստումներն ալ նոյն տեսակէն էին, վի ձիաւորներ դէռ պիտի հաւաքուէին։ Իսկ ոսկիներուն վճարումն ալ կիպրոսի թագաւորին կը յանձնարարուէր, որ Արեւելքի Լատիններէն հաւաքուելիք պապական իրաւունքներէն վճարել նշանակուած գումարը։ Այդ նպատակով Ներսէս Պաղտն և Կոստանդին կաթողիկոսի կիպրոս կը ղրկուէին, այլ ներքին վէճերով գործը կը վիժէր (ԴԱՐ. 48), և կացութիւնը կը չարունակէր իր տարտամ և անկայուն վիճակի մէջ։

ԼԵՒՈՆ ՋԻԱՆԵԱՆ

1313. Վերջին Լեւոնի խոստովանահայրն ու ներքոզատան պատմագիրը Յովհաննէս Դարդէլ, չատ մը հրաշապատում պարագաներ կը հիւսէ անոր ապահին կեանքին չուրջը, այլ չենք կրնար հաստատել թէ որ աստիճան ստուգութեամբ, կի ընտանեկան դրոյցներու հաւաքածոյի կերպարանը կը ներկայէին։ Դարդէլի պատմելով, Կոստանդին Բաղդինեան, իւր թագաւորութիւնը ապահովելու համար Ջիւանի այրին Սուլթան տիկինը, և երկու մանուկները՝ Պէմունդն ու Լեւոնը, դրած է Կոսիկոսի բերդին մէջ (ԴԱՐ. 53), և մեռցնելու համար ալ թոյնով խառնուած մեղր ղրկած, բայց Սուլթան կասկածելով մեղրը աղքատ կնկան մը կը կերցնէ, որ կը մեռնի, և իրենք կ՚ազատին (ԴԱՐ. 54)։ Անկէ ետքը երկու տասիտ կը ղրկէ որ ծովին մէջ խնդդ՚ն, բայց Սուլթան կիպրացի նաւակ մը գտնելով, Կոսիկոսի բերդէն կը փախչի, և նորէն կ՚ապատին (ԴԱՐ. 55)։ Կիպրոսի մէջ ցամաք կ՚ելլէն կարպասի խորչը, այլ կիպրոսի թագաւոր Հուգոն Դ անոնց յաւ ընդունելութիւն չըներ, վասն զի Ամաւրիի տղոքները իրմէն դէմ դատ բացած էին իրենց հօրը կալուածները պահանջելու, և կարպասի մէջ կը թողու համեստ ծախքով մը ապրելու։ Սուլթան կ՚իմանայ թէ Կոստանդին գիրենք անկէ ալ յափշտակել պիտի տայ, ուստի ծո-

վեզերքը կը թողու երեք տարի այնտեղ ապրելէ ետքը, և Ս. Սիմէոնի դղեակը կը փոխադրուի, ու նորէն կ'ազատին (ԴԱՐ. 56)։ Այնտեղ ալ հրաչքով ականակիտ ջուրի աղբիւր մը կը բղխի, և Հուգոն ուխտի գալուն, իր հօրեղբօր թոռներուն վրայ կը կարեկցի, և մօրերնուն հետ իրեն արքունիքը կը փոխադրէ, և այսպէս այս անգամ ալ խնդճ կեանքէ կ'ազատին (ԴԱՐ. 57)։ Լուսինեանց վերջին չառաւիղները կ'ապրին Կիպրոսի արքունիքին մէջ, մինչեւ Հուգոն Դ'ի մահը 1361'ին, և միւնոյն պաչտպանութիւնը կը վայելեն անոր յաջորդէն Պետրոս Ա'է, որ հօրը հիւրասիրութիւնը կը չարունակէ։ Պետմունդ և Լեւոն հետզհետէ կը զարգանան զինուորական կրթութեանց մէջ, մինչեւ որ չափահաս ըլլալնէն ետքը Հայոց թագաւորական գահը ձեռք ձգելու ձեռնարկեին, իբրեւ Գուիտոնի եղբօրորդիներ և օրինաւոր յաջորդներ, իրենց մեծ մօրը Զապլունի ճիւղով կոռիկոսեանց կամ Պալերնեանց ժառանգներ նկատուելով։

ՄԽԻԹԱՐԻ ՆՈՐ ՁԻԳԵՐԸ

1314. Երբոր մէկ կողմին Լատիններու հոգեւոր պետը կրօնական պայմաններով, և որուան բացատրութիւններէ չգոհանալով խոստացած օգնութիւնները կը զլանար, և Հայեր առերեսի գոհացումներով զայն հաճել կ'աշխատէին, կիլիկիոյ թագաւորութիւնը հետզհետէ իր քայքայման կը դիմէր։ Գաբանոնիք հիւսիսի Պապիրոնը կը գրաւէին, Եգիպտացիք հարաւէն Ակայսի կը սպրանային, և Կոստանդին թագաւորի ու Լիպարիտ զօրավարի մահուանէ յաջողութիւնները՝ կայունութիւնը բարելաւելու չէին բաւեր։ Իսկ կղեմէս պապ միչտ նոյն յանդիմգրգռ կը կրկնէր 1348ին գրած նամակներուն մէջ, թէ զնոտ և գանյոտ պիտի օգնէ, երբ վստահութիւն ստանայ թէ Հայ էպտա մոբեթել էջեն յոբաոյ մոլբռնիեանց (ՉԱՄ. Գ. 351)։ Իսկ բնդհակառակն այդ վստահութիւնը աւելի կը նուազէր, զի կիլիկիա գտնուող Լատին կրօնաւորներն և լատինամոլ Հայեր կը չարունակէին տեղեկագրել, թէ Հայերուն կրօնական բնաւորութեան մէջ փոփոխութիւն չէ եղած, և յղուած յայտարարութիւններ միեւնոյն տառեր, և կեղծեալ խոստ-

քեր են։ Պատմուած հանգամանքներէն երեք իսկական հետեւութիւն մը ուզենք քաղել, պէտք է ընդունիլ, թէ իրաւ Հայոց խոստքերը ու գործերը իրարու համաձայն չէին, հռոմէականութեան հաւանութիւնին բերանացի էր, արտաքին օգնութեան համար բռնադատուիլ պայմանը կատարած երեւնալու համար, այլ ընդհանուր եկեղեցին և ժողովուրդը, ինչ որ էր նոյն կը մնար, հայրապետ մը իր բնիկ վարդապետութեամբ և արարողութեամբ։ Պապն ալ այդ պարագայէն կ'օգտուէր խոստումները չկատարելու, և ինչպէս առաջ, նոր ստացած յայտարարութիւններուն ալ նշանակութիւն չի տալով, և 1351'ին դարձեալ նոր բացատրութիւններ կը պահանջէր Մխիթարէ (ՍԻՍ. 559)։ Իսկ Մխիթար չարունակ նոյն բաները կրկնելէ ձանձրացած, պապին դիտել կուտար, թէ պէտք չէ որ ամէն հանդիպած լրատուներու ականջ կախէ, այլ իւր գրութեանց հաւատք ընծայէ, և փութայ ինչ որ խոստացած էր՝ գործով ալ կատարել (ՉԱՄ. Գ. 352)։ Աւոր վրայ կղեմէս կը պահանջէ վերջնական և վաւերական յայտարարութիւն մըն ալ ատանալ, և Արեւելքի լատին եպիսկոպոսներուն կը յանձնարարէ՝ տեղւոյն վրայ քննութիւն կատարել և իրեն տեղեկագրել, այլ անոնք ալ խոյս կուտան, ձեռնհաս և վստահելի թարգմաններ չունենալնուն պատճառանքով (ՉԱՄ. Գ. 352), և գործը կ'երկարաձգուի, մինչեւ որ 1353'ին Ներսէս Պաղտի Արեւելք դառնալուն առթիւ, պապը անոր կը յանձնարարէ թարգմանի և քննիչի պաչտօնները կատարել (ՍԻՍ. 560)։ Որոչակի չունինք թէ ինչ եղաւ Պաղտի գործունէութիւնը, և ինչ արդիւնք արտադրեց անոր միջամտութիւնը, սակայն վստահաբար կրնանք ըսել թէ բարի և օգտակար պտուղ մը հնար չէր ակնկալել այնպիսի անձի մը գործէն, որ մոլեռանդ և մոլեգին կիրքերու մատնուած հոգի մը ուներ, և ուղղութեան ու չինութեան հետեւելու նպատակէն չատ հեռու էր։ Իրրեւ Պաղտի պաչտօնը հակակչռող ձեռնարկ մը, Զամչեան այդ միջոցին, այսինքն 1354 թուին, կը նչանակէ հրաժարեալ կաթողիկոս Յակոբ Անաւարզեցիի իբր պատգամաւոր Աւինիոն երթալը, պապը հաճեցնելը, և

Հռոմի ուխտն ալ կատարելով Կիլիկիա դառնալը (ՁԱՄ· Գ· 353)։ Այդ եղելութեան իբր աղբիւր կը յիշէ Մխիթար Ապարանցին, Ունիթոր պատմագիրը, զոր մենք ձեռնուրնիս չունինք ստուգելու համար, այլ կ'երեւի թէ Ջամչեան թիւրիմացութեամբ գրած է այդ կէտը, քանի որ Ալիշան իւր նորագոյն հետազօտութեանց համեմատ բոլորովին կը լռէ, և անուղղակի հերքած կ'ըլլայ Ցակոբի պատգամաւորութեան պատմութիւնը։ Հաւանական ալ չերեւիր որ նախկին կաթողիկոս մը յանձն առնու այսպիսի պաշտօն մը կատարել, թող որ Ցակոբի անձն ալ պապին առջեւ հաճելի չէր, որ կարենար նպաստաւոր ընդունելութիւն գտնել և տպաւորութիւն ներգործել։ Արդէն 117 կարծեցեալ մոլորութեանց կարգին ալ տեսանք, որ քանի քանի առարկութիւններ ուղղակի Ցակոբի անձը կը դիտէին, և զայն իբր գլխաւոր ընդդիմադիր կը ցուցնէին (§ 1307)։ Այդ պարագաները կշռելով երբեք հաւանական չենք գտներ Ցակոբի պատգամաւորութիւնը, և ըստ այսմ պարզ թիւրիմացութեան հետեւանք կը կարծենք Ջամչեանէ պատմուած պատուիրակութիւնը։

ՄԽԻԹԱՐԻ ՄԱՀԸ

1315· Թադաւորութեան վտանգեալ և եկեղեցւոյն տատամսեալ վիճակին մէջ կը հանդիպի Մխիթարի մահը, 1355'ին, 14 տարի հայրապետական աթոռը վարելէն ետքը։ Ծանր և մեծամեծ տագնապներու ենթարկուած, և գրեթէ ապարդիւն մնացած պաշտօնավարութիւն մը ունեցաւ Մխիթար, աւելի արգահատելի, քան թէ քննադատելի իւր գործունէութեան և ուղղութեան մէջ։ Հնար չէ Մխիթարը լատինամոլութեամբ զառածեալ և հռոմէականութեան աչակերտեալ կարծել, որչափ ալ ամէն կերպերով ջանացած երեւայ պապերուն հաւատացնել թէ հնազանդ և համամիտ է լատին եկեղեցւոյ վարդապետութեանց և սովորութեանց։ Ժամանակակից ցուցակագիր մը, կաթողիկոսներու չարքը կազմածատեն կը գրէ· «Եւ Ցակոբ Հայոց պատրիարքն, եւ Մխիթար ազգիս Հայոց պատրիարքն (ՏԱՇ· 989), ուր ազգիս Հայոց կոչումը Հայոյ կոչումին դիմաբաժան դնելովը կը ցուցնէ, թէ այդ կոչումը հայադաւանի և ոչ հռոմէադաւանի իմաստով կը գործածէ և մեր տեսութիւնը կը հաստատէ։ Մխիթարի միտքը բացատրելու համար պէտք է յիշել, որ ահագին և վերահաս վտանգ մը կը սպառնար։ Կիլիկիոյ թագաւորութիւնը հիմնովին վտանգեալ էր, միակ յուսոյ նշոյլ մը Լատիններէն կ'ըսպասուէր, անոնց կողմանէ ալ հռոմէադաւանութիւնը իբր բռնադատեալ պայման կը դրուէր, ուստի համակերպութիւնը անհրաժեշտ կը դառնար, գոնէ այն չափին մէջ որչափ որ պէտք էր դիմացինը գոհացնելու համար։ Հոս կանգ կ'առնէր Մխիթարի համակերպութիւնը, իսկ միւս կողմէն իբր բոլոր ոյժերով կ'ընդդիմանար հռոմէականութեան անձնանուէր քարոզիչ և հայադաւանութեան ոխերիմ թշնամի, և իրենց եկեղեցւոյն ուխտեալ քանդիչ եղող Ունիթորներուն. և նոյնիսկ հռոմէադաւանութեան պետին առջեւ կը պարզէր անոնց մոլար ու վնասակար արարքները։ Եթէ երբեք ոմանց կողմէն դատապարտելի կամ պարսաւելի դատուի Մխիթարի այդ ընթացքը, մենք պիտի ըսենք թէ վտանգը ու տկարութիւնը այնպիսի բուռն և գերագոյն պարագաներն են, որ ոչ միայն կը նուազեն, այլ և իսպառ կը ջնջեն պատասխանատուութիւնը։ Ամէն առթի մէջ երէ կեղծիքը արդարանալի բան մը չէ տկարին համար, աւելի անարդարանալի է զօրաւորին համար, որ տկարը խաբելով զայն իւր կորուստին կ'առաջնորդէ։ Պապերուն կողմէ չարունակ խօսուած և երբէք չգործադրուած խոստումները, չարունակ պահանջուած և առնուած, և առժամեայ գոհունակութենէ ետքը նոր բծախնդրութեամբ եղծուած յայտարարութիւնները, և հետզհետէ բարդուելով մինչեւ 117 հասած անհիմն առարկութիւնները, չատ աւելի կը ծանրանան Հռոմի պապերուն, քան թէ Մխիթարի և անոր նման կաթողիկոսներուն վրայ։ Շատ աւելի աղէկ կ'ըլլար, երէ միանգամընդմիշտ և վերջնականապէս մերժէին օգնել իրենց դաւանութեան չհամակերպող Հայերուն, որ երթային և իրենց գիտցած կերպով իրենց գործը վարէին, և իրենց վտանգին դարմանը հոգային, քան թէ չարունակ սուտ յուսադրութիւններով, խաբէական

խոստումներով, կեղծակալ բարեմտութիւններով և արուեստակեալ պայմաններով խաղցնէին, և քայլ առ քայլ քայքայման մղէին։ Գոնէ իրենց պատասխանատուութիւնը ազատած կ'ըլլային, և պատմութիւնը իրաւունք չէր ունենար Լատինական մեղամտութեանց վերագրել Հայ իշխանութեանց վերջնական անկումը։

Տ· ՅԱԿՈԲ Բ· ԱՆԱԻԱՐՉԵՑԻ, ԴԱՐՁԵԱԼ (1355-1359)

ՆՈՐԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

1316· Հայ եկեղեցւոյ հայրապետներուն չարքին մէջ անօրինակ և միակ է Յակոբի պարագան, որ կանոնական և վերջնական կերպով աթոռէ հրաժարելէն, և ուրիշ մը օրինաւորապէս կաթողիկոսութիւնը վարելէն ետքը, երկրորդ ընտրութեամբ կրկին հայրապետական աթոռ կը բարձրանայ և կաթողիկոս կը հռչակուի։ Ասիկայ յայտնի նըշան մըն է թէ Յակոբ անուանարկութեամբ և իրական մեղադրութեամբ կաթողիկոսութենէ չվտարուեցաւ, այլ յօժարակամ քաշուեցաւ (§ 1283), իր պատուովը ապրեցաւ, և սկսաւ Նորէն փնտռուիլ, երբոր Լատինաց մերձաւորութեան՝ ոչ միայն անպատուաղ, այլ և վտանգաւոր ըլլալուն չատեր սկսան համոզուիլ։ Յակոբի կրկին կաթողիկոսանալուն մասին տեղնիտեղօք պատմութիւն չունինք, որ գիտնանք թէ կրկին օծում կատարեցին, կամ թէ ինչ ձևով աթոռ բարձրացուցին. սակայն հաւանական չէ կրկին օծելնին, վասն զի մեր եկեղեցին երբեք օծում չկրկնէր, և իբր ստոյգ կը նկատունք որ արդէն կաթողիկոս օծուած ըլլալով առանց նոր արարողութեան գործի գլուխ անցաւ։ Յակոբի կրկին կաթողիկոսանալուն առաջին աղբիւր կը գտնունք Դավրիժեցին, որ կը դրէ թէ Մխիթարէ եպս. ընտրեալ ամս չորս (ԴԱՎ·335), և անոր հետեւելով կը կրկնէ Երեւանեցին ալ (ՋԱՄ·17)։ Սակայն հնագոյններ կարծես թէ կ'անգիտանան այդ կրկնակ պաշտօնավարութիւնը, զի Անկիլին չարունակողը, Հայոց 789'ին կը դնէ, թէ Մխիթար ամս չորեքտասան (ՍԱՄ·168). ձիլդ 803'ին ալ կը դնէ թէ Մեսրոպ ամս տասնվեց (ՍԱՄ·169), որով Յակոբի համար միջոց չմնար։ Նոյնպէս ուրիշ յիշատակարան մըն ալ առանց ընդմիջումեան կը չարէ թէ Յակոբ, թէ Մխիթար, թէ Մեսրոպ (ՏԱՇ·989), որով անգիտակ կ'երեւի Յակոբի երկրորդ կաթողիկոսութեան։ Թերևս մենք ալ միեւնոյն այդ կրկնութիւնը չընդունիլ, եթէ զօրաւորագոյն ըլլային վաստերը, սակայն Անկիլին չարունակողը մեծ հեղինակութիւն չվայելեր իր չփոթ տեղեկութիւններովը, և յիշատակարանը անորոշ է թուականներ չունենալուն համար, մինչ Դավրիժեցին ազբիւրներու դիմելով կապսած է իր ցուցակը, յիշատակարաններ և կոնդակներ ալ քննած է (ԴԱՎ·334), և աւելի վստահութեան արժանի կը նկատուի։ Ըստ այմ կը հետեւինք անոր քաղած ծանօթութեանց, ինչպէս հետեւած են մեզմէ առաջիններն ալ։

ԻՒՂՈՒԹԻՒՆԸ

1317· Յակոբի առաջին ընտրութենէն 28 տարիներ անցած էին երբ վերստին կաթողիկոսութեան բարձրացաւ 1355'ին, հետեւաբար ծերացեալ հասակին մէջ վերստանձնած պիտի ըլլայ այդ պաշտօնը, երբ ոչ այնչափ ժիր գործունէութիւն, որչափ խոհական վարչութիւն մը կը սպասուէր ժամանակին պարագայից բերմամբ։ Յակոբ յայտնի էր իր ճարտար ուղղութեամբ հայադաւան եկեղեցին պահելու և պաշտպանելու, առանց լատինականութեան դէմ բուռն պայքար մղելու, չանալով որևէ օգուտ մը քաղել անկէ, առանց Հայ եկեղեցւոյ իսկութենէն բան մը վրայ տալու։ Մխիթար որ իբրեւ աւելի ճկուն ու յարմարող պաշտօնի կոչուած էր, բոլոր իր չանքերով ու զիջողութիւններով զգալի արդիւնք մը չէր յաջողած ձեռք ձգել. և այդ յուսախաբութենէն էր անշուշտ որ ամենքը նորէն Յակոբի դառ-

նալ կը յորդորէր։ Գուցէ յաջորդի ընտրութեան մասին նեռնակ ուղղութեանց մըրցումը դադրեցնելու դարման մըն ալ եղաւ՝ ծերունի կաթողիկոսը նորէն պաշտօնի կոչելով՝ հակառակութիւնները լուծցնելու խորհուրդը։ Մեծ գործունէութիւն չէր ըսպասուեր Յակոբէ, և չունեցաւ ալ. պատմութիւնը գրեթէ ոչինչ չպարունակեր այն չորս տարիներուն մէջ, որ 1355'է ետքը անցան մինչեւ Յակոբի մահը։ Կոստանդին Թագաւորն ալ ներքին հասոզմամբ մեծ լատինասէր մը չէր, արդէն Գուիտոնի լատինամոլութեան դէմ ելլող խումբէն ընտրուած էր։ Այնչափ ինչ կ'ընէր որչափ բուռն հարկը կը պահանջէր և այդ մասին Յակոբ կաթողիկոսի հետ համամիտ էր։ Հռոմի հետ փոխադարձ՝ յարաբերութեանց և թղթակցութեանց բացակայութիւնն ալ դիւրաւ կը մեկնուի, քանի որ Թագաւորն ու կաթողիկոսը կիլիկիայէ դիմումներ չէին ընկեր, որով պապերուն առիթ չէր ըլլար կրօնական հաւատակերպութեան և հպատակութեան պահանջները նորոգել։

ՈՒՆԻԹՈՐՆԵՐ ՎԵՐԱԿԱԶՄՈՒՄ

1318. Ունիթորներու առաջնորդ Յովհաննէս Քռնեցին վախճանած էր 1348 յունուար 6'ին (ՍԻՆ. 387), որով գրեթէ անգլուխ մըներացած էին, և գործունէութիւնն ակարացած էր, զի Բարթողիմէոսի Լատին ընկերներն ալ, Գևորս Ապագունացին և Յովհաննէս Անգղիացին նոյն միջոցներուն մեռած էին։ Յովհաննէս իր պապէն Քռնեցիին ստացած կոնդակը՝ իբր յատուկ միաբանութիւն կը նկատէր Հայ Ունիթորները (§ 1278), բայց Քռնեցիին մահուընէ ետքը հետզհետէ տկարացած էր Ունիթորներու կազմութիւնը, ոչ միայն յոգեպ փոփոխութեան, այլ եւս ազգապարենի և ընտանեկան (ԿԱՒ. 524)։ Հետեւաբար պարտաւորուեցան Հռոմի յատուկ ձեռնտուութիւնը իւնդրել, և այս նպատակով երկու պատգամաւորներ յղեցին Աւինիոն կղեմէս Ջ'ի յաջորդ Իննովկինտիոս Ջ պապին։ Գացողներն եղան Ջահկեցի հարազատ եղբայրներն, Թովմաս և Յամուէլ (ՍԻՆ. 388) կամ ելեւէիւրոս (ԿԱՒ. 524)։ Ունիթորներու դիրքը աւելի զօրացնելու համար, այս անգամ 1356 յունուար 31'ի պապական կոնդակով, անոնք կատարելապէս ձուլուեցան Դոմինիկեան լատին միաբանութեան հետ, և Հայաստանի վանքերը ոչ եւս իբր Միաբանութիւն, այլ իբր Մէքենական գաւառ նկատուեցան, գաւառահոր կամ գաւառական մեծաւորի մը իշխանութեան ներքեւ։ Ունիթորներու հետեւող հռոմէադաւան Հայերու համար ալ Նախիջեւանի անունով եպիսկոպոսական վիճակ մը կազմուեցաւ, և նոյն իսկ պատգամաւոր գացողները, Թովմաս՝ եպիսկոպոս և Յամուէլ՝ գաւառահայր նշանակուեցան (ԿԱՒ. 524)։ Դոմինիկեանց ընդհանուր մեծաւորը պիտի օգնէր և պիտի խնամէր Հայ վանքերը, բայց և մերթընդմերթ իր կողմէ այցելութեամբ պիտի քննէր անոնց ընթացքը, և պիտի տայր պէտք եղած հրամանները։ Այսպէս իրենց սկզբնաւորութենէն քիչ ետքը իբր Հայ գործող Ունիթորները. պաշտօնապէս լատինութեան կ'անցնէին։ Մէկ կողմէն միջոցներու նուազութիւնը, և միւս կողմէն կերպարանին փոփոխութեան պատճառով, Ունիթորներ չկրցան այս ատեններ մեծ գործունէութիւն ունենալ, մինչեւ որ Իննովկինտիոսի կարգադրութեամբ յաջողեցան նորէն կազմուիլ և զօրանալ, և Հայ եկեղեցւոյ դէմ յարձակումներու ձեռնարկել։ Իրենց կեդրոնը հաստատուեցաւ Նախիջեւան և Ջահուկ և Շահապունիք գաւառներու մէջ, բայց հետզհետէ Ջահուկի մէջ ամփոփուեցան, և այս պատճառով Ջահկեցի կոչուեցան։ Անոնք որ Մեծ Հայոց կողմերը հռոմէադաւանութեան կը հետեւէին, ինչչափ ալ անձուկ և սահմանափակ կերպով, քանի մը դարեր տեւող գոյութիւն ունեցան։ Միշտ Ներսէս Պաղոնի և Սիմէոն Պէկի անուններն ալ այլ եւս չեն յիշուիր պատմութեան մէջ, որով անոնց ալ այդ միջոցին մեռած ըլլալը կը հետեւի։ Արդէն բաւական ժամանակ էր, որ իրենց տարաձգ գործունէութիւնը կը չարունակէին, բայց չենք կրնար ճշդել, թէ ո՛ւր, Արեւելքի՞ թէ Արեւմուտքի մէջ կնքեցին իրենց արկածալից կեանքը։

1319. Յակոբի երկրորդ կաթողիկոսութեան միջոցին տեղի ունեցաւ ահեղ սրածութիւն մը, որ չատ մը կեանքերու կորուստ պատճառեց կիլիկիոյ մէջ։ Յաղու-

մը յայտնի չէ, բայց կրնայ հետեւանք ըլլալ 1356'ի ասպատակին, և կամ պարզ մահտասնամեայ մը եղած ըլլալ վասն

ՅԱԿՈԲԻ ՄԱՀԸ

բակիչ հիւանդութեանց երեսէն։ Նկատելի կէտ մըն է, որ հակառակ սովորական պատահարաց, ուր ընդհանրապէս ստորին դասակարգն է որ զոհ կ'երթայ վարակիչ ախտերու, այս պարագային եկեղեցականներու և աղնուականներու դասակարգեր բազմաթիւ զոհեր տուին, մինչեւ իսկ Կոստանդին Թագաւորի սրբէ՛ք քաղցմ վարակուեցան և մեռան ի մէջ սասոյց տասնից, և այս այնչափ աչքի զարկաւ, որ իբր աստուածաստաց պատուհաս կ'ուզէ մեկնել զայն լատին պատմիչը, իբր զի վէր նա յոբոնէ ըմբռ անդէ հայոց (ԻԱՐ. 58)։ Ասով Լուսաւորչեան ազգատոհմին ժառանգական իրաւունքին բռնաբարող մը կ'ուզէ ցուցնել Նզրեցոց ազգատոհմէն եղող Կոստանդինը։ Իսկ արկածին թուական կը ցուցուի 1359 տարին (ՍԻՄ. 560)։ Յակոբի կաթողիկոսութեան երկրորդ մասը համառօտ եղաւ, զի 1359'ին կնքեց նա իր կեանքը, ինչպէս կ'երեւի, տարիներու երկարութեան և աղէտներու ծանրութեան ներքեւ ճնշուած։ Դիժբախտաբար օրինաւոր պատմագիրներ չունենալով, կցկտուր և ցրիւ յիշատակներով կը պարտաւորուինք կազմել ժամանակիս պատմութիւնը, չոր ակնարկներ միայն տալով, առանց անոնց հանգամանքները ու չարժառիթները կարենալ բացատրելու։ Իսկ Յակոբի անձին և գործերուն մասին քաւական գրեցինք պատմութեան կարգին, և պէտք չենք տեսնար նորէն անդրադառնալ անոր ուղղութիւնն ու ընթացքը բացատրելու, կամ արժանիքը գնահատելու համար։

1320. Այստեղ մեր սովորութեան համեմատ ժամանակակից նշանաւոր անձերն ալ յիշել ուզելով, միայն երկու նահատակներու անունները կը գտնենք, և գերեզմանները Անիի մօտ գտնուելէն, Անեցիներ ըլլալնին կը հետեւցընենք։ Այս երկուքն են, կիրակոս վարդապետ և Սարգիս քահանայ, վասնզի կը կարծենք թէ արձանագրութեան Ա. Սբբէ՛ գրուածը պէտք է Տ.Սբբէ՛ կարդալ։ Առաջինին համար ըսուած է թէ նահատակեցաւ յանօրէնաց։ Իսկ երկրորդը՝ իւր եղբայրը կազեր որդի Միւռոնի, սբէ՛նաշնաշաա գտած է ի խոբեչն հոբէ փոբնաղ սբոբած (ՇԱԿ. 34)։ Որչափեւ նոր վկայից հաւաքիչները, երկուքն ալ մարտիրոսներու կարգ են անցուցած (ՆՈՐ. 133), սակայն հնար է որ պարզապէս աւազակային սպանութեանց զոհ գացողներ ըլլան, քանի որ վկայաբանական յիշատակներ կը պակսին։ Կիրակոսի համար յայտնապէս 1348 թուականն տրուած է, և անոր ժամանակակից կ'երեւի Սարգիսն ալ։

Տ· ՄԵՍՐՈՊ Ա· ԱՐՏԱԶԵՑԻ 1357-[illegible]

1321. Յակոբի յաջորդն եղաւ Մեսրոպ Արտազու արքեպիսկոպոս ու Թադէոսի վանքին առաջնորդ (ՉԱՄ. Գ. 353), և յայտնի չէ թէ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՈՒ ԸՆԹԱՑՔԸ

պատահմամբ Սիս գըտնուելով, կամ ներհակընդդէմ մրցումներու վերջ տալու համար, այսպէս հետեւէն անձ մը հայրապետական աթոռ բարձրացած է։ Ոմանք սոյն Մեսրոպը կը նոյնացնեն Տորձեանի եպիսկոպոսին հետ (ՉԱՄ. յա. 110), որ Մխիթարի ժողովին ներկաներէն էր (§ 1291), սակայն լուկ անունները մերձեցում մըն է, առանց ուրիչ մէկ նշանի։ Դավրիժեցին 1364'ին կը դնէ Մեսրոպին կաթողիկոսութիւնը, այլ նա յայտնապէս գրած է, որ ոչ թէ սկզբնաւորութեան թուականները կը նշանակէ, այլ այն տարին որուն մէջ կաթողիկոսին պաշտօնի վրայ ըլլալը գրած է։ Մեսրոպի աւելի կանուխ ալ պաշտօնի վրայ ըլլալուն կը վկայեն ուրիչ յիշատակարաններ ալ, որ 1360'ին Մեսրոպը կաթողիկոս կ'արձանագրեն (ԹՈՐ. Բ. 381, 437), որով կ'արդարանայ 1359'ին ընտրուած ըլլալուն սովորական թուականը։

Բաւական ժամանակ էր որ չարունակ կիլիկեցիներ էին հայրապետութեան գահակալները, սակայն հաւանական չէ, որ Մեսրոպը հետուէ բերելով ուղած ըլլան տարբեր ուղղութիւն մը տալ գործերուն։ Արտաղեցիներ ալ արդէն, Ջաքարիա Տործորեցիի օրէն, հակամէտ էին դէպի միութիւն, և սիրով կ'ընդունէին այդ նպատակին ծառայող պայմանները, մօտաւորութիւն կը ցուցնէին իրենց կողմերը գտնուող լատին կրօնաւորներուն, և կը ջանային օգտուիլ անոնց ուսումէն ու հրմտութենէն, բայց միանգամայն հետու էին լատինամոլնելու ծանծաղամիտ նմանողութենէն, և Հայոց Եկեղեցին կատարելապէս լատինակերպ և հռոմէադաւան ընելէն։ Մեսրոպ ալ հարկաւ այդ ուղղութեան հետեւող մըն էր, և իւր ընտրութիւնը պէտք է մեկնել իրր չափաւորութիւն մը կիլիկիոյ լատինասէր ուղղութեան մէջ, քանի որ լատինասիրութիւնը, առանց երկրին քաղաքական օգուտ մը բերելու, ներքին երկպառակութիւններու պատճառ կ'ըլլար։ Լատինամոլութեան երկու մեծ գայթակղեցուցիչ կէտերն եղած էին բաժակին ջուրը և Մնունդին ոտնը, որոնք առիթ կ'ընծայէին հակառակորդներուն օրէն և ըստ պահել էրէց և քաղամ սէյր գործել։ Մեսրոպի առաջին հոգածութիւններէն մին եղաւ, համոզիչ միջոցներով միտքերը հանդարտեցնել, նորութեանց հետեւողները իւրովի հետ կեցնելու աշխատիլ, և ժողովուրդին մէջէն յուզիչ և գայթակղեցուցիչ առիթները պակասցնել։ Բայց երբոր տեսաւ որ մոլեռանդներու խօսք հասկցնել հնար չըլլար, քանի որ անոնք Սսոյ և Ամանայի ժողովներուն հեղինակութեամբ կը զօրանային, մինչ ժողովուրդը առջի օրէն բողոքած և հակառակած էր այդ ժողովներուն դէմ, և քանի որ եպիսկոպոսներն ալ պարտք չէին զգացած այդ որոշումներուն համակերպիլ ու գործադրել, Մեսրոպ պէտք զգաց պաշտօնական միջոցներ ձեռք առնել միտքերը հանդարտեցնելու համար։ Կոստանդին Թագաւորին հետ կամակից միաձայնութեամբ ժողով մը դումարեց Սիսի մէջ, ուր նկատի առնուեցան նախընթաց գործողութիւնները, անոնց հետեւութիւնները, պարագայից պահանջներուն վրայ երկար խորհրդակցութիւններ կատարուեցան, և վերջապէս ժողովական վճիռով որոշուեցաւ բաժակին ջուր խառնելը խափանել, և ջրախառն բաժակի կիրառութիւնը խստաւ դատապարտել կիլիկիոյ մէջ, (ՁԱՒՐ. Գ. 355), կամ լաւ եւս Սիսի մէջ, որովհետեւ անկէ դուրս արդէն ընդհանուր գործածութեան ալ չէր մնած, այլ լոկ անհատաբար ջուր խառնողներ կը գտնուէին։

ՍՍՈՅ ՆՈՐ ԺՈՂՈՎԸ

1322. Պատմական եղելութեանց կարգին կարեւոր կէտ մըն է Մեսրոպի օրով 1361'ին դումարուած Սսոյ ժողովը, զոր Ջամչեան կիլիկեցւոց պատմութենէն քաղելով թեթեւակի իմն կը յիշէ, և գործը միայն ջրախառն բաժակին վրայ կը մասնաւորէ։ Դիժբախտաբար ձեռքի տակ չգտնուիր այդ գործը ամբողջութեամբ պատմող հեղինակ մը, որ կարենայինք կատարեալ ուսումնասիրութեամբ գործը բացատրել։ Սակայն դիւրին է հասկնալ, թէ խնդիրը լոկ ջրախառն բաժակի վրայ չէր կրնար ամփոփուիլ, այլ բոլոր նոր և օտարամուտ ձեւեր պէտք էր միանգամայն վերնայիս, և այդ միտքով երեւանեցին բացատրօրէն կը գրէ, թէ Մեսրոպ եթէպէտ զլուրն է սուրբ խոչերդոյն, և հերետեաց զեխեռմայոթիւնն՝ որ ճանաչել էր է Հայս է կոստանդին հերձուածողէն, որ է կեսարացին, և յՕշէն ընգաւորէն (ՁԱՒՐ. 17)։ Հարկաւ աղբիւր մըն ալ ունեցած է այսպէս բացայայտ պրելու համար։ Ժողովական գործերուն ձեռնարկին հասած չլինելը, չկրնար երբեք ժողովին հեղինակութիւնը նուազել, և հռոմէականներուն ալ փաստ չըլլար անոր կարեւորութիւնը ուրանալու։ Եթէ առանց կաթողիկոսի դումարուած Սսոյ ժողովի մը հեղինակութիւնը կը բարձրացնեն, կամ կեսարացիին նորութիւնները Ամանայի ժողովին որոշումներով կ'ուզեն հաստատել, պէտք է որ Մեսրոպի դումարած ժողովին ալ, թէ ոչ աւելի, գոնէ համահաւասար զօրութիւն ճանչնան։ Եւ եթէ նախնեաց հնաւանդ սովորութիւնները խախտող դումարումները, իրր օրինաւոր ժողով կ'ընդունին, եւս առաւել այդ օրինաւորութիւնը կը պատչամի օտարամուտ նորութիւնները խափա-

նոյ գումարումին։ Ըստ այսմ դիմացէ գիմաց կ'ունենանք համանման գործեր, ժողով մը՝ որ նախնեաց կանոնները կ'այլայլէ և նորութիւններ կը մուծանէ, և ժողով մը՝ որ նորութիւնները կը խափանէ և նախնեաց կանոնները կը հաստատէ։ Այդ պարագային մէջ, տարակոյս առաւելութիւնը պէտք է տալ այն ժողովին, որ բազմադարեան կանոնները կը հաստատէ, և քանի մը տարի առաջ մուծուած պիտակ նորութիւնները կը ջնջէ։ Ըստ այսմ հռոմէադաւանները համբուխեան դպրեվանքին եղող Սսոյ և Ատանայի ժողովները անզօր կը դառնան, ոչ միայն այն դիտողութեանց հիմամբ զորս իրենց կարդին գրեցինք (§ 1235, 1257), այլ և զօրութեամբ պաշտօնական գործողութեանց։ Հարկաւ այլ եւս պիտի չկրնան ըսել, թէ կաթոլիկոսին ժողովը տարբեր բան մը եղած էլլայ, քան Արտազիցին ժողովը։ Մենք պնդեցինք և կը պնդենք, թէ կաթողիկոսի մը մոլեռանդ կամքը, և ուրիշ կաթողիկոսի մը արտաքին դիջողութիւնը չէին կրնար փոփոխել Հայ եկեղեցւոյ իսկական կիրպաբանը, և թէ բռնադատիչ պարագայից ներքեւ գումարուած, և յետոյ ուրիշ ժողովով յետս կոչուած ժողովական գործեր բնաւ չեն զօրեր հռոմէադաւան դրութիւնը ամրացնել։

1323. Կիլիկիոյ թագաւորութեան կացութիւնը հետզհետէ իր քայքայման կ'երթար, քանի որ ոչ ներքին ոյժ մը ունէր վանդին դիմադրելու, և ոչ ալ արտաքին ոյժ մը՝ որ իրեն հովանաւորէր։ Լատինականութեան աղէտը, ինչպէս պէտք է կոչել ժամանակին տագնապը, կրկնակի կը վնասէր արդէն տկարացեալ թագաւորութեան։ Դէպ Արեւմուտք դիմումը կը գրգռէր չրջակայ թշնամիները, լատինական ձեւերն ու կերպերն կը պատակտէին ժողովուրդը, արքունիքին լատիններու ձեռք անցնիլը, և նոյն իսկ Հայոց թագաւորական գահին վրայ լատինները բարձրանալը, անտանելի կը դարձնէր գայրացած կացութիւնը։ Հալէպի կուսակալ Պէկ-թիմուր, 1360'ին Տարսոնն ու Ատանան կը գրաւէր, կոռիկոսի բերդը գրեթէ անպաշտպան մնացած՝ Հայոց թագաւորութիւնէն բաժնուելով Կիպրոսի իշխանութեան ներքեւ կը մտնէր 1361'ին, կոստանդին թագաւոր անզօր և անկար յարձակումները վանել, գոնէ մնացածը պաշտպանելու ճիգերով կը տագնապէր, և կ'աշխատէր մինչեւ իր կեանքին վերջը, 1363'ին ակիզբները։ Առանց մեծ գործ մը կատարելու և առանց մեծ ոյժ մը ունենալու 19 տարի թագաւորեց Կոստանդին Բաղդինեան, միակ արժանիքն ունենալով ըստ կարելւոյն չետաձգած լինելու Հայ թագաւորութեան վերջնական անկումը։ Բռնադատեալ լատինասէր, այլ ոչ երբեք լատինամոլ, Հայ թագաւորութեան և Հայ եկեղեցւոյ հայկական տիպարը պահելու աշխատող, Կոստանդին ունեցաւ միտքի գնահատելի ուղղութիւն մը, ցուցուց կարողութեան չափաւոր ձիրք մը, այլ չկրցաւ կործանման առջեւը առնել, թէպետեւ յաջողեցաւ զայն հետաձգել իր իշխանութեան բաւական երկար տեւողութեան առեն։ Իր մահուանէ ետեւ ծանրացած աղէտը փաստ մըն է, որ գոնէ անուղղակի իր ձիգը կը բարձրացնէ։ Կոստանդին անժառանգ կը մեռնէր, զի իր զաւակները վարակիչ սրածութեան զոհ գացած էին (§ 1319), և յաջորդութեան խընդիրները նորանոր աղէտներ բարդեցին արդէն աղետալից կացութեան վրայ։ Լուսինեան Ջիւանի անդրանիկն Պէմոնդ 24 տարեկան երիտասարդ մը եղած էր, և կիպրոսի թագաւորին պաշտպանութիւնը կը վայելէր։ Պետրոս Ա, որ Հուգոն Դ'ի յաջորդած էր (§ 1313), ուզեց զայն նստեցնել Հայոց գահուն վրայ, զոր ժամանակ մը վարած էր անոր հայրը, և որուն նա ժառանգ կը նկատուէր հօրեղբօրը Գուիտոնին մահուընէ ետքը։ Իրքն Պետրոս ալ պէտք կը զգար անձամբ տեսակցիլ Ուրբանոս Ե պապին հետ, որ տարի առաջ յաջորդած էր Իննովկենտիոս Ջ'ի, Աւինիոնի մէջ։ Ուստի երիտասարդը մէկտեղ առած ճանապարհ ելաւ, որպէս զի պապական հաստատութեամբ ապահովէ Պէմոնդի թագաւորութիւնը։ Բայց երիտասարդը ծանրապէս հիւանդացաւ ճանապարհին և Վենետիկի մէջ մնաւ (ԴԱՐ. 58)։ Պետրոս իր ճանապարհը չարունակեց, Ուրբանոսի հետ տեսակցեցաւ, և Հայոց թագաւորութիւնը լուսինեանները-

բուն պահելու համար, յաւուրկ պապական կոնդակ մը առաւ Պէմունդի եղբօր Լեւոնի անունին 1364 ապրիլ 11 թուականով (ՉԱՄ. Գ. 356), զոր սակայն իրեն ժամ պահից (ԴԱՐ. 58):

ԿՈՍՏԱՆԴԻՆ ՀԵԹՈՒՄԵԱՆ

1324. Երբոր Կոստանդին Բաղդինեան անժառանգ մեռաւ, յաջորդութիւնն ինդիրը պատճառ եղաւ զանազան կուսակցութիւններ կազմելու, և Կիլիկիա պատակտեցաւ: Լուսինեանները իրենց կողմնակիցներն ունէին, որոնք Պետրոսի ալ դիմեր էին Պէմունդն ուղելու (ԴԱՐ. 57), որք սակայն կացութիւնն տէր չէին: Ինքզինքնին առջեւ քշող բախտախնդիրներ ալ կային, որոնցմէ կը յիշուին Լեւոն Լուսինեան մը և Նիկոլ Լուսինեան մը, որք սակայն չէն կրցած յաջողիլ, և մերժուած ու սպանուած են հակառակ կուսակցութիւններէն (ՍԻՄ. 560): Ընդհանուր պատակտութիւններու մէջ զօրացաւ Ներսեցոց կողմը, և Կոստանդին Բաղդինեանի յաջորդ նշանակուեցաւ նորա հօրեղբօրորդին, նոյնպէս Կոստանդին անուն, որպէ Բաղդինի եղբօր Հեթում Ջաւրուայի, կամ արքունական սենեկապանի, որ մեռած էր 1356'ին (ՍԻՄ. 560), և Հեթումէ քիչ ետքը, 1358 մայիս 21'ին վախճանած էր նաեւ անոր կրտսեր որդին Ջօֆրէ, 34 տարեկան (ՍԻՄ. 413): Այս հաշուով Կոստանդին Հեթումեան, որ երիցագոյն էր, 1363'ին թագաւոր հռչակուած ատեն, գոնէ 40 տարեկան եղած պիտի ըլլայ: Այս Կոստանդինն է որ Իւրինեանց գահին վրայ մնաց 10 տարիի չափ, բայց երկու նշանաւոր Կոստանդիններու իրարու յաջորդելը, պատճառ եղած է ոմանց երկուքը միացնելու, և ուրիշներուն ալ՝ մականուններուն տարբեր կերպով նշանակուելէն՝ անոնց թիւը բազմացնելու: Երեւանեցին, Գուիտոնի և Լեւոնի մէջտեղ կը դնէ, ըստ որ Հայոց Կոստանդէն, յետոյ և դարձ Կոստանդէն, յետոյ և դարձ Կոստանդէն, և դարձ ըզբոլոր Կոստանդէն (ՉԱՄ. 17), մինչ Դարդէլի ժամանակագրութիւնը երկու նշանաւոր Կոստանդիններ միայն կ'ընդունի, Բաղդինեանը և Հեթումեանը (ԴԱՐ. 59): Հեթումեանին իբր թագաւոր ընդունուիլը կը վերագրուի իբր թէ Պապին, որուն յաջողեցաւ ոչ միայն Կիլիկեցի իշխանները վաստրկիլ, այլեւ նոյն իսկ Կիպրոսի թագաւորը իրեն կողմը դարձնել, և անոր ձեռքով անգործադիր թողուլ Լեւոնը թագաւորեցընելու համար Ուրբանոսի տուած պապական կոնդակը (§ 1323), զոր Պետրոս պահեալ է ծածուկ ու եղայց, և ու առնէաց առ իշխանն Լեւոն (ԴԱՐ. 59): Այդ կոնդակին թուականը պատճառ եղաւ չատերուն 1365'էն Լեւոնը Հայոց թագաւոր եղած կարծել (ՉԱՄ. Գ. 356), սակայն Դարդէլի ժամանակագրութիւնը կը ցրէ այդ դրութիւնը, և մէջտեղ կը հանէ Պետրոսի տարօրինակ ընթացքը, որ կրցաւ գրեթէ 10 տարիներ դադնի պահել և անհնազանդ թողուլ իրեն համար նուիրական սեպուող պապական կոնդակ մը: Դարդէլ ոչ միայն ժամանակակից մին է, այլ և Լեւոնի խոստովանահայրն ու խորհրդականն և անոր անձնական պարագաներուն մօտէն տեղեակ էր: Այլ թէ ինչպէս կրցաւ Պետրոս այս տեսակ գործ մը յաջողցնել, որ ոչ Ուրբանոս իր կոնդակին պարծագրութիւնը պահանջէ, և ոչ Լեւոն իր իրաւունքը փնտռէ, պատմութիւնէ բացատրութիւններ չունինք: Սակայն դիտելի է նկատել, որ պապին կոնդակը նոյն ինքն Պետրոսէ ուղուած էր, և պապը անոր յանձնած էր պատշաճ կարգադրութիւնն ընել, իսկ Լեւոն փորձանքներ տեսած և Պետրոսի պաշտպանութեամբ յառաջ եկած, անոր հրամանին ներքեւ զինուորական մըն էր, որ իւրովի բան մը կարգադրելու միջոց չունէր, և Լուսինեան գերդաստանին սփոփող Պետրոս թագաւորին պարտաւոր էր անսալ: Դարդէլի տուած մանրամասնութիւններէն այնպէս կ'երեւի, թէ Պետրոս ընտրեն պոպն ու եղայց Իշխանն Լեւոն, պահեաց զինքնեան, և ու եհան ի վէր (ԴԱՐ. 60), որով Լեւոն տեղեկութիւն ունեցած չըլլար իրեն մասին եղած կարգադրութենէն, բայց եթէ գիտցած ալ ըլլար, հաւանեցնել զսա եղանակ չունէր:

1325. Կոստանդին Հեթումեան թէեւ յաջողեցաւ 10 տարի արքունական գահը պահել, դժուարին և աղետալից միջոցի մէջ, սակայն պատմական յիշատակներ չեն նէրեր իր վրայ գովեստի և գնահատումի նպաստաւոր կարծիք մը կազմել: Իրաւ գրե-

խաւորապէս Դարդէլն է այդ յիշատակներուն աղբիւրը, որ երկու նզովեցիներն ալ իբր բռնաւորներ և լուսինանց իրաւունքը բրտաբարողներ կը նկատէ, և այդ տեսութեամբ զանոնք դասով և աղտեղել կ'աշխատի, սակայն պարզ իրողութիւններն՝ ալ անկաշկանդ միտքով զննուած առնն, կոստանդին Հեթումեանի համար նպաստաւոր եզրակացութեան չեն տանիր։ Կիլիկիոյ թագաւորութեան սահմաններուն ամփոփուիլը, որ իր նախորդին օրով սկսաւ, տակաւ կը յառաջէր, այնպէս որ գրեթէ Սիսի չրջանակին մէջ կը պարփակուէր՝ երբեմն Կիլիկիայէ դուրս Փոքր Ասիոյ և Ասորիքի մէջ տարածուած թագաւորութիւնը։ Կոստանդին արեւմուտքի Լատիններէն յոյսը կտրելով անոնց չմօտենար, բայց բոլոր յոյսը կը կեդրոնացնէ Կիպրոսի Լուսինեաններուն վրայ, և կաշառքի միջոցներով և ճորտութեան մօտիկ քննութիւններով անոր պաշտպանութիւնը կ'ապահովէ, մինչեւ իսկ յայտարարելով չէ հաճեցած ընդունել ընա և ընծաներ նորա և ընկեր նորա զանձնայն (ԴԱՐ. 59)։ Կոստանդինի փարթամութեան ծագումն ալ կը մեղադրուի, որովհետեւ զայն կոպեծել էր կեղեքելով ենթակաները և յափշտակելով զինչ ժողովրդեան (ԴԱՐ. 60)։ Հայատակները իրմէ դժգոհ, ձեռքէն ազատելու համար, 1368'ին նոյն իսկ Պետրոսը հրաւիրեցին Հայոց թագաւորութիւնը իրենին կցելու (ՍԻՍ. 560), սակայն Պետրոս հարկ չեհասաւ անմիջապէս գրաւելու փութալ, զի գերիչխանի դերքը կը վայելէր Կոստանդինի վրայ, և քիչ ետքն ալ, 1361'ին, Կիպրոսի աւազանին սպանուեցաւ (ԴԱՐ. 60), որովհետեւ ինքն ալ իր իշխանութեան մէջ ոչ նուազ անտանելի էր, քան իր պաշտպանեալ Կոստանդինը։ Պետրոս Ա'ի յաջորդ հռչակուեցաւ որդին Պետրոս Բ, տակաւին 9 տարեկան, իր հօրեղբօր Յովհաննէս Լուսինեանի խնամակալութեան ներքեւ։ Ասոր ձեռքն անցաւ Ուրբանոս պապին Լեւոնի համար տուած կոնդակը, այլ Կոստանդին փութայ Յովհաննէսն ալ վաստկիլ սպրդելով պոչիցս ձեռն ձեռն և ընծայ, ու կոնդակը նորին պահուեցաւ ու ծածկուեցաւ, և Յովհաննէս ոչ ենթն է վէր ղրկեցաւն (ԴԱՐ. 60)։ Կոստանդին Սիսի մէջ իր հարստութիւններով մեկուկէ հանդարտ չէր, զի եգիպտացիք չուրջը պատած կ'ուզէին որոշիչ հարուածը տալ, և Ասիոյ քրիստոնեայ իշխանութեանց վերջին մեծցորդը բնաջինջ ընել։ Յարձակումները նորոյժ առին Պետրոս Ա'ի մահուընէ ետքը, ուսկից կ'ակնածէին եգիպտացիք, քանի մը անգամ հարուածուած ըլլալով՝ անոր նաւատին յարձակումներէն։ Մօչքիմուր Հալէպի ամիրան և Մանչակ Տարսոնի ամիրան չարունակ կը նեղէին Սիս քաղաքը պաշարմամբ և չրջակաները ասպատակով, մինչեւ իսկ Սիսը այրելով (ՍԻՍ. 226), բայց Կոստանդինի բախտէն արիասիրտ հրամանատար մը կար իրեն մօտ, որ քանիցս կը յաղթէր թշնամիները ցրուել։ Լիպարիտ անունով կը յիշուի այն, որդի Թորոս մարաջախտի, և եղբայր Վասիլի (ՍԻՍ. 542), որ աւելի ետքը պիտի յիշուի։ Սակայն վերջապէս Լիպարիտ ալ ինկաւ կոտորածի համար առջեւ քաշուած, և իրենները կամ կամ ակամայ իրմէ հեռացած մէկ պահուն։ Լիպարիտի անունը մինչեւ յետին ժամանակներ հռչակուած էր Սսեցւոց մէջ, և ժողովրդական երգերու նիւթ եղած (ՍԻՍ. 227)։ Անոր տեղ անցաւ Հեթում մը, որ քաղուածեան մանաւոր գործեր ալ կատարեց եգիպտացւոց դէմ, սակայն այն ալ Գրիգոր մատնիչէ մը սպանուեցաւ, և իր կինը Զարմանուհի լեռներ քաշուելով պատերազմիկ խումբի մը գլուխ կանգնեցաւ (ՍԻՍ. 184)։ Բայց այս ամէն վերջին ճգնաժամի քաղուածիններ, չէին կրնար Սիսի վտանգալից վիճակին արմատական դարման ըլլալ։

1326. Այդ խառնակ կացութեան մէջ Մխոպ կաթողիկոսի անունը չյիշուիր, և ոչ ալ կրօնական խնդիրներու յիշատակութիւններ կ'ըլլան։ Արեւմուտքի հետ ընդունած յարաբերութիւնները հարկաւ առիթ չէին տար նկեղեցական պահանջներ առաջարկելու, և փոխադարձ բացատրութիւններ կրկնելու, ինչ որ Մխիթարի օրերուն նկարագիրն էր եղած։ Մխոպ, որ համարձակութիւնը ունեցած էր մինչեւ իսկ Սսոյ և Աստանայի ժողովները որոշումները նոր ժողովով չնջել (§

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՐՁՈՒԱԾՆԵՐ

1322), հայադաւան և հայածէս ուղղութիւնը ամրապնդելու կ'աշխատէր, և այդ մասին իրեն օգնական ունէր Թագաւորն ալ։ Կոստանդին Հերթումեան թէ անձնական և թէ քաղաքական տեսակէտներէն պէտք էր որ կաթողիկոսին ուղղութիւնը հովանաւորէր, որովհետեւ պարտաւոր էր Լուսինեանց ազգատոհմին հետ մաքառիլ իր թագաւորութիւնը ապահովելու համար, և լատինականութեան զօրանալը Լուսինեանց և Լուսինեան կուսակցութեան կը նպաստէր։ Այդ մասին Թագաւոր և կաթողիկոս իրարու համամիտ և գործակից էին, բայց չենք ուզեր այդ գործակցութիւնը Կոստանդինի անտեղի գործերուն վրայ ալ տարածել։ Մեսրոպի ընթացքը խոհական անձի մը նկարագիրը կ'ընծայէ մեր աչքին, և չենք կարծեր թէ ստորնութեանց ալ զիջած ըլլայ· միայն թէ գէշ ազէկ, վերջապէս Հայ Թագաւոր մըն էր Կոստանդին, որ Հայ Թագաւորութեան համար կ'աշխատէր թէ ոչ անձամբ, գոնէ իր զօրավարներով, և Մեսրոպի ներեալ չէր անոր ընդդիմանալ, կամ զայն տկարացնել։ Բայց լատինասէրներու կամ Լուսինեան կուսակիցներու հետքը չնկուած չէր Սիսի մէջ, միայն թէ աւելի քաղաքական նպատակներու կը ծառայէին, և տիրող ուղղութեան դէմ մաքառելու չափ զօրաւոր չէին, և պէտք կը զգային տեղէ մը օգնութիւն գտնել։ Մասիմամ Թագուհի՝ Կոստանդին Բաղդինեանի այրին, որ Օշին խնամակալին Ծովհաննայէ ունեցած դուստրն էր (§ 1311), աւելի իր ազգատոհմէն քան իր ամուսնոյն ուղղութենէն ներշնչուելով (§ 1323), լատինասէրներուն գլուխն էր անցած, և 1271'ին յատուկ դեսպանութիւն մը կը ղրկէր Արեւմուտք, Սսոյ արքեպիսկոպոս Ծովհաննէսէ և Թարգման Մանուէլ Ծովհաննէսեանէ բաղկացած, որպէս զի թէ իր ազգականներուն և թէ պապին մտադրութիւնը հրաւիրէ կիլիկիոյ գործերուն վրայ։ Գրիգոր ԺԱ պապ, որ տարի առաջ յաջորդած էր՝ Ուրբանոս Ե'ի, և պապական աթոռը նորէն Հռոմ փոխադրած էր, խորհուրդ կու տար 1372 յունուար 22'ի նամակով, Մարիամ այրի Թագուհին՝ Պրունզուիքի Ոթոն (Otton de Brunswick) իշխանին հետ ամուսնացնելով, Կիլիկիոյ Թագաւորութիւնը զօրացնել։ Առաջարկը տեղի չունեցաւ, բայց Լուսինեանց կողմը աւելի հանարձակութիւն ստացաւ՝ իրենց մասին մտադրութիւն դարձուած տեսնելով։

ՄԵՍՐՈՊԻ ՄԱՀԸ

1327. Չենք գիտեր թէ ինչ դեր կը վարէր Մեսրոպ կաթողիկոս այդ պարագային մէջ, բայց Լուսինեանց նպաստաւոր եղած չերեւիր։ Արդէն ալ յիշեալ 1372 տարին իր մահուանն ալ թուականն է։ Իսկ Երեւանեցիին 1384 թուական ցուցնելը, ինչպէս նաեւ Մեսրոպի 26 տարի պաշտօնավարութիւն տալը (ՋԱՄ· 17)[1] Անեցիին չարունակողին չիմթ տեղեկութենէն (ՍԱՄ· 169) ծագում առած կ'երեւի։ Մահուան օրն ու ամսաթիւը նշանակուած չունինք, բայց ամենայն հաւանականութեամբ նա չէ հասած նոր առաջարկէն տեղեկութիւն ունենալ, կամ այդ մասին բան մը ընել։ Մեսրոպի պաշտօնավարութեան մէջ, քաղաքական տեսակէտէն մեծ գործունէութիւն չենք գտներ, բայց չենք կրնար ալ մեղադրել, զի պարագաներ ու միջոցներ ձեռնտու չէին։ Իսկ կրօնական տեսակէտէն արդիւնաւոր պէտք է ճանչցուի, իր նախորդներուն լատինամոլ ուղղութիւնը կասեցնելովը, որով թէ հայադաւան և հայածէս դրութիւնը ամրապնդելու, և թէ ապագային առաւելագոյն վտանգի մը առջեւն առնելու պատճառ եղաւ։

ՄԵՍՐՈՊԻ ՕՐՈՎ

1328. Ընդհանրական գործունէութիւնը իր օրով չկրցաւ Կիլիկիոյ մէջ ընդարձակուիլ, գոնանալով հետզհետէ զօրացնել այն դիրքը զոր Ջահկեցի եղբայրներ՝ Թովմաս և Սամուէլ ձեռնարկած էին հաստատել Ակներ-Լեան դաւանութեան մէջ, և արդէն հարիւրի չափ միաբաններ ունէին Լօբը վանքերու մէջ (ՍԻՆ· 389)։ Մեսրոպի օրով մեծագոյն վտանգ մը անցուց Երուսաղէմի աթոռը։ Պետրոս Ա. Կիպրոսի Թագաւորը, Արեւմտեան ազգերու ձեռնտուութեամբ չորս արշաւանք մը ըրած էր 1365'ին Եգիպտոսի վրայ և հոկտեմբեր 10'ին Աղէքսանդրիա քաղաքը գրաւած (ՍԻՍ· 560), մեծամեծ ջնաններ

և կոտորածներ հասցնելով քնակիչներուն, և իրր թէ մինչեւ Եդեսիա հալածել չէն էրէլ տանելով (ՍԱՄ. 170)։ Եգիպտացիք ձախողութեան հակահարուածը հասուցին Պաղեստինի քրիստոնէից վրայ, սաստիկ հալածանք մը հանելով, եկեղեցիները վաճկելով, կրօնափոխութեան բռնադատելով, և շատեր մահուան դատապարտելով։ Ս. Յարութեան տաճարն ալ փակ մնացած է 4 տարի, և Ս. Յակոբայ Հայ միաբանութիւնը երկու անգամ խմբովին Գաղա տարուած է դատուելու համար։ Մկրտիչ պատրիարք զանազան տանջանքներով և ծանր չղթաներով չարչարուած է, Գրիգոր և Կիրակոս արեղաներ բազմիւ հարուածներու ներքեւ նահատակուած էն ; Մխիթար Րէյիզ և միաբան մը Եգիպտոսի մէջ սպանուած են, և ուրիշ շատեր ալ մարտիրոսութեամբ վրկայած են, այդ չորս տարիներու ընթացքին (ԱՍՏ. Ա. 212), մինչեւ որ հալածանքը դադրեցաւ, և Մկրտիչ իւր պաշտօնը չարունակեց մինչեւ 1381 (ԲԱՌ. 46)։ Աղքատարի աթոռն ալ նախանձելի վիճակ մը չունէր, թէպէտ յատկապէս հալածեալ ալ չէր։ Քանի մը հազիւ անունով ծանօթ կաթողիկոսներէ ետք, աթոռի վրայ կը գըտնուէր Ներսէս Ա. Փոլատ, որուն օրով հազիւ 15 միաբաններ կը գտնուէին աթոռը, գրեթէ անբնակ մնացած, ինչպէս յիշատակարան մը կը գրէ, թէ «Լ ԺողովրԷնէն առնուն և ալ յայլոց, այլ գԷթ Է»ս գիւրթանցն այլոց գան, և քաղաք աչխարհիս և ընչաբանիս ընծայեալ կԷրևէին պարտական (ՕՕ. ԲԻԶ. 1194)։ Ներսէսի կաթողիկոսութիւնը տեւած է մինչեւ 1378, և իրեն յաջորդած է Զաքարիա մարտիրոսը, որուն վրայ իւր կարգին պիտի խօսինք։ Մէկ խօսքով՝ խեղճութիւն և տառապանաց չղթան մըն էր որ կը բոլորուէր ամէն կողմ։

Տ. ԿՈՍՏԱՆԴԻՆ Ե. ՍՍԵՑԻ

1329. Մեսրոպի յաջորդին ընտրութիւնը չէր կրնար շատ հանդիսական և կանոնական ձեւերով կատարուիլ, նկատելով այն տագնապալից կացութիւնը որ կը տիրէր, և երբ Սիս քաղաք հազիւ թէ կրնար դուրսերուն հետ յարաբերութիւն պահել։ Կոստանդին Հերձումեան ալ բռնական և բռնապետական իշխանութիւն կը վարէր, և կրնար իւր կամքով գործը վերջացնել, և առձեռն պատրաստ մէկ մը՝ անմիջապէս կաթողիկոս օծել տալ, աթոռը պարապ չթողուլ և կաթողիկոսական ազդեցութիւնը չկորսնցնելու համար։ Կոստանդինի նախընթացին վրայ որեւէ տեղեկութիւն տրուած չլինելով, իրաւունք կը կարծենք ունենալ, նոյնացնելով զայն Կոստանդին Լսիսկոպոսին հետ, որ յիշուած է Մխիթարի ժողովին ներկայ ներսուն մէջ, անթեմ կամ դրան եպիսկոպոսներու կարգին (§ 1291), և այդ հիմամբ կը պատչաճեցնենք իրեն Սսեցի մակդիրը։

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ

Մեր կազմած մերձեցումին կը նպաստէն Կոստանդինի Սսոյ մէջ գտնուիլը, երբ յարաբերութիւնները դժուարացած էին, և անոր չատ հակիրճ պաշտօնավարութիւնը, հազիւ երկու տարի, որ ծեր ըլլալուն նշան մըն է, ինչպէս պէտք էր ըլլար 1342'է առաջ եպիսկոպոս գտնուող մէկ մը։ Կոստանդինի ուղղութեան և ընթացքին վրայ ալ շատ ըսելիք չունինք, զայն իրարու Մխիթարի նախկին գործակից մը նկատելով, կրնանք ըսել թէ Արեւմուտքի օգնութեան հետամուտ, և բոլոր յոյսը Արեւմուտքի վրայ դնող մըն էր, և այս տեսակէտէն Լուսինեանց ալ համակիր։

1330. Նշանակելի է Կոստանդինի կաթողիկոսութեան սկիզբները Լուսինեան կուսակցութեան աւելի ամուր գտնելը, Կոստանդին Հերձումեանը աթոռունական գահէն վար առնելու, և Լեւոն Ջիւանեանը անոր տեղ թագաւորեցնելու գաղափարը յղանա-

ԼԵՒՈՆԻ ՀՐԱՒԷՐ

լու չափ։ Այս միաքով պատգամաւորու-
թիւն մըն ալ ղրկուեցաւ Կիպրոս, յանուն
ազգին ներսում ալ հայցելով Գուիտոնի և
Պէմունդի և Լատին ասպետներուն սպա-
նութեան համար, սակայն Լեւոն իսկեւիսկ
չհամակերպեցաւ, և չուզից առանց իւր տր-
քամադրութեան ներքեւ զօրաւոր գունդ մը
ունենալու կիլիկիա անցնիլ, և Հայ իշխան-
ներուն և գունդերուն ազդեցութեան ներ-
քեւ մտնել։ Իւր խոստովանահայր պատ-
միչն ալ կը վկայէ, թէ կը վախնար որ
«լեռնէին ընե Հայ ընդ յեռամբ իւրեանց, վ-
ջեալ ըստ նմա անյանց» (ԴԱՐ. 67)։ Այդ մտա-
ծութեանց մէջ, որոշակի կը տեսնուի կրօ-
նական խնդիրին ալ նկատի առնուած լինե-
լը։ Ներելի կոստանդիններու օրով հռոմէա-
կանութեան հակումը չատ տկարացած էր,
մինչ Լեւոն՝ Ջերմեռանդ հռոմէադաւան մը,
կ'ուզէր Հայերը իւր ուղղութեան տիպն-
լաս. չափ ոյժ ունենալ։

1331. Պարագաները չուտով ծանրա-
ցան և խնդիրին լուծումը գահավիժեցին։

ՀԵԹՈՒՄԵԱՆ
ՍՊԱՆՈՒԱՄ

Մանչակ ամիրայ Տարսոնի՝ նոր ասպատակ մը հանեց Սսոյ կողմերը, և քաղաքն ալ նեղի դրաւ։ Կոստան-
դին Հեթումեան բոլորովին յուսահատ և իւր կեանքին վրայ վախցող, մտածից հա-
րստութիւնները մէկտեղ առնելով խոյս տալ, և Սիսէ փախչելով Կիպրոս ապաւի-
նել, բայց այս խորհուրդին գործադրու-
թիւնը անհնար գտաւ, որովհետեւ Սիսէ
դէպի ծովեզերք ամէն տեղեր Եգիպտացի-
ներէն գրաւուած էին և անվտանգ անցնիլ
յուսալի չէր։ Այն ատեն մտածից թշնամիին
հետ համաձայնութեան մտնել, Սիսը կամ
կիլիկիան անոր յանձնել, միայն թէ իւր
կեանքը ապահովուի, և իրեն ներում կիպ-
րոս երթալ իւր հարստութիւններով։ Խոր-
հուրդը յայտնուեցաւ, և գայրոյթը ընդհա-
նուր եղաւ։ Կոստանդին արդէն իւր բրո-
նութիւններով ժողովուրդը զզուեցուցած
էր, մատնութեան յայտնուելովը իրեն պաշա-
պաններն ալ կորնչուց, դաւաճանութիւնը
դաւաճանութեամբ ընկճելու միտքը զօրա-
ցաւ, և Կոստանդին սպանուեցաւ 1373 ապ-
րիլին (ԴԱՐ. 68)։ Լուսինեան կուսակցու-
թեան յաղթանակն էր եղածը, և անիկայ
տիրացաւ կացութեան, և մինչեւ նոր թա-
գաւորի մը հաստատութիւնը Մարիամ թա-
գուհի (§ 1326) խնամակալ կամ թագապահ
հռչակուեցաւ, և իրեն քաղաքական և զին-
ուորական օգնականներ նշանակուեցան
Գուիտոնի եղբօր Պէմունդ կոմսին անհարա-
զատ գաւակը Բարթողիմէոս ասպետ, և Թո-
րոս մարաջախտին որդին Վասիլ զօրավար։
Իսկ թագաւորութեան յաջորդին համար չատ
վարանելու տեղի չէր մնար, Լուսինեան
կուսակցութիւնը արդէն տարի առաջ իւր
ընտրութիւնը ըրած էր (§ 1320), և թա-
գաւորի մահը ապահովցուցած էր արքու-
նական գահը։

1332. Համաձայնութիւնը չուտով գո-
յացաւ, Կոստանդին կաթողիկոս ալ միա-
ցաւ, պաշտօնական գիրեր

ԼԵՒՈՆ
ԹԱԳԱՒՈՐ

պատրաստուեցան և կընքուեցան, և Լեւոն Հա-
մուսի անպուն և երկու Սսեցի տանուտէրներ պատգամաւոր նշա-
նակուեցան՝ Լեւոն Ջիւանեանը կիպրոսէ Սիս առաջնորդելու։ Առնք ներկայացան նախ Պետրոս Բ թագաւորին, որ 13 տարեկան հղած էր, և գործերը կը վարէր իւր հօրեղ-
բօր Անտիոքայ իշխանի անունը կրող Ջով-
հաննէս Լուսինեանի խնամակալութեամբ։ Իսկ Լեւոն Ջիւանեան, արդէն 31 տարեկան հղած, կիպրոսի բանակին մէջ զօրավար մըն էր, և կիպրոսի թագաւորին հաւանու-
թեան հետ օգնութեանն ալ պէտք ունէր, իւր գործը յաջողցնելու համար։ Պատգա-
մաւորութիւնը Լեւոնի ալ ներկայացաւ, և օր հտքը հաւանութեան պատասխան ալ ստացաւ, բայց ոչ նոյնժամայն գործադրու-
թեան, զի կիպրացիք պատերազմի մէջ էին Գենուացւոց դէմ, և Լեւոնի ներկայութիւնը անհրաժեշտ էր կիպրացւոց յաջողութեան համար։ Ուստի թագաւորն ու խնամակալն յայտարարեցին թէ միայն պատերազմին վերջանալէն ետքը Լեւոն կրնայ կիպրոսէ մեկնիլ, և այն ատեն պէտք եղած օգնու-
թիւններն ալ իրեն կը տրուին (ԴԱՐ. 76)։ Լեւոնի յայտարարութեանց մէջ յատկապէս չեչտուած է, է պահպանել Լուսինեան հա-
մոյ պայմանը (ԴԱՐ. 74), այսինքն թէ հռոմէականութիւնը պաշտպանելու համար Հայոց թագաւորութեան յանձնառու կ'ըլ-

լայ, սակայն պատգամաւորներ չատ մտադրութիւն չդարձուցին այդ պայմանին, և յաջորդ կամայ կամս հաւանեցան իրենց խնդրանքին յետաձգման։

ՏԵՂԱԿԱԼՆԵՐՈՒ ԱՏԵՆ

1333. Քանի որ Լեւոն այդ վայրկեանէն պաշտօնապէս Հայոց թագաւոր նշած կը նկատուէր, ինքն որոշ չկց առժամապէս երկիրը կառավարելու սահմանուած մեղակալները, որոնք եղեն դարձեալ կանխաւ նշանակուած խնամակալները, Մարիամ թագուհին և Բարթողիմէոս Լուսինեան ու վասիլ Թորոսեան իշխանները (§ 1331), անոնց վրայ աւելցնելով Ռէմի կոմսուհին՝ Լուսինեան Գէմունդի այրին։ Այս չորսերուն օգնական որուեցան Կոստանդ զինակիր, և Մանուէլ Թարգման, այս վերջինս Իտալիոյ պատգամաւորութենէն (§ 1326) Կիպրոս դարձած։ Միսէ ևկող պատգամաւորները, և յիշեալ զինակիրն ու Թարգմանը Քերինէ նաւահանգիստէն յատուկ նաւով Կոռիկոս անցան, բայց իմանալով որ Սիս քաղաք Հալէպի ամիրայ Պէկ-Թիմուրի կողմէ պաշարուած է, պարտաւորուեցան հանդիպիլ Թոքթոյ հագնիլ և հեռագոս քալելով առանց ճանչցուելու Սիս մտնել։ Պատգամաւորութեան բերած խոստմնալից աւետիսը Սասեցիները ոգեւորեց, Լեւոնի դրօշը ամրոցին վրայ կանգնուեցաւ, ամենքը զինուեցան, և անվհատ յարձակումով պաշարողները ցրուեցին (ԴԱՐ. 80)։ Այդ եղելութենէն ալ որոշ ամսաթիւը նշանակուած չենք գտներ. բայց նկատելով որ Կոստանդին Հեթումեանի սպանութիւնը 1373 ապրիլին էր եղած (ԴԱՐ. 68), մեթձաւորապէս երեք չորս ամսուան ժամանակ հարկ կը զգանք տալ պատմուած եղելութենէն, և 1373 սեպտեմբերին դնել Լեւոնի թագաւորութեան հռչակումը և Պէկ-Թիմուրի պաշարումին ետ մղումը։ Անկէ մինչեւ Լեւոնի անձամբ Սիս հասնելը 10 ամիսներ անցան, բայց որոշակի դիպուած մը կամ նշանակելի եղելութիւն մը պահած չէ պատմութիւնը։ Կ'երեւի թէ ենիչէրիները պահ մը հանդարտեցան վերանալ ձմեռուան պատճառաւ, և Սիսի մէջ ալ ներքին խնդիրները դադրեցան նոր թագաւորին օրէցօր հասնելուն ակնկալութեամբ։ Կոստանդին կաթողիկոսն ալ հանդարտ օրեր անցուց, համակերպելով կատարուած եղելութեանց և առիթ չունենալով նոր խնդիրներ յուզելու՝ իր տարիքին ալ հետեւանօք, ինչպէս հաչուեցինք (§ 1329)։

ԼԵՒՈՆԻ ԳԱԼՈՒՍՏԸ

1334. Անդին՝ Լեւոն Գինուացւոց հետ պատերազմին հետեւանքներով նոր արկածներու հանդիպեցաւ։ Գինուացիք մեծ ոյժերով Ժամագոստա նաւահանգիստը պաշարեցին և գրաւեցին, և Կիպրացիք տեղի տուին։ Պետրոս Ա'ի սպանութեան վրայ քննութիւն բացին, և ուրիշ կասկածաւորներու հետ Լեւոնն ալ բանտարկեցին, որ Պետրոսի այրին Էլէոնորա թագուհւոյն միջնորդութեամբ Գինուացւոց ծովակալին դիմաց ինքզինքը արդարացնելու, Հայոց թագաւորութեան կոչուած, Ուրբանոսի կոնդակով հաստատուած, և մեկնելու վրայ ըլլալն ալ յայտնելով։ Վերջապէս Գինուացիք զիջան, բայց 36,000 կիպրոսի արծաթ դահեկան տուգանք պահանջեցին։ Լեւոնի մայրը Սուլթան տիկին և ամուսինը Մարգարիտ տիկին հաղիւ 6000 դահեկան ճարեցին, ու 30,000'ի փոխարէն Մարգարիտի աւատականն կալուածը հաչուեցին, և այնպէս Լեւոն բանտէն արձակուեցաւ։ Կիպրոսէ Կոռիկոս անցնելու համար ալ Լեւոն պարտաւորուեցաւ Էլէոնորայի թողուլ իր կնոջ Մարգարիտի ուրիշ մէկ կալուածը և երդնուլ թէ Կոռիկոսի բերդաքաղաքը պիտի չմտնէ, և Գինուացի ծովակալին խոստացաւ 10,000 ֆիօրին վճարել իբր վարձ, և 300 տուկատ ևս իր կարասիները գրաւումէ ազատելու համար։ Այդ ամէն գործողութիւններ երկար ամիսներ տեւեցին, և հազիւ 1874'ին զատկին օրը, ապրիլ 2'ին, կրցաւ Լեւոն Կոռիկոս հասնիլ իրեն հետ ունենալով մայրն ու կինը ու հետեւորդները (ԴԱՐ. 89), զորս չէր կրնար այլեւս կիպրոսի մէջ թողուլ։ Կոռիկոս հասնելով, Լեւոն բուն քաղաքը չմտաւ, և փոքրիկ կղզեակին մէջ բնակեցաւ, և որչափ ալ կիլիկիա հասած էր, բայց տակաւին իր թագաւորութեան մէջ չէր, զի Կոռիկոս Կիպրացւոց անցած էր (§ 1323), և այդ միջոցին Գինուացիք կ'իշխէին, ու անկէ մին-

չեւ Միս ուխ օրուան ճանապայէն աւելի էր (ԴԱՐ. 87), և միջանկեալ երկիրն ալ Տարաւոնի ամիրային ձեռքն էր։

1335. Կոստանդին կաթողիկոս հաւատնաբար կրցաւ լսել սպասուած խաղաղորէն կիլիկիա հանդիլը, բայց չկրցաւ զայն տեսնել։ Մահը կանխեց այդ միխիթարութիւնը իրեն ղրկելէ, թէպէտ ինքն ալ մտանակցած էր գործին, և կիպրոս գացող պատգամաւորները յատկապէս կաթողիկոսի անունն ալ յիշած էին, թէ Պետրոսի (ԴԱՐ. 69), և թէ Լեւոնի առջեւ (ԴԱՐ. 70)։ Կոստանդինի կաթողիկոսութիւնը տեւողութեամբ յոյժ համառօտ, կարեւորութեամբ ալ աննշանակ անցաւ, արդիւնաւորութեան հետք մը չենք տեսներ իւր վրան, և միայն տագնապալի և ազգին ճակատագիրին հետ չատ նշանակելի օրերու հետ կապուած կը մնայ իւր անունը, առանց յատուկ նշանակութիւն մը ունենալու, ոչ լաւ և ոչ վատ տեսակէտով։

Տ. ՊՕՂՈՍ Ա. ՍՍԵՑԻ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱԳՈՒՄ

1336. Պօղոսի ընտրութիւնը կատարուեցաւ Լեւոնի Կոռիկոս հասնելէն քիչ առաջ կամ ետքը, խաղաղորէն չորս տեղակալներուն պաշտօնավարութեան միջոցին և առանց աղդեցութեամբ, այլ թէ ո՛վ էր Պօղոս, ինչ էր իր նախընթացը, և ո՛ր արժանիքովը կաթողիկոսութեան բարձրացաւ, մնգի համար մխութեան մէջ կը մնան։ Մնդավայրն ալ կը մնայ անծանօթ, և Սսեցի մակդիր անունը յարմար տեսած ենք իրեն, հայրապետական աթոռանիստ քաղաքէն, և նոյն քաղաքին մէջ գտնուելէն, զի հարկաւ դժուար էր հետուէն կաթողիկոս ընտրել և հաստատել։ Մենք անդրադեձած ենք, իւրաքանչիւր հայրապետի մակդիր անուն մը գործածել, վասն զի կարգի թուահամարը, որով սովոր են յիշուիլ գահակալներ և աթոռակալներ, հին առեններ գործածական չէ եղած, և նորերուն ալ կազմածները իրարու անյարմար են, և հնար չէ իրրև որոշիչ յատկանիչ կամ յատուկ անուն մը ճանչնալ կարգի թուահամարները։ Այսպէս նոյն ինքն Լեւոն Ջիւանեանը, որուն վրայ կը խօսինք, ոմանց համար Լեւոն Ջ է, մինչ ուրիշներէն Լեւոն ե կը կոչուի։ Նոյնպէս իրենց կարգին դիտել տուած ենք Յովհաննէս և Կոստանդին կաթողիկոսներու թուահամարները։ Այս պատճառով պատմութեան մէջ ալ չատ անգամ կիպրոս եղած ատեն ըսած էր, թէ հարկ էր ձալ ամիս չորս է Կոլիկո (ԴԱՐ. 89)։ Այս միտքը թերեւս մեծաւոր ամուսնան համար էր, բայց գարուն նոյն հասած ըլլալով ալ կղզեակին մէջ մնաց, յանդուգն ձեռնարկի մը ծրագիրով, այն է Տարսոնի տիրանալ, ուր միայն 300 զինուորով մտադրութիւն չենք դարձուցած թուահամարով յիշելու մեր կաթողիկոսներն ու թագաւորները։ Պօղոս կաթողիկոս ակնկալութեանց միջոցին պաշտօնի անցաւ՝ կարծելով թերեւս Լեւոնի հանդիլովը վտանգելու թագաւորութեան բախտը լաւին դարձած տեսնել, և յուսալով որ Հայ աղգութիւնն ու Հայ եկեղեցին իրենց վտանգալից տագնապէն ազատելով, պիտի կարենան նորէն կենդանանալ՝ իրենց կատարեալ իսկութեամբ և ապահովեալ ինքնութեամբ։ Պօղոս իւր գործերովը ղգացման և գաղափարի տէր անձ մը կը ներկայանայ, լաւագոյն պարագաներու մէջ արդիւնաւոր գործունէութիւն վարելու կարող։ Դժբախտաբար այնպիսի օրերու մէջ աթոռ բարձրացաւ, որ պարտաւորեցաւ կործանման լրումը տեսնել, և ազգային իշխանութեան և բնիկ թագաւորութեան վերջանալուն ականատես վկան ըլլալ, պաշտօնական դեր ալ վարելու ստիպուած ըլլալով։

1337. Լեւոն Կոռիկոս հասնելուն պէս չիւմպաց ուղեւորիլ դէպի Սիս. արդէն կիպրոս եղած ատեն զրած էր, թէ հարկ էր ձալ ամիս չորս է Կոլիկո (ԴԱՐ. 89)։ Այս միտքը թերեւս մեծաւոր ամուսնան համար էր, բայց գարուն նոյն հասած ըլլալով ալ կղզեակին մէջ մնաց, յանդուգն ձեռնարկի մը ծրագիրով, այն է Տարսոնի տիրանալ, ուր միայն 300 զին-

ուրներ ունէին եպիսկոպոսները, իսկ քահանայքն համբերն էին Հայ Եկեղեցւոյ (ԴԱՐ. 90)։ Հազար հոգիի գումարմը ուզեց կազմել՝ բայց չյաջողեցաւ, Գինուացիներէն նաեւ ուզեց՝ բայց զլացուեցան, իր գաղտնի խորհուրդը Կոսիկոսի բերդակալէն յայտնել՝ որ Տարսոնի ամիրային լուր տուաւ, վերջապէս Կիպրոսէ զինուորներ ուզեց մինչեւ Սիս ընկերանալու համար՝ եւ այս, անգամ ալ ամրաստանուեցաւ թէ Գինուացւոց դէմ Կիպրոս արշաւելու կը պատրաստուի։ Գինուացիք անմիջապէս երկու ցռկանաւ ճանապայ հանեցին Լեւոնը ձերբակալելու եւ ետ բերելու, որով Լեւոնն չարկ եղաւ չսպասել եւ դիմերեսաւոն փախչիլ ու հեռանալ, Կոսիկոսի Հայ եպիսկոպոսին եւ Հայ դպրոցականներուն միջնորդութեամբ, եւ Տարսոն չի հանդիպելու երդումով։ Երկու նաւեր ճարեց, մայրն ու կինը քանի մը հետեւորդներով Կոսիկոսի բերդը գրկեց, անկէ ալ այս ինչ օր՝ այս ինչ տեղ երթալ ու հոն սպասել հրամայեց (ԴԱՐ.97)։ Ինքն ալ դիմերեսան մութին չորս հոգիով նաւ մը մտաւ ու գաղտ մեկնեցաւ, եւ առաւօտուն իր զինակիրն Սոհիէ Թուլկարտ միւս նաւին մէջ մտաւ 25 ազնուաւորներով եւ 25 հնձեալներով, եւ իրարու միացան, Կոսիկոսէ 30 փարսախ հեռու Գոնպասլաս ծոցը (ԴԱՐ.98)։ Աբեւ մանելէն ետքը անկէ մեկնելնուն՝ հնձեալներու եւ ազնուաւորներու եւ երկու ուղեցոյցներու ընկերակցութեամբ, բայց չտապելու համար հետի ազնուաւորները եւս քաղցին մէկ ուղեցոյցով, եւ միւս ուղեցոյցին հետ ու միայն հնձեալներով երթալ սկսան եւ երկար էլլեր առանց իջանելոյ չերվոյ, արշաւասոյր վազքով (ԴԱՐ.99) Սիս հասան 1374 յուլիս 26'ին (ԴԱՐ.112), եւ քաղաքն երեք փարսախ հեռու հանդիպ առին։ Ճանկարծական լուր քաղաքը դղրդեց։ Պօղոս կաթողիկոս, զոր Հայեր անէին էքէր ղլուպ ալեքսին (ԴԱՐ.99), բոլոր եպիսկոպոսներ ու վարդապետներ, եւ քաղաքին ղեմեղ եւ փոռոնէ, ալ եւ կանոյ, եւ քամահրելէն երթալոց պէտք նոսափարեռ դիմաւորելու վազելին, եւ մեծ հանդէսով քաղաք առաջնորդեցին, եւ նորէն ոգեւորուեցան, մինչ բոլորովին չուարած, եւ Լեւոնին գալէն ալ յոյսերնին կտրած, անձնատուր լինելու միտքեր կ'ունենային։ Միւս օրը յուլիս 27'ին հաւատարմութեան երդումը կատարուեցաւ, եւ չորրորդ օրը յուլիս 29'ին, 150 Հայ հեծեալներ ճանապայ ելան Լեւոնի մայրն ու կինը եւ հետերնին բերելու, եւ ողջամբ Սիս հասուցին (ԴԱՐ.102)։ Անկէ ետքը Լեւոնին առաջին գործը եղաւ իր տեղակալներէն հաշիւ առնել, պահանջելով առաջին թագաւորներէն մնացած գանձերը, եւ տեղակալութեան միջոցին գանձուած գումարները։ Բայց ապստամբած քանակը չգանելով սկսաւ նեղել չորս տեղակալները, որ էին Մարիամ ու Ռէմի տիկիններ, եւ Բարթողիմէոս ու Վասիլ իշխաններ։ Անոնք չփոթ պարագաներուն երեսէն մեծամեծ ծախքեր ըրած ըլլալնին պատճառելին, բայց Լեւոն չգոհանալով, խոստովանականները մտցուց գործին մէջ (ԴԱՐ.107), եկեղեցականներն ու աւագանին ժողովի գումարեց, Վասիլ Թոռոսեանն ու Կոստանդին Հեթումեանի այրին բանտարկեց, խիստ հարցափորձի ենթարկեց, բայց նեւթական արդիւնք մը չկրցաւ ձեռք ձգել, եւ իրր ներելով գործը փակեց (ԴԱՐ.111)։

1338. Կարգը եկաւ թագաւորական օծման հանդէսը կատարելու, եւ Հայերը կը պահանջէին, որ նախնի

ՕԾՈՒՄԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ

Թեան համեմատ կաթողիկոսը կատարէ զայն։ Լեւոն բացարձակապէս մերժեց Հայերուն առաջարկը, յայտարարելով թէ ինք հնազանդ էր Եկեղեցւոյն Հռոմայ, և անոր չէր հաւատար, ըլլ պարտ է և չեղ անել, ուստի կը սպասէր թէ չկրնար Հայոց միւռոնով Հայոց կաթողիկոսէն օծուիլ, և այս պատճառով՝ մէկտեղ բերած է Ներքոնի լատին եպիսկոպոսը Փրանկիսկեանց միաբանութենէն, որ և եթէ ընդ ինքն է կիպրոսի գնացքն օրհնութեան. և իրր փաստ կ'ունէցնէր, որ եթէ պապը լսէ որ Հայոց միւռոնով օծուած է, այլ եւս օգնութիւն չղրկէր։ Հայեր չէին կրնար հանդուրժել այդ յայտարարութեանց, ուստի ըրինչէին ընդ այն գի ոչ կարէ պօղիլ ընդ նոցայն օրինի (ԴԱՐ.113)։ Լեւոն տեսնելով որ գործը կրնայ տգեղ հետեւանքի մը յանգիլ, իրրեւ մեծ չնորհ և իրրեւ վերջնական

զիջում հաւանեցաւ, որ Երբրոնի եպիսկոպոսը և Հայոց կաթողիկոսը զատ զատ պատարագեն, և արարողութիւնն ատեն Լատին եպիսկոպոսը աջ կողմը կենալով, նախ օծէ և կարգը լրացնէ, ու վերջէն Հայ կաթողիկոսը ձախ կողմը կենալով ինքն ալ օծումը ընէ։ Երբոր Լեւոն վերջնականապէս պնդեց, թէ այս ձեւէն զատ, այլապէս ոեւնէ չխմիմ քնաւ էրքեւ, Հայերը ստիպուեցան հաւանիլ, բայց չինք կարծեր թէ ետ հոգալ և օրթոդոքսութեամբ, ինչպէս կ'ուզէ հաւատալ Լեւոնի յատին գովաբանը (ԴԱՐ. 114)։ Հանդէսը տեղի ունեցաւ Ս. Սոփիա մայր եկեղեցւոյն մէջ 1374 անպտ. Մրտ 14'ին, Յաչի Վերացման տօնին օրը, այն ալ յատին ծէսով, որովհետեւ օրը Հինգշաբթի եղած է այն տարին և Յաչի Վերացի կիրակին 17'ին կ'իյնար։ Թագադրութիւնը կատարուած է Մարգարիտ թագուհւոյն վրայ ալ հաւատարակէս, իսկ Չորեքշաբթութիւնը եղած է միայն Սոնիկ Դուկաթ և Մատթէոս Շապլ յատին ապականութեան։ Առաջինը մարաջախտ անուանուած և Լեւոնի հօրեղբօր այրին, Ռուբի կոմսուհին հետ ամուսնացած է, և երկրորդը պէսպէս անուանուած ու կոստանդին Հ'Խումհանի այրին հետ ամուսնացած է։ Օծման խնդիրը, եթէ մէկ կողմէն կը յայտնէ Հայ եկեղեցւոյն և Հայ ազգին նկատմամբ Լեւոնի տածած անհնազանդ և անարդարական զգացումները, միւս կողմէն կը հաստատէ թէ կիլիկիոյ Հայութիւնը հռոմէականութեան չէր հետեւած, և կաթողիկոսն ու եկեղեցականութիւնն ալ լատինամոլներ չէին եղած, ինչպէս ոմանք կը սիրեն պնդել։ Նոյն պարագան լուսաւոր կերպով կը մեկնէ այն հակակրութիւնն ու պաղութիւնը, որ այս վայրկեանէն սկսած է ցուցաբերել Հայոց կողմէ Լեւոնին հանդէպ, որովհետեւ Լեւոնի նպատակն եղած է, ոչ թէ Հայոց թագաւորութիւնն ու եկեղեցին պաշտպանել, այլ ինչպէս ինքն իսկ յայտարարած է, եկած է պաշտպան կալ կաթողիկոս հաստատ (ԴԱՐ. 108) հռոմէադաւանութեան տեսակէտով։ Ըստ այսմ եթէ Լեւոնի գալուստը օգուտ մը չունեցաւ Հայոց թագաւորութեան, և եթէ կերպով մը փութացուց անոր վերջնական կործանումը, նորէն լատինութեան խնդիրը պէտք է ճանչնանք իբր անոր պատճառը։

1339. Հայոց թագաւորութեան այս օրերու, կացութիւնը իմանալու համար բաւական լրայ պիտանայ, թէ

ՆՈՐ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ

եպիսկոպոսներ կ'ուսումնասիրեն պնդեր է պրոնոտարիոս Սոյ, թէ Սահմիք 8 տարի իմեր ալ կրնէին սերմանել և հնձել ընդ կրնէին, և այս պատճառով միմեանց հոգոցանէին հոգիս ալ Հայրենեացն ղէհոյս տալէին (ԴԱՐ. 115)։ Լեւոն ալ կ'ուսումնասիրէ պարձակ միաբանութիւնը չանուանակել, բայց Տաճատ զօրավար, Լեւոնի պատգամաւորները կը բանտարկէ, և նպարտեբոս ուսումնասիրէ կ'արձակուի, ինչ որ Դարպէլի պատմելով յուսահատ կնած է Լեւոնին, որ ամանց երկու կողմերու տարբեր բռնութիւններ ընելէն և հակառակութիւնը արծարծելէն։ Իրաւ պատմիչը որոշ վկայութիւն չգտնելով իր կասկածը հաստատելու, բայց անհնար չէ որ Լեւոնի Հայոց դէմ բռնած նախապատրաստութիւնը՝ ոմանց նախանձայոյզ գործողութիւններ պրպտած լրայ։ Լեւոն թագաւորին դուռը յարձակում մը կը կարգադրէ, իբրեւ քանչելին կորած ատոր իրեն խոստումնալից, ինչ որ յաջողութեամբ կը պսակուի, բայց Տաճատ պաշտպանելով կը յաղթահարէ 12,000 հոգւոց բանակով, և երեք ամիս ետքը կը դնէ թագաւորը, մինչեւ որ Լեւոն կը պիջանի տարի վճարել, և Տաճատ պաշտպանութիւնը դիւրացնել (ԴԱՐ. 118)։ Այդ յարձակութիւնէն անցած 1374 անպտ. Մրտ պ' կաւմրի միջոցը. Եւ պիտանի սուլտանը որ միտքը դրեր էր Հայոց թագաւորութիւնը վերջացնել, մանաւանդ Լատինի մը անոր պատճառ անցնելէ յետը, նոր արշաւանք մը կազմակերպեց Ադանայի դէմ զօրավար Տրամանտաստարտիամ, և 15,000 զօրաց բանակով, որ 1375 յունուար 5'ին վերջնական պնդեց պաշարումը, և Ատանայցիներուն նախնիներուն պիտի իրենց խափանեց ամէն յարձակութիւնները։ Ադանայ ալ յանկարծ միշտ մտանութեանց մէջ զգաստանալու իր բարեկամ Հայերուն վրայ, թէ նոր արշաւանքը որոշուած լրայ Գահիրէ, գտնուող Տաճատին Ադանայի նպատակի խնդրանքին վրայ, և Սիսի անոր հասած պէտք

ներուն վրայ, և թէ Լեւոնի կողմէ Ապուպէքրի հետ բանակցութիւն ղրկուող Վահրամ իշխանը, իրեն տրուած հրահանգներուն հակառակ իսօսած ըլլայ։ Որչափ ալ այդ պարագաները միայն կասկածներու վրայ հիմնուելով պատմուած ըլլան, սակայն ակներեւ է Լեւոնի և Սսոյ Հայերուն մէջ աճած հակակրութիւնը։ Տեսանք օծման առթիւ Հայոց զգացումները վիրաւորող ընթացքը, դիւրին է ենթադրել, թէ յաջորդ ամիսներուն մէջ ալ, նորանոր վիրաւորանքի առիթներ տրուած են Լեւոնի կողմէ։ Սիսի բնակիչները կրնային մտածել, թէ ազգային իշխանութեան վերջին մնացորդը, որ այլեւս դուռները փակուած բերդի մը պարիսպներուն մէջ կ'ամփոփուէր, չէր արժեր մոլեռանդ Լատինի մը իրենց ազգութեան և եկեղեցւոյն դէմ արհամարհանքները։ Խնդիրը ոչ եւս վերացական վիճակին մէջ, այլ ծանրացեալ պարագաներուն ներքեւ պէտք է նկատել, երբ կեանքի պարէնին պակասելուն վրայ զգացումի վիրաւորանքներ կ'աւելնային, և երբ Սսոյ բերդաքաղաքը ոչ եւս Հայութեան այլ լատինականութեան ապաստանարան կ'ըմբռնուէր։ Միւս կողմէն դիւրին է համոզուիլ, թէ փանի մը հարիւր տարիներէ իվեր աբեւմտեան քրիստոնէութեան դէմ պատերազմող իսլամական սուլտանութիւնը, ոչ Աչոտի մը յորդորներուն և ոչ վահրամի մը խօսքերուն պէտք ունէր իւր նպատակը յաջողի վարելու համար։

ՀԱՑՈՑ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ

1340. Ապուպէքրի կարգադրած պաշարումը, և պարբերական յարձակումները, տակաւին չկրցին Սսոյ մէջ եղողները, որոնք ինչպէս Դարդել ալ կը խոստովանի (ԴԱՐ. 124), այլ հետզհետէ կրած կորուստնին, և դիմադրութեան միջոցներու նուազութիւնը, պաշտպանութիւնը անհնարութեան հասուցած էին։ Լեւոն հրամայեց որ բոլոր բնակիչները միջնաբերդի մէջ քաշուին, և փաղաքին բնակութեան մասը կրակ տալով աւերել, և ներքինի լատին եպիսկոպոսին ձեռքը աւետարան մը տալով, ամէնքը նորէն երդումնցուց, կաթողիկոսն ու եպիսկոպոսները ու եկեղեցականները ալ միասին, իրեն հաւատարիմ մնալ, և մինչեւ ցմահ պատերազմիլ (ԴԱՐ. 125)։ Դարդէլի պատմելով, կաթողիկոսն ու եպիսկոպոսներ ու իշխաններ կանուխէն գաղտնի յարաբերութեան մէջ էին Հալէպի ամիրայ Մէլէքի ձեռքը անձնատուր ըլլալու, եթէ ինքն անձամբ ներկայանար, և թէ այս պատճառով Մէլէք 15,000'ի նոր բանակով Սիս հասած էր 1375 փետրուար 24'ին (ԴԱՐ. 124)։ Բայց նախնդն Դարդէլ է որ կը վկայէ, թէ փետրուար 25'ին յարձակումը ետ մղողները բերդապահ Հայերն են եղած, Լեւոնի բերած 50 զինուորներուն հետ միասին։ Այս պատերազմին մէջ է որ Լեւոն ծնօտէն վիրաւորուած և երիք ակռայ կորնցուցած է թշնամիներուն վիրպահանէն փրթած երկաթի կտորի հարուածով, և պարտաւորուած է մահիճ իյնալ ներքին աշտարակին մէջ։ Այդ պատերազմին միջոցին պէտք է դնել նաեւ կէզեղակ վարդապետի մը սպանութիւը, որուն համար ըսուած է թէ ֆրոյ աշկէրթ էր (ՍԱՄ. 170), և հարկաւ նշանաւոր անձ մը եղած է, որ անունը աւանդութեամբ պահուեր է։ Յաջորդ օրերուն մէջ Մէլէք չարունակեց յարձակումները առանց վերջնական յաջողութեան, Լեւոնին ալ առաջարկեց անձնատուր ըլլալ և ամենայն պատուով և դիւրութեամբ իւր երկիրը դառնալ իրեն մարդիկներով, կամ եթէ ուզէ, իսլամութիւն ընդունիլ և սպարապետի աստիճանով սուլտանին ծառայութեան մտնել։ Լեւոն մերժեց, բերդապահներն ալ դիմադրութեան քաջալերեց, սակայն ուրիշ դժուարութեանց վրայ, պաշարի նուազութիւն ու սով ալ սկսած էր տիրել բերդին մէջ (ԴԱՐ. 129)։

ԼԱՏԻՆՆԵՐՈՒ ԴԱՒԸ

1341. Ասոր վրայ դիմադրութեան անօգուտ լինելուն Լատիններն ալ համոզուեցան, և գաղտնապէս Մէլէքի լուր հասուցին անձնատուր լինելու պատրաստականութիւննին յայտնելով, մինչեւ իսկ Լեւոնն ալ սպաննելու մտադրութեամբ, եթէ իրենց չհաւանի։ Այդ չարժումին պլուխ եղաւ Մատթէոս Շապղ լատին տապետը։ Դարդէլ կը կարծէ թէ Մատթէոս մոլորեցնողներն եղած էին իւր կինը, Վասիլ Թորոսեան իշխանը և Պօղոս

կաթողիկոսը (ԴԱՐ. 130), բայց նոյն իսկ յուսահատ վիճակը՝ բաւական էր վարձկան ասպետներուն միտքը փոխելու, առանց թէպաղրութեանց պէտք ունենալու։ Մատթէոս կրցաւ իր կողմը յանկուցանել բոլոր Լատիններըը, որոնք ամէն բան կարգադրեցին, ու Մարտ 24'ին աշտարակին վրայ յարձակեցան, զի ոչնչին ըղձայ և ընդդէմն որ էին անյապաղ նորա։ Իրաւ ալ կռուեցան ընդ Ընչնոպահան, բայց այդ միջոցին երկու Հայ և մի Հոռոմ ասպետներ որ Լեւոնի մօտ կը գտնուէին, ըղձալի պարանոցին ընդ ճեղքն է քերդն երկրորդ, և իրենք ալ ետեւէն իջան, իսկ թագուհին և ուրիշներ այն տեղ մնացին, բայց վնաս չկրեցին։ Աշտարակը դիմադարձ Լատիններուն ձեռքը մնացած էր, երբ թագաւորին դէմ փորձը լսուեցաւ, Սսոյ Հայ ժողովուրդը ծանրացաւաւն եղե, և ընդդէմ ընդդէմ պահել Լեւոնի պաշտպանութեան վազեցին, և է նոյն երկրէ ըղձայ յոյժ Հայ է վերայ աշտարակին, բայց չյաջողեցան զայն Լատիններուն ձեռքէն առնել։

1342. Դարձել, որ կ'ուզէր Հայերը մատնիչ ու դաւաճան ցուցնել, իր իսկ վրկայութեամբ կը հերքուի, երբոր ինքն է որ Լատիններու դաւաճանութիւնը և Հայոց հաւատարմութիւնը կը պատմէ։ Լեւոնէ անարգուած և վիրաւորուած Հայերն են, որ նոյն Լեւոնի անձը կը պաշտպանեն իր Լատիններուն դէմ։ Մատթէոս աշտարակէն չուսնով իջած առեն ինկած և մեռած էր, ուրիշ Լատին մը անոր ետեւէն իջնելով Մելէքին ներկայացաւ աշտարակը յանձնել, բայց ամիրան չվստահացաւ զի ալ էին նոյն Հայ ազգ, և քաղաքին ու բերդին բուն տէրը չէին. միայն բերդին մօտեցաւ և տասը հոգի իրենները էն ներս դրկեց, դիտելով աշտարակին մէջ մղուած ընտանի կռիւը։ Այդ միջոցին աշտարակին մէջ մնացած Լեւոնի հաւատարիմներէն ոմանք, նոյն ձեմիչի ծանկէն ուստի Լեւոն փախած էր, չուսնով վեր առին զնոնա և Հայոց անդի, որ պատ կռուէ, որոնք աշտարակին մէջ եղող Լատինները կոտորելով, անոր տիրացան և Լեւոնի դրօշը բարձրացուցին (ԴԱՐ. 137)։ Հայեր այդ կերպով իրենց ուղղութիւնը և քաջութիւնը ցուցնելէ ետքը, լուրջ խորհրդակցութեան նստեցան Պօղոս կաթողիկոսի նախագահութեամբ, ըղձ ոնէն է պատ էսբեանց, կը գրէ Դարդել, և որոշեցին թէ հնար չէր այլեւս դիմադրել ու տոկալ, և թէ անձնատուր լինելէ զատ եղանակ չէր մնացած, ինչ ալ ըլլար Լեւոնի միտքն ու նպատակը, Ըստ այսմ ծանուցին Մելէքի, և միւս առտուն բերդին դուռը խորտակելով, զի բանալին Լեւոնի մօտ կը մնար, կաթողիկոսն և գլխաւոր իշխաններ և եպիսկոպոսներ և քաղաքացիներ Մելէքի ներկայացան և անձնատուր եղան (ԴԱՐ. 140)։

ԼԵՒՈՆ ԱՆՁՆԱՏՈՒՐ

1343. Լեւոն այլեւս մէկը չունէր իրեն հետ, Լատիններ ապստամբած ու սպանուած էին, և Հայեր իրենց որոշումը տուած էին, ուստի պարտաւորուեցաւ Մելէքի առաջարկին համակերպիլ, և կինաց ապահովութեան երդմնագիր առնելով ինքն ալ անձնատուր ըլլալ, ինչպէս որ ըրաւ, ու պատուաւոր և համակիր ընդունելութիւն գտաւ (ԴԱՐ. 143)։ Այդ վերջին եղելութիւններ կատարուեցան 1375 տարւոյ աւագ չարթուան մօտ։ Ծիչատակարան մը ապրիլ 16 ուրբաթ օր կը դնէ, բերդին առումը, որ 1374 սեպտեմբերէն սկսելով պաշարման ներքեւ էր (ՍԻՍ. 228), բայց ապրիլ 16'ը երկուշաբթի էր, իսկ ուրբաթը ապրիլ 20, և գրութեան սքսալանք մը յայտնի կը տեսնուի, և անորոշ կը մնայ Սիսի առնուելուն ճիշդ օրը։ Մեր հաշուով պէտք է աւագ երկուշաբթի ապրիլ 16'ին դնել, զի հարկաւ քանի մը օրեր պէտք էին կարգադրութեանց համար, և միւս կողմէ դիտենք, թէ ճիշդ զատկի օրը, ապրիլ 22'ին։ Մելէք Սիսէ մեկնեցաւ, քաղաքին վրայ իր կողմէ հրամանատար մը թողուով, և իրեն հետ առնելով, Լեւոնը ու թագուհին իրենց զաւակաց հետ, Մարիամ նախկին թագուհին, Սոհիէ Դուլկարտ մարթաղախտ իր Իւմի կնոջ հետ, Պօղոս կաթողիկոսը, և Հայ իշխաններ և գլխաւոր Սսեցիներ, ընդ ամենայն պատ էքբեա տան (ԴԱՐ. 148)։ Ապրիլ 30'ին Հալէպ հասաւ, բայց դուրսը գիշերեց, մայիս 1'ին մեծանդէս մուտք կատարելու համար, և այնպէս

պանները յղից Եգիպտոս, յայողութիւնը ատեստելու, և գիրի բերած անձերուն համար սուլտանին կամքը իմանալու։ Այսպէս փակուեցաւ վերջին Լեւոնի թագաւորութիւնը, որ յուլիսէն ապրիլ հազիւ 9 ամիս տեւողութիւն ունեցաւ, և իրմէն հետ վերջացաւ նաեւ Հայոց ազգային իշխանութեան չարքը։

ՀԱՅԵՐՈՒ ԸՆՔԱՑՔԸ

1344. Ազգային պատմութեան համար նշանաւոր հանգրուան մըն է 1375 թուականը, բայց և եկեղեցական տեսակէտէն ալ իր նշանակութիւնն ունի, քանի որ վերջին հերետիկոսական մեծ շարժումն է։ Լատին կրօնաւոր Ծովհաննէս Դարդէլ, Լեւոնի խոստովանահայրն ու գովաբանը, իրրեւ ժամանակակից և դիտակից վկայ՝ հերետիկոսութեան համար հետեւնակաւոր աղբիւր մըն է, և մենք անոր գրածները քաղեցինք, առանց մտադրութիւն դարձնելու տարբեր պատմութեանց, որոնք յայտնի չէ թէ ուսկից քաղուած են (ԶԱՐ. Գ. 356-362)։ Սակայն չենք կրնար անոր հետեւիլ երբոր պարզ խորհրդածութիւններ ու գնահատումներ կը բացատրէ, որոնց մէջ ազդուած է իր պաշտպանած անձը և իր դաւանած եկեղեցին բարձրացնելու փափաքէն։ Դարդէլի համար Գողս կաթողիկոս մաննիչ ու դաւաճան ու ստրատրուժ անձ մըն է, և բոլոր ձախողութեանց պատճառ է։ Սակայն դժուար չէ Դարդէլի խօսքերուն մէջ տեսնել անոր զայրոյթին բուն պատճառը։ Երբոր կաթողիկոսին անունը տուած առնուը չէ տալով մը կը կրկնէ, Զոր ասէին էբբե- ղտպն ալ խոհէն (ԴԱՐ. 99), կամ Զոր է պոռոէ ասէն էբբե- ղտպ, որպես մե ղբբեալն հայբն (ԴԱՐ. 123), կամ Զոր ասէն է պոպ խոբեանց (ԴԱՐ. 138), նոյնի իսկ կը յայտնէ թէ Գողս հոգեմէականութեան մտքի մէկը չէր, թէ այդ մասին Լեւոնի համամիտ չէր, թէ կրցածին չափ հայադաւան և հայածէս եկեղեցւոյ պաշտպանութեան կ'աշխատէր, և այս բանական էր որ Գողս կաթողիկոս Դարդէլի համակրութիւնը չվայելէր, և սէնն վնասուց պարտական նկատուէր։ Մենք հաճութեամբ կ'արձանագրենք Դարդէլի վկայութիւնը, թէ 1375'ին Հայերը հոգեհաղաւան չեն եղեր, բայց չենք կրնար հաստատել իր տեսութիւնները, երբ նա մոլեռանդ հոգեմէականութեան չէշտեր կ'առնէ։ Ինչպէս Դարդէլ է որ կը վկայէ, թէ Հայեր Լեւոնի անձնական պաշտպանութեանը ձեռնարկեցին զէնքը ձեռքերնին և իրենց կեանքին վտանգով, նոյն իսկ Լեւոնի հետեւորդ դաւաճան Լատիններեան դէմ, որով մարդասիրական ու տիրասիրական պարտք մը զգացին կատարել։ Հնար չէ չտեսնել, որ անչուշտ իրենց կաթողիկոսին, իրենց պապին յորդորներով կը գործէին, ինչ որ Գողսի մեծանձն և վեհոգի զղացումներուն փաստն է։ Լեւոն ինքն ալ Դարդէլի հետ միտք մը կը ներկայանայ, երբոր Հայոց պաշտպանութեան նպատակով Հայոց թագաւորութիւնը կը ստանձնէ, բայց առաջին վայրկեանէն անոնց դաւանութիւնը կ'անարգէ, և հոգեկան հաւատքի պաշտպանութեան նման ըլլալը կը յայտարարէ, Հայոց նուիրապետութիւնը կը նախատէ՝ Լատին հոգիակոսը մը Հայոց հայրապետին նախադասելով, Հայոց սրբութիւնները կ'արհամարհէ Հայոց միւռոնը ընդունիլ չուզելով, և վերջիվերջոյ իրրեւ լոկ արտաքին ձեւականութիւն մը զայն կ'առնէ, պաշտօնական օծումը լատին միւռոնով ստանալէն ետքը։ Իր՝ նպատակներուն սիրելի ըլլալու, և անոնց զղացումները իրեն չանկուցանելու փափաքով իշխանապետ մը, պէտք չէր որ անոնց կրօնական զգացումները չվիրաւորելով, և անոնց նուիրական սկզբունքները անարգելով սկսէր։ Այսու հանդերձ դիւցազնական ըլլալու չափ վեհոգի կը գտնենք մենք Հայոց ընթացքը, և միթենք ներչնչող կաթողիկոսին հոգին, որ Լեւոնի կ'տանքին պաշտպան կը կանգնին իրենց կ'տանքին վտանգով, երբ անոր անձնուէրները կարծուած՝ ազգակից և դաւանակից և չտանակից լատիններն են, որ անոր դէմ կը դաւճանին լրբենի ըմբոստութեամբ։

1345. Նիւթերնիս ամէն կողմէն սպառած ըլլալու համար, քանի մը խօսք ալ քաղաքական տեսակէտէն ասելնենք։ Մեր տեսութեամբ պէտք չէ Հայոց թագաւորութեան կործանումը 1375'ին կատարուած

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

հղելութիւն մը կարծել։ Անիկայ կործանուած էր արդէն, երբոր Նղրկայի կոստանդինեան ներուն օրէն պիտակ անունի մը վերածուած էր, կիլիկիան ամբողջը կորսընցնելով, և միայն Սիս քաղաքի չրջանակին մէջ պարփակուած էր, քաղաքին չրջակայ արտերուն մշակութիւնն ելնելու ապահովութիւն չունենալու չափ։ Անիկայ արդէն վտանգուած էր, երբոր Խաչակիրներու ժամանակէն Արեւմուտքի հետ մտերմանալով Արեւելքի թշնամութիւնը իր վրայ հրաւիրած էր, երբ փոխադարձաբար Արեւելքի հզօր հակառակութեանց դէմ Արեւմուտքի բարեկամական օգնութեանց կը դիմէր, և այդ օգնութիւնը ստանալու համար զաւանական և ծիսական զոհողութեանց լուծին տակ մտնել կը ստիպուէր, իսկ այդ հոգիներու ու սիրտերու վրայ ճնշող լուծը չկարենալով տանիլ՝ արտաքնայարդար ձեւերու կը դիմէր, և միշտ իրեն դիմաց խաբէական խոստումներ, բծախնդիր պատճառաբանութիւններ, անհիմն չմշմշանքներ, ու կեղծուպատիր խօսքեր կը գտնէր։ Այս է բուն պատճառը, որ կիլիկիա հետզհետէ կը տկարանար, կը հիւծէր, կը սպառէր, և անողոքելի կործանման կը դիմէր։ Մարդկային զգացումները անյագուրելի գաղտնիքներ ունին, որ երբ մէկ մը հոգւոյն մը կը մատնուի՝ դժուարաւ կրնայ ինքզինքը թօթափել, և փորձանքէն դուրս ճողոպրիլ։ Նոյնը եղաւ մեր կիլիկիացիներուն ալ։ Լեւոն առաջին թագաւորն և Լամբրոնացի օտարասէր քարոզիչն սկսելով, էջը չիյաուեցաւ հետզհետէ, Եղան զիջողութեանց ճանապարհ ընդլայնողներ, և զան զայն չափաւորելու աշխատողներ, բայց վերջապէս ուղղութիւնը հիմնապէս չփոխուեցաւ, և սկսած ճանապարհը յառաջացաւ, և ինչ որ պիտի բլլար եղաւ, քէպէտեւ երկու ամբողջ դար քաչքչուելով երկարեցաւ։ Ըստ այսմ Սսոյ այրիացուեր քաղաքին բարձունքը, անձուկ բերդի մը մէջ փակուած ափ մը Հայեր, որոնք իրենց օգնութեան հկող Լատիններուն դաւաճանութիւնն ալ ընկճելու կը պարտաւորուէին, անողոքելի հարկը և իսկական իրականութիւնը ճանչցողներ և մտացածին բանաղ-

գուշանքներէ զգուշացողներ էին, երբ կը տեսնէին և կը զգային, թէ բոլոր Մեծ-Հայք ոտնակոխ եղած, Փոքր-Հայք օտարին մատնուած, կիլիկիա արդէն գրաւուած, Սսոյ քաղաքն իսկ ձեռքերնէն ելած տեսին, լերան մը կողքին և կղզիացեալ բլրի մը մէջ փակուածները չէին, որ պիտի կարենային երեք չորս բիւր պաշարողները հալածել, Եգիպտական ընդարձակ և հզօր սուլտանութեան դէմ դնել, և Հայ իշխանութեան ապագան ապահովել։ Քաղաքական և ռազմական ճշմարտութիւններ իրենց անողոք զօրութիւնն ունին, և անոր հպատակեցան Սսոյ բերդին մէջ Մլէհի անձնատուր ըլլալու հարկը զգացողները, Պօղոս կաթողիկոսն ալ պլուխնին։

ԳԵՐԻՆԵՐ ԵՒ ԳԵՐԵԴԱՐՁ

1346. Մայիսր ամբողջ Հալէպի մէջ անցուցին Սիսէ դ՚րի բերուածները, քէպէտ պատուով պահուած և պատշաճապէս կերակրուած (ԴԱՐ. 150), մինչեւ որ Եգիպտոսի սուլտան Շապան էշրէֆէ հրաման եկաւ անոնք իրեն ղրկել։ Յունիս 1՚ին Հալէպէ մեկնեցան, և Յուլիս 9՚ին Գահիրէ հասան, և նորէն վայելչապէս հիւրասիրուեցան, և երկուշաբթի յուլիս 23՚ին սուլտանին առջեւ հանուեցան։ Հանդիսաւոր օրը չորեքշաբթի կը դրէ Դարդել (ԴԱՐ. 151), սակայն տոմարական հաշուով չորեքշաբթին յուլիս 11՚ին կ՚իյնայ, և իրօք յիշատակարան մըն ալ յուլիս 11՚ին կը դնէ անոնց Գահիրէ հանիլը (ԱՍՏ. Ա. 213), և յարմարագոյն կ՚ըլլայ ըստ այսմ ուղղել Դարդէլի տուած ամսաթիւը։ Մլէհ ամիրայ հաւանած էր որ Լեւոն կարենայ երթալ ուր որ ուզէ (ԴԱՐ. 142), և Լեւոն այն աւանն նախապատած էր սուլտանին մօտ երթալ (ԴԱՐ. 146), բայց սուլտանը միայն իր իշխանութեան սահմաններուն մէջ ուզած տեղն ընտրելը ներեց, և նա առաջարկեց Գահիրէ մնալ, և Գահիրէի Հայ պլիսաւորներուն հրաշխաւորութեան ներքեւ ազատ բնակութիւն հաստատեց Գահիրէի մէջ ըստ հաճոյից կամաց իւրոյ, և օրական 60 արծաթ առձիկով (ԴԱՐ. 152)։ Մարգարիտ թագուհին Լեւոնի հետ մնաց իրեն զաւակներով, որք էին Գուիտոն իր առաջին ամուսինէն և Փիլիպա Լեւոնէն։ Իսկ Մա-

բիամ թագուհի, և Ռեմի կոմսուհի և ամուսինը Մոհիէ խնդրելին Երուսաղէմ բնակիլ, և ըստ այնմ գործադրուեցաւ (ԴԱՐ. 153), և մեկնեցան Գահիրէէ օգոստոս 6'ին (ԱՍՏ. Ա. 214), և պատուով ընդունուեցան Մկրտիչ պատրիարքէ։ Բայց Մարիամ երկարակեաց չեզաւ և 1377'ին Երուսաղէմի մէջ վախճանեցաւ (ՍԻՍ. 560), և ըստ աւանդութեան թագուհեցաւ Ս. Յակոբի աթոռանիստ եկեղեցին՝ ընդ սեամբ սոբի պաճարին (ԱՍՏ. Ա. 214)։ Կը մնային կաթողիկոսն ու հայազգի իշխաններ և քաղաքացիներ։ Դարդէլ ընդ ամենայն սքի էքբե տան ըսած էր (ԴԱՐ. 148) Մելէքի Սիսէ Հալէպ տարածները, բայց ուրիշ յիշատակարան մը վերնան և ինն կը դնէ Գահիրէ բերուած Հայերուն թիւը (ԱՍՏ. Ա. 203), և կ'երեւի թէ Դարդէլ միայն չատ մեծերն է յիշած։ Հայեր սուլտանէ խնդրելեցին իրենց տէղերը դառնալու արտօնութիւնը, յանձն առնելով միայ ընդ լծով իշխանութեան նորա, և այս պայմանով արտօնուեցան (ԴԱՐ. 154), և ատենք ալ օգոստոս 6'ին Գահիրէէ մեկնեցան (ԱՍՏ. Ա. 214), և և 1375 տարին չվերջացած Սիս վերադարձան։ Միայն վասիլ Թորոսեան և այլ եւս չորս գլխաւորներ Հայոց մէջէն, մեծամեծ խոստումներէ հրապուրուելով գոչյան է գեն Սաբայինոյ, թէպէտեւ կ'երեւի թէ յետոյ չատ չքախտաւորուեցան (ԴԱՐ. 954)։

ԹԱԳԱՒՈՐԻ ԱՂՕԹՔԸ

1347. Թագաւորի համար հասարակաց աղօթից խնդիր մը կը յիշէ Դարդէլ, նոր մեղադրանք մը աւելցնելու համար կաթողիկոսին դէմ։ Նախ կը յիշէ թէ Հայ քահանայներ սղոցին է սոբի պարբերին և յայլ տղերնա հանապազորեայ վան ընթաւորոյն Հայոց վերծանելոց, և յականէ յանուանէ վան ընթաւորին որ կենդանին է։ Արդ կ'ըսէ, Լեւոնի գերեզմից կաթողիկոսը, տանէ լեռ էր նամակից մարնարնեան ընթաւորին, ու ըրմարնարնեան և անքնարնեան հրամայեց տհանոյեցն Հայոց քենակերոց է Գահիրէ և է Հայաստան, ապառնալիօ քանարբանոց, զի մ' ալեւս սղցնեցին է պարբերի վան Լեւոն ընթաւորի փեռն էրեանց, և մ' յեշեցին զանուն նորս յայլ սրենայն տղերնան, այլ ընդին հոխառին սղցնեցին վան սոբլուն բնակելն։ Եւ կը յաւելու թէ ամուր է Հայոց որ քնակէն է Գահիրէ չհնազանդեցան կաթողիկոսին և չարունակեցին Լեւոնի համար աղօթել (ԴԱՐ. 155)։ Բայց չարամտութիւնը աւելի Դարդէլի սիրտին մէջն է, հռոմէականութեան նպաստաւոր չեղող կաթողիկոսը նախատելու համար, չարամտութեան հետ անգիտութիւնն ալ խառնելով։ Ստոյգ է թէ Հայոց եկեղեցին յականէ յանուանէ կ'աղօթէր Հայոց թագաւորին համար, և հին գրչագիրներ կը ցուցնեն, թէ պատարագի վան խաչերնեան (ԺԱՄ. 575) և ժամերգութեան Առաջաւ (ԺԱՄ. 243) քարոզներուն մէջ, ուր այսօր կը կարդանք վան բարեպաշտ ընթաւորոյ, հին ատեն կ'ըսուէր վան բարեպաշտ ընթաւորին ետոյ այս անուան, և նոյն իսկ անդաստանի օրհնութեանց մէջ, ուր այժմ կը յիշենք ընթաւորութիւն էրեսփոխեցոյ (ԺԱՄ. 266), հին ատեն կ'ըսէին ընթաւորութիւն Հայոց։ Սակայն թագաւորութեան բնաջինջ ըլլալէն, և Հայերուն ստիպեալ օտարազգի իշխանութեան հպատակութեան երդուելնալէն ետք, հնար չէր հին բացատրութիւնները պահել, և Գողոս կաթողիկոս բռնադատեալ պատշաճ փոփոխութիւնը հրամայած է, ճարտար դարձուած մը գործածելով։ Նա չէ հրամայած, վան սոբլուն բարեպաշտ աղօթել, ինչպէս Դարդէլ կը կարծէ, այլ ընթաւորին բառը ընթաւորոյ փոխելով, և Հայոց բառը էրեսփոխեցոյ դարձնելով, խուսափած է ոչքրիստոնեայ վիճապետի անունը ծիսական յիշատակութեան մտցնելէ։ Իսկ էրեսփոխեցոյ յիշատակութեամբ լուսաւորչական Հայերն է իմացած, և ոչ թէ Արեւմտեան թագաւորութիւններէն մէկը կամ միւսը, ինչպէս ոմանք կը սիրեն մեկնել։ Հին ասացուածոց փոփոխուելուն ժամանակը մութ էր մնացած մեր պատմութեանց մէջ, իսկ Դարդէլի ակնարկը զայն ճշդելու կը ծառայէ, և Գողոս կաթողիկոսի ժամանակ եղած ըլլալը կը վկայէ, և անկէ հրամայուած՝ բռնադատեալ պահանջից ներքեւ, և ոչ թէ ըրմարնարնեան և անքնարնեան նպատակով։ Իսկ Գահիրէի Հայերէն ոմանց Լեւոնի համար աղօթելու չարունակելը՝ կաթողիկոսին կամքին դէմ, պաշտօնական չրջանակէ դուրս գործ մը եղած ըլլայ բերեւս, զի այլապէս հնար չէ զայն բացատրել, նոյն իսկ սուլտաններուն

մայրաքաղաքին մէջ և Լեւոնի իրենց մօտ արգելական եղած տանն։

1348. Պօղոս կաթողիկոսի կեանքին և պաշտօնավարութեան մնացած մասին վրայ որոշ տեղեկութիւններ չունինք։ Մահը կը դրուի տարօրինակ յուցականերու մէջ 1377՝ին, բայց չենք գիտեր թէ որ ամսիւրէ քաղուած է։ Անեւցիին չարունակողը 1382՝ին կը գնէ Թէոդորոսի կաթողիկոսութիւնը որ Պօղոսին յաջորդն է, և անոր 9 տարի պաշտօնավարութիւն կու տայ (ՍԱՄ·170), և կը համաձայնի Թէոդորոսի ոսկանութեան 1393 թուականին (ՍԱՄ·172), մինչ 1377՝էն հաշուելով 16 տարի պէտք կ՚ըլլար տալ Թէոդորոսի կաթողիկոսութեան։ Դավրիժեցին ալ միայն 8 տարի կու տայ Թէոդորոսի (ԴԱՎ·336), և այս հաշուով մինչեւ 1385 պէտք կ՚ըլլայ երկարել Պօղոսի կաթողիկոսութիւնը։ Որչափ ալ Անեցիին չարունակողին և Դավրիժեցիին վկայութիւնները վճռական փաստեր չըլլան Պօղոսի կաթողիկոսութեան տեւողութիւնը ճշդելու, սակայն Ջամչեան որոշ վկայութիւն մը չունէր, Պօղոսի ամբողջ միայն է հայրապետութիւն ըլլալը հաստատող (ՋԱՄ·Գ·362), և մենք կը հաւանինք վերոյիշեալ վկայութեանց հետեւիլ, և նոյնիսկ Թէոդորոսի ընծայուած տարիներուն համաձայնութեամբ, Պօղոսի կաթողիկոսութիւնը երկարիլ մինչեւ 1382, ընդամէնը 8 տարի տալով անոր պաշտօնավարութեան։ Բայց երկարելով ալ ուրիշ բան մը չունինք պատմելու։ Պօղոս դերութիւնէն դադնալով նոր կացութեան մը դիմաց կը գտնուէր, և կը պարտաւորուէր Հալէպի ամիրայէն քաշուած Սիսի հրամանատարին իշխանութեան ներքեւ գործել (§ 1342), և նոր կառավարութեան պայմաններուն համակերպիլ։ Իրաւ այլազգիք միշտ հեղգամիտ չէին քրիստոնէից հանդէպ, բայց անգամ մը որ զանոնք ազատ կը թողուին իրենց կրօնքին հետեւիլ, այլեւս մանրամասնութեանց չէին միջամտեր, և ձեւեր ու կերպեր չէին հրամայեր, և այս երեսէն Պօղոս կրնար դիմդին թեթեւացուցած զգալ, Լեւոնի կողմէ եղած կրօնական թելադրութիւնները և պահանջումները դադրած տեսնելով։ Պօղոսի պէտք էր նոր, դրութեան հանգիստ նոր պաշտօնավարութիւն մը կազմակերպել, ինչ չափ ալ աւերակներու վրայ մնացած էր, և անշուշտ իւր հայրապետանոցն ալ քանդուած էր, երբ Լեւոնի հրամանով Սիս հրաձիգ եղաւ, որպէսզի թշնամիին իբր ապաստանարան չծառայէ։ Աւելցնենք թէ Պօղոս ոչ միայն պիտի չանար կրօնական կեդրոնագրութիւններ ընել, այլեւս քաղաքական կացութեան համար ալ օգտակար թելադրութիւններ ընել, և ահա թէ ինչո՞ւ։

1349. Քաղաքական նոր կացութիւնը, պարզ և յստակ կերպով չէր կրնար գծուիլ մէկէն։ Սառյդ է թէ Սիս իւր ամիրան ունեցած էր, բայց նա ժամանակին տիրող դրութեան հանգիստ, ոչ թէ գաւառապետ կառավարիչ մըն էր պարզ պաշտօնէի դերը վարող, այլ իւրովի և լիազօրն իշխանութեամբ երկրին տէրն էր, պարտաւոր ըլլալով միայն գերիշխան սուլտանին տարեկան հարկ մը վճարել, և անոր հրամանին համեմատ իւր գունդովը պատերազմի երթալ, ազատ ըլլալով իւր հայրն ալ արշաւանքներ ընել և աւարտ տանիներ հանել։ Այդ դրութեան մէջ դիւրին էր մանաւանդ անձերու ալ աստ և անդ տեղ տեղեր տպաւինել, և անոնց մէջ և անոնց չափովը որչափ կը զօրէին՝ ազատ իշխանութիւն վարել։ Կիլիկիոյ թագաւորութեան անկումը այդ դիրքը զօրացուց։ Իրաւ թագաւորութիւն չկար, և երկիրը ընդհանրապէս Եգիպտոսի գերիշխանութեան անցած էր, բայց Հայ իշխաններէն որոնք որ կրնային, Տարսոն և Ամանոսի բարձունքներուն վրայ, իրենց համար ամրութիւններ և իշխանութիւններ կազմեցին, սկսելով ու մեծնալով, պղպեղնալով ու ջնջնուելով՝ պարագային համեմատ։ Այդ կացութիւնը երկար տեւեց կիլիկիոյ մէջ, և մինչեւ մեր օրերը հասած Զէյթունի իշխանները, այդ դրութեան մնացորդներն են։ Ընդարձակ և կանոնաւոր պատմութիւն մը կը պակսի, և ցրիւ տեղեկութիւններ մոռացիր ուսումնասիրողի տքնութեանց կը կարօտին կատարեալ պատմութեան վերածուելու համար։ Մենք

պիտի բաւականանք մտադրութիւն հրաւիրելով Անեցիի չարունակողին այն վրիպած մէկ տողին վրայ, որ 1376 թուականին ներքեւ կը գրէ, Կոստանդին սմն թոռոսան և ուրն, (ՍԱՄ·170), միեւնոյն ձեւով, որով անկէ առաջ ալ Կոստանդինը թագաւորները յիշած էր, Կոստանդին սմն երկու, Կոստանդին սմն թանէրկու (ՍԱՄ·169), որով այդ վերջին Կոստանդինն ալ նոյնպէս թագաւոր մը պէտք է իմանալ։ Իրօք ալ Կիլիկեցի ժամանակագիր մը 1424'ին կը գրէ, թէ ետքէն Կոստանդին թոռոսան և ուրն սմ (ՍԻՍ·543), որ ամենայն ճշդութեամբ կը կապուի 1376 թուականին հետ։ Այս երկու վկայութիւններէ իրաւունք կ'ունենանք հետեւցնել, թէ Լեւոնի գերութեամբ՝ թագաւոր անունը Կիլիկիայէ չջնջուեցաւ, և այն մանաւանդ իշխաններուն մէջ, որ աստ և անդ կը տիրէին, գլխաւոր մը կար՝ թէեւ ոչ Սիսի մէջ, որ անոնց վրայ գերիշխան կը նկատուէր, և որ ցրուեալ բնակիչներուն կեդրոնն էր, և թագաւորի անունն ալ կը կրէր։ Նա բաւական զօրութիւն ալ ունեցած պիտի ըլլայ, երբ 1424'ին եգիպտոսի սուլտան մը անձամբ անոր դէմ պատերազմի գալու կը տիպուի, և վերջնական յաղթութիւնը կը տանի (ՍԻՍ·543)։ Մեր տեսութեամբ, Պօղոս կաթողիկոս իր գործունէութիւնն ու մանակցութիւնը ունեցած է այս մասին, բաժանեալ իշխաններու միաբանական կապը պահելով, և պատչաճ խրատներով զիրենք քաջալերելով։ Պօղոս կնքած կ'ըլլայ իր կնիքը բնական մահով, քանի որ տարբեր յիշատակութիւն մը չունինք։ Ինքն կը ներկայանայ զգացման և գաղափարի տէր անձ մը, ամենադժբախտ պարագաներու ներքեւ ապրած, և իր եկեղեցւոյն պաշտպանութեան նախանձախնդիր։

ՈՒՆԻՔՈՐՆԵՐՈՒ ԴԷՄ

1350· Կիլիկիոյ թագաւորութեան մեծ տագնապը և աղետալի արկածը ստիպեց մեզ պահ մը մտադրութիւն վրիպեցնել արեւելեան գաւառները, ուր կրօնական խնդիրներ բուռն յուզմանց պատճառ կ'ըլլային։ Ունիքորներ նոր կազմակերպութեամբ և Արեւմուտքէ ստացուած նպաստներու զօրութեամբ (§ 1318), հետզհետէ աւելի կը տարածուէին ու կը քաջալերուէին, և պարզապէս բռնութեանց և հալածանաց կը յանդրգնէին ազգային եկեղեցւոյն հաւատարիմ Հայերուն դէմ։ Իրենց գլխաւոր զէնքն էր, չարք մը պիտակ հեղինակութիւններով և իմաստակ պատճառաբանութիւններով խիղճերը վրդովել, Հայոց եկեղեցւոյն մէջ պաշտուած խորհուրդները անվաւեր ու չեղեալ նկատել, և հաւատացեալց մկրտութեան և պաշտօնէից ձեռնադրութեան վրայ կասկածներ յարուցանելով, կրկնամկրտութիւններ և կրկնաձեռնադրութիւններ ընել, Հայ եկեղեցիներու և սրբութիւններու նուիրականութիւնը ուրանալ և անարգել, և պարզապէս հայադաւանները անհաւասներու հաւասարել։ Այդ գեղծումները պատմողն ալ իրենց մէջէն է, Մխիթար Ապարանցին, ինքն ալ միեւնոյն անտեղութեանց գործիչ մը (ԶԱՄ·Գ·447)։ Ջահկեցի եղբայրներէն Թովմաս եպիսկոպոսի յաջորդը կը յիշուի Յովհաննէս Դավրիժեցի (ՍԻՆ·388), այլ Սամուէլ գաւառահօր յաջորդը յիշուած չէ, բայց թերեւս է նոյն ինքն կարապետ Ճգագարակեր վարդապետը, որ գործի գլուխ կը գտնուէր ճիշդ այդ միջոցին (ՄՆԻ·37)։ Իսկ Հայոց վարդապետներ, որոնց համար նուիրական էր իրենց հայադաւան ու հայածէս եկեղեցին, և խղճի պարտաւորութիւն կը զգային անոր պաշտպանութեան աշխատիլ, կարեւոր տեսան հակառակորդներուն աղբիւրները ճանչնալ, անոնց լեզուին հմտանալ, անոնց գիրքերուն ծանօթանալ, անոնց պատճառաբանելու ձեւերը որդեգրել, որպէսզի կարենան հաւասար զէնքերով անոնց դէմ պայքարիլ։ Այդ կերպը, ոմանց համար իրերու ազդու միջոց կը ծառայէր իրենց վարդապետութիւնն ու ծէսն ու կանոնները հակառակորդներուն ըրաբանութեանց դէմ պաշտպանելու, բայց ոմանց ալ գայթակղութեան առիթ կ'ըլլար, արուեստակեալ ձեւերէն հրապուրուելով Ունիքորներու կողմը անցնելու, և իրենց օրինակով ժողովրդականներն ալ գայթակղեցնելու։ Երկու կողմերուն մէջ տիրող մրցումը, առիթներ ալ կը ստեղծէր դէմ դէմի գալու, վիճաբանութիւններ վարելու, որոնք արտաքին կռիւ-

ներու և աղետալի երկպառակութիւններու դուռ կը բանային։ Խուսափելով չնչին մանրամասնութիւններ մտնել, կը բաւականանանք յիշել այն երանաչնորհ վարդապետները, որոնք ազգային և օտար ուսմանց զարգացման, և ազգային ուղղափառ եկեղեցւոյն պաշտպանութեան, և հաւատացեալ ժողովրդեան չինութեան աշխատեցան, և ամէն քրտամբ կազմեցին օտարամոլ հոսանքին դէմ, որ կը կարծէր հայադաւան եկեղեցին ընկլուզել, այլ ինքն ակարացաւ ու ետ մղուեցաւ, և Հայ եկեղեցին չարունակեց իր ուղղութեամբ և ուղղափառութեամբ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՐՈՏՆԵՑԻ

1351· Այդ երանաչնորհ խումբին գլուխ ու դասապետ պէտք է ճանչնալ Յովհաննէս Որոտնեցի վարդապետը, ազնուական ազգատոհմէ սերեալ, Իւանէ իշխանին որդին, Մղակ գաւառի Որոտն չրջանակին Վաղանդան գիւղին մէջ ծնած, 764 նաւասարդ 30'ին, այսինքն է 1315 յունուար 29'ին։ Մնծոփեցին՝ Իւանէ իշխանը Վասակ Սիւնիի սերունդէն կը կարծէ (ՄՆ· 15), Տաթեւացին ալ է Հայկեան հռոց նախնական, է Սկօտիոյ ցեղապետ-ընեան սերունդէն կը դնէ (ՍԻՆ· 219), բայց կ'երեւի թէ մերձութեամբ Օրբելեանները հին Սիւնեաց հետ միացուցած են, զի Որոտն չատոնց Օրբելեանց իշխանական կալուած էր եղած, և Իւանէ որդի էր Հասան իշխանի և վախտ տիկնոջ և եղբայր Սարգիս արքեպիսկոպոսի (ՍԻՆ· 217)։ Օրբելեանց տոհմէն գրեթէ անպակաս էին եկեղեցականութեան նուիրեալներ, ինչպէս Ստեփանոս Տարայիճեան (§ 1159) և Յովհաննէս Լիպարիտեան (§ 1188) և վերոյիշեալ Սարգիս արքեպիսկոպոսները։ Նոյն կոչման և նոյն յաջորդութեան սահմանուած կ'երեւի Յովհաննէս Իւանեան, մանկութենէն եկեղեցական ուսմանց նուիրուելով, այլ Տաթեւացիին ըսելը, որ և ղվինէ Սկեւեոց յաջորդեալ, և ոչ պանծացեալ ըստ ոչ ախորժեալ (ՍԻՆ.219), դուշակել կու տայ թէ Որոտնեցին հրաժարած է Սիւնեաց արքեպիսկոպոսութենէ բոլորովին ուսմանց և պայքարի նուիրուելու համար։ Որոտնեցին կախիկ մականուն ալ ունեցած է, իբր թէ նախեալ է ոչէն Աթոռոյ (ՄՆ· 14), կամ թէ է ոչէ չէիոյն նախեալ և նախեալ (ՍԻՆ.219), բայց կը կարծենք թէ յաւէտ նիւթական և արտաքին պատճառ ունեցած է կախիկ կոչումը, թէպէտ մէզի անծանօթ մնացած։ Իսկ անբացատրելի կը գտնենք Ալաթեցիին դրելը, որ և Կախէկ անուն ձննդեան (ՓԻՐ· 36), զի որեւէ յատուկ անունի նմանութիւն չունի։ Որոտնեցին աչակերտած է եսայի Նչեցի վարդապետին՝ Գայլեձորի վանքին մէջ, բայց Տիրատուր վարդապետ մըն ալ կը յիշուի իբրեւ իւր ուսուցիչ (ՄՆԹ· 15)։ Ճառաջադէմ և վարգացուն՝ Նչեցիի աշակերտներուն մէջ՝ յատուկ նպաստակ ըրաւ իրեն այն կողմերը տարածուող Ունիթորներու դէմ մաքառիլ, և այս պատճառով խորին ուսումներու հետեւեցաւ, բայց չկրնար 28 տարի աչակերտած ըլլալ, ինչպէս յիշատակարան մը կը գրէ (ՓԻՐ· 36)։ Կ'երեւի թէ Նչեցիի մահուանէ ետքը (§1275), Որոտնեցիին վիճակեցաւ անոր յաջորդել, թէպետեւ այն ատեն հազիւ 25 տարեկան եղած կ'ըլլայ, բայց թերեւս Նչեցիէն ետքը պահ մը ուրիշ մըն ալ եղաւ Գայլեձորի առաջնորդ։ Որոտնեցիին Գայլեձորի մէջ աչխատած ըլլալը աւագ է, ուսկից փոխադրուեցաւ Տաթեւի ուսումնարանը, և այն տեղէն պայծառացոյց ըղձը Հայոց ըղբաղեալ և տհասնայեալ (ՄՆԹ· 15), հաւատարապէս ոյժ տալով ամէնքի և ամէնացեալ եկեղեցականց դասակարգերուն։

ՍԱՐԳԻՍ ԱՊՐԱԿՈՒՆԵՑԻ

1352· Նչանաւոր եղաւ Սարգիս Ապրակունեցի վարդապետն ալ, Որոտնեցիէ կրտսեր, մինչեւ իսկ Նչեցիի ետքը Որոտնեցիին ալ աչակերտ կարծուած։ Սարգիս հաստատուեցաւ Ապրակունեաց վանքին մէջ, որ չատ մօտ է երնջակի Ս. կարապետ վանքին (ՍԻՆ· 378), Ունիթորներու դէմ բացութեան մէջ, աւելի մօտէն անոնք պիտելու ու անոնց հետ մաքառելու համար։ Կը պատմուի թէ բուռն վէճեր ալ ունեցաւ կարապետ Ճապարակեր ունիթորին հետ։ Անգամ մը որ Ճապարակեր պատրաստութիւններ կ'ընէր Պետրոս Աբապտնացիի պատրաստած Աստուածընեանց և Մարմնընեանց գիրքէն Ապրակունեցիին հարցումներ տալ, ասոր աչակերտներէն մէկը, որ Ունիթորնե-

րու էր աչակերտած, բայց սիրտը հանդարտ չէր, գաղտնի կերպով նոյն պիրքին հայերէնը, զոր Յակոբ Քանեցին էր թարգմանած, Սարգիսի կը բերէ, որպէսզի պատրաստուած գտնուի, և իրօք ալ երկու օր ետքը հարցումի եկող Ունիթորներուն, պիրքին համեմատ կը պատասխանէ Սարգիս և քննութեան եկող Ունիթորները կը զարմացընէ (ՄԵՄ·37)։ Ասոր վրայ նոյն պիրքին վրայէն իրեն աչակերտներուն ալ կը դասախօսէ, բայց Մեծուհեցին կը մեղադրէ անոնք՝ որ Արագոնացիին պիրքը նախադասած են Հայ եկեղեցւոյ ընդունած պիրքերուն, և յանուանէ կը յիշէ Գրիգոր Լուսաւորիչի, Աբահաս Աղվանդրացիի, Գրիգոր Առուսածաբանի, Կիւրեղ Աղեքսանդրացիի, Սեւերիանոս Մլենեցիի, Անաստաս Շիրակացիի, Պօղոս Տարսոնեցիի, Յովհաննէս Օձնեցիի, Սարգիս Հաղբատացիի, Դաւիթ Փիլիսոփայի, Մովսէս Խորենացւոյ, և Առաքել Թարգմանիչի պիրքերը (ՄԵՄ·38)։ Ասոր վրայ, Ապրակունեաց վանքին աչակերտութեան Ունիթորութենէ խնորուելուն պատճառով հարկ եղաւ նոր կարգադրութիւն մը ընել, ինչպէս պիտի յիշենք։

1353· Ուրիշ վարդապետաց խումբ մըն ալ Շամբիձորի վանքին մէջ կը պատրաստուէր միւս Սարգիս վարդապետի ձեռքին տակ սակայն երկու Սարգիսներ աւելի փափաքող էին միաբանելու կէս մը գտնել, և Արեւմտեան ուսումէն օգտուելով Հայութեան իսկութիւնը պահել, բան մը որ անհնար էր յորչափ մոլեգին նախանձայուզութիւն մըն էր Ունիթորներուն նշանաբանը։ Այս

ՄԱՂԱՔԻԱ ՊՐԻՄԵՑԻ

իրականութիւնը լաւ յայտնի էր Որոնեցիին, որ երբեք չմօտեցաւ պիզոզական ձեռնարկներու։ Իրեն աչակերտներուն մէջ կը գտնուէր, իրմէ ալ աւելի նախանձայոյզ մէկը, Մաղաքիա Պրիմեցի վարդապետը։ Ինիկ Պրիմու կաֆա քաղաքէն, և նշանաւոր ազգատոհմի զաւակ, յոյժ ճեռ գան ոբ էր, և մեծ հարստութեան տէր, որ եկեղեցւոյ ծառայելու փափաքով եկած էր աչակերտիլ Որոնեցիին՝ Տաթեւի վանքին մէջ։ Գրեթէ տասնամեայ աշխատութենէ ետքը, ինքն ալ գործի դլուխ եղաւ նախիջեւանի վանքերը ծաղկեցնելու և աչակերտութիւն կազմելու միտքով (ՄԵՄ·15), բայց եղելութիւններէ գինեալ և կշռելէ ետքը, և տեսնելով որ Ունիթորներ վերջացական ուսումներու հետ գործնական միջոցներու և յայտնի բռնութիւններու դիմելէ չեն կասիր, Մաղաքիա ալ որոշեց այդ կերպն ալ ընդունիլ, և արտաքին միջոցներով զօրացնել ուղիղ ուսման հետեւողները, ընկճել հակառակորդները, և քաջալերել հաւատացեալ ժողովուրդը։ Այդ նպատակին յաւակացաւ իր հայրենական մեծագանձ հարստութիւնը եւս և ինչ որ ծանօթներէն և բարեացակամներէն կրնար հաւաքել։ Զեռք առաւ նաեւ տիրող պետութեան պաշտօնեաները՝ որ իր ուղղութեան օգնեն, և սկսաւ բռնութեամբ ալ վանել բռնութիւն գործածողները։ Իսկ ինքն կատարեալ ճգնողական կեանքի հետեւեցաւ, ձգնաւորի կոչումը իրր մականուն ստանալու չափ, և ղեկտի ու ուտեստի ու կենցաղի ամէնէն խստամբեր պայմաններուն ենթարկելով իր անձը (ՄԵՄ·16)։

Տ· ԹԷՈԴՈՐՈՍ Բ· ԿԻԼԻԿԵՑԻ

1354· Հնար է միտքէ անցընել, թէ այն խստնակ ու անկերպարան վիճակի մէջ, որ կը տիրէր Սսոյ հայրապետական աթոռին չուրջը, հնար ըլլար կանոնաւոր ձեւակերպութիւններով կաթողիկոսական ընտրութիւն կատարել, ուստի աւելորդ կը նկատենք որոնել թէ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ինչ կերպով բարձրացաւ Թէոդորոս հայրապետական աթոռը։ Իր նախընթացէն ալ տեղեկութիւն չունինք, և կիլիկեցի մակդիր անուներ տուած ենք իրեն այն ենթադրութեամբ, որ երկրացի մը պէտք է եղած ըլլայ, քանի որ Սիս աւերակ էր այլ եւս։ Անշուշտ ազդեցիկ եպիսկոպոսներէն մին եղած է, թագաւոր կոչուող կոստանդինի պաշտպա-

նութիւնը վայելած է (§ 1369), և Սսոյ ա-
միրային ալ պաշտպանութիւնը ստացած է
անչուշտ այն միջոցներով, որոնք Թուրք
ամիրաներու աչքին նշանակութիւն ունէին։
Ուրիչ հղանակ մը մտածել անհնար է, կըշ-
ռելով պարագաները և բաղդատելով հետ
գնետէ անկումի դիմող աթոռին վիճակը։
Թէոդորոսի աթոռ բարձրանալուն թուակա-
նը, հաւանականագոյն հաշուով դրինք 1382'ին,
և պէտք չենք զգար անգամ մըն ալ կրկնել
մեր տուած բացատրութիւնները (§ 1348)։
Անեցին չարունակողը կը գրէ թէ «էր Թէո-
դորոս ինոց ի Մըզր, և ձեռնադրեալ ընկե-
լոյ ընդ առաքեան Բարխուէն (ՍԱՄ· 170), որ է
Բարկուկ կամ Պարգօն-Տայէր, այն որ ա-
ռաջ լոկ խնամակալ էր։ Դարդէլի պատ-
մութեամբ, Շապան-Էչրէֆ սուլտանին 1377
մարտ 12'ին (ԴԱՐ· 157) ապանուելուն վրայ,
անոր յաջորդած էր որդին Մելէք-Մանսուր
կամ Մանսուր-Ալայէտտին, 7 տարեկան տղայ
մը (ԴԱՐ· 159), իսկ իշխանութիւնը իրարու
ձեռքէն յափշտակած էին ինքնընտիր խնա-
մակալներ, Գարաչ (ԴԱՐ· 159), Էնէրէգ
(ԴԱՐ· 160), Դեհտահուր (ԴԱՐ· 163), Բարկ
(ԴԱՐ· 162), և Բարկուկ, միշտ իրարու խնա-
մակալ առաքեան և պէռռիեան (ԴԱՐ· 181)։
Վերջինիս սուլտանութեան հասնիլը 1382'ին
կը դրուի, և Թէոդորոսի անոր օրով եգիպ-
տոս գալը կը ցուցնէ թէ նոր բարձրացած
էր կաթողիկոսութեան։ Պատմութիւնը բա-
ցատրիկ պատճառ մը չտար այդ այցելու-
թեան, ուստի կը մնայ հետեւցնել, թէ նոր
պաշտօնի անցած ըլլալով, հաստատութիւնն
ընդունելու և տիրապետող սուլտանութեան
պաշտպանութիւնը ստանալու համար կա-
տարուած ուղեւորութիւն մըն էր։ Սոյն այս
պարագայն նոր փաստ մը կ'ըլլայ Պօղոսի
մահը մինչեւ 1382 յետաձգելու (§ 1348), և
նոյն տարին դնելու յաջորդին կաթողիկո-
սութիւնը։

1355· Թէոդորոսի եգիպտոս գացած տարին, Լեւոնի գերութեան վերջանալուն և եգիպտոսէ հեռանալուն

ԼԵՒՈՆԻ ՀԱՄԱՐ ՋԱՆՔԵՐ

թուականն է, այլ չենք կարծեր որ իրարու հանդիպած ըլլան։ Լեւոնի ա-
զատքանդրիայէ մեկնիլը 1382 հոկտեմբեր 7'ին տեղի ունեցաւ, իսկ Թէոդորոս աւելի
ետքը հասած պիտի ըլլայ, զի Լատին պատ-
միչը բնաւ անոր մասին ակնարկ մը չունի։
Լեւոն գրկէթէ մոռցուած մնացած էր Գա-
հիրէի մէջ մինչեւ 1377 տարին, երբ խումբ
մը ազնուական և եկեղեցական Լատին
ուխտաւորներ Երուսաղէմ չգացած Գահիրէ
հանդիպեցան և իրեն հետ տեսակցեցան։
Ասոնց մէջ էր Ծովհաննէս Դարդէլ քահա-
նայ (ԴԱՐ· 158), Փրանկիսկեան միաբան
(ԴԱՐ· 168), բնիկ Գաղղիացի, Եստամպ
(Etampes) քաղաքէ, որ առանձինն մտա-
դրութիւն դարձուց Լեւոնի վրայ։ Յուլիս
20'ին յատուկ պատարագեց Թագուհիին ա-
նունին օրը՝ Ս. Մարգարիտայի տօնին, և
յանձն առաւ իւր մեծաւորէն հաւանութիւն
ստանալով դառնալ և Լեւոնի մօտ մնալ,
իբրեւ խոստովանահայր կամ դրանեռէց, և
այնպէս ալ ըրաւ (ԴԱՐ· 158)։ Սա ինքն է
Դարդէլ պատմիչը, որ ինչպէս կը տեսնուի,
նախընթաց հղելութիւնները իւր հետինա-
կութեամբ պատմած չէ, այլ պարզապէս
Լեւոնի բմբռնումները կրկնած է, որոնք
հարկաւ ինքզինքը արդարացնելու տեսա-
կէտով հաղորդուած էին։ Լեւոն կանխաւ
դիմումներ ըրած էր պապին, Գերմանիոյ և
Ծունաց կայսրներուն, Գաղղիոյ և Նէապոլ-
սոյ և Սպանիոյ թագաւորներուն, բայց ոչ
մէկ կողմէն օգնութիւն չէր տեսած։ Դար-
դէլի գալուստը կարծես թէ բարեգուշակ
հղաւ, զի 1377 օգոստոսին պատգամաւորներ
հասան Եգիպտոս՝ Կիպրոսի թագաւորէն,
Նէապոլսոյ թագուհիէն, և Գուիտոնի Ջա-
պէլ աղջկան միջնորդութեամբ Ծունաց կայս-
րէն, որոնք Լեւոնի ազատութեանը համար
միջնորդեցին, բայց արդիւնք չունեցան, զի
ունայնաձեռն եկած էին, մինչ Սթօկլնոփ
ընկերոջ են ի քեզ, և ալ աբյակեն ի քոյ
օթոթոց, կ'ըսէ Դարդէլ (ԴԱՐ· 155)։ Եգիպ-
տացիք այդ միջնորդութիւնները նախատե-
սելով՝ Լեւոնի ձեռքէն գիր առած էին թէ
ինքն Գահիրէէ հեռանալ չփափաքիր (ԴԱՐ·
156), և անկէ օգտուելցան միջնորդութիւն-
ները մերժելու։ Լեւոն և Դարդէլ պէտք
զգացին պատուիրակ մը ունենալ Եւրոպիոյ
մէջ, որ ազատութեան համար պէտք եղած
միջոցները հոգայ, և այս նպատակով Դար-
դէլ ինքն եգիպտոսէ մեկնեցաւ 1379 սեպ-
տեմբեր 11'ին և 1380 մարտ 5'ին Արագո-

նիայի Պետրոս Դ թագաւորին ներկայացաւ Բարկինոնիա (Barcellona) քաղաքի մէջ, գիրերը յանձնեց և գործը բացատրեց, ինչպէս նաեւ խոստումներ ընդունեցաւ, բայց չկրցաւ Եգիպտացիները համոզելու համար պէտք եղած հարուստ ընծաները ձեռք ձգել։ Այդ պատճառով Դարդէլ կաստիլիա անցաւ, և Յովհաննէս Ա թագաւորին ներկայացաւ 1380 նոյեմբեր 29'ին Մէդինա-կամպօ (Medina del Campo) քաղաքը (ԴԱՐ. 172), և սիրտը չարժելու համար սկսաւ պատմել ընելոբէնա թագուհի և ղէյշա Բեթհոհայն Մոբթոբէթոյ՝ և ղբէոբդին Մոբհամա կամ Փիննայի գոթիք նորա. և ըստ ղէոբդ ղբ ոմնայն բանագոթէին ղնա ոբանալ ղԹբէոթա (ԴԱՐ. 173), թէպէտև Լեւոն որչափ ալ ոբթելէն է Գահիրէ (ԴԱՐ. 163), սակայն նոյն իսկ Դարդէլի վկայութեամբ Գահիրէի մէջ կ'ապրէր շա հաճոյէց կամոյ էոբոյ (ԴԱՐ. 153)։ Իրաւ ալ Դարդէլի գործածած միջոցը իւր օգուտը ունեցաւ և յաղէցան Բոնի ոբէոյէն Կաոթիլէոյ, և խոստացաւ ընել և տալ ինչ որ պէտք ըլլայ (ԴԱՐ. 174)։ Սակայն գործադրութիւնը յապաղեցաւ թէ Կաստիլիոյ արքունիքին մէջ տեղի ունեցած արկածներուն պատճառով, և թէ Հռոմէական եկեղեցւոյ մէջ տիրող մեծ հերձուածին երեսէն, որ յառաջ կու գար Աւինիոնի կղերէն է պապին, և Հռոմի Ուրբանոս Զ պապին իրարու դէմ մղած բուռն պայքարէն։ Դարդէլ բաւական աշխատեցաւ մինչեւ որ ամէն տեսակ դժուարութիւններ յաղթէր, և Կաստիլիոյ թագաւորին ընծաները, և երկու թագաւորներուն գիրերը ձեռք ձգէր, և հազիւ 1382 մայիս 21'ին կրցաւ Սպանիայէ մեկնիլ Եգիպտոս դառնալու համար (ԴԱՐ. 180)։

ԼԵՒՈՆ ԱԶԱՏ

1356։ Յովհաննէս Դարդէլ, և Կաստիլիոյ թագաւորին դիմակիրը, և Արագոնայի թագաւորին պատգամաւորը, միասին Աղէքսանդրիա հասան 1382 օգոստոս 14'ին, անկէ Գահիրէ անցան. և Լեւոնի կարգադրութեամբ բերուած ընծաները մաս մաս ըրին, սուլտանին, Բարկուկին և կարեւոր պաշտօնէից համար։ Սեպտեմբեր 5'ին Բարկուկին ներկայացան, և սեպտեմբեր 18'ին սուլտանին, և ընծաները իրենց արդիւնքն ունեցան, և սեպտեմբեր 30'ին Լեւոնի ազատութեան հրամանը ստացուեցաւ և հանդիսաւոր պատուասիրութիւններ կատարուեցան։ Լեւոն առանց ժամավաճառ ըլլալու ճանապարհութեան պատրաստութեանց ձեռնարկեց, իւր հետեւորդներն ու գերութեան ընկերները փրկանաւորեց նոր ստացած միջոցներով, և սուլտանին սեփական գետանաւով Նեղոսի իվար Գահիրէէն Աղէքսանդրիա հասաւ, և հոկտեմբեր 7'ին առաջին գտած նաւովը Աղէքսանդրիայէ մեկնեցաւ։ Եգիպտական արքունիքի մեծերը մոռցեր էին Լեւոնէ երդում պահանջել նորէն իրենց դէմ չպատերազմելու և չգործելու համար, և ստիպաւ հրովարտակ հանեցին ետ դարձնելու հրամանով, սակայն սուրհանդակը հասաւ առաուն, երբ Լեւոն գիշերուան մէջ արդէն մեկնած էր։ Ասկէ ետքը կը դնէ Դարդէլ Մանսուր սուլտանի սպանութիւնը, և Բարկուկի սուլտան հռչակուիլը (ԴԱՐ. 185)։ Ըստ այմ Լեւոնի մեկնելէն ետքը տեղի ունեցած կ'ըլլայ Թէոդորոս կաթողիկոսի եպիսկոպոս հանդիլը, քանի որ սոլոն Բաբէոն է որ դիմա պոպով ընկալա ին (ՍԱՄ. 170)։ Դարդէլի պատմութեամբ, Լեւոն հոկտեմբեր 7'ին Աղէքսանդրիայէ նաւարկելով հոկտեմբեր 21'ին հասաւ Հռոդոս, և հոն լսեց կիպրոսի Պետրոս Ա թագաւորին հոկտեմբեր 10'ին մեռած ըլլալը։ Պահ մը մտածեց կիպրոս անցնիլ և թագաւորութիւնը ձեռք ձգել իբրեւ Լուսինեան ազգատոհմին երիցագոյնը, բայց Հռոդոսի ասպետները չօգնեցին գինուացւոց հետ չխնամանալու համար։ Ուստի նոյեմբեր 21'ին Հռոդոսէ նաւարկելով դեկտեմբեր 12'ին հասաւ Վենետիկ, և Վենետկեցիք ալ զլացան կիպրոս երթալու համար ուզած նաւերը տալ (ԴԱՐ. 187)։ Մրցակից պապերուն մէջէն, Լեւոն՝ Աւինիոնի պապին կողմը բռնեց, թէպէտ Հռոմի աթոռը մինչեւ այսօր հակապապ կը հռչակէ Աւինիոնի կղեմէս Ե պապը։ Վենետիկէ հիւսիսային Իտալիոյ ճանապով Լեւոն եկաւ Աւինիոն, և իբրեւ ճշմարիտ թագաւոր և իբրեւ հասատոյ խոստովանող մը մեծ պատուով ընդունուեցաւ, և 1383 մարտ 1'ին կղեմէս նուիրեց անոր ղպոսոսկան վոքդն ոսկեղէն,

ՆՈՐ ՎԱՆՔԵՐ

էքէթ-ոն ջոճենթին ալնոսթոռնէ է ըսթա-ոբս (ԴԱՐ.189)։ Լեւոն Եգիպտոսէ եղնելէ ետքը Դարդէլի աչխատութիւնը վարձատրելու համար, անուանած էր զայն ոփենա-բդէբ Հայոց (ԴԱՐ.185), այսինքն՝ իրեն քարտուղար, պասն ալ զայն վարձատրելու համար նշանակեց յեղէոպոսսրնէն էսբսէն Տօրքէթելեայ է ըսթասոբսրնեան Նեապոլէ, թեբեւս Տերլիտիոյ (Terlizzi), զի յիշուած անունով քաղաք չենք գտներ։ Այս առիթիւ Լեւոն ալ Յովհաննէս Դարդէլի տէղ Յովհաննէս կորնէի կրօնաւորը անուանեց ոփենոբդէբ Հայոց (ԴԱՐ.189)։ Յատկապէս մանրամասնեցինք Լեւոնի ազատութիւնը եւ ուղեւորութեանց պարագաները՝ քաղելով Դարդէլի գրածներէն, որ գլխաւոր գործիչն ու Լեւոնի ուղեկիցն էր։ Այս կերպով անհին կը յայտնուին այն պատմութիւնները որոնք Շահան Հայ իշխանի մը աշխատութեանը, եւ Հռոմի Ուրբանոս պապին միջնորդութեան կը վերագրեն Լեւոնի ազատութիւնը։ Թերեւս Շահան կոչուածը չփոխուած ըլլայ նախկին Հայ քահանայ եւ հաւատափոխ Մանուէլի հետ, զոր Դարդէլ տուտ ասպետ եւ խաբեբայ կ'անուանէ, բայց եւ այնպէս պարտաւորուեցաւ միջոց մը իրեն գործակից պահել (ԴԱՐ.179)։ Միեւնոյն պատճառով ալ չկրնար հաստատուիլ Լեւոնի Եգիպտոսէ եղնելէն ետքը երուսաղէմ այցելած, եւ Մարգարիտան ու Փեննան այստեղ թողած ըլլալը (ՉԱՄ.Գ.363), որուն արձագանգ կ'ըլլան երուսաղէմի մէջ ընդունուած զրոյցներն ալ, թէ Լեւոն պատուասիրուած ըլլայ Յովհաննէս Լեհացի պատրիարքին կողմէ, եւ թէ թագուհին ու աղջիկը երուսաղէմ ապրած ու մեռած եւ Ս. Յակոբի մէջ թաղուած ըլլան, Սարգիս Եգիպտացի պատրիարքին օրով 1405'ին (ԲԱՒ.46)։ Ուրիշ մըն ալ Մարգարիտա թագուհին Եգիպտոսի մէջ մեռած եւ Հայոց Ս. Մարիոս եկեղեցւոյն մէջ թաղուած, կը գրէ, 1377'էն քիչ ետքը (ՍԻՍ.560), որ է ըսել Դարդէլի Եգիպտոսէ մեկնելէն առաջ։ Սակայն Դարդէլ այսպիսի բան մը չյիշեր, եւ կաստիլիոյ թագաւորին առջեւ տրքայազուն տիկիններուն նեղութիւնները կը պատմէ (ԴԱՐ.173), որով կը ցուցնէ թէ 1380'ին վերջերը դեռ կենդանի էին։ Բայց միւս կողմէն պէտք է եւս նկատել, թէ Լեւոնի Եգիպտոսէ մեկնելուն առթիւ և՝ մեկնելէն ետքը, Դարդէլ այլեւս թագուհիին և դստեր խօսքը չըներ, ուակից կրնայ հետեւիլ Մարգարիտի 1381'ին վերջերը կամ 1382'ին սկիզբները Եգիպտոսի մէջ մեռած ըլլալուն աւանդութիւնը (ԲԱՒ.147)։

1357. Ուղղամիտ և ուղղափառ վարդապետներու կողմէ Ունիթորներու դէմ բացուած պայքարը պատմած առիթներս (§ 1350), յիշեցինք Ապրակունեաց կամ Երնջակի վանքին մէջ ծագած գայթակղութիւնը, և աչակերտութեան մէջ ծագած չփոթութիւնը (§ 1352), որ նախազգացուած էր Ստեփանոս փակակալ վարդապետէն պեւլէմթ էէլբոյ յոնոբջը եբոլոյ (ՄԱՄ.31)։ Մաղաքիա Ղրիմեցի վարդապետ հազիւ թէ լուր կ'առնէ, տեղւոյն վրայ կը հասնի, և Ապրակունեաց վանքին կացութիւնը ուղղելու համար, անմիջապէս Տաթեւէ հոն կը հրաւիրէ Որոտնեցին, և անոր կը յանձնէ գործը նայիլ և կարգադրել, գինչ ալ է պոբոթեալ էոյնիոլոբնէն ըբոնրնեան պէեթ աշխէբոոց (ՄՆՄ.39)։ Իսկ Սարգիս Ապրակունեցին, որ ուղղութենէ չէր չեղած, բայց յուզումը զըսպելու զօրութիւնը չէր ունեցած, կը փոխադրէ Նախիջեւանի մօտ Աստապատի վանքը, հոն ալ աչակերտութիւն մը պատրաստելու համար։ Ղրիմեցին իւր նիւթական միջոցները երկուքին որամադրութեան տակ կը դնէ, վանքերուն բարեկեցիկ վիճակն ապահովելու համար, և իւր գիտցած արտաքին միջոցներն ալ կը գործածէ՝ դուրսէ ոտնձգութիւնները ու բռնութիւնները զըսպելու։ Այդ կարգադրութեանց թուական կրնանք նշանակել 1380 տարին, կամ քիչ առաջ, Պօղոս կաթողիկոսի վերջին տարիները։ Որոտնեցին ապդու կերպով քննութիւն կատարեց, նշանաց ջոճենայն նոբքոռոբ և աչնորմոհան, և պոռոքեաց է նոցանէ ջոճենայն ըբոնրնեան պէեթ աշխէբոոց։ Ամէնքը հրապարակային հարցափորձի ենթարկեց, և երբ պոբոռոռոբեցան արտաքին պատիժներով ալ իրատեց, ջոճոռ եբէն է քռանթ յեբնիւ հոբեալ, և ջոճոռ քբոռեթ աբոբն (ՄՆՄ.40)։ Որոտնեցիին ըրածը պէտք չէ զար-

մանք պատճառէ, նկատելով ժամանակին սովորութիւնները, և Ունիթորներու կողմէ ձեռք առնուած բռնութիւնները, մանաւանդ որ Որոտնեցին իր ապաչխարութիւն խլատացած է թերութիւնին ճանչցողներուն վրայ, իսկ բաժնուիլ ուզողներ՝ ելած ու մնկնած են ազատօրէն։ Առնց մասին ալ կը գրէ Մխոփնեցին, թէ ամենեւեան պատժեցան, ոմանք փոխոր եղեն, ոմանք խոչտանգեալ մեռան, ոմանք ալ ծանր տուգանքներ կրեցին (ՄՆ· 40)։ Բանի որ իրենց չհնազանդած բանները կը պատմէ Մխոփնեցին, զրոյցներ կրկնած կ'ըլլայ։ Իր բացատրութիւնները վերլուծելով կրնանք ըսել, թէ լատինացնել վարդապետներուն մէջէն չլսախտաւոր խելագարներ ալ եղան, կամ թէ Լատիններուն կասկածաւոր երեւնալով կրակի փորձութեան ալ ենթարկուեցան, հաւատոյքնանական առհաններու սովորական ձեւով։ Այդ անչատուղներուն մէջէն ղէշոցեցի եւս դարձողներ ալ եղած են, ինչպէս յանուն կը յիշուի Աւտո Մոկացի վարդապետ մը, որ դառնալէն ետքը առաջ Երուսաղէմ գացած, և անկէ իր գաւառը եկած է, ուր և ջմբռնուած պոռնկած է ըստ ղէշոց (ՄՆ· 40)։ Ապրակունեաց և Աստապատի վանքերը, երկու նշանաւոր մեծ վարդապետանոցներուն ձեռքին տակ չուտով յառաջացան և փայլեցան՝ Ղրիմեցիին կատարած պահպանութեան և պաշտպանութեան շնորհիւ։ Ամէն կողմէ ուսման ծարաւի, և եկեղեցւոյն հաւատարիմ արեղաներ և քահանաներ և դպիրներ՝ խուռն դիմեցին սոյն վանքերը, և բազմաթիւ աշակերտութիւն մը կազմուեցաւ, որ նոյն իսկ Ունիթորութեան կեդրոնին մէջ ուղղափառութեան համար աշխատեցաւ ու արդիւնաւորուեցաւ, և զօրաւոր թեւմը եղաւ օսմանեան նորութեանց՝ եւս քան զեւս տարածուելուն։ Մաղաքիա Ղրիմեցի, ամէն տեսակ դիւրութիւններ պատրաստեց և զժուարութիւններու յաղթեց, մինչեւ իր կեանքին վերջը, որ զժբախտաբար չատ չուտ վրայ հասաւ։

1358· Քաղաքական կացութիւնը, թէպէտ անկանոն ու բռնապետական իշխանութեանց ներքեւ, փոքր ի չատէ հանդարտած վիճակ մը ունէր, երբ անակնկալ մրրիկի պէս նոր արշաւանք մը հասաւ ընելքէն, որ վերիվայր ԼԷՆԿԹԻՄՈՒՐԻ դարձուց երկրին կացութիւնը, հուր ու սուր, աւերած ու կոտորած սրփռելով ամէն կողմ, և գլխաւորապէս Հայաստան ու Հայաբնակ գաւառները։ Լէնկթիմուրի կամ Կաղ-Թիմուրի կ'ուղղենք ակնարկել, զոր Եւրոպացիք Թամէրլան անունով կը ճանչնան։ Լէնկթիմուր 1335ին Թաթարաց Քէշ քաղաքը ծնած էր, և 1361'ին իր հայրենական երկրին մանաւանդ իշխանութեան անցաւ, և հետզհետէ զայն ընդարձակեց, քաջութեան, բռնութեան և խարդաւանութեան միջոցները անխտիր գործածելով, մինչեւ որ 1370'ին Թաթարաց մեծ խան հռչակուեցաւ։ Իսլամ պետութիւններ կամ սուլտանութիւններ բոլոր Ասիոյ կը տիրէին այն միջոցին, և բաժինները իրարու ձեռքէ կը խլէին։ Մեծ խալիֆա մը կը մնար Պաղտատի մէջ, որ անունէ աւելի ազդեցութիւն չունէր միւս սուլտաններուն վրայ, որոնք կ'իշխէին Պարսկաստան, Աստրպատականի, Միջագետք, Ասորիք, Եգիպտոս, Փոքր Ասիա, Կովկաս, և ամէնուն ձեռքին ներքեւ ալ Հայութեան ցրուելով բաժիններ կը գտնուէին, որոնք ամէն չարժումներուն աղէտները կը կրէին։ Լէնկթիմուր իր ընդհանուր իշխանութեան առաջին տարիներուն մէջ Թաթարներու և Պարսիկներու սահմաններուն մէջ գործեց, և միայն 1380'ին իրեն բանակները ղրկեցին Ասրպատականը և Հայաստանը։ Սուլտանիոյի ամիրան, Էխիլ Հպատակութիւն յայտնեց, և Թաւրիզի ամիրա Ահմէտ հալածելու օգնեց, բայց իբր դաղտնի դաւադիր ամբաստանուելով, պղնձի տանի մէջ եփուելով սպանուեցաւ (ՄՆ· 13)։ Իսկ Թաթար հրոսակը Ասրպատականէ սփռեցաւ վանայ և Կարսի կողմերը, Սիւնիք ալ մտաւ և 12 գաւառները աւերեց ու աւարեց, բայց 1382'ի յունուար 6'ին, Ծայնութեան օրը եկած սաստիկ ձիւնը, հրոսակը ստիպեց ցրուիլ, ու այդ առիթ քաղաքի վերջան է փերոնենե, և ապստամբողները ջարդած տան աւարէն է ետք ընկեցեալ, գնացին յաշխարհն Ասրպատական (ՄՆ· 14)։ Սիւնեաց գաւառներուն արկածները,

անհնար էր որ Ապրակունեաց և Աստապատի վանքերուն ալ աղետալի չըլլային, սակայն յաւտուկ յիշատակութիւն մը չգտնելնուս կը հետեւցնենք, թէ Ղրիմցիին զանգերն ու նպաստները՝ վնասները արգիլեցին կամ դադրմնեցին։

ՂՐՒՄԵՑԻՒ ՄԱՀԸ

1359. Մաղաքիա վարդապետ Ղրիմեցի, հղելութենանց պարագաներէն ստիպուած, և Ունիթորներու չհասատակութիւններէն գրգռուած, խիստ կերպով զանոնք զսպելու կը հետեւէր։ Միաւոմի կը դիտէր աւելի նախանձայոյզ գործիչները և իրր հասարակ խռովարարներ աշխարհական դատարանի առջեւ կը հանէր, ծանր չէր խնայեր, բուռն միջոցներէ չէր քաշուեր, այնպէս որ սարսափ ազդեր էր անհանձ նախանձայոյզներուն վրայ։ Անոնք ալ իրենց կողմէ առելութեան միջոցներու ձեռնարկեցին։ Նախ փորձեցին ամբաստանութիւններ գրկել Հռոմի Ուրբան պապին, որ առանց արեւմտեան հերձուածին զբաղումներուն ալ (§ 1355), դժուար թէ կարենար ազդեցութիւն գործել իրեն չհպատակող Հայերուն վրայ։ Տեսնելով որ Ղրիմեցիին ազդեցութենէն ազատելու կերպ մը չեն գտներ, և իրենց անոր դէմ գործած հակառակութիւնները արդիւնք չեն ունենար, ձեռք առին նոյն իսկ Մաղաքիայի անհամայր եղող կին մը, որ ունիթորութեան աշակերտած էր, և համոզեցին թէ հռոմէական եկեղեցւոյ նուիրական յաջողութիւն պիտի ըլլայ անոր մահը։ Մաղաքիա երկնակի բարեդաչտ գիւղին մէջ, կերակուրի սեղանին վրայ մեռաւ, թեղեւոր եղեալ է առաջնէն էրզ յաղնըմայէ (ՄՆՄ. 16)։ Մխիթար Ապարանցի ջերմ Ունիթոր, որ առաջ Մաղաքիայի աշակերտած էր, կ'ըսէ թէ յանկարծամահ մեռաւ կերակուրի վրայ, և ել համբա ըն Ոնիկոր թեղեալ էին ընա (ՁԱՄ. Գ. 449)։ Մեզի կը թուէ որ սիրող գործիքին Ունիթոր մըն ալ վկայէ, իսկ հերքելու փաստ մը չգուցներ։ Մաղաքիա Ղրիմեցին իր առաւելին մէջ յաւտուկ դէմք մըն է, ազնուականութիւնը և հարստութիւնը ճգնաւորի խստամբերութեան փոխանակող, որ ջահնայն ժամանակ կենաց էրզոյ, հարկաւ եկեղեցական կեանքին մէջ, ձե ալ եղեր և էլեալ ալ էրզ, որ Սարբ Սարգիս փոխն դնել է փո վարդավառին ըսր ալ էրզ, որ է դեղ պահոցն՝ կերակուր է կերակուր դնչ էղելըսր ճաշակեր, որ միշտ տուրյ գերեցել էր, որ տով առաջնոց, վչտա ճիւղերով, պարեել էր ընդարմ էրզ, և այս խստամբեր կեանքը կը վարէր, ոչ թէ անապատ քաշուած ու աշխարհէ հեռացած, այլ աշխարհի ամէնէն բուռն և աստիճ զբաղանքներուն և տաղտուկներուն մէջ։ Իրեն զգացումներն ալ ոչ այնչափ հեզութեան հակամէտ, իշխանական հով մը կը պահէին եկեղեցականութեան ներքեւ ալ, և ան ընդ ակն օրինքին հետեւելով, մոլեռանդ Ունիթորներուն դէմ կը զարձնէր, ինչ որ անոնք ազգային եկեղեցւոյ հաւատացեալներուն դէմ կը գործէին։ Մաղաքիայի մահը ճգնաւորի և մեծ նախանձայոյզի փառքին հետ նահատակի պսակն ալ աւելցուց իր վրայ, դի գոհ գնաց իր անկոպար եկեղեցասիրութեան և ազգային հաւատարմութեան։ Մահը տեղի ունեցաւ 1384 թուականին, իսկ օրը անորոշ է մնացած։ Յովհաննէս վարդապետ և Մատթէոս արքեպ., որ Մաղաքիայի պատանումը կատարած են, ուզած են անոր մարմինին վրայ գտնուղ քուքերը իրր մասունք պահել, բայց Որոտնեցին չէ ներած, և միասին թաղել տուած է Ապրակունեաց վանքին մէջ (ՄՆՄ. 16), որուն մօտ քիչ ետքը ինքն ալ պիտի թաղուէր։

ԴԱՐՁԵԱԼ ԼԷՆԿԹԻՄՈՒՐ

1360. Կրկին անգամ դարձաւ Լէնկթիմուր Հայոց կողմերը, և 1386'ին ներքին գաւառներէն եղնկով, նորէն իջաւ դէպ ի Պարսկաստան և Ատրպատական, անկէց դէպ Սիւնիք, և հեղեղջրէն յառաջացաւ մինչեւ երնջակ, Կարբի, Բջնի, Կողբ, Գառնի, և Սուրմարի (ՍԱՄ. 171) որ Սուրբ-Մարի ալ կըսուած է (ՄՆՄ. 17)։ Այնչափ անաւոր էր արշաւանքին վախը, որ ամէն կողմէ ժողովուրդները լեռներու անառիկ կիրճերը և անմատոյց գագաթները կ'ապաւինէին։ Մարտիոս կողբացի տանուտէր մը, իր երկրացիները Բարդոյ լերան վրայ հանեց, և ապրեցոյց ինձա պարբերաբար և օրհասկնէ ղբրոնիմբ (ՄՆՄ. 18)։ Այդ միջոցին պէտք է դնել Որոտնեցիին ալ Մար գիւղի բարձունքը

ապաւինիլը, այլ ոչ երբէ Որոտնէ (ՍԱՄ· 170), այլ Ապրակունիքէ փախչելով՝ երբեմն Ջակի պաշարման պատճառով (ՄԵՄ· 17)։ Մեծոփեցին կը պատմէ, թէ Կաղզուանու Վարդիկ-Հայր վանքի միաբաններէն երկուքն ալ Գետարգել Ս. Նշանը ազատելու համար գաղտնի կը թաղեն, բայց երկուքին ալ սպանուելովը, տեղը անյայտ կը մնայ, և գտնելու համար եղած ջանքեր և հետազօտութիւններ անպտուղ կը դառնան (ՄԵՄ· 18)։ Միայն թէ 15 տարի ետքը 1401'ին գրուած յիշատակարանի մը մէջ, Յովհաննէս և Թովմաս և կիրակոս աբեղաներ, կը վկայեն թէ վերոյիշեալ ըսածէն նշանն Գետարգել, և թէ յանձնեցին վարդապետիկի Ս. եղիչէի ուխտը, որ է այժմեան Ոստանի Զաղար Ս. Նշանի վանքը (ՓԻՐ· 15)։ Բջնայ մէջ ալ ամբողջին գրաւուելէն ետքը կը նահատակեն տեղւոյն Վանակ (ՁԱՄ· Գ· 422) կամ Վահանան եպիսկոպոսը, որ էր այր խոհեմ և բարեպաշտ, ազնիւ և բնիկ ամենայն ազգէ (ՄԵՄ· 19)։ Լէնկթիմուրի արշաւանքները ոչ միայն աւերած և կոտորած կը սփռէին, այլ հաւատուրացութիւնը իբր ազատութեան պայման առաջարկելով, պատճառ կ'ըլլային որ քաջասէր նահապետներն հետն և պակաս ազնուականներ։ Այս նպատակով իրենց հաւատքին հաստատուն եղողները չորեքշաբթի առաւօտ, աւուր, օրով, ժեղտեմբեր, անպտնելի ըրբրանօք և անբերան բերան (ՄԵՄ· 13), զոր աւելի մանրամասնելով Շահապունեցի յիշատակագիր մը կ'ըսէ· Ոմանք հրով կեսայբեաց փորբելոյ, և այլք ի սովոյ գաղանաբեկ վճռեցան. կեսոյ առաքեալ պետրոսաբաբեղոց գալբելոյ և առհասարակ անձով ընկեցեալ (ՁԱՄ· Գ· 421), իսկ նահատակուողներուն թիւը Բրէտոկ Ասոմոնոյ Ջրոյ գալ է գրելէ ի'ըսէ ժամանակակից պատմիչը (ՄԵՄ· 19)։ Լէնկթիմուր վրաստան ալ կ'արշաւէ, Տփղիսի բնակիչները կը կոտորէ, այնպէս որ պանելն չոլով էր տեղ ըլ պոելու, և Սահմանաց Փիր վարդապետ հարիւր կ'առնուի մահապարտ եղեալ է պանդխտել։ Բազաբատ վրաց թագաւորը, կը կարծէ ընծաներով ազատիլ, այլ հաւատքն ալ վրայ տալու կը հարկադրուի, թէպէտ առ երեսս. սակայն ձմեռը հասած լլլալուն, Լէնկթիմուր ձմեռելու համար Արցախ կը քաշուի, որ է Ղարաբաղ (ՄԵՄ· 20), կամ որ նոյն է նախնի Մուղանու դաշտը (ՍԱՄ· 171), Բազարատն ալ մէկտեղ տանելով։ Իսկ նա կեղծեալ պատրաստականութեամբ, Լէնկթիմուրէ մեծ բանակ մը կ'ուզէ որ անոր հնազանդեցնէ ամբողջ կովկասի ուժը ցեղերը, որ են Վրացի, Աբխազ, Իմէրէլ, Մէկրէլ, Օսէդ, Սօնք, Մեսխ ու Դրալ։ Գունդերը առնելով ճանապայ կ'ելլէ, և գաղտնի իւր Գորգի, Կոստանդին ու Դաւիթ որդիներուն լուր կու տայ պատրաստ գտնուիլ, և իւր ձեռքը եղած բանակը, ի նեղոփոյն և ի կածան փեղիս առաջնորդելով, 12,000 հոգիէ աւելի ջարդել կու տայ, և ինքն ալ լիոնային կողմէր ապաւինելով կ'ազատի (ՄԵՄ· 20)։ Ի քալ փոքոյն՝ յաոաջ ասած ըսպէն, որ 1387'ին ապրիլ 7'ին կը հանդիպէր, Լէնկթիմուր Մուղանէ Սիւնիք կ'իջնայ և անկէ կը դիմէ Հայաստանի հարաւային գաւառները։

ՏՈՒԱՋԱՏԻԿ ՁԵՂԱՒ

1361· Այս տեղ հարեւանցի յիշենք թէ ուղիղ չէ ոմանց 1387 տարին ծառազատիկ կարծելը (ՁԱՄ· Գ· 423), որուն պատճառ եղած է թերեւս վերջին 1292 տարւոյ ծառազատիկէն (§ 1191) 95 տարի հաշուելը, որ է ծառազատիկներու պարբերական չրջանը։ Սակայն այդ պարբերականը հաստատուն չէ, այլ միջոց մը այն կը խախտի նահանջներու յառաջ բերած տարբերութեամբը, և 532 տարիներու չրջանին մէջ միայն չորս ծառազատիկներ տեղի կ'ունենան, և 247 տարիներու միջոց մը առանց ծառազատիկի կ'անցնի։ Ըստ այսմ 1292'է ետքը նոր ծառազատիկի պիտի հանդիպինք 1539'ին։ Արդէն ալ յիշեցինք, թէ 1287'ին զատիկ կիրակի օրը, ոչ թէ ապրիլ 6'ին կը հանդիպէր՝ ինչպէս պէտք էր ըլլար ծառազատիկ կազմելու համար, այլ ապրիլ 7'ին։

ԼԷՆԿԹԻՄՈՒՐԻ ՑԱՂԹՈՒԻԼԸ

1362· Հայաստանի հարաւային կողմերը երկու գլխաւոր ամիրայութիւններ կազմուած էին վերջին տասնեակ տարիներ, զորս ժամանակակից ազգայիններ Թուրքմանի տէրութիւններ կը կոչեն, այլ և Մարաց պետութիւն կ'անուանեն (ՄԵՄ· 27), և Գուրդ անունն ալ կու տան

(ՄՆՄ· 29)։ Մէկուն կեդրոնն էր Սասունի լեռներուն վրայ, և միւսինը Ամիթ կամ Տիարպէքիր քաղաքին մէջ, և համացեղ լինելով ալ՝ իրարու հետ թշնամութեամբ էին։ Ընդհանրապէս հովիւ ժողովուրդ էին, և մեծութիւններն ոչխարներու հօտերը ըլլալուն, անոնցմէ կ'առնէին իրենց անունը, հիւսիսայինները Գարաքօյունլու և հարաւայինները Աքքօյունլու, իբր սեւ ու ճերմակ ոչխար ունեցողներ։ Երկուքն ալ ժամանակին սովորութեան համեմատ բազմաթիւ փոքրիկ իշխանութիւններու համախմբուած թիւններ էին՝ գերիշխան պետի մը գլխաւորութեան ներքեւ։ Հիւսիսայիններու պետն էր Ծուսուփ՝ Սասունի մեծ ամիրային, որ Գարա-Ճուսուֆ ալ կը կոչուի, և իրեն գլխաւոր հպատակներէն էին Գարա Մէհմէտ՝ Արճէշի, և Շէյխ Շէրիֆ՝ Խոյթի ամիրանները։ Իսկ Աքքօյունլուներու պետն էր Օսման, որ և Օթման կը հնչուի։ Լէնկթիմուր առաջ Գարա Մէհմէտի վրայ քալեց, որ մինչեւ ձապաղջուր փախաւ, բայց հետ դառնալով զարկաւ Լոզմաղան թաթար զօրավարին գունդը (ՄՆՄ· 21)։ Ասպատակին մեծ ճիւղը կը յառաջէր դէպի Տարոն, այս պատճառով ճանպազն վրայ եղող Արճէշ և Մանազկերտ և չուրջը եղող ժողովուրդը դէպի Գլակայ վանքը վազեց, Ս. կարապետի երկնային պաշտպանութեան ալ ապաւինելով։ Տէրոյն եպիսկոպոսն Աբգար, և Յակոբ ճգնաւոր վարդապետ, և այնտեղ ապաւինող Ներսէս Մեծոփայ եպիսկոպոս և Սահմանոս Արճիշեցի վարդապետը, և Թովմաս Մեծոփեցի պատմիչ վարդապետն ալ, որ Ե ե է Նէբս կոչէ կ'ըսէ (ՄՆՄ· 23), հոգեւորով և մարմնաւորով կը խնամէին և կը քաջալերէին փախստականները։ Իսկ Ծուսուփ մեծ ամիրան Տարոնի ժողովուրդը փութացուց Սասունի լեռները բարձրանալ։ Շէյխ Շէրիֆին յանձնելով զայն դէպի Խալթ քշել բռնութեամբ և հաւկանելով, որ երբէք պատերազմի չելլէ, Ծուսուփ ինքն ալ ամբողջ ժողովուրդը առաջնորդեց Սասունի լեռները, և բնակեցաւ Գելիեկոզան գաւառին մէջ, ուր Ս. Գրիգոր Լուսաւորչի անունով եկեղեցի մը կայ, և Մարափ անունով թուրքման մը 100 հոգի տանելով թախտն էրէն։ Մեծոփեցի պատմիչը կը գրէ, թէ կարապետ Մեծոփեցի կրօնաւորը, որ էր փեսան ղեռոզան, իրեն պատմեր է թէ երբէք պէտք չէ հետեւիլ պէտք չէ, քանի որ վերջ օգոյ և չկրնան հետեւեցան է ըզբ Թոբջանին (ՄՆՄ· 24), այնպէս անակնկալի և հրաշալի եղած էր Լէնկթիմուրի յաղթութիւնը։ Թաթարներ չմատանանալով լեռներէն վար արշաւել, դէպի Վասպուրական դարձան, Բաղէշի ամիրային հպատակութիւնը ընդունեցին, Արծկէ չատ գիւղի տարին, որուն հետ էր կարապետ Ջուղայեցի արհեստ, որ գիրքեր հոգեւոր մխիթարիչը, և վերջէն եպիսկոպոս ալ եղաւ Ամրոնց տարուած քրիստոնէից համար (ՄՆՄ· 28)։

1363· Արտաճմիկ և ըզմանուկ տեսարանի մը յիշատակը պահած է Մեծոփեցին, զոր պէտք չէ որ մենք ալ զանց ընենք յիշել։

ՄԵԵՑԻ ՔԱՋՈՒՀԻՆ

Այդ անապին խուճապին մէջ, որուն մասնակից էին Տարոնցիք, թաթարներուն հասնելուն պատճառով, երբ ամէն ոք ծակամուտ կը պահուէր քարայրներու և մայտաններու մէջ, աւելի դժուար էր կիներուն տափնապը, որոնք մանչն աւելի գերութեան և բռնաբարութեան և խեղդուկ ցանկութեանց զոհ երթալ կը վախնային, հասարակին կատղութեան ալ վախով։ Մուշի գաւառէն կին մը երկու-երեք հատ տղոց

և եհան գլուխ գոհութեամբ (ՄԵՄ· 26)։ Որդեսպան մայր մը և անձնասպան կին մը չէ հնար կարծել այդ Քաջուհին, զոր Մեծոփեցին կը բաղդատէ որդին ողջակիզելու պատրաստ Աբրահամին, և Հօքը զաւակները մահուան տուող Շամունէին, և անոնց գերբաղանց առաքինութեան համահաւասար կը գտնէ Մչեցի կնոջ քաջութիւնն ալ։ Որչափ ալ բորբոքեալ հրեւակայութեան մէկ վայրկեանին մէջ կատարուած ըլլան կրկնակ ըսպանութիւնները, սակայն եռանդուն հաւատքի, հաստատուն առաքինութեան, և նախանձայոյզ համոզման արդիւնք է այն զօրաւոր որոշումը, որով մայր մը ձեռքը կը մեկ իւր զաւկին արիւնին, և ինքն իւր մահով կը պաշտպանէ իւր հաւատքն ու պարկեշտութիւնը։ Ընդհանուր ըմբռնման մէջ ալ աւելի մեծ քաջութիւն մը ճանչցուած չէ՝ քան թէ հաւատքին, առաքինութեան, հայրենիքին և ընկերին սիրոյն՝ իւր կեանքը զոհել։ Մչեցի կնոջ ըրածն ալ այս է։ Մեծոփեցին որպէս զի յայտնէ թէ երկոքեան ընդհանրապէս կամ կոչնեւ պատմութիւն մը չէ ըրածը, կը յաւելու թէ Գլակէ Մուշ գաղով հարցափորձած է զինեալն և գլխատած, և իրողութիւնը ստուգած է։ Անոնով ալ կը յիշէ Առաքելոց վանքին առաջնորդ Բարթողիմէոս վարդապետին նզբայր Դաւիթ աբեղան (ՄԵՄ· 27), որ հարկաւ ճանպու վրայ գտնուած և եղելութիւնը աչքովը տեսած է, այլ դժբախտաբար կնոջ ով ըլլալը և անունը չէ կրցած իմանալ, որով մենք ալ չկրնալով անունը յիշատակել՝ Մչեցի Քաջուհի կոչելով կը գոհանանք (ՄԵՄ· 129)։ Առաքելոց վանքին միաբաններուն յիշատակութիւը, մտածել կու տայ թէ Տիրնակատարի սարին վրայ տեղի ունեցած է Քաջուհիին գործը, և իրօք ալ այդ կողմէն է ճանպան՝ որ Մուշէ Սասուն կը տանի։

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԵԲԱՍՏԱՑԻ

1364· Միւնոյն 1387 տարին տեղի ունեցաւ Սեբաստիոյ եպիսկոպոս Ստեփանոսի և երկու ընկերներուն նահատակութիւնը, բայց ոչ Թախարներու երեւոյն։ Անոնց հաւատացեալներէն Սեբաստիոյ մէջ կը տիրէր Պուրհանէտտինի ամիրայ, որ իշխանութիւնը ձեռք ձգած էր նախորդ ամիրան սպանելով (ՆՈՐ· 137)։ Զաքարիա և յանգուցեալ մարդ մը, ամէնուն ատելի եղած էր իւր խոտորումներուն և ամբաստանութեան համար, և միշտ կասկածոտ ու դաւաճանութիւնէն վախցող էր, նոյն իսկ Թուրքերուն կողմէն։ Զարախօսներէն ոմանք Ստեփանոսի անունն ալ խառնեցին, և այդ պատճառով բոլոր Ս. Նշանի վանականներուն ձերբակալութիւնը հրամայուեցաւ։ Ստեփանոս աղաչանքով և կաշառքով պաշտօնեաներուն հաճոյացաւ ամէնքը չտանիլ, և գոհացան ձերբակալելով Ստեփանոս եպիսկոպոսը, և միաբանութեան երիցագոյններէն Սեղբեստրոս և Թորոս աբեղաները։ Ամիրան վանահայրն փօխան, և թերեւս ապահովութեան համար ալ, Ազչար լեռը հովանոցի գացած էր, և հոն տարին ձերբակալեալները, և քննութիւնը յանձնուեցաւ դատաւորին։ Ստեփանոս զօրաւոր կերպով պաշտպանեց իրենց անմեղութիւնը, բայց ամիրային կողմէ ուրացութեան հրաւիրուեցաւ ազատութեան արժանանալու համար։ Այս անգամ եպիսկոպոսը արիութեամբ խոստովանեցաւ իր անյողդողդ հաւատքը, քրիստոնէութեան և իսլամութեան վրայ ալ ակնարկներով և բացատրութիւններով, ինչ որ զայրացուց Պուրհանէտտինը, և մահուան վճիռ արձակեց Ստեփանոսի, ինչպէս նաեւ աբեղաներուն դէմ, որոնք ձայնակից էին իրենց եպիսկոպոսին (ՆՈՐ· 141)։ Երբոր գլխատման տեղը տարին, դահիճը երկու անգամ զարնելով չկրցաւ վիզը կտրել, ինչ որ կախարդական զօրութեան վերագրուելով, ձեռքէն առքէն բռնելով եպիսկոպոսը գետինը տապալեցին, մէջքէն կտրեցին և անդամները յօշոտեցին, և ետեւէն Սեղբեստրոս և Թորոս աբեղաներն ալ գլխատեցին։ Մարմինները անթաղ թողուեցան, բայց քրիստոնեայք յաջողեցան վերցնել և գաղտնի թաղել (ՆՈՐ· 143)։ Միայն ներուած էր գլուխը վերցնել և քաղաք տանիլ հօրը ցուցնելու համար, որուն լուրը սրբնով սիրտն է փղձին, և մայրն լայր ողբմալին, երբ տեսաւ զոյգ յայն հալեն (ՆՈՐ· 150)։ Նահատակութեան օրը նշանակուած է յունիս 23 (ՃԱՍ.Ա. 268), որ էր Լուսաւորչայ կիրակին, իսկ որովհետեւ յունիս 26 ալ գրուած կայ (ՆՈՐ. 148), յարմար է զայն պատչաճեցնել գլուխը

հօրը ցուցուած օրինն, որ ըսբե+ըՔՒ ըսուած է (ՆՈՐ· 150)։ Ստեփանոս տարիքոտ պիտի չըլլայ, ինչ որ կը հետեւցնենք ոչ միայն հօրն ու մօրը տակաւին կենդանի ըլլալէն, այլ և յատկապէս յիշուելէն Թէ ի՛ւ ֆայլեր այն ի՛ւրքը տղուան յեբեւէն (ՆՈՐ· 150), ինչպէս կը գրէ անոր յիշատակին ձօնուած զգայուն տաղին հեղինակը, անշուշտ Սեբաստիոյ Ս. նշանի միաբաններէն մէկը։ Պուրնանէտտին Ստեփանոսի նահատակութենէն ետքը, Ս. նշանի վանքը հրամայած է կողոպտել, նոյնպէս ուրիշ վանքեր ալ, և Զորայ վանքին առաջնորդ Միքայէլ վարդապետը 36 աքեղանեբով չատ չարչարուելէն ետքը գլխատել տուած է։ Իսկ ինքն վերջէն Օսմանեանց սուլտան Պայազիտ Եըլըրըմին ձեռքն ինկած և չարաչար սպանուած է (ՉԱՄ· Գ· 432)։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿՈՏՈՐԱԾԸ

1365· ԼէնկՔիմուրի արշաւանքին դառնալով, Տարոնի ձախողութիւնը զայն չընկճեց, այլ ընդհակառակն աւելի սաստիկ զայրոյթով վասպուրական քաղաքց, ամէն կողմ այրեաց քանդելու և արիւնաչաղախ կոտորելու նպատակով։ Առաջ Արծկէ եկաւ, և տեղւոյն ամիրան Սահանդ անուն, մինչ նորդներով և ընծաներով հպատակութիւն յայտնեց, ուստի յոյժ «էրեցեալ եղեւ, և այս պատճառով ալաթեցաւ եղիէր և Ջաց է խաղալ» (ՄՆՄ· 29)։ Սահանդի իշխանութիւնն ալ ընդարձակեց (ՄՆՄ· 29), և հաւանաբար սա ինքն է Սահաթ ամիրան, որ Մարտիրոս Կողբացի քալ տանուտէրը (§ 1360) նահատակեց, երասխի մէջ խեղդել տալով (ՄՆՄ· 18)։ ԼէնկՔիմուր Արծկէէ անցաւ Տոսպ գաւառը, բայց տեղւոյն ամիրան նզդին անուն (ՄՆՄ· 30), կամ ըստ այլոց Փիրի-Պէկ (ՉԱՄ· Գ· 424), ընդդիմացաւ, և «ինձ» զբօսն և քաղաքութեամբ էլ«ոպանէից վանայ անառիկ ամրոցին մէջ փակուեցաւ (ՄՆՄ· 30)։ Սակայն պաշարնին պակսեցաւ, և 40 (ՄՆՄ· 30), կամ 25 օր պաշարումէ ետքը, պարտաւորուեցան տեղի տալ։ Թէպէտ ամիրան խոնարհեցաւ, սակայն ԼէնկՔիմուրի ցասումը չիջաւ, և զայրոյթով դրաւեց բերդը յոյսով հինգ քաղքանջ, յոյսով գոհոց Սարգ խալէն (ՍԱՄ· 171)։ Պահէ «ըսա-

կամ պահէ «ոչ կը կոչուին չաբաթապահքներու նախընթաց հօմնակներըը, իբր կամաւոր չաբաթապահքեր, և ըստ այսմ ինչ չաբաթապահքին նախընթաց հինգշաբթի նշանակուած օրը կ'ըլլայ 1387 սեպտեմբեր 5։ ԼէնկՔիմուր հրամայեց կին ու տղայ գերի պահել, իսկ բոլոր այրերը ջնջոտոցելու և ջանհատոս է բերդին է վայր ընկենուլ, այսինքն է վանայ քաղաքին վրայ բարձրացող սեպաձեւ գագաթէն վար հոսել։ Անյապաղ բարձրացաւ դիակոյտը, «ինչ չի վերջին անկելն ալ գետնէն (ՄՆՄ· 30), որոց թիւը եօթն հազար մարդ կը հաշուուի (ՍԱՄ· 171)։ Եւ կ'երեւի թէ կոտորածը սակաւ աւելի չատ եղած պիտի ըլլար, եթէ մտաբէ մ, որ է երգեցող, քաղաքին «նարան ելլելով Ղէյմաճի «ալ, այսինքն աշխարհի վերջին կոչը չհնչեցնէր, ուակից ԼէնկՔիմուր սպաւիրեալ կոտորածը կը վերջացնէր նոյն օրը (ՄՆՄ· 31)։ Այդ տեղ ալ Մեծուիցին ականատեսներու վկայութիւնը կը յիշէ, որ են Զաքարիա արքեպիսկոպոս և Պօղոս վարդապետ, որոնք է բերդէն լինելով, ազատուեցան վերջը մնալով, և Թաթար իշխանի մի գերի սրուելով, որ ձէր պոռեալ բոլոն բերդէն ալոպ սրոբ (ՄՆՄ· 31)։ Ձմեռնային եղանակին վրայ հասնելուն, ԼէնկՔիմուր նորէն իւր երկիրը դարձաւ, արշաւանքին արդիւնքը աւարն ու գերիները մէկտեղ տանելով, և անցած տղերքն իւր անգթութեան հետքերը թողլով, այնպէս որ «ոբեցաւ «ռնուն երկիրս Հայոց, յԱրծկոյ մինչեւ պոռնն Վրաց և մինչեւ ի կոբ ֆեռն։ Աւերածին և կոտորածին հետեւանքն եղաւ սաստիկ սովը, որ պոբռնեցաւ յոռնաց պեղէ, և այնպիսի սաստկութեամբ, ձի կերան ղջոռնոց և ձիոպոս, և երբ անոնք ալ սպառեցան, խոտովքին ջոպոբեբ և ջրոպոբեբ, թէպէտ և այդ անբնական կերակուրներէն ուստղներն ալ չեռոյ ինեբաւ «նանէն (ՄՆՄ· 32)։ Սովին տեւողութիւնն երկարեցաւ, և յաջորդ 1388 և 1389 տարիներուն ալ չարունակեց, և Մեծուիցին որ այդ կողմերը կ'ապրէր, լաւագին կը նկարագրէ ընդհանուր խեղճութիւնը։

1366· Կ'երեւի թէ այդ ցաւալի կացութիւնը այնչափ ծանր չէր Սիւնիքի և չրջակայից մէջ, ձի Ունիքորներ մէկ կողմէն,

և Ապրակունեաց ու Աստապատի վանքերը միւս կողմէն, իրենց նպաստակին կ'աշխատէին և կրօնական մրցումները կը չարունակէին։ Թէպէտ Ղրիմեցին մնուած էր, բայց անոր կարգադրածն ու թղածը տակաւին կը բաւէին, և Որոտնեցին Ապրակունեաց վանքի և Ապրակունեցին Աստապատի վանքը առաջ կը տանէին իրենց վանական և ուսումնական գործունէութիւնները, բազմաթիւ և զարգացեալ աշակերտներ պատրաստելով ազգային եկեղեցւոյ պաշտպանութեան համար։ Չորրորդ տարին էր նախանձայոյզ Մաղաքիայի մահուընէն՝ երբ տակաւին Որոտնեցին, իբ կինաց 73'րդ տարին քիւակոխելէն ետքը։ Ծանր աշխատութիւնները և ժամանակին եկ'ղեցական'բուն տուողական եղող կնճռոտական խաւտութիւնները տկարացուցած էին անոր մարմինը։ Նա իբ արդիւնաւոր կեանքը կնքեց 73'րդ տարին լրացուցած օրը, օրը օրին նաւասարդ 30'ին, Հայոց 837 թուին, որ այն տարին կ'իյնար 1388 յունուար 13'ին, Աստուածայայտնութեան ութօրեկին, որ անչուշտ չփոխմամբ յունուար 6'ին բուն տօնին օրին հետ փոխանակուած է (ՁԱՁ·302), վանդի այն տարին յունուար 6'ը նաւասարդի 23'ին կը հանդիպէր և ոչ 30'ին։ Իսկ օրը օրին հանդիպումը լոկ Հայոց հին տոմարով կ'արդարանայ, զի ծնած տարին նաւասարդի 30'ը կ'իյնար յունուար 29'ին (§ 1351)։ Նաւասարդի 30'ին միևնոյն օրը ծնունդին ու մահուան զուգադիպութիւնը ճշմարտուած էր Սահակ Պարթևի վրայ (§ 222), և Մեծոփեցին այդ նմանութիւնը յիշելով կ'ուզէր նկ, թէ այս է օրէնաւոր մահ մեռոք տէրոնէից (ՄԵՒ·17)։ Սակայն կը տարբերի Խլաթեցիին տուած թուականը, ի յոյնոցէ Հայոց ընտրեալ, ըստ որս և հինգ եօթն յաթելն, յոմանոցէ մի պահ յայտնաւորեան, լոյս աբեաս խաւարեցան, յետ վեց աւուրըն խաւարման, զոր ասէ Տէրն իբ անյիկան (ՓԻՐ·36)։ Ըստ այսմ 1386 յունուար 1'ին հիւանդացած և յունուար 6'ին վախճանած պիտի բուէր, սակայն միւս հաշիւը չսուրբն տրուածն է, և միայն Խլաթեցիին վկայութիւնը չբաւեր զայն խախտել։ Որոտնեցին թաղուեցաւ Ապրակունեաց վանքը, Ղրիմեցիին գերեզմանին մօտը (§ 1359)։ Իրմէ մնացած գրական աշխատութիւններէն, Յովհաննու աւետարանին և Պօղոսի թուղթերուն մեկնութիւններ, բազմաթիւ քարոզներ, և Փիլոնի ու Արիստոտէլի ու Պորփիւրի փիլիսոփայական գիրքերուն վրայ բացատրութիւններ։ Անշուշտ օտար լեզուներու, և գլխաւորապէս յատիներէնի՝ ալ հմտացած էր, ունիթորներու արուեստակալ վարդապետութեանց դիմադրելու համար։ Նոյնը կրնանք հետեւցնել Ապահանցիին ըսելէն ալ, թէ Որոտնեցին առաջնորդը հաստ ցոցաներ գինն ընդ ուղղափառութեան դէր (ԶԱՄ·Գ·450), ինչ որ միայն արեւմտեան ուսումներուն հետեւած ըլլալը կրնայ ցուցնել։ Բայց Որոտնեցիին գլխաւոր արդիւնքն ու փառքն եղած է, գլուխ և նախահայր նկատուիլ այն բուռն պայքարին, զոր ազգային եկեղեցւոյ վարդապետները մղեցին Ունիթորներու լատինամոլ ձիգերուն դէմ, ամուր թումբ մը կազմելով հոսանքին հանդէպ, որ հակառակ զօրաւոր ջանքերու պարտաւորութեաց յետոյ ընկրկիլ, օտարը տկարացաւ և Հայ եկեղեցին իբ ինքնութիւնն ու իսկութիւնը պահեց։ Այդ բազմերեսոյթ վարդապետներ ամէնքն ալ Որոտնեցիին աշակերտներն կամ աշակերտներուն աշակերտներն են, այնպէս որ առաջին և մեծ արդիւնքը անոնցմով պիտի վերագրուի Յովհաննէս Որոտնեցիի։ Ուստի իրաւամբ բուած է, թէ պայծառացոյց վարդապետ Հայոց վերջապէս և հանճարեղ, ճեմելիքն կրթասորութեամբ և ազգասիրութեամբ, հանճարեղ գիր և ճիշդ մտածելով ընդդէմ հերետիկոսաց ազնիւ մշակն եղեն։ Մեծոփեցին անոր մահը յիշած տեղն կ'ուսուցնէ, թէ խաւարեաց ճեմ աշխարհիս Հայոց (ՄԵՒ·15), սակայն մենք պիտի ըսենք, որ թէպէտ ինքն պակասեցաւ, այլ իբ վաստած ջահը բաւական տեղ լուսաւորէ մնաց իբ աշակերտներուն ձեռքով, և անոնցմէ մնաց ազգային եկեղեցւոյ աւանդութեան մէջ։ Նորա արուեստիններն համար բուած է, թէ էր ճեմահաս և բարեխելի, ջերմ և փառահեղ, իսկ ներքինին համար թէ էր հեզ բարուք, ազնիւ, առաքինասէր, հոգւոյ յոյժ ազգասիրաց և ամենեցուն սիրելի։

ՈՐՈՏՆԵՑԻԻ ՄԱՀԸ

Ասոնցմէ (ՁԱՁ. 303), ուստի իրաւամբ եկե-
ղեցին անոր անունը տօնելի սուրբերուն
կարգը անցուց, թէպէտեւ չկարենանք ճըշ-
դել այդ տովորութեան սկիզբը։ Անոր տօնը
մենք ալ կը կատարենք այսօր (ՁՕՆ. 45),
բայց պահ մը ընդհատեցաւ՝ ժԹ՛րդ դարուն
ակիզբները տեղի ունեցած միաբանական
ջանքերուն առեն, և այս պատճառով Ցայս-
մաւուրքի վերջին տպագրութիւնն ալ զանց
ըրած է անոր յիշատակը։

ՏԱՔԵՒԱՑԻՆ ԿԸ ՅԱՋՈՐԴԷ

1367. Որոնեցիին աշակերտներուն թիւը
նշանակուած չենք գտներ, բայց անտեղի չէր
ըլլար իրեն վրայ ալ մեր-
ձաւորաբար կրկնել, ինչ
որ իւր ուսուցչին նայի
նկեցիին վրայ ըսուած էր
թէ 363 աշակերտներու վարդապետական
գաւազան տուած է (§ 1241)։ Այդ բազմա-
թիւ և ընտրեալ խումբին պլուխը պէտք է
դիչենք Գրիգոր Տաթեւացին, որ իւր վար-
դապետին յաջորդեց, և գրեթէ զայն գերա-
զանցեց։ Գրիգոր որդի էր Ալեքսիոսի Սար-
գիսի, որ երկրին աղէտից պատճառով անկէ
գաղթած, և Փարպեցի աղբիկան մը հետ
պսակուած, բնակութիւն հաստատած էր
Վայոցձոր գաւառին հաւանաբար համանուն
աւանին մէջ։ Այն տեղ ծնած է Գրիգոր,
քանի մը վաղամեռիկ զաւակներէն ետքը
ուխտի զաւակ (ՁԱՁ. 531)։ Տարին չէ նչա-
նակուած, բայց հաշուելով որ 14 տարեկան
Որոտնեցիին աշակերտած (ՁԱՁ. 532), և 28
տարի անոր մօտ մնացած է (ՄԵԺ. 33),
1346'ին եղած կ'ըլլայ ծնունդը։ Քահանա-
յական ձեռնադրութիւնը առած է Որոտնե-
ցիին հետ Երուսաղէմ գացած առենը, վար-
դապետական գաւազանը Որոտնեցիէ առա-
ջած է Երզնկայի մէջ, իսկ ծայրագոյն գա-
ւազանը անագան ընդունած է 1387'ին
Որոտնեցիին վերջին տարին (ՁԱՁ. 532), և
1388'ին յաջորդած է անոր, հռաւնուքեամբ
և կոչ՝ դէպ վըրդապետին Սարգիս Ապրակու-
նեցւոյ և հռչակեալ եղբօրդ իւրոց (ՄԵԺ. 17),
ինչ որ ընտրական գործողութիւն մը կը
ցուցնէ, և Գրիգորի վկայեալ արժանիքը
կ'ապացուցանէ։ Գրիգոր երկու տարի միայն
նստաց Ապրակունեաց վանքը յետոյ վրդա-
պետութեան առաջարկեցաւ, մինչ երթալով կը
նուազէին վանքին միջոցները և կը տկա-

ՍՈՒՆԱՐՈՒ ՎԱՆՔԸ

րանար անոր դիրքը, այնպէս որ վերջին
ձմեռը պարտաւորուեցաւ առնս աշակերտ
անցընել ի յԱպրակունեացն հնձան, և 1390
տարւոյ ի գարնան եղանկին փոխադրուեցաւ
Տաթեւի վանքը, ուր իրեն պաշտպանու-
թիւն և ձեռնտուութիւն կը խոստանային
իշխանն Սմբատ Օրբելեան որդի Իւանէի և
Թոռն Բուռթէլի (ՄԵԺ. 33), և Թոռնորդի
Ելիկումի (§ 1175), և արքեպիսկոպոսն Առա-
քել, Գրիգորի քուերորդին (ՄԵԺ. 51), կամ
լաւ եւս քեռիին որդին։ Այն տեղ Գրիգոր
հետզհետէ ժողովեց զբազմաշակերտս, և նոր
զարկ տուաւ Տաթեւի դպրեվանքին, որ
եղաւ այն մեծ հաստատութիւնը, որ լոյս
աշխարհ ղրկեց ճշմարիտ և ազգասէր գա-
ւանականներ և հռչակաւոր (ՄԵԺ. 33), և ուստի
յառաջ եկաւ ազգային եկեղեցւոյն մէջ
գտնուող այժմեան վարդապետական դասա-
կարգը։ Սովորութիւն էր վարդապետական
վկայականներուն մէջ յիշել իրարմէ գաւա-
զան ստացողներուն չարքը, և վերջին դա-
րերու վկայականներ միշտ նախ Գրէգոր Տա-
ղնեացւոյն սկզբնաւորութեամբ կը գրուէին,
և անոր զանազան աշակերտներէն տարբեր
ճիւղեր կը կազմուէին (ԴԱՎ. 340), որով
ներկայիս մեր եկեղեցւոյն բոլոր վարդա-
պետները Գրիգոր Տաթեւացիի բարոյական
սերունդը կը նկատուին, և Որոտնեցիին
իսկ անունը չյիշուիր, ու Տաթեւացին ըն-
դունած կ'ըլլայ իրրեւ վարդապետութեան
նահապետը, կամ Մեծոփեցիին բացատրու-
թեամբ՝ «բլուրս ծածկաւոր աղբիւրն, անմոռ աթե-
ղան, և երկրորդ լուսաւորիչն» (ՄԵԺ. 17)։

1368. Սարգիս Ապրակունեցի Աստա-
պատի վանքն էր տակաւին, երբ Գրիգոր
Ապրակունեաց վանքին
մէջ հաստատուեցաւ, բայց
ինքն անկէ առաջ թողուց
իւր տեղը, ի նոյն ամ գա-
նուիլն, որ է 1388'ի տովին տարին (§ 1355)։
Սարգիս պարտաւորուեցաւ Աստապատը թո-
ղուլ, և Հիր կամ Հոյ քաղաքին մէջ տա-
կաւ աշակերտաց անդորդ ղաստաս տովոյն գա-
նուիլն նեղուիլն, և քիչ մը կացութիւնը
միզմանալէն ետքը իւր աշակերտներէն
Յովհաննէս Սադաղ վարդապետը ճանապայ
հանեց, որ Հայաստանի նեռսերը յարմար
տեղ մը գտնէ նորէն դպրեվանք մը կազ-

մելու։ Քաջբերունեաց կամ Աբճէշի եպիս-
կոպոս Զաքէոս, յուշուց անոր Խառաբաստ
գիւղի մօտ, Սուխարու Ս. Աստուածածնին
վանքը։ Մեծոփեցին որ միշտ տէսիլքներու
և երազներու փաստերով կը գնահատէ նոր-
լուիւնները, Յովհաննէսն ալ տեսիլքով
հաւոզուած կ'ըսէ Սուխարու վանքին յար-
մարութեան վրայ, Սարգիսն ալ նոյն փաս-
տով իր որոշումը տուած (ՄՆՄ·36), և
1389'ին եկած հաստատուիլ այն տէղ, և
է էրոց ալակերաց և էջնաւորաց և յաւար-
նաւէրաց, առելի քան լրնաւոր կարգաւորներ
հաւաքելով, նոր և զարգացուն աշակեր-
տութիւն մը կազմել, և վասպուրականի
լեզուներով գաւառները մխիթարել ասմամբ
և գիրոնութեամբ, քամտ և պարարտիւ (ՄՆՄ·
37)։ Սուխարու աշակերտութիւնէն է ինքն
Մեծոփեցի պատմիչն ալ, որ չափազանց
կը բարձրացնէ իր վարդապետին արժա-
նիքը, թէ հեղնութեամբ և խանդավառութեամբ ոչ
գոլով նման նոր յորդի։ Ապամոյ, և թէ միան-
գամայն զէմ կերպարանաց խորոց անհնութեան և
ջարմացուցանէր զմտնոյն մարդ, մանաւանդ զպէս
այլազգեաց, ինչ չի ազի Զաքարեայն յերկիրս
գոմրնան գայն նոմա (ՄՆՄ·36)։

1389. Աստապատի և Ապրակունեաց վանքերուն նուազիլը պատճառ եղաւ, որ Գրիգորի և Սարգիսի համ-

ՈՒՐԻՇ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

չիրակ կամ աշակերտակից վարդապետներ անոնցմէ բաժնուին, և իրենք ալ առ և անդ ցրուելով զատ զատ վանքերու մէջ հաստատուելով նոր աշակերտութիւններ կազմին, և Որոտնեցիին հիմնած գործը ընդարձակեն։ Այս տէղ այն տէղ տես-նուած ցրիւ յիշատակները հաւաքելով կը տեսնենք նախ Ծակոր վարդապետը, որ Այրարատի մէջ կարճի գիւղի մօտ գտնուող Սաղմոսավանքը սկսաւ չէնցնել (ՄՆՄ·33)։ Գէորգ վարդապետ, չիրիմամբ Գրիգոր դրուած (ՄՆՄ·33), երթնկա գնաց, և այն տէղ աշակերտութիւն հաստատեց և լաւ եր-կասիրութիւններ ալ պատրաստեց, թէպէտ ճշդուած չենք գտնար թէ երթնկայի բազ-մաթիւ վանքերէն որն եղաւ Գէորգ երթնկացիին հաստատուն տեղը։ Յովհաննէս վարդապետ Քաջբերունեաց գաւառէն, Զարիշատի Ներսէս քահանային ուխտի զա-

ւակը, Նահապետ աբեղայի մօտ առաջին ու-սումն առնելէն և Ներսէս եպիսկոպոսէ քահանայ ձեռնադրուելէն ետքը, Ստեփա-նոս աբեղայի մը հետ Ապրակունեաց վանքը եկան Որոտնեցիին աշակերտիլ։ Երեք տա-րիէ մանաւանդ գաւազան առացան, բայց մեծ վարդապետութիւնը չկրցաւ տալ Որոտ-նեցին իր մահուան կանխելովը, և Տաթեւացին տուաւ։ Յովհաննէս քիչ ետքը եկաւ ի հայրենի գաւառն իւր, ի տեղի ասէին Մեծոփոյ վանէ, յաւարնոր կիւրակէն (ՄՆՄ· 56)։ Տարին նշանակուած չէ, բայց որով-հետեւ արդէն Սարգիս Սուխարու մէջ աշա-կերտներ հաւաքած կը յիշուի, գոնէ 1391'ին պէտք կ'ըլլայ դնել Յովհաննէսի Մեծոփ դառնալը, և այդ ենթադրութեամբ նոր կիրակին կը հանդիպի ապրիլ 2'ին։ Իսկ Մեծոփի հռչակաւոր տաճարին չինութեան սկզբնաւորութիւնը աւելի ուշ տեղի ունե-ցած է 1402'ին (ՄՆՄ·58)։ Որոտնեցիին աշակերտներէն կը յիշուին նաեւ Ստեփանոս Դարասցի (ՄՆՄ·47), որ հաւանաբար վերա-յիշեալ Ստեփանոսն է՝ Յովհաննէս Մեծո-փեցիին հետ աշակերտութեան գացողը։ Վարդան Հոգոցեցի (ՄՆՄ·49), այն որ յե-տոյ Ապրակունեցի Սարգիսին յաջորդեց Սու-խարու վանքին մէջ, և Յակոբ Ովանննացի որ նահատակուեցաւ։ Ուրիշ չատ մը վար-դապետներու անուններ ալ ունինք, որոնք յետոյ Տաթեւացիին և Ապրակունեցիին մօտ ալ մնացած ըլլալնուն, անխտիր անոնց և անոր աշակերտներ կը կոչուին, և վերջին կը թողունք անոնք յիշատակել։

1370. Երբ մէկ կողմէն Հայ եկեղեցին գիտութեամբ զօրաւոր վարդապետներով

ԱՒԱԳ ԲԱՂԻՇԵՑԻ

կը պայծառանար, նոյն իսկ արտաքին տագնապ-ներու և հալածանք-ներու ներքե, միւս կողմէն ուսմամբ տկար բայց հաւատքով զօրաւոր գաւակներն ալ իրենց կեանքով և արիւնով կը պաշտպանէին եկեղեցին։ Կոտորածներու մէջ սպանուելները ճշմարիտ մարտիրոսներ էին ընդհանրապէս, զի իսլա-մական մոլեռանդութիւնը ամէն մէկուն կ'առաջարկէր ուրացութիւնը իրրեւ ազա-տութեան միջոց, իսկ Հայ քրիստոնեային կը նախընտրէր իւր կեանքը գոհել քան թէ

սուբր հաւատքը։ Մանաւոր մարտիրոսնե-
րու ալ յիշատակներ պահած են մեզի ժա-
մանակակիցներ, որոնց հիմը միշտ կեղծ
կամ սուտ նոճանափոխութեան պարագայն
է, հետեւանք մահմետական օրէնքին՝ որ
խլամութենէ ետ դարձողը մահապարտ կը
վճռէ։ Աւազ անուն քահանայ հաստատակ
արհեստաւոր մը, բնիկ Բաղէշ քաղաքէն,
երիտասարդութեան առնն Սալմաստ գացած
և Պարսիկներու մօտ աշխատած էր, առանց
քրիստոնէութիւնը թողլու, և վերջերը իր
քաղաքը դառնալով արհետին կը հետեւէր։
Երեսուն տարի անցած էր Սալմաստ երթա-
լէն, երբ այն տեղէ եկող Պարսիկ մը զայն
կը տեսնէ չուկայի մէջ, և կը զրուցէ թէ
նա ժամանակով Պարսիկներուն մօտ խլա-
մացած էր, իսկ Աւազ կը պնդէ. Ես էրէս-
պոնէայ էի և երէ եղէց (ՆՈՐ. 158)։ Այսչափը
կը բաւէ որ խաժամուժը գլուխը ժողվուի,
և ուղղակի Ամիրշարաֆ ամիրային առջեւ
հանէ իբրեւ խլամութիւնը ուրացող։ Ամի-
րան կը լսէ և կը տեսնէ թէ բաւական
վկաներ չկան ամբաստանութիւնը հաստա-
տելու, և կ'ուզէ արձակել, բայց ժողո-
վուրդին ստիպման վրայ վճիռը դատաւորին
կը թողու։ Մոլեռանդները կասկածելով որ
մի՛ գուցէ այն տեղ ալ վճիռ չտրուի, Աւագը
կը ստիպին ու կը չարչարին տարած առնե-
նին, և անոր հաստատամիտ պատասխան-
ներէն զայրանալով՝ քարերով ու բիրերով
ու զէնքերով վրան կը յարձակին, և վեր-
ջապէս ֆայթոյ նոճի ըրլլէն Ե հոլլն է
էլեֆն, և դատաւորին չտարած, ճանապան
սպաննեցին։ Աւագի վկայութեան օրը եղած
է 1390 մեհեկի 17, որ պէտք է սարկաւա-
գադիր տոմարով փետրուար 23'ին հաշ-
ուուի, զի գրուած է թէ եղաւ յոթը ը-
ւեէչքեօրէ չբէյբոդոմ շքեօրս փոթանորդոց
պոհոց (ՆՈՐ. 154), ինչպէս տոմարական
հաշուով ալ կը տուգուի։ Աւագ սովորա-
բար Բաղիշեցի կը կոչուի (ՃԱՍ. Ա. 93),
բայց Սալմաստեցի ալ ըսուած է (ՆՈՐ. 152),
երկար ժամանակ Սալմաստ ապրած ըլլա-
լուն համար։

1371. Ճիշդ եւս եղիսաբէթ վկայու-
հին, բնիկ Արճէշի Խառաբաստ գիւղէն,
բայց կ'երեւի թէ Սուխարու վանքին ազ-
դեցութիւնը չէր զգացած, զի ուր ալլկան
կեանք կը վարէր, Բերկրիի մէջ պահելոց-
ելէր. և վանայ մէջ կը հետեւէր էրէյոյ
պոռնկութեան, և անյագ էր
ԵՂԻՍԱԲԵԹ ի գեղս։ Օր մը վիճելու
ԽԱՌԱԲԱՍՏԵՑԻ առին խօսքը հաստատելու
համար, Սուրբ Աստուա-
ծածին վկայ, կ'ըսէ, որ այս բանս այս է (ՆՈՐ.
157)։ Սուխարու Ս. Աստուածածնի ման-
կական յիշատակն էր, որ բերնէն կը թռէր։
Շուրջը եղողներ վրան կը յարձակին, թէ
ինչո՞ւ էիր ըսած ուրէլ։ Ցանկարծական
արիութիւն մը կու գայ եղիսաբէթի վրայ և
համարձակօրէն կը պատասխանէ. Ահա Ե
սխալեմ, դի ես ծառայ եմ Սուրբ Աստուա-
ծածնին։ Ոչ միայն Աղդին թախտ ամիրայն
ու պատուորը, այլեւ ամիրային կինը փա-
չախթուն կոչուած, ապտալիք և ալո-
քանք կը գործածէն եղիսաբէթը ապտա-
մոզելու, սակայն չեն յաջողիր, նա հաս-
տատուն կը մնայ իւր արիւնով պատ'ղի
կնանքը սրբելու միտքին վրայ, և քար-
կոծուելով կը նահատակուի 1391'ին Քա-
ռասնից յիշատակին օրը ըստ յայտաւետայ
(ՆՈՐ. 168), այսինքն մարտի 9'ին։ Թէպէտ
յայտաւետքը եղիսաբէթ Խառաբաստցիին
յիշատակը կը դնէ ապրիլ 24'ին, թամար
Մոկացիի յիշատակին կցելով, յոյժ փնդ
սրբոց Քառասնից պարագային ալ աւելցնելով,
որ նոյն օրուան վրայ չէ մարտուիր (ՃԱՍ.
Ա. 183)։

1372. Թէոդորոս կաթողիկոսի հաղիւ
թէ աթոռ բարձրանալը յիշեցինք (§ 1354),
և մէկ մըն ալ աւելի չու-
ՀՌՈՄԷԱԿԱՆ նեցանք անոր անունը
ՄԻՏՈՒՄՆԵՐ տալ։ Պատմական դէպ-
քեր մեզ արեւելեան եր-
կիրներուն մէջ պահեցին, կիլիկիայի մասին
գրելիք չունենանք, զի իրօք ալ այն կող-
մերը բնաւ եղելութիւն չկար՝ որ մեր մը-
տադրութիւնը գրաւէր։ Եգիպտական սուլ-
տանութիւնը իւր նպատակին հասած, քրիս-
տոնեայ պետութեանց վերջինը պաչտօնա-
պէս ջնջած, նոր արշաւանքներու առիթ
չունէր, միւս կողմէն Արեւելքէն հասնող
լէնկթիմուրեան հեղեղը զինքն կը տիպէր
ամփոփ մնալ, որեւէ պատահականութեան
հանդէպ։ Այս պատճառով կիլիկիոյ թագա-
ւորութեան բնակիչներէն կազմուած, Տաւ-

րոսի և Ամանոսի ժայռերուն մէջ պահուըռաղ Հայ իշխաններն ալ, աւելի խաղաղ վիճակ կը վայելէին, և անկէ օգտուելով կաստանդին Կիլիկեցին ալ թագաւորի պիտակ անունով (§ 1349) իւր գլխաւորութիւնը կը պահէր լեռներու մէջ ցրուած Հայերուն վրայ։ Այդ պարագաներուն մէջ մեծ դործունէութիւն մը հնար չէր սպասել որեւէ կաթողիկոսէ, որ մենք ալ կարենայինք դործունեայ պաշտօնավարութիւն մը պահանջել Թէոդորոսէ, որուն ուր մնացած և ուր նստած ըլլալն իսկ ճշդելու դժուարութիւն կը կրենք։ Որոշակի ալ չդիտենք թէ ինչ ուղղութիւն կը տիրէր այս միջոցին Կիլիկիոյ մէջ կրօնական տեսակէտէն։ Մեծ տպաւորութիւն մը միայն ունինք, որ Սսոյ վերջին վեց կաթողիկոսներուն ժամանակը ամէնէն սեւ գոյներով նկարագրած, և անոնց անկարգ և ապօրէն և դատուելի գործերը մեղադրած առեն, այդ ամէնը կը վերադրէ անոնց լատինամոլ ուղղութեան և կը գրէ. Տանաստանդ ալ ծացեալ էր խոր պղծութեանն, տպկեդոնական բոլով (ԿՈՍ. 55)։ Այդ վեցերուն առաջինն է Թէոդորոսը, և պէտք կ'ըլլայ նոյն կարծիքն ունենալ անոր վրայ ալ։ Մենք բաւական յստակ կերպով տեսանք թէ Պօղոս լատինասիրութեան չատ հակամէտ մը չէր (§ 1344), բայց արդէն հայադաւան և հայածէս եկեղեցին, դիտմամբ կամ պատահմամբ, որոշմամբ կամ սովորութեամբ զանազան կէտերու մէջ լատինականի մօտեցած էր և լատինամոտ հով մը կը տիրէր Սսոյ աթոռին վրայ։ Յայտնի եղելութիւն մրն է, թէ հակառակ Արեւելեան վարդապետներու ճիգերուն, հակառակ Տուէոդորիներու և Օրբէլեաններու, Որոտնեցիներու և Տաթեւացիներու ընդդիմադիր ջանքերուն, լատինամոտ միտքեր և ձեռներ մուտք գործած էին, և ոմանք մինչեւ այսօր ալ կը մնան ազդային եկեղեցւոյն մէջ, և տակաւին թօթափելու քայլութիւնը չերեւիր։ Լատինամոլութեան մեծ ազդակ, այն է լատիններու օգնութեամբ քաղաքական դիրքերնին պահելու ակնկալութիւնը, պէտք էր այլեւս իսպառ ջնջուած ըլլար Հայերուն միտքէն, վերջին Լեւոնի վերջին հաքը։ Բայց սեւեռեալ գաղափարներ դժուարաւ կը ջնջուին, և մինչեւ յետին դարեր կիլիկեցւոց միտքէն իսպառ չհեռացան Արեւմուտքէն օգտուելու նպատակը և Արեւմուտքը հաճեցնելու գաղափարը։ Հետեւաբար անհիմն չկրնար ըսուիլ Մեծոփեցիին գրածը, թէ լատինամոլներ էին Սսոյ վերջին կաթողիկոսները, այլ ոչ տիրապէս լատինացեալներ կամ կատարեալ հռոմէադաւաններ, ինչպէս նոր հայկաթոլիկները կը սիրեն պնդել։ Հայ եկեղեցին երբէք իւր ինքնուրոյն և բնատիպ խոհութիւնն կորսուսած չէր։ Այս բանիս իբրեւ հաստատութիւն պէտք է նկատել որ նոյն իսկ Որոտնեցին ու Տաթեւացին և բոլոր Տաթեւեան աշակերտութիւնը, չէին վարանիր Սսոյ վերջին կաթողիկոսները իբր ճշմարիտ և օրինաւոր հայրապետներ ճանչնալ, ինչ որ ըրած չէին ըլլար եթէ կատարեալ հռոմէադաւաններ եղած ըլլային Սիս նստող վերջին կաթողիկոսները։

ԹԷՈԴՈՐՈՍԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

1373. Այս տեսութիւններով մէկտեղ մենք պիտի չհամարձակինք բացարձակ կերպով մեղադրել Թէոդորոսը, և զայն կատարեալ աղթարմանեաց չարքը անցնել։ Առ այս մեր գլխաւոր հիմնակէտն են Թէոդորոսի սպանութիւնն և սպանութեան չարժառիթը, Մեծոփեցիին գրածին համեմատ, թէ ՀՍսոյ կաթողիկոսն պատ և վեց պանապետ սպան է Ներսէս-Ներսէս Սսոյ պէղ Ղեւմ Օմարն (ՄՆՍ. 71)։ Մենք այս կտորին մէջ Ներսէս անունով լատինամոլները ակնարկուած կ'իմանանք, վասնզի Մեծոփեցիին միտքն է օտարներու վրայ նետել կաթողիկոսին մահուան պատճառը։ Եթէ իրենեերուն վրայ խօսիլ ուզէր, պէտք էր ուրիշ դարձուած գործածէր, և տարբեր կերպով որակէր նենգամիտ մատնիչները։ Արդ եթէ Մեծոփեցիին ուղղութենէ օտարներ էին Թէոդորոսի մահուան պատճառ եղողները, ուրեմն աղթարմանեաց դասակարգէն էին, ուրեմն Թէոդորոս անոնցմէ չէր, ուրեմն Թէոդորոս ալ Պօղոսի նման քիչ ու չատ հայադաւան և հայածէս ուղղութեան հետեւող էր։ Ըսուած չէ թէ նենգամիտ քրիստոնեաներու զրպարտութիւնը ինչ էր, բայց 16 տանուտէրներու կամ իշխաններու ալ միասին սպանութիւը, բաւական է հե-

տեւցնելու, թէ քաղաքական խնդիր էր յուզուածը, և թէ Հայոց կաթողիկոսին և իշխաններուն վրայ եղած ամբաստանութիւնը, քաղաքական խլրտումի և եգիպտացիներուն դէմ ելլելու գոյն ունէր, որ ամիրային անմիջապէս ամէնքը մէկէն սպանելու կ'ելլար, իբրեւ մեծ դաւաճանութիւն մը արգելելու նպատակով։ Ամիրան գրգռողներուն՝ Նէնէ-Ղէն վերագրուիլը կը ցուցնէ, թէ անհիմն էր պատճառանքը, բայց բռնութեան միջոցին և բռնաւոր իշխաններէ, ոչ անաչառ քննութիւն կը սպասուէր, և ոչ արդար դատաստան։ Իսկ մէլիք Էօմէրը, պէտք է Սսոյ ամիրայն ըլլայ, այլ յայտնի չէ թէ ժառանգական իշխան մըն էր, թէ ոչ յատկապէս դրկուած կողմնակալ զօրավար մը։ Սսոյ վերջին կաթողիկոսներ Մեծոփեցիէ ամբաստանուած են թէ իրարու ձեռքէ աթոռը յափշտակելու համար, իրար սպանած են գեղ մոհումեդնելով (ԿՈՍ. 55), ինչ որ թերեւս չպատշաճի Թէոդորոսի սպանութեան, բայց եթէ ենթադրելով թէ իրեն յաջորդն ալ քսու խմբակէն մէկն էր, և թէ այս քսութեան պատճառով Թէոդորոս 16 իշխաններու հետ և ամիրայի հրամանով սպանուած է, ինչպէս նոյնինքն Մեծոփեցի յայտնի կը վկայէ (ՄԵՄ. 71)։ Գործը կրնար աւելի ուրոյ կերպարան ունենալ, եթէ լոկ Շարունակողին գրածովը ւնայինք, թէ ըստ Թէոդորոսի է Սէֆ ապանէն (ՍԱՄ. 172)։ Սպանութեան թուականը Մեծոփեցիի գրելովը 1393'ին յանգեցաւ ապէ (ՄԵՄ. 71), որ է 1392, և նոյնը կրկնած է յիշատակարանին մէջ ալ Հայոց 841 թուականը դնելով (ԿՈՍ. 55), և այդ կրկին յիշատակութիւնները մեզի համար բաւական են պատմական թուականը մը հաստատելու։ Ուստի զանց կ'ընենք զննել Շարունակողին Հայոց 842 տարին յիշելը (ՍԱՄ. 172), և ուրիշ յիշատակարանի մը 844 տարին է հայրապետութեան Թէոդորոսի կարծելը (ՓԻՐ. 6), որ գրիչի կամ տպագրութեան սխալ մըն է, և կամ Բաբերդի յիշատակագրին կիլիկիոյ մէջ անցած դարձածէն լուր չունենալուն հետեւանքն է։ Զինք դիտեր նոյնպէս թէ ինչ աղբիւրէ քաղած են ուրիշներ ալ 1389 թուականը (ՍԻՄ. 560), գուցէ համեմատութեան գնելով նոյն տարին Նէվրոսի կոմս Յովհաննէսին դէպ արեւելք դիմելը, և եգիպտոսի սուլտան Բարկուկին կիլիկիոյ կողմերը արշաւելը։

Տ. ԿԱՐԱՊԵՏ Ա. ԿԵՂԵՑԻ

1374. Թէոդորոսին յաջորդին ընտրութիւնը ոմանք տարի մը կը յետաձգեն, սակայն այդ մասին որոշ ակնարկ մը չենք գտներ ժամանակակիցներուն մէջ, և կը կարծենք թէ այդ կարծիքը յառաջ եկած է Կարապետի կաթողիկոսութեան 1393 թուական նչանակուելէն (ՍԱՄ. 172), որով Թէոդորոսի մահուընէ տարի մը ետքը եղած կ'ըլլայ։ Սակայն միւնոյն տեղը Հայոց թուականը 840 ցուցուած է, որ կը պատասխանէ 1391'ին և Թէոդորոսի մահն ալ 842 դրուած է, այսինքն 1393'ին, որ իրարու չեն կապակցիր, և այդ կողմէն որոշ փաստ չկազմուիր։ Միւս կողմէն ալ 1393'ին Կարապետ կաթողիկոսը

ՆԱԽԸՆԹԱՑՆ ՈՒ ՊԱՇՏՕՆԸ

յիշողներ, ընտրութեան թուական չեն տար, այլ նոյն թուականին կաթողիկոս դնուիլը կը յիշեն։ Այդ պատճառներով մենք պատճառ մը չենք գտներ Կարապետի կաթողիկոսութիւնը տարի մը յետաձգելու։ Էօմէր ամիրան ալ նոր կաթողիկոսի հաստատութեամբ նիւթական օգուտ առիթ կ'ունենար, և ուշացնելու դրդիռ չունէր։ Հետեւաբար ոչինչ չարգիլեր որ Կարապետի կաթողիկոսութիւնը 1392'ին դնենք, անմիջապէս Թէոդորոսի սպանութենէն ետքը, ոչ թէ կանոնաւոր ընտրութեամբ, որուն պարագաներ նպաստաւոր չէին, այլ նոյն ինքն Կարապետի առջեւ նետուելովը, պաչպանողներ ալ ճարելովը և ամիրան գոհացնելովը։ Կարապետ ըսուած է Կեղեցի է Խոչէնոյ (ՉԱՄ.

ՑԱՒ. 110), և թէպէտ աղբիւրը ցուցուած չէ, այլ կը պահենք իրրեւ յատուկ անուն մը, որ մեր կարծիւօք օգտակար է անձերը զատելու։ Բայց հռէ ծննդեամբ կիլիկեցի չէր, անշուշտ առաջին տարիքէն Կիլիկիոյ մէջ ապրած և հայրապետանոցին մէջ յառաջացած էր։ Շարունակողը զայն կը կոչէ պէր Կարապետ Բոյչն (ՍԱՒ. 172), որ ժողովրդական հնչումով Բոչի ալ կ'արտասանուի։ Անկայտ կը մնայ այդ կոչումին իմաստն ու ծագումը, և չենք կարծեր թէ խստամբեր կեանք ունեցող, բոկոտն չրջող կամ ղոկ ու խեղճ ապրող մէկ մը եղած ըլլայ։ Այսպիսի առաքինութիւն կամ կենցաղ կիլիկիոյ հայրապետանոցին ընտանի չէր այդ միջոցին։ Աւելի հաւանական է կարծել թէ խեղճ, բոկիկ ու բոկոտն, կեղեցի պանդուխտ տղայ մըն էր, հայրապետանոցին մէջ պատսպարուած և հետզհետէ յառաջացած ու բարձրացած, նման Եղիսպատրուշեցիի նման մէկ մը (§ 614)։

ԿԱՐԱՊԵՏՆԵՐԸ ԵՐԿՈՒ ԶԵՆ

1375. Աւելի կարեւոր է զննել կարապետի անձին վրայ կատարուած կրկնումը, որով մէկ կարապետը երկու կարապետ կաթողիկոսներու վերածուած է, և կարապետ Ա և կարապետ Բ անուններով երկու կաթողիկոսներ ցուցակի անցած են։ Այդ խիւրիմացութեան մեղի ծանօթ հնագոյն կազմողը Խաչիկեան է, որ իր ցուցակին մէջ գրած է. ՊԽՊ ր. պէր Կարապետ. ՊԽԶ ր. պէր Դաւիթ. ՊՅՐ ր. դա՛ պէր Կարապետ (ԴԱՒ. 336)։ Ետեւէն նկողնէն ալ իրեն հետեւած (ՉԱՒՄ. Գ. 428), և բոլոր վերջին գրողներ նոյն սխալութիւնը ընդունած են։ Այլ մենք հնագոյն աղբիւրներու դիմած ատենիս, չուտով տեսանք թէ խիւրիմացութիւն մը տեղի ունեցած է այդ բանին մէջ։ Շարունակողն որոշակի և կրկին անգամ գրած է, պէր Կարապետ Բոյչն ամ եղիազան (ՍԱՒ. 172), որով Հայոց 852'էն ետքը եղող կարապետը Աիւնեցին 844'ին կաթողիկոս գտնուող Կարապետը եղած կ'ըլլայ, և այլեւս երկու կարապետներու տեղի չմնար։ Որպէս զի մեր տեսութիւնը աւելի յայտնի ըլլայ, պէտք կ'ըլլայ խիւրիմացութեան ծագումն ալ ցուցնել։ Անենք որ երկու կարապետներու միջանկեալ Դաւիթ մը կը դնեն, անոր պաշտօնին տեւողութիւնը կը դնեն 1397'է 1403 տարիներու մէջ։ Այդ մէկուկէս տարիներու պատկանող յիշատակարաններ, կարապետ անունով կը յիշեն ժամանակին կաթողիկոսը, այսպէս 1400'ին կը գրուի, է հայրապետոցն Կիլիկեցւոց պէր Կարապետ (ՓԻՐ. 11), 1401'ին է հայրապետոցն Կիլիկեցւոց պէր Կարապետ (ՓԻՐ. 14), և 1402'ին է կաթողիկոսն Հայոց պէր Կարապետ (ՓԻՐ. 18), և հռէ այդ տարիներուն կարապետ տակաւին կաթողիկոս էր, Դաւիթի մը տեղի չէր մնար։ Սակայն այդ միջոցին Դաւիթ կաթողիկոս մը կար, բայց ոչ թէ Սսոյ այլ Աղթամարայ մէջ, նոյն ինքն 1393'ին նահատակուող Զաքարիայի եղբայրն ու յաջորդը։ Աղթամարայ կաթողիկոսները սովոր էին համարձակ Հայոց կաթողիկոս կամ հայրապետ կոչուիլ, մանաւանդ իրենց վիճակային գրողներու կողմէ, զորօրինակ, է կաթողիկոսն Հայկազեան տէր տէառն Դաւիթ (ՓԻՐ. 18), կամ է հայրապետութեան տէառն Դաւիթ (ՓԻՐ. 24), կամ պարզապէս է հայրապետութեան տէառն Դաւիթ (ՓԻՐ. 14։ Այդ կոչումներէն են որ առիթ տուած են նոյն միջոցներուն Դաւիթ կաթողիկոս մը ենթադրել, և հետեւապէս կարապետը միջակուսր ընելով երկուքի վերածել։ Մեր տեսութիւնը իւր վերջնական հաստատութիւնը կը գտնէ այն վկայութիւններով, ուր կարապետ և Դաւիթ միասին կը յիշատակուին միեւնոյն ժամանակ, մէկը Սիս և միւսը Աղթամար նստած։ Այսպէս 1400'ին գրուած է, է հայրապետութեան Կիլիկեցւոց պէր Կարապետ, և է հայրապետութեան Ինչառնեաց ոչ յԱղթամար կղզի, Դաւիթ՝ եղբօր տէառն Զաքարիայ (ՓԻՐ. 11), և 1401'ին է հայրապետութեան պէր Դաւիթ Աղթամարայ, և է Կիլիկեցւոց պէր Կարապետ (ՓԻՐ. 14), և 1404'ին, է կաթողիկոսութեան Հայկազեանց տէառն Կարապետ Կիլիկեցւոց, և է Ջրոյ հայրապետութեան տէառն Դաւիթ Աղթամարայ (ՓԻՐ. 23)։ Այդ վկայութիւններն ու բացատրութիւնները այլեւս վարանման տեղի չեն թողուր, սովորական ցուցակներուն Դաւիթ Դ'ը, բոլորովին վերցնել, և կարապետ Ա և կարապետ Բ կաթողիկոսներու տեղ միակ կարապետ Ա Կեղեցի, մականուն Բոկիկ, կաթողիկոս մը ընդունիլ, ինչ-

պէս որ բոլոր յիշատակներ ու յիշատակարաններ երկրորդ կարապետի մը ներթափրութիւնը չեն ճանչնար։

ՋԱՀԱՐԻԱ ԱՂԹԱՄԱՐՑԻ

1376. Անցողակի յիշեցինք Աղթամարայ Դաւիթ կաթողիկոսին նախորդին և եղբօր Զաքարիայի անունը։ Սա աթոռ բարձրացած էր 1378'ին, և մեծ փոյթ ունեցած էր իր վիճակին զարգացման, և աթոռին պայծառութեան։ Իր օրով Սարգիս Սորբեցի վարդապետը, Նչեցիի աշակերտ և Որոտնեցիի աշակերտակից, ծաղկեցուցած էր եղերով լերան վրայ գտնուող Ս. Գէորգ վանքը, որ Սարի Ս. Գէորգ կը կոչուի լերան գագաթը գըտնուելէն, Փութկու Ս. Գէորգ ալ կ'ըսուի մերձակայ գիւղին անունէն, և շատ բանուկ կապան մը ըլլալուն, անցորդներ այնտեղ օթարան կը գտնէին, և աքաղաղի ձայնով փուքի ու փոթորիկի գուշակութիւն կը ստանային (ՕՕ. ԲԻՋ. 1194)։ Օր մը Ոստանի դատաւորը ճաֆէր անուն (ՁԱՍ. Ա. 271), Աղթամար կու գայ և իր մախաղը կաթողիկոսին աւանդ թողուլ կ'ուզէ, իսկ Զաքարիա նենգամիտ դիտումը գուշակելով ապահով տեղ չունենալը կը պատասխանէ։ Ասոր վրայ դատաւորը հերձուածելով մինչեւ իսկ կաթողիկոսը կ'ապտակէ, սակայն ուրիշներուն վրայ հասնելուն կը ստիպուի տեղի տալ, և որպէս զի պարտաւոր չմնայ, ինքն իր երեսը սկրդելով և արիւնոտելով Ոստան կը դառնայ, և Աղղին ամիրային կաթողիկոսը կ'ամբաստանէ, երբ ամիրայն քաղաքի մէջ կը հանգստանար։ Զաքարիան ալ ետեւէն կը հասնի դատաւորին դէմ գանգատելու, և ամիրային առջեւ դէմ դէմի կը գտնուին։ Ամիրան դատաւորին վկայութիւնը գերակշիռ կը համարի, և իրեւ գործը վերջացնելու միջոց կ'առաջարկէ, ԹՈՒՅՆ ՅՕՐԵՆ ՈՒՐ Է ԵՒ ՀՈՐՀԻՄ ԻՆՁ ՀՂՕՐ (ՆՈՐ. 173)։ Զաքարիա համարձակ կը պատասխանէ, իր անպարտութիւնը կը հռչակէ, պարտաւոր եղած առնէն ալ իր սուրբ հաւատքէն չհեռանալը կը յայտարարէ։ Շուրջը գտնուղներ կը զայրանան քրիստոնէութիւնը փառաբանելուն վրայ, և առանց ամիրային հրամանին սպասելու, վրան կը յարձակին, կուչտէն կը վիրաւորեն, և բաղանիքէն դուրս հանելով կը մերկացնեն, և վիզէն չուան անցընելով փողոցներ կը քաշկռտեն, մէկ կողմէն ալ կը քարկոծեն ու կը հարուածեն, մինչեւ որ փողոցի մէջտեղ հոգին կ'աւանդէ, ՕՐՀՆԱԾ ԸՆԴՆ Է ԲԵԲԱՆՆ, և ԲԱՐԻ ԽՈՍՈՎԱՆՈՂԸՆԿԱՆ (ՆՈՐ. 174)։ Աղղին ալ այս եղերական վախճանէն ազդուած, չներսէս մարմինն անարգել, այլ կը հրամայէ Հայերուն՝ ԹԱՂԼՊՈՓՈՎ ՈՐԵՒ Ե ԿՈՓԵՑԷՆ, և անոնք ալ կը տանին և կը թաղեն Աղթամարի մէջ (ՁԱՍ. Ա. 272)։ Զաքարիա կաթողիկոսի նահատակութեան օրը նշանակուած է 842 մեհենի 15, որ բուն տումարով կը պատասխանէ 1393 յունիս 25'ին, չորեքշաբթի օր (ՆՈՐ. 176), մինչ Ցայսմաւուրքի մէջ նշանակուած յունիս 26 օրը (ՁԱՍ. Ա. 272) հինգշաբթի կը պատասխանէ, և թերեւս թաղման օրն է։ Նահատակութեան տարին ունանց մինչեւ 1396 յետադգիլը (ՁԱՄ. Գ. 434), դրչագիրներու չփոխմտութեան արդիւնք պէտք է սեպել։ Նահատակ կաթողիկոսին յիշատակը գովուած է իր աշակերտներէն Գրիգոր Աղթամարցի տաղաւոց վարդապետին յօրինած գանձ քարոզով (ՆՈՐ. 177)։ Այս Զաքարիայի եղբայրն ու յաջորդն է Դաւիթ, որ 1393'ին պաշտօնի անցնելով մինչեւ 1423 կաթողիկոսութիւն վարեց Հաւաքարանին հաստիատ (ՕՕ. ԲԻՋ. 1195), թէպէտեւ յիշատակարանի մը մէջ 1430 թուականը կը տեսնենք (ՓԻՐ. 94), եթէ ընդօրինակութեան սխալանք չկայ, զի չատ երկարած պիտի ըլլար իր պաշտօնը։ Սա է որ չփոխմամբ Սսոյ կաթողիկոսներուն ալ չարքն անցած է (§ 1375)։

ԼԵՒՈՆԻ ՄԱՀԸ

1377. Սոյն այս 1393 տարին վերջին Լեւոնի մահուան տարին է, որուն ներողապէս անցնելէն ետքը (§ 1356) այլեւս իրմէն չհետեւեցանք, մեր պատմական չրջանակէն դուրս նայելով, սակայն գոնէ հարեւանցի քանի մը տեղեկութիւններ աւելցնենք նիւթի ամբողջացման նպատակով, Լեւոն 1383'ին սկիզբները Աւինիոն հասած, մայիս 4'ին կղեմէս Է պապին մօտէն մեկնեցաւ, Արագոնայի և Կաստիլիոյ թագաւորներուն երախտագիտական այցելութիւն տալու։ Առաջ

Արագոնիայի Պետրոս թագաւորին համառօտ այցելութիւն մը տուաւ, ու փութաց Կաստիլիոյ Ծովհաննէս թագաւորին հանդիպիլ, որ մայիս 12'ին պիտի ամուսնանար, բայց Լեւոնի չհասնելուն պատճառով՝ մայիս 16'ին յետաձգեց և Լեւոն նշանաչք Նոթ (ԴԱՐ. 191)։ Ծովհաննէս Լեւոնի հետ պատշտի եղաւ Սպանիոյ մէջ, և այդ միջոցին օգոստոս 14'ին Սեգովիոյ (Segovia) մայր եկեղեցւոյն մէջ Ծովհաննէս Դարդէլի եպիսկոպոսական ձեռնադրութիւնը կատարել տուաւ հանդիսապէս (ԴԱՐ. 192), իսկ Լեւոնի չնորհեց Մադրիդ և Վիլլարէալ և Անդիխար (Mädrid. Villareal, Antequera) քաղաքները իբրեւ աւատ, և գումար մը Պաղդիա ուղեւորելու համար (ԴԱՐ. 193)։ Լեւոն յիշեալ քաղաքներուն տիրանալէ ետքը ճանապարհ ելաւ 1384 փետրուար 29'ին, և Նաւարրայի թագաւորին, Բէառնի կոմսին, Արագոնայի թագաւորին և Աւինիոնի պապին հանդիպելով յունիս 30'ին Պարիս (Paris) հասաւ, և մեծ պատուով ընդունուեցաւ կարոլոս Ը Պաղդիոյ թագաւորէն։ Այստեղ կը փակուին Դարդէլի յիշատակները (ԴԱՐ. 199)։ Լեւոն Պարիսի մէջ առատ դրամական նպաստներ ստացաւ, և Սէնդուէնի (Saint-Ouen-sur-Seine) պալատն ալ իբր յատուկ բնակարան (ԲԱՍ. 105)։ Պաղդիոյ և Անգլիոյ վէճին առթիւ յանձնառու եղաւ Պարիսէ Լոնդոն բանագնաց երթալ, և 1385 հոկտեմբեր 24 թուականով Անգղիոյ Հենրիքարտոս Բ թագաւորին ապահովագիրը առանալով (ԲԱՍ. 108) Լոնդոն անցաւ, բանական աշխատեցաւ բայց հաչտութիւնը չդոյացաւ (ԲԱՍ. 116), թէպէտ Լեւոն նպաստներ և պարգեւներ առաւ, և 1386 մայիս 20'ին Պաղդիա դարձաւ (ԲԱՍ. 119), և կարոլոս Ը թագաւորին մտերիմ խորհրդականը եղաւ, և միչտ անոր մօտ ըլլալու համար Տուրնէլի (Tournelles) պալատը փոխադրուեցաւ (ԲԱՍ. 121)։ Հաչտարար բանակցութիւնները նորոգուեցան 1392'ին, և Լեւոն նորէն մասնակցեցաւ, թէպէտ առանց յաջողութեան (ԲԱՍ. 119)։ Լեւոն 1393'ին 51 տարեկան կ'ըլլար, բայց չատ տկարացած էր, անկողին ինկաւ Տուրնէլի պալատին մէջ, և մեռաւ նոյեմբեր 29'ին, որ չաբաթ օր մըն էր, և ոչ կիրակի (ԲԱՍ. 125), և թագաւորական պատիւներով թաղուեցաւ Սէնդրնի (Saint-Denis) արուարձանը, Ս. Դիոնեսիոս եկեղեցւոյ արքունական դամբարանին մէջ։ Հին փառաւոր չիրիմին միայն պատկերը մնացած է (ԲԱՍ. 1), Պաղդիական յեղափոխութեան աւերածներէն ետքը։ Իսկ այժմ վրան արձանով, այլ մէջը դատարկ գերեզմանաքար մը միայն կը գտնուի Ս. Դիոնեսիոսի եկեղեցւոյն մէջ, զի ոսկրները խառնուած կը կարծուին Մօնրուժ (Montrouge) թաղի գիտնափորներուն մէջ դիզուած ոսկրներուն հետ (ԲԱՍ. 145)։ Լեւոնի անձին և գործերուն վրայ բաւական խօսած ենք. Եւրոպայի մէջ անցուցած կեանքն ալ մեծ գովեստի առիթներ չընծայեր։ Իրաւ ամէն տեղ իբր քրիստոնեութեան համար զրկուած և հալածուած մը՝ մեծ պատիւ գտաւ, և Հայոց թագաւորութիւնը նորոգելու առաջարկով մեծամեծ գումարներ ձեռք անցուց, բայց իր գովաբաններն ալ կը խոստովանին, թէ թէպէտ չատ դրամ կը հաւաքէր, բայց ասոնց խղճի խոչ ոանէնալը էր հաճոյներուն կը ձախսէր ջանալ (ԲԱՍ. 106)։

ՈՒՂՂԱՓԱՌ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

1378. Այդ միջանկեալ տեղեկութիւնները ետքը նորէն Աւինիոնի եղելութեանց դառնալով, կարապետ կաթողիկոսի գործունէութեան մասին յիշատակ մը չենք գտներ։ Ոչ միայն կաթողիկոսական աթոռին ապիկարներու և անարժաններու ձեռք ինկած ըլլալը, այլ և նոյն իսկ կիլիկիոյ անկեալ և քայքայեալ դիրքը, ամէն նշանակելի գործողութեան արգելք էր։ Կաթողիկոս հղողը, իր ձեռք անցուցած լսխտէն զոհ, զայն իր դիւրութեանց գործածելէ աւելի մտածմունք չունէր, ազգին հանրութեան ու եկեղեցւոյն ամրողջութեան հետ ոչ յարաբերութիւն կը պահէր, և ոչ տեղեկութիւն ունէր, որ տատապելու կացութեան դարմանը հոգար, արդէն նմ հոգալ ալ ուզէր՝ գործելու ոչ միջոց ունէր և ոչ կարողութիւն։ Այն ամենատխուր կացութիւնը՝ զոր Մեծոփեցին կը պատմէ Սիս նստող վերջին կաթողիկոսներուն վրայ (ԿՈՍ. 56), հետզհետէ աճելով իր գագաթնակէտը պիտի հասնէր, սակայն արդէն կարապետի օրէն զեղծումները սկսած էին և օրէցօր կը տարածուէին։ Երբ

կիլիկիա իւր վերջնական անկումին կը դիմէր, Հայաստանի ներքին գաւառներ, նոյն իսկ արտաքին տագնապներու և տառապանքներու ներքեւ, գոնացուցիչ արդիւնքներ ցոյց կու տային։ Որոնկիսին ձեռնասուններն էին, որոնք աստ և անդ վանքներու մէջ, գլուխնին խումբ մը աշակերտներ հաւաքած, եկեղեցւոյ պաշտպանութեան գործիչներ, և ժողովուրդին առաջնորդող վարդապետներ կը պատրաստէին։ Քաղաքական անկումին ներքեւ կ'աչխատէին գոնէ կրօնական անկումին առջեւն առնել, որ սպառնալից երեւոյթներ կը ստանար Կիլիկիոյ Աղթամարներուն և Երնջակի Ունիթորներուն երեսէն։ Սահակ-Մաշտոցեան դարուն երեւոյթն էր որ կերպով մը կը կրկնուէր։ Այն ատեն Արշակունի թագաւորութեան դադարման և կրօնական հալածանաց գունութեան դէմ, Հայ գրագիտիւնն ու երանաշնորհ Թարգմանիչներն էին, որ ազգին պահպանութեան ու պաշտպանութեան գրաւական կ'ըլլային. այս տեղ ազգային իշխանութեան վերջանալուն և ազգային եկեղեցւոյն դէմ լարուած նենգութեանց հանդէպ, վերանորոգեալ ուսումն և Ուղղափառ վարդապետներն էին, որ հայրապետաւան և հայածեալ եկեղեցւոյն պաշտպան կը հանդիսանային։

ՏԱՔԵՒԱՑԻԻՆ ԳՈՐԾԵՐԸ

1379. Առաջինն ու գլխաւորը Տաթեւ էր, ուր Տաթեւացին եկած էր 1390'ին Ապրակունեաց վանքը թողլով (§ 1367), և ուր իրեն չորքը հաւաքուած էին Որոնկիսին վերջիններն և նորէն իրեն յարողները։ Ասոնց մէջ յանուանէ կը յիշուին, Մխիթար Տաթեւացի, Ծովհաննէս Հերմոնեցի, Գալուստ Վազանդնեցի, Սիմէոն Սիւնեցի, Յակոբ Բոստացի, Գրիգոր Այրարատեցի, Գրիգոր Ջուղայեցի, Մատթէոս Ջուղայեցի, Աւետիս Առատպատցի, Եղիա Ոծոփեցի, Ծովհաննէս Վազանդնեցի, Ծովինան Շամախեցի, Ծովհաննէս Կապանցի մականուանեալ Կարմիր, Մատթէոս Ուխտեցի, Մկրտիչ Փայտակարանցի և Ստեփանոս Թաւրիզեցի (ՄՆԹ·50)։ Տաթեւացիին արդիւնաւորութեան մէջ երկու գլխաւոր կէտեր նկատողութեան արժանի են։ Առաջինը, իւր ուսումնական ծրագիրն է, որուն առաջին մասը կը կազմէին անչուշտ Հնոց և Նորոց Կտակարանաց մեկնութիւնները, և նախնի սուրբ հայրերուն գրուածները, որոնցմով ուղիղ հաւատքը և ուղղափառ դաւանութիւնը կը հաստատէր։ Ասոնց հետ կ'աւանդէր նաև լուծմանց տրամաբանական (ՄՆԹ·34), այսինքն է տրամաբանական (ՄՆԹ·51), կամ յոյն փիլիսոփայներուն՝ Պղատոնի և Արիստոտելի, Փիլոնի և Պորփիւրի իմաստասիրական գործերուն բացատրութիւնները, նպատակ ունենալով միտքը կրթելու ուղիղ տրամաբանութեան, և սուրբ գիրքէ անկախաբար ապացուցուած ճշմարտութեանց մէջ։ Տաթեւացիին պետական երկասիրութեանց գլխաւորն եղող Գէղ Հաջմանց գործը, իւր ձեւովը յայտնապէս կը ցուցնէ թէ Տաթեւացին հմուտ էր լատին լեզուի և տիպակ էր լատին աստուածաբանութեան Սկոլաստիկեան ոճին, և Հայոց եկեղեցւոյ ուղղափառութիւնը կը պաշտպանէր միեւնոյն ձեւերով, որով անոնք սովոր էին իրենց վարդապետութիւնը պաշտպանել, և Հայ եկեղեցւոյ դէմ գրել։ Երկու հատոր Ամարան և Ջմրան քարոզգիրքներն ալ կը վկայեն, թէ յատուկ մտադրութիւն դարձուցած էր իւր աշակերտութիւնը քարոզի և բեմբասացութեան վարժեցնելու։ Արիստակէս վարդապետի և Գէորգ Լաստիվերտցիի, գրչութեան արուեստին վրայ գրուածներով զբաղած ըլլալն ալ (ՄՆԹ·52), նչան է թէ ընտիր գրչագրութեան և առատ ընդօրինակութեան գործ մեծ արուած էր Տաթեւի դպրանոցին մէջ, որով Տաթեւացին, ժամանակին հասկնալի ուսմամբ, լիագոյն ծրագիր մը կը մշակէր իւր աշակերտներուն զարգացման համար։ Երկրորդ նկատելիքնիս է, որ Մեծոփեցին Տաթեւացիին աշակերտներէ և վարդապետներէ յիշելէն ետքը կ'ասէ յետոյ, և ահաւասիկ բազումս առեալ զվարդապետութիւն ի նմանէ (ՄՆԹ·51)։ Այդ բազմաթիւ քահանաներն անչուշտ առանձնակեաց կղերին կը պատկանին, և միատ կ'ընձեռնեն մեզի հետեւցնելու, թէ եկեղեցական բարձր ուսումը կուսակրօն դասակարգին պահուած առանձնայատուկ իրաւունք մը չէր, այլ թէ կուսակրօն և ամուսնաւոր դասակարգերու հաւասարապէս կը արուէր եկեղեցական պաշտօնէութիւնէ պա-

հանջուած կրթութիւնը, և թէ արեղայական վեղարին հետ հարկաւ կապուած չէր նկատուեր վարդապետական գաւազանը։ Տաթեւացին 1390'էն սկսելով Տաթեւի մէջ աշխատեցաւ տեւականապէս, ալ երբեք անոնք (ՄՆՄ·34) մինչեւ 1409, ինչպէս պէտք է հաշուենք հիմնուելով Հայոց 858 թուականին հաւելման (ՄՆՄ·52), և ըստ այնմ ուղղելով չփոթմամբ 867 (ՄՆՄ·34) կամ 868 (ՄՆՄ·53) գրուած տեղերը։ Թէպէտեւ այդ միջոցին Լէնկթիմուրեան արշաւանքները մեծ տագնապներ հասուցին Հայաստանին, այլ համեմատաբար ազատ մնաց Սիւնեաց երկիրը, և Տաթեւացին կրցաւ իր գործը յառաջացնել։

ԱՊՐԱԿՈՒՆԵՑԻՒ ՄԱՀԸ

1380. Սարգիս Ապրակունեցին ալ նմանօրինակ կերպով կ'աշխատէր Սուխարու վանքին մէջ (§ 1368), և իրեն աշակերտներէն էին այն վարդապետները, որ Տաթեւացիին Մեծոփ գալուն առթիւ այնտեղ խմբուեցան, Գրիգոր Խլաթեցի, Յակոբ Ովաննայի, Մարգարէ Վարագցի, Յակոբ Ապիւնակցի, Յովհաննէս Փափլինցի, Ստեփանոս Բերկրիցի, Մկրտիչ Հիզանցի, Յովհաննէս Բաղիշեցի Սարգիս Յարութիւնցի, և Մելքիսէդ Երզնկացի (ՄՆՄ·52), ինչպէս նաեւ Արեգնէ Տաթեւ գացող երէսփոխան եղբօր, յատկապէս կոչուած աշկերտ Դեղին Սբէրէ, որք են, Յակոբ, Մարգարէ, Յովհաննէս, Մկրտիչ, կարապետ, Մելքիսեդ, Սարգիս, Մատթէոս, կարապետ, և Թովմաս Մեծոփեցի պատմիչը, որ մեզացած երկուքին անունը չտար (ՄՆՄ·51)։ Ասոնցմէ Սարգիս՝ Սալնապատացի կը յիշուի, և Մկրտիչը Նահապետացի, և Յովհաննէսը՝ Փափկչեցի, և երկու Մկրտիչներ եւս կ'աւելցուին՝ մէկը Հողձեցի և միւսը Օղուլբէկեան (ՏԱՇ·418), որոնք պէտք է ըլլան 12 թիւը լրացնողները։ Սարգիսի աշխատութիւնն ու արդիւնաւորութիւնն ալ համեմատեալ էր Գրիգորի առաջին, սակայն Սուխարու աշակերտներուն դիմումը, որ բան մը աւելի վաստակելու նպատակով Տաթեւ գացին, այն տեղ աւելի բարձր ուսում տրուելուն նշանակն է։ Սարգիս երիցագոյն էր Գրիգորէ, և ոտանաւորի գրեթէ ընկերակից (§ 1352), ուստի կանխուց անոր մահը, և 1401'ին վախճանեցաւ դէպ Լոբոպոլեան Սբէրէս ալ-օբեալ և լէ ասօբէ (ՄՆՄ·49), և թաղուեցաւ Արճէշի եպիսկոպոսարանը Նաչատուբի և Զաքէոսի գերեզմաններուն քովը (ՄՆՄ·37)։

ՎԱՐԴԱՆ ՀՈԳՈՑԵՑԻ

1381. Սուխարու առաջնորդութեան և ուսուցչութեան մէջ, Ապրակունեցիին յաջորդեց, ոչնչէն այլն Ա-ռաքել պատմ., դէպ Տփղասէրն և Լոբոպոլեան Հայոց, Վարդան Հոգոցեցին (ՄՆՄ·49)։ Ասոր ձեռքին տակ կը գտնուէին Թաղամաշկերտ ասօրել տեղ վարդապետաց ըմբռնօք։ Նա Սուխարու Սուրբ Աստուածածնին վանքին մէջ վարդապետաց ըմբռնօք, և ասմունքէ էջից և սաղմոսերգութեամբ պայծառացոյց ընթերցողներն Արճէշի գաւառին մէջ (ՄՆՄ·50), մինչեւ որ ստիպուեցաւ անկէ քաշուիլ փոխոցել յանդիման, այսինքն է 1405 տարուոյ Լէնկթիմուրի արշաւանքներուն պատճառով, և գնաց հաստատուիլ Վանայ քաղաքին մօտերը է ասօրէ Սալնապատ, որ է Աղթամարեաց օրհրուն Զորովանքը, ուր քիչ ետքը 1406'ին (ՄՆՄ·41), եհաս ոչ վախճանի նորա, և այն տեղ թաղուեցաւ։ Վարդանի մահուընէ ետքն է, որ Սուխարու աշակերտութենէն 12 վարդապետներ, որք ճեպել գնացին Տաթեւ, վասնզի այն տեղ կը վարդապետէր Մեծն Գրիգոր, Լոբոպոլեան Ամենայն Հայոց, երէցփոխ Լուսաւորչին, և ասպետաբարքն ի երկիւղէ ելեալ ոմանց նմանապէտաց և Լոբոպոլեաց հնոց և նորոց (ՄՆՄ·50)։ Այնտեղ երկու տարի մինչեւ 1408, չարունակեցին ուսանիլ 12 գաղթերունիները, զորս յոյժ սիրով ընկալաւ Տաթեւացին, կերպով մը հայրենակիցներ նկատելով և իր ծագումը վերյուշելով, զի իւր հայրն ալ էր ի գաւառին Գաղթեղունեաց ի գեղջն Աբռիլոյ (ՄՆՄ·50)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԵՑՈՓԵՑԻ

1382. Տաթեւէն և Սուխարէն ետքը նշանաւոր եղաւ Մեծոփայ վանքը, որուն ծաղկեցնողն էր Յովհաննէս Մեծոփեցի։ Տաթեւացիին քովէն բաժնուած ինչպէս կ'երեւի, անոր Ապրակունիքէ Տաթեւ փոխադրուած միջոցին (§ 1369)։ Յովհաննէս ուխտ ըրած էր, որ եթէ իրեն պակ Աստուած երկնաւոր-ներէն կրէ վերապետութեան, որ է մեծ

վարդապետութեան աստիճան, Ասոծածնէ կոչին փաճոյ չինէ յոյժ հրաշալի (ՄՆՄ· 55), և այս միտքով Մեծոփի հաստատուէլէն երկու տարի ետքը ուզեց չինութեան ձեռնարկել, այլ չկրցաւ գի ոչ իոյր ինոսոն ճոպոպոպեր է իոոոո էոր, ուստի պարտաւորուեցաւ համբերել ժամանակ ինչ, թէպէտ միւս կողմէն զբօսելոց զոոոբ ոոխոն ժամօ և ոզբինէ և պոպոբոփօ, ընընջմոբ էրոց և ոոոոճանօ և էեվիջէկ կոբճոոօրինոմբ, ծոոօ և փնէօ (ՄՆՄ· 57)։ Վերջապէս յաջողեցաւ գտնել Հոռոմ մը ծարաճ անուն, յոյժ ինոսոն և ճոբոբ չէնող, որ այն կողմերը ինկած էր է էեբորինէն Թոմոբէն, և անոր գլխաւորութեամբ հիմնարկութիւնը կատարեց 1402'ին, բայց չէնքը ոոբոբեցոո չեօբէն ոմն, այսինքն է 1409'ին (ՄՆՄ· 58)։ Ծովհաննէս Մեծոփեցի տաճարին արձանագրութեան մէջ, ծարաճ յոյնին հետ յանուանէ կը յիշէ բազմաթիւ հայ ոոբ· արհեստաւորներ ալ, որք են, Առամ, Սիրուն, Դաւիթ, Տիրատուր, Մկրտիչ, Ծովհաննէս, Ծովսէփ, Ղազար, Մարտիրոս, Կիրակոս, Զաքար Բէկ, և միւս Առամ (փիր· 30), և մենք ալ առիւս կը բնենք Հայ արհեստաւորներու անունները անկորուստ պահելու համար։ Մեծոփայ տաճարին փառաւոր չինուածը գրգռած էր այլ ազգինները, և քաղծմ յանհոոոբեցն մոխոցեալ լինէին, և մինչեւ իսկ փորձեցին քակել, այլ Ծովհաննէսի պաշտպան կեցաւ Զաքար (ՄՆՄ· 58), որ է Թաթար կուսակալ Շէյխ Ահմէտը, որ ծոոոն ամ ծովբոլոբո, այսինքն վանայ լիճին չրջակայ երկիրները կառավարեց, և յոյժ քոբէքոբոյ և էբէոոոնէոոէբ էոլով, չէնցուց ու ծաղկեցուց աշխարհը, 1397'էն մինչեւ 1407 (ՄՆՄ· 49)։

1383· Վերոյիշեալ Շէյխ Ահմէտին հովանաւորութեան ներքեւ ծաղկեցաւ նաեւ Սարբ Ս. Գէորգ վանքը,

ԵԼԱՔԵՑԻՆ ԵՒ ՈՒՐԻՇՆԵՐ

Սարգիս Սորբեցի վարդապետին ձեռքով (ՄՆՄ· 49), զոր անգամ մը յիշեցինք (§ 1376)։ Պիտի չկարենանք մանրամասնութիւններ տալ Ծակոր Սաղմոսավանքի և Գէորգ Երզնկացի վարդապետութեան գործունէութեան վրայ, քանի որ կանոնաւոր տեղեկութիւններ կը պակսին։ Իսկ Գրիգոր Խլաթեցի վարդապետը, որ Մերենց մականուանեալ է, զի էր ոբջէ հոոոոբջմ ոոն Ասոոծոյ ծնէէ (ՄՆՄ· 41), վարդան Հոգոցեցիին յաջորդեց Սալնապատի մէջ, բայց ոչ կրցաւ հոն մնալ, և ոչ ալ Սուխարու վանքը գտնել, և քաչուեցաւ Բզնունեաց գաւառը, Արծկէ քաղաքի մօտ, Ծիսնայի Ս.Ստեփանոս վանքը, Սիսիան լերան ստորոտը, այժմ ընկուզած։ Խլաթեցին մեծ աշակերտութիւն չկրցաւ կազմել, դժուար ըլլալով ուսման հետեւիլ աղետալից միջոցին, թէպէտ Մեծոփեցին այդ կը վերագրէ ոոնոոցեալ քոբոց ոոոոճանոց ծբոոմ ոզէէ։ Ուստի ինքզինքը տուաւ գիրքերու ընդօրինակութեան, և յոոոն ամ էէբ էբէոց փէ և էէչէբ (ՄՆՄ· 42), և արդիւնքը աղքատներուն կը բաշխէր (ՄՆՄ· 85)։ Խլաթեցիին գլխաւոր գործն է Ծայսմաւուրքը նորէն կարգադրելն ու ճոխացնելը, վկայաբեր անունին ալ արժանանալով (ՀԱԹ· 560), և ինքն ալ նոր վկայ մը ըլլալով իւր ծեռացեալ հասակին մէջ։

1384· Լէնկթիմուրի արշաւանքներուն մանրամասնութիւնները զանց ընելով, յիշենք միայն թէ 1387 ձմեռուան սկիզբը իւր երկիրը դառնալէն ետքը (§ 1365), զէնքերը դարձուց հեռաւոր կողմեր, արշաւեց Կովկասներու հիւսիսակողմը գտնուող երկիրները, Թուսաստանն ու Խրիմը ասպատակեց, անկէ դարձաւ հարաւ, Ատրպատականէ և Պարսկաստանէ անցաւ Հնդկաստան, յարձակեցաւ ներքսագոյն Թաթարաստանի և Չինաստանի վրայ ալ, ոչ կանոնաւոր աշխարհակալութեամբ, այլ հինաբար ասպատակելով, աւերելով և աւարելով, գերելով և գերփեելով անխնայ։ Լէնկթիմուրի Հայաստանի կողմեր արշաւանքները նորոգուեցան 1395'ին (ՄՆՄ· 44), Մէյոաֆարէքի կողմէն մտնելով, և հետզհետէ զարնելով Ամիդը, Մերդինը, և Արեւորդիներուն չորս գիւղերը, հասաւ երզնկա, ուր եկեղեցիներուն կործանումը արգելելու խնդրանքով իրեն ներկայացաւ Գէորգ երզնկացին, բայց չհե և էէլէ պղծոյն՝ չրնոնէն պոպոոեցան և ոչխն իջնէէ, և չկրնալով յաջողիլ լուլվ և ոբպոոոոո չեոպ պոչյոո ոյբն Ասոոծոյ (ՄՆՄ· 45)։ Լէնկթիմ-

մուր երզնկայէ սկսաւ դէպ ետ երթալ, Բասէնի Աւնիկ բերդը գրաւելուն առթիւ Մսիր բերդակալը և հարիւր բերդապահներ կոչեաց, և քերդին ի վայր ընկեց, և դառն։ Արարատեան նահանգի մէջ Բագրատունեաց բերդը, այսինքն կարսը, աւած առն Իրևք-հարիւրապան տաճիկներ և քրիստոնեաներ զասուց, ըսելով թէ դէրճոանեայս սպանանիմ և զաճիկն ազատիմ։ Ասոր վրայ, կարսի Մկրտիչ եպիսկոպոսին երկու եղբայրները երթեւեկ խառնեցան ի գոնդս Տաճկաց, սակայն սպանելու հրամանը տաճիկներուն վրայ եղաւ, և երկուքն ալ միասին սպանուեցան, թէպէտ կը պոռային թէ մեր Քրէճոպոլ ծառայ եմ, և ասոր դէմ եղեր եղէնոպոլին (ՄԱՄ. 46)։ Թաթարաց սպասատակները չարունակեցին մինչեւ Կոգովիտ և Արճէշ, և այդ միջոցին տեղի ունեցաւ Ստեփանոս Դարացի վարդապետին մահը (ՄԱՄ. 47)։ Զանազան պատերազմներ չարունակեցին Թաթարներու զօրավար Աղդինի, և Թիւրքմէններու ամիրայ Ճուսուֆի կամ Գարաեուսուֆի մէջտեղ։ Ճուսուֆ յաջողութիւն մըն ալ ունեցաւ՝ Ճովհաննէս անուն Հայու մը հասուցած լուրովը, զոր հաբաղաբ մը կ'անուանէ Մեծոփեցին (ՄԱՄ. 48), բայց Թաթարներ նորէն զօրացան, և Ճուսուֆի պարտաւորուեցաւ փախչիլ Ասորիքի կողմերը, և 1396'էն մինչեւ 1406 այլ ոչ կրաց ի՛նչ Հայաստանի կողմերը (ՄԱՄ. 49), և ասկէ կը սկսի Շէյխ Ահմէտի չինարար կառավարութիւնը, ինչպէս արդէն յիշեցինք (§ 1382)։ Ինչ որ այս արշաւանքներու մէջ մեր դիտել տալ ուզած կէտն է, Հայաստան աչխարհին աւերումն է, զոր տխուր սիրտով կը պատմէ Մեծոփեցին, թէ նէնել գեաւ քաղքեր մեր աչերէս առ աւերակ, ընտիր և գոռոզ չինոյն ընկեց (ՄԱՄ. 47)։

1385. Լէնկթիմուր իւր արշաւանքները նորոգեց 1400'ին վերջերը (ՄԱՄ. 131), և Միջագետքի վրայէն հասաւ Դամասկոս, և յետոյ ի լման եկաց այնտեղ, և 1401'ին սկիզբը, չարժեցաւ դէպի Փոքր Ասիա (ՄԱՄ. 62)։ Դամասկոս եղած ատենին համար կը պատմուի, թէ 700,000 գինուորներու ձեռքով 700,000 գլուխ կտրել տալով եօթը բուրգեր չինել տուած ըլլայ, և յատկապէս Տաճիկներու գլուխներով, և հրամայելով չմօտենալ ամէն անոնց որ ըսին թէ ճի՛շդ է, այսինքն է Իսկի, որ է Գլխոտնիայ (ՄԱՄ. 63)։ Նոյն հրամանը Պաղտատի մէջ ալ ընել տուած ըլլալը կը պատմուի, և Մեծոփեցին կը յիշէ, թէ իւր հօրեղբօր եղբայրն Մխիթար Տաղտէն վանայ, ականատես եղած և իրեն պատմած է (ՄԱՄ. 64), սակայն ուրիշներ իրենց անհիմն զրոյց կը նկատեն այդ պատմութիւնը, և գոնէ չափազանցեալ պէտք է նկատել գլուխներուն թիւը։ Լէնկթիմուր 1401 տարին անցուց Ասորիքի և Միջագետքի կողմերը, և այդ միջոցին կրնանք դնել Սիսի վրայ ալ յարձակիլը, և աւերելով ու աւարելով անցնիլ երթալը (ՍԻՍ. 542)։ Ճառաջեց նաեւ Պաղեստինի կողմը, բայց երուսաղէմին չդպաւ և ի դառ ան, այսինքն 1402'ին պաչարեց Սերաստիան, որ Օսմանեանց ձեռքն էր անցած։ Լէնկթիմուր քաղաքը անձնատուր ըլլալու հրաւիրեց երդումննալով, թէ ով չկնել օրով սպանանէ, սար նոցա է ելքս նոր տրանէ, բայց ամէնէն խուժդուժ անգթութիւնները այնտեղ կատարեց։ Հրամայեց որ չինաժողովուրդը չբլբեցնէն, իսկ չկռնայն յետս չդոյն կոչել և սրլատել։ Զորքն ի զրահեր ծոչվիլ ի պաշտպավչէ՝ հնձելազօրի ոտքերուն ներքեւ կոխկռտել տալ էքրէս ըստ կռնաւոյնէ, իսկ քաղաքացիները ու գինուորները կոչել սպէտ և չեռտ ըստ հազար սէր, և կենդանի ընկել և ջրով և մխրով ծածկել (ՄԱՄ. 65)։ Սեբաստիա տակաւին կը պահէ այդ անողորմ բռնութեան յիշատակը Սեւ-Հողեր դաչտին անունովը։ Լէնկթիմուր սաստիկ զայրացած Օսմանեան սուլտան Պայազիտի խրոխտ վարմունքէն, չիտակ անոր վրայ քալեց, Անկիւրիոյ ճակատամարտին մէջ յաղթութիւնը տարաւ 1402 յունիս 18'ին, և Պայազիտը գերի բռնելով, մէկտեղ առաւ Սմրղանտ տանելու, այլ չհասաւ, դի Պայազիտ ութ ամիսէն 1403 մարտ 8'ին մեռաւ Լէնկթիմուրի բանակին մէջ (ՏԻՒ. 355)։

1386. Օսմանեան սուլտանութեան վրայ առիթ չունեցանք խօսելու, անոր սկզբնաւորութիւնը պատմելնէս ետքը (§ 1228)։ Օսման Ա. սուլտան և հարստութեան հիմնադիրը, որ իր անունն ալ տուաւ իւր ժո-

ղովուրդին, սահմանները ընդարձակեց Ծուն-
նաց կայսրութիւնէ ասիական գաւառներ
գրաւելով, և մինչեւ Նի-
ՕՍՄԱՆԵԱՆՔ կիա. Նիկոմիդիա և Պրու-
ԵՒ ՀԱՅԵՐ սա մօտենալով: Իրեն յա-
ջորդեց որդին Օրխան Ա.
1326'ին, որ յիշեալ քաղաքներուն տիրեց,
Պրուսան մայրաքաղաք հռչակեց, Քիոս կղզին,
Կիւղիկոն թերակղզին, և Գալլիպոլիս նա-
ւահանգիստը գրաւեց, Կոստանդնուպոլիսի
սպառնացաւ, բայց աւելի նշանաւոր եղաւ
ներքին կարգ ու կանոն, օրէնք ու զին-
ուորականութիւն հաստատելովը իր եղբօր
Ալայէտտինի կարող ձեռնտուութեամբ:
Մուրատ Ա. 1360'ին իր հօրը յաջորդելով,
տիրապետութիւնը Եւրոպական կողմերը
ընդարձակեց, Ադրիանապոլիսը մայրաքա-
ղաք հռչակեց, Թրակիան, Մակեդոնիան և
Ալբանիան նուաճեց, Քոսովայի պատերազ-
մին մէջ Բուլղարներու ու Սերբերու ու
Հունգարացիներու միացեալ զօրութեանց
յաղթեց 1389'ին, բայց նոյն դաշտին մէջ
Սերբիացի վիրաւոր զինուորի մը կողմէ
սպանուեցաւ: Ասոր որդին էր Պայազիտ Ա.,
որ մերթ Ասիակողմը և մերթ Եւրոպակողմը
արագաշարժ արշաւանքներովը Երկարօրեայ
կամ կայծակ մականունը ստացաւ: Ասիոյ
կողմէ զանազան փոքր իշխանութիւններ
նուաճեց, Եւրոպիոյ մէջ իր հօրը աշխար-
հակալութիւնները ընդարձակեց, Կոստանդ-
նուպոլիսը պաշարեց և Ծունաց Մանուէլ Բ
Պալէոլոգոս կայսրը հարկ վճարելու ստիպեց,
Թանուբեան Նիկոպոլսոյ պատերազմին մէջ՝
Հունգարացւոց և Լեհաց և Գաղղիացւոց
միացեալ խաչակրութիւնը ցրուեց 1396'ին,
բայց Էնկիւրիոմուրի դէմ չկրցաւ դնել, և
գերի ինկաւ, բայց երկաթէ վանդակի մէջ
փակուած ըլլալու զրոյցը հաստատութիւն
գտած չէ: Ծիշեալ սուլտաններուն Հայոց
հետ յարաբերութիւնները միչտ քաղցր ու
բարեացակամ եղան: Օսմանեանք, լոկ զէն-
քի նուիրուած ժողովուրդ մըն էին, բայց
դէպի քաղաքակիրթ երկիրներ տարածուե-
լով, արուեստից ու ճարտարութեանց պէտ-
քը զգացին, և Ծոյներուն չկրնալով վատա-
հիլ, Հայ տարրին վրայ հաստատուելին իրենց
մտադրութիւնը, և անոնցմէ օգտուելու հա-
մար, ամէն տեսակ դիւրութիւններ ցու-
ցուցին: Փոխադարձաբար Հայերն ալ, որ
ուրիչ տեղեր հալածուած ու նեղուած էին,
իրենն սկսան դիմել Օսմանեանց տիրապե-
տած երկիրները, և այս միջոցին սկսած է
Փոքր-Ասիոյ առաջակողման, և յայնկոյս
Վոսփորի գաւառներուն նորանոր գաղթա-
կանութիւններով հայաբնակ և հայաչատ
երկիրներ դառնալը: Օսմանեանք կրօնական
ազատութիւնն ալ լիապէս կը յարգէին, ինչ
որ Հայերը կը քաջալերէր, մինչ Ծունական
կայսրութիւնը կրօնական բռնադատութիւն-
ներովը ստիպած էր Հայերը իրմէ հեռու
մնալ, և Հայաստանի գաղթականներն ալ
կը նախընտրէին կովկասը անցնելով դէպի
Ղրիմ և Լեհաստան, կամ Եփրատը անցնե-
լով դէպ Ասորիք տարածուիլ, իսկ Կիլիկիոյ
գաղթականները ծովը անցնելով դէպ Իտա-
լիա կը տարածուէին: Բայց Օսմանեան
սուլտանութեան զօրանալէն ետքը՝ գաղ-
թականութեանց հոսանքին ընթացքը փոխ-
ուեցաւ, և արեւմտեան Ասիան եղաւ իրենց
նախընտրած կողմը:

1387. Էնկիւրիոմուրի դէպ Արեւելք մնկ-
նելէն ետքը, Փոքր-Ասիոյ մէջ մնացած էր
Ռամազան անուն Թաթար
ՍՍԵՑԻՈՑ իշխանը այն կողմերուն
ԳԱՂԹԵԼԸ տիրապետելու հետամուտ,
որով Սիս ալ մտադիր էր
վառ գալոթեան Ռոմալանին (ՍԻՍ. 542): Այդ
պարագայն մեղի մտածել կու տայ, թէ ան-
ուանեալ թագաւոր Կոստանդինը (§ 1349),
հետզհետէ կրցած էր իւր դիրքը զօրացնել,
և եթէ ոչ ինքնագլուխ, գոնէ Եգիպտացւոց
հովանաւորութեամբ իշխանութիւն մը հաս-
տատել Սիսի մէջ, զոր Ռամազանեանք
կ'ուզէին գրաւել, և յարձակումներով կր
նեղէին Սսեցիները: Աւասիկ յաջորդեալ է
նեղ-ընել, և ակնյայտնի տեսնալով ղըբա-
նալն անհաւանելիք, յուսակտուր եղան վերջ-
նական յաղողութեան հասնելէն, և ինչ բա-
նակիցներ որոչելու համար մեծ խորհուրդ եղե-
ւ գոռաւ Կաթողիկոսին, և համաձայ-
նեցան քաղաքին լքանել ու գաղթել: Այդ
ժողովին թուական ցուցուած է 1404 (ՍԻՍ.
542) կամ 1403 տարին (ՍԻՍ. 560): Գաղ-
թականութեան առաջին խումբը մնկնած է
Եգիպտոսի մը, զլուխ ունենալով պարն Կա-
թողիկոսին, իսկ

երկրորդ խումբը՝ չբե+չՔՔՆ, և անոր ա-ռաջնորդներն են, պարո՛ն Աբըլէֆ, և Էրէ-ցո՛նէն Ճվհաննէս և Վահան, Գրիգոր և Սթե-փանո՛ս։ Քաղաքին մեկնողները կը նչանակ-ուին պոո՛ն ԼՈ, (երեսուն հազար), եթէ սխալ չէ թուատուր, կամ թէ հազար երե-սուն կարդացուելու չէ. որովհետեւ թէ ցուցուած թիւը չափազանց կ'երեւի, և թէ երկու օրուան մէջ այնչափ բազմութեան մեկնիլը դիւրին չէր։ Քաղաքին մէջ կը մնան միայն ալեւոր և չափաւոր, որոնք տես-նելով, թէ ալ ոտ ձագ է ձնծոտանց և էլեա-նոց, և պարոնց և է ընթացուրէ ցեղէցն, կ'որոշեն անձնատուր ըլլալ, և եփո՛ն վՈՒ-յո՛նէսէ վէց (ՍԻՍ·542)։ Արդ 1404 յունիս 6 օրը ուրբաթ կը հանդիպի, որով նախըն-թաց երեքշաբթիի և չորեքշաբթիի մեկ-նումները կ'ըլլան յունիս 3'ին և 4'ին։ Ռամազանեանք այս կերպով կիլիկիոյ կը տիրապետեն, և միջոց մըն ալ անոնց ձեռ-քը կը մնան Հայ թագաւորութեան վերջին բեկորները։ Սիսէ հլլող գաղթականները անոնց յայնկոյս ծովը, որ աւելի կիպրոս անցնելնին հաւանական կը ցուցնէ, ուր տակաւին քրիստոնեայ իշխան մը կար Ճով-հաննէս Բ թագաւորը, սակայն ուրիշ ժա-մանակագիր մը կ'ըսէ թէ մթե՛լ է նա՛ փնո-ցին է Փըռնէ՛սոփան (ՍԻՍ·542)։ Հետեւապէս անտեղի չէր ըլլար, այդ գաղթականութեան հետ կապել Իտալիոյ մէջ հաստատուած Հայազգի հասարակութեանց մի մասը։ Թա-գաւորի անուն կրող կոստանդինին Թոռին մեկնելը, իսկ իր անունին վերջէն չհիշ-ուիլը մտածել կու տայ, թէ կոստանդին Սիսէ քաչուելով կիլիկիոյ մէջ կամ մօտերը մնա-ցած է, ապագայ ակնկալութեանց յուսով. որով պէտք կ'ըլլայ ղինքն իբր ձեռներէց և աննկուն հոգւոյ տէր մէկը ճանչնալ։ Իսկ իրեն համար գրուած կը գտնենք, թէ վեր-ջին Լեւոնէ հետքը փոքչե՛լ ընթացուրէ է Սի՛-կոսոփոլին, և միանգամայն փոռոսան և ոՐՆ-ա՛ ընթացուրեաց կ'ըսուի, և 1424'ին կը դրա-ուի իր թագաւորութեան վերջը (ՍԻՍ. 543)։ Ակէ անկրկնայ կը հետեւի, որ եթէ ոչ տիրապէս թագաւոր, գոնէ տիրող ազ-գապետ մը եղաւ նա, և վերջալոյսի ճա-ռագայթներու նման չարունակեց ազգային իշխանութեան օրը, 1376'էն մինչեւ 1424, որ ճշդիւ կը պատասխանէ իր 48, ամեայ իշխանութեան։

ԿԱՐԱՊԵՏԻ ՄԱՀԸ

1388· Գալով կարապետ կաթողիկոսին, իրեն տրուած 12 տարիները (ՍԱՄ·172), 1392'էն հաշուելով (§ 1374), կու գան վերջա-նալ 1404'ին որ է ճիշդ Սիսին Ռամազանեանց ձեռք իյնալուն տարին, և երկու պարագա-ներ յարմար զուգադիպութեամբ կու գան իրարու յարակցիլ, այնպէս որ նոր տիրա-պետութիւնը յաժար կամ թէ բռնի ձեւով վերջ տուած կ'ըլլայ կարապետի կաթողիկո-սութեան։ Կարապետի 1404'ին կաթողիկոս յիշուիլը (ՓԻՐ·23), պատմութեանս կար-գին կը համաձայնի, բայց 1411'ին ալ է հայրապետութեան Հայոց պէտ Կրթպետէ գըր-ուիլը (ՓԻՐ·39), ծանր դժուարութեանց տեղի կու տայ, քանի որ ստոյգ է թէ 1408'ին Ցակոբ Գ արդէն կաթողիկոսացած էր։ Դիւրին մեկնութիւններ են գրչագիրի ընթերցուածը սխալուած կարծել, կամ հե-ռաւոր Սիւնիքի մէջ գրող Մարեցի ընդօ-րինակողը կիլիկիոյ գործերուն անտեղեակ ենթադրել, այլ ասոնք ոյժ ունին, երբոր հակառակը յայտնի փաստերով ու վկայու-թիւններով զօրացած կ'ըլլայ։ Դավրիժեցին 1404'ին Ֆե՛ պէտ Կրթպետ մը դնելով (ԴԱՎ·336), զոր մենք հերքեցինք (§ 1375) բոլորովին իսկ չյիշեր կարապետի յաջորդ Ցակոբին անունը, զոր չարունակողը կ'ըն-դունի, բայց միայն ա՛մ երկու տարուան վարութիւն կու տայ, այն ալ 1403 թուա-կանէն սկսելով (ՍԱՄ·172), որ է մերձա-ւորապէս Ռամազանեանց տիրապետութեան տարին, և որ 1408'ին ոչ եւս Ցակոբը, այլ Գրիգորը կաթողիկոս ընդունած կ'ըլլայ, որուն սկիզբը կը դնէ 1405'ին (ՍԱՄ·172)։ Այս իրարու հակասող տեղեկութեանց խառ-նելով Մեծոփեցին ընդհանուր կերպով գրածն ալ, թէ կիլիկեցիք վերջին վեց կա-թողիկոսներէն վեցն ալ պեղ մահու աքե՛ոցին (ԿՈՍ·55), և Ջամչեանի հարեւա աղբիւրէ մը քաղածն ալ՝ թէ Ցակոբ մոռոցե՛լ սա այլազգէ ոփբոյն Կիլիկիոյ եռա ղեբօ՛ՐՆեան ա-ՐնոՈՅն (ՋԱՄ·Գ·455), կը կարծենք իրա-ւունք ունենալ, եթէ ամէնէն ալ մեկա-խաբար, բայց և ամենուն ալ տարբերբէն

բաղադրուած կարծիք մը յայտնենք կարա-
պետի կաթողիկոսութեան վերջնանալուն
վրայ, որուն արդէն ինքնութեան վրայ ալ
նոր կարծիք մը յայտնելու առիթը ունե-
ցանք (§ 1375)։ Մեր տեսութեամբ Ռամա-
զանեանց 1404'ին Սիսին տիրելը, և կարա-
պետի այդ տիրապետութեան դէմ աչխա-
տած ըլլալը, պատճառ եղած են նոր
տիրապետ Ռամազան ամիրային կարապետին
դէմ թշնամանալուն։ Իսկ Ծակոր ամիրային
հաճութիւնն ու պաշտպանութիւնը ստանա-
լով, աթոռին հետամուտ կ'ըլլայ, և նպա-
տակին կը հասնի, ոչ թնտրութեամբ, զի
պարզապէս էս- ղրէօ-ՆԻՆ ՆՇՈՒՆ, որ է
ըսել զօրութեամբ զայն ձեռք ձգեց, հա-
կառակ ամէն ի դիմադիր իրեն դէմ ըլլա-
լուն (ՁԱՄ· Գ· 455), որոնք հարկաւ կարա-
պետի կուսակիցներն են եղած։ Այս կեր-
պով Սսոյ մէջ հակաթոռութեան դիրք մըն
ալ կազմուած պիտի ըլլար, բայց ամեր ա-
ռիթ տրուած չէ կարապետի դէղակուր
ապանութեամբը։ Ձևնք կարծեր, որ կարա-
պետ պաշտօնէ իյնալով մինչեւ 1411 ապ-
րած ըլլայ, զի 1409'ին Տաթեւացին ուղ-
ղակի Ծակոբի կը դիմէր, ինչպէս պիտի
տեսնենք, այլ սպանութիւնը գահագրկու-
թեան կից քալած է։ Ըստ այսմ 1392'ին
կաթողիկոսացած կարապետը, 12 տարի
ետքը, 1404'ին վերջնելը թուագրուած կը
մնանք և Ծակոբ նոյն թուականին կաթողի-
կոսութեան տիրացած կ'ըլլայ, ոչ օրինա-
ւոր կերպով, այլ նոր տիրապետող ամի-
րային ահարկու ազդեցութեամբ, ուսկից
անգամժան պէտք է նկատել Ծակոբէ տրուած
համոզիչ ընծաները ու վճարումները։
կարապետ անկանոն կերպով աթոռ բարձ-
բացած, ապարդիւն կերպով պաշտօնի վրայ
մնացած, անիրաւունակ կերպով ալ զայն
կնքած կ'ըլլայ, չկրնալով ինքն ալ յաջո-
ղուցիչ գոնէ տակութիւն մը ստանալ իւր
կաթողիկոսութենէն։

1389· Սրբոց եկեղեցւոյ պետերը և
բարձր պաշտօնեաները չինիչ օրինակներ և
առաքինի տիպարներ չեն ներկայեր մեր
առջեւ, միթիթարական է տեսնել որ հասա-
րակ ժողովուրդէ անձեր կ'արիանան իրենց
հաւատքին պաշտպանութեան և, կանգներ-
նին գոնելու անձնուիրութիւնը կ'ունենան։

Մոկացի կին մը, անունը Թամար, և պայծառ
դէղեցկութեան համար Գոհար կոչուած, Թով-
մաս անուն անձի մը հետ
ԹԱՄԱՐ ամուսնացած էր, բայց
ՄՈԿԱՑԻ ԿՈՒՐԴ մը ետեւէն կ'իյ-
նար յափշտակելու, ուստի
նոր ամուսինները միասին կ'երթան կը
փակուին Աղթամար կղզիի մէջ։ Այս դէպ-
քը տեղի կ'ունենայ 1393'ին ատենները։
Քանի մը տարի ետքը, գործով մը Ոս-
ման քաղաքը կ'իջնան, նոյն կուրդը կը
հանդիպի Թամարին, և մէկէն սովորական
խաբէութեան կը դիմէ, թէ — Էքբէն փո-
ֆոյեալ էր։ Աղդին ամիրայ խաբէական ըլ-
լալը զգալով անփոյթ ըսաւ (ՆՈՐ· 189),
սակայն իւր կինը փաչախաթուն, լէզի և
չանգոփն թիւրքմէնուհի կամ քրդուհի մը
(ՆՈՐ· 190), այն որ եղիսաբէթ Խառաբաս-
տեցին ալ նահատակել տուած էր (§ 1371),
մէջ տեղ կ'անցնի Թամարը յորդորելու ու
բանադատելու։ Թամար դատաւորին ատ-
եանն ալ կը հանուի, բայց անսասան կը
մնայ սրբասիրտ պատասխաններով. և նոյն-
պէս կը խօսի տասն օր անուսուղ բանտար-
կութենէն ետքը, հազար ոսկի ալ առջևը
դրուած տեսնելով։ Երբ այդ չանքերը ար-
դիւնք չունեցան, մահուան վճիռ տրուեցաւ,
և Թամար քարկոծմամբ նահատակուեցաւ
Ոստանի մէջ, իսկ Աղդին հրամայեց մարմինը
պատուով թաղել։ Թուական նչանակուած
է 1398'ին ահեկի 17'ին, երկուշաբթի օր,
Ցինանց միջոցը, մերձ տօնի սրբոյն Գէորգայ (ՆՈՐ·194)։ Հայկական ամիսը հնար
չէ հին տոմարով հաչուել, զի այն տարին
կը պատասխանէր օգոստոս 25'ին որ Ցի-
նանց միջոց չէ։ Իսկ նոր սարկաւագապէր
տոմարով կը պատասխանէ ապրիլ 24'ին,
որ Ցինանց միջոց է, և մերձ է սուրբ Գէորգայ յիչատակին, որ Ցայսմաւուրքի մէջ
ապրիլ 23'ին կը նչանակուի։ Միայն 1398'ին
ապրիլ 24 երկուշաբթի չհանդիպիր, այլ չո-
րեքշաբթի, իսկ երկուշաբթի կը հանդիպի
1396, և պէտք կ'ըլլայ հայկական Պին թը-
ւականին մէջ (ՆՈՐ· 195) է և ե թուատա-
ռերու փոխանակութեամբ թուականը ուղ-
ղել, և Պին կարդալ, ու Թամար Մոկացիին
նահատակութիւնը դնել 1396 ապրիլ 24'ին,
որ կը լինի Ցինանց չորրորդ կամ կարմիր

կիրակիին երկուշաբթին։ Ուրիշներ ե՛ւ է Թուատառերու փոխանակութիւնը ամսաթիւին վրայ կատարելով ժե՛ ամսաթիւը ժէ կ՚ուզեն կարդալ, և քանի որ 1398 ապրիլ 22՚ը երկուշաբթի կը հանդիպի, այն օր դնել նահատակութիւնը։ Այդպէս կ՚ընեն քանիէ աւելի ձեռագիրներէն միայն երկուքին մէջ չեզ աշխարհաթուքան կէրեկէ յաւելուածը տեսնելով (ՆՈՐ· 197), բայց մենք կը նախադասենք տարեթիւին վրայ կատարել Թուատառերու ուղղութիւնը, զի միայն երկու օրինակներու յաւելուածը բնագրական չկրնար սեպուիլ, և միւս կողմէն կը յարգուի Յայտաւուքքին հեղինակութիւնն ալ, որ ապրիլ 24՚ին և ոչ 22՚ին կը դնէ Թամարի յիշատակը (ՅԱՍ· Ա· 182)։

ԵՐԿՈՒ ՎԱՆԵՑԻՔ

1390. Անգամ մը վանայ քաղաքին մէջ, Հայոտարի կոչուած չէիները. տաճիկ աղջկան մը մարմինը զի՛ր ըզմանէն հաներ էին վան դըշ, հաւանաբար կախարդական նպատակով։ Դործը քրիստոնէից վրայ բողոքեցաւ, և քաղաքացիներէն ութը հոգի ամբաստանուեցան։ Առնցմէ մէկը Սիրանոս անուն խոստովանեցաւ, բայց ուրացաւ և ազատեցաւ. և երկու մեղսակիցներ միայն ցուցուց, որով հինգ հոգիներ այլևս չի փնտռուեցան։ Երկուքէն մէկը՝ կարապետ փախաւ, իսկ միւսը Մէլքիսեդ տանը մէջ ձերբակալուեցաւ, և անմիջապէս ուրացաւ թէև հրաւիրուեցաւ։ Ցանձն չունենալուն, հրացայտ չամիսներով մարմինը տանջեցին 26 տեղերէ, և հաւատքին վրայ հաստատուն մնալուն քարկոծման վճիռ տուին։ կարծելով թէ պիտի չկարենայ քալել, կողովով կ՚ուզէին փոխադրել, այլ նա իւրովի վեր ելաւ, և քարկոծմամբ նահատակուեցաւ, իսկ մարմինը յօշոտելով այրեցին։ Մէլքիսեդ Վանեցիի նահատակութեան օրն է 1403 յուլիսի 10։ Օր մը ետքը ձեռք ձգեցին կարապետ Վանեցին ալ, և ուրացութեան բռնադատելու համար ականջները կտրեցին, և չհաւանելուն պատճառով քարկոծեցին ու այրեցին ընկերին նման (ՆՈՐ· 203)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՁՄՇԿԱԾԱԳՑԻ

1391. Յովհաննէս Ձմշկածագցի քահանայն ալ նոյն 1403 տարին կատարուեցաւ։ Իւր բարեբարոյ, պարկեշտ և աղքատասէր կեանքը քահանայակից ընկերներուն նախանձը գրգռած էր, որ թունաւոր դեղ մը կանգնել կարմիր Սարակ կոչուած տեղը։ Ասիկայ աւելի եւս գրգռեց նախանձոտները, և Յովհաննէսի դէմ ծանր ամբաստանութիւններ մատուցին ամիրային՝ սրբած մի պահուն, որ հրամայեց չինուածը քանդել և քահանայն ուրացութեան ստիպել։ Անմիջապէս ժողովուեցան, փայտաչէն եկեղեցիին կրակ տուին, և Յովհաննէսի ուրացութեան չհաւանելուն համար, կապեցին ոտքէն և յետոյ սկսան ի հուր, և այսպէս կատարուեցաւ սրբակրօն քահանան 1403 սեպտեմբեր 10՚ին։ Ձմշկածագի եպիսկոպոսը Դաւիթ, արտօնութիւն ստանալով մարմինը պատռուի թաղեց Ս. Աստուածածին եկեղեցին ի Նէտ պըղտին, և յիշատակն ալ գիրի առաւ (ՆՈՐ· 206)։ Այդ միջոցներուն ընդհանուր հալածանք ալ հրահրուած էր Բաղէշի մէջ Իբրահիմ ամիրային, որ իւր եղբօր Շարաֆի յաջորդած էր։ Նա կողոպտել է տալէն, և յոյժ պատանդեան էքոսակէսէ, բայց յաւուրս նահատակութեանն անուններ չունինք։ Իբրահիմի ընթացքին հանդուրժութիւն չտուաւ Միրան-Շահ, Լէնկթիմուրի որդին, որ հարուածին գլուխ տալու կողմնակալ դրուած էր, և Իբրահիմին վրան քալեց ու սպաննել տուաւ, բայց Աղդին ամիրային միջնորդութեամբ, Իբրահիմի որդին Շամչատինը ամիրայ նշանակելով դարձաւ Թաւրիզ իւր կեդրոնը (ՄԵՆ· 69)։

ՍՏԵՓԱՆ ԵՒ ՄԻՒՍԷՖԻՐ

1392. Տարօրինակ պարագաներով կը պատմէ Մ. Ծորիկեցին՝ Ստեփան Ամիւկցի քահանային նահատակութիւնը, ապօրէն գործեր ալ վերագրելով անոր։ Ստեփանոս միջոց մը իւր ծընողավայրին մօտ եղող Լիմ անապատը ապրելէ ետքը, Արճէշ եկաւ, և երկիրը անցնելով և անօթութենէ գտնելով, զի եպիսկոպոս և վարդապետ փախած էին Թախարաց յարձակումներուն պատճառով, քաղաքի ծա-

ման» եվ առաջնորդ գաւառին։ Մեծոփեցին կը մեղադրէ Սահփանոսի ըրածը, իբր զի պէտք է որ ամենայն կոթողաւոր չէրտակ կոչել կարենայ. սակայն մենք ապօրէն չենք գտներ, որ նա անտեսուհուն ժողովուրդին ինքնընտիր առաջնորդն եղած ըլլայ, միայն թէ ասոնցմանէն բարձր խորհրդական գործերու չխառնուի։ Այլ կը դիտենք մանաւանդ միւս պարագային, որ նա կ'ապրէր յիշատակել կին մի է ազատացոյն հրամանաւ և կալաւէ անհաւատից (ՄԵՆ· 112)։ Այդ վիճակը չարունակեց քանի մ ամսանոց, և Աբճիշեցի տանուտէրներէն Մուսէ֊փիր ալ գործակից էր Սահփանոսի։ Առանց գործունէութիւնը հաճոյ չըլլար անօրինաց և սպասուրէնէց ոմանց, որ նենգաբար մատնեն երկուքն ալ Արճէշի Սահանդ ամիրային (§ 1365)։ Ուրացութեան առաջարկը կը հնուեի, և յանձնառու չըլլալուն երկուքն ալ կը գլխատուին, և գլուխ է պարսկէն է կայր կոթեցին։ Մեծոփեցին կը յաւելու թէ անձրեւ երեքօրեայ ընթացք էրեանց (ՄԵՆ· 112), հարկաւ ապօրէն կեղծակութիւնը, և ոչ թէ անձրնծայ գործունէութիւնը։ Սահփանոսի և Միւսէ֊փիրի նահատակութեան թուական յուշուած է 1395 տարին, առանց ամսաթիւի (ՄԵՆ· 113)։ Այդ նահատակութիւնը պատմելէն ետքը երկարօրէն առած կը բերէ Մեծոփեցին նոյն քահանայական սերունդին մէջ պատահած անկարգութիւնները, յայտարարելով թէ ըր սերմանն ըր լինի երկրագործութիւն, և ըր սոսոցըն ըր լինի սոսոճ նոցա (ՄԵՆ· 113)։ Սկսելով պատմել թէ ի հանել ես յայտնէ ինա հանել զ Յովհաննէս անուն, վրայ կը բերէ մերձաւորայ ամուսնութիւններ, որոց մէջ իրաւ կան բաւական մօտիկներ, բայց նոյն կերպով կը պախարակէ նաեւ այն՝ որ առնու ընդդէմ ելոյ ինչ ի սոսէ գոսոցն, և այն որ առնու ի սոսէ գոսոց էնոյն հոգեզգօրդոյ ելոյ (ՄԵՆ· 114), որոնք վկայեալ բոլոր աստիճանի խնամութիւններ են։ Ժամանակին նախապաշարեալ սովորութեանց իբր նմոյշ յիշենք նաեւ, որ այդ կիներէն մին դեւերու մատնուած ըլլալով, երբ խաչ ու աւետարան, դիմումներ ու կախարդութիւններ օգուտ չեն ըներ, ժողովուրդը էրեցին ղրկեն էղբոր ալեկին, և կինը ընդդէմ դնելէ ի պարանոցն, և սոսոճ սոսեալ ի չեսս ելոյ ալեկին և հալածեն զնոյն ի քրիստոնէից և ղրկեն ի Տեսուն, զի ընդդէմ ցանցառ նոցա, զի ոչ կամս էր դեղագործն, այլ ակամայ, և եպիսկոպոսներուն և վարդապետներուն ուղղելով խօսքը՝ կը խնդրէ, այս սոսոճ և անցասոր կենացս համար մ' նենգէս ի սէն եղբայրական (ՄԵՆ· 116), ակնարկելով այն պարագային, որ այդ կնոջ ամուսնութեան համար դիմած էին ի հոգեսոր առաջնորդս և վերջապէս եկեղեցւոյ, և անոնք հաւանած էին յանցանօք պատուիրանաց բերել սոսեալ (ՄԵՆ· 115)։ Մենք այս միջադէպները ուզեցինք պատմել, պարզապէս ժամանակին ըմբռնումները պատկերացուցած ըլլալու համար։

1393. *Ժամանակակից եղելութիւնները քաղելու, և Հայութեան զանազան հատուածներուն պատկանող դէպքերը զանց չընելու համար հետեւեալ տեղեկութիւններն ալ կը յաւելունք։*

ԱՂԹԱՄԱՐ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Աղթամարի մէջ Դաւիթ կաթողիկոս, Զաքարիայի եղբայրը (§ 1376), իշխանութիւնը վարած է արդիւնաւոր գործունէութեամբ, և օգտակարութեամբ, Շէյխ Ահմէտի հովանաւորութեան ներքեւ (§ 1382)։ Այդ միջոցին բաւական թուով վանքեր ալ ծաղկած են Աղթամարի սահմաններուն մէջ։ Վարի Ս. Գէորգի, Մեծոփայ Ս. Աստուածածնի և Ցիպնայ Ս. Սահփանոսի վանքերն զատ, որոնց վրայ խօսուեցաւ, պէտք է յիշել նաեւ Հիզանի Ս. Խաչ վանքը՝ Յովհաննէս Հաւատարան վարդապետին ձեռքով, և Աղթամարայ Ս. Խաչ մայրավանքը՝ Զաքարիա Փիլիսիայ վարդապետին ջանքերով։ Դաւիթ կաթողիկոսի կը վերագրուի նաեւ թեմական տուրքերուն մէջ կանոնաւորութիւն մտցնելը, իւրաքանչիւր գիւղի բնակիչներուն և կարողութեան համեմատ (00. ԲԻՋ· 1195)։ Երուսաղէմի մէջ ալ նոր Հայ վանքեր կը հաստատուէին ինօրինական վայրերը, և Ս. Յակոբայ աթոռը կը պատասխանէր օտարներու ձեռնադրութեանց

դէմ պաշտպանել իւր սրբավայրերը։ Սարգիս պատրիարք Գողգոթայի տիրապետութեան համար նոր հրովարտակ մը կը ստանայր 1393'ին Պետրոս և Վահրամ վարդապետներու աշխատութեամբ (ԱՍՏ· Ա· 216)։ Գահիրէի մզկիթին հրդեհը քրիստոնէից վերագրուելուն պատճառով, նոր հալածանքներ և սպանութիւններ տեղի ունենալէն զատ, ընդհանուր հրաման ալ տրուած էր, որ քրիստոնեայք չկարենան ձի և ջորի հեծնել և ոչ պատուոյ փակէտ գործածել։ Բայց Մարտիրոս եպիսկոպոս միեւնոյն ժամանակ, 1399'ին կը յաջողէր պաշտպանութեան հրովարտակ հանել տալ Արաբացի հարկապահանջներուն դէմ, և երկրորդ մըն ալ 1402'ին Մեսրոպ եպիսկոպոս կը հանէր Ճանեների գերեզմանատան անարգել կիրառութեան համար (ԱՍՏ· Ա· 217)։ Ուխտաւորներու կացութիւնը ճշդելու համար Սարգիս պատրիարք ընդհանուր կանոն մը հաստատել կուտար 1400'ին, թէ տարիէ աւելի երուսաղէմ մնացողներ միայն պարտաւոր պիտի ըլլան գլխահարկ վճարել, և թէ Հայեր, վրացիներ, Հապէշներ և Ծոյներ հաւասարապէս ազատ պիտի ըլլան Ս. Գերեզմանի մուտքին համար յատուկ տուրք վճարելէ (ԱՍՏ· Ա· 219)։ Սարգիս պատրիարքի ժամանակը հարկ է վերջացնել 1412'ին (ԱՍՏ· Ա· 219), թէպէտ երկարաձգուած էր սովորաբար մինչեւ 1417 (ԲԱՈ· 47)։ Ինչպէս գործերէն կը տեսնուի, արդիւնաւոր միջոց մը եղած է Սարգիսի ժամանակը։

1394. Ունիթորներու գործունէութեան ալ նոր զարկ մը տուած ըլլալու համար, ՈՒՆԻԹՈՐՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԸ Ղուկաս Շահապունեցին գաւառական ընտրուելէն ետքը անմիջապէս Հռոմ կ'ուղեւորէր, նպաստներ և դիւրութիւններ ստանալու։ Այդ առթիւ ան ալ առաւել կը չեչտուէր երկակի Ունիթորներուն ամբողջապէս լատին իրաւասութեան ենթարկուիլը, որոնց վրայ պիտի չկարենային հակել տեղւոյն եկեղեցական իշխանաւորները, այլ միայն Հռոմէ եկող այցելուները, ինչպէս կը հրամայէ Վոնիփակիոս Թ պապին 1398 յունիս 1'ին հանած կոնդակը։ Իսկ 1399 ապրիլ 28'ի կոնդակով ալ Երիմի մէջ գտնուող Ս. Յակոբ, Ս. Նիկողայոս և Ս. Պետրոս-Պօղոս վանքերը, Հայաստանի գաւառահոր իշխանութենէն զատելով, ուղղակի Հռոմի ընդհանուր մեծաւորութեան կ'ենթարկուէին։ Նշանակելի է նաեւ այն կարգադրութիւնը, որ Նախիջեւանի Հայ եպիսկոպոսութեան յաջորդող Փրանկիսկոս Դալրիժեցին, պապին կոնդակը չստացած ձեռնադրուելուն համար, պապէն կը մերժուէր, և հակառակ ընկալեալ սովորութեան, փոխանակ Թոմինիկեանի, Փրանկիսկեան լատին կրօնաւոր մը՝ Ստեփանոս Սէկէս՝ Նախիջեւանի եպիսկոպոս կ'անուանուէր 1398 օգոստոս 26'ին (ՍԻՆ· 389)։ Դիտելով որ այդ միջոցին էր, որ տեղի կ'ունենային Տաթեւացիի և գործակիցներուն Հայ եկեղեցւոյ պաշտպանութեան համար տարած ջանքերը, Հռոմ և Հռոմէականք իրենց զօրութիւնը կը դնէին եւս քան զեւս՝ լատինականութիւնը չեչտելու մէջ, ինչ որ անշուշտ իրենց յաջող ելք պիտի չտար։ Զի Հայեր բնական կերպով պիտի խորչէին օտարածէս և օտարաձեւ կարգադրութիւններէն, մինչ թերեւս աւելի հրապուրուած ըլլային, եթէ հայածէս և հայաձեւ կերպարաններով գեղեցկացած ըլլային Հռոմի հաւատոցական ճիգերը։ Ունիթորներու կացութիւնն ու գործունէութիւնը տկարանալու երես բռնած էին արդէն Որոտնեցիին և Ղրիմեցիին աշխատութեամբը, և սկսուած նուազման ճանապարհ չարունակեցին անոնցմէ ետքն ալ։

Տ· ՅԱԿՈԲ Գ· ՍՍԵՑԻ

1395· *Տգեղ պարագաներու ներքեւ սկսած տեսանք Յակոբի կաթողիկոսութիւնը* (§ 1388)։ *Իւր նախընթացը անծանօթ, և իւր ծննդավայրն ալ անորոշ, Սսեցի մակդիրը կը դրծածենք, ոչ միայն աթոռէն, այլեւ այնտեղ ալ հաստատուած մէկը ըլլալէն, քանի որ կրցաւ Ռամազան ամիրային պաշտպանութեամբ կարապետը հեռացնել, և անոր տեղը աթոռ բարձրանալ։ Որովհետեւ պահաստաւոր և հակառակ յիշատակներու մէջ օրէն է հաւանական եզրակացութիւններու վրայ հիմնուիլ, կրնանք 1404'ին կամ առ առաւելն 1405'ին դնել Յակոբի կաթողիկոսութեան սկիզբը, մօտնալով չարունակողին նչանակած 1403 թուականին, բայց հեռանալով անոր տուած երկու տարի միայն պաշտօնավարութեան տեւողութենէն* (ՍԱՄ· 172)։ *Առ այս մեզ կը պարտաւորէ Տաթեւացիին և Սսոյ աթոռին միջեւ եղած թղթակցութիւնը, ուր Յակոբի անունը որոշակի գըրուած է* (ՉԱՄ· Գ· 456), *և որ տեղի ունեցած է Տաթեւացիին վախճանէն առաջ, այսինքն է 1409'ին* (ՄՆՄ· 52)։ *Իրբեւ գործ և արդիւնք բնաւ յիշատակ մը չունինք Յակոբի վրայ· և եթէ Տաթեւացիին նախաձեռնութեամբ փոխանակուած գիրն ալ չըլլար, անունը տալու չափ ալ առիթ ունեցած պիտի չըլլայինք։ Արտաքին միջամտութեամբ կաթողիկոսութիւնը ձեռք անցընողի մը, չատ յարմար կուգան այն ղեղծումները, զորս Մեծոփեցին կը վերագրէ Սսոյ աթոռականներուն* (ԿՈՍ· 55-59), *և զորս զանց կ'ընենք այս տեղ յառաջ բերել, յեսոյ կրկնութեան չսպառտաւորուելու համար։ Ինչ որ մտադրութեան արժանի է, անկանոն ընտրութիւնը և անկարգ պաշտօնավարութիւնը պիտնալով հանդերձ, Արեւելեան վարդապետներուն, Տաթեւացիին ալ գլուխնին, առանց դիտողութեան և դժուարութեան Յակոբի կաթողիկոսական իշխանութիւնը յարգելն է, ոչ միայն ձեռնադրութիւն և միւռոն ընդունելու անհրաժեշտ պարագաներու մէջ, այլ և իրաւասութեան և վարչականութեան վերաբերող խնդիրներու մէջ։*

ՊԱՇՏՕՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿ

1396· *Պատմեցինք արդէն, թէ երբ Վարդան Հոգոցեցի վարդապետը, Սուխարու վանքէն Սալնապատ փոխադրուիլէ ետքը, այն տեղ կը վախճանի 1406'ին* (§ 1381), *և Գրիգոր Խըլաթեցի վարդապետը, որ անոր յաջորդելու կոչուած էր, կանոնաւոր հաստատութիւն մը չէր կրնար կազմել* (§ 1383), *Սարգիս Ապրակունեցիին օրէն մնացած 12 երիցագոյն աշակերտներ կ'որոշէին Տաթեւ երթալ, և իրենց ուսումը կատարելագործել Գրիգոր Տաթեւացիի ձեռքին տակ* (§ 1381)։ *Այս տասերկուքներէն մէկն էր Թովմաս Մեծոփեցի վարդապետը, ժամանակակից պատմիչը։ Վասպուրականցի և Սիւնեցի վարդապետներուն բարեզուշակ յարաբերութիւնները այդ ժամանակէն կը սկսէին, որ տակաւ աճելով աթոռին փոխադրութեան ճանապայ պիտի բանային։ Այդ արդիւնքին ծագումը կը պարտինք Որսանեցիին և Գրիմեցիին ցանած սերմերուն, որոնք անդադար և պատահական բաժանումներու զանց ընելով՝ Հայ եկեղեցւոյ ընդհանուր չահերուն հետամուտ եղան։ Բայց յատկապէս պէտք է յիշատակել Ապրակունեցին, որ Աստապատի վանքը Թողլու պարտաւորուած ատեն, իւր մտադրութիւնը կը դարձնէր Վասպուրականի կողմը, և Սուխարու վանքը կը հաստատէր իւր դպրեվանքը* (§ 1358)։ *Սիւնեցի մըն էր՝ որ կուգար Վասպուրականցիներուն համար աշխատիլ, և Վասպուրականցիք ուրախութեամբ կ'ողջունէին իրենց եղած այցելութիւնը։ Պէտք չէ մոռնանք որ Վարդան Հոգոցեցին ալ նոյն դիտումամբ աշխատած էր Սուխարու և Սալնապատի մէջ* (§ 1381)։ *Յիշենք Սարգիս Տարբեցին ալ, որ Սարի Ս· Գէորգը կը ծաղկեցնէր* (§ 1376), *զի ինքն ալ Սիւնեաց աշակերտութեան մէջ վարդապետ էր Որսանեցիին ձեռքին ներքեւ։ Այդ յարաբերութեանց*

մէջ ուրիշ նկատելի կէտ մըն ալ կար, և այն ալ կաթողիկոսական իրաւասութեան տարբերութիւնն էր, որովհետեւ Վասպուրականի նահանգ իր ամբողջութեամբ, ինչպէս և Մոկք և Կորդուք, Աղթամարի կաթողիկոսական իրաւասութեան ենթարկուած էին, իսկ Աղթամարի աթոռը Պահլաւունիին օրէն դատապարտութեան ներքեւ էր (§929), և Անաւարզեցիին օրով տրուած արձակումն ալ հաստատուն ձեւ մը չէր առած (§ 1203), ինչպէս Մխիթարի տուած բացատրութիւնները կը քաղուի (§ 1304)։ Սիւնեցոց և Վասպուրականացոց մէջ սկսած փոխադարձ կասկած կը ցուցնէ, թէ իրաւասութեանց տարբերութեան և Աղթամարի կացութեան մտադրութիւն չէր դարձուեր. և թէ հանդարտ և ամբողջական յարաբերութիւններ կը պահուէին երկու կողմերուն մէջ։ Այդ յարաբերութիւնները աստիճան մը եւս զօրացան, 12 Վասպուրականցիներու Սիւնեաց դպրոցը դիմելովը, զորս Տաթեւացին ընդունեցաւ էջբե- ղըզէ ւ-ե «էբէլ և քաղ- յէլ, յիշելով մանաւանդ թէ Վասպուրականցի մըն էր ինքն ալ՝ Արճիշեցի Սարգիսին որդի (ՄՆՄ·50)։

1397. Վասպուրականցի վարդապետներուն Տաթեւ գալը պիտի դնենք 1406'ին վերջերը, վարդան Հոգեցնցիին մեռնելէն քիչ ետքը, զի երկու տարի ետքը Գրիգոր ապրած չըլլար (ՄՆՄ·51), Տաթեւէ մեկնելէն առաջ, որ տեղի ունեցաւ Հայոց 857'ին կամ 1408 տարւոյ վերջերը ձմեռնամուտին (ՓԻՐ·29), և կրնար Հայոց 858 ալ բսուիլ (ՄՆՄ·52), որուն ամառորը կ'իյնար դեկտեմբեր 9'ին։ Իրր աստուածաչունչէ դասախօսութիւն՝ Մեծոփեցին կը յիշէ ղէբէէ-պաան Ռօպէրն Պէղօի ապաւէնչն, իսկ սուրբ Հոգւոյ դործերէն վկայութիւն Ապրահամ Աբեղային Գրիգորի, որ է Նազիանզիոնի ճառերուն հաւատարիմ հաւաքածոն, և կ'աւելցնէ թէ անոնք նաեւ ապացուցանել կ'ելլէր պրպտելէ իմաստասէրներուն։ Այդ յիշատակութիւնները կը ցուցնեն, թէ ժամանակին ընդունուած ոճն էր, նուիրել հեղինակաւոր գիրք մը ձեռք առնել, և անոր վրայ բացատրութիւններ տալ։ Այնպէս հիացած ևն նորեկ վասպուրականցիները Տաթեւացիին առատահոս դասախօսութեանց վրայ, որ Մեծոփեցին կը գրէ թէ ողբեցոյց ըմբռնելն ապաքէն վճռապատան Հեղինեացոց (ՄՆՄ·51), աւելի բարձր գտած են վարդապետին բացատրութիւնները՝ քան փիլիսոփաներուն հեղինակութիւնները։ Գրիգոր Տաթեւի դասասացութիւնը, կամ մեծ վարդապետն էր, իսկ ապրքե ախոյն ապաքինուէր էր Առաքել արքեպիսկոպոս Սիւնեաց, ւ-ե բէղբդէն ֆեթ վբեթ-պէթէն, որովհետեւ Տաթեւի վանքը միանգամայն Սիւնեաց առաջնորդարան էր, և վանքն ալ արքեպիսկոպոսին իշխանութեան ներքեւ էր։ Առաքելը աւելի քան Տաթեւացիի քրոջ, քեռիի որդի կը կարծենք, զի չենք կարծեր թէ Տաթեւացին, որ հազիւ 44 տարեկան Ապրակունիէ Տաթեւ փոխադրուեցաւ, արդէն արքեպիսկոպոսութեան աստիճանին բարձրանալու տարիք ունեցող քրոջ որդի կարենայ ունենալ (§ 1367)։ Տաթեւացիին չուրջը կը գտնուէին իր 16 վարդապետներէն 13'ը, զորս արդէն յիշեցինք (§ 1379), իսկ վերջին երեքը Մատթէոս Ուխտեցի, Մկրտիչ Փայտակարանցի և Ստեփանոս Թաւրիզեցի յայլ թէղէեղած կ'ըսուին։ Անունով յիշուածներէն զատ, իրեն մօտ ունէր նա ւ-հանոյ բաղաձ աելէ ւ-ե գլխաւոր ոչխ (ՄՆՄ·51)։ Իսկ 12 նորեկները յիշեցինք արդէն Ապրակունեցիին աշակերտներուն վրայ խօսած առենին (§ 1380)։ Երկու տարի տեւեց Տաթեւի մէջ վայելած հանգիստ կեանքերնին, վասն զի սկսան նեղուիլ ի հալածմանէ անօրինաց (ՄՆՄ·52), և տեսան որ այլեւս ալ ի չար հանդարտութիւն և ալ հանդիպ խաղաղութեան վասն անօրինաց չըլլալնին։ Մեծոփեցին չգիտեր թէ ինչ հալածում և ինչ խռովութիւն սկսաւ Սիւնեաց կողմը, բայց կ'երեւի թէ Լէնկթիմուրի մահուանէ ետքը թաթարներուն մէջ տեղի ունեցած՝ ներքին խռովութեանց կ'ակնարկէ։ Տաթեւացին պահ մը մտածեց ապրելու ֆնալ չբաղձալի, և ապրիլացել ի ըմբռնեալ աշխարհէ գալ (ՄՆՄ·24), բայց հարկաւ դիւրութիւններ չունեցաւ, որ ապրիլ իր աշակերտները ևն ի գաղտ Աբծիլոյ, ապրելալ ւ-ե քնակելն ըմբռնեալ ղապաստանհաճոյ ախոն Մեծոփոյ (ՄՆՄ·52)։ Ինքն Տաթեւացին, որ իրեն ենթրած

քանի մականունը կու տայ, 1408'ին է հրեշտակապետական վանքն Մեծոփայ եկած, և անդ յիշեցեալ ըլլալը կը գրէ (ՓԻՐ·29), որով տարուան վերջերը և ձմեռուան սկիզբները Տաթեւէ Մեծոփ անցած ըլլալը կը հետեւի։ Վանքին առաջնորդն էր Յովհաննէս Մեծոփեցի, որ աւարտելու մօտեցուցած էր փառաւոր տաճարին չինութիւնը (§ 1382)։ Նա փութաց Տաթեւացիին ընդունելութեան, և ընծեալ զեմ ընդ առաջ հոգեւոր ծնողին իւրոյ, և քերթողական ի հանդոյց ընծայեցաւ, (ՄԵՄ·59)։ Տաճարին չինուածն ալ աւարտելուն մեծահանդէս նաւակատիք կատարեց, Տաթեւացիին ներկայութեամբ։ Այն տեղ ժողովեցան հոգեառն վերապետք, զորս յիշեցինք (§ 1381), և առնուն կրօնաւորք, և Տաթեւացին պայծառացեալ լուսաւորեց ապաշխարին վերապետութեամբ զմիւնեցին (ՄԵՄ. 59), հինեց գաւթ ընթացքն Յովհաննու մեծապարծին, ղէկը Յոթ նահապետին և զէկը էրեքմեան վերապետացն Գեորգեայ Լմբրունացւոյ և Աբէլոփէթ (ՄԵԺ·52), զորս Տաթեւացին ինքն ալ կը յիշէ ինքնագիր յիշատակարանին մէջ (ՓԻՐ·29)։ Իսկ Յովհաննէս անճոռնի սրբութեամբ զսարգիանայր, և ի պատուոյ կոչ պէտոյին պատուհան (ՄԵՄ. 59), և կոչ ի վերայ քաղմունեան եղբարցն և ներկրեալ զմիւնեան հացի և հանդերձից (ՄԵՄ.5)։

1398· Տաթեւացին և իրեն հետեւորդները Սիւնիքէն եկած, հարկաւ հաչտ աչքով պիտի չդիտէին Աղթամարի կաթողիկոսութեան դիրքը, և Մեծոփեցին ալ կը վկայէ, թէ ի սոյն ժամանակի ի խնդիր ելեալ վասն կոպանոյ Աղթամարայ, պէտք զգացին հետազօտել կապանքին ծագումն ու պարագաները։ Այս նպատակով պատրաստուած կ'երեւի վասն սրբոյն Աղթամարայ, որ էին ի ներքոյ բռնադրանոյ գրուածը, որքան Գրիգորի Տարեցւոյն՝ առաքելականի վերապետի սոցեալ (ԿԱՆ·170-173)։ Այս գնումին ներքեն հայքը Տաթեւացին ինձանդես ժողով սրբալ սրբոյ ընծայից վասնեան ի կոպանոյ ձեռոյ կաթողիկոսացն մերոյ (ՄԵՄ·52)։ Իրողութիւնը կ'արժէր որ մանրամասնօրէն պատմուած ըլլար, այլ կ'երեւի թէ Մեծոփեցիին գգացումները չեն ներած իրեն. խորունկը մտնել այնպիսի հոգեբանութեան, որուն չատ պատուաւոր պիտի չըլլային Աղթամարի աթոռին, որին ինքն ալ վիճակայիններէն էր, և որուն փառաւորութեան համար ալ մեծ փափաք ունէր, և մինչեւ վերջ ճիգեր ալ թափեց։ Աղթամարի Հաւաքարանը չլիներ թէ Տաթեւացին Աղթամարով զրաված և ժողով գումարած և զայն եկեղեցական կապանքէն արձակած ըլլայ։ Աթոռին մէջ տեղի ունեցած չփոթութիւններն ալ Հաւաքարանը Դաւիթ կաթողիկոսի մահուանէն, կամ 1423'էն ետքը (§ 1376), այսինքն Տաթեւացիին մահուանէ ալ բաւական ետքը կը թողու։ Զամչեանի պատմութեամբ, որ անշուշտ աղբիւր մը ունեցած է, Աղթամարի աթոռին չփոթութիւնները Տաթեւացիին գալէն առաջ սկսած են, և Տաթեւացին չփոթութեանց վրայ հասնելով, ինդիրը ձեռք առած և ժողովով լուծում տուած է։ Այս պատմութեանը հաւնեցած երկու պարագաներ կը գուցուին իրրեւ չփոթութեանց պատճառներ։ Առաջինը կաթողիկոսէն դժգոհութիւն, երկրորդը աթոռներու բաժանումը չնչելու միտում։ Դաւիթ սպիկար անձ մը եղած չէ և իր օրով աթոռին զարգացման ալ չանքեր եղած ըլլալը տեսանք (§ 1393)։ Առ առաւելն պէտք է սոսր սրբապարտ ճոխանալուն, կամ թերեւս բռնանալուն վերագրել ժժգոհութեանց պատճառը, յիշելով մանաւանդ տուրքերու մասին կարգադրութիւնները (§ 1393)։ Աւելի հաւանական կը տեսնուի երկրորդ պարագան, որուն կ'ակնարկէ Մեծոփեցին ալ, պատմելով թէ Տաթեւացին անձնեալնք առաջոյն Աղթամարայ վրայ ուշադրութիւն դարձնելով, տրտղնաց գառնալ է հնազանդութեան (ՄԵՄ·34)։ Սակայն նպատակը աւելի հին ատեր կէտ մը կը դիտէր։ Կիլիկիոյ աթոռին անկումը ընդհանուր ազգին մտապրութիւնը կը հրաւիրէր, մանաւանդ Տաթեւեան աշակերտութեան աչքին, իրր եկեղեցւոյ վերանորոգութեան կենսական կէտ մը։ Պէտք էր հայրապետական աթոռը ազատել կիլիկիոյ վարակեալ միջավայրէն, սակայն ցորչափ օրինաւոր յաջորդութեան գիծը այն տեղ մնացած էր, դիւրին չէր այդ կէտը յանկարծ լուծել և անպատրաստ կերպով

որոշման մը յանդիլ։ Աղթամարի աթոռն ալ բաւական ճոխութիւն ստացած էր, և Մեծ-Հայոց կաթողիկոսութեան ձեւ առած էր, մինչ կիլիկիոյ աթոռը Փոքր-Հայոց կաթողիկոսութեան անունով կը յիշուէր անդրսին Մխիթարի օրէն (ՄՆՍ· ԻԵ· 1258)։ և այդ կոչումները Աղթամարին կարեւորութիւնը կը բարձրացնէին։ Ջմոռնանք յիշել, որ նոյն միջոցին Աղթամար նստող Զաքարիա և Դաւիթ կաթողիկոսները, աւելի կ'արժէին քան Սիս նստող Կարապետն ու Յակոբը։ Այդ աւէն պարագաներ հիմնական փոփոխութեան մը և կարեւոր բարենորոգութեան մը պէտքը կը զգացնէին Եկեղեցւոյ չահերով տոգորուած հոգիներուն։

ԱՂԹԱՄԱՐԻ ԱՐՁԱԿՈՒՄԸ

1399· Զամչեանի յառաջ բերած թուղթը, թէպէտ ընդհանուր վաստուրականցիներէ գրուած կ'ըսուի, այլ եկած է կղմանս վասպուրականցիներու թելադրութեամբ և ազդեցութեամբ է, որ ամենայն կրթասէր և աշխարհական կամքէն անկախ կերպով ընտրուած Տաթեւացիին ազդեցութեան դէմ մրցելու անպատրաստ էր։ Կաթողիկոսին գահընկեցութեամբ անձի փոփոխութիւն չէ, ընդհանուր նպատակը, այլ Աղթամարի կաթողիկոսութեան դադարումը, զի ալ կոչել պոռնի՝ որոյ հիմն է վերայ ասպէն է եդեալ, և ալ է վերայ վէմ (ՋԱՄ· Գ· 456)։ Այս կերպով կապանքին պատճառը դադարելով, կապանքն ալ ջնջուած կ'ըլլար, և այն յայտարարութիւնն է զոր հռչակից Տաթեւացին, ձեռնհասութեամբ դադարեցնել, հարկաւ Մեծոփայ վանքը, որոյ հիմն է կապանց հնոց կորուստն էր (ՄԵՍ· 52)։ Մեծոփեցին կը սիրէ պաշտելի վարդապետը բարձրացնել, անոր վերագրելով գործին իշխանական մասն ալ, սակայն այնպէս չէր ըմբռներ ինքն Տաթեւացին, որ գիտութեամբ և արժանաւորութեամբ բարձր կրնար ըլլալ, բայց իշխանական նկարագիրը չունէր։ Ուստի պարտաւորուած կանոնաւորութեամբ կը դիմէր Յակոբ կաթողիկոսին, որ կանոնական արձակումը տայ, թելադրելով ալ, որ ամեն տալէ յանուանէ, և վրդովութեան և տհանոյութեան ընդդէմ օրհնութեան գրէ, այլ ընդլեզելոց նոցա արյախօտ է կապանց անէծքն, և բոլոր Աղթամարի վիճակներուն եպիսկոպոսներ ձեռնադրէ և միւռոն յղէ։ Մութ կը մնան միայն թէ որոնք են քոլոր այն երեք երկիր, զոր Սսոյ աթոռին է հնազանդութեան բերած կ'ըսէ (ՋԱՄ· Գ· 456), այլ հաւանաբանօրէն կրնանք մեկնել՝ վասպուրական և Մոկք և Կարդուք երեք նահանգներուն վրայ։ Սոյն ատեն մէջ Յակոբի տրուած գովեստները, պոծանէ համայնից ազգէ, ծնունդ ցեղապետութեան պէտ, և վհ երբեք, պէտք է առնել իբր պատշաճից բացատրութիւններ, ինչպէս իշխանաւորներու ուղղուած գրութիւնները կը կազմուին, աւելի պաշտօնին բարձրութիւնը դիտելով, քան թէ պաշտօնավարողին արժանաւորութիւնը։ Տաթեւացիին գլխաւորութեամբ տրուած որոշումը հաղորդուեցաւ ամէն կողմ, դէպ Արեւելք մինչեւ ի յորոտն Աղուանից, դէպ հարաւ մինչ ի Պաբելոփան, դէպ հիւսիս մինչ ի Վրաստան, և դէպ արեւմուտք մինչեւ Սսոյ աշտան սուրբ։ Յակոբ փութաց պատասխանել ամենայն ուրախութեամբ, ուր գինքն կ'անուանէ կաթողիկոս ամենայն Հայկազնեաց հանուրց և վաղարշապատու, որով կը յայտնուի թէ էջմիածինէ դուրս գտնուող կաթողիկոսներ միշտ ինքզինքին պանդուխտ կը սեպէին և աթոռին բուն տեղը էջմիածին կը ճանչնային, և գիրը կ'ուղղէ յանուանաւոր մայրապետին Աբջէլ, և է սուրբ աթոռն Մեծոփոյ, որով կը հաստատուի վասպուրականցւոց ժողովին Մեծոփայ վանքը գումարուած ըլլալը։ Ոչ միայն օգնութիւններ կը ղրկէ, այլեւ հայրապետական հեղինակութեամբ կը յայտարարէ, թէ այսր էջ հոգեւորական բաջը հրամանի հաստատուն է (ՋԱՄ· Գ· 457)։ Յիշուած չէ նոր եպիսկոպոսներ և միւռոն յղած ըլլալը, բայց ենթադրելի չէ որ չոր թուղթով մը բաւականացած ըլլայ, այլ հարկաւ պատշաճ պատուիրակութիւն մըն ալ ճանապայ հանած է։ Տաթեւացին 1408 ձմեռամուտին Մեծոփ հասած ըլլալով (§ 1397), նոր գա-

բունէն առաջ գործի ձեռնարկել չէր կրնար, և հազիւ թէ ամառուան յառաջանալէն ետքը կրնար գործի ձեռնարկել, միաքերը պատրաստել, ժողով հրաւիրել և հաւաքել, որոշում տալ, գիրերը յղել, այնպէս որ հազիւ 1409'ին վերջերը կրնար Յակոբ կաթողիկոս եղելութեան տեղեկանալ։

ՏԱՔԵՒԱՑԻՆ ԿԸ ԴԱՒՆԱՑ

1400· *Յայտնի կը տեսնուի որ այդ մեծ չարժումը կատարուած է առանց Դաւիթ կաթողիկոսի համաձայնութեան, թէ ոչ անոնք կրնային որոշում տրուած չէր ըլլար։ Այս պատճառով Դաւիթ զինուեցաւ իր անձին և պաշտօնին պաշտպանութեան, ձեռք առաւ այն ամէն միջոցները, որոնք կրնային նպաստել, այսինքն է կաշառի և բռնութեան ոյժերը, կողմնակիցները զօրացուց և ամեցուց, և տեղական իշխանութիւնը միջամտութեան հրաւիրեց, անոր կասկածները գրգռելով արեւմուտքի կողմէն եղած ոտնձգութեանց դէմ, և քաղաքական տեսակէտներ վերագրելով պարզ հոգեւորական գործողութեան մը։ Մեծոփեցին որոշ չգիտեր այդ պատճառով տեղի ունեցած անցուդարձը, սակայն իր կցկտուր ակնարկները յայտնի կը ցուցնեն, թէ Դաւիթ ուղղակի հալածանք հանեց Տաթեւացիին դէմ, իրրեւ չփոթութեանց սկզբնապատճառ, և գործը այնչափ մղեց, որ Տաթեւացին պարտաւորուեցաւ փախուստով ինքզինքը ազատել։ Արդէն Մեծոփ մեկնելը չատ չոր կերպով բացատրուած է, թէ ի դէս ածի ելեալ ընդ քեզ (ՄԵՆ·34), և այդ խորհրդաւոր լռութիւնը աւելի կասկածաւոր կը դառնայ, երբ կը գրէ, թէ մեկնելէն առաջ՝ նկատելով ընթացքը մարդոց, և յետոյ ԴԱՂՏԱԳՈՂԻ ԱՌԱՒԱԼ ԳՆԱՑԻՆ ի քաղաքն Աբեղեկեան (ՄԵՆ·53)։ Ոչ մի պարադայ չէր ստիպեր որ Տաթեւացիին ազգակիրները յանկարծ գան և անոր չուրջը հաւաքուին, եթէ ծանր խնդիր մը յուզուած չըլլար, և ոչ ալ հարկ կ'ըլլար Տաթեւացիին քաղաքէն մեկնիլ, եթէ վտանգ մը չնչմարուէր։ Տաթեւացիին ձեռնարկը ձախողած էր, և Մեծոփեցին կը խղճէ իր վարդապետին աննպաստ բան մը գրել։ Աղթամարի կաթողիկոսը անհաճոյ քայլ մը առած էր, և Մեծոփեցին չուզեր զայն մեղադրել, վասնզի իր գրած տունը Աղթամարի աթոռին հետ հաչտ էր, և իրարու գործակից էին Սսոյ աթոռին տեղափոխութեան համար։ Այդ մտածումներն են, որ պատմիչին կ'արգիլեն տեղնիտեղօք պատմել Աղթամարի կողմէն Տաթեւացիին դէմ յարուցուած հալածանքը, և մեծ վարդապետին փախուստի պարտաւորութիւնը։ Ինչ որ սակայն դիւրին է քաղել իրեն գրիչին ոճէն, և թերեւս յակամայից ապրդած պարագաներէն։ Այդ եղելութիւնները պէտք է դնել 1410 տարւոյ ընթացքին մէջ։ Մեծոփեցին կը դրէ, թէ Տաթեւացին ամ ոչ ընդ քնակեցաւ ի սուրբ սենեկի Մեծոփոյ (ՄԵՆ·34), սակայն մեր այդ լման տարին ոչ թէ պարզ բնակութեան, այլ արդիւնաւոր բնակութեան, կամ որ նոյն է, ուսուցչական ժամանակին վրայ պիտի մեկնենք, քանի որ 1408'ին վերջերը եկած ըլլալը իր յիշատակարանէն կը ճշդուի (ՓԻՐ·29), իսկ 1410'ին մեկնած ըլլալը Մեծոփեցին կը չնշէ։ Իրրեւ ուղիղ պէտք է ընդունիլ այն կտորը, ուր Հայոց 858'էն տարի մը ետքը կը դնէ մեկնիլը (ՄԵՆ·52), և ոչ թէ 868'էն ետքը (ՄԵՆ·53), զի այդ հաչուով տասնը մէկ տարի մնացած կ'ըլլար Մեծոփի մէջ։ Ստոյգ ալ հազիւ տարի մը աշխատած ըլլալու միջոց կը մնայ, եթէ հասնելէն ետքը պէտք եղած պատրաստութեանց, և մեկնելէն առաջ քաչուած ապրելու միջոցները հաչիւ առնենք։*

ՄԱՀԸ

1401· *Տաթեւացին Գրիգոր ֆալաֆեղէ ուղեւորութեան պատաւորուած ըլլալով, նեղութիւններ ալ պիտի կրէր, զի ինչպէս գործերու ընթացքը կը ցուցնէ, մարմնոյ առողջութիւնն ալ կորուսած էր, թէպէտ տակաւին 64 տարեկան։ Սաղմոսավանքի մէջ մնայ ժամանակ մը, ուր գինքն խնամեց Տէր Վրթանէս Ծոփք Սալմոսավանէց, հոգեւոր հօրեղբայր էր, բայց իր փափաքն էր դառնալ իր սիրած օխտարանը՝ Տաթեւի դպրեվանքը, ուր իր երջանկութիւնն էր վայելած և արդիւնաւորութիւնն ունեցած։ Թերեւս աւազէր ալ ուրիշներու խնդրոյ առարկայ Մեծոփ գացած ըլլալը։ Վասպուրականցիք չուզեցին*

լքանել մեծ վարդապետը, և ինչ-ինչ ի կ'ըսէ Մեծոփեցին, ընկերներուն ակնարկելով, լըրջութե՛ւ և աշխէրհ՛ն ծնօղ՛ա՛ն նա, այսինքն է Սաղմոսավանք խմբուեցան։ Տաթեւացիներ ալ կ'ուզէին իրենց մօտ ունենալ պաշտած վարդապետնին, ուստի ի՛մաստասէր եղիկոսն և լըրջութե՛ւն տէր Ա՛ստուածատուր, Սիւնեաց մետրապոլիտը, անձամբ ինքնին իրեն հետ տկան նաեւ աշխէրհ՛ի Գրիգորի է Սկեւռա է ուրբ ա՛ստուածոյ Սուքիաս և Սաղմոսավանքէն տարան Տաթեւ, կարծես թէ սիրելի վանքին մէջ հոգին աւանդելու և մարմինը հողի յանձնելու համար։ Տաթեւացին իւր վախճանը մօտալուտ զգալով, փութաց Տաթեւի մայրավանքը հասնելուն պէս իւր յառաջացնալ աշակերտներուն ծայրագոյն աստիճանը տալ, որպէսզի Որոտնեցիի սկսած և իւր ծաղկեցուցած գործը չարունակեն։ Իրաւ ալ չեք ա՛ռնն ա՛ստուծ ֆնալոյ Նոր Հ՛ետ՛ադարձ՛ա՛, զի արդէն հիւանդագին ինկած էր, և ութ օրէն մահիճ ինկաւ, և ֆոխեցա՛ յաստ կենցա՛ է հանգերձեալն (ՄՆ· 53), և օրհա՛ տհաւն եին կոչեցա՛ չերկնային տաղտն (ՄՆ· 34)։ Յանկարծական մահուան ձեւը չեն ցուցներ այդ բացատրութիւնները, բայց և ոչ ալ կը ճչդեն թէ որչափ ատեն տեւեց մահաբեր հիւանդութիւնը, ինչ չուզենք ա՛ստուծ ա՛ն ա՛ստղջ ծացնել բացատրութիւնը հիւանդութեան տեւողութեան վրայ իմանալ։ Ամսաթիւ չունինք, այլ միայն ըսուած է թէ մահր տեղի ունեցաւ յաստ՛ուծ փծնէ Նախվկայն Սթեփանոսէ (ՄՆ· 60), որ 1410'ին հանդիպած է դեկտեմբեր 25'ին, կամ հայկական տումարով 860 նաւասարդ 17'ին, և չենք գիտեր թէ ինչու Յայսմաւուրքը ապրիլ 27'ին կը դնէ անոր յիշատակը (ՅԱՑ· 531), ինչ Մեծոփեցի Յովհաննէսի մահուան հետ չփոթուած չէ։ ինչ հիւանդութեան ութերորդ օրը վախճանած, և հանգելուն ութերորդ օրը հիւանդացած պիտի հաչուինք, դեկտեմբեր 11'ին կամ նաւասարդի 3'ին Տաթեւ հասած, և դեկտեմբեր 18'ին կամ նաւասարդի 10'ին հիւանդացած պիտի հաչուինք։ Մարմինը թաղուեցաւ նոյն վանքին մէջ, ուր և մինչեւ այսօր կը պատուուի անոր գերեզմանը (ՍԻՆ· 236)։ Հարկաւ թաղումը մեծահանդէս կատարուեցաւ Առաքել մետրապոլիտին գլխաւորութեամբ և վասպուրականցի վարդապետներուն ներկայութեամբ, որոց գլուխը կը գտնուէր Յովհաննէս Մեծոփեցին (ՄՆ· 53), և յանուանէ կը յիշուին Թովմաս Մեծոփեցին, Մկրտիչ Մեծոփեցին, Յակոբ Ովսաննացին և Մկրտիչ Բերկրեցին (ՄՆ· 61)։

ՏԱՔԵՒԱՑԻՒՆ ԱՐԴԻՒՆՔԸ

1402· Գրիգոր Տաթեւացի Հայ եկեղեցւոյ երանաչնորհ վարդապետներուն չարքին վերջինն է, փառաբանուած և տօնուած յատուկ յիշատակով, և գովուած նա՛ստ՛ծ կոչմամբ, որ գրեթէ մակդիր անուն մը դարձած է։ Այդ արտասովոր փառքին բուն պատճառը հաստատուած է իւր անխոնջ աշխատութեան վրայ, որով դէմ դրաւ ունիթորական հոսանքին և աղթարմայական վարակման, որոնք օգուտ քաղելով Հայ ազգին և Հայ եկեղեցւոյ անկած և տկարացած կացութենէն, կը յուսային զայն ընկլուզանել, և ազգային եկեղեցւոյ գոյութիւնը վտանգել։ Գրիգոր հետեւելով նոյն ուղիղ չաւիղին, զոր ուսած էր, իւր արժանաւոր վարդապետէն, Որոտնեցի Յովհաննէսէն, և իւր կողմանէ աւելցնելով ինչ որ հանճար և սիրտ իրեն կը թելադրէին, ինքզինքը նուիրեց սոսկ ուսումնական ճիւղին, կամ պաչտօնական բառով՝ վարդապետական ընթացքին. գրեց ու քարոզեց, սորվեցուց ու աւանդեց, և Տաթեւական աչակերտութ՛եամբ ուէր կանգնեցաւ հայադաւանութեան ուղղափառութեան, և զայն ազատեց իւր վտանգեալ վիճակէն։ Այդ անդուլ ջանքին և պայծառ արդիւնքին հանդէպ հրապարագիտական պարտք մըն է, զոր կը կատարէ եկեղեցին անոր յիշատակը տօնելով, որուն սկզբնաւորութեան թուականը ճըշդուած չենք գտներ։ Ետ առաւել չենք իմանար թէ ինչու մեծպահքի ոչ-հանդիսական օրերուն մէջ դրուած է (ՏՕՆ· 45), որ իւր մահուան տարեդարձին հետն ալ համեմատութիւն չունի (§ 1401)։ Նոր վերջացած դարուն սկիզբները, միաբանական նպատակի հետեւողութեամբ, պահ մը ընդհատած կը գտնենք անոր տօնը, և այս պարագային հետեւանքը եղած է՝ Յայսմաւուրքի վերջին տպագրութեան մէջ յիշատակին ալ

զանց ըլլալը, ինչպէս Որոնեցիի համար ալ յիշեցինք (§ 1366)։ Տաթեւացին անկասկած պէտք է դասել ժամանակին գիտնականներուն չարքը։ Հոլցմանց գիրքը, թէ ոճով և թէ պարունակութեամբ համահաւասար կերպարան և արժէք ունի, մինչին դարու հռչակեալ լատին աստուածաբաններուն, Թովմաս Ակուինացիի, Ալբերտոս Սուաբեցիի, և Սկովտոս Երինացիի (Thomas Aquinateusis, Albertus Suevieusis, Scotus Erigena) գործերուն հետ, հանգիտակչիռ առաւելութիւններով և համանման թերութիւններով։ Ակէ կը հետեւցնենք թէ ոչ միայն լատիներէնի հմտութեամբ, այլ և լատիններուն ընդունած ձեւերով ուզած է մաքառիլ անոնց դէմ։ Մինչեւ իսկ կրնանք աւելցնել, թէ Հարցմանց գիրքին մէջ բացատրութիւններ կրնան լուսաբանուիլ Սկոլաստիկեաններուն լատիներէն դարձուածներուն համեմատութեամբ։ Իրաւ ներկայ դարուս մէջ հետեւելի չեն այլեւս Տաթեւացիին ձեւն ու ոճը, ինչպէս գործածելի չեն արեւմտեան Սկոլաստիկեան ոճերը, սակայն ժամանակին լատիններուն դէմ իրենց զէնքերով մաքառելու հարկը ստիպած է Տաթեւացին, Հոլցմանց գիրքին մէջ իւրացնել և Հայոց սեփականել տալ նաեւ այնպիսի վարդապետութիւններ, որոնք լատիններէն առջեւ կը դրուէին, և թէպէտ Հայ եկեղեցւոյ սեփական չէին; բայց խընդիրի նիւթ եղող կէտերէն ալ դուրս կը մնային։ Կ'երեւի թէ Տաթեւացին ուզած է այնպէս իմն ցուցնել, թէ Հայ եկեղեցին թերի բան մը չունի՝ իւր ընդհանուր վարդապետութեան մէջ։ Այսպէս են եկեղեցւոյ խորհուրդներուն եօթը թիւը, և վերջին օծումը (ՏԱՓ·587), մեղքերու տեսակները և աստիճանները (ՏԱՓ·555), Հաղորդութեան բացատրութիւնը (ՏԱՓ·557), ազգաբանական ճիւղահամարը (ՏԱՓ·611), և այլ նմանները։ Հոլցմանց գիրքին ետքը գլխաւոր գործն է Ա՛ստո՛ւած հօրը և Զո՛րաւոր հօրը անուններով երկուքի բաժնուած քարոզգիրքը, վարդապետական տեսութիւններով ճոխացած։ Ուրիշ գործերէն չատերը յիշեցինք պատմական կարգին, և դուրս ցուցակագրած է Յայսմաւուրքը (ՅԱՓ·533), և որոնցմէ հնար է այսօր ալ օգտուիլ, որչափ ալ ոճը

ընտել չըլլայ այլեւս մեր գործածական կերպին։ Այդ գրուածներն են որ անմահացուցած են Տաթեւացիին անունը, և աւելի փառաւորած, քան եթէ հայրապետական աթոռ բարձրացած ըլլար։

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

1403. Գրական երկասիրութիւնը հետ արդիւնաչատ եղած է Տաթեւացին իւր ընդարձակ ուսուցչութեամբը և բազմաթիւ աշակերտներովը, որ ինչպէս ըսինք ներկայիս գտնուող Հայ վարդապետութեան հիմն ու աղբերակն է (§ 1367)։ Վերեւ քիչ մը բան ըսած ենք իւր աշակերտներուն վրայ. բոլորն ալ Տաթեւացիին գործունէութեան արգասիք պէտք է համարուին։ Վարդապետական աշխատութեան մասին ունեցած ջանքին և անոր արդիւնաւորութեան մասին մնացած զգացումին արտայայտութիւն եղած է վարդապետական աստիճանին տուուչութեան համար կազմած ծիսական կարգը, զոր յօրինեալ է Տաթեւացին, ինչպէս Մաշտոցին մակագրութեան մէջ գրուած կայ (ՄԱՇ. 281)։ Ծօրինուած կանոնը երկար է իւր կազմութեամբ և ծանր է իւր պարունակութեամբը, և ուրիշ ազգերու մէջ գործածուած ձեւերէն տարբեր ըլլալուն, պէտք է ընդունիլ, թէ Տաթեւացիին միտքին ստեղծումն է։ Ուրիշ ազգերու մէջ վարդապետական աստիճանը իւր ուսումնական կերպարանը կը պահէ, և Գաւակաւորի, Արուեստաւորի ու Մագիստրոսի (Bachelier, Licencié, Docteur) երեք աստիճաններով կը լրանայ։ Հայ վարդապետութիւնը, որ աստուածաբանութեան մագիստրոսի աստիճանին կը պատասխանէ, Տաթեւացիին դրութեամբ ամբողջապէս եկեղեցական կերպարանի վերածուած է, 14 աստիճաններու դասաւորութեամբ, թէպէտեւ ամէն աստիճաններ իրենց յատուկ գոյութիւն և նշանակութիւն չունին, այլ միայն երկու բաժանումներ կան, մէկը 4 և միւսը 10 աստիճաններով, որ Փոքր և Մեծ, կամ Սահաւոր և Միչոփեան անուններով կ'որոշուին։ Հին ու նոր կատակարանէ քաղուած ընթերցուածներ, և չարականներէ հաւաքուած յարմար պատկերներ կը կազմեն արարողական մասը, իսկ գաւազանին աստիճաններուն թուով կրկին

և կրկին տուժուխթիւնները՝ կը պատկերացնեն վարդապետութեան նիւթ եղող կէտերուն տարբերութիւնները, և պաչոճին ընդարձակութիւնը կը ցուցնեն։ Ուսմանց ընթացքը լրացնողներուն տրուած աստիճանը՝ մանաւորն էր, իսկ ծայրագոյնը պահուած էր վարդապետաց վարդապետներուն, որոնք վանքերու կամ վանական դպրանոցներու կամ վարդապետանոցներու մէջ իրենց յատուկ աչակերտութիւն մը կը կազմէին։ Զննք ուզեր պատմութիւննիս ընդհատելով համեմատութեան դնել այդ սկզբունքը, և այժմեան կուստանդնուպոլսոյ պատրիարքութեան մէջ տիրած սովորութիւնը, ուր անուանելու անգամ ծայրագոյն աստիճան կը տրուի, մինչ հին պէտք էր ունայնատիտ ակնկալութիւններ գոհացնել, հնար էր հինգերորդէն մինչեւ չորեքտասաներորդ աստիճաններուն մէջէն տարբեր բաժանում ալ կազմել, և օրինակ իմն, Աթոռ վերջապէս աստիճան մըն ալ ստեղծելով աստիճանաւոր բարձրացման ձգտումներու յագուրդ տալ։ Տաթեւացիին կազմած արարողական ձեւը, իւր ընդարձակութեամբը նպատակ ունեցած է ուսումնականութեան գերակշռութիւնը բարձրացնել, և կերպով մը անոր այնպիսի դիրք մը տալ, որ նոյն իսկ եպիսկոպոսականէն աւելի վայել մը ուներ։ Այս միտքը այնչափ զօրացաւ, որ մինչեւ վերջին դարուն սկիզբները ծայրագոյն աստիճան ունեցող եպիսկոպոսներ, վարդապետի պատուանունով կը կոչուէին, իբրեւ աւելի փառաւոր կոչում մը։ Այսպէն Մաշտոցի խորագիրն ալ ծայրագոյնները կ'արտօնէ եկեղեցւոյ մէջ նոթել է վերջ ասելու, և ձոթե է ձոթ ընդ արբելոյն խոսիլ, հրամայելով լինել երբեք զվէմ անշրջելիս, և ոչ մի թերութիւն ունենալ է հոգով, է խօթե և է կրնս խօրհնդ, և ինչ որ կը քարոզեն՝ ընդ ինէն կոպրել նոթ (ՄԱՇ·337)։ Արտօնութիւնները կիրառութենէ դադարած են, անչուշտ անոր համար, որ ծայրագոյն վարդապետներ տարապայման աճած, և իրենց նշանակութիւնը կորուսած են, պարտաւորիչ պայմաններուն չեն պատասխաներ, և պէտք եղած ձիրքերով ճոխացած չեն։ Շատ նշանակալից է, նոյն իսկ Տաթեւացիին, Որոտնեցիի մահուան մօտ ծայրագոյն գաւազան ընդունիլը (§ 1366)։

1404. Տաթեւեան հաստատութիւնը Գրիգորի մահուամբը չդադրեցաւ, բայց թէ ո՛վ նստեցաւ Գրիգորի վարդապետական աթոռը՝ ՏԱՔԵՒԱՑԻՆ ԵՏՔԸ Մեծոփեցի պատմիչը յանուանէ յիշած չէ։ Տաթեւացիին աչակերտները համրած առեն առաջին դրած է Մխիթար Տաթեւացին (ՄՆՄ·50), բայց Մխիթարի անունը ուրիշ տեղ յիշուած չենք գտներ, մինչ Գրիգորի մահուանէն 30 տարի ետքը, իբրեւ վարդապետներու առաջին, և իբրեւ վերջապէս Ե ոսոգիչ կը յիշուի Յովհաննէս Հերմոնեցին (ԿՈՍ·51), որ երկրորդ է նախասացեալ ցուցակին մէջ Մխիթարէ ետքը (ՄՆՄ·50)։ Այսչափը կը բաւէ մեզի հետեւցնելու, թէ Մխիթար Գրիգորէ առաջ կամ քիչ ետքը մեռած է, իսկ Գրիգորի գործին չարունակողն ու արդիւնաւորողն եղած է ստուգապէս Յովհաննէս Հերմոնեցին։ Մէկտեղ եկող վաստրականցիներն ալ ետ չեն դարձած, անչուշտ կը վախնային Դաւիթ Աղթամարցիին սահմաններուն մէջ երեւալ, որ հաւասարապէս զայրացած էր Տաթեւացիին գործակիցներուն դէմ, և մանաւանդ իւր վիճակայիններուն դէմ, որ իրեն գահընկէցութեան աշխատած էին, թէպէտ նպատակներին յաջողցուցած չըլլան։ Յովհաննէս Մեծոփեցին, որ վաստրականէ հեռացողներուն գլխաւորն էր, առիթէն օգտուելով սկսաւ չրջան ընել Սիւնեաց և Այրարատի վանքերը, բայց երբ կը գտնուէր Այրեվանքը, երկիւղածեցաւ ոսոգածմոտ ֆեղբեբեանն (ՄՆՄ·61), հիւանդացաւ մեծապահոց միջոցին, մօտ է Զաքէի յարութիւն գոն, և Ծիրանց մէջ, է նոյն օրն որ ասէ Անակղէն Աթոռոց, է Յարութիւն օրն, այսինքն կիրակի օր մը՝ հաւաքել վանօճան նոթա, ֆնոց սա Քրիստոս (ՄՆՄ·61)։ Անակղէն Աթոռոց յարութեան չարական, ունինք միայն Անակղէն Աթոռոց և ոմնոզբ հարցը (ՇԱՐ·335), կ'երգուի Ծիրանց չորրորդ կամ կարմիր կիրակէին (ՏՕՆ·112), որ 1411'ին կ'իյնար մայիս 3'ին, և այս պէտք է ընդունուի իբրեւ Յովհաննէս Մեծոփեցիի մահուան թուականը։ Նոյն չորս վաստրականցի վարդապետները, որոնք Տաթեւացիին թաղման

գանուած էին (§ 1401), և իրենց հետ եղող-ները՝ հայրենակից և հայրապատիւ ընկերն ալ տարին Թաղեցին Հաւուցքառի վանքը, Յովսէփ նոր վկային և Եղիա վարդապետին գերեզմանին քովը (ՄՆՄ· 61)։ Յովսէփ նոր վկայն Յովսէփ Դրունեցին է, որուն վրայ խօսած ենք իւր կարգին (§ 959), իսկ Եղիա վարդապետ՝ պէտք է իմացուի Հաւուցքառի վանահայրը, որ ներկայ եղած էր Լօռիի գումարումին (§ 1084), և որուն չինարար ու նշանաւոր անձ մը եղած ըլլալը կը քաղուի այդ պատուաբեր յիշատակութենէն։ Մեծոփեցի պատմիչը՝ իրեններուն փառաւորութիւնները փայլեցնելու հետամուտ, կը վկայէ թէ Յովհաննէսի գերեզմանին վրայ քաղցր քաչչունիներ լինէին ի սոյն ամէց նոցա (ՄՆՄ· 61), սակայն Յովհաննէսի յիշատակը Յայսմաւուրքի անցած չգտնուիր։ Որոշ պատմութիւններ կը պակսին Տաթեւացիին մահուան յաջորդող միջոցին, և վասպուրականէ փախած վասպուրականցի վարդապետներուն վրայ, որոնք կ'ներեւի թէ պահ մը ապահովութիւն չգտցին իրենց տեղը դառնալ, և միայն Դաւիթի հետ հաշտուելէ կամ անոր մեռնելէ ետքը համարձակեցան դառնալ։ Այս առթիւ Թովմաս Մեծոփեցին ալ, ժամանակակից պատմիչը, ձեռք անցուց Մեծոփայ վանքին առաջնորդութիւնը, իբր Յովհաննէսի յաջորդ։

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԱՀԸ

1405· Յակոբ կաթողիկոս բախտին յաղող բերմամբ պատեաւոր և յաղող գործի մը մէջ գտնուած էր, Աղթամարի կապանքը լուծելու կոչուելով (§ 1399), սակայն արդիւնքը տեսնելու միխիթարութիւնը չկրցաւ ունենալ, զի ոչ միայն գործը առջեւ չգալեց (§ 1400), այլ և իր ալ կեանքին վախճանը չուտով վրայ եկաւ։ Իրրեւ ժամանակակից աղբիւր Մեծոփեցին ունինք, որ վեց կաթողիկոսներուն ետեւէ ետեւ դիղակուր սպանուած ըլլալը գրելով (ԿՈՍ· 55), Յակոբն ալ այդ չարքին խառնած կ'ըլլայ· բայց Զամչեան ալ, որ ամէնուն վրայ այդ տեսակ մահը չտարածեր, Յակոբի համար կ'ընդունի ի դէպ ընդ հայրապետացոյն դիպ մահս արքունական սպանուած ըլլալը (ՉԱՄ· Գ· 457)։ Յակոբին մինչեւ 1409 ապրած ըլլալը, վասպուրականցոց դիրքէն գաղ (§ 1399), Մեծոփի արձանագրութիւնն ալ կը վկայէ (ՓՒՐ· 30), և սովորութիւն եղած է անոր կեանքը երկարաձգել գոնէ մինչեւ 1411, Տաթեւացիին մահուընէ ետքը (ՉԱՄ· Գ· 457), և մենք ալ գաղտ մը չենք գտներ անկէ չեղելու։ Միայն թէ ոչ եւս 2 տարի միայն, ինչպէս սովորաբար կը տրուի (ՍԱՄ· 172), այլ գոնէ 7 տարի պէտք է տանք անոր կաթողիկոսութեան, ինչպէս բացատրեցինք մեր ժամանակագրական բաղդատութեանց մէջ (§ 1388)։ Անծանօթ կը մնան մեզի ըսպանութեան պարագաները, թէ ինչ առիթներ գրգռեցին Սսոյ միաբանները կաթողիկոսին թունաւորելու, և թէ սովորական նախանձէն, կամ Յակոբի բռնաւոր ընթացքէն ազատելէ գաղ մասնաւոր պարագայ մը եկաւ միաբանները վերջնական որոշման հասցնելու։ Նկատելով թէ ով եղաւ Յակոբի սպանութենէն օգուտ քաղողը, և չգտնու ուսումնասիրութենէն փնտռելով գաղտնի եղելութեանց լուծումը, կը համարձակինք ըսել, թէ նոյն ինքն Յակորի յաջորդը եղած կ'ըլլայ դաւաճան դեղտութեան գլուխը կամ հնդիկը, և Յակոբ իւր անձամբ վճարած կ'ըլլայ ինչ որ ինքն ալ իւր նախորդին՝ կարապետ կաթողիկոսին բրած էր (§ 1388)։ Յակոբ Գ Սսեցի անյանական կը մնայ, ինչպէս անյանական ալ աթոռ բարձրացած էր, քայլ մը եւս առջեւ տանելով հայրապետական աթոռին քայքայումը, ընդարձակելով զեղծմանց ասպարէզը, և իւր բռնական ընթացքով զրգռելով ապերախտ վրէժխնդրութիւնները։

ԵՈՒՍՈՒՖ ԵՒ ԻՍՔԷՆՏԷՐ

1406· Քաղաքական պատահարները աչքէ վրիպեցուցինք, ազգային և եկեղեցական եղելութեանց հետ ներկին կապ չունենալնուն։ Էնկիմուր 1402'ին Օսմանեանց սուլտան Պայեզիտ Երկրորդի վրայ տարած յաղթանակէն ետքը (§ 1385), երբ նախ է վերադառնալ Եւրոպա և կոստանդնուպոլսոյ մերձակայ տեղերը անհնարին եղան հաստատած չարիքը և անեղ կոտորածը, սեպհական գործ համարեցաւ ոչ միայն վարեցին (ՄՆՄ· 66), Թուրք և Քուրդ, տղայ և ծերասուն, որոնց մէջ տկարներուն տէր սեպհականութեան գիրքէն գաղ

Ֆռացին, ինչպէս կը վկայէ Մեծոփեցին, թէ պետ ալբ մերվ և լոռ, բայց ոչնչ կրեռ (ՄՆՄ·67)։ Լէնկթիմուրի այդ արշաւանքը վերջինն եղաւ դէպ Արեւմուտք. միւս տարին 1404'ին պատրաստուեցաւ Զինաստան արշաւել, բայց չկրցաւ գլուխ հանել, մի ճանապարհ մեռաւ, Ոտքանտ գաւառի Օթրար աւանը, 1405 փետրուար 18'ին, 71 տարեկան։ Լէնկթիմուր անգութ բռնակալի տիպար մըն է արտաքնոց համար, իսկ իրենները՝ այլասիրաչէն, ուսումնասէր, օրէնսդիր և արդարասէր վեհապետի համբաւը կը վայելէ (ՏԻՒ·357)։ Իրեն յաջորդեց որդին Շահռուհ, զոր ոմանք կը նոյնացնեն Միրանշահի հետ (ՃՆՏ·186), որ Պարսկաստանի իշխանապետ թողուած էր, և սա ալ այն տեղ իրեն յաջորդ նշանակեց Իօմէր որդին։ Անցողակի յիշենք թէ չատ չփոթ են Լէնկթիմուրի որդիներուն և թոռներուն անձերն ու անուններըը, որ միահամուռ 40'ր կ'անցնին։ Սոյն Իօմէրի համար կ'ըսուի. թէ գոյնոյ բանաստեղծ չանհատոպոլեան Բուռթէլ Օրբելեանը և անոր եղբայր Սմբատը, Տաթեւացիին պաշտպանը (§ 1367), Տարսայիճ եղեգեաց, Ագիտան Աղթից, և Սարդաթմիշ Մակուայ իշխանները, որք էքէբ ջիճ ի ոչնուոզց ֆռացել էին, և որ չեռոյ դրկուցան և եկան ճշմարիտ հաստատելէ (ՄՆՄ·67)։ Գարա-Եուսուֆի Գարագոյունլուն, որ իւր երկրէն փախած էր (§ 1384), բայց ոչ ի խաստեցոյն բանակ նեբէյինս դրուած, ինչպէս ոմանք կարծեցին (ՍԱՄ·173), այլ ոչ երբ ել յաչեբնս մէր մինչեւ 1855 (ՄՆՄ·49), որ է 1406, այսինքն է Լէնկթիմուրի մահուան յաջորդող տարին, երբ ղբոցեալ Յոհաննէն այն Աստրապատական մուսա յաղթական, և ապա խաղաղութեան վերջն կոմսից աշխարհս Հայոց։ Իսկ յերկրորդ ամն, այսինքն է 1407'ին, նոր պատերազմ բացուեցաւ Լէնկթիմուրի թոռին Ապուպէքրի և Յուսուֆի միջեւ, և նորին Յուսուֆ զօրացաւ, Երզնկան, Մէրզինն ու Արզնին իրեն հպատակեցուց, Ամիդի վրայ ալ յարձակ՝ որ Աքքոյունլուներուն կեդրոնն էր, բայց հպատակութիւնն ընդունելով հաշտութեամբ վերջացուց։ Աքքոյունլուներուն վեհապետն էր Օսման կամ Օթման, զոր յոյժ սիրող ալբիս Հայոց կ'անուանէ Մեծոփեցին, առանց գործ մը յիշելու (ՄՆՄ·72)։ Գաղտատի ամիրայ Ահմէտ, Յուսուֆի բացակայութենէն օգտուելով Թաւրէզը գրաւեց, բայց Յուսուֆ ետ դարձաւ, ոչ միայն Թաւրէզը, այլեւ Գաղտատն ալ առաւ, և Ահմէտը սպանանելով Աքանդար կամ Իսքէնտէր որդին այն տեղ նստեցուց, և ինքն դարձաւ հանգստանալ Բագրեւանդի վաղարշակերտ քաղաքը, որ է այժմեան Ալաշկերտը։ Գահ մը պատերազմի ազմուկը գադրեցաւ, և եղե ի նոյն ժամանակ խաղաղութիւն Հայոց, և մերքին ի շինս քնակչին, ընկեր հարկապահանջութեան քաղաք էր, սակայն խաղաղութիւն առանց խռովութեան էր (ՄՆՄ·73)։ Այս միջոցը կը պատասխանէ Տաթեւացիին վանապետական գալուն, և Աղթամարի խնդիրը յուզելուն, և Դաւիթ Աղթամարցիին վերստին գործանալուն, որուն պաշտպան կանգնած էր Գարագոյունլուն Յուսուֆ, միշտ կասկածոտ օտարներու միջամտութենանց մասին։ Մեծոփեցիին գրելը թէ ծագկել էին նկեղեցի, պէտք է պատշաճեցնենք Տաթեւացիին ձեռօք եղած բարեկարգութեանց։ Դաւիթ ալ հետու չէր այդ գործունէութենէ, որչափ ալ Տաթեւացիին դէմ գինուած ըլլար աթոռական խնդիրին պատճառով։ Գաւեհէնն օգտուելով ուրացեալ Հայ իշխաններ, որոնք վերեւ յիշուեցան, եկին ի հնազանդ, և մինչեւ իսկ Տաճիկներէն գրաւուած վանքեր ու նկեղեցիներ՝ ետ տրուեցան (ՄՆՄ·73)։

1407. Այդ միջոցին էր որ հռչակ կը գտնէին Յուսուֆ Իսահակ պատմիկին քաղաքագիտութիւնները։ Բնիկ Թաւրէզցի էր նա, իսլամ կրօնքին մէջ ծնած և ուսած, ու լեզու և գաղտնագրութեան ընթացքովը, հմտութիւն մը եղած էր դիւանին դէմ, և ամէն տեսակ բռնութեանց ձեռնարկէց էր, ու անելով քնազանութեան ընթացք (ՆՈՐ·208)։ Տակաւին պատանի մըն էր չուրջ 1377'ին, երբ կը հաւաքէր ղէղզ ոչխար ընդ, և կը ձգէր ի կոյս դիւանին (ՄՆՄ·73)։ Կ'երեւի թէ այդ գործերը պահ մը իւր սիրտն ալ վրդովեցին, որ դիւցեր մը ընկանէ նօթ, մոյն և եղբօր, անոր անհետին գալման յոյնեն ընդհանրել ազատ ֆռացին, և ընդունցանել ու կա-

ըէն մինչեւ երեք տիւ և երեք գիշեր։ Լսուած ձայնն էր, Աստուած իմ մեղայ ինձ, խոստովանիմ և հաւատամ, և ուրիշ համիմատ բացատրութիւններ (ՄՆՄ· 75)։ Երիտասարդը վերջապէս ուշաթափելով սկսաւ Թմրութեան մէջ տեսածները պատմել, որք էին դժոխքի անուռ տեսարաններ. և դինքն անունց մէջ նետելու սպառնալիքներ, և արքայութեան վայելքներու հեռապատկերներ, որոնցմէ սարսափած դաւանութեան աղազակներ կը կրկնէր։ Քունին մէջ խոստացածը, արթնութեան մէջ կատարելու հաստատուն միտքով, կը դիմէր Թաւրէզ գտնուոզ Սուրփհանաս Լալուկ վարդապետին, և կը մկրտուէր, և այս առթիւ Եուստոֆ անունը փոխելով Իսահակ կը կոչուէր, բայց սովորաբար երկու անուններովը մէկտեղ Յուսուֆ Իսահակ կը կոչուի (ՄՆՄ· 76)։ Առաջնորդն էիթէը գիտը Տօճկոց, վարդապետէն ալ սաստ գիտը Հայոց, և որովհետեւ էր յոյժ պատճառ և գեռազ, ճարտար քարոզիչ մը դարձաւ (ՆՈՐ·209), Իսահակ պարսիկ լեզուէն կոչումն ալ ստանալու չափ (ՆՈՐ· 217), թէպէտ բնաւ եկեղեցական աստիճան չունէր։ Նոյն նախանձայուզութեամբ որով քրիստոնէութեան հալածիչն ու անարգողն էր, քարոզիչն ու պաշտպանը դարձաւ Աստուածային Գիրքէն նման (ՆՈՐ· 209), սկսելով նոյն իսկ իւր ծննդավայրէն, Թաւրէզ քաղաքէն, և հետզհետէ չրջելով է Քրդաստան, է Պարսկաստան, է Հայաստան, է Վրաստան, յԱսորեստան, է Բազդատ և յայլ քաղաք գիտը, և իւր տարագրութեամբ ածել գիտցաւ է հաւատս Քրիստոսի, և այսպէս աշխատելով գոմ տասաուն, մինչեւ որ ծերացաւ (ՆՈՐ· 213)։ Քարոզութեանց հետ համընթաց էին հալածանքներն ալ զորս կրնց, խստագոյն չարչարանքներու ալ ենթարկուելով, բայց թէ այսպէս կամ թէ՝ այնպէս վերջնական վտանգներէ ազատուելով։ Թաւրիզի մէջ ուղտի վրայ ձագանքի ենթարկել էտրր, այնչափ գանակոծելին՝ որ հազիւ 40 օր նոր քերթուած մորթի մէջ ծրարելով տուղ ջացել հանին ընդանէն։ Սուլտանիա քաղաքը, Ամրզանդ մայրաքաղաքը, Պաղատատի մէջ ալ նմանօրինակ նեղութիւններ կրնց (ՄՆՄ· 76)։ Լայիլանի մէջ կրակով փորձեցին, նախքնեւան՝ պարիսպէն վար ձգեցին, Մարագա՝ գլխիվայր կախեցին (ՆՈՐ· 212)։ Գահ մը Մեծոփայ վանքն ալ քաչուեցաւ և և վեց ամիս հոն մնաց։ Մեծոփեցին էն սահել կ'ըսէ, և տարին ցոյց չտար, բայց հաւանաբար 1409'ին, Տաթեւացիին այնտեղ եղած տարիին պէտք է պատահեցնել։ Մեծոփէ գնաց Արճէշ, ուր գինքը է գէշն քաղելով քարկոծեցին, և բազուկը խորտակելով ազատ թողուցին, ուսկից էն գոչեցել սահ մը կը գրէ Մեծոփեցին (ՄՆՄ· 76)։ Բայց այս թուականէն ետքն ալ Յուսուֆ-Իսահակ չարունակած է քարոզչական չրջագայութիւնները մինչեւ իւր նահատակութիւնը, որ տեղի ունեցած է Շամախի քաղաքը, 1417 ապրիլ 18'ին, հասակ բերով գլուխը պայթեցնելով, այնպէս որ սալէն սրինաւ է վար ընթեցաւ (ՆՈՐ· 216)։

Տ· ԳՐԻԳՈՐ Ը· ԽԱՆՋՈՂԱՆ

ՊԱՇՏՕՆ ԵՒ ԺԱՄԱՆԱԿ

1408· Ըսինք արդէն թէ Յակոբի սպասնութեան թելադրող կամ գործադրող պէտք է նկատել այն անձը, որ այդ ոճիրէն կ'օգտուէր (§ 1405)։ Աւել ոչ միայն մատնանիչ ըրած կ'ըլլանք Գրիգոր Ը կաթողիկոսը, այլ և յայտարած կ'ըլլանք անոր կաթողիկոսութեան հանգուցման կերպը, այսինքն է սպանութեամբ աթոռը դատարկացնել, և կաչառքով յաջորդութիւնը ձեռք անցընել։ Այդ կերպը Զամչեան ալ կը չիշտէ (ԶԱՄ· Գ· 457), հարկաւ աղբիւրէ մը քաղելով։ Սակէ կը հետեւի թէ Գրիգոր աթոռին ազդեցիկ եպիսկոպոսներէն էր, և արտաքին միջոցներով ճոխացած, բայց աւելի բան մը գիտցած չենք բլլար իւր նախընթացին վրայ։ Ծագումն ու ծնունդն ալ չենք չիշտած չիշատակարանն-

րու մէջ, այլ իւր կենդանութեան ժամանակէն գրուած է, թէ Մանուէլ Խանձոյեան կոչէ (ՓԻՐ. 56), առանց պատճառը կամ բացատրութիւնը տալու։ Խանձի կամ կրակի իմաստ մը կայ բառին մէջ, այլ չենք գիտեր թէ ներգործաբար խանձող ու այրող պիտի իմանանք, թէ ոչ իւր վատ գործերով խանձուած ու սեւցած մէկ մը։ Ասոր հետ մէկտեղ անհնար չէ որ արտաքին կամ պատահական պարագայէ մը յառաջ եկած մականուն ըլլայ։ Միայն ստոյգ է, որ Սիս նստող վերջին կաթողիկոսներուն մէջ ամէնէն աւելի վաստիարը այդ Գրիգորը կը նկատուի, Գրիգոր նուիրական անունին անարգանք դառնալու չափ։ Աթոռի տիրանալուն թուականը 1411'ին պահելով (§ 1405), տեւողութիւնը խնդրոյ նիւթ է։ Ժամանակագիր մը ամբողջն կը դնէ (ՍԱՄ. 172), որով կը հասնինք 1418'ին, ինչ որ կը համապատասխանէ Դավրիժեցիին ընդունած թուականին, թէ Հայոց 867 թուին, որ է 1418, ըստ որում Գրիգոր Մանուէլ Խանձոյեան կոչէ, ութօրեակն (ԴԱՎ. 336)։ Թէեւ միեւնոյն 1418 թուին Գրիգոր կաթողիկոս կը յիշուի յիշատակարաններու մէջ (ՓԻՐ. 56), բայց այդ քնաւ նոյն տարին քաշուելուն չհակառակիր։ Սակայն երկու տարի ետքն ալ, 1420'ին, է Լոնդիկոսընեան Հայկազեան սեռէ պեռան Գրիգորէս գրող յիշատակարան ալ կայ (ՓԻՐ. 62), որ կը թելադրէ 1418'էն ետքը թողուլ Գրիգորի կաթողիկոսութեան վերջը։ Միւս կողմէն բոլորովին անոր հակառակը կը ցուցնեն ուրիշ յիշատակարաններ, որոնք ոչ միայն 1418'ին (ՓԻՐ. 57), այլ և 1416'ին է հայրապետութեան պեռան Պետրոս կը դնեն (ՓԻՐ. 48)։ Ընդհանուր կանոն է, այդպիսի տարաձայնութեանց մէջ միակ բացատրութիւնները նկատի չառնել, և տարերու փոխանակուելուն կամ գրողներու սխալելուն վերագրել տարբերութիւնները։ Այդ տեսակէտէն նայելով, 1416'ին Պօղոսի կաթողիկոսութիւնը նշանակուելուն մէջ՝ հայկական թուականին ե և է թուատառերու չփոթը դիւրաւ կ'ենթադրուի, և Պկե թուատառը Պկէ կարդալով 1418 թուականը կ'արդարանայ։ Իսկ Գրիգորի մինչեւ 1420 կաթողիկոս յիշուիլը, կրնայ հետաքրքրական Հիզանցի գրողին Կիլիկիոյ գործերէն տեղեկութիւն չունենալուն վերագրուիլ։ Այդ դիտողութիւններու վրայ հիմնուելով, և Գրիգորի կաթողիկոսութեան 1418'ին վերջանալուն մասին՝ զանազան աղբիւրներէ համաձայն վկայութիւնները տեսնելով, մենք ալ կը համաձայնինք պահել նոյն թուականը, և Գրիգորի ետքինամեայ պաշտօնավարութեան տեւողութիւնը։

ԿԻԼԻԿԵՑԻՈՑ ՋԵՂՄՈՒՆԵՐԸ

1409. Որչափ ալ ետքինամեայ միջոցը բաւական գործունէութեան ժամանակ ըլլայ, սակայն Խանձոզատի կողմէ որեւէ գործ մը կամ արդիւնք մը կատարուած ըլլալու յիշատակ չունինք, և այն քիչը որ կը գտնենք բոլորովին իրեն աննպաստ է։ Կիլիկիոյ աթոռին աննախանձելի վիճակը չատոնց էր որ Արեւելեայց մտահոգութեան և մտադրութեան առարկայ եղած էր, և Տաթեւացիին նախաձեռնութեամբ Աղթամարի խնդիրին յուզուելուն չարժանրին ալ այս էր եղած (§ 1398)։ Դաւիթի գահընկեցութեամբ գործին լուծում գտնելու միտքը, չատ գործնական չէր, և արդիւնաւոր ալ չեղաւ։ Ընդհակառակն Դաւիթի զայրոյթը և անձնապաշտպանութիւնը գրգռեց, և անով մեծ նպաստակն ալ ձախողեցաւ, ու Տաթեւացիին վերահաս մահուամբ խնդիրն ալ մարեցաւ, թէպէտ չի թաղուեցաւ։ Թէ՛ բուն Սիւնեցիք, և թէ Տաթեւ գտնուող վասպուրականցիք հետամուտ էին պէտք եղածը գործել, և Կիլիկիոյ մէջ գործուած անկարգութիւններուն վերջ մը տալով, հայրապետական աթոռին չուքն ու ազդեցութիւնը վերանորոգել, որ Սսոյ անձուկ չրջանին մէջ փակուած, սակաւաթիւ կեղծ ու զեղծ եկեղեցականներու ձեռքը ինկած, ընդհանուր ազգին չփումներէն և ազդեցութենէն դուրս մնացած, և անձեւ ու անկերպարան տիրապետութեան մը նպատակ դարձած, ամէն տեսակ անկարգութեանց համարձակ դուռ էր բացած։ Մեծոփեցին իրրեւ անաչառ դատախազ մը միասին թուած է այդ անտեղութիւնները։ 1. Մնացեալ էր խոր պղտոմայոսընեան կոռոպղեայ կեւսարացւոյ և Գրիգոր Անաւարզեցւոյ։ 2. Զանկեալ է ետքէն քրլոսընեան՝ է յաւիճան առաքելական կոչէին։ 3. Գայլոսընեամբ զբազմա է

հաւատոյն Քրիստոսի է քոյ հաճելն (ԿՈՍ. 55)։ 4. Անառակութեամբ և արբեցողութեամբ և դիպի վրաս չըլլին։ 5. Հաստիկ չիլիպտի չիլով չվոխին ի քոյ քաղքին։ 6. Աթախով փայն չընորհս Հոգւոյն Սրբոյ (ԿՈՍ. 56)։ 7. Ի վերայ դիպ վիճակի երէս և ըրս եպիսկոպոս չեռնադրելին։ 8. Չանազդաս և ընկերքս չեռնադրելին։ 9. Անկախ նզովից և քանգրուներմէ կոպանոյ ըլչեցրս մեր լեին (ԿՈՍ. 57)։ 10. Թալին ըզբինէն Քրիստոսի, և ըսլին վճռանեալն է Լաստուրին։ 11. Ցոլ Լաստուրին երբ նային, որ ու վԼաստուրին ճանկելին և ու ըսլ Լաստուրին գիներին (ԿՈՍ. 58)։ Այդ սխուր նկարագիրը եւս առաւել ընդարձակուած էր Յանձնոզատին օրով, այնպէս որ Արեւելեայք միջամտելու պէտքը զգացին, և կերպին վրայ խորհրդակցութիւններ ունեցան։ Սակայն մանրամասնութիւնները մեզի հասած չեն, միայն թէ ընդհանուր համաձայնութիւն մը կը տեսնանք Արեւելեայց մէջ։ Սիւնեցիք և Այրարատցիք, Արծիշեցիք և Աղթամարցիք ձեռք ձեռքի տուած համաձայն գործունէութեան կը ձեռնարկեն, որուն հիմնական կէտերը կ'ըլլան, աթոռը Կիլիկիայէ ետ դարձնել, Աղթամարի աթոռն ալ դադրեցնել, և հայրապետական աթոռը Լուսաւորչահիմն էջմիածնի մէջ նորոգել։ Աղթամարի կաթողիկոսն ալ այդ ծրագիրին համակերպած կը տեսնուի, ընդհանուր հայրապետական աթոռին ժառանգութիւնը իրեն յանձնուելուն վստահանալով։ Հետեւաբար խնդիրին լուծումը այլեւս Դաւիթի կողմէն ալ դժուարութեան չէր հանդիպեր։ Այդ կերպով իրապէս և օրինաւորապէս կատարուած պիտի ըլլար, ինչ որ յետագայք թիւրիմացութեամբ ըրին, Դաւիթ Աղթամարցին հայրապետաց չարքն անցընելով (§ 1375)։

1410. Արեւելեայք կ'որոչեն, իբրեւ մեծ ձեռնարկին նախաքայլ, պատուիրակ մը ղրկել Սիս, քննիչի և

ԽԱՆԶՈՂԱՏ ԳԱՀՃՈՒԿԵՑ

այցելուի և բարեկարգիչի պաշտօնով, որ տեղւոյն վրայ կացութիւնը ուսումնասիրէ և գործը պատրաստէ, և այդ պաշտօնը կը յանձնուի Երուսաղէմի պատրիարք Պօղոս արքեպիսկոպոսին, որ Մարդիս պատրիարքի յաջորդած էր (§ 1393)։ Պօղոս ծնած էր Այրարատեայ Գառնի քաղաքը, ինչպէս յայտնապէս կը վկայէ Դաւիթ Գառնեցի յիշատակագիրը, Հաւուցքառի վանքին համար ընդօրինակուած երկու մաշտոցներու մէջ (ԹՈՐ. Ա. 233. Բ. 339)։ Ակնկ կը հետեւի թէ Արեւելեանները իւմբէն էր Պօղոս և Տաթեւի աշակերտութենէն, և Երուսաղէմի միաբանելով մինչեւ պատրիարքութիւն բարձրացած։ Հետեւաբար Պօղոս, թէ՛ իբր ուղղութեամբ և թէ տեղական պարագաներու հմուտ և փորձառու ըլլալով՝ յարմարագոյն անձն էր դիտուած պաշտօնը կատարելու։ Իրեն պատրիարքութեան սկիզբը թէպէտ 1417'ին կը կարծուէր (ԲԱՒՈ. 47), սակայն մուրհակներու վկայութեամբ 1413'ին արդէն պատրիարք կը նշանակուի (ԱՍՏ. Ա. 219), և Երուսաղէմի համար ալ օգտակար ըրած էր իւր պաշտօնը (§ 1393)։ Կիլիկիա՝ անցնելուն թուականն ալ ճշդուած չէ, յիշատակարան մը, պատրիարքութենէն յետ ոսկ ինչ ասոնց կը գրէ (ԱՍՏ. Ա. 220), ուրիշ տեղ միայն ամ երկոս պատրիարքութիւն վարած կ'ըսուի (ԲԱՒՈ. 47), ուրիշ մըն ալ մինչեւ 1418 կը յետադէ Անթերթալը (ՉԱՄ. Գ. 458)։ Տարբերութիւնները բաղդատելէ ետքը հաւանական կը գտնենք 1417'ին դնել Պօղոսի Սիս երթալը, Յանձնոզատին անկումէն տարի մը առաջ։ Այս տեղ ալ նորէն մեզի կը պակսին պատմական յիշատակներ, սակայն գործին՝ Յանձնոզատի գահընկէցութեամբ և աքսորով վերջանալը, յայտնապէս կը ցուցնէ, թէ Պօղոս կրցած է մէջ տեղ հանել անոր դէմ ծագած անկէ բաժնել ու հեռացնել իւր գործակիցները ու չհանակիցները, եղանակ ալ գտած է տեղւոյն ամիրան իրեն դրաւել։ Փննչութեան արդիւնքը այն եղաւ, որ Պօղոս՝ զեղծարար Գրիգորը տապալեց, ինքն զօրացաւ, և նոյն տարի դարձ է յետ ալեզդէ Ամիրային Կէլէկեցոյ (ՉԱՄ. Գ. 457)։ Գրիգորի գահընկէցութեան հետ յիշուած է եւս թէ ապօրէնին (ԴԱՎ. 336), ինչ որ քաղաքական իշխանութեան գործակցութիւնը կը ցուցնէ, առանց իմացնելու թէ ինչպէս և ուր։ Գուցէ բանտարկութիւն ալ յաջորդեց աթոռէն վտարումին։ Աւելի դաւալի է ինչ որ ասէ է ֆասլաններ ինչ, ըստ նահանգով տարին ՉԱՄ. Գ. 457)։ Այդ բա-

ցատրութիւնը մերիններուն գրիչին ներքեւ ուրացութեան իմաստն ունի, և անմիջապէս միտք կը բերէ, թէ ամիրային ձեռքէն և անոր բռնութիւններէն և բռնադատութիւններէն ազատելու համար հաւատափոխութեան յանձնառու եղած ըլլայ, ինչ որ հայրապետական աթոռին պատուոյն համար՝ չէինք ուզեր, որ ստոյգ ըլլար։ Բայց թէ անկէ ետքը ինչ ըրաւ, ինչչափ ապրեցաւ, և ինչ կացութեան մէջ մնաւ, մը թութեան մէջ կը մնան մեզի համար։

1411. Դիւրին է ընդունիլ գործին, այսինքն կաթողիկոսներուն գահընկէցութեան

ԿԱՆՈՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

օրինաւորութիւնը, որչափ ալ թերի ըլլան, պատմական յիշատակները, որոնք բաւական են հանձողատին իսկապէս անարժան մը ըլլալը հաւաստել։ Բայց ամէն պարագայի մէջ անհրաժեշտ կը նկատենք, որ գահընկէցութիւնը քննութեամբ և վճռով, կանոնական օրէնքով և ժողովական հղիմնականութեամբ պէտք է տեղի ունենայ, որպէսզի կաթողիկոսը օրինաւորապէս գահընկէց սեպուի, և տեղը անցնողը հակաթոռ մը չնկատուի։ Ներկայ պարագային մէջ պահանջուած պայմանները, և ափոթեցնին ըսելն ալ աւելի բռնական քան թէ օրինական գործի մը երեւոյթը կու տայ, իսկ մենք, հակառակ որոշ յիշատակներ չգտնելնուս, օրինական գործողութեան մը դիմաց գտնուիլ կը կարծենք։ Ան այս մեզի իբր փաստ կը ծառայեն, Գողտի իբրեւ քննիչ ղրկուիլը, և անոր ուղղամիտ և ուղղադատ անձ մը ըլլալը, որ հարկաւ կատարեց այնչափ ինչ, որչափ որ հնար էր ընել Սիսի մէջ տիրող անկարգութեանց մէջ։ Գողտ կրցած է, ինչպէս յիշեցինք, Յանձողատին գնդծումները երեւան հանել, և Աթոռին մէջ գրանուող եպիսկոպոսներու և վարդապետներու և Սիսի իշխանաւորներու գործակցութեամբ որոշում տալ և գործադրել. արդէն Արեւելեայց հաւատոյքին կանխաւ ապահովուած էր, իրեն տրուած յանձնարարականն պայծառով։ Ամէն աթոռի մէջ Յանձողատին անձը՝ տխուր դէմք մը, և իր վախճանը՝ դժպհի ազէտ մը ըլլալ չդադրիր, ի նչ որ ինքն իրեն կը բաւէ Սսոյ աթոռին վերջին ժամանակներուն ցաւալի կացութիւնը պատկերացնել, և աթոռի փոխադրութեան կարեւոր ձեռնարկին անհրաժեշտ պէտք մը դարձած ըլլալը հաստատել։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ

1412. Քաղաքական տեսակէտէն ալ աւելիով միջոց մըն է Յանձողատի ժամանակը։ Ախլցխա քաղաքի մէջ, որ վրաց թագաւորութեան ներքեւ էր, հետզհետէ չատցած էին Պարսիկները, զի չէրնաննչ ոչնչ Աբաբաղին Իվանէի, բռնչցուցանել էր ընտս, մինչեւ իսկ քրիստոնէից նախանձը չարժել։ Վրացի և Հայ երիտասարդաց խումբ մը օր մը խոզի ոսկրներ կը նետէ անոնց մզկիթը, որուն վրայ Պարսիկներ վրէժխնդիր ըլլալու համար Գարա-Եուսուֆի հրաւէր կ'ընեն և քաղաքը անոր կը մատնեն, և կոտոչ և անողոք կոտորածի կ'ենթարկեն։ Ոչ միայն էբբե- ղեռն անվէ ղեհուն է վէբ տան ընտ և ղեկ- տաց տարդեան, այլ և ֆեբէ ռաեալ ղէկն և ղոզչ, ղեսբէռեար և ղշեռբհան (ՄԵՄ. 77), ձանր փրկանքներով ազատութիւն կու տային, որով կամաւորապէս կը թաղնուէին քրիստոնեանդր, կանայ ղշբբռաբան էբեռնց կողոպէին, և ամ ոչեռբէկ և ամֆռաեռբէկ կայբ՝ ռայն և ֆնեկնեհուսուֆի կատարած Ախլցխայի կոտորածին թուական նչանակուած է 1416 տարին, ուսկից ետքը դէպ Ասորիք ալ կ'արչաւէր, բայց կ'երթար խրոխտ էբբե- ազատ, և կը դառնար իբրեւ ղղկան պէր (ՄԵՄ. 78)։ Օսման Աքքոյունլու աւիրէն օգտուեցաւ մինչեւ երզնկա արշաւել 1417'ին, երբ Լէնկիմուրի որդին Շահռուհն ալ Թաւրէզի վրայ կը քալէր, այլ հետզհետէ ռաեալ ռաֆկեցռա բառնռաբն այն Յուսուֆ, որ է Գարագոյունլու Գարա-Եուսուֆը, իւր բանակն ցրուեցաւ և մէկ մասը եկաւ ձմրեկ է ղալ և ղբբռնել ռչեռբհն Քաղեբեռնեռց (ՄԵՄ. 79)։ Իսկ Թաթարներ սրիռուեցան ամէն կողմեր, մինչեւ որ Իսքէնտէր Պաղտատէ եկաւ (§ 1406), իւր Գարագոյունլուները հաւաքեց, և եղբօրը Ասպահանին հետ նոր պատերազմի պատրաստուեցաւ, յաջող յարձակում մըն ալ կատարեց (ՄԵՄ. 80), բայց ոչ վերջնական յաղթութեամբ։ Շահռուհ նորէն խմբուեցաւ, և ուղտերն ու անասունները առջևէն քչե-

լով, և կախարդական արհեստներու ալ դիմելով, կրցաւ թիւրքմէնները չփոթել և ջարդել, և Իաքէնտէր ու Ասպահան մինչեւ Մերզին և Մուսուլ փախան 1421'ին (ՄԵՄ. 81), բայց Շահռուհի հետ դաշնալուն վրայ, կրցաւ Իաքէնտէր նորէն գալ և Թաւրէզի մէջ թագաւորել 1422'ին (ՄԵՄ. 83)։ Տարբեր չէր Փոքր-Ասիոյ ալ կացութիւնը, ուր Եգիպտացիք, Գարամանցիք և Օսմանցիք իրարու հետ կը մաքառէին աշխարհակալութիւնին ընդարձակել։ Կիլիկիա էր երեքին սահմանակցութեան երկիրը, և Տարսոն քաղաքը իրրեւ կարեւոր կէտրոն, ձեռքէ ձեռք կ'անցնէր փոխադարձ յաղթութիւններով։ Մէհէմմէտ Չէլէպի, Օսմանեանց սուլտան Պայազիտ Երլտըրըմի որդին ու յաջորդը (§ 1385), նախ առաւ Տարսոնը Ռամազանեաց ձեռքէն 1415'ին, բայց երեք տարիէն Եգիպտացիք գրաւեցին 1418'ին, միւս տարին 1419'ին Գարամանցիք զօրացան, սակայն նորէն եկան Եգիպտացիք 1420'ին և Գարամանցիները հալածեցին (ՍԻՍ. 560)։ Սիսի անունը չյիշուիր այդ պատերազմներուն մէջ, ուր կը չարունակէր Ռամազանեանց իշխանապետութիւնը(§1387) տարող Յանձռզատի ժամանակը, և յաջորդին ալ առաջին տարիները։

Տ. ՊՕՂՈՍ Բ. ԳԱՌՆԵՑԻ

1413. Պօղոս Գառնեցի, Երուսաղէմի պատրիարքը, զոր արդէն ծանօթացուցինք (§ 1410), ոչ միայն յաջողեցաւ իր պաշտօնը արդի՛ւնաւորել Յանձռզատ Գրիգորը հեռացնելով, և աթոռին վրայ ազդեցութիւն բանեցնելով, այլեւ կրցաւ գատարկացած աթոռը գրաւել և հայրապետ հռչակուիլ։ Մանրամասնեալ պատմութեան պակասութիւնը նորէն մեզ կը ստիպէ մերթեցումներով լրացնել եղելութեանց չարքը և մեկնել անոնց կապակցութիւնը։ Պատմական գաղտնիք կը մնայ, թէ ինչ կերպով յաջողեցաւ Պօղոս կաթողիկոսութիւնը ձեռք անցընել։ Ի պատիւ իրեն, որ ընդհանուր անկումին մէջ իրրեւ բաթեր արժանաւորութիւնն մը կը փայլի, չենք ուզեր ըսել, թէ նոյն կերպերով զօրացած ըլլայ, որոնցմով կարապետ Ա և Յակոբ Գ ձեռք անցուցած էին հայրապետական աթոռը։ Բայց երբէ՛ք ամիրան չանէր և միաբանները ստիպելու միջոցներէն ալ օգտուեցաւ, անտարակոյս պարտաւորուեցաւ գործածել այն կերպերը, որոնք միայն կը ծառայէին այն առն, իրրեւ ազդեցիկ միջոցներ, քանի որ ներքին անկարգ և անկերպարան վիճակը չէր ներեր հիմնուիլ օրինական կանոններու վրայ։ Պատմողներ կան, թէ է՛ն եկեալ սմանց չէպէկոպոսց և վարդապետց եղեն կոնդակք ընա՛ ինձ ղՊօղո՛ս (ՉԱՄ.Գ.458), բայց աւելի հնարագրական կ'երեւի քան պատմական, երբէ՛ք չբաւականանանք կանոնական ընտրութիւն լսել՝ ընդհանուր հաւանութիւնն ու ընդունելութիւնը։ Հնարագրական կը կարծենք ուրիշներէն յառաջ բերուած ձեւն ալ, թէ Յանձռզատի անկումէն ետքը Սիսէ Երուսաղէմ եկեալ փոքո՛ ղՊօղո՛ս և նոփոցկն չՈՒոո՛ կՈՒոզկՈՈոՈՒՆեան (ԱՍՏ.Ա.220), վասնզի Պօղոս արդէն Սիսի մէջ կը գտնուէր կաթողիկոսացած առնելը։ Պօղոսի կաթողիկոսութիւնը նշանաւոր հանգրուան մըն է Սսոյ աթոռին վերջին տարիներուն մէջ, որ կրնար միճապէս օգտակար ըլլալ, երբէ՛ք տեւողական վիճակ մը ստանար, և արկածալից վախճան չունենար։ Պօղոս քնիկ Աբեւելցի, արեւելեան աշակերտութեամբ ուսած, և Երուսաղէմի միաբանութեան հետեւող, անհնար էր որ աղթարմայական ուղղութիւն ունենար, դի այլապէս ոչ Տաթեւեան աշակերտութեան վստահութեան արժանացած, և ոչ Երուսաղէմի աթոռին պատրիարքութեան հասած կ'ըլլար։ Իր հայրապետութեան կոչումը, և Սսոյ աթոռին տիրանալը, աղթարմայական ուղղութեան թէ ոչ վերջանալուն, գոնէ տակա-

բանալուն նչանն էր, և նչանաւոր արդիւնքներ ալ ունենալու յոյս կը ներչնչէր։ Զինք գիտեր թէ ինչ միտքով կը գրէ Ջամչեան, թէ Պօղոս յեռանդագնաց կրթասէրն էր մի ընտրեալ գոյն, որ երկնացեալ էր յոյժ ի բարեզգրաթերներ, ի սակս պեղակերպ անապատից Սմանոյ (ԶԱՄ.Գ.458)։ Մինչ այդ խօսքերը կը մեկնինք աղթամարեական գործունէութեան դէմ թուրք մը ըլլալուն վրայ, բայց չենք վատահիր թէ նոյն իմաստով իմանան Ջամչեան և իր համամիտները, զի անոնց սիրելի է աղթամարեական ուղղութիւնը, որ զօրացած էր այդ դժպհի միջոցին, վերոյիշեալ անապատից աթոռին տիրանալուն պատճառով։

1414. *Պօղոսի կաթողիկոսութեան թուականը 1418'ին նչանակեցինք արդէն, և մնկէ աւելի են յիշատակարաններ որ այն տարին կը նչանակեն է կաթողիկոսութեան մէջ առնուած պեղծ (փիր.56), կամ է հայրապետութեան պեղծ (փիր.57), որ այս մասին երկբայութեան տեղի չմնար։ Իսկ տեղուղութեան մասին մինչեւ 1428 տարին յիշատակարաններ կը գտնենք, որք է հայրապետութեան պեղծ գրուած են (փիր.89)։ Իսկ Դավրիժեցին Պօղոսի յաջորդը կը դնէ 1430'ին (Դաւ.336), և անոր վրայ հիմնուելով Պօղոսի կաթողիկոսութիւնը 12 տարի ընդունուած է ընդհանրապէս, նոյնպէս կը պահենք մենք ալ։ Հետեւաբար իրրեւ պարզ թիւրիմացութիւն կամ սխալանք պէտք է նկատել ժամանակագիրի մը նչանակած ամ երկոս տեղուղութիւնը, և այն ալ 1412'էն 1414 (ՍԱՄ.173), որ ամէն յիշատակարաններու ալ անհամաձայն կուգայ։ Մնայուն արձանագրութիւն մըն ալ 1423 թուականով Սուրբ Աննա հայրապետանիստ վանքին ճակատը Թոխտ Պօղոս կաթողիկոսի չինուած ըլլալը կը վկայէ (ՍԻՍ.541)։ Պօղոս հպիտ թէ կաթողիկոսական աթոռս բարձրացած, ձեռնարկեց զարդարել զվանս իւր, այսինքն է աթոռանիստը, խոհաթեղթ և բեղեցիկ կրբօք և սահմանիւ, զոր պետել էր յԱբեթելը, է հայրենի խոռանիստ ընէն իւր, որով յայտնապէս կը վկայուի Տաթեւեան աչակերտութենէ եղած, և Տաթեւեան ուղղութեան հետեւող ըլլալը։ Որպէսզի կարենար իւր գեղեցիկ նպատակը իրագործել, փութաց բերել յԱբեթելէ վերընդունելի էլէոփայս և անյիշս ճգնավերացս, աբեղայս և կրճատօրս, անչուշտ և վարդապետս։ Սիսի մէջ օրինաւոր հայրապետանոց իսկ չէր գտած, զի ոչ հոյլ վանս և բեղէ հանգոպեան կրնոզիկոսին, և ոչ սաներին կրնոզիկոսն գոռաս և սեղանս հաստրեցոց, և այս պատճառով պարտաւորուեցաւ ի հիմանց կանգնել հայրապետանոց մը բեղեցկօրէն յօրինուածով, է պեղէ ինչ պատուական և վսեմ ընել, որ Սուրբ Աննա կոչէր, զոր գրեթէ ոտ ջինուածել, վճիռ և ալեքսիոս, որուն մէջ նահե սահմանից գոռաս հաստրեցոց ինքան եղբոյց (ՍԻՍ.541))։ Այդ համառօտ տեղեկութիւններն ալ կը բաւեն իմանալու թէ ինչ յուսին քայքայման հասեր էր Սսոյ աթոռը Պօղոսի նախորդներուն ձեռքը, և թէ ինչ եղաւ Պօղոսի գործունէութեան հոգին Սիսի մէջ։ Որչափ ալ Սսոյ միաբան եպիսկոպոսներ և վարդապետներ յօժարեցան կամ հարկադրուեցան Պօղոսի կաթողիկոսութիւնը ընդունիլ, սակայն ի հարկէ հաշտ աչօք պիտի չտեսնէին, իրենց ուղղութեան հակառակ ընթացք մը, իրենց գործունէութեան դէմ լացուած պայքարը, և գիրենք կարգի ու կանոնի լուծին տակ մտցնելու ճիգերը, եւս առաւել պիտի չախորժէին Արեւելքէ եկող վարդապետներու և աբեղաներու՝ աթոռին տիրանալուն։ Միւս կողմէն Արեւելեայք, տեսնելով Պօղոսի ստացած դիրքը, և հայրապետանոցը իրենց ուզած ձեւին վերածելու համար ձեռնարկը, նոյն իսկ իրենց գործակցութեան դիմելը, մտադիր կը յիտաձգէին աթոռի տեղափոխութեան դժուարին ձեւը, և առ այժմ կաթողիկոսին կ'օգնէին և կը գործակցէին իւր գտնուած տեղը վերանորոգել անկեալ աթոռը։ Այդ միջոցներուն Պօղոս ուզած էր անգամ մըն ալ երուսաղէմ այցելել Մատթէոս վարդապետի հետ, թերեւս այն տեղի գործերը կարգադրելով փակելու, և կիլիկիոյ պէտք եղած անձերն ու միջոցները բերելու համար։ Սակայն Սսոյ աթոռին համար 1419'ին գրել տուած ճառընտիրին (ԱՍՏ.Ա.220), և 1422'ին գրել տուած Ճայսմաւուրքին ու Տարեգիրքին (ՍԻՍ.541),*

ՇԻՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԿԱՆՈՆՔ

թուականները, հարկ չենք տեսներ իւր ուղեւորութեան տարիին հետ կապել, վասն զի հեռուէն ալ կրնար ապստրանքն ընել։ Աւելի հաւանական կը գտնենք 1423'էն՝ հայրապետանոցին չինութենէն ետքը թողուլ ուղեւորութիւնը։

ՍԻՍԷՆ ՆՈՐ ԳԱՂՈՒԻՔ

1405. Ուրիշ պարագայ մըն ալ, զոր կը քաղենք, կրնայ մեր տեսութեամբ ուղեւորութեան պատճառն ու ժամանակը մեկնել։ Ցիլան ենք արդէն թէ կոստանդին մը, Լեւոնի հեռանալէն ետքը թագաւորի անուն ստանձնելով դիրք մը կազմած էր Կիլիկիոյ մէջ, 1376 տարիէ սկսելով (§ 1349)։ Պատմած ենք նաեւ, թէ 1404'ին Իսմազանեանց տիրապետութեան սկիզբը բազմաթիւ գաղթականութիւն մը Սիսէ մեկնած էր, իրեն գլուխ ունենալով կարապետ մը, որ կոչուած է Նոան Կոստանդինի ընտրեալ (§ 1381)։ Արդ սոյն այս կոստանդինի վերջին անգամ Կիլիկիայէ հեռանալուն յիշատակութիւնն է, որ խնդիրին լոյս կը սփռէ։ Ժամանակագիր մը 1424 տարւոյն ներքեւ կը գրէ, թէ Նոա ետաւրէ է Կէպրոս անցաւ, և ընդ նմին բազում էշխան, իբրեւ չէր փոհմականօք հանդերձ։ Նոյն տեղ թագաւորն ալ մատնանշուած է, Նոա ետաւրեաց Կոստանդին 48 ամ բացատրութեամբ։ Նշանակալից է, մանաւանդ որ նոյն ժամանակագիրին խօսքով, այն՝ որ վերջ տայ Նոա ետաւրութեան Կէլէկեցւոց, Լեւոն չէ, այլ այս կոստանդինն է։ Կ'ըսէ հետ թէ Կիլիկեցւոց թագաւորութիւնը Լեւոն մնծէն սկսելով 226 տարի տեւեց, և իրօք այդչափ տարիներ անցած կ'ըլլան 1199'էն (§ 1063) մինչեւ 1424 (ՍԻՍ. 543)։ Այդ ժամանակագրութիւնը երկու տարիներու տարբերութիւն մը կու տայ, բայց այն ալ կրնայ լրացուիլ ուրիշ յիշատակարանէ մը, որ 1426'ին գրելով, է Նոա ետաւրեան Հայոց Կոստանդեայ կը նշանակէ (ԹՈՐ. Ր. 425)։ Այս թուականին տեղի ունեցած արտաքին մեծ եղելութիւնն ալ Եգիպտացւոց Սիսի վրայ յարձակումն է, Մուզէֆէր սուլտանին հրամանատարութեամբ, որուն ոչ կոչուին զբեմ առնել Իսմազանեաններ և Հայեր, և տիրացան տեղի տալ, և 30,000 փառ անցան յայնկոյս Ծովս, անոնց հետ նաեւ Նոա ետաւրէ է Կէպրոս անցաւ։ Եգիպտացւոց սուլտանը 1422'էն սկսելով Պուրսպէյ Աշրաֆ էր, և ոչ Մուզէֆէր, բայց հրամանատարը կրնայ սուլտանի ազգականներէն մէկը նշանած ըլլալ, եթէ ժամանակագիրը անունը տալուն մէջ սխալած ալ ըսել չուզենք։ Արդ այս պարագայն, որ Հայոց պնաը և բազմաթիւ գաղթականութիւն մը քաղաքը կը թողուր, չատ յարմար կու գայ Պօղոս կաթողիկոսին ալ հեռանալուն, և պահ մը երուսաղէմ քաչուելուն, որ Եգիպտացւոց սուլտանութեան ներքեւ էր։ Գուցէ անկէ Եգիպտոս ալ անցած է։ Ուղեւորութեանց թուականը 1424'ի և 1426'ի մէջտեղերը պէտք է դնել, յարձակումը և գաղթականութիւնը և քաղաքին յանձնուիլը, Պօղոսի երուսաղէմ երթալուն և Սիս դառնալուն հետ կապակցեալ եղելութիւն մը նկատելով։ Պօղոսի Սսոյ մէջ պաշտօնավարութիւնը ուրիշ պարագաներ չներկայեր, և կիլիկիոյ հանդարտ մնացած ըլլալը կը ցուցնէ։

ԻՍԿԵՆՏԵՐԻ ԱՐՇԱԻԱՆՔՆԵՐԸ

1416. Իսկ Հայաստանի վիճակը չատ փոթորկալից և աղետալից էր, Թարագօյունլու Իսկէնտէրի երեսէն, որ 1422'ին հօրը Եուսուֆի իշխանութիւնը վերանորոգած էր Թաւրէզի մէջ (§ 1412), և պատուհաս մը եղաւ երկրին, վասն զի օրէն նա կենդանի էր է վերայ երթալէ, ամենայն երկիր է վերջմամն կոչ և է խռովութեան (ՄՆԴ. 108)։ Հաւիւ թէ Թաւրիզ հաստատուած էր, որ Ալաթի կողմը յարձակեցաւ, և անգութ կոտորածներ ըրաւ Մղակ և Աղուվանք բերդերու մէջ։ Միւնեւոց կողմերն ալ ասպատակեց, և չայնմ օրէ է հետ է լաց և է սուգ նոցա ամենայն ազգս Հայոց (ՄՆԴ. 83)։ Միւս տարին 1423'ին Բաղէշը աւերեց, և վանը պաշարեց, և չորս ամիս չուրջը նստելով ոչ կրցաց առնել, թէպէտեւ քաղաքին մէջ չատեր հնաւ է ոչխար և է ջուր։ Թաւրէզ դառնալէն ետքը է նոյն ամին լքեաց, 1424'ը հանդարտ անցուց, սակայն 1425'ին նորէն վանի վրայ գնաւ և առաւ, Աղթամարն ալ գրաւեց, և այնչափ կոտորած ու աւեր ըրաւ, որ պատմիչը անհնար կը համարի ընդ նէ սրկանել զնեխելն և զզքոճն (ՄՆԴ. 84)։ Ասպատակը կրկնուեցաւ 1426'ին Ալծկէի կողմերը, և տարած-

ուեցաւ մինչեւ Որմի։ Սուլտանիոյ առումին ալ 4 ամիս տեւեց (ՄՆՄ. 86), միշտ միեւնոյն անդիմութեամբ։ Թաթարաց մեծ խաները զերիչխանութեան իրաւունք մը կը վերագրէին իրենց Արեւելքի մլուս իշխաններուն վրայ, Շահռուհ ալ ուզից զսպել Իսկէնտէրի յախուռն արշաւանքները, և 1427'ին անդիմ անհամբ ջրօթ եկաւ է վերայ չէմբ և անդեայ և անհնազանդ և հպարտ և փառազ Բահադուրին Սէֆդարին (ՄՆՄ. 86), որ պարտաւորուեցաւ փախստեղով ազատիլ։ Շահռուհ ալ իր կողմէն երկիրը աւերելով և աւարելով վրէժ լուծեց Իսքէնտէրէ, և ձմեռը վրայ հասնելուն Ղարաբաղի դաշտը քաշուեցաւ, որ է հին Մուղանը, և անդ անցոյց զբահնալանդ առաջս Յէրեանոյ (ՄՆՄ. 87)։ Իսկ Իսքէնտէրի ցրուած գունդերը՝ վասպուրականը, և մանաւանդ Քալքերունեաց գաւառը կողոպտեցին և աւերեցին, է վերջապէս յետ եր և փեղափոխ, և է ներքսագոյ գառնաւրէն անբերնաց։ Վանայ ծովակին կըղզիները փախստականներով խռնուեցան, ինչն Մեծոփեցին ալ Լիմ ապաստանողներուն մէջ էր, ուր և ոչ նաւելոյ և յաճախելոյ տեղի գտաւ, թէպէտ սիրալիր ընդունելութիւն տեսաւ առաջնորդ Յովհաննէս վարդապետէն։ Տագնապը այնտեղ ալ կը հասնէր հետեւէն, և Ամիւկի իշխան Հաճիբէկը բռնադատութեամբ, մէկ դիւերուան մէջ 40,000, բայց իրօք 100,000 դահեկանի ոսկի և արծաթ կը կորզէր փախստականներէն (ՄՆՄ. 88)։ Այդ ազէտը տեղի ունեցած է 1428 վարագայ պահոց մէջ, որուն տօնը այն տարի կ'իյնար սեպտեմբեր 26'ին։ Օսման Աբբոյունլուն պատեհէն կ'օգտուէր Գարաբոյունլուներուն վրայ յարձակելու, և հալածելու, որով ջաղաց Յէրեանոյն ամէն էրէ, առանց ջ հանդիպած կը լինէր երկրին, սակայն 1429 գարնան Իսքէնտէր կը դառնայր և Արծկէ կը պաշարէր, բայց հազիւ առաջ առաջս նստած էր անդէն, որ իրեն վրայ կու գար Ջոնկայ, Շահռուհի որդին, բայց չէր յաջողեր, վասն զի Իսքէնտէրի զօրեղ թաթարի մը հետ մինամարտը յօգուտ Իսքէնտէրի վերջանալուն, թաթարներ ետ կը քաշուէին, և Իսքէնտէր Բասէն կ'արշաւէր (ՄՆՄ. 90)։ Երկրին Հայերը չփոթած ու վարանած, է ձերջս և է ձախ վճռոյ խոցեալ կոյին (ՄՆՄ. 91), այսու հանդերձ անդիմ և անհամբ էին Յորասան տարուած գերիները։ Մինչեւ յաջորդ 1430 տարւոյ Գիւնտեկոստէն, այսինքն յունիս 4, թաթարներու ասպատակը կը չարունակէր, և անոնց մեկնելէ ետքը Հայի տօնին օրը, սեպտեմբեր 17'ին, Իսքէնտէր նորէն Արծկէն կը պաշարէր, բայց այս անգամ քրիստոնէից գլխաւորներէն Արծկէի տանուտէր Մուրատ, և Արճէշի տանուտէրներ Յովհաննէս Փոքոյ և Գորգի Աղոյ, քաղաքին այլազգիներէն գաղտնի բանակցութեան մտան և անձնատուր եղան, և վեսա չկրեցին (ՄՆՄ. 93)։ Այս եղերն ամէն ալ ը է ներքոյ գառն պատահած կամ, կ'ըսէ Մեծոփեցին, 1422'է ասդին եղած աղէտներուն ակնարկելով (ՄՆՄ. 95), զորս հազիւ թէ քանի մը տողերով յիշեցինք։ Երբ 1431 տարին սկսաւ, ամբողջ եկաւ Հայաստան և Ատրպատական, և այնչափ սաստիկ, որ ոչ միայն գիւղերն է յորոգեբս և է գոգեբս էրեհանց, գետնուղ և ուտել, այլ մինչեւ իսկ Թաւրէզի մէջ կերեալ էին հազար օձ գողանի և յայգին, և գայլեր անթաղ դիակներ ուտելու վարժուած, ողջերու վրայ ալ կը յարձակէին և կը գիշատէին (ՄՆՄ. 94)։ Մեծոփեցին իւր կողմերը եղածին ականատես, հիսիսային գաւառներու համար ալ Զաքարիա Տեղերցի արեղային վկայութիւնը կը յիշէ։

1417. Վերոյիշեալ տեղեկութիւնները քաղեցինք, ոչ թէ քաղաքական եղելութեանց կատարեալ պատմութիւնը տալու նպատակով, այլ միայն գաղափար մը տալու թէ ինչ արկածներ և աղէտներ կը սիրէին Հայաստանի մէջ, որոնք պիտի չներէին եկեղեցւոյ պաշտօնեաներուն և վարդապետներուն գործնական մտադրութիւն դարձնել կաթողիկոսական խնդիրին (§ 1409)։ Բարեբախտաբար Պօղոս Գառնեցին էր հայրապետական աթոռին վրայ, որ կրցածին չափ բարեկարգութեանց կը հետեւէր և աթոռին կացութիւնը վերանորոգելու կ'աշխատէր։ Եկեղեցական տեսակէտէն նկատառութեան արժանի պարագայ մըն ալ կը յիշէ Մեծոփեցին, թէ մաս մը Հայեր վան ապաստանեցան և ողջոյն գառնաւրեան, գնացեալ խառնե-

ՀԱՒԱՏԱՓՕԽ ՀԱՑԵՐ

ցան է Քաղքն Բագէշոյ, Մշոյ և Սաճոյ, և եւ-
թէ հաստատ դարձան յանհաստատութիւն (ՄՆՄ.
95), և վրայ կը բերէ թէ ածին զդէն նոցա
անհաստատութեամբ և ընդ աշխարհս ածնայն
(ՄՆՄ. 96)։ Հայաստանի ազգաբնակութիւնը
ուսումնասիրողներուն համար դաղտնիք մը
չէ, թէ այնտեղ գտնուող իսլամ տարրէն
Քուրք կոչուած ստուար մաս մը, և Քուրդ
անունի ներքեւ ճանչցուած մաս մը՝ Հայ
արիւնի ներուն է, որ ժամանակին դժգոհ
պարագաներու ներքեւ իւր ազգային եկե-
ղեցիէն բաժնուած, և տիրապետող տարրին
դէնը ընդունած է, իբրեւ կեանքի ապա-
հովութեան միջոց, կամ իբրեւ վտանգներէ
զերծ մնալու փաստ, կամ իբր չահի ու
փառքի ու պաշտօնի հրապոյր։ Այդ կէտը
չատ յայտնի կերպով կը հաստատուի դիմա-
գիծերու գնութեամբ ալ, զանազան Քուրդ
ցեղերու վրայ մնացած հայկական աղաւաղ-
ևալ կոչումներով ալ, և չատ տեղեր պահ-
ուած հայերէն լեզուով, և կենդանի մնա-
ցած պատմական աւանդութիւններով։ Սա-
կայն ժամանակակից պատմիչի մը բացայայտ
վկայութիւնը ատոնց ամէնուն վրայ իւր գերա-
կշռութիւնն ունի, չուզելով ալ այն կէտերը
մոռցնել վրիպեցնել։ Մնծոփեցին մի-
այն վանի ապստամբութեան և ապրին տեղի ունե-
ցած հաւատափոխութիւնները կը յիշէ, բայց
անշուշտ այդ պատճառներէն չատ աւելի
ազդու և զօրաւոր եղած են սուրն ու դա-
չոյնը, տանջանքն ու չարչարանքը, գերու-
թիւնն ու հարստահարութիւնը, և ո՛վ գիտէ
որչափ հազարներ, և որչափ բիւրեր այդ
պատճառներով հաւատքնին ուրացան։ Թե-
բեւս չատեր առաջ կեղծեօք ըրին, սակայն
զաւակներին նորընկալեալ դէնին մէջ ծնան
ու մնան, և սերունդները իսկամ սեպուած
Քուրք և Քուրդ տարրերը աճեցուցին։

ՅԻՄԱՐ ՎԱՆԵՑԻ

1418. Այդչափ աղէտներու և անկում-
ներու մէջ չէին պակսեր նաեւ իրենց հա-
ւատքին համար կեան-
քերնին զոհող առաքինի-
ներ ալ, որոնց մէկ քա-
նիին անունները կը գըտ-
նուի մեզի հասած գիրքերու մէջ. բայց չատ
ու չատ են է դպրոցեան կեանքէ գրուածները։
Յիմար վանեցի ամուսնացեալ կին մըն էր,
բայց չունք գիտեր թէ իրր յատուկ անուն
կամ իրր մակդիր անուն կը կրէր այդ կո-
չումը։ Այրը ապստամբած էր վանայ 1387'ի
կոտորածին մէջ (§ 1365), և ինքն անոնք և
անոյսկըս մնալով, իրր հացկիւաց մուտ
Քուրդի մը մօտ, որուն կինը մնայնալուն
անկոս ընդ ցնծալին, ուսկից որդի մը և դուստր
մըն ալ ունեցաւ (ՆՈՐ. 224)։ Քուրդին ազ-
գականները ստիպելին զայն որ կինը տաճ-
կացնէ, և իրենց վրայ առնէ ստիպել, բայց
վերջէն գոհացան որ եկեղեցիին վրայ երեք
քար նետէ։ Յիմարը քարերը նետեց, և
Քուրդեր զինքն հանդարտ թողուցին, և
այսպէս ապրեցաւ իրր կեղծուրաց, դրեթէ
20 տարի (ՆՈՐ. 225)։ Սակայն Յիմարի խիղ-
ճը հանդարտ չէր, և որպէս զի կարենայ իրր
քրիստոնեայ ապրիլ, չուրջ 1406'ին Մակու
քաշուեցաւ, ուր կ'իյնէր Սուրբ Աթմիչ
քրիստոնեայ (§ 1406)։ Յիմար այնտեղ մնաց
իրր 10 տարի, բայց այնտեղ ալ անոր միտ-
քը չդիմեցին, թէ պէտք է կեղծուրացու-
թիւնը քաւէ ուր որ գայն ըրած էր։ Այդ
միտքով դարձաւ վան, իրեն Քուրդ սիրոջ
և Քուրդ զաւկին մօտ, որ գինքը ապատ
թողած էին իւր քրիստոնէութեամբը ապրիլ։
Բայց ազգականներ և դրացիներ նորէն լե-
զու եւան տեսնելով որ քրիստոնէից եկե-
ղեցին կը յաճախէ։ Կարդացողներ ալ գոր-
ծին խառնուեցան, երբ օր մը եկեղեցին կը
դառնար, և ստիպեցին որ քրիստոնեայ լե-
լալը մերժէ, մինչ Յիմար բարձրաձայն կը
պնդէր։ Ստիպելու համար սկսան զարնել և
հարուածել, իսկ կինը մինչեւ քաղաքին
հրապարակը վազեց և կանգ առաւ, և այն
տեղ քարկոծելով սպաննեցին, երբ Յիմար
գոհունակութեամբ կը կրկնէր, թէ ջուրէն
որ չոքելուն չգիտցի, ես է կոտոփ իմ ա-
նուն։ Նահատակութեան թուականը ճիշտ
գիրները 1418 կը դնեն (ՆՈՐ. 227), թէպէտ
ուրիշներ 1416 դրած են (ՁԱՄ. Գ. 438), իսկ
ամսաթիւը փետրուար 3 նշանակուած է
Ցայսմաւուրքի մէջ (ՅԱՍ. Ա. 62)։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐ

1419. Արծկէի իշխանները էր վաղին
(ՁԱՄ. Գ. 441), Մուրատ-Շահ կոչմամբ ճանչ-
ցուած, զի եղբայր Ղա-
զոյ էրէսոռնէից է Ջէլ
Ձոլը, այսինքն
վանայ լճին չրջանակին
մէջ։ Իբր իւր ազդեցութեան յայտարար կը

պատմուի, թէ նոր հիմն եր ի ձէջ անօրինաց խաչին և աւետարանս ըստ օրինի ընեան Տեառն, ուսկից կր հնուեցնինք թէ այս տեսակ արարողութիւններ ընդհանրապէս ներուած չէին։ Այլազգիներ նախանձելով և ջնտն անուն մատնիչ Հայ մրն ալ իրենց ընկեր առնելով, քաղաքապետին ամբաստանեցին, որ իսկոյն ուրացութիւնը առաջարկեց իր աղատութեան միջոց, և երբ իչխանը մերժեց, նախ բանտարկուեցաւ, և յետոյ պարիսպէն կախուած նետահար և նետելց նահատակուեցաւ (ՄԵՎ. 110)։ Ուրիչ տեսուտէր մրն ալ Զաքարիա անունով, որ նորնպէս Արծկեցի կ'երեւի, միևնոյն կերպով ուրացութեան բռնադատուեցաւ, և չհաւանելուն վրայ, ի պոռնոց նոթա պոռնոց բերէ՛ել հեղնուցին։ Զաքարիային նահատակութիւնը Մուրատչահէ առաջ տեղի ունեցած կ'ըսուի (ՄԵՎ. 110)։ Սոյն միջոցին Զաբիչատ աւանի Մկրտիչ ձեռնաւորը և իր ութ անդամէ բաղկացեալ ընտանիքը, կրակի մէջ այրելով նահատակուած են։ Նոյնպէս Աղսիմնակ գիւղի Յովհաննէս ձեռնաւորը հաւատոյ համար նահատակուած է։ Արխատակէս Բաղբերունին ալ, զոր եղբօր ծառայելս կր կոչէ Մեծոփեցին, առանց յայտնելու թէ մարմնաւոր կամ հոգևոր եղբայրութեամբ։ Նահատակութեան կերպին համար ալ կր դրէ, թէ ի հոբն խորվչին էքըեա զգեան անդր։ Այդ վերջիններուն նահատակութեան թուական կը դնուի 1420 տարին, և բանտարկութիւնը ալ եղած է Ապրիլ ըներդին իչխան Փիրալի (ՄԵՎ. 111)։ Այս նահատակներուն հետ պէտք է դասենք Արձէչի և Արծկեի մէջ իրենց քրիստոնէութեան համար կատորուած Հայերը, և նոյն պատճառով ծանր տանջանքներ կրող խեղճերը, որոնց համար կը դրէ պատմիչը, թէ առանց ամենայ խորով ծանչին զինեալս, և դեղ և քանիկ չըլլին էքըեա զանազանս (ՄԵՎ. 111)։

ԲԱՂԷՑԻ ՀԱԼԱԾԱՆՔԸ

1420. Ժամանակակից նահատակներուն մէջ աւելի նչանաւոր է վարդան Բաղիչեցին, յինիկ լճեզերեայ Դատուան պիւղէն (ՆՈՐ. 234), ամուսնացեալ հոգատէր մր, որ միջոց մրն ալ չրջակայ վանքերը պտտելով աղօթասէր և հոգևոր կնանք կ'անցընէր Բաղէչի ամիրայ Շահչատինի ուրացութիւններ քաջալերելու և բունադատելու չանքերը ծանր թուեցան վարդանի, և միտքը դրաւ գործին անտեղութիւնը անոր իմացնել, և անձամբ ներկայանալով յայտնեց, թէ Աստուած 72 լեզուներէն իւրաքանչիւրը իւր օրէնքովը կը թողու, դրնէ հրամանէ՛ս ես աւելի ե՞ս ըլլալդ, որ կ'ուզես զմինեանս ի ես օրենէ՛ դարձնել (ՆՈՐ. 237)։ Խօսակցութիւնը երկարելուն ու վարդանի համարձակութեան վրայ զայրանալով, ամիրայն քանի մը հարուածներ ալ տուաւ վարդանի, և հրամայեց բանտարկել ու չարչարել։ Այդ եղած է 1421 յունուար 1'ին չորեքչաբթի օր, իսկ Հայոց 870 նաւասարդի 27'ին, Ըստ այսմ Յիսնային ցուրտին ներքեւ բանտ կը տանին վարդանը դրէ և քով և էլեէքաց (ՆՈՐ. 238), ուր չերէք աւուրս ալ դադարելէն ի չըլչըելուց, որոնց վերջը յունուար 4'ին նորէն ամիրային առջեւ կը հանեն, իսկ նա համարձակ, մինչեւ իսկ դուրանէն Ցիսուսի համար գըրուածները յիչելով, իր հաւատքը կը պաչտպանէ։ Աւոր վրայ մահուան վճիռի համար դատաւորին կը յանձնուի, և նոյն օր սրով և քրով և տաքմբ կը նահատակուի՝ յոանուար ամսոյ է 4, ծննդեան պահոցն յաւուր չքնաղս, ի ծագաման ժամս (ՆՈՐ. 242), կիրակամուտի երեկոյին։ Թուականին մասին եղած այս տարբերութեանցը հետեւիլ (ՆՈՐ. 243)։ Ցիչեալ 1421 տարւոյն ընթացքին պատահած է նաեւ երկու Հապէչ կամ Եթովպացի քահանաներուն նահատակութիւնը Ախլաթի մէջ, որոնք տարբ տեղւոյց ուխտաւորութենէ ետքը Հայաստանի սրբավայրերը եկած էին, և նահատակեցան է յԵսայ այլազգեաց, և թաղուեցան Բարեձորի վանքը (ՆՈՐ. 244), որ է եօթնախորան Ս. Աստուածածինը Ախլաթի մէջ, և կը յիչուին Հապչ տանեայ կողմամբ, բուն անունները անծանօթ մնացած ըլլալով։ Բաղէչի հալածանքներուն միջոցին կ'իյնայ եւս Հայոց 874'էն 3 կամ 4 տարի առաջ, այսինքն է 870'ին կամ 1421'ին կատարուած Թովմաս Պուլիկցի վարդապետին նահատակութիւնը։ Վկայութեան պարագաները չեն պատմուած, այլ միայն ըսուած է թէ՝ Սիմէոն

Ի՛տունի վարդապետին աչակերտ էր, ջէ-
փակ մանրաժամանց, սէրոջ սրբոնելեան և աղընից;
և թէ նեթէ հարբեալ պանդէն (ՄՆԴ. 44)։ Պատ-
ւիկ վանք Ի՛տունիք գաւառին մէջն է, և
անոր առաջնորդը պիտի ըլլայ Սիմէոն
Ի՛տունին, որ ուրիշ կողմէ մէզի ծա-
նօթ չէ։

ՍՈՐԲԵՑԻ ՎԿԱՆԵՐ

1421. Բաղէշի հալածանքը երբ ոմանց մարտիրոսական պսակներ կը պատրաստէր, ուրիշներու ալ գլորման պատճառ կ'ըլլար, և այս կարգէն եղած էին, Սահ-
փանոս վարդապետ Ծէկ-
ուայ Ս. Գամազիէլ վանքէն, Պետրոս քա-
հանայ Խիզան քաղաքէն (ՆՈՐ. 247), և Ստեփանոս Սորբեցի աչխարհական երիտա-
սարդ մը (ՆՈՐ. 257)։ Վարդապետն ու քա-
հանայն ալ Նոբքոզբոզ Թալխան+ (ՆՈՐ. 257) կը կոչուին, և գիտ երիտասարդներ էին, երկուքն ալ բարեկեցիկ կ'ապրէին Բաղէշի մէջ, այլ սիրտերնին անհանգարտ և խիղ-
ճերնին միշտ խռով, իրարու հետ չարունակ կը ցաւակցէին և կը խորհրդակցէին, մին-
չեւ որ փոխադարձ իրար քաջալերելով որո-
չեցին ետ դառնալ, մինչեւ իսկ կեանքեր-
նին զոհելու պատրաստականութեամբ։ Այդ մտադրութեամբ նախ դիր մը ուղղեցին Խիզանի դատաւորին, որուն առջեւ ուրա-
ցութիւնները բրած էին, ետեւէն իրենք ալ Բաղէշէ մեկնեցան, Բարեձորի վանքը այ-
ցելեցին, ուր տարի առաջ թաղուած էին նահատակ Հապաչ քահանաները, երեք օր մնացին, խոստովանեցան և հաղորդուեցան Համբարձման օրը (ՆՈՐ. 251), 1424 յունիս 1'ին, և միւս օր ուրբաթ յունիս 2, Խիզան մտան և համարձակօրէն ուղղուեցան դէպի եկեղեցին ի վեց ժամս առաւօտ (ՆՈՐ. 252), աղօթեցին և այն տեղ եղողներուն իրենց դղջումն ու քրիստոնէութիւնը յայտնեցին։ Գլուխնին ժողվուող քրիստոնեանները հա-
ղացուցին, որ փորձանքի չհանդիպին, իսկ այլազգիներուն իրենց հաստատուն վերա-
դարձը կը բացատրէին, որոնք ամբոխիւ երկուքն ալ դատաւորին առջեւ հանեցին։ Սովորական յորդորներէ և սպառնալիքներէ ետքը առաջ Պետրոս քահանային քովէ հա-
եւ կորզեցին ջնջոցը, և նոյնժամայն սրով և ժայռէ նահատակեցին։ Ետքէն վարդապե-
տին վրայ յարձակեցան, նախ ինքզինքը պատսպարել, բայց Ստեփանոսի ուժգնակի յիշումէ պատասխանատուն վրայ, կացնով ընկաւ, ոտքէ և ժայռէ սպաննեցին վարդապետն ալ (ՆՈՐ. 257), միւնոյն օրը յաղթ տասը եր-
կու, յաջորդ Հարքեաչնանն սրբոնելու (ՆՈՐ. 260)։ Ատոնց նահատակութեան լուրը Սորբի մէջ լսուելով, Ստեփանոս երիտասարդն ալ ոգեւորեց, որ քրիստոնեայ ըլլալը յայտա-
րարեց, այդ մասին իր մօրմէն ալ քաջա-
լերուելով, և երբ սպառնալիք և հրապոյր արդիւնք չունեցան, տեղւոյն այլազգիներ օդին ժողվեցան և նահատակեցին զայն (ՆՈՐ. 259)։ Ստեփանոս Սորբ'ցիին մարտի-
րոսութիւնը կատարուեցաւ չեք ինն տասը նահատակուելեան Խիզանցիներուն (ՆՈՐ. 258), որ է ըսել 1424 յունիս 11'ին, Հոգեգալուստի կիրակի օրը։

ԳՐԻԳՈՐ ԽԼԱՔԵՑԻ

1422. Մարտիրոսներուն կարգը պիտի դասենք նաեւ մարտիրոսներուս գովաբան և Ցայսմաւուրքի նոր կար-
գադրող և տաղ'երու եւ գանձ'երու հեղինակ Գրի-
գոր Խլաթեցի վարդա-
պետը՝ Մերինց մականունով ծանօթ։ Գրի-
գոր նախապէս 8 տարի Որսանեցիին աչա-
կերտ և Տաթեւացիին աչակերտակից եղած էր (ՄՆԴ. 85), յետոյ Սուխարու մէջ Սար-
գիս Ապրակունեցիին աչակերտեցաւ (ՄՆԴ. 41), վերջէն Տաթեւացիին ալ հետեւեցաւ երբոր նա Մեծոփ եկաւ (ՄՆԴ. 52), և իբր առաջնորդ վարդան Հոգոցեցիին յաջորդեց Սալնապատի մէջ (ՄՆԴ. 41), բայց պարա-
գանները չներեցին մեծ աչակերտութիւն կազմել, և Ծիրանայի վանքը քաչուելով ընդօրինակութեանց և Ցայսմաւուրքի կար-
գադրութեան զբաղեցաւ (§ 1383)։ Այդ աչխատութիւնը 50 տարի չարունակած և 70 տարեկան եղած էր, երբ Երուսաղէմ ուխտի գնաց, ուր եղիա ամ յոհել, նորէն իր վանքը դարձաւ (ՆՈՐ. 501)։ Խլաթեցին 75 տարեկան եղած էր (ՄՆԴ. 85), երբ Իւ-
քէնաերի թիւրքմէնները Արծկէի կողմերը արչաւեցին (§ 1416), և Ծիրանայի վանքն ալ հասան։ Միաբաններ փութացին փախ-
չիլ, այլ չկրցան ծերունին ալ միասին տա-
նիլ, որուն ծանր կուգար իր սիրելի վանքը լքանել, և կը պատասխանէր. Ասո

կոչէց և ասք դէսայց (ՀԱՑ. 501)։ Դէտ խոր-հուրդի վրայ էին, երբ ասպատակները մո-տեցան, միաբանները աճապարեցին, իսկ ծերունին մինակ մնացած անոնց ձեռքը ինկաւ, որոնք չոյժ փանջել ըզըզբեցին որ ուրանայ, և մերժելուն վրայ նոյն ժամուն վէնէն ընդ էբբեր զերան անդր (ՄԵՄ. 43)։ Նահատակութեան օրը գրուած է 1425, մայիս 9, Հոգեգալուստին կիրակին (ՀԱՑ. 561), որ տոմարով չարդարանար, ուստի մենք ալ կը համաձայնինք տօնին օրը պինդ բռնելով, և ամսաթիւի տարբերութիւնները մօտեցնելով, 1426 մայիս 19'ին Հոգեգա-լուստի կիրակին պնդել Խլաթեցիին նահա-տակութիւնը (ՆՈՐ. 274)։ Թագումը կատա-րեցին Յակոբ ճգնաւոր վարդապետը, Խլա-թեցիին հօրեղբայրը, և նահատակին աշակերտներէն Ստեփանոս եպիսկոպոս և ուրիշներ։ Ամէն մնաց Յակոբ Խլաթեցի ապաստանը նորա քեռորդին, և միւս տարին է Համբարձմանն յառաջ վերացան, հոգին աւան-դեց երբ քահանաներ Համբարձա-ՏԷՐՆ ԴԷ յերկինս կ'երդէին։ Այս հաշուով Յակոբի ալ մահը հանդիպած կ'ըլլայ 1427 մայիս 29'ին։

ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ ԵՒ ԿՈՑՍ ՄԸ

1423. Արծկէի արչաւանքէն յետ երկու-ամ, 1428'ին, Ոչտունիք ապաստակեցին Իսքէնտէրի գունդերը, և չատեր նահատակեցին։ Անունով կը յիշուի Յակոբ Ոլոմանեցի վարդապետը (§ 1481), Անծղնապատ վանքէն, որուն մարմինը թաղուած է Նարեկի մէջ, Գրիգոր Նարեկացիի գերեզմանին մօտ (ՄԵՄ. 43)։ Նոյն միջոցին Դաղար Բաղիշեցի վարդա-պետը փութայ Սասունի լեռները ապաւի-նել. սակայն հոն ալ ճանչցուեցաւ, և Քրիս-տոսի աստուածութիւնը ուրանալ չուզելուն հրեշաւ օրով սպանին ընդ (ՄԵՄ. 44)։ Յիչա-տակնք Սիմէոն Այրիվանեցի վարդապետն ալ, հաւանաբար նոյն ինքն Տաթեւացիի աշակերտներէն եղող Սիմէոն Սիւնեցին, որ բարեկարգած է նախ եղիվարդի վանքը և յետոյ Այրիվանքը։ Նկատողութեան ար-ժանի են իր կարգադրութիւնները որք վանքերու կանոնները կ'ամիսին։ Վանա-կաններուն զգեստը բրդեղէն կամ մաղեղէն կամ մաչկեղէն միայն պիտի ըլլայ, պատա-

ԱՂԹԱՄԱՐԻ ՇՓՈԹՆԵՐ

րագողները պարտաւոր պիտի ըլլան երեք յիսնակներ պահել, որք են քառասնորդաց, ամարան և յիսնակաց, չաբաթ և կիրակի օրերն ալ մէկտեղ, պատարագած օրերնին ուխտը կանոն պիտի քաղեն, և գինի ու միս պիտի չուտեն, վանականներ է ժամաթէին, է հացաթէին և է քառաթէին, այսինքն եկեղե-ցին ու սեղանատունը ու խուցարանը միայն մէկտեղ պիտի ըլլան, պարապատիկ չըլ-պատի մէջ պիտի բնակին, առանց հրամանի դուրս պիտի չելլեն, քնոյ ժամը է ի վեր պիտի ըլլան, առաւօտ, ցորեկ կամ մու-ցորեկ պիտի չունենան վանքին մէջ, և հնազանդ պիտի ըլլան առաջնորդաց։ Սի-մէոնի մահը տեղի ունեցած է 1428'ին (ՀԱՑ. 570)։ Անցողակի պիտի յիշենք թէ Յայտնութիւնքը մայիս 9'ին կը նչանակէ վարդնի (ՅԱՍ. Ա. 201) կամ վարդենիկ կոյս մը (ՀԱՑ. 557), որ կատարեալ պահ-պանելու և իրեն նուիրէն ինկող երիտասար-դին ձեռքէն ազատելու համար, ոստայնանկի կկոցով աչքերը կը կուրցնէ։ Ոմանք այդ միջոցին կը գնեն վարդնիի արիական գործը (ՁԱՐ. Գ. 443), սակայն ոչ այդ մի-ջոցին և ոչ կոյսին հայ ըլլալը կը քաղուի Յայտնութիւններէն, որ առանց տեղի և առանց թուականի կը պատմեն եղելու-թիւնը, և անունին հայ հնչումն ալ թարգ-մանական նչանակուած կրնայ ըլլալ։

ԱՂԹԱՄԱՐԻ ՇՓՈԹՆԵՐ

1424. Գարաքօյունլու Իսքէնտէրին օրով Հայաստանի աղետալի վիճակին նկա-րագիրը տուինք արչա-նքներու պատմու-թիւններով և մարտիրոս-ներու յիշատակութիւննե-րով, և այսչափն ալ կը բաւէ հետեւցնելու թէ ինչ չափ ու բառնակ վիճակի մէջ էր եկեղեցական կացութիւնը։ Հարաւային Հայաստանը Աղթամարի աթոռին վիճակ կը կազմէը Տաթեւացիին այն կողմերը գալէն առաջ, իսկ Հիւսիսային Հայաստանը թէ-պէտ Սսոյ աթոռին իրաւասութեան ներքեւ էր, սակայն յարաբերութիւններ դժուարին էին։ Ինչպէս ալ Պօղոսի կաթողիկոսու-թիւնը՝ կապերը պաշտօնապէս ամրապնդած էր, սակայն քաղաքական խառնուածքներ չէին նպաստեր սիրտ դործակցութիւն հաստա-տել, և հետեւապէս հիւսիսային վիճակներ

իրենք իրենց կը գործէին, մեծ վարդապետութեան գլխաւորութեամբ։ Աղթամարի աթոռը դադրեցնելով միակ հայրապետական աթոռ մը հաստատելու փորձը ձախողած էր (§ 1400), և Դաւիթ իւր աթոռին վրայ անխախտ մնացած էր, սակայն Տաթեւէ դարձող և Տաթեւացիին գործակից Վասպուրականցի վարդապետներ, որչափ հնար էր, ամուր կը մնային իրենց միաբին վրայ և Աղթամարի չէին հպատակեր։ Ըստ այմ, այդ ժամանակէն պէտք է ճանչնալ Աղթամարի իրաւասութեան սահմաններուն ամփոփիլը, և Արծկէի, Արճէշի, Բերկրիի և չրջակայ գաւառներուն Աղթամարէն զատուիլը։ Այս հետեւանքին կը նպաստէր Դաւիթ կաթողիկոսին ալ մահը, որ ամենայն հաւանականութեամբ կը դրուի 1423'ին (§ 1376), և իրեն յաջորդութեան մեծամեծ խնդիրներու տեղի տալը, որոնց եթէ մեծ պատճառը փառասիրական նեղհակընդդէմ ձգտումներն էին, մասամբ ալ իրաւասական խնդիրը կրնայ եղած ըլլալ։ Աղթամարի Հաւաքարանը Դաւիթի մահէն, մինչեւ անոր եղբօրորդւոյն Զաքարիայի զօրանալն ու տիրապետելը, այսինքն է 1423'էն մինչեւ 1437, 14 տարիներու միջոցին համար 21 կաթողիկոսներու անուն գտած ու ցուցակագրած է (ՕՕ·ԲԻՋ·1195), և այս միայն կը բաւէ ցաւալի կացութեան ծանրութիւնը իմանալու։ Երկրին աղէտները չէին կրնար Ունիթորներուն ալ աննպաստ չըլլալ, որոց յախուռն գործունէութիւնը կանգ կ'առնէր քաղաքական չփոթներուն առջեւ, և ոչ ալ նոր զարգացում կը ստանային իրենց ձեռնարկները։ Նախիջեւանի եպիսկոպոսներու և Երնջակի գաւառահայերու անուններ քաղուած են զանազան յիշատակներէ (ՍԻՆ·388), սակայն նկատողութեան արժանի է որ ամէնքը հայազգի չեն, և օտարազգիներ ալ անխտիր պաշտօնի կը կոչուին պապերուն կողմէն։ Ասիկայ կը հաստատէ Ունիթորական կամ հռոմէադաւան ուղղութեան չատ չուտ իսկատիպ լատինականութեան յանգիլը, ինչ որ ալ ուզեն ըսել այդ ուղղութեան պաշտպաններ։ Մխիթար Ասպարանցին, յոխորտանքով Մխիթարեանց (ՍԻՆ·390), և իրենց հռանդուն փաստաբանը, որուն բաղձանքն անգիտակից և անխոհեմ քանիներ և ի հոգւոյ ապերախտներ գրած ըլլալը իբր դաւանակիցներն ալ կը խոստովանին (ՉԱՄ·Դ·449), մինչեւ 1410 հասուցած է իւր գիրքը, և անկէ ետքը տեղեկութիւններն ալ կը նուազին Ունիթորներուն գործունէութեան վրայ։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԳՈՐԾԵՐ

1425. Պօղոս պատրիարք Երուսաղէմէ Սիս եկած ատեն հարկաւ իւր տեղը մէկը նշանակեց աթոռը կառավարելու, և այս եղած պիտի ըլլայ Մարտիրոս Եգիպտացի հռիփսիմեանը, որ պատրիարք ալ ընտրուեցաւ երբ Պօղոս կաթողիկոսութեան բարձրացաւ 1418'ին։ Իրեն ժամանակն էր որ Պուրսպէյ Աչրաֆ սուլտան Եգիպտոսի, գահակալութեան առաջին տարիներուն մէջ Երուսաղէմ եկած ըլլալով, չենք գիտեր ինչպիսի առիթէ գրգռուելով հրամայեց, Ս. Յարութիւն տաճարին դուռները փակել քրիստոնէից դէմ, և անոնց մուտքը արգիլուլ։ Մանաւանդ է արդէն որ մինչեւ այսօր ալ Ս. Յարութեան տաճարին դուռը Տաճիկներու պահպանութեան յանձնուած է, և իրենք են բուն պահապանները, և քրիստոնեայ դրուռնապաններ խիստ անուղով ճանչցուած են իբր եղէրոբոխան կամ օգնական։ Այդ կարգադրութիւնը ծանր եկաւ եպովպիոյ քահանայութեան, իսանակ անուն, և իր տէրութեան նէրքեւ գտնուող այլազգիները հրամայեց կոտորել, որուն փոխարէն Պուրսպէյ ալ Պաղեստինի և Եգիպտոսի քրիստոնեաները չարդել պիտի տար, եթէ նոյն իսկ պետութեան աւագանին, յառաջ գալիք տագնապը յիշեցնելով ետ առնել չտար սուլտանական հրամանը (ԱՍՏ·Ա·220)։ Այս պատճառներով ի կոնդէլոոնեան փէր Պօղոսին, յերուսաղէմ Յարութեան փառաւոր եկեղեցի փակել կայր (ՍԱՄ·174), զոր ի դէպ է դնել 1424 և 1426 տարիներու միջոցին։ Բայց անկէ ետքը կ'երեւի թէ պահ մը հանդարտ տարիներ չարունակեցին, և Մարտիրոս պատրիարք ալ չինարար պաշտօնավարութիւն ունեցաւ մինչեւ 1430, երբ իւր ծերութեան պատճառով, իրեն աթոռակից առաւ նոյն եպիսկոպոսը (ԲԱՒՈ·48), որ աւելի ներքին վարչութեամբ կը զբաղէր, մինչ Մարտիրոս կը չարունակէր

ազգային ստացութեանց վէճերուն հետեւիլ։ Դիմաւորելէս պարտաւորուցաւ Պօղոս գոհ՝այի սրբավայրին տիրապետութեան եւ ուրիշ ըլլալ, զոր վայելիք յաջողեր էին 1431՝ին Հայերուն ձեռքէն գրաւել (ԱՍՏ. Ա. 222)։ Բայց Մարաիոս Եպիսկոպոս գնաց 1433՝ին, և երեք տարի անխոնջ աշխատելով, ծախսելով և խոստանալով, ձեռք ձգեց 1436՝ին վերստին ստացութեան հրովարտակը (ԱՍՏ. Ա. 226), և Երուսաղէմ դառնալով գործադրել սուաւ 1438 տարւոյ պաշտօնական գրութեամբ (ԱՍՏ. Ա. 225)։

ՊՕՂՈՍԻ ՄԱՀԸ

1426. Պօղոս կաթողիկոսի ժամանակակից ցրիւ հղելութիւնները քաղելու հետեւելով, աչքէ վրիպեցուցած հզանք կիլիկիոյ գործերը, որոնք հանդարտ կ՝երեւարան մը առած էին մեծ գաղթականութենէն և Պօղոսի Սիս դառնալէն յետքը (§ 1415)։ Եթէ քաղաքական դիրքը մեծ յուզումներ չէր ներկայներ, Եգիպտական տիրապետութեան վերահաստատուելէն յետքը, ներքինը սկսած էր բնաւնի գրգռութիւններ բուսցնել։ Կիլիկիոյ հայրապետանոցին մէջ աղթարմայական խմորը կանուխ դրուած էր, իսկ Պօղոս Աբնեվլեայց ուղղութեան հետեւող՝ անհակայ անհետացնելու ձեռնարկած էր, և այդ նպատակով Արնեվլեան վարդապետներ ալ բերել տուած էր (§ 1414), և կը սկսէր անոնցմով չրջապատուիլ։ Այսպիսի պարագաներու մէջ գաղափարէն աւելի չահադիտութիւնն է որ կը տիրէ, և Սսոյ միաբան եպիսկոպոսներ և վարդապետներ, հարկաւ իրենց աղթարմայական միտումներէն աւելի, կը գրգռուէին գոյն՝երուն և պաշտօներուն և անոնցմէ քաղուելիք չահերուն ուրիշներու ձեռք անցնելէն։ Այս կէտին մէջ կը տեսնենք մտնք, ներքին գժտութեանց և հրկպառակութեանց աճիլը, որոնք յանգեցան Պօղոսի հղերական վախճանին, և ինքն ալ մէկը հղաւ այն վեց կաթողիկոսներէն, որոնց Սսոյ միաբանները պիտի տեսնեն ութոյն և ի կնոց ոտի հանի, և յատկապէս Պօղոսի վրայ ճշմարտուած կ՝ըլլայ անտղի բարութեանքներով ինքզինքնին արդարացնելնին, բաղձալ անողդջ պղնելով ի վերայ նոցին (ԿՈՍ. 55)։ Պօղոսի մահը վերջին հարուածը հղաւ հայրապետական աթոռին համար, որուն թէպետև դարման մը ըլլած ըլլար, եթէ աւելի ապրէր, և եթէ իր ձեռնարկը չարունակուէր։ Ընդհակառակն աղթարմայութեամբ խմորեալներ նորէն տիրացան, և զեղծումներ բաց ասպարէզ ստացան, և այլեւս յայտնուեցաւ թէ յոյս ու ճար չկայ հայրապետական աթոռը իր աղետալի վիճակէն ազատել, բայց եթէ ազատելով զայն այն իսկական միջնոլորտէն որուն մէջ կը մնար։ Դժբախտաբար գրեթէ անհնար էր անմիջապէս ձեռնարկել, վի Արեւելք ամբողջ անտանելի տագնապի մէջ էր գարաքօյունլու խաչէնաէրին երեսէն, և ոչ միայն գործելը, այլեւ մտածելն իսկ հնար չէր, հայրապետական աթոռին հոգածու գտնուելու։ Այս էր իրաց վիճակը 1430 թուականին, որ Պօղոսի երկոտասանամեայ կաթողիկոսութեան վերջինը եղած է, ինչպէս բացատրեցինք (§ 1414)։

Տ. ԿՈՍՏԱՆԴԻՆ Ջ. ՎԱՀԿԱՑԻ

ՎԱՀԿԱՑԻ ԵՒ ՆԱՂԱՇ

1427. Նորէն կիլիկեցիք կը տիրանային հայրապետական աթոռին, զոր ձեռք կը ձգէր իրենց դիւանագիտական կոստանդին Տղիսկոպոս բնիկ Վահկայ բերդէն, և ձգտումով նախաձեռնակ, ու միջոցներով հարուստ, ու հնարագիտութեամբ ճարտար անձ մը, թերեւս նաեւ գլուխ ու վարիչ Պօղոսի դաւաճաներուն։ Իր ուղղութիւնը ճշդելու համար կրնանք հիմնուիլ այս վերջին պարագային, ինչպէս նաեւ նկատի առնել Լատիններու մօտենալու կամքը, և Փլորենտիոյ ժողովին հետ յարաբերութիւնը, որչափ ալ գործին առաջին չարժումը իրմէ բղխած չըլլայ։ Հետեւաբար աղթարմայութեան, թէ ոչ նա-

խանձայոյզ մը, գոնէ համակիր մը եղած ըլլալը կը յայտնուի։ Ասոր հետ մէկտեղ պէտք է ընդունինք, թէ այդ մասին ալ մեծ գործունէութիւն ունեցած չէ, քանի որ միւս կողմէն Մկրտիչ Նաղաչ վարդապետի հետ նախորդ մտերմութիւն ունէր, և ասոր հանդէպ յարգանք կը տածէր, որ է ըսել թէ հայադաւանութեան սէրը իր սիրտէն բոլորովին հեռացած չէր, իսկ Նաղաչի աղթարմայութենէն հետու մէկ մը եղած ըլլալը յայտնի է։ Բնիկ Բազէչի մօտիկ Պոռ գիւղէն էր Նաղաչը, Աւաքիլ մեծատուն քահանայի որդի, Յովհաննէս վաղամտիկ քահանայի, և Աբգար մեծատուն տանուտէրի եղբայր, թէպէտ ազգութենէ կրօնաւորութեան փափաքող, սակայն ամուսնանալու պարտաւորուած էր։ Կնոջը առաջին ծննդաբերութեան առթիւ այրիանալով, եկեղեցականութեան կը մտնէր, նկարչութեան և ճարտարապետութեան արուեստներէն ալ չհրաժարելով։ Որոշակի ըսուած չէ թէ ո՛ր աչակերտութենէ էր, այլ Տաթեւի աչակերտած ըլլալը չյիշուիր, իսկ 1418'ին, գեղ. սարկաւագ եղած ատեն Պոռայ Ս. Աստուածածնայ, այժմ Ս. Յովհաննէս վանքը գտնուած կը տեսնուի (ՆԱՂ. Է.), իսկ վարդապետութիւնը Աղիդի մէջ անցուցած է, և 1430'ին նոյն քաղաքին եպիսկոպոս ձեռնադրուած է, նոր ընտրուած Վահկացի կաթողիկոսէն (ՀԱՒ. 572)։ Մկրտիչ չատ ազդեցիկ դիրք մը ունեցած է Միջափոտքի մէջ, իր կարողութեամբ և յաջողակութեամբը, բայց աւելի Աքքոյունլու Օսմանի սիրելի ըլլալովը, որով ամէն տեսակ արտօնութիւններ տուած է քրիստոնէից համար, եկեղեցիներու նորոգութիւն, եկեղեցականներու ազատութիւն, համարձակ պաշտամունք, և գերիներու ու նեղուածներու ազատութիւն։ Իր գլխաւոր չինութիւնները եղած են, Արղնիի Բարձրահայեաց վանքը 1433'ին և Տիարպէքիրի Ս. Թէոդորոս կաթողիկէն, որ անագան աւարտեցաւ 1439'ին (ՀԱՒ. 573)։ Բարեբախտ պիտի ըլլայինք եթէ վանքերուն մասին ալ նմանօրինակ տեղեկութիւններ հասած ըլլային, մինչ ընդհակառակն իր օրով եւաքանզեւս յառաջացաւ Սուրբ Հայրապետանոցին քայքայումը, և կաթողիկոսական աթոռին անկումը, որ Հայ եկեղեցոյ ուղղափառութեան և հաստատութեան նախանձայոյզ վարդապետները ստիպեց վերջնական դարմանին դիմել, և կիլիկիոյ մթնոլորտէն հեռացնել հայրապետութիւնը, և զայն վերադարձնել իր սկզբնական տեղը, լուսաւորչահիմն էջմիածինը, որ թէպէտ արտաքին և քաղաքական տեսակէտով նախանձելի բախտ մը չունէր, գոնէ անտեսիզդ պահած էր հայադաւան ուղղափառութեան սկզբունքը։ Պօղոսի սպանութիւնը և Կոստանդինի յաջորդելը մեծապէս ցնցած էին Արեւելեայց միտքերը, և հարկաւ անմիջապէս ալ գործի ձեռնարկած կ'ըլլային, եթէ պարագաները նպաստէին։

ԻՍՔԷՆՏԷՐ ԵՒ ՋԻՀԱՆՇԱՀ

1428. Տագնապալից էր կացութիւնը, ամէն կողմ սուր ու հուր, աւեր ու աւար կը տիրէր Գարաքօյունլու Իսքէնտէրին երեսէն։ Աբալի, Իսքէնտէրի որդին և վանայ իշխանը, անխրաւութեանց չափը անցընելուն, հօրմէն ետ կոչուեցաւ, բայց նա Շամախիի իշխան Խալիլուլլահին ապաւինեցաւ, որ Աբալին Շահռուհ մեծ խանին ղրկեց, և այս պատճառով Իսքէնտէր Շամախի յարձակեցաւ 1434'ին, և օրոյ ճարակ եւ հնձեցուան առաջ ճանապարհաց ջնջութեան, և քաղաք ու գիւղ, ծառ ու այգի, ամէն բան ջնջեց, անպատմելի աւերս գործելով Շամախիէ անցաւ յայնկոյս Դերբենդ, անողորմ սրախողխող առնելով ղեբեներն և ղազաղանս, և ամ ի չիան այդ առպատակը չարունակեց, և ահագին աւարով և գլուխներու բեռներով Սիւնեաց երկիրը դարձաւ 1435'ին, ուր Ցակոբ Շամախեցի քահանան կրցաւ քրիստոնեայ գերիները ազատել (ՄՆԻ. 100)։ Շահռուհ ուզելով Իսքէնտէրը պատժել անդէն և անհամբերութեամբ Սուլտանիան պաշարեց, և անկէ երկնցակ եկաւ, ուր Իսքէնտէրի մայրն Խանում ու եղբայրը ձիհան խոստացան Շահռուհի Իսքէնտէրը սպաննել, բայց նա յաջողեցաւ փախչիլ Կոգովիտ գաւառի Արծափ գիւղը, և անկէ կարինի վրայ քալեց, ուր Աքքոյունլու Օսմանի հետ զարնուեցաւ, և զայն սպաննեց և գունդերը ջարդեց, ու դիակները դիզելով. ինքն յառաջացաւ դէպ Աբչէհիր և Թօքաթ։ Շահռուհի որդին Ջոնգայ, որ կը հետապնդէր՝

եռեւէն չհասաւ, իսկ Շահռուհ պատուեց ու Շահ անուանեց Իսքէնտէրի ձիհան կամ Ջահան եղբայրը, որ իրեն հպատակութիւն էր յայտնած (ՄԵՄ·103)։ Միւս տարի 1436'ի գարունին Իսքէնտէր իւր ասպատակը նոր բոգեց, Սերաստիոյ չրջակայքը քանդեց, այրի մը մէջ ապաւինած Հայերէն՝ էրիկ մարդիկը անասելի չարչարանօք տանջեց, և կին ու տղայ գերի տարաւ, Տիվրիկէ ծանր փրկանք գանձեց, Խարբերդը պրկ և հրկ աւերեց, Դերջանի ժողովուրդը ճանպայ հանեց իրր գերի ձիւն ձմեռին, և երբ ցրտահարներու բազմաթիւ մահերը կ'իմացընէին, ծէնծղելով ասէր. Ասոնցմէ պրծ, չ'ինչ էույն է ինչ (ՄԵՄ·105)։ Քան չատերը սասելէ մոռցէլ դառնալ էին Իսքէնտէրի երեսէն, որ 1437'ին եղբօրը ձիհան Շահի վրան քալեց, բայց իրեններէն լքուելով երկնակի բերդը ապաւինեցաւ, ուր իւր իսկ մայրը Խանում և Շահաբաթ որդին, և 10 չրեղ և էոլ մեծամօրթի զինուորներ զինքն սպասնեցին երբ է էոն էր աբթել է ֆինոյ, և գլուխը ձիհան Շահին տարին։ Եւ խալըչոյս երկիր կը յաւելու պատմիչը (ՄԵՄ·107)։ Ըսած էինք վերեւ (§ 1422) թէ պարագայք չնեբեցին Հայաստանի վարդապետներուն Սսոյ աթոռին գործովը զբաղիլ, ուստի քաղուածօրէն տուինք վերջին տարիներուն անցքերը, որ մեր խօսքը կը հաստատեն։

1429. Դժբախտութեանց չարքը լրացնելու համար յիշենք եւս Օրբելեանց վերջանալը։ Այդ ազգատոհմէն մնացած էր միայն Պելգին իշխան, Պեղգին (ՄԵՄ·117) և Պեչգին ալ գրուած (ՄԵՄ·134), որդի Սմբատ իշխանին, այն որ Տաթեւացիին պաշտպանութիւն էր բրած (§ 1357), կեղծուրաց ալ եղած, և նորէն դարձած (§ 1406)։ Պելգին միակ Հայ իշխան մնացած էր Արեւելեան գաւառները, ճիշ մի է մէջ ոչխարց, և ասոր մի է խառը էէլէրէ (ՄԵՄ·119), ընդ գերիշխանութեամբ վրաց Ալէքսան թագաւորին, որ Սիւնեաց նահանգն ալ իրեն հնազանդեցուցած էր։ Սակայն Ալէքսան Հայոց նկատմամբ համակիր չէր, և կը վախնար մի' գուցէ Հայեր Պելգինի չուրջը ժողվէնգին, և ասիոնց լեզի կոշման վրաց։ Ուստի կը մտադրէ զայն սպանել տալ, և Աւետիքին անուն Հայ մըն ալ կը վարձէ, որ գոյ գիշեր մահու է ժամ կէսգիշերին Պելգին կը զգայ, դեղքաի ալ կ'առնէ, բայց օգուտ չունենար և կը մեռնի։ Ալէքսանի և Աւետիքի գործին մէջ կրօնամոլութեան հետք մըն ալ կը նշմարէ պատմիչը, թէ ոչն էոպիկոպոսան չկրցաւ տանիլ զիւրեցուն ոչխին, ուղղափառ և ճշմարիտ հաւատացեալն (ՄԵՄ·118)։ Ալէքսան այս կերպով Օրբելեանց տէրութիւնը վերջացուց, որոնց նախապէս Լօռի դղեակն ալ տուեր էր։ Պելգինի եղբայր Շահ, փոյթ չունեցաւ հայրենի գաւառին տիրանալ, իսկ որդին տանամէայ մնաւ, և Հայ իշխաններու վերջին հետքն ալ ջնջուեցաւ 1438'ին։ Միայն Պելգինի աւագանին անոր վրէժը լուծեց, Աւետիքը ծայրակոսոր սրբեցաւ և է մոռանց (ՄԵՄ·121)։

ՎՐԱՑ ՆՈՒԱՃՈՒՄԸ

1430. Ալէքսան 1439'ին չարաչար և անհանդուրժելի ցաւերով հիւանդացաւ, և 1440 Զատկին օրը, մարտ 27'ին ձիհանշահ եկաւ ու վրաց Շամխուլտէ քաղաքը պաշարեց, և անհամար թուով գերի վարեց, որոնք մինչեւ է Մոբ և է խորասան և է Պաղդադ և է Տճկոսդան և չամինայ երկիր ցրուեցան (ՄԵՄ·121), իսկ Հայաստանի քրիստոնեայք այնքան աղքատացած էին որ ին էոպէ և ին էէ՝ էեբէ ի ինել ալ կոբեր (ՄԵՄ·122)։ Վրաց թագաւորութեան իյնալովը քրիստոնէից չատին յոյսն ալ ջնջուեցաւ, և մէ, կ'ըսէ Մեծոփեցին, որ հանդոպալ չոյս է վրացիան անեղվ պրծնէ, չայնմանէ չոսոհոփեալ, ասոյլ անօրինաց ափերեան եղէ (ՄԵՄ·123), և այդ վերջին աղէտքին վրայ ողբով կը փակէ իւր պատմութիւնը։ Ձիհանշահ այս կերպով բոլոր Հայաստանի և Կովկասի բացարձակ տիրապետողը դարձաւ, և թէպէտ քրիստոնէից վրայ հարկերը խստացուց, գոնէ պատերազմի խռովութիւնները վերջացան, և երկիրը համեմատաբար հանդարտ վիճակ մը ստացաւ, որով ուրիշ գործերով ալ զբաղելու հնարաւորութիւն ներկայացաւ։ Ձիհանշահ այդ կողմերուն վրայ մարզպան կամ ընդհանուր պետ դրաւ իւր Հասան-Ալի որդին, որ աթոռը հաստատեց Նախիջեւան, և անոր ձեռքին ներքեւ կուսակալներ նշա-

նակուեցան՝ Վան, Երեւան, Տփղիս, եւ ուրիշ գաւառներ, պէյ կամ պէկ կամ քէթ կոչմամբ, եւ ասոնցմէ մէկն էր Երեւանի Եաղուպ պէյը, որուն անունը պիտի յիշենք աթոռի փոխադրութիւնը պատմած ատենները։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԵՐՁՈՒԱԾԸ

1431. Այժմ պէտք է անցնինք կարեւոր կէտ մը լուսաբանել, որ է Հայոց կողմէ Լատինաց Փլորինտացւոյ ժողովին յղուած պատուիրակութիւնը, եւ անոր ձեռքով կատարուած գործողութիւնը։ Սակայն գործին լիակատար բացատրութեան համար անհրաժեշտ կը դատենք կողմնակի տեղեկութիւններ տալ Լատիններուն եւ Յոյներուն կացութեան վրայ։ Կղեմէս Ե պապ իր աթոռը 1309'ին Հռոմէ փոխադրած էր Գաղղիոյ Աւինիոն քաղաքը, ուր աթոռը մնաց մինչեւ 1377, երբոր պապերու ժամանակ, մինչեւ որ Գրիգոր ԺԱ. նորէն Հռոմ հաստատուեցաւ, բայց քիչ ետքը մեռաւ 1378 մարտ 26'ին, եւ երկու պապեր միանգամայն ընտրուեցան, Ուրբանոս Զ Հռոմի մէջ եւ կղեմէս Է Աւինիոնի մէջ։ Այսպէս սկսաւ Արեւմտեան Հերձուածի կոչուած պառակտումը։ Ուրբանոսի յաջորդեցին Վոնիփակիոս Թ 1379'ին, Իննովկենտիոս Է 1404'ին, եւ Գրիգոր ԺԲ 1406'ին, իսկ կղեմէսի յաջորդեց Բենեդիկտոս ԺԳ 1394'ին։ Հերձուածին վերջ տալու համար գումարուեցաւ Պիսայի (Pisa) ժողովը, Իտալիոյ մէջ, 1409 մարտ 26'ին, երկու պապերն ալ չճանչնալու սկզբունքով, զորս յունիս 5'ին հերձուածող եւ հերետիկոս հռչակեց, եւ յունիս 26'ին ընտրեց Աղեքսանդր Ե պապը։ Այս ընտրութիւնը ուրիշ արդիւնք չունեցաւ, բայց երբ երրորդ պապ մըն ալ աւելցնել, եւ թէպէտ Աղեքսանդր Ե 1410'ին մեռաւ, բայց իրեն յաջորդեց Յովհաննէս ԻԳ, եւ իր աթոռը Բոնոնիոյ (Bologna) մէջ հաստատեց։ Միեւնոյն միջոցին նորադանդութիւնն ալ սկսած էր Արեւմուտքի մէջ, որուն նախահայրը եղաւ Յովհաննէս Վիքլէֆ (John Wickliff) Անգղիացին 1374'ին, եւ իրեն յաջորդեց Յովհաննէս Հուս (Johan Huss) Գերմանացին 1403'ին, հետեւապէս հերձուածին խնդիրին՝ հերետիկոսութեան խնդիր մըն ալ կը կցուէր եւ-

ԲԱՍԻԼԻՈՑ ԺՈՂՈՎԸ

րոպայի մէջ, բայց մենք այդ եղելութեանց չենք հետեւիր։ Երրակի հերձուածը վերջացնելու համար գումարուեցաւ Կոստանդիոյ (Gonstanz) ժողովը Հելուետիոյ մէջ 1414 նոյեմբեր 5'ին, եւ 1415 ապրիլ 6'ին իւր նշանաւոր վճիռը արձակեց թէ ժողովի իշխանութիւնը պապական իշխանութենէն վեր է։ Ժողովը մինչեւ 1418 իւր նիստերը չարունակեց, 1415 մայիս 29'ին Յովհաննէս ԻԳ'ը դատապարտեց, 1415 յուլիսին Գրիգոր ԺԲ'ի բանագլօսեալ հրաժարականը ընդունեց, 1417 յուլիս 26'ին Բենեդիկտոս ԺԳ'ը կրկին մերժեց, եւ վերջապէս 1418 նոյեմբեր 11'ին Մարտինոս Ե'ը պապ ընտրեց։ Հերձուածը պաշտօնապէս դադրած եղաւ, բայց խռովութիւնները չուտով չդադրեցան։ Գրիգոր ԺԲ քիչ ետքը մեռաւ 1417'ին 91 տարեկան, Յովհաննէս ԻԳ, որ 1415'ին բանտարկուած էր՝ երկք տարիէն մեռաւ 1418'ին, իսկ Բենեդիկտոս ԺԳ իբր պապ ապրեցաւ մինչեւ իրեն մահը 1424'ին, եւ իրեն յաջորդեց կղեմէս Ը, որ իւր դիրքը պահեց մինչեւ 1429, այլ հետզհետէ լքուելով ստիպուեցաւ հրաժարիլ եւ Մարտինոս Ե'ի հնազանդիլ։ Կոստանդիոյ ժողովը որոշած էր պարբերաբար ընդհանուր ժողովներ գումարել իբր իրաւու չարունակութիւն, եւ ըստ այսմ առաջինը գումարուեցաւ Իտալիոյ Պաւիա (Pavia) քաղաքը 1423 մայիսին, բայց վերահաս ժանտախտին պատճառով յունիսին Իտալիոյ Սիէնա (Siena) քաղաքը փոխադրուեցաւ, եւ լոկ հերետիկոսութեանց գործերով զբաղելով փակուեցաւ 1424 փետրուար 26'ին։ Այդ մանրամասնութիւնները մէկ կողմէն կը հաստատեն թէ Լատիններուն եկեղեցական դրութիւնն ալ Հայերու կացութենէն չատ չէր տարբերեր, եւ միւս կողմէն մեզ կ'առաջնորդեն Փլորինտիոյ ժողովին իսկութիւնը ճշդելու։

1432. Մարտինոս Ե նոր ժողով հրաւիրեր էր 1431 փետրուար 1'ին, Հելուետիոյ Բասիլիա (Basilea կամ Basel) քաղաքը մարտ 3'ին բացուելու պայմանով, սակայն ինքը փետրուար 20'ին մեռաւ եւ մարտ 3'ին ընտրուեցաւ Եւգինէոս Դ։ Այդ պարագաններ յապաղեցին ժողովականաց չուտով հաւաք-

ուիլը, և 1431 դեկտեմբեր 14'ին առաջին նիստը գումարուեցաւ, մինչ անդին պապը դեկտեմբեր 12'ին հրաման կը հանէր ժողովը յետաձգել և 18 ամիսէն բանալ Բոնոնիա քաղաքը, ուր ինքը կը գտնուէր։ Բասիլիոյ ժողովականները չհաւանեցան և 1432 փետրուար 15'ին կրկնեցին Կոստանդիոյ ժողովին վճիռը, թէ պապական իշխանութիւնն ալ ժողովականին ենթարկուած է, և Եւգինէոսի առաջարկեցին յետաձգման հրամանը հետ առնուլ։ Եւգինէոսի չհամակերպելուն վրայ 1432 դեկտեմբեր 18'ին իրեն 60 օր պայմանաժամ նշանակեցին, և նոյնը կրկնեցին 1433 յուլիս 13'ին, պատուհասանքութեան սպառնալիքով։ Ասոր պատասխան Եւգինէոս սեպտեմբեր 13'ի կոնդակով Բասիլիոյ ժողովականներուն որոշումները կը ջնջէր, բայց ինքն ալ տագնապալի վիճակ մը ունէր Բոնոնիոյ մէջ, թէ քաղաքական հակառակութիւններուն և թէ իրենցմէն լքուելուն երեսէն։ Այս պատճառով ստիպուեցաւ Բասիլիոյ ժողովականներուն հետ հաշտուիլ, ինչ որ տեղի ունեցաւ 1434 ապրիլ 24'ին, և յունիս 26'ին անգամ մըն ալ հռչակուեցաւ Կոստանդիոյ վճիռը ժողովներու գերիշխանութեան վրայ։ Եւգինէոս դժգոհ այդ ելքէն, բայց և ստիպեալ հարկին հնազանդիլ, պատեհ գտաւ օգտուիլ իր աղերսագրութիւնը զօրացնող պատգայէ մը, որ յանկարծ կը ներկայանար Յոյներուն կողմէ։ Օսմանեանց սուլտան Մէհէմմէտ Ա'ի (§ 1412) յաջորդած էր որդին Մուրատ Բ 1421'ին, և երկուքին ձեռքով Յունական կայսերութեան Ասիական և Եւրոպական բոլոր երկիրները Օսմանեանց իշխանութեան ներքեւ անցած էին, այնպէս որ Կոստանդնուպոլիս այլեւս ամէն կողմէն թշնամիէն չրջապատուած, և յոյժ անձուկ սահմաններու մէջ ամփոփուած էր։ Յովհաննէս Ը Պալէոլոգ կայսր, որ 1425'ին հօրը Մանուէլ Բ'ի յաջորդած էր, գահակալութիւնէն անմիջապէս ետքը, ծանր պայմաններով տասնամեայ հաշտութիւն մը կնքեց Մուրատի հետ, բայց և այնպէս միշտ երկիւղի մէջ էր։ Արեւմուտքէ զատ ուրիշ կողմէ օգնութիւն մը չյուսալով, և այդ օգնութեան համար պատնական միութեան պայմանին անդրաժեշտ ըլլալը դիտնալով, հարկաւ Գալաթիա (Calata) արուարձանին մէջ հաստատուած Գենուացիներէն ալ յորդորուելով, ուղղակի Եւգինէոս պապին դիմեց 1433'ին, և սա ալ նոյն տարւոյ յուլիսին Քրիստափոր Կարաթօնի (Cristoforo Garatoni) քարտուղարը յղեց բանակցութեան սկսելու։ Յովհաննէս կայսր կ'առաջարկէր Կոստանդնուպոլսոյ մէջ գումարել միութենական ժողովը, որուն Եւգինէոս համաձայն էր, և Բասիլիոյ ժողովը ցրուելու միջոց կը նկատէր (Պէլ. Ա. 275), մինչ Բասիլիոյ ժողովականք, որոնց ալ յատուկ պատգամաւորներ յղած էր Յովհաննէս կայսր՝ Եւրոպիոյ մէջ կ'ուզէին։ Այնատեն Եւգինէոս իր նշած Բոնոնիան առաջարկեց, իսկ կայսրը Յովհաննէս Անկոնա (Ancona) քաղաքը կը նախադասէր։ Բանակցութիւնք երկարեցան մինչեւ 1436, և այդ միջոցին ժողովը կանոնական գործերով զբաղեցաւ, առանց աչքէ վրիպեցնելու Յոյներն ալ, զորս իրեն կողմ ձգել կ'աշխատէր, Բասիլիան կամ Աւինիոնը կամ Սաւոյեան իրենց ժողովատեղի առաջարկելով, իսկ կայսրը, որ Եւգինէոսի և ժողովականաց մէջ ազդուագոյն կողմը կը փնտռէր, վերջապէս ժողովականներէն բաժնուեցաւ և Եւգինէոսի յարեցաւ։ Ասոր վրայ պապը սկսաւ աւելի խրոխտաբար վարուիլ Բասիլիոյ ժողովականաց հետ, ժողովականք ալ բացարձակ ընդդիմութիւն հռչակեցին։ Պապ ու կայսր համաձայնեցան Իտալիոյ Փերրարիա (Ferrara) քաղաքը գումարուիլ, որուն վրայ Եւգինէոս 1438 յունուար 1'ի կոնդակով Բասիլիոյ ժողովը լուծեալ հռչակեց, և փետրուարի 8'ին ժողովը բանալ տուաւ, 27'ին ինքն ալ գնաց, մարտ 4'ին Յովհաննէս կայսրը եկաւ, և 7'ին ալ հասաւ Կոստանդնուպոլսոյ Յովսէփ պատրիարքը, եկեղեցական հետեւորդներով, ապրիլ 9'ին հանդիսութիւն կատարուեցաւ, բայց ժողովական գործողութիւններ մինչեւ հոկտեմբեր 8 յետաձգուեցան, Լատիններէն չատերուն յապաղելուն պատճառով։ Եւգինէոս իր յաղթութիւնը կատարեալ կը կարծէր, բայց Բասիլիոյ ժողովականք չէին զիջաներ։ Փերրարիայի ժողովը ապօրէն հռչակեցին, Բիտուրբիոյ (Bruges) կանոնք կոչուած՝ Գաղղիական եկեղեցւոյ սահմանադրութիւ-

նը հաստատուեցին, որ պապական իշխանութեան նպաստաւոր չէր, 1439 յունիս 25'ին Եւգինէոսը գահընկէց հրատարակուեցին, և նոյեմբեր 5'ին նոր պապ մըն ալ ընտրուեցին Սավոյիոյ Ամեդէոս Ը (Amedeo VIII di Savoia) հրաժարեալ իշխանը, որ փեւլիքս Ե կոչուեցաւ։ Ուրիշ մանանաւոր կարգադրութիւններէ ետքը 1443 մայիս 16'ին ժողովը փակուեցին, որ ամբողջ 12 տարի տեւած էր, և որուն հեղինակութեան մասին լատիններն ալ իրենց մէջ համաձայն չեն, և հինգ վեց տեսակ կարծիքներ կազմուած են (ՊԵԼ. Ա. 292), որոնք մեզ չեն հետաքրքրեր։

ՓԼՈՐԵՆՏԻՈՑ ԺՈՂՈՎԸ

1433. Մեզի հարկաւոր էր գիտնալ թէ ինչ հոգւով, ինչ նպատակով, և ինչ պարագաներու ներքեւ գումարուած է յունալատին միաբանութեան ժողովը, որուն այնչափ կարեւորութիւն կու տան հռոմէադաւանք, և զոր մեր ազգային եկեղեցւոյն վրայ ալ տարածել կը ջանան։ Ծոյներ եկած էին Օսմանեան վերահաս գրաւումէն ազատուելու, և որեւէ արտաքնայարդար պայմանով օգնութիւն մը ստանալու համար։ Իսկ Եւգինէոս կ'աշխատէր որեւէ ձեւի տակ Արեւելքի վրայ ազդեցութիւն տարածելով՝ իր անձնական թշնամիները ընկճել։ Ահա տիեզերական ըսուած ժողովոյ հեղինակութեան հիմը, և հաւատոյ դաւանական վճիռ կոչուած որոշումը։ Փերրարիոյ մէջ 1438 հոկտեմբեր 8'էն, մինչեւ 1439 յունուար 10, տասնըվեց նիստեր գումարուեցան, Ե յՕըթ-ոյ յաւելուածին վրայ վիճելով, բայց քաղաքին մէջ ժանտախտ ճարակած ըլլալուն՝ միեակամ հաւանութեամբ փոխադրուեցան մերձակայ Փլորէնտիա (Firenze) քաղաքը, ուր փետրուար 26'ին առաջին նիստ մը գումարեցին։ Հոգւոյն Սրբոյ Ե յՕըթ-ոյ բղխման խնդիրը չարունակեց մինչեւ յունիս 8, և վերջապէս միջասահման բանաձեւով մը փակուեցաւ։ Պատարագի հացին և արբագործութեան և հանգերձեալ Մուբոքի խնդիրներն ալ փոխադարձ դիմողութեամբ փակուեցան, բայց պապական իշխանութեան կէտը ծանր ընդդիմութեանց բաղխեցաւ, իրեն գործնական ձեւերուն մէջ։ Ծոյները բաւական կը սեպէին Հռոմի աթոռը առաջին ըսել, մինչ Լատիններ ասոր ընդարձակ նախաձեռնութիւններ կու տային, հանգամանակին յաւելուածներ ընելու, իւրովի տիեզերական ժողով հրաւիրելու, առանց ուրիշ պատրիարքներու զայն գումարելու, պատրիարքները իր ատեանը բերելով դատելու, և նմաններ, զորս Ծոյներ չէին ընդունիր, և Ծովսէփ պատրիարքին յունիս 12'ին վախճանելուն վրայ, Ծոյն եպիսկոպոսներ մեկնելու կը պատրաստուէին։ Սակայն կայսրն ու պապը միտքերնին ուրիշ նպատակներ ունէին, Ծովհաննէս որեւէ կերպով Լատինաց օգնութիւնը ապահովել կ'ուզէր, Եւգինէոս Բասիլիոյ ժողովականաց առջեւ տկարանալ չէր ուզեր, որոնք ճիշդ այն օրեր, յունիս 25'ին (§ 1432), զինքն գահընկէց կը հռչակէին։ Միտքերնին տարբեր, բայց նպատակնին համամիտ, կայսր ու պապ միացան, և ստիպողական ու չահեցողական ամէն միջոց գործածելով, և որոշ բացատրութեանց տեղ դիւրաթեք բանաձեւներ ընդունելով, բայց միշտ բաւական դժուարութիւններով՝ միութենական վճիռ մը դիրքի առնել և ստորագրել տուին յուլիս 5'ին, և 6'ին երկուշաբթի օր հանդիսապէս հրատարակուեցին Փլորէնտիոյ մայր եկեղեցւոյն մէջ։

ՓԼՈՐԵՆՏԻՈՑ ՎՃԻՌԸ

1434. Այն հաւատոյ գիրին մէջ (ՄՆՍ. Լ Ա. 1025) նկատելի կէտերն են։ Նախ պապը իր կոնդակը կը հաստատէ հաւանութեամբ կայսեր, և արեւելեան պատրիարքաց (ՄՆՍ. Լ Ա. 1026) ընդարձակ կերպով կը բացատրէ թէ Հոգւոյն Սրբոյ բղխման մասին Լատիններուն է Հօրէ և յՕըթ-ոյ, և Ծոյներուն է Հօրէ Որդւով բանաձեւներր նոյն իմաստի կը յանգին, և կ'ընդունի իբր է ինչ ակնթանք վարդապետութիւնը (ՄՆՍ. Լ Ա. 1030)։ Պատարագի և մաքրարանի մասին երկաքանչիւր եկեղեցիները իրենց սովորութեանց մէջ կը թողու։ Իսկ պապական իշխանութեան մասին խօսուած ատեն կ'ընդունի Ծոյներուն պահանջած պայմանները, թէ այն կ'իմացուի, Ինչպէս որ պէտքերուն ժողովներուն և եկեղեցական կանոններուն մէջ կը պարունակուի։ Եւ թէ Ամբողջապէս պէտք պահուին պա-

բէթլէհէմ քալը էրասանէնքը և ասանձնաընծայութիւնքը (ՄՆԱ. ԼԱ. 1034)։ Այդ բանաձեւներով Յոյն եպիսկոպոսներ կը կարծէին իրենց դրութիւնը ազատած ըլլալ, իսկ Լատիններ կ'ուրախանային որեւէ կերպով Յոյներու վրայ առաւելութիւն ստանալ։ Եւգինէոս Բասիլիականաց վրայ յաղթանակ տարած կ'ըլլար, և Յովհաննէս իր կայսրութիւնը ապահոված կը կարծէր։ Կայսրը յուլիս 6'էն ետքը իւր դիտած գործնական արդիւնքը կը պահանջէր, սակայն Եւգինէոս չունէր այն ազդեցութիւնը որ եւրոպիոյ բանակներր Օսմանեանց դէմ չարժէր։ Կայսրը յուսախաբ իւր ակնկալութեանց մէջ, բաւական ատեն դիւ Փլորինտիա մնաց, որ նպատակը իրագործէ, սակայն տեսնելով որ բան մր չարտադրուիր, և ընդդիմադիր եպիսկոպոսներու դիտողութիւններէն ցաւելով, միութենական որոշումէն յիսուն օր ետքը, օգոստոս 26'ին բոլոր Յոյներով Փլորինտիայէ մեկնեցաւ դէպի Կոստանդնուպոլիս, ուր հասաւ 1440 փետրուարի առջի օրր։ Միայն երկու Յոյն եպիսկոպոսներ հետ մնացին, որոնք սիրտով հոգեմէաբանութեան յարած էին, Բեսարիոն (Bessarione) Նիկիոյ և Իսիդորոս Կիեվի (Kiev) արքեպիսկոպոսները, որոնք կարդինալութեան աստիճանով վարձատրուեցան։

1435. Յոյներուն մեկնելէն օր առաջ Փլորինտիա կը հասնի Հայ պատգամաւորութիւնը, և կայսրը հանդիսաւ ընդունելով Փլորինտիայէ կը մեկնի (ՄՆԱ. ԼԱ. 1046)։ Բայց մենք պէտք է հոս դառնանք պատգամաւորութեան ծագումր պատմելու։ Այդ միջոցին ծագկեալ Հայ դպրութիւնն մր կր գտնուէր Խրիմի Կաֆա քաղաքը, որուն ծագումը կը կապուի Զարմագանի արշաւանքներուն (§ 1113), և Անի քաղաքի փախստականներուն հետ Ասոնք առաջին անգամ բնակեցան Ախսարայ։ Աժտերխանի և Ղազանի մօտերր, ուր հասած կ'ըլլան չուրջ 1235'ին։ Երբ 1261'ին Յոյն կայսրներ Կոստանդնուպոլիսը Լատիններէն նոր առին, օգնութիւն գտած էին Գինուացիներէն, որոնք վենետիկցիներու և Պիսացիներու հետ կը մրցէին ծովի տիրապետութեան և առեւտուրի ընդարձակութեան համար։ Միքայէլ Պալէոլոգ կայսր իրր երախտագիտութեան պարտք, Գինուացիներուն (Genovesi) տուաւ Կոստանդնուպոլսոյ հանդիպակաց ծովեզերքը, որ Գալաթիա կամ Կալաթա կը կոչուի այժմ, անչուշտ իտալերէն Calata անունով, ինչպէս կը կոչուին ցարդ Գինուայի և Սավոնայի և չրջակայ Լիգուրեան նաւահանգիստներու քարափները։ Կոստանդնուպոլսէ դուրս Գինուացիք մեծ կեդրոն ունէին Խրիմու Կաֆա քաղաքը, և առեւտրական կայարաններ, Ջմիւռնիոյ, Փիոսի, Միտիլէնի և ուրիշ քաղաքներու մէջ։ Քրիստոնեայ իշխանութեան մը կաֆայի մէջ մերձաւորութիւնը՝ Ախսարայի Հայերուն տեղափոխութեան փափաքը չարժեց, և կաֆայի Գինուացիներէ հաւանութիւն ստանալով, և դիմադրող Թաթարներու հետ պատերազմելով, եկան հաստատուիլ Կաֆա 1330'ին, և հետզհետէ ընդարձակուելէն նոր գիւղեր ալ չինելով և չէնցնելով և բազմաթիւ եկեղեցիներ կանգնելով (ՀԱՁ. 581)։ Այդ թուականէն դար մը անցած էր, և չատ զարգացած էր Հայոց դիրքը Գինուացւոց պաշտպանութեան ներքեւ, սակայն բարի դրացիութիւն և բարեացակամութիւն չգտնելու նպատակները, Կաֆայի Հայերուն մէջ մերձաւորութիւն ու հակամիտութիւն մր ստեղծեցին դէպի լատինականութիւն, որ ոչ բոլոր հայրենակութեան հաւասար, և ոչ ալ կատարեալ և պաշտօնական կերպով էր, և մաս մը միայն մինչեւ ունիթորական յանձնառութիւնն ալ հասած էր և երեք վանքեր ունէր, ինչպէս յիշեցինք (§ 1394)։ Ուրիշ մաս մր կիլիկեցւոց ոճով աղթաթրմայական զիջումներու կը միտէր, և վերջապէս ճշմարիտ հայադաւան մաս մըն ալ կար, միշտ տիրապետողներու հետ լաւ յարաբերութիւններ պահելու զգուշաւորութեամբ։ Երբ որ 1433'ին Յովհաննէս կայսր Եւգինէոսի դիմաց (§ 1432), և միութենական դիտում յայտնեց, պապին միտքը ծագեցաւ միեւնոյն փորձն ընել ուրիշ Արեւելեան եկեղեցիներու հետ ալ, որոնք Հռոմի հետ յարաբերութիւն չունէին, որպէսզի տեսակ մր դաշնակցական միութեամբ իւր դիրքը

զօրացնէ, և Բասիլիականաց կողմը տկա-
բացնէ, որոնք աւելի ազդեցութիւն ու-
նէին Գերմանական, Գաղղիական և Սպա-
նիական երկիրներու մէջ։ Սակայն Բասի-
լիոյ ժողովականք ալ Եւգինէոսի գաղափա-
րը հակակշռելու համար, իրենք ալ իրենց
կողմէն, ոչ միայն կայսեր, այլ և ուրիշնե-
րու ալ նոյն հրաւէրը ուղղեցին, ինչպէս
կ'երեւի Կոստանդնուպոլիս գտնուող Ծով-
հաննէս և Եսայի Սսոյ եպիսկոպոսներու
նամակէն, զոր ուղղած են Բասիլիոյ ժողո-
վականներուն 1433 սեպտեմբեր 30'ին
(ՄՆՍ. Լ. 642), ուր կ'ակնարկեն ժողովին
կողմանէ կայսեր ուղղուած գրութ'ան և
ղրկուած պատգամաւորութեան։ Մենք ար-
դէն յիշած ենք Բասիլիոյ ժողովին Ծունաց
հետ միութեան խնդիրով զբաղիլը (§ 1432)։
Բայց Եւգինէոս իրեն կուսակից և օգնական
ունէր Իտալացիները, և յատկապէս Գենուա-
ցիները և Վենետիկցիները, որոնք բնդար-
ձակ և ազդեցիկ յարաբերութիւններ ունէին
Արեւելքի մէջ, և իրենց ձեռնտուութիւնը
ընծայեցին Եւգինէոսի, անոր հրաւիրագիր-
ները կամ դիմումները հասուցին Հայերուն,
Եթովպացիներուն, Ասորիներուն, Քաղ-
դէացիներուն և Մարոնիներուն, և ձեռնար-
կերնէն եկած միջամտութիւնը գործածեցին
յօգուտ պապութեան, բայց մենք պիտի
ամփոփունք Հայերուն վերաբերեալ կէտե-
րով։ Ինչպէս կաֆայի Հայերը, նոյնպէս
Կոստանդնուպոլիս գտնուողներն ալ Գեն-
ուացւոց ազդեցութիւնը կը կրէին, ինչպէս
կը կրէր Ծունաց կայսրն ալ։ Այսու հան-
դերձ երկու եպիսկոպոսները յանձնառու չե-
ղան միութեան բանակցութեան մտնել և
գործը թողուցին կաթողիկոսին (ՄՆՍ. Լ.
642)։ Այդ պատասխանին վրայ Եւգինէոս
ուղղակի Կոստանդին կաթողիկոսի անու-
նով գիր մը գրեց, որ Եսայի եպիսկոպո-
սի ղրկուեցաւ տեղը հասցնելու համար։
Նամակը ղրկուած է Կոստանդնուպոլիս, և
ոչ Երուսաղէմ (ԶԱՄ. Գ. 473), ինչ որ յար-
մար ուղեգիծ մըն ալ չէր։ Շփոթութիւ-
նը յառաջ եկած է, Եսայիի նոյն միջոցին
Երուսաղէմի Մարտիրոս պատրիարքին ա-
թոռակից ըլլալէն (ԲԱՈ. 48), ինչպէս որ
Եսայի ալ կը ստորագրէ։ Պապին նամակը,
Աբդլմեհ սարկաւագի ձեռքով Սիս ղրր-
կուեցաւ, և Եսայի ըստ այմ 1434 նոյեմ-
բեր 1'ին պապին պատասխանեց, ուր պա-
պին պատուիրակ Բրիստափոր կաթաթօնիի
հետ ալ տեսակցած ըլլալը կը յիշէ (ՄՆՍ. Լ.
867)։

ՊԱՊԱԿԱՆ ՀՐԱՒԷՐԸ

1436. Հայերը հռոմէադաւան ցուցնելու մարմաջով բռնուած գրողներ, նորօրինակ տրամաբանութիւն մը ու-նին։ Շողոքորթ դովա-նքները՝ հաւատոյ դա-ւանութիւն կը մնկնեն, միութեան փափաք ցուցնող յայտարարու-թիւնները՝ կատարուած իրողութիւն կը ցուցնեն, անհատի մը կամ խումբի մը րրա-ծրն ու գրածը՝ նկեղեցւոյ ամբողջութեան կը վերագրէն, և այս կերպով Հայ նկեղեց-ւոյ նկարագիրին և իսկութեան վրայ վճիռ կ'արձակեն։ Ներկայ պարագային մէջ ալ, Կոստանդին կաթողիկոսը, Սսոյ աթոռը, Կոստանդնուպոլսոյ եպիսկոպոսը, Երուսա-ղէմի պատրիարքը, Կիլիկիոյ ժողովուրդը, կաֆայի գաղութը, կատարեալ հռոմէադա-ւանները ցուցնելու ճիգեր կ'ըլլան։ Ապդ եթէ այս այսպէս էր և ամենքը պապութեան հպատակներ էին, հապա ինչ էր պապին կողմէն զանոնք միութեան կոչելու հրաւէ-րը, զի ոչ թէ միացեալներու, այլ միացեալ չեղողներու կրնար ուղղուիլ այդպիսի ա-ռաջարկ մը։ Պապին հրաւէրին հանդէպ Կոստանդնուպոլիս եղող եպիսկոպոսներ դործը կաթողիկոսին կը թողուն, կաթողի-կոսն ալ չաճապարեր համաձայնութիւն յայտնելու, այլ մինչեւ Տիարպէքիր կը գրէ, և խնդիրն ու թուղթը հաղորդելով՝ Մկրտիչ Նաղաչ եպիսկոպոսին կարծիքը կ'ուզէ, որուն աղթարմայութեան դէմ անձ մը ըլլալը յայտնի էր (§ 1427)։ Օրի-նօք չարժուելու համար պէտք էր որ վան-կային Սիւնեցի և վասպուրականցի վար-դապետական կեդրոններուն ալ գրեր, այլ չմոռնանք որ Գալաթացոյնլու Իսքէնտէրին չանաւտակութեանց միջոցն էր (§ 1428), և կ'երեւի թէ վանկացին հազիւ Տիարպէքիրի հետ հաղորդակցելու հնարաւորութիւնն է ունեցեր։ Նաղաչին կարծիքը առաջարկին հակառակ եղաւ. հայադաւան ուղղութեան հաւատարիմ մնալով՝ քաղկեդոնիկ դաւա-նութեան չուզեց համակերպիլ, և հազիւ

Կոստանդինի նամակը ստանալէն տարի անցնելէն ետքը, 1436 մայիս 16'ին պատասխան գրուեց, որ միութենական բանակցութիւնից մանելու համար պէտք էր որ դիմացիններդ միանգամ ընդ միշտ քաղկեդոնական դաւանիչ դուրս կանգնին (ՁԱՄ. Գ. 474)։ Այս առթիւ Նաղաչ՝ Լատիններէն զատ Յոյներն ալ կը յիշէ, զի պապական առաջարկէն զատ կայսերական յորդորն ալ կար ի նպաստ միութեան։ Եթէ Եւգինէոս պապ իւր ներքին տագնապէն ազատելու ոյժ կը գտնուէր, Յովհաննէս կայսրն ալ արտաքին տագնապէն ազատելու օգնութիւն կը սպառէր։ Նաղաչի պատասխանին վրայ բարձիթողի մնաց հրաւէրին խնդիրը, որ մեծ նշանակութիւն ունի ազգաբանական թեան խնդրով չփոխուած կաթողիկոսի մը համար, և Եւգինէոսի 1434'ին գրած նամակը մինչև 1438 անպատասխանի մնաց։ Այդ պարագան կը բաւէ հաւաստել թէ Հայեր, և նոյն իսկ Սսոյ աթոռը, ոչ միայն կատարեալ հնազանդական չէին, այլ և ոչ այնպէս ըլլալու միտում ունէին. ապա թէ ոչ, ինչպէս ալ ծանր ըլլային քաղաքական պայմանները, չորս տարուան լռութեան պատճառ մը չկար, և ինչպէս գիրը գացած էր, պատասխանն ալ կրնար դառնալ։

1437. Միութենական խնդիրը և Հայրու եղած առաջարկը նորէն ձեռք առնուեցաւ, երբ Փերրարիոյ ժողովը սկսաւ գումարուիլ 1438 տարւոյ սկիզբը (§ 1432)։ Այս անգամ պատրաստ նոր նամակ չգրուեցաւ, կաթողիկոսին կողմէն ձեռնարկ մը չեղաւ, կիլիկիոյ մէջէն չարժում չսկսաւ, այլ գործին կեդրոնը Կաֆա եղաւ, և գործին մղումն տուողներն եղան Պօղոս Իմբէրիալի (Paolo Imperiali), Կաֆայի Գենուացի կառավարիչը, և Լուչինօ Ֆացիօ և Կալէդօ Կրիմալտի (Lueino del Fazio, Galeto dei Grimaldi), անոր օգնականները (11. ԱՄՍ. 461)։ Գենուացիք են ուրեմն, օտարազգի և օտարադաւան անձինք, որոնք մէջտեղ հնկած են Եւգինէոսի տագնապին օգնութիւն հասցնել, և Հայ պատգամաւորութիւն մը ղրկելով Փլորենտիա, անոր յաղթանակը պատրաստել Բասիլիականներու դէմ։ Գենուացի կառավարիչն ալ կը վկայէ, թէ ինքն Յեռնդկեց վարդապետ Հայերը (11. ԱՄՍ. 464), և յայտնի է թէ վարդապետութիւնը ինչ նշանակութիւն ունի իշխանաւորի մը բերանը։ Հայերը համակերպութեան ստիպուեցան, և Լատիններ ամէն ծախք ընելու պատրաստակամութեամբ և ամէն դիւրութիւն ընծայելու խոստումով 1438 մայիս 12'ին թուղթ մը ստորագրել տուին Կաֆայի Մարգաքիա եպիսկոպոսին և քահանայական դասուն և գլխաւոր աշխարհականներուն, և պնդալատան հանդերձ նամակը հասուցին Կոստանդնուպոլիս, և անկէ Սիս, այնպէս որ 70 օրէն, յուլիս 25'ին Կոստանդին կարող կ'ըլլար պատասխանել թէ՛ ազգայիններուն և թէ՛ հիւպատոսին։ Կաֆացիներէ գրուած նամակին մէջ ըսուած էր, որ կամ Գենուա, կամ պապին, կամ սիւնհոդոսին մէկը ղրկուի Լեհաստան եպիսկոպոս մը ուղարկելով, և կ'ուղէին որ կաթողիկոսը նշանակէ զայն, իսկ եթէ մերժէ կամ մինչև երեք ամիս յապաղէ, ինքն հիւպատոսն պիտի ղրկէր վերջապէս մը ընտրելու նպատակով (11. ԱՄՍ. 461)։ Ակնէ զատ դաւանական միաբանութեան կամ հաւատոյ սկզբանց նկատմամբ որոշ խօսք մը չկայ նամակին մէջ։ Կաթողիկոսն ալ իր պատասխանին մէջ կը յիշէ թէ Եմանուսիոս եպիսկոպոս մը եկած է իրմէն, պապին պատուիրակին և Գենուացի կառավարիչին նամակներով (ՊԼԶ. 260), որով կը յայտնուի թէ Լատին պատուիրակութիւն մըն ալ եկած էր նամակին հետ, կոստանդինի վրայ ստիպում գործելու համար։ Իսկ Կոստանդին բաւականացած է չորս անձեր նշանակել նոյն իսկ Կաֆայի մէջէն, որք են Մարգիս վարդապետ, որ Կաֆացւոց արքեպիսկոպոս և Կոստանդինի անթրանիկ՝ այսինքն առաջին ձեռնադրեալ եպիսկոպոսը կը կոչուի (ՊԼԶ. 260), թէպէտ վերեւ Մաղաքիա յիշատակուեցաւ իբր Կաֆայի եպիսկոպոս, և Մարկոս ու Թովմաս վարդապետներ և Յովակիմ Հալէպի եպիսկոպոսը, որ երթան և ըսբջինոյ եղէն դեքան սոբբն Սեղբեսբոս և սոբբն Գրիգորիս, այսպէս միաբանին ի խալդընիէն, ի սեբ և ի գ.-ընէն (ՊԼԶ. 261)։ Ապա այս խօսքերը հոգեւոր սէրէ աւելի բան մը չեն նշանակեր, և մոլորութենէ

դառնալու վրայ չեն կրնար մնկնումիլ, բայց եթէ լուսաւորիչն ալ մոլորութենէ դարձած ըսելով։ կաթողիկոսը նոյն կերպով կը գրէ հիւպատոսին ալ, ինչպէս որ Սոբէ Հոֆէն պիտի լսած ըլլայ անոնց դիտը, այնպէս ըսել ետ-ծեն, որպէս զի սէր և գոնութիւն և եղբայրու-թիւն ըլլայ ի մէջ երիցանէից (11· ԱՄՍ· 463)։ կաթողիկոսը ո՛չ հաւատոյ վրայ, ո՛չ պապի իշխանութեան, ո՛չ հռոմէականութիւն ըն-դունելու, և ոչ մոլորութիւններ մերժելու վրայ կը խօսի, խաղաղութենէ և եղբայր-սիրութենէ անդին չանցնիր, որ կերպով մը լատիններու մոլեռանդութեան յանդիմա-նութիւնն է, վասնզի Հայերու վրայ կրկնա-մկրտութիւն իսկ ընելու կը հանէին (11· ԱՄՍ· 465)։ Պապին ուղղուած գիր իսկ չի տար, և պատիւ և յարգանք կամ հպատա-կութիւն յայտնող յայտարարութիւն մը չի գրեր, որուն երբէք ազատ չէին Հայ կա-թողիկոսները, և ոչ ալ հրահանգ մը կը գծէ իր պատգամաւորներուն։ Գենուացի կառավարիչը կը գրէ պապին, թէ պատ-գամաւորութիւնը կո՛չ էր յանուն բովանդակ ազգին (11· ԱՄՍ· 464), սակայն ինքն է ըսո-ղը, կաթողիկոսին գիրերուն մէջ ասանկ իմաստ մը չկայ։ Վերջապէս բոլոր իրողու-թիւնները սոսկման վրայ եղած դիմողու-թեան մը կը վերածուին։ Կաֆայի Հայեր Գենուացիներէ սոսկում կը կրեն պատգա-մաւորութիւն մը ղրկել, և Կոստանդին վե-րիվերոյ և անորոշ ձեւով գոնացում մը կու տայ, որ կաֆացիները իրենց տէրերէն չի նեղուին։ Անոնց հռոմէական չըլլալուն կը վկայէ հռոմէադաւանութեան մեծ ախոյեանն ալ, թէ Քեֆէի Հայերն էրէնց եպիսկոպոսով Հռոմն անլսել էին (11· ԱՄՍ· 453)։ Մենք կ'ուզենք ընդունիլ թէ Կաֆայի մէջ տա-կաւին մնացած էր ունիմորական խումբէն մաս մը իր վանքերով և իր յատուկ ե-պիսկոպոսով, սակայն այս չափով Կաֆան հռոմէադաւան չէր ըլլար, ինչպէս այսօր ալ մաս մը Հայ կաթոլիկ գոնուիլը Հայոց ազ-գը կաթոլիկ չընէր։

1438· Այդ պայմաններու ներքեւ ճան-պայ կ'ելլէ Կաֆայէն՝ չորս վարդապետներէ կազմուած Հայ պատգամաւորութիւնը, բայց պարթամաւորութեան առաջնորդ կը նչանակ-ուի, Յակոբ Բրիմատիսի (Jacobus de Pri-matitiis) լատին կրօնաւորը, յատկապէս այդ գործին համար Բոնոնիայէ պապին կողմէն ղրկուած, երկու ուրիշ լատին ընկերներով, որք են Փրանկիսկոս Բո-նոնիացի և Լուդովիկոս Բոնոնիացի (Francesco da Bologna, Luigi da Bologna), երեքն ալ Փրանկիսկեան միա-բանութենէ։ Այդ լատին Յակոբն է, որ պիտի ըլլար Հայերուն ելլեսոր լսեսոր, և Հայերս սէրտը Բոլորվին անոր չհաւա-տար պիտի ըլլար, և առանց անոր կարող պիտի չըլլայինք տա-հանջատիպին ներկայանալ (11· ԱՄՍ· 464)։ Ա-ւելի պարզ խօսելու համար, գացող Հայ վարդապետները խրատուելակ պիտի ըլլային, և լատին կրօնաւորներ գործը պիտի կար-գադրէին։ Կառավարիչն Իմբէրիալի յանձ-նարարութիւնը կատարած և գործը լրա-ցուցած ըլլալուն ուրախ, 1438 դեկտեմ-բեմբեր 1'ին պապին ուղղած նամակով մը ճանպայ կը հանէ կէս լատին և կէս Հայ պատգամաւորութիւնը, որ առաջ Կոստանդ-նուպոլիս կը հանդիպի, անկէ Վենետիկ, անկէ Փլորենտիա կ'ուղեւորի, ուր կը հաս-նի 1439 օգոստոս 25'ին (§ 1435), երբ տիե-զերական կոչուած ժողովը՝ իր գործը եր-կու ամիս առաջ լրացուցած էր, և Յոյներն ալ մեկնելու վրայ էին։ Եւգինէոս իր լա-տիններով ներքին գործեր կարգադրելու կը չարունակէր, և սեպտեմբեր 4'ին Հերձուա-ծող և հերետիկոս կը հռչակէր Բասիլիոյ ժողովականները՝ որ իրեն դէմ գահընկէ-ցութեան վճիռ արձակած էին։ Հայերու հետ ինչ բանակցութիւններ եղան, ինչ գու-մարումներ տեղի ունեցան, ինչ խնդիրներ յուզուեցան, ինչ պայմաններ առաջարկուե-ցան, և ինչ տեսակ ընդունելութիւն յայտ-նուեցաւ, ասոնք ամէնքը մեզի անծանօթ կը մնան, զի այդ մասին ժողովական տե-ղեկութիւններ և արձանագրութիւններ չեն գտնուիր։ Միայն Հայերուն հասնելէն չորրդ երեք աւիս ետքը, 1439 նոյեմբեր 22'ին, Եւգինէոս իր անունով կոնդակ մը կը հրատարակէ, հաստարակ կոնդակներու ձե-ւով, և Ծնդ-ոչ- ա Ա-ո-ո-ա-ծ օգնական Ֆը, աղաղակեցէ- ա Ա-ո-ո-ա-ծ Յակոբոյ, սկզբնաւո-րութեամբ (ՄՆՍ· ԼԱ· 1047), որ ոչ ժողո-վական կանոնի ձեւն ունի, և ոչ Հայ պատ-

գամաւորներուն նախապէս տուած աստրագրութիւնները կը կրէ։ Այս պատճառով Լատիններն ալ տովորաբար Հրահանգ որ Հայոց անունով կը ճանչնան և կը նշանակեն այդ կոնդակը, որով ժողովական հնդիսակութիւն տուած չեն ըլլար։ Միանգամայն մնծ խնդիրներու նիւթ կ'ընեն զայն, վասն զի ոչ միայն ձեւին կողմէն ժողովական հնդինակութեան պայմաններուն չպատասխաներ, այլ և պարունակութեան կողմէն ալ նշանաւոր անճշդութիւններ ունի, զորօրինակ ձեռնադրութեան խորհուրդին մէջ միայն գործիքներու տուուչութիւնը յիշելով, զանց կ'ընէ ձեռաց դրութիւնը, որ խորհուրդին էական կէտն է, և առանց որոյ ձեռնադրութիւնը անվաւեր կ'ըլլայ։ Ամէն առթի մէջ, պատմութեան ամբողջացման նպատակով հարկ կը սեպնենք այդ պաշտօնագիրն ալ վերլուծել։

1439. Կոնդակին սկիզբը մեծամեծ խօսքերով կը հռչակուի, թէ 900 և աւելի տարիներէ իվեր բաժանուած ՀՐԱՀԱՆԳ ՈՒ ՀԱՑՍ Հայոց եկեղեցին՝ այս անգամ Հռոմի հետ կը միանայ։ Արդ նախ հռոմէադաւանները Եւգինէոսի հնդինակութիւնը կը յարգեն, պէտք է ընդունին թէ ասկէ առաջ միութիւն եղած չէ, մինչ իրենք քանի քանի անգամ կատարուած միութիւններ կը պաշտպանեն։ Եւգինէոս կը յիշէ, թէ Հայեր անյոյն փոփոխոյ դիտիեն, սահմեցին ձեզ պոգիսմասոյս նշանասոյս, քաքպուշոնս և խմասոնս, լեզուէ էշանոնիեմբ ճոխացեալս, որ եկին ի հետասոյ աշխարհս քաղամ նեղսընեմբ և ծովային վտանգս (ՄՆՍ.ԼԱ.1049), մինչ մենք տեսանք թէ եկողները կաֆացիներ են, Գևնուացւոց սոիպմամբ բերուած, և ոչ Սսոյ հայրապետանոցէն և կաթողիկոսէ ղրկուած անձեր, և թէ պատգամաւորութեան գլուխները լատիններ են (§ 1438)։ Այս յառաջաբանին վրայ կը սկսի յատուկ գլուխներով Հայերուն առաջարկել ընդունելու կէտերը։ Առաջինն է Քրիստոսի և Հոգւոյն Սրբոյ աստուածութիւնը երեք ժողովներու համեմատ։ 2. Երկու բնութեանց վարդապետութիւնը։ 3. Երկու կամաց վարդապետութիւնը։ 4. Քաղկեդոնի ժողովին և Լեւոն պապին ուղղափառութիւնը և Հռոմէ ճանչցուած բոլոր ժողովներուն ընդունելութիւնը (ՄՆՍ.ԼԱ.1050—1054)։ 5. Մի առ մի կը մեկնէ եօթը խորհուրդները, իւրաքանչիւրին նիւթն ու ձեւը ու պաշտօնեայն ու արդիւնքը բացատրելով, ու գրեթէ բառացի քաղելով Թովմաս Ակուինացիին գիրքէն, ուստի պէտք չենք զգար մանրամասնութեամբ յառաջ բերել այդ երկար յօդուածը (ՄՆՍ.ԼԱ.1054–1059)։ Մկրտութեան մէջ ևս Հրեպեմ ղեկ ձեւը կը հրամայէ, բայց Մկրէ Թոռոյս ձեւն ալ չի մերժէր։ Դրոյմի մէջ բացարձակապէս եպիսկոպոսը կը ցուցնէ իբր պաշտօնեայ։ Հաղորդութեան մէջ բաժակին չուր խառնելու համար Յայտնութեան տեսիլքէն վկայութիւն մը կը յարմարցնէ, Ջոբ քաղամ, Յովհաննէս քաղամ, սակայն բնագիրին մէջ գրուած է. Ջկնաբն ղբ գեսեբ, որ նոգեբ պոռնիկն, Յովհաննէս են (ՁՁՏ.ԺԼ.15)։ Ապաշխարութեան խորհուրդին մէջ պաշտօնէին քահանայական աստիճանը անբաւական կը սեպէ, և յատուկ եպիսկոպոսէ տրուած արտօնութիւն ալ կը պահանջէ։ Վերջին օծութեան պարզապէս Լատիններուն իմացածին պէս կը բացատրէ։ Ձեռնադրութեան մէջ զանց կ'ընէ ձեռաց դրութիւնը, և միայն գործիքներու տուուչութիւնները կը յիշատակէ։ Ամուսնութեան մէջ նիւթ և ձեւ և պաշտօնեայ չգիտեր, և ամուսնալուծութիւնը բացարձակապէս կը մերժէ։ 6. Պարտաւորիչ կը հռչակէ Աթանասի Կանոն հաւատոյ գրութիւնը, և 7. Հայերուն ալ կը տարածէ Ծունաց հետ յուլիս 6'ին հաստատուած միութեան գիրը։ 8. Կը հրամայէ, որ Հայերն ալ Լատիններուն հետ տօնին Աւետումը, Յովհաննու ծնունդը, Քրիստոսի Մնունդն ու Թլփատութիւնն, ու Յայտնութիւնն ու Տեառնընդառաջը։ Վերջապէս կը յայտարարէ թէ Հայ պատգամաւորները, իրենց և կաթողիկոսին և ամենայն Հայոց անունով այդ ամէն կէտերը հաստատեցին, ընդունելով կամ մերժելով ինչ որ Հռոմայ եկեղեցին կ'ընդունի կամ կը մերժէ։ Սակայն ինչպէս ըսինք, յառաջագոյն կատարուած բանակցութիւններ և յայտարարութիւններ կը պակսին, և միայն Լատին պատգամաւորներուն համակերպելով՝ Հայ պատգամաւորներն ալ ընդունած կ'ըլլան։ Թէպէտև

Եւգինէոսի կոնդակին ներքեւ ստորագրած են վարդապետներէն ոմանք, և յանուն ոմանց և յանուն ոմեքն կ'ընդունինք ըսած են, սակայն պէտք չէր որ այս ըսէին «պես և սրբոյն» ձեր վկայէ յաւելուածով (ԶԱՄ. Գ. 481), զի ոչ թէ պատգամաւորներ ընդունելնին պապէն պիտի իմանային, այլ պապը պատգամաւորներէն պիտի իմանար։ Հետեւապէս այդ յայտարարութիւնը՝ ստացուքեան անդորրագիրէ աւելի ոյժ չկրնար ունենալ, քանի որ եթէ կանխորոշ ժողովական վաւերագիր մը գտնուէր, հարկաւ ժողովներու պաշտօնական հաւաքածոյին անցած կ'ըլլար, սակայն այսպիսի գիր մը ոչ արձանագրուած է, և ոչ ալ եղած է։

ԿԱՆՈՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

1440. Երբոր 1439 Նոյեմբեր 22'ին Եւգինէոս իւր հրանանգը կը հրատարակէր և կը յայտնէր թէ Հայ պատգամաւորները կաթողիկոսին անունով իւր որոշումները կ'ընդունին, պատգամաւորներէ ներկայացուած կամ ներկայացնել կարծուած Կոստանդին Վահկացի կաթողիկոսը այլեւս չկար։ Նոյն 1439 տարւոյ ապրիլ 20'ին գրուած յիշատակարան մը կ'ըսէ, թէ տէր Կոստանդին հայրապետը յաւմ ամ ֆոխեցա ա Քրիստոս (ՏԱՇ. 50), ուրեմն նա մեռած էր 1439 տարւոյ սկիզբները, դեռ պատգամաւորները օգոստոս 25'ին Փլորենտիա չէ հասած, և ինչ որ յանուն Կոստանդին կաթողիկոսի կը գործուէր, վաւերական հանգամանք զուրկ էր, թէպետեւ առանց այս պարագայի ալ՝ Փլորենտիոյ գործողութեանց մէջ վաւերականութեան հիմնական պայմաններուն բացակայութիւնը ակներեւ էր։ Եւգինէոս որ 1439 Նոյեմբեր 15'ին Կոստանդին կաթողիկոսին կը գրէր, անոր ղրկած պատգամաւորներուն հետ դառնալուն առիթ, հանդուցեալի մը ուզած կ'ըլլար իւր գիրը։ Գիր մըն ալ կ'ուղղէր կաֆացիներուն, վասն զի իսկապէս կաֆայի գաղութին և ոչ բոլոր Հայ ազգին ներկայացուցիչները կրնային սեպուիլ եկողները։ Յօդուածագիր մը այդ գիրը ուղղուած կ'ըսէ Գէֆէի Լոռոչկիեց (11. ԱՄՍ. 465), բայց քանի որ ասկէ առաջ նա ընդունած էր, թէ 1433'էն ետք պարզուած էր, որ Գէֆէի Հայերէն էրէնց եպիսկոպոսով Հռոմէ անջատեալ էին (11. ԱՄՍ. 453), անուղղակի յայտնած կ'ըլլայ, թէ Եւգինէոսի Գինուացւոց միջնորդութեամբ կաֆայի Հայոց հետ ունեցած յարաբերութիւնները, աւելի կաֆայի մէջ գտնուող ունիթորական հատուածին հետ էր, քան թէ բոլոր հայաբնակութեան հետ։ Պատգամաւորներ 1439 Դեկտեմբերին Փլորենտիայէ մեկնեցան պապին առատ ընծաներով, որոնց արժանացած էին իրենց հոգւոյ համակերպութեամբ, և պէտք էր որ ձեռնըսին եղած նամակն ու հրահանգը չիտակ տանէին Սիս, կաթողիկոսին յանձնելու համար, բայց այդպիսի բան մը ըրած չեն, այլ Կոստանդնուպոլիսէ չիտակ ուղղուած են Երիմ, և իջած կաֆա՝ իրենց մեկնած տեղը, կատարուած գործերէն տեղեկութիւն տալու համար կաֆայի Գինուացիներուն, որով ցուցած են թէ անունով միայն Հայոց կաթողիկոսին, իսկ իրօք Գինուացի կառավարիչին պատգամաւորներն են եղած, լատին կրօնաւորներու գլխաւորութեան և առաջնորդութեան ներքեւ։ Այսպէս կը վերջանայ Փլորենտիոյ ժողովին գացող պատգամաւորութիւնը, Հայաստանի չրջանակէն դուրս կատարուած, և որին չուրջը այնչափ կը զբաղին հռոմէականներ, Հայոց եկեղեցւոյ Հռոմի հետ միաբանութեան վերջնական և պաշտօնական գործ մը ցուցնելու համար։ Մենք գործին ընթացքն ու պարագաները ու չարժառիթները բացատրեցինք, որպէս զի ընթերցողներուն դիւրին ըլլայ իւրովի եզրակացութեան գալ։ Վերջին դիտողութիւն մըն ալ աւելցնենք։ Յիշատակենք պահ մը որ Կոստանդինի ըրածն ու բաածն, և պատգամաւորներուն խօսածն ու գրածը՝ օրինական բաներ ըլլան, միթէ կրնա՞ր Կոստանդին Վահկացին, առանց խորհրդակցութեան և առանց ազգին համաձայնութեան, առանց ազգային ժողովի և առանց կանոնական պայմաններու, ինքն իւրովի, լատիններէն եկած բոտիպման վրայ, դաւթականութենէ չորս եկեղեցականներու յանձնարարութիւն տալով, Հայոց եկեղեցւոյ դրութիւնը այլայլել, դաւանութիւնը փոխել, և կացութիւնը փոփոխել։ Թերեւս լատիններ, որ իրենց եկեղեցւոյ պետին վրայ անսխալականու-

թեան և ամենակարողութեան ձիրքեր կ'ընդունին, այսպէս հաւանին, բայց ոչ Հայեր, որ այդպիսի ձիրքեր չեն ճանչնար իրենց եկեղեցւոյն պետին վրայ։

ՎԱՀԿԱՑԻՒՆ ՄԱՀԸ

1441. Կոստանդին Վահկացիի մահուան պարագաները մակաբերելու համար, նորէն պիտի դիմենք Մեծոփեցիին ընդհանուր կերպով տուած ծանօթութեան, թէ Սոյ վերջին վեց կաթողիկոսներէն, վերջն ալ գեղ մահու ոչխոյն (ԿՈՍ·55), որ երէք առաջիններուն վրայ ի լրոյ տեղեկութիւն ալ կարծուի, գոնէ վերջինին համար գիտակցօրէն գրուած տեղեկութիւն պէտք է ըսուի, վասնզի ոչ միայն ժամանակակիցի մը վկայութիւնն է, այլեւ գրուած է այն պարագաներու մէջ, երբ Մեծոփեցին իւր ուշնուրուշը Սոյ գործերուն վրայ սեւեռած էր, և անոր ընթացքը կը գնէր։ Մեծոփեցին լռելեայն կերպով նոյնը կը հաստատէ, երբ ուրիշ տեղ կը գրէ, թէ Կոստանդին կաթողիկոս Սոյ գնաց առ Աստուած (ԿՈՍ·63), որ իւր մէջ հեգնական չնչտ մը ունի։ Վահկացիի անունը գովեստի արժանի բան մը չներկայեր, և իւր ժամանակը աւելի զօրացած պիտի ըլլան այն զեղծումները, զորս Մեծոփեցին կը թուէ, և մենք արդէն քաղեցինք (§1049)։ Որչափ ալ աղթարմայութեան հակամէտ էր, սակայն իրր իրեն նպաստաւոր պարագայ մը պէտք է նկատենք Եւգինէոսի կողմէ եղած միութեան հրաւէրին, և Գնունացւոց ու Կաֆացւոց կողմէ եղած դիմումները հանդէպ վերապահութեան և զգուշաւորութեան դիրք բռնած ըլլալը (§ 1437)։ Իւր ժամանակին կիլիկիոյ կացութեան վրայ չատ գրելու բան չունինք, պի իրարու դրացի Իսլամ պետութեանց փոխադարձ պատերազմներն են եղածները, որ Սիսի կացութիւնը չփոխեցին։ Տարսոն և Ամանոսի մէջ հաստատուած Հայ բերդակալները մէկ մասն ալ անոնցմէ նուաճուեցաւ այդ միջոցին, և յատկապէս կապանի բերդը 1435'ին (ՍԻՍ·561)։ Օսմանեան սուլտան Մուրատ Բ. աւելի ընդարձակեց իւր աշխարհակալութիւնը դէպ արեւելք, և 1436 թուականը կրնայ նկատուիլ իրր սկիզբն Օսմանեան տիրապետութեան բուն հայաբնակ գաւառներու վրայ. մինչ ասկէ առաջ Հայերու վրայ տիրած էին, փոքր-Ասիոյ գաղթականութեանց մէջ, և ոչ Փոքր ու Մեծ Հայաստանի վրայ։

ՑՈՎՍԷՓԻ ՇՓՈՓՆԵՐ

1442. Վահկացիին մահուան դառնալով, անոր բնական վախճան ունենալուն իրր հաստատութիւն պէտք է նկատել՝ մահուանէն ետքը տիրող խռովութիւնն ալ։ Դավրիժեցին 1437 տարեթիւով տէր Յովսէփ կաթողիկոս մը կը դնէ (ԴԱՎ·336), զոր Երեւանեցին ալ ընդունած է (ՋԱՄ·17), և Ջամչեան ալ Յովսէփ Գ. կաթողիկոս մը անցուցած է ցուցակին (ՋԱՄ·ՅԱԻ·92)։ Սակայն Մեծոփեցին այս անունով մէկը չճանչնար, այլ Կոստանդինի մահը յիշելով, անմիջապէս վրայ կը բերէ, Ե Գրիգոր անուն եպիսկոպոս ի գՆեն կաթողիկոս (ԿՈՍ·63)։ Նոյն ինքն Ջամչեան ալ այլեւայլ տեղերէ քաղելով գրուած է, որ Յովհէ էջ ալիբհիկ ոտ, և նոյնեպէս առանց ձեռնարկեան, և թէ ոգին քնաս չընկալաս չկոդիկոսութեան նորա (ՋԱՄ·Գ·485), այնպէս որ այսչափ գիտնալէն ետքը ցուցակի անցնելն ալ զարմանալի կ'ըլլայ։ Ազգին չընդունելուն իրրեւ բացայայտ նշան կը նկատենք 1439'ին գրուած յիշատակարանի մը տարօրինակ բացատրութիւնը է հայրապետութեան լսածը (ՓԻՐ·118), որպիսի ինչ ուրիշ յիշատակարաններու մէջ ալ տեսած է Ջամչեան, է հայրապետութեան ժեջ աղօթն որ էր է Սիս, և խոփանեցաս՝ բացատրութեամբ (ՋԱՄ·Գ·486)։ Արդ այդ մանր տեղեկութիւնները իրարու մօտեցնելով, կրնանք հաստատել, թէ Դավրիժեցիէն Յովսէփ որուած 1437 թուականը չկրնար երբեք նկատի առնուիլ, իրր Վահկացիին կաթողիկոսութեան վերջը, քանի որ Վահկացիին 1438'ին գործելը (§ 1437), և 1439'ին մեռնիլը (§1440), հաստատուն վկայութիւններով ճշդուած է։ Իսկ Յովսէփը պէտք է կաթողիկոսութեան թեկնածու, և ամէն միջոցները անխիղճ գործածող մէկ մը ճանչնալ, որ ամենայն հաւանականութեամբ և ոչ իսկ եպիսկոպոս եղած է։ Նա իւր նպատակին հասնելու համար Վահկացիին կեանքին ալ դաւաճանած է, և թերեւս բռնի կերպով հայրապետանոցին ալ տիրացած է,

բայց Սսոյ հայաբնակութենէն ընդունուած չէ, և եպիսկոպոսներն ալ օծումը ղացած են, և իրենց մէջ միանալով և ժողովուրդն ալ թեւ թիկունք առնելով, իրենցմէ մէկը կաթողիկոսական աթոռ բարձրացուցած են։ Այս կերպով անցած է 1439 տարուոյ մինաշորդը Վահկացիին մահուանէ ետքը, կատարելապէս անիշխանութեան և կաթողիկոսական աթոռին բռնաբարման միջոցը, որուն վրայ հնար չէ ընդունիլ բռնակալ Յովսէփի անունը, որով Յովսէփ Գ կոչուածը՝ անգոյ կաթողիկոս կը դառնայ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԼԱԹԵՑԻ

1443. Նահատակներու թիւը որ անցեալ տարիներու մէջ բաւական չատ եղած էր, նուազած է այդ միջոցին, և միայն Յովհաննէս Խլաթեցիի անունը կը գտնենք հին յիշատակներու մէջ։ Քան տարեկան ժիր և առոյգ, գեղեցիկ և քաղցրերգակ երիտասարդ մըն էր Յովհաննէս, որ իր երգերով կը զուարճացնէր ժողովուրդը, նաև առաւել Սէյֆէտտին ամիրան, Խլաթի իշխանը, և հանապազ կոչ առնէր նորա (ՆՈՐ. 284)։ Իրեն կ'ընկերանար տաճիկ երգեցիկ աղջիկ մըն ալ, բայց Յովհաննէսի հետ մրցելով չկրնալ չէնէր (ՆՈՐ. 292), և ասկէ ծագեցաւ ատորին նախանձ մը, և ամիրային կողմէ Յովհաննէսը ուրացութեան յորդորելու ջանք մը։ Վերջապէս ամիրան, 1439 տարուոյ առաջի օրերը անգամ մը առջեւը կանչելով, ատիպաւ կը պնդէ, և զրպարտութիւն ալ կ'ածելցնէ, թէ գոռ կաղ է երբեմն ժողովրդի ընդ Տաճկի ընկերանալ, և կը հետեւցնէ թէ պէտք է որ տաճկանայ և աղջիկը առնէ, որպեզի կեանքը ազատէ (ՆՈՐ. 285)։ Յովհաննէսի մերժելուն վրայ, ամիրան կը հրամայէ բերդէն վար գլորել, բայց երիտասարդը դէմ կը դնէ, ասոր վրայ բրածնէ կ'ընկնի և ոտք ու ձեռք չղխայի զարնելով կը բանտարկեն։ Գիշերը հրապոյր և սպառնալիք կը չարունակեն, մինչեւ որ Յովհաննէս կը տկարանայ, և կը խոստանայ ամիրային կամքը կատարել։ Առտուն Յովհաննէսը ձի հնծցնելով քաղաքին մէջ փառաւորութեամբ կը պտցնեն, բայց քրիստոնեաներ կը ցաւին և կը սրտմտին, նոյն իսկ իր ծնողքն ալ։ Այդ ցոյցերուն առջեւ Յովհաննէս կը զղջայ անմիջապէս, քահանաները կը դիմէ խոստովանելու և հաղորդուելու, բայց անոնք կը մերժեն խաղ ու կեղծիք նկատելով։ Յովհաննէս լացով ու ողբով իւր անկեղծութիւնը կը վկայէ, և վերջապէս Առաջաւորի բարեկենդանին եկեղեցի երթալով կը խոստանայ հինգ օրերը անառաջ անցնել, որ վերջէն հաղորդուի։ Տաճիկները կ'իմանան, կերակուրի կը հրաւիրեն, կը մերժէ, ամիրային լուր կու տան, որ կը հրամայէ միջոց մը հանդարտ թողուլ մինչեւ որ թլփատուելու ատիպեն։ Այսպէս օրերը կ'անցնին մինչեւ Բուն Բարեկենդանի նախընթաց չարաթ օրը։ Նոյն օրը վերջապէս ղինքը կը ձերբակալեն և առեան հանելու տարած առիւնին բերդէն անդին անցնիլ չուզեր, ուր յայտնած էր ուրացութենան հաւանութիւնը։ Քոբէ և ֆայոէ կը հարուածեն ու կը վիրաւորեն, և դատաւորին լուր կու տան, և քարկոծելու հրամանը առանալով ֆոբէ և ֆայոէ հաբեալ ըբբեցէն ըմծնայն մարմին նոր, և այնպէս կը սպաննեն նոյն տեղը։ Մարմինը կրակի կու տան, և միայն երեք օր ետքը կը ներեն քրիստոնէից ինացորդները թաղել։ Նահատակութեան թուականը պիտի դնենք 1438 փետրուար 22, կոստանդնուպոլսոյ ժողովի տօնին չարաթ օրը, կէս օրուան մօտ, ժամը 6'ին (ՆՈՐ. 298), որ տարին Առաջաւորն ալ կ'իյնար փետրուար 2'ին (ՆՈՐ. 292)։ Իսկ ձեռագիրներուն մէջ տեսնուած 1437 թուականը՝ նշանակուած տօնին չպատասխաներ, և չատ տարօրակաս սխալանք մըն է թուատառերու փոխանակութիւնը ընդօրինակողներուն գրչին ներքեւ։

Տ· ԳՐԻԳՈՐ Թ· ՄՈՒՍԱԲԷԳԵԱՆՑ

1444· Կոստանդին Վահկացի մեռած էր 1439'ին ապրիլէն առաջ (§ 1441), և նոյն տարուոյ նոյեմբեր 7'ին չաթաթ օր, կաֆայի մէջ դրուած յիշատակարան մը՝ Գրիգորը իբր կաթողիկոս կը յիշատակէ (ՓԻՐ· 119), յիշելով նաեւ նոյն քաղաքին կամ Հոնաց աչխարհին եպիսկոպոս Մաղաքիայի անունը, զոր արդէն մենք ալ յիշեցինք (§ 1437)։ Սակէ կը հետեւցնենք, թէ Գրիգոր կրցած էր ամառուան մէջ աթոռը դրաւել, քանի որ լուրը մինչեւ Ղրիմ հասած էր, և փլորենտիայէ դարձող պատգամաւորութիւնը դռնէ կոստանդնուպոլսոյ մէջ լսած պիտի ըլլար, աթոռին պարապութեան վերջացած ըլլալը։ Ուստի երէք պատգամաւորութիւնը բոտ ամենայնի կաթողիկոսական կերպարան ունեցած ըլլար, պէտք էր նախ Սիս, և ոչ թէ կաֆա երթար։ Միւնոյն տմարթիւերու բաղդատութենէն կը հետեւցնենք, թէ չատ երկար տեւած պիտի չըլլան Յովսէփի ուրնձգութիւններու և աթոռի չփոթութիւնները (§ 1442)։ Գրիգորի նախընթացը պատմուած չէ, և ծննդավայրն ալ ծանօթ չէ, և միայն ազգատոհմով կամ յաւելուածով անցած է պատմութեան մէջ (ԴԱՎ· 336)։ Մուսաբէգեանց կոչումին հնար չէ, տոհմական հնչմանը պատճառով տոհմական ծագում ալ տալ, այլ հարկաւ հայազգի Մովսէս իշխան մրն է, որ տիրող պետութեան սովորութեամբ Մուսա Բէգ կոչուած է։ Ակէց կը հետեւի Գրիգոր կաթողիկոսին իշխանազուն մը ըլլալը, և այդ ծագումն ալ իբր զօրանալուն և աթոռը դրաւելուն պատճառն եղած կ'ըլլայ։ Գրիգորի նկարագրին և արժանիքին համար, բնաւ նչանակութիւն չունի կաֆացի Մատաթիա աբեղայէն՝ պետառ Գէյէթէ Բաբեպըլէ և ասոնցմէ էլ Նմանոյն գրուիլը (ՓԻՐ· 119), զի հետեւ հետեւ, հապիւ թէ անունը լսած՝ կաթողիկոսավայել ածականներ կը պատչաճեցնէ կաթողիկոս եղողին։ Մենք գիտենք միւս կողմէն, թէ Կոստանդինի սպանութիւնը, Յովսէփի ոտնձգութիւնը և Գրիգորի յաջողութիւնը, իսկոյն ցնցեցին Արեւելեան վարդապետները, որոնք այլեւս առնեն հասած դատեցին, չատոնց իվեր յղացած միտքերնին գործադրելու, համոզուած ըլլալով թէ այլեւս աւելորդ էր Սոց աթոռին իբր տեղին վրայ բարեկարգութիւնը, թէ անոտի ակնկալութիւն էր կիլիկիոյ հայրապետանոցին վրայ վստահիլը, և թէ այլ եւս պատճառ մրն ալ չկար, որ հայրապետական աթոռը իբր պանդխտութիւնը չարունակէր, որուն միակ արդարացումը ազգային քաղաքական իշխանութեան վաղարչապատէ դուրս ելած ըլլալն էր, և եկեղեցական իշխանութիւնն ալ չարունակակալ տեղափոխութիւններով անոր կը հետեւէր։ Կիլիկիա ոչ միայն քաղաքական տեսակէտով իբր նչանակութիւնը կորուսած, և չրջակայ իշխանութենէն ձեռք խաղալիք դարձած էր, այլ և եկեղեցական տեսութեամբ, անկարգ անկերպարան բան մրն էր եղած, ոչ ուսումն էր մնացած այնտեղ և ոչ օրէնք, վանքեր քայքայուած, վարդապետներ անարգուած, եկեղեցականութիւն ստորնացած, ուր ընդհակառակն Արեւելեան վիճակներու մէջ գնահատելի արժանիք կը ցուցնէին Տաթեւեան աչակերտները՝ Սիւնեցի և վասպուրականցի կրկին ճիւղերով։

1445· Այդ կրկին ճիւղերուն գլուխը կը պատուէին Յովհաննէս Հերմոնեցի Սիւնեցի մէջ, և Թովմաս Մեծոփեցի Վասպուրականի մէջ։ Յովհաննէս է յԱկներցւոյ, է վանէ Հերմանէ կոչուած է, առաջին անգամ յիշատակուած առներ (ՄՆՄ· 50), ուսկից կը հետեւի, ծննդավայր Երզնկացի, իսկ առաջին կրթութիւնը վայրկեանի Հերմոնի վանքէն ըլլալը, յետոյ Տաթեւացիին աչակերտած, և մեռնելէն անմիջապէս կամ քիչ ետքը անոր յաջորդած, ինչպէս գրեցինք (§ 1404)։ Այդ միջոցին, որուն վրայ կը խօսինք, նա էր վերջապէս և առաջին ճանչցուածը (ԿՈՍ· 52), ինչպէս երբեմն կը ճանչցուէր վերջա-

դեպն Գրէգոր Տաթեւացին (ՄԵՆ. 59)։ Ցովհաննէս Կոլոտիկ կամ Գոլոտենց մակդիր առնունով ալ յիշուած է (ԿՈՍ. 78), սակայն ծագումն ու իմաստը պիտի դժուարանանք ճշդել, պէտք եղած բացատրութիւնը առանդուած չգտնելով։ Հերմոնեցիին դիրքը և Տաթեւացիէն ժառանգած հոգին զինքն կը պատրաստէին գլուխ կանգնիլ մեծ և կարեւոր գործին, որուն առաջին դաղափարը կրնանք տանիլ մինչեւ Տաթեւացին, հետեւաբար պէտք է անոր սանք՝ չուրջը գտնուողներուն և բոլոր Հայաստանի նշանաւոր վարդապետներուն հետ խորհրդակցութեանց նախաձեռնութիւնը։ Ինչպէս որ նախապատրաստութիւնները վերջացնելէ ետքը՝ ինքն եղաւ, որ ամէն կողմ հրաւէրներ ցրուեց դալ և հաւաքուիլ Խոշոտ-բերդ Ք-ին և օգոստոս Մեծոփեցին, զոր իբր պատմագիր յաճախ յիշեցինք, և զանազան եղելութեանց մէջ ունեցած մասնակցութիւններն ալ պատմեցինք, ծնած էր Քաջբերունեաց Ազովիա գիւղաքաղաքը, որդի ազնուական Ստեփանոսի, և եղբայր Գորգի մելիքին, այսինքն քաղաքի իշխանին։ Հետզհետէ աչակերտած էր Մեծոփի և Սուխարի և Սալնապատի վանքերուն (ՏԱՇ. 418), որոնցմէ յետոյ փոխադրուեցաւ Տաթեւ 1406'ին (§ 1397), և վերջապէս հաստատուած էր Մեծոփայ մէջ իբրեւ առաջնորդ սոյնքան տարի (ՏԱՇ. 677)։ Տաթեւ երթալէն 35 տարիներ անցած էին, և թովմաս վախճանը անցուցած էր սույգ, բայց երիտասարդական ժրութիւն կը կրէր տակաւին, աթոռին փոխադրութեան ձեռնարկին գործունեայ վարիչը ըլլալու չափ։ Ինչքան է որ կը գրէ թէ Ի ԽՆԴԷՐ ԵԼԱ ԷԼՓԱՆՈՒԹԵՆՆ Ի ԱՌԱՔԵԼՈՒԹԵՆՆ Ի ԿՈՂՔԿՈՏՈՐՈՒԹԵՆՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ ՏԵՂԻՆ (ԿՈՍ. 62), և կը վկայէ իւր նախաձեռնարկ ըլլալուն։ Հետեւապէս պէտք է ընդունիլ թէ գլխաւորապէս այս երկուքն էին Հերմոնեցին և Մեծոփեցին, որ գործին իրականացման համար կը խորհրդակցէին չարունակ։ Հերմոնեցին չուտով կրցած էր իւր գաղափարին յանկուցանել Արեւելեան վարդապետները և եպիսկոպոսները, որոնք արդէն պատրաստ էին վերջ տալ Սոյ՝ աթոռին և վերաթարմնել լուսաւորչականութեան էվմիածինը, և որոնց մէջ աւելի աչքառու ազդեցութիւն կը վայելէին Արտազու կամ Մակուայ եպիսկոպոս Գրիգոր, և Հաւուց-թառայ եպիսկոպոս Զաքարիա։ Աւելի ծանր էր Մեծոփեցիին աշխատութիւնը, որուն մասը չփման մէջ էր Աղթամարի վիճակներուն հետ, որ ինքզինքը Մեծ-Հայոց կաթողիկոս կը ցուցնէր, և Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը իրեն սեփական կը կարծէր։ Աթոռին վրայ կը գտնուէր Զաքարիա, Նահատակ Զաքարիայի և վերջին Դաւիթին եղբօրորդին, որ չիոթութեանց միջոցէ մը ետքը կրցած էր աթոռին տէր դառնալ, և օրինաւոր պաշտօնավարութեան ձեռնարկել (§ 1424)։ Մեծոփեցին յայտողեցաւ Զաքարիան ալ իւր կողմը չգրաւել, և Սիւնեցի ու վասպուրականցի վարդապետներուն գործակից ընել Աղթամարցիներն ալ, անոնց Զաքարիայի աչքին ցոլացնելով, Աղթամարէ էվմիածին անցնելու հնարաւորութիւնը։

ՇԱՐԺՈՒՄԻՆ ՇՈՒՐՋԸ

1446. Շատ չհանգրդիւ պատմութիւն մը ունեցած պիտի ըլլայինք, եթէ ժամանակին կատարուած բանակցութեանց և փոխանակուած տեսութեանց ու թղթակցութեանց վրայ կատարեալ տեղեկութիւններ գտնայինք, ուր տեսնուէին գործին մէջ գլխաւոր դեր վարողներուն դիտաւորութիւնները ու դիտումները, և իրարու հանդէպ մրցակից չարժումները։ Մեծոփեցին թովմաս, որ միակ ժամանակակիցն պատմողն է, երբ մինչեւ իսկ երազներն ու հանդիպումները իբր կարեւոր ինչ գիրի առած է, բոլորովին զանց րուած է գործիչները և գործին հանգամանքները պատչաճ կերպով ներկայել։ Իւր գլխաւոր պատմութիւնն իսկ անարուեստ և ժամանակագրութեամբը չփոթ գրուած մըն է, և ինքն իսկ կը խոստովանի, թէ ծեր էի և չեռ չէռաւ ամաց ակոյ, վասն այսորիկ չեռ և չառաջ երեցի (ՄԵՆ. 44)։ Ոչնչափ եւս առաւել անկեալ ոճ պէտք էր ունենայինն աթոռոյ տեղափոխութեան յիշատակարանին երեք հատուածները, որոնք զանազան ժամանակներ գրուած են, և այն ալ հօթանասնամեայ եղածատենները, երբ աւելի գրուած էր, քան թէ յիսնամեայ եղած ատենը։ Այսու հանդերձ մենք նախընթաց և հետեւորդ եղելութիւնները և մանր ակ-

նարկները նկատի առնելով, պիտի աշխատինք փոքրիշատէ մեկնաբանել գործին և գործիչներուն հոգեբանական հանգամանքները, նախ ալ, քանի որ ազգային եկեղեցւոյ պատմութեան համար, նշանաւոր հանգրուան և կենսական ձեռնարկ մըն է հայրապետական աթոռին Սիսէ Էջմիածին փոխադրութիւնը։ Անտարակոյս է որ մարդկային գործերու մէջ, որչափ ալ բարձր սկզբունքներ և վեհ գաղափարներ անոնց նչանակութիւնը մեծցնեն, անձնական և կողմնակի գրգիռներ չեն դադարիր համընթաց քալել հանրային գործերուն հետ։ Մենք բնական կը սեպնենք որ գոնէ անձնականները հանրականներուն վրայ չտիրապետեն՝ և հանրականներուն էութիւնը չեղծանեն։ Անհնազանդ պիտի ըլլար ըսել, թէ Արեւելեայք բնաւ մտանաւոր և անձնական օգուտ չունէին այդ փոխադրութեան մէջ, որ պիտի զօրացնէր իրենց կողմը և իրենց ձեռքը պիտի անցնէր եկեղեցւոյ ուղղութիւնն ու վարչութիւնը։ Մանաւոր օգուտ մըն ալ կրնային յուսալ գործին գլուխ կանգնողները, Ամէնայն Հայոց բարեկարգեալ աթոռին գահակալն ըլլալով, և այդ ակնկալութիւնը նախապէս կը գրգռէր Զաքարիա Աղթամարցին, և նոյնը ունէին նաև Գրիգոր Արտազեցին, Զաքարիա Հաւուցքառեցին և Յովհաննէս Հերմոնեցին։ Միայն Թովմա Մեծոփեցին այդպիսի մտածումներ չունէր, բայց անոր սիրտին մէջն ալ վասպուրականցիներուն նախապատուութիւն ստանալուն յոյսերը կ'աճէին, թէ՝ Աղթամարի կաթողիկոսը իրեն հետ ունենալովը, և թէ անոր վարդապետներէն և եպիսկոպոսներէն չատերը չհան ըլլալովը։ Այսպէս էր Արեւելեան վարդապետներուն կացութիւնը 1439'ին վերջերէն սկսելով, և մեծ ոգեւորութեամբ ատացած էր Մուսաբէգեանցին կաթողիկոսանալուն լուրը ստուգուելէն ետքը, և կը չարունակէր բովանդակ 1440 տարւոյ ընթացքը։

1447. Երբոր Արեւելեայց մէջ այդ անցուդարձերը կը զօրանային ասդին Կիլիկիոյ մէջ Մուսաբէգեանց բնաւ լուրջ ձեռնարկ մը չէր ըներ, և ոչ ալ մեծ ազդեցութիւն կրնար ատենալ։ Մեծոփեցին յայտնապէս կը գրէ, թէ նոր եթէոլ կաթողիկոսն ալ էր, չէ թէ նորոգեալ եթէոլ ոնէր է վերյ ինէան (ԿՈՍ. 63)։ Այդ նորոգեալ գործերը կ'ակնարկեն այն զեղծումներուն, զորս անգամ մը քաղած ունք (§ 1409), և կրկնել չենք ուզեր։ Կ'երեւի թէ աթոռին մէջ եպիսկոպոսներ ալ չատ չէին, ոչ թէ ձեռնադրելիք չի գտնուելուն համար, այլ մրցակիցներ և ազդեցութիւն վարողներ չչատցնելու համար։ Այս նպատակը կը տեսանք մենք, երբ կը կարդանք թէ ի նոյն ատենի, այսինքն կաթողիկոսութեան տիրանալուն պէս, Մուսաբէգեանց անմիջապէս եօթն նոր եպիսկոպոսներ յեռանդրէ (ԿՈՍ. 63), կամ ուրիշ օրինակներու համեմատ հինգ եպիսկոպոս (ԿՈՍ. 88), որ է սովորական գործած ե և է թուատառերու չփոթութիւնը։ Ատոնք հարկաւ իւր կուսակիցներն են եղած, որ իրեն պաշտպան պիտի հանդիսանային, որովհետեւ ինչպէս չփոթութեանց ատեն սովորական է, հակառակութիւններ ալ կը զօրանային Մուսաբէգեանցի դէմ։ Կիլիկեցի ըլլալ եպիսկոպոս է նեբէյն կոչմանը, որով կրնանք իմանալ թէ մեկալ եպիսկոպոսները, իրենք ալ զգուած աթոռին անկարգութենէն, նամակ ղրկած և դեսպան կը գրեն ամենայն օրհնալի վրդապետաց և եպիսկոպոսաց, և ուղղակի Մեծոփեցիին ոչ գրեն, ողպէս զի ցրուէ և գործէ։ Նամակին մէջ կը գրէին, թէ խոտան և անկեան փոյթ է մեզ ամենայն ազգաց, և նոր կարգադրութեան մը պէտքը զգացնելով, կը յայտարարէին օր առաջ գործի ձեռնարկել։ Այս պարագան կը ցուցնէ թէ փոխադրութեան գործը Կիլիկիոյ եպիսկոպոսական մարմինին հաւանութիւնն ալ ստացած էր, գոնէ մասնակի, և ընդհանուր համաձայնութիւն մը կը տիրէր ազգին զանազան մասերուն մէջ։ Միանգամայն կը հասատատ Մեծոփեցիին ստանձնած գործունեայ դերը, և ամէն կողմ անոր անունին լսուած ըլլալը, որ Կիլիկեցի եպիսկոպոսներն ալ իրեն կը դիմէին և իրեն կը վստահէին, բոլոր Արեւելեաններուն հաղորդել իրենց գիրը, և անոնք գործի յորդորել։ Բարեղէպ առիթ մը Մեծոփեցիին գործը կը դիւրացնէ, զի էջմիածնեցի կրօնաւոր մը կու գայ իրեն այն օրերը, որուն կը յանձնէ

ՄԵԾՈՓԵՑԻՆ ԵՒ ԿԻԼԻԿԵՑԻՔ

ընծան ուղղեն կիլիկեցի եպիսկոպոսներուն և կը յանձնարարէ «ֆեթէլ ասմինեան» (ԿՈՍ. 64)։ Պէտք չէ ենթադրել որ Կիլիկեցի եպիսկոպոսներ Արեւելեաններէն իւրաքանչիւրին զատ զատ գրած ըլլան, այլ Մեծոփեցիին ուղղուած գիրն է, զոր էջմիածնեցի արեղան ծոցը դրած վանքէ վանք և վիճակէ վիճակ չրջելով առնէն մէկուն կարգացնել պիտի տար։ Այս պարագային իրր երէցփոխ պաշտօնակատար է Մեծոփեցին (ԿՈՍ. 63) իբր ձեռնարկին, որով սկսաւ հետաքրքրել էջմիածնի իշխանութիւն (ԿՈՍ. 63), այսինքն է հայրապետական աթոռոյ էջմիածնի մէջ վերահաստատուիլ։ Իրօք ալ մեծ ոյժ մըն էր այդ նամակը։ Եղելութիւնը տեղի ունեցած է 1440 տարւոյ սկիզբները, զի 1441'ին սկիզբները Հերմոնեցիին եկած ժողովին հրաւէրին համար, չեմ դիտեր ի՞նչ եկն պատահեր կ'ըսէ (ՄԵՍ. 65), որով կիլիկեցւոց նամակին ազդեցութիւն ունեցած ըլլալն ալ կը յայտնուի։ Մեծոփեցիին գործի մղուելուն պատճառներուն մէջ երազներ և պատահարներ ալ կան, որոնց մէջ նշանաւոր է Սահմանոց Աղթամարցի արեղային խօսքը, վասն ի՞նչ ես այնքան յաղթեալ ես հնազանդութեան Զաքարիա կաթողիկոսին (ԿՈՍ. 66), որով կը չեչտուի վատզուրականոյց միտքը, Զաքարիա Աղթամարցին էջմիածին տանելով Ամենայն Հայոց կաթողիկոս հռչակել։

ՄՈՒՍԱԲԷԳԵԱՆՑ ՈՒ ՊԱՊԸ

1448. Աղթամարի նկատմամբ կազմուած այդ կարծիքը այնչափ տարածում ստացած էր, որ փոխադրութիւն մէջ դէմ դէմ եղող երկու կողմերէն, անոնք որ նպաստաւոր էին՝ Աղթամարեան կը կոչուէին նմանաձայնութեամբ բառախաղ կազմելով Աղթամարեան անունին հետ, որով կը կոչուէին կիլիկեցիք, որ փոխադրութեան մասին աննպաստ կարծիք ունէին։ Երբոր Մուսաբէգեանցի ալ աղթամարեական խմբէ վարակուած ըլլալուն իրր նոյն կրնանք նկատել, 1440'ին իր կողմէն Եզրիկոս Դ'ի գրուած նամակը, զոր տարած է Ալեքսդոս անուն Լատին կրօնաւոր մը։ Չենք ուզեր խնդիր յուզել, թէ ուղղակի Միսէ գրկուած գիր մըն է՞ր այն, թէ ոչ կաֆայէ գրուած նամակ, իբր պատասխան Եզրիկոսի յանձնած նամակին։ Սակայն ընդունելով ալ թէ Գրիգորէ գրուած ըլլայ, դժուար է ճշդել, թէ ինչ ըսել կ'ուզէ երբոր կը գրէ, քաջիւթեան քաքաա ընդոց տոց, որ ճաաւթայնէ էքէ զբեթէն և զաաթեզ, կամ էքէթ զչինչ եւլէն, և էքէթ զոկի ընակթէն (ԱԶԱ. 104)։ Եզրիկոսի նամակը կոստանդնի էր ուղղուած (1440), ուստի պէտք էր որ անոր մահէն ետքը Գրիգոր զգացնէր իր յաջորդելը և պատասխանելը։ Դիտելու կէտ մըն է նաեւ որ այդ նամակին մէջ հրանդ կոնդակին վրայ (§ 1439) ամենեւին ակնարկ չըլլար։ Եթէ այս լռութիւնը կամաւոր է, մեղմելու ձեւ մը կ'առնէ, իսկ եթէ պատահական է, հրանդին Սիս գրկուած չըլլալը կը ցուցնէ, և կաֆայի մէջ պահուած կ'ըլլայ, և դիտողութեան արժանի կարեւոր պարագայ կը դառնայ։ Սոյն կէտերը նկատի առնուած ատեն, Ալբերդոսի տարած նամակը նշանակութիւնը կը կորսնցնէ, և պարզապէս քաղաքավարութեան կամ ակնակալութեան նամակ մը կը դառնայ, որուն կարեւորութիւն ալ տալ պէտք չըլլար։ Ընդհակառակն յօդուածագիր մը այնչափ մեծ նշանակութիւն կ'ուզէ տալ Փլորենտիոյ ժողովին և Եզրիկոսի կոնդակին, որ կը յայտարարէ թէ Քոն Հայոցմէն վերջապէսները փեռնելով Կոստանդին կաթողիկոսն է Գոլիւն գլխաւոր աթոռի փոխադրութիւնը կատարեցին (11. ԱՄՍ. 466)։ Սակայն այդ դիտողութիւնը, դիտողին նպատակին հակառակը կ'ապացուցանէ, և Կոստանդինին ըրածը՝ անհատական գործ եղած ըլլալը կը հաստատէ, որով կը յայտնուի թէ Հայ եկեղեցւոյն ընդհանրութիւնը անոր գրածը չընդունեցաւ և մնջժից։ Իսկ մենք դիտել կու տանք, որ Մեծոփեցին՝ Սսոյ վրայ բարդած 12 մեղադրութիւններուն մէջ, առջինն մանր պարագաներու իջնալով մէկտեղ, Կոստանդինի միութիւնն կամ Եզրիկոսի կոնդակին գոյութիւնն իսկ կ'անգիտանայ։ Ասկից կրնանք հետեւցնել թէ միութիւն կամ կոնդակ՝ բնաւ մտադրութեան չեն առնուած, կամ այն է որ Արեւելեաններ անզեկութիւն իսկ չեն ունեցած, և կամ կարեւորութենէ զուրկ են դատած, և հիմնուած են այն կէտին վրայ, թէ կիլիկեցւոց մէջ ճաշեալ էր խոր

պլնարմայոնեան Կոստանդիոյ կեսարացւոյ և Գրէգորի Աստուածաբանի (ԿՈՍ. 55), և ոչ թէ նոր զարկ մը ստացած էր Կոստանդին վահանակցիի և Գրիգոր Յովհաննէսեանի ձեռքով։ Արեւելեայք յայտնապէս նկատի կ'առնեն ինչ որ ծագեալ էր ու հին էր, և ոչ թէ բան մը որ նոր գործուած ըլլայ։

ԱՋԻՆ ԱՆՑԱՑՏԱՑՈՒԻՍԸ

1449. *Երբ աթոռոյ փոխադրութեան խորհուրդը տակաւ դէպի լուծումը կը յառաջէր, և ամէն տեսակ պարագայ, պատահար ու հրազ այդ նպատակին վրայ կը մեկնուէր, ամէնէն աւելի նշանակութիւն կը ստանար Լուսաւորչի Աջին Սիսի հայրապետանոցէն անհետանալ կամ գողցուիլը։ Մեզի զարմանալի կը թուի, որ Մեծոփեցին ակնարկ իսկ չունի այդ անհետացման վրայ, այնչափ որ թերևս Մեծոփեցիին կրթնելով անհետացումը ուրանայինք, եթէ բազմաթիւ ժամանակակից յիշատակարաններ զայն չհաստատէին։ Անհետացման թուականն ալ բացատրութեանց կը կարօտի, զի մինչ նորեր ինչ ինչ յիշատակարաններ 1441'ին կը դնեն անհետացումը (ՁԱՄ. Գ. 486), անդին ուրիշ յիշատակարան մը, 1439'ին գրուած, որուչակի կը հաստատէ թէ յայտ ածի վերցեալ եղեալ Աջն է Սրբ, և զէ ինչ էին զինչ եղեալ (ՓԻՐ. 119)։ Եթէ թուականին գրութեան կամ ընդօրինակութեան մէջ սխալանք սպրդած չէ, Աջին անյայտացումը Գրիգորի կաթողիկոսութենէն առաջ եղած կը հանդիպի՝ և Գրիգոր առանց Աջի կաթողիկոս եղած կ'ըլլայ։ Մենք կը դժուարանանք այդ ենթադրութիւնը ընդունիլ, զի այդ առիթին Գրիգորի կաթողիկոսութիւնն իսկ անընդունելութեան հանդիպած կ'ըլլար, և Մեծոփեցին ալ առանց դիտողութեան պիտի չէր կրնար ըսել (ԿՈՍ. 63)։ Ջամչեան ալ Մուսաբէգեանցին առանց հաստատելու երեւելի սրբընդրացք և զնոցա նոթել ըլլալը միայն կը յիշէ (ՁԱՄ. Գ. 486), մինչ Գրիգորի նախորդներն ալ նոյն կերպով նստած էին։ Ուստի 1439'ին անյայտացումը իրրեւ անհաւանական մէկդի թողլով, կը նախադասենք ուրիշ յիշատակագիրի մը ըսածը, որ այսպէս կը գրէ 1441'ին. Յայտ ածի զԱՂ. զաջն Տեառն յայնմ պահուն հասին հանդիպեցաւ Հայոց ազգիս, զանգի Աջ սրբոյն Լուսաւորչին ձերոյ, որ կայր հին զանի ժամանակի ի Սիս զեղեալ, անյայտ եղեալ, զի ջինքն ընկեցան, և զի ջինքն թէ ինչն զինչն ծածկեցաւ, և ի մեծ նեղութեան կան և ի պրպտութեան Հայոց ազգս վասն այս պատճառի, և զկնի ինգեկնոց Գրիգոր քաղաք ընդունեցաւ և այլ եպիսկոպոսք ընդ նմա վասն Աջին Լուսաւորչին ձերոյ ի չեան ընդրելոյ և արքայ առն ձոյ, և վրայ կը բերէ Խաչափայտին, Լուսաւորչի նշխարաց, Վարագայ խաչին, և Սուքիասանց ոսկրներուն գիւտերը (ՓԻՐ. 125)։ Ծիչատակարանը գրուած է 1441 մարտ 15'ին, և հարկաւ բաւական ատեն անցած էր, մինչեւ որ հեռաւոր յիշատակագիրը գոյժը իմանար, հետեւաբար յարմարագոյն կու գայ 1440'ին վերջին ամիսներուն դնել անյայտացումը։ Իսկ անյայտացումը պէտք է վերագրել այն կիլիկեցի եպիսկոպոսներուն, որոնք Արեւելեաններէն փոխադրութեան կը քաջալերէին իրենց նամակով (§ 1447), և այդ նպատակով Մեծոփեցիին կը դիմէին։ Անոնցմէ փոխադարձ համամտութեամբ կազմած են այդ հնարքը, փոխադրութեան գործը դիւրացնելու համար, որով Մուսաբէգեանցը և իր համախոհ եպիսկոպոսները նեղի դնելնին, հաշիւով եղած գործ մը կը տեսնուի, ճշմարտութիւնը ծածկելու համար։ Նոյնիսկ Մեծոփեցիին խոր լռութիւնը Աջին անյայտացման մասին, կշռուած լռութիւն մը կ'ըլլայ։ Գողութեան խորհրդակից և գործակից եղած ըլլալով, նա չէր կրնար ո՛չ ճշմարիտը խոստովանիլ, և ոչ անգիտակի պէս կեղծել, և յարմարագոյն սեպած կ'ըլլայ լռելը։ Լուսաւորչի Աջին Հռոմկլայի առումէն և եգիպտացիներէն գրաւուելէն ետքը, նորէն ետ առնուած, և Սիսի մէջ պահուած ըլլալը, իր կարգին գրած ենք (§ 1198), և կրկին այդ կէտին վրայ չենք անդրադառնար։

ԺՈՂՈՎԷՆ ԱՌԱՋ

1450. *Այս նախապատրաստութիւններով՝ Արեւելեայք հետզհետէ փոխադրութեան գործին յաջողութիւնը կ'ապահովէին, ջանալով միւս կողմէն կողմնակիցներու թիւը ընդարձակել, և հայաբնակութեանց ամէն կողմերէն համամիտներ ունենալ, որովհետեւ*

տես թէ յաջողութեան հիմ և թէ օրինաւորութեան փաստ՝ պէտք էր ըլլար գործին հակառակութեան չհանդիպիլը, և ընդհանուր համակամութեամբ և հաւանութեամբ ընդունելի։ Ամբողջ 1440 տարին այդ նախապատրաստութիւններով, հնարագիտութիւններով և թղթակցութիւններով անցաւ, և 1441'ի սկիզբները Յովհաննէս Հերմոնեցին, իբրեւ ամէնէն աւելի հեղինակաւոր անձնաւորութիւն, և Տաթեւեան աչակերտութեան պ'ոտ, և Եռամեծ Տաթեւացիին յաջորդ, ամէն կողմեր չրջաբերական հրաւիրագիրներ ղրկեց, ֆօրնանէլէ և ոռանց յապոլանաց եալ եպիսկոպոսք և վերջապէս ի Երուսաղէմ բոլոր և օգոստոս, ղէ մ ի յապոլէն ոռանց խոփանոսն ածէ ֆրթոյն։ Ժամադրութեան տեղը որոշուած էր Զատիկէն ետքը, իսկ օրուան որոշում չենք գտներ, ի հարկէ պիտի նայէին որ բաւական թուով ժողովականներ հաւաքուած ըլլան։ Ժողովատեղի որոշուած էր նոյն իսկ էջմիածինը, ուր պիտի վերահաստատուէր հայրապետական աթոռը։ Էջմիածինը երեւանի ամիրայ Եաղուպ պէկի իշխանութեան ներքեւ էր (§ 1429). ուստի Հերմոնեցին հոգաց անոր հետ ալ բանակցիլ, և անկէ ապահովութեան գիր ստացաւ, ֆալ վղվղալէ և հաւաքուիլ էջմիածնի մէջ, և ոռանց ահ և էյնէալ կոփոբել ղինդէր։ Մեծուհեցին կիւրոսի կը բաղդատէ Եաղուպը, որ Հայոց ջնջուած անց առնել աթոռը կոչեցաւ նորոգել, ինչպէս կիւրոս նորֆէոց վերոաղէմ (ԿՈՍ. 65)։ Հերմոնեցիին հրաւէրը որչափ ալ ֆօրնանէլէ և ոռանց յապոլանաց գալու համան էր, սակայն բաւական կանուխէն ղրրկուած պիտի ըլլայ. վասնզի Մեծուհեցին հրաւէրը առնելէն ետքը, Մեծուհի Արճէշ կոչած, Արճէշի մէջ ուղևկիցներու պզտիկ կարաւան մը կազմած, և Արճէշէ մեկնելով հետզհետէ հանդիպած է Դարօնք կամ Պայբուրթ քաղաքը, Ակռռի աւանը՝ Մասիսի կողը, Արտաչատու Յորվիրապը, և Այրիվանքի Ս. Գեղարդը, անկէ անցած է Տաթեւ ուր վերջապէս Հերմոնեցիին մօտ, և անկէ եկած է Երեւան, որ ժամադրավայրն էր զանազան կողմէ հանդուղներուն (ԿՈՍ. 68)։ Ուրիշ եկողներուն մասին ալ պէտք է նկատի առնել տեղերնուն հեռաւորութիւնը և ուղեւորութեանց դժուարութիւնները, և հետեւցնել թէ գոնէ երկու ամիս առաջ հրաւիրագիրները ղրկուած են, որով 1441 Աստուածայայտնութեան տօնէն առաջ հրաւէրները յղուած կրնանք ըսել։

ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՐԴԱՐԱՑՈՒՄԸ

1451. Գործին արտաքին հանգամանքները պատմած առնիս, անոր ներքին կողմերն ալ տարկ կ'ըլլայ աչքէ չվրիպեցնել, թէ ինչ իրաւունքով և ինչ օրինաւորութեամբ պիտի կատարուէր աթոռին տեղափոխութիւնը։ Նախևառաջ ըսենք թէ Սիս կաթողիկոսութեան սկզբնական և օրինական աթոռը չէր, այլ զանազան օթարանները էն մէկն ալ այն էր, բնաւ տարբերութիւն չունենալով Դուինէ, Աղթամարէ, Արծրունեայէ, Անիէ և Հռոմկլայէ, ուր հետզհետէ աթոռը փոխադրուած էր պարագայից յարմարութեամբ, այնպէս որ երէկ տեղափոխութիւնը ներելու չէր, բոլոր յիշեալ տեղերը նստող կաթողիկոսները հակաթոռներ պիտի նկատուէին։ Հետեւաբար այդ վերջին տեղափոխութիւնն ալ պէտք չէ որեւէ դիտողութեան նիւթ ընել, և չենք իմանար թէ ինչպէս ենթրեմ Ալպասանեան կրնայ պնդել, թէ հայրապետական շուռէլ սա է օրէնք Գրիգորէ Լուսաւորչէն սկսեալ, ասոց է ֆերֆահէն կէլէկէյ (ԱՋԱ. 52)։ Մանաւանդ որ երէկ առաջին տեղափոխութիւնները հայրապետական աթոռը նախնական և նուիրական տեղէն կը հեռացնէին, վերջին տեղափոխութիւնը զայն պատանական և օտարական թափառումներէ ազատելով իր նախնական և նուիրական տեղը կը դարձնէր։ Նկատողութեան արժանի է նաեւ, որ թափառումներուն միակ արդարացուցիչ փաստը, քաղաքական իշխանութեան կեդրոններուն տեղափոխութիւնն էր, երբ հետզհետէ մարզպաններ Դուինի, Արծրունիներ Աղթամարի, Բագրատունիներ Անիի, Պահլաւունիներ Հռոմկլայի, և Լուսինեանները Սիս կը տանէին իրենց իշխանական կեդրոնը։ Այլ երբ քաղաքական իշխանութիւնը իսպառ կը չնջուէր ազգին մէջէն, և Հայաստանի տիրող պետութիւնը ոչ Եգիպտականն էր և ոչ կիլիկեանը, այլեւս ոչ մի արդարացուցիչ պատճառ չէր մնար, որ պանդխտութիւնը չարունակէր, և հայրա-

պետական աթոռը իւր նախնական և նուիրական սրբավայրէն դուրս թափառէր։ Քաղաքական անկումը՝ եկեղեցական անկումին ալ առաջ բերած էր հայրապետութեան վրայ, որ իւր չուքն ու փառքը կորուսած, ափ մը բաղդախնդիր եկեղեցականներու ձեռք մնացած, ազգային մարմնոյն հակողութենէն հեռացած, ուղղութիւն և աւանդութիւն մոռցած, եկեղեցւոյ չարն ու սրբութիւնը մէկ կողմ թողած, լոկ անձնական և արկածալից գործերու կը հետեւէր, աւելի ճիշդն ըսելու համար՝ կաթողիկոսական աթոռը իւր ազդեցութիւնը կորուսած, յերան մը անկիւնը ինքզինք գլուխ լքուսած, անուն մըն էր եղած այլեւս առանց իրական իշխանութեան և գործնական օգտակարութեան։ Այդ կացութեան ինկած էր Սիսը, և հնար չէր որ իբր եկեղեցւոյ գերագոյն հայրապետին աթոռանիստը մնայր, մանաւանդ որ բաւական տունէ իվեր ձեռնարկուած միջոցները, Գրիգոր Տաթեւացիի ճիգերը, Պօղոս Գառնեցիի աշխատութիւնները, և հանրային զգացումին պահանջները, արդիւնք մը չէին ունեցած վիճակը փոփոխելու, բարեկարգութիւնը վերականգնելու, և արժանաւոր և օրինաւոր կացութիւն մը վերաթարմացնելու։ Սոյն աթոռանիստը իւր յետին ստորնութեան հասած էր, ամէնէն անկեալ խիղճերն ալ յուզելու, և նոյնիսկ Սոյ եպիսկոպոսներն ալ զզուեցնելու չափ (§ 1447), որուն չէր կրնար երբեք յարմարիլ էջմիածնի կչուտը (ԱՋԱ. 52)։

ՀԱՄԸՆԹԱՑ ՊԱՐԱԳԱՆԵՐ

1452. Աթոռի տնօրինութեան ոչ թէ լոկ արդարացնել, այլեւ պահանջել գործ մը եղած բլլալը ընդունելով մէկտեղ, կրնայ դիտուիլ թէ ուրիշ տնօրինութիւններ կատարելու պաշտօնի վրայ եղող կաթողիկոսներ, մինչ այս անգամ նոյն կաթողիկոսը չէր, որ Սիսէ էջմիածին կը փոխադրուէր, այլ նոր կաթողիկոս մը կ'ընտրուէր էջմիածնի մէջ։ Զամչեան, այդ կէտը պարզելու համար կը յիշէ նախապէս, թէ Մուսաբէգեանցի ընտրութիւնը կատարուած էր առանց հաւանութեան էթէնէի աջոյ և աթոռոց, որով բանը կ'ուզէ թէ օրինաւորապէս ընտրեալ կաթողիկոս չէր, և թէ ազգը իրաւունք ունէր զայն չընդունիլ և չճանչնալ, և նոր ընտրութիւն կատարել։ Իրօք ալ պատմուած պարագաներն ալ կը վկայեն, թէ նախորդին սպանութեամբ, և հետեւանդոդի մը դէմ մրցելով յաջողած էր Մովսէս իշխանի որդին Գրիգոր՝ հայրապետական աթոռին տիրանալ (§ 1441), և ինչպէս Յովսէփը (§ 1442), նոյնպէս Գրիգորն ալ հնար էր կաթողիկոսներու չարքին մէջ չառնել։ Ուրիշ պարագայ մըն ալ ունինք նմանատիպ Զամչեանէ յառաջ բերուած, անչուշտ աղբիւրէ մը քաղելով, թէ Արեւելեայք էջեցին ա՛ Դէյէր Մաաբէգեանց և հրաժարեցին է՛լ չկ'ընդունին, և թէ սա վճռա՛ յանձն է՛լ անդր (ՁԱՒՐ. Գ. 486)։ Ակէ՛ ալ կը հետեւի, որ Մուսաբէգեանց երթալ չուզելով, հրաժարեալ նկատուեցաւ, և թէ ոչ յայտնապէս, գոնէ լռելեայն նոր ընտրութեան հաւանեցաւ, կամ թէ իբր ըմբոստ դատուեցաւ, և գահընկէց հռչակուեցաւ։ Զամչեանի յառաջ բերած պարագաները նկատի չառնելով ալ, մենք պիտի յայտարարենք թէ Հայաստանեայց եկեղեցւոյ սկզբունքով՝ ոչ աթոռը, և ոչ եկեղեցին, որեւէ աթոռակալի կամ հայրապետի տիրապետական կամքին չեն յանձնուիր։ Հայոց եկեղեցին, իւր կաթողիկոսներն ալ ազգային ընդհանուր ժողովին ենթարկեալ գիտէ, և ժողովով գատուելնին ու գահընկէց բլլալնին կ'ընդունի։ Պատմութիւնը մեզի ցուցուց թէ՛ գատուած և արդարացած, և թէ՛ գատուած ու գատապարտուած, և թէ՛ ժողովով գահընկէց հռչակուած կաթողիկոսներ, որ այդ սկզբունքին գործնական ցուցմունքներն են։ Ըստ այմ, եթէ Մուսաբէգեանցի ընտրութիւնն օրինաւոր համարուի կամ ոչ, կամ եթէ Մուսաբէգեանց էջմիածին երթալու հրաւիրուած բլլայ կամ ոչ, երբոր համակամ և համաձայն ազգային ժողով մը դադարած կը հռչակէ Մուսաբէգեանցի կաթողիկոսութիւնը, և աթոռը դադարած ճանչնալով, նոր կաթողիկոս կ'ընտրէ, այլ եւս խնդրոյ տեղի չկրնար ըլլալ գործին կանոնաւորութեան, և նոր ընտրեալին օրինաւորութեան վրայ։ Երբոր Պիսայի և Կոստանդիոյ ժողովները, պաշտօնի վրայ գտնուողները մերժելով Աղեքսանդր Ե

կամ Մարտինոս Ե պապերը ընտրեցին (§ 1431), և երկուքն ալ իբրեւ օրինաւոր պապեր ընդունուեցան Հռոմէականներէն, չենք իմանար թէ ինչպէս Հայ հռոմէականներ կը յաւակնին հակառակ մը ցուցնել վաղարշապատի ազգային ժողովէն ընտրուած կաթողիկոսը (ՐՍՏ· 248), որպէսզի օրինաւոր կաթողիկոսութիւն սեփականին կիլիկիոյ աթոռին, և Կիլիկիոյ անունով արդարացնին դարեր վերջ ստեղծուած Հայ կաթոլիկ կաթողիկոսութիւնը։ Հակաթոռութեան վճիռը ոչ թէ աթոռակալ մը կու տայ իրեն մրցակիցին դէմ, այլ հանրութիւնը, այսինքն ազգն ու եկեղեցին, մէկուն դիրքը պաշտպանելով և զօրացնելով, և միւսին ներքին ու արտաքին ճանաչումը զլանալով, մին օրինաւոր ու միւսը ապօրէն, մին աթոռակալ ու միւսը հակաթոռ կը վճռէ։ Վաղարշապատի ժողովը ազգին հանրութեան օրինաւոր ներկայացուցիչն էր, իր որոշումը վաւերական եղաւ օրէնքով և կանոնով, հաստատուն եղաւ գործով և արդիւնքով։

ԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՆԵՐԸ

1453· Վաղարշապատի 1441 տարւոյ ժողովին ընդհանուր ազգային ժողով ըլլալուն կը վկայեն անոր կազմութիւնը, և ներկաներուն թիւը։ Մեծոփեցին ասելէ տան վերջը հոգեւոր անձինս կը հաշուէ ներկայ եկեղեցականաց թիւը (ԿՈՍ· 53), և այս բաւական է, առանց պէտք ունենալու յիշատակարանի մը համեմատ հօծին հարիւրի բարձրացնելու ներկայից թիւը (ՓԻՐ· 133)։ Ժողովի եկողներուն ամէնքն ալ ձայնի տէր անձինք էին, զի երեսունէ աւելի ականաւոր և անունով յիշուած ներկաներէն, և քսանէ աւելի գրաւոր մասնակցողներէն զատ՝ կային այլեւս վանահայրներ, վարդապետներ և աւագ երէցներ, որոնք միշտ ժողովներու մէջ ընդունուած էին, ինչպէս Սոյ (ԿԱԼ· 460) և Առանայի (ԿԱԼ· 565) ժողովներու մէջ ալ ներկայ էին։ Աչխարհական ներկայացուցչութիւնն ալ պատրաստ էր, և այս դիտմամբ կը յիշուին ազատ և ոչխար ազատաց, Յեռանասդ և փանոպերք (ԿՈՍ· 53), որոնք քաղաքական կարգերու իրանգարուելէն ետքը, նախարարներու ու սեպուհներու ու իշխանները տեղը կը բռնէին, և դարուն սովորութեան համեմատ աչխարհիկ դասակարգը կը ներկայացնէին։ Անունով յիշուած եպիսկոպոսներն ու վարդապետները կը քաղենք Մեծոփեցիէ (ԿՈՍ· 51—53)։ Նախապէս յիշենք չորս աթոռները, որոնք հին կանոնով կաթողիկոսընտիր ճանչցուած էին, իբրեւ զանազան բաժիններու ներկայացուցիչներ (§ 930)։ Ըստ այսմ կը տեսնենք որ վաղարշապատի ժողովին ներկայ էին Գրիգոր Արտազի, Գրիգոր Հաղբատի, Շմաւոն Տաթեւի և Յովհաննէս Բջնոյ եպիսկոպոսները։ Սիւնեցիներու և հիւսիսային գաւառներու կողմէն հոն էին Յովհաննէս Հերմոնեցի մեծ վարդապետը, Զաքարիա Հաւուցթառայ և Ստեփանոս Սիւնեաց արքեպիսկոպոսները, և անոնց հետ Զաքարիա Նորավանքի ու Մարտիրոս Սեւորդեաց եպիսկոպոսները, և Դաւիթ Սիւնեցի ու Ստեփանոս Սիւնեցի վարդապետները՝ Հերմոնեցիին ձեռնասուններ։ Հիւսիսայիններուն հետ յիշենք ևս Ազարիա Գանձասարի կամ Աղուանից եպիսկոպոսը, որ յատուկ վիճակ մը կը ներկայացնէր։ Այրարատի կամ Միջնաչխարհի վիճակներէն հոն էին Գաբրիէլ Էջմիածինի, կարապետ Յովհաննավանքի, Անտոն Խորվիրապի, Յակոբ Կողբի, Մկրտիչ Բագրեւանդի եպիսկոպոսները, և Սարգիս Զագամանեցի և Տիրացու Վանանդեցի վարդապետները։ Վասպուրականցիներն ալ բաւական թուով եկած էին, գլուխին ունենալով Յովհաննէս Արճէշի եպիսկոպոսը և Թովմաս Մեծոփեցի հռետորն գործիչը։ Անոնց հետ էին Կիրակոս Ոչտունցի, Մկրտիչ Մեծոփեցի, կարապետ Խառաբաստեցի, Յովսէփ Սուխարեցի, Ղազար Բաղիչեցի, Ստեփանոս Արծկեցի, Յովհաննէս Արծկեցի, Զաքարիա Վարագեցի, և Յովհաննէս Վարագեցի վարդապետները, որոնց վրայ ուրիշ յիշատակարան մը կ'աւելցնէ Սարգիս Արծկեցի և Յովհաննէս Խաթեցի վարդապետները (ՁԱՄ· Գ· 487)։ Դարձեալ մի այլ յիշատակարանի մէջ ալ կը գտնենք կարապետ Մեծոփեցի, Մկրտիչ Հողեցի, և Մկրտիչ Ողբևկենց վարդապետները (ՓԻՐ· 122), որոնց վերջին երկուքը ուրիշ տեղ Հողձեցի և Օղուլբէգեան անունով յիշուածներն են

(§ 1380)։ Ամենապատի կիրակոս անունը կրկին յիշուած է թէ ներկանեռւ և թէ բացականեռւ մէջ, և հաւանաբար եպիսկոպոս մըն է ներկայն, և համանուն վարդապետ մըն է թղթով մատնակցողը։

ԳԻՐՈՎ ՀԱՒԱՆՈՂՆԵՐ

1454. Հեռաւորութեան պատճառով, կամ թէ քաղաքական արգելքով, չատեր անձամբ ներկայ չկրնալով բլլալ ընդունիլ դէպանեալ են վաղարշապատի ժողովին, և ասոնց գլխաւոր խումբը կը կազմեն Տարոնցի վարդապետները։ Գլակայ Ս. Կարապետի եբեհոլչ վանքէն, Յովսէփ և Աւետիս եպիսկոպոսներ, և Թորոս, Բարսեղ ու Գրիգոր վարդապետներ, Տիրինկատարի Ս. Աստուածածնի վանքէն Պօղոս և Զաքարիա վարդապետներ, Աստունի Մատին Աստուածածնի վանքէն Յովհաննէս վարդապետ, Վանատուրի վանքէն կիրակոս վարդապետ, և Բաղէշի վանքերէն Դաւիթ եպիսկոպոս և Սահակ ու Ստեփանոս վարդապետներ։ Բացականեռւն երկրորդ խումբն ալ, որոնք ընդունել դէպանեալ են, Աղթամարցիներն են, որոնց գլուխը կը յիշուին Աւետիս վարդապետ Սուրբխաչեցի, և Յովհաննէս վարդապետ Ապարանեցի, Հիզանու և Ապարանից վանքերու առաջնորդներ, Գամաղիէլի վանքէն Յովհաննէս և միւս Յովհաննէս, Բարեձորոյ վանքէն դարձեալ Յովհաննէս և Հիզանի վանքէն կարապետ վարդապետներ։ Աղթամարցի վարդապետներուն մասնակցութիւնը կը հաստատէ Զաքարիա կաթողիկոսին համաձայնութիւնը վաղարշապատի ժողովին դարձին հետ, թէպետեւ անձամբ ներկայ բլլալ չէ ուզած, և յատուկ խուղք գրկին ալ չէ յիշուած։ Այս անուններու մէջ երեւսաղէմի պատրիարքութեան կողմէն պատգամաւորի մը անունը չենք գտներ, բայց զարմանալու չէ, զի երեւսաղէմ իւր առանձնացեալ դիրքին մէջ և չարունակ ազգային հաստատուն թեանց պաշտպանութեան զբաղած, դիւրութիւն չունէր ընդհանուր գործերով զբաղելու, բաւական սեպելով հանրութեան ճանչցած կաթողիկոսէն ձեռնադրութիւն ստանալ, և ինքնուրոյն կերպով իւր գործերը վարել։ Իսկ կիլիկիոյ աթոռին և կիլիկեան վիճակներու համար բաւական նշանակալից են չորս եպիսկոպոսներուն նամակն ու դիմումը (§ 1447), և Մուսաբէգեանցի ընթացքին մասին յայտնուած կարծիքները (§ 1452)։ Բայց ամէնէն աւելի մեր տեսութիւնը հաստատող պարագայն, Սսոյ աթոռին պահած լռութիւնն է հրապարակաւ կատարուած և իրեն վերաբերեալ գործի մը հանդէպ, մանաւանդ որ կողմէն ոչ մի բողոքի և ոչ մի հակառակութեան յիշատակութիւն չկայ վաղարշապատի ժողովին ըրածին դէմ։ Ըստ այսմ ամէն տեսութիւններ և հանգամանքներ կու գան ապացուցանել, թէ վաղարշապատի ժողովը ընդհանուր ազգին և ընդհանուր եկեղեցականութեան համակամ և համահաճ համաձայնութեամբ գործեց առանց բացառութեան, և օրինաւոր ու վաւերական ժողով եղաւ, և եկեղեցական կանոններու և ազգային իրաւունքներու հիմամբ կատարուեցաւ հայրապետական աթոռին Սիսէ էջմիածին փոխադրութիւը, ուրկէ հետացած էր 484'ին Մանդակունիին օրով, և հաստատուած էր Դուինի՝ էջմիածինէ ոչ չատ հետու (§ 321), և անկէ ալ կրկին հետացած 928'ին Դրասխանակերտցիի օրով (§ 732), և վերջապէս իւր նախնական և նուիրական սրբավայրը կը դառնար 957 տարի աստանդական թափառիկ ետքը։

ԳՈՒՇԱԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ

1455. Որչափ ալ ներքին կերպով գործին բնութեան հետ կապուած չբլլան, սակայն աւելորդ չենք սեպեր յառաջ բերել ինչ ինչ պատահարներ, որոնք նոյն ժամանակի գործիչներուն բմբռնումով գործին օրինաւորութիւնն ու յաջողութիւնը երաշխաւորած են։ Որովհետեւ նոյն իսկ այս տեսակ դիւրահաւան և աւելորդապաչտ բմբռնումներով եբեւան կու գայ, թէ եղած գործը ոչ մի դժուարութեան հանդիպած չէ, և ամենայն ինչ դիւրաւոր կերպով և ընդհանուր հաւանութեամբ կատարուած է, այնպէս որ Մեծոփեցին համարձակ կը գրէ, թէ «Ժողովեան դէպանեալ ընդ Սրբոյ, պեալեմբ բէղբոյ, և յանօրէն երեցոյ, հաւանեալ ամենայն Հայկազեան բաւոյ, աղքեր և բարեխօսեալ ամենայն սրբոց, սկան ու լրացուցին առաջադրեալ գործը

(ԿՈՍ. 53)։ Մեծոփեցին Մեծոփայ վանքէն չմեկնած երիք անգամ աւետարանի վրայ վիճակ կը բանայ, և հետզհետէ կը գտնէ. Դոչյաս Ցխաս է ֆասաս էր (ՄԱՐ. Զ. 1), Քալէլբեցաբաւ չէ ես յաղնեցէ ազխարհն (ՅՈՀ. ԺԶ. 33), և դարձեալ Դոչյաս Ցխաս է ֆասաս էր։ Մեծոփէ մեկնած աւետարանին բարեպաշտ մարդ մը կու գայ պատմել, որ գիշերը տեսեր է Կոմրով, կանալով և ապիոկով օգտաշինել զօրքեր՝ որոնք ըսեր են թէ ղըր էջդեցին ես, և օդէն թռչելով գացեր են Վաղարշապատ (ԿՈՍ. 97)։ Ցիչուած երիք գոմերը Հայկական եաֆոյէ կազմած ըլլալու նչանակութիւնն ունին։ Կրօնաւոր մը երազ տեսեր է թէ արեւը խաւարելով արեւմուտք և հիւսիս կը պատի, և էջմիածնի դուռը գալով կը լուսաւորուի։ Ուրիշ կրօնաւոր մըն ալ տեսեր է սպիտակ ձիու մը վրայ նստած լուսաւոր մարդ մը, որ Ծիրանաց երկրէն կու գայ, Վաղարշապատ կը մտնէ, եկեղեցին բանալ կու տայ, անկէ ժողովուրդը ատոքացնալ արտ մը կը տանի, և ամէնուն մանգաղներ կը բաժնէ որ հնձեն։ Ուրիշ մըն ալ Օչական Ս. Մեսրոպի գերեզմանին գացած կ'ըլլայ, հոնկէ գաւազան մը կը բերէ, եկեղեցիին մէջ կը տնկէ, ուրկէ խնձորներ կը հանին և կը ճաչակեն։ Այլազգի կին մը կաթողիկէի եկեղեցին կանթեղներով լեցուն կը տեսնէ։ Աստուածապաշտ մարդ մըն ալ երկինքէն կախուած կանթեղ մը կը տեսնէ, և ձայն մը որ կ'ըսէ, կանըեղս էջդեցին է (ԿՈՍ. 72)։ Այս եւ բազապատում զրոյցներ իրաւ գործին խոհեմութեան համար փաստ մը չեն, բայց կը բաւեն ցուցնել թէ ամենայն ինչ առանց հակառակութեան և առանց դժուարութեան կատարուած է, և թէ ամենուն համոզումը եղած է, որ իրենց ձեռնարկը աստուածային պաշտպանութեամբ և առանց արգելքի վերջացած է։ Ամէն գար իրեն մէկ մտածելու և գործելու կերպն ունի, Միքինդարն ալ աւելորդապաշտ էր թէ Արեւելքի և թէ Արեւմուտքի կողմերը։ Իսկ մենք ոչ թէ անոնց իսկութեան, այլ այդ ձեւերու մէջ ծածկուած համոզման մտադրութիւն կ'ընծայենք։

1456. Ցառաջ բերուած երազապատում զրոյցներէ չատ տարբեր է, և ազգային բմբռնումի հիմ կը կազմէ, Լուսաւորչի Աջին տրուած նչանակութիւնը, իբրեւ կնիք և երաչխաւորութիւն օրհնաւետ և ճշմարիտ հայբասկուութեան։ Այս բանին հաստատութիւնը կը դանենք այն անխախտ սովորութեան մէջ որով կոնդակները կ'ըսէ Աջէն օրհնութեամբ կը մակագրուէին, միւռոնը Աջով կը նուիրագործուէր, և եպիսկոպոսական ձեռնադրութեանց համար ալ Աջը կը գործածուէր։ Փոխագրութիւնը կատարելու նախապատրաստութեանց գլխաւորն եղաւ Աջը Սիսէ հետացնել (§ 1449), իսկ էջմիածնի մէջ յայտնուելը՝ գործին վաւերականութեան փաստ եղաւ։ Ցիչատակագիր մը կը գրէ. ՎԱՔ Լուսաւորչին է Սուր ֆղաջեալ բերին յէջդիածին, և վերոյն հաստատեցին զկոնդակն (ՍԱՄ. 175)։ Ուրիշ մըն ալ կը գրէ, թէ ասրբ Լուսաւորչի Աջն կրեալ եր է Սուր, և ել համբառն է Վաղարշապատ, վասն որոյ ֆղալեցան և հաստատեցին զՇնոն յէջդիածին (ՓԻՐ. 133)։ Նոյն ոճով ուրիշ յիչատակագիր մըն ալ նորընտիր կաթողիկոսը սրբանաձառանդ կ'ընդունի, վանդէ վաՔ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ֆղացան է Սուր և բերեալ եգեն յեր սեպհական ասնուն (ՓԻՐ. 129)։ Նոյնինքն Դաւրիժեցին ալ կը գրէ, թէ ասրբ ասնուն էջդիածին յայսմ ժամանակի նորոգեցաս, ֆանդէ Աջն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին է ասրբ էջդիածինն յայսոնեցաս (ԴԱՎ. 336)։ Մենք միաք չունինք պնդել, թէ առանց Աջին՝ Հայոց կաթողիկոսութիւն չկրնար ըլլալ, սակայն չենք կրնար չճանչնալ, թէ այս եղած է ազգին մէջ տարածուած համոզումը, և մտադրութիւն կը հրաւիրենք յառաջ բերուած յիչատակութեանց մէջ գործածուած վան որոյ ու վանդէ ու ֆանդէ պատճառականներուն, որոնց վրայ կը հիմնուի փոխադրութեան օրինաւորութիւնը։ Մեր նպատակն է, ոչ թէ վերացեալ խնդիրներով զբաղիլ, այլ իրապէս և գործնականապէս տեղի ունեցած եղելութիւնները վերլուծել և բացատրել, և անոնց մէջ ծածկուած ընդհանուր բմբռնումը, ազգային համոզումը, և եկեղեցւոյ առումը իմաստ հանել, որպէս զի կատարուած եղելութեան ճիշդ իմաստը և օրինական զօրութիւնը ցուցնենք։ Այս

կերպով է որ կը հաստատուի աթոռոյ փոխադրութեան կանոնական ուղղութիւնը. Սոյ հայրապետանոցին դաղարումը, և էջմիածնի հայրապետանոցին վերանորոգումը: Այս եղած է նոյն ատեն ազգին համոզումը, այդ համոզումը անխախտ պահուած է մինչեւ մեր օրը, և Հայ եկեղեցւոյ ամէն հաւատացեալներ բնաւ կասկած չունին այդ ճշմարտութեան մասին:

Տ. ԿԻՐԱԿՈՍ Ա. ՎԻՐԱՊԵՑԻ

ՄՐՑԱԿԻՑ ԸՆՏՐԵԼԻՆԵՐ

1457. Աթոռոյ փոխադրութեան տարուոյն գատիկը կ'իյնար ապրիլ 16'ին, և հետզհետէ կը սկսէին հաստատել ժողովականները ընտրեալ քաղաքը, որ աւելի յարմար էր բազմաթիւ եկողները պատսպարելու: Հարկաւ այդ միջոցին խորհրդակցութիւններ ալ կը կատարուէին հաւանական ընտրելիին վրայ: Մեծոփեցին կը գրէ, թէ քաղցր է յեղեռըդն յոթով կոչեցաւ ըսել է յոթընդօրօրութեան թոռ-ֆոմական քրոնիկոն, և ոչ կարեցան քառասնից քրոնիկոնական քարիւքն գառնութեան ապիճանին (ԿՈՍ. 69): Բայց մենք այսպէս լաւատես պիտի չըլլանք հաւանական ընտրելիներուն համեստ զգացումներուն վրայ, և մեր կարծիքը կ'արդարացնեն հետզհետէ կատարուած եղելութիւնները: Հիւսիսայիններուն մէջէն Զաքարիա Հաւուցթառեցին, որ եպիսկոպոսներուն երիցագոյնն էր, Յովհաննէս Հերմոնեցին՝ որ արդիւնաւոր մեծ վարժապետն էր, և Գրիգոր Արտազեցին՝ որ մեծ վիճակի արքեպիսկոպոս և ձեռնհասէց գործիչ մըն էր, երեքն ալ իրենց սիրտին մէջ մեծ ակնկալութիւններ կը տածէին նահապատուած ընտրելին ըլլալու: Իսկ վաստրակաւորները իրենց միտքը դարձուցած էին Զաքարիա Աղթամարցիին վրայ, որ ոչ միայն կարող անձ մըն էր, այլեւ այս կերպով Աղթամարի բաժանումը պիտի անհետանար, և բոլոր Վասպուրական և բոլոր Հայաստան մէկ իրաւասութեան պիտի վերածուէր: Մենք ալ գործին վրայ անկաշկանդ նայելով պիտի համաձայնէինք ընդունիլ Վասպուրականցոց տեսութիւնը, սակայն դժբախտաբար չատ զօրաւոր էր գաւառական խարխութեանց գաղափարը, և Տաթեւեան աշակերտութիւնը յանձն չէր առներ այդչափ բարձրացած տեսնել Աղթամարի բաժանական աթոռը, որ մինչեւ իսկ իւր վրան ալ իշխէ: Ուստի եթէ յառաջ կոչուած ընտրելիները առերեսոյթ համաձայնութեամբ հետ կը քաշուէին, անկեղծ խոնարհամտութիւն չէր այն, այլ ճարտար հնարիմացութիւն, իրարմէ խիթալով առջեւ չենտուելու համար: Մեծոփեցին ինքն ալ կը տիրէ իւր գրածը, երբ կը խոստովանի թէ վրդապետն այն Յովհաննէս Հերմոնեցին, և Զաքարիան Հաւուցթառեցին, ոչ կարեցան Գրիգոր Արտազեցիին լինել կոնդիկոս, վասն ապերախտութեան որ առ նա առնէին (ԿՈՍ. 78): Չենք կրնար ճշդել, թէ բոլոր հաւանական ընտրելիները մէկ կողմ դնելով, բոլորովին դուրսէն, գործին չմասնակցած ու վրան չի խօսուած անձ մը ընտրելու որոշումը, կանոնաւ կատարուած խորհրդակցութեանց մէջ հաստատուեցաւ, թէ ոչ վերջին պահուն էջմիածնի մէջ որոշուեցաւ: Բայց ստոյգ է թէ հուսկ ուրեմն այդ խոհական ձեւով կատարուեցաւ ընտրութիւնը: Մրցակիցներու մէջ մղուած խուլ պայքարը կը հաստատուի նաեւ անով, որ Երեւանի կառավարիչ Եաղուպ պէկին կողմէն հրաման եղեւ օգնել կոնդիկոս առանց հակառակութիւններուն (ԿՈՍ. 69), որ ըսել է թէ Պարսիկ իշխանաւորն ալ բան մը իմացեր էր տիրող հակառակութիւններուն մասին, որ պէտք զգացեր է եպիսկոպոսներն ու վարդապետները խաղաղութեան յորդորել:

1458. Ընտրողական գործողութեանց ամսաթիւերը Մեծոփեցին որոշակի չտար: կը յիշէ թէ Երեւան հասնելով սիրալիր ընդունելութիւն գտան ազգայիններէն, որոնք ձեռնհասութեամբ ընդ առաջ ելլէն, վասնզի

ի լաւագ հեռէ անդերծանել էին, և չէին տես-
սած այսչափ վարդապետ և եպիսկոպոս ի մի
ժողովի հաւանելէն ի միտս զոն նա-
ղուպ պէկէն հրաւէր ըս-
տացան, և անոր մօտ
գացին, զի կ'ըսէ թէ հատ ա նա, և
նաղուպ պէկով ընդունած է պիտինք ինքե-
նըեանց երթալ (ԿՈՍ. 68)։ Յայտնի է
որ նաղուպ աշխարհաչէն նպատակներ ու-
նէր, և կ'ուզէր իւր գաւառը չէնցնել, այն
տեղ հաստատել տալով Հայերուն կեդրոնը,
և զանոնք քաջալերելով ազատօրէն իրենց
մաղրութիւնը կատարել։ Երբոր ժողովա-
կանները իրեն մօտ կը հաւաքէ, զանոնք
հանդէսով ճանապայ կը դնէ, անոնց ընակ-
բակից կու տայ ղրղ ինք, և գործին աւելի
փայլ աւելցնելու համար, ֆղով և ընծիով
և ֆամբ քաշչրեանց կու գան կը մնանն
ի ա-ըբ ֆաղն վաղարշապատ (ԿՈՍ. 69)։ Զինք
կրնար ենթադրել թէ ամէնքը մէկ օր երե-
ան հասած և ի միտս զոն վաղարշապատ ե-
կած և ընտրութիւն կատարած ըլլան, և
երկու օրուան մէջ ամէն գործ լրացած ըլ-
լայ։ Միւս կողմէն ասոնական օրերու յիշա-
տակութիւններ ալ չունինք, որ անոնցմէ
ամաքիւ քաղենք, բայց չենք կարծեր թէ
վաղարշապատի ժողովը բացուած ըլլայ
Համբարձումէն առաջ, որ այն տարի կը
հանդիպէր մայիս 25'ին։ Ընտրողական գոր-
ծողութեանց մանրամասնութիւններ ալ կը
պակսին։ Մեծոփեցիին պատմած ձևն ալ
քիչ մը տարօրինակ կ'երեւի, երբ կ'ըսէ,
թէ աբէլն վճռել է ա-ըբ ա-եփաբանն, և ել
վճռին կէրթա- հաչբապեփին (ԿՈՍ. 72), վասն
զի աւետարանին մէջ կիրակոսի անունը
գտնել հնար չէր։ Աւետի պէտք է ըսել, թէ
կիրակոսի վրայ համաձայնութիւն գոյացնե-
լէն ետքը, աւետարանի վիճակին ալ դի-
մած են, և աւետարանը բացած ատեննին
նպատակայարմար տունի մը հանդիպած և
այս կերպով կատարած ընտրութիւնները
վերոյիշեալ կամքին համաձայն ճանչցած են։
Կիրակոս, որ այս կերպով կաթողիկոսու-
թեան կը բարձրանար, Մասիս լերան ստո-
րոտը, Ակոռի աւանին մօտ, Վանատան
անապատին մէջ ճգնող վարդապետ մըն էր,
հետու ամէն աշխարհային գործերէ և ան-

ՅՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

ման փոխադրութեան գործին աշխատու-
թիւններէն, որով իսկապէս փոտուած չէ-
զոք անձն էր, որ ներկայնդէմ մրցակ-
ցութիւնները պիտի լուծեր։

1459. Կիրակոս Վասպուրականցի էր, Արճէշ կամ Քաջբերունեաց գաւառի հա-
րաւատ պիւղէն (ԿՈՍ. 54) և Խրլոց ազգատոհ-
մէն (ԹՈՐ. Ա. 224)։ Ծննդա-
նան տարին որոշ նչա-
նակուած չէ, բայց նթէ 1397'ին քահանայ
ձեռնադրուեցաւ Արտազու Պօղոս եպիսկո-
պոսէն (ԿՈՍ. 54), գոնէ 25 տարեկան եղած
ըլլալու է, որով ծնունդը կրնայ դրուիլ
չուրջ 1370'ին, և 70 տարեկան եղած կ'ըլլայ
1441'ին։ Առաջին աչակերտութիւնը սկսած է
իրեն ծննդավայրին մօտ եղող Սուխարու
վանքին մէջ, նախ Սարգիս Ապրակունեցիի
և յետոյ Վարդան Հոդոցեցիի ժե ջթ-
ա-ոց ձեռքին տակ (ԿՈՍ. 54)։ Եղած է նաեւ
Սարի վանքը Սարգիս Սորբեցի վարդապե-
տին մօտ, Աղթամարայ վիճակին մէջ, հա-
ւանաբար Սուխարու և Սալնապատի վան-
քերուն լքուելէն ետքը։ Բայց վերջէն վաս-
պուրականի կողմերը թողած է առանձնու-
թեան և ճգնութեան փափաքով, և 1409'ին
հաստատուած է Այրարատ գաւառի Խորվի-
րապի վանքը, որ է ա-ըբ ա-եփն և կենդա-
նարար ջրերէն լա-ա-ա-ըրէն, և ուր երկար
տարիներ ճիզուվը Վիրապեցի կոչումը ստա-
ցած է իրրեւ մակդիր անուն։ Ճգնողական
կեանքին մէջ աւելի խստութեանց դիմե-
լով, վերջին տարիներ Խորվիրապի վանքն
ալ թողած, գացած էր Արարատի ստորոտը,
Ակոռիէ ոչ շատ հեռու Վանատան կոչուած
տեղը, և հոն իրեն յատուկ ճգնարան հաս-
տատած, ուր կը գտնուէր առանձնացեալ
երբ փոխադրութեան խնդիրով Արեւելեայք
ատքի վրայ էին։ Կիրակոսի գովաբան Մե-
ծոփեցին կ'ըսէ թէ քահանայական ձեռնա-
դրութիւն ստացած օրէն ոչ միս ճաշակել էր,
և ոչ գինի ըմպել, և ոչ կէս անասուց կերել,
գովել և ա-ա-էին ա-բա-ըներէ անել, ա-բա-
քերեան, հել և խոնարհ, ոչ նըմա- և ոչ անեծ- ի
քերանէն ելլել (ԿՈՍ. 54)։ Մեծոփեցին ոչ
միայն գովաբանր, այլ և պաշտպանը եղած
է կիրակոսի, և չատ հաւանականութեամբ
երբ յոհ Մաթեոս ի յԱկոռի կը հանդիպէր

(ԿՈՍ. 67), իւր միտքը հաստատած էր կիրակոսը առաջ քշել, եթէ Զաքարիա Աղթամարցին դժուարութեան բաղխէր։ Կիրակոս ծննդեամբ և աչակերտութեամբ վասպուրականցի, այլ երեսուն և երկու տարի էր որ Հայոց Հայրապետութեան գահուն վրայ (ԿՈՍ. 54), այլեւս վասպուրականցիներէ զատուած կըրնար նկատուիլ, և Սիւնեցիներու և Արարատցիներու կողմէ ընդունելի ըլլալ, ինչպէս եղաւ ալ։

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ

1460. Ամենայն հաւանականութեամբ, կիրակոս ալ այն երեք հարիւր ժողովականներէն մէկն էր, որոնք վաղարշապատ հաւաքուած էին, որովհետեւ չենթադրուիր որ այդպիսի բացառիկ պարագայի մէջ ալ թողած չըլլայ իւր ձգնարանը։ Երբոր ընտրութիւնը լրացաւ և աւետարանի վիճակով ալ նուիրագործուեցաւ, կիրակոս առանց հակառակընդդիմանալ կրնայ յուսալ որ կիրակոսի հրաժարելով գործը նոր կերպարան առնէր, և իրենց համար հաւանականութիւն ստեղծուէր, բայց վերջապէս անդիմադարձ համաձայնեցան, վասնզի երկու խումբերուն մէջ տեղ, չեզոք և ոչ մէկէն եղող մէկ մը կ'ընտրուէր, և լոկ առաքինութիւնն ու արդութիւնն էր, որ յաղթանակ կը տանէր, և ոչ գործունէութեան և ճարտարութեան առաւելութիւնը։ Կիրակոս պարզ վարդապետ էր, հետեւաբար պէտք էր որ մեծ ասիճան և եպիսկոպոսութիւն ալ առնէր կաթողիկոսական օծում ստանալէ առաջ, ուստի նախ այդ պէտքը լրացնելու ձեռնարկեցին, և Մեծոփեցին կը գրէ թէ «ի կէս աթոռ յեռանդրութեան։ Զանազան ակնարկներէն կը յայտնուի թէ Յովհաննէս Հերմոնեցին առած է ծայրագոյն գաւազանը (ԿՈՍ. 84), և Զաքարիա Հաւուցթառեցին եպիսկոպոսութեան աստիճանը եպիսկոպոսներու ընկերակցութեամբ (ԿՈՍ. 78), իսկ կաթողիկոսական ձեռնադրութեան մասնակցած են անշուշտ այն երկոսան եպիսկոպոսք ասիք և անիք (ԿՈՍ. 52), որոց անունները մի առմի յիշած է Մեծոփեցին, հարկաւ երիցութեան կարգն ալ պահելով, և են. Զաքարիա Հաւուցթառի, Գաբրիէլ Էջմիածնի, կարապետ Յովհաննավանքի, Յովհաննէս Բջնոյ, Անտոն Խորվիրապի, Յովհաննէս Արճէշի, Յակոբ Կողբի, Մկրտիչ Բագրեւանդի, Մարտիրոս Հաղբատի, Ազարիա Գանձասարի, Զաքարիա Նորավանքի, և Ստեփանոս Սիւնիքի։ Հաւուցթառեցին առաջինն է այդ խումբին, որուն մէջ մտած են Սիւնիքի, Այրարատի և Վասպուրականի եպիսկոպոսներ անխտիր՝ ամէնուն ալ մասնակցութիւնը նուիրագործելու համար։ Ձեռնադրութեան օրը նշանակուած չէ, բայց նկատելով որ է ասքը Պենտեկոստէն առաջ, այսինքն է յունիս 4'ին, օրհնած են ըստ առածքերնի (ԿՈՍ. 74), կաթողիկոսական ձեռնադրութենէն անմիջապէս ետքը, ամենայն հաւանականութեամբ նախընթաց կիրակին մայիս 28'ին, կաթողիկոսական օրհնութիւնն է տրուած, երբ արծիւ մըն ալ առանել ընտ նստած է է վերայ էլեայ էջմիածնի (ԿՈՍ. 73)։ Ըստ այսմ Համբարձման օրը, մայիս 25'ին, ընտրութիւնը լրացած կ'ըլլայ, և յաջորդ երկու օրերուն մէջ ալ վարդապետութեան և եպիսկոպոսութեան կարգերը կատարուած։

ՄԻՒՌՈՆ ԵՒ ՕՐՇՆԱԳԻՐԵՐ

1461. Վերանորոգեալ աթոռին առաջին գործն եղաւ միւռոնի օրհնութիւնը, ուզելով խորհրդական պէտք մը լրացնել, և միանգամայն ջնջել Սոյ աթոռին մէջ կատարուած զեղծումներէն մէկը, որ էր միւռոնի վաճառումը ծանր վճարումներու փոխարէն։ Իրրեւ առաջին բարեկարգական կանոն կը հռչակէ Մեծոփեցին, թէ միւռոնը բաժանեցոյ ընդ ամենայն չորիս թագաւորան, և կանանեցոյ չորէ տալ և չորէ առնուլ, և բոլոյն զղջանքն սխմանական (ԿՈՍ. 74)։ Միւս այլ կարեւոր գործն եղաւ Աղթամարի աթոռին կապանքը կամ բանադրանքը վերցնել, որ սկսած էր Գրիգոր Պահլաւունիի կաթողիկոսութեան սկիզբը (§ 929), և որով զբաղեր էին Գրի-

գոր Անաւարզեցի (§ 1203), և Յակոբ Սսեցի կաթողիկոսները (§ 1398)։ Արձակումը աւելի ընդարձակ իմաստով տարածուեցաւ չընդհանրապէս Հայոց ազգին, արձակելով զոհեալն կապելը և չքանդելը յանձնին (ՉԱՄ. Գ. 488), ինչ որ պահանջ մըն էր Սսոյ վերջին կաթողիկոսներուն ալ ու ձախ նզովքներ տ'ղացուցած ըլլալուն համար, որոնք անիծք նզովից և քանդելիքով կապանաց ընկերս մեր կոչեն (ԿՈՍ. 57), և պէտք էր ընդհանուր արձակումով մը բոլոր սիրտերը հանդարտեցնել։ Աղիամարի արձակումը յատկապէս յիշուած է, վասնզի այդ կողոպտիչն ալ Դաւիթ եղած ըլլայ (ՉԱՄ. Գ. 467), մինչ Զաքարիա ըլլալը յայտնի է։ Իսկ Դաւիթի մը անունին յիշուիլը, կրնայ թէ առաջին հակաթոռ Դաւիթ Թոռնիկեանի վրայ մնկնուիլ (§ 929), և թէ վերջին Դաւիթ Գուրճիպէկեանին, որ Տաթեւացիին ընդդիմացաւ և զայն հալածեց (§ 1400)։ Աթոռոյ փոխադրութիւնը և Վաղարշապատի ժողովին վճիռը և նորընտիր կաթողիկոսին պաշտօնը ծանուցանող օրինութեան գիրեր յղուեցան Աղուանից կաթողիկոսութեան և Երուսաղէմի պատրիարքութեան, և բովանդակ Հայաստանի և կիլիկիոյ և Փոքր-Ասիոյ վիճակներուն; և ուր ուրեք Հայ գաղթական նուիրիւններ հաստատուած էին, և այսպէս էջմիածնի վերանորոգեալ աթոռին անունն ու իշխանութիւնը բոլոր աշխարհի մէջ լսուեցաւ, և 1441'էն սկսելով յիշատակագիրներ կը սկսին է կողոպտիչ-ը-ընկեան սոբ Լուսաւորչի աթոռոյն տէր Կիւրեղի բացատրութիւնը գործածել (ՓԻՐ. 124)։ Իսկ հայրապետական կոնդակները գրուած էին այս սկզբնաւորութեամբ. Աստուածն անիկն Աստուածոյ, Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ես կիրեղոս Յովսէ Յովսէկեան Աստուածոյ և Ցեղուաչ Գրիգորէ, ողորմութեամբ և ընդհանուր նորին կողոպտիչ աթոռոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին տէրոյ, և վաղարշապատու սոբ էջմիածնէ և Ամենայն Հայոց (ՉԱՄ. Գ. 488), որ սովորական մակագրութիւններէն չատ չտարբերիր։

1462. Օրինութեան կոնդակներուն կարգին յիշուած կը տեսնենք, թէ պրկուեցաւ նաեւ աթոռոյն Սսոյ, սոբ Նոփէր Գրիգոր Մուսաբէկեանց (ՉԱՄ. Գ. 483)։ Զնանք կրցած ստուգել այդ տեղ

ԿԻԼԻԿԻՈՑ ԴԻՐՔԸ

գնկութեան առաջին աղբիւրը, որ մեծ նշանակութիւն ունի կիլիկիոյ աթոռին դիրքը ճշդելու։ Եթէ Մուսաբէկեանց մտադիր ընդունեցաւ կիրակոսի օրհնութեան կոնդակը, ուրեմն ոչ միայն կամակից էր Վաղարշապատի ժողովին, այլ ինքզինքը ենթարկած էր անոր գերագահ իշխանութեան, որով անգի չէր մնար կիլիկիոյ աթոռը հակաթոռ նկատելու, ինչպէս որ ազգը նկատեց բաւական երկար միջոց մը, մինչեւ երկու աթոռներուն մէջ համաձայնութիւն հաստատուիլը։ Հայերը ազգովին և իւր կաթողիկոսով հռոմէադաւան ցուցնելու մարմաջը, որ Զամչեանի հետեւողութեամբ Մխիթարեան գրիչներու մեծ նպատակն է եղած, Մուսաբէկեանցի անձին վրայ մեծ կարեւորութիւն դրած է, և աւելորդ պէտք չէ նկատուի, եթէ այստեղ միջանկեալ կերպով մենք ալ քանի մը դիտողութիւն աւելցնենք։ Իրենցմէ ոմանք Մուսաբէկեանցը անկանոն ընտրուած և ոչ օրինաւոր կաթողիկոս ցուցնել ուզած ատեն (ՉԱՄ. Գ. 486), ուրիշ մը զայն իբրեւ օրինաւոր աթոռի տէր, և վիրապեցին հակառակորդ կողոպտիչ կոչելու կը հասնի (ՔՍՏ. 248), և վերջերս ուրիշ մըն ալ Մուսաբէկեանցը մինչեւ 1450 օրինաւոր կաթողիկոս ցուցնել կը ճգնի (11 ԱՄՍ. 467)։ Մենք իրաւունք կ'ունենայինք իրարու հակառակ կարծիքները զիրար եղծանող ըսելով, ինդիրը զանց ընել, սակայն պատմական եղելութիւնները լուսաբանելու, պարտքն ալ կը զգանք։ Մուսաբէկեանցի անձին մասին ոչ բոլոր և ստոյգ տեղեկութիւնները կը պակսին, որ կարենանք բացարձակ կերպով բան մը հաստատել, ուստի պարտաւորեալ կեցուածք ակնարկները մօտեցնելով սիրտ քաղենք պատմական եղրակացութիւնները։ Անոնք որ կիլիկիոյ մանաւանդ աթոռը՝ ոչ թէ կարապետ եւդոկիացիէ, այլ Գրիգոր Մուսաբէկեանցէ կը սիրեն ակսիլ, աթոռին աւելի փայլ մը տալու փափաքով, Մուսաբէկեանցի և եւդոկիացիին մէջտեղ Յովսէփ կաթողիկոս մը կը դնեն, Մաղա-

քիա դպիրին յիշատակագիրէն քաղելով (ՍԻՍ. 218)։ Այդ Ցովսէփը միևնոյնը պէտք է ըլլայ որ Վահկացիէն ետքն ալ կաթողիկոսական աթոռը ձեռք ձգելու աշխատեցաւ (§ 1442), և երբէ առիթ գտաւ իւր ոտնձգութիւնները նորոգել, անշուշտ այլևս Մուսաբէգեանց չկար, և բնական եղբայրասպանութեամբ, և ոչ թէ մտացածին կարծիքով, կը հետեւի Մուսաբէգեանցի կամ մեռած և կամ տեղը լքած և հնացած ըլլալը։ Մենք դժուարութիւն պիտի չհանդիպինք սպանուածեան պարագան ալ ենթադրել, և վեց սպանեալ կաթողիկոսներէն ետքը (ԿՈՍ. 55), եօթներորդ մըն ալ աւելցնել այդ չարքին, ինչ որ Այիչան կամակից կիլիկեցի եպիսկոպոսներուն նպատակէն (§ 1449) օտար պիտի չըլլար։ Առանձին մտադրութիւն պէտք էր դարձնել յիշատակագիրէ մը առնելով եղած հրատարակութեան վրայ, թէ կաթողիկոսութիւնը ետաւ և հինգ ամ խափանեալ ձօց է տայբ-ալ-ալ-ս կ'ելլէնօյ, այսինքն ի Սիս (ՀԱԹ. 575), երբէ ստուգած չըլլայինք, թէ Ալիչան, որ առանց աղբիւրը ցուցնելու Անտոնեանց մատենադարանին մէջ գտնուող յիշատակարան մը կը հրատարակէ, պարզապէս թիւրիմացութեան զոհ ըլլացած է, ետաւ և հինգ կարդալով, ինչ որ բնագիրին մէջ յայտնապէս ըղ հինգ ամ խափանեալ ձօց գրուած է (ՃՇՏ.), որով աւելորդ կը դառնան նոր գրոհի մըն ալ դիտողութիւնները (11 ԱՄՍ. 466)։ Արդ երբէ 1147'էն առաջ, հինգ ամ խափանեալ ձօց Սսոյ աթոռը, այսինքն դահակալ չունեցաւ, ուրեմն Մուսաբէգեանց ոչ եւս կ'ապրէր կամ ոչ եւս կաթողիկոս կը ճանչցուէր, և մտացածին չէ 1441'էն այս կերպ կամ այնկերպ Սսոյ աթոռը դադարած և վերջացած ըսել։

1463. Երկու կտորները յառաջ կը բերուին ցուցնելու թէ 1444'ին և 1450'ին առ-

ՍՍՈՑ ԱԹՈՌԻՆ ՎԱԽՃԱՆԸ

կաւին Մուսաբէգեանցը կենդանի էր, բայց չենք իմանար թէ ինչ օրինաւորութեամբ փաստ կրնայ քաղուիլ Մուսաբէգեանցի կենդանութենէն, քանի որ նա ազգային ժողովով դահրնկէց հռչակուեցաւ, իսկ կենդանի մնալն ալ օրինաւոր ըլլալ ըսել չէ։ Բացատրի պէտք է դիտել տանք, թէ 1444'ին Գրիգորիս և Կիրակոսի միանգամայն կաթողիկոս ըսուիլը հարկաւ Մուսաբէգեանցը չցուցներ, վասնզի է կելլէ և է վալբլտոտ յաւելուածները՝ ամբողջ պատճէնին ընդօրինակութեամբ չեն հաստատուած (11 ԱՄՍ. 466)։ Միևնոյն 1444 տարին և միևնոյն սահմանակցութեան մէջ գրուած յիշատակարան մը Տէտան Գրէգոր և պետան Կէրակոս կաթողիկոսութիւնները միանգամայն կը յիշէ (ՓԻՐ. 133), բայց Գրիգորը՝ Զալարէգեանցն է և ոչ թէ Մուսաբէգեանցը, և այդ երկու անուններու զոյգ գործածութիւնը ատեպ կը տեսնուի մինչև Կիրակոսի մահը, թէպէտ վերջինս հրաժարած ու քաչուած էր։ Իսկ 1450'ին գրուած կարծուած նամակը ճիշդ այդ թուականը չի կրեր, զի Հայոց ՌՊԼԹ թուականը (11 ԱՄՍ. 468) 1450 չէ այլ 2450, որուն հասնելու ալ յոյս չունինք։ Իսկ երբէ ըսեն թէ սխալմամբ գրուած կամ տպուած է, պէտք է ընդունիլ որ սխալէն ալ ուղիղ հետեւանք չելլեր։ Ուրիչ պարագաներ ալ նկատելի են այդ յառաջ բերուած գիրերին մէջ։ Գիրը կ'ուղղուի սրբոյ հօրն Եփթիմեայ ետեւնայոպէէ. իսկ Եւգինէոս Դ 1450'էն երեք տարի առաջ 1447'ին մեռած էր, ինչ որ հնար չէր որ երեք տարի ետքը իմացուած չըլլար Սիս կամ Գահիրէ։ Նոյն թուղթին մէջ կ'ըսուի, թէ Սարգիս և Թովմաս վարդապետները ինքն Գրիգոր ղրկած ըլլայ, մինչ անոնք վահկացիէն ղրկուած էին, և Ալբերտոս կրօնաւորն ալ ոչ 1450'ին այլ 1440'ին նամակը տանողն է (ԱՉԱ. 104)։ Անոնք որ 1450'ին Մուսաբէգեանցը կենդանի, և եպէոկոպոս եպիսկոպոսաց երէոս Հայոցաց աշխարհաց կ'ուզեն ընդունիլ, պէտք է նաեւ մեկնեն, 1447'ին կարապետ Եւդոկիացիին եգիպտոսի սուլտանին հրովարտակով Սսոյ մէջ կաթողիկոս նստած առեն, ինչ կերպով Մուսաբէգեանց կրնար այդ դիրքը պահել Գահիրէի մէջ, երբ արդէն ուրիչ մը տիրող պետութենէն ճանչցուած էր։ Պէտք չէ մոռնալ եւս որ Եփիսկոպոս բացատրութիւնը երբեք Հայոց սովորական չէ եղած, որոնց պաշտօնական ոճն է Ամենայն Հայոց բանաձեւը։ Ուրիչ մանրամասնութիւններու մէջ մտնել չուզելով ալ՝ կրնանք եղրակացնել, թէ կնիք գրուած մըն է իրր փաստ յառաջ բեր-

ուածը և կաֆացի լատինամոլներու յերիւրուած մը, որ միանգամայն անվստահութեան մեծ կասկածներ կը տարածէ Փլորենտիոյ Լաւրենտեան մատենադարանին, և ուրիշ պապական դարաններու մէջ պահուած գրութեանց վրայ։

ՍՍԵՑՈՑ ԿԱՐԾԻՔԸ

1464. Մեղի անծանօթ չէ, որ նոյնիսկ կիլիկիոյ աթոռին չէտին կաթողիկոսներ յաւակնութիւն ունեցած են, իրենց աթոռը ուղիղ գիծով օրինաւոր յաջորդութիւն ցուցնել, և էջմիածնի աթոռը ապօրինի կամ ապստամբ նուաճել։ Սիմէոն Մեթաստացին պատմական յիշատակներ կը քաղէ, ցուցնելու համար թէ ազգը իբր օրինաւոր կաթողիկոններ ճանչցաւ Հռոմկլայ և Սիս նստողները՝ և ի բերան Գրիգորի Դնձեցւոյ կ՚ըսէ՝ «Ոչ ոք ժողովրդեան ունի այդ չափը ընդունիլ, սակայն այդչափը չբաւեր հաստատել, թէ այնմհետև դնէր ցոյսը ժամանակի կայ հաստատ հայրապետութեան ատ ի Սիս, և սուրբ Լուսաւորչի Աջն է սա քնութեան, չի հաճեցաւ ընդ սա» (ԱՋԱ. 12)։ Աջի անյայտացումը (§ 1449), և ազգային ժողովը (§ 1453), և ազգովին տրուած վճիռը (§ 1458), օրինաւոր գործողութիւններ են, որք չեն կրնար ջնջուիլ, Սիմէոնի խօսքով, թէ անհնազանդ եղեալ չեր Աբեղեղանցը սուրբ Լուսաւորչի աթոռոյն, չեռնադրեցին ըստ կամս իւրեանց զկիւրիոս կաթողիկոս Խոզէրոպեցին (ԱՋԱ. 13), կամ եփրեմի բսելովը, թէ դա ի վերջս դեռս ելոխ ամբոյնել կէրկոս անուն, զոմոքոնիկն խորհեր ի սրբոյ աթոռոյս Սսոյ (ԱՋԱ. 53)։ Մանաւանդ որ, ինչպէս պատմեցինք, կիրակոս ինքն ոչ ապստամբութիւն խորհեցաւ, և ոչ իրեն համար աշխատեցաւ, այլ ազգովին կատարուած որոշման հպատակեցաւ։

1465. Կիրակոսի կաթողիկոսութիւնը բարեգուշակ յաջողութիւններով սկսաւ էջմիածնի մէջ։ Եկեղեցական իրաւասութեան և նուիրապետական բարեկարգութեան տեսակէտէն, այս ընտրութեամբ կրնար ջնջուած և անհետացած նկատուիլ աթոռներու բաժանման խնդիրը, Սիս դարձած էր իրօք, և Աղթամար համաձայնած և օրինուած էր, և էջմիածնի կաթողիկոսը միանձան պլուսի էր ճանչցուած առանց ընդդիմադիրներու և հակաթոռներու։ Մուսաբէգեանցի հրապարակէ հեռացած կամ մնած կամ ձեռնթափ եղած ըլլալը՝ այլեւս պատմական ստուգութիւն մրն է Սսոյ աթոռին հինէ ամ խափանուելովը, և ուրիշ փաստի պէտք չկրնար այլ մասին։ Աղթամարն ալ այն դիրքը առած էր, ինչ որ ունէր Աղուանից կաթողիկոսը, որուն հետ սահմանի մէջ ազատ և ինքնուրոյն իրաւասութիւն գործածող, սակայն իրմէ վեր գերագոյն աթոռակալ մը ճանչցող էջմիածնի մէջ։ Եթէ Սսոյ աթոռը իսպառ ջնջուէր ու դադարէր, կամ թէ իբր նախկին աթոռին յիշատակ էջմիածնի գերագահութեան ներքեւ կաթողիկոսական աթոռ մը պահուէր Աղթամարի նմանութեամբ, ամէն առթի մէջ Հայաստանեայց եկեղեցւոյ նուիրապետութեան կազմը և Ամենայն Հայոց հայրապետութեան իսկական կերպարանքն անեղծ և անտեղծ պահուած կ՚ըլլար, և երկրորդական կաթողիկոսութիւնց պայմանները անոր վնաս չէր բերեր, ինչպէս չէին բերեր վրայ և Աղուանից կաթողիկոսութիւնները, եթէ չուզենք իսկ ըսել, թէ աւելի ալ կը բարձրացրնէին։ Կիրակոսի անձին վրայ գալով, նա հայրապետական աթոռին վրայ ալ պահեց իր ձգնողական և առաքինական կեանքը, և ամէնքը թեառնեին զերծանել այրն Աստուծոյ ի վտս ցնոնութեան զրկ և զբեզբ տկնջենասէր սրբատահութեամբ (ԿԱՄ. 76), որ ընդհանուր պատկառանք և յարգանք կը բերէր վերանորոգեալ աթոռին վրայ։ Ըստ այնմ համակրութիւնն ալ կը չատնար հետզհետէ, և որովհետև մինչև այն ատեն բոլորովին լքեալ և անխնամ մնացած էր վանքն ու աթոռը, դուրկ ամէն պէտքերէ, Աստուածապաշտ ազգս Հայկազեան, Աբգարայ և Լուսաւորչի, յորդորուեցաւ ամէն տեսակ գոյքերով ճոխացնել աթոռը, և մեծասէր պէսպիսի և անհատ և ընտանի ըլլէն զոյքը աներ (ԿՈՍ. 75)։ Այս նպատակին հասնելու համար պէտք էր որ աթոռին մէջ կանոնա-

ւոր մատակարարութիւն հաստատուած ըլլար, և այս կողմէն ալ Կիրակոս ընդհանուր ակնկալութիւնէ վեր գանուեցաւ, և կրցաւ արքունն և ազդեցիկ խնամք տարածել ամէն ճիւղերու վրայ, և չինարարութեամբ ալ զբաղիլ, քան որչափ ինչ կրնար սպասուիլ վանաստանի իսաւմբեր ճգնաւորէն։ Եպիսկոպոսներուն չարքին տնանք Գաբրիէլ եպիսկոպոս մըն ալ Էջմիածինի անունով (ԿՈՍ.52), ինչ որ կը ցուցնէ թէ աթոռին թափառած ատեն, Էջմիածնի վանքը ունէր վիրակաւոր եպիսկոպոս մը, որ վարչապատի ալ թեմակալն էր անշուշտ։ Բայց եթէ Էջմիածին բոլորովին լքեալ չէր, պարզ եպիսկոպոսի մը ներկայութիւնը բաւական չէր պահել անոր բարձր դիրքը և պահանջուած կացութիւնը։ Այսպէս անցան Կիրակոսի կաթողիկոսութեան սկիզբնները, տարի մը կամ քիչ աւելի։

ԳՐԳՈՒԻՔԵԱՆՑ ՍԿԻԶԲԸ

1466. Սակայն կամաց կամաց սկսան գլուխ հերետնել նախանձոտ կիրքերը և խուլ հակառակութիւնները, նորահաստատ կացութեան դէմ գժգոհութիւններ, և գոհունակութիւն չգտած բուռն ձգտումներ։ Այդ դժգոհի հերետիքներ յառաջ եկան Սիւնիքի կողմէն և Տաթեւեան աշակերտութենէն, և դիտելի է որ Էջմիածինը չէնդնող Արարատի և Վասպուրականի հետ, Սիւնիքը չէր յիշուած։ Կիրակոս որչափ ալ 32 տարի, իվեր Արարատ հաստատուած, սակայն վերջապէս Վասպուրականցի մըն էր, Վասպուրականցիներէ պաշտպանուած, և անոնց կողմէն առջեւ մղուած, ինչպէս Մեծոփեցիին Ակոռի հանդիպելուն առթիւ դիտել տուինք (§ 1459)։ Բայց որ աւելին է, Կիրակոսի չուրջը խմբուեցան բոլոր Վասպուրականցիները, Թովմաս Մեծոփեցին ինքն ալ ազդեցիկ և գլխաւոր դեր մը ստացաւ հայրապետանոցին մէջ։ Թէ ոչ ամէն, գոնէ չատ գործերու գլուխ Վասպուրականցիներ անցան, չատ և օգուտ անոնց բաժին սկսաւ ըլլալ, և Սիւնեցիներ և Տաթեւական խումբը երկրորդական չարքը մղուեցան, մինչ իրենք էին Արեւելեայց կիզիչները, իրենք էին որ նոյն իսկ Վասպուրականցիներուն չարժուէ էին տուեր, թէ 12 Վասպուրականցիներուն Տաթեւ գալուն, և թէ եռամեծ Տաթեւացիին Վասպուրական երթալուն առիթով։ Մեծոփեցին ալ զգալ կուտայ այդ կացութիւնը, երբ պարծենալէն ետքը թէ «ինձմով քաջալերեցաւ և ընդհատ ըղձացեալ էր ոտիս Հայոց» (ԿՈՍ.76), և թէ ըղձացեալ էր «որբ կոչուիլն, կը յաւելու, թէ «ինձնէ՛ն երանի պային կոչմանց ըղձացելոց և հանդիսից ձայնք» (ԿՈՍ.77), այսինքն է կը գովէին Վասպուրականի կոչմանց և վանայ ձայնք պատկանող վարդապետները, որք այդ բարեկարգութեանց գործիչ կը նկատուէին։ Մուլ դժգոհութիւնները որոնք 1442 տարիէն սկսեր էին, յայտնի խօսուիլ սկսան 1443'ին սկիզբները, և պարագլուխ կանգնեցաւ Մարկոս՝ եպիսկոպոս Վրաստանի, Հերմոնեցիին աշակերտներէն, որ Վաղարշապատի ժողովին չէր գտնուած։ Իրեն միացաւ Աստուածատուր վարդապետ Սաղմոսավանքէն (ԿՈՍ.77), որ ցաւած էր որ ինն է չանանոց նոր ալ նուիրեցին, ինչ որ Մեծոփեցին անխոհեմ կը համարի, զոր օրէն կոչոչ կոն և վերակացու նոքին, Գաբրիէլ եպիսկոպոս Ծովհաննավանքի և Կիրակոս վարդապետ Ռշտունի (ԿՈՍ.75)։

ԿԻՐԱԿՈՍԻ ԴԷՄ

1467. Ժգոհներու խումբը պէտք ունէր իրեն ազդեցիկ կողմնակիցներ ճարել, և Կիրակոսը նեռելու համար պատճառներ ունենալ։ Առաջին ընտրութեան ժամանակէն երեք մրցակից ընտրելիներ կային Սիւնեցւոց կողմէն, Ծովհաննէս Հերմոնեցին, Զաքարիա Հաւուցքաւուցին և Գրիգոր Արտազեցին, սակայն մինչեռ կուսակցութենէն՝ երեք մրցակից ընտրելիներ գտնուիլը տկարացուցած էր անոնց կողմը։ Երեքին մէջէն նախադասելի կ'երեւէր Արտազեցին, սակայն միւս երկուքը աւելի ազդեցիկ էին, և անոր կաթողիկոսանալը չուզեցին վանաբնակներ ու առանձին։ Բայց նոր կացութեան առջեւ հարկաւ մեղմացած էին կիրքերը, մանաւանդ որ Հերմոնեցին է «ոչ ժամանակ ելոցեալ էր ոչնչի» (ԿՈՍ.78), և Հաւուցքաւուցին արդէն եպիսկոպոսներուն երիցագոյնը, այլեւս տկարացած էր տարիքին բերմամբ։ Մարկոս և ընկերներ առաջին անգամ ուզեցին այս երկուքը վաստկիլ, ծերունի-

ները համոզելով թէ այլեւս պէտք է որ իրենց ակնկալութիւնները վար դնեն և Արտազնին կաթողիկոսացնելու համաձայնին իրենց կողմը զօրացնելու համար։ Առաջ դիմեցին Հաւուցթառեցիին, մեղադրելով իսկ զայն, թէ դուռ եդեալ է կիրակոսը կաթողիկոս, ակնարկելով անոր ձեռնադրութեան նախագահելուն, իբր այն թէ ասով փորձանքին պատճառ եղած ըլլար։ Անիկայ համոզվէ ետքը, իրենց ընկերացուցին Շմաւոն Տաթեւի եպիսկոպոսը, և Հաւուցթառեցին գլուխ կանգնեցաւ խումբին, որ յարձակեցաւ Գնոյ ա՛ւ վրդպետին Յովհաննէս Հերմոնեցին (ԿՈՍ.78), որ իսկոյն համաձայնեցաւ, և առնէ դաս ընթեռնուն և պատասխանն ոչ մէկէն ոտք հանեց կիրակոսի գահընկեցութեան գործին հետեւելու։ Կը մնար պատճառներն ալ ճարել, բայց առաջին գործի մը համար կիրակոսը ամբաստանել չէին կրնար, և կը խոստովանէին իսկ թէ ճգնութեամբ կատարելն հանգոյն է։ Ուստի գործը օրինականութեան ձեւին թափելով, ուզեցին ըսել թէ կաթողիկոսութիւնը անվաւեր է, և օրինաւոր կաթողիկոս չէ։ Այս երեսէն գտած պատճառանքներն երկու եղան, մէկը թէ է կոչնէն յԱղթամար է, որ է քաղաք ժամանակաց հեթէ քահանայք են (ԿՈՍ.77), ուսկից կը հետեւցնէին թէ ոչ է ձիրած, և ոչ է էջմիածին (ԿՈՍ.79), իբր դի բանադրանքի ներքեւ եղողներուն պաշտած խորհուրդները թերի և անվաւեր կը համարուէին։ Իսկ միւս պատճառն էր, թէ պարտ էր է կաթողիկոսոյ եպիսկոպոս լինել, և ապա յեպիսկոպոսոյ կաթողիկոս ձեռնադրել (ԿՈՍ.79)։ Այդ պատճառներէն առաջինը ընդհանուր առմամբ կամ առերեսյօթ կերպով միայն կրնար խօսուիլ, վասն զի ընդհանուր քրիստոնէութեան մէջ ընդունուած է անարժան պաշտօնէին կատարած մկրտութիւնն ալ, և զեղծմամբ միայն կրկնամկրտութիւններ կ'ըլլային, ինչպէս Ունիթորներն ալ կը կատարէին Հայերուն վրայ։ Իսկ երկրորդ պատճառը թէեւ եպիսկոպոսութեան վաւերականութեան վրայ չկրնար տարածուիլ, քանի որ Նիկիական կանոնը մեր եկեղեցին ալ ընդունած է, գոնէ ազգային և կանոնական սովորութեան փաստ կրնար ըլլալ, թէ ընկալնալ օրէնք է, ձեռնադրեալ եպիսկոպոսներուն մէջէն կաթողիկոս ընտրել և ոչ թէ եպիսկոպոս չեղող եկեղեցականներուն մէջէն։ Ազգային պատմութեան մէջն ալ չատ ցանցառ են այդ կանոնին բացառութիւնները, որոնք աւելի նայ ընդհանրացած կանոնը կը հաստատեն։ Կիրակոսի դէմ յարուցուած խնդիրն ալ, մինչեւ յոյն սովորութիւնը կը հաստատէ, որչափ ալ յայտնի է թէ բողոքելու իրաւունք չունէին անոնք, որոնք իրենց ձեռքովը բացառութիւնը նուիրագործած էին։ Անցողակի նշանակուած է երրորդ կէտ մըն ալ, թէ հերձուածող է, զի ջնջած հինգերոյ քերթեալ է է Կոստանդնուպոլսէ (ԿՈՍ.79), որ վերջին օծումի ձէթ գործածելու վրայ պիտի մեկնուի, սակայն ոչ առաջ և ոչ հետը Մեծոփեցին այդ մասին լուսաբանութիւն չտար։

1468։ Հարկաւ դաւադրութիւնն ու աղմուկը ծածուկ չէին կրնար մնալ, արդէն Հերմոնեցիին հասած խումբն ալ չատ գաղտնութեամբ չէր գործեր, այլ հանդարտակ էջմիածին կու գար բռնութեամբ իր միտքը գործադրել։ Առաջ կեղծ բարեպաշտութեամբ կը մտնէին ի սուրբ պաճարն Մխիթարին, բայց քաջալերեցաւ և օրհնութեամբ լցեալ իսկ կիրակոս, որ գաղտ չունէ հանդիպիլ էջմիածինը կը թողու, և ֆախրաւոր արքեալ դարձեալ է դուռ էրէսթանէի մէջ քաղաքին։ սակայն իրեն վրան եկողները չէին հանդարտիր, և կը հետապնդէին օրհնել ասդ և անդ, մինչեւ որ տէղը իմանալով գոյն ընդ, և իրենց հակառութեան ներքեւ պահեցին, մինչեւ որ ասեալ գարան ա՛ւ բռնաւորն Ալեքսի, որ է երեւանի նաղուպ պէկը։ Կաթողիկոսի մը դատաստանն ու գահընկեցութիւնը ազգային ժողովի իրաւունքն էր, և ոչ օտարազգի տիրապետողին, սակայն ոչ միայն սկիզբէն իվեր վարժուած էին քաղաքական իշխանութեան վճռով գործել, այլ սոյն այս ետքը պէկն էր, որ վաղարշապատի ժողովին դիւրութիւն և պաշտպանութիւն էր ընծայած, և նորա հովանաւորութեամբ կիրակոսի կաթողիկոսութիւնը հաստատուած և հաչակուած էր, և փոփոխութիւնն ալ հնար չէր առանց անոր հաւանութեան կա-

տարել։ Եաղուպի ատեանին մէջ առջեւ կ'անցնի Հերմոնեցին գործը բացատրել, և կ'ըսէ, թէ Կիրակոս ալ է ձերած, ալ է տէր-պանէայ, այնպէս որ երէք կոչ գոս, որ հարկաւ չպիտի այդ նոքէ գոս, կոչ մը ասիկա ցոյց ալ է, չէ ձերմէ, և նոր եպիսկոպոս և կոնդակով յեռանդրեմ (ԿՈՍ.79)։ Եթէ իրօք այսպէս խօսեցաւ Հերմոնեցին, պէտք է ըսել թէ զառամած և ցնորած էր, ապա թէ ոչ աւելի անտրամաբան խօսք մը չէր կրնար ըսել Տաթեւեան դպրոցին մեծ վարժապետը։ Եաղուպ իսկ կրցաւ անոր երեսը զարնել, թէ Կիրակոսի եպիսկոպոսութիւնը ու կաթողիկոսութիւնը նոյն իսկ իրենք էին կատարած, որուն Հերմոնեցին չկրնալով պատասխան տալ, սոսկալ օբանայ ղեմբոքոնէն, և թողլէն և ընկերք նոքին կատարելցին, կ'ըսէ, ուզելով իմացնել թէ Մեծոփեցիին և վաստրականցոց աղդեցութեան ներքեւ կատարուեցան ձեռնադրութիւնները։ Կիրակոս լաւ կոյր և անմտանալ, հարկաւ իւր սիրտին մէջ ցաւելով այդ ատիճան լրբութեան վրայ, և միայն Մեծոփեցիին աչակերտներէն կարապետ վարդապետ մը և ազգականներէն Մերուն անուն երիտասարդ մը, կը համարձակին պատասխանել, թէ բողոքողները ալ են ճշմարիտ, այլ խոբեբայ (ԿՈՍ.80), սակայն բողոքողներու խումբէն Ստեփանոս վարդապետ մը, հաւանաբար եղեգեցին (ԿՈՍ.87) եհաւ ղբեբան Մերունի, և լաւ աբեմբ։ Եաղուպ բարկացեալ բողոքողները կը մերժէ, սակայն Հաւուցքառեցին առանձինն տեսակցելով, և անհամբ աբեմի տալով, Եաղուպը կը համոզէ, որ ինքն վրան չունի կաթողիկոսն աբտաս հանելը և ալ հանելը, և թող տայ ազգին որ ուզածնուն համեմատ գործեն, և իրենց հաւնած անձը, Գրիգոր Արտազեցին, կաթողիկոս ձեռնադրեն (ԿՈՍ.80)։ Այսպէս կը վճռուի Կիրակոսի գահընկեցութիւնը և Գրիգորի կաթողիկոսութիւնը, և յիշատակագիրը իրաւունք ունի ըսելու. Գրէթէ եպիսկոպոս Մանուկ նոտա թուղթով և ղբեբով (ՍԱՒՐ.175)։

1469. Այդ գործողութեանց ոչ մի պարագայն կանոնական՝ և ոչ մի պատճառանքը հիմնական չըլլալուն, բացարձակ առմամբ հնար չէր Կիրակոսի կաթողիկոսութիւնը դադարած և Գրիգորը իրաւամբ կաթողիկոսութեան անցած համարիլ։ Սակայն մեր պատմագիրներէն և ժամանակագիրներէն և յիշատակագիրներէն ամենքն ալ 1443'ին կը դնեն Գրիգորի կաթողիկոսութիւնը, և Կիրակոսի միայն երկու տարի կաթողիկոսութիւն կուտան, ինչպէս Մեծոփեցին ալ կը գրէ, թէ ոչ ոք հայրապետ տէր Կիրակոս երկու ամ նոտա չունա պարբերութենեն է կոնդակին (ԿՈՍ.75)։ Մենք ալ պիտի հետեւինք այդ կարծիքին, և այս կէտէն դադարեալ նկատելով Կիրակոսի պաշտօնավարութիւնը, իրեն յաջորդին անունով պիտի մակագրենք մեր յօդուածները։ Այս միտքին մեզ մօտեցնողը ոչ թէ բացարձակ արդարութեան սկզբունքն է, զի ոչ մի իրաւունք կրնայ յառաջ բերուիլ Կիրակոսի պաշտօնանկութիւնը արդարացնելու, այլ միայն իրական եղելութեան հիմամբ է որ այդ տեսութիւնը կ'ընդունինք։ Կիրակոս որ պաշտօնին հետամուտ չէր, բնաւորութեամբ ալ անկէ հեռու էր, և առաքինութեամբ ալ պնդելու կամք չունէր, երբոր տեսաւ զայրացած փոթորիկը, և եկեղեցական դասուն աղմկալից հակառակութիւնը, ոչ միայն չարժուեմ մը չըրաւ և բառ մը չարտասանեց իւր իրաւունքը պաշտպանելու և հակառակորդներուն լրբութիւնը զսպելու, այլ կարծես թէ ուրախանալով որ անտանելի բեռէ մը կ'ազատի, իսկոյն ձեռնթափ եղաւ գործէն, պահանջուած հրաժարականը յօժարակամ տուաւ, և պաշտօնապէս պաշտօնէ քաշուեցաւ, թողլով ասպարէզը իւր հակառակորդներուն, որպէսզի գործէն ինչպէս կ'ուզեն, և աթոռը յանձնեն ում կը հաճին։ Միւս կողմէն գործին գլուխը գտնուողները, ազգային ժողովի կերպարանը կուտային իրենց ձեռնարկին, և համախումբ որոշումով դադարեալ կը հռչակէին մէկը և աթոռ կը բարձրացնէին միւսը։ Այդպիսի պարագաներուն մէջ, ոչ թէ ներքին արդարութեան փաստը՝ այլ ձեւական օրինաւորութեան պայմանն է, որ որոշման վաւերականութիւնը կը վճռէ։ Եւ Կիրակոս յանիրաւի, բայց ձեւական օրինաւորութեամբ կաթողիկոսութենէ կը դադարէր, և գործը իւր յօժար հաւանութեամբ

ԿԻՐԱԿՈՍ
ՑԱՆՁՆԱՒՈՒ

կը հաստատէր։ Իսկ ազգային և եկեղեցական անհատականէն անհնարին հարուած մը կը արտուէր հայրապետական աթոռին նշանակութեան և ազգային նուիրապետական միութեան, և կը ջնջուէր այն գեղեցիկ սկզբունքը որ երկու տարի առաջ հաստատուած էր Կիլիկիոյ աթոռին դադարմամբ և Աղթամարի աթոռին հաստատութեամբ։ Այն համերաշխ և գործակից և մտացեալ հայրապետութիւնը որ վերստին փայլելու և արդիւնաւորելու սահմանուած էր, նորէն իր բաժանեալ և պառակտեալ դրութեան վերադարձաւ, և մինչեւ այն օր երկփեղկեալ կաթողիկոսութիւնը հաւասարակշիռ կերպարանի փոխուեցաւ, ոչ միայն Աղթամար նորէն գլուխ քաշեց, այլ և Սիս իւր դադարած աթոռը հաստատակեցաւ վերականգնել, ազգային հաստատութեան և գործակից արդիւնաւորութեան յայտնի վնասներով։ Այն գեղեցիկ խորհուրդները որոնցմով առաջնորդուեցան 1441 տարւոյ գործիչները, չտեսով խանգարեցան 1443 տարւոյ աւերիչներով, և ըսել թէ միևնոյն անձերն էին գործիչներն ալ աւերիչներն ալ։

Տ· ԳՐԻԳՈՐ Ժ· ՋԱԼԱԼԲԷԳԵԱՆՑ

1470· Գրիգոր՝ որ կիրակոսի տեղ կաթողիկոսութեան կը բարձրանար, որդի էր էր պարոն Ջալալ բէգին (ՓԻՐ· 130), կամ ճէլալ պէյին, որով ազնուատոհմիկ մէկ մը և պետութեան առջեւ դիրք ունեցող մէկու մը զաւակ եղած ըլլալը կը յայտնուի, զի ընդհանրապէս պետական չրջանակներու հետ չափաւ ունեցողներն էին, որ տաճկական պատուանուն և երբեմն տաճկական անուն ալ կը կրէին։ Սովորաբար Մակուցի կամ Արտազեցի կամ Սուրբ-Թադէոսցի ալ կը կոչուի, որովհետեւ եպիսկոպոս էր Արտազի՝ որ է Մակու քաղաքը, ուր է Սուրբ Թադէոսի մայրավանքը, բայց անհատականները չէ որ ծննդեամբ ալ նոյն քաղաքէն եղած ըլլայ, թէպէտ ոչ ուրիչ յիշուած կը գտնենք։ Աչակերտութիւնը Տաթեւեան դպրոցէն էր, Հերմոնկիին չրջանէն, և իր տոհմային ազնուութեամբ և անձնական գործունէութեամբ չուտով յառաջ եկած էր։ Նախընթաց յօդուածներուն մէջ տեսայ իր անունը յիշեցինք, իբր փոխադրութեան աչխատողներէն մէկը, և նոյն իսկ 1441'ին յարմարագոյն ընտրելիներէն մին նկատուած, որ թերեւս յաջողած ալ կ'ըլլար, եթէ նոյն իսկ իրեն վտանգակիցներէն՝ Հերմոնեցիին և Հաւուցքառասնցիին նախանձոտ տեսութիւնները արգելք եղած չըլլային (§ 1457)։ Սակայն վերջապէս երբ Սիսեցոց և Վասպուրականցոց ներհակընդդէմ մրցակցութիւնը յուզուեցաւ, և Սիսեցիք զօրացան, Գրիգոր իբրեւ ընտրելագոյն կաթողիկոսացու անհակառակ ամէնէն ընդունուեցաւ՝ Մարկոս վրաստանցիին մէջտեղ իյնալովը (§ 1467)։ Մինչ զիտողութեան արժանի կէտ մը կը տեսնենք, որ Մեծոփեցին այդ վերջին չփոթներուն և կիրակոսի դէմ մղուած հակառակութիւններուն մէջ, նչանակելի դեր մը չտար Ջալալբէգեանցին, թէպէտ կը մեղադրէ անոր յանձնառութիւնը, թէ անխոհեմ այն եպիսկոպոսը գրգռեց և մեծ էր երկեւիլն արտաքին գործերուց, ու հանուելն (ԿՈՍ· 81)։ Բայց արդար ըլլալու համար պիտի բանք, որ եթէ Գրիգորի ընտրութիւնը տեղ և դատապարտելի պայմաններու մէջ կատարուեցաւ, որոնցմէ ինքն բոլորովին անհաւան չկրնար սեպուիլ, և եթէ իր կաթողիկոսութիւնը ձախող եղելութեանց առիթ ընծայեց, սակայն իր պաշտօնավարութիւնը անպատուական և վնասակար եղած չէ, վասնզի ինքն է որ նորոգեց արքեպիսկոպոսութիւնը Լըճեցոյ (ԴԱՎ· 336), և ինքն է գործակից որ անոր շրջանակը ընդարձակուեցաւ, տանչ նախապէս ան նորոգեցաւ գլխաւորապէս երեք եպիսկոպոսութիւնք ի Ներսէսեան և արքեպիսկոպոսութիւնք (ՋԱՒ· 19)։ Իր գործունէութեան գլուխ աւելցնենք նաև, թէ նախորդ և գահընկէց կա-

Թողիկոսին հանդէպ ալ չուզից բռնութեամբ վարուիլ կամ նախանձով ճոխանալ, և մարդասիրական ընթացք մը պահից։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՔ ԵՒ ՍԻՒՆԵՑԻՔ

1471. *Հազիւ թէ Զաքարիա Հաւուց-թառնցին առատ կաշառքով և համոզիչ խօսքերով Եաղուպ պէկի հաւանութիւնը ստացաւ, նորէն ամէն կողմէ հաւաքուեցան, և էջմիածնի Մայր Տաճարին մէջ կաթողիկոսական ձեռնադրութեան կարգ կատարեցին Գրիգորի վրայ։ Մեծոփեցին մանրամասնութիւններ չտար, հարկաւ տալու սիրտ ալ չունէր, Պապրթէցին ընդհատ, սակայն ոչ հակասական, այլ իբրեւ նախապատրաստութիւն, ակնարկեց Սարգիս Սալնապատցի վարդապետին 6,000, իսկ ամբաստանութիւն ընծողներն եղած են Զաքարիա և Անտոն եպիսկոպոսներ (ԿՈՍ. 82), որ պէտք է ըլլան Հաւուցթառնցին և Խորվիրապցին (§ 1460)։ Տուգանքի հնթարկուողներէն կիրակոս յիշուած էր Վասպուրականցի ժողովականներուն կարգին (§ 1453), իսկ Սարգիս ոչ։ Երկուքէն զատ հալածուողներ ալ եղած ըլլալը կը հետեւցնենք Մեծոփեցիին ըսելէն, թէ ցաւ եղէր էպիսկոպոսիս (ԿՈՍ. 82)։ Միայն իրեն մասին բան մը չըսեր, և մենք ալ պիտի հաւանինք հետեւցնել, թէ նա կիրակոս կաթողիկոսին հետ քաշուեցաւ, և անոր հետ մասնաւոր տուն փակուեցաւ, և ծերունի գահընկէցը չցաւցնելու համար իր մխիթարիչ ընկերին ալ խնայեցին։ Անանուն ժամանակագիրի մը ըսելը, զի և վիրքն վրդովեաց զսրտիս եղոյն (ԴԱՎ. 485), ոմանք Մեծոփեցիին վրայ ուզեցին մեկնել, զայն նկատելով ժամանակագրութեան հեղինակը (ՓԻՐ. 130), բայց աւելի յարմար է կիրակոս Ուչտունի վրայ մեկնել, բաղդատելով Մեծոփեցիին պատմածին հետ (ԿՈՍ. 81)։*

ԿԻՐԱԿՈՍԻ ԴԻՐՔԸ

1472. *Երբոր կիրակոսի պաշտօնէ դարձնելուը վասպուրականցոց գործն ու ազդեցութիւնը տկարացաւ, Մեծոփեցի Թովմասին այլեւս պէտք չէր մնար էջմիածին մնալ, և կը գտնենք զինքն Մեծոփ դարձած և վանքին առաջնորդութիւնը ձեռք առած ըստ առաջնոյն։ Ինքն յայտնապէս բան մը չի գրեր, բայց 1443'ին վանահայրութեան վրայ գտնուիլը կը յիշուի (ՓԻՐ. 130), որով չատ երկար մնացած չըլլար կիրակոսի հետ, և անոր մօտէն հեռացած կ'ըլլայ, տեսնելով որ այլեւս իրեն ընկերակցութեան կամ օգնութեան պէտք չունի, քանի որ Զալալբէգեանց ոչ մի կերպով չէր խնտանար անոր դէմ, մինչեւ իսկ անհակառակ կը ներէր որ կիրակոս իբրեւ կաթողիկոս պատուուէր ու յիշատակուէր։ Ծիշատակութիւններէն ոմանք վասպուրականի մէջ գրուած են, ուր կիրակոսի կողմը զօրաւոր էր և կրնար անոր համար պնդել, և Գրիգորի անունը յիշատակել չուզել, ինչպէս են 1446'ին Արճէշ (ՓԻՐ. 153) և Վան (ՓԻՐ. 154), և 1447'ին*

Աթոկէ (ՓԻՐ. 157) գրուած յիշատակարանները։ Սակայն ասոնց հետ կան 1445'ին Հալաթ (ԹՈՐ. Բ. 306), և 1446'ին Բաղէշ (ՓԻՐ. 151) գրուածներ ալ, որոնք վաւպուրականէ դուրս են։ Բայց աւելի նշանակալից են այն յիշատակարանները ուր Գրիգոր ու Կիրակոս զոյգ կը յիշուին, զոր օրինակ 1444'ին Արզնի գրուածը (ՓԻՐ. 133), որուն նմաններ սակայ կը հանդիպին (ԱՐԱ. 230), բայց առանձին յիշուելու արժանի է Մեհրեյարոյց կոչուած աւետարանը, Ախճէ գրուած և Մեծոփ ծագկած 1445'ին, է հայբոլեաբոլեան պետան կէրեսէ սուբ կոնդիկն էջմիածին, և է հայբոլեաբոլեան պետան Գրէգորէ ալեսաւոր Լուսաւորչին գերոյ, երբ հոն էր և առաջնորդութիւն կը վարէր. ապոստաքենակ սուրբ սեխին Մեծոփոյ սուրբ Ասպոստաքենոյ պաճորին՝ Թոմայ գեղ բռնուելէ (ՓԻՐ. 147), որ է նոյն ինքն Մեծոփեցի պատմիչը և ցաւով էջմիածինէ հեռացողը։ Ջնոր կրնար ենթադրել որ Մեծոփեցին ներէր Գրիգորի անունը իր վանքին մէջ կիրակոսի հետ զոյգ յիշատակել, եթէ Կիրակոս հալածական մը և Գրիգոր հալածիչ մը հանդիսանար ասոր աչքին։ Հետեւաբար կրնանք վստահօրէն ըսել, թէ Գրիգոր Կիրակոսի պատուական դիրք մը կազմած էր, կաթողիկոսական ձեւ և պատիւ ալ չվայելով, թէպէտ Վանատանի նախկին ճգնաւորը, էջմիածնի չուրջը գտնուող վանքերէն միոյն մէջ նորէն իր ճգնողական կեանքը կ'անցընէր, անցած դարձածէն անտեղեակ, և ըլլալիքին անտարբեր, աղօթքէ միայն սպասելով եւ կեղեցւոյն և ազգին բարիքը։ Երկու կաթողիկոսներու անուններուն զոյգ յիշատակուիլը, եթէ առաջին անգամ Ջալալբէկեանի կողմէն փափկանկատ զգացումի արդիւնք եղաւ, սակայն ապագային զեղծումներու դուռ և աթոռակից կաթողիկոսներու չրջան մը կազմից։ Կիրակոսի կեանքը աթոռէ քաչուելէն ետքը վեց տարի եւս տեւած է, և մահը տեղի ունեցած է 1448'ին, մեծաւորապար ութանասնամեայ եղած ատեն, թէպէտ ստոյգ պատմութիւնը չունինք։ Ասոնցմէ և սրբակեաց անձ մը եղած էր միշտ, այնպէս ալ վախճանելուս, բարձր աստիճանին հասաւ, գրեթէ դիպուածով, և միայն իր անունը ծառայեց աթոռին փոխագրութեան գործը նորոգելու։ Անտեղի չէր ըլլար եթէ Հայոց եկեղեցին ալ պատուէր կիրակոսը, ինչպէս Հռոմայ եկեղեցին իր սուրբ կը պատուէ անապատէ եկած և չուտով անապատ գարձած կեղեստինոս ե պապը։

ԹՈՒՄԱՍ ՄԵՑՈՓԵՑԻ

1473. Գրիգորի կաթողիկոսութեան գործերը պատմելու չանցած, յարմար կը սեպնք Թոմայ Մեծոփեցիի մասին ըսուելիքն ալ վերջացնել։ Եռանդուն և տոկուն գործունէութեան վրայ տեսանք միչտ Մեծոփեցին, անդստին այն օրէն որ 12 ընկերակիցներու խումբ մը կազմելով, և Հայ եկեղեցականութեան մասերը բաժնող պատուարները քանդելով, Վաստպուրականէ անցաւ Սիւնիք (§ 1396), և իրեն գրաւեց հռամեան Տաթեւացին ու պան Վաստպուրական բերաւ (§ 1399)։ Պատահական գործ մը չէր Մեծոփեցիին յրաժը, և պէտք է ընդունիլ թէ հեռաւոր և բարձր նպատակներ ծնած էին անոր միտքին մէջ։ Բաւական ըլլայ նորէն միտք բերել անոր գործունէութեան արդիւնքները, զորս պատմութիւնս կարգին հետզհետէ յիշեցինք, մինչեւ որ նորա մեծ գաղափարը իրագործեցաւ, և 1441'ին Հայ եկեղեցւոյ միահեծան հայրապետը հռչակուեցաւ էջմիածնի մէջ։ Մեծոփեցին գոհունակութիւնն ալ ուներցաւ իր յարմար տեսած անձը նստեցնել կաթողիկոսական աթոռին վրայ, բայց երբ իր յաջողութեան գագաթնակէտը հասաւ, այնտեղէն սկսաւ իր ատոր խուսարիլ, և գործը ձախողութեան դիմից։ Վաստպուրականցիք իրենց յաջողութեամբ սկսան դէղծանիլ, էջմիածնի մէջ իրենց բացարձակ գործունէութիւնը հաստատելով և Սիւնեցւոց նախանձը գրգռելով։ Մեծոփեցին ալ կ'ընդունի այդ մեղադրանքը, երբ կը խոստովանի, թէ անէքդոտներն մեջ աբբէն կոնդակոն կիրակոս և Վէրաբացոյ նորէն (ԿՈՍ. 75), բայց պէտք չէ մոռնանք թէ կիրակոսի գլխաւոր վերակացուն ինքն էր, և չկրնար ինքզինքը պատասխանատուութենէ դէրծ կարծել։ Թերեւս այս խիղճն է որ իրեն կը թելադրէ տեղի տալ, որեւէ մաքառում ու մրցակցութիւն չյուզել, այլ լուռ ու մունջ քաչուիլ իր վանքը, և գործը թողուլ իր ընթացքին, գրեթէ անգործ կեանք

մը անցընելով մինչեւ իւր մահը։ Պատմութեանը մէջ կ'ըսէ թէ չեռ չեռան ամոց ոխոյ (ՄԾԴ·44), որով փոխադրութեան ձեռնարկէն առաջ զայն գրած կ'ըլլայ, իսկ փոխադրութեան յիշատակարանները Մնծոփ դառնալէն ետքը գրած է։ Երկրորդ հատուածին վերջը 1443 թուական է նշանակուած (ԿՈՍ·74), և գրուածին գոհունակ ոճը կը ցուցնէ թէ առաջին երկու մասերը գրած է էջմիածնի մէջ, նոյն տարուոյն բոկիզքները, տակաւին կիրակոսի դէմ չարժումը չկասած, իսկ երրորդ հատուածին մէջ, կը գրէ, թէ փոթորիկին լրանալէն ոչ երկոս ամ է (ԿՈՍ·86), որով 1446'ին գիրը առած կ'ըլլայ այդ վերջին հատուածը, որ բովանդակ այրած սիրտի մը զեղուածն է, և զսպուած կիրքի մը պորթկացումը։ Սուրբ Գիրքին մէջ յիշուած բոլոր տիրադրուժներու և քահանայապետ անսրգողներու օրինակները կը կուտէ Կիրակոսի դէմ հրնողներուն գլուխը, յատկապէս կը զայրանայ Հերմոնեցիին դէմ, ակնջի իլցեալ, ոգիսկ ծերոսի՝ չէ գեղէն է փոխուիլ, և ծոթալ բերելմանէ ծնրին դէմ (ԿՈՍ·84)։ կը զարմանայ թէ տակաւին ծղոյ ալ եին է քերան նոցա (ԿՈՍ·86), բայց կը մաղթէ Աստուծմէ դ' առնել նոցա գոգոգոն չահոքին գոգոգոնն, այլ ասգ առնել նոցա ընդ-ընէն (ԿՈՍ·87)։ Սակայն և այնպէս ապաստած միսիթարութիւնը չունեցաւ, և ցաւով կնքէց իւր կեանքը կիրակոսէ քիչ առաջ։ Ծիշատակարան մը 1446'ին կը դնէ նորա մահը, վերնոսն ամ կացեալ անդ ի Մնծոփ (Փ՝Ր·148), սակայն նորէն ե և է թուաստանութեան չփոթութիւն պէտք է ընդունիլ, վասն զի 1448'ին Յակոբ Ղրիմեցի վարդապետը կը յղէ անոր ազգականաց և տոմարի բացատրութիւնները (ՓԻՐ·158)։ Ըստ այսմ 1448 տարին ընդունուած է իբր Մնծոփեցիին մահուան թուական, իսկ տարիքը հօթանասունը անցած պէտք է հաչուել։

ԱՐԵՒԵԼԱԿՈՂՄԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ

1474. Փոխադրութեան ձեռնարկը չբայարեալ տալու համար, երկրին քաղաքական կացութիւնը բացատրել յետագային։ Եաղուպ պէկ, Երեւանի կառավարիչը, կամ լաւ նա ինքնուրոյն իշխանը, ննջարկեալ էր Ձիհանչահի կամ Ջահանչահի, Գարաքօյունլուներու վեհապետին, որ ֆոփչահ անունը կը կրէր, կեդրոնը հաստատած էր Թավրէզ, և իրեն կը հպատակէին Աստրպատական, Պարսկահայք, Վասպուրական, Այրարատ, Սիւնիք, Աղուանք և Վրաստան (§ 1430)։ Նա 1437'ին յաջորդած էր իր եղբօր Իսքէնտէրի (§ 1428), և անարկու եղած չրջականներուն, որով համեմատաբար հանդարտութիւն կը տիրէր։ Իսկ Ագքօյունլուներուն վեհապետը կամ սուլտանը Օթման 1435'ին սպանուելէն ետքը (§ 1428), իրեն յաջորդած էր որդին Համզա, միշտ կեդրոնը ունենալով Միջագետքի մէջ՝ Ամիդ կամ Տիարպէքիր քաղաքը, և իշխանութիւնը տարածելով Հայաստանի Ծոփք և Աղձնիք և Տուրուբերան նահանգներուն վրայ։ Համզայի իշխանութիւնը խիստ եղաւ քրիստոնէից դէմ, մինչեւ իսկ Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոսին Օթմանի արտօնութեամբ չինել տուած Ս. Թէոդորոսի կաթողիկէին (§ 1427) գմբեթը հրամայեց վար առնել, մինարէներէն աւելի բարձր ըլլալուն համար, և Նաղաշ ցաւին չդիմանալով պահ մը Ամիդէ հեռացաւ, և Տրապիզոն ու Կոստանդնուպոլիս հանդիպելով անցաւ Կաֆա, և հոն մնաց մինչեւ որ Ձիհանկիր սուլտան հօրը յաջորդելով 1443'ին, Նաղաշը փնտռեց, գտածուց 1447'ին, և արտօնեց գմբեթը վերաչինել, զոր տասն օրուան մէջ լրացուցին Ամդեցիք, բոլոր հայաբնակութիւն տիւռ և գիշեր աչխատելով։ Այս առթիւ նոյն եկեղեցւոյն մէջ գտնուեցաւ Ս. Նշանը կամ Խաչափայտի մասունքը, զոր Սարգիս կաֆայի եպիսկոպոսը Նեգինէոս պապէն նուէր առած էր (§ 1440), և ինքն ալ Նաղաշին ընծայեց։ Աւանտափը կատարուեցաւ վարագայ Խաչին տօնին, 1447 հոկտեմբեր 1'ին, որ տարեկան հանդիսութիւն եղաւ Ամդեցիներուն (ՀԱՑ·574)։ Գարաքօյունլուներու և Ագքօյունլուներու փոխադարձ թշնամութիւնները բոլորովին չդադրեցան, թէպէտեւ հայկական գաւառներու վրայ չատ չծանրացան, և տեւեցին մինչեւ որ Ձիհանչահ գօրացաւ և իրեն հարկատու բրաւ Ձիհանկիրը 1461'ին։ Ձիհանչահ դէպ Արեւելք ալ իւր իշխանութիւնը ընդարձակած էր, և հետզհետէ նոր մասերու տիրե-

լով ամբողջ Պարսկաստանը նուաճած էր 1460'ին, հանելով զայն Պուսայիտի կամ Ապուսայիտի ձեռքէն, որ 1451'ին յաջորդած էր Շահռուհ մեծ ինքնակալին թաթարաց։ Ծիհանչահի իշխանութիւնը ընդհանուր առմամբ նպաստաւոր էր քրիստոնէից, և անկէ օգտուելով տեղի ունեցան այն ներքին չփոթութիւնները, որոնց սկզբնաւորութիւնը տեսանք Կիրակոսի գահընկէցութեամբը։ կարծես թէ արտաքին չփոթութեանց նուաճելը ներքիններն կը քաջալերէր։

ԱՐԵՒՄՏԱԿՈՂՄԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ

1475. Արեւմտեան Ասիոյ երկիրներուն մէջ ալ երեք տարբեր տէրութիւններ կ'իշխէին, Եգիպտացիք և Գարամանցիք և Օսմանեանք։ Պաղեստին և Ասորիք և Կիլիկիա Եգիպտացւոց ձեռքն էին, և Սիսն ալ անոնց գերիշխանութեան ներքեւ էր։ Գարամանցիք Փոքր-Հայքը ունէին, տարածուելով դէպի Բարձրհայք և Պոնտոս, իսկ Փոքր-Ասիան և կղզիներ, և Եւրոպական կողմեր Օսմանեանց ձեռքն էին, որոնց կ'իշխէին յաջորդաբար երկու զօրաւոր վեհապետներ, Մուրատ Բ և անկէ ետքը Մէհէմմէտ Բ որ հօրը գահը ժառանգած էր 1451'ին։ Ծունական կայսրութիւնը կոստանդնուպոլսոյ անձուկ շրջափակին մէջ պարփակուած, վերջին ճգնաժամի օրեր կ'անցնէր։ Ծովհաննէս Է Պալէոլոգի, Փլորինտիոյ ժողովով ու Հռոմի հետ միաբանութեամբ ձեռք ձրդկլ յուսացած օգնութիւնը՝ պարապի ելած էր, բայց Ծոյներ անկէ, զատ ապաւէն մը չունենալով, երբ մէկ կողմէն կոստանդնուպոլսոյ պարիսպները ամրացնելու կ'աշխատէին, միւս կողմէն ալ պապական պատուիրակներուն հետ Հռոգւոյն Սրբոյ բղխման խնդիրներով կը զբաղէին, որ հնար բլլայ Հռոմը համեցնելով Լատինական դունդերը օգնութեան բերել։ Ծովհաննէս Է'ի չաւղին վրայ կը քալէր կոստանդին ԺԲ Պալէոլոգն ալ, որ եղբօրը յաջորդած էր 1448'ին։ Մեհէմմէտ Բ հազիւ գահ բարձրացած, ուզեց վերջին հարուածը տալ հոգեվար կայսերութեան, և 1453 մայիս 29'ին կոստանդնուպոլիսը գրաւեց, և ծաթին կամ Ցաղթական Նշակուեցաւ, Սուրբ Սոփիայի կաթողիկէին մէջ իսլամական աղօթքը հնչեց, աւերած ու կոտորած պահ մը տիրապետեցին, կայսրն ու պատրիարքը պատնէշներու վրայ ինկան, և Օսմանեանց թագաւորութիւնը կայսրութեան բարձրացաւ։ Արդէն խօսեցանք համակիր յարաբերութեանց վրայ, զորս Թուրքեր և Հայեր փոխադարձաբար ունէին և կը մչակէին (§ 1386)։ Մուրատ Բ աւելի ընդարձակած էր իր տէրութիւնը, դէպի Փոքր-Հայք. Գարամանցիները հետզհետէ հարուածած էր, Եգիպտացիներէն ալ քաղաքներ գրաւած էր, որով աւելի չատցեր էին Օսմանեանց հպատակ Հայերը։ Ծունական կայսերութեան անկման հետեւանքներէն մին եղաւ կոստանդնուպոլիսը մայրաքաղաք հռչակելը, և ուզեց անոր մէջ Հայական հոծ գաղթականութիւն մը հաստատել, իբր հակակշռող Ծունական բնակչութեան, քրիստոնեաներու դիմաց քրիստոնեաներ դնելով, քանի որ իւր բարձր քաղաքականութիւնը պիտի չներէր իրեն մայրաքաղաքին մէջէն քրիստոնեայ տարրը ջնջելով հաստատուիլ։ Ակէ սկիզբն առած է Բիւզանդական ոստանին մէջ Հայկական մեծ գաղութին ներկայութիւնը, և պատրիարքական աթոռով և իշխանութեամբ ճոխանալը, զոր իւր կարգին պիտի լուսաբանենք։

ԱՂԹԱՄԱՐԻ ԽԶՈՒՄԸ

1476. Աղթամարի Չաքարիա կաթողիկոսը, որ Վասպուրականցիներուն վստահանալով և էջմիածին փոխադրուելու յոյսով հաստատակած էր վաղարշապատի ժողովին դումարման և էջմիածնի աթոռին վերանորոգման, յուսախաբ եղաւ երբոր Կիրակոս ընտրուեցաւ, բայց տուած խոստումէն ետ չկեցաւ, վանդի ընտրեալը Աղթամարի հին թեմականն մըն էր, որ Աղթամարի աթոռը կ'արձակէր ու կ'օրհնէր, և իւր գլխաւոր ակընկալութիւնն ալ դէռ կրնար իրականանալ։ էջմիածնի և Աղթամարի յարաբերութիւններ նաչտ ընթացան Կիրակոսի երկամեայ կաթողիկոսութեան միջոցին, բայց նոյնպէս չէին կրնար մնալ երբ Կիրակոս հեռացաւ, Վասպուրականցիներ ցրուեցան և Սիսնցիք տիրեցին։ Չաքարիա խզեց իւր յարաբերութիւնները, Գրիգորի հետ չպահեց նոյն բնթացքը զոր Կիրակոսի հետ հաստատած էր,

և չուզելով Գրիգորի կաթողիկոսութիւնը ճանչնալ, և իրաւունքի տեսակէտէն կիրակոսը կաթողիկոս ընդունելով, զինքն ալ անոր աթոռակից և Ամենայն Հայոց հայրապետութեան վարիչ կը նկատէր։ Վանի մէջ 1446'ին գրուած յիշատակարան մը այդ տեսութիւնը կը հաստատէ, ի կոնդակաւորեցեան պեռան Կիրակոսէ և պէր Զաքարէյէ բացատրութեամբ (ՓԻՐ. 154)։ Բայց երբ կիրակոս մեռաւ, զինքն յաջորդ և ժառանգ նկատուց, և 1448'ին չէյէ ղառաջին էքբե կոնդէկոս էջմիածնէ (ԱՐԱ. 230), և այսպէս կը չարունակէ սպասելով իրօք ալ էջմիածին փոխադրուիլ, և Ամենայն Հայոց աթոռին վրայ բազմիլ Մայր տաճարին մէջ, ինչ որ բաւական ուշ կրցաւ յաջողցնել։ Աւելորդ կը սեպնենք վնտռտիլ թէ ինչ դեր ունեցաւ Մեծոփեցին այդ ճիգերուն մասին, և թէ քանի՞ լերկց արդեօ՞ք Զաքարիայի գաղտնի հնարքները, որովհետև կիրակոսի մահուանէ առաջ իրական ձեռնարկ կամ յայտարարութիւն մը տեղի չէր ունեցած, իսկ մահուանէ ետքն ալ Մեծոփեցին այլևս կ'ընդանի չէր։ Իւր վերջին յիշատակարանին մէջ ալ Աղթամարի մասին յայտնի ակնարկ մը չունի։

ԿԻԼԻԿԻՈՑ ԱԹՈՌԸ

1477։ Աղթամարի խղումէն ետքը կաթողիկոսութիւն ունեցաւ Կիլիկիոյ բաժնուիլը։ Փոխադրութեան թուականն, այսինքն 1441'էն ետքը Կիլիկիոյ աստացած կացութեան վրայ արդէն տեղեկացած ենք (§ 1462), և Մուսաբէգեանցի կենդանի կամ մեռած ըլլալուն մասին, ինչ ալ ըլլայ ճշմարիտը կամ ճշմարտանման կարծիքը (§ 1463), ստոյգ է թէ Կիլիկիոյ աթոռը միջոց մը իսպառնացաւ և դադրեցաւ, և յաջորդութիւնը ընդհատեցաւ Սսոյ մէջ։ Ահեղ յիշատակարանները, որ վկայեն թէ աթոռն ոչ եղ է Սիս խոփանեցաւ, կամ անոնց Սոյ ասնայն ձայց (ՓԻՐ. 126), այնպէս որ Մուսաբէգեանցի հրաժարած կամ պարտկեց եղած, մեռած կամ Գահիրէ փախած ըլլալէն, իրաւական և իրական կացութիւնը չփոխուիր։ Մէկը կ'ըսէ թէ, ոսոբ անոնց Լուսաւորչէ է մոյսէսեան Կիլիկիոյ, տան հինէ ամ խոփանել ձայց վան անյայտ լինելոյ ոսոբ Աչքն (ՍԻՄ. 223)։ Մեծոփեցին կը դրէ, թէ ղբրայ և զիւնն ազնաբարոյութեան, է Կիլիկեցւոցն է տհամայսպետութեան տարեթ, Ասուածդ ազաթեց, և անկէց հաքն է, որ պարյնել վերջին հակոսոս կոնեմբ կոնոչիս եղէն (ԿՈՍ. 85), որ է ըսել թէ Սսոյ աթոռին դադարելուն և վերականգնելուն մէջ, ընդհատման միջոց մը անցած է։ Անգամ մը որ Կիլիկիոյ աթոռը խափանել էր, հաւանական չէր անոր վերականգնելը եղէ էջմիածնի մէջ չփոթութիւններ ծագած չըլլային, կիրակոսի գահընկեցութիւնը տեղի չունէնար, Գրիգորը կաթողիկոս չհռչակուէր, Զաքարիա իւր յաջորդութիւնները չիպէր, և Կիրակոսի ու Գրիգորի ու Զաքարիայի միանգամայն կաթողիկոսութիւնը ճանչցողներ չգտնուէին։ Այդ պատճառով է որ Կիլիկեցիներն ալ քաջալերեցին հերձ կաթողիկոսներն ալ չճանչնալ, և չորրորդ մըն ալ իրենք հռչակել։ Այդպէս կը խորհի Մեծոփեցին ալ, որ Հերմոնեցիին յանդիմանելով կ'ըսէ, Կիլիկեցիէն վճռաբանքիսութեան և անհամոզութեան տ ըսեցին, և այս պատճառով պարյնել վերջին հակոսոս կոնեմբ կոնոչիս եղէն (ԿՈՍ. 85)։ Ովքեր և քանիներ էին այդ չարժումին գլուխը՝ չենք գիտեր, միայն կաթողիկոս հռչակուողին անունը գիտենք, որ էր Կարապետ Եպիսկոպոս։ Մեծոփեցիին երբեմն ի չէնոբեմ կոչուած, հարկաւ առաջ ամուսնացեր քահանայ եղած ըլլալուն համար։ Եպիսկոպոսութեան համար չեռնադրելէ կ'երեսի ըսուած է (ՁԱՐ. Գ. 491), և Մեծոփեցիին երբեմն ի չէնոբեմ, որ է նոցանէ եր չեռնադրելէ ըսելը (ԿՈՍ. 85), առ առաջին ամուսնացեր քահանայութեան վրայ առնել չուզենք։ Կիլիկեցի յիշատակագիրը, որ այնչափ հիացմամբ կը խոսի Կարապետի վրայ, Սսոյ մէջ աթոռ վերանորոգելուն համար, այդ մասին բնաւ տեղեկութիւն չտար. միայն ենթել է Թոխաթոյ կ'ըսէ, ուսկից Եւդոկիացի մակդիր անունը, որ աւելի հերետիկոսական վիճակէն առնուած կը թուի, քան թէ ծննդավայրէն։ Կարապետի տրուած գովեստները,

տալի ընթերցուածը, ինչպէս ուրիշ տեղ ալ գրուած է. Զոր հինէ ամ խոփանել ձայց վան անյայտ լինելոյ ոսոբ Աչքն (ՍԻՄ. 223)։ Մեծոփեցին կը դրէ, թէ ղբրայ և զիւնն ազնաբարոյութեան, է Կիլիկեցւոցն է տհամայսպետութեան տարեթ, Ասուածդ ազաթեց, և անկէց հաքն է, որ պարյնել վերջին հակոսոս կոնեմբ կոնոչիս եղէն (ԿՈՍ. 85), որ է ըսել թէ Սսոյ աթոռին դադարելուն և վերականգնելուն մէջ, ընդհատման միջոց մը անցած է։ Անգամ մը որ Կիլիկիոյ աթոռը խափանել էր, հաւանական չէր անոր վերականգնելը եղէ էջմիածնի մէջ չփոթութիւններ ծագած չըլլային, կիրակոսի գահընկեցութիւնը տեղի չունէնար, Գրիգորը կաթողիկոս չհռչակուէր, Զաքարիա իւր յաջորդութիւնները չիպէր, և Կիրակոսի ու Գրիգորի ու Զաքարիայի միանգամայն կաթողիկոսութիւնը ճանչցողներ չգտնուէին։ Այդ պատճառով է որ Կիլիկեցիներն ալ քաջալերեցին հերձ կաթողիկոսներն ալ չճանչնալ, և չորրորդ մըն ալ իրենք հռչակել։ Այդպէս կը խորհի Մեծոփեցին ալ, որ Հերմոնեցիին յանդիմանելով կ'ըսէ, Կիլիկեցիէն վճռաբանքիսութեան և անհամոզութեան տ ըսեցին, և այս պատճառով պարյնել վերջին հակոսոս կոնեմբ կոնոչիս եղէն (ԿՈՍ. 85)։ Ովքեր և քանիներ էին այդ չարժումին գլուխը՝ չենք գիտեր, միայն կաթողիկոս հռչակուողին անունը գիտենք, որ էր Կարապետ Եպիսկոպոս։ Մեծոփեցիին երբեմն ի չէնոբեմ կոչուած, հարկաւ առաջ ամուսնացեր քահանայ եղած ըլլալուն համար։ Եպիսկոպոսութեան համար չեռնադրելէ կ'երեսի ըսուած է (ՁԱՐ. Գ. 491), և Մեծոփեցիին երբեմն ի չէնոբեմ, որ է նոցանէ եր չեռնադրելէ ըսելը (ԿՈՍ. 85), առ առաջին ամուսնացեր քահանայութեան վրայ առնել չուզենք։ Կիլիկեցի յիշատակագիրը, որ այնչափ հիացմամբ կը խոսի Կարապետի վրայ, Սսոյ մէջ աթոռ վերանորոգելուն համար, այդ մասին բնաւ տեղեկութիւն չտար. միայն ենթել է Թոխաթոյ կ'ըսէ, ուսկից Եւդոկիացի մակդիր անունը, որ աւելի հերետիկոսական վիճակէն առնուած կը թուի, քան թէ ծննդավայրէն։ Կարապետի տրուած գովեստները,

հարկաւ կիլիկեցիի մը չհայկազունիւններ են (ՀԱՑ. 575), սակայն ամէն առթի մէջ ճարպիկ և գործունեայ և մտաւոր կարողութեան ալ տէր անձ մը եղած կը տեսնուի։

1478. Ամենայն Հայոց կաթողիկոսութեան համար Լուսաւորչի Աջին ունեցած նշանակութիւնը յայտնի ԱՋԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ ըլլալով (§ 1456), կարապետի հնար չէր Սիսի մէջ կաթողիկոսութիւնը հաստատել առանց Աջն ալ վերահաստատելու, հետեւաբար պէտք էր որ գտած ըլլար անյայտացեալ Աջը, որուն բացակայութիւնը կիլիկեցիներն ալ համոզած էր Սսոյ աթոռին դադարելուն։ Իրօք ալ այդ եղաւ կաթողիկոսի ձեռնարկին փաստը, և չեմ գիտեր, այնքան անյայտ եղած Աջը՝ Նորգեղոց ըսուբ-Թոռս (ՀԱՑ. 575)։ Սակայն արդէն աչխարհաքարոզ եղած էր, թէ Աջը կանուխէն յայտնուած էր Վաղարշապատի մէջ, և այս եղած էր կիրակոսի կաթողիկոսութեան հիմը, և միշտ ալ այն էմմիածին կը մնար, զի 1445'ին Գրիգոր Ջալալբէկեան օրինութիւն կը գրէր ի սուրբ ՅԱՋԻՆ Գրիգորի Ծոյց Լուսաւորչի (ՓԻՐ. 140) և այնպէս ալ կը չարունակէր։ Իսկ կարապետի աջը գտնելը և անով ինքզինքը կաթողիկոս հռչակելը 1446'էն առաջ եղած չէ, և պատմական հանգամանքներ բաւական են հաստատել, թէ Սսոյ նոր աջը, բուն և վաւերական աջը չէր, որչափ ալ կիլիկիոյ կաթողիկոսներ չանան պնդել և անոր սուտ հրաշքներ պատրաստելու աչխատիլ։ Աջի մը մէջտեղ երեւնալը բաւական չէ այդ նպատակին, զի Աջի ձեւով մանանաւուիլը հայկական յատուկ սովորութիւն է. որով ամէն մի սուրբի նշխարքը, որ ոսկրն և ըլլայ, և որչափ պզտիկ ալ ըլլայ, աջ ձեռքի ձեւով սրածայր տուփի մը մէջը կամ ծայրը կը պահուի, և կ'ըլլայ սուրբի մը աջը։ Աջի ձեւին ներքաւութիւնը յարմար տեսնուած է անով օրինութիւն տալու կամ խաչակնոյ ընելու, և այժմ ալ Հայ եկեղեցիներու մէջ կը տեսնուին սուրբերու աջեր և նոյն սուրբի բազմաթիւ աջեր, որոնք միայն աջի ձեւով մանանաւուիլներ են, նոյնիսկ մատներն ալ օրինութիւն տալու ձեւով ծալուած։ Ջալալբէգեանի վերոյիչեալ կոնդակին մէջ Լուսաւորչէն գատ տասը հատ եւս աջերէ օրինութիւն կը յիչուի, աւելցնելով և այլ բազմաց աջերոյ ոչ ասոր կան (ՓԻՐ. 140)։ կիլիկիոյ աջերն ալ մէկէ աւելի են, և ըստ էութեան աջերոց անուններն կը տարբերին, որք են սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և Սեբաստոյ Հռոմոս հայրապետին, և սրբոյն Նիկողայոսի սուանձետցի հայրապետին, և սրբոյն Բարսղայ ճգնաւորին (ԱՋԱ. 58)։ Միւս կողմէն ոչ էջմիածնի և ոչ Սիսի աջերը բացուած չեն, և մէջը ինչպէս ոսկր գտնուիլը քննուած չէ, և չենք ալ կրնար պնդել, թէ առաջին անգամ Աջի մանանաւուիլը չինել տուողը (ԱՋՐ. 30) աջ ձեռքի ափամոջ ոսկրները անոր մէջ դնուած ըլլայ։ Ըստ այմ կարապետ Եւդոկիացիին դիւրին էր, նորէն բուն աջին նման նոր աջ մըն ալ պատրաստել տալ, մէջն ալ Լուսաւորչի մասունք դնել, նթէ չուզենք ալ ուրիշ որեւէ ոսկր մը գնուած ըսել։ Որովհետեւ չեմ գիտեր բացատրութիւնը, ոչ գիտեն պատմութիւնը կը ցուցնէ, և ոչ յայտնութեան պարագաները, և պարագային համեմատ զրուցուած խօսքէ մը աւելի չէ։

1479. Փափաքելի էր գիտնալ թէ երբ և ինչպէս պատրաստուեցաւ կարապետի կաթողիկոսութիւնը, որ ԿԱՐԱՊԵՏ ԵՒԴՈԿԻԱՑԻ անդէ և քանի եպիսկոպոսներով կատարուեցաւ անոր օծումը, և ինչ պարագաներ ընկերացան այդ հռչակման։ Թուական պէտք է նչանակել 1446 տարին, ինչպէս յայտնապէս կը գաղափ քանիցս յիչուած կիլիկեցւոյն յիչատակարանէն, որ թէպէտ առանց թուականի հրատարակուած է Ալիչանէն (ՀԱՑ. 575), սակայն Անտոնեանց մատենադարանը պահուած բնագիրը ՊԿԵ, այսինքն 1446 թուականը կը պարունակէ (ՁՇՏ.), և է նոյն այն ձայնոցը որ ծայկ'էլէն և կազմուելէն յետքը նուիրուած է կարապետ Եւդոկիացիին։ Նոյն յիչատակարանն է որ կը վկայէ թէ կիլիկիոյ աթոռը հինգ տ խոփանեալ Ճոց վան անցեալ սուրբ Աջին Գրիգոր Լուսաւորչին (ՁՇՏ.)։ կարապետ անմիջապէս փութայ իւր դիրքը ամրացնելու համար եպիսկոպոս հրաւիրել սուլտանին մօտ, որ Տաճիր կոչուած է (ՁՇՏ.), սակայն Ապուսայիտ Ջաքմաք արդէն գահակալած էր

(ձՆՑ.71)։ *Կարապետ կ'ուզէր հաստատուել Քէհան հրովարտակ և պարգեւներ ստանալ, իբր կաթողիկոս Եգիպտացւոց սուլտանութեան հպատակ Հայերուն։ Երթալուն և դառնալուն Երուսաղէմ հանդիպած է, ուր 1445'էն պատրիարք էր Աբրահամ, Նայիլի (§ 1435) և Յովհաննէսի յաջորդած (ԲԱՒՐ. 49)։ Կարապետ անոր ալ օգնեց, և ազատեաց ջնջելեջն է պրբոց և ըրբնընեան է յանբլնոց՝ դէռ Եգիպտոս չգացած, իսկ ի դարձին ստացած նուէրներուն մի մասը Երուսաղէմի յատկացնելով, ուզած է անշուշտ Միաբանութիւնը չհիլ և Երուսաղէմն ալ իր կաթողիկոսութեան ներքեւ պահել։ Կարապետը 1447'ին ալ յիշատակուած կը գտնենք իբր կաթողիկոս (ՓԻՐ. 157), հարկաւ պաշտօնապէս ճանչցուելէն ետքը, և այս թուականով ալ ցուցակի անցած է (ՍԻՍ.218)։ Տարիէ մը 1448'ին, Պօղոս Գառնեցիին չհնած Ս. Աննայի հայրապետանոցը (§ 1414) նորոգած՝ և անոր մէջ հաստատուած է (ՍԻՍ.223)։ Դժուարին է ճշդել թէ որ երկիրներ և քանի վիճակներ ընդունեցան անմիջապէս կարապետի կաթողիկոսութիւնը և Սսոյ աթոռին իրաւասութեան ներքեւ մնան։ Ոչ մի ճշդուած պատում յիշատակ մեզի հասած չէ այս մասին, և խնդիրին լուծումը կը մնայ հաւանական մտքերու։ Քանի որ Գրիգոր էջմիածնի մէջ կը նստէր Ձիւանշահի հովանաւորութեամբ, և կարապետ Սիսի մէջ հաստատուեցաւ Ջաքմաքի պաշտպանութեամբ, բնական էր, որ անոնց պետական սահմաններն ալ կաթողիկոսներուն իրաւասութեան դիծերը ըլլային, անոնց սահմաններէն անդին եղողներն ալ սահմանակից-ներուն կապուելով, առանց որոշ և հաստատուն սահմանագիծ մը ունենալու, որով սահմանի վրայ եղող քաղաքներ չարունակ մէկէն միւսին կ'անցնէին։ Այդ խորհրդածութիւններէն կը հետեւցնենք թէ կիլիկիայէն դէպ արեւմուտք, Գարամանցիներուն և Օսմանցիներուն հպատակ Հայերը բնական կերպով մը Սիսին կապուեցան, մանաւանդ որ մինչեւ քանի մը տարի առաջ Սիսը հայրապետանոց ճանչնալու վարժուած էին, և էջմիածին իրենցմէ հեռու էր և յարաբերութիւնները դժուար։ Այդ մեր կարծիքին հաստատութիւն կու տայ Եւդոկիացի կարապետէն չուրջ 150 տարի ետքը կազմուած ցուցակ մը, ուր իբր Սսոյ աթոռին ենթարկեալ վիճակներ կը նշանակուին Կիլիկիայէ զատ, Երուսաղէմ, Հալէպ, Կիպրոս, Ներկիսարիա, Անկիւրիա, Կոստանդնուպոլիս և Թեսաղոնիկէ (ՊԷՆ.Ա.823)։ Ինչ որ կը ցուցնէ թէ եգիպտոսի սուլտանութենէն դուրս, Գարամանցիներու և Օսմանցիներու ներքեւ եղող Հայերն ալ սկիզբէն Սիսի աթոռին յարած էին։*

1480. Գրիգոր Ջալալբէգեան, աղմուկով և խռովութեամբ աթոռ բարձրացած, հանդարտ պաշտօնավարութեան կերպարան տուաւ իր կաթողիկոսութեան, առանց մաքառումներու կամ ընդդիմութեանց ձեռնարկելու։ Կիրակոսի պատուաւոր դիրք մը պահովից (§ 1472), Զաքարիայի յարաբերութիւնները խզելուն հանդէպ լռից (§ 1476), և ոչ ալ կարապետի նոր աթոռ մը հաստատելուն դէմ բողոքից, այնպէս որ թէպէտ հակաթոռներ ելան մէջտեղ, սակայն Մայր Աթոռը անոնց դէմ վճիռներ չարձակեց, կապանքներ չվճռեց, նզովք ու բանադրանք չհռչակեց։ Երբոր առաջին անգամ Աղթամար հակաթոռ կաթողիկոսութիւն հաստատեց, Սեւաւ-Լերան ժողովը նզովք ու կապանք վճռեց Գրիգոր Պահլաւունիի օրով (§ 929), իսկ Գրիգոր Ջալալբէգեանի օրով ոչ ժողով գումարուած է, և ոչ վճիռ արձակուած, որով կրնանք բսել թէ Աղթամարի աթոռը կիրակոսի օրհնութենէն ետքը կրկին չէ նզովուած, իսկ կիլիկիոյ աթոռին դէմ առաջին օրէն նզովք չէ արձակուած, վասնզի նզովք ու բանադրանք՝ զօրութեամբ կամ լռութեամբ չեն տրուիր, և ոչ ալ մեր մէջ նովին ըստ-ով (ipso facto) բանադրանքի ոճր կանոնուած է։ Այդ ընթացքը մեծ մասամբ Ջալալբէգեանի դիրքին տկարութեան հետեւանքն էր, որ պէտք ունէր հանդարտութեամբ իր չփոթ կացութիւնը ամրապնդել, միւս կողմէն պէտք է իր ընթացքին խոհականութիւնն ալ դիտել, քանի որ խռովութեամբ յառաջ եկողէ մը չատ դիւրաւ կրնար յաջորդուն ընթացք մըն ալ սպասուիլ, դէմը

կանգնողները և մրցումի ելլողները հալածելով և հարուածելով։ Գրիգոր ընդհակառակն չինարար և բարեկարգական գործերու մտադրութիւն դարձուցած է, որչափ որ չէր ապաստեր Թոռթով ու ջբելով պաշտօնի հանդուղէ մը (ՍԱՄ. 173)։ Դավրիժեցին կը վկայէ թէ Նորփոյն ոչընչել Սոչք էջմիածնի (ԴԱվ. 336), և երեւանեցին, որ հին յիշատակներու խղճմտիւ պրպտող մը եղած է, չվարանիր յայտարարել, թէ Գէղէոր կաթողիկոս այս Մակուցի առնէ ջնջած է ոչոչ աղուոյ, հանգ նախապէս ու նորոյեաց գլխատած սրբոյ աղուոյ ի ներոսոպ և արգասոսպ, ընդ որս գեղջոյս առնելով հոգեպատ գրվածական և գաղտնական գրվէ պաճխիանէ, որ ան կան սրդեն (ՋԱՄ. 19)։ Ասոնք մին միւսէն օգտակար ձեռնարկներ են. իմիածնի խաթարուել վանքը նորոգել, և անոր կալուածները օրինական կալուածագրերով ապահովել, որոնք հիմ եղած են Մայր Աթոռին հետզհետէ կազդուրման և զարգացման։

1481. Գրիգորի ուրիշ մէկ կարգադրութիւնն ալ՝ յատուկ մտադրութեան արժանի է։ Դավրիժեցին 1455 թուականի ներքեւ կը դնէ. Նոյն տէր Գէղէոր, ոչլե- եղե- կոհոգիոս տէր Աբգասպէս (ԴԱվ. 336)։ Դավրիժեցիին գործածած թուականները, ինչպէս ինքն իսկ յայտարարած է, եղելութեանց սկսելը չեն ճշդեր, այլ թէ նոյն թուականին ներքեւ ինքն յիշատակութիւն մը գտած է։ Ըստ այսմ իրր Արիստակէսի կաթողիկոսանալուն թուական պատուաւոր չենք ընդունիր 1455 տարին, այլ թէ այն տարին արդէն եղած էր։ Եղելութեանց կարգը ուսումնասիրելով կը գտնենք որ մինչեւ 1448, Գրիգորի և Կիրակոսի զոյգ կաթողիկոսութիւն մը պահպանեցաւ (§ 1492), և ապա վարժուեցաւ մի եւնոյն աթոռի վրայ մէկէ աւելի կաթողիկոսներ տեսնելու։ Կերպով մըն ալ վասպուրականցիներու զգացումները չհամեցան, իրենց սիրած անձին ցուցուած մտադրութեան գոհունակութեամբ։ Սրդ ճիշդ 1448'ին է որ առաջին անգամ է հայրապետարանեան պետն Բագարակեցի յիշատակութեան կը հանդիպինք, և որ աւելին է, վանայ մէջ գրող

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱԹՈՌԱԿԻՑ

Վասպուրականցի մըն է, որ այդ յիշատակութիւնը կ'ընէ (ՓԻՐ. 158)։ Այդ պարագան մեզ կ'առաջնորդէ հետեւցնել, թէ Կիրակոսի մահուամբ, վասպուրականցիներու հակրութիւնը չկորնչցնելու համար, անոր յաջորդ մը ուզած է տալ Գրիգոր, անոնցմէ կամ անոնց համակիր անձ մը իրեն աթոռակից առնելով, որ միւս կողմէն պիտի կարենար իրեն օգնական ըլլալ աթոռին տագնապալի վիճակին մէջ առձեռն գործերը լրացնելու։ Ատոնց մէջ գլխաւորներէն մէկն էր դրամականը, պահանջուած սակերը և տուրքերը վճարելու համար, զի հետ Գրիգոր կրցած էր ճիհանչահ վհատ պետին հովանաւորութիւնը վայելել և եաղուպ կուսակալէն ամէն պաշտպանութիւն գտնել, զօրաւոր ազդակը նախընծայ նուէրներն և տարեկան վճարումներն էին, որոնք հետզհետէ կը ծանրանային միջոցներուն նուազելովը։ Արիստակէսի կաթողիկոսութիւնը այդ դժուարութեանց դարման մը պիտի ըլլար։ Ակէ աւելի տեղեկութիւն չունինք և չենք կրնար տալ՝ թէ Արիստակէսի անձին և նախընթացին, և թէ իր անուանման չարժանութիւն վրայ։

1482. Ընդհանուր և իրաւաբանական ինդիր մը կը ներկայացնէ մեզի երկրորդական կաթողիկոսի մը անուանումը, որ յատուկ յիշատակութիւն ստանալ սահմանուած էր։ Կաթողիկոսի մը հրաժարելով ուրիշի մը անուանուելուն օրինակը ունինք Սարգիս Սեւանցիի վրայ (§ 812), մէկուն գահընկէցութեամբ ուրիշի մը ընտրուիլը տեսած ենք Վահան Սիւնիի (§ 770) և Կոստանդին Կատուկեցիի վրայ (§ 1182), պաշտօնավարութիւնը լքանելով գործը ուրիշի յանձնելու կերպն ալ գործադրած էր Գրիգոր Վկայասէրը (§ 879), վերջապէս հրաժարեալ կաթողիկոսի մը անուանապէս չարունակելն ալ տեսնուեցաւ Կիրակոս Վիրապեցիի վրայ (§ 1472), սակայն բոլորովին նոր էր գործի վրայ հղող և գործը չլքանող կաթողիկոսի մը քով, համահաւասար անունով և պիրքով, օծումով և արտօնութիւններով կաթողիկոս մը եւս պահել։ Շատեր սովորութիւնի բրած են այս երկրորդականներն

ԱԹՈՌԱԿՑԱՑ ԴԻՐՔԸ

ալ իրեն կատարեալ կաթողիկոս արձանագրել և կարգի թուականարով կաթողիկոսներու գաւազանին անցընել (ԺԱՄ. 635), բայց մենք այդ սովորութեան պիտի չկարենանք հետեւիլ։ Մեր ըմբռնումով Ամենայն Հայոց հայրապետութիւնը յատուկ և միակ աթոռ մըն է, և ամէն աթոռ իր միակ աթոռակալը կրնայ ունենալ, և ոչ երկու կամ աւելի։ Կրնանք ընդունիլ որ լիազօր փոխանորդներ կամ խորհրդականներ կարենան անուանուիլ, որ նոյնիսկ եպիսկոպոս ձեռնադրելու և միւռոն օրհնելու իշխանութիւնները ուրիշի ալ կարենան փոխանցուիլ, բայց չենք կրնար ընդունիլ, որ ասով իսկական կաթողիկոսութիւնը և միակ աթոռակալութիւնը կարենայ կիսուիլ կամ բաժնուիլ։ Հետեւապէս ցորչափ աթոռի տէր կաթողիկոս մը կենդանի է, ուրիշ մը հաւասարապար կաթողիկոս չկրնար ընդունուիլ, և մենք ալ անոնց անուններըը գաւազանին չենք կրնար անցընել, այլ կը նկատենք իրրեւ աթոռակից կամ կաթողիկոսակից՝ լիազօր փոխանորդի կամ գործակից օգնականի կերպարանով, և ոչ աւելի։ Ներկայ պատմութեանս մէջ գլուխները կաթողիկոսներու անունին վրայ բացած ըլլալով, աթոռակիցները բուն կաթողիկոսին գլուխին ներքեւ կը պահենք։ Այսպիսիներուն պաշտօնական անունը կ'երեւի թէ Ալեքսանդր եղաւ, վասնզի Արիստակէս, որ այդ նոր դիրքին առաջինն է, այդ անունով կոչուեցաւ, և նոյնը իր վրայ իբրեւ մականուն մնաց։ Որչափ ալ աթոռակալ անունին իմաստը, բառական ճշդարանութեամբ աթոռին տէրը կը ցուցնէ, և ոչ անոր օգնականը կամ փոխանորդը, սակայն սովորութիւնը այդ երկրորդ իմաստը յատկացուց Ալեքսանդր բառին, և գուցէ Արիստակէսէն սկսաւ այդ սովորութիւնը։ Վասնզի նոր դիրք մըն էր ստեղծուածը, և նոր անուն մըն ալ պէտք էր որ զայն բացատրէր, առանց չատ ականջները խայթելու։ Աթոռակիցներու սովորութիւնը հետզհետէ տարածուեցաւ մինչեւ միւռոնյն ատեն չորս կամ հինգ կաթողիկոսներ ունենալու չափ, որ կատարեալ զեղծում էր։ Բայց եթէ այդ տարօրինակ ձեւէն օգուտ մը կրցանք ուսնեալ, այն ալ անհակառակ է առանց դժուարութեան յայտնութեան պահուին էր։ Եթէ պահ մը աթոռի պարապութենէ ետքը նոր ընտրութիւն ընել հարկ ըլլար, արդիւնքը չատ կեղակարծ պիտի ըլլար, որով ահագին դժուարութենէ հանդէպ, մինչ աթոռակիցներու ձեռնադրութեամբ, կաթողիկոսին մահուան վայրկեանէն կաթողիկոսութիւնը կը ժառանգէր աթոռակիցը կամ աթոռակիցներուն աւագագոյնը, և աթոռը վայրկեան մը իսկ դատարկ մնացած չէր ըլլար։ Իրաւ՝ ազգովին ընտրութեան ձեւ մը չէր եղած, բայց ազգային աթոռին անընդհատ չարունակութեան պահովութիւնն էր։ Բացառիկ ժամանակներու մէջ երբ կարեւորը հնարաւոր չէ, հնարաւորը կ'ըլլայ կարեւոր։

1483. Նորութիւններ են զորս հետզհետէ պատմութիւնը մեր առջեւը կը հանէ այդ միջոցին, և անոնցմէ

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՅԵՐ

մէկն ալ Կոստանդնուպոլսոյ մէջ նոր և մեծ աթոռի մը սկզբնաւորութիւնն է, պատրիարքութեան անունով։ Կոստանդնուպոլսոյ մէջ հայաբնակութեան մը գոյութիւնը պատմութենէն ակներեւ է, սակայն հնագոյն ժամանակներու թեմակալ իշխանութիւնը բացարձակապէս տեղական և եղական ըլլալով, միւռոնյն քաղաքի մէջ մէկէ աւելի թեմակալ եպիսկոպոս չէր ըլլար, և բոլոր վիճակի մը մէջ գտնուողներ միւռոնյն եպիսկոպոսին կը հնազանդէին, և նոյն եկեղեցիէն հոգեւոր մխիթարութիւն կ'ընդունէին։ Հետեւապէս Հայերն ալ Կոստանդնուպոլսոյ մէջ իրենց յատուկ եկեղեցական դիրք մը չունէին, թէպետեւ քաղաքական դիրքին տիրապետելու չափ թիւ և ազդեցութիւն ունէին, բանակին մէջ մեծ ոյժ կը կազմէին, կայսերական թիկնապահ գունդին լաւ մասն էին, բազմաթիւ և քաջ զօրավարներ ունէին, պալատական պաշտօնեաներու չարքին կը գտնուէին, և կայսերական գահն ալ գրաւելու կը յաջողէին։ Ծունական Հայաստանին քնակիչներն ու Պարսկական Հայաստանին փախստականներն էին՝ որ այդ տարրերը կը կազմէին։ Որչափ ալ Քաղկեդոնի խնդիրը՝ խոր մը կը դնէր Յոյներուն և Հայերուն մէջ, սակայն Հայերը կամ այն էր որ ստիպեալ կը

համակերպէին, և կամ անհատաբար իրենց ինքնութիւնը կը պահէին, բայց Հայ եկեղեցի և Հայ թեմակալութիւն չկար, ոչ կաստանդնուպոլիս և ոչ կայսերութեան ուրիշ կողմերը, Մեծ-Հայքէն և Փոքր-Հայքէն զատ՝ ուր բնիկները Հայերն էին։ Գաղթականութենց Հայերուն յատուկ եպիսկոպոսներ ձեռնադրելը, և զանոնք Ցոյն կամ Ասորի եպիսկոպոսներու մօտ զեւտղելը Նեստորական Արշարունիին օրով սկսած ցուցցինք (§ 785), սակայն ընդհանուր ակնարկ մըն է գիտցածնիս, տեղով ու թուով և յաջորդութեամբ տեղեկութիւններ չունինք, իսկ Կաստանդնուպոլսոյ վրայ ա՛լ աւելի նուազ ին մեզի հասած տեղեկութիւնները, և Սոխնպօլայ Ցուսիկ եպիսկոպոսը, Աստամպոլի կամ Կաստանդնուպոլսոյ եպիսկոպոս իմանալուն ապահով չըլլալը՝ իւր տեղը բացատրեցինք (§ 1230)։ Կաստանդնուպոլսոյ մէջ Հայ եկեղեցիի մը յիշատակին չատ ուշ կը հանդիպինք 1360'ին, քերականութեան մը յիշատակարանին մէջ, որ ընդօրինակուած է ի չիւթրս Ցոհաննու, ի թաղս Կոստանդնուպոլիս, ընդ հովանեաւ սուրբ Աբգէն (ՁԱՇ. 782), և Ս. Սարգիս անունը վստահութիւն կը ներշնչէ թէ Ցունական եկեղեցի մը չէ։ Ցիշուած տարին կ'ինայ այն չըլլանին, երբ Հայերը աւելի Լատիններուն վրայ կը կրթնէին, և Ցոյներ՝ Հայերը իրենց մօտեցնելու ջանքեր կ'ընէին։ Սակայն այդ Ս. Սարգիս եկեղեցին ուրիշ կողմէն ծանօթ չէ, և տեղն ալ ճշդել դժուար է, թէեւ քաղաքամիջի չինուած մը կ'երեւի Ցոյն եկեղեցիներու սրբութիւնները յիշելէն։

ՂԱԼԱԹԻՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

1481. Սոյգ կերպով Կոստանդնուպոլսոյ մէջ չինուած Հայ եկեղեցի մը՝ այժմեան Ղալաթիոյ եկեղեցին է, ոչ բուն և պարապատ քաղաքի մէջ չինուած, այլ քաղաքին հանդիպակաց կողմը, Բերայի արուարձանին ծովափնեայ ստորոտը, որ Գենուացիներէն Ղալաթա (Galata) էր կոչուած, իբր քաբափ կամ բլուր բառին ծուլափ։ Այդ եկեղեցւոյն հիմնարկութեան ժամանակը ցուցնող փաստ կը նկատուի անոր ճակատը այսօր ալ երեւցող արձանագրութիւնը, ուր բուն մէջ յիշուած անուններէն 1391 թուականին կը տանին, թէպէտ 1436 գրուած է (ԿՈԼ. 110), բայց այն 1733'էն առաջ դրուած արձանագրութիւն մը չէ (ԿՈԼ. 110), որով ցուցուած թուականէն և գործէն ևրեք կամ երեքուկէս դար ետքը դրուած վկայութիւն կ'ըլլայ։ Ջանց կ'ընենք պնդել թէ զանազան տեղեկութիւններու հետեւելով, կրնայինք 1733'էն աւելի ետքը դնել տեղուած ըսել արձանագրութիւնը, հիմնուելով ինչ ինչ տեղեկութեանց վրայ։ Հմուտ գրող մը, Երեմիա Քէօմիւրճեան, Հայոց 885, այսինքն 1436'ին կը դնէ չինութիւնը (Ձէլ. 74) և Կաֆայեցի պէյերէն կ'ըսէ ընդհանուր կերպով, և որով անձի անուն չտար, ինչպէս արձանագրութիւնը մուծած է։ Շինողներուն Կաֆայեցի ըլլալը՝ բաւական եղած է ոմանց համար հաւմէադաւանները հիմնարկութիւն կարծել սոյն եկեղեցին, սակայն Կաֆայի ոչ միայն հայարնակութիւնը, այլ մի մասը միայն Ունիթորներու հետեւած էր, և Կաֆայի մէջ ալ հայադաւաններու եկեղեցիներ կային, Գենուացւոց իշխանութեան ներքև։ Արձանագրութեան մէջ յիշուած Կոզմոս անունն ալ իբր կոմիտասի փոխանցում, բան մը չապացուցաներ, զի քաղաքական համակերպութեան հետեւանք է և ոչ դաւանութեան, թող որ Կոզմոս անունը անսովոր չէր Հայոց համար, և ուրիշ տեղ Կոզմոսը Կոմ ալ գրուած է, որ պատուանուն մըն է։ Վերջապէս Գենուացիք, առեւտրական մարդիկ, չհանդիտական քան կրօնական յարաբերութեանց հետամուտ, կ'աշխատէին Հայերը մօտեցնել իրենց չահին և իրենց օգտին։ Հետեւաբար Հայ եկեղեցիի մը չինութիւնը քաջալերելին, աւելի Հայադաւաններուն համար պէտք էր, զի հաւմէադաւանները լատիններու եկեղեցիներովն ալ կը բաւականանային, մանաւանդ թէ կը նախադատէին ալ։ Միանգամայն պիտի աւելցնենք թէ Քէօմիւրճեանի չանան նախնական չինելին ըսելը (Ձէլ. 74) երբեք վերաչինութիւն իմացնելու դիտում չունի, քանի որ նա կը դիտէ առաջին չինութիւնը իմացնել, և արդէն լատադոյն ձեռագիրներ յԱնապատ նախնական ունին, որ կաֆացոց ծագումը կը ցուցընէ, և ուրիշ ոչինչ։ Միանգամայն 1436 թուականը չատ յարմար կու գայ Եսայի և

Ցովհաննէս եպիսկոպոսներուն Կոստանդնուպոլիս գանուելուն, որոնք հռոմէական չէին, զի միութեան կը հրաւիրուէին (§ 1435)։ Այդչափը պատմական ճշդութեանց համար, ապա թէ ոչ տարիներու տարբերութիւնը՝ գործին իսկութիւնը չայլայլեր։ Պէտք չէ նաև մոռնալ, որ թէ Ջէօմիւրճհանը ընդ Ցոնաց պէրպեռութեան (Զէլ. 74) և թէ արձանագրութիւնը ընդ Լչհանոնիոմի Ցոնաց, հրման փոթել չինելը (ԿՈԼ. 110) կը գրեն, որով Գինուացիներու միջամտութեամբ կամ հռոմէադաւանութեան նպաստադրութիւնը այս կողմին ալ հիմ չգտներ։ Ղալաթիոյ Եկեղեցւոյն 1436 թուականէն՝ մինչեւ Օսմանեան տիրապետութեան 1453 տարին, միջոցը չատ քիչ էր, որ Հայ գաղթականութիւնը կարենար սովորական ընթացքով ընդարձակուիլ, և տեղական Ցոյն տարրին հակակշռող ոյժ մը կազմել, որով միշտ կ'արդարանար Ֆաթիհի հոգածութիւնը Հայ գաղթականութիւնը նոր մայրաքաղաքին մէջ աճեցնելու (§ 1475), և մաս մը յորդորմամբ ու մաս մը ստիպմամբ Փոքր-Ասիոյ քաղաքներէն խումբ խումբ Հայեր Կոստանդնուպոլիս փոխադրելու։ Այդ նոր աշխատութիւնը չարունակած է մինչեւ 1461, երբ Մէհէմմէտ իր նպատակն ու քաղաքական դիտումը լրացնելու համար, Հայերուն վրայ ալ ընդարձակեց այն քաղաքական կամ լաւ ևս կենցաղական դրութիւնը, զոր Ցոյներուն համար կազմակերպեց իր տիրապետութենէն անմիջապէս ետքը։

ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

1485. Իսլամ պետութեանց համար կարեւոր ու կենսական խնդիր մը եղած է իրենց հպատակ քրիստոնեայ ժողովուրդներուն կենցաղական դիրքը ճշդել, և այդ մասին օրինական կացութիւն մը կազմել։ Այդ դրժուարութեանց պատճառը իրենց քաղաքական և կենցաղական օրէնսդրութիւնն էր, որ բովանդակ կրօնական սկզբունքներու և դատական պատգամներու վրայ հիմնուած ըլլալով, անհնար էր քրիստոնեաներու պատչաճեցնել։ Ուստի երկու ծայրայեղ որոշումներու կը մղուէին, ինչպէս որ պարագային կիրքերը կը գրգռէին. կամ կոտորածով կը ապառէին և բռնութեամբ կրօնափոխ կ'ընէին, և կամ զինուորական և ելեմտական վարչութիւնները իրենց վերապահելով, բոլոր կենցաղական օրէնքները անոնց կամքին կը թողուէին, անոնց մէջէն պատասխանատու պետ մը նշանակելով։ Այդ վերջին ձևին դործադրութիւնն էր Արաբացի ոստիկաններու քովը Հայ պատրիկներու անուանումը, որոնք Հայոց բնտանեկան ու ազգային ու կրօնական կեանքին լիազօր կառավարիչներն էին, մինչ ոստիկաններ զինուորական և ելեմտական գործերով միայն կը զբաղէին և գերիչխան դիրքը կը պահէին։ Նոյն ձևին բարգաւաճումն էր, պատրիկներուն թագաւորի անուն և կերպ տալը՝ առանց իսկապէս պատրիկներուն դիրքէն բարձրանալու։ Իսկ ինչ որ անկէ ետքը Թաթարներու և Թուրքերու, Եգիպտացիներու և Գրամանացիներու ներքև գործադրուեցաւ, իսկապէս տարբեր չէր, միայն փոխանակ ընդհանուր պատրիկ մը ունենալու, տեղական մանր քրիստոնեայ իշխանները նոյն ձևը կը պահէին ամիսի չրջանակներու մէջ։ Ֆաթիհի կացութիւնը ասկէ աւելի ճարտար ձեւ մը կը պահանջէր։ Նա իւր մայրաքաղաքը կը հաստատէր քաղաքի մը մէջ, որուն բնակչութիւնը քրիստոնեայ էր, և Իսլամ բնակչութիւնը նոր պիտի սկսէր, նա չէր կրնար քաղաքը անմարդացնելով նորէն սկսիլ, և քաղաքագէտ ու քաղաքակիրթ պետութիւն մըն ալ կազմակերպելու ձըգտումներն ունէր։ Քրիստոնեայ տարրը պէտք էր միաբ, իւր յատուկ կենցաղական օրէնքներով պէտք էր ապրեր, իսլամական օրէնքները անոնց պարտադիր ընել անհնար էր, պատրիկ մը կամ իշխան մը հաստատելն ալ դօրացնել կ'ըլլար մայրաքաղաքի քրիստոնէից դիրքը, որ անյարմար էր մայրաքաղաքի մը համար։ Արդէն Ցոյն ժողովուրդն ալ իսլամական օրէնքներու ներքեւ ապրելու անհնարութիւնը նախատեսելով, խմբովին գաղթելու խորհուրդը կ'որոճար, գոնէ հայրապետական աթոռը քրիստոնեայ հովանաւորութեան մը ներքեւ տանիլ կը մտածէր։ Այստեղ մէջտեղ եկաւ Ֆաթիհի քաղաքագէտ դիտոր։ Նա մտածեց թէ իսլամ ժողովուրդին կենցաղական օրէնքները իրենց կրօնքէն կը բղխէին, օրէնքի պաշ-

Ցովհաննէս եպիսկոպոսներուն Կոստանդնուպոլիս գանուելուն, որոնք հռոմէական չէին, զի միութեան կը հրաւիրուէին (§ 1435)։ Այդչափը պատմական ճշդութեանց համար, ապա թէ ոչ տարիներու տարբերութիւնը՝ գործին իսկութիւնը չայլայլեր։ Պէտք չէ նաև մոռնալ, որ թէ Ջէօմիւրճհանը ընդ Ցոնաց պէրպեռութեան (Զէլ. 74) և թէ արձանագրութիւնը ընդ Լչհանոնիոմի Ցոնաց, հրման փոթել չինելը (ԿՈԼ. 110) կը գրեն, որով Գինուացիներու միջամտութեամբ կամ հռոմէադաւանութեան նպաստադրութիւնը այս կողմին ալ հիմ չգտներ։ Ղալաթիոյ Եկեղեցւոյն 1436 թուականէն՝ մինչեւ Օսմանեան տիրապետութեան 1453 տարին, միջոցը չատ քիչ էր, որ Հայ գաղթականութիւնը կարենար սովորական ընթացքով ընդարձակուիլ, և տեղական Ցոյն տարրին հակակշռող ոյժ մը կազմել, որով միշտ կ'արդարանար Ֆաթիհի հոգածութիւնը Հայ գաղթականութիւնը նոր մայրաքաղաքին մէջ աճեցնելու (§ 1475), և մաս մը յորդորմամբ ու մաս մը ստիպմամբ Փոքր-Ասիոյ քաղաքներէն խումբ խումբ Հայեր Կոստանդնուպոլիս փոխադրելու։ Այդ նոր աշխատութիւնը չարունակած է մինչեւ 1461, երբ Մէհէմմէտ իր նպատակն ու քաղաքական դիտումը լրացնելու համար, Հայերուն վրայ ալ ընդարձակեց այն քաղաքական կամ լաւ ևս կենցաղական դրութիւնը, զոր Ցոյներուն համար կազմակերպեց իր տիրապետութենէն անմիջապէս ետքը։

1485. Իսլամ պետութեանց համար կարեւոր ու կենսական խնդիր մը եղած է իրենց հպատակ քրիստոնեայ ժողովուրդներուն կենցաղական դիրքը ճշդել, և այդ մասին օրինական կացութիւն մը կազմել։ Այդ դրժուարութեանց պատճառը իրենց քաղաքական և կենցաղական օրէնսդրութիւնն էր, որ բովանդակ կրօնական սկզբունքներու և դատական պատգամներու վրայ հիմնուած ըլլալով, անհնար էր քրիստոնեաներու պատչաճեցնել։ Ուստի երկու ծայրայեղ որոշումներու կը մղուէին, ինչպէս որ պարագային կիրքերը կը գրգռէին. կամ կոտորածով կը ապառէին և բռնութեամբ կրօնափոխ կ'ընէին, և կամ զինուորական և ելեմտական վարչութիւնները իրենց վերապահելով, բոլոր կենցաղական օրէնքները անոնց կամքին կը թողուէին, անոնց մէջէն պատասխանատու պետ մը նշանակելով։ Այդ վերջին ձևին դործադրութիւնն էր Արաբացի ոստիկաններու քովը Հայ պատրիկներու անուանումը, որոնք Հայոց բնտանեկան ու ազգային ու կրօնական կեանքին լիազօր կառավարիչներն էին, մինչ ոստիկաններ զինուորական և ելեմտական գործերով միայն կը զբաղէին և գերիչխան դիրքը կը պահէին։ Նոյն ձևին բարգաւաճումն էր, պատրիկներուն թագաւորի անուն և կերպ տալը՝ առանց իսկապէս պատրիկներուն դիրքէն բարձրանալու։ Իսկ ինչ որ անկէ ետքը Թաթարներու և Թուրքերու, Եգիպտացիներու և Գրամանացիներու ներքև գործադրուեցաւ, իսկապէս տարբեր չէր, միայն փոխանակ ընդհանուր պատրիկ մը ունենալու, տեղական մանր քրիստոնեայ իշխանները նոյն ձևը կը պահէին ամիսի չրջանակներու մէջ։ Ֆաթիհի կացութիւնը ասկէ աւելի ճարտար ձեւ մը կը պահանջէր։ Նա իւր մայրաքաղաքը կը հաստատէր քաղաքի մը մէջ, որուն բնակչութիւնը քրիստոնեայ էր, և Իսլամ բնակչութիւնը նոր պիտի սկսէր, նա չէր կրնար քաղաքը անմարդացնելով նորէն սկսիլ, և քաղաքագէտ ու քաղաքակիրթ պետութիւն մըն ալ կազմակերպելու ձըգտումներն ունէր։ Քրիստոնեայ տարրը պէտք էր միաբ, իւր յատուկ կենցաղական օրէնքներով պէտք էր ապրեր, իսլամական օրէնքները անոնց պարտադիր ընել անհնար էր, պատրիկ մը կամ իշխան մը հաստատելն ալ դօրացնել կ'ըլլար մայրաքաղաքի քրիստոնէից դիրքը, որ անյարմար էր մայրաքաղաքի մը համար։ Արդէն Ցոյն ժողովուրդն ալ իսլամական օրէնքներու ներքեւ ապրելու անհնարութիւնը նախատեսելով, խմբովին գաղթելու խորհուրդը կ'որոճար, գոնէ հայրապետական աթոռը քրիստոնեայ հովանաւորութեան մը ներքեւ տանիլ կը մտածէր։ Այստեղ մէջտեղ եկաւ Ֆաթիհի քաղաքագէտ դիտոր։ Նա մտածեց թէ իսլամ ժողովուրդին կենցաղական օրէնքները իրենց կրօնքէն կը բղխէին, օրէնքի պաշ-

ռոնեաններըը իրենց օրէնսգէտ կրօնականներն էին, պաշտօնեաներուն ալ գլուխը մեծ դէմ-պետն էր: Ըստ այսմ կենցաղական ճիւղը օրէնքով և օրէնքի պաշտօնեաներով կրօնքի չրջանակին մէջ կը պարունակուէր: Միւնոյն ձեւը որոշեց յարմարցնել քրիստոնեաներուն, և նախապէս Յոյներուն, որ կենցաղական օրէնքնին պահեն իրենց կրօնքին համաձայն, իրենց կրօնքին պետը ըլլայ պաշտօնէութեան ալ գլուխը: Ինքն իրեն պահեց միայն Յոյն կայսրներուն դէմը, որ էր կրօնքի պետը կամ պատրիարքը հաստատել և հնչակել: Աթանաս պատրիարք պատերազմին մէջ սպանուած էր, Ֆաթիհ հրամայեց նոր մը ընտրել, և ժողովուրդը ուրախութեամբ ներկայեց Գէորգ Սկոլարիոս գիտնական եպիսկոպոսը, որ եղաւ Գեննադիոս Բ, և Ֆաթիհ զայն հաստատեց միեւնոյն չքեղ արարողութեամբ, որով Յոյն կայսրներ պատրիարքները կը հաստատէին, և անոր տուաւ իւր կրօնակիցներուն կենցաղական կացութեան վերաբերող իշխանութիւնները: Հին ժամանակի պատրիկնեբուն դիրքն էր որ պատրիարքներուն կը տրուէր, արդէն տաճկերէն հնչմամբ ալ ֆընճէյ կամ պոյրնչ կոչուեցաւ պատրիարքը:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ

1486. Թէ պետական և թէ պատրիարքական դիւաններուն հրդեհները չատ կարեւոր գիրեր ոչնչացուցած են, և այսօր չգըտնուիր սկզբնական արտօնագիրը որով Մէհէմմէտ Ֆաթիհ վճռեց պատրիարքական իշխանութեան ձեռնհասութիւնները: Միայն իրարմէ փոխանցուելով կազմուած վերջին պաշտօնագիրերը, և գործածութեամբ պահուած սովորութիւնները կը գծեն այն ձեւը, որ նախապէս 1453'ին կազմուեցաւ պատրիարքական իշխանութեան համար: Սովորաբար փաղաքական անունով կը յիշուին պատրիարքներու տրուած արտօնութիւնները, այլ մենք կը նախադասենք կենցաղական անունով կոչել, որպէսզի պերոան բառի իմաստ չառնէ: Ըստ այսմ այն ամէն կենցաղական պահանջ, որ որեւէ կերպով կամ չափով կրօնքի հետ կապակցութիւն ունի, այդ պարունակին մէջ առնուեցաւ, և պատրիարքին իրաւասութեան յանձնուեցաւ, կրօնք, եկեղեցի, պաշտաման, եկեղեցականութիւն, դաստիարակութիւն, ուսում, ամուսնութիւն, ընտանիք, ժառանգութիւն, բարեգործութիւն, անհատականութիւն, աղգանամար, և նամանիք, որոնք Թուրք կամ Իսլամ ժողովուրդին համար մեծ դէնպետին իրաւասութեան կը պատկանէին: Միանգամայն պատրիարքին իշխանութեան ենթարկուեցան, եպիսկոպոս, վարդապետ, և քահանայ, ինչպէս դէնպետին կ'ենթարկուէին նահանգներու և գաւառներու և քաղաքներու կրօնաւորներր և դատաւորները: Մեր տուած տեղեկութիւնները յայտնապէս կը ցուցնեն, թէ այդ դրութիւնը, որ ստէպ սխալմամբ անունով կը յիշուի, բնաւ չնորհք մը, աղատ պարգեւ մը, և բացառիկ առաւելութիւն մը չէ, այլ կատարելապէս Իսլամ ժողովուրդին ունեցած դիրքին հաւասարաչափ զուգակշիռն է, և Օսմանեան պետութեան օրէնսդրական դիրքին բացարձակ պահանջն է: Հակառակ պարագային պէտք էր համապատասխանէ սպառմանց կամ բռնապետական ստիպմանց ձեւը գործադրել, եթէ Ֆաթիհի որչափ աչխարհակալ նոյնչափ աչխարհագէտ միտքը չուզէր՝ ամէն կերպով այդ վայրագ ձեւերէն խորշիլ, և քաղաքակիրթ երկրի մէջ հաստատուող տարրը նոր պահանջներուն ընտելացնել: Այդ համառօտ նկարագիրը որչափ և նախապէս Յոյն ազգաբնակութեան վրայ ձեւուեցաւ, սակայն կարեւոր էր մեզի համար ալ, որովհետեւ իրրեւ սկզբնատիպ ծաւալեց Հայերուն ալ տրուած կամ օրինադրուած ձեւին:

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ

1487. Կոստանդնուպոլսոյ առման թուականէն ետքը ուրիշ տարի անցեր էր, և հետզհետէ ընթացած կամ ևկած զաղթականութիւններր հայաբնակութեան լաւ բազմութիւն մը կազմած էին, և առանձինն մտադրութեան ալ առարկայ եղած էին: Ֆաթիհ զանոնք հետզհետէ կը զետեղէր քաղաքին պարիսպներուն ներքնիւը կարեւոր դուռներուն մօտերը, թէ Մարմարայի ծովեղերքին, թէ ցամաքակողման պիծին և թէ Ոսկեղջիւրի եզերքներուն ուղղութեամբ, որոնք ազմագիտութեան և ապահովութեան տեսա-

կէտէն մեծ կարեւորութիւն ունէին, և Ծոյն տարրը այնտեղերը պահել յարմար չէր նկատուեր։ Երբոր Հայերը այնչափ չտացան որ բնակչութեան կարեւոր մասը եղան, և երբ իրենց ներկայութեան այնչափ կարեւորութիւն տրուեցաւ, պէտք էր անոնց ներքին և կրնգաղական դիրքն ալ բարձրացնել, և Ծոյներուն հանդէպ համահաւասար կացութեան մէջ դնել։ Օսմանեան պետութեան սահմաններուն մէջ գտնուող Հայեր առաջ ալ առանց հոգեւոր պետի մը չէին մնացած, քէպէտեւ անոնց կանոնաւոր և չարայարեալ յիշատակները կը պակսին, իսկ մեզ դժուար է մանր իրողութիւններով զբաղիլ։ Ծրիւ ակնարկներ մեզի կը ներկայեն Ծովակիմ եպիսկոպոս մը, որ կուտինա քաղաքի Հայ եկեղեցին նորոգած է, որ Պրուսայի եպիսկոպոս կոչուած է (01 ՕՐԱ. 79), որ Ֆիլիպէի ալ առաջնորդ յիշուած է (ՓԻՐ. 224), և որ Կոստանդնուպոլսոյ Հայերուն հոգեւոր պետն եղած է։ Այդ յիշատակութիւններէն դժուար չէ հետեւցնել, թէ Ծովակիմը՝ Օսմանեան պետութեան ներքեւ գտնուող Հայերուն առաջնորդն էր, համապատասխանելով Օսմանեան սուլտաններուն տեղափոխութեանց, որ ինչպէս գիտենք, սկսան Ադրիանուպոլիս, անկէ անցան Պրուսա, անկէ Ադրիանուպոլիս, անկէ Կոստանդնուպոլիս, և Ծովակիմ եպիսկոպոս ալ նոյն պարագաներուն մէջ տեղափոխութիւններ կատարեց։ Չենք ուզեր ըսել թէ բոլոր տեղափոխութեանց ժամանակակից եղած է, վասնզի Օրխանի Պրուսա հաստատուելէն (§ 1385) մինչեւ Ֆաթիհի Կոստանդնուպոլիս հաստատութիւնը (§ 1475), դարէ մը աւելի տարի անցած է։ Բայց յայտնի է, թէ բոլոր հին ու նոր օսմանեան կիզրոնները միւնոյն Ծովակիմի վիճակը կազմած են, և իր պաշտօնին բերմամբ է, որ վերջին անգամ Կոստանդնուպոլիս եկած է։ Որոշ չենք գիտեր թէ ինչ եղած է այս Ծովակիմին նախընթացը։ Անունի նոյնութիւնը միտք կը ձգէ Ծովակիմ Հալէպի եպիսկոպոսը, որ 1438'ին կաֆայէ Հառմ գացող պատգամաւորութեան մէջ կը գտնուէր (§ 1437)։ Կոստանդնուպոլսոյ Ծովակիմը մինչեւ 1474 կը յիշուի (11 ԱՄՍ. 473), և բոլորովին անհնարին չէ երկու անունները նոյն անձի վրայ միացնել, զի Հառմ գացած ատենն 40 տարեկան ըլլալով ալ 76 տարեկան կ'ըլլար 1474'ին, ուսկից հետը չատ ապրած չէ։ Ծովակիմներու նոյնութիւնը, թէ ոչ ստուգապէս, գոնէ հաւանապէս մտածելի կու տայ թէ Կիլիկիոյ նախկին պատգամաւորը վերջէն ալ Կիլիկիոյ աթոռին հետ եղած է, և կարապետի կոչմը չարած, ուսկից կը հետեւի Օսմանեան պետութեան Հայերուն նախապէս Կիլիկիոյ աթոռին հետ կապուած ըլլալը, արդարացնելով անոգան կազմուած ցուցակին պարունակութիւնը (§ 1479)։

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՁԵՌՆՀԱՍՈՒԹԻՒՆ

1488. Սովորաբար կը պատմուի թէ Ֆաթիհ ուղղով Հայերու դիրքը կանոնաւորել և բարձրացնել, ոչնչով անոնց ալ պետ մը տալ Ծունաց պատրիարք Գենադիոսի համար կազմուած կերպով և արտօնութիւններով, և այս նպատակով Ծովակիմը 1461'ին Պրուսայէ կանչեց, և Հայերու հոգեւոր պետ հռչակեց, պատրիարք կամ էթնարխ անունով և իրաւունքով։ Այս պատմութիւնը կը լրացուի Կոստանդնուպոլիսի գրաւչէն առաջ տրուած խոստումով (ՉԱՄ. Գ. 500), և կ'աւելցուին նախընթաց մտերմութեան, և մինչեւ իսկ յաղթականին սուրը օրհնած ըլլալու պարագաները։ Չենք կրնար վաւերական աղբիւրներով ճշդել այդ կէտերը, բայց և ոչ կրնանք ընդունիլ որ Ծովակիմ առաջնորդ 1453'էն մինչեւ 1461 Կոստանդնուպոլիս գալ ուզած չըլլայ, և այնտեղ հաստատուղ Հայերն ալ իրենց դիրքը ամրացնելու հետամուտ եղած չըլլան։ Ծովակիմի ստացածը նոր պաշտօն չէր, զի արդէն արքեպիսկոպոս Փոքր-Ասիոյ և հարաւային Եւրոպիոյ Օսմանեան գաւառներուն առաջնորդն էր, և ինչ որ Ֆաթիհէ կը ստանար քրիստոնեաներու համար կազմակերպուած նոր կացութեան գործադրութիւնն էր։ Միայն առաւելութիւնը զոր Հայերը կը ստանային, պատրիարք անունով պատուուած և պատրիարքի իրաւունքներով ճոխացած պետ մը ունենալն էր։ Սակայն տրուած պատրիարքութիւնը լոկ արտաքին պատիւ և արտաքին իրաւունք էր, եկեղեցական

նուիրապետութեան տեսակէտով պատրիարքական աթոռ մը հաստատել վճռական կարողութենէն վեր էր, և բարձրագոյն եկեղեցական իշխանութենէ մը այսպիսի իրաւասութիւն կամ առիթ հաստատուած չէր։ Վասնզի ոչ Սիսի և ոչ Իջմիածնի աթոռները, որչափ որ գիտնք, Կոստանդնուպոլիսով զբաղած չեն։ Բայց զբաղելու ալ պէտք մը չկար։ Ցովակիմ արդէն կանուխէն ունէր առաջնորդական իշխանութիւնը, և երբ նոյնինքն Փլորենտիա գացող և 1440'ին Փլորենտիայէ դարձող Ցովակիմն էր, հետևաբար Վանկացիի օրէն, գոնէ Մուսաբէգեանցի օրէն անորոշ սահմանով վիճակի մը ընդհանուր առաջնորդը եղած էր։ Իր տեղափոխութիւնը պատահական էր, կիլիկոսի ու Գրիգորի չփոթութեանց միջոցին իր պաշտօնը չտրուեալ էր, և վերջէն ալ կաթուղիկի կողմը բռնած էր։ Ըստ այսմ տարածեալ վիճակի մը առաջնորդն էր, որուն ինչ ինչ արտօնութիւններ ալ աւելցած էին։ Առաջին վայրկեանէն պէտք ալ չկար որ Ցովակիմի համար ստեղծուէր աւելի ընդարձակ իրաւասութիւն մը, վասնզի գրեթէ բովանդակ Օսմանեան կայսրութիւնը մէկ վիճակի պէս կը ներկայանար, և իրաւասութեան ընդարձակութիւը բնական ընթացքով առաջ եկած էր, քանի կ'ընդարձակուէր Օսմանեան պետութիւնը, իսկ սա Կոստանդնուպոլսոյ մէջ նստող առաջնորդը պէտք էր ճանչնար իբր բոլոր իր հպատակ Հայերուն հոգեւոր պետը՝ ինչ ալ ըլլային անոնց իրենց մէջ ունեցած եկեղեցական յարաբերութիւնները։ Իսկ Կոստանդնուպոլսոյ պատրիարքներուն ոչ միայն արտաքին և կենցաղական իրաւունքին, այլև անոնց ներքին և հոգեւորական իրաւասութեան՝ ուրիշ առաջնորդներու վրայ տարածութիւը, հետեւանք եղաւ նորահաստատ դրութեան, որուն մէջ դժուար էր կրկին իրաւասութեանց սահմանը գծել ու զատել, քանի որ պատրիարքներուն յանձնուած գործառնութիւնները իրենց բնութեամբ կրօնական և եկեղեցական սեռա առնչութիւններ ունէին։ Այսպէս պահանջը սովորութեան և սովորութիւնը օրէնքի փոխուելով, Կոստանդնուպոլսոյ Հայ պատրիարքները Օսմանեան կայսրութեան Հայերուն վրայ թէ եկեղեցական և թէ կենցաղական իրաւասութիւն կը ստանային, թէպէտև այս մասին հայրապետական կամ ժողովական յատուկ որոշում մը տրուած չըլլար։

ՍՍՈՑ ՊԱՏՄԱՇԱՐՆԵՐ

1489. Պարագաներու հետեւանօք, երկու կաթողիկոսական աթոռներուն ալ Կոստանդնուպոլսոյ գործերով զբաղած չըլլալը յայտնի է, սակայն եթէ զբաղիլ ալ ուզէին, իրենց չուրջը կատարուող գործողութիւններ պիտի չներէին իրենց նպատակին հասնիլ։ Սսոյ մէջ կարապետ կաթողիկոսութիւնը միայն 2 տարի տեւած կը կարծուէր, և 1449'ին իրեն յաջորդ կը դրուէր Սահմանոս Սարաձորեցին (ՉԱՄ. Գ. 491), սակայն նորագոյն գտնուած յիշատակներ մինչեւ 1477 կը յետաձգեն կարապետին մահը (ՍԻՍ. 539), և 1461'ին կը գտնեն Սսոյ մէջ տեղի ունեցած խռովութիւն մը։ Սսոյ իշխան Մելիք Էօմէր, անուշա նախկին իշխան Մելիք Էօմէրի թոռ, զոր յիշեցինք Թէոդորոս Բ'ի սպանութեան առիթիւ (§ 1373), իր բռնութեամբ այնչափ զայրացուցած էր Սսեցիները, որ Հայ ու Տաճիկ միաբանեցան զայն սպաննել, և իրենց խորհրդակցութիւնը կատարելու համար ժողով է ընէին ի Կաթողիկոսարան։ Մելիք Էօմէր թիւրքմէն գունդեր վարձեց իր պաշտպանութեան, կռիւ ու պատերազմ տեղի ունեցաւ երկու կողմերուն մէջեւ, կտորածներ և թալաններ քաղաքը աւերեցին, և Թիւրքմէնները տէն է սոբէ յոնոռ, է կռիոզէկոռբան պէչ կաթողիկոզն, և ըռլանեցին զվանդն և զռոբէ գռոռան և զսգնաչ սբբռըլռա (ՍԻՍ. 544)։ Արդ այս տարին էր որ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութիւնը կը հաստատուէր, բայց անկէ ետքն ալ Սիս խաղաղ ու ապահով մնացած չէ։ Այս տրակածէն քիչ ետքը 1464'ին Զագամ պէկ մը կը ցուցուի իբր տէր Սսոյ, որ անուշա Մելիք Էօմէրը մեծ ժելով տիրացած է, և անոր վրայ կու գայ Մարաչի պէկին որդին Շահսուար, որ Դաշտային Կիլիկիա գրաւելէն ետքը 1468 յունիս 2'ին Սիսը կը պաշարէ, և Սսեցիք ութ յարձակումներ վանելէ ետքը վերջապէս անձնատուր կ'ըլլան դեկտեմբեր 23'ին, և

Սոյ իշխան կը նշանակուի Շարամերթ՝ Շահնուաբի կողմէն։ Սա Հայերը կը հարբսատանաբէ, գլխաւորները կ՚ելլէ դնէ է հոբն, և փախստականներն ալ փրկանքի պատրուակով ձեռք կը ձգէ, և անոնք ալ է հոբն դնելով, չաւ մը կը նեղէ, և վճռե և չչնանդն և ըսպ ըսլն կը կողոպտէ։ Բայց այն երկար չվայելեր, վանդի վրան կը հասնի Իսիլ Թիւրքմէնը 1469'ին, որ քաղաքը ընտելեցը, և ըսպ մալ եսա և ըսպ անոր սբբոցներէն և մնկնեցաւ։ Շահնուար Սիսին մէջ հազար անուոր այլազգիներ կը փոխադրէ, 1470'ին ժանտախտէն հոգը գրեթէ անմարդացեալ քաղաքը չէնցնելու համար։ Այդ ժանտամահին մէջ մնուած է նաեւ Հեթում Կազինց, Սպիտակ Երէց մականուանեալ Աջպահ Ս. Լուսաւորչի Աջոյն (ՍԻՍ. 545), և ուրիշ սրբոց աջերուն (ՍԻՍ. 540), պաշտօն մը, որ կարապետի օրով հաստատուած էր Սսեցիներու կամքով, Աջի նոր անյայտացման վտանգին առջեւն առնելու համար։ Սա ինքն կը նկատուի իբր նախահայր Աջպահներուն կամ Աջապահներուն գերդաստանին, որ զօրաւոր դիրք ստացաւ դար մը ետքը, ուսկից չատ եպիսկոպոսներ եղան, և որ վերջէն Սսոյ աթոռին ժառանգական յաջորդութիւնը ձեռք անցուց։ Կարապետ եւդոկիացիին դառնալով ցարդ պատմուածները կը ցուցնեն, թէ բաւական տագնապալի օրեր անցուցած է իր բովանդակ հրեւանամեայ կաթողիկոսութիւնն մէջ, և թէ իրեն դիւրին չէր հեռաւոր գործերով զբաղուիլ։

1490. Լաւագոյն չէին Գրիգոր Ջալալբէգեանի էջմիածնի մէջ անցուցած օրերը։

ՋԱՔԱՐԻԱ ԵՒ ՍԱՐԳԻՍ

Յորմէհետէ կիրակոս մնաւ, և Ջաքարիա Աղթամարցին զինքն Ամենայն Հայոց հայրապետ կարծեց, իր բոլոր ձիգերուն նպատակն էր կերպով մը էջմիածին անցնիլ, և իրօք պրաւել հայրապետութիւնն նախնական և նուիրական աթոռը, որ անգամ մըն ալ հնչակուած էր վաղարշապատի ժողովով և նոյն իսկ Ջաքարիայի համաձայնութեամբ (§ 1476)։ Բաւական միջոց մը անցած էր 1443'էն ասդին, և Ջաքարիա չէր կրցած իր նպատակին հասնիլ, սակայն իր ջանքերը գաղտնիք չէին, և Ջալալբէգեան հարկաւ մտածոգ էր իր աթոռին վրայ, ստիպեալ ըլլալով չարունակ անոր հնարքներուն առջեւն առնել, և Արիստակէսի աթոռակցութիւնն ալ (§ 1481) վերջնական դարման մը եղած չէր։ Այստեղ մէջտեղ կ՚ելլէ Սարգիս եպիսկոպոս մը, էջմիածնի միաբանութենէն, որ իր ձեռքը կ՚անցընէ Լուսաւորչի աջը, և նշանաւոր ուրար մը, և խաչվառի դրօշ կամ խաչալամ մը (ՉԱՄ. Գ. 503), և անոնցմէ կ՚աշխատի իրեն բարձրանալու ճանապարհ բանալ։ Անտեղի պիտի չըլլար Սարգիսը կաթողիկէին փակակալ կամ լուսարարապետ եղած ըսել, քանի որ դիւրութիւն ունեցած է յիշեալ առարկաները տիրանալ։ Ջամչեան այդ պարագային կը գրէ, առանց աղբիւրը ցուցնելու, և թէպէտ Դավրիժեցին չյիշեր, բայց չենք կրնար ենթադրական ըսել Ջամչեանի գրածը, և կ՚ընդունինք Սարգիսի վերագրուած գողութիւնը։ Երեւանեցին ալ հղելութեանց չարքին չմոցներ Սարգիսի արարքը, այլ Աջն և ուրարը ու խաչվառը, եգիպտոսէ Թաւրիզ բերուած և Շիհանշահի ձեռքը գտնուած կը կարծէ, իբր թէ եգիպտոս մնացած ըլլային եգիպտացւոց ձեռք գերի իյնալէն իվեր (§ 1193)։ Բայց այդ ենթադրութեամբ՝ պէտք կ՚ըլլար ստել Հեթումի ձեռօք կատարուած Աջին դարձը (§ 1198), կաթողիկոսներուն իրենց կոնդակներով զայն յիշելը, վերջին անգամ Սիսէն անյայտանալը (§ 1449), և վաղարշապատի մէջ յայտնուիլը (§ 1456), զորս յայտնի վկայութիւններով հաստատեցինք, և զորս նոյն ինքն Դավրիժեցին ալ կը յիշատակէ, և կը հաստատէ յատուկ ուսումնասիրութեամբ իրեն գտած ու գննած տեղեկութեանց համեմատ (ԴԱՎ. 321—328), որով կը դարմանէ ուրիշ տեղ պահած լուսթիւնը, և կը վկայէ, թէ Լուսաւորչի սուրբ Աջն հաստատ և պատճէն պահուելէ է Սսոյ և երկար չէջքիածին, ուր և գնացեալ չէ Ազուռոմ (ԴԱՎ. 329)։ Երեւանեցիին տարբեր կարծիքը արդիւնք է միայն անկն յիշատակարանները տեսած չըլլալուն։ կը մնայ միայն ճշդել թէ ինչ միտքով Սարգիս իր յանդուգն ձեռնարկը կատարեց։ Ըստ Ջամչեանի՝ Գրիգոր և Արիստակէս կաթողիկոսներ իրարու հետ

գժտած էին, և Սարգիս պատրհ գտաւ Ալը իրեն ձեռք անցնելով Թաւրիզ երթալ, որ ձիհանչահը վաստկելով կաթողիկոսութիւնը իւր վրան դարձնէ (ՉԱՄ. Գ. 503)։ Մեզի դժուար կ'երեւի Սարգիսի վրայ ենթադրել այնչափ յանդգնութիւն և միջոցներու առատութիւն, որ կարենար ուղղակի Թաւրիզ դիմելով ձիհանչահը իր կողմը վաստկիլ։ Այդ մեկնութիւնը կ'ընդունի Ջամինեան ալ, բայց առանց իւր կարծիքին պատճառներ հիմ մը ցուցնելու (ՉԱՄ. Ա. 7)։ Շատ աւելի հաւանական և ճշմարտանման պիտի ըլլար ըսել, թէ Սարգիս Ջաքարիայէ գաղտ չհաւնած էր, և անոր գործը չաղողցնելու համար նուիրեալ կամ վաճառեալ գործակից մըն էր։ Ջաքարիա իր տարիներէ իվեր որճացած խորհուրդը գործադրելու համար երկու գլխաւոր պէտքեր ունէր, մէկն էր ձիհանչահը իւր կողմը վաստկիլ և միւսը Ալին տիրանալ, վասնզի ձիհանչահի հրամանով և զօրութեամբ աթոռին տիրացած առնին ալ, ազգը զինքն չէր ընդուներ իբրեւ կաթողիկոս, բայց եթէ Լուսաւորչի Ալը մէկուէ առնելով ուրիշ տեղ հաստատուէր։ Ալին անունն էր, որ մեծապէս ազդած էր հանրային կարծիքին վրայ կիրակոսը ընդունելու համար, Ալի անունով չաղոցած էր կարապետ ալ նոր աթոռ հաստատել, Ալը պէտք էր որ Ջաքարիայի ձեռքն ըլլար իւր կամքը օրինաւոր ընելու համար։ Ուստի ամէնէն առաջ Սարգիսի հետ համաձայնած էր, որ Ալը առնէ և Թաւրիզ իջնէ, ուր ինքն ալ պիտի հասնէր միւս պայմանը լրացնելու, որ է ձիհանչահի հրամանը առնալ։ Ապա թէ ոչ Սարգիս, եթէ իրեն համար աշխատած էր, չէր կրնար այնչափ դիւրութեամբ տեղի տալ, և իրեն համար կատարած աշխատութիւնը Ջաքարիայի վայելել տալ։

ՋԱՔԱՐԻԱ ՑԷՋՄԻԱՑԻՆ

1491։ Ջաքարիայի նպատակին չաղողցնելու համար չարչար աւելի մըն ալ եղաւ ձիհանչահի թախտարեկու վրայ տարած չաղթութիւնը, երբ մինչեւ Հրէ մայրաքաղաքը արշաւելէ ետքը, չաղխական փառքով դարձեալ եկն ի Նախճաւան, ի Պաղտէն շահապան ի Թաւրէզ։ Ջաքարիա խնդակցութեան և չնորհաւորութեան փութաց քաղաքի ընդունելին պէտք էր որ տեսած ըլլար Ջաքարիան և Գրիգորը վար առնելով Ջաքարիան բարձրացնելու համար, բայց պատշ չէնք գիտեր թէ ինչ տեսակ չարաշահութիւններ ըրած էին Գրիգորը վար առնելով։ Թերեւս Գրիգորի անտարբեր մնալը անհաճոյ երեւցաւ ձիհանչահի, ուստի անոր տարեկան հարկերուն վճարումը չաղաղած էր, վերջապէս ձիհանչահ որոշից Ջաքարիան գոհացնել, անոր խլած այսինքն պատուոյ գլխաւ տուաւ, չնորհեց միանգամայն ղազախ պարբերապետութեան, և հրամայեց երեւանի իշխանին որ Ջաքարիան տեղը բազմեցնէ։ Բոլորովին նոր է Ջամինեանի մտածած կերպը, որ ձիհանչահ հրամայած ըլլայ Ջաքարիայի և Սարգիսի չաղորդաբար կաթողիկոսութիւն վարել (ՉԱՄ. Ա. 7), որուն ոչ մի տեղ յիշատակը կամ ակնարկը չգտանք։ Գրուած է, թէ ձիհանչահ տուաւ նահապետական չաղ կաթողիկոսութեան դերը (ԴԱվ. 324), սակայն չկրնար իրը իւր կողմէ բնծայ մը տուած ըլլալ (§ 1412), այլ միայն կրնայ փոխանցումին հաւանած ըլլալ, կամ թէ Ջաքարիա այսպիսի ձայն մը հանած կ'ըլլայ, գործին փայլը աւելցնելու համար։ Ջաքարիայի գովաբանը կ'ուզէ անոր չաղողութիւնը կաթողիկոսութեան ձեռնադրութենէ առաջ և կամ միայն ցոյց տալ, բայց իսկապէս հրամանը ձիհանչահին Ջաքարիա եկաւ երեւան, և անկէ իջմիածին, արտաքին իշխանութեան ձեռնտուութեամբ տիրացաւ հայրապետանոցին, և ինքզինքը հռչակեց ինքնակալ պարբերապետ ընդհանուր ամէնայն էրէսփանեան ազգի, որ են ընդ ամենայն ալբոսպ պեղեբոց (ԴԱվ. 325), հարկաւ միայն Հայ քրիստոնեաները, և ոչ ամէն քրիստոնեաները իմանալով։ Ջաքարիայի փառքը պատմող յիշատակագիրը՝ Գրիգորի ու Աբիստակէսի անուններն իսկ չյիշեր, սակայն անոնց կաթողիկոսութիւնը դադարած չէր, և Դավիթ Ինգիին իւր սովորութեան համեմատ 1461 թիւին կը գրէ. Նոյն պէս Գրիգոր, և Նոյն պէս Աբրահամ, այլեւս եղեւ կաթողիկոս

փէր Զաքարէ» (ԴԱվ. 336), քանի որ այլեւս ախոռականներու չատութիւնը վինքը չէր խրտչեցներ, թէպէտեւ մինչ ամէնքը միեւնոյն կերպով պիտի չկարենանք նկատել։ Նախ պէտք է որ Զաքարիայի գործը աւելի ճշդութեամբ դնենք 1460'ին, համեմատ Ստեփանոս Արծկեցի աբեղային վկայութեան, որ նոյն թիւին նախ է հայրապետութեան փեսան Գրիգորէ գրելէն ետքը, վերջէն կ'աւելցնէ՝ է հայրապետութեան փեսան Զաքարէայ, որ յայմ ամի պէրճաց էջմիածնէն և լուսաւորչէ տաճկաց Աղբն (ՓԻՐ. 196)։ Պատերազմական գործողութեանց ալ չարմարագոյն եղանակը ամառնային միջոցը ըլլալուն, Զաքարիայի թաւրիզ երթալը պէտք է դնել աշնան առաններ՝ ձիհանշահի յաղթական դարձին, և ձմեռ չմտած ալ էջմիածին հասնիլը, Հայոց 909 թուականին վերջերը, որուն չորդը 910 տարւոյն ամանորը կ'իյնայ 1460 նոյեմբեր 26'ին, և երկու թուականներու անխոհեմ գործածուած ըլլալը կ'արդարանայ։

1492. Զաքարիայի կաթողիկոսութեան վրայ խօսելով, չատ ճիշդ կը գտնենք վերոյիշեալ Արծկեցի յիշատակագրին գործածած ԿԱՆՈՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԸ բացատրութիւնը, զի չենք կրնար օրինաւոր կաթողիկոսութեան պայմանները ճանչնալ մէկու մը վրայ, որ պետական իշխանութենէն միայն կ'ընդունի իւր պաշտօնը, և անոր գլուխը կ'անցնի արտաքին բռնութեան ձեռնտուութեամբ։ Գրիգորն էր հայրապետութեան օրինաւոր ախոռակալ ճանչցուած անձը, ոչ մի ժողով և ոչ մի օրինական վճիռ չէր որոշած անոր պաշտօնը, և ոչ ալ ինքն կամովին հրաժարած էր պաշտօնէն, և ոչ իսկ նոր ձեւին համեմատ՝ Գրիգոր և Արիստակէս համաձայնած էին իրենց ախոռակից ճանչնալ Զաքարիա Աղթամարցին։ Հետեւաբար Զաքարիա, թէպէտ Աղթամարի մանաւոր ախոռին կաթողիկոսն էր, այլ էջմիածնի ընդհանուր և Ամենայն Հայոց ախոռին վրայ բռնի տիրապետող մրն էր, և այս առաւելութեամբ չարդարանար առձեռն ցուցակնութեան մէջ Զաքարիան՝ Զաքարիա Բ անուանով և թուանամարով օրինաւոր կաթողիկոսներու չարքին անցնելու սովորութիւնը (ԺԱՄ. 635)։ Գրիգորի և Արիստակէսի կողմէ դիմադարձութեան կամ բողոքի գործողութեան մը կատարուած ըլլալուն յիշատակը հասած չէ, բայց եթէ պետական ոյժին հանդէպ տեղի տալու պարտաւորութեան ալ, անով իրենց իրաւունքէն ինկած չեն ըլլար։ Հանրութեան կարծիքն ալ մեր ըմբռնումը ունեցած է, ինչպէս կը քաղուի 910 մեհենկին, այսինքն 1461 մայիսի վերջերը գրուած յիշատակարանէն, որ միայն է հայրապետութեան փէր Գրիգորէ կը յիշէ (ՓԻՐ. 198)։ Հաւաքարանը կը գրէ թէ էջմեան փեշ քաղաք պարսից նեղեալ անկաւ էր, և Զաքարիա հասոյց ղարս քաղքովն (ՕՕ ՐԻՋ. 1195), ինչ որ կրնայ ըլլալ իբր մեծագործութեան ցոյց և իբր համակրութիւն չահելու եղանակ, և նոյնիսկ էջմիածնի յետաձգուց տուրքերը վճարելով ձիհանշահը գոհացնելու միջոց։ Բայց այս կերպով երբեք օրինաւորութիւնը գնած չըլլար։ Պատգամներն ալ կը ցուցնեն, թէ Զաքարիա չատ դիմադրութիւն չէ տեսած, որով էջմիածնէ բացակայելու իսկ համարձակած է, բայց ասիկայ ալ բուն զօրութեան և բռնադատեալ լուութեան նչանէ աւելի բան մը չէ։ Չենք կրնար նաեւ ճշդել թէ Գրիգոր և Արիստակէս ուր քաշուեցան և ինչ դեր վարեցին, կամ թէ ստիպուեցա՞ն էջմիածնի մէջ ընկճուած ապրիլ, սակայն ամէն աղբի մէջ Զաքարիայի օրինաւորութեան տեսակէտը երբեք չարդարանար։

1493. Զաքարիայի էջմիածնի տիրանալէն քիչ ետքը, 1461 գարունին ձիհանշահ չատ անդր արշաւանք մը կազմեց ԷՋՄԻԱՄԻՆԷ ՓԱԽՈՒՍՏԸ Աքքոյունլուներուն դէմ, և նախ Խլաթի վրայ յարձակելով բոլոր երկիրը աւերեց ու աւարեց, և ամէն կողմ տարածեց վհատութիւն եկեղեցւոց, վտանգ ուխտաւորաց, երբեմն ուրիշներուն, վհատութիւն քահանայից, և վտարչութիւն լինելն ամենայն ժողովրդեանն, նոյնը սպառնալով ընել է Բաղէշ, է Մուշ, է Խոյ, է Սատանայ, և յամենայն գաւառս նոցա։ Զաքարիա, որուն գործունէութիւնը չենք ուրանար, փութաց մեծագոյն չարիքներու առջեւն առնուլ։ Ձիհանշահէ արտօնութիւն ստացաւ հաչտա-

բարի դեր կատարել, և Ճինանկիրի գնաց զայն զիջողութեան համոզելու (ԴԱվ. 325)։ Ախս երէս աշխատեցաւ այդ բանագնացութիւնները լրացնելու համար, և վերջապէս կրցաւ Ճինանկիրը հարկ վճարելու համոզել, և Ճինանչահը իւր զօրքը ետ քաշելու հաւանեցնել, և առեալ վերադարձել հոքին, փոքեալ մարդց փոխըմէն Ճինանչահի, և ազգաց զմինոյն ժողովրդեն, ղէայ և զՏաճիկ, ի յԱռաջ անդրիմաց։ Այդ այն պատերազմն է, զոր յիշեցինք արդէն քաղաքական կացութիւնը բացատրած առենիս (§ 1474)։ Զաքարէյան իրաւամբ փառաւորուեցաւ, դեռ բանալ խելայեալ յերկաց ցուրց, ի Թուրքման փոխըմէն Ճինանչահէ, և ի Քուրդ ազգէն Ճինանկիրէ, և նորէն դարձաւ էջմիածին աւելի զօրացած, 1461 յունիս ամսոյ առենները։ Բայց երբ Զաքարիա աւելի ամուր կը կարծէր զինքը, այնտեղ սկսաւ իր ձախողուածը։ Ճինանչահ Աքքոյունլուներու դէմ արշաւանքը դադրեցնելով, իր գունդերը դէպ արեւելք դարձուց Թաթարներու դէմ, Հայաստանի և չրջակայից կառավարութիւնը յանձնելով իր Հասան Ալի որդւոյն, որ իւր հաչուոյն ինքն ալ գանձելու և չահելու միջոցներ կը փնտռէր, և Զաքարիա՝ մշակուելու յարմար երկիր մըն էր, որով երկուքին յարաբերութիւնները սկսան ցրտանալ։ Հասան Ալի սկսաւ Զաքարիան ձեռք ձգելու և ստիպելու միջոցներ որոնել, և Զաքարիայի գովարանը կը յաւելու թէ այդ ամէնը կը գործուէր ՆենԹոլիմէ ըսթեցոց ոմանց։ Պիտի չհակառակինք այդ ակնարկը Դրիգորի և Արիստակէսի վրայ իմանալ, որոնք անշուշտ իրենց օգուտին պիտի ծառայեցնէին Հասան Ալիի ձգտումները, և Զաքարիան հետաքննելու պիտի հետապնդէին։ Զաքարիա ալ չուտով ձևոնթափ չեղաւ և իր ճարպիկ գործունէութեան միջոցները ձեռք առաւ, բայց չյաջողեցաւ, և վախցաւ իսկ՝ երբ տեղեկացաւ թէ Հասան Ալի կ՚ուզէ ըմբռնել զինքն, որ յաջողի պահանջել Թոնյս և ինչ։ Նեղանակը յառաջած էր, և յոյսը չհերցոյ հասած էր, այսուհանդերձ Զաքարիա ստիպուեցաւ էջմիածինը թողուլ և ծպտեալ կերպով հեռանալ, յանկարծ ձեռք չիյնալու համար, բայց չմոռցաւ իրեն հետ տանիլ վաչն սուրբ Լուսաւորչին (ԴԱվ. 326) և խաչալամը, որ նկարեալ կայր ի մի կողմն պարկերն պերառնան, և ի միս կողմն Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, և Թոփառորչին Տրդատայ, և ընդալփեղ կուսին սրբոյն Հռիփսիմեայ, և նչանաւոր ուրարը, սկիներ յօրինուածով և պղէզ պղէզ փառով երանէ երանէ ըսրտրեալ (ԴԱվ. 327)։

1494. *Զաքարիա Աղթամարայ կաթողիկոս և Ամենայն Հայոց աթոռին տիրապետող, ծպտեալ և անճանաչելի Աղթամար նայ կերպով ճանապարհորդելց էջմիածնէ մինչեւ Բերկրի, Բագրեւանդայ վանքին և Պայազիտի բերդին մէջն ալ ինքզինքը ծածկելով, մինչեւ որ հասաւ իր բնիկ կաթողիկոսութեան սահմանը։ Բերկրիի մէջ Տէրյուսկանորդոյ վերին վանքը, որ Ապգելան կը կոչուի, առաջին անգամ ինքզինքը յայտնեց, և ցոյց տուաւ մէկտեղ բերած սրբութիւնները, գլխաւն ապոստածային վաչն սուրբ Լուսաւորչին, հանդերձ խալաթովը և սրբոցը (ԴԱվ. 326)։ Մեծ հզաւ ժողովուրդին խանդավառութիւնը, Լուսաւորչի պաչտելի Աջը Աղթամարի աթոռին ձեռքը անցած տեսնելով, և Բերկրիէ մինչեւ Աղթամար, ոչ եւս փախստականի, այլ յաղթականի փառաւորութեամբ ճանապարհորդեց Զաքարիա։ Ամէն տեղ ընդառաջ ընծայներ խնկով և մոմերով, և գնդամբք խոյց և զսուրկոց, և երկրպագութիւն տալուցանէին սուրբ Աջոյն և հայրապետին, և համբուրէին ընծաս փափաքով։ Բոլոր ճամպուն վրայ եղող գիւղեր և աւաններ չարունակեալ խափոր կը կազմէին, բայց աւելի մեծ հանդէսներ տեղի ունեցան վան, որոնց մասնակցեցաւ քաղաքի իշխանն Մահմուտ պէյ, Ճինանչահի կաթնեղբայրը, և Ոստան, որուն Քուրդ իշխանը ընդհակառակն գաղտագողի նենգել և յափչտակել մտածեց։ Ուստի Զաքարիա ստիպուեցաւ Ոստանէ չուտով հեռանալ, և Քարապաչաի բերդէն նաւ մտնելով Աղթամար հասաւ 911 նաւասարդ 16'ին, որ է 1461 դեկտեմբեր 11'ին, և ճշդիւ կը պատասխանէ սրբոյն սուրբ Յակոբայ պահոց (ԴԱվ. 329)։ Հաչիւ առնելով էջմիածինէ Բերկրի հեռաւորութիւնը, և միայն սուրբ ինչ միջոց վան մնալը, և Ոստանէ չուտով*

մեկնիլը, պէտք է իբր 20 օր առաջ դնել Զաքարիայի էջմիածինէ հեռանալը 1461'ին նոյեմբերին վերջերը, որով տարի մը միայն տեւած կ'ըլլայ Զաքարիայի տիրապետութիւնը էջմիածնի մէջ (§ 1491), հռամմեայ բացակայութիւնն ալ մէջը հաշուելով։ Աղթամարեան յիշատակարանը (00 ԲԻԶ· 1195), Զաքարիան նորէն էջմիածին դարձած կ'ըսէ Աջը բերելէն ետքը, այլ և հոն մեռած, մանաւանդ թէ ըստ այլոց երկու տարի այն տեղ մնացած կ'ըսուի, և 1464'ին դեղեաւ եղած է Նոյեմբ (ՓԻՐ· 220), սակայն Բազէշի պատգամաւորութենէն ետքը, դարձեալ Նըփա է յղուած իբր է ատեն էջմիածին պատգային հետ (ԴԱՎ· 326) չփոթուած է, զի Աջի փոխադրութիւնը ոչ թէ օրինական և յայտնի գործ մը եղած էր, որպէս ոմանք կարծած են (ՓԻՐ· 208), այլ գողունի յափրշտակութիւն և փախուստ մը (ԴԱՎ· 327), ուսկից ետքը անհնար էր, որ Զաքարիա Աջը Ազթամար թողլով կարենար էջմիածին դառնալ։ Հետեւաբար չարդարանար անոնց այ կարծիքը, որ մինչեւ 1465 եղեռնէն ետքն ի Գողթն դեղեաւ կը դնեն Զաքարիան (ԱՐՐ· 230)։

1495· Զաքարիայի հեռանալովը Գրիգոր Զալալբէգեան նորէն կացութեան տէր դարձաւ 1461 տարւոյ վերջին ամիսէն սկսելով, իրեն կողմը ունենալով Հասան Ալի, որ փոխարքայ մըն էր այդ կողմերուն վրայ, և զոր չհանած էր Գրիգոր սէտք եղած միջոցներով։ Գրիգորի միշտ աթոռակից և գործակից մնաց Արիստակէս Աթոռակալ, որուն կողմէն 1462'ին Լինհասանի Հայերուն կոնդակ մը ղրկուիլը (ՓԻՐ· 207), առիթ տուած է ոմանց նոյն 1462'ին մեռած ըսել Զալալբէգեանը (ՁԱՄ· Գ· 506), մինչ յայտնի վրկայութիւններ չատ ետքը տակաւին գործի վրայ գիտեն Գրիգորը։ Դավրիժեցին 1466 թուականին ներքեւ կը գրէ· Նոյն թէ Գրէգոր, և Նոյն թէ Աբէթոռկէս, այլեւ եղեւ կոնդակ թէ Սրբոյն (ԴԱՎ· 337)։ Երկրորդ աթոռակիցի մը ասելնալը նշան է Գրիգորի ծերացած և ակարացած ըլլալուն, որ գործակիցներ չատցնելու պէտք զգացած է, այլ զարմանալի է Սարգիսին այդ պաշտօնին կոչուիլը։ Այս այն Սարգիսն է, որ Աջը էջմիածինէ գողնալով Զաքարիայի տիրապետութիւնը դիւրացուց, և Գրիգորի դիրքը խախտելու պատճառ եղաւ, և այժմ անոր մօտ և անոր գործակից կը տեսնենք։ Պատմութիւնը չէ բացատրած այդ փոփոխութեան գաղտնիքը, սակայն երբեմն պարագաները ինքնիրեն կը խօսին, և հղելութեանց կապակցութիւնը կը բացատրեն։ Եթէ Սարգիս Աջին գողութիւնը իրեն համար պատրաստած էր, պէտք էր իրեն ծանր երեւար Զաքարիայի յաջողութիւնը, իսկ եթէ Զաքարիայի ծառայութիւն մատուցանել ուղած էր, ինչ որ մենք հաւանական նագոյն կը կարծենք (§ 1490), պէտք էր Զաքարիայէ արժանաւոր վարձ մը ստացած ըլլար, ինչ որ յիշատակուած չէ, և ոչ ալ բացակայութեան ատեն ալ աթոռակցութեան պատիւն ու գործը Սարգիսի յանձնուած է։ Երկու առիթներու մէջ ալ դիւրաւ կը հաստատուի Սարգիսի և Զաքարիայի անհամաձայնութիւնը, մանաւանդ թէ Զաքարիան հեռացնելու համար Սարգիսի ալ Գրիգորի միանալը, և Զաքարիայի մեկնելէն ետքը, երկրորդ աթոռակիցի մը պէտք զգացուած ատեն, Սարգիսին այդ առաջնութեան կոչուիլը։ Դավրիժեցիին նշանակած 1466 թուականը, պարտաւոր չենք իրեւ Սարգիսի աթոռակցութեան սկիզբը նկատել, ինչպէս ինքն ալ յայտնապէս կը գրէ (ԴԱՎ· 335), ուստի ամենայն հաւանականութեամբ կրնանք Սարգիսի աթոռակից կաթողիկոսութիւնը 1462'էն հաշուել, Զաքարիայի մեկնելէն անմիջապէս ետքը։

ՍԱՐԳԻՍ ԱԹՈՌԱԿԻՑ

1496· Գրիգորի վերջին տարիներուն միջոցը, նշանաւոր և կարեւոր դիպուած մը չներկայեր։ Ինքն ալ ներքին գործերով և յուզուած տագնապներով լեցուած կ'անցընէր իր ծանրացեալ օրերը։ Գրիգորի մահը պէտք է դնել 1465 տարւոյն վերջերը, վասնզի որչափ ալ Հայոց 915 թիւին գրուած յիշատակարան մը կը նշանակէ թէ հայրապետութեան գահն Գրիգորէ, ընդհանուր Հայոց կաթողիկոսի (ՓԻՐ· 226), սակայն ուրիշ մըն ալ 914 թուականով կը գրէ, թէ կաթողիկոսութեան գահն Ըռքոպէոսէ, որ յայտ ամի նոյեմբ յա-

ԳՐԻԳՈՐԻ ՄԱՀԸ

ին հայրապետութեան (ՓԻՐ. 221), ինչ որ Գրիգորի մեռնելով, աթոռակցութենէ նահապետ աթոռակալութեան անցնելուն կրնայ պատճառիլ։ Նկատելով ալ որ Հայոց 915 տարին 1465 նոյեմբեր 25'ին կը սկսէր, այն տարւոյ վերջերը դնելով Գրիգորի մահը՝ երկու յիշատակութիւններն իրարու կը մօտենան, մանաւանդ որ գրողները տեղւոյն վրայ չեն, և լուրերն ալ չատ չուտ չէին տարածուիր այն ատենները։ Գրիգոր Զալալբէգեան կամ Մակուցի կամ Արտազեցի կաթողիկոսին գործերը հետզհետէ յառաջ բերած ատեններս ինչինչ դիտողութիւններ ալ միատեղ յայտնեցինք։ Ապիկար և ստորին անձնաւորութիւն մը եղած չէ, գոնացուցիչ գործունէութիւն և գնահատելի արդիւնքներ ալ ունեցած է, դժբախտաբար պաշտօնի բարձրանալը չատ տգեղ կերպերով կատարուեցաւ, որոնց մէջ ինքն ալ մեղադրանքէ ղերծ չկրնար րսուիլ։ Այդ պարագային իր պաշտօնին սկզբնական տրտկարութիւն մը բերաւ, որով չկրցաւ եկեղեցւոյ հիմնական չահերուն պաշտպան կանգնիլ, և պատճառ եղաւ Աղթամարի աթոռին նորէն բաժնուելուն, կիլիկիոյ բաժանեալ աթոռին հաստատուելուն, և էջմիածնի աթոռին բռնի գրաւուելուն։ Որով հայրապետական աթոռին միահնծան վերաբնորոգութեան բարեգուշակ ձեռնարկը՝ իր օրով և իր պատճառով վտանգուեցաւ։ Իրմէ սկսաւ նաեւ աթոռակից կաթողիկոսներու դրութիւնը, ուսկից երթէ մի պատահական օգուտ յառաջ եկաւ՝ յաջորդութեանց ապահովուելովը (§ 1482), չատ աւելի ծանր ու հետզհետէ աղիտաբեր եղան անոր հետեւանքները, և չուրջ երկու դար վրդովեցին հայրապետական Մայրաթոռը։

ՋԱՔԱՐԻԱՅԻ ՄԱՀԸ

1497. Ժամանակակից է նաեւ Աղթամարի կաթողիկոս Զաքարիայի մահը։ Մինչեւ 1464 Զաքարիա յիշատակուած է (ՓԻՐ. 218, 219), երթէ հայ թուականին մէջ Գ և Դ թուատառերու փոխանակութեամբ 1465 չուզենք կարդալ, վասնզի սոյն այս 1465 տարին առաջին անգամ կը յիշատակուի Զաքարիայի յաջորդը Ստեփանոս (ՓԻՐ. 222), և 1466'ին տակաւին է հայրապետութեան նորընծայ եղելոյն պէս Սթեփանոս կը գրուի (ՓԻՐ. 226), որով 1465'ին վերջերը պէտք կ'ըլլայ դնել Զաքարիայի ալ մահը, Գրիգորի մահուան հետ միեւնոյն տարին։ Հաւաքածոյին այստեղ ալ Զաքարիայի և Ստեփանոսի մէջտեղ երկու տարի ընդհատում և չորս աննչան կաթողիկոսներու անուններ կը դնէ (00 ԲԻԶ. 1196), որոնք ուրիչ յիշատակարաններէ չեն ստուգուիր, և Զաքարիայի անմիջական յաջորդ կը նչանակուի Ստեփանոսը, ինչպէս որ մենք ալ կ'ընդունինք։ Բայց մտադիր կը պահենք միւս տեղեկութիւնը, թէ Ստեփանոս էջմիածնի մէջ ձեռնադրուած էր Զաքարիայէ (00 ԲԻԶ. 1195), վասնզի անչուշտ Զաքարիա այս տեսակ հանդիսութիւններ ուղած է կատարել Մայր Աթոռի մէջ։ Ասկէ կը հետեւի Ստեփանոսի ալ զօրաւոր դիրք ունենալ րլլալը, որով պատճառ չմնար անչնան անձերուն կաթողիկոսութեան անցնելուն։ Մանաւանդ որ Լուսաւորչի Ակն ալ Ստեփանոսի ձեռքը կը գտնուէր տակաւին։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԱՐՕՆԵՑԻ

1498. Թէպետեւ այդ ժամանակամիջոցը, որուն վրայ կը խօսինք, ընդհանուր կերպով մոլեռանդ հալածանքներու գործեր չներկայեր, սակայն երթեք չէ դադրած այն սովորութիւնը որով որեւէ ամբաստանութենէ կամ զրպարտութենէ աղատուելու միջոց կը ցուցուէր ուրացութիւնը, և իրաւ կամ կեղծ կամ սուտ ուրացութենէ մը ետ դառնալը մահապարտութեան պատճառ կ'ըլլար։ Այս առիթներէն ամենքը պատմուած չեն, և ո՛վ գիտէ որչափ արի նահատակներու անուններ անյիշատակ մոռցուած են, որոնց յիշատակը թաղուել կը մնայ յայտէ և անյայտէ յիշատակութեան մէջ (ՏՕՆ. 259)։ Անուններն ծանօթներէն մէկն է Յովհաննէս Տարօնեցի, Մշոյ Ս. կարապետի Իննականեան վանքին եպիսկոպոս, որուն վրայ նախանձոտ Քուրդեր զրպարտութիւն յարուցին, թէ «ինծ ղբ. ղին. ղկլին և փոքր չինծ ղկնղեցի չի (ՆՈՐ. 300)։ Եպիսկոպոսը Մուշի գաւառապետէն ձերբակալուելով Բաղէշի ամիրապետին ղրկուեցաւ, որ առանց ուրիչ քննութեան ուրացութեան պայմանը առա-

ջարկեց, և Ծովհաննէսի մերժելուն վրայ բռնադատութեան սանձանքներ փորձուեցան։ Նախ մերկացնելով բարձր տեղ մը հանեցին և վիզը չուան ձաղանքի ենթարկեցին, յետոյ նոյն կերպով քաղաքին մէջէն տարնել տալ՝ մինչեւ բերդը, կրակ վառելով բոցերէն անցուցին, սուրով խոցեցին, և քարկոծեցին, մինչեւ որ հոգին աւանդեց քարերու տարափին տակ (ՆՈՐ· 302)։ Իսկ մարմինը փառաւոր թաղուեցաւ Ս. Սարգիս Հին Տպարանին մէջ, Բաղէշի արքեպիսկոպոսին ձեռքով (ՆՈՐ· 303), որ էր Ծովհաննէս Թամսուրց (ՓԻՐ· 213)։ Նահատակութեան օրը կը նշանակուի, ապրիլ 19, Նոր կիրակէի երեքշաբթին (ՆՈՐ· 303), որ կը յարմարի 1463'ին, ինչպէս ունին քանի մը ձեռագիրներ, և կը հաստատէ Մարտիրոս Պոռնեցի վարդապետը (ՓԻՐ· 213), և չարդարանար ուրիշ գրչագիրի ցուցած 1473 թուականը (ՆՈՐ· 304)։

1499. Առանց մանրամասնութիւնները գիտնալու քանի մը ուրիշ նահատակներու ալ կը հանդիպինք, որոնց անունները կ'ուզենք յիշել անմոռաց չթողու համար։

Այսպէս է նախ, տէր Աստուածատուր Վանեցի, որ նահատակեցաւ 1448'ին գրուած յիշատակարանի մը համեմատ (ՓԻՐ· 158), թուականը ապրող։ Նոյնպէս Աքանդար որ է Ալիքսանդր Ասլան-Մ՚ելիքՀնց, որ 1465'ին վկայեալ է Լաւ Քրիստոս ապստամբելեան (ՓԻՐ· 220), տեղը անորոշ։ Նոյնպէս պարոն Լոյս, զոր նահատակեցին 1467'ին (ՍԱՄ· 175), և որուն տէր կաֆա ըսուած է ուրիշի կողմէ (ՓԻՐ· 227), թէպէտ դժուար է ընդունիլ, կաֆա քաղաքին Լատիններուս իշխանութեան ներքեւ գտնուելուն համար։ Նահատակին իշխանազուն մը բլլալը կը քաղուի պոլոն պատուանունէն, և ուղիղ չերեւիր ուրիշներուն պարոնլոյս յատուկ անուն մը կազմելը (ՓԻՐ· 227)։ Ատոնք են առ այժմ մեր հանդիպած անուններուը։ Նահատակներէն դուրս սովոր ենք նշանաւոր անձերու և գրողներու յիշատակներն ալ քաղել, սակայն դժբախտաբար չատ աղքատ է այդ մասին մեր պատմութեան առարկայ եղող դարը։

ՈՒՐԻՇ ՎԿԱՆԵՐ

Տ. ԱՐԻՍՏԱԿԷՍ Բ. ԱՓՈՒՌԱԿԱԼ

1500. Հայրապետական աթոռին դատարկանալը նոր ընտրութիւն պէտք չէր ատեղծէր, զի երկու օծեալ աթոռակիցներ պատրաստ էին, և երիցագոյնն Արիստակէս նոսին իսկ աթոռին տէր կը դառնար։ Նոր էր յաջորդութեան այդ ձեւը, և ժողովական վճիռ մը դեռ հաստատած չէր, բայց այնչափ ցրուած ու ցնցուած էր ազգին կացութիւնը, որ ոչ ոք դիտողութիւն կամ ընդդիմութիւն յարուցանելու միտք ունեցաւ, և կատարուած գործողութիւնը սովորական կողմէն ընդունուեցաւ ու նուիրագործուեցաւ և ապագային ալ նախընթաց եղաւ և իբր կանոն ծառայեց։ Արիստակէսի ոչ ուսան յայտնի է և ոչ նախընթացը (§ 1481), որով ծննդավայրի կամ պաշտօնատեղւոյ մասին չունինք։ Ինչ որ ալ ըլլայ, Աթոռակալ կոչումը, որով առաջին անգամ Գրիգորի գործակից և բարձակից ճանչցուեցաւ, իրեն վրայ իրենէ մահանուն մնացած է։ Գրիգորի հետ արդէն երկրորդ աթոռակից և կաթողիկոսակից կը գտնուէր Սարգիս (§ 1495), որ այժմ Արիստակէսի հետ առաջին աթոռակիցի տեղը կը ստանար, և քանաւ ակնարկ մը չունինք, որ Արիստակէս նորէն երկրորդ աթոռակից մը ունեցնելու ուզած բլլայ։ Այս է եղած հայրապետանոցի դիրքը 1466'ին, Գրիգորի մահուանէ անմիջապէս ետքը։ Մարբերդցի յիշատակագիրի մը սոյն 1466 թուին պարզապէս է կաթողիկոսութեան պետաւ Սիքօի գրելը (ԹՈՐ· Բ· 479), մինչ չտիպեր Արիստակէսը մեռած ենթադրել, ինչպէս ոմանք կարծեցին (ՋԱՄ· Գ· 506), այլ թէ երկուքին ալ անունը հաւա-

սարապէս կը յիշատակուէր, երբեմն ի միասին և երբեմն զատ զատ։ Մեր խօսքը կը հաստատուի ուրիշ յիշատակարանով մը, որ 1468'ին կը գրէ ի հայրապետութեան Վաղըզադոս փեսան Ռոփէնէ Սուքը էջմիածնէ ապստամբելէն ետքը (ԹՈՐ. Բ. 577)։ Իսկ քաղաքական կացութիւնը փոխուելէն չէր կրած, միայն վեհապետները փոխուեցան և 1467'ին ձիւնանչահի յաջորդեց որդին Հասան Ալի, որուն ազդեցութեամբ Ջալալբէգեանց զօրացած և Ջաքարիա խոյս առած էր (§ 1493)։ Ձիւնանչահէ քիչ առաջ ձիւնանկիրն ալ մեռած և իրեն յաջորդած էր որդին Հասան, Ուզուն այսինքն Երկայնահասակ մականուանեալ, որ կրցաւ Աքքոյունլուներուն անկեալ դիրքը բարձրացընել։

ՍՏԵՓԱՆՈՍ ԱՂԲԱՄԱՐՑԻ

1501. Էջմիածնի և Աղթամարի աթոռները միաժամանակ աթոռակալ փոխած էին, և Ստեփանոս իր նախորդէն ոչ նուազ ձեռներէց, և Աղը իրեն ձեռքը ունենալուն վատահ, ուզեց նորէն փորձել Ջաքարիայի անգամ մը կատարած յարձակումը, որ մոռցուած չէր, և որուն ինքն ալ գործակցած էր, և էջմիածնի մէջ ալ եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստացած էր (§ 1497)։ Գրիգորի մահը բարկդէպ առիթ նկատուց փորձը կրկնելու, և ինչպէս կիրակոս Ջօչկանց երէց կը գրէ, Ստեփանոս Աղթամարցին յայտ ածէ որ է 1467 տարին, ֆնոց չէջմիածէն և փէրեաց յոմնոյն Հայկազեան ազգէ (ՓԻՐ. 229)։ Այդ եղելութենէն ետքը անմիջապէս յիշուիլը է ղոնսուեան Ջհանշահ (ՓԻՐ. 230), կրնայ մեզ առաջնորդել, թէ Ստեփանոս յաջողեցաւ պահ մը նորէն չահիլ Ձիւնանչահի պաշտպանութիւնը, որ իրեն նախորդին հովանաւորն ու բարերարն էր եղած, և այնպէս քաջալերուիլ իր ձեռնարկին մէջ, սակայն բախտը այս անգամ ալ նպաստաւոր չեղաւ Աղթամարցիներուն։ Վասնզի միևնոյն միջոցին տեղի ունեցաւ Աքքոյունլուներու վեհապետին Ուզուն Հասանի յարձակումը Գարաքոյունլուներու վրայ, իւր հօրը Ձիւնանկիրի վրէժը լուծելու (§ 1493)։ Ուզուն Հասան զօրացաւ, և Ձիւնանչահ, ոչ ինքն անձամբ որ մեռած էր, այլ որդին Հասան Ալի՝ հօրը պատուանունովը կոչուած, չկրցաւ դէմ դնել, և 1468'ի մեծ պատերազմին մէջ ինքն ալ ապանուեցաւ, և իւր ազգատոհմը գերի ինկաւ, և Աքքոյունլուներ իսպառ նուաճեցին Գարաքոյունլուները և Ուզուն Հասանի ինքնակալ տիրապետող եղաւ երկու բաժիններուն միանգամայն, Միջագետքի և Պարսկաստանի, և ղէրէսոնէէ ազատէց ի բռնութենէն (ԹՈՐ. Բ. 377)։ Անչուշտ Ստեփանոսի պաշտպաններուն անկումը իր փորձը պարապի հանեց, և ինքն ալ իր նախորդին նման համառօտ միջոց մը էջմիածնի և ամենայն Հայոց Աթոռ տիրապետելէն ետքը, պարտաւորուեցաւ խոյս տալ և Ջաքարիայի փախուստը կրկնելով Աղթամար ապաւինիլ։ Հաւանական է կարծել թէ Լուսաւորչի Աջը երկրորդ անգամ մըն ալ էջմիածին տարուեցաւ և ետ բերուեցաւ, վասնզի Ստեփանոս չէր կրնար Աջը Աղթամար թողլով էջմիածնի տիրանալ։ Պէտք է նաև յիշենք, թէ ձիւնանկիրը հարկաւորութեան համոզող Ջաքարիայի յաջորդը, չէր կրնար աղէկ աչքով նկատուիլ կամ պաշտպանուիլ Ձիւնանկիրի զաւակէն։ Արիստակէս անգամ մըն ալ Աղթամարցիներէ ազատելով իր հայրապետական աթոռին դարձաւ։ Ստեփանոսի ձեռնարկին մէկ նշանը կը տեսնենք նաև Հայրապետ Աղթամարցի արևելային անցդողակի ակնարկին մէջ, որ ճառընտիր մը գրած է ղէնա ի ժամէ էջմիածէն և ղէնա յոտոտածքնակ կղէս Աղթամար (ՓԻՐ. 231), որով Ստեփանոսի հետ գացած և դարձած ըլլալը կը հաստատուի։ Եւ եթէ ճառընտիրի մը լսմասը կրցաւ նա էջմիածնի մէջ գրել, ուրեմն միջոց մը այն տեղ մնացած էր, և ըստ այսմ Ստեփանոս 1467'ին էջմիածնի տիրացած և 1468'ին էջմիածնէ փախած կրնանք դնել։

ԼԵՁԱՍՏԱՆԻ ՀԱՅՑԵՐ

1502. Արիստակէս կաթողիկոսի նշանաւոր գործերուն կարգը պէտք է դասենք Լենաստանի համար եպիսկոպոս ձեռնադրելը, որ տեղի ունեցած է 1467'ին, Ստեփանոսի յարձակումէն առաջ։ Լենաստանի Հայ գաղթականութեան սկզբնաւորութիւնը կը

բարձրանայ չորս դար առաջ մինչեւ 1065, Անիին Ալփասլանի ձեռք իյնալուն առեն (§ 869), երբ Անեցի կամ ընդհանրապէս Շիրակացի գաղթականներ կովկասը անցնելով սկսան տարածուիլ դէպ հիւսիս, և հետզհետէ ընդարձակուեցան, ու Լեհաստանի թագաւորներուն պաշտպանութիւնը գիրենք քաղաքներց անոնց հովանւոյն ներքեւ ամփոփուիլ։ Հայերուն կեդրոնացած տէղը եղաւ գլխաւորապէս Իւլով կամ Լով քաղաքը, գերմանական հնչմամբ Լէմպէրկ և լատինական հնչմամբ Լէոպոլիս կոչուած, որ 1259'ին մեծ քաղաքներու կարգն անցաւ։ Հայերու Իւլով հաստատուելուն ճիշդ թուականը որոշել դժուար է, բայց հարկաւ հետզհետէ աճեցան և բազմացան քաղաքին տնտեսական զարգացման ընթացքով։ Առաջ քաղաքէն դուրս իրենց յատուկ թաղ և սեփական եկեղեցիներ ունեցած են (ԲԺՇ· 97), և միայն 1173'ին քաղաքին մէջ փայտաշէն փոքրիկ եկեղեցի մը արտօնուած են չինել, որուն տեղը 1363'ին քարաշէն մեծ եկեղեցի մը կառուցած են Յակոբ Շահնչահեան կաֆացի և Փաշոս Ամրանեան Ղազալցի, որոնք կը վկայեն թէ չինած են հայոբաառ սոբբ Լաաաուրչին օրինօփն, հնազանդ կաթողիկէին, այսինքն հայրապետութեան Ամենայն Հայոց, և Հայ եպիսկոպոսի (ԲԺՇ· 104)։ Իւլովի եպիսկոպոսներուն առաջինը ևս այդ թուականին կը յիշուի, թագաւորազուն Յովհաննէս մը Մհարոպ Արտազիսիէ ձեռնադրուած 1365'ին, թէպէտ ոմանք 1364'ին ձեռնադրուած Գրիգոր մըն ալ կը յիշեն (ԲԺՇ· 106)։ Բայց յաջորդներուն մասին յիշատակներ կը պակսին, մինչեւ Յակատուր եպիսկոպոսը, որ 1467'ին պաշտօնի կ'անցնի, Արխատակէսէ ձեռնադրուած (ԲԺՇ· 110)։ Նոյն միջոցին Լեհաստան կը գտնուին երկու նուիրակներ, Անանիա արքեպիսկոպոս և Թովմաս եպիսկոպոս, որոնց ղրկող աթոռները յիշուած չեն։ Անոնց հետ ժողով մը կը գումարուի, ի ժողոփէս· որ է ընդդէմ փաղփէս (ԲԺՇ· 110), որ անչուշտ Հաճկատար Աստուածածին վանքն է (ԲԺՇ· 98), և ուր զանազան կարգադրութիւններ եղած են եպիսկոպոսարանի գործունէութեան և և եպիսկոպոսին ձեռնհասութեան վրայ։ Այդ արձանագրութենէն կը քաղուի, որ փաաոփէցց մարմին մը կայ քաղաքին մէջ հաստատուած, տնտակ մը վարչական ժողով մը, և Յակատուր եպիսկոպոս կը խոստանայ, սաաջի Աաթաածց, որ սանց փաաոփէցց հրամանին, 1· Եկեղեցւոց և անոնց ընչից մասին հրաման չտայ։ 2· Քահանայից գործն չեաանամսի չլինի։ 3· Եբիցանաա զբաքո սա զբաքաապաքն ի փեղ ընել և այլ փեղ չնել։ 4· Զփահանայ և ընբկաաք չձեռնադրել։ 5· Անհաաչ խնամոխին կամ այլ անհաս քան կաշտօփ չընել։ 6· Ինչ որ խրեանց կրեացն հոգոյ քաքին կամ հանին գան, զայն առնել, և սահիլ չպահանջել։ 7· Ինքնին եկեղեցապան և հայրապետ չղնել։ 8· Ինչ քան որ լինայ կամ գասագան, հոգեաոր կամ մրցհատոր, սանց գաաաոփէցց չընել։ Ի վերջոյ նկատելով որ թերեւս կաթողիկոսին կողմէն տարբեր կարգադրութիւն կարեւոր ըլլալ, եպիսկոպոսը իր վրայ կ'առնէ պատշաճը գործադրել, և կը յայտարարէ որ եթէ կրնայ գէր Աբէթաաէան վերջին հրաման այնէ և վերջ տալ գործ պէրանէ այնէ, երբէք ես պատրաստ եմ կրնայ Աաթաածվ (ԲԺՇ· 110)։ Այդ դրութիւնը հետեւանք էր այն ազատութեան զոր կազմիր Գ Մեծն, Լեհաց թագաւորը տուած էր Իւլովցիներուն 1356'ին, և անկէ առաջ կատարեալցներուն 1344'ին, ազատ քաղաքի իրաւունքներ վայելել, և սեփական վոյն կամ իշխանապետ և տասերկու դատաւորներ ունենալ, թէ քաղաքային և թէ դատական գործերը վարելու համար։ Ասոնք են որ հայերէն կոչմամբ Տաաաոփէցց ժողով կը կոչուէին (ԲԺՇ· 116), և որոնց հրամանները համակերպիլ կը խոստանայ Յակատուր եպիսկոպոսը։ Հարկաւ նախընթացապար տեղի ունեցած անհամաձայնութիւնները իսափանելու համար հաստատուած է այդ պայմանագրութիւնը։

ԱՐԻՍՏԱԿԷՍԻ ՄԱՀԸ

1503· Արխատակէսի կաթողիկոսութեան տեւողութիւնը և մահուան թուականը ստոյգ կերպով գրուած չըլլալուն կը պարտաւորուինք զանազան տեղեկութիւնները համեմատելով հղրակացութեան յանգիլ։ Դավրիժեցին 1466'էն մինչեւ 1474 յիշատակութիւններ

չունի, որով Արիստակէսի մասին որոշ բան մը չենք կրնար քաղել (ԴԱՎ. 337)։ Երեւանեցին 1466'ին կը գրէ. Յեւ Զ-ութէայէ Տէր Ս-ըէյ- (ՋԱՄ. 20), Արիստակէսը բոլորովին զանց կ'ընէ, մինչ մենք անոր անունը յիշատակուած ունինք մինչեւ 1467 (§ 1502), եւ նոյնիսկ մինչեւ 1468 (§ 1501), որով Ջամչեան ալ չարդարանար 1466'ին մնալով Արիստակէսը (ՋԱՄ. Գ. 506)։ Ակնյենք եւ Ամիրթալվաթ Ամասիացի բժշկապետին յիշատակարանը, որ իւր քարտմանութիւնը 1469 դեկտեմբեր 26'ին աւարտելով, է Կ-ՊՈԼԻՍ-ՈՒԻՆ փէր Ը-ըստոփէթ կը գրէ. (ՓԻՐ. 224)։ Եթէ Փիրզալէմեանի հաւաքած յիշատակարաններուն հրատարակութիւնը այս միջոցին փակուած չըլլար (ՓԻՐ. 232), կամ եթէ նորա ձեռագիրները տրամադրելի գտնուէին, պիտի կարենայինք չատ տեղեկութիւններ քաղել անոնցմէ, ինչպէս օգտուեցանք վերջին կէս տարի միջոցին համար։ Առ այժմ կը պարտաւորուինք 1469'էն անդին չյետաձգել Արիստակէսի կեանքը, եւ սոյն տարին մնալած բանել, ենթադրելով ալ որ դեկտեմբեր 25'ին կրնար գոյժը տակաւին Փիլիպէ քաղաքը հասած չըլլալ։ Արիստակէսի յիշատակին եթէ գովութեան խօսքեր եւ արդիւնաւորութեան փաստեր պիտի չկարենանք աւելցնել, մնդպրութեան եւ դպրոմանքի դիտողութիւններն ալ գրելու պատճառ չունինք։ Առաջ իբրեւ Ջալալէդեանցի աթոռակից. եւ վերջէն իբրեւ անոր յաջորդ չորս տարուընակ տագնապալից օրեր անցուց, եւ եթէ մեծ արդիւնք մը յառաջ չբերաւ, գոնէ կրցաւ եղածը պահպանել, եւ Մայրաթոռի դիրքը պաշտպանել, եւ Զաքարիա ու Մանուէլեան Աղթամարցիներու ոտնձգութեանց դէմ դնել։ Իրաւ Հասան Ալիի ձգտումները եւ Ուզուն Հասանի յաջողութիւնները իրեն նպաստեցին, բայց գովելի արդիւնաւորութիւն մըն է տարիներէ օգտուիլ գիտնալն ալ։

Տ. ՍԱՐԳԻՍ Բ. ԱՋԱՏԱՐ

1504. *Ծաղորդութեան գործը աթոռակցութեան իրաւունքով կարգադրելու կերպը, կրկին իւր իրագործումը*

ՍԱՐԳԻՍ ԵՒ ՕՏՈՊԵՑԻՆ

Ծումը ունեցաւ Արիստակէսի մահուանէ ետքը, քանի որ արդէն Ջալալէդեանցի օրէն երկրորդ աթոռակից նըւաչակուած էր Սարգիս (§ 1495), և Արիստակէսի հետ ալ չարունակած էր իրրեւ աւագ ինն աթոռակից։ Իւր գործերէն ինչ ինչ պատմեցինք (§ 1490), և աթոռակցութեան բարձրանալն ալ բացատրեցինք (§ 1495), բայց իւր ուսկից րլլալը և անկէ առաջ ինչ նախընթաց ունեցած րլլալը չենք գիտեր, և որոչ մակդիր անունն ալ չենք գտներ։ Մենք գիրքը ճանչցանք Լուսաւորիչի Աչը էջմիածնէ տանելուն ատեն, և այդ պարագային կազմած ենք Աչատար մականունը, համանուններէն զատելու համար, աւելի տեղ կոչում մը իմացնելով, քի անհրաժեշտ է քէ յայտնի գաղութին մըն էր Սարգիսի ծրածը։ Այդ գործը բաւական է անոնպատ գաղափար մը կազմել տալու համար իւր վրայ, իբր անձնական չահի զգացում անձ մը, օրինաւորութեանց պայմաններն ալ ոտնակոխ ընելու չափ։ Իւր գործին ներքին նշանակութիւնը չատ աւելի մեծ եղած է քան արտաքին եղելութիւնը, Մայրաթոռի պատկառելին գիտնալով և Աղթամարցոց յարձակումներուն քաջալերութիւն տալով։ Որչափ ալ Սարգիս վերջէն Զաքարիայէն բաժնուած և օրինաւոր կաթողիկոսներու կողմը գործակցելու ձգնած րլլայ, բայց հարկաւ ինքզինք մեղադրելու չափ ցաւած պիտի րլլայ, երբ կարգը իրեն հասաւ Մայրաթոռի գահակալն րլլալու, առանց Լուսաւորիչի Աչը իւր ձեռքը ունենալու։ Անշուշտ ամէն տեսակ ծրագիրներ և ամէն տեսակ միջոցներ Սարգիսին միտքէն անցան, գուցէ քանիներ ալ փորձեց, բայց յայտնի ու բանի կերպեր բնաւ վատահութիւն չներշնչեցին,

և հարկ եղաւ գաղտնի ու նենգամիտ միջոցներու դիմել, ինչ որ հնար չէր ձանձունել և հրապարակել։ Սարգիսի նպատակին օգնելու յարմար անձ մը ներկայացաւ էջմիածնի եպիսկոպոսներէն Վրթանէս, բնիկ Օծոպեցի, Շահպանուցձոր կամ Շահապնք գաւառէն ու Սիւնիք նահանգէն, այլ խորթ և խելասոյ ի բոլոր իւր ճարտարբան ի խօսս, որ Սարգիսի հետ խորհրդով և կամօք համաձայնելէ ետքը (ԴԱՎ. 329), յանձնառու եղաւ, գաղտնի ձեռնարկը գլուխ հանել։ Վրթանէս էջմիածինէ հեռացաւ առանց երթալիք տեղը իմացնելու, և առանձնացաւ յանձնառ ալեւոր, առանց իւր ով ըլլալը յայտնելու։ Անոր այլափոխոյ ձանաննն և դիմօքն, և հարընկալ ընկերացոյց ըմբռնոն, և եղեւ ի կերպ մուղրոյ՝ անկեր իրոց և կորսուլոյ։ Ինքզինքը աւելի ծածկելու համար, ի վերոյ ոն ձիաներն կոպիտ պարանոցքին, և կալոյայ ղինի, և եղաւ կատարելապէս մղտեսի մը, ինչպէս սովոր էին կոչուիլ վանքերու մէջ գտնուող խեղճ աղօթաւորներ և ուխտաւոր ծառայողներ։ Այս կերպարանի ներքեւ ներկայացաւ Վրթանէս Աղթամարի վանքը, չենք գիտեր ինչ անունի ներքեւ, և ընդունուեցաւ Աղթամարի կաթողիկէին ստորին ծառայութեանց մէջ (ԴԱՎ. 330)։ Վրթանէսի նպատակն էր այս կերպով իմանալ Աչին պահուած տեղը, անոր տիրանալու միջոցները ճարել, և գաղտնի կերպով զայն վերցնել, ինչպէս Սարգիս յաջողած էր ընել էջմիածնի մէջ (§ 1490), և հիմակ նոյն կերպը թելադրած էր Վրթանէսի։ Բայց Սարգիս մխիթարութիւն չունեցաւ իւր հնարքին ելքը տեսնել, զի Վրթանէս հազիւ յոմ ետքն կրցաւ յաջողցնել իւր նպատակը (ԴԱՎ. 330), երբ Սարգիս արդէն մեռած էր.

ԱՔՈՒԱԿԻՑՆ ՈՒ ՄԱՀԸ

1505. Սարգիս տարիքը առած և յուզմունքներով ատեն անցուցած, բաւական տկարացած էր երբ աթոռին տէր եղաւ իբրեւ բուն աթոռակալ, և իրմէ զատ աթոռակից ալ չէր մնացած, զի Արիստակէս չէր ուզած նոր մը բարձրացնել այդ աստիճանին։ Ուստի Սարգիս հարկ տեսաւ իրեն աթոռակից մը օծել, և այդ աստիճանին բարձրացաւ Յովհաննէս եպիսկոպոս մը, որով Սարգիսի հետ այլեւս եղեւ կրկնակի պէտ Յովհաննէս։ Այս ընտրութիւնը Դավրիժեցին կը դնէ 1474 թուականին ներքեւ (ԴԱՎ. 337), սակայն ատկէ կը հետեւի միայն նոյն թուականին արդէն եղած ըլլալը, և ոչ թէ նոյն տարին օծուիլը, ինչպէս Դավրիժեցին ալ զգացուցած է (ԴԱՎ. 334), և յայտնապէս ալ Վրթանէս Օծոպեցիին ձեռնարկը պատմած ատեն (§ 1504), ըսուած է թէ ըստ խորհրդով և կամս կրկնակցաւն, որոյ անուանն են Սարգիս և Յովհաննէս (ԴԱՎ. 330)։ Արդ քանի որ Վրթանէսի ձեռնարկը կանուխէն եղած բան մըն էր, Յովհաննէսի աթոռակցութիւնն ալ պէտք է Աարգիսի միանձան կաթողիկոսութեան սկիզբը դնել 1470'ին։ Երեւանեցին ալ 1475 թուականը յիշած ատեն (ՋԱՄ. 20), պարզապէս Դավրիժեցին կ'օրինակէ Գ և Դ թուատառերուն ալ չփոթութեամբ ընդօրինակութեան կամ տպագրութեան մէջ, և հետեւաբար նոր հեղինակութիւն չկազմեր։ Ջամչեան համանուն Սարգիսներու և Յովհաննէսներու յիշատակութենէն չփոթելով, չէ ուզած Յովհաննէսը աթոռակից կաթողիկոս ճանչնալ, հակառակ Դավրիժեցիին յստակ վկայութեան, և նոր ձեւ մը տուած է Սարգիսի կատարած ընտրութեան, թէ կրցեր էր ի ձեռնադրէ Յովհաննէս վերջապէս, յետնագրելով զնա եպիսկոպոս էջմիածնի (ՋԱՄ. Գ. 506), կոչում մը՝ որուն ոչ ուրիք կը հանդիպինք։ Սարգիսի բուն կաթողիկոսութեան ժամանակէն բնաւ եղելութիւն մը չենք գտներ, զոր կարենանք իբր իւր գործունէութեան պատմութիւն յառաջ բերել։ Անգործ անցուցած է նա իւր հայրապետութեան տարիները որ երկար ալ չեն եղած, և կը համեմատին Ուզուն Հասանի պատերազմներու միջոցին։ Դավրիժեցին 1476 թուականէն կը դադրեցնէ Սարգիսի անունը, և առաջին կը դնէ Յովհաննէսը (ԴԱՎ. 337), որով կ'իմացնէ թէ այդ թուականին Սարգիս արդէն մեռած էր։ Միւս կողմանէ օտար աղբիւրէ մը, ինչպէս Իտալիոյ Գենուա քաղաքի հին գրութեանց դիւանը, կը քաղուի թէ 1474'ին Հայոց կաթողիկոս մը մեռած է, զոր ուրիշներ Արիստակէսի ուզած են պատչաճեցնել (ԱՐՐ. 230), բայց

մինք յարմարագոյն կը գտնենք Սարգիսի վրայ իմանալ, քանի որ 1474'էն առաջ հաստատուհցինք Արիստակէսի մահը (§ 1503)։ Այս տեսութեամբ Սարգիս Բ Աջատար իր կեանքը կնքած կ'ըլլայ 1474'ին, 4 տարի և քիչ մը աւելի վարելով բուն աթոռակալ հայրապետութիւնը, որուն աթոռակիցը եղած էր 1462'էն իվեր (§ 1495) երկու նախորդներուն հետ։ Իր վրայ գիտցուած տեղեկութիւնները տգիղ գոյներ միայն ցոյց կուտան, իսկ ուր այդ յիշատակները կը պակսին՝ անգործ դատարկութիւն մըն է տիրածը, և ինքը առաջին կը գտնուի այն չարքին մէջ, որոց համար Երեւանեցին կը գրէ, թէ «ի ոչ ոքանչ արթեալ ընդանաւոր բեւեռելոյն ինչ գրելի (ՋԱՄ. 19)։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԳՈՐԾԵՐ

1506. Երուսաղէմի աթոռին վերաբերեալ գործերէն գրեթէ բոլորը արբավայրերու տիրապետութեան խնդիրներ են, քրիստոնէից զանազան բաժիններուն իրարու դէմ վարած պայքարներով, ուսկից օգուտ կը քաղէին եգիպտոսի պետական չրջանակները, և նոյնիսկ սուլտանները, անձնական չահերու ապրիներ պատրաստել։ Վերջին անգամ յիշեցինք Գողգոթայի արբավայրին համար վրացիներու և Հայերու մէջ մղուած խնդիրը (§ 1425), որուն համար Մարտիրոս պատրիարք եգիպտոս գնաց, իսկ եսայի աթոռակիցը, որ Կոստանդնուպոլիս կը գտնուէր (§ 1435), Երուսաղէմ դարձաւ տեղական վարչութեան գլուխը գտնուելու համար։ Գողգոթայի Հայերուն ձեռք անցնիլը տեւական չեղաւ, զի վրաց թագաւորը կրցաւ կրկին յագեցնել և հաճեցնել Ապուսայիտ Զաքմաք սուլտանը, և այս անգամ անհնար եղաւ Մարտիրոսի վրացւոց դէմ մրցիլ. թէպէտ կրկին եգիպտոս գնաց։ Ուստի գոհացաւ Հայ սեփականութիւն դարձնել վերնատունն որ այժմ ալ Հայոց ձեռք կը գըտնուի, և ոչ եթ պեղի ըստ ասացելոյ, անսանալ ելելոյ երկրէ Դաւիթ, ուր ժամանակաւ է վերայ ոչխն էտրեբեցեալ յիշատակարան ալ կը գտնուի եղեր (ՀՆՆ. 227), 1439 թուականով (ԱՍՏ. Ա. 229)։ Շատ չտեւեց վրացւոց յաղթութիւնը, վասնզի թագաւորութիւններն վերջացաւ 1440ին (§ 1429), և իրենց բաժինր ինկաւ համակէն և պատանէից Ցոանայ, և վրացւոց անունը չնջուեցաւ սուրբ տեղեաց մէջ։ Իսկ Հայերէ գրաւուած Գողգոթային կէսն ալ Ֆռանկն բռնութեամբ առեալ է յետոյ Ցունաց (ՀՆՆ. 227)։ Այս միջոցիս չարունակ ոտնձգութեանց պատմութիւններ են որք յառաջ կը բերուին, և որոց հետեւիլ մեր նպատակէն դուրս է։ Միայն յիշենք թէ ոչ միայն քրիստոնեայք իրարու դէմ, այլ և մահմետականք քրիստոնէից դէմ սեփականութեանց խնդիրներ կը մղէին, և եկեղեցիներ կը քանդէին կամ մզկիթի կը փոխարկէին, իբր այն թէ կանուխէն իսլամական աղօթատեղիներ եղած ըլլան։ Այս կարգին նշանաւոր է Դաւիթի գերեզմանին գրաւումը 1468'ին (ԱՍՏ. Ա. 239), և նոյնիսկ Ս. Ցարութիւն տաճարին քրիստոնէից առնելն փակուիլը 1496'ին, որ դադրեցաւ եթովպացւոց թագաւորին Երուսաղէմ այցելելուն առթիւ 1480'ին (ԱՍՏ. Ա. 238)։ Հայկր չատ նեղութիւններ կրեցին այդ պատճառներով, և նոյնիսկ Ս. Ցակոբեանց վանքին սեփականութիւնը պաշտպանելու պարտաւորուեցան, և անիրաւ տուրքերու դէմ մաքառեցան։ Եսայի որ Մարտիրոսի աթոռակիցն էր, անկէ ետքը չատ չապրեցաւ և հինգ պատրիարքներ յաջորդեցին մինչեւ Ցովհաննէս Թաւիլ, որ բուն աթոռակալ եղաւ 1479'ին (ԹԱՈ. 50)։ Պէտք է յիշենք որ Երուսաղէմի յաջորդութիւնն ալ աթոռակցութեան ձեւով կը կատարուէր, ինչպէս էջմիածնի համար տեսանք (§ 1482)։ Երուսաղէմի համար ուրիշ պարագայ մըն ալ կար աթոռակցութեան հարկր ստեղծող. վասնզի արբավայրերն ալ անհատականութեան ձեւր կը կրէին պատրիարքներու անունով, և աթոռակցութիւնը իսլամական դատարանին հաստատել տալով, սեփականութիւնը կորսընցնելու վտանգին առջեւր կ'առնուէր, որ կրնար տեղի ունենալ, պատրիարքնեռու անժառանգ այսինքն անզաւակ մեռնելովր։

Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Ի· ԱԶԱԿԻՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ

1507. *Յովհաննէս կաթողիկոսի անունը կը պակսի սովորական ցուցակներու մէջ, որք կազմուած են Ջամչեանի հետեւողութեամբ, և որ չփոխմամբ անոր անունը կաթողիկոսներու չարքէն դուրս հանած է* (§ 1505) *հակառակ Դավրիժեցիին յայտնի վկայութեան, որ* 1476 *թուականին ներքև առաջին կը յիշէ, նայ փեր Յովհաննէս, իբրեւ բուն կաթողիկոս* (ԴԱՆ. 337). *Ջամչեանի չփոխութեան հիմ եղած է համանունները նոյնացնելու միտքը· իբր զի Յովհաննէսի հետ Սարգիս մը գտնուած է չարունակ. և ինքն ալ կիլիկիոյ Յովհաննէս կաթողիկոսներուն հետ նոյն անունը ունեցած է* (ՋԱՄ. Գ. 507)։ *Սակայն Յովհաննէսի հետ եղող Սարգիսներ երկու են, մէկը զինք աթոռակից առած է* (§ 1505), *իսկ միւսը ինքն Յովհաննէս իրեն աթոռակից ընտրած է, և այս երկրորդը չատ յստակ կերպով կը զատէ Դավրիժեցին գրելով, այլ և եղբա՛ կաթողիկոս Գրիգոր փեր այլ Սարգիս* (ԴԱՎ. 337)։ *Կ'երեւի Ջամչեանին աչքէն վրիպեր է Գրիգոր այլ խօսքը, որ Սարգիսները միացուցած է, և երկուքին մէջտեղ ուրիշ կաթողիկոս մը դնել աւելորդ սեպած է։ Իրեն հետեւած է սովորական ցուցակն ալ, ուր Սարգիս Բ'ի յաջորդ կը դրուի Աբիստակէս Գ. և միջանկեալ երկու կաթողիկոսներ Յովհաննէսը և միւս Սարգիսը զանց եղած են* (ԳԱՄ. 635)։ *Երեւանեցին առաջինը եղած է զանցառութիւնը ուղղելու մէջ, գրելով, փեր Յովհաննէս ի ՋԻԳ ԹՈՒՔ* (ՋԱՄ. 20), *և նոյնը ալ Յովհաննէս Ը մը* (ԱՐՐ. 230. ՋԱՄ. Բ. 8) *ընդունած են ցանկին մէջ, զոր մենք Յովհաննէս Ի գրեցինք· որովհետեւ կանուխէն յայտնած ենք թէ հնար չէ Հայոց կաթողիկոսներուն չարքին և թուառնամարին մէջ ընդունիլ Յովհաննէս Բագարանցի հակաթոռը* (§ 389), *զոր սովորական ցուցակը չարունակած է իբր Յովհաննէս Գ. արձանագրել* (ԳԱՄ. 621), *սակայն ժամանակակիցներ վկայած են թէ նա ալ հաստատեալ էր հայրապետական Հայոց* (ՈՒԽ. Բ. 63)։ *Այս պատճառով մենք Օձնեցին՝ երրորդ գրեցինք* (§ 558), *Ովայեցին Չորրորդ* (§ 637), *Դրասխանակերտացին Հինգերորդ* (§ 699), *և Սանդին Վեցերորդ* (§ 1072). *որով սոյն Յովհաննէսն ալ կ'ըլլայ եօթներորդ։ Այդ թուառնամարը մեզ չատիպէր յաջորդ Յովհաննէսին կոչումը այլայլել· զի կարծեցին, որ* 1831*ին կաթողիկոսացաւ, առաջին անգամ ըլլալով սկսաւ թուառնամարով ստորագրել Յովհաննէս Ը. և պատճառ չէինք դատեր պաշտօնական ստորագրութիւն մը փոփոխել, որչափ ալ սովորական ցուցակին սխալ թուառնամարին հետեւանքը եղած ըլլար։ Յովհաննէսի աթոռակցութիւնը* 1470 *թուականին և բուն աթոռակալութիւնը* 1474*'ին դրած ենք արդէն, պարտուպատճառ բացատրութիւններին ալ տալով* (§ 1505)։

ԿԱ. ՊՈԼՍՈՑ ՀԱՑԵՐ

1508. *Վերեւ յիշեցինք, թէ Աքքոյունլուներու վիճակուոը Ուզուն Հասան, գրագրութիւններուն վրայ զօրանալով իր իշխանութեան ներքեւ միացուց երկու պետութիւնները* (§ 1501)։ *Ուզուն Հասան իր ստացած յաջողութիւններով փքացած, դէպ Արեւմուտք ալ ընդարձակուելու միտքը ունենալու, և* 1471*'ին Եւսուֆ զօրավարը յղեց դէպ ի Փոքր-Ասիա, որ Եւդոկիան առաւ Օսմանցիներուն ձեռքէն, և Իկոնիոնի և Աւտանայի գաւառները արշաւեց, այլ Օսմանեանք իրենց այժերը ամիրութեամբ կրցան վերջէն Եւսուֆի բանակը վանել, և զինքն ձերբակալել Մուսթաֆա արքայորդւոյն հրամանատարութեամբ։ Յաջին այդչափով ալ չգոհացաւ, և* 1473*'ին ինքն անձամբ նոր արշաւանք մը կազմակերպեց Ուզուն Հասանի դէմ, և բազմաթիւ ճակատամարտներով անոր զօրութիւնը խորտակեց, մաս մը գաւառներ գրաւեց և Ուզունը փախուստի ստիպեց։ Այդ յաղթութիւններով աւելի եւս ընդարձակուեցաւ Օսմանեան տիրապետութիւնը Հայ ազգին վրայ, և աւելի բազմացան մայրաքաղաքի Հայերը, որ Յա-

թին յատուկ պաշտպանութեան առարկայ էին, իբրեւ իւր կայսերութեան բարեացակամ և չինարար մեծ տարրը։ Այդ եղելութիւնները տեղի ունեցան Մարգիս Ալջատարի օրերը, տագնապի մատնելով իշխանութիւնն ալ, որ Ուզուն Հասանի իշխանութեան ներքեւ անցած էր (§ 1505)։ Փոքր-Ասիոյ յաղթութիւններէն ետքը Թաթիխ իր աշխարհակալութիւնը չարունակեց Սեւ ծովի հիւսիսային կողմերը, և 1475'ին կաֆան ալ առաւ Գենուացւոց ձեռքէն, և անկէ ալ Հայ գաղթականութիւն մը փոխադրեց իր մայրաքաղաքը։ Կաֆայի անունը գործուր փաստ մըն է Հռոմէականներու ձեռքը բոլոր անկէ եկողները Հռոմէադաւան ենթադրելու, և անով իրենց գաւանակիցներուն թիւը աւելցնելու. սակայն կաֆացի հայութիւնը, Ունիթոր մասէն զատ հայադաւան մեծ մաս մըն ալ ունէր, և քաղաքին մէջ երկու Հայ եպիսկոպոսներ եղած, և մէջերնին վէճեր մղուած ըլլալուն յիշատակութիւնը (ԱՐՐ. 230) բաւական է ցրելու անոնց ենթադրութիւնը։ Չենք կարծեր որ կարենան ըսել, թէ Թաթիխ ընտրուի միայն հռոմէադաւանները բերած էր իւր մայրաքաղաքը, մանաւանդ որ անոր համակրութիւնը վարուած էր իրեն բարեկամ հայադաւաններուն, և ոչ թէ թշնամի Գենուացւոց բարեկամ հռոմէադաւաններուն։ Ս. Նիկողայոս եկեղեցւոյ մը անունն ալ փաստ մը չընծայեր կաֆայէ միայն հռոմէադաւաններ եկած ըլլալնուն. զի Լատիններու Ս. Նիկողայոսէն զատ, հայադաւաններուն ալ նոյն անունով եկեղեցի մը ունեցած ըլլալը հաստատած է։ Ուստի միայն Կոստանդնուպոլսոյ հայարնակութեան՝ ոչ թէ հռոմէադաւան եղած, այլ միայն անոր մէջ հռոմէադաւան մաս մըն ալ գտնուած ըլլալը կրնայ ընդունուիլ։ Հայեր արդէն իրենց յատուկ և օրինական դիրք մը կազմած էին Ծովակիմ եպիսկոպոսի պատրիարքական առնուն և իրաւունք ստանալովը (§ 1481), մինչ ոչ մէկ յատուկ գոյութեան կամ կացութեան յիշատակ չգտնուիր հռոմէադաւաններուն համար։ Անոնք ազատ կրնային ըլլալ իրենց ներքին համակրութեան կամ համոզման մէջ՝ լատիներեն կամ լատիներէն կամ լատիներով ըլլալ, բայց համաձայնաբար կերպով մաս կը կազմէին միակ հայ ազգութեան, ոչ առանձին ստացուածքն կամ հաստատութիւն կամ եկեղեցի ունէին, և ոչ ալ ունենալ կրնային։ Մայրաքաղաքին Հայ եկեղեցիներու թիւը որոշակի ճշդուած չենք գտներ այդ առաջին միջոցին մէջ, այլ հետզհետէ յիշատակուած կը գտնենք Ս. Սարգիս, Ս. Լուսաւորիչ, Ս. Նիկողայոս, Ս. Աստուածածին, Ս. Գէորգ եկեղեցիները (10. ՕՐԱ. 50)։ Սակայն Ալմը ճեօմաէն, կամ Վեց Հաւաքոնէն անուններ, որով կոչուած են Կոստանդնուպոլսոյ Հայերը առաջին հրատարակներու մէջ, գոնէ վեց սկզբնական եկեղեցիներու գոյութիւնը կը պահանջէ, զի նոյն իսկ տաճկական ըմբռնումի մէջ, ամէն հաւատարակութիւն կամ ժողովուրդ կամ թաղ՝ իւր աղօթատեղիով կը ստանար իւր ուրոյն կազմութեան հիմը։

Կ. ՊՈԼՍՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐ

1509. Կոստանդնուպոլսոյ հայաբնակութիւնը կամ յաւ ևս Օսմանեան հպատակ Հայութիւնը, իւր յատուկ պատմագիրը չէ ունեցած, որ որոշակի ցուցնէր մեզի՝ անոր առաջին ժամանակներուն հանգամանքները, և ստիպուած ենք կցկտուր ակնարկներով կազմել անոր նախնական պատմութիւնը, մինչեւ որ հասնինք այն ժամանակներուն, ուր գլխաւոր դիրք և կարեւորութիւն ստացաւ ընդհանուր Հայութեան համար։ Կոստանդնուպոլսոյ Հայ գաղթականներուն սկզբնաւորութիւնը մինչեւ 1453 Հոկտեմբեր 28 կը բարձրանայ (ՏԱՇ. 895), որ է իսկ առաւմէն միայն հինգ ամիս ետքը (§ 1476), ուսկից կ'ետեւ չարունակաբար աճած է մինչեւ Ծովակիմի պատրիարքութիւնը 1461'ին (§ 1488), ինչ որ աւելի զարկ տուած է Հայերուն բազմանալուն և ազդեցիկ դիրք կազմելուն։ Յիշեցինք կաֆայի գաղութը 1475'ին, անկէ ետքը նշանաւոր եղած է ևս Գարամանի գաղութը 1479'ին, որուն յատկացուած է Սամախիա թաղը քաղաքին հարաւարեւմտեան ծովեզերեայ անկիւնը, ուր եղած է ևս առաջին պատրիարքարանը, թէ ոչ Ծովակիմի առաջին օբէն, գոնէ քիչ ետքը։ Գարամանի գաղութէն առաջ վախճանած է Ծովակիմ, բաւական երկար և արդիւնաւոր առաջնորդութիւն վարած

ըլլալով Օսմանեան հպատակ Հայերուն վերաբերեալ ի Կուտինա, ի Պրուսա, ի Փիլիպէ, և վերջէն ի Կոստանդնուպոլիս, մօտ 20 տարի։ Դժուար է որոշակի ճշդել Ծովակիմի մահուան թուականը որ մինչեւ 1474 կը յիշուի (§ 1487), իսկ Ամիրտովլաթ բժշկապետ 1478'ին կը գրէ յեղէնոպոսցիներուն թէ Նիկողայոսէ մայրաքաղաքին Կոստանդնուպոլսէ (ՏԱՇ· 198), և երկու թուականներուն մէջ կը մնայ Նիկողայոսի յաջորդելը, և հաւանականագոյն է վերջին թուականին մօտիկ, 1477'ին դնել անոր պատրիարքութիւնը։ Ոմանք կ'ուզեն նոյնացնել զայն 1486'ին Անկիւրիոյ կարմիր վանքը նորոգող Նիկոզայոս եպիսկոպոսին հետ, սակայն ենթադրելի չերեւիր, որ Կոստանդնուպոլսոյ աթոռը բարձրանալէն ետքը իբր Անկիւրիոյ եպիսկոպոս յիշուէր, բայց նկատի առնելով, որ Անկիւրիա իւր նախկին տեղն էր, որուն իսկապէս կը տանէր Կոստանդնուպոլիս փոխադրուելէ ետքն ալ։ Այդ մենութեան կը նպաստէ դիտելը, թէ այդ միջոցին տակաւին որոշ և զատուած վիճակներ չէին կազմուած Օսմանեան կայսերութեան գաւառներուն մէջ, և Կոստանդնուպոլիս նստող պատրիարքներ, ընդհանուր թեմակալ կը նկատուէին բոլոր կայսերութեան մէջ, և եպիսկոպոսներ և վարդապետներ, որոնք աստւանդ վանքերու կամ քաղաքներու մէջ կը մնային, իրրեւ պատրիարքին փոխանորդներ կը նկատուէին, և ոչ իրր իսկական թեմակալներ (09 ԹէՈ· 210)։ Մեր տեսութեամբ այդ դրութեան հետեւանք պէտք է նկատել Մաթաթիոս կոչումը, որով այսօր ալ Օսմանեան կառավարութիւնը կը ճանչնայ հայ թեմակալ առաջնորդները, մինչ բաւին իսկապէս պարզապէս պատուոյ կամ պատճառով կը հնչէ, և չատ սեփականի պաշտօն կամ իրաւասութիւն վարող թեմակալի դաղափարը։ Իրրեւ եկեղեցական յարաբերութեան կեդրոն, հաւանականագոյն պատճառներ ընդունիլ, թէ Կոստանդնուպոլիս Սսոյ հետ կապուած էր (§ 1487), սակայն Կոստանդնուպոլսոյ պիրքին հետզհետէ բարձրանալն ու օրինակը, և էջմիածնի սահմաններէն, զոր օրինակ կաֆայէն եկող գաղթականները, և Մայրաքոռ հպատակ վիճակներուն Օսմանեան պետութեան ներքեւ անցնիլը, բնական կերպով Մայրաքոռի հետ ալ յարաբերութիւն ունենալու դուռ բացին, որով անըզգալի եղանակաւ հետզհետէ տկարացան կիլիկիոյ յարաբերութիւնները և զօրացան էջմիածնի հետ կապակցութիւնները, մինչեւ որ վերջնականապէս առաջինները խըզուեցան, և երկրորդներուն տեղի տուին։

ԱՄԻՐՏՕԼՎԱԹ ԲԺՇԿԱՊԵՏ

1510· Կոստանդնուպոլսոյ Հայութեան վրայ հատուածնիս չփակած, պէտք կը զգանք յիշատակել Ամիրտովլաթ բժշկապետը, որ մայրաքաղաքի հայաբընակութեան ամէնէն կարկառուն դէմքը կրնայ նկատուիլ այս միջոցին։ Բնիկ Ամասիա քաղաքէ, որդի Եղիայի, ուսմանց և գլխաւորապէս բժշկական անդրկուքնանց հետամուտ, թէ հրմտութիւններ համբարձց, և թէ շատ էրեան, կ'ըսէ, էն ժողվել է յԱբուքաց և է Պարսից և է Թուրքաց (ՌԱՄ· 341), որոնց մէջ հին Յոյն բժշկապետներն ալ կը յիշէ։ Ծովհաննէս կը կարծէ թէ թարգմանութեանց վրայ ծանօթացած ըլլայ յոյն դիրքերուն (ՌԱՄ· 123), սակայն Ամիրտովլաթ Ծուխանայ երկիրներու մէջ ապրած և լեզուագէտ անձ ըլլալով, անհաւանական չենք կարծեր գինքն յուսարէնի ալ տեղեակ ենթադրել, և այսպէս իմանալ իւր գրածն ալ, թէ սարսափեմ զոհ հինէ լեզուով, զինչ որ սասոյ է Հայոց և է Հասմոյ և յԱբգիկա, է Պարսից և է Թուրքաց, էէչ Լատինս (ՌԱՄ· 374)։ Հայ բժիշկներ ալ կը յիշէ, Մխիթար, Աճարոն, Ստեփաննոս, Ծուչին, Սարգիս, Յակոբ, Դեղին, Սիմաւոն, վահրամ, որոնք շատ էրեան չենել էին, և զորոնք ինքն տեսեր է (ՏԱՇ· 199), այլ մեզի հասած չեն, բացի Մխիթար Հերացիէն։ Իւր սիրած արուեստին հետամուտ, ըսբջ եկաւ, կ'ըսէ, քաղաք տաղտանի, ըսբջ եկաւ, կը յաւելու, ըշխարհն Մակեդոնացոց (ՏԱՇ· 199), ուր 1469'ին աւարտած է Օքսոփ քէշիշներուն դիրքը Փիլիպէի մէջ (ՓԻՐ· 224), անկէ ետքն է որ եկաւ քանիցս կ'ըսէ, է Տյբտաղաչն է Կոստանդնուպոլիս, և հոն ալ 1478'ին կը սկսի և 1482'ին կ'աւարտէ Անդիոց անուն կոչուած բժշկական բառարանը (ՌԱՄ· 342)։ Տարիքը որոշ չենք գիտեր, այլ 1497'ին տեղի ունեցած է իւր

մանը, դեկտեմբեր 28, հինգշաբթի օր, և ոչ 29 (ԹԱՄ·364)։ Ըստ այմ իւր վերջին աշխատութենէն ետքը 15 տարի եւս ապրած կ'ըլլայ, բայց չենք գիտեր թէ ուրիշ ինչ աշխատութիւն գրած է, կամ թէ կոստանդնուպոլսոյ հայաբնակութեան համար ինչ գործունէութիւն ունեցած է։ Ամէն ապիթի մէջ մայրաքաղաքի գաղութին պատիւ բերող դէմք մըն է, զոր իրաւամբ կրնանք Գրիգոր Մագիստրոսէ (§ 866), և Մխիթար Հերացիէ ետքը (1027), պատուով յիշեալ աշխարհական մատենագիրներուն կարգին։

1511· Էջմիածնի վրայ խօսած ատենս, պատմեցինք Վրթանէս Օծոպեցի եպիսկոպոսին, 1470'ին կամաւոր աղքատի ձեւով և կաղ մղտեսիի կերպարանով Աղթամարի կաթողիկէին սպասաւորութեան մանելը (§ 1504)։ Եթէ բաւական զարմանալի է եպիսկոպոսի մը այդ դժուար վիճակը ստանձնելու յօժարութիւնը, ա'լ աւելի զարմանալի պէտք է երեւնայ, 7 տարի չարունակ այդ վիճակին մէջ, ամէնայն երկայնամտութեամբ յարատեւելը, որ մինչեւ ո՛վ գիտէ որչափ ստորնութեանց և հակառակութեանց ալ պարտաւորութեամբ տակաւ, միաբաններուն և մեծաւորներուն երեսէն։ Սակայն Վրթանէս գիտցաւ իւր հեզ ու աշխատասէր վարմունքով սիրելի դառնալ Ստեփանոս կաթողիկոսին, և հետզհետէ կաթողիկէին ծառայութեանց մէջ յառաջանալ, մինչեւ որ կրթելոյն ընտրեալ եկեղեցւոյն, և պահող անոնց և սրբոտիներուն վանից, որոնց հետ նաեւ Լուսաւորչի Աջը, որուն բերուելէն 15 տարիներ անցեր էին, և հարկաւ նախանձոտ հակողութիւնն ալ նուազած էր։ Երկու տարի տառապած էր Վրթանէս, բայց վերջապէս նպատակին կը հասնէր, և իւր դիտած առարկաներն իրեն ձեռքին ներքեւ կը գտնուէին։ Այլեւս բարեզէպ պատեհ մը կը սպասէր, և զայն գտաւ ծանօթ Ջուղայեցի փերեզականերու էլչին և երեսփոխանին Աղթամար կղզին մտնելուն մէջ, որոնք եկեր էին վճռաբեկ կոչ և ոչինչ, չէր և ալ ոչ և այլ ինչ։ Անոնց մէջ հանգիպ'ցաւ մատրիմ և վստահելի անձ մը, որուն իշուն կոչէին, որ է պալատն, այսինքն համեստ ճեղքելով, մէջը վտռեց Աջը և խաչալաւն և ուրարը, և այնպէս դուրս հանել կղզիէն, յանձնարարելով որ քարոզ պաշտպանեցի, մի եւս որբոյ յանձնի, այլ ետ դառնալ առեալ հասցէ ի Ջուղայ։ Մէկ երկու օր ետքը, պատճառով ինչ ինքն ալ կղզիէն դուրս ելաւ, յանձնելով թէլի ուրի պարանը քակել, կերպարանն ալ փոխել, և իբրեւ ուրիշ մարդ մը Ջուղայ հասաւ (ԹԱՎ·330)։ Աղթամարին մէջ լուսարարին ուշանալը, քննութեան առիթ տուաւ, և Աջը պակսած ըլլալուն վրայ խնդրակներ հանուեցան, սակայն կաղ մղտեսին տեսնող չէր եղած։ Ջուղայէ աւետաւորներ ղրկուեցան էջմիածին, մինչ կողմէն Աջը պատուով փոխադրուեցաւ Նախիջեւան, ուր հասած էին եւս Ծովհաննէս և Սարգիս կաթողիկոսներ, երկուզեցականօք և աշխարհականօք։ Հոն առաջ պաշտեալ ֆառաօրէն ընդ ընդրէ Աջն, և յետոյ աշխուհաչաշտ քաղաքներէն էջմիածին բերին և հանգուցին ի սեղանան և ի քեւան սրեան իւր (ԹԱՎ·331)։ Այսպէս յաջողեցաւ Աջին էջմիածին դառնալը, որուն վիճակուած էր միշտ գողունի կերպերով փոխադրուիլ Սիսէ էջմիածին (§ 1449), էջմիածինէ Աղթամար (§ 1493), և Աղթամարէ էջմիածին։ Դավրիժեցին Աջը դիմաւորելու դացող Ծովհաննէս և Սարգիս կաթողիկոսները յիշած առեն, կ'աւելցնէ, որոյ կոմս և խորհրդոյ ընթիմբ ֆնացեալ էր Վրթանէս եպիսկոպոս այսֆրէ (ԹԱՎ·331), և որովհետեւ Սարգիս Ջլատարն էր որ խորհուրդը տուած էր (§ 1504), կրնայ եզրակացուիլ թէ նոյնը տակաւին կենդանի ըլլար 1777'ն, Աջին վերադարձին տարին (ՋԱՄ·20), մինչ Սարգիս Ջլատարի մահը կանուխէն տեղի ունեցած ըսինք 1774'ին (§ 1505)։ Բայց այդ եզրակացութիւնը ընդունելի չենք համարիր, քանի որ այն ատեն Դավրիժեցին ինքն իրեն հակասած պիտի ըլլար։ Վանզի քիչ ետքը աւելի յստակ կերպով կը գրէ. նոյն պէր Ծովհաննէս, այլեւ եղեւ կոնդակս այլ պէր Սարգիս։ Այս Ծովհաննէս և Սարգիս կոնդակատոյ ժամանակին Լուսաւորչի Աջն ետքեալ է յԱղթամ բոյ, և եկեալ է ի սուրբ էջմիածինն յետոյ Վրթանէս եպիսկոպոսին

(ԴԱՎ. 337)։ Հետեւաբար Յովհաննէսի նախորդ եւ Յովհաննէսի աթոռակից երկու Սարգիսներր՝ Դավրիժեցին ալ պահ մը իրարու հետ չփոթած կ'երեւի։ Կրնայինք ալ աւելցնել, թէ գո՛ այլ Սարգիսն ալ կրնայ ժամանակին Վրթանէսի ձեռնարկին գիտակից եղած ըլլալ, քանի որ էջմիածնի մէջ դիրք վայելող եպիսկոպոս մը եղած պիտի ըլլայ, եթէ երկը չորս տարի ետքը աթոռակցութեան կոչուելու արժանի դատուեցաւ (§ 1507)։

ՎՐԹԱՆԷՍ ՕԾՈՊԵՑԻ

1512. *Վրթանէս Օծոպեցին իւր կատարած գործովը էջմիածնի մէջ աթոռին յաւիտենական երախտաւորը ճանչցուեցաւ, և իրաւ ալ Մայրաթոռը պիտի կորսնցնէր իւր պատիւն ու փառքը, այլեւ իւր գօրութիւնն և իրաւունքը, եթէ նուիրական Աջը Աղթամար մնար, քանի որ այնչափ մեծ էր հանրային կարծիքին կողմէ Աջին տրուած նշանակութիւնն ու կարեւորութիւնը։ Կաթողիկոս ու աթոռակիցը, և եկեղեցական ու աշխարհական գլխաւորներ, ամէնն ալ իրենց կողմէ, քաղա՛ծ և անդադար պըթեռքաշեցին Աջը ազատողին, և ինչչափ նուէր և աջահամբոյր Աջին ձօնուեցան, անոնք ալ Վրթանէսի յատկացուեցան, և միանգամայն որոշեցին որ Վրթանէս եպիսկոպոսն չէջ աթոռակալ կաթողիկոսին, որուն և էջ կ'ենթադրէ (ԴԱՎ. 348)։ Վրթանէսի տրուած աթոռակալի պատիւը, ընդհանուր կերպով իմացուած է իբրեւ փակակալ կամ լուսարարապետ կաթողիկէին, և քիչեր ուզած են զայն իմանալ իբրեւ աթոռակից կաթողիկոսութեան, և բան այսմ ալ անոր անունը կաթողիկոսական ցուցակին անցուցած են (ՉԱՄ. Բ. 227 ե.)։ Սակայն մենք համամիտ պիտի չգտնուինք այդ վերջին մեկնութեան։ Վրթանէս ոչ մի յիշատակարանի մէջ իբրեւ կաթողիկոս յիշուած չէ, ինչպէս կոչուած են միւս աթոռակիցները։ Դավրիժեցին ինքն ալ, անոր հետեւողութեամբ Երեւանեցին ալ, Վրթանէսի անունը ցանկին չեն անցուցած, մինչ անցուցած են բոլոր աթոռակիցները։ Նոյնիսկ օրէն և էջ կ'ենթադրէ՝ տրուած պաշտօնը պահելու պայմանը, մանաւոր և միւսիսական պաշտօն մը կրնայ պատշաճիլ, և ոչ երբեք օծեալ և աթոռակից կաթողիկոսութեան։ Վրթանէս բաւական տարի իրեն տրուած պաշտօնը վարած է Մայրաթոռի մէջ, և միայն է ժամանակ ծերութեան էջով, և վան անկարողութեան ծանօթ, որ հաւանաբար Աղթամարի մէջ վարած երկարամեայ չարքաշ կեանքին հետեւանքն էր, հանգստանալու համար քաշուեցաւ մէյ էջով ալ Օծոպու Ս. Աստուածածին վանքը, ուր և վախճանեցաւ և թաղուեցաւ 1493'ին, Աղթամարէ դառնալէն 16 տարի ետքը, ուսկից կը հետեւցնենք թէ յիսուն տարեկանէ աւելի էր գործին ձեռնարկած տարին։ Այլ թէ այս 16 տարիներէն որչափը էջմիածին և որչափը Օծոպ անցուց չենք կարող ճշդել։ Վրթանէսի յիշատակը մեռնելովն ալ չմոռցուեցաւ, զի ամէն կաթողիկոսներ Յովհաննէսէ սկսելով, իրր հայբենապաշտօնէր կոչ եւ ասանդրութիւն, իւրաքանչիւր տարի օր մը Օծոպ կ'երթային, և Վրթանէս եպիսկոպոսի հոգւոյն պատարագ և հոգեհանգստեան պաշտօն և հոգեհաց կը կատարէին, և կը յաւերժացնէին էջմիածնի մեծ երախտաւորին յիշատակը։ Այդ սովորութեան մինչեւ դար մը տեւած ըլլալուն կը վկայէ Դավրիժեցին, ուսկից ետքը կ'երեւի թէ քիչ քիչ զանցառութեան հանդիպած է։

ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՔԱՇՈՒԻԼԸ

1513. *Լուսաւորչի Աջին վերադարձը, որչափ ալ Վրթանէս Օծոպեցիի անձնական աշխատութեանց և ճգանց արդիւնք, սակայն Յովհաննէս կաթողիկոսի օրով կատարուած յաջողութիւն մը ըլլալուն, անյարմար չդատեցինք, անով որոշել վինքն համանուն կաթողիկոսներուն մէջէն, և Աջակիր մակդիր անունը տուինք անոր, քանի որ ուրիշ կողմէն, ոչ ծննդավայրն և ոչ նախընթաց պաշտօնէն տեղեկութիւն չէ տրուած զայն տարորոշելու համար։ Կաթողիկոսներու տրուած կարգի թուանշանները մենք անրաւական սեպած ենք համանուններր իրարմէ զատելու, որովհետեւ այդ թուանշանները ժամանակին պաշտօնական կիրառութեամբ նուիրագործուած չեն, և վերջին գրողներն ալ իրարմէ տարբեր թուան-*

համարներ կը գործածեն, և աւելի չփոթութեան՝ քան թէ ճշդութեան կը ծառայեն։ Ահա է պատճառը, որ մենք անդամին մեր պատմական ուսումնասիրութեանց սկիզբէն աշխատած ենք իւրաքանչիւր անունին մակդիր անուն մըն ալ աւելցնել անխափան, գործածուածները ընդունելով և պակասները լրացնելով։ Իսկ կարգի թուատառերը կը պահենք միայն, իբրեւ ցուցակագրութեան պահանջ, հակաթոռները դուրս ձգելով, իսկ աթոռակիցները թուատառերին անցնելով, Յովհաննէս Աջակիրին գործունէութեան գալով, Աջին վերադարձէն պատ ոչ մի եղելութիւն չենք գտներ իր օրով Մայրաթոռի մէջ կատարուած, և բոլորովին ամուլ միջոց մը կը կազմեն իր տարիները։ Գործունէութեան պակասութեան հետ, անծանօթ կը մնան իր պաշտօնավարութեան տեւողութիւնն ալ, վերջաւորութիւնն ալ։ Դավրիժեցին ոչ մի յիշատակութիւն չունի 1476 և 1493 տարիներուն մէջ, և վերջին թուականին Ներքեւ առաջին անգամ Միւս-Այլ Սարգիսը գլուխ կ'անցնէ, ուսկից կրնար եղրակացուիլ, թէ Յովհաննէսի կաթողիկոսութիւնը մինչեւ 1493 տեւած ըլլայ, որ կ'ըլլայ մերձաւորապէս 20 տարի տեւողութիւն, 1474'էն սկսելով (§ 1505)։ Բայց այդ չէ մեր պաշտպանելիք ժամանակագրութիւնը, և մեր տեսութիւնը կը պարզաբանենք, իրերը իրենց իսկութեան մէջ նկատի առնելով։ Ցիչատակներու և արձանագրութեանց մէջ, մեզի իբրեւ թանկագին աղբիւր կը նկատենք Ռոչքեանի ժամանակագրութիւնը, ուր կը յիշուի Յովհաննէս կաթողիկոսին 1485'ին Լեհաստանի կամինից քաղաքին մէջ գտնուիլը (ԱՐՐ. 230)։ Ինչ առիթով կամ ինչ պատճառով այդ հեռաւոր ուղեւորութեան ձեռնարկած էր, կամ թէ Լեհահայ գաղթականութեան համար ինչ գործունէութիւն ունեցած էր, Ռոչքեան չբացատրեր և տեղւոյն յիշատակարաններն ալ կը լռեն, և քանաւ նշոյլ մը չենք կրնար գտնել՝ ուսկից լուսաբանութիւն մը քաղենք։ Յովհաննէս առաջին կ'ըլլայ էջմիածնի կաթողիկոսներուն մէջէն, որոնք տարաշխարհ ուղեւորութեան ելած են կրօնական նպատակներով, գաղթական Հայերու հոգեւորական կացութիւնը հսկելու, և գաղթական Հայերէ նիւթական նպաստներ հաւաքելու, Մայրաթոռոյ կարօտութիւնը դարմանելու, և անյագ տիրապետողներու դրամական քաղցը յագեցնելու համար։ Եթէ 1485'ին կամինից կը գտնուէր, առնուազն 1484'էն էջմիածինէ մեկնած կ'ըլլար, և որովհետեւ նորէն դառնալն ալ չյիշուիր, իբր աթոռը մուցածի պէս տարաշխարհ թափառող մը կ'ըլլայ այլեւս, և իրրեւ գահակալ նկատելու պէտք չմնար, որով մենք ալ յիշեցինք 1484 թուականէն Յովհաննէսը հրաժարականով աթոռէն հեռացած կը նկատենք, և իր կաթողիկոսութեան տեւողութիւնը կը փակենք։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱՀԱՏԱԿ

1514։ Յովհաննէս կաթողիկոսի մը անունը տեսեր են ոմանք 1505 թուականին Ներքեւ (ԱՐՐ. 230), և նոր Յովհաննէսի մը դիմաց գտնուիլ կը կարծեն, սակայն նոր Յովհաննէսի մը անունը չյիշուիր Դավրիժեցիէն և երեւանեցիէն, թէպէտ բազմաթիւ աթոռակիցներու անուններ ցուցակագրուած են (ԴԱՎ. 337), ինչպէս պիտի տեսնենք։ Ուստի կը հաւանինք նոր Յովհաննէսի մը գոյութեան ենթադրութիւնը մէկ կողմ թողուլ, և ըսել թէ 1474'ին բուն գահակալութեան անցած, և 1484'ին էջմիածինէ և աթոռէ հեռացած, և 1485'ին կամինից գտնուող Յովհաննէս Աջակիրն է, որ տակաւին կ'ապրէր 1505'ին, և իր անունը պատահաբար գրուած է մանաւանդ յիշատակարանի մէջ, որուն ուր և երբ գրուած ըլլալը ցուցուած չէ, և թերեւս Լեհաստանի մէջ գրուած յիշատակարան մըն է, ուր կը գտնուէր Յովհաննէս։ Եթէ կը նկատուի մերձեցուցմամբ ընդարձակել պատմական պարագաները, մենք իրր հաւանական պիտի ընդունէինք, նոյնացնել Յովհաննէս Աջակիրը, այն Յովհաննէս Հայբաթէրէն հետ, որ 1508'ին Սարգիս եպիսկոպոսի և Դաւիթ կրօնաւորի մը հետ, կոստանդնուպոլիս եկան էջմիածնի նուիրատուութեամբ, այնտեղ Նահապետեան ֆլեռմոֆոբոյ (ԱՍՏ. Ա. 257), և անունները տօնացոյցի մը մէջ ալ նշանակուած է, թէպէտ այդ յիշատակը յառաջ բերողը կ'աւելցնէ թէ չէ ի մէջ պատմութեան նահապետեան նոյ

(ՎՐԲ. Ե. 280)։ Շատ յարմար կու գայ ըսել, թէ Գովհաննէս Էջմիածնի համար նպաստ հաւաքելու նպատակով Հայ գաղթականներու չրջանը կատարած ատեն, այդպիսի վախճան մը ունեցած ըլլայ կոստանդնուպոլսոյ մէջ։ Այդ ենթադրութեան իբր հաստատութիւն կրնանք աւելցնել թէ, թէ Գովհաննէս արխեպիսկոպոս Աղընկէնց և Սարգիս եպիսկոպոս և Աթէոնոս եպիսկոպոս և Դաւիթ աբեղայ, 1506'ին է հայրապետութեան պետան կոնդակով թէ Սարգիս կը գտնուին Սեչով կամ Սուչաւա քաղաքը Նոխրակ է ասոնք էջմիածնէն (ՏԱՇ. 55)։ Գովհաննէսի անխափ հայրապետ կամ կաթողիկոս կամ արքեպիսկոպոս գրուիլը կրնայ մեկնուիլ իր հրաժարեալ կաթողիկոսի կերպարանովը։ Այդ ենթադրութիւնները ստուգութեան կը մօտենան ուրիշ յիշատակարանով մը, ուր պատմուած է Էջմիածնի նուիրակներու Ամասիոյ մէջ նահատակութիւը (ՀԱԹ. 587)։ Նուիրակներն են Մեծ Գովհաննէս եպիսկոպոս աղնուական և պէս Սարգիս եպիսկոպոս և Դաւիթ կոյս աբեղայ, որոնք միւռոնով և օրհնութեամբ կու գան Բիւզանդիա, անկէ կ'անցնին, Կաֆա, Մոլտաւիա, Սուչաւա, Իլվով, Աքքերման, և կը դառնան Կոստանդնուպոլիս, ուսկից իբր թէ Դաւիթը Ամասիա կը դրկուի, և հոն կը ձերբակալուի իբր լրտես և տանջանքներու կ'ենթարկուի։ Սակայն Ամասիայի յիշատակութիւնը աւելորդ և անիմանալի կը մնայ, վասնզի առանց ուրիշ ծանօթութեան երկար միասին կը գտնուին ձերբակալուած։ Մեծ վէզիր Ալի փաշայի կը հանուին, Խանդաբէ կամ հիւնքեարի՝ որ է սուլտանին լուր կը տուի, մեծ փլան կը կազմուի, Ղափօց օթան կը բանտարկուին, որոնք ամէնքը Կոստանդնուպոլսոյ և ոչ Ամասիայի կը պատկանին։ Երկար ալ ուրացութեան չհաւանելնուն է ըբլբաղն զնազան ասել ասոնք հնգեթասան տանջուելէ ետքը (ՀԱԹ. 589) կը գլխատուին 1506 հոկտեմբեր 17'ին (ՀԱԹ. 590)։ Նոյն անուններ և նման պարագաներ կը յորդորեն նոյնացնել այդ զոհազան յիշատակները, թուականի տարբերութիւնն ալ չատով կը մեկնուի ե և է հայ թուատառերու չփոթութեամբ, և կրնանք իբր ստոյգ ընդունիլ Գովհաննէսի և իր ընկերներուն նուիրակութեամբ երկար պտոյտներէ ետքը 1506'ին Կոստանդնուպոլիս նահատակութիւը։

1515. Այդ ժամանակամիջոցին պակաս չեղան ուրիչ հաւատոյ նահատակներ ալ, թէպէտ ոչ ընդհանուր հալածանքի մը հետեւանօք։ Ատոնք անձնական պատահարներու պատճառով կեանքերնին զոհողներ եղած են, յաճախ կեղծ կամ սուտ ուրացութենէ մը ետ դարձած ըլլալու պատրուակով։ Այդ կարգին յիշենք նախ Ստեփանոս Կոստանդնուպոլսեցին, ծնած կոչուած Նորահաս երիտասարդ ըլլալուն համար, և նոյնիսկ մայրաքաղաքին մէջ նահատակուած 1471'ին, այլ պարագաները անծանօթ մնացած (ՁԱՄ. Գ. 515)։ Դաւիթ Խարբերդցի, տէր Գրիգոր քահանային երիտասարդ որդին (ՍԱՄ. 175) տաճկացեալ քեռայրէն ամբաստանուեցաւ իբրեւ թէ մահմետական օրէնքը հայհոյած ըլլայ, ձերբակալուեցաւ և 20 օր բանտարկուեցաւ, ուսկից վերջը իր հօր իսկ քաջալերութեամբ ուրացութեան չզիջանելուն, մոլեռանդ բազմութենէ խոշտանգուեցաւ, կրակով ալ տանջուեցաւ, և սրախողխող նահատակուեցաւ 1474 յունուար 16, կիրակի օր (ՆՈՐ. 308)։ Ըստ այսմ բանտարկութիւնն ալ եղած կ'ըլլայ 1473 դեկտեմբեր 27'ին։ Սիրուն Հիզնացի կամ Հիզանցի, այս ալ երիտասարդ մը 25 տարեկան, մօրը տաճկանալուն վրայ, զինքն ալ կը բռնադատուն մօրը հետեւիլ, այլ նա խաթիւ կ'ընդդիմանայ քրիստոնէութիւնը փառաբանելով, որուն վրայ բազմութիւնը կատաղելով, տեսակ տեսակ տանջանքներէ և խոշտանգանքներէ ետքը կը բանտարկեն, երկու օր յետոյ նորէն չարչարելու կը ձեռնարկեն, սիւնի մը պրկելով անխնայ կը խոցոտեն, և գիչերն ի բուն այնպէս թողլով, առաւօտուն հրապարակ կը տանին, ձեռքերը կը կտրեն և բոլոր ներկաներ սուրերով կը վիրաւորեն մինչեւ ոչ ծաց փեղէ ոչ է մնացին նոր։ Նահատակութեան օր նչանակուած է 1476 յունուար 14 (ՆՈՐ. 312)։

1516. Ստեփանոս Տաթեւացի, եղբօրորդի Շմաւոն արքեպիսկոպոսի (§ 1453), և ինքն ալ Տաթեւի արքեպիսկոպոս, որ

աղջիկ մը առևանգող և տաճկացող աբեղայ մը ուժգին միջոցով ետ էր բերած, և երկուքն ալ ապաչխարութեան արժանացուցած (ՆՈՐ. 313)։ Ժամանակ կ'անցնի այդ գործին վրայ, և 1477'ին Ուզուն Հասանի մեռնելուն և նաղուպի յաջորդելուն առթիւ, Հայաստանի կողմին իշխանը Խալիլ Սոֆու, որ է կրօնասէր իսլամ անձ մը, կ'ուզէ յապաղեալ վրէժը լուծել, և նենգութեամբ կը հրաւիրէ Ստեփանոսը, որ ժամադրութեամբ կու գայ, իրեն հետ առնելով և իւր ազգականներէն քրոջ որդին եպիսկոպոսը, և մօրեղբօրորդի աբեղայն, որոց անունները չեն գրուած։ Խալիլ կեղծ պատուասիրութենէ ետքը ուրացութիւն կ'առաջարկէ, և արքեպիսկոպոսին և ընկերներուն դիմադրութեան վրայ կ'երդնու, իմ եբէոպոսաս կ'ըսէ չեմ ըսեր քեզ, ըե այդ բանէդ այլ ծոր կայ (ՆՈՐ. 315)։ Իրրեւ փորձ, նախ 8 օր և դարձեալ 12 օր անսուաղ բանտարկութենէ ետքը, առաջ կը ձեռնարկէ ընկերները տանջել, և իւր հրամանով երկուքն ալ օդին չնչէն կասկլով, վէրնոպոսն խոշնչեցին կախաղի մէջ, և ղեբէլեն խոշվեցին կրակի վրայ, նոյնիսկ Ստեփանոսի աչքին ներքեւ, որուն վրայ էր գլխաւորապէս Խալիլի ցասումը։ Այսպէս կատարուեցաւ երկուքին նահատակութիւնը 1478 թուականին։ Իսկ Ստեփանոս հազիւ հոգեպահիկով սարի մը բանտարկութիւն քաշեց, ուսկից ետքը բոլոր ակռաները հանելով գանկին վրայ բեւեռեցին, և դարձեալ երկար բանտարկեցին, մինչեւ որ վէրքերը սպիանան։ Ակռէ ետքն ալ հետզհետէ նոր տանջանքներ հնարելով նեղեցին։ Անգամ մը բեւեռաքարշով մարմնոյն վրայ վաթսուն տեղէ վիրաւորեցին, անգամ մըն ալ բոցերու վրայ խանձեցին, անգամ մըն ալ գլուխը գերծելով և մեղրով օծանելով ընկոյզի կճեպի մէջ փակուած սեւ բզէզներ կապեցին, որ գանկը ծակեն և ուրիշ տանջանքներ ալ հնարեցին։ Այսպէս հինգ ամ քոլըբ է չըչըբաե և է քանբ կոցեալ կոպանօւ, ովվվ և ձաբաաւվ, պեաեաց այնքան պանջանոցն (ՆՈՐ. 317)։ Վերջապէս Ստեփանոսի քոյրը գնաց անկա յոռ մօր ֆոփչահին, որ յուզուելով հրաման ղրկեց Խալիլի Ստեփանոսը արձակել, իսկ նա երդումը պատճառելով կը պնդէր, մինչեւ որ թագուհին մարդ ղրկելով բանտրեամբ ազատեց Ստեփանոսը է յեռաց Խալիլի, և յոզբլեաց է վանս է բ Տաթեւ (ՆՈՐ. 318), և այս եղաւ 1483'ին, (ՆՈՐ. 319), և ոչ 1453'ին, ինչպէս ուրիշ տեղ գրուած է (ՍԻՍ. 528), վասնզի այն տեղ ալ յիշուած է նաղուպի թագաւորութեան ժամանակը (ՍԻՍ. 526), որ 1478'ին գահակալած է։ Ստեփանոս տարի մը Տաթեւի մէջ կազդուրուելէն ետքը Երուսաղէմի ուխտաւորութիւնը կատարեց, և Տաթեւի վանքը դառնալով, չուտով վախճանեցաւ սրբութեամբ և խոստովանողական մահուամբ, զոր իդէպ է նշանակել 1485'ին։

Տ. ՍԱՐԳԻՍ Գ. ՄԻՒՍԱՅԻ

1517. Երբոր Յովհաննէս Աջակիր էջմիածինէ մեկնեցաւ 1484'ին (§ 1513), արդէն օծեալ կաթողիկոս մը կար իրեն աթոռակից, որ նովին իսկ աթոռին բուն գահակալը կ'ըլլար, և աթոռակիցէ աւելի բան մը, քանի որ իրմէ գերադոյնը չկար Մայրաթոռի մէջ։ Այդ կաթողիկոսն էր Սարգիս, ոչ Աջաթարը, ինչպէս չատեր չփոխեցին։ Մենք արդէն չեչտեցինք երկու Սարգիսներու տարբերութիւնը, պնդելով Դավրիժեցիին Մէ՛ այլ պէր Սարգէ՛ բացատրութեան վրայ (§ 1507), և որովհետեւ այդ վերջին Սարգիսին ալ ծագումը և նախկին պաշտօնը մեզի անծանօթ է, կրճիմը լուծող բառերը իրր իրեն որոշիչ և մա՛դիր անուն կ'ընդունինք, և Սարգիս Գ Միւսայլ կը կոչենք, և Յովհաննէսի մեկնելուն թուականէն զինքն իրր բուն գահակալ կը նախ-

ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՔԵԻԱՑԻ

տենք։ Ասով Յովհաննէսը իրր վախճանած չենք ուզեր ցուցնել, այլ իրր գործէ ձեռնթափ և բուն գահակալութենէ հրաժարած կը սեպնենք, կամ թէ աթոռակիցի կերպարանին ներքև մնած, որովհետև արդէն ընդունեցանք Լեհաստանի մէջ իրրեւ կաթողիկոս գացած և ապրած ըլլալը, և մինչեւ իսկ հաւանական նկատեցինք, որ կոստանդնուպոլիս նահատակուած Յովհաննէս հայրապետը եղած ըլլայ (§ 1516)։ Միւսայլ Սարգիս որ Յովհաննէսի հեռանալովը աթոռին տէրը կ'ըլլար, նշանաւոր եղած է իր օրով աթոռակցութենէն բարձրացուցնեբու չատութեամբր, որոնք Աբիստակէս Գ., Թադէոս Ա. և Եղիչէ Բ. անուններով սովորական ցուցակներու ալ անցած են իրր բուն կաթողիկոսներ (ԺԱՄ. 636), ինչ որ հնար չէ ընդունիլ, քանի որ միեւնոյն ատեն աթոռի վրայ կը գտնուէր վերոյիշեալ Սարգիսը, որ բուն գահակալն էր։ Մենք կանոններու և օրէնքներու և ընկալեալ սովորութիւններու հակառակ կը նկատենք, միեւնոյն աթոռի վրայ և միեւնոյն ժամանակ մէկէ աւելի գահակալներ ճանչնալ, ընդունելով միայն որ գահակալներ, առանց հրաժարելու, կարենան իրենց մօտ լիազօր փոխանորդներ կամ գործակիցներ կամ աթոռակիցներ ունենալ, որոնք կարենան հանդիսաւորապես կերպով բոլոր վրէնց րրած գործերը կատարել, միւռոնի օրհնութիւնն և եպիսկոպոսի ձեռնադրութիւնն ալ մէջը ըլլալով։ Սակայն այսպէս ըլլալով ալ աթոռի տէր և բուն գահակալ չեն կրնար ըսուիլ, և իրենց անունը կաթողիկոսական գաւազանին չկրնար անցնիլ, մինչեւ որ բուն գահակալին մահուամբ կամ հրաժարմամբ աթոռը չդատարկանայ։

1518. Ներկայ պարագայիս մէջ, Դավրիժեցին, որ մեզի առաջնորդ եղող նչանաւոր հեղինակութիւնն է, 1493, 1499, 1504 և 1506 թուականներուն ներքեւ, հաստատուն կերպով կը կրկնէ, նոյն պէս Սթեփ. բացատրութիւնը, որով այդ ժամանակամիջոցին համար անհրաժեշտ է Միւսայլ Սարգինը իրր բուն կաթողիկոս ճանչնալ, և չարզարանար, 1466'է Սարգիս Գ, 1490'է Աբիստակէս Գ, 1498'է Թադէոս Ա, և 1503'է Եղիչէ Բ անուններըը իրր բուն կաթողիկոս արձանագրելու դրութիւնը (ԺԱՄ. 636)։ Կը մնայ միայն հետազօտել թէ Միւսայլ Սարգիսի հետ եղող աթոռակիցներ չորսը մէկտեղ պաչտօնի վրայ գտնուած են, թէ ոչ իրարու յաջորդելով պաչտօն վարած են։ Այդ հետազօտութենէն ալ գլխաւոր աղբիւր կ'ընդունինք Դավրիժեցին, ուրիչ մասնաւոր յիչատակներու հետ բաղդատելով, քանի որ չեն հրատարակուած Փիրզալէմեանի հատաքածոյին յիչատակարանները, որ կըրնային միայն լուսաբանութիւններ ընձեռել։ Այդ կարգին առաջին նչանակած են ումանք Վրթանէս Օծոպեցին (ՋԱՄ. Բ. 227'է) զոր մենք արդէն չընդունեցանք (§ 1512), որով առաջին կը մնայ Աբիստակէս, զոր կը համաձայնինք Աբիստակէս Գ. ըսել, բայց լոկ աթոռակցութենան իրաւունքով։ Դավրիժեցին զայն կը նչանակէ 1493'ին (ԴԱվ. 337) և երեւանեցին 1492'ին (ՋԱՄ. 20)։ Սակայն ուրիչ յիչատակարաններ 1486'է ունին անոր անունը (ԱՐՐ. 230), ինչ որ կը ցուցնէ թէ Յովհաննէսի մեկնելէն քիչ ետքը, Սարգիս պէտք զգացած է իրեն աթոռակից մը առնել, որով ինքզինքը բուն գահակալ նկատած է, ինչպէս որ մենք ալ աթձանագրեցինք։ Իսկ 1499'ին միւս աթոռակիցը յիչած առնին, Դավրիժեցին այլ եւս Աբիստակէս անունը չտար, որով կը թելադրուինք հետեւցնել թէ Աբիստակէս Գ 1499'ին կամ քիչ առաջ վախճանած է, և Սարգիս առանց ընկերի չմնալու համար նոր աթոռակից մը առած է, ինչպէս որ ըսած ալ է թէ, «յԼ եղև կաթողիկոս փէր Թոփեոս» (ԴԱվ. 337), զոր չենք վարանիր Թադէոս Ա կոչել, պարզապէս աթոռակցութենան տեսակէտէն։ Այդ Թադէոսի անունն ալ այլևս չկրկնուիր, երբ 1504'ին նոր աթոռակից մը կը նչանակուի. «յԼ եղև կաթողիկոս փէր Եղիչէ, բայց միշտ կը կրկնուի բուն գահակալին անունը, նոյն փէր Սթեփ» (ԴԱվ. 337)։ Այս տեղ ալ իրաւունք կունենանք հետեւցնել թէ Թադէոս Ա մեռած էր 1504'ին կամ քիչ առաջ, որով դարձեալ իրր միակ աթոռակից պաչտօնի կը կոչուէր Եղիչէն, որ և Եղիչէ Բ աթոռակցութենան իրաւունքով, որով երկուքէ աւելի չեղան երբեք կա-

ՋՈՐՍ ԱԹՈՌԱԿԻՑՆԵՐ

Թողիկոսները մինչեւ 1506։ Այս տարուդն ներքեւ Դավրիժեցին երեք անուններ միանգամայն կը դնէ, Նայն պէր Սարգիս, և Նայն պէր Նէրսէս, այլ և Եղէ կաթողիկոս պէր Ներսես (ԴԱՎ. 337)։ Աթոռակիցներու կրկնումը կրնայ հետեւանք ըլլալ առջի երկուքներէն մէկին, և աւելի հաւանականութեամբ Սարգիսին, տկարացած վիճակով աչխատութեան և յոգնութեան անբաւական գտնուելուն։ Այդ Ներսէսը կրնայինք իրաւամբ Ներսէս ե կոչել, ինչպէս գրողներ ալ գտնուեցան (ԱՐՐ. 230), սակայն Ներսես ե կոչումը վերջին առիններ Աչտարակեցիէն պաչտօնապէս գործածուած ըլլալուն իր տոորագրութեան մէջ, և աթոռակից Ներսէսն ալ բուն գահակալութեան անցած չըլլալուն, պէտք չենք ունենար Թուահամարներու փոփոխութիւն ընել, և առանց Թուահամարի կը թողունք Սարգիսի վերջին աթոռակիցը։ Իսկ Աչտարակեցիին Ներսես ե Թուահամարը առնելուն պատճառը Ջամչեան է, որ առանց մի փաստի, ուզած է աթոռակից Ներսէսը նոյնացնել Աղթամարայ Ստեփաննոս կաթողիկոսի եղբայր և յաջորդ Ներսէսի հետ, և մինչև իսկ Դավրիժեցին սխալած ըսելու չափ յառաջ գացած է (ՋԱՄ. Գ. 509)։ Ջամչեանի հետեւողութեամբ է, որ սովորական ցուցակն ալ զանց ըրած է Ներսէսի անունը (ՓԱՄ. 636), թէպէտեւ Երեւանեցին ընդունած է զայն 1506 Թուականի ներքեւ, մինչեւ իսկ իբր գլխաւոր ու բուն աթոռակալ ցուցնելով (ՋԱՄ. 20)։ Այդ տեղ կը վերջանան Դավրիժեցիէն յիչուած Սարգիսի աթոռակիցները, որոնք իբարու յաջորդելով պաչտօն վարած են, և միայն վերջին տարիները երկու աթոռակիցներ միանգամայն գտնուած են։

1519. Իբր թէ Դավրիժեցիէ յառաջ բերուած աթոռակիցներու անուններ քիչ ըլլային, ոմանք ուզած են ուրիչներ ալ աւելցնել ինչ ինչ թերի կամ թիւրիմացի ակնարկներու վրայ հիմնուելով։ Սակայն մենք չենք կրնար այդ անուններ ցուցակին աւելցնել, և կը հիմնուինք Դավրիժեցիին և Երեւանեցիին լռելուն վրայ, որոնք հաւատարմագոյն և հնագոյն աղբիւրներն են։ Աւելցածնե-

ԿԱՐՄԵՑԵԼԱԼ ԱԹՈՌԱԿԻՑՆԵՐ

րէն մէկն էր Վրթանէս Օծոպեցին, որուն վրայ կանուխէն գրած ենք (§ 1512)։ Իսկ երկրորդն է Յովհաննէս մը որ իբր նոր անձ երբեք յիչուած չէ, և որուն նկատմամբ եղած յիչատակութիւնները չատ լաւ կրնան պատչաճիլ Յովհաննէս Աչակիրին, ինչպէս որ իւր կարգին բացատրեցինք (§ 1514)։ Դաւիթ մըն ալ տեղ մը յիչուելիք է եղեր, թէպէտ մենք չենք տեսած, և ոչ ալ գիտենք թէ ինչ հիմամբ Ներսէս և Դաւիթ միեւնոյն անձը կարծուած են (ԱՐՐ. 230), և չենք համարձակիր կաթողիկոս մը կամ աթոռակից մը աւելցնել, և ոչ ալ երկանուն մը ընդունիլ։ Առնցմէ զատ 1488 թուականին գրուած յիչատակարանի մը մէջ, է հայրապետաբնեան պէր Յովհաննէս տեսնուիլը (ԱՐՐ.230), իրաւունք տուած է ոմանց Յուսիկ Բ կաթողիկոս մըն ալ աւելցնել այդ միջոցին, որ չունին ոչ Դավրիժեցին և ոչ Երեւանեցին, որ է ըսել թէ Մայրաթոռի մէջ յուսած անուն չէ։ Այս առթիւ դիտել կուտանք, թէ Հայրապետ և Հայրապետաբնեան կոչուածը հինեւրուն սովորութեամբ միայն կաթողիկոս և կաթողիկոսութիւն իմաստով գործածուած չէ, այլ վանքերու մէջ, ինչպէս վանական վարդապետները Հայր կը կոչուին, վանահայրն ալ Հայրապետ կը կոչուէր, իբրեւ Հայրեցապետ, և համապատասխանող նորագոյն Աբբահայր կոչման։ Այսպէս գրուած կը գտնենք. Ի հայրապետաբնեան պէր Սահակ աբեղայէն վարժուէն (ՓԻՐ. 10), կամ եա Մեբոան աբեղայս, որ է նորպետան ժամանակէս հերպետ կոչիմ հալածաբար ինձսապահն սոբբ վարդանայ (ՓԻՐ. 45), և յաճախ ուրիչ յիչատակարաններու մէջ ալ։ Այդ միեւնոյն միջոցին, այսինքն 1491 թուականին կը տեսնենք Յուսիկ մը Գուզարաց Ս. Կարապետ վանքին առաջնորդ, որուն անունը կաթողիկոսին հետ յիչուած է, է կաթողիկոսաբնեան Հայոց պէր Սարգիս և չեպէլոպոսաբնեանն Մեբոյս պէր Յովհաննէս (ԹՈՐ. Ա. 120), և կը կարծենք, թէ ուրիչ տեղ մը նոյն Յուսիկին Հայրապետի անուն տրուած ըլլալը, յորդորած է ոմանք (ԱՐՐ. 230) Յուսիկ կաթողիկոս մըն ալ աւելցնել Սարգիսի յաջորդներու չարքին, մինչ մենք բաւական փաստ չենք գտներ իրենց

կարծիքը ընդգրկելու։ Անցողակի ակնարկը՝ նենք, որ Ակիչան, այդ գիւտին հեղինակը, Ծուսիկ Բ և ոչ Ծուսիկ Գ կը կոչէ իր գաղափարած կաթողիկոսը, որով անուղղակի կերպով հերքած կ'ըլլայ անոնց կարծիքը, որոնք Ներսէս Մեծէ ետքը Ծուսիկ Բ կաթողիկոս մը կը դնեն և կը պնդեն, (§ 157), պարզապէս գրչութեան տարբերութեամբ կազմուած ենթադրութիւն մը։

ԺԱՄԱՆԱԿԻՆ ԱՄԼՈՒԹԻՒՆԸ

1520. Սարգիսի երկարատեւ պաշտօնավարութիւնը, ինչպէս և իր անձն ալ իսպառ ամուլ են կարեւոր գործունէութիւնէ, և պատմութիւնը ոչ մի արդիւնաւորութիւն կամ ներկայութիւն չգտներ, որով կարենայ անոր ժամանակը ճոխացնել, և պարտաւորեալ պիտի կրկնէ վչտացնել Երեւանեցիին տրխուրագին յանգերգը, թէ չայ-ոտն դիջոց ջրեցիկ ոտրբ ալոտ է վա անդր ընդնայր օր ատոր և չանչէոնիւն (ՋԱԱՐ. 19)։ Հազիւ 30 տարիներ անցեր էին այն ոգեւորեալ և ոգեւորիչ վայրկեանէն, երբ բազմաթիւ նչանաւոր և գիտնական անձեր Լիմիածնի մէջ հաւաքուելով աթոռին փոխադրութեան և հիմնեցման վերանորոգման կենսական գործերուն կ'աչխատէին, բայց անա ոչ անոնք կային այլեւս, և ոչ արժանաւոր հետեւորդներ և չաջորդներ ունեցած էին, և Մայր աթոռոյ կաթողիկոսներուն ապարդիւն պաշտօնավարութեան զուգակիր կ'ընթանար՝ հիմնեցման դասակարգին ալ անկում վիճակը, որ և ոչ համառօտ պատմութիւն գրող մը գտնուած է։ Ձեռն երեւար այլեւս Տաթեւի և ուրիչ վանքերու բազմաւար աչխատութիւնները, դիմացնես չեն հզներ արդիւնաւոր վարդապետներ, բնաւ յիշատակ չունինք որ և է գովանի և արժէքաւոր հեղինակութեան։ Երբ Մեծոփեցին, կակծադին կը յանդիմանէր Հերմոնեցին, վիրապեցիին դէմ նիւթած դատաճանութիւնոր համար, բան էր, ընտոտոտոն Հայոց ոոդդեթոս ատոոտձեքանոոընեան խոխանեցեր (ԿՈՒ. 84), և կարծես թէ չարագուչակ կանխատեսութիւն մը ունեցած էր ոգեւորեալ գործիչը, որ արդեամբ կը կատարուէր այդչափ արագ կերպով, մեղ ալ իրաւունք տալով իրեն հետ մեղադրել ընդհանուր ապիկ ոչերս, և ոտոտ և կոկոտ և քէրտ և անհնազանդ չահանայական կոչիկս, և ընդդիմութեան կրծնաոոցց Հայկազն ազգի (ԿՈՍՍ. 85)։ Բայց ողբը թողունք, ու պատմութեան դառնանք։ Աւագի ժամանակներու իրրեւ վերջին բնկոր մնացած էր Մկրտիչ Նաղաչ վարդապետը, որ կաճայի պանդխտութենէն իր եպիսկոպոսական աթոռը, Ամիդ կամ Տիարպէքիր դառնալէն ետքը (§ 1474), 1473'ի ժանուամանին առիթ զգայուն ողբ մը գրեց իր ծերութեան առեն, և ինքն ալ քիչ ետքր վախճանեցաւ։ Ցիչենք նաեւ կիրակոս Երզնկացի վարդապետը, ուսկից մնացած է Ոսկեփորիկ գիրք մը, հաւաքածոյ խրատական գրուածներու և ժողովրդական ոտանաւորներու և քահանայական հրահանգներու, դիշեր և աչխատութեամբ ոճով։ Իրեն կը պատկանի նա Աստուածածնայ Անձինք կոչուած Աբէել Եբոբէին չարականը, որ չարդարացներ բնաւ ապենչէլի ըրթոն գովեստր, զոր ոմանք կարծած են տալ անոր (ՁԱԱՐ. Գ, 509)։ Եւ կը սոիպուինք այսչափով փակել ժամանակակից նչանաւոր և դիտական անձերու վրայ տրուելիք ծանօթութիւնները։

ՍԷՖԻՆԵՐՈՒ ՁՕՐԱՆԱԼԸ

1521. Քազաքական կացութիւնը նոր կերպարան առաւ այդ միջոցին, վասնզի Ա.քթոյնեաններու թագաւորութիւնը, Գարագոյնլուներր ընկճելով իր գազաթնակէտը հասնելէն ետքր, յանկարծ դէպի կործանում սկսաւ քալել։ Ուզուն Հասանի 1479'ին մեռնելէն ետքը՝ անոր չաջորդից Եաղուպ, թէպէտ ոմանք անկէ առաջ Խալիլ մրն ալ կը յիչեն, որ քանի մը ամիս գահը չափրչատակեց։ Եաղուպ հազիւ մինչեւ 1485 կրցաւ իչխանութիւնը պահել հակառակորդներու հետ մաքառելով, և իր դիւղակուռ սպանութենէ ետքը, բազմաթիւ մրցակիցներ իրարու հետ պատերազմելով և իչխանութիւնը իրարմէ յափչտակելով իրենց տէրութեան կործանումը փութացուցին, մինչև որ նոր և բնիկ Պարսիկ հարստութիւն մը սիրից գարուս վերջր 1499'ին, այն է Սէֆիներու կամ Սոֆիներու ազգատոհմը։ Սէֆի ինքն Արտաւիլի իչխանն էր և գօրաւոր

ցեղի մը չէյիր, որ ձիհանչահի երեսէն փախստական Ուզուն Հասանի մօտ ապաւինած և անոր քրոջը հետ ամուսնացած էր։ Շէյխ Սէֆի Շիրվան գաւառը գրաւել ուզած ատեն պատերազմի մէջ մեռաւ, և իրեն յաջորդեց որդին Շէյխ Հայտար, որ Ուզուն Հասանի աղջկան հետ ամուսնացած էր։ Միշտ հետամուտ էր իւր հայրենական ժառանգութիւնը ձեռք ձգելու և հօրը սպանութեան վրէժը լուծելու, բայց չյաջողեցաւ, և ինքն Հայտար և իւր երէց զաւակները՝ Ալի և Իպրահիմ պատերազմի մէջ մեռան, և մնաց միայն մանուկն Իսմայէլ (ՏՁԼ. 353) զոր Աղթամար կղզին փախուցին և հոն աճեցաւ Հայերու խնամատարութեամբ (ՉԱՓ. Ա. 7), Իսմայէլ, որ մօրենական ազգակցութեամբ Աքքոյունլուներէն սերած էր, կրցաւ Պարսիկներէն կուսակիցներ գտնել, որոնք զղուած էին վերջին խռովութիւններէն և ձեռնարկեց նոյն իսկ Պարսկաստանի թագաւորութեան հետապնդել։ Վերջին թագաւորներէն Ռիւստէմի դէմ եղաւ և սպաննեց զայն 1497'ին, և հետզհետէ յաղթեց Անմէտի, Էլվէնտի և Մուրատի, և 1499'ին Թաւրիզն ալ գրաւեց, և բոլոր Պարսկաստանը նուաճելով 1502'ին, Ապահանի մէջ Շահնշահ հռչակուեցաւ (ՏՁԼ. 353), և Սոֆիներու կամ Սէֆիներու հարստութեան հիմնադիրն եղաւ, որոնք երկուքուկէս դար յաջորդեցին Պարսից գահուն վրայ։ Այդ կերպով Էջմիածինն ալ Հայաստանի մեծ մասին հետ Սէֆիներու իշխանութեան ներքեւ մնաւ, որ աւելի նշանաւոր եղաւ բռնակալ սիրապետութեամբ քան չինարար իշխանութեամբ։ Երեւանցին Սարգիսի 16'րդ տարին կը գնէ Շէհէթօղլ որդի և Շեխէֆօղ թոռ Շահ Իսմայէլի թագաւորութիւնը, որ կը պատասխանէ Միւսայլ Սարգիսի կաթողիկոսութեան մեր տուած թուականին, այսինքն է 1484'ին (§ 1513), միայն ուղիղ չէ 1491'ին գնել Շահ Իսմայէլի թագաւորութիւնը (ՉԱՄ. 20), որ ճշդուած հաշուով տեղի ունեցած է 1499'ին (ՃՆՏ. 187)։ Պարսից թագաւորութեան կրած այդ մեծ փոփոխութիւնը իւր նշանակութիւնն ունեցաւ Հայ ազգին և կաթողիկոսութեան համար, և նորանոր տագնապներու դուռ բացաւ, միայն թէ ներքին պատերազմները, Պարսկաստանի մէջ չդադրեցան, և Հայաստանի վրայ չտարածուեցան։

ՍԱՐԳԻՍԻ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆԸ

1522. Առեղծուածական բլալու չափ դժուար է Միւսայլ Սարգիսի կաթողիկոսութեան վերջաւորութիւնը ճշդել։ Դավրիժեցին, որ բնտրելագոյն աղբիւրն է, 1506'ին Սարգիսի հետ եղիչէ և Ներսէս աթոռակիցները նշանակելէն ետքը, տասնամեայ ոստում մը կ'ընէ մինչեւ 1515, և այս թուականին կը նշանակէ պարզապէս Կաթողիկոս թէ Զաւոքիա, ոչ վերոյիշեալ աթոռակիցներէն մէկը կրկնելով, և ոչ ալ Զաքարիայի նախապէս աթոռակից եղած բլալը յիշելով (ԴԱՎ. 337)։ Նորերէն իւրաքանչիւր ոք իր միտքին համաձայն ժամանակագրութիւն մը կազմած է, այդ դատարկը լեցնելու և չարայարեալ զաւազան մը կարկնելու համար, քանի որ յայտնի է որ աթոռի տասնամեայ պարապութիւն տեղի ունեցած չէ, և ենթադրելի ալ չէ։ Ինչ որ ամէնուն կողմէ հաստատուն բռնուած է, Զաքարիայի 1515'ին կաթողիկոսանալն է. Դավրիժեցիին հետեւողութեամբ, թէպէտ Դավրիժեցին ոչ թէ սկզբնաւորութեան թուականը կուտայ, այլ նոյն թուականին այսպէս յիշատակութիւն մը գտած բլալը կը վկայէ, համաձայն իւր յայտնի ազդարարութեան (ԴԱՎ. 334)։ Դժուարութիւնը աւելցնող պարագայ մըն ալ այն տասնամեայ միջոցին համար մասնաւոր յիշատակարաններու չհանդիպիլնիս է, որոնք կրնային մեզի կարեւոր լուսաբանութիւնն ընծայել։ Զամչեան չարայարութիւն մը կը կազմէ դնելով 1467 Սարգիս Բ, 1490 Արիստակէս Գ, 1498 Թադէոս Ա, 1503 եղիչէ Բ, և վերջապէս 1515 Զաքարիա Դ (ՉԱՄ. Գ. 509)։ Անոր հետեւած է սովորական ցուցակն ալ (ՃԱՄ. 635)։ Իսկ երեւանցին կը դնէ 1476 Սարգիս Գ, 1492 Արիստակէս Գ, 1499 Թադէոս Ա, 1504 եղիչէ Բ, 1506 Ներսէս, և վերջապէս 1515 Զաքարիա Գ (ՉԱՄ. 20)։ Ալիշան անուններու խճողում մը կը կազմէ դնելով, 1467 Սարգիս Բ, 1475 Յովհաննէս Ը, 1477 Սարգիս Գ, 1486 Արիստակէս Գ, 1488 Յուսիկ Բ, 1499 Թադէոս Ա, 1504

եղիչէ Բ, 1505 Յովհաննէս Թ, 1506 Ներսէս Ե, և վերջապէս 1515 Զաքարիա Գ (ԱՐՐ. 230)։ Վերջերս Զամինեան դրած է 1468 Սարգիս Բ, 1476 Յովհաննէս Է, 1477 Սարգիս Գ, 1506 եղիչէ Բ, և միւտ 1515'ին Զաքարիա Բ (ԶԱՄ. Բ. 227 է)։ Այդ խուռն և անյարիր ենթադրութեանց մէջ առաջին դիտելիքնիս այս է, թէ Դավրիժեցիին յայտնի վկայութեամբ 1506'ին աթոռի վրայ կը գտնուի Նոյն պէտ Սիմէոն (ԴԱՎ. 337), ուստի մինչեւ այդ թուականին եղող բոլոր անուններ պէտք է ցուցակի չմտնեն իբրեւ աթոռակիցներ, ինչպէս որ կանխէն ալ բացատրեցինք, թէ ընդունելի եղողները (§ 1518), և թէ մեր տեսութեամբ անընդունելի երեւցածները (§ 1519)։ Նոյնը կը հաստատուի շատ մը յիշատակարաններէ ալ, որոնք միջանկեալ տարիներու համար Սարգիսը իբր կաթողիկոս կը յիշեն, մինչեւ 1506 մարտ 12 օրն, ուր գրուած է Ի հայբաղեաոնեան պեառն կաթողիկոսի պետ Սիմէոն (ՏԱՇ. 55)։ Այդ թուականէն յետոյ Սարգիսը յիշող յիշատակարանի չենք հանդիպած, բայց կարելի պատմութիւնը անհաւանական չենք կարծեր, քանի որ Սարգիսի մահուան ալ յիշատակութիւնը չենք գտներ։ Նուիրակներու պատմութեան մէջ (§ 1435), ակնարկ մը կայ 1506 տարին, Մի եբիսկոպոս գոհ ինքն, կաթողիկոսն եղեալ վախճան (ՀԱՇ. 589), որ չատ մութ է, և չթաւեր Սարգիսը մեռած ըսելու նոյն տարին, որ Դավրիժեցին իբր կենդանի կը յիշէ Նոյն պէտ Սիմէոն կաթողիկոսը (ԴԱՎ. 337)։ Բայց խնդիր է միւտ 1506'է 1515 տասնամեայն լրացնել։ Մենթադրութիւններէն մին է Սարգիսը 1506'ին վախճանած ըսելով, եղիչէ Բ'ը, որ երկոյսգոյն աթոռակիցն է, բուն գահակալ անցընել մինչեւ 1515։ Այս դրութիւնը ընդունած է Զամինեան, բայց մենք հիմ մը չենք տեսներ։ Երկրորդն է Զաքարիան 1515'էն առաջ բուն գահակալ դարձած ընդունիլ և տասնամեայն մէջտեղերը որեւիցէ տարի մը՝ դնել Սարգիսի մահը և Զաքարիայի յաջորդելը։ Որչափ որ պիտենք տակաւին այդ դրութիւնը մէկէ մը առաջարկուած չէ, այլեւ ամենքն ալ Զաքարիան անխախտ կը պահեն 1515'ին, և խնդրոյ նիւթ եղող տասնամեան կը լրացնեն մասամբ եղիչէի և մասամբ Ներսէսի բուն գահակալութեամբ։

1523. Իսկ մեր կարծիքը եղած է, ոչ եղիչէի և ոչ Ներսէսի բուն գահակալութիւնը ընդունիլ, այլ մեծ պատճառով, որ յիշատակարաններու մէջ բնաւ չենք հանդիպիր այս երկու անուններուն իբրեւ բուն կաթողիկոս արձանագրուելուն, և ցորչափ որեւէ այդպիսի յիշատակութիւն չտեսնանք՝ կամայական և քմահաճոյ կը կարծենք եղիչէ կամ Ներսէս անունները ցուցակին անցնել, իբրեւ բուն գահակալ կաթողիկոսներ։ Մենթադրութիւնները ներեալ կ'ընդունինք, երբ գոնէ աննախօրոք ակնարկ մը զայն արդարացնէ, և կամ թէ ժամանակագրական պահանջ մը զայն անհրաժեշտ ցուցնէ։ Ներկայ պարագային մէջ ոչինչ կարգելու մեզ ենթադրել որ Սարգիսի կեանքը 1506'էն անդին ալ չտրունակած ըլլայ, և կամ Զաքարիա 1515'էն առաջ բուն գահակալութեան բարձրացած ըլլայ, վասնզի Դավրիժեցիին տուած թուականները, ալ ըն ընդհն կոնդակոսաց նոթելոյ զաոաջին ամն նշանակեն, այլ միայն կը ցուցնեն թէ այն նոյնը իշխանութեան վրայ և կենդանի կը գտնուէին (ԴԱՎ. 331)։ Եւ որովհետեւ ոչ մի նշան չունինք միջանկեալ տասնամեայն որոշ մէկ տարւոյն մէջ Սարգիսը մեռած ըսելու, կեղակարծ բան մը ենթադրած չըլլալու համար, մինչեւ 1515 կը յետաձգենք անոր մահը, մինչեւ որ նոր գտնուող յիշատակարաններ և նոր յիշատակութիւններ աւելցը երեւան բերեն, և որոշ կերպով հաստատուի 1506-1515 տասնամեայն նկատմամբ ընդունուելիք իրականութիւնը, և փարատուի յիշատակութեանց չգտնուելէն յառաջ եկած մթին անստուգութիւնը։ Հետեւաբար պիտի չկարենանք աւելի բան մը ըսել Միասայլ Սարգիսի մահուան նկատմամբ։ Միայն դիտել պիտի տանք թէ ժամանակագրական դժուարութիւնն չենք հանդիպիր ենթադրելով որ 1476'ին աթոռակից և 1484'ին գահակալ հռչակուող Սարգիսը, մինչեւ 1515 ապրած ըլլայ, որովհետեւ ութսնամեայ և աւելի տարիք ունեցող անձեր յաճախ տեսնուած են Հայաստանեայց կաթողիկոսներուն շարքին մէջ։

ՏԱՍՆԱՄԵԱՅ ՄԻՋՈՑ

1524. *Սոյ նորահաստատ կաթողիկոսութեան դէպքերը պատմեցինք մինչեւ կարապետ Եւդոկիացիին կեանքին վերջը (§1489), որուն մահը տեղի ունեցաւ 1477'ին, բան նորագոյն հետազօտութեանց (ՍԻՍ. 539), թէ պէտեւ երբեմն կը կարծուէր թէ չատ կանուխ վախճանած ըլլայ 1449'ին (ՍԻՍ. 218). Ըստ այսմ չատ երկար պաշտօնավարութեան միջոց չմնար, իւր երկու յաջորդներուն Ստեփանոս Սարաւորիցիի և Յովհաննէս Անտիոքացիի, վասնզի երրորդ Յովհաննէս Թլկուրանցին կաթողիկոսական աթոռ բարձրացած է 1489'ին (Թլկ. 5). Սարաւոր անունով տեղ մը Կիլիկիոյ մէջ չգտնուելուն, կրնայ մտածուիլ թէ կարնոյ Սարաւորէն եղած ըլլայ Ստեփանոս, և հանդիպմամբ Կիլիկիոյ աթոռին մէջ յաւաջացած։ Իւր կաթողիկոսութիւնը կ'երկարաձգուի մինչեւ 1488, և հազիւ տարւոյ մը կարճատեւ միջոց կը տրուի Յովհաննէս Անտիոքացիին (ՍԻՍ. 539). Սարաւորիցիին վերագրուած է Իջմիածնի կաթողիկոսութիւնը խափանելու գաղափար մըն ալ, սակայն իրեւ ժամանակ կը ցուցուի 1449 տարին (ՉԱՄ. Փ. 491), երբ ուղղուած հայհոյով կարապետ էր կաթողիկոս, նոյնիսկ իւր առաջին տարինեռւ մէջ։ Ուստի հաւանականագոյն կ'ենթադրուի Սարաւորիցիէն հեռացնել այսպիսի միտում մը, և կարապետի վերագրել ոչ միայն Սիսի մէջ կաթողիկոսութիւն հաստատելու, այլ նոյնիսկ Իջմիածինը խափանելով նորէն Սիսը Ամենայն Հայոց աթոռ հռչակելու ջանքը։ Ստոյգ կերպով Սարաւորիցիին ժամանակը կ'իմացուի Սիսին Օսմանեան կայսերութեան ձեռք անցնիլը։ Մէհէմմէտ Բ Ֆաթիհի 1481'ին յաջորդած էր Պայազիտ Բ վէլիի, որ հօրը աչխարհակալութիւնները չատ աւելի ընդարձակից թէ Եւրոպակողմեան մէջ Պոսնիոյ և Մոլտաւիոյ վրայ, և թէ Ասիակողմը Գարամանացոյ և Եգիպտացոյ վրայ։ Գարամանցիները նուաճեց 1486'ին և 1487'ին Եգիպտացիներէն քաղաքներ և բերդեր խլեց, բայց իսպառ չկրցաւ նուաճել։ Սիսի աթոռին և Գարամանի ու Կիլիկիոյ գաւառներուն Օսմանեանց ներքեւ նուաճուելովը, տակաւ կը չսանար Օսմանեան հպատակ հայութեան թիւը, և Հայերը եւրոպացւոց կը կապուէին Օսմանեան չահերու հետ, քանի որ սուլտաններն ալ իրենց օգտակար և իրենց հաւատարիմ տարր մը կը նկատէին Հայերը։ Ստոյգ ալ, երբ չատ աւելի ազնտալի էր Հայերուն կացութիւնը Քրիստոնեայ և Պարսկական տիրապետութեանց ներքեւ, Հայեր չատ հաճելի կը տեսնէին Օսմանեան կայսերութեան ներքեւ քրիստոնէից համար կազմուած դիրքը, և Հայերուն ցուցուած չատուկ մտաւրութիւնը, և այս պատճառով արեւելեան գաւառներէն չարունակեալ գաղթականութիւն մը կը յորդէր դէպ արեւմտեան գաւառներ, և հետզհետէ կը բազմանար Օսմանեան հայաբնակութիւնը, և կը զօրանար Կոստանդնուպոլսոյ Հայ պատրիարքութեան դիրքը։*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

1525. *Սոյ կաթողիկոս Յովհաննէս Թլկուրանցիին վրայ խօսիլ ուզելով, պէտք է նախ դիտենք թէ բոլորովին տարօրինակ և անսովոր դէմք մըն է նա հայրապետական աթոռի վրայ։ Իւր կաթողիկոսական գործունէութենէն չատ բան չենք գիտեր, և կը հնարուելու ենք թէ չատ բան ալ բրած չէ, թէ պէտեւ մինչեւ 1525, ամբողջ 36 տարի կաթողիկոսութիւն վարած է։ Բայց ուր եկեղեցական գործունէութեամբ անշուշտ կը մնայ, նշանաւոր անձ մը կը ներկայանայ իրր տաղտուկ բանաստեղծ, բայց ոչ միայն իրր եկեղեցական երգերու յօրինող մը՝ Շնորհալիի կամ Նարեկացիի նմանողութեամբ, այլ կատարելապէս աչխարհային երգիչ մը, որ մարմնական սէրը, կնոջ գեղեցկութիւնը, աչխարհի զուարճութիւնները և կեանքի խնդումի վայելքները կը փառաբանէ զգայուն չեչտերով և նուագարանի ոգեւորութեամբ, և ինքն Յովհաննէս Թլկուրանցի անունով կը փակէ իւր տողերը (Թլկ. 31-33)։ Ոչ միայն տաճկերէն բառեր կը գործածէ չաճախ, այլ և ամբողջ տաճկերէն երգեր ալ գրած է (Թլկ. 24)։ Սակայն այդ սիրահարական տողերու հետ ունի կատարեալ հոգեւորական երգեր ալ, որք հարկաւ կեանքին վերջին մասին մէջ գրուած են, ինչպէս անոնցմէ մէկուն մէջ կ'ըսէ իրեն համար, թէ Եօթա-*

նասան փոքի լցեր (ԹԼԿ. 48)։ Նկատողութեան արժանի է, որ նոյն իսկ աշխարհային տողերու հետ հոգևորական զգացումներ խառնուած են։ Ուստի մեզի ալ հաւանական կ'երեւի կոստանեանցի կարծիքը, որ Թուլկուրանցիին իրեն համար՝ Իա ոոբք կոբոպէոխ ճոբան ոս ձոաան էս ըսելէն (ԹԼԿ. 39) կը հետեւցնէ, թէ նա ալ մէկն եղած է ասոնցմէ, որ Մշոյ Ս. Կարապետի ուխտատորութեամբ և եօթնամեայ պահեցողութեամբ աչուղ կամ ըմբիչ կամ լարախաղաց կը դառնային (ԹԼԿ. 7)։ Պիտի աւելցնենք նաև, թէ երիտասարդութիւնը սիրոյ և զուարճութեան նուիրելէ ետքը յանկարծական դէպքի մը առջեւ փոփոխուած և եկեղեցւոյ նուիրուած պիտի ըլլայ։ Եւ իրեն բնական աշխուժութեամբը՝ եկեղեցական-նութեան մէջ ալ աչխատասէր և գրաւիչ գործունէութիւն ցուցնելով, հետզհետէ բարձրացած և մինչեւ կաթողիկոսութիւն հասած կ'երեւի։ Այլ թէ կիլիկիոյ աթոռը ինչ օգուտ քաղեց աչուղ կաթողիկոսէն, կամ թէ Թլկուրանցին ինչ արդիւնքներ ընձեռեց Հայ եկեղեցւոյն, ինչպէս ըսինք, մեզի անծանօթ կը մնան, և չգոյութեան կասկածներ կը թելադրեն։

ԱՂԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

1526. Աղթամարի աթոռին վրայ խօսած առիթներս յիշեցինք Ստեփանոսի կաթողիկոսանալը 1464'ին (§ 1497), Էլմիածին արշաւելը 1467'ին, և ետ դառնալը 1468'ին (§ 1501), և աթոռի վրայ գտնուիլը 1477'ին, երբ Ալը Օծոպեցիին ձեռքով Էլմիածին դարձաւ (§ 1511)։ Ծիչատակարաններ իր օրով կը դնեն Աւտէրի եկեղեցւոյն չինութիւնը 1472'ին, և անոր անունը կը յիշուի մինչեւ 1487 (ՕՕ·ԲԻՋ· 1196), և այդ միջոցներուն իրեն յաջորդած է միեւնոյն Թուրջիբէգեանց ազգատոհմէն իւր եղբայրն Ներսէս, զոր մենք չուզեցինք Էլմիածնի աթոռակից Ներսէսի հետ չփոթել, հակառակ ոմանց կարծիքին (§ 1518)։ Ներսէս կարճատեւ պաշտօնավարութիւն ունեցած է, նոյն պէս անոր յաջորդող Զաքարիան ալ, որ բոլոր Աղթամարայ կաթողիկոսներուն նման չորեքշաբթի և ի ցեղէն ճեճ ՐեքաոոբՀն Գոքկայ եղած կ'ըսուին։ Աղթամարցի յիշատակագիրը մը որ 1495'ին կը գրէ, յանցեալ տիւն այսինքն 1494'ին կը դնէ Զաքարիայի մահը, և կաթողիկոս կը ճանչնայ Ստեփանոս մը (ԹՈՐ· Բ· 447), որ 1495'ին ալ յիշուած է (ԹՈՐ· Բ· 276), բայց 1496'ին տէր Աստմ (ԹՈՐ· Բ· 426) կամ տէր Ադամ (ՕՕ·ԲԻՋ· 1197) է Աղթամարի կաթողիկոսը։ Այս թուականէն մինչեւ 1542, որ է ըսել 46 տարիներու միջոց մը, անստոյգ են կաթողիկոսներու չարքն ալ, աթոռին կացութիւնն ալ։ Հաւաքարանը այդ միջոցին համար, նախ կը յիչէ Գրիգոր մը, որ 1509'է մինչեւ 1534 պաշտօնավարած կ'ըսուի, և իրեն յաջորդ կը նչանակուին Եղիազար և Պաղտասար և Ղազար, առանց կարենալու չարայարեալ յաջորդութիւններն հաստատել, և թերեւս պատահական պարապութիւններ ալ տեղի ունեցած են այդ միջոցին։ Այդ պարագաները կը հաւաստեն Աղթամարի չրջանակին մէջ ալ տիրող անկումը, ուր չկային այլեւս յաջորդներ այն քիչ ու չատ ուսումնական անձերու, որոնք այդ յիանամեայ միջոցին սկիզբները կ'ապրէին, ինչպէս են Ծովհաննէս արքեպիսկոպոս էջոց աչխէբ, տէր Գրիգոր Ակաբէգեանց ասոաաձքեան և հաեթոբ, տէր Մկրտիչ բքՀոանոպեթ, և տէր Թումա Մինասեանց էէլեոփոյ (ՕՕ·ԲԻՋ· 1196)։ Այդ անկումին իբր պատճառ կրնանք նկատել, դարուն վրայ տիրող տխուր ազդեցութիւնը, բայց յատկապէս ալ Աղթամարի կողմերը ասպարէզ էին Աքքօյունլուներու և Գարաքօյունլուներու անդադար պատերազմներուն, և վերջէն Շահ Իսմայէլի ռազմական ձեռնարկներուն։ Անոր Աղթամարի մէջ գտած ապաստարանը (§ 1521), կ'երեւի թէ ոչ մի երախտագիտական զգացում չյուզեց նոր աչխարհակալին սիրտին մէջ։ Երուսաղէմի և կոստանդնուպոլսոյ պատրիարքական աթոռներուն մէջ նչանաւոր եղելութիւններ չեն յիչուիր, և առաջիկային կը թողունք ասոնց մասին խօսիլ։

1527. Պէտք չէ անյիչատակ թողուլ նչանաւոր դիպուած մը, որ այս միջոցին կը պատկանի, ինչպէս է առաջին անգամ կատարուած հայերէն տպագրութիւնը։ Տպագրութեան գիւտը տեղի ունեցաւ Գերմանիոյ Մոգունտիա (Mainz) քաղաքը 1455'ին,

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Յովհաննէս Գուտընպերգ (Gutenberg) հա-մեմատ աչխատաւորի մը ձեռքով, և այդ թուականէն 57 տարի ետքը, 1512'ին հայերէն պարզապէս մը հրատարակուեցաւ, ոչ եւս գրչագիր, այլ առաջին տպագիր գիրք մը, ըլլայ իսկ ոչ չարժական տառերով, այլ միակտուր կաղապարով տպագրուած: Վասն զի հաստատատիպներ և պատկերներ ալ տպագրութենէ օտար չեն, թէպետեւ միակտուր փորագրութեան ենթադրութիւնը հիմնաբար կը հերքուի տպագրեալ Պարզատումարին բուն օրինակը զննողներէն: Առաջին տպուած գիրքին յաջորդեցին Պոփոթոփոթը, Ո-ըթ-ը-ի-էր, Տաղերան և Ալիւթ (ԼԷՕ·14), որոնց հետ Սաղմոս մըն ալ (06 ԱՄՍ·325): Անոնցմէ ոմանք 1513 թուական կը կրեն, և ոմանք առանց յիշատակարանի են (ՏԻՊ·37): Այդ կէնսական ձեռնարկը տեղի ունեցաւ հայաբնակ երկրէ հեռու և հայազգի գործունէութեան սահմաններէն դուրս, Իտալիոյ Վենետիկ քաղաքը, որ այն ատեն կրնար համարուիլ բոլոր աչխարհի մէջ ամէնէն յառաջացեալ և զարգացեալ քաղաքը, թէ առեւտրական ճարտարութեան և թէ ուսումնական լուսաւորութեան տեսակէտէն: Ջունինք ստոյգ տեղեկութիւն մը, թէ որչափ և որպիսի մանակցութիւն ունեցան Հայեր այդ կէնսական ձեռնարկին մէջ, կամ թէ լոկ իտալական չահագործումի արդիւնք եղաւ Հայերուն համար դիւրագնոյ գիրք պատրաստելը: Անծանօթ և Մեղոպոբ Բակոբի մը անունը միայն կայ 1513'ի տպագրութենանց մէջ, (ԼԷՕ·15), իբր էջող յիչուած, բայց ոչ ով ըլլալը, և ոչ ալ տպագրութեան տէրն կամ բարերարն ըլլալը գիտնք: Ժամանակին հոգեւորական իչխանութիւններէն ոչ էջմիածին, ոչ Սիս, և ոչ Կոստանդնուպոլիս չեն յիչուիր, որ գոնէ ազգային չարժումի մը հետքը տեսնայինք այդ ձեռնարկին մէջ: Տպագրեալ Տաղարանը կր պարունակէ բաւական թուով Յովհաննէս Թլկուրանցիի երգերը (§ 1525), բայց չենք գիտեր թէ ինչչափ գործակցութիւն ունեցաւ Թլկուրանցին իր կաթողիկոսութեան 24'րդ տարին լոյս ընծայուած գիրքին համար (ԼԷՕ·22), բայց միչտ բախտաւոր եղած է իր կենդանութեան իսկ իր երգերը տպագրուած տեսնելով: Ամէն առթի մէջ Հայ միտքի զարգացման նպաստաւոր փաստ մըն է արեւելքի ազգերուն մէջէն յառաջընթաց գանուիլը, ըլլայ իսկ որ օտարազգիներ նախաձեռնարկ եղած ըլլան, վասնզի ամէն առթի մէջ Հայ տարրին մէջ պէտք էր սպառուէին Հայ տառերով մամուլին ներքևէն անցնող գիրքերը: Բաղցր է ինձ յիչել, որ այս տողերը խմբագրած ժամուս, 1912 յունուար 17-30 —ճիչդ 400 տարիներ —կը լրանան այդ նչանակաւոր նորութենէն, և Հայ տպագրութեան չորրորդ դարադարձը բոլոր Հայերուն զգացումները կը յուզէ: Ուրիչ ժամանակակից նորութիւն մըն ալ Նոր Աչխարհի դիւտն է, զոր Քրիստոփոր Կոլոմբոս (Cristoforo Colombo) Գենուացին գտաւ 1492 հոկտեմբեր 12'ին, բայց Ամերիկոս Վեսբուչի (Amerigo Vespucci) Փլորենտիացին տուաւ անոր իր անունը, չուրջ 1500'ին րրած ուղեւորութեամբը և հրատարակած տեղեկագրութեամբը: Այն ժամանակ և քանի դարեր ալ ետքը՝ Հայոց համար նչանակութիւն չունեցաւ Ամերիկան, սակայն ներկայ ժամանակիս այն ալ Հայ գաղթականութեան նչանաւոր հանգրուան մը եղաւ:

ՄԱՒՐԱՍ ՎԱՆԵՑԻ

1528. Ժամանակակից դէպքերուն կարգին միչտ ուրոյն տեղ մր սովորութիւն ընդհանուր անկումի ժամանակիս մէջ՝ ուժգին ուգեւորութեան և հոգեկան զօրութեան արտայայտիչներ են և ազգային հոգին կը բարձրացնեն: Մուրատ Վանեցի, որոյ անունը հայերէն Պարգեւ է ըսուած, Վանայ իչխան Սիւլէյմանէ ուրացութեան կը հաւիրուի, իր հօրը տաճկացած ըլլալուն համար, սակայն իր դիմադրելուն և քրիստոնէութիւնը փառաբանելուն վրայ՝ սրով կը վիրաւորուի, և ափացի ու բռնցի հարուածուելով քաղաքէն դուրս կը քչկըռտուի և քարկոծմամբ կը նահատակուի, իսկ մարմինը կը թաղուի Ս. Պօղոս եկեղեցւոյ առջեւը: Նահատակութեան օրը դրուած է 934 մարգաց 13, որ կը պատասխանէ 1485

սեպտեմբեր 26'ին, բայց Յայսմաւուրքը հաստատուն տոմարով կը դնէ յունիս 19'ին, իսկ ուրիշ օրինակ մը մարտ 30'ին (ՆՈՐ. 321)։

ՄԻՐԱՔ ԹԱՒՐԻԶԵՑԻ

1529. *Միրաք Թաւրիզեցի՝ Թաւրիզ մայրաքաղաքի հայաբնակութենան աւագը, Եաղուպի արքունիքին մէջ ազդեցութիւն ունի, և մեծ հարստութեան տէր, մեծամեծ բարերարութիւններ կը կատարէ, բազմաթիւ գերիներ գնելով կ'ազատէր, և դրամի զօրութեամբ եկեղեցիներու չինութեան և քրիստոնէից պաշտպանութեան չնորհներ կը ստանար, այնպէս որ Տաճիկներու մեծամեծները նախանձոտ թշնամութիւն մը ունէին Միրաքի գէմ։ Ասոնց մէջէն Մէհտի անուն մէկ մը, որ եաղուպէ թոյլտուութիւն ունէր, որ ջրհեղեղ ըլլալ և աշխարհ, կամ էր եղէղ, իւր ընկերներով կը խորհրդակցէր չարունակ Միրաքը մէջտեղէն վերցնելու, և վերջնական որոշման կը յանգին 1486 մարտ 22'ին։ Միւս օր, որ աւագ հինգշաբթի էր, Միրաք բոտ օրինի խոստովանած և հաղորդուած էր, երբ ուրբաթի կէսօրին Մէհտի իւր փառաւորութեամբ Միրաքի կու գայ, խօսքէ խօսք անցնելով ուրացութիւն կ'առաջարկէ, Միրաքի մերժելուն կը զայրանայ, և իրր թէ Միրաք իրենց օրէնքը հայհոյած ըլլայ, նոյնտեղ կը զարնէ կը մեռցնէ, և գլուխը կտրելով յաղթանակաւ մինչեւ թագաւորական պալատ կը տանի։ Տաճիկ բազմութիւնը կը խուժէ քանդել Հայոց եկեղեցին, զոր Միրաք չինել տուած էր։ Հայեր եաղուպի կը պիտանի, որ Միրաքի սպանութենան վրայ ցաւելով, Տաճիկ բազմութիւը ցրուել կու տայ և Մէհտին դաւելով կը տրամադրէ սպաննել։ Միրաքի մարմինը պատուով կը թաղուի, մինչ Մէհտիները բացին կը նետուի, ինչ որ Տաճիկները կը վշտացնէ, և Դաւում կամ Բասըմ մեծ պատասխան պիտի կանգնի, անոր փառաւոր թաղում տալու։ Բայց եաղուպ այդ ձեռնարկն ալ իրեն անարգանք նկատելով, Բասրին ալ մեռցնել կու տայ, և պիտաւոր պօրծակիցներն ալ ձաղանքի ենթարկելէ յետոյ սպաննել կու տայ։ Այդ պէսքէն քիչ ետքն է եաղուպի ալ դիպուկ սպանութիւնը (§ 1521)։ Միրաքի սպանութիւնը տեղի ունեցած է 1486 մարտ 24 աւագ ուրբաթի խորհրդաւոր օրուան ցերեկը, և թաղումը յաջորդ առաւօն՝ աւագ չարաթ օրը (ՆՈՐ. 328)։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԿԱՖԱՑԻ

1530 *Աստուածատուր կամ Բուղտան Կաֆացի, ոչ քիչ չոթ ղբրտնելէ երիտասարդ և հոչն ոչ որչէն, Կաֆայի այլազգիներուն աչքին զարկած էր, որ կ'ուզէին զայն իրենց կամքին հնազանդեցնել։ Ուստի սուտ զրպարտութեամբ դատաւորին մատնեցին, թէ Ռուշտ չէշտ եհան, և չարաչար տանջելէ ետքը թող տուին, իբրեւ թէ իրեն մտածելու առնն թողած ըլլան։ Երիր օր ետքը նորէն առին հօրր տունէն, և հարուածներով և ղէգնեներով ու կրակով տանջելէ ետքը, կրկին հօրր տունը բերին, և պզտիկ ծէր ծընողն ալ ետեն ղրկեցին։ Երրորդ անգամ իբրեւ թէ Աստուածատուր հաւանած ըլլայ, թլփատման գործողութիւն պատրաստուեցաւ, այլ նահատակին ուժգին բողոքելուն վրայ, մահուան վճիռը առին դատաւորէն, և խաչի փաթթելով է հոր ընկեցին։ Նահատակութենան թուականը ըսուած է 1488 ապրիլ (ՆՈՐ. 331), բայց ամսաթիւը չէ յիշուած և ոչ ալ ուրիշական պատչաճը։ Մերձաւոր է ժամանակով Սուլթանչահի որդի Թորոս Հռոմկլայեցիի նահատակութիւնը 1494 օգոստոս 1'ին, սակայն պարագաները չեն պատմուած (ՉԱՄ. Գ. 515)։*

ՇՆՈՐՀԱՒՈՐ ԽԱՑԻԿՑԻ

1531. *Մինչեւ յոն 1494 տարին հանդիպեցաւ Շնորհաւոր կնոջ նահատակութիւնը (ՉԱՔ. Բ. 125), որ Շնորհօր ալ գրուած է (ՅԱՑ. 148)։ Ամուսնացեալ կին մըն էր, արդէն այրիացեալ, չերչէն Մոթոց (ՉԱՔ. Բ. 125), և կը բնակէր Բաբերդի վերին Խայիկ գիւղը (ՆՈՐ. 333), ուր Ռուշտ մը նահանգապետ էր զոյն իրեն չանիլ և պոռնկել ընդ նմա։ Շնորհաւորի դիմադարձութիւններէն չարունակելուն, մինչեւ որ անգամ մը քուրդը կնոջ է հօտ է գացած մինակին՝ կ'ուզէ զայն բռնադատել, և երբ չկրնայ ան ալ նոքա, տալէ ան իրեն, որուն վրայ Շնորհաւորի եղբայրը՝ քրոջը*

պաշտպանութեան հանձնելով Քուրդը կը սպաննէ և կը փախչի։ Շնորհաւոր կը բրուռնուի, և Բաթերդի ամիրային առջեւ կը հանուի, ուր սպանութիւնը իւր վրան առնելով, կ'ըսէ թէ Քուրդը չբռնկեր կրնար առնել (ԶԱՔ. Բ. 126)։ Ասոր վրայ ուրացութեան կը հրաւիրուի իրր ազատութեան պայման, և յանձն չառնելուն վրայ օթոխէ կոթողեցին Շնորհաւորը և նահատակեցին։ Մահը տեղի ունեցած է 1494'ին, և յիշատակը Բայամաւուրքի մէջ դրուած է հոկտեմբեր 31'ին (ՅԱՁ. 149), որ նոյն տարի կը հանդիպէր Գիւտխաչի ուրբաթին։

1532. Յովհաննէս Դրախտիկցի արձակին նահատակութիւնն ալ յիշուած է յիշատակարանի մը մէջ 1500'ին (ՍԻՍ. 76), այլ պարագաները պատմուած չեն։ Սոյն միջոցին նահատակուած է Աւետիք Դրի Բեցի արեղան ալ, որ գովուած է իրրեւ փիլիսոփայ, քաղկրաձայն, գրագիր և պատկերահան (ՆՈՐ. 347)։ Սպանութիւնը կատարած են թաթար իսանի զինուորները, է Վերայ ճանապարհին Ս. Նշանէ վանէն (ՆՈՐ. 346), որ է կաֆայի մօտ՝ Խրիմու Ս. Խաչ վանքը, իսկ մանրամասնութիւնք կը պակսին Յովհաննէս Սեբաստացիի տաղին մէջ։ Թուական պիտի ընդունուի 1509 դեկտեմբեր 11, երեքշաբթի օր (ՆՈՐ. 349), Ս. Յակոբայ պահոց չաբթուն։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ԱՒԵՏԻՔ

Տ. ԶԱՔԱՐԻԱ Բ. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԵՑԻ

1533. Զաքարիայի անունը առաջին անգամ կը յիշէ Դավրիժեցին 1515'ին, իրր միակ և միահնծան հայրապետ, գրելով կ'ըսէ՝ թէ Զաքարիա, բայց մենք արդէն ըսինք թէ հաւանական է աւելի կանուխէն սկսիլ անոր կաթողիկոսութիւնը (1523)։ Չենք կարծեր բնաւ որ Զաքարիա առանց աթոռակից ըլլալու ուղղակի գահակալ կաթողիկոս ընտրուած ըլլայ։ Աթոռակցութեան սովորութիւնը օրէնքի ձեւ առած ըլլալու չափ արմատացած էր, և եթէ բացառիկ բան մը հանդիպած ըլլար, անշուշտ յիշուած կ'ըլլար։ Ակն թէ երբ Զաքարիա աթոռակցութեան կոչուեցաւ, որոշ յիշատակութիւն չենք գտներ։ Անորոշ ակնարկ մը կը գտնենք յիշատակարանի մը մէջ. Ցիշէ՛ ը. . . . եան Զաքարիա, որ ընտրեցաւ Հայոց նոր քահանայ յ յանդիման սուրբ Աթոռոյ Ս. Էջմիածնի՝ ի ձեռն Աստուածոյ պետրոնիմէն և յետոյ ի թուին 1506. (ԹՈՐ. Բ. 253)։ Մաշուած գիրերը կրնան լրացուիլ թէ Էջմիածին և թէ Հայրապետ բառերով, սակայն վերագրուած գործը, որ է բոլոր Հայոց եկեղեցիները ազատել, ընդարձակ ձեռնարկ մը ըլլալուն, աւելի կը միտինք հայրապետ կարծել յիշեալ Զաքարիան, քան վարդապետ, մանաւանդ որ նոյն տեղ առանձինն յիշուած է տեղւոյն, այսինքն Լիմին առաջնորդը տէր Յովհաննէս։ Այդ խօսքը Աղթամարի վերջին Զաքարիա կաթողիկոսին ալ չյարմարիր, քանի որ նա 1494'ին վախճանած էր (§ 1526), և անա թէ ինչպէս կը հանգինք տէր Զաքարիան 1506'էն կաթողիկոս ճանչնալ, գոնէ իբրեւ աթոռակից։ Բուն գահակալութիւնը հաւանական ըսինք 1515'է առաջ դնել, քանի չենք կրնար վկայութեամբ հաստատել։ Ըսինք ալ որ փաստ մը չկայ եղիչէ Բ և Ներսէս աթոռակիցները գահակալութեան բարձրացնելու (§ 1522), և եթէ Սարգիս Մխսայէկ ետքը Զաքարիան կ'ընդունինք իրր բուն գահակալ, պէտք է ենթադրել թէ Սարգիսէ առաջ մեռած էին եղիչէ և Ներսէս աթոռակիցները, և անոնց տեղ աթոռակցութեան կոչուած էր Զաքարիա։ Այս է մեր կարծիքը, և պէտք դատողնիք մեր կարծիքին հիմերն ալ յատակօրէն առջեւ դնել։ Սոյն Զաքարիան չատեր Փ կը հաչուէն, թուանշաններ անցընելով Զաքարիա Աղթամարցին, զոր մենք իրր նախաթա-

նկ ստեցինք և թուահամարի անցընելը անպատչաճ դատեցինք (§ 1492), ուստի մեր թուահամարով այդ Զաքարիային կը պատկանի Զաքարիա Բ կոչումը։ Իսկ վաղարշապատեցի մակդիրը կուտանք առ ի չգոյէ որոչ տեղեկութեան մը իր ծննդավայրին և պաշտօնատեղւոյն վրայ։ Գործերուն ընթացքն ալ կը ցուցնէ թէ հայրապետական աթոռը և հայրապետութիւնը, թէ ոչ ժառանգական, գոնէ սեփական իրաւունք մը դարձած էր էջմիածնի միաբանութեան խումբին և վաղարշապատի չրջանակին, ո՛րոնք իրենց անձնական չահին հետ, գոնէ Ամենայն Հայոց հայրապետական աթոռը անխափան պահելու և չարունակելու օգուտը ընծայեցին։

ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵՒ ՍԵԼԻՄ

1534. Երբոր Զաքարիա կաթողիկոսական գահակալութեան բարձրացաւ 1515'ին, կամ թէ այդ թուականէն ալ առաջ, երկիրը անագին չփոթութեանց մատնուած էր, երկու հզօր վեհապետներու պատերազմներուն երեսէն, որոնք էին Պարսից չահ Իսմայէլը և Օսմանեանց սուլտան Սելիմը։ Սելիմ թէպէտ իւր հօր Պայազիտի անդրանիկը չէր, բայց եէնիչէրիներու պաչտպանութեամբ յաջորդ նչանակուեցաւ, 1512'ին։ Պայազիտ Բ իւր որդիներն ու թոռները կուսակալութեանց գլուխ անցուցած էր, որով փառասէր ձգտումներ և մրցակից հաւակնութիւններ տեղի ունեցան, և Սելիմ հետզհետէ իւր փառասիրութիւնը ընդարձակելով, իւր հայրը հրաժարելու և գինքն յաջորդ հռչակելու ստիպեց, և հրաժարելուն երրորդ օրը Պայազիտ մեռաւ և ամէնուն համոզումը եղաւ թէ Սելիմ զնոյր իւր եղբայրը (ՍԱՄ. 175), որ և յաջորդաբար եղբայրները ու եղբօրորդիները ալ սպաննել տուաւ, իւր ապահովութեան համար, և եաւուզ կամ Անողոք մակդիր անունը ստացաւ։ Շրջակայ թագաւորներէն Իսմայէլ միայն Սելիմը չյնորհաւորեց, և Սելիմ 40,000 Շիի Իսլամներ, այսինքն Պարսիկներ կամ Պարսից դաւանակիցներ կոտորել տուաւ, որուն վրայ Իսմայէլ պատերազմ բացաւ, և Սելիմի յարձակումներուն առջև երկիրը աւերից որ պաչար չգտնայ։ Ասով մէկտեղ Զալտրանի պատերազմին մէջ Սելիմ յաղթական եղաւ 1514 օգոստոս 23'ին, և Իսմայէլ վիրաւոր, Թաւրիզի մէջ ալ ապահով չըլլալով, աւելի ներքին գաւառներ ապաւինեցաւ։ Բայց իսկոյն ետ դարձաւ, երբոր Սելիմի բանակը Պարսիկ սահմաններէն քաչուեցաւ, Օսմանեան կայսրութեան կը ցնծով Հայաստանի մի մասը, այսինքն Կարնոյ, Կամախու և Մչոյ գաւառները, սակայն էջմիածին և արեւելեան գաւառներ միչտ Իսմայէլի մնացին, որ դէպ ի Վրաստան և Կովկաս աւելի ընդարձակեց իւր տիրապետութիւնը։ Սելիմ նոր արչաւանքներ կազմեց դէպի Տարաւ, 1515'ին Ասորիքի, 1516'ին Միջագետքի, և 1517'ին Եգիպտոսի տիրեց, և 1517 ապրիլ 13'ին, Եգիպտացւոց վերջին սուլտանը Թուման կախաղանի վրայ սպանուեցաւ, և այդ օրէն խալիֆայութեան, այսինքն իսլամութեան Մարգարէին յաջորդութեան իրաւունքը Եգիպտացիներէն Օսմանցիներուն անցաւ, և Արաբացի տարրը զրկուեցաւ իր դարաւոր իրաւունքէն, որ Թուրք տարրին փոխանցուեցաւ։ Այս պարագան աւելի փառաւորեց Օսմանեան կայսրութիւնը, որովհետեւ Սելիմ Մէքքէի և Մէտինէի և բոլոր Արաբիոյ ալ տէրը հռչակուեցաւ, կամ ինչպէս պաչտօնապէս կը կոչուէր սուրբ տաղտկերու ծառայի ու պաշտպանն եղաւ։ Եգիպտոսէ դարձին Երուսաղէմ ալ մտաւ յաղթանակով, և տեղւոյն քրիստոնեաներուն հպատակութիւնը ընդունեցաւ։ Հայոց պատրիարքն էր Սարգիս, որ Յովհաննէս Թաւլի (§ 1506) երրորդ յաջորդն էր Մարտիրոսէ և Պետրոսէ ետքը, և 1507'ին աթոռ բարձրացած էր (ԲԱՒ. 51)։ Սարգիս փութաց նոր աչխարհակալին վաւերացնել տալ Հայոց ազգին սեփականութիւնները, և ներկայելով Էօմէրի և Սալահէտտինի և Եգիպտոսի սուլտաններուն հրովարտակները՝ անոնց հաստատութիւնն ուզեց, և Սելիմ նոր մը տուաւ, որուն մէջ յաչեչ անուանէ յիչած էր գլխաւորաբար և գիտնական սուրբ պատրիարքն։ Սելիմի հրովարտակը առաջինն ու հին է Օսմանեան վեհապետներէն Հայերուն տրուած վաւերագիրներուն (ԱՍՏ. Ա. 248)։ Հայերը այդ առիթու ոչ միայն իրենց ստացութիւնները ապահովեցին, այլև պաչտ-

պանեցին Լատիններուն սեփականութիւնները, երբ Սէլիմ լսելով Լատինաց ուխտը և գանձ քաղած ունենալը, և ուզելով տիրանալ, անոնց եկեղեցականները բանտարկել հրամայեց, ուր և մնացին 29 ամիս, հազիւ ոգեպահիկ մնունդ ստանալով, ու քաղած գործէն և գաղտ և գոռ գանձուց (ԱՍՏ. Ա. 249)։

ՋԱՔԱՐԻԱՑԻ ՄԱՀԸ

1535. Սէլիմի և Իսմայէլի Հայաստանի հողին վրայ մղած պատերազմները աղետալի եղան Հայ տարրին համար, գլխաւորապէս Իսմայէլի հրամայած աւերածներով (§ 1534), և այս նեղութիւնները անչուշտ էջմիածնի և Զաքարիայի վրայ ալ ծանրացան։ Որչափ և Դավրիժեցին յայտնի նշանակած չըլլայ, չնար չէ ենթադրել որ Զաքարիա առանց աթոռակիցի մնացած ըլլայ, և որովհետև ինքն Սարգիսի աթոռակիցներուն վերջինն էր, ուստի մինակ չմնալու համար, անչուշտ իր կաթողիկոսութեան սկիզբը և ըստ սովորական ըմբռնման 1515'ին, իրեն աթոռակից մը առաւ, որ եղաւ նորէն Սարգիս մը, Սարգիս Դ թուանամարի կարգով։ Այդ Սարգիսի համար Ռուչրեան կը գրէ թէ 1496'էն վրաստան կը գտնուէր, որ ըսել է թէ Սարգիս Գ'ի օրէն վրաստանի առաջնորդ էր, այլ կ'երեւի թէ թուաստուի սխալ մը սպրդած է, ուր կը գրէ թէ մինչեւ 1524 Վրաստան մնաց (ԱՐՐ. 230), վասն զի չենք կրնար ենթադրել որ աթոռակից նշանակուելէն ետքն ալ, և պահակալութեան բարձրացած ատենն ալ կարող եղած ըլլայ էջմիածինէ դուրս ապրիլ։ Ռուչքանի տուած տեղեկութիւնը կը ծառայէ մեզի վրաստանցի մակդիր անունով որոշել այս Սարգիսը իր համանուններէն։ Զաքարիայի գործունէութենէն բնաւ պատմելու յիշատակութիւն մը չենք գտներ, իսկ մահը կը տիպուինք դնել 1520'ին, սա միակ պատճառով որ այդ թուականին աթոռակից Սարգիսը իբր բուն կաթողիկոս կը յիշատակուի Դավրիժեցիէն, և Զաքարիա այլեւս չյիշուիր (ԴԱՎ. 337)։ Նոյն մեկնութեամբ վարուած է նաեւ երեւանեցիին 1520'ին դնելով Սարգիսի կաթողիկոսութիւնը (ՋՍՄ. 20), և այսպէս կը չարունակեն յետագանեն ալ, որչափ և Դավրիժեցին բաց ըլլայ, թէ սկզբնաւորութեան տարիները չեն իրեն նշանակած թուականները (ԴԱՎ, 334)։

ԽԱՉԱՏՈՒՐ ԿՈՂԲԱՑԻ

1536. Երկու նոր վկաներու յիշատակներ ալ այդ միջոցին կ'իյնան։ Խաչատուր կողբացի, ամուսնաւոր աշխարհական մը, բնակութեամբ և գործով Ամիւի կամ Տիարպէքիր հաստատուած էր։ Չենք գիտեր ինչ դրդմամբ երկու դիմումներ օր մը Խաչատուրի համար կը վկայեն թէ տաճկացած էր, մինչ Խաչատուր կը բողոքէր։ Բազմութիւնը կը խռնուի, ուրացութեան բռնադատութիւններ կը չարունակուին, սպառնալիքներ կ'ըլլան, փարիր կը կոտորուին, բոցեր կը վառուին, բայց Խաչատուրի անյողդողդ մնալուն վրայ, կրակով տանջուելէ ետքը կը գլխատուի (ՆՈՐ. 351), 1517 ապրիլ 7'ին, յաւուր Աւետեաց սուրբ Աստուածածնէն (ՆՈՐ. 352), որ կ'իյնար աւագ երկչաբթի օրը, զոր չենք իմանար ինչու հրատարակիչները ապրիլ 5 կիրակիի ուզած են վերածել (ՆՈՐ. 352)։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԽՓԱՑԵՑԻ

1537. Աստուածատուր Խփայեցի, բնիկ Մողոլ, Խփայ կամ Ղատայի երկրէն, որ է այժմեան Պուխարա գաւառը (ՍԻՄ. 531)։ Մխիթար Բաղէշցի վաճառականը գնած էր զայն, որ ղայութիւնեան առնէն, երբոր այն երկիրները կը չրջէր, և իրրեւ զաւակ խնամած էր Բաղէշի մէջ, ուր տղան քրիստոնէութիւնը ընդունած և մկրտուած էր։ Աստուածատուրի ծագումը մէջտեղ կ'ելաւ երբ 18 տարեկան եղած էր, և յուսացաւ թէ որդի է Թուրքի (ՆՈՐ. 355), և այդ ամբաստանութեամբ ամիրային առջեւը կանչուեցաւ։ Ոչ ողոքանք և ոչ սպառնալիք չկրցան խախտել Աստուածատուրի հաւատքը, և թէպէտ ահով և ծաղով յօլով փանջեցին, երկար գանակոծեցին, ձմեռ ատեն սառուցեալ գետեղեմին ձգեցին, քկնամէջը հոն վանեցին, ձեռքն ու ոտքը կրակի բռնեցին, սուրով մարմինը ծակոտեցին, և ամէն ան[illegible] ըրին, սակայն չկրնալով զայն ուրացութեան հպատակեցնել, փարկոծմամբ

նահատակեցին 1519'ին (ՆՈՐ, 357)։ Ազ-
քամարցի Գրիգորիս կաթողիկոս, որ յաւուրս
տաղ մը գրած է, նահատակութեան օրը
նշանակած չէ (ՆՈՐ. 358)։

Տ· ՍԱՐԳԻՍ Դ· ՎՐԱՍՏԱՆՑԻ

ՅԱՋՈՐԴԵԼՈՒԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

1538· Զաքարիայի յաջորդը եղած է Սարգիս, որ Դավրիժեցին կը նշանակէ 1520'ին փէր Սըֆէ-, և 1523'ին նոյն փէր Սըֆէ- կոչմամբ, իսկ յաջորդ կաթողիկոսի անունը կը յիշկարածգէ մինչեւ 1536 (ԴԱՎ· 337)։ Ակէ քաղելով ընդունուած է սոյն Սարգիսի կաթողիկոսութիւնը դնել 1520'էն 1536, բան որուն կը դնէ Երեւանեցին ալ (ՋԱՄ. 20)· և պէտք է նոյն կերպով պահել, քանի որ ոչ մի տարբեր յիշատակութիւն չտիպեր զայն փոխարինել։ Համանուն Սարգիսներու իրարու քիչ հեռաւորութեամբ յաջորդելը, առիթ եղած է ոմանց անոնք նոյնացնելու, ինչպէս Բ և Գ Սարգիսներու վրայ յիշեցինք (§ 1507), և այս տեղ ալ Գ և Դ Սարգիսներու վրայ նոյնութեան կասկած մը կը յարուցանէ Ալիշան (ԱՐՐ.230), սակայն հիմնական չերեւիր իր կարծիքը։ Դավրիժեցին ճշդարան է նոյն բառը աւելցնելու, երբ միեւնոյն անձին անունը կը կրկնէ, և այդ յաւելուածը չունի Զաքարիայէ առաջ և ետքը եղող Սարգիսներու վրայ, և մենք պիտի չուզենք բաժնուիլ Դավրիժեցիին տեղեկութիւններէն։ Միւս կողմէն Սարգիս Դ'ը 1476'էն առաջուկից կաթողիկոս եղած պիտինք, և ներկայ Սարգիս Դ'ը մինչեւ 1536 չարուներկած, և եթէ նոյն ըլլային 60 տարի չարունակ կաթողիկոսութիւն վարած անձ մը պիտի ունենայինք, որ հաւանական չէ, ենթադրելի չէ, և բուած ալ չէ, ինչ որ հրնար չբուէր, եթէ իրօք այսպիսի տարօրինակ պարագայ մը ճշմարտուած ըլլար։ Աւելցնենք եւս որ անմիկնելի կը մնայ, ծերացեալ կաթողիկոսի մը 35 տարի առանձնացած վարուցանի մէջ ապրելէ ետքը, նորէն աթոռ դառնալով 16 տարի եւս պաշտօն վարելը, ինչ որ եղած պիտի ըլլար եթէ Գ և Դ Սարգիսները նոյնացնելու դրութիւնը ընդունուէր։ Հետեւաբար պէտք է առանց պատմութիւնը բռնաբարելու Բ և Գ և Դ Սարգիսները իրարմէ զատել, զորս Ալշատար և Միւսայլ և Վրաստանցի մակդիրներով որոշեցինք։ Դավրիժեցիէն նշանակուած չինք գտներ վերջին Սարգիսի հետ աթոռակից եղողի մը անունը, և թէպէտ այս միջոցին էջմիածին առանց աթոռակիցի չէր մնար, սակայն անհաւանական չենք կարծեր ըսել, որ Սարգիս Վրաստանցին, էջմիածնի միաբանութենէ հեռու ապրած անձ մը ըլլալով, պահ մը ուզած ըլլայ միայնակ պաշտօնավարել։ Սարգիսի գործունէութենէն ալ յաւելք բերելիք կէտ մը չունինք, դուրսէն աղէտք և արկածք, ներսէն տկարութիւն և չփոթութիւն, չէին ներեր որ էջմիածնի գահակալները, ուզելով ալ, կարենային ձեռներէց և արդիւնաւոր գործունէութիւն մը ունենալ, և բոլոր արժանիքնին պէտք է ամփոփենք աթոռի գոյութիւնը պահպանելու և վերահաս վտանգները հեռացնելու ջանքերուն մէջ։

Կ. ՊՈԼԻՍ ԵՒ ՍԻՍ

1539· Կոստանդնուպոլսոյ մէջ սուլտան Սէլիմ մնած էր 1520 սեպտեմբեր 22'ին, և իրեն յաջորդած սուլտան Սիւլէյման Ա. Քանունի, այսինքն է Օրէնդրադիր, Օսմանեան գահուն ամէնէն բարձր և հոյակապ վեհապետ։ Իր գահակալութիւնը սկսաւ գթութեան և արդարութեան գործերով, և ուզելով նօրը բռնակալ անգթութիւնները, 1521 յունուար 27'ին զսպեց Ասորիքի ապստամբութիւնը, օգոստոս 29'ին Պելկրատ առաւ Հունգարացիներէն, և 1522 դեկտեմբեր 25'ին Հոդոսը՝ ասպետներուն ձեռքէն, երբ Լասիներ անտոյթ էին Աթէնքին օգնելու։ Փրանկիսկոս Ա Գաղղիոյ թա-

գաւորը և կարոլոս Ե Գերմանիոյ կայսրը իրենց ներքին դժուարինութիւններով կը զբաղէին, և Լեւոն ժ պապ նորագանգուածեան դէմ կը պայքարէր։ Այդ միջոցներուն, 1523'ին, կը մնար Պարսից շահ Իսմայէլը, և իրեն կը յաջորդէր Թահմասպ կամ Թահմազ շահ, որուն մասին գովութեամբ կը խօսին մեր պատմիչները (ԶԱՔ. Ա. 10)։ Մեր նպատակը չէ Սիւլէյմանի քաղաքականոյ չարքը պատմել, որ մինչեւ վիէննա հասաւ իր բանակներով, թէպէտ 1529 Հոկտեմբեր 14'ին, ձմեռն ալ վրայ հասնելուն պատասխանուելուն պաշարումը վերցնել և ետ դառնալ։ Մեր պատմութեան կարգին համար յիշենք միայն, 1526'ին վերջերը, Կիլիկիոյ Իլիլ գաւառին գրաւուիլը, և 1527'ին Դամասկոսեցիներու ապստամբութեան Օսմանցիներէ ընկճուիլը, բայց Սիս, Տարսոն, Ադանա և ուրիշ Կիլիկիոյ քաղաքներ մնծամեծ վնասներ կրեցին, և Կիլիկիոյ Հայութիւնը մանաւանդ եղաւ պատերազմի աղէտներուն, որք վայրագօրէն մրուեցան երկու կողմերէն։ Թլկուբանցի Յովհաննէս Բ կաթողիկոսը 1525'ին մնաւ բլլալով (§ 1525), իր յաջորդ Յովհաննէս Դ Բիւրակցիին օրերուն կ'իյնան այդ պատերազմական աղէտները։ Իսկ Կոստանդնուպոլսոյ մէջ, Նիկոդայոսի (§1509) պատրիարքութիւնը վերջացաւ 1489'ին, Տարկաւ իր մահուամբ, վասնզի այն ատեն տակաւին չէր ճչմարտուեր առաջիկային սովորական դարձած փոփոխականութիւնը։ Իրեն յաջորդեցին կարագետ 1489'է 1509, և Մարտիրոս մինչեւ 1526, որոնց գործերը անծանօթ մնացած են յիշատակներու պակասութեամբ։ Մարտիրոսի օրերուն կ'իյնայ Կոստանդնուպոլսոյ Հայարնակութեան մէջ Թաւրիզցի՝ կամ ընդհանրապէս Պարսկաստանցի տարր մըն ալ աւելնալը, զորս Սելիմ փոխադրեց 1514'ին Շահ Իսմայէլի վրայ տարած յաղթութենէ ետեւ (§ 1534), և որոնց մէջ չատ էին արհեստաւոր և արհեստագէտ Հայազգիներ (ԶԱՄ. Գ. 511)։ Մարտիրոսէ ետքը 1526'ին Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան անցաւ Գրիգոր Վաղարշապատցի, Զաքարիա Բ կաթողիկոսի եղբօրորդին։ Գրիգորի ծագումը կը հաստատէ կանուխէն դիտել արուած կէտը թէ Կոստանդնուպոլսոյ աթոռը, որչափ ալ առաջնները կիլիկիոյ կաթողիկոսութեան հետ յարաբերութեան մէջ կը պահուէր, սակայն հետզհետէ թէ արեւելքի հայարնակութեան չատնալովը, և թէ էջմիածնի վիճակներէն լաւ մաս մր Օսմանեան կայսրութեան կցուելովը, էջմիածնի աթոռին հետ յարաբերութիւններ ընդարձակուեցան, և հետզհետէ անոր իրաւասութեան տակ կապուեցաւ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութիւնը (§ 1509)։ Այդ տեսակէտէն չատ նչանաւոր կալից է վազարչապատցի և կաթողիկոսի եղբօրորդի և էջմիածնի միարան եպիսկոպոսի մը պատրիարքութեան բնաւրութիւը։

1540. Պատերազմի աղէտները Հայաստանի մէջ նորոգուեցան Սարգսի վերջին տարիներուն։ Սուլտան Սիւլէյման փութաց ա-

ՍԱՐԳԻՍԻ ՄԱՀԸ

բեւմուտքի կողմէն պատերազմները վերջացնել, որ Պարսիկներուն հետ նորոգէ, վասնզի մինչ Զիւլֆիքար խան՝ Պաղտատի պարսիկ կուսակալը՝ կը խոստանար Օսմանեանց յանձնել քաղաքը, Շէրիֆ պէյ՝ Բաղէշի Օսմանեան կուսակալը՝ իր քաղաքը Պարսիկներուն կը յանձնէր։ Խալտիմ փաչա, Սիւլէյմանի սիրելի և կարող մնծ նպարքոսը 1572'ին ճանապայ ելաւ Տզօր բանակով, Հալէպ ձմերից, գարնան հետզհետէ դրաւեց Ախլաթ, Արճէշ, Ալճավազ, Վան և Ուրմիա, իսկ 1533 յուլիս 13'ին Թաւրիզ մտաւ։ Սուլտան Սիւլէյման, որ 1533 յունիս 13'ին Կոստանդնուպոլիսէ մեկնած էր, Նիկիա, Կուտինա, Ագչէհիր, Գոնիա, Էրզրում, և Արճէշ հանդիպելով, Թաւրիզ մտաւ սեպտեմբեր 20'ին, ուսկից Պաղտատի վրայ քալեց, և գրաւեց դեկտեմբեր 31'ին։ Բաւական երկար մնաց այն տեղ աչխատակազմութիւններ ընդարձակելու և կառավարութիւններ կարգադրելու համար, և Տազիւ 1534 օգոստոս 2'ին մեկնեցաւ դէպի Թաւրիզ, և 1535 յունուարին մայրաքաղաք գարձաւ։ Այդ պատերազմներուն հետեւանօք նոր գաւառներ և Հայութիւնէ նոր մաս մր Օսմանեանց անցան, այլ էջմիածին միշտ Պարսիկներուն ձեռքը մնաց։ Յիչենք անցողակի որ 1535 փետրուարին հաստատուեցաւ սուլտան Սիւլէյմանի և

Գաղղիոյ թագաւոր Փրանկիսկոսի միջեւ պայմանագրութեանց դաշնագիր մը, որով չատ մը արտօնութիւններ և ազատութիւններ կը տրուէին Գաղղիացիներուն Օսմանեան հողի վրայ, և որ ծառայած է իբր հիմն և նախատիպ այն արտօնեալ և ապահարկ կացութեան (Capitulations), զոր եւրոպացիներ կը վայելէին Օսմանեան կայսրութեան մէջ։ Սարգիս կաթողիկոսի մահն ալ այդ միջոցին պիտի հաստատենք 1536'ին, հիմնուելով Դավրիժեցիէն անոր յաջորդին տրուած թուականին (ԴԱՎ. 337), քանի որ ուրիշ աղբիւր չենք գտներ աւելի ճիշդ ժամանակագրութիւն մը կազմելու, և ոչ ալ յատուկ տեղեկութիւն մը մահուան պարագաներուն վրայ։ Ինչպէս կը տեսնուի, այդ միջոցին կաթողիկոսներուն անուններէն զատ բան մը չենք կրնար յառաջ բերել, և իրենց մասին հաւանական ժամանակագրութիւն միայն կրնանք կազմել, ինչ որ ինքն ըստ ինքեան բաւական է աթոռին անկեալ վիճակը ցուցնելու։

ԲԱՐՈՒՆԱԿ ԱՄԴԵՑԻ

1541. Պատմական յիշատակներու կարգին կը գոհանանք քաղել քանի մը նոր վկաներու յիշատակութիւնները, որչափ որ կը գտնենք կցկտուր յիշատակարաններու մէջ։ Բարունակ Ամդեցի, սովորաբար Պուտախ կոչուած, արւեորդի հօր և քահանայի դուստր մօր զաւակ մը, և Տիարպէքիր բնակող, ախորժ կը զգար Հայոց եկեղեցին յաճախել, և Մկրտիչ աբեղայէ մը և քահանայներէն ընթերցմունքներուն կը տեղեկանար, և աւելի կը հետաքրքրուէր Ծայսմաւուրքի վկայաբանութիւններով, և հաւատք քարոզելու և հաւատոյ համար նահատակուելու եռանդով կը բորբոքէր։ Թուրք և արաբ և պարսիկ լեզուներու հմուտ, այլազգիներու հետ կը տեսակցէր և քրիստոնէութիւնը կը բացատրէր, և իր ձեռքով ասելէ ետև չէնոսան այլ հաւատացեալ է Քրիստոս (ՆՈՐ. 362)։ Թէպէտ տունի և խանութի տէր էր Բարունակ, բայց ինքզինքը աւելի քարոզութեանց էր տուած, և երեք տարիէ հետէ այդ կեանքը կը վարէր, երբ ոմանք գինքը նենգութեամբ չէյխի մը մօտ կը տանին և զրոյց կը հանեն թէ տաճկացաւ։ Պուտախի հերքելուն վրայ նախ դատաւորին և յետոյ կուսակալին առջեւ կը հանեն, երեք օր բանտարկութենէ ետքը, կիրակի օր նորէն ատեան կը բերեն, և երկար հարցուփորձէ, և հարուածներով և հրով փորձելէ ետքը, վիրաւից կը բանտարկեն։ Միւս օր կրկին դատաստանով և սպառնալիքներով կը տիպին, և անդրդուելի մնալուն վրայ, ոտուըներէն ու ձեռուըներէն ձողի մը կը բեւեռեն, և վիզէն չուն մը կը կախեն, և չորս կողմը փայտ ու խոիւ դիզելով, եօթը ժամ չարունակ կ'այրեն, մինչեւ որ մարմինը մոխիր կը դառնայ (ՆՈՐ. 368)։ Պուտախի կամ Բարունակի նահատակութիւնը դրուած է 1524 յունիս 13'ին (ԶԱՄ. Գ. 516), որ երկուշաբթի օր մըն է, և կը յարմարի առաջին ատեանին կիրակի օր տեղի ունենալուն (ՆՈՐ. 363)։

ՈՒՐԻՇ ՎԿԱՆԵՐ

1542. Լոկ անուններով միայն ծանօթ են ուրիշ քանի մը նահատակներ ալ։ Կապտակտ Մելիտինեցի, Մաթթիոս եկեղեցւոյն լուսարարը, հրով նահատակուած է 1524'ին, իսկ օրը չէ յիշատակուած (ԶԱՄ. Գ. 516)։ Թոմաս եզեսացի 1528'ին (ԶԱՄ. Գ. 516), Հայկապետ Տեւու վանքին աբեղայ 1533'ին (ՍԱՄ. 176), Թադէոս Սեբաստացի երէց 1534'ին (ԶԱՄ. Գ. 516), և Շանքուռակ գիւղի քահանան ալ 1535'ին, որուն անունը չէ յիշուած (ՍԱՄ. 176)։ Ասոնց ամէնուն ալ նահատակութիւնները կրակով կատարուած են։ Քիչ մը աւելի տեղեկութիւններ տրուած են Կոկճայ (ՆՈՐ. 373) կամ Կէօկճան (ԶԱՄ. Գ. 516) կամ Օգլա Սեբաստացիին վրայ (ՍԱՄ. 176)։ Տաճիկ պինուորներ յանկարծակի տունէն հանելով, ատեան կը տանին թէ դուք քրիստոնեայ էք (ՆՈՐ. 373), և իսկոյն ուրացութեան կը հրաւիրեն և տանջանքներու կը ձեռնարկեն։ Ձեռուընէրն ու ոտուընները կապելով գետին կը պառկեցընեն, լեզուն կը կտրեն, կը ծեծեն ու կը խոցոտեն, և վերջէն հրապարակ տանելով գլխիվայր ցցահար կը կանգնեցնեն և քարկոծմամբ կը սպաննեն (ՆՈՐ. 375)։ Միայն տարեթիւը յիշուած է 1536'ին, և կոչուած է աղնոսկան և խոճա (ՍԱՄ. 176), բայց տաղին մէջ միշտ իբր հանոկ և քոճա հանո-

ներկայացած է, (ՆՈՐ. 375) որով ազնուազգի երիտասարդ մը եղած ըլլալը կը ստուգուի։

ԳԵՐՄԱՆԻԱ ԲՈՂՈՔԱԿԱՆ

1543. Վերեւ անցողակի ակնարկեցինք թէ Լեւոն ժ Հռոմայ պապը զբաղած էր նորագանդութեան իրնդիրներով (§ 1539), որ ընդարձակ տարածում սկսած էին ունենալ, և իդէպ կը դատենք քանի մը խօսք աւելցնել Բողոքականութեան վրայ, որ եթէ ոչ այն ատեն, վերջին ատիններ Հայերուն մէջ ալ մուտ գործեց։ Ծիշտ հինգ թէ գարուկէս առաջ Եւրոպիոյ մէջ ազատամիտ վարդապետութիւն մը կը քարոզուէր Վիքլէֆի և Հուսի ձեռքով (§ 1431)։ Ըսողներ կան թէ անոնց վարդապետութիւնը իւր արմատն ունէր Պաւղիկեանց աղանդին մէջ, որուն հայկական ծագում ալ կը տրուի (§ 671), և որուն հետեւողներ Ասիոյ մէջ ընկճուելէ ետքը Եւրոպա անցան, և ծագում տուին Բուլղարիոյ Բոգոմիլներուն, Լոնգոբարդեան աղանդաւորներուն և Գաղղիոյ Ալբիգեանները, որոնց դէմ գինուեցան Դոմինիկեանք միաբանութիւնը և Հռոմի հաւատաքննութիւնը (§ 1179)։ Ըստ այսմ վարդապետական խնդիրներ, չարունակեալ գոյութիւն ունեցած էին, երբ յանկարծական ասպարէզ գոհան Մարտինոս Լուտերի (Luther) ձեռքով։ Երկու գլխաւոր առիթներ չարժումին պատճառ եղան։ Ցուլիոս Բ ռազմագէտ և քաղաքագէտ անձ մը, 1503'ին պապ ընտրուելով ձեռնարկած էր Գաղղիացիները և Գերմանացիները Իտալիայէ հեռացնել, և իւր յաջորդը Լեւոն ժ 1516 դեկտեմբեր 19'ին Գաղղիոյ հետ համաձայնութիւն կնքելով, Բիտրուբգիոյ կանոնները ջնջած էր (§ 1432), որով Գերմանիոյ հետ միայն յարաբերութիւններ լարուած կը մնային։ Լեւոն ժ, որ գեղարուեստից պաշտպան ճանչցուած է, Ս. Պետրոսի վսեմ կանեան տաճարին շինութեան միջոցներ հայթայթելու համար, մեղաց և ապաշխարանաց լիակատար ներողութեան փոխանակութիւնամբ նպաստահաւաք ձեռնարկ մը բացած էր, 1517 սեպտեմբեր 13'ի կոնդակով, անոր չահագործումը Դոմինիկեան կրօնաւորներուն յանձնելով, մինչ անկէ առաջ այդպիսի գործեր Օգոստինեան կրօնաւորներուն իրաւունքն էր եղած։ Մարտինոս Լուտեր, Օգոստինեան միաբանութեան կրօնաւոր քահանայ և Աստուածաբանութեան ուսուցիչ, իւր միաբանութեան իրաւունքը պաշտպանելու ձեռնարկեց, և խնդիրը յառաջացնելով, նոյնիսկ դրամով մեղաց ներողութիւն տալու սկզբունքին դէմ ելաւ, և պապական իշխանութեան հիմերը քննութեան ենթարկելով, անոր զեղծումները սկսաւ յանդիմանել։ Լուտերի նախաձեռնութիւնը մեծ ընդունելութիւն և պաշտպանութիւն գտաւ Օգոստինեաններէ և հակեղեցականներէ՝ իրր սեփական խնդիր, և Գերմանացի իշխաններէ և ժողովուրդէ՝ իրր պապերուն հակագերման ուղղութեան ընդդիմութիւն։ Մրցումը հետզհետէ աճեցաւ և տարածուեցաւ, և երբ Լեւոն ժ 1520 յուլիս 15'ին Լուտերի 41 նախադատութիւնները, և 1521 յունուարին նոյնինքն Լուտերն ալ նզովեց, բողոքականութիւնը հռոմէականութենէ զատուելով ինքնուրոյն կացութեան իրաւունք ստացաւ, և ոչ միայն Գերմանիա, այլ ուրիշ երկիրներ ալ արձագանգ տուաւ։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐ

1544. Գերմանախօս Հելուետիոյ մէջ գլուխ կանգնեցաւ Ուլրիկոս Ջուինկլ (Zwingli), Ջիւրիխի (Zurich) աւագերէցը, որ 1522'ին ձայն բարձրացուց դըպրամի փոխարէն չնորհուած ներողութեանց դէմ, և չուտով իրեն յարեցան Հելուետիոյ ինքնուրոյն գաւառները։ Գաղղիախօս Հելուետիոյ եկեղեցականներէն Ցովհաննէս Կալվին (Calvin) բողոքական սկզբունքները ընդգրկեց, զորս առաջին անգամ յայտնեց Փարիզի մէջ 1532'ին, և անկէ Հելուետիա գալով և զանազան քաղաքներ չրջելով իրեն կեդրոնը հաստատեց Ժընեվի (Genève) մէջ 1536'ին, և բողոքականութեան աւելի գիտական և աւելի կարգադրեալ ձեւ տալու արժանիքն ունեցաւ։ Դանիոյ մէջ Ցովհաննէս Թաուզըն (Tausen) մեծ յաջողութիւն ունեցաւ, Քրիստիանոս Բ և Գ թագաւորներուն պաշտպանութեամբ, մինչեւ որ 1536'ին ընդհանուր գումարմամբ բողոքականութիւնը ազգային կրօնք հռչակուեցաւ։ Նորվեգիա և Իսլանտա՝ որ Դանիոյ իշխանութեան ներքեւ էին,

և Շուէտիա որ Դանիոյ գերիշխանութիւնը կը ճանչնար, միւնոյն հոսանքին հետեւեցան Ալաւոս և Լաւրէնտիոս Բէթէրսըն (Petersen) Հայոց քահոյսութեամբ։ Անգլիոյ մէջ Հէնրիկոս Ը թագաւոր, 1521'ին Լուտերի դէմ հրատարակութիւն ալ ըրած էր, բայց երբ կաւարինէ Արագոնացիին հետ ամուսնութիւնը լուծելու և Աննա Պոլէյնի (Boleyn) հետ ամուսնանալու խնդիրը ծագեցաւ, և կզևմէս է պապ՝ 1527'ին նպաստաւոր կարծիք տուած ըլլալով հանդերձ 1529'ին մերժից, Հէնրիկոս Թոմաս Քրոմուէլի (Cromwell) խորհրդով 1531'ին Հռոմէ բաժնուելու որոշումը յայտնեց, և անգլիական եկեղեցւոյ ինքնիշխան տէր հռչակուեցաւ, և 1534'ին կազմակերպութիւնը լրացուց, թէպէտ ոչ բան ամենայնի Լուտերի ու Կալվինի ։ Ջուինգլի սկզբունքներով, բայց արդեամբ Անգլիան ալ Հռոմէ բաժնուեցաւ, և միայն մանաւոր բաժիններ մնացին յիշեալ երկիրներու մէջ՝ Հռոմի հետ կապուած։ Մեր նպատակը չէր բողոքականութեան վրայ կատարեալ տեղեկութիւն տալ, անոր համար ոչ անոր վարդապետականն սկզբունքները բացատրեցինք, ոչ իրեն մէջ ունեցած խնդիրները պատմեցինք, և ոչ ալ ներքին կազմակերպութեան գանազան կէտերը յառաջ բերինք։ Այլ բաւականն անդրադարձինք միայն սկզբնաւորութեան պարագաները և քանի մը ժամանակագրական թուականներ յիշել, իրրեւ նշանաւոր եղելութիւն մը, որուն մասին իւր կարգին պիտի ստիպուինք խօսիլ, Հայոց հետ ալ ունեցած չփումները և ներգործած ազդեցութիւնները պատմած առնենք։

Տ. ԳՐԻԳՈՐ ԺԱ. ԲԻՒԶԱՆԴԱՑԻ

1545. Դավրիժեցին 1536 թուականին ներքեւ կը գրէ։ կ՚ըսէ՝ թէ Գրէգոր (ԴԱվ. 337), առանց յայտնելու թէ ով և ուստի ըլլար, և ոչ ալ նախապէս աթոռակից եղած ըլլալը, և մենք ալ անհաւանական չդատեցինք Սարգիս Վրաստանցիին առանց աթոռակիցի մնացած ըլլալը (§ 1538)։ Ուր որ տեղեկութիւններ կը պակսին և մանր ակնարկներէ պատմութեան չարքը կապակցել կը պարտաւորուինք, ներեալ կ՚ըլլայ անչուշտ երբեմն մերձեցումներ ընելով բաներու մէջ։ Այդ համարձակութեամբ դիտած ենք թէ Գրիգոր կաթողիկոս մը կ՚երեւի, երբ Կոստանդնուպոլսոյ մէջ Գրիգոր պատրիարք մը կը դադարի։ Ակնկալենք որ Գրիգոր պատրիարքը էջմիածնեցի մըն է, և նոյն իսկ նախկին կաթողիկոսի մը եղբօրորդի (§ 1539), որ կերպով մը իրաւունք կու տայ առջեւ անցնելու և կաթողիկոսական աթոռին յաջորդութեան ձգտելու, այնպիսի ժամանակ մը որ կանոնական ընտրութիւններ պատահական և անձնական նախաձեռնութիւններով փոխանակուած էին։ Այդ տեսութիւններն են անշա, որ մեզի համարձակութիւն կու տան նոյն ինքն Զաքարիայի եղբօրորդի և Կոստանդնուպոլսոյ պատրիարք Գրիգորը տեսնել՝ էջմիածնի գահակալ Գրիգորին մէջ, և այս դիտողութեամբ տուած ենք անոր Բիւզանդացի մակդիր անունը։ Ինչպէս ըսինք, վկայեալ պատմութիւն մը չէ մեր տեսութիւնը, բայց պարագաներու մերձեցումներէն քաղուած եզրակացութիւն մըն է, որ իւր ոյժն և արժէքն ունի, ուր ատոնց տեղեկութիւններ չեն գտնուիր։ Գրիգորի կաթողիկոսութիւնը կը յիշատակուի 1540 թուականին ներքեւ ալ Մչոյ Ս. Առաքելոց վանքը (ԹՈՐ. Բ. 422) և Ջերմուկ քաղաքը (ԹՈՐ. Բ. 456) գրուած յիշատակարաններուն մէջ։ Աւելի ետքն ալ 1541'ին դարձեալ կը յիշէ զայն Դավրիժեցին, երբ Գրիգորի մօտ աթոռակից մը աւելնալը կը պատմէ (ԴԱվ. 337), և այս յիշատակութիւնն է անշուշտ, որուն կ՚ակնարկէ Ալիշան, որ Գրիգորը Գրիգորիս ալ կը կոչէ (ԱՐՐ. 230), ինչպէս կը կոչէ նաեւ Ջմշկիածագի

մէջ գրուած յիշատակարան մը (ԹՈՐ. Բ. 364)։ Սակայն 1541 տարին պէտք չէ իբր Գրիգորի կաթողիկոսութեան վերջ համարիլ, ինչպէս ըրած են Ջամչեան (ՋԱՄ. Գ. 517) և Երեւանեցին (ՋԱՄ. 20), զի Դավրիժեցին նոյն տարւոյն նոյեմբեր տակաւին կենդանի կ'ընդունի Նոյ պէտ Գրիգոր կաթողիկոսը, աւելցնելով թէ այլ և եղեւ ի Գրիգոր պէտ Սթեփանոս (ԴԱՎ. 337), որով Սահմանոս լոկ աթոռակից եղած կ'ըլլայ 1541'ին և ոչ բուն գահակալ կաթողիկոս։ Այլ թէ երբ վերջացաւ Գրիգորի կաթողիկոսութիւնը ճշդելու փաստեր կը պակսին, և անյարմար չէր ըլլար զայն երկարաձգել մինչեւ 1545, երբ առաջին անգամ յիշատակուած է Գրիգորի յաջորդը Սահմանոս (ԴԱՎ. 337)։ Որչափ ալ Դավրիժեցին կը գրէ թէ իւր դրած թուականները սկզբնաւորութեան տարիներ չեն (ԴԱՎ. 334), սակայն քանի ժամանակները իրեն կը մօտենան աւելի ճիշդ տեղեկութիւններ գտած կ'ըլլայ, և մենք իրաւունք կ'ունենանք աւելի կարեւորութիւն տալ վերջին թուականներուն։ Մանաւանդ որ քիչ քիչ կը սկսին պատմական յիշատակներ ալ չտանալ, որով հնար կ'ըլլար Դավրիժեցիին ճիշդ թուականներ գտնել։ Աւելի տեղեկութիւն չունինք Գրիգորի նկատմամբ։

ՆՈՐ ՏՕՒԱՋԱՏԻԿ

1546· Գրիգորի կաթողիկոսութեան օրով նորոգուեցաւ Ծուազատիկի հնացեալ խնդիրը, որ հանդիսած չէր 1292'ի վերջին Ծուազատիկէն իվեր, այսինքն է, Հռոմկլայի ատենէն ասդին (§ 1191)։ Տոմարական հաշիւները այնպէս իմն կը բերեն, որ իւրաքանչիւր հինգհարիւրակին մէջ չորս անգամ միայն Ծուազատիկ կը հանդիպի իրարմէ 95 տարի տարբերութեամբ, և 247 տարիներու մէջով մը առանց Ծուազատիկի կ'անցնի և այս հիմամբ դիտեցինք իւր կարգին թէ 1387 տարին Ծուազատիկ չէ եղած (§ 1361)։ Առանց Ծուազատիկի միջոցը 1292'էն իվեր կը քաղէր, և նոր Ծուազատիկը կ'իյնար 1539'ին, ինչպէս տոմարական հաշիւներ կը ցուցնեն, և ուղիղ չէ Ջերմուկցի Եղիա արեգային զայն 1540'ին դնելը (ԹՈՐ. Բ. 454)։ Շփոթութիւնը կրնանք մեկնել, ըսելով թէ Հայոց 989 թուականը կը սկսէր 1539 նոյեմբեր 7'ին, և եթէ Ջերմուկցին իւր Յայտարարքը աւարտեց 1539 նոյեմբերէ 1540 մարտ միջոցին՝ նոր զատիկը չկած, կրցաւ անցեալ զատիկը միւնոյն 989 թուականին վերագրել և այնպէս յիշատակել։ Ինչ ալ ըլլայ չփոթութեան պատճառը, պէտք է պինդ բռնենք տոմարական հաշիւը և 1539 ապրիլ 6'ին և 13'ին դնել յոյն և հայ զատիկները, ինչպէս կը դնէ ժամանակագիր մըն ալ (ՍԱՄ. 176)։ Հետաքրքրական պարագաներ կը պատմէ Ջերմուկցին Երուսաղէմի մէջ յուզուած վէճերուն մասին։ Ձմարիտ զատիկին ժողովրդական փաստեր լուսանկարութիւնը ըմբռնուած ըլլալով, Հայեր Յոյներէ կը պահանջեն, որ անոնց ճրագալոյցին, այսինքն ապրիլ 5'ին, Յոյներուն Փլաբիոս պատրիարքին հետ, Հայ եպիսկոպոսներ ալ մտնեն սուրբ Գերեզմանը որ քննեն լոյսին ճշմարտութիւնը, և մինչեւ 500 և 1000 ոսկի գրաւ կը խոստանան։ Սակայն Յոյներ չեն հաւանիր, այլ ըսխմաթ և էթպէրի պահել է ըսելին գերեզմանը կը մտնեն, և իբր թէ լոյսը կը հանեն, սակայն եէնիչէրէ և այլպէս որ է դռան էն կը վկայեն թէ ինքնին լոյս չելաւ։ Երբոր Հայոց ճրագալոյցը կու գայ, ապրիլ 12'ին, հապա թէ Հայեր երկու անգամ թափօր կը դառնան Գերեզմանին չուրջը, և ահա լոյսն ընաա է կանչեցին, և տասնիկ պաշտօնեաներ՝ նշանչին, զոփն և եաղիչին և ըսա եէնիչէրէ, որ ներկայ եղեր են դուրսէն, վկայեր են լոյսին ճշմարտութեան (ԹՈՐ. Բ. 455)։ Այս պարագաները պատմելով, բնաւ դիտում չունինք լոյսի խնդիրը բացատրել, այլ միայն ժամանակին սիրող զգայուններն ու հաւատքը ծանօթացնել։ Ուրախ պիտի ըլլայինք տեսնելով որ գտնէ կարենայու յիշատակութիւն չըներ Ջերմուկցին, սակայն ուրիշ տեղէ կը վկայուի թէ Յոյներ յարուցին աղմուկ մեծ, և առին եղեն հանդիսելոյ Հայոց մեծաւոր ընաաց և նեղոնց (ԱՍՏ. Ա. 254)։

1547· Ծուազատիկին տարին Հայոց պատրիարք եղած կ'ըլլայ Աստուածատուր Մերտինցին, որ ըստ ոմանց 1523'ին ընտրուելով 19 տարի պաշտօնավարելէ ետքը 1542'ին տեղի կու տայ Փիլիպպոսի, և անոր

մահուանէն ետքը 1562'ին նորէն աթոռ կը բարձրանայ իւր հօրեղբօրորդւոյն Անդրէասի աթոռակցութեամբ եւ երկու տարիէն կը վախճանի 1564'ին (ԲԱՌ. 61)։ Իսկ յետ այլոց Աատուածատուր 1532'ին կը յաջորդէ Յովհաննէս Դուկասեանի, որ էր լեալ յաջողիչն Լեւոդէկոս Սոյ, զոր մինչեւ իսկ Թլկուրանցիին հետ նոյնացնողներ կան (ԱՍՏ. Ա. 251)։ Սակայն ուրիշ տեղէ այսպիսի յիշատակ չկայ, եւ առ առաւելն կիրիկիայէ եկող Յովհաննէս եպիսկոպոսի մը կրնանք պատչաճեցնել այդ ակնարկը։ Սոյն երկրորդ աղբիւրը Փիլիպպոս պատրիարքը չճանչնար, եւ 1542'ին Աատուածատուրին յաջորդ կը դնէ Անդրէաս Պարունաէրը՝ Աատուածատուրի հօրեղբօրորդին, մինչ առաջին աղբիւրը 1462'ին կը յիշատակէր, եւ միանգամայն չյիշեր Յովհաննէսը, որ երկրորդ գրութեան մէջ մեծ դեր ունի ազգային անփականութեանց պաշտպանութեան համար։ Ինչի որ երկու գրողներն ալ Երուսաղէմի միաբաններ են, որ պէտք է ձեռնարկին ունենային վաւերական գրութիւնները, մեզի անմեկնելի կը մնան իրենց տարբեր կարծիքները, եւ անհամաձայնութիւնները լուծելը իրենց կը թողունք, վասնզի այլուր Աատուածատուր կենդանի եւ գործակից կը յիշուի Անդրէասի հետ մինչեւ 1554 (ԱՍՏ, Ա. 263)։ Անդրէասի տրուած Պարոնտէր անունը, այդ մակդիրին առաջին յիշատակներէն մէկն է, բայց առաջիկային ուրիշներու ալ տրուած պիտի տեսնենք։ Ջանազան բացատրութիւններ մատուցած են այդ մականունին, իսկ մեր կարծիքն է երկու պատուաւոր կոչումներու միացումը տեսնել այդ բառին մէջ։ Պատրոն կոչումը գոյութիւն է պատրոն (Patron) լատինական բառին (ՇԱԿ. 62, 64), եւ կը պատասխանէ հայերէն տանուտէր կոչման, եւ այսպէս կը կոչուէին միջին դարերու նշանաւոր եւ իշխանաւոր անձեր, իսկ Տէր կոչուածը իրենց պատասխանուն սեփականուած էր եկեղեցականներուն։ Այս տեսութեամբ պարոնտէր, այսինքն պատրոն եւ տէր կը կոչուէին այն եկեղեցականները, որոնք կանոնէին աշխարհիկ վիճակի մէջ իշխանաւորի դիրք վայելած էին։ Անդրէաս պարոնտէրին դառնալով, սաղմոսական յիշատակներ կը պատմեն անոր չատ վէճերը եւ չատ յաջողութիւնները ազգային սեփականութեանց պաշտպանութեան համար։ Նա ինքն 1555'ին Կոստանդնուպոլիս ալ գացած է, իրեն փոխանորդ թողլով Նաչատուր եպիսկոպոսը (ԱՍՏ. Ա. 270), եւ այն տեղ չորս տարի մնալով Յոյներու Գերմանոս պատրիարքին հետ դատ վարած է կայսերական առեւանին առջեւ՝ ազգային իրաւունքներու եւ ստացուածքներու համար, եւ յաջողութեամբ Երուսաղէմ դարձած, եւ 1560'ին նորոգած է Համբարձման եկեղեցին (ԱՍՏ. Ա. 272)։ Լատիններուն ալ պաշտպանութիւն եւ հիւրընկալութիւն ըրած է, երբոր անոնք հեռացած էին Սիոնի վանքէն, եւ անոնց առժամեայ բնակութիւն տուած է ի սոբք Հրեշտակապետաց վերի մասին, ինչ առն հրամանաւ բռնաւորական՝ քանի վերջ (ՀՆՆ. 278)։

ՄԱՆԿԱԺՈՂՈՎԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

1548. Սուլտան Սիւլէյման երրոր պարսից արշաւանքէն դարձաւ 1535'ին (§ 1540), եւ պէտք տեսաւ իւր բանակը նոր տարրերով կազմակերպել, հրաման ըրաւ պզտիկ տղաքներ հաւաքել ամէն կողմէն եւ զանոնք դինուորական կեանքին մարզել։ Այդ առթիւ քրիստոնեայ տղաքներն ալ կը հաւաքուէին անխտիր, եւ իսլամական կրօնքով կը կրթուէին։ Իսկ տղաք բռնի կ'առնուէին ուր որ կը գտնուէին, տուներ ալ կոխելով դուրս կը հանուէին, եւ ուր ընդդիմութիւն տեղի ունենար, զինու զօրութեամբ, կոտորածով եւ աւերածով կ'ընկճուէին։ Մանկաժողովր աւելի Ասիական գաւառներու մէջ կը կատարուէր, եւ քրիստոնեայ տարրերուն մէջ աւելի հարստահարուողը Հայը կ'ըլլար։ Կը յիշուի թէ սուլտան Սէլիմ առաջին անգամ մտածած էր այդ ձեւը, սակայն խափանուած էր, եւ Սիւլէյման զայն հրամայեց աւելի կազմակերպել եւ աւելի բուռն կերպով։ Մանկաժողովը տարուէ տարի կը կատարուէր, եւ ղրեր ու կոծեր, բռնութիւններ եւ խռովութիւններ անդադար էին, մինչեւ իսկ այդ պատճառով Եւդոկիոյ մէջ ութը եկեղեցիներ միեւնոյն 1543 ապրիլ 9 օրը այրուած ըլլալը կը յիշ-

ուի տարեգրութեանց մէջ (ՉԱՄ. Գ. 513)։ Բարձր Հայոց հայաչատ գաւառին կրած տառապանքը անտանելի երեւեցաւ Մաղաքիա Դերջանցի վարդապետին, որ այն առնն ազդեցիկ դիրք ունէր այն կողմերը, ոչ միայն իւր բանիբուն հմտութեամբ, այլեւ աչխարհաչէն ձեռնարկներով, և որուն առնուն մինք ալ անձամբ կարդացած ենք կոթերի եկեղեցւոյն մէջ թէ Նոյեմբեր 974=1525'ին Յեռամբ Մաղաքիա վերադարձ, և մեծ կամուրջին վրայ ալ՝ թէ 989=1540'ին կանգնեաց Յեռամբ Մաղաքիա վերադարձին։ Մաղաքիա արդէն ծերացեալ, բայց սրտով առոյգ, անձամբ եկաւ Կոստանդնուպոլիս, ուր պատրիարք էր իւր մէկ նախկին աչակերտը, Աստուածատուր Եղուպէական եպիսկոպոս (09 ԱՄՍ. 232), Գրիգոր Բիւզանդացի պատրիարքին յաջորդը, և ամէն ջանք ու միջնորդութիւն գործածից, մինչև որ յաջողեցաւ կայսերական արտօնութիւն ստանալ Դերջանի ու Բաբերդի ու չրջակայից մէջ Հայերուն մանկաժողովը դադրեցնելու։ Մերձաւոր հաչուով հնար է 1545'ին դնել Դերջանցիին յաջողութիւնը։ Օրինակը քաջալերիչ եղաւ ուրիչ գաւառներու ալ, որ յատուկ դիմումներով և յարմար միջոցներով ուրիչ մասնաւոր արտօնութիւններ ձեռք ձգեցին, և այսպէս հետզհետէ նուազեցաւ մանկաժողովի դրութիւնը, մինչեւ որ առնն անցնելով իսպառ խափանուեցաւ (ՉԱՄ. Գ. 513)։

Տ. ՍՏԵՓԱՆՈՍ Ե. ՍԱԼՄԱՍՏԵՑԻ

(Ապրիլ 1931 էջ 305)

1549. Վերջին ծառազատիկը 1293'ին Ստեփանոս Դ կաթողիկոսի օրով տեղի ունեցած էր (§ 1191), և

ՅԱՋՈՐԴԵԼՆ ՈՒ ԱՔՈՌԱԿԻՑԸ

1539'ի նոր ծառազատիկին յաջորդեց Ստեփանոս Ե'ի աքոռակից կաթողիկոսութեան բարձրանալը, որ Սալմաստեցի կոչուած է ծննդավայրէն առնելով, թէպէտ Կոստանդնուպոլսեցի ըսողներ ալ կան։ Իբր զի նա Պարսկաստանի Հայ գաղութին հետ մայրաքաղաք փոխադրուած էր տղայութեան առնն (§ 1539), և հոն մնծցած ու կրթուած, բաւական հմտութիւն ստացած, և լեհական Հայ գաղթականութեանց մէջ պտտած էր, և նոյն իսկ լատին լեզու ուսած կ'ըսուի (ՉԱՄ. Գ. 517)։ Ստեփանոս Կոստանդնուպոլիսէ էջմիածին երթալով, Գրիգորէ աքոռակից ընտրուեցաւ 1541'ին (ԴԱՎ. 337), թերևս այս թուականէն քիչ ալ առաջ։ Էջմիածինի չրջանակէն դուրս, Կոստանդնուպոլիսէ եկողի մը աքոռակցութեան կոչուիլը, մեր տեսութեամբ կրնայ իբր փաստ ծառայել այն կարծիքին զոր յայտնեցինք, թէ ինքն Գրիգոր ալ Կոստանդնուպոլիսէ էջմիածին գալով հայրապետութեան բարձրացած էր (§ 1545), և իրեն յաջորդած էր Ստեփանոս 1545'ին, Դավրիժեցիին ժամանակագրութեան համեմատ (ԴԱՎ. 117), որ ըստ այսմ չորս տարի աթոռակցութիւն վարած կ'ըլլայ։ Ստեփանոս կաթողիկոսութեան սկիզբը փութաց իրեն աքոռակից մը առնել, և նորէն էջմիածնի չրջանակէն դուրս մէկ մրն էր, որ այդ աստիճանին կոչուեցաւ, և է Մխիթար Սեբաստացին։ Այս կերպով պահ մը նոր տարր կը սկսի էջմիածնի մէջ գործել, և էջմիածնի վրայ ներգործել, և նոր չարժուձ և օգտակար գործունէութիւն մը կը սկսի այնտեղ, թէպէտ չուտով դադարելու սահմանուած, վաղաչրջապատցիներու նորէն կացութեան տիրանալուն հետևանքով։ Սալմաստեցիին չուտով աքոռակից մը ընտրելը, չենք կրնար անոր տարիքին և տակաւութեան վերագրել, զի 1514'ի գաղութին (§ 1539), տակաւին դեռահաս եղողը 1545'ին մեծ տարիք չէր կրնար ունենալ, այլ այդ որոչման մէջ կը նկատենք այն հետաւոր պիտուն զոր ունէր, Հայ գաղթականութեանց և օտար երկիրներու մէջ պտոյտի ելլելու. ուստի պէտք էր որ յարմար տեղակալ մը թողուր Մայրաթոռին մէջ։ Իսկ այդ հետաւոր նպատակին մէջ կը

տեսնենք ոչ միայն հայրապետական աթոռին նպաստներ ճարելու դիտումը, այլև անոր դիրքը բարձրացնելու և զարգացման սկզբնաւորութիւններ ընելու կամքը, ինչ որ արդիւնք էր իւր կանուխէն ստացած ուսումնական առաւելութենանց։ Նպատակին գործադրութիւնը նեղ անմիջական չեղաւ, չատ ալ չուշացաւ, որովհետեւ Ստեփանոսի ուղեւորութիւնը, սովորաբար կը դրուի չուրջ 1548 թուականին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԱՇԱՐՆԵՐ

1550. Ստեփանոսի նպատակը փութացնելու պատճառ տուին քնծայեցին քաղաքական պատահարներն ալ։ Շահ Թահմազի հզօր բերդը Ալխազ իշխան, հզօրը հետ գժտելով, անոր դէմ դրգռած էր Օսմանեանց սուլտան Սիւլէյմանը, և սա անոր վստահելով արշաւանք մը կազմեց Պարսից դէմ, բայց Թահմազ խուսափեց մեծ պատերազմի բռնուելէ, և Սիւլէյման համարձակ արշաւեց Արարատի և Վասպուրականի կողմերը ասիրելով և գերելով զբաղած գեղջ։ (ՉԱՓ. Ա. 11), և 20 ամսոյ քաղաքներ գրաւելէ ետքը, 1549 դեկտեմբեր 21'ին Կոստանդնուպոլիս դարձաւ (ԹՈՒ. 147)։ Ծիչդ այդ միջոցին է Ստեփանոսի էջմիածինէ հեռանալը, և համընթաց կը հանդիպի Սիւլէյմանի արշաւանքներուն։ Ստեփանոսի անձնանօթ չէին Օսմանեանց մեծութիւնն ու զօրութիւնը, և իրաւամբ կրնար վստահիլ անոնց վերջնական յաղողութենան, և այս տեսակէտով Կոստանդնուպոլիս կը դիմէր այնտեղ կարգադրելու համար Մայրաթոռին ապագայ կացութիւնը։ Բայց հապա՛ւ թէ Սիւլէյման հեռացած էր Պարսից սահմաններէն, որ Թահմազ առիթէն օգտուելցաւ Օսմանեանց սահմանները յարձակելու, և բաւին բուն նչանակութենամբ ասիրեաց, քանդեց ու կողոպտեց, Խնուս, Բասէն, Կարին, Դերջան, Կղզի, Բաբերդ, Երզնկա և Սպեր գաւառները (ՉԱՓ. Ա. 11)։ Այդ միջոցին Ստեփանոս արդէն Կոստանդնուպոլիս կը գտնուէր, և աջակցութենամբ Աստուածատուր պատրիարքի, որուն ազգեցիկ դիրք մը ձեռք ձգած էր Մաղաքիա Դերջանցիի ընծայած ձեռնտուութենան մէջ տեսանք (§ 1548), ձեռնարկեց Մայրաթոռի պաշտպանութենան պայմանները հոգալ, սակայն աւելի առջեւ չկրցաւ երթալ, որովհետեւ չուտով հասաւ Պարսից արշաւանքին գործը, և Արեւելքին նորէն Պարսիկներու ազդեցութեան ներքեւ մնալը։ Պարսից յարձակումը 1549'ի վերջերէն սկսելով չարունակեց մինչեւ 1552, ասոր համար թադէոս Սերաստացի վարդապետը զայն կը զուգակցէ այն տարուան, յորմէ հաղար ամ լցաւ ընդհանուր Հայոց տոմարին (ՉԱՄ. Գ. 514), ակնարկելով Յայտնութեան պատգամին, թէ չեւ հաղար ամն լրանայ զսատանայ (ՅՅՏ. Ի. 7), զի այսուհետ ալ ոչ ի գլըլոշ ասէ՝ ընդհեղաս ընդան վիշապն (ՀԱՁ. 593)։ Կսկծագին են Սերաստացիին խօսքերը. Ոչ ֆեղ ու ֆալ թողուցին, կ'ըսէ, զմեզնայն հրով այրեցին, զայլն ամն կոխեցին, զբարբայն ամն այրեցին, զմեզնայն սրով խաղեցին (ՀԱՁ. 594), վնաս և ենկեղեցի ի հիմանց խախտեալ էընդացին, քաղաք էին ու ասպատաձնընդ՝ զայն ամենն աւերել էեբեցին (ՀԱՁ. 595)։ Բնական էր որ այդ պատահարներ վերիվայր ընէին Սալմաստեցիին նպատակը, և զայն կասեցնէին Օսմանեան կայսրութեան մօտ դիմումները չարունակելէ։

ՍԱԼՄԱՍՏԵՑԻՒՆ Ի ՀՌՈՄ

1551. Կոստանդնուպոլսոյ մէջ օգտակար ձեռնարկ մը ընելէ յետաքրքիր՝ Ստեփանոս մտածեց Եւրոպա անցնիլ, և Եւրոպական քրիստոնեայ տէրութենանց հետ բանակցելով օգնութեան և նպաստի արդիւնքներ ձեռք բերել, և զարգացման միջոցներ ճարելով իւր աթոռը բարձրացնել։ Լատին եկեղեցին 1300'էն սկսած էր յոբելեան տարւոյ տօնախմբութիւնը մեծանշանդէս կատարել՝ որ տօբէ տօբէ ալ կը կոչուի։ Առջի տասնեակ հարիւրամեակի լրման ալիտ կատարուեր, բայց չուտով յիսնամեակի փոխուեցաւ, և 1475'ին քսանեւհինգամեակի վերածուեցաւ։ Վատիկանեան տաճարին մեծ դուռերէն մէկը հիւսուած կը մնար, և յոբելեան տարին հանդիսապէս կը բացուէր, և տարւոյն վերջը նորէն կը հիւսուէր։ Ստեփանոսի Կոստանդնուպոլիս գալուն յաջորդ տարին, 1550 թուականը յոբելեան տարի էր Հռոմի մէջ, և Պօղոս Գ պապ արտակարգ չքեղութիւն տալ որոշած էր, մեծ հանդէսներով և առատ ներողութենանց չնորհներով։

Նպատակն էր որ չատ բազմութիւն հասնի Հռոմ և Վատիկանեան նորաչէն տաճարին լրանալուն և զարդարուելուն մեծագանձ նուէրներ հաւաքուին։ Այդ համաչխարհային հաւմախմբութիւնը չատ յարմար էր Ստեփանոսի նպատակին, և որոշեց Հռոմէ սկսիլ իր եւրոպական շրջագայութիւնը։ Հռոմէադաւանութեան պաշտպանները, հազիւ թէ Հռոմի անունը կը յիշուի, պապին հպատակութենէ զատ բան չեն տեսներ այդ չարժուձմին մէջ, բայց տարբեր և ընդարձակագոյն էր Ստեփանոսի նպատակը։ Նա մտադիր էր եւրոպայի զանազան կողմերը շրջագայիլ և գլխաւոր պետութիւններուն հետ յարաբերութիւն հաստատել։ Այդ մասին չատ նշանակալից է Պարսից հպատակ Հայոց կողմէ Վենետիկի հանրապետութեան ուղղուած գրութիւնը, 1547 թուականով (ՎԵՆ. 326), ուր իբր իրենց ներկայացուցիչ կը նշանակեն Ստեփանոս պատրիարքը, և կը յայտարարեն թէ կը «պաեժ չեր ֆլօռն, համոզուած ըլլալով, որ ի գիծոնընենէ գերանց վենետց պէտ ոլոչ գեր ֆլոռնընեն և պատռոնընեն» (ՎԵՆ. 329)։ Որոշած են որ պապին ալ դիմում ըլլայ, վասնզի այն ատեն Հռոմ, ոչ միայն եւրոպիոյ գլխաւոր արքունիքներէն մին էր, այլեւ իր կրօնական կեդրոնով գերագոյն դիրք մը ստացած էր։ Միւս արքունիքներն ալ կրօնամոլ ձգտումներ ունէին, և իրենց դաւանութենէ դուրս եղողներուն համար, թէ ոչ հակառակ, գոնէ անտարբեր էին, և Հռոմի պապէն յանձնարարութիւն մը մեծ նշանակութիւն ունէր անոնց հաճելի ըլլալու։ Ստեփանոսի համար անհրաժեշտ էր պայման էր Հռոմէ երթալ, և յոբելեան տարւոյ պարագան աւելի եւս կը դիւրացնէր իր նպատակը, վասնզի կրնար Հռոմի մէջ ամէն կողմէ եկեղեցիներու հետ ծանօթութիւններ հաստատել,

ԵՐԹԱԼՈՒՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

1552. Ստեփանոսի Հռոմ երթալուն մասին ազգային յիշատակարաններ և ժամանակագիրներ բնաւ ակնարկ մը չունին, նոյնիսկ Հռոմի դիւաններէն ալ ոչ մի պաշտօնական գրութիւն յառաջ բերուած է, և կաթողիկոսի մը անձամբ Հռոմ գալուն ամենանշանաւոր պատահարին պարագաները պատմող կամ եղելութիւնը յիշատակող մը չկայ։ Մեր տեսութեամբ անհնար էր որ Հռոմի դիւաններ լուռ մնացած ըլլային այդպիսի կարեւոր պատահարի մը վրայ, ուստի կրնայինք այդ կրկին կէտերու, այսինքն ազգային յիշատակներուն և Հռոմի դիւաններուն լռութեանցը վրայ հիմնուելով, իբրեւ ճըշմարտուած եղելութիւն չընդունիլ Սալմաստեցիին Հռոմ երթալը, ինչպէս պալճեան ինքն ալ լռութեամբ կ'անցնի, և Սալմաստեցիին ուղեւորութիւնն իսկ չյիշեր (ԿԱՓ. 151), և Փափազեան ալ զանց կ'ընէ յիշել միաբանական և հաւակներպական պայմանները (ՓԱՓ. 775), Ալիշան ալ զանց կ'ընէ այս տեսակէտը (ՎԵՆ.330), զոր կը պանծացնէ Ջամչեան, թէպէտ այն չպարունակուիր Գուալտերիոս Արետացիէ իւր իսկ յառաջ բերած հատուածին մէջ, մանաւանդ թէ հակառակը կը քաղուի Գուալտերիոսի խօսքերէն, որ գրեր է թէ Ստեփանոս յօժարեցաւ ինչ ի բռնութենէ երթալ ի Հռոմ, այլ ոչ ի կամաւորէ ժամանակ խափան լինել ընդ նոսա (ՁԱՄ. Գ. 518)։ Մենք չենք ուզեր մեր քննադատութիւնը յառաջ մղել ուղեւորութիւնը ուրանալու չափ, և ըսել թէ Գուալտերիոս կամ եղելերուածքաղ մը պատմած է, և կամ խաբեբայի մը հանդիպած է, զի Ստեփանոսի Հռոմ երթալը կը հաստատուի, թէ վերոյիշեալ թուղթով, և թէ եպիսկոպոսին ձեռնադրութեան վկայագրով, որ գրուած է 1549 սեպտեմբեր 6'ին ի կոստանդնուպոլիս և ի մայրաքաղաքն Հռոմ (ՀԱՑ. 593), ուր պապին նկատմամբ գիծոն պետական ակնարկէն աւելի խօսք ալ չկայ (ՀԱՑ. 592)։ Բայց այս տեսակցութիւնն ալ ընդունելով, ուրիշ բան չենք տեսներ Սալմաստեցիին ընթացքին մէջ, բայց եթէ եւրոպական օգնութեանց հետապնդութիւն մը, և եւրոպական գարգացման միջոցներուն հետանալու փափաք մը։ Անոնց մէջ պէտք է առաջին կարգին դասել նորանոր տպագրական արուեստը, որով արդէն Հայ գիրքեր ալ երեւցած էին հրապարակի վրայ (§ 1527), բայց չարունակութիւնը ընդհատուած կը մնար (ԼԷՕ. 76)։ Սալմաստեցիին ուղղութեան հակառակ չէր՝ մտերմական և համակրական յարաբերութիւններ ալ հաստատել Պօղոս Գ'ի հետ, ինչպէս կը յիշէ

Ջամչեան (ՉԱՄ. Գ. 58), բայց աւելի անոր յաջորդին Ճուլիոս Գ'ի հետ, վասնզի Պօղոս չհասաւ յոբելեան տարւոյ հանդիսաւորութիւնները կատարել։ Հայոց կաթողիկոսը կրնար բերանացի և վարկապարազի յուսադրութիւններ ալ խոստանալ պապին, պարզապէս իւր ակնկալած օժանդակութիւնը ձեռք ձգելու համար, և միանգամայն հաստատակօրէն հոգեւոր հաղորդակցութիւն ալ ընել անոր հետ, վասնզի Հայ եկեղեցւոյ ներողամիտ հոգին իրեն չէր արգելեր այդպէս վարուիլ ամէն անոնց հետ, որ իրեն համամիտ են երեք նախնական սուրբ ժողովներու հիման վրայ։ Բայց այսչափը չհաստատեր բնաւ թէ Սալմաստեցին Հռոմ գացած ըլլայ պապական իշխանութեան հպատակելու և Հռոմէական եկեղեցւոյ հաստակելու, և հայադաւան եկեղեցին հռոմէադաւանի փոխարկելու համար։

ԷՋՄԻԱԾԻՆ ԴԱՐՆԱԼԸ

1553. Ստեփանոս նոյնիսկ 1550 յոբելեան տարին չելած Հռոմէ մեկնած կ'ըսուի, ուր անշուշտ հետաքրքրքութիւնը և բարեպաշտութիւնը յագեցնելու չրջագայութիւնները և այցելութիւնները լրացուց, և չիտակ անցաւ Գերմանիա, կարծես ե կայսեր տեսակցութեան, որ այդ միջոցին սաստիկ զբաղուած էր Լուտերի վարդապետութեանց երեսէն՝ Գերմանիոյ մէջ տիրող ներքին խռովութիւններով (§ 1543)։ Այստեղ ալ մանրամասն տեղեկութիւններ կը պակսին կաթողիկոսին և կայսեր միջեւ տեղի ունեցած յարաբերութեանց և յառաջ եկած արդիւնաւորութեանց մասին, և հաւանական եզրակացութիւնն է թէ կարեւոր արդիւնք մը ձեռք ձգուած չէ։ Գերմանիայէ կ'անցնի Լեհաստան բազմաթիւ Հայ գաղթականութեանց այցելելու, երբ կը թագաւորէր Ջիկմունդ կամ Սիգիսմոնդոս Բ Օգոստոս, նշանաւոր իւր աչխարհակալութիւններով և Հռոմի պապութեան դէմ ընդդիմութիւններով, և Գերմանական նորաղանդութեան և Սկիւնեանց աղանդին ցուցած պաշտպանութիւններով։ Այդ վերջին պարագան մանաւանդ նպաստաւոր էր Հայոց, որք Լեհաստանի մէջ տիրապետող հռոմէադաւան եկեղեցիէ անջատ դաւանութիւն ունէին։ Լեհաստանի յիշատակներ ալ մեզի յատուկ մանրամասնութիւններ չեն տար Ստեփանոսի գործունէութենէն, որ կարծես թէ անցած տեղերուն մէջ բնաւ հետք չէ թողուցած, անցած ըլլալուն վրայ կասկած յարուցանելու չափ։ Սոյն այս 1551 տարին էր, որ Մոլտաւիոյ մէջ, որ է Պուղտան երկիրը, Հայերու դէմ կրօնական հալածանք հնչակեց Ստեփան իշխանը, յունական որթոդոքսութեան կամ քաղկեդոնիկ դրութեան ուղղութեամբ։ Մոլտաւիա Սալմաստեցիի ուղեգիծին վրայ կը գտնուէր, բայց չենք ստոյգ թէ մասնակցութիւն ուզեց ունենալ, կամ աղաչեցութիւն կրցաւ ընել իշխանին վրայ, թէպէտեւ հալածանքը ոչ երկար տեւեց և ոչ ալ արդիւնք մը ունեցաւ (ՉԱՄ. Գ. 519)։ Սալմաստեցին իւր ուղեւորութիւնը չարունակեց ցամաքի ճանապով, և կաֆա և ուրիշ հայաբնակ քաղաքներ հանդիպելով էջմիածին դարձաւ 1551 տարւոյ մէջ։ Մայրաթոռոյ դիւաններն ալ մեզի տեղեկութիւն չեն հայթայթեր թէ ինչ նիւթական կամ բարոյական արդիւնքներ կրցաւ քաղել Ստեփանոս իւր ևրոպական չրջագայութենէն, և ինչով կրցաւ օգտուիլ էջմիածինը։ Ներեւանցին ալ ոչ մի յիշատակ չէ գտած այս մասին, և Սալմաստեցիին ուղեւորութեան խօսքն ալ չըներ (ՉԱՄ. 20)։ Պարագաները մտածելով կրնանք հետեւցնել, թէ տպագրական արուեստին քաջալերութեան համար Ստեփանոսի ախոռակից Միքայէլի ձեռնարկը՝ իւր առաջին չարժումը ստացած է Ստեփանոսի բերած տեղեկութիւններով, զի թէ Արեւելքէ Հռոմ և թէ Իտալիայէ Գերմանիա անցած ատեն վճռական հանդիպած է, որ այն ատեն ևրոպական լուսաւորութեան կեդրոնն էր, և ուր 150 տպարաններ կը գործէին (ԼԷՕ. 16), և ուսկից ելած էին առաջին Հայ տպագրութիւնները (§ 1527)։ Ստեփանոսէ կը սկսի էջմիածինի և Հռոմի մէջ յարաբերութեանց նոր չարք մը, որուն հռոմէական մերձեցուցման գոյն կ'ուզեն տալ ոմանք, և գոյն իրր նպատակ կը կարծեցնեն, մինչ լոկ միջոց մըն էր այն՝ ևրոպական զարգացման մերձենալու եւանդէն յառաջ եկած, ինչպէս յառաջիկայ կը քաղուի վերեւ յիշուած ազգայնոց գրութիւնէն (§ 1551)։

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՏԱՇԱՐՆԵՐ

1554. *Ստեփանոս կաթողիկոսի իբր հռոմէադաւ բացակայութեան միջոցին, Մայր աթոռոյ գործերը վարողն էր Միքայէլ Ա. Սեբաստացի, աթոռակից կաթողիկոսը* (§ 1549)։ *Սակայն պէտք չէ բնաւ այնպէս ենթադրել թէ Ստեփանոս իբր հրաժարեալ հեռացած ըլլայ, և եկած առեն Միքայէլ ը՚՚՚չէն պո՚՚՚ի՚՚՚ Նոքին և ընդհակառակն անոր դարձուցած ըլլայ* (ՁԱՄ. Դ. 518)։ *Ստեփանոս մեկնեցաւ գահակալի դիրքը վրան պահելով, և Միքայէլ իբր տեղակալ գործեց, արդէն ալ աթոռակիցի դիրքը կը բաւէր որ կարենար կաթողիկոսական գործերը լիապէս լրացնել։ Անծանօթ կը մնայ եւս մեզի թէ ինչ գործունէութիւն ունեցաւ Միքայէլ իբր տեղակալ մնացած տարիները, թէպետեւ չատ բան սպասելու ալ չենք քաջալերեր ժամանակին արկածալիր պատահարները՝ պարսկական արշաւանքին պատճառով, ո՚՚՚ր՚՚՚նք թէպէտ ուղղակի Օսմանեան և ոչ Պարսկական գաւառներու վրայ կը ծանրանային* (§ 1550), *սակայն անհնար էր որ Էջմիածին ալ փորձանքներուն ազդեցութիւնը չկրէր։ Մանաւանդ որ Շահ Թահմազի Օսմանեան գաւառներուն պատճառած աղէտները, անշուշտ իրենց փոխադարձը պիտի ունենային սուլտան Սիւլէյմանի կողմէ, որ չէր ներեր երբեք Պարսիկներուն՝ անոնց գործած աւերածը։ Հազիւ թէ Սիւլէյման պահ մը դադար գտաւ Հունգարացւոց և Աւստրիացւոց դէմ վարած պատերազմներէն, նորէն Ասիակողմ դարձուց իր զէնքը, և 1554 ապրիլին խաղացոյց իր բանակը, և աւերից աւարից, ու գերեց գերփրեց Նախիջեւան, Երեւան և Արցախ գաւառները* (ԺՈՒ. 147)։ *Էջմիածին այս չրջանակին մէջն էր, և Ստեփանոս ու Միքայէլ ծանրապէս զգային արշաւանքին հետեւանքները։ Բարեբախտաբար Թահմազ չուտով տեղի տուաւ, և պատուաւոր կերպով հաչտութիւն խնդրեց, սեպտեմբեր 26'ին զինադադար եղաւ, և 1555 մայիս 29'ին հաչտութիւն կնքուեցաւ* (ԺՈՒ. 147)։ *Եւ բարեկամութիւնը տեւական ձեւ առաւ, և յոյժ մտերմական դրութիւններ փոխանակուեցան 1556'ին Սիւլէյմանիէ մնծ մզկիթին նաւակատեաց առթիւ, որ կատարուեցաւ օգոստոս 26'ին* (ԺՈՒ. 148)։ *Հարկաւ վերջին արշաւանքէն կրած վնասները դարմանելու հարկն էր, որ Ստեփանոսն ու Միքայէլը ստիպեց, երկու եւս աթոռակիցներ աւելցնել 1557'ին, որոնք եղան տէր Բարսեղ և տէր Գրիգոր, և չորսին ալ անունը միանգամայն կու տայ Դավրիժեցին* (ԴԱՎ. 338)։ *Վերջին երկուքը վաղարշապատեցի տեղական ոյժեր կ՚երեւան, և այդ մակդիրով կը կոչենք երկուքն ալ։ Բարսեղը համանուններուն մէջ Գ կը հաչուենք, զի Բարսեղ Բ Անեցին, Ապիրատի դէմ Արեւելեայց ընտրած կաթողիկոսը, որոշակի մերժուած չլինելով և առողջ սկզբունքին պաչտպան կանգնած ըլլալով, աւելի քան հակաթոռ, իբր աթոռակից նկատեցինք* (§ 1049)։ *Իսկ Գրիգորը՝ ԺԲ կ՚ըլլայ համանուններու մէջ։ Զորս կաթողիկոսներ միանգամայն ունենալու որոշումը, զոր վնասներու պահանջած դարմանին վերագրեցինք, հնար է ներքին խլրտուներ լռեցնելու ալ միջոց նկատել, զի ժամանակ մըն էր որ վաղարչապատեցի խմբակը զինքն գործերէ հեռու կը գտնէր, և ժամանակին չփոթութիւններէն կրնար օգտուիլ Սալմաստեցին և Սեբաստացիին դէմ կռուելու։ Ալիչան այդ երկուքէն առաջ Արիստակէս Դ՚ը կը յիչէ 1555'է մինչեւ 1564 տարիներու համար* (ԱՐՐ. 231), *սակայն որոշ ազբիւր մը չունի, զի «Նոքա է հայրապետունեան Աբէթալէի յիչատակութիւնը* (ԱՐՐ. 230), *իդեպ է իմանալ Արիստակէս Գ՚ի վրայ* (§ 1518), *քանի որ ուրիչ ոչ մի տեղ նոր Արիստակէսի մը յիչուելուն հանդիպած չենք, և այս պատճառով բոլորովին զանց կ՚ընենք այդ անունը։ Դավրիժեցին ալ կ՚անգիտանայ անոր գոյութիւնը, ապա թէ ոչ հինգ կաթողիկոսներ միանգամայն յիչած կ՚ըլլար, ուր չորս միայն կը յիչատակէ* (ԴԱՎ. 338)։

ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆԸ

1555. *Որոշակի գրուած չենք գտներ, թէ որչափ ևս ապրեցաւ Ստեփանոս Սալմաստեցին նոր աթոռակիցներ աւելցնելէնետքը։ Դավրիժեցին 1467'ին կաթողիկոսներուն գլուխ կ՚անցընէ Միքայէլ Սեբաստացին* (ԴԱՎ.

338), որ կրնար առնուիլ իբրեւ Ստեփանոսի մահուան թուական։ Ալիշան տեղ մը Ստեփանոսը 1551 կամ 1552'ին վախճանած կ'ենթադրէ էջմիածինի մէջ (ԱՐՐ.231), մինչ Ստեփանոս հազիւ թէ այն տարին դարձած ըլլար իւր աթոռը. իսկ այլուր կենդանի կ'ենթադրէ մինչեւ 1564, կաֆա գրուած յիշատակարանի մը վրայ հիմնուելով (ԱՐՐ. 230)։ Կաւմնիցի յիշատակարաններուն մէջ ալ 1566 սեպտեմբեր 1'ին կը գրուի է կ՚ուղէկոսընեան փեռան փէր Սթեփանոյէ (ԲԺՇ. 143), որ յարմար կուգայ Դավրիժեցիէն քաղուած թուականին (ԴԱՎ. 335)։ Այս թուականներուն դէմ իբր դիտողութիւն կը նկատուի Միքայէլ Սերաստացիի 1562'ին, իբրեւ բուն կաթողիկոս և իւր կոնդակով Արքար Եւդոկիացին Հռոմ ղրկելու ձեռնարկը, ուսկից չատեր կը հետեւցնեն Միքայէլի բուն գահակալ ըլլալը, և անկէ ալ Ստեփանոսի մեռած ըլլալը։ Այդ է սովորաբար ընդունուած դիրքիւնը, որով Ջամչեան Ստեփանոսը մեռած կը դնէ 1555 թուականին, այսինքն էքբե անցին սախաժամանակ, Հռոմէ դառնալէ ետքը (ՋԱՄ. Գ. 519), իսկ սովորական ցուցակը 1547'ին կը վերջացնէ անոր կաթողիկոսութիւնը (ԹԱՄ. 636) որ Հռոմ երթալէն ալ առաջ կ'իյնայ։ Սակայն կաֆայի և կաւմնիցի յիշատակարանները յստակ են, և Ստեփանոսը կենդանի և կաթողիկոս կը ճանչնան մինչեւ 1566։ Եւ ոչ ալ կրնանք Ստեփանոսը այդ թուականներուն հրաժարուած և գործէ քաշուած ըսել, վասնզի կաֆայի յիշատակագիրը Ստեփանոսէ զատ կը յիշէ և ըշլ կ՚ուղէկոան, ըզոց ըանաանան ալ էէսցոցոէ, կ'ըսէ, և ալ էէեցոէ (ԱՐՐ. 230), և դիտնք թէ այդ թուականին Ստեփանոսի հետ կաթողիկոսակից կը գտնուէին Միքայէլ Ա և Բարսեղ Գ և Գրիգոր ԺԲ։ Մենք պէտք կը զգանք այդ վկայութիւններուն այժ տալ, և համաձայն Դավրիժեցիին ժամանակագրութեան 1567'էն առաջ չանցընել Միքայէլի բուն գահակալութիւնը (ԴԱՎ. 338)։ Այդ դրութեամբ պէտք կ'ըլլայ ըսել, թէ Միքայէլ կամ ներքին գժտութիւններէ և արտաքին նեղութիւններէ ստիպուած, և կամ նոր ձեռնարկներ յաջողցնելու դիտմամբ, պահ մը թողուց էջմիածինի բնակութիւնը, և իւր ծննդավայրը Սերաստիա քաշուեցաւ, որ Գետադարձի ալ հայրապետանոցը եղած էր (§ 857), բայց միշտ պահելով և պաշտպանելով իւր աստիճանը և գործունէութիւնը։ Միւս կողմէ Ստեփանոս ալ տարիքը առած և տկարացած ըլլալով, պարտաւորուեցաւ գործերը թողուլ նոր վաղարշապատեցի աթոռակիցներուն ձեռքը, որոց երիցագոյնն էր Բարսեղ, և այդ տեսակէտով 1563'ին գրող յիշատակագիր մը կըրցաւ պարզապէս գրել է հայբապեռոընեան փեռան Բարսեղէ (ԱՐՐ. 230)։ Սակայն մեր տեսութեամբ Միքայէլ Սերաստիոյ մէջ և Բարսեղ էջմիածինի մէջ ազատօրէն գործելով ալ՝ բուն գահակալ չէին կրնար նկատուիլ, ցորչափ կենդանի էր Ստեփանոս և իւր իրաւունքը կը պահէր կանոնաւորապէս։ Այդ պատճառով Ստեփանոսի անունին ներքեւ պիտի չարունակենք պատմել մինչեւ 1567 կատարուած գործերը, և Միքայէլի գործունէութեան մէկ մասը։

1556. Երեւանեցին 1557'ին դնելով Միքայէլի կաթողիկոսութիւնը, որ Դավրիժեցիէն վաղարշապատեցի աթոռակիցներուն համար տրուած թուականն է (ԴԱՎ. 338), կը ներկայէ գայն իբրեւ զօրաւոր կամքի տէր անձ, որ կրցաւ Աղուանից և Աղթամարի կաթողիկոսներուն յաւակնութիւնները զսպել, և նախախէ, կ'ըսէ, ծիլեաց չիշէ Աղռաանէց և Աղիճամրաս կոռողիկոսաց (ՋԱՄ. 20)։ Որուշ չէ նախախէս բառին իմաստը, թէ երեւանեցիին նշանակած 1557'էն առաջ կատարուած գործի մը վրայ պիտի իմանանք, զի Միքայէլ 1545'է իվեր աթոռակից էր (§ 1549), թէ ոչ 1567'ին բուն գահակալ ըլլալէն ետքը կատարուած առաջին գործ պիտի հասկանանք։ Միքայէլի վերագրուած գործը էջմիածինի աթոռին անմիջական իրաւասութեանց սահմաններուն պաշտպանութիւնն է, զոր Երեւանեցին քաղած է Մայրաթոռի մէջ պահուած գրութիւններէ և աւանդական յիշատակներէ։ Աղուանից կաթողիկոսը ուզած է իրեն սահմաններուն կցել Նախիջեւան, Գեղարքունի, Ղափան, Աղստեւ և Լօռի գաւառները, `իսկ Աղթամար ալ ձեռնարկած է իւրացնել Խոյ, Սալ-

մաստ, Վան, Ամիդ, Արճէշ, Խլաթ, Մուշ և Բաղէշ գաւառները (ՋԱՄ·20)։ Մինչև յետ բուռն կերպով ընդդիմացած է, և Պարսից իշխանականութեան դիմելով զնոս ամ, այսինքն զօրաւոր հրովարտակ ստացած է Շահ Թահմազէն, թէ Գանձակ, Պարտաւ, Աղստև, Լօռի, Ջակամ, Նախիջևան, Գեղարքունի, Ղափան, Խոյ և Սալմաստ, էջք-ձն վճռ+ ան (ՋԱՄ·78)։ Հրովարտակին թուականը չյիշեր, և մեզ հնար չէ ստուգել, միայն թէ՝ որ ի ծՂ ԻՋ ընօջն ձրամ նոպատ, եհան զնոս ամ բացատրութիւնը (ՋԱՄ·20), 1557'ին կամ քիչ հտքը կը ցուցնէ հրովարտակին ստացութիւնը, և պարագաները կը համեմատին Սիւէյմանի արշաւանքին ժամանակներուն (§ 1554)։ Երկու սահմանակից տէրութեանց մէջ եղած արշաւանքները և դրաւումները՝ առիթ պիտի ընծայէին եկեղեցական իշխանութեանց ալ սահմաններուն չփոթուելուն, և անշուշտ այդ եղած է Աղուանից և Աղթամարի կաթողիկոսներուն սահմանին ընդարձակելու համարձակութիւն տուող պարագան։ Աղուանից աթոռը իր ինչ հպատակ էր Հայոց գլխաւոր աթոռին. սակայն տիրող չփոթութեանց պատճառով, Հայոց հայրապետութեան երկար ատեն պանդխտութեան մէջ գտնուելուն, և էջմիածին դառնալէն ետքը կերպ կերպ դժուարութեանց ենթարկուելուն երեսէն՝ ամէն յարաբերութիւններ խանգարուած էին, էնոն որ չէ ղբմանէ, որ էնիէ ձէն այոցէ, ոզ զԱղուանից զոս ճաձէս ընէ ոզէս էցեն (ՋԱՄ·78)։ Որոշակի չենք կրնար ճշդել թէ Աղուանից կաթողիկոսներէն որն էր, որուն հետ գործ ունեցաւ Միքայէլ. իսկ Աղթամարի կաթողիկոսներէն ոսնձգութիւն ընողը եղած կ'ըլլայ Գրիգոր Սէֆէխնեան, փոխ մականուանեալ՝ երիտասարդութեանը պատճառով (00 ԻՋ·1197), որ 1542'էն 1610, 68 տարի պաշտօն վարած է յաջորդելով Գրիգորիս Աղթամարցի երդարանին, որ այս կոդմէն նշանաւոր եղած է Աղթամարի աթոռին վրայ (ԱՂԹ·7), ինչպէս Յովհաննէս Թլկուրանցին Սոյ աթոռին վրայ (§ 1525)։ Ցիշենք անգամ մը ևս թէ որչափ ալ Միքայէլ մեծ գործունէութիւն ունեցած ըլլայ, հարկաւ անձամբ Պարսից արքունիքն ալ դեգերելով, սակայն իրը բուն գահակալ գործած չէ, դի կենդանի էր և իր աթոռին վրայ կը գտնուէր Սալմաստեցին։

1557· Միքայէլի անունին պատիւ բնող ձեռնարկներէն մեծագոյնը տպագրութեան գործին զարկ տալու համար ունեցած մասնակցութիւնն է։ Միքայէլ աթոռակից կաթողիկոս 1562'ին Սերաստիա կը գտնուէր, բայց թէ երբ եկած էր, դժուար է ճշդել, ինչպէս նաև գալուն՝ չարժուելիքը որոշել, զոր կասկածով միայն նշանակեցինք (§ 1555)։ Բայց անհաւանական չէ ըսել, թէ ուղղակի ազգային ձեռնարկներու համար եկած ըլլայ, նոյն իսկ Սալմաստեցիին հետ խորհրդակցութեամբ (§ 1551), և այնտեղէ ուելի յաջող միջոցներ գտնելու ակնկալութեամբ։ Միքայէլ յարաբերութեան կը մտնէ Աբգար Եւդոկիացի կոչուած անձին հետ, որդի Ամիր պէկի, սովորաբար Սաֆար կամ Սէֆէր կոչուած (ՅԻՇ·256), իբրև յարմարագոյն անձ այդ նպատակին, թէ իր միջոցներով և թէ յաջողակ ձիրքերով։ Աբգարի որդին Սուլթան կամ Սուլթանչահ, իր հօրը վրայ տեղեկութիւն տալ ուզելով կը հաստատէ թէ նա թագաւորազուն էր Սենեքերիմ Արծրունիի ցեղէն (§ 824), և ճիւղագրութիւն կազմելու համար Աբգարէ կ'իջնէ Տրդատ, անկէ Գագիկ Կարսեցին, անկէ Սենեքերիմ Սեբաստացին, և անկէ իր հօր Աբգարի, անշուշտ համարելով պոլ զնոսոնս ի ըս պոյ է յԱբբաթայ գնոչ իր հայրը (ՅԻՇ·256)։ Իսկ այս ճիւղագրութիւնը հաստատած կ'ըլլայ Միքայէլ՝ Սեբաստիոյ մէջ առնելով ծողով քաղաք եպիսկոպոսաց և երէցանց և վարդապետաց և էմոսոնոց հանճաքոց, և ամէնէն կնքուած վկայագիր մը կազմելով։ Վկայողներուն մէջէն յանուանէ կը յիշուին, Երուսաղէմի պատրիարք Անդրէասը, վանահայր եպիսկոպոսներ՝ Բարսեղ Ս. Հռիփսիմէի, Գրիգորիս Ս. Անանիայ, Աստուածատուր Ս. Գրի վանքի, Պետրոս Ս. Մարտիրոսի, ու Թադէոս Ս. Առաքելոց, թեմական եպիսկոպոսներ՝ Յովսէփ Պիծաւի, Անդրէաս Ամասիոյ, Սրապիոն Բալուայ ու Յովհաննէս Անկիւրիոյ, միաբան եպիսկոպոս-

ներ՝ Սամուէլ Երուսաղէմէ, Միխթար Էջմիածինէ, Յակատուր ու Գրիգոր Վարդապետներ՝ Յովհաննէս Ս. Յովհաննու և Գրիգոր, քահանաներ՝ Դաւիթ Ս. Նշանի ու Սահակ աւագերէց, երեսփոխան Յովհաննէս Ս. Մեհնայի, և մանկտաւագներ՝ Գրիգոր ու Տոլվաթ։ Նկատելով որ այդ անուններ խիստ անկարգ կերպով չարուած են բնագիրին մէջ (ՑԻՇ· 256), և թէ Անդրէաս պատրիարք Սերաստիա չէ գացած, և 1560'ին արդէն Երուսաղէմ վերադարձած է (§ 1546), ամենայն հաւանականութեամբ կը հետեւցնենք թէ Միքայէլ կաթողիկոսի նախագահութեամբ օրինաւոր ժողով կազմուած չէ Սերաստիոյ մէջ, այլ միայն կաթողիկոսի տուած վկայագիրին ներքեւ Աբգար հետզհետէ նոր վկաներ աւելցուցած և կնիքներ ժողված է։ Իսկ իւր հօր և իւր քաղաքական սերունդը յաւակնոտ թեթեւամտութիւն մը կ'երեւի, կամ թէ ներոպացւոց աչքին փոշի փչելու միջոց մը, ինչպէս մեր օրերն ալ տեսանք 1878'ին Ռուսիա ղրկուած պատգամաւոր եպիսկոպոսին վրայ։ Կ'երեւի թէ Աբգար Ամիրպէկեան ալ այդ տեսակ դիտումներ ունեցած է։

1558· Միքայէլ 1562 Մայիս 20 թուականով երկու յանձնարարականներ կու տայ Աբգարին՝ Հռոմի պապին ուղղուած, որ էր Պիոս Դ, և իրր ընծայ կը յանձնէ միւռոն, խոչ ոսկի, մանանի օրհնակ, Ս. Թէոդորոսի մասունք, և հայաբնակ տեղերու և վանքերու ցուցակ մը, և Աբգար կը մեկնի, իւր որդւոյն Սուլթանի (ԿԱՓ· 152), և Աղէքսանդր քահանայի ընկերակցութեամբ (ԿԱՓ· 157), որ Աբգարի ֆանոյ կը կոչուի (ԿԱՓ· 152), անոր ձեռնասունը ըլլալուն։ Իրրեւ փաստ և իրրեւ հիմ յարաբերութեանց կը յանձնէ Դաշանց Թուղթէն օրինակ մը, խնդրելով որ անոր պարունակութիւնը վերահաստատուի։ Աբգար պարտաւոր էր կիպրոսի և վենետիկի ճանապով Հռոմ հասնիլ։ Վենետիկ ոչ միայն քաղաքական, այլեւ տպագրական ձեռնարկին կեդրոնը պիտի ըլլար իւր միջոցներով, իսկ Հռոմ իւր հաւանութեամբ պիտի արտօնէր վենետիկցիները և բոլոր Լատինները այդ Արեւելցիներուն օգնելու,

ԱԲԳԱՐ Ի ՀՌՈՄ

հաստատելով թէ ճշմարիտ և ընդունելի քրիստոնեաներ են։ Աբգարի ճանապորդութեան պարագաները չեն յիշուած, և անծանօթ մնացած են Միքայէլի ալ, որ Սեբաստիայէ Էջմիածին դառնալէ ետքը 1563 ապրիլ 1 հինգշաբթի օր, նոր նամակ մը կը գրէ պապին, իրեն պատուիրակներուն վրայ լուր փնտռելով։ Այդ առթիւ Աբգարը ճանչցնելու համար կը յայտնէ, թէ երկու ձեռքով յաջողակ և ձախը իրրեւ աջ գործածող մէկն է, և կը յաւելու թէ ալ դիտն է Տաճկաց, այլ առաքելական եռանդ ընդդէմ երեսփոխիկ վանականաց, նորահնար նշանագիրներ գործածած է, զոր Նա դիտն ճանաչէ (ԿԱՓ· 153)։ Անշուշտ Աբգարի վենետիկի մէջ ուշանալը, վենետիկէ և Էջմիածին լուր հասցնելու դժուարութիւնը, պատճառ եղած են Միքայէլի և Մայրաթոռին իրենց պատուիրակէն տեղեկութիւն չունենալուն։ Գուցէ Աբգար խորհած է առանց Հռոմ երթալու ալ, վենետիկի մէջ իւր ձեռնարկը յաջողցնել, սակայն վերջիվերջոյ ստիպուած է երթալ, Լատին հաւատացեալներուն մօտ ընդունելութիւն գտնելու համար։

ԵՐԹԱԼՈՒԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

1559· Այստեղ ալ հռոմէադաւանները ամէն ճիգ կը թափեն հաստատելու համար թէ Աբգարի պատուիրակութեան բուն նպատակը Հռոմի հետ կրօնական միաբանութիւնն ու պապական իշխանութեան հպատակութիւնն էր, ինչպէս դիտել տուած էինք Սալմաստնցիին ուղեւորութեան առթիւ ալ (§ 1551)։ Իսկ մենք պիտի յայտարարենք, թէ Հայեր երբեք այդ միաբանութիւնը իրենց նպատակ չնկատեցին, այլ Արեւմուտքի զօրաւորութենէն և պարզացումէն հրապուրուելով, այն կողմէ օժանդակութիւն գտնելու յոյսը փայփայեցին, և զայն ստանալու համար հպատակութեան կամ միաբանութեան արտաքին յայտարարութիւններ ընելէ չի քաշուեցան, գործնականապէս Արեւմտեանները հաճեցնելու և չանելու, և ներքնապէս անոնք ալ կատարեալ քրիստոնեայ և հինեական կեանքու մէջ իրենց համամիտ բերնան ըլլալնուն համար։ Միքայէլի երկրորդ նամակին մէջ յայտնի կերպով կը տեսնուի այդ ոճը, միաբանութիւնը և հպա-

տակութիւնը կը յիշուի միայն, չէ յե֊ պե֊ց֊֊ է էբ֊֊ընէ ասդ (ԿԱՔ֊ 152)։ Աբգարի որդին ալ իրենց յանձնուած պաշտօնին նպատակը բացատրած առեն կ'ըսէ, թէ այն եղած է. 1. վաւաչին Դաչին, այսինքն Դաչանց Թուղքը, և պաւաչին երդնահեն նորոգել, ուր առելի Հայոց աթոռին իրաւունքները կը բացատրուին։ 2. Իմանալ զիր Հռոմայեցւոց, ըն սրպէս կան ընդ Հայս։ 3. Լատիններուն յօժարեցնել է էրկ֊֊ընէն վերադարձ Հայոց։ 4. Միջնորդել, որպէսզի դիւրութիւն ընծայուի հայրապետացն Ձեր, ճանապարհ հարթել է Հռոմ (ՁԻՇ֊ 258)։ Ինչպէս կը տեսնուի եկեղեցական միութիւնը նպատակ չէ, այլ Խաչակիրներու ժամանակին կազմուած զաղափարն է, որ տակաւին կը տիրէ, թէ Արեւմուտք պարերու յորդորներուն զօրութեամբ պիտի զինուի, և Արեւելք պիտի ազատուի Իսլամական տիրապետութենէ, որ բացառապէս կը ծանրանար Հայերուն վրայ։ Բաց աստի Արեւմուտք պիտի ընձեռէր նաեւ զարգացման միջոցները, որոնց կարդին առաջին և գլխաւոր և կատարելապէս հիանալի կը նկատուէր տպագրութեան նորահնար արուեստը, ինչչափ ալ Աբգարի որդին առաջնակարգ տեղ չտայ այդ նպատակին։ Աբգար իւր ընկերներով Հռոմ եկած պիտի ըլլայ 1563'ին վերջերը։ Առաջին գործը եղած է անշուշտ Պիոս Դ պապին դիմել պէտք եղած յանձարարականները ստանալու, ներկայացնելով Միքայէլի առաջին գիրերը, որոնք տակաւին մեզի ծանօթ չեն, բայց այդ գիրերը չեն բաւած կատարեալ համոզում գոյացնելու համար, և Աբգարէ պահանջուած է Հայոց եկեղեցւոյն դաւանութիւնը գրով ներկայացնել։ Արդ պէտք է դիտել, որ եթէ Միքայէլի նպատակը դաւանական ըլլար, այդպիսի գիր մը ինքն կազմած և տուած պիտի ըլլար, և դարձեալ թէ այդպիսի միաբանութեան համար քանի մը եպիսկոպոսներու և վարդապետներու, և ոչ թէ պարզ աչխարհականի մը պիտի տրուէր պատուիրակութեան պաշտօնը։ Աբգար պարտաւոր էր համակերպիլ պահանջուած պայմանին, որպէսզի իւր նպատակին հասնի, և այդպիսի գրուած մը կը գտնուի այսօր, 1565 նոյեմբեր 10 յաւուր ըրէ֊ըն֊֊բ֊֊ (ԿԱՔ֊ 158), զոր մենք հարկ կը զգանք 1563 կարդալ, ձեռագիրին կամ տպագիրին մէջ սխալմունք ենթադրելով։ Իրր զի 1563'ին և ոչ 1565'ին չորեքշաբթիի կը հանդիպի նոյեմբեր 10 ամսաթիւը, և զի Պիոս Դ, որուն անունը կը յիշուի, արդէն վախճանած էր 1565 նոյեմբեր 10'ին, և և զի մինչեւ 1565'ին վերջը չէր կրնար ուշանալ դաւանութիւն ներկայելու պայմանը, քանի որ նոյն տարին, արդէն չատ գործեր կատարուած էին Հռոմի մէջ ինպատ Հայոց։ Ըստ այսմ ուրիչ տեղ 1564 նոյեմբեր 8 թուական դրուած ըլլալը (ՁԱՄ֊ Գ֊ 524), կամայական ուղղութիւն մը կը տեսնուի։ Հայերու նպաստաւոր գործերու մէջ յիշենք, Հռոմ գտնուող Հայերու համար պէտք ը հիւանդոց մը հաստատութիւը (ՁԻՇ֊ 256), կամ լաւ եւս՝ նորոգութիւը (06 ԱՄՍ֊ 322), Պիոս Դ պապէն հրաման ելլալը, հայերէն նոր էրբ չընելու համար, և գիրերուն հանդիսապէս պապին ներկայացուիլը (ՁԻՇ֊ 260), և այդ գիրերով 1565 տարւոյ համար խոնարհաբար պատրաստուած ըլլալը, նոյնիսկ Ր քանալի էրբն կամ տարեգիրն ալ յիշելով (ՁԻՇ֊ 257), և վերջապէս վենետիկ փոխադրուելով նոյն 1565 տարին Սաղմոս մը տպագրելը (ԼՀՕ֊ 96)։ Այս ամէն բաղդատութիւնները կը ստիպեն հաստատել թէ Աբգարի դաւանական գիրը ոչ 1565 և ոչ 1564'ին, այլ 1563 նոյեմբեր 10'ին գրուած պէտք է ըլլայ։

ԱԲԳԱՐԻ ԴԱՒԱՆԱԳԻՐԸ

1560. Աբգարի տուած դաւանական գրուածոյն վերջը եղած յայտարարութիւնը, որով նա կ'ընդունի էրբէ֊վերջոյ ըստ֊ պ֊֊բ֊֊, և ըստ էահանոյակս Հռոմայ էլսի և հովիւ ամենայն աշխարհի և ձակալ (ԿԱՔ֊ 157), հռոմէադաւաններու գրիչին ներքեւ ապացուցական փաստ մը կը դառնայ, առանց մտաբերելու որ Աբգար դպիրի և Աղեքսանդր քահանայի մը կազմած գրութիւնը բնաւ հեղինակութիւն չկրնար նկատուիլ եկեղեցւոյ մը պաշտօնական դաւանութիւնը հաստատելու, մինչ իրենք ալ պարզապէս է պէտ ընդէցենէլոյ գրած ըլլալնին կը յայտնեն (ԿԱՔ. 157)։ Միւս կողմէն այդ գրութեան մէջ, որոշակի ըսուած է, թէ էրբէ֊ դ֊ան֊հա֊

գաս ՝անէմ, այլեւս է չնչէ՞յ, վկոսանդէնոպոլսէ Ե վիճեսոյ (կԱՔ. 154), որով բացյարձակապէս դուրս կը թողուի Ղազկեդոնի ժողովը քազկեդոնիկ վարդապետութեան հետ, և զարմանալի է որ Հռոմ կրցած է լռութեամբ ընդունիլ այդ կէտը։ Միևնոյն գրուածին մէջ կը յայտարարուի, թէ է պոպոթէն վեմոբեալ Ե վլեսր ու օրինենմ է կէր (կԱՔ. 154), և թէ ու Ե՛մ դեքան է ծոնէ Սիընպեան Տեսան, և թէ հաղորդիմ երկուսոմբ պեսկո, որով Հայ ծէսին սեփական կէտերը կը պաշտպանէն Հռոմի դէմ (կԱՔ. 155), այնպէս որ Պալճեան ալ կը փափաքի ենթադրել, որ Աբգար համոզուելով հռոմէական վարդապետութենէն, նոյնը ըսի ամենայն մասին ընդունած Ե ընդբերած ըլլայ (կԱՔ. 158), այսինքն իւր դաւանագիրը ուղղած ըլլայ։ Բայց ամէն առթի մէջ Աբգարի դաւանագիրը երբեք իբր փաստ ծառայող գրուած մը չէ, նախ զի գրողը բնաւ հեղինակութիւն չունի, և երկրորդ՝ որ պարունակութիւնը ամբողջովին հռոմէադաւան չէ, այլ միայն պատեհութեան համեմատ, և պապը հաճեցնելու համար գիր մըն է, բարոյական ճնշման և օտար թելադրութեան ներքեւ պատրաստուած։ Իսկ Պիոս Դ գործնական և գործունեայ մարդ, գոհ եղած է պապական իշխանութեան մասին հատուած մը տեսնելով, մնացածներուն վրայ աչք գոցել, որպէսզի ներքին Արեւելքի մէջ իւր ազդեցութեան դուռ մը բացուի, ուսկից մտնելէն ետքը դիւրին էր հետզհետէ պայմանները ու պահանջները աւելցնել։ Այս եղած է միշտ պապական դրութեան հետեւած կերպը։ Աւսր մէկ տեսակն էր Հայերուն ալ բռնած կերպը, բերանացի կամ գրաւոր յայտարարութիւնները առատացնելով և պահերը հաճեցնելով՝ ակնկալելով օժանդակութեանց և դիւրութեանց հետեւէ ըլլալ, առանց բնաւ հոգ տանելու միևնոյն յայտարարութիւնները գործնականապէս յարգելու կամ իրենց եկեղեցական դրութիւնը այլայլելու։ Շողոքորթ ընթացքի լուսաւոր նշան մը պէտք է նկատել Պիոս պապը, Պեսրս էսէ անուանելը (ՅԻՇ. 260)։ Այս փոխադարձ ընթացքին հետեւանքն է, որ Հռոմի մէջ չարունակ Հայերու դարձեր կ'արձանագրուին, որոնք տեղի պիտի չունենային, եթէ անգամ մը իսկապէս և իրապէս դարձի եկած ըլլային հռոմէադաւանները իմացած կերպով, կամ թէ հայադաւան եկեղեցին հռոմէադաւան եղած կամ դարձած ըլլար, ինչպէս կը սիրեն պնդել, պատահական գրուածներու պաշտօնական հեղինակութիւն ընծայելով։

ԱԲԳԱՐԻ ԱՐԴԻՒՆՔԸ

1561. Աբգարի բռնած ընթացքը փոքրիշատէ արդիւնք մը ունեցաւ, բայց բուն նպատակին չհասաւ, Հայերու ազատութեան կամ քաղաքական դիւրութեան համար որեւէ ձեռնարկ չեղաւ, միայն դիւրութիւն ընծայուեցաւ Հռոմի մէջ դեգերող անտերունչ փախստականներուն յատուկ հիւրանոց մը սահմանել, և Աբգարի պատիւներ ցուցնել՝ զի ֆէյն փէոս ոչոբ համաձոմոբ հանդէս, և ոսօքէ խոսան ամբոխին համբուրելու ջերմեռանդութեամբ Աբգարի, ըսաւ, թէ է Հայոց ընտանեաց ֆի ոն (ՅԻՇ. 258)։ Աբգարի Սուլթանչան որդին ալ իւր պաշտպանութեան ներքեւ առաւ, կոչելով զայն Մարբոնոն, այսինքն է Մարկոս Անտոնիոս, և զայն ուսման դրաւ է փոբոսոնս, և Հայերուն հոգածութեան համար պաշտպան կարտինալ մը նշանակեց (ՅԻՇ. 250), և էրեք հրաման չինելս նոբ ֆէբս (ՅԻՇ. 260), և Աբգարին հրամայեց ետ դառնալ ու պոբբէոբէն Միքայէլ, ու զայն Հռոմ բերել որ քեբան ու քեբան խոսելով իմանայ ընդս Հայոցն (ՅԻՇ. 258)։ Աբգարի որդին մնաց Հռոմ, և եղաւ Հայոց հիւրանոցին տեսուչը. իսկ ինքն Աբգար վճռակիր անցաւ, պապին կողմէ իրեն տրուած ընկերով, որ էր Նոբընծոյ եպիսկոպոս ոն (ՅԻՇ. 258)։ Աբգար և ուղեկիցը վճռակիր գտնուեցան 1563'ին ի Րոֆսոսրսոլնեան Եբելմոն Րոսոճն, այսինքն Հերոնիմոս Բրիօլի դուքսին օրով, ուր տպեց Սաղմոսը, Գառնեցիի օրինակին վրայ (ՅԻՇ. 262), որ և վերջացաւ 1566 Մայիս ԺՆ, օրն ոսբէոմ, ԺՒ ֆոմ (ՅԻՇ. 263), այլ պէտք է ԺԷ կարդալ, զի ուբրաթը 17'ին կը հանդիպի։ Այդ Սաղմոսը իբր առաջին տպագրուած հայերէն գիրք ընդունուած էր 1512'ի և 1513'ի հրատարակութիւնները չի ճանչցուած (§ 1527), և կրնար իսկ կերպով մը նոյնպէս նկատուիլ, եթէ հաստատուէր առաջիններուն միակտուր փայտեայ կաղա-

պարով տպուած ըլլալը հաստատատիպներու նման, թէպէտ այդ ենթադրութիւնը այլևս դուրս թողուած է (§ 1527)։ Աբգար վախցաւ վիճակէն հեռանալ, լսելով այլ նահանջ, իբր Տաճիկներու դէմ լատիններէ օգնութիւն խնդրելը, և մնաց վիճակի պատգրութեան գործերը չարունակել։ Իրեն ուղեկից եպիսկոպոսը ճանապայ հանեց պապէն Միքայէլին ղրկուած ընծաներով, որպէսզի զայն Հռոմ առաջնորդէ, բայց այն ալ հիւանդացաւ և մնաւ, և պապին ընծաները, Հռոմ դարձուցան, և ահնայն ինչ լուն չլսելոյ Աստուծոյ առաջն և անոր եղեն (Յհ. 258)։ Այս եղաւ Աբգարի պատուիրակութեան ընթացքը մինչև 1566 տարին, այսինքն մինչև Սալմաստեցիին կաթողիկոսութեան վերջին տարին։ Պատուիրակութեան բոլորովին քաղաքական նպատակ ունեցած ըլլալը անգամ մըն ալ կը հաստատուի՝ Աբգարին Տաճկաստան դառնալուն հետ և Եղիազարի պարագայով։ Իսկ եկեղեցական միաբանութեան համար, կաթողիկոսէն պաշտօնական քայլ մը առնուած չէ, 1563'ին գրուած նամակը այդ նպատակը չյայտներ (ԿԱԹ. 152), Աբգարի դաւանադիրը եկեղեցւոյ կողմէ պաշտօնական դործ չէ (§ 1560), մանկէ Հաքն ալ ուրիշ պաշտօնական գործ մը կատարուած չէ։ Պիոս Դ, որ Աբգարի գործին ձեռք դնողն էր, 1565'ին վերջերը վախճանած էր, և իրեն յաջորդած էր Պիոս Ե, նախկին մեծ հաւատաքննիչ մը, որ բոլորովին հեռու էր իր նախորդին զիջողական և յարմարողական ճկունութենէն, որով Աբգարի ալ հնար չէր այլ եւս առաջին բանակցութիւնները չարունակել։

ՍՏԵՓԱՆՈՍԻ ՄԱՀԸ

1562։ Ստեփանոս Ե Սալմաստեցիի կեանքը մինչև 1566'ի վերջերը, կամ 1567'ի սկիզբները երկարաձգելը պատմական պահանջ մը ցուցուցինք (§ 1555), սակայն անոր կեանքին վերջին մասին գործունէութենէն բան մը չենք կրնար պատմել, մանաւանդ թէ պիտի ընդունինք թէ ինքն մուցուած մնալու չափ քաշուած կացութիւն մը կը պահէր, և էջմիածնի գործերուն գլուխը կը գտնուէր Բարսեղ Գ աթոռակից, երբ Միքայէլ և Սեբաստիա կը մնար՝ 1561 և 1563 տարիներու միջոցին, և այս վերջինը կը ստանձնէր դլխաւոր գործունէութիւնը, երբ Մայրաթոռ կը դառնար 1563'ին, ուսկից ապրիլ 1'ին երկրորդ նամակ մը կ'ուղղէր Հռոմ (§ 1568)։ Սալմաստեցիին մահուան պարագաներուն մասին ալ որևչակի բան մը չունինք գրելիք, և կ'երեւի թէ ծերութեամբ և տկարութեամբ կեանքը վերջացուցած է։ Սկիզբէն զինքը իբր կրթուած և ուսումնական անձ մը ներկայացուցինք (§ 1549), և իրօք ալ իւր այդ ձիրքերուն արդիւնքը ցուցուց, եթէ ոչ խակապէս և ամբողջապէս անկեալ վիճակը վերականգնելով, գոնէ առաջին անգամ զարթնուսմի նշան տալով և դէպի վարգացում առաջին քայլն առնելով, եւրոպական զարգացման հետ յարաբերութեան մտնելով, և անձամբ ալ Իտալիա, Գերմանիա և Լհհաստան ճանապրդելով։ Տպագրական արուեստին Հայոց մէջ առաջին անգամ 1512'ին երեւան գալը, ուղղակի Հայ ոյժերու արդիւնք չերեւար (§ 1527), իսկ Աբգար Եւդոկիացիին ձեռնարկը, որով բացատաբար փառաւորուած է ցարդ Միքայէլ Սեբաստացիին անունը, ժամանակագրական հետազօտութեանց եզրակացութեամբ նշանաւոր բաժին մը կ'ապահովէ Ստեփանոս Սալմաստեցիին, որ թեւադրիչ կամ հրահանգիչը եղաւ Միքայէլի Սեբաստիա անցնելուն, և այն տեղէ աւելի դիւրութիւնով գործին աշխատելուն, ինչ որ անհնար պիտի ըլլար էջմիածնի մէջ գործադրել։ Այդ տեսութեամբ պարտք կը զգանք Սալմաստեցիին նշանաւոր և արդիւնաւոր յիշատակութիւն մը ընծայել կաթողիկոսներու չարքին մէջ, և վերջին գաբերու զարթնումին նախահայրը և նախակիզբը ճանչնալ զայն։ Իսկ այդ առթիւ տեղի ունեցած միաբանական երիւոյթներուն մասին հարկ չենք զգար անդրադառնալ, իւր կարգին պարզաբանած ըլլալով՝ թէ՛ Ստեփանոսի ուղեւորութեան (§ 1552), և թէ՛ Աբգարի պատուիրակութեան նշանակութիւնը (§ 1559)։

1563. Ստեփանոսի կաթողիկոսութեան 1545'է 1566 քանանամեայ միջոցին տեղի

ունեցած ազգային եղելութիւններ մեծ ու կարեւոր բան մը չեն ներկայեր։ Կիլիկիոյ աթոռին վրայ իրարու կը յաջորդեն Սիմէոն Ուլնեցի 1539'ին, Ղազար Ուլնեցի 1545'ին, որոնց կը յաջորդէ Սսեցի մը, Թորոս Մայանեց 1548'ին, Լեւոնբերդի իշխաններէն։ Թորոս կանուխէն ամուսնացած և Մանէս անուն որդի մը ունեցած էր, որ այրիութենէ ետքը կոյսի հետ կը պսակուի, և այս պատճառով Աբիստակէս Ուլնեցի վարդապետ՝ կաթողիկոսը կը յանդիմանէ սաստկապէս, այնպէս որ ըսողներ ալ կան թէ վէճերէն եաւ (ՍԻՍ. 536)։ Թորոս իր Լեւոնբերդը կը քաչուի և հոն կը մեռնի 1553'ին (ՍԻՍ. 534), իսկ կաթողիկոսութեան կը յաջորդէ Խաչատուր Զորիկ, և անկէ ետքը Խաչատուր Երաժիշտ 1560'ին։ Վերջինս յայտնապէս Ուլնեցի ըսուած է, և Զորիկին ալ Ուլնեցի ըլլալը կը քաղուի Ուլնեցւոց պաշտպանութեամբ և Սսեցիին վտարմամբ աթոռ բարձրանալէն։ Այսպէս Ուլնեցիներուն յաջորդաբար կաթողիկոսանալը և Սսեցին տապալելը, Ուլնիոյ զօրանալուն և մնացորդ հայ իշխաններուն (1415) Ուլնիոյ մէջ ամփոփուելուն ժամանակը կը ճշդէ։ Վերջին Խաչատուրի պաշտօնը երկար եղած է մինչեւ 1584։ Սոյն միջոցին քաղաքական եղելութիւններն ալ ոչ մի նորութիւն ունեցած չեն կիլիկիոյ կողմերը, որ վերջնապէս Օսմանեան կայսրութեան նահանգ էր դարձած։ Աղթամարի աթոռին վրայ կը գտնուէր միշտ Գրիգոր Սէյֆէտինեան (§ 1556), որ Լոփթվ Էֆենտի ըսուած է, փոքրիշատէ ուսումնական զարգացման հետամուտ, և ուսում ունեցողներու պաշտպանութիւն ընելուն համար (00 ԲԻՉ. 1917)։ Երուսաղէմի աթոռը չարունակ վէճերու և հակառակութիւններու ենթարկուած էր, իր ստացութիւնները և չինութիւնները պաշտպանելու համար տեղացի այլազգիներու ոտնձգութիւններուն դէմ, և երբէք այդ մասին յաջողութիւններ ունեցած է, ամէնքն ալ արդիւնք են Անդրէաս Պարոնտէրի անխոնջ և աննկուն աշխատութեանց (§ 1547), որ ամէն մի խնդիրի համար կըրցած է յատուկ կայսերական հրամանագիրներ ձեռք բերել (ԱՍՏ. Ա. 274), նոյն իսկ Կոստանդնուպոլիսէ դառնալէն ետքն ալ (§ 1547)։ Անդրէաս արդիւնաւոր և երկարատեւ պաշտօնավարութիւն ունեցած է մինչեւ 1293, իր վերջին տարիներուն մէջ իրեն օգնական և գործակից և գրեթէ աթոռակից ունենալով, իր եղբօրորդին Դաւիթ Մերտինցին (ԲԱՌ. 52), ինչպէս որ ինքն ալ աթոռակից եղած էր իր հօրեղբօր Աատուածատուր Մերտինցիին (ԲԱՌ. 51)։ Կոստանդնուպոլսոյ պատրիարք Աատուածատուր Եաղուպեանի (§ 1463), 1550'ին յաջորդած էր Ստեփանոս, և իրեն օրով տեղի ունեցաւ Անդրէաս Պարոնտէրի Կոստանդնուպոլիս գալը (§ 1548), որուն օժանդակ պէտք է ճանչցուի Ստեփանոս։ Նա թերեւս համամիտ և համակիր ալ գտնուեցաւ Միքայէլ կաթողիկոսի ձեռնարկներուն (§ 1557), թէպէտ մեծ գործակցութիւն չէ կրցած ունենալ, զի 1561'ին մեռած է, և Աբգար Եւդոկիացին ալ կիպրոսի և ոչ Կոստանդնուպոլսոյ Ճանապով գացած էր Վենետիկ (§ 1557)։ Ստեփանոսի յաջորդած է Տիրատուր Սսեցի, Անկիւրիոյ եպիսկոպոսը, բայց հազիւ երկու տարի կրցած է պաշտօն վարել, և պատրիարքութիւնը անցած է Յակոբ եպիսկոպոսի մը, և իր օրով կատարուած է Աբգարի պատգամաւորութիւնը, որուն ինքն մասնակից եղած չէ, այլ անոր ձեռնտու եղած է, երբ Աբգար իր տպարանը Վենետիկէ Կոստանդնուպոլիս փոխադրեց։ Իսկ Տիրատուր կ'երեւի թէ բնութեամբ ձեռներէց և ձգտումներով խիզախ անձ մը եղած է, ինչպէս Սսոյ կաթողիկոսութեան խնդիրին մէջ պիտի տեսնուի։

ՄԻՒՍ ԱՔՈՌՆԵՐ

1564. Գոհունակ զգացումով մը յիշենք (§ 1562), թէ Սալմաստեցիին կաթողիկոսութեան միջոցը, ազգային զարգացման առաջին զարթնումի միջոցն եղաւ։ Ինչպէս անհատական, նոյնպէս հանրային կեանքի մէջ ալ վայրկեաններ կան, յորս բարեդէպ պատահարներ ըստ ինքեան անկարեւոր՝ ամենակարեւոր արդիւնքի մը սկզբնապատճառ կը դառնան։ Այսպէս է ներկայ պարագան ալ, զի գիտենք թէ ըստ ինքեան չատ մեծ

ՋԱՐԹՆՈՒՄԻ ԱՌԱՋԻՆՆԵՐ

չէր Սալմաստեցիին ըրածը, այլ մնծամնծ հեռուանքներ յառաջ բերաւ։ Ժամանակիս մէջ իրենց ուսումնական ջանքով, թէ ոչ երկասիրութեամբ, նչանաւոր անձերուն գլուխը պէտք է յիշենք դարձեալ Ստեփանոս Սալմաստեցի և Միքայէլ Սեբաստացի կաթողիկոսներուն անունները, անոնց կցելով նաեւ Գրիգորիս Աղթամարցին (§ 1556)։ Յիշենք ևւս Մաղաքիա Դերջանցի վարդապետը (§ 1548), որուն աչխարհաչէն և ազգօգուտ ձեռնարկներէն զատ, բանիբուն և հմուտ անձ մը նդած ըլլալն ալ վկայուած է։ Իրեն դրացի, նաւանաբար և գործակից նդած է Ղուկաս Կեղեցի կամ Յորձնացի վարդապետը, որ յատուկ աչակերտութիւն մըն ալ կազմած է, և իրեն ձեռնասուններէն արժանաւոր կաթողիկոսներ ալ նդած են։ Ղուկաս թողած է տոմարական գրուած մը ոտանաւոր և արձակ խառն գրութեամբ (ԴԱվ. 4)։ Աղթամարի կղմներն ալ ուսմամբ պարապողներու անուններ ունինք, ինչպէս են, Սիմէոն Ասպարանցի վարդապետը, որ հմուտ աչակերտներ ալ հասուցած է, որոնցմէ կը յիչուին կարապետ վարագցի, Յովհաննէս Խիզանցի, և Յովհաննէս Մաղկոզ վարդապետները։ Նոյն աչակերտութենէ նդած են Յովհաննէս կրճան, և Յովհաննէս Գրագիր վարդապետներ, և Սահակ որ Լոբոպեթոց Լոբոպեթ մականունին արժանացած է։ Վարագի մէջ ալ աչակերտութիւն մը կազմած է Մարգար Պարոնտէր եպիսկոպոսը, և իրեն ձեռնասուններէն յիչուած են Զաքարիա Փիլիսոփայ, կարապետ Ջամալ, և Յովհաննէս Բրգուտենց վարդապետներ, որոնց յօրինած երգերն ու գանձերը կը գտնուին աստեւանդ (00 ԲԻԶ. 1197)։ Ինչպէս կանխեցինք յայտարարել, այդ անուններէն կը յիչենք ոչ իրրեւ գերազանց հանճարներ, և ոչ իրրեւ ընտիր երկասիրութեանց հեղինակներ, այլ իրր առաջին հաւիրաններ, որք անագին անկումէ մը ետքը առաջին չարժումը տուին զարթնումի դարերուն։

1565. Ժամանակակից ծանօթութիւններէն լրացնելու համար յիչենք նաեւ սոյն միջոցին նահատակուած նոր վկաներէն։ Յորդյան անուն երիտասարդ մը, որուն ծննդավայրը չէ յիչուած, հետեւ գալով Մարգուան կը հատնի 1541'ին մէջ օր մը, և հաղիւ թէ պանդուկ մը կ'իջնէ ու խօսակցութեան կը մտնէ, իսկոյն աղմուկ մըն է կը սկսի, թէ Խոջըշահ չէշտ ասոց (ՆՈՐ. 378), իբր թէ իսլամութեան հայհոյած ըլլայ։ Հոն եղողներ կը զայրանան, ծեծկլլն ելլեն, ու էլչիքաց առջեն փոքան է փոփոխան, երկու չեմպոնդն չեփն կոպծ։ Դատաւորին առջեւ ոչինչ կ'օգտէ Յորդյանի բողոքը, ուրացութեան կը հրաւիրուի որ պատիժէ ազատի, և պարգեւներ ալ կը խոստացուին, բայց Յորդյան կը մերժէ յայտարարելով թէ ինքն աւելին ալ ունի (ՆՈՐ. 380)։ Ասոր վրայ կատաղելով մահուան վճիռ կը հանեն և հրապարակին վրայ կրակի նետելով կը նահատակեն (ՆՈՐ. 382)։ Սարգիս Մելիտինացի վկայի մը արձանագրութիւնը կը պահուի Զմիւռնիոյ եկեղեցւոյն բակը, որուն մէջ ըսուած է, թէ Սարգիս յատնի համարձակի, և մեծ հանդիսաւոր նահատակի, բայց ուրիչ մանրամասնութիւններ գրուած չեն։ Նահատակութիւնը նդած է նոր կիրակիի երեքչաբթի օրը՝ ապրիլ 15'ին հանդիպած տարին։ Իսկ թուականը չոխ հաշիւ հայկեան ըստ թերի է օրինակին մէջ (ԳՕՍ. Ա. 82), և կրնայ 1550, 1561 և 1572 թուականներուն յարմարիլ անխտրաբար։ Հրատարակիչներ 1550'ին կը դնեն (ՆՈՐ. 383), բայց յարմարագոյն է գոնէ 1561'ին իմանալ, դի Հայոց 1000 թուականը 1551'ին կը պատասխանէ, և պակաս տողն ալ հարկաւ հազարին վրայ յաւելուած թիւ մը պիտի պարունակէր։ Լոկ համառօտ յիչատակով ծանօթ է ևւս Սիլիվրիցի Յոռոմ, կամ ուղիղ հնչմամբ՝ Հռիփսիմէ Սիլիվրիցի վկայուհին, զոր նահատակ ըլլն 1554 փետրուար 14, չորեքչաբթի օր, ընդ ըլլայն, Տեառնընդառաջի առտուն (ՆՈՐ. 385)։ Վերագոյնդ թանմազի արշաւանքները պատմած առնինիս, մնծամնծ կոտորածներ ալ տեղի ունեցած ըլլալը յիչեցինք (§ 1556), և գիտենք թէ իսլամական սովորութիւն էր ուրացութիւնը առաջարկել նարուածը չի տուած։ Հետեւաբար անթիւ նդած են այդ պարագաներուն մէջ վկայող նահատակնե-

րը, որոց ոչ անուններըը գիտենք և ոչ թիւը։ Թադէոս Սեբաստացիի յիշատակարաններուն մէջ կը գտնենք միայն Արճէշի վանքի առաջնորդ Յակոբ վարդապետի և իւր երեսուն միաբանակից ընկերներուն նահատակութիւնը, որոնք ասպատակին հանթիլը իմանալով, գիշերուան մէջ պատարագի սպաս կը պատրաստէին հաղորդուելու համար, բայց ինչքան պոռթրտէին, և քամբռփն սպաս գնէին, յանկարծ հասան սուսերամերկ Պարսիկներ, և անողորմ կոտորեցին ամէնքն ալ։ Յակոբ Մեծոփեցիի և ընկերներուն նահատակութիւնը տեղի ունեցած է 1552 օգոստոս 14'ին, վերափոխման կիրակէին առաւօտն (ՀԱՑ· 595), և չենք գիտեր թէ ինչու ոմանց անմիկնելի երեւցած է նահատակութեան թուականը (ՆՈՐ· 682)։ Նահատակաց կարգին պէտք է դասել եօթանասուն ապաստորդիները, որ մէկ գիշերուան մէջ սպանուած են Կարնոյ մէջ 1550'ին (ՍԱՄ· 176), թէպէտ անյայտ կը մնան մեղ եղելութեան պարագաները։

Տ· ՄԻՔԱՅԷԼ Ա· ՍԵԲԱՍՏԱՑԻ

1566· *Միքայէլի գահակալ կաթողիկոսութիւնը պատմելու սկսած ատենիս, չենք պարտաւորուիր իրրեւ նոր անձ մը զայն ներկայել,* **ՋԱՆԱՉԱՆ ԱՔՈՌԱԿԻՑՆԵՐ** *զի արդէն բաւական լնդարձակ կերպով անոր գործունէութիւնը տեսանք ու պատմեցինք։ Դավրիժեցին 1567'ին կը դնէ Միքայէլը իբր առաջին և բուն գահակալ (ԴԱՎ· 338), և կամենինք յիշատակարանը մինչեւ 1566 կը հասցնէ Սալմաստեցիի կաթողիկոսութիւնը (ԲԺՇ· 143), և մենք բանաւոր կը սեպնենք 1566'ի վերջերը դնել Սալմաստեցիին մահը և Սեբաստացիին գահակալութիւնը։ Երբոր Միքայէլ գահակալութեան կ'անցնէր, իրմն աթոռակից կը գտնուէին երկու վաղարշապատցիներ՝ Բարսեղ Գ. և Գրիգոր ԺԲ (§ 1554)։ Սակայն ատենցմէ, առաջինը կը վախճանէր 1567 տարւոյն մէջ (ԹՈՐ· Բ· 256), և անշուշտ անոր փոխանակելու համար է, որ նոր աթոռակից մը կ'անուանուի, Ստեփանոս Ջ Առնջեցի։ Թէպէտ Դավրիժեցին 1567 տարւոյն ներքեւ չորսին անունն ալ միանգամայն կու տայ, և միասին կը յիշէ Միքայէլ Ա, Բարսեղ Գ, Գրիգոր ԺԲ, և Ստեփանոս Ջ կաթողիկոսները (ԴԱՎ· 338), սակայն կը կարծենք թէ նոյն թուականին ներքեւ չորսին ալ գլխաւորուած ըլլալը կ'ուզէ իմացնել, և ոչ չորսին ալ միատեղ։ Ինչպէս ուրիշ շատ կաթողիկոսներուն, նոյնպէս Առնջեցիին ալ նախընթացին վրայ բան մը պիտի չկարենանք պատմել, և ոչ ալ իւր գործունէութեան մասին բան մը գիտենք, և կ'երեւի թէ երկարակեաց ալ եղած չէ, վասնզի երբոր Գրիգոր ԺԲ գահակալութեան կ'անցնի, այլեւս Ստեփանոս Ջ'ի անունը չտրուիր, և ամենայն վստահութեամբ կը հետեւցնենք Միքայէլի կենդանութեան անոր վախճանած ըլլալը, առանց կարենալու ժամանակը ճշդել։ Միքայէլի կաթողիկոսութեան տեւողութիւնն ալ վստահագոյն կերպով Դավրիժեցիէն կը քաղենք, որ միայն 1576'ին Գրիգոր ԺԲ'ը իբր գահակալ գլուխ կ'անցընէ (ԴԱՎ· 338), և հետեւաբար մինչեւ այն տարի ապրած կ'ըլլայ Միքայէլ, 21 տարի աթոռակցութեամբ և 10 տարի գահակալութեամբ, երկարատեւ և ոչ ապարդիւն կաթողիկոսութիւն վարելով։ Ջամչեան, որ աթոռակցութեամբ մէկտեղ Միքայէլի 22 տարի պաշտօնավարութիւն կու տայ, յայտնի սղրիւր և զօրաւոր փաստ մը չունի, և երբ իբր Միքայէլի յաջորդներ՝ Գրիգոր ԺԲ'ի 4, և Ստեփանոս Ջ'ի 2, և Թադէոս Բ'ի 9 տարի կը վերագրէ (ՋԱՄ· Գ· 525), յայտնապէս կը հակառակի Դավրիժեցիին, որ մինչեւ 1593 կենդանի կ'ենթադրէ Գրիգոր ԺԲ'ը (ԴԱՎ· 338), ինչ որ յիշատակարաններով ալ կը հաստատուի։ Երեւանեցիին չարակարգութիւնն ալ չփոթ է երբոր կը գրէ, ղինի պէր Մխոյէլ, պէր Բոլոէղ, պէր Գրիգոր, և պէր Սթեփանոս, միեւնոյն 1567

թուականին ներքեւ (ՋԱՄ· 20), զի Բարսեղ և Ստեփանոս չէին Մէյ-չելի կենդանի չէին։ Սովորական ցուցակն ալ աւելի յաջող չէ, երբոր իբր իրարու յաջորդներ կը նշանակէ 1547 Միքայէլ Ա, 1557 Բարսեղ Գ, 1563 Գրիգոր ԺԲ, 1573 Ստեփանոս Զ, 1575 Թադէոս Բ, 1584 Առաքել Ա (ԺԱՄ· 637)։ Գահակալներու գաւազանը միայն Ստեփանոս ե, Միքայէլ Ա. և Գրիգոր ԺԲ կաթողիկոսները պէտք է պահէ չարքին մէջ, քանի որ մնացեալներ իբր լոկ աթոռակիցներ՝ չեն կրնար կաթողիկոսութեան յաջորդական գաւազանին անցնիլ։

ՋԱՆԱՋԱՆ ԴԷՊՔԵՐ

1567· Սալմաստեցիին մահուան թուականին զուգընթաց եղաւ սուլտան Սիւլէյմանի մահը, 1566 սեպտեմբեր 6'ին, Միկէթի պաշարմանատեն, Հունգարիոյ մէջ, և 24'ին սուլտան Սէլիմ Բ, Սիւլէյմանի որդին, իբ գահակալութեան հանդէսը կը կատարէր Կոստանդնուպոլսոյ մէջ։ Պարսից շահը Թահմազ կը փութար զնսպանութեամբ Կոստանդնուպոլիս յղել երեւանի կուսակալ Շահ-Քուլի սուլտանը, առատ և թանկագին ընծաներով, և երկու տէրութեանց մէջ հաչտութեան դաչինքը կը նորոգուէր (ԺՈՒ· 156), որով խաղաղութեամբ կ'անցնէր Միքայէլի գահակալ կաթողիկոսութեան տասնամեայն, քանի որ Օսմանեանց և Պարսից պատերազմները անազան նորոգուեցան 1578'ին, Միքայէլի մահուընէ ետքը։ Ծիչատակարաններու և ծանօթութեանց նուազութիւնը կը ստիպէ մեզ լռութեամբ անցընել բովանդակ տասնամեայն, թէպէտ Միքայէլի եռանդն ու կարողութիւնը կը յորդորեն մեզ հաւատալ, թէ նա բոլորովին անգործ ու ապարդիւն անցուցած չէ իբ կաթողիկոսութիւնը։ Հնար չէ նաեւ ենթադրել որ խզուած ըլլան Միքայէլի և իբ յղած պատգամաւոր Աբգարի յարաբերութիւնները, թէպէտ այդ մասին ալ ստոյգ տեղեկութիւններ կը պակսին։ Աբգար 1565'ին վենետիկ անցած էր, ինչպէս յիշեցինք (§ 1561), ուր 1253'էն իվեր Հայերու յատուկ տուն կամ հիւրանոց մը կը գտնուէր (ՎԵՆ· 144), Հայ վերակացուի և Հայ եպիսկոպոսի չսկողութեան ներքեւ, որոնցմէ 1561'ին կը յիշուի Նիկողայոս (ՎԵՆ· 336), իսկ Աբգարի ևկած տարին կը գտնուէր Մելքիսեդեկ եպիսկոպոս (ՁԻՇ· 263)։ Աբգար ժամանակ մըն ալ այնտեղ մնաց, վախնալով Թուրքիա դառնալ, որովհետեւ այնտեղ լսուած էր իբ Եւրոպա երթալուն բուն նպատակը (§ 1561)։ Աբգարի որդին կը գրէ թէ հայրը է փոքիոսան էր, և իրրեւ ինքզինքը արդարացնելու միջոց հնարելու և ոչ ըզոման էր (ՁԻՇ· 258), որպէս զի այն ցուցնէ իրրեւ իբ ուղեւորութեան բուն նպատակը։ Պատմելինք թէ զանց ըրաւ Միքայէլը անձամբ Հռոմ տանելու համար ստացած յանձնարարութիւնը, և իբ ուղեկից լատին եպիսկոպոսը ճանապայ հանեց, որուն մահուամբը գործը անհետեւանք մնաց (§ 1561)։ Մենք կը կասկածինք թէ մի գուցէ Աբգարի վախն ալ ճարտար դարձուածք մը ըլլայ կաթողիկոսին Հռոմ գալը խափանելու համար, զի Պիոս ե'ի անձը հիմնապէս կը փոփոխէր Աբգարի տեսութիւնները։ Տրիտենդեան ժողովը նոր փակուած էր 1563'ին, 18 տարի տեւելէն ետքը, և Պիոս ե, նախկին մեծ հաւատաքննիչը, ամենայն զօրութեամբ անոր կանոններուն գործադրութեան ձեռնարկած էր, և վենետիկի հանրապետութիւնն ալ կատարելապէս հպատակած էր նոյն կանոններուն։ Այդ խստութեան հետեւանքն էր անողոքելի ուղղութիւն մը, որուն դէմ ուարաւ պիտի հնազանդէր Աբգարի միաբը, և հաւանաբար չէ ուզած կաթողիկոսը վտանգաւոր դիրքի մէջ դնել։ Ինքն Աբգար անձամբ ալ կրեց այդ դրութեան նեղութիւնը, չկարենալով ազատօրէն հրատարակութեան տալ Հայոց ծիսական գիրքերը, որոնց մէջ դիտողութեան տեղի կը գտնէին թէ Հռոմի և թէ վենետիկի գրաքննիչները։ Միայն Սաղմոսը կրցաւ տպագրել, և իբ տպագրական կազմածները լրացնելով վենետիկի մէջ, գոյքերը հաւաքեց և կոստանդնուպոլիս եկաւ, իբր յարմարագոյն կեդրոն տպագրական ձեռնարկին, պետական չրջանակներու առջեւ ալ զինքն արդարացնելով, թէ վաճառ այս պարտքէն փոխեալ եմ ի Ֆռանկըստան (ՁԻՇ· 258)։ Անստոյգ զրոյց մը կայ թէ կոստանդնուպոլսոյ մէջ նախ ձերբակալուած, բայց տպագրական կազմածովը արդարանալով ազատ թողուած

ըլլայ, և անկէ ետքը իւր տպագրական գործարանը հաստատած ընդ հովանեաւ Ս. Նիկողայոս Էնվիցոյն Հայոց (ՅԻՇ· 261), այսինքն է Վանկայի Ս. Նիկողայոս Լեհեզեցւոյն բակը կամ մօտը (11 ԱՄՍ· 472)։

1568· Որոշակի նշանակուած չենք գտներ թէ Աբգար ինչչափ ատեն վիճետիկ մնաց և երբ կոստանդնուպոլիս հասաւ։ Գիտենք թէ 1568'ին տպագրած է տօնացոյցը, տաղարանը, ժամագիրքը և պատարագամատոյցը (ՅԻՇ· 262), բայց Մաղաքիա Ոէվահիրճեան դպիր 1567'էն պատրաստ կը յիշէ Աբգարի տպարանը, ուր եղեր ըսած՝ այնէն պահած, և գրեցաւ ֆուր Էբրահամ-ընէն պլոյոց (ՅԻՇ· 261)։ Աբգար դպրին ազգանունը Տէր-Գէորգեան-ընէն իրր ընկերակից կը յիշուի ինչ Խոջայէմ Անտոնիս Սալմեան ապիտատէին անունը (ՅԻՇ· 262), բայց պէտք չէ որդին ալ կոստանդնուպոլիս եկած կարծել, վասն զի ինքն իրեն համար կը վկայէ, թէ հօրը մեռնելէն ետքը ասդ ի Հռոմ անայ է գալ-պան առ յեռամբ հզօր կրզիմոլոց (ՅԻՇ· 258)։ Նկատի առնելով Աբգարին կրած ահաւոր դժուարութիւնները և տպարան մը հաստատելու պայմանները, գոնէ 1566'ին Աբգարը վիճետիկ մնկնած պէտք է ըսենք։ Երեք տարիի չափ տեւած կ'ըլլայ Աբգարի կոստանդնուպոլսոյ մէջ՝ ունեցած գործունէութիւնը, ուսկից յետոյ 1569'ին կ'երթայ Էջմիածին Միքայէլ կաթողիկոսի մօտ (ՅԻՇ· 262), որուն կարգադրութեամբ մեկնած էր Սեբաստիայէ 7 տարի առաջ (§ 1557)։ Որովհետեւ տպագրական արդիւնաւորութիւնը կոստանդնուպոլսոյ մէջ կը դադարի, օրէն էր հետեւցնել թէ Աբգար իւր տպարանին կազմածներովը փոխագրուած ըլլայ Էջմիածին, սակայն ոչ մի յիշատակ և ոչ մի արդիւնք չունինք այդ միջոցին մէջ Էջմիածինի մէջ տպարան մը գտնուած ըլլալուն, որով չենք համարձակիր այդ տեսութեան վրայ պնդել, թէպէտ առանց աւելի ալ դժուար կ'ըլլայ մեկնիլ Էջմիածին երթալուն նպատակը։ Միւս կողմէն բացարձակ պարտք մըն ալ էր Աբգարի իւր գործունէութեան արգասիքը ներկայել և յանձնել անոր, որ այդ նպատակին հովանաւորն ու կարգադրողն եղած էր։ Պատմական յիշատակներու, նոյնիսկ թէքիւռ ակնարկներու պակասութեան մէջ, չկարենալով որոշակի բան մը ըսել, ենթադրական վիճակի մէջ կը թողունք Աբգարի Էջմիածին անցնելուն և Միքայէլի վերջին օրերուն արդիւնքները։ Սակայն այն քիչն ալ որ երկուքին վրայ գիտենք, բաւական են գովեստով և օրհնութեամբ յիշատակել անոնց անունները, և գիրենք նկատել իրր առաջին գործիչներ տպագրական աշխատութեան Հայոց մէջ տարածուելուն, քանի որ 1512'ին տպագրութիւնները Հայ գործունէութենէ դուրս և Հայ յարաբերութիւններէ անկախ երեւոյթներ էղան (§ 1527)։ Եւ ասով կը վակենք Միքայէլ Սեբաստացիի կաթողիկոսութեան ժամանակը։

Տ· ԳՐԻԳՈՐ ԺԲ· ՎԱՂԱՐՇԱՊԱՏԵՑԻ

1569· Երբոր Միքայէլ կը վախճանէր 1576'ին, միայն Գրիգոր կը մնար անոր մօտ աթոռակից, զի Բարսեղ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆ Գ և Ստեփանոս Զ վախ· ԵՒ ԱՔՈՌԱԿԻՑՆԵՐ ճանած էին արդէն (§ 1586), և հետեւաբար նովին իսկ Գրիգոր կը լինէր բուն գահակալ կաթողիկոսութեան (ԴԱՎ· 338), հանճարեղ այն ատեն ընդունուած սովորութեան, որով յաջորդութիւնը կ'որոշուէր, ոչ թէ նոր ընտրութեամբ, այլ նախորդին կամքով։ Գրիգոր ինքն ալ արդէն ծերացեալ էր, վասնզի 1583'ին 85 տարեկան եղած ըլլալը գրուած է (ԱՐՐ· 232), և 1576'ին արդէն 78 տարեկան եղած կ'ըլլայ, և ուրովհետեւ 1557'էն աթոռակցութեան կոչուած էր (§ 1554), կը հետեւի թէ 59 տարեկան եղած ատեն այդ աստիճանին բարձ-

բացած էր։ Ինչ ինչ յիշատակարանների մէջ 1575'էն կը կարդանք է Հայբուղեսրնեան տէր Գրիգոր կոմոլիոյն (ԹՈՐ. Բ. 260), կամ է Հայրապետրնեան տեառն Գրիգոր (ԹՈՐ. Բ. 410), սակայն այդ յիշատակներ չեն ստիպեր մեզ Դավրիժեցիին թուականէն առելի կանխել Գրիգորի գահակալութիւնը, քանի որ գիտենք թէ յիշատակագիրներ անխտիր գահակալը կամ աթոռակիցը կը նշանակեն իբր բուն կաթողիկոս։ Միւս կողմէն նկատելով Գրիգորի տարիքը, և հետեւելով սովորական դարձած ձեւին, զարմանալի պիտի չերեւի այլ եւս տեսնել, որ Գրիգոր անմիջապէս իրեն երկու աթոռակիցներ կ'ընտրէ միեւնոյն 1576 տարին, որք են Թադէոս Բ և Առաքել Ա (ԴԱվ. 238), այս երկրորդը է ԹԷՔ ՔԻՆ ԷՔՓՈՆԷ (ԴԱվ. 1), և անշուշտ առաջինն ալ վաղարշապատեցի ծննդեամբ կամ բնակութեամբ, քանի որ ուրիշ տեղացի ըլլալը նշանակուած չէ, ինչպէս յիշուած էր Սալմաստեցիին, Սերաստացիին և Ամրոսցիներուն համար (ԴԱվ. 238)։ Աթոռակիցներու յաւուրց գործունէութեան մաս կազմել սկսած էին նաեւ գաղթականութեանց հետ յարաբերութիւնները, կրկնակի նպատակով՝ թէ անոնց հակելու, և թէ անոնց ձեռքով Մայրաթոռին համար քաղաքական և նիւթական օգնութիւններ հայթայթելու։ Իրաւ այս նպատակով նուիրակներ ալ կրնային զրկուիլ, բայց կ'երեւի թէ կաթողիկոսի անունով ճոխանալը, և կաթողիկոսական իշխանութեամբ եկեղեցական ծիսակատարութիւններ և կարգադրութիւններ ալ ընելու իրաւունքը, օգտակար նկատուած էր այդ այցելուներուն արդիւնաւորութիւնն աճեցնելու համար։ Գրիգորի նոր աթոռակիցներէն Թադէոսը, անմիջապէս Էջմիածինէ մեկնած է յիշեալ նպատակով, վասնզի 1577 յունիս 21'ին Վենետիկ կը գտնուի և կը մասնակցի մեծահանդէս թափորին, որ կազմուած էր Ճուտէքա (Giudeca) կղզեակին վրայ չինուելիք ուխտի եկեղեցւոյ հիմնարկէքին առթիւ, Վենետիկի Թեմական պատրիարքէն հոգը առած տեղը գրաւելով (Վեն. 332)։ Այդ առթիւ աւելցնենք թէ հայազգին Անտոն Աւետեան կամ Սուրիացի, որ նշանաւոր և զած էր Վենետիկի մէջ նաւաչինութեան արուեստով (Վեն. 246), ժամանակի դէմ ալ դէղ մը հնարած էր, և չատեր բժշկած և մահուանէ ազատած (Վեն. 260), և այդ ժամանակին առթիւ էր որոշուած ուխտի եկեղեցւոյն կառուցումը։ Թադէոսի Վենետիկ գալուն պատճառը որոշակի չէ ցուցուած, բայց այդ ուղեւորութեանց բնդհանուր չարժառիթը յայտնի էր, իսկ կրօնական նպատակ մը ունեցած չըլլալը կը հետեւի պապութեան հետ յարաբերութեան չմտնալէն, և Ալիշան ալ կը խոստովանի թէ «չէ ըսված Ե ԷՔՈՆ Է Հոմ (ԱՐՐ. 231)։ Թադէոսի այցելութիւնը երկարատեւ ալ եղած չէ, վասնզի Վենետիկի մէջ մնալը միայն 4ն է ամիս ցուցուած է (Վեն. 333), ուսկից պէտք է անցած ըլլայ Լեհաստան (ԱՐՐ. 231), ուր աւելի քազմաթիւ և աւելի կարող էին Հայ գաղթականութիւնները։ Անհնար է մեզ ճշդել թէ որչափ ատեն գաղթականութեանց մէջ դիզգիրեցաւ Թադէոս Բ, բայց ատոյգ է, որ իւր չրջանը աւարտելով դարձած է Մայրաթոռ, ուր 1583 հոկտեմբեր 21'ին Աբգարի սրդին Սուլթանչահ, Մարգանատն կոչուած, խընդրանքի նամակ մը կ'ուղղէ Հռոմէն (ՅԻՇ. 258), որուն վրայ յաւաջիկային պիտի խօսինք։

1570. Թադէոսի ուղեւորութիւնը դուրգրնթաց կու գայ երկու սահմանակից խաղաղութեան խանգարելու պատերազմի տագնապներուն վերսկսելուն, այնպէս որ անհաւանական չէ ներքին կապակցութիւն մը ճանչնալ երկու եղելութեանց մէջ։ Շահ Թահմազ 53 տարի թագաւորելէն ետքը մեռած էր 1576'ին, զեղակուր եղած (ԺՈՒ. 166), կամ է քաշանէ խեզբել (ԶԱՔ. Ա. 11), իրեն յաջորդ ցուցնելով իրեն որդիներէն Հայտարը, զոր նոյն օր սպաննել տուաւ իր Իսմայիլ եղբայրը, սակայն նա ալ խեղդուեցաւ 1577'ին, տարիուկէս ցոփակեաց թագաւորութենէ ետքը, և գահ բարձրացաւ Թահմազի երէց որդին Մուհամմէտ, որ Խուտաբանտ կամ Խիւտապէնտէ կոչուեցաւ։ Պարսկաստանի ներքին խռ-

ՕՍՄԱՆՑԻՆԵՐ ԵՒ ՊԱՐՍԻԿՆԵՐ

ռովութիւնները Օսմանցիները քաջալերեցին պատերազմը նորոգելով սահմաններն ընդարձակելու։ Սուլտան Մուրատ Գ, որ 1574 դեկտեմբեր 21'ին յաջորդած էր իւր հօրը Սէլիմ Բ'ի, Մուսթաֆա փաշան (ԺՈՒ. 166), որ և Լալա փաշա (ՁԱՓ. Ա. 13), հրամանատար նշանակեց, որ 1578 յունիս 23'ին առաջին մեծ յաղթութիւն մը տարաւ Ջըլտըրի ճակատամարտին մէջ, և սեպտեմբեր 8'ին երկրորդ մըն ալ կատարեց Քանաքի գետեզերքը, և այսպէս հիւսիսային Հայաստան և կովկասեան գաւառներ Օսմանեանց հպատակեցան, և Երեւան և Էջմիածին ալ նոյն տիրապետութեան անցան։ Հայ պատմագիրին համեմատ, Լալա փաշան «էրէսց վնբեաւն և բերէսց 60,000 անյին», և Ջերհատ փաշա որ անոր յաջորդեց, չինէսց քերդ յնբեաւն (ՁԱՓ. Ա. 13)։ Այդ նպատակաւ էր, որ քաղաքի եկեղեցի+ալեալ, զոր չինուածն քերդին առնէին, և հազիւ Սբ+բեաց կոչուած մեծ եկեղեցին ազատուեցաւ Առաքել կաթողիկոսին Ջերհատին առջեւ միջնորդելովը, բայց չկրցաւ արգելել զինուորներուն իրենց ձիերով 30 օր եկեղեցւոյ մէջ բնակիլը (ՍԱՄ. 192)։ Մեր նպատակէն դուրս կը սեպենք հետեւիլ Պարսից և Օսմանեանց պատերազմներուն, որոնք երկար տեւեցին։ Այդ պատերազմներուն մէջ երկու կողմէն նչանաւոր հանդիսացան Իւզէմիր Օսման փաշա, որ մանաւոր զօրապետութենէ ետքը Ջերհատի յաջորդեց իբր Օսմանեանց հրամանատար, և Համզէ Միրզա, Խիւսրաւ Շահին որդին։ Պատերազմները չարունակեցին մինչեւ 1584, բայց պատերազմի աղէտէն աւելի սաստիկ եղաւ սովը, որ պատերազմին աւերածներուն և կոտորածներուն երեսէն առաջ եկաւ, և ոըուն աղիողորմ նկարագիրը կը պատմեն ժամանակակիցներ (ՍԱՄ. 190)։ Օսման փաշա, որ Կոստանդնուպոլիս դարձած էր, 1585'ին նոր արչաւանք մը բացաւ Ատրպատականի և ներքին Պարսկաստանի կողմը, բայց ինքն հիւանդութեամբ մեռաւ, և Համզէ քանի մը նչանաւոր յաղթութիւններ տարաւ։ Ասոր վրայ Օսմանեանք արչաւանքը նորոգեցին, և վերջապէս Պարսիկներ իտնարհեցան հաչտութիւն խնդրել, որ կնքուեցաւ 1590 մայիս 21'ին Նէվրուզի օրը, և Լուբիատան, Շէհրիզօր, Շիրուան, Ատրպատական, Երեւան, Վրաստան, և կովկասեան գաւառներ Օսմանեանց տիրապետութեան ներքեւ մնացին (ԺՈՒ. 175)։ Պարսից արքունիքը անկեալ վիճակ ունեցաւ։ Մուհամմէտ Խիւտապէնտէի օրով, մանաւանդ երբ Համզէ Միրզա ալ սպանուեցաւ։ Անոր յաջորդեց Ապպաս եղբայրը, և գահ ելաւ հօրն ալ օգնելէ ետքը. և նա է հռչակաւոր և մեծ մականուանեալ Շահ-Աբասը կամ Շահ Ապպասը։ Անոր իսկական թագաւորութիւնը հռչակուեցաւ 1590'ի դաչնադրութենէն ետքը, թէպէտեւ 1585'է սկսելով չատ գործեր անոր անունով կատարուած էին։ Նա ինքն ալ եղած է հաչտութիւնը անհրաժեչտ դատողը, անկեալ կացութիւնը վերանորոգելու համար։ Աւելորդ է անգամ մըն ալ կրկնել, թէ այդ երկարատեւ պատերազմներու երեսէն կարի աղետալի եղած էր էջմիածինի կացութիւնը։

ՍՈՒԼԹԱՆՇԱՀԻ ՋԳՏՈՒՄՆԵՐԸ

1571։ Քանիցս յիչեցինք թէ Ապգարի որդին Սուլթանշահ, Լատիններէն Մարգանտոն կամ Մարկոս Անտոնիոս անունով ճանչցուած, Հռոմ մնացած էր իւր հօրը մեկնելէն ետքը (§ 1568), և այն տեղ ազգային հիւրանոցին տեսուչ, և ընդհանրապէս փախստական և պանդուխտ և ուխտաւոր Հայոց խնամակալ եղած էր, գոնէ ինքն մեծաբանութեամբ կը գովէ այդ մասին իւր ունեցած աչխատութիւնը (ԳՒՇ. 256)։ Քանի տարիէ իվեր Հռոմ մնալով ընտելացած և համակերպած էր տեղական պահանջներուն, և իւր ներքնաքաղաքական ըլլալուն համոզմամբ, իչխանական տիտղոսի մըն ալ հետամուտ էր։ Այդպիսի տիտղոսի մը համար աւատական կալուածի մը ստացութիւնը էական էր; և այս է անչուչտ իւր գրածին իմաստը, թէ «ինչ կարեւոր բան էր կամ ընտանեկան էրէ կամ զեղծումն կամ զերէրս» (ԳՒՇ. 258)։ Մենք կը կարծենք թէ պապին ուզելէն աւելի ինքն եղած կ'ըլլայ այդ բանին հետապնդողը, որչափ ալ գիտենք թէ 1572'ին Գրիգոր ԺԳ յաջորդած էր Պիոս Ե'ի, և բուռն կերպով կ'աչխատէր Արեւելցիները, և մանաւանդ Հայերը, հռոմէադաւանութեան չահելու և ասոր նպատակաւ ամէն տեսակ հրապու-

բիչ միջոցները ձեռք առած էր։ Կ'երեւի թէ Միքայէլ կաթողիկոսէն Աբգարին տրուած վկայագիրը՝ պապական աթոռանիստին մէջ ներքին համոզում յառաջ բերած չէր, որ Սուլթանչահէն նոր վկայագիր կը պահանջուէր իւր ծագումը արդարացնելու համար՝ կանոնաւոր ազգաբանութեամբ մը։ Սուլթանչահ կը պարտաւորուի զայն ճարելու համար Թադէոս կաթողիկոսին դիմել։ Այդ նամակը կը գտնուի այսօր Ամստերտամի դիւանին մէջ (ՑԻՇ· 255), և մենք ալ անկէ օգտուեցանք Աբգարի վրայօք մանրամասնութիւններ քաղելու (§ 1557)։ Նամակը 1583 հոկտեմբեր 21 շաբաթ ը թուական կը կրէ (ՑԻՇ· 258), սակայն յիշեալ ամսաթիւը էլլո-շաբթի կը հանդիսի, և չաբաթ օրը կ'արդարանայ 1581'ին, որով կամ տարեթիւը կամ ամսաթիւը ուղղելի կը մնայ. բայց հաւանաբար չաբաթ օրուան յիշուիլը չփոխութեան արդիւնք է, և 1583 թուականը պահելու է։ Իսկ ուղղակի Թադէոսի գրելը, հետեւանք է անշուշտ Թադէոսի Իտալիա գալուն, և թերեւս տեսակցութիւն ալ ունենալնուն Վինեետիկի մէջ (§ 1569), կամ թէ Թադէոսի անունը լսուած ըլլալուն։ Սուլթանչահ կը խնդրէ, որ նոր վկայագիր մը պատրաստուի իրեն թագաւորազարմ ըլլալուն, զոր Թադէոս իւր կնիքով կնքէ, և ուրիշ քանի եպիսկոպոսներու ալ կնքել տայ, գՆելով գինի ծառայու, և գմարտնաւ էրէց նէրսէս։ այսինքն աւորագրութիւն ալ աւելցնելով, և Խոսրովնաբէր, այսինքն երդման ներքեւ, որպէս զի յայլոզի իրեն քաղաքներ և գիւղեր ուննալ, որ է ըսել իշխանական տիտղոս ստանալ։ կը յայտարարէ, թէ այս բանը ոչ ևս իմ ձեռքէս, այլ ևս Հայոց, և այն երէց պարոնց համար, որք են Հռոմ եկող Հայերը խնամել, Հայոց անունը բարձրացընել, և էլլո-ընէն սբոյն Սիոնի, այսինքն Հայաստանի, պատրաստել, որպէս հնարն իմ ոչ եղե (ՑԻՇ· 258), կամ թէ ըսել, Աբգարին գլուխ հանել չկոցած նպատակը իրագործել (§ 1589)։ Նամակը տանելու և վկայագիրը բերելու համար յատուկ պատգամաւոր ալ ճանապայ հանած է, այլ թէ գործը ինչ արդիւնք ունեցած է, յայտնի չէ, կամ թէ ունեցած ալ չէ, զի Սուլթանչահի գործերուն և վախճանին վրայ ուրիշ տեղեկութիւն չունինք։ Նամակին պարունակութիւնը ունայնասիրութեան արդիւնքէ աւելի բան մը չէ, այլ աւելորդ չդատեցինք յիշատակել, իբր ժամանակին գաղափարներուն արտայայտութիւն, թէ ինչպէս Հռոմի հետ յարաբերութիւններ և լատինասէր մերձեցումներ՝ էլլո-ընէն սբոյն Սիոնի նպատակին կը դիմէին։

ՆՈՐ ՏՈՄԱՐԻ ԿԱԶՄՈՒԻԼԸ

1572· Գրիգոր ԺԳ պապը, զոր անգամ մը յիշեցինք (§ 1571), իւր անունը տուած է նոր տոմարին կազմութեան, որ այժմ ընդհանրացած է Արեւմուտքի մէջ, թէպէտ Արեւելեան եկեղեցիներ և ազգեր տակաւին հին տոմարով կը վարուին, և կ'արժէ այս մասին բացատրութիւն մը տալ։ Տոմարի վերջին կարգադրութիւնը եղած էր 325'ին Նիկիոյ ժողովին առնն, զատկական հաչիւր ուղղելու համար։ Այս մասին հիմ բռնուած էր Յուլիան դրութիւնը, տարին 365 օր և 6 ժամ հաչուելով, և քառորդ օրերը չորս տարին մէկ անգամ օր մը հաչուելով, սովորական տարիները 365, և չորրորդ տարիները 366 օր հաշիւել, որով հարիւրամեայ դար մը կ'ունենար 36,525 օր։ Իսկ Զատկի օրն ալ ճշդելու համար մարտ 21'ը հաստատուն գիշերահաւասար ընդունուեցաւ, ինչպէս էր 325'ին, և այդ հիմամբ չհնուեցան զատկական ցուցակները, և այլ եւս անոնց վրայ կը քալէին եկեղեցիները, անկախաբար աստղաբաշխական գննութիւններէ։ Սակայն իրօք տարին 365 օր և 6 ժամ չէր, այլ 365 օր, 5 ժամ, 48 վայրկեան, 47 երկվայրկեան և 33 նուվայրկեան, որ տասնորդական դրութեամբ կը գրուի 365,242217, և տարբերութիւնը կ'ըլլայ մերձաւորապէս 11 վայրկեան իւրաքանչիւր տարի, որ հարիւր տարուան կամ 36524,2217 օրերու վրայ մէկ օրի մօտ տարբերութիւն կու տայ, կամ տասնորդական ձեւով 0,7783։ Այդ տարբերութիւնը դարերու չարունակութեամբ գումարուելով, գիշերահաւասարը խախտած էր, որ այլ եւս մարտ 21'ին չէր հանդիսիր իսկութեամբ, թէպէտ այնպէս կ'ըմբռնուէր գործածական ցուցակներու մէջ, և նոյն ցուցակներով ալ կը հաչ-

ուուէին գատիկները։ Կացութիւնը դիտողութեան առարկայ եղած էր դար մը առաջ, բայց անորոշ մնացած, մինչեւ որ Նորէն խնդիրը արծարծեց Ալոիսիոս Լիլիօ (Lilio) Իտալացի աստղաբաշխը, որ այդ մասին լուրջ ուսումնասիրութիւններ կատարած էր։ Լիլիօ 1576'ին մեռաւ առանց գործնական որոշման մը յանգելու։ Գրիգոր ԺԳ պապ խնդիրը ուրիչ հմուտներու հետազօտութեանց յանձնեց, և տեսնուեցաւ որ դիւերահաւասարը 10 օր խախտած էր, և իսկապէս մարտ 11'ին կը հանդիպէր։ Այդ 10 օրերու տարբերութիւնն էր, որ պապին հրամանով ուղղուեցաւ 1582'ին, և հոկտեմբեր ամսուն մէջ, կարեւոր ծոններու պակասութեան միջոցին, հոկտեմբեր 4 հինգշաբթիին յաջորդեց հոկտեմբեր 15 ուրբաթ։ Ապագային ալ խախտուիլը արգիլելու համար որոշուեցաւ, իւրաքանչիւր դարավերջի տարին նահանջն ընել և 365 օր պահել։ բայց այսչափին ալ չատ գալուն, որոշուեցաւ նաեւ իւրաքանչիւր չորրորդ դարավերջի տարին նահանջն ընել, չորրորդ դարավերջ համրելով այն թուականները, որոց հարիւրեակները չորսի բաժանելի են։ Նոր կամ Գրիգորեան տոմարի դրութիւնը նոյն 1582 տարին ընդունեցին Իտալիա, Սպանիա, Լուսիտանիա, Գաղղիա, Բելգիա և Դանիա. 1583'ին Հելուետիոյ հռոմէադաւանները, 1584'ին Գերմանիոյ հռոմէադաւանները, 1586'ին Լեհաստան և 1587'ին Հունգարիա։ Իսկ Գերմանիոյ և Հելուետիոյ բողոքականներ անագան ընդունեցան 1700'ին, և Անգլիա, Շուետիա և Նորվեգիա 1752'ին, իսկ գաղթականութիւններն իրենց բնաշխարհին հետ։ Արեւելեան ազգեր և եկեղեցիներ՝ ցարդ կը չարունակեն հին տոմարով վարուիլ, որուն բոլոր տարբերութիւնը, դիւերահաւասարի խախտուելուն միտ չդնելով՝ դարավերջի նահանջը չգիտցուելուն վրայ կը կայանայ։ Ամսաթիւի տարբերութիւնը, որ 1582'ին 10 օր էր, նոյն մնաց 1600'ին, երբ նոր տոմարն ալ նահանջը պահեց, իսկ անկէ ետքը 1700'ին տարբերութիւնը եղաւ 11 օր, 1800'ին 12 օր, և վերջերս 1900'ին 13 օր։ Արեւելեայք աւելորդ նախանձախնդրութիւն մը կը դնեն այս մասին, Արեւմտեայց կամ Լատինները հետեւած չըլլալու համար, սակայն խնդիրը ոչ կրօնական է և ոչ դաւանական, քանի որ երկու կողմերն ալ միեւնոյն կանոնով կը հաշուեն իրենց գատիկը։ Աւոր հետ մէկտեղ քանի որ Թուականի խնդիրը քաղաքական նշանակութիւն ունի, աւելորդ կը գտնենք Արեւելեան ազգերու հռոմէադաւան բաժիններուն ցուցած փութկոտութիւնը, երկրին քաղաքական ընթացքէն հեռանալու, և ինքզինքնին Աբեւմուտքի յարմարցնելու։ Որչափ ալ այսօր պարզ աչքով ալ կը նշմարուի, որ երկինքի վրայ լրումն լուսնի չկայ, երբ հին տոմարը իր ցուցակներուն համեմատ լուսնի լրումն կը հաշուէ, սակայն այդչափը չարդարացներ երկրին ընդհանուր հաշիւէն չեղիլը։ Միայն թէ բաղձալի էր, որ պարզապէս բնական և գիտական հաշուոյ խնդիր մը աւելորդ տարաձայնութիւն չառնէր ազգերու և եկեղեցիներու մէջ, և որովհետեւ այժմէն այդ դիտմամբ չարժուածներ կը տեսնուին, յուսալի է որ գործը կարգադրութեան մը յանգի, տարբերութիւնը 14 օրուան չբարձրացած, որ տեղի ունենայ երկու դարէն 2100'ին։

ՀԱՑՈՑ ԴՊՐԱՏՈՒՆ

1573. Զանազան կողմերէ և զանազան պատճառներով Հռոմ եկող պանդուխտներուն հետ հասած էր նաև այրի քահանայ մը, Ծովհաննէս Տէրղնցի, քէպէտ Տէրղինը անծանօթ, որ իր երկու աղջիկները Ամիդի մէջ թողլով հայցատուր որդւոյն հետ եկած էր բախտ փնտռելու (ՁԻԵ. 249)։ Սուլթանչահի հետ մտերմանալով Հռոմի մէջ տպարան մը կազմակերպելու հետեւեցաւ, և անկէ ելած առաջին գործն է, Տաճար Գրիգորեան յաւելեանն, որ եղեր չէչհառաֆեան հզոր պետն և այլ նախաորոց, 1584'ին տպագրուած (Լ.Ե. 104)։ Անդուլա Գրիգոր պապին յատուկ պաշտպանութեամբ կը կատարուէր այդ հրատարակութիւնը, որով պապը իր տոմարական կազմակերպութիւնը Արեւելքին ալ կ'ուզէր ծանօթացնել, թէպէտ որեւիցէ մը ձեռք ձգած չէ։ Պապը Արեւելքին և առանձին Հայերուն վրայ մտազբաղութիւն դարձնելով, կերպով մը կ'ուզէր անոնցմով փոխարինել, ինչ որ Արեւմուտքին մէջ բո-

ղաքականութեամբ իւր իրաւասութենէն ե-
լած էր։ Սակայն այս նպատակով խորհեցաւ
Հայոց յաւուրս և անոնց անունով եկեղեցա-
կան դպրատուն մը բանալ Հռոմի մէջ, ամ-
բողջապէս պապական գանձուն ծախքով,
որպէս զի այնտեղ պատրաստուին Հայազգի
եկեղեցականներ, հռոմէականութեան սկըզ-
բունքով մնած և ուսած, և անոնց ձեռքով
Հայեր և Հայոց եկեղեցին հռոմէադաւա-
նութեան վերածուի։ Վասնզի թէպէտ իր
կոնդակին մէջ կ'ըսէ, թէ Հայոց եկեղեցին
չոխինչ ձեռնադիր ծեռնադրութիւն հա-
պաղ ի Տեառնէ Յիսուսէ, սակայն վեր-
ջէն կը յաւելու թէ պղծեցին ի նոսա մոլե-
ռութիւնն (ՋԱՒ. Գ. 526), և այս կերպով
կ'ուզէ յաւուրս վարժարանի պէտքը առ-
ջեւ բերել։ Գործը Հայերուն դիւրընկալ
ընելու համար, գովութեամբ կը յիշատակէ
Հայ եկեղեցւոյն առաքելական քարոզու-
թեամբ սկսած ըլլալը, և Հայոց բիւրապիսի
նահատակաց և նեղութեանց ներքեւ իրենց
քրիստոնէական հաւատքին վրայ հաստա-
տուն մնալը։ Բայց Հայերու հաստատուն
պահած հաւատքը հայադաւանութիւնն էր,
որով պէտք կ'ըլլայ այդ իմաստով առնել
Գրիգոր ԺԳ. պապին Հայերուն համար չոայ-
լած գովեստը։ Պապին որոչումը արդիւնք և
գործադրութիւն չունեցաւ. կոնդակը 1584
հոկտեմբեր 13 թուականն կը կրէր, և ինքն
1585 ապրիլ 10'ին կը մեռնէր, գործին
սկզբնաւորութեան իսկ չհասնած։ Գրի-
գորի մահուանէ ետքը իւր յաջորդները այդ
միտքին մտադրութիւն չդարձուցին, և միայն
Ութերասնս Ը պապ, երբ 1630'ին առնոլները
ընդհանուր ազգութեանց համար Բրօբականա-
նայի կամ Տաւալոցի դպրատունը հիմնեց,
Հայ երիտասարդներ ալ ընդունուեցան, և
անոնցմէ սերեցան հռոմէադաւանութեան
նուիրեալ քարոզիչներ, և այնպէս չարու-
նակեց, մինչեւ որ Լեւոն ԺԴ պապ 1883'ին
Հայոց յաւուրս Լեւոնեան դպրատունը բա-
ցաւ Հռոմի մէջ։

1574. Գրիգոր ԺԳ պապը Հայերուն
վրայ մտադրութիւն դարձնելու յորդորող
պատգամներուն գլխաւորը, Հռոմ խոնուող
Հայերուն ներկայութիւնն և պաշտպանու-
թեան թախանձանքներն էին, բայց դուր-
սէն ալ իւր մտադրութիւնը հրաւիրող պա-
րագաներ պակաս չեղան։ Հռոմի հետ յարա-
բերութիւն մշակողներուն մէջ նախաձեռ-
նարկ դեր մը կը ստանձ-
նէր Սսոյ աթոռ, և Ներ-
սէս Ե Տաճեցի 1575'ին
այդ իմաստով դիմում
կ'ընէր Գրիգոր ԺԳ պապին (ԱԶԱ. 108)։
Որչափ ալ այդ նամակին մէջ գործածուած
արեւելեան չափազանցութիւնները և չոդո-
քորթ նմանութիւնները՝ դաւանական մեկ-
նութեան տանիլը, պարզապէս բորբոքեալ
երեւակայութեան արդիւնք ըլլան (ԱԶԱ.
109), սակայն իրողութիւն մրն է՝ եղած
դիմումը, որուն նպատակն է միշտ էջմիածնի
աբեղան Սիմէոն (§ 1571), զոր Ուլնեցի նոր
կազմակերպուող Հայութիւնն ալ (§ 1563)
արեւմուտքէն կ'ակնկալէր, հետեւելով կի-
լիկեցւոց հնազանդ նախապաշարեալ գաղա-
փարին (§ 1055)։ Այդ դիմումին իբրեւ ար-
դիւնք պիտի ճանչցուի, պապին կողմէ յա-
տուկ նուիրակի մը կիլիկիա ղրկուիլը, յա-
րաբերութիւնները ճշդելու և իսկական
հռոմէադաւանութեան հաւանեցնելու Հա-
յերը, վասնզի Գրիգոր պապն ալ պէտք չէր
անգիտանար Հայերուն չատ չատ անգամ-
ներ առատ յայտարարութիւններ գրելը,
առանց երբեք իրենց նախնական դիրքէն
խախտելու։ Պապերը արդէն Հռոմի մէջ
յատուկ Հայերու հոգածու և պաշտպան
կարդինալ մը հաստատած էին, որ էր Ծու-
լիոս-Անտոնիոս Սանսէվէրինօ (di San-Se-
verino), իսկ պատուիրակութեան ընտ-
րուեցաւ Լէոնարդոս Միդոնի անուանական
եպիսկոպոսը, որ Հռոմէ մեկնեցաւ 1583'ին
ուղիղ դէպի Հալէպ, մեկտեղ ունենալով
պապէն նամակ մը Յակոբոս կաթողիկոսի
անունին (ԿԱՔ. 309), և հաւատոյ դաւա-
նութեան պատճէն մը (ԿԱՔ. 311), որուն
համեմատ պիտի հաստատուէր յարաբերու-
թիւնց հիմը, և որ անհրաժեշտ պայմանը
պիտի ըլլար ակնկալուած օգնութիւնց։
Յակոբոս արդէն ծեր մարդ էր ասելէ դա-
դրեցած ար, երբ իրեն վերէն ընդհանուր և
օգնական առաւ Ազարիա Ջուղայեցին, որ
անոր կենդանութեան ջաղաջ ատ ծառայեց
Սսոյ կաթողիկոսարանին (ԿԱՔ. 312), և
անշուշտ այդ պատճառով Ազարիայի ա-
նունն ալ Յակոբոսի հետ յիշուած էր

ՀԱՑՑՑ ՄԱՍԻՆ
ԳՈՐԾԵՐ

1575'ին՝ պապին ուղղուած նամակին մէջ (ԱԶԱ. 108)։ Լէոնարդոս Արեւելք չհասած հաչատուր վախճանած էր, և Ազարիա իրեն յաջորդած 1584 փետրուար 25'ին (09 ՕՐԱ. 283), և ան այլ օրէնք կ՚օրօշէ ձեր ազգէ ներս՝ Հալէպ գացած էր, երբ այն տեղ իրեն ներկայացաւ պապական նուիրակը բանագնացութեանց նպատակով, և իրր առաջին պայման, էքէք օօլչ ղօօանօօրիճան օօրբ հօօպոյ, զոր հայերէնի թարգմանած էր Գրիգոր Բերբերացի սարկաւագ կաթողիկոսական թանին (ԿԱՔ. 311)։ Բանակցութիւնները չատ հեշտ եղած պիտի չըլլան, եթէ դիտունք որ անոնք տարի մը չարունակեցին՝ մինչեւ որ ելք մը ունենան։

ԼԷՈՆԱՐԴՈՍ ՊԱՏՈՒԻՐԱԿ

1575. Լէոնարդոս Հալէպ եղած ատեն լուր կ՚առնէ թէ էջմիածինի կաթողիկոսութիւն Առաքել՝ Ամիդ կը դանուի, և հարկաւ կը տեղեկանայ ալ թէ էջմիածինի աթոռին դիրքը աւելի բարձր և ազդեցութիւնը աւելի ընդարձակ է քան Սսոյ աթոռը, ուստի անոր հետ ալ յարաբերութեանց կը մտնէ, իւր պաշտօնին ու նպատակին կարեւորութիւնը չատցնելու համար։ Այդ առթիւ Լէոնարդոսի գրութեանց մէջ կը յիշուի Գրիգոր ԺԲ կաթողիկոսը 85 տարեկան ծերունի մը, և Առաքել աթոռակից, և Դաւիթ փոխոլ (ԱՐԱ. 232)։ Թադէոսի անունը յիշուած չէ, ուակից կը հետեւի թէ Թադէոս Բ վաղարշապատեցի աթոռակիցը, որ Իտալիա և Լեհաստան ալ գացած էր (§ 1569), արդէն վախճանած էր 1584'ին, Գրիգորի կենդանութեան, որով անտեղի կ՚ըլլայ անոր անունը կաթողիկոսական գաւազանին անցքուիլը սովորական ցուցակին մէջ (ԺԱՒ. 637)։ Փակակալ անունով յիշուած Դաւիթն ալ, Գրիգորի նոր աթոռակից Դաւիթն է, ան ե՛ն է նոյն գեղջեն էջմիածնէ (ԴԱՎ. 2), որուն կաթողիկոսակից ըլլալը 1586'ին կը դրուի թէ Դավրիժեցիէն (ԴԱՎ. 338) և թէ Երեւանեցիէն (ՋԱՒ. 20)։ Սակայն անհաւանական չէ մինչեւ 1584 բարձրացնել աթոռակցութեան թուականը, նկատելով որ առանց այդ պայմանի անոր անունը Գրիգորի և Առաքելի հետ յիշուած չէր ըլլար. արդէն փակակալի պատուանունն ալ չատ բարձր նշանակութիւն ունէր հին դարերուն մէջ։ Ակիլան կը գրէ թէ Լէոնարդոս երեքէն ալ ընդունելութեան առած ըլլայ, իւր առաջարկներուն համար (ԱՐԱ. 232), սակայն ոչ ինքն և ոչ իւր համամիտներէն վատիկանի դիւանները պրպտողներ, այսպիսի գիրեր ոչ տեսած են և ոչ հրատարակած, որով ենթադրական կը մնայ այս տեղեկութիւնը։ Պատմական յիշատակներ չեն բացատրեր Առաքելի Ամիդ կամ Տիարպէքիր գալուն չարժառիթը։ Պարագաներու մերձեցութեամբ կը գտնենք, որ 1584 տարին Պարսից և Թուրքաց պատերազմին ընդհատուելուն միջոցն է (§ 1570), և հաւանաբար Առաքել եկած է Ամդեցիներու օգնութեան դիմելու, որոնք լաւ և կարող վիճակ ունէին, և ուր առաջնորդ էր Սրապիոն եպիսկոպոս, Ղուկաս կեղեցիի աչակերտներէն (§ 1564), որ մեծ հռչակ ունէր թէ իւր հմտութեամբ և ազդեցութեամբ, և թէ իւր մեծահարուստ ունեւորութեամբ։ Յառաջիկային պիտի տեսնենք՝ այդ առաւելութեանց համար անոր կաթողիկոսութեան հրաւիրուիլը Վաղարշապատեցի Դաւիթէն։ Գուցէ կանուխէն ալ այդ միտքը յղացած էր, և Առաքել նոյն նպատակով Ամիդ եկած էր, բայց այս անգամ ելք մը չունեցաւ։ Լէոնարդոսի դառնալով անոր էջմիածնի հետ յարաբերութեանց մասին ստոյգ բան մը ըսել դժուար է։ Նմանապէս էջմիածին երթալու դիտում ունեցած, և Օսմանեանց նոր արչաւանքին պատճառով արգիլուած ըլլալը (ԱՐՐ. 232), պարզ ենթադրութիւնէ աւելի նշանակութիւն չունի։

ԱԶԱՐԻԱՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

1576. Լէոնարդոսի և Ազարիայի միջեւ հաստատուած բանակցութիւնք մինչեւ 1585 չարունակեցին, թէպէտ մանրամասնութիւնք մերի անծանօթ կը մնան, այլ Գրիգոր պարկաւագ կը վկայէ, թէ միայն չեփ չոյժ ֆաֆաօրնեան և ղօօյնչ բաղամ անեմ է հեփ պօրնօփէր Ալեքսեայ եպիսկոպոսին, և յետ խորհրդակցելոյ է յաւէթ քաֆին իւր եպիսկոպոսէն և երէցներէն, այսինքն մեծամասնութեամբ և ոչ միաձայնութեամբ, վերջապէս ընդունելօօ ատորադրել առաջարկեալ դաւանութիւնը է փաշն եպիսկոպոսութեան երէցօյն Հալէպ (ԿԱՔ.

307)։ Ասոր վրայ Ազարիա Սիս դարձաւ, և այն տեղէ գրուած ևն երկու նամակներ, մէկը կաթողիկոսին և միւսը եպիսկոպոս. ներուն կողմէն, ուղղուած Գրիգոր ԺԴ պապին 1585 ապրիլ 10 չաբաթ օր թուակա. նով, որ այն տարին աւագ չաբաթ եղած է, և է նաեւ Գրիգոր ԺԴ պապին մեռած օրը (§ 1573)։ Ազարիա իւր նամակին մէջ կը յայտնէ, թէ կաթողիկոսութեան չանցած ուխտ ունեցած է Հռոմ այցելել, բայց հի. մայ այլեւս չկրնար, վախնալով յայլ ևն ֆոյնոց, ևթէ բնակութենէն հեռանար։ Ա. նոր համար, Յովհաննէս եպիսկոպոսը կը յղէ իւր տեղը, և անոր հետ Գրիգոր սար. կաւագն ալ, ասոնել պատճէն համար, և Աստուածաչունչ մըն ալ կը ղրկէ ըստ այնմ ապագրելու համար, վասնզի գրչագիրներ 200 կամ 300 ֆլորին կ'արժեն և չեն գըտ. նուիր։ Կը յիշէ թէ ստորագրած է ներկա. յացուած դաւանութիւնը, տեղեկութիւն ունեցած է Նորփման փոխարէն, բայց թէ չկրնար խոխոել յասել ևն ըստ ազէէ, և կը յաւելու թէ սարկաւագը կու գայ ևնէ ի փղոյվ վան ասոնն է պարտականն (ԿԱՓ. 312)։ Ակնարկներ ունի Դաշանց Թուղթին և կո. ռիկոսեանց ժամանակ Հռոմի հետ յարաբե. րութեանց մասին, որպէսզի հաստատէ թէ իրենք միշտ Հռոմի միացեալ եղած են, թէպետեւ կը խոստովանի, թէ քաղաք մը նախնէ ոչ են պահել ըստ պարտ (ԿԱՓ. 309)։ Այդ յայտարարութեանց նպատակն է պապին սիրտը օգնութեան և նպաստի չար. ժելու, զի, կ'ըսէ, ասենէն եմ ևրէյ է ներ. ևոյ անողորմ բերանը, որ ևան ղեղց ղերց ա. ղնան օր փանջին և ըրլաբեն ընդ աքահա. ղնեմք, մինչ մինք գնանք և ազատ եմ (ԿԱՓ. 309)։ Իսկ միւս նամակը ստորագրած են Մարտիրոս Աչոտի, Յովհաննէս Զէյթու. նի, և Ղազար Հալէպի եպիսկոպոսներ, Մըսըրչան, Լիպարիա, Յանուչ և Պուտախ Սսոյ իշխաններ, և Յովհաննէս քահանայ Հալէպի։ Ասոնք կը վկայեն թէ Ազարիա Աչատուրի օգնական եղած է և այժմ իրենց կաթողիկոսն է, և կը խնդրեն որ ըստ այնմ ճանչցուի, և կը փակեն միշտ նոյն յանգերգը կրկնելով, թէ ի' ասանաւ ղեղ ղաղաս և գնանք (ԿԱՓ. 313)։ Շա. բունակ աղքատ և մնանկ ըլլալնին յիշե. ցնելը՝ կը բացատրէ կիլիկեցւոց ունեցած ակնկալութիւնը, և Լէոնարդոսի ներշնչած յուսադրութիւնը, և դաւանութիւնը ստո. րագրելնէն ապատուած հետեւանքը։ Որոչա. կի պիտի չկարենանք ճշդել թէ ստորա. գրող Զէյթունի եպիսկոպոս, կամ թէ ու. րիշ Յովհաննէս եպիսկոպոս մըն է Հռոմ երթալիք պատուիրակը։

ԱԶԱՐԻԱՑԻ ԴԱՒԱՆԱԳԻՐԸ

1577. Դաւանութեան գիրին մանրա. մասնութեանց մտնել հարկ չենք տեսներ, զի Հայոց եկեղեցւոյ միաքով և Հայերուն կող. մէ չարադրուած գրու. թիւն մը չէ, այլ կատար. եալ հռոմէական միտքով և Հռոմի կողմէ կազմուած դաւանութիւն մը, լատիներէն գրուած, և ապա հայերէնի վերածուած, ինչպէս որ Գրիգոր սարկաւագը կը յայտա. րարէ, թէ ևարգմանեցի և ֆրեյէ հասարա. մաևնութեամբ, որչափ որ կարացի և ֆիտացայ է պար. մաևներ, ղոր արար ինչ պէր եպիսկոպոս Սկիվե. նի է ֆրանկի և յարտակ լիզնե, և ես ֆրեյէ է հայերէն (ԿԱՓ. 307)։ Հետեւաբար Հայ կաթողիկոսի և Հայ եկեղեցականի մը գիտ. ցածին կամ դաւանածին բացատրութիւնը չէ, այլ ստիպմամբ առնուած ստորագրու. թիւն մըն է, այն ալ տարի մը ձգձգելէ ետքը տրուած, իբրեւ բռնադատեալ պայ. ման մը ևերկութեանց հանդէպ պաշտպա. նութիւն և աղքատութեան հանդէպ օգնու. թիւն գտնելու ակնկալութեան։ Այլ թէ ինչ արդիւնք ունեցած ևն, յայտնի չէ. որովհետեւ պատմութեանց մէջ Լէոնար. դոսի պատգամաւորութեամբ գալը յիշուած և գրուած է, բայց դառնալէն ետքը որեւէ արդիւնք ունեցած ըլլալը գրուած չէ։ Այս տեղ ալ հռոմէադաւանները կը կարծեն ան. ջրելի փաստ մը և հաստատութիւն գտած ըլլալ Ազարիայի վկայութեամբ, սակայն չուզելով ալ կրկնել թէ որպիսի ստիպման ներքեւ տուած է Ազարիա իւր ստորագրու. թիւնը՝ իրեն առջեւը դրուած թուղթին ներքեւ, դիտել պէտք է տանք թէ Ազա. րիա ոչ Հայոց եկեղեցւոյ հայրապետն է, ոչ Հայ եկեղեցւոյ ներկայացուցիչն է, և ոչ ալ օրինական ժողովով որոչում մը տուող է։ Սսոյ աթոռը բաժանեալ և մասնաւոր աթոռ մըն է, անոր աթոռականն ալ կարօտու.

թեանց և նեղութեանց լուծին ներքեւ կրած անձ մըն է, որ որեւէ պայմանով մը դիւրութիւն գտնելու հարկին ներքեւ կը հնձէ։ Այսու հանդերձ բաւական կ'աշխատի բերանատիչ հարկէն ազատիլ, և վերջապէս երկ եպիսկոպոսի, չորս աշխարհականի և մէկ քահանայի պիտակցութեամբ պահանջուած ստորագրութիւնը կու տայ, և ոչ թէ ինքնաբերաբար իւր միտքը կը յայտնէ։ Այսպիսի անհատական գրութիւն մը ոչ Հայոց եկեղեցիէն ընդհատ է, և ոչ Հայոց եկեղեցւոյ դաւանութիւնը կը ներկայէ։ Դիտողութիւն մըն ալ պէտք է աւելցնենք, Ազարիայի դաւանութեան ներքեւ Ղազար եպիսկոպոսի և Գրիգոր սարկաւագի 1585 մայիս 1 չաթաթ օր թուական կանով, Ազարիայի ստորագրութիւնը հաստատուն վրայ։ Կ'երեւի թէ Լէոնարդոս ստորագրութիւնը առնելէն երկ չաթաթ առը աւելցնել տուած է ստորագրութեան վաւերացումը, ինքն ալ ստորագրած, և Բերիայի լատին նուիրակին ստորագրութիւնն ալ աւելցուցած (ԿԱՓ. 308)։ Վերջապէս նկատելի է որ Ազարիայի անունը Զաքարիա արձանագրուած է պապական դիւանին մէջ (ԿԱՓ. 302), և կ'երեւի թէ անունը ճիշդ գրելու չափ ալ կարեւորութիւն չէ տրուած ձեռք անցուած ստորագրութեան։

ԱԶԱՐԻԱՑԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

1578. Շատ աւելի նշանակալից է դրծին հետեւանքը։ Լէոնարդոսի և Ազարիայի միջեւ գոյացած համաձայնութեամբ Ազարիայի դիրքը կը խախտուի, և ընդհանուր ժժգոհութեան առիթ կը դառնայ, և տարին չանցած Ազարիա հանգուցեալին կողմէն կը մերժուի, և Տիրատուր Սահակ, մականուանեալ Գիտնական, որ 1563'ին Կոստանդնուպոլսոյ պատրիարքութենէն եղած էր երկամեայ պաշտօնավարութենէ հետքը (§ 1563), կաթողիկոս կ'օծուի Սսոյ մէջ 1586 մարտ 20'ին։ Սահակին Տիրատուր ալ երկար առին հաճելի չի ուաւ, և Յովհաննէս Ակնեցւոյ, մականուանեալ Բարեբարոյ, իրեն հետամտիններ կը գտնէ, և ինքն ալ կաթողիկոս կ'օծուի Սսոյ մէջ 1588'ին, և այսպէս Կիլիկիոյ մէջ երկ կաթողիկոսներ միանգամայն կը գտնուին, իւրաքանչիւրը իրեն հետեւորդներու չքնաղ մը ունենալով, սակայն Սիսը Յովհաննէսի ձեռք կը մնայ։ Այդ երկպառակութիւններ և բաժանումներ հետեւանք էին Ազարիայի Հռոմի հետ հաստատած յարաբերութեան, և որչափ ալ ցաւալի ըլլայ այդ հետեւանքը, յայտնապէս կը ցուցնէ թէ Կիլիկիա բովանդակ հետեւորդ չէր Ազարիայի ստորագրած դաւանութեան, և թէ Ազարիայի ըրածը անձնական կամ մասնաւոր գործ մը եղած էր։ Ազարիա Կիլիկիոյ մէջ իւր դիրքը վերանորոգելէ յետոյ հետ, Կոստանդնուպոլիս կու գայ, ուր Յակոբ պատրիարքէն հետքը (§ 1563) նստած էին, Յովհաննէս Տիրապէզքիրցի 1573'ին, Թովմաս Գազատացի 1581'ին, Մարգիս Ուլնեցի 1587'ին, և Յովհաննէս Ուլնեցի 1590'ին։ Ազարիայի Կոստանդնուպոլիս գալուն թուականը յայտնի չէ, բայց հարկաւ կանուխէն երկած պիտի ըլլայ, որ առնէն ունենար կողմնակիցներ և պաշտպաններ չահելու համար, մինչեւ որ 1591'ին Յովհաննէսը հեռացնելով Կոստանդնուպոլսոյ պատրիարքութիւնը ձեռք անցուց, իսկապէս Սսոյ աթոռը դառնալու միտքը յաջողցնելու համար։ Հաղիւ տարի մը կը մնայ Կոստանդնուպոլիս, և 1592'ին Սիս կը դառնայ, և կը յաջողի Տիրատուրին և Յովհաննէսին վրայ ալ զօրանալ, և Սսոյ աթոռին տիրանալ, այլ եւս մոռնալով Հռոմն և Հռոմի յարաբերութիւնները։ Ազարիայի թեմերուն կոստիան այդ վերջին մասը երբ 10 տարի առած է, և վախճանած է 1601 յունիս 2'ին (ՁԱՄ. Գ. 536), և գերեզմանը կը գտնուի Բերիոյ եկեղեցւոյն մէջ, նշանակելով արձանագրութեամբ մը, Թող դանդաղ փիլ Ագաթօ Խրոլիկոն (08 ԱՐԹ. 593), որ կարծես թէ կ'ուզէ առաջին անգամ տեղեկութիւն ակնարկել։ Քանի որ Ազարիայի գերեզմանը յատակ արձանագրութեամբ մէջտեղ է, չենք գիտեր ինչ պատրուակ առած են հռոմէականք կարծել, թէ Ազարիա չէր փոչանաց է Հռոմ եկեց և վախճանեցաւ (ՍԻՄ. 218)։ Ազարիայի մահէն հետքը Յովհաննէս Սկեւռացի Նորէն Սիսի մէջ գրաւեց, և գերեզմանը մեծ մահէն ալ առաջ, դի Ազարիա Բերիոյ մէջ եկեղեցուած կ'ապրէր, ուր և մեռաւ, և իրրեւ ուրոյն աթոռ

մը ախտաւէզ նոր յայտրդ ալ ունեցաւ, Պետրոս Կարկառեցին, որ 7 տարի պաշտօնավարեց, և վախճանեցաւ 1608 ղեսպ պոնոց Նթ+ըբ[illegible] (08 ԱՐՆ. 594), այսինքն է մարտ 22'ին, և գերեզմանը կը մնայ Բերիոյ եկեղեցին։ Յովհաննէս և Պետրոս, և թերևս անկէ ալ առաջ Յովհաննէս և Ազարիա, համերաշխութիւն գոյացուցին, որ իւրաքանչիւրը որոշ չրջանակի մէջ իրաւասութիւն վարէ (ԶԱՄ. Գ. 528), մինչև որ Պետրոս ալ մեռաւ, և 1586'ին սկսած պառակտումը վերջացաւ 22 տարի տեւելէն ետքը, և Յովհաննէս Սչնթապցի միանձնան մնաց Սսոյ աթոռին վրայ, մինչեւ իւր մահը 1627'ին։

Կ-ՊՈԼՍՈՑ ԱԹՈՌԸ

1579. Իակ կոստանդնուպոլսոյ մէջ Ա. զաթիայի մեկնելէն ետքը 1592'ին նորէն աթոռ բարձրացաւ Սարգիս Ռէվնեցին, որ երկու տարի առաջ տեղի տուած էր Յովհաննէս Ուէվնեցիին (§ 1578), և այս անգամ ալ չորս տարի ետքը տեղի տուաւ Տիրատուր Սանցիին, որ անգամ մը պատրիարք եղած էր (§ 1563), և վերջերս ալ Սսոյ կաթողիկոսութենէն հեռացուած էր՝ Ազարիայի կրկին զօրանալուն պատճառով, թայց կաթողիկոսական կերպով ճոխանալէ չէր դադարած։ Կրնայ մոռացուիլ թէ Վարգիս պատուազիր կերպով տեղի տուած ըլլայ Տիրատուրի, ուսկից ժամանակին ստացած էր եպիսկոպոսական ձեռնադրութիւնը (90 ԱՐՆ. 519)։ Տիրատուր այս անգամ ալ երկար պաշտօնավարութիւն չէ ունեցած Կոստանդնուպոլսոյ աթոռին վրայ, զի երեք տարիէ 1599'ին, մայրաքաղաքի մեծամեծները հանէն զինքն յղեցոյց, ուրիշ արժանաւորագոյն մը գտած կարծելով պատրիարքութեան համար (ԶԱՄ. Գ. 535)։ Կիլիկիոյ և Կոստանդնուպոլսոյ վերաբերեալ տեղեկութիւնները կանխակցինք հաւաքել այստեղ, չարաշարութիւններն պահելու համար։ Քաղաքական և պետական գործերէն չատ բաներ չունինք պատմելի այդ միջոցին, զի կը տանէր Փուրքաց և Պարսից մէջ հաստատուած 1590'ի հաշտութիւնը (§ 1570), և գրեթէ տեղապէս Հայաստան և Կովկաս Օսմանեանց իշխանութեան ներքեւ իր գրաւէին, էջմիածինն ալ միասին։ Սակայն կաթողիկոսները ուրոյն դիրք մը չէին գրաւեր պետութեան աչքին, որ կը չարունակէր իր իրմէ ծանուցեալ հոգեւոր պետ և ազգապետ ճանչնալ Կոստանդնուպոլսոյ պատրիարքը, և անոր խոզուած էր պարտ ու պատշաճ հոգեւոր յարաբերութիւնները պահել բոլոր ուրիշ աթոռներու հետ, և և նոյն կարգին՝ էջմիածնի աթոռին հետ ալ։ Սսեցիներու և Ուէվնեցիներու կոստանդնուպոլսոյ աթոռին վրայ յաջորդաբար բարձրանալը, և նոյնիսկ Ազարիայի և Տիրատուրի Սսոյ կաթողիկոսի անունը վրանին պատրիարքական աթոռը գրաւելը, յայտնի կը ցուցնեն Սսոյ և Կ. Պոլսոյ մէջ տիրող սերտ յարաբերութիւնը, սակայն էջմիածնի Օսմանեանց տիրապետութեան ներքեւ անցնելը, պէտք էր Մայրաթոռի հետ յարաբերութիւնները զօրացնէր, և իրօք ալ այդ արդիւնքը յառաջ եկաւ, և այդ առեներէն կոստանդնուպոլսոյ աթոռը վերջնականապէս և բացառապէս կապուեցաւ էջմիածնի Մայրաթոռին հետ։

ԳՐԻԳՈՐԻ ՎԱԽՃԱՆԸ

1580. Գրիգոր ԺԲ. վաղարշապատեցի կաթողիկոսն ալ՝ երբ իւր կեանքը կնքեց, իբր Օսմանեան հպատակ կը նկատուէր։ Գրիգորի վախճանը որոշապէս գրուած չունինք գոներ, և պարտաւորեալ մնանք յիշատակներու բաղդատութենէն պիտի քաղենք թուական մը։ Լէհաստրդոսի յիշատակներուն մէջ կը գտնուի Գրիգորի անունը, թէ 1583'ին կենդանի էր տակաւին, թէպետ 85 տարեկան ծերունի մը (ԱՐԱ. 232)։ Ինչ ետքը 1585'ին, է կոնդկոստաննա պէս Գրիգորէ կը դնէ Դաւիթ Մարեցի եպիսկոպոսը՝ իւր գրած աւետարանին ժամանակը (ԹՈՐ. Բ. 368), տարի մըն ալ ետքը 1586, նոյն պէս Գրիգոր կենդանի կը ցուցուի Դավրիժեցիին ժամանակագրութեան մէջ (ԴԱՎ. 338)։ Տարի մը նաև ետքը 1587'ին Դաւիթ եպիսկոպոս Գեղամայ երկրէն, որ նոյն ինքն վերոյիշեալ Մարեցին կ'երևի, Խնուսի մէջ ղրկել եղած աւետարանը մը կը գրէ է կոնդկոստաննա պէտ Գրիգորէ յետոն էջմիածնէ, ճգդելով իսկ թէ [illegible] Աբեթելէց աչէտրն է վոնդէ կոյ, որովհետև

Օսմանլոս ազգն շատ քեզդուղաղ եռա (ԹՈՐ. Բ. 446), և իրօք գիտենք թէ 1577'ին սկսած էին Օսմանեանց արչաւանքները (§ 1570)։ Այդ թուականէն ետքը Դրիգորի անունը տուող յիշատակարանի չենք հանդիպած, իսկ Դավրիժեցին մինչեւ 1593 կը յետաձգէ Դաւիթի անունը գլուխ անցընել (ԴԱՎ. 338) որ կրնայ առնուիլ իբր Գրիգորի մահուան թուական։ Արդ 1593'ին Գրիգոր պէտք է 95 տարեկան եղած ըլլար, այնպէս որ այլ եւս անունով միայն կաթողիկոս կրնար ըսուիլ, բոլորովին ակարացած և զառամած վիճակի մէջ, բայց և այնպէս գահակալութիւնը իրաւամբ իրը կը մնար, թէպէտ աթոռակիցներն ըլլային գործնականապէս կաթողիկոսութիւնը վարողներ։ Դավրիժեցին իւր պատմութեան սկիզբը, առանց թուական յիշելու կը գրէ, թէ ի ժամանակս յոր էր կաթողիկոս տէրոյ տէրոյն էջմիածնի, պէր Առաւել (ԴԱՎ. 1), սակայն այսչափով Առաքելը գահակալ կաթողիկոս չենք կրնար ընդունիլ, քանի որ ուրիշ տեղ 1578'ին ալ ի հայրապետութեան պեռան պէր Առաւելին էջմիածնի սուրբ տէրոյն (ԹՈՐ. Բ. 435) գրուած կը գտնենք, երբ աներկբայաբար Գրիգոր էր գահակալը։ Ծիշատակագիրներ կը սիրեն տալ այն անունը՝ որ գործի գլուխ կը գրտնուէր, և Գրիգոր, 80 տարեկան եղած ատենէն կամ աւելի առաջ գործը աթոռակալներուն թողած կ'երեւի։ Ըստ այսմ երբ Առաքելին համար յաճախ ոմ Տէր բսելէն ետքը կը գրէ, յեր սուրբ եկոց կաթողիկոս սուրբ էջմիածնի պէր Դաւիթ (ԴԱՎ. 2), կրնանք Առաքելը ընդունիլ իբր վարիչ, և ոչ գահակալ կաթողիկոսութեան։ Բնական ալ էր որ երիցագոյն աթոռակից Առաքելին մահէն ետքը, աթոռին կառավարութիւնը կ'անցնէր իրմէ ետքը եկող Դաւիթին, որուն աթոռակից անուանուած ըլլալը արդէն գրած ենք (§ 1575)։ Բայց այդ ձեւը չէր արգելեր, որ իրաւամբ և կանոնապէս գահակալ նկատուէր միւս Գրիգոր, թէպէտ զառամած և բոլորովին գործէ քաշուած, բայց ոչ հրաժարած և ոչ ալ գահընկէց նկատուած։ Ջամչեան, և անոր հետեւողութեամբ կազմուած սովորական ցուցակը, Գրիգորի միայն 4 տարի կու տան 1569'էն սկսելով, և Մատթէոս Ջ, Թադէոս Բ, և Առաքել Ա աթոռակիցները գաւազանին կ'անցընեն, և 1586'էն Դաւիթ վաղարշապատեցին գահակալ կը նշանակեն (ԺԱՄ. 637), մինչ մենք մինչեւ 1587 Գրիգորը յիշատակուած ցուցուցինք։ Ուստի յիշեալ երեքը կաթողիկոսական գաւազանին չենք անցըներ, և Գրիգորի իրաւական կաթողիկոսութիւնը հաւանական հաչուով մը մինչեւ 1590 կ'երկարաձգենք, այն տեսութեամբ միայն, որ Դաւիթ 1593'ին աթոռակից մը առնելէն առաջ, յոյժ ինչ կաթողիկոսութիւնը մինակ վարեց, ըստ քէչման ժամանակի և ըստ իւրում կրէ (ԴԱՎ. 2)։

Տ. ԴԱՒԻԹ Դ. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԵՑԻ

ԱԹՈՌԱԿԻՑ

1585. *Դաւիթի նախընթացէն բաւական բան արդէն ըսած կը գտնուինք, թէ բնիկ էր էջմիածնի գիւղէն, որ է վաղարշապատ (ԴԱՎ. 2), թէ Գրիգորէ աթոռակից ընտրուած էր 1584'ին (§ 1575), և թէ Առաքելի մահուանէ ետքը աթոռին վարչութիւնը ձեռք առած էր (§ 1580), մինչ անկէ առաջ իբր փակակալ կամ լուսարարապետ միայն եկեղեցւոյն հոգածութիւնը կը կատարէր (§ 1575)։ Գահակալութեան անցնելն ալ պարագանելու մերձեցուցմամբ հաւանական ցուցուցինք 1590'ին դնել (§ 1580)։ Դաւիթ վաղարշապատեցին մենք Դաւիթ Դ ըսինք, թէպէտ սովորաբար Դաւիթ Ե գրուած է (ԺԱՄ. 437), որովհետեւ իւր կարգին ցուցուցինք թէ Դաւիթ Դ կարծուածը Ամենայն Հայոց կաթողիկոս մը չէ, այլ Աղթամարի կաթողիկոսն է (§ 1375)։ Գրիգորի վերջին ժամանակները, երբ կաթողիկոսարանի վարիչներն էին Առաքել և Դաւիթ աթոռա-*

կիցներ, հետզհետէ ծանրացած և դառնացած էր Հայաստանի վիճակը, մանաւանդ Պարսիկներէ նոր առնուած գաւառներու մէջ (§ 1570), որոնց վրայ հինգ Օսմանցի կուսակալներ նշանակուած էին, Թաւրիզ, Երեւան, Գանձակ, Շամախի, և Դարբանդ քաղաքներու մէջ, իսկ Վրաստան հարկատու ազգային իշխաններու ձեռք էր (ԴԱՎ. 1), որոնք երբեմն թագաւոր ալ կը կոչուէին։ Ամէնէն աւելի անտանելի դարձած էր այդ գաւառներուն վրայ դրուած հարկը, որ ուղղակի Մայրաթոռին վրայ ալ կը ծանրանար, և վճարումը անհնարին էր եղած տիրոջ կարօտութեան երեսէն, այնպէս որ կաթողիկոսը կրցածը վճարելէն ետքը, կը պարտաւորուէր խոյս տալ, հալածական լինել և ըստ ժամանակաց, և հալածական և թափառական կ'անցընէր (ԴԱՎ. 2)։ Իր կացութեան դարման կը մտածէ Դաւիթ իրեն աթոռակից մը առնել, որ դրամ ճարելու օգնէ, և այս առթիճանին կը բարձրացնէ Մելքիսեդեկ Գառնեցի եպիսկոպոսը, այր խոհեմ, և հեռատես նախանձաւոր, որ կ'աշխատէր կողմնակիցներ ալ ճարելով աթոռակցութիւնը ձեռք ձգել (ԴԱՎ. 21)։ Դաւիթ այսպէս ըն այնպես, կամայ ըն չոլ կամայ Մելքիսեդեկը օրհնեց 1593'ին (ԴԱՎ. 338), սակայն ապատած դիւրութիւնը չգտաւ, վասնզի եղէն երկու կաթողիկոս և երկու հակոզ, և թէ այս և թէ հարկապահանջութեան պատճառներով պարտքերը աճեցան մինչեւ չկրնան հոգալ գոհաշ (ԴԱՎ. 3)։ Սակայն գոհացը այժմեան արժէքով իմանալու չէ, վասնզի այն առեն իտալական կրօն դրամին արժէքն ունէր, որ այժմեան զուռուշին քսանեւհինգպատիկն էր։ Կացութեան չբարւոքելուն պատճառով Դաւիթ և Մելքիսեդեկ ալ հաւասարապէս իջեր էին և ըստ ժամանակաց և ըստ տեղեաց կ'երթային, և չարունակ տեղ կը փոխէին, ան ալ գիշերային, չտեսնուելու համար (ԴԱՎ. 3)։ Իրենց նպաստ ճարելու միջոց, գուցէ և կայսերական չնորհ առանալու յոյսով, Մելքիսեդեկ անձամբ կաստանդնուպոլիս գնաց, Տիրատուր Սսեցիի պատրիարքութեան օրով, շուրջ 1598'ին, և լաւ ընդունելութիւն ալ գտաւ, այնպէս որ ազգային մեծամեծներ հրապուրուեցան Տիրատուրը հեռացնել, և պինքն պատրիարք անուանել 1599'ին (§ 1579), բայց Մելքիսեդեկ իր նպատակին չկրցաւ օգտակար ըլլալ։ Կոստանդնուպոլսեցիք կ'ուզէին իրմով օգտուիլ, ընդհակառակն Մելքիսեդեկ անոնցմէ օգտուելու կ'աշխատէր, ուստի չուտով յարգը կորսնցուց, և տարին չլրացած իսկ 1600'ին, պատրիարքութենէ հանուեցաւ, և պարտաւորուեցաւ էջմիածին դառնալ, առանց Մայրաթոռին կացութեան դիւրութիւն մը ընծայած ըլլալու։

ԱԻԵՏԻՍ ԱՔՈՐԱԿԻՑ

1582։ Այստեղ ոմանք երրորդ կաթողիկոս մըն ալ կը յիշեն Աւետիս անունով, առանց ցուցնելու թէ ո՛վ էր և ուստի՞ և ե՞րբ կաթողիկոսութեան բարձրացաւ (11 ԱՄՍ·5)։ Այս անունը անգամ մը հարեւանցի կը յիշէ Զաքարիա Քանաքեռցի (ՁԱՔ. Ա. 50), և անոր յիշատակութիւնը կ'ընէ Գրիգոր Դարանաղցին ալ (11 ԱՄՍ·69), սակայն Դավրիժեցին, որ իրեն չատ մօտ ժամանակի պատմութիւնը մանրամասնօրէն կը գրէ, Աւետիս անունով կաթողիկոս մը չճանչնար, և միշտ երկու կաթողիկոս (ԴԱՎ·3), երկուքն կաթողիկոսն (ԴԱՎ·4), կաթողիկոսաց երկոցունց (ԴԱՎ·6), կաթողիկոսն երկուքն (ԴԱՎ·8), կը գրէ Դաւիթի և Մելքիսեդեկի անուններու տալով, և մենք Դավրիժեցիին վկայութեանը վրայ հիմնուելով, այդ միջոցին Դաւիթի մօտ երկրորդ աթոռակից մը չենք աւելցներ, ուրիշ առիթի թողլով Աւետիսի խնդիրը։

ՇԱՀԱԲԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

1583· Շահաբաս Պարսից թագաւոր, որ Օսմանեանց հետ 1590'ի հաշտութիւնը կընքեց ծանր պայմաններով, բայց իր տէրութիւնը զօրացնելու դիտմամբ (§ 1570), իրօք ալ խղճի մտօք այդ նպաստակին հետեւեցաւ, և հետզհետէ վերակազմեց Պարսկաստանի անկեալ վիճակը։ Իր ձեռք առած միջոցներուն մէջ նշանաւոր էր՝ քրիստոնէից և յատկապէս Հայոց հանդէպ ցուցած բարեացակամութիւնը, որով ամէն տեսակ պաշտպանութիւն առատապուղ անոնց, կրկին նպաստակներով։ Մէկը անոնց առևտրական և արհեստագիտական յաջողակութիւններով իր երկիրը ճոխացնել և զօրացնել, և միւսը

Հայերուն սիրտը իրեն կողմը չտնելով՝ Օսմանեանց դէմ կատարելիք ձեռնարկին համար ազդեցիկ օգնականներ չունի։ Այս ընթացքին արդիւնքն եղաւ, որ էլեաեն և կոչտակալէ, մահդպանէ և էրխոանեայէ, հետզհետէ սկսան գաղթել Պարսից թագաւորութեան կողմը, էլ ընթեաս նաեա դիւրընթաց էտցին վերջնելէ ի ծառայութենէն Օսմանցոց (ԴԱՎ. 8)։ Պատմիչը Մահմետականներէն յանուանէ կը յիշէ, Ղազի խան և Հայաթ բէկ Ուլամայօղլի Քուրդ ցեղապետները, որոնք Շահաբասի կողմը անցան, իսկ Վրացի իշխանազուններէն չատեր, Սիմոն խանի բանտարկութենէն և սպանութենէն ետքը Պարսկաստան ապաւինեցան։ Պարսկաստան գաղթող Հայազգի իշխանազուններէն կը յիշուին Սարուխան բէկ և եղբայրը Նազար բէկ Ոսկանապատ գիւղէն, Օղլան քէչիլ և եղբայրը Ղուլու բէկ Հաթերք գիւղէն, Ջալալ բէկ և եղբօրորդիները Խաչէն գաւառէն, Սուլջում մելիք Դիզակ աւանէն, Փաչիկ մելիք Քօչիկ գիւղէն, Բաբէն մելիք Բրիտիս գիւղէն, Մելքիսէթ եպիսկոպոս Մելիքզատէ գիւղէն, և Հայկազն մելիք Խանածաղ գիւղէն։ Դիզակի գաւառէն՝ չորս գիւղեր դահաղչն, և Ագուլիս կամ Գողթն գաւառէն Դաչտ գիւղի ժողովուրդէն եբէտման ալ խմբովին գաղթեցին, և Շահաբաս բոլոր եկողները սիրով կ'ընդունէր և կը բնակեցնէր Ասպահան (ԴԱՎ. 9), որ իւր մայրաքաղաքն էր ըրած, և կ'ուզէր չէնցընել։ Այսպէս հետզհետէ կը զօրանար պարսկասէր կողմը, և Դաւիթ ու Մելքիսեդեկ կաթողիկոսներն ալ սկսած էին Շահաբասի սիրելի ըլլալու ձեւեր գործածել, վասն զի կը նախատեսէին թէ Շահն հաստատելոց է յաչխարհն Հայոց (ԴԱՎ. 10)։

1584. Իսկ Շահաբասի գալէն սպասուած ակնկալութենան իրականալուն ժամանակը անորոշ էր, և պէտք էր դրամի և հարկի ստիպողական պէտքին հանդէպ անմիջական դարման մը հոգալ։ Գահակալ ուաթոռակից երկու կաթողիկոսներ կը մտածեն նոր աթոռակից մը աւելցնել, որ թէ գործունէութեամբ և թէ դրամական կարողութեամբ կարենայ զօրաւոր օգնական մը

ՍՐԱՊԻՈՆ
ԱԹՈՌԱԿԻՑ

ըլլալ։ Այսպիսի մէկ մը ամէնուն կողմէ վկայուած էր Սրապիոն Ուռհայեցի մեծ վարդապետը, Ամիդի կամ Տիարպէքիրի եպիսկոպոս։ Իրքն մեծահարուստ հօր ժառանգ ըլլալով ալ՝ երկեղեցական կոչման նուիրուած էր, և աչակերտած Ղուկաս կեղեցի վարդապետին (§ 1564), որ էր ելեսի ամենայն վարդապետաց ժամանակին, և անկէ ընդունած էր վարդապետական գաւազանը 1586 փետրուար 20'ին, և յետոյ Տիարպէքիրի առաջնորդ եղած, և ինքն ալ նոր աչակերտութիւն բացած, և նշանաւոր վարդապետներ հասուցած։ Այսպէս եղան, Գրիգոր կեսարացի, Բարսեղ Ամիւնցի, Յովհաննէս Ուռհայեցի, Արիստակէս Տարոնեցի, Յովսէփ Հղուեցի, Յովհաննէս Հղուեցի, Յովհաննէս Քաջբերունի և Մովսէս Տաթեւացի։ Ուսումնական զարգացման հետ, ազդեցիկ դիրք մըն ալ չունած էր Սրապիոն նոյնիսկ Հռոմոց և Ասորւոց և Մահմետականաց առջեւ, և ոչ փութանայր առ նա ֆրէնկ ոք ինչ և կամէր կենցաղական (ԴԱՎ. 5)։ Դաւիթի և Մելքիսեդեկի համար ընտրութիւնը դժուար չեղաւ, և իրենց գրութեամբ Սրապիոնը կաթողիկոսութեան հրաւիրեցին, խոստանալով անոր ձեռքը յանձնել ամէն գործերը, և դէ, կ'ըսէն, դեղն դերվէ կամ է քաց կամ է կաղուչկոսրնեն և է փէղսրնեն, բայց այս խօսքերով ոչ թէ իրենց աստիճանէն, այլ միայն գործերը վարելու նախաձեռնութենէ կը հրաժարէին։ Սրապիոն հաւանեցաւ, բայց ոչ իր չալեփ կաղուչկոսրնեն և ֆառոց, կ'ըսէ Դավրիժեցին, այլ վան էլեսրնեն լառաօֆիս աթոռոյն, և հասաւ Ջուղայ, ուր եկան զինքն դիմաւորել երկու կաթողիկոսներն, Մանուէլ Հաւուցթառի, Մանուէլ Խորվիրապի և Աստուածատուր Գեղարդի եպիսկոպոսներով, և քանի մը ազգականներով։ Աֆետեղ բանակցութեան կը մտնեն, Սրապիոն չխնայեր ոսոլ ինչ եկեբեան բանս, որուն երկու կաթողիկոսները, և որ կաղուչկոսրնեն էին, ոչ հաճեցան, Հաւուցթառեցին ոչմոկ չէօրէկ եաբէ, և խռնփութեաց ղսրել և ղլեել, վերջապէս էլկոսրնեն և խաչրնեն սիրեց, և Դաւիթ ու Մելքիսեդեկ բանակցութիւնը խզելով Տաթեւի վանքը մեկնեցան։ Սրապիոն Ջուղայի մէջ մնաց, և Ջուղայեցիք

անոր խօսքերուն և կարողութեան զմայլելով՝ չանացին առաջին խորհուրդը լրացնել, և իրենց միտքին համեցուցին ըսելով՝ թէ կ՚երթան, և էջմիածինի մէջ Սէնհոթոս Դ կազմեցին, և Սրապիոնը կաթողիկոս օծել տուին Դեքեմբեր հնդկէ 1603 օգոստոս 14՚ին (ԴԱՎ. 7), վերափոխման կիրակի օրը, և ոչ Հոգեգալստեան օրը (11 ԱՄՍ. 5), որ յունիս 12՚ին կ՚իյնար։ Այս առթիւ մեծ խրախճանքներ եղան Գրիգոր ԺԴ Սրապիոն, աթոռակից կաթողիկոս, զի գահակալութիւնը միշտ Դաւիթին կը մնար ցորչափ չէր հրաժարած։

1585. Դաւիթ և Մելքիսեդեկի խորհուրդը կատարուած էր, բայց ոչ ինչպէս իրենք մտադրած էին։

ՇԱՀԱԲԱՍ ԵՒ ՍՐԱՊԻՈՆ

Սրապիոն տիրացած էր էջմիածինի, մինչ իրենք Տաթեւ քաշուած կը մնային, և սկսան վախնալ զի մի՛ ի խռովութիւն ընկնէին։ Որպէսզի ճառագ խռովութիւնն ի չեա՛ խոցեան (ԴԱՎ. 8), մտածեցին իրենք առաջին Շահաբասին դիմել, և անոր ձեռքով թէ դիրքերնին պահել, և թէ Օսմանցոց հանդէպ ունեցած պարտքերնէն ազատիլ։ Մելքիսեդեկ իրեն հետ առնելով Հաւուցքաւոր և Դիզարդի եպիսկոպոսները փութաց Ասպահան իջնել, իսկ Դաւիթ Որվիրապի եպիսկոպոսին հետ Հայաստան մնաց։ Շահաբաս պատուով ընդունեցաւ եկողները, խօսեցաւ և խօսեցուց, ըմբռնեց խորհուրդը զրկից նոցա չէին ծալած, և ըմբռնեց զրկիցնին զչիրհելն և զնոցա՝ և վերջապէս զչիրհելոլ զանոց ինձա՛ (ԴԱՎ. 10), և անմիջապէս արշաւանքի ձեռնարկեց։ Մեծ յաղթութիւն մը տարաւ Օսմանցոց վրայ, որոնց հրամանատարն էր Ալի փաշա, Թաւրիզի կուսակալը, և պատերազմին սկսելէն 20 օր ետքը քաղաքը մտաւ, անկէ Նախիջեւան քալեց, ուր Օսմանցիք չհետացած աւարառութեան ձեռնարկած էին, և դիւրաւ գրաւեց։ Ջուղայի Հայերը՝ իրենք Շահաբասը դիմաւորեցին և քաղաքը յանձնեցին և Շահաբասը խօսքայ Յակիկի տունը պատուասիրեցին (ԴԱՎ. 16)։ Վերջապէս 1603 նոյեմբեր 16՚ին Շահաբասի բանակը երեւցաւ Երեւանի հանդէպ, ուր Օսմանեանք ամրացած էին իբրեւ իրենց սպաստանի դղեակը (ԺՈՒ. 184)։ Պարսից յաջողութիւնները կոստանդնուպոլսոյ արքունիքը վրդովեցին, սուլտան Մէհէմէտ Դ որ 1595 յունուար 16՚ին հօրը Մուրատ Գ՚ի յաջորդած էր, գոյժէն քիչ օր ետքը մեռաւ 1603 դեկտեմբեր 22՚ին, և Ահմէտ Ա գահակալեց 14 տարեկան եղած տէն։ Երեւան անձնատուր եղաւ վեց (ԺՈՒ. 188), կամ ութն (ԴԱՎ. 23) ամիս խիստ պաշարման դիմանալէ ետքը, որ է ըսել 1604՚ին կէսէն ետքը։ Մխիթարն միջոցին կարան ալ ինկաւ Պարսիկներու ձեռք, այլ Ախլցխա դէմ դրաւ, երբ միւս կողմէն Օսմանեանք էրզրումի մէջ նոր բանակ կը գումարէին (ԺՈՒ. 189)։ Էջմիածինի պահանջատէրերը երեւանի պաշարումէն առաջ, սկսած էին Սրապիոնը նեղել էջմիածինի հին պարտքերը գանձելու համար, զորս Սրապիոն չէր ուզեր ճանչնալ, բայց պարտաւորուեցաւ ամանց յալով և ամանց առնոտալ, և այնպէս վճռե՛ ի չեա՛ նոցա (ԴԱՎ. 14)։ Իսկ Երեւանի առումէն ետքը Սրապիոն ալ իբր կաթողիկոս, ընդդէմ եղեւ Շահաբասի առջեւ, բայց շուն անթե՛ ապրի ընե, վասնզի կանուխէն Մելքիսեդեկին հետ համաձայնած էր զայն իբր կաթողիկոս ճանչնալ, քանի որ զայն իբր շահենչեն, այսինքն իբր իւր կողմնակից ընդունած էր։ Ատոր վրայ Սրապիոն խոհեմութիւն սեպեց հեռանալ, և չնչե՛ նոյ ինոց ի Զո՛ղայ, որպէսզի անկէ ալ Տիարպէքիր դառնայ ի թե՛լ ի՛ր (ԴԱՎ. 18)։

1586. Դաւիթ և Մելքիսեդեկ Շահաբասի կողմն անցնելով և Պարսից տիրապետութեան օժանդակելով,

ՍՐԱՊԻՈՆԻ ՎԱՒԱՃԱՆԸ

կը կարծէին ոչ միայն իրենց կաթողիկոսութիւնը ապահովել, այլեւ Օսմանեանց հեռանալովը անոնց ունեցած պարտքերնէն ազատել, բայց այդպէս չեղաւ։ Հազիւ թէ Շահաբաս Երեւանի մէջ հաստատուեցաւ և Օսմանեանց գրաւած գաւառները ետ առաւ, անոնց պահանջատէրերն ալ տէր դարձան, և երկու կաթողիկոսները ստիպուեցան [illegible]

իբր կաթողիկոսակից և պարտքին ալ մասնակից (ԴԱվ. 19)։ Գլխաւորապէս Մելքիսեդեկն էր, որ առաջ սրհմաբեաց վարդապետ՝ Շահաբասի դիմելով (ԴԱվ. 151), և այս անգամ ալ ուզեց այս կերպով զօրաւոր մրցակիցէ մը ազատիլ։ Շահաբասի հրամանով թագաւորական հարկապահանջները, կաթողիկոսական պատուիրակին հետ իսկոյն ճանապարհ ելան Սրապիոնի հետեւէն, Ջուղայի մէջ ըմբռնելէն ետք, և սրբոյն է կալանեն, և պահանջէին է նմանէ ֆռանք յղելով։ Թէեւ Սրապիոն մաս մը բան վճարեց, սակայն հարկապահանջները չգոհացան, և աւելին գանձելու համար սկսան վարդապետ է վտանգել ընչաբանաց, հարուածով և ֆռանկ, մինչեւ իսկ է հրապարակի կախել յոտից քրածնէ առնէին ետ սաստիկ առաջ յղելվ (ԴԱվ. 19)։ Սրապիոն ստիպուեցաւ քաղաք ֆռանք եղած առել վճարել, որպէսզի հարկապահանջները գոհացնէ. և այսպէս ձերբազերծեալ, Ջուղայէ մեկնեցաւ ու եկաւ վան, և վանէ Տիարպէքիր (ԴԱվ. 20), ուր նորէն իբր առաջնորդ ընդունուեցաւ, ինչպէս կը տեսնուի 1605'ին այնտեղ գրուած յիշատակարանի մը մէջ, է պէրպէրօղլնէն ժերոյ նահանջէ պէր Սրապիոն վարդապետին, որ և ընդհէ Տնառն՝ Գրիգոր կոնդակոս առաջ էջմիածնայ (ԹՈՐ. Բ. 435)։ Սակայն թէ տարիքը առած էր, և թէ փորձանքներէ տկարացած էր, որով Տիարպէքիր գառնալէն տարի մը ետք վախճանեցաւ 1606 ապրիլ 23'ին (ԴԱվ. 20), երեւման խաչին ուրբաթ օրը, և նոյն տեղ թաղուեցաւ հասարակաց գերեզմանատան մէջ, ուր տակաւին կը տեսնուի իր համեստ չիրիմը պարզ տապանագիրով մը։ Սրապիոնի կաթողիկոսութիւնը երազի պէս անցած բան մը եղաւ, և ոչ ալ կանոնաւոր գործունէութիւն մը ունեցաւ։ Դաւիթէ և Մելքիսեդեկէ հրաւիրուելով և չհամաձայնելով, Ջուղայեցիներու ստիպմամբ ձեռնադրուեցաւ 1603'ին վերջերը, գործի չի ձեռնարկած պատերազմի տագնապներուն ենթարկուեցաւ, իր ունեւորութեան համբաւին երեսէն վտանգուեցաւ, և հանեցէն տարի մը ետքը մազապուր ազատուելով իր տեղը դարձաւ, և քիչ ետքը մեռաւ։ Իրրեւ անհատական ձիրքերով նշանաւոր անձ մը, պատուաւոր յիշատակ մը թողած է Սրապիոնի անունը, թէպէտ իբր կաթողիկոս ոչ մի նշանակութիւն ունեցած չէ։ Եւ ոչ ալ իբր հակաթոռ նկատուած է, թէպէտեւ վերջին պահուն Դաւիթ և Մելքիսեդեկ ետ կեցած ըլլան իրենց առաջարկէն, ուստի իբր օրինաւոր աթոռակից կը պահենք իւր անունը, Գրիգոր ԺԴ Սրապիոն կոչմամբ։

1587. *Սրապիոնի վրայ գործածուած խստութիւնը՝ Դաւիթին ու Մելքիսեդեկը ընտրելեց պահանջուած վճարումներուն գոհացում տալ, միւս կողմէն Շահաբաս ալ իրենց վրայ չատ չծանրացաւ, քանի որ իւր նոր աշխարհակալութեանց դիւրութիւններ ընծայած էին։ Բայց երկու կաթողիկոսներ չի կրցան հանգստութիւն վայելել, և միշտ անորոշ վիճակ և թափառական կեանք ունէին։ Այդ միջոցին կրնանք պատճառներնել Աւետիս Ա կաթողիկոսի մը երեւումը, թէեւ առանց երկուքներուն կամքին եղած, այլ Սրապիոնի հեռանալէն ետքը, իբր անոր յաջորդ նշանակուած ժողովրդական նախաձեռնութեամբ, ինչպէս եղած էր Սրապիոնի ալ օծումը (§ 1584)։ Այդ միտքը յայտնապէս կը թելադրուի, Աւետիսի համար Դարանաղեցիին գրածէն, թէ եր անխոթեմբ և հանուսակ էպիսկոպոս (11 ԱՄՍ. 69), որ ուղղակի հակաթոռ մը ըսել կ'ըլլայ. սակայն քանի որ ժողովուրդէն պաշտպանուած էր, ամենայն վերապետ և խոստոստ յեպիսկոպոսաց և ի տանուցից և ի ժողովրդոյն ընտրեալ պատուակ անէին, մանաւանդ որ միւս երկուքը սիրուած չէին, և անհամ էին օրպես ղաղ անպիտան (11 ԱՄՍ. 69)։ Այդ հակաթոռութեան ձեւն է անշուշտ պատճառը, որ Դավրիժեցին երբեք Աւետիսի անունը չէ յիշած։ Նոյն միջոցին Շահաբասը առաւ թէ Օսմանեանց սպարապետ Ջղալօղլի Սինան փաշա կարնոյ մէջ անագին բանակ մը կը պատրաստէ իրեն վրայ քալելու համար (§ 1583), և որովհետեւ ինքն անոր դիմադրելու պատրաստ ոյժ չունէր, պատերազմէ խոյս տալու եղանակը որոշեց, և միանգամայն թշնամիին ոյժը կոտրելու համար, ուզեց երկիրը անմարդաբնակ ընել և անապատ դարձնել, որպէսզի յար-*

ձակոզ բանակը պաբէն ու դարման չգտնայ և չկարենայ յառաջել (ԴԱՎ.·26)։ Այդ խորհուրդները կ'ըլլային 1604 տարուոյ ա-չունի սկիզբները, չեմ գիտեր ամսոյ խալին (ԴԱՎ.·27), և վերահաս ձմեռն ալ աւելի զգալի պիտի ընէր Շահաբասի մտածած հնարքը։ Առաջին անգամ իւր միտքը յայտնեց Աքճաքալէ եղած ատեն, որ է հին Երուանդակերտը (ԴԱՎ.·26), իրեն մօտ հրաւիրելով տեղւոյն մեծամեծները, որոնց գլուխը կը գտնուէր Ծովհաննէս քահանայ, Աղա Տէրտէր կոչուած։ Անոնք ձմեռը պատճառելով գործադրութիւնը գարուն թողուլ առաջարկեցին, բայց արդէն ձմեռուան պարագան Շահաբասի մտածմունքին հիմնակէտն էր։ Ամիրգունա խան, Երեւանի պարսիկ կուսակալը, գլուխ նշանակուեցաւ նոր ձեռնարկին, և Պարսկական Հայաստանի զանազան գաւառներու համար յատուկ զօրապետներ նշանակուեցան աշխուժօրէն խորհուրդը գործադրելու։ Հրաման տրուեցաւ քաղաքներու և գիւղերու բոլոր բնակիչները ճանապայ հանել դէպի Արարատի դաշտը, անկէ միահաղոյն Պարսկաստան անցընելու համար, դիմադրողները սուի և ճահաճով և ջրոսկիով բնաջինջ ընել, ջրհորները, ջրանցքները և ջրաղացները ալ ջրով կամ փայտերու ապականելով կամ կենդանիներու պոչերուն փաթթուելով անցնելու համար։ Դավրիժեցին աղիողորմ չէշտերով կը նկարագրէ աղետալի անցքը, զոր մենք պիտի չկրկնենք, բաւական ըլլայ ըսել թէ լողալու անփորձ տղաներու, կիներու և ծերերու դիակներով ծածկեալ էր եբէան ջուրը, և թէ քաղաքն այնէ էին որ հեղձմամբ ջրոյն մեռան, քան անոնք որ անցին (ԴԱՎ.·31)։ Վերջապէս յաջողեցան թուքերը չհասած բազմութիւնը անցընել, բանակն ալ անցաւ, Ամիրգունա խան հրաման ստացաւ Երեւան դառնալ, և գերութիւնը վարելու պաշտօնը անցաւ Էլիազ Խալիֆալու զօրապետին, ուղիղ Պարսկաստանի ներսերը տանելու համար զայն, ընդ Նեղ և Նոբի և ընդ դիմաւորին վայրս, իսկ Շահաբաս և բանակը իջան Թաւրէզ ընդ արեւմտեան ճանապարհն։ Երբ աքսորականները Ահար և Մուշկուն գաւառները հասան, այլեւս ոչ կարէին գնալ, վասն ասպիսասուոյ և գառնաղանջ ցրտոյ յերեան, ուստի բռնադատեալ այն կողմերը վերեցուցին ընտա տիս ինչ, մինչեւ որ գարունը բացուի (ԴԱՎ.·32)։ Հաւանական հաշուով 1606 տարուոյ յունուարին վերջերը կրնանք դնել այս դադարը։ Դաւիթ և Մել-

ասածով գանելով, և ըմանց գանգը և վիճակը հարցնելով, և մինչեւ իսկ վաղարշապատցի Ծովհաննէսի, Աւագիկ կաթողիկոսի եղբօր, և ուրիշ գլխաւորի մըն ալ գէլաթին կոբեցին, և է յոգ ցցեցին է յահ և յերկիւղ ժողովրդեանն (ԴԱՎ.·29)։

1588. Տագնապը հաւքանգիւս մնծցաւ, երբոր կարգը երասիր անցնելու հկաւ։ Հայեր ու պարսիկներ հասած էին Ջուղայ, երբ Թուրքեր ալ Նախիջեւան հասան։ Պարսիկներ սկսան վախնալ թէ մի գուցէ Թուրքեր վրանին գան, գիրենք վտանգեն և գերիները ազատեն։ Ուստի և ալ չամ մ հանգստութիւն տուին, այլ ամէնքը ստիպեցին գետը անցնիլ։ Որչափ ալ զանազան կողմերէ նաւեր հաւաքեցին, և նոյնտեղ չորս փոթ չինեցին, իմա՛ լաստեր և կուրեր, սակայն բազմութեան համար բաւական չէր, մինչ պարսիկ բանակը բազմութիւնը չրջապատած էր որ փախչող չըլլայ, և բոլոր գետը կը մղէր լողալով կամ փայտերու ապաւինելով կամ կենդանիներու պոչերուն փաթթուելով անցնելու համար։ Դավրիժեցին աղիողորմ չէշտերով կը նկարագրէ աղետալի անցքը, զոր մենք պիտի չկրկնենք, բաւական ըլլայ ըսել թէ լողալու անփորձ տղաներու, կիներու և ծերերու դիակներով ծածկեալ էր եբէան ջուրը, և թէ քաղաքն այնէ էին որ հեղձմամբ ջրոյն մեռան, քան անոնք որ անցին (ԴԱՎ.·31)։ Վերջապէս յաջողեցան Թուրքերը չհասած բազմութիւնը անցընել, բանակն ալ անցաւ, Ամիրգունա խան հրաման ստացաւ Երեւան դառնալ, և գերութիւնը վարելու պաշտօնը անցաւ Էլիազ Խալիֆալու զօրապետին, ուղիղ Պարսկաստանի ներսերը տանելու համար զայն, ընդ Նեղ և Նոբի և ընդ դիմաւորին վայրս, իսկ Շահաբաս և բանակը իջան Թաւրէզ ընդ արեւմտեան ճանապարհն։ Երբ աքսորականները Ահար և Մուշկուն գաւառները հասան, այլեւս ոչ կարէին գնալ, վասն ասպիսասուոյ և գառնաղանջ ցրտոյ յերեան, ուստի բռնադատեալ այն կողմերը վերեցուցին ընտա տիս ինչ, մինչեւ որ գարունը բացուի (ԴԱՎ.·32)։ Հաւանական հաշուով 1606 տարուոյ յունուարին վերջերը կրնանք դնել այս դադարը։ Դաւիթ և Մել-

քիսեդեկ կաթողիկոսներ այլ բազմութիւնն հետ էին, բայց Մելքիսեդեկ դադարէն օգտուելով ետ դարձաւ, և էն էջմիածին և առնէր գլխոյկոս-ին (ԴԱՎ.153), առնոյ էխմեծ լճէն (ԴԱՎ.156), մինչ Դաւիթ բազմութեան հետ մնացած էր: Մելքիսեդեկի ետ դառնալը բնաւ Մայրաթոռի համար հոգածութիւն ունենալէն չէր, զի երեւանի մէջ բնակութիւն հաստատեց, և չուրջը հաւաքելով ղզիկան և ղեղեացս էր, չորեքսոյ լոյծ և ընտրյալ կենօք, մխիթն և արքեպիսկոպոս (ԴԱՎ.153): Գարնան բացուելուն նորէն ճանապայ հանուեցաւ ազգութեան բազմութիւնը, Աբուխուրաք բէկի գլխաւորութեամբ, որ յաջորդած էր Էլիասի, մինչեւ որ հասան Ասպահան: Քաղաքացի հղողները քաղաքին մէջ բնակեցան, իսկ չինականները և զէղականները զետեղուեցան Ասպահանի չուրջ հղող Էնջան, Ալինջան, Գանդիման, Ջղախոտ, Փարիա և Բուրվարի գիւղերը, 500 տուն ալ փոխադրուեցաւ Շիրազ գաւառը՝ Ալլահվերտի խանին խնդրանօք, այն կողմերն ալ չէնցնելու համար (ԴԱՎ.33): Հայաբնակ հղած տեղերու կարգին Քանաքեռցին կը յիշէ նաեւ Ահար, Ապահի, Համատան, Գուլփէքան, Քրման, Խունսար, Խոյիկան և Շրխչաբան կոչուած տեղերը (ՉԱՓ.19):

ՋՈՒՂԱՑԻ ԳԱՂՈՒԹԸ

1589. Արարատի մեծ գաղութը, ընդարձակուած էր ոչ միայն նահանգին բոլոր գաւառներուն վրայ, այլ և անոնց հետ Բարձր-Հայոց և Տուրուբերանի և վասպուրականի չրջակայ մասերուն վրայ (ԴԱՎ.381), որոնք վերջին օրեր Պարսիկներուն անցեր էին, և հիմայ կը ստիպուէին նորէն լքանել: Ընդհանուր տագնապին մէջ առանձինն յիշատակութեան արժանի է Ջուղա քաղաքի գաղութը, վասն զի քէ իւր մեծահարուստ և ազդեցիկ դիրքովը, և քէ սահմանագլուխի վրայ գըտնուելովը կրնար մտածուիլ, որ ընդհանուր աւերումէն ազատ մնար: Շահաբաս երբոր երասխը անցնելէ ետքը դէպի Թաւրիզ կ'ուղղուէր, յատուկ հրաման արձակեց Ջուղան ալ պարպելու համար, և այս հրամանին գործադիր նշանակեց Հանիս Թահմազղուլի բէկը, որ վրաց թագաւորական ազգատոհմէն Պարսկաստան մնացած և իսլամացած իշխաններէն էր: Երեք օր պայմանաժամ տրուեցաւ Ջուղայեցիներուն կամովին ճանապայ ելլելու, ուսկից ետքը աւարառութիւն և սպանութիւն պիտի սկսէր քաղաքին մէջ, և այս նպատակով զինուորներ և աւազակներ քաղաքը պաշարած էին: Անհնարին խուճապին խառնուեցան անձրեւ և ձիւն, փայլակ և կայծակ (ԴԱՎ.45), այնպէս որ անկարագրելի եղաւ Ջուղայեցւոց տառապանքը, որոց ոգիքը կը քաղուէին հայբենիքէն բաժնուելնուն, և սիրտերը կը տանջուէին ամէն տեսակ զրկումներով: Սրտաճմլիկ տեսարան մը բացուեցաւ կաթան Ս. Աստուածածնին եկեղեցւոյն առջեւ, ուր օտարութենէ դառնալու չնորհքը մաղթելով եկեղեցիներու և տուներուն բանալիները գետին մէջ նետեցին (ԴԱՎ.43): Շահաբաս անողոք, կրկին և կրկին հրամաններ կու տար, քաղաքին մէջ պահուածները փնտռել, և բոլոր քաղաքը կրակի տալ: Նոր տարուոյ գարունին նոր հետազօտութիւններ կատարուեցան Ջուղայի չուրջը, և մնացորդներ ճանապայ հանուեցան 6ինանց երկրորդամ կիրակի երկուշաբթի օրն (ԴԱՎ.46), այսինքն է 1605 ապրիլ 8'ին, և այսպէս իսպառ քանդուեցաւ Ջուղայ, ճոխ և փառաւոր գիւղաքաղաքը: Ջուղայեցիներէ մանաւանդ բաժիններ բնակեցան Թաւրէզ (ԴԱՎ.45) և Վալդրին, բայց բուն տեղերնին եղաւ Ասպահանի մօտ առանձին թաղ մը, որ Նոր-Ջուղայ կոչուեցաւ, և ոբ չէնցին յարկ և քնակոխին հրաշալի յօրինուածովք, կամարակապ փողոցօք, ընտրեալ ապրանօք, ամբառնան հովանեօք, քաջկրթեալ և արուեստագէտ շինուածօք: Սոյնպէս չէնցին և վիճեցան հրաշալեաց յօրինուածովք, երկնանման խորանօք, և էրեմբերդ կոչեցեալ, քաղաքակ ծագիկաւ զեղեց երանելով, ոսկով և լազուրդով, պեղրնկանօք Տեառն և պատկերով սրբոց, և է էլեսի կոչեցեալ կառուցիկ ընդ սրբոյ խաչն (ԴԱՎ.46):

1590. Այդ վերջին դիւրութիւնները, զորս բառացի առաջ բերինք Դավրիժեցիէն, կարծես հակասութեան մէջ կը գտնուէին առաջ պատմուած բռնութիւններուն հետ, և իրօք ալ խառնակ զգացումներով տոգորեալ անձ մըն էր Շահաբաս: Եթէ ուզենք այդ

ընթացքին բացատրութիւն մը տալ, պիտի ըսենք թէ իւր երկիրը չէնցնելու բուռն և յախուռն տենչն էր որ կը

ՇԱՀԱԲԱՍ ԵՒ ՀԱՑԵՐԸ

բորբոքէր իւր միտքը, և հետեւապէս ուրիշ տեղ եղած առաւելութիւնները նախանձելով, կ'ուզէր զանոնք իր կողմը փոխադրել, և այս նպատակով անգութ բռնութիւններէ իսկ չէր քաշուեր։ Հայը աշխարհասէն, օգտակար և զարգացուն տարր մըն էր, և որպէսզի նա իրեն համար աշխատի, ամէն դիւրութիւն կ'ընծայէր իւր երկրին մէջ, և ամէն բռնութիւն ալ կը գործածէր որպէսզի ուրիշին օգտակար չըլլայ։ Անհաւատալի ըլլալու չափ թոյլատու և քաղցր եղաւ անոր վարմունքը Հայաստանէ բռնութեամբ քչուած Հայերուն հետ, անգամ մը որ անոնք Պարսկաստան հաստատուելէն, որպէսզի սիրեն նոր բնակութիւնները և աշխատին անոր օգտին։ Ամէն մտերմութիւն և բարեացակամութիւն կը ցուցնէր, կ'այցելէր անոնց չինութիւնց, մտերմաբար կը տեսակցէր, և մանաւանդ Ջուղայեցւոց գլխաւորին խօճայ Սաֆարի տունը, գրեթէ իւր իջեւանն էր, ուր կ'ուտէր և կը խմէր անխտիր, և Տոյն աչքը կը ցուցնէր Սաֆարի եղբօր Նազարի, և որդիներուն Մելիքի, Սուլթանամի և Սարֆրազի։ Հայերը ստէպ արքունիք ալ հրաւիրելով կը պատուէր, և իւր նախարարներն ալ կը ստիպէր նոյնպէս ընել։ Հարկերը Հայերուն համար թեթեւցուցած էր։ Դատաստանները անոնց կողմ կը վճռէր, Պարսիկները զրկելով ալ։ Բնիկները իրենց առաջնութիւններէն հանելով Հայերուն կը սեփականէր. ամէն տեղ անխտիր եկեղեցիներ չինել կ'արտօնէր։ Հայոց մեծ տօներուն անոնց եկեղեցիները ալ կ'երթար և անոնց ուրախութիւնց կը մասնակցէր։ Ամէն ծիսական պաշտամունք հրապարակաւ և ազատօրէն կատարել կու տար, ինչպէս չըրօրհնէքը, կոչնակը, խաչվաճը, խափորը և հանդիսաւոր մեռելաթաղը (ԴԱՎ. 47)։ Շահաբասի ներքին նպատակը հետզհետէ արդիւնաւորեցաւ, զի բանի աքսորմամբ գաղթած Հայերը, որ սուաջ դառնալու մտածումով կ'օթօրուէին, սկսան այդ փափաքը կորնցնել, և մէկ կողմէն իրենց առեւտրական և արհեստական օգուտը, փրնկք կապից երկրին հետ, և տեղաւորուեցան նոր երկրին մէջ։ Շահաբասի այդ միտքը պարզօրէն կը բացատրուի այն խօսքերով զոր պատմիչը անոր բերանը կը դնէ, իբրեւ պատգամաւոր Պարսիկներուն պատասխան. Մի՛ վշտանայ և ծեղծրէ՛ չէ՛, չէ՛ ես քեզմո՛ ծախէ՛, չանէ՛ և հնարէ՛ հաչէ՛ ինչ ինձոյ բերել ընաս յայս աշխարհս, այլ ինչ ինձ օգուտ նոցա, այլ ինձ օգուտ ծը, չէ՛ ապէ՛ ծը չէնեցի, և ապէն ծը յաւելի (ԴԱՎ. 48)։ Միայն թէ Շահաբասի միտքն ու գործը տեւական չեղան, և չատ բան փոխուեցաւ իւր նախնական դրութենէն։

1591. Իբրեւ մեծ գաղթականութեան գործին յարակից պարագաներ, աւելցնենք այս տեղ ինչինչ մասնաւոր դէպքեր, որք ազէ-

ԳԱՂՈՒԹԻ ԱՐԿԱԾՆԵՐ

լութեան իսկական գոյնը կը ցոլացնեն։ Ամիրգունա խան, որ Երասխի եզերքէն հրաման ուսուցաւ իւր կուսակալութեան դառնալ (§ 1588), պաշտօն ունէր միանգամայն փախած և պահուրտած Հայերը հաւաքելով Պարսկաստան յղել։ Գառնի գիւղի բնակիչներ, իրենց վրայ հկող զինուորները ծեծած ու վիրաւորելով ցրուած էին, ու իրենց տեղը անդոգ կը մնային։ Ամիրգունա իրողութիւնը զինուորներէն իմանալով չէր յօժարեցաւ առնելով Գառնիի վրայ հկաւ, և ծեծով ու տրուածով ու խոչտանգանքով չարչարելէ ետքը՝ գիւղացիները քշեց մեծ կարաւանին ետեւէն, սակայն անոնցմէ մաս մը փախան, և քիչ մը պաշար ձարելով ապաւինեցան Գեղարդի ձորին քարանձաւները։ Ասոնց հետ էին Մանուէլ Հաւուցթառի և Աստուածատուր Գեղարդի եպիսկոպոսները, որոնք Մելքիսեդեկի հետ Շահաբասին գացեր էին (§ 1585)։ Ամիրգունա բարեկամական խօսքերով հրաւիրեց փախստականները վար իջնել, իսկ անոնք անարգական խօսքերով և քարերու տարուածներով պատասխանեցին։ Ասոր վրայ զինուորները տոփոխոց ճանապարներով և ժայռերէն սողոսկելով կըրցան քարանձաւները բարձրանալ, և ներս եղողներուն վրայ յարձակիլ։ Զինուորներէն մէկը Մանուէլի գլուխը կտրելով վար նետեց, Աստուածատուր կենդանւոյն վար

նետուելով Ամիրգունայի առջեւը սպանուեցաւ, և քարանձաւին մէջ եղողներէն մէկ մասը ջարդուեցաւ, մէկ մասն ալ մեծ կարաւանին հետեւէն քշուեցաւ։ Դավրիժեցին երկու եպիսկոպոսներուն սպանութիւնը օրըստ օրագրած Աթոռածոյ կը նկատէ (ԴԱՎ. 35), վասնզի Մելքիսեդեկի հետ Շահաբասը գրգռելու գացած ըլլալով, բոլոր ազէտներուն պատճառ եղած էին։ Ծիշատակելի է եւս Քօռաւարի ձորին սրկածը, ուր Եախրչեան կոչուած այրի մէջ հազարէ աւելի անձեր ապաւինած էին, մեծաւ մասամբ կիներ և տղայ, իսկ այրեր չրջակայ փոքր քարանձաւներու մէջ փակուած կը մնային։ Այրին անմերձենալի դիրքին պատճառաւ՝ Պարսիկ դիւնուորներ հետեւի կողմէն լերան գագաթը բարձրացան, և անկէց վար չուաններով և գօտիներով կախուելով մինչեւ քարայրի բերանը իջան, անկէ ալ տասերամերկ ներս խուժելով անագին ջարդ կատարեցին, կիներու և աղջիկներու վրայ բռնութիւններ ալ գործադրեցին, որով չատեր ըղձալիօրէն մահն նախադասելով՝ յանբոյսըլինէն ի վայր ուրանէն զինեցան և մեռանէին. չատերն ալ ցաւալի մահուան կը հանդիպէին, լերան ներքեւ գտնուող անթափ ձոռոց ճիւղերուն ցցուելով և տանջուելով (ԴԱՎ. 37)։ Այսուհէնայ ալ ապաւինողներէն մի մասը մեծ կարաւանին խառնուելով քշուեցաւ։ Այս երկու տեղնիտեղով պատմուած արկածներ բաւական են իրենց նմոյշ ծառայել այն անթիւ անհամար աղէտներու, որոց դուռ բացաւ Շահաբասի անգութ հնարքը։ Գաղթականին թողած երկիրը կատարեալ անապատի կերպարան էր առած, արգաւանդ հողեր խոպանացած, առուր բերդեր քանդուած, վանքեր և եկեղեցիներ կործանած, կաթողիկէներ տապալած, երկիրը բնակիչներէ թափուր, արտեր առանց հողագործի լքուած, գալաններ և գիւղատիպ թռչուններ չատցած, և իրաւամբ կը գրուին ժամանակակիցներ, հեղմզմզել եղեալ էզկէմ, և հոբեալ յոբոսոս ազբամ և աշխոբեմ, զի անոպոս եղեալ վայելել և փոյթ աշխոբեմ մեր (ԴԱՎ. 39)։

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

1592. Վերեւ յիշեցինք թէ Ջուլղայի Սինան սպարապետը Պարսիկ բանակը կը հալածէր և կը հետապնդէր (§ 1587), սակայն երբ երասխ կը հասնէր, թէ Պարսիկ բանակը և թէ աքսորական կարաւանը գետը անցեր էին, և դեռ կը մնային Ջուղայի աւերակները։ Օսմանցի սպարապետը չհամարձակեցաւ այլեւս յառաջել, աքսորական կարաւանը դժուարին ճանապարհով գացած էր, Պարսիկ բանակն ալ լաւ դիրքի և զօրացած վիճակի մէջ կը գտնուէր։ Ուստի հարկ սեպեց ձմեռուան խոտութիւնը յարգել, և վան ուղղուեցաւ ձմեռելու, բայց միշտ խիթալով Շահաբասի թաւրիզի մէջ հաստատած բանակէն։ Իրօք ալ Շահաբաս առաջին յարձակում մը փորձեց վանի վրայ, զարկաւ Օսմանցոց բանակը, աւերեց և թալանեց չրջակաները (ԴԱՎ. 53), առանց վանի տիրանալու (ԺՈՒ. 189)։ Սինան գարունին կարին եկաւ, և նոր ոյժեր ալ հաւաքեց զանազան կողմերէ, բայց Շահաբաս ուազմագէտ հնարքով նախ մասնաւոր պատերազմներու մէջ թշնամին տկարացուց, և յետոյ վերջնական յաղթութիւնը տարաւ 1605 հոկտեմբեր 25'ին, ի սկզբան փոբեմբէն (ԴԱՎ. 57), զի նաւասարդի 5'ն էր։ Ջուլղայի սպարապետը պարտաւորուեցաւ նահանջել դէպի Տիարպէքիր, ուր մեռաւ սրտի ցաւէն, թերեւս անձնասպանութեամբ ալ, 1606 փետրուար 6'ին (ԴԱՎ. 57), ուրիշներ կը գրեն 1605 դեկտեմբեր 2'ին (ԺՈՒ. 190)։ Այդ յաղթութիւնը հաստատեց Շահաբասի տիրապետութիւնը Հայաստանի այն մասերուն վրայ, որոնք 1590'ի դաշնագրութեամբ Օսմանեանց թողուած էին (§ 1570), և երեւան ու էջմիածին, չատ քիչ ժամանակ Օսմանեանց տիրապետութեան ներքեւ մնալէ ետքը, նորէն Պարսից ձեռքը անցան։ Աւելորդ կը սեպենք երկու կառավարութեանց բաղդատութիւնը մանել, տեսանք արդէն Օսմանեանց ներքեւ տեղի ունեցած տագնապը, պիտի տեսնանք Պարսից իշխանութեան բռնութիւնները։ Նոյն իսկ Շահաբասի բարեացակամութիւնը Հայերուն հանդէպ (§ 1590), սահմանափակուած էր Պարսկաստան գաղթողներուն վրայ, մինչ անոր ձեռքը աստկապէս կը ծանրանար Հայաստան մնացողներուն վրայ, ինչպէս վերեւ բացատրեցինք (§ 1590)։

1593. Պատերազմական տագնապներ և բռնի գաղութի ազէտներ չէն միայն, որ Աբեւելքը, և աւելի սաստկութեամբ Հայ տարրը կը ճնշէին։ Ջալալի կամ Ձէլալի կոչուած յեղուզակներուն փորձանքը, եթէ մեծագոյն չէր, համահաւասար արկած մըն էր։ Ասոնք իրարու հետ միացած կամ դաչնակից մարմին մը չէին, այլ իւրաքանչիւր գաւառի մէջ հաստատուած բռնապետ իշխաններ, զորս աւելի յարմար էր աւազակապետներ կոչել, ամէն ապահովութիւն և աւարառութիւն և սպանութիւն համարձակ կը գործէին, յաճախ իրարու դէմ ալ ելլելով։ Ձէլալի ընդհանուր կոչումը գուցէ յառաջ եկած է Ձէլալի քրդական ցեղին անունէն, որ նախայարձակը եղած էր այդ գործին, իր ցեղապետ Թօփալ Օսմանի գլխաւորութեամբ։ Այդ համարձակ յեղուզակութիւնը կը տիրէր բոլոր Օսմանեան կայսրութեան Ասիական գաւառներու մէջ, Պրուսայէն մինչեւ Պաղտատ, Տրապիզոնէն մինչեւ Դամասկոս, բայց աւելի սաստիկ էր Հայաստանի և կիլիկիոյ կողմերը։ Գրգռութեան պատճառն ալ երկրին անիշխանութիւնը և պետական ազդեցութեան բացակայութիւնն էր, իւրաքանչիւր ցեղապետ կամ կուսակալ իբր ինքնիշխան աէր ուզածը կը գործէր աւազակներու խումբ մը գլուխը ժողված, որ թուով հազարի կը մօտենար և քիչ անգամ հազարը կ'անցնէր։ Որեւէ լեռ մը կամ կիրճ մը յեղուզակներուն անթռնաբարելի ապաւէնն էր, անոնք տիրապետութեան չէին հետապնդեր, այլ կը գոհանային աւազակօրէն աւերելով և աւարելով, գերելով և ղերփելով։ Մեր նպատակէն դուրս է անոնց պետերը համրել, որոնցմէ 30'ի չափ յանուանէ կը յիշէ Դավրիժեցին (ԴԱՎ. 64), կամ աստ և անդ կատարած չարագործութիւնները պատմել, որոնք զանազան պատմիչներէ և յիշատակագիրներէ յառաջ բերուած են իրենց քստմնելի ցուցիչ և մորմոքիչ մանրամասնութիւններով։ Ոչ միայն գոտածնին և տեսածնին կը գրաւէին, այլեւ ծածուկ պահարաններու մէջ եղածները իմանալու և առնելու համար, անլուր տանջանքներով և խոչտանգանքներով կը չարչարէին, գլխաւորապէս վանքերու միաբանները և եկեղեցիներու քահանաները, և յատուկ կերպով կը հնարէին մանկամարդ կիներու, նորահաս աղջիկներու և գեղերես մանչերու առեւանգութեան։ Այդ անտանելի կացութեան հետեւանքն էր, որ արդէն գաղութով և կոտորածով անմարդացեալ երկիրը, փախուստի և խուճապի մատնուածներու երեսէն գրեթէ բոլորովին կը դատարկանար, հողագործութիւն, անասնաբուծութիւն, արհեստ և առեւտուր իսպառ կը դադարէին։ Հայերուն իրենց բնագաւառէն հեռանալը, որ զանազան պատճառներով արդէն ընդարձակութիւն գտած էր, անգամ մը եւս կ'աճէր և կը տարածուէր, և ով որ կրնար, կեանքը ազատել կ'աշխատէր ու պանդխտութեան ճանապարհը կը բռնէր։ Պարսկաստան, Ասորիք, Կովկաս, Լեհաստան, Հունգարիա, և Կոստանդնուպոլսոյ չրջակայքը նոր հայաբնակութեամբ կը լեցուէին։ Ձէլալիներու յեղուզակութեանց սկզբնաւորութիւնը ոմանք 1598'էն կը դնեն (ՉԱՄ. Գ. 536), ուրիշներ 1599'ին Հիւսէյին փաշայի ապստամբութենէն կը սկսին (ԴԱՎ. 64), բայց իդէպ է աւելի առաջ ալ դնել անոնց սկիզբը, և յիշեալ տարիներէն հաշուել աւելի սաստկանալը, որ տասը տարի եւս անընդհատ չարունակեց։

ՁԷԼԱԼԻ
ՅԵԼՈՒԶԱԿՆԵՐ

1594. Այդ անտանելի ազէտներուն եւս տեւէն հասաւ անմիջապէս ինչ որ անհրաժեշտ հետեւանքն էր, այսինքն ընդհանուր սովը։ Գրեթէ անսուաղ մնացին կայսերութեան բոլոր Ասիական գաւառները է՛ել էլլ-ոյ Ծո-վ-ն, Սեւ ծովէ և Միջերկրականէ չրջապատուած մասերը, և աւելի սաստկութեամբ Հայկական գաւառները, ուր պատերազմներ, բռնի գաղութը և Ձէլալիք ձեռք ձեռքի տուած ամէն բան ապականած և ամէն կողմ անապատացուցած էին։ Սովին սկզբնաւորութիւնը կը դրուի 1606'ին, երբ տակաւին Ըալ էր Ե ալ էր էլ-ոյ, 1607'ին սաստկացաւ, 1608'ին չարունակեց, 1609'ին թուլացաւ, և հազիւ 1610 թուականին քաչա քնա-ն ազբմա-ղնեմբեն Աստ-ծոյ։ Իսկ սաստկութեան աստիճանը ցուցնելու հա-

ԱՀՈՒԵԼԻ
ՍՈՎԸ

մար բաւական ըլլայ յիշել որ ոչ միայն դլուխ և գլոտս և ըսյլ անասուբ կենդանի, այլ և մարդոյ ինչ կերան մարդիկ (ԴԱՎ. 68)։ Բազմաթիւ մանաւանդ դիպուածներ կը պատմուին, թէ ինչպէս մեռածները ոչ ըսղնէին, այլ ուտէին, կամ թէ կենդանի մարդս ըմբըռնէին և ուտէին։ Օշականցի մը մարդ խաբելու, մորթելու և ծախելու առեւտուր էր ըրած։ Բջնեցի երեք կիներ մարդու կտորուանքներ եփելու վրայ բռնուեցան։ Կարնեցի չորս կիներ մարդ մորթելու վրայ յայտնուեցան, և կուսակալի հրամանով սպանուեցան։ Սեբաստացի կիներ իրենց զաւակն իսկ կտրած ու կերած էին (ԴԱՎ. 65)։ Բաւական կը սեպենք ակնարկել այդ պժգալի եղելութիւնները, որպէսզի գոնէ ընդազօտ գաղափար մը տուած ըլլանք ժամանակին տիրող անտանելի կացութեան վրայ։ Աւելորդ չըլլայ դիտել տալ, թէ սովին սաստկութեան տարիները, յելուզակներուն ա՛լ աւելի կատաղութեան տարիներն էին։ Եւ որ չար ևւս է, մէկ կողմէն վատ օրինակը, միւս կողմէն վերահաս սովը, քրիստոնեաներէն ալ զանիները կը կատղեցնէին, որ էրբէ- պեսաէն ըէ այլպէէն որպէս առնէն, ինչեանէ եաս ակառ այպէս առնել (ԴԱՎ. 63)։

ՁԷԼԱԼԻՆԵՐՈՒ ՋՍՊՈՒԻԼԸ

1595. Այսչափ աղէտներ և երկրի աւերածներ հազիւ թէ սթափեցուցին Օսմանեան կեդրոնը, որպէսզի գործնական և վերջնական միջոցներ ձեռք առնուին երկիրը խաղաղեցնելու, և ձէլալիները ընկճելու, և սովին դարման մը հոգալու։ Մանր բայց կենսական գործը յանձնուեցաւ Գուլուճու Մուրատ փաշայի, որ իբր սպարապետ Գերմանացւոց դէմ պատերազմին, 1606 նոյեմբեր 11'ին, պատուաւոր և նպաստաւոր հաշտութեան մը ստիպած էր Հռոդոլփոս Բ կայսրը, և 1607 յունուարին մեծ եպարքոսութեան բարձրացած էր։ Մուրատ անմիջապէս պատրաստութիւնները լրացնելով Կոստանդնուպոլսոյ մօտերէն սկսաւ յելուզակներուն դէմ յարձակումները, և բուռն զօրութեամբ և անողոք խստութեամբ յաջողեցաւ ամէնքն ալ ղսպել, բոլոր գլխաւորները սպաննել ու ջնջել, և հետեւորդները հպատակեցնել, և 1608 դեկտեմբեր 18'ին, տարիուկէս անդուլ անխոնջ աշխատանքէ ետքը, յաղթական փառքով մայրաքաղաք մտաւ, իբրեւ յաղթութեան նշանակ առջեւէն տանելով ձէլալիներէն գրաւուած 400 դրօշներ, իւրաքանչիւրը իւր խմբապետի անունովը մակագրուած (ԺՈՒ. 193)։ Պէտք է դիտել թէ 1609 տարեթիւը սովին ալ թուելնալուն թուականն է (§ 1594), երբոր երկրին բնակիչներուն հնար եղաւ իրենց գիւղերուն մէջ հաստատուիլ, և քիչ ու չատ հողագործական աշխատութեանց ձեռնարկել, արհեստաւորներ համարձակութիւն ստացան իրենց գործերով զբաղիլ, և առեւտրականներ կրցան ապրանքներու փոխադրութեան հետեւելով ժողովուրդին պէտքերը հոգալ։ կարծես թէ նոր կեանք մը սկսաւ երկրին մէջ, ահագին տագնապէ մը ետքը։

ՄՐՑԱԿԻՑ ԳՈՐԾԻՉՆԵՐ

1596. Պատերազմներու և յելուզակներու և սովի անտանելի արկածներուն ժամանակը, պէտք էր որ Օսմանեան հայրենակութեան կեդրոնը՝ հոգածութեան և խնամողութեան չարժէր, և կոստանդնուպոլսոյ պատրիարքները և մեծամեծները յորդորէր իրենց ազգայիններուն հակելու և օգնելու։ Դժբախտաբար տարբեր ընթացքի մը հաւաստիքը կ'ընծայեն մեզի մայրաքաղաքի Հայերը, անձնական վէճերով և խարդախ միջոցներով իշխանութիւնն ու ազդեցութիւնը իրենց ձեռքէ խլելու զբաղած։ Եկեղեցական դասակարգէն չորս անուններ են, որ հրապարակի վրայ կ'երեւին այս միջոցին, իրաքանչիւրը իւր աչխարհական կողմնակիցներն ունենալով, որոնց մէջ նշանաւոր անուններ չեն յիշուիր։ Ծովհաննէս Կոստանդնուպոլսեցի, մականուանուած Խուլ, անչուչտ ականջին ծանրութեան համար, ծնած կ-Պոլիս 1554'ին, աչակերտութիւնը և եկեղեցական աստիճանները մայրաքաղաքին մէջ ստացած, և հաւանաբար նոյն տեղ ալ եպիսկոպոս ձեռնադրուած Մելքիսեդեկի այն տեղ եղած ատեն 1599'ին (11 ԱՄՍ.2)։ Գրիգոր կեսարացի, ծնած կեսարիա (ԹՈՐ.Ա. 294), թուականը անորոշ, աչակերտած Սրապիոն Ուռհայեցի կաթողիկոսին (§ 1584), 1595'ին

անկէ վարդապետական գաւազան առած (ԿՈԼ.78), կեսարիոյ առաջնորդ եղած և երուսաղէմի գործերուն մասնակցած է (11 ԱՄՍ. 3)։ Գրիգոր Դարանաղեցի, մականուանեալ Բուք (ՏԱՇ.410), ծնած կամախ 1576'ին, Աբեղայ ձեռնադրուած 1590'ին, միջոց մը էջմիածինի մօտերը Սաղմոսավանք մնացած, ետքէն Բաբերդ եկած (ՍԱՄ.203), վարդապետական գաւազան առած Սրապիոն Օձաեզացի վարդապետէն՝ Վահանայենի առաջնորդէն, 1603 մայիս 28'ին, որ յունիս 12 պէտք է ուղղուի, եթէ Հոգեգալստեան տօնն էր տուչութեան օրը (11 ԱՄՍ.51)։ Դարանաղեցին Բաբերդէն չէ կրցած երեւան դառնալ, Շահաբասի հրամայած բռնի գաղութին պատճառաւ (§1587), և խոյս տալով կ-Պոլիս եկած է 1604'ին (ՏԱՇ.410)։ Զաքարիա Վանեցի Գիչու որդի (ԹՈՐ.Ր.288), կամ Գէչոյեանց ընտանիքէն, ծնած Վան չուրջ 1570'ին, աշակերտած Վարագի մէջ Բարսեղ Աւանցցի վարդապետին, և վարդապետական գաւազան առանալէ ետքը կ-Պոլիս եկած, ուր 1603'ին կը գտնուէր ուսուչութեան զբաղած Յակոբ Ուլնեցի և Մաղաքիա Եւդոկիացի վարդապետներուն հետ (11 ԱՄՍ.65)։ Վանայ առաջնորդ էր եղած 1606'ին, և 1608'ին մերժուելով (ԹՈՐ Ր. 288), կ'երեւի թէ այս անգամ էջմիածին է անցած, ուսկից Մելքիսեդեկի կողմէ նուիրակ կը ղրկուի, Ֆրանկոպոնէն «բէռոնէից առհասարակ», և այս առթիւ Հռոմ ալ կ'երթայ (11 ԱՄՍ.72)։ Յիշեցինք արդէն (§ 1581), թէ Մելքիսեդեկ Գառնեցի աթոռակից կաթողիկոս՝ կ-Պոլիս եկած էր 50000 ղուրուշի պարտքին դիմաց նպաստ հաւաքելու, երբ 1599'ին պատրիարքութիւնը ձեռք ձգեց Տիրատուր Սսեցին գահընկէց ընելէ ետքը, բայց տարին չանցած նոյնը իրեն ալ պատահեցաւ (§ 1581)։

1597. Յովհաննէս Խուէն եղաւ, որ յաջողեցաւ Մելքիսեդեկը տապալել, և ինքն անոր տեղ պատրիարքութիւնը դրաւեց 1600'ին։

ԿԵՍԱՐԱՑԻՆ ՈՒ ԽՈՒԼԸ

Յովհաննէսի զօրանալուն ոյժը հարկաւ տեղացի ըլլալով բարեկամներ ունենալն էր, բայց տեւական չեղաւ իր վիճակն ալ։ Գրիգոր Կեսարացի հազիւ թէ կ-Պոլիս երեւցաւ ենթուսաղէմի նուիրակութեան պաշտօնով, ամէնքը չահեցաւ իր փառաւոր կերպարանքով, ճգնողական կեանքով և գիտնական արժանիքով, ինչ որ բաւեց Խուէը տապալելու և պատրիարք հռչակուելու 1601'ին։ Ոմանք կը կարծեն թէ Կեսարացին պատրիարքութենէ ետքը 1602'ին Լպիսկոպոս ձեռնադրուած ըլլայ Սսոյ մէջ Յովհաննէս Ա.ին Թապկիէն (§ 1578), չկարենալով էջմիածին երթալ ճէլալիներու երկիւղէն (11 ԱՄՍ. 4), սակայն ուրիշ յիշատակներ 1598'ին կը դնեն անոր ձեռնադրութիւնը, նոյն Յովհաննէս Ա.ին Թապկիէ, իսկ պատրիարքութենէ ետքը միայն Կեսարիա գացած կ'ըսեն վիճակին գործերուն համար, և նորէն այցելած Ա.ին Թապկիին վանկայ բերդին մէջ (90 ԱՐԲ.475)։ Կեսարացիին համակիր չեղողներն իսկ կը գրեն թէ պատրիարքութեան մէջ ժամանակ մը «ոչղոխէաններէ էրթեց (11 ԱՄՍ.4), բայց թէ ինչ ըրաւ չենք գիտեր, և ոչ ալ գաղթականութենէ և ճէլալիներէ յառաջ եկած արկածներուն մասին բան մը ըրած ըլլալը կը գտնենք։ Առաւելն օգնած է ներքին գաւառներէ փախստականները կ-Պոլսոյ մօտերը տեղաւորելու։ Այդ կարգին նշանաւոր է Ռոտոսթոյի գաղթականութիւնը, կամախ գաւառէն եկած, որուն պաշտպան ու պատմիչ եղած է իրենց հայրենակիցը Գրիգոր Դարանաղեցին։ Կեսարացին 9 տարի պատրիարքութեան աթոռին վրայ մնաց, մինչեւ որ Յովհաննէս Խուլ նորէն զօրացաւ։ Անկէ առաջ 1607'ին անգամ մըն ալ բացակայած է Կեսարացին, և Յակոբ Նաղաչ քահանայն պատուիրակ ղրկուած է, զինքն կեսարիայէ բերելու, և նա դարձած է ի Բէ՛ղանդէ՛ ո՛հելգէ՛ղ և իւ՛ղիւ կէղէ՛ ո՛ղէ՛ ղո՛է՛ծ (11 ԱՄՍ.3)։ Բայց մրցումները չեն դադրած, մինչեւ որ 1609'ին Խուլը կը յաջողի նորէն աթոռին տիրանալ։ Կեսարացիին պարբերական բացակայութիւնները, որոնցմէ 1602'ին և 1607'ին հանդիպածները յիշեցինք, հետեւանք էին կեսարիոյ առաջնորդութիւնը վրան պահելուն (01 ՕՐԱ.88)։ Յովհաննէս Խուլին այս երկրորդ անգամ պատրիարքութեան անցնելու առեներն և անոր նախաձեռնութեան կը վերագրուի կոստանդնու-

պոլսոյ Գումքաբու թաղին մէջ, 1610'ին, առաջին անգամ Ս. Աստուածածնի անունով մատուռի մը կամ փոքրիկ եկեղեցիի մը չինութիւնը, Յոյներու գերեզման եղած գետնի մը վրայ, և 40 օրուան մէջ գործը վերջացնելու պայմանով (11 ԱՄՍ. 79)։ Այժմեան պատրիարքանիստ մայր եկեղեցւոյն սկզբնաւորութեան թուականն է, որ աթոռանիստ տեղւոյն տեղափոխութեան ալ պատճառ եղած է, մինչ անկէ առաջ Սամաթիոյ Ս. Գէորգը եղած է աթոռանիստ, և Սալը Մանաստըր կոչումը, որ ցարդ կը պահուի, ոչ միայն ջրամբարներու գոյութեան, այլեւ վարդապետներու բնակակցութեան յիշատակը կը պահէ։

ԷՋՄԻԱԾԻՆ ԵՒ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ

1598. Երբոր Կ-Պոլսոյ մէջ վերոյիշուած ելեւէջները տեղի կ'ունենային, Էջմիածինի անցուդարձն ալ լաւագոյն վիճակ չունէր։ Յայտնի է թէ բուն դահակալն էր Դաւիթ, որ յաջողեցաւ և նախ էր լեալ կաթողիկոս տէր Մելքիսեդեկ, և աստիճանաւ և ալեւոր եւ ծեր էր, նախ Դաւիթն էր օրհնեալ Մելքիսեդեկ (ԴԱՎ. 155), բայց նա գաղթականութեան հետ Ասպահան էր գացած, և հոն կը չարունակէր մնալ։ Թէպէտ Շահաբաս Ղուլին աւելի ընդունէր տէր Մելքիսեդեկ, այս վերջնոյս առանց իւր կամաց Մուշկունէ ետ դառնալէն ցաւած (§ 1588), սակայն Մելքիսեդեկ յաջողած էր Էջմիածինի տիրանալ Ամիրգունայի և միւս պաշտօնակալաց պաշտպանութեամբ, քանի որ առաւել չեռնհաս և բազմաթոռ էր քան զնոսա (ԴԱՎ. 161)։ Մելքիսեդեկ համարձակութիւն գտնելով Ամիրգունայի հովանաւորութենէն, ելլեցաւ և աթոռացաւ և չօրացաւ չէլեռնոցեան դիմի, ուր կոչէր լեալ Դաւիթ, զի զըր ինչ ասէր Դաւիթ, զբանիւ նորա Մելքիսեդեկ աթոռնիստանէր, և ոչ միայն այսպէս, այլեւ իրաւունքէ և հասոյթներէ ալ կը զրկէր, մինչեւ որ Դաւիթ կը գանգատէր, որ եթէ ի բաց կացուցեալ չէ չէլեռնոցեանն կաթողիկոսութեան, գոնէ պատ ինչ ոչ առաջ գրման պիտոյից պարենի կերակրոյ և չէնոցոյ (ԴԱՎ. 155)։ Դարանաղեցի Գրիգորի և Քանաքեռցի Զաքարիայի վկայութեամբ Աւետիս կաթողիկոս մրն ալ (§ 1582) կը գտնենք այս միջոցին Էջմիածինի մէջ, սակայն չենք գիտեր թէ ինչ դեր կը վարէր, և ինչ գործունէութիւն ունէր, քանի որ Դաւրիժեցին ամէն մանր պարագաները և ամէն ներկաները յիշելով մէկտեղ, այս միւս աթոռակիցին անունն իսկ չտար իւր ընդարձակ պատմութեան մէջ։ Իդէպ կը կարծենք ըսել, թէ Աւետիս, որ պրիչէր և սբեռեր, իբրեւ և առաջագ բնաւորութեան տէր անձ մը կը նկարագրուի (11 ԱՄՍ. 69), համակերպող ընթացք մը կը պահէր Մելքիսեդեկի հանդէպ, ոչ անոր անկարգութեանց մասնակցելով, և ոչ ալ ընդդիմանալ համարձակելով, կամ իւր իշխանութեամբ ճոխանալով։ Մելքիսեդեկի անկարգ ընթացքը, և աթոռէ հեռու երեւանի մէջ բնակելով էջմիածնի արդիւնքը իւր ըլած և ընդոչյոկ կեանքին գործածելը, քանիցս միաբաններու կողմէն իրեն երեսը խօսուեցաւ, սակայն Մելքիսեդեկ չօրացեալ և աթոռացեալ ելլելէ պետական իշխանութենէ, աթոռնէն և անկուղէ զմենայն առաջելն նոցին (ԴԱՎ. 153)։ Ասոր վրայ կարապետ և Մարտիրոս և Յովհան եպիսկոպոսներ, երեքն ալ ի նոյն ելեղբն էջմիածնէ, ստիպուեցան Ամիրգունա խանին ամբաստանութիւն ներկայել, անոր անհատատարիմ մատակարարութեան դէմ, և խանը առիթ գտաւ 60 թուման գանձել Մելքիսեդեկէ իբրեւ տուգանք, իսկ սա սրտմտած լեալ էջմիածինէ հեռացաւ, և վրաստան քաչուեցաւ, ինչ որ հաճելի չեղաւ պետական իշխաններուն, քանի որ նուէրներու աղբիւրը կը ցամքէր։ Ուստի դեղտէր եղեն Ամիրգունայի, որ այս անգամ ալ առիթ գտաւ եպիսկոպոսներէն տուգանք գանձել, Մելքիսեդեկը բերել, և զանունք հեռացնել, որոնցմէ կարապետ Սեւան քաչուեցաւ, Մարտիրոս Ասպահան գընաց Դաւիթի մօտ, իսկ Յովհանի տեղը յիշուած չէ (ԴԱՎ. 154)։ Այդ եղելութեանց մէջ ալ Դաւրիժեցին Աւետիսի անունը չի տար, և չենք կրնար ճշդել թէ ինչ դիրք կը պահէր նա Մելքիսեդեկի և միաբանութեան պայքարին մէջ։

1599. Պատահական միջադէպ մը մեծ նշանակութիւն ստացած է այդ միջոցին։ Հայաստանի բուն գաղութին վրայ Ֆրանկ պրծէ, այսինքն լատին կրօնաւորներ սկսած էին ցրուիլ զանազան գաւառներ, թէ մարդ

որսալու և թէ անտէր ստացուածներ գրաւելու, և գլխաւորապէս լքեալ տաճարներէն մնացած սրբութիւններ հաւաքելու։ Անոնց մէ ոմանք կարևնիս գիւղի Ս. Առաքելոց վանքին մէջ Անդրէաս առաքեալի գլուխը կը գտնեն, բայց Երեւանի եպիսկոպոսը վրայ կը հասնի և ձեռնէն կ'առնէ։ Ուրիշներ Ս. Հռիփսիմէի տաճարը կը պրպտեն, որ աւեր ձեւ մը առած էր, և քովնտրէ եկեղեցին և իրանէն ոչինչ անասնացեալ էին (ԴԱՎ. 135)։ Պարբէ եբէ (ԴԱՎ. 137), որոց երկուքին անուններ Գլէյում (ԴԱՎ. 149) կամ Գլեան և Արտանէլ են յիշուած (ԴԱՎ. 141), իմ՝ Գուլիէլմոս և Հրնչտակապետ, իրենց գործ կ'ընեն Ս. Հռիփսիմէի ոսկրները ձեռք ձգել, և գաղտնի պեղումներով նպատակին կը հասնին, բայց ոսկրները եկեղեցւոյն մէջտեղը հանած ատենին, վրայ կը հասնին Գրիգոր և վարդան եպիսկոպոսներ, երբ եւած էին է քեօռնա չքնաղեալ։ Կրօնաւորներուն և եպիսկոպոսներուն մէջ կոփ և կռիւ և պատերազմ կը սկսին, մինչեւ իսկ ղէիֆան հաղթելէ և վիրաւորել, բայց եպիսկոպոսներ կը յաջողին նշխարները էջմիածին փոխադրել, ուր կը խմբուին բոլոր միաբաններ, և կը հասնի նաեւ Մելքիսեդեկ (ԴԱՎ. 137), ուրուն արդէն ոչի գահեկան տուած էին կրօնաւորները, վ'ի դ վեյէ հեռաւորութիւ քրիստոս (ԴԱՎ. 131)։ Այստեղ ալ Մելքիսեդեկ աչք կը գոցէ որ մէկ մաս մը վերցնեն կրօնաւորները է մալխին չինուած քանակներու մէջ։ Միաբաններ մնացածը նորէն իւր առաջին տեղը կ'ամփոփեն, ուր խմով և կռիւ հաստատեալ ամրացան։ Հռիփսիմէի նշխարները հանող կրօնաւորներ, Երեւանի և Նախիջեւանի ճանապով կ'երթան Երնջակի Ապարանք գիւղը, Ունիթորներու կեդրոնը, անկէց ալ լռելեայն կ'իջնեն Ասպահան, որպէսզի նշխարներէ մաս մըն ալ տանին է քաղաք Գըոայ (Goa), որ է Հնդկաստանի մէջ, չերկէրն Փորթուկէզին, և վերջապէս է քան է ի Ֆռանկոփան (ԴԱՎ. 139)։

ՀՌԻՓՍԻՄԷԻ ՆԵՐ ՀԱՒԱՔԵԼՈՒ ԱՆՈՆՑ ՆՇԽԱՐՔԸ

1600. Ասպահանի մէջ դեռ չէր լրացած կրօնաւորներուն և նշխարներուն գալը, երբ Դաւիթ կաթողիկոսի սպասաւորներէն մէկը, անունը Գրիգոր, Ֆռանկայ լեզուին ծանօթ և անոնց վանքերը յաճախող, հանդիպմամբ կը լսէ գործը նոյնիսկ կրօնաւորներուն բերնէն, և լուր կու տայ Դաւիթի, այն ալ իսճայ Սաֆարին, որ Նոր-Ջուղայի աւագն էր (§ 1590), և Ազատէրտէրին (§ 1586), որ աւագերէցն էր։ Անոնք ալ լուր կու տան Միրզա Մանմաու կուսակալին, և Լատինաց վանքը յանկարծ կոխելով, ոսկրներու սրնտուկը կը գտնեն, և կնքելով Սաֆարի մօտ աւանդ կը դնեն, մինչեւ որ Շահաբասէ հրաման մը գայ։ Սաֆարի եղբայր Նազար ալ, որ Թաւրիզ Շահաբասի մօտ կը մնար, պէտք եղած միջնորդութիւնը կ'ընէ, և Ալթուն անունով յատուկ պաշտօնեայ մը կը ղրկուի Ապարանք, նշխարները գողցող կրօնաւորները Շահաբասի մօտ բերելու։ Ալթուն ամէն իստութիւն ձեռք կ'առնէ, կապանք, չարչարանք և բրածնէ, որպէսզի բուն գողցողները ցոյց տան, և հոն պահուած նշխարներն ալ մէջտեղ հանեն։ Ալթուն, որ հայազգի Աւետիք մըն էր, պատահմամբ կը լսէ պղտիկ տղայի մը, իր հօրեղբօր քահանային ծեծուած ատեն բերնէն հանած հայերէն մէկ խօսքը, և անով հետաքննութիւնները կը դիւրացնէ, ամէն բան մէջտեղ կը հանէ, մինչեւ իսկ մեբձակայ Բոլու լերան մէկ քարանձաւին մէջ թաղուած մասը, և թէ նշխարները և թէ կրօնաւորները առնելով ճանապայ կ'ելլայ Թաւրիզ տանիլ։ Աստապատ հանդիպած ատեն, որ իւր ծննդավայրն էր, Աւետիք-Ալթուն կրօնաւորներուն գլուխները միայն Շահաբասի տանիլ կը մտածէ, այլ պողոս Մոկացի վարդապետի խրատով ետ կը կենայ։ Իսկ Շահաբաս կրօնաւորները կ'արձակէ, և նշխարները բոլոր Սաֆարի կը ղրկէ, որ պահուին Ասպահանի մէջ (ԴԱՎ. 145)։ Իրրեւ այս պատմութեան լրումն կ'աւելցուի, թէ երկու բուն գող կրօնաւորները աւազակներէ կը սպանուին (ԴԱՎ. 146), թէ անոնց Աղամիր սպասաւորը հազիւ կ'ազատի (ԴԱՎ. 147), թէ յետ ժամանակաց լատինները երկու սպանութիւններուն ոսկրները Ֆրանկաստան կը փոխադրեն, էբէ ընչեաց տրտէրոէ (ԴԱՎ. 148), և թէ կը յաջողին ալ Շահաբասի ձեռքով Ասպա-

հան պահուած նչխարներէն պղտիկ մաս մը առանալ, և զայն զետեղել ի հիմունս եկեղեցւոյ վանացն Գըեայէ (ԴԱՎ. 149)։ Համաձայն այս պատմութեան, զոր Դավրիժեցին ականատեսներէն քաղելով գրած է, Ս. Հռիփսիմէի այժմեան գերեզմանին մէջ գըտնուող ոսկրները այլեւս ամբողջը չեն, և ձեռքէ ձեռք անցած կտորներն ալ աւտուանդ ցրուած են, ինչպէս Նախիջեւանի Գուլթափիա գիւղը Պօղոս Մոկացի վարդապետին դրածը (ԴԱՎ. 143), Մինաս Ակնեցի՝ Զմիւռնիոյ եպիսկոպոսին Իտալիա տարածը, և Պետրոս Խալարնց՝ Սաֆարի թոռին Պաղտատ փոխադրածը (ՁԱՒ. Գ. 573)։ Պատմուած եղելութեան թուականը ճիշդ յիշուած չէ, այլ իզէպ է դնել չուրջ 1607'ին, երբ տակաւին Շահաբաս Թաւրիզ կը գտնուէր։

1601. Ս. Հռիփսիմէի նչխարներուն գողութեան գործը, որչափ ալ Հայոց համար յայղողութեամբ վերջացաւ, սակայն Մելքիսեդեկ եւ Լատիններ սեղանի համար մշտնջենաւոր անարգանքի փաստ մը եղաւ, Սմոլ ոլեան խալֆա, այսինքն ոսկր ծախող կաթողիկոս՝ անունը տրուեցաւ հետեւէն (ԴԱՎ. 156), և երեան իվեր յանդիմանուեցաւ, թէ զոհասեղանէն պոռոալան գանձն հանելով վճռաբեկեր ալլպէեոց (ԹՈՐ. Բ. 287)։ Սակայն Մելքիսեդեկ այսչափով իւր դիրքը խախտած չգտաւ. Դաւիթ միշտ հետու կը մնար Աղաղանի մէջ, Աւետիս ընկճեալ դիրք մը կը պահէր, և Մելքիսեդեկ կրնար ուզածը ընել Մայրաթոռին մէջ՝ Ամիրգունա կուսակալը իրեն պաշտպան ունենալով։ Հայրապետական բոլոր հասոյթները ըստ հաճոյս կը գործածէր իւր լոյծ և ընթացիկ կեանքին, կամ չեռնէից և քաղմոռոբ կաշառքներուն։ Մելքիսեդեկ որ իւր չհամոզ և փառասոյր գործերուն մէջ, ոչ մի անտեղի միջոց չէր խորհեր, նոր պարագայ մըն ալ մտածեց աւելցնել այդ չարքին, այն է դաւանական խնդիրները չհավաճառի միջոց դարձնել։ Լատին կրօնաւորներուն Հայաստանի կողմերը յաճախելու պարագայն, և անոնցմէ մտերմութեամբ ստացած կաշառքները, և աւելին ալ ընդունելու յուսադրութիւնը, պինդ յորդորեցին աւելի մերձաւորութիւն ցուցնել և դէպ Արեւմուտք ձեռք երկնցնել, և զօրաւոր և հարուստ ըմբռնուած լատինականութեան արդիւնքներով բախտաւորուիլ։ Այդ մասին իրեն համամիտ գտաւ Զաքարիա վանեցին, որ վանէ մերժուած իր քովը կը գտնուէր (§ 1596), և Արեւմուտքի Հայերուն նուիրակութիւնը անոր յանձնեց 1610 մայիս 1 թուակիր կոնդակով, որ Իլվով, Կամենից, Սեչով և Եաչ չրջագայի, և արդիւնքներ հաւաքէ (11 ԱՄՍ. 72), անկէ ալ Իտալիոյ գաղթականներուն անցնի, և յարմար յարաբերութիւններ մշակելով Հռոմ ալ հանդիպի, և պապութեան հետ չհաւէտ և չհաւար կապեր արդիւնաւորելու ջանայ։ Հռոմի դիւանները մշ կը գտնուի գրուած մը Մելքիսեդեկի կողմէ Պօղոս Ե պապին ուղղուած 1610 մայիս 15 շաբթ օր թուականով (ԱՋԱ. 121), մինչ մայիս 15'ը երկուշաբթի կը հանդիպի այն տարին։ Գրութիւնը ընդարձակ է (ԱՋԱ. 113—121), և արեւելեան ոճի ամէն կատարեալ ճոխութեամբ և օրինակներով և փոխաբերութիւններով կը բարձրացնէ պապն ու պապութիւնը, չողոքորթութեան վարժ ականջները զզուեցնելու չափ։ Մենք պիտի չփորձենք անոր վերլուծութիւնն ալ տալ, միայն պիտի դիտենք թէ ամենայն հաւանականութեամբ գրուածը Մելքիսեդեկէ բղխած չէ, այլ Հռոմի մէջ Զաքարիայէ պատրաստուած է, իւր պատգամաւորութիւնը յաջողցնելու համար։ Աւսոր նչան կը նկատենք մայիս 15'ին նոր տոմարի հաշուով շաբթի ըսուած ըլլալը, որ Մելքիսեդեկի գործածած հին տոմարին չի պատասխաներ, և նոյն գրութեան պոռոյ էրով երեւցած ըլլալը (ԹՈՐ. Բ. 289), ինչ որ էջմիածնի մէջ չէր կրնար պատրաստուիլ, և վերջապէս Մելքիսեդեկի ալ նեղը մտած աւուն զայն իրմէ հեռացնել ուզելը, որուն համար կեսարացին իրեն կը գրէր, որ ինչ պոյէ է որ դու չես դիքանիր, պապին գիր մը գրէ, ինչ ոճ շաֆոթիա անուն վրդովիչ, որ է դէղանէ նոռէրակ եին յայր կոլմանդր, առանց մեր կամաց և էյհոռինեան իմ մօրթվէ սոպ չեռափէր է պոռեալ չեղ (ԹՈՐ. Բ. 292)։ Ցայտնի չէ թէ ինչ արդիւնք կրցաւ ձեռք ձգել Զաքարիա իւր պատուիրակութեամբը, դի

միայն ոսկեղէն խաչ մը ընծայ, և Շահաբասի յանձնաբարական մը գրելու խոստումը յիշուած են, երբ միւս կողմէն կը պահանջուի որ Մելքիսեդեկ Հաւոյ գոնանըխան գրէ (11 ԱՄՍ. 74)։ Առիվ կը յայտնուի թէ Ջաքարիայի մատուցած չորեքորթի նամակն ալ չէ բաւած Մելքիսեդեկի հաւատքին վրայ վստահութիւն ներշնչելու։ Մելքիսեդեկի անձը և անոր չհամոզող ընթացքը, և գրուածին հեղինակութենէ զուրկ ըլլալը բաւական են հաստատել, թէ որչափ անհիմն են հռոմէականներուն անոր վրայ հիմնած փաստերը (ԱՋԱ. 121)։ Մելքիսեդեկ յոյն օգնական աթոռակից մըն էր, և ոչ Հայ եկեղեցւոյ տիրապէս ներկայացուցիչը, և իր եպերելի ընթացքն ալ նկատի չառնելով, նա իւրովի և առանց ժողովի, և նոյն իսկ Մայրաթոռոյ միաբանութեան կողմէն վրաստանութիւն չվայելելով, չէր կրնար երբեք Հայ եկեղեցւոյ դաւանութեան վաւերական թարգմանն ըլլալ։

ԳՐԻԳՈՐ ԴԱՐԱՆԱՂԵՑԻ

1602. Պատմութեանս մէջ գործունեայ դեր վարող անձանց մասին, որչափ հնար է լիակատար տեղեկութիւն տալու նպատակով, աւելորդ չենք սեպեր ինչ ինչ մանրամասնութեանց ալ մտնել, եթէ առաջնակարգ կարեւորութիւն ալ չներկայեն։ Այդ կարգէն է Գրիգոր Դարանաղեցի վարդապետը, որուն 1604'ին Բաբերդէ Կ-Պոլիս գալը յիշեցինք (§ 1596), երբ պատրիարքական աթոռին վրայ կը գտնուէր Կեսարացին (§ 1597)։ Սակայն Կ-Պոլիս չուզեր մնալ, և Երուսաղէմ երթալու փափաքով ճանապայ կ'ելլէ, ուր սակայն չհանդիպիր, և ժամանակ մը Եգիպտոս կը մնայ, և այնտեղ կը ձեռնարկէ ամբողջական Աստուածաչունչի մը ընդօրինակութեան իր կիրառութեան համար, որ այժմ մեր ստացութիւնն է, թէպէտ քայքայեալ և քանի մը թերթեր պակաս, բայց կարեւոր յիշատակարաններ կը պարունակէ տեղ տեղ։ Գրչութեան սկսած է 1605 Նոյեմբերին, և չարունակած է մինչեւ Ծաղիկ։ Միւս տարին 1606'ին նկած է Երուսաղէմ, ուր յունիս 15 չարաթ օր, է վերջ Գիւրեղոսեան Հռոմէական Հաւատքը կը լրացնէ։ Այստեղ ալ պիտի դիտենք թէ Հոգեզատուտի տօնակին չորսերէ օրը յունիս 14'ին կ'իյնայ, և 15'ին Եղիայի կիրակին է. սակայն ամենէն մտադիր գրիչներ ալ վայրկեանը վայրկեանին չգրելով, այսպիսի թերեւս անճշդութեանց կ'իյնան յաճախակի։ Այդ տարի իրր Երուսաղէմի պատրիարք կը յիշէ Դաւիթ արքեպիսկոպոսը, որ է Մերաւնցին (§ 1503), Անդրէասի օգնականը և 1593'ին յաջորդողն, իսկ Գրիգոր Հանդն աբեղայ, որ է հռչակաւոր Պարտնէրը, յիշուած է իբրեւ վերակացու հոգեբոյս և քաղքենի աշխատասէր։ Տարի մը մնացած է Դարանաղեցին Երուսաղէմ, ուր կը գտնուի տակաւին 1607 նոյեմբեր 24'ին, և անկէ կ-Պոլիս կու գայ գտնելու նպատակով, բայց շատ ժամանակ արգիլուած է է քաղաքէն ելլոց, այսինքն ծէլալինները ապստամբութենէն (§ 1593), և ուր ուրեմն կրնայ երթալ է ինչ, այսինքն է իր հայրենական գաւառը, և կը դադարի Բենկայի կամ Բինկիանի վանքը, և ընդօրինակութիւններ կը չարունակէ, մինչեւ որ նորէն յանի նեղլոց ֆոխոխայ ֆոլվ կ-Պոլիս կու գայ։ Այդ գալուստը իղէպ է դնել 1612'ին (11 ԱՄՍ. 7)։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԳՈՐԾԵՐ

1603. Մինչեւ Դարանաղեցիին կ-Պոլիս վերադարձը, նոր դիպուածներ տեղի ունեցած էին մայրաքաղաքի մէջ, և ինչպէս արդէն ըսինք, Յովհաննէս Խուլ յաջողած էր կեսարացին տապալելով երկրորդ անգամ պատրիարքական աթոռը գրաւել 1609'ին (11 ԱՄՍ. 4)։ Կեսարացին, ժիր և գործունեայ մարդ, գնաց ուրիշ կերպով օգտակար ընել իր տաճնը։ Արդէն կ-Պոլիս եկած էր Երուսաղէմի պատրիարքին համար, և պատրիարքութենէն ալ օգտուած էր այդ նպատակին, ուստի Եգիպտոս և Ասորիք և Միջագետք չերթալու հաւ., և բաւական գումար հաւաքելով Երուսաղէմ դնաց, այնտեղի գործերը կարգադրելու։ Այդ ուղեւորութեան մէջ իրեն ընկերակից ունէր Մովսէս Տաթեւացի վարդապետը, նոյն ինքն ապագայինն բազմարդիւն կաթողիկոսը։ Մովսէս բնիկ Սիւնեցի էր, Բաղք գաւառէն, Խոտանան գիւղէն, Սրապիոն եպիսկոպոսի մնձ վարդապետին ու կաթողիկոսին աչակերտած էր անոր վերջին տարիները, և թե-

բեւս էջմիածինէ անոր մօտ մտած էր։ Շատ սիրուած ըլլալով 15 տարեկան աքեղայ և քահանայ կը ձեռնադրուի, և Սրապիոնի վաղահաս մահուանը վրայ Գրիգոր կեսարացիին ձեռքին տակ կը զարգանայ, Եգիպտոս և Երուսաղէմ կրօնաւորական վանքեր կ'ուսումնասիրէ, Ս. Յակոբեանց վանքին ալ կը ծառայէ, մեղրամոմը ձեռնկցնելու արտօնուած կը սորվի, և նորէն կեսարացիին մօտ կը դառնայ անոր պատրիարքութեան առնն, և Արեւելցիներու միջնորդութեամբ՝ վարդապետութեան աստիճան ալ կը ստանայ Դէթ Հանդիպէ- (ԻԱՎ. 219)։ Կեսարացին Մովսէսի հետ կը կատարէ վերջին չրջագայութիւնը, և 1610'ին Երուսաղէմ գալով, դիպելով պարտքերը կը թեթեւցնէ որոնք 8000 դրուշ հղած էին, կ'ըսէ Դարանաղեցին, և թէ 600 դրուշ ալ տարեկան հարկ կը ծանրանար, և ամէն օր 5 կարմիր եօթ կ'երթար պարտատէրց համար, այնպէս որ չեխ չէին էր հոգեր վրան Հոյոց։ Կեսարացին՝ Դաւիթ պատրիարքին անկատացած ըլլալն ալ տեսնելով, անոր գործէ ձեռք քաշել կուտայ, և վանքին ու աթոռին մատակարարութիւնը կը յանձնէ Գրիգոր Պարոնտէրին, որ աբեղայ հղած տեսնէն աթոռին վերակացուն և հոգաբարձուն էր, և գլխաւոր գործունեայ անձը (11 ԱՄՍ. 4)։ Այդ առթիւ պէտք չէ Դաւիթը գտնկէց հղած նկատել, այլ միայն աթոռակցութեան ձեռը գործադրուած, Դաւիթին պահելով պատիւը, և Գրիգորին յանձնելով վարչութիւնը։ Գրիգորին նախընթացին գալով, բնիկ Գանձակեցի է հղած, Սպիտակաչէն գիւղէն և Վարդանեան ազգատոհմէն։ Տղայութեան տեսն թոնիր իյնալով անվնաս ազատելուն վրայ՝ ծնողքը ուխտած են զինքը Երուսաղէմի նուիրել, և անոնց վաղահաս մահուանէ ետքը ինքն Գրիգոր ուզած է անոնց ուխտը լրացնել, և Երուսաղէմ եկած է 1581'ին, նորահաս երիտասարդութեան տեսն։ Ժամանակ մը Երուսաղէմ մնալէն ետքը, չրջած է Հռոմ ու Սիս, և Երուսաղէմ դառնալով մատակարարութեան գլուխ անցած է, և ներքին գործունէութեամբ և արտաքին յարաբերութեամբ օգտակար եղած է աթոռին, և սմէնէն յարգուած և պատուուած և իրր միակ կարող անձր ճանչցուած (ԱՍՏ. Ա. 283), և այս է որ կեսարացին ալ կը յորդորէ զայն գործի գլուխը անցնել։

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ

1604. Երրոր կեսարացին կոստանդնուպոլսէ հետու օգտակար ձեռնարկներու կը պարապէր, իր կողմնակիցները առթիւ կը գըտնէին, ժամանակին գործածական եղած միջոցներով զօրանալ, և Յովհաննէս Խուլը պատրիարքութենէն տապալել, և նորէն կեսարացիին պատրիարքութիւնը վաւերացնել տալ տէրութեան ալ կողմէն։ Նա ալ 1611'ին սկիզբները, դարձեալ յաղթական մուտք կը գործէր Կ-Պոլիս, այս անգամ աւելի խըստութիւն բանեցնելով իր հակառակորդ խումբին վրայ։ Ինչ ետքը 1612'ին Դարանաղեցին Տրապիզոնի ճանապով Կ-Պոլիս կը դառնայ (§ 1602), վանեցին ալ յունիս 15'ին Հռոմի կը հասնի (11 ԱՄՍ. 9), ուր գացած էր Արեւմուտքի նուիրակութենան առթիւ (§ 1601), և կեսարացին երկուքին հետ ալ կասկածով և աստկութեամբ կը վարուի։ Աւրիկայ իրեն նպաստաւոր չըլլար, վասն զի, նոյն իսկ Դարանաղեցին, որ կը խոստովանի, թէ ես քնա- չէի -ալը խ-ալը, երբէ կեսարացին այս հալին չտեսնէր գէս, կը յայտարարէ թէ -ոչ-ես-եցայ յալ կամ գնալ անոր։ Խուլն ու Դարանաղեցին ու վանեցին միացած կեսարացիին դէրքը կը խախտէն (11 ԱՄՍ. 9), որ թէպէտ ակամայ, բայց յանդգնեալ է նոցանէ և հրաժրելով, պատրիարքութիւնը կը թողու և իր վիճակը կեսարիա կը դառնայ (11 ԱՄՍ. 4)։ Երեք դաչնակիցները իրենց յաղթութեան արդիւնքը նաւասարապէս վայելելու համար, այս անգամ պատրիարքութեան հաստիքները մէջերնին կը բաժնեն, յաբակից վիճակներուն վրայ հսկողութեան հետ, որով միայն կրնային արդիւնքներն ալ ապահովել։ Կ-Պոլիսը կ'առնէ Վանեցին, քնակն դաբնին հին ըղձալի էր էրէվան, որ է ըսել Կ-Պոլսոյ պատրիարքութեան նախնական հրովարտակին սահմաններովը, և բուն պատրիարք կը նկատուի։ Խուլը կ'առնէ ըմհնայն Ո-ոոոմբն քաց յ\-ոոոզոոոս, այսինքն է Եւրոպակողման վիճակները Ռոսոսթոյէ գաս, վասնզի անկայ Դարանա-

ղեցիին հայրենական գաղթականութիւնն ըլլալով, յարմար կը սեպուի անոր թողուլ, Անթոլի ֆաբռանտան, այսինքն Ասիակողման մերձաւոր վիճակներն ալ մէկտեղ (11 ԱՄՍ. 9)։ Բայց կեսարացին կեսարիոյ մէջ հանդարտ չմնաց, այլ բանակցութեան մտաւ Յովհաննէս Ալեքսացի կաթողիկոսին հետ, օգուտ քաղել ուզելով Սսոյ աթոռին կոստանդնուպոլսոյ վրայ վարած հին իրաւասութենէն (§ 1489), և Յովհաննէսը համոզելով անձամբ կ-Պոլիս երթալ իր ազդեցութիւնը գործադրելու և գինքն զօրացընելու։ Իրօք ալ Մինաս Բացախ և միւս Մինաս կարնեցի եպիսկոպոսներն ալ մէկտեղ առնելով, չորսը միասին կ-Պոլիս կու գան։ Երկու կուսակցութիւններ նորէն պայքարի կը մտնեն, Վանեցին և Խուլը մէկ կողմէն, կեսարացին ու Ալեքսացին միւս կողմէն։ Խուլը մինչեւ Ադրիանուպոլիս կ'երթայ, անձամբ կը ներկայանայ սուլտան Ահմէտի, և իրենց կողմին նպաստաւոր հրովարտակ մը կը ստանայ, որով վերջէն եկող չորսերը իրենց տեղերը կը ղրկուին 1613 մայիս 25'ին, որ օր Դարանաղեցին ալ իր Ասիակողման վիճակներուն այցելութենէն կ-Պոլիս կը մտնէր (11 ԱՄՍ. 10)։ Յաղթութեան գլխաւոր գործիչը Խուլն ըլլալով, երեք դաշնակիցներու մէջ բաժիններու փոխոխութեան հարկ մը կը ծնի։ Վանեցին տեղի կու տայ և Խուլին կը թողու կ-Պոլիսը իր յարակիցներով, որոնց մէջ կը մտնեն նաեւ Կուտինա, Սեբաստիա և Կաֆա։ Վանեցին կ'առնէ Անթոլո ֆաբռանտան, այսինքն Իւսկիւտարէն սկսելով մերձաւոր Ասիակողմը, իսկ Դարանաղեցիին կը մնայ Ռումելին Դալաթիայով մէկտեղ (11 ԱՄՍ. 10)։ Այդ նոր բաշխումով Խուլը կը սկսի բուն պատրիարք նկատուիլ։ Սոյն միջոցին համար կ-Պոլսոյ պատրիարքներու սովորական ժամանակագրութիւնը (01 ՕՐԱ. 88) պէտք կ'ըլլայ փոփոխութեանց ենթարկել, գլխաւորապէս Դարանաղեցիի յիշատակարաններուն ուսումնասիրութեամբ, և ըստ այսմ կ'երեւի, որ Խուլը 1615'էն անդին չէ կրցած աթոռին վրայ մնալ, և նորէն տեղի տուած է կեսարացիին դրաւել պատրիարքական աթոռը (11 ԱՄՍ. 11)։

1605. Կոստանդնուպոլսոյ եղելութիւնները այս կէտին ընդհատելով կ'անցնինք նկատի առնել էջմիածնի մէջ տեղի ունեցած պատահարները։ Վերջին անգամ յիշեցինք Մելքիսեդեկի 1610'ին Զաքարիա Վանեցին Արեւմուտքի նուիրակ յղելը, և իր անունով Պօղոս Ե պապին գրութիւն մը ներկայացած ըլլալը (§ 1601)։ Զաքարիայի նուիրակութիւնը երկու տարի տեւեց, և 1612'ին կ-Պոլիս դարձաւ, և այնտեղ մնաց ուպատրիարք ալ եղաւ (§ 1604), ուստի դժուար է հաստատել, թէ էջմիածին դարձած և Պօղոս Ե պապին նամակը Մելքիսեդեկի ներկայացուցած ըլլայ, ինչպէս կը յայտարարուի Մելքիսեդեկի կողմանէ 1613 մարտ 22 թուականով գրուած նամակի մը մէջ, որ պապական դիւանին մէջ կը գտնուի (ԱԶԱ. 122)։ Աւելցնենք որ յիշեալ թուականին Մելքիսեդեկ էջմիածին ալ չէր, և կալանաւոր էր Շահաբասի ձեռքին տակ, ինչպէս պիտի տեսնենք, և պէտք է ըսել, թէ այս անգամ ալ Զաքարիա, իր նուիրակութենէն օգտուելով, Մելքիսեդեկի անունով և կնիքով երկրորդ գրութիւն մըն ալ ուղղած է Հռոմ, ինչ որ իրեն դիրքին և հետեւած ուղղութեան նպաստաւոր պիտի ըլլար։ Ոմանք ինչինչ կցկտուր յիշատակներու հիմնուելով կ'ուզեն հաստատել, թէ Զաքարիա երկրորդ անգամ Հռոմ գացած ըլլայ 1613 մարտ 22'ի նամակը տանելու համար (11 ԱՄՍ. 73), սակայն այդ թուականին ոչ միայն Մելքիսեդեկ ազատ չէր պապին հետ թղթակցելու, այլեւ Զաքարիա ազատ չէր Կ-Պոլիսէ հեռանալու, ուր իբր պատրիարք կեսարացիին հետ մրցելու զբաղած էր, և զայն հեռացնելէ ետքը, Ասիակողման վիճակներուն վերակացութիւնը ստանձնելով՝ անոնց այցելութեան ելած էր։ Ան առաւելն տեղը մնալով, և յանուն Մելքիսեդեկի գիր մը յարմարցնելով, Հռոմ ղրկած է, որուէ մէկու ձեռքով։ Հետեւաբար այդ երկրորդ գրութեան վրայ ալ կարեւոր գրուածի պէս չենք կրնար նայիլ։ Թող որ եթէ ուղղակի Մելքիսեդեկէ ալ բղխէր, կաթողիկոսական օգնականի մը և չհամոյ անձի մը գրուածը՝ չէր կրնար ու-

նենալ այն պաշտօնական հանդամանքը, զոր հոռմէականք կը սիրեն անոր ընծայել (ԱՋԱ. 123)։ Իդէպ է այս տեղ յիշել, թէ 1611'ին Շահաբաս իր երկրակալութիւնը ընդարձակելու և վրաց թագաւորութեան հետքերը ջնջելու նպատակով եկած էր Վրաստան, և պատերազմով կամ խաբկանօք հեռացուցած էր անոնց իշխանները։ Կախեթի թագաւոր Թամրազ՝ կովկասի լեռներն էր փախած, իսկ Տփղիսի թագաւոր Լաւասափ՝ գերի իյնալով սպանուած էր։ Թամրազի տղաները ներքինացուելով Պարսից դէնին և ծառայութեան անցած էին, իսկ անոնց մայրը՝ Մարիամ թագուհին, ուրանալ չուզելուն համար կտտանաց տանջանքներով նահատակուեցաւ (ԴԱՎ. 78-110)։ Օսմանեանք կարծելին պատեհ առիթ գտնել Պարսից դէմ պատերազմը նորոգելու, և 1611 գարունին Գուլտճու Մուրատ փաչա, մեծ հպարտոս և սպարապետ և ձէլալիներու յաղթականը (§ 1595), կ-Պոլիսէ մեկնեցաւ հզօր բանակով, և Թաւրիզի վրայ գնաց. իսկ Շահաբաս առանց դիմադրութիւն ցուցընելու՝ առաջարկեց հին հաշտութիւնը նորոգել, որպէսզի նոր տագնապի մը չի մատնուի, երբ ինքն Կովկասի կողմերը կը պատերազմէր, և ըստ այսմ խաղաղութեան նոր դաշնագիր կնքուեցաւ 1612'էն վեց տարի պայմանաժամով, և Պարսիկներէն տարեկան ընծայ մը տրուելու պայմանով (ՁԱՄ. Գ. 579)։

ՄՐՑԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

1606. *Մարտիրոս վաղարշապատեցի եպիսկոպոսը, որ էջմիածինէ արտաքսուելով Ասպահան գացած էր (§ 1598), այնպիսի տխուր գործերով ներկայացուց Մելքիսեդեկի գործերը և էջմիածինի անխնամ և լքեալ վիճակը, որ Երեւանցի և Ջուղայեցի մեծամեծներ, Դաւիթը բռնադատեցին և հաւկեցին ընդունել յէջմիածին, ուրկէ և հոգալ պէտք էր նոր, խոստանալով ալ թէ ոչ օժանդակելու եթէ յոռնայն գործ և ի քեռն։ Այս կերպով Դաւիթ, որ 1604'ի բռնի գաղութէն իվեր Ասպահան կը մնար, 1612'ին սկիզբները դարձաւ և եկաւ և էջմիածին հաստատուեցաւ Մարտիրոս եպիսկոպոսի հետ։ Հազիւ թէ գայն տեսաւ Մելքիսեդեկ, ինքն ալ Երեւանը թողուց և էջմիածին եկաւ, որպէսզի իրաւազուրկ չմնայ, սակայն նախանձախնդրութեան և հակառակորդութեան բորբոքուեցան Մայրաթոռի մէջ (ԴԱՎ. 154), և նորէն Մելքիսեդեկ զօրացաւ, յինն կորնչել ջանաց ընդհանրութեան, և որ Մելքիսեդեկեան էին՝ ի շրջել ընթացան զինքն՝ արհամարհեալ անէին ընդ։ Դաւիթ տեսնելով թէ վշտացել, քանի որ Ամիրգունա կուսակալ Մելքիսեդեկը կը պաշտպաներ (§ 1598), պարտաւորուեցաւ նոյնինքն Շահաբասի դիմել, որուն հետ լաւ յարաբերութիւն ունէր, և որ վրաց պատերազմին պատճառով Գորի կը գըտնուէր, ուր էր բանակին կեդրոնը (ԴԱՎ. 155)։ Շահաբաս լաւ ընդունելութիւն ըրաւ Դաւիթի, լսեց անոր գանգատը, և երբ լսեց թէ Սմօկ ոչխան խոչիճան է (§ 1601) Դաւիթը նեղողը, որուն դէմ արդէն ինքն հակակրութեամբ լեցուած էր, միտքը դրաւ առիթէն օգտուելով զայն նեղը դնել։ Այդ եղելութեանց կարգին Դավրիժեցին միւս աթոռակիցին՝ Աւետիսի, ոչ միայն ինչ դեր վարելը չպատմեր, այլեւ անունն իսկ չյիշեր։ Թէպէտ մենք չենք ուզեր Դարանաղեցիին և Քանաքեռցիին յիշատակութեանց հակառակ Աւետիսի գոյութիւնը ուրանալու չափ յառաջել, սակայն չենք ալ կրնար Դավրիժեցիին լռութեան վրայ զարմանք-նիս զսպել։ Միակ բացատրութիւն կը գըտնենք այն պարագային վրայ, թէ Աւետիս Դաւիթի ու Մելքիսեդեկի կամքին դէմ, անկրթութեամբ և հակառակ կրօնքով եղած էր, ինչպէս Դարանաղեցին ալ կը խոստովանի (11 ԱՄՍ. 69)։ Իսկ այս վերջին եղելութեանց պահուն, այսինքն 1612'ին, Դաւիթ և Մելքիսեդեկ միասին էջմիածին գըտնուած տեսն, թերեւս Աւետիս արդէն հեռացած էր անկէ, վասնզի նոյն միջոցներուն նա գտնուած է Ամիդ (ԹՈՐ. Բ. 289), և քիչ ետքն ալ 1613'ին գացած է Երուսաղէմ՝ Ջուղայեցի և ուրիշ մեծամեծներու հետ, ուր և եպիսկոպոսական աստիճան է տուած Գրիգոր Պարոնտէրին, որ Երուսաղէմի աթոռին վարչութեան գլուխը կը գըտնուէր (11 ԱՄՍ. 69)։ Ամենայն հաւանականութեամբ միեւնոյն 1613 թուականն ալ Դաւիթ Մերտինցիին վախճանած տարին է (ԹԱՈ. 52)։

1607. Շահաբասի կեանքին ամենէն նկարագրական պարագաներէն մէկն է, կերպ կերպ կերպարանները, ՇԱՀԱԲԱՍ ԵՒ ԷՋՄԻԱԾԻՆ առանց ճանչցուելու ժողովրդական խաւերու մէջ մտնել, և իւր գործերուն նկատմամբ եղած կարծիքները և դիտողութիւնները հարցնել և լսել ու իմանալ։ Շատ մը զուարճալի և հետաքրքրաշարժ դիպուածներ կը պատմուին իւր վրայ այս մասին, ուակից քանիներ Դավրիժեցին և Քանաքեռցին իրենց պատմութեանց մէջ յառաջ բերած են։ Շահաբասի հետաքրքրութեան առարկայ եղող կէտերէն և գլխաւորներէն մին էր, թէ ինչո՞ւ իւր Պարսկաստան փոխադրած Հայերը, իւր կողմէ այնչափ պաշտպանութիւն ու դիւրութիւն տեսնելէ, և բարօրութիւն ու արդիւնաւորութիւն վայելելէ ետքն ալ (§ 1590), տակաւին իրենց Հայաստանին կը փափաքին, ուր պիտի չգտնէին Պարսկաստանի մէջ ունեցած վայելքնին։ Իրօք ալ այս միտքը ունէին ոչ միայն գեղեր և անդնդախոր, այլեւ նշանաւոր և գիտուն (Դաւ. 151)։ Իւր յանձնառութեան պատմութեան մէջ այդ բանին գաղտնիքը իմանալ ուզելով, քահանաներէ ու պատուներէ, և նոյն իսկ բարեկեցիկներէ լսած էր, թէ Հայը չի կրնար զատուիլ էջմիածնի կաթողիկէէն և Լուսաւորչի Աջէն, որ իրեն համար օրհնուած քան աղբիւրներն են։ Եւ այս պատճառով միտքը դրած էր ոչ միայն Աջը Ասպահան բերել տալ, այլեւ էջմիածնի տաճարը քակել տալով քարերը փոխադրել, և Ասպահանի մէջ վերաշինել, որպէսզի այլեւս Հայաստանի վրայ չմտածեն, և ասիկա ալ Հայոց, և չկենայ ալ Պարսից (Դաւ. 150)։ Ըսող եղած է թէ Դաւիթ կաթողիկոսն ալ նոյ բան ըսած ատենները (Դաւ. 156)։ Ըսեր է կամ ոչ, Շահաբաս ուզեց օգտուիլ Մելքիսեդեկի դէմ եղած գանգատէն, և առ այժմ գոնէ Աջը էջմիածինէ հանել։ Անգամ մը երբ Նոր-Ջուղայի մէջ խօջայ Նազարին հետ կը պտտէր, անոր կը յայտնէ թէ այսինչ տեղ պիտի փոխադրէ և վերաշինէ էջմիածնի կաթողիկէն։ Նազար հազիւ թէ Մայրտաճարը քակելու միտքը կը հեռացնէ ըսելով, թէ չհին քարեր չեն պակսիր իւր խորհուրդին կատարման, մինչեւ իսկ ոսկիէ կամ արծաթէ տաճար մը կրնայ կանգնել (Դաւ. 153), և թէ քարերը տեղափոխելու պէտք չկայ։

1608. Դաւիթի և Մելքիսեդեկի իրնդդիմին դառնալով, Շահաբաս հրաման ըրաւ Մելքիսեդեկը ի պահել ՄԵԼՔԻՍԵԴԵԿԻ և ի գանձանս մատնել, և ԱՐԿԱԾՆԵՐԸ զինեալ իւրմէ ջրծիոյ ջինջ իրեն ուտեցնել, իսկ Աջը էջմիածինէն առնելով Գորի ղրկել։ Հրամանին գործադրութիւնը յանձնուեցաւ Թահմազդուլի բէկին, որ փոխանորդաբար Երեւանի կուսակալութիւնը կը վարէր, իւր հօր Ամիրգունայի բանակին հետ վրաստան գտնուելուն համար։ Թահմազդուլի անմիջապէս Մելքիսեդեկը ձերբակալեց Երեւանի մէջ, և էջմիածին բերելով, «ի՞նչ ըրիր», միւս միաբաններն ալ փնտռտելէ, ստիպելով որ Աջը յանձնեն, որոնք վերջապէս դարանը ցուցուցին, ուսկից Թահմազդուլի Աջը հանեց և առաւ, դարանին մէջ գտնուող ոսկեզօծ մեծադին աւետարան մը և արծաթեայ խաչ մըն ալ մէկտեղ։ Անկէ ետքը Մելքիսեդեկն ու աւանդները առնելով Երեւան կը դառնայ, որ հրամայուած միւս պատիժը գործադրէ բերդին մէջ։ Սրովհետեւ յաժարակամ չէր կրնար Մելքիսեդեկ իւր միաբ խածնել և ուտել, զայն կռնակի վրայ կը տարածեն, ոտուրներէն ու ձեռուրներէն չորս ցիցերու կը պրկեն, բեւեռաքաչով՝ այսինքն է աքցանով թեւէն պատառ մը միս կը փրցնեն, և բունի բերնին մէջ կը խօթեն, և փատուրներ կը սկսին ծեծել, մինչեւ որ ծամէ ու կլլէ, ուսկից ետքը մունետիկը կ'աղաղակէ, թէ «Թոփըճը» հրման ընթացքին, և Մելքիսեդեկը կապերէն կը քակեն, բայց չդիմայակապ կը բանտարկեն չհին ղրկելու համար (Դաւ. 157)։ Այս տարաղէպ գործերը տեղի ունեցան յոյնս պահոց ֆեխտան Աթոռածածնին (Դաւ. 158), որուն բարեկենդանը 1612'ին՝ կը հանդիպէր օգոստոս 9'ին։ Մելքիսեդեկի չարչարանքը այսպէս տեղնիտեղօք կը պատմէ Դավրիժեցին, սակայն համբաւը չատ աւելի մեծցուցած է զայն, իբր թէ «բռթռթալ ջրկոքեն, այսինքն ուսերը պոչէն պրեծ ջիայր,

ինչ որ լոկ զրոյցէ առնելով գրած կ'ըլլայ Երզնկացի Ամիրաբը (ՏԱՇ. 355)։ Զարչանքին գործադրուելէն ետքը Դուբաթ Նաչիրլու անուն ապայի մը պաշտօն յանձնուեցաւ, զինուորական պահպանութեամբ Մելքիսեդեկը կապանօք և աւանդները մնտուկով Գորի տանիլ Շահաբասին։ Սա աւանդները կը զննէ ու կը պահէ, իսկ Մելքիսեդեկը սպաննել պիտի տար, երէկ Ամիրգունայի միջնորդութիւնը չըլլար, բայց առջևը հանելով կը սպառնայ, և չղթայակապ կը պահէ, ետքէն ալ Թահմազղուլի փոխկուսակալին կը ղրկէ, որ աւանդներուն և էջմիածինի կաթողիկէին նշանաւոր քարեբուն հետ Ասպահան ղրկէ, ուր ինքն կ'ուզէր դատել Մելքիսեդեկը՝ պատերազմի դաշտէն հեռանալէն ետքը։ Ըստ այմ ալ կը գործադրուի, Մելքիսեդեկ միշտ չղթայակապ Ասպահան արգելական կը տարուի։ Աջն ու աւետարանն ու խաչը Սաֆարի տունը իպահ կը տրուին, Ս. Հռիփսիմէի նշխարներուն հետ, իսկ կաթողիկէին քարեբուն առաքումը կը յետաձգուի, մինչև որ քակուին, պատրաստուին և ծանր կառքերով և յարմար եղանակի մէջ կարենան էջմիածինէ Ասպահան փոխադրուիլ։ Դավրիժեցին Մելքիսեդեկին կրած արկածներուն վրայ խորհրդածելով կը գրէ, թէ պէտ է սթանչանալ և հիացմամբ ըմբռնալ ըսք հոգոցոճն էօծոցս, իբր զի այս կերպով անդամ մըն ալ ճշմարտուեցաւ թէ պրվ և ռէշնէչ ոփ, նովկէ և փանչէոցէ։ Իսկ Մելքիսեդեկը կը մեղադրէ, նախ բոլոր յոյսը մարդու, այսինքն Ամիրգունայի վրայ դնելուն, և երկրորդ Սրապիոնի գլուխը բերած փորձանքներուն համար (ԴԱՎ. 159), ինչպէս արդէն պատմած ենք (§ 1586)։ Թահմազղուլի բէկ սրբութիւնները ղրկած ատեն Ծովհաննէս քահանայի մը յանձնած էր անոնց ընկերանալ, իսկ Ասպահան հասնելուն մեծահանդէս թափորով և եկեղեցական արարողութեամբ կատարուեցաւ անոնց ընդունելութիւնը։ Այդ վերջին եղելութիւնները տեղի ունեցան 1613 տարւոյն սկիզբները, և ասով կը տեսնուի, թէ Մելքիսեդեկի հնար չէր 1613 մարտ 22'ին ազատօրէն պապին նամակ գրել, և Զաքարիա կ'ըլլայ զայն յարմարցնողը, քանի որ կ-Պոլսոյ մէջ էր, և տեղեկութիւն չունէր հեռաւոր Արեւելքի մէջ եղածներէն (§ 1605)։

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԵՒ ԴԱՒԻԹ

1609. Երբ Շահաբաս Մելքիսեդեկն ու աւանդները ղրկեց, Դաւիթ Գորի կը մնար բանակին մէջ, և պատուաւոր դիրք կը պահէր, մինչև որ Շահաբաս հրամայեց որ երթայ էջմիածին նստի և իր կաթողիկոսութիւնը վարէ։ Դաւիթ իրաւունք ունէր Ամիրգունայէ կասկածելու, Շահաբասին դիմաց բսելով. Թէպէտ էմ, զիս է խանն ամանէնէ, պիս խանին յանձնարարէ, մինչ խանը կը յայտարարէր թէ է վէրայ էլթոյ էմյ ասէ պոպէղէ հանէպէան։ Իրօք ալ ցորչափ Շահաբաս վրաստան կամ Ատրպատական կը գըտնուէր, Հայաստանի չրջակաները, Ամիրգունա չատ պատուով կը վարուէր Դաւիթի հետ, բայց երբ նա Ասպահան գնաց ու հեռացաւ, սկսաւ խոժոռիլ, ալ պոպոէր և ալ խօսէր, կամ իրնէոպանօ խօսէր և յոպոպէմ երէսէր (ԴԱՎ. 163)։ Մինչև այն ատեն Մելքիսեդեկ յաջողած էր Ասպահանի Հայերուն միջնորդութեամբ ազատօրէն և ընդարձակ ապրիլ, կաթողիկոսութիւն ալ կը վարէր (ԴԱՎ. 162), Ամիրգունայի հետ գաղտնի կը թղթակցէր, նորէն էջմիածին դառնալու և Մայրաթոռին տիրանալու միջոցներ կը խորհէր, մինչև իսկ կը մտածուէր որ Ամիրգունա է դադաճ հնարէ իմ սպանջէ ըհոէրն (ԴԱՎ. 163)։

ԷՋՄԻԱԾԻՆԻ ՔԱՐԵՐԸ

1610. Այդ եղելութեանց սկիզբներն էր, որ էջմիածինի կաթողիկէէն 15 նշանաւոր քարեր հանուեցան, որք են, 1. Սոբբ սեղանն յոբոյ վէրայ պոպոբոբն սոբբ մոպվէր. 2. Եայս սեղանոյս սէոնն. 3. Գրէնոպոյ էջման պեղէոց էոբն. 4. Աոոզանն. 5. Մէկ էոբ է կոշման հարսոոյն ասոյճանէ բեմին. 6. Ես մէկ էոբ է կոշման հէոսէոյնոյ ասոյճանէ բեմին. 7-10. Զոբս էոբ է ղոբէց անկեանց եկեղեցոյն. 11-12. Եբկոս էոբե մոման որ է ոշոռնակ, և 13-15. Եբե՛ այլ ոբոշ էոբնե՛ է սոլոյոբկ էոբանց բեմին։ Այս 15 կտորները երբեմն է մէջ կոշոյ և կոբեցեն, զինուորական պահպանութիւն կազմեցին, նորէն նոյն տէր Ծովհաննէս քահանայն (§ 1608) հսկող նշանակեցին, Նաղդի

բէկ անուն սպայ մըն ալ գլխաւոր դրին, ըսք Քաշալէնէ Թոբանցն սայլեր պատրաստեցին (ԴԱՎ. 161), և գոմէշներ լծելով ճանապայ հանեցին 1614'ին, բայց մինչեւ որ Ասպահան հասան, հայկական ամանորը անցած էր և Ֆէթհէլ էր դարձեր (ԴԱՎ. 162)։ Արդ ամանորը 1614 հոկտեմբեր 19'ին իյնալուն, իդէպ է ըսել որ 1614'ին վերջերը կամ 1615'ին սկիզբները քարերը հասան Ասպահան, և քաղաքին մօտերը՝ Բաֆուն կոչուած մահմետական գիւղին մօտ դնուելով գմբեթին մէջ զետեղուեցան, ուր Հայեր սկսան չարունակ ուխտի երթալ։ Քարերը հոն մնացին ժամանակ մը, ըստ ոմանց 2, ըստ այլոց 7, կամ աւելի եւս տարի (ԴԱՎ. 161), մինչեւ որ Բաֆունցիք անոնց ներկայութիւնը իրենց համար չարագուշակ նկատելով, խնդրեցին որ փոխադրուին, և հանդէսով տարուեցան Նոր-Ջուղայի մէջ Ամենայնից եկեղեցին, ուր Դաւիթ-ժեցին աչքովը տեսած և համրած է 15 քարերը (ԴԱՎ. 162)։

ՓՈՒՔԿԱՑ ԱՐԿԱԾՆԵՐԸ

1611։ Քանի կը յառաջանար Հայերուն Պարսկաստանի մէջ տէրութիւնը, հետզհետէ կը նուազէր Շահաբասի անոնց նկատմամբ գործածած համակիր ընթացքը, և զանազան առիթներով խստութեանց կը ձեռնարկէր, մահմետական մոլեռանդութիւնն ալ խառնելով։ Շահաբասի բոնի տարած գաղթականութենէն ետքը, կամաւոր գաղթականութեան հոսանք մըն ալ սկսաւ ձգելու յարուզակութեանց երեսէն (§ 1593), և զանազան կողմեր փախչող Հայերուն մէջէն թեւ մըն ալ Պարսկաստան եկած էր, և ապաւինած Երեւան, Գանձակ, Թավրէզ, Աբտաւիլ, և չրջակայ գաւառներ։ Շահաբաս անոնք ա՛լ աւելի նեղելու փոխադրեց, և գլխաւորաբար Ասպահան և Ջահրապատ գաւառները, և յատկապէս Փուքկայ կամ Գէչգունի աւանը։ Այս գաղթական խումբին վրայ վերակացու նշանակած էր Շահաբաղան, և իրեն օգնական Ուղուրլու բէկ, և իրենց ձեռքին նեղքեւ եղող երկու բաժիններու վրայ մէյմէկ հայ մելիքներ, Մուրատ Ղըրխլալան և Յովսէփ Ղարապաչ։ Քիչ ատենէ այդ խումբը չքաւորութեան մէջ ինկաւ, ունեցածը ծախեց ու վատնեց, և պարտաւորուեցաւ արքունի առատաձեռնութեան դիմել։ Շահաբաս հաւանեցաւ օգնել, բայց ոչ նուիրատուութեամբ, այլ փոխատուութեամբ, և տուաւ Ղարապաչի բաժինին 300 և Ղըրխլալանի բաժինին 100 թուման, պայմանով որ 3 տարիէ փոխը վճարեն առանց տոկոսի, և ով որ չկարենայ վճարել, պարտաւոր ըլլայ կամ մահմետական ըլլալ և կամ իր զաւակները տալ, մանչերը 4 և աղջիկները 3 թուման հաշուով։ Այդ փոխատուութիւնը եղած էր 1608'ին, և Շահաբաս լռեց մինչեւ 1613, և ուր ուրնին սկսաւ պահանջել, Ուղուրլու բէկին պաշտօն տալով գանձումներն ընել։ Հայեր ոչ միայն փոխը չչահեցուցին, այլ առածնին կերան և վատնեցին, և վճարման ատեն յուսահատութեան մատնուեցան, անոր համար Դաւրիժեցին սիրտին ցաւէն ըսբչէ՜, անաբոյն, անչմաբ, անանաքբոյ, եղնաբոյ կը կոչէ այդ անհետաւոտ Հայերը (ԴԱՎ. 112)։ Հարկապահանջ պաշտօնեաներ և գինուորներ, կը բռնադատէին, չբչբէն, խեբէն, հաբխանէն, բանաբբէթ ասէն. ժողովուրդին ունեցածն ալ՝ անոնց պէտքերուն ծախուեցաւ, և եղան խոտ ու ջուր և չուան (ԴԱՎ. 113)։ Աղաչանքներ և պատանքներ անօգուտ եղան Շահաբասը ողոքելու, որ պահանջատէրի իրաւունքով է քաշասան ու քաշասաբ դիմել կը պատասխանէր։ Ինչ Հայեր զաւակներն ու ընտանիքնին հաւաքելով Շահաբասի առջեւ տարին իբրեւ վճարման գին, այլ սա լայ ու կոծէն ազդուածի պէս, չուզեց կինդանի վճարները ստանալ, և առաջարկեց, որ միւս պայմանը գործադրուի, այսինքն է մահմետականութիւն ընդունին (ԴԱՎ. 115)։ Անագին չփոթ և աղմուկ յառաջ եկաւ այդ պատճառով, գինուորներ կը բռնադատէին և կը խոչտանգէին, Հայեր կ'ընդդիմանային և կ'ողբային։ Այդ նեղ ժամուն օգնութեան հասաւ լատին եպիսկոպոս մը, անունը անծանօթ մնացած, որ Հայերը կրօնքի հաստատութեան յորդորելով, գաղտնապէս 200 թուման վճարեց Ղարապաչի խումբին և 50 թուման Ղըրխլալանի խումբին, և մնացածին համար ալ պայմանաժամ ուզելով կայութիւնը հանդարտեցաւ (ԴԱՎ. 116). բայց

չուտով խռովեցաւ։ Ղարապաշի խումբէն երկու Հայեր, Բաղդասար և Ախիչան, իրենց մելիքէն տասնական թուման կը պահանջէին, սպառնալով որ թագաւորին լուր կու տան թէ Ջուանկ եղան, որ այնպէս դրամ նին ճարեր։ Թէպէտ մելիքն ու գլխաւորներ խնդրեցին համբերել, որ արքունի պարտքէն նուքը իրենց ալ վճարեն, անոնք չհանացին, և անհիմն մատնութիւնը ըրին, իրենք ալ իսլամացան և ըլլիստուեցան։ Շահաբաս բարկանալով սկսաւ Ղարապաշ մելիքը յանդիմանել, որ երէք դրամի համար հաւատափոխ չէիք ըլլար, ինչո՞ւ Ջուանկ եղաք, և մէկ կերպով չհամոզուեցաւ անոր յայտարարութեանց, թէ ալ եմ դարձեալ, այլ կամ է հաւատն մեր, և ամէն կերպ խոստութիւն հրամայից դործածել, մինչև որ մահմետականութիւնն ընդունին։ Ծովսէփ Ղարապաշը գլխիվայր կախելով այնչափ բրածնծ ըրին, որ եղեր անշունչ էրեր ըլեալ, և իր ժողովուրդն ալ ակռան անենոյ չըլլալ, հարկանել և վէրաւորել, է կոխելանի և յօթայ, է չղնայ և է կոճէր, է բանտ և չարչելանս, ռավել և ձաբաւել, և այս գործոյ առաջ, և վերջապէս բռնութեամբ է վայր կոխել ըլլալուն, և կիսամեռ խեղճերուն բնութեն հաւանութիւն առնելով, առէտիս տարին Շահաբասի, թէ հրամանը կատարուեցաւ, և նա ուրախանալով իւրաքանչիւր տան գլուխ երկրական թուման պարգեւ բաշխել տուաւ (ԴԱՎ. 118)։

ՓՈՒՔԿԱՅԻ ՄԻՒՍ ԲԱԺԻՆԸ

1612. Անոր վրայ կարգը միւս բաժինին եկաւ, բայց Մուրատ Ղըրխլալան չուտով սկարացաւ և յանձնառու եղաւ խլամանալ, իսկ իւր ժողովուրդին համար յայտարարեց, թէ ոչ իրմէ, այլ Բաղդասար քահանայէն կախում ունի։ Այս խօսքը լսուածին պէս, Բաղդասար իւր ժողովուրդը հսկումի հաւաքեց, ցայտաձայնօն կատարեց, պատարագեց, և ժողովուրդը հաղորդեց, և երբ առտուն խնդրակներ եկան, արիւրար անոնց հետեւեցաւ։ Շահաբաս աստիկ բարկութեամբ սկսաւ սպառնալ, առիւծներու յօշոտել տալ և չուներու կերակուր ընել, եթէ յանձն չառնու կրօնափոխ ըլլալ։ Քահանայն հանդարտօրէն կը պատասխանէ. Երբ առ ինչ իմով կամօն գառնալ չիմաց հաւատոց, ես կամ իմով ալ գառնամ. և ըն քառնութեամբ գրոյցանէս, ալ է պէտս հրամայեալ ինչ օրինէրէն ես. և ըն վառ պարտաց ես ասես և խնդրես, ղալըն գառնալ եմ, և որ ինչ ճացեալ է, ըլլա ես այօր և է վալէն վճարեմ (ԴԱՎ. 120)։ Շահաբաս, որ իւր բռնապետական գործերուն մէջ լաւ կողմ մը կը պահէր, յուզուեցաւ Բաղդասարի իմաստուն պատասխանէն, զգաց անոր ոյժը, պահ մը լռեց, և յետոյ հրամայեց. Ինձի՞ալ գառ ըլլալ պարտան ես, և այսպէս Ղըրխլալանի խումբը ազատեցաւ չերկոց վառնէից, է գանձանց և յօրացուներն։ Ասոր վրայ լատին եպիսկոպոսը ներկայացաւ և իրաւունք պահանջից Շահաբասէ, որ երէք Ղարապաշի բաժինը ուրացութեան հպատակեցուց, ուրիւն դրամը պահելու իրաւունք չունէր. և Շահաբաս ետ դարձուց 200 թուման։ Կ'երեւի թէ ներքնապէս ալ ցաւեցաւ Շահաբաս գործածած խստութեան համար, վասն զի այլեւս չծանրացաւ բռնի ուրացող խումբին վրայ, որոնք չարունակեցին քրիստոնէի կեանք վարել առաջի հաւատոյն ճշմարիտն, վասն երջանկաց օրացուներն, և հրապարակաւ կատարել եկեղեցական պաշտամունք, մկրտութիւն, թաղում. հաղորդութիւն և այլն, և մահմետականացն ոչինչ էպրն էր, այնպէս որ Դավրիժեցին կը վկայէ թէ օրըէ նոցին ամենէեան էրէսփանէայ են ալ, իսկ մելիք Մուրատ Ղըրխլալան, պատճառանք մը յարմարցնելով Թաւրիզ, և անկէ Երուսաղէմ գնաց ընտանեօք, և անդ քրիստոնէական ապրեցաւ, և որովհետեւ երեսփոխ էրէսփոխ էր, մինչեւ կեանքին վերջը վանքին համար աշխատեցաւ առանց վարձու, և ինքն ու կինն ալ հոն մեռան ու թաղուեցան (ԴԱՎ. 122)։ Փութիկայ կամ Դէչգունի արկածները՝ 1613'ին սկսելով մինչեւ 1614 տեւած էին։

ՇԱՇԱԲԱՍ ԵՒ ԴԱՒԻԹ

1613. Այդ միջոցին, ինչպէս առիթ ունենանք յիշելու, Դաւիթ կաթողիկոս կը մնար Էջմիածին և Մայր աթոռի մէջ կը պաշտօնավարէր, թէպէտ Ամիրգունայէ լաւ աչքով չէր նայուած։ Իսկ Մելքիսեդեկ կը մնար Ասպահան, և նա ալ այդտեղ իբր կաթողիկոս

կը գործէր, թէպէտ Շահաբասէ չարտօնուած (§ 1609)։ Իսկ Աւետիսի համար չենք գիտեր, թէ ո՞ւր գացեր էր Երուսաղէմի մէջ ձեռնադրութիւն կատարելէն ետքը (§ 1606), զի միայն չատ աւելի ուշ էջմիածին դրատունը գիտենք, առանց կարենալու երբ եկած ըլլալը ճշդել։ Այսպէս անցան քանի մը տարիներ, մինչեւ Թուրքաց նոր արշաւանքը Պարսից դէմ, հրամանատարութեամբ Օքուզանմատ փաշայի (ԴԱՎ. 161), որ է մեծ եպարքոս Էօքիւզ Մէհմէտ փաշան, որ 1615 մայիս 22'ին Կ-Պոլիսէ մեկնեցաւ, բայց ձմեռը Հալէպ անցուց, և 1616 գարնան բացուելուն կամաց կամաց յառաջացաւ, Նախիջեւանը գրաւեց 40 օր պաշարելէ ետքը, քանի մը յաղթութիւններ ալ տարաւ Պարսիկ զօրավարներու վրայ, և եկաւ Երեւանը պաշարել (ԺՈՒ. 200)։ Շահաբաս անձամբ եկաւ քաղաքին պաշտպանութեան, և իր բանակը հաստատեց Գառնիի լեռները, ուսկից Օսմանեան բանակը նեղեց, Երեւանի պաշտպանութիւնը վարող Նահավենտ զօրավարն ալ լաւ դիմադրեց, ձմեռուան ցուրտն ալ վրայ հասաւ, և Էօքիւզ Մէհմէտ ձեռնթափ կարին դարձաւ (ԴԱՎ. 200)։ Այդ պատճէնն օգտուեցաւ Դաւիթ Տոյն էֆենտի Խանէն, այսինքն Ամիրգունայի, Շահաբասի մօտ երթալ, և նորէն գանգատիլ Ամիրգունայի բռնացքին և Մելքիսեդեկի գրգռութիւններուն մասին։ Շահաբաս նպաստաւոր կերպով ընդունեցաւ գանգատը, բայց քաշուեցաւ Ամիրգունայի դէմ բան մը բռնել, որ կարող և օգտակար պաշտօնեայ մրն էր, և բոլոր ցասումը Մելքիսեդեկի վրայ դարձնելով՝ Չէրքէզ Իբրահիմ սպային հրամայեց, որ իսկոյն երթայ զայն իրեն բերէ Ասպահանէ, մինչ Մելքիսեդեկ պտոյտի ելած էր։ Իբրահիմ ետեւէն գնաց, և Գանդիման գաւառի Քաթակ գիւղը գտաւ զայն, և չղթայի զարնելով իջեցուց Ասպահան, անկէ ալ բերաւ Վայոցձոր, ուր եկած էր Շահաբաս Գառնիէ դառնալով։ Դաւիթ տատկաւին Շահաբասի հետ կը մնար, և տեսնելով որ նա Մելքիսեդեկը չղթայակապ պահելով գործը կը ձգձգէ, և անմիջական նպաստաւոր որոշման յոյս չկայ, խիթալով ալ նորէն էջմիածին դառնալ, հրաման խնդրեց Ասպահան երթալ, և Շահաբաս արտօնեց, Ջղախաս գաւառի Ծղնտիկան գիւղի հասոյթին ալ իրեն տալեան կենաց պարգեւելով։ Դաւիթի մեկնելը կրնանք դնել 1617 տարւոյ սկիզբները։ Իսկ Շահաբաս հետզհետէ եկաւ վայոցձորէ Նախիջեւան, ուր վաղանցուկ եղած էր Օսմանեանց գրաւումը, և անկէ ալ Ագուլիս որ է Գօղմն (ԴԱՎ. 165)։ Ինչպէս կը տեսնուի այս միջոցին Մայրաթոռը բոլորովին անտէր անտէրունջ կացութիւն մը ունեցաւ, Դաւիթ Ասպահան քաշուած, Մելքիսեդեկ չղթայակապ բանտարկուած, և Աւետիս թափառող աստանդական։ Արդէն լրիւ և ամայացեալ էջմիածինը՝ աստիճան մը եւս աւերուելու և քանդուելու ճանապարհի մէջ մտած էր. արդէն մայր տաճարն ալ կիսակործան կերպ մը առած էր 15 կոտր գլխաւոր քարերու վերցուելովը (§ 1610), և ով դիտէ որչափ ուրիշ աւերածներ ալ գործուած էին անոնք նանելու համար։

ԱՆԴՐԷԱՍ ԱԳՈՒԼԵՑԻ

1614. Շահաբաս կը սիրէր ամէն կողմ հսամակրական ցոյցեր տեսնել, ուստի ժողովուրդն ալ կրցածին չափ հանդէսներ կը պատրաստէր անոր գալուն կամ անցնելուն, բոլոր ժողովուրդը մնծով ու պզտիկով զգն կը դիմաւորէր, զարդարուն զգեստներով, ծաղիկներով և մրգեղէններով զինքը կը պատուասիրէր, բուրումներ կը ծխէր, իսկ գուսաններ և երգեցողներ արուեստական նուագարաններով կը նուագէին և ընտրեալ վայելչահասակ ու գեղեցկատես երիտասարդներ և աղջիկներ ղէնէն ալէ քաշտատոցանէն շահէն։ Եկեղեցական դասակարգն ալ չուրջառ և չապիկ հագած, խաչասեամ և աւետարան բարձրացուցած, խունկօք և մոմեղինօք, գանգակով և ծնծղայիւք և էքթելով ինչէն մինչեւ որ չահր հասցանէն չէ՞ր լլեանն։ (ԴԱՎ. 274)։ Ագուլիս հասած ատենն ալ այդ ամէնը կատարուեցան, ուր դպրատան վերակացու և ուսուցիչ էր Անդրէաս Ագուլեցի երիտասարդ և ուսեալ քահանայ մը։ Ինչպէս կ'երեւայ, Շահաբաս կը դիտէ դէ ուժեղ էին խաղաղ հանգամանքն, և միտքը կը դնէ թէ ասիկայ նպաստակով բրած են, որ տղաքը տգեղա-

ցնեն, որպէսզի չըլլայ թէ ինքն հաճելի ի նոսա առնէցէ ի նոցանէ, ինչ որ կը ցուցնէ թէ այսպիսի բաներ ալ կ'ընէ եղեր։ Կաթողիկոսին ըսուածը եկեղեցականներուն գագաթին վրայ, աւելի կամ նուազ մեծութեամբ ամէն ծխլուած բոլորակ մասն է, որ Լատիններու հետեւողութեամբ սկսած է գործադրուիլ, երբ ձեռնադրութեան մաչոցին փոփոխութեամբ՝ խուզումն հերաց արարողութիւնն ալ մտած է Հայոց մէջ, թէպէտ ոչ միշտ և ոչ ամէն տեղ գործադրուած։ Ընողը գըտնելու համար տղոց վերակացու քահանան հարցափորձի կ'ենթարկեն, և նա ուրիշը ձեռք չտալու համար ինքզինքը կ'ամբաստանէ։ Ասոր վրայ կը բանտարկեն, և կըրկին կը հարցափորձեն, բայց իրմէ զատ ուրիշ մը չցուցնելուն համար, գետինը տատրածելով սաստիկ կը գանակոծեն, և ուրացութիւն կ'առաջարկեն գլխապարտութենէ ազատելու համար։ Անդրէասի յանձն չառնելուն վրայ երկար կը փորձեն սպառնալիքներով և խոստումներով, միջնորդութիւններ ալ ընդունելի չեն ըլլար, նոյնիսկ չկտուիր Ծղնացի խօջա Անթռեւի կնոջ աղաչանքը, որոմ մայր էր ասացեալ շահ։ Վերջապէս մահուան վճիռը արձակեց Շահաբաս, և ամբոխով տարին Անդրէասը կատարման տեղը, ուր չատեր, և նոյն իսկ երիտասարդ քահանային ծնողքը, զինքը արիւնհան կը յորդորէին։ Հոն ալ չատ մը սպառնական և անացուցիչ ձեւերէ ետքը, վերջապէս պատառեցին ղբօվչին և ծակեալ ղէլը որունէց ոչխն պարանով գլխիվայր կախեցին, ուր կենդանի մնաց գիշեր ի տասն աբեւառն, և կախաղանին վրայ հոգին աւանդեց 1617 նոյեմբեր 18'ին, որուն համեմատ տրէ 10 ամսաթիւը հաստատուն տոմարով է գրուած։ Մարմինը պահ մը անթաղ թողուելէ ետքը, քրիստոնեայք արտօնուեցան վերցնել, և թաղեցին Ագուլիսի մէջ Ացածորի եկեղեցւոյ բակը (ԴԱՎ. 277)։

ՄՈՎՍԷՍ ԵՒ ՊՕՂՈՍ

1615. Երեք ամիսի չափ Անդրէաս քահանայի նահատակութենէն, և դեռ ձմեռնային եղանակը չէր անցեր, որ է ըսել 1618 փետրուարի մէջն էր, և Շահաբաս ալ տակաւին Ագուլիսի կողմերը կը գտնուէր, երբ խօսակցութեան կարգին, քրիստոնէից թշնամի Ագուլեցի Շահուղ բէկ, կը յիշէ թէ Անդրէասի ըրածը Տաթեւ գտնուող Մովսէս վարդապետի թելադրութեամբ եղած է, և թէ Աստապատ գտնուող Պօղոս վարդապետ մըն ալ միեւնոյն ուղղութեամբ կը գործէ։ Շահաբաս իսկոյն կը հրամայէ երկուքն ալ ձերբակալել և բերել։ Մովսէս վարդապետ Տաթեւացին յիշած ենք արդէն (§ 1603), որ Կեսարացի Գրիգորի 1611'ին երկրորդ անգամ Երուսաղէմէ Կ-Պոլսոյ պատրիարքութեան գալուն միասին եկած էր, և 1612'ին անոր կեսարիա քաշուած ատեն (§ 1614) անկէ բաժնուած էր, իբր հայրենիքին մէջ աշխատելու համար։ Մովսէս Տիարպէքիրի մէջ իբր առաջին վարդապետին Սրապիոն կաթողիկոսի գերեզմանին այցելելէ, և վան ու Թավրիզ հանդիպելէ ետքը, Տաթեւ եկած և այնտեղ նոր վանական կեանք և գործունէութիւն հաստատելու կ'աշխատէր (ԴԱՎ. 219), ուրկէ ստացած է Տաթեւացի մակդիր անունն ալ, որով սովորաբար կը կոչուի, թէեւ բնիկ Խոտանանցի էր, Սիւնեաց աշխարհէն (ԴԱՎ. 217)։ Մովսէսի գլխաւոր նպատակներէն մին ալ էր գիւղեր և քաղաքներ պտտելով քարոզել և խրատել, և բարոյական ու քրիստոնէական կենցաղ վերարծարծել, որ իսպառ մնացած և աղաւաղուած էր ժամանակին ձախորդութիւններուն և եկեղեցական անկումին պատճառով։ Սոյն նպատակի համար գլխաւոր տեղեր դպրատուններ կը բանար, և չրջականերէն ալ տղաքներ կը հաւաքէր և ուսուցիչներ կը կարգէր, ինչպէս եղած էր Ագուլիսի դըպրոցն ալ (ԴԱՎ. 273), որուն վերակացուն էր Անդրէաս նահատակ քահանան (§ 1614)։ Այս աշխատութեան կ'ակնարկէր Ագուլեցի Շահուղը՝ Մովսէսի վրայ խօսելով։ Անոր համանման կերպով աշխատող մըն էր Պօղոս վարդապետն ալ, բնիկ Մոկացի, Բար գիւղէն, վարագայ վանքը կարապետ Զագ վարդապետի աշակերտած, և անկէ ետքը ինքզինքը քարոզութեան նուիրած, նոյն իսկ Թավրիզ քաղաքի մէջ ժամատուն բացած, և եկեղեցիներ նորոգելու աշխատած։ Գողթան գաւառին վրայ առանձինն ջանք էր թափած, ուր մեծ հռչակ հանած էր

ծղնայի առաքելաչէն եկեղեցւոյն փակեալ դուռերուն հրաշալի բացումովը (ԴԱՎ. 204)։ Իւր չքնագայութեանց մէջ ժամանակ մըն ալ Աատապատ մնացած էր, ուր Ալթուն-Աւետիքը գող կրօնաւորներուն սպանութենէն ետ կեցուց (§ 1599), և անկէ ետքն ալ միշտ լծակից և աչխատակից եղաւ Մովսէս Տաթեւացիին՝ քարոզութիւնը ընդարձակելու և դպրոցներ բանալու ձեռնարկին մէջ, ինչպէս յանուանէ կը յիշուին Շոռոթի և Աատապատի դպրոցները (ԴԱՎ. 273)։ Ասոնց երկուքն էին որոնց ձերբակալման հրամանը տուաւ Շահաբաս։

ՏՈՒԳԱՆՔԻ ՎՃԱՐՈՒՄ

1616. Մնդրակներ չատ դժուարութիւն չքաչեցին, զի չարունակ հրապարակի վրայ էին երկու վարդապետներն ալ։ Երկուքն ալ ձերբակալեցին, վիզերնին անցուցին օղամանեակ ըմբէնել է ֆայթից, և ոտաբոբիկ ու գլխարկ ոչնչով, և յոռի ցրուելիս յերեսաց Շահաբասին բերին։ Նա առաջ կը մտածէր այդ երկուքն ալ նահատակել, բայց հարկաւ ցնցուած պիտի ըլլար Անդրէաս քահանայի եղերական պատահարէն, որ միտքը փոխեց, և տուգանքի ձեւը նախընտրեց, խորհելով թէ այս կերպով չենէ սպանած ոչոք ալ, և ընաւ նոցա։ Տուգանքի քանակը 500 թուման նչանակեց երկուքին համար, բայց նոյն իսկ իւր նախարարներուն միջնորդութեամբ 300 թումանի իջեցուց (ԴԱՎ. 278)։ Վարդապետները անոր և լաւագոյն էին, ուստի արտօնութիւն ստացան զինուորներու հսկողութեամբ հանգանակութեան ելլել, և չատով յաջողութիւն գտան իրենց սրբակեաց համբաւովը, որով ամէնքը անխնայաբար ինձէին ընծայ և ընդհանրապէս առաջի վարդապետին։ Հանգանակութիւնը մինչեւ 700 թուման արդիւնաւորեց, որով ոչ միայն տուգանքը, այլ և ինչ որ այլ անդր խոցի ինչ վճարեցին, ետս և բաղաղ գերի և բանտարկեալ և գոռոզաբարեալ աղաչեցան վարդապետներուն չնորհիւ (ԴԱՎ. 279)։ Մովսէս և Պօղոս ազատութիւն ստանալով իրենց տեղերը դարձան, և իրենց առաջին քարոզութիւններէն չդարձակեցին, մինչ Շահ-ռուզ Ագուլիացին քիչ օր ետքը սպանուեցաւ, ինչ որ բրած մատնութեան աստուածային պատուհասը նկատուեցաւ (ԴԱՎ. 279)։ Մելքիսեդեկ կաթողիկոս ալ տուգանքի համար կալանաւոր էր, բայց վարդապետներուն պէս բախտաւոր չեղաւ։ Շահաբաս Ագուլիսէն ելլալով Դանդի և անկէ Աատապան եկաւ, և Մելքիսեդեկ կապանօք չջկէր ընդ բանակն ոչխար, անոր որոշման սպասելով։ Քաչած նեղութիւններէն ազատելու համար, քանիցս դիմում ըրած էր, որ երթ հանուածք և երթ կենաց վերջ տայ իւր տառապագին վիճակին։ Իսկ Շահաբաս յայտարարած էր, ոչ սպանանիմ և ոչ ընդոմ մինչեւ որ որոշեալ տուգանքը վճարէ։ Որոշուած գումարն ալ 300 թուման էր, ևթնք յանցանքներուն համար հարիւրական թուման, մէկը՝ Ս. Հռիփսիմէի նչխարքը կաչառքով ծախելը (§ 1599), միւսը՝ անհրաման Մուչկունէ ետ դառնալը (§ 1588), և երրորդը՝ իւրովի Աատապանի մէջ կաթողիկոսութիւն վարելը (§ 1609)։ Մովսէս և Պօղոս վարդապետներուն տուգանքին համար առատաձեռն եղող Հայերը, անտարբեր կը մնային Մելքիսեդեկի նկատմամբ, և ոչ միայն Պարսիկ մեծամեծներ, այլեւ Հայ իչխաններ՝ Նազար, Սուլթանում, Մխրվէլի և Հայկազն, իրեն հասկցուցին, թէ ուրիչ եղանակ չկայ իրեն, այլ պարտք փոլ և ղերծանիլ (ԴԱՎ. 166)։ Վերջին յուսահատութեան մէջ Մելքիսեդեկ առաջարկեց քահանայութիւն, որ ուզած տուգանքը կալանաւոր մնացած ատենը ճարել անհնար ըլլալուն, եթէ ազատ թողուի և կաթողիկոսութիւնը վարել արտօնուի, յանձն կ'առնէ տարեկան հարիւր թուման վճարել թագաւորին։ Այս առաջարկը առաւել չհաւնեցաւ Շահաբասին, ուստի կարծեաց վհատութեան նշոյլ, կաթողիկոսութիւնը վարելու հրովարտակ տուաւ, չղթաներէն արձակեց, և թողուց որ երթայ և խոստացած գումարը հաւաքէ և վճարէ (ԴԱՎ. 167)։ Դավրիժեցին դիտել կուտայ թէ կերպ կերպ պատմուած են 100 թուման տարեկան հարկին պարագաները. ոմանք կ'ըսեն թէ միայն երեք տարուան համար, և ուրիչներ թէ մշտնջենաւոր էր Մելքիսեդեկի առաջարկը. և դարձեալ թէ միայն իւր ազատութեան համար առաջարկած էր, իսկ ուրիչներ՝ կաթողիկոսութեան կացութիւնը դժուարացնելու դիտմամբ,

գործած էր կ'ըսեն։ Հարկաւ յատակ յօդուածներով որոշ գծուած գործ մը չէր, բայց տեւական և տաժանելի բնոյթ մը եղաւ աթոռին վրայ։ Իսկ Մելքիսեդեկի ձեռքը զօրաւոր զէնք մը եղաւ, համարձակօրէն չրջելու և ժողովուրդին վրայ բռնանալու, նոյն իսկ արքունական արտօնութեամբ (ԴԱՎ. 168)։ Հազիւ թէ ազատութիւն գըտաւ, յաջորդ ձմրան չրջագայութեանց ձեռնարկեց, նախ Տփղիս, անկէ Թաւրիզ, անկէ Ասպահան (ԴԱՎ. 169), ուր կը գրտնուէին ունեւոր ազգայիններր։

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ՀԱՐԿԱՀԱՆ

1617. Այս կերպով տարօրինակ կացութիւն մը սկսաւ Մայրաթոռի մէջ 1618'էն սկսելով, երբ Մելքիսեդեկ նոր յանձնառութեամբ կաթողիկոսութեան տիրացաւ։ Գրեթէ երկու տարի էր որ Դաւիթ Էջմիածինէ Գորի մեկնած էր (§ 1613), և անկէ ալ Ասպահան քաչուած, և Մելքիսեդեկ կալանաւորուած, որով անտէրունչ կը մնար Մայրաթոռը։ Հաւանաբար այդ կացութիւնն էր որ Ամդեցի Մելքոն դպիր 1617'ին գրած աւետարանը կը նշանակէր է յանհնարելիութիւն ժամանակի ոգիս Հայոց (ԹՈՐ. Բ. 418)։ Այս անգամ տէր մը կը ստանար, բայց՝ աւելի բռնաւոր և կեղեքիչ հարկահան մը, որ ոչ Մայրաթոռ կը նստէր, և ոչ Մայրաթոռ կը հոգար, այլ թափառական ուր որ Հայ կը գտնուէր կամ ուր տեղէ դրամ չորթելու յոյս ունէր՝ հոն կը դիմէր, իրեն հետ ուրնեալով պետական պաշտօնէից և զինուորաց խումբ մըն ալ, որոնք մէկ կողմէն իրենց ծախքովը ծանրանային է վերայ ծողովրդեանն, և կաթողիկոսին ակնարկին վրայ ով ալ բլլար, եպիսկոպոս թէ արհղայ, երէց թէ աշխարհական, կոխէին յոթկն և բռնծէծ առնէին, գինքը ըսած կոտոց էրեանց առնուին դրամ (ԴԱՎ. 167)։ Դավրիժեցին Ղուկը, այսինքն է Ռուկէթ, որ է սրբոյնէր կը կոչէ Մելքիսեդեկի հետեւորդ խաժամուժր, իբր պետական ծառաներ, որոնք անոր հետ չրջելով իրենց զուարճութեան և քսակին կ'աշխատէին, և ոչ Մելքիսեդեկի հասոյթին, այնպէս որ երբ Մելքիսեդեկ արդէն 800 թուման վճարած եմ կ'ըսէր, Շահաբաս կը յայտարարէր, թէ և ոչ մի փող չէ հասեր իրեն։ Մելքիսեդեկ դրամ հաւաքելու նպատակով ոչ միայն անասելի բռնութիւններ կատարելու չէր խղճեր, այլև քաղամ անկրկնելի և չրինաղանգրնիւ կաչառքով կը նեղէր համարձակ, ինչպէս են, անթափանչ չեռնարքութիւն՝ երէկ եպիսկոպոս և երէկ ռահնայէց, վանքերու վիճակները մէկէն կտրել և միւսին չնորհել, կնաթողութիւն, երկակնութիւն, աւետառնութեանց համարյակ հրաման, և որ ասկէն նման քաղամ անկրկնելի։ Մելքիսեդեկ միտակ ալ չէր այդ գործերուն մէջ, այլ իր եպիսկոպոսներն ալ թեւ թեւ ելած, նոյնը կը գործէին մանր քաղաքներու և գիւղերու մէջ, մինչ ինքը իրեն պահած էր գլխաւորները, ինչպէս Ասպահան, Թաւրիզ, Նախիջեւան, Երեւան, Տփղիս, և այլն (ԴԱՎ. 170)։ Երբ առաջին տարին լրացաւ 1619'ին, Շահաբաս հարիւր թուման գանձելու պաշտօնով Զիալ, Աւաթ, Զրաղ և Բեհբահ բեկլերը ղրկեց Մելքիսեդեկի վրայ, որ չի կրցաւ պահանջը վճարել, և այս չորսն ալ աւելցան Մելքիսեդեկի վրայ, և նոքեն է վերայ կոխոտիկոն ծառայե և երկեցե էրեանց, և զմեռան պիտոյս էրեանց՝ զկերակրոց և զայլ կոեաց է կոխոտիկոսէն առնուին (ԴԱՎ. 169), և զկնոցաղաղրութիւնս էրեանց զեղեցութեամբ և շայլոթիւնեամբ վերեին, այնպէս որ կաթողիկոսին հաշուոյն փոխառութիւններ կ'ընէին յաղելէ յայլ գիւղ, և այս պարտքերն ալ հարիւր թուման մոտոխոյին կամ տարեկան հարկին վրայ կը բարդուէին (ԴԱՎ. 171)։ Շուրջ վեց տարուան ժամանակամիջոց մը պիտի հաշուենք այդ եղկելի կացութիւնը 1618'էն մինչեւ 1624։

ԱՒԵՏԻՍ ՎԱԽՃԱՆԸ

1618. Թէպէտ Մելքիսեդեկ և Գառնեցի պետական հրովարտակով կաթողիկոսութեան տէր էր եղած, այլ իր կանոնական կացութիւնը օգնական և աթոռակից բլլալէ աւելի չէր, քանի օր բուն գահակալը Դաւիթ Դ վաղարշապատցին՝ իր դիրքը կը պահէր և իսկական կաթողիկոսն էր, Ասպահան քաչուած։ Թէպէտ նոյ է քացեայ, այլ նոյն չրջանակին մէջ պաշտօն կը վարէր, և մեծացածին համար էրէ զբօղան կոպեալ է քոտոքէղ, սպոռէ և ըղնոյր զբոզ ժամա (ԴԱՎ.

167)։ Իսկ միւս աթոռակիցն Աւետիս Ա մինչ մոռացուած ու անյիշատակ կը մնայ Դավրիժեցիին պատմութեան մէջ, որ լիագոյն և հաւատարմագոյն պատմիչն է, իսկ Դարանաղեցիին յիշատակները քաղողներ կը գրեն, թէ երուսաղէմէ ետքը գացած է էջմիածին, առանց յայտնելու թէ 1613'է քանի տարի ետքը, և անկէ վրաստան, և թէ անդ եղեալ վախճան նորա 1620'ին (11 ԱՄՍ. 69)։ Հակառակ ասոր նոյն Դարանաղեցին իր Ատուածաշունչի յիշատակարանին մէջ (ՅՐՆ.) կը գրէ, թէ կաթողիկոս կաթողիկէ էրայ է ինձ ընկալաւ Հայոց ի Ա Հ Ա Ա, նա յետքեր ամոյ է, և փոյց Թ, է հայրապետութեան Հայոց պետառ պէր Աւետիսն, որ այժմ յաջորդէ ընտ օրթայ Գրիգորի Լուսաւորչին ձերոյ, ուակից կը հետեւի թէ 1622 նոյեմբեր 7'ին չէր վախճանած, և ոչ թէ վրաստան, այլ էջմիածին կը գտնուէր։ Ցիշուած հռոմէական և հայկական ամսաթիւերը իրարու չեն համեմատիր, զի անչափ տոմարով նոյեմբեր 7, սահմի 29 է, իսկ չարժական տոմարով քաղոց 9, փետրուար 22 է, և պէտք է անճշդութիւնը վերագրել Դարանաղեցիին տոմարական սխալին։ Իսկ Աւետիսի մասին վկայած առն ինքն իրեն կը հակասէ. և չենք գիտեր ինչ եղրակացութեան յանգիլ Աւետիսի գործունէութեան և վախճանին նկատմամբ։ Քանաքեռցի պատմիչն անցողակի յիշատակութեան համեմատ, Աւետիս կը գտնուէր Երեւան, Ամիրգունա խանին մօտ, երբ Մեխլը- քաբա կամ քեհեռանկիր աքեղայ կոչուած խարեբային գործը կը փնտուէր (ՉԱՓ. Ա. 50)։ Թէպէտ նա խարեբան խայտառակեց, սակայն երբ զայն ջուրի մէջ խեղդելու վճիռ տուաւ Ամիրգունա, պէրսանոյ կաթողիկոսին խարեբան ազատեցաւ, և երբ սահմանէն հեռացուելու համար խարեբան Քանաքեռ կը հանդիպէր, կ'ըսուի թէ էր անդ է Քանաքեռ և կաթողիկոսն (ՉԱՓ. Ա. 53)։ Սակայն այդ չափը չբաւեր Աւետիսի էջմիածին գտնուած տարին ճշդելու, վասնզի պատմիչը թուական չնշանակեր, իսկ Ամիրգունա չատ կանուխէն Երեւանի կուսակալ էր, 1604'ին Պարսի տիրապետութեան նոթոգուելէն ի վեր։ Հետեւապէս այդ կողմէն ալ պիտի չկարենանք Աւետիսի մահուան թուականը ճշդել։ Միւս կողմէն լոյս մը կ'առնենք Մովսէս Տաթեւացիի նամակէն, ուր կը յիշուի կեսարացիէն Մելքիսեդեկին գրուած յանդիմանագիրը, ուակից օրինակ մը 1615 օգոստոս 27'ին Մեծ-Անապատ է բերուեր, և կարդացուեր է սեպտեմբեր 19'ին, որ է Խաչի երեքշաբթին, Հայկազն իշխանի այնտեղ չինել տուած եկեղեցւոյն նաւակատիքին առթիւ։ Այդ թուականին կ'ըսուի թէ Աւետիս նոյ է էջմիածին և ասոր չէիցեալ, որ է ըսել կրօնաւորական ձև առած, և կը վկայուի թէ յերուսաղէմ գնելէ առաջ չատ աստուածավախութիւն չունի եղեր։ Ամէն առիթի մէջ, պէտք է 1620 և 1624 տարիներու միջոցին մնացած կարծել, և աւելի հաւանարար էջմիածնի մէջ, ուր նորէն եկած և նստած պէտք է ըլլայ, երբ Դաւիթ ու Մելքիսեդեկ բացակայ կը գտնուէին։ Աւետիսը ոչ իրրեւ գահակալ, այլ իրրեւ աթոռակից կաթողիկոս պիտի նկատուի, առանց բացատրել կարենալու թէ ինչու իր մասին այսչափ չատառ և կատաղի լռութիւն կը պահէ Դավրիժեցին։ Ոչ ծագումը, ոչ անուանումը, ոչ արժանիքը, ոչ պաշտօնէութիւնը և ոչ ալ վախճանը ստոյգ կերպով հաստատուած ըլլալուն, որոշ գնահատում մըն ալ չենք կրնար ընել իր վրայ, և աննչանակ դոյութեան մը յիշատակով կը փակենք իր վրայ եղած ծանօթութիւնները։

ՍԱՐԳԻՍ ՊԱՐՈՆՏԵՐ

1619· Երբոր եկեղեցւոյ պետ ճանչցուող անձերը այդպիսի ստոր կացութիւն և գերուելի նկարագիր կը ցուցնէին, և եկեղեցւոյ պաշտօնական դրութիւնն ալ անոնց երեսէն հետզհետէ խղճալի վիճակ մը կը ներկայացնէր, միաբարական երեւոյթ մըն է անանձնացած հոգեսէր եկեղեցականներ, անհատական ճիգերով կը սկսին եկեղեցականն բարեկարգութեան աշխատիլ, ժողովուրդին բարոյականը բարձրացնելու ճիգեր կ'ընեն, և դառն ու եղկելի ժամանակներուն ներածին չափ, փորձիչատէ ուսումն ալ տարածելու և դպրոցներ բանալու անձնանուէր ճիգեր կը թափեն։ Այս կարգին

մէջ նախապատիւ տեղ մը պիտի տանք Սրապիոն Եդեսացի վարդապետին, որ անցողական կերպով Գրիգոր ԺԴ կաթողիկոս ալ եղաւ (§ 1584)։ Գովութեամբ պիտի յիշենք Սրապիոն Օձտեղացի վարդապետը որ Բաբերդի վանահայրն էր վանքին մէջ կը գործէր (§ 1596), իսկ վախճանին վրայ տեղեկութիւններ կը պակսին։ Նոյնպէս կաթողիկոս Զագ վարդապետը որ Վանայ Վաթագ վանքը (§ 1615) աշակերտներ և վարդապետներ հասցնելու կ'աշխատէր, և մեծ գաղութին առին Ապահան գնաց այցելութեան, և հոն վախճանեցաւ ու թաղուեցաւ (ՀԱՑ· 610)։ Առնցմէ աւելի նշանաւոր եղան Մովսէս Տաթեւացի և Պօղոս Մոկացի վարդապետները, որոնք արդէն յիշեցինք (§ 1615)։ Առանց հետ արդիւնքով և նչանակով պայծառացաւ նաեւ Սարգիս Պարոնտէր Սաղմոսավանքի եպիսկոպոս և Մեծ-Անապատին առաջնորդը։ Սարգիս բնիկ էր Աթաքածոյն գաւառի Ծարևնի դիւղէն, որ կարբիի մօտ էր և այժմ է ասբէկ։ Սաղմոսավանքի աշակերտած և այնտեղ յառաջացած, մինչեւ եպիսկոպոս և առաջնորդ ալ եղած էր, և կ'երեւի թէ ինքն ալ անունքն մէկն էր, որոնց խնդել և խօսակից վայելչաբարբառ ախորժելի կու գար։ Աթաքածի վրայ երէկներու ետեւէն պտտող որսորդ մը, քարանձաւի մը մէջ մնացած ճգնաւորի մը հանդիպելով եպիսկոպոսին իմաց կու տայ, որ զայն գտնելով պատուով կը թաղէ, բայց դիպուածը մեծ տպաւորութիւն կը գործէ Սարգիսի վրայ, որ այն օրէն կ'որոշէ հեռանալ յանկարծակի և հեռանալ առաքինական վարուց (ԴԱՎ· 190)։ Իւր նպատակին իրագործման համար Հայաստանի մէջ պէտք եղած ուղեցոյցը չգտնելուն, իւր դիտումը նուիրագործելու համար Երուսաղէմ ուխտի կ'երթայ։ Հոն իր ետեւէն կը հասնի կիրակոս Պոնտացին, Տրապիզոնի այրի քահանան, որ նոյնպէս հոգեւոր կեանքի եռանդ զգացած և Սարգիսի օրինակէն քաջալերուած, անոր հետ միանալու միտքը յղացած էր (ԴԱՎ· 191)։ Երուսաղէմ հասնելնուն որոշ թուականը չունինք, միայն Դարանաղեցիէ (ԴՐՆ.) կը գտնենք, որ 1606'ին Երուսաղէմ եղած ատեն հոն հանդիպած է համշէրցի եպիսկոպոսի՝ որ ազգովին պէտ Սարգիս եպիսկոպոսին Սալմանվանեցի, և Տրապիզոնցի կարապետ պէտ Կիրակոսին, որոնք այնտեղ կը գտնուին 1607 փետրուար 2'ին ալ։ Երուսաղէմի մէջ Սարգիս ու Կիրակոս իրարու հետ դիմած և դէպքան և դէպքհանդէպ կ'որոշեն կրօնաւորական բարեկարգութեան աշխատիլ, և Երուսաղէմի վանքերուն մէջ իմացածնին ու սորվածնին Հայաստանի մէջ գործադրել, ուր և քիչ հետը կը դառնան։ Ծարմար տեղ մը ճարելու համար կը դիմեն Սիւնիք, վանքերու և կրօնաւորութեան աւանդական կեդրոնը, և Տաթեւ, Զորավանք կամ Ծրուանց ու Թանահատ քիչ քիչ մնալէ հետը, կը նախընտրեն Տաթեւի հին Անապատը կամ Հարանց-Անապատը, և զայն կը նորոգեն և կը կազմակերպեն, որ անկէ հետը աւելի կը ծանօթանայ Մեծ-Անապատ անունով (ԴԱՎ· 192)։ Այդ հաստատութեան թուականը 1608'էն հետը թողուլ յարմար չենք սեպեր, թէպէտեւ ոմանք մինչեւ 1610 կը յետաձգեն (ՁԱՐ· Գ· 563)։

ՄԵԾ-ԱՆԱՊԱՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ

1620· Շուտով կը հռչակուի Մեծ-Անապատին համբաւը, և ամէն կողմէ աշակերտներ և գործակիցներ կը հաւաքուին Սարգիսի և Կիրակոսի չուրջը, և մինչեւ իսկ անոնցմէ աբէ, վրթպետ, եպիսկոպոս և ռահանայ, եկին և յաբեցան ի Նոսա։ Այս կարգին յիշատակութեան արժանի են Պօղոս Մոկացի և Մովսէս Տաթեւացի վարդապետները, որոնց արդիւնաւոր գործունէութիւնէն և արկածներէն ինչինչ պատմած ենք (§ 1615), և ինչինչ ալ տակաւին պիտի պատմենք։ Առանք առանց իրենց քարոզչական չրջագայութիւնները դադրեցնելու, Սարգիսի և Կիրակոսի մեծ օգնականներն եղան, դուրսէն նպաստներ հասցնելով, խորհուրդներ տալով և ուսուցչութիւն ընելով, ու ատեն ատեն Մեծ-Անապատը քաշուելով և անապատական կեանքի հետեւելով։ Անապատին հիմնարկողներուն կարգին պիտի յիշենք նաեւ ոչ-կրօնաւոր մէկ մը, Զուղայեցի Հախնազարի որդի Հայկազն իշխանը, որուն անունը անգամ մը տուինք (§ 1616), և զոր գինուորական քաջութիւնովը համբաւ Շահաբաս չատ սիրեց, և կոչուց ընե էլեան էրէլէ, հանել

ի դոխ- ԹԷՕ-ՐԵՒ (ՀԱԹ· 619)։ Հաւանաբար Հայկազնի իշխանութեան սահմանը Սիւնեաց երկրին կողմն էր, որ դիւրութիւն ունեցաւ պաշտպան կանգնիլ Սարգիսի հաստատութեան, և ինչպէս անապատին աշակերտներէն Ներսէս Մոկացի կը վկայէ, անոգոխ սիրտ չէին երեւիր, քրիստոնեայ (ՀԱԹ· 619)։ Հարկաւ Հայկազնի պաշտպանութեան չնորհիւ էր, որ Մելքիսեդեկ, երբ միւս վարդապետները կը հալածէր, Սարգիսի գործին չկրցաւ երբեք արգելք դնել։ Անապատի աշակերտներուն մէջ նշանաւոր եղաւ Ներսէս Մոկացի վարդապետը, Մոկք գաւառի Ակնկոյաս գիւղէն, Բեղոյ մականուանեալ, որ է Պեհեաւոր, վասն ծնեալ էր քեզն (ԴԱՎ· 30), յառաջագոյն Ամրոյու Բարսեղ Գաւառցիին աշակերտած (§ 1504), և Անապատի մէջ ալ զարգանալէն ետքը, պահ մը նոյնտեղ ուսուցչութիւն ըրած, և անկէ մեկնելով նոր անապատ մը հաստատած է Լիմ կղզիին մէջ, որ չատ բարգաւաճ եղաւ Ներսէսի առաջնորդութեան ներքեւ, իսկ անոր 1627'ին վախճանելէն ետքը իրեն յաջորդած է Ստեփանոս Մոկացի, նա ալ Անապատի աշակերտութենէն։ Ստեփանոսի օրով Լիմայ միաբանները տարապայման աճելուն համար, մաս մը բաժնուած և կտուցի մէջ նոր անապատ մըն ալ հաստատած են (ԴԱՎ· 191)։ Անապատի միաբաններէն են նաեւ, Թովմաս Տաթեւացի՝ որ ետքէն Շամախոյ վիճակին եպիսկոպոսն ու առաջնորդն է եղած. Կոստանդին Վաղարշապատեցի եպիսկոպոսը՝ որ էջմիածինէ վտարուելով Սիւնեաց ապաւինած էր (§ 1598) և անկէ Մեծ-Անապատ քաշուեցաւ. Արիստակէս Շամբեցի՝ որ Սարգիսի մահուանէ ետքը Մեծ-Անապատին առաջնորդն եղաւ. Արիստակէս Բարկուշատցի՝ որ Տանձափարախի անապատին հիմնադիրն ու առաջնորդն եղաւ. Դաւիթ Շամքոռեցի՝ Ղարամանեանց ազնուական տունէն՝ որ Զարեհաւանի Անապատը հիմնեց և վիճակին եպիսկոպոսն եղաւ. և այլք քանի՛ և քանի՛, որոնք այնու աւելի արդիւնաւոր եղան, որ Անապատին մէջ վարժուելէն ետքը, բարեկարգութեան գործը ընդարձակեցին, և այնքա՛ն գնացեալ չէնեցին անապատ և վանօրայ (ԴԱՎ· 192)։

ՄԵԾ-ԱՆԱՊԱՏԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1921· կարեւորութենէ զուրկ չենք դատեր Մեծ-Անապատին մէջ պահուած կրօնաւորական կենցաղին համառօտ նկարագիրը քաղել, և Հայոց մէջ այդ միջոցին կազմուած վանական կեանքին կանոնները ճշդել։ Առօրեայ կեանքերնին սովորաբար առանձնական էր. Մէյն ել ժամերէ է իջել, և դէպի է ձեղնին մտնելու և է գերէ ալերիլ է դէպի ել կը յիշուի նաեւ է մտնելու է իջնել նին միասին հաւաքուիլ. բայց բէ ինչ ուսական աշխատանքներ էին այդ մարմնաւոր գործերը՝ որոշակի չէ յիշուած։ Անհատական ստացութիւնը արգելուած էր, և կանոն էր ամենուն ինչ հասարակաց լինել։ Առաջնորդին կը պատկանէր իւրաքանչիւրին պէտքը հոգալ և ինչ որ պէտք ըլլայ բաշխել, իսկ միաբանը իւր խուցին մէջ յատուկ ուսուիլք կամ ուրիշ բան ալ պիտի չպահէր։ Հնազանդութեան օրէնքը խիստ էր, և պէտք էր ընդունել չիմա իւր և լինել հնազանդ և կոտրտոդ կամաց առաջնորդին։ կերակուրը չորն ի անգամ էր է քաղցր փոքին, գինին ու միսը իսպառ արգելուած, և հանապազօր պահք, չարաքի և կիրակի և տէրունական օրերէն դուրս։ Միսը իսպառ արգելուած ըլլալով՝ պէտք կ'ըլլայ պահք չեղող օրերը նաւակատիք իմանալ, իսկ տէրունական օրերն ալ տօնական պատշաճով զատել։ Կերակուր և միրգ՝ ամէնուն միաչափ պիտի բաշխուէր է դէպ դինքը ցփոանս, և պիտի ուտէին լռելեայն. ուտելու ատեն ալ սովորութիւն էր փէր ընդհանուր, որ քիմքին հետ միտքն ալ զբաղի։ Ընթերցման գիրքը բացարձակապէս Աստուածաշունչ չյիշուելուն, սուրբ հայրերու գիրքերն ալ հարկ կը լինի իմանալ։ Չգիտտի մասին վերջի ատենները եկեղեցականներ սկսած էին վէզար և փիլոն դէպ է ժամ ալերիլ գործածել, իսկ անկէ դուրս էքէթ ըշխարհական չըլլէն, ուստի որոշուեցաւ միշտ եկեղեցական զգեստով չրջիլ, աբեղայն փիլոնաւ և վէզարաւ, քահանայն փիլոնաւ, և պարզ միաչակեացը ոսկրիայն և ոսկոսոսը։ Քուսիթայն կը բացատրուի թէ է փէթ ընդէ, այսինքն է գլխանոց մազերէն կամ թաղեայ, և հաւանաբար սրածայր, իսկ քառակուսին արտաքին

զգեստ մը պիտի ըլլայ, որուն ձեւը ճշդել դժուար է։ Կրօնաւորական զգեստը կը լրացնէին՝ գիսի կամ մազերէն է նէրսէս շէնորհալի, եւ կապայի պէս բան մը պիտի ըլլայ, առջեւէն բաց պարտական չապիկի պէս, և ֆոթ մը ձգէին։ Իսկ իրր նիւթ՝ ամէն ոպանելի պիտի ըլլար ասոնց, և ոչ թոմբակէն, որ բնական կամ պէղ ալ կը կոչուէր, և պճնութիւն կը սեպուէր։ Քահանայից գլխանոցը չէ յիշուած, և քանի որ վզառ չունէին, քուսիթա գործածէլնին կը հետեւի։ Փամփուշտիններու ամրողջաբար կը կատարէին ըստ իւրաքանչիւր ժամուն զատ զատ, այսինքն ի մէջ գիչերի, առաւօտուն, արեւագալին, երբորդը, վեցերորդը և իններորդը իրարմէ որոշ, նոյնպէս մնացեալներն ալ։ Գիչերային ժամէն ետքը Յայսմաւուրք կը կարդացուէր պատչաճ չարականով մը, և առաւօտեան և երեկոյեան ժամերէն ետքը էջս խոտոկանոն կը կարդային։ Միանգամայն ուխտ կանոն սաղմոս անխափան կը քաղուէր ամէն օր ժամերու վրայ բաժանմամբ։ Շաբաթ և կիրակի և տէրունական օրերն հակում էր բոլոր նախընթաց գիչերը։ Գիչերին ժամուն կ'աւելցնային Ճչէնոցս և այլն ձայնիւ, կանոնագլուխ ձայնիւ, Հանգստեան չարական և աւետարան, և քաղուածք չարականաց։ Հակումէ ետքը պատարագ կը մատչէր անխափան պտրօ և ոսկեսփօ, իւրաքանչիւրը իւր ծիսական զգեստով։ Պէտք էր մինչեւ պատարագին վերջը, այսինքն մինչ'ու Իբբեծաչէցին աւետարանը, ահե և դաղրնեմբ աղբիւր, և ֆէթել է սրտի ըե ղինչ աղբիւր։ Պատարագէ վերջն ալ ժամ մ' առանչին ազի պիտի ըլլար, և ունկէ ետքը ճաչ։ Իսկ իրր բարեպաշտական կանոն, պէտք էր պահել ղիբս և ղեորդրդս՝ սրբոց յոհնէսի անմահաւոր տեսանողաց Հոբելեանաց և մարճոանոց, և յոհնէսի սուրբ յայնն և յերեկոյն խոսվելանել անխափան ղանցասաց և ղմտածողնեան սուրբն, բայց որոշ չէ թէ հրամայական էր այդ խոստովանութիւնս։ Ասոնք ընդհանուր կանոններ էին, որոց միաբաններու պէտք էր հնազանդէին իրրեւ օրէնք, որովհետեւ ուխտադրութեան յիչատակութիւն չունք գտներ քնաւ, և ասով կը տարբերէին Ակնեցւոց մըտեայց կրօնաւորութենէն։ Ասոնցմէ զատ իւրաքանչիւր միաբան ղնդանոկ ասոչնորնեան ալ ունէր, ամէն ոպնակացորնեամբ, ամէն պահոց պնդորնեամբ, ամէն արնակացորնեամբ, ամէն արտասուահեղորնեամբ, ամէն լուսնացորնեամբ, ամէն հիանդաց սպասաւորորնեամբ, ամէն այլ կերպիւ (ԴԱվ. 195—197)։ Այդ նկարագիրէն կը տեսնուի թէ չատ զօրաւոր էր ճգնողական վերացեալ կեանքը, սակայն ինչպէս առաջ ըսածներնէս (§ 1620) և ուրիչ չատ մանրամասնութիւններէ կը քաղուի, գործնական կեանքն ալ խնամով մչակուած էր, մանաւանդ ուսմամբ և քարոզութեամբ և ժողովուրդի հոգածութեամբ, որուն համար նոր ճիւղեր ալ կը հաստատուէին։

ԳՈՐԾԻՔՆԵՐՈՒ ՄԱՀԸ

1622. Վարչական տեսակէտէն Սարգիս Պարոնտէրն էր Մեծ-Անապատին հոգեբոյժ է տրտնաւոր կոմսնէ, և այս պաչտօնը իրեն վրայ մնաց մինչեւ իւր մահը։ Իսկ էրզ ասոցնէլ էին կիրակոս Պոնտացի քահանան, որ միչտ պէտ կնքոնս կը կոչուի, և Թէպէտ այրի, բայց կ'երեւի թէ վարդապետութեան աստիճան չէ առած, և Պօղոս Մոկացի, Մովսէս Տաթեւացի, Ներսէս Մոկացի, ու Թովմաս Տաթեւացի վարդապետները։ Առաջին երկքը չլսուն կեանք ունէին, իսկ վերջին երկուքը քառասմ ամանոկ Սարգիսի հետ մնալէ ետքը, Քչտաղք կամ Աղահէճք գաւառը քաչուեցան և Հօչանք գիւղի մօտ նոր անապատ մը բացին (ԴԱվ. 198)։ Թէ Սարգիսի և թէ կիրակոսի կեանքն ու գործունէութիւնը միակերպ ձեւ մը կը ստանան վանական չրջանակի մէջ, որով պատմուելու մանրամասնութիւններ կը պակսին, և վախճանին ալ գրեթէ միաժամանակ տեղի կ'ունենայ մէկ տարուան միջոցին, Թէպէտ հայկական երկու տարեթիւերու մէջ, այսինքն է ՌԿԹ և ՌՀ, առաջինին վերջերը Սարգիս, և երկրորդին սկիզբները կիրակոս (ԴԱվ. 198)։ Աւելցնենք թէ Հայ Թուականին նոր տարուն սկիզբը 1620 նոյեմբեր 17'ին կ'իյնար։ Ներսէս Մոկացի իրրեւ նշանաւոր պարագայ մը կը յիչէ, թէ ըստ կրթէ եղող Անապատի հիմնարկութիւնը, իշխանն ընդ վրդապէտ, հայրապետն և առաջնեան,

միւնոյն է հաշիւ և ծոյնանասան Հայոց թուին, այսինքն 1621'ին վախճանած են (ՀԱՒ. 622)։ Հայրապետը Սարգիս է, և առանձնականը կիրակոս, զոր յիշեցինք, և իշխանն ալ Հայկազն Հախնազարեանն է, որուն վրայ խօսեցանք (§ 1620), և ուրիշ տեղեկութիւն չունինք աւելցնելու իր գործունէութեան և մահուան վրայ։ Կը մնայ վարդապետը, որ է Պօղոս Մոկացին, զոր պարզապէս ոսոքէ կը կոչէ Դավրիժեցին, իբր օրինակելի վարքին, քարոզչական գործունէութեան, կրած հալածանքներուն և ի կենդանութեան և յետ մահուան հրաշագործութիւններուն համար, և որուն գործունէութենէն ինչինչ յիշատակներ (§ 1615), և 1618'ին Շահաբասէ տուգանքի ենթարկուիլը պատմեցինք (§ 1616)։ Միւնոյն տարին Մելքիսեդեկ ալ ազատութիւն ստացաւ Շահաբասէն, և կաթողիկոսութեան տիրացաւ 100 թուման տարեկան տուրքի պայմանով (§ 1617)։

1623. Մելքիսեդեկ, որ տուրքին վճարման համար դրամ հաւաքելու կը չրջէր, իրեն գործին արդելիչ ՊՕՂՈՍ նկատեց Պօղոսը, որ իբր ՄՈԿԱՑԻ քարոզութիւններով բարեգործական նպատակներու կը յորդորէր ժողովուրդը, ետեւէ ամէն չանք և միջոց գործածել զայն լռեցնելու։ Կաթուխէն ալ ապահովացած էր վարդապետին թէ ելցես չեչէչէ ծէրմէ, և փոչես չեչէչէ սոսոչ եկեալ ես. իբր զի Մոկք Աղթամարի կաթողիկոսութեան կը պատկանէր, և թէ ոչ է պէտք ծէր խոքեցոյ և նորահաւակ սրոշոխեն սո (ԴԱՎ. 207), այլ վերահաս պատահարներ, լսեցուցած էին կալանաւոր Մելքիսեդեկը, և Պօղոս համարձակ չարունակած էր։ Բայց երբ ազատութիւն ստացաւ, կրկին սկսաւ Պօղոսը հալածել, և Նախիջեւանի մէջ անոր հանդիսելով, դարձեալ հրամայեց իր սանմանէն ելլել, թէ ոչ կ'ըսէր, ղրնդան եկեղեցիդ՝ ըզ քո չկենցէր, է վերայ ելիցէ սո սոկեցէց (ԴԱՎ. 207)։ Պօղոս յուսահատ կ'ուզէր հեռանալ, բայց Շամբ գիւղի մէջ, իրեն հիացողներ թող չտուին, ընդհակառակն յորդորեցին Շահաբասին դիմելով արտօնագիր առանալ. ուստի ուղղուեցաւ դէպի Աղուանք, ուր կը գտնուէր թագաւորը։ Արտգարար գիւղի մէջ, այլազգիի մը հետ եղաւ, և անոր ամուլ կինը օրհնեց, որ միւս տարին զաւակ ունեցաւ։ Քօխտուկլու գիւղին մէջ Շահաբասի ներկայանալով, փոխանակուած արտօնագիրը առաւ, սակայն Մելքիսեդեկ նոր զրպարտութիւններով զայն Ամիրգունայի ասլաւասանից, որ թէպէտ վարդապետը ձերբակալել, այլ Պօղոսի խօսքերէն և գործերէն զրաւուելով, զայն պատուեց, և Մելքիսեդեկի հրամայեց հանգուցիլ։ Սա տեսնելով որ այդ եղանակը չյաջողեցաւ, Թաւրէզի իշխան Դաւչղայ (ԴԱՎ. 215) կամ Դարչղայ խանին դիմեց (ՀԱՒ. 620), եկեղեցական և աշխարհական ընկերներ ալ մէկտեղ տանելով, բայց այնտեղ ալ կոպտօրէն փոթռեցին եղեր սրպես և սա Ա. ծերհոռոյ խանէն կոպտեցաւ (ԴԱՎ. 215)։ Այդ եղելութիւնները տեղի ունեցան միւնոյն 1615 տարին (ՀԱՒ. 620)։ Այդ ատեն Ներսէս Մոկացին կաթողիկոսանալ երեւս կը յիշէ իրեւ հակառակորդ (ՀԱՒ. 620), իսկ Դավրիժեցին Սահակ կաթողիկոսի անունն ալ կու տայ (ԴԱՎ. 216)։ Սակայն 1618'ին Սահակ դեռ կաթողիկոսացած չէր, և Դաւիթ ալ Ասպահան փոչուած էր, իսկ Աւետիսի գոյութիւնը երկու պատմողներն ալ կ'անդիմանան, և պէտք է ըսել թէ Մելքիսեդեկ միայն էր գործողը, և Սահակ, որ յետոյ կաթողիկոս եղաւ, իրեն գործակիցն էր։ Մելքիսեդեկ տակաւին չհանգարտեցաւ, և Պօղոսի վրայ բռնացաւ, և որովհետեւ Մելքիսեդեկի պետական հանդերձանքը և դիւանագործական հաւատարիմներ աւելիուն սարսափ ազդած էին (§ 1617)։ Պօղոս ճարտասանօրէն և անօգնական, և ձեռագիր տուաւ սրչ չէրչէլ և սչ հոդչել, և ինչ ղոյսոխչ սահմ, լենչ ես ընշոխ ինքհոռչին։ Ասոր վրայ քաշուեցաւ Մեծ-Անապատ, և հոն կոչ ծախոյսուիճով (ԴԱՎ. 215), մինչեւ իր կեանքին վերջը 1621'ին, ուր վախճանեցաւ, միւս երկուքին՝ հայրապետին, առանձնականին և իշխանին հետ միեւնոյն տարին (ՀԱՒ. 620)։

1624. Էջմիածնի կողմը կատարուած եղելութեանց կապակցութիւնը չխզելու համար, պարտաւորուեցանք նաեւ թողուլ կատարդնուպոյսոյ կողմը հանդիպածները, ուր 1613'ին նոր բաշխում մը կատարած էին

Խուլն ու վանեցին ու Դարանաղեցին իրենց մէջ, և Խուլն եղած էր պատրիարք հռչակուողը (§ 1604)։ կեսարա-

ԿԵՍԱՐԱՑԻՆ ԵՒ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ

ցին նորէն կեսարիա քաշուած, երբէք ձեռքէ չէր թողած պատրիարքութեան հետապնդումը, և իր հակառակորդ խումբը տապալելու միտքերը, ինչ որ չատ դժուար բան չէր, քանի որ բոլոր մըրցումը պետական չրջանակները չահելով կը կատարուէր։ Այս մասին մեծ նշանակութիւն ունէին պետական պաշտօնեաներու մտերիմ եղող ազգայիններ, երբ պետական պաշտօնեաներն ալ յարափոխ վիճակ ունէին։ կեսարացին անդամ մըն ալ Խուլը և իրենները տապալելով եկաւ ու պատրիարքութիւնը գրաւեց, իսկ Թուսկանը ճչդելու համար կը լուսաբանութիւնք Մելքիսեդեկի ուղղած իր գրութենէն, ուր իշխանական ոճ մը կը գործածէ, զոր չէր կրնար գործածել՝ եթէ կոստանդնուպոլսոյ պատրիարքական աթոռին վրայ չըլլար։ Այդ գրութեան բուն Թուսկանը յիշուած չէ, ոչ անոր թերի պատճէնը հրատարակողին (ԹՈՐ. Բ. 279), և ոչ ամբողջական օրինակը ուսնողին կողմէ (11 ԱՄՍ. 67). բայց միայն կ'ըսուի թէ 1615 օգոստոս 27'ին պատճէնը Հայաստան հասած էր, և հարկաւ անկէ առաջ գրուած էր, անկէ ալ առաջ, գոնէ 1615'ին սկիզբները կեսարացին պատրիարքական աթոռը նորէն գրաւած պիտի ըլլար։ Իսկ 1615'ին սկիզբները կեսարացիին Մելքիսեդեկի կծու գրութիւն մը ուղղելուն չարժառիթը մեկնելու համար՝ պէտք է յիշենք, որ այդ միջոցին Մելքիսեդեկ Ասպահան կը գտնուէր և հաւարձակօրէն այն կողմերը կաթողիկոսութիւն կը վարէր, և միանգամայն Դաւիթը էջմիածինէ հեռացնելով, նորէն Մայրաթոռը ձեռք անցընելու կ'աչխատէր (§ 1610)։ Իր նպատակին չարմար առիթ կարծած է Օսմանեանց նոր արչաւանքի պատրաստութիւնները Պարսից դէմ (§ 1613), և հետեւաբար անոնց չաղթութեան հաւանականութիւնը։ Ուստի Երուանի ու էջմիածինի նորէն Օսմանեանց տիրապետութեան անցնիլը նախատեսելով, կանխած է կոստանդնուպոլիս դիմումներ ընել, որ զինքն կաթողիկոս ճանչնան, և ոչ Դաւիթը։ Այդ դիմումը երբած կ'ըլլայ Խուլ Ծովհաննէս պատրիարքին վրայ վստահանալով, որուն հետ համերաչխ և մտերիմ էր, սակայն նոյն միջոցին Խուլին իյնալովը և կեսարացիին բարձրանալովը, այս վերջինը, որ երբէք համակիր չէր Մելքիսեդեկի, տարբեր կերպով կը պատասխանէ անոր։ Ժամանակակից պարագաներու բաղդատական ուսումնասիրութիւնն է, որ այդ կապակցութիւնները մեզի կը թելադրէ, քանի որ կցկտուր յիշատակներով պատմութեան չարքը կազմել կը պարտաւորուինք։

1625. Կեսարացիին գրութեան վերջին մասը՝ պարզօրէն կը յայտնէ անոր նպատակը, և կը հաստատէ մեր

ԿԵՍԱՐԱՑԻԻՆ ԳԻՐՔ

բացատրութիւնը։ Եկէ՛ք լսեցէ՛ք, կ'ըսէ, նա ընդունի՛ք զեզ որպես զօդզուածնիզիկո, և ըն ալ, զոյ էյնա (ԹՈՐ. Բ. 295)։ Ուրեմն Մելքիսեդեկը ընդունելու կամ չընդունելու կէտն էր խնդիրին էութիւնը և գրութեան չարժառիթը։ կեսարացին կը պանդատի թէ եկեղեցական կարգերը խանգարած և անկարգութեան մատնուած են թուլամորթ առաջնորդներու երեսէն, և կը յաւելու, ըն և է էզ էոյ երէոէ այս ընուլմօրընուիւն, և վ'անցնի է քալմեն զոկաո և զելեասօրան յիչել։ 1. Ի վերայ եպէսկոպոսի, կ'ըսէ, եպէսկոպոս նա օրհնէս վանորձընուիւն, ոեյ ընկն երկու և երէոէ, ըզբ և հինգ եպէսկոպոս յեանգրէալ ես, և կ'աւելցնէ թէ նա անարժաններու ալ այդ աստիճանը տուած է։ Կը յիշէ Մրգիկ մը, որ է Մաալ ընօրէոցեր էր, և կարապետ Գրիգկնաօչր, որ հոմ գոբյաս, և հոմ կին էս, և եօրն գոբի է հեպ այն ընալ կեցս, այսու հանդերձ երկուքն ալ Մելքիսեդեկէ եպիսկոպոս ձեռնադրուած էին (ԹՈՐ. Բ. 281)։ 2. կ'ըսէ. Քինչ երկեր որ նապէրկ յաղբկես, նա կա ընգրես յորոնել որ լաբ և լերբ, անդեմ, անամօր և ամբոգոաան մ կայ, զընդելենէն կաաաես. և երկար կը պատմէ անոնց գործած անկարգութիւնները, այնպէս որ ազգս Հայոց գալեկոգեալ է է գոբլահոգոնիւնե վրոցն այոզկեսցս (ԹՈՐ. Բ. 282)։ 3. Ասոր հակառակը, կ'ըսէ, երբ վարդապետ մը չնչմբէգն խօսի, է վերայ նորս անեակ բերանով, անբաս լեզուաս, յանգոգն գինոց, լբենի երէ-

...ից, և անկէ մօտ, քանդրանց էէր կո էէր. ապա երկարօրէն այդ կէտերը կը պարզէ, յայտնելով ալ, թէ անէրա անէձէ անէձէն՝ ալ անձան (ԹՈՐ. Բ. 234—286)։ 4. Կը յանդիմանէ Ս. Հռիփսիմէի ոսկրներուն վաճառումը, և Լուսաւորչի Աջին փոխադրութիւնը, և կը հարցնէ ըն ...ոնց այն ...ոբէ Աջն դա ինչէ՞ դ...ան կո ...ընէ (ԹՈՐ. Բ. 287)։ Կաթողիկոսներու չաւութիւան վրայ ալ կը դիտէ, թէ է դէ ...ուռ վէց եբէ կ...ոզիկո էւ, և ալ ըն դնդ կացել և այլէդ դ...ոբել, այլ ...ն դէդ է չէ...ը գ...ացել եբ-կէր կ...ն...ելե կ...ոզիկոս...ն ...անէ. և կը պնդէ թէ իբր կաթողիկոս ...ոչինչ՝ Դ...ուի կ...ոզիկոն է (ԹՈՐ. Բ. 288)։ 5. Կը ծանրանայ Հռոմի պապին ուղղուած գիրին վրայ. սաստիկ կը մեղադրէ Զաքարիա վանեցին, «Զ...ելէ» կոչելով, և կ'առաջարկէ որ եթէ այն գիրը Զաքարիայի գործն է, և ըն ...պէտ է ...ր դ... կ...ն դ...քանէր, պապին գբէ և խարդախութիւնը իվեր հանէ (ԹՈՐ. Բ. 290—292)։ Բոլոր յիշուած կէտերուն մասին ալ այսուհետեւ տարբեր վարուիլը կը պահանջէ, և ինչպէս սկիզբը յառաջ բերինք, այդ պայմանով միայն քեզ իբր կաթողիկոս կո ընդունիմ, կ'ըսէ, ըն ալ, դո էէ...ե, այսինքն է, չենք ընդունիր։ Կնասբայիին գրութեան պարունակութենէն կը տեսնուի, որ նա նկատի կ'առնէ Մելքիսեդեկի բովանդակ անցեալը, և հին ու նոր գործեր հաւասարաբար կը յանդիմանէ, և չամփոփուիր միայն վերջին ատենները Ասպահանի մէջ ունեցած կացութեան վրայ։ Երեք կաթողիկոսներու յիշատակութիւնը և անոնց իրարմէ անկախ գործունէութիւնը, կը պատչաճի Դաւիթի և Մելքիսեդեկի և Աւետիսի, որոնց երեքին ալ անունները յիշուած են նոյն գրութեան մէջ (ԹՈՐ. Բ. 288—289)։ Բնաւ չենք երեւակայեր թէ Մելքիսեդեկ օգտուած ըլլայ կնասբացիին յանդիմանութիւններէն, վասնզի աւելի եւս սաստկացուց իր անկարգութիւնները, 1618'ին Շահաբասի հրովարտակով Մայրաթոռը ձեռք անցընելէ ետքը (§ 1617)։ Կնասբացիին գրութիւնը չատ նշանակալից է ցուցնելու համար, թէ ինչ արհամարհական աչքով կը նայէին կ-Պոլսոյ մէջ Մայրաթոռոյ կացութեան վրայ։

ԿԱԹՈԼԻԿ ԵԱՐԾՈՒՄՆԵՐ

1626. Սոյն գրութեան հոգին, մանաւանդ վերջին կէտին վրայ տրուած բացատրութիւնները, մեզի կ'առաջնորդեն մտադրութիւն դարձնել այն խնդիրին վրայ, որ սկսած էր կոստանդնուպոլսոյ մէջ երեւան գալ, և ուրիշ տեղեր ալ արձագանգ գտնել, և ազգին մէջ երկպառակութեանց պատճառ և կուսակցութեանց նշանաբան դառնալ։ Աւիկայ ոմանց կողմէ յայտնուած հռոմէական դաւանութեան մօտենալու միտումն էր։ Լատիններու արեւելքին վրայ ազդեցութիւն ունենալու ջանքերը նոր չէին, և Ռուբինեանց օրէն սկսելով այդ միտումը չէշտուեցաւ, ներկայիներով զօրացաւ, բայց անոնց տկարանալովը չդադրեցաւ. և երբոր քաղաքականապէս տիրապետելու դուռները փակուեցան, լատինականութիւնը բոլոր ոյժը թափեց դաւանական միութեամբ հասմակիրներ և հետեւորդներ չատցնելու։ Այդ նպատակին կը հետեւէր ոչ միայն պապութիւնը, իբր հոգեւորական իշխանութիւն, այլեւ Իտալական հանրապետութիւններ իբրեւ տիրապետական և առեւտրական յարաբերութեանց համար, և անոնցմէ ալ աւելի Գաղղիոյ թագաւորութիւնը, որ իբր ազգակիցներուն և կրօնակիցներուն վրայ պաշտպանութեան իրաւունք ստացած ըլլալով՝ զայն կը տարածէր կրօնակից բնիկներու վրայ ալ, և անով Թուրքիոյ ներքին գործերուն վրայ ալ ազդեցութիւն կ'ունենար։ Այդ պաշտպանութենէ օգտուելու ձգտումն էր, որ բնիկներէ ալ մաս մը, մանաւանդ այնպիսիները որոց սիրտին մէջ ազգային եկեղեցւոյ զգացումը տկար էր, լատիններու հետ յարաբերութեան կը մտնէին, և բերնով թէ գործով, երեւանց թէ սրտանց, անոնց համակերպելու կը հրապուրէր։ Գաղղիոյ դեսպաններն ալ չատ անգամ կրօնական քարոզիչի դեր կը վարէին։ Միեւնոյն ատեն Աւետեաց մէջ չատցած էին լատին կրօնաւորները զանազան միաբանութիւններէ, Փրանկիսկեան և Դոմինիկեան, Յիսուսեան և Թէաթինեան, որոնք մեծաւ եռանդով հռոմէադաւանութիւն տարածելու կ'աշխատէին, իրենց օգնական ունենալով քաղաքական պաշտպանութիւնը,

և իրեւ փաստ գործածելով նիւթական նպաստներ, իսկ իբր հրապուրիչ միջոց առ ջեւ դնելով ուսմանց աւանդումը։ Արեւելքի մէջ իրենց համար աւելի դիւրամատչելի և դիւրաշահելի տարբը կը ներկայանար Հայը, երկու մեծ պարագաներով։ Մէկը արտաքին էր, Հայուն աւելի նեղուած ու զրկուած և ցրուած վիճակը. և միւսը ներքին էր, Հայուն կրօնական զգացումներուն՝ խոյլատու և ներողամիտ ոգիովնց վրայ հիմնուած ըլլալը, կամ աւելի բաց խօսելու համար, յաւիտենական փրկութեան համար հայրապետութեան անհրաժեշտ պայման նկատուած չըլլալը, և ուրիշ քրիստոնեայ եկեղեցիներու մէջ ալ յաւիտենական փրկութեան հնարաւորութիւնը։ Զմոռնանք, որ Ունիթորներու վերջին մնացորդներէն զատ, Հայազգի անհատներ ալ լատին միաբանութեանց անդամակցելով, և լատին դպրատուներու աշակերտելով, հռոմէականութեան ջատագովներ եղած էին։ Այդ ամէն հանգամանքներ իրարու մօտ գալով, Հայերուն մէջ՝ թէպէտ մասնաւոր, բայց բաւական կարեւոր հոսանք մը կը կազմէին հռոմէականութեան մօտենալու, և լատինական օրնութեամբ զօրանալու, և եւրոպական նպաստներով բախտաւորուելու համար։ Ասոնց ընդհանուր հոսանքը ոչ երբեք զատուելով ինքնագլուխ և ինքնուրոյն մարմին մը ըլլալու գաղափարով գործի կը սկսէր, այլ իբրեւ միեւնոյն Հայ ազգութեան մէջ կազմուած կուսակցութիւն մը՝ կը ջանար իր տեսութիւնն ու կարծիքը զօրացնել, և ազգն ու ազգին կեդրոնը ու ազգային իշխանութիւնը այն կողմը հակելցնել, որով մի և միակ մարմնոյ կամ հասարակութեան մէջ երկու կարծիքներու կամ կուսակցութիւններու իրարու դէմ պայքարը կը մղուէր, այն ամէն միջոցներով և գէնքերով որով ընտանի կռիւներ տեղի կ՚ունենան։

1627. Հռոմէականութեան հակամէտ ներու կողմը ժողովրդական կոչմամբ Ֆրէնկ կամ Ֆռանկ կը կոչուէր, և այդ անունը, որ Գաղղիացւոց յատուկ անունն էր, բոլոր Եւրոպացւոց անխտիր կը տարածուէր՝ լատին կոչումին համանշանակ դառնալով։ Ասոր ալ պատճառը Գաղղիոյ դէւսպանատան բոլոր հռոմէադաւանններու վրայ պաշտպանութիւն վարելն էր։ Հռոմէական եկեղեցին Կաթոլիկ (Catholique) յորջորջումը իբր յատուկ անուն իրեն սեփականած ըլլալով, նոյնը սկսաւ Ֆռանկ կոչումին տակ գործածուիլ, և հետզհետէ ընդհանրացաւ և սովորական դարձաւ և ճիշդ այդ միջոցներուն սկսած է կոչման կիրառութիւնը։ Հռոմէադաւանք իրենց պաշտօնական և անպաշտօն գրութեանց մէջ կը սիրեն այդ անունը հայկական տառադարձութեան ձեւով Կաթոլիկ գրել, սակայն մենք պիտի չկարենանք իրենց հետեւիլ, վասնզի Կաթոլիկ բառը բոլոր քրիստոնեայ եկեղեցիներէն ընդունուած և գործածուած կոչում մըն է, յունականէ տառադարձութեամբ և ընդհանուր իմաստով, և նոյն իսկ Հայոց եկեղեցին ալ սոյն կոչումը իրեն համար կը գործածէ։ Ուստի չփոթութիւն չպատճառելու համար՝ կը նախադասենք Կաթոլիկ և Կաթոլիկ կոչումները իրարմէ զատելով, առաջինը ընդհանուր քրիստոնէական իմաստով, և երկրորդը մասնաւոր հռոմէական առումով գործածել։ Քանի որ կոչումներու վրայ կը խօսինք, աւելցնենք թէ Հայ հռոմէականք ի զուր Ռոդէֆօ կոչումը իրենց կը սեփականեն, իրրեւ թէ Կաթոլիկ կոչումին թարգմանութիւնն ըլլար, մինչ Ռոդէֆօ բառը յունական ՈբՆոփօ բառին թարգմանութիւնն է, և լատիններ իսկ այդ կոչումը Ծոյներու սեփականած են և իրենց չեն պատշաճեցներ։ Իսկ Ռոդէֆօ հայկական բառն և կոչումը՝ հայկական անուն է, և հայաստանեայ եկեղեցւոյ սեփական է, և զայն լատինացնել բոլորովին սխալ է։ Անոնց մասին դիտողութիւնները փակելով պիտի կրկնենք, թէ Հայ հռոմէականութեան միտումը, որ ժէ դարուն սկիզբներէն նոր կերպարան մը սկսաւ առնել, և հետզհետէ չեչտուեցաւ քաղաքական և նիւթական հրապոյրներու չնորհիւ, երբեք յատուկ մարմին կամ առանձին հաստատութիւն մը չէր և չեղաւ, այլ պաշտօնապէս միեւնոյն Հայ ազգութեան և Հայ եկեղեցւոյ մէջ մնաց, և կարծիքի ու տեսութեան տարբերութենէն անդին չանցաւ։ Ասոր մէկ

ԿԱԹՈԼԻԿ ԱՌՈՒՄՆԵՐ

հաստատուն և անժխտելի փաստն է, որ այս նեռքին վէճերը ուրիշ բան չէին, բայց եթէ իւր կողմը զօրացնելու ճիգեր։ Լատինասէր կամ լատինամիտ կամ լատինամոլ եղողներ, կամ ուրիշ կոչմամբ՝ Ֆռանկ կամ կաթոլիկ ըսուողներ, չէին ուզեր Հայ պատբիարքարանէ, Հայ ազգութենէ, Հայ եկեղեցիէ զատուելով առանձին ըլլալ, այլ միայն պատրիարքական աթոռին տիրանալով՝ զայն իրենց միտքին տանիլ, և ազգը իրենց ուղղութեան հետեւցնել կը ջանային։ Ըստ այսմ ցորչափ հայադաւան Հայ պատբիարքութենէ դուրս չէին, իրենք ալ պաշտօնապէս նոյնը կը մնային, և նոյն մարմնոյն մէջ կը չարունակէին մնալ։ Այն մեծ միտումը զոր Յովհաննէս Խուլ և Գրիգոր կեսարացի, այդչափ բուռն կերպով և չարունակակալ եղեռնքներով իրարու դէմ կը մղէին, երկու կարծիքներու կամ երկու ուղղութիւններու ընդհարումն էր, որուն սկզբնաւորութիւնը պատմեցինք, չարունակութիւնն ալ պիտի պատմենք։ Եւ դժբախտաբար երկու դար և աւելի անոր տխուր երեւոյթները առջեւ բերելու պիտի պարտաւորուինք։

1628. Յովհաննէս Խուլ որ լատինամիտ ուղղութեան գլուխ էր կանգնած, 1600'ին, 1609'ին և 1613'ին պատբիարքական աթոռը գրաւած էր, և անգամ մըն ալ 1612'ին զայն թողած էր իւր աջակից և գործակից Վանեցիին. իսկ կեսարացին ալ նոյնպէս երեք անգամ պատբիարքութեան տիրացած էր 1601'ին, 1611'ին և 1615'ին, այս զանազանութեամբ՝ որ անգամ մը ինը տարի կրցեր էր մնալ, մինչ իւր հակառակորդներուն իշխանութիւնները միշտ վաղանցուկ եղած էին։ Վերջին պահուն ալ ինքն էր նորէն աթոռին տէրը, ուակից այնչափ ուժգնութեամբ կը յանդիմանէր Մելքիսեդեկ աթոռակից կաթողիկոսը (§ 1625), որ արտաքին զօրութեամբ բուն գահակալ Դաւիթը զրկելով և լռեցնելով՝ բռնապետական կաթողիկոսութիւն վարած էր, և տակաւին վարելու կը հետապնդէր։ Ինքն Մելքիսեդեկ ալ իր յոյսը լաթինամոլներու վրայ դրած, անոնց կողմը կը հակէր, և հետուէն հետու Խուլին և վանեցիին հետ կ'ընկերչակէր, թէպէտ 1600'ին Խուլը եղած էր զինքն Կոստանդնուպոլսոյ աթոռէն տապալողը (§ 1596)։ Գրիգոր Դանաղեցին, որուն ուղղութիւնը Խուլին ու Վանեցիին հետ համաձայն չէր, ասով մէկտեղ անոնց միացած էր 1612'ին, զայրանալով կեսարացիին կասկածոտ և բռնական բնաւորութեանէն, և անկէ օգուտ ալ քաղած էր պատրիարքական հասոյթներու վայելքին մասնակցելու, 1612'ին Անտիոքոս Խրոխտանոց վիճակներուն, ու 1613'ին Ամասիոյ վիճակներուն վրայ վերակացու նշանակուելով (§ 1604)։ Սակայն վերջնապէս չկրցաւ լատինամոլ ուղղութեան հետ հաչտուիլ, ուստի կեսարացիին վերջին զօրանալէն ետքը՝ բաժնուեցաւ Խուլին և Վանեցիին ընկերակցութենէն, և երկրորդ անգամ կ'ուզէ մեկնեցաւ և Երուսաղէմ գնայ, ուխտի և հանդարտութեան նպատակով։ Այդ ուղեւորութեան թուական կը դրուի 1616 տարին (11 ԱՄՍ·11), Աստուածաչունչի հրատարակարանին մէջ ալ (ԴՐՆ.) այդ երթին ակնարկելով կը գրէ, թէ վերջ է յանդիմանէլ վտանգները որոց համար կը գրէ, թէ այլ էլ ոչ պատահեն, և այլ լեզու ծառել ոչ կրնայ, պատրիարքական աթոռին չուրջը անկէ ոչնացած պայքարներու վրայ իղձ է յիշատակարանել (§ 1604), որոնցմէ խորագէտ գրուած կ'երեւայ։ Այլ թէ երուսաղէմ ինչպէս մնայ որոշ չէ։ Սբե՛ս որ չէ՛ր կ'ըսէ, ասոր և անդր, և այլ բազում հանգիստ, և զբոյնել նոյն այլ ասոնք, որ է, ըսել թէ 1619'ին Կոստանդնուպոլիս եկած է ուր և չարունակած է իւր Աստուածաչունչին ընդօրինակութիւնը։

ԱԹՈՌԻ ՁԳՏՈՒՄՆԵՐ

1629. Կարգաւոր պատմութեան բացակայութիւնը, և մանր յիշատակութիւններով պատմութիւն կազմելու հարկը, և ասոնց ալ ստէպ թերի և անյարիր ըլլալը, մեզի կը թողուն այդ միջոցին պատրիարքական իշխանութիւնը վարողներուն չարքը, միայն թէ ստորագրական ցուցակները, որք Զամչեանի հետազոտութեամբ կազմուած են, այնուս չենք կրնար իբրեւ հաստատուն ընդունիլ։ Կը պարագրին որ 1615'ին նորէն պատրիարքու-

թիւնը ձեռք ձգած էր, նոյն պաշտօնին վրայ կը տեսնուի 1618'ին, ինչպէս յիշատակագիր մը կը գրէ, ի հայրապետութեան տեառն Մելխիսեդեկ կաթողիկոսին, և վրդապետին Տաճատայ Գրիգոր տօքթօրին կեսարացւոյ (ՏԱՇ·778), և յայտնի է թէ կեսարացին կաթողիկոս չէ եղած։ Կեսարացիին պատրիարք ըլլալովը չէր եղծուած վիճակներու բաժանմանց կերպը՝ որ Խուլին և Վանեցիին և Դարանաղեցիին դաշնակցութեան առթիւ կազմուեցաւ (§ 1604)։ Այդ մասին իրր հաստատութիւն պէտք է նկատել երկու իրարմէ անկախ յիշատակներ։ Առաջինն է Իւսկիւտարի Ս. կարապետ եկեղեցւոյ չինութիւնը 1617'ին Զաքարիա Վանեցիի ձեռքով (11 ԱՄՍ·74), որ կը ցուցնէ թէ նա ինքն էր տակաւին Աւետիսեան առաջնորդը, ինչպէս կարգադրուած էր 1613'ին բաշխումին առթիւ (§ 1604), կեդրոն ունենալով Իւսկիւտարը, և ընդարձակուելով, մայրաքաղաքի մերձաւոր վիճակներու վրայ։ Ս. կարապետի անունը անմիջապէս կը տանի Մշոյ Ս. կարապետի յիշատակին, ինչպէս որ յարդ ալ վարդավառը նոյն եկեղեցւոյն տօնական օրն է՝ հետեւելով Գալակայ վանքին տօնին։ Միայն թէ Զաքարիա Վանեցի էր, և վարագ նշանաւոր Ս. կարապետ չկար, ինչպէս ուրանք կ'ենթադրեն, և Ս. կարապետի անունը անկէ կը հետեւցնեն (11 ԱՄՍ·74)։ Ընդհակառակն տեղական աւանդութիւն մը Գալակէն կ'առնէ այնուհետեւ ծագումը, պատմելով թէ Մշեցի գործաւորներ Իւսկիւտարի մեծ մզկիթներէն մէկուն չինութեան կ'աշխատէին, և թէ մօտիկ աղօթատեղիի մը պէտքը զգալի ըլլալով, նոր եկեղեցիին չինութիւնը արտօնուեցաւ։ Միւս նշանակը Նիկոմիդիոյ մէջ պահուած գրչագիր հին ճաշոցին մէջ 1618 փետրուար 26'ին աւելցած յիշատակն է, ի վերտիւլիւնեան յայտ նահանջէ Զ+ոյ վրդապետէ, որ աշխոհա է Վասպուրականէ, որ ասէ Վան, իսկ Զ+ոյ՝ Զաքարիա Վանեցիի ժողովրդական կոչումն էր, որուն տակաւին Անտոնեան ֆրանգական վիճակներու վերակացու լինելը կը հաստատուի։ Նոյնպէս պիտի ըսենք Դարանաղեցիին մասին ալ, որ վերջին անգամ Իւսկիւտարի վիճակներուն վերակացուն էր, և որ ընդհատ յիշատակներով չարունակ Ռոտոսթոյի առաջնորդ կը յիշուի, Գալաթիա կը մնայ, որ Ռումելիի վիճակին մաս տրուած էր, և Ռոտոսթոյ գրտնուող տապանագիրն ալ զայն Նախիջ+ան կը կոչէ (11 ԱՄՍ·7)։ Առնցմէ կը քաղուի թէ Դարանաղեցին հակառակ իւր թափառած չրջագայութեանց, մինչեւ վերջ Ռումելիի կողմին առաջնորդը մնաց, Ռոտոսթոն իրեն աթոռանիստ ունենալով, և Գալաթիան ալ իրր մայրաքաղաքի մէջ օթեւան։ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան սկիզբները բոլոր Օսմանեան կալսրութեան վիճակները, գոնէ մայրաքաղաքէն որոշ հեռաւորութեամբ չրջանակի մէջ, ուղղակի պատրիարքին վիճակը կը նկատուէին, և թեմական իրաւունքներ անոր կը պատկանէին, և վանքերու ու քաղաքներու մէջ գտնուող եպիսկոպոսներ ու վարդապետներ՝ թեմակալ չէին, այլ պարզապէս իրր ծ+ոքթէ+ս կամ պ+ոռ+ուկ կը նկատուէին, և պատրիարքին իրաւունքը կը յարգէին (§ 1509)։ Առաջին անգամ Խուլ Ճովհաննէսի, Վանեցի Զաքարիայի և Դարանաղեցի Գրիգորի միջեւ կատարուած բաշխումը, որ ուղղակի իրաւունքներու վայելքին համար էր, սկիզբ տուաւ առաջնորդական վիճակներու կամ թեմակալութեանց բաժանման, որ պատահական առիթ ծագումնաւորելով՝ հաստատուն իրաւունքի փոխուեցաւ, և այս պիտի նկատուի իրր պատճառ, որ նոյն իսկ կեսարացիին պատրիարքութեան ներքեւ, Դարանաղեցին ալ, Վանեցին ալ կեսարացիին հետ հաշտ չըլլալով իսկ, կրնան պահել իրենց թեմական կամ առաջնորդական իրաւունքը։

Կ-ՊՈԼՍՈՑ ԵՓՈՔՆԵՐ

1630. Երբոր Վանեցին ու Դարանաղեցին այդ կերպով առաջնակարգ դեր վարելէ հետացան, պատրիարքական աթոռին ձգտումը մը, Խուլին և կեսարացիին մէջ անհատական մրցում մնաց, և չարունակեց մինչեւ ատոնց վերջին չունչը։ Կեսարացին միշտ իրեն պահեստի պաշտօն ունէր կեսարիոյ առաջնորդութիւնը, ուր կը քաշուէր ամէն անգամ որ Կ-Պոլսէ հեռանալու կը ստիպուէր, սակայն Խուլին համար այդպիսի պահեստի պաշտօն մրն ալ ունեցած ըլլալ

բնաւ չյիշուիր, և ասոր ալ պատճառը, զի իւր նախնական գործունէութիւնը Կ-Պոլսէ սկսաւ, որուն բնիկն ալ էր; և հետեւաբար տունտեղ և ազգական ալ ունէր, և անպաշտօն վիճակի մէջ ալ մայրաքաղաք մնալու յարմարութիւնները կը վայելէր։ Անգամ մը յիշուած է, թէ կեսարացին, այնչափ մօտ եղեալ էր ընծ Յովհաննէսին, ինչ ընծ փախուցեալ էր ի Պրուսա (11 ԱՄՍ. 16), սակայն այսչափը բաւական չենք սեպեր, Խուլը Պրուսայի առաջնորդ կարծելու, և Պրուսան ալ անոր պահեստի պաշտօնատեղին եղած ըսելու։ Միշտ կցկտուր յիշատակներու վրայ հիմնուելով, կեսարացին պատրիարքութիւնը պահած պիտի ըսենք մինչև 1619, որ կը համապատասխանէ Դարանաղեցիին երիք տարի թափառելէ ետքը 1619'ին Կ-Պոլիս դառնալուն (§ 1628), և 1620'ին Կ-Պոլսոյ մէջ գրուած աւետարանի մը մէջ՝ յաւելուածքին Յովհաննէս վերապատիւն ըսուած ըլլալուն (11 ԱՄՍ. 11)։ Դժբախտաբար իրր Կ-Պոլսոյ պատրիարքութեան պատմութիւն, ներկայիդ պայքարներէ զատ բան մը չունինք գրելու, և ոչ ալ կրնանք ազգային գործերուն և գործունէութեան մասին որոշ տեղեկութիւններ տալ։ Իրրեւ նկատողութեան արժանի կէտ յիշատակենք երիք դաշնակիցներու մէջ տեղի ունեցած պառակտումը, և Դարանաղեցիին միւս երկուքին բարեկամութենէն զատուիլը։ Արդէն կանուխէն ալ, իւր խոստովանութեան համեմատ, թէ Ապոստոծ էր, որ ես քնաս չէի սալը Խուլը (11 ԱՄՍ. 9), Դարանաղեցին անոր յաւիտենամոլ ուղղութեան հաւնողը չէր, բայց կեսարացիին կասկածոտ և բռնական ընթացքէն զայրացնալով՝ յարած էր Խուլին կողմին, բայց այս անգամ կ'երեւի թէ այլեւս չկրցաւ տոկալ անոր ծայրայեղութեանց։ կը դրէ թէ իւր երկու դաշնակիցները սկսան անխիղճ սպսել ի գործ սպսրս չնէր և չէին յայտնի հրապարակաւ, և ըստ սպսղն անբժէին (11 ԱՄՍ. 9), ուստի բաժնուեցաւ անոնց կողմէն, հարկաւ կեսարացին ալ առիթէն օգտուեցաւ Դարանաղեցին չհնելու, որով կրնար հակառակորդը տկարացնելով իւր կողմը զօրացնել։ Խուլին և վանեցիին պահոց մէջ թուլութիւն մտցնելը, հռոմէականաց կողմէ անոնց պաշտօնապէս դաւանափոխ եղած ըլլալուն փաստ կը ցուցուի (11 ԱՄՍ. 9). սակայն այս հիմնական պատճառաբանութիւն մը չկրնար նկատուիլ։ Ոչ երբէք և ոչ ուրէք օրինազանցութիւնը կամ անտարբերութիւնը իրր կրօնափոխութեան փաստ ընդունուած է, կամ կրնայ ընդունուիլ։ Այս տեսակ օրինազանցներ չատ եղած են և չատ ալ կան ամէն կրօնքներու մէջ, բայց իրաւունք չեն տար զիրենք պաշտօնապէս կրօնափոխ կամ դաւանափոխ կարծելու։ Դավրիժեցին ալ Հայ վանականները կ'ամբաստանէ թէ զանց ըրած էին պահք և ծոմեր և ժամերէ կենցաղավարքէն, և թէ ի քոլոր տարին սպսրէ և էին և ոչ անխիղճ կ'ուտէին (ԴԱՎ. 220). բայց այս պատճառով դաւանափոխ չէին ըսուեր։ Խուլին ընթացքը եթէ պարզ օրինազանցութիւն ալ չըսենք, առ առաւելն կուսակցութիւն մրն էր, կամ թէ Հայ եկեղեցւոյ խստութիւնները թեթեւցնելու կ'աշխատէր, բայց ասով Հայ եկեղեցիէ պաշտօնապէս բաժանուած, և ուրիշ եկեղեցւոյ ծոցը մտած չէր ըլլար, և ոչ ալ նոր պաշտօնական մարմին մը կազմողներ կ'ըլլային անոր հետեւողները։ Ապա թէ ոչ Խուլը Հայոց պատրիարք ըլլալու ալ հետամուտ պէտք չէր ըլլար, և իրեն կողմնակիցներն ալ պատրիարքարանի գործերով զբաղելու չէին։ Այս վիճակի մէջ կը չարունակեն Կ-Պոլսոյ գործերը մինչեւ 1624, բայց մենք պէտք է նորէն Էջմիածինի գործերը պատմելու դառնանք, իրարու կապակցութիւնները պահելու համար։

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԵՒ ՄՈՎՍԷՍ

1631. Մելքիսեդեկը թողուցինք իւր բռնակալ և հարկահան կաթողիկոսութեան (§ 1617), և իւր հարկապահանջ պատգամներուն մէջ, որոնք սակայն արդիւնաւոր չէին ըլլար, վանքի ամենէն յանդգնած և օրէք էին գլուղիկոսն, և թէպէտ ինքն Մելքիսեդեկ և իրեն հետեւորդները սանձը իրանց կեղեքելու կղզիացին զգաստացան, սակայն հաւաքածնին ոչ էին բաւական ծախսը իրենց անգամ, իսկ պետական 100 թումանի տարեկանը ամէն ապառիկ մնալով հասած էր մինչեւ չվճռեալ բռնաման, որոնց վրայ կ'աւելնային փոխառութեանց պարտքերը,

ղէր է պարտաճաշակ առեալ էին վան կրթութ ղօնքերոյ և ինքեանց (ԴԱՎ. 171)։ Կը յիշուի թէ այդ վարանմանց միջոցին, Մելքիսեդեկ նամակ մը գրած է Գրիգոր ժե պապին, 1622'ին, և անոր մահուան լուրը առնելուն երկրորդ նամակ մը փութացուցած է Ուրբանոս Ը պապին 1623'ին (ՏԱՇ. 111), որոնց մէջ անչուշտ ակտիւ եղած չողոքորթ լեզուն գործածած կ'ըլլայ, բայց նպատակը տագնապալից վիճակին նպաստ մը ակնկալելն եղած է։ Մելքիսեդեկ այդ կողմէ ալ յաջողութիւն մը չտեսնելով վերջին յուսահատութեան մէջ կ'որոշէ կաթողիկոսութեան հետ պարտքն ալ ուրիշի մը փոխանցել, և եթէ հարկ ըլլայ գաղտնի կերպով Պարսից տէրութենէն դուրս ելլելով տագնապէ ազատիլ, և Օսմանեան գաւառներուն մէջ կաթողիկոսութիւնը վարել և չահեցնել։ Այդ առթիւ իւր միտքը կը դարձնէ Մովսէս Տաթեւացիին վրայ, ուսկից հարկաւ կը յուսար առձեռն գումար մըն ալ ստանալ իւր միտքը գործադրելու համար։ Մովսէսի վրայ խօսակցանք, երբ Գօղոս Մոկացի վարդապետին հետ տուգանքի ենթարկուեցան Շահաբասէ (§ 1616)։ Իսկ անկէ ետքը յիշեցինք իւր քարոզչական չրջագայութիւնները և եկեղեցաշէն ձեռնարկները և ժողովրդական հոգածութիւնները, միշտ Գօղոսի հետ համաձիտ և գործակից, որ քան զինքն երիցագոյն էր. ինչպէս նաեւ պատմեցինք Սարգիս Պարոնտէրի կրօնաւորական ձեռնարկին ըրած օժանդակութիւնները (§ 1620)։ Երբոր Մելքիսեդեկ 1618'ին թագաւորական հրովարտակով և 100 թուման տուրքի պայմանով կաթողիկոսութիւնը ձեռք առաւ, Գօղոսի դէմ գործած բռնութիւնները (§ 1623) Մովսէսի դէմ ալ փորձեց, միայն թէ անոր չկրցաւ հրամայել իւր վիճակէն դուրս ելլել, զի Մովսէս Սիւնեցի էր էջմիածինի վիճակէն, և ոչ Մոկացի Աղթամարի վիճակէն։ Մովսէս աւելի կտրուկ միջոց մըն ալ գործածեց, ու ձեռ ֆելըն և ձեռաւելն և ձեռելէն որ է գործը, ծրարեց և Մելքիսեդեկին ղրկեց ըսելով. Մեր լեռ գործելմէ է դուրեկը, և ընդ այդ եղիր իշէն մեղ ինչ, քան զայս զգաստանալ Աստուծոյ։ Մելքիսեդեկ ամչցաւ, իւր խորհրդակիցներն ալ ղինքն համոզեցին, և գաւազանն ու միւռոնը Մովսէսի դարձուց, և եռ հրման դարձոնեն։ Այդ եղելութեան թուական կըրնանք նչանակել 1620 տարին, երբ Գօղոս բռնադատուել Մեծ-Անապատ էր քաչուած (§ 1623)։ Մելքիսեդեկ որչափ ալ պաչտօնապէս թոյլ տուաւ Մովսէսի իւր քարոզութիւնները չարունակել, սակայն է նենգելոյ ոչ դադրեցաւ, և հանգամալ հալածահարեց և չդադրեցուց, այնպէս որ Մովսէս ստիպ վհատել և լռել, միտքը դրաւ կարին անցնիլ, որպէսզի կարենայ ազատօրէն իւր հոգեւոր պաչտօնը կատարել (ԴԱՎ. 224)։ Երբ այդ դիտաւորութեամբ Երեւան եկաւ, Ամիրգունա լուր առաւ, և վարդապետը իրեն կանչեց, խօսեցաւ և աւելի եւս հաստատուեցաւ այն լաւ գաղափարին վրայ, զոր կազմած էր անոր և Գօղոսի գործունէութեան նկատմամբ, որ լոկ կրօնական էր և քաղաքական անտեղութիւն չէր ներկայեր։ Ամիրգունայի և Մովսէսի մէջ հաստատուած լաւ յարաբերութեանց պատճառներէն մէկն ալ եղած կ'ըլլայ՝ Ամիրգունայի քինին Աղասիի իւր ամուսնոյն Երեւանեցի Յովհաննէսի հետ հաչտութիւը՝ Մովսէսի քարոզութեան ազդեցութեամբ, ինչ որ Ամիրգունա չէր կրցած ընել իւր զօրաւոր միջամտութեամբ և իւր կնոջ Հոռոմիի թախանձանօք (ՉԱՓ. Ա. 54)։ Ամիրգունա Մովսէսի վրայ հիանալով, զայն համոզեց և իւր մօտը պահեց, Երեւանի մէջ Ս. Աստուածածնայ եկեղեցին անոր յատկացուց, զոր Մովսէս չէնցուց և պայծառացուց, և ազգին համար նուիրական սրբավայր մը դարձուց, ուր խուռն կը խուժէր ժողովուրդը Մովսէսի քարոզութիւններն և կատարած արարողութեանց կարգաւորութենէն հրապուրուած։ Այստեղ մնաց Մովսէս շատ երկար, որ է ըսել մինչեւ 1623։

ՄՈՎՍԷՍԻ ԳՈՐԾԵՐԸ

1632. Մովսէս Ս. Աստուածածնայ վանքին կատարելապէս տուած էր Մեծ-Անապատի ձեւը (§ 1621), կրօնաւորական բարեկարգ միաբանութիւն ալ կազմած էր, որուն համբաւը տարածուեցաւ է Հոռոմոպոն, է Ջրջոպոն, է Վրաստան, է Պարսկաստան, և յամենայն աշխարհս վճռաբանէ էին, և նուիրներ ալ կուտային, ինչ որ Մելքիսեդեկի ծանր կաւ գար,

ղբրեր և հեղինակ լինէր, բայց Ամիրգուանայի պաշտպանութեան պատճառով ոչ կարէր ղբր ինչ անել Մալեխ։ Մուածից դմնէ Մովսէսի անունով ինքն ալ օգտուիլ, և անոր հետ միաբանօրհնէք կատարել, և արդիւնքը ինքը գանձել։ Այդ նպատակով յաջաւկ պատգամաւոր եպիսկոպոսներ ղրկեց Ս. Անանիայի վանքը, սակայն Մովսէս հրաժարեցաւ յայտնելով, թէ ինքն տակաւին եպիսկոպոս ալ չէ։ Մելքիսեդեկ փութաց գժուարութիւնը լուծել, անմիջապէս Ս. Անանիայի վանքը եկաւ, և աւագ երկուշաբթի օր, 1623 ապրիլ 7, որ Աւետման ծան ալ էր, Մովսէսը եպիսկոպոս ձեռնադրեց, և աւագ հինգշաբթի օր, ապրիլ 10'ին միասին միաբան օրհնեցին, որ լաւ արդիւնաւոր եղաւ նուէրներու կողմէն, և Մելքիսեդեկի արծաթասիրութիւնը գոհացուց։ Ջուղայեցի վաճառականներ Աստուածատուրի նպաստով այնչափ բարձրացուցին Մովսէսի արժանիքը, որ աւէնքը փափաքեցան անգամ մը գոնէ զայն տեսնել, ուստի յաջորդ պատգամաւորութեամբ զինքն Ասպահան առաջնորդեցին, ուր մնաց ժամանակ ինչ, թէ քաղաքին և թէ շրջակայից մէջ եղող Հայ գաղթականութեանց այցելեց, քարոզեց, մխիթարեց, և գոհ գոհացուցիչ է նոյնոյն, գտածաւ երեւան Ս. Անանիայի վանքը, իւր կրօնաւորական կեանքը չարունակել (ԴԱՎ. 227)։ Այդ պարագաներուն մէջն էր, այսինքն միաբանօրհնէքի յաջողութենէն ետքը, և Աստուածատուրի այցելութենէն առաջ, որ Մելքիսեդեկ կաթողիկոսութիւնն ալ Մովսէսի փոխանցելու գաղափարը յղացաւ, և անոր յայտարարեց թէ ազգս Հայոց երբս գոյացին չկնին, մինչ ընդհակառակն ղեկ ելեր և ընդառնին։ Արդ հոգին սրտանի պարտ եղեալ և քաշմաց, ես չեմ կրնար վճարել, վասն զի չեն ատր, դուն կրնաս վճարել, որովհետեւ կրնաս հաւաքել, ուրեմն պահ տեղ ղոյքդ սրտան էջիածին և գլխոդիկոսութեան, դուն պաշտօնը վարէ ու պարտքը վճարէ, և ինչ փառ մնայի գործան պէտոյից և ըզի է վնասելդ (ԴԱՎ. 171)։ Մելքիսեդեկ մինչեւ այն ատեն միշտ նենգութեամբ էր գործած, ուստի իւր առաջարկին անկեղծութեան հնար չէր վատահանալ, և ամէն տեսակ դարձուածներ միտքէ անցընել ներեալ էր։ Մովսէս ալ իրաւամբ կրնար կասկածով վերաբերուիլ իրեն եղած առաջարկութեան. թէպետեւ գործն ալ ըստ ինքեան ախորժելի պայմաններու մէջ չէր։ Ուստի Մովսէս հրաժարելով հրաժարեցաւ (ԴԱՎ. 172), և անկէ ետքը կատարած պիտի ըլլայ Ասպահանի ուղեւորութիւնը, և հոն անցուցած 1623'ի վերջին և 1624'ի սկիզբի օրերուն տօնական միջոցը։

1633. *Մելքիսեդեկի կողմէ յայտնուած՝ կաթողիկոսութիւնը ուրիշի փոխանցելու գաղափարը, արթնցուց իրեն եղբօրորդւոյն Սահակ Գառնեցւոյ եպիսկոպոսին ախորժակը, որ մինչեւ այն ատեն կաթողիկոսին աջ բազուկն էր եղած, և զգացուց անոր՝ որ քանի որ ես իմ ժառանգ և արդէ ես, պէտք չէ որ այլոց ընծրհեմ քու կաթողիկոսութիւնդ։ Մելքիսեդեկ աւելի յարմար գտաւ այդ փոխանցումը, վասնզի թէ վճարմանց պատասխանատուութիւնը ուրիշի վրայ ծանրացուցած կ'ըլլար, և թէ այդ անձը իրեն հզու հպատակ մէկը կ'ըլլար։ Սահակի առաջարկին հաւանեցաւ, և անոր հետ մէկտեղ էջմիածին եկաւ, և ի հբնչակապետաց կնքուկի օրն, այսինքն է 1623 նոյեմբեր 9'ին զայն կաթողիկոս օրհնեց։ Անկէ երեւան եկաւ նոր կաթողիկոսով, զայն ժողովուրդին ներկայացուց, Ամիրգունա խանին ալ ճանչցուց, և անկէ ինդրեց որ Շահաբասին ալ ճանչցնէ, ինքն ալ յատկապէս գիր գրեց, թէ ես ծերացեալ եմ և անկարացեալ, վասն որոյ հրաժարեցայ, և վնասակ ըզի եմ իմ տեղս կարգեցի, որ կաթողիկոսութիւնը պիտի վարէ և տուրքն ալ պիտի վճարէ (ԴԱՎ. 172)։ Այստեղ Դաւիթ ժեղին սխրող անկարգութիւնները բացատրած ատեն կը գրէ, թէ ոչ ըն ի էր, այլ երբ և ըզր կոնդակաւ կայն (ԴԱՎ. 221)։ Կաթողիկոսներու չորս թիւը լրացնելու համար, Դաւիթի, Մելքիսեդեկի և Սահակի վրայ պէտք կ'ըլլայ Աւետիսն ալ աւելցնել, և այդ վերջինը մինչեւ 1623 կամ 1624 կենդանի ենթադրել։ Արդէն գրած ենք որ անհնար է Աւետիսի մահուան թուականը ստուգութեամբ ճշդել (§ 1618), և եթէ կենդանի ալ ըլլար, ոչինչ կ'արգելէր որ նոյնիսկ Աւետիս էջմիածին

գտնուած առենը, Մելքիսեդեկ նոր կաթողիկոս մը ասելցնէր եղածներուն վրայ, թէ պէտեւ Աւետիսին վերջի առեններ Վրաստան քաշուած ըլլալուն խօսքն ալ կայ (11 ԱՄՍ. 69)։ Սահակի կաթողիկոսութեամբ մենք գահակալութեան կարգը փոփոխուած չենք կարծեր, որովհետեւ որչափ ալ Մելքիսեդեկ արքունի հրովարտակով Մայրաքուղայ տէր կը նկատուէր, և իւր իրաւունքն ալ նոյնպէս արքունի հաստատութեամբ Սահակի վրայ կը փոխանցէր, սակայն կանոնական իրաւամբ և եկեղեցական օրէնքով Դաւիթ կը մնար միշտ բուն գահակալը, թէպէտեւ Ասպահան քաշուած. և անձուկ սահմանի մէջ պաշտօն վարող, սակայն ոչ հրաժարած էր և ոչ ալ ազգային ժողովով գահընկէց եղած։ Հետեւաբար Մելքիսեդեկ ալ, Սահակ ալ, և նոյնիսկ Աւետիսն ալ՝ երէք տակաւին կենդանի էր, երեքն ալ պարզ աթոռակիցներ էին, իսկ գահակալ կը մնար միշտ Դաւիթ Դ վաղարշապատեցին։ Սահակ կը պատրաստուէր անձամբ երթալ Դոռն ըսելէն, որպէսզի վերջնական և հաստատուն ըլլայ սեպհականացուցանելը ի վերոյ ընթեռնելոցն, թէպէտեւ գործի ձեռնարկած էր, և շահ ըսելէն, որոնք Մելքիսեդեկի հետեւորդներն էին (§ 1617), անցած էին Սահակին, և ընդ նմա չըլլեցաւէն դրամ հաւաքելու համար (ԹԱՎ. 173)։ Այդ միջոցին Մովսէս ալ Ասպահանէ դառնալով (§ 1632) կայ պղտմութեամբ յիշուած պան (ԹԱՎ. 227), այսինքն է Ս. Անանիայի վանքը։ Մելքիսեդեկ միշտ դրամ ձեռք ձգելու իղձէն մղուած, մտածեց Մովսէսէն ալ գումար մը կորզել, ուստի երեւոյթ ընելէ զինքը ղրկել ուղեւորելու, այսինքն է Մովսէսի անունով առաջ պարտամուրհակ մը կեղծեց, Ասպահանէ դարձին 100 թումանի վճարելու իրեն, և պահանջին դատը Ամիրգունայի առջեւը հանեց։ Մովսէս բացէիբաց ուրացաւ, պարտաթուղթին կեղծ ըլլալը յայտնեց, և այնպէս անկեղծօրէն բացատրեց, որ խանն ալ և անոր իշխաններն ալ և աւելն մարդ իւր սիրտին մէջ Մովսէսի իրաւունք կուտար, միայն թէ օրինական վկայ չկար և դատը երկու ամիս կ'երկարէր առանց վերջանալու։ Ամբաստանողներն ալ ուզելով գործին մէջէն ելլել, որոշեցին պայն վրան ներկէն նետել, և Սահակ դատարանի մէջ յայտնեց, թէ ինքն ալ Մելքիսեդեկ ալ թուղթին մասին ուղղակի բան մը չեն գիտեր, միայն թէ Համազասպ Հաւուցթառեցի՝ երեւանի եպիսկոպոսն է զայն ներկայացուցած, և խաբէութեան հեղինակը նա եղած պիտի ըլլայ։ Ասով ուզեցին ոչ միայն իրենք ազատիլ, այլեւ Համազասպէ քէն լուծել, որ իբրեւ և ճարպարբեռն հակառակորդ մըն էր իրենց, և դիմաքանոնիկէ պոռոտցնէր զիրենք Մելչիսեդեկեան։ Համազասպի համար ինչ կարգադրութիւն եղաւ չէ յիշուած, բայց այդչափը բուսական եղաւ, և Ամիրգունա Մովսէսն արդարացուց, և ի նմին հանդիսի պատուեցին զնորոգին ըսյն (ԹԱՎ. 228)։

1634. *Մելքիսեդեկ կը յուսար որ կաթողիկոսութիւնը ուրիշի փոխանցելով ինքն ազատութիւն կը*

ՄԵԼՔԻՍԴԵԿ *գտնէ և հանգստութիւն*

Ի ԿՊՈԼԻՍ *կը վայելէ։ Սակայն այնպէս չեղաւ։ Երէք պետականս սուրքը Սահակէն պիտի պահանջուէր, սակայն փոխատու պահանջողներ ուղղակի Մելքիսեդեկը գիտէին, և կը չարունակէին անկէ պահանջել իրենց առնելիքը։ Վերջին նեղութեան մէջ Մելքիսեդեկ ձեռք զարկաւ էջմիածնի թանգարանին, և իբր վճարում կամ իրրեւ գրաւ սկսաւ պահանջատէրերուն յանձնել ըզոսկեայ Ճաչկալ անօրէն օրէնք էջմիածնի, մինչեւ իսկ Ս. Գրիգորեան կէսի և Ս. Տեւփանոսի ձկերը եւ էրս առ այլսդէի Մահմետականս, և նոր փոխառութեամբ հին փոխատուներ լուծուց։ Սակայն այս ալ հիմնական ազատութեան կերպ մը չէր, և կասկած ալ կար որ դեռ այլ պարտք եւս ելլէ Նեղոցէն, և հասած տեսաւ վերջնական դարմանին՝ այսինքն փախուստին ժամանակը։ Ուստի օր մը, 1624 գարունին սկիզբները, լոկ սպասաւոր մը մէկտեղ առնելով՝ էջմիածինէ ելաւ երեկոյին մթնալուն մօտ, և երեւանի ճանապարհ բռնեց, բայց ճանապարհն կէսէն ուղղութիւնը փոխեց դէպի Սահաթի փոսը՝ որ է Երասխի միւս կողմը, և անկէ չիտակ գնաց ի կողմն Կղէայ, հանդիպեցաւ Կաղզուան, և առանց ուրիք դադարելու Օտմանեան սահմանագլուխը մնցաւ, և եկաւ կարին։ Անկ*

տեղ ալ չատ չմնաց, այլ կամաց գնալով, և առանց իր չուրջը աղմուկ ու համբաւ հանել տալու, արագ գնացքով հասաւ Կոստանդնուպոլիս (ԴԱվ. 173)։ Այս հաշուով մինչեւ յունուար 1624 տարին եղած է Մելքիսեդեկի Կոստանդնուպոլիս հանդիպիլը (11 ԱՄՍ. 12), երբ պատրիարք կը դանուէր Յովհաննէս Խուլը, և իրեն պաշտպան ու գործակից էր Զաքարիա Վանեցին, Ասիա կողման վիճակներու վերակացուն (§ 1630)։ Յայտնի էր արդէն Մելքիսեդեկի և ասոնց մէջ կանխաւ հաստատուած մտերմութիւնը, և երկրին ալ հաւանաբարապէս լատինամոլ կռանակցութեան պատկանիլը։ Հետեւաբար Մելքիսեդեկի ներկայութեամբ աւելի զօրացաւ Խուլին կողմը, Մելքիսեդեկ ալ այժ առած կը խրոխտար գոչելով էբբե՛ ջո՛ւթ, որովհետեւ չրջապատուած ալ էր քաղաքական անառակ եկեղեցոյ անառակ, և սոսկ վերջերուն իր համախոհն (11 ԱՄՍ. 12)։ Ասիկա վկայողը Դարանաղեցին է, որ Խուլին և Վանեցին, հետեւաբար Մելքիսեդեկին ալ կողմնակից էր, բայց վերջիվերջոյ զզուանօք հեռացած էր անոնցմէ (§ 1630)։ Նոր համախմբակալ երկրները Մելքիսեդեկ և Յովհաննէս և Զաքարիա, համարձակ իրենց կիրքերուն ասպարէզ գտած, ոչ միայն չարչարելու հրապարակաւ պահքը կը լուծէին, այլեւ պահեցողները անարգէին, և ոչ միայն հերձուածներ կը տարածէին, այլեւ քաղաքական անառակներ կը գործէին։ Այդ ընթացքը պաշտպանելու յաւակնողներ, կը յայտարարեն թէ ասոնց ըրածը կրնալի՛ր իմաստ կաթոլիկ Հայերու՝ օրինակ ներքեալ էր (11 ԱՄՍ. 12)։ Բայց չենք գիտեր թէ ինչ տարբերութիւն կայ ասոնց ըրածին, և Հայաստանի մէջ գտնուող ղեղծ եկեղեցականներուն ընթացքին մէջ, զորս Դաւրիժեցին կը մեղադրէ թէ փափուկ և անձնատուր պահէին, և թէ քաղաք քաղաք և գիւղ գիւղ պտնէին, և թէ ոչ ոք անոնց կը ճանչակէին։ Սակայն այս ընելով կրնային չէին ըսուիր (ԴԱվ. 220), և նոյն իսկ հանդամանութեան պաշտպաններ Հայաստանի վանականներուն ալ կրնային չէին ըսած։ Մեր նպատակը իրաքանչիւրին կարծիքին դատախազ ըլլալ չէ, այլ միայն կը փափաքինք պատմական եղելութիւնները իրենց խակութեան մէջ ներկայել, և հայոց ազգին մտայնութիւնը հիմնապէս լուսաբանել։ Եղելութեանց կարգին դասնալով, երեքհարիւր ընթացքը այնչափ գէշ տպաւորութիւն գործեց, որ Հոհաննէս և քաղմքեռ ժողովրդով ցոյցեր կազմակերպուելուն առնոց դէմ, և Ներսէս Սեբաստացի վարդապետը, ճշմարտութեան իբրեւ նոր Ապոստոլ և սքեռեր անձ մը, որ վերջէն Սսոյ աթոռն ալ բարձրացաւ, ջղագին եղեռ զայրացած և գայթակղած ժողովուրդին, որ վերջապէս յայտնելու չարչարելու ժողովներ և հալածական առնել է տալ (11 ԱՄՍ. 12)։ Մելքիսեդեկի կ-Պոլիս հանդիպիլը 1624'ին տեղի ունեցած էր՝ այսուհի ժամանակները, և գոնէ տարի մը այնտեղ մնացած պիտի ըլլայ, զի ժամանակագրական պահանջներու համեմատ, 1625'ին վերջին ամիսներէն առաջ եղած պիտի չըլլայ Կոստանդնուպոլիսէ մեկնիլը։

1635. Այստեղ ժամանակագրական կապակցութեամբ հարկ կը սեպնենք պատմել Արմաշի վանքին հիմնարկութիւնը, որ մեծ կարեւորութիւն ունեցաւ ազգային պատմութեան եղելութեանց մէջ։ Արմաշու Զաքարեանց Ս. Աստուածածին վանքը, կը գտնուի համանուն գիւղին կից, Նիկոմիդիայէ դէպ արեւելեան հիւսիս երկարող լեռնաշղթային վրայ, որ աւանդութեամբ առաջին դարերու հալածանքներու ատեն քրիստոնեաներու ապաստարանն է եղած։ Այժմեան Հայ վանքը հաւանաբար չինուած է յունական յանգած վանքի կամ եկեղեցիի մը տեղին վրայ։ Թէպէտ վաւերական արձանագրութիւն կամ պատմութիւն չէ մնացած՝ հիմնարկութեան տարին և պարագաները ճշդող, սակայն անկասկած է թէ հիմնարկութիւնը եղած է մի դարուն առաջին տարիներու մէջ։ Աւանդական յիշատակներ կը հաւաստեն թէ ձեղալինեներու երեսէն փախած գաղթականները բազմացուցած են այդ կողմերու հայաբնակութիւնը, և մենք գիտենք թէ չուրջ 1600'ին տեղի ունեցաւ ձեղալինեներու բռնութեանց ընդարձակումը (§ 1593), և վերջացաւ 1608'ին (§ 1595)։ Վանք մը հաստատելու գաղափարը ունեցած է էջմիածնի նուիրակ Թադէոս եպիսկոպոս, ո-

ԱՐՄԱՇԻ ՎԱՆՔԸ

րուն աւանդութիւնը տեսիլքներ և յայտնութիւններ ալ կը վերագրէ, և չատ մը դժուարութիւններ ալ կը պատմուին՝ գլխաւորապէս վանաշինութեան պետական արտօնութիւնը ձեռք ձգելու համար, զոր վերջապէս յաջողած է առնել Թադէոս՝ Նիկոմիդիոյ մէջ, Պարսից դէմ պատերազմի գացող մեծ եպարքոսէ մը։ Այս պարագան ալ ճշդելիներու ընկճուելէն ետքը տեղի ունենալուն կը յարմարի, երբ 1611 գարուն էին, մեծ եպարքոս Գուդուճու Մուրատ փաշան ճանապայ կ'ելլէր իբր Պարսից դէմ պատերազմին սպարապետ (§ 1605)։ Հաւանական է որ Թադէոս եպիսկոպոս կանոնէն չինութեան ձեռնարկած ըլլայ, սակայն հիմնարկէքի պաշտօնական թուականը յարմար է դնել 1611'ին, պետական արտօնութիւնը ստացած թուականին։ Աւոր չատ յարմար կուգայ Դարանաղցիին յիշատակարանն ալ, որ երբ 1612'ին պատրիարքական հասոյթներուն բաշխուելէն ետքը, իրեն բաժին ինկած Անապատ֊ֆաբափայէն այցելութեան կ'ելլայ, Արմաշ ալ կը հանդիպի, և իւր Աստուածաշունչէն հինէ թերթ֊ը կը գրէ Արմաշու ժամատանն, է պատճ Նորշէն վանէ իջեցելոյն՝ հոգ Արմաշու Նորշէնէն (ԴՐՆ.)։ Ասկէ կը հետեւի թէ Արմաշ գիւղ նոյն միջոցին Նորշէն մաս մըն ալ ունեցեր է, և անոր հուպ Նորշէն վանէ մը հիմնուեր է։ Այդ պարագան ալ աւանդութեամբ կը հաստատուի, թէ գիւղին մէջ վերի էջ հնագոյն մաս մը եղեր է, և ետքէն վերի էջ մաս մը աւելցեր է, և այս վերի գիւղին հուպ կը գտնուի վանքը։ Վանքին ալ բաւական կազմակերպեալ վիճակ մը ունեցած ըլլալուն նշան է, որ Դարանաղցին տակաւին Արմաշ չհկած, իւր հետեւորդներէն Առջակեցի Վարդապետ յղած է Արմաշու էջ Նոր էջն, և իւր Աստուածաշունչին ընդօրինակութեանը համար, այն տեղէն օրինակ մը բերել տուած է իւր պտնուած տեղը, հաւանաբար Նիկոմիդիա քաղաքը։ Դժբախտաբար ասկէ աւելի պատմական յիշատակ չունինք Արմաշու վանքին նախնական ժամանակին վրայ, թէ ինչ կարգով և կանոնով կազմուած էր վանական կանոնութիւնը, թէ ինչչափ անդամներ ունէր միաբանութիւնը, և թէ Մեծ-Անապատին կազմակերպութիւնն էր արդեօք (§ 1621) Արմաշի մէջ ալ հաստատուածը։ Միայն դիտելու է, որ թէպէտ Հայ վանքեր չատ են Փոքր-Հայոց մէջ, և չատ չատ են Մեծ Հայոց մէջ, սակայն ցանցառ են Փոքր-Ասիոյ հայ գաղթականութեանց մէջ, և Մէրզիֆունի և Անկիւրիոյ Զարխափան Ս. Աստուածածնի վանքերէն ետքը, որոնք հնագոյն են, միայն Արմաշի Զարխափանն է՝ որ վերջին դարերուն մէջ հիմնուած է, և կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան մերձաւորագոյն վանքն եղած է։

1636. Արմաշու հիմնադիր Թադէոս եպիսկոպոսին վրայ խօսելով, մինչեւ հիմայ այս անուն եպիսկոպոսի

ԹԱԴԷՈՍ
ՀԻՄՆԱԴԻՐԸ

մը հանդիպած չենք ժամանակակից պատմութեանց և յիշատակարանց մէջ, որ մերձենալով ծանօթութիւն մը քաղէինք անոր ծագումին և նախընթացին և գործունէութեան վրայ։ Տեղական աւանդութիւնը զայն Նոէլէ կոչումով կը ճանչնայ, և երկու չրջան կը վերագրէ, մէկը Բիւթանիոյ, և միւսը Ղրիմու չրջանակներուն մէջ, Արմաշի մէջ հաստատուելէն առաջ։ Նորա արժանիքին նկատմամբ ալ, ինքնատիպ քահանայապետ փաստ մըն է վանաշինութեան գաղափարն ու ձեռնարկը, թէ իւր հոգեւորական զգացմանց և թէ ժողովուրդի հոգածութեան տեսակէտէն։ Նմանապէս բաւական կարողութեան ալ նշան է, գործ մը գլուխ հանելը, և նոյնիսկ պետական արտօնութիւնն ալ իւր նախաձեռնութեամբ ստանալը, երբ պատրիարքները աթոռի պայքարներով միայն կը զբաղէին (§ 1604)։ Արմաշի մէջ տիրած գաղափարը իրեն նպաստաւոր է և ցարդ ալ նոյնպէս կը մնայ։ Միայն վերջին օրեր Դարանաղցիին Երուսաղէմի մէջ պահուած ձեռագիրէն հատուած մը հաղորդուեցաւ ինձի, ուր Արմաշու Թադէոս եպիսկոպոսը չատ տգեղ գոյներով նկարագրուած է, և կոչուած է Թոփէօ անուն ընչահաճ, է պատճ եղբայրն եղած եպիսկոպոս, որ կայր է Նոր֊շէն վանս Արմաշու, որ ալ օրինաց հոգ տանէր, և ալ յԱստուածոյ ահ և երկիւղ կը կրէր, և ալ է մարդոյ ամէն, ալ պատ էիւրէր և ալ տարփ է էլինեմուլ֊ինանն, ալ ժողով քնաս զղջանայ տանէր, այլ

անյապաղութեամբ ֆոթթէր վերնայ ըլլալ, և էր քաղքացիաց և ըրտնէր, և այնպես անդրդուելութեամբ դէպ՝ Թարանաղեցիին այդ նկարագիրը, եթէ ստոյգ լինէր, հարկ կ՚ըլլար Թադէոսը աչխարհի չարագոյն մարդը նկատել. սակայն մենք քիչ մը կասկածով պիտի վերաբերուինք Թարանաղեցիին վկայութեան։ Նոյն ձեռագիրին մէջ Թարանաղեցին նախապէս կը յիչէ, թէ ինքն էր է Նորշէն վանաՀայրապետը, որ յանուն սուրբ Աստուածածնին էր, և կ՚աւելցնէ նաև, է մէջ չեռնիբոլին։ Արդ Թարանաղեցին, ինչպէս Աստուածաչունչին յիչատակարանէն կը քաղուի, մէկ անգամ միայն, և այն ալ կարճ ժամանակաւ գրանուած էր Արմաչու Նորշէն վանքը, ուստի կը հետեւի թէ վանքը իր երթալէն առաջ չինուած էր, և թէ վանքին չինութեան առն ինքը հոն չէր։ Ուստի անհիմն պարծենկոտութենէ զատ բան մը չէ՝ է մէջ չեռնիբոլին գրելը, որուն պատճառ եղած է անչուչտ, այն կողմերուն վերակացուն ըլլալը, և վանքին իր իչխանութեան տակ մանին մէջ գտնուիլը։ Ամենայն հաւանականութեամբ Թադէոս, որ վանքը հիմնարկելու համար այնչափ աչխատութիւն թափած էր, ընդդիմացած պիտի ըլլայ նոր վերակացուին միջամտութեան, և վանքը կնաստրացիին իչխանութեան առնն չինուած ըլլալով, Թադէոս անոր բարեկամ՝ և Յուլին և անոր կողմնակիցներուն հակառակորդ եղած պիտի ըլլայ։ Ըստ այսմ յայտնի կ՚ըլլայ Թէ Դարանաղեցիին զայրոյքը Թադէոսը հպատակեցնել չկրնալուն հետեւանքն է, և նկատողութեան արժանի է, որ միայն հինգ տեղ Թադէոսի անունը գրելու չափ կրցած է Արմաչ մնալ։ Թադէոսի մասին գրուած մեզադրանքներն ալ ընդհանուր խօսքեր են և անհաւատալի ըլլալու չափ չափազանցութիւններ, և ժամանակին սովորական պարծած՝ իրարու դէմ խօսուած ու գրուած նախատինքներ։ Իրրեւ գրական եղելութիւն կը գտնենք միայն Թադէոսի չուչտակ վարդապետ և եպիսկոպոս եղած ըլլալը, որ յանգանակ մը չէ, և մէյ մըն ալ Աբրահամ Տիվրիկցի անուն աչխարհական անձ մը, որ երեսուն տարի կեղծ քահանայութիւն է ըրեր, աբեղայ և քահանայ ձեռնադրած ըլլալը, զոր Դարանաղեցին իր իչխանութեան առնն ուզեր է արգելել, բայց նախկին գիւղացիք զայն պահեր են՝ իրեն յաջողակութեան և օգտակարութեան համար, Յուլին և Զաքարէն հրամանագրով, և իր հրամանին չեն անսացեր։ Ասոր ալ պատճառ, տարակաւ տարիէ մը Աբահակոզմանն վերակացութիւնը թողուլն է, որովհետեւ Զաքարէ կամ Զաքարիա վանքին առանձնից անոր բաժինը, և ինքն Ռուսիկիի կողմը քաչուեցաւ։ Մենք չենք ուզեր Թադէոսը իրրեւ սրբութեան տիպար մը ներկայել, բայց և ոչ կրնանք զայն պատել Դարանաղեցիին տեսութեամբ, որ Թադէոսի չափ ալ արդիւնք մը չունի, և ընդօրինակող և հասարակ գրագիրէ բարձր անձ մը եղած չէ։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ԱՆՑՈՒԴԱՐՁԸ

1637. *Կոստանդնուպոլսոյ պատրիարքարանին դատնալով, պէտք է յիչենք Թէ Մելքիսեդեկի և Յովհաննէսի և Զաքարիայի վրան կեանքը ընդհանուր գայրոյթ պատճառած էր ժողովուրդին մէջ* (§ 1634), *և կարի յարմար կու գայ այդ միջոցին պատչաճեցնել Յուլին մէկ արկածը։ Կ-Պոլսոյ քահանաներ հաւքէ՛ր իմն կը տանին զայն Նաւլըքարուի կողմը գտնուող Աբէֆնէբէց գիւնետունը, և եէնիչէրիներու գլխաւորին լուր տալով իրենք խոյս կու տան, մինչ եէնիչէրիներ ևկնդեցական մը գիւնետունի մէջ անանկով, զվբրտագեան առնէն բռնեն, Թէպէտ այն կ՚ատզաղակէր Թէ պեղեակ չէմ պեղոյս։ Որչափ ալ եղածը խաղ մըն էր, սակայն Քէօմիւրճեան, որ միջադէպը կը պատմէ, կը յայտնէ Թէ Յուլ Յովհաննէս վրտագեան պեղեցէ, այսինքն է կոստանդնուպոլսեցի, ծանօթ էր իրր է բաւ չմբէչեան ապրող մը* (Ձեղ. 6)։ *Աւանդ այս դիտողութեան ալ, քահանայից մտածած խաղը, նոյնիսկ Յուլին կենդցաղէն գըրգռուած ըլլալով, կը լուսարանէ անոր ընթացքը։ Այդ ընդհանուր գրգռութեան մէջ Մելքիսեդեկ կը յուսահատի կոստանդնուպոլսոյ մէջ յաջողութիւն գտնել, և տեսնելով որ անդ եաս ոչ ընկալան զնա ժողովուրդք և վրտագեան ժամանակն* (ԴԱվ. 174), *ուր արդէն լաւ անուն մը չէր Թողած իր պատրիարքութեան օրէն* (§ 1581), *կը մտածէ այլուր փնտռել իր բախտը, և կ՚ուղեւորի*

դէպի Լեհաստան, յուսալով օգտուիլ Իլվովի Հայ գաղթականութեան միամտութենէն և հարստութենէն։ Մելքիսեդեկի մեկնիլը Հայոց 1065'ին կը դրուի, բայց որովհետեւ ամանորը 1625 հոկտեմբեր 16'ին կ'իյնար, կրնանք նոյն 1625 տարւոյ վերջերը դնել անոր Կոստանդնուպոլիսէ մեկնիլը։ Ձիշդ այդ միջոցին Գրիգոր կեսարացին նորէն կ-Պոլիս կը դառնար, Մինաս կարնեցի և Յովհաննէս Երզնկացի եպիսկոպոսներու ընկերակցութեամբ, առիթէն օգտուելով Խուլը տապալելու համար (11 ԱՄՍ. 13)։ Գուցէ անոր հանիլն ալ Մելքիսեդեկի հետանալուն պատճառներէն մէկն էր։ Խուլը իր իսկ գրած մէկ յիշատակարանին մէջ, ինքզինքը պոբէ-ր այս նահանջը կը կոչէ 1625 ապրիլին (11 ԱՄՍ. 12), սակայն 1626'ին կամ 1625'ին վերջերը՝ հայկական ամանորին հաշուով, կեսարացին արդէն Խուլը էոթոցեալ էր է Պոլսոս, և ինչն պէրէալ էր պատրիարքարանին քանոնիմբ (11 ԱՄՍ. 16), ինչ որ կ'ակնարկէ ուրիչ տեղ ըսուածին, թէ հանայէ և քամճիթի ծղրիդով յաջողած էին ցրուել զէր ծղրիվ Մելքիսեդեկի և Յովհաննէսի և Զաքարիայի, և հալածական առնել է հալէին դնէ։ Չի Մելքիսեդեկ գացած էր է Ալէքոցոց աչերէն որ այժմ կէհ էր (11 ԱՄՍ. 12), և որ ուրիչ տեղ յաչերէն Ռոսոց է ըսուած (ԹՈՐ. Բ. 478)։ Յովհաննէս փախած էր ի Պրուսա, և Զաքարիա իր Ասիակողման բաժինը քաշուած։

1638։ Երբոր Մելքիսեդեկ Իլվով հասաւ, իրեն արծաթասիրութեան բարեպատեհ առիթ մը գտաւ, և պսիկոպոսական աթոռին պարապութիւնը և նոր ձեռնադրութեան պատեհը։ Նախատուր եպիսկոպոսէ ետքը՝ որ 1467'ին Արիստակէս աթոռակալէ ձեռնադրուած էր (§ 1502), Լեհաստանի եպիսկոպոսներու չարայարութիւնը կը կազմին, Ստեփանոս, Գալուստ, Գրիգոր Վարագցի, Պարսամ Տրապիզոնցի, Յովհաննէս-Գալուստ, և Կարապետ-Գաբրիէլ (ԿԱՄ. 5.), և վերջապէս Մեսրոպ Կաֆացի արքեպիսկոպոս (ԲՌՆ. 154), որ վախճանած էր 1623'ին (ԲՌՆ. 21), և աթոռը պարապ մնացած էր մինչեւ Մելքիսեդեկի հանիլը, 1626'ին սկիզբները։ Ըստ այսմ աթոռի պարապութիւնը սա ինչ տեւած կ'ըլլար և ոչ ոք ինչ (ԲՌՆ. 21)։ Իսկ Ղազար Բաբերդցի վարդապետ մը, որ 1624'ին ինքզինքը սոքնոդր սոբէ սեխե և Օլեխոց երէրէ (ՏԱՇ. 718), և ուրիչ տեղ ալ Ո-լեխոց երէրէ եպէսկոպոս կ'անուանէ (ՏԱՇ. 708), միայն վալաքիոյ մասին առաջնորդն եղած է։ Իլվովի գլխաւոր աթոռին պարապութեան պատճառն եղած է ընտրութեան մասին երկպառակութիւնը, վասնզի ոչ միայն եկեղեցական կանոններով, այլեւ Լեհ թագաւորներէ ճանչցուած օրէնքներով, ծղրվոբդր և եկեղեցիներէ Հայոց Իլվովոյ, ունէին էսոսոն ընտրելիոց (ԲՌՆ. 154)։ Մելքիսեդեկ խնդիրը լուծելու համար իր միակ փաստ կը ճանչնար իրեն գալիք գումարը, ուստի մէկ կողմ թողուց ժողովուրդին ընտրելիները, և պեսոնելով ղալվորիէն սոյեն պոբսոբ սակոյն, նաեւ ղինկելորիէն եսս յալվից սակոց, ինչպէս Դավրիժցին կը գրէ (ԴԱՎ. 280), կամ թէ կալոեել քալճո սլեսով, ինչպէս Լատին պատմիչն ալ կը խոստովանի (ԲԱՆ. 154), առաջուընէ հրէից չէսոն ղոսոչ կորեցէն իր գին (ԿԱՄ. 203), և առանց ումիք յայտնելու, և ժողովուրդէն գաղտնի, օր մը կ'առանձնանայ մերձակայ Հաճկատար Ս. Խաչ վանքը (ԲԺԵ. 102), և դռնփակ եկեղեցւոյ մէջ եպիսկոպոս կ'օծէ Նիկողոս Թորոսեան, կամ տեղական յորջորջմամբ Նիկոլ Թորոսովիչ 22 տարեկան աբեղայն, քնիկ Իլվովցի Յակոբ Թորոսովիչ անուն մեծահարուստ վաճառականի մը որդին (ԿԱՒՐ. 143), որ ոչ սոխ էր սէրելէլ, և ոչ արժանաւոր այնմ ասպիճանի, ինչպէս կը վկայէ լատին պատմիչն ալ (ԲՌՆ, 154)։ Հազիւ թէ կը լսուի Մելքիսեդեկի գործը, ժողովուրդը կը յուզուի, այնպէս որ ֆոէր մ էսո և ղէն սոնոյր, և է մասոնն մասոնն կոպրեր գլխովղիսոն և գյեսոնպրեսլն է նմանի (ԲՌՆ. 21), իսկ Մելքիսեդեկ եպիսկոպոսութեամբ (ԲՌՆ. 154) կը յայտարարէր թէ ուրիչ վիճակի համար ձեռնադրած է, և նիկոլն ալ մէկտեղ առնելով կը փութար Իլվովէ մեկնիլ կամենից երթալու, անկէ ալ է հայբենի էս դառնալու յայտարարութեամբ։ Երբ եագլովից կը հանին, Մելք-

քիսեղակ կ'առաջարկէ Նիկոլի Իլվով դառնալ (ԲՌՆ. 21), իսկ սա կը սոխակէ և զինքն չընդունողներուն դէմ բանադրանքի և նզովքի կոնդակ մը կ'առնէ Մելքիսեդեկէն, և անով զօրացած կը դառնայ Իլվով։ Մերձաւոր կիրակէին զայն հանդիսապէս կը հրապարակէ, իսկ ժողովուրդը թէպէտ և փըրփրել ձեռ- -փով, բայց վերոխել -րոխ- և -էէքեր- եղել լեցին (ԴԱՎ. 281), պատկառելով կաթողիկոսին անէծքէն։ Այս կերպով Նիկոլ աթոռը գրաւեց, և ժողովուրդը թէպէտ չոխաց, բայց հպատակեցաւ, և իբր երկու տարի առանց վրդովման անցաւ, և Նիկոլ իւր իշխանութեան մէջ հաստատուեցաւ (ԲՌՆ. 21)։

ՄԵԼՔԻՍԵԴԵԿԻ ՄԱՀԸ

1639. Իսկ Մելքիսեդեկ եպլովիցէ, ուր Նիկոլէն բաժնուեցաւ, եկաւ կամենից, և չենք գիտեր թէ ուր երթալ կը մտաբերէր, զի էչմիածին չէր կրնար դառնալ, Կ-Պոլիս ալ յաջողութիւն չէր գտած, մանաւանդ որ կեսարացին ալ արդէն պատրիարքական աթոռը գրաւած էր։ Ծիշատակարանի մը մէջ կ'ըսուի թէ եկած է ի Լեռպոլէ՝ Լվով(ՏԱՂ. 111), սակայն ուրիշ կողմէ մը չհաստատուիլը, և յիշատակագիրն ալ հեղինակաւոր մէկ մը չներկայանալը։ Ուստի կ'երեւի թէ ինքն ալ որոչում մը չէր տուած, զի զինէ -ոոլ ինչ -ոոոբց հէաանդոցա- աղուհացից օրերուն մէջ, և քիչ օր ետքը մեռաւ կամենից քաղաքը, 1626'ին, ի թէնէ յոբոլենան Ղալըբս, որ է ըսել ապրիլ 1'ին, և այնտեղ թաղուեցաւ, (ԴԱՎ. 283), ուր կը տեսնուի տակաւին իւր գերեզմանը Աւետման եկեղեցւոյն մէջ, փորագրեալ պատկերն ալ պատին վրայ (ԲԹՇ. 152)։ Ծիշատակարանի մը մէջ 1628'ին ի հոբոլեթոոլենան թեոան թէր Մելքիսէդէ կոլղիոլին կարդացուած ըլլալը (ՏԱՇ. 708), պարզապէս հայկական թուականին մէջ ե և է թուատառերու չփոթութեան հետեւանք է, զի Մելքիսեդեկի մահուան թուականը ստուգուած է։ Մելքիսեդեկի արկածախնդիր, փառամոլ, արծաթասէր և նենգամիտ կեանքը փակելով՝ գնահատումի կամ գովեստի արժանաւոր ոչ մի կէտ չենք գտներ առաջ բերելու համար։ Իւր աթոռակցութեան կոչուած օրէն 33 տարի գործի վրայ գտնուեցաւ, բայց երբեք օգտակար ծառայութիւն մը չկատարեց, որուն ակընկալութեամբ Դաւիթ զինքն բարձրացուց, կամ թէ ինքն ինքզինքը բարձրացնել ստիպեց (§ 1581)։ Բոլոր նպատակն եղաւ Դաւիթը և ուրիշ աթոռակիցները անչքացնելով ինքն տիրանալ իշխանութեան. Դաւիթը որչափ կրնար հեռու և անգործ պահեց, Սրապիոնը նենգութեամբ հեռացուց, Աւետիսը անկարեւոր դիրքի մէջ թողուց, բայց ինքն ալ իրեն ուրիշ վայելք չպատրաստեց, բայց երէկ լոյծ և ընթրյոկ կենսւ զուարճանալու դիւրութիւնը (ԴԱՎ. 153)։ Բաւական նեղութիւններ ալ կրեց, բրածնէ հարուածներ, չղթայակապ բանտարկութիւններ, կալանաւոր թափառումներ, մինչեւ իսկ իւր միսը ուտելու բռնադատուեցաւ (§ 1608), սակայն այս ամէնը, որ խոստովանողական արժանիքի պատճառներ կրնային ըլլալ, ոչ մի փառաւորութիւն չբերին իրեն, զի ոչ հաւատքի համար կրեց, և ոչ աւետքինական հոգւով տարաւ, այլ պարզապէս իւր արծաթասէր և նենգամիտ գործերուն հետեւանքները կրեց։ Դաւանութեան կողմէն ալ տկարամիտ թուլութենէ և չհաղթական չոպոքորութենէ տարբեր երեւոյթ մը չենք տեսներ իւր վրայ։ Իրեն վերագրուած գիրերուն և իւր անունով Հռոմի պապերուն ուղղուած նամակներուն վրայ հիմնական վերապահութիւններ յայտնեցինք իւր կարգին (§ 1601), և անոնց պարունակութեանց չափազանցութիւնը դիտել տուինք, որ գրածին լուրջ արժէքը կը կորսէ։ Բայց երէկ իբր իսկապէս իւրն ալ ընդունինք, չենք գիտեր ինչ ոյժ կրնայ վաստկիլ հռոմէականներուն պաշտպանած խնդիրը, անուղիղ անձի մը վկայութեամբ։ Նա ոչ միայն իւր անհատական արժէքով ոչ մի ոյժ չի կրնար ունենալ, այլեւ պաշտօնական տեսակէտէն ոչ մի հեղինակութիւն չունի, քանի որ երբեք գահակալ կաթողիկոս և եկեղեցւոյ պաշտօնապէս պետը չէ եղած, և Դաւիթը նենգութեամբ հեռացնելով, ու արքունի հրովարտակով զօրանալով ալ, երբեք գահակալ կաթողիկոս չդառնար։ Ուստի և Հայաստանեայց եկեղեցւոյ բուն հայրապետներուն չարքին չմտնար իւր անունը, հակառակ սովորական ցուցակներու մէջ ան-

ցած ըլլալուն (ԺԱՄ·637), պահակալի և աթոռակիցի տարբերութեան միտք դարձուած չըլլալուն պատճառով։

ՊԱԼԱԹՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ

1640· Կոստանդնուպոլսոյ մէջ, կնատրացիին նորէն աթոռին տիրանալուն ատենները Պալաթ Թաղին եկեղեցին ինդիրը կը յուզուէր։ Այդ Թաղին պատկանող կէօմրիւկիւ Ս. Նիկողայոս եկեղեցին, որ առաջ լատին եկեղեցի եղած կ'րսուի (11 ԱՄՍ·472), և յետոյ կաֆացի Հայերուն անցած, և վերջերս Թաղին ազգային եկեղեցին էր եղած, կառավարութեան կողմէ գրաւուելով մզկիթի վերածուած էր, և այսօր ալ Ռէֆէլի Ճամի անունով կը կոչուի։ Եղելութիւնը մնծապէս յուզած էր Հայերը, բայց թէ Գրիգոր Կաստրացին և թէ Յովհաննէս Խուլ, հաւանաբար Պրուսայէ դարձած (§ 1547), մին պատրիարք և միւսը մրցակից, համաձայն կը գտնուէին գործին մտադրութիւն չդարձընելու մէջ, որովհետեւ իրենց բոլոր ազմակ և խռովարարն հանելը պատրիարքութեան համար էր, և երկուքն ալ պէտք ունէին կառավարական պաշտպանութեան, և չէին կրնար կառավարութեան հակառակ խօսիլ։ Անոնց անհոգութեան հանդէպ գործին հետամուտ կը գտնուէր Արիստակէս Խարբերդցի վարդապետ, որուն օգնական կ'ըլլար Դարանաղեցի Գրիգոր վարդապետը, որ 1628'ին երուսաղէմէ դարձած էր, չփոթութեան միջոցին։ Ատոնք գրաւած եկեղեցին ետ առնելու անհնարութեան առջեւ, յաջողեցան արտօնութիւն առնալ նոր եկեղեցի մը չինելու և պայծառացնելու, լքեալ և աւերակ յոյն եկեղեցւոյ տեղը, որ է այժմեան Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցին։ Երբոր այդ ինդիրը կը յուզուէր և կը կարգադրուէր, կնատրացին աթոռէն հեռացած էր 1627'ին Լեհաստան երթալու դիտմամբ, իսկ Կ-Պոլսոյ մէջ պատրիարքութեան փոխանորդ կը թողուր Յովհաննէս Երզնկացին, որ Պակիամուրճագ կոչուած է, հաւանաբար Թէոդոր պէկի ջոջ իմաստով, և անոր ալ օգնական էր Մինաս կարնեցին։ Ատոնք Արիստակէս Խարբերդցիին և Գրիգոր Դարանաղեցիին յաջողութիւնը իրենց և իրենց պետին անպատուութիւնն նկատելով, երկուքն ալ կը հալածէին, և անոնք ալ պատասխանած էին ապաւինիլ Դալաթիոյ եկեղեցին (11 ԱՄՍ·16), որ Դարանաղեցիին իշխանութեան ներքեւ կը գտնուէր, իրրեւ յարակից մաս Թումուլիի վերակացութեան (§ 1604)։ Զինք կրնար ճշդել թէ որ օր կնատրացին Կ-Պոլիսէ մեկնեցաւ, վասնզի կամենից հասնիլը պիտինք, բայց ինչ ճանապով գացած և առաջ որ տեղեր հանդիպած ըլլալը չենք գիտեր, ինչպէս նաեւ չենք գիտեր թէ ինչ միտքով Կոստանդնուպոլիսէ կը հեռանար տապնապալի ժամանակին մէջ։ Ուսոյ անորոշ կը մնայ, թէ պատասխանոյ նամանի մրն էր ըրածը, սոնց հրամանոց սպասելու մնացած ըլլալուն համար, թէ ոչ Մելքիսեդեկի հոն երթալն ու մեռնիլը և Լեհաստանի մէջ սկսուած երկպառակութիւնները, առիթ կ'ընծայէին գործերը քրնելու և կարդադրելու, և միանգամայն օգտակար արդիւնք մրն ալ ձեռք բերելու։ Տեղ մը հասկնանցի յիշուած է թէ Լեհաստան չանցած Էջմիածին հանդիպած ըլլայ (11 ԱՄՍ 19), սակայն ոչ տեղեկութեան աղբիւրը ցուցուած է և ոչ նպատակը բացատրուած։ Դավրիժեցին ատանկ բան մը չյիշեր բնաւ, և կնատրացիին Կ-Պոլիսէ մեկնելուն և Լեհաստան հասնելուն թուականներն ալ չենք ներեր Էջմիածնի ուղեւորութեան պէտք եղած ժամանակը պարունակել։ Իսկ Պալաթու նորաչէն եկեղեցին չեթ տանէ սոսրց միաստուեցաւ, որ հրաչքոցն եղեւ, և որովհետեւ Արիստակէս Պրուսա անցած էր, Դարանաղեցին գլուխ կանգնեցաւ նորոգութեան, և մեծահանդէս պատրաստ և ցնծութեամբ նաւակատիքը կատարեց։ Բայց երբ ծախուց հանգանակութեան սկսաւ, քահանաներ ատոր թշնամացան իրենց հասոյթին կարճելուն համար, և խնամակ ընդհակառակն վերաբերեցին օրհ., և Դարանաղեցին խռովարնեցաւ նորէն Դալաթիա քաշուելցաւ (ԴՐՆ)։

ԿԵՍԱՐԱՑԻՆ ԵՒ ՆԻԿՈԼ

1641· Նիկոլ եպիսկոպոս որ 1626'ին սկիզբները Մելքիսեդեկ ձեռնադրուած և նպովքի սպառնալիքով աթոռին տիրացած էր (§ 1638), տակաւին երիտասարդ ու բնիկ Իլվովցի, տեղացի Լեհերուն հետ սերտ կապակցութեան մէջ, և հօրը հարստութեամբը պե-

տական յարաբերութիւններ ալ կապած, իբր հայազգութիւնէն չատ թուլցած, և Լեհաստանի ազգութեան և կրօնքին համակերպութիւն զգացած էր, և այդ ոգւով ալ կը վարէր իր եպիսկոպոսութիւնը, թէպէտ և պաշտօնապէս հայադաւանութիւնը կը պահէր։ Դէպ հոս որ 1627'ին վերջերը կամենից եկաւ, և հոն Յակոբ անուն սարկաւագ մը աբեղայ ձեռնադրեց Ռոփրիոս անունով, դեկտեմբեր 2'ին։ Ճիշտ այս օրերուն կամենից կը հասնի կեսարացին։ Նիկոլ, կամ այն է որ չատ ունէր կամինիցէ մեկնիլ՝ և միանգամայն նորընծային առաջին պատարագին նուէրներէն չի զրկուիլ, կամ թէ թեթեւօրէն կը նայէր Հայ ծէսին պահանջներուն վրայ, 15 օրէն դեկտեմբեր 16'ին կ'ուզէ Ռոփրիոս արեղան քահանայութիւն հանել և առաջին պատարագը ընել տալ, և կեսարացին ալ հանդէսին կը հրաւիրէ։ Բայց սա, խստապահանջ պահպանող անձ մը, հրաւէրը մերժեց, և միանգամայն պնդեց թէ պարտ է լինի պահել ընտանեաւոր քահանայութեան Հայոցմէն։ Միւս կիրակին Նիկոլ իր միտքը պնդեց և կեսարացին նորէն հրաւիրեց, բայց նա՝ խոտն ի՛ն լինի պատասխանելով, կրկին ընդդիմացաւ (ԴԱՎ. 282)։ Այս անգամ Նիկոլ իր կամքը կատարեց, և դեկտեմբեր 23'ին Ռոփրիոս նորընծային առաջին պատարագը ընել տուաւ, միանգամայն փակել տալով միւս եկեղեցին, որ կեսարացին այն տեղ արարողութիւն չկատարէ։ Սա ալ վշտանալով հրատարակեց, թէ անկնեալ լինի ոք այսօր փնոյ յայն եկեղեցին, և այսօր խմել եղեն երկոց ևս եկեղեցոց գրոհն. ու ժողովուրդը մնաց առանց ժամի և պատրէի, թէպէտ դեկտեմբեր 24 երկուշաբթին Դաւթի մարգարէին տօնն էր, և յաջորդաբար էին առաւօտ առաջ փներուն (ԴԱՎ. 283)։ Նիկոլ իր հակառակութիւնը յառաջ տանելով, կամենիցի կառավարիչին դնաց, որուն անունն էր Լուքաչ, և բաւ թէ այդ վարպետութեամբ, որ է Քառասէն աշխարհն եկեր է, ղրղոզ է եղեր, և Լուքաչ իսկոյն կեսարացին արգելքի տակ առաւ էբերե է դէպ հոգի, և հազիւ զօրաւոր միջնորդութեանց վրայ հաճեցաւ որ դառնայ ընդ որ եկեալն էր, և կեսարացին ստիպուեցաւ 1628'ին սկիզբները դառնալ Բուդդան, որ է Մոլտաւիա, և անկէ Ռումելի անցնիլ, Տարկաւ Կոստանդնապոլիս դառնալու միտքով, ուր պատրիարքական տեղակալ թողած է Յովհաննէս Երզնկացին։ Ճանապէն էրեց էէր բռնորեցաց, նղվից և կոզնոց է վերայ նկիլէն, (ԴԱՎ. 284), և կ'ըսուի թէ եօթն ընկեր էր ընդէն (ԿԱՄ. 206)։ Գիրը խլվով ալ հասցնել տուաւ, միայն թէ նիկոլ ալնչ հոգոց, և անտարբեր կերպով չարունակեց իր գործն ու պաշտօնը, և կայ է կոչէն էոռամ (ԴԱՎ. 284)։ Սակայն չչուկը տարածուեցաւ ժողովուրդին մէջ, որ անոր ձեռնադրուելուն հակառակած էր, և միայն Մելքիսեդեկի բանադրանքին սպառնալիքովը զսպուած։ Նիկոլի եպիսկոպոսանալէ ետքն ալ ունեցած կենցաղէն և լսոնիամիտ ընթացքէն զղուած ըլլալով, առիթ գտաւ իր ժժգոհութիւնը յայտնապէս ցուցնել, և ոչ յոռոց ղբռնայն ներհակն է վերայ նկիլէն (ԴԱՎ. 284)։ Լատին պատմիչն ալ կը վկայէ, թէ Նիկոլ, որ համբաւել էր յանդուգն խոռոչբնաւորութեամբ և բարկացոտ բարուք, է ոռաղ ժամանակ հակառակորդ էր յոյոյ զրպարտութ Հայոց (ԲՈՆ. 154), որը են ազատ հայաքաղաքին երկոտասանից ժողովին անդամներ, վասն կոչուած իշխանապետի մը նախապատուհեամբ (ԲԹՇ. 116)։

1622. *Կեսարացին երբոր 1628'ին Լեհաստանէ վերադառնայ, միտքը իր պատրիարքական աթոռը գրաւելն էր անշուշտ, զոր յանձնած էր Յովհաննէս Երզնկացիին պահպանութեան, կամ լաւ եւս պաշտպանութեան, սակայն իրաց կացութիւնը բոլորովին փոփոխած գտաւ։ Կեսարացիին բացակայութիւնը տկարութիւն բերած էր իր կողմին, Յուլն ալ արդէն անարգուած և ազդեցութիւնը կորուսած, մանաւանդ Մելքիսեդեկի գալէն ետքը տեղի ունեցած գայթակղութեանց երեսէն (§ 1637), պէտք տեսաւ Կ-Պոլսէ հեռանալ, և ինքն ալ բռնեց Մելքիսեդեկի և Կեսարացիին ճանապան, և ուղեւորեցաւ Լեհաստան։ Հարկաւ մեծ եղած պիտի ճանչնանք Լեհաստանի Հայ գաղութին ստացած կարեւորութեան և դրամական կարողութեան համբաւը, որ բոլոր*

ԿՊՈԼՍՈՅ ՄՐՅԱԿԻՑՆԵՐ

բաթթրաստիճան եկեղեցականներ իրարու ետեւէն այն կողմերը կը դիմէին՝ բախտաւորուելու ակնկալութեամբ։ Եղելութեանց յարակցութիւնները կը թելադրեն կարծել, որ Կեսարացիին և Նիկոլին մէջ տեղի ունեցած հակառակութեան, և Կեսարացիին և Յուլին մէջ տիրող անհաչտելի ներհակութեանց հետեւանօք, Նիկոլ ինքն դիմում ըրած ըլլայ Յուլին, որպէսզի անոր հեղինակութեամբ և ներկայութեամբ իր դիրքը զօրացնէ, և Կեսարացիին նղովքին պատճառով ծագումն առած տիուր տպաւորութիւնները ջնջէ։ Իրօք ալ կը տեսնենք որ Յուլը լաւ ընդունելութիւն կը գտնէ Լեհաստանի մէջ, և հաչտ կ'ընթանայ Նիկոլի ուղղութեան հետ։ Երբոր Կեսարացին և Յուլը, երկու հզօր մրցակիցներ կոստանդնուպոլսոյ պատրիարքական գործունէութիւնէ կը քաշուին, աստղերէզը բաց կը մնայ վանեցիին, որ 1613'ի բոլխուսէն իվեր (§ 1604), Կոստանդնուպոլսոյ մերձաւոր Ախալկողման վիճակներուն վերակացութիւնը կը պահէր, և իրօք ալ կը յաջողի 1628'ին տիրանալ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան, և արքունական հաստատութիւնն ալ ընդունիլ (11 ԱՄՍ. 74)։ Թէ Կեսարացին Կոստանդնուպոլիս կը հանդիպի կամ ոչ, ճչդելու աղբիւր մը չունինք, միայն գիտենք թէ նոյ Կեսարիա գացած է (ԲՈՆ. 155), և իր պահեստի առաջնորդական վիճակը քաշուած է, առանց ընաւ իր միտքէն հրաժարելու, որ էր կրկին Կոստանդնուպոլսոյ աթոռը գրաւել։ Պատմական յիշատակներ մեզի ընդհանուր եղելութիւններ միայն ցոյց կու տան, իսկ անոնց կապակցութեան համար բաղդատական ուսումնասիրութիւններով կ'առաջնորդուինք։ Այսու հանդերձ չենք կրնար որոչ բան մը բսել Կեսարացիին Կեսարիոյ մէջ ունեցած գործունէութեան, և իր մտադրութեան համար գործածած միջոցներուն վրայ։ Նորէն դառնանք Էջմիածին։

1643. Սրբոց Մելքիսեդեկ Էջմիածինէ կը հեռանար (§ 1634), Աւետիս ալ մեռած էր (§ 1618), Դաւիթ ալ Էջմիածինէ ձեռք քաշած Ասպահան կ'ապրէր (§ 1613), մէջտեղ կը մնար միայն Սահակ Դ Գանձակեցին, իբր Մայրաթոռին տէր, թէպէտ մեր պրուքիամբ հնար չէ զայն գահակալ կաթողիկոս նկատել, ցորչափ Դաւիթ Դ վաղարշապատին, որ օրինաւորապէս յաջորդած էր ՍԱՀԱԿԻ ԸՆԹԱՑՔԸ Գրիգոր ԺԲ վաղարշապատեցիին (§ 1581), ոչ հրաժարած էր և ոչ ալ գահընկէց եղած։ Այլ կը պահէր իր աստիճանը ու պաշտօնը, թէպետեւ բռնադատեալ Էջմիածնի գործերուն չխառնուիլ, և ընկճուած արտաքին իշխանութեամբ և կաչաղի զօրութեամբ բռնացող սիմոնակիցներէն, որոց վերջինը Սահակ ալ առանց իրեն այդ աստիճանին բարձրացած էր։ Սահակ Ամիրգունայի ընծայագիրով և Մելքիսեդեկի խնդրագիրով Շահաբասէ ճանչցուած էր (§ 1633), որովհետեւ յանկին կալ ղալ, այսինքն գիտցիր պարտաւոր, զոր ի կալմանէ ընդդիմէն եր Մելքիսեդեկ (ԴԱՎ. 175)։ Բայց ահաւասիկ, այսինքն հաստատութեան հրովարտակ ստանալու գործը երկարէցաւ Շահաբասին տեղափոխութեանց պատճառով, թէպէտ թուղթը գրուած ու պատրաստուած էր։ Թահմազղուլի բէկ, Ամիրգունայի որդին, որուն գործը յանձնուած էր, Շահաբասի ետեւէն պատնդացաւ Ջահրապատ, Ղազբին, Սուլթանիէ, Արտաւիլ, և դարձեալ Սուլթանիէ. երեւան ալ գալ պարտաւորուեցաւ իր հօրը հիւանդութեան պատճառով, ուր և հաստատուեցաւ հօրը մահուամբը. բայց ալ կայ թէ իր հայրը սպաննած ըլլայ (ՋԱՒ. Ա. 62)։ Այս պատճառով Սահակ նոր հետապնդութիւններ ըրաւ (ԴԱՎ. 176), և հազիւ թէ 1626'ին ձեռք ձգեց ցանկացեալ հրովարտակը (ԴԱՎ. 230)։ Գործին ուշանալուն պատճառ էին կերպով մը Պարսկաստանի Հայ գաղութին գլխաւորները, խօսքայ Նազարը գլուխնին, որոնք չէին ուզեր ճանչնալ Սահակի կաթողիկոսութիւնը, և իրենց մօտ գտնուող ծերունի Դաւիթը կը գրգռէին, որ մէջտեղ ելլայ, Շահաբասին դիմէ, իր իրաւունքը պաչտպանէ, և Սահակի հաստատութիւնը արգիլէ։ Իրօք ալ Դաւիթ չարժուեցաւ, Շահաբասին մօտ ալ գնաց, բայց Սահակ ետեւէն հասաւ, իրարու ալ հանդիպեցան, և Սահակ ճարպիկ եղաւ իր գործը յաջողցնել, և Դաւիթ մինչեւ իսկ իր բուն նպատակը ծածկեց, յայտնելով թէ

ման ֆոթձոյ իմոյ ֆնամ, որ ազոռոթիան ֆոռղն առնիմ ջոթլուկին, այսինքն ապահովէ իրեն պարէնին համար տրուած ագարակին հասոյքը (ԴԱվ. 176)։ Որչափ ալ Սահակ արքունի հրովարտակ ստացաւ, սակայն Նորդուղայեցիք և բոլոր Պարսկահայ գաղութները՝ այնոքա էա ալ ընկալան ըմահակ կոխոդիկոս, և միշտ Դաւիթը իրենց կաթողիկոս ճանչցան (ԴԱվ. 177), թէպետեւ անկէ ալ գործունէութիւն մը չէին սպասեր, և բոլոր մտադրութիւնին դարձուցած էին Մովսէս Տաթեւացին առաջ անցընելու։

ՄՈՎՍԷՍԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ

1644. Մովսէս կը չարունակէր իւր առաջնձնական, բայց միանգամայն գործունեայ կեանքը վարել Ս. Աստուածայայանութեան մէջ (§ 1633), երբ 1625'ին օր մը այնտեղ իրեն կը հանդիպի Բայինդուր բէկ անուն պալատական մը, որ երեւան եկած էր ֆոզվէլ ըզըյ և ըզլխոռա վան ֆոթռոռբէն, և Ամիրգունա կաթողիկոսին հետ է ըզօռոռա եկել ըզբէն (ԴԱվ. 220)։ Մովսէս հիւրերը պատուելու համար եօթնական հատ ոչխար մոմ նուէր ներկայեց։ Բայինդուր հիացած մնաց մոմերուն ճերմակութեան վրայ, որ անձանօթ էր այն կողմերը, և որուն արհեստը Մովսէս սորված էր Երուսաղէմ եղած ատենը (§ 1603)։ Բայինդուր յայտարարեց թէ մոմերը կը պահէ որ չահին ընծայ տանի, և Ամիրգունա իւր եօթը մոմերն ալ յանձնեց նոյն նպատակին, և Մովսէս ալ իւր կողմէն եօթը հատ եւս աւելցուց։ Բայինդուր իւր պաշտօնը լրացնելով Շահաբասին դարձած ատեն, անոր ներկայացուց 21 ճերմակ մոմերը, պատրաստողին վրայ ալ գովութեամբ խօսեցաւ։ Շահաբաս իսկոյն Ամիրգունայի գրեց որ Մովսէս եպիսկոպոսը իրեն ղրկէ, ինչ որ գործադրուեցաւ, և Մովսէս մինչեւ Պաղատատ գնաց, ուր կը գտնուէր Շահաբաս, և ըստ նոթել պոթբոզեր 1626 գարնան սկիզբը։ Թագաւորը հրովարտակով հրամայեց Ասպահանի քաղաքապետ Լալա բէկի, որ Մովսէսին յարմար տեղ մը ցուցնէ, երկք յարմար աշակերտներ ընտրէ, և 100 լիտր մոմ տայ, որ արհեստը անոնց սորվեցնէ։ Ըստ այսմ ալ գործադրուեցաւ։ Ասպահանի մէջ Թիլիմխանի այգին Մովսէսին յատկացուեցաւ, Ֆատուխ և Ղաբչղայ և Բէհզատ Պարսիկներ աշակերտ նչանակուեցան, և մինչեւ տարւոյն վերջերը Մովսէս աշակերտները վարժեցուց, և ճերմկցած մոմերուն հետ ու խօջայ Նազարի միջնորդութեամբ ներկայացան Շահաբասի, երբ Ֆահրապատի ձմերոցը կը գտնուէր։ Շահաբաս յոյժ ըստեղաց, և մոմերը է յեռս տեսել զբօռոյբ, և որովհետեւ Աստուածայայանութեան տօնը մօտ էր, խօջայ Նազարի յանձնարարեց, որ Մովսէս դեռս հանդիսի պատրաստէ Ֆահրապատի եկեղեցին, ուր ինքն ալ ներկայ պիտի գտնուի։ Շաբաթ օր կ'իյնար 1627 յունուար 6'ին տօնը։ Մովսէս ոչ միայն ամենայն խնամքով պատրաստութիւնները կատարեց, և նախքան վերյիշ ոգիպոկ մոմ մարդըչփ, այլև գիշերը հակումով անցուց, որպէս զի Աստուած ընդունի ցոցդչ զոծոխբոռնիան այլահոռոք ֆոթռոռբէն (ԴԱվ. 231)։ Իրօք ալ Շահաբաս չափազանց գոհ մնաց, և երբ կ'ուզէր դրամով կամ կալուածով վարձատրել, խօջայ Նազար դիտել տուաւ, որ Մովսէս ըշխոյնա և ըշնչոփ նոր ըսնդ ոբոթել է, և թեզադրեց անոր տալ զըռռոբրոթիան ռոբբ էզմիածնի ֆոթռոռբոյն նոռոթ (ԴԱվ. 232)։ Սահակ տեղեկութիւն առնելով ջանաց գործը արգելել, առարկելով թէ ըստ ոբոթել է՞ ինչ, և դիւանբէկին, այսինքն արքունի քարտուղարին և մուծամուծներու մօտ աշխատեցաւ, սակայն ոչինչ օգտեցաւ, և իրեն ըսուեցաւ, թէ թէպետ Մովսէսի պռռոփ էզմիածնին, ընծին լռռոբրոթիան պռռոփ, և ոչ չիոնդիռռոթիանն (ԴԱվ. 178)։ Ամէն դժուարութիւններ հարթուելով, Մովսէս Ֆահրապատէ երեւան և երեւանէ էզմիածին եկաւ, և դեռս ֆռռոփ, և անպռռոմ ցնռռոթիամբ՝ ոչ դուն ինչ, այլ և ոհնան չրէռռանէնց, գործի ձեռնարկեց է վաքռվռոթ պռոց եզէռռըթոն ռռռոն, որ է 1627 յունիս 25, և ոչ 23, ինչպէս աւելցուցեր է Ոսկանի օրինակը (ԴԱվ. 232)։

ԷՋՄԻԱԾԻՆԻ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

1645. Դավրիժեցին ազիտղորմ չհնտեղով կը նկարագրէ էջմիածինի մայր տաճարին այն օրուան վիճակը, և կարեւոր կը սեպնէք զայն քաղել, իբրև մտադրութեան արժանի պատմական պարագայ մը։ Պէտք է նախ

յիշենք, որ ինչ ինչ կտորներ բունի քանդուած ու տարուած էին (§ 1610), և հարկաւ հետզհետէ մնծցած էին պատառուածները. և լքուած չէնքը հետզհետէ վնասներ կրած էր։ Դուրսի կողմէն կաթողիկէին կամ գմբէթին գագաթը ինկած էր, տանիքին և չորս կողմի պատերուն քարերը քանդուած և թափուած էին, յատակներու քարերը փչրուած և ծակոտուած, լուսամուտներուն վանդակները պակսած, այնպէս որ ներսի կողմը թռչուններու ծոփվէ և ծղվէ և այլ էակներով լեցուած էր, զառուններու և սողուններու որջ դարձած, և աղտեղութեանց համբարանոց եղած։ Մայր տաճարին բակը աւերակներով և աւելորդներով հետզհետէ դիզուած էր, և հողն ու մոխիրը և աղբիւսը մինչև հօթը կանգուն բարձրացած՝ գոցած էր տաճարին վարի մասերը և չուրջանակի եղող աստիճանները։ Ծածկոց և զարդ չէր տեսնուեր բնաւ եկեղեցւոյն մէջ, և ոչ ալ կանթեղ կամ մշտավառ լոյս, այնպէս որ հազիւ թէ այլազգի մահմետական մը վաւեր ջրթէ չեղոյ և գնէ է վերյ բերդն, և այն եւս երբեմն երբեմն։ Իրրեւ սպաս ալ բան մը չկար, ոչ գիրք, ոչ գիթօ և ջուրջա, ոչ քուրվա և խոռն, և ոչ ուրիշ կարեւորներ։ Աւանդատունն ալ գրեթէ դատարկուած էր, զի ինչ որ կար՝ կաթողիկոսներ վճռաբերով և երես գնելով վոխնել էին, խալ և ոքհ և քուրվա և ջուրջա և ամէնայն ինչ, և վերջին աջերն ալ Մելքիսեդեկ մեկնելէն առաջ փոխառութեան համար գրաւի էր տուած (§ 1634)։ Տաճարին չուրջը եղող բնակութեան չէնքերն ալ աւերել և է վերյ գիմանց ելլալել էին (ԴԱՎ. 233)։ կաթողիկոսներ երեւան կը բնակէին, եւ վանքին մէջ մնացած էին միայն քանի մը հատ ախալթոր և ճեհիլ, որոնք որպես զեղեցիկ հողէորթս վրայէն առնն կ'անցընէին, և անոնք իսկ շատ փոքրաքանակ՝ չրջակայ գիւղերու մէջ կը չրջէին (ԴԱՎ. 234)։ Մովսէս Տաթեւացի գործի ձեռնարկելով նախ բակին դիզուած աւելորդը չանաց վերցնել տալ, և գործը դիւրացնելու համար օգտուելցաւ գետին ջուրէն, զոր կողեցին է նոցա ինչ, և փորուած մասը հոսանքին տուին, որ հողը կը տանէր և քարը կը մնար, եւ այսպէս եղեւ հարկաւոր գետին, և քարերը հետզհետէ իրենց տեղերը չարուեցան պատերուն վրայ։ Անկէ ետքը գմբէթին ու տանիքը նորոգեցին, քանդուած եւ պակսած սալերը լրացնելով։ Այդ առթիւ կը յիշուին տաճարին չափերը, ներսի կողմէն, պատերէն զատ, 50 կանգուն երկայնութիւնը, 48 կանգուն լայնութիւնը և 35 կանգուն բարձրութիւնը մինչև կաթողիկէին պորտը (ԴԱՎ. 235)։ Անկէ վերջ չրջապատ պարիսպ մը կանգնեցին է հողյ, տաճարին պատերէն՝ արեւելքէն ու արեւմուտքէն 63 կանգուն, և հիւսիսէն ու հարաւէն 56 կանգուն հեռու, և ուխը բուրգեր կամ աչտարակներ՝ անկիւնները և մէջտեղերը։ Պարիսպին ներսի կողմն ալ՝ արեւմտակողմը չինուեցան գոլոպոտ և փոռնէ այսինքն է պաշտօնատուն և հիւրանոց, հիւսիսակողմ և արեւելակողմը խցիկ է քնելոխներ գաթանէց, և հարաւակողմ սեղանապան, գանապան, գնգեւոպան, և համբարանոցներ։ Այս ամէն մասերը չինուեցան լքեալ տեղ և ընդել ապականով կրվ և քարվ, և վայելուչ յօրինուածով (ԴԱՎ. 234)։

1646. Մովսէս այդ գործերը լրացնելու համար իրեն զօրավիգ և օգնական ունեցաւ նախ՝ աստ եւ անդ գտնուած հոգեւէր և բանեի ԱՅ ՆՊԱՍՏՈՂՆԵՐ բեսէր եկեղեցականներ, որոնք իւր չուրջը հաւաքուեցան, և որոց չատերը էրզոյ աշխէրհոց խումբէն էին, և երկրորդ՝ ղարաբ և ղզըլմոսլիանոց էրզոռնկէց, որոնք ղարաբէն և զիլնէն առնէն, և ոչինչ խնայեցին է նոցա ոքիչ աշխատութեանց վրայ (ԴԱՎ. 232)։ Նա Մայրաթոռոյ նիւթական նորոգման հետ, անոր բարոյական բարեկարգութեան ալ հետամուտ եղաւ, վանականն կենցաղ հաստատեց, աւանդի դրուած կամ վաճառուած սպասներ վճարելով ազատեց, և գլխաւոր գործերէն մին եղաւ գըզըռոսան մը բանալ Ծովհաննավանքի մէջ՝ իրրեւ կատարեալ դպրանոց կամ դպրեվանք, ուսկից առաջ եկան վրդապետ և եպիսկոպոս, աքեղայ և երէցոն, ամէնն ալ ոչ պիտանի և օգտակար ալեւորի, զորս հետզհետէ ցըրուեց զանազան կողմեր։ Աւանք մէկ կողմէ հռիփսիմեան տաղտկալի ընթացքին և քաղքէդոն վրայ

հոտոտելէն գլուխ և գլխոյ ուրիշ հոտոտյ և ենկեցոյն ատանդոլեան, և ընկերել կոչնականէն զնոտոտոլուխ ճշմարտութիւնն, և միւս կողմէն չկնիկն զկնկեցիս, և կը նոր, րոգէին ու կը պայծառացնէին վանքերը՝ որ ամօթոցել ի խոռոչ կային։ Այս կերպով Մովսէսի նախանձայոյզ աշխատութիւնց չնորհիւ, վանքեր կը լեցուէին ուխտաւոր և ուխտաւորուհիներ, իսկ գեղջուց՝ վոչ երկրագործ (ԴԱՎ. 235)։ Մովսէսի ստանձնած պաշտօնը լոկ ըստ բառոյն էր, որ է փակակալութիւն հին բառով, կամ լուսաբարապետութիւն նոր կոչմամբ. բայց իջմիածին իրմէ զատ ուրիշ չունէր, և անպաշտօն կաթողիկոսութիւն էր իր բուրծը։ Այն որ պաշտօնապէս գահակալ կաթողիկոսի անուն ունէր, Ասպահան կը գտնուէր ամէն գործէ ձեռնթափ, և իննսնամեայ զառամեալ տարիքի մէջ. իսկ այն որ արքունի հրովարտակով ճանչցուած՝ գործունեայ աթոռակիցի պաշտօնը պիտի վարէր, հարկահանի դերը կը վարէր կարեւոր գաւառներու մէջ, և երկուքէն ոչ մէկը եկեղեցւոյ և ազգի հոգածութեան գործերով կը զբաղէր։ Իրաւունք ունէին ուրիշին ձեռնադրել Հայոց չընդհանուր աշխարհս քեռկեալ, որ այդ կոչնկոց անկարգութենէն չնչդեցնել, կամ լաւ եւս առանց կաթողիկոսի ինացած, կամ և չգործելու և կոչնկէն արքս կը փափաքէին, և վերապետ և եպիսկոպոս և երեցեալ արք՝ գրով և ազատնօր ընտանիէն և կը խնդրէին Մովսէսէ, զի չանչն առաջ ըստ կոչնկոց (ԴԱՎ. 236)։

ՍԱՀԱԿԻ ՓԱԽՈՒՍՏԸ

1647. Սահակ Գառնեցին Շահաբասի հրովարտակը ստանալով (§ 1643) կը կարծէր թէ ամենայն ինչ իրեն չայոզ պիտի քալէ, և իրեն հետեւորդ կազմած ղեկերս, այսինքն պետական պաշտօնեաներու զօրութեամբ և բռնութեամբ պիտի կարենայ իր հօրեղբօր Մելքիսեդեկի գլուխ հանել չկրցածը ինքն կատարել։ Այդ միտքով պատրաստներ կը կատարէր Հայաստան ու Պարսկաստան, բարեկեցիկ հայաբնակութեան քաղաքները, բայց ոչ մի տեղ ընդունելութիւն չէր գտներ, և ոչ իսկ իրրեւ կաթողիկոս կ'ընդունէին պինքն, զի ոչ թէ ազգային ընտրութեամբ, այլ լոկ իր հօրեղբօր կամքով ծծումն ստացեր էր, մինչ նոյն ինքն հօրեղբայրն ալ՝ ամէնուն ատելի եղած ու զզուանք պատճառած անձ մըն էր։ Միւս կողմէն ինչ որ բռնութեամբ և կեղեքելով ձեռք կը ձգէր, այն ալ հետեւորդները գոհացնելու իսկ չէր բաւեր, և այսպէս հետզհետէ կ'աճէին վըճարուելիք գումարները, թէ տուրքին և փոխառութեանց, և թէ հետեւորդներու ապառիկ պահանջներուն բարդուելովը։ Տարի մը և աւելի այսպէս անցուց Սահակ, օր ըստ օրէ յուսահատութեան մատնուելով, և երբ 1627 սկսաւան միջոցին Նոյ կը գըտնուէր, միտքէն կ'անցընէր ինքն ալ իր հօրեղբօր ճանապան բռնել, ըստ որ է զոլերէն անցնիլ չերկէր Օսմանցոց (ԴԱՎ. 179)։ Երբ այդ միտքերը կ'որոճար, նամակ ստացաւ Երեւանի կոմսը գտնուող իր բարեկամներէն, թէ այժմ Թահմազղուլին կը վարէ կուսակալութիւնը, որ պատրաստ է իրեն օգնել, եթէ փութայ Երեւան գալ։ Գրողներն էին Մանուէլ Նորվիրապեցին, Մելքիսեդեկի հին գործակից մը (§ 1584), Մկրտիչ Հաւուցթառեցին սպասուած Մանուէլի յաջորդը (§ 1591), այլոն հանդերձ (ԴԱՎ. 179)։ Սահակ փութայ հրաւէրին անսալ, և Նոյէ Երեւան եկաւ, բայց ակնկալութիւնը չիրականացաւ, ընդհակառակն Թահմազղուլի ալ պահանջումները խստացուց, որովհետեւ ապառիկ գումարը 800 թուման էր եղած։ Սահակ երբ տեսաւ որ խաբուեցաւ, որոշեց իր առաջին խորհուրդը գործադրել։ Կր մօտենար 1628'ին Մնունդը. Սահակ այնպէս կեղծեց թէ կուսակալը ուզած է մնծահանդէս ծոն մը տեսնել, և թէ Մովսէս, որ Երեւան կը գտնուէր, իրմէ խնդրած է պէտք եղած ապահովը էջմիածինէ բերել։ Այս պատրուակով իր արաբերնթաց ձին հնծաւ, և էջմիածնի ճանապան բռնեց։ Բայց կէս ճանապէն չեղեցաւ, զգեստը փոխեց է կերպ ղբլաշի, և արշաւասոյր քալքով յառաջացաւ դէպի Նախիջեւան, բայց քաղաք չհանդիպեցաւ, այլ Տարաշամբ գիւղի նաւատեղին երասխը անցաւ, և առանց ուրիք կանգ առնելու քերեց Զոբս և Նոյ քաղաքները, անցաւ սահմանապլուխը, մտաւ Օսմանեան հողը, և հասաւ վան քաղաքը, և հոն ինաց՝ ուրախանալով որ

ճոպրելնալ էրկեցաւ ի չիւոց զօրէրոյն։ Սահակի փախուստը տեղի կ'ունենայ 1627 դեկտեմբերին։ Պետական պաշտօնեաներ սկսան Մովսէսը նեղել, իբր թէ նա թէկադրած ըլլայ Սահակի փախուստը. սակայն սա կրցաւ չուտով հաստատել, թէ ինքն ամենևուին տեղեկութիւն չունի, և թէ Սահակ չինծու խօսքեր դրած է կուսակալին և իւր լսերանը (ԴԱՎ.·180)։ Այս կերպով Սահակ Մայրաթոռի գործերուն հետ չարաբերութիւնը խզեց, և փակուեցաւ իւր կեղակարծ կաթողիկոսութիւնը, որ մինչեւ իսկ հակաթոռութիւն պիտի կարենայինք ըսել, երբ աթոռակիցներու չատութիւնը ասվորութեան անցած չտեսնէինք։

ՀԱՐԿԻՆ ՎԵՐՋԱՆԱԼԸ

1648. կատարեալ եկեղեցական անիշխանութեան տարի մը կրնանք ըսել 1628 տարին, երբ Մայրաթոռը լսու ամենայնի անատէր և անտէրունջ վիճակ մը ուներ պաշտօնապէս, թէպէտ իրաւ պէս Մովսէսի խնամքի ներքեւն էր, բայց նա կաթողիկոս չէր։ Իսկ կաթողիկոսութեան անուն կրողներէն մէկը զառամած՝ ձեռնթափ կ'ապրէր Ամպահան, միւսը փախստական՝ առանձնացած էր վան։ Մովսէս, կաթողիկոսութեան թեկնածու չէր, բայց սրտացաւ հոգածութեամբ պէտք եղած ջանքերը կ'ընէր էջմիածինը վերականգնելու։ Այս կողմէ յատուկ մտադրութեան կէտ մը դարձած էր տարեկան 100 թուման տուրքը, որ չվճարուելով բարդուած էր, և պարտքը կը մնար միշտ, թէպէտեւ պաշտօնապէս պարտական մը չէր մնացած մէջտեղ։ Մովսէս դիմեց Շահաբասի սիրական խօճայ Նազարի, եղանակ մը գտնելու համար, բայց նա խորհուրդ տուաւ պատեհ առիթի սպասել, դիտել տալով թէ այս ինքնօրս չոյժ օրձոխօնէ և պետհ է, չայգիան շահոց օրձոխոյ ալ ջանց առնէ (ԴԱՎ.·236)։ Ճիշդ այդ օրերուն տեղի կ'ունենայ Շահաբասի մահը Ջահրապատի մէջ, որ Դավրիժեցին 1629 յունուար 7'ին կը դնէ (ԴԱՎ.·237), սակայն օտար պատմագիրներ 1628'ին կը դնեն (ՏՊէ.·357)։ Դավրիժեցիին թուականը յայտնապէս գրիչի կամ գրչագիրի սխալանք է, զի ինքն իսկ, Շահաբասի մահուընէ ետքը ասիս ասի Մովսէսը արքունիքի մէջ դեզերած (ԴԱՎ.·237), և անկէ ետեւան եկած, և զանազան գործեր կատարած ըսելէ ետքը, 1629 յունուար 13'ին զայն կաթողիկոս օծուած կը դնէ (ԴԱՎ.·239)։ Շահաբաս իւր որդիները կասկածով մեռցնել կամ կուրցնել տուած էր, որով իրեն յաջորդեց Սամ-Միրզա թոռը, որուն անունը Սէֆի փոխուեցաւ, Սէֆիանց հարստութեան նախահայրին անունովը (§ 1521), և եղաւ ու կոչուեցաւ Շահ-Սէֆի, կամ Շահսէֆի, (ԴԱՎ.·237)։ Նազար և Ջուղայեցիք պարագայէն օգտուելու համար ըրընոց ֆոյեխօ Մովսէսը Ասպահան հրաւիրեցին, որովհետեւ նոր գահակալութեանց առիթով մեծ չնորհներ ընդունելու պատրաստ էր, ալոպեղմէ ըսած ասիկ պահեկան, և այլեւ ինչ պարտականութեանց պատրաստուելին, նախարարներն ալ չատհեցան պատեհ միջոցներով, և ասիս ասի (ԴԱՎ.·237) քաղաքէն աչխարհականութեամբ և յոյժ քաղաք ջանյ ձախելով, իբր ի հազար ընտանի (ԴԱՎ.·239), յաջողեցան ստանալ ընտրական նամակ, որով կը ներուէր և կը ջնջուէր էջմիածինի վրայ ծանրացող հարիւր թուման տարեկան տուրքը։ Ասոր վրայ Մովսէս ու Հայ իշխաններ բոլոր պետական պաշտօնատուները չրջելով, այնքան աշխատեցան, մինչ չի չոմենայն մարթենց, ասիս ասի էրեալ կայր քանն այն, չոմենայնէ հանել արտաքսեցին (ԴԱՎ.·238)։ Այսպէս ընտանական ինչով, ազգաս և հոգաս քանի, ոչ միայն ջնջեցին վճռին ընտրան մասլատին, այլեւ ստացան ընդհան կոնդիկոսութեան Մովսէսի վերադարձին ըսո հայցատանց ասիկան ազգին Հայոց (ԴԱՎ.·239)։ Այս կէտէն սկսելով կերպարանափոխ կ'ըլլայ Հայոց հայրապետութեան և կաթողիկոսութեան Մայրաթոռին վիճակը, և գրեթէ դարագլուխ մը կը կազմուի ազգային եկեղեցւոյ համար, և մենք այդ կէտերը կը վերապահենք պատմել Մովսէս Գ կաթողիկոսին անուններն ներքեւ։

ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ ԵՒ ԱՂԹԱՄԱՐ

1649. Բայց տակաւին այդ գլուխին չանցած, յիշենք ինչ ինչ մասնաւոր տեղեկութիւններ, որք այդ միջոցին կը պատկանին, և որք ընդհանուր պարագայից հետ կապակցութիւն չունէին։ Էջմիածինի և կոստանդնուպոլսոյ աթոռներն էին, որ իրարու չարակ-

ցեալ դիպուածներով մեր մտադրութիւնը գրաւեցին, միւս աթոռներ անկախ և առանձնակ կեանք ունեցան։ Աղթամարի կաթողիկոս Գրիգորիս Սէֆէտինեան երկայնակեացը, որ 62 տարի պաշտօն վարած կ'ըսուի (§ 1556), ըստ տեղական աւանդութեան վախճանած է 1610'ին և իրեն յաջորդները եղած են Աբրահամ, Յովհաննէս, Ներսէս և Մարտիրոս (ՕՕ ԲԻՋ. 1197)։ Սակայն Խիզանցի յիշատակագիր մը, 1626'ին Գրիգորիսի կաթողիկոսութեան ատեն գրած ըլլալը կը յիշատակէ (ԹՈՐ. Բ. 254), որ վերիվայր կ'ընէ Հաւաքարանի ժամանակագրութիւնը, բայց մենք պիտի չկարենանք հեղինակօրէն պարզաբանել նկատուած անհամաձայնութիւնը, քանի որ յատուկ ուսումնասիրութեան խնդիր մը պէտք է ընել Աղթամարի կաթողիկոսներուն չարքը։ Ինչ որ կրնանք ըսել այս է, թէ կաթողիկոսը ըլլայ այսինչ կամ այնինչ անուն անձ մը, Աղթամարի աթոռը չներկայներ բարգաւաճ կացութիւն մը, թէպետեւ անոր վիճակներուն մէջ ալ կը յիշուին քանի մը ուսման հետեւող վարդապետներ։ Այսպէս են Սիմէոն Ապարանցի, կարապետ Վարագցի, Յովհաննէս Խիզանցի, Յովհաննէս Ծաղկող, Կիրակոս Աւանցցի, Յովհաննէս Կրճոն, և Սահակ Վանեցի վարդապետներ, որոց մէջէն առաջինը և վերջինը աշակերտներ ալ հասուցած են (ՕՕ ԲԻՋ. 1197)։ Սոյն կարգին յիշենք եւս Մելքիսեդեկ Վժանեցի վարդապետը, զոր Մովսէս ուսուցչութեան հրաւիրեց Յովհաննավանքին դպրատունին մէջ (ԴԱՎ. 307)։ Այս վարդապետները ընդհանրապէս Աղթամարի սահմաններուն մէջ աստ և անդ հաստատուած, իրենց անհատական ջանքերով կը գործէին, իսկ աթոռը ոչ մի պայծառութիւն չունէր։ Աղթամարի վիճակներէն էին եւս Պօղոս Մոկացի (§ 1623) և Ներսէս Մոկացի (§ 1622) վարդապետներ, որոնք արդիւնաւոր եղան էջմիածնի վիճակներուն մէջ, Յիշենք այստեղ Յովհաննէս Մարեցի վարդապետն ալ, թէպէտ ընիկ Սիւնեցի, որ իբր տօքողղ ոպղքճաոց և չանքխանող ոոճհոյց, իբր ընկերցուել և էրուել մեծ արդիւնք ունեցաւ, և 1583 յունիս 20'ին վախճանելով մեծ համբաւ թողուց իւր ետեւէն (ՍԱՄ. 192)։ Որովհետեւ Հայաստանի արդիւնաւոր վարդապետներուն անունները կը քաղինք, անգամ մըն ալ յիշենք Սրապիոն Եդեսացին, Սրապիոն Օձունեցացին, Սարգիս Պարոնտէրը և Կիրակոս Պոնտացին, որոց գործերը իրենց կարգին պատմեցինք։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԳՈՐԾԵՐ

1650. Երուսաղէմի աթոռը այդ միջոցին իւր սեփական և տեղական խնդիրներու չրջանակին մէջ ամփոփուած՝ յատուկ կեանք մը կ'անցընէր Գրիգոր Պարոնտէր պատրիարքին իշխանութեան ներքեւ, որ 32 տարի չարունակ բազմաշխատ և բազմարդիւն պաշտօնավարութիւն ունեցաւ Երուսաղէմի աթոռին վրայ, սկսելով 1613 թուականէն, երբ եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստացաւ Երուսաղէմի մէջ Աւետիս կաթողիկոսէն (§ 1606)։ Գրիգոր Պարոնտէրի անունը Երուսաղէմի պատրիարքներուն չարքին ամէնէն փայլուն անուններէն մէկն է, եթէ չուզենք ալ ամէնէն մեծն եղած ըսել։ Գրիգոր կեսարացին նախատեսելով անոր վրայ այդ մեծ կարողութեան առհասարակ, տակաւին աբեղայ եղած ատենէն, յանձնած էր անոր Երուսաղէմի մատակարարութիւնը, երբ տուքերուն վճարման համար նպաստ հաւաքելով Երուսաղէմ էր գացած (§ 1603)։ Պարոնտէր մինչեւ կեանքին վերջին չունչը չստեց իրեն վրայ դրուած ակնկալութիւնը, և իրաւամբ անոր յիշատակը անմոռաց է մինչեւ ցայսօր Երուսաղէմի մէջ, ուր հանապազօր կը յիշատակուի իւր անունը պատարագի ատեն Գոհութեան քարոզին մէջ, որովհետեւ ըստ ամէնայնի արժանաւոր եղած է այդ բացառիկ պատուոյն։ Երուսաղէմի սրբավայրերուն մէջ՝ ազգային սահմանութիւններէն և իրաւունքներէն ամէնն ալ՝ թէ մահմետականներէն և թէ քրիստոնեաներէն խնդիրի և վէճի, վտարմանց և ձերբընկալութեանց առարկայ եղած են։ Ս. Յակոբեանց վանքն ալ, Մինդրեան այրն ալ, Համբարձման տեղն ալ, Պատանատեղւոյն մոմերն ալ, գատ գատ խնդիրներու նիւթ եղած են, բայց Պարոնտէրի աշխատութեամբ Հայոց իրաւունքները անվէզ են պահուած։ Ազգային վանքերու չինութիւններն ու նորոգութիւններն ալ մեծ վէճերու դուռ բա-

ցած են, Լատիններ բիւրատեսակ զրպարտութիւններով չկանացած են աննկուն պատրիարքը տկարացնել, բայց ամէնուն դէմ միշտ զօրացած է Պարոնտէր իւր անխոնջ արիութեամբը, որոց մանրամասնութիւնները ուրիշներէ երկարօրէն պատմուած են (ԱՍՏ. Ա. 279—333), և մենք աւելորդ կը սեպենք կրկնել։ Այս մրցումներուն հետ Պարոնտէր կրցած է վանքին վրայ ծանրացող պարտքերը սրբել, երեսունէ աւելի նոր այգիներ գնել, եկեղեցական զարդերն ու սպասները ճոխացնել, բարոյական տեսակէտէն ալ վանական բարեկարգութիւնը պայծառացնել, միաբաններու թիւը աճեցնել, կարող վարդապետներու զարգացման նպաստել, որոց մէջ պէտք է առանձինն յիշուին կարապետ Մոկացին, որ իւր կատարեալ աջակիցն էր (ԱՍՏ. Ա. 330), և Աստուածատուր Տարոնեցին, որ իրեն յաջորդեց (ԲԱՒ. 54)։ Նշանակելի էր նաեւ իւր առաքինական և ճգնողական կեանքը, հովուական ջանքերով և քարոզչական արդիւնքներով մեկտեղ, և իրաւամբ տիպար անձնաւորութեան մը կնիքը փայլեցաւ իւր վրայ մինչեւ իւր մահը 1645'ին։ Գրիգորի կենսագրական պարագաներու մէջ կը յիշուի Կ-Պոլիս ալ գտնուած, և Պալաթու եկեղեցւոյն համար աշխատած ըլլալը (ԱՍՏ. Ա. 306), սակայն այդ պարագային թիւրիմացութեան հետեւանք ըլլալը այլեւս ստուգուած է յայտնապէս (11 ԱՄՍ. 15), զի Պալաթու գործին հետ կապակցութիւն ունեցող Գրիգորը, Դարանաղեցին է եղած (§ 1640)։ Իրաւ Պարոնտէր Գրիգորը իւր պաշտօնին և իւր վարած դատերուն թերմամբ ատեպ մայրաքաղաքի հետ գործ ունեցաւ, և արքունի հրովարտակներ ալ ձեռք բերաւ, սակայն անձամբ Կ-Պոլիս եկած ըլլալը ստուգուած չէ, որով իւր անուանակից կեսարացին, որ իւր բարեկամն ու պաշտպանն էր, իրեն զօրավիգն եղած կ'ըլլայ հրովարտակներու ստացութեանց համար։

1651. Վերջին տարիներու նոր վկանութեան յիշատակութիւնները պանդ ըրինք քիչ մը առնենք իվեր (§ 1565), թէ չդիտցուելու դիպուածները չընդհատելու, և թէ անոնց թիւը չատ չըլլալուն համար, և այսուհետ կուա ք համառօտիւ քաղել եղածները։ Լոյս անուն 18 տարեկան կաֆացի ազնուական երիտասարդ մը, պօքճ պատուանուն կրող, որուն համար երբեմն Պարոնտեր և երբեմն ալ Լուսապարոն կը կոչուի, նախանձոտ Տաճիկներէ կը զրպարտուի, իբրեւ թէ կէզլով քաղաքի մէջ խլամացած և նորէն հոն դարձած ըլլայ, և կաֆայի մէջ ատեան կը հանուի 1567 յունուար 5'ին։ Դատաւորը զրպարտութիւնը իմանալով ազատ կ'արձակէ, բայց քաղաքի իշխանին բռնութեամբ նորէն կը ձերբակալուի, և բանտարկութեանց և խոշտանգանաց կը մատնուի, խոստումներով և սպառնալիքներով կը փորձուի չորս ամիս չարունակ։ Մնողքը կ'աչխատին դրամով դատաւորն և իշխանը չահիլ, և մինչեւ կոստանդնուպոլիս դիմում կ'ընեն, այլ չեն կրնար ալիւղացանել կաֆայի մոլեգնեալ ամբոխն ու մոլեռանդ իշխանները։ Երիտասարդն ալ ետ չկենար իւր հաւատքէն, և վերջապէս գլխատմամբ կը նահատակուի 1567 մայիս 15'ին, որ ճշդիւ կը պատահի չեք Համբարձման հինգշաբթին (ՆՈՐ. 406)։ Վրթանէս կաֆայի եպիսկոպոս պատմած է նահատակին յիշատակը վկայաբանութիւնով և տաղերով (ՆՈՐ. 408)։ Օսմանեան սուլտան Մուրատի օրով նորոգուած էր Պարսիկներու հետ պատերազմը (§ 1570), և անուղղոի ու բռնութեանց օրեր էին պատահներու մէջ, զի կուսակալներ և դատաւորներ ուզածնին ընելու ազատութիւն գտած էին։ Ցատուկ զրկումներու առիթ կ'ընծայէր եւս այն հրամանը, որով արգելուած էր իսլամ չեղողներուն իսոյր կամ փակեղ գործածել (ՍԱՄ. 176), և պարտաւորեալ սեաւ գոտկ պիտի դնէին գլուխնին (ՆՈՐ. 414)։ Այդ միջոցներուն Միջագետքի Թուրգուրան կամ Թլկուրան աւանը դատաւոր կը գտնուէր Մահմէտ, որ չափազանց տուրքեր կը ծանրացնէր քրիստոնեաներուն վրայ։ Աւանք Օսմանեան զօրավարին դիմելով քեզի հատ է հրաման ա՛ զոփաւոր, թէ օրինական տուրքէն այլ աւելի մ' առնուր է զոյանէ (ՆՈՐ. 416)։ Աւոր վրայ Մահմէտ Տիարպէքիր դիմեց, մեծ դատաւորէն այժ գտնելու համար. Թուրգուրանի գլխաւորներն ալ հետ էն եկան, և երբ Մահմէտ

ճարահատեցաւ, ղրպարտութեան դիմեց, երկու ալ սուտ վկայ ճարեց, թէ «ան» ընէ դէն է ընտանեան հայհոյեցին։ Անմիջապէս հրաման եղաւ բանտարկել և այրելով բռնկանել Թուրգուրանցի տանուտէրները, ո՛րոնցմէ փոքր ըմբռնելէ ետքն, բայց ցասումը գլխաւորապէս երկուքին վրայ ծանրացաւ, Մարգարէ սարկաւագին և Շահրիման գիւղապետին վրայ։ Ուստի այս երկուքը զատեցին, և հրաւիրեցին ուրանալ որ ազատին։ Իսկ անոնք զիրար քաջալերելով և բոլոր գիշեր սաղմոսելով յօժարակամ պատրաստութեան նահատակութեան, և միւս առտուն խոչտանգանօք և ձաղանօք կատարման տեղը տարուեցան, ուր քեռեռեցին ի ֆոյթ զոթ և չյեռ նոթ, և քոբքոռեցին ընդ նաւով, և այնպէս նահատակուեցան երկու երանելիները (ՆՈՐ. 417), 1580 սեպտեմբեր 6'ին (ՆՈՐ. 413)։ Ունինք նաեւ կարնոյ եպիսկոպոս Յովհաննէս Դարանաղեցիի նահատակութիւնը 1592'ին, կարնոյ մէջ կատարուած (ՉԱՒ. Դ. 516), որուն մանրամասնութիւնք կը պակսին։ Նոյնպէս առանց մանրամասնութեանց յիշատակուած են Աբրահամ Ուռհայեցի քահանայի և Աքանատար կամ Ազէքսանդր Ուռհայեցի տանուտէրին գլխատմամբ նահատակութիւնները՝ 1600 յունուար 22'ին երկուշաբթի օր, Եղեսիոյ մէջ, Ձէլալիներու գլխաւորներէն Դարա եաղըճիի հրամանով (ՍԱՒ. 176)։

1652. *Շահրաման վրայ խօսած առենին առիթ ունեցանք յիշել թէ հակառակ կիրքերու և հակառակ ձիրքերու տէր անձ մըն էր, արդարասէր և բռնատուր, անողորմ և դիմած, լայնախոհ և կարճամիտ միանգամայն, և իրաւամբ հակասական գործեր կը պատմուին իր վրայ։ Ծիշեցինք նաև թէ ծպտակալ պորտելու սովորութիւն ունէր, և այդ պարագաներուն մէջ թէ՛ վհանձն և թէ՛ փոքրգի գործեր կը կատարէր անխտիր։ Դէպ եղաւ որ 1620'ին ծպտակալ կը պտտէր Փարիա և Բուրվարի գաւառներու Հայ գաղթականներուն մէջ։ Այնտեղ Հայ կնոջմէ մը գանգատ կը լսէ թագաւորին դէմ, պիրկնք իրենց հայրենիքէն հանելուն համար. Ասոր քահանայի մըն ալ իսլամութիւն առաջարկելով խիստ պատասխան մը կ'ընդունի։ Սաստիկ զայրանալով, նոյնտեղ քահանային գլխուն կացինով կը զարնէ և անզգայ վիճակի մէջ թլփատել կու տայ։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և սաստիկ հրաման կը հանէ յիշեալ գաւառներուն բոլոր Հայերը իսլամացնել և թլփատել (ԴԱՎ. 124)։ Ասոր վրայ ամէն կողմ անողորմ գործադիրներ կը յղուին։ Հայերէն մէկ մասը կը ցրուին ամայի լեռներ ու ձորեր, մէկ մասը յականմայից յանձնառու կը լինին, բայց չատերու վրայ բռնի կը գործադրուի թլփատութիւնը՝ խոչտանգանքներու և հարուածներու ներքեւ կիսամահ վիճակի հասցնելէ ետքը։ Նոյն բանին կ'ենթարկուի, Փահրան գիւղի տանուտէր Նուրիջանը, որ միայնակ կիրճի մը մէջ պահուըտելով, նետաձգութեամբ արգելած էր իւր գիւղը թլփատելու եկող պաշտօնեաները (ԴԱՎ. 125)։ Երբոր լուր կը բերուի Շահրաման թէ հրամանը գործադրուած է, թլփատեալ քահանաներու քառասունական ոչխար նուէր տալ կու տայ, և միանգամայն բազմաթիւ կարդացողներ կը ղրկէ, որ Փարիացի և Բուրվարեցի Հայերուն իսլամ կրօնքը սորվեցնեն, սակայն Հայերը ոչ հնազանդեցին և բառնալ չկրցին, մինչեւ իսկ ի մոլեռնէն ելբիս և ղըզըլ սպանին, և այս չափ վիճակը տեւեց շատ երկար (ԴԱՎ. 126)։ Ազնիւ կացութիւնը կը յուզէ Փարիայի Յոյիկան գիւղը բնակող Գրիգոր անուն անձ մը, բնիկ վայոցձորի Արփա գիւղէն, մարդը պրիճահաս և չալմանգամ, սրտին սէր, բանիւ և խելք հանճարեղ, և հաստատուն հաստատ և ջերմեռանդ անձ մը, որ միտքը կը դնէ վերջ տալ այդ կացութեան, և զանազան գիւղերէն հօմն հոգի ալ մեկտեղ առնելով Ասպահան կու գայ 1622'ին։ Ամէն միջոց գործածելով, աղաչանք և կաչառք, պատճառաբանութիւն և կարեկցութիւն, իշխաններէն քանիներ կը շահի, անոնց միջնորդութեամբ Շահաբասի աղերսագիրներ և դիմումներ կը կրկնէ՝ հնգիցս և վեցիցս և աւելի, մինչեւ որ նախ բերանացի և յետոյ գրաւոր հրաման կը ստանայ որ Փարիա և Բուրվարի գաւառներու Հայերը համբյակ պաշտօնեն ջրբնարնեաւրնեան հաստատ խրճանց (ԴԱՎ. 127)։ Գրիգոր Արփայեցի միանգամայն կը յաջողի եւս 1000

թումեան գումարը հաւաքել եւ վճարել, զոր իբր տուգանք պահանջած էր Շահաբաս՝ չնորհուած ազատութեան փոխարէն, եւ զոր ուրախութեամբ տուին Փարիսացիներ եւ Բուրվարեցիներ, թէպէտ այդ երեսէն եղան չատ ե ոչոտ կոչ յոյժ։ Գրիգորի յաջողութիւնը դրացի Պարսիկներու թշնամութիւնը գրգռեց, որ մանմնատական մը ապաննելով Գրիգորի պարտէզը խոզուցին եւ զայն իբրեւ սպանիչ ամբաստանեցին, եւ տեսան քաշելով ուզացութիւնը իբրեւ ազատութեան պայման առաջարկեցին։ Բայց արիասիրտ իշխանաւորը հաստատութեամբ մերժեց, եւ յօժարակամ յանձնառու եղաւ գլխատմամբ նահատակուիլ (ԴԱՎ. 128)։ Գրիգոր Արփայեցիի նահատակութիւնը մեծաւոր հաչուով յարմար է դնել միեւնոյն 1622 տարին (ՆՈՐ. 434)։

Տ. ՄՈՎՍԷՍ Գ. ՏԱԹԵՒԱՑԻ 1629 - 1632

ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ

1653. Մայրաթոռին անտէրունջ եւ անիշխան վիճակը, կաթողիկոսի անունը կրողներուն տկարութիւնն ու խուսափիլը, եւ Մովսէսի չինարար գործունէութիւնը եւ հարիւր թումանի տարեկանը ջնջելու անօրինակ յաջողութիւնը, այնպիսի բացառիկ պարագաներ էին, որ իրաւամբ Մովսէսը երկնաւոր հրեշտակի մը պէս կը նկատուէր ամբողջ Հայութեան կողմէն, եւ այդ հանրային կարծիքին թարգմաններն էին Նոր-Ջուղայի եւ ուրիշ քաղաքներու իշխանաւորները, որոնք Շահ Աբբասի Մովսէսի կաթողիկոսացման համար արքունի հաւանութիւնը խնդրեցին եւ ստացան (§ 1648)։ Բայց կ'երեւի որ Մովսէս տակաւին կը վարանէր պաշտօնապէս անունն ու օծումը ընդունիլ, թէպէտ գործով կաթողիկոսութիւնը կը վարէր, եւ Մայրաթոռի աւերն ու տևսակ հոգածութիւնները կը կատարէր։ Որոշ կերպով չիշեր պատմիչը թէ անձնական համոզումն էր, որ Մովսէսի վարանումին պատճառ կ'ըլլար, թէ ոչ կանոնական երկիւղածութիւն մըն էր, որ զինքն յետս կը կասեցնէր, երբ անդին երկու անձեր կային, որոնք կաթողիկոսութեան անունը կը կրէին, Դաւիթ Ասպահանի եւ Մահակ Վանի մէջ։ Որն եւ ըլլայ բուն չարժառիթը Մովսէս 1628 աշունին յաջողութեամբ Ասպահանէ էջմիածին դառնալով եւ ազգային կամքը գիտնալով եւ արքունական հաւանութիւնը ստացած ըլլալով ալ, տակաւին ժամանակ մը անցուց իւր վերջնական որոշումը եւ զիջողութիւնը յայտնելէ առաջ։ Այդ միջոցին կ'իյնան այն ընդլէ ոչխարանոց, զորս պատմիչին վկայութեան համեմատ, աբէ երեսելէ, եկեղեցական եւ աշխարհական, ստիպաւ կը զրկէին է Պոլսոյ պանայ, է Վրաստանայ, է Ղրիմատանայ, է Հռոմատանայ, եւ յամենայն աշխարհաց, եւ ինքրեքն ե ոչխէն չէ մ ե պարծանս յօրենից, այլ վասն հաստատութեան հաստատ ե կրկէ եկեղեցոյ յայնմ ոստե վիճակաւորութեան (ԴԱՎ. 239)։ Այդ վերջին ակնարկները, թէպէտ քողարկեալ ոճով, բայց յայտնի միտքով կը վկայէին, թէ եկեղեցին անտէր անտէրունջ էր, եւ այսպէս մնալ հնար չէր, պարագաներն ալ դժուարին էին, ուստի այդ կացութեան վերջ տալու կորուկ միջոցը, պաշտօնապէս ընդունել եւ հռչակելն էր, ինչ որ Մովսէս իրապէս եւ գործնականապէս կը կատարէր, եւ որուն համար պէտք եղած հաւանութիւնն ալ ստացած էր տիրող կառավարութենէն։ Այդ պատճառաբանութիւնն է հարկաւ, որ վերջիվերջոյ Մովսէսի միտքին վրայ ալ ազդեց, եւ զիջաւ ընդհանուր թախանձանքին, եւ 1629 յունուար 13'ին, Մինդեանն ուխտէքին, երեքշաբթի օր, օծմամբ սրբոյ Հոգւոյն Աստուծոյ օծաւ հայրապետ Ամենայն աշխարհ Հայոց (ԴԱՎ. 239)։ Հարկաւ այդ աւերին լիակատար կերպով գործադրուելուն բոլոր ծիսական եւ կանոնական պայմանները, որոնց ամէնէն նախանձախընդիր պաշտպանը՝ ինքն Մովսէսն էր, բայց մեզ չեն հասած մասնակցող 12 եպիսկոպոսանեւրուն եւ անոնց երիցագոյնին անունները։

նմանապէս ընտրութեան և օծման մասնակցող իշխանաւորներուն և բազմութեան մասին ալ որոշ տեղեկութիւններ չունինք։ Մովսէսի օծման թուականը 1629 յունուար 13'ին որոշ գրուած է Դավրիժեցիին, և նոյնութեամբ կրկնուած զանազան տեղեր (ԴԱվ. 338) և համեմատուած ուրիշ թուականներու հետ, և հաստատուած Երեւանեցիին (ՋԱՄ. 20-21), ուստի տարօրինակ կը թուի Ալիշանին զայն 1630'ին յետադգելը (ԱՐԱ. 231)։ Անշուշտ այս բանին պատճառ տուած է Դավրիժեցիին մէջ տեսնուած չփոթութիւնը, որով 1629 յունուար 7'ին կը դնէ Շահաբասի մահը (ԴԱվ. 237), 3'ին Մովսէսի օծումը (ԴԱվ. 239), և 19'ին Շահսէֆիի գահակալութիւնը (ԴԱվ. 237)։ Սակայն այդ չփոթութիւնը ուղղելու համար աւելորդ էր Մովսէսի օծման թուականը փոփոխել, քանի որ արտաքին պատմագիրներու հետեւողութեամբ պէտք էր 1628'ին կանխել Շահաբասի մահը և Շահսէֆիի գահակալութիւնը, ինչպէս մենք ալ դիտել տուինք (§ 1648)։

1654. Մովսէս կաթողիկոսը իր օծման թուականէն իբր գահակալ կը նկատուինք, թէպէտեւ մենք ամէն

ԳԱՀԱԿԱԼԻ
ԻՐԱԻՈՒՆՔ

առիթի մէջ գահակալի մը մեռնելէն կամ ժողովով մերժուելէն առաջ ուրիշ մը գահակալ ընդունելէ խորչած ենք։ Այս պարագային մէջ ալ դիտենք, թէ Դաւիթ Դ վաղարշապատեցին, որ վերջին գահակալն էր, տակաւին կենդանի էր Աստահանի մէջ, երբ Մովսէս կ'օծուէր էջմիածին։ Գիտենք նաեւ թէ կանոնական ժողով մը չգումարուեցաւ էջմիածնի մէջ, կանոնապէս Դաւիթը գահընկէց հրատարակելու և Մովսէսը գահակալ հռչակելու համար։ Սակայն բացառիկ պարագաներ բացառիկ դարման, և բացառիկ կնճիռներ բացառիկ լուծում կը պահանջեն, և այս հանգամանքը կը ճըշմարտուէր այդ միջոցին։ Տարի մը ամբողջ անցեր էր, որ աթոռը տիրապէս անտէրունջ էր։ Անիկա որ բուն գահակալ կը նկատուէր, սկիզբէն իվեր կամկար ու ապիկար, չատնոցուընէ իվեր իսպառ ձեռնթափ, իննսնամեայ զառամեալ վիճակի մէջ, կ'ապրէր հեռաւոր Առպահանի մէջ, և կար իբրեւ թէ չկար, ոչ իրաւունքին տիրութիւն կ'ընէր և ոչ տիրութիւնը ընելու կարողութիւն ունէր։ Միւսն ալ՝ որ կաթողիկոսութեան իրաւունք էր առած փախըստական Մելքիսեդեկի կամքով միայն, ազգին ոչ մի բաժնին կողմէն ընդունելութիւն չէր գտած, ամէնէն մերժուած էր, և միայն արքունական հրամանին վրայ կը հիմնուէր։ Սա ալ իւրովի փախած ու ձեռնթափ եղած ըլլալէ զատ, իր միակ ոյժն եղող արքունի հրամանն ալ կորուսած էր, Մովսէսին կաթողիկոսութեան Շահսէֆիէ հաստատուելովը։ Այս պարագաներ լուսաւոր կերպով կը հաստատեն թէ Մայրաթոռին նոր կազմակերպութիւն տալը անհրաժեշտ պահանջ էր, իսկական պարագաներէ առաջ եկած։ Միւս կողմէն դիւրութիւն և հնարաւորութիւն ալ չկար, զանազան երկիրներէ եպիսկոպոսներ և վարդապետներ եւ իշխանաւորներ հաւաքելով կանոնական ժողով կազմելու, և գահընկէցութիւնը և գահակալութիւն վճռելու, և պէտք էր հնարաւոր եղած գործնական միջոցներով գոհանալ։ Պէտք եղած փաստերէն մէկն էր՝ կաթողիկոս կարծուողներուն գործնականապէս գահազուրկ նկատուիլը, և ընտրելի կաթողիկոսին գործնականապէս գահին տէր գտնուիլը։ Իսկ ժողովական որոշման տեղը կը բռնէր ընդհանուր կարծիքին առանց բացառութեան համամիտ և համակամ հաստատուն յայտնուիլը, ամէն կողմերէ գրաւոր դիմումներ հասնիլը, և ոչ մի կողմէ հակառակութիւն լսուիլը։ Այս պարագաները կշռադատելէ և ուսումնասիրելէետքը, մենք ալ վճռաբար կրնանք ըսել, որ եթէ ոչ նիւթապէս հաւաքուած ժողովով, ժողովական որոշման համահաւասար զօրութեամբ՝ ամենայն ազգ Հայոց, որ յԱրեւելս և յԱրեւմտեան կոյսն, ջրբաժանեցան ընդ միմեանս և քանի՛, և որպէս զմոլեսն վերջապէս կոնդակին, և հաստատեցին ի սուրբ աթոռն էջմիածին (ԴԱվ. 182)։ Ահա թէ ինչու իր օծման օրէն իբրեւ գահակալ կ'արձանագրենք Մովսէս Տաթեւացի կաթողիկոսը։ Անոր մակդիր անունը ոմանք Սիւնեցի կը գրեն, հայրենական նահանգէն առնելով (ԱՐԱ. 231), ոմանք ալ Խոտանանցի գրելին ծննդավայր գիւղէն առնելով (ՋԱՄ. Բ. 233), սակայն

մինք կը պահենք Տաթեւացի կոչումը, իւր առաջին գործունէութեան տեղէն առնուած, (§ 1615), որ ծիսական կիրառութեամբ ալ նուիրագործուած (ԺԱՄ. 591) և ընդհանրացած է։

ՍԱՀԱԿԻ ՇԱՐԺՈՒՄԸ

1655. Սահակ Գառնեցին երեւանէ և Մայրաթոռէ գալուագողի փախչելով, վանն ապաւինելէն ետքը (§ 1647), ամրողջ 1628 տարին չրջելով անցուց այդ ե- անդր յաչերս ե- է +ողջ+ս, որ կայն ընդ էջեանս-ընեամբ Օամանցւոց (ԴԱՎ. 183), բայց միշտ վանի և Բազէշի չրջակաները մնաց, առանց հանդարձակելու աւելի յառաջել, եւ ոչ ալ կոստանդնուպոլիս երթալ մտաբերից, ինչ որ կը ցուցնէ թէ լաւ ընդունելութեան չէր հանդիպեր և քաջալերութիւն չէր գտներ։ Եպիսկոպոսներէն և վարդապետներէն ըստ ոմանս գտաւ իրեն հետեւող, մանաւոր չահերու ակընկալութեամբ կապուածներ, բայց կոթողչէին էրեց էրեծոյն չէին։ Սահակ երբ Մովսէսի օծութիւը լսեց, և դիմադրութեան գործակիցներ վիտռեց, մերժումի հանդիպեցաւ, միայն Պօղոս Այնթապցի՝ վարդապետ մը գտաւ իրեն օգնական, Յովհաննէս Այնթապցի կիլիկիոյ կաթողիկոսին եղբօրորդին, որ է ըսել Մայրաթոռոյ հպատակութենէն դուրս մէկը։ Սա յանձնառու եղաւ կ-Պոլիս երթալ և այնտեղէն հրովարտակ հանել, և Սահակի կաթողիկոսութիւնը ճանչցնել տալ։ Պէտք է նկատի առնել, թէ այս կերպով Սահակ Մայրաթոռի կաթողիկոսութեան կարծեցեալ իրաւունքը պաշտպանել չէր դիտեր, քանի որ Օամանեան հրովարտակով Պարսկական կառավարութենէ ճանչցուած չէր ըլլար, այլ միայն նոր հերձուած մը պիտի ստեղծէր եկեղեցւոյ մէջ, Օամանեան դասակարգը էջմիածնի աթոռէն զատելով, և նոր կաթողիկոսական աթոռ մը հաստատելով Գըլակայ Ս. Կարապետին մէջ, ուր միւռոն ալ պիտի օրհնէր, և պիտի խափանէր ընդէրքն և ընչեանս-ընեան սորբ աթոռոյն էջմիածնի (ԴԱՎ. 184)։ Զաքարիա վանեցին, Մելքիսեդեկին և Յուլին գործակիցը, որ ժամանակին պատրիարքն էր (§ 1642), հաճութեամբ ընդունեցաւ Պօղոս Այնթապցի պատուիրակը, և հաւանեցաւ օգնել Սահակի միտքին, քանի որ Մովսէս կաթողիկոս կեսարացիին աչակերտն ու բարեկամն էր (§ 1603), և ինքն պատրաստ էր որեւէ կերպով կեսարացիին հակառակ բան մը ընել։ Պատրիարքի մը դժուար չէր կայսերութեան սահմանին մէջ եղող հոգեւոր պետերու համար հրովարտակներ ընդունիլ իր պատասխանատուութեամբ, ուստի Սահակի համար ալ պէտք եղած հրամանագիրը ստացուեցաւ սուլտան Մուրատ Դ'ի կառավարութենէն (ԴԱՎ. 183), միայն թէ մեծ եպարքոս Յուսրէվ փաշա 1629 յունիս 9'ին կ-Պոլիսէ մեկնած էր Միջագետքի ապստամբ Քիւրտերուն և Պարսիկներուն դէմ պատերազմին պատճառաւ (ԺՈՒ. 225), և հրովարտակը առանց անոր հաւանութեան տրուած էր։ Երբոր Սահակ վանի մէջ իւր էրեծոյն համար Պօղոսը ճանպայ հանած էր, վանայ դլխաւորներ, որոց մէջ յանուանէ կը յիշուին Ամիրխան Յանենց, Թումէ, Շիրաք, Միրաք, Փօլատ, և Սարուխան, եղածը լսելով՝ չատ աչխատցան Սահակը ետ կեցնել իւր միտքէն, ղ ընկոտակոնիեն և ղեռվնոնիեն Ընդէ։ Մովսէսէ ղրկուած էջմիածնի նուիրակ Փիլիպպոս Աղբակեցի վարդապետն ալ իրենց հետ առնելով, Սահակի խոստացան որ վանայ մօտ Գուրուպաչի Ս. Յակ վանքը էրովէ տղէն իրեն յանձնեն, նուիրակն ալ առանձինն տարեկան 300 ղուրուչ վճարել խոստացաւ, որպէսզի եկեղեցւոյ մէջ նոր բաժանում և երկպառակութիւն չստեղծէ, բայց նա ոչ էրեծոյ է ըստ էնոսոսրոնեանց էրերդոց էրոց, լսած ըլլալով իւր պատուիրակին հրովարտակը բերելով ետ դառնալը (ԴԱՎ. 182)։

ՍԱՀԱԿԻ ՁԱԽՈՂԻԼԸ

1656. Սահակ վանէն և Պօղոս կ-Պոլսէն գալով, իրարու միացան Տիարպէքիրի մէջ, ուր էր Յուսրէվ մեծ եպարքոսը, որպէս զի ստացուած հրովարտակին գործադրութիւնը հրամայել տան։ Այս անգամ Տիարպէքիրի իշխանաւորներէն Երեմիա և Մաքսուտ, և վանեցի Ռուշիլան, և քաղաքին առաջնորդը Բարսեղ Ամդեցի՝ Սրապիոնի աչակերտ և յաջորդը (§ 1584), ուրիշներով մէկտեղ սկսան Սահակէ խնդրել որ վտանգաւոր դիտումէն և Հայ եկեղեցւոյ մէջ հերձուած

ստեղծելէն ետ կենայ, և խոստացան որ ի՛տալտ ի՛մ է վնասելէդ որոմ և հաճելոյի՝ ինձան լեցի ընմի և վճռելո, և նախքան էջ գոնէ մի տպեր ի նա, այլեւ տարին 500 դուրուշ թոշակ վճարուի էջմիածինէ։ Նոյն ինքն Մովսէս կաթողիկոսէ և Փիլիպպոս նուիրակէ ալ նամակներ հասան, թէ ուղղակի Սահակի գրուած և թէ բարեկամներու ուղղուած, Սահակը համոզելու համար։ Սահակն ամէն ճիգեր պարապի ելան, և Սահակ գրաւոր կերպով Խուսրէվի դիմից հրովարտակին գործադրութիւնը պահանջելու, 10,000 դուրուշ ալ տարուէ տարի տուրք խոստանալով։ Երբոր Բարսեղ եպիսկոպոս և իշխանաւորներ ալ մեծ եպարքոսին դիմեցին՝ Սահակի գործերն ու նպատակը բացատրելով, և ժողովուրդին գալիք վնասները ցուցնելով, Խուսրէվ կը պատասխանէ. Անէծք Հայեր, ինչպէ՞ս մերժէմ, չէ նէ՝ փոքոյն չ10,000 դուրուշ յաելոն է փանյոնին. որուն կը պատասխանէ Իւնհիյան, որ եթէ Հայոց ազգը վան փանչէ վճռաւ, է՝ 20,000 դուրուշ տամ (ԴԱՎ. 186)։ Նկատողութեան արժանի է, թէ ինչ սկզբունքով կը որուին եղեր պետական որոշումները։ Երբոր Խուսրէվ որոշումը կը յետաձգէ, Ռուհնիյան դիտել կուտայ ետս, թէ ինչ միտքով արդեօք Սահակ, առանց նախապէս իրեն դիմելու, ուղղակի Կ-Պոլիս դիմած է։ Խուսրէվ իրօք կը արտասուի, և Սահակը տեսնելով կը սկսի յանդիմանել, թէ ինչո՞ւ պինքն անարգելով ուղղակի թագաւորը ձանձրացնելու մարդ է ղրկած։ Իսկ երբ Սահակ գոհացուցիչ բացատրութիւն մը չկրնար տալ, կը հրամայէ ղրկողն ալ պացողն ալ դնել ի ֆալխա և քրծեի առնել։ Հրամանը կը սկսի գործադրուիլ անվրդով և առջին կերպով, և ըստ սովորութեան ուրացութիւնը կ'առաջարկուի իբրեւ ազատութեան պայման։ Այս անգամ գանգատաւորները վախնալով թէ Սահակ և Պօղոս կրնան տկարանալ, արձակեն քաղաքն խոստանալով և ցրուելով, և միջնորդներ ճարելով, կը յայտնէին որ Խուսրէվ հրամայէ երկուքն ալ ապչոխել ի փանջանոց, և է քաց վռնել ի դրան դուռն։ և այսպէս հրկիզելով և չարչարելով դուրս կը հանուին։ Այս կերպով Սահակ և Պօղոս ոչ միայն նպատակնուն չհասան, այլ և ոչ հաւանչոխէին չքնել ի մէջ տրդիան վան ամենոյ (ԴԱՎ. 188)։ Սիմէոն Մերապատցի՝ կիլիկիոյ կաթողիկոս, իւր մէկ գրուածին մէջ էջմիածնի կաթողիկոսները կը յանդիմանէ, թէ վնահ կընդունէին և պիտոյս վրդովեին պատճէնել պատ, և ազէի ազէի պանջանոյ հասապոցն ապրցոցոյն (04 ԱՐՐ. 746), սակայն Դավրիժեցիին պատմութիւնը կը տէ անոր րսածը, մանաւանդ թէ նոյն իսկ էջմիածնի կողմնակիցները վտանգին առջեւն առնելու աչխատած էն։ Նոյնպէս անտեղի է նոր գրողի մրն ալ ըսելը, թէ եպարխոսը կաշառելով Մովսէսի կողմնակիցներէն՝ բրծեի ընթերցուին ալ սպիպելով որ հասապն ապրանան, և թէ հազիւ կաշառով ազատուեցան։ Ջի ընդհակառակն Դավրիժեցիին պատմածին համեմատ, ուսկից նոր գրողն ալ իւր րսածները քաղել կը ցուցնէ (11 ԱՄՍ. 75), ազգին մէջ բաժանում և ներքնում ստեղծելու համար կաշառք խոստացողը ինքն Սահակն էր եղած, և իւր ազատութիւնն ալ իւր հակառակորդներուն միջնորդութեամբ ստացաւ։ Նոր գրողը այնպէս իմն կարծել կուտայ, իբր թէ Սահակի կաթողիկոսական իրաւունքը բնաւաբուած ըլլայ, մինչ այսպիսի իրաւունք մը չունէր Սահակ (§ 1654), և վերջին անգամ ալ հետապնդածը Մայրաթոռոյ պահակալութիւնը չէր, այլ Օսմանեան գաւառներուն մէջ, կիլիկիոյ և Աղթամարի իրաւասութիւններէն դուրս մնացած մասերուն վրայ, հակաթոռ և բաժանեալ նոր կաթողիկոսութիւն մրն ալ ստեղծել։ Այդ դիտումին հանդէպ ալ վանի և Տիարպէքիրի ազգայնոց կողմէն եղած ընդդիմութիւնը, Սահակին ամէնէն մերժուած և ամէնէն անարգուած ըլլալուն յայտնի ապացուցութիւնն է, և անբացատրելի կը դառնայ վերոյիչեալ նոր գրողին այսպիսի մէկու մը պաշտպանութիւնը առանձնելը։ Սահակի արկածին պատմութիւնը փակելու համար աւելցնենք, թէ անոր իբր թուական կըրնանք նչանակել 1630'ին սկիզբը ձմեռնային ամիսները, երբ Խուսրէվ Տիարպէքիրի մէջ կը ձմերէր։

1657. Մովսէս Տաթեւացիի կաթողիկոսական գործունէութիւնը պատմելու մտած ատենիս, պէտք է նախապէս յիչենք թէ Մայրաթաղրին և Մայրաթոռին նիւթական և

բարոյական բարենորոգման և բարեկարգութեան մասին յիշուած ձեռնարկները, որոնք 1677 յունիս 25'ին սկսան, և որոց մանրամասնութիւնները տուինք (§ 1645), հնար չէր որ մինչեւ 1629 յունուար 13 լրացած ըլլային, մանաւանդ որ միջանկեալ տարիներս Ժամանակին մեծ մասը Աղպահան անցուց 100 թուման տուրքը ներել և ջնջել տալու համար։ Հետեւաբար անոնց չարութենակութիւնը և լրումը կաթողիկոս օծուելէն ետքը կատարուած պիտի ընդունինք։ Այդ առթիւ գիտցաւ Մովսէս օգտուիլ այն մեծ իանդգուժութենէն, որ ազգին մէջ բորբոքեցաւ իւր կաթողիկոսանալուն պատճառով, և իւր չուրջը գտնուող բազմաթիւ միաբաններէն և աշակերտներէն՝ նուիրակ ցրուեց ամէն կողմերը, որ նպաստներ հաւաքեն Էջմիածնի նորոգութեան համար, որ նոր էր սկսել կը չեչտէ Դաւրիժեցին ալ (ԴԱՎ. 182), ինչպէս մենք ալ դիտել տուինք։ Եւ որովհետեւ ամէնքը միանգամ բացատրած ենք, կրկին վերադառնալ աւելորդ կը նկատենք։ Մովսէսի գործունէութեան մի մասը կը կազմեն նաեւ ընտանեկան և ընտանեօրէն և ընչ էրեան ստանալու համար ըրած աշխատութիւնները և թափած ջանքերը, որք մեծ նշանակութիւն ունին Մայրաթոռին կալուածական և ստացական իրաւունքներուն համար, և զորս Երեւանեցին մանրամասնօրէն կը քաղէ (ՋԱՄ. 22), այլ մեզ դժուար է այդ մանրամասնութեանց հետեւիլ։ Բաւական ժամանակէ իվեր Մայրաթոռի մէջ տիրող անկարգութիւնները, մանաւանդ վերջի ժամանակներուն մէջ Դաւիթի և Մելքիսեդեկի և Սահակի անխորհուրդ վատնելը և գրաւի տալը, ազգային ստացութեանց մեծ մասը վտանգի ենթարկած էր, ուստի մանրազնին և խղճամիտ գործունէութեան պէտք կար, պատշաճ կերպերով և օրինական ձեւերով անոնք ազատել, ապահովել և հաստատել վաւերական կալուածագիրներով։ Թէպէտ այդ մասին Մովսէսի յաջորդներն ալ գովանի փութաջանութիւն ունեցան, բայց անոնց սկզբնաւորութիւն տուած ըլլալու և ուղղութիւն հաստատած ըլլալու պարծանքը

ՄՈՎՍԷՍԻ ԳՈՐԾԵՐԸ

իրաւամբ Մովսէսի պիտի վերագրուի։

1658. Մովսէսի եկեղեցական բարեկարգութեանց կարգին կը յիշուի եւս թէ եկեղեցին պայծառացոյց քաղուիամ յարմար և հոսպիտան յաղթութեամբ (Դ Ա Վ. 210), որ կը ցուցնէ թէ հասարակաց ալօթքից կարգաւորութեանց մէջ ալ Մովսէսէ հաստատուած կանոններու հետք մը պէտք է տեսնել։ Սակայն չենք ուզեր հետեւցնել, թէ Մովսէս նոր կարգադրութիւններ աւելցնելու միտք ունեցած ըլլայ, այլ միայն խաթարեալ և խանգարեալ կարգերը իւնամով իրենց նախնի դրութեան վերածելու աշխատած է։ Մէկ կարգադրութիւն մը միայն իրեն կը վերագրուի, այն է Օրհնութիւն չարականներուն քաղուածը, որուն համար Այաչատուր Կեսարացի վարդապետ, Մովսէսի աշակերտն ու գործակիցը կը վկայէ, թէ ա ինչն սրբոյ հայր մեր առաջնոյ պատ ըսկսեալ ասել Օրհնութիւն, գըլխաւոր պատճառ ցուցնելով Ստեփանոս Սիւնիի պատրաստած տասը պատկերով Աւագ օրհնութիւնները։ Բայց որչափ ալ Այաչատուր Կեսարացի կը կրկնէ թէ սրբոյն հայրապետական (ԺՄԳ. 694), սակայն այդ կարգադրութիւնը Մովսէսի ինքնաստեղծ գիւտը հազած չէ, վասնզի անկէ առաջ Սարգիս Պարոնտէր Մեծ-Անապատի մէջ սահմաններ էր ըսել Օրհնութիւն ըստ Իսրհրդոյ սուրբն, և է վերայ տալոյծ ըսկսելոյ (ԴԱՎ. 196), որով Մովսէս անոր հետեւողութեամբ ընդարձակած կ'ըլլայ Մեծ-Անապատին սովորութիւնը, ուր ինքն ալ միաբանած էր (§ 1620)։ Միայն թէ Մովսէս ալ քաղուածը իբր պարտաւորիչ չէ հրամայած, զի Այաչատուր Կեսարացին ալ կը գրէ. Սրբ հաճեցան կամ եղեայբունեան յերոյ, Տէառն գոհունեան, և երե ալ աւրհնեալեւ՝ կամ յեր եղեցին (ԺՄԳ. 694)։ Մովսէսէն ետքն ալ նոր պատուէր մը չունինք քաղուածին մասին, այնպէս որ այժմ լոկ հնացեալ սովորութեամբ իբր պարտաւորիչ նկատուած է, մինչ պէտք էր զայն իբր կամաւոր հանդիսականութիւն կամ իբր բարեպաշտական յաւելուած նկատել Մովսէսի կարգադրութեամբ։

1659. Ինչինչ յարաբերութիւններ ալ կը վերագրուին Մովսէսի Հռոմի պապու-

քեան հետ, որոնց մեծ կարեւորութիւն կ'ընծայեն հռոմէադաւանները՝ յօգուտ գործածելով անոր անունն ու հրեշակը։ Ջամչեանի անորոշ եւ անստուգելի աղբիւրներէ քաղած պատմութեան համեմատ, Մովսէս առաջին թուղթ մը գրած կ'ըլլայ 1629'ին իր հայրապետութեան սկիզբը, դարձեալ Ֆռ եռ ընդդէմ անկէ ետքը, որուն վրայ 1631'ին Պօղոս Փիրոմալլի (padre Paolo Piromalli) լատին Դոմինիկեան քահանայ մը կը ղրկէ Ուրբանոս պապէն, որուն Մովսէս չատ մը լատինամիտ յայտարարութիւններ ըրած կ'ըլլայ, և որուն ձեռքը կը յանձնէ նոր թուղթ մը, 12 եպիսկոպոսներէ ալ ստորագրուած։ Իբր թէ Փիրոմալլի այդ թուղթը կը տանի Նախիջեւանի Ունիթորներուն, և անկէ կը ղրկէ Հռոմ, և կրկին էջմիածին դարձած ատենը, այլազգի իշխանին կողմէ կասկածաւոր կը նկատուի, կը գանակոծուի և կը բանտարկուի, և հազիւ 22 ամիս ետքը կրնայ ազատութիւն ստանալ (ՁԱՄ. Գ. 611)։ Մովսէսի 12 եպիսկոպոսներու հետ գրած վերջին թուղթը, որ Ջամչեանի պատմութեամբ 1631'ին գրուած էր, ուրիշներ 1629'ին կը տանին (ՊԼՃ. 270), և Փիրոմալլիի գալուստը, որ Ջամչեանէ 1631'ին դրուած էր, ուրիշներ 1640'ին կը յետաձգեն (ԿԱՓ. 162)։ Իսկ գրչագիր մը, որ ժամանակակից է, 1628'ին կը դնէ հանդիպիլ Եփրեմ եպիսկոպոս Մովսէսի նամակը (ՏԱՇ. 111), երբ Մովսէս դեռ կաթողիկոս չէր։ Մովսէսի նամակներէն ոչ մի պատճէն յառաջ բերուած չէ, որ անոնց թիւն ու թուականը ու պարունակութիւնը ստուգէինք, իսկ իրարու հակառակ տեղեկատուներ օրինաւոր կասկածի իրաւունք կու տան ըստ ուածներուն ստուգութեան վրայ, կասկած մը որ աւելի եւս կը զօրանայ ազգային պատմիչներուն պահած լռութեամբը։ Մելքիսեդեկի նամակներուն համար ըրած դիտողութիւնս, թէ անոնք Մելքիսեդեկի արգելքի ներքեւ եղած ատեն Ջաքարիայի ձեռքով կազմուած էին (§ 1608), հաւանական կը ցուցնէ, թէ կաթողիկոսներու անունները չհանգործող ուրիշ լատինամոլ գործիչներ եւս եղած են, երբ տեղերու հեռաւորութիւններ և յարաբերութեանց դժուարութիւններ անհնար կ'ընէին որեւէ բաղդատական ստուգութիւն։ Բայց առանց այս դիտողութեանց ալ, իրարմէ չատ տարբեր բաներ են, նամակի մը մէջ չհայտնուած քաղաքավարի բացատրութիւններ, և հաւատոյ պաշտօնական դաւանութիւններ։ Մովսէս իր հայրապետական եկեղեցւոյ դրութիւնը բարձրացնելու և պայծառացնելու աշխատող մը, երբեք զայն ուրանալու կամ փոփոխելու միտքը չէ ունեցած, այլ եղած է միշտ ինչ որ էր, հայաբաւան եկեղեցւոյ հաւատարիմ ախոյեան։ Բայց կրցաւ Լատին աշխարհին բարեացակամութիւնը վնտռել, թէ իր դիրքին ոյժ մը գտնելու յուսով, և թէ Եւրոպիոյ մէջ եղող Հայ գաղութներու դիրքը պաշտպանելու համար։ Մովսէս կրնար ալ, Ջամչեանի պատմածին համեմատ, փիրոմալլիի յայտարարել թէ անխոտ անխ ղիւսմոնիան սէրոյ ընդ Ֆծէ Հռոմայ աթոռոյն (ՁԱՄ. Գ. 611), վասնզի Հայ եկեղեցւոյ սկզբունքով՝ սիրոյ միաբանութիւնը կը պահուի միւս եկեղեցիներու հետ, առանց անոնց դաւանութիւնը ամբողջապէս ընդգրկելու, բաւականանալով հիմնական կէտերու վրայ համաձայնութեամբ։ Մովսէս կրնար նաև պապութեան հետ յարաբերութիւնները մշակել, Ուրբանոս Ը պապէն Արեւելեցիներու համար բացուած դպրատունէն օգտուելու համար (ՁԱՄ. Բ. 24)։ Օտարազգի վարժարանները դիմելը նպատակ ունի միայն ուսումնական զարգացումը, և ոչ թէ օտար դաւանութեան հետեւողութիւնը, բան մը որ մինչեւ մեր օրերն ալ կը ճչմարտուի։

1660. Ուրիշ պարագայ մըն ալ կայ, որ Մովսէսը կը ստիպէր Արեւմտեաններուն հետ յարաբերութեան մտնել։ Գրիգոր Կեսարացի, իր կամենիցէ վտարուելէն (§ 1641) և Ջաքարիա Վանեցիի պատրիարք ըլլալէն ետքը, կեսարիա գացած էր, իբր սեփականը վիճակը (§ 1642), և հոն լսած էր Մովսէս Տարեւացիին՝ իր նախկին ձեռնասունին (§ 1603) Մայրաթոռոյ կաթողիկոսութեան բարձրանալը։ Այդ ատիթ Գրիգոր Մովսէսն կը խնդրէր, որ, քաջալերութեամբ

էջփոխն է կոնդակական իշխանութեամբ (ԴԱվ. 284) Նիկոլը բանադրէ, զի նոր պատգամ մը վրայ հկած էր, որ կեսարացին կաթողիկոսական բանադրանքի մըն ալ պէտքը կը զգար, իւր արձակած բանադրանքին վրայ (§ 1641)։ Որչափ ալ Նիկոլ կարեւորութիւն չէր տուած կեսարացիի բանադրանքին, սակայն իւր ժողովուրդին զգածուելուն, և իրմէ զգուշանալուն վրայ, կը ստիպուէր ու կը պատրաստուէր անոնք չանհլու համար 3000 դուրուչ ժողովուրդէն ճանապարհածախս առանալով, Իլվովէ մեկնիլ, Կոստանդնուպոլիս և անկէ Կեսարիա երթալու համար, որ գոյէ ծեղչ և սոյէ սէյհոճի կեսարացիէն։ Բայց Պրուսա հասած առեն կը հանդիպի Սրիասակէս Խաբէրդցի վարդապետին, որ կեսարացիին դէմ բարկացած էր, անոր փոխանորդներուն իրեն դէմ հանած հալածանքին համար (§ 1640), և Նիկոլը կը համոզէ թէ պէտք չունի կեսարացիին երթալ, և թէ ինքն ալ կրնայ արձակել, ուրով Նիկոլ կը հաւանէր չերթալ, այլ միայն թուղթով արձակում կը խնդրէր, պատճառելով թէ ասոնէ հեռանալ և անկէ կամ է մնալ կեսարացին կը հաւատայ, կը խղճայ, կը գրէ Իւղէ արքեպիսկոպոսին և օրհնութիւն, և կը ղրկէ Պրուսա, և Նիկոլ գայն առնելով կը դառնայ Իլվով, ուր Իլվովցիք դիրը սուննալով, սրբեցան և ջրբանեցան ընդ եղէկոպոսին (ԴԱվ. 205)։ Մինչ այս մինչ այն կեսարացին լուր կ'առնէ, թէ խարկանօք խլած է իրմէ արձակման թուղթը, ուստի իսկոյն կը փութայ նզովքը նորոգել և Իլվովցիներու ալ կը գրէ, թէ սաստկին նզովեն և քանաքրանէն կայ է վերայ այդր եղէկոպոսիդ (ԴԱվ. 286)։ Անա այդ առթիւ է որ աւելի հաստատութեան համար Մովսէս ալ կը խնդրէ կաթողիկոսական իշխանութեամբ Նիկոլը բանադրել։ Իրօք ալ Մովսէս՝ վատահ իւր նախկին վարդապետին վերայ, և համաձիտ անոր ուղղութեան, խնկոյն էրեց էչ քանաքրանաց և սաստեց է վերայ Նիկոլ եղէկոպոսին (ԴԱվ. 284)։ Մովսէսի բանադրանքը կ'արձակուէր 1629'ին, որ պապին ալ գրուած նամակին թուականը կը ցուցուի (§ 1659), և այդ զուգադիպութիւնը կը բաւէ բացատրել թէ ինչ կրնար ըլլալ Մովսէսի նպատակը, երբ իրօք գրած է այն նամակը, որուն մասին ստոյգ և վաւերական տեղեկութիւններ կը պակսին։ Մովսէսը ուզած է իւր իշխանութիւնը պահել Արեւմուտք գտնուող Հայերուն վրայ, և ոչ թէ ինքզինքը հպատակեցնել Արեւմուտքի պապութեան ներքեւ։ Որովհետեւ Մովսէս բանադրանաց գիրին հետեւէն, Լեհաստան կը ղրկէր Խաչատուր կեսարացի վարդապետ, և քանի որ Նիկոլ կը յանդրգնէր կաթողիկոսական վճիռն ալ անարգել, Մովսէս պաշտօն կու տար նուիրակին ընկերանալ ընկնիլ է պոլսոմանէ (ԲՒՆ. 155), և Գրիգոր կեսարացին ալ նուիրակը կը զգուշացնէր, որ չ'էսոյէ ըէ ընկերցէ ընկնիլը է կոթը և է պոլիս եղիսկոպոսութեան (ԴԱվ. 286)։ Իլվովցիք բացարձակապէս դէմ դարձած էին Նիկոլի, և ոչ միայն իրմէ կը խորշէին, այլ և խորհէին պատերազմ դնել ընդ է քանքէ, և հանել է նմանէ պսակեցան արեւելեկոպոսութեան (ԲՒՆ. 22)։ Խաչատուր վարդապետն ալ, թէպէտ այլ հնչ և հանգարտ և տպզբաքարոյ (ԴԱվ. 286), սակայն չկարենալով տանիլ Նիկոլի նախատինքներուն և կաթողիկոսական հրամաններու դէմ ըմբռստանալուն, ինքն ալ անէծքը կը կրկնէր, որուն վրայ քաղաքին դատաւորները եկեղեցին կը փակէին և դատաստանի կը նստէին Նիկոլը դատելու նուիրակին նախագահութեամբ։ Խաչատուր խնդրին զայրանալը տեսնալով, հայտելու և հայտեցնելու միջոցներ կը փնտռէր, բայց դատաւորներ անողոք կը մնային, և երբ Նիկոլ կը սպառնար արքունի դատարանի դիմել, Հայազգիներ կը պնդէին, թէ իրենց իրաւունքը տրուած է, որ իրենց գործերուն Հայոց ազէէ գոռոզութեան պատճառանաւ, և ազ ըէ գոռոզութեան ազգին Ճառնից։ Նուիրակը արտասպնելու համար ալ կ'աւելցնէին, այլեւ առնիմ սպառնէ ընդ սպրանց նոցա, և խելք ընդ խելաց նոցա, և գոռ զի՞ է եւ երինէ (ԴԱվ. 289)։ Այսպէս կը չարունակէր վէճը, զի ոչ Նիկոլ կը հպատակէր, և ոչ ալ ազգայինք կը զիջանէին։

1661. Նիկոլ տեսնելով որ ազգային կանոններով և ազգային դատաստաններով պիտի չկարենայ ժողովուրդը յաղթահարել կամ ինքն արդարանալ, դատանախոհութեան միջոցին կը դիմէ, որպէսզի Լեհաց արքունական և լատինաց կրօնական զօրութեամբ

իւր հակառակորդները ընկճէ։ Այս նպատակով կը դիմէ սա այնուհետեւ որ է կոչէին նվիրեալ կամ վկայ, ինչպէս Դավրիժեցին կը գրէ (ԴԱվ. 289), ամէն լատին կրօնաւորները եզվայիթ, կամ ձիզվիթ (Gesuita) կամ Յիսուսեան միաբան նկատելով, մինչ լատին պատմիչներ կը ճչդեն թէ դիմից չէ՛ կրնար հրեշ Կոմնէնոյ Բոհոռնէց (ԲՌՆ. 22), և հրապարակաւ հռոմէադաւանութիւն ընդունեցաւ, յայտարարելով թէ մխ է հնազանդութիւն քրիստոնեայ ժողովուրդ, որ ամէն հնազանդութիւն կը մերժէ սուրբ գրոց հրամանը որ սա է ընդունէ (ԴԱվ. 289)։ Այսպէս 1630՛ին Նիկոլ եպիսկոպոս Լեհաստանի սուրբ գրոց հռոմէադաւանութիւն ընդունելու իսկական և պաշտօնական առաջին գործողութիւնը, զոր կատարեց Նիկոլ Թորոսովիչ, կաշառքով և գաղտնի ձեռնադրուած Իլվովի եպիսկոպոսը (§ 1638), և այս է իսկապէս կաթոլիկ կամ հռոմէադաւան ըլլալու ձեւը, և ոչ թէ վարկապարագի բացատրութիւնները, որով կը կարծեն իրենց համաձիանալ չատցնել հռոմէադաւան գրողներ։ Նիկոլ ապաս էր ինքն իրեն համար ուզած դաւանութեան յարիլ, այլ Իլվովի ժողովուրդն ալ իրեն հետեւող յայտարարելու իրաւունք չունէր։ Եւս առաւել Իլվովի լատին արքեպիսկոպոսարանը իրաւունք չունէր Հայերը բանադրելու որ Նիկոլի հետեւին հնազանդին, և եւս քանզեւս անիրաւ էր Լեհաց արքունի իշխանութիւնը, որ գինուորական այժ գործածեց Հայերը իրեն դաւանութեան հպատակեցնելու, և հրաման տուաւ իւր պաշտօնեաներուն, որ հարկել խորտակեցին զրուան եկեղեցւոյն, զոր Հայեր չէին բանար Նիկոլի առջեւ, և ընկել եպիսկոպոս տաճին չէ՛ կրնար եկեղեցին, և է նա յանդգնեցաւ զեկեղեցին ամենայն ընդհանուր Քանդարանին նմէջ կային հազարէ աւելի գիրքեր հարուստ կողքերով և ոսկետուի կազմերով, և եկեղեցական զարդեր և սպասներ և զգեստներ, է հարց և է հասոց, է վաճառ և է նախնի խոհասոցց նուիրուած, եւս և վաւերական տոհմակ և նոմոս։ Այս կերպով ազգային ինչք և սուտյուածք, իրաւունք և անփականութիւնք միանգամայն

ոտնակոխ կ՛ըլլային, և ամբողջ ժողովուրդ մը լատինական սկզբունքով և գօրութեամբ բռնական հարստահարութեան կ՛ենթարկուէր։ Այս է հռոմէադաւանութեան կողմէ հռչակուած մեծ յաղթանակը։ Հռոմէադաւանները սովոր են ասկէ առաջ ալ կատարուած նզովութեանց և Լեհաստանի Հայերուն ընթացքին մէջ Հայերուն հռոմէադաւանութեան յարած ըլլալուն փաստերը տեսնել, սակայն Նիկոլի և Իլվովի գործերը լաւական են անգամ մըն ալ հաստատել մեր պնդածը, թէ Հայեր, ուրիչ դաւանութեանց հետ հաշտ ապրելով ալ, երբեք իրենց հայրենական հայադաւան եկեղեցիէն օտարացած չէին և չեն։ Լեհաց կրօնական և պետական իշխանութիւններ ձեռք ձեռքի տուած, կը հետապնդէին եբէյոնց և էլեոնաց Հայոց, և Նիկոլին չհամակերպողները էլեոնական բռնութեամբ, կ՛ենթարկէին է քանգ և է պատեան, և այսպէս կը կազմէին Լեհաստանի Հայերուն վրայ հռոմէականներուն տարած կարծեցեալ յաղթանակին դրուագը։ Նիկոլ կրցաւ բռնութեամբ տիրանալ բոլոր եկեղեցիներու և վանքերու, բայց չկրցաւ տիրանալ ժողովուրդին, զի նոյնիսկ Լատին պատմագիրներ վկայութեամբ, է քաց կոչէն է նմանէ ժողովուրդ առհասարակ, քաց է մեր կամ չերկոց տանտայէց, և սմանց ազգակցաց նեկոլէն առաջաց (ԲՌՆ. 156)։ Իսկ ուրիչ Լատին մը, միակ Արեւմտեան քահանայի մը անունը կու տայ իրրեւ Նիկոլի հետեւող (ԲՌՆ. 23)։

ՆԻԿՈԼ ԿԱԹՈԼԻԿ

ՆԻԿՈԼԻ ԲՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ

1662. Յաչատուր Կեսարացի նուիրակ, բնական բերմամբ պայքարելէ հետեւ անձ մը, երբոր տեսաւ Նիկոլի ընթացքը և պետական բռնութեամբ գործանիլը, մնծապէս վշտացաւ, զմեզ և զմօրսն է՛ր ծաղեց (ԿԱՄ. 210), չուտով Մ. Յաչի վանքը քաշուեցաւ, ուր յանկարծ կառավարութենէն պաշարուեցաւ իրրեւ լրտես։ Նիկոլ պաշտպանելու ձեւեր կ՛առնէ յուսալով որ կարենայ զայն իրեն յանկուցանել, սակայն չյաջողիր, և Յաչատուր ալ կը համոզուի, որ Նիկոլը ճանպայ բերելու համար չանքերն ալ ըլլալ պէտք է և նանէ վտակ կը դաւնային։ Լեհացիք ուղղելով օր առաջ Յաչատուրը հետացնել, յաստոյս չերթայնէ, առաքեստոյց և ցրտոյնէ, յան-

վրէ ձեռն՝ օրն կաղանդի, հանին զնա խելծ և լալ, որով 1631 տարեգլխին կը թողու Ամաչատուր Լեհաստանը և ուղիղ էջմիածին կու գայ, և իրաց վիճակը կը ներկայացնէ կաթողիկոսին ու եպիսկոպոսներուն, որոնք ցաւոքին սրտէ, և աղաւաղեալ աչօք տեսին զան ազգին Հայոց՝ որ էին յիւրում տալտկի (ԴԱՎ. 291)։ Արդ, մեծ Մովսէս կանուխէն հռոմէադաւանութեան յարած մէկն էր, ինչպէս հռոմէականք կը կեղծեն, ընդհակառակն ուրախութիւն պէտք էր զգացած ըլլար, և ոչ սուգ ու տրտմութիւն։ Սրբոց նուիրակն ալ հեռացաւ, Նիկոլ ա՛լ աւելի համարձակութեամբ իւր բանութիանց տապարէզ դրաւ, և այնպիսի գործերու ձեռնարկեց, որ կը յիշեցնէին զԵլիզաբեթ, զոր կը կրէին քրիստոնեայք ի ժամանակս կոտորէ ընթացողին։ Քահանաներն ու գլխաւորները պէտք է քանդ, և 300 կամ 400 դուրուչ տուգանքով կ'արձակէր. մեռելները թաղելու և վրան քար ձգելու արգելք կը դնէր՝ և հազիւ թէ մեծ գումարներով կը ներէր. մկրտութիւն և պսակ չէր ներեր, եթէ հռոմէականութիւն չընդունէին, կամ եթէ ծանր տուգանք չի վճարէին, ուստի գալանի ուրիշ քաղաքներու մէջ ընել կը պարտաւորուէին. մեռելները օրերով անթաղ կը մնային, և փայտէ դագաղի մէջ կպրտաթիթով ծածկուած ցուրտ տեղեր երկար աւուն կը պահուէին (ԴԱՎ. 292), 15 և 16 տարեկան անկնունքներ կը գտնուէին, չատ տղայք անկնունք կը մեռնէին, և հոգեվարներ առանց հաղորդութեան կը վախճանէին։ Իլվոյիք կը պնդէին իրենց վայելած արտօնութիւններուն վրայ. յոյց կաթողիկոսն էր աղաւաղեալ գաւանութեան հաւատոյ, ուստի մանաւանդ տուն մը եկեղեցի վերածելին, և Նիկոլէ գրաւուած եկեղեցիներէ մին ետ դարձնելը պահանջեցին, որ Սիգիսմոնդոս Գ'ի օրով զրացուեցաւ (ԲՈՆ. էջ), և երբ վաստիալաւ է՛ է հրամայուեցաւ (ԲՈՆ. 158), Նիկոլ անոր ալ ուզից դիմադրել, չէ զգոհէ սրբազանին վաճաց Աթոռոյ ընէր նոր, կը կարծէ Լատին պատմիչը (ԲՈՆ. 23)։ Բայց թագաւորը հէնցել և շաղաղանել չսմելոյ ետ կեցաւ, կ'ըսէ, և այլևս չուզեց ճան է ջրջին առնել (ԲՈՆ. 24)։ Նիկոլի պատճառաբանութիւնը եղած էր, սրբեղիզոսոս եմ ես կոչուիլն, ուր կրեմ գալ եկեղեցի ի է յեհեղաձայոց (ԲՈՆ. 24)։ Կ'երեւի թէ կաթոլիկութիւնը կը ներէ եղեր իւր իսկ ժողովուրդը կեղեքել, անիրաւի խոչտանգել, և հաւատքին չներած բանը՝ դրամի փոխարինութեամբ ներել։

1663. Իլվոյիք կանխած էին պատուիրակ յղել Մովսէս կաթողիկոսին, Սիմոն անուն քահանայ մը և երեւելի աշխարհական մը (ԴԱՎ. 293), որովհետեւ Ամաչատուր նուիրակին էջմիածին գառնալէն ետքը ձայն մը չէր եղած։ Պատուիրակներուն ձեռքը տրուած նամակը 1631 յուլիս 25 թուական կը կրէ (ԲՈՆ. էէ), ուր կը նկարագրուին Նիկոլի գործած բռնութիւնները, ինչպէս վերեւ յիշեցինք. քահանայից գանակոծութիւնները ու բանտարկութիւնները և բռնադատեալ դաւանափոխութիւնները, տեղական իշխանութեանց կողմէն գտած պաշտպանութիւնը, և գոնէ եկեղեցի մը իրենց թողլու համար ըրած խնդիրներուն զլացումի հանդիպիլը, այն սկզբունքով թէ ամենայն եկեղեցի հնազանդին եպիսկոպոսին, որպես իշխանատրէն (ԲՈՆ. էը)։ Այդ գրութեան մէջ Նիկոլ, չարունակ անէծք և վիպէսոպոս անուններով կը յիշուի, որ ժողովուրդին ներքին զգացումը կ'արտայայտէ։ Ահա այդ պարագան էր, որ Մովսէսը ստիպեց գրել ընտիր խոհեմանս և լի իմաստութեամբ, առ թագաւորն Լեհաց և առ նորին իշխանն, և առ արքեպիսկոպոսն Իլվոյ որ յաղէն Ֆրանկաց, նախ առ քոքն (ԴԱՎ. 293)։ Մովսէսի նամակներուն նպատակը, ոչ հպատակութիւն յայտնել էր, և ոչ հռոմէադաւանութեան սկզբունքներու հաւանութիւն տալ, ինչպէս հռոմէականներ կը սիրեն մեկնել (§ 1650), այլ նա ողջ լեզուով և չահեցողական ոճով կը խնդրէր, սրբազնագոյն քահանայապետն, և ընդհեղէ զեկեղեցին յինեանս (ԴԱՎ. 294)։ Այս նամակներուն վրայ տրուած է վճռական է՛ի հրամանը, եկեղեցիներէն գոնէ մէկը հայադաւանները թողու, ինչպէս յիշեցինք (1662). իսկ նամակին մէջ յիշուած եկեղեցի մը տալու զլացումը, տեղի ունեցած էր վճռական նախորդին Սիգիսմոնդոս Գ'ի օրով, որուն մահը հանդիպած է 1632'ին սկիզբները։ Ձիչդ

այդ միջոցին կը հանդիպի Յովհաննէս Խուլի Լեհաստան գանուիլը (§ 1642)։ Կ-Պոլիսէ մեկնելուն ձիշդ թուականը չենք գտներ, բայց գրուած է թէ 1631'ին անցնէ ընդ Լեհաստան, 1631 դեկտեմբեր 1'ին Իլվովի մէջ կ'աւարտէ ընդօրինակութիւն մը, և 1632 ապրիլ 18'ին այնտեղ կը գտնուի Սիգիսմոնդոսի մահուան օրը (11 ԱՄՍ.18), որ ըսել է, թէ ձիշդ Նիկոլեան տարօրինակ գործունէութեան օրերուն ներկայ եղած է Լեհաստանի մէջ, թէպետեւ ոչ Դավրիժեցին և ոչ Լատին պատմիչներ անոր անունը չեն տար իրենց յիշատակներուն մէջ։ Խուլին ուղղութիւնը ծանօթ ըլլալով իր նախընթաց գործերէն, և մանաւանդ իր առաջին կային բռնած ընթացքէն, պէտք է ընդունիլ թէ քաջալերիչ եղած է Նիկոլի տարադէպ և անճաշ գործերուն, մինչ իր 78 տարեկան հասակը, և ժողովուրդի հոգով զբաղած անցեալը, պէտք էր իրեն թելադրէին խաղաղութեան և հաշտութեան միջնորդ ըլլալ, և մոլեռանդ Նիկոլի ապօրինի բռնութեանց առջեւն առնել։ Նախկին պատրիարք և ծերունի եպիսկոպոս մը չէր կրնար իբր անծանօթ մնալ քաղաքի մը մէջ, ուր իբր երկու տարի աւուն անցուցած է. ուստի անոր անունին չուրջը Դավրիժեցիին պահած լռութիւնը, իբր անարգական զանցառութեան նշանակ պէտք կ'ըլլայ մեկնիլ, և չենք գիտեր ինչ մեկնութիւն տալ Լատին պատմիչներուն ալ պահած լռութեան, բայց եթէ Խուլին կարեւորութիւն և նշանակութիւն չվերագրելնուն։ Ասիկայ յայտնապէս կը հետեւի Իլվովցի Հայ քահանայի մը գրածէն, թէ Խուլ պարբերաբար Սթամպուլէն, զոր մէկ մեկնէ եթէ տալ ի Լվիւ, ընկեր ընդեր Լեհաստուրէ, և իվիւ գործէն Նիկոլ, և յոր տեղ նորէ գՀայս հայոյէր։ Թէպետ կ'ըսէ թէ Լեհաց եկեղեցականներէն և իշխաններէն, նոյնիսկ թագաւորէն և թագուհիէն պատիւներ տեսաւ, սակայն այսու հանդերձ Լատին պատմիչներուն լռութիւն պահելը, կը հաստատէ մեր տուած մեկնութիւնը։ Խուլին զգացումներուն ինչ ըլլալը ճշդելու համար, չատ որոշիչ են իր իսկ խօսքերը։ Երբոր Հայեր իրեն կ'ըսեն. Մեք եմք Լեհաստուրէ, հնազանդ ձեր կամացդ եմք, ինքը սովոր է եղեր պատասխանել. Կամացդ ալ է, իմ պարտս տան ընդեռ է, ամեն Հայոց աշխարհն իմ է (11 ԱՄՍ. 20-21)։

1664. *Կաթողիկոսի մասին Խուլին բուսծր կը հաւաստէ, թէ Մովսէս ոչ համամիտ էր հռոմէական դաւանութեան և ոչ կամակից հռոմէական գործունէութեան, մինչ անոր պատկին գրած նամակին զօրութեամբ բոլոր հռոմէական դրդոներ, Զամչեան, Պալճեան, Ըստկարեան, Ագարեան, Գալէմքեարեան և բնկերք՝ կը սիրեն կարծել, թէ Մովսէս ողջ-ֆառոտի, իրենց միտքով՝ լատինամիտ էր, և Թուրքիոյն Նիկոլ ըրածներուն հաւան (ՔՍՏ. 380)։ Բայց բոլորովին ուրիշ նպատակով գրուած էր Մովսէսի նամակը, ինչպէս վերեւ յիշեցինք, այսինքն Լեհաստանի հայադաւանները չեղեալու համար։ Այդ գիրը տարբեր միտքի տանիլը՝ դիւրաւ կ'ըմբռնենք Սիմէոն Սերաստացիին դրչին տակ, որ իր Սսոյ աթոռը պաշտպանելու նպատակով ամէն տեսակ նախատական լուտանքներ կը գրէր Էջմիածնի դէմ. բայց չէինք ուզեր նոյն հոգին տեսնել նաեւ անոնց մօտ, որոնք լուրջ գրողի կերպարանքով կը պարծին։ Սերաստացիին գրածին համեմատ, Մովսէսի նամակը Հռոմի մէջ կը տեսնէ Խուլը, և էրեւալ ջրինդն՝ ի Սթամբուլ յղել կ'ըլլայ, ուսկից ինքն Սիմէոն ալ ընդօրինակելով պահած եմ կ'ըսէ (04 ԱՐՐ.723)։ Կը յիշէ նաև թէ Խուլին Հռոմ գրկած օրինակին լուրը Գրիգոր Կեսարացիին ալ կը հասնի, որ մեղադրական գիր մը կ'ուղղէ Մովսէսի. իր նախկին ձեռնասունին։ Սակայն կեսարացին Մովսէսին գրած թուղթը տեսած եւ պարունակութեան տեղեակ եղած չէ, որովհետեւ պարզապես անախորժելի համբաւ և պղտմեցոյ գրոյց և ցասուցին ասացուածս լսելով կը գրէ, իբր թէ Մովսէս Քաղկեդոնի ժողովն ալ ընդունած ըլլայ, և կամ Նիկոլի ու Խուլի նման պաշտօնապէս հռոմէական դաւանութիւան յարած ըլլայ (ՁԱՄ. Գ. 611)։ Բայց այսպիսի յայտարարութիւն մեր գոյութիւնն չունէր, և թէպէտ պատմէնը մէջտեղ չկայ՝ որ մօտէն զննենք, սակայն դիւրին է մակաբերել, թէ պապին անձին գովեստներ և Հռոմի աթոռին փառաբանութիւններ էին, յորս մերայինք կ'աւտտա-

նային չափազանցելու աստիճան, երբոր Հռոմի կողմէն պաշտպանութիւն կամ օգնութիւն կը խնդրէին կամ կը յուսային։ Ներկայ պարագայից մէջ ալ Մովսէսի Լեհաց թագաւորէն և Հռոմի պապէն խնդրածն ու ապասածը՝ իւր ազգակիցներուն և դաւանակիցներուն պաշտպանութիւնն էր, որպէսզի անոնց վրայ ստիպում և բռնութիւն չգործուի դաւանութիւննին փոխելու, և հռոմէականութիւն կամ լատինականութիւն կամ՝ քաղկեդոնականութիւն ընդունելու, այլ ազատ թողուին իրենց հայրենական դաւանութեան մէջ, որ կատարելապէս ուղղափառ և ճշմարիտ է։ Մովսէս իրաւամբ կրնար աւելցնել, թէ Հայ եկեղեցին հիմնական և էական կէտերուն մէջ հռոմէական դաւանութենէն տարբեր չէ։ Միանգամ ընդմիշտ պէտք է ըմբռնեն Հայ եկեղեցւոյ հակառակորդներ, հայազգի ըլլան թէ օտարազգի, որ Հայկական եկեղեցւոյ ներողամիտ և թոյլատու հոգին, ուղղափառութիւնը՝ քրիստոնէական ճշմարտութեանց և քրիստոսական տնօրինութեանց էական կէտերու վրայ կը հիմնէ, վարդապետութեանց երկրորդական կէտերու մէջ իւրաքանչիւր եկեղեցւոյ ազատութիւնը կը յարգէ, անոր համար ուրիշ եկեղեցւոյ հետ հոգեւոր հաղորդակցութենէ չխորշիր, անոնց արտաքին առաւելութիւններուն և աշխարհային կարողութիւններուն վկայելու չդժուարանար, և մինչեւ մէկ աստիճան յարգանք ընծայելէ ալ չքաշուիր։ բայց ոչ իւր եկեղեցւոյ հնաւանդ ուղղափառութիւնը կը զոհէ, և ոչ ուրիշ եկեղեցւոյ իւր վրայ իշխանութիւնը կ'ընդունի։ Երբոր այդ կէտերը ըմբռնուին, չատ դիւրին կըլլայ, մեր կաթողիկոսներուն և մեր վարդապետներուն ըսածներուն և րսածներուն իսկական միտքը թափանցել, և քաշկրտութիւններով չխեղաթիւրել։

1665. *Մովսէս Տաթեւացիի կաթողիկոսական գործունէութիւնը չատ համառօտ ձեւով կը նկարագրեն մեր պատմիչները։ Ասոնք միայն, սակայն քիչ չեն ձեւ իւր արդիւնաւորութիւնը որ չատ կանուխէն սկսած էր, և կաթողիկոս չհռչակուած՝ կաթողիկոսական գործունէութեամբ կը փայլէր։ Մովսէս վախճանեցաւ 1632 մայիս 14'ին (ԴԱՎ.·240), բայց չէ ըսուած թէ ինչ պարագայից մէջ։ Տարիքը չատ մեծ պէտք չէ եղած ըլլալ, եթէ Գրիգոր Սրապիոնի կաթողիկոսութեան միջոցին, չուրջ 1600'ին (§ 1584), իբր 15 տարեկան աբեղայ ձեռնադրուեցաւ (§ 1603), որով մահուան թուականին մերձաւորապէս յինանմեայ եղած կ'ըլլայ։ Ախտաւոր մըն ալ եղած չըլլալուն նչան կը սեպենք տոկուն և անխոնջ աշխատութիւնը և չարքաշ կեանքը մինչեւ կեանքին վերջը, որով պատահական ծանր հիւանդութիւն մը զայն տապալած պիտի ըլլայ, երբ գործով կամ հանգիտի նպատակով կը գտնուէր Երեւան, Ս. Աստանիայի վանքը, իւր սիրեցեալ և նուիրական օթարանը։ Երեւանեցիք, որոնց հետ այնչափ սերտ կապուած էր իւր առաջին գործունէութեան օրերէն սկսելով, ուզած պիտի չըլլան յետ մահուան ալ անկէ բաժնուիլ, որ թաղումը կատարուած է նոյն քաղաքին մէջ, և գերեզմանն ալ դրուած է ժողովրդական գերեզմանատան մէջ կողեռ բլուրին վրայ, որ այսպէս կոչուած է Ցովհաննէս Կողեան վարդապետին գերեզմանէն (§ 833), և որուն մօտ թաղուած էր նաեւ Մելքիսեդեկ Վժանեցին, որ նախընթաց 1631 տարին վախճանած էր (ԴԱՎ.·309)։ Մովսէսի վարդապետական գործունէութեան հետ կաթողիկոսական արդիւնաւորութիւնը, և բարեկարգական ջանքերուն հետ չինարար աշխատութիւնները՝ փոքրիշատէ պատմեցինք։ բայատրեցինք նաեւ իւր հաստատուն և անվրդով ուղղափառութեան հաւատքը, ինչպէս որ Հայաստանեայց եկեղեցին կ'իմանայ և կը դաւանի։ Իսկ իւր անհատական և առաքինական առաւելութեանց համար կը խօսին ամենուն սիրելի և պաշտելի դարձած իւր գործերը, որով բացառիկ կերպով մը ամենուն անձկալի եղաւ և ընդհանուր միաձայնութեամբ կաթողիկոսական աթոռ բարձրացաւ։ Իրեն համար վկայուած է նաեւ, թէ էր [illegible] և ողորմած, և թէ գործաւոր էր [illegible] (ԴԱՎ.239)։ Իւր կաթողիկոսութեա-*

ՄՈՎՍԷՍԻ ՄԱՀԸ

նը Հայ Եկեղեցւոյ համար դարագլուխ մը կը կազմէ ըսինք (§ 1648), և իրօք ալ իրա-
մով կը փակուի այն աղետալի և եղկելի
շրջանը, որ ամէնէն աւելի յուսալից պայ-
մաններու ներքեւ սկսաւ՝ աթոռոյն փո-
խադրութեան և կիրակոս Վիրապեցիի ընտ-
րութեան առթիւ, այլ որ յուսահատ եղք
մը ունեցաւ, չատ մը իրարու չդիմացուած
արտաքին և ներքին պարագաներու պատ-
ճառով։ Շատ ցանցառ մխիթարական ար-
դիւնքներ ներկայացց մեզ 1441'էն մինչեւ
1629, մօտ երկու դարերու ժամանակամի-
ջոցը, աւերւի աղետալի դարձած՝ աթոռա-
կիցներու դրութեան մուտք գտնելովը և
ընդարձակ զեղծումներու դուռ բանալովը։
Միակ օգտակար հետեւանք ունեցաւ ա-
թոռին յաջորդական և անընդհատ չարու-
նակութիւնը պահպանելուն մէջ, որ կըր-
նար թերեւս վտանգի ենթարկուիլ, ամե-
նաժուարին պատահարներու ներքեւ՝ եթէ
կաթողիկոսի մահուան պահուն յաջորդը
պատրաստ չգտնուէր։ Մովսէս իրեն աթո-
ռակից չառաւ և առնել ալ չմտաբերեց, և
անով վերջ տուաւ այդ տարադէպ սովո-
րութեան։ Նպատակնիս ներբողական մը
հիւսել չըլլալով, կանգ կ'առնենք մեր նկա-
տողութեանց մէջ, դիտել տալով միայն այն
մնծագոյն և բացառիկ պատիւը, զոր իրեն
ըրած է և կ'ընէ Եկեղեցին, անոր անունը
յիշելով հանդիսաւոր պատարագի մէջ, և
ամէն հովս և հովսափեփոյ կարգին, և
կցելով զայն ուրիշ լուսաւոր անունի մը
հետ, և զոյգ յիշատակելով Գէյգոէ և Մա-
ռէի Յոհաննոյեաց անուններըը (ԺԱՄ. 591),
զի Մովսէս ալ Գրիգորի համանման, եղաւ
լուսափոյ փոնս Աբրահան (ԴԱՎ. 239), որչափ
ալ ոչ ծննդոյցը և ոչ յայտմաւուրքը չեն
արձանագրած տակաւին նորա անունը։

Տ. ՓԻԼԻՊՊՈՍ Ա. ԱՂԲԱԿԵՑԻ 1633 - 1655

ՓԻԼԻՊՊՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

1666. *Մովսէս Գ Տաթեւացիի մահուամբ տեղի կ'ունենար աթոռոյ պարապուրթեան երեւոյթը, որ երկար տեւնելէ իվեր ճըշմարտուած չէր, զի կաթողիկոսին մահուան վայրկեանին երիցագոյն աթոռակիցը ժառանգական ձեւով գահակալ կը դառնար։ Աթոռոյ պարապութեան հետ ընտրութեան գործողութեան պէտք կ'ըլլար, որ է ընել կը վերակենդանանար հայրապետը ընտրելու իրաւունքը, որ խափանուած էր քանի որ նոյն ինքն կաթողիկոսներն էին, որ իրենց կամքով աթոռակիցներ կ'որոշէին և կ'օծէին, և անոնց կամքովը միայն կը լրանար նոր կաթողիկոսի ընտրութեան գործը։ Պէտք չէ ուրեմն անյիշատակ թողուլ եկեղեցական բարեկարգութեան և ժողովրդականն իրաւանց այդ մնծ վերակենդանութիւնն ալ, իրրեւ Մովսէսի գլխաւոր արժանիքներէն մին։ Մայրաթոռին միաբանութիւնը և աղգին երեւելիները՝ ունակութիւն ստացած ըլլալով նախորդին կամքով յաջորդը որոշուած տեսնել, Մովսէսը վերտանգաւոր վիճակի և օրհասական ժամի մէջ տեսնելով, ուզեր էին անոր կամքը իմանալ յաջորդին նկատմամբ, և նա մատնանիշ ըրեր էր իւր աշակերտներէն արժանաւորագոյնը, Փիլիպպոս եպիսկոպոս Աղբակեցին։ Սակայն եպիսկոպոսներ չհամարձակեցան իսկոյն զայն յառաջ կոչել և օծումը կատարել, այլ հանգուցելոյն կամքը յարգելով հանդերձ, պէտք զգացին ազգային ընտրութեան պայմանը լրացնել, և ամէն գլխաւոր կեդրոններ եղելութիւնը հաղորդելով անոնց հաւանութիւնը ստանալ։ Ծրիւ ժողովի ձեւ մըն էր, որ այս կերպով կը կատարուէր, և մենք իրաւունք ունինք այդ կէտն ալ նորէն Մովսէսի արդիւնք համարիլ, և անոր որոշ հրահանգին հետեւանք ըսել, զի անշուշտ անմիջական օծման կ'անցնէին միաբանք և մնծամնծք, եթէ բացարձակ եղած ըլլար Մովսէսի կամքը։ Այնչափ մնծ էր պաշտելութիւնը անոր անձին չուրջը։ Մովսէսի մահուան օրէն, 1632 մայիս 14'էն, ճիշդ ութը ամիսներ*

անցան մինչեւ 1633 յունուար 13, մինչեւ որ յետոփանչէթ թելչաց առաւելչին ղնուղին վիայական, դի Փիլիպպոս վերադարձ լեցի կոնդիկո, և Առաւածայայտնութեան ութօրէքին, որ Մովսէսի օծման ալ չորրորդ տարեդարձն էր, կաթողիկոսական օծումը կատարուեցաւ, և ապէս Հայկազեան քնչդրեալ ղաւրծոցան, դի փոխանակ հօր եկաց որդի՝ էլեան հանուր ազգի (ԴԱվ.·242)։ Զմոռնանք ուրիշ մէկ նշանակութիւնն ալ, զոր ընդհանուր հաւանութեամբ կատարուած ընտրութիւնը կը ստանար, որովհետեւ տակաւին կենդանի էին Դաւիթ և Մահակ, երբ Փիլիպպոս կաթողիկոս կ'օծուէր, և այս կերպով անգամ մըն ալ կը հաստատուէր երկուքին ալ ազգային և եկեղեցական տեսակէտով կաթողիկոսական իրաւունքէ հեռացած կամ հեռացուած ըլլալը։ Աթոռոյ պարապութեան միջոցին տեղակալութիւնը հարկաւ վարած էր միաբան եպիսկոպոսներէն մին, քէպէտ Դավրիժեցին չէ յիշած այդ պարագան, և ամենայն հաւանականութեամբ նոյն ինքն Փիլիպպոս է եղած տեղակալը, և գուցէ այս իսկ է Մովսէսի բերանը դրուած խօսքերուն իմաստը, թէ ես զՓիլիպպոս վերադարձուկ կոմիմ լինել փոխանորդ իմ, և յաջորդ արդ ալոտոյն (ԴԱվ.·242), այսինքն է, փոխանորդ իբրեւ տեղակալ, և յաջորդ իբրեւ պահակալ։

ՓԻԼԻՊՊՈՍԻ ՆԱԽՔՆԹԱՑԸ

1667. Փիլիպպոս քնիկ էր Աղթակ գաւառի էրնկան գիւղէն։ Շուրջ 14 տարեկան եղած աստեն նոր բացուած Մեծ-Անապատին աշակերտելու կ'երթայ, բայց չընդունուիր վասն պղտկան հասակին և անմօրուք ըլլոյն, բայց նա կը խնդրէ, և ըսիւս որ Անապատին մօտերը է դէզ մայրեաց աստեն կ'անցընէ, մինչեւ որ Սարգիս Պարոնտէր կը ստիպուի զայն ընդունիլ, բայց նորէն Անապատէն ներս չառներ, այլ կը յանձնէ Մովսէս Տաթեւացիին աշակերտութեան, որ փոքրաքանակ ըլլալէ յաչեցրեն (ԴԱվ.·241)։ Եղելութիւնները բաղդատելով շուրջ 1609'ին կրնանք դնել Փիլիպպոսի դիմումը (§ 1620), և 1593'ին անոր ծնունդը, որով 40 տարեկան եղած կ'ըլլայ կաթողիկոս օծուած տարին, և կը համապատասխանէ 1655'ին 63 տարեկան վախճանելուն։ Երբոր կը հասնի է փէերէյսաարդոնեան կը ձեռնադրուի աբեղայ, կամ կոսակրօն հոհանայ, և ուսմանց և ընթերցուածոց մէջ յառաջանալով, վարդապետական իշխանութիւն կընդունի նոյն ինքն Մովսէսէ, և նոյնէն եպիսկոպոս ալ կը ձեռնադրուի 1630'ին (ԴԱվ.·241)։ Անգամ մը միայն առիթ ունեցանք յիշել Փիլիպպոսի անունը, երբ իբր նուիրակ վան կը գտնուէր 1629'ին, և կը մասնակցէր Սահակի հետ բանակցութեանց (§ 1655)։ Հաւանաբար նոյն ինքն է փոխէի Փիլիպպոս պոլէ (ՀԱՑ 623), որուն խնդրանօք գրած է Ներսէս Մոկացի իւր տաղը ի գովեստ սանոնց՝ որ եղեն սիւներ Աստուածոյ (ՀԱՑ·618), որ այնչափ սիրելի եղած էր խնդրողին և գրողին հաւասարապէս։ Եթէ Մովսէսի կաթողիկոսական չրջանին մէջ չատ յիշատակութիւններ չեն ըլլար Փիլիպպոսի գործունէութեան, պատճառն այն է, որ անմիջապէս կապուած էր Մովսէսի անձին, իբր անոր անբաժան գործակիցը, և առիթ չունէր զատաբար յատուկ գործեր կատարելու։ Եւ իրաւացի ալ էր այդ կապակցութիւնը, քանի որ ինչպէս յիշեցինք, իւր առաքելութեան առաջին քայլէն Մովսէսի հետ գտնուած էր չարունակ։ Այդ սրտակից գործակցութեան հետեւանքն է նաեւ, որ Փիլիպպոս Մովսէսի յաջորդելով, նոր բան մը ընելու չձեռնարկեց, այլ յամենայնի և լուտ ամենայնի ջանաց լրացնել Մովսէսի սկսած՝ բայց արագահաս մահուամբը լրացնել չկրցած ձեռնարկները (§ 1645), որոնց նորէն մանրամասնութեանց մտնել աւելորդ կը դատենք։

ԴԱՒԻԹԻ ՄԱՀԸ

1668. Ժամանակին նշանաւոր դէպքերը քաղելու սկսած առենիս, առաջին պիտի յիշենք Դաւիթ Դ վարչապետեցի կաթողիկոսին մահը, զոր Ասկան վարդապետ յիշած է, Դավրիժեցիին պատմութեան իւր տպագրած օրինակին մէջ, իբր զի նոյն յիշատակութիւնը չէ տեսնուած ակզբնագիր օրինակներուն վրայ։ Ըստ այսմ կը տեղեկանանք թէ Փիլիպպոսի յաջորդեցրեցաւ ած, ոհաա Դաւիթ յամենայն օքսոպոսէ (ԴԱվ.·338)։ Դաւիթ աթոռակից կաթողիկոս նշանակուած էր

1584'ին (§ 1575), և մահն ալ Փիլիպպոսի առաջին տարիին, այսինքն 1633 օգոստոսին դնելով, 49 տարի կաթողիկոս անունը կրած կ'ըլլայ, բայց կրնանք ըսել, առանց երբեք իսկապէս եւ իրապէս կաթողիկոսութիւն վարած ըլլալու։ Մինչեւ 1590 պարզապէս աթոռակից էր (§ 1581), և գահակալութեան սկիզբը Մելքիսեդեկ Գառնեցին իրեն աթոռակից ընտրելով, իր վրայ բռնակալ տիրապետող մը առեղծած եղաւ, որ չուտով ամէն գործունէութիւն և ազդեցութիւն ձեռք անցուց, և Դաւիթ պարտաւորուեցաւ քօղարկեալ կացութեան ներքեւ մնալ։ Մեծ գաղութին հետ Մայրաթոռէ հեռացաւ, և Աղթամար քաղաքը ամփոփ եւ նեղ չրջանակի մէջ սպրեցաւ։ Եթէ պատահաբար ազգայիններու պնդելուն վրայ (§ 1606), կամ Մելքիսեդեկի կալանաւորութեան միջոցներուն (§ 1610) Մայրաթոռ դարձաւ, գործերուն տիրանալու կարողութիւնն ու ժրութիւնը չունեցաւ, և վերջապէս արքունի հրամանով Մելքիսեդեկ զօրացաւ ու տիրացաւ (§ 1616), մինչև իսկ իր կամքով առանց Դաւիթը սպանելու ապրուռը Սահակի փոխանցեց (§ 1633)։ Զանց կ'ընենք Սրապիոնի և Աւետիսի աթոռակցութիւնները, որոնք կացութեան վրայ մեծ փոփոխութիւն չբերին։ Սահակ ալ թէպէտ իր տիրապետ առանձնակ գործը, բայց իսկապէս չտիրացաւ անոր, և վերջապէս 1629'ին ինքն ալ Դաւիթին ալ, հրաժարեալ և ձեռնթափ նկատուեցան, իրաւասութենէ հեռացան կամ հեռացուեցան, և օրինաւոր գահակալութիւնը Մովսէսի անցաւ (1654)։ Դաւիթի աննշանակ գոյութեան հակառակ, մենք զայն իբրեւ գահակալ նչանակեցինք 1590'է մինչեւ 1629'ի սկիզբը, 39 տարիներու համար, պատկառ կալով միայն պաշտօնական և կանոնական պահանջներուն, որովհետեւ հնար չէր Դաւիթի պաշտօնական իրաւասութեան առնչուած՝ Մելքիսեդեկն ու Սրապիոնը ու Սահակ իբր գահակալներ ընդունիլ, և սովորական ցուցակին համեմատ 1593'էն առաջինը, 1603'էն երկրորդը, և 1624'էն երրորդը բան և գահակալ կաթողիկոսներու գաւազանին անցընել։ Սխալ է նաև որ Մելքիսեդեկ, չեմ ընդունիր Դաւիթ, թողնելով մեզ 7, կաթողիկոսութիւն վարած ըլլայ (ԺԱՄ. 637), զի Մելքիսեդեկ Դաւիթէն 7 տարի առաջ մեռաւ կամենից քաղաքը (§ 1639)։ Դաւիթ ընդհանուր առմամբ, եթէ չբսենք անուանական և թարմատար, գոնէ անգործ և ապիկար կաթողիկոսի մը նկարագիրը կը ներկայէ, և չարժէր որ աւելի երկարենք իր կաթողիկոսութիւնը գնահատելու կամ իր գործունէութիւնը կշռադատելու համար։ Ինչպէս անընդհատ ապրեցաւ, անընդհատ ալ մեռաւ Դաւիթ Աղթամարի առանձնութեան մէջ, իննսունը անցուցած տարիքի մէջ, առանց յիշատակաց արժանի բան մը թողլու իր ետեւէն։ Իր դաւանական ուղղութեան վրայ կասկածի տեղի չունինք, քանի որ միչտ Նոր-Ջուղայի գաղթականութեան մէջ սպրեցաւ, որ միչտ ամուր եղած է հայագաւան ուղղափառութեան վրայ։ Դաւիթի ալ պօղոս ե պապին գիր մը գրած ըլլալը կը յիչեն հռոմէականք, սակայն նոյն իսկ այդ նամակին տրուած 1605 թուականը, որ պատերազմի և քաղաքական տագնապներու տարին է (§ 1585), կեղծակարծ կը ցուցնէ այդ նամակին գրութիւնը։ Մեւս կողմէ եթէ Դաւիթ պատրպոնց էրոց առթիւ գրեց, այս եղած կ'ըլլայ իր բուն նպատակը, և ոչ պատուհերեան և հպատակութեան յայտարարութիւնը (ՁԱՄ. 600)։ Բայց այդպիսի նամակներուն նչանակութեան վրայ բաւական խօսեցանք։

1669. Ինչ հաքը ուրիչ խօսուած անձ մըն ալ կը կնքէր իր կնքանքը՝ հեռու երկրի մը մէջ, Ծովհաննէս Խուլ պատրիարքը Հռոմի մէջ։ Վերջին անգամ զինքն տեսանք Իվովի մէջ Նիկոլի օգնական և Հայերը բոնի կաթոլիկացնելու ձեռնարկին գործակից (§ 1663)։ Լեհահայեր չկարենալով տեղական իշխանութիւններէ պաշտպանութիւն գտնել, կարծեցին որ կարենան պապին կողմէ պաշտպանուիլ, և Մովսէս պապին գրուած նամակին հետ (§ 1664), որ իրենց ղրկուած էր, պատուիրակութիւն մը յղեցին Հռոմ (ԹԱՎ. 294)։ Նիկոլ կասկածելով որ մի՛ գուցէ յաջողին՝ իրեն դէմ ամբաստանութիւններ կուտակով, ինքն ալ փութաց և տեղն Հռոմ երթալ, Խուլն ալ ընկերա-

ցաւ Նիկոլի պաշտպանութեան համար, և Հռոմ հասան 1632'ին վերջին ամիսները։ Այս տեղ է որ Խուլը, թէպէտ մինչ այն աստեն հռոմէականութեան յարած, այլ ոչ պաշտօնապէս կաթոլիկ դրուած, այս անգամ եկեալ հասեալ այս սոքօք պեպէ, հնազանդեցաւ սրբոյն քաքէ (11 ԱՄՍ·24), կամ լատիներէն տապանագիրին համեմատ, հաստատը գտանել ուզեց նոյն խոկ հաստոյ սէհոէին մէջ, հաստոյ ֆերթոյն իշխողն Ռոբեռտ Ռոքինհըմէ սէջ (11 ԱՄՍ·25)։ Այս վկայութիւնը կը հաստատէ թէ Խուլը մինչ այն աստեն կաթոլիկ չէր եղած, որչափ ալ կաթոլիկութեան միտեալ ըլլար, այլ պաշտօնապէս կը մնար հայադաւան եկեղեցւոյն մէջ։ Դաւանութեան փոփոխութիւնը ներքին մտածմունքով չըլլանար, պաշտօնապէս գործողութեան պէտք ունի, և Խուլը անոնք կատարեց Հռոմի մէջ 1632'ին։ Հռոմի որոշումն ալ, ինչպէս դիւրին է մակաբերել, Նիկոլին նպաստաւոր եղաւ, և անիկա Տղէյէթոյէն ներկայացան Հայոց և յանդղեցին դէպ ի նոցա (ԴԱվ·294)։ Հայեր յուսաբեկ և Նիկոլ յաղթական Իլվով դարձան, իսկ Խուլը Հռոմ մնաց ուխտանի մօտ տարիքին մէջ, պապին կողմանէ ստանալով այն դիւրութիւնները, զոր յոյս չունէր գըտնել կ-Պոլսոյ մէջ, և այլեւս հանդարտ կեանք մը անցուց։ Կալանոսի վկայութեամբ Խուլը զանազան գրուածներ թողած է լատիներէն ուղղութեամբ և հայերէն լեզուով, որոնք Հայաստան մէջ երբեք ճանչցուած չեն, և ձեռագիր կը պահուին կ'ըսուի Հռոմի Բրոքականտայի դիւանին մէջ (11 ԱՄՍ·21)։ Կալանոս Խուլին գրածները իբր զօրաւոր փաստ կը նկատէ լատին դաւանութիւնը ջատագովելու, թէպէտ ասով աւելի ակարացուցած կ'ըլլայ իր դրութիւնը։ Գրուածը ուղղուեր է ընդդէմ Հայոց, իբր ջոփեվօ-Ռիֆ երկոց բնութեանց Քրիսթոսի, և է անշուշտ պապէն գտած ընդունելութեան փոխարէնը։ Դիւրաւ կը հասկացուի Խուլին այսպիսի գրուած մը պատրաստելը, բայց անհասկանալի կը մնայ անոր հեղինակութեամբ Հայոց եկեղեցին դատապարտելու և լատին եկեղեցին պաշտպանելու ձգտող Կալանոսի և հետեւողներուն մտայնութիւնը (11 ԱՄՍ·22)։ Երկար չեղաւ Խուլին Հռոմի մէջ անցուցած կեանքը, ուր հասած էր 1632'ին վերջերը, և մնաւ 1634 յունիս 13'ին (11 ԱՄՍ·24), որ հաւանաբար նոր տոմարով նշանակուած է, և հին տոմարին յունիս 3'ին կը պատասխանէ։ Դերեզմանը Հայկերուն հիւրանոցին կից Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցւոյն մէջն է հայերէն և լատիներէն տապանագիրերով, բայց տարբեր խմբագրութեամբ։ Լատիներէնին մէջ ըսուած է, թէ քրիստոնէութեան պաշտպանէն ոտանաւորին մէջ, էքսհայբ և հովիւ և վերապետ, ծողովրդեան ուսման և եկեղեցին նորոգողը և պատեց և ոսոյց (11 ԱՄՍ·25)։ բայց աւելի ճիշդ եղած կ'ըլլար եթէ ըսուէր, թէ հակառակ ժողովուրդին խղճալի պարագաներուն, փառասիրական ձգտումներով երկպառակութիւն արծարծեց և հակառակութիւն վարեց՝ ուր որ ալ գտնուեցաւ։ Այս եղաւ Խուլին վախճանը, ճիշդ 80 տարեկան հասակին մէջ, զի ծնած էր 1554'ին (§ 1696)։

1670. Պատմութեանս մէջ մտադրութեան առարկայ եղած անձերէն մէկն ալ

ՍԱՀԱԿԻ ԽԵՂՃՈՒԹԻՒՆ

Սահակ Դ Գառնեցի ապոստոլական կաթողիկոս է, զոր վերջին անգամ յիշեցինք Տիարպէքիրի մէջ վարած դերին, և գտնուած խայտառակ դիրքին մէջ (§ 1656)։ Երբոր Սահակ և ընկերը Պօղոս Ալխթապցին, Տիարպէքիրի մահմետականներուն միջնորդութեամբ ազատեցան Խուսրէվ եպարքոսին խստութենէն, հաղիւ թէ քանի մը օր ետք կրցան այնտեղ մնալ, և լռելեայն խոյս տուին Տիարպէքիրէ։ Սահակ Օսմանեան երկրի մէջ խայտառակուած, և Պարսկական սահմաններէն փախուստական, գաղտ կերպով հկաւ կարին, բայց այնտեղ ալ չկրնալով մնալ վրաստան անցաւ, բայց ոչ ետ իբր կաթողիկոս, զի ոչ ոք զինքն կ'ընդունէր, և ոչ մէկուն առջեւ յարգ ու պատիւ կը վայելէր։ կ'ըսուի թէ այն կողմերը ապրեցաւ յանծանօթս, ցորչափ կենդանի էր Մովսէս, և հաղիւ Փիլիպպոսի յաջորդելէն ետքը հաստակեցաւ անոր մօտ գալ։ Մէկ կողմէն խղճմտութիւն, և միւս կողմէն ցաւ նկատելով, որ երթալով մահացու ախտի կերպարան առաւ, զինքն ստիպեց էջմիածինի խնամքին

դիմել. եկաւ է սոյբ էջմիածին, և ետոյ անդէն է սոյբ սրբոյն էջմիածին (ԴԱՎ. 188)։ Սահակ այլեւս ոչ միտք և ոչ կարողութիւն ունէր իւր յաւակնութիւնները վարելու, ուստի Փիլիպպոս չվարանեցաւ ընծայել քրիստոնէական սիրոյ անյիշաչարութիւնը, և պատսպարել զայն իւր վերջին խեղճութեան մէջ։ Ենթադրելով որ 1634'ին աւեհնները Սահակ եկած ըլլայ էջմիածին, հինգ տարի եւս ապրած կ'ըլլայ այնտեղ մինչեւ իւր մահը (ՉԱՄ. Գ. 609)։ Սահակի գործակից եղող Պօղոս Ալէppացիին համար գրուած է, թէ Տիարպէքիրէ հետանալէն ետքը եկած է Կոստանդնուպոլիս, անկէ ալ Ռումելի անցած, և վերջէն Լեհաստան, ուր նշել ժամանակ ինչ, վախճանած և թաղուած է այնտեղ (ԴԱՎ. 188)։ Պօղոսի Լեհաստան գալու ատենը կը հանդիպի Նիկոլի բռնութեանց և չհատակութեանց միջոցին, բայց յայտնի չէ թէ Պօղոս ինչ դիրք բռնեց այդ եղելութեանց մէջ, թէ որչափ եւս ապրեցաւ, և որ քաղաք ու որ տարին հանդիպեցաւ անոր մահը, զի ուրիշ պարագայի մը մէջ այլեւս անոր անունը յիշուած չէ։

ՊՕԼԱՁԱՏԻԿԻ ԱՆՑՔԵՐԸ

1671. Պոլազատիկներու պարբերական չրջանին համեմատ, անգամ մըն ալ հանդիպեցաւ այն 1634'ին, Գրիգոր Պարոնտէրի պատրիարքութեան օրով։ Պոլազատիկները սկսած էին ընդհանրապէս դիտողութեան տակի չտալ երկու ազգութեանց՝ Յոյներու և Հայերու միջեւ, բայց կը պահէին իրենց նշանակութիւնը երուսաղէմի մէջ, լուսանցնութեան պարագային պատճառով, իրր զի Ճրագալոյցի հրաչալի լոյսը, մէկ կամ միւս ազգին զատիկը պիտի նուիրագործէր։ Կարծես թէ այս անգամ ուրիշ անգամներէ աւելի կարեւորութիւն ստացած էր խնդիրը, և կանոնէն սկսած էին փոխադարձ սպառնալիքներ իրարու զատիկները խափանելու։ Յոյներ մինչեւ իսկ Գրիգոր պատրիարքին կեանքին կը սպառնային եթէ չհամակերպի իրենց հետ զատիկ ընել ապրիլ 6'ին, իսկ Հայեր անդրդուելի էին իրենց հաշուով ապրիլ 13'ին տօնելու, և Գրիգոր մէկ կողմանէ կ'աշխատէր բանակցութիւններով խաւախտութեան գալ, և միւս կողմէն Հայ առաջնորդներուն կը գրէր, որ ուխտաւորներ օր առաջ ներկայ գտնուին երուսաղէմ պատշաճ պաշտպանութեան համար. մեծամեծ գումարներ ալ կը ծախսէր քաղաքին և կառավարութեան գլխաւորները Հայերու կողմը չանելու համար։ Ուխտաւորներ, Յոյներ, Ռուսեր, Վրացիներ, Պուլղարներ, Սըրպեր, Ուլահներ, Պոչնաքներ, և տեղացի խառնիճաղանճը, մեծ թիւով հաւաքուած էին, արքունական հրովարտակ ալ ձեռք ձգած էին, Դամասկոսի կուսակալն ալ չհանած էին, և չափ չկար իրենց խրոխտանքներուն և սպառնալիքներուն, եթէ Հայեր չուզեն միասին զատիկ տօնել։ Մեծամեծ անտեղութեանց վախեր կային, երբոր բարեդէպ պարագայ մը հասաւ Հայերու օգնութեան։ Մովսէս Քիւչիւք Անմէտ փաչա Պաղեստին կը հասնէր Ֆախրէտտին-պէյ-Մասն, կամ Մանօղլու ապստամբին վրայ, իրեն հետ էր իւր Հայազգի հանդերձապետը Աւետիք Բաղիշեցի, որ անցուդարձին տեղեկանալով, ծովակալին իմացուց վերահաս վտանգը, որ իսկոյն հրաման ըրաւ կուսակալին Յոյները զսպելու։ Նախապէս զինաթափ ըրին բոլոր յունադաւանները, և անոնց զատկին օրը զինուորական պատրաստութեամբ պաշարեցին Ս. Յարութեան տաճարը։ Գրուած է թէ ծովակալին կողմէ ղրկուած գունդը Յունաց զատիկին առթիւ ֆէյէց ղբօսանք կեկեղեցւոյն, և ոչ եթ ինչ Յոյնոց հանել է ներս (ՉԱՄ. Գ. 616)։ Սակայն այդ բացատրութիւնը ճիշդ չկրնար ըլլալ, որովհետեւ ոչ միայն անհնար էր իշխանական հրամանով ժողովուրդի մը զատիկը խափանել, այլ ուրիշ ակնարկէ մը կը տեսնուի, թէ Յոյն փծելցին ղլոփլին էրեանց, և ասկօրան ըլան եւ վան նոցա (ԱՍՏ. Ա. 322)։ Ուստի պէտք է ըսել թէ ծովակալին կարգադրութիւնն եղաւ, որ երկու ազգեր իրարու զատիկը չարգիլեն, և թէ այդ հրամանը կատարուեցաւ, և երկու ազգեր զատ զատ տօնեցին։ Ինչ որ խափանուեցաւ, Յոյներու մեծամտութիւնն էր, որ իրենց վայելած առաջնութեան չնորհիւ կը պահանջէին ամէնքը իրենց հպատակեցնել։ Այս էր որ ի-

բենց չաջողեցաւ, և Հայերն ալ իրենց պատիկը ըրին նուիրական լուսանանութեամբ, ինչպէս կը գրէ ականատես մը, թէ Հայոց պատիկը փառաւորուեցաւ պայծառ լոյսով մը՝ որ Գերեզմանէն (ԹՈՐ. Բ. 432), և թէ մոլորեցան Յոյն, և թէ Հայ, Հպարտ, Աւետ և Ղեւոն՝ ուղիղ կային (ՍԱՄ. 178): Գրիգոր պատրիարք կրցաւ միխիթարուիլ առանց դժպհի միջադէպի անագին վտանգ մը անցուցած ըլլալով: Միայն մայրաքաղաքի մէջ երկու անձերու դէմ թշնամութիւն գործեցին Յոյները, յատկապէս երուսաղէմէ դարձող Յոյները, որ կը ցուցնէ թէ այն երկուքը մեծ դեր ունեցած են Յոյներու դէմ եղած ձեռնարկներու մէջ: Ցիշեալ երկուքն էին Մինաս քահանայ և Սէֆէր Ալեճճի, այսինքն գունաւոր կտաւներ վաճառող, որոց գերեզմանները ալ կը յիշուին (Չէլ. 50): Երկուքին դէմ ամբաստանութիւններ յօդեցին էքը չանգաոր չէբս պէտոնէ (ՉԱՄ. Գ. 616), և իսկոյն դատաստանի ենթարկուեցան և ուրացութեան հրաւիրուեցան՝ իբրև ազատութեան պայման, զոր երկուքն ալ մերժեցին և քրիստոնէութիւնին բարձրաբարբառ դաւանեցան, որով գլխատման դատապարտուելով կոտրեցան սրով (ԱՍՏ. Ա. 321), կամ յետոնէ դռան վրնեցան (09 ԱՄՍ. 204), և նահատակաց կարգը դասուեցան: Երկուքին հետ ուրիշներ ալ նահատակեից պէտք է եղած ըլլան, զի Քէօմիւրճեան Ծէբէ «ամէ ալ կը յիշէ ընդ Մինաս քահանայն (Չէլ. 50): Իսկ թուականը իդէպ է պահել նոյն իսկ 1634 տարին, այլ օրը կը մնայ անորոշ:

1672. Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան գործերը նկատելի իրողութիւններ չէին ներկայեր, յորմէհետէ մրցակցութիւնը թէ ոչ դադարեր, չատ թեթեւացեր էր, երկու մեծ մրցակիցներուն, կեսարացիին և Խուլին հեռանալովը: Զաքարիա վանեցին գրաւած էր պատրիարքական աթոռը 1628'էն իվեր (§ 1642), և Սահակի ալ օգնած էր՝ անոր անունին նոր կաթողիկոսութեան հրովարտակ հանել տալով (§ 1655), բայց վերջէն ստիպուեցաւ համակերպիլ Մովսէսի կաթողիկոսութեան, երբ Սահակի գործը ձախողեցաւ (§ 1656), և հաւանական է որ չմտաբերեց ալ Փիլիպպոսի կաթողիկոսութեան արգելք յարուցանել, և ինքն ալ գտնուեցաւ անոնց հետ, որ չէ-բա-նէ-ի պեղէց թղթով հաւանութիւն յայտնեցին Փիլիպպոսի կաթողիկոսութեան (ԴԱՎ. 242): Հաւանիլն ընծինք, վասնզի ճիշդ այդ միջոցին, Հայոց 1082 թուին, զինքն ճանչնալ չէին Պոմպոլոյէ (ԳԱԼ. 345): Արդ Հայոց 1082 թուին համապատասխաներ կ'իյնար 1632 հոկտեմբեր 14'ին, Փիլիպպոսի օծումէն երեք ամիս առաջ, ուստի կրնայ կարծուիլ, թէ Զաքարիայի կողմէ դժկամակութեան նշաններ՝ երեան պատճառ ըլլալ նորա պաշտօնանկութեան, և Գրիգոր կեսարացի որ անոր յաջորդեց, նա եղաւ Կոստանդնուպոլսոյ պատրիարքական աթոռին անուամբ Փիլիպպոսի կաթողիկոսութեան հաւանութիւն յայտնողը, որ իր ձեռնասուն Մովսէսի ձեռնասունն էր: Կեսարացիին բազմաթիւ պատրիարքութիւններուն վերջինն է այս, զի երեք տարիէն 1636'ին աթոռի վրայ եղած ատեն վախճանեցաւ, և Գալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ թաղուեցաւ (ԿՈՒ. 79), ուր այժմ այլևս գերեզմանը չերեւիր, անուշտ նոյն եկեղեցւոյն 1736'ին հրկիզուելէն ետքը վերաշինուած պահուն տեղի ունեցած անմատրութեան պատճառով: Կեսարացիին վերջին պատրիարքութեան ժամանակամիջոցը նշանաւոր դիպուած մը չներկայեր, և խաղաղ պաշտօնավարութիւն մը ունեցած է: Նա չատ նշանաւոր անձնաւորութիւն մը եղած է, զոր Դավրիժեցին կը կոչէ այր երեւելի, վարուն պարկեշտ և ըղձալոյ, խոհեմութեամբ ճոխացեալ, քանիքեան և յոյժ հանճարեղ, այնպէս որ անոնի էր ի մէջ աշխարհի, և ամենայն աշխարհ նախանձ կային ընդեմ (ԴԱՎ. 288): Եկեղեցական և ազգային խորին գիտութենէ զատ, հմուտ եղած է համարողականին և երկրաչափականին, գրած է Թուականս և պոմպոլիոս, Ադամէն մինչեւ իր ժամանակը, հայերէն գիրով և լեզուով երկնագունդ մը չինած է, յօրինած է քերթուածներ, գանձեր և տաղեր (06 ԼՈՒ. 1184), բայց ամէնէն վեր է իր ազգային եկեղեցւոյն պաշտպանութեան համար ամուր հաստատութիւնը և անխոնջ չանքը, որով յաղթականի կերպով մաքառեցաւ լատինասէր և

ԿԵՍԱՐԱՑԻԻՆ ՄԱՀԸ

լատինամիտ կուսակցութեան դէմ։ Իրեն յիշատակին փառաւոր վկայութիւն մը եղաւ եկեղեցւոյ մէջ թաղուիլը, բացառիկ պատիւ-ներ հրամայած, և Շահին չէլէպի ազգայնոյն միջնորդութեամբ, ինչպէս կը վկայէ իր եղբօրորդին Յակոբ Կեսարացի քահանան (ԿՈՒ. 79)։

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ՇԻՆՈՒԹԻՒՆ

1673. Կեսարացիին պատրիարքութեան վերջերը սուլտան Մուրատ Դ նոր արշաւանք մը կազմեց Պարսիկներուն դէմ։ Արքունական վրանը կանգնուեցաւ Իւսկիւտար 1635 փետրուար 21'ին, մարտ 12'ին ճանապարհ ելաւ Մուրատ, մնծամեծներու ընկերակցութեամբ և ահռելի բանակով (ԺՈՒ. 233), որ 700.000 կը կարծուի (ԴԱՎ. 243), յուլիսի վերջը երեւան պաշարուեցաւ, և յաջորդ ին (ԴԱՎ. 234) Մուրատ տիրեց քաղաքին օգոստոս 8'ին։ Յաջողութեանը օգնեց Պարսիկ կուսակալին՝ Ամիրգունայի որդւոյն Թահմազղուլիի կամակցութիւնը, թէպէտ և մեծ եղաւ Մուրատի ալ իր զինուորներուն ազդած քաջալերութիւնը։ Հանդիսաւոր կերպով կատարուեցաւ օգոստոս 14'ին ուրբաթի աղօթքը, և քրիստոնեաներ ալ ըսպիսպուեցան յաղթութեան համար գոհաբանութիւններ կատարել (ԺՈՒ. 233)։ Անչուշտ Փիլիպպոս կաթողիկոս ալ մասնակցած է այդ հանդիսութեանց, և մեծահանդէս կատարած օգոստոս 16'ին վերափոխման տօնը։ Մուրատ երեւանէ յառաջելով երասխը անցաւ, և Թաւրիզի վրայ քալեց, և սեպտեմբեր 12'ին քաղաքը առաւ և աւարի մատնեց։ Քօթուրի պաշարումը յաջող չեղաւ ձմեռնային ձիւներուն պատճառով, և Մուրատ առանց ուրիշ գործի ձեռնարկելու ետ դարձաւ, և 1635 դեկտեմբերի վերջը Կ-Պոլիս մտաւ յաղթանակով (ԺՈՒ. 234)։ Սակայն Օսմանեան տիրապետութիւնը վտանգուկ եղաւ Երեւանի և Էջմիածինի վրայ։ Հազիւ թէ Մուրատ ետ կը դառնար, որ Շահ-Սէֆի պատերազմական պատրաստութեանց կը ձեռնարկէր՝ Երեւանը ետ առնելու համար, որուն Օսմանեան կուսակալ էր անուանուած, Մուրթեզայ փաշա, Բաբէքոյ և Խելոյէ էլչեան կոչուած (ԴԱՎ. 243), բայց սպանուեցաւ պաշարման առեն (ԺՈՒ. 234), որ 93 օր տեւեց (ԴԱՎ. 243), և 1636 սեպտեմբերին Պարսիկներ տիրեցին Երեւանի, և երկու օր երկու գիշեր տեւող Մխիթարեան ճակատամարտէ ետքը Օսմանցիք բոլորովին վտարուեցան Պարսիկներէ առնուած գաւառներէն (ԺՈՒ. 235)։ Տարիէ աւելի տեւող պատերազմերուն պատճառով աշխարհն Արարատ իր չքնաղ գաւառովն աւերուեցաւ և քանդուեցաւ, և Էջմիածինն ալ նշանաւոր վնասներ կրեց, չէ որ Ինչ ցոյսակերպ չէնէ կոյն տանջեցաւ, նոյնպէս Երեւանի Ս. Աստնեայի վանքն ալ քանդուեցաւ, ուր մատուռէն զատ ամենայն ինչ փայտակերտ էր եղած։ Փիլիպպոսի հարկ եղաւ նորէն նորոգութեանց ձեռնարկել, և իւր կատարած չինութեանց մէջ յատկապէս կը յիշուին՝ Էջմիածինի սեղանատունին քարէ սեղաններն ու նստարանները ու գետնի սալարակը, արեւելեան կողման խուցերը, եկեղեցւոյ տանիքը, գմբէթին գլակը, եկեղեցւոյ չուրջի և խուցերուն ու տուներուն առջեւի քարակապ սալայատակը, երկու ձիթհանքերը, Ս. Աստնեայի վանքին ժամատունը ու սեղանատունը ու խուցերը, և այլ մասնաւոր չինուածներ, զորս պատմիչը յանուանէ չյիշեր, և ամէնքը ալ ըստ էպէս, այլ տեսէ և քննով (ԴԱՎ. 244)։ Այս չինութիւններով անցուց Փիլիպպոս 1636 և 1637 տարիները, պարսիկ սէրութեան պաշտպանութեամբ։ Շահ-Սէֆի ուզեց իրաց կացութիւնը հաստատուն պայմանի կապել, և 1637 օգոստոս 9'ին յատուկ դեսպան ալ յղեց Կ-Պոլիս, այլ Մուրատ չհաւանեցաւ, և խաւարտչին բանտի մէջ փակեց Մաքսուտ խան դեսպանը, միտք ունենալով նորէն պարսիկներուն դէմ պատերազմի ելլել (ԺՈՒ. 235)։

ԱՋԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

1674. Փիլիպպոս կաթողիկոս էջմիածնի չինութեանց համար այնչափ ջանք թափած աստն, չէր կրնար անտարբեր աչքով տեսնել, որ Մայրաթոռ զբրկեալ մնայ իւր գլխաւոր զարդն ու նուիրական սրբութիւնն եղող Լուսաւորչի Աջէն, որ աղբիւրն էր օրհնութեանց և կնիքը հայրապետական իշխանութեան, բայց Նոր-Ջուղայ խոջայ Սաֆարի տունը կը մնար, յորմէհետէ հոն յղուած էր

1612'ին Շահաբասի հրամանով (§ 1609)։ Փիլիպպոս մտածեց անձամբ զբաղիլ այդ գործին, և 1637'ին ամառուան միջոցին գնաց Ասպահան, և առանց իւր միտքը յայտնելու, առաջ պտտեցաւ Հայ գաղթականներու մէջ, տեղեկանալ նոցա ըղձից առթիւ, այլ միւս կողմէն խոչընդոտ եղող նոցանց ընթերցին առիթ էզդածնէ, այսինքն է նուիրակութեան հասոյթները, որոց պէտք ունէր կատարուած նորոգութեանց համար (ԴԱվ. 244)։ Բայց իւր միտքը Աղը վերադարձնելն էր, որուն համար երկու դժուարին պայմաններ կային առջեւը, Շահէֆէլիի թագաւորական հրամանը, և Հայ գաղթականութեանց հաւանութիւնը։ Այս երկրորդս ալ առաջինէն ոչ նուազ դժուար էր, որովհետեւ այդ հայրենազուրկ գաղթականները բոլորով սրտով յարած էին Աղին ներկայութեան, անկէ ակնունելով ամէն յաջողութիւն իրենց վտարանդի կեանքին մէջ։ Փիլիպպոս նախ արքունի հրամանին հետեւէն եղաւ, և այս նպատակին համար իրեն կողմը չահեցաւ Հայոց երեւելիներէն պէտք եղած անձերը, որոնք ժողովրդական անխորհուրդ բարեպաշտութիւնէն աւելի՛ կանոնական պատշաճողութիւնը կը զգային, և կրնային ջենալ Աղըն չէզդածնէն։ Անոնց ձեռքով Պարսիկ իշխաններուն դուռները ձեռք առաւ, և առաքեալ պըտ ըէբա ամենուն հաճեցոյց։ Անոնց ալ օգնութեամբ թագաւորին խնդրագիրը պատրաստեց, և զայն ներկայել լեալ ըսաւ անկէ գոհեին յոյսով, և յաջողեցաւ ընդհանուր ինդով հաստատուած հրամանագիրը առանալ, որ Աղը՝ պէտք է իրեն յանձնուի։ Յովհաննէս Սաֆարի Թոռներ, Ջալալ, Միքայէլ, Սիման և Պատիկ, ժողովուրդէ դրգռուելով զլացան իրենց մեծհօր յանձնուած աւանդը նոր տալ, մինչեւ որ Փիլիպպոս պարտաւորեցաւ հայրապետական անձնէ անոնց ընդդիմութեան յաղթել, և Աղը մեծ խափարով բերուեցաւ քաղաքին մէջ Յովհաննց եկեղեցին։ Փիլիպպոս պատարագեց կիրակի մը, եբաց զԱղն, օրհնեց և քարոզեց, բայց փոխանակ ընդդիմանալէն Ջուղայեցիք։ Ուստի հարկ եղաւ գաղտնի փոխադրութեան դիմել, գործակցութեամբ քահանաներու և գլխաւորներու, որոնք փոխադրութեան պէտքը զգացած էին։ Լուսաւորչի Աղը Յովհնց եկեղեցիէն բերին է Ղանէն Ջուղայ, որ է Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչը, անկէ քաղաքին մէջ երեւանցիներուն թաղը, անկէ Բրինճլու օթեւանը։ Հոն Մարգար Ծղնացի վաճառականին բերուն մէջ ծրարեցին, որ անձամբ տարաւ Թավրէզ իւր վաճառքներուն հետ։ Այդ ամէնը գաղտնի գործուեցաւ։ Ետեւէն Փիլիպպոս ալ Թավրէզ իջաւ, և Աղը առաւ Ծղնացի Մարգարին ձեռքէն, և անձամբ բերաւ էջմիածին 1638 սեպտեմբեր 20'ին Դավրիժեցիին հաչուով, և եղաւ անդադար օրհնութիւն ամենայն Հայոց, և ցնծութեան տօն կատարուեցաւ (ԴԱվ. 246)։ Սակայն Փիլիպպոսի էջմիածին հասնելուն թուականը, Դավրիժեցիին նշանակածէն տարբեր կը գտնենք կաթողիկոսին Իլվովցիներու ուղղած կոնդակին մէջ, ուր 1638 հոկտեմբեր 12'ին կը գրէ. Թէ երէ՛ օր էր, յորժ եկեալ է՛ ի սբ՛ոյանէ՛ սղա՛էն Աստահանայ (ԹԹԵ. 113), ըստ այմ հոկտեմբեր 9'ին, և ոչ սեպտեմբեր 20'ին հասած կ'ըլլայ էջմիածին, 19 օրուան տարբերութեամբ Դավրիժեցիին նշանակածէն։ Աղին այս վերադարձն ալ, հակառակ իւր պաշտօնական պայմաններուն, կատարելապէս կը յիշեցնէ Օծոպեցիին գործածած հնարիմաց կերպերը (§ 1511)։ Այս անգամ ալ 26 տարի Աղը էջմիածինէ հեռու մնաց, բայց անկէ ետքը այլեւս տեղէն չէ խախտուած, և Աղին հետ պահուած կը մնան նաեւ եւս խաչէմը և ուրարը, որ միասին Աղթամար տարուած էին (ԴԱվ. 333)։

ՊԱՂՏԱՏԻ ԱՌՈՒՄԸ

1675. Մուրատ Դ Օսմանեան կայսրը, այս օրեր սկսած էր արդէն Պարսից դէմ կրկին պատերազմիլ, բայց բարեբախտաբար այս անգամ իւր արշաւանքը չիտակ Պաղտատի վրայ ուղղած էր, որով Հայաստան ազատ կը մնար ռազմական արհաւիրքներէն։ Մեծ և պարքոս Պէհրամ փաչա Կարսի և Կարինի կողմերուն ամրութիւնները զննելէ ետքը, 1637 յունիս 25'ին Ամասիա դարձաւ, և անկէ նոր գարնան քալելու Օսմանեան բանակը, բայց ինքը ձանապան մնաւ։ 1638 օգոստոս 18'ին, և իւր բանակը Պաղտատի առջեւ հասաւ նոյեմբեր 15'ին, 197 օրուան

վաստակաբեկ գնացքէ հոգը։ Սուլտան Մուրատ եկած էր անձամբ առանձնել հրամանատարութիւնը, և դեկտեմբեր 24'ին մեծ յարձակում մը կատարեց, և միւս օր 1638 դեկտեմբեր 25'ին Պաղտատ առնուեցաւ և աւարի մատնուեցաւ, և այն օրէն ասդին Պաղտատ կը մնայ Օսմանեան տիրապետութեան ներքեւ (ԺՈՒ.236)։ Հայ ժամանակագիր մը Հայոց 1087 թուին դեկտեմբեր 13 երկուշաբթի օր կը դնէ Պաղտատի առումը (ՍԱՄ.178), որ եթէ հին և նոր տոմարներու տարբերութեամբ ալ հաշուուի, տակաւին ամսաթիւը ճօթնեկի օրուան չպատասխաներ, և թուատառի չիտնութիւն մը պէտք է ընդունիլ։ Պաղտատի պատերազմին և Այլին վերադարձին թուականները իրարու համեմատելով կը տեսնենք, թէ երկուքը միեւնոյն տարւոյ մէջ կատարուած են, սակայն 1638 նոյեմբեր 15'ին Պաղտատի պաշարումէն առաջ, սեպտեմբեր 20'ին կամ հոկտեմբեր 9'ին Փիլիպպոս ամէն բան վերջացուցած, և Այլին հետ ինքն ալ դարձած էր էջմիածին (§ 1674), ապա թէ ոչ պատերազմական գործերը կըրնային իւր ձեռնարկին յաջող ելքը արգիլել։

ՓԻԼԻՊՊՈՍ ԷՋՄԻԱԾԻՆ ԸՆԹԱՑՔԸ

1676։ Փիլիպպոս էջմիածին չհասած, սկսած էր զբաղիլ Լեհահայոց բռնի կաթոլիկացման գործովը (§1662), որուն համար իւր նախորդն ալ հոգ տարած էր (§ 1663)։ Ծորմէհետէ Նիկոլ՝ Ծովհաննէս Մուրի ձեռնտուութեամբ (§ 1669), յաջողած էր Հայերուն դիմումին հակառակ Ուրբանոս Ը պապէն պաշտպանուիլ, և արքեպիսկոպոսական պալիւմ ալ առնալ՝ 1633'ին Իլվով դառնալով, այնչափ սոնքացած էր, որ Հայ եկեղեցականի համեստ տարազն ալ փոխելով, սկսած էր գործածել ղէեօ ձէբօնէ օրդէ կոչուածն, և մինչեւ իսկ ղէեօ ոպիսկ և Ֆէօղ պապէն (ԲՈՆ.157)։ Հռոմէադաւան Նիկոլի և հայադաւանութեան հաւատարիմ ժողովուրդին հակառակութիւնները երբէք վերջ չէին գտած, անիկայ իրմէն բռնակալ իշխանութիւնը կը վարէր ամէն տեսակ քմահաճ խստութիւններով, և ասոնք կերպ կերպ խազեր և դիմադրութիւններ և անարգական գործեր կը չարունակէին անոր դէմ։ Այսպէս էին գործերը Լեհաստանի մէջ, երբ անդին էջմիածնի մէջ ալ հոս մէկականներու կողմէն փորձեր կ'ըլլային, նոյն իսկ կաթողիկոսը իրմէնց կողմը չհանելու։ Պօղոս Փիրօմալլի Դոմինիկեան կրօնաւորը, բանտարկութենէն ազատելով (§1659) էջմիածին էր դարձած 1634'ին, և լաւ ընդունելութիւն գտած Փիլիպպոսէ, իբրեւ ուսուցիչ օտար լեզուաց և իմաստասիրական գիտութեանց։ Բայց նա առիթէն կ'օգտուէր լատինամիտ առաջարկներ թելադրել կաթողիկոսին։ Հայոց ծիսական և վարդապետական դիրքերը ուսումնասիրելով անոնց մէջէն իր միտքին յարմար վկայութիւններ կը հաւաքէր, որպէսզի Հայոց եկեղեցին քաղկեդոնական և հռոմէադաւան ցուցնէ։ Սակայն Փիլիպպոս կարճեց անոր աւարկութիւնները պատասխանելով, որ երէկ այդպէս է, և դո՛ւ ինչ այդպէս ճանաչէս, վ՛ի՛նչ պնդեալ կո՛ս չընդունայն վէճս (ՁԱՄ.Գ. 614)։ Փիրօմալլի հակացաւ և համոզուեցաւ թէ հնար պիտի չըլլայ ուղղակի իւր նպատակին հասնիլ, ուստի անուղղակի միջոցներ գործածելու ձեռնարկեց։ Երբոր տեսաւ ըհ Հայ+ խոչըն յանուանէ Քաղկեդոնէ, ինքն ալ այլեւս ոչ չէլէր ըանուն նորին, այլ ընդհանրապէս «ըողէր, այսինքն է Քրիստոսի բնութեանց և Հոգւոյն Սրբոյ բղխման, և ուրիշ նմանօրինակ նիւթերու վրայ կը խօսէր լատինամիտ ուղղութեամբ, և հայերէն դիրքերէ մուրացածոյ վկայութիւններով, առանց Հայոց սկանջը խայթող Քաղկեդոնի կամ Հռոմի անունը տալու, ուզելով այսպէս անոնց միտքերը իւր կողմը պատկերացնել, անզգալաբար և մեղմօրէն։ Աւանկ Հայերն սկսան գոհ մնալ անոր այս տեսակ քարոզութիւններէն, զայն իրմէնց կողմը անցած կարծելով, և զայն իբր իրմէնց հաճոյական և ընդունելի անձ կը պատուէին (ՁԱՄ. Գ.615)։ Դավրիժեցին իսկ գովութեամբ կու տայ անոր անունը, այլ էմսափոն և երէեւելի կոչելով (ԴԱՎ.295)։ Փիրօմալլիի այդ ուղղութիւնը աւելի ճարտար էր, քան Ունիթորներու մոլեռանդ ընթացքը և յախտուռն ձեռնարկները, թէպէտեւ ինքն ալ Ունիթորներու միաբանակից Դոմինիկեան կրօնաւոր մըն էր։ Հաւանական էր որ նա

աւելի յաջողէր իւր այդ չահեցողական, չըսենք խոբէական ոճովը, սակայն նա ալ իւր դէմ գտաւ մոլեռանդներու խմբակը։ Փիրօմալլի էջմիածինէ մեկնելով սկսաւ չրջիլ Հայոց գլխաւոր քաղաքները, իւր ոճով քարոզել Հայ եկեղեցիներու մէջ, և նոյն իսկ Կ-Պոլիս գալով Դալաթիոյ Ս. Լուսաւորիչի մէջ ալ քարոզներ կը խօսէր հայերէն լեզուով (ԲԺՇ. 114), և ընդունելութիւն ալ կը գտնար, Քաղկեդոնի և Հռոմի անուններն լռելու հնարիմաց ճարպիկութիւնովը, որուն չէին կրնար թափանցել հասարակ ժողովուրդը և դաւանութեանց տարբերութիւններուն նրբութիւնները հասկանալու կարող չեղողներ։ Ջմոռնանք որ քիչ ու չատ լատինական կողմը հակողներ ալ պակաս չեղան։

ԼԵՉԱՀԱՑԵՐ ԵՒ ՓԻԼԻՊՊՈՍ

1677. Անդին Իլվովի Հայեր, որ Նիկոլի դէմ պայքար կը մղէին, կ'աշխատէին ամէն պարագայէ օգտուիլ, և բարեդէպ հանդիպեցին Լեհահայց և Պարսից թագաւորներուն մէջ դեսպանական յարաբերութեանց պարագան, և յաւուկ դիրով, գուցէ և պատուիրակով, դիմեցին Փիլիպպոս կաթողիկոսին, որ Պարսից թագաւորին կողմէ միջնորդութիւն մը ըլլայ իրենց համար Լեհաց թագաւորին մօտ։ Այդ պիրն է որ Փիլիպպոսի ձեռք հասած կ'երեւի Ասպահան եղած առեն, և էջմիածին հասնելէն երեք օր ետքը պատասխանը կը գրէ 1638 հոկտեմբեր 12'ին։ Փիլիպպոսի կոնդակը ուղղուած է, Իլվովի, Կամենիցի, Նաղլովիցի, Ջամոսցայի և Լուցկայի Հայ գաղթականութեանց։ Կաթողիկոսը կը յայտնէ թէ չատ տրամեցաւ պատմուածներուն վրայ, դիմումը ըրաւ է պատճառ պարսից, և պահ մը լսեց թէ քանի մը եկեղեցիներ Հայերուն յանձնուեր են։ Կ'աւելցնէ թէ տեղեկութիւն է Լեհաց դեսպանին հետ, որ իրեն խօսք տուեր է, թէ երբ դառնայ՝ կը խօսի իրենց թագաւորին և բէրելն է այդ գործ։ Պարսիկ դեսպանին ալ խօսեր է, ինքն ալ դիր մը կը յղէ Լեհաց թագաւորին, կը յիչէ նաև Հայոց նպաստաւոր խուղի մը ըսելով որ Աստուած պղտեցէ ջնեղ յայտ գառնոցն վրայ (ԲԺՇ. 113)։ Փիլիպպոսի կոնդակին Իլվով հասնիլը նչանակուած է 1639 յունիս 25 թուականով (ԲԺՇ. 113), և չաթաթ մը ետքը յուլիս 2'ին կը նչանակուի Փիրօմալլիի Իլվով հասնիլը (ԲԺՇ. 114)։ Սա պաշտօն ընդունած էր Ուրբանոս Ը պապէն Իլվով երթալ, որպէսզի իրը Հայոց լեզուին և եկեղեցական խնդիրներուն համար հնարեցէք հաշտութիւն առնել է Ջ. Նիկոլի և Ժողվէրեան (ՁԱՄ. Գ. 639)։ Իսկ Փիլիպպոս կաթողիկոսի կողմանէ ալ յանձնարարութիւն ունեցած լլլալը, Դավրիժեցիէն չքաղուիր (ԴԱՎ. 295), ինչպէս ոմանք կարծեցին (ՁԱՄ Գ. 639)։ Փիրօմալլի իւր ոճին հետեւելով լաւ յարաբերութիւն կապից Լեհահայերուն հետ, որ մինչեւ իսկ հաւանեցան և ճանապարհի ծախքն ալ հոգալով զայն Հռոմ ղրկեցին, որպէսզի պապին առջեւ իրենց պահանջը պաշտպանէ։ Բայց Նիկոլի և Փիրօմալլիի յարաբերութիւնները լաւ չէին եղած, երկու գլխաւոր պատճառներով, մէկը Նիկոլին խիստ մոլեռանդ ուղղութեան հետեւիլը, և երկրորդ իւր անհատապէս անկարգ և ընդարձակ և ցոփակեաց կեանքը։ Անոր համար Նիկոլ պէտք զգաց անգամ մըն ալ անձամբ Հռոմ երթալ իւր դատը պաշտպանելու, և իւր նպատակին ալ հասաւ։ Պօղոս Փիրօմալլի Հռոմ հասնելով քանի մը թէրեւսորներ վան Հայոց ուսուցիչ էր (ԴԱՎ. 295), և հարկաւ թելադրած էր իւր մտածած հնարիմաց եղանակը Հայերը չհնելու, և լոկ բառերով չխոչընդոտելու համար։ Անչուչտ Նիկոլի հեռացումն ալ օգտակար ցուցած էր գրգռութիւնները մարելու համար։ Բայց Նիկոլի ուղղութիւնը աւելի ընդունելութեան արժանացաւ պապական արքունիքին կողմէ, և մոլեռանդ Նիկոլը խոչնեց ղեկանութիւնն Պօղոսի՝ յետադարձութեամբ ելլայիրացը (ԴԱՎ. 295)։

ՆԻԿՈԼԻ ՁԵՂՄՈՒՄՆԵՐԸ

1678. Անգամ մըն ալ Նիկոլ յաղթական կ'երեւար իւր կրօնամոլ պայքարին մէջ, և Լեհահայեր կրկին կը դիմէին Փիլիպպոսի օգնութեան, որ երկրորդ կոնդակով մը կը ծանուցանէ 1640'ին, թէ Պարսկաստանէ գացող դեսպանը ճանապարհ սպասուած լլլալով, գործը անհետեւանք է մնացած, և կ'առաջարկէ

ւոնէ մի քանիքառ անյինս յղել, որպէսզի ա-
նոնց հետ խորհրդակցի ձեռք առնուելիք
միջոցներուն վրայ (ԲԺՇ. 114)։ Այդ առա-
ջարկին գործադրուած բլլալը յայտնի չէ,
մինչ յայտնի է, Լեհահայերու խղճալի կա-
ցութեան չարունակելը դէու բաւական տա-
բիներ։ Ժողովուրդը իւր եկեղեցիներէն
վտարուած և եկեղեցւոյ խորհուրդներէ և
կարեւոր ծէսերէ զրկուած, ուխտած էր
երթմամբ, է ըրլլալու ամենայն քաղաքէ՝
ուն է ծառայութիւն նկատել (ԲՈՆ. 156), և
այդ նպատակով ոչ մի ծախքէ ետ չէր կե-
նար, մինչեւ որ պղտիկ ժողովուրդն տա-
հապրակ (ԲՈՆ. 26), և յուսահատութեան
մատնուելով քաղաքէ ալ երկիւղածէ և վեր-
ինդիրէ հայրենի օրինաց՝ դէնեցան է ուն և է
տեղէց, և ղան պանդխտիլ և նժդեհիլ չըլ-
ւոյելէ յօտար ազնութիւն։ Իսկ Նիկոլ իւր ծախ-
քերը գոցելու համար եկեղեցիներուն գան-
ձատուները գանուած հարստութիւնները,
չերքեան և ղրքոսեան անօրէն և գժնեայ
ատեր վատնեց ու ցրուեց, ղբօ վճռաբեց,
ղբօ կլատ քաղեցց, և ղբօ յերամբ Հրեից
խորտակել արար արծարի և վճռաբեց, ալնպէս
որ Լեհահայերու եկեղեցական գանձերը
քանի վաճեց և ալին ձաց։ Ասոր հետ
մէկտեղ, ինքն իւր վատթար ընթացքը կը
չարունակէր, և կայր ըստ ատոլին վրաց ե-
րաց, և եւ ատատել անատակ (ԴԱՎ. 296)։
Այդ մասին լատին պատմագիրը մանրա-
մասնութիւններ ալ կու տայ, թէ ատեր Նի-
կոլ կայ մ յաշնատան գոհի, ղբօ յակէտատել
եր է վանաց էքէթ գիկն էր օրինատր, և կը
յաւելու, թէ են Նիկոլ է ինոջէն պրէտ յար-
քանս հատակ (ԲՈՆ. 160)։ Եւ սա է կաթո-
լիկութեան ախոյեանը, որուն համար պա-
պութիւնն չէր խղճար քրիստոնեայ և կրօ-
նասէր ժողովուրդ մը ոտնակոխ ընել, և
յանուն կաթոլիկութեան հոգեւորապէս և
մարմնաւորապէս հալածել, որպէսզի բրու-
նութեամբ հեռացնէ զայն իւր հայրերուն
նախնական և ուղղափառ դաւանութենէն։
Այդ կացութիւնը տասը տարիէ աւելի տե-
ւեց, առանց նոր միջադէպ մը ունենալու,
և Փիլիպպոսի ալ աւելի չներկայացաւ այդ
միջոցին նորէն Լեհահայերու գործերով
զբաղելու, թէպէտ հնար չէր որ միտքէ հե-
ռացներ իւր հօտին մէկ մասին կրած կրօ-
նական և անտանելի հալածանքը։

1679. Սոյն միջոցին պէտք է նշանակել Սահակ Գառնեցիին մահը, որ ախտաւոր և հիւծած կեանք մը կը վարէր Էջմիածինի մէջ, Փիլիպպոսի խնամքին ներ-քեւ (§ 1670)։ Անհնար էր որ իւր արտաքին ցաւերն ու փորձանքները չազդէին Սահակի սիրտին վրայ, միտքը բերկրով որչափ ինչ ըրած էր, թէ ինքն անձամբ, և թէ իւր հօրեղբօր Մելքիսեդեկի գործակցելով, լոկ անձնական չահերու ու կիրքերու հետեւելով, և պատճառ եղած էր եկեղեցւոյն և ազգին կրած վնասներուն։ Պէտք էր նաեւ ազդուէր իրենցմէ եւթը եկեղեցւոյն գլուխը անցնող հայրապետնե-րուն, Մովսէսի և Փիլիպպոսի ընթացքէն, որոնք բոլոր ջանքերնին և ոյժերնին և ազ-դեցութիւննին հանրութեան օգտին կը գոր-ծածէին։ Ըստ այսմ եթէ յակամայից ցաւա-գար, բայց կամաւորապէս ապաչխարող կեանք մը կ'անցընէր, ախտն ալ օր աւուր կը սաստկանար, որուն անունը չէ յիշուած, բայց իրը նկարագիր կը նշանակուի թէ ատան երկոտին ոտն նոթ, և օր աւուր յաե-լս սաստկանար, և եղա ինչ է ինն, և ցատ այն յոյժ ցաւէր և կոչ վշտացուցանէր զնա (ԴԱՎ. 188)։ Ինքն ալ զգաց թէ այլեւս համրուած են իր օրերը, և ազաչեց ու խնդրեց բա-նալ զինն և փանել է փոճար ատրք էջմիածնի։ Այնտեղ Իջման տեղւոյն առջեւ, քալամ հա-ատալանօ և էղյնել օրոք և յորդաքատզի արքատատօ և ցատքին անյոմբ, լացաւ և ազօթեց, ազաչեց ու պաղատեց, ծեր ե-պիսկոպոս մը կոչելով խոստովանեցաւ, ճանչնալով ինքը զինքը իրը փոքագործել ծառայ, ներցատել հոգեով և մարմնով, և հա-ղորդուեցաւ հատարով և յատով, և հոգեւո-րական մխիթարութեան զգացումներով լեց-ուած, նորէն բերուեցաւ է փառն յորամ կայր հնանդ, և նոյն գիշեր հոգին աւանդեց, ու եկեղեցական արարողութեամբ թաղուեցաւ է փէր էերեզմանոցն, միաբանական գերեզման-ատան մէջ (ԴԱՎ. 189)։ Դավրիժեցին տա-րի և օր չնչանակեր, բայց մանաւար յի-չատակարաններու համեմատ 1639'ին կը դրուի մահը, տասնամեայ վտարանդի և առանձնացեալ կեանքէ ետքը (ՁԱՄ. Գ.

609)։ Մենք ալ կը կրկնենք Դավրիժեցիին հետ. Տէրն Քրիստոս ներսէն արտօսք անբաժրպտելութեամբ էր (ԴԱՎ. 189)։ Սակայն մահուամբ կը վերջանայ դժպհի ժամանակներու վերջին մնացորդը։

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ

1680. Տասնամեայ միջոց մը կը բացուի առջևնիս, 1640'էն 1650, որուն մէջ գլխաւոր դիպուած մը չունինք պատմելու, այլ կը չարունակէ Փիլիպպոսի խոհական և չինարար գործունէութիւնը։ Քաղաքական կացութիւնն ալ նպաստաւոր էր, զի Պաղտատի առումէն ետքը, տեւական խաղաղութեան դաշնագիր մը հաստատուեցաւ Օսմանեանց և Պարսից միջև։ Պաղտատի պատերազմին առեն իրաւ պատերազմը Հայաստանէ հեռու էր (§ 1675), բայց թաթարներու նիզակակից գունդերը՝ Երիմէն Պաղտատ գացած առենին առաստակած էին Արտաստ նահանգը, և տիրանալու փորձեր ալ ըրած. բայց 1639'ին Տիարպէքիրի մէջ որոշուած երեսնամեայ խաղաղութեան պայմանագիրին մէջ, ապահովուած էր Պարսից պետութիւնը Երեւանի վրայ և այս դաշնագիրը հանդիսապէս վաւերացաւ Կ-Պոլսոյ մէջ 1639 սեպտեմբեր 21'ին, ուր սուլտան Մուրատ դարձած էր յունիս 10'ին (ԹՈՒ. 237)։ Երկու պատերազմիկ թագաւորներն ալ չատ չապրեցան անկէ ետքը, Մուրատ Դ մեռաւ 1640 փետրուար 9'ին, և իրեն յաջորդեց Իպրահիմ Ա. բնաւորութեամբ թոյլ և կենցաղավարութեամբ մեղկ անձ մը։ Շատ չանցաւ Շահ-Սեֆի ալ մեռաւ 1641'ին, և իրեն յաջորդեց որդին Շահ Ապպաս կամ Շահաբաս Բ տակաւին մանուկ, բայց արբեցութեան և չուայտութեան անձնատուր, որով և ախտերու ալ ենթարկուեցաւ, բնաւորութեամբ ալ թոյլ և տկար եղաւ (ՏՊԷ. 358)։ Այդ պարագաները նպաստեցին Փիլիպպոսի հանդարտ չինարարութեանց։ Ինքն խորհրդական և հանճարեղ, աչխատկաչէն և արթնաբար անձ մը, անխոնջ կը հետեւէր նորոգութեանց, չանալով վերականգնել անցած ժամանակներու մէջ աւերուածները ու քանդուածները, և ինչ որ կը ձեռնարկէր պղպջեբեթալ արբանեանայք ամենայն (ԴԱՎ. 249)։ Նախանձաւոր էր նաեւ բարոյական զարգացմանց, ամէն տեղ հրովէր և նախանձրէր, ղբդրբրալ էր եկեղեցւոց և պարոնէլ գենէ պերճանաձոց, և իր ուղղամիտ և արդար գործերով, ճգնութեան և արթնութեան կեանքով, խոչորակեաց և խարազնազգաց երեւոյթով, ամէնուն պատկառանք էր ազդած, նոյն իսկ Մահմետականաց և վրաց մէջ տարածուած էր համբաւը, և ալ ինչ ասիկ, այլ և աչերբհալէ և չչնան և ե ղերթելերէ, արբէչն և պարոնէչն ընե։ Իր արդիւնարար ձեռնարկներով վաղչոց խոխանել ևանօրայ լցան արեղչէ, և ճեղչ և հաղայ երէցմբ, բազմ կիսասեր և խոխոել եկեղչէ նորճեցան, այլևս չալով եկեղեցի նոր չինեցան։ Գլխաւոր գործերէն մին եղաւ Մովսէս կաթողիկոսէն Ծովհաննավանքի մէջ հաստատուած դպրատունը (§ 1646) էջմիածին փոխադրել (ԴԱՎ. 250), և անոր աւերի զարկ տալ իր աչքին ներքեւ, ուսուցիչ նչանակելով Սիմէոն Ջուղայեցի վարդապետը (ԴԱՎ. 312), Մելքիսեդեկ վիմանցիին աչակերտներէն։ Նչանաւոր եղան նաեւ էջմիածինի չարակից Գալիանէի և Հռիփսիմէի վանքերուն նորոգութիւնները, սակայն առաջիկային կը թողունք անոնց մասին խոսիլ։ Այդ միջոցին կ'իմնայ չիշատակագիրի մըն ալ ըսածը, թէ 1647'ին Փիլիպպոս ղբաանեանէն կոխղիկէ հասաւոյ 25 եպիսկոպոսներու և 8 վարդապետներու հետ ստորագրելով ասուեաց է Հաճ է չեան ճրնեբ Պ։ղոճ Փիլիմալիճ (ՏԱՇ. 112)։ Փիլիպպոսի հոգեհաղաւանութեան դէմ բռնած ուղղութիւնը չայտնի է բոլոր իր կեանքէն, այսու հանդերձ ուրիչներու հետ լաւ ապրելու փափաքն ալ և մանաւանդ Լհհահայերու դիւրութիւն մը ճարելու ճիգերը ծանօթ են, միացած Փիլիմալիճի կազմած՝ Հայերու ականջը խոյթող բացատրութիւններէ զգուչանալու ոճին։ Հետեւաբար հնար չէր որ բացարձակ հոգեհաղաւանութեան գիր մը եղած ըլլար այդ նամակը, այլ Հայ եկեղեցւոյ դաւանութեան պաչտպանողական բացատրութիւն մը։

1681. Այդ զբաղմանց հետ աւելի կարեւոր խնդիր մը սկսած էր տանջել Փիլիպպոսի միտքը, այն է կաթողիկոսական իրաւասութեանց սահմաններուն խնդիրը։ Ծանօթ են արդէն երկու կաթողիկոսական մասնաւոր աթոռները Աղթամարի և Սիսի

մէջ, որոնք հակաթոռութեան կերպարանի ներքև սկսան, սակայն օրինաւորութեանց կերպարան առած էին, Աղ-
ԿԻԼԻԿԻՈՑ ԽՆԴԻՐԸ թամար Վիրապեցիին օրհ-նութեամբը (§ 1461), և Սիս՝ սկիզբէն իրեն դէմ վճիռ չտրուելովը (§ 1480), որով հան-րութեան կողմէն ընդունուած աթոռներ էին։ Երկուքին ալ ահմանները ոչ սկիզբէն և ոչ յետոյ որոշ գծուած չէին, և քաղա-քական տիրապետութեանց համեմատ կը փոխուէին իրաւասութեանց վիճակները։ Վերջապէս Մայրաթոռի անկարգ անկանոն կացութիւնը, մանաւանդ վերջին ժամա-նակներու մէջ, համարձակութիւն տուեր էին միւս աթոռներուն ուզածնուն պէս գործել և ուզած կողմերնուն համար եպիս-կոպոսներ ձեռնադրել։ Սիմէոն Սեբաստա-ցի, որ 1633'էն իվեր կիլիկիոյ կաթողիկոս էր եղած, ետս առաւել կ'ընդարձակէր իր ձեռնարկները և ձեռնադրութիւնները։ Աբ-դէն կիլիկիոյ աթոռը հինէն իրաւունքներ կը ազահէր Կոստանդնուպոլսոյ քաղաքին և վիճակներուն վրայ (§ 1487), և վերջերս ալ կեսարացին սերտ յարաբերութիւն կը պահէր կիլիկիոյ աթոռին հետ, ուսկից ա-ռած էր իր եպիսկոպոսական ձեռնադրու-թիւնը (§ 1536), և որուն օգնութեամբ փորձած էր պատրիարքական աթոռ դառ-նալ (§ 1604)։ Կեսարացին ուրիշ պարագա-ներու մէջ ալ դժուարութիւն չունէր կիլի-կիա դիմել պէտք եղած ձեռնադրութեանց համար, Էջմիածին թէ հեռու էր և թէ պա-տերազմներուն պատճառով երթեւեկներ դժուարին և վտանգաւոր եղած էին։ Բայց իր սկզբունք Մայրաթոռի իրաւունքները անարգող չէր, մանաւանդ որ Մովսէս իր ձեռնասունն էր, Փիլիպպոսն ալ օտար մը չէր։ Վերջին անգամ Սիմէոն Կ-Պոլիս էր եկած կեսարացիին հետ, 1633'ին պատ-րիարքութեան գալուն առթիւ (§ 1672), և վերադարձած ատեն Անկիւրիա կը հանդի-պի, և այնտեղ Թորոս վարդապետ մը ե-պիսկոպոս կը ձեռնադրէ, իբր դի Անկիւ-րիոյ Ղուկաս եպիսկոպոսը մեռած է եղեր (04· ԱՐՐ· 717), և Յոհաննէսի և Յովվաննէսի տիպեր են որ ձեռնադրէ (04· ԱՐՐ· 718)։ Այս պատճառով խռովութիւն կը ծագի Ան-կիւրիոյ մէջ, կեսարացին ալ դժգոհ կը մը-նայ իր բարեկամին գործէն, խնդիրը փի-լիպպոսին կը հաղորդուի, որ Թորոսը կը բանադրէ, կամ թէ եպիսկոպոսութենէն կը կախակայէ, և Սիմէոնի ըրածին համար դիտողագիր մը կ'ուղղէ, մեղադրելով աղի-կամի և իր իրաւասութեան վիճակներէն դուրս ձեռնադրութիւն կատարելը (04 ԱՐՐ. 288)։ Փիլիպպոսի գիրը չունինք, միայն ա-նոր իմաստը Սիմէոնի պատասխանագիրէն կը քաղենք։ Փիլիպպոսի թուղթը գրուած կ'ըլլայ, ա՛ ամենայն Արմենիոյ Տ՛ոմէն, որ յաշխարհս Կիլիկիա, է Սիս և է Բերիոյ Տաղէն (04· ԱՐՐ· 377), իսկ թուականին համար յայտնի յիշատակութիւն չկայ, բայց ուղիղ Յերեւիր 1634 կամ 1635 թուականը, զոր ոմանք Սիմէոնի նամակին համար նշանա-կած են (11 ԱՄՍ· 24)։ Ձեռնադրութենէն յետ Տաղ ամայ, Թորոս կ-Պոլիս կու գայ և կեսարացիին հետ կը հաշտուի, որ դինքը նուիրակութեան կը ղրկէ։ Թորոս պարի և ներս ալ չէ՛ ելած՝ Յակոբ Ջուղայեցին կը ղրկէ Անկիւրիա առաջնորդ կը ղրկուի, անկէ Սիմէոն դինքը Սիս կը կան-չէ, և նա կու գայ, և անկէ ետքն է որ Փիլիպպոսի գիրը կը հասնի (04· ԱՐՐ· 719)։ Ասկէ զատ կեսարացին Էջմիածնէ բռնա-նպաստ կը կոչուի (04· ԱՐՐ· 479), որ կը հա-մապատասխանէ մեր Եղիազարեան բա-ցատրութեան, և կեսարացիին մեռած ըլ-լալը կը ցուցնէ, որ 1636'ին տեղի ունե-ցաւ (§ 1672)։ Միւս կողմէն սուլտան Մու-րատը դեռ կենդանի կը յիշուի (04· ԱՐՐ· 722), որ 1640'ին մեռած է, և այս հաշիւ-ներով Փիլիպպոսի նամակին Սիմէոնի հաս-նիլը պէտք է դնել դոնէ 1638'ին։

1682· Այդ թղթակցութեան վերլուծութիւնը տալու համար յարմարագոյն կը սեպենք դէմ առ դէմ յա-ՍԻՄԷՈՆԻ ՆԱՄԱԿԸ ուշ բերել Փիլիպպոսի նամակէն յիշատակուած մասերը և Սիմէոնի պա-տասխանները։ Սիմէոն իրեն աթոռին հա-մար ամենէն փայլուն բառերը գործածելէն ետքը, կը բաւականանայ ա՛ հոգեւոր եղբ-բայրդ ձեր տէր Փիլիպպոս կաթողիկոս Հայոց հաս-ցեով, և ոչ իսկ Էջմիածնի աթոռը յիշե-լով։ Փիլիպպոս սկիզբը սիրոյ վրայ խօսած

կ'ըլլայ, որուն կը պատասխանէ Սիմէոն խօսքը անոր դարձնելով, և Փիլիպպոսի նամակին ինչ ինչ բառերը խմբելով։ Գլխաւոր խնդիրը կը յանգի աթոռներու մեծութեան վրայ։ Փիլիպպոս Էջմիածնի աթոռին Ամենայն Հայոց գլխաւոր աթոռ ըլլալը յայտնելու համար իմաստասիրական բացատրութեամբ, սեռի և տեսակի և անհատի առնչութիւնները յիշած կ'ըլլայ, ելլելա-կացնելով թէ մասնէն է հանդէպ ընդհանրին, քայց ոչ հանդէպ է մասնոյ (04· ԱՐՐ·38)։ Սիմէոն կը հասկնայ թէ ինչ միտք ունին այդ խօսքերը, այսինքն թէ Էջմիածին չափազանց է և Սիս վերջին, կամ Էջմիածին ընդարձակ է, և Սիս մասնակի։ Ուստի Լուսաւորիչէ սկսելով կաթողիկոսներու չարքէն քաղուած մը առջեւ կը դնէ, ոչ միշտ ճշդուած թիւերով և թուականներով, հետեւցնելու համար թէ ինչպէս յայտնի այդ հայրապետութենէն հեռացած, այնքան Սիս, և ոչ թէ Լուսաւորչի Աշոտ, չէ՞ որ քնակեցաւ, չէ հաճեցաւ ընդ սոյ իսկ վիրապեցիին կաթողիկոսութիւնը ապօրէն կը դատէ, իբր զի անհնազանդ եղեալ Յեր Աբեղեան կոչիդ է ոչ թէ Լուսաւորչէ պնոյս, և յետնադրեցին ըստ կարգ իրեանց կոնդակս խորհրդեցին զգալով կիլիկեցիներու յաւակնոտ մեծամտութեան մերթ ընդ մերթ երեւան եկող յայտարարութիւնն է, որ հերքուելու իսկ պէտք չունի, զի պատմական պարագաներ չատ որոշ են այդ մասին, և մենք ալ իւր կարգին բացատրած ենք (§ 1451)։ Սիմէոն իրրեւ հիմնական փաստ մը առջեւ կը բերէ Գրիգոր Կնապատցիի մէկ յայտարարութիւնը, զոր գրեր է նա Սիս ձեռնադրուած միջոցին։ Այս յայտարարութիւնը, որ ամբողջապէս յառաջ բերուած է (04· ԱՐՐ·479—482), բնաւ կիրակոսի մասին չխօսիր, փոխադրութեան չակնարկեր, և ճարտար դարձուածներով Յովհաննէս Այնթապցիի կաթողիկոսութիւնը կը պաշտպանէ, ոչ Էջմիածնի աթոռին դէմ, այլ Պետրոս կարկառեցիին դէմ, որ Բերիոյ մէջ Սիսի հակառակ կաթողիկոսութիւն կը վարէր (§ 1578)։ Ակէ զատ, չատ յայտնի է կեսարացիին չարունակ Էջմիածնի հետ յարաբերութիւն պահելը և զայն գլխաւոր աթոռ ճանչնալը, պնդելով թէ՝ Սիս Էջմիածնէ վերջ Երեմիան եմ (04 ԱՐՐ. 718)։ Առանց այս դիտողութեան ալ, միթէ կեսարացիին խօսքը այդչափ մեծ վկայութիւն մըն է, որ անով հնար ըլլար լուծել երկիղեցւոյն կենսական խնդիրը. նա ժամանակակից վկայ ալ չէ, և փոխադրութենէն երկու դար ետքն է։ Աւելի ոյժ չունին Ռուբինեանց ժամանակէն կամ փոխադրութենէ առաջ Արեւելեայց կիլիկիոյ աթոռին հետ յարաբերութիւնները (04· ԱՐՐ·464), զի ոչ ոք կ'ուրանայ թէ այն միջոցին հայրապետական աթոռը կիլիկիա էր։ Եթէ Սիմէոնի պատճառաբանութիւնը բան մը արժէր, աւելի Աղթամար կրնար օգտուիլ անկէ, քան թէ կիլիկիա։ Իսկ գրչութեան արհեստին և երաժշտութեան արուեստին կիլիկիոյ մէջ ծաղկած ըլլալը, լրջութեամբ խօսուելու փաստ մը չէ. նոյնպէս Սալմաս է Մշոյ և Խոշ է Սոյ ժողովրդական առածն ալ (04· ԱՐՐ·485), որ կաթողիկոսութեան վարչականութեան հետ կապ մը չունի, և Սիմէոնի ամուր փաստերէ զուրկ ինալը կ'ապացուցանէ։

1683· Սիմէոն աւանդական զրոյց մըն ալ կը յիշէ թէ Մովսէս Տաթեւացին առաջարկած ըլլայ կիլիկիոյ Մինաս կաթողիկոսին, թէ ԴԱՐՁԵԱԼ ԵՒ ՆԱՄԱԿԸ Եւ կոմիմ կոմս իմով հրաժարիլ չիմայ քաղնէս, քայց ընդ դուռ կոմիմ և ոչ հաճիմ, անդ հասցուցեալ (04· ԱՐՐ·485)։ Մովսէսի խօսքերը ոչ պատմիչներ գրած են և ոչ գրաւոր յիշատակ մը կայ, որ անոնց իմաստը ճշդէինք, բայց եթէ անոնք Սիմէոնի յառաջ բերածին պէս ալ ըլլան, միայն Մովսէսի աթոռոյ միութեան համար անկեղծ և անչահասէր փափաքը կը հաստատեն, և աւելի ոչինչ։ Վերջնական որոշումը ազգային ժողովով պիտի տրուէր հարկաւ, և ոչ Սիմէոնի նախորդին՝ Մինաս կարնեցիի ազատ կամքով։ Սիմէոն կ'անցնի պատասխանել Փիլիպպոսի դիտողութեան, թէ ընդէ՞ր յետնադրեցին աշխարհ է ծերոմ վիճակն (04· ԱՐՐ·713)։ Իւր արդարացման համար յանուանէ կը յիշէ իւր նախորդներուն Էջմիածնի վիճակին համար ըրած ձեռնադրութիւնները. Խաչատուր Ուշնեցին՝ Ակնայ վրայ, Տիրատուր Սսեցին՝ Անկիւրիոյ և Կ-Պոլսոյ վրայ, Ազարիա Ջուղայեցին՝ Կարնոյ, Եւդոկիոյ,

Ամասիոյ, Մարովանի, կաֆայի, Խարբերդի, Բաղէշի և Մուշի վրայ, Յովհաննէս Ալեքսանդրացին՝ Մերտինի, Երզնկայի, Մարսվանի, Կոստանդնուպոլսոյ, Ադրիանապոլսոյ, Պուլղարացւոց, Իլվովի, կաֆայի, Գոնիայի և Կեսարիոյ վրայ, Պետրոս կարկառեցին՝ Զընքուշի, Մուշի և Եւդոկիոյ վրայ, Մինաս կարնեցին՝ Մերտինի, Երզնկայի, Սեբաստիոյ, Եւդոկիոյ, և Սուլտանասարբի վրայ։ Զեռնադրեալներուն անուններն ալ կը յիշէ Սիմէոն, բայց մենք զանոնք բրինք, բաւական սեպելով տեղերը ցուցնել, որով կ'որոշուին էջմիածինի ներքեւ եղող վիճակները։ Սիմէոն կը յաւելու թէ ասոնք միայն իր դիտցած ու տեսածներն են, և թէ ուրիշներ ալ պէտք է ձեռնադրուած ըլլան Ազարիայէ և Պետրոսէ, երբ Կիլիկիայէ մինչեւ Հին-Ջուղա գացին Լեւոն Եղեռնագլխոյ դարձեր էին (04 ԱՐՐ· 714)։ Սիմէոն թերեւս իրաւունք ունենար բսել, հայր էմ ինձ ցայժմ էրթալ, և ես գրեցի (04 ԱՐՐ· 713)։ Նախորդներս ձեռնադրեցին, ես ալ կը ձեռնադրեմ. բայց յայտնի է որ երեք չիրթ ժամանակներու մէջ և երթեւեկներու անհնարութեան առեն էջմիածինի վիճակներ ստիպեալ դիմեցին Կիլիկիոյ աթոռին, ասով բնաւ կանոնական իրաւունք չէր կրնար հաստատուիլ, իսկ Փիլիպպոս պէտք կը զգար ուրիշ բանորոշմանց հետ այդ կանոնական կարգերն ալ վերանորոգել։ Սիմէոն կ'ուզէ օգտուիլ Լամբրոնացիին գրածէն, թէ կաթողիկոսը ընդ ամենայն թեղթս ոնի էչեռնոմիկոն չեռնագրելոյ եպիսկոպոս, սակայն չմտածեր, որ Լամբրոնացին ազգի մը պետ եղող կաթողիկոսին վրայ կը խօսի, և ոչ պատահարար կաթողիկոս անուն կրողներուն վրայ։ Փիլիպպոսի իրր առարկութիւն կը դիմադրէ՝ Հալէպցի Սիմէոն մը ձեռնադրած ըլլալուն, յանդիմանելով թէ հան նախ դիբեռնոր չկոնի տոմոն (04 ԱՐՐ· 715), սակայն չյիշեր թէ այն ո՛ր վիճակին համար ձեռնադրուած է, վասնզի խնդիրն հիմր ձեռնադրելոյն վիճակն էր, և ոչ ծննդավայրը։ Սիմէոն կ'անցնի մեղադրել բանադրանք արձակած ըլլալը Թորոսի դէմ, թէ ոչ կ'ըսէ բոլոր Սիսէ ձեռնադրեալներն ալ պէտք էր բանադրէիր, նաեւ վախճանելէն ի հող, որ ոչբրդ պոզի (04 ԱՐՐ· 715), ինչ որ լուրջ պատճառաբանութիւն և օրինաւոր տրամաբանութիւն մը չէ։

1684· Սիմէոն իր նպատակին համար բերած փաստերուն չվստահելով, նիւթէն կը չեղի, և կ'անցնի էջմիածնի աթոռին կողմէն կատարուած գործերը մեղադրել։ Կը սկսի յանդիմանել թէ Համազասպ եպիսկոպոսը զանազան տանջանօք սպաննել տուիք, Մարդակերաց Ճանճի եպիսկոպոսին ականջը կտրել տուիք, Սերկևէկցի արեղային ծածուկ անդամը կրտրել տուիք, Գառնեցի արեղան հաւատքէն ուրացուցիք, Զաքէոս արեղան ֆռանկ ընել տուիք, Սահակ կաթողիկոսը և Պօղոս վարդապետը տաճկցնել տուիք, Լեհաստանի Հայերը անհաղորդ և անթաղում թողուցիք (04 ԱՐՐ· 716)։ Սակայն Սիմէոն անհիմն զրոյցներ հաւաքած է, զի Սահակի և Պօղոսի համար բանածին ճիշդ չըլլալը արդէն յիշեցինք (§ 1656), Լեհաստանի համար բսածն ալ բոլորովին հղհզութեան հակառակ է։ Համազասպ Հաւուցքառեցին իրաւ Մելքիսեդեկ մատնեց, բայց սպանութիւնը յիշուած չէ (§ 1633), իսկ մնացածներն ալ անծանօթ անուններ են, և Մարդակերաց եպիսկոպոսը յայտնի առասպել կը տեսնուի։ Փիլիպպոսի կողմէ ակնարկուած սիմոնականութեան ամբաստանութիւնը, այսինքն կաշառքի համար գործած ըլլալը Սիմէոն իսպառ կը հերքէ, և իր անունին Սիմոն, և ոչ Սիմօն ըլլալը կը պնդէ, որ սիմոնականութեան հետ առնչութիւնը հեռացնէ։ Լամբրոնացիէն բերած վկայութիւնը անգամ մրն ալ կը կրկնէ, և էջմիածնի արեղաներէն մէկուն՝ կ-Պոլսոյ մէջ 100 դուբուշնոց աւետարան մը իրր խըզմէթ և վարձ իւրացնելը, Փիլիպպոսին երեսը կը զարնէ, իբրեւ անոր կողմէ կաշառակերութիւն (04 ԱՐՐ· 716), որոնք կարեւորութենէ զուրկ խօսքեր են։ Վերջէն կը հասնի Թորոսի ձեռնադրութեան պարագաները բացատրել։ Կեսարացիին հետ կ-Պոլիս գացած աւեն, Անկիւրիայի Դուկաս եպիսկոպոս կը մնան, Թորոսը կը ներկայացնեն, բայց չձեռնադրեր։ Դարձին մինակ եղած աւեն նորէն կ'առաջարկեն, ինքն դիտել կուտայ թէ էջմիածնէ ընծա է էնկիւրէ գալն, բայց ժողովուրդն այնպէս վրայ կը ձեռնադրէ,

ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԽՕՍՔԵՐ

և կ'անցնի կ'երթայ։ Կեսարացին լսելով կը նեղանայ, կ'երեւի թէ առաջին անգամ նա արգելած էր ձեռնադրութիւնը, բայց քանի ամիս ետքը Շահին Զէլէպի և իօջայ Ե-բեմիա՝ Թորոսը Կ-Պոլիս կը բերեն, և Կեսարացին հետ կը հաշտեցնեն, ընդունելով և էջփոխնէ քահանայ վճարելով։ Ասոր վրայ Թորոս պատրիարքական նուիրակ կը ղրկուի Ռումելի և Անատոլու, և տարիուկէս ու աւելի կը չրջի, և կրկին Անկիւրիա առաջնորդ կը դառնայ Կեսարացիին ջրնդունելով նամակ։ Բայց ժողովուրդը չընդունիր, և այս պատճառով Սիմէոն Թորոսը իր մօտ կը կանչէ, որ կու գայ ու կը մնայ Սսոյ աթոռին մէջ։ Այս ատենք ըլլալով, կ'ըսէ Սիմէոն, այլ ոչ ինչ ելոյ ցաց, զի ընդունելոյ և քանզի որ Թորոսի հայրենիքը Գանձակն է, այսինքն Գարաման, և մայրը Մելտինէէ է, և ինքն իմ թեմիս մէջ է (04 ԱՐՐ. 719)։ Եթէ իրօք այս ամէնը լմնցնէին ետքը գրած է Փիլիպպոս իր բանադրանքի կոնդակը, այլեւս անոր պէտք մնացած չէր ըլլար, քանի որ Սսոյ ձեռնադրելը Սիս քաշուած էր։ Հարկաւ Փիլիպպոս ալ այդչափը կրնար մտածել, ուստի կ'երեւի թէ կոնդակը աւելի կանուխ գրուած, և հաւնիլը ուշացած է, կամ թէ Սիմէոն, ինչպէս ուրիշ տեղեր, այստեղ ալ պարագաները կը խառնակէ, որ իրաւացի խօսած երեւնայ։

1685. Սիմէոնի նամակին վերջին մասը կծու յանդիմանութիւններ են Փիլիպպոսի հասցէին, ուր Սառուա-

ՆԱՄԱԿԻՆ ՓԱԿՈՒՄԸ

չունչէ քաղուած կտորներով կ'ուզէ իր խօսքերը վաւերացնել։ Անոնցմէ եղեկիայի ուղղած պատգամէն կը բաղդատէ Փիլիպպոսի ընթացքը, անոր բերանը դնելով, թէ «Ահա ելանեմ, ելադրեմ, ելիմ-պանդռեմ, ելնդունիմ հնազանդեցուցեալ եմ, և զոր՝ ո՞ եւ, որ ոչ հնազանդէ, յո՞ յոյժ եալ է» (04 ԱՐՐ. 721)։ Կ'ըսէ, թէ Փիլիպպոս իր նուիրակութեան առեն ամէն տեղ խռովութիւն պատճառած, և չարունակ փախուստի ստիպուած է։ Բաղէշ՝ հինգ վարդապետներու հետ, Վան՝ Յովսէփ Մոկացի վարդապետին հետ, Լիմ և Արճէշ՝ տեղացի եպիսկոպոսներու հետ, Կարին՝ Մինաս վարդապետին հետ, ամէն տեղ խռովութիւն թողուցիր, կ'ըսէ, ընդդէմ երէցն կռուիլ ելանել. հալածէ կոչէ, զի ոչ երէցս Ոհանոյ երէցն է (04 ԱՐՐ. 722). ոտն Ոհանոյն են, ընդդէմ այլազգի են, ընդդատաստան առնեն (04 ԱՐՐ. 724)։ Բոլորովին անհարկի ակնարկ մը, իսօսք խառնել ուղղանեու սովորական ոճը։ Կը յիշէ թէ էջմիածնի նախորդ կաթողիկոսներ, Սիսէ կատարուած ձեռնադրութեանց մասին դիտողութիւն չեն ըրեր, ուստի կը հետեւցնէ, նոյնպէս և ինք չընդդիմէ, և ոչ խորհի։ Դարձեալ էջմիածնի վրայ մեղադրանքներ կուտելու համար, կ'ըսէ թէ Մովսէս՝ նամակ է գրել պապին (04 ԱՐՐ. 722), թէ Մելքիսեդեկ մնացած միւռոնը թափեր են, թէ էջմիածնի նուիրակներ՝ Պրուսա, Մանիսա և Զմիւռնիա՝ մեծապահոց մէջ բաց պատարագ են ըրեր, թէ Փիլիպպոս կեղծեր պահեցող մըն է, և թէ էջմիածնի նուիրակներ միւռոնի համար սակարկութեան են մտեր (04 ԱՐՐ. 725)։ Բոլոր այս պարագաները, եթէ ճշմարիտ ալ ըլլան, վիճականերու անփակտութեան խնդիրը չեն լուծեր։ Վերջապէս իրեն դովեսար ընելով, ֆեռէր, կամ ֆեհ, կամ յեղկող, կամ արձանէր, կամ կաղապարել չըլլալուն վկայ կը կոչէ բիսպիններ, ուր այնտեղ քրիստոնեայ մնացեր է (04 ԱՐՐ. 726), և կ'երեւի թէ բիսպիններէ գոհ բարեկամ չէ ունեցեր։ Անա Սիմէոնի նամակին վերլուծութիւնը, զոր ուղեցինք քիչ մը ընդարձակօրէն քաղել, վասնզի ոչ միայն բաւականաչափ պատմական պարագաներ կը պարունակէ, որք լոյս կը սփռեն ժամանակին կացութեան և կենցաղավարութեան վրայ, այլեւ կը լուսաբանեն կիլիկիոյ կաթողիկոսներէն ոմանց՝ միմիանց հանդէպ յայտնած մեծամտութիւնը, որով ինքզինքնին Ամենայն Հայոց օրինաւոր հայրապետութեան յաջորդ կը կարծեն, և էջմիածնի Մայրաթոռին վրայ իբր հակաթոռ կը նային։ Այդ մասին իր կարծիքն խօսած ենք (§ 1462), և անդրադառնալու պէտք չենք զգար։

1686. Սիմէոնի նամակը ինչ արդիւնք ունեցաւ չենք գիտեր, և ոչ իսկ հասցէին ղրկուած կամ էջմիածին հասած ըլլալը տեղ մը յիշուած է։ Դաւրիժեցին ալ բնաւ ան-

ՍԻՄԷՈՆ ԵՒ ՆԵՐՍԷՍ

դեկուքիւն չունի այդ միջադէպին վրայ, և կ'երեւի թէ էջմիածինի մէջ Սիմէոնի նամակն իսկ չէ տեսեր։ Բայց ինչ ալ ըլլայ եղելութիւնը, Փիլիպպոս խոհականութեամբ վարուած է խրնդիրը չարձարձելով և պայքարը չերկրորդելով, համոզուած ըլլալով թէ այսպիսի բնաւորութեան և լեզուագարութեան տէր մէկու մը հետ հնար չէր խօսք հասկնալ և հասկցնել, և բարեկարգական կանոններու վրայ համոզում գոյացնել։ Սիմէոն բոլոր իւր նամակին մէջ կանոններու յիշատակութիւն իսկ չընէր, և պատահական դործերը իրր ուղեցոյց կը նկատէ։ Ըստ այսմ կաթողիկոսական վիճակներու յարաբերական խնդիրները, որոնց վրայ Մովսէս ու Փիլիպպոս մտադրութիւն դարձուցած էին, իրենց չփոթ կացութիւնը չարունակեցին մինչեւ Սիմէոնի մահը 1648'ին, որուն յաջորդեց Ներսէս Մերաստացի, որ անդամ մը յիշուեցաւ Կ-Պոլսոյ դործերուն առիթով (§ 1634), և որ աւելի խաղաղասէր և խոհական գաղափարներու տէր անձ մըն էր, և բարեկարգ յարաբերութեանց պէտքը կը զգար։ Իրօք ալ անոր օրով փոխադարձ պայմաններ կրցան հաստատուիլ էջմիածինի և Սիսի աթոռներու միջեւ։ Այդ յաջողութիւնը սովորաբար դիպուածի արդիւնք կը կարծուի, երկու կաթողիկոսներուն պատահմամբ Երուսաղէմ գտնուելէն առջեւ եկած (ԴԱՎ. 254), սակայն պարագաներու ուսումնասիրութիւնը կ'առաջնորդէ կարծել, ինչպէս մտածած է և Արէլ Մխիթարեան (ԱԲԼ. 145), թէ այդ համաձայնութիւն կանխաւ պատրաստուած կարգադրութեան արդիւնք էր, մանաւոր բանակցութիւններով Փիլիպպոսի և Ներսէսի մէջ հաստատուած, և լրացնելու համար չեզոք գետինի մը վրայ իրարու հետ տեսակցելնին որոշուած, և ժամադրութիւն ալ եղած, այնպէս որ Փիլիպպոս Երուսաղէմ գացած առեն, ճանապայ եղած կը գտնէ Ներսէսը (ԴԱՎ. 254)։ Փիլիպպոսի էջմիածին մեկնիլը տեղի ունեցաւ 1451'ին (ԴԱՎ. 260), ամսաթիւը յիշուած չէ, բայց գարունին յառաջելուն կրնար ընել երեւանէ կարին ճանապարհորդութիւնը, և պատշաճողութիւնը կը պահանջէր որ գաղիկն ալ ըրած ըլլար, որ այն տարի կը հանդիպէր մարտ 30'ին։ Փիլիպպոս բաւական երկար ուղեւորութեան ձեռնարկած առեն, պէտք էր որ յարմար մէկ մը տեղակալ նշանակէր Մայրաթոռին գործերը հոգալու, և ձեռնարկած չինութեանց հակելու, և որչափ ալ անունը տրուած չէ, սակայն Դավրիժեցիին ըսելէն, թէ Յակոբ Ջուղայեցին է ⳟⲟⲙⲁⲛⲟ-ⲡⲟⲗⲓⲧⲟⲩⲙⲉⲛⲟⲥ Փիլիպպոսի, «ոմն չինութիւններով զբաղիլ (ԴԱՎ. 267), և թէ Գայիանէի և Հռիփսիմէի վանքերուն նորոգութիւնները Փիլիպպոսի բացակայութեան առեն կատարուած են (ԴԱՎ. 253), կրնանք հետեւցնել թէ նոյն ինքն Յակոբ Ջուղայեցին, Փիլիպպոսի յաջորդը, անոր տեղակալն ալ եղաւ բացակայութեան միջոցին։ Պէտք է նաեւ դիտել, թէ նախորդներու օրով այսպիսի պարագաներու մէջ, օծեալ աթոռակից մը կը դրուէր, ինչպէս երբեմն Յովհաննէս Աջակիրը (§ 1513) և Ստեփանոս Սալմաստեցին (§ 1549). սակայն աթոռակցութեան սովորութիւնը Մովսէս Տաթեւացիէ միանգամ ընդ միշտ ջնջուած ըլլալով, Փիլիպպոս ալ դայն չուզեց վերանորոգել, և լոկ եպիսկոպոս տեղակալի յանձնեց Մայրաթոռին գործերը։ Գրչագիր աւետարանի մը յիշատակարանը 1653 թուականին, ⳟⲟⲙⲁⲛⲟ-ⲡⲟⲗⲓⲧⲟⲩⲙⲉⲛⲟⲥ պէր Անանիայ գրած ըլլալէն (ԹՈՐ. Ր. 340), որ և ճիշդ Փիլիպպոսի բացակայութեան թուականին կը համեմատի, հնար էր հետեւցնել, թէ այս անունով աթոռակից մը գտնուած ըլլայ էջմիածինի մէջ. սակայն Դավրիժեցիին և ուրիշներուն այս անունով մէկ մը չյիշելնէն, և ուրիշ աթոռներու վրայ ալ այս անունով կաթողիկոս չգտնուելէն, պարզապէս չփոթութեան հետեւանք կը նկատենք Անանիա կաթողիկոսի մը յիշատակութիւնը։ Առաւաւէն կաթողիկոսութեան բացակայութեան միջոցին տեղապահութեան վրայ կրնար մեկնուիլ. սակայն այն ալ չենք համարձակիր պնդել՝ միակ և չփոթ յիշատակութեան մը հիմնուելով։

1687. Փիլիպպոս էջմիածին մեկնեցաւ ⳟⲟⲗⲟⲙ ⲙⲡⲟⲗⲓⲧ, ⲉⲡⲓⲥⲕⲟⲡⲟⲥ ⲛ ⲉⲝⲏⲅⲟⲩⲙⲉⲛⲟⲥ, ⲛ ⲧⲁⲅⲁⲛⲟⲩⲓ ⲛ ⲙⲁⲣⲧⲩⲣⲟⲥ, որոնց միացան ⳟⲟⲗⲟⲙ ⲉⲡⲓⲥⲕⲟⲡⲟⲥ ⲛ ⲉⲝⲏⲅⲟⲩⲙⲉⲛⲟⲥ ⲛ ⲓⲉⲣⲉⲱⲥ, ⲛ ⲧⲟⲗⲧⲟⲩ ⲛ ⲫⲣⲁⲛⲅⲟⲩ (ԴԱՎ. 253),

ԱՅՆՊԷՍ ՈՐ ՔԱՆԻ ՄԸ ՀԱՐԻՒՐ ուխտաւորներու մեծ կարաւան մը կազմուեցաւ։ Կուստանդնուպոլսոյ Հայկական թաղվըդ՝ իմանալով Փիլիպպոսի ուղեւորութեան լուրը, փութացին մեծ եւ պարբոսին դիմել, և պարտուպատշաճ պաշտպանութեան և պատուասիրութեան միջոցները խնդրեցին իրենց կաթողիկոսին համար։ Օսմանեան կառավարութիւնն ալ հաւանեցաւ տալ նոյն ընթացուրեան ընթով, և նշանակել անոր մօտ ընթացուրեան թաղուց է պրծնէ ընթացուրէն, որպէսզի ցորչափ նա Օսմանեան հողին վրայ գտնուի, պարտուպատշաճ յարգանքն ու խնամքն ընծայուի տեղական իշխանութեանց կողմէն։ Յատուկ պաշտօնեան արքունի հրովարտակին հետ հանդիպեցաւ Փիլիպպոսի կարնոյ մէջ, և անկէ ետքը միչտ անոր ընկերացաւ չարունակ երկու տարի, մինչեւ որ հասաւ Փիլիպպոսը է ուրբ Էջմիածին, և Մահմատուլի խան երեւանի կուսակալէն ատեալ ընթղ նշանէ և պաշտօնեան՝ դարձաւ է գառան ընթացուրէն էրոյ՝ է Կոստանդնուպոլիս (ԴԱՎ. 254)։ Կարիւէ Երուսաղէմ ցամաքային ուղեւորութեան մէջ, Փիլիպպոսի հանդիպած քաղաքները որոշակի յիչուած չեն, և ուղեւորութեան տեւողութիւնն ալ ցուցուած չէ, բայց նկատելով որ բոլոր գլխաւոր տեղեր պիտի փափաքէին կաթողիկոսին օրհնութիւնը վայելել, և կաթողիկոսն ալ պիտի ուզէր նորէն հանդիպիլ այն տեղերը, ուր նուիրակութեամբ գտնուած էր, պէտք է ենթադրել, թէ ոչ ուղիղ գիծով կրցաւ յառաջել, և ոչ ալ հասարակ կարաւանի ճանապով կրցաւ երթալ, որով հաւիւ 1651 աչունին կրնար Փիլիպպոս Երուսաղէմ հասնիլ։ Դաւիթ Եւդոկիացի երէց մը, որ 1651'ին կատարած ուղեւորութիւնը ճիշդ օրագրութեամբ կը պատմէ, նոյն տարւոյ նոյեմբեր 30'ին հասած է Հալէպ, և անդ տեսած է ընկայն հայոց ընթղ ընթացուրէն կաթողիկոն, և անոր օրհնութիւնը առած, և այն օրեր հոգեւոր պերն է ուրբ Եղուարդ է գացած (ՏԱՇ. 84)։ Ուրիշ յիչատակագիր մըն ալ կ'ըսէ, թէ Հայոց 1101 թուին Փիլիպպոս և Ներսէս իրարու հանդիպեցան Բերիոյ մէջ, և գնացին է հեռ է ուրբ Խաչն Եղուարդ (ՏԱՇ. 442), և պէտք է դիտել որ 1101'ի ամանորը 1651 հոկտեմբեր 10'ին կ'իյնար։ Ըստ այսմ մեծ տօներուն մօտ Երուսաղէմ հասած կ'ըլլան։ Երուսաղէմի պատրիարք կը գտնուէր այդ միջոցին Աստուածատուր Տարոնեցի, Գրիգոր Պարոնտէրի աչակերտներէն (§ 1650), որ անոր յաջորդած էր 1645'ին (ԲԱՒՒ. 54), և իւր նախորդին նման չինարար ձեռնարկներ կատարած, բայց և ծանր հակառակութիւններ կրած, ոչ միայն արտաքիններէն, այլ և ներքիններէն, մինչեւ իսկ զինքն պաշտօնանկ ընելու չափ 1649'ին (ԱՍՏ. Ա. 338), պատրիարքութեան բարձրացնելով Եղիազար Ախթապցին (ԲԱՒՒ. 55), այդ յախուռն ձգտումներու և անդադար յուզումներու մարդը, որուն գործերը մեզ երկար պիտի զբաղեցնեն։ Բայց Աստուածատուր կրցաւ կառավարութեան ձեռքով նորէն իւր աթոռը դառնալ 1650'ին (ԱՍՏ. Ա. 338), և ինքն էր պատրիարքական աթոռի վրայ, երբ միասին Երուսաղէմ հասան Փիլիպպոս և Ներսէս։ Իրաւ, ինչպէս դիտել տուինք, աւելի մեծ և կարեւոր գործի նպատակով կուգար Փիլիպպոս Երուսաղէմ (§ 1586), բայց նա զանց չըրաւ տեղական գործերուն ալ մատղրութիւն դարձնել, ներքին բարեկարգութիւններ հաստատել, և պիտանի չինութիւններ կատարել։ Այս կարգին նչանաւոր են Ս. Յակոբեանց տաճարին յատակին սալարկը երանգ երանգ վիմօք, և աւազ խորանի բեմին բարձրացումը (ԴԱՎ. 254)։ Փիլիպպոս օտարներու կողմանէ ալ չատ պատուուեցաւ, Տաճիկ կուսակալը, Յոյներու պատրիարքը, ու Լատիններուն վանքին պետը, բոլորն ալ ընդունեցին և պատուեցին զնա (ԴԱՎ. 254)։

1688. Երկու կաթողիկոսութեանց միջեւ տիրող գրգռութեաց ընդունելը, և կանոնաւոր յարաբերութիւններ հաստատելու ջանքը, որ վերջ պիտի տար չատ մը անտեղի միջադէպներու, և պիտի դադարեցնէր Սիմէոնի նամակին մէջ արտայայտուած զգացումները, ըստինք, կանխաւ բանակցութեանց նիւթ եղած և միայն որոշման մը պէտքը կը մնար։ Այդ նպատակին պիտի ծառայէր Երուսաղէմի գումարումը. թէպէտ կատար-

ՓԻԼԻՊՊՈՍ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

եալ ծանօթութիւններ չունինք մանրամասնութեանց վրայ, ուստի հատուկտիր յիշատակներէ պէտք է քաղենք ինչինչ տեղեկութիւններ։ Մարտիրոս Ղրիմեցիէ գրուած ոտանաւոր մը՝ ներկաներուն թիւն ու անունները կու տայ (ՂՐՄ.)։ Փիլիպպոս կաթողիկոսի հետեւորդ վարդապետներէն կը յիշուին, Դաւիթ Շօշեցի, Բարսեղ Շօշեցի, Ներսէս Տաթեւացի, Առաքել Շուռթեցի, Գաբրիէլ Երեւանեցի, Յոհան Երեւանեցի, Յովհաննէս Մուղնեցի Տիգրանակերտի առաջնորդ, Յոհան Արղնեցի, Մխիթար Եւդոկիացի Գաղատիոյ առաջնորդ, Գրիգոր Վանեցի, Աւետիս Վանեցի, Խաչատուր Բաղիշեցի, Թորոս Կեսարացի, և Նիկողոս Կեսարացի։ Ներսէս կաթողիկոսի հետեւորդներէն կը յիշուի միայն Խաչատուր վարդապետ Բերիոյ առաջնորդ։ Թեմակալ եպիսկոպոսներէն կը յիշուին, Սահակ Վանայ, Մարկոս Սասնոյ, Յովհաննէս Ակնայ, Ստեփանոս Մոկաց, Միքայէլ Բաղիշոյ, և Պետրոս Սասոյ։ Երուսաղէմի միաբաններէն Աստուածատուր պատրիարքէն զատ կը յիշուին, Խաչատուր Ջնքուչեցի, Առաքել Բաբերդցի, Թորոս եպիսկոպոս և Մնոփրիոս Լեհացի։ Ժողովականաց ամբողջ թիւը եղած է 63, այսինքն 2 կաթողիկոս, 18 վարդապետ, 8 եպիսկոպոս, և 35 կրօնաւոր, որ է աբեղայ։ Քահանաներ եղած են վերոնշեալ։

ԳՈՒՄԱՐՄԱՆ ԳՈՐԾԵՐ

1689. *Երուսաղէմի մէջ տրուած որոշմանց և հաստատուած կանոններուն նկատմամբ, Դավրիժեցիէն ուրիշ միայն 13 կանոններու պարունակութիւնը, որ կ'երեւի թէ բուն իսկ ստորագրեալ պատճէնը չեն, վասն Դավրիժեցին ալ ըստ համառօտ նշանակէցէ նախապանով յառաջ կը բերէ (ԴԱՎ. 255)։ Թիչեալ կանոններուն ժողովական ոյժ կրնայինք տալ, հիմնուելով Դաւրիժեցիին ծանօթութեան, բայց դժուար կը նկատենք ընդհանուր ազգային ժողովի հետ ղինակութիւնը տեւնել Երուսաղէմի գումարումին մէջ, քանի որ ընդհանուր հրաւէրով և ամէն կողմերէ հաւաքուած ժողով մը չէր կազմուածը, որուն մասնակցած են Փիլիպպոսի և Ներսէսի հետեւորդները և Երուսաղէմի վանքը գտնուղները։ Իսկ քահանաներ և աշխարհականներ եղած են՝ պատահմամբ գտնուղ ուխտաւորներուն գլխաւորները։ Հետեւապէս աւելի քան բուն և ազգային ժողովական գործ, իբր երկու աթոռներու մէջ համաձայնութեան դաշնագիր մը իդէպ է նկատել յիշեալ 13 գլուխները։ Այսու հանդերձ կը համաձայնինք այդ կանոններուն վրայ՝ պաշտօնական և կանոնական նշանակութիւն տեւնալ։ Իբր զի այդ գլուխներուն գլխաւոր նպատակէտը եղած է «եր և դաբձանութիւն էլիսց աղաւաց կողոպիսացն էջմիածնէ և Սսոյ» (ԴԱՎ. 255), որպէսզի հնար ըլլայ աղջնեն առնել այն անկարգութեանց և զեղծումներու, որոնք սիրած էին երկու աթոռներուն իրարու ձեռքէ իրաւունք և հասոյթ խլելու մրցումէն։ Իսկ անկէ յառաջ եկած հակառակութիւնէն, կ'օգտուէին անհատներն ալ իրենց ապօրինութիւնները գեղեցկելու համար։ Այդ մասին աւելի մեղադրելի էր Սսոյ աթոռը, որ ինչպէս տեսանք Սիմէոնի նամակէն, Մայրաթոռի իրաւունքները և հեղինակութիւնը կ'ուզէր ջնջել, և իրեն համար օգտակար պարագայ մը կ'ըլլար էջմիածնի աթոռին Պարսիկ տիրապետութեան ներքեւ գտնուիլը, և Պարսիկ տէրութեան Օսմանեանին հետ պատերազմի կամ խնամութեան մէջ լինելը։ Ասով Սիս կը քաջալերուէր Օսմանեան վիճակներու վրայ ոտնձգութիւններ ընել, և Օսմանցիներու գովելու ցոյցերու դիմել, ինչպէս Սիմէոն ալ ըրած էր (§ 1685)։ Այդ զեղծումներուն դարման տանիլը Մովսէս ալ մտածած էր, բայց իրեն անհնար էր եղած երկու տէրութեանց թշնամութիւններուն չարունակուելուն պատճառով, իսկ Փիլիպպոս ուզեց օգտուիլ 1639'ին հաստատուած երեսնամեայ խաղաղութենէն (§ 1680), և անով զօրացնել առաջին քայլը՝ զոր առած էր Թորոս Անկիւրացիին ձեռնադրութեան դէմ ելլելով (§ 1681)։ Իսկ անկէ ետքը պէտք եղած էր երկարատեւել, որպէսզի խոհական*

մէկ մը յաջորդէ յաճառ և յախուռն Միմէոնին։

1690. *Երուսաղէմի մէջ երկու կողմնակ հաւանութեամբ հաստատուած 13 դլուխներու ամփոփումը հետևեալն է, որ կը քաղենք Դաւրիժեցիէն (ԴԱվ. 255-256)։ 1. Իւրաքանչիւր կաթողիկոսական աթոռ իւր վիճակային եպիսկոպոս ձեռնադրէ իւր վիճակներուն համար։ Եթէ իւր վիճակային չեղողը ձեռնադրէ, իւր վիճակին մէջ անգործ է, և մէկուն ձեռնադրածը միւս աթոռին մէջ անընդունելի լինի։ Այս կանոնն է որին պատութեամբ կիլիկիա ձեռնադրուած եպիսկոպոսները Էջմիածնի վիճակներուն մէջ վարչական պաշտօնի չեն կոչուիր, բայց եթէ Էջմիածնի աթոռին պաշտօնապէս միաբանելով։ 2. Մէկ աթոռէն ձեռնադրուածը, միւս աթոռին պիտի դառնայ։ 3. Առանց ժողովուրդի խնդրանքին և առանց վկայականի չի յանդգնիր եպիսկոպոս մը ուրիշ եպիսկոպոսի վիճակը երթալ։ 4. Արեւէ պատճառով եպիսկոպոս մը ուրիշ եպիսկոպոսի վիճակը չի յափշտակէ։ 5. Մէկ վիճակի վրայ երկու եպիսկոպոս կամ երկու առաջնորդ չըլլայ, բայց մէկ քանի տեղ ինչ պատճառ է մէջ։ Եսա այսպէս մեծ վիճակի մը կենդանութեան ուրիշ մեկուսի պիտի չձեռնադրուի, բայց եթէ առաջինը հեռանայ, կամ ծանր պատճառով մը հեռացուի։ 6. Եպիսկոպոսներ իրենց վիճակային չեղողը չձեռնադրեն, և եթէ համարձակին, լուծին ինքն և իր ձեռնադրեալն, որ է ըսել եպիսկոպոսը թեմականութենէն զրկուի, և ձեռնադրուած քահանայն չկարենայ քահանայութիւն ընել։ Այդ դլուխը այնպէս պէտք է իմանալ, որ եպիսկոպոսը ուրիշ վիճակի համար քահանայ չձեռնադրէ, և եթէ ոչ վիճակայինը ձեռնադրէ՝ իր վիճակին մէջ անգործ։ 7. Եպիսկոպոս մը որ առանց իւր կաթողիկոսին հրամանին, խաչօք և այլազգաց բռնութեամբ վիճակի մը տիրանայ, լուծին ի կրճին։ 8. Մեծ վարդապետը ուրիշի ընտրութեան վրդովութիւն չտայ, եթէ նախիրները չըլլայ կոչելով ոմանք և առաքինութեամբ և հասկցող և պատուական երէցներ, և վկայէլ յանձնելոնց։ Բայսանի է թէ վարդապետութիւն ատելու իշխանութիւնը օրինօք մեծ վարդապետութիւն էր, և ոչ եպիսկոպոսութիւն, զի ուսումնական աստիճան էր և ոչ եկեղեցական ձեռնադրութիւն։ Այժմեան սովորութեամբ կը պահանջուի որ առողջ եպիսկոպոս և ծայրագոյն վարդապետ բլլայ միանդամայն։ Իսկ ընծայելոցին համար դիտելի են չորս պայմանները, ուսումն, առաքինութիւն, տարիք, և օրինաւոր վկայութիւն։ 9. Քահանաներ և ուրիշ ժառանգաւորներ, այսինքն սարկաւագներ և դպիրներ, իրենց եպիսկոպոսէն ձեռնադրուին, իրենց թողվքեան հաւանութեամբ, իսկ եթէ այսպէս չըլլայ, կարգալոյծ ըլլան։ 10. Եպիսկոպոսներ և քահանաներ, զերծանձն և ընտանի որ ի թողվքենէն՝ գանձեն ըստ հրամանի հայրապետական կանոնաց, որով վերջ գտնեն պրոճանք և թիւհանութիւն, որոնք յոլով և հանապազ կը լսուին։ 11. Քահանաներ ալ իրենց մէջ, իրարու զինանին և ընտանին չյափշտակեն, ոչ այլազգեաց բռնութեամբ, և ոչ կեղծաւոր բարեյեղութեամբ, հապա պարագային յափշտակողը լուծին ի կրճէն։ 12. Ամուսնութեանց առթիւ, նշան ատլ առնելէն զգուշանան, առանց բաղդատ հանութեան չձեռնարկեն, և ոչ ալ կատարեն առանց ի քէթ ընդունելոյ, այլ քահանաներ բաղդատ առնեն, այսինքն քանի մը անգամ ի մէջ եկեղեցոյն ձանաչեն առանձին աղջկան, որպէս զի եթէ պղծութիւն պարագայ մը կայ, գիտցողը յայտնէ, և եթէ ոչ գտնի պղծութիւն ի մէջ նոցա, այն ատեն նշանադրութիւնը կատարեն կնոյ կամ ժողվքեան կամ երէցանի։ Այդ վերջին կարդը կը ցուցնէ, թէ պէտք չէ նոյն իսկ բնտանեկան խօսքակաս կատարել առանց քաղդատ հանութեան և առանց քէթ ընդունելոյ ընդունելութեան, որպէսզի ևս մը աւելորդ դիտողութիւններ չծագին։ 13. Այրի քահանաներ, երբ իրենց պարկեշտ և ձերբ, և կամ անկարող հանդանան ընծայութեան, քահանայական պաշտօնին չարունակին, թէ ոչ՝ գնացքն ի վար և յանապատ, և եթէ չեն երթար՝ ի ժառանգութենէ և ի կրճէ հրաժարին։ Որով կը հասատատուի թէ քահանաներու կրկին ամուսնութեան համար՝ անհրաժեշտ է կարգին հրաժարելու պայմանը, և նոսրելի չէ կրկին ամուսնանալ և եկեղեցական մնալ։*

ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԿԱՆՈՆՆԵՐ

յայտնի էր իւր իսկութեան մէջ, որ գլխաւոր հայրապետութիւնը հնար չէր երկուքի վերածել, առանց Հայոց եկեղեցին ալ կիսելու, իսկ Երզնկացւոյն աթոռին գլխաւորութիւնը և Ամենայն Հայոց Հայրապետական իրաւունքը ճանչցուած էր բոլոր հայութենէն։ Դամբիժեցին զանց չընաւ այդ բարձր իրաւասութիւնը չեչտել, երբոր կը գրէ թէ Փիլիպպոս ինքն կազմեց այդ կանոնները, և [illegible] (ԴԱվ. 256), և թէ ամէնքը՝ եկեղեցական և աշխարհական, ներքև կաթողիկոսը և առաջնորդ պատրիարքը միասին։ Ընդունելի համարեցան իրենց հայրապետին Փիլիպպոս (ԴԱվ. 255), և յետոյ ընդունեցին և հաստատեցին, և կոմսը յետոյ ընդունեց զայն (ԴԱվ. 257)։ Երուսաղէմի գումարման և կանոնների ոչ մի նշան կայ նշուած չէ, միայն բաւած է թէ Փիլիպպոս եկաց յերուսաղէմ [illegible] (ԴԱվ. 254), և այս հաշուով 1652 տարուան մեծպահքին մէջ լրացած կ'ըլլայ այդ մեծ գործը, այն է, որ [illegible] (ԴԱվ. 255)։ Ժողովին տեղւոյն մասին, թէեւ Դրիմեցիի առանձնաւորին մէջ կը կարդանք, թէ [illegible] այրին, ուր [illegible] սակայն դժուար է այդ խօսքը ժողովատեղիին վրայ իմանալ, և յարմարագոյն է Ս. Յակոբեանց Մայրավանքին մէջ գումարուած ընել. Փիլիպպոս հաղիւ կրցած կ'ըլլայ Զատիկէ առաջ, որ ապրիլ 18'ին կը հանդիպէր, Երուսաղէմ մտնել և Կ-Պոլիս գալ։ Անցողակի յիշենք թէ Դրիմեցիին ոճանաւորին մէջ Հայոց 1101 թուականը, Քրիստոսի 1654 տարուն համեմատուած է, որ Անեցիին և ալլոց ոմանց յաւուկ տումարական սխալ մըն է երկու տումարներու 553 տարի տարբերութիւն դնել, և պէտք է պնդել բոլորովին 1652 տարին՝ իբր Երուսաղէմի ժողովին թուական, զի 1654'ին Փիլիպպոս արդէն Իմմիածին դարձած էր։

1692. Փիլիպպոս ուրիշ մեծ գործ մըն ալ միտքը դրած էր Իմմիածինէ մեկնելուն առթիւ, այսինքն է կաթողիկոսական պատրիարքութեան մէջ տիրող չփոթութիւնները և խառնութիւնները վերջացնել, և այս պատճառով հաղիւ թէ Երուսաղէմի մէջ

1691. *Յիշուած կանոնները մեծ մասը և գլխաւորները նպատակ ունին երկու աթոռներու միջեւ եղած*

ԿԱՆՈՆԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

կրօնական ձեռնադրութեան մասին եղած խնդիրները լուծել։ Մնացեալներն ալ երկրորդաբար նոյն խնդիրնեռւն հետ կապ ունին՝ քահանաներու և ամուսնութեանց ձեւերը ճշդելով։ Կանոնները պարզ են արդէն և ինչինչ բացատրութիւններ ալ արդէն տուինք, բայց երկու դիտողութիւններ եւս պիտի աւելցնենք։ Առաջինն է, որ բաղձալի էր երկու աթոռներուն սեփական վիճակներուն վրայ որոշ տեղեկութիւններ տրուած տեսնալ։ Այս մասին փոքրիշատէ գաղափար մը կրնայ կազմուիլ այն վիճակներու յիշատակութեամբ, զոր քաղեցինք Սիմէոնի նամակէն (§ 1683), թէպէտ պիտինք, թէ փոփոխութիւններ տեղի ունեցած են զանազան ատեններ։ Ըստ այսմ Սերաստիայի երթեւեկի կիւկիոց թեմ եղած ըլլալուն զրոյցը՝ կը տուի Սիմէոնի յառաջ բերած վիճակներու անուններէն, որոնց մէջ Սերաստիան որոշակի իբր Իմմիածնի վիճակ յիշուած է (§ 1683)։ Միւս դիտողութիւնս է, որ եղած կարգադրութիւններն այնպէս ինն կարծել կու տան, թէ երկու աթոռներ մէկ դիծի վրայ ըլլան, որոնք իբր հաւասար հաւասարի հետ կը պայմանաւորուին, և Մայրաթոռին գլխաւորութեան մասին ակնարկ մը չըլլար։ Այդ կէտը Աբէլ Մխիթարեանի ալ աչքին զարկած ըլլալով, կը կարծէ թէ Փիլիպպոս [illegible] նկատելէն ընդ Ս-ոյն, կամ թէ Փիլիպպոս [illegible] ալ այդ պայմանները, գլխաւորապէս վախնալով Սսոյ մէջ տիրող լատինասէր ուղղութենէն (ԱԲԼ. 146)։ Իսկ մենք կը կարծենք թէ ոչ գիտողութեան և ոչ անճարացեալ յանձնառութեան, այլ լոկ խոհական լռութեան եղանակը դործածած է Փիլիպպոս։ Այնչափ մեծ էին եպիսկոպոսական ձեռնադրութեանց, և քահանայական իրաւանց, և ամուսնական դեղծման մասին տեղի ունեցած անկարգութիւնները, որ պէտք չէր գործը կնճռռանել, նախ քան իրաւասութեան խնդիր մըն ալ բարդելով։ Միւս կողմէն այդ կէտը այնչափ

կիլիկիոյ խնդիրը աւարտեց, եմոտ է նա- և Նովէ ինոց է կոստանդնապոլիս (ԴԱՎ. 257)։ Բայց մենք պէտք

ԴԱՒԻԹ ԱՐԵՒԵԼԵՑԻ

է ետ դառնանք կոս- տանդնուպոլսոյ անցու- դարձը պատմելու, զոր պահ մը աչքէ վրիպեցուցինք, կեսա- րացի Գրիգորի մահէն, այսինքն 1636'էն իվեր (§ 1672), այնտեղի գործերուն ինքիր մէջ ձեւ մը առած ըլլալուն պատճառով։ կեսարացիին յաջորդած էր Զաքարիա Վա- նեցին, երկար զօրաւոր մրցակիցներուն վեր- ջինը, որ ինքն ալ կրցաւ իր պատրիար- քութիւնը վարել մինչեւ իր կեանքին վեր- ջը 1639'ին (11 ԱՄՍ. 76), ինչպէս ալ սխալ- մամբ 1617 տարին կը կարդացուի Իւսկիւ- տարի գերեզմանոցին մէջ՝ իր տապանա- գիրին վրայ, որ դար մը ետքը դրուած կամ գրուած է, և Զաքարիայի իր կենդանու- թեան նուիրած խաչին թուականը՝ չփոթ- ուած է մահուան թուականին հետ (11 ԱՄՍ. 78)։ Զաքարիայի վերջին պատրիարքու- թեան միջոցն ալ առանց նշանաւոր եղե- լութեան անցած է։ Թէպէտ Զաքարիայով վերջացաւ երկարատեւ պայքարի մը չրջա- նը, սակայն Կ-Պոլիս հանդարտութիւն չգտաւ, վասնզի Հռոմի կողմէն աւելի սաստիկ կերպով գրգռուեցան արեւելեան հնաւանդ քրիստոնէութիւնը արեւմտեան նորաձեւ քրիստոնէութեան ձուլելու ճի- գերը։ Այդ նպատակին աւելի հետամուտ եղողն էր Ուրբանոս Ը պապը, որ 1626'ին Պետրոս Աւիտաբոլ (Pietro Avitabole) Թէա- թինեան կրօնաւորին գլխաւորութեամբ, քարոզիչներ յղած էր Կովկասի երկիրները (ԿԱՀ. 120), վրաց և սահմանակից Հայոց մէջ հետմէականութիւն տարածելու պաշտօ- նով։ Անոր Գործակից յղուեցաւ 1636'ին կղեմէս կալանոս Սորենտացի (Elemente Ga- lano da Sorrento) (ԿԱՀ. 173), ուրիշ Թէա- թինեան կրօնաւոր մը, որ հազիւ տարիէ մը 1637'ին հասեր էր իր տեղը (ԿԱՀ. 175), և երկու տարիի չափ այն կողմերը մնալէ և հայերէն սորվելու աշխատելէն ետքը 1640'ին հրաման ստացաւ Կոստանդնուպո- լիս դառնալ, իբր հետ տեղեկ Հայոց ազգին, ինչպէս ինքն կը գրէ (ԿԱՀ. 179)։ Կ-Պոլսոյ մէջ Զաքարիայի մահուանէ ետքը պատ- բիարքութեան ընտրուած էր Դաւիթ Արե- ւելցի, նուիրակ էջմիածնի և հայադաւա- նութեան ջերմ պաշտպան, կեսարացի Գրի- գորի ուղղութեան հետեւող։ Սակայն չէր վերջացած լատինասէրներու խմբակը՝ Յու- լիոս հետեւողներուն մնացորդներով կազ- մուած, որոնք իրենց նպատակին աշխա- տելէ չէին դադարած, այն է նախապէս պատրիարքութեան տիրանալ, որ յետոյ ի- րենց միաքը կարենան իրականացնել։ Իսկ պատրիարքութեան տիրանալու միջոցներն էին, պետական անձերը չահելու կերպեր և առատաբար կաշառքներ։ Պետական պաշտօնեաներէն ալ իւրաքանչիւրը՝ ունէր իր Հայազգի սեղանաւորը, իբրեւ գանձող և իբրեւ միջնորդ, և պաշտօնէից փոփո- խութեամբ չատ դիւրին կ'ըլլար պատրիարք ալ փոփոխել։ Ըստ այսմ Դաւիթ Արեւելցիի հակակիրներուն դժուար չեղաւ, օր մը զայն գահընկէց ընել, և իրենց մտերիմներէն կիրակոս Երեւանեցին պատրիարքութեան բարձրացնել 1641'ին (ՁԱՄ. Գ. 622)։ Ա- նոր օրով կալանոս Կ-Պոլիս կը հասնի (ԿԱՀ. 179)։

1693. կալանոս երկու միջոցներ գոր- ծածեց Հայերուն մօտ ընդունելութիւն

ԿԻՐԱԿՈՍ ԵՐԵՒԱՆԵՑԻ

գտնելու և տակաւ անոնք չահելու համար, գոր- ծակցութեամբ այն իսմ- բակին, որուն լատինա- սէր ուղղութիւնը արդէն ծանօթ էր։ Ղա- լաթիա թաղին մէջ, եւ կաթոլիկութեան ջերմ պաշտպան՝ Տըլահէյ (Jean de la Haye) գաղղիական դեսպանին հովանաւորու- թեամբ, ուսուցչութեան սկսաւ լեզուական և գիտական նիւթերու, և իր հայախօսու- թիւնը մեծապէս կը նպաստէր Հայ աշա- կերտներ չատցնելու իր չուրջը, քանի որ Հայերն ալ եւրոպական ուսմանց ծա- րաւի էին և կարօտ կը քաչէին։ Միւս միջոցն եղաւ իր փիչուչատ բժշկական հմտութիւնը, որով դեղեր կը պատրաստէր, և հիւանդներ կը մատակարարէր բաւական յաջողութեամբ։ կալանոսի աչակերտողնե- րուն մէջ Հայեր ալ կային, և յանուանէ կը յիչուին Նաչատուր Սեբաստացի, Թով- մաս Բերբերացի և Պօղոս Տիվրիկցի վար- դապետներ, որոնց կալանոս գիտութեանց

կերպարանին ներքև հռոմէադաւան թելադրութիւններ ալ կ'ընէր, և սկզբատիկեան արուեստակեալ ձեւերով դաւանական կէտեր կը բացատրէր՝ Հայ եկեղեցւոյ դաւանութեան հակառակ։ Կալանոսի աչակերտանորուն միջոցով կիրակոս ալ Կալանոսով կը հետաքրքրուէր, յարաբերութիւնն ալ կը մտնէր, դաւանական կէտերու մասին կարծիքներ կը հարցնէր, բայց միշտ գրաւոր կերպով, երես առ երես տեսութիւնէ զգուշանալով, կասկածելի չըլլալու համար։ Այդ յարաբերութեանց յատուկ միջնորդն էր Ծովհաննէս վարդապետ մը, որ Հռոմի մէջ ուսումնքը լրացնելէն ետքը Արեւելք ղրկուած էր։ Կալանոս կը գրէ թէ կիրակոս այնչափ հիացած էր իր հմտութեանը վրայ, որ զինքն Նոր Աղեքսանդր մը և նոր Նոր Կիւրեղ մը կ'անուանէր, և Հայերը կը քաջալերէր իրեն մօտ աչակերտիլ և զարգանալ (ԿԱՀ. 179)։ Կիրակոս Կալանոսի հետ տեսակցելու բուռն տենչը գոհացնելու համար, օգտուեցաւ Ախակողման վիճակներու այցելութեան ելլելու առիթէն, և երբ Իւսկիւտար անցաւ, իբր թէ հիւանդացաւ, և լատին կրօնաւոր բժիշկը դարմանի համար բերել տուաւ։ Ան տեղ Կալանոսի լաւ ընդունելութիւն կ'ընէ և գիշերելու կը պահէ, և երբ, կը գրէ Կալանոս, պատրիարքին մարդիկը արթնցութեամբ կը քնանային, մինչ իրարու հետ, իր հօրը և եղբօրը ներկայութեամբ, հաւատքի խնդիրներով կը զբաղուէինք (ԿԱՀ. 179)։ Միևնոյն գիշեր հաւատոյ դաւանութեան գիրը մը կը պատրաստէ Կալանոս, զոր Կիրակոս կը ստորագրէ, գիր մըն ալ Գաղղիոյ դեսպանին որ գիրը պապին հասցնէ և իր կողմէն ալ միջնորդէ, այն խոստմամբ, որ երբ պատենը գտնէ բոլոր ազգը հռոմէադաւանութեան առաջնորդէ։ Այդ նպատակով Կիրակոս պապէն կը խնդրէր ալ որ Կալանոսը Կ-Պոլիս թողու և պէտք եղած միջոցները չնորհէ։ Այդ օրուան գրութիւնն է 1641 նոյեմբեր 5 (ԱԶԱ. 125), իսկ Փրոբականտայի գահերէցին կողմէն Կիրակոսին ուղղուած պատասխանը (ԿԱՀ. 180), և Կալանոսի ուղղուած հրամանագիրը (ԿԱՀ. 128) 1742 մայիս 21—31 թուականը կը կրէն։ Կիրակոս Երեւանեցիին այդ գիրը հռոմէադաւաններու կողմէն մեծ շփոթ մը կը սեպուի իրենց ուղղութեան (ԱԶԱ. 123)։ Սակայն պատրիարք մը, որ իր ժողովէն և ժողովուրդէն ծածուկ, գիշերուան խաւարին մէջ, օտարազգեանի մը թելադրանքին վրայ, գաղտնի գիր մը կը ստորագրէ, աւելի իր կոչումը խարդաւանողի և իր պաշտօնը մատնողի կերպարանն ունի, քանի որ գաղտնի գրածը յայտնի չդաւանիր, և գրածին հակառակ ուղղութեամբ պաշտօնը կը չարունակէ։

ԿԱԼԱՆՈՍԻ ՋԱՆՔԵՐԸ

1694. Կիրակոս Կալանոսէ խնդրած էր, որ Ղալաթիայէ Ստամպոլի կողմը անցնի, այն տեղ հոծ Հայութեան մէջ իր ուսուցչութիւնը չարունակելու։ Այս առաջարկը Կալանոսը խրտչեցուցած էր, զի լատին կրօնաւորներ մինչև այն առեն Կ-Պոլսոյ կողմ անցած չեն եղեր։ Ուստի խորհրդակցելով Ծովհաննէս Ուռհայեցի՝ Տիարպէքիրի արքեպիսկոպոսին հետ, զոր Կիրակոս տեղակալ էր թողած, կ'որոչէ աչքի չզարնելու համար, իր տարազն ալ փոխել, և Հայ վարդապետի պէս ղգեստաւորուիլ, որ «Ես ոչ ոքէ ոչինչ կը խնդրեմ՝ ոչ ալ հետաքրքիր չեմ գործերէդ, կ'ըսէ ինքն (ԿԱՀ. 180), և ոչ թէ դիեցուցիչ Հայոց վերջակէտ՝ ես է ընդդէմ (ՁԱՄ. Գ. 623)։ Ըստ այսմ Կալանոս 1642'ին սկիզբները կը հաստատուի Ստամպոլի կողմը պատրիարքարանի մէջ, ուր ազատարար և բազմաթիւ աչակերտներ հաւաքուելով իր չուրջը, միշտ լեզուական և գիտական ուսմանց անունով, իսկ գաղտնի՝ դաւանական ներչնչումներով։ Պատրիարքարանի տեղւոյն համար ընդհանուր կարծիքն էր թէ ճիշդ 1641'ին, Կիրակոսի պատրիարքութեան սկիզբը, պատրիարքարանը Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցիէն Գումքաբուի Ս. Աստուածածնին եկեղեցին փոխադրուած ըլլայ (01 ՕՐԱ. 94)։ Իսկ Սամաթիոյ եկեղեցիէն առաջ չատ հաւանական է որ Ծովհաննէս Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչը նստած ըլլայ, վասնզի այն տեն Հայերը ուրիշ ազգային եկեղեցի չունէին, և Ղալաթիա ալ մինչեւ վերջը առանձնաչնորհեալ և նախապատիւ դիրք մը կը պահէր։ Գումքաբուի եկեղեցւոյն չինութիւնը աւելի կանուխ

տէրի ունեցած էր 1610'ին, Յովհաննէս Խուլին պատրիարքութեան օրով (§ 1597), և հաւանականագոյն կը կարծենք, պատրիարքարանի տեղափոխութեան թուականը 1641'էն առաջ տանիլ։ Միւս կողմէ յայտնի ըլլալով Խուլին և կիրակոսի միեւնոյն կուսակցութեան կամ ուղղութեան պատկանիլը, անտեղի չէր ըլլար հետեւցնել, թէ ատոնց միտումն եղած է իրենց յարմար նոր կեդրոն մը կազմել, առջի կեդրոնին իրենց ուղղութեան համամիտ չըլլալուն պատճառով։ Ըստ այսմ 1610'է 1641 պատրիարքարանի կեդրոնը ընդհանրապար յետ և յառաջ տեղափոխուած կ'ըլլայ, մինչեւ որ վերջնականապէս նոր կեդրոնին մէջ կը հաստատուի։ Ամէն առթի մէջ Կալանոս լատին կրօնաւորին Հայ վարդապետի տարազով լատինականութիւն ներշնչելը՝ ընդհանուր տժգոհութիւն գրգռեց Հայոց մէջ, և Կալանոսի կացութիւնը դժուարացուց, ինչչափ ալ տեղակալ Ուռհայեցին զինքը կը հովանաւորէր, և Կալանոսի երեք հաւատարիմները՝ Խաչատուր և Թովմաս և Պօղոս (§ 1693), կը պնդէին թէ Կալանոսի պաշտօնն է գիտութիւններ և մականուններ սորվեցնել մանուկներու կրօնքին դէմ, և Հայոց քրիստոնէութեան պաշտպանութիւն ընել (ԿԱԼ. 180)։ Երբ ինքն Կալանոս ալ այն կողմէ քաշուիլ կը մտածէր, ժանտախտէ կը բռնուի և Դալաթիոյ կողմը Լատինաց հիւանդանոցը կը փոխադրուի, «պէտ ի կ'ըսէ, էիննէբէ հեռա առանց իմ եկեղեցւոյ խորհուրդներուն չմեռնէի։ Սակայն 15 օրէն կը բժշկուի, և հիւանդութեան պարագային գրգռութիւնները չիմացած ըլլալուն, նորէն պատրիարքարանի կողմը կը դառնայ։ Այսպէս կ'անցնի 1642 տարին, մինչեւ որ կիրակոս «ոբոյ մը չըմփոյոնենն եոյը Կ-Պոլիս կը դառնայ, և հազիւ թէ վերադարձին հասար խնդակցութիւններ կ'ընդունի, ժանտախտէ կը բռնուի և երեք օրէն կը մեռնի, տակաւին 40 տարեկան (ԿԱԼ. 181), և կը թաղուի Պալըքլըի գերեզմանատունը (ՉԷԼ. 51)։ Սմանթիւը որոշ չենք գտներ, բայց 1642 սեպտեմբերին կը հաշուենք։ Քարոզ մը միայն կը յիշուի իրմէ գրուած, բայց ձեռագիր և անծանօթ մնացած է (ՏԱՇ. 840), որով չենք կրնար գնահատում մը կազմել։

1695. Երբ Կալանոս և իրենները տխուր էին կիրակոսի մահուան վրայ, կը միխթարուին Խաչատուր Սեբաստացիին, նոյն իսկ Կալանոսի աչակերտին՝ պատրիարքութեան ընտրուելովը, որով լատինասէրներու երկդիմի ընթացքը, կը յաջողի չարունակել։ Գաղղիոյ դեսպանն ալ յատուկ պատգամաւորով իր խնդակցութիւնը կը յայտնէ, որուն չնորհակալութիւն կը փոխարինէ Խաչատուր՝ իր որդւոյն ձեռքով, իբր զի այրիութենէ ետքը ձեռնադրուած է եղեր (ԿԱԼ. 180)։ Խաչատուրի տրամադրութիւնները յայտնի ըլլալուն, Հռոմ ալ կը փութայ Փրօբագանտայի դահլիճէն ձեռքով 1642 նոյեմբեր 26—6 դեկտեմբեր թուականով չնորհաւորութեան նամակ ուղղել Խաչատուրին։ Միեւնոյն թուականով գիր մըն ալ կ'ուղղուի Յովհաննէս Ուռհայեցիին տեղապահութեան առնելը, որ օգոստոսի մէջ պատրաստակամութեան յայտարարութիւն գրած է եղեր Հռոմ։ Երկու նամակներն ալ յատուկ յանձնարարութիւններ կը պարունակեն, որպէս զի ճշդիւ գործադրեն, ինչ որ հայր կղեմէս Կալանոս Հռոմէ ստացած հրահանգին համեմատ իրենց պիտի առաջարկէ (ԿԱԼ. 181)։ Այդ Խաչատուր Սեբաստացին է որ ուրիշներէն Գաղատացի կը կոչուի, և Մինասէրճի մականունով ճանչցուած է, և որ 16 տարի ետքը Կիւրիկիոյ կաթողիկոս ալ եղաւ։ Խաչատուրի պատրիարքութեամբ լատինասէրներուն զգացած ուրախութիւնը չատ կարճատեւ եղաւ, վասնզի Հռոմի նամակները դեռ Կ-Պոլիս չհասած, Դաւիթ Արեւելցին հապճեպ չտապով հասաւ Հալէպ, ուր վտարուած էր Կիրակոսի օրով, պէտք եղած միջոցները գործածեց և պատշաճ վճարումներն ալ ըրաւ, և կրցաւ Խաչատուրը գահընկէց ընելով, նորէն գրաւել պատրիարքական աթոռը, ուսկից իբր տարիուկէս առաջ հեռացուած էր։ Դաւիթի պատրիարք ըլլալը՝ գործերուն ուղղութեան փոփոխութիւնն էր։ Հազիւ թէ նա պատրիարքարան կը մտնէ, Ուռհայեցին ու Կալանոս մասնաւոր սենեակներ կը քաչուին, Յովհաննէս

Ուռհայեցին յանկարծամահ կը վախճանի (ԿԱՀ. 181), և Պալըքլը կը թաղուի (ՁԷՀ. 51), և կալանաս՝ լատինասէրներուն խումբէն Իակինտէր չէլէպիի տունը կը քաշուի Թովմաս Բէրիացիի հետ, որ Իակինտէրի պաշտպանեալն էր։ Բայց Դաւիթ լսելով՝ զիրինք հանդարտ չթողուր, և կալանաս Գումքապուի կողմը թողլով նորէն Գալաթիա կը դառնայ իրեն հետեւորդներուն հետ, լատինները և դեսպանատան մօտ, և անչուշտ Հայ վարդապետի տարազն ալ կը թողու։ Այդ պարագային գրած է Թովմաս Հռոմէադաւանութեան յայտարարութիւն մը, և զայն Հռոմ յղած, որ 1643 փետրուար 12 թուականով գրուած է (ԿԱՀ. 183), և ըստ այսմ Յակատուրի պատրիարքութեան տեւողութիւնը հազիւ քանի մը ամիս եղած կ'ըլլայ։ Հռոմէ Յակատուրի եւ Յովհաննէսի ուղղուած գիրերուն անհետեւանք մնալուն վրայ, նոր յանձնարարութիւն մը կը գրուի Թովմասի 1643 յունիս 3—13 թուականով, որպէս զի հռոմէադաւանութեան համար աշխատի (ԿԱՀ. 183), հարկաւ ծածուկ ձեռքով, զի Թովմաս պաշտօնապէս իր յարաբերութիւնը չէր խզած հայադաւան եկեղեցիէն, եւ լատինասէրներուն չանքն էր հետզհետէ զօրանալով Հայ պատրիարքութեան տիրապետել, եւ անկէ ետքը նպատակներն գործադրել։

1696։ Յակատուր պահ մը Կ-Պոլսէ հեռանալէ ետքը, նորէն գաղտնապէս ետ եկած էր, կալանոսի մօտ ապաւինած, ուր այս երկուքը եւ Թովմաս Բէրիացին ու Պօղոս Տիվրիկցին ալ անոնց հետ, խորհրդակցութեան կը պարապէին, և միջոցներ կը պատրաստէին Դաւիթը պատրիարքութենէ գահընկէց ընելու։ Դաւիթ լուր առաւ անոնց ըրածին վրայ, և որովհետեւ քանի մը Հայ եկեղեցականներուն լատին կրօնաւորի մը հետ գաղտնի խորհուրդի մէջ գտնուիլը՝ չատ զօրաւոր ամբաստանութիւն էր կառավարութեան աչքին, ուստի պետական պաշտօնէից ձեռքով տունը պաշարել տուաւ՝ չորսն ալ ձերբակալել տալու հնարով, բայց Յակատուր ու Թովմաս ու Պօղոս կրցան խոյս տալ ատենին, և կալանոս միայն ձերբակալուեցաւ։

ԿԱԼԱՆՈՍԻ ՀԵՌԱՆԱԼԸ

Գաղղիոյ դեսպանը լուր առնելով, փութացուց իր պաշտօնեաները, որոնք կաշառքով գոհացուցին Տաճիկ պաշտօնեաները աչուընին գոցել կամ ուրիշ կողմ դարձնել, որպէսզի կալանոս կարենայ փախչիլ, և դեսպանատուն ապաստանիլ։ Սակայն դեսպանն ալ համոզուեցաւ որ կալանոսի դիրքը հիմնապէս խախտուած է Կ-Պոլսոյ մէջ, և պիտի չկարենայ օգտակար ըլլալ ոչ Հռոմի կրօնական ազդեցութեան և ոչ Եւրոպիոյ քաղաքական ազդեցութեան, ուստի Գաղղիոյ ու Վենետիկի դեսպանները համաձայնութեամբ զինքն նաւ դրին ու Հռոմ դարձուցին, ուր հասաւ երկամեայ նաւագնացութեամբ, Ջմիւռնիա հանդիպելէ և Լիվոռնօ (Livorno) ցամաք ելլելէ ետքը։ Իրեն հետ նոյն նաւով Եւրոպա եկած են, Յովհաննէս՝ կիրակոս պատրիարքի հայրը, Ջաքարիա դպիր, և ուրիշ երիք Հայեր (ԿԱՀ. 184)։ Կալանոս իր ուղեւորութեան թուականները չյիշեր. սակայն 1643'ին աչնան աւետներուն պէտք կ'ըլլայ հաշուել Իտալիա հասնիլը։ Կալանոսի մեկնելէն ետքը այլեւս Յակատուր Սերաստացիի անունը չյիշուիր Կ-Պոլսոյ անցուդարձին մէջ, և կ'ենթադրուի թէ գործէ քաշուած է։ Իսկ Թովմաս Բէրիացի Հռոմէ ստացած յանձնարարութեան հպատակելու եռանդով՝ աշխատեցաւ իր կուսակցութեան հետ Դաւիթի դէմ պայքարը չարունակել, և մեծամեծ խոստումներով յաղողեցաւ գահընկէց ընել տալ, և ինքն պատրիարք հռչակուիլ, սակայն ատենին ատցութեան չկրցաւ մտնել, չկրնալով խոստացած գումարները վճարել, զոր իրենները ալ չկրցան կամ չուզեցին հանգանակել։ Անոր համար լռելեայն Կ-Պոլիսէ մեկնեցաւ և Հռոմ գնաց, յուսալով այն տեղէն նիւթական օգնութիւններ ալ գտնել, և անով յաղողիլ։ Թովմասի մեկնելուն առթիւ ուրիշ Հայեր ալ Հռոմ մեկնած են, և ատոնց մէջ կը յիշուին, կարապետ՝ կիրակոս պատրիարքի եղբայրը, և Յովհաննէս վարդապետ՝ զոր յիշեցինք իբր կալանոսի և կիրակոսի միջնորդ (§ 1693)։ Թովմասի անուանական պատրիարքութիւնը կը հաշուուի 1644 տարւոյ մէջ։ Կալանոս մնացած է Հռոմ, իբրեւ ուսուցիչ Հայերու և Սրեւելցիներու, որոնք գոտած ընդունելու-

թենէն քաջալերուած կը յառաջէին Հռոմ երթալ, և դաւանական յայտարարութեամբ մը դիւրութիւններ և պաշտպանութիւններ կը վայելէին (ԿԱՀ. 184)։ Կալանոս աշխատած է գրական երկասիրութիւններ ալ պատրաստել հայերէն և լատիներէն լեզուներով, Հայոց լեզուին և պատմութեան և վարդապետութեանց մասին, որոց պլխաւորն է, Մէ-քա-նո-ըէն Հա-յոց ա-րք եկեղեց-ա-յն ընդ դէմ ա-րք եկեղց-ա-յն Հռո-մայ, երկամասնեայ և հռահասուր գործը, զոր աւարտած է 1651 մայիս 23—2 ապրիլին Հռոմի մէջ (ԿԱՀ. ր), և տպագրութեամբ հրատարակած։ Միակողմանի ուղղութեամբ և անձնական տեղեկութեամբ յօրինուած գործ մըն է, որուն գրածները Հայ հռոմէականներէ իսկ խստիւ քննադատուած են (ՉԱՄ. Գ. 624)։

Կ-ՊՈԼՍՈՑ ԳՈՐԾԵՐ

1697. Դաւիթ Արեւելցի, որ իբրև գաղընկէց մինչեւ Կիպրոս վտարուած էր, անմիջապէս ետ դարձած էր Թուխմասի անյաջողութիւնը լսելով, և դիւրաձեռք ձգած պատրիարքական աթոռը։ Թէպէտեւ լատինամիտները հրապարակի վրայ տկարացան, և ձախողեցան Հայերը հռոմէադաւան դարձնելու գործին մէջ, բայց պայքարը չդադրեցաւ Հռոմի հովանաւորութեամբ և օժանդակութեամբ և ներքին կացութիւնը միւնոյն մնաց՝ իշխանաւորներու և եկեղեցականներու մէջ արմատացած անձնական խնդիրներու և բուռն հակառակութեանց պատճառով։ Այդ կացութեան ընդհատ մէկ նկարագիրը կու տայ Դավրիժեցին, և սկիզբը 1652'էն 18 տարի ետեւ կը տանի (ԴԱՎ. 259), այսինքն է մինչեւ 1634 կը հասցնէ, որ է ըսել մինչեւ Փիլիպպոսի կաթողիկոսութեան սկիզբները և Գրիգոր Կեսարացիի վերջին պատրիարքութիւնը։ Սակայն մենք անկէ առաջ ալ տեսանք խառնակութեանց տիրելը։ Այդ չփոթներուն գլխաւոր պատճառներէն մին եղած է, Կ-Պոլսոյ մէջ հինէն հաստատուած գլխաւորներուն, և հետզհետէ նոր եկողներուն մրցումը։ Վերջիններս գաւառներու մէջ կուսակալներու հետ մտերմութիւն կը ստանային, և կուսակալներուն բարձրանալովը իրենք ալ ազդեցութիւն կը չահագնէին, որով Կ-Պոլսոյ հինեներուն նախանձը կը չարժէին, որոնք քէչքիշ և քէչչոյն պանձնուէ նոր եկողները չէքթ- ղէթեհիլ և ըմբըդէ անէին, և ազգային գործերու մէջ ալ ղէկմաքա է քաց տեցել անհաղորդ պահէին, թէպէտեւ ատոնք զօրաւոր ըղլային գաւառէ փոխադրուած եպարքոսներուն մօտ (ԴԱՎ. 257)։ Այսպէս Կ-Պոլսոյ մէջ ազդեցիկ իշխանաւորներ դարձած էին Վանեցի խօջա Իւուհիջան և Տիարպէքիրցի խօջա Երեմիա, որոնց անունները տուած ենք գաւառի գործերուն մէջ (§1656)։ Այդ նախանձընդդէմ մրցակցութիւնը նոյն իսկ լատինամիտ պայքարներուն մէկ չարժառիթը կը կազմէր։ Ատովութիւններուն պատճառներէն մէկ ուրիշն ալ պատրիարքներու ատեպ և անհարկի փոփոխութիւններն էին, որով խռմաեբէն և խռովաբարն է ժողվդեականաց, իրենց կիրքէն և յամառութենէն դրդուած քառաբաղ չընէին, աման է վեբայ այմ, և աման այմ առաջնորդէ, և յաջողելու համար պայն է լաս յոլվա, և վանէին ղեռայքանն։ Այս պատճառով երբեմն խոստումներով, և երբեմն փոխառութեամբ, պարաքեր կը կազմէին, և յետոյ պատրիարքական փոփոխութեանց պատճառով իրարու վրայ կը թողուին։ Այս կերպով 40,000 ղուռուշի պարտք մը գոյացած էր, որ ընդհանուր ազգին վրայ կը ծանրանար, և ոչ ոք կ'ուզէր վճարել։ Դաւիթ Արեւելցին պատրիարքութեան անցած էր, բայց խռովութիւնը չէր դադարած, ինքն ալ անձեռնհաս կը գտնուէր զայն վերջացնել։ Անոր համար աբ եբեաելէ և անոանէ, եբեցոան և եբեցկոբ՝ հետաւոր էմմիածինին կը դարձնէին աչուընին, և պատուիրակներով ու նամակներով Փիլիպպոս կաթողիկոսին կը դիմէին կնճիռը լուծել և խաղաղութիւն հաստատել իր իշխանութեամբ։ Կացութիւնը աւելի դժուարացաւ, երբ Դաւիթ իբր 5 տարի ալեկոծեալ պատրիարքութենէ ետքը, վերջապէս պաշտօնական հաւանութեամբ 1649'ին, սակայն զինքն վար առնողներն ալ ուրիշ մը չկրցան տեղը դնել, և պատրիարքարանը մնաց առանց պատրիարքի, և իշխանաւորներէն քանի մը հատը, Տեղակալ անունի ներքեւ իրենք սկսան վարել պատրիարքարանի գործերը։ Փիլիպ-

պոս այս լսելով ուզեց միջամտել, երբեմն ըղձովը և երբեմն հարց առաջնելով, և այլ կերպէ- հնար հնարելով, բայց ոչ եղե- խաղ- ըն-ի-ն (ԴԱՎ. 259)։ Ուզեց անձամբ կ-Պոլիս գալ, բայց ուրիշ կարեւոր և քիչուչատ պատրաստուած գործ մը կը տեսիէր զինքն երուսաղէմ երթալ, ուստի չատացաւ խոստանալով որ երուսաղէմի գործը աւարտելով կ-Պոլիս կու գայ։

ԳՈՒՄՔԱՓՈՒՐ ՀՐԴԵՀԸ

1698. Անցողակի յիշենք այստեղ Դաւիթի պատրիարքութեան օրով, 1645'ին հանդիպած Գումքափուի մեծ հրդեհը, որուն մէջ Մայր եկեղեցին և յարակից պատրիարքարանն ալ այրեցան, և միւս տարին 1646'ին վերաչինուեցան Պօղոս Տիվրիկցի վարդապետին գլխաւորութեամբ (ՁԱՄ. Գ. 624), որ կալանոսի հեռանալէն ետքը Դաւիթի հետ հաշտուած պիտի ըլլայ (§ 1696)։ Սոսկալի երկրաշարժ մըն ալ 1648'ին վանն ու վասպուրականը աւերեց, քաղաքներ ու գիւղեր ու վանքեր քարուքանդ ընելով, որոց նոթոգութեան երախտաւոր Հուհիկեան վանեցին։ Երկրաշարժին օրը Դավրիժեցին կը դնէ յոթերկ- ամոյ յերկուան, յոտէ սրբոյն- էլչերն, որ լսեանայր սուտ չքան սուտն (ԴԱՎ. 378), սակայն 1648'ին ապրիլ 2'ին զատիկ է, և աւագ ուրբաթ մարտ 31'ին է, և միայն 1659'ին լոյս աւագ չարաթը ապրիլ 2'ին կ'իյնայ. ուստի պէտք է աւելի ամսաթիւի քան թէ տարեթիւի, չփոթութիւն մը ընդունիլ Դավրիժեցիի տուած թուականին մէջ։

ՏԵՂԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

1699. Տեղակալութեան ձեւը, կամ աւելի ճիշդ խօսելու համար՝ պատրիարքարանի անգլուխ կերպարանը, տարիի մօտ տեւեց 1649'էն սկսելով մինչեւ որ Դաւիթ պահ մը տեղակալները հաճեցուց, որ նորէն զինքը պատրիարք ընդունին, և ընդունեցան 1650'ին, բայց չորս ամիսէն նորէն վար առին, և տեղակալութեան ձեւով կառավարուեցան միջոց մըն ալ։ Դաւիթի այդ վերջին պաշտօնանկութիւնը տեղի ունեցաւ 1651'ին, և կ'երեւի թէ ինքն ալ յուսահատեցաւ այլեւս կացութեան տիրանալ և նորէն պատրիարքութեան բարձրանալ, դի 1651 դեկտեմբեր 10'ին նա Բերիա կը գտնուի, Դաւիթ Եւդոկիացի քահանային պատմածին համեմատ (ՏԱՇ. 841)։ Երբոր նախապէս ծանօթ դէմքեր կ-Պոլսոյ մէջ կը պակսէին, նոր մը կը սկսէր այնտեղ երեւան գալ, եղիազար Այնթապցին։ Նա 1641'ին վարդապետութեան աստիճան առած Յովհաննէս Ջնքուչցի վարդապետէն, անկէ ետքը զանազան քաղաքներ պտտած, 1647'ին Արղնիի առաջնորդ եղած, և Փիլիպպոսէ եպիսկոպոս ձեռնադրուած, Բարձրահայեաց Ս. Աստուածածնին վանքին պայծառութեան աշխատած (ԹՈՐ. Բ. 400), անկէ երուսաղէմ գացած էր, ուր կը յաջողի 1649'ին Աստուածատուր պատրիարքը գահընկէց ընելով անոր տեղ ընտրուիլ։ Բայց տարին չբոլորած Աստուածատուր իր աթոռը կը դառնայ (§ 1687), և եղիազար 1651'ին Կոստանդնուպոլիս կու գայ (ԹՈՐ. Բ. 400), թերեւս երուսաղէմի աթոռը նորէն ձեռք ձգելու համար, բայց Կոստանդնուպոլսոյ անգլխութիւնը զինքը աւելի կը չահագրգռէ, և կ-Պոլսոյ ժողովուրդն ու իշխանաւորները մշակելու կ'աշխատի։ Այդ միջոցին տեղակալութիւն կը տիրէր կ-Պոլսոյ մէջ, այնպէս որ 1651'ին Փիլիպպոսի ուղղութեան համար կայսերական հրովարտակ ստացած ըլլալու գործն ալ կը վերագրուի Հայկան ժողովրդոյն որ քնահեալ են ի Կոստանդնուպոլիս (ԴԱՎ. 263), և պատրիարք չկիշուիր, դի իրօք այն միջոցին պատրիարք չկար։ Եղիազար բուռն բայց գործունեայ, յախուռն բայց գրաւիչ բնաւորութեան տէր, քիչ քիչ կը չահի տեղակալները, որք կը հրապուրուին նոր ելոզ ճարտար և յաջողակ վարդապետէն, և 1651'ին վերջերը զինքն պատրիարք կ'անուանեն։ Սակայն եղիազար ինքզինքը գործի վրայ փայլեցնելու և ազդին վիճակը դարմանելու չափ առն չունենար, քանի որ պարտաւոր էր նախապէս իր դիրքը ամրացնել, և ահա 1652 զատիկէն ետքը Փիլիպպոս կաթողիկոս երուսաղէմէ կը հասնի (§ 1691)։

1700. Փիլիպպոսի կ-Պոլսոյ մէջ ընելիքը գծուած, և իր միտքին մէջ ալ կանուխէն կազմուած էր, դի անցուդարձին կա-

տարելապէս տեղեակ էր։ Նախ սկսաւ իւր հեղինակաւոր ձայնով, ազդու քարոզութեամբ և ազդեցիկ խրատներով առիւծնուն սիրտն ու համակրութիւնը գրաւել, ժողովուրդին մէջ ինկած աղետալի գժտութիւնները հետզհետէ թեթեւցնել։ Ընդհանուր գործերուն և չահերուն պէտքը զգացնել, այնպէս որ կիրքեր հետզհետէ թուլցան, թշնամութիւնները քիչցան, և հնար եղաւ քիչ ու չատ համաձայնութիւն մը հաստատել։ Այդ նպատակին համար անհրաժեշտ պայմաններէն մէկն էր, անկողմնակալ և առիւծնուն հաճելի պատրիարք մը ունենալ, մինչ եղիազար Աղթամպցին, ումանց ազդեցութեամբ բարձրացած ըլլալուն, մեացեալներուն հաճելի չէր։ Եղիազար ինքն ալ զգաց այդ պէտքը, թէ պիտի չկարենայ պէտք եղած յարաբերութիւնները հաստատել, հարկաւ Փիլիպպոսի հայրական խրատներն ալ ազդեցին, և եղիազար պատրիարքութենէ հրաժարեցաւ նոյն 1652'ին վերջերը, տարի ու կէս պատրիարքութիւնը վարելէն ետքը (ԹՈՐ. Բ. 403), և 1653ին նորէն քաշուեցաւ իր առաջին տեղը, այն է Արղնիի վիճակը և Բարձրահայեաց վանքը (ԹՈՐ. Բ. 404)։ Իսկ պատրիարք ընտրուեցաւ Ծովհաննէս Մուղնեցի եպիսկոպոսը, որ պէտք է Փիլիպպոսի հետեւորդներէն մին եղած ըլլայ, վասնզի նախապէս ոչ գործի վրայ գտնուած է և ոչ անունը յիշուած է։ Երկրորդ գործն էր ազգին վրայ ծանրացող 40,000 ղուրուշի պարտքը սրբել, որ քար գայթակղութեան եղած էր։ Փիլիպպոսի հռովմանասիրութեամբ հանդանակութիւն մը բացուեցաւ, և նա ինքն կոգայ հռոփքաբեան՝ որ հաւատարիմ, որոնք բաղամ ջանք և աշխատութեամբ գործին հետեւեցան, և յոխոռն ոմն, մէկ կողմէն հաւաքելին և միւս կողմէն վճարելին, և պարտքերը սրբեցին։ Գործին յաջողութեան օգնեց Փիլիպպոսի ազդեցութիւնը, որովհետև ոռ որ լինէր հրաման հայրապետէն, ոչ բնաւ էլէր քան ինչ ոռոխ (ԴԱՎ. 257)։ Պետութեան առջեւ ալ յարգ ունեցաւ Փիլիպպոս, և կայսերական հրովարտակ ալ ստացաւ, որով իր կաթողիկոսական իրաւասութիւնը կը ճանչցուէր

ՓԻԼԻՊՊՈՍ Ի Կ-ՊՈԼԻՍ

Թուրքիոյ Հայերուն վրայ (ՉԱՓ. Բ. 74)։ Կ-Պոլիս եղած ատեն Փիլիպպոս ուխտ գտաւ Պրուսա ալ այցելել երեմիա Քէօմիւրճեանի ընկերակցութեամբ, և Սիւրի Առայի մէջ ալ պատարագից, Ներսէս Մեծի աքսորին աւանդական յիշատակին համեմատ (09 ՕՐԱ. 98)։ Այսպէս ամբողջ տարի մը Կ-Պոլսոյ մէջ աշխատեցաւ ազգային դործերու կարգադրութեան համար, ոչ միայն տեղական խնդիրները լուծելով, այլեւ հեռաւոր Լեհահայերուն խաղաղութեան ալ նպաստելով։

1701· Նորէն պէտք է Լեհահայոց գաւառանք և անոնց ընթացքը բացատրենք, զորս թողուցինք 1640'ին, երբ Փիլիպպոս անոնց առաջնորդ էր խոհեմ և հմուտ անձեր յղել իրեն, որպէսզի պէտք եղածը իմանայ և կատարէ (§ 1678)։ Կ'երեւի թէ առաջարկը չգործադրուեցաւ, կամ եթէ գործադրուեցաւ՝ արդիւնք չունեցաւ, վասնզի հետք մը մնացած չէ պատմութեան մէջ։ Նիկոլ միշտ մնացած է իր բռնակալ իշխանութեան վրայ և իր յաման հռոմէականութեան մէջ, իսկ ժողովուրդը երբ 12 տարի եւս չարունակած է իր ընդդիմութիւնը, և ամէն միջոցներ գործածելէ և ապարդիւն ելլելէ ետքը, վերջապէս յուսահատութեան մատնուած, որոշած է անուղիղ միջոցներու դիմել առանց իր միտքէն հրաժարելու։ Ժողովուրդին գլխաւորները կը մտածէին, չէ թէ ի վերջին երեսս կոխելէ ընդհայեցուցին, որպէսզի այս կերպով կարենան յաղթահարել ընթերցողոն Նիկոլ, և եկեղեցին յիշեցնել զանոնց մոցնել, և անկէ ետքը կրթեցին զանոնց ըստ սովորոյն կրթել։ Այդ խորհուրդը յաջողցնելու համար իրր թէ Օձնեցիին առաջ գրուած ձեռնադրութեան մաշտոցի մը մէջ՝ դաւանութեան ձեւ մը կը գտնեն, որուն մէջ կը պարունակուի հղեր երբեմն հնալանդ լինելոյ սրբոյն Պետրոսի, Գրիգորի Լուսաւորչի, և ոմանց օրինաւոր յաջորդաց նոցա, այլև ընդունելի էին եօթնեւեան ժողովն և ոմանք յետոյն (ԲՈՆ. 26)։ Մեզի համար անիմանալի կը մնայ այս տեսակ հանգամանք մը Օձնեցիին առաջ գրուած, երբ Հռոմի հետ յա-

բարերութիւններ ալ գոյութիւն չունէին, ուստի յայտնապէս հնարիմաց դարձուածի մը, կամ թէ կեղծեալ գրուածի մը արդիւնք եղած է այդ տարօրինակ գիւտը, որուն իսկութիւնը գրուած չէ, և ինքնագրութեանց մէջ մանուելն ալ աւելորդ կը դատենք: Լեհահայերը այդ հանգամանակը ներկայեցին թագաւորին, որ էր հռչակաւորն Յովհաննէս Ջազիմիր, Եանէյ-Լէտէ գրուած մերիննեբէն (ԴԱՎ. 300), որ առաջարկը ընդունելու համար Հայոց կաթողիկոսական հաստատութիւնը պահանջեց: Փիլիպպոսի կ-Պոլիս հանդիպելը բարեպատեհ նկատուելով, իսկոյն պատուիրակներ յղուեցան կաթողիկոսական վաւերացումը ձեռք ձգելու, և միանգամայն իրենց բուն միտքը բացատրելու համար: Փիլիպպոս իսկոյն չհաւանիր առաջարկին, վասնզի իսկութիւնը իրեն յայտնի եղած պիտի ըլլար, բայց դիմէ քաղաքական նկատումներէն, և երկուքեալ էութենէ էութիւն ձուլուելով բոլորովին է ձոյ հատկական եկեղեցոյ (ԲՈՆ. 159), և վստահանալով թէ ասիկայ միջոց մըն է էլեմոսինան եկեղեցոյ նոցա (ԴԱՎ. 299), և լսելով իսկ անշուշտ թէ ինչ է Լեհահայոց ներքին դիտումը, ուր ուրեմն հաճի կրնայինան յայն բան, և հանգանակի ձևը կը հաստատէ (ԲՈՆ. 159): Բայց գիրը Լեհահայերուն չյանձներ, այլ կուտայ զայն իր աշակերտներէն Յովհաննէս Արղնեցի վարդապետին ձեռքը, այլ էքլեմ է-մասսոմինեմբ և հանճարեղ բանէ, և զայն 1653 նոյեմբեր 5'ին գրուած կոնդակով նուիրակ կը կարգէ (ԿԱՄ. 521), և կը հրամանգէ նախապէս ամէն միջոց գործածել (ԴԱՎ. 299), և մ' առնէ առնել զայն քաղցր, բայց դէմ է ձայնգիտացն հարկի, (ԲՈՆ. 159): Այս ամէնը կը կատարուէր առանց Նիկոլի մասնակցութեան, բայց հնար չէր որ Նիկոլ լուր չառներ ժողովուրդին ձեռնարկին նկատմամբ:

1702. Նիկոլ կը մտածէ որ պատուիրակներ կրնան կաթողիկոսին հետ իրեն անմպատ որոշման յանդիլ, որովհետև հռոմէական կանոնմներէ զատ իր անձնական անկարգ ընթացքին դէմ ալ դանգատներ ունէին, և կասկածելով թէ դէմ է ինքն է կրձանուածի, երբ դէմ կը-եղ ձուլուելէ ձայն հաստատ, այսինքն իր անկարգութեան դէմ ամբաստանութիւններ ընէ, կ'որոշէ ինքն ալ անձամբ կաթողիկոսին երթալ (ԲՈՆ. 159): Պէտք եղած ծախքին համար վերջ հարց ընդունել նախ քրմ կը սանայ Եւդոկիացի Մարկոսի որդի Սիմոն Ջէլէպի մեծանարուստ բարեկամէն (ԴԱՎ. 297) և [illegible] չտալով ճամպայ կ'երթայ (ԲՈՆ. 26), Պուղտանի վրայէն (ԴԱՎ. 297): Ճանապան կը հանդիպի Յովհաննէս Արղնեցիին՝ որ պատուիրակներուն հետ իրլվով կ'երթար, և անկէ ալ կ'առնէ ընդդէմ ա[illegible]ն վան ինչեան յանձնաբարեցաւ, և ճանապան չարունակելով կը հասնի կ-Պոլիս, և Փիլիպպոսին կը ներկայանայ (ԴԱՎ. 299): Իսկ Արղնեցին կ'երթայ Իլվով: Լեհահայերը Նիկոլը մինակ չթողլու համար, որ ուզածը չխօսի կաթողիկոսին և չհամոզէ, նոր և ազդեցիկ պատգամաւոր մըն ալ ճանպայ կը հանեն, Խաչքօ կամ Խաչիկ անուն ան էրեւելի, որ էր մ է գործարքի Հայոց: Խաչքօ ալ Նիկոլի հետէն կ-Պոլիս կը հասնի: Փիլիպպոս որ յակամայից հաստատած էր Լեհահայերուն մտածած կերպը և առաջարկած գիրը, կացութիւնը փոխուած կը տեսնէ Նիկոլի հասնելովը, վասնզի այլևս իր ձեռքին տակն էր քար գայթակղութեան եղող անձը: Նիկոլ չուտով կը հասկընայ այդ բանը, և պարագայից յարմարելու ճարտարութեամբը, միտք ու լեզու կը փոխէ, և ինչպէս լատին պատմիչը կը գրէ. «Ընկերէ և հայերէ հեղաբար կաթողիկոսէն, ներել նմա ըմենայն յանցանս իբր. և որպէս երբեմն ոխէր, ըն յայնմհետէ հպարտ լեցեալ ընդառաջ էլմիածնէ: Ճանչն առնոյր և ալ պայմանս, զորս անպարեհաս կը կոչէ լատին պատմիչը (ԲՈՆ. 159), վասնզի Հայ եկեղեցւոյ նպաստաւոր էին: Այդ պայմանները կը գտնենք Դավրիժեցիին յիշուած, և են. 1· Նիկոլ իբր եկեղեցական ու աշխարհական հետևորդներուն հետ՝ պահանջել խոստովանեցաւ ընդառաջել Լատտոորչէն և ընդէն ընդառաջել Հայրապետէն: 2· Նիկոլ իբր հետևորդներով՝ ընծայեցաւ ընդունելութիւն Հայոցմանեցւոյ եկեղեցւոյ: 3· Նիկոլին յաջորդը էջմիածնի կաթողիկոսէն լինելէ ծածուկ, և անոր հնազանդ և հեպեծուղ լեցեալ: 4· Նիկոլ իբր հետևորդներով, մ'

խառնեցէք զոր է քաֆակ սրբոյ պատրաստին։ 5. Պապին անունը չկիսուի չեկեղեցական խառնաֆառաց և է կղերկոաց, ոչ ալ Նիկոլի յաջորդէն, այլ միայն Նիկոլէն, և զայն և է պատրաստ ինչ։ Այս բացառութիւնն ալ ներուեցաւ, որովհետև Նիկոլ այդ կիսատակութիւնը չեռնտրեաւ խստացած ըլլալով, կասկած կը յարուցանէր թէ ուշ մահապարտ առնէին զինքն։ Նիկոլ այդ ամէնը հոգով կրեց և չկրնար կամ չկրնայ կրել բոլորն ալ ինքզինքով և չեռնտրուիլ պրպտել ներելու, և կաթողիկոսն ալ գիրը յանձնեց Մաչքօ դատաւորին, որպէսզի Իլվովի դիւանին մէջ է պահեսի առնէին վասն առյապոյն դէպքերուն։ Փիլիպպոս յատկապէս ալ խրատեց Նիկոլը որ դէպ ուշացնել է ներելու և է իջնել վրայ է րոյ, ուղղութեան գայ, և եպիսկոպոսութիւն վարէ բարեպաշտ կենցաղավարութիւն ունենալով, Նիկոլ ինչ որ առաջարկուեցաւ կատարելապէս անդիմադարձ ընդունեցաւ, կաթողիկոսն ալ զինքն արձակեց ի կապանաց բանադրանաց (ԴԱվ. 298), զոր Մովսէս կաթողիկոս դրած էր (§1660), Իլվովի եպիսկոպոսութեան նոր կոնդակ ալ առաւ 1654 ապրիլ 15 թուականով (ԿԱՄ. 255), և այնպէս արձակեց իր տեղը։

1703. Յովհաննէս Արղնեցին կանոնիչէն Իլվով հաստատուած էր խաղաղութեան ու հաշտութեան ու սիրոյ ԼԵՉԱՀԱՅԵՐՈՒ քարոզներ խօսիլ, բայց ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ ժողովրդեան ընդդիմանան, և Նիկոլը հեռացած ըլլալուն այլևս ոչ կրնին հնազանդիլ նմա, մինչ Արղնեցին՝ Նիկոլին կաթողիկոսին երթալը բարեգուշակ նկատելով՝ կ'աշխատէր փոխադարձ հաշտութիւն պատրաստել առանց գործը վճռական ձևի մտցնելու, մինչև որ Նիկոլ դարձաւ կաթողիկոսին օրհնութեան կոնդակով և Հայ եկեղեցւոյ հպատակութեան յանձնառութեամբ։ Այն առեն աւելի դիւրացաւ գործը։ Նիկոլի զղջումը, հայադաւանութեան և Հայոց եկեղեցիին վրայ դարձի յայտարարութիւնը ժողովուրդին միտքը չինեցին, իբր թէ Նիկոլ ղրկեցեալ և ընդհալ էր ղինւոր վրայ։ Քաղաքական իշխանութիւնն ալ, կանոնիչէն ընդունած ըլլալով Հայերուն կրօնքի ազատութիւնը, նոր ընդդիմութիւն չէր կրնար յարուցանել, երբոր եպիսկոպոս և ժողովուրդ կը համաձայնէին, որով հաշտութիւնը անհակառակ կնքուեցաւ։ Առաջին կիրակին Յովհաննէս Արղնեցին գլուխ կանգնեցաւ, ու եպիսկոպոսն ու ժողովուրդը միասին եղան չկիզեցին էրբեանց (ԴԱվ. 299), ուստից 1630'էն, այսինքն 23 տարիէ իվեր վտարուած էր ժողովուրդը (§ 1661), խրատեց, քարոզեց, մխիթարեց, ածեալ է համբոյր հաշտութեան ընդ միմեանս ընդ եպիսկոպոսին, որով ամէնքը տիրաբել սրտից, և փոխադրեմբ օրհնեին զԱստուածն ամենայն։ Յովհաննէս Քազիմբեր թագաւորն ալ, որ այն օրեր Իլվով եկաւ, յատկապէս իրեն մօտ հրաւիրեց Արղնեցին, խօսեցաւ ու խորհրդակցեցաւ, և շնորհակալութիւն սրտ նմա, ժողովուրդն ու եպիսկոպոսը վերջապէս հաշտեցնել կրնալուն, և շքեմ թամանակ խաղողութեան համար (ԴԱվ. 300)։ Այս հաշտութեան օրը նուիրական եղաւ Լեհահայերուն համար, և տարուէ տարի անոր յիշատակը որոշեցին կատարել Տեն Մխիթարի անունով, և օր սահմանեցին Հոգեգալուստէն ետքը միտասանեւորդ կիրակէն (ԲՒՆ. 27), որ 1652'ին կ'իյնար օգոստոս 8'ին, վերափոխման բարեկենդանին, և այն օրը պէտք է ընդունիլ իբրեւ Լեհահայերու հաշտութեան օրը։ Միութեան ոգին վրայ խօսելով Լատին պատմիչը, կ'ըսէ թէ սրբազանը դիպանեցան նոյն ընդ դիմաց, այլ ոչ ընդ սոյն եկեղեցոյն, իմա՛ եկեղեցւոյն Հռոմայ, իբր զի ըստ քարոզանդոսրնեմբ պաշտին ընդերկիսական սրբազանութեան իբրեանց, և թէ Նիկոլ ընդունայն ընդ իրբեաց ըստ այնմ որոյ եր չասաղ ոն զնոսա ընդունին իբր, այսինքն հռոմէադաւանութենէն առաջ (ԲՒՆ. 27)։ Եւս և սորբերոնին ընդ ընդ գոյն գոյանութեան, զոր իբր թէ հին մայրոցէ քաղած էին Հայերը (§ 1701), չանվաներ համբել, հրամայել լիներ ընդել զոյն էին (ԲՒՆ. 159)։ Աւելորդ չըլլայ դիտել տալ թէ որչափ ամուր էր Փիլիպպոս հայադաւան սկզբունքներու վրայ, որով չէր կրնար այլապէս վարուած ըլլալ Հռոմի ուղղած դիմերուն մէջ (§ 1680), յայտնի կէտերը կըրկնելով և մնացածը զգուշաւորութեամբ լռելով։ Ծիչեալ եղելութեանց հետեւանքով Հայ էրբ ընտրեցաչին է սրբոյ էրբեանց, զի

ֆին հաբ՝ ձգելու զանյին ընդյեցոցանելոյ, և այնս պահելոյ ըզբանըն, ձուլվ ելլվ է նախնի հասած խբեանց (ԲՒՆ· 27)։ Ասիկայ մեծ ցաւ կը պատճառէ Լատին պատմիչին, մանաւանդ տեսնելով թէ քաղաքական իշխանութիւնէ ալ հաւանութիւն ստացան, և արձանագրէ նոյնիսկ ֆին յարձակն Ցուլիոս Բալֆրայ (ԲՒՆ· 160)։ Նոր կացութիւն մը ստեղծուեցաւ այս կերպով Լեհահայոց մէջ, որոնք արտաքնապէս իրր թէ հռոմէադաւանութեան յարած կ'երեւէին, մինչեւ իսկ Լատին եկեղեցիներու մէջ պատարագած առնելին յանելօն ջոր է ֆին բաժակին (ԲՒՆ· 27), այլ ներքնապէս, այսինքն իրենց եկեղեցիներուն մէջ, ըստ ամենայնի Հայ եկեղեցւոյ կանոններ կը պահէին, ոուն չէր խղճեր առաջնորդ լինել Նիկոլ, որ միշտ իւր անձին ու չահին կը ծառայէր, և ոչ երբեք կրօնքի կամ դաւանութեան, հակառակ հռոմէականներուն իր վրայ տածած մեծ համակրանքին։ Դավրիժեցին 1660 մայիս 10'ին գրելով կը հաստատէ, թէ մինչեւ այն օր Իլվովցիք և Նիկոլ կան է ելբոյ նոյն պայմանագրութեան (ԴԱՎ· 302)։ Նոյնպէս լատին պատմիչն Ալոզիոս Փիթու, 1668 դեկտեմբեր 31'ին (ԲՒՆ· 113) կը վկայէ, թէ Հայեր նոյն դիրքը կը պահեն ու ելոյելն մինչեւ յայոց (ԲՒՆ· 27)։ Իսկ Ծովհաննէս Արղենցի՝ ամ ի ազգէն Իլվով մնաց, որպէսզի Հայ եկեղեցւոյ կանոններուն և ծէսերուն գործադրութիւնը ապահովէ, և ապա գրչաւ և ին է սորբ էջմիածին 1654'ին (ԴԱՎ· 300), և իւր պաշտօնին յաջողութիւնը հաղորդեց կաթողիկոսին, որ իւր աթոռը գարձած էր։

ՎԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ

1704· Փիլիպպոսի բացակայութեան էջմիածնի մէջ կատարուած գործերուն նշանաւորները Ս. Գայիանէի և Ս. Հռիփսիմէի վկայարաններուն նորոգութիւնները։ Առաջ Ս. Գայիանէի տաճարին նորոգութեան չեռն է ֆրեթ եղել Փիլիպպոս 1651'ին, դեռ էջմիածինէ չմեկնած (§ 1686)։ Տաճարին պռնկան քովնտակ նկնել էր, միայն չրջանակի պատերը և մէջտեղի չորս սիւները կանգուն էին, այնպէս որ գլուխը բոլորովին բաց էր, յատակը ծակոտկել և խոտոտկել (ԴԱՎ· 250), աւագ խորանը և ներքնեայ մատուռը, որ է դէր հռիփսիմեան նշխարաց սրբոց, աւերակ և քանդակալ էր, և ազքատութէ և ֆեհտ լցեալ (ԴԱՎ· 251)։ Հարկաւ այդ վերջին պարագաները Մովսէս առաջ ժամանակին համար են, զի չենք կարծեր որ 20 տարիներէ իվեր, որ նորոգութեանց ձեռնարկուած էր, աղբիւրով լեցուն թողուած ըլլար Գայիանէի տաճարը։ Նորոգութիւնները կատարուեցան է հինաց գնչ- ցֆեֆրն ֆրբերին։ Ս. Գայիանէի տաճարին նորոգութեան գործը աւարտելէն ետքը կը ձեռնարկեն Ս. Հռիփսիմէի վկայարանին ալ նորոգութեանց, որուն մէջ՝ տանիքը, կաթողիկէին գագաթը, պատերուն երեսները, ներքին յատակը, բեմը և խորաններըը՝ սեղեալ և ֆայֆեալ էին։

ԳԱՁԻԱՆԷԻ ՆՇԽԱՐՔԸ

1705· Իբրեւ հետաքրքրական և միանգամայն կարեւոր մի միջադէպ, յառաջ բերենք աւանդական պատմութիւն մը զոր Դավրիժեցին ալ արժան սեպած է տեղնիտեղօք պատմել։ Երբոր 1652'ին Ս. Գայիանէի վկայարանը կը նորոգուէր, գործին վրայ վերակացու և ֆոքձալոր դրուած էր Ծովհաննէս աբեղայ մը, այր սրբակենաց և ֆոքձանէայ և խորհրդոյան խորհրդով։ Այս հոգեւորական հետաքրքրութիւն մը կը զգայ վկայարանին ներքեւ վկայուհիներուն գերեզմանները գըտնել, և յարմար կերպով մը յայտնել սեղանեան ֆոքձողը, ինքն միայնակ պեղումներու կը ձեռնարկէ, և ֆէչէք և ցեբեկ ի չարունակ աշխատելով կը բախտաւորուի երեք գերեզմաններու հանդիպիլ, զորս կը բանայ ալ, և աչքովը կը տեսնէ ոսկրները ապիկ, ֆայլան և անգլես, և հոգ անուշադրեան ալ կ'առնէ։ Ոսկրներէն միայն կտոր մը կը վերցնէ, տապաններըը կը փակէ ինչպէս էին, խոզ և իլ կ'ամրացնէ, և հողը նորէն լեցնելով, առջի վիճակին կը բերէ, և անկէ ետքը միայն եղելութիւնը միաբանութեան կը հաղորդէ, և ոսկրն ալ կը ցուցնէ սա է նշան հաստատութեան (ԴԱՎ· 211)։ Դավրիժեցին եղելութեան օրն ալ կը նչանակէ 1652 հոկտեմբեր 19, երեքշաբթի օր (ԴԱՎ· 252), որ տոմարական հաշուով ալ կ'արդարանայ։ Գիւտին ստուգութիւնը իրաւ արեղայի մը վկայութեան վրայ կը հիմնուի, սակայն անոր երկիւղած ուղղամտութիւնը

պէտք է իրրեւ ճշմարտութեան երաչխաւորութիւն ընդունուի։

1706. Ս. Հռիփսիմէի տաճարին մէջ ալ նչխարաց խուզարկութիւն կը կատարուի; թերեւս միեւնոյն չինուածքանց դործավար Ծովհաննէս աբեղայի ձեռքով, բայց միաբաններու ընկերակցութեամբ։ Այս առթիւ երեւան կ'ելլեն, երեք տեղ քաթին քաթին, երկուքը է ոտի վրայ, եւ երրորդը՝ որ և քալած եր՝ է ոտի վրայ արձել դրուած (ԴԱվ. 252)։ Այդ դիրքը եւ փայտէ մնտուկը պէտք չէ զարմանալի երեւին, քանի որ պատմած ենք անգամ մը, այդ տապաններուն խառնուած եւ դուրս հանուած ոսկրներուն նորէն հաւաքուած եւ տեղը դրուած ըլլալը 45 տարի առաջ (§ 1599). Դավրիժեցին յառաջ կը բերէ Հռիփսիմեանց գերեզմանին քովը պատին վրայ գրուած երեք տուն չարականի մը պատճէնը, ծանօթ հանանց սոբք կոնոդիկէ արքիեպիսկոպոսարանին (ԴԱվ. 253) ստորագրութեամբ։ Շարականը անարուեստ է, և վերջին տուներ նոյն տաճարին սպասաւորող քահանայի մը սիրտին զեղուածը կ'երեւի։ Երկու տաճարներուն նորոգութիւնները 1651'ին սկսած ըլլալով՝ 1653'ին աւարտած են յամ երէ (ԴԱվ. 253), որ է ըսել թէ Փիլիպպոս չմեկնած սկսած է, և դառնալէն ետքը լրացուցած, իսկ բացակայութեան միջոցին գործին չարունակութիւնը հոգացած է Ծակոր Ջուղայեցին, ինչպէս հաւանական ցուցուցինք (§ 1686)։

1707. Փիլիպպոսի կ-Պոլիս մնալը տեւեց տարի մը ամբողջ 1652 ամառուան սկիզբէն մինչեւ 1653 նոյն ամիսները։ Երկու մեծ գործերէն զատ, որք են կ-Պոլսոյ և Իւվովի խռովութիւններուն բարձումը, նա կատարեց այլեւս քաղաք գործ քաջալերանց և սպասներ հաւաքելց, կաթողիկոսարանն ալ նորոգեալ կրնաչէտ ճոխացնելու հոգ տարաւ (ԴԱվ. 260)։ Այդ նիւթական նպաստներուն

ՓԻԼԻՊՊՈՍԻ ԴԱՌՆԱԼԸ

կարգին ամէնէն նչանաւորը եղաւ Մայրտաճարին դանգակատուն մը ունեցնելու համար պէտք եղած ծախքին հայթայթումը, զոր կաթողիկոսին առաջարկութեան վրայ ինքս յօժարութեամբ և կամակատարութեամբ յանձնառու եղաւ վճարել՝ Անտոն Չէլէպի անուն կրէ ընծաւոր և փոքրամարմին, յոյժ եռեռուն և հնարագէտ պրուսացի վաճառականի մը, որ Կոստանդնուպոլսոյ և Զմիւռնիոյ մէջ վաճառատուներ ունէր, և ներքին գաւառներէն և Եւրոպայէ եկող ապրանքները Գենթամայն փներ, և Գենթամայն վճարէր դէին, և ներեք քաղաքներու մէջ ալ ոներ ղրկոնս և կոպտաձեռնութեամբ հոգ կրէր։ Դժբախտաբար Դավրիժեցին մակդիր անուն մը չյիշեր այդ նչանաւոր Անտոնին վրայ, որ պիտի նայինք թէ ոչ ազգատոհմին նախնիքներէն եղած է էջմիածնի գանգակատունին բարեբարբը։ Բայց ամէն տարի մէջ հնար չէ զայն նոյնացնել Անտոն Կեավուրէն հետ՝ որ ֆրեռնս յերկիր Լէհաստան, թէպէտ ան ալ ունէր փառաւոր տուն, որ եղեւ ընծան Ֆիլիպեանցին դիւանին։ Վասն զի այս Անտոն կը նկատագրուի իրրեւ մէկ մը, որ Հայոց ալին գնդեցաւ, յիշելու ըստ ոչ նչան (Չէլէ. 77)։ Փիլիպպոս յաջողութեամբ փակելով իւր երուսաղէմի և Կոստանդնուպոլսոյ եկեղեցական հայրապետական ուղեւորութիւնը; ճանպայ եղաւ դառնալ Մայրաթոռ, չհնար գիտեր ինչ ճանապով, և ի ժէ փոխան սքեռհոյ կառքին, այսինքն է 1653 օգոստոս 14'ին, եռաց յերկիրն (ԴԱվ. 260)։ Հարկաւ առաջին հոգերէն մին եղաւ իւր բացակայութեան ժամանակ կատարած գործերուն տեղեկանալ, որունք կանոնաւոր ընթացք ունեցած էին Ծակոր Ջուղայեցիի հսկողութեամբ, և վերջին պէտքերը լրացնել երկու վկայականներուն և Մայրաթոռին մէջ կատարուած նորոգութեանց։ Զմեռը վերահաս ըլլալուն նոր չինուածքներ չկրցաւ սկսիլ, և ցուրտերուն մեղմանալուն ձեռնարկեց գանգակատունին հիմնարկութեան, որուն համար պէնճամի քաղաքաց յուղարկեց երեք սրբ կոնդակներ (ԴԱվ. 260)։ Սկզբնաւորութիւնը Դավրիժեցին կը դնէ յոյնոյ ազատհոգեց (ԴԱվ. 262), 1654'ին Բուն բարեկենդանը կ'իյնար փետրուար 5'ին։ Փիլիպպոս կ'ուխտէր օր առաջ գործը վեր-

ջացնել և սիրտին փափաքը լրացնել, սա-
կայն սաստիկ ընդդիմութեան հանդիպեցաւ.
Մահմատղուլի կուսակալին կողմէն, այր
եռաց և բռնութեամբ, այլեւ խոստիճ ընդ դէս-
պանէից։ Որուն թէպէտ կաշառք և բազում
ննջրանօք մօտեցաւ կաթողիկոսը, բայց նա
ոչ լսաւ նմա, և չարաւնակ կը սպառնար թէ
ոչ ըզսրբոյ չէն ղշնդեսցեն, այլ տակիչս եմ
ընդ, զի Փիլիպպոս արդէն ձեռնարկած էր
հիմերը գնել, և քիչ քիչ առաջ կը տանէր,
և տարիէ մը ասկէսի բաղձոյս չէին, գնեն
կոպեան ներքին կամբն, երբ Փիլիպպոսի ալ
մահը վրայ հասաւ։ Զանգակատունը, ինչ-
պէս այսօր ալ կը տեսնուի, հիմնարկուե-
ցաւ Մայրաքաղքին սրուժանակողմը, աւագ
դրան առջեւ, ետոպ և կէս օրմայ նոքին (ԴԱվ.
262)։

1708. *Փիլիպպոս իր ուղեւորութենէն*
դառնալէն ետքը տարիուկէս միայն ապրե-
ցաւ էջմիածնի մէջ, և
ՓԻԼԻՊՊՈՍԻ ՄԱՀԸ *տակաւ տկարացաւ իր*
առողջութիւնը, թէպէտեւ
63 *տարեկան էր տակաւ-*
ին (ԴԱվ. 266)։ *Տեառնի կիրակիին*, 1654
մարտ 18*ին ևկեղեցի իջաւ, նոքա չկրնա-*
ց տալ ըսել ըսրդ, տեսնելն տակը իրեն
նիւթ ընելով։ Բայց յաջորդ երկուշաբթիին
պատժաց և անկաց ի մահիճս։ Բայց միւսանգ
չիոթիեցան, և լուր առնելու համար իրեն
մօտեցողներուն սկսաւ ըսել, թէ ոչ էս յա-
նէմ յառ-ղըմբէն, և թէ երկուսն քարոզին
մէջ, երբոր կը կրկնէի, ուշ եաս կոթս լինել
պնթս իսօսքերը, կարծես թէ չայլեւ ոտից
ոչխեցաս է սէրս էմ, իբր թէ ինձի ըսէր,
թէ ոչ էս պնեսես։ Իրօք ալ վիճակը օրէօր
ծանրացաւ, և Դատաւորի կիրակիի առ-
տուն, գեղէ լոյս առաւօտուն սկսաս հոգեվա-
րել, ինքն ալ զգաց իր վիճակը, և սկսաւ
Աչք աբչիէս օրհնարանութիւնը կրկնել, և
այնպէս առնդեսց ընբռնել հոգին, 1655
մարտ 25*ին* (ԴԱվ. 265)։ *Դաւրիժեցիին*
հանգամանօրէն նկարագիրը, զոր իրեւ ա-
կանատես կը պատմէ, կը գտնէ թէ Փի-
լիպպոս մինչեւ վերջին չունչր ուշը վրան
ունէր, որով անդրպարտ վիճակ ունեցած չէ,
այլ ներքին սխալմը հետեւանք եղած է
իր մահը, որ տարեմտի ալ կրնայ ըս-
ուիլ, 63 տարեկան բլլալնիսոյն առնելով։

Այս պարագան աւելի կը բարձրացնէ Փի-
լիպպոսի արժանաւորութիւնը, որ յազմաչ-
խատ կեանք և անխոնջ աչխատութիւն
կրցած է ունենալ ախտակիր տկարութեան
մէջ։ Իր պաշտօնավարութիւնը բաւական
երկար եղաւ 22 տարի և 3 ամիս (ԴԱվ.
266), *կամ աւելի ճիշտ 22 տարի, 2 ամիս*
և 12 օր, օծման օրէն հաշուելով։ Բայց
աւելի ալ, զի Մովսէսի մահէն ետքն ալ
ութ ամիս, իբր լոկ ընտրեալ կաթողիկոս
տեղակալութեամբ կառավարեց Մայրաթա-
ղը։ Փիլիպպոս կաթողիկոսներուն չարքին
մէջ աւելի արդիւնաւորներէն մէկն է,
վասնզի առաջ գործակից, և վերջէն չա-
րունակող և գրեթէ լրացնող եղաւ, այն
մեծ բարեկարգութեան և բարեզարդու-
թեան, որուն առաջին գործիչն ու հոգի-
նակն եղաւ Մովսէս Տաթեւացին։ Փիլիպ-
պոսի գործունէութիւնը տարածուեցաւ ա-
մէն ճիւղերու վրայ։ Մայրաթաղին ներքին
կարգերը, վանական կանոնները, եկեղե-
ցական ծէսերը, բարոյական կենցաղը, իր-
մով սուացան իրենց հիմնական վերանորո-
գումը։ Երուսաղէմի աթոռին պայծառու-
թիւնը, կիլիկիոյ խնդիրին լուծումը, կ-Պոլ-
սոյ չիոթիութեանց հանդարտութիւնը, Լե-
հահայոց կենճիսին վերցուիլը, իր վայե-
կան արդիւնքներն եղան։ Մայրաթաղին,
մերձաւոր վկայարաններուն, բազմաթիւ
վանքերուն, և վիճակային եկեղեցիներուն
չինութիւնները իրմով քաջալերուեցան ու
լրացան։ Էջմիածինը իրմով գեղեցկացաւ եկե-
ղեցական անօթով, սկիւռ և աթթռով, գեղագին
զգեստաւոր և պատկական ըրենով, նիւթապէս
ալ հարստացաւ կահիւք պղնձեղինօք և
բրդեղինօք, և բազմացան հոյլ անբան չեն-
պանեաց, ոչխար և ըսխէր, և ըսխէր ոտկոյ չէր,
և ըսխէ խոշնոյ և անգեաց, այլ և ագռաւ և այծէ-
ր և քաւբատկան, ևս ամէն տեսակ կաղամածներ
արդիւնաւորել տուաւ (ԴԱվ. 263)։ *Մեծ և-*
ղաւ նաեւ իր հմտութեան ու ազդեցութիւնը,
և եղած էր ագեցաւոր և գեղշտոր առաջի ա-
զնուն պաղտոյ, Հայոց, Հոռոմոց, Վրաց, Օսմանե-
ոց, Պարսից, և գեղտեղ իշխանաց, նոքա ըս-
եռաւոյ էին։ Մեծ քարոզիչ ալ եղաւ, և ըս-
ղոր կեանքին մէջ անխափան վարեց իր վար-
դապետական կոչումը, է գիւղս և է տաղտս,
*է վանս և յանապատս, և յամենայն տեղիս, և

ըր ինչ տօրվէլ էրաթէր, ու պէտէր, այսինքն ապարդիւն չէր մնար (ԴԱՎ. 264)։

1709· Փիլիպպոսի թաղումն ալ խնդրոյ նիւթ եղաւ, վասնզի Մայրաթոռոյ միաբանութիւնն ամբողջ կ'ուզէր թաղել զայն է՛րբ ՓԻԼԻՊՊՈՍԻ ԹԱՂՈՒՄԸ լըլլա՛նէ, է՛ն իւր չ՛ընտրած ընթերափառն, այլ Մահտաղուի խան իւր հակառակութիւնը կաթողիկոսին մահուընէ ետքը չարունակելով, էրէ սոփոյթել ըրաց, և ու ըսայր ետևէն, որ առանց իւր հաւանութեան չ՛ինուած էր, և որուն համար միշտ կը սպառնար թէ տակընէ՛ն եմ ես։ Ամէն տեսակ միջոցներ գործածուեցան կուսակալին հաւանութիւնը ձեռք ձգելու համար, և այս պատճառով Փիլիպպոսի մարմինը անթաղ կը մնայր, և կայ՛ր դէպ-դէմ է՛ն պատ՛ն, ըսուբ երեսէ՛ դրպես կ՛ենդանի մարդ է տես, և բնաւ գէշ հոտ մը չարտադրելով։ Օրեր անցան, իսկ Մահմատաղուի խանն ալ կսպասէ՛ր է՛ղբ քարոյ էրոյ, և վերջապէս միաբանները յուսահատելով, մահուանէ վեց օր ետքը, մարտ 31, Մուսն ի վիրապ յիշատակին չաբաթ օրը, մեծահանդէս թափօրով մարմինը փոխադրեցին Ս. Հռիփսիմէի տաճարը (ԴԱՎ. 265), և անդ է՛ն դէպ պատ՛ն, է՛ն հէսթասային կողման խորանին հանգուցին զնա, և գերեզմանը բարեպաշտներու ուխտագնացութեան տեղի եղաւ, ինչպէս կը վկայէ Դավրիժեցին (ԴԱՎ. 266)։

1710· Փիլիպպոսի ժամանակը ուսումնական զարթնումի միջոցին կը պատասխանէ, որուն Մովսէս ԲԱՂԷՇԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ սի հետ ինքն ալ իւր արժանիքն ու մասնակցութիւնն ունեցած է։ Թէպէտեւ իրմէ անկախաբար ալ գործեր կատարուած են, սակայն միշտ իրեն համար պատուաւոր առնչութիւն մը կը ճչմարտուի, զի հայրապետի մը հոգին և ընթացք, բարեզուշակ ներչնչում կ'ազդէ ամէն կողմ։ Մեր նախընթացաբար հասուսուած ոճին համեմատ, ընդհանուր գործունէութիւնը պատմելէն ետքը, ցրիւ դիտելիքներէն կարեւորագոյնները քաղելու կ'անցնինք։ Կանուխէն սկսած էր մեծ հռչակ ունենալ Բաղէշ քաղաքին յարակից Ամբռուլի կամ ուղիղ հնչմամբ Ամլորդւոյ վանքին գպրոցը։ Անոր սկզբնաւորութիւնը կը տարուի մինչև Գրիգոր Տաթեւացի, որուն աշակերտներէն Դանիէլ վարդապետ ձգնաւոր մականուանեալ, իբրև գլուխ կը նկատուի Ամլորդւոյ վարդապետական գաւազանին, և յաջորդներ կը յիշուին Յովհաննէս Համշէնցի, Գրիգոր Արճիշեցի մականուանեալ Զօրթան, Ներսէս Մատաղ, Ներսէս Բաղիշեցի, Ներսէս Ամկեցի, Յովհաննէս Ոստանցի՝ մականուանեալ Բրդուտ, Բարսեղ Գաւառցի, և Ներսէս Մոկացի մականուն Բեղլու, զոր առիթ ունեցանք յիշել Մեծ-Անապատին մասին խօսած ատենս (§ 1620)։ Ծիշուածներուն մէջէն Ամլորդւոյ գպրոցին մեծ զարկ տուողը եղաւ։ Բարսեղ Գաւառցին, որ Սուրբ Գրոց ուսումնասիրութենէ զատ հետամուտ եղաւ իմաստասիրական և տրամաբանական ճիւղերը մշակել, և պոռճա՛ եղե՛ք գրեցէ՛ք ըրպոտէն էրոյ էլոռ՛ներ (ԴԱՎ. 303)։ Եւ որովհետև անխոնջ ինքնօգնութեամբ, և աղօթքի դիմելով յաջողեցաւ իւր նպատակին մէջ, իրաւունք ունեցաւ Դավրիժեցին ըսել, թէ ալբ՛ըն և պատուէն ամենայն իմաստասիրեան, Հոգին սուրբ Աստուած, եր սա պետասիրեան և հանճար տոց խելամտաց լինել բանին և ոճոյն և շատոց արտաքին էրեսոց, ասոնց ասլաներբելոյ և ցուցանելոյ բնաւ (ԴԱՎ. 302)։ Բաղէշի գպրոցին աշակերտութիւնը Հայ վարդապետութեան նոր զարգացման սկզբնապատճառը կրնայ ըսուիլ, զի Յովհաննէս Համշէնցիի և Գրիգոր Արճիշեցիի բազմաթիւ աշակերտներն են, որ ամէն կողմ սփռեցան և նոր գպրոցներ բացին։ Դավրիժեցին կըսէ ըսել թէ Աբելեանց ոչն է Զօրեանն սերեցան (ԴԱՎ. 340)։ Բայց Զօրթանի կամ Գրիգոր Արճիշեցիի ուսումը տակաւին սահմանափակ էր, իսկ արտաքին ուսմանց նախայոյն պիտի ճանչցուի Բարսեղ Գաւառցին, զի անով մեր վանքերուն մէջ առաձեռն ուսմանց դասագիրքեր զարձան Սահմանաց, Պոլէմոնի, Սոփոփոռեանց, Պերիարմենիասին, և նմանօրինակ գիրքերը (ԴԱՎ. 306)։ Բարսեղ վախճանեցաւ 1615'ին, և գերեզմանը տակաւին կ'երեւի Ամլորդւոյ

վանքին մէջ՝ Բաղէշի քաղաքին մօտ (ԿՈՒ.5)։

ԱՄԼՈՐԴԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

1711. Բարսեղի գլխաւոր աշակերտներն էին եղան Յովսէփ Ոզմեցի, Հայրապետ Մոկացի և Ներսէս Մոկացի, և այս երրորդն է որ յօլով աշխատեցաւ, և հրմտութիւններ առաքելոյն ի ձեռն ձեռնադրեալ և ի ձեռն ընդունելոյ (ԴԱՎ.304), բայց Մեծ-Անապատին համբաւէն գրաւուած Բաղէշէ հեռացաւ։ Սակայն այս պատճառով Բաղէշի դպրոցը չխանգարուեցաւ, այլ Բարսեղի միւս աշակերտները զայն չարունակեցին, և մինչ առաջնորդներու չարայարեալ անուններուն չունինք, Ներսէս Մոկացիէն ոչ շատ ետքը կը գտնենք վարդան Բաղիշեցին, որ հռչակաւոր եղած է իր ուսումնական գործունէութեամբ։ Մոկացին Մեծ-Անապատի մէջ արտաքին ուսմանց դասախօսութիւնը չարունակեց, այլ այնտեղ չատեր աւելի հոգին ըմբռնելու միտքով չկու կոչին։ Մինչդեռ Մելքիսեդեկ վիճակեցին մեռաց ամենէն անձնուէր աշակերտ, և Ներսէսի հետ միասին գնաց. երբոր նա այնտեղ հաստատուեցաւ, և երկուքը ձեռք ձեռքի տուած աւելի ևս ընդարձակեցին արտաքին հմտութիւնից շրջանակը։ Միմի մէջ հինգ այլ եղբայրներ միանալով Մելքիսեդեկի հետ, բայց վերջէն չկու կոչին չընդունելով որոշումն երրոց, ի պահանջին ալ նոյն ընթացքին է վերայ բանին (ԴԱՎ.304)։ Իսկ Մելքիսեդեկ մեռաց տակուն աշխատող մինչեւ վերջը, և գերազանցեց Բարսեղի և Ներսէսի հմտութիւնները, և իւր գիտութիւնը փոխադրեց էջմիածին, երբոր Մովսէս կաթողիկոսէ Յովհաննավանքի ուսուցիչ կոչուեցաւ (§ 1649)։ Դավրիժեցին, որ հասած է զայն լսել, հիացմամբ կը գրէ, թէ էբէս ղօշան աղէկ և հեղինակ ընդհանուր բանն է քերականէ նոր (ԴԱՎ.307)։ Արդէն յիշեցինք թէ վիճակեցին մահը տեղի ունեցաւ 1631'ին (§ 1665), և իրր պատճառ կը յիշէ Դավրիժեցին, թէ ցաւ տի անհոգութենէն և անյարմար դեղեր գործածելէն, հիւանդութեան ատեն անգամին, և այնպէս վճռեց գլխաւորը՝ և ուսումնները եւսքան զուս զարգացնողն ալ Սիմէոն Ջուղայեցին է, զոր վերջէն Փիլիպպոս ուսուցչութեան կոչեց, երբ Յովհաննավանքի դպրոցը էջմիածին փոխադրեց (§ 1680)։ Կը պատմուի թէ երբ Հայաստան կեսարացի նուիրակ ղրկուեցաւ Լեհաստան (§ 1660), իրեն կ'ընկերանար Սիմէոն Ջուղայեցին, և այնտեղ պատահեցան հանճարեղ Ֆռանկոց, և ինքզինքին տակաւ զգալով գիտական հմտութեանց մէջ, դառնալէն ետքը կրկին յանդրուանեմբ և ջերմեռանդ սրտիւ պատրաստ կրօնքին հոգեւոր ուսմանց, բայց աւելի Սիմէոն, որ հրհետասարդագոյն էր, և կրկին սկսել ճեղոյց ընտիր (ԴԱՎ.310)։ Սիմէոն երեք տարի անընդհատ էջմիածնի մէջ ուսմանց պարապելէ ետքը, Ասպահան գնաց Հայաստան կեսարացիի մօտ, որ վիճակին առաջնորդ էր եղած, և այնտեղ ալ չարունակեց իր ինքնօգնութեամբ աշխատութիւնները, վանզի Հայաստան ուսմանց պարապողները կրկին ծագեան դէպ յապահով պահէր, և Սիմէոնի վրայ սկսել ընդ և ընտ առնէր։ Այդ Հայաստանն է որ Լեհաստանի նուիրակութիւնը մեծ գրգիռ տուած էր Արեւմտեան զարգացման արդիւնքները Հայաստանի մէջ փոխադրել, և այս փափաքով տպարան ալ բացաւ 1640'ին Ասպահանի մէջ (ԴԱՎ.210), զոր կազմից ամենքին է վրդեհող ալ պեսել, այլ ետքով հանճարը յայտ ածել երեսից (ԺՄԳ.605)։ Ծիշատակարանին մէջ յիշուած են Սիմէոն Ջուղայեցի վարդապետ, և Յովհաննէս վարդապետ մը, որ գնացել չէջէ յաչխարհն Լոքինացոց, որպես զի սահել է նոցանէ և ելեալ սուղեցէ և հաստատեցէ տպագրութեան արհեստը է ձէջ Հայոցպանեայց (ԺՄԳ.606)։ Իրաւունք կը զգանք սոյն Յովհաննէսը նոյնացնել այլուր յիշատակուած Յովհաննէս Ջուղայեցի վարդապետին հետ (ՏՊԱ.86), որ իւր յաջողակութիւնը Իտալիոյ մէջ սկսաւ գործադրել, թէպէտ կը խոսասվանի ըստ հրամանէ և ըստ կամաց կեսարացւոյն գործի ձեռնարկած ըլլալը (ՏՊԱ.87)։ Սիմէոն քերականութիւն (ԴԱՎ.312) և տրամաբանութիւն (ԴԱՎ.313) մըն ալ չարադրեց, Պրոկղի նոր թարգմանութիւնը ուղղեց, և անկէ ետքն է որ էջմիածնի ուսուցիչ եղաւ, իսկ վերջէն 1651'ին կը յիշատակուի իրր արքեպիսկոպոս Նոր

Ջուղայի (ՏԱՇ·363)։ Կանգնին վերջին ա-
տենները ուզած է Թոքաթլեան աղքա-
թալ յայնարէն Ցառնոց, որ է Օսմանեան գա-
ւառները, բայց Եւդոկիոյ մէջ կը հիւան-
դանայ և կը վախճանի 1657 փետրուար
27'ին ցաւագնագոյն պոռնոյն, որ ճչդիւ կը հան-
դիպի երթալ ուրբաթին, և այնտեղ կը
թաղուի (ԴԱՎ·314)։ Իսկ Ներսէսեան կա-
սարացին աւելի կանուխ վախճանած կ'ըլ-
լայ, քան Սիմէոն 1651'ին, Փիլիպպոսի կոն-
դանուխեան առն Աստուածատրի գաղու-
թին առաջնորդն էր, իբր Ներսէսեան յա-
ջորդ։

ԻԼՎՈՎԱՑԻ ԵՒ ԴԱՒՐԻԺԵՑԻ

1712· Ժամանակակից վարդապետնե-
րէն յիշատակուի է նաև Սահիան Իլվովացի
է ծնեալ պոռնի, որ պատ-
ձած կրթութիւնը իւր
հայրենեաց մէջ առնելով,
նիկոլի նեղութիւններէն
զգուած, էջմիածին կու գայ ծնողաց հետա-
նութեամբ։ Անտեղ հետզհետէ կը յառա-
ջանայ ազգային հմտութեամբ, և Մայրաթո-
ռոյ մէջ օտար լեզուներու համար թարգ-
մանիչ և ուսուցիչ կը հանդիսանայ, և չորս
ալ գիրքեր կը թարգմանէ լատիներէնէն,
որք են Ցովհաննու, Աբէնթպոյէ, Դէյէ պոհե-
ոյ, Բանէ առաքեալ (ԴԱՎ·315), որոնցմէ
զատ կը յիշատակուին նաև Հայեէ վոռոյ,
Բոռոտան ազգիկ, Հրեշտակաբանութիւն և
Պատմութիւն Ղազարեան (ՀԴՊ·296)։ Սահիա-
նոսի գործունէութիւնը Փիլիպպոսի օրով
սկսած, ու չարունակած է մինչև անոր յա-
ջորդին ալ մահը։ Աւանձինն յիշատակու-
թեան արժանի է նաև Առաքել վարդապետ
Դավրիժեցին, մանաւանդ այն մեծ ար-
դիւնքին համար՝ որով վախճանմամբ ժա-
մանակամիջոցի համար ազգային պատմու-
թեան առաջնորդն ու մեծ սատարողն եղած
է։ Ռնիկ Թաւրէզ քաղաքէ և Մայրաթոռի
աշակերտած, ապրեն իսկ անել և վրթնել և
յոռոց ծերութեան ժամանել եմ, կ'ըսէ, ո-
րով լոկ վանական կեանք անցուցած ըլլալը
կ'իմացուի, առանց վարչական անցուդար-
ձերու մասնակցելու, թէպետև չրջապատու-
թիւններ ունեցած պիտի ըլլայ, որ մասնա-
մասնութիւններով կը պատմէ սատեանդ
կատարուած եղելութիւնները։ Տարիքը չգի-
չեր, այլ երբ 1651'ին պատմութիւն գրելու
կը ձեռնարկէ Փիլիպպոս կաթողիկոսի բռնա-
դատիչ սպիտմամբ, յաղթուելէ ծերութեան
եղած կ'ըսէ զինքը, և թէ ծեր էի, նախ յոյժ
ցաւագին տրտմով, և է լռոյ ալէ պակասել,
և է պնդութենէ չեռւոց ընտրեալ գրոցս (ԴԱՎ·
519)։ Ուստի երբ ինքգինքը յաշկերտութենէ
Փիլիպպոսի կոնդակով կը կոչէ (ԴԱՎ·516),
աւելի պաշտօնական դիրքը կը դիտէ, զի
հատակակից եղած կ'ըլլայ Փիլիպպոսի, խակ
ուսմամբ վժանեցիին և Ջուղայեցիին աշա-
կերտած պէտք է ըսուի, զի և անոնց սոր-
վեցուցած արուեստին ուսումնասիրութեան ալ հմուտ
կը տեսնուի՝ տուած բացատրութիւններէն
երկակացնելով։ Պատմութեան վրայ 4 տարի
կ'աշխատի, բայց Փիլիպպոսի մահուընէ ետ-
քը կը լքանի, խակ յաջորդին յորդորներով
նորէն ձեռք կ'առնէ 1658'ին, և կը փակէ
1662'ին, ինչպէս կը գրէ յիշատակարանին
մէջ (ԴԱՎ·518), ինչպէս ալ գործին կէսին
1662 յուլիս 1'ը իրր գրելուն թուական կը
ցուցնէ (ԴԱՎ·333)։ Ակէ կրնանք հետեւ-
ցընել թէ չարայարեալ պատմութիւնը մին-
չեւ Լ գլուխին վերջն է, խակ անկէ ետքը
մինչեւ ԽԶ գլուխ եղող մասերը, որք իրար-
մէ անկախ նիւթեր են, կ'երեւի թէ առեն
առեն գրած պատրաստ ունէր, և ետքէն
պատմութեան ծայրը կցեց, թերեւս մաս
մըն ալ վերջէն աւելցուց, ինչպէս՝ Այլա-
պոռնիներն ըստ յեղանակի անցեալ պատմո-
ղներէն մակագրութիւնն ալ կը յայտնէ (ԴԱՎ·
351)։ Դավրիժեցիին մահը, 1662'էն չատ
ետքը եղած պիտի չըլլայ, զի Փիլիպպոսի
յաջորդին գործերէն միայն զանգակատունին
չինութիւնը կը պատմէ (ԴԱՎ·207) և ու-
րիչ գործողութիւն չյիշեր մինչև կաթողիկոսի 8
տարիներու գործունէութիւնէն։

ՏԻՆԱՐԱՐ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

1713· Գոնէ յիշատակին պահելու հա-
մար յառաջ բերինք ուրիշ վարդապետներու
ալ անուններն, և իրենց
կատարած չինութիւննե-
րը, հետեւելով Դավրիժե-
ցիին տուած տեղեկու-
թեանց։ Նախ վարդապետ Մեղրեցի՝ Երեմ-
ջակայ Ս. Կարապետի վանքին տաճարդը,
աւերեալ եկեղեցին, տունները, խուցերը և
պարիսպները՝ բոլորովին քանդելով նորէն
վերաչինեց աւելի ընդարձակ կերպով, և
1653 հոկտեմբեր 17'ին եկեղեցւոյն նուա-

կաթիքը կառարեց (ԴԱՎ. 267)։ Զաքարիա վարդապետ Վաղարշապատեցի՝ Ծովհաննավանքի առաջնորդն ալ, Փիլիպպոսի օրով դպրատունին Էջմիածին փոխադրուելէն ետքը ձեռնարկեց ամէնայն ինչ նորէն շինել ուժգի ընդարձակ և վայելուչ։ Շինութիւնները աւարտեց 1652'ին, և հաչվերացին օրը սեպտեմբեր 12ին, եկեղեցւոյ օծումը լրացուց։ Ցոյժ ծերացած ըլլալով Էջմիածին քաշուեցաւ, ուր վախճանեցաւ 1659 յունվար 10'ին, վարդավառի օրը, և թաղուեցաւ զանգակատան առջևի քարայատակին մէջտեղը, որուն համար ինքն իր փոքանչ ալ պատրաստած էր (ԴԱՎ. 268)։ Մկրտիչ եպիսկոպոս Մակուեցի՝ Արտազու Ս. Թադէոսի առաջնորդ, իբ միաբաններուն հետ նոյն վանքին վերաչինութեան ձեռնարկեց. 1650'ին աւարտեց եկեղեցին, և 1653'ին ժամատունը, և անոնցմէ ետքն ալ Ս. Անդիսոյ վկայարանը և նահատակ կոչուած եկեղեցին (ԴԱՎ. 269)։ Մարտիրոս եպիսկոպոս Մուղնեցին ալ, Մուղնու Ս. Գէորգ եկեղեցին և սենեակները իր հիմանց վերաչինեց, և ընդարձակագոյն պարիսպով պատեց Փիլիպպոսի օրով (ԴԱՎ. 270)։ Ոսկան վարդապետ Երևանցի՝ Ուչիի Ս. Մարգիս վանքին նորոգութեան ձեռնարկեց, պարիսպն ու սենեակները չինեց, բայց եկեղեցին աւարտելու չհասաւ։ Իսկ Օշականի Ս. Մեսրովպի տաճարը ուղղակի Փիլիպպոս կաթողիկոսին կողմէ վայելուչ կերպով նորոգուեցաւ 1645'ին (ԴԱՎ. 270)։ Փիլիպպոս եպիսկոպոս Բջնեցի, Բջնիի Ս. Աստուածածնին քարչրջեց և լանջաց և ներսէն տաճարը ձեռնարկեց նորոգել, Պետրոս Զուղայեցի կամ Պետրոս Բգուզ նշանաւոր անձին ծախքով. և աւարտեց 1643'ին. իսկ չուքչանակի վանքն ու պարիսպը իր յաջորդ Մանասէս Բջնեցի վարդապետը լրացուց (ԴԱՎ. 271)։ Ատենմէ զատ Շուռոթի եկեղեցին, Ագուլիսի վանքը և փիւղի չորս եկեղեցիները, Թավրէզի եկեղեցին, Դարաչամբի եկեղեցին, Ծղնայի եկեղեցին, և այլ յոլով ղրս ուչ չինչ կ'ըսէ Դավրիժեցին, ամէնքն ալ Փիլիպպոսի աչակերտ վարդապետներուն ջանքով չինուեցան կամ նորոգուեցան (ԴԱՎ. 272)։ Այս կարգին կը յիշուի նաև Քասապի վրայ եղող Աչտարակ գիւղի կամուրջը, զոր խոջայ Գրիգոր երեւանցի, Մածակենց մականուանեալ, ի հիմանէ հնչէ ցկատարած չինել տուաւ իր ծախքով 1664'ին ի հաս Աստուածոյ (ԴԱՎ. 271)։ Այս ամէն չինութիւններ և վերաչինութիւններն ալ որոնք յիշուեցան, և այլ նաև չատեր որք յիշուած չեն, ամէնն ալ Փիլիպպոսի մեծագործ և աչխարհաչէն գործունէութեան արդիւնքներ են, ըլլ նորա օրինակին և յորդորներուն զօրութեամբ կը կատարուէին։ Ջմռնանք գովութեան յիչատակ մըն ալ նուիրել ժամանակին ազգայնոց եկեղեցասէր և բարեսէր զգացումներուն, որոնք այս կերպով օգտակար կ'երևնէին 1639'ին դաչնագիրով հաստատուած խաղաղութեան տարիները (§ 1680), և միանդամայն ապահովող և սկզբնատառաճառ կ'ըլլային բարեկարգութեան և զարգացման պատրաստութիւն, որոնք այդ առաջին ճիգերուն և խաղաղութեան հետեւանքն էղան։

ԴԱՐԱՆԱՂԵՑԻՒՆ ՄԱՀԸ

1714. Ժամանակակից վարդապետներու ցուցակը վերկելու համար անգամ մըն ալ յիչենք Գրիգոր Դարանաղեցի վարդապետը, որուն անունը տալու նոր առիթ չներկայացաւ, 1624'ին Պալախու եկեղեցիին կառուցումն ետքը, որուն գործակցեցաւ և որուն համար հալածուեցաւ (§1640)։ Դարանաղեցին տարիքն առած և թափառական կեանքէն յոգնած վերջապէս քաշուեցաւ Ռոտոսթոյ, որ կանուխէն իրեն սեփական վիճակ էր նչանակուած (§1604), կամ ինչպէս ինքն Աստուածաչունչին յիչատակարանին մէջ կ'ըսէ, ի ձէ սեփական օրհնաւանն, ի ձէ ձէ սեփական վիճակն հռոթոյ, և համաչխարհիկ եղեալ փաղաքչոյ և փեղկոյ, և կ'երևի թէ այլ եւս անկէ հեռացած չէ։ Ռոտոսթոյ դրուած յիչատակարան մը 1639 մարտ 22'ին, ի թեղոյս առաքելոցն Թադէոսի Գրիգոր վրդովեցաւ կ'ըսէ (11 ԱՄՍ. 8), և 1643 սեպտեմբերին ձերացեալ լի աստուածբռնատեղ մնացած ըլլալը տասնամեայ վրայ կը կարդացուի (11 ԱՄՍ. 7)։ Այսպէս կը հնգուի բաւական իր վրայ խօսիլ տուած կեանք մըն ալ, որուն մեծ գործունեութիւնը թէպէտ անտարակոյս ոչ ալ անկողմնակալ, գոնէ ժամանակակից պատմութիւն

մը գրած ըլլալն է, որ տակաւին տպագրուած չէ։

ՍԱՐՈՒԽԱՆ ԽԻԶԱՆՑԻ

1715. Վարդապետներէն Հոգը կ'անցնինք ժամանակիս մէջ նահատակուած նոր վկաներու յիշատակներն ալ քաղել, ինչպէս որ սովորութիւն ըրինք արդէն։ Սարուխան Հիզնացի կամ Խիզանցի, արհեստով կօշկար, միանգամայն վարժ երգիչ և քնարահար, Խիզանէ Բաղէշ կը փոխադրուի, կ'ամուսնանայ և կ'այրիանայ երկու զաւակներով։ Պատահմամբ ծանօթութիւն կ'ընէ կնոջ մը հետ, որ ինքզինքը քրիստոնեայ և այրի կը յայտարարէ, ամուսնութիւնը կ'որոշուի, և օրինօք կը պսակուի եկեղեցւոյ մէջ, և քրիստոնէապար կ'ապրին մինասին երիք տարի։ Անկէ հոգը կը յայտնէ կինը, որ ինքն քուրդ և մահմետական է, բայց քրիստոնեայ ըլլալու համար իւր ամուսնոյն քովէն փախած և ինքզինքը ծածկած է։ Սարուխան կը զգայ թէ մեծ վտանգի մէջ ինկած է. բայց կը լռէ ու կ'անցնը կը չարունակէր, մինչեւ որ կնոջ ամուսին երդող Քուրդը Բաղէշ գալով կինը կը գտնէ, և աղմուկ կը թողու քաղաքին մէջ թէ քրիստոնեաներ իւր կինը յափշտակած և բռնի իրենց հաւատքին դարձուցած են։ Սարուխան կը ձերբակալուի, դատաւորի և իշխանի առջեւները կը հանուի, ուրացութեան կը բռնադատուի, է մեռնիմ և է նեմ քանի կը փակուի (ՆՈՐ. 439), բայց հնար չըլլար զինքն ուրացութեան հաւանեցնել, ուստի կրակով սպանութեան կը դատապարտուի, և գլուխը կոճ մ ի ֆայի, ոտքէն զարնելով բոցերուն մէջ կը նետեն, և այնպէս կը նահատակուի, 1631'ին առաջաւորաց ուրբաթ օրը, փետրուար 4'ին, երբ Փիլիպպոս Աղբակեցին ալ նուիրակութեամբ Բաղէշ կը գտնուէր։

ԿՈՏԷԱՑԻՔ ԵՒ ՂԸԶԼԱՐ

1716. Օսմանեանց և Պարսից պատերազմին միջոցին էր 1638'ին, որ Մասուր անուն պարսիկը սուտ համբաւով Օսմանեան բանակէն փախուստի ասիպեց թաթար գունդ մը, որ Կոտէից կամ Երեւանի նահանգը կ'ասպատակէր (ՋԱՔ. Բ. 19)։ Փախչողներ կրցածնին մէկտեղ տանելու հետամուտ, երկու Կոտէացի գեղադէմ պատանիներ ալ կապած կը տանէին իրենց հեշտութեան զոհ, Արծնի գիւղին Դժուարագէմ կոչուած քարաժայռ դահավէժին մօտ, կը հասանին կապերը քակել, և պատանիներ չոնոտի պըղծութենէն ազատելու և օրացոյնեմբ չկորսուելու նպատակով, չէչեցին անոնց Աստուծոյ, և անոնք է փոքրացն է վայր և գետն։ Քարաժայռին մէջ պահուըտած ոմանք, անոնց ժարիւննները փոթել է ֆէլէն Աբդնէ՝ ընդէղէն (ՋԱՔ. Բ. 23)։ Անձնազոհ նահատակներու օրինակներ ցանցառ չեն վկայաբանութեանց մէջ, և անոնց կարգին պէտք է դասել այդ երկու Կոտէացի պատանիներն ալ, որոց անունը անյայտ է մնացած։ Նոյն փախուստի միջոցին ուրիշ այլազգիներ ալ ձեռք կը ձգեն Ղըզլար անուն մանկամարդ կին մը, նորագաւթի դիւղէն, վաճառականի Սեաւ Ջաքարիայի կողակից, և հափտփելով իրենց ձիուն վրայ կ'առնեն, բայց Ղըզլար ազատելու համար զինքն վար կը ձգէ։ Երկու երիք անգամ այդ ճիգը կը կրկնուի, մինչեւ որ Թաթարներ հետեւէն պարսիկներու մօտենալը տեսնելով՝ արթնօղ արբէն ղէրանելէ կինն Ղըզլար, ընդէն կ'ասմահ և փախեան, որ առած վէրքերուն երեսէն եօթն օր հոգը վախճանեցաւ, օրինաւորապէս հաղորդուելէ հոգը (ՋԱՔ. Բ. 24)։ Ասոր ալ անունը նահատակներու կարգին դասելու չենք վարանիր, քանի որ հաւատոյ և արդարութեան պաշտպանութեան համար եղան Ղըզլարի դիմադրութիւնն ու մահը։

ԳԱԼՈՒՍՏ ԱՐԱԽՍԱՑԻ

1717. Գալուստ քահանայ Արախսա գիւղի, Երեւանի գաւառին մէջ, մկրտած էր Բասէնէ գաղթած չքաւոր մէկու մը նորածինը, և իզձալով անոր աղքատութեան 12 լիտր ալ ցորեն տուած էր իբր ողորմութիւն։ Օր կ'անցնի և Բասէնցի գաղթականին կնոջ հայրն ու եղբայրը հասնելու կու գան, և կը սկսին պահանջ յարուցանել թէ իրենց աղջիկը առնանգած և ինչքերը գողցած է, և դործը դատաւորին առջեւը կը տանին, որ վճարման վճիռ կու տայ։ Մարդիկը տալու բան չունէին, մէկ բան մը առած ալ ունէին, վաճառել էին, և ազատելու համար կ'որոշեն

ուրանալ ; և աւելի արժանիք ցուցնելու հա-
մար խօսք ալ կը խառնէին, թէ իրենք ու-
րացութեան միտքով եկած էին, բայց թէ
Գալուստ քահանան զիրենք ստիպեց նորա-
ծինը մկրտել, մինչեւ իսկ կ'ըսէին թէ կա-
չառք ալ տուաւ զիրենք համոզելու։ Այս-
չափը կը բաւէ Գալուստը երեւանի աստանը
քաշելու և խիստ հարցափորձի ենթարկե-
լու. բայց Գալուստի բացատրութիւնները
օգուտ չին ունենար, թէ անոնք քրիստոն-
եայ էին, թէ մկրտութիւնը իրենք ուզե-
ցին, թէ ցորներ ողորմութիւն տուաւ, և
վերջէն կրօնափոխ ըլլալնին առջի դործերը
չպլայտիր։ Ուրացութիւնը չուտով կ'առա-
ջարկուի իրր ազատութեան պայման, որուն
կը դիմադրէ Գալուստ, թէպէտ պէտք էր ի
էջց էլսոնելնե (ՋԱՒ.Բ.31)։ Կը բանտարկ-
ուի, զինքն համոզելու եկող կարդացող-
ները ետ կը դարձնէ, և վերջապէս քար-
կոծման վճիռը կը տրուի։ Անհնարին ձա-
դանքով և խոչտանգանքներով կը տանին քա-
հանան քաղաքին արեւմտեան դուռը, քրիս-
տոնեաներն ու բոյանները կը ստիպեն քար-
կոծելու, և երբ ամէնքը կ'ընդդիմանան ու
կը փախչին, Պարսիկներ վրան կը յարձակին
և քարերու ներքեւ կը թաղեն Գալուստ
Արահատցի քահանան։ Նահատակութեան
օրը եղած է 1640'ին յոտնաձգութեան, առանց որոչ ամսաթիւի, որ տարին Բուն
բարեկենդանը կ'իյնար փետրուար 15'ին։
Մարմինը թաղուած է Ս. Աննանիայի անա-
պատը (ՋԱՒ.Բ.32), Մովսէս Տաթեւացիին
վանքը։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ

1718. Նիկողայոս Տիգրանակերտցի մա-
կանունանալ, որովհետև Հայերը սովորած են
այդ անունը տալ հին Ա-
միդ, և այժմ Տիարպէքիր
քաղաքին, 15 տարեկան,
և փոքրէ գեղեցիկ և հաս-
կա վայելուչ պատանի մըն էր յիշեալ քա-
ղաքը (ԴԱՎ.405)։ Զինքը գգուելէ ուզող
Տաճիկներուն կ'ընդդիմանայ ու կ'անարգէ,
և իրր Տաճիկներու հաւատքին հայհոյող՝
դատաւորին առեւանը կը հանուի։ Պատանի
Նիկողայոսի հերքումին դիմաց, երկու սուտ
վկայ կը բերեն, և երբ Նիկողայոս ուրա-
ցութեան չդիջանիր, մահուան վճիռ կ'ար-
ձակուի։ Կուսակալը կը միջամտէ որ խոս-
տումներով և ազաչանօք համոզէ պատա-
նին, և երբ չյաջողիր՝ վճիռին գործադրու-
թիւնը կը հրամայէ։ Բոլորովին մերկ և
ձեռուընները հետեւը կապուած քաղաքին մէջ
պտցնելէն ետքը, մահապարտութեան տե-
ղը կը տանին, և կրկին սպառնալիքներով
և խոստումներով կը փորձեն, որ միջոցին
Մարտիրոս քահանան արմաւի հատի մէջ
հաղորդը ծրարելով կը յայտողի Նիկողայոսին
ճաչակել տալ և փախչիլ։ Վերջապէս երկու
ձեռուընները և երկու ոտուընները հետզհետէ
վէմին վրայ կը ջախջախին, և մինչեւ երե-
կոյ այնպէս կը թողուն։ Միւս օրը տուն մը
կը փոխադրեն, ուր երրորդ օրը հոգին ա-
ւանդեց։ Կոստանդնուպոլսեցի նահատակութեան պէտք
Նիկողայոսի կը դրուի 1642 ապրիլ 15'ին
(ԴԱՎ.409), որ կը հանդիպի զատկի ուր-
բաթին, և աւելի կը յարմարի տանջանաց
օրուան, որով մահը կրնայ դրուիլ 17'ին,
Նոր կիրակիին։ Դավրիժեցին կ'ըսէ թէ վե-
պոպէ ան, ըստ անոնն ալ ֆոտ, Նիկողա-
յոսի այը և տանջանաց վէմը, նորաչէն և-
կեղեցւոյ հիմին մէջ զետեղեց. իսկ Ցայս-
մաւուրքը կ'ըսէ թէ այդ բանը տաղնոյդ
տղտէն ըրած է (ՑԱՍ.Ա.168)։ — Տանը-
հինդ տարեկան նահատակի մըն ալ յիշա-
տակը կ'ընէ Քէօմիւրճեան, գրելով. Ե-
Մանուկը Ըտէն ՁԱՒՈ, Նահատակ տաղ ընդե-
պատան (ՁԻԼ.78), սակայն հնար չէ նոյնա-
դրնել 15 տարեկան Նիկողայոսի հետ, վասն
զի այս գերեզմանը կ-Պոլսոյ Բերայի մէջ է,
և թուականն ալ ՃՄՒ կամ ՌՃՄ, այսինքն
1652 է. ուստի անծանօթ մնացած Մանուկ
կոստանդնուպոլսեցի նահատակի մը պէտք
է վերագրել այդ յիշատակութիւնը։

ԽԱՉԱՏՈՒՐ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ

1719. Ուրիշ Տիարպէքիրցի նոր վկայ
մըն ալ Խաչատուր Տիգրանակերտցին է,
Նիկողայոսի նման պարա-
գաներու մէջ նահատակ-
ուած, աւելի սրատեսուչ
կերպով։ Իբրև տասը տա-
նէր էր Խաչատուր, ջղեղիպոս և վայելչա-
հասակ երիտասարդ մը, յոյժ հոգեւոր և ե-
կեղեցասէր, դարբնութեան արհեստին զբա-
ղած, քաղաքին մեծ մզկիթին մօտերը։ Օր
մը երբ մզկիթին աղբիւրէն կը լուացուէր,
ոտքը և կռնակէ ելած Տաճիկ մը զինքն կը
վանտէ, և Խաչատուրի ընդդիմանալուն

վրայ, ժխոր մը կը փրթի, և Տաճկաց օբէնքին հայհոյած ըլլալու պրպտուքեամբ և ուստ վկաներով դատաւորին առջեւը կը հանեն։ Սա ահելի գոլթով և ողոքանօք կը վարուի, գործը միւֆթիին կը ղրկէ, որ մահապատիժ կու տայ, և դատաւորը կը պարտաւորուի վճիռ արձակել. կուսակալն ալ թաղամ խանդաղատական քանիներ կը ջանայ հրիտասարդը ազատել ուրացութեանն միջոցներով։ Մէկ երկու անգամ առանձինն կը թողու, գուցէ մտաբերէ, բայց Աչատուր միշտ աւելի ուժգնութեամբ կը պնդէ իր ընդդիմութիւնը, մինչև որ կուսակալն ալ կը հրամայէ պատգամին գործադրութիւնը, որ քերթել տարկ տևած էր, Աչատուրին՝ «Ելնէ՛ք ձ՛ը, ես է տապան իմ ու գտանեմ ըլլալուն համար (ԴԱՎ. 411)։ Նախ մերկացնելով և ձեռուընները ետեւը կապելով ձաղանօք և խոչտանգանօք քաղաքին մէջ կը պտըտցնեն, և քաղաքին նոր դուռին առջեւ, թէ առջեւէն և թէ ետեւէն մորթը մինչեւ մէջքը քերթելով անգամ մըն ալ քաղաքին մէջ կը պտըտցնեն։ Անկէ ետքը կը բերեն մեծ հրապարակը, և վէմի վրայ նախ բազուկները, վերջէն սրունքները կը ջախջախեն, և նահատակը նուաղեալ գետին կը տապծուի։ Այդ վիճակին մէջ, նախ չուր կը խմէ, և վերջէն հազորդ կ'ընդունի հացի մէջ ծրարուած, և այնպէս կը թողուի։ Աչատուր Բաղիշեցի վարդապետ և Յաճռէչ Բալուեցի աբեղայ, իրեն մօտը կը մնան մխիթարելով մինչեւ որ գիշերուան մէջ հոգին կ'աւանդէ։ Մարմինը կը փոխադրուի եկեղեցի, և օր մը հասարակաց բարեպաշտութեան առարկայ կը թողուի, և վերջէն կը թաղուի մեծաշուք հանդէսով։ Կուսակալը քսուներու դրժմամբ կ'ուզէ մահապարտի մը յիշատակը փառաւորողները պատժել, այլ կ'արգիլուի այն օր եէնիչէրիներուն իրեն դէմ հլլելովը, և չաթաթ մը բերդին մէջ արգիլական պահուելովը, և քաթխոտութեամբ օրթոյն խաչօրոյ եղած կ'ընդունուի քրիստոնէից ազատութիւնը։ Նահատակութեան օրը եղած է 1659 օգոստոս 20'ին (ԴԱՎ. 417) որ կը հանդիպի վերափոխման հինգշաբթիին։ Աչատուրի այ յիշատակը Ցայսմաւուրքին մէջ անցած է (ՑԱՍ. Բ. 89)։

1720. Սիրուն Գնունի կամ Ակիւրցի, վասպուրականի Գնունի կամ Ամուկ գաւառին Ակիւր գիւղէն, ամուսնացած էր արդէն, և կարօտ ըլլալով մահմետականի մը ծառայութեան մտած էր վանայ մէջ։ Օր մը որ իր տիրոջ համար բեռ մը կեռաս կը բերէր Ակլաթի կողմէն, վանայ մէջ Տաճիկ տղաքներ վրան ինկան կեռասը յափշտակելու, և Սիրուն ապրանքը պաշտպանելու համար տղաքը կը վանէր, և արձակած քարերէն տղու մը գլուխը վիրաւորուեցաւ, և երկու ամիսէն մեռաւ։ Սիրունի տէրը զայն խստօրէն հետապնդեց Ակիւր՝ իր գիւղը, բայց գիւղին Տաճիկները զինքն կալանաւորեցին. տղուն ծնողքն ալ վրէժինդրութիւն կը պահանջէին, բայց դատաւորն ու միւֆթին զինքն անվարան արձակեցին և Սիրուն նորէն Ակիւր դարձաւ։ Ահա անդամ երկու և երեք հոբիւ վանեցի կրթնամոլ Տաճիկներ, հաւաքուեցան։ Ակիւր եկան, Սիրունը վան բերին, մահ սպառնացան եթէ իրենց կրօնքը չընդունի. Սիրուն ուրացութեան չհամաձայնեցաւ, ուստի ամէն տեսակ խոչտանգանքներ թափեցին վրան, բարակ չուանով բազուկները պրկելով, ծեծելով, քաշկռտելով, ու կոփահարելով՝ քանի օր շարունակ քաղաքին մէջ ձաղանաց և խոչտանգանաց ենթարկեցին։ Որչափ ալ Սիրունի ծնողքն ու միրձաւորք առ երկար ուրացութեան կը յորդորէին, Սիրուն երբէք չհամձն չեղաւ։ Տաճիկներ երեք օր ալ իրենց աղօթքները դադրեցուցին իրեն բողոքոյ ցոյց, սակայն անոր ալ մահուան վճիռը չկրցան առնել դատաւորէն։ Ուստի երբոր նորէն քաղաքին մէջ կը պտըտցնէին, կասապիններէն մին կուշտէն վիրաւորեց զայն դաշոյնով, ուրիշ մը քարով գլուխը ջախջախեց, և այնպէս նահատակուեցաւ Սիրուն, վանայ Նալբանտանոցի չուկային մէջ 1655'ին (ԴԱՎ. 421) օգոստոս 5'ին (ՆՈՐ. 471), վերափոխման բարեկենդանի կիրակի օրը։ Մարմինը առաջ քաշկռտելով քաղաքէն հանեցին և քարկոծեցին, և անկէ ետքը քրիստոնեայք կրցան զայն առնել և թաղել ընդհանուր գերեզմանոցին մէջ։

Սիրունի ալ յիշատակը Յայսմաւուրքին անցած է (ՅԱՍ. Բ. 62)։

1721. Ցիչատակութիւնն ապժանի կը սեպնէք վարագայ Ս. Նշանին գերութեան և ազատութեան եղելութիւնն ալ, զոր յայժմանմանօրէն կը պատմէ Դավթիժեցին (ԴԱՎ. 382–402)։ Ասլաբի բերդին տէրն էր Սիւլէյման բէկ անուն բռնապետ մը, որուն քով ապաստան գտած էր Զօմար անուն նախկին կուսակալ մը, որ աւազակապետ էր դարձած։ Վանայ մէջ ալ զօրացած էր Հիւսէյին աղա անուն իշխանաւոր մը, կուսակալն ալ իրեն հպատակեցուցած։ Երկուքը միասին ընդդիմացան նոր եկող կուսակալին, և այս պատճառաւ իրենց վրայ ղրկուեցաւ Սինան աղա զօրավար մը։ Ասիկայ Հիւսէյինի և կուսակալի վրայ զօրանալու համար իրեն օգնութեան կանչեց Սիւլէյմանն ու Զօմարը, որոնք եկան, և վանայ չրջակայքը և Հիւսէյինի կալուածները աւերած աւնէնին, վարագայ վանքն ալ ելան նոյն նպատակով, և հարուստ աւարի ակնկալութեամբ։ Մխիթարեանները ցրուեցան, և միայն երեք ծերեր մնացին, Յովհաննէս և Սահակ և Մովսէս աթէղաներ, որոնք Զօմարի ձեռքէն անասանելի չարչարանքներ կրեցին, որ վանքին գանձարանները յայտնեն, սակայն անոնք ամենուն ալ տոկացին պնդելով թէ ոչ ֆէթհֆ վէնդբելն չէր (ԴԱՎ. 387)։ Ան ատեն աւարառութ անձամբ և Զօմար գլուխնին, եկեղեցիներուն պատերը ծեծելով և քանդելով գտան նախ պղնձեղինաց, յետոյ արծաթեղինաց գանձարանը, որուն մէջ էր վարագայ Ս. Նշանն ալ, ամէն բան գրաւեցին, սկիհ և խաչ, աւետարան և գիրք, քյոց և բուռվառ, չուբլաս և վարագոյր, և մարդագլուխ արծաթէ մի խաչ մեկ խոնդրէ կչռով, և իրր թ յաթգանս Ս. Նշանին մօտը քանանայ մը դրին, և ամէնքը փոխադրեցին Ասլաբ։ Վարագի կողոպտուելուն օրն էր 1651 (ԴԱՎ. 389), ողոհոյէց հինգերորդ շաբաթ յոթերորդ օրն ԴԱՎ. 398), որ կ'իյնայ մարտ 14'ին։ Սիւլէյման ուզեց Ս. Նշանը իր սահմանին մէջ եղող Հոգւոց վանքը դնել, բայց աւազնորդ Պետրոս եպիսկոպոս յանձն չառաւ, պատճառելով թէ պէտք է իր տէրը գտնայ, և մնաց Սիւլէյմանի ապարանքը (ԴԱՎ. 395)։ Վանայ գլխաւորներէն Մարխաս Զէլէպի՝ Խանենց խօջայ Թումայի որդին, անձամբ Ասլաբ եկաւ Ս. Նշանը փրկանաւորելու, մինչև 7000 ղուրուշ խոստացաւ, բայց Սիւլէյման չզիջաւ (ԴԱՎ. 396)։ Ասկայն աղէտաբեր եղաւ հետևանքը։ Յորմէհետէ Ս. Նշանը գերուած էր, Ասլաբի եկեղեցին բաբեկեաններուն մնացաւ։ Ցիսնակի բաբեկենդանին որ կը հանդիպէր նոյեմբեր 16'ին (ԴԱՎ. 391), Զօմար Հիւսէյինին հետապնդելու համար չատ մը փորձանքներու հանդիպեցաւ, և վերջ ի վերջոյ ձեռք ի՛նալով ապանուեցաւ (ԴԱՎ. 371)։ Սիւլէյման իրեն դէմ եղած դաւաճանութիւնը զսպելու համար իր մեծամեծներէն երեքը բանտարկեց, բայց անոնց հաւատարիմները կանացի զգեստով իրեն մօտ երթալով զինքը ապանեցին, վարագի կողոպտուելուն տարեդարձին, 1652 տարուս հոգեց հինգերորդ ուրբաթ օրը (ԴԱՎ. 399), որ այս անգամ կը հանդիպէր ապրիլ 2'ին։ Սիւլէյմանի եղբայրը Իպրահիմ բէկ անոր յաջորդեց Ասլաբի տէրութեան մէջ։ Բայց այն ալ յաջողութիւն չտեսաւ, երկրին արդասաւորութիւնը հետզհետէ նուազեցաւ, 1653'ին Լուսաւորչի պահքին, որուն բաբեկենդանը կ'իյնար յունիս 19'ին, ասատկ ձիւն տեղաց, և ցանք ու արօտ խանգարեց, ու խաչնեամն տաբաժուեցաւ։ Եռեւէն Իպրահիմ ինքն ալ աստիճ հիւանդացաւ (ԴԱՎ. 401), ուզեց գնել Ս. Նշանը Հոգւոց վանքը ղրկել, բայց Պետրոս եպիսկոպոս նորէն յանձնառու չեղաւ, և ուզը դարձնելու անհրաժեշտութիւնը զգացուց (ԴԱՎ. 401)։ Վանեցիք եղածները լսելով քաջալերուեցան, և Մարխաս Խանենց իշխանաւորը նորէն եկաւ, և 2000 ղուրուշի փրկանքով յաջողեցաւ Ս. Նշանը և կողոպտուած իրերէն որչափ ինչ մնացած էր նա առնուլ, և ուրախութեամբ վան բերել։ Վանեցիք վախցան նորէն Վարագի վանքին մէջ՝ ամայի լերան գագաթը դնել Ս. Նշանը, և պահեցին քաղաքին Ս. Տիրամայր եկեղեցին, որ անկէ ետքը աւելի յաճախ Ս. Նշան անունով կոչուած է։ Վարա-

գայ Ս. Նչանին գերեզարթը տեղի ունեցաւ 1655'ին (ԴԱվ. 401), որ է նոյն իսկ Փիլիպպոսի մահուան թուականը. իսկ ամսաթիւը նշանակուած չէ։ Այն երեք ծերունի աբեղաններըն՝ Յովհաննէս և Սահակ և Մովսէս՝ որոնք Ս. Նչանի համար չարչարուած էին, հաղիւ տարի մը եւս կրցան ապրիլ. և իրարու հետէ վախճանեցան 1652 տարւոյն մէջ (ԴԱվ. 389), և գերեզարթը տեսնելու չհասան։ Պատմութիւնը չյիշեր եւս վարագայ առաջնորդին անունը, որ կ'երեւի՝ թէ ասպատակին հասնելուն՝ առաջին փախչողներէն մին եղած է։

Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ

1722. Վարագայ Ս. Նչանի պատմութեան առիթով յառաջ բերուած է Ս. Յովհաննու կարապետի մասունքի մըն ալ յայտնութիւնը։ Երբոր Շահաբաս Առաջինի հրամանով Ջուղայ ալ բոնի կերպով գաղթելու կը ստիպուէր (§ 1589), հնար չէր եղած ամէն բան միասին փոխադրել, և չատ կարեւոր բաներ ալ մուցուեցան և մնացին, և Ջուղայի աւերակներուն մէջէն բախտ գտնողներ ալ եղան։ Մէհրամ անուն այլազգի մըն ալ խուզարկութիւններ ըրած առեն, վերին կաթան կոչուած եկեղեցւոյն աւերակներուն մէջ, խեցեղէն ամանի մէջ տուփ մը կը գտնայ, որ քանի մի կտոր ոսկրներ ու մաղաքիի կտոր մը կը պարունակէր։ Արժէքաւոր բան մը կարծելով կը պահէ, մինչև որ լաւ մը տեղեկանայ, բայց միւս կողմէն իւր տունին բախտը կը չրջի, նախ կենդանիներ յետոյ զաւակները կը մեռնին, գործերն ալ կը ձախողին։ Շիտիթած գործը կը յայտնէ իւր ծանօթներէն Դարաչամբի Շմաւոն եպիսկոպոսին, որ մագաղաթը կարդալով կ'իմանայ թէ Յովհաննու կարապետի մասունքներ են, որոնք 972'ին Ղրամ քաղաքի աւերման առթիւ Ջուղայ են բերուած (ԴԱվ. 404), և Մէհրամի կամքը հաճեցնելով մասունքները կը պահէ։ Լուրը կը լսուի, և Առաքանի Ջուղայեցիներ խօջայ Նազարի գլխաւորութեամբ՝ կ'ուզեն տէր ըլլալ, և Շմաւոն կը պարտաւորուի մասունքները յանձնել մագաղաթին հետ, որոնք Առաքան կը տարուին, միայն մեծկակ կտոր մը իրեն կը պահէ։ Ջուղայի գաղութը 1605'ին կատարուած ըլլալով, մերձաւորապէս 1608'ին կրնանք դնել այդ մասունքներուն գիւտը, որուն վրայ բաւական առեն կ'անցնի մինչեւ 1654'ին նորէն անոնց յիշատակութիւնը կ'ըլլայ։ Յակոբ Եպիսկոպոս Ջուղայեցի, Փիլիպպոսի գաւառնալէն ետքը ձեռնարկած էր Դարաչամբի Ս. Նախավկայի վանքը նորոգել, երբ Շմաւոն եպիսկոպոս, որ յոյժ ծերացեալ պիտի ըլլար, Յակոբի լուր կուտայ մօտը պահած մասունքին վրայօք, և կը փափաքի զայն խաչի մը մէջ զետեղելով վանքին յիշատակ թողուլ։ Այս տեղ Դավրիժեցին Յակոբի բերանէն կը յայտարարէ, թէ «Ես ոչ հրաման ի կանանց գնել գնչութ սրբոց ի մէջ եկեղ» (ԴԱվ. 405), և ասով կը հաստատուի հնաւանդ և յոյժ օրինաւոր սովորութիւն մը։ Վանզի քանի որ խաչը յանուն Քրիստոսի նուիրագործուած և գործածուած կը նկատուի, չէր ըլլար անոր կցել սուրբի մը անունին նուիրագործումը։ Սակայն այսօր անխտիր կը տեսնենք խաչերու ակին մէջ սուրբերու մասունքներ դրուած, որ վատնացուց նմանողութեամբ եկամուտ մըն է։ Յակոբ պատշաճագոյն կերպով յատուկ մասնատուփ մը պատրաստել տուաւ, «ոչ-ինչ» ոչխայի, ոսկեզօծ ակերով ընդհանուր, և անոր մէջ զետնզուց Շմաւոնի պահած Ս. կարապետի մասունքը, վրան ալ արձանագրելով «Ոսկրեաւն սրբոյն պահմանոց», որուն մասին իբր ականատես կը խօսի Դավրիժեցին (ԴԱվ. 405), զի իւր ժամանակին ալ պահուած պիտի ըլլար մասունքը Դարաչամբի Ս. Նախավկայի գանձարանը։ Չենք գիտեր թէ այնտեղ կը մնայ տակաւին, վասն զի Ս. Նախավկայի վանքը, որ տակաւին Պարսկաստանի սահմանին մէջ կը գտնուի, բազմիցս կողոպտուած է, և չունակ արշաւանքներու ենթարկուած տեղ մը եղած է։

Տ· ՅԱԿՈԲ Դ· ՋՈՒՂԱՅԵՑԻ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԾԱԳՈՒՄ

1723· Փիլիպպոս կաթողիկոսի թաղումը վեց օր ուշացած էր (§ 1709), և այս պատճառով ասկէ չատացած էջմիածին եկող եպիսկոպոսներուն և վարդապետներուն խիւը, որոնք պէտք տեսան աթոռոյ պարապութեան միջոցը կարճել, և անմիջապէս նոր կաթողիկոս օծել և նատեցնել: Մարտ 25'ին եղած էր Փիլիպպոսի մահը, և 31'ին թաղումը, Ս. Լուսաւորչի ծոմին օրը: Չատիկը մօտ էր, ուստի չտապեցին, և Մաղկազարդի կիրակիին 1655 ապրիլ 8'ին կաթողիկոս օծուեցաւ Յակոբ Ջուղայեցի Հռիփսիմպոլսոյ, որուն անունը տուինք Փիլիպպոսի բացակայելուն միջոցին (§1686): Մաղկազարդին նախընթաց օրը՝ Ղազարու յարութեան յիշատակին հետ Աւետման ալ ծօն էր, բայց չենք կրնար պնդել թէ այն օր տեղի ունեցած ըլլայ ընտրութեան համար ժողովը: Փիլիպպոսի թաղումէն ետքը՝ որ օր ալ եղած ըլլայ ընտրական ժողովը, նկատելի կէտ մը կը մնայ, որ Խոշքէլ Լէրպպէրտն և Եղիազարեանն կ'ըսուի միայն (ԴԱՎ· 266), և իշխանաւորներու յիշատակը չըլլար, որով հարկ կ'ըլլայ սոսկ եկեղեցական տարրով լրացած ըսել ընտրութիւնը: Եւ ոչ ալ կը պահուի այն ձեւը որ Փիլիպպոսի ընտրութեան ատեն գործածուեցաւ, ազգային գլխաւոր կիզրոններու հաւանութիւնը առնելէն ետքը օծումը կատարելով (§ 1666): Պատմութիւնը բացատրած չէ թէ ինչ էր այդ չտապին չարժառիթը, և թէ ինչու զանց եղաւ աշխարհական տարրին մասնակցութեան պայմանը: Միայն այս ինչ յայտնի է, թէ Յակոբի ընտրութիւնը ոչ մէկ կողմէ ժխտողութեան կամ տրտունջի տեղի չտուաւ: Թերևս Փիլիպպոսի կողմէն յայտնուած յանձնարարութիւն մը պատկառանք ազդեց, բայց ասկէ զօրաւոր եղած պիտի ըլլայ Յակոբի տեղակալութեան մէջ գրտնուիլը՝ Փիլիպպոսի երկամեայ բացակայութեան միջոցին, և զրծով յուցած յաջողակութիւնը, և արդեամբ ստացած իրաւունքը: Կերպով մը զրծաղրուած է աթոռակիցներու չըլլանին սովորութիւնը, զի Յակոբ առանց օծումի և առանց կաթողիկոսական անունի, օգնական կաթողիկոսի դերին մէջ կը գտնուէր: Յակոբ բնիկ Ջուղայեցի էր, ծննդեամբ Հին Ջուղայէ, զի 1680'ին 82 տարեկան վախճանած ըլլալով, 1598'ին մարտին ծնած, և 1605'ին բռնի գաղութին (§1589) 7 տարեկան եղած կ'ըլլայ: Իսկ կեանքը անցուցած պէտք է ըլլայ Նոր Ջուղայ կամ Ասպահան, մինչեւ էջմիածնի աշակերտիլը, ուր ուսած կ'ըլլայ Մելքիսեդեկի և Սիմէոնի ձեռքին տակ: Ըստ այսմ 57 տարեկան կաթողիկոսական աթոռ բարձրացած կ'ըլլայ, միայն 6 տարեկան պզտիկ Փիլիպպոսէ, որով աւելի կրտսեր ընակերակիցը պէտք է ըսել, և ոչ թէ անոր աշակերտը (ՋԱԱՐ· 23): Էջմիածնի մէջ չուտով կարևոր դեր ստանձնած պիտի ըսենք, քանի որ յարմար տեսնուած է կաթողիկոսական տեղակալութիւն վարելու: Իսկ վերջին օրերու մէջ յիշուեցաւ նա՝ Դարաչամբի Ս. Նախավկայ վանքին նորոգութեան առթիւ (§1722): Իւր երկարատեւ և վաստակաբեր և արդիւնաւոր կաթողիկոսութիւնն ալ կը ցուցնէ, թէ խոհական և գործունեայ և ազդեցիկ անձ մը եղած է, և ամէնուն կողմէ արժանապէս գնահատուած է:

ԴԱՇՏԵՑԻՆԵՐ ԵՒ ՏԵՂԱՓՈԽՈՒԱԾ

1724· Ջուղայեցիին կաթողիկոսութեան սկիզբները տեղի ունեցաւ Նոր Ջուղայի ընդարձակման եղելութիւնը: Հին Ջուղայի գաղթականներ Ասպահանի մէջ առանձին թաղ մըն էր կազմած, քաղաքին մէջէն անցնող Զէնդէ-Էհրուտ գետին հարաւային կողմը, իսկ ուրիշ կողմերէ եկած Հայեր Ասպահանի մէջ զանազան թաղերու մէջ զետեղուած էին՝ Պարսիկ մահմետականներու եւ ուրիշ ազգերու հետ խառն: Գողթն գաւառի Դաշտ գիւղի եւ չրջակայից գաղթականներ, որոնք

կանուխէն եկած էին (§1583), եւ առնասարակ Դաչտերի կը կոչուէին, բնակած էին Շամչապատ Թաղը (ԴԱՎ.·340)։ Երեւանէ եւ չրջականերէն գաղթածներ կը գտնուէին Թաղթիխարաջայ եւ Բազաթ Թաղերը, իսկ առհասարակ Հայաստանի զանազան կողմերէն՝ Տիարպէքիրէ, Բազէչէ, Մուշէ, Կարինէ, Երզնկայէ եւ անոնց չրջականերէն բերուածներ կը բնակէին, Շախչախան եւ Թորոսկան Թաղերը (ԴԱՎ.·345)։ Առանց ամէնուն՝ Ջուղայեցւոց կազմած Նոր-Ջուղայի մէջ կեդրոնանալն է, որ տեղի ունեցաւ Շահաբաս Երկրորդի հրամանով եւ բոնի գործադրութեամբ։ Գործին առաջին ծագումը Շամչուղատէն սկսաւ, որ աւելի գեղեցիկ եւ հանգիստ թաղն էր, եւ ուր կը կեդրոնանային պալատան նախկին պաշտօնեաներ եւ հին ներքինիներ, եւ կ'ուզէին Հայերը հեռացնել անոնց տեղերը գրաւելու համար (ԴԱՎ.·345)։ Պատեհ առիթ մը լզաւ անոնց ձեռքը Շահաբասի կողմէ տրուած հրամանը, որով Մահմետականներուն կ'արգիլուէր գինիի գործածութիւնը, սաստիկ պատիժներու, քիթ ու ականջ, ձեռք ու ոտք կտրելու, և մինչեւ իսկ մահապարտութեան պատիժներով (ԴԱՎ.·342)։ Ասով մէկտեղ արբեցութիւնը սովորական էր Պարսիկներու մէջ, մինչեւ իսկ Թագաւորին զարմանք պատճառեց, որ Աստուանէ Ղազբին էր քաշուած։ Ասոր ներքին պատճառը իմանալու համար Նալաֆղուլի բէկ անուն գեռապ և ֆոյլ պալատականի մը պաշտօն տրուեցաւ Իշոխմալ-Դուլաթ եպարքոսէն՝ Ասպահան երթալ, և հետազօտութիւններ ընել։ Շամչապատի բնակիչ Պարսիկներ թելադրեցին արքունական գրասլահ կամ դիւանապահ պաշտօնէին, և նա պատեհ առիթով զգացուց Նալաֆղուլի պատուիրակին, թէ բուն պատճառը գինի խմելու արտօնեալ Հայերու հետ խառն բնակութիւնն է, վասնզի մէկուն ձեռքը գինի տեսնուած ատեն, յոյս ունի Հայոց գոռ գոռնէ, և յոյն ունի Հայոց գոռ գոռնէ՝ կ'բաէ, և կ'ազատի, և ուզողը Հայու մը տունը կը մտնէ ու կը խմէ, կամ կը գնէ և տունը կը տանի (ԴԱՎ.·244)։ Բաց ասոր գետին ջուրն ալ, ուսկից Մահմետականներն ալ կը խմին, չարունակ կը սղծուի, վասնզի Հայեր անոր մէջ կը լուան գինիի կարասները, և անոր մէջ կը վաթնեն քաղցուէն աւելցած հինգիսը և օղիէն մնացած մրուրը (ԴԱՎ.·346)։ Նալաֆղուլի գաղտնիքը գտած ըլլալու դժունակութեամբ եպարքոսին հաղորդեց զայն, նա ալ Թագաւորին առաջարկեց, և այսպէս տրուեցաւ 1655'ին Դաչտեցիներուն համար արքունի հրամանը (ԴԱՎ.·351) Շամչապատէ ելլելու, և գետին միւս կողմը Նոր-Ջուղայ և Գաւառապատ Թաղերը փոխադրուելու։ Հայեր թէպէտ ընդդիմացան, բայց վերջապէս երթ է հրամանէ ետ չդարձաւ, երթ է բանտարկեցին իշխանացն, երթ է հարստահարութեամբ Մահմետականացն, անոնք ծածկեցին, և Թալթեցի Հայերուն համար նշանակուած Թաղերը անցան (ԴԱՎ.·347)։

ԱՍՊԱՀԱՆՑԻՔ ՏԵՂԱՓՈԽՈՒԱԾ

1725. Շամչապատի Դաչտեցիներուն վրայ կատարուած առաջին հրամանը գոնացուցիչ արդիւնք ունենալով, միւս տարին 1656'ին մինուոյն հրամանը գործադրուեցաւ Երեւանցիներու վրայ (ԴԱՎ.·351), որոց նախ բարեկամօրէն յանձնարարուեցաւ, գիւղացւոց խօսքայ Յակոբջանին ձեռքով, բայց ոչ Ե քէչ ալեւ Հայոց, կը գրէ Դաւրիժեցին, «նոյն գծխամէ Ե գէմգծուչ լինել, մինչեւ իսկ աղմուկով Ե աղաղակով Թագաւորին դիմացին, սակայն օգուտ չըլլաւ, Ե Թագաւորը չէնեաց հանգերձ ղըզլաշով վրանին ղրկեց, «ծխէն քանտրնեմ հանելու համար։ Բայց երբ յոճախաց քէչն Ե վրայ գլխոցն Հայոց, այն ատեն չկեալ Ե չգծանտրնեն չկնեցան քեզելու, ժամանակ Ե փոխարէն գետին խնդրելին, որոնք իրենց չնորհուեցան (ԴԱՎ.·319)։ Միեւնոյն ատեն Շախչախանցիներն ալ ստիպուեցան տեղերնէն ելլալ, և փոխադրուիլ Ջուղայեցիներու քովը իրենց ցուցուած հողերուն վրայ, և տեղափոխութիւնը լրացաւ 1659'ին (ԴԱՎ.·351), որով բուն Ասպահանի մէջէն Հայերը պարպուեցան, և Նոր-Ջուղան կատարեալ հայաքաղաքի ձեւ առաւ, և ստացուած արդիւնքը հետզհետէ հաճելի և սիրելի դարձաւ Հայերուն։ Ջի անով ազատուեցան չատ մը անտղութիւններէ, որոնք խառն բնակութեան հետեւանք էին, և խառնակ կենակցութեան դիւրութիւն կը մատակարարէին։ Այս անտղութիւնց կարգէն էին չատութիւն մոռը-

մութիւն չատցնելով քրիստոնէութենէ ուրացանալ և կրօնափոխ ալ ըլլալը։ Մանաւանդ երիտասարդներ և երիտասարդուհիներ, փոխադարձաբար իրարու սիրահարուելով ուրացութեան կը յորդորուէին, որպէսզի ուսուցիչք մահմետականաց քրիստոնեայ աղջիկներ առնեն, կամ ուսուցիչք քրիստոնէից մահմետականներու հետ ամուսնանան, և ըսյոպէսի քաղաքական պետական մէջ մեծ կը յարէ պատուիչը։ Նիւթական դիւրութիւն ալ ունեցան Հայերը, որ քաղաքամիջի նեղ և անյոյն և ահաւասիկ բնակութեան տեղ, ընդարձակ չէրնոցներով և մարդասէր հովանաւորութիւններ ունեցան պարտէզներէ չրջապատուած։ Վերջապէս իւրեան բնակութեան պատճառով, մահմետականներ խոնարհել ենթգենին և ղլուխէն քրիստոնեայ դրացիները, մինչ նոր բնակութեանց մէջ այդ ձանձրոյիներէ ալ ազատ՝ է գոհ պէղոլ գոհարհել ուրիշ ընկերութեամբ կիւնակցելու սկսան։ Այս պատճառներով Հայերը մինչ առաջ գիւրացան, վերջէն գէրգէր դաւնալով սկսան գոհանալ, զի խնամարկութեամբ Աստուծոյ կոպրեցաս այս գործս (ԴԱՎ. 350)։

ՋԱՆԳԱԿԱՏԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

1726. Յակոբի կաթողիկոսութեան ընկիզբը նշանաւոր յայղութիւն մը եղաւ զանգակատունին գործը, զոր Փիլիպպոս հիմնարկած էր (§ 1707), և որուն մինչեւ վերջ հակառակ էր կեցեր Մահմատղուլի կուսակալը (§ 1709), չարունակ սպառնալով չինուածն ալ քակել։ Սակայն Աստուած պահեց դլնգիակատունն և ղնան գոհեց, կը գրէ պատմիչը։ Մահմատղուլի իւր գործոց բնաւորութեամբ անարգած էր և է ըմբռնէ առնէ թագաւորին կողմէ եկող իշխանները, որոնք գարձած աստիճանին զինքն ամրաստանելուն և պաշտօնեանկ ընել աուին, և յայղոյց նշանակուեցաւ Նալջաֆղուլի խան, որ հաստատուեր վերեւ յիշատակուած (§ 1724) միեւնոյն Նալջաֆղուլի բէկն է։ Այդ փոփոխութիւնը տեղի ունեցաւ Փիլիպպոսի մահուընէ ոչ չատ ետքը, և Յակոբ ալ նոր եկող կուսակալին մտերմութիւնը ձգտելով, երբեմն հրամանաւ է գոհ նոքա, և ոսկին ու արծաթը չհնայելով կուսակալէն և անոր չուրջը գտնուող իշխաններէն, յայղոյցաս 1657 յուլիսին, Փիլիպպոսի մահուընէ երկու տարի ետքը, զանգակատունը լրացնելու հրամանը առնուլ, և ամէն փոյթ և ջանք թափելով, տարիէ մը գայն բարձրացուց ուաւարտեց՝ զանազան բանդակներով զարդարելց։ Մէջը սեղան ալ կանգնելով անուանակ Սուրբ Հրեշտակապետ՝ խորհրդով Գաբրիէլեան փողոյն, և 1658'ին Խաչվերացին օրը, սեպտեմբեր 12'ին, զանգակատունին գագաթին խաչը օրհնեցին, և հնչեցին զնոցները, այսինքն է վար առին չինութեան ծառայող յատակառոյց կազմածը, որ կը նշանակէ գործին աւարտումը։ Դավրիժեցին կը դիտէ թէ զանգակատունին վրայ էրեթ ընտանեան այլապէս են (ԴԱՎ. 263), սակայն Մխիթարեան կ'ըսէ թէ կաթողիկէին ներքին կողմը 1658 թուականը գրուած կը տեսնուի (ՎԱՂ. 24)։

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1727. Ազգային կեանքին և մեծ աթոռնորուն աղետալի անցուդարձերը պատմելու չանցած, յիշենք նաև Յակոբ կաթողիկոսի հայկական տպագրութեան հաստատութիւնը։ Այդ կենսական գործը Միքայէլ կաթողիկոսի հովանաւորութեամբ և Աբգար Եդեսկիացիի ձեռքով սկսած առաջին ազգային չարժումէն ետքը (§ 1557), թէպէտ ընդհատ, բայց ոչ սպառած ընթացք մը ունեցաւ, բայց միշտ Իտալական քաղաքներու և աուաւելապէս Վենետիկի մէջ։ Աբեւելքի մէջ առաջին փորձ Խաչատուր Կեսարացիինը եղաւ 1640'ին (§ 1711), սակայն արդիւնքը գոհացուցիչ չէր արհեստական տեսակէտէն։ Յովհաննէս Ջուղայեցին ալ նոյն չէր եկած կատարելագործութիւն բերելու, և նոյն նպատակով 1637'ին Եւրոպա անցնող Յովհաննէս Անկիւրացին ալ իւր գործունէութիւնը Իտալիոյ մէջ ամփոփած էր, մինչ Յակոբ կաթողիկոս հետամուտ էր արեւսար ազգային կեդրոնին մէջ զարգացընել։ Այդ նպատակով, իւր կաթողիկոսութեան սկիզբը Եւրոպա ուղարկեց Մատթէոս Մարեցի սարկաւագը, որ Վենետիկ հասաւ 1656'ին, բայց պարտաւորուեցաւ 14 ամիս այնտեղ ղեգերիլ իզուր. անկէ Հռոմ անցաւ, հոն ալ 8 ամիս մնաց ապարդիւն կաթոլիկական սղպելքներու չկրնալով

յաղթել, և 1658'ին գնաց Հոլանտիոյ մայրաքաղաքը Ամսդելտամ (Amsteldam) հին հնչմամբ, կամ Ամսդերտամ (Amsterdam) նոր հնչմամբ։ Հայ տառերու նոր կաղապարներ կը սկսի պատրաստել տալ, բայց չատեր չեն օգներ, և միայն Աւետիս Ղըլըչճեց երեւանեցի վաճառականը դրամով և խորհրդով ձեռնտուութիւն կ'ընծայէ, և 1660'ին կը սկսին Ցեսու որդի մը տպագրել։ Բայց գործը չաւարտած 1661 յունուար 22'ին կը մեռնի Մարեցին (ՏՊԱ. 98), և Աւետիս կը չարունակէ և կը լրացնէ, և ուրիշ գիրքեր ալ կը հրատարակէ, ընկերակցութեամբ կաթոլիկ Անդրիանեցի վարդապետին, որ էջմիածնէն ղրկուած էր Մարիցիին մահուանէ ետքը։ Աւետիս իւր իսկ եղբայրը՝ Ուչիի Ս. Սարդիսը նորոգող (§ 1713) Ոսկան երեւանեցի վարդապետը ինդրած էր կաթողիկոսէն գործին գլուխ կանգնելու համար, և Ոսկան իրմէ առաջ փութացուցած էր իւր աշակերտ կարապետը, մինչեւ որ ինքն զանազան տեղեր հանդիպելով նպաստներ հաւաքէ և այնպէս երթայ (ՏՊԱ. 102)։ Այդ ամէն աշխատութեանց հովանաւորող և ոգեւորութիւն ներշնչողը միշտ Ցակոբ կաթողիկոսն էր, որուն գլխաւոր նպատակներէն մին ալ տպագրուած Աստուածաշունչ մը ունենալն էր՝ Սուրբ Գիրքը տարածելու համար։

ՇԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱԼՈՒԱԾՔ

1728. Ցակոբի չինարարութեան արդիւնքներէն յիշած ենք վկայարաններուն նորոգութիւնները (§1704), Շամբուձորու Ս. Աստուածածնի (ՋԱՄ. 24) որ է Դարաչամբու Ս. Նախավկայի ամրողջական վերաշինութիւնը (§ 1722), և վերջէն զանգակատունին աւարտումը (§ 1726), բայց չատ աւելի գործեր ալ լրացուց հետզհետէ, և առանձինն իւր հոգածութեան առարկայ ըրաւ աթոռապատկան գիւղերուն ստացութիւնը ընդարձակել և ապահովել։ Կաթողիկոսութեան սկիզբները Ասպահան ալ գնաց, որպէսզի Շահաբասէն առջի հրաման վառ կոնդակոսութեան ետքը, և մեծ յաջողութիւն գտաւ, և համարձակ ալ քրիստոնէութեան խորհուրդները բացատրեց չհին առջեւ։ Այս առիթը արքունի հրովարտակով ապահովեց էջմիածնի գիւղին տասանորդին վայելումը (ՋԱՓ. Բ. 60—62), և Շահաբասէ յոյժ սիրելի ըլլալով, սոսկէ հրամանագրով հաստատել տուաւ աթոռին իրաւունքները (ՋԱՄ. 24)։ Ցակոբի օրով վանքապատկան գիւղերուն աւելցան Ամիրի՝ Գեղարքունի գաւառին մէջ, Եայճի՝ Մաղուհնի գաւառը, Բոխնխա՝ Անբերդի հանդէպ, Ղարաղօյունլու՝ Ախագածի վրայ, Մելիքի՝ Ապարան գաւառը, Օշական՝ Արագածի ոտքը, Նորագիւղ՝ Երեւանի մօտ (ՎԱՂ. 23), զոր Ցէյ էֆէնտի կը կոչէ Երեւանեցին (ՋԱՄ. 24)։ Իսկ Զաքարիա կը յիշէ Քասաղ, Թեղնևաց, Սանտոյ, Սեւաւեր, Բադռինճ, և Բիւրական գիւղերն ալ (ՋԱՓ. Բ. 62)։ Երկու տարբեր տեղերէ ալ ջուր հանելով և ընթացքը կանոնաւորելով, մէկը Նորգիւղի արուեստը ոռոգելու, և միւսը Մայրաթոռին ներքին կիրառութեան յատկացուց, և նոյն ջուրերէ օգտուեցաւ ջրաղացներ և տիմկեր ալ բանեցնելու։ Երէք տեղ ալ, Մոլլատուրան գիւղը, Դուի այգին և Մանկասար ագարակը, չինեաց ջրթռ ծովակ, այսինքն է մեծ ջրամբարներ, որք ալ սակաւ առնէն ջրփոխնիան այրեաց և սրսրէէց (ՋԱՄ. 24)։ Այսչափ ինչ Ցակոբի բազմօգուտ ձեռնարկներու, և Մայրաթոռի ներքին գործերու վրայ գրելէն ետքը, անցնինք քաղել այն ազուռալի անցուդարձերը, որոնց ասպարէզ դարձան Կոստանդնուպոլսոյ և Երուսաղէմի աթոռները։

ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵՒ Կ-ՊՈԼԻՍ

1729. Երբոր Փիլիպպոս 1653'ին Կ-Պոլիսէ էջմիածին դարձաւ (§ 1709), Ծովհաննէս Մուղնեցին Կ-Պոլսոյ, և Աստուածատուր Տարոնեցին Երուսաղէմի պատրիարքներ էին, երկու տեղերն ալ հաւասարապար խաղաղութիւն էր, և Բեթղեհէմի կալուածին և Ս. Փրկիչի վանքին համար յարուցուած խնդիրները Հայերուն նպաստաւոր կերպով վերջացած էին (ԱՍՏ. Ա. 342)։ Կոստանդնուպոլսոյ մէջ պատրիարքական աթոռին չուրջը յուզուող և զայն իրարու ձեռքէ խլելու խնդիրները լուած էին, ցորչափ կհսկանի էր Փիլիպպոս, որ Մուղնեցին պատրիարքութեան անցուցած էր. բայց հազիւ թէ Փիլիպպոսի մահը լսուեցաւ՝ ձգտումներ զօրացան, գլխաւորապէս եղիազար

Ալթապցիի կողմէն, որուն կ'օգնէր Մարտիրոս վարդապետ Կաֆացի իւր ձեռնասունն ու պաշտպանեալը։ Շուտով կազմուեցաւ նշանաւոր ազգայիններու խմբակ մը, որոց հետ կը գտնուէր Ռուհիկան Վանեցի (§ 1697), և Մուղնեցին վար առնուեցաւ, սակայն յաջորդ չդրուեցաւ, վասնզի իշխանաւորներ իրենց ձեռնտու գտան տակալութեան ձեւը, զոր անգամ մըն ալ փորձած էին 1649'ին, և իրենց վրայ պահեցին պատրիարքական իշխանութիւնը, կաֆացին գործածելով իբր փոխանորդ, որ իրենց անունով եկեղեցական գործերը կատարէ։ Այդ փոփոխութիւնները տեղի ունեցան 1655'ին (ԶԱՐ. Գ. 664), Փիլիպպոսի մահուան տարին չլրացած։ Ակէ առաջ Բուսպաղէմի մէջ վախճանած էր Գաբրիէլ Եթովպացի վարդապետ, Եթովպացւոց կամ Հապէշաց անունը, որ յաջորդ չունեցաւ, և Եթովպացի կրօնաւորները իրենց երկիրը երթալու առիթով, սրբավայրերին և կալուածներին Հայոց պատրիարքութեան յանձնեցին, որոց հետեւորդներն էին արդէն։ Բայց Ցոյներ, որ Մռազատիկի տարիէն իվեր աստիկ հակառակութիւն կը վարէին Հայոց դէմ (§ 1671), պատեհ գտան Հապէշներու մասերը յափշտակել, իսկ Հայերուն չնայ չեղաւ ոչ դատարանով և ոչ Սղեքսանդրիոյ Պափտի պատրիարքին վկայութեամբ իրաւունքներին պաշտպանել, և Աստուածատուր պատրիարք պարտաւորուեցաւ անձամբ Կ-Պոլիս երթալ, ուր հասաւ 1656'ին սկիզբները, տեղականերու իշխանութեան միջոցին (ԱՍՏ. Ա. 344)։ Միևնոյն տարին Կ-Պոլիս դարձած էր Թովմաս Բերբիացին, որ 1644'ին անուանական պատրիարքութենէ մը ետքը՝ Հռոմ փախած էր (§ 1696), և այժմ ետ կը դառնար նորին չփոթութիւններէն օգտուելով, և դիւապատնաւներու և անոնց ծառայող Հայերու ձեռքով պատրիարքութիւնը ձեռք ձգելու համար։ Օսմանեան պետութեան վիճակն ալ ոչ նուազ խառնակ էր նոյն միջոցին, զի Եէնիչէրի և Սիպահի գունդեր ապստամբութիւն յարուցած էին իրենց ռոճիկներուն պատճառով, և Եպարքոսներ և նախարարներ զոհ կ'երթային իրենց պահանջումներուն։ Հազիւ 1656 մարտ 8ին քիչ մը հանդարտութիւն կրցած էր պատրաստել մեծ Եպարքոս Ջաւուշ փաչա, այլ ամիսէ մը այն ալ կը մեռնէր, և իրեն կը յաջորդէր Պօյնուէյրի Մէհէմմէտ փաչա, և Եպարքոսութեան տեղակալ Նուսուֆ փաչա՝ ապստամբներէն չորս հոգի ձեռք անցընելով կը գլխատէր մայիս 8'ին, և անով ապստամբութիւնը կ'ընկճուէր (ՓՈՒ. 261)։

ՅԱՅՈՂՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ

1730. Աստուածատուր պատրիարք, Կ-Պոլսոյ պատրիարքարանի ձեռնտուութենէ յուսահատելէ, Եղիազար Ալթաբացիին հետ համաձայնութեան կը մտնէր, վրատահելով անոր վարչականն և դրամական կարողութեանց վրայ, և կը խոստանար յաջողած ատենին երեսաղէմի գործերը անոր յանձնել փոխանորդի անունով։ Իրօք ալ ուղղակի նոր Եպարքոս Պօյնուէյրիին կը դիմէին, Ռուհիկանի միջնորդութեամբ, և կը ստանային Հապէշներու սէփականութիւնները Հայոց յանձնելու հրովարտակը։ Եղիազար զայն առած կը փութար Երուսաղէմ, և կը տիրանար խնդիրի ներքեւ եղող կալուածներուն՝ և կը կարգադրէր Հայոց իրաւունքները Բեթղեհէմի տաճարին վրայ (ԱՍՏ. Ա. 349)։ Այդ պարագային կը պատմուի Եղիազարի Հայոց վանքին մէջ պահուած 200,000 դահեկանի արժողութեամբ ոսկի և արծաթ դրամներ գտնելը, զորս Գրիգոր Պարոնտէր ծածկած է եղեր, և ծածկագրութեամբ գիրքէն մէկ և սպիտակ մոմ անուններով տետրներու մէջ նչանակած։ Ինչ ալ ըլլան դիւտին պարագաները, Եղիազար արդէն դրամական կարողութեան տէր, ասով անգամ մըն ալ զօրացաւ, և գումարները մասամբ գործածել սկսաւ, և մասամբ գաղտնի տեղեր պահեց (ԶԱՐ. Գ. 666)։ Բայց յաջողութիւնը չատ չտեւեց, զի 1656 սեպտեմբեր 5'ին Պօյնուէյրին ալ փոխուեցաւ, և տեղը անցաւ Քէօբրիւլիւ Մէհմէտ փաչա, լիազօր իշխանութեան պայմանով, և անկէ օգտուելան Ցոյներ՝ նոր հրովարտակ մը ընդունիլ իրենց նպաստաւոր, Հապէշաց սէփականութիւնները գրաւելու, և Եղիազարը իբր յանցապարտ ձերբակալելու։ Աստուածատուրի դիմումներ արդիւնք չունեցան, ընդհակառակն Ցոյներ նոր ամբաստանութիւններ բարդեցին

եղիազարի և ընդհանրապէս Հայոց վրայ, և Ս. Յակոբն ալ գրաւելու հրամարտակ ստացան։ Եղիազար պարտաւորուեցաւ թաքչիլ, և Աստուածատուր յուսակտուր երուսաղէմ դարձաւ այն տեղ աչխատելու համար։ Երկուքը մէկտեղ չանեցան երուսաղէմի կուսակալ Հասան և Գազայի կուսակալ Հիւսէյին փաչաները, որոնք անմիջական գործադրութիւնը յապաղեցին։ Ասոնց ձեռքով կրցան չահիլ Դամասկոսի մեծ կողմնակալն ալ, Թիյարօղլու կոչուած, որ առաջ եղիազարը բանտարկած էր, բայց ապա թողուց, անոր ձեռքէն ստանալով Ս. Յակոբայ մայրավանքին բանալիները, զորս իր մօտ իբր աւանդ պահեց, և վանքին դուռներն ալ կնքեց, բայց միանգամայն Հայոց նպաստաւոր գիր ալ ղրկեց Ռէօթրիւլիին։ Ասկէ առաջ Աստուածատուր և Եղիազար ճանապայ հանած էին Դաւիթ Բերիացի եպիսկոպոսը, և անոր ձեռքով բաւական գումար ալ յղած Իւնհիյանի, որ երուսաղէմի փոխանորդութիւնը էր ստանձնած, պատշաճը հոգալու։ Բայց թէ Դաւիթի ու Իւնհիյանի դիմումը, և թէ Թիյարօղլուի գիրը օգուտ չունեցան, և Ռէօթրիւլիւն կրկնեց իւր հրամանը Ս. Յակոբը Յոյներուն յանձնելու, և Եղիազարը իբր գլխապարտ կ-Պոլիս յղելու։ Այս պատճառով Հայերը իրենց վանքէն հեռացուած թափառական կը մնային երուսաղէմի մէջ, իսկ Եղիազար ձեռք չիյնալու համար՝ Դամասկոսի և Գազայի և Եգիպտոսի կողմերը կը դիզգիզէր, տեղ մը դադար չունենալով։ Այսպէս անցաւ ձմեռը, և նոր տարւոյ 1657'ի գատկին, որ մարտ 29'ին կը հանդիպէր, Թիյարօղլուն առժամապէս ներեց Հայերուն, գատիկնին Ս. Յակոբի մէջ ընել, նորէն բանալիները ետ առնելու և դուռները կնքելու պայմանով։ Այս պատճառով Ռէօթրիւլին աւելի զայրացաւ Թիյարօղլուի դէմ, և կրկնեց իւր ոճրի հրամանները, որով չփոթ կացութիւնը կը չարունակէր երուսաղէմի մէջ։

1731. Իսկ կ-Պոլսոյ մէջ տեղակալութեան ձեւը նորանոր անկարգութիանց դուռ կը բանար։ Պատրիարք չգանուելուն վեց թաղերուն կամ վեց մեծ եկեղեցիներուն աւագները ուզածնուն պէս կը գործէին և իբարու հետ կը կռուէին, և կաֆացին որ իբր պարզ փոխանորդ կը գործէր, այժ չունէր զանոնք զսպել։ Աւիթէն ջանաց օգտուիլ Ղազար Սեբաստացի աբեղայ մը, որ առաջ կ-Պոլիս էր ապրած, ետքէն էջմիածին գացած, և չկըրնալով Փիլիպպոսէ և Յակոբէ վարդապետութիւն ստանալ, կ-Պոլիս էր դարձած, և կաֆացիին յարելով, վերջապէս անկէ վարդապետութեան աստիճան առած էր։ Երկուքը մէկտեղ էջմիածնի վրայ չարախօսելու կը հետեւէին, անուղղակի կերպով նախորդ պատրիարք Մուղնեցին վատաբանելու համար, որ պատրիարքութենէ ելնելէ ետքը (§ 1729) էջմիածին էր դարձած։ կ-Պոլսոյ մէջ Ս. Նիկողայոսի և Ս. Աստուածածինի քաղերը՝ կաֆացիին և Ղազարին կեդրոնն էին դարձած, ուր եկեղեցիներու մէջ իրենց չաղակրատութիւնները կը խօսէին, մինչեւ որ ժողովուրդներ զայրացան, աւելի Ղազարի վրայ, և զայն ձեռք ձգել ուզեցին։ Իսկ երբ Ղազար պահուըտեցաւ, իրենք խռովարար ամբաստանելին, Ս. Նիկողայոսի քահանաներուն և թաղեցիներուն սպառնացան, բայց ասով ալ չյաջողեցան։ Այդ միջոցին կ-Պոլիս կը գտնուէր Կիլիկիոյ կաթողիկոս Թորոս, որ 1653'ին յաջորդած էր Ներսէս Սեբաստացիին, այն որ Փիլիպպոսի հետ երուսաղէմի խաղաղութիւնը կնքած էր (§ 1690)։ Թորոս ալ Սեբաստացի էր ինչպէս կը վկայէ Ռէօմիւրճեան, գրելով Թորոս Սեբաստացի կաթողիկոս կիլիկիոյ գաթողիկոս Թորոս, որ 1653'ին յաջորդած էր Ներսէս Սեբաստացիին, այն որ Փիլիպպոսի հետ երուսաղէմի խաղաղութիւնը կնքած էր (§ 1690)։ Թորոս ալ Սեբաստացի էր ինչպէս կը վկայէ Ռէօմիւրճեան, գրելով Թորոս Սեբաստացի կաթողիկոս կիլիկիոյ գաթողիկոս (Ձէվ. 51), բէպէտ ուրիշներ Սսեցի կը գրեն (09 ՕՐԱ. 283)։ Սա երկարակեաց չէ եղած, և 1657 ապրիլ 29'ին վախճանած է կ-Պոլիս եղած միջոցին, այլ որոշ չենք գտներ անոր մահուան պարագաները։ Միայն կը պատմուի թէ Մարտիրոս կաթողիկոսը, որ 1657 փետրուար 8'ին սկսող մեծ պահքին սկիզբը երուսաղէմ էր գացած, ճիշդ ապրիլ 29'ին կ-Պոլիս դարձաւ, և Յակոբայ Սեբաստացիին հետ Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ Թորոսի յուղարկաւորութեան գտնուեցաւ, որ թաղուեցաւ Պալըքլըի գերեզմանոցը, ուր կը տեսնուի տակաւին իր գերեզմանը նորոգեալ տապանագրով։ Յակոբ Սեբաստացին յաջորդեց կ-Պոլսոյ

եկեղեցիներէն իւրաքանչիւրին հարիւրական դատուչ նուիրելով, և հրովարտակն ստանալով կ'երթայ Սիս, և կ'օծուի 1657 յունիս 17'ին։ Այս առթիւ Ղազար ալ կ-Պոլիսէ կը հետանայ հայաստանին յարելով, և անչուշտ անոր կաթողիկոսութեան օգնած ըլլալուն համար անմիջապէս եպիսկոպոս ալ կը ձեռնադրուի Տիվրիկի վիճակին վրայ (ՁԱՄ. Գ. 669), թէպետեւ քիչ ետքը նորէն կ-Պոլիս կու գար, նոր տնձգութեանց սկսելու՝ աւելի զօրութեամբ։ Կաֆայեն ալ իւր քաղաքն էր գացած այն կողմէն միջնորդութիւն ճարելու յոյսով։

Ս. ՅԱԿՈԲ ՅՈՑՆԵՐՈՒՆ

1732։ Հայերուն այժր նուազած ըլլալուն Թիւրօղլուն անոնց կողմէ չահի ակընկալութիւնն ալ քիչցած տեսաւ, մանաւանդ զատկին առթիւ բրած թոյլտուութեամբը Թէօփրիւլին զայրացուցած ըլլալը բաւժել ալ ուզելով, Հոգեգալուստին օրը 1657 մայիս 17'ին, Ս. Յակոբի բանալիները յանձնեց Յոյներուն, որոնք անարդել գրաւեցին Հայոց վանքը, սպասներուն և ինչքերուն տիրացան, մեծ դուռը Հայոց դէմ գոցեցին, և և կողմնակի անցքէ մը ներս ելլել. ասնարգ թաղի մը մէջ տեղ ցուցուցին մնալ ուզողներուն, և այլևս չափ չկար Հայոց դէմ ըրած նախատինքներնուն և ցուցած յոխորտանքներնուն (ՁԱՄ. Գ. 670)։ Բայց երբ լրացած կ'երևէր Յոյներու չաղխանակը, յանկարծական պատահար մը կերպարանափոխ ըրաւ կացութիւնը։ Մեծ դաւաճանութիւն մը յայտնուեցաւ կ-Պոլսոյ մէջ, որուն պատճառով 4000 հոգի սպանուեցան և դիակներն ծով նետուեցաւ։ Յոյներու Պարթևնիոս Գ պատրիարքին գիրերն ալ ձեռք ինկան, և յանցապարտ դատուելով Փարմաքքարուն կախուեցաւ իր պաշտօնական տարազով, և դիակը ծով նետուեցաւ (ՓՈՒ. 263)։ Ուրիշ Յոյներ ալ փնտռուեցան և ցրուեցան, և նոյն իսկ Երուսաղէմի Յոյն պատրիարքն ալ պարտաւորուեցաւ խոյս տալ և թաքչիլ։

1733, Այդ արկածէն քիչ առաջ, Թէօփրիւլին միտք ունէր Հայերուն գործերը կարգադրել, ուստի ուխտած էր պատրիարք մը դնել, և տեղականները բանտարկել տուած։ Ասոնք 10,000 դահեկանի տուգանքով ազատած էին, և տարեկան 100,000 փող պատրիարքարանի տուրքը 140,000 հազարի բարձրացնելով ընտրութիւնը յետաձգել տուած կը կարծէին։ Բայց Թովմաս Բերբերացին մեծ ևպարքոսին մօտ երթալով Ադրիանուպոլիս, և պատրիարքարանի տուրքը 400,000 փողի բարձրացնելով, պատրիարքութեան հրովարտակ կը ստանար, և առջևէն իրր իւր փոխանորդներ կր ղրկէր Նիկողայոս Թուլկուրանցի ու Դաւիթ Բերբերացի վարդապետները, և Աստուածատուր Վանեցի երէցը։ Ասոնց ետևէն ինքն ալ կը հասնէր կ-Պոլիս 1657 մայիս 13'ին, եպարքոսութեան տեղակալ Սինան փաշայի հետ։ Թուականները բաղդատելով կր տեսնենք, որ այդ գործը տեղի կ'ունենար Ս. Յակոբի գրաւումին հետ միևնոյն օրերը (§1730)։ Յիշեալ Աստուածատուր երէցը նոյն ինքն Թրլթըլ մականունեանն է, այսինքն է Թոխմախաօս, յախուռն և ձեռներէց քահանայ մը, որուն անունով կուսակցութիւնն ալ Թրլթրլեան կոչուեցաւ, և Թովմաս Բերբերացիին կողմնակից ըլլալուն, լատինասիրութեան և օտարամոլութեան կերպարանը առաւ վրան, թէպէտ իսկապէս պարզ կուսակցականութիւն էր պատահատումներուն չարժառիթը։ Անհնարին չփոթութենանց միջոց մը կը ներկայէ 1657 տարւոյ երկրորդ կէսը։ Վերագոյնդ յիշեցինք դաւաճանութեան մը յայտնուիլը և Յոյն պատրիարքին մահապարտութիւնը և Յոյներու լքումը։ Թերևս այդ պատճառով Հայերուն նպաստաւոր վիճակ մը ստեղծուէր, բայց Թովմասի հանած փորձանքը ներքին պատահատումը ամեցուցած էր։ Տեղականներու խումբը 24 հոգիներու ածած էր, իրեն հովանաւոր ունենալով Իւսինճանը, որոնցմէ 15'ին անուններն յիշուած են, և են, Խոջայ Տաւութ, Սէֆեր Խոճայի, Շէհրի Արապիի, Պէկլէր էքմէքճի, Դրիզոր Քէրէստէճի, Յարութիւն Եաղճի, Սիմոն Պօտուր, Յարութիւն Պալի, Համի Կոստիկ, Ֆէրհատ օղլու, Մկրտիչ, Մուրատ, Էմիքիկ, և երկու երէցներ՝ Սիմէոն և Քիւրքճիւ օղլու։ Թեև Յոյներու անկումով Հայերը չանէին, գլխաւորապէս Ս. Յակոբի խնդիրին մէջ, սակայն միւս կողմէն պետական ապստամ-

բութիւն մը կազմած էին Ասիակողման 18 հուսակալները, պլուինին ունենալով Ապազա Հասան փաչան, և յայտնապէս Ջէօբրիւլիին անկումը պահանջելով (ԺՈՒՒ. 265)։ Ապստամբներէն մէկն էր Թիյարօղլուն, և նեղիազար Ալնթապցին ալ անոր մօտ կը գտնուէր, Ս. Յակոբի վանքը պաշտպանելու համար, որուն Թիյարօղլուն կը խոստանար՝ Ջէօբրիւլիին տապալելէ ետքը դործ կարգադրել։ Ալնթապցին արդէն Ջէօբրիւլիէն հալածուած (§ 1729), կրկին ատելի դարձած էր Թիյարօղլուին ապաւինած ըլլալովը, որով թէ Հայերուն դործերը, և թէ մանաւորապէս Ս. Յակոբի դործը, պաշտպանութիւն չէին գտներ կառավարութեան առջեւ։ Ռուհիէան և տեղականներէն ոմանք Ադրիանուպոլիս դիմեցին Թովմասի պատրիարքութեան դէմ բողոքելու, բայց հոգոծով փանէց վռնտուեցան, և Թովմաս ետեւնէն երթալով իր պաշտօնին համար նոր հաստատութիւն ստացաւ, և այնպէս կ-Պոլիս դարձաւ, բայց ազդը չէր ուզեր զայն ճանչնալ, և ոչ ալ հրամաններր կ'ընդունէր։ Իսկ Թովմաս ալ Գումքապուի պատրիարքարանն իսկ մտնել չէր համարձակեր, և առանձնացեալ կ'ապրէր Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյն ժամատունը, չրջապատուած Պօսթանճի գունդէն պահակներով, 20 քսակի վարձքով (ՁԱՄ. Դ. 672)։ Այս կացութեան մէջ կ'անցնէին 1657 տարւոյ վերջին, և 1658 տարւոյ առաջին ամիսները։

1734. Հայերուն համար մեծ փորձանք մըն էր Ս. Յակոբի Ծոյներէն գրաւուիլը, բայց կարծես թէ այն կը մոռցուէր Թովմաս Բիւ-

ԹՈՎՄԱԱՒ ՎԱԽՃԱՆՔ

բիացիին բռնակալ պատրիարքութեան Հանդէպ, որ ազգին կամքին հակառակ կաշառքի զօրութեամբ և պետական բռնութեամբ իշխանութիւնը ձեռք անցուցած, կեղեքմանց և անիրաւութեանց կը ձեռնարկէր, յանձնառու եղած գումարները ճարելու համար։ Մանաւոր պարագայ մը ժպգոնութիւնը կ'աւելցնէր, դի Թովմաս ձեռք ձգած հրովարտակին մէջ երեսաղէմն ալ իրր իրեն հնթարկեալ անցընել տուած էր։ Տեսնելով որ Թովմաս կաշառքի ոյժով պաշտպանութիւն կը գտնէ կառավարութեան մէջ, հակառակորդները ստիպուեցան ուրիշ ձէնքով զայն տապալել, և յօդուտ գործածելով Թովմասի տասր տարիներ Հռոմ մնալը, կատարելապէս Ֆրէնկներու հետ համաձայնիլը, և անոնց տարազն ու կնոցագն ալ ընդունած ըլլալը, զայն կասկածելի ներկայեցին կառավարութեան աչքին, և վկաներ ալ ներկայացուցին Թովմասի Հռոմի մէջ ունեցած ընթացքը հաստատելու։ Սինան փաչա նպարքոսութեան տեղակալ՝ դատական քննութեան նստաւ, և Թովմասը պարտաւոր գտնելով, բանտարկեց զայն Գանդրգուլու կոչուած, մահապարտներու արգելարանը, իր փոքրաւոր Մելխոն աթոռային հետ, 1658 յունիս 3'ին (ՁԱՄ. Դ. 673)։ Սակայն ազգային-ներ հետամուտ էին, որ Թովմաս բոլորովին իսկ մէջտեղէ վերնար հետաւոր ազդեցութեամբ կամ որեւէ կերպով, դի գիտէին թէ անհնար չէր կաշառքի զօրութեամբ բանտէն ալ իշխանութեան դառնալ։ Ուստի նորէն պէտք եղած ճիդերը չարունակեցին, և վեց թաղերու, այսինքն Գումգապու, Սամաթիա, Պալաթ, Ղալաթիա, Հիսարտիպի և Զինիլիհամամ թաղերու եկեղեցականներն ու իշխանները, այս անգամ միաձայնութեամբ, մուրհակ ալ կնքելին ըլլալիք ծախքերը վճարելու, Թովմայէ պահակներուն խոստացուած վարձքը առաւելօքր փոխարինելու, և պետական պաշտօնեաներու պէտք եղած հատուցումներն ընելու։ Գործին ոյժ տալու համար, իրենց կողմը չանհգան նաեւ Աստուածատուր պատրիարքը, որ Ս. Յակոբին Ծոյներուն յանձնուելէն ետքը, տեղւոյն վրայ յաջողութիւն չգտնելով մայրաքաղաք էր եկած, Ս. Յակոբի սեփականութեան համար պէտք եղած հրովարտակն կառավարութենէն ստանալու համար։ Աստուածատուր պատրիարք ուշնուրուչը երեսաղէմի տուած, կ'ուզէր կ-Պոլսոյ աթոռին խնդիրներուն չխառնուիլ. նոյն միտքով գրած էր Ալնթապցին ալ Թիյարօղլուի բանակէն, թէ գլխաւոր խնդիրը Ս. Յակոբն է, և ոչ պատրիարքի անձը։ Սակայն կ-Պոլսոյ հասարակութեան աչքին երեսաղէմ հեռու կր մնար, և բոլոր մտադրութիւններն գրաւուած էր Թովմայի բռնակալ և կաշառապին պատրիարքութեամբը։ Այս

պատճառով Ալֆթաղդինին նամակը նկատի չառին, և Աատուածատուրը համոզեցին թէ Երուսաղէմի գործը յաջողութիւն չկրնար գտնել ցորչափ Թովմաս կը մնայ, և այսպէսով անկէ ալ Թովմայի դէմ դատապարտութեան և նզովից գիր առին, և կրկին զօրացած՝ ամբաստանութիւնները սաստկացուցին. այնչափ որ Սիոնի փաչա, եպարքոսութեան տեղակալը, Թովմայի մահապարտութեան հաւանեցաւ, առանց գործադրութիւնը հրապարակաւ կատարելու։ Ըստ այսմ դեղատուութեամբ մնաւ Թովմաս բանտին մէջ, իբր թէ ֆրէնկ մնած լլլար, և 1658 օգոստոս 1 կիրակի առաւօտ դիակը բանտին դրան առջեւ նետուեցաւ ի ձաղանս, ըստ սովորութեան. և երկու օր այսպէս մնալէ ետքը, օգոստոս 3'ին երեքշաբթի օր ծով նետուեցաւ Ոսկեղջուրի կողմը։ Որչափ ալ ազգ ըլլայ Թովմայի անձին վրայ կատարուած աղետալի վրէժինդրութիւնը, ալ աւելի տգեղ պէտք է դատուի Թովմայի եպերելի փառասիրութիւնը, որ նենգութեամբ և կաչառքով հանրութեան կամքին հակառակ աշխատեցաւ պատրիարքութեան տիրանալ, և բռնութեամբ զայն պահել։ Եթէ փորձանքի հանդիպեցաւ, գրգռութիւնը իւր կողմէն տրուեցաւ։ Անոնք որ Թովմայի նախընթացարար կալանոսի հետեւած ըլլալէն (§ 1693) և տասը տարի Հռոմ ապրելէն, բոլոր այդ անցուդարձը Թովմայի հռոմէական ըլլալուն կը վերագրեն, և ազգայիններուն ըրածը հռոմէականութեան դէմ հալածանք մը կը ցուցնեն, պէտք է դիտուն, որ հռոմէականութիւնը աւելի անարգուած է Թովմայի վատ և չհասէր և փառասէր ընթացքովը, քան իրեն ընդդիմադիրներուն հակառակութեամբը։ Միւս կողմէն ալ պէտք է համոզուին, թէ Հայութիւնը լատինասէր և հռոմէական չէ ըլլար, ինչպէս կը սիրեն կարծեցնել։

ՊԱՐՏՔԵՐՈՒ ԽՆԴԻՐՆԵՐ

1735. Թովմայի պատրիարքութիւնը, թէպէտ իբր 15 ամիս տեւողութիւն ունեցած էր, բայց իրապէս անուանական մնացած էր, գրեթէ նման իւր առաջին պատրիարքութեան (§ 1696), վասնզի միեւնոյն միջոցը պատրիարքարանը տեղակալներուն ձեռքն էր, թէպէտ յայտնի չէ թէ ով եղած էր իրենց կողմէն եկեղեցական փոխանորդը կաֆայիին մեկնելէն ետքը (§1730)։ Երբոր Թովմայի մեռնելով պատրիարքի անուն կրողն ալ պակսեցաւ, տեղակալներ աւելի համարձակութեամբ գործերնին սկսան չարունակել, օգտուելով դարձեալ կաֆացիին գործակցութենէն, որ նոյն միջոցին կաֆայէ կ-Պոլիս կը դառնար։ Անոր յորդորներով նորէն ձեռք առնուեցաւ Ս. Յակոբի սեփականութեան խնդիրը։ Այդ նպատակով կաֆացին ընկերներով Քէօրբիւլիին հետ տեսակցելու գնաց, երբ նա ալ Մաճառներու պատերազմէն կը դառնար. բայց խիստ ու զայրացկոտ ընդունելութեան հանդիպելով, գացողները հազիւ կրցան ազատօրէն ետ դառնալ։ Թրլքրլեանք այդ պարագային քաջալերուելով նոյն ինքն Թրլքրլ երէցին գլխաւորութեամբ Քէօրբիւլիին տեսակցութեան գացին հոկտեմբեր 14'ին, իրենց հակառակորդները ամբաստանելով, Թովմայի մահը մէջ տեղ դնելով, և այդ իրենց եղած ծախքերուն համար իրենց նեղուիլը աւելցնելով։ Քէօրբիւլին ատոնք ալ ետ դարձուց, կ-Պոլիս հասնելէն ետքը գործը նայելու խոստումով, և ահա երրորդ պատգամաւորութիւն մը կու գայ Իւնիջանի գլխաւորութեամբ, և տեղակալներէն երթր հոգիներու ընկերակցութեամբ, որոնք Քէօրբիւլիին կը հանդիպին Զէքմէճէ կոչուած աւանը, բայց կը ձերբակալուին, և կ-Պոլիս բերուելով կը բանտարկուին։ Թրլքրլեանք քաջալերուած՝ ամբաստանութիւնները կ'ընդարձակեն և կը ծանրացնեն, բոլոր տեղակալներու ձամար ձերբակալութեան հրաման կ'ելլէ, նոյն ինքն եպարքոսութեան տեղակալը կ'ամբաստանուի և կը յանդիմանուի, բայց վերջապէս կը յաղթէ նորէն չահեղական մեծ միջոցը, որ է արծաթը, և ամէնքը կ'արձակուին, և այս անգամ Թրլքրլեանք կը սկսին վախնալ որ չվտանգուին։ Երկու կողմերուն մէջ ծանր վէճեր կը յուզուին, Թովմայի դէմ գործողութեանց աւելի եղած ծախքերուն և խոստացուած գումարներուն վճարման համար, որոնք հաւէ-բաւէ տալով գումարներ կը կազմէին, և նախընթաց պայմանադրութեան համեմատ հաւասարապէս վեց խազերու վրայ կը ծանրանային (§

1733)։ Այլ այժմ Թբլիսլանք կը խուսափէին և գլխաւորապէս Ս. Սարգիսի և Զինիլիհամամի խաղերները, որոց մեծամասնութիւնը Թբլիսլանց կողմէն էր։ Այս կերպով մէկ կողմէն ներքին վէճեր կը յուզուէին, և միւս կողմէն բոլոր հանդանակութիւնները կը չարունակուէին, զի հայարքունական հրամանը վճարումը անխափան ամէնուն վրայ ծանրացուցած էր (ԶԱՄ. Գ. 678)։ Իսկ երուսաղէմի գործը նորէն մոռացութեան տրուած էր, կառավարութիւնն ալ Հայերուն գործին չատ մտադիր չէր, զի Ախիկոզման ապրատամբները հետզհետէ մայրաքաղաքին կը մօտենային (§1731)։ Մուրթէզա փաչա անոնց դէմ ղրկուեցաւ, բայց յաղթուեցաւ 1658 դեկտեմբեր 11'ին Ըլկրնի ճակատամարտին մէջ։ Նա չյուսահատեցաւ, և նոր գունդեր դիմաց, սուտ հրատարակութիւններով ապստամբներուն մէկ մասը չահեցաւ, հրամատարնին Ապազա Հասանը մօտը բերել տուաւ, և սիրալիր ընդունելութենէ և մեծահաց կոչունքէ ետքը, զայն ապահնել և բոլոր հետեւորդները կոտորել տուաւ 1659 փետրուար 17'ին։ Այսպէս ընկճեցաւ ապստամբական չարժումը (ԺՈՒ. 265), և այդ առթիւ ձերբակալուեցաւ ու գլխատուեցաւ Թիլթօղլուն ալ (ԱՍՏ. Ա. 362), երուսաղէմի բարեկամ կուսակալը (§1733)։

ԵՂԻԱԶԱՐ ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾ

1736. Եղիազար Այնթապցին, որ տարիէ իվեր Թիլթօղլուի ձեռքին ներքեւ ապստամբներու բանակին հետ էր, քանիցս մայրաքաղաքի գլխաւորներուն գիրեր և գումարներ հասուցած էր Ս. Յակորի ինդիրին համար, առանց արդիւնք մը տեսնելու։ Ապստամբաց հետ գտնուելուն համար կառավարութենէ վախնալով, վարանոտ վիճակ մը ունէր. բայց վերջապէս որոշեց խոյս տալ Թիլթօղլուի քովէն, և որոշ գիր մըն ալ չստանձնելով և հրապարակ չելլելով, անծանօթ բնակիլ կ-Պոլսոյ մօտերը, իրեն նախանձաւոր Մէհմէտ ազայի մը պարտէզին մէջ։ Եղիազար այդպէս ապրեցաւ 1658 նոյեմբերէն մինչեւ 1659 փետրուար, եւ միայն կաֆացին և քիչեր գիտէին իրողութիւնը և լսելեայն կ'աշխատէին, թէ՛ Ս. Յակոբի վանքին, և թէ Եղիազարի ապահովութեան համար։ Բայց վերջապէս Թբլիսլանք լուր առին, և Շէկ Գաապար մը կառավարութեան իմացուց, խնդրակներ ելան, և Եղիազար ձերբակալուած մեծ և սպարքոսին առջեւը հանուեցաւ, որ չատոնց ետեւէ էր զայն ձեռք ձգել և դատապարտել։ Եղիազար ճարտար պատասխաններով չանաց չիջուցանել Բէօբրիւլիին զայրոյթը. որ թէպէտ զգածուեցաւ, բայց չհանդարտեցաւ, և միայն հրամայեց չղթայակապ բանտարկել Եէնիչէրիներուն պահակատունին մէջ։ Զիւնապատ և ցրտաշունչ գիշեր մըն էր, 1659 փետրուար 18'ին, երբ Եղիազար բանտ առաչնորդուեցաւ. Մեծապահոց առաչին ուրբաթին։ Ոչ ոք համարձակեցաւ անոր մօտենալ, միայն երեմիա Բէօմիւրճեան, պահապաններուն հաճեցնելով մօտ գնայ. ելոց Ե լոգոյց, զի մօտալուտ մահապարտութեան նշան էր այդ ընթացքը։ Եղիազար անոր յանձնեց իւր կնիքները և վրան եղող 500 ոսկւոյ ծրարը, որ Ռուհիջանին յանձնէ, իբրեւ Երուսաղէմին գործակալի կամ փոխանորդի։ Օրեր անցան և մահապարտութեան կասկածը չձմարտուեցաւ, մանաւանդ զգուշութիւններն ալ թուլցան, և Եղիազարի այցելութիւններ ներուեցան։ Սա ոգի առած առաչին սարսափէն, սկսաւ յանձնարարել որ բոլոր աշխատանքնին Ս. Յակոբի համար գործածեն. և իրեն համար չհոգան. մինչեւ իսկ Կաֆացիին նամակ գրելով յայտարարեց, որ ոչ կրնայ հանել զիւ ոտի, ոտանց կոխելոյ հող պահել աղաթռնեան Ս. Յակոբայ, նշխարք յԱթոռածոյ։ Բայց Եղիազարի համար աչխատողներ չկատեցան, դիմումները չարունակեցին, և վերջապէս Բէօբրիւլին հրամայեց Եղիազարը արձակել, մինչեւ իսկ ոտանց էրէւ փոքեանոյ, որ առաչին տեսակցութենէն մեսացած տպաւորութեան պիտի վերագրուի։ Եղիազար Գալաթիա եկաւ 1659 մարտ 22'ին, Մեծ պահոց վեցերորդ երեքչաբթին, 32 օրուան չղթայակապ բանտարկութենէ մը ետքը (ԶԱՄ. Գ. 681)։

1737. Հազիւ թէ Եղիազար բանտէ ազատեցաւ, մտադրութիւն դարձուց Ս. Յակոբի գործին հետեւիլ, և կ-Պոլսոյ մէջ տիրող կացութիւնը բաւարար գտնելով՝ նորոգ իշխանութիւնը՝ իրեն տեսութեամբ

ալ ապօրինի բան մըն էր, մանաւանդ որ Երուսաղէմի համար հոգ տարած չէին, և իրենց հովանաւորող Յուհիջանի հետ, իրենց կամքին ծախսած էին այն գումարները՝ զոր ե-ղիազար անոր հասուցած էր Երուսաղէմի խնդիրները վարելու համար: Թրլքիւնանք արդէն ընկճուած էին Թովմասի մանուկէ ետքը, և մեծ եպարքոսին առջեւ ալ հա-մարձակութիւննին կորսուած, ուստի կա-մայ ակամայ մասնակցեցան հասարակաց պարտք կոչուած գումարին մնացորդին վճարման (§1733), և այսպէս այդ խնդիրը փակուեցաւ չուտով: Բայց նոր խնդիր մը բացուեցաւ դատկին օրը, ապրիլ 3'ին, Տաճիկներէ փոխ առնուած 14,000 դահեկանի վճարման համար, զոր սեղականներ ծախսած էին Թովմայի ապահովութիւնը փութացնելու: Տեղակալներ իշխանաբար կ'ուզէին զայն Երուսաղէմացւոց վճարել տալ, այլ Աստուա-ծատուր պատրիարք և Մարտիրոս կաթողիկոս վրանէրնէն նեստորին, վճարելու անկարողու-թիւնին յայտնելով: Ան առնն գարձան եղիազարի վրայ ծանրանալ, բայց նա ընդ-հակառակն սկսաւ սեղականները ամբաս-տանել, Յուհիջանն ալ միաբերդ, թէ Երու-սաղէմի գումարները իրենց կամքին ծախ-սեցին, և ինքն սկսաւ իր տուած գու-մարները պահանջել անոնցմէ: Կառավա-րութեան առջև ալ նոյնը կրկնեց, երբ տե-ղակալները գործը դատարանի հանեցին, և ժողովուրդին մէջ ալ նոյն խօսքերը տա-րածեց, մինչեւ որ ամէնքը սեղականներու իշխանութիւնը վերջացնելու համար, ե-ղիազարը պատրիարք անուանել ուզեցին, բայց եղիազար յանձնառու չեղաւ, և ընտ-րելի ներկայացուց կաֆացին: Ժողովուրդն ալ հաւանեցաւ և պաշտօնապէս կառավա-րութեան ներկայացուց, և 1659 մայիս 25'ին, կարմիր կիրակիի երկուշաբթին, Մարտիրոս վարդապետ կաֆացի, դեռ եպիսկոպոս չձեռնադրուած, պաշտօնապէս պատրիարք հռչակուեցաւ, և սեղականներու իշխանու-թիւնը բոլորովին դադրեցաւ, Մուղնեցիին իյնալէն չորս տարի ետքը: Այս առթիւ ե-ղիազար 10,000 դահեկան վճարեց պատ-րիարքութեան ծախքերուն համար, բայց

ՄԱՐՏԻՐՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ

տարեկան տուրքը միայն 140 հազար վճար-ուեցաւ, ինչպէս տեղակալներ յանձնառու եղած էին, և ոչ 400 հազար ինչպէս Թով-մաս աճեցուցած էր (§1731): Միանգամայն պատրիարքին հրովարտակէն վերցուեցաւ Երուսաղէմ ալ անոր ենթարկեալ լլլալուն յիշատակութիւնը, որ Թովմասի հրովար-տակին աւելցուած էր (§1733):

1738. Կր մնար 14,000 դահեկանին խնդիրը, որուն համար եղիազար, Աստուածա-տուրի և Մարտիրոսի հետ, մինչև իսկ մեծ եպարքո-սին ողորմելի վիճակին և տեղակալներու դէմ, որուն առջեւ ամէնք պարտաւորուե-ցան խոստովանիլ թէ Երուսաղէմի գրաւներ ուրիշ նպատակի գործածուած են: Բայց Քէօրքիւլին եղիազար համաձայնութեան յորդորեց, նկատելով որ Յուհիջան վատա-կոտ է յոբտանէ (ԶԱՄ. Գ. 683): Այս ան-գամ կաֆացին ալ իր պատրիարք, իր ժողովուրդին կողմը սկսաւ խօսիլ, եղիազարի և Աստուածատուրի դէմ: Բայց եղիազար անողոք մնաց, մինչև որ օգոստոսի մէջ իրաւախոհութիւնն եկան, 14,000'էն 4'ը Երուսաղէմի, 6'ը վեց թաղերու, և 4'ը տե-ղակալներու վրայ բաշխելով: Այս անգամ ալ Հիսարտիսի, Զինիլիհամամ, և Պալաթ թաղերու քահանաները սկսան դժուարու-թիւն յարուցանել, զոր կաֆացին անդամ մը հնազանդեցուց քահանայապետութիւնէ զադրեցնելով: Բայց խնդիրը նորոգուե-ցաւ, և դիմադրողներ եպարքոսական հրա-մանագիր մըն ալ առին և եկեղեցւոյ մէջ կարդալ ուզեցին, որուն պատրիարքը ընդ-դիմացաւ: Այդ պատճառով եպարքոսական տեղակալութեան կողմէն Մարտիրոս պատ-րիարք և վեց պաշտօնական ազգայիններ բանտարկուեցան ալ: Բայց վերջապէս ազ-դին մեծամեծները տեսնելով որ չնչին պատ-ճառով խնդիրներ կ'երկարաձգուին, ոչ միայն անմիջապէս փրկանքը վճարելով պատրիարքն ու ընկերները բանտէ ազատեցին այլև մնացած պարտքն ալ սրբեցին (ԶԱՄ. Գ. 687), և այսպէս փակուեցաւ այդ գծուծ և անպէտ խնդիրներուն չարքը: Թերևս ար-ժան ալ չէր, որ այսչափ երկարէինք անոնց մասին, բայց ուզեցինք ձայնակ մը տալ այն

անկումին, ուր իջած էր ազգային կացութիւնը։

1739. Եղիազար այդ չփոթութեանց մէջ չէր մոռցած Երուսաղէմը, և երկու պատրիարքներու անուն

Ս. ՅԱԿՈԲ ԵՏ ԱՌՆՈՒԱԾ

նով ալ խնդրագիր մատուցած էր մեծ Լպարքոսին, և մանրամասն տեղեկութիւններով և հրովարտակներու յիշատակութիւններով ցուցուցած էր Հայոց իրաւունքը Ս. Յակոբայ վանքին վրայ։ Մեծ Լպարքոսն ալ յատուկ պաշտօնեայ յղած էր Երուսաղէմ, ամենայն ինչ տեղւոյն վրայ ստուգել, և պատուաւոր ու տեղեակ անձերու վկայութեամբ հաստատել։ Երուսաղէմի այլազգիները առնասարակ և համարձակ վկայութիւն տուած էին, թէ ինչպէս ի սկզբանէ անտի Ս. Յակոբի վանքը Հայոց սեփականութիւնն էր, և Յոյներ անոր վրայ երբեք իրաւունք ունեցած չէին, և վկայութիւններն ալ օրինաւոր վաւերացումներով հաստատուած էին։ Յատուկ պաշտօնեան դարձած էր նոյն միջոցներուն, երբ պարտքերու խնդիրներն ալ փակուած էին. և Եղիազար երկրորդական հոգևրէ ազատուած, պատրաստ կը սպասէր Ս. Յակոբի մասին դիմումը կրկնելու։ Որչափ ալ Եղիազարի սիրտին մէջ սաստիկ էր ազգային սեփականութեանց իրաւանց պաշտպանութեան հոգին, սակայն անուրանալի է, որ խիղճի խայթ մըն ալ կը կրծէր անոր սիրտը, որովհետև ինքն էր եղած որ միաժամութեամբ Ս. Յակոբայ բանալիները Թիւրօղլուին յանձնած էր իբր աւանդ (§ 1730)։ Ձիշդ այդ օրերուն մեծ Լպարքոս Բէօրբիւլի Մէհմէտ փաշա մեծանանդէս տօնախմբութիւն մը կազմակերպած էր Պրուսայի մէջ, տալուտան Մէհէմմէտ Դ կայսեր ներկայութեամբ, իբր որդւոյն Բէօրբիւլի Ահմէտ փաշային, կարնոյ կուսակալութեան պաշտօնով ուղևորուելուն օրը։ Առիթէն օգտուեցաւ Եղիազար, փութաց ինքն ալ Պրուսա երթալ, ձեռքը լեցուն աւատ և բնտիր նուէրներով։ Լպարքոսութեան պաշտօնակալներուն ձեռօք մեծ Լպարքոսին դիմեց, և վեր ելլոյ օրէնսդիր խոյ Հայոց իրաւունքներուն հաստատութիւնը խնդրեց. և Բէօրբիւլին, որ արդէն տեղեկացած էր եկած պաշտօնագիրներով, հաճեցաւ խնդիրը թագաւորին ներկայել, և ստացաւ Հայոց իրաւունքները վերահաստատող հրովարտակը։ Այս վերջին տօնէն մէկ երկու օր առաջ էր, երբ կայսերական հրամանը արձակուեցաւ Պրուսայի մէջ (ԶԱՄ. Գ. 687), իսկ 1659'ին Այս վերջացը կը հանդիպէր սեպտեմբեր 11'ին։ Հրովարտակը մանրամասնօրէն կը յիշատակէ նախընթաց հրամանագիրները և վճիռները, Ցունաց նենգութիւնները, Թիւրօղլուին վրայ կր թողու գործուած զրկանքները, կը հրամայէ Հայերուն ելեղեցւոյ, վանօրէից, ուխտատեղեաց և ամենայն սեպհականեայ իրաւունքները անխախտ պահել, կ'արգիլու Ցունաց հակառակութիւնները, որ մինչև իսկ երբեմն խոքեօխութեամբ հրովարտակ ևս հանել ջանացեր, մ' երբեք չյղի ընծայեսցի այնմ (ԱՍՏ. Ա. 362)։ Այդ հրովարտակին հիմամբ Յատուածատուր պատրիարք ճանչցուեցաւ տէր Երուսաղէմի բոլոր ազգային սեփականութեանց։ Բայց լատագոյն սեպհականեցաւ, որ ինքն Կոստանդնուպոլիս մնայ տակաւին, և գործադրութիւնը Եղիազարի յանձնուի։ Ուստի անոր անուան փոխանորդութեան և գործակալութեան պաշտօնագիր կազմուեցաւ՝ Նաղըբ անունով, և անով Եղիազար ճանապայ ելաւ, և Երուսաղէմ հասնելով տիրացաւ Ս. Յակոբի և բոլոր ազգապատկան սեփականութեանց 1659'ին վերջերը, տօնախմբութեանց օրերէն քիչ առաջ։ Ըստ այսմ Հայոց մայրավանքը Յոյներու ձեռք մնացած կ'ըլլայ երկուքուկէս տարի 1657 մայիս 17'էն սկսելով (§ 1730)։ Եղիազար ոչ միայն ազգային սեփականութիւնները ազատեց, այլև օգտակար ընելով իր դրամական կարողութիւնը և պահած գումարները (§ 1729), և կանուխէն մտագրած նպատակն ալ իրականացնելով, չքեղացուց և ընդարձակեց մայրավանքին չատ մասերը իր պաշտօնավարութեան քանի մը տարիներուն մէջ։ Այդ կարգէն կը յիշուին Իջմիածին մատուռը, պատրիարքական աթոռը, Ցոպպէի կալուածները, Ռամլէի վանքը ու եկեղեցին, Գազայի եկեղեցին, և Մայրավանքին արեզաթաղը (ԱՍՏ. Ա. 364)։

1740. Մարտիրոս պատրիարք, թէպէտ առաջին անգամ Եղիազարի ձեռքով միայն 140 հազար փող վճարած էր իբր տուրք,

սական երկրորդ տարին՝ եղիազարի մեկնելէն ետքը 400 հազար պահանջուեցաւ, Թովմասի հրովարտակին հետեւողութեամբ (§1733), և Մարտիրոս Ադրիանուպոլիս գնաց, ուր էր արքունիքը, գործը կարգադրելու նպատակով, բայց չյաջողեցաւ, և 40 օր արգելական մնաց, մինչեւ իսկ իրեն ըսուեցաւ, թէ կրնայէ, որ պարտքը են փոլ, Նոթիլ պորէթէ։ Ազգային և պետական գործառնութեանց մասին դիտողութեան արժանի խօսք։ Մարտիրոս թերեւս ղիլանէր, բայց Քէօմիւրճեան ընդդիմացաւ, և յաջողեցաւ յաւելուածական վճարումը իբրեւ կաշառք գործածելով՝ օրինական սակը չաւելցնել։ Մարտիրոս Ադրիանուպոլսէ մեկնեցաւ աւագ երկուշաբթի օր, 1660 ապրիլ 16'ին, Զատիկը Ռոտոսթոյ կատարեց ապրիլ 22'ին, և անկէ կ-Պոլիս հասաւ (ԶԱՄ·Գ·688), ուր քիչ օր առաջ, ապրիլ 7'ին, Ղալաթիոյ հրդեհն էր տեղի ունեցած։ Շատ չանցաւ, անագին հրդեհ մըն ալ Կոստանդնուպոլիսը լափեց և անապատացուց, որ սկսաւ չամիճեան չորեքշաբթի է ւոանէբդէ և Նոէնպրդէ, չորեք ըբեռո, ինչպէս կը գրէ ականատես Մեղրեցին (ԴԱՎ·433), և չենք իմանար թէ ինչու ուրիշներ յուլիս 14'ին կը դնեն (ԶԱՄ·Գ·691)։ Հրդեհը երեք օր տեւեց, և քաղաքին հիւսիսային ծայրէն սկսելով մինչեւ միջավայրին գագաթը տարածուեցաւ վոռոաչան՝ այսինքն հիւսիսային հողմեան նաւահանգիստ (ԴԱՎ·434), և երկու կողմերէն ծովեզերքները իջնալով, իբր 30,000 տուն ու 3000 անձ այրեց։ Հայոց եկեղեցիներէն երկիզեցան Ս. Նիկողայոս և Ս. Սարգիս, և հազիւ ազատեցաւ Թումքաբուի եկեղեցին (ԶԱՄ·Գ·691), զի հրդեհին մէկ ծայրը դադրեցաւ ի դուռն Աւետվոլչանին, իմա՛ Թումքաբուի, վոխճան ոռեալ ոռ փոռն վոնէչ, այսինքն պատրիարքարանին (ԴԱՎ·434)։ Պատրիարքին համար նոր տաճնապի պատճառ մըն էր բազմաթիւ Հայերու անտուն և անինչ մնալը, և անա ուրիշ դըժուարութիւն մըն ալ ծագեցաւ գաւառացիներու երեսէն։ Սանոք իրենց տեղերը պարտաւոր էին պետական տուրքերը տեղացիներու վրայ բաշխելով վճարել· բայց չատ

ՂԱԶԱՐ ՊԱՏՐԻԱՐՔ

գաւառացիներ մայրաքաղաք գալով կը հարբստանային, և այլեւս իրենց հայրենիքին տուրքերուն չէին մասնակցեր, և տեղերնին մնացող խեղճերը կը նեղուէին։ Այս պատճառով Եւդոկիայէ, Սեբաստիայէ, Կամախէ, Տիվրիկէ և ուրիշ քաղաքներէ պատուիրակներ եկան կ-Պոլիս, և մեծ եպարքոսին դիմելով արտօնութիւն ստացան իրենց գաւառացիները ցոյց տալ, որ վճարման բռնադատուին։ Ղազար Սեբաստացին, որ Տիվրիկի եպիսկոպոս եղած, և անկէ կ-Պոլիս եկած էր (§ 1731), առիթ գտաւ գանգատաւորներու գլուխ անցնիլ, և Մարտիրոս պատրիարքը մեղադրելով կուսակիցներ չունիլ, որոց կ'առաջնորդէր Շրվան Տիվրիկցին։ Մարտիրոսը յորդորողներ եղան որ Ղազարը աքսորով հեռացնել տայ, բայց չի յաջողեցաւ. և Ղազար զօրացաւ, և Շրվանի օգնութեամբ կաշառք ու նուէր սփռելով, Մարտիրոսի պաշտօնանկութեան և իր պատրիարքութեան հրովարտակը հանել տուաւ, և պատրիարքարանին տիրացաւ 1660 նոյեմբերին (ԶԱՄ·Գ·690)։ Մարտիրոս վերստին պատրիարքութիւնը ձեռք ձգելու համար եղիազարի օգնութեան դիմեց, բայց սա լաւագոյն սեպեց Ղազարը պահել, և Մարտիրոսը Երուսաղէմի նուիրակ նշանակեց Արեւելեան վիճակները։ Իսկ Մարտիրոս առիթէն օգտուեցաւ 1661'ին էջմիածին անցնիլ, ու Յակոբ կաթողիկոսէ Ղրիմի եպիսկոպոս ձեռնադրուիլ։ Թէպէտեւ մեծ ընդունելութիւն չգտաւ, բայց կրցաւ քանի մը տարի Ղրիմ մնալ, քանի որ բնիկ կաֆացի ալ էր (ԶԱՄ·Գ·691)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԻՒԹԻՒՆՃԻ

1741· Ղազարի պատրիարքութիւնն ալ, նախորդներուն նման՝ անակնկալներու և քմահաճոյքներու ենթարկեալ բան մըն էր, և պատրիարքութեան վրայ եղողը ամէն տեսակ պարագաներէ օգուտ պէտք էր քաղէր աթոռին վրայ մնալու համար։ Ղազարին համար յաջողակութիւն համարուեցաւ այրած Ս. Նիկողայոսի վերաշինութիւնը, առանց նոր հրովարտակի, օգտուելով մեծ եպարքոսին բացակայութենէն, և Յոյներուն ինք այրած եկեղեցիներու վերաշինութեան նախաձեռնարկ բլլալէն (ԶԱՄ·Գ·691)։ Քէօրբիւլի

Մէնմէտ մեծ եպարքոսը մնաւ 1661 հոկտեմբեր 31'ին, 5 տարի պաշտօնավարելէն, և իբր 30,000 հոգի զանազան պատճառներով սպաննելէն ետքը, որուն հետեւանքը եղած էր, անարկու դարձնել սկուտական իշխանութիւնը (ԺՈՒ. 271)։ Իր առաջարկութեան վրայ իրեն յաջորդեց որդին Քէօբրիւլիւ Ահմէտ փաշա, որուն երկու տարի առաջ կարնոյ կուսակալութեան երթալը յիշեցինք (§ 1738), որ տակաւին 26 տարեկան էր (ԺՈՒ. 271), և աւելի յառաջ Քէօբրիւլիօղլու անունով կը յիշուի հօրմէն զատուելու համար։ Որդին ալ հօրը քաղաքականութեան սկսաւ հետեւիլ, և հազիւ թէ դարձաւ Մառառայ դէմ պատերազմէն, առաջին գործերէն մին եղաւ հիմնայատակ ընել տալ ուռանց հրովարտակի վերայինուած Յոյներուն և Հայերուն եկեղեցիները, նոյն իսկ զատկի օրը, 1662 մարտ 30'ին (ԶԱՄ. Գ. 692)։ Այսչափին ալ բաւեց որ Ղազար պատրիարքին կացութիւնը սկսի վտանգուիլ, և այս անգամ իրեն մրցակից հանդիսացողը եղաւ Յովհաննէս վարդապետ Արեւելցի, մականուանեալ Թիւթիւնճի, գուցէ չատ ծխող ըլլալուն համար։ Յովհաննէս ծննդեամբ Վասպուրականցի եղած պիտի ըլլայ, զի Հաւաքարանին համեմատ իր առաջին պաշտօնները եղած են Հոգեւոց Ս. Աստուածածին, Սալնապատու Ս. Գրիգոր և Վարագայ Ս. Նշան վանքերուն մէջ, և մանաւանդ այդ վերջինին արդիւնաւոր եղած է նորափոր առուով մը, որուն միայն հետքերը կը նշմարուին այժմ (00 ԲԻՋ. 1198)։ Յովհաննէս էջմիածինի նուիրակութեան եղած էր, և լաւ գումար մը հաւաքած էր Կ-Պոլիս հասած ատեն, և Ղազարի մասին սկսած ժոգովներուն և կուսակցական հակառակութիւններուն՝ դինքը քաշուելուկցին պաշտօնին հետամտիլ ըլլալ։ Թրլթրլեանց յարեցաւ, իր դրամական միջոցները անոնց օգնութեան տրամադրեց, և Թրլթրլ երեցին հետ Քէօբրիւլիօղլուին և տուէն Սիլիվրի գնաց, երբ սա Մառառներու դէմ պատերազմին համար նորէն ճանապայ ելած էր, և պատշաճ վճարումներով պատրիարքութեան հրովարտակը ստացաւ կամ գնեց (ԶԱՄ. Գ. 692), և մայրաքաղաք դառնալով պատրիարքարանին տիրացաւ 1663 փետրուարին (01 ՕՐԱ. 104) կամ 1663 մարտին (ԺՈՒ. 272), և աւելի ապահովութեան համար Ղազարն ալ բանտարկել տուաւ (ԶԱՄ. Գ. 692)։ Աղթամարի Հաւաքարանը՝ Թիւթիւնճիին պատրիարքութիւնը կը յետաձգէ 1683'ին (00 ԲԻՋ. 1198), սակայն Կ-Պոլսոյ աթոռին յիշատակները, որ աւելի ստուգապատում են, կը հերքեն այդ դրութիւնը։

ՆՈՒԻՐԱԿՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԸ

1742. *Յովհաննէս թէ պատրիարքութեան հասնելու և թէ պատրիարքութիւնը պահելու համար իրրեւ մեծ փաստ կը գործածէր կաթողիկոսական իրաւասութեանց տեսակէտը, իբր զի ինքը էջմիածինի նուիրակ էր, մինչ Ղազար Սիսէ ձեռնադրուած էր (§ 1729)։ Սակայն ինքը անհաւատարիմ նուիրակ մը եղած էր, էջմիածնի արդիւնքը իր անձնական հետապնդութեանց ծախսած ըլլալուն համար, և որպէսզի հանրութեան մէջ պատող չչուկը լռեցնէ, յայտնապէս կը խոստովանէր եղելութիւնը, բայց և կը խոստանար պատրիարքութեան արդիւնքով էջմիածնի գումարները վճարել, և իրեն երաչխաւորներ կը ցուցնէր Մոսրով և Միրզա՝ Արեւելցի իշխանաւորները։ Նոյնը կը հաստատէր և Թրլթրլեան խումբը, որպէսզի ձեռքէ չհանէ իրեն կուսակից պատրիարք մը։ Այդ դիտումով երաչխաւորագիր ալ պատրաստուեցաւ Յակոբ կաթողիկոսի ղրկելու, և Մինաս Արեւելցի վարդապետի մը և աշխարհականի մը ձեռքով ճանապայ հանուեցաւ, խնդրելով որ հայրապետական կոնդակով մը հաստատուի Յովհաննէսի պատրիարքութիւնը։ Սակայն գիրը հասցէին չի հասաւ։ Ղազարի կողմնակիցները ձերբակալել տուին Թղթատարները Քարթալի մէջ, Թուղթերը գրաւեցին, և տանողներ ծանր տուգանքով ազատեցան տանօրեայ բանտարկութենէ ետքը։ Յովհաննէսի ակնկալութիւնը չիրականացաւ, մանաւանդ թէ աւելի վատթարացաւ, նոյն օրեր կաթողիկոսէն հասած գրութեամբ մը, որ Յովհաննէսի պատրիարքանալը լսելով, նուիրակութեան արդիւնքները կը պահանջէր, և Յովհաննէսը կը մերժադրէր, առանց Ղազարն ալ պաշտպանելու, որ Մայրաթոռոյ*

յայտնի հակառակորդ մըն էր։ Նամակին ետեւէն կ-Պոլիս հասաւ Էջմիածինի նոր նուիրակը, Մինաս Գաղատիոյ առաջնորդը, բայց ժողովուրդը նուիրակներու ընթացքէն զզուած, անոր ալ երես չտուաւ, և ապարդիւն մնացին Մինասի ջանքերը (ՉԱՄ. Գ. 694)։ Արդէն իսկ ընդհանուր ժպտութեան առիթ տուած էին Էջմիածինի նուիրակները, զորս Մայրաթոռն աւելի թուով և աւելի յաճախակի կը ղրկէր իր կարօտութիւնէն սփոփուած։ Նուիրակները իրենց հանգանակութիւնց փոխարէն միւռոն բաշխելու պաշտօնն ունէին, որով կը վնծծանէին չափազանց գումարներ պահանջելով, բռնանալով և կեղեքելով, հոգեւորական պատիժներ սպառնալով, առաջնորդներ և քահանաներ ծեծելէ-մի՛ խփելու-մի՛ ալ կը միջամտէին, և ամէն կողմ խռովութիւն կը սփռէին, կուսակցութիւններ կը կազմէին, և ոչ միայն եկեղեցականներ անոնցմէ ձանձրացած էին, այլեւ ժողովրդականք զրգռանք կը զգային։ Իրաց կացութիւնը այնչափ ծանրացած էր, որ մինչեւ իսկ Օսմանեան պետութեան դիմումներ եղան, որպէսզի Պարսից տէրութեան սահմաններէն եկող նուիրակները արգելէ, որոնք ոչ միայն ժողովուրդը կը կեղեքէին, այլեւ պետական տուրքերու վճարման արգելք կ'ըլլային։ Մեծ հպարտութեան կողմանէ ալ այդ խմաստով հրամանագիրներ ղրկուեցան կուսակալներուն (ԱՍՏ. Ա. 354)։ Նուիրակներու այդ գործերը, արդիւնքներու տարադէպ և անհաւատարիմ կիրառութեան պարապային հետ խառնուելով, դուռ բացին հակաթոռ կաթողիկոսութեան մը ստեղծումին, որուն պատմութիւնը չկատած, պէտք կը զգանք Եւրոպիոյ հայաբնակութեան եղելութիւնները քաղել, ժամանակակից դէպքերը համընթաց քալելնելու համար։

1743· Փիլիպպոս կաթողիկոսի օրով Նիկոլ եպիսկոպոսի և Իլվովացոց մէջ 1652'ին կատարուած հաշտութիւնը, ինչպէս այն ատեն ալ ըսինք, անկեղծ և հիմնական բան մը չէր (§ 1703)։ Ժողովուրդը իր հայադաւանութեան հոմէական կերպ մը տուած էր, Նիկոլ ալ իր հոմէադաւանութիւնը հայկական երեւոյթի ներքեւ ծածկած էր, բայց գոնէ դաւանական խնդիրներ դադրած էին, և պարէր Գոռնէն մը կը տիրէր (ԲԻՒՆ. 160)։ Սակայն Նիկոլի գործերը, որ անպարշտիկ էին բոլոր ապրիճանի ատեն, կը չարունակէին համարձակօրէն (ԲԻՒՆ. 28), և նա արքեպիսկոպոսարանին մէջ կ'ապրէր իբր սիրուելի հետ, որ կուսաստանէ հանուած միանձնուհի մըն էր, և անկէ ունեցած երկու տղաքներն ալ իրենց քովը կը պահէին։ Տրտունջներ ընդհանուր էին, բայց ամէն պատասխան բռնակալ յանդիմանէն կ'առնէին, և 1652'էն մինչեւ 1662 նոյն կացութիւնը կը տիրէր։ Յակոբ կաթողիկոս ալ կրցաւ 1662 յունուար 12'ի կոնդակով Յովհաննէս վարդապետ մը նուիրակ ղրկել Լեհաստանէ իբրաւունք և նպաստ, և միւռոնաբաշխութեան նուէրներ հաւաքելու (ԿԱՄ. 257)։ Միեւնոյն տարին Իլվով կը հանդիպի, Լեհաստանի արքունեաց մօտ պապական նուիրակ կամ դեսպան գտնուող Բինեաթելլի (Pignatelli) արքեպիսկոպոսը, և Հայեր՝ որ իբր թէ Հռոմի հետ միութեան մէջ էին, նուիրակէն կը խնդրեն որ Նիկոլը ուղղութեան բերէ։ Նուիրակը խրատներով և յորդորներով կը սկսի, բայց երբ կը տեսնէ թէ արդիւնք չունին, և Նիկոլ կամակորեալ է ըլլալ, արհամարհէ զինեթեան և ոչ կարի վերջ կենցաղ ասէր, իշխանաբար գործելու կը ձեռնարկէ, և Մարիամ Լուզովիկէ թագուհիէն ալ աջակցութիւն գտնելով, կը հրամայէ բռնի կորզել Նիկոլէն ըսուբհածա նոթա, զոր կ'ամուսնացնէ զինուորականի մը հետ մեծահարուստ օժիտ տալով, և երկուքը մէկտեղ կը ղրկէ ի հեռաստան վայրս ալեբոյնն (ԲԻՒՆ. 160)։ Նուիրակը Հայ գաղութին ներքինն ալ զննելով, և չատ հեռու գտնելով կարծեցեալ հոմէականութենէն, իսկոյն ընդդիմութիւն չցուցներ չխրոչելնելու համար, և կ'առաջարկէ որ իրենց համար Հռոմի ծախքով դպրանոց մը հաստատէ արժանաւոր եկեղեցականներ հասցնելու, որուն Հայերը միամտաբար կը հաւանին, և գործը Հռոմ գրուելով նպաստակայարմար վարիչի մը առաքումը կը խնդրուի։ Հռոմ իսկոյն աչքը դարձուց կղմէս Կալանոսի վրայ, որ 1643'ին կ-Պոլիսէ հեռանալէն իվեր Հռոմ կը մնար (§ 1696), իբր թէ անկան

միաբանութեան կուիրինալի վրայ ունեցած Ս. Սեղբեստրոսի վանքին մեծաւորը (San Silvestro al Quirinale), և Փրոփականտայի Ուրբանեան դպրանոցին ուսուցիչն էր, և յատկապէս Հայերու համար կը գրէր և կը հրատարակէր։ Կալանոս ծերացեալ կ'ըսուի, թէպէտ 53 տարեկան էր տակաւին, բայց տկարացած ալ պաշտօնը ստանձնեց, և իրեն ընկերակից ընտրեց հայր Ալոիզիոս Փիթու (Louis Pitou) Թէաթինեան միաբանակիցը, և Բոնավենտուրա Քոսթուցցի (Bonaventura Costuzzi) աշխատասէր եղբայրը, և Հռոմէ մեկնեցաւ 1663 սեպտեմբեր 30'ին։ Ձմեռը վրայ հասնելուն, պարտաւորուեցաւ մնալ Բաւարիոյ Միւնխէն (Munchen կամ Munich) քաղաքը, և հազիւ 1664 ապրիլ 17'ին հասաւ Լեհաստանի Վարշաւա (Varszawa կամ Varsovie) մայրաքաղաքը, ուր թագաւորական յանձնարարագիրներն և նուիրակի հրահանգներն ալ ստանալով Իլլով մտաւ մայիս 1'ին (ԲՈՆ. 30), զոր պէտք է հասմեմատել հին տոմարի ապրիլ 21'ին։ Կ'երեւի թէ Հայեր օր անցնելով զգացին Բիւնիա թէլլիի ներքին միաքը, որովհետեւ Կալանոս և ընկերներ անէրէլոՒնեան հանդիպեցան Հայոց կողմէն։ Նիկոլ ալ թէպէտ արտաքնապէս սիրալիր ընդունելութիւն ցուցուց, այլ հարկաւ չսիրեց իր վրայ իբրեւ քննիչ ղրկուած անձերը, և երեքին մէկտեղ բնակութեան համար ցուցուց սենեակ մը, ուր չորս ուրիշ անձեր ալ կը բնակէին (ԲՈՆ. 31), և շուրջ պատեալ էր շէղջ շէղջ պէքհօսէ և փակրա յէօղ և արլոսզ (ԲՈՆ. 33)։ Դպրոցի համար բնաւ տեղ չցուցուց, և միայն Կալանոսի սպառնալիքին վրայ, չորս բնակակիցները սենեակէն հանեց, և խոհանոցի համար հեռու տեղ մը ցուցուց, և քանի մը երիտասարդներու ներեց աշակերտիլ նոյն սենեակին մէջ, որոնք հազիւ 7 հատ էին, և տարի անցնելով 16 էզան (ԲՈՆ. 32)։ Այդ կաթոլիկ հաստատութեան վարժարան էրէսոսոնէց նպաստներ անուներ տրուած է (ՏԱՇ. 115)։

ԲՈՆԱՊԱՏԻՋ ՋԵՌՆԱՐԿՆԵՐ

1744. Կալանոս և ընկերներ տեսան թէ կէղջեօհ դէայն և է վէրէն երեսս է դէսըէն Հայոց ընդ եկեղեցւոյն Հռոմայ (ԲՈՆ. 31), ուստի իրենց պաշտօնական իսկական նպատակին հետեւելով, ձեռնարկեցին պահանջումներ ընել հայադաւան և հայածէս կէտերէն այս ու այն զեղչելու, և հռոմէադաւան ուլատինածէս կէտերով փոխանակելու։ Նիկոլ հաւանութիւն կը ցուցնէր, բայց չէր գործադրեր, ժողովուրդին ատելի չըլլալու համար (ԲՈՆ. 33), որովհետեւ երբ անգամ մը Յակոբ Գրիգորեան քահանային ներեց բաժակին ջուր խառնել, փառեթել սոբեսս է նմանէ ժողովուրդն (ԲՈՆ. 36)։ Սակայն կալանոս և ընկերներ իրենց նպատակէն չէին չեղիր, և իրենց խորհրդակից գտան Լազար Սլոնիովսքի (Lazar Sloniowski) անուն Լեհացի ազնուական մը, որ չատ երկիւղներ պատած էր, և 78 լեզուներ կը խօսի կ'ըսէին, բայց նոյէ էր է քաղսմ ամօց հեթէ (ԲՈՆ. 36)։ Կալանոս և Փիթու այս մարդուն խրատներէն ալ քաջալերուելով, սպառնական դիրք կ'առնեն Նիկոլի հանդէպ, թէ իրեն դէմ թագաւորին կը բողոքեն, և ժողովուրդին հանդէպ ալ, թէ միւթևան անունով ստացած արտօնութիւնները ետ առնել կուտան (ԲՈՆ. 37)։ Ասոնք են ահա առաքելական զէնքերը, որով հռոմէականութիւնը իւր յաղթանակը կը կազմէ, և Նիկոլի բարոյականով մէկն է՝ իրենց յաջողութեան միջնորդը։ Ասով մէկտեղ Նիկոլ, երկու կողմերն ալ չկորսնցնելու համար, կ'աշխատէր կալանոսի համոզել, թէ լաւ եւ ծալ սա ժամանակ մի և ախոռնել բաբեպոբեհ ժամս, սակայն կալանոս և իրենները չէն կասիր, և ամէնէն առաջ պետական հրամանով 1664 նոյեմբեր 7'ին աքսորել կուտան Յակոբ Բրոակի, բնիկ արեւելցի քահանայն, ինչպէս կ'ըսեն, ղէյոփեալ խոբեալն է հեբեբէյնոսոնեան. տեսնելով թէ նա խոլընդոյ կ'ըլլայ իրենց ախեանն ֆոքձոց և կամց։ Այդ աքսորը և չարունակ կրկնուած զրկումները սպառնալիքները իրենց արդիւնքը կ'ունենան, որով Հայեր իրենց սովորական առելութիւնը զիջողութեան ձեւին կը դիմեն, և 1664 դեկտեմբեր 25'ին համաձայնութեան ձեւակերպութիւն մը կը կատարեն (ԲՈՆ. 38)։ Այդ զիջողութեան առելի ազդեցիկ փաստեր կ'ըլլան, Նիկոլի համար՝ տարեկան 200 հռոմէական դահեկանի թոչակը (ԲՈՆ. 163),

և ժողովուրդին համար ալ՝ թագաւորական արտօնութիւնները դադարեցնելու սպառնալիքը (ԲՒՆ· 164)։ Կալանոս այսպէս զօրացած կը ձեռնարկէ հետզհետէ հայադաւան և հայածէս նշանները զեղչել տալ Հայոց եկեղեցիներէն։ Իբր սկզբնաւորութիւն 1665 յունուար 5'ին, որ է հին տոմարով 1664 դեկտեմբեր 26, Ս. Ստեփանոսի տօնին, Նիկոլի կողմէն բանադրանքի սպառնալիքով կը հրամայուի բաժակին ջուր խառնել, ընդհակառակ յաղթեալ խաչվեցեալ Քրիստոսի ըստ հաստատեալ և փառաւոր (ԲՒՆ· 38)։ Ջիլ Լտքը 1665 փետրուար 24'ին, հին տոմարով 14'ին, Տէառնընդառաջի տօնին, նոր ձեռնադրուող երիք դպիրներուն հրապարակաւ արտասանել կու տան դաւանութիւն կրոնից։ Մարտ 18'ին Ստանիսլասովի եկեղեցին և 20'ին Ջամոտիայի եկեղեցին ալ նորութիւնները կը գործադրեն, ինչպէս Ջամոտիացի Սիմէոն քահանան կ'արձանագրէ, թէ ոճաւ այսը հերետիկոսութեան չեն ընդունիր Հայոց Ջամոպիոյ։ Մարտ 21'ին, հին տոմարով 11'ին, Մուսն ի վիրապ տօնին, Սուրբ Աթոռոյ փառաբանութիւնէն կը զեղչեն Որ խաչեցար վասն մեր բառերը (ԲՒՆ· 39), և Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, ու Մարին պերճանան և սրբեան երկնական կոչ ուղղի՝ երգերուն խօսքերը ապատնիի կը փոխեն։ Միանգամայն հանգանակին մէջ Հոգի ամ ի սոյն կարդալէ ելեղեցի մասէն սոյն բառը կը զեղչեն, եկեղեցւոյ միութեան հակառակ կարծելով։ Ծիչեալ 1665 տարին ապրիլ 2'ին, հին տոմարով մարտ 23'ին աւագ հինգշաբթի օրը, տօնական երգերուն և չարականներուն մէջ 30 փոփոխութիւններ կը մտցնեն, զոր Փիլիմու ապղեքերցան Հայոց մոլորութիւն կ'անուանէ։ Ապրիլ 14'ին, հին տոմարով 4'ին նոր կիրակէի երեքշաբթին, կ'արգելուի վերաբերութեան առնն ծնրադրել (ԲՒՆ· 40), և այսպէս հետզհետէ կամայական փոփոխութեանց կը յաջորդեն հալածանքներ և աքսորներ և զրկումներ այն Հայ եկեղեցականներուն դէմ, որոնք կամակար չէին հնազանդիր Կալանոսի թելադրած և Նիկոլի հրամայած նորաձեւութիւններուն, որոցմէ մնացածները աւելորդ կը սեպնէք անուններով յիշատակել (ԲՒՆ· 41—44)։ Մեծ հակառակութեան և հալածանքի կը հանդիպի Ծակոբ կաթողիկոսի նուիրակ Պօղոս Եւդոկիացի վարդապետն ալ, որ 1655 յուլիս 11'ին Իլվով հասնելով կը պնդէր, թէ Հայերուն օրէն չէ որևէ փոփոխութիւն կատարել, մինչ հաստատուած ընդ այն կրնդունէին Ծակոբ (ԲՒՆ· 44)։ Նուիրակին դէմ հակառակութիւնները ամիսներով կը չարունակեն, մինչեւ որ 1665 հոկտեմբեր 29, կը բանադատուն Լեհաստանէ ելնել, որով ղինէ դինելոյ փնալոյ նուիրակն յաջէջէ ծրթեն հրամիան (ԲՒՆ· 49), կը գրէ Փիլիմու։ Բայց և կը խոստովանի, թէ ամենայն ինչ իրենց կը յաջողէր, վասն ամ ամ Իոլկին 200 դահեկանաց, զոր Հռոմ Նիկոլին կը ղրկէր (ԲՒՆ· 42), այն Նիկոլին, որուն անառակ կեանքը յայտնի էր Հռոմին, և դատապարտուած էր պապական նուիրակէն (§ 1742)։

1745. Եւրոպակողման մէջ կատարուած գործերէն մէկն ալ տպագրական ձեռնարկին հետ ապագրութիւն էր, որ Ծակոբ կեցին մահուընէ ետքը Ոսկան Երեւանեցին յանձնուեցաւ, և այն ալ իրմէ առաջ ճանապայ հանուց կարապետ Աղբիանեցին (§ 1727)։ Ոսկան վարդապետ Ղլիճենց տոհմէն էր (ՏՊԱ· 100), և թէպէտ Երեւանեցի կոչուած իւր ծագումին համար, բայց Ապահան ծնած էր 1614'ին, և նախ այն տեղ Խաչատուր կեսարացիին աշակերտած, անգամ մը Մովսէս կաթողիկոսի օրով էջմիածին եկած, բայց նորէն Ապահան դարձած, և Փիլիպպոս կաթողիկոսէ Մայրաթոռի ծառայութեան հրաւիրուած, Ուչիի վանքն ալ իրեն յանձնելով (§ 1713)։ Ոսկան ուչիմ և զարգացման ծարաւի՝ մտերմութիւն կապեց Պօղոս Փիրօմալլի լատին կրօնաւորին հետ, որ էջմիածին կը մնար (§ 1676), և անկէ ուսաւ լատին լեզուն, երբ լատինն ալ իրմէ հայերէն կը սորվէր, երկուքն ալ անկատար՝ բայց յաւակնոտ, որով անընդել և անովոր ոճով, և աղաղակ և անդէպ չբաղդատութիւններու ձեռնարկեցին, մինչեւ իսկ նախնեաց գրուածներուն և Աստուածաշունչին թարգմանութեան ձեռք մտցնել յանդգնեցան (ՁԱՄ· Գ· 620)։ Փիրօմալլի 1639'ին Հռոմ դարձած աստեն, Հայոց կաթողիկոսին փափաքը լսելու դիտմամբ հայերէն Աստուածա-

չունչի տպագրութեան հետամուտ եղաւ, բայց նախնեաց Եօթանասնից թարգմանութիւնը լատինական վուլկաթային համաձայնեցնելու համար չատ կտորներ եղծեց, այնպէս որ պապական գրաքննութիւնն իսկ իբեն չներեց զայն հրատարակել։ Փիլոմաթէի 1642'ին էջմիածին գալով նորէն Աստուածաչունչի կայմութեան այխատեցաւ Ոսկանի հետ, բայց միշտ նոյն նախապաշարեալ դիտմամբ, և հայերէն օրինակը լատինականին վրայ ձուլելու փափաքով (ԶԱՄ. Գ. 621)։ Երբոր Յակոբ կաթողիկոս Ոսկանի եպիսկոպոսական ձեռնադրութիւն տալով Արեւմուտք ուղեւորեց, Աստուածաչունչի տպագրութիւնը գլխաւոր նպատակն էր, իսկ Ոսկանի մէկտեղ առած օրինակը, վերը յիշուած բռնազբօսիկ օրինակն էր։ Էջմիածինէ մեկնեցաւ 1662'ին, և ուղիղ գնաց Ալիգուռնա, որ է Լիվօռնօ քաղաք Իտալիոյ, ուր եկած էր իւր եղբայրը Աւետիս, որ Ոսկանի անունին փոխանցեց Մարսկիէ մեռցած Ամսդելոտամի տպարանը (§1727)։ Ոսկան Հռոմի ու Ալիգուռնայի մէջ երեքեւկէս վաճառականներէ պէտք եղած միջոցները հայթհայթելու համար, և միայն երբք հոգի գտնուեցան օգնող, Ստեփանոս Ղանինց, Թէոդորոս Բիթրեչենց և Պետրոս Տէր-Աւագինց, տպագրութեան արդիւնքէն իրենց տուած դումարը ետ առնելու, և չահը էջմիածինի և Երուսաղէմի և Ուչիի վանքերու վրայ բաժնելու պայմանով (ԶԱՄ. Գ. 659)։ Այդ հիմամբ պայմանագիր ալ կազմելով, Ոսկան անցաւ Ամսդելոտամ, ուր հասած կ'ըլլայ 1663'ին, և անմիջապէս ձեռնարկեց նոր տառեր և զարդեր և պատկերներ պատրաստել Աստուածաչունչի տպագրութեան մեծ գործին, զանց չընելով նոյն միջոցին առձեռն զանազան հրատարակութիւններ ընել։ Աստուածաչունչի տպագրութիւնը սկսած է 1666'ին (ԶԱՄ. Գ. 660), բայց անկէ առաջ 1665 յունիս 23'ին Իլվով կը հասնի վարդան աբեղայ մը, Ոսկան եպիսկոպոսին կողմէ նամակով, ուր Ամսդելոտամի մէջ կրած դժուարութիւնները յիշելով՝ նիկոլի կ'առաջարկէր տպարանը Իլվով փոխադրել։ Կալանուս առիթը չաջող կը գտնէ իւր ձեռքին ներքեւ նոր միջոց մըն ալ ունենալու, և հաւանութեան դիր դրել կուտայ Ոսկանի. մանաւանդ որ գիտէր թէ Ոսկանէ կը հրատարակուէին ֆէյէ հերթիկոսական և ալօղղութիւն, և Ոսկան միացած էր ընդ կաթողիկոսին էջմիածինի (ԻՒՆ. 45), որով Ոսկանը Իլվով բերելով հայադաւանութեան նոր հարուած մըն ալ տրուած կ'ըլլար։ Ոսկան այլ ևս չպատասխաներ, և իւր գործը կը չարունակէ Ամսդելոտամի մէջ։ Փիլիթու կը կասկածի թէ Ոսկան միտքը փոխած է՝ իրենց Իլվով դանուելուն պատճառով (ԻՒՆ. 40)։

ՈՍԿԱՆԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

1746. Երկու տարի աշխատեցաւ Ոսկան Աստուածաչունչի տպագրութիւնը լրացընելու, զոր 1666'ին սկսելով աւարտեց 1668-ին (ԶԱՄ. Գ. 660), և է առաջին տպագրուած հայկերէն Աստուածաչունչը, որ նախորդ կաթողիկոսներէն չատերուն, Սալմաստեցիէն սկսելով, մեծ փափաքն էր եղած։ Ոսկանին տպագրութիւնը միակ հատոր մըն է, սովորական քառածալ մեծ, գրեթէ խորանորդի մօտեցող գիրք մը, իւր արտաքին ձեւերովը իրմէ առաջ կատարուած բոլոր տպագրութիւններէն գերազանց գործ մըն է, տառերը ընտիր ձեւով, այժմ ալ իբր տիպար սեպուելու արժանի, պատկերներով և զարդերով ճոխացած, որոնք ամէնքը կրնան պատիւ բերել Ոսկանի արուեստագիտական հանճարին։ Դժբախտաբար նոյն գովեստը պիտի չկարենանք կրկնել տպագրուած բնագիրին համար, որ աւելի նախնեաց ընտիր թարգմանութեան աղաւաղումը և խանգարումը կրնայ ըսուիլ։ Զինք գիտեր թէ այն՝ Փիլիրօմաթէի հետ էջմիածինի մէջ կազմուած օրինակն է (§1745), թէ ոչ անկէ ետքն ալ Ոսկան իւրովի ուրիշ փոփոխութիւններ ալ մուծած է, աւելցնելով կամ պակսեցնելով։ Ամէն առթի մէջ անտեղի ձեռնարկ մը եղած է Ոսկանի ըրածը, թերեւս անգիտակցաբար, մանաւանդ Հին կտակարանին վրայ, այս է Եօթանասնից օրինակը՝ ուսկից եղած է մեր նախնեաց թարգմանութիւնը, համաձայնեցնել եբրայական օրինակին, որ եղած է լատին թարգմանութեան բնագիրը։ Ոսկանի տպագրութեան ըլլալիք դիտողութեանց գլխաւորները հետեւեալներն են։ Հայերէն Աստուա-

ծաչունչը մինչեւ այն աստեն կը պահէր միայն հին Ամմանեան և եւթաղեան բաժանումները, որով իւրաքանչիւր դիրք բազմաթիւ մանր գլուխներու բաժնուած էր։ Իսկ Լատիններու գործածական դարձած՝ գիրքերուն գլուխներու և գլուխներուն համարներու բաժանումը, որ Հուգոնեան կը կոչուի, Հայերուն անծանօթ էր։ Ոսկան զայն հայերէնին ալ պատչաճեցուց, որ բնաւ անտեղութիւն չէր ունենար, եթէ հայերէն բնագիրը այլայլուած չըլլար, և այս կերպով Յակոբ կաթողիկոս ալ կրնար զայն թոյլատրած ըլլալ։ Իրօք ալ ըսուած է, թէ տպագիր օրինակը դրչագիրներէն տարբերելով, Նրմանաս վկեփոեաէն պեռան Յակոբոյ Հայոց կաթողիկոսի՝ գլխակոբեալ և փնացեալ է ըստ պաշմոպանացն (ՏՊԱ. 109)։ Բայց ասկէ դուրս ըրածներուն համար կաթողիկոսական հրաման ստացած չէ, և իւրովի գործեր ըրած է, ինչպէս են՝ հայերէն օրինակը լատինականին յարմարցնելու համար յաւելուածներ ընել, խօսքեր այլայլել, հատուածներ տեղափոխել, բառեր փոխել, տարօրինակ ոճով հայերէն մը ներմուծել, և խորթ լեզուով նայիլն գիրքեր թարգմանել, ինչպէս Սիրաքը, Ջորջորդ եզրը և Երեմիայի Թուղթը։ Այս փոփոխութեանց համար Ոսկան իւր օրով ալ մեղադրանքներ լսած է մտացի և խղճամիտ բանասէրներէ, զորս ինքն առաքելաբար և քաջիլեան խոտոր կ'անուանէ, բայց աւելի իր յանդգնութեան կրնային պատկանիլ այդ կոչումները։ Այսու հանդերձ տպագրութեան դիւրութիւնը և գրչագիրներու նուազութիւնն ու թանկութիւնը պատճառ եղան Ոսկանին օրինակներուն ամէն կողմ տարածուելուն, և անոր վրայէն կատարուեցան Պետրոս Լատինացիի 1705'ին Կ-Պոլիս, և Մխիթար Սեբաստացիի 1733'ին Վենետիկ հրատարակած նոր տպագրութիւնները, մոռնոր կտակարանի կամ չորս աւետարաններու մասնաւոր տպագրութիւնները։ Մինչեւ իսկ անոր հետեւողութեամբ կազմուեցաւ Թադէոս Երէցին 1686'ին Վենետիկ հրատարակած Ճաշոցը։ Եւ այսպէս չարունակեցին հրատարակութիւնները երկար ատեն, մինչեւ որ 1805'ին Վենետիկի մէջ հրատարակուեցաւ Յովհաննէս վարդապետ Նախիջեւանցի Թարգմանութիւն հետեւողութեամբ կազմած օրինակը։

1747. Ոսկանի տպագրական գործունէութեան պատմութիւնը լրացնելու համար, համառօտիւ քանի մը ՈՍԿԱՆԻ ԶԱՆՔԵՐԸ գիտնք Աստուածաշունչի հրատարակութիւնէն ետքը կատարուած գործերը, կրած ծանր դժուարութիւնները և տեսակ տեսակ տագնապները։ Ոսկան Ամստէլոտամ մնաց մինչեւ 1669 տարին, և քանի մը ուրիշ գիրքեր ալ հրատարակեց, բայց ստիպուեցաւ քաղաքէն հեռանալ, թէպէտ այնտեղ յարմարութիւններ ունէր թէ արուեստական միջոցներուն և թէ գրաքննական պայմաններուն կողմէն։ Հեռանալուն պատճառը պարտապաններուն երեսէն նեղուած ըլլալն էր, որ դրամական միջոցները պակսած ըլլալուն՝ անձնական պատասխանատուութեամբ պարտքերու ներքեւ մնացած էր։ Գրուած է թէ Ալիգուենացի երեք վաճառականները տուած խոստումնքնին չի կատարելնին (ՏՊԱ. 109), բայց աւելի հաւանաբար նախնական պայմանէն աւելին չվճարելնին։ Արեւելք ղրկուած օրինակներէն մաս մը նաւարեկութեամբ կորսուեցաւ, մաս մըն ալ յամրաբար վաճառուեցաւ, և գինը Ոսկանի չուտով չդարձաւ (ԶԱՄ. Դ. 661)։ Մինչեւ իսկ Ոսկան իւր տպարանը գրաւումէ աղատելու համար, կարապետ Ազրիանեցիի անունին դարձուց (ՏՊԱ. 111), և այս կերպով կրցաւ Ամստէլոտամէ խոյս տալ, և տպարանը բավանդակ կազմածովը Ալիգուենա փոխադրել։ Սակայն Իտալիոյ մէջ գրաքննութիւնը խիստ էր, և հռոմէադաւանի սկզբունքներէ դուրս բան մը տպագրել անկարելի էր։ Ուստի երբ տպարանը Ալիգուենա կը բերէր, միւս կողմէն 1669 մայիս 26'ին Գաղղիոյ Լուդովիկոս ԺԴ թագաւորին կը դիմէր, հայերէն Աստուածաշունչին օրինակ մըն ալ յղելով, որ արտօնութիւն մը երկիրներուն մէջ բանալու իւր տպարանը, Գաղղիոյ գրաքննութիւնը Իտալիայէ աւելի լայնախոհ ենթադրելով։ Ալիգուենա դիմելովը երեք չաճակից վաճառականներուն հետ ալ կարգադրութիւն մը կրնար լուսաւ, բայց անոնք արդէն Ամստէլոտամէ Թադէոս Երէցի ձեռքով իրենց

յղուած գիրքերը գրաւելով, Ոսկանին պարտքերուն դարման մը չէին ըրած (ՏՊԱ. 110), Յակոբ կաթողիկոսէ գալիք դրամական օգնութիւնն ալ պարապի ելած էր (ՏՊԱ. 116), զի կաթողիկոսը հակաթուրքիան տագնապներով չըզապաստած, ինչպէս պիտի տեսնենք, որեւէ ձեռնտուութիւն ընելու անհնարութիւնն մատնուած էր։ Իրա-մական նեղութենէն հետ, Հռոմի հրա-մայուած գրաքննական դժուարութիւնները ալ աւելցան Ոսկանի վրայ, որոնք սաստ-կացան Փիքուի գրգռութեամբ, որ 1672 յունուար 17'ին Հռոմ հասած էր, իլվոլէ դառնալով (ԲՒՆ. 216), և Ոսկանի դէմ չատ գէշ տրամադրուած էր, Դավրիժեցիին պատմութեան 1669'ին կատարուած տպագ-րութիւնը տեսնելով, որուն մէջ հռոմէա-կաններու ձիգերը, և յատկապէս Լեհաս-տանի և Նիկոլի գործերը ուժգին ձաղկուած էին (ԲՒՆ. 215)։ Ոսկան, որ Ամստելոտամի մէջ 19 կտոր հրատարակութիւններ կատարած էր, հազիւ երկու մանր գիրքեր կրցաւ տպագրել Ալիգուոնա 1670'ին. իսկ Մար-սիլիա հազիւ կրցաւ 1673'ին գործի սկսիլ։ Վատնդի այն տեղ ալ հասան Հռոմի հրա-հանգները, որոնք արգիլական հաստա-տութիւն ալ ստացան և կրօնական իշխա-նութեան յանձնարարուեցան։ Ոսկան Մար-սիլիա և Փարիզ անձամբ երթեւեկելէ ետքը (ՏՊԱ. 114), իր տպագրական անդուլ փա-փաքը լրացնելու համար, յանձնառու եղաւ գրաքննական խստութեանց ենթարկուիլ, և մինչեւ իսկ հաւատոյ դաւանութիւն ստո-րագրել Հռոմէական վարդապետութեան հաւաձայն (ՏՊԱ. 115)։ Ահա թէ ինչ պայ-մաններու ներքեւ ստիպուեցաւ Ոսկան Հռոմէադաւան միտքով փոփոխութիւններ մտցնել իր տպագրած ծիսական գիրքին մէջ, որոնց համար այնչափ մեծ գոհունա-կութիւն կը զգան Հռոմէականներ (ՉԱՄ. Գ. 661)։ Անոնք երբեք Ոսկանի միտքին յայ-տարարութիւնները չեղան, այլ բունադատ-եալ համակերպութիւններ։

1748. Ճիշդ այդ հոգեմաշ տագնապնե-րուն պէտք է վերագրենք Ոսկանի տա-րաժամ մահն ալ, որ տեղի ունեցաւ Մարսի-լիոյ մէջ հազիւ 60 տարեկան եղած ատեն, երբ չատ աւելի արդիւնքներ կնաւ էր ստանալ, իրեն նման տոկուն և անխոնջ բնաւորութեան վիճակուած անձէ մը։ Ոս-կան իրեն դժբախտութե-

ՈՍԿԱՆԻ ՄԱՀԸ

նէն անհաւատարիմ և նենգաւոր ընկերակիցի մըն ալ հանդիպեցաւ, ինչպէս եղաւ Թադէոս Համազասպեան, ծագմամբ Երեւանեցի, և ծննդեամբ Ասպահանեցի երէց-ցը։ Ամստելոտամի մէջ եկած չարած էր Ոս-կանի, և անոր գործակից կը գտնուէր Ալի-գուոնայի մէջ, իսկ Մարսիլիոյ տպարանին չհակակից բնակեր ալ եղաւ, բայց աւելի պատրաստ էր ծածկելու և էքսկոմունիկա-ցիոնը մոռնալու նպատակով, ինչպէս ըսած են գինքը ճանչցող ժամանակակից Զմիւռնացիք (ՏՊԱ. 115), որոնք զայն «ոչ գոյն ճահճայ, այլ և էքսկոմունիկայ կոչելու անուշն» կը համարին (ՏՊԱ. 117)։ Ուստի ամենայն իրաւամբ կրնանք կասկածիլ, թէ Թադէոս անմասն չէր Ամստելոտամի և Ալիգուոնայի մէջ ալ Ոսկանի կրած նեղութիւններուն պատասխա-նատուութենէն։ Նա իւր նենգապատիր գոր-ծունէութիւնը պահեց Ոսկանը ամբաստա-նելով 1673'ին վերջերը, թէ նոր սկսուած ժամագիրքի տպագրութեան մէջ հերետի-կոսական մասեր կը պարունակուին, և խնդիրը հանելով պետական և կրօնական ատեաններուն առջեւ։ Այդ գրպարտութե-նէն քիչ օրեր ետքը, 1674'ին սկիզբը վախ-ճանեցաւ Ոսկան (ՏՊԱ. 117), աւելի սիր-տին ցաւէն և նեղքին մորմոքէն։ Այս կեր-պով տպագրութեան ձեռնարկին կատարելա-պէս նահատակ մը եղաւ տպարանի փոչի-ներուն մէջ թաւալող այդ սրբազան արքե-պիսկոպոսը, մինչ չատ դիւրին էր իրեն, իւր ծագումով և աստիճանով՝ փառքերու և հեշտութիւններու մէջ անցընել իր կեանքը, իւր դասակից եկեղեցականներուն նման (ԼԷՕ. 182)։ Ոսկանի անձնաւորութիւնը ար-ժանի է մեր ազգին մտաւոր զարգացման տեսակէտէն՝ մեծ երախտաւորներու կարգը դասուիլ, և Հայ տպագրութեան իսկապէս մղումն տուողը ճանչցուիլ։ Նախընծայ տպագ-րութիւն ճանչցուած 1512 և 1513 տարի-ներու Յակոբի հրատարակութիւնները, մի-այն ժամանակագրական փաստ մը ունեցան, առանց իրական օգուտի։ Աբգար Եւդոկիա-ցիին ձեռնարկն ալ ամփոփուած ու սեղ-

մուած մնաց, ու անհետացաւ. Ոսկանի գործն է, որ իւր տարաբախտ մահուանէ ետքն ալ չդադրեցաւ, և չորցած բոյսէ մը թափուած սերմերու նման բողբոջները բազմացան։ Իւր քեռորդին Յովհաննէս Լեւոնեան, իւր աղգականը Պետրոս Լատինացին, իւր գործակատարը Նասիպ Գրիգորեան, իւր գրչագիրը Մատթէոս Վանանդեցին, և նոյնիսկ իւր դաւաճանը Թադէոս Երեւանեցին, տպարաններու վարիչներ եղան Մարսիլիա, Կ-Պոլիս, Ամստէլոտամ և Վենետիկ, և հետզհետէ ընդարձակուեցան Հայ տպարաններու թիւն ու արդիւնքը։ Դաւանական տնտեսակէտէն, հոմէականները իրենց համախոհ մը եղած կը կարծեն Ոսկանը, սակայն յառաջ բերուած պատմական պարագաները կը ցուցնեն, թէ պատահարար և բռնադատեալ առ երեսս համակերպող մը եղած է նա, և ոչ աւելի։ Եւ այն ալ տպագրական ձեռնարկը չխափանելու և չխանգարելու համար, ինչպէս չատ լաւ զգացին իւր հալածող ու քննադատ փիթունները, և ինչպէս ցուցուցին Դավրիժեցիին պատմութիւնն և նման գիրքերուն հրատարակութիւնները։ Նոյն կէտը կը հաստատուի եւս՝ մինչեւ իւր մահուան օրը կրօնամոլ հոմէականներէ և նենգամիտ դաւաճաններէ այդ երեսէն ամբաստանուած ըլլալովը։ Թերեւմտին ալ անյայտ մնացած ըլլալը, կրնայ իբր նշան նկատուիլ թէ իւր յիշատակը պատուոյ արժանացած չէ տեղւոյն կրօնական չրջանակին մէջ։ Մենք զինքը միաբանեցինք Աստուածաչունչի նախնեաց թարգմանութիւնը այլայլելու և աղաւաղելու ձեռնարկած ըլլալուն համար (§ 1746), բայց աւելի գործին և ոչ գործողին մասին է մեր դատաստանը, որ կ'ընդունինք թէ բարեմիտ կրցած է ըլլալ Ոսկանի նպատակը, հայերէն Աստուածաչունչը թերի կարծելով, քանի որ սուրբ գրոց ուսումը Հայերուն անծանօթ էր, Եւրոպայի մէջ ալ մշակուած չէր, և Ոսկան կրնար իբր տիպար ներկայացնել լատին աշխարհի մէջ գործածական եղած բնագիրը։

1749. Ոսկանի վրայ ըսուելիքը չփակած կ'ուզենք յիշատակել իրեն վերագրուած գործ մըն ալ (ԱՐԱ.231), այն է Հայ եկեղեցւոյ նուիրապետութեան վիճակագրական ցուցակը։ Արեւմտեան եկեղեցւոյ նուիրապետութեան արքեպիսկոպոսարանները և եպիսկոպոսարաններու կանոնաւոր բաժանման դրութիւնը տեսնելով, և իւր եկեղեցւոյն պատիւը պահպանելու նախանձայուզութեամբ, նմանօրինակ ցուցակ մըն ալ կազմած է Ոսկան Հայ եկեղեցւոյ նուիրապետութեան համար, թէպէտ մենք կը կարծենք թէ իսկականին և իրականին ճիշդ պատկերը եղած պիտի չըլլայ իւր ցուցակը։ Հայոց նուիրապետութեան արքեպիսկոպոսական նահանգներու կամ մետրապոլտութիւններու, և անոնց ենթարկեալ եպիսկոպոսարաններու բաչխուած ըլլալը, ոչ միայն կանոնաւոր ցուցակներով մեղի հասած չէ, այլեւ ոմանց կարծիքով Հայ եկեղեցին այսպիսի դրութիւն ունեցած չէ։ Մենք չունենալուն համակարծիք չենք, ապա թէ ոչ դժուար կ'ըլլար բացատրել նահանգներու անունով կոչուած եպիսկոպոսները, զորօրինակ Սիւնեաց, Մոփաց, Աղձնեաց, Մոկաց, Տայոց, Եւայլն, երբ նոյն նահանգներուն գաւառներն ալ և քաղաքներն ալ յատուկ եպիսկոպոսարաններ ունեցած են։ Աւելի մէկտեղ կանոնաւոր ցուցակներ չունինք նուիրապետութեան կազմութիւնը քաղելու համար, մանաւանդ Ոսկանի ապրած դարուն մէջ, ուր այլեւս նահանգներ և գաւառներ ալ քաղաքական նշանակութիւններն կորուսած էին, և կաթողիկոսներ ըստ հաճոյս և ըստ բերման թեմակալներ կամ առաջնորդներ կը ձեռնադրէին։ Մենք կը սիրենք գնահատել Ոսկանի դիտումը որ ուզած է իւր եկեղեցին կարգաւորեալ ներկայացնել Լատին աշխարհին առջեւ, և իրականը կանոնականի մերձեցնելով ցուցակ մը կազմած է։ Աւելի մէկտեղ այդ ցուցակը կարեւոր կը նկատուի, գոնէ ժամանակին տիրող մեծ բաժանումները, և նոյն ատեն գոնուող նուիրապետութեան պատկերը գիտնալու համար։ Ցուցակը միայն լատիներէնով պահուած է, և հետեւաբար հայերէն բնագիր ալ ունեցած չէ, զի ուղղակի օտարներու համար կազմուած է։ Ոսկանին ցուցակը՝ բոլոր վիճակները երկու կաթողիկոսութեանց վրայ կը բաժնէ, այսինքն Էջմիա-

ծին և Սիս, և նշանակուած աթոռներով Ա-լիչան համրած է 138, որոնցմէ 47 արքե-պիսկոպոսական և 91 եպիսկոպոսական (ԱՐԱ. 231)։ Սակայն յուցակին մէջ (ՊԻՆ. Ա. 820), եկեղեցական նահանգ կազմող ար-քեպիսկոպոսարանները 17 են, և անոնց ներքեւ եպիսկոպոսարաններէ զատ պատ-ուակալ արքեպիսկոպոսարաններ ալ յիշ-ուած են։ Սոյ կաթողիկոսութիւնը իբր միակ նահանգ կը նկատուի, իսկ Աղթամա-րը իբրեւ պարզ արքեպիսկոպոսարան կը յիշուի, որ կաթողիկոսական անուն կը վե-րագրէ իրեն։ Մենք կ'ուզենք այս ցուցա-կին քաղուածը տալ, որչափ հնար է հայ-կական անուններուն մերձեցնելով, վի մեր ձեռքն եղած օտարալեզու ցուցակը գրչա-գրական և տպագրական չատ փոխանցում-ներ ունեցած է, և անբացատրելի անուն-ներ ալ կը պարունակէ։ Շատ եպիսկոպո-սարաններուն բուն անունէն զատ, եպիս-կոպոսին բնակած վանքն ալ ցուցուած է, զոր մենք զանց կ'ընենք համառօտու-թեան համար, բաւական սեպելով համա-ռօտ քաղուած մը տալ, և մերձաւորաբար ներկայել ժէ դարուն մէջ Հայ նուիրապե-տութեան կազմութիւնը։

ՎԻՃԱԿՆԵՐՈՒ ՔԱՂՈՒԱԾԸ

1750. Էջմիածնի կաթողիկոսութեան ներքեւ եղող արքեպիսկոպոսներն են։ Ա. Երեւան, որուն եպիսկո-պոսներն են, Առինջ. Եղի-վարդ, Մուղնի, Սաղմո-սավանք, Գօշավանք, Ծովհաննաւանք, Գեղարդ, Տիփիս, Մա-ղարդավանք, Վարդինայր, Ծոյ, Կարբի, Աղ-ջոցվանք և Գետարդել, իսկ պատուակալ արքեպիսկոպոսարաններն են, Խորվիրապ, Ուչի և Բաղէշ, բովանդակ 18 աթոռ։ Բ. ար-քեպիսկոպոսարան Բջնի, եպիսկոպոսարան-ներ՝ Կնչարխալանք, Գեղարքունի, Շողա-գավանք և Սեւան, 5 աթոռ։ Գ. արքեպիս-կոպոսարան Հաղբատ, եպիսկոպոսարան-ներ՝ Գորի, Հաղարծին և Մակարավանք, պատուակալ արքեպիսկոպոսարան, Մաքի-նոցավանք, 5 աթոռ։ Դ. արքեպիսկոպո-սարան Կարմիրվանք, եպիսկոպոսարաններ՝ Կապոյտվանք, Հերմոնիվանք, և 3 անբա-ցատրելի անուններ, 6 աթոռ։ Ե. արքեպիս-կոպոսարան Սուրբ Նախաւկայ, եպիսկո-պոսարաններ՝ Աստապատ և Նախիջեւան, պատուակալ արքեպիսկոպոսարաններ՝ Ա-դուլիս, Մանահին և Շամախի, 6 աթոռ։ Զ. արքեպիսկոպոսարան Մակու, եպիսկո-պոսարաններ՝ Ծոյ, Ուրմիա, Մարագա և Սալմաստ, և անբացատրելի անուն մը, 6 ա-թոռ։ Է. արքեպիսկոպոսարան Տաթեւ, և-պիսկոպոսարաններ՝ Մեղրի, և 3 անծանօթ, պատուակալ արքեպիսկոպոսարան Ջահրա-պատ, 6 աթոռ։ Ը. արքեպիսկոպոսարան Ասպահան, եպիսկոպոսարաններ Փարիա, և 3 անծանօթ, պատուակալ արքեպիսկոպո-սարան Շիրուան, 6 աթոռ։ Թ. արքեպիսկո-պոսարան Վան, եպիսկոպոսարաններ՝ Ար-ճէշ, Խլաթ, Կոտուց, Լիմ, Ոստան, Խիզան և Աղբակ, 8 աթոռ։ Ժ. արքեպիսկոպոսարան Աղթամար, որ [illegible] եպիսկոպոսարաններ 3 անբացատ-րելի և [illegible] անծանօթներ, ընդ-ամէնը 6 աթոռ։ ԺԱ. արքեպիսկոպոսարան Ամիդ, և-պիսկոպոսարաններ՝ Ակլ, Արղնի, Բալու, Եղեսիա, Ջերմիկ, Մերտին, Ջնջուղ և Թուլ-կուբան, 9 աթոռ։ ԺԲ. արքեպիսկոպոսա-րան Խարբերդ, եպիսկոպոսարաններ՝ 4 ան-ծանօթ, 5 աթոռ։ ԺԳ. արքեպիսկոպոսարան Մուշ, եպիսկոպոսարաններ՝ Մատնավանք և Բաղէշ, 3 աթոռ։ ԺԴ. արքեպիսկոպոսարան Կարին. եպիսկոպոսարաններ՝ Ս. Աստուա-ծածին որ է Հինձք, Ճինիս և Մամբրուան, պատուակալ արքեպիսկոպոսարան Դերջան, 5 աթոռ։ ԺԵ. արքեպիսկոպոսարան Սեբաս-տիա, եպիսկոպոսարաններ՝ Ամպատեր, Անդ-րէաս և Ս. Հրեշտակապետ, 4 աթոռ։ ԺԶ. արքեպիսկոպոսարան Կեսարիա, եպիսկոպո-սարաններ՝ Ս. Աստուածածին և 1 անբա-ցատրելի, 3 աթոռ։ ԺԷ. արքեպիսկոպոսարան Եւդոկիա, եպիսկոպոսարաններ՝ Նազիանզ, Մարսուան և Նէոկեսարիա, 4 աթոռ։ Որով Էջմիածնի կաթողիկոսութեան ներքեւ կ'ըլլան 105 աթոռներ։ Դիտելի է որ քանի մը անուններ, ինչպէս Ծոյ ու Բաղէշ, եր-կու անգամ յիշուած կը գտնուին, եթէ աղաւաղումները տարբեր կերպով մեկնուե-լու չեն։ Սոյ կաթողիկոսութեան ներքեւ նշանակուած աթոռներուն սկզբնաւորու-թեան ժամանակներն ալ նշանակուած են, և ըստ այսմ կաթողիկոսութեան ալ սկիզբը ԺԳ դար բռնած է։ Արքեպիսկոպոսարան-

ներն են, կաստանդնուպոլիս, որ պատրիարքական էջոռանդնեբ կը պահանջէ՝ ԺԲ դար, Երուսաղէմ ԺԲ դար պատրիարք չէ ըսուած, Բերիա՝ ԺԲ դար, Թեսաղոնիկէ՝ ԺԲ դար, կիպրոս՝ ԺԲ դար, և Տարսոն՝ ԺԲ դար, եպիսկոպոսարաններն են, Անարզաբա, Առանա, Մոպսուեստիա, Թիանա, Նէոկեսարիա, և Անկիւրիա, բոլորն ալ ԺԲ դար, ընդամէնն 12 աթոռ։ Այս տեղ ալ դիտելի է որ էջմիածնական աթոռներու կարգին յիշուած էին արդէն Նէոկեսարիա և Անկիւրիա։ Ծուցակին վերջը նշանակուած են ինչ ինչ եպիսկոպոսարաններ, որ անձանօթ են կամ պատրաստ են (ՊԷՆ. Ա. 823), և յառաջ կը բերուին 25 անուններ մասամբ անբացատրելի, որոնց մէջ ծանօթ կը գտնենք Բաձրբերդ, կապան, Մաչկեւոր, Բասէն, Կոպիտար, Օծոպ, Մարաշ, Բաբերդ, Նիրկերտ, Ձապաղջուր, Մեծկերտ, կարս, Կոկիսոն, Ակյաս, Ծամիզաւ, և Խորձեան, որ կը գտնենք քէ զանազան կողմերու աթոռներ են։ Ըստ այսմ աթոռներուն բովանդակ թիւը կր հասնի 144'ի, երկու կաթողիկոսութիւններն ալ միատեղ։ Հարեւանցի դիտողութեամբ ալ կը տեսնուի, որ չատ խնթիւ կերպով կազմուած ցուցակ մրն է, արքեպիսկոպոսներուն և իրենց եպիսկոպոսներուն աչխարհագրական դիրքերը միչտ չեն համապատասխաններ, և կրկնուած անուններ կան, ինչպէս դիտել տուինք։ Ցատուկ նահանգ մրն ալ կազմուած է Լոփնոցեալ Հայոց անունի ներքեւ, և հինգ պատուակալ արքեպիսկոպոսարաններու անուններ կը յիշուին, որք են. Նախիջեւան, կաֆա, Մարաղա, Տփղիս և Սուլթանիէ, բայց առաջինէն զատ միւս չորսերը ընդհատ կ'ըսուին (ՊԷՆ. Ա. 823)։ Աւելի չենք ուզեր երկարել ցուցակիս ուսումնասիրութեան վրայ, բաւական սակաւ լոյս մատուցանելու հրաւիրել Աղթամարի կաթողիկոսութիւնը չընդունելուն, և կաթողիկոսութեան և Երուսաղէմի պատրիարքութիւնները Սիսի աթոռին ենթարկելուն վրայ։ Այդ տեսութիւնները չենք կրնար իբր հաստատուն կացութիւն ընդունիլ, այլ միայն նոյն ժամանակին տիրող խառնակ դիրքին վերագրել, և տեղի ունեցող հակաթոռութեանց հետեւանք ըսել, ինչպէս մինչեւ հիմայ պատմուածներ և առաջիկային պատմելիքներ յայտնի կը ցուցնեն։

1751· Ոսկանի անձին պատկանող տեղեկութիւնները լրացնելու համար, պարտաւորութեանք ժամանակագրական կարգը առ ԵՂԻԱԶԱՐԻ ՆՊԱՏԱԿԸ ջև մղել մինչեւ 1674· այժմ պարտաւոր ենք տասը տարիով նո դառնալ պատմելու համար հակաթոռութեան չփոթութիւնները, որուն հաւատարտպէս խառնուեցան էջմիածնի, Սիսի, Երուսաղէմի և կ-Պոլսոյ աթոռները։ Այդ կացութեան առիթ առաւ նուիրակներու անտեղի ընթացքը, ինչպէս տրդէն ակնարկած ենք (§ 1742), որ և զօրաւոր պատճառանք մր դարձաւ եղիազար Այնթապցիին ձեռքը։ Սա վերջին անգամ եկած էր Երուսաղէմ, իրրեւ ընդհանուր վերակացու և գործակալ Ամառաւածատուր պատրիարքի փոխանորդագրով, տիրացած էր Ս. Յակոբայ վանքին, և սկսած էր ընդարձակել և պայծառացնել Երուսաղէմի աթոռը, նորոգութիւններով և նոր չինութիւններով (§ 1639)։ Նոյն իսկ Ամառաւածատուրի կ-Պոլսէ Երուսաղէմ գալէն ետքը, գործառնութեանց ձերը միչտ եղիազար էր, որուն աչքին պատրիարքական աթոռներն ալ յագեցուցիչ չէին, հետզհետէ աւելի բարձր ծրագիրներ կ'որոճար, և անոր համար իր անձնականէն ալ կը ծախսէր Երուսաղէմին աւելի փայլ աւելցնելու համար։ Զաքարիայի պատմութեամբ եղիազար էջմիածինէ ալ քաջալերութիւններ ստացած էր իր գաղափարին, իբր զի քանի մը միաբաններ գլխաւորութեամբ Մնոփրիոս Երեւանեցի վարդապետին, ԷրԷնէն Քաղամ Հայհայանօ ոոոս Յակոբ կաթողիկոսի վրայ, և եղիազարը հրաւիրեցին, թէ եկէ ոոոբը ՈՒոոքս, և ձէ ւեղ ոոմ զկոՈղէկոոոՐէն էջմիածնէ, և Մնոփրիոս ալ հրաւիրակ գնաց, նամակին ետեւէն (ՉԱՒ. Ր. 71)։ Իսկ եղիազարի և Մնոփրիոսի մտերմութեան սկիզբը պէտք է տանիլ այն ժամանակին, որ եղիազար Արղնի կը մնայր, և Մնոփրիոս ալ Ամիդ նուիրակ էր եկած, և քաղաքացւոց խնդրանօք Ամիդի եպիսկոպոս ձեռնադրուած։ Մնոփրիոս կանուխէն Ամիդէ ալ էջմիածին նախատական դիրեր էր գրած կաթողիկոսին և միաբանութեան դէմ, որոնք այն ա-

տեն անհետեւանք մնացին (ՁԱՓ. Բ. 67), բայց մէջ տեղ ելան երբոր իւր ղ-ղէր և ֆ-բէ գործերուն համար Ամիրայինները վէբ-ոբեալ փաղէ-ցոյց, և ստիպուեցաւ փախչիլ էջմիածին յաճախ Յ-ոբ Յէնանց, որուն տարին մչդուած չէ (ՁԱՓ. Բ. 68)։ Այնտեղ ալ ներկայանալ չի համարձակելով, ուզեց փախչիլ, բայց կաւակերտի մէջ ձերբակալուելով էջմիածին բերուեցաւ, դատուեցաւ և դատապարտուեցաւ, Յակոբ ոբեալ Հրոփ և Խոզիոց ղեան-ֆոբն, և հրամայեց բանտարկել ի մահճոփ և Խոոբոյին ֆոբէ Ն։ Սակայն Մնոփրիոս յաջողեցաւ բանտէն փախչիլ, և Ասպահան ապաւինիլ, և նորէն կաթողիկոսին հետ հաշտուիլ, և էջմիածին դառնալ, ուր կը մնար Խոչհելով ըբէ- (ՁԱՓ. Բ. 70)։ Այս անգամ ալ վերոյիշեալ գիրը եղիազարի ղրկելով, ինքն ալ ետեւէն կ'երթայ, սակայն կարինէ ետ կը դառնայ (ՁԱՓ. Բ. 72)։ Իսկ եղիազար էջմիածինի մէջ կաթողիկոսանալու դժուարութիւնները նախատեսելով, առանձինն կաթողիկոսութեան ձեւը սկսած էր Հիտքին մէջ որոճալ։

ԵՂԻԱԶԱՐԻ ԾՐԱԳԻՐԸ

1752. Իւր այս գաղտնի խորհուրդը առաջին անգամ խոստովանաբար յայտնեց Կիլիկիոյ Յակոբ կաթողիկոսին, երբ սա 1663'ին Երուսաղէմ ուխտի էր եկած։ Գլխադիրի մատուռին մէջ առանձնանալով անոր յայտնեց, Օսմանեան գաւառները էջմիածինի կաթողիկոսութենէն զատելու խորհուրդը. Կիլիկիոյ աթոռին չդպչելով, և անոր թողլով որչափ ինչ արդէն անոր կը պատկանէր, և մնացածներուն համար նոր կաթողիկոսութիւն մը ստեղծել, և զայն իրեն սեփականել, աթոռն Երուսաղէմի մէջ հաստատելով, և Երուսաղէմի ու Կ-Պոլսոյ պատրիարքութիւնները իրեն ենթարկելով։ Գործին յաջողութեան համար եղիազար նիւթական միջոցներն ունէր, Երուսաղէմի մէջ գտած թաքուն գանձն ալ մէջտեղ ըլլալով (§ 1730), Երուսաղէմն ալ պատրաստած էր արդէն, էջմիածինի խորհրդատուր անունով մատուռը չինած առեն (§ 1739)։ Հայ ազգը չուտով կրնար գրաւել նուիրականներու հանգանակութիւնները և կեդրոնումներէ պատճառելով (§ 1742), և ձրի միւռոն բաչխելով. [illegible] վարութեան հովանաւորութիւնն ալ դիւրին էր ստանալ՝ Պարսկաստանի հետ յարաբերութիւնները վերջացնելու փաստով։ Կը մնար եկեղեցական օրինաւորութեան ձեւակերպութիւնը, այս ալ պիտի լրացուէր ճանչցուած կաթողիկոսէ մը օծում ընդունելով, և այդ էր եղիազարի Յակսաուրէ խնդրած ալակցութիւնը։ Յակսաուր համոզուեցաւ, քանի որ իրեն վնաս պիտի չի հասնէր, էջմիածին պիտի տկարանար, և անչուշտ ծառայութիւնը փոխարէն պատշաճ վարձն ալ սակարկուած էր։ Կը մնար օրն ու տեղը որոշել, զոր եղիազար պիտի պատրաստէր, և Յակսաուր խոստացաւ անոր կոչին պատասխանել և օծումը կատարել, մինչեւ որ նախապատրաստութիւնները լրանան։ Այսպէս 1663 Երուսաղէմի վանքին Գլխադիրի մատուռին մէջ հաստատուեցաւ հակաթոռութեան առաջին խորհուրդը։

ԵՂԻԱԶԱՐԻ ՁԵՌՆԱՐԿԸ

1753։ Յակսաուր Երուսաղէմէ իւր աթոռը դարձած առեն հակաթոռներ յարուցանելու միտքին հաչտուած էր, ուստի կամակար գործակցեցաւ Անդրէաս Աւորի վարդապետի մը, որ իւր իսկ կաթողիկոսին դէմ հակաթոռութեան կը հետապնդէր, և կառավարութեան հաւանութիւնն ալ ստացած էր։ Ուստի Յակսաուր Բերիոյ մէջ պէտք եղած ձեռնադրութիւնն ու օծումը տուաւ Անդրէասի, և այս կերպով խռովութիւն և երկպառակութիւն թողուց Աւորոց մէջ։ Յաչատուրի րրածը Հայերուն ալ տգեղ երեւցաւ և ժժգոհութիւններ բարձրացան, գլուխ ունենալով Դաւիթ Բերիացի եպիսկոպոսը, զոր յիչեցինք Երուսաղէմի խնդիրներուն առեն Կ-Պոլիս պատուիրակ յղուելուն առթիւն (§ 1730)։ Դաւիթ, որ կարկառեցի ալ կոչուած է, անչուշտ Բերիոյ գաւառին կարկառ գիւղը՝ իւր ծննդավայրն ըլլալէն, Բերիոյ մէջ առաջնորդ կը գտնուէր, ուստի կուսակցութիւն կազմելով ինքն ալ Յակսաուրի հակառակ կաթողիկոսանալու հետեւ եղաւ։ Կ-Պոլիս գնաց, Յովհաննէս պատրիարքը չհանեցաւ, և անոր տեղեկագիրով հրովարտակ ալ ձեռք ձգեց, և Բերիա դառնալով, ու Աւորոց կաթողիկոսէն ալ պաչտ-

պանութիւն գանելով, կաթողիկոս օծուեցաւ և Բերիոյ մէջ հաստատուեցաւ Խաչատուրի դէմ, և կաթողիկոսական իշխանութիւն սկսաւ գործածել։ Այս ամէնը տեղի ունեցաւ 1663 տարին։ Խաչատուր իւթովի չկրնալով Դաւիթը յաղթահարել ու մերժել, կը պատրաստուի Կ-Պոլիս երթալ, որ այս անգամ ինքն չունի պատրիարքն ու մեծամեծները, և Դաւիթը հեռացնէ, բայց Դաւիթ փութաց եւեւէն հասնիլ. և որովհետեւ երկուքն ալ հնչուն փաստերով կը խօսէին, Յովհաննէս Թիւթիւնճի պատրիարք չկրցաւ երկուքն ալ մերժել, եւ առաջարկեց որ Սսոյ կաթողիկոսական վիճակը մէջերնին բաժնեն, եւ իւրաքանչիւրը իր մասին մէջ ազատօրէն կաթողիկոսութիւն վարէ։ Դաւիթ միշտ բան մը վաստկած կ'ըլլար, իսկ Խաչատուր պէտք ունէր որեւէ կերպով գործը վերջացնել, վասնզի անդիէն ուրիշ կարեւոր գործ մըն ալ կը ստիպէր ինքն Կ-Պոլիսէ մեկնիլ. ուստի համաձայնութիւնը գոյացաւ և խնդիրը փակուեցաւ։ Եղիազար նոր կազմուելիք կաթողիկոսութեան համար Խաչատուրի հետ համաձայնութիւնէն ետք անգործ չէր մնացած, այլ պէտք եղած գումարները մէկտեղ առնելով եկած Կ-Պոլիս, և Յովսէփ Ամասիոլու Ռոտոսթոցի վարդապետը այնտեղ գործակատար թողլով, անմիջապէս անցած էր Եւրոպա, Ֆէօրթիւլիւօղլու մեծ եպարքոսին եւեւէն, որ 1664 մարտ 20'ին Սէմլին կը գրա նուէր՝ Մաճառներու դէմ պատերազմը (ԺՈՒ. 275) պատրաստելու համար։ Մեծ եպարքոսին հետ էր իր սեղանաւորը Ապրոյ Չէլէպի. Եղիազար նախ անոր հետ բարեկամացաւ, և անոր ձեռքով իր միտքը յայտնեց մեծ եպարքոսին, որուն չատ դիւր եկաւ. Տաճկահայերը Պարսկաստան գնուղ ատեն զատելու գաղափարը։ Ընծայ և կաշառք փաստին պակասը լրացուցին, և Եղիազարը Տաճկահայոց կաթողիկոս ճանչնալու հրամանագիրը ստացաւ՝ Երուսաղէմի պատրիարքութիւնն ալ իրը նոյն պաշտօնին լրումն և նոր կաթողիկոսութեան ատեն ընդունուեցաւ։ Եղիազար և Ապրոյ համաձայնեցան գործը գաղտնի պահել, և Եղիազար առանց Կ-Պոլիսէ անցնելու չիտակ Բերիա գնաց, պէտք եղած կարգադրութիւններն ընելու։ Նամակով ազդարարեց Խաչատուրի, որ փութայ անմիջապէս Բերիա գալ, և ատեն չտնցրնելու համար, հետեւորդ և կարասի ալ չառնէ, և սուրհանդակներու հետ արագընթաց ճանապարհորդելով Բերիա հասնի, ծանօթ նպատակը իրագործելու համար։ Այս էր, որ Խաչատուրը կը ստիպէր Կ-Պոլիսէ մեկնումը փութացնել։

1754 Որչափ ալ Խաչատուր արդէն իր գործակցութիւնը խոստացած էր, բայց երբ դործադրութեան վայրկեանը հասաւ, յանկարծ վարանեցաւ, և կերպով մը խզճիխայթէ ազատուելու համար, ուզեց գաղտնի խորհուրդը քանի մը խելահասներու հաղորդել, որոնց մէջ կար նաև Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան։ Խորհուրդի հրաւիրուածներ զարմացմամբ լսեցին եղածը, և Խաչատուրը յորդորեցին զայն չգործադրել, և վրանին աւին եղիազարն ալ յուսս կասեցնել, և նոյնիսկ Քէօմիւրճեաններ, որուն եղիազար վստահութիւն ունէր և իր մօտ ունենալ ուզած էր, ճանապայ հանեցին Բերիա երթալ, և տարադէպ գործը արգիլել։ Երեմիա մեկնեցաւ չտապով, Խաչատուր ալ եւեւէն. Երեմիա չատ խօսեցաւ և թախանձեց որ եկեղեցւոյն վրայ այդ դժբախտութիւնը չբերէ, բայց եղիազար անդրդուելի մնաց՝ եկեղեցւոյն և ազգին մեծ բարիք մը ըրած ըլլալ կարծեցնելով։ Խաչատուրն ալ առիթը կորսնցնել չուզեց, և մեծ եպարքոսին հրամանագիրը իրեն արդարացում առնելով, երեմիայի խրատներուն ալ չանսաց. ԵՒ ժողովեաց զամենայն եպիսկոպոսսն որ նահանգի, այսինքն կիլիկիոյ (ՁԱՌ. Բ. 72), ու եղիազարի վրայ կաթողիկոսական օծումը կատարեց Բերիոյ Ս. Քառասունք եկեղեցւոյն մէջ, 1664 տարին, բայց օրը նշանակած չենք գտներ (ԹՈՐ. Բ. 464)։ Տեղ մը 1666 գրուած ըլլալը (ԹՈՐ. Բ. 407) գրչագրական սխալանք պէտք է սեպել։ Եղիազար հաստիւ կաթողիկոս օծուած՝ օրհնութեան անդրանիկ կոնդակ գրեց և ղրկեց բոլոր Օսմանեան պետութեան մէջ եղող վիճակներուն, Խաչատուրի ենթարկեալ թեմերէն զատ։ Նախապէս սովորական ձեւով օրհնութիւնները չտայլելէն ետքը, կը ծանրանար էջ-

ԵՂԻԱԶԱՐ ՀԱԿԱՔՈՒ

միաձինի նուիրականութեան խաւսքիններուն եւ կեղծքումներուն վրայ, և ինքն կը խոստանար բոլոր այդ զեղծումները խափանել, ձրի միւռոն բաշխել, ժողովուրդին բարօրութեան աշխատիլ, Օսմանեան հովանաւորութեամբ գործել, և օտար միջամտութիւնները դադրեցնել։ Իւր կաթողիկոսական նպարքոսին ալ հաղորդելով, խնդրեց որ Օսմանեան պաւտանէն վտարուին Պարսկաստանէ ելլող նուիրակները, և ըստ այնմ նպարքոսական հրամանագիրներ յղուեցան Սեբաստիա, Կարին, Վան, Ամիդ, և ուրիշ դիւաւոր կուսակալութիւններ։ Վիճակներէն քաւական թուով եղիազարի յարողներ եղան, բայց ոչ ամենքը, վասնզի ինչմիածնի Մայրաթոռէն գաւուխլը չաւերուն ծանր կու գար։ Յակոբ կաթողիկոսի անունն ալ սիրելի և պատկառելի մնացած էր, հակառակ իր նուիրակներէն չաւերուն անտեղի ընթացքին։ Եղիազարի օծումին կատարումը էբէլ լոօա Ռոֆբէօ, վղվղալէ փնօ ա՝ նա ՆՆգաՐնեմՔ (ՉԱՓ. Ի. 72), և միասին պատրաստելին գրգռութեան միջոցները (§1751)։ Ակէ ծագեցան հայրապետական իրաւասութեան պատկառելիները, և Յակոբեան ու եղիազարեան կուսակցութեանց կոչումները։ Կաթողիկոսի յիշատակութիւններն ալ վիճակէ վիճակ, քաղաքէ քաղաք և եկեղեցիէ եկեղեցի տարբերեցան բովանդակ Թուրքիոյ մէջ։ Արդէն Կիլիկիա ալ բաժնուած էր Հաչատուրի և Դաւիթի մէջ, Ազիամարն ալ կանուխէն իրեն սեփական իրաւասութեան վիճակներն ունէր։ Եթէ մաս մը վիճակներ չհաւած ըլլան ալ եղիազարի համար յաջողութեան սկզբնաւորութիւն մըն էր, սակայն մեծ ձախողուած եղաւ Երուսաղէմ չկարենալ մտնելը, զոր իրր կեդրոն քրիստոնէութեան՝ իրեն սիրուհիստ որոշած էր ընել։

1755։ Երբոր եղիազար 1659'ին Ս. Յակոբայ վանքին տիրացաւ (§ 1735), ամէն կողմ Երուսաղէմի նուիրակներ հանած էր, և առանցմէ մէկն էր, Սարգիս Եպիսկոպոս Թէքիրտաղցի, Հաւուաժամուր պատրիարքի աչակերտ, կամ որ նոյն է Երուսաղէմի միաբան, որուն վիճակեցաւ երթալ Կաֆայի չրջանակը, և

ՍԱՐԳԻՍ ԹԷՔԻՐՏԱՂՑԻ

արդիւնաւոր նուիրակութիւն ալ ունեցաւ, բայց Երուսաղէմ դառնալուն քիչ արդիւնք ներկայացուց։ Եղիազար կասկածեցաւ և Սարգիսի պատած քաղաքներէն ձիշդ հաչիւներ բերել տուաւ. և Սարգիս ստիպուեցաւ պարտքը ճանչնալ, և վճարումը պարտաւորութիւններով երաչխաւորել։ Եղիազար պարտագիրները կէս գինով այլազգիներու փոխանցեց, որոնք սկսան Սարգիսը նեղել, որ 1663'ին Կ-Պոլիս անցաւ միջոց ճարելու և պարտաւէրները գոհացնելու համար. բայց երբ չյաջողեցաւ, պարտաւէրներու բողոքին վրայ բանտարկուեցաւ։ Հոն իրեն բանտակից դտաւ Ղազար Սեբաստացին, զոր Յովհաննէս Թիլիփունճի պատրիարքը բանտարկել տուած էր, պատրիարքութենէ գահընկէց ընելէն ետքը (§1741)։ Մօտաւորապէս տարի մը իրարու հետ ապրեցան, բարեկամացան, և խորհրդակցութիւններ կազմեցին իրենց ոսոխներուն դէմ։ Առաջ Ղազար ազատեցաւ իւր կողմնակիցներուն միջնորդութեամբ. իսկ Սարգիս նոյն իսկ իւր պարտաւէրներէ նպաստաւորուեցաւ, որոնք նոր փոխատուութիւններով իւր պատրիարքութիւնը յաջողցուցին, որպէսզի այս կերպով հին ու նոր պարտքերը միանգամայն վճարէ։ Սարգիս բանտէ ելլելով Ադրիանուպոլիս գնաց եպարքոսին հետեւելէն, և պատրիարքութեան հրովարտակն առնելով Կ-Պոլիս դարձաւ, Յովհաննէսը վտարեց, և պատրիարքարանին տիրացաւ 1664ին։ Ձիշդ այդ միջոցին էր որ եղիազար կաթողիկոսական օծում ստացած էր Բերիոյ մէջ, և Երուսաղէմ կ'ուզէր մտնել յաղթանակով, որուն պատրիարքութեան իրաւունքն ալ ստացած էր հրովարտակով։ Աստուածատուր պատրիարք և Երուսաղէմի միաբաններ չուզեցին ճանչնալ եղիազարի պատրիարքութիւնը, իրենց կողմը չահեցան Երուսաղէմի կուսակալ Էմիրնամ փաչան, Կ-Պոլսոյ պատրիարքութեան ալ դիմեցին, որ Սարգիս Թէքիրտաղցին էր անցած, և որ եղիազարի մեծ հակառակորդն էր. սա բոլոր իւր իշխանութիւնը գործածեց, որպէսզի եղիազարի տրուած Երուսաղէմի պատրիարքութիւնը ջնջուի (§1754), և Աստուածատուրի պատրիարքութիւնը վերահաստատուի։ Եղիազար այդ արգիլքներուն պատճառով Երուսաղէմ

երթալ չհամաձակեցաւ, և աթոռանիստ տեղ չունենալուն՝ թափառական կը չրջէր Եգիպտոս, Դամասկոս, Անտիոք և Բերիա, որպէսզի իւր կողմը գօրացնէ և Երուսաղէմի տիրանայ։

ՀԱԿԱԹՈՌԻՆ ԴԻՄԱԴՐՈՂՆԵՐ

1756. Եղիազարի մէջտեղ նետած հակաթոռ կաթողիկոսութիւնը, բոլոր Հայոց թիւնը տակնուվրայ ըրաւ, և ներհակընդդէմ կիրքեր գօրացան, թշնամութիւններ ստեղծան, կաշառքներ յորդեցին, գայթակղութիւնն և բարկութեան խռովութեան վիճակը գագաթնակէտը հասան։ Եղիազարի դէմ մաքառողներէն աւելի ճիգ թափողն Եղաւ Մարտիրոս կաֆացի, որ երբեմն Եղիազարի բարեկամն էր, բայց վերջին անգամ իրեն չօգնելէն ցաւած, էջմիածին էր անցած, և Դրիմու եպիսկոպոս եղած (§1740)։ Անմիջապէս կաֆայէ մեկնեցաւ Եղիազարի դէմ պայքարին գլուխն անցնելու համար. ուր որ հանդիպեցաւ ամէն տեսակ նախատինքներով և ամբաստանութիւններով Ջանայ զայն անուանարկել։ Եւդոկիա հասած ատեն, հոն տեսաւ Եղիազարի անդրանիկ կոնդակը, և անկէ առիթ առնելով չարաչար քննադատեց, և բաժնները գիրի առնելով՝ նամակի ձեւով Եղիազարի յղեց, երբ տակաւին Բերիա կը գտնուէր. և որպէսզի Եղիազար զայն բանայ, պատուաւոր հասցէ դրաւ վրան, Կաթողիկոս Հայոց պանէայց վերատեսութեամբ։ Անկէ չտատով էջմիածին անցաւ Ցակոբ կաթողիկոսը գրգռելու, և բոլոր Եղիազարի հակառակորդներուն կողմէ խօսեցաւ։ Մարտիրոս հասած էր յաջորդ պահոց Յոյնոց ընէն (ՉԱՒՐ. Բ. 73), որ է բանլ 1665 տարեգլխին։ Նախապէս հաչտուելով Յովհաննէս Մուղնեցիի հետ, որուն պատրիարքութենէն հանուելուն գրգռիչն էր եղած (§1729). անոր ձայնակցութեամբ կաթողիկոսը յորդորել, որ միասին կոստանդնուպոլիս երթան, և հայրապետական ազդեցութեամբ և ժողովրդական համերաչխութեամբ Եղիազարը կործանեն, և հակաթոռութեան ներձուած խափանեն։ Ցակոբ առաջիկային ուղեւորութեան առաջարկը գործադրելու խոստմամբ, Մարտիրոսին յանձնարարել առաջուրնէ կ-Պոլիս երթալ, և պէտք եղած միջոցները ձեռք առնել, Եղիազարի հակաթոռութիւնը խափանելու համար։ Իսկ ինքը չանայ չրջաբերական նամակներով ժողովուրդը հակաթոռութեան ազատէն՝ զգուշացրնել, Մայրաթոռոյ իրաւունքները պաշտպանել, Հայաստանեայց կաթողիկոսութեան նուիրականութիւնը բարձրացնել, և ամէնքը միութեան և սիրոյ յորդորներով օգտագործել։ Նոյնինքն Եղիազարի ալ գրել իւր ձեռնարկին յաջողութիւնը պարզելով, և յանուն եկեղեցւոյ երկմիտցուցանելով՝ սիրայորդոր իրատանել ուղղել։ Յովհաննէս Արղնեցի վարդապետն ալ, որ իմաստուն և գիտուն մարդու համբաւ կը վայելէր, իրեւ միջնորդ և պատուիրակ ճամպայ հանեց, հանդիպած տեղերը իրատել, և Եղիազարին մօտ ալ երթալով՝ պէտք եղածը խօսիլ և կարգադրել։

Կ-ՊՈԼՍՈՑ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

1757. Ընդհանուր չփոթութեան կացութիւնը նկարագրելու համար, բաւական լայն մայրաքաղաքին Կ-Պոլսոյ ճակին վրայ ամփոփ գաղափար մը տալ, ուր հասաւ կաֆացին 1665'ին առաջին ամիսները, և Եղիազարի դէմ չարժուձմին գլուխ կանգնեցաւ։ Այդ նպատակով անխափ ամէն բաժիններու հետ միացաւ, բաւական էր որ Եղիազարի դէմ վարուելիք պայքարին այժ տային։ Այդ մասին յառաջրնթաց կը գտնուէին Պարսկահայ գաւառներէ գաղթողներ, որոնց գլխաւորներն էին Խուսրէվ և Միրզա մեծատարուստ իշխանաւորներ (§ 1742), որք սովորաբար Ջահուկեան կը կոչուէին, երկու գլխաւոր ներուն ծննդավայր՝ Նախիջեւան գաւառի Ջահուկ գիւղին անունով (ՉԱՒՐ. Բ. 72)։ Կային և Պարսկահայ գաւառներու սահմանակցութիւնէն ու Հայաստանի ներքին կողմերէն վերջին տարիներ գաղթողներ, որոց համագամայն Արեւելցի անուն կը տրուէր։ Թրլթրլ երէցին կուսակիցներն ալ, որոնք յատկապէս սկզբունքներու հետեւողներ էին, Եղիազարի դէմ միացան, որուն կանուխէն հակառակորդներն էին։ Թրլթրլեան խումբը ընդհանրապէս ստորին դասակարգի անձերէ կազմուած էր, ինչպէս հոմէական պաշտպաններն ալ կ'ընդունէին, իսաստասանելով թէ կաթոլիկ դէպանէաց ընդ

էր լար աննլան և վերավերար և զարելե ամենեցան, այնինչ վիբելիելեան և ընտանե նոց (ՋԱՄ. Գ. 702)։ Սակայն կաֆացիին նպատակին ատնք ալ կը ծառայէին, և թերևս աւելի ալ օգտակար էին յուզմունքներ գրգռելու համար։ Կաֆացին իրեն կողմ ձգեց Ղազար Սեբաստացին ալ իր Տիվրիկցիներով, որ բանտէն ազատելէն ետքը նորէն պատրիարքութեան տիրանալու հետամուտ էր, և կաֆացիին կը խոստանար՝ եթե սաղէմի գործակալութիւնը անոր թողուլ։ Սարգիս պատրիարք արդէն իսկ Եղիազարի հակառակորդ էր, բայց իր ազդեցութիւնը տակաւ նուազած էր հին և նոր պարտքերը (§ 1755), և անոնց դիզուած տոկոնները վճարել՝ և այլազգի պարտատէրներուն ձեռքէն ազատիլ չկրնալուն համար։ Այս պատճառով ստէպ թաքչելու և չերևնալու կը ստիպուէր՝ պատրիարքարանի գործերը թողլով, կանուխէն իր աչակերտակից և հաւանաբար Թէքիրտաղցի Յովհաննէս վարդապետի մը ձեռքը, գուցէ նոյն ինքն Ամանօղլուն (§1753), որ կ'երևի վերջէն Եղիազարի հակառակ դարձած էր։ Այդ զանազան բաժիններ, կաֆացիին գրգռութեան ներքեւ միացած, միաձայն կերպով Եղիազարի կործանման կ'աշխատէին, Իզմիածնի աթոռին և Յակոբ կաթողիկոսին իրաւունքը պաշտպանելով։ Կաֆացին անձամբ թաղէ թաղ և եկեղեցիէ եկեղեցի կը վազէր, ամէն տեղ Եղիազարի գործերը կը պախարակէր, կեանքը կը խայտառակէր, և ձեռնարկը դատապարտող քարոզներ կը խօսէր։ Սակայն Եղիազարն ալ իր պաշտպաններն ունէր, և այս խումբը կը կազմէին ընդհանրապէս Հռոմգիներ, ասնուն մը որ ոչ Հռոմի և ոչ Հռոմիներու հետ առնչութիւն ունէր, այլ իր ծագումը կ'առնէր առաջակոման Ասիայի կամ Անատոլուի՝ Հռոմասան կոչելէն. և այս անունն ալ գործածական եղած էր Սելճուքեան թագաւորութեան՝ Իւումի սուլտանութիւն կոչուած ըլլալէն։ Այս խումբը կը կազմուէր ընդհանրապէս հինէն Կ-Պոլիս հաստատուած կամ մերձաւորագոյն գաւառներէն մայրաքաղաք փոխադրուող Հայերէն, որոնք նուազ համակրութիւն կը ղգային դէպի հեռաւոր Էջմիածինը, և աստիճ ղղուած էին Էջմիածնի նուիրակներէն. կաֆացին կը պնդէր անոնց տակաւ փոքրամասնութիւն մը ըլլալը, և անոնք ալ կաֆացին լաւեցնելու համար, մինչև իսկ պատառնական գիրեր սփռելու միջոցներուն դիմեցին։ Եղիազարանանութեան գլխաւորն էր Ապրոյ Չէլէպին, որ անոր կաթողիկոսութիւնն ալ յաջողուցած էր (§ 1753), և Ապրոյի՝ մեծ եպարքոս Բէօքրիւլիւօղլուին մօտ լաւ ազդեցութիւն վայելելը՝ Եղիազարի և Եղիազարեանց վըստահութեան հիմնակէտն էր։

ԵՂԻԱԶԱՐ ԹԱՓԱՌԱԿԱՆ

1758. Եղիազար տակաւին Բերթիա եղածատեն ստացած էր կաֆացիին յանդիմանական և նախատական գիրը (§ 1756), և զայն հրապարակաւ կարդացած էր՝ հակառակ Բէօմիւրճեանի և իր աչակերտներէն Սուքիաս վարդապետի դիտողութեանց, մեծանձնութիւն ցոյց տալու կերպով մը։ Երուսաղէմ չկրնալով երթալ, թափառական կը չրջագայէր (§ 1754), և զանազան քաղաքներ հանդիպածատեն (§ 1755), ստէպ կը պատասխուէր ծպտիլ իբր վաճառական կամ իբր այլազգի իչխանաւոր կամ ուրիչ տարազով, որովհետև հակառակորդները գաւառներու կուսակալներն ալ կը գրգռէին իրեն դէմ զանազան պատրուակներով, և ատոնք ալ խնդրակներ կը հանէին զայն ձերբակալելու համար։ Բաւական ամիսներ անցուցած էր Եղիազար այդ կերպով, երբ 1665 ապրիլին Յոպպէէ խառնուեցաւ Եգիպտոսէ եկող կարաւանի մը, բայց Համա հասած ատենին գինքն ճանչցող գտնուեցաւ, և պատասխուեցաւ իսյս տալ օթևանէն։ Պէյլանի մէջ հանդիպեցաւ Բէօմիւրճեանի և Դաւիթի, որոնց դիտողութիւններուն հանդէպ ապագայ ակնկալութիւններ և յաջողութիւններ կը յուսադրէր վստահօրէն։ Նորէն ծպտեալ տարազով, և սրընթաց գնացքով ճանապարհ չարունակեց, մինչև հասաւ Պրուսա, միաք ունենալով Ադրիանուպոլիս անցնիլ և Բէօքրիւլիօղլուին դիմել. և այսպէս ալ կանխեց լուր հասցնել Ապրոյի, որպէսզի պէտք եղած կերպով եպարքոսին միտքը պատրաստէ։ Այս առթիւ եպարքոսական կարգադրութեամբ Ադրիանուպոլսոյ մէջ ազգային գործոց համար մեծ ատեան մը բացուեցաւ։

Յովհաննէս Թիւթիւնճին, պատրիարքու-
թենէ ելնելէն առքը (§ 1755), Թրլ-
Թրլեանններուն դլխաւորներէն երկու հո-
գի առած մեծ եպարքոսին տունէն էր
գացած մինչեւ Սերպիոյ Գլկլրատը, և Մա-
ճառաց դէմ պատերազմին ատիթ անոր
տեղափոխութենէն հետեւած, առանց ար-
դիւնք մը ձեռք ձգելու, մինչեւ որ պատե-
րազմին վերջանալուն եպարքոսին տունէն
Ադրիանուպոլիս եկած՝ այնտեղ կը դեգերէր։
Մարտիրոս կաֆացին ալ Ադրիանուպոլիս
եկած էր Յակոբեան կուսակցութենէ չատե-
րու հետ, որ Եղիազարի կաթողիկոսութիւնը
տապալէ և Աստուածատուրի պատրիարքու-
թիւնը վերահաստատել տայ արքունի
հրովարտակով, որուն հետ կապուած պիտի
ըլլար իւր փոխանորդութիւնը։ Սարգիս Թէ-
քիրտաղցին տեսնելով որ իւր պատրիար-
քութեան վտանգ կը սպառնար Թիւթիւն-
ձիին կողմէ, հարկ սեպած էր ինքն ալ Ա-
դրիանուպոլիս երթալ, որպէսզի իւր աթո-
ռը պաշտպանէ։ Այդ միջոցին կը հասնէր
Եղիազար Ախթապցին ալ, որպէսզի նոր
հրովարտակներով և նոր գործութիւնով իրա-
կանացնէ իւր նպատակը, և օծումով ու
անունով ստացած կաթողիկոսութեան իս-
կական դիրք մը տայ Երուսաղէմի մէջ սի-
րաբար հաստատուելով։ Այդ իրաւնակ կա-
ցութեան լուծումն էր որ եպարքոսէն կը
սպասուէր, և որուն վրայ ներքնակ խոր-
հուրդներով կը ճնշէին Ապտին՝ որ Եղիազա-
րի պաշտպանն էր, և եպարքոսութեան ա-
ւազ պաշտօնեայն՝ որ Կաֆացիէ չհնուած
էր։ Եպարքոսը կանոնաւոր առիւն ալ կազ-
մից, Կաֆացիին կողմէ Եղիազարի դէմ և-
ղած ամբաստանութիւններր լսելու, ինչպէս
են Աստուածատուր պատրիարքէ 200 քսակ
արծաթ դրամ առնելով ուրիշ նպատակի դր-
ծածելը, ի ծնէ Հայ եղած չըլլալը, և ան-
հրաման եկեղեցիներ չինած ըլլալը։ Ա-
կայն եպարքոսը Ապրոյէ խրատուած, ճար-
տար դարձուածներով ամբաստանութիւն-
ները ջրեց, և Եղիազարի կաթողիկոսու-
թիւնը հաստատեց, և միւս կողմն ալ չկոտ-
րելով՝ Աստուածատուրի պատրիարքութիւնն
ու Մարտիրոսի փոխանորդութիւնն ալ հաս-
տատեց Երուսաղէմի վրայ։ Արդիւնքը Մար-
տիրոսը գոնացուց, որ հրամանագիրներր
առնելով փութայ Երուսաղէմ, իսկ Եղիա-
զար չկրցաւ գոն մնալ, դի առանց Երու-
սաղէմի իւր կաթողիկոսութիւնը՝ նշանա-
կութիւն պիտի չունենար։ Իսկ Յովհաննէսի
և Սարգիսի ինդիրին մէջ՝ Եղիազար և Ապ-
րոյ ալ Սարգիսի դէմ գործեցան, պէտք ե-
ղած կաշառքներն ալ առատօրէն տրուեցան,
և պատրիարքութիւնը հաստատուեցաւ Յով-
հաննէսի վրայ, որ չուտով եկաւ պատ-
րիարքարանի տիրեց, և Սարգիս չուսախաբ
մնաց բոլորովին։ Այդ եղելութենց ժա-
մանակը իղել է նշանակել 1665 տարուոյ
մայիսի վերջերը։

1759. Յակոբ կաթողիկոս, որ անմի-
ջապէս կաֆացին ճանապայ հանած էր ձմեռ
օրով (§ 1756), ինքն ալ
չատ չուշացուց իր ուղե-
ւորութիւնը, և զատիկն
ընելով, որ 1665 մարտ
26'ին կը հանդիպէր, որոշեց մտադրութիւնը
կատարել։ Զաքարիա կը յիշէ թէ Յակոբ
կաթողիկոս կանուխէն ալ Կ-Պոլիս երթալու
միտք մը ունեցած էր, և Սանակ Մակուե-
ցի եպիսկոպոսը պնռաղել և փեղապահ նշա-
նակելով՝ մինչեւ Եւդոկիա ալ եկած էր, բայց
Ռոփրիոսի կուսակցութեան հանած չփոթ-
ներուն պատճառով ետիպուած էր ետ դառ-
նալ Էջմիածին (ՁԱՔ. Բ. 72). իսկ կաֆա-
ցիին դալէն առքը հարկ տեսաւ ուղեւո-
րութիւնը փութայնել։ Սոյն առիթով ֆաղ-
վեցան տնեցն տաՊըրք վաներէն, եպէս-
պոս և վարդապետ, և հար և անապատական,
և աշխրհական որ երեելի, և մեծաս ֆաոյ
ոաղբիեցին գնոխոցիոն (ՁԱՔ. Բ. 73)։ Այս
անգամ Էջմիածնի մէջ տեղապահ մնացող
եպիսկոպոսը Մատթէոս եղած պէտք է ըլ-
լայ, որ պնռաղել անունով կիշուած է սոյն
բացակայութեան միջոցին (ՁԱՔ. Բ. 76)։ Ձան-
պորդութեան նպատակակէտը կատարեալ
պոլիս էր, բայց Յակոբ լաւագոյն սեպեց
նախ չհզօք տեղ մը իջնալ, և այնտեղէն ո-
րոշել բնելիքը, կացութիւնը կշռելէն ետ-
քը։ Այդ դիտումով չիտակ եկաւ Զմիւռնիա,
և հոն հասաւ երբ արդէն տրուած էին Ա-
դրիանուպոլսոյ մէջ եպարքոսական վճիռ-
ները, և Մարտիրոս գացած էր Երուսաղէմ
(§ 1758)։ Իսկ եղիազար տակաւին Ադրիա-
նուպոլիս կը դեգերէր, դի առանց Երուսա-

ՅԱԿՈԲ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

ղէմի վրայ իշխանութեան՝ այնտեղ երթալ չէր կրնար։ Յակոբի նպատակը յայտնի բլլալուն, դժուար է հաւատ ընծայել՝ կոծը երթալ է Հոմ, բայց թերեւս երթալ ըսողնոյն (Պլծ. 277), մանաւանդ որ Զմիւռնիա հասնելուն պէս հրաւէր առացաւ Երուսաղէմէ, որով Աստուածատուր և Մարտիրոս կը ծանուցանէին, թէ Երուսաղէմի տիրացած են, և այդ կողմէն եղիազար տկարացած է, եթէ գայ, միասին կը խորհին եղիազարի կաթողիկոսութիւնն ալ խափանել տալ, զոր այլևս դժուարին չէին կարծեր։ Այդ առաջարկին վրայ Յակոբ որոշեց ուղիղ Երուսաղէմ երթալ, և ուր տեղէ որ անցաւ, միշտ համակրութեան նչաններ և ձեռնտուութեան նպաստներ կը ստանար, ինչպէս որ էջմիածինէ Զմիւռնիա եկած առանն ալ ստացած էր։ Եղիազար Ադրիանուպոլսոյ մէջ Ապրոյի միջնորդութեամբ կը չարունակէր Երուսաղէմի պատրիարքութեան հրովարտակն ալ առնել, սակայն Բէօրթիւլիւօղլուն այս անգամ պինդ մնաց Աստուածատուրի անունին առած հրովարտակին վրայ, որուն պաշտպանն էր իւր աւագ պաշտօնեային (§ 1758), այնպէս որ եղիազարևանները չատեր, առանց Երուսաղէմի ալ Օսմանեան երկիրներու կաթողիկոսութեամբ գոհանալու կողմն էին։ Սակայն եղիազար կը պնդէր. Ո՞ւր ապա հոգեպէտ ընտ կաթողիկոսներնին։ Ապրոն անտանելի կացութիւնէն ելնելու համար մտածեց պատրիարք կոչումի վրայ չմնդալ, որ Աստուածատուրի վրայ հաստատուած էր, և եպարքոսը փոխել չէր ուզեր, այլ Նազըր Ե Ֆրնկվելլէ կոչումներով գոհանալ, որոնք բաւական էին Երուսաղէմի ստացութեանց և մատակարարութեանց տիրանալու, անգործութեան վերածելով Աստուածատուրի պատրիարք կոչումը։ Եղիազար ստիպուեցաւ այդ ձևին համակերպիլ, ոչ միայն պատրիարք կոչումը ստանալու անհնարութեան համոզուելով, այլև վախնալով որ եթէ ուշանայ, մի՛ գուցէ Երուսաղէմի մէջ իւր թաքուցած դրամները հակառակորդներուն ձեռքը իյնան։

1760. Եղիազար Տաճկաստանի կաթողիկոսութեան համար նոր հրովարտակը և Երուսաղէմի գործակալութեան համար պաշտօնագիրը ստանալով՝ փութաց Ադրիանուպոլիէ Ռուսաստոյ իջնալ և անկէ Պրուսա անցնիլ, չիտակ Երուսաղէմ երթալու նպատակով։ Բայց եղիազարի հակառակորդներ, և գլխաւորապէս Թրլթրլեանները ու Զահուկեանները բաղդ մատուցանելով թէ եղիազարի հետ դատ ունէին, հրաման հանեցին զայն բանի կ-Պոլիս բերելու, և իրենցմէ երկուքը Սիմոն Պօտուր և Պօղոս Աներօղլու ոստիկաններու ընկերակցութեամբ Պրուսա յղեցին, որոնք գիշերայն տանիքը քակելով եղիազարը ձերբակալեցին։ Տեղւոյն կուսակալը դէմ դարձաւ առանց իրմն կատարուած գործին, և եղիազարը ձեռնլներէն առաւ. անոնք ալ եղիազարի հետեւորդներէն Մոսիրիոս (§ 1754) և Սարգիս վարդապետները ձերբակալելով կապանօք կ-Պոլիս բերին, ուր եղիազարեանք յաջողեցան վարդապետները ազատել, և եղիազարի դէմ խօսուածները հերքել։ Այսուհանդերձ հարկ եղաւ որ եղիազար կ-Պոլիս գայ իւր գործը վերջնականապէս կարգադրելու համար, ինչպէս որ ալ եկաւ, և Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին նոտաւ, և չարունակ քարոզելով աւելի եւս ժողովրդականութիւն ստացաւ և կողմնակիցներ չատցուց։ Ուրիչ թաղերու եկեղեցիներէն ալ հրաւէրներ կը ստանար, և վերջէն փոխադրուեցաւ Սամաթիոյ եկեղեցին, որ աւելի նշանակութիւն ունէր, իբրև հայաշատ կեդրոն և իբրև հին պատրիարքարան։ Եղիազար այդ յաջողութենէն քաջալերուած, կը յուսար Երուսաղէմի պատրիարքութեան գործն ալ յաջողցնել, ու կ-Պոլիս մնալը կ'երկարէր։ Բայց միւս կողմէն Յովհաննէս Թիւթիւնճին իւր պատրիարքութիւնը կորնցնելու վախով, կառավարութեան կը դիմէր՝ որ եղիազարը հեռացնեն, վասնզի բոլոր արդիւնքներ անոր կ'երթային, և ինքը իր իրաւունքներէն կը զրկուէր։ Եղիազար հրաման ստացաւ հեռանալ, և այս անգամ Ապրոյ միջնմտեց, զայն իւր տունը հիւրընկալեց, և միանգամայն կառավարութիւնը համոզեց թէ եղիազար կ-Պոլսոյ պատրիարքութեամբ չզբաղիր, այլ օրինաւորապէս ստացած կաթողիկոսութեան և Երուսաղէմի խնամակալութեան

չաներուն կը հետեւի։ Յովհաննէսի ալ խօսուեցաւ որ եղիազարն էր՝ որ պատրիարքութիւնը յաջողցուցած էր (§ 1758), և անոր հակառակութիւնը կրնար իրեն վնասել։ Յովհաննէս դիջաւ, եղիազարը իրեն մօտ հրաւիրեց Պոլսոյ եկեղեցին, և սկսան բնակակից ըլլալ, բայց եղիազարեանք յարմար չգտանելին, և եղիազար նորէն Ապրոյի տունը փոխադրուեցաւ։ Այդ եղելութիւնները յարմար է նչանակել 1665 տարւոյ վերջին կէսին մէջ։

1761. Կայսրութիւնը քիչ մը հանդարտած կը կարծուէր, և ահա երուսաղէմէ կ-Պոլիս կը հասնի Մարտիրոս Կաֆային, ամբաստանագիրներով և ցաջողիւլը ներով և բողոքագիրներով զօրացած, եղիազարը խափան տալու համար։ Եղիազարի ստացած երուսաղէմի գործակալութեան հրամանագիրը՝ կը ջնջէր Մարտիրոսի պաշտօնը, և կը քայքայէր Աատուածատուրի դիրքը, ուստի ամէնքը միացան, Յակոբ կաթողիկոսն ալ միասին, եղիազարի դէմ ամբաստանագիրներով և երուսաղէմի իրաւունքներուն պաշտպանութեան գիրերով Մարտիրոսը ճանապայ հանած էին՝ մայրաքաղաքին մէջ եղիազարի դէմ մաքառելու։ Մարտիրոս 1666 տարւոյ սկիզբները կ-Պոլիս հասնելով՝ նորէն իր չուրջը համախմբեց բոլոր եղիազարի հակառակ խումբերը, Ջահուկեանները, Արեւելցիները, և Թրլբլեանները, որոնց գլուխը կը գտնուէր Աղբէաս երէց մը, ձէհէննէմ-Մէյտիվէնի մականուանեալ, որ կը նչանակէ Դէպոէ ոսկեղօծ, և բաւական է ցոյց տալ քահանային բնաւորութիւնը։ Անդրէաս երէց Թրլբլեանց պետ եղած ըլլալ կ'երեւի, իբր յաջորդ Աատուածատուր երէցին (§ 1733), որուն այլեւս անունը չկիչուիր։ Գան մը եղիազարեանք ալ վախնալ սկսան Մարտիրոսի կազմակերպած հակառակութենէն, բազմաթիւ ամբաստանութիւններէն և տրամադրելի միջոցներէն, և սկսան խաղաղութեան և հաչտութեան առաջարկներ ընել։ Նոյնինքն Ապրոյ՝ Մարտիրոսը չհնելու կերպի ձեռք առաւ, և երեմիա Քէօմիւրճեան անգամ մըն ալ իր բարեմիտ դպրայութիւնով մէջտեղ ինկաւ հաչտութեան և իրաղաքանութեան բանակցութիւններ կատարել։ Մարտիրոս երկդիմի և կեղակարծ ձեւերով ուղեց ատեն չահիլ, և հակառակորդ կողմը տկարացած կարծելով, իր ձգտումները աւելի հեռ յառաջ տանիլ, և նոյնիսկ երուսաղէմի պատրիարքութիւնը իր անունին դարձնել, որուն համախոհ գրանուէրեան իր կուսակիցները, դի Աատուածատուր պատրիարք ձերացած և կորովէ ինկած էր։ Այդ նպատակով առաջարկներ եղան Էտպերքոսութեան աւագ պաշտօնեային, որ արդէն Մարտիրոսէ չահուած էր Ադրիանուպոլսոյ մէջ (§ 1758), և անոր հետ սակարկութիւններ սկսան, մինչ պաշտօնեայն ալ իր կողմէն՝ Ապրոյի միջնորդութեամբ միւս կողմին հետ ալ սակարկութեան կը մտնէր, տեսնելու թէ որ կողմէն աւելի չահաւոր վարձք մը կրնար ապահովել։ Բայց Ապրոյ՝ Քէօրբիւլիւօղլիի հետ մտերմութեան վտանգ պիտի չէր տեսնար վճռուելու բարձել, և պաշտօնեային կը մնար Մարտիրոսի կողմնակից։ Այս կերպով կ'անցնէին օրերը, երբ Քէօրբիւլիւօղլուն կրեւէր պատերազմին համար կ-Պոլիսէ կը մեկնէր, և պատերը չկորանցնելու համար Մարտիրոս Տեւէէն կը հանէր մայրաքաղաքէն դուրս Տաղութիփչայի քանակատեղը, և եղիազարի դէմ ամբաստանութեանց գիրերը կը մատուցանէր։ Եպարքոսը կը հրամայէր եղիազարը բերել, բայց Ապրոյ եղանակը կը գտնէր եպարքոսը համոզելու, թէ այդ խնդիրները արմատէն վերջնելու եղանակը, Աատուածատուրն ու Մարտիրոսը գործերէ հեռացնելով՝ ամենայն ինչ եղիազարի յանձնելն է, որ կարող և ազդեցիկ հաստատակամ անձն է, և նպատակ ունի օտար միջամտութիւնները ջնջել Օսմանեան երկիրներէն (ՁԱՒՐ. Գ. 712)։ Եղիազար իրեն դատ զօրացնելու համար, չատ մըն ալ գիրեր պատրաստել տուեր էր Աղեկսանդրիոյ քաղաքներէն, կարնէ, Ամիզէ, Սեբաստիայէ, Կուտինայէ, Եզդուկիայէ, Ամասիայէ, Անկիւրիայէ, և ուրիչ տեղերէ, որոնք կը գանգատէին Էջմիածնի ներքինականներուն, և նոյնիսկ Յակոբ կաթողիկոսի ոտնձգութեան առթիւ հատացած իրաւունքներուն համար. և գոհունակութիւն կը յայտնէին եղիազարի մասին, որ իրաւունք չէր պա-

հանջեր և ձրի միւռոն պիտի բաշխէր։ Նոյնիսկ Կ-Պոլսոյ հայաբնակութեան կողմէ ալ նմանօրինակ գիրեր պատրաստուած էին (ԱՍՏ. Ա. 381-384)։ Քէօփրիւլիօղլուն այդ տպաւորութեամբ. կատարեց հարցաքննութիւնները, և Մարտիրոսի ամբաստանութեանց դէմ եղիազարի բացատրութեանց հաւանելով, վճիռն արձակեց Սպրոյի թեւլադրութեան ձեւով, և եղիազար յաղթանակելով ստացաւ թէ կաթողիկոսութեան և թէ երուսաղէմի պատրիարքութեան համար նոր հրովարտակ մը։ Վճիռը տրուեցաւ 1666 մարտ 31'ին Մուտն ի վիրապ յիշատակին չաբաթ օրը (ՁԱՄ. Գ. 712)։

ԵՂԻԱԶԱՐԻ ՄԻՒՌՈՆԸ

1762. Հազիւ թէ եղիազար իր կաթողիկոսութիւնը և պատրիարքութիւնը ապահովացուց, հրամաններ ղրկեց երուսաղէմ Յակոբ կաթողիկոսը հեռացնելու. նէթ իբր հիւր կը վարուի՝ պատուով ճանապայ դնել երուսաղէմէ, իսկ նէթ գործերու կը միջամտէ՝ բռնութեամբ վտարել։ Յակոբ միաբանութեան ալ նեղութիւն չպատճառելու համար, Ս. Յակոբայ մայրավանքը թողուց և Ցունաց վանք մը քաշուեցաւ. միւս կողմէն Կ-Պոլիս երթալու պատրաստութեանց ալ ձեռնարկեց՝ բաւական դժուարութեամբ, զի դրամական միջոցները սպառած լինելով, պարտք ընելու ստիպուեցաւ։ Եղիազար ալ կը պատրաստուէր երուսաղէմ երթալ. բայց յառաջագոյն ուզեց մայրաքաղաքին մէջ ալ փառաւորուիլ հոգեղեցական հանդէսներով, և եօթը եպիսկոպոսներ ձեռնադրեց, սուրբ տեղեաց նուէրներ հաւաքեց, և 250 ուխտաւորներու կարաւան մը կազմեց։ Յակոբ ու եղիազար միեւնոյն ժամանակ ճանապարհութեան մէջ եղան, բայց իրարու չհանդիպեցան։ Յակոբ Կ-Պոլիս մտաւ 1666 սեպտեմբերին, իրեն հետ ունենալով իր պարտատէրներն ալ, որոց վճարումը մայրաքաղաքի մէջ պիտի կատարէր (ՁԱՄ. Գ. 713), մինչ եղիազար ոգոստոսին մէջ մայրաքաղաքէ մեկնած էր (ԱՍՏ. Ա. 387)։ Եղիազար առանձինն հրովարտակ ալ առած էր Ս. Գերեզմանին վրայ պատարագելու համար, որ Հայոց հին իրաւունքն էր, բայց Լատինները արգելք կը դնէին, և չյարուցակեցին ընդդիմանալ, և նոյն հրովարտակին կրկնութիւն ալ օգուտ չունեցաւ, և եղիազար ոչ կրցաւ ֆրէյթօրել այդ իրաւունքը (ԱՍՏ. Ա. 386)։ Բայց իր կաթողիկոսութիւնը նուիրագործելու համար, 1667 յունուար 6'ին միւռոնի օրհնութիւն կատարեց Երուսաղէմի մէջ, և յունուար 27'ին կոնդակովը Ձրիաբար յղեց ամէն վիճակներ։ Թիւրիմացութեան հետեւանք կը կարծենք միւռոնի օրհնութիւնն ու կոնդակը 1666'ին դնելը (ՍՏՈ. 106). զի 1666'ին կը ճչմարտուի Մուտն ի վիրապ յիշատակին մարտ 31'ին հանդիպիլը (ՁԱՄ. Գ. 712), ասկից հետքն է միւռոնի օրհնութիւնը։ Իր յաջողութեանը երկնային պաշտպանութեան գոյն տալու համար, կոնդակին մէջ կը յիշէր թէ այն ձիթենին, որուն կապուելով ձաղկուեցաւ Քիստոս, Ս. Հրեշտակապետի վանքին մէջ կը պահուի, և թէեւ մինչեւ այն տարի գրեթէ բնաւ պտուղ չէր տար, բայց այն տարին այնչափ չատ տուեր է, որ բաւական եղեր է իր ամէն կողմ բաշխած միւռոնին ձէթը մատակարարել, և թէ է ենդբոյ Լոփնոց, նոյն ձէթէն նաև Հռոմայ պապին ընծա ուղարկեց (ՍՏՈ. 106)։ Եղիազարի գիւտը հանճարեղ էր, բայց իրական չէր, զի ոչ միայն միակ անպտուղ ծառ մը այդչափ պտղաբերութիւն անհնար էր, այլեւ Քիստոս պրետորիոնին մէջ սիւնի կապուած ձաղկուած էր, և ոչ պարտէզի մէջ ծառի մը կապուած։ Ակէ հետքը եղիազար իր գիրքը այլեւս կատարեալ պէս ապահովուած տեսնելով, չինարար ձեռնարկներու սկսաւ, և բաւական չինութիւններու ձեռնարկեց Երուսաղէմի և Ցոպէի մէջ։ Միաբանութիւնը համակերպելու և Աստուածատուր պատրիարք լռելու ստիպուեցան, քանի որ արքունի հրովարտակով և կուսակալներու յղուած պետական հրամանագիրներով զօրացած էր եղիազարի իշխանութիւնը։

ՅԱԿՈԲԻ ՅԱՋՈՂԻԼԸ

1763. Յակոբ կաթողիկոս Կ-Պոլիս հասնելով, Իսկիւտարէ սկսաւ բազմաթիւ դիմաւորողներէ պատուասիրուիլ։ Արեւելցիք, Յունահայք և Թրլիրլեանք ամէն մեծարանք կը ցուցընէին, կծու ակնարկներով կը խօսէին և ծանր ամբաստանութիւններ կը կուտէին

եղիազարի վրայ, որոնք կը լսէր Յակոբ, այլ չէր ձայնակցեր, մեղմօրէն կը պատասխանէր, և սիրոյ քարոզներ կը խօսէր։ Այդ հեզահամբոյր ընթացքը մեծ ոտպատուիրութիւն գործեց ամէնուն վրայ, և մինչև իսկ եղիազարեանները յորդորեց անոր մօտենալ։ Նոյնինքն Ապրոյ՝ երեմիայի հետ կաթոլիկոսին սկսաւ առաջարկել, որ հաւանի կաթոլիկոսութեան բաժնուելուն, քող տալով որ եղիազար Օսմանեան գաւառներու վրայ իշխէ, և ինքն ալ բաւականանայ Պարսկաստանի երկիրներով։ Յակոբ քաղցրութեամբ կը լսէր առաջարկը, ոչ կը բարկանար և ոչ կ'ընդդիմանար, այլ մեղմ խօսակցութիւններով Ապրոն նեղի կը դնէր, բաժանումներու երեսէն աղգին կրած ու կրելիք վնասները բացատրելով, զորս Ապրոյ չէր կրնար չճանչնալ և չխոստովանիլ, և երեմիա կը ձայնակցէր անշուշտ։ Այս ընթացքով Յակոբ մեծ ընդունելութիւն և համակրութիւն սկսաւ չահիլ. և մինչ մայրաքաղաքի մեծամեծներուն և իշխանաւորներուն չատերը եղիազարեան էին, կը սկսէին Յակոբեան դառնալ և անոր կողմը բռնել, յորդորել և օգնութիւն խոստանալ՝ Օսմանեան կառավարութեան ձեռքով էջմիածնի իրաւունքները վերահաստատելու (ՁԱՄ. Գ. 714)։ Յակոբի գլխաւոր օգնականները կ'ըլլան Խոսրով և Միրզա, Ջահուկեանց գլխաւորներ, և վերջապէս կ'որոշուի որ Յակոբ Ագթիանուպոլիս երթայ և թագաւորին ներկայանայ էջմիածնի իրաւունքներուն պաշտպանութեան համար։ Խոսրով և Միրզա անոր կ'ընկերանան, իսկ Ապրոյ և Երեմիա ընդդիմութենէ ձեռնթափ կ'ըլլան։ Խոսրով նախապէս կը դիմէ, իր բարեկամներէն և թագաւորին մտերիմներէն Ղայմազ խան կոչուած պալատականը չահելու, որ քաղցր ընթ թափօրէն է եղեն (ՁԱՓ. Բ. 73), և անոր խորհրդով աղերսագիր մը կը պատրաստուի, և կ'որոշուի որ ուրբաթի աղօթքին առիթ Յակոբ մէկ ձեռքը աղերսագիրը, և միւս ձեռքը Փիլիպպոսի տրուած հրովարտակը (§ 1700), փողոցին անկիւնը Մէնմէտ Դ սուլտանին դիմէ, իսկ Ղայմազ լսելիք խօսքերն ալ կը թելադրէ։ Այնպէս ալ կ'ընէ Յակոբ, որ լայր կոծանօտ և զառն հեծեծանօտ, երբ երկու դիրերը կը մատուցանէր (ՁԱՓ. Բ. 74)։ Թագաւորը թուղթերը կ'առնէ, զ'լոր ընթերցէ, զ'լոր բերէ՝ լսելով, կը ճանչնայ իր իսկ տուած հրովարտակը, և ինդրուածին վրայ Ղայմազէն բացատրութիւններ կ'ուզէ. որ պատշաճը կը խօսի Յակոբին համար և եղիազարի դէմ, այնպէս որ թագաւորը բացարձակ հրաման կը տանէ, կատարել և հաստել ըստ նմին ըստ բոլոր, և դիւրաւ ընդառաջ գոլ ի սոյն իրին բերել։ Ասոր վրայ պէտք եղած հրովարտակը կը տացուի, եղիազարի տրուած իշխանութիւնները կ'առնուին, և կաթոլիկոսութիւնն ու երուսաղէմի պատրիարքութիւնը Յակոբի կը տրուին (ՁԱՓ. Բ. 76)։ Այդ յաջողութիւնը կը տանար Յակոբ այն միջոցին, որ Երուսաղէմի մէջ եղիազար ինքզինքը ապահովուած կը կարծէր։ Միւս կողմէ պէտք է գիտնալ թէ Ռոսիրիոս (§ 1754), վերջին անգամ եղիազարի հետ երուսաղէմ գացած չէր, և երբ Յակոբի յաջողութիւնը տեսաւ, անմիջապէս եղիազարի դէմ դարձաւ, և ոչ-պէս ղլջացեալ Յակոբին դիմաց, խոստովանելով թէ ահա ձանձ ըանիչ ըանօրինութեան էր Յակոբ հատոտ ատ և նանէր քանիչ նոր, և իրմէ առաջ զայն էջմիածին դրկից լինել անդ պնոտակալ (ՁԱՓ. Բ. 85), որ այս անգամ պարզ գործակալի իմաստով առնուելու է։

ՅԱԿՈԲ Կ-ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

1764. Յակոբ կաթոլիկոս այլեւս Կ-Պոլսոյ մէջ անդիմադրելի աղդեցութեան տէր դարձած, տեղական կարգադրութեանց ալ սկսաւ ձեռնարկել։ Երուսաղէմի պատրիարքութիւնը, որ իրեն վերագրուած էր, Մարտիրոս կաթողիկոսին կը փոխանցէր, և պարտ ու պատշաճ հրովարտակով և հրամանագիրներով ճանապայ կը հանէր, որ երթայ եղիազարը հեռացնէ։ Աստուածատուրի բռնաւունքը ոտնակոխ եղած կ'ըլլար այս կերպով, սակայն դիւրին է մտածել, որ Յակոբ Աստուածատուրը անձամբ ալ տեսնելէ ետքը՝ համոզում գոյացուցած պիտի ըլլար, թէ նա եղիազարը տապալելու չափ կորով չունէր այլեւս, և Մարտիրոսի պէս բուռն և յախուռն անձի մը պէտքը զգալի կ'ըլլար։ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան վրայ պանտող Յովհաննէս Թիւթիւնճեան

ձին, էջմիածնի իրաւունքը խոչընդոտ համար կանուխէն Յակոբ կաթողիկոսի աչքէն ինկած էր (§ 1742), և ժողովուրդին ալ սիրելի չէր՝ պարտքերէ ճնշուած կեղեքումներու դիմելուն համար, ուստի Յակոբ իր ազդեցութեամբ այն ալ պաշտօնանկ ընել տալով, պատրիարքութիւնը տուին Մարգիս Թէքիրտաղցիին անցուց պետական հրովարտակով։ Յակոբ, Երուսաղէմի ուղեւորութեան և Ադրիանուպոլսոյ գործառնութեանց պատճառով րրած պարտքերն ալ կրցաւ դիւրաւ մարքրել, ժողովուրդին յօժար և առատ նուէրներովը, ամէնուն սէրն ու համակրանքը գրաւած ըլլալով, իր հեզահամբոյր և առաքինազարդ ընթացքով, և միանգամայն առանց աղմուկի և չփոթի կատարած գործերով։ Հաւանական է որ Յակոբ կաթողիկոս այդ ամէնը կրցաւ վճարել մինչեւ զատիկը, որ կը հանդիպէր 1667 ապրիլ 7'ին, և պարտեան բացուելուն ուղեւորեցաւ էջմիածին, գործերը կարգադրած, էջմիածնի իրաւունքները պաշտպանած, և Եղիազարի հակաթոռութեան գայթակղութիւնը դարմանած ըլլալու գոհունակութեամբ (ԶԱՄ. Գ. 715)։

ՄԱՐՏԻՐՈՍ ՑԵՐՈՒՍԱՂԷՄ

1765. Մինչեւ այն ատեն, արդէն Մարտիրոս հասած էր Երուսաղէմ, և Եղիազարը վտարելով պատրիարքութեան տիրացած։ Որչափ ալ Եղիազարին փառամոլ ձգտումները, և ազգը գայթակղեցնելը ու խռովութեանց պատճառ ըլլալը մեղադրանքէ զերծ համարել հնար չըլլայ, սակայն հնար ալ չէ անոր յաջողակ և չինարար գործունէութիւնը ծածկել։ Ան համառօտ միջոցին մէջ, որ Երուսաղէմի տիրապետեց, դարձեալ բաւական նշանաւոր երախտիքներ ունեցաւ աթոռին համար։ Վրաց վերատեսուչ Մելիտիոս վարդապետին՝ Ս. Յակոբայ վանքին տիրանալու յաւակնութիւնները արմատաքի ոչնչացուց. Ս. Յարութեան տաճարին մէջ Հայերուն վայելած իրաւունքները, տեղերը, կանթեղները, աշտանակները, պատկերները, սովորութիւնները, աւելածուքիւնները, թափորները, և ուրիշ կէտեր՝ պետական արձանագրութեամբ արձանագրել տուաւ և ապահովցուց։ Դարի Բերբերին, որ Կիլիկիոյ աթոռէն բաժնուած մաս մը վիճակներու վրայ կաթողիկոսութիւն կը վարէր (§ 1753), չփոթ կացութենէն օգուտ քաղելով, սկսեր էր միւռոն ղրկել և նուէր տալ Բերբոյ չրջակայ էջմիածնի պատկանող վիճակներէն։ Եղիազար զայն ալ զսպեց, և պետական հրամաններով Դաւիթի նուիրակները արտաքսեց (ԱՍՏ. Ա. 390)։ Եւ երբ ամէն կողմէն իր դիրքը ամրացուցած կը կարծէր, անա իր դիմացը կը կանգնէր Մարտիրոս նորագոյն հրովարտակով մը, որով Երուսաղէմի պատրիարքութիւնը Եղիազարէ առնուած էր, կաթողիկոսութիւնն ալ ջնջուած էր, քանի որ Յակոբ արտօնուած էր Օսմանեան պետութեան մէջ եղող դաւառներուն վրայ կաթողիկոսական իրաւունք վարել։ Եղիազար անակնկալի հանդիպած անձի մը չուարումը ունեցաւ, պի իր զօրաւոր պաշտպաններն ալ դարձած կամ պարտուած էին Կ-Պոլսոյ մէջ, ուստի ստիպուեցաւ անհակառակ տեղի տալ, և քաչունեցաւ Իամիէի վանքը, զոր ինքն չինել տուած էր (§ 1639), և փիչ ետքը անկէ ալ հեռացաւ, և գնաց Արզնի (ԶԱՄ. Գ. 715), որ իր անդրանիկ պաշտօնավայրը և գործունէութեան առաջին ասպարէզն էր եղած, և անդ դադարեցաւ բարեպատեհ աւրիի սպասելով նորէն մէջտեղ երեւնելու համար։ Իսկ Երուսաղէմի միաբանութիւնը որ նախապէս լուած և ընդունած էր Մարտիրոսի պատրիարքութիւնը, որպէսզի անոր ձեռքով Եղիազարը վտարէ, երբոր նպատակին հասաւ և կացութիւնը ապահովեց, սկսաւ նորէն իւրտիլ և Աստուածատուրի պատրիարքութիւնը պաշտպանել։ Մարտիրոս հարկ չտեսաւ դիմադրել, վասնզի այլեւս Աստուածատուր անուանական և պատուակալ պատրիարքութենէ աւելի բանի մը կարող չէր իոր ծերութեան հասած ըլլալով, և յանձնառու եղաւ, պատրիարքութեան անունը և պատիւ անոր թողուլ, իրեն պահելով փոխանորդութեան, կամ ինչպէս կ'ըսէին Նոզըր անունի կիրառութիւնը (ԶԱՄ. Գ. 715), զոր աւելի ճշդութեամբ կրնայինք աթոռակից պատրիարքութիւն կոչել։ Այդ փոփոխութիւնը կը դրուի 1668'ին, Մարտիրոսին գալէն ոչ չատ ետքը, իսկ տեղողութիւնը դարձեալ յոյժ կարճատեւ։

1766. Եղիազար երբոր լսեց Երուսաղէմի մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը, և Մարտիրոսի պատրիարքութիւնէ հեռացը, փութաց Կ-Պոլիս գալ, և Ջէօբբիւլիօղլուի մօտ Ապրոյի միջնորդութեամբ դիմումները կրկնել, նուէրներն ալ առատացնել, մինչեւ որ յաջողեցաւ իւր արդէն ստացած հրովարտակները նորոգել տալ, ու պատրիարքական կոնդակը նորէն Երուսաղէմ երթալ 1668'ին (ԱՍՏ. Ա. 392). Բայց չկրցաւ երկար վայելել, զի Մարտիրոս Կ-Պոլիս դարձաւ, և նորէն իր վրայ անգութ Երուսաղէմի պատրիարքութիւնը, Եղիազարը ամբաստանելով թէ անհրաման չինութիւններ կատարած է: Սակայն ընտրած միջոցը ձախող ելք ունեցաւ, և հրաման հղաւ ու պաշտօնեաներ յղուեցան անհրաման չինութիւնները քակելու, և Մարտիրոս պատասխանեցաւ Եղիազարի դիմել, այս բանին առջեւն առնել, և սա կրցաւ կաշառքներով պաշտօնեաները գոհացնել, և դէպ ի բերդին չինուածքը սկսան եկեղեցւոյ և վանաց քակելով, հրամանը կատարած ըլլալ: Եղիազար նորէն իր դիրքը վտանգուած տեսնելով, կամովին հեռացաւ Երուսաղէմէ, և Պրուսա քաշուեցաւ անդրադառնալու համար, եպարքոսական հրամաններով պատասխան կացութիւն մը ապահովելով: Այսուհետ միջանկեալ պարագայ մը կը պատմէ Երուսաղէմի պատմիչը (ԱՍՏ. Ա. 393), զի ուրիշներ կը գրեն, թէ Երուսաղէմի մէջ Աստուածատուրի պատրիարքութիւնը և Մարտիրոսի փոխանորդութիւնը վերահաստատուելուն վրայ (§ 1765), Հաց պատրիարքութենէն Եղիազարի յորդորեալ վերադարձաւ Երուսաղէմ (ՋԱՄ. Գ. 715): Մեր ձեռքը բնագիր յիշատակարաններ կը պակսին իսկութիւնը ճշդելու համար: Եղիազարի միջանկեալ գալուստին վրայ՝ որն և ըլլայ աստուգութիւնը, Մարտիրոս էր որ Երուսաղէմի գործոց գլուխ կը գտնուէր, երբ Աստուածատուր Տարոնեցին խոր ծերութեան մէջ կեանքը կնքեց 1671'ին, ինչպէս ունի Երուսաղէմի Ս. Փրկիչին մէջ եղող տապանաքարը (ԱՍՏ. Ա. 393), թէպետ ոմանք 1670'ին կը դնեն (ՋԱՄ. Գ. 715, ԲԱՒՒ. 55): Աստուածատուր պատրիարք յաջորդած էր Պարոնտէրին 1645'ին (§ 1688), որով 26 տարի պաշտօն վարած կ'ըլլայ, թէպետև իսկապէս չատ քիչ միջոց գործի գլուխ գտնուեցաւ, երբեմն բացակայ և երբեմն գահընկէց ըլլալով, երբեմն ալ լիազօր գործակալներ ունենալով իւր մօտը, որք տիրապէս պատրիարքութիւն կը վարէին: Բնաւորութեամբ հնազանդոյր և ուղղութեամբ առաքինի անձի մը տիպարը կը կերպարանէ Աստուածատուր, որ անտրտունջ ամէն կացութեան հետ համակերպած է, չուզելով երբեք հեռանալ և լքանել Երուսաղէմը, որուն օգուտն եղած է իւր գլխաւոր նպատակակէտը, ինչ ալ ըլլար իրեն թողուած դիրքը կամ բռնադատեալ կացութիւնը: Աստուածատուրի մահուամբ Մարտիրոս նովին իսկ պատրիարքութիւնը ստանձնեց, որուն համար նախապէս ստացած հրովարտակներ ունէր, և արդէն ալ փոխանորդի անունով պատրիարքութեան վարիչն էր:

1767. Աստուածատուրի մահը նորէն կը գրգռէ Եղիազարը՝ Պրուսայի հանգիստը թողուլ և Կ-Պոլիս գալ և իւր կաթողիկոսութիւնը վերակենդանացնել, Երուսաղէմի պատրիարքութիւնը ձեռք ձգելով: Նպաստաւոր պարագայ մըն էր Կ-Պոլսոյ պատրիարքին փոխուած ըլլալը: Սարգիս Թէքիրտաղցին, որ սկիզբէն Եղիազարի հակառակորդը եղած էր (§ 1755), վախճանած էր 1670'ին, և Իսիրնէքաբուի գերեզմանոցը թաղուած (90 ԱՄՍ. 202): Ժամանակամիջոցիս համար բաւական նորանչան եղելութիւն մըն էր Կ-Պոլսոյ պատրիարքի մը բնական մահուամբ պաշտօնին մէջ մնռնիլը: Սարգիսի յաջորդած էր Մաւրիանոս Մեղրեցի, Էջմիածնի միաբաններէն, նոյն ինքն որ 1660 տարւոյ մեծ հրդեհին պատմութիւնն էր գրած (§ 1740), և որ անչուշտ նորէն Կ-Պոլիս կը գտնուէր նուիրակութեան պաշտօնով, հանդարտաբարոյ և բան կաթի գրոց այակերտ և կիրքերու չծառայող անձ մը (ՋԱՄ. Գ. 715): Ուրիշ պարագայ մըն ալ կար՝ որ կրնար Եղիազարը քաջալերել: Երուսաղէմի աթոռին վրայ եղող և իշնող պատրիարքներէն՝ թէ ոչ ամէնքը, գոնէ չատերը, դրամական ոյժով նպատակին յաւուշ վարիլու համար,

նոյն իսկ սուրբ սպասները գրաւի դնելով փոխառութիւնից կը դիմէին, որով աթոռին կալուածները՝ կը նուազէին և տաճարին գանձարանը կը պարպուէր։ Միաբանութիւնը այդ անտեղութիւնն առջեւն առնելու համար կառավարութենէ հրաման հանել տալ կ'ուզէր, չի պարբերական ներառելի ի չիներն տեսել չնեա ի կալածս և ի կրօնից վնաս (ԱՍՏ. Ա. 391), և այդ մասին յատուկ գանգատ ալ կ'ընէին Մարտիրոսի դէմ, թէ չմինչեայ կալածս և ընթացածս վաճառս ի նա եւ նորա և նորոյ (ԱՍՏ. Ա. 394)։ Եղիազար այդ մասին անբաւիր կրնար ըսուիլ, զի մեծահարուստ ըլլալով, ոչ միայն աթոռէն բան մը չէր հաներ, այլև իրենէն դայն կը պայծառացնէր։ Այդ պարագաներ, և Քէօքրիւլիօղլուի առջեւ Ապրոյի պաշտպանութիւնը, և նոյն ինքն մեծ Լալարքոսին եղիազարի վրայ կազմած լաւ գաղափարը (§1761), չմոռնանք կաշառքներուն ոյժն ալ, գործը դիւրացուցին, և անգամ մըն ալ եղիազար կրցաւ Երուսաղէմի պատրիարքութեան հրովարտակ ստանալ, և կրկին զօրութեամբ Երուսաղէմ դառնալ ու աթոռին տիրանալ, կաթողիկոսակրպ ճոխանալ, և անանց որ իրեն կը դիմէին կաթողիկոսական չնորհաբաշխութիւններ ընել, առանց պնդելոյ նոյնը տասածել Թուրքիոյ բովանդակ Էջմիածնանպատակ վիճակներուն վրայ։ Իսկ Մարտիրոս կաֆացին տիպեալ Երուսաղէմը կը թողու, և Կոստանդնուպոլիս կու գայ, բայց Երուսաղէմի պատրիարքի անունը պահելով՝ իրեն համար առաջնորդարան մը կը բանայ այստեղ, և Երուսաղէմի օրհնութեան կոնդակներ գրելով և ցրուելով, նուէրներու համ աւելի ճիշդ հասոյթի աղբիւր մը կը պատրաստէ իր անուանական պատրիարքութեան։ Հրովարտակ ալ կ'առնէ իր պատրիարքութեան համար, և ուրիշ մըն ալ՝ ինքը չմեռած ուրիշը պատրիարք չանուանելու համար, սակայն ատոնցմով մէկտեղ Կ-Պոլսէ չհեռանար, գոհանալով այս տեղ հաւաքած գումարներով (ԱՍՏ. Ա. 378)։ Իսկ Եղիազար 1671'ին վերանորոգած իշխանութիւնը անխափան կը պահէ 10 և աւելի տարիներ, Երուսաղէմի վրայ անվըրդով իշխանութեամբ և կաթողիկոսական անունով, մինչև որ Էջմիածնի Մայրաթոռի վրայ իբր օրինաւոր կաթողիկոս բազմելու փափաքին կը հասնի։

ՅԱԿՈԲ ՑԷՋՄԻԱՑԻՆ

1768. Յակոբ կաթողիկոսի Կ-Պոլիս եղած միջոցին Երեւանի կուսակալը փոխուած էր, և Աբաս խանի տեղ եկած էր Սաֆի խան, ծագմամբ Լէզկի, որ այլ մտկնկր էր իւրացնել գնդէ և ըսչէին զոր Յակոբ չինել տուած էր Էջմիածնի քովը (§ 1728), բայց Մատթէոս աթոռակալ կամ տեղակալ դիմադրեց, բուն տիրոջ բացակայութիւնը և իր իշխանութիւն չունենալը պատճառելով։ Հազիւ թէ Յակոբ դարձաւ և խանին տեսակցութեան գնաց, Սաֆի փոխադարձաբար Էջմիածին գալով, նորէն խնդրեաց զնվէ, այսինքն է ջրամբարները, բայց Յակոբ անհնարութիւնը յայտնեց ըսելով, թէ կենդանի չէ և կենդանեղէն անհնարէ (ՁԱՓ. Բ. 77), որովհետեւ արտեր ու այգիներ անոնցմով կ'ոռոգուէին (§ 1728)։ Սակէ ետքը Յակոբ կ'ուզէ Աստուածատուր երթալ և չահ Սիւլէյմանին ներկայանալ, որ քիչ առաջ 1666'ին յաջորդած էր հօրը Շահաբաս Բ'ին։ Սա նոյնն է որ երբեմն Շահսէֆի Բ ալ կոչուեցաւ (ՁԱՓ. Ի. 84)։ Յակոբ պարտք կը զգար արտասահմանէ դարձին իր յարգանքը մատուցանել, միանգամայն տուրքը վճարել և ընծաներ ալ տանիլ, իսկ Սաֆի արգելք կը դնէր՝ կասկածելով որ իր վրայ պիտի դանգատի։ Ուստի երբ Յակոբ վերջապէս ճանապարհ ելաւ, զայն Աստապատէ ետ դարձուց, և Երեւանի մէջ Ս. Աստուածածնի Աստապատը է գէղաձոյլ օրօր, և ոչ մի կերպով չուզեց ազատ թողուլ։ Միանգամայն զանազան անձերէ գումարներ փոխ առաւ Էջմիածնի անունով, իբրև թէ աթոռին պարտքերը վճարելու համար, սակայն ինչն լափեաց, ոչ Յակոբի յանձնեց և ոչ տեղը դրկեց (ՁԱՓ. Բ. 78)։ Յակոբ չկրնալով խնդրանքով իր ազատութիւնը ստանալ Սաֆիէն, փախուստի միտքը ունեցաւ, օգտուելով պահապաններու թոյլտուութենէն, որոնց հետ ատէպ ելլելէ և գնայլ օր և կոչել։ Գարնանային միջոցին է Ցառաց աշխարհն (ՁԱՓ. Բ. 78), այսինքն Օսմանեան գաւառներէն ուխտաւորներու գալուստը լաւ առիթ մըն էր, ուստի կանուխէն իր գոյքերը ճանապայ հա-

նց դէպ Արտաւիլ, և Համբարձման օրը 1668 ապրիլ 30'ին հեծաւ ղլըչ ի՛ր և նոբէչէյ սաղոբ ճանապարհա՛ւ ևկաւ եղիվարդ, և չարունակ ձիավարելով և փալաչիբ և ռնէրչի՛ղ ուղեկիցներ առնելով, հնազհնաէ հանդիպեցաւ Նիգի Զորոյերան, Լօռիի Դսեղ, և Աղուանից Բարկուչաա գիւղերը, մինչեւ հասաւ Պարսկաստանի Արտաւիլ քաղաքը, ուսկից հանդարտ գնացքով անցաւ Ապահան (ՉԱՓ. Բ. 79)։ Այնտեղ նախապէս փոխարքայ Էհտիմալ-Տէլուաթի հետ տեսակցեցաւ, և մատոյց թագաւորին համար նուէրները, սաթէ տոգան մը, բուստէ պոփկէր մըրդոյ, 10 ոսկի ժամացոյց, և ալ ինչ պոզլաճաւոբ, և 50 ոսկի նոր հրովարտակի համար։ Միանգամայն բացատրեց իւր թուրքիա երթալուն չարժառիթը, այն է էջմիածնի տուրքը գլացող Տաճկահայերը նորէն հպատակութեան բերել, որուն հաստատութիւնն էր Օսմանցոց սուլտանէն առած հրովարտակը (§ 1763), զոր ներկայեց, և վրայ բերաւ Սաֆի կուսակալէն կրած հակառակութիւնը և անիրաւութիւնը (ՉԱՓ. Բ. 81)։ Սաֆի ալ իւր կողմէն Յակոբի փախուստը իմանալուն, և բոլոր հնազօտութիւններուն պարապի ելլալուն վրայ, ծանր ամբաստանութիւններով տեղեկագիր մը ղրկած էր (ՉԱՓ. Բ. 80)։ բայց փոխարքան կանուխէն ալ Սաֆիին հակառակորդ էր, և բան այնմ ալ ներկայացուց գործը թագաւորին, որ վճռեց, երթ խոնէկըն ղրէն էրէն, ռէ՛ ընդէ՛ր ալ էրէմ՛, և հրամայեց կաթողիկոսը պատուել, իսկ Սաֆին պատժել, մերկացնել և կապել, կողոպտել այնպէս որ գինէ չլանաց ոթոշըն եա՛ հանցէն, և չղիայակապ քանտարկել Վարդավուրի բերդը, Գուլապի գեւառը։ Այսպէս ալ կատարեց Աթաբաստականի կուսակալ Միրզա Իպրահիմ, որուն յանձնուեցաւ վճիռին գործադրութիւնը (ՉԱՓ. Բ. 82), իսկ կուսակալութիւնը անդրպատութեամբ վարեց Սարուխան բէկ իրր ամ էրէսա (ՉԱՓ. Բ. 89)։

1769. Նկատողութեան արժանի են Մնոփրիոս Երեւանեցիի վերջին անցքերն ալ։ Աթոռէն ճանչցուցած ենք այդ անհանդարտ և անխիղճ եկեղեցականը, որ իւր կեանքին սկիզբէն ամէն տեսակ ապօրինութեանց մէջ գտնուած էր (§ 1751)։ Ժողովուրդ կոբկոբ մակնուներ ստուած էր անոր, որ ասերիչ բնաւորութեան նշանակ է։ վերջին անգամ Յակոբ կաթողիկոսի հրամանով էջմիածին գալէն ետքը (§ 1763), նոր նենգութիւններ հնարած էր Յովհաննէսեանքի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսի դէմ, սուտ մատենահակներով և անտեղի պահանջներով, թէպէտեւ չուտով խայտառակուած էր։ Յակոբ կաթողիկոս էջմիածին գտնալով և ըրածը լսելով, բաւական սեպեց յանդիմանել և ռոպէ՛լ լաեցոյց (ՉԱՓ. Բ. 86), բայց և միանգամայն Գեղամայ գաւառին նուիրակութեան ղրկեց։ Երբ կաթողիկոսը է էլպահ եղե (§ 1768), Մնոփրիոս Սաֆի խանին կողմը բռնեց կաթողիկոսին դէմ, յուսալով կուսակալին միջնորդութեամբ կաթողիկոսութեան հասնիլ, և սուտ լուրեր ալ կը տարածէր, թէ Ռուբէյն կաթողիկոսութեան հասնիլ է գալ։ Բայց երբ իրաց կերպարանքը փոխուեցաւ և կրծանեցաւ խանն, Մնոփրիոս ուղեց Ապահան ապաւինիլ, բայց Սաֆին և գործակիցները պատժելու եկող պաշտօնէին մարդիկը, նիզբա գիւղը հասան, Ձերքակալեցին և Զանկեանի մէջ չղթայակապ բանտարկեցին։ Այս անգամ ալ Յակոբ զայն ազատեց, և եա՛ ի՛նա վէրաղ-ըրի՛ն ֆըթուդ գանն կաթողիկոսարանին, և ֆամսուրնեաբ ներ ռանէր ընդ նու իսկ ղրէն ալ զ-ռաբերէր ֆալըն ռանել ղլբռ-ըրէնն, և ռոանդ ֆէռեղլ-կըռղէկոսին ոբր պրաս բաղմ։ Յակոբ կաթողիկոս էջմիածին գտնալով, երբոր տեսաւ որ իւր հրովարտակը հասած չհասաւ, պարտաւորեցաւ նորէն Ապահան գտնալ, և աղերսամատոյց ըլլալ, և հրովարտակը չնորհուեցաւ։ Միանգամայն ատացաւ զբռոնալան էլչին ըսկ ռաէրռ-ըրնեան, ֆելէչիլ պաֆռաճան ռակնէ՛ր, և ֆռիլ պաֆռաճան, և ռամռոբ վէրռրէռ, և ֆլեռ ֆռաֆ որ ի՛ ռանդել, և երկար ղրեղ (ՉԱՓ. Բ. 87)։ Այդ առթիւ Իոսոսի որդի Սաֆիղուլի խան երեւանի կուսակալ անուանուեցաւ, և չանը ի՛նա չանչնեաց չկռնդկռնան։ Մնոփրիոս դիմադրելու էր պատրաստ, և ի պարտին նոր կուսակալին հետ վուխտաց չուտով երեւան հասնիլ՝ մեծակայ Մինդհան ռանր ինքր կա-

տարելու դիտմամբ, և ճրագալոյցին երեւան մտաւ, մինչ կաթողիկոս նուիրէն կու գար։ Մոփրիոս զգեստաւորուած էր, առնել ջրօրհնէ առաջի նորին, և ահա կը հանդի կաթողիկոսը։ Նոր կուսակալի հրամանով Մոփրիոսէ հանելով զգեստները, դիեցուցին նորին, և արբին ոչխարանէս ջրօրհնէ առաջի նորին, որ և հրաման ըրաւ կաթողիկոսին, դի արդէս և նմէ առնել ընդ կաթոլիկոսին, արաջե։ Յակոբ որ այնչափ ներողամիտ եղած էր Մոփրիոսի հետ, անոր վերջին նենգութիւնները լսելով և յանդգնութիւնը տեսնելով, զայն կարգալոյծ ըրաւ ի ծէ եկեղեցւոյ, և առեալ մէրթ խաչէից գիլոնին և ապա ընծրուան։ Մոփրիոս կ'ապաչէր, Մեղաս ի խաղէր. որուն կաթողիկոսը կը պատասխանէ. Ոչ ասելի Աստուծոյ, զոր ասացեալ ես, ըն ես հաստեմ զիլոնի նորին և հաստատեմ զնա ի վերայ իշխան պետին, առնել ի վերայ նորա պարտուց, որք դեռ ունէ մօրաս ի տան գիլոնի իմ։ կարգալոյծ Մոփրիոսը չդիմացակալ բանտարկուեցաւ յաջորդն ընդդէն (ՁԱՓ. Բ. 88), որ մահամոտ խոշտանգին ենթարկեց ի ըսուած է (ՁԱՓ. Բ. 70)։ երբոր սննդակիր խուզարկեցին, գտին ի բեռն գիրոց նորին, և երբոր ընթերցան կողոպտին, այսինքն կալուածներու վաւերագիրները ուզեցին, նա ոչնայր. բայց երբ ենթարկեցան տրին ընդ ի բանտին, քանորդութեան ձեռքով երեւանէ բերել տուաւ, որոնց մէջ գտնուեցան կաթոլիկոսութեան հետապնդելուն գիրերն ալ։ Բանտին մէջ երկար չապրեցաւ, դի կոչել ատեն ոչնչ հեծեծանօք մեռաւ (ՁԱՓ. Բ. 89)։ Թէպէտև պատմիչը տարի չնշանակեր, այլ հաւանական կ'երեւի վերոյիշեալ ջրօրհնէքը դնել 1670 յունուար 6'ին, հինգշաբթի օր, նկատելով որ ամ եղեռն կը գրուի Սարուխանի կուսակալական անզգուշութիւնը (ՁԱՓ. Բ. 89)։ Իսկ Մոփրիոսի մահը կրնայ գրուիլ նոյն տարւոյ մարտի մէջ, հետեւցնելով միայն ասոր նշանին մէջ ապրած ըլլալէն։ Աւելորդ չէր այդ մանրամասնութիւնները գրել մարդու մը վրայ, որ թէպէտ անարժան, բայց չարութիւնը մէջ ճարտար դէմք մը եղած է։

1770. Սաֆիզուլի խան, որուն յանձնած էր չան Սիւլէյման կաթողիկոսին պաշտպան կանգնել, չատ չուտ սկսաւ նորեցոյց չարչարել։ Թաւրէզէ քաղ կանոչ բերել տալով երեւանի մէջ հաստատեց, և այս մասին պատմիչը կը յաւելու, ոչ եր բնաւ աւերբունեան մէջ աչխարհ պահել քաղ (ՁԱՓ. Բ. 89), ինչ որ եթէ բանալի ուղիղ է, լաւ պարզաբար կու տայ Հայաստանի քաղաքներուն վրայ։ Իսկ Գարսիկներուն մասին դիտելի է, որ նոյնինքն թագաւորն ալ իւր կիրքերը յագեցնելու համար, բանաբնեմբ պայր բերել վնասոյ ծածկել չխնայեց (ՁԱՓ. Բ. 83)։ Սաֆիզուլիի չարիքը ժողովուրդին վրայ ալ կը տարածուէին, դի կեղեքելով ու բանանալով դրամ դիզելու կը նայէր։ Հրամայեց մնծատուն և օտարական մեռելներ չթաղել՝ վճարմամբ հրամանագիր չտուացած. գողերը չէր պատժեր, այլ միայն տուգանք կամ բաժին առնելով կը թողուր ազատաբար գործել. անձրեւի աւուն քրիստոնէից կ'արգիլէր տուներէ ելլալ, որով աւետաւերը կը մնասուէր. իսլամներու չէր ներեր քրիստոնէից եկեղեցիները մտնել, մինչդեռ աստիք այն տեղեր կ'երթային բժշկութեան համար։ Այդ պատճառներով նոյն իսկ Գարսիկներ իրեն դէմ բողոքող եղան, և պաշտօնանկութիւնը հետապնդեցին։ Հարկահանութեան խստութիւններուն մասին ալ իրենց նմոյշ կրնայ ծառայել, նոյն իսկ Զաքարիա Քանաքեռցի պատմիչին հօրը պատահած արկածը։ Սալան աղա անուն դաւալիք Օսմանցի մը, Գարսիկներէ պաշտօնի դրուած, Քանաքեռի վրայ հարկահաւաք կու գայ, որպէս դի էրեսոյ էլոխս առնէ և ամենայն էրցն, ըստ այնմ գլխահարկ պահանջելու համար։ Ամէն տանուտէրներ սկսան ներկայել իրենց արու զաւակները և մերձաւորները։ Մկրտիչ Քանաքեռցի, Զաքարիայի հայրը, հաչատուր որդին առջեւ ձգած, և Զաքարիան չալակած կը ներկայանայ։ Ասլան տեսնելով որ տղաքը փոքր և կղ և ընթ ոսկրք են, որով տուրքէ ազատ պիտի մնան, կը բարկանայ և կը հրամայէ Մկրտիչը գետինը պառկեցնել, լաւ մը թըրջել, և մէկ մը գլխուն՝ մէկ մըն ալ ոտքերուն վրայ նստեցնելով չորս հոգիի ծեծել կու տայ այնչափ՝ որ Մկրտիչ անընչացաւ և համբերին ընդ հետել։ Պատճառն էր, իբր

թէ ողջ տղաքը ծածկելով խեղանդամները ներկայացուցած ըլլայ։ Նոյն գիւղի մէջ Բարսեղ և Ղազար անուն երկու անձերու եղունգները հանել կատայ, Մարուգէ անուն անձ մըն ալ մէկ ձեռքէն կախել տալով գանակոծել կը հրամայէ։ Ծերերը պահարկ նկատելու համար նշան րրած էր, որ չկարենան պլուխնին չիտակ և ձեռքնին առջեւնին բռնելով քալել։ Իսկ աղայոց համար ալ նշան րրած էր որ վիզերնուն չափ քիւլի մը ծայրերը, ակռաներով բռնած առնենին՝ օդակը կարենայ գլուխնուն վրայէն անցնիլ (ԶԱՓ. Ա. 66)։ Այսպիսի քահանայ կարգադրութիւններր կը յիշենք իրրեւ նմոյշ այն բռնութեանց և հարստահարութեանց, որոնց ներքեւ կը հնձէին Պարսից հպատակ Հայերը, ոչ ուստեք պաշտպանութեան յոյս մը ունենալով, և կատարելապէս մատնուած ըլլալով առանց օրէնքի և առանց խիղճի պաշտօնէութեան մը ձեռքը։

ԼԱՏԻՆԱՑԵԼՈՑ ԸՆԹԱՑՔԸ

1771. Պարսկական տիրապետութեան ներքեւ կը գտնուէին տակաւին մաս մը լատինացեալ Հայեր, ուրոնք թէպէտ չատ նուազած էին Որմանդիի և Ղրիմեցիի տանէն (§1394) բայց չէին ջնջուած, և կը չարունակէին Ուխտիթորներուն աչխատութիւնները, որչափ ալ Պօղոս Փիրոմալլիի ձեռքով ընթացքնին քիչ մը փոխուած էր, և փոխանակ կրօնաւոր խստութեանց՝ չահեցողական գիտցողութիւններ կը ցուցնէին (§ 1676)։ Բայց տակ աւելի իրենց նպատակը կր գտնար պապերուն կողմէն Պարսից թագաւորներուն առջեւ եղած միջնորդութիւնը, որպէս զի յատուկ պաշտպանութիւն չնորհուի իրենց հաւատակիցներուն։ Պարսից թագաւորներն ալ մտադիր կ'անսային, որովհետեւ այդ կերպով Եւրոպայի մէջ համակրութիւն չտնելու և Եւրոպացիներէ ձեռնտուութիւն գտնելու դուռերը կը բացուէին։ Ըստ այսմ երբ Պօղոս Ե պապին կողմէ յատուկ պատուիրակ նշանակուած Պօղոս Չիթթատինի կրօնաւորը (padre Paolo Cittadini), Դոմինիկեանները զատ կարմելական և Օգոստինեան միաբաններու ընկերակցութեամբ 1615 դեկտեմբեր 13'ին Մեծ Շահաբասին ներկայացաւ Ծաղրապատ քաղաքը, խոստովանութիւն ուղղափառներու կեդրոնը եղող երկնչակին Հայ կաթողիկէ նշանակից, մանաւանդ կաժողովը արգիլից, դրաւուած ինչքեր դարձուց, և զանազան դիւրութիւններ չնորհից (ՍԻՆ. 394)։ Ուխտիթորական խումբը սակէ քաջալերուելով իր քարոզութիւններուն և դործունէութեան աւելի զարկ տալու սկսաւ, և այդ միջոցին կ'իյնան Օգոստինոս Բայէնց՝ նախկինեանի ուխտիթոր եպիսկոպոսին, և իր գործակից Պօղոս Փիրոմալլիի ճիգերն ու Հայերէ տեսած մատուռութիւններր, զորս յիշեցինք Փիլիպպոս կաթողիկոսի վրայ գրած տուներս (§ 1676)։ Կրօնաւոր նոր պատուիրակ մըն ալ Ուրբանոս Ը պապին կողմէ ներկայացաւ չահ Սաֆիի 1637 հոկտեմբեր 13'ին, Թովմաս Վիտալ Իտալացի Դոմինիկեանը (padre Tommaso Vitali), և արտօնութիւն ստացաւ վանական վարժարաններ բանալ Ջահուկ և Ասպարաներ գիւղերը, որ այնտեղ աչակերտներ պատրաստուելով և Հռոմի մէջ կատարելագործուելով՝ հռոմէադաւան քարոզիչներ դառնան (ՍԻՆ. 396)։ Այդ ձեռնարկին աւելի ոյժ տուաւ յիշեալ Պօղոս Փիրոմալլին, որ 1654'է 1664 նախկինեանի ուխտիթորական աթոռը կառավարեց, բայց տեղական խնդիրներու պատճառով Իտալիոյ մէջ քահանայութեան փոխադրուելով, Պիսինիանօ (Bisignano) քաղաքը մնաւ 1667 դեկտեմբեր 28'ին (ՍԻՆ. 397)։ Հռոմէադաւանութեան պաշտպանութեան համար նոր միջնորդութիւն մըն ալ բրաւ Ալեքսանդր Է պապը, 1664'ին յատուկ դիտում ընելով Շահաբաս Բ'ին (ՍԻՆ. 398), երբ Պաղպիոյ պատուիրակն ալ այդ նպատակին ոյժ տալու ձեռնարկեց։ Լուդովիկոս ԺԴ թագաւոր 1667 յունիս 26'ի պաշտօնագիրով չահ Սիւլէյմանին կը ծանուցանէր, թէ ինքն է կաթոլիկ Հայերու հովանաւորը, և փոխադարձ բարեկամութիւնն և օգնութիւնն առաջարկներ կ'ընէր, կաթոլիկներու պաշտպանութեան պայմանով։ Պարսիկ թագաւորին համար անսահման չէր Ափեմուաքի բարեկամութիւնը, որ կրնար պինդ ապահովել Օսմանեան պատութիւնն յարձակումներէն, ուստի բնադաձակ խոստումներ կուտար, և բաւական չափով ալ անոնք կ'իրականացնէր. այնպէս որ Լուդովիկոս թագաւոր 1674'ին յատուկ

նամակով Նախիջեւանի Ունիթոր եպիսկոպոսին կ'աւետէր իւր միջնորդութեան արդիւնաւորումը, և աւելի ևս աչխատելու և խնամք ցուցնելու խոստումներ կ'ընէր (ԼԷՕ·298)։ Այդ բնդոստ ակնարկներ բաւական են ցուցնել, որ թէպէտ բաւական ամիսփուսած էր Ունիթորներուն գործունէութիւնը, և իրենց հինգ եպիսկոպոսաբանները մէկի վերածուած էին (§1750), սակայն կերպով մը աւելի զօրաւոր եղած էր անոնց դիրքը չնորհիւ Եւրոպական պաշտպանութեան, ինչ որ պէտք էր ազդու տպաւորութիւն գործէր ընդհանուր Հայութեան վրայ։

ԼԱՏԻՆԱԿԱՆ ԳՐԳԻՒՆԵՐ

1772. Հայերուն կացութեան տկարանալուն պատճառներէն աւելի մեծն ալ, եկեղեցական բարեկարգութեան անկումն և եկեղեցականներու անփառունակ ընթացքն էր։ Ինչ որ վերեւ պատմեցինք Կ-Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքութիւններուն կաշառքի զօրութեամբ ձեռքէ ձեռք յափշտակուելուն մասին, կրնայ իբրեւ նշանակ առնուիլ՝ թէ ինչ հոգւոյ տէր էին բարձրաստիճանները, և ինչ ուղղութեան կը հետեւէին ստորին դասակարգերը, և թէ ինչ ընթացք կրնար ունենալ ասոնցմէ առաջնորդուած ժողովուրդը։ Մենք չենք քաչուիր իրականութիւնը մերկապարանոց ներկայել, ողբալով հանդերձ Հայադաւան Ուղղափառ եկեղեցւոյ ցաւալի արկածները. բայց չենք ալ հանդուրժեր, որ եղելութիւնք այլափոխուին և այլագունուին, տալով անոնց այնպիսի կերպարան մը որ իսկականը չէ։ Երբոր կաչառքն է որ կը տիրէ, կեղծաւոր և անիրաւ չահագործութիւններ անոր ուղիղ արտադրութիւններն են, և այս կարգին կը մտնեն նաեւ դիւրաւ տրուած ստորագրութիւններ և յայտարարութիւններ, երբոր անոնք հնչուն արդիւնքով կը փոխանակուին։ Պապութիւնը ամէն կողմ ցրուած կրօնաւոր քարոզիչներով՝ իւր ձեռնարկներուն համար պէտք եղած նիւթական միջոցները չէր խնայեր. քարոզիչներն ալ ճարտար էին անոնք չահագործելու, վճարեալ յայտարարութիւններ կորզելով, և զանոնք իբր յաղթական աւար պապերուն մատուցանելով։ Իսկ յայտարարութիւն տուողներն ալ ուրախ կ'ըլլային թանկագնոյ վաճառելով իրենց կեղծիքը, և առատացնելով առևտրական գրութիւններ, առանց փոխելու իրենց ընթացքն ու գործը, սովորութիւնն ու կիրառութիւնը, և կրկին կրկին կը դառնային անգամ մը տրուած յայտարարութենանց, կրկնապատկելով անոնցմէ սպասուած չահագործութիւնը։ Կը յիշուի թէ Խաչատուր Սեբաստացին 1665'ին 13 եպիսկոպոսներու և 9 վարդապետներու հետ՝ Աղէքսանդր Է պապին, և 1668'ին Դաւիթ Բերթացին կղեմէս Թ պապին՝ հպատակութեան գիրեր յղած ըլլան (ՁԱՄ·Գ·698)։ Աոոնք դրամի զօրութեամբ կիլիկիոյ կաթողիկոսութիւնը իրարու ձեռքէն խլելու եղողներն են, որոնց համար գիտենք թէ իրենց դաւանութեան և ծէսին պատշաճները երբեք չփոփոխեցին, բայց պահանջուած ստորագրութիւնները չզլացան, երբոր անոնք թանկագնոյ վաճառելու համար գնողներ գտան։ Այդ բանին լատիններն ալ տեղեակ էին, զի վերոյիչեալ Խաչատուրի համար կը գրէ Փիթու, թէ էր խոբեբայ ոլոխ և այլն (ԲՈՒՆ·35)։ Նախանձայոյզ հռոմէադաւան կարծուած Նիկոլին համար ալ կը գրէ, թէ համաձայնութիւն կը ցուցնէր՝ չի ֆ չիոլեան եօտոցե (ԲՈՒՆ·163)։ Մենք այնչափ չենք զարմանար չահասիրական ոգւով գործող այդ անարժաններուն վրայ, որչափ կը զարմանանք կրօնասիրական սկզբունքով խօսող հռոմէադաւաններուն վրայ, որ այսպիսիներուն ձեռքէն խլուած գիրերը, իբրեւ առաքելական հայրերու վկայութիւններ, և իբրեւ ներհուն աստուածաբաններու ուսումնասիրութիւններ կ'ընդունին ու կը ներկայեն։ Միանգամայն անոնցմով կը կազմեն հռոմէականութեան ապացոյցները, և անոնցմէ կ'ուզեն քաղել Հայոց եկեղեցւոյ դաւանական սկզբունքները։

ՕԳՆՈՒԹԵԱՆ ՅՈՑՍԵՐ

1773. Գիտենք թէ այս նենգամիտ և չահադէտ անձանց հետ կային բարեմիտներ ալ, որոնք ոչ թէ անձնական չահադիտութեան նպատակով, այլ հանրային օգուտի մը տեսակէտը դրդեալ, և անհրաժեշտ հարկին ներքեւ կքելով, չէին քաչուեր հռոմէականու-

թեան մերձաւորութիւն ցուցնել, և մինչեւ աստիճան մըն ալ անոր պահանջած պայմաններուն համակերպիլ։ Եւրոպական զարգացման մէջ յառաջադէմ երկիրները, և մասնաւորապէս Արեւելքի հետ յարաբերութեան մէջ գտնուող ազգերը, Լատին տարբին կը պատկանէին այն աստն, և անոնց մէջ նախընթաց էին Իտալականները՝ և հետեւորդ Գաղղիականները, երկուքն ալ կրօնամոլ հռոմէականութեան մէջ տոգորեալ, և պապական հոգեւոր գերիշխանութեան հլու հպատակ, և անոր ակնարկութեանց գործադիր։ Որպէս զի իրենց ունեցած զարգացումէն ուրիշին մասնակցութիւն կամ հաղորդակցութիւն չնորհեն, հռոմէական դաւանութիւնը իբրեւ անհրաժեշտ պայման կը պահանջուէր, որով բուռն ձգտմամբ զարգացման դիմող Հայերը, նոյն լուծին ներքեւ խոնարհելէն սարսեր եղանակ չուներին՝ իրենց սիրտին փափաքը և միտքին ծարաւը յագեցնելու համար։ Ուստի եթէ ոչ ներքնապէս և համոզմամբ, գոնէ արտաքնապէս և պաշտօնական երեւոյթով համակերպելու կը ղիջանէին, և այսպիսիներուն մէջ ընտրելագոյն անձեր ալ կը գտնուէին։ Ոսկանն ալ տեսանք հաւատոյ դաւանութիւն ստորագրել, որպէս զի տպարան բանալու արտօնուի (§ 1747), այն Ոսկանը որուն տպարանէն կ'ելլային ֆէր֊հերեվկո֊ոկան֊ և ալ ոզղաֆբեալ֊ հռոմէական տեսակէտով (ԲՒՆ֊45), և որոց մէջ կէն քան֊ ֆազօմ֊ անպոպշճ֊ գլոպինացոց և գնոռվքան հաւաոց, այլ և ֆվովրիկան֊ ոռոռոցկի֊ վան այլաբառան Հայոց (ԲՒՆ֊215)։ Արդէն իրենք ալ տեղեակ պէտք է ըլլային Հայերուն ներքին ուղղութեան, զի դաւանութիւն տուող Ոսկանն ալ՝ կրնային հարթել կ'ըսէին (ԲՒՆ֊232), և իրենցմէ եր չէին ըսեր։ Մնդիրի նիւթ չենք ուզեր ընել, թէ մինչեւ ուր հնար է մղել այդ բարեմիտ կեղծիքներուն արդարացումը, Հայ եկեղեցւոյ Թոյլատու և լայնախոհ սկզբունքներուն հիմնուելով ալ֊ այլ պիտենք և համոզուած ենք, թէ կեղծիքը տկարներու նախապատած զէնքն է, և դուրէ այն հարկն է որ զբրենը֊ծանէ, և զիրենք ալ կ'արդարացնէ։ Միայն չենք գիտեր թէ օրաւուր բուռղին համար՝ արդեօք իրական արիւնք մըն է՝ բռնութեամբ առնուած խծաքը, կամ թէ երկնային ըսուած ճշմարտութիւններ՝ կրնան քաղուիլ կեղծեալ յայտարարութիւններէ, թէ ոչ նոյն իսկ ճշմարտութիւն ցուցուածներն ալ կեղծիքի աստիճանին կ'իջեցնեն։

1774. Բարեմիտ կեղծիքներու դասակարգին պէտք է զուգակշռենք ազգային գործիչներու այն կարծիքն ալ, որով օտար եկեղեցւոյ մը հետ միաբանութեան մէջ ուզած են վնտռտել քաղաքական կամ եկեղեցական օգնութեան հիմերը։ Այդ նպատակին հետապնդումը տեսանք հին դարերու մէջ Յոյներու հետ փորձուած, երբոր Հայերը անոնցմէ կը յուսային իրենց քաղաքական կացութեան և պետական դրութեան պաշտպանութիւնը։ Նոյնը փորձեցին յաջորդ դարերու մէջ Լատիններուն հետ, երբոր տեսան անոնց Արեւելք արշաւանքները, և իտալական տարրներու դէմ պարզած ոյժն ու յաղթանակը։ Այն դարուն մէջ՝ որուն վրայ կը գրենք, այլեւս Հայուն համար անյոյս էր պետական դրութեան և ազգային իշխանութեան վերանորոգումը, և այս չէր կրնար ըլլալ իրեն նպատակը։ Բայց իրեն հարստահարեալ և լքեալ և անօգնական դիրքը, և իսլամական կրկին պետութեանց քահանայ կամքին մատնուիլը, անհատական հաճոյից ձեռք խաղալիք դառնալը, և անխիղճ և անօրէն կուսակալներէն տառապիլը, զիրենք կը յուսադրէր, թէ ոչ կացութեան բարւոքումը, գոնէ մեղմացումը ձեռք ձգել, եթէ Արեւմուտքէ զօրաւոր ձեռք մը իրենց պաշտպան կանգնէր։ Այս ակնկալութեան ալ իբր հիմ կամ նչան կրնային առնել հռոմէադաւան օտարազգիներուն և համազգիներուն՝ պապերու և թագաւորներու և հանրապետութիւններու կողմէ հովանաւորութիւը, և անկէ յառաջ եկած որեւէ չափով օգուտը։ Այս տեսութեան հետեւողներէն ոմանք, անհատաբար գործելով, կրնային հիմնապէս և անպայման կերպով հռոմէադաւանութեան յանձիլ, սակայն անոնք որ հանրային պաշտօնեայ կամ գործիչ լինելու պարտքը կը վայելէին, երբեք անպայման յարակցութեան ձեւին հետեւող չէին, այլ կը փափաքէին

փախադարձ բանակցութիւնամբ այնպիսի պետին մը գտնալ, որ Հայ եկեղեցւոյ ինքնուրոյնութիւնը պահելով, և հայադաւան և հայածէս դրութիւնն հիմնակէտները չխախտելով, երկկողմանի համակրութիւն մը կարենար կնքուիլ։ Մինչև աստիճան մը կրնային զիջողութիւններ և զոհողութիւններ ալ յանձն առնել, միայն թէ Հայ եկեղեցւոյն և դաւանութեան, աթոռին և ծէսին ինքնուրոյնութիւնը չքննուէր, և պատկան ամենակալ ձգտումներու չափաւորութիւն մը ապահովուէր։ Այդ դիտողութիւնները հարկ սեպեցինք այստեղ յառաջ բերել, դի նորանոր երեւոյթներու հանդէպ պիտի գտնուինք առաջիկային, և հռոմէականութեան Հայոց համար խօսից և գործոց առարկայ ըլլալը պիտի տեսնենք, անոր հետեւող կամ զայն փորձող ընտիր անձնաւորութեանց ձեռնարկներն ալ պիտի պատմենք, ուստի կրեւար էր ընդհանուր տեսութեամբ մը խընդիրը յուսաբանել։ Ամէնէն առաջի պէտք է չմոռնանք, թէ հռոմէականութեան մօտաւորութիւն ցուցնելով և բանակցութեանց մանելով, համաձայնութեան մը հասնելու փափաքը կամ ջանքը, երբեք կանխաւ ընդունելութիւն կամ անպայման համակերպութիւն բսել չէ. և ցորչափ վերջնական և կանոնական, վաւերական և պաշտօնական որոշում մը տեղի ունեցած չէ, բանակցողներ իրենց դիրքը կորուսած կամ միտքը փոխած չեն կրնար լսուիլ։

ԱՂՔԱՄԱՐԻ ԱԹՈՌԸ

1775. Պատմութեանս չարայարութեան անցնելով, պէտք է քաղենք Ծակոր կաթողիկոսի վերջին տարիներու եղելութիւնները, որոնք հանդարտ անցան, և նոր միջադէպներ չեն ներկայեր։ Էջմիածնի մէջ Ծակոր կաթողիկոս վերջին անգամ Աստանդ դառնալէ, և 1670 Մեսրոպի ջրօրհնէքի երեւանի մէջ կատարելէ ետքը (§ 1769), Էջմիածին եկաւ, և այնտեղ դադրեցաւ մինչև 1678 տարին, մատակարարութեամբ և մասնաւոր չինութիւններով զբաղեցաւ, և վշտակիր սիրտով դիտեց այն աղետալի անցքերը, որոնք թէ իր չուրջը և թէ հեռու տեղերը կը կատարուէին։ Տչորուեցաւ եկեղեցւոյն վէրքերով և ազգին վտանգներով, եւս առաւել ցաւելով որ չունէր այն միջոցները և այն ոյժերը՝ որոնք պէտք էին եկեղեցւոյն բարեկարգութիւնը և ազգին բարօրութիւնը պատրաստելու և իրականացնելու համար։ Աղթամարի աթոռը կը չարունակէր այն անշնորհակ դրութեան մէջ, զոր իւր կարգին յիշեցինք (§ 1649)։ Հաւաքարարը իբր կաթողիկոս կը յիշէ Պաղտասարն ու կարապետ Բունածը, որոնց կը յաջորդէ Մարտիրոս Մոկացին, նախնոյ գիւղէն և Գուռնի ազգատոհմէն, փչրուկ մականուանեալ, որուն օրով Մոկացիք ու Շատախցիք իրարմէ կը գժտին. և Շատախի իշխան Եզդին Շէր, իւր գաւառը էջմիածնի թեմ հռչակելով, Ծակոր կաթողիկոսէ վարդապետ մը կը խնդրէ իրր կաթողիկոսցու, և Ծակոր ալ կը ղրկէ 1661'ին մէկ մը՝ որուն անունը յիշուած չէ (00 ԲԻԶ. 1197)։ Գուցէ այս պարագան էր որ Ոսկանի թելադրեց Աղթամարը էջմիածնի արքեպիսկոպոսարանին կարգը դասել (§ 1750)։ Սակայն Մարտիրոս թող չտար որ բաժանումը տեղի ունենայ. չուտով Շատախ կ'իջնէ, և ազդեցութեամբ կամ բռնութեամբ, այսինքն տեղական կուսակալին ալ միջամտութեամբ, ոչ միայն Շատախը կը հպատակեցնէ (00 ԲԻԶ. 1198), այլև Վան, Բերկրի, Արճէշ, Խլաթ, Բաղէշ, Մուշ, Խօյապ, և մինչև Ամիդ, իրեն ներքև առնելու հրովարտակ կը ստանայ, սուլտան Մահմուտէ, յայտարարելով թէ այս գաւառներ ընդ պերսից էին, ասկէ է յերկիրն Պարսից նորոգ Խալիֆայն, ըստ որում ասա ժողվիլ պահէ յերկիրն Պարսից (ՉԱՄ. 93)։ Բայց Ծակոր կաթողիկոս կը յաջողի նոր հրովարտակով վիճակները ետ առնուլ, և Վանայ առաջնորդ Պօղոս վարդապետի վրայ կը դարձնէ, իբրև վիճակ վարագայ, առանց յիշելու էջմիածնի անունը, որովհետև ընդհարիւն էր ի մէջ Պարսից և Օսմանցւոց։ Ծակոր խոհեմութիւն սեպեց էջմիածնի անունը չտալ, դի հարցին բռնանալ լեզուաց նոցին, որ ընդ դէն առեալ, արձակեցին է յահանջ Օսմանցւոց, ըստ որում պահէն է յերկիրն Պարսից։ Երեւանեցին ցաւելով կը յաւելու, թէ մինչև յայժմ առնին զայսավոքրիկն Օսմանցւոց կոմսից ախոթլախէն (ՉԱՄ. 95)։ Ծակոր գործին վերջնական յա-

ջողոլիեան համար հաճեցաւ վճարել տալ Մարտիրոսին՝ և Աղթա՛րի իշխող Ապուլլահ չէլէպիին, անոնց պահանջած գումարները իբրև իրենց առձեռն ծախքերուն և վնասներուն փոխարէն (ՋԱԱՐ· 94)։ Մարտիրոս այլեւս նոր փորձ չըրաւ, և վախճանեցաւ 1663'ին։

ԱՂԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

1776· Մարտիրոսէ ետքը Աղթամարի կաթողիկոսներուն կարգին կը յիշուին Պաղտասար մը և Սահակ մը, և Մարկոս Արծիշեցի Բլուրմակ գիւղէն։ Անոնցմէ ետքը կու գայ Յովհաննէս Թիլքիւնճին, որ կ-Պոլսոյ պատրիարք եղած էր 1663'ին (§ 1741), և 1664'ին պատրիարքութենէ հանուած (§ 1755), 1665'ին կրկին զայն ձեռք ձգած (§ 1758), և 1667'ին կրկին վտարուած (§ 1764)։ Այս անգամ այլեւս կ-Պոլսոյ մէջ չկրցաւ յոյսը կտրած, դարձած էր իր հայրենական վասպուրականը, ուր կրցաւ 1667'ին Աղթամարայ կաթողիկոս ըլլալ, և 14 տարի աթոռի վրայ մնալ։ Պէտք է ընդունիլ թէ Թիլքիւնճին կաթողիկոսութիւնը իր մահուամբը վերջացած է, դի ժամանակագրութիւնը չարդարացներ 1683'է ետքը կ-Պոլսոյ պատրիարք ըլլալը, և իրմէ անիմն զրոյց պիտի նկատուի պատրիարքութենէ ետքը կարգաթող ըլլալը, որոյ արձագանգ եղած է Աղթամարի Հաւաքարանը (00 ԲԻՉ· 1298)։ Ոչ մի յիշատակ չունինք Թիլքիւնճինին կաթողիկոսական գործունէութենէն, և կ'ենթադրուի թէ յիշատակաց արժանի արդիւնք ալ ունեցած չէ։ Զինք ալ դիտեր թէ ինչ կերպով կարգադրած է նա Յակոբ կաթողիկոսի հետ, էջմիածնի աթոռէն իւրացուցած իրաւունքներուն վճարումը (§ 1741)։

ԿԻԼԻԿԻԱ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄ

1777· Կիլիկիոյ աթոռին վրայ լարուած ժին եղած սահմաններով կը պանուէին Խաչատուր Սեբաստացին և Դաւիթ Բերիացին կամ կարկառեցին (§ 1753), և ցուցակագիրներուն տարբերութիւնները իրարու քով բերելով կըրնանք ըսել, որ թէ Խաչատուր (ՁԱՐ· յա· 111) և թէ Դաւիթ (09 ՕՐԱ· 263), միևնոյն 1679'ին մեռած են։ Բայց իրենց մահուամբ ալ բաժանումը վերջացած չէ, դի Խաչատուր Մինասէրեանին տեղ նստած է Սահակ Մէլիանէնին, և Դաւիթին տեղ Ազարիա, կարկառեցիին տեղ ուրիշ կարկառեցի մը։ Սահակի Մէլիանէնի մականունին բացատրութիւնը չենք գտներ, թէ արդեօք գիտնական կամ գիտնականի զաւակ եղած էր, թէ ոչ պարզապէս արքունի մը։ Իսկ Ազարիա Գանրլեանց ազգատոհմէն ելած, և Դաթեանի մականուն ստացած է, որ ձիւթի նման սեւաթոյր եղած ըլլալու իմաստը կու տայ։ Կիլիկիոյ կաթողիկոսութեան ներքին անցքերուն, և կրկնակ աթոռականներուն դարձերուն վրայ աւելի մանրամասնութիւններ չունինք։ Իսկ Երուսաղէմի մէջ եղիազար պատրիարքութիւնը կը վարէր 1671'էն իվեր, կաթողիկոս անունն ալ պահելով և զօրաւոր հակառակորդ մը չունէր՝ որուն դէմ մաքառիլ պարտաւորուէր, վի Մարտիրոս Կաֆացին իրեն համար նորահնար դիրք մը չինած էր։ Երուսաղէմի պատրիարքութեան անունով կ-Պոլիս կը մնար, և կը գոհանար յանուն Երուսաղէմի հաւաքուած նուէրներով և ուխտի դարպաններով (§ 1767)։ Սուրբ Տեղեաց մէջ Հայերու սեփականութեանց դէմ ոտնձգութիւնները չէին դադրած, և եղիազարի օրով նորանոր դատեր բացուեցան և վարուեցան՝ Ս. Հրեշտակապետի պատին, Բեթղեհէմի եկեղեցւոյն, Բեթղեհէմի գերեզմանատան, Ս. Փրկիչի գերեզմանոցին, և Ս. Յարութիւնի դռնապաններուն պահանջմանց համար, որոնք միշտ Հայերուն նպաստաւոր վճիռներով վերջացան, չնորհիւ ընդհանուր աղդեցութեան և առատաձեռն հարստութեան զոր ունէր եղիազար, և յաջող ու ճարպիկ գործակատարութեան Խաչատուր Լվովցոպոսին, որ եղիազարի աջակիցն էր և դատարաններու առջև խօսողն ու փաստաբանողը (ԱՍՏ· Ա· 395-399)։ Այս առթիւ յիշենք թէ 1676 յունուար 25'ին կայսերական հրովարտակով Ս. Գերեզմանին իրենդիրն ալ վերջացաւ, և Լատիններուն պահանջները մերժուելով, անոր պահպանութիւնը՝ բանալիներով, դոյքերով ու կանթեղներով մէկտեղ Յոյներուն իրաւունքը ճանչցուեցաւ (ԺՈՒ· 284)։

1778· Լեհահայոց գործերը պատմած ենք մինչև Յակոբ կաթողիկոսէ նուիրակ յղուած

Պօղոս Եւդոկիացի վարդապետին բանի վտարումը 1655 հոկտեմբեր 29'ին (§1744),

ԼԵՁԱՁԱՑՈՑ ԳՈՐԾԵՐԸ

ուսկից ետքը կղեմէս Կալանոս և Ալսիզիոս Փիջու ուժի համաձայնութեամբ հետեւեցան Լեհահայերը լատինացնելու ձեռնարկին, իրենց վարժարանէն ելած նորահաս երիտասարդները քահանայացնելով, իբրև կամակատար գործիքներ, զի հին քահանաներ միշտ դժկամակ էին նորամուտ փոփոխութեանց, և առիթներէ կ'օգտուէին անոնք թօթափելու համար։ Այսպէս էին Ներսէս Եազլովիցի նախանձամ երէցը (ԲՒՆ· 161), և Ալեւիլք ձեռնադրուած երկու Լեհաստանցի քահանաներ, որոց մէկը Յովհաննէս Բեռնարդովիչ է կոչուած (ԲՒՆ· 170), իսկ միւսին անունը չէ յիշուած (ԲՒՆ· 169), որոնք վերջէն, գոնէ առերեսս, ստիպուեցան հպատակիլ, Կալանոսի կողմէն պետական զօրութեամբ սպառնացուած վտանգներու հանդէպ։ Իսկ Նիկոլ միշտ իւր երկդիմի ընթացքը կը չարունակէր, ակիզբները դիմադրութիւն ցուցնելով լատինամիտ փոփոխութեանց, ժողովուրդէ չվքուելու համար, և վերջէն համակերպութիւն յայտնելով, ինչպէս կը գրէ Փիջու, թէ Նիկոլին հետ չկրնար ձեղ չտանիլ՝ վասն ոմի ոմն ընչաքէր երէցէ տհեկանաց (ԲՒՆ· 42)։ Հայոց կաթողիկոսին կողմէն նոր նուիրակ մը կը հասնէր Ուլահայց երկիրը, որ գիրերով կը չանար Լեհահայերը իրենց հայրենասէր դաւանութեան և ծէսին մէջ պահել, սակայն միշտ միւնոյն կերպերով ընդառաջ եղեր չանէր (ԲՒՆ· 52)։ Ճիշդ այդ միջոցին կը մտնէր կալանոս, Իլվովի մէջ 1666 մայիս 14'ին, և Հայոց մայր եկեղեցւոյն մօտը կը թաղուի մայիս 17'ին։ Կալանոս 56 տարեկան մտած կ'ըսուի (ԲՒՆ· 52), որով 26 տարեկան եղած կ'ըլլայ երբ վրաստան ղրկուեցաւ, և 30 տարեկան երբ կ-Պոլոյ Հայոց մէջ սկսաւ աշխատիլ (§ 1692)։ Քիչ առաջ մնած էր և Բռնավանդուրա աշխատաւոր եղբայրը (ԲՒՆ· 178), որով միայն մնաց Ալսիզիոս Փիջու, և կալանոսի յաջորդեց Թոխաճ պէյ պայծռնով, թէպէտ 28 տարեկան էր տակաւին, և Ղըզլ յոհաննա, այլ յաջողակ էր ի լեզուս, և լիովին տեղեակ կալանոսի ուղղութեան (ԲՒՆ·178)։ Փիջու ինքզինքը դրաւ Իլվովի լատին արքեպիսկոպոսին և Լեհաստանի պապական նուիրակին տրամադրութեան ներքեւ, որով կրցաւ դիմադրել Նիկոլի պահանջներուն դէմ։ Իրեն աջակից ունեցաւ Յովհաննէս Կերիմովիչ Հայ եպիսկոպոսը, որ Նիկոլին քեռայրին եղբայրն էր, և անոր փոխանորդութիւնը կը վարէր։ Կերիմովիչ Լեհաստանի մէջ լատինաց մօտ ուսում առնելէ ետքը էջմիածին գացած էր, և մինչեւ Պուզտանի կամ Մոլտավիոյ եպիսկոպոսութեան բարձրացած, ժողովուրդին հետ գործած և երուսաղէմ քաշուած. իբր 7 տարի հոն մնացած, յետոյ Հռոմ երթալով հռոմէադաւանութիւն ընդունած, իբր 5 տարի ալ հոն կեցած, ետքէն Լիվօռնոյ անցած, և վերջապէս Իլվով գալով կալանոսի պաշտպանութեամբ փոխանորդ նշանակուած էր (ԲՒՆ· 50)։

1779· Փիջու իւր առաջին քայլութիւնը ցուցուց Իլվովի վանական եկեղեցւոյն սարկաւագներէց Սիմէոն քահանայի դէմ, որ հաւատարիմ կը մնար Հայ ծէսին ամբողջութեան։ Անոր մօտ իրեն աչակերտներէն երիտասարդ քահանայ մը դրաւ, և անոր վկայութեամբ Սիմէոնը բանտարկել տուաւ. Հայոց քաղաքապետին սպառնացաւ, թէ Սիմէոնը պաշտպանելով չէ՞ր խ- ոռ-ժեոչ (ԲՒՆ· 58), վերջապէս կերպ կերպ բարուրանքներով քահանան աքսորել տուաւ 1666 յուլիս 16'ին (ԲՒՆ· 61)։ Անկէ ետքը Փիջու՝ Նիկոլն ու կերիմովիչը մէկտեղ առնելով Լեհաստանի հայաքաղաքները այցելութեան կ'ելլայ, ծիսական փոփոխութիւնները հաստատելու։ Յուլիս 31'ին Եազլովից կը հասնին, ուր յաջորդ օրը, հին տոմարով յուլիս 22'ին վարդավառի տօն կը կատարեն, և կանխաւ յիշուած փոփոխութիւններէն զատ (§1744), Յայտնութեան մէջ ալ 41 կարծեցեալ ռոչոնիններ ուղղագրեցին, զորս միատումի կը յիշէ Փիջու (ԲՒՆ· 64-67)։ Օգոստոս 12'ին կ'երթան Կամենից, ուր մեծ դժուարութեան կը հանդիպին ժողովուրդին կողմէն, և մինչեւ հոկտեմբեր 6 այնտեղ կը մնան, և ամէն տեսակ սպառնալիք, պետական մի-

ջամուխքիւն, արքայական հրաման, և ճարտար դարձուածներ կը գործածէն մինչեւ որ կերկով մը կամենիցացիները նորամուտ փոփոխութեանց յանձնառու ընեն, գոնէ առ երեսս (ԲՒՆ· 93)։ Իրենց յաջողութեան որոչիչ փաստ կ'ընեն էջմիածինի նուիրակ Պօղոս Եւդոկիացիէ (§ 1744) գրուած երկդիմի նամակ մը (ԲՒՆ· 92)։ Հռոմէականութեան այդ յաջողութիւնները տեղի կ'ունենային չնորհիւ Նիկոլի, որուն կողմէ կը տրուէին փոփոխութեանց հրամանները, և Հռոմի պապութիւնն զայն կը պաշտպանէր և կը վարձատրէր, թէպէտև չատ լաւ գիտէր թէ որպիսի ոք էր իրեն գործիք ըրած անձը։ Պապական պաշտօնեաներ իրենց նամակներով կը հաստատէին, թէ ֆայլոկլոնիէն փոքրիկներ են ըսբ ուռնի արեւելեցոցն Հայոց Իլճայ, առնելով կնոջ կոպծելիւ՝ ընդ որ կեայ և հաղորդութեան առնէ, թէ չուզեր ելանել ի պէմէն յոր նախասեալն է (ԲՒՆ· 99), և թէ ֆրընգեցոց կոչել անդրէն ու ինչն չկիէն, զոր սբյակեալն էր (§ 1743)։ Պէտք կը զգային որ Նիկոլ ընդդէ չկենցաղ էր խոչոռակ և սբյակեալ չկնաչան (ԲՒՆ· 101), բայց միւս կողմանէ լաւագոյն կը սեպէին չեռ կալ ի կոռբելոյ շանձնորդութիւն պատուելին, զի գ' այսոս խոճանեցոյ այն խորհուրդ օգոգոյ (ԲՒՆ· 102)։ Անգամ մը Նիկոլ կը պատրաստուի Հռոմ երթալ Փիլիպէի ընկերակցութեամբ, և 1667 սեպտեմբեր 26'ին կու գան Քրաքով (Krakow կամ Cracovie), բայց Թաթարներու և Քազախներու ապստամբութեանց պատճառով, միաբերնին փոխելով Իլվով կը գառնան հոկտեմբեր 19'ին, ուր գործը ձեռք կ'առնէ Ջովսէվի Կարացիոլի կրօնաւորը (Giuseppe Grazioli), որ Հռոմէ կալանոսի յաջորդ նշանակուած էր։ Սա չհանելու կերպերը չգիտնալուն, Նիկոլի կողմէ խրատութեանց կը հանդիպի, իր ձեռնարկներուն դիմադրութիւն կը տեսնէ, և հիւանդութեան մէջ ալ արգահատանք չգտնար, և կը մեռնի 1667 դեկտեմբեր 30'ին, 39 տարեկան եղած տարին։ Նորէն ուժգնութեայ տեսչութեան անցաւ Փիլիպէ, որ դիտէր երբեմն չողոքորթելով և երբեմն պնդելով Նիկոլը գործածել (ԲՒՆ· 109)։ Հաւանեցաւ իսկ ատոր ընկերանալ՝ երբ 1668 յուլիս 31'ին Նիկոլ կամենիցի և Նպոլոլիի տօնավաճառներուն կ'երթար՝ իբր սովորական ձիերու առեւտուրին համար (ԲՒՆ· 111); որուն կը ներուէր այս գործը, երբ միւս կողմէն ինք բանտարկուէր Հայ վարդապետ մը՝ որ նոյն տօնավաճառին մէջ ի վճռականութիւն էր պարտեալ։ Բայց գոհար ձեռ գործը կը կարգադրէ, և վարդապետը ազատ կը թողուի (ԲՒՆ· 188)։ Փիլիպէ այս առիթէն օգտուելով նոյն տեղերը հռոմէադաւանութեան տարածման աշխատելու, և Նիկոլի հետ իլվով դարձան սեպտեմբեր 6'ին (ԲՒՆ· 112)։ Այդ մանրամասնութիւնները յառաջ կը բերինք որպէսզի մօտէն տեսնուի, թէ ինչ միջոցներ կը գործածուէին, և ինչ անձեր գործիք կ'ըլլային Հայերը հռոմէադաւանութեան բռնադատելու համար։

ՆԻԿՈԼ ՀՌՈՄ ԿՈՉՈՒԱԾ

1780· Պապական նոր նուիրակ Գալիացոտիոս Մարէսքօթթի (Galeazzo Marescotti), տեսնելով թէ ինչպիսի ապտանելի վրաւ կենցաղվարեր Նիկոլ, և ալ գոգոբեր ի չեռնոգրելոյ ընչին ածնբեանս, համոզուց զայն Հռոմ երթալ, և 1668 հոկտեմբեր 11'ին ուղեւորեցաւ Նիկոլ, իր երկու որդիներու հետ, և Հռոմ հասաւ դեկտեմբեր 31'ին (ԲՒՆ· 113), 20 հետեւորդներով և 21 ձիերով (ԲՒՆ· 204)։ Կրկին էր Հռոմի նպատակը Նիկոլը Հռոմ բերելուն մէջ։ Եթէ մէկ կողմէն անոր ատնաւակ կեանքը իրեն գործին պատուաբեր չէր, միւս կողմէն ալ Նիկոլի փոփոխամիտ բնաւորութիւնը ոչ միշտ նպաստաւոր կ'ըլլար Հռոմի նպատակին։ Անոր հետացմամբ և կլերիմոլիչի տակարամիտ տեղակալութեամբ, աւելի դիւրին պիտի ըլլար Լատին կրօնաւորներուն՝ սկսուած գործը յառաջացնել, Լեհերու պետական ոյժն ալ իրենց կողմը ունենալով։ Այդ ոգեւով աշխատեցաւ Փիլիպէ՝ Նիկոլի հետանալէն ետքը, և կլերիմոլիչի ձեռքով հետզհետէ հետացուց հին քահանաները, և անոնց տեղ նորահաս երիտասարդներ դրաւ իրենց աշակերտներէն, և ծիսական փոփոխութիւնները ընդարձակեց նորանոր հերետիկոսութիւն գտնելով Հայ եկեղեցւոյն մէջ։ Փիլիպէի յաջողութիւնները զայն արժանի ըրին 1670'ին պետրոս պատրիարքութիւն տնտեսանելու պաշտօնապէս (ԲՒՆ· 209), մինչ ցայնժամ փոխանորդութեամբ

ին վարէր գործը։ Նեթքին գժտութիւն մը պիտի կարենար գործին վնասել։ Փիթուի ընկերը զրկուած Յովսէփ Պակաթթա Վերոնացին (Giuseppe Bagatta da Verona), որ 1670 յունիս 22'ին Իլվով կը հասնէր, ոթեղ էր Հայոց և չէր համաձայներ Փիթուի ճարտար չհնեցողութեանց. ուստի խոչընդոտ լինել յոժարեցաւ, այնպէս որ տեսնալով ին վր այլ ևս հոգ հոմքերել անոր ընթացքին, հեռացնելու հարկը կը ծագէր, և 1671 յուլիս 15'ին Պակաթթա կը դառնար Իտալիա (ԲՌՆ. 212)։ Այդ միջոցին կը յիշուի Թագէոս Համազասպեան երէցին Լեհաստան գալը, Ոսկանի տպագրած գիրքերը վաճառելու (§ 1748)։ Փիթու կը հակառակի, պնդելով մանաւանդ Դավրիժեցիին պատմութեան վրայ, որուն մէջ խստիւ պախարակուած են Նիկոլի գործերը (ԴԱՎ. 279). բայց կերիմավիչի ջոյլտուութեամբ, Թագէոս վճռաբեց անդ էլլ ինչ, և այլևն եանց չերկիլէն Մալտվեայ և Վալաքիոյ (ԲՌՆ. 216)։ Փիթու հարկ տեսնալով նորանոր նպաստներ և կարգագրութիւններ առանալ Հռոմէ, 1671 հոկտեմբեր 26'ին Իլվովէ մեկնեցաւ և 1672 յունուար 16'ին Հռոմ հասաւ, իսկ Լեհահայերը լատինացնելու գործը բաժնելով յանձնեց իւր ընկերներէն Օգոստինոս Լոպէլլի և Հերոնիմոս Պոսսի կրօնաւորներուն (Agostino Lobelli և Girolamo Bossi), որոնք չորս ամիս առաջ յունիս 23'ին Լեհաստան հասած էին (ԲՌՆ. 213). առաջինին յանձնեց վարչականն ու կըրթականը, և երկրորդին մատակարարականն ու դրամականը (ԲՌՆ. 217)։

1781. Պատմութիւնը որոշակի չպատմեր, թէ ինչ կը մտածուէր և ինչ կը գործուէր Էջմիածնի մէջ Լեհաստանի ԹԷՈԴՈՐՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ հայերուն կացութեան նկատմամբ։ Ընդհանուր յիշատակներ միայն կը ցուցնեն թէ գործը բարձիթողի եղած չէր։ Պօղոս Եւդոկիացիին նուիրակութենէն ետքը (§ 1744), Վալաքիոյ նուիրակին Լեհահայերով զբաղիլը յիշեցինք (§ 1778), նոր պատգայ մըն ալ այս անգամ կ'երևնէ առջևնիս։ Նիկոլի Լեհաստանէ հեռացած ըլլալը լսուելով, Յակոբ կաթողիկոս, հեքյոաձեղ կոնդակաւ մը Էջմիածնի կոչուած լատին պատմիչէն (ԲՌՆ. 218), պատուհաս յայտարար կը տեսնէ նոր Հպիսկոպոս մը զրկել Լեհաստան, իբրեւ Նիկոլի յաջորդ, և այս պաշտօնին կը կոչէ Թէոդորոս Վարդանովիչ վարդապետը, որդի ախոռաց դպաոցի Հայոց Իլվովի, և եղբօրորդի Մեսիմոնոս Վարդանովիչ վարդապետի, որ կը կոչուի տըփոսէզ կոնդէնոին, և է նոյնինքն Մեսիմոնոս Իլվովացի կամ Լեհայի վարդապետը (§ 1712), յաջող փոխ վ-ըդրանեանց (ԿԱՄ. 140), այլուր յաջող փոխ Պէրնագովիանց բռնած (ԿԱՄ. 144), վարդան հայկական անունին լատինակերպ ծանօթութեամբ։ Թէոդորոս Լեհաստանի լատին հաստատութեանց մէջ ուսանելէ, և էկլէզիաստիկ պրըմիէնց վրայ է պայծառ հռչակաւորին ալ մանուելէն ետքը, էջմիածին կոչուած էր հոգեւորմէն, և քահանայութեան և վարդապետութեան բարձրացած։ Այս անգամ ալ կոստանդնուպոլսայ մէջ 1671 օգոստոս 13'ին վերափոխման կիրակին (ԿԱՄ. 259), Լեհահայոց Հպիսկոպոս ձեռնադրուելով գնաց պարտէզ գնալ, Լեհաստան կը զրկուէր (ԲՌՆ. 219) 1671 օգոստոս 28 կոնդակով (ԿԱՄ. 265), ժողովուրդը հավուլու իբրեւ ողոքալ և աղաչել, և Նիկոլի մահուընէ ետքը իբր ողջընդ հովիւ և պետ (ԿԱՄ. 264)։ Բայց քանի մը օր ետքը 1671 սեպտեմբեր 1'ի կոնդակով, տատեղեան և հայրապետական իշխանութեամբ ուղղակի ողջընդ հովիւ և պետ Լեհաց երէցէն կ'անուանուի Թէոդորոսը (ԿԱՄ. 260), որպէսզի իշխանութիւնը վաթ՝ Հայոց հնգեցուոյ կանոնաց համեմատ, զոր լատինը կը մեկնէ, զի գոյացաւ գնդղեղդն Հայոց, որ գոնեմէն խոնել էր չենիցին Հռոմայ, անգրեն չէնոնելն հերյոաձոզ կոնդակաւն։ Փիթու առակաւին Հռոմ չէր հասած, երբոր Թէոդորոս Լեհաստան հասաւ. բայց չուզեց ետ գառնալ, և ուղեւորութիւնը չարունակեց։ Լապէլլի և Պոսսի դիմացին Լեհաց Միքայէլ Վիսնէցովսքի Թագաւորին (Koributh Wisnoviecki), որ 1669'ին յաջորդած էր հրաժարեալ Յովհաննէս Քազիմիրի, պնդելով մանաւանդ թէ Իլվովի Հայ հպիսկոպոսը դեռ կենդանի է և յաջորդին ընտրութիւնը պահել է օրէնքին Լեհաց։ Այսու հանդերձ Թէոդորոս հանդիսապէս Իլվով մտաւ, բայց

այս անգամ անոր դէմ ելաւ Կերբիմովիչ, որովհետեւ ինքն կը սպաէր յոյն ընտանեաց Հռոմէն ցաղրիպոլիտանն (ԲՈՆ· 220)։ Գործը պետութեան առջեւը ելաւ, Թէոդորոս ալ վարչապետ գնաց, Լեհահայոց բռնած ուղղութիւնը ինքն ալ պաշտպանեց, թէ Հայերը իրենց կաթողիկոսով արդէն միացած են Հռոմի եկեղեցիին հետ, և ոչ թէ նոր միութիւն մը կը կնքեն, սակայն հակառակ կողմը գօրացաւ։ Առաջարկուեցաւ որ Հռոմ երթայ, բայց յանձն չառաւ, և ստիպուեցաւ վճռական իշնալ, անկէ Արեւելք երթալու համար, և ուղղակի Բերթա գնաց։ Կը յիշուի թէ Թէոդորոս վերջէն Սպանիա գացած (ԲՈՆ· 221), և այնտեղ Դոմինիկեան վանքը քաշուած լլլայ Հռոմէականութիւն ընդունելով, սակայն Լատին պատմիչ ալ չհաւատար Թէոդորոսի հռոմէադաւան դառնալուն, և կը գրէ թէ Ղեւէ կոնդոնաց է փոքն, և փոխարէն է նմա հատոլ (ԲՈՆ· 222)։ Թէոդորոսի վերեզմանը կը յիշուի Հռոմի մէջ, ուր մեռած է 1700 փետրուար 12'ին (ԿԱՄ· 259)։ Անգամ մըն ալ դիտել կու տանք թէ հայադաւանութիւնը, իւր թոյլատու և յանախոհ սկզբունքներուն զօրութեամբ, երբեք առաջին ժողովներու դաւանութեան համաձայնող եկեղեցիները՝ քրիստոնեայ ընդհանրական եկեղեցիէն դուրս չէր սեպեր, որով կրնար անոնց հետ հաղորդութեան մէջ լլլալ, և անոնց հետ միութեան մէջ հռչակել ինքն։ Իսկ Թէոդորոսի Սպանիա անցնելուն պարագաները, և անոր վախճանը ուրիշ կողմէ ծանօթ չեն։

ՀՌՈՄԻ ՋԵՌՆԱՐԿՆԵՐԸ

1782. Թէոդորոսի միջամտելը Հռոմը գրգռեց լրջօրէն մտածել Լեհահայերուն և կեղեցական վարչութեան, Նիկոլի անձին և անոր յաջորդութեան վրայ։ Մէկ կողմէն խորհուեցաւ լատին գօրաւոր միաբանութեան մը յանձնել գործը, բայց Թէաթինեանց կարգապետը յանձն չառաւ այդ ծանրութեան ներքեւ մտնել, թէպէտ Փիթու հետամուտ էր խորհուրդը իրագործել։ Մտածեցին Դոմինիկեանց ալ դիմել, որոնք մեծ հաստատութիւն ունէին վարչապետի մէջ, սակայն սոյն խորհուրդն ալ չիրականացաւ։ Նիկոլը չէին ուզեր նորէն հոս դրկել, նկատելով անոր անառակ կենցաղը և անհաստատ բնաւորութիւնը և երկդիմի ընթացքը, մինչ միւս կողմէն Հայեր հետզհետէ աւելի դժուարութեանց և վտանգներու ենթարկուած լինելով, մինչեւ իսկ Նիկոլի ներկայութիւնը նուազագոյն չարիք կը սեպէին։ Հռոմ մտածեց Նիկոլի քով օգնական մը նշանակել յաջորդութեան իրաւունքով, և հետզհետէ միտքը դարձուց Հայազգի և Իլվովացի հայր Պատրիարկ Դոմինիկեան կրօնաւորին, Յովհաննէս Քրիսոստոմոսի Ջամոստիայի ասպագիրէցին, և փոխանորդութիւն վարող Յովհաննէս Կերիմովիչ Եպիսկոպոսին վրայ, բայց չկրցաւ կատարեալ վստահութիւն կազմել։ Ամէնքը աչքերնին դարձուցին վարդան Ծունանեան Եւդոկիացի աշակերտին վրայ (ԲՈՆ· 228), որ առաջ Լեհաստանի մէջ կալանուած և փիմուի ձեռքին ներքեւ կրթուած, 1670 օգոստոսին Անգելոս Փեվերատիի կրօնաւորին հետ (padre Angelo Peverati) Հռոմ էր դրկուած (ԲՈՆ· 209), և երկու տարի ալ Եղեռնական պոլսոյն Հռոմայ պարպանալով, կատարելապէս Հռոմի վստահութեան արժանացած էր (ԲՈՆ· 228)։ Այդ միջոցին տեղի կ'ունենար Օսմանեանց արշաւանքը Լեհաստանի դէմ՝ Քէօբրիւլիօղլուի հրամանատարութեամբ, որ 1672 օգոստոս 26'ին կամենիցը նուաճեց, և սեպտեմբեր 9'ին Իլվովը գրաւեց (ԺՈՒ· 282)։ Լոպելլի և Պոսսի Քրաքովա փախան, դրպրոցոնին քանդուեցաւ, աշակերտներ ցրուեցան, և պարտաւորեալ Լեհահայերու և Իլվովի Հայ ախտին համար բլլալիք կարգադրութիւններ չտատանուեցան (ԲՈՆ· 224)։ Միջոց ժամանակէն օգտուեցաւ Հռոմ Հայոց պատարագամատոյցը և ուրիշ ծիսական գիրքերը «ազգագրել տալու ըսք օրինակի լատինացոց, յատուկ յանձնաժողովի մը ձեռքով, որուն կ'անդամակցէին Աւրոպիոս Փիթու Իլվովի տեսուչը, Սեբաստիանոս Վերմանացի՝ Դոմինիկեան կրօնաւոր մը, վերոյիշեալ Վարդան Ծունանեան, և Հռոմի մէջ թարգմանչութիւն ընող Բարսեղ և Յովհաննէս քահանաներ (ԲՈՆ· 225)։ Առոնց գործը այնչափ աղաւաղ և աղճատեալ, և լեզուն նօթաթ ֆէն լեզու հայկական բառերով չափ խճողեալ էր, որ Հռոմ ալ իրեն սրտած տեղեկութեանց հիմնուելով հրատարակու-

քիւնը չարտօնեց (ԲՈՆ. 226)։

ՆԻԿՈԼԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

1783. Սակայն միանգամ ընդ միշտ պէտք էր վերջ տալ Լեհահայոց գործին, ստացուած արդիւնքը չկորսընդունելու, և զայն հետզհետէ յառաջացնելու համար, մանաւանդ որ յաջորդ 1673 տարւոյ ամառան մէջ Յովհաննէս Սոպիէսքի յաղթութիւն մըն ալ տարած էր Օսմանեանց վրայ (ԺՈՒ. 283)։ Ըստ այսմ 1673 սեպտեմբեր 5'ին Փրուիականտայի ժողովը յատուկ գումարում ունեցաւ, Փիլիպ առաջարկած տասը պայմանները քննելու, որոնք կալանուսեան աւանդութեամբ և չանեցողական հոգւով կազմուած էին, և որոց առաջինն էր՝ Աբգելալ Հայոց դառնալ ի Տունն ի լեհականութիւն (ԲՈՆ. 234)։ Հայրունի ազգային զգացումները չվիրաւորելու միջոց։ Բայց այս անգամ ալ որոշում չկրնացաւ։ Փիլիպ հետամուտ էր Իլվով դառնալ, իր առաջին աշխատութեանց վտանգուիլը նախատեսելով, և Հռոմը կը համոզէր որ Նիկոլը վերադարձնէ, յարմար օգնականի ընկերակցութեամբ, վստահացնելով թէ Տէրոնէ օ՛ ամօ էքէօ օղնէդ, և այն ալ հօ օնելով ըզդօդ էօդ, չկրնար այլեւս վնասակար դառնալ (ԲՈՆ. 226)։ Վերջնական որոշումը տրուեցաւ 1673 նոյեմբեր 17'ի ժողովին մէջ, և դեկտեմբեր 2'ին Փիլիպ Հռոմէ մեկնեցաւ, և 1674 փետրուար 1'ին Իլվով հասաւ, և իսկոյն ձեռնարկեց քանդուած դպրոցը վերաշինել, աշակերտներ հաւաքել, և ժողովուրդը հռոմէական պահպանութեան համաձայնեցնելու գործը առնիւ վարել, թէպէտեւ մարտ 30'ին Լոպուլլիի մեռնելովը՝ Փիլիպի օգնական մը պակաս էր (ԲՈՆ. 245)։ Սոյն միջոցին Իլվով նորէն պաշարուեցաւ Օսմանցիներէն, բայց անվնաս ազատեցաւ Սոպիէսքիի ձեռքով, որ քիչ առաջ Միքայէլի մահուան վրայ Լեհաց թագաւոր ընտրուած էր (ԺՈՒ. 283)։ Փիլիպ կ'աշխատէր Նիկոլի վերադարձն ալ կատարել Յունանեանի յաջորդական օգնականութեամբ, ուստի այս մասին Լեհաց արքունիքին հաւանութիւնն ալ ստացաւ, և Հռոմի հաղորդեց։ Նիկոլ Յունանեանը ձեռնադրեց Նպիփանիոյ անուանական տիտղոսով, և անմիջապէս ուղեւորեցաւ, և յաջորդ տարւոյ Յունուարին Լիսին հասաւ, մինչ Յունանեան հոն էր գար։ Օսմանեանց կրկին Իլվովի վրայ յարձակելնուն պատճառով, ինչպէս յիշեցինք, ուղեւորութիւնին յապաղեցաւ, և հազիւ հոկտեմբեր 2'ին երկուքը միասին Իլվով մտան, և մեծ հանդէսով ընդունուեցան, և 27'ին արքունիք ներկայացան։ Փիլիպ կը յուսար թէ այլեւս Նիկոլ իրեն հրահանգներուն հոս հպատակ կը մնայ, սակայն չուտով սկսան փոխադարձ տժգոհութիւններ, զի ոչ միայն Նիկոլ չուտով է նախնի կեցուածքն կենցաղավարութեան դարձաւ, այլեւ ազահութեան կեղեքումներով, Լատիններուն նեղութիւն պատճառելով, Յունանեանը անարգելով, և նմանօրինակ միջադէպներով առաջին ժամանակները վրանորոգեց։ Իր նախկին սիրուհին ալ նորէն իր խնամոց ներքեւ առաւ, զոր մուսինը լքած էր, տեսնելով որ Նիկոլ ճախկէ յայտնի նոր գեղ էր։ Երբոր հիւանդացաւ, Ս. Խաչի վանքին մէջ կեցուց, և երբոր մեռաւ դիա ղովի պէտրոպոլիտէնէ և քաշմաճախ պատարագիչ կատարեց, և փրանկիսկանաց եկեղեցւոյն մէջ թաղեց։ Նիկոլի այդ կինէն ունեցած զաւակներուն համար գրուած է, թէ ա՛ յոխ պաոպէրօկօլիճանց էրէանց, ու լաոֆոյն ինչ լէգէն՝ տան ղհայէ էրէանց (ԲՈՆ. 28)։

ՆԻԿՈԼԻ ՄԱՀԸ

1784. Նիկոլ Իլվով դառնալէն ետքը հինգ տարի եւս ապրեցաւ՝ խոր ծերութիւնն հասնելով, բայց և խոպատէս սուզուելով այն անտեղի կեցցաղին մէջ, որուն հետեւեցաւ բոլոր իր երկարակեաց կեանքին եւ երկարատեւ պաշտօնավարութեան մէջ, որ 1626ին Մելքիսեդեկ ստացած ձեռնադրութենէն (§ 1638) մինչեւ 1681 իր մահուան թուականը (ՉԱՄ. Գ. 643), 55 տարի տեւած է, և 22 տարեկան ձեռնադրուած ըլլալով 77 տարեկան մեռած է։ Հռոմէականներու մէջ մեծապէս պատուուած է անոր անունը իբր սկզբնապատճառ Լեհահայերուն հռոմէադաւանութեան անցնելուն, և իբր գլխաւոր գործիչ այդ ձեռնարկին։ Այլ եթէ լաւ քննէին գործին պարագաները, պիտի չհամարձակէին այդչափ դիվել բարձրաստիճան

եկեղեցական մը, որ ընդհանուր պայմակ-
ղութեան առարկայ էր իր հրապարակային
չնութեան կեանքովը. և առաջնորդարանի
մէջ կը պահէր ու կը պատուէր կուսաստանէ
խլուած կին մը, և անկէ առացած երկու
ապօրէն զաւակները, և մինչեւ Հռոմ ալ
միասին կը տանէր՝ աչխարհի ցուցադրելով
ամենայն անամօթութեամբ: Եւ երբ բռնա-
դատեալ կը բաժնուի պռոնիկէն, ժամանակ
անցնելէն ետքը նորէն զայն մօտ կ'առնէ
երիտասարդական օրերը վերանորոգելու:
Բայց գոնէ հռոմէականութեան հետեւելուն
մէջ ուղղամտութիւն և անկեղծութիւն ու-
նենար, զի առաջին դիմումը՝ իւր ապօրէն
ձեռնադրութիւնը ժողովուրդին բռնութեամբ
ընդունել տալու նպատակով սկսաւ, և
մինչեւ վերջն ալ ուրիշ արդիւնք չունեցաւ,
բայց եթէ դրամական փոխարինութեան
ծառայեցնել և իբրեւ վարձկան ծառայ Հռոմի
կամքը կատարել, մինչ ժողովուրդն ալ չար
չդադրեցնելու համար Հռոմի հրահանգնե-
րուն ալ արտով չէր համակերպեր: Մէկ
կողմէ Հռոմէ յղուած լատին պաշտօնեա-
ները կը նեղէր, ժողովուրդին լաւ երեւ-
նալու համար, և միւս կողմէ ժողովուրդը
բռնութեամբ և հարստահարութեամբ և կե-
ղեքումներով կը նեղէր Հռոմի հաճոյական
երեւնալու համար: Փիլիպպոս կաթողիկոսի
առջեւ հայադաւան և հայածէս կանոններու
կատարեալ էն յանձնառու կ'ըլլար՝ աթոռը
ձեռքէ չհանելու համար, իսկ Հռոմի պատա-
ւիրակներուն առջեւ ամէն պայմանի հա-
ւանութիւն կը ցուցնէր՝ դիրքը պահպանե-
լու համար: Հռոմայ իշխանութիւնք և
պաշտօնէութիւնք, որոնք այդ ամէնը լաւ
գիտէին, ինչպէս պատմութիւնն ընթացքին
մէջ տեսնուեցաւ, չթաչուեցան երբեք այդ-
պիսի մէկու մը ձեռքով նպատակնուն հետե-
ւիլ, յայտնի ցուցնելով որ ոչ կրօնքի պրո-
բութիւնը կամ հաւատքի ուղղութիւնը, ոչ
խղճի ճշմարտութիւնը կամ բարոյականի
մաքրութիւնն էր պիտուած նպատակը, այլ
միայն սերտագոյութեան ձգտումը և իշխա-
նութեան անդը, որուն համար կ'արդա-
րանային ամէն միջոցներ և կը սրբանային
ամէն միջնորդներ, բաւական էր որ նպա-
տակին հասնէին: Բայց եթէ միջոցներ և
միջնորդներ իրենց պզտիկ ու ընդհմիր
վրայ ալ կը ցոլայնէն, ինչպէս ուղիղ միտ-
քը կը ցուցնէ և ուղիղ խիղճը կը տրվեցնէ,
հռոմէականը պէտք է այդ հետեւանքը
ճանչնան իրենց գործին և իրենց նպատա-
կին վրայ ալ, որուն համար գործածուած
միջոցներէն և միջնորդներէն քանիները յի-
չեցինք, քանիներ ալ առաջիկային պիտի
տեսնանք:

ՄԵՂՐԵՑԻՆ ԵՒ ՅԱՋՈՐԴՆԵՐ

1785. Կ-Պոլսոյ աթոռին վրայ խոտու-
ցինք Սահիանոս Մեղրեցին, որ 1670'ին
նստեցաւ (§ 1767), և խո-
հական ու խաղաղասէր
անձի համբաւ կը վայե-
լէր, և կրցաւ իւր ժա-
մանակին վրայ քիչ ու չատ ազդել, որով
կուսակցական ելեւէջներ իւր օրով պահ մը
լռեցին: Բայց դժբախտաբար հանդարտու-
թիւնը տեւողական չեղաւ, և ոչ ալ երկար
եղաւ իւր պաշտօնավարութիւնը, ու
1674'ին վախճանեցաւ: Գերեզմանաքարին
վրայ յիչուած 1673 թուականը նոքէն գրո-
ւած սխալ մը կը կարծուի (Ձէլ. 304):
Մահուան պարագաներուն վրայ ընդ ազօ
տեղեկութիւն մը կուտայ Քէօմիւրճեան, որ
Պալըրլը թաղուածներուն կարգը կը յիչէ:
Եւ Աբէտեան Մեղրեցի ասք պոպրէկ, կամ՝
պատրիարք, ոչ լեալ պարտադան՝ Պադոճաֆեբէն
հանէն, երկաւորքէ եաս գվախճան (Ձէլ. 51):
Կ'երեւի թէ պատրիարքարանի օտարներուն
ունեցած պարտքերուն համար բանտարկ-
ուած է, և ազատուելէն երկու օր ետքը
մեռած է, հարկաւ սիրտի ցաւէն և բանտի
նեղութենէն: Նոյն իսկ պատրիարքի մը
բանտարկուիլը՝ չափազանց և յուզմանց
նչանակին է, և պատրիարքական պարագան ու ա-
նոր չվճարուիլն ալ իսկոյն այդ միտքին կը
տանին: Ասկէ կը հետեւցնենք, թէ Մեղ-
րեցիին վերջին օրերը նորէն ընդդիմադիր
կուսակցութիւններ հրապարակ իջած էին,
և պատրիարքութիւնն ալ ծանրանալու ձիգերը
երկկողմանի միութիւններ բորբոքած: Մեղրե-
ցիին յաջորդը Յովհաննէս մըն է մականա-
ւանեալ Թօփալ, որ է կայ, զոր սանք
Ամասիացի վարդապետ և ուրիշներ Սամա-
խիացի երէց կը կոչեն (ՁԱՐ. Գ. 715): Տե-
ղերու անուններուն հետ է համաձայնեցնել՝
ծննդավայրին ու բնակավայրին տարբերու-
թիւնն պատշաճցնելով, իսկ աստիճաններուն

ալ կը համաձայնին, եթէ ըսենք թէ քահանայութիւնէ հոգը վեղար առած է պատրիարքանալուն առիթ, որուն օրինակները պակաս չեն։ Այդ ենթադրութեամբ Յովհաննէս առաջին քահանայն կ'ըլլայ պատրիարքութեան բարձրացած, ինչ որ չատ զարմանք պէտք չէ պատճառէ, երբ կը տեսնանք, որ ոչ կանոնով և ոչ օրինաւոր ընտրութեամբ կ'որոշուէր պատրիարք եղող անձը, այլ բաւական էր քիչ մը կուսակիցներ չահիլ, պէտք եղած գումարը ճարել, և պետական հրովարտակը գնելով պատրիարքանին տիրանալ։ Այդ բանին կրնար ձգտիլ քահանայ մըն ալ, ինչպէս կը ձգտէր եպիսկոպոս մը կամ վարդապետ մը, մանաւանդ որ այս միջոցին քահանայութիւնը չատ զօրաւոր էր, և վեց գլխաւոր եկեղեցիներու աւագերէցներն էին որոնք իրենց քահանայ ընկերներով ամբոխավարութեան դերը կը վարէին և աղմուկներ կը յուղէին, ինչպէս տեսանք Աստուածատուր Թըլթըլը (§ 1761), և Անդրէաս ՃէհէննէմՄէրթիվէնին (§ 1733)։ Այդ երէցներ, որ այս ու այն եպիսկոպոսին կողմը զօրացնելով իրենց ազդեցութիւնը կը չատցնէին, չատ բնական էր որ քայլ մը ևս յառաջելով ուղղակի իրենց համար աչխատէին։ Յովհաննէսի պատրիարքութիւնը յանկարծ կը վերջանայ, ինչպէս յանկարծ սկսած էր, և պատմական աղբիւրներ չենք գտներ պարագաները բացատրելու։ Աւոր օրուան կը հանդիպի Չինիլինամամ թաղի հրկիզուած Ս. Սարգիս եկեղեցւոյն (§1640) վերաչինութեան ձեռնարկը, և չաւարտած քանդուիլը (ՉԱՄ. Գ. 715). այլ թէ որչափ ինչ արժանիք ունէր Յովհաննէս վերաչինութեան մէջ, կամ մեղադրանք փլչուելուն մէջ, մեզի անծանօթ կը մնան, միայն կ'երեւի թէ իրեն համար չարաբաստիկ եղաւ փլուզումը, և աթոռէն անկումը յաջորդ տարւոյ։ Ուրիշ պարագայ մըն ալ, որ մտադրութենէ պէտք չէ վրիպի, Մարտիրոս կաֆացիին անձն է, որ իբր Երուսաղէմի պատրիարք կամ առաջնորդ անունով կ-Պոլիս կը նստէր, և հարկաւ անտարբեր չէր կ-Պոլսոյ պատրիարքական աթոռին հանդէպ, զայն իրեն սեփականելու, կամ թէ իր կուսակիցը անոր վրայ բազմեցնելու նպատակով։ Որչափ ալ կարեւոր նկատուի կաֆացիին ընթացքը այդ չփոթներուն նկատմամբ, սակայն որոշ կերպով ճշդուած չենք գտներ անոր դերը Յովհաննէսի անկումին մէջ։

1786. Յովհաննէս տարին չբոլորեր աթոռին վրայ, և իրեն ընդդիմադիր կը տեսնէ ուրիչ երէց մը, որ է Ծաղիկ Անդրէաս Նօթ ՃէհէննէմՄէրթիվէնի եւ Կրպոց Անդրէասը, Թըլթըլեանց ամբոխապետը և կաֆացիին հին բարեկամը (§ 1761), որանք սակայն այլեւս իրարու բարեկամ չեն մնար, երբ Անդրէաս կը յաջողի 1675'ին Յովհաննէսը աւտպաշլել և ինքն բարձրանալ, հոգ ալ չընելով վեղար առնել և վարդապետ կոչուիլ, որով առաջին անվեղար պատրիարքն եղած կ'ըլլայ։ Հարկաւ կաֆացիին կ-Պոլսոյ մէջ իբրեւ պատրիարք ճոխանալն, ու ժողովրդական հաստիքներէն լաւ մաս մը իւրացնելն է, որ Անդրէասը գրգռած է անոր դիրքը խախտելու, և կաֆացին իւր ազդեցութիւնը գործածած է զայն տապալելու, որով Անդրէաս ալ Յովհաննէսին նման չուտով կը սխալուի տեղի տալ ուրիչ երէցի մը։ Մարտիրոս իր յաջողութեան համար աւելի անչուշտ կաչառքի ոյժը, քան չուտով ուրիչ պարագայ մըն ալ կը հասկնար անոր ձգտումները քաջալերելու։ Քէօրթիւլիւօղլու Ահմէտ փաչա, որ հիւանդ էր արդէն, ուզեց Մէհէմմէտ Դ սուլտանին ընկերանալ, երբոր սա Լէհերու պատերազմէն ետքը Ադրիանուպոլիս կը դառնար, բայց ճանապարհիւանդութիւնը աստիճանալով 1675 հոկտ. 30'ին մեռաւ Պուլկարի մօտ Գարապիպէրի ագարակին մէջ, 42 տարեկան, բայց 15 տարի մեծ լսարքոսութիւն վարած (ԺՈՒ. 285), և իրեն յաջորդեց Գարա Մուսթաֆա փաչա, բնիկ Մարտունցի, թագաւորին քեռայրը և Քէօրթիւլիօղլուին մանկութենէ ընկերակիցը (ԺՈՒ. 286)։ Մարտիրոս փութաց նոր լսարքոսը իրեն չահիլ, ուստի պէտք եղած միջոցները ձեռք առաւ իւր դիրքն ամրացնելու և Երուսաղէմի պատրիարքութեան նոր հրովարտակ առացաւ, բայց Երուսաղէմ երթալ չփորձեց և բաւականացաւ Եղիազարի իբր իւր փոխանորդի հրամանագիրը դրկել, և ինքն կ-Պոլսոյ մէջ Երուսաղէմի վանքին և ուխտին պատկանող

հատոյքները հաւաքել։ Անդրէաս այդ առաքեալ իբր ընդդիմութիւնը աստուածային յայտնութիւն չունենալու, դի Մարտիրոս կրցաւ զայն պաշտօնէն վտարել, և անոր տեղ իրեն հնազանդ, գաւառացի անուս քահանայ մը պատրիարք անուանել տալ, որ էր կարապետ կեսարացին, զոր ժողովուրդը հեգնօրէն Տէր Կրպոյ կը կոչէր։ Կաթողիկոսը անոր աստիճանը բարձրացուցած ըլլալու համար փութաց վիզայ տալ, և Տէր Կրպոն սկսաւ Կրպոյ Ռաբունն կոչուիլ (ՁԱՄ· Գ· 717)։ Պատրիարքական փոփոխութիւնը տեղի ունեցաւ 1676'ին վերջին ամիսները, և կարապետ աթոռը պահեց երեք տարի մօտ մինչեւ 1679, ինչ որ ժամանակին չիրթութիւններուն նայելով երկար թաւեւ կրնայ թուիլ։

1787· Կ'երեւի թէ ընդդիմութեանց գլխաւորներ կարապետ մէկ կողմ թողած, ուղղակի կաթողիկոսին դէմ ԵՐՈՒՍԱղԷՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ սկսած էին մաքառիլ, անչուշտ իրենց դրդուածքիւնը ու մէջնորդները առաջնորդ եղիազարէն, որուն համար անտարակոյս կրնար ըլլալ կ-Պոլսոյ պատրիարք եղող անձը, բայց կինանական էր Երուսաղէմի պատրիարք անունով գործող կաթողիկոսին տապալել։ Քանի որ Սբ-Յակոբ առանձնաւոր պաշտօն մը բաւական ժամանակէ իվեր առեղծուած էր. զայն ոչնչացնել անհնար էր, կառավարութեան առջեւ ալ պաշտօնի փոխանցումն էր՝ ճանչցուած և գործածուած եղանակը։ Այս պիտի ըլլայ պատճառը որ փոխանակ Մարտիրոսի տեղծած ինքնահնար պաշտօնին անգոյութեան հաստատելու, զայն ուրիշի փոխանցելու կերպին են հանուած կաթողիկոսին հակառակորդները, եղիազարի հովանաւորութեամբ։ Առաջին առջեւ հետեւողը Ահէնէմ-Մերտիվէնի Անդրէասն է, զոր կաթողիկոսը պատրիարքութեան հանած էր, բայց 1677'ին սկիզբները կաթողիկոսին պաշտօնը ձեռք կը ձգէ պետական հրովարտակով։ Մարտիրոս և կարապետ միացեալ ոյժերով Անդրէասի դէմ կ'ելլեն, և 1678'ին զայն վար կ'առնեն, և նոքէն կաթողիկոս է որ Երուսաղէմի առաջնորդութեան հրովարտակ կը առնայ։ Սակայն Յովհաննէս, նախկին պատրիարք (§ 1785) կը յաջողի զօրանալ և կաթողիկոսը հալածել, և իրմէն սեփականել անոր պաշտօնը, այսինքն Երուսաղէմի առաջնորդի կամ պատրիարքի անունն ու հաստոյքը (ՁԱՄ· Գ· 619), որ կրնար Երուսաղէմի փոխանորդութիւն կամ գործակալութիւն ըսուիլ, քանի որ եղիազար էր որ իսկապէս Երուսաղէմի աթոռին վրայ կը գրաւնուէր, առանց սակայն որեւէ յարաբերութիւն ունենալու կ-Պոլիս նստողին հետ։ Այս փոփոխութիւնը տեղի ունեցաւ 1679ին։ Սակայն այս անգամ ընդդիմադիրները միացան կաթողիկոսին հետաամդելով չգոհացան։ Կրպոյ Ռաբունն ալ պատրիարքութենէ հանելու ձեռնարկեցին։ Պատրիարքութեան հետաձգողը այս անգամ աշխարհական մըն էր, Սարգիս անուն, էքմէկճի մականուանեալ, որ բանակին հացի հայթայթիչն էր, և աննշան մէկը չէր, բայց փափաք ղգալով ինքն վայելել պատրիարքութեան օգուտները, իսկոյն քահանայ կը ձեռնադրուի, և իբր Սարգիս Երէց պատրիարքութեան հրովարտակ կը առնայ Նոյն 1679 տարին, նախընթաց քահանաներուն հետեւողութեամբ, և չնորհիւ այն յարաբերութեանց զոր ունէր պետական չինականներու մէջ, գուցէ ալ պատրիարքութեան հետ կը պահէր իր առաջին արհեստը։ Ձենք ուժեր առնելի դիտողութեանց մտնել ժամանակին կացութեան վրայ, դի պատմուած պարագաներ բաւական են ցուցնել թէ ինչ անկումի հասած էին եկեղեցին ու եկեղեցականութիւնը, պատրիարքութիւնն ու ազգութիւնը, կամ մէկ խօսքով Հայութիւնը։

1788· Այդ ամէն դժուարի եղելութեանց լուրերը կը հասնէին Յակոբ կաթողիկոսի ականջը, որ արդէն աչքով ալ տեսած էր Երուսաղէմի (§ 1759) և կոստանդնուպոլսոյ անցուդարձերը (§ 1763), տեղեկութիւն առած էր Լեհաստանի գործողութեանց վրայ, և իրեն չուրջն ալ էջմիածինի մէջ պակաս չէին անտեղութիւններ, և հնար չէր որ չմորմոքեր եկեղեցասէր հայրապետին սիրտը, և չմտածեր ազգու դարման հայթայթել այդ անկարգութեանց, և ազգային եկեղեցւոյն հնարաւոր բարեկարգութիւնը պատրաստել։

Ամէն միտք չուտով կը յարի այն առարկային որ իւր աչքերուն դիմաց կը կանգնի, և կաթողիկոսին տեսութեան ատեն մօտ գտնուողները հոմէական կրօնաւորներն էին, որոնք Հայաստանի մէջ կը տեսնուէին անդատին Ունիթորներու օրերէն, և կը չարունակէին իրենց գործունէութիւնը ատելի կամ նուազ ընդարձակութեամբ, բայց միշտ միակերպ ուղղութեամբ։ Ատոնք երբեմն սաստիկ մոլեգնութեամբ Հայութիւնը ջնջելու և լատինութիւնը տեղը դնելու կը ջանային, բայց բաւական ժամանակէ իվեր ատելի չանցդական ուղղութիւն մը ընդգրկած էին, Հայոց ազգային դպացութիւնները չոչնչով, ընդհանուր գիծերու մէջ հայկական ձեւերը պահելով, և աստ և անդ բառերու կամ նախադասութիւններու կամ չարժուածներու փոփոխութեամբ գոհանալով, միայն թէ պապական իշխանութեան հպատակութիւնը կամ համակրութիւնը բացարձակ կերպով ապահովուէր, ապագային թողլով աստիճանապէս յառաջացնել փոխակերպութիւնը։ Արդէն բացատրեցինք Թոմինեկեան Փիրօմալլիի, և Թէաթինեան կալատոսի ու Փիթուի այդ ուղղութեամբ կատարած մերձեցումները։ Ատոնց հետէն եկած էին ատելի ճարտար և ատելի ճկուն գործիչներ, Յիսուսեան միաբանները Իգնատիոս Լոյոլայի աչակերտութենէն, Եզուիտ կամ Ճիզվիթ (Gesuita) կոչուած։ Ատոնք տիրող պետութեան հետ ալ բարեկամութիւն հաստատելու կերպերը գիտէին, բնութեան և առողջապահական գիտութեանց քիմիայի իսկ մարդիկներ կը պարսպացնէին, բժշկական և առողջապահական դեղերով և հրահանգներով ժողովուրդը կը գրաւէին, և այս կերպով ճանապայ կը բանային իրենց նպատակին համաձայն ներքինչութիւններ քիւլպելու։ Պէտք չէ հոս մոռնալ, որ ինչ ալ բլլային հոմէական քարոզիչներուն ներքին սկզբունքները, նոյնպիսի ուղղութիւնները, տուտակատոպա միջոցները, և նորահնար վարպետութիւնները, այլ որ պարտող արտաքին բարեկարգութիւն մըն ալ կը պահէին, կանոնական ձեւեր ունէին, անձնատուր կ'երեւէին, և մանաւանդ մեծ ծերունի հրամաններուն անսալու և հրահանգներուն հետեւելու ճշդապահութեամբ կը փայլէին, որոնք ատելի կը չեշտուէին Արեւելքի մէջ, ուր կանոնական բարեկարգութիւնը և խստապահանջ հրամանատարութիւնը չատ հոռի մնացած էին։ Եկեղեցական խնդիրներու վրայ մտածողներ, պէտք էր խոստովանիլ տպաւորութիւն զգային այդ չօչափելի հակադրութենէն հանդէպ։ Արեւմտեան գործիչներ ուրիշ նպատակ մըն ալ ունէին, և այս էր Արեւելքի մէջ տեսնուած բռնական տիրապետութեան դէմ, գօրաւոր պաշտպանութեան ակնկալութիւնը, և նիւթական օգնութենէն առատութիւնը։ բան մը ուսկից հնար չէր որ չյարժուեր ու չգրաւուեր ամէն վշտացեալ ու հարստահարեալ սիրտ, և ամէն արկածեալ ու աղքատացեալ մարդ։

1789. Այդ գաղափարներ կը գրաւէին Յակոբ կաթողիկոսի միտքն ալ, որ չատ կանուխէն իւր եկեղեցւոյն դժբախտ կացութենէն գիտակից, և անոր լաւացման կերպարան մը տալու փափաքող, բայց տեղւոյն և պայմաններուն պահանջմամբ անձուկ չրջափակի մէջ մնացած, և չուրջը տեսածով տպաւորուելու սովրած, ոկսած էր մտածել, թէ ինչ կերպով արդեօք կրնար օտարին վրայ տեսած առաւելութիւնները ազգային տարբերին վրայ փոխանցել, և ուրիչ եկեղեցւոյ վրայ նկատած յատկութիւնները իր եկեղեցւոյն վրայ իրագործել։ Այդ գաղափարը նոր չէր Յակոբին միտքին մէջ։ Երբոր առաջին անգամ 1665'ին նա Զմիւռնիա եկաւ, անկէ երուսաղէմ, անկէ ալ Կ-Պոլիս ճանապարհեց (§ 1759), այսպիսի նպատակ մը ունեցած էր։ Նա կ'ուզէր Օսմանեան մայրաքաղաքի և Եւրոպացւոց հետ յարաբերութեան մտնել և ուսումնասիրել, թէ ինչպէս հնար է այդ միտքը իրականացնել, և ինչ միջոցներով Արեւմտեան առաւելութիւնները Արեւելեաններուն վրայ պատուաստել։ Նա պատրաստ էր այդ նպատակին համար, երթէ հարկ բլլայ, Արեւմուտք ալ երթալ, որուն կեդրոնը այն դարուն մէջ Հռոմն էր։ Եւրոպացի ուղեւոր մը, որ 1670'ին Զմիւռնիայէ Անգղիա երթալու համար Իտալիայէ կ'անցնէր, այնտեղ չչուկ մը լսած է, թէ Հայոց առաջին պատրիարքը, իր մէկ մեծ

ՅԱԿՈԲԻ ԴԻՏՈՒՄԸ

պոլիտեղի սովիկցոմբէ, ըսաւ ֆեռլօ է ձոմ (Լէօ. Ա. 242), բայց թէ քանի մը աւիւ իտալիա մնալով ալ՝ այդպիսի բան մը չէ տեսած։ Եւ ինչպէս պիտի տեսնար 1670'ին, քանի որ արդէն 1667'ին Յակոբ կաթողիկոս ետ դարձած և էջմիածին գացած էր (§ 1764)։ Մեզի համար չատ դիւրին է այդ կէտը վերլուծել։ Յակոբ կ'ուզէր Արեւմուտքէն օգտուիլ, և անոնց ձեռնտուութեամբ Հայ եկեղեցին բարեկարգել և Հայ ազգութիւնը բարեզարդել, բայց երբեք չէր ուզեր Հայ եկեղեցին իր ինքնուրոյնէն հանել և ազգը լատինացնել։ Իր նպատակին վրայ հաստատուն, իր ծրագիրին վրայ ամուր, կաթողիկոսը հարկաւ մասնաւոր տեսակցութիւններ և խորհրդարար բանակցութիւններ ունեցած է Կ-Պոլսոյ մէջ, և ասոնց արձագանգն է, որ մինչև Իտալիա Եկեղեցական պետութեան մէջ լսուած է, երբ Յակոբ լատիններուն իսկական ծրագիրը իմանալով, ետ կեցած էր իր միտքէն, և դարձած էր էջմիածին։ Իսկ երբ էջմիածին դառնալէն երեք տարի ետքն ալ զրոյցը կը լսուէր Իտալիոյ մէջ, նշան է որ ոչ խզելով այլ յուսադրելով բանակցութիւնը փակած էր։ Իրականութիւնն այն է, զոր Եւրոպայի ուղեւորն ալ լաւ քաւիանցած էր, թէ Հայոց պարբերը նոյնպէս հեռու էր մտքեն օտար եկեղեցոյն հպատակելու գիտաւորութենէն, որուն Հայաստանը հեռու է հասկանալ կրնայ ալ (Լէօ. Ա. 242)։

1790. երբ Յակոբ կաթողիկոս հեռու էր եկեղեցին հպատակեցնելէ և ձուլելու և ինքնուրոյնը կորսնցնել տալու դաղափարէն, բայց էջմիածնի խորհուրդը լքած չէր համաձայնութեան օրինաւոր գիտին մը գտնելու դաղափարը, միշտ ենթադրելով որ դիմացինները նոյնչափ ուղղամիտ էլլան իրենց պահանջներուն մէջ, որչափ ինքն ալ միամիտ էր իր առաջարկներուն մէջ։ Յակոբի Կ-Պոլսէ մեկնելէն և համաձայնութեան հետապնդութենէն տասը տարիներ անցած էին, և Յակոբի տակաւին իր առաջին միտքին վրայ էլլալուն նշանները կը տեսնենք։ Հարկաւ այդ միջոցին մէջ իրեն մօտեցան Հայաստան գտնուող տարբեր միաբանութիւններէ արեղաները, հարկաւ Յակոբ տեսակցեցաւ և խորհրդակցեցաւ բանիմաց և բարեմիտ Հայերու հետ, և այդ ճիգերու հետեւանքը պէտք է ըլլայ այն յատուկ խորհրդակցութիւնը, զոր կազմեց 1678'ին (Լէօ. Ա. 239), և որուն մասնակցեցան վեց եկեղեցական աստիճանաւորներ և վեց աշխարհական անձեր (Լէօ. Ա. 240)։ Տիրապէս հնար չէ այդ գումարումը խօսել կոչել այն իմաստով, որով կ'իմանանք մենք տղգային ժողովները, զի պաշտօնական ոչ մի հանդամանք չէր ներկայեր, մանր համար մենք ալ խորհրդակցութիւն ըսինք։ Այդ խորհրդակցութեան մասին տեղեկութիւնը տուողը, ոչ աղբիւրը կը ցուցնէ և ոչ քնագիրը առջեւ կը բերէ՝ որ կարենայինք աւելի ճշդութեամբ խօսիլ, միայն կանխահաս կը տեսնենք այդ խորհրդակցութեան վերապրուած որոշումը, թէ խօսքը չըլլայ հպատակութեան յայտնել պոչի (Լէօ. Ա. 239)։ Համաձայնութեան նպատակով բանակցութեան մտնելու, և բացարձակապէս հպատակութիւն յայտնելու միջեւ մեծ տարբերութիւն կայ, և երկուքը իրարու չփոթելու չէ, Յակոբին վերագրելով միտքեր, զոր ունեցած չէ, և որոնցմէ միշտ հեռու մնացած է, թէպէտ ամենայն յօժարութեամբ ուզած է համաձայնութեան կերպ մը գտնել և այդ միտքով բանակցիլ։ Էջմիածնի խորհրդակցութեան մտնող աշխարհականներ Արցախցի կամ Ղարաբաղցի են եղած, լեռնային գաւառներու խորհուրդին զաւակներ, որոնք աւելի առջեւ ալ յաճախ ունէին աչուընին, քաղաքական աղատութեան դիրք մըն ալ առեղծել, և իրենց դլխաւորն էր ծերունի Պաւշ իշխանը, որուն կողմէն գումարման ներկայ էր իր որդին, Իսրայէլ Օրի, զի ծերունին ստիպում էր տունը մնալ (Լէօ. Ա. 423)։ Խորհրդակցութենէն պատգամաւորութիւն մը կազմուեցաւ, որ Արեւմուտք երթալով եղած խորհուրդները պիտի մչակէր, տեսակցէր, բանակցէր, և պատշաճ պիտի որոշէր։ Յակոբ կաթողիկոս, արդէն ուխտնամոյ, չվարանեցաւ անձամբ ուղեւորիլ։ Նչանակութեան արժանի է, որ պատգամաւորութիւնը նախ էջմիածնէ Տփղիս գնայ (ՁԱՔ. Բ. 91), պարագրուն համար հան-

դանակութիւն բանալու խօսքով, բայց առանց Պարսիկ կուսակալին իմաց տալու։ Անոյշ վրաց իշխաններուն հետ ալ տեսակցեցաւ, և հակառակ Երեւանի կուսակալէ ևկած պատուիրակին անապով ետ դառնալու, ուղեւորութիւնը չարունակեց, Սերաստիա հանդիպեցաւ, և նաւով կ-Պոլիս անցաւ (ՋԱՔ. Բ. 91)։ Մենք խորհրդակցութիւնեան ամբողջ գաղտնիքը ձեռնըմիս չունինք, բան որում գաղտնի պահուած էր ժամանակին ալ, իսկ մէջտեղ կը խօսուէին եղիազարի հակաթոռ կաթողիկոսութիւնան, և կ-Պոլսոյ պատրիարքական աթոռին չփոթութիւնց ինդիրները, որոնց կարգադրութիւնան համար կ'ուղեւորէր ծերունազարդ հայրապետը։ Նա իր ուղեկից և պաշտօնակից ընկերներով կ-Պոլիս հասաւ 1679 դեկտեմբերին, որ կը ցուցնէ թէ 1678'ին խորհրդակցութիւնէն ետքը տակաւին զբաղած են միաքերնին հասունցնելու, ատեն մըն ալ վրաստան մնացած են՝ վրացիներու հետ համերաչխ գործակցութիւն մը ծրագրելու համար, և անկէ ետքը ուղեւորած են կ-Պոլիս։

1791. Բաւական հետաքրքրական պէտք է ըլլային կաթողիկոսին կ-Պոլսոյ մէջ անցուցած օրերուն գործերը, եթէ կանոնաւոր տեղեկութիւններ գրուած ըլլային, կամ մեր ձեռքը գտնուէին։ Եղելութիւնց արդիւնքն ալ լոյս չտեսաւ, վասնզի ոչ մի գործ չէ լրացած դեկտեմբերէ օգոստոս ութը ամիսներուն մէջ, զոր Յակոբ անցուց կ-Պոլսոյ մէջ, ուր և մնաւ և թաղուեցաւ։ կ-Պոլսոյ պատրիարքութիւնան մասին գիտցուածը՝ էջմիածնի Մարդիս երէցին 1680'ին պաշտօնէ հանուելով՝ Կրպոյ Իսթրունին նորէն պատրիարք ըլլալն է, որ չփոթութիւնց վերջանալ, կամ աթոռին կանոնական ձեւ մը տալ բնել չէ, անուս կնսարացիին պաշտօնի անցնելովը։ Միայն կը ցուցնէ թէ Յակոբ կաթողիկոս լաւ յարաբերութիւնց մէջ գտնուած է Մարտիրոս Կաֆացիին հետ, որուն պաշտպանեալն էր Կրպոյ։ Մարտիրոս նոյն ատեն ամենէն կարկառուն դէմքն էր կ-Պոլսոյ մէջ, որ Թօփալ Յովհաննէսն ալ երեսաղէմի առաջնորդութենէն մերժած, և

պաշտօնը նորէն իրեն վերադարձուցած էր Յոսովհան և Ջահուկեան և Արեւելցի խումբերուն օգնութեամբ։ Յակոբ մօտ իրրև մտերիմ խորհրդական կը տեսնանք երեմիա չէլէպի Քէօմիւրճեանը, որուն անուններ ուրիշ անգամներ ալ տուինք, իրրև հմուտ և ուսումնական, իրրև գործիչ և հոգեկան անձնաւորութիւն մը։ Երեմիա որպէս էր Ս. Սարգիս եկեղեցւոյ քահանայ աէր Մարտիրոսին (ԹՈՐ. Բ. 401), և իւր ուսումնական զարգացմամբ թէ ազգային չրջանակին մէջ. և թէ կայսերական պաշտօնատանց մէջ դիրք և յարգանք կը վայելէր, իրրև կարող գրիչ և ճարտար թարգմանիչ, ուստի և Զելէպի պատուանունին արժանացած։ Երեմիա տպարան մըն ալ բացած էր կ-Պոլսոյ մէջ 1667'ին, որ սակայն երկար տեւողութիւն չունեցաւ, դի ընդունելութիւնն չգտան իւր պատրաստած աննոթը, պատարագամատոյցը, բաղդատուելով Ոսկանի պատրաստած ընտիր տառերուն հետ (ՀԴՊ. 209)։ Պէտք է կարծել թէ Երեմիայի հաղորդուեցան էջմիածնի խորհրդակցութեան մէջ հաստատուած գաղտնի տնտեսիչներր, և անկէ յարմարագոյն խորհրդական մը չէր կրնար գտնել կաթողիկոսր, թէ օտարաց հետ յարաբերութեան մտնելու, թէ պետական զգուշաւորութիւններր կարգադրելու, և թէ ազգային կազմակերպութեան կէտերը ճշդելու համար։ Երեմիայի կը վերագրուի այն խորհուրդն ալ, որով որոչուեցաւ յաւուրկ հրաւիրագիր ղրկել եղիազարի որ կ-Պոլիս գայ, և նոյն ինքն Մարտիրոս Կաֆացին, եղիազարի հնօրեայ մրցակիցը, հրաւիրակ ղրկուեցաւ Երուսաղէմ եղիազարը համոզելու։ Յակոբի կողմէ դրուած հրաւիրագիրին մէջ եղիազարի տրուած՝ Սէրեցելէ էմ է Քէնոս պոսոական եբէոյբ կոչումը, և եկ այբ, և խոչնոբդ ատբեել բոյոս եկը հնոբէց չբէոս ադէն՝ առաջարկը (ՁԱՄ. Գ. 718), բաւական են ցուցնել թէ ընդարձակ և կենսական խնդիրի մը մասին խորհրդակցութեան կը կոչուէր եղիազար, և Կաֆացիին անձամբ հրաւիրակ երթալը՝ կարեւորագոյն կէտ մը հաղորդելիք ըլլալը կը հաստատէ։ Երուսաղէմի մէջ ալ ամէն ակնկալութենէ վեր սիրալիր կ'ըլլան երկու անհաչա մրցակիցներուն յարաբերու-

Քիւններեը, և կաֆացին մինչև իսկ միջնորդ և աղաչաւոր կ'ըլլայ, որ Եղիազար իբր օրինաւոր կաթողիկոս եպիսկոպոսական ձեռնադրութիւն կատարէ (ԶԱՄ. Գ. 719)։ Քանի որ որոշ տեղեկութիւններ չունինք ձեռնքնիս, կը պարտաւորուինք գիտցուած պարագաներու ներքին նշանակութիւնները գնահել։

ՅԱԿՈԲԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

1792. Յակոբ դեկտեմբերին հասած էր Կ-Պոլիս, հարկաւ միջոց մը նախապատրաստական խորհրդակցութեանց գրաղեցաւ, և մինչև որ կաֆացին երթալը որոշուի, և մինչև որ նա Երուսաղէմ ուղեւորի, օրեր անցան, և Բուն բարեկենդանը հասաւ, որ 1680 փետրուար 21'ին կ'իյնար։ Մեծպահքը և Զատիկը ուխտաւորութեան միջոց էր, և Եղիազարի լսրմար չէր Երուսաղէմէ հեռանալ, ուստի հրաւէրին պատասխանեց ուխտաւորութեան միջոցին լրանալէն ետքը գալու պատրաստականութեամբ, և հաւանական է կարծել, որ նոյն ինքն կաֆացին բերաւ Եղիազարի պատասխանը։ Ինչպէս նաեւ հեռուեցնել, թէ տեսութեանց համաձայնութիւն մը կայացաւ Յակոբի ու Եղիազարի, Մարութրոսի ու Երեմիայի միջև։ Անոնցմէ այդ միջոցին մանաւանդ բանակցութիւններ ալ տեղի ունեցան Յակոբի կողմէն կարեւոր անձերու հետ, թէ աղգային չրջանակին մէջ, և թէ պապական ներկայացուցիչներու հետ, որոնցմէ երկու անուններ յիշուած կը գտնենք, Գասպար Կասպարինի (Gaspare Gasparini) անուանական արքեպիսկոպոս կիւղիկոնի և պապական փոխանորդ (ԱԶԱ. 127), և Փրանկիսկոս Ճիլի՝ (Francesco Gili) Ճիսուսեան միաբանութեան մեծաւոր (ԿԱՔ. 164), որոնց հետ հաւանաբար բանակցութիւն տեղի ունեցած է, բայց արդիւնքը բացասական եղած է, և ոչ մի գոհացուցիչ հետեւանք գոյացած չէ։ Ամենք այդ հետեւանքը կը վերագրեն ներքին անհամաձայնութեան, իբր զի Յակոբի ազատական ձգտումը համակրութիւն չէր գտներ Հայ հոգեւորականութեան մէջ (ԼԷՕ. Ա. 243), սակայն մենք բնաւ պէտք չենք տեսներ այդպիսի մեկնութեան, որ կ'ենթադրէ Յակոբի վրայ յատուկ հետապնդում և կուրօրէն համակերպութիւն հռոմէական պահանջներուն, մինչ ոչ մի նշան կամ փաստ չկայ մէջտեղ կաթողիկոսին այսպիսի դիտումի վերագրելու։ Յակոբ մեծ և ընդարձակ ծրագիր մը ունէր, Հայութեան երկու մեծ բարիքները պատրաստել, արտաքին հովանաւորութիւն և ներքին բարեկարգութիւն, և այս նպատակին օգտակար կը դատէր Հռոմի հետ համաձայնութիւն մը, բայց ոչ երբեք կը մտածէր Հայ եկեղեցւոյ ինքնութիւնը ջնջել, Հայ եկեղեցւոյ ազատութիւնը պոնել, Հայ եկեղեցւոյ լայնախոհ սկզբունքները ուրանալ, և Հայ եկեղեցին Հռոմի եկեղեցւոյն տրակացնել։ Նորա տեսութիւնը վեհ և բարձր էր, քրիստոնէական ուղղամիտ և անխարդախ միութեան գետին մը ստեղծել, և անկէ օգտուիլ իր ազգին բարօրութեան և իր եկեղեցւոյն բարեկարգութեան համար։ Կ'ընդունինք թէ յոյժ բարեմիտ էր Յակոբ՝ լատին քարոզիչներուն փաղաքչական խօսքերուն հաւատալով, և թէ չափազանց միամիտ էր՝ Հռոմն ալ իր տեսութեանց և համոզմանց համաձայն ենթադրելով. բայց բնաւ չենք գտներ նշան մը, որ բացարձակապէս Հռոմի հպատակելու նպատակ ունեցած ըլլայ։ Նոյն իսկ ուխը ամիսներ Կ-Պոլիս մնացած ըլլալով եղրակացութեան մը յանգած չլինելը, և Հռոմ երթալու չձեռնարկելը, նշան են իր ուղղամիտ և հաստատամիտ ըլլալուն, և նպատակին վրայ ամուր կենալուն։

ՅԱԿՈԲԻ ՄԱՀԸ

1793. Յակոբ կաթողիկոսի ծրագիրին մէջ կար ուղեւորութիւնը մինչև Հռոմ ալ երկարելու միտքը, բայց պայմանական էր, որ յուսալից նշան մը տեսնէր իր ուղղութեան համաձայն։ Բայց ըլլայ իր միտքին համապատասխան սկզբնաւորութիւն չգտնելը, ըլլայ մայրաքաղաքին մէջ հոգեւորական և ազգային խոնական դասակարգերուն դժկամակութիւնը, ըլլայ Եղիազարի յատպիլը՝ որուն հետ համամիտ գործելու նպատակ ունեցած էր, անոր կարողութիւնէն և ճարպիկութենէն օգտուելու համար, ըլլայ վերջապէս բանակցութեանց երկարիլը, ատոնցմէ որն և ըլլայ բուն պատճառը, կամ թէ բոլորն ալ մասնակի կերպով պատճառ եղած

ըլլան, իրականութիւնն այն է, որ Յակոբ Կ.Պոլսէ անդին չկրցաւ անցնիլ, և Հոգևգալուստէն ետքը, որ մայիս 30'ին կը հանդիպէր, հինգշաբթու, և օր ևս ըզր պնթացեալ, ոչ միայն ուղևորութիւնն, այլ և գործելու անբաւական եղաւ, մինչև որ յի աւուրբք, 82 տարեկան և 4 ամսական հասակին մէջ (ԿԱՔ. 163), վախճանեցաւ կոստանդնուպոլիս 1680 օգոստոս 1'ին, կիրակի օր, Վարդավառէն 15 օր ետքը։ Յակոբ կաթողիկոսի օթևանը պէտք է Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին եղած ըլլայ, որ պահպանման ալ Բերայի գերեզմանատան մէջ եղաւ, է տալոն Ղալաթիոյ, է հասարակաց գերեզմանն, է պեղին որ կոչի Բեյօղլի, ուր ցարդ կը տեսնուի իւր չիրիմը Հոգեւոր Տէր անունով ճանչցուած, և բարեպաշտներու ուխտատեղի եղած։ Յուղարկաւորութիւնը կատարուած է երկուշաբթի օր օգոստոս 2'ին, և գերեզմանին վրայ երբ որ պիտ պահ մը հասարակ ոչ քն կ'ըսէ պատմիչը, զոր գերեզմանին ներքեւ քար չարիլու մասին կրնայինք իմանալ, սակայն է վերջ բառը կը խնդրէ, չիրիմին երեք աստիճանով բարձրացած ըլլալուն վրայ իմանալ, ինչպէս որ ալջ խովէ պեոէ կը գրէ Զաքարիա Քանաքեռցին (ԶԱՔ. Բ.91), և ինչպէս մենք ալ կը տեսնանք տակաւին։ Յակոբ կաթողիկոսի մահուան առթիւ մտադրութեան և քննութեան արժանի կէտն է անոր անունով տեսնուած մի պիրը, որուն հիմնուելով հռոմէականք պահունակութեամբ կը հռչակեն, թէ գիտ ոոոբէ յոոոլ էոն ղերոանելը էը, եա ըղըով զպոոանեոըիան ոոզէզ հաոոոոյ, ընդոնելով է նմին զայն ոմենայն ըզր ընդունի հռոմէական ոոոբէ եկեղեցի (ԶԱՄ. Գ.719)։ Մեր պատմիչներ այսպիսի բանէ մը տեղեկութիւն չունեն, այսու հանդերձ կան ոմանք որ կ'ընդունին, թէ ի այսպէս գոանական ըոզըն հաոանօբեն գոոած, էը լինի Հայոց կաթողիկոսը (ԶԱՄ. Բ.34), բայց մենք այդ կարծիքին պիտի չկարնանք համաձայնիլ։

1794. Նախապէս պէտք է դիտել որ Յակոբի մահը օգոստոս 1'ին տեղի ունեցած է, և ոչ օգոստոս 2'ին։ Իրաւ. տապանագիրին մէջ կը կարդանք, Հոլոր հոբէոբ էոն և ինն Հայոց ընվի, երկբորդ ասոոբ ամսոյն Հոմայ օգոստոսի, և ոչ ամսոյն Հոմայ (ԿԱՔ. 165), սակայն այդ արձանագրութիւնը որ անտգան գրուած է հինգշաբթի խոխիճ Զաքարիայի կողմէ, տապանին բոժիչոխոց մոբմ ՄԱՀՈՒԱՆ նախնի յայտնուելէն հետ ՅԻԵԴ ՕՐԸ քը, չփոթած է թաղման օրը մահուան օրին հետ։ Անոր համար տապանին մէկ անկիւնը աւելցուած կայ, թէ Ս.ոբէ հոբ յանէոմ յեվ- ընվ.ՈՀԻԹ օգոոսի և։ Պատմիչն ալ կ'ըսէ թէ յոոոբ՝ յոբոմ հանգոոցեալ են ընա է պապանի, երկոոչքի պոպահել (ԶԱՔ Բ.91), և 1680'ին երկուշաբթին կ'իյնայ ճշդիւ օգոստոս 2'ին։ Արդ Յակոբի բերնով գրուած գաւանագիրը օգոոս 1 թուական կը կրէ, թէ հայերէն (ԿԱՔ. 164) և թէ գաղղիերէն օրինակներու (ԱԶԱ. 128), և թէ Ծունանեանի ցուցակին մէջ (ՏԱՇ. 112), որով կը հաստատուի, թէ գաւանագիրը ոչ թէ գիվ ասոբէ յոոոլ էոն ղերոանելը էոբ գրուած է (ԶԱՄ. Գ.719), այլ նոյն իսկ մեռած օրը։ Արդ ամէն հետաքննին միտք կրնայ մտածել, թէ ինչ արժէք կրնայ ունենալ 82 տարեկան ծերունիի նոյն իսկ մահուան վայրկեանին տուած յայտարարութիւնը, որ 8 աւիս չարունակ լատին աբեղաներու հետ ալ չփման մէջ գտնուելով, և երկու ամիսէ իվեր հիւանդացած ալ ըլլալով, չէ ուզած և չէ մտածած այդպիսի յայտարարութիւն*մը տալ, թէպետեւ անշուշտ իրեն մօտեցող հռոմէականներ այդպիսի գրութիւն մը ձեռք անցընելու ջանք ունեցած են։ Նոյն իսկ գրուածին պարունակութիւնն ու ոճն ալ, որուն մէջ կը յիշուին 82 տարեկան և 4 ամսական ըլլալը, 26 տարի հայրապետութիւն վարած ըլլալը, կասպարինիի և Ճիլիի (§ 1792) ներկայ ըլլալը, և ուրիշ չատ մը երկրորդական պարագաներ, յայտնի կը ցուցնեն թէ ծերունի հոգևվարքի պրելուն կամ թելադրելուն կամ մտածելուն յարմար գրութիւն չէ, այլ ուրիշներէ պատրաստուած և նեղ վայրկենի մը մէջ իբր թէ ստորագրել տրուած գիր մըն է։ Եթէ քնապիրը մէջտեղ ըլլար, կրնար նոյն իսկ ստորագրութիւնը գննուիլ, թէ ուխտնամեայ հոգևւարքին դողդոջուն մատներէն ելած կրնա՞յ ըսուիլ։ Հետեւաբար երբեք պարէք և նշանակութիւն ունեցող գրուած մը չկրնար ըսուիլ այդ գիրը, ինչ-

չափ ալ հռոմէականք՝ պայծառ ու լուսաւոր հռոմայ գաւառներն (ԿԱՓ. 163), կամ ջերմառնչութեամբ ծանցաւած ու ընդբնչուած գաւառներն (ԱՋԱ. 125) անունն այդ կնշանակէր մէջ։

ՎԵՐԱԳՐՈՒԱԾ ԳՐՈՒԹԻՒՆԸ

1795. Բայց պէտք է ուրիշ կարեւոր կէտ մըն ալ նկատողութեան առնել։ Ձատկոբի դաւանագիրին թէ հայերէնը (ԿԱՓ. 163) և թէ գաղղիերէնը (ԱՋԱ. 125), Հռոմի դիւանները հանուելով իբր թէ բառական և տառական ճշդութեամբ հրատարակուած են հռոմէական կանոնական պաշտպաններէն։ Արդ հայերէնը երեսունեւօթը տող ընդարձակութիւն ունեցած ատեն, գաղղիերէնը իննսունեւնիգ տող գրուած մըն է, և բանի թէ այս երկուքը՝ իրր իսկական բնագիր և իրր նոյն վաւերագիր առջեւ կը բերուին։ կը սիրեն կարծել թէ ընդօրինակ ըլլալով բանի մը (ԿԱՓ. 164) կրնան սրդարացնել և իրր վաւերական և պաշտօնական ներկայացնել այդ տեսակ խարդախ խեղաթիւրութիւնները։ Ընդհակառակն ամէն խղճամիտ քննադատ կրնայ համարձակ բանի, թէ երկու կեղակարծ գրուածներ են, ճարտար հռոմէականներէ պատրաստուած, և իրրեւ իրենց յաջողակութեան արդիւնք պապութեան ներկայացուած, փոխադարձ վարձքին կամ գովեստին արժանալու համար. քանի որ իրենց երկար բանակցութիւններով արդիւնք մը ձեռք չէին կրցած ձգել, և դիւրին միջոց մըն էր՝ այլեւս ձայն չհանել չկրցող հանդուցեալին բերանը ուզած խօսքերնին դնել։ Մանաւանդ որ այսպիսի բան մը, եթէ իրօք տեղի ունեցած ըլլար, պէտք չէր անծանօթ մնար կաթոլիկոսին չուրջը գտնուողներէն, մանաւանդ թէ պէտք էր որ հանրութեան մէջ ալ լսուէր, և իւրաքանչիւրին ձգտումներուն համեմատ գովասանքի կամ մեղադրանքի նիւթ ըլլար, և ապրին մէջ չչուկ տարածուէր և չփոթութիւն ծագէր, և ոչ թէ բոլորովին անծանօթ մնար, և հայրապետը իրր հաւատարիմ ուղղափառ հայապետական պատուէր և գովուէր, օրհնաբանուէր ու բաթեանուէր, և սրբութեան համբաւով փառաւորուէր։ Մինչ ամէն ազգային ի՛շատ կարաններ և պատմութիւններ՝ բացարձակապէս կ՚անգիտանան այդպիսի եղելութիւն մը, որ չատ կարեւոր միջադէպ մը պէտք էր կազմէր, եթէ իրական ըլլար։ Հարկ կը զգանք նաեւ մատնանշել հրատարակել գաղղիերէնին մէջ տեսնուած անճշդութեանց վրայ, որ ընդունելով հանդերձ թէ հռոմայ գաւանագիրը, և անոր կախողիկոսութեան փառաւէջերջը պոլին է, գայն Նիկոմեդիա պոլիսն է և ըստ ամենայն կը հայուէ (ԱՋԱ. 126), և 1670 պոլին թուական կը դնէ (ԱՋԱ. 128) 1680'ին կատարուած մի բանին, որ տպագրական սխալ ալ չէ, վասնզի յառաջ բերող հեղինակն ալ իրր 1670 պօլսոյ վաեբոփէր կը ներկայացնէ (ԱՋԱ. 124)։ Այս այսպէս ըլլալով հանդերձ՝ երեք տարի ետքը 1673'ին իրր Ձակոբէ Ի կենդանագրեան գրուած գիր մըն ալ կը յիշէ, և հռացէէն աւելի բան մը յառաջ չբերեր (ԱՋԱ. 128), որով նամակի հռացէի մըն ալ հաւատոյ դաւանութեան ղօրութիւն վերագրած կ՚ըլլայ։ Ըստ այսմ տրուած բացատրութիւններէն ետքը չատ կը նուազի, յաւ նուա կը ջնջուի, այդ տեսակ դիրերու կարեւորութիւնը, որոնք կեղակարծ ձեռքերով Հռոմ կը ղրկուէին, իսկ իրենց բուն տեղը ոչ իրականութիւն ունէին և ոչ ետք կը մոռուին։

ՄԱՀՈՒԱՆԷ ԵՏՔԸ

1796. Ձակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսին անձնաւորութեան և արժանիքին վրայ չատ նուա խորհրդածել պէտք չենք տեսներ, քանի որ պատմութեան կարդին քանիցս դիտողութիւններ ու նկատողութիւններ ալ չատ բերինք իր գործերուն վրայ։ Ութնամեայ անցուցած և ծանրածանր արկածներու մէջ յուզնած ծերունի մը, երբոր աւոյգ երիտասարդի պէս ձեռնարկներէ ու ղեկավարութիւններէ չքաշուիր, տարօրինակ հոգւոյ զօրութեամբ ճոխացեալ կերպարան մը կը ներկայացնէ բան ինքնան։ Ձակոբ նախանձայոյզ եկեղեցական և նախանձախնդիր հայրապետ մը լինելով հանդերձ, իր մատուցութիւնը կը տեսնենք ոչ միայն կրօնական և կրթական բարեկարգութեանց վրայ, այլեւ ուշադրութիւն կը դարձնէ

ազգին ապագային վրայ, և անոր կենցաղական ու քաղաքական վիճակին ալ իր ջանքերուն առարկայ կ'ընէ, և դուբսէն հոգևանաւորութիւններով ու նիւթական օգնութիւններով կը խորհի ազգին անկեալ կացութիւնը բարձրացնել, և արկածեալ վիճակը երջանկացնել։ Ցակոբ այդ նպատակով բանակցութիւններու ալ կը մտնէ, հաճամիտներ կը ճարէ, խորհրդակցութիւններ կը կատարէ, և պէտք է որ նչանակելի միտք մը և գնահատելի սիրտ մը ճանչցուի։ Եթէ իր ծրագիրը չարդիւնաւորուիր, այն ալ դարձեալ իրեն համար արժանաւորութեան փաստ մըն է, զի իսկական չափաւորութեամբ գիտէ զիջողութեանց սահմանները ալ ճչդել, և չուզեր անոնք անցնիլ՝ իր ևկեղեցւոյն ինքնուրիւնը և իր ազգին իսկութիւնը ոտնակոխ ընելով։ Ժողովուրդը, որ ստէպ իւր յարգանքը կը կշռէ, ոչ այնչափ բարձր միտքերու տեսութիւններով, որչափ զգալի բարութեան ու առաքինութեան, պարկեշտութեան ու բարեպաշտութեան պարագաներով, ամենէն զօրաւոր վկայութիւնը տուած է իր հայրապետին, անոր գերեզմանը իբրև ուխտատեղի ճանչնալով մանուան առջի օրերէն սկսելով, և անկէ ակնունելով և ընդունելով երկնային չնորհաց պարգևներ։ Քանաքեռցին կը վկայէ, թէ Ցակոբի գերեզմանը առնէ «ֆանելիա» և քիլիոներնա, և որովհետև երկուշաբթի ևղած է թաղման օրը, չաբնայ էրէոշաբթին առնէն պոպոթ «հանայն Ղալըրա», և գնան է էրեքշաբնին հայրապետին, չէ ժողովրդե՛ն գան յոխոր և չգնեն գիշերշաբնին, և գան խալհաթայը։ Նե կը յաւելու թէ և «գնայ անը և երես պոպոթ առնել (ՋԱՓ. Բ. 91)։ Այդ առիթ կը պատմէ թէ նչանաւոր Տաճիկ մը, էլճան ֆեֆ առաջէ վազէն, փիր եաղուպի այսինքն Ցակոբ կաթողիկոսի հրաշքով անդամալուծութենէ բժշկուելով, անոր գերեզմանին ծառայութիւն կ'ընէր (ՋԱՓ. Բ. 92)։ Ցակոբի գերեզմանին ուխտաւորութեան սովորութիւնը մինչեւ այսօր կը չարունակէ՝ Հոգևաւոր-Տէրի անունով, բայց չաբաթ օրեր. թէպէտ չենք գիտեր թէ երբ փոխոխուած է սկզբնական երկուշաբթի օրը։ Գուցէ ամենօրեայ պատարագի հին սովորութեան պարելուն, և չաբաթ օրեր պատարագ մատուցանելու նոր սովորութեան հետևողութեամբ։ Հոգևաւոր-Տէրին գերեզմանը մեծ հռչակ ունեցաւ վերջերս Բերայի գերեզմանատունին գրաւումը արգելելով, երբ որոշուած տրուեցաւ զայն մերձակայ գօրանոցին մարզանքի հարթավայր դարձնել։ Եւ այս օրերս ալ (1912 մարտ) նորէն նկատողութեան առարկայ դարձաւ, երբ անոր մօտը ամփոփուեցան այն ոսկերոտիքը, որոնք հանուեցան գերեզմանոցին երկայնքին վրայ ևտ քաշուած մասէն, զոր պէտք եղաւ քաղաքապետութեան յանձնել, Բանկալթի կոչուած մեծ փողոցը ընդարձակելու համար։

ՅԱՋՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

1797. Ցակոբի ուղևկից և գործակից եղող պատգամաւորութեան երեք եպիսկոպոս և երեք աշխարհական անդամները (ՋԱՓ. Բ. 34). իրենց պաշտօնը վերջացած նկատեցին կաթողիկոսին մնունելովը, և որոշեցին ետ դառնալ։ Աչխարհականներէն մէկը միայն, Պօղոս իչխանին որդին Իսրայէլ Օրի՝ ետ չդարձաւ, այլ ճանապարհը չարունակելով անցաւ Վենետիկ, և անկէ Գաղղիա, էնսրոբրնչեան առաջինը ըլլալով Հայերու մէջ չատոնց մոդցուած ասպարէզին հետևիլ։ Վերջին տեսնենք՝ միայն տպարան բանալու կամ կրօնաւոր ըլլալու կամ առևտուր ընելու համար՝ Հայեր Եւրոպա կ'անցնէին։ Երբոր Ցակոբ կաթողիկոս Կ-Պոլիս կը հիւանդանար և կը վախճանէր, եղիազար արդէն երուսաղէմէ մեկնած էր, իր խոստման համաձայն, և Կ-Պոլիս մօտեցած առեն լսեց Ցակոբի մահը, և չուզեց յառաջել, ճանապարհ փոխեց և երուսաղէմ դարձաւ (ՋԱՓ. Գ. 719)։ Ցակոբի մոռնելովը ոչ միայն կը դադարէր Կ-Պոլիս գալուն նպատակը, այլև եղիազարի դիրքը կրնար անակնկալներու հանդիպիլ, գուցէ և վնասուիլ, մինչ երուսաղէմի մէջ կազմուած դիրք մը ունէր, և այնտեղէն տիրաբար կրնար իր գործերը կարգադրել, ունեցածը պահել, գուցէ և լուսագոյն դիրք մըն ալ կազմել։ Կաթողիկոսը աթոռէն հեռու մնացած լլլալով, էջմիածինի միաբանութիւնը առիթ չունեցաւ, կամ թէ չհամարձակեցաւ, քանի մը օր-

ուան մէջ յաջորդն ընտրել և նատեցնել, ինչպէս եղած էր Յակոբի ընտրութեան ատեն (§ 1723)։ Ներքին կառավարութեան գլուխը մնաց Սուլիանոս Իլվովցի եպիսկոպոսը, որ Յակոբի մեկնած ատեն իբր փոխանորդ նշանակուած էր, և մնալէն ետքը տեղապահ նկատուեցաւ (ՀԻՊ· 296)։ Միաբանութիւնը իսոհական ուղղութեամբ սպասից որ կ-Պոլսոյ հետ համաձայն կերպով գործէ։ Բայց այնտեղ ալ բժշուած էին կարծիքներ, և գլխաւոր խնդրոյ կէտը եղիազարի անձն և անոր հակաթոռ կաթողիկոսութեան դիրքն էր, որուն աւելի դատնէութիւն և ընդարձակութիւն տալ սկսած էր եղիազար Յակոբի մահուանէ ետքը։ Մայրաքաղաքին մէջ բազմաթիւ ազդեցիկ կուսակիցներ ունէր, որոնք աւելի նպաստաւոր կը գտնէին անոր ձգտումները գոհացում տալ, և պէտք է ըսել թէ Յակոբ կաթողիկոս իր վերջին անգամ կ-Պոլիս գտնուած ատեն չատ մեղմ կերպով սկսած էր խօսիլ և վարուիլ եղիազարի նկատմամբ, մինչեւ իսկ չատ հաւանական է, որ ինքն տեղի տալու և հրաժարելու մտադիր էր, մանաւանդ եթէ այդ նպաստաւոր ըլլար իւր մեծ գաղափարին։ Արդէն բացատրեցինք վերջին հրաւիրագիրին ոճը և կաֆացիին հրաւիրակ յղուելուն կէտերը (§ 1791)։ Կ-Պոլսոյ պատրիարքութեան աթոռին վրայ կը գտնուէր Կրպոյ Ութարեան (§ 1791), որ թէպէտ 1680 տարւոյն մէջ, Յակոբի մահուանէ քիչ ետքը պատրիարքութենէ հեռացուած էր, և Թորոս Կոստանդնուպոլսեցի, Թէոմիւթեանէ Մարտիրոս կոչուած երէցը (ՄԽԻ· 29) աթոռը գրաւած էր (09 ՕՐԱ· 111), սակայն Կրպոյ 40 օրէն կրցած էր գայն տապալել, և երրորդ անգամ պատրիարքութեան բարձրանալ (ՉԱՄ· Գ· 721)։ Կրպոյ յայտնի համամիտ կը տեսնուէր եղիազարի կողմին, և Էջմիածնի հետ ալ բանակցութիւնք կը չարունակէին 1681 տարւոյն ընթացքը։ Անհնար էր որ ինքն եղիազար ալ իւր մասին պէտք եղած ձիգերը թափած և միջոցները գործածած չըլլայ։ Վերջապէս Մայրաթոռոյ միաբանութիւնն ալ համոզուեցաւ, որ թէ ակնդետոյ խազաղութեան տեսակէտէն, և թէ միաբանութեան նիւթական օգտին տեսակէտէն, նպաստաւոր էր ճարտար ու կարող և ունեւոր եղիազարին Էջմիածին գտնուիլը։ Ուստի հաւանեցան այդ որոշման, Պարսիկ կուսակալն ալ համոզեցին, և Պարսիկ արքունիքին հրովարտակն ալ ստացան, և այս կերպով աթոռին յաջորդութեան խնդիրը լուծուեցաւ 1691 յունիսին, տարի մը վարանոտ վիճակէ ետքը, բայց դէտ բաւական ատեն անցաւ, մինչեւ որ Մայրաթոռոյ իւր նոր գահակալը տեսնար։

ԿԱՐՊԵՑԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԸ

1798· Այդպէս է սովորական աղբիւրներէն քաղուած պատմութիւնը, սակայն վերջին օրերուն մէջ երուսաղէմի մատենադարանապետ Մեսրոպ Նշանեան վարդապետ, պարապութեան միջոցին համար Սահակ անունով կաթողիկոսի մը խնդիրը մէջտեղ հանեց (12 ՏԱՃ· 369)։ Նա գտեր է որ 1680 օգոստոս 10'ին, այսինքն Յակոբի վախճանէն քանի օր ետքը գրուած նամակի մը մէջ, երկու վարդապետներ՝ Գրիգոր կեսարացի և Աստուածատուր՝ կ-Պոլիսէ երուսաղէմ գրեր են թէ Յակոբ իրեն յաջորդ ցուցած է չիոհոյ Լըբօպէն, և թէ նոյն ինքն եղիազարի և Մարտիրոս կաֆացիին յանձնարարած է հոթալ ըլլալ։ Իսկ Թէոմիւթեանն Յակոբի վրայ գրած ողբին մէջ տեղ մը կսկր է, թէ չիոհոյ սրբել, ըստ Սահակն ընդբել է։ Ուրիշ տեղ մըն ալ գրեր է, թէ Էջմիածնի մէջ չիոհոյ սոբք հայրապէտն Թէոբեն յոհոան սոբք նախնի, և ինչ էլլ Ֆիլիբոանոց օրհնութեամբ նորոգ ժամանի (12 ՏԱՃ· 370)։ Բայց հնդիր է դիտնալ թէ այդչափ կը բաւէ արդեօք նոր անուն մը աւելցնելու հայրապետական ցուցակին մէջ։ Մեր տեսութեամբ Յակոբի կտակը փափաք մըն է և ոչ եղելութիւն, և իրականութեան փաստ չէ, քանի որ Յակոբ ինքն ալ գործը նախատեսած է, և հաւանած է որ ըսվ ոտ կոչն ընդբել էլլեն յոհոան (12 ՏԱՃ· 369)։ Կը մնայ մեկնել Էջմիածնի բռնութեան խմբին գործը, որ Սահակը Թէոբեն յոհոան, և անկէ ետք՝ էլլ Ֆիլիբոանոց օրհնութեամբ ըսուածը (12 ՏԱՃ· 370)։ Սակայն պէտք չենք զգար, Թէոբեն ըսուածը օծում իմանալ, և էլլ Ֆիլիբոանոց ըսուածը, հայրապետական անդրանիկ կնդակ իմանալ։ Միաբանու-

թիւնը կրնայ պատուոյ ցոյց բլլալ, և Սահակը իւր հայրապետութեան սեղակալ ճանչնալ, և Կ-Պոլիս ալ միխիթարութեան դիր դրկել Յակոբի մահուան վրայ, բայց թէ Սահակ և թէ միաբանութիւն իրաւամբ սպասած կ'բլլան, որ տիրող երկպառակութիւնը և հակաթուռութեան կնճիռը փակուի, և այնպէս պաշտօնական ծիսակատարութեանց անցնին։ Այս բանին սուգ թիւնը կը քաղէնք, կաթողիկոսին էջմիածին լուր դրկելէն, որ Ի ե՞ղե ընդ հարցանելոյ այր կողմանէ առնէ։ ղևԿ. Բ. 106)։ Տարի մը ետքն ալ, 1781 յուլիս 21'ին, միաբանութեան եղիազարի գրած նամակին մէջ Սահակի անուն չկայ, և աթոռը բոլորովին զատարկ ցուցուած է (ՍՏՈ. 111)։ Եթէ Սահակի մը էջմիածին կաթողիկոս նստած բլլալը ստոյգ բլլար, պէտք չէր զայն լուր Թանագնացին, և ոչ ալ զայն պիտի զանց ընէին Երեւանցին և Շահխաթունեան, որոնք կաթողիկոսներու յաջորդութիւնը կազմած են էջմիածնի դիւանին և յիշատակներուն նուիրուելնուն, և Սահակի գոյութիւնն իսկ կ'անգիտանան։ Հետեւապէս Ռէօմիւրճեանի ոգրին անորոշ մէկ բացատրութիւնը բաւական չենք սեպեր նոր կաթողիկոս մը հաստատելու, և զայն անմիջապէս թուականի նէրքեւ ալ առնելու, ինչպէս կ'ապատարէ ընել Նշանեանը (12 ՏԱՀ. 371)։ Սահակի անունը ընդունողներ, պէտք էր նախապէս պատմութենէ ուսուցչին թէ ով ոք էր այդ Սահակը, որ թեև'ւս ամենէն առաջ տեղապահութեան կոչուած Սահակ Մակուեցին բլլայ (§ 1759), յետոյ Աթոռապահական առաջնորդ, ուսկից հոգը Մատթէոս եղաւ տեղապահ, և վերջին անգամ ալ Ստեփանոս Իլվովացին էր այդ պաշտօնը վարողը (§1797)։ Ակէ զատ պէտք էր պարզել թէ ինչպէս եղաւ Սահակի կաթնեցեալ կաթողիկոսութեան վախճանը, թէ ինչպէ՞ս դադրեցաւ, և ի՞նչ հանգամանքներով ինքն մերժուեցաւ, որ եղիազարի տեղ բացուի։ Աւատաւէրն յառաջ բերուած վկայութիւններէ կրնար քաղուիլ, թէ Սահակ՝ որ Յակոբի կողմէն կաթողիկոսացու ցուցուած էր, Մայրաթոռոյ տեղակալութիւնը վարողն էր Յակոբի մինչեւ հոգը, թէպետ իւվոլցին յիշուած է իբրեւ տեղապահ, կամ թէ Աթոռապահական տեղապահութեան կոչուեցաւ Յակոբի մահուանէ ետքը։ Մեր պատճառաբանութեան եղրակացութիւնը կը հաստատուն ուրիշներն ալ, թէ Սահակ առաջնորդ Աթոռապահականի, Յակոբէ ցուցուեցաւ մահուընէ 10 տարի առաջ, բայց չյիշատուեցաւ, և թէ ինքն ալ կը ոոչ ոոպէճանէ էքէթ ձանըկէթ քէթէ մը։ Այս առթիւ նորէն Սահակն ալ եռանգուն կ'ընէ ցուցնելու ջանքեր կը կրկնուին (12 ԱՄՈ. 579), սակայն Սահակ ալ Յակոբի նման, առանց իւր հայրապետութիւնը զոհելու՝ կինչ ընդհանուր եկեղեցւոյ միութեան մէջ ճանչցող մը եղած կ'բլլայ,

1799. Եղիազարի օրինաւոր կաթողիկոսութեան միջոցին չանցած, պէտք է որ մեր սովորութեան համեմատ քաղենք վերջին ժամանակամիջոցին նոյնատակուած նոր վկայութիւնները, և ուրիշ ազգային եղելութիւններ՝ որոնք ընդհանուր պատմութենէն անջատ կը մնան։ Ժամանակագրական կարգով նախ յիշենք Մխիթար Վանեցին, որ Խելօ, Խօվէ, Վալէաեան, Յիվէօ, Զինուորաց, և ոոֆենգէ երիտասարդ մըն էր, և այս պատճառով այլազգի իշխաններէն և զինուորականներէն ալ սիրուած (ԻԱՎ. 421)։ Օր մը որ Մխիթար տանը մէջ երգով ու քնարով ուրախական ակումբ մը ունէր, այլազգի տղաներ տուներ կը պատեն և անհանգիստ կ'ընեն։ Մխիթարին հայրը յուսահատելու կ'ելլայ, իսկ տղաքներ անոր կը զարնեն։ Մխիթար բարկանալով տղայոց հետեւէն կ'իյնայ, և ոչ միայն կը հալածէր, այլ հայհոյութեամբ անոթեցէր ընոոպ և ջրէնս տղայոց, և չէր ալ լուեր երբոր Տաճիկներէն ոմանք իրեն կ'աղաչարէին։ Կրօնամոլ խումբ մը զինքը ձերբակալելով կը բանտարկէ, եէնիչէրիները կ'ազատեն, և միջոց մը իրենց մօտ պահելէ ետքը կ'արձակեն։ Սակայն կրօնամոլներ նորէն կը ձերբակալեն և դատաւորին կը տանին, բայց ապանութիւնն հրաման չելլալուն, կոպեալ ջնեն է յեօ և ելօթ է քաց և քոլոն քաղաքին մէջ կը պատցնեն՝ ծեծելով, նախատելով, տանջելով, և ուրացութեան ստիպելով որ ազատի։ Մխիթար արիութեամբ կը մերժէր, մանաւանդ թէ

իւր քրիստոնէութիւնը կը փաստաբանէր, առանց միաք դնելու ապրակատներու և բռնակալներու առևրևս ուրացութեան յորդորներուն, ոչ ալ կուսակալին խոստումներուն։ Մխիթար հանապազօր նորոգուած ձաղանքէն և սանձանքէն և չարչարանքէն չէր տկարանար, մինչև որ օր մըն ալ «Ճշ չըթէայ է սոխոցն», այսինքն է կարգացողներէն մէկը առաջին անգամ սուրով կը զարնէ, ընկերներն ալ կը հետեւին, և փողոցին մէջ կը սպանանեն, ոտքը չուան անցընելով քաղաքէն դուրս կը քաշկռտեն, և դիակը կը քարկոծեն և քարերու ներքեւ կը ծածկեն։ Մխիթարի նահատակութիւնը տեղի ունեցաւ 1656 նոյեմբեր 12'ին, և միւս օր հրաման առնելով մարմինը հանդիսով թաղեցին ի գէղ Հայոց (ԴԱՎ.· 424)։ Մխիթարի մահուան թուականը, հայկական տարեթիւով 1105 գրուած ըլլալուն, և այդ տարւոյ ամանորը 1655 հոկտեմբեր 9'ին իյնալուն, ոմանք Մխիթարի նահատակութիւնը 1655 նոյեմբեր 12'ին կը դնեն (ՆՈՐ.· 472)· սակայն չենք կարծեր թէ պատմիչը ճշդութեամբ միտք դարձուցած ըլլայ հնաւանդ ամանորին, քանի որ ամսաթիւն ալ հայկականով չէ գրուած։

1800· Ուրիշ վաստուրականցի նահատակ մըն ալ Աւետիս Ոստանցին է, որ աղքատ չինական ըլլալով, ապրուստի կարօտութենէն Աղրակի Բաբլասան գիւղը կը փոխադրուի ընտանեօք, և Լօռիքան բերդի տէր Բաքտար քուրդ իշխանին ծառայութեան կը մտնէ (ԴԱՎ.· 425)։ Իւր այլազգի ծառայակիցներ, նախանձել ընդ նա, սուտ ամբաստանութիւն կ'ընեն իրենց տիրոջ, թէ Աւետիս մահմետական ըլլալ խոստացած է· բայց Բաքտար ականջ չկախեր։ Ատոր վրայ կը դիմեն գլխաւոր իշխան Խուարէվ փաշային, և երբ այն ալ Աւետիսը հարցափորձելով զրպարտութիւնն ըլլալուն կը համոզուի և կարեւորութիւն չտար, այս անգամ իրենց հաւատակիցներու մոլեռանդութիւնը կը գրգռեն, որոնք կ'առնեն բռնի իրենց հետ կը տանին Աւետիսը, և առաջ պատիւներով, զգեստներով և համազգեստներով կը փորձեն չանիլ որ ուրանայ· և երբ կը մերժէ, բռնաւորիքներու կը ձեռնարկեն, և սուրբ ծայրերով մարմինը կը ծակոտեն, այնպէս որ մարմինին վրայ ոչ ձայ չեռնալ պէտք է անձակ, և յոլորովին արիւնլուայ փիզանի հրամարակը կը տանին ու կը գլխատեն 1656 մարտ 20'ին։ Մարմինը իշխանէն յանձնուելուայ Աղբօրը Թափառուկ Ոստանցիի, որ հկեղեցական արարողութեամբ թաղել տուաւ Առաք գիւղի գերեզմանոցը (ԴԱՎ.· 428)։

1801· Գաբրիէլ Ղալաթիացի էր ծնընդեամբ, թէպէտ ծնողքը Տիվրիկի Խուռնավիլ գիւղէն էին։ Գաբրիէլին Աղբայրը ուսճկացած և եէնիչէրի պինուր էր, Գաբրիէլն ալ անոր կ'այցելէր մերթընդմերթ, և այդ կերպով ինքն ալ համակերպեցաւ թլփատուիլ և եէնիչէրի գրուիլ, և կրէտէի պատերազմներուն մէջ ալ գտնուեցաւ։ Սակայն սիրտը հանդարտ չէր, քրիստոնէութեան դառնալու համար Ներապա կը փախչէր, և 12 տարի այն կողմերը կը չրջէր։ Ս. Յակոբ առաքեալի և Ս. Պետրոս ու Ս. Պօղոս առաքեալներուն ալ ուխտ կ'երթար (ՆՈՐ.· 484), որ ըսել է Սպանիոյ Քօմփօսթէլլա և Իտալիոյ Հռոմ քաղաքները կ'այցելէր։ Բայց միշտ խղճը կը խայթէր, ուստի ուրացութիւնը և սուտ դայթակղութիւնը քաւելու փափաքով Կ-Պոլիս կը դառնայ 1662 օգոստոսին։ Ինչ մը աւուն ծնողաց տունը փակուած կը մնայ Ղալաթիա, և սեպտեմբեր 14'ին Խաչվերացի օրը կ'երթայ ի գէղեցիս Հայոց (ՆՈՐ.· 485), որ Ներապոյին եղած կ'ըլլայ, և հոկտեմբերի հկեղեցի կ'երթայ, անդուշտ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչը, կը խոստովանուի և կը հաղորդուի։ Երեքշաբթի չուկայ երթալուն կը ճանչցուի, և իբր մահմետական դարձող առնան կը հանուի, և հաւատքին հաստատուն ըլլալուն կը բանտարկուի, և միւս օր կրկին հարցափորձէ ետքը կախաղանի կը պատապարտուի, և կը կախուի ՚ի ֆռղջս տալէ, որուն տեղը ճշդել դժուար է։ Նահատակութիւնը տեղի ունեցած է 1662 սեպտեմբեր 17 հնչին չորեքշաբթին, իսկ մարմինը երկու օր կախաղանի վրայ թողուելէ ետքը ուրբաթ առտու ծովը կը նետուի (ՆՈՐ.· 489)։

1802. Վայոցձոր գաւառի Ախիա գիւղին մէջ Խաչիկի Նորահաս աղջիկը Աղիզ, կամ աւելի ուղիղ Աղիզէ, իսկ հայերէն կոչմամբ Պատուական, նշանուած էր Միրման անուն երիտասարդի մը, որ յաւուր գոմ անկա ընդ նմա, և ժամանակը լրանալուն Պատուական զաւակ մը ունեցաւ։ Ջայնը տարածուեցաւ, Մուրատ խան Նախիջեւանի կուսակալը ուզեց երիտասարդը ձերբակալել, բայց նա փախաւ, ուստի աղջիկը բռնել տուաւ։ Երբ կը յանդիմանէր զայն իբրեւ բոզ ու պոռնիկ, Պատուական ինքզինքը պաշտպանեց՝ իրարու նշանուած ըլլալնուն պարագայով. բայց Մուրատ զայն իւրացնելու դիտմամբ ուրացութիւն առաջարկեց, որ պատիժէ ազատի։ Աղջկան հաստատամտութիւնը քանիցս փոթձելէ ետքը, վերջապէս կը հրամայէ որ մէջքէն կապկռով մզկիթին մինարէյէն կախէն, և այնտեղ սպառնալիօք ուրացութիւն առաջարկեն, և երէկ նորէն չի հաւանի, չուանը կտրելով վար իջուցուն. ինչպէս որ ալ ըրին, և բարձրէն իյնալով նոյն տեղը նահատակուեցաւ։ Պատուական Ախիայեցիին նահատակութեան թուական նշանակուած է 1669 (ԶԱՒ. Բ. 128), իսկ օրը ձշդուած չէ։

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՓԱՑԵՑԻ

1803. Բաղտասար Եւդոկիացի նահատակուած է ի Կարին։ Պատմական պարագաները չատ քիչ տարբերութեամբ կը գտնենք թէ յատուկ վկայաբանէ մը (ՆՈՐ. 490) և թէ Բանաձեւեալ գրուած (ԶԱՒ. Բ. 120), բայց աւելի ճիշդ կը կարծենք առաջինը, զի Բանաձեւեցին կը խոստովանի թէ հոգեյ զԱստուած ընկէց նահատակին, և էրեցէ պրպես լոայ (ԶԱՒ. Բ. 124). մինչ առաջինը իբր ականատես իր գիտցածը կը գրէ կատարեալ մանրամասնութիւններով։ Բաղտասար պզտիկ տարիքին մէջ հօրմէն որբ կը մնայ, և իւր մեծ եղբօր Անտոնի կողմէ կօչակարի մը քով կը դրուի, և անոր հետ Զմիւռնիա կ'երթայ։ Անտեղ բռնութեամբ զինքը կ'իսլամացնեն և կը խլիտտեն 13 տարեկան հղած ատեն (ՆՈՐ. 490), սակայն տղան դժկամակ ըլլալով, քրիստոնէութեամբ ապրելու նպատակով Եւդոկիա կը դառնայ՝ նոյն իսկ կօչակար վարպետին խորհուրդով (ԶԱՒ. Բ. 121), բայց այնտեղ ալ մայրն ու հղբայրները կը կասկածին, և կը յորդորեն որ Օսմանեան սահմաններէն ելնէ, և էջմիածինի կողմերը երթայ, ինչպէս որ ալ կատարէ։ Մայրտաճարը ու գնդապետը վանքեր ուխտի կը պտտի, և վերջապէս վանքի մը մէջ կը հաստատուի, որուն անունը յիշուած չէ, ու 7 տարի կը մնայ (ՆՈՐ. 491) Ջաքարիա վարդապետի մը մօտ (ԶԱՒ. Բ. 122), սաղմոս ու չարակաս սորվելով և վանքին ծառայելով։ Վարդապետին մահուընէ ետքը, նոյն վանքը կը թողու, և 2 տարի ետ չդնալ ուխտ և անդ, վերջէն երեւանի մէջ քրիստոնեայ կօչակարի մը մօտ աշխատելու և վաստկելու կը մտնէ (ՆՈՐ. 491)։ Ախտեղ կը ճանչցուի Եւդոկիացի Հայէ մը, ուսկից կը լսէ կարնեցի Տաճիկ մը, և միտքը կը դնէ խաբկանօք պատանին կարին տանիլ, և այնտեղ իսլամութեան վերադառնալու սորվել։ Ախս միտքով, իբրեւ թէ Եւդոկիացի ըլլար, և պատանին իրեններուն դարձնելու յանձնառութիւն ունենար, կը համոզէ միասին ուղեւորիլ. անոր ունեցած դրամներն ալ ձեռքէն կ'առնէ, և կարին հասնելնուն իբ միտքը կը գործադրէ, և Բաղտասարին իսլամացած ըլլալը նուսուֆ կուսակալին կը հաղորդէ (ԶԱՒ. Բ. 122)։ Երբոր լուրը մէջտեղ կ'ելլայ, Բաղտասար հոգեւորապէս զօրանալու համար իսկոյն կը խոստովանուի և կը հաղորդուի Մեծ-Հոշէ էէրէէն, որ է ըսել 1672 մայիս 19'ին։ Բաղտասար կը ձերբակալուի, և առաջին հարցափորձէ ետքը կը բանտարկուի, ուր նորէն կը հաղորդուի Յակոբ քահանայի մը ձեռքով (ՆՈՐ. 492), որ երբեմն լեալ էր մոլոպէ (ԶԱՒ. Բ. 124)։ Զորս օր ետքը կրկին կը հարցափորձուի, և արիւնբար քրիստոնէութիւնը խոստովանելուն վրայ, գլխատման վճիռ կը տրուի, և կը տարուի կանայ դուռնէն դուրս (ՆՈՐ. 493) է ըսուէն որ ասէ Սուրբ Նշան (ԶԱՒ. Բ. 124), և կը գլխատուի Գայիանեանց տօնին երեքշաբթի օրը, 1672 յունիս 4, ժամը 6'ին (ՆՈՐ. 494). իսկ Քանաքեռցիի համեմատ, 1664 Հոկտեմբերի տօնին օրը ժամը 8'ին (ԶԱՒ. Բ. 124), որ կը հանդիպի յունիս 7'ին։

Այլ ինչպէս ըսինք, կը նախադասենք առաջին վկայաբանին գրածը, թէպէտեւ Քանաքեռցին ալ կ'ըսէ, թէ է ամ նահապետեան օրերն ալ պատահեցաւ, այլ է վաղեմ դէպք ընկեր նորա (ՁԱՓ. Բ. 124), որով գոնէ իւր կարծիս գանուած թուականը ճշդուած թեամբ նշանակած պէտք կ'ըլլար ենթադրել։ Բազտասարի տարիքը, թէպէտ իր պապանէ կը յիշուի (ՁԱՓ. Բ. 126), այլ 13 տարեկանին փորձանքի հանդիպած, 7 տարի ճնացած, 2 տարի ևս չրջած, և վանք մը գանգատան ուղեւորութիւններ րրած ըլլալը հաշուելով, իբր 25 տարեկան չափահաս երիտասարդ մը եղած պէտք է ըլլայ։ Նահատակին մարմինը թաղուած է կարին է հարաւակողմն եկեղեցւոյն, է նեղոյ որմն (ՁԱՓ. Բ. 124), ուր յարդ կը տեսնուի գերեզմանի քարը, առանց արձանագրութեան, բայց միշտ իբրեւ նահատակի գերեզման պատուուած կարնեցիներէն։

ՏԱՐԻ 1804. Ուրիշ կարնի կատարուած նահատակ մըն է Յակոբ կարնեցի, Դուլիկեան ազգատոհմէն (ՆՈՐ. 500), քեռեւս Ղազկնոյ որդի՝ իբր պատասխանելու մէջ գանուող հօր որդի, պի ինքն ալ էղբէ կը կոչուի (ՁԱՓ. Բ. 125), այսինքն է թաղապետութեան պատասխան։ Սուտ վկաներ կ'ամբաստանեն թէ խոպոպ պոճկանալ, և ամբողջ Յինանց միջոցին բանտարկելէ և սովալուկ չարչարելէ և երեք անգամ առևան հանելէ ետքը, կը քարկոծեն նոյն Ս. Նշանի վրայ, ուր գիպպոպոն պատնէն, 1673 Գալիանեանց տօնին օրը (ՆՈՐ. 500), որ է ըսել մայիս 27'ին։ Իսկ Քանաքեռցին Բազտասարէ 3 տարի ետքը կը գնէ Յակոբի նահատակութիւնը, որ կ'ըլլայ 1667'ին, և գերեզմանը դէղ է էբեղեցան Բազպատէն (ՁԱՓ. Բ. 125)։ բայց մենք առաջին հաշիւը կը պահենք, իբրեւ աւելի վաւերական աղբիւրէ քաղուած։ Իսկ գերեզմանին մասին յայտնի նշան մը չտեսնուիր, գուցէ կարնոյ Տաճարին ետեւի մասին մէջ գտնուի։ Ուրիշ կարնեցի մըն ալ նահատակուած է Կ-Պոլսոյ մէջ, բնիկ կան գիւղէն, զբաղմամբ բեռնակիր, որուն միայն նահատակութեան օրը նշանակուած է 1682 մայիս 19, իսկ պարագաները չեն պատմուած (ՁԱՓ. Գ. 656)։ Ասոնցմէ զատ 1673'ին վկայած են երեք անանուն նահատակներ ալ, մին կարնեցի, երկրորդը Սերաստացի, և երրորդը Բէօբրիւքէօյցի, որ թէպէտ յամանց կամուրջ գիւղ թարգմանուած է (ՁԱՓ. Գ. 656), այլ պէտք է իմանալ Բասէնի Բէօբրիւքէօյ գիւղին վրայ, որ է հին վաղարշաւանը։

ՏԱՐԻ 1805. Գրիգոր Տաթեւացի կոչուած եւ էջկէն գիւղ մանուկ մը, բնիկ Տաթեւ գիւղէն, Մշոյ Ս. Կարապետի ուխտի եկած ըլլալով, տեղացի այլազգիներէն կը բանադատուի ուրանալ, հարկաւ իրենց հաճոյից ծառայելնելու համար։ Երբոր ոչ ոգոքանչներով և ոչ խոշտանգանքներով չեն կրնար մանուկը հաւանեցնել, սասիկ կը չարչարեն, և վերջապէս կը նահատակեն 1676'ին, իսկ մարմինը վանականներ վերցնելով կը թաղեն չեղբ էբեղեցոցոյ վանքին Ս. Կարապետի (ՁԱՓ. Գ. 655), զոր պէտք չէ իբր գերեզմանոց դուրս իմանալ, այլ մեծ գերեզմանոցին ծայրը, ուր նշանաւոր անձեր ալ թաղուած են։

ՏԱՐԻ 1806. Դաւիթ Մելքոնեան Սերաստացի երիտասարդ մըն էր ամէն էքէ եօթն երէց այսինքն 21 տարեկան (ՆՈՐ. 505), աղքատ և անուս, որ Սիսան չեմեին բաղնիքը վարձելէ տեղ էր, միակ քրիստոնեայ բոլոր Տաճիկ սպասաւորներուն մէջ։ Անգամ մը չարաթական հատկութենին բաշխած առևտրին ընկերները Դաւիթին կը ձայնեն, Մելքո՜ն կեավօ, եկ Ա՜ա, և Դաւիթ զայրանալով կը պատասխանէ, ՚Վ էպէ կեավօ, ես էրվեղ լեա (ՆՈՐ. 505)։ Այս պատասխանին առաջին մասը մնկնելով, և իբր թէ կեավօ վեր ըսել, էլսի եմ ըսել ըլլայ, բաղնեպանները չեմեին կը խօսին թէ Դաւիթ իսլամութիւն ընդունած է, և վկայութիւնին երդումով կը հաստատեն։ Դաւիթ կ'ուրանայ ասանկ բան մը ըսած ըլլալը, և չեմը իբրեւ պատերազմ միջոց իսլամութիւն ընդունելը կ'առաջարկէ։ Ակէ կը սկսին Դաւիթի հարցափորձերը չեմեին և դատաւորին և կուսակալին առեւտրները, և իգործ կը դրուին բանտարկութիւններ և

չարչարանքներ, ինչպէս աքցաններով մարմինը կտտել, գլխիվայր կախել, մէկ ձեռքէն կախել, բրածնծ տանջել, անուսաղ պահել, և ուրիշ տեսակ տեսակ չարչարանքներ, որոնք իբր 20 օր չարունակեցին, մինչեւ որ վերջապէս փոսի մը մէջ կիսովի թաղելով և քարկոծելով նահատակեցին, վարդանանց տօնին օրը, Էջէց ե՟ս հ՟էք՟էջ, և ի՟ն հ՟էք՟էի, և այլ ե՟ս էջե՟նէջ, ե՟ս էջ՟կոփա՟նի, այսինքն է 1677 տարւոյ փետրուար էջ՟ի Դ՟կոփա՟նի, այսինքն 22'ին (ՆՈՐ· 514)։ Մարմինը յօշոտելով չուներու առջեւ նետելու հրաման կը տրուի, բայց քրիստոնեայք կլլուծ զմբին սուրբ ի՟ափէ՟լ՝ պատուով կը թաղեն Սրբաստիոյ Սուրբ Բառաստնաք գերեզմանոցը (ՆՈՐ· 513)։ Վկայաբանը Միքայէլ Բարղամեան, իրաւամբ կը զարմանայ անուս և տգէտ բաղնեպանի մը կողմէ յայտնուած անօրինակ արիւնքհան վրայ (ՆՈՐ· 515)։ Շատերուն վրայ ալ մեծ տպաւորութիւն գործած է անոր օրինակը, և յատկապէս կը յիշուի Գասպար Սրբաստացին։ Կռուան մականունով ճանչցուած, ուսեալ և պեղէկ էրէոփանէոՙՙՙէան անձ մը, որ 25 տարի առաջ ուրացած էր, և արդէն ալեւոր եղած։ Դաւիթի նահատակութիւնը դիտելով, և ինքն իր վրայ ամէնալով ընկեց է ք՟ոց ղ՟ակէղ՟ն տպեղ՟, և այս պատճառով դատաւորին առանձին տանուելցաւ, և համարձակ քրիստոնէութիւնը դաւանելուն համար, կախաղանի դատապարտուելցաւ, և այնպէս նահատակուելցաւ։ Նոյնիսկ Դաւիթին նահատակուած տեղը, անկէ երկու ամիս ետքը 1677 ապրիլ 22'ին (ՆՈՐ· 519), որ կը հանդիսի Աչխարհամատեան կիրակէին։ Այս տեսակ նահատակութիւններ ուրիշ տեղեր ալ՝ չատ եղած են անշուշտ, այլ մենք միայն յիշատակուածները կրնանք անցընել մեր պատմութեան կարգը։

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ

1807· Հայ տպագրութեան պատմութիւնը հասուցինք մինչև Ոսկանի մահը (§ 1748), և դիտել տուինք որ 1674'էն ետքը չխափանեցաւ տպագրական ձեռնարկը, ինչպէս եղած էին նախընթաց փորձերը։ Մարսիլիոյ տպարանը իր ժառանգութիւն մնաց Սողոմոն Լլեւոնեան քեռորդւոյն, բայց Թադէոս Համազասպեան ալ ընկեր էր։ գործին մէջ կը գտնուէինն նաև Նասիպ Գրիգորեան գործակատարը և Մատթէոս Յովհաննէսեան Վանանդեցի՝ չարաբարդոլը կամ պրաչարը։ Թամագիրքի տպագրութիւնը, որ Թադէոսի քսութեանց պատճառով Ոսկանի մահուան ալ պատճառեղած էր, Թադէոսի ձեռք նորանոր նենգութեանց առիթ եղաւ, որ կարծես անձնական չահէ աւելի գործին վնասելու կ'աչխատէր (ՏՊԱ· 119)։ Հռոմէ գրաքննիչ ղրկուած Յովհաննէս Յակոբեան, Հոլով մականունեալ խառնակիչին քննութենէն ետքն ալ, Թադէոս ժամագիրքին դէմ տմբաստանութիւններ կը տեղացնէր պետական և եպիսկոպոսական ատեաններուն առջև, իբրև գործակից գտնելով Թոմմաս Հայրապետեան քահանայ մըն ալ, որ Մարսիլիա հանդիպելուն եպիսկոպոսարանէն քննիչ նչանակուեցաւ։ Թոմմասի չափազանց լատինամոլութիւնն մինչեւ իսկ Պաղդիական կառավարութեան առջեւ նկատողութեան առնուեցաւ, և ատենական հարցաքննութեան ենթարկուեցաւ, իբրև Պաղդիական եկեղեցւոյ ազատութեանց դէմ վարուող, և Հռոմի հաւատաքննութեան գործակատարութիւն ընող։ և նպաւիւ կրցաւ ինքզինքը արդարացնել և անդատապարտ մնալ, բայց 1683 փետրուար 25'ին վճռով Հայ տպագրութեանց այլևս չխառնուելու հրաման ստացաւ (ՏՊԱ· 127)։ Այդ եղելութեանց երեսէն չատ նեղութեանց ենթարկուեցան Սողոմոն և Նասիպ և Մատթէոս, թէպէտ նոյն միջոցին Թամագիրքի, Սաղմոսի, և Հոլովին հեղինակած ճարտասանութեան, և ուրիշ մանր գիրքերու տպագրութիւնները կրցան աւարտել (ՏՊԱ· 118)։ Պէտք է յիչատակենք ևս Բարսեղ Կոստանդնուպոլսեցի և Յովհաննէս Յակոբեան քահանաներուն Հռոմի մէջ ալ կատարած մոլեկան չահատակութիւնները, որոնք ոչ միայն Հայ ծիսական գիրքերը իրենց անձկամիտ ուղղութիւններով խանգարեցին ու աղաւաղեցին, այլև Հայ լեզուն ալ ուղղելու յանդգնեցան, նորաձևար հոլովումներով և խնամարհութիւններով, որուն համար Հոլով մականուն ստացան։ Ասոնց գործը անընչահնակ մնացած կ'ըլլար, եթէ Հռոմ տպագրել

տուած չըլլար 1674'ին Հոլովվելու քերականութիւնը, և 1677'ին անոնց աղաւաղած պատարագամատոյցը և ուրիշ ծիսական գիրքեր (ՁԱՒՐ. Գ. 662)։ Հոլովվելու արատոց քերականութիւնը, ուրիշ տարածնալ դասագիրք չգոնուելուն պատճառով, հրատարակի վրայ ազդեցութիւն գործեց, և գրական լեզուին խանգարման մէջ նչանակելի դեր ունեցաւ բաւական երկար ժամանակ։ Այսչափ ինչ Ցակոբ կաթողիկոսի օրով կատարուած եղելութեանց մասին։

Տ. ԵՂԻԱԶԱՐ Ա. ԱՅՆԹԱՊՑԻ

ՄԱՅՐԱԳՈՌԷՆ ԸՆՏՐՈՒԻԼԸ

1808. *Եղիազարի հակաթոռ կաթողիկոսութիւնը, և Ցակոբի մահուանէ ետքը անհակառակ գործունէութիւնը, և իր և իրմէն կուսակիցներուն ջանքերը, նախապէս նոր կաթողիկոսի ընտրութիւնը յապաղեցին, որովհետեւ Սահակ կաթողիկոսի մը գոյութիւնը առնղծուածային դուցուցինք* (§1798)։ *Երբոր նոր ընտրութիւն չընելու գաղափարը մէջ տեղ ելաւ, հետզհետէ համամտութիւն գոյացաւ ապօրինի կաթողիկոսութիւնը օրինաւորութեան վերածել, և Եղիազար Այնթապցին Էջմիածնի մայրաթոռին վրայ բազմեցնել։ Այդ մասին նախաձեռնութիւն մըն ալ կ'ընծայուի Կաֆացիին, որ Էջմիածին գրեց, ըն ինչ ըսել կարցանելը այս կոչմանց առնէ կարդալ։ Սակայն Կաֆացին իր պարբերի չնորհալիր ճանչնալը* (ՁԱՔ. Բ. 106), *պէտք է իրր երբեմն եր իմանալ, զի նոյն միջոցին, ինչպէս գրեցինք* (§ 1792), *Կաֆացին պատուիրակ գացած էր Եղիազարին և վերադարձած։ Համաձայն այդ առաջարկին վերջնական որոշումը տուաւ Մայրաթոռին միաբանութիւնը, որ կաթողիկոսական ընտրութեանց իրաւասուն դարձած էր Փիլիպպոսի* (§ 1666) *և Ցակոբի* (§ 1723) *ընտրութիւններէն իվեր։ Իրմէն որոշումը պետական իշխանութեան ալ ընդունել տալէն ետքը* (§ 1797), *գայն պաշտօնական հրաւիրագիրով մը վաւերացուց, որ* 1681 *յունիս* 21 *թուական կը կրէ* (ՍՏՈ. 111), *և* 1680 *օգոստոս* 1'*ին Ցակոբի մահուան տարեվիցէն* 10 *օր կանուխ է։ Այդ հրաւիրագիրը մեզպէսական ակնարկ մը չունի Եղիազարի կանուխէն գործադրած ապօրէն ձեռնադրութիւնները վրայ, և հակաթոռութիւնն իսկ կը նուիրագործէ չերկոս սուրբ Պետրոս չեղչերեքով բաժանումի անուանելով* (ՍՏՈ. 109), *և ոչ ալ նորընծոր պաշտօն յանձնելու ձեւը կը գործածէ, այլ կոնդակ ընծրել հոգեւոր հովիւ* (ՍՏՈ. 107), *և Աստուած զինէ չերկոսէն իսկ Նոյն ընտրեց բացատրութիւններով* (ՍՏՈ. 108), *կարծես թէ նախընթացին ալ օրինաւորութեան ձեւ մը տալ կը փորձէ։ Մինչեւ իսկ զայն իրր նախախնամական բան մը կը ցուցնէ, յիշելով թէ Դաւիթ ալ է Բէթղեհեմ ընտրեալ օծաւ, սակայն Ասպատած է ընտրողը Բոլորէն գտնել ճշ. և վրայ կը բերէ թէ՝ Նոյնպէս և Ասպատած զինէ է այն չորքերել պնդրինեց այժմ նմանակը այնչափ խոնարհական և զեռնաքարշ ոճով և զգացմամբ գրուած է, որ մինչեւ իսկ զրողները կը զիջանին խոստովանիլ, որ ընդհանրապէս ինչ է ժամանակի ատեն յայտնել երեւոյթ, ըստ անատակին և մէտ ատեն գործէտ, գերատ չերկուս և ատոչի տոյ* (ՍՏՈ. 109)։ *Այդ ոճը, ոչ թէ ակնհայտ մէջէն հակառակութեան և գայթակղութեան կէտ մը բառնալու նպատակը, այլ աւելի Եղիազարի նիւթական կարողութենէն և չինարարութենէն օգտուելու դիտումը կը ցուցնէ, առաջարկելով որ վերոյին նորոգեցնէ և հաստատէ զերատ* (ՍՏՈ. 110), *և յանձնառու ըլլալով որ ենթէ գէշէ զատրէ երշկատրէ տ և վերջ մը գլեայ* (ՍՏՈ. 109)։ *Նամակին ներքին յատուկ անունով անձեր յիշուած չեն, այլ իրրեւ ստորագրութիւն գրուած է, եպիսկոպոսաց, վարդապետ, տանուտէր, սարկաւագաց, գպիր, իշխան և ատենապետ, և այլ* (ՍՏՈ. 111)։

1809. Նամակը երուսաղէմ տանելու համար պատգամաւորութիւն մը կազմուեցաւ, որուն գլուխը կը յիշուի Պետրոս Գողթան եպիսկոպոսը, իսկ միաբանութեան գլուխը կը գրաւնուէր Ստեփանոս Իլմովկին կամ Լեհացին՝ (§ 1797)։ Ընդունուած պատմութեան համեմատ էջմիածնի պատուիրակութիւնը եղիազարի ներկայացաւ երուսաղէմի մէջ, սակայն Աւետիք Եւդոկիացին այնպէս կը ցուցնէ թէ Պետրոս Ագուլեցին հանդիպեցաւ Եբէ+ եպէ+կոպոս+, եղիազարի ներկայացան Զմիւռնիոյ մէջ, ուր կը գտնուէր նա, և նաւ ալ վարձած էր Հռոմ երթալու համար՝ եօթը վարդապետներու հետ, որք էին, Մինաս, Սուքիաս, Նահապետ, Յակոբ Զորեցի, Սիմոն Գուրջ, Ծովհաննէս և ուրիշ մը (74 ԱՐՐ.75)։ Սակայն կ'ենթադրենք թէ Աւետիք գրած ատենը չատոնց Արեւելքէ հետացած և խիստ բանտարկութենէ ետքուան՝ կրցած է պարագտնելը և տարիներ չփոթիլ, որովհետև իրեն պատմած պարագաներէն արդարացնելու համար պէտք էր ընտրութիւնը լրացած ըլլար Յակոբի մահուան և յարարերութեանց ծրագիրին ատեն, ինչ որ հակառակ է էջմիածնի միաբանութեան նամակին։ Եղիազար որչափ և այդ վերջաւորութեան նկատմամբ գոհ և ուրախ, բայց կ'երեւի թէ չատ չտասղ ցուցնել չուզեց, վասնզի մինչեւ որ պատուիրակութիւնը երուսաղէմ երթար, և Եղիազար պատրաստուէր և ուղեւորէր, և Կոստանդնուպոլիս գար, եօթը ամիսներ անցան մինչեւ 1682 Մեծպահոց սկիզբը, որուն բարեկենդանը փետրուար 26'ին կ'իյնար։ Մեծպահքը և Յինուանքը Կոստանդնուպոլսոյ մէջ անցուց, Օսմանեան կառավարութենէն ալ իւր կաթողիկոսութեան հաւանութիւն և հաստատութիւն առնելու, և ուրիշ կարեւոր գործերն ալ կարգադրելց։ Այս կարգին չմոռցաւ Կրպոյ Ութրուն պատրիարքն ալ վարձատրել, իրեն ցուցած պաշտպանութեան համար, և զայն Լեհիկոպոսութեան բարձրացուց, և նախկին Տէր Կրպոն (§ 1781) եղաւ Կրպոյ Սրբազան։ Վերջապէս Հոգեգալուստէն ետքը, որ յունիս 4'ին կը հանդիպէր, եղիազար կ-Պոլսէ կը մեկնի նաւով, և 1682 օգոստոս 22'ին, Աստուածածնայ չարթուն վրայ եկող երեքշաբթին կը հասնի էջմիածին, ինչպէս սովորաբար կը դրուի, թէպէտ օգոստոս 14 րսող ալ կայ (ՋԱՓ.Ի.106), որ Աստուածածնայ մեռելոցին կ'իյնայ։ Եղիազարի իբրև արդէն օծուած կաթողիկոսի վրայ, նորէն օծման արարողութիւն չկատարուիր, և հարկաւ կը բաւականանան առաջին մուտքին հանդէսով, որովհետեւ ուրիշ որեւէ արարողութեան յիշատակութիւն չունինք։

1810. Եղիազար անձամբ անձ մը չէ պատմութեան համար, որ անոր նախընթացը պարտաւոր ըլլանք բացատրել։ Անիկայ 1641ին վարդապետութեան աստիճան առնելէն իվեր՝ հրատարակչին գործունէութեան մէջ էր որով 1682'ին 41 տարիներու գործնական կեանք ունէր, և 70'ի մօտ ալ տարիք ունեցած սլիտի ըլլայ։ Ամէն տեսակ արկածներ անցուցած էր, և ամէն տեսակ պաշտօններու մէջ մտած ու ելած էր քանի մը անգամներ։ Կոստանդնուպոլսոյ և երուսաղէմի պատրիարքութիւններն ալ անոր ձեռքտուփներուն չադուրդ չէին տուած. ինքնահաւնար և նորօրինակ կաթողիկոսութիւն մըն ալ ստեղծած էր, և հակառակ չատերու հակակրութեան և դիմադրութեան՝ իրեն համար կուսակիցներ չհանած էր, և ստեղծած դիրքը կը պահէր։ Որչափ ալ այդ անչադուրդ ձգտումները եղիազարը մինչև ապօրէն և անվաւեր ձեռնարկներու մղեցին, սակայն սիրտին խորը հանրութեան օգտակար ըլլալու բարի դիտումը չպակասցաւ, և ունեցած կարողութեան ձիրքերը և հարստութեան ինչքերը, անձնական վայելքի չյատկացուց, այլ ազգօգուտ չինութիւններու և ձեռնարկներու գործածեց։ Սիմէոն Երեւանցին ալ պիտի կը նկարագրէ իբրեւ այր ճարտարքան և ճոխախոհ, չքեղ և ահաւոր (ՋԱՄ.25), և գովանի ձեռնարկներ կը վերագրէ անոր։ Մարթ է ըսել թէ իրաւ չափազանց եռանդը և անկոպար ձգտումը՝ մինչեւ չարհուն ձեռնարկներու մղեցին եղիազարը, բայց սիրտը չպակասեցին, և երբոր բարեդէպ պարագաներով իւր իղձերուն յաջողելը տեսաւ, էջմիածնի

ՆԱՄԱԿԻՆ ՀԱՂՈՐԴՈՒԻԼԸ

մէջ Ամենայն Հայոց հայրապետութեան օրինաւոր յաջորդ ճանչցուելով, և իբր բորբոքած խոչի և կրակ վերջացաւ (ԹՈՐ. Բ. 407), հանդարտ գործունէութեան տուաւ ինքզինքը՝ տարիքն իսկ այդ ձեւը պահանջելով, և չինարար և արդիւնաւոր պաշտօնավարութիւն ունեցաւ յոգուտ Մայրաթոռին։ Այդ կարգին իբր գլխաւոր պէտք է նկատել, որ ջեղեամ պարտ սրբոյ աթոռոյն, որ ձեռքէ էին յաւելոց, ու ղանձանն անհե արաբ, և ազատեաց զաւրէ սրեալ, ինչ որ մեծ ծառայութիւն մըն էր, քանի որ գիտենք թէ ինչ ծանր նեղութեանց ներքեւ կ'իյնար Մայրաթոռը պարտքերու և պարտատէրերու երեսէն։ Մայրատաճարին վրայ իր յիշատակներն են, Իմման տեղւոյն վրայ չինուած սեղանն ու կամարիկէն՝ որ յառաջագոյն յոկ գետնէն բարձր կլորակ քար մըն էր (ՇԱՀ. Ա. 31), տաճարին հիւսիսային և հարաւային կամարներուն ներքեւ երկու սեղանները, հիւսիսայինը Ս. Աստիճանոսի անունով և ութը աստիճանով եպիսկոպոսական ձեռնադրութեանց համար, և հարաւայինը Ս. Կարապետի անունով և երեք աստիճանով վարդապետական ձեռնադրութեանց համար, (ՇԱՀ. Ա. 39), և տաճարին մէջ արբատաչ քարով բաժնուած գաւթ, գոյն ժողովուրդին գալու համար, և վերջապէս տաճարին վրայ աւելցուած երեք փոքր կամարիկները (ՉԱՄ. 26)։ Հիմնական նորոգութիւններ կատարեց Ս. Հոիփսիմէի և Ս. Գայիանէի վկայարաններուն և վանքերուն վրայ. ատոնցմէ գատ չինեաց ջեղեամ եկեղեցի և արբ ընդօրինակեաց քաղաց վանօրէից (ՉԱՄ. 25), և զայլ բազում բարեշինեաց արբ։ կարասիներուն ապահովութեան ալ նպաստեց՝ ջրբեռն արտաքին և փոքրորդական հոփոյեալ։ Միչտ ալ Էրէնց հետ ձեռնհաս կ'ըլլայ (ՉԱՄ. 26), այսինքն է երբեք սարսռութեանց չդիմանալով, և ոչ ալ բրոնութեանց տեղի տալով, միացած է միչտ նոյն եղիազարը որ անանձ՝ աննկուն գործող և գժուարութեանց և հակառակութեանց դէմ չարունակ մարտող, ինչպէս իր առաջին քառամնամայ ալեկոծեալ պատմութեան մէջ։ Վերոյիշեալ չինութիւնները գրաւեցին եղիազարի հայրապետութեան բովանդակ տեւողութիւնը, և անոնցմէ դուրս չատ քիչ յիշատակներ հասած են ազգային ինդիրներու կամ տաճարական տեղափոխութիւններու վրայ։ Միաբանութեան մէջ ալ հանդարտութեան միջոց մը եղած է եղիազարի տաճարական կաթողիկոսութիւնը, յայնմ նչանակ անոր ունեցած ազդեցիկ իշխանութեան և կարող վարչականութեան։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԳՈՐԾԵՐԸ

1811. Ալս պատճառով կը պարտաւորուինք առանձինն առանձինն մատնանչել գլխաւոր ազգային եկեղեցւոյն զանազան աթոռներուն վրայ, որոց մէջ բաժնուած էր ժամանակին Հայութիւնը։ Երբոր եղիազարի հետանալով արամադրելի կը դառնար Երուսաղէմի աթոռը, անոր բնական յաջորդ կը ներկայանար Մարտիրոս կաֆացին, որ թէպէտ հինէն եղիազարի մրցակից և հակառակորդ, այլ յարաբերութիւնները փոխուած էին, յորմէհետէ Յակոբ մեծ խորհուրդը մէջտեղ ելած էր, և կաֆացին անձամբ Երուսաղէմ գացած էր՝ եղիազարը կ-Պոլիս հրաւիրելու, որով նորէն բարեկամութիւն հաստատած էր իրենց մէջ (§ 1791)։ Ըստ այմ բնաւ դժուարութիւն չհանդիպիր բռնել, թէ եղիազար ինքն ալ երբ կ-Պոլիս կը գանուէր, անձամբ օգնած ըլլայ Մարտիրոսի վերջնականապէս Երուսաղէմի պատրիարք ձանչցուելուն, և անբացատրելի կը գտնայ լսել, թէ չէր ուզեր եղբարը ի կոստանդնուպոլսոյ, Մարտիրոս կ-Պոլիս եկած ըլլայ։ Մարտիրոս անձնապէս պարտքերու տակ կը գտնուէր, ուստի քաղաք գտագրեց այս երեսէն, և բանս ալ գրուեցաւ (ՉԱՄ. Գ. 720), ինչ որ կը համաձայնի Սահփանոս Մեղրեցիի բանաստեղծութեան մասին գրածներնուս (§ 1785)։ Անհաւատալի չէ կարծել որ եղիազար Մարտիրոսի ազատութեան ալ օգնած ըլլայ, վասնզի Մարտիրոսի Երուսաղէմ դառնալը կը նամնմատուի եղիազարի էջմիածին ուղեւորելուն 1682'ին։ Շատ չանցնիր և Հայերու ու Յոյներու մէջ վէճ մը կը բացուի 1683'ի պատկին, որ ապրիլ 8'ին կը նանդիպէր, նանդիսատեր Գրիգոր եպիսկոպոսին Ս. Գերեզմանին դուռը աւետարան կարդալէն, զոր Յոյներ քէօ և հաւնէ է քօ վռեալ կ'արգիլեն, իրենց սե-

իական պնդելով այդ իրաւունքը (ԱՍՏ. Ա. 402)։ Մարտիրոս տեղական դատարանին առջեւ իրաւունք կը չտէր. բայց երբ երկու պատրիարքներ Ադրիանուպոլիս կու գան, մեծ նպարգոսը Յոյներուն իրաւունք կու տայ, և հազիւ թէ Քէօմիւրճհանի միջնորդութեամբ գործը հաչտարար կերպով կը փակուի, և Մարտիրոս Երուսաղէմ կ'ուղեւորի։ Բայց ձանպան կը մնայ Եգիպտոսի մէջ, վերափոխման չաթաթապահքին, որուն բարեկենդանը կ'իյնար 1683 օգոստոս 5'ին, և կը խաղայ Մար-Մինաս կամ Ս. Մինաս եկեղեցւոյ գերեզմանոցը (ԱՍՏ. Ա. 404)։ Նոր պատրիարքի ընտրութիւնը դժուարութեանց կը հանդիպի, զի հազիւ չեք անցնելոյ Էլլուց ամօթ Յովհաննէս Եպիսկոպոս Կոստանդնուպոլսեցի, նախութեամբ մականուանեալ իբրեւ սխեմնակեր պահեցող մը, կայսերական հրովարտակով աթոռը կը բազմի 1685'ին։ Խաղաղութիւնը երկարատեւ չըլլար, զի 1687'ին Սիմէոն Եպիսկոպոս կը յաջողի պատրիարքութեան հրովարտակ ստանալ, և Յովհաննէսը կը հալածէ (ԱՍՏ. Ա. 405)։ Իսկ ուրիշներ Մինաս Ամենչին կը կարծեն աթոռը գրաւողը, Յովհաննէսն ալ իրեն հետ աթոռակից պահելով (ԲԱՌ. 56)։ Այլ հաւանական է կարծել, որ նախ Մինաս աթոռին կ'անցնի և Սիմէոնէ կը վտարուի։ Յովհաննէս ալ հանդարտ չնստար և նորէն պատրիարքութիւնը ձեռք ձգելու կ'աշխատի, բայց հազիւ չորս տարիէն կը յաջողի Սիմէոնը տապալել, և ինքն ըլլալ բուն պատրիարքը 1691'ին։ Այդ միջոցին տեղի կ'ունենային Յոյներու և Լատիններու վէճերը Սուրբ Տեղեաց քանի մը հատին սեփականութեան վրայ, և Լատիններ դեսպանին միջամտութեամբ զօրանալնէն ետքն ալ Հայոց դէմ, պահանջումներ հաներ էին։ Բայց Յովհաննէս պատրիարք աթոռին ունեցած հին հրովարտակներուն զօրութեամբ՝ յաջողեցաւ հաստատել և պահպանել հայկական սեփականութիւնները։ Սակայն Յոյներ ետ չկասեցան իրենց պահանջումներէն, և չարունակ կը նեղէին Հայերը, մինչեւ իսկ զատկի ձրագալոյցին Ս. Գերեզման մտնելու իրաւունքն ալ պահանջելով. բայց Յովհաննէս այդ կէտին մէջ ալ պաշտպանեց Հայոց իրաւունքը 1692'ին (ԱՍՏ. Ա. 412)։ Այդ վիճակին մէջ էին եկեղեցւոյ գործերը, երբ պատրիարքութեան վերջերը։ Միայն թէ այդ եղելութիւններ պատճառ եղած էին մեծամեծ ծախքերու և ծանր պարտքերու՝ որոնք 200 քսակի կամ 100,000 ղուրուշի հասած էին. և պապա Մինաս, որ 40 տարիէ իվեր Երուսաղէմի մատակարարութիւնը կը վարէր, կ-Պոլիս դրկուեցաւ, ազգայնոց օգնութիւնը խնդրելու (ԱՍՏ. Ա. 409)։ Այս է այն մեծ պարտքին սկզբնաւորութիւնը, որ Շղթայակիր Գրիգոր պատրիարքին հռչակաւոր գործունէութեան առարկէ եղաւ։

1812. Կոստանդնուպոլսոյ աթոռին վրայ կը գտնուէր 1680 դեկտեմբերէն իվեր

	կարապետ կեսարացին կամ
Կ-ՊՈԼՍՈՑ	Կրպոյ Սրբազանը, երբոր
ԳՈՐԾԵՐԸ	Եղիազար մայրաքաղաքէն էջմիածին ուղեւորեցաւ (§ 1809)։

Բաւական ալ ազդեցիկ դիրք ստացած էր այդ նախկին անուս երէցը իր երրորդ պատրիարքութեան մէջ, որ երեք տարի մօտ տեւեց։ Բայց այս անգամ ալ իրեն մրցակից հանդիսացաւ եփրեմ Եպիսկոպոս Ղափանցի, Սիւնեաց Հաբանդ գաւառէն կամ իբ կապան քաղաքէն (ՍԻՆ. 255), զոր Եղիազար իր Տաննէլէն քիչ ետքը 1683'ին, նուիրակ յղած էր Կ-Պոլսոյ չրջանակին համար։ Տարի մըն էր որ եփրեմ մայրաքաղաք կը գտնուէր, և հետզհետէ բարեկամներ և կուսակիցներ կը չատցընէր, և իրմէ առաջ նուիրակներուն նման պատրիարքական աթոռը գրաւելու միտքը կը մշակէր։ Վերջապէս իր նպատակին կը հասնէր, և կայսերական հրովարտակը ստանալով 1684 օգոստոս 15'ին (ՉԱՄ. Գ. 721), Աստուածածնայ պահոց ութերորդ օրը պատրիարքական աթոռը կը գրաւէր։ Եփրեմ, ինչպէս յաւաջիկային ալ պիտի տեսնանք, բնութեամբ խիստ և ուղղութեամբ անաչառ հայազատ, պաշտպան եղաւ այն կուսակցութեան, որ կը ջանար լատիններու կամ կաթոլիկներու մերձաւորութեամբ պաշտպանութիւն փնտռելու կարծիքը փարատել։ Կարապետ ալ իր կողմէն անգործ չէր մնար, եփրեմի դէմ գրգռութիւնները կը մշակէր, և 20 ամիս ետքը 1686 ապրիլին չորրորդ անգամ լլլալով պատրիարքութիւ-

նը ձեռք կ'անցընէր։ Այս անգամ նուագ բախտաւոր, տարիէ մը 1687 ապրիլին, տնդի կու տար իրմէ բռնագունին։ Կարապետ սկիզբէն լոկ քահանայ եղած ըլլալը նորէն քահանայական դասակարգին քաջալերութիւն տուաւ՝ պատրիարքական գահուն հնտամուտ ըլլալու։ Կարապետի նոր մրցակիցն ու յաջորդը Թորոս Կոստանդնուպոլսեցի երէցն եղաւ, որ անգամ մըն ալ Կարապետի դէմ եղած, և միայն 40 օր կրցած էր աթոռը պահել (§ 1791)։ Այս անգամ մօտ տարի մը կը վայելէ, և 1688 մարտին տեղի կու տայ ուրիշ երէցի մը, Յակոբատուր Ճլեցիին, Սիմեոնայ Սոթք կամ Զօք գաւառի Ճիլ գիւղէն։ Բայց նա ալ 7 ամիսէն, 1688 հոկտեմբերին կը տապալուէր կարապետ կեսարացիին, որ հինգերորդ անգամ ըլլալով պատրիարքական աթոռը կը գրաւէր։ Սակայն կարապետ ալ տակաւ իր ազդեցութիւնը կորուսած էր ժողովուրդին առջեւ, որ չուտով՝ տարիէ մը (ՁԱԱՔ. Գ. 721) կամ լաւ ևս հինգ ամիսէ (09 ՕՐԱ. 112), 1689'ին առաջին ամիսներուն մէջ կը հետապնդէր ազգային մեծամեծներու կամքով, որոնք պատրիարքներու մրցակցութենէ զզուած, նոր ընտրութիւնը կը խափանէին, և իրենց ձեռքը կ'անցընէին պատրիարքարանի գործերը տեղակալութեան առնունով, որուն մէկ առաջին օրինակը տևսանք 40 տարի առաջ (§ 1699)։ Այս անգամ տեղակալութեան գլուխ գտնուողնէրն էին Սախատղու կոչուած գերձակ մը, և Շահին անուն որմնադիր մը որ է համամձի, հարկու ազդեցիկ արհեստապետներ և պետական գործակատներ, որոնք իրենց մօտ միշտ եկեղեցական փոխանորդ մը պահեցին։ Աւաջ Թորոս Կոստանդնուպոլսեցի երէցը, որ պատրիարք էր եղած՝ այդ փոխանորդութեան կոչուեցաւ, բայց չուտով մերժուեցաւ պաշտօնէն, թէպէտ վերջէ երէցը գործելու սովորութիւնը պահուեցաւ (09 ՕՐԱ. 112), որչափ ալ չենք գտներ փոխանորդութեան կոչուածներուն անունները, և ոչ ալ կրնանք պնդել թէ երեմիայէ յիշուած՝ Խաչատուր և Յէրապուր, Մեծապուր և Աւետարան էրէցներ (ՄԽՒ. 29), փոխանորդներուն իսկական անուններն ըլլան, դի նման նահնչիւն անուններ կ'երեւան։

1813. Պատրիարքական աթոռին այդ անկեալ վիճակը տեսնելով իրաւացի է Մարտիրոս Քէօմիւրճեանն երէ-

ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ

սին տետ ազգային մայրաքաղաքին մէջ կաթոլիկներուն գործերը, որոնք յաճախել է ըրէր և ընդլով գէտա զա է գոյ Աստուծոյ, ասան կաշատ և փոխոխ խլել չէրէցց պաշտօնն։ Ատոր ալ հետեւանքն եղած էր որ ըսո օրէ յաւելաւ ընդհանուր դոյնն, որ կը ցուցնէ թէ պաշտօնը խլելու միջոցը պետական տուրքի յաւելման խոստումն էր եղած։ Այս պատճառով պատրիարքութեան անցնողներ սկսած էին եկեղեցիները կողոպտել է գանց և է չէշտակց, է ընդհանց և այլ գիւղացց, միանգամայն մեծագումար պարտքեր ալ բարդուած էին պատրիարքարանին վրայ, ուստի առանց պատրիարքի մնալը դարման նկատուած եղաւ պարտքը չչացնելու համար, և ազգայիններ որոշած էին, որ ոչ պարէի լէնչի, և ոչ է տալս անգամ մեջ (ԹՈՐ. Բ. 398)։ Անկանոն կացութեան մէջ անկարգութեանց աճումը բնական հետեւանք էր, և նորեր սկսան ատիկնալ հետզհետէ։ Ծիչած հնգ մայրաքաղաքին Հայաստան մէջ լատինասէր և լատինամոլ կուսակցութեան մը գոյութիւնը, որոնք չէին քաշուեր մինչև իսկ լատինաց դաւանութեան ալ համակերպիլ, ինչպէս որ պատմեցինք (§ 1626), և այս ուղղութեամբ գործող պատրիարքներն ալ յիշեցինք, ինչպէս եղան Յովհաննէս Ասլը (§ 1597), Զաքարիա Վանեցին, և Թովմաս Բերիացին։ Սակայն այն ատեն բռնադատած ուղղութիւնը, ներքին կուսակցութեանց պայմաններէն անդին չէր անցած, կը փափաքէին կացութեան տիրանալ, պատրիարքութիւնը ձեռք անցընել, և իրենց ուղղութիւնը քարոզել. սակայն իրարմէ անջատման և իրարու դէմ կրօնական խստութեան չտեսնուելու չկային։ Միեւնոյն եկեղեցիով և միեւնոյն եկեղեցականներով կը վարուէին երկու կողմերը, բերանով կամ նամակով լատիններու հաւատամքին կը յայտնէին, բայց իրենց ծէսերուն և քարոզչութիւններուն մէջ տարբերութիւն չէին մտցներ։ Լսածն էր այս՝ բռնած բն-

թացքին, բայց տակաւին հաստատուն կը մնային կեցած տեղերնին՝ անոնք որ Արեւելք կը մնային, իսկ Արեւմուտք անյողներ տեղական համակերպութենէ չէին քաշուեր, իսկ Արեւելք դարձած առիններն նորէն իրենց հնաւանդ ձեւերը կը գործածէին։ Բայց անգամ մը որ այդ սահուն ուղղութիւնը կը սկսէր, գլորումը հետեւանք էր, և այս բանի գլխաւոր պատճառ պէտք է նկատել Արեւմուտքի մէջ կրթուող և դիրք կազմող, և լատինական վանքերու և դպրանոցներու, և յատկապէս Ութբանեան վարժարանի մէջ ուսում առնող Հայերը, որոնք հիմնապէս տոգորեալ կաթոլիկական սկզբունքներով և սովորութիւններով, և Արեւելեան եկեղեցիներուն ուսած հերձուածողի և հերետիկոսի կոչումներով ամանջնին լեցած, միտքերը պղտորող գրոյցներով միամիտները կ'որսային։ Արեւմուտքի աչակերտող Հայերուն հետ և անոնցմէ առաջ պէտք է յիշել հայերէնագէտ լատին կրօնաւորներ, և առհասարակ իբրեւ քարոզիչ Հռոմի կողմէ Արեւելք ղրկուած զանազան լատին միաբանութեանց անդամակիցներ, որոնք յատկապէս Հայերուն մէջ աշխատելու պաշտօն ունէին։

ՀԱՑՈՑ ՁԳԱՑՈՒՄՆԵՐԸ

1814. Եղելութեանց ներքին պայմանները լաւ իմանալու համար, անգամ մըն ալ կրկնենք Հայերուն քանի մը տուներն ու դիտումները։ Առանց առաջինն է իրենց եկեղեցւոյն քոյլատու և լայնախոհ սկզբունքը, որով ուղիղ հաւատքը կամ ուղղափառութիւնը իրենց բացառիկ սեփականութիւն չեն նկատեր, և երեք ժողովները ընդունող եկեղեցիներուն բոլորը՝ Բրիտտոի ճշմարիտ և ընդհանրական եկեղեցիէն դուրս չեն նետեր։ Որչափ ալ իրենց սեփական վարդապետութեան յարած կը մնան, սակայն ուրիշներուն ալ՝ սեփականի կամ մանաւոր կամ երկրորդական վարդապետութիւն ունենալը չեն արգիլեր։ Միւս մէկ տեսութիւնն ալ կրթութեան և ուսման և զարգացման անյագ և անկեղծ տենչն է, որով ուր որ նշոյլ մը կը տեսնեն՝ արչաւասոյր կ'ընթանան, և ուսկից որ ակնկալութիւն կրնան տեսնել՝ անդամները կը դիմեն։ Ինչպէս չեն կասիր նիւթական չրջանակի մէջ զոհողութիւններու և նեղութիւններու յանձնառու ըլլալ, նոյնպէս մտաւորական և հոգեւորական չրջանակի մէջ ալ իրենց միտքն ու սիրտը զոհողութեանց ենթարկելէ չեն քաշուիր։ Այդ սկզբունքներուն հետեւողներուն կողմէն՝ ուրիշ եկեղեցիներու մատուցուած յարգանքը, կամ անոնց համակերպելու յանձնառութիւնը, ոչ հայադաւանութենէ հռոմէադաւանութեան անցնիլ է, և ոչ ալ, ինչպէս կաթոլիկներ կը խօսին, մոլորութենէ ուղղութիւն դառնալ է, այլ փափաքուած նպատակի մը համար անտարբերութեամբ կատարուած զիջողութիւն մըն է։ Հայութեան սեփական այդ զգացումին հետեւանք պէտք է ճանչնանք, հռոմէադաւան դրպրոցներու մէջ ուսում առնող աչակերտներուն համարձակօրէն հայադաւան եկեղեցւոյ պաշտօնէութեան մտնելը, և հայադաւան ախոռներէ ձեռնադրութիւն ընդունիլը, և զայդ պէտք է ճանչնան կաթոլիկութեան պաշտպանները ալ, եթէ չեն ուզեր իրենց համամիտները, իբր նենգաւոր և իբր կեղծուրացք ամբաստանել։ Բայց թէ այնպէս կամ թէ այսպէս, ակներեւ է որ մեծ եղաւ այսպիսիներուն ազդեցութիւնը ժողովուրդին մէջ գժտութեան որոմը ցանելու, հաւատակիցները իրարմէ բաժնելու, հերձուածողութեան և հերետիկոսութեան մակդիրներով դիւրաթ նախատելու, սուրբ խորհուրդներուն վաւերականութեան կամ ապօրինութեան զրոյցներով եկեղեցիներ զատելու, ու Հայերը լատին եկեղեցիներ հաւաքելու, և վերջապէս Եւրոպական կամ օտար յարաբերութեանց գայթակղեցուցիչ և կասկածաւոր ներգործութիւնները ստեղծելու, և պետական օրէնքով ճանչցուած պատրիարքութեան կամ ազգապետութեան դէմ ըմբոստութեան դրդելու։

ՆԵՐՔԻՆ ՊԱՌԱԿՏՈՒՄԸ

1815. Այս տեսակ երկպառակութեանց սկզբնաւորութիւնը ճիշդ այդ միջոցին սկսած լինելուն վկայութիւնը ունինք Երեմիա Քէօմիւրճեանէ, որ 1690'ին եղիազար կաթողիկոսի գրած նամակովը կը ծանուցանէ, թէ եկեալ հասեալ է հե՛ Լ Նախանձ և վշտալուծ նոր

ի մէջ Հայոց, յորմէ և քայլակղզիէն քաղ-
մոց, Կոմոլիկ և Հերչոածոզ, Ֆրէնկ և Հայ
ընկերով, հանդերձ այլով ազճամանօ։ (ՁԱՄ.
Գ.722)։ Մազաքիա Ծէվահիրճեան ալ կը
հաւաստէ, թէ Ռո՛ զայոպէի ինչ ալ ֆէրեա՛,
չի չկենդանի Քրիսթոսի ի ճանալեա՛, և ահա
այժմ խոտորնիմ բերդ արանց հատատեցին ի մէջ
եկեղեցւոյ քաջանօ՛ (ՁԱՄ. Գ.723)։
Զոր Ծէվահիրճեան բերդ արանց կը վերագրէ,
Քէօմիւրճեան գլխաւորին անունովը, կը յիշէ
թէ այդ բանին եղե առիթ Սերգիս ան Թո-
խոնցի (ՁԱՄ. Գ.722)։ Բայց որոշակի չտար
այդ Սարգիս Եւդոկիացիին նախընթացը,
սակայն պատմութեան կարգէն յայտնապէս
կը քաղուի, թէ մոլի լատինասէրներէն էր,
և թէպէտ Հայ եկեղեցւոյ մէջ եպիսկոպո-
սութեան բարձրացած (ՁԱՄ. Գ.759), սա-
կայն անչուշտ հռոմէականներու մէջ ու-
սած մէկ մը պէտք է ըլլայ։ Ֆրէնկ կոչու-
մին ծագումը, որ աւելի սովորաբար Ֆռանկ
կամ Փռանկ կը հնչուէր, թէպէտ ուղղակի
Գաղղիոյ բնակիչներուն չատուկ, սակայն
Խաչակիրներու ժամանակէն ընդհանրացած
էր բոլոր լատիններուն կամ լաւ ևս Եւրո-
պացիներուն վրայ։ Այդ կոչումին՝ իբրեւ
Հոյ անունին դիմաբաժանելու, և իբր Ոչ-
Հոյ իմաստով գործածուիլը, աւելի քաղա-
քական քան թէ կրօնական նշանակութիւն
տուած է նոյն կոչումին, և այդ պատճա-
ռով քաղաքականապէս կասկածելի կոչում
նկատուած է, իբրեւ բարեկամ և մտերիմ,
համամիտ և գործակից Եւրոպական ազգու-
թեանց, որոնք Օսմանեան պետութեանը
դէմ հակառակութիւններ և թշնամութիւն-
ներ և պատերազմներ կը մղէին չարունակ։
Իսկ այդ Ֆրէնկ անունը ժամանակին լատի-
նասէրներն ու լատինամոլները սիրով կ'առ-
նէին վրանին, իբրեւ նշանակ իրենց Եւրո-
պական գաղափարներու հետեւողութեան։
Կռնոլիկ կոչումն ալ կը պահէին իբրեւ տա-
ռական կոչումն հռոմէական եկեղեցւոյ
իրեն սեփականած անունին, որ ճշդիւ կը
յայտնէր ծայրայեղ լատինամոլներու վի-
ճակը։ Միայն թէ իրաւունք չունէին կա-
թոլիկ անունը Ռոչչափա թարգմանել, որ
ոչ ստուգաբանութեամբ, ոչ կիրառու-
թեամբ, և ոչ պաշտօնական լեզուով Կռ-
նոլիկ կոչման չհամապատասխանէր։ Ստու-
բանութեամբ Յոյներուն օրթոդոքս կոչումին
կը համեմատի, իսկ պաշտօնական կիրառու-
թեամբ սկիզբէն իվեր սեփական է Հայ
ազգային, կամ Հայադաւան կամ Հայաս-
տանեայց սուրբ եկեղեցւոյ, և անոնք որ
Հայադաւանութենէ կը խորչէին՝ իրաւունք
չունէին և չունին իրենց վրայ առնուլ ասո-
ղջափա կոչումը։ Անունէն զործին անցնելով՝
ազգին մէջ սպրդել սկսած խորութիւնն ու
պառակտումը յառաջ կու գար այն թելադ-
րութիւնէն, զոր Լատիններ և լատինամիտ-
ներ իրենց հետեւողներուն կ'ընէին, թէ
Հայ եկեղեցւոյ մէջ պաշտօնած խորհուրդ-
ները ապօրէն են, և կատարուած բարե-
պաշտութիւնները ապարդիւն. ուստի կը
յորդորէին լատին եկեղեցիներու մէջ կա-
տարել իրենց հոգեւորականութիւնները։
Բայց որովհետեւ չէին կրնար այդ սկզբուն-
քը պաշտաճեցնել մկրտութեան, պսակի և
թաղումի վրայ, որոնք արտաքին նշանա-
կութիւն և օրինականութիւն ալ ունէին,
կը դոնանային գոնէ խոստովանութեան,
հաղորդութեան և պատարագի համար խոր-
ձեցնել Հայերը իրենց եկեղեցիներէն, և
լատին եկեղեցիներ յաճախելու սորվել։
Իրենց յատուկ Հայ եկեղեցիներ բանալու
արտօնութիւնը չունէին, քանի որ պետու-
թենէ ճանչցուած հաստարակութիւն կամ ազ-
գութիւն չէին. սակայն այդ նպատակին
ձգտումներ ունէին, և պաշտօնական դիրքը
չկրնալով ձեռք ձգել, տուներու մէջ պաղա-
նի մատուռներ կազմակերպելու կը ձեռ-
նարկէին։

1816. Սուղ ախոռին վիճակն ալ լաւա-
գոյն չէր, մանաւանդ որ հին ազիաբաս-
յութեան խմորը ջնջուած
ՍՍՈՑ չէր կիլիկիոյ կողմերէն,
ԱՔՈՒԸ և ամէն առտնին յուզ-
մունքներ դիւրաւ այդ
կողմը կը միտէին։ Աքսոր պառակտման
մէջ թողուցինք վերջին անգամ 1679'ին,
զի Սիսի մէջ Սահակ Մէլխանէձին և Բերիոյ
մէջ Ապարիա կարկառեցին նոտան երկու
նախորդ պառակտեալներու տեղ (§ 1779)։
Ընդհանրապէս Բերիա նստողներ աւելի մօտ
էին հռոմէականութեան, տեղւոյն մէջ գըտ-
նուող Լատին կրօնաւորներու հետ չփուե-
լով, և իրեն բաժանեալ և տակաւին

դիւքը Արեւմտեայց նպաստներով եւ հովանաւորութիւնով զօրացնելու համար։ Ազատիա բոլորովին իսկ լատիններէն գրաւուելով, 1683'ին անձամբ Հռոմ գնաց ծեր տատիքին մէջ (09 ՕՐԱ. 284), թէպետեւ ուրիշներ 1683'ին կը դնեն Ազարիայի ընտրութիւնը եւ հինգ տարի ալ պաչտօնավարութիւն կու տան (ՁԱՐ. յաս. 111)։ Ինչպէս ալ Ազարիա հրաժարեցաւ ըստ յոմանց (ՍԻՍ. 539) Հռոմ գացած ատենը, մինչ աւելի հաւանական կը սեպենք որ անոր նպաստակը եղած է նոր նպաստներով զօրացած վերադառնալ, սակայն իւր յաւակնայեալ տարիքը չներեց իրեն այդ նպատակը իրագործել, եւ Հռոմի մէջ վախճանեցաւ ու թաղուեցաւ 92 տարեկան (ՍԻՍ. 539)։ Ազատիայէն ետքը ընդհատած կ'երեւի Բիւրիայի հակաթոռ աթոռին յաջորդութիւնը, սակայն անդամ մը սկսած պատակտումը բոլորովին չջնջուեցաւ, եւ սրեւէ ներքին տարաձայնութեան պահուն, իսկոյն Բիւրիոյ հակաթոռութիւնը նորոգուած կը գտնենք։ Իսկ Սահակ Մէյիանէցին մինչեւ 1689 չարուներկոյս իւր կաթողիկոսութիւնը, եւ իրեն յաջորդ ունեցաւ Գրիգոր Առանացին, Պիծակ մականուանեալ, որուն միայն երկու տարի պաչտօնավարութիւն կը տրուի (ՁԱՐ. յաս. 111), եւ հրաժարելով ձեռնթափ եղած կ'երեւի (09 ՕՐԱ. 284) 1691'ին։ Սակայն ոչ միայն ժամանակիս պատրիարքներուն եւ կաթողիկոսներուն հոգիէն չատ հեռու էր՝ ձեռք անցուցած իշխանութիւնին ձեռքէ հանել, այլեւ անցողական յիշատակ մը, թէ Գրիգոր Կիլիկիոյ կաթողիկոս 1693'ին Հռոմ գացած ըլլայ երկու եպիսկոպոսներու բնակերակցութեամբ (ԿԱՓ։ 165), կը հաստատէ թէ Գրիգոր իբր Կիլիկիոյ կաթողիկոս կը չրջէր տակաւին։ Ուստի աւելի պատմութեան կարգին համաձայն կը գտնենք ըսել, թէ Աստուածատուր Սասունցի, Նարեկն մականուանեալ, Գրիգորի վրայ պօրանալով զայն աթոռէն մերժած եւ ինքն անոր պաշտօնը գրաւած է, եւ Գրիգոր աստանդական Հռոմ ալ դիմած է, որպէսզի սրեւէ հռոմէական պատանութեան պատրուակով նիւթական նպաստ ձեռք ձգէ եւ անով կարենայ նորէն իւր աթոռը դառնալ։ Սակայն կ'երեւի թէ այս կերպով ալ յաջողութիւն գտած չէ, զի աւելի ուշ, 1703'ին կը գտնենք զայն Երուսաղէմի մէջ (09 ՕՐԱ. 284), եւ այս կը բաւէ բացատրել Հռոմ երթալուն իսկական նպատակը։ Վասնզի հռոմէականութեան միտումը, որ Կիլիկիոյ եւ Կոստանդնուպոլսոյ աթոռներուն մէջ կրցաւ դեր մը խաղալ, Երուսաղէմի աթոռին եւ Երուսաղէմի միաբանութեան վրայ բնաւ չազդեց, եւ չէր ալ կրնար ազդել, քանի որ չարունակ լատիններու դէմ ալ մաքառելու պարտաւոր էին՝ Հայկական սեփականութեանց պաչտպանութեան համար (§ 1811)։ Զինք կրնար ճչդել թէ Կ-Պոլսոյ աթոռը ինչչափ մասնակցութիւն ունեցած է Պիծակի եւ Նաթքնի մրցումներուն, զի 1691'ին կը չարունակէր աչխարհական ազգականներուն վարչութիւնը (§ 1812)։

1817. Եղիազար կաթողիկոսի կարողութեան համբաւը լաւ տպաւորութիւն ունեցած էր Հայաստանի մէջ, որ եկէն չոխեան խոշտանգ է ԱՂԹԱՄԱՐ ընալանդպոլիան ամա, մինչեւ իսկ Աղթամարի ԵՒ ԷՋՄԻԱԾԻՆ աթոռը յանձն առաւ վերջ տալ ներհակընդդէմ մատաուումներու, և ընդունելով էջմիածնայ գերիչխանութիւնը՝ զգալի և նչանակալից կերպով նուազեցուց է ամանէ (ՁԱՔ. Բ. 106)։ Երբոր Յովհաննէս Թիլիւնճի կաթողիկոսը վախճանեցաւ 1683'ին (§ 1776), իրեն յաջորդ ընտրուած Թովմաս Ծիրիճցին՝ փոխանակ իր եպիսկոպոսներէն ընդունելու կաթողիկոսական օծումը, քաղաք ընծայէ, եպիսկոպոսէ, տոհանայէ և փանոփերսէ ուղևորեցաւ Էջմիածին, և եղիազարէ ընդունեցաւ իր ձեռնադրութիւնը Մայրաթաղաքին մէջ, և ինքս պատուով և ինքնէն պատչխոսէ փոխարինուեցաւ, միւսոն ալ առաւ Էջմիածինէ իբրեւ նչանակ հպատակութեան, և այնպէս դարձաւ իւր աթոռը Աղթամար, որով վերջացած եղաւ ընդոպոլիան ու է նախնեաց առաջնոց հայրապետաց Աղթամարայ սկսած էր, և բոլոր Հայ եկեղեցին եղաւ ի հօտ և ի հովիւ, ընդ գերագահ իշխանութեամբ կաթողիկոսին Ամենայն Հայոց։ Այդ եղելութիւնը պատմող Յովհկի մաչտոցին յիշատակագիրը, Թովմային ըրածը պատմելով կը յարէ՝ թէ պատանեցայ ղերեան Սրկաճնակաց, այսինքն է հռոմէականներու,

որով կ'ուզէ իմանալ Հայաստան թափառող լատին կամ լատինամիտ աբեղաները (ՕՕ ԲԻՋ. 1138)։ Ասոնք ատեպ Հայոց եկեղեցւոյն դէմ կը կրկնէին, և դեռ կը կրկնեն, թէ բաղմագլխեան է և յատուկ գլուխ մը չունի, վասնզի մէկէ աւելի կաթողիկոսներ կը ճանչնայ։ Մակայն երբէք Հայոց եկեղեցին իւր Մայրաթոռին գերագոյն իշխանութիւնը այլայլած չէ։ Ամէն եկեղեցիներու նուիրապետութեան մէջ յատուկ աստիճան մըն ալ ընդունուած է ընդհանուր պատրիարքին կամ կաթողիկոսին, և մետրապոլիտ արքեպիսկոպոսին մէջտեղ, որ քաղաքական նպատակ կամ ազգայնապէս զատուած մասի մը գլուխն է. և որչափ ալ կաթողիկոսի կամ պատրիարքի անուն կը կրէ, սակայն իրր երկրորդական կամ իրր մանաւոր կ'իմանայ այդ անունը, մինչև աստիճան մը ինքնագլուխ իրաւասութեամբ, բայց միշտ գերագոյն աթոռին իշխանութիւնը ճանչնալով։ Այդ երկրորդական աստիճանի պատրիարքներուն կամ կաթողիկոսներուն, միւռոն օրհնելու և եպիսկոպոս ձեռնադրելու արտօնութիւն ունենալն ալ՝ այդ յարաբերութիւնը չփոխադարձեր, պէս պէսուած եկեղեցական ծիսակատարութիւնները Հայոց մէջ ալ՝ ընդհանուր հայրապետին վերապահուած չեն եկեղեցական բացարձակ կանոնով, այլ միայն տիրող սովորութեամբ կամ ներքին կարգադրութեամբ։ Կանոնական սկզբունքով ամէն եպիսկոպոս կրնայ միւռոն օրհնել, և ամէն մետրապոլիտ կրնայ եպիսկոպոս ձեռնադրել երկու եպիսկոպոսներու ընկերակցութեամբ։ Ամէն առթի մէջ Աղթամարի աթոռին առած քայլը գեղեցիկ ցուցմունք մըն էր Հայոց եկեղեցւոյն դէմ խօսուած մեղադրանքը ներքելու։ Թումայի նախաձեռնութեամբ սկսած սովորութիւնը չատ գեղեցիկ կարգադրութիւն մը եղած կ'ըլլար, եթէ չարաշնակէր Աղթամարի և կիլիկիոյ աթոռներուն կողմէն, հանդիպելով նախապէս վրաց և Աղուանից կաթողիկոսներուն կողմանէ պահուած սովորութեան. բայց դժբախտաբար նորէն խանգարեցաւ նոյնիսկ Թումայի կողմէ 1693'ին, երբ զարի յաջորդին օրով։

1818. Լինաստանի մէջ եղածները պատմեցինք մինչև Նիկոլի մահը 1681'ին (§ 1784), զոր վարդան Ծունանեանի գերեզուածէն առնելով՝ ումն կը դնէ հոկտեմբեր 14'ին (ԿԱՒՐ. 127), և ուրիշ մը հոկտեմբեր 24'ին (ՏԱՇ. 122), որ կը պատասխանէ տոմարներու տարբերութեան։ Իսկ Մատթէոս Ռոշքեան կը դնէ մարտ 21'ին 85 տարեկան (ԿԱՒՐ. 143), մինչ 1626'ին 22 տարեկան ձեռնադրուած ըլլալով (§ 1638), 77 տարեկան պէտք էր ըլլար, 55 տարի եպիսկոպոսութիւն վարած ըլլալով։ Աւելի վաւերական աղբիւրներ չունինք տարիքն ու մահուան օրը ճշդելու։ Իսկ Ռոշքեան ուրիշ տեղ Նիկոլի տարիքը 72 և եպիսկոպոսութիւնը 42 դնելով (ԿԱՒՐ. 142), ոչ 22 այլ 30 տարեկան ձեռնադրուած կ'ենթադրէ, և իրաւունք կ'ունենանք առաջին թուականները հետեւիլ։ Երբոր Նիկոլ կը մեռնէր, իրեն օգնականն էր Յովհաննէս կերիմովիչ, որ Բարխատանենց ալ կոչուած է (ԿԱՒՐ. 143), իսկ վարդան Ծունանեան որ օգնական և յաջորդ նչանակուած էր (§ 1783). Իլմովէ բացակայ էր, պի աեխել ընդան է սոբբ խոլվան այսինքն Փրոբականատայէն, գացած էր է Հայոսան տոբղելը պզեռս, կամ հոմէադաւանութիւն տարածելու, որովհետեւ Նիկոլ դեռեւս սոյէ էր և սոզլ (ԿԱՒ. 143)։ Ծունանեանի քարոզութիւնէն միայն Սահակ Մակուեցի եպիսկոպոսին իրեն հաւանիլը յիշուած է (ՊԼՃ. 277), զոր քամահ կերպով կաթողիկոսութեան տեղակալ կ'ընեն ոմանք (ԱՋԱ. 129)։ Սահակ Մակուեցի անուն եպիսկոպոսը յիշեցինք արդէն տեղապահութեան անուանուած՝ երբ Յակոբ Էջմիածինէ հեռացաւ, բայց Եւդոկիայէ ետ դարձաւ (§ 1759), որով երկար պաշտօնավարութիւն չունեցաւ։ Իսկ երբ Յակոբ նորէն ուղեւորութեան ելաւ Մատթէոս էր տեղապահը, և վերջին մեկնելուն Ստեփանոս, և Սահակի մը կարճեցեալ կաթողիկոսութիւնը անհիմն ցուցուցինք (§ 1798)։ Վարդան Ծունանեանին պատմելով որովհետեւ անոր քարոզութիւնները ժողովուրդին մէջ չփոթութիւն կը ձգէին, 1682'ին կոչուեցաւ Էջմիածին, և հնազանդեցաւ, ուր Պաչատուր կարնեցին միայն իրեն յաջեցաւ (ԼԻՕ. Ա. 305), և ինքը եղանակը պատ հետեւողութ։ Հապա թէ

ՎԱՐԴԱՆ ՅՈՒՆԱՆԵԱՆ

Նիկոլի մահուան լուրը առաւ, փութաց Իլվով հասնիլ, և ձեռք առնուլ Լեհահայոց արքեպիսկոպոսութեան աթոռը ուր կը գըտնեմք 1683'ին (ԿԱՄ· 197), բայց չենք կըրնար ճշդել հասնելուն թուականը։ Վարդան Ծունանեան գործի ձեռնարկից ոչ ևս Նիկոլի նման յեղյեղուկ կերպով հռոմէադաւանութեան ծառայելով, այլ ըստ ամենայնի հաստատամիտ ուղղութեամբ զայն ամրացընել աշխատելով, այնպէս որ Լեհահայոց բոնի միութեան հիմք սկզբնաւորողն Նիկոլ էր, զայն լրացնողը Վարդան եղաւ, որ ըմենայն բան քաջերէրեան իբեւոնի առնելով, շատ անգամ ընդդիմադրին սէրն ոչնչեց, ուստի Հայերն ալ իրեն պատիւ չէին դներ (ԿԱՄ. 130)։ Վարդան որդի էր Ծունան քահանայի, Թոխաթու ծառս գիւղէն (ԿԱՄ· 143), կամ Խազուեաց ստորոտը Գըռգի գիւղէն (ԿԱՄ. 198), որ նոյն անունի տարբեր հնչումներ կ'երևէին, իսկ կեանքը Եւդոկիոյ մէջ անցնելուն, սովորաբար Եւդոկիացի կը կոչուի։ Վարդեվել ընդելանն է վարդբեցոց, և ընդելանն է Լեհաստան (ԿԱՄ· 198), որ է Լեհապոլիս կամ Իլվով, փիթուի ձեռքին տակ, անոր կողմէ Հռոմ փրոփականտայի դպրանոցը ղրկուած էր կատարելագործուելու (§ 1782), և վերջէն իբրեւ Հռոմի կատարելապէս վստահելի անձ մը՝ Նիկոլի յաջորդ էր նչանակուած (§ 1783)։ Այդ պաշտօնին հասնելէն ետքն ալ՝ առնոր պարապ չանցնելու համար Իլվովէ Արևելք էր անցած հռոմէադաւանութիւն տարածելու ետանդով։ Առանց մանր պարագաներ պատմելու՝ բաւական կը սեպենք ըսել, թէ Վարդան Լեհական իշխանութենէ պաշտպանութիւն գտնելով, և Լատին արքեպիսկոպոսին և կրօնաւորներուն հոյ հպատակութիւն ցուցնելով, մէկ կողմէն կ'աշխատէր բոլոր Հայ եկեղեցւոյ դաւանական և ծիսական կէտերը հռոմէականին նմանցնել, և միւս կողմէ հայադաւանութեան պաշտպանները ընկճել, և վիճակին և չրջակայից մէջ գտնուած Հայ եկեղեցականները այս կամ այն կերպով իրեն կողմը ձգել։ Առանց մէջ կը յիշուին Մինաս վարդապետ Եւդոկիացի՝ Պուղտանի կամ Մոլոտաւիոյ եպիսկոպոս, Զիլիֆտարօղլու մականունեալ, 1686'ին (ԿԱՄ· 127), Աստուածատուր վարդապետ Մշեցի՝ Ս. Կարապետի վանքէն, և Քրիստոտուր քահանայ՝ Սեչովի աւագերէց՝ Մանտրող մականունեալ, 1689'ին. Մովսէս եպիսկոպոս Երևանցի՝ էջմիածնի նուիրակ 1690'ին (ԿԱՄ· 44), եղիա քահանայ Սեչովցի, Մանդրուն մականունեալ, Մոլոտաւիոյ աւագերէց 1691'ին (ԿԱՄ· 128), և Մխիթար եպիսկոպոս Մոկացի, Լալուակ Մխոյ կոչուած 1693'ին (ԿԱՄ· 145)։ Առնցմէ ոմանք Իլվով հանդիպելով, և տեղական եպիսկոպոսը հաճեցնելով նպաստ մը չորթելու, և ուրիշներն ալ Իրանսիլվանիոյ մէջ պաշտպանութիւն գտնելու դիտումով գործած. յայտնի կերպով չենք իմանար թէ այսպիսիներու վկայութեամբ ինչ փաստ կը կազմուի հռոմէական դաւանութեան համար։ Վարդան հեռուէն ալ երբեմն իր ծանօթներուն միջնորդ կը դառնար, ինչպէս Ազարիա Աղուանից կաթողիկոսին համար ըրաւ, էջմ ամենց հոթելոյ փոյթ տարաւ պապին մօտ 1688'ին (ԿԱՄ· 127), և Ազարիա փոխարէն չնորհակալութեան գիր մը կը գրէ պապին 1695'ին, որ իբր թէ կ'ըլլայ պապական ընտրի հնազանդութեան և փառաւորեան, և որուն վրայ պապէն չան Հիւսէյինին յանձնարարական մրն ալ կը գրուի Ազարիայի համար (ԿԱՄ· 145)։

1819. Ծունանեանի գործերուն ամէնէն նչանաւորը եղած է՝ 1689 հոկտեմբեր 10'ին Իլվովի մէջ գումարած ԼԵՀԱՀԱՅՈՑ ԱՆՋԱՏՈՒՄԸ ֆառատեան ժողովը (ԿԱՄ· 129), որ Սինոդոս ալ կոչուած է (ԿԱՄ· 144), ուր Լեհաստանի Հայոց եկեղեցիներու մէջ գործածուելիք ծիսական գիրքերը ծայրէ ծայր աչքէ կ'անցընուին, և Հայաստանեայց եկեղեցւոյ սուրբ հայրերուն կարծեցեալ մոլորութիւնները, Վարդան Ծունանեանի և նմանօրինակ կարճամիտներու խելքով կ'ուղղուին, և նոր օրինակներ կը կազմուին, և Հռոմ կը ղրկուին ըստ այնմ տպագրուելու և հռոմէադաւան Հայերու կիրառութեան ծառայելու համար։ Այդ գործին կ'աշխատակցին Հայերու քարոզիչ և ուսուցիչ վանին աթեղաններն ալ, և նոյնիսկ Լեհաստանի արքունեաց մօտ պապական նուիրակ գըտնուող կանտէլմի (Gandelmi) եպիսկոպոսն

ալ ժողովին կը նախագահէ, և Աստուածատուր Ներսէսեան եպիսկոպոսին կը յանձնուի սրբագրել ծիսարանները Հռոմ տանիլ և տպագրութեանը աչխատիլ։ Այդ գիրքերն են Պատարագամատոյց, Տճեցոյց և Սբէլ քահանէ (ԿԱՄ· 129), այսինքն ժամագիրք, Շարական և Մաշտոց։ Հռոմի մէջ Բարսեղ և Յովհաննէս Հոլոփեր ալ (§ 1807) իրենց մանակցութիւնը պէտք էր նուիրէին, բայց հաւանաբար ատոնց կանխաւ կատարած ուղղութիւնները բաւական սեպուեցան, վասնզի 1689 թուականէն ետքը նոր հրատարակութիւններ չունինք Հռոմի մէջ տպագրուած։ Բայց Վարդանի գումարած ժողովը ուրիշ հետեւանք ունեցաւ աւելի կարեւոր։ Քանի որ Հայոց եկեղեցւոյ վերաբերեալ գործառնութեան մը պապական նուիրակը կը նախագահէր իրրեւ եկեղեցական իշխանութեան ներկայացուցիչ, այլեւս Հայոց հայրապետին իրաւասութիւնը ոտնակոխ կ'ըլլար։ Այդ պարագային հետ պէտք է կապել Վարդանի այն քայլը, որով վերջնականապէս կոչեց Լեհահայերէ կոպը ընդհանրին հեռ, մինչ մինչեւ այն ատեն թէ Նիկոլ և թէ ինքն Վարդան՝ ինքզինքնին էջմիածնի աթոռին հպատակ կը ճանչնային (ԼԷՕ· Ա· 305)։ Բացթաղակ չենք կրնար պնդել թէ Հայոց հայրապետին անունին յիշատակութիւնն ալ դադրած ըլլայ, բայց չատ հաւանական կը դատենք, քանի որ զայն իրրեւ մոլորեալ ու հերձուածող ու հերետիկոս ըսելու յանդգնութեան հասած էին։ Այս թուականին, այսինքն 1689 հոկտեմբեր 10'ին պէտք է հաստատել Լեհահայերուն՝ Հայոց Ուղղափառ սուրբ եկեղեցիէն պաշտօնապէս խզուիլը, քանի որ Իլվովի աթոռը ինքզինքն էջմիածնի կաթողիկոսին անկախ և Հռոմայ եկեղեցւոյ հետ դիմելով հրապարակէց Հռոմէականք այս որոշման վրայ գրած առնելին, Վարդան դիքանոսքեան փոքը կոտրիլ էլսի փառա կ'րսեն (ԸՍՏ· 382), բայց լաւագոյն էր ազգային եկեղեցւոյ ծոցէն բաժնուելցաւ ըսէին, ոչ ալ «ղլփա» եղաւ, այլ ուղղափառութենէ հեռացաւ գրէին, զի Ո«ղլփա»՝ Հայ եկեղեցւոյ հայերէն անունն է, և կ'ըսէ բառը «ղլփա» չկրնար խարգմանուիլ։ Մինչեւ այս ատեն Իլվովի աթոռը, ընդհանուր առաջնորդութիւն էր բոլոր արեւմտեան գաղթականներուն, այլ Ցունաստանի 1689'ին առած քայլը, իրմէ անջատեց Մոլտաւիայի և Վալաքիայի և Պուքովինայի գաղթականները, որոնք ազգային եկեղեցւոյ հաւատարիմ մնային, և նոյնիսկ աստեղանդ գտնուող հոգեւորականներն ալ քաղաքական բաժանմամբ իր հպատակութենէ ելան, և մնաց պարզապէս Կալիցիա գաւառը եղող հոգեւորական Հայերուն և պիսկոպոսարանը։

ՀՈՒՆԳԱՐԱՀԱՑ ԳԱՂՈՒԹԸ

1820· Ցունաստան ուրիշ գաւառներու Հայերէն ձեռք քաշելու ստիպուած, մտադրութիւն դարձուց Մահաց երկրին Դրանսիլվանիա գաւառին մէջ հաստատուող նոր գաղթականներուն վրայ։ Առնց սկզբնաւորութիւնը կը հանուի մինչեւ 1654, սակայն բուն գաղթականութիւնը կը դրուի 1672'ին, երբ Մոլտաւիայի յունադաւան իշխանը հալածանք հանեց, և մոտ մը Հայեր Մոլտաւիայէ հեռացան։ Այս խումբէն էին Մինաս Զիլիֆտարօղլու եպիսկոպոսը և եղիա Սեչովցի քահանան (ԳԱՀ· Ա· 2), որոնցմէ առաջինը վարդան յաջողեցաւ իւր կողմը չահիլ 1686'ին (§ 1818), և հաւանաբար անոր մահուընէ ետքն է որ 1691 յունիս 30'ին յատկապէս Դրանսիլվանիոյ համար եպիսկոպոս ձեռնադրուց Օքսենտիոս Վերթերեսքօ (ԿԱՄ· 128) կամ Աբգենտիոս Վրզարեան (ԳԱՀ· Ա· 19) Պօքտեչանցի վարդապետը, Լոթեցեալ է Հոմ ըն համալսարանաւ Ռոպանեան, այսինքն է Փրոփագանտայի վարժարանին մէջ, որ գէաց անգէն եղեալ՝ դիքանեցոյց ընդ սբեղ եկեղեցոյն Հոմայ (ԿԱՄ· 128)։ Արդէն կազմակերպեալ չէին նոր գաղթականները, և Աւստրիոյ կայսրութեան պաշտպանութեան ալ կը կարօտէին, ուստի չատ դիւրաւ կատարուեցաւ Հունգարահայերուն դաւանափոխութիւնը։ Ըստ այսմ կը յայտնուի, թէ եղիա Սեչովցի քահանային 1691'ին դաւանափոխ ըլլալն ալ (§ 1818) ինչ դրդումէ առաջ եկած է։

1821· Պարսկաստանի Հայերուն վրայ խօսած առենիս, գլխաւոր կէտ կը նկատենք չահ Միւլէյմանի մտադրութիւնը, որ բոլորովին հեռանալով իւր նախնեաց սկզբ-

բունքէն, կ'աչխատէր անդրադարձել ղեղրդելի և զոռոգիլ ազգ ւրլուսանէից, մանաւանդ ղազգ Հայոց, ի հաւատոց խրեանց, և զբյուղացանել ընտ իսլամական կրօնքին (ԽԱՉ. 154)։ Այս պատգան բաւական է հետեւցնելու թէ այլ եւս Պարսկաստանի գաղթականները չունէին այն հանդիստ վիճակը, զոր կը վայելէին Մեծ Շահաբասի օրերը։ Իրենց հոգեւորական վարչութիւնը կեդրոնացած էր Ամենասիրկիչի վանքին մէջ, ուր արժանաւոր առաջնորդներ կը գտնուէին ընդհանրապէս։ Յակսաուր կեսարացիին յաջորդ կը դնեն ոմանք Դաւիթ Ջուղայեցին (ԽԱՉ. 141), բայց մենք արդէն յիշեցինք թէ Սիմէոն Ջուղայեցին եղած էր անոր յաջորդը (§ 1711)։ Իսկ Յակոբ Ջուղայեցին դժուար է այդ կարգին անցընել, որովհետեւ 1655'ին Դաւիթ պաշտօնի վրայ կը յիշուի (ԽԱՉ. 142), որ կը համապատասխանէ Սիմէոնի Ջուղայէ հեռանալուն թուականին (§ 1711)։ Յակսաուր արեւելցի Ջուղայեցի չափազանց դժուարութիւններ կը յառաջէ Դաւիթի, կոչելով զայն երէց եւ անուանելով տանուտէր ասոր Դաւիթ հրեշտակային վարդապետ (ԽԱՉ. 141), և Դաւիթի արժանիքներուն գլխաւորն է Ամենասիրկիչի վանքը վերաշինելը՝ հոյակապ և դեղեցիկ և յոյժ վայելուչ կերպով, ապեռասրաս և երկնամած ատճառով, յոյժ գեղեցիկ և ամենալուր յօրինուածովք, զոր լրացուց 1664'ին (ԽԱՉ. 142)։ Դաւիթ նուիրականն չինութեանց հետ ներքին զարգացման ալ աշխատեցաւ, և աշակերտներ հասուց գիներս ցտասոան, ամենեւեան ի ընտրէ և գտազդեցի, զորս գեղեցկապէս վայելուչցոյց էկկլեսիաստական գիտութիւնբ և քնաղանգական ասպատքանութիւնբ (ԽԱՉ. 219), և եղան անվանելի աշակերտ ընդդեմ Պարսից անասունաձիկ, և ընդդեմ Երկաբնակ հերետիկոսց (ԽԱՉ. 148)։ Առանց մէջ երկու նշանաւորագոյներն են Սահմանոս Ջուղայեցի, որ Դաւիթին յաջորդեց (ԽԱՉ. 149), և Յովհաննէս Մրքուզ, որ նշանաւոր եղաւ իսլամ օրէնսգէտներուն հետ, և նոյն իսկ Պարսից չահին հետ քրիստոնէական հաւատալեաց պաշտպանութեան համար կատարած վիճաբանութիւններովը (ԽԱՉ. 153), զորս երկարօրէն կը գրէ Յակսաուր (ԽԱՉ. 154-218)։ Առանցմէ առքը կը յիշուին Ագէքսանդր, Յակսաուր, Մինաս, Անդրէաս, Միքայէլ, Մարկոս, Յովսէփ, Սիմէոն և Յովհան վարդապետներ, ամենքն ալ եպիսկոպոսութեան բարձրացած Մրքուզէն զատ, որ իրով յոյժ հռչակեցաւ (ԽԱՉ. 219)։

ԴԱՒԻԹ ՋՈՒՂԱՅԵՑԻ

1822. Երրոր 1680'ին Յակոբ կաթողիկոս Կ-Պոլիս կը գտնուէր, Յովհան աբեղայ մը գայն կը բանադատէ, որ Փէրիա գաւառին առաջնորդութիւնը իրեն տրուի Հազարջրիպի վանքին հետ, և կաթողիկոսին դժուարանալուն վրայ կը սպասնայ ուրանալ չՔրիստոսէն հետ։ Յակոբ իրր թէ կը գիջանի կոնդակը տալ, բայց միւնոյն ժամանակ կը գրէ էջմիածին, որ երբոր գայ ընդունել գէնչեն գնա ի Սեաս կղզոյ, և դ ես իսոս էլցե անդի (ԽԱՉ. 149)։ Ըստ այսմ ալ կը գործադրուի, և Յովհան քանի մը տարի կը մնայ Սեւան, բայց վերջապէս կը յաջողի փախչիլ անտի, և գալով Փէրիա գալով կը հաստատուի Հազարջրիպ վանքը։ Հազիւ թէ լուրը կ'առնուի Նոր-Ջուղայի մէջ, Սահմանոս վարդապետ որ Դաւիթի յաջորդած էր, և Աղաբիր Շահնաթունեանց գիւղաւագը, և Ջուղայեցւոց գլխաւորները, վրայ կը հասնին, ընդունելի գՅովհան ընդունելի, խոչընդոտ և գանգատ ընդդիմել գոռոգին, և գնին ի գնդան քանդ. բայց Յովհան անկէ ալ կը փախչի, և Պարսից դիմելով իսլամութիւն կ'ընդունի (ԽԱՉ. 150) Մէհմէտ-Ալի բէկ, կամ Շեխ-Մուհմին կոչուելով (ԽԱՉ. 168), և պատճառ կը լսայ Սահմանոսէ և խորհրդակիցներէն վրէժը լուծել։ Այս տեղ պատմիչին ժամանակագրութիւնը կը կնճռոտի, և հարկ կ'ըլլայ նկատի առնել, որ Յակոբի Կ-Պոլիս գտնուիլը 1689'ին էր (§ 1791), և Դաւիթի մահը 1684'ին (ԽԱՉ. 220), որով բնական էր Սահմանոսի յաջորդութիւնը այդ տարեթիւէն հաշուիլ։ Արդ Յովհանը Սեւանէ փախչելէն առքը ձերբակալողը Սահմանոս եղած բուսելով (ԽԱՉ. 150), Յովհանի երկրորդ ձերբակալութիւնը և ուրացութիւնը, և գինչ ինչ ամօ կատարած մատնութիւնը, և Սահմանոսի քովնեցի ամ ամի բանտարկութիւնը, և ծանր տուգանքով

ՅՈՎՀԱՆ ՇԵԽ-ՄՈՒՀՄԻՆ

ազատուիլը, 1685'ին չէն կրնար իյնալ (ԽԱՉ. 151)։ Ուստի Թուատաւերու սխալներ ենթադրելով՝ Ծոհանի երկրորդ ձերբակալութիւնը 1685'ին, և Մաւիանոսի բանտարկութիւնը աւելի մերձաւորաբար 1687'ին պիտի դնենք. կամ եթէ Մաւիանոսի բանտարկութիւնը 1685 պիտի իմանանք, այն ատեն Մաւիանոս՝ Դաւիթի յանձնարարութեամբ ձերբակալած կ'ըլլայ Ծոհանը մերձաւորաբար 1683'ին։ Ամէն ատեն մէջ ճիշդը ստուգելու փաստեր չունենալով նոր հետազօտողներու կը թողունք կնճիռին լուծումը։ Մեզի բաւական ըլլայ ըսել թէ Ծոհան Շեխ-Մուսին, Սիւլէյման չահին մօտ կ'ամբաստանէ Մաւիանոսը, և բանտարկել կու տայ զայն, և ըսյը բաղսմա վրդովեցաւ և չահանայա, և պրկել ղոռ նոցա է կոճղը դնդրեցին, ուր կը մնան մի քանի ամիս, և հազիւ հազար թուման վճարելով նախարատաց և մնծամեծաց, հազար թուման ալ արքային, և տարեկան երեք հարիւր թուման տուգանք խոստանալով կ'ազատին։ Տարեկանը կը վճարուի մինչեւ 1691, և հազիւ կը ջնջուի 1692'ին Ջուղայի գիւղաւագ Աւետիսին ձեռքով (ԽԱՉ. 151)։ Այդ եղելութիւնները ամբողջաբար եղիազարի կաթողիկոսութեան միջոցին հանդիպելով, դարմանալի է անոր անունին քնաւ չյիշուիլը։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՐՔՈՒԶ

1823. Սոյն այս միջոցին կ'իյնան Ծովհաննէս Մրքուզ վարդապետին գիտական և կրօնական վիճաբանութիւններուն մի մասը, զոր բրած է քրիստոնէական վարդապետութիւններ պաշտպանելու համար։ Այս առաջին մասը Սիւլէյման չահին օրով կատարուած է, թէպէտ աւելի նչանաւոր մասը տեղի ունեցած է Հիւսէյին չահին օրով, որ 1694'ին իր հօրը յաջորդեց։ Մրքուզի պատճառաբանութիւնները, ինչպէս կը քաղէ պատմիչը, կը հիմնուին դպրոցական ոճին վրայ, որուն անտեղեակ ըլլալով չահն ու իւլամ կրօնականները, մեծ զարմանքով և հիանալով կը խոստովանին, թէ Ե է յիսըոլէ է Ֆրանկ՝ ալ էոյ նման սմա (ԽԱՉ. 175), վասնզի ղէյբ հաւատքանութիւն և պրամքանութիւն զմէնայն է ինչ էոլելել ասէ (ԽԱՉ. 174)։

ԵՂԻԱԶԱՐԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

1824. Մինչեւ հիմայ յառաջ բերուած եղելութիւնները առանց եղիազար կաթողիկոսի միջամտութեան կամ գործակցութեան կատարուած են, ինչ որ մեզի իրաւունք կու տայ եզրակացնել, թէ որչափ եղիազար կաթողիկոսութիւնէն առաջ ձեռնարկ և ցրուած գործունէութիւն ունէր, այնչափ ալ հանդարտ և ամիսի պաշտօնավարութիւն ունեցած է օրինաւորապէս կաթողիկոսանալէն ետքը։ Տարիքն էր արդեօք պատճառը, թէ չափազանց յոգնածութիւնը, թէ ալ ամէն տեսակ արկածներէ և յախուռն ձեռնարկներէ ետքը տեսակ մը յուսախար հիասթափութիւնն է՞ր՝ որ զինքը քաշուելու և ամփոփուելու կը տիպէր, մենք որոշել չենք կրնար. միայն եղելութիւնը հետազբօսներու մտադրութեան կը ներկայենք։ Ընդհանրապէս բոլոր յիշատակարաններ և նոր պատմագրողներ եղիազարի գործունէութիւնը Մայրաթոռոյ նկարական և բարեկարգական չրջանակին մէջ կը պարփակեն, և նոյն վիճակին մէջ փակուած ու վերջացած կը ցուցնեն։ Նորերէն մէկ մը միայն՝ եղիազարի կը վերագրէ Արեւմուտքի հետ յարաբերութեանց ձգտումներ, և լատին կրօնաւորներու հանդէպ նոյն ընթացք, մինչեւ իսկ Հայ եկեղեցիներու մէջ քարոզելու թոյլտուութիւն տալ, և 1686'ին վախճանող Լատին միաբան Ռու աբեղան մեծ հանդէսով Հայոց գերեզմանատան մէջ թաղելու արտօնութիւն չնորհել (ՉԱՄ. Բ. 37)։ Եղիազարի բոլոր կեանքը հոսմէական նութեան հակամէտ եղած չէ, և յայտնի գործերու դիմաց չատ նչանակութիւն չեն ունենար Աւետիք Եզոսկիացիին անոր վերագրած լատինամիտ տեսութիւնները։ Աւետիք այդ յիշատակները գրած է երբ հաւատաքննական բանտարկութեան մէջ գտնուելուն փոխութիւնամբ ազատութիւն գտնելու կը միտէր, և զինքն կանուխէն այդ միտքի վրայ եղած ցուցնելու դիտմամբ, նոյնը իր ձեռնադրող կաթողիկոսէն իրեն աւանդուած կ'ուզէր կարծեցնել։ Իրր այն թէ եղիազար զինքն ձեռնադրած ատեն յանձնարարած ըլլայ հնազանդիլ էֆէնդի, և բանալ ջուր խառնել ծածուկ, և բզխոցն է Հօրէ Ե է յՈրբոյ ըսել,

և թէ երուսաղէմի եղիա վարդապետը էրէ֊եպիսկոպոս Հռոմ ղրկած ըլլայ, և թէ ինքն ալ եօԹն վերապետս Հռոմ երթալու վրայ եղած ըլլայ (74 ԱՐՐ. 75), երբոր էջմիածին հրաւիրուեցաւ (§ 1703)։ Ատոյգ եղելութիւններ բնաւ չեն ներեր այդպիսի ենԹադրութիւններ բնել եղիազարի վրայ, թէպէտ նա կրնար համարձակ բարեկամական յարաբերութիւններ մշակել Արեւմտեան եկեղեցիներու չհաւնելու, և անոնց միջնորդութեամբ Հայութեան լաւագոյն կացութիւն մը հոգալու նպատակով։

ԵՂԻԱԶԱՐԻ ՄԱՀԸ

1825. Այդ տեսութեամբ կրնանք ընդունիլ, թէ եղիազար ալ իր նախորդին Յակոբի նման կեանքին վերջին միջոցին էջմիածինէ կ֊Պոլիս ուղեւորելու դիտաւորութիւն ունեցած է, այնտեղ աւելի դիւրութեամբ եւրոպացոց հետ բանակցութեան մտնելու, և ա֊նոնցմէ քաղաքական օգնութիւն ստանալու յոյսով։ էջմիածինէ մեկնիլը կը դրուի 1691'ին, բայց կարինէ կը պարտաւորուի հետ դառնալ, ճանապարհութիւնը վտանգալից տեսնելով (ԶԱՄ. Բ. 37)։ Օսմանեան կայսրը Մէհէմմէտ Դ գահընկէց եղած էր 1687 նոյեմբեր 8'ին, ներքին խռովութեանց և ա֊պստամբութեանց պատճառով (ԺՈՒ. 296), որ բոլոր ասիական գաւառներուն մէջ ալ տարածուեցան եկեղեցի Օսման և կէտուք Մէ֊հէմմէտ փաչաներու գլխաւորութեամբ, և վեց տարի տեւեցին, Միւէյեան Բ և Ահմէտ Բ սուլտաններուն օրով (ԺՈՒ. 299)։ Ձիչդ 1691 տարւոյն յուլիս 14'ին Միւէյեան Բ կը մեռնէր և եղբայրը Ահմէտ Բ կը յաջորդէր, և երկրին խաղաղութիւնը աւելի վրդովուած էր, և եղիազար չվստահացաւ այդ չափով միջոցին ցամաքային ճանապարհութիւնը չարունակել, և ոչ ալ կրնար յաջողութիւն յուսալ կ֊Պոլսոյ մէջ։ Կարինէ հետ դարձաւ էջմիածին, և ուղեւորութեան դժուարութիւնները ալ ակարացած, քիչ օր հետք վախճանեցաւ 1691 օգոստոս 8'ին, 9 տարի կաթողիկոսութենէ հետք, ինչպէս ընդհանրապէս ընդունուած է, թէպէտ Ջանաքեռցին 1690 օգոստոս 14'ին կը դնէ 8 տարի կաթողիկոսութիւն հաշուելով, և մահուան օրը էջմիածին մտնելու օրուան հետ նոյն բերելով (ՉԱՒ. Բ. 101)։ Եղիազար թաղուած է Ս. Գայիանէի իւրաչէն գաւիթին աջակողմը (ՄՈՎ. 278)։ Եղիազարի կ֊Պոլիս երթալ ուզելուն ուրիշ մէկ նպատակն եղած կ'ըլլայ՝ կրօնական վէճերու ու խորութեանց բորբոքումը, որոնք կ֊Պոլսոյ մէջ զայրացած էին, և որոնց վրայ իր մտադրութիւնը հրաւիրած էր երեմիա Քէօմիւրճեան 1690'ին գրած նամակովը (§ 1815)։ Սակայն չատեր ըսած խոսքեան (ՉԱՄ. Գ. 722), կամ խելահաս և խոհական անձէ չընալը միտքը կը վերագրեն եղիազարի (ՄՈՎ. 278), մինչ ուրիշ մը այս խռովութիւնները հանգուցելու համար կ֊Պոլիս երթալու որոշումը կը յիշէ (ԶԱՄ. Բ. 36)։ Բայց որն և ըլլայ ատոյգը, անձամբ կամ պատուիրակով ազգային ընդհանուր գործերուն միջամտելու գաղափարը չատ ուշ ծագած է եղիազարի միտքը, և իրագործուած ալ չէ։ Իսկ եղիազարի անձին և ձեռնհասկութեան, կարողութեան և ուղղութեան վրայ պատմութեանս ընթացքին մեր տեսութիւնները յայտնած ըլլալով, աւելորդ կը սեպենք մահուընէ հետք նոյն դիտողութիւնները ամփոփել, որ անգամ մը գրուածները կրկնել պիտի ըլլար։

Տ. ՆԱՀԱՊԵՏ Ա. ԵՒԵՍԱՑԻ

1826. Եղիազարի յաջորդին ընտրութիւնը լրացեալ գործողութեան մը պէս կը ներկայանայ պատմութեան մէջ, զի եղիազարի մահուընէ միայն երկու օր հետք, օգոստոս 10'ին կաթողիկոս կը հռչակուի իր ձեռնասուն աշակերտը Նահապետ եպիսկոպոս Եղեսացի (ՉԱՄ. Գ. 724)։ Անչուշտ հանգուցեալ կաթողիկոսի կամքը կար այդ մասին, որ Մայրաթոռոյ միաբանութեան կողմէն խղճմտօրէն յարգուեցաւ, մինչեւ

իսկ գրող ալ եղաւ, թէ Նահապետ Նոբ էսկ Յեսուվ կոթողէս ծնեցաւ (ՁԱՄ. Բ. 37)։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՈՒ ՆԿԱՐԱԳԻՐ

Այդ վերջին պարագան բուն յիշատակողը Աւետիք եւզոկիացին է, որ իւր վերջին օրերու յիշատակարանին մէջ կը գրէ, թէ հիւանդ եղիազարը իւր մեռնիլը զգալով մահիճէ եղած, եկեղեցի իջած, պատարագ մատուցած, Նահապետը օծած, և նորէն հիւանդութեան մահիճը դառնալով Նոյեմբեր հոգին աւանդած ըլլայ (94 ԱՐՐ. 112)։ Սակայն ընտրելագոյն աղբիւրներ, որ օգոստոս 8'ին եղիազարի մահը և օգոստոս 10'ին Նահապետի օծումը կը դնեն, այդ ենթադրութիւնը կը հերքեն. և միայն կրնանք ընդունիլ եղիազարի կտակային կամքը Նահապետ կաթողիկոսացնելու, զոր միաբանութիւնն ալ կը յարգէ մեծագոյն կաթողիկոսին պատուոյն։ Միաբանութիւնը այդ առիթս ալ բացարձակ իրաւամբ գործած կ'րլլայ, ոչ մերձաւոր իշխանաւորներու և ոչ ալ հնուաւոր ախոռներու հաւանութեան դիմելով։ Բայց և այնպէս ոչ մի կողմէն նկատողութիւն չյարուցուիր, և ամէն կողմէ աւանդ դիտողութեան կ'ընդունուի Նահապետի կաթողիկոսութիւնը։ Այդպէս լրած էր միաբանութիւնը Յակոբի ընտրութեան առն ալ. իսկ Եղիազարին ընտրութիւնը բացառիկ հանգամանքներու հետեւանք եղած էր. և ահա անոր մահուընէ ետքը՝ իւր նախընթաց սովորութեան կը դառնայ։ Նահապետ եղեսացին, որ իբր եղիազարի ձեռնասունն ու աչակերտը, խորհրդակիցն ու գործակիցը կր ներկայացուի, երբէք յիշուած չէ ոչ եղիազարի ընքնաւնար կաթողիկոսութեան, և ոչ ալ օրինական հայրապետութեան միջոցին, որով մութ կր մնայ մեզի թէ որ ժամանակին նա եղիազարի մօտ աչակերտ մտած է, և որ եղելութեանց մէջ եղիազարի գործակից եղած է, եթէ այսչափ անոր հաւատարիմն ու մտերիմն էր, որ իրեն յաջորդելու կր նչանակէր, եթէ անձամբ չօծեր ալ։ Նահապետ կր նկարագրուի, ճիշդ եղիազարի համանման տիպարով անձ մր, ֆոռմալ, ֆառպեցի, հաբիւ իչխեցող (ՁԱՄ. 26), խստապահանջ, և սաստկութեամբ վարող կաթողիկոսութեան գործր (հԱՁ. 151), թէպետեւ կրօնական և յոբինոց ըսալ էր (74 ԱՐՐ. 113)։ Այդպէս կը նկարագրեն զինքր մօտէն ճանչցողներ, որով չարդարանար Ձամչեանի պարզաբար ոչ ըստեպէր և հեղհեղուկ ըսելր (ՁԱՄ. Գ. 724), զոր իբր գովասանք կու տայ. իբր թէ Նահապետ հոգեմտկանութեան բարեկամ և դիւրամիտ, և մինչեւ իսկ զայն ընդունած անձ մր եղած ըլլայ։ Սակայն պատմութեան ընթացքը պիտի ցուցնէ թէ Ձամչեանի ենթադրութիւնը այս անգամ ալ հիմնական չէ։

ԵԻՆԱՐԱՐ ԱՐԴԻՒՆՔ

1827. Ազգային կեանքի զանազան պատահարներու պատմութեան չանցած, յիշատակենք Նահապետի չինարար գործերր, որոնց համար հաւանաբար դիւրութիւններ ունեցաւ եղիազարի թողած անձնական ստացութիւններէն։ Դիտելի պարագայ մրն է, որ կաթողիկոսներ կրնան մեծագործ և մեծածախ չինութիւններ ձեռնարկել, երբ ընդհանուր կերպով ախոռոյ խնդութեան և աղքատութեան գանգատներ ամէն կողմէ կր բարձրանան։ Այդ անհամաձայն եզրներու մեկնութիւնը պէտք է գտնել այն դրութեան մէջ, որ կաթողիկոսներ, ինչպէս նաեւ անոնցմէ հետեւ եկող աստիճանաւորներ, անջրպետ մր դրած էին իրենց անձնական ստացութեանց և ախոռոյ սեփականութեանց մէջ։ Ինչ որ իբր իրաւունք և իբր նուէր կը ստանային, կամ թէ կեղեքմամբ ալ կը հաւաքէին, իրրեւ իրենց անհատական ստացութիւն կը նկատէին, և իրենց կենցաղին և նպաստակին կամ թէ չինարար ձեռնարկներու կը գործածէին։ Այս կերպով ախոռին հանրային ստացութեան քիչ բան կը մնար, կալուածական հասոյթներ կամ որոշ տուրքեր միայն, որոնք չատ չէին պաղաբերներ, և միաբանութեան ուտելուտին ու զգեստին ու պահեստին գործածուելու դրամերը կ'անօրաներ, ախոռներ ու միաբանութիւններ խեղճ ու կարօտալից վիճակ կ'անցրնէին, և ախոռներու վրայ ծանրացող տուրքեր անվճար կը մնային և կը դիզուէին։ Այդ կերպով եղած է անչուշտ Նահապետի վարմունքը, եթէ անձուկ և դժուարին օրերու մէջ նչանաւոր չինութիւններ կատարեց,

որոնցմէ գլխաւորները երեւանեցին կը յիշէ։ Ասոնք են Շողոկաթի եկեղեցին և վանատունը բոլոր յարակիցներով՝ Աղամալ Շոռոթեցի իշխանին ծախքով, Հրազդանէ հանուած առուն լեռ ծակելով և քարաժայռներ պատռտելով՝ վանքին արտերը ոռոգելու համար, Երեւանի Ջորագետի վանքին եկեղեցին ու խուցերուն նորոգութիւնը՝ բոլոր չրջակայ մասերով, վաղարշապատ և Քանաքեռ և Կոնտ և ուրիշ չատ գիւղերու եկեղեցիներու չինութիւնները, այնպէս որ կրցաւ ըսուիլ, որ յեղիէն Եբեսանոս արտն տաբաշեն եկեղեցէ կան, ըսք գեղ մարին է ամանէ են չենեցելէ։ Ասոնցմէ զատ Նահապետ արար և զայլ շինութիւնս և զեղեցկէ գործս յիշուածջ և յեղիէն, կալուածներ աւելցուց, և եղածները ապահովցուց արտօնական և փաստաբուղէն վաւերագիրներով։ Ինքն սկսաւ և յառաջկոյց Քասագ գետի վրայ Օչականի էեղեցէ և գեղեցիկ կամուրջը (ԶԱՄ·26) որ մահուընէն ետքը լրացաւ 1706'ին (ԶԱՄ·Բ·38)։ Այդ չինութիւններ հետզհետէ կատարուեցան Նահապետի կաթողիկոսութեան միջոցին, բայց որովհետեւ միւս եղելութեանց հետ կապ չունին, ամէնքը մէկէն այստեղ քաղել յարմարագոյն սեպեցինք։ Իրօք ալ այդ չինարար ղրաղումները տեղի ունեցան աւելի ծանապետի առաջին տարիները, երբ չէին սկսած ներքին չփոթութիւնները, որոնք տեղի ունեցան ի չբբորդամ ամ կաթողիկոսութեան սրբն, 1695'ին (ԶԱՄ·27)։

1828· Ասով ըսել չենք ուզեր, թէ առաջին տարիներուն մէջ ալ միջադէպներ տեղի չունեցան, վասնզի Նահապետ կրէ սոսկալի էր, և անթերութեամբ կայր ի վերայ ամենայն եկեղեցականաց (ԶԱՌ·Բ·136), թէպէտ իւր անձնաւորութիւնը ոչ միշտ նպատակին հասնելու կը ծառայէր։ կաթողիկոսութեան առջի ամիսներուն մէջ, վշտանալու առիթ ունեցաւ Աղթամարայ կաթողիկոս Թովմասի վրայ, որ եղիազարին հպատակութիւն էր յայտնած, և իշխանութեան տեւական հնազանդութիւն խոստացած (§ 1817), բայց ասով իւր մեծամտութիւնը չէր մերկացած։ Որոշ գրուած չէ, բայց այս միայն յայտնի է, որ Նահապետ Թովմայի վրայ բարկանալով, զայն պաշտօնէն կը զրկէ, և Աւետիս եպիսկոպոս մը կաթողիկոս ձեռնադրելով Աղթամարի աթոռին տիրանալու կը զրկէ։ Սակայն Թովմաս չընկճուիր։ Աւետիս Պարսկաստանէ կու գար, մինչ Աղթամար՝ Օսմանեան երկիր էր, և Թովմասի չատ դիւրին եղաւ Աւետիսը վտարել տալ կուսակալին ձեռքով, և իւր աթոռը ձեռքէ չհանել։ Որպէսզի իւր ծերութիւնն ալ պատճառ չըլլայ աթոռին յանկարծ դատարկանալուն և Աւետիսի յաջողելուն, Սահակ Ապծկեցի եպիսկոպոսը աթոռակից կաթողիկոս կ'օծէ, որ յաջորդութիւնը ապահովէ Աղթամարի եպիսկոպոսներուն վրայ՝ էջմիածինէ անկախաբար։ Որչափ Թովմաս Ցերիճցիին առաջին գործը օգտակար էր եկեղեցւոյ խաղաղութեան, այնչափ վնասակար կը դառնայ վերջին ընդդիմութիւնը. սակայն Թովմասի իրաւամբ կրնար ծանր գալ Նահապետի ըրածը, տեսնելով որ իր ջնջըտնիները ջրաջր էոծածացաս (00 ԲԻԶ·1198)։ Մենք ալ պէտք է ըսենք, թէ անաչառ խստութիւնը վարչական չրջանակի մէջ՝ ոչ միշտ օգտակար արդիւնքներ յառաջ կը բերէ, և Նահապետ աւելի խոհեմութեամբ վարուած, և ապագային համար աւելի օգտակար ընթացք բռնած կ'ըլլար, եթէ առիթ չտար խզելու այն կապը՝ որ երկու աթոռներուն միջեւ բարեբախտաբար հաստատուած էր։ Աւետիս իրեն տրուած աթոռը գրաւել չկրնալով, հետապնդութիւնէն ձեռնթափ չեղաւ, և պինքն դէռ գործի վրայ կը տեսնենք մինչեւ 1697, երբ Թովմաս աւելի գրգռուելով և Օսմանեան կուսակալը գրգռելով, վանայ մէջ նստող էջմիածնի հպատակ եպիսկոպոսն ալ հեռացնել տուաւ, և վանայ վիճակին վրայ Աղթամարեան եպիսկոպոս հաստատեց, և Նահապետ իւր իշխանութիւնը ընդարձակելու աշխատած ատեն, վիճակ մըն ալ իւր ձեռքէն հանուած տեսաւ։ Նահապետի առաջին քայլը կրնանք դնել 1693'ին։

1829· Երբ եղիազար վախճանեցաւ 1691'ին (§1825), կ-Պոլսոյ աթոռը 1689'էն սկսելով աշխարհական տեղակալներու ձեռքը կը մնար, քահանայ փոխանորդի մը գործակցութեամբ (§ 1812), և երկու տարիէ

աւելի էր որ այդ դրութիւնը կը տեւէր։ Բայց այս ձեւն ալ ոչ յարատեւ կրնար ըլլալ, և ոչ ժողովրդական պահանջ-

ՄԱՏԹԷՈՍ ԵՒ ԵՓՐԵՄ

ները կը գոհացնէր, և ահա ինքը կ'ընծայէր ճարպիկ եկեղեցականի մը իր դիտումները յաղեցնելու։ Այս անգամ ալ առաջ անցնողը եղաւ Մատթէոս Եպիսկոպոս կեսարացի, մականուանեալ Սարի, որ է Շէկ, անչուչտ մազին ու մօրուքին գոյնին պատճառով, որ պատրիարքական աթոռը բարձրացաւ 1692'ին, և իրր երկու տարի պաշտօնին վրայ մնաց (ՁԱՄ. Գ. 721)։ Մատթէոսի օրով չարունակեցին Հայու ու Յունկի, ուղղափառի ու օտարադաւանի բուռն վէճերը, որոնց վրայ ընդհանուր տեղեկութիւններ տուած ենք (§ 1813), այլ իր օրով մանաւանդ եղելութիւններ կամ յիշատակաց արժանի պարագաներ չեն յիշուիր։ Չենք կրնար այդ լռութիւնը համաձակօրէն Մատթէոսի իսոնականութեան վերագրել, զի այդպիսի արժանիք մը իրեն պատչաճեցնելու չեն նպաստեր իր ընթացքն ու գործերը։ Այսու հանդերձ փառասիրական նպատակներու մէջ բաւական յաջողակ եղած պիտի ըլլայ, զի երբոր Կ-Պոլսոյ աթոռը անբաւական գտաւ իր ձգտումներուն, կամ թէ երբոր գայթիպայթի տեսաւ իր դիրքը, կրցաւ Կիլիկիոյ աթոռին համար ազգային հաւանութիւն և պետական հրովարտակ ստանալ, և այսպէս զօրացած Սիս երթալ ու Աստուածատուր Նարին կաթողիկոսը մերժելով տեղը անցնիլ, ինչպէս որ սա ալ բրած էր Գրիգոր Պիծակին (§ 1816)։ Երբոր Կ-Պոլսոյ աթոռը կը պարպուէր Սարիի հետանալով, կամ թէ երբոր Սարիի դիրքը կը խախտուէր, գայն կը գրաւէր Եփրեմ Վասիանցին, որ անգամ մը 20 տարի սոյն պաշտօնը վարած էր (§ 1812), և 8 տարի ետքը կը յաջողէր գայն վերստին ձեռք ձգել 1694'ին։ Վասիանցիին յաղթանակը անտարակոյս հայադաւանութեան յաղթանակն էր, բայց չենք վարանիր յայտարարել, թէ որչափ դովելի նկատմունք Եփրեմի զգացումները ազգային եկեղեցւոյ պաշտպանութեան համար, նոյնչափ պիտի չի կրնանք բանել իր վարմունքին և գործելակերպին համար, զի բուռն ընդդիմութիւնը նպատակին հասնելու չնպաստեր, որչափ կրնայ ընել իսոնական հաստատամտութիւնը։ Պատմական ճշմարտութենէ հեռացած չենք ըլլար բանալով, թէ Եփրեմի և նմանները խստութիւնները աւելի նպաստեցին հռոմէականներուն գօրանալուն և կազմակերպուելուն, մինչ պիտի չկարենային օգտուիլ՝ պատրիարքներու հաստատամիտ, բայց և իսոնական ընդդիմութենէն։

1830. Եփրեմի պատրիարքութենէն ոչ չատ ետքը, 1695'ին, ամենայն անյայտ, կը վախճանէր Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան (ՁԱՄ. Գ. 723), որուն անունը քանիցս տուինք պատմութեան կարգին, անդստին այն ժամանակէն, որ եղիազար իր ինքնահնար կաթողիկոսութիւնը ստեղծեց (§ 1754)։ Երեմիա նշանակելի դէմք մըն է մեր ազգային պրծիչներու մէջ՝ իր ինքնատիպ և բազմակողմանի ձիրքերով։ Հաւատարապէս ներհուն եւրոպական լեզուներու, և տեղական յունարէնի, և տաճիկ ու արաբացի գրականութեան, փոխադարձաբար մէկէն միւսին թարգմանեց կարեւոր գործեր, և չատ եւս ազգայնոց համար՝ հայերէնի, և օտարաց համար հայերէնէ փոխարկեց, հայրենական լեզուին կատարեալ հմտութեամբ։ Իր երկասիրութիւնները բազմաթիւ են և զարմանալի ակտիւութիւն մը կը ներկայեն, որոնց մէջ Աստուածաչունչի տաճկերէնի թարգմանութիւնէն, մինչեւ գաւեչտ ոճով և տամկօրէն բարբառով ուսանաւորներ կը գտնուին։ Առանց ամբողջական ցուցակը և գնահատութիւնը մատենագրութեանց մատնադէտանը կրնայ թողունք։ Մեր նպատակին ծառայողը իր ժամանակակից պատմութիւնը պիտի ըլլար, եթէ գրչագիրը ունեցողներ գայն հրատարակած ըլլային ցարդ, ինչպէս եղած է Կ-Պոլսոյ անդագրութիւնը պատմական յիշատակներով խառն, որուն հրատարակութեան աշխատեցաւ բժշկապետ Վահրամ Թորգոմեան (Զ|լ. ը.)։ Երեմիա պաշտօններ վարած է պետական չրջանակներու մէջ, և եւրոպական դեսպանատուններու քով, և ազգային պատրիարքներու մօտ, և անմիջական չփում ունեցած է ամէն կարեւոր գործերու հետ, իբրեւ խորհրդակից և

գործակից, և իբրեւ յանձնաբարութեանց կատարող։ Ինքն անկեղծ և հաւատարիմ հայադաւան, երբեք բան մը պոհած չէ ազգային եկեղեցւոյ ինքնութենէն և յատկութիւններէն, բայց և եւրոպական պարգացման և առաւելութեանց տեղեակ, հակառակ եղած չէ անոնցմէ օգտուելէ, և միջասահման ընթացք և գործունէութիւն մը ունեցած է, ծայրայեղութիւններէ խորշելով, ոչ հռոմէադաւանութեան յարելով, և ոչ հայադաւանութենէն հեռանալով։ Երեմիա որդի էր Ջէօմիւրճեան Մարտիրոս քահանային, և Նավբերդի Ամբակումի քրոջ դրստերէն։ Ամբակում բարեպաշտ և բարեկեցիկ անձ մը, անպատակ ըլլալուն՝ իւր քրոջ թոռը եղող Երեմիան իրեն որդեգիր էր առած, որով Տաճկէն Սէֆէ պղէյ, Ամբակումի «էֆէնտի» տալով զայն և ժառանգ է կոչուած, և անշուշտ սա ինքն եղած է Երեմիայի ստացած դարգացման և ընդարձակ գործունէութեան պաշտպանն ու հովանաւորը (ԹՈՐ. Բ. 402)։ Երեմիա 1695'ին 60 տարեկան մեռած ըլլալով (ՁԱՄ. Գ. 723), 1635'ին ծնած և 1647'ին 12 տարեկան եղած կ'ըլլայ, երբ հայրը կը գրէ, թէ «ընդրուիլ օրբեռնս իմ, ձեր յաժառնութեամբ, ընբեռնի զբպէր, ընօրհեալ եմ ինեան մանուսի Ամբակումի օրբեռնեան (ԹՈՐ. Բ. 403)։ Բազմադիւն և բազմաչխատ Երեմիայի 60 տարեկան վախճանիլը կը նկատենք, ոչ միայն տարիքին կողմէն վաղահաս, այլ և աղգային չահերուն կողմէն տարաժամ, վի անոր մահուանէ ետքը, աւելի ոստոկացան բուռն ու խիստ ձեռնարկներ, դորս կրնար խափանել Երեմիա իւր խոհական խորհուրդներով, եթէ տակաւին ապրէր։ Գուցէ և իւր եղբօր Կոմիտաս քահանային վրայ ալ կ'աղդէր, զգուշացնելով զայն բուռն ընդդիմութիւններէ, որ անուղղակի կերպով պատճառ եղան աղետաբեր դէպքերու։

ԿԱԹՈԼԻԿԱԿԱՆ ՃԻԳԵՐ

1831. Ամենուրեք կաթոլիկութեան իրնդիրն էր որ յուզմանց և չփոթութեանց պատճառ կ'ըլլար Հայութեան մէջ, և որուն սկզբնապատճառ պիտի նկատուին եռանդնոտ և դործունեայ, բայց և չախուռն ու կրօնամոլ Լատին արեղաներ, որոնք նախ քան մի-

ջոցներով հարուստ, քաղաքական պաշտպանութեամբ զօրաւոր, և ձեռներէց յանդգնութեամբ նշանաւոր, սանձարձակ մրսած էին արկածելու և չարչարելու ժողովուրդի մը մէջ, որ իւր բնական բուռն տունչերուն հակառակ, բնութեան և տիտութեան ճիրաններուն ներքեւ կը ճնչուէր։ Այս խեղճերուն այլեւս չդացնելով փայլուն ոսկւոյն հրապոյրը, դրաւիչ զարգացման ուսումները, և ազդեցիկ պաշտպանութեան ակնկալութիւնները, դիւրաւ կրնային իշխել տակաւ հոգիներու վրայ, որպէսզի ցուցուած առաւելութեանց հանդէպ, յանձն առնուն դոհել իրենց ուղղափառ եկեղեցին, ուրանան իրենց հայրենասէր ինքնուրոյն, և հետեւին օտարատեսան սկզբունքներուն։ Ուստի զարմանալի պէտք չէ երեւնայ, եթէ կը յաջողէին իրենց հետեւող խմբակ մը կազմել։ Առով մէկտեղ մեծ չէր իրենց արդիւնքը։ Նոյն ինքն եւրոպացի ականատեսներ կը վկայէին, թէ չատ էին հնարքներն ու թ-խաբէբը, որ Հոմը գործ դրեց Հայերին կաթոլիկ դաւանելու համար, բայց ապարդիւն. և թէ այս ամէն գործունէութիւնը վերջ կրաղ ի բան բերել (ԼԷՕ. Ա. 246)։ Թէպէտ Հայութեան մեծամասնութիւնը, և գրեթէ հանրութիւնը, ամուր կը մնար իւր նախկին կացութեան մէջ, բայց ամենափոքր հատուած մրն ալ կը բաւէր՝ որ անոր անունով օտար միջամտութիւնը ներս սպրդէր, և ազգին խաղաղութիւնը վրդովէր, ներքին երկպառակութիւններ տարածուէին, և ընդդիմադիր կիրքեր բորբոքուէին։ Այսպիսի կացութեան հանդէպ մեղադրելի պէտք չէ սեպել, եթէ տակաւ զէնքերով հզօր բռնադատութեանց դէմ մաքառողներ, անձնապաշտպանութեան օրինաւոր միջոցով, ամէն հնարաւոր և հանրական զէնքերու գործածութեան յորդորուէին։ Այս պէտք է ըլլայ ուղղադատ կշիռը, աղետալի ժամանակամիջոցիս մանրամասնութիւնները՝ արդարապէս քննադատելու և կշռադատելու համար։ Կաթոլիկ քարոզիչներուն չափազանցութիւնները կը մեղադրէր նոյն իսկ եւրոպական դիտող մը, որ կը գանգատի թէ ասոնք «ինչպէս ալ հոգեբարեացն պաշտպանէին գեղ գնել կ'ուզէին զբերեն, ինչպէսին գերապանեցին աւելի հաղթա-

էին և լուսափ կը համբին, և չին փոփոխէր հազուստները մինչև ոտները էչխել (ԹՈՒՐ. 50)։ Դժուարութիւնը արտաքուստ եղած կ'ըլլար, եթէ միայն օտարազգի քարոզիչներ եղած ըլլային գործողները, բայց ներքուստ ալ օտար դպրոցներու Հայազգի աշակերտներ, և կերպ կերպ միջոցներով սրսացուած եկեղեցականներ, ընտանիքներու մէջ սողոսկելով և խղճահարներ հրապուրելով, պատճառ կ'ըլլային առանին երկպառակութեանց, որոնց առջևն առնել կը պարտաւորուէին անչուչտ ազգին պետներն ու գլխաւորները։ Ամենէն աւելի յուզում պատճառող կէտն էր՝ Հայերը Հայ եկեղեցիներէ հեռացնելու սկզբունքը, խիղճներ վրդովելով բարեպաշտութեանց արգիլնաւորութեան և խորհուրդներու վաւերականութեան վրայ։ Այս ձեռնարկներ աւելի կ-Պոլսոյ մէջ կը գործադրուէին, ուր կրօնաւորներ՝ դնապանները ունէին հաւատին իրենց պաշտպանութեան։

ՆԱՀԱՊԵՏ ՅԵՒ ՊԱՊՈՒՔԻՒՆ

1835. Տարբեր էր քարոզիչներու գործունէութիւնը պատահներու, և նոյն իսկ Մայրաթոռի մէջ։ Մինչ կ-Պոլսոյ մէջ իրենցմէ հրաշագործութեանց Հայոց եկեղեցիներ մտնելը կ'արգելէին, գաւառներու մէջ իրենք մրաշնելու չէին խղճար, և Նահապետ կաթողիկոսէ իբրեւ չնորհ կը խնդրէին և կը ստանային՝ Հայ եկեղեցիներու մէջ քարոզելու արտօնութիւնը։ Նահապետի կը վերագրուին ամենամօտ յարաբերութիւններ Հռոմի և հռոմէականներու հետ, միջնորդութեամբ Ծիսուհեան միաբանութեան արեղաներու, որոնք գլխաւոր գործիչներ դարձած էին ներքին գաւառներու մէջ, ուր չատ նուաղեր էր կանոնաւոր հաստատուած Դոմինիկեանց ազդեցութիւնը, և որոնց մենաստրդներն էին Երնջակի Ունիթորները։ Սակայն պէտք է յոյժ վերապահութեամբ ընդունիլ Զամչեանի այս մասին տուած տեղեկութիւնները, որ ստանդ տեսած կեղծակարծ ակնարկներն ալ իբրեւ անտեսի տրբիւր կ'ընդունի, իսկ ժամանակակից և կենակից անձերու գրուածներէն քաղուելիք տեղեկութիւնները կ'անտեսէ։ Ըստ Զամչեանի, Ծիսուհեան արեղաներ ոչ միայն թոյն պոռթ և ընդունելութեան ոեծ Նահապետէն, այլ և Նահապետ մեծ վիշտ պատճառեցին, իրենց տեղեկութիւններով և ծանուցանելով՝ թէ Արեւմուտքի մէջ լուր տարածողներ եղած ըլլան, թէ Հայ է բոց կոթել էջեն է ոչխոյ և է հպատակութենէ առաքելական Հռոմայ, իբր թէ առաջուց Հայոց հայրապետութիւնը Հռոմի ձեռքին տակ նուաճուած ըլլար։ Կը պատմուին նաև թէ այդ միաղբանքը Հայերէն հեռացնելու համար Նահապետ 1695 սեպտեմբեր 5'ին, ընդդէմ ոչխոյ և յաջորդութեան յղած ըլլայ Իննովկենտիոս ԺԲ պապին (ԶԱՒՐ. Գ. 724), մինչ այս թուականին Նահապետ կաթողիկոսութենէ զրկուած և աքսորէն հեռացած էր։ Այս նամակին պատճէնը և թարգմանութիւնը կը գտնենք ուրիշ մօտ (ԱՋԱ. 130), բայց առնելիքան չափազանցութեանց և փոխաբերութեանց հեղեղին մէջ, հպատակութեան խմատա չենք գտներ, և գործին բուն իմաստը կը տեսնենք այն հատուածին մէջ, ուր պապէն նիւթական նպաստ և քաղաքական օգնութիւն կը սպասէ Նահապետ, ինչպէս հիւանդներ առողջութիւն, գերիներ ազատութիւն, բանտարկեալներ փրկութիւն, և ինչպէս մանկունք մօրերնուն ստինքներէն կաթ կը փնտռեն (ԱՋԱ. 131)։ Միչտ նոյն յանգիրքն ու նոյն նպատակն է, պապութեան ձեռքով Եւրոպայէն քաղաքական. հովանաւորութիւն և նիւթական նպաստ ստանալու ակնկալութիւն, և այդ յայտնելու համար չողոքորթ մարդտանձութիւն։ Տեսանք արդէն, թէ այդ դաղափարը սկսած էր զօրանալ Արեւելքի մէջ, և օրինաւոր և տանելի համաձայնութեան մրն ալ սկզբունքը ընդունուած էր (§ 1790), և ասկէ անդին չէր անցներ Նահապետի ալ դիտումը։ Կաթողիկոս մրն ալ կրնար հրապուրիլ լատին եկեղեցականութեան արտաքնայարդար բարեկարգութիւնէն, կրնար ալ փափաքիլ անոր նմանութիւնը իւր եկեղեցւոյն մէջ քալալերել, բայց ոչ իւր ուղղափառութենէն չեղիլ, և ոչ իւր եկեղեցւոյն ինքնութիւնը գոնել։ Լատին քարոզիչներ նամակի մը գրութիւնը բաւական կը ցուցնէին, և կաթողիկոսը կը յորդորուէր իւր անձնական նախանձեռնութեամբ այսպիսի նամակ մը անոնց յանձնել, որով

մարդոցակ գործիչներ իրենց պետերուն առջեւ արդիւնք և արժանիք կը չահէին, այլ ազգային չրջանակի մէջ անոնց հետքն անգամ չէր երեւար։ Զաքարիա Քանաքեռցին որ Նահապետի հետ ապրած է, և զոր՝ ոչ այնմ է՝ բացատրութիւնամբը կը հաւատայ (ԶԱՒ. Բ. 107), որ Նահապետի թերի կողմերն ալ գրելէ չքաշուիր, երբեք տեղեկութիւն չունի և չուար Նահապետի հոգեմտական նուիրեան միտքերուն կամ պապին նամակ գրելուն վրայ, ինչ որ կը ցուցնէ թէ Նահապետի նամակը, զոր Հռոմ կը պահէ և՛ղեր (ԱՁԱ. 129), Նահապետի անպաշտօն և անձնական և գաղտնի մէկ գործն է, զոր իբր փորձ կրցած է յանձնել Լատին աբեղաներուն, այլ որ բնաւ նչանակութիւն չկըրնար ունենալ Հայոց եկեղեցւոյն և Հայ հայրապետութեան տեսակէտէն։

ՆԱՀԱՊԵՏԻ ՏԺԳՈՀՆԵՐ

1833. Մայրաթոռի մէջ, ստոյգ է, որ Նահապետի դէմ ժժգոհութիւններ կը չատնային, և անոր գործերուն դէմ բողոքներ կը զօրանային, բայց ոչ թէ հոգեմտականութեան հետեւելէն գրգռուած, իբր թէ Նահապետ կ՛ուզէ լոկին գոյութիւնել ղպէն (ԶԱՒ. Գ. 725)։ Բուն չարժառիթը եղած է, զի կոթ սոսկէ էր է վերջ չանցաւորց, ինչպէս կը գրէ Զաքարիա Քանաքեռցին (ԶԱՒ. Բ. 136), կամ զի սոսկալի ընթացքով վերէ գործք կոխոդիկոսութեանն, ինչպէս կը կրկնէ Ջուղայեցին (ԽԱՁ. 151)։ Երբ սկսան խնդրել ինչ գործեր, սա կալաւ հրամայել կոխել, և գանալից առնէր, և գոհանար ընդհանուր իշխանութեամբ, հարէր զմօրան և զանգուն, և արկանէր ի քանդ և չղջուիչ, և այսպէս անարխութեամբ կայր ի վերայ ամենայն եկեղեցւոյ և գանձուց (ԶԱՒ. Բ. 136)։ Պէտք չէ նաեւ մոռնալ վրիպեցնել, որ երբ այդ խոստութիւնները անհատական կամքով կը գործուին, անոնց կը խառնուին նաեւ անիրաւ գործեր, մանաւանդ երբ Նահապետի այդ ընթացքէն վերաբերեալ գլխաւորապէս էջմիածնի միաբանները, նաեւ ամեն ի սերտելոց ի վերայ չարեաց, և գրավ դաբանեցան Նահապետի դէմ, որպէսզի զայն գահընկէց ընեն, և այդ խորհուրդին գլուխ կանգնեցան Նախիջեւանի և Գողթան եպիսկոպոսները, որոնց անուններն՝ չեն յիշուած (ԶԱՒ. Բ. 136)։ Ուրիշ պարագայ մըն ալ պէտք է դիտել այդ հակառակութեան մէջ։ Մայրաթոռը Պարսկաստանի մէջ էր, հետեւաբար իշխանութիւնը այն կողմի եկեղեցականութեան ձեռքը կը մնար, որուն գլուխը գտնուէին էջմիածնի տեղացի և Նոր-Ջուղացի միաբանները, կամ որ նոյն է Ջուղայի երեւելիները առհասարակ հանրութիւնը, զի Նոր-Ջուղան էր բոլոր պարսկահպատակ Հայութեան կեդրոնը։ Հետեւաբար այդ խումբին ախորժելի պիտի չերեւար տաճկահպատակ Հայութենէն եկած Եղիազարի և Նահապետի իրենց վրայ իշխելը, կամ անոնց տեսութեամբ՝ իրենց վրայ բռնանալը, և պիտի ջանային նորէն իրենց դարձնել Մայրաթոռոյ կառավարութիւնն ու հեղինակութիւնը։ Այդ տեսութիւնը կը քաղուի Քանաքեռցիին խօսքերէն ալ, որ ինքն ալ չատ համակիր չերեւիր Նահապետին, և կը գրէ թէ կաթողիկոսները, իմա Եղիազար և Նահապետ, ըզ ինչ չէրեսնց աշխատէին վերսկսել

զեցին և եկեղեցականութիւնը մաս չունէր կաթողիկոսին անհատական և պաղտնի ձեռնարկներուն մէջ։

ՍՏԵՓԱՆՈՍ ՋՈՒՂԱՑԵՑԻ

1834. Հակառակութեան գլուխ կանգնող Նախիջեւանի և Գողթան եպիսկոպոսներ (§ 1833), պէտք եղած ամբաստանագիրներ կը պատրաստեն Նահապետի դէմ, և իրենց համամիտներուն ստորագրութիւններով կը զօրացնեն, և գիրերը Ջուղայեցւոց կը ղրկեն, որպէսզի իրենց հետ միաբանին Նահապետը ուսպաստելու և անոր տեղը նստեցնելու Ստեփանոս Ջուղայեցին, Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքին առաջնորդը և Պարսկաստանի Հայոց արքեպիսկոպոսը, նոյն ինքն որ ուրացեալ Յոհան արեղայի ձեռքով բանտարկութեան և չարչարանքի և տուգանքի ենթարկուած էր (§ 1822)։ Գիրերը Ջուղայ տանելու համար կ'ընտրեն Մատթէոս կարնեցի վարդապետը, Բատրազն մականուանեալ, որպէս զի բերանացի ալ աշխատի Ստեփանոսը համոզել պաշտօնը տանձնելու, և Ջուղայեցիները յորդորել պատշաճ դիւրութիւններն ու միջոցները ընձեռնելու։ Նամականին ու պատուիրակը իրենց նպատակին կը հասնին, Ստեփանոս ալ կը չարժուի, և քալամ քանի մը անգամ մը յիշեցինք (§ 1822)։ Աւետիս է հաւնելը և է ընտանեցնելը ընտանութիւն Հիւսէյինի յականայս կրօնափոխ էր եղած, և իսլամութիւն ընդունած Մահմատ Հոսէն կամ Մէհէմմէտ Հիւսէյին անունով։ Նա ոչ այնչափ միայն այլ և երկուքն ալ ընտանեցան նոր աղբիւրաց նմա, այսինքն է չան Հիւսէյինի կանանոցին նուիրից (ԽԱՉ. 152), և այս կերպով եղեր էին եղբարք ի միջի ազգին Հայոց։ Նահապետ ալ կուսակիցներ չէին պակսեր, և ինքն ալ անչուշտ պաշտպաններ ճարելու կիրպէրն ու միջոցները գիտէր. իւր քալամ քաբեկամէ ալ գործի ձեռնարկեցին, բայց ամէնէն առելի իրեն նպաստաւոր և օգտակար եղաւ Աւետիս Ջուղայեցի գիւղաւագը, զոր

աւելի ունեցած էր, անոր աւագնորդութեան առնէին։ Աւետիս պաշտպան հանդիսացաւ Նահապետին, որուն գահընկեցութիւնը խմբակի մը չարակամութեան հետեւանք էր, և պարզապէս ձախել ջնջելու դէպի գլուխ եկած մի գործ էր։ Շան Հիւսէյնի հետ ունեցած համաձայնակութեամբը հաղորդեց անոր Ստեփանոսի տուած հրովարտակին ապօրինութիւնը, որ հակառակ էր Հայոց օրէնքին, որ կաթողիկոս մը չմեռած կամ չհրաժարած ուրիշի մը նստիլը չնեղրեր, և եղածն ալ ձեռք ձգուած էր առատ կաշառքներով պալատականներու մէջ։ Անչուշտ չան Հիւսէյնի վրայ տպաւորութիւն գործող ուրիշ ամբաստանութիւններ ալ եւեցուց Աւետիս-Մէհէմմէտը, որ թագաւորը սաստիկ զայրանալով հրամայեց Ստեփանոսէ հազար թուման տուգանք գանձել, և զինքն ալ իւր համախոհներուն հետ բանտարկել, և հրամանին գործադրութիւնը յանձնուեցաւ Երեւանի կուսակալ Ֆարզալիի, որ Ստեփանոսը նստեցուցած էր։ Ֆարզալի դժուարութիւն չունեցաւ հրամանը գործադրել, տուգանքը գանձել, և Ստեփանոսը բանտարկել իւր երեք գլխաւոր համախոհներով, որոնք էին Պետրոս վարդապետ, Գրիգոր Մուղնու և Յովհաննէս Մաղկունոյ առաջնորդները, մինչ Նահապետ յաղթական յաղթութեամբ իւր աթոռը կը գառնար, և միաբանութիւնն ալ կը լռէր (ԶԱՒ. Բ. 137), զի կ'երեւի թէ Ստեփանոս ալ զիրենք չգոնացուց, երբոր տեսան որ ոչ խղճմտութեամբ վարե նա ղեկավարութեան։ Միայն թէ չարդարանալ կարծիքը, թէ միաբաններ հրթիռին ըն չխոտոր, որպէս վերեւ ա (ԶԱՒ. Գ. 725), զի կարի յայտնի էն Քանաքեռցիին և Ջուղայեցիին ցուցած պատճառները։ Եղելութիւնը այս ձեւին թաւիլ ուզողներուն դիտումն է, Նահապետը իբրեւ հոմէականութեան մօտ և միաբաններուն սիրելի, իսկ Ստեփանոսը իբրեւ ոչ հոմէադաւան ու միաբաններէ մերժուած ցուցընելով, Հայ եկեղեցին իբր կաթոլիկ ներկայել։ Սակայն պատմական ստոյգ հանգամանքներ իրենց դիտումին չեն ծառայեր։ Ընդհակառակն ժամանակակիցներ Նահապետ կը մեղադրեն իրրեւ խստաբարոյ, և Ստեփանոսը հակաթոռութիւնէն հետքն ալ եբանէլ այր Աթոռոյ կը ճանչնան, և մանաւանդ հետքը չէշտոն օրհնութեամբ եղեցէ կը գրեն (ԽԱՋ. 153)։

1836. Ստեփանոսի հետ բանտարկուած երեք վարդապետներուն դժուար չեղաւ չուտով ազատիլ, վասնզի ՍՏԵՓԱՆՈՍԻ ՄԱՀԸ է բանտէ ընդոյն էին (ԶԱՒ. Բ. 137), և եթէ նա եւ յալեալ պոռթոս և սբյնչեցան (ԽԱՋ. 153)։ Իսկ Ստեփանոսի հետ չեղաւ ազատիլ, մանաւանդ թէ աւելի ծանրացաւ իւր վիճակը, և հանել եւ է ընդ և չընդոյն բանտէ, սրկին է մրին և մահահատ ղընդան (ԽԱՋ. 153), ոտքերը ծունկերէն ծանրագոյն կոճղի զարկին, թիկունքին վրայ կարծրանիւթ քարեր կապեցին, և այնպէս անչարժացեալ թողուցին, մինչեւ որ է ղեղբոնէնէ հոգոյն, չոմմանէ հերցան, և է քաղմնալոյ սրբոյն վշտացեալ ոեռս անդէն (ԶԱՒ. Բ. 138)։ Եղերական է ապաքէն Ստեփանոսի վախճանը, որ ոչ սորին զգացմանց տէր անձ մըն էր, և ոչ ալ հասարակ եկեղեցական մը, այլ ի չընթրեալ ուշկերտէ Դաւիթ Ջուղայեցիի, և արժանաւոր յաջորդ Յակոբայ Կեսարացիին և Սիմէոն ու Դաւիթ Ջուղայեցիներուն, և գլուխ Ամենափրկչի վանքին ընտիր միաբանութեան։ Այլ դժբախտաբար յախուռն գործի մը մէջ ներուեցաւ, առանց եկեղեցական և կանոնական օրինաւորութեանց կաթողիկոս մը գահընկէց ընելու և անոր տեղը անցնելու յաւակնութեամբ, լոկ մանաւանդ խումբի մը գրգռութեամբ։ Պէտք է ըսել որ երկայնամիտ համբերութեամբ տարած պիտի ըլլայ Ստեփանոս գլուխ եկած բազմաչարչար արկածները, որոնք անհամեմատ ծանրագոյն էղան, քան իւր անխորհուրդ ձեռնարկները։ Այդ բանին կը վկայէ պատմիչն ալ, ես ահայպես եղե- լոխճան և մահ եբանէլոյ առն Աթոռոյն պետոն Սթեփանոյ վրդպոպոթ և ղողինոթ, որոյ չէշտոն օրհնութեամբ եղեցէ, և ատով կը կնքէ անոր պատմութիւնը (ԽԱՋ. 153)։ Չենք գիտեր ում վերագրել Ստեփանոսի վրայ գործածուած խուժդուժ խստութեանց պատասխանատուութիւնը, արդեօք թագաւորին բարկութեանն, թէ կաթողիկոսին վրէժխնդրութեան։ Թագաւորին համար շատ նշանակութիւն պիտի չունենար եկե-

ղեցական կանոններու պահանջը, իսկ կաթողիկոսին վրայ չէինք սիրեր ծանրացնել այդպիսի վայրագ վրէժխնդրութիւն մը, որչափ ալ ծանօթ ըլլան Նահապետին ընթացքը, որ «ոճրա-ընկեր» կոչ (ԶԱՒԶ. Բ. 136) և քրածէծ առնէր մահս չէ (ԶԱՒԶ. Բ. 107): Սահիանոսի հակաթուրքեան եղելութիւնը չատաչ բերինք, առանց ժամանակագրական ճշդութեանց, վասնզի որոշակի գրուած չէր՝ նոյնիսկ բանաստարկութեան տեսողութիւնը: Մանուան թուականը պէտք է ընդունիլ 1698 յունուար 4'ին (ԶԱՒԶ. Բ. 138), կամ աւելի ճիշդ 1698 յունուար 5'ին, չորեքշաբթի օր, Աստուածայայտնութեան նրագալոյցին (ԱՐԱ. 439), թէպէտ ուրիշ տեղ 1696 փետրուար 16 գրուած ըլլայ (ԽԱՉ. 153), զոր չփոխուած կը կարծենք իւր գահընկէցութեան թուականին հետ, իբր զի 1695'ին կը տրուի իւր գահակալութիւնը (ԶԱՒՄ. 27), և պաշտօնավարութեան տեսողութիւնը տասն ամիս բռնած ըլլալով (ԶԱՒՄ. Գ. 725), 1695 ապրիլին տեղի ունեցած կ'ըլլայ Սահիանոսի գահակալութիւնը: Ըստ այմ կը հաստատուի թէ Նահապետ 1695 սեպտեմբեր 5'ին չէր կրնար իբրեւ աթոռի վրայ կաթողիկոս պապին նամակ գրել (§ 1832): Իսկ Սահիանոսի գահընկէցութիւնը 1696 փետրուարին տեղի ունենալով երկու տարի տեւած կ'ըլլայ առնոր քառամեայ բանաստարկութիւնը: Մարմինը իւր իսկ կամքով տարին Խորվիրապի վանքը (ԶԱՒ. Բ. 138), և անդ հանգոյն փառաւորեաց (ԱՐԱ. 439): Այդ մասին մեծ նոգ ունեցած է Նահապետ, խղճալի կաթողիկոսին յիշատակը պատուելու համար, և մեծամեծ ծախքերու ասիպուած է, բանտարկեալ դատապարտեալի մը մարմինը գրանանէն առնելով փառաւոր յուղարկաւորութիւն ընելու համար (ԶԱՒՄ. Բ. 39), ինչ որ կրնայ նպատակ Նահապետ վայրագ վրէժխնդրութենէ ազատ տեսնելու կարծիքին:

ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ

1837. Այդ միջոցներուն էր որ Հայաստանի խորհուրդը կը թափառէր Մխիթար Սեբաստացի սարկաւագը, որուն ապագայ գործունէութիւնը կը պահանջէ կանոնական պատմել անոր նախընթացը: Մխիթար Պետրոսեան, և կամ աւազանի նախկին անունով Մանուկ, 1676 փետրուար 7'ին ծնած Սեբաստիա քաղաքը, տեղական քահանաներու և վարդապետներու մօտ սկսած էր առնել առաջին ուսումները, մինչեւ որ Ս. Նշանի վանքին միաբան մտնելով, 1685'ին դպիր և 1691'ին սարկաւագ կը ձեռնադրուի՝ առաջնորդ Անտիոք եպիսկոպոսէն (ՄԽԻ. 57): Մայրաթոռի մէջ ընդարձակագոյն ասպարէզ գտնելու փափաքը, զինքն կը յորդորէ փոքրաւոր մտնել էջմիածնի նուիրակ Մխիթէլ եպիսկոպոսի մօտ, որուն հետ Սեբաստիայէ կը մեկնի 1691 դեկտեմբերին, և ձմեռնային ուղեւորութեամբ ու կարին հանդիպելով էջմիածին կը հասնին 1692 փետրուարին, Նահապետի կաթողիկոսութեան սկիզբը: Կարնոյ մէջ է, որ Մխիթար կը գտնէ Խոյոյ «բէռապանէական յատիներէնէ թարգմանուած գիրք մը, 1687'ին վենետիկ տպուած և բոլորովին հոմէական ուղղութեամբ գիրք մը, զոր Մխիթէլ եպիսկոպոս նախահոգ զգուշութեամբ պատանի սարկաւագին ձեռքէն կ'առնէ: Կարին ալ մուտ գտած էին Լատին քարոզիչներ ու խիզճեր վրդովելու ճիգեր կը թափէին: Սեբաստացի ուխտաւոր մը, Մխիթարի ծանօթ, էջմիածին կը հանդիպի նոյն օրերը, և Մխիթար կը հրապուրուի անոր հետ Հայաստանի արուարձանները տեսնել, և իբր եպիսկոպոսէն զատնի հայրենակիցին հետ էջմիածնէ կը մեկնի, երկու ամիս միայն այնտեղ մնալէ ետքը, և Խորվիրապ ուխտ կատարելով կ'անցնին Սեւան կղզիին վանքը: Սեւանի եկեղեցւոյն մէջ տեղի ունեցած կ'ըսուի Մխիթարի տեսիլքը, որուն վկան հարկաւ ինքն միայն է, և որուն մէջ Աստուածածին Մխիթարի կը խօսի, ինչպէ՞ Մխիթար ինչ որ կ'ուզէ, և Մխիթար կը պատասխանէ. Այն կ'ուզէմ, պէրուհի, ինչ որ դուն կ'ուզես. և Աստուածածին ալ կը խոստանայ. Քու ըսածդ ուզածդ, եղէչ (ՅՈՒ. 6): Մխիթարեանք այս տեսիլքին մէջ կ'ուզեն տեսնել իրենց միաբանութեան հիմնարկութիւնը, և անոր հոմէական ուղղութիւնը: Բայց պարագաներ չատ հետու կը ցուցնեն այդ նպատակը 17 տարեկան սարկաւագին միտքին, որ էջմիածին եկած էր Մայրաթոռին մէջ բարեր

գանելու։ Եւս առաւել չենք կարծեր որ ըսէն, թէ Սեւանի Աստուածածինը, որ այսչափ գարերէ իվեր հայադաւան եկեղեցւոյն մէջ էր, և Սեւանի հայադաւան միաբաննեբուն հովանաւորն էր, նա ալ միտքը փոխած ու հռոմէադաւան դարձած ըլլայ։ Մխիթար վերը յիշուած Սերաստացի ուղեւորին հետ նոբէն Սերաստիա երթալու համար Սեւանէ կարին կու գայ, բայց Բաձէնի վանքին առաջնորդ Մելքիսեդ եպիսկոպոս, զինքն վար կը դնէ տղայոց ուսուցչութեան համար, մինչ կարնոյ Աւետիք եպիսկոպոսն ալ ամէն հնարք կը դործէ կը դնէր զինքն գրօսլօ, կը գրէ Մխիթարեանց պատմիչը (Մխի. 77), այսինքն կարինի մէջ պահելու, ինչ որ Աւետիքի անձնասուրութիւնը դիտնալով, Մխիթարի վրայ հաւատարիմ հայադաւանութիւն տեսնելուն վկայութիւն կրնայ համարուիլ։

1838. Կարնոյ առաջնորդ Աւետիք Եւդոկիացին, զոր առաջին անգամ յիշելու առիթ կ'ունենանք, հրաչակաւոր է պատմութեան մէջ, և հարկ կը սեպնենք այժմէն անոր նախընթացը բացատրել։ Բնիկ Եւդոկիացի, 1657 ապրիլ 7'ին ծնած, մինչեւ 15 տարեկան ըլլալը մեծ հօրը՝ Տարիւրտասնոյ Սարգիս քահանային, և մկրտող Պետրոս քահանային մօտ քիչ չատ ուսման պարապած ըլլալով մէկտեղ, հօրը մօտ ջուլհակ եղած և ղըմաշ գործելն սորված, և նշանաւած ալ էր։ Յակոբ Պէլէնկեցի եպիսկոպոսին նուիրակութեան առթիւ, կուսակրօն եկեղեցականութեան փափաքը կը զարթնու, և նոյն վարդապետին աչակերտութեան կը մտնէ, և 3 տարի հոգը Փայաս գտնուած առենին, տարկաւագ կը ձեռնադրուի 1675'ին։ Մինչ Պէլէնկեցիին նուիրականն չըվազայութիանց հետեւելով, 1689'ին Սերաստիա կը գտնուի Յակոբ կաթողիկոսի անկէ անցած առնն (§ 1790)։ Պէլէնկեցին կաթողիկոսին հետ Կ-Պոլիս կ'երթայ, և Աւետիք իւր վարպետին բաժնուելով, Երուսաղիմացի Սահակ եպիսկոպոսին հետ Էջմիածին կու գայ, և անոր հետ հոն դառնալով՝ Երզնկայի Կապուսու կամ Կայիփոսի Ս. Յակոբ վանքին մէջ արեղայ և վարպետ կը ձեռնադրուի, և նոյն վանքին առաջնորդ կը նշանակուի։ Ասկէ կը յագի Աւետիքի՝ Երզնկացի կոչուիլը (74 ԱՐՐ. 74)։ Ոչ միայն այս վանքը, այլեւ Տիրանաչէն Ս. Նշանի, կամ Տիրաչէն Ս. Ներսէսի վանքն ալ կը նորոգէ, և Երզնկայի Մարիամ Աստուածածին չնչին եկեղեցին ալ նորոգելու կը ձեռնարկէ (74 ԱՐՐ. 75)։ Յանկարծ եէնիչէրիներու բռնաստութիւնը կը բորբոքի, որոնք չոյժ եօթնալ էին, էրէսունէյ ղըշլայն կու պղծէին, և աստղահարիան առնէին, և Աւետիքն ալ էրիսթեղց խանչալով խոցոտեցին, որ պարտաւորուեցաւ 40 օր ի հանիծ մնալ։ Առողջանալէն ետքը կ-Պոլիս կու գայ, և պատշաճ հրամանները հանել տալով, և զինուորական դունդ ալ բերել տալով բռնաստութիւնը զսպել կու տայ։ Ասոր վրայ հակառակորդները կը գրգռուին և զինքը կ'ամբաստանեն իբրեւ անհրաժան եկեղեցի չինող, և կարնոյ կուսակալին հրամանով կը բանտարկուի և կոճղի կը զարնուի, և երեք օր անասուղ կը թողուի կարնոյ մէջ։ Անկէ ետքը առեան հանուելով իւր արդարացման պէտք եղած պաշտօնագիրները կը ներկայէ, և Ֆէյղուլլան դատաւորին վճռով ազատ կ'արձակուի, և Երզնկա կը դառնայ եկեղեցւոյն չինութիւնը չարունակելու։ Այս միջոցին Երզնկայի մէջ Սահակ կիւմիւշխանացի վարդապետէն ծայրագոյն գաւազան կ'ընդունի, և անկէ Էջմիածին անցնելով եղիազարէ եպիսկոպոս կը ձեռնադրուի 1691'ին 34 տարեկան եղած առեն։ Երբոր Երզնկա կը դառնայ ուղղակի իւր կեանքին կը սպառնան, որով հազիւ առեն մը կը պահուըտի չարունակ վախի մէջ։ Յանկարծ դատաւորը՝ որ իւր գլխաւոր հակառակորդն էր, ընտանեօք կը հիւանդանայ, և զինքն աստուածային պատուհասի ենթարկուած տեսնելով, բացարձակ հրաման կու տայ եկեղեցին չինել և դրամական և նիւթական նպաստ ալ կը ղրկէ։ Սակայն եէնիչէրիներու բռնաստութիւնը կը նորոգուի, և Աւետիք Էջմիածին կ'ապաւինի, ուր 4 ամիս միայն մնալով Նահապետ կաթողիկոսի հրամանով կարնոյ առաջնորդութեան կը ղրկուի 1691'ին վերջերը (74 ԱՐՐ. 115)։ Այդ միջոցին է անա որ Մխիթար Բաւէնի վանքը կը հաստատուէր, և զոր Աւետիք կ'ուզէ

ԱՒԵՏԻՔ ԵՒԴՈԿԻԱՑԻ

եղեր իրեն որսալ։ Եւ որովհետեւ Ալեքսիք կ՚ուզէին Հայոց հալածանքին նախաձեռնարկը, և սկիզբէն իվեր նախանձայոյզ հայադաւան մը ցուցուած է (Միխ. 61), պէտք է ընդունինն իրենները՝ թէ Մխիթարի վրայ կախումիկութեան միտում չէր ուղղուեր տակաւին։

ՄԽԻԹԱՐԻ ՊՏՈՒՏՆԵՐԸ

1839. Մխիթար սարկաւագը տարի մը միայն Բասէնի վանքին մէջ մնալէ յետոյ, 1693՝ին Սեբաստիա Ս. Նշանի վանքը կը դառնայ, և կը մնայ իբրև միաբան, մինչեւ որ իր պաշտպան Անանիա եպիսկոպոսին տեղ կ՚անցնի Սահակ կեսարացի վարդապետը։ Մխիթար անկէ ժժգոհելով, նորէն ուրիշ տեղ բախտ փնտռելու կ՚ելլայ, և Յունիան Եւդոկիացի վարդապետին հետ 1695 մարտին կը մեկնի երուսաղէմ Հայոց վանքը երթալու։ Բայց Բևրիոյ մէջ երկուքն ալ կը սկսին չփուիլ Լատին աբեղաներու հետ, որոնցմէ Անտուն Պովոլիէ Յիսուսեան միաբանութենէն, գիրնք կը գրաւէ, և Հռոմ յղելու և պիանական դարձնելու խոստումներով երկուքն ալ Հռոմէականութեան կը միացնէ (Միխ. 95)։ Գոնէ այս կը ցուցուի Մխիթարի Հռոմէականութեան յարելուն չարժառիթն ու սկզբնաւորութիւնը, թէպէտ տակաւին զայն հայադաւան եկեղեցւոյ ծառայութեան մէջ կը գտնենք, իրրեւ լատինասէր Հայ մը, և ոչ երբեք իբ եկեղեցիէն բաժնուած կաթոլիկ մը։ Հռոմին անունէն և Եւրոպայի համբաւէն գրաւուած Մխիթար՝ երուսաղէմ կը մոռնայ, և Բևրիայէն կ՚իջնէ Խաքէնտէրուն որ է հին Ալեքսանդրիա կամ Փոքր Ալեքսանդրիան, անկէ ալ Կիպրոս կ՚անցնի, և Կիպրոսէ նաւ մտնելէն ետքն ալ՝ նորէն միտքը կը փոխէ, և դարձ կ՚ելլէ և Կիպրոս կը գառնայ, և առաջին պատեհով Սելեւկիոյ նաւահանգիստը կ՚անցնի, և Անտիոքի ու Բևրիոյ ու Այնթապի ճամբով Սեբաստիա կը գառնայ 1695 նոյեմբերին, և Ս. Նշանի վանքին միաբանութիւնը կրկին կը չարունակէ։ Այնտեղ 1696՝ին Զաքարիէն ետքը, որ ապրիլ 12՝ին հանդիպած էր, քահանայական ձեռնադրութիւն կ՚ընդունի Կեսարացի Սահակ եպիսկոպոսէն։ Աստիճանը իրեն համարձակութիւն կու տայ լատինասէր կուսակցութեան կողմը բռնելու, բայց հակառակութիւններ կը դրգռէ իր դէմ, կը պարտաւորուի խոյս տալ, և Եւդոկիա ու Ակն դեգերելէ ետքը, նորէն Սեբաստիա կը գառնայ, լսելով որ մեռած է Մառուկ վարդապետը, զոր իրր անձնական հակառակորդ նկատած էր։ Բայց Սեբաստիան բաւական չէր իր ձգտումները գոհացում տալ, և աչքը կը սեւեռէ մայրաքաղաքին և պատրիարքութեան կեդրոնին, հոն ընդարձակելու համար իր ասպարէզը, և 1698՝ին ապրիլին Կ-Պոլիս կը մտնէ (Միխ. 117), տակաւին 22 տարեկան նորընծայ վարդապետ մը։

1840. Այս միջոցին անցողակի յիշատակ մը կը գտնենք Մարգիս գպիրէ նշանակուած (ՍՐԳ.), թէ Վասիլէոսի Եփոթ Կոնդակոսն Աքոյ, որ Կոնէ Ակնարկ ըլլ էն, Ըրէսցոս Ութնեսեան = 1696 յունիս 5 ընկաւ ը, թէպէտ չարաթ օրը յունիս 6՝ին կ՚իյնայ։ Այդ տարին Կիլիկիոյ կաթողիկոս Գիւնէք Մատթէոս Սարին (§ 1829), որուն Վասիլէոսի մականունը տրուած չէ ուրիշ տեղ։ Թէպէտ նա իվերջոյ ուրացաւ, բայց 1707՝ին, և ոչ 1696՝ին։ Ըստ այսմ մեզի համար անուծանելի կը մնայ խնդիրը, թէ արդեօք խուսականներու չփոխութիւն մըն է՞, թէ ոչ տարբեր կաթողիկոս մըն է որ նեղը բնկած մէկ պահուն այդ վանքը ունեցաւ։

1841. Կոստանդնուպոլսոյ մէջ պատրիարքական աթոռի վրայ կը գտնուէր Եփրեմ Վասիլեան 1694՝էն իվեր (§ 1829), հայադաւանութեան համարձակ պաշտպան մը, և լատինամիտներուն յայտնի հակառակորդ, սակայն այդ միջոցին պատմութիւնը անոր չվերագրեր խստութեան գործեր։ Հետեւաբար չարդարանար, զան սոսկել Քոլոն (ՉԱՄ. Գ. 727), կամ էրէն գոհան Քնաորոնեան պաշտօնանկ եղած ըլլալու բացատրութիւնը, քանի որ չատ յայտնի են պատրիարքութիւնը իրատու ձեռք խլելու տիրող մրցակցութիւնը, և պատրիարքներու չարունակ փոխուելիքները։ Անհիմն տասցուած պիտի նկատ-

ԵՓՐԵՄ ՎԱՍԻԱՆՑԻ

ուի նաև Ստեփանոս Ջուղայեցիէն իւր բանտարկութեան առեն նամակ գրուիլը Եփրեմին՝ Նահապետի հռոմէականութիւնը մեղադրելով, և այս պատճառով Եփրեմի Նահապետի դէմ գրգռուիլը, բայց գահընկէց ըլլալուն պատճառով բան մը ընել չկրնալը։ Վասնզի ոչ միայն չատ դժուար էր Ստեփանոսի իւր խիստ բանտարկութեան միջոցին Կ-Պոլիս նամակ հասցնել, այլ և Նահապետ, աթոռ վերադարձաւ 1696'ին, Եփրեմի գահընկեցութենէն երկու տարի առաջ (§ 1836)։ Նահապետի իշխանութիւնն ալ Օսմանեան կառավարութենէ ճանչցուելուս հրովարտակով, որ չէր կրնար կատարուիլ առանց Եփրեմի միջնորդութեան։ Ստոյգն այն է որ Եփրեմն ալ պիտի չկարենար երկար աստն դէմ դնել նոր մրցակիցներու, և պաշտօնանկ եղաւ. Մխիթարի Կ-Պոլիս հասնելէն ամիս մը ետքը, 1698 մայիսի առաջին չաբաթ օրը, որ 6'ին ըսուած է, բայց 7'ին պիտի ուղղուի, և ոչ 8'ին (ՁԱՒ. Գ. 327)։ Յաջորդը Մելքիսեդեկ Եալիկոպոս, Սոպհի Շայէր մականուանեալ, որ կը դուգնէ թէ չայէր կամ աչուղ մըն էր, և Սուպհի իւր կեղծանունն էր, ինչպէս սովորութիւն է ամէն աչուղներու կեղծ անուն մը ունենալ։ Պատրիարքութեան բարձրացող եպիսկոպոսի մը՝ երգաբանութեան հետեւիլը զարմանալի պէտք չէ երեւայ, վասնզի երգի ճիւղը ժամանակին բարձրագոյն գրականութիւնն էր, և կանոնխէն ալ այդ ճիւղին մէջ յառաջացած տեսանք Յովհաննէս Թլկուրանցի (§ 1525) և Գրիգոր Աղթամարցի (§ 1556) կաթողիկոսները։ Մելքիսեդեկի օրով ալ կը չարունակուէին Կ-Պոլսոյ մէջ Հայոց ու Յունկի անվերջ վէճերը, և եկեղեցականներէն ալ այս ու այն կողմի պաշտպաններ կը յայտնուէին համարձակ, բայց տակաւին խարականութիւններ դօրացած չէին, և նոյն իսկ հռոմէական դպրանոցի մէջ ուսում առնող արեւմտեան, իբրու Հայոց եկեղեցւոյ վարդապետներ պաշտօնավարութեան կը մանէին, ինչպէս Խաչատուր Կարնեցի կամ Խաչատուր Առաքելեան՝ Փրոփականտայի դպրանոցին աչակերտը, որ Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցին քարոզչութիւն կ'ընէր, և Մայր եկեղեցւոյ բնիկ իսկ կը յարձրանար։

1842. Մխիթար Սեբաստացին ալ, որ Կ-Պոլիս հասնելուն, յայտնապէս Խաչատուրի կը յարէր և Հռոմ երթալու միտքը կը մշակէր, առանց դժուարութեան Դալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ քարոզելու կ'արտօնուէր Մելքիսեդեկ պատրիարքէն։ Դալաթիոյ դիրքէն կ'օգտուէր Մխիթար դիւրին չափումներ ունենալու լատիններուն հետ, և իրեն զարգացման դուռ մը բանալ Արեւմտեայց մերձաւորութեամբ, ինչպէս պինքը կը քաջալերէին. Խաչատուր Կարնեցին և Յովհաննէս Վերզոյ Ցիսուսեանց միաբանութենէն՝ Բեւրիայէ ծանօթ լատին աբեղայ մը։ Մխիթարի ներքին ոգին ճչդելու համար աւելորդ չէ դիտել, թէ նա խարականութիւնը հեռացնելու համար, խոշոր-ընեան և եղբայրընեան տրոշնէք կը խօսէր՝ Հայ ու Յունկ անուններով մաքառող կուսակցութեանց, որով նոյն իսկ Հայութիւն պաշտպանողներ՝ հնէ հեպ տրտ չոնէ կ'ըսէին Մխիթարին (ՑՈՒ. 17)։ Աւիկայ Մխիթարին միջամտման անտարբեր մը լինելը կը հաւատանք, և իրաւունք ունին որոնք իրեն կը պատչաճեցնեն Լամբրոնացիին առածը, թէ է ինչ Հայն որպես վաչխոցին, և Լաչխոցին որպես չէնելնոցին (Մխի. 119), որ ոչ թէ լատինացի կամ հռոմէադաւան եղած բլլալը կը նչանակէ, այլ հարազատ հայադաւանութեամբ, հռոմէադաւանին և յունադաւանին ալ հանդէպ ազատական և թոյլատու համոզում, և համոզումին համաձայն ընթացք և վերաբերութիւն ունենալը։ Մխիթարի Կ-Պոլիս մնալը 5 ամիս միայն կը տեւէ (Մխի. 121), և 1698 սեպտեմբերին, նորէն բախտ փնտռելու փափաքով կը մեկնի Կ-Պոլսէ, ուր մտադրած աստպարէզը չէր գտած, և կը խորհի դառնալ Հայաստանի ներքին գաւառները, ուր կանոնխէն տեսած էր չարժումի միտումներ և նոր ձեռնարկներու նչաններ։

ՄԽԻԹԱՐ Ի Կ-ՊՈԼԻՍ

1843. Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսին հետ, 1679'ին վերջը Կ-Պոլիս եկող պատուիրակութեան անդամակիցներէն մէկուն, փոխանակ Արցախ դառնալու, 1680'ին Եւրոպա անցնելով Գալղիոյ մէջ պինուորական արուես-

ԻՍՐԱՅԷԼ ՕՐԻ

մին հետեւած բլլալը յիշած ենք, և այս մէկն էր Պոլոյ իշխանին որդին Իսրայէլ Օրի (§ 1797)։ Իսրայէլ անսովոր անուն չէ Հայաստան մէջ, բայց Օրի մականունը հայերէն չունինք, և հարկաւ Եւրոպայի մէջ գայն իւրացուցած է Իսրայէլ, ով գիտէ ինչ նշանակութեամբ։ Մեր կարծիքով դժուարին է ենթադրել թէ Ori, առաւելապէս բլլայ Roi գաղղիերէն բառին, որ ֆոֆոտ կը նշանակէ, և թէ ամբողջ Israel Ori անունը, il sera roi, նո ֆոֆոտ կը լինէ իմաստով գործածուած բլլայ (Լէօ Ք. 265)։ Օրի 12 տարի ծառայեց Գաղղիական բանակին, և մինչեւ ազգի ստիճան բարձրացաւ, և Գաղղիացի գունդերու հետ պատերազմներու ալ մասնակցեցաւ, և եղաւ կատարեալ Եւրոպացի մի անհատ, իւր արեւելցի ծագումը և նկարագիրը անյայտացնելու չափ։ Ծիշտ 12 տարիներուն վերջը՝ պատերազմի գերի ինկաւ Անգղիացւոց ձեռքը, և առիթ ունեցաւ Անգղիան ալ ուսումնասիրել և Անգղիացւոց բնաւորութիւն ստացաւ, Գաղղիա չվերադարձաւ, այլ այս անգամ Գերմանիա անցաւ՝ Պալատինիոյ կայսրնտիր իշխանութեան, ուր 1688'էն իվեր յայտնութեան պատերազմ կը մղէր Փիլիպպոս-Գուլիէլմոս իշխանը, և վերջապէս ազգատոմին իրաւունքը կ'ամրապնդէր Յովհան-Գուլիէլմոս իւր որդին 1697'ին (Johan-Wilhelm)։ Անոր ծառայութեան մէջ կը գտնուէր Օրի, և զանազան քաղաքներու մէջ կառավարչութեան պաշտօն վարած էր (Լէօ Ա. 423), երբ օգտուելով Յովհան-Գուլիէլմոսի հետ ստացած մտերմութենէն, Օրի Գուլիէլմոսի ռազմիկ ձգտումները գրգռեց և Արեւելքի մէջ ընդարձակ գործի ասպարէզ, ու նոր թագաւորութեան ակնկալութիւն փայփայուց անոր աչքին։ Յովհան-Գուլիէլմոս գրաւուեցաւ և գործին ձեռնարկելու ալ որոշում տուաւ, վստահանալով Էվոլոյ Ա կայսեր օգնութեան, որ իւր քննկալն էր։ Օրի արդէն Գաղղիա եղած ատենէն հռոմէականութիւնը ընդունած էր, և լաւ գիտնալով թէ ինչպէս կրօնափոխութիւնը հիմնական պայման մըն էր եւրոպական արքունիքներուն առջեւ յաջողելու, և կրօնականներու ու պապութեան հովանաւորութիւնն ստանալու, համարձակեցաւ խոստանալ և վստահացնել՝ Հայ եկեղեցին հռոմէականութեան բերելու։ Պարագաներն ալ յաջող կ'երեւնային նոր ձեռնարկին, վասնզի 16 տարիներէ իվեր պատերազմներ կը չարունակէին Եւրոպիոյ և Թուրքիոյ միջեւ, որոնք նոյն 1695 փետրուար 6'ին Մուսթաֆա Բ'ի՝ իբր մօրեղբօր Ահմէտ Բ'ի յաջորդելէն ետքը, պահ մը Օսմանեանց յաջող կողմեր ունեցան, բայց վերջապէս 1697'ին Ծէնթայի ճակատամարտը Օսմանեաց աղետաբեր եղաւ, և Եւգինէոս Սավոյացւոյն (Eugenio di Savoia) տարած մեծ յաղթանակը, ստիպեց Օսմանցիները հաշտութեան հաւանիլ։ Այդ մասին բանակցութիւններ սկսած էին՝ Աւստրիոյ, Թուրքիոյ, Ռուսիոյ, Վենետիկի և Լեհաստանի լիազօրներու մէջ իրարու պատերազմիկներ, որոնց հետ էին Անգղիոյ և Հոլանտիոյ լիազօրներն ալ իրարու միջնորդներ (ՓՈՒ. 312)։ Այդ պարագաներուն մէջ էր որ Յովհան-Գուլիէլմոս մտածեց Օրին Լէոփոլտ կայսեր մօտ յղել պատուապատշաճ գիրերով և հրահանգներով։ Օրի 1698 օգոստոս 2'ին Տիւսէլտորֆ (Dusseldorf) քաղաքէն մեկնեցաւ դէպի Վիէննա՝ կայսեր ներկայանալու, որպէսզի հրահանգներ տուին Քարլօվից (Karlowitz) հաւաքուած լիազօրներուն։ Քարլօվիցի դաշնագիրը 1699 յունուար 26'ին կնքուեցաւ՝ երկարատեւ բանակցութիւններէ ետքը, 25 ամեայ խաղաղութեան պայմանաժամով, բայց անոր մէջ Հայոց մասին ակնարկ չկար, վասնզի ծրագրեալ ձեռնարկը Պարսկական Հայաստանին համար էր, և ոչ Օսմանեան Հայաստանին համար։ Իսկ Օրի հարկաւ քաջալերական խօսքեր լսեց, որ Յովհան-Գուլիէլմոսէ Հայ ու Վրացի իշխաններուն ուղղուած գիրերով ուղեւորեցաւ Հայաստան։ Ամերդդ չհեպուի կրկնել, թէ Օրի Եւրոպացի ասպետ անուանով կը ճանաչուէր, իբր իսկութիւնը ծածկելով։

ՆԱՀԱՊԵՏ ԵՒ ՕՐԻ

1844. Օրի իւր ուղեգիծը նախ Լեհաստանի և Ռուսաստանի վրայով սկսաւ, բայց ձմեռնային արգելքներու պատճառաւ փոխեց դէպի Մոլտաւիա և Սեւ ծով, և հոն ալ դժուարութիւնով լսելնելուն, Ադրիանուպոլսի և Կոստանդ-

նուպոլիսի դիծր ընտրեց։ Առաջին քաղաքին մէջ Գաղղիոյ դեսպանին հետ տեսակցեցաւ, իսկ մայրաքաղաքի մէջ մեծ նպարքոսը տեսաւ, արքունիքն ալ պատեցաւ, միչտ յանձնառիթս։ Մելքիսեդեկ պատրիարքին ալ ներկայացաւ (Լ։Ո։Ա։425), որուն պէտք չտեսաւ ծրագիրը յայտնել, յայլոցս թեան նչոյլ չտեսնելով մայրաքաղաքի յուզուած Հայութեան վրայ, և միայն Աթոսական գաւառներով ճանապարհելու պիւրոխիններ ստացաւ ու մեկնեցաւ։ Ճամբային ուղեւորութեան մէջ ոչ դինքն յայտնեց, և ոչ իր նպատակին մասին խօսեցաւ, և չիտակ Ներեան հասաւ 1699 ապրիլ 4'ին, աւագ երեքշաբթի օր, իսկ երէկ նոր տոմարով հասնունք, կը հանդիսի մարտ 25'ին, Մուսան ի վիրապ յիչատակին։ Զարթաչ պինուորականը հոգ ըրած պիտի չըլլայ ձմեռնային երանակին ճանապարհել ներքին գաւառները։ Անկնէն կարեւոր կէտը կար այստեղ իր առաջ։ Եւրոպայի օգնութեան դիմելու և Եւրոպայի հանոյական ձեւեր ալ գործածելու միտքը ընդրկած էին հաւատարապէս Յակոբ և Եղիազար և Նահապետ, և քաղաքավարի և քիչ մըն ալ չոլոքորդ գիրեր ստորագրած էին, իսկ այս անգամ Օրի հռոմէադաւանութեան բացարձակ պայմանը կը բնէր, և պէտք էր այդ կէտին վրայ կաթողիկոսին հաւանութիւնը առնալ։ Ի՞նչ Հայ քաղաքական գործիչը հեռացաւ էջմիածնէն քաղցրվին հիասթափած (Լ։Ո։Ա։427), չկրցաւ կաթողիկոսը համոզել և դաւանափոխութեան հաճեցնել։ Կաթողիկոսը բացէիբաց դէմ կը խօսէր Հռոմէական դաւանութեան։ Հարկաւ Նահապետ չէր կրնար չիչել որ Լատին քարոզիչներ Նոր-Զուղայի Հայ տպարանը փակել տուեր էին, իսկամութեան դէմ հրատարակութիւններ ընելու քաղաքականութեամբ, և իրենց աչակերտող Շահրիմանեանց տունը՝ Հայ ազգային չաներուն դէմ չարժեր էին։ Այդ պարագան, որ պատմական է, պէտք է դնենք Զամչեանի պատմութեան հանդէպ, որ կը գրէ, թէ Ինոսենտիոս ժԲ պապ, Նահապետի 1695 սեպտեմբեր 5'ի նամակը առնելով՝ պատասխաներ ուղղուցած էր կաթողիկոսի գանգատութեանը պատճառով, և թէ աթոռ դառնալէն ետքը, պատասխանը գրկած էր Յակոբ կարնեցիի ձեռքով, և աղնիւ բնաւորութեամբ և ազնիւ միտքով էր միտեալ։ Անոնց հետ կալանոսի գիրքէն օրինակ մըն ալ, որ Հայերու վերագրուած մոլորութիւնները կը ներքէ, և թէ Նահապետ ալ ամենայն հպատակութեամբ կատարեալ կաթոլիկութեան դիր մը յղած էր 1699'ին, որուն բնագիրը Հռոմի մէջ չգտնուելով, Մխիթարեանց ձեռք իսկած կ'ըլլայ (ՁԱՄ։Գ։726), ուսկից կազմուած է լատիներէն թարգմանութիւնը (ԱՁԱ։132)։ Օրիի և Նահապետի միջեւ կատարուած հզգլութիւնը, զօրաւոր փաստ է հաստատելու մեր կարծիքը, թէ Հայոց կաթողիկոսներ քաղաքական օգնութեան և նիւթական նպաստի յոյսով, դիւժուարութիւն չէին զգար լոկ խօսքով հաճոյակատար ըլլալ, առանց իրենց դիրքէն չարժուելու։ և առ առաւելն այսպէս հզած կրնայ ըսուիլ Նահապետի ընթացքը իր առաջին նամակովը։ Իսկ այս վերջին նամակին գոնէ Հռոմի դիւաններուն վկայութիւնն ալ կը պակսի. իսկ ընծաներն ու աթոռը զրոյցէ մը ուրիչ չեն։ Ինչ որ Զամչեանի պատմութեամբ՝ իբրեւ Ինոսենտիոսէ Նահապետի ընծայուած աթոռ կը ցուցուի, հայրապետական աթոռի կաթողիկէ մըն է, կամ սիւներու վրայ ամպհովանի մըն է, կատարեալապէս Արեւելեան գործուած էջմիածնի կաթողիկէներուն նմանութեամբ, եւրոպական ոճէն և արհեստէն օտար, և որ աւելին է վրան հայերէն տառերով։ Պեռռո եպիսկոպոս անունը կը կարդացուի (ՄՈՎ։281), որ անշուշտ նուիրողին, կամ նուիրող հաստատութեան առաջնորդին արձանագրութիւնն է։ Արդ միեւնոյն 1699 տարին տեղի ունեցած է Նահապետի պաշտօնական և բացարձակ մերժումը հռոմէադաւանութեան հետեւելու, նոյնիսկ Հայոց իշխանութեան վերականգնումին և եւրոպական զինեալ պաշտպանութեան խոստումին համդէպ (Լ։Ո։Ա։428)։ Աւելի խօսիլ պէտք չենք տեսներ այդ մասին։ Կը բաւականանք նկատել տալ, որ Զաքարիա Գանաքեցին, Խաչատուր Զուղայեցի, և Միքէոն Երեւանեցի, բնաւ տեղեկութիւն չունեին Նահապետի վերագրուած ենթագրականներէն։

1845. Հաւանական է որ Օրի՝ Նահապետ կաթողիկոսին ալ ինքզինքը յայտնած չըլլայ,

վանզի էջմիածինէ իւր տունն ալ երթալով, ինքզինքը ծածկեց, նոյն իսկ իւր քրոջ ու եղբայրներուն գոյովին հանդէպ ամուր մնալով, որոնք եւրոպացի օտարականէն իրենց կորսուած եղբօր վրայ լուր կը փնտռէին (Լ՝Օ· Ա· 429)։ Բայց ինքզինքը յայտնեց Անգէղակոթի իշխան Մելիք Սաֆրազին, որ էջմիածինի 1678՝ի խորհրդակցութեան մասնակցողներէն էր (§ 1790), և ազգային ձեռնարկին սիրոյն՝ զայն հաչտեցուց գլխաւոր մելիքներէն Մարտիրոսեան Ամիրի հետ։ Մելիքներն ալ հաւաքեց Անգէղակոթի մէջ, և տեղական ոյժերուն և դիրքերուն վրայ տեղեկութիւններ քաղեց, և դաւանափոխութեան համոզեց։ Սակայն կրօնական պետի մը հովանաւորութիւնը անհրաժեշտ էր, և այս միտքով Գանձասար նստող Աղուանից Սիմէոն կաթողիկոսին դիմեց, բայց նա ալ իւր միաբանութիւնով մերժողական պատասխան տուաւ. միայն Մեծիրանից Ս. Յակոբի վանահայր, Մինաս Տիգրանեան վարդապետը գտնուեցաւ Օրիին համաձայնող, և անոր հետ իբր Հայ Եկեղեցականութեան ներկայացուցիչ եւրոպա երթալու յանձնառու (Լ՝Օ· Ա· 434)։ Անցողաբար յիշենք թէ այս միջոցին Աղուանից երկիրը բաժնուած էր Սիմէոն և Երեմիա կաթողիկոսներուն միջեւ, որոնք անդամ մը հաչտուելէ յետոյ նորէն գժտուած էին, և որչափ ալ էջմիածին Երեմիայի կողմն էր, սակայն միշտ աւելի ազդեցիկ դիրք կը պահէր Սիմէոն (ՋԱՄ· 81)։ Ամառան մը մէջ Օրին ոգեւորեց առղող Արցախի լեռնականները, որոնք տեղական չոլժումով և եւրոպական արշաւանքով իրենց փրկութիւնը մօտալուտ կը տեսնէին, և սիրայօժար կը ստորագրէին որչափ թուղթեր՝ որ Օրին կը պատրաստէր, պապին, կայսեր, կայսրնաիրին, և ուրիշ կարեւոր անձանց։ Եւրոպայէ գալիք արշաւախումբին անհնար լինելով Թուրքիայի վրայէն անցնիլ, Քարլովիցի հաչտութեան հետեւանօք (§ 1843), պէտք էր որ այն Ռուսաստանի ճանապով կովկաս իջնէր, կայսրընտիր Յովհան-Գուլիէլմոսի հրամանատարութեամբ։ Հոգ չէր ալ եթէ չատ մեծ չըլլար գալիք գունդը, դի Օրին կ՝երազէր որ Հայերը պիտի կարենային հայթայթել առնուազն մինչեւ 10,000 հեծեալ (Լ՝Օ· Ա· 441), և 200,000 պատերազմող մարդ (Լ՝Օ· Ա· 443), մէկտեղ հաչուելով վրացիներն ալ և Օսմանեան գաւառներէ եկողներն ալ· մինչ Պօրկեան այդերը շատ չնչին էր համարօտ (Լ՝Օ· Ա· 444)։ Այս նախապատրաստութիւնները լրացնելով և գործը ապահովուած կարծելով, Իսրայէլ Օրի՝ Մինաս վարդապետի հետ 1699 ամառուան մէջ դարձաւ Յովհան-Գուլիէլմոսի մօտ, զոր ոգեւորեց իւր յաւատաս տեղեկութիւններով, և նորա հրահանգով եկաւ Լէոպոլտ կայսեր մօտ 1699 աչնան միջոցին։ Կայսրը քէպէտ Սպանիոյ յաջորդութեան խնդիրով զբաղուած, բայորովին չմերժեց օգնելու առաջարկը, այլ զգացուց Ռուսիան միասին ունենալու անհրաժեշտութիւնը, և հրահանգեց դիմել Պետրոս կայսեր, և պատչած յանձնարարական նամակներով ճանապայ հանեց 1700 գարունին։ Օրին պէտք ունեցաւ նորէն իւր պաչտպան կայսրընտիրին դառնալ, և անկէ ալ հրահանգուելով և յանձնարարուելով մեկնեցաւ դէպի Ռուսիա։ Հայաստանի մելիքներուն ոգին ալ վառ և միտքերնին հաստատ պահելու համար, Օրի պէտք տեսաւ Յովհան-Գուլիէլմոսի կողմէն նամակ հասցնել անոնց, վստահացնելով թէ Աթոռոյն Օրէնն է ընթրել. հայբենի գեղ և սուրբ երկիր ետեւէ հանելոհամար (Լ՝Օ· Բ· 227)։

1846· Երբոր Օրի և Մինաս Մոսկուա հասան, 1701 յուլիս 11՝ին, Ռուսիոր այն տագնապներու մէջ էին, որոնք հետեւեցան 1700 նոյեմբեր 19՝ին Նարվայի ճակատամարտին մէջ Շուէտիացիներու կողմէ կրած պարտութիւնները։ Նուաճողական պատերազմական յանձնարարականներ ունէին կայսէն և կայսրընտիրէն և Լեհաց Օգոստոս Բ թագաւորէն. և նպատակ Օրհնութիւն հայազգին Լեհաստանէ միասին առած էին իրենց տեղական լեզուներու թարգման։ Հակառակ ներքին տագնապին, Պետրոս կայսր մտադրութիւն դարձուց իւր ոտքովը եկող առաջարկին, որ իրեն դուռ կը բանար դէպ Տարաս ալ ընդարձակել իւր կայսրութիւնը, երբ մեծամեծ ձիգերով կ՝աչխատէր դէպ հիւսիս տարածուիլ, և

Պալթիկէն ծովային հաղորդակցութիւններ կազմակերպել։ Պետրոս յաւուկ պաշտօնէութիւն մը նշանակեց ևկող պատգամաւորութիւնէն, զոր իբրև կայսեր և կայսրընտիրի դեսպան կը նկատէր (Լէօ· Բ· 228), որ պէտք եղած տեղեկութիւնները քաղէ Հայաստանի կացութեան, Պարսից զօրութեան, և Եւրոպիոյ օգնութեանց մասին։ Պաշտօնէութեան գլուխն էր Գոլով ռուս իչխան, և թարգման էր Նիկողայոս Սրօթարիուս Ծոյնը (Լէօ· Բ· 235)։ Օրի միշտ նպաստաւոր, և չափազանցեալ նպաստաւոր տեղեկութիւններ կը հաղորդէր գրաւոր և բերանացի, այնպէս որ Պետրոս յաւուկ պաշտօնեայ մը կը յղէր Պարսկաստան, Վասիլ Քուչուկով անուն, որպէսզի տեղւոյն վրայ ստուգէ կացութիւնը (Լէօ· Բ· 240)։ Այս բանակցութեանց վրայ՝ պաշտօնական պատգամաւորութիւն մըն ալ Պարսկաստան յղելու միտքը ծագեցաւ, մինչեւ իսկ Պարսկաստանի ամրութեանց յատակագիծները ունենալու պէտքը զգացուեցաւ, բայց այդ գործերուն կատարումը կայսրընտիրին թողուեցաւ։ Այս պատճառներով գործը կը ձըգձգուէր, մանաւանդ 1701 դեկտեմբերին Շուէտական պատերազմին մէջ Ռուսներուն տարած յաղթանակը՝ բոլորովին այն կողմը դարձուց Պետրոսի մտադրութիւնը (Լէօ· Բ· 241)։ Օրի ձգձգումներէ յոգնած, Ռուսական բանակին ծառայութեան մտնելու միտքը յղացաւ, որուն պատասխան ստացաւ Պետրոսէ 1702 մարտին, թէ Շուէտական պատերազմէն ետքը անպատճառ էր յետը կ'առնէ այն փոքրը (Լէօ· Բ 242)։ Օրի և Մինաս ուրախութենէ արտասուելու հասած, այս աւետիսը ամէն կողմ հաղորդելու համար, Նազար Օրեխովիչ թարգմանը կայսրընտիրին, և Միւռոն Վասիլեւսքի հայազգի հարիւրապետը՝ իրենց բարեկամ մելիքներուն յղեցին։ Համակիր պատասխանները աւին կայսրընտիր Յովհան-Գուլիէլմոսէ 1702 աշունին, իսկ Սաֆրատի և բարեկամ մելիքներուն մօտէն դարձաւ Վասիլեւսքի 1703 գարունին։ Սակայն ևկած պատասխանները յուսադրութենէ անդին չէին անցներ։ Կայսրընտիրը՝ Սպանիոյ և Գերմանիոյ մէջ սկսած պատերազմին պատճառով իւր անմիջական ձեռնարկը անհնար կը տեսնէր, իսկ Պետրոս Մեծն, որ նոյն օրեր, 1703'ի գարունին, Սանկտ-Պետերսբուրգ (Sanct-Petersbourg) քաղաքին հիմերը կը դնէր, բոլորովին այդ գործով էր գրաւուած։ Օրի հասկցաւ թէ իւր մտածած ձեռնարկը առ այժմ չկրնար սկսիլ, նոր գաղափար յղացաւ՝ Եւրոպա դառնալ, և պապին կողմէն Պարսկաստանի դեսպան նշանակուիլ, և այս կերպով աւելի դիւրաւ նախապատրաստական տեղեկութիւնները քաղել։ Ռուսաց կայսրէն գնդապետի աստիճան խնդրեց ու ստացաւ, Մինաս վարդապետը Մոսկուա թողուց, որ գործին ծայրը թողած չերեւայ, և 1704 փետրուար 10'ին Մոսկուայէ մեկնեցաւ, և չիտակ Տիւսսելտորֆ գնաց, ուր կը սիրային իւր տուսաբինը և երկու զաւակները (Լէօ· Բ· 247)։ Այդ եղելութեանց մէջ, կաթոլիկոսը յիշեցինք միայն երբ բացէրաց մերժեց Օրիէ առաջարկուած կաթոլիկանալու գաղափարը (§ 1844)· սակայն նահապետ հետու չէր ազգային ազատագրութեան ծրագիրէն, միայն չէր ուզեր զայն գնել իւր եկեղեցւոյն ուրացութեամբ։ Ապա թէ ոչ, երբոր պաշտպանութեան խոստումը Ռուսիայէն ևկաւ՝ առանց դաւանափոխութեան պայմանի, սիրով ընդունեցաւ Միւռոն Վասիլեւսքի պատգամաւորը, և 1702 նոյեմբեր 7'ին Օրիէ նամակին ալ պատասխանեց խնդակցութիւն յայտնելով, որ Ռուսաց կայսրը պարտք է Հայ ազգի ազատութիւնը հոգալու (ԶԱՄ· Բ· 40)։

1847· Երբոր Հայութեան բախտը չօչափող, կարեւոր՝ բայց և ոչ հիմնաւոր

ԼԱՏԻՆՆԵՐ Ի Կ-ՊՈԼԻՍ

ձեռնարկներ կը կատարուէին Կ-Պոլիսէ հետու, այնտեղ բոլորովին տարբեր չարժուձիներ տեղի կ'ունենային, և փոխանակ ազատութեան, նորանոր աղետալի եղելութեանց դուռ կը բանային։ Մէկ կողմէն պատրիարքութեան թեկնածուներու յախուռն մրցումները, և միւս կողմէն Լատին քարոզիչներու և իրենց հետեւողներուն մոլեռանդութիւնը՝ հետզհետէ կը զայրանային։ Մինչեւ այս առիններու միջնորդ հասարակութեան մէջ կարծիքներու տարբերութեան կերպարանը կը տիրէր, առանց բաժանումի և անջատումի ձեւն առնելու։ Ազգային եկեղեցական իշխանու-

քիւնն ալ, որչափ և պահպանողական և պաշտպանողական ընթացքի հետեւող, հայադաւանութեան թոյլատու սկզբունքէն չէր հեռանար, և տարբեր կարծիքներու հետեւողներն ալ միեւնոյն եկեղեցւոյ մէջ կը մնային, և փոփոխակի անոր վարչութեան ալ կը մասնակցէին, թէպէտ իշխանութիւնը ձեռք անցընելու մրցակցութիւնը կը մղէին։ Ասիկայ ամէն կառավարութեան մէջ ալ կը հանդիպի՝ իբր կուսակցական դրութեան հետեւանք։ Հռոմի պապութիւնն ու գործիչներն ալ, չէին քաշուեր այդ ընթացքին հակակշռիլ, միշտ այն գերագոյն սկզբունքով, որ պէտք չէ առաջ իտալական խնդիրներ յուզել, և ոչ ալ շատ փոփոխութիւններ պահանջել, այլ ուզի կառուցանել հոգը պահանջները հետզհետէ չատցնել։ Մենք տեսանք կալանոսի Հայ վարդապետի տարազ իսկ հագնիլը (§ 1694), և Ծիսուսեան աւետարանութեան Հայոց եկեղեցիներուն մէջ քարոզելը (§ 1832)։ բայց այն ժամանակները անցած էին, և այս միջոցին սկսած էին տարբեր մտածել ու գործել. ուստի ամենաէջ պոռթկումով արբենցին կոնդակներուն Հայոց եկեղեցին հանելը (ԹՕՐ. 45)։ Ակռ ծագելիք անհեդութիւնները դիտել սուղին, Պրաքօնիէ՝ Ծիսուսեանց վանահայրը կը պատասխանէր, թէ չէր կրնար ընդունիլ որ կոնդակներն ամենաէջ հաղորդութեան մը առնոյին երեց հերձուածող եղբօրց հետ, և ըստ ամենեն դառն շրջաբանութեամբ ալ ընդին պէտ էր առնէին (ԹՕՐ. 47)։ Հռոմէական ծանր խօսքերով կը պախարակէն և կը նախատէն ժամանակիս մէջ ազգային իշխանութիւն և պատրիարքութիւն վարողները, իբր բռնաւոր հալածիչներ և անգութ դահիճներ, իբր թէ անոնց պարտքը չըլլար՝ իրենց հօտին մէջ մտնող օտարներուն գողութիւնը արգելել, իրենց եկեղեցին անարգողներուն դէմ դնել, և Հայ եկեղեցիներէ հեռացնելով լատին եկեղեցիներ տանելու անխոհեմ և վտանգաւոր ձեռնարկին առջեւն առնել։ Այո՛, մենք պիտի յիշենք կաթոլիկութեան առջեւն առնելու համար գործածուած ուժգին և բուռն միջոցներն ալ, բայց պէտք է ճանչնալ, որ անոնց առաջին պատասխանատուութիւնը լատիններուն վրայ կը ծանրանայ, իրենց անխոհեմ և մոլեռանդ պահանջումներով, և իրենց հետեւողներուն խիղճերը չարչրկելով, մինչ այսպիսի բաներ չէին տեղի ունեցած, ցորչափ գործը ներքին զգայմանց չրջանակի մէջ կը մնար, և իրենք ալ կը զգուշանային նորանոր պահանջներէ։ Հայոց եկեղեցին քրիստոնեայ էր այդչափ զարերէ իվեր, ուղղափառ եկեղեցի էր ի սկզբանէ անտի, միշտ կը մնար ինչ որ էր, միայն Արեւմուտքի դիւրաբարդած նորութիւններէ կը խորշէր, և լատիններուն պէտք չէր՝ որ Արեւելքի առաքելական և հնաւանդ քրիստոնեանները ստիպէին, իրենց դպրոցական և նորահնար վարդապետութեանց համակերպիլ։ Այդ ընդհանուր տեսութիւնը պարզելէ ետքը պատմական եղելութեանց անցնինք։

ՍՈՒԱՀԻ ԵՒ ՅԱՋՈՐԴԸ

1848. Պատրիարքութեան աթոռը գրաւած էր Մելքիսեդեկ Սուպհի 1698 մայիսին (§ 1838), և Եփրեմ Վանցին աքսորով հեռացուցած, իսկ Կիլիկիոյ աթոռին վրայ կը մնար Մատթէոս Սարի (§ 1829)։ Բարեկամական զգայմունքի թէ պատշաճ փոխանակութեա՞մբ, Մելքիսեդեկ հաճեցաւ Եփրեմի աքսորանքէն դարձնել 1699'ին սկիզբը, և Ադրիանուպոլսոյ առաջնորդութիւնն ալ անոր յանձնել։ Մրցակիցներու սովորական ձիգերու չնորհիւ, Մելքիսեդեկ հազիւ թէ տարին լրացուցեր, հակառակութիւնները զօրացած տեսաւ, և գահընկէց եղաւ Եփրեմի դառնալէն քիչ ետքը 1699 յուլիսին, բայց ոչ 23'ին (ՁԱՄ. Գ. 727), այլ 25'ին երեքշաբթի օր, ինչպէս ձշդուած կը գտնենք Սարգիս գպիրին ձեռագրին մէջ (ՍԳՒ.)։ Նոր անձ մըն էր որ այս անգամ պատրիարքութեան կը բարձրանար, Միխիթար վարդապետ Քիւրտիստանցի կոչուած, որ Սղերդի գաւառին պաշտօնական անունն էր, և պէտք է այնպէս իմանալ, և ոչ թէ յաչեցեն Կոտոց (ՁԱՄ. Գ. 727)։ Իսկ Սղերդցի վարդապետ մը հաւանական է Բաղէշի Ամիրդուղ վանքին միաբաններէն եղած կարծել, քանի որ անոր նախընթացին վրայ աւելի տեղեկութիւն չունինք։ Միխիթարի պաշտօնավարութիւնն ալ երկար չեղաւ, դի միւս տարին 1700 դեկտեմբեր 4'ին նորէն աթոռ կը բարձրանար Մելքիսեդեկ Սուպհին։

Այդ տարիներու մէջ ալ կը չարունակէին Հայու և Յունկի վէճերը, որոնց հետևհետէ զայրանալուն առիթ կուտար Լատին քարոզիչներու և լատինացեալ Հայերու կողմէ՝ Յունկ կոչուածներուն վրայ դրուած արգելքը, որով մեզաւոր կը նկատուէին եթէ Հայոց եկեղեցիներ յաճախէին իրենց բարեպաշտութեանց համար, և կը բռնադատուէին օտարազգի եկեղեցիներ յաճախել, և օտարազգիներու ազդեցութեան ներքեւ մտնել, ինչպէս արդէն բացատրեցինք (§ 1847)։ Բայց տակաւին բուռն գործողութիւններ չեն յիշուիր մինչեւ 1700 թուականը, ոչ այնչափ Մելքիսեդեկի կամ Միխիթարի հռոմէականութեան հակամէտ կամ թոյլատու ըլլալէն, որպէս ոմանք կը սիրեն կարծել, այլ դի աստիճանով է՝ որ այդ տեսակ գործեր կը սաստկանան։ Հռոմէականութեան հետևողներն ալ դրուած արգելքներուն տակաւին խստիւ համակերպելու չէին յորդորուեր, մանաւանդ որ կամայ կամ ակամայ ստիպեալ էին պաշտօնական խորհրդակատարութեանց համար Հայ եկեղեցիներու և Հայ եկեղեցականներու դիմել, դի յատուկ Հայ կաթոլիկ եկեղեցիներ չկային, Հայ կաթոլիկ հաստարակութիւն մը կամ պաշտօնական կացութիւն մրն ալ չի կար, և եթէ Լատին եկեղեցիներու մէջ լրացնէին այդ խորհրդակատարութիւնները, օտարանպատակ և տէրութեան հակառակորդ և ապստամբ պիտի նկատուէին։

1849. Երուսաղէմի աթոռին վրայ քաղուցինք Յովհաննէս պատրիարքը՝ նշանաձի մականուանեալ, որ

ԳԱԼՈՒՍՏ ԵՒ ՄԻՆԱՍ

արդիւնաւոր եղած էր Հայոց ստացութիւնները պաշտպանելուն մէջ, բայց ստիպեալ չատ աճեցուցած էր աթոռին վրայ ծանրացող պարտքերը (§ 1811)։ Հրովարտակներ ալ հանել տուած էր, որ Երուսաղէմի գահակալները անվրդով մնան աթոռին վրայ մինչեւ իրենց մահը. սակայն հրովարտակներ միայն իրեն ծառայեցին, որովհետեւ աթոռին վրայ վախճանեցաւ 1697'ին (ԱՍՏ. Ա. 414), իսկ իրմէ ետքը՝ ալ աւելի խառնակ եղաւ պատրիարքական յաջորդութիւնը։ Մահուան թուականը ղրիմի Երուսաղէմի պատմագիրին հետևողութեամբ, վանդի քէպէտ ուրիշ մը տապանագիրին մէջ 1694 գրուած ըլլալը յիշած է (ԲԱՒՌ. 57), սակայն յետին գրողը հարկաւ աւտուգելով նշանակած է ձիշդ թուականը։ Երբոր մահուան լուրը կ-Պոլիս հասաւ, էչեմ-Նաւոթ ազէն պատրիարք ընտրեցին Գալուստ Ջէյթունցի եպիսկոպոսը, կայծակ մականուանեալ, և հրովարտակն ալ հանել տուին, բայց Գալուստ իսկոյն Երուսաղէմ չուղեւորեցաւ, այլ աթոռին վրայ ծանրացած պարտքը պատճառելով, ուղեց ազգին մէջ հանգանակութեան երթալ, և կ-Պոլիսէ սկսելով մեծ շրջագայութիւն մը սկսաւ Եւդոկիա, Սեբաստիա, Բերիա, Ամիդ և Կարին, և տարին լրացուց, բայց ոչ գործը աւարտեց, ոչ հանգանակածէն լուր տուաւ, և ոչ Երուսաղէմ դումար մը հասուց, որ պարտապաններուն բռնադատութիւններէն կը ձնշուէր (ԱՍՏ. Ա. 415)։ Աւար հետ բոլոր այն քաղաքներէն ուսկից կ'անցնէր Գալուստ, չարունակ իրեն վրայ գանգատներ կը հասնէին պատրիարքարան։ Ուստի հարկ եղաւ վերջ տալ այդ անվայել ընթացքին. Գալուստ պաշտօնանկ հռչակուեցաւ, և Երուսաղէմի պատրիարքութեան կոչուեցաւ Մինաս վարդապետ Համդեցի, և հրովարտակը առնուեցաւ 1698'ին։ Պէտք է ընդունիլ, որ նոյն ինքն Մինաս էր որ Յովհաննէսի մահուանէ ետքը աթոռին վարչութեան գլուխը կը գտնուէր, Գալուստի թափուցած չրջագայութեանց միջոցին։ Մինչեւնոյն 1698 տարւոյ թուականը կը կրէ Մինասի աշխատասիրած Ագէ-բանո-ՐԷ-ն գրքոյկը, որուն մէջ չատ համառօտ կերպով քաղած է Հայոց և Հռոմայեցւոց վեհապետներուն պատմութիւնը (ԱՄԳ. 144), համաձայն իւր գտած տեղեկութեանց, որոնց մէջ աւելորդ է ձշդութիւն և քննադատութիւն փնտռել։ Կ'երեւի թէ Մինաս օգտուեցաւ Երուսաղէմի մէջ անցուցած ժամանակէն, և փափաքեցաւ բան մը արտադրել, որուն մէջ միայն բարի կամքն է գնահատելի։ Երբոր Մինասի հրովարտակը ստացուեցաւ, միանգամայն պետական հրամանն հանուեցաւ, որ ուր և գտնուի Գալուստ, ձերբակալուի և Կ-Պոլիս բերուի. այլ նա փութաց պաղատագրի դալ, և ազգին մէջ չփոթութիւններ ձգել, Մինասը

ամբաստանելով և զանազան յերիւրանքներ բարդելով, մինչեւ որ Տարկ եղաւ Մինասի անձամբ կ-Պոլիս գալ, և Գալուստի վրրպարտութիւնները ցրել, և իւր պատրիարքութիւնը վերահաստատել տալով երեսաղէմ դառնալ 1699'ին (ԱՍՏ. Ա. 417)։ Երեսաղէմ դառնալէն ետքը պարտաւորուեցաւ տեղացի Իսլամներու հետ դատի մրցնալ և պայքարիլ, որոնք զանազան կարեւոր սեփականութիւններ յափշտակելու պահանջներ կը յարուցանէին։ Մինաս հին հրովարտակներու օրութիւնամբ ազգային իրաւունքները պաշտպանեց (ԱՍՏ. Ա. 418)։ Այդ եղելութիւններ տեղի կ'ունենային մասամբ Մելքիսեդեկի և մասամբ Մխիթարի պատրիարքութեան միջոցին։

1850. Մխիթար Սեբաստացի վարդապետին մասին վերջին անգամ յիշեցինք կ-Պոլսէ մեկնելը 1698 սեպտեմբերին, Հայաստանի կաթուղիկէ նոր նեղքին գաւառներուն մէջ իրեն տալարէզ փրկուելու համար (§ 1838), և յատկապէս նպատակ ունենալով Օլթի և Նարման գաւառները, կարինի և կարսի սահմանակցութեան մէջ։ Նաւարկութեամբ Տրապիզոն պիտի երթար, բայց ալեկոծութենէն հետզհետէ էրէյլի և Սինոպ ցամաք եղնելով, վերջապէս Սամսոնէն ճանապարհ կը փոխէ, ամիս մը կը մնայ Մարսուան, քիչ մըն ալ Ամասիա, և 1699 գարունին կը հասնի կարին։ Օլթիի վրայ դրած ակնկալութիւնները չհմարտուելուն, Հինձք գիւղի կարմիր վանքը կը հաստատուի առաջնորդ Մարգար եպիսկոպոսին մօտ, ուր 3 ամիսներու հետ 15 ալ աշակերտ գտնուելուն՝ անոնց ուսուցիչ կ'անուանուի (Մխի. 132)։ Այստեղ կը մնայ իբր տարի մը, բայց վերջապէս այդ ալ չբաւականանար իւր ձգտումները գոհացնելու։ Մարգար եպիսկոպոսէ գաւազան իշխանութիւն ընդունելէ ետքը, կը մրտադրէ նորէն մայրաքաղաք դառնալ, ուր աւելի յաջողութիւն կրնար յուսալ այս անգամ։ Անոնք որ Մխիթարի ամէն մի չարժումին մէջ կաթոլիկական միաբանութեան մը հիմնարկութեան գաղափարը կը փափաքցնեն, այստեղ ալ նոյն բանը առաջարկած կ'ըսեն Մարգարի, անոր բնազդելով իսկ միաբանութեան առաջնորդութիւնը (Մխի. 136). սակայն կը կարծենք թէ այս և ասոր նման պարագաներ, գործի մը լրանալէն ետքը մտածուած գաղափարներ են։ Մեղադրելի չեն Մխիթարի երախտաւորնալ աշակերտներ, երբ անոր կեանքին ամէն քայլերուն մէջ՝ հրաշալիք և սքանչելիք և երկնային նշաններ կը տեսնեն։ Կարմիր վանքէն հեռանալէն ետքը, քիչ մըն ալ կարին քաղաքին մէջ կը մնայ, ուր էր Աւետիք Եպիսկոպոս (§ 1837), և որուն համար ըսուած էր, թէ ամէն հնար է փրկել զինչն որոշեալ և իրեն մօտ պահելու (Մխի. 77), բայց այս անգամ իբրեւ Մխիթարի հալածիչ կը ներկայացուի, վասնզի աղղաբարած է անոր, ապին ՀՀՃամանուէնեան պատանդէն հակառակ վերադարձմամբ չհոսիլ (Մխի. 138)։ Սակայն Մխիթար Հայ Եկեղեցւոյ պաշտօնեայ էր, և Հայ Եկեղեցւոյ գաւանութեամբ օծուած և գաւազան ստացած էր. և մինչ կաթոլիկ Եկեղեցւոյ եպիսկոպոսներն ալ չէին պահանջեր, որ նորահաս վարդապետ մը, ինչպէս էր Մխիթար, իր Եկեղեցիէն աւանդուած և հանրութենէն ընդունուած գաւանութեանց դէմ համարձակ չհոսէր։ Արդէն կարին հաստատուելու միտք չունէր Մխիթար, ուստի կը փութայ Տրապիզոն իջնել, և 1700 յունիսին անկէ մեկնելով, այս անգամ յաջող նաւարկութեամբ յուլիսին Կ-Պոլիս կը հասնի (Մխի. 142). Մխիթար պատրիարքի վերջին օրերը (Մխի. 144), որ դեկտեմբեր 4'ին գահընկէց եղաւ, և Մելքիսեդեկ նորէն աթոռը գրաւեց (§ 1846)։ Մխիթար Քիւրտիստանցին եղաւ որ Մխիթար Սեբաստացին արտօնեց նորէն Դալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ քարոզել (Մխի. 145), իբր Հայոց Եկեղեցւոյ վարդապետ։

1851. Մխիթար պատրիարքի յաջորդող Մելքիսեդեկ Սուպհին (§ 1838), որ ամէն ջանք ու զոհողութիւններ թափած էր նորէն պատրիարքական աթոռը գրաւելու, այս անգամ ալ բախտաւոր չեղաւ, և կաթոլիկական խնդիրին առաջին բուռն միջադէպը իրեն ալ պատահի դարձաւ։ Ազգրանաւորոյ քահանաներէն երեք, Կ-Պոլսոյ մէջ հաչատաւոր կարնեցիին

ԵՓՐԵՄԻ ԳԻՏԵՐԸ

յարած, և անկէ ինչ ինչ հռոմէական բա-
ցատրութիւններ ուսած, իրենց տէրը դաւ-
նալէն ետքը, սկսած էին կրկնել, և ժողո-
վուրդին մէջ յուզում պատճառել։ Եփրեմ
Ղափանցին, որ առաջնորդն էր (§ 1847),
փափաքելով իւր վիճակին ներքին յուզմանց
պատճառները սկիզբէն խափանել, նախա-
պէս սասոնց, վերջէն արդելից նորատա-
կիկ ֆռանկացեալ վարդապետութիւնները
խօսիլ; և երբ անոնք յամառեցան իրենց րն-
թացքին մէջ, պարտաւորուեցաւ քահանա-
յագործութենէ արգելիլ, և քաղաքէն ալ
հեռացնելով կ-Պոլիս յղել Մելքիսեդեկ
պատրիարքին, յանձնարարելով գանոնք զըս-
պել կամ ուղղութեան բերել։ Ասոնք յա-
ջողեցան Մելքիսեդեկի պաշտպանութիւնն
ձեռք ձգել, արդէն դիւրին բան մըն էր՝
մրցակիցներու մէկէն հալածուղին միւսէն
պաշտպանուիլը։ Պատրիարքը յանձնարարեց
անոնց՝ իրենց տեղը դառնալ, ուր ինքն ալ
պիտի երթար պետական յարաբերութեանց
համար, և դիւրին կը կարծէր Եփրեմը ամո-
քել։ Դժբախտաբար չատ չուտ գործան
քահանաները, և իրրև յաղթութիւն տա-
րած, իրենց առաջին միտքերը աւելի
համարձակ կրկնել, ինչ որ պիտի դայրա-
ցնէր Եփրեմ առաջնորդը, որ այս անգամ
նպարքոսական հրամանով քաղաքէն վտա-
րել տուաւ նոյն երէցը, իբր օտարուտում
անձեր և ժողովուրդը յուզելու և պառակ-
տելու պատճառ եղողներէ։ Այս իսկ էր այն
առնն Ֆրէնչ և Ֆրանչեսքօ բառերուն բուն
իմաստը։ Ինչպէս ալ Քարլովիցի դաշնագի-
րէն և 25'ամեայ խաղաղութենէն ետքը դա-
դարած էին Թուրքիոյ և Եւրոպիոյ թշնա-
մութիւնները, բայց Օսմանեանց միտքէն
ջնջուած չէին երկարատեւ պատերազմները,
և թշնամական հոգին մարած չէր երկու
կողմերուն մէջ ալ։ Հետեւաբար պետական
չրջանակներու մէջ չատ նշանակալից կը
դառնար՝ ֆրանչեսքօ էն ընդ Ֆրանչ բացատ-
րութիւնը (ՉԱՄ. Գ. 729), զոր եթէ Հայեր
դաւանական իմաստով կը իսկէին, Տաճիկ-
ներ քաղաքական իմաստով կ'իմանային։
Երեք Ազրիանուպոլսեցի քահանաներ կ-Պո-
լիս բերուեցան 1701 յուլիս 5'ին, Գիւտի
Նչխարաց չորեքի օրը, և միւս օր իրր քա-
ղաքական կասկածուտներ Թիւրանի բանտա-
րգելուեցան։ Այս երեքը պատմութեան մէջ կը յիշուին՝ իրր հռո-
մէական սկզբունքներու առաջին զոհերը,
թէպետեւ անուննին յիշուած չէ։ Բայց յաջո-
նի կը տեսնուի, թէ ոչ երբեք իրենց միտ-
քին կամ հռոմէութեան պատճառաւ կրած են
գլուխնուն եկած արկածը, այլ պարզապէս
յատինական բարեկամութեան և Արեւմըտ-
եան քնկնածութեան համար կասկածաւոր
նկատուած, և բացարձակապէս պետական
հարուածի մը ենթարկուած էն։ Ամէն առ-
թի մէջ Եփրեմ Ղափանցիին անունը գոր-
ծին յարակցած լլլալուն, հռոմէականաց
կողմէ իրրեւ կաթոլիկութեան առաջին հա-
լածիչ նկատուած է։

ԵՓՐԵՄ ՊԱՏՐԻԱՐՔ

1852. Մելքիսեդեկ պատրիարք որ երկար պատրաստութեամբ Ազրիանուպոլիս կ'ուղեւորէր, հոն հասաւ երբոր ամէն բան աւարտած էր։ Գործին առաջնորդը իրեն լրտես-լէն, և իւր նպատակին հակառակ վերջաւորութիւն ունենալէն ցա-ւած, երթալուն հետ ալ խիստ լեզու գոր-ծածած պիտի լլլայ, որ անոր ալ զայրոյթը գրգռած է։ Ոչ միայն իւր առաջարկու-թեանց գոհացում չէ տացած, և պատ-րիարքութենէ գործնկէց ըլլալու վտանգին է հասած, այլեւ ինքն ալ իրր թշնամի տէ-րութեանց նպաստաւոր, կասկածելի դար-ձած և իրրեւ պատժապարտ թիւրանի բան-տարկութեան դատապարտուած է, երկու ամիսէ աւելի Ազրիանուպոլիս տունն անցը-նելէ ետքը։ Որչափ ալ մեծ լլլար Ղափան-ցիի ազդեցութիւնը երթալուն առջեւ, սակայն Քէօրրիւլիւ Հիւսէյին փաչա, այն խոհական և չրջահայեաց քաղաքագէտն էր, որ Խմաթաճ մականունով ճանչցուած է պատմութեան մէջ, և օտարներուն կողմէ ալ դնչակուած է իբ իսկական և չափաւոր վարչութեան համար (ՓՈՒ. 316), որով չէր կրնար պարզապէս ուրիշի խօսքին վրայ, այսպիսի անօրինակ խստութեան ձեռնարկել։ Ազրիանուպոլսոյ ժողովուրդն ալ պատրիարքին դէմ ելաւ, և Մելքիսեդեկի դէմ դատախազ կանգնեցաւ, և այս ալ պատճառ եղաւ որ գործնկէց դնչակուելէ ետքը՝ կ-Պոլիս դրկուելով Թիւրանի բանտար-գելուեցան։ Իսկ պատրիարքութեան կոչ-

ուեցաւ Եփրեմ Ղափանցին 1701 սեպտեմբեր 1'ին, որ անգամ մը (§ 1812) և երկու (§ 1829) պատրիարքութիւն վարած էր արդէն։ Եփրեմ չուզեց Ազրիանուպոլսէ հեռանալ, այլ թագաւորի և նպարքոսի և զինապետին մօտ մնալ, և այն տեղէն պէտք եղած արտօնութիւնները առնել և հրամաններ արձակել։ Եփրեմ այս անգամ աւելի ազդեցիկ կերպով աշխատեցաւ, կաթոլիկացեալ խմբակին կողմէ՝ Լատիններուն գրգռութեամբ ստրմանուած պատակոսմնեբուն առջեւն առնել, անոնց ազդեցութիւնը կոտրելով և անոնց գլխաւորները հեռացնելով։ Կ-Պոլսոյ մէջ պատրիարքական փոխանորդ մը նչանակեց, տեղւոյն վրայ վարչական և մատակարարական գործերը հոգալու, սակայն ժամանակակիցներէ երբեք յիշուած չենք գտներ փոխանորդին անունը։

1853. Նոր դէմք մը կը կսկսի երեւիլ ժամանակակից պատմութեան մէջ, թէպէտ օտարազգի, բայց Հայ ազգութեան գործերով զբաղող, և ամէն մի հզօրութեան մօտակից։ Սա ՖԷՐԻՕԼ ԴԵՍՊԱՆ Գաղղիոյ դեսպանն է, կոչուած Ֆէրիոլ, Արժանթալի մարքիզը (Charles Ferriol, marquis d'Argental). որ բաւական ճիգեր և ամենակերպ միջոցներ գործածելով յաջողած էր Գաղղիոյ թագաւորութեան կողմէն կ-Պոլսոյ դեսպան անուանուիլ 1699'ին (ԺՈՒ. 460)։ Իր առաջին ջանքն եղաւ Լատին կրօնաւորներու ազդեցութիւնը նուազեցնել ի նպաստ դեսպանութեան, բայց երբ այս չյաջողեցաւ, ուղղութիւնը փոխեց, և սկսաւ աշխատիլ դեսպանութեան ազդեցութիւնը բարձրացնել գործակցութեամբ Լատին կրօնաւորաց և պաշտպանութեամբ կաթոլիկութեան։ Իր դեսպանութեան սկիզբները, մինչեւ իսկ ժողով մը գումարել տուաւ, հայազատանութեան պաշտպան և հռոմէադաւանութեան կողմնակից Հայ եկեղեցականները իրարու մօտ բերելով, և երկու կողմերուն պահանջներն ալ չափաւորելով Մխիթարեան գաղթական մը ալ պատրաստել տուաւ 1701'ին, որ Հայոց պատրիարքին և Լատին եպիսկոպոսին հաւանութիւնները առնէր երբք, պապին հաստատութեան ներկայացնէր Գաղղիոյ դեսպանատան և թագաւորութեան միջնորդութեամբ։ Բայց գործը իր ընթացքը չի կրցաւ լրացնել, և ՄԻՔԱՅԷԼ ՂԱԶԱՐԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅՈՑ ՊՐՈՏԵՍՏԱՆԵԱՑՔ ԸՆԴՔԷՄԻՐԵԱՑՔ (ԹՕՐ. 47)։ Այդ բանը առիթ կ'ունենար ճիշդ Եփրեմի նոր պատրիարքութեան սկիզբը, և Հայ եկեղեցականութեան կողմէ ցոյց տրուած խաղաղասիրութեան չնորհիւ։ Ընդհանուր և նախատական գրգիռ մըն էր Ֆէրիոլ ձեռնարկը, զոր չէր կրնար յաջողութեան առնել ոչ թէ Եփրեմի սկզբունքներով ապրող հաստատամիտ մը, այլեւ ոչ որեւէ հեզահոգի և խաղաղասէր զգացումներ ունեցող եկեղեցւոյ պետ մը, երբոր կը տեսնէր իր հնազանդ և ուղղափառ եկեղեցւոյն դէմ արձակուած անարգանքը։ Հետեւապէս որ եւ է անկողմնակալ դիտողի համար յայտնի ճշմարտութիւն մըն է, որ եթէ Եփրեմի կողմէ բռնի միջոցներ ընդարձակուեցան, անոնց պատասխանատուութիւնը իրեն աւելի՝ զինքն գրգռողներուն վրայ կ'իյնայ, և հայազատանութեան պաշտպաններէն աւելի՝ հռոմէադաւանութիւն մուծանելու հետամտողներուն վրայ կը ծանրանայ։ Հետեւողներ որչափ ալ ուղիղ հոգւոյ բկութեան նախանձայուզութեամբ՝ իրենց ընթացքը վարագուրել, սակայն աստղութիւն ինքնին կը ցայտէ, որ պապական ազդեցութիւնը տարածելու և քաղաքական միջամտութիւն ընդարձակելու ձեռնարկ մըն էր։ Եթէ Հայեր ալ գտնուեցան, որ այդ օտարուհամ և օտարամուտ միջամտութիւնները քաջալերեցին, երկու բան պիտի կ'արդարացնեն. Հայազատանին եկեղեցականապէս թոյլատու և լայնախոհ զգացումը, և Հայազգւոյն կրթականապէս զարգացման անյագուրդ ձգտումը։ Այս դիտողութիւններն ընելով՝ կ'ուզենք միայն պատմական ստուգութիւնը իր ճիշդ կէտին բերել, թէ ոչ պիտի չգովաբանենք ոչ Ղափանցիին և ոչ իրեն յաջորդներուն բռնութեան ձեռնարկները, քանի որ համոզուած ենք, որ բռնութեան միջոցներ ուղիղ և ապահով կերպով նպատակին չեն տանիր, և ատկէ հակառակ արդիւնք ալ յաճախ կը բերեն, և հալածուած զգացումը տարածուած կը դարձնեն և յաջողելուն կը նպաստեն։

1854. Գրգռութիւնն առիթը կ'ատկյցնէին յատինամոլները՝ երբ Լատին եկեղեցիներու մէջ կը հատաքուէին, թէպէտ Հայ եկեղեցւոյ պաշտօնէութիւնն չարքէն չէին ելլեր. լատին վանքերու մէջ դումարուիլներ կը կազմէին, և մանաւոր տեղեր ալ կը տեղծէին իրենց գաղտնի համախմբութիւնից համար։ Աւոր հետ մէկտեղ արտաքին պաշտպանութիւններով ներքին իշխանութիւնից դէմ կը մաքառէին, և դեսպաններու հովանաւորութիւնամբ պատրիարքական աթոռին և պատրիարքներու անձին դէմ բռնանալ կը փորձէին, և իրենց գրգռութիւններով միւս կողմին ցասումը կը գայրացնէին, և պաշտպանողական ձեռնարկներու կը մղէին։ Ժամանակին լատինամիտ խումբին մէջ աւելի կը խօսուէին Նաչատուր կարնեցի և Մխիթար Սեբաստացի վարդապետները, բայց առաջինը արդէն իր Հռոմի մէջ ստացած դաստիարակութեամբը ծանօթ ըլլալով, այնչափ գրգռութիւն չէր յուզեր, որչափ երկրորդը, որ Հայ վանքերու աչակերտ մրն էր։ Մանաւանդ երբոր երեւան եկաւ, որ երբ մէկ կողմէն Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ քարոզչութիւնը կը վարէր իբր Հայ վարդապետ, միւս կողմէն Կ-Պոլսոյ Բերթա օտարազնակ արուարձանին մէջ տուն մը վարձած էր (Մխի. 150), որուն արտաքուստ գրակազմութեան դործարանի ձեւ տուած, ներքուստ լատինական սկզբունքները տարածելու կ'աշխատէր (Մխի. 151)։ Արդէն աւելն Հայ վարդապետի սովորութիւն էր, իր չուրջը աշակերտութիւն մը կազմել, Մխիթար ալ այդ սովորութենէն կ'օգտուէր։ Սեբաստացիին աշակերտողներուն մէջ յանուանէ կը յիշուին, Սարգիս Ակնեցի դպիր, Ղազարոս Ակնեցի այրի, Յովհաննէս Սեբաստացի պատանի, Ազարիա Բերացի դպիր, և Եղիա Կոստանդնուպոլսեցի վարդապետ՝ Ներսուաղեմի միաբաններէն (Մխի. 146)։ Մխիթար եղանակը գտաւ Սարգիս և Ազարիա դպիրները արեւոյ ձեւը նագրել տալ Գէորգ և Մանուէլ անուններով, որով վանական խումբի մը երեւոյթը տուած եղաւ իր հետեւողներուն (Մխի. 149)։ Գրակազմութեան արհեստարանի ձեւը յիշեցինք, բայց բոլորովին կեղծ չէր այդ նպատակը, որովհետեւ Մխիթարի մէկ զբաղումն ալ դիրք տալով տալն էր Կ-Պոլիս բացուած տպարաններու մէջ։ Այդ միջոցին օր մը, 1701 սեպտեմբեր 8'ին, Մխիթար իւր գործարան-տունին մէջ, իրեն հետ եղողները կը հաւոզէ միասին ապրիլ, և Տաճկաստանէ հեռանալով իրենց բնակութիւնը հաստատել այնպիսի տեղ մը, ուր կարենան իրենց ուզած կերպով գործել, ինչպէս էին Արեւելքի մէջ Լիբանանը, իսկ Արեւմուտքի կողմը Պիղոպոնէսը։ Մխիթարեանները այդ միջադէպը պատմելով՝ կը պարծենան, թէ Մխիթարեան դաղափարին չենոց սահմանը օրն եղաւ այն (Մխի. 160), բայց տակաւին կանոնական և իրաւական սկզբունաւորութեան նշան մը չտեսնուիր, և եթէ ըլլար ալ, Հայոց պատրիարքութեան և հայադաւանի չրջանակին մէջ գործ մը պէտք էր եղած ըլլար։ Վասնզի Մխիթար այդ թուականէն ետքն ալ Գաղղիոյ դեսպանատան կից Վերաբաւոր Փրանկիսկեանց (Cappuccini) վանքը կը բնակէր, և կը գործակցէր հայր Բակինթոս վանահօր՝ պատակտուել Հայերը միացնելու համար։ Իսկ 1701 նոյեմբեր 26 թուականով համաձայնութեան պայմանագիր մրն ալ կը պատրաստուէր (Մխի. 165), որով Ֆէրիոլ դեսպան կը յայտարարէր թէ ինք գիտցաւ վերջէն, մեզմացած էր փրանկացեալներուն հանդէպ բռնուած ընթացքը (Մխի. 162)։ Հետեւաբար անջատական մտադրութիւնը դեռ Մխիթարի միտքին մէջ տեղ բրած չէր։

ՄԽԻԹԱՐ Ի Կ-ՊՈԼԻՍ

1855. Եփրեմ Ղափանցիին օրով փրանկացեալներու վրայ ծանրացած հետապնդութիւնը, սովորութիւն է անոր վերագրել իբր հեղինակի և սկզբնապատճառի, սակայն դեսպանը կը գրէ, թէ «այն հալածանքը Թուրք գիտցին ըսելու, որ երբեմն ընչաքաղցն է Փրանկաց, և ինք պղծագործութեամբ ոչնչացուց ի քաղաքէն գիտցի վերջ» (Մխի. 162)։ Ուստի պէտք է մեղմել Եփրեմի վրայ եղած դատաստանը, և ոչ ալ անոր վերագրել, եթէ աթքունի հրովարտակ մը հրամայեց, բովանդակ կայսերութեան սահմանին մէջ բոլոր Ֆրանկ եղողները ձերբակալել և ցրուել (ՉԱՄ. Գ.

ԱԻԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔ

732)։ Այսպիսի հրովարտակ մը բնական կերպով դուռ կը բանար բազմապիսի անիրաւութիւններու և բռնադատութիւններու, որ ջառաջ կու գային անձնական խնդամութիւններէ, անհատական վրէժխնդրութիւններէ, և ստորին չարաչահութիւններէ, և մինչ 1701'ին վերջերը, չատերու վրայ բռնադատութիւններ գործուեցան, տուներ խուզարկուեցան, բանտարկութիւններ եղան, աքսորներ և վտարումներ գործադրուեցան, անոնց իսկական պատճառը Ֆէյզուլլահ դէնպէնտ էր։ Այս պատճառով Մխիթար Աբրահատցին և Խաչատուր Կարնեցին ալ Լատին վանքերու մէջ կը պահուրտէին, երբ միւս կողմէն 1701 Հոկտեմբեր 26'ի պայմանագիրը կը պատրաստուէր, և Փրանկիսկեան վիզտրատորց մեծաւորը Յակինթոս՝ անձամբ Ադրիանուպոլիս կ'երթար Եփրեմի ալ հաւտնութիւնը առնելու (Մխի. 165), ուսկից հոգի պայմանագիրը Հռոմ՝ պապին և Լիմիածին՝ կաթողիկոսին պիտի ղրկուէր հաստատութեան համար (Մխի. 164)։ Կ'երեւի թէ Եփրեմի վրայ զիջողութեան գաղափար տեղատուն համար է, որ Ֆէյզուլլահ անոր վրայէ վատահութիւնը կը վերցնէ, և լաւ կը նայէր Կարին՝ Աւետիք եպիսկոպոսին չուտով Կ-Պոլիս գալ, որ պինդ պատրիարքութեան բարձրացնէ։ Աւետիք և Ֆէյզուլլահ նախօրօք էին կարին (ԹՕՐ. 54), առաջ պաշտպանութեան օրէն (§ 1831), և յետոյ առաջնորդութեան ժամանակէն, ուստի երբոր Ֆէյզուլլահ Կ-Պոլիս դէնպետութեան բարձրացաւ, ուզեց իր բարեկամն ալ բախտաւորել, մանաւանդ որ Աւետիք ծանօթ էր իր խառնութեամբ նորոգուած վարդապետութեանց դէմ, և կարնոյ մէջ Լատին կրօնաւորաց վարժարանն ալ փակել տուած էր։ Աւետիք այդ լուրը առած կ'ըլլայ 1701 սեպտեմբերի սկիզբները, վասնզի երկու ամիս պայմանաժամ ուզեց ճանապայ ելնելու (74 ԱՐՐ. 115), և անկէ հաքը կարնէն մինչեւով Կ-Պոլիս կը հասնէր 1701 դեկտեմբերին (Մխի. 165), և Ս. Յակոբի տօնին՝ ամսոյն 13'ին (ՁԱՄ. Գ. 732). Սամաթիոյ եկեղեցւոյն մէջ խոլապաթիրական քարոզ մը կը խօսէր, և կը փութար Ադրիանուպոլիս երթալ պատշաճ կարգադրելու, ուր Ֆէյզուլլահն միջնորդութեամբ պատրիարքական փոխանորդ անուանուելու, կացութիւնը բարւոքելու յանձնարարութեամբ։ Սակայն իսկապէս եփրեմը տապալել էր Ֆէյզուլլահի միտքը։ Հազիւ ամիսուկէս էր, որ Աւետիք Ադրիանուպոլիս կը գանուէր իւր նոր պաշտօնով, երբ 1702 փետրուար 1'ին, նոր տարւով 12'ին, Ս. Սարգսի կիրակէին, ժողովրդականն մեծ ցոյց մը կազմուեցաւ Եփրեմի դէմ, և հինգ օր տեւեց պրպտութիւնը։ Աւետիք սոսկալի ծանկուիլ, և Եփրեմ տակաւին պատրիարքութիւնը պահել, բայց քիչ օրուան համար, որովհետեւ փետրուար 24'ին, նոր տարւով մարտ 7'ին, Մեծպահոց երկրորդ երեքշաբթին, Աւետիք եւդոկիացին պատրիարք նշակուեցաւ Ֆէյզուլլահի պաշտպանութեամբ, և հազիւ աւելի անցոյ ընկերակցութեամբ եպարքոսին առեանը փարեցաւ Ադրիանուպոլսոյ մէջ։ Եփրեմը էջմիածին ապրելու համար տրուած որոշումը՝ իբր Աւետիքի դաժանութեան նշան ցոյց կը տրուի (Մխի. 166), բայց յայտնապէս է լաւ կողմը մնկնել, Մելքիսեդեկի վրայ փորձուած պետական խստութենէն (§ 1850) ազատելու և հետու ու ազատ տեղ մը զայն ապահովի հանելու միտքով։ Արդէն այն կողմերու բնիկն էր Դափանցին, իսոր ծանօթութեան ալ տուած։ Այս միտքը կը քաղաւի նոյնիսկ Աւետիքի գրածէն, թէ Եփրեմ յոյժ աղօթող էր Յիսէր ի Ջէջ Յոզվըրեան, և թէ Եփրեմի համար հրաման տանէր գնալ ի սուրբ Էջմիածին, մտ ի Նահապետ կաթողիկոսին, անդ դառնալ (74 ԱՐՐ. 115)։

1856. Աւետիքի պատրիարքութեան սկզբնաւորութիւնը խազագաւէր բռնակցութեանց սկսկալութիւններ ԱՒԵՏԻՔԻ ԸՆՔԱՑՔԸ

ր աւելցուց։ Աւետիքի և Յակինթոսի յարաբերութիւնները աւելի մտերմական եղան Անդրիանուպոլսոյ մէջ, և Աւետիք կրցաւ իր մտադրութիւնն վրայ Լատիններր վատահացնել, առանց Ֆէյզուլլահի ալ կասկածները արթնցնելու։ Դէպ պանն ալ միամտեցաւ Աւետիքի մասին, զոր առաջ իրր դաժան հալածիչ մը նկատած էր, բայց 1702 մարտ 11'ին կը վկայէր, թէ Աւետիք Հայերը խաղաղ-ընեան կը յորդոր, և յունիս 8'ին կը հաստատէր, թէ Կաթո-

կոյ հալածումը քալըովէն վրէջացած է (ՔՕՐ. 56)։ Աւետիք այդ միջոցին կը չարունակէր մնալ Ադրիանուպոլիս, որ իսկական մայրաքաղաք դարձած էր թագաւորին և նպարքոսին և դինպէտին ներկայութեամբ. իսկ կոստանդնուպոլսոյ մէջ իրեն ներկայացուցիչ և փոխանորդ նչանակած էր Յովհաննէս Ամասիացի վարդապետը (ՉԱՄ. Գ. 733)։ Սոյն օրեր Կ-Պոլիս եկած էր Մատթէոս կեսարացի՝ Սսոյ կաթողիկոսը, մականունանալէն Սարի, որ Կ-Պոլսոյ պատրիարքութենէ Սսոյ կաթողիկոսութեան անցած էր 1694'ին (§ 1829), և երբ տարիէ մեռած ախոռին վրայ կը մնար։ Սակայն հինէն կազմուած Բերիացւոց պառակտումը, որ պահ մը դադրած էր Ազարիա կարկառեցիի քաչունէլէն եռքը (§ 1816), անգամ մըն ալ արծարծեցաւ Պետրոս Բերիացիին ձեռքով, որ հաւանարար Դաւիթ և Ազարիա կարկառեցիներուն ազգականութենէն եղած կ'ըլլայ, և հնօրհայ իրաւունք մը վերանորոգելու ձրգտումով մէջտեղ ելաւ։ Պետրոսի ձեռնարկը 1701'ին կը դրսի, վերիվերոյ Աւետիքի հրապարակ ելաւ օրերը։ Պետրոս նստաւ Բերիոյ մէջ իրրև Սսոյ հակաթոռ, բայց Մատթէոս յանձն չառաւ կաթողիկոսական իրաւասութիւնը բաժնել, ինչպէս ժամանակով հաստատուած էր Խաչատուրի և Դաւիթի միջև (§ 1753)։ Մրցակիցը ընկճելու նպատակով Կ-Պոլիս եկաւ, բայց պատրիարքական սթոռին չփոթութենէն պատճառով չկրցաւ արդիւնաւոր ձեռնարկ մը կատարել, և պատնէն ակնկալութեամբ մայրաքաղաքի մէջ կը դիպերէր։ Եւ ահա Կ-Պոլիս կը հասնին չորս Երուսաղէմի միաբան վարդապետներ (ՉԱՄ. Գ. 733), իսկ Աւետիք Եղիազարեան ԵՒՏԷՒԽԻՈՍ Ս. ՅԱԿՈԲՈՅ կը գրէ (74 ԱՐՐ. 150), որուն համար բաւած է, թէ անկարելի էր գործել չէկէլեցոլ, ժողովել արծաթեղեն Մինաս Համդեցի պատրիարքին կողմէն, թէպէտ ճշդուած չէ՝ թէ ինչ էր գործած անկարգութիւնին։ Մինաս յատկապէս ալ գրած էր Աւետիքի այդ վարդապետներուն մասին, որպէսզի ականջ չկախէ անոնց չարախօսութիւններուն, և զգուշացնայ անոնցմէ. սակայն այդ բանը հրապարակի վրայ չլսուեցաւ, և ակռլ վարդապետներ համարձակ կը խօսէին Մինասի դէմ, տ'սակ տեսակ զրպարտութիւններ վերագրելով անոր պաշտօնավարութեան, թէ միաբանութիւնը ցրուեր է, թէ մեծապատմար պարտքի ներքև ձգած է, թէ կալուածները ծախած է, և թէ բոլոր ապառնները Կ-Պոլիս յղած և գրաւ դրած է Ինկլէզ պէզիրկեանէն մօտ (74 ԱՐՐ. 150)։ Առաջ Մատթէոս եղաւ, որ իրեն գրաւեց արտաքսեալ վարդապետները, և ժողովական հաւաքումի մէջ ալ անոնք խօսեցուց, որպէսզի Մինասի տեղ Երուսաղէմի պատրիարքութեան անցնի (ՉԱՄ. Գ. 733), և արդէն կաթողիկոս ալ գտնուելով, եղիազարի նման դիրք մը կազմէ Արեւելքի մէջ։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԻԱՑՈՒՄԸ

1847. Բայց Մատթէոս իրմէ ճարպիկ մրցակիցի մը բազնեցաւ։ Աւետիք որ ունէն կողմ սիրոյ և խաղաղութեան օրհնադիրներ ղրկած էր, ժամանակին Մինաս պատրիարքին ալ պատուապատչամ յորդանօք գրած էր, ուսկից քաջալերելով Մինաս, արտաքսեալ վարդապետներուն անտեսութիւը իմդրած էր։ Աւետիք բուռնակառակն զանոնք մտէն բրտնեց, Անդրիանուպոլիս կանչեց, և Մինասի դէմ իսօսածնին հաւաքեց։ Արդէն Կ-Պոլսոյ մէջ ալ՝ Մատթէոս բաւական յուզում յարուցած էր Մինասի դէմ, կարծելով իրեն օգտին ծառայեցնել, մինչ Աւետիք մէկ կողմէն Մատթէոսի կը սատէր, որ տեղը դառնայ՝ նիւէ չուզէր տուգանքի և վտանգի ներքև իյնալ, և միւս կողմէն կառավարութիւնն կը դիմէր Մինասի պահընկեցութիւնը պահանջելով, և Ֆէյզուլլահ դինպոտին պաշտպանութեամբ իրեն վրայ դարձնելով անոր յաջորդութիւնը, առանց Կ-Պոլսոյ պատրիարքութիւնն ալ թողլու։ Այս է երկու սթոռներու միաւորութեան սկիզբը, որուն ոմանք թուական կը նչանակեն 1701 տարին (ՉԱՄ. Գ. 734). սակայն Աւետիքի պատրիարքութիւնն ալ 1702'ին սկսած ըլլալուն (§ 1853), աւելի ճիշդ է 1702 յուլիս 13'ի հրովարտակով որոշուած ըսել այդ միացումը (ԱՍՏ. Ա. 421)։ Յովհաննէս Հանտա, Երուսաղէմի ողբերգու պատմիչը, այդ միացման վրայ խօսելով, կը գրէ, թէ ՝ բռնճճլլ և անհիշ ոմանք, անոնցմէ և եղ էրիւթեանոյ, ընդդիմեալ է հօրեն Յոհաննց սոսո-

նայէ և ի կոթողաց նորին, վիշոյ ոչոյց որոց առաքեցուիցն, այնուհետև և կոտորելոյ, ի առաքեցուիցն արքին (ՀՆՆ. 119)։ Աւետիքի անունը չտար, թէպէտ պատմելով գործիչը մատնանիշ կ'ընէ. բայց որովհետև մէկէ աւելի անձերու կ'ակնարկէ Հաննա, իզէպ է զայդ մեկնել Երուսաղէմի միաբան վարդապետներուն վրայ, որոնք Մինասէ վրէժ լուծելու համար, իրենց միաբանութեան դէմ դաւաճանեցին, և զայն կորսնեան մերքոնը տալուցին, քաջալերելով Աւետիքի փառասիրական և չահադիտական ձգտումները։ Մենք ալ համամիտ ենք համարձակ կերպով մեղադրել Աւետիքի այդ ձեռնարկը, և զայն իբրև մեղսագրելի կէտ մը նկատել։ Աւետիք կ'ուզէ ինքզինքը արդարացնել, և կը գրէ թէ ինքը բնաւ հետամուտ չէր, այլ առաջեան ժամանեցին դիտիք կոչեցին, ըստ որում եկաք՝ փառաց ընել արքայն (74 ԱՐՐ. 151)։ Այլ պատմութիւնը դինքը չկրնար արդարացնել, և կը պարտաւորուի ճանչնալ Աւետիքը իր պատճառ այն ազնատալի պատահարներուն, որոց մանրամասնութիւնները պիտի տեսնենք հետզհետէ։ Անցողակի դիտենք, որ թէպէտ պատմութիւնը որոշակի չյիշեր, սակայն հղկութիւնները կապկցութիւնը յայտնապէս կը ցուցնէ, թէ ամէն ծագում առած է՝ կոստանդնուպոլսոյ և անոր պատրիարքութեան հոգեւորապէս ենթարկեալ վիճակներուն մէջ, կ-Պոլսոյ աթոռակալներուն իրը Երուսաղէմի և կոստանդնուպոլսոյ պատրիարք միանգամայն յիշատակուիլը, որ յետոյ երկուքին զատ զատ յիշատակուելուն առաջին քայլն եղած է։

1858. Ամուսներու միաւորութեան պատճառով բոլորովին հղձաւ ու խանգարեցաւ Երուսաղէմի ամուսին կարգն ու սարքը, քանի որ չկար այլեւս պատրիարք մը՝ որ միաբանութեան գլուխ, սեփականութեանց տէր, և մատակարարութեան իշխող ըլլար։ Պատրիարքէ զատ ընդհանուր մատակարարի մը պաշտօնը բաւական ժամանակէ իվեր մտած էր, որուն հնագոյն օրինակներէն մէկին է Պարտուէր Դրիգորի յանձնուած պաշտօնը (§ 1603), և որ նորոգուեցաւ Եղիազար Ամենափրկի վրայ ալ, Աստուածատուրի պատրիարքութիւնը յարդելով մէկտեղ (§ 1759)։ Ժամանակ անցնելով գործը սովորականի դարձաւ, և այնարհականներու անցաւ ընդհանուր մատակարարի պաշտօնը, որ Նազըր և Մէ-Ղէվելլի կը կոչուէր երբեմն, և վերջէն Պաշ կոչմամբ ակաւ յիշուիլ տեղւոյն վրայ, և սոյն միջոցին պաշտօնը վարողը հնչակաւոր Պաշա Մինասն էր։ Աւետիք Երուսաղէմի պատրիարքութիւնը ստանձնելով Պաշա Մինասին պաշտօնին չդպաւ, այլ կապահպանեց անունով մէկ մը իւր կողմէ փոխանորդ նշանակեց՝ Նազըր անունով, և արքունի հրովարտակով Երուսաղէմ դրկեց, յանձնարարելով որ Պաշային հետ գործակցութիւնեմբ, անմիջապէս կալնալ վիճակը ընդոծեր, ոչն հանդերձեալն ընդ ղեկեցեալն էր, ղեկեն չղնչելոյ է քանդ (ԱՍՏ. Ա. 420)։ Այսպէս կ'ըսէ Երուսաղէմի յիշատակագիրը. բայց Աւետիք կը գրէ, որ թէպէտ այսպէս հրամայն եղած էր, սակայն ինքն իսկզբան և ընդունած է, որ Մինաս պատրիարք՝ ինէ հալէն նոր նոյ է վանն (74 ԱՐՐ. 151)։ կարապետ Երուսաղէմ հասնելով գործի ձեռնարկեց 1702 օգոստոս 18'ին (ԱՍՏ. Ա. 421)։ Մինաս պատրիարքին գահընկեցութեան և կարապետ նազըրին պաշտօնին հրովարտակները հանդիսապէս հրապարակուեցան, և խիստ քննութիւններ բացուեցան պատրիարքին հաշիւներուն վրայ, որուն մնծամեծ վնասներ վերագրուած էին աքսորեալ միաբաններու խօսքով։ Մինաս Համդեցին կրցաւ պահպանել բացատրութիւնները տալ, ուսոր կրկին կ-Պոլսոյ հետ բանակցութիւններ եղան. Ֆրանկութեան կամ կաթոլիկութեան կամ աղթարմայութեան վրայնները ալ խառնուեցան Մինասը պարտաւոր թողլու համար։ Աւետիք պատրիարք Յովհաննէս Ամասիացի փոխանորդն ալ Երուսաղէմ չդնց (ՉԱՄ. Գ. 737), և նոր հրաման դրկել տուաւ Երուսաղէմի դատաւորին՝ խիստ քննութիւններ կատարելու։ Այս առիթը մեծ աւերան մը կապմուեցաւ, ուր դատաւորը կ-լինոյ ղեկամեծ այլազեան, ղեկոնոցը Լոփինոյ և Ցուանոյ և Աւորոյ, ընդհանր Պետրոս Ս. Յակոբոյ, և զինուորքը Հայոց, որոնք միաբանին Մինասի նպաստաւոր վկայու-

Քիւն տուին, թէ ըր ժողվածց է ժամանակ էլեռնըրնեան էրէց, ծախեաց է կրեսոր պետ չինորնեանց և նորըռնեաց ց. ու վարեաց զինչ ոզբին, հատարմորնեամբ կոպրեաց չմեռնայն էրեն վնաց, և ու էրքեր հակոզեալ է լարին էրեն (ԱՍՏ. Ա. 424)։ *Դատաւորն ալ այդ վկայութեանց համաձայն կոզմեց իւր վճիռ և կ-Պոլիս հաղորդեց։ Ասով քննեցաւ Մինասի կացութիւնը, սակայն պաշտօնէն զրկուած մնաց, և երուսաղէմ մատուկ բարեկան գործերը նաղրը կարապետին, և վանական գործեր վէքիլ Յովհաննէսին ձեռքին անցան, որոնք ուրիշ նպատակ չունէին, բայց եթէ օրուէ կերպով և միջոցով դրամ և ինչք ձեռք անցընել, և իրենց դիւանաւորին հասցնել, հարկաւ իրենց անձնական բաժինն ալ չմոռնալով։ Իսկ միաբաններուն նկատմամբ կարի զգայուն են Հաննայի խօսքերը, թէ վէքիլն ու նաղրը պահանջին նոյնծեք չքնաղ դիքան է նէրէց կոմց էրեանց ըրաց* (ՀՆՆ. 122)։ *Համիկեանն միջոց մըն ալ երուսաղէմ մնաց* (ՁԱՒՐ. Գ. 734), *և վերջապէս միւս տարին, 1703'ի ամառուան մէջ, կ-Պոլիս գնաց, տեսնել թէ ինչ կրնայ յաջողցնել իրեն և երուսաղէմի համար* (ԱՍՏ. Ա. 428)։

1859. *Աւետիք պատրիարքին դատա-*
լով պիտի դիմենք, թէ երբոր նա երկու
պատրիարքութիւնները իր
ԱՒԵՏԻՔԻ *ձեռքն անցուց, և արքու-*
ՁԱՆՔԵՐԸ *նական պաշտպանութիւնը*
ապահովցուց Ջէյմսսլայն
դեսպանին ամենակարող միջնորդութեամբ,
համարձակ նետուեցաւ փրանկացնեալներու
ձեռնարկը ջնջելու, բայց միշտ առանց ձեռք թողլու օտարներու հետ հաչտարար և խաղաղասէր կերպերը։ Ինքն փրանկացնեալներու խօսք չըներ իր յիշատակարանին մէջ, այլ կը յիշէ, թէ քաղաքէն էին ի վեր ձգ ղվէրեան յօրինողներ, որոնք յօրինե ինոչ վրայ մի այլ կին կ'առնէին (74 ԱՐՐ. 115)։ *Այս բանէն յառնելով ըսե՞նք, երեմիա Սահատպետեան, Յովհաննէս ու Յարութիւն Քիւրքիւլեօղլիք և Նիկողոս Էսքէրօղլի, որոնք պաշտօնէ ձգելու դիմում են րլեր, բայց Ջէյմսսլայն նոյն իսկ դիմողները Քիւրանի է դատապարտել տուեր։ Այս տեսիլն ալ Աւետիք կը պրէ, թէ ես գեր ու էի լռեալ ըստ-*

պէսըվ էրէն (74 ԱՐՐ. 116)։ *Աւետիք երեսաղէմի պատրիարքութիւնը ստանալէն, այսինքն 1702 յունիսէն ու չատ ետքը, Ադրիանուպոլիսէ Կոստանդնուպոլիս եկաւ։ Մարքիսօրիա կամ Մարքիքէօյ գիւղէն մեծ բազմութիւն մը դինքն դիմաւորելու Մատթէոս Սարի կախողիկոսի գլխաւորութեամբ, մեծայարդար պատուասիրութիւններ եղան, և քաղաք մտաւ այնպէսի թմ հանդիսիւ որ չէր քնաւ լսեալ ոտէ ի պարբերաց* (ՁԱՒՐ. Գ. 735)։ *Իրեն բացակայութեան միջոցին ապատուած էին երեք Ադրիանուպոլսեցի քահանաները, որոնք գրեթէ տարիէ իվեր Քիւրանի մէջ բանտարկուած կը մնային* (§ 1849), *և ոսկան էին ազատ չրջիլ։ Ուրիշներ կը գրեն թէ վոխանորդ Ամասիացին ազատած էր անոնք* (ՁԱՒՐ. Գ. 737), *մինչ Աւետիք իրեն կը վերագրէ անոնց ազատութիւնը* (74 ԱՐՐ. 151)։ *միայն թէ Աւետիքի դառնալէն վախցան, և Փրանկիսկեան Վիզտաւրոյ վանքը ապաստանեցան, ուր էր Մխիթար Աբեղատացին ալ* (§ 1852)։ *Աւետիք կ-Պոլսոյ մէջ ալ խնամով մչակից Վիզտաւրոյ Փրանկիսկեանց մեծաւոր Յակինթոսի յարաբերութիւնները, խրոխտ ոյգներ ալ պատրաստելով անոր պատուհաս* (ՁԱՒՐ. Գ. 737), *և անոր ձեռքով Ֆէրիոլ դեսպանին ալ վատահութիւնը գրաւելով, որ 1702 հոկտեմբեր 2'ին, որ է սեպտեմբեր 21'ին, կը գրէր թէ հալածանէ քոլըովն վէքըլացած կ'երթէ* (ԹՕՒ. 56)։ *Աւետիք միւս կողմէն փրանկութեան պատրուակով չատերու վրայ կը ծանրանար, ինչպէս Պրուսայի առաջնորդ Սուբիաս եպիսկոպոսին, անունը անծանօթ մնացած նչանաւոր աւազերէցի մը, յերթեւեկ երէցանց և յէչխանաւոր չատերուն, որոց բանտարկութիւն և գանակոծութիւն սպառնալէ ետքը, ծանր տուգանքներով կը նեղէր* (ՁԱՒՐ. Գ. 735)։ *Այս պատրաստ լրովին կը ցուցնէ, թէ ինչ էր Աւետիքի բուն նպատակը, զոր գիտէր պատչաճ կերպով գեղեցնել իրմէ գործ վէճերը չքննելը ապահովելէն ետքը, և ոչ միայն ուղիղ դատաւորութեան, այլև բարեկարգական նախանձայուզութեան կերպարանով, որով ժողովրդական համակրութիւն ալ կը չահէր, մինչ իրմէ նեղսաժնեները խուսէր մը կը սկսէին կազմել, և բողոք-*

նին նպարքոսութեան անպակալին կը հասնէին (ԶԱՒ. Գ. 736). իսկ սա Ֆէյսուլլահէ առացած հրամանագին համեմատ դանգատողները կը բանտարկէր և կը տուգանէր (ԶԱՒ. Գ. 735): Այդ միջոցներուն էր որ Յովհաննէս Ամասիացի երուսաղէմ կը ղրկուէր (§ 1856), և անոր տեղ պատրիարքական փոխանորդութեան կը կոչուէր Յովհաննէս Զմիւռնիացի վարդապետ (ԶԱՒ. Գ. 737): Աւետիք օգտուելով Բակինհոսի վրայ ազդած վատահութենէն, առաջարկեց փոխադարձ հաչտարար յարաբերութեանց պայմանագիր ալ կազմել. և ինդրեց որ Լատինները ալ մանակին բլլալիք ծախքերուն, և միանգամայն իրենց մօտ ապաւինած Մխիթար վարդապետին և Ադրիանուպոլսեցի քահանաներուն պաշտպանութիւնն չընեն, որպէսզի ինչնամութեան նշանր վերցուի. և խոստացաւ լաւ ընդունելութիւն ընել անոնց՝ երթալ իրեն դիմելու: Մինչեւ իսկ Մխիթարին ուղղած մէկ նամակին մէջ մին ալ յանձնեց Բակինհոսի՝ խոստանալով զայն ի գէպ պարբերել, և ի վերջոյ ծածկեց գործը պարզապէս լռութեամբ (ԶԱՒ. Գ. 738):

1860. Բակինհոս կատարեալ գոհունակութեամբ փութայ Աւետիքի պայմանները գործադրել, որպէսզի հայտարարութեան պայմանները իրականացնէ, և իր հրովարտակ առաջարկեալ վատահօրէն երթայ պատրիարքին մօտ, բացարձակ յայտարարելով թէ այլեւս չկրնար անոնք իր վանքին մէջ պահել: Ֆէրիոլի ալ Բակինհոսի համամիտ բլլալուն նշան պիտի ընդունինք, վերեւ յիշուած սեպտեմբեր 21'ի նամակով տուած վկայութիւնը (§ 1857): Բակինհոսի վերջնական յայտարարութեան վրայ երեք Ադրիանուպոլսեցի քահանաներ, զորս Աւետիքի մօտ, որ քանի մը տարիէ ի վեր ընկերացած էին Մխիթար չուզեց համզուիլ, և ստիպուելով Լատին վանքէն հեռանալ, մտանաւոր տուն մը քաչուեցաւ յանձնախմբին, և հոն ալ ինքզինքը ապահով չկարծելով ընդ առաջս պահպաներ է եղեր, ինչպէս անուշ իրմէ լսելով, կը պատմեն իրենները (ԶԱՒ. Գ. 738): Մխիթարի կեանքին ամենէն նշանաւոր վայրկեաններէն մին է այս, որ իրենները կը ներկայացուի իբր անարկու հալածանքէ մը ազատուելու պատրաստ, սակայն պատմական տեղեկութիւններ չեն արգարացներ նախադրեալ ոտիպողականութիւնը: Աւետիք հալածանքի գործիք չէր կատարեր այդ միջոցին, և ոճանց դէմ եղած խոստութիւններ, պատրանական էին, և եւրոպական դեսպանները չէին կատարեր այդ միջոցին, առաջ առաքանքներ չորթալու, որ Մխիթարի մասին չէր կրնար ճշմարտուիլ: Իսկ կայսրութեան մասին պէտք է իրրեւ ապացուցական ընդունիլ Բակինհոսի զրպարտած վատահութիւնը, և Ֆէրիոլի առած վկայութիւնը, թէ Գալաթացւոց քաղաքին վերջացած էր (ԹՕՐ. 56): Երբ Մխիթարի պատերազմելուն վրայ Աւետիք խուզարկութիւններ հրամայեց, շատ բնական էր ապարդեալ իշխանաւորին կողմէ կատարուած հետապօտութիւնը, և չկրնար արգարացնել Մխիթարի բորբոքեալ երեւակայութիւնը, որ ինքզինք գահի սուրին ներքեւ կարծելով, նկեղեցական աքեմը կը ծալէ, գուցէ և պէմբին վրայ ալ վոտիտութիւններ կը կատարէ, վաճառականի մարդու տարազ կը հագնի, և օտարազգիներու բարեկամութենէն օգտուելով ինքզինքը Զմիւռնիա պացող նաւ մը կը նետէ: Հոն նախ վաճառականներու պանդոկ մը, և յետոյ Յիսուսեան միաբանութեան Լատին աբեզանները մօտ կ'իջեւանի, բայց տակաւին ինքզինքը ապահով չզգար, և միշտ Աւետիքի իրնդրանքները իրեն հասնելն հետապնդած կ'երեւակայէ, հապճեպ կերպով Վենետիկի նաւ մը կը մտնէ, որ զայն կը տանէ Զակինթիա կամ Զանթա կղզին, բաւական հեռու և Մխիթարի նպատակէն դուրս տեղ մը: Մխիթարի Կ-Պոլսէ մեկնիլը կը դրուի 1702 սեպտեմբերին (ՄԽՒ. 173), և Զմիւռնիայէ մեկնիլը հոկտեմբերին (ՄԽՒ. 174), իսկ Զանթա հնալը կը տեւէ մինչեւ 1703 փետրուար (ՄԽՒ. 176): Մխիթարի նախ Զմիւռնիա, և անկէ դէպի Յունաստան երթալը, պիտի վերապրինք իր չինթաբեանի և աշխարհ ելած առիթէն օգտուելու դիտումին, վր չատ յստակ միտքը դրած էր Աթենքէն և հայրենական կեդրոնէ չհեռանալ:

ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ ՄՕՏ

1861. Լիբանանի բնակիչ Մարոնիներու մօտ երթալ էր Միխիթարի միտքը (Միսի. 156), որպէսզի ազատ վարչութիւն կրնան վայելէին և յատուկ պատրիարքութիւն ալ ունենին, և Հռոմէական եկեղեցիէն ալ յարած էին ժամանակէս մը առաջ, Բրիզոզ ԺԴ պապին օրով։ Միխիթարի նախնական այդ մտադրութիւնը, կարի յարմար կու գայ, նոյն միջոցին Մարոնիներու մէջ գործադրած կրօնաւորական ձեռնարկներուն հետ, որոնց հոգի և ներշնչող եղած էր Ապոստոլական Վարագի, Բնութեան նշանաւոր վաճառականը, իրեն բնակութեան ունենալով ծիրանի Հալէպ և նոյնպէս Պէյքին վաճառականներէն։ Երբեմն ալ ինքզինքին հոգեւորականութեան տուած, 1694'ին անձամբ ալ կրօնաւորած էին, և 1701'ին Ապոստոլն առաջնորդ ընտրուած էր Ս. Եղիազէ Նչակաւոր մայրավանքին Լիբանանի մայրիներուն մէջ։ Մարոնի վաճառականներուն ձեռնարկը նմանօրինակ ազդեցութիւն գործած էր իրենց արհեստակից և մտերիմ հայազգիներէն չորս եղբայրներու վրայ, որպէսզի իրենք ալ Հայերու յատուկ կրօնաւորական հաստատութիւն մը կազմեն Մարոնիներու մօտ և անոնց հովանաւորութեան ներքեւ։ Այս չորս եղբայրներ՝ որոնք էին Մուրատի և Թոմանի Յովակիմ, որ Պարակատանի կազմերէն Բերիա գալած էր ժամանակէս իրր կէս դար առաջ, և անհատականակ չէ Ունիմար Ջահկեցիներէն եղած կարծել Յովակիմ։ Չորս եղբայրներուն երիցագոյնն էր Աբրահամ, կարեւոր առեւտրական տան մը պրես, ժամանակի գործածական տառերէն բառով՝ ՔՐԵՔ մը, կամ հայերէն բառով՝ ֆէբէլէ մը, որուն վրայ ապրած էր Մարոնի բարեկամներուն օրինակը, և Բեյրութ Լիբանան էր եկած, կրօնաւորական ձեռնարկին համար անհրաժեշտութիւններ առնելու և Ապոստոլին հետ խորհրդակցելու համար (Ա 68.)։ Անչուշտ այդ ամէն պատգամներ Միխիթարի ականջը հասած էին, որ Բեյրութ եղած էր ժամանակին, և այնտեղի հասմէականներուն հետ յարաբերութեան մէջ գտնուած էր (§ 1837), գուցէ և Մուրատեան եղբայրներուն հետ ծանօթացած էր։ Հաւատար Չմիւռնիա եկած տաեղն ալ, Լիբանան անցնելու միտքը իրմէ օտար չէր, երբ հոգեհոգ փախուստի վայրկեանին չփոխուխման մէջ՝ Չանիմա գացող նաւ մը նետուեցաւ, և ուղիդիր փոխադրեցաւ։

ՆԵՐՔԻՆ ԵՓՈՔՆԵՐ

1862. Աւետիք պատրիարք որ 1702 յունիսին Կ-Պոլիս էր եկած (§ 1857), քանի մը տարի ետքը նորէն Ալբիանոպոլիս էր դարձած (ՁԱՒՐ. Գ. 738), ուր հետաձած էին երեք Ալբիանոպոլսցի քահանաներն ալ, զորս խաղաղութեամբ իրենց տաեղն էր ղրկած պատօրէն քահանայագործելու համար։ Հարկաւ նոր միջադէպ մը տեղի ունեցաւ, քիւրեղ երեք քահանաներ՝ կամ անհրաժեշտ մարմնոյ մը ունենան, կամ իրենց քահանան հանդիպեցան, որ Աւետիք կրկին դայրացած անոնց վրայ, և առաջնորդարանին մէջ բանտարկեց, եպարքոսական վճռով պատուհասել տալու։ Միջնորդներ և խոստումներ չկրցան Աւետիքի դայրոյթը իջեցնել, և քահանաները արձակել տալ, ուստի ոմանք բանտիճան դիմելով յարձակեցան առաջնորդարանին վրայ, և քահանաները ազատեցին, և պատրիարքին մարդիկը և նոյն ինքն պատրիարքն ալ պանակոծեցին։ Աւետիք նոյն դիպուածս դայրացած եպարքոսին առջեւ ամբաստանեց բռնացող ամբոխավարները, սակայն եպարքոսը Տալատեան Մուսթաֆա փաչա, անուս պինդ օրէնսդիր մը, պատրիարքին վրայ դարձուց իր յանդիմ, թէ ինչ իխտիարիտեամբ բանտեր և չվիճաններ կրնայ ունենալ, և նոյն ինքն Աւետիքը բանտարկել տուաւ (ՁԱՒՐ. Գ. 739), ուր և մնաց 27 օր (74 ԱՐՔ. 151), մինչեւ որ հասաւ Ֆէյզուլլահի պաշտպանութիւնը, որ ոչ միայն Աւետիքը ազատեց, այլ և անոր հակառակորդներէն հինգ հոգի Կոստանդնուպոլսոյ Թիարներ ղրկել տուաւ։ Երբոր Աղբիանու պոլիս անհնազանդ էր, Կ-Պոլիս ալ հանդարտ չէր, վր Յովհաննէս Չմիւռնացի փոխանորդ՝ համարձակ կը դիմէր զրպարտութիւնով և բռնութիւնով՝ մեծամեծ տուգանքներ գանձելու նպատակով։ Գանգատներուն ձայնը մինչեւ Ալբիանոպոլիս արձագանգեց, և եպարքոսական հրամանով Աւետիք Կ-Պոլիս գարձաւ ժողովարդը խա-

զաղացնելու համար։ Բայց արդիւնքը հաւասակը եղաւ, դի այս անգամ Աւետիքի դէմ ամբաստանութիւններ գրուեցան և պարքոսին, որ կրկին Աւետիքը եա կանչեց քննութեան համար։ Աւետիքի գրածին համեմատ իրեն դէմ եղած ամբաստանութիւնը, փրանկացիներուն պաչտպանութիւն ընելն էր, որոնցմէ 125 հոգիի ցուցակ մը կազմուած էր, և իրեն եղած հարցումն էր, որ եթէ այդչափ քան կայ, դու էր չե՞ որ (74 ԱՐՐ. 152)։ Աւետիք չուզեց մնկնիլ առանց Կ-Պոլսոյ անդակալէն և դաստառլէն բարի վկայութեան գիր մը առնելու, և Յիսնամեայ կաց բարեկենդանին, նոյեմբեր 15'ին, մայր եկեղեցւոյ բեմէն ժողովուրդը հրաւիրուց իրեն համար վկայութիւն տալ։ Ամբոխ բազմութեամբ գիմաց եպարքոսական տեղակալին առաջը, Աւետիք զժգոհներուն ամբաստանութիւնները ցրելու։ Տեղակալը բազմութենէն և ոստիկէն իրարչած, գայն գրուելու համար ազգիւ անդնողներէն երեսուն հոգի ձերբակալել տալով ֆալաքայի գանակոծութեան կ'ենթարկէ, զոր մերթ եօթը կամ ութը կը քարկոծուին։ Երեսուններուն մէջն էր Մաթէոս Սարի կաթողիկոսն ալ, և ամէնքն ալ ստիպուին բոլ ինքզինքնին գանձարկութենէ կ'ազատեն։ Սակայն Աւետիքի նպաստակը չյաջողիր, և առանց վկայագրի Ազբիանոպոլիս կը մեկնի դեկտեմբեր 3'ին, ինչպէս պէտք կը զգանք ուղղել նոյեմբեր 3 գրուածը (ԶԱՐ. Գ. 742), դի վերագրող Աւետիքը Կ-Պոլիս եղած բաւած էր Յիսնամեայ բարեկենդանին (ԶԱՐ. Գ. 741), որ է բանի նոյեմբեր 15'ին։ Աւետիքի համար միշտ պատրաստ էր Ֆէյզուլլահ գնդապետին պաչտպանութիւնը, և այս անգամ ալ անով կը յաջողէր Տայտապանը չանիլ և իր հակառակորդները բանտարկել տալ, և միջոց մը նորէն Ազբիանոպոլիս մնալ կառավարութենէ պաչտպանուած և պետական հոգատարութեամբ զօրացած։

1863. Երբ Աւետիք Ազբիանոպոլսոյ մէջ հանդարտած կը նստէր, Յովհաննէս Զմիւռնացի վոխանորդ՝ առիթէն կ'օգտուէր Կ-Պոլսոյ մէջ իր ուզած կերպով չանապատական հրամաններ և հրահանգներ արձակել, միշտ իրր պատճառանք գործածելով լսասիկանութեան ձգտումները և կաթոլիկական գիզծումները։ Ստուգութեամբ կ'ապացուցէր և կը հաւաքէր ու կ'այրէր ալ յատիներէ նէ թարգմանուած գիրքեր, որոնք Հայ ծէսի հակառակ խուզութիւններ կը ներկին։ Լաւիններու մօտ ուսած և անոնց կողմը բռնող եկեղեցականներուն խորհրդակատարութիւնները կ'արգիլէր, կնունքի և քահանայի համար ալ պատրիարքարանէ արտօնութիւն առնալ կը պահանջէր՝ պատանութիւնին առուգելու պատրուակով, բայց իրօք յատուկ տուրք մը գանձելու նպատակով։ Անոնք որ այդ ամէն պարագանեըու մէջ ուղղակի հսամէտպատանութեան դէմ հաղածանք մը կը տեսնեն, իրօք իրենց կը հակատին՝ երբ կը յայտարարեն, թէ չատեր ֆոլք փոքեալ ղբրեթայս խրեթէն չեկեղեցին Ցառաց, ընդ ակրեին (ԶԱՐ. Գ. 742), դի եթէ այդպիսիները իրօք ֆրանկոպեալներէն էին, պիտի իզձէին պաչտանապահ հերետիկոս նկատուած Յոյներուն դիմել մկրտութեան կնճռաւոր խորհուրդին համար։ Աւետիքի և Յովհաննէսի բուռն և ընդհատուր հալածանքի գործեր և հրամաններ կը վերագրուին այդ միջոցին, միչտ նոյն հսամէտպատուան պատմողներու կողմէ (ԶԱՐ. Գ. 743), սակայն պատմածներուն ստուգութիւնը կեղակոտած կը գտնուի Ֆէրիթ վկայութեամբ, որ ճիչդ այս օրերուն 1903 մայիս 3 14'ին գրած նամակով կը վկայէ, թէ ամէն ահ-սարսափ և կրճռոտ գործերը խէօ լա՜ կ'երթան, և բառական մեծ անդորրութիւն կը վայելէին (ԹՈՒՐ. 57)։ Գիտենք թէ Ֆէրիթ նամակին մը չէր Աւետիք պատրիարքին, և ոչ ալ անոր մրայ վատահութիւն կը տածէր, և սակայն իր հաստատութեան կը վերագրէր առացուած յաջող արդիւնքը։ Սակայն ինչ ալ ըլլայ Ֆէրիթի և Աւետիքի դէմտադիմ կեղծեալ բնաւորը, մեզի կը բաւէ որ եղելութիւններ և պատահարներ պատմողներ կերպարան ունէին, և կը տանին այն անարկու հալածանքները տեսարանները, զոր հսամէտպատան պատմողներ կը պատկերացնեն (ԶԱՐ. Գ. 743)։ Աւետիք կը պատմէ, թէ անգամ մըն ալ ինքն Կ-Պոլիս եկած է այդ միջոցին 125 անձերու դէմ

ղած գրգռութիւնը ցածուցանելու, թէ Զմիւռնացին ֆրէնկ է Ակճէփոտն, որ վան ափռոնիեան դրամ կ'ուղղէ առնելը պարտաւոր գրգռութիւններ էր յուզած, թէ ամբաստանութեանց գլխաւորը ղպտիերէնին կոպին խօսքն էր, որուն ինքն յայտարարած է թէ իբեան ֆրէնկ, ըմօվպա չկրնէր (74 ԱՐՐ. 152), թէ վերջապէս 125 անձերը կրցած է արդարացնել, և թէ ի մէջ նոցա միայն եղիսաման մէտ կային ըմէ. և ափսո և կողպոպոլ եկեղեցեաց առնցմէ երեքը. Առաքել Շահամիր օղլու և Սրապիոն և Ամրահամ Զալուխ, իրեն դէմ ալ ամբաստանութիւն են բրած, իրրեւ երեսաղէմի դրամներուն վատնող, այլ Աւետիք պաշտպանած է, և Առաքել ու Աբրահամ Թիարան նեռուած, թէպետեւ Տուլտապան եպարքոս միշտ իրեն հետ հաստակութեամբ է վարուած, սպառնալով թէ ը֊ֆըֆոբ կրծի, դի այնպէս ըմբռնած էր թէ ինքն օտարացեալներու պաշտպանութիւն կ'ընէ (74 ԱՐՐ. 153):

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿ

1864. Եօթ տգիտին ներքին ձեռնարկներ դժուարին կացութիւն ունէին ընդհանուր վիճակը աւելի անհանդարտ էր, և սկզբնատճառն էր Թէյդուլլահն դինպէտ, որ անհաւատալի բլլալու չափ դերիչխանութիւն կազմած էր Մուսթաֆա Բ սուլտանին անձին վրայ, ամէն ուզածը ընել տալու չափ, և ընդհակառակ յագուրդ տալով իր հակերոպական ձգտումներուն, ցրկրով և ցրուելով, քանդելով և ջարդելով ամէնայն ինչ և ամէնայն անձ, որ եւրոպական յարաբերութեանց և մերձաւորութեանց մէջ կը գտնուէր: Պէտք չէ մոռնալ որ Աւետիք Թէյդուլլահի հնօրեայ բարեկամն ու մտերիմն, պաշտպանեալն ու պաշտպանողն էր. սակայն ինչպէս պատմուած պարագաներէ ցուցին, Աւետիք բաւական ճարպիկ էր, նոյնիսկ Թէյդուլլահի աչքին ներքեւ, Ցակինթոնեաններու և Թէրզիօղլուներու հետ յարաբերութիւններ մշակելու, և իր հաչտարար տնտեսութեանց վրայ մնոնց վատահութիւնը դրաւելու: Սակայն ամէն զօրութիւն, որ բրտնական է, իր տարաբախտ վերջը կ'ունենայ, Թէյդուլլահի դէմ ընդհանուր տժգոհութիւնը օրէցօր կը տառակառար ժողովրդական խաւերուն և զինուորական դասակարգերուն մէջ, և աւելի բորբոքեցաւ, երբ եղարքոս Տուլտապան Մուսթաֆա փաշան ալ Թէյդուլլահի դրգռութեամբ և ամբաստանութեամբ, և թագաւորական հրամանով խեղդամահ սպանուեցաւ, և տեղը անցաւ Թէյդուլլահի մտերիմն ու դաւակիցը Ռամի Մէհէմմէտ փաշա, որ զինուորական ալ չէր (ԺՈՒ. 116): Թագաւորին մայրաքաղաքէ հեռու Ադրիանուպոլսոյ կեզիս կնանքն ալ գանգատի նիւթ դարձաւ, և վերջապէս Կ֊Պոլսոյ մէջ խռովութեան և տպստամբութեան դրօշը համարձակ պարզուեցաւ, և եէնիչէրիներու հնչակաւոր կաթսան էթմէյտանի հրապարակին վրայ հաստատուեցաւ, պահանջելով սուլտանին մայրաքաղաք դառնալը, և Թէյդուլլահի ու չատ մը սրբանահակներու պաշտօնանկութիւնը: Ռուս վարաբներ չատ պաշտօնակալներու սպարանքներն ալ կողոպտեցին, և օրինագէտներու պատգամախօսական ատեանէն իրենց դատին արդարացումը հնչակել տուին: Նոր 1703 տարուոյ յուլիս 11—22'ին յատուկ պատգամաւորութիւն մըն ալ մայրաքաղաք Ադրիանուպոլիս մեկնեցաւ, և անոր բանադատութեան վրայ Թէյդուլլահ պաշտօնանկ եղաւ իր որդիներով և արբանեակներով, և Մուսթաֆա սուլտան խոստացաւ Կ֊Պոլիս դառնալ: Ինչդ այդ օրերուն և պատգամաւորութեան մեկնելէն առաջ, յուլիս 8'ին, Աւետիք Ադրիանուպոլսէ մեկնած էր Կ֊Պոլիս գալու, զոր հնար չէ իրր պատահական դիպուած նկատել, քանի որ մայրաքաղաքի անցուդարձը անծանօթ չէր կրնար բլլալ Ադրիանուպոլսոյ մէջ, և անչուշտ Թէյդուլլահի խորհուրդով ծրագրուած ուղեւորութիւն մըն էր, կերպով մը չփոթութիւնը ցածուցանելու և դինպէտին դիրքը պաշտպանելու նպատակով: Զորու հասած առնն Ռուսթեմի առաջնորդ Ճովէվի վարդապետ կնասրացին, և Չէրքէզ հասած առնն այլազգի իշխանաւոր մը, Աւետիքը զգուշացուցին Կ֊Պոլիս երթալէ, ուր սպառնամբութիւնը արդէն յայտնի կերպարան առացած էր, բայց ինքն համակերպեցաւ միայն՝ փոխանակ ուղղակի մայրաքաղաք մտնելու, ծովով անցնիլ Իւսկիւտար, որ է նախնի Քրիսոպոլիսը:

Աւետիք Իւակիւտար հասաւ յուլիս 14'ին (ՁԱՒ. Գ. 744), պատգամաւորութիւնն մեկնելէն երեք օր ետքը։ Աւետիքի այդ ընթացքը յայտնի կը ցուցնէ, թէ նա գաղտնի նպատակի մը կը ծառայէր և որոշ հրահանգի կը հետեւէր։

ԱԻԵՏԻՔ ՊԱՏՏՕՆԱՆԿ

1865. Մինչ այս մինչ այն ապստամբներուն իրտհատութիւնը կը բարձրանար Ֆէյզուլլահի պաշտօնանկութեամբը և Մուսթաֆայի դառնալու վիճանելովը, և կը վտանգուէր Ֆէյզուլլահանց կացութիւնը։ Հաղիւ թէ կը լսուի որ Աւետիք Իւակիւտար կը գտնուի, վանզի իւր հետեւորդները ուղղակի ցամաքի ճանապով պատրիարքարան եկած էին, ապստամբ խումբը անոր վրայ կը դարձնէ իւր ջայրոյթը, վանզի ամէնուն յայտնի էր երկուքին միջեւ տիրող մտերմութիւնն ու համամիտ գործակցութիւնը։ Պէտք չէ մոռնալ որ Աւետիքի դէմ եղող ապգային դասակարգ մըն ալ կար, և անոնցմէ աւելի՝ Ֆէրիթ գեսպանը, որ յայտնի ու գաղտնի ամէն միջոցներ գործածած էր և կը գործածէր Աւետիքը տապալելու։ Մինչեւ հիմայ իւր հնարքները ձախողութեան մատնուած էին Ֆէյզուլլահի զօրաւոր պաշտպանութեան առջեւ, բայց այլեւս այն վերջացած էր։ Ուստի Տաճիկ խուժանին, Հայ լատինամիտներուն և Գաղղիացի դեսպանին միաբան միասիրտ դաշնակցութեամբ՝ Աւետիքի կործանումը պատրաստուեցաւ։ Առաջ անոր բնակած տունը պաշարուեցաւ, և կ'ըսեն թէ Աւետիք փախուստի առաջարկներն ալ մերժեց, ինչ որ յայտնի կը ցուցնէ իւր գալուն գաղտնի նպատակը, և թերեւս ալ Ֆէյզուլլահի վերջնականապէս ինկած իյլալուն չհաւատալը, արտաքնայարդար ձեւակերպութիւն մը ունենալով պաչմաքարզաեէ Ակի էֆէնտի նոր դեսպանին անունովը։ Սակայն ամբոխավարներ կը փութան Աւետիքի անձին տիրանալ, և երկու օր արգելական պահելէ ետքը, յուլիս 22'ին կը փակեն զայն Եէտիքուլէի աչտարակը, պետական անձերու բանտը, ուրկէն ներքին Օթմանեան թարգմանուած (ՁԱՒ. Գ. 744)։ Աւետիքի փոխանորդ Յովհաննէս Ձմիւռնիացին ալ կը փնտռուի (ՁԱՒ. Գ. 745), ինչ որ կաթոլիկներու դրգռութեան նոր փուռ մըն է, ուր անոր անձնաւորութիւնը բնաւ նշանակութիւն չէր կրնար ունենալ ապստամբ ամբոխավարներուն համար (§ 1863)։ Բայց Ձմիւռնիացին արդէն ժամանակին փախած և հետացած էր։ Աւետիքի բանտարկութիւնը, իրեն պաշտօնանկութիւնն ալ չենթադրեր, վի ամէն իշխանութեանց տակնուվրայ եղած ատեն, նոր ընտրութեան միջոցը կը պակսէր. ուստի իբր երկամեայ միջոց մը բացարձակ անիշխանութիւն կը տիրէ ազգային չրջանակին մէջ ալ։ Իսկ քաղաքական չրջանակը բնաւ բարեփոխութիւն չկրեր, մանաւանդ երբոր Մուսթաֆա սուլտան իւր մայրաքաղաք պատը կը յետադէ. որուն վրայ մայրաքաղաքի մէջ 200,000'ի մօտ գինեալ խռովարարներն (ԹՕՐ. 58) մուտ մը՝ յուլիս 29'ին ճանապայ կ'ելլէ Ադրիանուպոլիս երթալ։ Իրենց հետ կը միանան այնտեղ գտնուող Եէնիչէրի գունդերն ալ, և Մուսթաֆայի գահընկեցութիւնը կը վճռուի 1703 օգոստոս 11—22'ին, եղբայրը Ահմէտ Գ սուլտան կը հռչակուի, և գահընկէցը կը փակուի Ֆֆէ, որ է արքայազուններուն վանդակապատ արգելարանը, ուր 4 ամիս միայն կ'ապրի և դեկտեմբեր 20—31'ին կը մեռնի (ԹՈՒ. 319)։ Նոր կայսրն Ահմէտ Գ ամէն գիջողութիւններու պարտաւորուեցաւ խռովարարները հանդարտեցնելու և չանելու համար, մինչեւ իսկ սեպտեմբեր 6'ին կոստանդնուպոլիս գալուն առթիւ, նախկին պէհլեւտ Ֆէյզուլլահն անոնց ձեռքը յանձնեց, որ զայն սպաննելէ և մարմինը յօշոտելէ ետքը, փոխանակ թաղելու ծովը նետեցին։ Աւետիք տակաւին կը մնար Եէտիքուլէի աչտարակը, և պատրիարք չկար մէջտեղ, ուստի մեծամեծներ նոր եպարքոս Տամատ Հասան փաչայի դիմեցին, և պետական հրամանով նորէն երկու պատրիարքութիւնները բաժնեցին։ Կոստանդնուպոլսոյ պատրիարք անուանուեցաւ Դիոնուսիոս Ե պիսկոպոս Զէյթունցի, Ամասիայի ալ կոչուած և կայծակ մականունեալ, որ երբեմն Երուսաղէմի անուանական պատրիարք էր եղած (§ 1847)։ Իսկ Երուսաղէմի պատրիարքութեան մէջ վերահաստատուեցաւ Մինաս Համդեցին, որ կ-Պոլիս կը գտնուէր,

և իսկոյն ուղեւորուեցաւ կիլիկիոյ նախկին կաթողիկոս Գրիգոր Պիծակի հետ (§ 1816)։ Սա Հռոմ դիմած էր մեծամեծ ակնկալութեամբ, բայց կ'երեւի թէ յուսախաբ եղած կ-Պոլիս էր դարձած, և այս անգամ յանձնառու կ'ըլլար Երուսաղէմ երթալ իբրեւ Մխիթարի օգնական։ Աւետիքի պաշտօնապետութիւնն ու Մխիթարի ու Գալուստի անուանումները նշանակուած են 1703 սեպտեմբեր 8'ին (ՍՐԳ.), որ է Ատուածածնայ Մինդեան տօնին օրը, այն տարի Յայլի պահոց չորեքշաբթիին հանդիպած։ Մխիթար Համդեցին Երուսաղէմէ դառնալէն ետքը (§ 1856) կ-Պոլիս մնացած գիտէինք մինչեւ նորէն պատրիարքութիւնը ձեռք անցընելը, որ միեւնոյն տարին տեղի ունեցաւ։ Բայց միւս կողմէն կը գտնենք, թէ այդ միջոցին տեղի ունեցած է Յարութիւն Էքսէրճեան սարկաւագին գրածը, որ ըստ վկային Ւոլոյ, դէպի Պետրոս Մխոյ հնչպէսին սրբոյ Նրսոսդեմի՝ եղեալ է սորբ էջմիածին, ոչխարյան քառով է կոչ սորբ Նրսոսդեմ, հառաչանաց տաղ մը կ'երգէ (ԷՔՍ.)։

ԱՒԵՏԻՔ ԱՔՍՈՐԵԱԼ

1866. Որչափ և բանտարկուած և պաշտօնանկ եղած, մեծ էր տակաւին Աւետիքի համակիր չարժումը ժողովուրդին մէջ, ուստի հակառակութեան ցոյցերով ընդունուեցաւ Մայր-եկեղեցւոյ մէջ Գալուստի պատրիարքութեան համար աւագերէցին ծանուցումը, որ այդ պատճառով խոչոնգանքի ալ ենթարկուեցաւ, և ամէն կողմ թնդացին՝ Ուռ վԱՒԵՒՔ վուրդապետն ենդրեմ ազազականները (ՁԱՒՐ. Գ. 745)։ Յէրիոլ դեսպան և հռոմէականներ հազիւ ձեռք անցուցեր էին Աւետիքի անպաշտպան մնալուն պատճառը, ուստի գեօպէնին անդօլ ընկճելը (ԹՕՐ.59) հապարքոսը հանեցաւ, ոչ միայն Աւետիքի կուսակիցներէն 15 հոգի անմիջապէս է ձօսյօնքեան ընդ բանտարկել, այլեւ Աւետիքը հետապնդել ու ձերբակալել։ Ուստի ձերբակալները հասեր կապուած, և վիզը չուան ձգուած, եկեղեցւոյ հանեցին և նաև դրին Ավրատ կղզին տանելու համար (ՁԱՒՐ. Գ. 745)։ Ծիչուած աքսորավայրը փոքրիկ և գրեթէ ամայի կղզի մըն է Ասորիքի հզերքը, Լատակիոյ և Տրիպոլիսի մէջտեղը, Եւրոպացիներէ Ապրտոսս դրուած աղաւաղութեամբ (ԹՕՐ. 59), և է հին Արատոս կղզեակը, որ Ռուատ ալ կը կոչուի։ Բայց Յէրիոլ այսչափով չգոհացաւ, և չդադարեցաւ Աւետիքը հալածելէ, և իր ազդեցութիւնը դեռ ըստ ըստվ, ամենամեծ և խոր չէնութիւնը գործելէ չդադրի կը դնէ Աւետիքէ բերի Անոր ատոր ու քանդարկութիւնը հնար եղածին չափ դիմադրել ընելու կ'ալիսի, և ձանձ քրքրութեամբ մը, որուն ազդեցիները մերթ կը վերանէ ապրիլ համարելու, երբ ընդն ինչ փոփոխուելով իր նամակներով, և հարկ կը համարի իր ընկը կրկին լծուն մարդ քանդիլ մը դէմ հանել պալ։ Այս անգրութիւնը Յէրիոլ իր նամակներուն մէջ կը հայհոյէ, ատանց ամենին ցուցնելու, որով ամէն ոք է ըստ կը փոփոխ ընդ ազդացնելու խորհ մը (ԹՕՐ. 60)։ Աւետիքի եկեղեցուէն հանուիլը պէտք է նշանակել սեպտեմբեր 11'ին, Յայլի նաւակայիքին, զի յուլիս 22'էն հայտնելով 51 օր մնացած է ահարկու աչտարակին մէջ (ՁԱՒՐ. Գ. 745)։ Իսկ թէ երբ հասաւ աքսորավայրը, որոյ նշանակուած չենք գտներ, այլ ամիսի մօտ տեւած կ'ըլլայ կ-Պոլիսէ մինչեւ Ավրատ ծովագնացութիւնը։ Աքսորավայրին մէջ ծոյլ ի գործ, կը գրէ ինքն (74 ԱՐՐ. 153), և անշուշտ չատ խստամբեր և տագնապալից եղած է աքսորավայրին մէջ անցուցած տարին, թէպէտ յիշատակներ և մանրամասնութիւններ կը պակսին։ Սակայն վերեւ յիշուած պարագաններէ, և մանր ու ճախճախուտ նկուղի մէջ փակելու համար՝ Յէրիօլի կողմէ եղած թելադրութիւնը, բաւական են իրր նմոյշ ծառայել Աւետիքի կրած ծանր նեղութեանց։ Հռոմէականներ իրենց մէկ ոմանց՝ դաւանութեան առիթով կրած նեղութիւններէն խոստովանողական և մարտիրոսական արժանիքներ կը կազմեն. Աւետիքին ալ՝ կաթոլիկ Յէրիօլի թելադրութեամբ և իր դաւանութեան պատճառով կրած տառապանքը՝ նոյն չարքին անցընելու իրաւունք չունինք արդեօք։

1867. Գալուստ կայծակ թէպէտ պաշտօնապէս և պետական հրամանով պատրիարք անուանուեցաւ, սակայն խաղաղ պաշտօնավարութիւն չունեցաւ, վասն զի Աւետիքի հետեւողներ չդադարեցան երբեք անոր անունը տալէ և զայն աթոռ վերա-

դարձնելու ջանքերէ, երբեմն ողոքական աղերսագիրներով, երբեմն դրամական խոստումներով, և երբեմն ալ

ԳԱԼՈՒՍՏ ԵՒ ՆԵՐՍԷՍ

կայծակին դէմ ամբաստանութիւններով։ Սակայն մէկ կողմէն նախկին Ֆէյզուլլահնանի մը դէմ նախապաշարում հակակրութիւնը, և միւս կողմէն Ֆէրիթ դևսպանին և Լատին կրօնաւորներուն և կաթոլիկացում խմբակին ճիգերը՝ ապարդիւն կը թողուին Աւետիքեանց սչխատութիւնները, իրենցմէ չատերուն ալ նեղութեանց և գանակոծութեանց և բանտարկութեանց պատճառ ըլլալով։ Յատկապէս կը յիշուին Աբրահամ վարդապետ Արզումանեան, Մուրթ կամ Ճանպազա մականուանեալ, որ 210 հարուածներով գանակոծուեցաւ Ֆալախայի մէջ, և Պետրոս վարդապետ, որ Աւետիքի քոյրուղարն էր, և ևրեք երգնկացի քահանաներ, որ նոյնպէս սաստիկ գանակոծութեան ենթարկուեցան, և ուրիշ բազմաթիւ անձեր, որոնք Աւետիքի պաշտպանութիւն ընդունուն թիւրապարտութեամբ պատժուեցան (ԶԱՄ. Գ. 746)։ Որչափ Աւետիքի համար համակրութիւն կը յայտնուէր, նոյնչափ հակակրութիւն կար Գալուստի դէմ, և այս պարագային ջանաց օգուտ քաղել Աւետիքեանց խումբէն և Մատթէոս Սարիի սչակերտ Ներսէս վարդապետ Պալաթցի, որ ղեռնէմք դրմոց գործը յաջողցնելու առաջարկը տարածեց։ Եւ իրօք ալ ժողվեցաւ յոլով դրամ, և անով զօրացուց Գալուստի դէմ ամբաստանութիւնները։ Այս կերպով եպարքոսական վճիռով Գալուստ պաշտօնանկ եղաւ և Թիւրանէ բանտարկութեան դատապարտուեցաւ (ԶԱՄ. Գ. 747)։ բայց կ'երեւի թէ չգործադրուեցաւ, վի Աւետիք կը գրէ, թէ ֆեխել էր յԱմասիա (74 ԱՐՐ. 153)։ Թէպէտ Գալուստ տապալեցաւ, բայց Աւետիքի ազատութիւնն ու պաշտօնի դառնալը չիրականացան, վի Ներսէս աւելի օգտակար տեսաւ իր անունով հանել կ-Պոլսոյ պատրիարքութեան հրովարտակը։ Գալուստի պաշտօնը 10 ամիս իսկ չտեւեց, վի 1704 ապրիլ 25'ին, Նոր կիրակիի երկուշաբթին տեղի ունեցաւ պատրիարքի փոփոխութիւնը (ՍՐԳ.)։ Աւետիքանց աւելի պայրատն Ներսէսի ըրածին վրայ, և անոր դէմ բողոքելու և զայն ամբաստանելու չարժուեցան, և որչափ ալ Տատատ Հասան փաշա եպարքոսին օրով չյաջողեցան, և մինչեւ իսկ Տաֆնեցան է քանե և է քանե և է ֆռռայոնիէն ընդ (ԶԱՄ. Գ. 747), սակայն եպարքոսական փոփոխութիւնը կացութիւնն ալ փոփոխեց։ Գալայլը Անմէտ փաշա, որ եպարքոսութեան կոչուեցաւ 1704 սեպտեմբեր 17'ին՝ Հայվեռացի օրը (ՍՐԳ), թէպէտ փոքրագի և ուռնայնասէր անձ մը կը նկարագրուի (ԺՈՒ. 320), բայց գոնէ բանական գործերէ հեռու էր, և խնդիրներ վերջացած տեսնելու հետաքրքրուեցաւ. ուստի չուսով կրցան զինքն համոզել, թէ Աւետիք օտարազգիներու դատաճանութեանց գոհ մըն է, և անոր ներկայութեամբ միայն կրնայ հանդարտիլ Հայրերու մէջ տիրող պատակտումն ու խռովութիւնը։

1868. Այս համոզմամբ Աւետիքի ազատութիւնը հրամայուեցաւ Գալայլըէն, բայց

ԴԱՐՁԵԱԼ ԱՒԵՏԻՔ

Աւետիք իւր իսկ աղաչանքին և ազերսագիրին կը վերագրէ զայն (74 ԱՐՐ. 153), և կը կարծենք թէ անտեղի չէ բոլոր միջոցները իրարու յարակցել, նոյն իսկ դրամին ոյժը։ Ներսէսի պաշտօնանկութիւնն ալ վճռուեցաւ, սակայն Սարգիս դպիր՝ Ներսէս Պալաթցիին 1704 ապրիլ 22'ին պատրիարք ըլլալը նշանակելէն ետքը կը գրէ, թէ Նեբեռս այս կէյն եղեռ 1704 Հոկտեմբեր 6 (ՍՐԳ)։ Այս ակնարկը մեզ կ'առաջնորդէ հետեւցնել, թէ Ներսէսի պատրիարքութիւնը, թէպէտ կարճատեւ, սակայն նոյն իսկ չարունակել չկրցաւ և ընդհատում ունեցաւ, և թէ մինչեւ որ Աւետիք աքսորէն դառնար, Ներսէս նորէն պատրիարքութեան մէջ հաստատուեցաւ. 1704 Հոկտեմբեր 6'ին։ Աւետիքի կիլատակներէն ալ կը քաղենք, թէ Ալբստի աքսորավայրէն երկրէն ետքը չիտակ Բերիա է եկած, ուր Հայոց ժողովուրդն ջոխնայ տրմնոյ պակասութիւնեն կրէն և պատուոյ ճանապարհեցէն դէպի երգնկա, ուր կ'ուզէր երթալ Աւետիք՝ իւր վանքը, որ է կայիսոսի վանքը քաշուելու։ Բայց երգնկա հասնելու երկու օր մնացած, յատուկ սուրհանդակով հրաման ստացաւ կ-Պոլիս դառնալ (74 ԱՐՐ.

153)։ Ներսէս երկրորդ անգամ պատրիարքութիւնէն հանուեցաւ, Աւետիք յանձնառու եղաւ ազգին մէջ հաչտութիւնը վերահաստատել, և այնպէս կրկին բարձրացաւ պատրիարքական աթոռը 1704 դեկտեմբերին (ՁԱՄ. Գ. 747)։ Ամենք ըսին թէ Աւետիք Մինասը Երուսաղէմի պատրիարքութիւնէն անգամ մըն ալ վտարելով Կիպրոս ափսորել տուած և Մինաս ալ Կիպրոսի մէջ մնած ըլլայ (ՁԱՄ. Գ. 748), սակայն Երուսաղէմի մէջ եղող Մինասի պետիմաներ կը յուսնէ թէ նա արդէն վախճանած էր 1704 նոյեմբերին, Աւետիքի պատրիարք հաստատուելէն առաջ, ինչ որ Աւետիք ինքն ալ կը յիչէ, թէ «նա վախճանեալ է (74 ԱՐՐ. 154)։ Իսկ մահուան ամսաթիւը թէպէտ է 14 Նոյեմբեր ՈՀոյ գրուած է, սակայն պէտք է իբր տպագրական սխալ նկատել, և նոյեմբեր 24 կարդալ, որպէսզի արդարանայ յաջորդ օրբաները մնուած ըլլալը (ԱՍՏ. Ա. 429)։ Աւետիք Երուսաղէմի աթոռին պարապութենէն օգտուեցաւ, նորէն Երուսաղէմի պատրիարքութիւնը կ-Պոլսոյ պատրիարքութեան կցելու համար, և սկսաւ չտնեցաւ ուրիչ մը աթոռէն տապալել և ափսորել։ Հռոմէականք կը սիրեն Աւետիքը սիրաս տանել, թէ վա՜ե պահել չըն գովեն զայն եղեւ (ՁԱՄ. Գ. 747), այսինքն 1705 մինչ տուարը չլրացած, բանութիւնց և հալածանաց ձևնարկած ըլլայ։ Սակայն Ֆէրիոլ մինչեւոյն օրերը, այսինքն 1705 մարտ 11'ին կը գրէ, թէ Աւետիք պատրիարք դեռ «Ինձոբ ընթերք կը վարէ, և կրնէ գործերը շատ խոշոր են, և օգոստոս 13'ին ալ կը կրկնէ, թէ Աւետիք քանի՜ նեղութիւն շատ կրելոյ (ԹՕՐ. 63)։ Ասով չենք ուզեր հաստատել թէ Ֆէրիոլ հայտ և վստահ եղած ըլլայ Աւետիքի մասին, ալ միանգամայն Աւետիքի համար կը գրէ, թէ շատ շատ և շատ խորհրդ տրդ է, թէ քանի՜ հանգիստ ընդհատ ընդհատ գինը, և թէ գինը քաղցրանի ընդհատ՜ նիները չի՜ խոցներ (ԹՕՐ. 64)։ Բայց մեզի բաւական է նկատել տալ, որ Աւետիք խոհական բնաւացքով հակառակորդին գանգատանաց առիթ չէր տար, և նոյն իսկ Ֆէրիոլը իրեն համար նպաստաւոր վկայութիւն տալու կը բանադատէր։ Նշանակութեան արժանի է որ Աւետիք մինչեւ իսկ յանձնառու կ'ըլլայ 1705 սեպտեմբեր 15/26'ին, Խաչի նուաստութեան օրը, անձամբ Գաղղիոյ դեսպանատունը երթալ կոնդակոց հետ խաղաղութեան մտերմութեան համար (ԹՕՐ. 64)։ Աւետիք կը պահանջէ որ լատիններ Հայերու դէմ գրգռութեան ատիթները խափանեն, իրենց եկեղեցիները մէջ Հայերու դէմ նզովքները դադրեցնեն, և Հայոց եկեղեցիները մէջ քարոզելու խոյտութիւնը չարաչար չպատժեն և լեզուներն չափաւորեն (ԹՕՐ. 65)։ Պէտք կը զգանք մատնութիւն հրատարակել այդ առաջարկներուն վրայ, որոնք երբ մէկ կողմէն Հայերուն ծայրայեղ նեղութիւնը կ'ապացուցանեն, միւս կողմէն Լատիններուն վրայ պատասխանատուութիւնը կը ծանրացնեն, և գրգռութիւններուն առնոց կողմէ ըլլալը կը հաստատեն։ Եւ տակաւին Ֆէրիոլ կը յայտարարէ, թէ այս խօսքերուն համար՝ պարբերութ կը բաներ բառ պարկել կո՜ պա, երբ կանխա՜ ալ երբեմն կոնդակ համար էլլ պատ՜ (ԹՕՐ. 65)։ Իրրև հետաքրքրական պարագայ յիշենք այլ այցելութեան առիթ նոյն ինքն Աւետիքի գրածը, թէ Ֆռանցիա՜ նախապատ ընտրեալներն ղեկավարն ապրեր նկարել էին է օրան էլլէ պէտէն, պետ և համբուրելոյ փոխարէմբ օրհնէ, և ցանկայի ինչ երբ լինելոյ ոչ պէտէ ազգ ճշմարիտ գիր օրինել պետոյն աթանաճամ, և համբուրելոյ զգաստանալոյ յոգոյ նոր (74 ԱՐՐ. 154)։ Թէ Աւետիք այն օրը այդ զգայուն ու փափաքը ունեցած է, չենք պընդեր. միայն գիտենք որ այդ խօսքերը գրած է Գաղղիոյ խստամբեր բանտին մէջ, երբ իւր ազատութիւնը կը սպասէր նոյն քահանայապետէն, որ էր Լուդովիկոս ԺԴ։

1869. Աւետիք խոհական ջանքերով կ'աչխատէր հաչտարար կացութիւն մը պահովել, առանց հայաստանի դաւան եկեղեցւոյ ինքնութիւնը զոհելու և առանց օտարամուտ կաթոլիկացման ճիգերը քաջալերելու. սակայն այդ ընթացքները իւր ակնկալութիւնները չը պատկեցին, և ազգին ներքին վիճակը հետզհետէ աւելի աղմկալից դարձաւ, գլխաւորապէս Լատինամիտներուն գրգռութիւնները Ֆէրիոլ

դեսպանին պաշտպանութեամբ, և Յակինթոս մեծաւորին թելադրութեամբ (ԹՕՒ. 69), միւս կողմէն պատրիարքութեան թեկնածու եկեղեցականներուն խորամանկ հնարագիտութիւնները, և ժողովուրդին մէջ ալ արմատացած կուսակցութիւնները, աղետալի եղելութեանց դուռ կը բանային հնարզնեալ։ Պարտքի սովորական գործ մըն ալ անագին խռովութեան պատճառ եղաւ նոյն միջոցին։ Մինաս Ամիրեանին օրէն երուսաղէմի գործակալ Երեմիա, հաւանաբար Սահապայեանը (§ 1856), 22,000 դահեկանի փոխառութիւն մը առած էր Անգղիացի վաճառականէ մը (§ 1856), անունը Լօթեան, և որուն երաշխաւոր գրուած էին Սրապիոն (§ 1863), Ալէքսան Քէօմիւրճեան, և Յովհաննէս Ծիրեան, որոնք երկոքան տրտում ձեռքով կ'ըսուին (74 ԱՐՐ. 154), և հաւանաբար կանուխ յիշուած հակառակորդներով կը լրանան, որք են, Յովհաննէս և Յարութիւն Թիւթէլողլիք, Նիկողոս Էսքէրօղլի (§ 1859), Աւաքիլ Շահամիրօղլու, և Ագրահամ Զալուխ (§ 1863)։ Առնք Աւետիքի դէմ դատ կը բանան, որ իբր երուսաղէմի պատրիարք աթոռին անունով եղած փոխառութիւնը վճարէ. իսկ Աւետիք կը դիմադրէ, ըսելով թէ ան չէ ինձմէ, ըսել կ'ելլէ՝ տա՛ր երէ վանէդ վռայ խոշոր չոանէն, գնա՞ր տալ ուրիշ մը կը դուշնան, Աւետիք վաւերականութիւնը կ'ուրանայ, և վերջապէս երեմիայի մեռնելէն ետքն ալ, միւսները դիմել թէ տալի չա՞ տալն է, և ոչ կրցին առնուլ, անոր համար էն պահեն, սպասնալով ըն է ձուլ ըն է ցամա՞ք, կամայ չամայ ղրա՞ տալ կ'առնուա՞ (74 ԱՐՐ. 154)։ Այդ պարտքին խնդիրը կորիզ մը դարձաւ, որուն չուրջը սկսան հաւաքուիլ ամէն անոնք որոնք որևէ կերպով Աւետիքէ ցաւած էին, և որոնց մէջ ինքն կը յիշէ այսպիսիները, որ գնչու կանայ անէն, և գիրկ կին ընդալ տուն։ Այդ խումբին խառնուեցան նաեւ Մարտիրոս Երզնկացի վարդապետը, մականուանեալ Քիւչնանճի, որ իր ձեռնասունն էր, և այս երկրորդ պատրիարքութեան սանն վոխանորդ անուանուած էր, և Հայրապետ Գալիքէսրցի՝ զոր Ուր-ի էնէթ, այսինքն գործակատար նշանակած էր. որովհետեւ երկուքն ալ ի կամ ի խորհուրդ լինելով, և հասոյթներն ալ իրենց ձեռքը ըլլալով, պատրիարքի անունով դրամ կը հաւաքէին, և 8 ամիս էր որ գործի վրայ էին. բայց ինչպէս կը դրէ Աւետիք, մեկ-տակ ցոյց չ'ընան, ղրբած գիշերին, և ինչ պարտ կոտրեցին. ձանձայ ընցա խորտխոռիւն, կիցին հիսապ պեայ (74 ԱՐՐ. 155)։ Ահա այս երկուքին ալ Աւետիքի դէմ ելլալուն պատճառը։

1870. Աղգին մէջ արծարծուած հակառակութիւնները գնեցիկ առիթ էին Գաղղիացի դեսպանին՝ անունք ԱՒԵՏԻՔԻ և ԳՈՐԾԵՐԸ ուսքանզուս բոլքոքելու, և ամէն հնարաւոր միջոցներով Նայնէկ Հայոց գլխին հակառակորդներ յարուցանելը Աւետիքի դէմ։ Այդ խումբին կը խառնուի նաեւ Մատթէոս Մարի, կիլիկիոյ պահազուրկ կաթողիկոսը, որ այնուս կիլիկիա դառնալէն յոյսը կտրած, ուր Պետրոս Բերբերեան զօրաւոր կնոջով հաստատուած էր, աչքը դարձուցած էր կ-Պոլսոյ աթոռին, և լատինամիտներու օգնութեամբ կը յուսար նպատակին հասնիլ։ Մինչեւ իսկ Ֆէրիոլ՝ դեսպանատունը կը հրաւիրէ զայն, և իր ազգեցութեամբը և խորհուրդներովը կ'օգնէ անոր (ԹՕՒ. 66)։ Անկէ կը սկսի Մատթէոսի ալ լատինամիտ կողմը հակիլը, մինչ անկէ առաջ Աւետիքի պաշտպաններէն էր, ինչպէս տեսանք Մարքիսօրեայի դիմաւորութեան (§ 1859), և տեղական առանձին կայութեան երթալուն առթիւ (§ 1862)։ Աւետիք ինքն ալ իւր յիշատակարանին մէջ իրեն դէմ լարուած մեքենայութեանց մասին տեղեկութիւններ կու տայ, բայց ինչպէս ելլէն կը յիշէ, որ իրեն դէմ հակառակութիւններ կը գրգռէր, որ նոյեր էր աղբիւր թուրք պաշտօնեաներուն անունք չտալու համար (74 ԱՐՐ. 156), և քանի Ֆրանցօ ելլէ պէկին մասին գանգատի խօսք չըներ, դի Գաղղիացւոց ձեռքն էր ինկած, և անոնցմէ բարիք կը սպասէր։ Միայն անցողակի կը յիշէ Գաղղիացի դեսպանին տուած այցելութիւնը, և իւր մօր երուսաղէմ ուխտի երթալուն առիթ անոր ձեռքով յարմար նաւ մը ձարելը (74 ԱՐՐ. 155)։ Սակայն Ֆէրիոլի քննամութիւնները չատ յայտնի են, ամէնէն պատմուած, և իւր իսկ նամակներով հաս-

տատուած են, այնպէս որ Աւետիքի լռութիւնը, կամ լաւ եւս անուններու փոխանակութիւնը, բռնադատեալ զգուշաւորութիւն մը կը յայտնուի։ Պէտք չէ աչքէ վրիպեցընել որ յիշատակարանը գրուած է Գաղղիոյ բանտին մէջ, երբ այլեւս Աւետիք միտքին մէջ որոշած էր Գաղղիայէն դաւանական պահանջներուն հաճոյակատարութեամբ իր ազատութիւնը ձեռք անցընել։ Աւետիք իրաւ իրին խչնամի դեսպանատուն մը ցոյց կու տայ, բայց իզուր Անգղիականը կ'ամբաստանէ, որ այդ տեսակ խնդիրներու երբեք միջամտած չէր, եւ իբր բողոքական, միտք ալ չէր կրնար ունենալ լատին արարողութիւնները եւ պապական կրօնքը պաշտպանել։ Նոյն իսկ պարտաւէր Եւրոպային Լօթրան, Գաղղիացի մըն է հաւանաբար եւ ոչ Անգղիացի, ինչպէս անունին հնչումն ալ կը թելադրէ, եւ անոր ալ ազգութիւնը փոխանակուած է Աւետիքին գրիչին ներքեւ, դեսպանատունին փոխանակուելուն նման։ Աւետիքի երկրորդ պատրիարքութեան տարին լրանալու վրայ էր 1705 տարւոյն հետ, բայց նորքին ազմուկը, եւ Աւետիքի դէմ հակառակութիւնը հետզհետէ կը զօրանար ազդեցիկ եւ գրամատէր դասակարգին մէջ, որուն ոյժ կու տային լատինամիտները, թելադրութիւններ կ'ընէին Լատիններէն, եւ հովանաւորն էր Գաղղիական դեսպանը։ Աւետիքի համակիր էր իրաւ Հայոց հասարակ ժողովուրդը, որ գոնէ անկաշկանդութեամբ կը տեսնէր անոր անխոնջ եւ անվհատ պաշտպանութիւնը Հայ եկեղեցւոյն համար, սակայն այդ համակրութիւնը չէր բաւեր Աւետիքի պէտք եղած պաշտպանութիւնը պատրաստել, եւ առաջն ալ առնուլ այն տարբեր եւ վատ դաւաճանութեանց, որոնք գաղտնաբար կը պատրաստուէին ուղղափառ, բայց եւ խրոխտ պատրիարքին դէմ։

ՆԱՀԱՊԵՏԻ ՄԱՀԸ

1871. Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան չուրջը կատարուած կարեւոր եղելութիւնները, պահ մը մեր աչքէն հեռացուցին Մայրաթոռոյ գործերը, որոնց վրայ վերջին անգամ խօսեցանք՝ Նահապետ կաթողիկոսի Հռոմի հետ կործեցեալ յարաբերութեանց առթիւ, եւ յատկապէս յիշեցինք նաեւ Իսրայէլ Օրիի առաջարկութեանց հանդէպ ցուցած ընդդիմութիւնը կաթոլիկանալու պայմանի մասին (§ 1844)։ Նահապետ սիրով կը տեսնէր ազգային ազատութեան համար ըլլալիք ջանքերուն, միայն թէ անոնք առանց դաւանափոխական պայմանի ներկայանային (§ 1846)։ Պատմութիւնը մեղի չէ հասուցած Նահապետի վերջին տարիներէն դէպքերու կամ գործերու յիշատակներ, ուսկից կը հետեւցընենք թէ ամփոփուած եւ քաշուած կեանք մը ունեցած է Նահապետ իր վերջին տարիներուն մէջ, եւ հանդարտութեամբ վախճանած է 1705 յունիս 13 չորեքշաբթի օր (ՁԱՄ. Գ. 749), ինչպէս կը կրկնուի ուրիշներէն ալ (ՄՈՎ. 286), եւ կը հաստատուի երեւանեցիին վկայութեամբ, որ 1705 տարեթիւը կը դնէ առանց ամսաթիւի (ՋԱՄ. 27)։ Ըստ այսմ իբր թիւրիմացութիւն կը նկատենք ուրիշ տեղ 1706 յունիս 13 դրուած ըլլալը (ՍՐԹ.), մանաւանդ որ այսպէս գրողը էջմիածնի մէջէն չէ։ Նահապետի անձնաւորութեան մասին սկիզբէն փոքրիշատէ տեղեկութիւն տուած ըլլալով (§ 1826), կրկին դրելու պէտք չենք տեսներ. բաւական ըլլայ նկատել տալ որ Մտեփանոս Ջուղայեցիի հակաթուրքենէն հետքը (§ 1834), Նահապետ չատ թուլցուցած պիտի ըլլայ իր առաջին խստութիւնները, միաբաններն ալ քիչցուցած պիտի ըլլան իրենց գանգատներն ու պահանջները, տեսնելով Նահապետի յաղթական վերադարձը (§1835). քանի որ վերջին տարիները չատ հանդարտ ապրեցան էջմիածնի մէջ։ Իսկ Նահապետի վերագրեալ լատինամիտ կամ կաթոլիկական միտումը չկրնար բնաւ հաստատուիլ, քանի որ չատ յայտնի է այդ մասին Օրիին առաջարկին չհաւանիլը եւ կաթոլիկանալու մասին ցուցած ընդդիմութիւնը (§ 1844)։ Մանուան պարագաներն ալ յիշատակուած չենք գտներ, միայն գերեզմանը յայտնի է իրաչէն վանքին, Շողակաթի բակին մէջ։

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՅԱՊԱՂՈՒՄԸ

1872. Աւելի կարեւոր կը նկատենք հետազնել յաջորդի ընտրութեան յապաղումը, որ 1705 յունիսէն մինչեւ 1706'ի վերջերը երկարած է, եւ այսպիսի նշանաւոր միջադէպ մըն ալ ցարդ առանց բացատրութեան մնացած

է, այնպէս որ հետազօտողներն ալ սխալուած են դրել, թէ յաջորդման ԵՐԿԱՐՔ ԴԷՂ չունի (ՋԱԱՐ. Բ. 40)։ Մեր տեսութեամբ պէտք է յստակութեամբ վերագրել այն գժտութեան՝ որ տեղի ունեցաւ Մաւիսանոս Ջուղայեցիի հակաթոռութենէն, և երկուքի բաժնած էր Արեւելեան վանդապետանոցն իւսմբը, իսր անջրպետ մը ստեղծելով Մայրաթոռի և Նոր-Ջուղայի բաժիններուն մէջ, և որ բոլորովին դարմանուած չէր նահապետի կենդանութեան։ Ջուղայեցի բաժինին գլուխ կը գտնուէր Ալեքսանդր Ջուղայեցին, նոյն ինքն որ Մաւիսանոսէ առաջ էջմիածին էր եկած անոր կողմէն նահապետ վտարելու (§ 1834), և որ հարկաւ չէր կրցած ներել նահապետի պայապան Մայրաթոռցիներուն՝ Մաւիսանոսի ազետալի վախճանը (§ 1836)։ Ջուղայեցիք անչուչտ հետամուտ էին իրենց ձեռքն անցընել Մայրաթոռի արտասահմանեան, որ պահ մը իրենցմէ եղած էր Ամենապրին և Եղեսացիին կաթողիկոսանալովը։ Ջուղայի կարող և ազդեցիկ իշխանաւորներն ալ հարկաւ ամէն միջոց գործածելին, որ իրենցմէ դուրս մէկ մը չկարենայ արքունական հաստատութիւն սահայ։ Կ-Պոլսոյ հայութիւնն ալ, որ կարեւոր դեր ունէր այդ պատգամներուն մէջ, Աւետիքի վերջի օրերուն չտրամադրեցաւ երեսէն՝ չէր կրնար Մայրաթոռի կացութիւնն մտադրութիւն դարձնել, և քիչ ետքը վրայ եկող Աւետիքի արկածը բոլորովին անհնար կը դարձնէր կաթողիկոսական աթոռին և ընտրութեան մասին հոգածութիւն ունենալ։ Այդ ամէն տատամսութիւնները իրարու խառնուելով, և փոխադարձաբար իրարու ճիգերը չեզոքացնելով, պատճառ եղած են ընտրութիւնը օրէցօր յետաձգելու, և արդելած են ընտրելիի մը վրայ համաձայնութիւն գոյացնելու։ Նոր կաթողիկոսի աթոռ բարձրանալու տարին՝ երեսանեցիէն Հայոց 1156 թուականը զբաղած ըլլալուն, ոմանք 1707'ին կարծեցին յետաձգել ընտրութիւնը, սակայն պէտք է դիտել որ 1156'ի սմանորը 1706 սեպտեմբեր 26'ին հանդիպելուն, յաջորդ ամիսները միեւնոյն 1706 տարւոյն մէջ կը մնան։ Մեզի մնաք է նաեւ Մայրաթոռոյ վիճակը՝ տարիէ աւելի տեւող աթոռոյ պարապութենէն մինչեւ, և ոչ ալ կը գտնենք իբր տեղեակ գործերը վարող եպիսկոպոսին անունը, որ հարկաւ նահապետի հինաւուրց ընկերներէն կամ երիցագոյն ձեռնասուններէն մէկն էր։ Ընդ պիտոր թէ էջմիածնի դիւանները մէջ անձանօթ մնացած յիշատակներ կը գտնուին արդեօք. միայն թէ մինչեւ այս օր ասոնցմէ դրողներն ալ այդ եղելութիւնները լուսաբանած չեն, և նոյն իսկ երեւանեցին ալ բացատրութիւն մը տուած չէ (ՋԱԱՐ. 27), թէպէտ և վերջապէս ամոց չափ աթոռին անկողնակից մնացած բլլալը կը հաստատէ (ՋԱԱՐ. 81)։ Բայց եթէ պարապութեան միջոցին Մայրաթոռի յիշատակներ կը պակսին, Կ-Պոլսոյ աթոռին մէջ կարեւոր և անօրինակ եղելութիւններ տեղի ունեցած են, և կ'անդրնդնք անոնք պատմել։

1873. Աւետիքի դէմ միաբանած հակառակորդները (§ 1870) վերջապէս անոր կարեւոր պատրաստութեան ձեռնարկած էին, և յայտնի կամ դաղտնի ամէն միջոցներ կը գործածէին որպէսզի իրենց նպատակին հասնին։ Աւետիք լաւ կ'տեսնէ թէ Լօթրեանի պարտքին երաշխաւորները, յաջողած են և ղբօսփն չքեաել են է վանէց վրայ, որ է ըսել վինքն տեղի պիտի դնեն, և տեսլ գանձնկեցութեան առիթ պիտի պատրաստեն։ Կառավարութեան կողմէն ալ իրմէն կանխիկ կը պահանջէին ղբօսլոյ փոխան ղիքի գրածն, պատճառելով թէ ֆո փեղյգ Ե մանոպլէգ ցանկոցը կոյ, և Աւետիք վտանգը անցընելու համար կը պարտաւորուէր պարտք բնել և վճարել (74 ԱՐՐ. 155)։ Սակայն տագնապը ատով ալ չանցնիր, և Աւետիքի կացութիւնը հետզհետէ կը վտանգուի։ Օսմանեան կառավարութեան ընթացքն ալ հետքանգուած խիստ կը պատնայ Եւրոպացւոց և Եւրոպականութեան բարեկամներուն դէմ, մանաւանդ երբ Գալլիոյ Ազմէտ և Պալիաձի Մէհէմմէտ Եղարքանները կարճատեւ պաշտօնավարութենէ ետքը, պաշտօնի կ'անցնին Զօլղուղ Ալի փաշա, ուղղութեամբը խիստ և բնութեամբը խստասիրտ անձ մը (ՓՈՒՐ. 321)։ Քանի որ ժամանակին անցնող բարեւրանքը էրնեկեան բլլալն էր, Աւետիքի հակառակորդներն ալ նոյնը կը գործածեն

Աւետիքի դէմ, և կառավարութեան բողոք կուտան, թէ էրմենէ ծլլէրն իւլալ կ'անէ, իբր ըն ֆրենկ կ'անէ, վնաս ազէր ընա (74 ԱՐՐ. 155)։ Այդ բանը կը հաստատեն նոյն իսկ Աւետիքը կաթոլիկներու հալածիչ ներկայացնել ուզողներն ալ, և կը պատմեն թէ նպարքոսը Աւետիքը յանդիմանած ըլլայ, թէ Աբդ այժմ ֆլանի կոֆր լինել ֆրենկց (ՁԱՐ. Գ. 748)։ Պատմութեան կարգին առ ջեւ չանցած, պէտք է մտադրութիւն դարձնենք Ձամչեանի յառաջ բերած մէկ պարագային վրայ ալ, թէ Աւետիքէ ետքը Մատթէոս Սարի, Սոյ դանազուրկ կաթողիկոսը պատրիարքութիւն վարած ըլլայ երկու ամիս, և իրմէ ետքը այդ պաշտօնին անցած ըլլայ Մարտիրոս Քիւրէնանճին 1706 փետրուար 11'ին (ՁԱՐ. Գ. 750)։ Սակայն Աւետիք իւր յիշատակարաններուն մէջ կը յիշէ, թէ անոնք որ իւր պաշտօնանկութիւնը կը պահանջէին, Քիւրէնանճին կ'առաջարկէին, թէ ահա այս Մարտիրոս վարդապետն ֆոն էրմենի է, դէլ լա է, զոնա կոնդրենդ (74 ԱՐՐ. 155)։ Աւետիք լսելով թէ բողոքը ընդունելութիւն կը գտնէ, նպարքոսութեան արկղակալին էր դիմէր, կոնդիկ վճարումը ետ ուզելու։ Ու ահա հինգ օրն, երկու բարեպաշտներ ներկայացուցեր էին իրեն հրաման, ըն Աւետիք ֆանըլ ֆոխէ՝ Պէհճա ապասընա տալիպենք (74 ԱՐՐ. 156), որ է, Աւետիք պաշտօնանկ պատրիարքը Թէոնեստոս կղզին բերդարգել ընելու հրաման։ Իսկ այս աւուր թուականը կը գտնենք նոյն Աւետիքի ուրիշ յիշատակարանին մէջ, թէ 1706 փետրուար 2'ին էր (00 ԲՆԱ. 143)։ Այդ հաշուով փետրուար 2'է 11 Մատթէոս Սարիի երկամեայ պատրիարքութեան միջոց չմնար, և հարկ կը լինի անոր անունը ջնջել կ-Պոլսոյ պատրիարքներուն ցանկէն, ինչպէս ուրիշ դիւցողներն ալ րրած են (01 ՕՐԱ. 122)։

1874. Աւետիքի պաշտօնանկութենան և պատժապարտ աքսորման չարժառիթը միայն ազգային դիւանաւորներուն եւ Լօթրանի պարտքէն ի թեներտոս դէպարագիտներուն բողոքը չէր, այլ անկէ աւելի ուժգին և ազդեցիկ էին Գաղղիոյ դեսպանին բողոքները, որ Աւետիքը կը ներկայացնէր իբրեւ Լատիններուն ազգութենան և կրօնքին անարգող, Լատին և յատիններուն անհատներու դէմ անիրաւող, և բարեկամ տէրութիւնց յարաբերութիւնները խանգարող, ուստի պաշտօնապէս կը պահանջէր անոր պաշտօնէ հանուիլը և խստիւ պատժուիլը։ Այս զիմումներէ և ժողովրդականց բողոքներէ դրդուած, Ջօրլուլուն պէտք կը դգար Աւետիքի վրայ ծանրանալ, և զայն գործէն և կ-Պոլսէ հեռացնել։ Ձամչեանն կ'աւելցնէ նաեւ, թէ նա ֆան հոլանէլ ընա, և սբէնկլա ի քանի մահապրտոց, ի Խանկըլըսարայ, որ է Աբեան ֆաքը, հրամայեց ազատել ի Թենեստոս (ՁԱՐ. Գ. 748)։ Ուրիշ առնդ մըն ալ պրուած է թէ 1706 փետրուար 14/25'ին պատրիարքութենէ հանուելով, Եբեսոֆոս եպիսկոպոս ազատ ըրկուած ըլլայ ապրիլ 9/20'ին (ԹՕՐ. 67)։ Սակայն Աւետիք իւր յիշատակարաններուն մէջ յայտնապէս 1706 փետրուար 2'ին կը դնէ Թենեստոս աքսորուիլը (00 ԲՆԱ. 143), և 8 օրէն նոն հաստնիլն ալ կը գրէ, թէ երկու ֆոթըռօվկա ասըն օր ֆնացած ի Պահճա ապասին լալեցին (74 ԱՐՐ. 155), որ է ըսել փետրուար 10'ին հասած է իւր աքսորավայրը։ Թենեստոս ըրկուիլը նշանած մըն է, թէ մեղմօրէն վարուած է Ջօրլուլուն Աւետիքի հետ, ինչ որ անպատմ մըն ալ անհաւանական կը ցուցնէ գանակոծութիւնն ու Գանլըլըսարի բանտարկութիւնը։ Թենեստոսի մէջ մնալը տեւած է երկու ամիս ի քիչըն (00 ԲՆԱ. 143), որ է ըսել մինչեւ ապրիլի կէսը։ Աւետիքը բերդարգելութեան մէջ Թողլով, դաւանանք մայրաքաղաքին եղելութեանց։

1875. Աւետիքի պաշտօնանկութենէն քանի մը օր ետքը, փետրուար 11'ին, պաշտօնապէս պատրիարք հռչակուեցաւ Մարտիրոս Ուրֆալեցին, մականուանեալն Քիւրէնանճի, որ Աւետիքի բարերարեալ ձեռնասունն և անոր փոխանորդն էր ըլլալէն ետքը, իւր բարերարին դէմ էր դարձած, երբ Աւետիք անոր խարդախութիւններն ու գողութիւնները երեւան հանելով, պաշտօնէն հեռացուցած էր (§ 1869)։ Մարտիրոս մէկ ալտըն էրէսպանէ ըզքէ էր (74 ԱՐՐ. 155) եղած Երզնկայի մէջ, զոր Աւետիք քովը առած և կրթած էր։ Մարտ-

տիրոս ամուսնացած և քահանայ էր ձեռնադրուած Աւետիքէ, և այրիանալէ ետքը արեղայ և վարդապետ և Զմիւռնիոյ նուիրակ էր եղած Աւետիքի առաջին պատրիարքութեան ատեն, և երկրորդ պատրիարքութեան ատեն ալ պատրիարքական փոխանորդ էր անուանուած։ Բայց Մարտիրոսի փոխանորդութիւնը Աւետիքի պատրիարքութեան հետ անմիջական եղած պիտի չըլլայ, զի 1705 յունուար 3'ին կը յիշուի, թէ Տէր Եսայի, հայր Փափազլեան Տաճատէի Պօղոսին, Ֆէթվէ եղեա Աւետիս պատրիարգին (ՍՐԳ.)։ Իսկ Մարտիրոս Եսայիի յաջորդած կ'ըլլայ, և ամենայն ինչ Աւետիքէ ստանալէ ետքն ալ այդպես խոչընդոտած անոր դէմ (74 ԱՐՐ. 155)։ Հնար չէր Մատթէոս Սարին ալ անվարձ թողուլ, որ ձեռնտու եղած էր Աւետիքը տապալելու. ուստի անոր ալ յատկացուեցաւ Երուսաղէմի պատրիարքութիւնը, ոչ իբրեւ կատարեալ Երուսաղէմի պատրիարք, այլ իբր պարզ Երուսաղէմի առաջնորդ, ձեւ մը զոր կանուխէն ստեղծած էր կաֆացին (§ 1787), կ-Պոլիս մնալու և Երուսաղէմի դարպասները իւրացնելու իրաւունքով։ Քիւրհանճին և Սարին իրարու հետ միաբանած, և Աւետիքի հակառակորդներուն ձեռքով յաջողութիւն գտած, պարտաւոր էին իրենց բարեկամները բախտաւորել, և հալածել անոնք որ իրենց նպաստաւոր չէին, այսինքն, Աւետիքի կուսակիցներ էին։ Այդ կարգին կը յիշուին Մանուէլ ու Ծովհաննէս քահանաներ, հաւանաբար ուրիշ առիթ յիշուած երգնակայինները (§ 1867), և Մարգար Պարթեւազն ու խօճա Սահակ իւխանաւորները, թէպէտ որոշակի ճշդուած չենք գտներ անոնց դէմ եղած գործերը (01 ՕՐԱ. 122)։ Մարտիրոս, որ պատրիարքութեան անցաւ, տակաւին եպիսկոպոս ձեռնադրուած չէր, և ձեռնադրելու հարկ ալ դիւրութիւն չկար, զի էջմիածինի աթոռը պարապ էր տակաւին Նահապետի մահուընէ ետքը (§ 1872)։ Ատոնց չանցնելու համար անոր ալ դարմանը մտածեց Մարտիրոս, և որոշուեցաւ որ Մատթէոս Սարի՝ Սսոյ դահաձուրկ կաթողիկոսին ձեռքէն ձեռնադրութիւն ընդունի։ Աչխարհամատան կիրակէին, որ ապրիլ 7'ին կ'իյնար և միանգամայն Աւետման ծոն էր, Մայրեկեղեցւոյ պըսպ բոլոր սարկաւագները չկրնալով ներկայ գտնուիլ, այսինքն է ձեռնադրութեան կոչումին պէտք եղող հօծն աստիճանները, և այն տեղ Սարի կը ներկայէ Սսոյ՝ Էրէց Եպիսկոպոս Յեռանգրեցոց, Քիւրհանճին ուրիշ երկու ընկերներ ալ տալով, որոնք յանուանէ յիշուած չեն։ Եպիսկոպոսական ձեռնադրութիւն մը նորութիւն էր կ-Պոլսոյ համար, ուստի ըմբռնելի բան մի եղեալ է նոյն պեսպանն, որ պետութեն ապուշ ճայեալ հիացեալ էին (ՍՐԳ.)։ Բայց եթէ նորութիւնը հետաքրքրական էր, նշանակութիւնը տաճկի չեղաւ, որովհետեւ կամ ղիկոսական իրաւասութեանց չփոփոխութիւն յառաջ կը բերէր։ Ուստի պետեռնէն պատճառեց չարչրա, (01 ՕՐԱ. 123), և փոխանակ Մարտիրոսի դիրքը ամրացնելու, զայն աւելի տկարացուց, որովհետեւ փաստ ընձեռեց Աւետիքի կուսակիցներուն Մարտիրոսը իբր կանոնազանց և իբր ապօրինի ձեռնադրուած նկատելու։

ԱՒԵՏԻՔ Ի ՄԷՍԻՆԱ

1876. Ուրիշ նոր պարագայ մըն ալ եկաւ եւաքանզեւս վտանգել Քիւրհանճիի դիրքը։ Թէոնետոսի բերդը բանտարկեալ Աւետիք՝ և կ-Պոլսոյ մէջ Աւետիքի բարեկամները, չարունակ հետամուտ էին ազատութեան չնորհը ձեռք բերել, և այդ նպատակով, կ'ըսէ ինքն, պըղտհալ ոսղբիեցի է Կոստանդնուպոլիս Թոռթէն Դեղին, ըի հրման ընդհեռ ինչ, ազատութեան տալ, և գնալ է սուրբ յերուսաղէմ։ Իրեն բարեկամներն ալ հարկաւ նիւթական միջոցներով աշխատեցան զօրացնել ազերսագիրին ազդեցութիւնը, և հակառակ դեսպանին ու լատինամիտներուն ընդդիմադիր ջանքերուն, ազատութեան հրամանը ստացուեցաւ (74 ԱՐՐ. 192), ինչ որ նոյեմն Զօրլուլու եպարքոսին Աւետիքի հանդէպ բարեացակամ տրամադրութեան նշանն էր։ Բայց երբ Յերիթալի ուղղակի թշնամութեան ճիգերը ապարդիւն դարձան, վատ նենգութեան միջոցները ձեռք առնուեցան, զոր Եւրոպացի դիտիչն ալ՝ ազեց էրատոն ակնեն չանգուածն բանբերութեան կ'անուանէ (ԹՕՐ. 66)։ Աւետիք Թէոնետոսէ Երուսաղէմ՝ ծովագնացութեամբ պիտի երթար, և հետզհետէ պիտի հանդիպէր Քիոս, Հռոդոս ու Կիպրոս։ Յերիթալ մտածեց այդ ճանապարհու-

թեան միջոցին նեղութեամբ հափշտակել տալ Աւետիքը, անոր անձին տիրանալ, և զայն Լատին հաւատաքննութեան ատեանին մատնելով անյայտացնել։ Իր խորհուրդին գործադիր ընտրեց, Քիոս կղզւոյ գաղղիական փոխհիւպատոս Պօնալը (Bonald), իսկ հրահանգը անոր հասցնելու համար ճանապայ հանեց Ծիսաւանի միաբաններէն Թարիյօն արեղան (Թ0Ր. 68)։ Ապրիլի մէջ կիրակի օր մը, թերեւս նոյնիսկ ապրիլ 7 Մարտիրոսի եպիսկոպոսացած օրը, եպարքոսութեան բարապան մը Աւետիքի յանձնեց հրաման ա-ղաթօ-ղէեան, պաշտօն ունենալով անոր ընկերանալ և ճանապարհել մինչ Ռոտոս, իսկ անկէ երուսաղէմ երթալու համար կ'երեւի թէ բարապանը պիտի փոխուէր։ Քիոսի համար նաւ մը գտնելով, Աւետիք և բարապանը և մէկ փոքրաւոր չորս օրէն հոն հասան, և յամաք ելան նոր նաւ գտնելու։ Աւետիք միամտօրէն կը գրէ թէ պատրաստ նաւ չկար Հռոդոսի համար և երեք օր սպասեցին (74 ԱՐՐ. 192)։ Սակայն հոն կատարուեցան ամէնէն տգեղ մատնութեան պատրաստութիւնները։ Եւրոպա գացող Գաղղիական նաւը փոխհիւպատոսը ձարեց, նաւապետին հաղորդեց դէսպանի հրահանգները, Թուրք բարապանն ալ կաշառեց, և խեղճ Աւետիք, որ լեզուներն չէր գիտեր և բսաձներն չէր իմանար, միամիտ վստահութեամբ ինքզինքը անոնց յանձնեց, երեք ոսկի ալ նաւուղչէք վճարելով մինչեւ Հռոդոս։ Քիոսէ մեկնելու օրը ճշդուած չէ, բայց մերձաւորապար ապրիլի միջին օրերը պիտի ըլլայ։ Գիշերուան ժամը 5'ին, այսինքն կէս գիշերին նաւը ճանապայ կ'ելլայ գաղտագողի, առաւօտուն կը հանդիպի կղզի մը, վր ֆէոթէ ինչ կ'ուսին՝ կը գրէ Աւետիք, ուսկից պարէն կը հայթայթեն, և միւս օր կը հասնին Տէկիրմինլիք, որ է Սանթօրինօ կղզին։ Հոն Թուրք բարապանը դուրս կ'ելլայ և այլ չպատնար։ Երկու օր եւս նաւագնացութիւնէ ետքը, բռնի դուրս կը հանեն Աւետիքի փոքրաւորը, և կղզի մը կը թողուն, և խեղճ Աւետիք անծայր մնացած, կը սկսի մտածել թէ նաւապետը վր ինչ պէտ առնէ, ձգե՞ն կու չէ՞, կու սպանէ՞ն, ֆէրեցնէ՞ն։ Այլեւս առանց օգնականի, գերի կ'իյնայ նաւապետին ձեռքը, որ կը խլէ կ'առնէ ամենոր ունեցածներն ալ, որոց մէջ նաեւ ղուրբէ խալէ, և կաչիէ կղզեցած պարկ մը, որուն մէջ ունէր 188 ոսկի, մէկ ադամանդ և մէկ զմրուխտ մատանի, ծոցի ժամացոյց, 17 ոսկեթել դաստառակ, և 7 ձեռք ճերմակեղէն։ Աւետիք կ'ուզէ բողոքել, աղաչել, սակայն լեզուներն չհասկնար, ծափ խօսքէն հետ, ես չեմ գիտեր ըն ինչ կ'ուսին, կոյր պղտցել անառնան, խելք պահպահ է գլ ձովս հարկադիր լինելով (74 ԱՐՐ. 193)։ Այլ եւս ուրիշ տեղ չեն հանդիպիր մինչեւ որ կը հասնին Մէսինա քաղաքը (Messina), որ է Ըոպոնել, կը գրէ Աւետիք (00 ԲՆՍ. 143), զի Սիկիլիա՝ Սպանիացւոց տիրապետութեան ներքեւ կը գտնուէր Փիլիպպոս Ե Պուրպոնի թագաւորութեան օրով։ Մէսինա հասնելնին մերձաւորապար պէտք է դնել 1705 մայիսին սկիզբները։

1877. Մէսինայի մէջ ալ Աւետիքը անձին տէր կանգնողը միշտ Գաղղիական հիւպատոս մը եղաւ, Բօլ Կ-ՊՕԼՍՕՑ Սուլիէ (Paul Soulier) ՅՕԻՋՕՒՄՆԵՐԸ անուն, որ զայն փակել տուաւ հաւատափոխութեան բանտը (74 ԱՐՐ. 72), զոր ինքն Աւետիք՝ Նազարէթ, կամ Լազարէթ (Lazzaretto) կը կարծէ (74 ԱՐՐ. 193), որ է վարակեալոց զգուշարան, և ծածկեց զայն այն անուամբ որ եանէն խօսքերեան (74 ԱՐՐ. 72)։ Հինգ ամիս մնաց Աւետիք Մէսինայի հաւատաքննական բանտին մէջ (00 ԲՆՍ. 143), բայց գործածուած խստութեանց մանրամասնութիւնները պատմուած չեն։ Մէսինա հասնելուն կրցած էր Աւետիք իւր վիճակին վրայ լուր հասցրնել Կ-Պոլիս, 1706 մայիս 7'ին Մէսինայէ գրուած նամակով մը (Մեխ. 180), և ոչ Ճէնովայէ (Genova Թ0Ր. 69), ուր բնաւ չեն հանդիպած։ Լուրը տանելու միջնորդն եղած է Սարթալի անուն Ծոյն վաճառական մը (Թ0Ր. 69), զոր ի դէպ է նոյնացնել Աւետիքի յիշատակարանին մէջ յիշուած Սաֆըղօ պօղէլիեանէն հետ (74 ԱՐՐ. 193), որ է Քիոսցի վաճառական։ Ժամանակն ալ կը յարմարի, զի յունիսի սկիզբները լուր կ'առնեն Կ-Պոլսեցիք Աւետիքի օտարներէն հափշտուած ըլլալուն վրայ (Թ0Ր. 135)։ Այս է նոր պարագայն որ եւաքանզեւս կը վտանգէ Քիւլհանեին դիրքը (§ 1876), որ

լատինամիտներուն կողմը կը բռնէր, իսկ Լատիններէն էին անլուր բռնութեան հեղինակները, և չատ ճշմարտանման էր Մարտիրոսի կամակցութիւնը հնթադրել։ Յանկարծական չարժում մը Աւետիքեանց կողմէն՝ Մարտիրոսը կը տապալէ պատրիարքական աթոռէն, և 1706 յունիս 9'ին, Լուսաւորչի կիրակէին, պատրիարքարան կը յանձնուի Միքայէլ Խորխորդցի քահանային, աւելի իբր թեղապահ Աւետիքի (01 ՕՐԱ· 123), զոր ժողովուրդը միշտ իբր պատրիարք կը ճանչնար, քան թէ իբր բուն պատրիարք։ Ինչպէս Փիլհանճիին հետ Սարին ալ խախտուած է իր դիրքէն, այլ Երուսաղէմի համար նոր պատրիարքի ընտրութիւն կատարուած չէ, վասնզի Մինաս Համդեցիի 1704 նոյեմբերին վախճանելէն ետքը (§ 1868), մինչեւ 1718 այլեւս Երուսաղէմ յատուկ պատրիարքներ չունեցաւ, այլ Կ-Պոլսոյ պատրիարքութեան հետ միացուած նկատուեցաւ, և Կ-Պոլսոյ դահակալները Երուսաղէմին ալ կառավարէին ալեբհոան թեղեկագիր և նազըթ, որոնք փերթեր բանալին է վերայ դնելուն և ժողվելէն ետքը (ԱՍՏ. Ա. 429)։ Աւետիքի նեղութեամբ բռնուած և բանտարկուած բլլալուն լուրը ոչ միայն Հայերը զրգռեց, և նոյնիսկ Աւետիքի հակառակ եղողներն ալ ցնցեց, այլ Օսմանեան կառավարութիւնն ալ զայրացուց, և Զօրլուլուն մէկ կողմէն խնդրակներ հանելց դայն գտնելու, և միւս կողմէն սաստիկ սպնդումներով և սպառնալիքներով Ֆէրիոլ դեսպանէն պահանջեց Աւետիքը նոր դարձնել, որ միշտ չգիտնալ ձեւացուց, և ամէն բան ուրացաւ, և միշտ ծոլահէններու ձեռքն ինկած բլլալուն մեղսութիւնը կրկնեց, ինչ որ կաշառուած բարապանն ալ բռած էր առաջ, բայց վերջէն տանջանաց ներքեւ ճշմարտութիւնը խոստովանած էր (ԹՕՐ· 100)։ Սակայն ինքն Ֆէրիոլն է որ իր նամակներուն մէջ կը յայտնէ, թէ վերջապես յետոյ ինքս, ես գինւոը Գողդիս գանել տուի, և հրահանգներս տուի Քիւոլ Խոճա-պաշային (Միսի· 213)։ Բայց իրրեւ իրեն չմոռնանք կ'աւելցընէ, թէ Ծիսաւանց մեծաւոր հայր Յակինթոսն է, որ գինս տպիեց, այլ քահանայն էրեք ընելու (ԹՕՐ· 67)։ Կը յիշուի եւս թէ Հայոց երկու պատուիրակները՝ Փիլհանճին և Սարին, արտօնէ ընթրանք նեռներել ղրկելէ (ԹՕՐ· 104)։ Ֆէրիոլ ինքն ալ զգացած էր, թէ այս պեպէը շատ էրէ է կրնալիկց համար, և անոնց դեմ գինւոյ տուած կ'երեւի հետ եպարտոյին (ԹՕՐ· 103)։ Ինչպէս որ ալ պատահելէը կատարուեցաւ, և կրնալիներէը արտօքէլ վրէժխնդրութեան ենթարկուեցան, խորհրդարանի մը ելաւ, և լրտեսներու Հայոց գլխաւորները քանուելով քանդարկուեցան (ԹՐՐ· 101)։ Հռոմէականներ բողոքներ կը բարձրացնեն իրենցներուն դէմ եղած հրամաններուն վրայ. սակայն եղելութիւնները կը խօսին, թէ որ կողմն է բուն բռնութեան և անգութ անիրաւութեան միզապարտութիւնը, և թէ պետական վրէժխնդրութիւնէ տարբեր բան մը չէին եղած քոսութեան կողմէն հրամայուած կարգադրութիւնները։

1878. Կոստանդնուպոլսոյ մէջ գայրացած յունգումները, գլխի յորդորէին Աւետիքի դահիճները՝ զգուշ

ԱՒԵՏԻՔ Ի ԳԱՂԴԻԱ

չաւորութեան միջոցներ ձեռք առնել, և Մեսինայի մէջ մնալը ապահով չտեսնելով, անձամբ ուզ մը փոխադրել։ Աւետիք ինքն ալ լսեր է, որ Կոստանդնուպոլսոյ Ֆռանցս ելլէ պէին այլ էէր է էրէր ընդունելիցե է Ֆռանցս։ Միտք յայտներ է Սիկիլիոյ Բալէրմօ (Palermo) գլխաւոր քաղաքը փոխադրել, բայց Ընդանիս Ընֆռասըն Փիլիպպոս ի չէ հաւաներ դահիճի մեծ դերը ստանձնել (74 ԱՐՐ· 194), զոր յօժարակամ ընդունած էր Գաղղիոյ մեծանուն Լատովիկոս ԺԴ թագաւորը։ Այսպէս 1706 սեպտեմբերին, Ժուֆբօա Սուլիէ (Jouffroy Soulier) նաւապետին հսկողութեամբ, Աւետիք կը փոխադրուի Մարսիլիա (Marseille), ուր հասածին պէս իսկոյն արքունի խիստ բանտը կը բանտարկուի է ընդհան անդորմ՝ էերեց նման (74 ԱՐՐ· 72)։ Իսկ Աւետիք յաւագին չհետեւելով կը պատմէ, որ իմ ըրկէն էռանկ երկրէ չղրկէք, և կառնաս էեւկինեցին, ըմբռնէ և զէլոնիս ածկէցին, ծերկոցոցին, և զՀռոցիել սատակեցէ և զէրէրերս և ընդ ընթս նոյս առին։ Յատկապէս մտրութիւն ածկելուն կը ծանրանայ, զոր Հայոց ազգն կն ածկէր, և իրր կարգազրկութիւն մեղեղոյ, յոյժ յոյժ գժնատես եկաս կ'րսէ։ Նոյն

երևոյ կը փոխադրուին Նէրէլ քանդ Խոր, ուր Ֆաղլ կ'ըսէ թառասուն օր լալէին (74 ԱՐՐ. 194)։ Մօնմօր է եղեր բանտին վերնակացուին անունը (74 ԱՐՐ. 72), զոր հարկ կը սեպենք յիշել, որ չմոռցուի անուր բռնութեան գործադիրը։ Կ-Պոլսոյ մէջ կը չարունակէին թէ պետութեան և թէ ազգին յուզումները Աւետիքը գանելու, և անոր հակառակորդներուն վրայ ծանրանալու։ Թէպէտ Յէրիոլ իւր բոլոր զօրութեամբ անդիսութիւնին կը յայտարարէր, և ինքն ալ գտնելու համար աշխատութիւններ կր խոստանար, սակայն ձեռքի տակէն 1706 սեպտեմբեր 16'ին կ'ըղձայ կր գրէր, որ ծոն սենեակի մը մէջ փակել պահ, որպեսզի քնաց լայս լսենէ, և քնաց ազատութեան լծուած էրթ (ԹՕՐ. 111)։ Այս յուշերն էին հարկաւ որ Լուդովիկոսի կառավարութիւնը կր յորդորէին Մարսիլիոյ նաւարանին նկուղն ալ բանական ծածուկ չսեպել, և կ'որոչուէր զայն փոխադրել Գաղղիոյ հիւսիսակողմը Նորմանտիա և Բրիտանիա գաւառներուն սահմանակցութեան վրայ, Ալանսոնի ծովեզերքը՝ ժայռի մը վրայ բարձրացող Ս. Միքայէլի վանքը, Մօն-Սէն-Միշէլ (Mont-Saint-Michel) անուանով ծանօթ Բենեդիկտեանց հռչակաւոր մայրավանքը, որ յետոյ եկեղեցականներու և պետական անձերու բանտարկութեան յատկացուեցաւ։ Աւետիքը կր խաբէն թէ փարիզ կր տանին անկէ ապատ թողլու համար, և հասարակ աշխարհականի պէս կր հագուեցնեն, ֆէռոփէռը, ղալին, փէռ, սէլ, ֆալ, ղբօ, եաղմօրլօր, և նէպի անուն անձի մը և երկու կրճֆնեներու հետ առանց փարիզ հանդիպելու կր բերին վերոյիշեալ Ս. Միքայէլի վանքը, և առանձինն սենեակի մը մէջ կր փակեն էբէ-էրիէօ'ին (père prieur), այսինքն է վանքին մնծաւորին հրամոդութեան յանձնելով (74 ԱՐՐ. 194)։ Մարսիլիոյ թիարանին քառասնօրեայ բանտարկութիւնն, և Մարսիլիայէ Մօնպէնսիէլ Գաղղիոյ ամրողջ երկայնքին ուղեւորութիւնը հաչուի առնելով, իջեպ է 1706 դեկտեմբերին սկիզբները գնել այնտեղ հասնիլը։ Ինքն ալ էբէ պոբէ կը հաչուէ միչտ անք ինալը (00 ԲՆԱ. 143), մինչեւ 1710 յունուար 8 (74 ԱՐՐ. 194), ինչպէս ինքը կր գրէ, և բստ այսմ ամրողջապար հոն անցուցած կ'ըլլայ 1707, 1708 և 1709 տարիները, անձանօթ բոլոր աչխարհէ։ կ'երեւի թէ Յէրիոլի իսկ չէր ծանուցուած Աւետիքի եղած տեղը (ԹՕՐ. 111)։ Այս տեղ ընդհատելով Աւետիքի վրայ գրելիքնիս պիտի անդնինք ուրիչ տեղեր կատարուած իրողութիւնց, և յատկապէս հայրապետական աթոռին յաջորդութեան, սակայն անկէ ալ առաջ, մեր սովորութեան համեմատ կ'ուզենք քաղել քանի մր ժամանակակից վկաներուն յիչատակները։

1879. Թողին գաւառի Շաղկերտ գիւղի տանուտէր Մալխաս, երբոր պարտական կը

ԿԱՏԱՐԵԱԼ — իներ գիւղին հաչուէն,
ԳՈՂՔՆԱՑԻ — գիւղացոց ճնչումէն ազատելու համար Նախիջեւանի իչխան Մէհէմմէտ Ռիզա խանին կը դիմէ, որ իւր կոյս ու գեղանի աղջիկը անոր որդւոյն Մուրթեզաղուլիին տայ, եթէ գինքն գիւղացւոց դէմ պաչտպանէ։ Պայմանադրութիւնը կ'ընդունուի, և այր ու կին Տաճիկ հարսնեւորներ կու գան աղջիկը Երեւան տանիլ։ Կատարեալ, կամ տաճկական կոչումով Թամամ, կ'ընդդիմանայ, սակայն օգուտ չունենար, ձերբ է տալ, ձերբ է յօթէն, աղջիկը կը տանին Երեւան, ուր Մուրթեզաղուլին, ըղբաբէօղլու ասկավ և արձիվով և գէղովով, բայց աղջիկը միտքը կը դնէ մինչեւ վերջը դէմ դնել, Գլխաբաց հասարակ դառնալ, «ան առջուներեմ Ֆալ կ'ենգանի։ Տունը Հրազդանի ձորին վրայ ըլլալուն, պատուհանէն վար կը նետուի, և ուչադրութենէն գինքն ժողվելով՝ կամուրջը կ'անցնի, կարբիի ճանապան կը բռնէ, և հարցնելով և ուղեւորներու հետեւելով Նորագեղի և կարբիի վրայէն եղվարդ կը հասնի. հոն կը խոստովանի ու կը հաղորդուի կնանքին վտանգը կրնաւելով, և ճանապան կը չարունակէ, ուրիչ տեղ երթալու։ Ով ըլլալը յայտնելով, եղվարդի տանուտէրը Սահակ, իբր թէ Նախիջեւանի իչխանին վրէժխնդրութենէն վախնալով գիւղին իչխանին խորհուրդով, երկու Տաճիկներու հետ ետեւէն կը հասնի, զարդերէն կը մերկացնէ, կը կապէ և Տաճիկներէն մէկուն խանջանովը աղջիկը կը խղդէ։ Մալխաս ետեւէն կը հասնի, մարմինը գտնել կու տայ, որուն փառաւոր

յուղարկաւորութիւն կը կատարեն իբր վրկայունեայ, և Եղվարդի եկեղեցւոյն բակը կը թաղեն՝ կատարեալ Գողթնացի կոյսը։ Կատարման թուականն է 1691։ Քանաքեռցին յատկապէս Եղվարդ երթալով պարագաները ստուգած ու դիրի առած է (ՁԱՔ. Բ. 128—131)։

1880. *Միևնոյն 1691 տարին սեղի ունեցած է Պօղոս Սղերդցի սարկաւագին նահատակութիւնը։ Նեստորական*

ՊՕՂՈՍ ՍՂԵՐԴՑԻ

Ասորի մը տաճկացած լալով՝ հանդիսապէս կը բերեն զայն Հայոց եկեղեցին, չէ ուրացած թէ ընդդէմ եկեղեցւոյն, որուն կը հետեւի ամբոխն ալ, և կը սկսին եկեղեցին քարկոծել։ Մուտն ի վիրապ տօնն էր, և եկեղեցին լեցուն էր, ժողովուրդը կը յուզուի և կը չփոթի։ Այս միջոցիս Պօղոս, նորապսակ սարկաւագ, և բիտասարդական աչխոյժով դուրս նետուեցաւ, ամբոխը ցրուելու, բայց խռնումի մէջ պատահաբար քարէ խոցոխեաց զնոսա և ղբջիղ Նոցա։ Ասոր վրայ զինքն կը ձերբակալեն և դատաւորին առեւանը կը հանեն, որ ուրացութիւն կ'առաջարկէ մահապարտութենէ ազատելու համար։ Պօղոս դիմադրեց, ուստի պահեցին առաջի քանի մը քանի, և վերջապէս ոտքերէն ցցի մը կապելով և չուրջը փայտ կուտելով այրեցին արիասիրտ սարկաւագը։ Մուտն ի վիրապը մարտի 28'ին իյնալով, և առաջի քանի մը ուածը երկու չաբաթի չափ համրելով, զատկի մօտ կրնանք դնել նահատակութեան օրը, որ այն տարի կը հանդիպէր ապրիլ 12'ին։ Ոսկրները չաւաքելով կը թաղեն Սղերդի եկեղեցւոյն բակը (ՆՈՐ. 525)։

1881. *Ուրիշ նահատակ սարկաւագ մըն է Սարգիս կարեցին, աւազանի անունով Սաֆար, 18 տարեկան, որ*

ՍԱՐԳԻՍ ԿԱՐՍԵՑԻ

միանգամայն մուշտակի աւետուրը կը չարունակէր։ Օր մը Տաճիկ կարգացողի մը առջեւ դիտողութիւն բրած լալով իսլամական կրօնքի մասին, անիկայ պատեհ առիթ կը կարծէ սպառնալիօք ձրի ապրանք չորթելու, և Սարգիսի ընդդիմանալուն վրայ կը սկսի աղմուկ հանել թէ մեր կրօնքին հայհոյեց։ Ամբոխը իսկոյն Սարգիսը դատաւորին առջեւ կը հանէ, որ ուրացութիւնը կ'առաջարկէ իբր ազատութեան պայման։ Գործը կուսակալին ատեանն ալ կ'երկայ, և հնար չըլլալով սարկաւագին հաստատամտութիւնը խախտել, քարկոծմամբ կը նահատակեն Հայոց 1141 թուին, և որովհետեւ հոկտեմբեր 15'ին կը դրուի յիշատակը (ՆՈՐ. 530), պէտք է 1691 հոկտեմբեր 15'ին դնել նահատակութեան օրը, ղի Հայոց յիշեալ թուականին ամանորը սեպտեմբեր 27'ին կ'իյնար։

1882. *Նիկողայոս Պրուսացի երիտասարդ մըն էր, Այվազեանց տունէն, Ակաճանի և Շուշանի որդի, դարբնութեան արհեստով զբաղած Պրուսայի մէջ, թահթաքալէ Պօղոսը չուկան, և 16 ամիս առաջ ամուսնացած, և Աննա անունով աղջիկ մը ունեցած։ Ութը տարեկան եղած ատեն հօրմէ որբ մնացած, մօրը Շուշանին խնամքով արհեստ սորված և գործի տէր եղած էր։ Բարեհեսիլ պատանի մը ըլլալով, հինգ տարի առաջ՝ այսինքն 1689'ին, դրացի Տաճիկ արհեստաւորներէն ուրացութեան ստիպումներ կրած էր, որոնք սպառնալիքներ սկսած էին ընել, և գործը փակուած էր՝ ղոռթ կէրթէյ ընծայելով Նոցա ըննալան խօրկէ (ՆՈՐ. 532)։ Նոյներ փորձը սկսան կրկնել 1694'ին, ուրոնց այս անգամ խստիւ պատասխանեց Նիկողայոս, և խանութպաններէն սպառնալիքներ ալ եղան, բայց տուած վկաներ յարգուեցան, և Նիկողայոս բանտարկուեցաւ, ուր մնաց 10 օր, և այդ միջոցին քաղաքին առաջնորդ Սուքիաս եպիսկոպոսէ ղրկուած քահանայի մը ձեռօք խոստովանեցաւ և հաղորդուեցաւ։ Նորէն դատաւորին առջեւը հանուեցաւ, և քրիստոնէութեան վրայ անսասան մնալուն՝ գլխատման դատապարտուեցաւ։ Իսկոյն մերկացնելով, և ձեռքերը յետեւ կապուած՝ քաղաքին մէջ պտտցնելով, ձաղանօք գլխատման տեղը տարին։ Ճանապարհ բարեկամներ և խղճացողներ առ երեսս ուրացութեան կը յորդորէին, մայրն ու մօրաքոյրն ու զոքանչն ալ նոյն առաջարկը կ'ընէին (ՆՈՐ. 535), այլ արի երիտասարդը*

անդրդուելի մնայ, և վիզը ներկայից դահիճին, որ չորս հարուածներէ ետքն ալ չի կարենալով կտրել, ասելը դադրեցուց (ՆՈՐ. 536)։ Սուքիաս եպիսկոպոս մարմինը թաղելու հրամանը ստացաւ, և Հայերու ու Յոյներու անդամոց բաղմութեամբ թաղեց ի նշանաւոր տեղ, (ՃԱՍ. Ա. 218)։ Նահատակութեան օրն եղած է 1694 մարտ 14, մեծ պահոց չորրորդ չորեքշաբթին (ՆՈՐ. 537)։

ԳՐԻԳՈՐ ՋՈՒՂԱՑԵՑԻ

1883. Ուրիշ երիտասարդ նահատակ մըն ալ է Գրիգոր Ջուղայեցի, լոյս Գրիգոր մականուանեալ, լոյսի պէս բարեհոտիլ կերպարանին համար, և տակաւին 18 տարեկան։ Գրիգոր Ասպահանի մէջ Անգղիացի վաճառականի մը մօտ կը ծառայէր։ Օր մը հանդիպմամբ հօրը հագուստին քղանցքը՝ պարսիկ իանութպանի մը ըսբմպա անօթոյ կը դպչի, որ իւր ջուրը պղծեց ըսելով դայն ոտքնաքէ ընելով։ Գրիգոր զայրանալով հրկու այլազգի ծառայակիցներու հետ կ'երթայ պարսիկը ծեծել, և միասին հասնելով ընվէցորէն, և ընդ տրէլ փանէն է գոռան Անգլէցոյն (ՅՃՈ. Ա. 210)։ Այսպէս կը սկսի Գրիգորի դէմ անհաչտ քէնամութիւնը, և իսլամական կրօնքի դէմ հայհոյած ըլլալու պատրուակը, զոր դատաւորի վճռով հաստատել կուտան, և ըստ այնմ Գրիգորը Անգղիացիներէն կը պահանջեն, որ տեղական դատարանին յանձնեն։ Անգղիացիք հրկու ծեծող այլազգիները կը յանձնեն, իսկ Գրիգորը կը պահեն։ Երբոր գործը մինչեւ եպարքոսին կ'հլլայ, Գրիգորը կը հեռացնեն, որ Ջուղայի մէջ հօրենական տունը կը պահպահի։ Ան տան հայրը կը ձերբակալեն, որ տղուն ուր ըլլալը յայտնէ, և երբ սպառնալիքով չեն կրնար իմանալ, երդմամբ կը վստահացնեն, թէ բան մը հարցնելէ ետքը պիտի թողուն, և հայրը հաւանելով մօրը կը գրէ որ յանձնուի, և այսպէս Գրիգոր պահակներուն ձեռքը կ'անցնի (ՅՃՈ. Ա. 213)։ Ան տան կը սկսին մահուան սպառնալիքներ և ուրացութեան առաջարկներ՝ ազատելու համար։ Ամբոխը եպարքոսին վրայ ալ կը ծանրանայ՝ Գրիգորի մահապարտութիւնը վճռելու, սակայն նա միայն ձաղանքի հրաման կուտայ, և չապիկ վարտիքով պնդութեամբ կապուած, քարկոծելով, գանակոծելով և կռուիններ հանելով և այլ եղմտիւնէ ըբլըբանօւ, բոլոր չուկաները կը պտտցնեն։ Կը տանին նաեւ է խան վճռաբանոցն Հայոց, ուր Գրիգոր ամէնքը կը քաջալերէր, վստահացնելով իւր է վիլայ ճըշմրտութիւն հասած ժըլայ մնալուն (ՅՃՈ. Ա. 216), և այսպէս կը տանին մինչեւ է պանդոկն շահ։ Հոն պարսիկ վաճառականներուն աւազը ողոքանաց միջոցներ կը գործածէ, ուրացեալ Հայերէ ոմանք ալ հայերէն լեզուով կը խրատեն — եղեա գոանեխ, և ինձ յայլ տղտս, բայց նա կը մնայ անդրդուելի։ Ամբոխէն մէկը գաւազանով, և ուրիշ մը սուրով կը զարնեն, և բարձրաւանդակէ կը գլորեն, բայց ուրիշներ ազատելով սենեակ մը կը փակեն։ Մոլեգնեալ ժողովուրդը սենեակին դուռը կոտրելով ներս կը խուժէ, և հոն սուրերով և դաշոյններով և բիրերով, վրան կը յարձակին, և յօբէն ընդհատեալ հոգին կ'աւանդէ արիասիրտ նահատակը (ՅՃՈ. Ա. 218)։ Մարմինը Ջուղա տարուելով պատուով կը թաղուի Երեւանի թաղին ամարան եկեղեցւոյն մէջ (ՆՈՐ. 549)։ Նահատակութեան օրը տապանագիրին մէջ նշանակուած է 1704 յուլիս 3'ին, Երբէսի և Հաթայ տոնին օրը (ՅՃՈ. Ա. 220), որ ճշդիւ կը պատասխանէ հին տումարին, երբ սոյն տօնը կը կատարուէր Հոգեգալստեան չորրորդ երկուշաբթին, մինչ այժմ Սիմէոնեան տօնացոյցով փոխադրուած է Հոգեգալստեան երկրորդ չաբաթ օրը, և անխմանելի կը մնայ թէ ինչու հրատարակողներ 1703 յուլիս 20 գրած են (ՅՃՈ. Ա. 219)։

Տ· ԱՂԵՔՍԱՆԴՐ Ա· ՋՈՒՂԱՅԵՑԻ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

1884· Էջմիածինի մէջ 1705 յունիս 13'էն իվեր դատարկ էր հայրապետական աթոռը (§ 1872)։ Անչուշտ հետեւանքը էին ամէնքն ալ նոր կաթողիկոսի ընտրութեան, թէպէտ չենք կրնար վրճռաբար ճշդել դէմերնին ելած դժուարութիւնները, և անոնք հարթելու համար կատարուած բանակցութիւնները։ Գրեթէ յանկարծ աթոռ բարձրացած կը տեսնենք Ալեքսանդր Ջուղայեցին, Ս· Ամենափրկիչի առաջնորդը և Պարսկաստանի մետրապոլիտը, նոյն ինքն որ Ստեփանոս Ջուղայեցիի կողմէ իբրեւ յաւակնութեաց էջմիածին եկած էր Նահապետ կաթողիկոսը վտարելու (§ 1834)։ Ալեքսանդրի կաթողիկոսական օծումը 1706 դեկտեմբեր 7'ին կը դրուի (ՇԱՀ· Ա· 224), բայց կանոնիչէն որոշուած և լսուած և ընդունուած պիտի ըլլայ ընտրութիւնը, զի 1706 դեկտեմբեր 20'ին Կ-Պոլսոյ Հայոց գլխաւորները Ալեքսանդրի ուղղուած նամակ մը կը գրեն, և միայն 13 օրերու միջոցը բաւական չէր, որ եղելութեան լուրը Կ-Պոլիս հասնէր, և Կ-Պոլսեցիք կարենային այնպիսի ընդարձակ գրուած մը պատրաստել, որուն ներքեւ 448 անձերու կնիքները են դրուած (01 ՕՐԱ· 123)։ Թէ ժամանակին չփոթութիւնները, և թէ Հայութեան զանազան մասերուն մէջ տիրող երկպառակութիւնները, յորդորած են անչուշտ Ջուղայեցւոց խումբը, որ որչափ ալ յաջողած են իրենց ընտրելին յաջորդակալ տալ և էջմիածինի վարչութիւնն իրենց ձեռքը անցընել, բայց չեն ուզած օծման նուիրագործութիւնը փութացնել, այլ ամէն բաժիններու, և գլխաւորապէս Կ-Պոլսոյ պատրիարքարանի ալ հաւանութիւնը ընդունիլ։ Հետեւաբար մենք կը միտինք դեկտեմբերէ ետք ամիսի չափ առաջ 1706 սեպտեմբերին ընտրական տագնապը լրացած և կաթողիկոսը որոշուած ընդունիլ, և միայն օծումը մինչեւ դեկտեմբեր 7'ը յապաղած։ Այս մեր տեսութիւնը կը հաստատուի ուրիշ մասնաւոր գրութիւնէ մը, ուր 1706 սեպտեմբեր 18'ին կը գրուի Ալեքսանդրի է ---ըք-ՐՈՆ ԷՉՄԻԱԾԻՆ է ՏՐՈՂԻԿՈՍՈՒԹԻՆ ֆնալութեանը (ՏՃՈ· Բ· 48)։ Ալեքսանդրի անձը թէպէտ և ոչ բոլորովին անծանօթ, սակայն և ոչ բոլոր մանրամասնութիւններով ծանօթ է։ Նա վինքն կոստանդնէ սրբէ կը կոչէ, և յաջորդն է այն նչանաւոր և բանիբուն վարդապետներու, որոնք հաչատուր կեսարացիէ սկսելով պայծառացան իրենց արժանիքով և պայծառացուցին Ջուղայի աթոռը։ Սիմէոն, Դաւիթ և Ստեփանոս Ջուղայեցիներէ ետքը, 1699 յունուար 20'ին յաջորդած է Ալեքսանդր (ՏՃՈ· Բ· 48), Ստեփանոսի դառնաղէտ մահուան տարիւիչէն ետքը՝ պաչտօնապէս անունը ստանձնելով, իսկ անկէ առաջ իբր տեղապահ վարած է պաչտօնը այն օրէն, որ Ստեփանոս իբր կաթողիկոս էջմիածին գնաց (§ 1834)։ Ալեքսանդր թէ հմուտ անձ մը եղած է, և թէ բուռն պաչտպան հայադաւան ուղղափառութեան, ինչպէս կը վկայէ իր գրած երկասիրութիւնը, Գէղ· ոթենական, որ ասի վերածանական, զոր պատրաստած է 1682'ին (ՂԱՋ· 108), և տպագրուած է Նոր-Ջուղա 1687'ին, իր վարդապետութեան առնն (ՂԱՋ· 107), և որուն երկրորդ տպագրութիւնն ալ կատարուած է Կ-Պոլիս, դար մը ետքը 1783'ին (ՂԱՋ· 109)։ Այդ գիրքին մէջ Ալեքսանդր նախ հինգ գլուխներով հերքած է բնութեանց խնդիրին մասին քաղկեդոնական դրութիւնը, և միւս հինգ գլուխներով ալ պաչտպանած է Հայ եկեղեցւոյ վարդապետութիւնը, բաժակի ջուրին, յորդւոյ յաւելուածին, քաւարանին, առանձնական դատաստանին, և պապութեան մասին՝ լատինական վարդապետութեանց դէմ (ՂԱՋ· 108)։ Աջղնաթոյց գրքոյկ մըն ալ պատրաստած է 1687'ին, բայց միայն 1790'ին հրատարակուած է (ՂԱՋ· 110)։ Այդ գրուածները, աւելի քան որեւէ ուրիչ ենթադրութիւն, բաւական են ճչդութեամբ ցուցնել Ալեքսանդրի հաստատուն

և աներկդիմի հայադաւան ուղղութիւնը։

1885. Առաջին գործը որով ստիպուեցաւ զբաղիլ Ալեքսանդր, Կ-Պոլսոյ պատրիարքութեան խառնակ և

Կ-ՊՈԼՍՈՑ ԿՆՃՈՒՏԱԾ կացութիւնն էր,

ԴԻՄՈՒԻՄԸ Աւետիքի հափշտակումէն ետքը, երբ Քիւլհանճին ալ տապալեցաւ, և Միքայէլ Երէց պատրիարքարանի վարիչ նշանակուեցաւ (§ 1877). սակայն ոչ ազգը խաղաղեցաւ, և ոչ գործերը կարգադրուեցան։ Կ-Պոլսեցիք չատոնց դադարած էին էջմիածինէ սպասել իրենց գործերուն կարգադրութիւնը, վասնզի ոչ միայն հեռաւոր էին, այլ տարբեր պետութեան ներքեւ գտնուելով՝ չէին կրնար Օսմանեան կառավարութեան գործերուն միջամտել։ Բայց այս անգամ ստիպուեցան Ալեքսանդրի դիմել, գլխաւոր առիթ առնելով Ծովհաննէս Զմիւռնիացիին էջմիածին գտնուելէն, որ Աւետիքի առաջին գահընկէցութեան առիթ փախած (§ 1865), և չունչը էջմիածին էր առած։ Կ-Պոլսեցիք զայն կ'ուզէին, իբրեւ Աւետիքի հոգւոյն և ուղղութեան հետեւող, և անոր բացակայութեան տեղ՝ անոր անունով պատրիարքութիւնը վարելու յարմարագոյն անձ մը։ Միւս կողմէն կրօնական խնդիրը տակաւ կը զայրանար, և Հայեր կ'ուզէին իրենց նպաստաւոր վճիռ մը ունենալ Մայրաթոռի հեղինակութեամբ տրուած, որպէսզի անով զօրացած կարենան մաքառիլ, լատինամիտ ներսէս դէմ, որ Ժէրիօլի ազդեցութեամբ ամէն տնտակ բռնութիւններ և անիրաւութիւններ կ'ընէին և ընել կուտային, և որոյ պատկն էր եղած Աւետիքի անձին դէմ դործածուած հաւատաքննական անգթութիւնը։ Այդ գրութեան պատճէնը հրատարակուած ունինք (63 ԿԻՆ· 663—683), որ կը սկսի երկար և ամենափառաւոր գովեստներով Ալեքսանդր կաթողիկոսին անձին և Հայաստանեայց եկեղեցւոյն, և գրողներ ինքզինքին կը դասանին լսողաց և ընդունողաց հաւատացեալներ։ Գրութեան թուականն է 1706 դեկտեմբեր 20 (63 ԿԻՆ· 682), և կաթոլիկութեան մուտ գտնելուն սկիզբը 17 տարի առաջ կը դնեն, Խաչատուր Կիւմիւշխանացի վարդապետին ձեռքով, զոր Խալիֆայ կը կոչեն (63 ԿԻՆ· 668)։ Ալեքսանդրուն կը վերագրեն տասնէ աւելի մոլար և անտեղի գործեր, և կը պատմեն նիերսէսի պատրիարքութեան օրէն եղածները, երկարելով Աւետիքի վրայ, և մանրամասնօրէն պատմելով յափշտակութեան պարագաները, և անկէ ետքի դէպքերը։ Կը գանգատին էջմիածնի նուիրակներուն թոյլ ընթացքին վրայ, և կը խնդրեն որ Խոլիֆայ ապօրէնութեան վերջ դնէ և Իմ էլիս զրկէ իրր քննիչ, և Իզմիրցի Ծովհաննէս վարդապետն ալ անոնց հետ, որ եկեալ Թէքիրդաղ՝ ձալով ապին (63 ԿԻՆ· 677)։ Կը խնդրեն նաեւ որ պապին գրելով պահանջէ Աւետիքի ազատութիւնը, և տապա գրութեանց վրայ իսկելով՝ Թրիքոր դպիրին վրայ պաշտպանութիւն կը հրաւիրեն Տուզախեցի Ղազար քահանային դէմ, զոր ապստամբ և խռովարար կը կոչեն, որ և քաղաքին հոգւոյ այս Թրէքոր դպրոց և կը փակեն խնդրելով որ կապէ և անիծէ յանուանէ զայն հերձուածողն։ Այդ նպատակով անուանական ցուցակ մը կը կցեն ծանօթ աղթարմանները, թազերու վրայ բաժնելով, և զատելով բուն աղթարմանները, և աղթարմա չրլլալով Աւետիքի կորստեան համար անոնց հետ միացողները, որոց գլուխ կը դնեն Մատթէոս Սարին և Մարտիրոս Քիւլհանճեան, որ քանի՛ են է ԹՈՒՐՔԻՆ (63 ԿԻՆ·681)։ Ծուցակները քիչ մը չփոթ են, բայց առաջին թուարկութեամբ, 175 անուններ կը գտնենք։ Դումքաբուէն 6 քահանայ, 27 աշխարհական, 3 կին, և 5 միացող. Սամաթիայէ 7 քահանայ, որոց առաջինը՝ Քէօշքէրէճ ոբդի Կոփաս էրէցն (63 ԿԻՆ· 680), 23 աշխարհական, 14 կին, և 12 միացող. Գալաթիէն 10 վարդապետ, 8 քահանայ, 3 աշխարհական, և 7 կին։ Ստորագրութեանց մէջ առաջինն է Միքայէլ Խարբերդցի երէցը վ+իլ վ+իճին, այսինքն պատրիարքական տեղակալ Աւետիքի, երկու վարդապետներ՝ Ծովհաննէս և Խաչատուր, և 448 կնիքներ, որոց ի +անէ+ փակին ապօրէնութիւններ կան (63 ԿԻՆ· 683)։ Ալեքսանդր նամակը առաջին պէս Ծովհաննէս Զմիւռնիացին փութացուց Կ-Պոլիս երթալ (01 ՕՐԱ· 124), և միանգամայն գրեց է Կոստանդնուպոլսոյ Դեղ վ+իլ+իճին Օսմանցւոց, ըլ ես Հայոց ազգին ֆէրման եմ, և զուտ իմ խոլոբդէ՝ հնազանդիլ ոչ կա-

դն ինչ, և ելեալ են կրծէց ժբոց, ահա եթոս ֆեղիվ, չէ պոթէցեէ այս անուն և այս անուն, ըսուվ էբբե 175 կամ 200 անձինս, որ ֆըռնի են եղեալ Հայոց (ՏՃՈ. Ե. 47)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՋՄԻՒՌՆԱՑԻՆ

1886. *Մինչեւ որ Աղեքսանդրէ սպասուած պատասխանը գար, կամ մինչեւ որ Ջմիւռնացին հասնէր, Միքայէլ երէցին վարչական նուիրեալը չդադրեց պահանջուած գործունէութիւնը ունենալ, և Սահակ Ապուչեհցի վարդապետ յաջողեցաւ իրեն գրաւել ազգին մէջ ազդեցիկ խումբի մը վստահութիւնը, և Միքայէլը հեռացնել տալով, ինքն նոտաւ պատրիարքական աթոռը 1707 յունուար 22'ին (ՍՐԳ.), որով միայն 7 ամիս տեւած եղաւ Միքայէլի պատրիարքութիւնը կամ տեղապահութիւնը։ Սահակ բնաւորութեամբ հանդարտասէրը և ուղղութեամբը խաղաղասէր անձ մը նկատուած է, բայց ոչ բնաւ իր եկեղեցւոյն համար տկար և իր դաւանութեան համար վարանոտ, այլ աչքատած է հնարաւոր միջոցներով փոթորկեալ կացութիւնը մեղմացնել։ Իրեն ձեռնտու ունեցած է Ատուածատուր Ջուղայեցի վարդապետը, մականուանեալ Աղաւնի, որ նուիրակ եկած էր Աղեքսանդրէ կաթողիկոսի հրամանով, և յատուկ հրահանգներ ստացած տպագրական ձեռնարկները քաջալերել, ինչպէս կը հաստատուին զանազան գիրքեր այս միջոցին Կ-Պոլսոյ տպարաններէն ելած (01 ՕՐԱ. 124), որոնցմէ չորս հատ կը յիշուին (01 ՕՐԱ. 125)։ Սակայն Սահակի բնթացքը չբաւար մեկնուելով, սկսած էր քաջալերել կաթողիկացեալները, և իրենց առաջնորդող լատինները, և իրենց հովանաւոր դեսպանը, ինչ որ չէր կրնար դիւր գալ ազգին ընդհանրութեան, և իրենց եկեղեցւոյն հաւատարիմ դաւակարգին, որոնք չէին կրնար տակալ իրենց վարդապետութեան և ծէսին և սովորութեանց դէմ արձակուած անհիմն նախատինքներուն, և ազգին մէջ ցանուած անջատական սերմերուն, մանաւանդ երբ հայրապետական վճռով ալ հաստատուեցան իրենց զգացումները։ Առանք եղան չարժարիքները՝ որ Սահակի պատրիարքական պաշտօնն ալ երկարատեւ չկրցաւ ըլլալ, և պարտաւորուեցաւ տեղի տալ յայտնուած բուռն զգացումներուն ուժին առիս պաշտօնավարելէ հետքը, և 1707 սեպտեմբեր 26'ին, պատրիարք հաստատուեցաւ Յովհաննէս Ջմիւռնիացին (ՍՐԳ.), զոր այնչափ փափաքով փնտռած էր ազգը՝ կաթողիկոսին ուղղած խնդրագրովը (§ 1885), և որուն ընթացքին և ուղղութեանը քաջածանօթ էր (§ 1863), ու միակ յարմարագոյնը կը նկատէր՝ Աւետիքի անձին վրայ կատարուած անիրաւութեան և բռնութեան վրէժը լուծելու։ Յովհաննէսի պատրիարքութեան անցնիլը ձախողուած մըն էր կաթոլիկամիտ Հայերուն համար. բայց աւելի ծիւրիօլի և իրեն գործակից ու գործիք եղող Լատին աբեղաններուն, որոց մէջ կը գերազանցէին Ցիսուսեան միաբանները։ Առանք իրենց ձեռնարկը վստնդուած տեսնելով՝ սկսան պահանջներ առաջադրել իրենց համամիտներուն վրայ, ստիպելով որ ալ երես դնային յեկեղեցի Հայոց, այլ յեկեղեցի Լատինաց։ Հռոմէականք այդ եղբայրատեաց կռիւը և նախնեաց դէմ հաւաստուրաց անարգանքը արդարացնելու համար կը գրեն, թէ պոլսեցի Բաֆանեցան էպոս է ժողվբեր Հայոց. սակայն ասով ալ խոստովանած կ'ըլլան թէ իրենք են իրենց դարաւոր և հայրենաւանդ եկեղեցիէ բաժնուողները. ընդունած կ'ըլլան նաև թէ այս պատճառով անոս ապերախտին դէմ ազգին մէջ, և ծագեցան կռիւ և կռիւ, նախիներ և ընդհատ անհնարին Հայութեան մէջ՝ (ՁԱՄ. Գ. 750)։ Մէկ խօսքով ստիպեալ կը խոստովանին թէ իրենք և իրենց հրապուրիչները եղած են՝ ազգին մէջ տեղի ունեցած ալէկոծներու և արկածներու բուն պատճառներն ու պատասխանատուները։

ՏԱՍՆԵՐՈՒՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ

1887. *Այդ պարագաներուն մէջ պաշտօնի անցած Ջմիւռնիացին, թէ իր բնական միտումին ուժգնութեամբ, թէ կաթողիկոսէն ստացած հրահանգին քաջալերութեամբ, և թէ ժողովրդական յուզման և զայրացման ստիպմամբ, անմիջապէս ձեռնարկեց չփոթութիւնները լուծելու և առիթ տուողները պատժելու։ Բայց ոչ նաև հետապնդեց այն 200 կամ 175 անձերը, որոնք յիշուած էին Աղեքսանդրի ուղղուած նամակին մէջ (§ 1885), այլ միայն 40 հոգիներու ցուցակ մը կազ-*

մեց, և ասոնց մէջէն ալ 9 հոգիներու վրայ աւելի ծանրացաւ, որոնք գլխաւոր դրդիչներ կը նկատուէին, և ձերբակալուեցան Հոկտեմբեր 21'ին, Հայկ վեցերորդ երեքշաբթին, և բանտարկուեցան Զօրլուլու եպարքոսին հրամանով, որ չէր կրնար ներել Լատիններուն և լատինամիտներուն՝ Աւետիքի անձին վրայ կատարուած բռնութիւնը, և կառավարութեան պատուոյն եղած նախատինքը: Եպարքոսը Բ-ղ-ր-ղ Ե ղ-ե-ն-լ-ի-ց Ա-է-փ-է-ը կը դ-ե-ն-ջ-էր, իսկ Ձէրլօլի ճ-ը-ը հ-ա-ն-է-լ-վ չարունակ Ն-ր-ն-ր Խ-Բ-ե-ը Ր-ի-Ն-Ն-է-ր կը ճ-ա-Ե-է-ր Ա-Ե Ե-գ-ր-է-ի-ն ց-ե-ե-ը ք-ն-ջ-ն-է-լ-ը հ-ա-ր (ԹՕՐ 108): Ձիչեալ էին գլխաւորներն էին. Մանուկ Տուրտունեան, Աբրահամ Քարաօղլանեան, Մուրատ Թէրճիմեան, Առաքել Շահամիրեան, Յարութիւն Պէնկլեան, Յարութիւն Թիւթէլեան, Զաքար Ներսունկեան, Միքայէլեան և տիրացու Դաւիթ (ՁԱՄ. Գ. 751): Այս բոլորէն զատ ուրիշներ ալ ձերբակալուեցան վերոյիշեալ քառասուններէն, որոց մէջ կը յիշուին Գէորգ Զօղասիճի, Գրիգոր Սահաթճի, Յարութիւն Օրթագիղցի, Ղազար Պէնկլեան, և տիրացու Գէորգ: Նոյն գիշեր ձերբակալուեցան նաեւ Կոմիտաս Քէօմիւրճեան և Կարապետ Ճամճեան քահանաները, և մանաւոր տուներ դրուեցան: Զօրեքշաբթի օր, հոկտեմբեր 22'ին, իրենց գլխաւորներու դատաստանը տեսնուեցաւ Զօրլուլու Ալի եպարքոսին առեւտը, և գլխաւոր խնդիրը կը դառնար, Ո-ր-ե ո-ւ-ո-ր-ե-ց-է- ձ-Ա-է-փ-է- Ջ-ր-պ-ե-ա հարցումին չուրջը: Մատթէոս Սարին ալ քննութեան բերուեցաւ և իրեն ալ հարցուեցաւ. Զ-ե-ձ ՞ ե-ք է պ-ե-ձ Ն-ր-, և նա նոյն խակ ձերբակալեալները ամբաստանեց, թէ Ն-ա-ո ո-ւ-ո-ր-ե-ց-ի-ն ձ-Ա-է-փ-է-, և Ն-ա-ո ե-ք-ի-ն պ-ա-ր-է-ր-է-: Հարցումները կրկնուեցան ամբաստանեալներուն, թէ ձ-Ա-է-փ-է-ն ի-Ն-ձ ո-ր-ր-է-. որուն բացատրութիւն մը չկարենալով տալ, անիրաւ նեղութեան և լատին նեղգաւորներու գործակցութեան յանցապարտ համարուեցան. Մատթէոս ալ իրենց կամակից և մեղսակից նկատուեցաւ, և տուներուն վրայ պետապարտութեան վճիռ տրուեցաւ, և նոյն գիշեր բանտ տարուեցան: Հինգշաբթի, հոկտեմբեր 23, առաւ ալ միասին, գլխատման տեղը տարուեցան, և ընդհանուր յուզում մը կը տիրէր: Տուներուն ալ սովորական առաջարկը եղաւ, կրօնափոխութեամբ կեանքերնին ազատելու. պահ մը ընդդիմացան, բայց երբ սուրին չդալար տեսան, առաջին Մատթէոս Սարի, Կիլիկիոյ պահապետ կաթողիկոսը, հաւանութեան յայտարարութիւնն ըրաւ, որուն հետեւեցաւ Թիւթէլեան, և հետզհետէ միացեալները ալ, և ամէնէն վերջը Ներսունկեանը, և այսպէս ոտքն ալ հաւատքի գնով կեանքերնին ազատեցին: Բայց որովհետեւ առերես ուրացութիւն մըն էր, շատ քիչեր խլամութեան մէջ մնացին: Մատթէոս փութաց Հռոմ ապաւինիլ, և հռոմէականութիւնը պաշտօնապէս ընդունելով պաշտպանութիւն գտաւ. ուրիշներն ալ գանազան տեղեր ցրուելով մատրութենէ վրիպեցան: Կիլիկիոյ կաթողիկոսներէն ուրիշ մըն ալ ուրացութիւնը յիշեցինք (§ 1840), և Մատթէոսէ հետ չփոթուած ենթադրեցինք, թէ պէտեւ ամէն պարագաներ, Ղասրէճի անունը, 1696 տարեթիւը, յունիս 5 ամսաթիւը, և եօթնեկի չաբաթ օրը (ՍՐԳ.), բնաւ չեն յարմարիր Սարիի ուրացութեան:

ԿՈՄԻՏԱՍ ՔԷՕՄԻՒՐՃԵԱՆ

1888. Կոմիտաս Քէօմիւրճեան քահանայի դատը առանձինն պահուած էր, զի իրեւ չարժուէին գլուխ ամբաստանութեան եղաբքոսին առեւտը: Կոմիտաս որդի էր Մարտիրոս քահանային և եղբայր երեմիա Չէլէպիին (§ 1830), և ինքն ալ կրթութիւն և ուսում առացած էր Նալբէրցի Ամրակումի խնամքով, որ իրր իւր սեփական զաւակներ խնամած էր իւր քրոջ թոռները: Զարգացման փափաքով իրենց դաստիարեան մասին քիչ շատ թոյլ եղողներուն խումբին խառնուած էր Կոմիտաս ալ, սակայն եղբօր երեմիայի խոհական և ճարտար դիւրաւորութիւնը չունէր: Եկեղեցականութեան հետեւած և Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ աւագերէցութեան բարձրացած էր, և քարոզութեան ալ վարժ ըլլալով, ժողովուրդին կը խօսէր՝ օտար սկզբունքներու համաձայն բացատրութիւններ խառնելով, որով իւր վրայ դիտողութեան առիթ ընծայած էր քահանայակից ընկերներուն, որոնցմէ յանուանէ կը յիշուին Յակոբ Աստուածատուրեան, Սահակ Յով-

1889. Կոմիտաս քահանային նահատակութիւնը, հռոմէականք կը սիրեն ուղղակի

ԿՈՄԻՏԱՍ ՆԱՀԱՏԱԿ

կաթոլիկ դաւանութեան համար մարտիրոսութիւն նկատել, մինչ պարզապէս խլամութիւնը մերժելուն համար տեղի ունեցած է, նման այն ամէն նահատակութիւններուն, զոր պատմութեան կ'արժէ յիշատակելնիք չարունակաբար: Իրեն դէմ յարուցուած հակառակութիւնն ալ, թէ ազգային չրջանակին և թէ պետական պարունակին մէջ, իր ակզբնապատճառ և իր չարժառիթ ունեցած է Աւետիքի անձին վրայ կատարուած կաթոլիկական նենգաւոր բռնութիւնը, որուն մէջ կը սիրենք Կոմիտասը գործակից եղած չը ճանչնալ, և կը ցաւինք ինքզինքը իր համակիր և համաձիտ ցուցած ըլլալուն: Յովհաննէս պատրիարքի համար ալ՝ պէտք չէ մոռնալ անոր անպայման սէրը Աւետիքին վրայ: Կոմիտաս ինքն ալ, բանաէն իր քահանայական ընկերներուն գրած նամակով, որ Սամաթիոյ 1865 տարւոյ հրդեհին այրած է, այլ զոր կարդացողներ դեռ կենդանի են (ՇՀՊ.), որոշակի յայտարարած է, թէ ինքն էր-ն-ց-ե-լ մը չէ, և իր վրայ վրատածութիւն ներչնչելու համար, խոստացած է աւագերիցութենէ հրաժարիլ և քարոզ չխօսիլ: Իրեն վրայ գործադրուած գլխատման ալ՝ ուղղակի պատճառը, ոչ թէ կաթոլիկութիւնը, այլ քրիստոնէութիւնը ուրանալու և իսլամութիւն ընդունելու առաջարկին խստիւ պատասխանելն է եղած, թէ էմ էր-ր --էն փ-լ է-ե-ր-ն պէնդ ը-ն-ն-ել (ՇՀՊ.): Իր վերջին օրերը չարագրած ողբին մէջ ալ ազգին ազնաւալի վիճակը կ'աւաղէ, բայց ոչ Հռոմի և ոչ կաթոլիկութեան յիշատակութիւն կ'ընէ, այլ Լ---ուչ -չէ-փ-ն-ց և Լ---ուչ --է-փ-ն միայն կ'ակնարկէ, որ ամէն անկեղծ հայրենասէրներն գործած բացատրութիւնն է: Նահատակ քահանային թաղումը կատարած կ'ըսուին Ցոյն քահանաներ (ՁԱՄ. Գ. 755), սակայն Հայոց բաժնին մէջ թաղուած ըլլալը կը սեւ ներկութիւնը, զի առանց Հայոց պատրիարքին հաւանութեան չէր կրնար հոն թաղուիլ: Նոյնպէս կը նկատենք մարմինը անգլուխ թաղած ըլլալուն պարագան, ինչ

հանգամանք և նոյն Շէօրէքեան քահանաներ (ՁԱՄ. Գ. 751): Կոմիտաս Գոթծոց Առաքելոց գիրքը ռուսերուն վերածած և ռուսերէն գրութեամբ ալ հրատարակած էր 1704'ին, զոր չենք կրցած տեսնել, որ դնահատել կարենայինք: Կոմիտաս Երուսաղէմ ալ գացած էր Եփրեմ պատրիարքի օրով, որ անձնական թշնամութենէ խուսափելէ աւելի, հայադաւանութեան մօտիկ եղած ըլլալու նչան պէտք է սեպուի, քանի որ Երուսաղէմի միաբանութիւնը միշտ հռոմէադաւանութենէ հեռու ճանչցուած էր: Կոմիտասի ձերբակալութիւնը հռոմէականք պարզապէս Սամաթիոյ քահանաներուն նախանձին կը վերագրեն (ՁԱՄ. Գ. 751), սակայն աւելի ճիշդ կ'ըլլար իր անզգոյշ համարձակութեան վերագրել, զի քաջալերած կը սեպուէր Աւետիքի դէմ ելլող նենգաւոր հալածիչները. և եթէ ոչ ուղղակի, գոնէ անուղղակի անոնց գործակից կը նկատուէր: Ըստ այսմ եղելութեանց կապակցութիւնը և Օսմանեան կառավարութեան ընթացքը ուսումնասիրելով, եղածը ոչ այնչափ դաւանական խնդիր մը, այլ աւելի լսումներուն Աւետիքի վրայ գործած անիրաւութեան, և լսումնամիտներուն անոնց համամիտ գրանուելուն վրէժխնդրութիւնը պէտք է ճանչնալ: Միևնոյն խնդիրին պատճառով Կոմիտասի վրայ ալ յանցապարտութեան վճիռը որուեցաւ դատաւորէն, 1707 հոկտեմբեր 23, հինգչաբթի օր, երկու ընկերներուն՝ Յարութիւն Խաչատուրեանի և Գրիգոր Եղիայեանի հետ, իսկ 1707 հոկտեմբեր 25'ին չաբաթ օր, Գիւտ Խաչի նախընթաց օրը, վերջին հարցափորձէ մը ետքը, գլխատութեան վճիռ որուեցաւ եպարքոսէն, և գլխատման տեղը սորուեցան: Կոմիտասի առաջարկուեցաւ կրօնափոխութեամբ կեանքը ազատել, սակայն նա իր հայրենական հաւատքին վրայ հաստատուն, և արիասիրտ անձի մը զգացմամբ տոգորեալ, յանձն չառաւ քրիստոնէական հաւատոյ ուրացութեամբ ապրիլ, և յօժարակամ դրաւ գլուխը դահիճին սուրին ներքեւ: Միւս երկու ընկերները չուարած և ահեղական կեանքերնին ազատելին ուրացութեան պայմանին ենթարկուելով (ՁԱՄ. Գ. 755) առաջին տասներուն նման:

որ կանոնական թերութիւն մը եղած կ'ըլլար։ Իսկ գլուխն ու մարմինը Դաղղիական դեսպանին ձեռքով Դաղղիա յղուած ըլլալն (ԶԱՄ. Գ. 755) հաստատուն վկայութիւն մը չունի, և Դաղղիոյ մէջ ընաւ տեղ մը պահուած չցուցուիր։ Կոմիտասի գերեզմանը եղած է Պալըքլըի Հայ գերեզմանատան մէջ, պատուոյ տեղը, կիլիկիոյ Թորոս կաթողիկոսին չիրմին մօտ, և յարգանօք կը պահուի մինչեւ ցայսօր, և երբեք խախտուած չէ ոսկրներու ներկայութիւնը տեղափոխելու համար։

1890. Կոմիտասի նահատակութենէ քիչ օր առաջ լուր հասած էր Կ-Պոլիս թէ Միքայէլ Բրգնիկցի քահանան կախաղանի վրայ նահատակուած էր Սերաստիոյ մէջ։ Այդ եղելութեան ալ առիթ տուած էին տեղական երկպառակութիւնները, որոնց Միքայէլ իբր դրդռիչ ամրաստանուած, և կրօնափոխութեամբ ազատիլ յանձնառու չէր եղած։ Ինքն ծննդեամբ Հարբերդցի էր, բայց Բրգնիկ գիւղի մէջ մեծցած և քահանայացած։ Նոր կիրակիին նախընթաց օրը, 1707 ապրիլ 19'ին երեք Հայեր ձերբակալուած էին Սեբաստիա՝ Ֆրանկութեան ամբաստանութեամբ, որոնց երեք հատ ալ ելոյթներ տպագրուած էին, Միքայէլ քահանան ալ յիշուելուն իրեւ խառնակութիւն տարածող։ Ապրիլ 20'ին նա ալ ձերբակալուելուն և 21 օր բանտարկութենէ ետքը մահուան վճիռը արուելուն, ուրացութեան հրաւիրուելուն, և չհաւանելուն վճիռը գործադրուելու։ Թուականը 1707 մայիս 11 չարաթ օր գրուած է (ԲՐԳ.), բայց չարաթ օր մայիս 10'ին կը հանդիպի։ Միքայէլ քահանան Բրգնիկ գիւղին կաթոլիկութեան իբր սկզբնատաճառը նկատուած է։ Ինչպէս կոմիտասի համար ըսինք, Միքայէլին ալ արկածները և անոնց ալ ուրացութիւնը՝ լատինները յարուցած անհանգիստ պրպտանոց հետեւանքներէն են, որոնց մէջ իրենք իրենց օտարազգի և օտարադաւանակ ձախող հետեւանքներէ վնաս կը տեսնային, և իրենց հետեւողները փորձանքներու մատնել չէին խղճար, որ չենք կարծեր թէ ուղղամիտ բնաւորութ մը ըլլայ։

1891. Ինչպէս բնական փոթորիկներ, նոյնպէս և քաղաքական և հանրային յուզումներ՝ տեւական վճիռ չեն ունենար, և ինչպէս յանկարծ կը բորբոքին, այնպէս ալ չուտով կը հանդարտին։ Մատթէոս Սարիի և իր հետեւողներուն և վերջին երկուքներուն ուրացութիւնը, և Կոմիտաս ու Միքայէլ քահանաներու դէմ ապարատուութիւնը, ազդեցութիւն ունեցան ժողովուրդին վրայ, որ պահ մը կանգ առաւ իր գործերուն մէջ։ Կառավարութիւնն ալ չարմար նկատեց աւելի յառաջ վարել բռնութեամբ զսպելու ոճը. Զօրլուլուն ինքն ալ պահ մը դադար տուաւ իր օտարատեաց ղեկավարներուն, և հակումով յուզուց այն պատասխաններուն, զոր Լուտովիկոս ԺԴ թագաւորը Օսմանեան կառավարութեան կը յղէր Խաբեռ-Ընէնը Չեռ-ռանելով, և խոստանալով Ապենէյ և Իռլէյ վրէ ֆնռռել տալ Աւետիքը, որ իրեն ձեռքին տակ և իր հրամանով Ս. Միքայէլի վանքին մէջ բանտարկուած կը տեւէր (ԹՕՐ. 114)։ Անոնք որ զանազան պատճառներով բանտարկուած և աքսորուած կամ թիւրան փակուած էին, կրցան դրամի և տուգանքի օրութեամբ ազատութիւնները գտնել, ատոնց մէջ կարապետ Շամճեան քահանան ալ, որ առաջին անգամ կոմիտասի հետ ձերբակալուած էր (§ 1887)։ կարծես թէ հանրութիւնն ալ յոգնած էր տեւական յուզումներէն, և Զմիւռնիացիին տարբեր խաղաղասէր և հեզաբար գործող պատրիարքի մը պէտք կը զգար։ Ըստ այսմ նա ալ տիպուեցաւ տեղի տալ, և 1708 դեկտեմբեր 30'ին, նորէն Սահակ Ապուչեխցին պատրիարքութեան բարձրացաւ (ՍՐԳ.), իր վկայեալ հանդարտասիրութեան համար։ Յովհաննէս Զմիւռնիացիին պատրիարքութիւնը, պատահարներով նշանաւոր, բայց լոկ 15 ամիս տեւողութիւն կրցած է ունենալ։ Ինքն արդէն տարիք էր, որով չտեւեալ ապրած պիտի չըլլայ՝ պատրիարքութենէ իջնելէն ետքը, թէպէտ որոշ յիշատակ չենք գտներ իր վախճանին վրայ։ Ժամանակին տիրող զգայուններուն նշանն է նոյնպէս Սահակ Ապուչեխցիին երկրորդ պատրիարքութեան 5 տարիէ աւելի տե-

ՀԱՆԴԱՐՏ ՄԻՋՈՑ

ւելը, որ նկատի առնելով տիրող յուզումները և պատրիարքական արագ արագ փոփոխութիւնները, չատ նշանաւոր եղելութիւն մը պէտք է նկատուի։ Այդ հանդարտութեան միջոցին կ'ուզենք օգտուիլ մենք ալ, և կատարեալ պատկեր մը տալ այդ ատենուան հայ գրականութեան վրայ։

1892. Մխիթար Սեբաստացին թողուցինք Զանթա կղզւոյն մէջ (§ 1860), ուր հանդիպմամբ ինկած էր ՄԽԻԹԱՐ ՄԵՔՈՆ 1702 հոկտեմբերին աճապարանօք Զմիւռնիայէ հեռանալուն առթիւ, և ստիպուած մնաց այնտեղ մինչեւ 1703 փետրուար (Մխի. 176), մինչեւ որ ինչ ընելիքը որոշէր։ Իրմէ հեռուղներէն ոմանք ինկած էին Նաուպլիա, որ է Նէապոլիս Հոռոմոց, Պելոպոնէսի արեւելակողմը հանդնուն ծոցին մէջ, և հոն հրաւիրեցին Մխիթարը, որ գալէն ետքը նախադասեց Մեթոն կամ Մօտօն հաստատուիլ, Պելոպոնէսի արեւմտակողմը, Մեսենիա գաւառին ծայրը՝ ծովեզերեայ բերդաքաղաքը, ուր հանդիպած ալ էր Զանթայէ եկած առնը։ Վենետիկի հանրապետութեան պաշտօնեաներ հաւանեցան իրեն բնակավայր տալ, և կալուածական հողեր ալ չնորհել, եթէ մինչեւ երեք տարի կարճնայ կանոնաւոր վանք մը կազմակերպել։ Այս պայմաններով Մխիթար Մեթոն փոխադրուեցաւ 1703 տարւոյ ամառուան մէջ, իրեն հետեւող 15 անձերով, 4 աբեղայ և 11 դպիր, և հաստատուեցաւ ընդարձակ տան մը մէջ զոր Վենետկեցիք չնորհեցին։ Մխիթարի այս տեղ կազմած վանական ձեւը, տակաւին հայկական կերպարանին ներքեւ էր, ինչպէս ինքն ալ կը յայտարարէր թէ պահեմ զնեան Հայոց (Մխի. 190), զի սովորական էր Հայոց մէջ՝ իւրաքանչիւր վարդապետի առանձակերտութիւն մը կազմել և վանք մը չէնցընել։ Բայց որովհետեւ լատին պետութեան մը հովանաւորութեան ներքեւ մտած էր, պարտաւոր էր քիչ չատ անոնց սովորական ձեւերուն մօտենալ, որոնց առաջինն էր միաբանական կանոնի մը հիմը։ Ըստ այսմ առաջին անգամ իտալերէն լեզուով պատրաստուած գրութեան մը մէջ, որ յայտնապէս լատին եկեղեցական իշխանութեանց համար գրուած էր կը գուշնի, կանոնաց Սուրբ Անդրէաս Աքեբայէ յիշատակութիւնը կը տեսնուի (Մխի. 182)։ Արդ Ս. Անտոնի անունով կանոններ Հայոց մէջ ծանօթ չէին, որչափ ալ Մխիթար այսպէս հաւատացնել ուզած ըլլայ լատիններուն (Մխի. 190), ուստի Կանոնաց Ս. Անդրէաս Աքեբայէ յիշատակութիւնը պէտք է միացնել՝ Լիբանան քաշուելու իր նախնական գաղափարին հետ (§ 1860), ուր իրօք Ս. Անտոնի անունով և Ս. Անտոնի կանոնով կազմակերպուած էր Մարոնի վանականութիւնը, և տակաւին այս ձեւն էր որ Մխիթարի միտքը գրաւած էր։ Բայց Մեթոնի բնակութիւնը, վենետկական հովանաւորութիւնը, և լատիններու չիւմը տակաւ հեռացուցին զինքն Արեւելքի մէջ մնալու և դործելու դիտաւորութենէն, և լատինական պաշտպանութիւնը ապահովելու հետեւեալ։ Այդ միտքով երկու տարի անցնելէն ետքը, 1705'ին Հռոմ կղեմէս ԺԱ. պապին երկու աբեղաներ ղրկեց, պաշտօնական յայտարարութեամբ մը՝ իր դաւանութեան և վանականութեան վրայ։ Պատուիրակները տարւոյն վերջերը՝ հոկտեմբերին մէջ Հռոմ հասան, և որչափ ալ վենետիկի դեսպանէն պաշտպանուեցան, տակայն Մեթոնի մէջ հաւաքուած խումբին՝ դաւանութեան և կազմակերպութեան տեղեկութիւնները կատարելու և քննութիւններու տեղի տուին (Մխի. 193), և 1706'ին պատուիրակներէն մին՝ եղիա վարդապետ ձեռնունայն Մեթոն դարձաւ, իսկ միւսը՝ Յովհաննէս վարդապետ Հռոմ մնաց իտալերէն և լատիններէն ուսանելու (Մխի. 194), և դիմումները չարունակելու համար։ Ձիչդ այդ միջոցին էր որ 1706 ապրիլին Աւետիք հաստատուած և և գերեսւած այդ ծովեզերքէն կ'անցնէր (§ 1876)։ Աւետիքը տանող նաւին Մեթոն հանդիպած ըլլալն ալ կը յիշուի (Մխի. 180), բայց ոչ Աւետիք գիտցած է թէ Մխիթար հոն է, և ոչ Մխիթար իմացած է թէ Աւետիք անցորդ նաւին մէջն է։ Հռոմէ ապաւան գրիչ մըն ալ կը պիտի, այդ զուգադիպութիւնը, և անտրակելի ապացոյցմամբ մը կը ներքոդէ Ֆէրիոլի անարդարանալի պոթը (Մխի. 214), և կը յանդգնի վաստուած նենա-

գութեանց գործակից և անխրատութեանց հովանաւոր ցուցնել։

ՄԽԻԹԱՐԻ ԳՈՐԾԵՐԸ

1893. Մխիթարի տրուած հանգամանք պայմանաժամը լրանալու մօտ էր, և վանք չհնարելու պատճառը պէտք էր գործադրել, ուստի առիւղաւարար 1706 մարտին չհնութեան ձեռնադրակից (Մխ. 199), և հոկտեմբերին աւարտից, և նոյեմբերին բնակելու գործածից, թէպէտ չհնութեան ծախքը պարտք կը կը մնար, զի ակնկալուած նպաստները գրեթէ չէին կամ կորած էին։ Մխիթար անձուկ վիճակի մէջ անցուց հետեւեալ տարիները Մեթոնի մէջ, և հաղիւ պզտիկ յաջողութիւններէ քաջալերուած 1708 մարտին Հայ եկեղեցիի մը հիմնարկութիւնն րրաւ (Մխ. 206), որպէսզի լատին եկեղեցին յաճախել աղատուին, կամ աղօթարանի վերաուած անհնարակով չհնան։ Եկեղեցին եօթը ամիսէ, այնինքն հոկտեմբերին մէջ կրցաւ կիսովի ծածկել և առժամեայ կերպով գործածել, բայց անոր վերջնապէս աւարտիլը միայն 1711 ուշացաւ, երբ վանքին պահականներն ալ լրացան (Մխ. 209), և վանականութեան ձեւ առաւ Մխիթարի շուրջը հաւաքուած աշակերտութիւնը։ Մինչեւ այն ատեններ Մխիթար իւր հայկական և արեւելեան ձեւերը պահելու փափաքը կը տածէր, սակայն վերջապէս համոզուեցաւ թէ Արեւելքէն հեռացած և Հայութենէ բաժնուած էր, և այլեւս այն կողմէն նպաստ և օգնութիւն չէր կրնար յուսալ։ Ճանի տարի էր որ Լատին հովանաւորութեան ներքեւ կ'ապրէր քաղաքականապէս, ուստի ուզեց եկեղեցական պաշտպանութիւնն ալ յարակցել, այլ դիւրաւ չի յաջողեցաւ, զի Հռոմ միշտ կասկածանօք կը նայէր տակաւին հայերի ինքնուրեանն նշաններր պահելու աշխատող Մխիթարին վրայ։ Պէտք էր որ նա անպայման լատին ձեւերուն հակակրպէր, զի նոյն իսկ Ս. Անտոնի կանոնակարգն անունն ալ խնդիրի նիւթ էր դարձած, և լատինական կանոնակարգ յանձնառութիւնը կը պահանջուէր։ Հռոմ գրեթէ Ծովհաննէս վարդապետ, որ տարիներէ իվեր հոն կը սպասէր, անհրաժեշտ պայմանը զգացուց, և Մխիթար վերջապէս հաւանեցաւ Ս. Բենեդիկտոսի կանոնակարգն ընդունելութեան, և Հռոմի կամքին բացարձակ հպատակութեան։ Այս կերպով միայն կրցաւ առանալ Հռոմի օրհնութիւնը, որուն շուրջը 1712'ին Մեթոնի թերաւ Ծովհաննէս վարդապետը։ Ծանձնառութեան պաշտօնական ձեւ տալու համար, նոյն 1712 սեպտեմբերին, Մխիթար և իրեն հետ եղողները, կոմնթոսի Լատին արքեպիսկոպոսին առջեւ հաւատոյ դաւանութիւն և վանականութիւն երդան (Մխ. 240), և այն ատեն Մխիթարի աշակերտութիւնը՝ իրրեւ վանական միաբանութիւն ճանչցուեցաւ, լատինական կանոնով և կաթոլիկ դաւանութեամբ։ Մխիթարի աշակերտութեան ասկէ առաջ ունեցած վիճակը անպաշտօն բան մըն էր, իրենց կամքով իրարու հետ ապրող խումբ մըն էր, որ ոչ Հայ եկեղեցւոյ իշխանութեան կը հպատակէր, և ոչ Լատին եկեղեցւոյ սկսէն ճանչցուած էր, ասոր աւելի ճիշդ պիտի ըլլար 1712 սեպտեմբերէ հաշուել Մխիթարեան վանականութեան կամ միաբանութեան պաշտօնական սկզբնաւորութիւնը։ Բենեդիկտեանց կանոնադրութեան հիմամբ, Մխիթարի պաշտօնական կոչումն ալ Հայկական ձեւերը մերկանալով, լատինական աչքահաչ տիպերուն փոխուելու, որ չարունակ գործածութեամբ մաղդիր անուն դարձաւ։ Այս կէտէն ուրկէն պէտք է հաշուել Մխիթարի հայազգաւան ուղղափառ եկեղեցիէն պաշտօնապէս և վերջնապէս խզուիլը, թէպէտ կարծես թէ սերտին խորքէն չկրցաւ քանդել ու քանցիլ հայրենասէր եկեղեցւոյն իղձերը, և թէ գործունէութեան մէջէն արմատախիլ ընել հայկական ձեւերը։ Այս պատճառով ալ տեսնենք վերջը անպակաս եղան իր դէմէն՝ եկեղ հռոմէադաւան և ներքնապէս հայատեաց մեացած րլլալու ամբաստանութիւններր, որոնք տակաւ և չատ յոգնութիւն պատճառեցին կաթոլիկ րլլալր հաստատացնելու համար։

ԱՆՏՈՆԵԱՆՑ ՍԿԻԶԲԸ

1894. Մխիթար Սեբաստացիէ կ-գոլիսէ փախուստ պատճառ եղաւ թէ Մոգոստեանց կայսրներու կողմէն յղուած՝ Լիբանանի մէջ Հայկաթոլիկ միաբանութեան մը կազմելու ձեռնարկութիւնը (§ 1860)։ Ար-

բահամ, չորս եղբայրներուն երիցագոյնը, Լիբանանի մէջ 1702'ին չրջագայութիւն մը կատարելով՝ Բերիա դարձած էր, և չորսերն ալ միւնոյն խորհուրդը որոճալով, վերջնական որոչումին տուած էին 1707'ին Աւետման օրը, որ ապրիլ 7'ին կը տօնուէր։ Անկէ ետքը ձեռնարկած էին իրենց առեւտրական գործը վերջացնել, որ քաղուելիք գումարներով կրօնաւորական հաստատութիւնը հիմնեն, բայց չէին կրցած այդ նպատակը իրականացնել։ Չի նոյն տարին՝ Բերիոյ մէջ ալ հռոմէականաց վրայ խստութիւններ կը գործածուէին Պետրոս Բերիացիի ձեռքով (ԱՆՏ.), որ Սոյ հակաթոռ կաթողիկոսն էր (§ 1856), և Յովհաննէս Զմիւռնիացիի կոստանդնուպոլսոյ մէջ բռնած ընթացքին կը հետեւէր (§ 1837)։ Չորս եղբայրներէն երկու միջինները, Յովհաննէս և Յակոբ, Ս. Եղիսէի վանքը կը մտնէին Ապտալլահի ձեռքին տակ վանականութեան սչակերտելու, կրտսերը Մինաս առեւտրական կարգադրութեան համար Սիւրիոյ Տրիպոլիսը կ'երթար, իսկ Աբրահամ Լիբանան կը դառնար՝ ապահով տեղ մը ճարելու, ուր կարենային վանք հաստատել։ Օտարազգի և օտարօրէնութեան ըլլալնին, և Հայերուն ընդհանրապէս կաթոլիկ չըլլալը, և ուրիշ նմանօրինակ պարագաներ՝ իրր դժուարութիւն առարկուեցան Մարոնիներու կողմէ, և նոյն իսկ Յակոբ Աւգուստ՝ Մարոնի պատրիարքը չզիջաւ խնդրուած արտօնութիւնը տալ, մինչեւ որ Ապտալլահ Դարաալի վանահօր և Սախա Յազինեան իշխանին վկայութիւնները յաջողեցան կասկածները փարատել։ Յազինեան իշխանը՝ իւր սեփականութիւնն եղող, Քեսրուանի գաւառի մէջ, Ընդիլիաս գեղին ձորամէջը, Աֆքար կոչուած առանձնացեալ բլուրին վրայ չինուած տնակը, անոնց իրբեւ վանք յատկացուց 1709'ին, տեղական և եկեղեցական իշխանութեանց հաւանութեամբ։ Այդ տարիներուն էր որ Մխիթար ալ Մեթոնի մէջ յատուկ վանքի չինութեամբ կը զբաղէր (§ 1893)։ Մուրատեան եղբայրներ, հազիւ քանի մը տարի մնացին այս տեղ, զի ասպատակներու եղբեւէն պաթտաւորուհեան խոյս տալ և ապաւինիլ Քիւրքի գիւղը։ Առաջին տեղերնին ալ եւս անապահով կը նկատուէր, ուստի Յազինեան Սախա իշխանաւորը, իւր սեփականութիւններէն Դուստա գիւղի մօտերը Քեէմ կոչուած պղտիկ ագարակը՝ մէջի տուներովը նուիրեց անոնց (ԱՆՏ.), որուն հաստատումն վանքի ձեւ տուին 1716'ին, և տէր դարձան մարտ 3'ին իրենց յանձնուած վաւերագիրին զօրութեամբ։ Եւ որովհետեւ Մարոնիներու մէջ և անոնց հետեւողութեամբ միաբանութիւն մը կը կազմէին, Անտոնեան կոչումն ալ վրանին առին։ Իրենց սկզբնական նպատակը պարզ վանականութիւն եղած կ'երեւի, վանզի այսպէս ալ կը բացատրեն իրենց միտքը, թէ ուզած են չինել ՀՆ ֆոյր անապա (ԱՆՏ.), որ է առանձնացեալ վանք։ Այդէն Լիբանանի լեռներուն առանձնութիւնն ալ տարբեր նպատակի չէր կրնար ծառայել։ Նոյն էր Մխիթար Սեբաստացիի Մեխոնի մէջ սկսած ձեռնարկն ալ, զի Մեխոն ալ Լիբանանի նման ուսումնական զարգացման դիւրութիւն ընծայող տեղ մը չէր։

ՄԵԼՔՈՆ - ԹԱՍՊԱՍԵԱՆ

1895· Այդ երկու կրօնաւորական միաբանութեանց սկզբնաւորութիւնները, Մխիթարեանը Արեւմուտքի և Անտոնեանը Արեւելքի մէջ, նախաքայլեր էին, Լատին քարոզիչներու ձեռքով և Դաղղիացի դեսպաններու պաշտպանութեամբ մուտ գտնող լատինամիտութիւնը՝ կազմակերպեալ կաթոլիկութեան վերածելու, հռոմէադաւան սկզբանց և տեսութեանց կատարեալ համակերպելու, և պապական իշխանութեան հպատակելու. բայց տակաւին ներքին կերպով միայն, զի պաշտօնապէս Հայ պատրիարքարանի իշխանութեան ներքեւ կը մնային Օսմանեան տէրմանութեան մէջ։ Այս երկու ազգակներուն հետ երրորդ մըն ալ հետզհետէ կը զօրանար և գործունեայ կը դառնար, և այս նպատակին կը ծառայէին Հռոմի եկեղեցական վարժարաններուն մէջ դաստիարակուած Հայ երիտասարդներ, որոնք հռոմէականութեան սկզբունքներով տոգորուած և եկեղեցական կոչում ստացած, Հայ ժողովուրդին մէջ կը մտնէին իրր ազգային եկեղեցւոյ պաշտօնեաներ, և ճարտար կերպերով կը ստղտակէին հաւատացեալոց միտքերը պղտորել։ Այդ խումբէն յառաջնորդաց մը յիշեցինք

հայատուր Առաքելեան կարնեցի վարդապետ, որ տակաւին իւր գործունէութիւնը կը չարունակէր մայրաքաղաքի մէջ, և անոնց ուրիշ մըն ալ կը հետեւէր անոր, Մելքոն Թասպասեան Մամպուտցի վարդապետը, նաև Հռոմի Փրոփականտային մէջ կրթուած և ուսած էր, և իր հայրենիքը դառնալէն հետք՝ Հայ վարդապետներու նման աշակերտներ կը հաւաքէր իւր չուրջը, իւր առած ուղղութեամբ ուսուցանելու, որոնց մէջ նչանաւոր եղաւ Աբրահամ Արծիւեան Այնթապցին (ԱՂՔ. Գ. 9)։ Անոնք չէին խորչիր իրր Հայ եկեղեցւոյ պաշտօնեաներ նկատուիլ, որպէսզի յայղողին ժողովուրդին մէջ աղօսկիլ, և Թասպասեան 1908'ին Բերիոյ մէջ (ԱՂՔ. Գ. 11) եպիսկոպոսական աստիճան ստացած էր՝ Պետրոս Բերբացիէ, Պիծակ մականուանեալ արդէն յիշուած Կիլիկիոյ Հայկազեան կաթողիկոսէն, որ հռոմէականներէ իրր կաթոլիկներու հալածիչ նկատուած է (§ 1894)։ Կան որ Պիծակը իրր լատինասէր միտում ունեցող կը ներկայեն (ԱՂՔ. Գ. 11), սակայն ամէն աստիճ մէջ պաշտօնապէս Հայազատեան եկեղեցւոյ պաշտօնեայ էր, և անոր ուղղութիւնը կը պաշէր, զի և ոչ իսկ յանձն կ'առնէր Քաղկեդոնի և Լեւոնի նզովքը զեղչել ձեռնադրութեան աստն, թէպէտ ունայնք տարբեր դարձուածներ գործածուած կ'լսեն (ԴԻԹ. 24)։ Պետրոսի համար գիտենք, թէ Հայազատեան եկեղեցւոյ ծոցը մնուած է երուսաղէմի մէջ (09 ՕՐԱ. 284), և անհիմն է ոմանց կարծիքը թէ Պարսկաստան աքսորուած և հոն մնուած լլլայ (ԴԻԹ. 33), քանի որ Պարսկաստան Օսմանեան իշխանութիւնն ներքեւ երկիր չէր։ Մելքոն Հայազատեան դրութեամբ Մամպուտի վիճակին եպիսկոպոս ձեռնադրուած էր, բայց եպիսկոպոսութիւնը ձեռք անցընելէն ետքը, սկսաւ ամենուրեք համարձակ լատինամոլ գործունէութիւնն հետեւիլ, և մինչ զինքը պիտի տեսնանք Կ-Պոլիս եկած, և այնտեղ լատինամիտ կուսակցութեան գլուխ կանգնած, մինչեւ իսկ չարժուիլներ ստեղծելու ձեռնարկած, զի ինչն լեցէ ասելոցդ և պարբերս, գոնէ է վերայ երից ասելոյն (ՁԱՄ. Գ. 758)։ Արդէն քանիցս դիտել տուած ենք, թէ լատինամիտութիւնն ալ կուսակցական մրցումները և փառատենչ ձգտումները ծածկելու ծառայող պատրուակ մըն էր։

ԱԲՐԱՀԱՄ ԱՐԾԻՒԵԱՆ

1896. Թասպասեանի հետեւողութեամբ գործունեայ դեր ունենալ ձեռնարկած էր անոր ձեռնասուններէն Աբրահամ Արծիւեան վարդապետը, 1679'ին ծնած Այնթապ (ԴԻԹ. 9), եւ 1706'ին արեղոյ ձեռնադրուած (ԴԻԹ. 17), և Թասպասեանի նման Պետրոս Բերբացիէ եպիսկոպոսական աստիճան ստացած 1710'ին Բերիոյ մէջ (ԴԻԹ. 25)։ Աբրահամի Պետրոսէ ձեռնադրութիւն ընդունելուն իրր պատճառ ցուցնել, իրր թէ Պետրոս է ձեռնադրել ուզած եղեր (ԱՂՔ. Ա. 10), Հռոմի համար կարկառուած բարեբանք մըն է, զի այդ վարդապետները անխտիր որեւէ աթոռէ եպիսկոպոսութիւն կ'ընդունէին։ Իսկ Աբրահամի Պետրոսէ ձեռնադրուիլը չատ բնական էր, զի բնիկ Այնթապցի էր, և Մամպուտցի վարդապետին աչակերտ, և իրր Բերիոյ առաջնորդ կ'ընդունէր ձեռնադրութիւնը (ԱՆՏ.), նոյն իսկ Բերիոյ մէջ (ԱՂՔ. Ա. 10), ուր կը մնար հակաթոռ Պետրոս Պիծակը։ Ժամանակակից եղելութեանց չարակցութիւնը չկորսնցնելու համար պարտաւորուած ենք տեղ տեղ ոտտումներով չատ բերել մատդրութեան արժանի դէպքերը։

ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՆԱՄԱԿԸ

1897. Լատին քարոզիչներուն Թուրքիոյ գանազան կողմերը չատ բերած չարմիները, և անոնցմէ չատ եկած երկպառակութիւնները ու թշնամութիւնները, և այս պատճառով տեղի ունեցած աղետալի դէպքերը, Աղեքսանդր կաթողիկոսի մտադրութիւնը հրաւիրեցին։ Գործնականապէս միջամտելու և զսպելու միջոցներ ու դիւրութիւններ չունենալով, մտածեց նոյնիսկ անոնց սկզբնապատճառն եղող պապական աթոռին դիմել, և անկէ պահանջել յիշեալ գայթակղութեանց դադարումը։ Այդ նպատակով 1709 փետրուար 25 թուականով գիր մը ուղղեց (ՅՈՀ. Բ. 16) յոգեպատիս և էբտահալել պարոնով ճեմբելի՝ պեհլեանէն յամանիցելոյ քահին Հռոմայ, փեռանք Գլէմենտոսի էբէց էբլենէ պապէ (ՅՈՀ. Բ. 38), որ է կղեմէս ԺԱ. պապը, ժամանակին աղետալից գործերուն դրդիչը։ Աղեքսանդր այս նա-

մակով կը խոստովանի թէ «ե» վերջացեալ բառերէն այժմ ներքամանակի է տրճռաւոր էյ ընդունուելնին, և աննախանձաբար կը յաւելու թէ դիւրն պէտք ունենալով զատորոշելու բերդէն ի «երբ» և ի հոգի, և կ'ընդունի ալ թէ աւետարանին համաձայն է որ հոգևոր իշխանութիւններ կարենան տարբեր առաքել ի ըրեւթաթիան պեղբս (ՏՃՈ·Բ·39)։ Սակայն պապէն ղրկուած քարոզիչներուն գալով կը դիտէ, թէ տարբեր այնուհի ու պարբին ալեաց լինել առ ինձ, այլ առաքել առ այնուհի՝ որ ու կարգան զանոնք պետք ունի ճիշտ Քրիստոսի (ՏՃՈ·Բ·43), և կ'անարգէն քրիստոնէական վարդապետութիւնները, և նախատինքներ կը կուտէն քրիստոնէութեան վրայ։ Մինչ պապին ղրկած քարոզները ըլլ առնայն պետք ունելով և լսելով՝ ալինչ համբին, և ու յառ է նոցա, այլ անձոյն առնելով ընդունէ, ըստ ըրջապտել պաշտեն, արկանելով ի ձէ երեսփոխէից ազմաւ խռովութեան, և խոհանոց չինութեան և հոպատասութեան արկանէն յալով էյրնակցութեան (ՏՃՈ·Բ·44)։ Այդ ընթացքին հանդէպ կը յիշէ, թէ երկրին պետութիւնը, որ այլազգ է և ու պաշտպանէ երեսփոխութեան, բովով բոյ և նախանձախնդիր պահպանէ ընդ ընդ ղեղառնոց, իսկ առ ձեզ եկեալ պարբէն ու այպես, այլ ներհակառ վարքն ընդ ձեզ Ուստի կ'առաջարկէ որ նոցա ըստգն առաւել ի յետ ձեզ, և ըստ ցուցուած պարտուն, ընդբան կռանցն չարհալորինեն երեսփոխէից։ Իսկ ևթէ, կ'ըսէ, հեծապատառութեան ի զէայ հերետիկոս պատարագութեան, եղէցի կամ վհատառութենանք, սակայն սրբազան անուան պետանք ու է վայելուչ այնպէս իրականութեան (ՏՃՈ·Բ·45)։ Այս այն նամակն է, որ հռոմէականներուն գրիչին տակ էջէ «երբ» և չարբառն ալեաց է, ընդառնելով զհատմայ հայրապետն լինել Քրիստոսի և յաջորդ Պետրոսի Վէմի, և թէ Աղեքսանդր, որ կանուխ պապութեան դէմ գրած էր (§ 1884), կաթողիկոսութենէ ետքը է բաց եղող զատջին ընդդիմութեան իր (ԶԱՄ. Գ·749)։ Սակայն այսպիսի բացատրութիւն մը չգտնուիր Աղեքսանդրի խուզիչին մէջ։ Հայ եկեղեցւոյ ճշմարիտ քրիստոնէութիւնը հաստատելու համար դատնութեան ամիսփում մը գրած է, բայց ոչ պապութեան, և ոչ երկու բնութեան յիշատակութիւն կայ անոր մէջ, և Հոգւոյն Սրբոյ համար, չնչտելով կը կրկնէ. Բղեհատ է Հօրէ անէնելի և անխնալի (ՏՃՈ·Բ·40), և Բղեհատ ընդբղենատ ա է Հօրէ (ՏՃՈ·Բ·41)։ Սակայն հռոմէականներուն համար բաւական է որ մէկ քանի քաղաքավարութեան նպատակով գրուած պատուադիր բառեր տեսնան, որ անմիջապէս գրողը հռոմէադաւան հռչակեն, չկարենալով թերեւս ըմբռնել, թէ հնար է հակառակորդի հետ ալ վայելուչ լեզու գործածել առանց նզովից և անիծից, ինչ որ արժանիք մըն է Հայ եկեղեցւոյ ներողամիտ ուղղութեան։

ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

1898· Աղեքսանդրի նամակին հետեւանքն ինչ եղած է՝ գրուած չէ, բայց եղելութիւնները կը ցուցնեն թէ արդիւնք ունեցած չէ։ Հայերէն նամակը թարգմանած է հայերէնագէտ Յակոբ Վիլլօթ՝ Յիսուսեան կրօնաւորը, և անոր վկայութեան վրայ կը պնդին հռոմէականք, թէ Աղեքսանդրի նամակը «երբ» ընդբան և առղեփառական էր իրենց միտքով, այսինքն կաթոլիկական, և ու պէմպրբան. սակայն իրենք ալ կը խոստովանին թէ Վիլլօթ ընթցմանեաց ու հաբալաբ խմացառաձով (ԶԱՄ·Գ·750), որով խարդախողը իր վկայ ընդունած կ'ըլլան, հակառակ նամակին բնագիր պատճէնին՝ որ մէջնուին է։ Վիլլօթ, որ ծանօթ է հայերէն բառարանով և ուրիշ գրուածներով, 1688'ին չիոթութեանց առթիւ չան Սիւլէյմանի հրամանով Պարսկաստանէ վտարուած լատիններէն էր, որ չկրնալով ուրիշ կերպով Հայոց դէմ հակառակութիւնը յագեցնել, փոքրիկ տետրակ մը հրատարակեց Ամերիանոսի և Աղեքսանդրի դէմ, որուն մէջ Աղեքսանդրի՝ կաթողիկոսութեան առնն հռոմէականներու դէմ ըրածները կը թուէ։ Ինչ ինչ պարագաներ ալ կը յիշէ, թէ Աղեքսանդր եփսոբ տալել վանէն Քաբաչինոց, այսինքն Վեղարակիր Փրանկիսկեանց, ու է թարվէզ, թէ լատիններուն մօտ ուսման գացող տղոց ակնարկելով բսած է Թարվէզի Հայերուն, թէ անդել բառին յեր պանէ և պայ է ձձել ըսքենը ըսն, թէ Օսմանցոց եպարքոսին գրած է կաթոլիկները պատժել (§ 1825), թէ այս պատճառաւ չատեր թիապարտութեան մատնուած են, կամ է սվա և պանջանոց մնուած

են, և հաշտաց անյին փախստական ցրուած է, թէ Թարվէզ և Շամախի և Գանձայ և Թիֆլիզ քաղաքները տակնուվրայ բրած է, և թէ ինք Վիլլօթ ալ անոր պատճառով տակաւին պանդուխտ կը չրջի Պարսկաստանէ դուրս (ՏՃՈ. Բ. 47)։ Այդ մելադրանքներ, և Վիլլօթի կողմանէ եղած ամբաստանութիւնները, ինչ ալ ըլլայ անոնց իսկութիւնը, գոնէ պիտի հաստատէին՝ թէ Աղէքսանդր չատ հեռու էր կաթոլիկներու համամիտ և անոնց կողմը ըլլալէ։ Ցիշուած պարագաներ յայտնի կը ցուցնեն, թէ ինչ վերապահութեամբ ընդունելու է հռոմէական պատմիչներուն գնահատումները։

1899. Զանազան դէպքեր մեր աչքէն հեռացուցին Իսրայէլ Օրիի մեծ ձեռնարկը, որ էր Հայոց ազատագրութեան գործին ներքին միջամտութեան չնորհիւ։ Իր մտածած կերպերուն ապարդիւն մնալովը, և Ռուսաց Պետրոս Մեծ կայսեր մօտ բրած միջնորդութիւններուն իրական օգուտ չունենալը, զինքը ստիպած էին 1704 փետրուար 10'ին Մոսկուայէ մեկնիլ դէպի Տիւսէլտորֆ, թէ իր ընտանիքին տեսութեան և թէ Ցովհան-Գուլիէլմոս կայսրնտիրին խորհուրդները լսելու, որ Օրիին պաշտպան էր կանգնած (§ 1846)։ Օրին թէպէտ Ռուսական երկարաձգումներէ ձանձրացած, սակայն քաջալերիչ նչաններ ունէր Հայաստանի կողմէն։ Աղուանից Սիմէոն կաթողիկոսը 1701'ին, և անկէ առաջ Երեմիա կաթողիկոս 1700'ին մեռած էին, և 1702'ին Եսայի Հասան Ջալալեանց Աղուանից կաթողիկոսական աթոռը գրաւած էր բաժանումը վերջացնելով, թէպէտ առանց էջմիածնի գիտութեան։ Բայց վերջէն հաչտուած և Նահապետ կաթողիկոսէ հաստատութիւն առած էր (ՋԱՄ. 81)։ Եսայի համարձակօրէն Օրիի ծրագիրին պաշտպան կանգնեցաւ և մելիքներուն ալ քաջալերութիւն տուող եղաւ, Անգեղակոթի մէջ հաւաքուած մելիքները (§ 1835) իր գլուխը ժողվեց Գանձասարի մէջ, ուր Օրիի հրահանգ տուեցաւ իրենց հաչուոյն ծախքեր ընել (ԼԷՕ. Բ. 259)։ Հետեւաբար Օրի գոնէ այդ կողմէն վստահութեամբ մը Եւրոպա կր մեկնէր (§ 1846)։ Զարմանալի է որ Եսայի կաթողիկոս, որ Պափմըլէն համաձայ Աղուանից եպիսկ մը քեռզած է, բնաւ Օրիի և անոր ձեռնարկին ակնարկ մը չունի իր գրուածին մէջ։ Օրի Մոսկուայէ մեկնելով Վիէննայի մէջ կայսրընտիրին հետ տեսակցեցաւ, Լէոփոլտ կայսեր ալ տեղեկութիւն տուաւ, բայց Եւրոպական պատերազմներուն վիճակը չէր նեղրեր կայսեր՝ ուրիչ գործով զբաղիլ, և կայսրընտիրն ու Օրի՝ Տիւսէլտորֆ անցան, և այնտեղէն յատուկ դիմումներով կղեմէս ԺԱ պապը համոզեցին, որ Պարսից չահին նամակ մը ուղղէ քրիստոնէից պաշտպանութեան համար, և նամակը Օրիին յանձնուի տանիլ (ԼԷՕ. Բ. 260), որ այս կերպով պաշտօնական հանգամանքով Պարսկաստան պիտի մտնար, և կարեւոր հետաքննութիւնները պիտի կատարէր։ Օրի հոգաց նոր զէնքեր գնել Հոլանտիոյ մէջ 400 Հայեր զինելու չափ, որոնք Ռուսական արչաւանքին յաջողութեաց պիտի երթային, իբրեւ երկրին հմուտներ, և ինքն ալ կը պատրաստուէր Վիէննայէ մեկնիլ 1705'ին։ Մայիս 7'ին Լէոփոլտ Ա մեռաւ, և Ցովսէփ Ա յաջորդեց, և պէտք եղաւ զայն տրամադրել Հայերուն հովանաւորելու (ԼԷՕ. Բ. 261)։ Օրին 1706 հոկտեմբերին, այսինքն է իր տարիուկէս ետքը նորէն Մոսկուա կը գտնենք, ուր յիսունէ աւելի հետեւորդներէ չքախումբ մը կը կազմէ, ամենայն ճոխութեամբ պատրաստուած, և Պետրոս Մեծէ ալ յանձնարարականն առնելով, պապական դեսպանէ աւելի Ռուսական դեսպանի կերպարանը կուտայ իր ձեռնարկին։ Ամէն ազգէ և ամէն տիճանէ անձեր կ'առնէր նա իրեն հետ, և մինչեւ իսկ Վրաց արքայորդին մէկտեղ առնել մտածեց, բայց Ռուսաց կայսեր հաւանութիւնը չստացաւ։ Մոսկուայէ մեկնեցաւ 1707 յունիսին, հոն թողլով Մինաս վարդապետը թղթակցութեանց և յարաբերութեանց համար, բայց Շամախի քաղաքը տիպուեցաւ կանգ առնել։ Պարսից կառավարութիւնը կասկածներու մատնուեցաւ անսովոր և անակնկալ դեսպանութեան մասին. Շամախիի կուսակալը չարունակ աթգելքներ կը հանէր՝ Ասպահանէ հրահանգի սպասելով, բայց հրահանգը չէր գար, զի Շահ Հիւսէյինի տկարամիտ կառավարութիւնը՝ ընդունելու կը վարանէր, դիմադրե-

լու կը վախնար։ Անվերջանալի ձգձգումներէ ետքը, և մօտաւորապէս Մոսկուայէ մեկնելէն երկու տարի ետքը, Օրի Շամախիէ կը մեկնէր, էջմիածին կը հանդիպէր, Աղէքսանդր կաթողիկոսի օրհնութիւնը կ'առնէր, և այնպէս կը չարունակէր իր ճանապարհ։ Աղէքսանդրի մէկ նամակը կայ Պետրոս Մեծ կայսեր ուղղուած 1709 յուլիս 7'ին գրուած, որուն մէջ Օրիի Պարսկաստան մեկնիլը կը ծանուցանէ, պաշտօնին պատիւը լաւ պահելը կը վկայէ, և կայսեր չնորհակալու օրհնութիւններ կը մատուցանէ (ԼԷՕ·Բ·267) Հայոց ազգին վրայ ցուցած հոգածութեան համար։ Այդ նամակը 4 տարի միայն ետքն է պատին ուղղած նամակէն (§ 1897), որուն մէջ կը գովէր և կը բարձրացնէր Պարսիկ վեհապետին քրիստոնէից մասին ցուցած խնամքը (ՏՃՈ·Բ·45). սակայն պէտք չէ որ ոմանց պէս հետեւցնենք թէ կաթողիկոսը հակառակ էր Օրիի ծրագրին (ԼԷՕ·Ա·446), դի անոր բուն միտքը պատին ընթացքը հակազդակներով մը չանդիմանել էր։ Ապաքէն նոյնիսկ Պետրոսի օրհնագիր յղելը իր զգացումները կը յայտնէ, որ այսպիսի խորհուրդներու չէր հակառակեր, բաւական էր որ դաւանափոխութեան պայմանի կապուած չըլլային, ինչպէս Նահապետ ալ կը մտածէր (§ 1846)։

1900. Օրիի դեսպանութեան արդիւնքը և Պարսկաստանի մէջ տեղի ունեցած պաշտօնական եղելութիւնները։

ՕՐԻԻ ՄԱՀԸ

Շուրջ 1709 յունիսին Շամախիէ մեկնող Օրին, նոյն տարւոյ սեպտեմբեր 20'ին Շամախի դարձած կը գրտնենք (ԼԷՕ·Բ·269), միայն երեք ամսոյ միջոց մը, ճանապարհութիւններն ալ հէնց լըլլալով, որ կը ցուցնէ թէ Պարսիկները չսպասած են օր մը առաջ դեսպանը ետ դարձընել։ Արդէն Օրին ալ կատարելու յատուկ գործ մը չունէր, մէկ մը իրեն կարեւորութիւնը պիտի աճեցնէր, մէկ մըն ալ տեղւոյն վրայ Պարսկաստանի նկատմամբ ճիշդ տեղեկութիւններ պիտի հաւաքէր, ինչ որ կրցած էր Շամախի մնացած առենն ալ ընել։ Իրր դեսպանութեան նպատակ ցուցուած էր քրիստոնէից պաշտպանութիւնը, և Շահ Հիւսէյին յատուկ գրով մը կը պատասխանէ Զար Պետրոսի, որ թէպէտ քրիստոնէից մէջ կան այնպիսիներ, որ սրբանէ պոկիծը պէտ կրեին էրեանց վար սրբտնեցէ կամ վար ուղղութեան համար, սակայն, կ'ըսէ, ձեր բարեկամութեան համար, վեհանձնաբար ներում եմ չէշել ժողովուրդներէ քալը սրբտներն ու ձեռերը, այն պայմանով որ նրանց այսուհետեւ այլ ես սրտիկ սխալներէ ձեզ չընեն (ԼԷՕ·Բ·268)։ Յայտնի չէ թէ որոնց կ'ուզէ ակնարկել այդ իրողութեամբ. մեզի բաւական է տեսնել, որ իրօք քրիստոնէից պաշտպանութեան չուրջը դարձած է Օրիի դեսպանութեան պաշտօնական նիւթը, և թէ իրր Ռուսական դեսպան նկատուած է, և պատին կողմէն ունեցած դեսպանութիւնը նկատի առնուած չէ։ Օրիի կը վերագրուի այդ ամբիւ յարաբերութեան մտած ըլլալ ուրացեալ վրացի Գորգին խանի հետ, որ Աֆղաններուն երկրին մէջ բռնաւոր կուսակալ մրն էր (ԼԷՕ·Բ·279)։ Բայց Գորգինէ աւելի՝ Օրիի ներկայութենէն օգուտ քաղողին Աֆղանները, որոնց պետ Միրվէյս՝ Աֆղաններուն ապստամբութիւնը կազմակերպեց, և անոր որդին Մահմուտ՝ Պարսից չահ եղաւ Հիւսէյինը տապալելով։ Օրի, Պարսկաստանէ դառնալուն, Շամախիէ լուր տուած էր Պետրոսի՝ Աֆղաններուն չարժումին մասին, իսկ ինքն Շամախի մնալ ստիպուած էր, սպասելով որ Ռուսաց կողմէ նաւեր հասնին, որոնցմով կասպից ծովէն փոխադրէ մետաքսագործ 20 Հայ բնտանիքներ, և Պետրոսի բնծայ 25 ձիերը, իր հետեւորդները, և Աղուանից նայի պատրիարքը, որ յանձնառու եղած էր անձամբ Ռուսաց կայսեր ներկայանալով ազատագրութեան գործին աշխատակցիլ։ Նաւեր բաւական չգտան, և հարկ եղաւ մի մասը ցամաքով ճանապայ հանել։ Օրիի գտնուած նաւն ալ փոթորիկէ ցամաք ինկաւ և քայքայեցաւ, և Օրի նիզովօ ձմեռելու պարտաւորեցաւ, և հազիւ թէ 1711 ամառուան սկիզբը գայն Աստրախան հասած կը գտնենք։ Օրի ժամանակը անգործ չանցուց, և չարունակ Ռուսներուն տեղեկութիւններ հասուց Օսմանցոց չարժումներուն վրայ, որոնք Ռուսաց դէմ պատերազմի կը պատրաստուէին Պալթիածը Մէհմմէտ Նպարքու-

սին հրամանատարութեամբ։ Պատերազմը Բրութի դաշնադրութեամբ փակուեցաւ, և Պետրոս անձամբ մեծ վտանգէ մը ազատեցաւ (ԺՈՒ. 324)։ Օրի երբ այդ ծառայութիւնները կը մատուցանէր, պարտաւորուած էր իրեն դէմ կայսեր մօտ եղած ամբաստանութիւնները ցրել, և իր գործին արգելք հանողներուն դէմ մաքառիլ։ Այդ պարագաներուն մէջ, իր կեանքը կը կրկէ Աստրախանի մէջ 1711 օգոստոսին, դեռ մերձաւորապար յիսնամեայ ժիրաժիր տարիքին մէջ, անչուշտ ծանր հիւանդութեան մը հետեւանօք։ Ծուղարկաւորութեան կը նախագահէ Եսայի Աղուանից կաթողիկոսը, ամիսներով մարմինը Հայոց եկեղեցւոյն բակին մէջ, թէպէտ այժմ այլեւս հետքը չի տեսնուիր։ Եսայի առանց Օրիի՝ բան մը ընելու անբաւական գտնուելով, կը պարտաւորուի Գանձասար դառնալ (Լէօ. Բ. 274)։

ԳՈՐԾԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1901. Իսրայէլ Օրի, ինքնատիպ և չափազանց դէմքի մըն է պարուս պատմութեան մէջ, որուն մասին սակայն ժամանակակից ազգային յիշատակարաններ բնաւ բան մը չեն պատմեր, և վերջին ժամանակներու պատմութեան գիրքեր և ձեռնարկներ պատրաստողներն ալ լուռ են անոր մասին։ Եթէ առաջինները քաղաքական կասկածներով չեն խօսած, վերջիններն ալ տեղեկութիւն չունենալնուն խօսելու առիթ չեն ունեցած։ Օտար դիւանները մէջ գտնուած թղթակցութիւններ առիթ ընծայեցին մոռացութեան գերեզմանէն յարուցանել մոռցուած Օրին, և գլխաւորապէս կարապետ Եզեանց՝ բանասէր պատմաբանը կը պարտինք, որ 1898'ին ըստուար հատորով մը հրատարակեց պետական դիւաններէ քաղուած 300 կտորէ աւելի նամակներ և գրուածներ իրենց բնագրական լեզուներով։ Իսրայէլ Օրիի վաղահաս վախճանը իրեն չներեց արդիւնաւոր հետեւանքի մը հասցնել իր ձեռնարկը, որուն վրայ 1680'էն 1711 երեսուն տարիներ անխոնջ աշխատեցաւ, միշտ իրեն դիմաց ունենալով այնպիսի դժուարութիւններ, որոնք ամէնէն հաստատամիտ գործիչներն ալ կրնային ձեռնթափ ընել։ Սակայն Օրի հնդիմակն ու ստեղծիչն եղաւ Հայութիւնը իբր ազգային մարմին նկատուելու գաղափարին, և զայն իբր ընկերական մարմին մը վերակենդանացնելու ծրագիրին։ Ռուբինեանց հարստութեան՝ Լուսինեաններու օրով և ձեռքով իյնալէն իվեր, Հայութեան գաղափարն ալ կ'իյնար իբր ազգութիւն նկատուելէ, և անյոյս տեսութիւններ էին որ կը զօրանային։ Արցախի ծոցը յղացուած գաղափարը, որ Էջմիածնի խորհրդակցութեան մէջ խօսուեցաւ (§ 1790), և որուն հետեւանօք Ցաղկոր կաթողիկոս Վրաստանի վրայէն Կ-Պոլիս եկաւ, ծերունի Պաւղի երիտասարդ որդւոյն միտքին մէջ սեւեռեցաւ, որ եթէ տարիքով գործին գլուխը չէր կրնար տեսնել, սիրտին եռանդովը գործը հրահրողն եղաւ։ Այս բանին նշանակն է Օրիի Կ-Պոլիսէ նեբոպա անցնիլը, գինուորականութեան հետեւիլը, աղդեցիկ դուռեր բաղխելը, իշխաններ և թագաւորներ իր միտքին համոզելը, և գործի ալ ձեռնարկելով երկրէ երկիր և քաղաքէ քաղաք թափառիլը (§ 1843)։ Հասարակ բախտախնդիրի կերպարան պիտի տուէր իրեն, եթէ գաղափարին բարձրութիւնը, նպատակին ուղղութիւնը, աշխատութեան յարատեւութիւնը չարդարացնէին իր ընթացքը։ Թէպէտ Օրի առանց արդիւնաւորութեան կնքեց իր կեանքը, այլ գործ մշակած խորհուրդն ու ցանած սերմերը չկնչացան. և եթէ այսօր, իր մահուանէն 200 տարի ետքը, Հայ ազգութիւնը՝ ընկերական չրջանակի մէջ լաւագոյն դիրք մը ունի, և ապագայ բարօրութեան իղձերով կ'օրօրուի, պէտք է խոստովանիլ թէ չարժումին սկզբնաւորութիւնը Օրիի կը պարտի։ Աշխարհի ընթացքին և դարերու պատմութեան մէջ չատ ու չատ են գաղափարի մը հիմնադիրներ, որ իրենց միտքին արդիւնաւորութիւնը չեն տեսած։ Ազգային զգացմանց տեսակէտէն՝ Օրիի գործին մէջ դիտողութեան կէտ մը կրնայ կազմել դաւանափոխութեան պայմանին համակերպիլը (§ 1843), սակայն բուռն զգացումներով տոգորուած, և նպատակին նորութեամբ ոգեւորուած, և կրօնական չեզոք անձի մը համար՝ թերեւս մեղադրելի չըլլան այդ մտածումները։ Միւս կողմէն իրապէս գործադրելի հանդամանք չունեցաւ այդ պայմանը, զոր տիպղական կերպով կ'առաջ-

ջարկէր Լատին աչխարհը, և անոր ներկայացուցիչներուն, կայսրընտիրին և կայսեր և պապին բունդատուիչ կամքը։ Բարեբախտաբար երկրորդական մնացին այդ գործիչներն ալ, իրենց պայմաններն ալ։ Օրի չուտով ետ թողուց իր առաջին համոզումը, երբոր աւելի զօրաւոր և աւելի խոհական և աւելի լայնամիտ հովանաւոր մը գտաւ իր զգացումներուն, Ռուսիոյ մեծ կայսր Պետրոս Մեծը, որ Հայերը պաշտպանելու համար չպահանջեց անոնցմէ իրենց դաւանութեան զոհողութիւնը։ Ռուսիոյ կայսեր անունն ու գործը առջեւ անցան, և անոր անունով կատարեց Օրի Պարսկաստանի դեսպանութիւնը (§ 1900)։ Այս թուականէն Հայեր Ռուսիոյ դարձուցին իրենց աչուըներր։

1902. Օրիի ձեռնարկին տրուած Ռուսական գոյնը աւելի ևս չնչուռւցաւ անոր մահուանէ ետքը։ Մինաս վարդապետ Տիգրանեան, որ չարժուհին առաջին օրէն Օրիի գործակից էր եղած (§ 1845), և որ իբր Օրիի ներկայացուցիչը Ռուսաստան էր մնացած անոր Տիւսսելտորֆ (§ 1846) և Պարսկաստան (§ 1899) մեկնած միջոցներուն, իբր Օրիի յաջորդ՝ իր վրայ առաւ գործին չարունակութիւնը, ամփոփուելով պարզապէս Ռուսական յարաբերութեանց չրջանակին մէջ։ Իրաւ անգամ մը Եւրոպա անցած էր Օրիի հետ և կայսրընտիրին ծանօթացած (§ 1845), սակայն այնչափը չէր բաւեր, որ եւրոպական լեզուաց և գործոց անտեղեակ Հայաստանցի վարդապետը՝ կարենար յարաբերութիւններ մշակել Արեւմուտքի հետ, և Եւրոպական արքունիքները չանագրգռել Հայերու մասին։ Հետեւաբար այդ կողմէն նոր ըսելիքներ չունինք այլեւս, և Լատինական մօտաւորութիւնը խափանուած կը մնայ։ Մինաս վարդապետ բոլոր ուչադրութիւնը դարձուց Ռուսաց կառավարութիւնը չանագրգռել Հայաստանի իրդիրներով, և երեք տարիներ, 1711'էն 1714 որ Աստրախան մնաց, անձանձրոյթ տեղեկաբեր մը եղաւ Պետրոսի չարժուհին, որ կը սպառնար այլայլել Պարսկահայ երկիրներուն վիճակը, և Սէֆիներու տկարացած և մղկտացած հարստութիւնը տապալել։ Գործը Ռուսներուն համար անտարբեր չէր, և Պետրոս ալ, 1715'ին Պարսկաստան դեսպան դրկող Արտէմ Վոլինսքիի հրահանգ կու տար յատկապէս պեղկոմիներէ հաւաքել Հայ ժողովրդէ տալն (Լիւ0·Բ. 284)։ Իսկ այդ հետաքրքրութիւնը թելադրողը նոյն ինքն Մինաս վարդապետն էր, Օրիի հոգւով ներչնչեալ մը, և Հայոց ազգութեան վերակենդանացման անձնուէր աչխատող մը։ Օրիի ձեռնարկին մերձաւոր չարունակութիւնը տալէ ետքը, այժմ դառնանք նոյն միջոցին կատարուած ուրիչ հեղլութիւններր պատմել։

1903. Թուականներու մերձաւորութիւնը մեր առջեւը կը դնէ Աւետիք պատրիարքը, որ 1706 դեկտեմբերին Ս. Միքայէլի վանքը վակուած կը մնար Գաղղիոյ թագաւոր Լուդովիկոս ԺԴ'ի հրամանով (§ 1878)։ Ստոյգ է որ Հռոմէն, կղեմէս ԺԱ պապին կողմէն, խնդրանչանքներ և սիրալիր յանձնարարութիւններ կու տային Լուդովիկոսի, որպէսզի բանտարկեալ եղբայրը ազատ արձակէ (Թ0Բ·112). սակայն անհնար է Գաղղիացւոց՝ Մեծ մականուանած և իրենց վեհապետներուն երեւելագոյնը ճանչցած թագաւորին ձակտէն սրբել՝ Աւետիքի պատգամովը դրոչմուած բիծը, քանի որ էր պետքանէն չեօթ անոր վերջաբերեալ գլխաւոր հեղինակն եղած, և էր նամանաւանդ ալ յայտնապես հռոմէականի փառաց, և նենգութեամբ վերադարձ ու բանտարկեալ Աբբէյէ անչին արիւն հովիւն էր (Թ0Բ·114)։ Աւետիք չղթայակապ փակուած էր Ս. Միքայէլի բանտ-վանքին խուցերէն միոյն մէջ, ուրիչ մէկու մը հետ յարաբերութիւն չունենալով, բայց հին աչխատասէր միաբան Մոֆլէ Ճուլէն (mon frère Julien), եղբայր Յուլիանոսի հետ։ Աւետիք կը գրէ, թէ նա յոյժ անուղղի էր, ըստ մեզ խոպոր լսէր, ու բերէր ներելով, և դէպ նախապէս հերձուածողներ (hérétique, schismatique), այսինքն Նեսթորիոս և հերձուածող կոչելով. էլչիէն լաւ չէր պար, և դէպ խօսք կը թողուր։ Միայն մեծաւորին այցելութենէն առնուած շնորհով պահ մը կը բանար և էլենճէրէն։ Աւետիք կը կարծէ թէ Յուլէն մեծաւորին կամքին հակառակ գինքը կը նեղէ. սակայն մենք լաւ գիտնք, որ Լատին կրօնաւորը իր մեծաւորին հրահան-

գին հակառակ չէր կրնար գործել, և եղածը հարկաւ խաղ մրն էր խեղճ Աւետիքը խաբելու։ Բոլորովին տարօրինակ պարագայ մըն ալ կը յիշէ Աւետիք, թէ իւր խուցին վրայ գտնուող մը, ղէրն է ինծի՞ կո՞ն ըսաը, և բանտապան կրօնաւորներ արգելել չէին մտածեր։ Աւետիքի սիրտին վիշտ տուող պարագաներուն աւելի մեծն էր, իրր հերետիկոս և հերձուածող նախատուիլը, այդ խօսքը չէր ընդունէի, կը գրէ, բայց ընդ ընդմ էիներ որ պատասխանէի. ուստի ինծի՞ ըսէ էիներ ցերեկ և վերադրելու, երբո՞ օր երբ օր տղոյն կո՞ծայէ։ Նախատինքներուն գոյզ կ'րնթանային դատաստիոխութեան բառիպուններ, և կը հալածուէր նոյն իսկ անոր համար, որ ինձի՞ պարէնս կզահս և ջրոմս ըս կը պահէր, որպէս է մանուկներն է վեր պահեալ եր է Հայոց կրօնէն։ Աւետիք ձանձրացած բանտապան կրօնաւորին լուտանքներէն, անոր նշանացի կ'իմացնէ, որ պահոց օրն ոսիեմ խմիմ նէ՝ կոխելի ֆառնոց կո՞ընիմ հա՞ ըս։ և անկէ ետքը կ'րսէ. ձեզը վէղը ասոյէ, և ինծի՞ պէս որ քերէն (74 ԱՐՐ. 194)։ Այդ մանրամասնութիւնները յառաջ բերինք իմացնելու համար թէ Աւետիքի հաւատաքննական բանտապանները մինչեւ ուր կը մղէին զայն նեղելու նրբութիւնները։ Միջոց մը ետքը սկսեր են կիրակի և օր օրէ վանէն տաքսը տանիլ պտրաքէ ըսելու. սակայն հոն ալ ըսր պէս կ'ինն եղեր (ԹՕՐ. 113), իրրեւ խորչելի անձնաւորութիւն մը։ Ս. Միքայէլի վանքը եղած միջոցին վերջերը ճուլէն ուրիշ տեղ կ'երթայ, և տեղը Սաքսո աշխատասէր միաբան մը կ'անցնի, և Աւետիք գոհունակութեամբ մը՝ հանգստացոյ կ'ըսէ, միայն անոր համար որ կէր խօսէր (74 ԱՐՐ. 194), այսինքն է, գոնէ չէր նախատեր։

ՊԱՍՔԻՑԼԻ ՄԷՋ

1904. Տարիներ անցեր էին Աւետիքի անյայտանալէն, սակայն Կ-Պոլսոյ մէջ անոր անունը մոռցուած չէր, և գայն գտնելու ջանքերը կը չարունակէին, նոյնիսկ անհիմն պրոյեկներ ժողովուրդը կը դրդռէին, և եկեղեցւոյ մէջ էրէկոններէը ազդեցիկ կը կոչտգոնէին, այսինքն հակումներ կը կատարուէին, անոր շուրջ վերադարձին համար (ԹՕՐ. 105)։ Կը լսուի, իրր Իոաոսթոյ եկած ըլլայ, և իսկոյն շատեր հոն կը վազեն։ Մէկ մը Հոլանտիոյ մէջ տեսայ կ'ըսէ, և պարգեւներ կը ստանայ. երկու թուրք գերիներ Մալթա կղզին բանտարկուած է կ'ըսեն, և իրենց փրկանքը կը չահին. և հարուստ Հայեր յառուկ նաւով Մալթա կ'ուղեւորին (ԹՕՐ. 106)։ Ֆէրիոլ այդ պարագաները կը հաղորդէ իրենց խագաւորին, որուն ականջը կը հասնի թէ Աւետիքը փնտռելու մարդեր եկած են Լիվուռնօ, և անկէ Գաղղիա պիտի անցնին (ԹՕՐ. 113), և այդ աւէն պարագաները կասկածներ աւելցնելով, նոյն իսկ Սէն Մէնէլիէ լեռը չրջապատող ծովը ոտ ասաղտոն ալ, Աւետիքի համար՝ ըսո քառակոնի դիւռացոյ չհամբառելով, հռչակաւոր Պաստիլ (Bastille) բերդերը, ծանր գործերն ու աշխարհները հարկաւոր գտուածոյ հաստատուած գերին ձեռքէ չհանելու համար (ԹՕՐ. 115)։ Աւետիք կը գրէ, թէ չեմ երէ՞ ամոց, այսինքն 1710'ին, յունուար ամոյ 8, օրն ըսրե՞ըքին, որ հին տոմարով կը պատասխանէ 1709 դեկտեմբեր 28'ին, հրաման եհաս յարտեան, և երե՞ մարդ ղէրն է յարտեանէ մայրաքաղաք Փարիզ (74 ԱՐՐ. 194)։ Թերեւս ամսաթիւին մասին չփոթութիւն ունեցած ըլլայ Աւետիք, գի բանտի արձանագրութեանց մէջ 1709 դեկտեմբեր 18'ին գրուած է, թէ ամենայարեաբար քանգարիւել մը քերտեցաս, որոն անունը ծածուկ կը պահուի (ԹՕՐ. 115)։ Սակայն մեր տեսութեամբ այդ անանուն բանտարկեալը Աւետիք եղած պիտի չըլլայ, քանի որ Աւետիք ամսաթուով և ճօթենակի օրով կը նշանակէ Պասթիլ փոխադրութիւնը, թէպետ ըստակ չէ թէ յունուար 8 ըսրե՞ըքին օրը հրամանին հասնելուն, թէ Մօնսէնմիշէլէ մեկնելուն, կամ թէ Փարիզ հասնելուն թուականն է։ Պասթիլ բերուելուն պէս Աւետիք չղթայակապ կը նետուի է քանդն ներքին, գետնափոր նկուղներէն մէկը, ուր կը մնայ տասնուհինգ օր։ Անտեղ յոյժ փոքրոյիկ առնէ, կ'ըսէ, է. ոտմանեակ և է հաղ, էլէրն յոյժ նեղը հաղ, ըսր յուշտփէի նոր (74 ԱՐՐ. 194)։ Բանտին վերատեսուչը, որ մասյս Պէռնվիլ կը կոչէ (00 ԲՆՍ. 142), հոգ կը տանի բժիշկ բերել և խնամել տալ, և անշուշտ բժիշկի խորհրդոյն է, որ վտանգաւոր նկուղին մէջ Աւետիքի կեանքը վտանգուած տեսնուելուն,

իբրեւ մեծ չնորհ մը քառասնօրեայ առաջին բանտարկութենէ ետքը, նկուղէն կը տեղափոխուի, և կը դրուի մէկէ հազարաւոր քանդ (74 ԱՐՐ. 195)։ Այս բացատրութիւնն ալ կը բաւէ ցուցնել, թէ դարձեալ հանդիստ դիրք մը ունեցած չէ, այլ միայն առաջինին բազդատութեամբ տանելի նկատուած է։ Պասքիլլի բանտին մէջ կատարուած տեղափոխութիւնը մերձաւորապար կը դնենք 1710 փետրուարին վերջերը։ ✓

1905. Նոր դիրքին հետ նոր կացութիւն մըն ալ կը ստեղծուի Աւետիքի համար, մասնաւորապէս արտաքին ԱԻԵՏԻՔԻ ՆԵՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ ՆՈՐԸՆ ձեւը կ'ուզենք նոպգնական և ներքին նեղութիւններ, և ստիպուհինք կ'ըլլան իր դատանութիւնը փոխելու և կաթոլիկ դառնալու, որպէսզի հնար ըլլայ զինքն բանտէն աթձակել։ Ցատուկ Գաղղիացի եկեղեցական մը կ'որոշուի այդ նպատակին, Մոսյոր լաբէ Ռընօտօֆ անուն (monsieur l'abbé Reynaud) որպէսզի Աւետիքը թեւադրէ և յորդորէ։ Ռընօտօֆի մօտ թարգման կը նշանակուի Մոսյոր Լաւբր մը, որ լեզուագէտ Հայ մը եղած պիտի ըլլայ, զի գրուած է թէ անունը ըստ ինքեան Հայոց՝ Խաչատուր. Հայ մը, որ անունն ալ թարգմաներ է՝ գաղղիական Լա-Քրօա (La Croix) կոչման փոխելով, և վըստահելի անձ մը դարձեր է, զի ելոյթ ընդհանրապ ալ կոչուած է։ Աւետիքի հետ յարաբերութենէն ունեցողներուն չարքին, վերոյիշեալներէն զատ կը յիշուին նաեւ Միքել մը պահապան, Անտոն մը կեղակոյր քերող, և Քէթլէյ մը, որուն անունը չէ գրուած (00 ԲՆԱ. 143)։ Ջորս տարիներ կը լրանային որ Աւետիք անտանելի նեղութեանց ներքեւ կը հալէր, սակայն օրինակելի տոկունութեամբ իր միտքն ու ընթացքը չէր փոխեր, կը յուսար թերեւս որ օր մը իրենները իրեն ազատութեան կերպը կը գտնեն, և զինքն այդ գերութենէն կը փրկեն։ Սակայն տարիներ կ'անցնէին, և Աւետիք զինքն յաւիտենական մոռացութեան ինկած կը կարծէր, վասնզի ոչ մի կերպով աչխարհէ լուր չէր ստանար։ Հիւանդութիւնն ալ, անդրաժշտ հետեւանք բազմաչարչար կեանքին՝ զոր կաթոլիկութեան պաշտպանները իրեն պատրաստած էին, օրէ օր կը ծանրանար իր վրայ, այնպէս որ մարմնոյն զօրութեան հետ հոգեկան զօրութիւնն ալ տակաւ կը նուազէր Աւետիքին վրայ, և դատանափոխութեամբ իր առաջապահին կեանքին նչխարհալ օրերը մխիթարելու գալափարը՝ տակաւ կը զօրանար իր վրայ։ Բայց իսկոյն որոշման չէր հասներ. հօքին ամիսներու միջոց մը կ'անցնէր տակաւին, մինչեւ որ Աւետիքի տրամադրութիւնը վճռական որոշման չանգի։ Իրենտօֆ քահանայն ճարտարութեամբ վարած կ'երեւի իրեն չանձնուած պաշտօնը, առաջ Աւետիքի ընթերցանութեան տալով հռոմէական հոգւով գրուած հայերէն գիրքեր, զորս հարկաւ ինքն ալ կ'ընդչայներ թարգմանին միջնորդութեամբ։ Անկէ ետքը Աւետիքի իրբեւ ժամանց կը ներուի գրիչով ալ զբաղիլ, նոյնիսկ տպագրելու գիրքեր արտագրելով, որոնք դեռ պահուած են Փարիզի Գաղղիական մեծ մատենադարանին մէջ (00 ԲՆԱ. 114)։ Այս գրութեանց մէջ Աւետիքի աւելցուցած յիչատակարանները, պատմական աղբիւրներն են իր կրած արկածներուն։ Ընդօրինակած գիրքերէն գրատնուածներն են, Հռոթերդոս Բնլարմինոսի Պ-օրըքանօ-ըն-ի էրնոպանեական վերծաբանութիւն, թարգմանութիւն Պետրոս Պօղոս քահանայի. և կղեմէս կալանոսի Քերթող և պրոմեթեական նէրթաթիւն, և Նոր կոնկոբան Ամոդելոտամի 1668'ի տպագրութեան վրայէն (00 ԲՆԱ. 141)։ Առաջինին վրայ կը գտնուի 1710 յունիս 9/20 թուականը, իսկ վերջինին վրայ օգոստոս 3/14 և օգոստոս 27 թուականները, որք կը ցուցնեն թէ որ միջոցին ներուած է իրեն գրութեամբ զբաղիլ։ Իսկ գրութեան յաջողակութիւնը կը քաղուի Աւետարանը 20 օրէն և Նոր կտակարանը 39 օրէն աւարտած ըլլալէն։ Ընդօրինակութեանց վրայ աւելցուցած յիչատակարաններէն կը քաղուին չատ մը կենսագրական տեղեկութիւններ և իր արկածներուն մասին ծանօթութիւններ, որոնցմէ արդէն օգտուեցանք պատմութեանս կարգին։ Վերջնագոյն թուական, 1720 օգոստոս 23'ին, կը գրէ, «Ահա ըստ փոքէ և ասըն ամէն եղեր որ քանի կամ, է մէջ Փարիզու քերթին ղընփանէն, որով 1706 տարւոյ սկիզբէն հանչուած կ'ըլլայ իր բանտարկութիւնը (§ 1874), յա-

սինքն կ-Պոլսէ սկսելով։ Այդ յիշատակարաններուն մէջ Աւետիք դժուարաւոր է Գաղղիոյ տէրութեան և պաշտօնականներուն դէմ բան չգրել, նարկաւ վախնալով որ գրածները, թարգմանին ձեռքով կրնան բարձրը տեղը հաղորդուիլ և իրեն վնասել։ Ուստի միշտ չմոռնար ազօթել և գովութեամբ յիշատակել Լուդովիկոս Թագաւորը, զոր Լոյ կամ Լոյս (Louis) կը կոչէ, և Ֆնօ-Ե վէրէ մօնսէնյէօր Պոնշարթրը (Bonchartre), և Փարիզու սաքըոէթ կարդինալ Նօայլը (Noailles), յուսալով որ էսէկոպոսութիւնը ինձմէ դէպ ի վեր տալով կը ցուցնեն, բայց տակաւին մինչեւ օգոստոս 23 վճռական որոչում մը տուած չերեւիր, և ինքն կը կոչէ Աւետիք Էրբոպէօ Հայոց Լուսաւորչեան, կամ Էրբոպէօ Հայոց Լուսաւորչի, կամ Կոնսոր Հայոց Էրբոպէօ (00 ԲՆՍ·142-143)։

1906. Ուր որ Աւետիքի միտքը աւելի եւս մեղմացած կը տեսնուի՝ ընդարձակ յիշատակարանն է, որ կատարեալ ինքնակենսագրութիւն մըն է։ Գրութեան օրը չէ յիշուած, բայց ոճէն վերջին օրերուն գրուած ըլլալը կը հասկցուի, թէպետեւ տեղ մը էջ փոքր Ե հինգ ամսուկ նշանակած է (74 ԱՐՐ·195) իր բանտարկութիւնը, բայց ե և է թուատառերու չփոթութիւն մը կ'ենթադրուի, և եօթն ամսուան կէս ընթերցուածը 1710 օգոստոսին կը համապատասխանէ։ Աւետիք Բեւլարմինոսի գրութեան վերջը բաց էր յուսնի 9/20'ին, թէ ըստ պորտիանոսին, հինգ է տան անգամ սիկիքեն հինգ է վերջն կոպերեցի, այլ երկու անգամ ըզբնուն եւս երեցի, և թէ որ ճշմարիտ են քանի օրին, և մոտանեաս իմով ինէեցի վան հերձուածին և հաստատութեան քանի (00 ԲՆՍ·144)։ Սակայն տակաւին այդչափը չէ բաւած իր միտքին հաստատութեան վստահանալու և անչուշտ այս եղած է պատճառը, որ մեծ յիշատակարանին մէջ ջանացած է հաստատել թէ ինքն սկիզբէն հռոմէական դաւանութեան համաձայն գտնուած է, և մինչեւ իսկ իբր կաթոլիկ հալածուած է։ Այդ նպատակով կը յայտարարէ թէ նիհազար կաթողիկոս և պիսկոպոսական ձեռնադրութեան առթիւ իրեն յանձնարարած ըլլայ, հնազանդիլ էջմիածին, և քահանայ ըլլալ, և Սուրբ Հոգին բերեր է ի վերայ և յՈրդւոյ բռնել (74 ԱՐՐ·75), թէ ինքն Ջուղայի եղած ըլլալու ամբաստանութեամբ պատժուածները ազատած ըլլայ (74 ԱՐՐ·115), թէ կաթոլիկները պաշտպանելուն համար ամբաստանուած ըլլայ (74 ԱՐՐ·153), թէ իրեն համար բռնուած ըլլայ Ֆրէնկ կ'ասէ (74 ԱՐՐ·155), և թէ Մարտիրոս Քիւլհանճին տեսած ըլլայ իրեն բաժակի ջուր խառնելը (74 ԱՐՐ·156)։ Այդ պարագաները կամաւոր և դիտումնաւոր յօրինուածներ են անչուշտ, որպէսզի կարենայ վերջնական համոզում գոյացնել տալ իր կաթոլիկանալուն վրայ, և անով յաջողի ազատութիւնը ձեռք ձգել։ Մենք պէտք չենք զգար ըսել, թէ այս կտորներ չէին ըստ ընդունելութեան երեսած ընտանեկան բռնութեան ներքեւ, զի երկարամեայ կրած բռնութիւնները, և անոնցմէ ազատելու համար պահանջուած դարմանը, ներքնապէս ատիպած էին Աւետիքը, իր ուղղութիւնը փոխել, և անգամ մը այդ միտումը չեչտելէն ետքը, դիւրին էր այլեւս եղելութեան վրայ յաւելուածներ և մեկնութիւններ կցել։ Ապաքէն բուռն հայադաւանութեան տէր և բռնաւոր հալածիչ կարծուած, և այս պատճառով նենգութեանց մատնուած և նեղութեանց ենթարկուած Աւետիքը՝ իբր կանուխէն կաթոլիկ ցուցնել, հակասութիւնները իրարու ճշմարտութիւն ընդունիլ կ'ըլլար։ Ծիշատակարանին վերջը Աւետիք, ներումն կը չնորհէ ամէն անոնց՝ որոնք մոռնելով, ըզբաղելով, նախատելով, կոշտելով, փնաղ առնելով և սրհամարհելով իրեն դէմ դաւանչեցին, կը հրաժարի կ-Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքութիւնները, և ի թուրքէն փառաց և մանուպէն, կ'ուզէ այսուհետեւ փառնել ըստ ճանապարհն կենաց, և հեռանալ ընդէն էրեսնեան, և վան հաստատութեան քանի այս, կ'ըսէ, յեռամբ իմով էրեալ էէր յեռէրեցեր (74 ԱՐՐ·195)։ Այդ վերջաբանը պահանջուած յայտարարութեան մը կատարեալ ձեւը կու տայ ծանօթ յիշատակարանին, և այս նպատակը կը բացատրէ անոր մէջ տրող կաթոլիկական միտքը, որ չկրնար երբ-

բեք Աւետիքի նախնական և իրական միաքր նզած ըլլալ, և պարզապէս ապաուէթիւն ստանալու համար պահանջուած պայմանին նիւթական դործագրութիւնն է։

ԱՒԵՏԻՔԻ ՄԱՀԸ

1907. Ցառաջ բերուած վերլուծութիւնները կը ցուցնեն թէ մինչեւ 1710 օգոստոսի վերջերը չէր վերջացած Աւետիքի վրայ տակրութիւնը Լատին հաւատաբնութեան ձեռքին, երբ կը գրէր թէ «Ես ուրախ եմ այժմ, և ինչ ի՛նթեր ըլլ այլ ինչ ի՛նդ ես այսքան գլխոյս» (74 ԱՐՐ. 195)։ Բայց վերջապէս ազատութեան հրամանը եկեղեցականն և թագաւորական իշխանութիւններէն չնորհուեցաւ, և 1710 սեպտեմբեր 22'ին Փարիզի արքեպիսկոպոս Լուդովիկոս-Անտոն Նօայլ կարդինալին առջեւ հաւատոյ դաւանութիւնը տուաւ, հայադաւանութիւնը մերժելով և հռոմէադաւանութիւնն ընդունելով (ԹՈՐ. 116)։ Պասթիլի բանտէն ազատելով հակողութենէն չազատեցաւ, վասնզի իրեն բնակութեան տեղ ցուցուեցաւ, Բրթիտալա-Քրօա անձին տունը, Ֆէրու (Férou) փողոցին մէջ (74 ԱՐՐ. 73), որ Նոթր-Տամ կոչուած է (ԹՈՐ. 117), և պէտք է ըլլայ բանտին մէջ ալ թարգմանութեան պաշտօն վարողը և հռոմէական եկեղեցւոյ պաշտպանութեան միջնորդ հաչատուրը (§ 1905)։ Գրուած կը գտնենք թէ, «Ան մը օր Եփը «Տանտէր Տիրամօր Նոթր-Տամ (Notre Dame) մայր եկեղեցւոյն դէմ (ԹՈՐ. 117), բայց չենք ուզեր կարծել թէ Հայ եկեղեցւոյ ձեռնադրութիւնը ոչինչ հաշտութեամբ կրկին ձեռնադրութիւն տրուած ըլլայ Աւետիքի, այլ տեսակ մը նզովքէ արձակման արարողութիւն մը կատարուած պիտի ըլլայ։ Միայն թէ եպիսկոպոսական աստիճանը զլացուելով, իրր պարզ քահանայ լոկ պատարագելու արտօնուեր է, որով Աւետիք իրր հոգեւորական մխիթարութիւն, «Ան օր (ԹՈՐ. 118), կամ թատ այլոց «Ան չէրևէր, Բոսիկ կարմելեանց (Carmes-Déchaussés) մատուռին մէջ կը պատարագէր, և յաճախ բուսաբանական պարտէզին մէջ կը չրջագայէր (74 ԱՐՐ. 73)։ Գրեթէ վեց տարի էր որ անտանելի չարչարանքներով հիւծած էր Աւետիք, որ կը նկարագրուի, իրր «Եկի վշտով և յուսահատութեամբ, «Ան ըն պարբերաբար ինծի կերպարանք մը, պետք խորհրդաւոր ինծ«ապած, «ըը գրեթէ մարած, հայեցան ջինքերս «ետզէտ մը վրան պահած, և պիտ մարդնը գաղտնի մը ջինքերէն կանգնած բանած (ԹՈՐ. 117)։ Կ'երեւի թէ Աւետիքը վերջին օրերուն մտացած և գրեթէ մոնամարձ անունով ուած են անոր ազատութեան չնորհը, զի միայն ինունակէս ամիս եւս ապրած է, և այն ալ անչուչտ տխուր և հիւանդական վիճակի մէջ, և 1711 յունիս 11'ին, հին տարտրով յունիս 30'ին, կնքած է իր կեանքը, անկիւսատ կ առանձնութեան մէջ, և մարմինը թաղած են Ս. Սուլպիկիոսի (Saint-Sulpice) եկեղեցւոյն գամբարանը։ Տապանաքար ալ ունեցեր է, կ'ըսուն, այլ 1793'ի յեղափոխութեանց մէջ անյայտացեր է։ Կը յիշուի թէ Հռոմ երթալ ալ փափաքած ըլլայ, ուզի հանգիստ ապաստան մը յուսալով, բայց փափաքին չէ հասած (74 ԱՐՐ. 73)։

ԱՒԵՏԻՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1908. Անհնար է որ պահ մը կանգ չառնենք յետահայեաց ակնարկ մը նետելու համար Աւետիքի գործունեայ և տատապագին անձնաւորութեան վրայ, որ միջոց մը երկաթեայ Դիմակով (Masque de fer) մարդուն հետ չփոթուեցաւ, և որ 54 տարեկան միանելով երկարակեաց անձի մը պարծանքութեան հռչակը, և զանազանել ձեռնհաս մը տկարութեան կերպարանը կը նեղիսէ պատմութեան մէջ։ Աւետիք բացարձակապէս պահ մը եղաւ մելեռանգ լատինականութեան, որ Լատին կրօնաւորներուն արժարժանքով բացավառ բորբոքեցաւ Գաղղիական գետան Ֆէրիոլի սրտին մէջ, որ իր իշխանաւոր դիրքին և նենգաւոր միտքին այժմեր այդ նպատակին ծառայեցուց (§ 1853)։ Աւետիք հայադաւան եկեղեցւոյն հաւատարիմ պաշտպան, կատաղի հալածիչ մը չեղաւ, մանաւանդ թէ ճարտար դարձուածներով յաջողեցաւ նոյն իսկ Լատիններու հետ լաւ յարաբերութիւններ մշակել, և Ֆէրիոլը տեսնել իրեն բնութագիրն վրայ նպատակաւոր վկայութիւններ տալու (§1856)։ Այդ կողմէն չատ աւելի բուռն գործիչներ եղան Ներսէս Ղափանցին և Յովհաննէս Զմիւռնիացին, որոնք սակայն Ֆէրիոլի անգութ դատաճանութիւններուն չենթարկուե-

յան, և հնար չէ Աւետիքը կաթոլիկութեան ամենամեծ հալածիչը նկատել, և ըրած չարիքին փոխարէնը վրան հրաւիրած բսել, ինչպէս հռոմէականք կ'ուզեն ցուցնել։ Նոյն այն տարին որ Աւետիք կը վախճանէր, Փէ-բիոլ խնդութեան պատճառով հակոզութեան ներքեւ առնուած էր, պաշտօնը ուրիշի յանձնուած էր, և վերջապէս էբէթ-էլ-Փ-բիէ կը բերէր, իբր արծաթագին գեղուհւոյն՝ եգերացի Այչէ աղջկան հետ (ԹՕՒ. 121), և այս բաւական է հաստատել թէ մոլեգնալ միտքի մը գործ էր՝ Աւետիքի դէմ վարած անձնական թշնամութիւնը և վատ դաւաճանութիւնը, և թէ Աւետիք անպարտ գոհ մըն է կրօնական մոլեգնութեան։ Երբեք չենք ուզեր բսել թէ Աւետիք ամէն մեղադրանքէ զերծ պաշտօնավարութիւն ունեցած ըլլայ, և համարձակ գրեցինք երուսաղէմի պատրիարքութիւնը իր վրայ դարձնելուն անտեղութիւնը (§ 1857)։ Հնար է փառասիրութեան և չանսիրութեան ստգտանքներ ալ բնել իր գործունէութեան ինչ ինչ կէտերուն վրայ, սակայն Աւետիքի դէմ ըլլալիք մեղադրանքները չատ կը նուազին, քանիւս կ'անյայտանան ալ, իբր հակառակորդ լատիններուն և լատինամիտներուն՝ նենգաւոր և դաւաճան արարքներուն բաղդատութեամբ։ Աւետիքի զօրաւոր հոգի մը ըլլալուն փաստերը, իր պաշտօնական գործունէութենէն աւելի, կրնանք քաղել իր տառապագին կեանքին մէջ թողած յիշատակարաններէն, որոց մէջ ակներեւ են հանդարտ միտքի և կշռադատ խելքի և աննկուն սիրտի արտայայտութիւնները, որով չորս տարիէ աւելի անտանելի խոչտանգանքներու ներքեւ իր ուղղութեան մէջ կրցաւ տոկալ։ Նկատի առնելով իրեն չսրջը կազմուած այխարհէ անհաղորդ և անծանօթ վիճակը, իրեն վրայ ճնշող ճարտար բռնադատութիւնները, իրեն կրած անտանելի տուայտանքները, և վերջապէս խօթագին և անբժշկելի ախտաւոր վիճակը՝ որ բազմաչարչար կացութեան հետեւանքն էր, մենք պիտի չկարենանք ծանրանալ վերջին պահուն հռոմէադաւանութեան դիմանալուն վրայ ալ։ Իրմէ մնացած յիշատակարանները որ հրատարակուած են, և չատ եւս իրմէ գրաւեալ անտիպ թուղթեր, քահանայագրութիւնք, աղերսներ, պէտքերէ, կոնդակներ, որոնք ժամանակին պատմութեան վրայ ալ լոյս կը սփռեն, և եղած հարց էբէթ Նէ-ն կը մարգարէն (74 ԱՐՐ. 36), կը ցուցնեն թէ ուշիմութեան և արիութեան հետ բաւական մշակեալ միտքի ալ տէր անձ մըն էր Աւետիք եւդոկիացի պատրիարքը, լաւագոյն բախտի և փառաւոր վախճանի արժանաւոր անձ մը, որուն սակայն չժպտեց յաջողութեան բախտը, և չի կրցաւ ապատարար արդիւնաւորել իր կարող ձիրքերը։ Անցողակի յիշենք, որ Աւետիքը վեղարակիր փրանկիսկեանց իրեն վրայ խնամ և սէր ցուցնելէն, և անոնց խոթկոծ վարքէն չխուսելով, է յաշ է՛ր դարձած և ապաչխարել, այնոցիկ կրնաւորց միաբանութեան մասն բսելը (ԶԱՒՐ. Գ. 748), պարզապէս հռոմէականութեան յերիւրուած մըն է, որով զբաղիլ իսկ չարժեր։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԿԱԹՈՒԹԻՒՆԸ

1909. Երուսաղէմի և Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեանց միևնոյն անձի վրայ միանալը, կամ լաւ եւս կ-Պոլսոյ պատրիարքին Երուսաղէմի պատրիարքութիւնը իւրացնելը, 1702 յուլիս 13'ի հրովարտակով առաջին անգամ հաստատուած էր Աւետիքի վրայ (§ 1857), և համաւօտ ընդհատումէ ետքը նորոգուած 1704 դեկտեմբերին Աւետիքի պատրիարքութեան վերադառնալուն առնն (§ 1868)։ Այդ միաւորութիւնը մեծապէս աղետալի եղած էր Երուսաղէմի աթոռին, որովհետեւ աթոռը տէր մը չունէր զինքն խնամող, և վարձկան մատակարարներ, որոնք պապ և Նազըր անուններու ներքեւ կ-Պոլսէ կը ղրկուէին, յաճախ աչխատհական դասակարգէ, չհուսէք ու չհանճնելու տարիներ նպատակ չունէին։ Իսկ Երուսաղէմական հասոյթներ կ-Պոլիս կը գանձուէին, և կ-Պոլսոյ մէջ կը ծախսուէին առանց Երուսաղէմի աթոռին օգուտ մը ունենալու։ Այդ անտեղի կացութեան տխուր հետեւանքները ողբագին չէշտերով կը նկարագրէ ականատես Հանննա։ կ-Պոլիսէ մեկնող ուխտաւորներուն գիր կը տրուէր քէ ուխտել էն լ-պէս ղրբպան, ղուռանէդն և ղալը, և ուխտաւորն էբէթ ղիւլհնեցնել ոտ գնային։ Բաց ասոր ղրբպ գիրքոյէդ առնուին

կ-Պոլսոյ մէջ, և երուսաղէմ կը ղրկէին որ փայլէին այլասոսիւ եկեղ. դրամբ, և այս պատճառով պարտն լեռնացեալ քաղքենոսիւ երուսաղէմի վրայ (ՀՆՆ. 120)։ Պարբերսոնն և այլ անսպասած ոմն իրենց ազգականները կը ղրկէին, գայող փոխանորդներ պահէին ընդ ինքեան վճռոյ և ղորքս, և ասոնք սոսպէին զբանյ սիմոնին։ Երուսաղէմը խնդճութեան մէջ կր հնծէր, իսկ կ-Պոլսոյ մէջ սուտ լուրերով ժողովուրդը կր խաբէին։ եթէ միաբաններէն ձայն հանող լիլար, զնեբսըն է քանդ մալեցոսցանէին, և վերիսոսրդան յոյսոր և է վալան կեղեւէին, այնպէս որ ոչ եւս համբյակիբ սէ է սրսցաս դաբեանէ զսոսիւ լինել սիմոնին իրաւունքներուն (ՀՆՆ. 122)։ Երբոր առձեռն միջոցներ սպառեցան սկսան կարասին ալ ծախել, և Պարոնտէրէ մնացած ղպղնյեղենն ֆոլսոբեր է Ռոպպէ ներսեղել չկրցին յիմիպոս, զոռնս և ղդրսրեզը և զոյլ գեղերբ էրս կր գնէին, զեղը, սկինս, բոբլոս, փապռնկս, ղոցս և գկռնրնզը, կոբսոբել և հալեալ լճճռեբն սյլազբեսց (ՀՆՆ. 123), այն ալ գնալբ զոռսոսչ գբն հալեբ ընէ երկս հարեր զոռսոսչ լճճռեբն, ընֆեպահ կերսերբն խեղճ գեբանէց համարեա ընէ խոզս հաճառնէին, և ևթէ խնդներուն ձեռքը ուխտաւորներէն ողորմութիւն մր իյնար, տուգանքի պատրուակով կը կողոպտէին։ Որովհետեւ այդ չարայրութեանց համար չարունակ պարտքեր կ'առնէին, այնչափ չատցած էին պարտատէրները, գնչ գբ էրեբն է գեղ սրբոյ եբսոսալէմ փճոսրս ֆոռնէր սէ, որ չկրնար ֆոխսոս և ետց առնէսց սիմոնին վրայ։ Եւ որովհետեւ վճարում չկր լիլար, պարտատէրներ ամէն բռնութեանց կր ձեռնարկէին, զերսոսն է նրսպարել կր հանէին, զաբսոսն չէց էրեբանց է չգբ գրան սրբոյ եկեղեցոյն կոպէին, և արարողութիւնները կր խափանէին, և բռնութեամբ կր դիմէին։ Պատմիչը կր յիշէ զմռանէն զէնսոսրց է խոցէն կոխոսրց և զեղբն գինը նոցա, զոպռնն և զնսոսն, զգեցն և գրեզոցն, զմբրսո ֆեռեբն և զհայհոյանս, զերսրպահսոճ գբանցն խոյէց և զզոսրճսոճ լսոսմարբց, և զէրեզերն է բոան խոչ է խոց զբջեփոյեբն պարսոսրբց, է գեղ եկեղեցոյ կոշիսո մռանեբն, և է բեռճ գերչ է ժամարան եբանեբն, ձեռքի սկիզբ խլելու համար (ՀՆՆ. 126)։ Այս ամենուն հետեւանք եղաւ կարգի և կանոնի, վանականութեան և արարողութեանց խափանիլը, և այսպիսի բնդհանուր անկման վիճակ մր տիրեց, որ ամբէր սէ սեբել գինն ֆել չգբեն Հայոց (ՀՆՆ. 127)։ Արդարեւ արտասուելի նկարագիր, որուն չհատակութիւնն իսկ սիրտերը կր քաոսնիացնէ։ Այս էր Երուսաղէմի վիճակը մինչեւ 1713 տարին, Սահակ Ապուչխոյի պատրիարքին օրերը, որ թէպէտ Երուսաղէմի մասին գիչ տրամադրուած չկարծուիր, այլ սովորական դարձած բնթացքը սիրացած էր և կը չարունակէր։

ԱՄՐՏՈԼԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

1910։ Այդ միջոցին չանկարծ կ-Պոլիս կուգայ նոր անձնաւորութիւն մր, որ սահմանուած էր մնծ և օգտակար դեր մր ունենալ կ-Պոլսոյ պատրիարքութեան պատակտեալ և խանգարեալ կացութեան վրայ։ Յովհաննէս Բասիլիկոյ վարդապետն էր, ասկի ծանօթ կսլոտ մականունով։ Ցիչած ենք իբ կարգին Բազէշի գաղաքին ծայրը, Հոգեւոր գետակի եզերքը գտնուող՝ Ս. Կարապետ Ամրոցի, և կամ ժողովրդական հնչումով Ամրատի վանքը, որ Գրիգոր Տաթեւացիի ժամանակէն սկսաւ ուսումնական փայլ մր տանել Դանիէլ Ճգնաւոր վարդապետէ սկսեալ, և որուն յաջորդութիւնը հասաւ մինչեւ Բարսեղ Գետաւացի (§ 1710) կամ Ագրակեցի (ԿՈԼ. 147), որ նոր գարկ մր տուաւ Բազէշի ուսումնարանին, զոր գոռգոռան (ԿՈԼ. 2) կամ համալսարան (ԿՈԼ. 142) կր կոչեն իբաւցինք, հարկաւ արտաքին ուսմանց ալ պարագիներուն պատճառով։ Բարսեղ Գետացիին 1615'ին յաջորդեց Ներսէս Մոկացի, որ հարքն Մեծ-Հայոց փոխադրուեցաւ (§ 1711), և որուչափ չենք գտներ անոր յաջորդը կամ յաջորդները, միայն գիտենք որ իրր երեսուն տարի հարբ, այսինքն մինչ գարուն երկրորդ կէսին կր փայլէր վարդան Բազիչեցի վարդապետը, որ նչանաւոր էր իբ ժամանակին, և բնաւոր աչակերտներ հասուցեր էր, որոնց մէջ աւելի նչանաւոր հանդիսացան Գրիգոր Շիրուանցի և Յովհաննէս Բազիչեցի։ Վարդանի հռչակը մնծ էր, և Ամրոյ չինութիւններով և մանաւանդ արուեստ ճոխացաւ (ԿՈԼ. 3), բայց գժբախտաբար մանրամասն տեղեկու-

թիւններ չունինք իւր գործի սկսելուն, և արտադրած արդիւնքներուն վրայ. իւր աշակերտներն ալ երախտապարտ գովեստներ ունին, առանց կենսագրական տեղեկութիւններու։ Որչափ ալ երկար ենթադրենք վարդանի գործունէութիւնը, չենք կրնար Մոկացիի յաջորդած թիւ, և ոչ ալ դիտնք, թէ քանիներ և որոնք եղած են երկուքին մէջտեղ։ Վարդան վախճանեցաւ 1705՝ին չէզման աբեղայութեան է վերջն էր (ԿՈԼ. 147), այսինքն է մարտ 24՝ին, և Բարսեղի մօտ թաղուեցաւ. Ամբողջ եկեղեցւոյն տեսանելի վրայ (ԿՈԼ. 3), բայց յաջորդութիւնը իրարու տակի տուաւ, և ներքին դժուարութեանց պատճառ եղաւ, որով երկու ընտրելագոյն աշակերտներ, Գրիգոր և Յովհաննէս, տեսնելով իրենց սիրեցեալ համալսարանը քայքայել, և զանազան վանքեր տեղահան համար Ապահանիք, վաղարշակերտ, Վիշապաձոր և Հաւոմոսի վանք հանդիպելէ ետքը, Գրակոյ Ա. կաթողիկոսի վանքը հաստատուեցան, առաջնորդ կարգելով եպիսկոպոսի իրենց սիրելի աշակերտներէն մին։ Այս քաղաքին սկսաւ Գրակոյ մայրավանքին վերաշինութիւնն և վերակենդանութիւնն նոր շրջան մը. ասկէ քանի մը տարուան չինարարներով մէկէն հիմնայատակ քանդուելուն 1709՝ին է Մեծոփէն կիրակոսը (ԿՈԼ. 158), այսինքն յետ 5՝ին տեղ ունեցած երկրաշարժին։ Պէտք եղաւ նորէն վերսկսիլ վանքերու շինութիւնները, և յաջողեցան կանգնել գլխաւորները քեղեցկութեամբ, և քանի մը տարի ետքը, զանգակատան կոնքերը, և բնակարանները (ԿՈԼ. 162)։ Նոյն միջոցին կաթողիկոսի վախճանելուն, Գրիգոր Շիրուանցի վանահայր բնտրուեցաւ, և Յովհաննէսի հետ գործին հետևեցաւ, միայն թէ մեծագումար պարտքի տակ ինկան։ Այս պատճառով Յովհաննէս 1712՝ին հանգանակութեան երթ և շրջագրկ ճանապարհութեամբ, պտնայուցիչ արդիւնք ունեցաւ հանդիպած քաղաքները, մինչև որ Կ-Պոլիս հասաւ 1712՝ին վերջերը։ Սահակ պատրիարքի պաշտպանութեամբ, անտանելի չուտով և լեալէ արդիւնքներ ունեցաւ, որով և ազատեցաւ ասոր վանէն Պետրոս Գետնափոր է քաղաքեն պարտքեր (ԿՈԼ. 163)։ Կայսեր դէմ Կ-Պոլիս եկած պահուն, ուրիշ վարդապետներ ալ ուրիշ կողմեր հանգանակութեան եղած են, որոնց մէջ կը յիշուին Արքահամ Խօյաբնցի, Ներսէս Մերուժանի, և ուրիշ Յովհաննէս մը (ԿՈԼ. 164)։

ԿՈԼՈՏ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1911. *Երուսաղէմի պարտքին և կացութեան մասին հետզհետէ հասնող ձայնեղ լուրերը և կոլոտի Գրակոյ պարտքին մասին յաջող գործունէութիւնը, իրարու հետ համեմատելով, նոյնիսկ կոլոտը Երուսաղէմ յղելու խորհուրդը կազմեցին Սահակ պատրիարքի միտքին մէջ, որուն համաձայնեցան Բարսեղ Մուրատեան, Յարութիւն Թէվէքէլեան, և Սարգիս ու Իսրայէլ Լոթվին գլխաւորները (ԿՈԼ. 12), և քանի չլեռնէ և ձաղկոտրդէ Հայոց (ՀՆՆ. 129), և քաղաքացիք հրաւիրմամբ և սոսկալի սպիտմամբ համազգին կոլոտը Երուսաղէմ երթալ (ԿՈԼ. 164), ուխտալ և վերթալ անուամբ և զայն ճանապարհին ընդ պերճանաց սխալանքն և չքաւոր արդեամբ, այսինքն մաս մը գումարով (ՀՆՆ. 129)։ ինչպէս և ինքն ալ կ'ըսէ, թէ պարտաւորուեցաւ պանել ընդհրմանքն հաստատելոյն է սորք Երուսաղէմ, և ձանապել սպասածելոյ պեղքոյն (ԿՈԼ. 164)։ Կոլոտ Երուսաղէմ հասաւ մեծպահքի երկրորդ կէսին մէջ, զարմիկէն առաջ, որ 1713՝ին կը հանդիպէր ապրիլ 5՝ին։ Իւր հասնիլը սակաւ ընդհատութեան եղաւ երթոյ պանն այնորիկ (ԿՈԼ. 169), վասնզի տեսնալով և ցաւօք ընթալ, որ է յետոյ կոչտիկ և երթալութեր ժերջոյ և սոսկանան էրէսոնէից՝ դնալ հաստատանալու, տարապայման անչքնչել էր Երուսաղէմի աթոռը. իւր բերած դրամով և ուխտաւորներու նուէրներով սկսաւ ինչ ինչ անփականութիւններ դրամ ազատել (ԿՈԼ. 168), և յատկապէս մ՝ էսրիկ վանք (ՀՆՆ 129), որ պիտի լլլայ եկեղեցին Աստուծոյ, և է սորք Յարութեան դիմի կոնդեղն (ԿՈԼ. 169), և պարտքեն վանուց Հրեշտակապետաց (ՀՆՆ. 129), որ ճառնան եթել կոչին է էրամ՝ ազատեցան ընդհանր Տէրն (ԿՈԼ. 169)։ Ապրիլ 5՝ին զարմիկը կատարելէն և ուխտաւորները յետ դարկելէն ետքը, կոլոտ չարունակեց իւր պաշտօնը աթոռին ներքին բարեկարգութեան, և արտաքին պարտքերու կարգա-*

դրութեան աչխատելով, թէպէտեւ կրելով ղղպտրոնէն բաղմա է բարբարս պարսկաբ-բոցն, և է Ալբանոց լռելեաց՝ ղնաղան և յոյն-նախադահ ներսնէան, որոնք այս կերպով հնարեին գինել ղնա է Ալբ և է կրեկդոնենե ոչխոյ պան։ Սակայն Կոլոտ հաստատուն էր իւր ուղղամիտ գործունէութեան մէջ, և մէկու մը չէր նուիրեր աթոռին մասակարարութեան մէջ նենգութեամբ և չարաչահութեամբ օգտուիլ (ՀՆՆ. 130), և ակնկատոյց կը սպասէր ելոփան գնա ած ոսխոտոտոցն կէլէն օրհնութեան է Բիւզանդիոյ (ԿՈՒ. 169)։ Իսկ 1714'ի գատիկը պիտի հանդիպէր մարտ 28'ին, գնա եղանակները չպարզուած։

1912. Կոլոտի այս ակնկալութիւնները չիրականացան։ Սահակ Ապուչեխցիին պատրիարքութեան առաջին տարիները համեմատաբար հանդարտ անցած էին, բայց ջնջուած չէր ազգին մէջ տիրող երկպառակութիւնը, միշտ կաթոլիկական ձգտումներու պատրուակին ներքեւ։ Եթէ մէկ կողմէն լատինամիտներ, Լատին և Լատինաց մօտ կրթուած եկեղեցականներու գրգռութեամբ, և Արեւմուտքէ հասնող նպաստներով, և Գաղղիական գեսպանատան կողմէ ցուցուած պաշտպանութեամբ զօրացած, իրենց նպատակը յառաջացնելու կ'աչխատէին, պատրիարքարանն և ազգն ալ կը պարտաւորուէին հնարաւոր միջոցներով անոնց խրախոյանքը զսպել, և ազգային կացութեան և եկեղեցական ինքնութեան համար աչխատիլ։ Որովհետեւ օտար դաւանութեան տիրայարները օտար պետութեան միջամտութեամբ կ'ուզէին օգտուիլ, իրենց ազգութեան և դաւանութեան սերտ փարած Հայերն ալ՝ իրենց տէրութեան պաշտպանութիւնը պիտի դիմադրէին անոնց։ Ան ժամանակին Եւրոպական տէրութեանց և Օսմանեան պետութեան մէջ տիրող խչնամութիւնները և սպասնացող պատերազմները, բնական իմն հետեւութեամբ Օսմանեան կառավարութեան աչքին կասկածաւոր պիտի կացուցանէին Արեւմտեայց հետեւողութեան դիմող և բարեկամութեան վտանգող խումբերը։ Ձիչդ այդ միջոցներուն մեծ եւ պարքոս Տամատ Ալի փաչա վենետկեցիներուն և Աւստրիացիներուն դէմ պատերազմի նախապատրաստութիւններով կը զբաղէր, անոնցմէ իւրհլու համար Պելգրատ նէսի և Հունգարիոյ տիրապետութիւնը (ԺՈՒ.325)։ Ահա կաթոլիկութեան միտղներու դէմ կարծեցեալ կրօնական հալածանքին տիրապէս քաղաքական բացատրութիւնը։ Այդպիսիներու դէմ ձեռք առնուած միջոցներուն չօչափելի չարժաւորը, լատիններուն կողմէն բռնուած ընթացքն էր, որ քաղմոքիչ էրաոս գէս-ըզոցոցանէին, ոչ առնել հաղորդութիւն ինչ ընդ Հայս է հոգեւոր (ՉԱՄ. Գ. 758), այսինքն է., Հայոց եկեղեցիները չներթալ, և Լատին եկեղեցիներ յաճախել, որ զգալի կերպով պետութիւնը իրենց դէմ դրգռել ըսել կ'ըլլար։ Ահա պատճառը որով Սահակ պատրիարքի օրերն ալ ազատ չմնացին ներքին աղմուկներէ, և քանի որ խնդիր մը կար մէջտեղ, ամէն անձնական վէճեր կամ կիրքի յուզումներ՝ չուտով այդ կերպարանին կը վերածուէին։ Այս ձեւը առաւ նահե Սահակ պատրիարքի և Թոտոսթոյի առաջնորդին միջեւ ծագած վէճը. պատրիարքն՝ առաջնորդը պաչտօնէ հանած էր, և առաջնորդն ալ համարձակեցաւ Սահակ պատրիարքը ամբաստանել կառավարութեան առջեւ։ Անոր կողմը զօրացուցին իչխանաւորէն գժգոհ եղող զանազան խումբերը, և կառավարութիւնը վրճռեց պատրիարքի փոփոխութիւնը (ՉԱՄ. Գ. 757), և Սահակ պաչտօնէ դադրեցաւ 1714 մարտին, որով 1708 դեկտեմբերէն սկսելով 5 տարի և 7 ամիս պատրիարքական աթոռի վրայ մնացած կ'ըլլայ։ Ահա Կոլոտի ակընկալութիւններուն պարապի հլլալուն մէկ պատճառը, գի ոչ միայն պատրիարքական տագնապը արգելքներ կը յարուցանէր, այլ և Սահակի հեռանալով իւր պաչտպանը կը կորնչնէր։

1913. Զանարդութիւններ կարծես թէ իրար կը հալածեն, և երբ Կոլոտ պատրիարքական տագնապին չչուկ-ներով կը վարանէր, լուր կ'առնէ թէ Նահ ոսխոտոտոցն, գնա Միջերկրական մեծ ծովը չհլած, Մարմարայի մէջ, Աբիւթոյ կամ Հերակլիոյ, այսինքն Իրկլիի առջեւ խոչոչեցաւ։ Ուխտաւորները փոքանրէն ապատելով կ-Պոլիս կը գանան, և չայլ նա-

ՍԱՀԱԿ ՊԱՇՏՕՆԱՆԿ

ՈՒԽՏԱՒՈՐԱՑ ՎՏԱՆԳԸ

կը վարձեն, բայց այն ալ չեն տեղի ու տալ, տակաւին ճանպայ չելած, մինչ է պէտք էր, որ քաղաքին Մարմարայի ծովափը եկեղեցաւուի կողմերը պէտք է լլայ, է տարբէկ հողմոյ, անչուշտ հարուածային փոթորիկ, կը վնասուի, և ողնափայտը կը խորտակուի, և չկրնար ճանապարհել։ Այդ դոյժերը վրայէ վրայ առնելով, պատրիարքը կը գրէ Կոլոտ, և կը յանձնէ, չէզոք ձեռնպահելոն, և կը պատմէ Ս. Յարութեան տաճարին լուսարարին և ուրիշ քրիստոնէի մը տեսած ձախող երազները (ԿՈՂ. 170)։ Զարմանալի չէ Կոլոտի այ երազներու տուած կարեւորութիւնը, որ ժամանակին տիրող նախապաշարում մին էր, ամէն դասակարգերու վրայ հաւասարապէս տարածուած, որ հիմայ իսկ դեռ ջնջուած չէ մեր ժամանակակիցներուն միտքէն։ Ինչ ալ ըլլայ երաշխերուն տրուելիք կարեւորութիւնը, իրականը այն էր, որ 1714 տարւոյ զատիկը, որ մարտ 28'ին կը հանդիպէր, յաջող չանցաւ, և Կոլոտ չկրցաւ կ-Պոլիսէ ուխտաւորներէ նորանոր միջոցներ առնալով, յաջող կարգադրութիւններ ընել նրուաղէմի աթոռին համար, և գլխաւորապէս գրաւի դրուած կալուածներէն և սպասներէն մաս մըն ալ ազատել, և նոր բեռներու տակ չմնալ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ

1914. Երբ Սահակ Ասլանեանցի պաշտօնականութեամբ և ազդրումամբ, պատրիարքական աթոռը պարապ մնաց, հաստարակութեան մէջ անմիջական փութաջանութիւն չտեսնուեցաւ նոր մը ընտրելու, դի մեծամեծներն ոմանք յանձրեղել էին, եւ այլ ոչ էին պէտք ընդ ը՞ ընթացքն (ՁԱՄ. Գ. 757), որ է ըսել է թէ հրապարակի վրայ աչքի զարնող մը, կամ թէ հետաքրքրող մը չկար։ Առիթէն օգտուողը կ'ըլլայ, Յովհաննէս Գանձակեցի, պարսկահայ սահմաններէն եկած վարդապետ մը, կամ լաւ եւս եպիսկոպոս մը, որ տակաւին իր պանդուխտ ու դիրք չկազմած, հայրապետներու մօտ կը բնակէր, որ անչուշտ իր հայրենակիցներ էին։ Նա ճանչցուած էր իրր խոհեմ և օրինաց նախանձախնդիր եկեղեցական մը, և միանգամայն իրրեւ ճարտարախօս, քարոզ և մեր անձ մը կը յայտնուէր։ Իր ծանօթ հայրապետները զայն մեծամեծներուն մտադրութեան ներկայացուցին, որոնք հաւնեցան և հաւանեցան, և կառավարութեան ներկայացուցին, և 1714 մարտ 21'ին Մաղկազարդի օրը, Յովհաննէս պաշտօնապէս աթոռ բարձրացաւ (Q1 ՕՐԱ. 136)։ Յովհաննէսի անձնաւորութ մը բլլալը ոմանց անհաճոյ երեւցուց անոր պատրիարքութիւնը, և ցօրաւոր հետաքրքրութ մը չգտնուիլը կը քաջալերէր Սահակի կողմնակիցները զայն նորէն դարձնելու։ Յովհաննէս իր ճարտարութեան առաջին փորձը տուաւ, մայրեկեղեցւոյ մէջ ժողովուրդը հաւաքելով, արդէն տասը չաբթու օրեր էին, և հանրածանօթ յայտարարելով, թէ ինչքն գժտութեան պատճառ չուզեր բլլալ, և յօժարակամ կը քաշուի, եթէ այնպէս կ'ուզեն, բաւական է որ ընդ ը՞ ընթացքն է։ Այդ յայտարարութիւնը ամէնուն համակրութիւնը գրաւեց և միաձայնութեամբ Յովհաննէսի պատրիարքութիւնը ընդունուեցաւ։ Հաւանաբար այդ հղելութեան թուականն է մարտ 26 օրը, որ ուրիշներէ իրր պատրիարքութեան թուական կը նշանակուի (ՁԱՄ. Գ. 757), և որ աւագ ուրբաթ օրուան կը համապատասխանէ, որով կրցած է Յովհաննէս Գանձակեցին հանդիսապէս զատիկը տօնախմբել, մինչ տօնը անպտուղ կ'անցնէր Յովհաննէս Կոլոտին համար Երուսաղէմի մէջ (§ 1913)։ Յովհաննէս Գանձակեցին Ռուսիոյ գաւառներէն հկած, աւելի նախանձայոյզ էր հայրենասէր եկեղեցւոյ պահպանութեան և պաշտպանութեան, իր պատրիարքութեան սկսած օրերն ալ աւելի պայծառացած էին եւրոպական յարաբերութեանց կամ փրանկականալու դէմ Օսմանեան պետութեան հակակրութիւնները, նոյն միջոցին վնասակարութեամբ դէմ մղուած պատերազմին պատճառով։ Այս առիթ տուաւ Յովհաննէսի բուռն գործունէութեան ձեռնարկելու, որուն պատմութիւնը կը յետաձգենք Սղխասանդր կաթողիկոսի յաջորդին օրերուն։

1915. Նոր պատրիարքին առաջին ձեռնարկներէն մին ձախող որոշում մը եղաւ, այն է իրր վերադարձ կամ փոխանորդ, և իրր պարտ կամ մատակարար Երուսաղէմ դար-

ձգնել Յովհաննէս Պալըքէսիրցին, որ քանի մը տարի առաջ Սահակ պատրիարքէն այդ պաշտօնին կոչուած էր,

ԿՈԼՈՏ ԵՐԱՇԽԱՒՈՐ

սակայն դատաստանի վճիռով պաշտօնէն հանուած էր 1711'ին, որովհետեւ թէ՛ վանական հայրիկները, էքսոմունիկացիոն եւ ըզըրմըռիլօնա նոէէքէալը յոխտատորց, վատնած եւ ոչնչացուցած էր իւրայ իրը, եւ թէ՛ պարտքեր աւելցուցած էր ու հայիւ տեսնուած տեղն պարտաւոր մնացած էր (ԱՍՏ.Ա. 439)։ Կոլոտ երբ Պալըքէսիրցիին անունը կու տայ իւր գրութեանց մէջ, կը կոչէ զայն անյոփն է ըզբօ, Բէլը եբլէրդը, ծբլուցեալ է ընդհաց, նոր հրէայ եւ հին հերետիկոս (ԿՈԼ. 170), որ իրեն հետ ուրիշ երեք պրեանէպ էրոպէպ ալ ունենալով, նորէն սկսաւ զօշաքաղուքեանց հետեւիլ, ընդհանուր թաղ մը կազմակերպել կալուածներու եւ սպասներու վրայ, վաճառելով կամ գրաւի դնելով, որով մերկացոյց վիճակէն հարուստ սորբ, այսինքն երուսաղէմի եկեղեցին, յոմնից ըզբօց (ԿՈԼ. 171)։ Երբոր պարտատէրները տեսան, որ իրենց պահանջը գանձելու միջոցները օրըստօրէ կը նուազին, կ-Պոլիս դիմեցին եւ հրովարտակ հանել տուին, թէ Հայոց ամենայն գլուխը ձախոխոյի եւ էրեանց գործն պրէչէ։ Պալըքէսիրցին եւ ընկերները, առանց ընդդիմանալու այս կործանիչ հրամանին, խորհեցան նախ վճռաբեկ դիեղէչէի վանն սորբ Փրկիչ (ՀՆՆ. 131)։ Հազիւ թէ այդ գործը լսուեցաւ, միաբանք եւ ժողովուրդք այլայլմէ եղած չփոթեցան, եւ նոյն ժամանակին մէջ Կոլոտին դիմեցին իւր հնդկական ազգակցութեամբ եւ ստացած յարգանքովը ընդդիմանալ այդ ձեռնարկին եւ աւեր կանգնել ազգային սուրբ հաստատութեանց։ Պարտատէրներուն ալ դիմեցին կողկողագին, որոնք տեսնելով ընդհանուր յուզումը եւ արցունքը՝ հաւանեցան սպասել, միայն թէ կ'ըսեն դէպ մի հաստատուի երաշխաւորութիւնը յանձն առնուլ, պարտատէրներն ալ կը հաւանին, տեսած ըլլալով անոր ուղղամտութիւնը եւ աթոռին համար անկեղծ աշխատութիւնները։ Կոլոտ գիջաւ, և չորս տարուց պայմանաժամով մատուցման վճարելու պայմանով, հինգերը սրբին սաջէ գոտորէն, և կուսակրն ալ գոն մնալով վարդապետ պատուասիրից և իէլայեալ յօղաստրեաց (ՀՆՆ. 133)։ Կոլոտի առաջին գործը եղաւ Ս. Յարութիւն տաճարին մէջ գոնաբանական աղօթքներ ընել՝ ձեւը գտած յայտնութեան համար, և անկէ վանք գառնալով միաբանները հաւաքել, և նորանոր փոխառութեանց դուռը փակելու համար կտրատել և ջնջել պաշտօնական կնիքը՝ յորոյ վերայ էրեալ էր անուն սրբոյ սիոնի, և որով ըմբռնիկ պարտուցն կ'եղէին, և որ հաստատ կնիք կամ օրհնյէ կնիք կ'անուանէ զայն, (ԿՈԼ. 172)։ Անհատական անուն չկար կնիքին վերայ, որով ոչ ոք անձնապէս պարտական կը սեպուէր, և է կեղծել դէպ ի վեր ֆնայր, անոր համար ամէն փոխանորդներ և մատակարարներ անխտրաբար ըմբռնեցան եւ մատնուեցան (ՀՆՆ. 135)։ Այդ ամէնը կը պատմէ Հաննա, որ գործին մասնակից է։ Եղելութիւնները տեղի ունեցան 1714'ի վերջերը, ուսկից հետը 1715'ի սկիզբները կոլոտ երուսաղէմէ մեկնեցաւ կ-Պոլիս գալ, և ազգային մեծամեծներուն եղածը իմացնել և ընելիքին ցուցնել։

1916. Երբոր Երուսաղէմի մէջ այս անցուդարձերը տեղի կ'ունենային, էջմիածնի

ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՄԱՀԸ

մէջ աթոռը կը պատարկանար Աղեքսանդրի մահուամբ։ Իրեն գործերէն չատ մանրամասնութիւններ չունինք, և այս պատճառով ժամանակակից եղելութեանց վրայ ընդարձակուած առնինա, իրեն գործունէութիւնէն չատ բան չկրցանք յառաջ բերել։ Գիտենք որ ընծյբենէ և զբօբելօմ էր միսիթարելու նպատակով 1711 հոկտեմբեր 12'ին Նոր Զուզա է եկած, և ուխն ամիս այն տեղ առնն անցընելէետքը 1712 յունիս 17'ին էջմիածին դարձած։ Գրուած է թէ կաթողիկոսութեան առթիւ եղած օծումը, ոչ դէպ առնէ ոգէին, այլ և վանն սրբոյ էջմիածնի (ՏՃՈ. Ա. 35)։ Եւ բնականին ալ կը վկայէ թէ եղեւ հանճարեղ և չինարար, զբաղամ ընացեալ շինուածոց նորոգեաց, գմբեթն սեղանատունն վերանորոգեաց, գայթն Սրբոյ Հոգեխոհ դեղացոյց և պարսպեաց,

հաբաթացոյց ըսաբք պՆաա եՆեվՆցոՆ ըրդաա+ և ապաէՆ կանՆ+ և անաանե+, և յաաել մաղա+ և ըրդՆօնա՝ ապ+աանական և գաագաաբական էրվ+ (ՋԱՄ. 27)։ Ինքն ալ 1713 յունիս 4'ին Մովսէս Ջուղայեցիին կը գրէր, թէ գաան գեղ էաքՆանայ+ ան Ն՛մ, երե+ հաքՆաբ սաելի սաագա և մշակ կա+ բանՆ. և ասոր տեղ բացուած չինաքիւննե՛րուն կարդին կը յիշէ նաև ևրևանի այգին, Օչականի մուկքը, և մեծ առուն (ՏՑՈ. Բ. 85)։ Բայց տակաւ կը տեսանար Աղեքսանդր, և 1714'ին իւր վախճաներ մօտալուտ տեսնելով գրաւոր կտակ մըն ալ կը պատրաստէ, որով կը յայտնէ, թէ Նահապետի օրէն մնացած պարտքերն ալ վճարած է, մեկ դեկան պարգ+ չկայ սաագաբ աՆհաայա, այլ և գրամ եաա կայ։ Իրևն յաջորդ կը ցուցնէ Ջուղայի առաջնորդութեան մէջ իւր յաջորդ Մովսէս Ջուղայեցին, վստահացնելով թէ էրկեն, երե+էկեն և բաղմէրկեն ճախացոյցնէ ըՆհաա և ըզգո. թէպետեւ կը յաւելու թէ կամ չեր է, ը ո+ կամ+ կաՆողկա ընդբէ+, և կը վերջացնէ օրհնութեամբ, կոչե+ բարեաա և ճաոցե+ խաղաղութեամբ, և վան մեր աղըՆ արբե+ և չէչեցե+ է Քրէատա (ՏՑՈ. Բ. 36)։ Կտակին ամսաթիւը չկայ, բայց մահուանէ չատ առաջ պիտի չըլլայ, զի 1714 հոկտեմբեր 19'ին Մովսէս էջմիածին կը հրաւիրուի կաթողիկոսանալու նպատակով (ՏՑՈ. Բ. 50)։ Իսկ Աղեքսանդր կը վախճանի նոյեմբեր 22'ին (ՏՑՈ. Բ. 37), և կը թաղուի է ՆեբէԷ մեծ ընեկաոպան, չաՆկոՆչ գրան (ՋԱՄ. 27)։ Աղեքսանդր Ջուղայեցի ուսումնական և գործունեայ և խոհական և չինարար, պատկառելի դէմք մըն է կաթողիկոսներու չարքին մէջ, թէպետեւ կենսագրական մանրամասնութիւններով հարուստ չըլլան իւր վրայ եղող յիշատակարանները։ Ազգային և կեղեցւոյն մասին իւր հաստատամիտ և անխարդախ ուղղութեան համար բաւական ըլլայ պատկին գրած նամակին մասին տուած վերլուծութիւնին (§ 1897)։

Տ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Ա. ՀԱՄԱՏԱՆՑԻ

1917. Վերջին տասնամեակ Մայրաթոռոյ միաբանութիւնը բնաւորութեան տէր էր դարձած, ազգային իշխանութեան մովսէս թեան և ներկայացուցչութեան ջուղայեցի թեան դերը ջնջուած լինելով, և նա ալ դիւրաւ կը հետեւէր նախորդ կաթողիկոսէն յայտնուած միտքին։ Այս անգամ ալ նոյն ճանապան բռնուեցաւ, և Մովսէս Ջուղայեցին, որուն արդէն Աղեքսանդր չմեռած հրաւէր ուղղուած էր, կրկին կոչուեցաւ գալ էջմիածին և կաթողիկոսական աթոռը գրաւել։ Ջուղայի առաջնորդներուն կաթողիկոսութիւնը՝ Ջուղայեցւոց ալ հաճոյանալու հետեւանքը կ'ունենար, որոնք կարող և ուշնեւոր դիրք ունէին, և հարկաւ անոնց օժանդակութեամբն էր որ կաթողիկոսներ չինարար կը դառնային, թէ ոչ ուրիչ կողմեր աղբատութիւնն ու կարօտութիւնն էր որ կը տիրէր։ Կը կարծենք թէ Մովսէս միակ օրինակն է պատմութեան մէջ, որ պաշտօնապէս կաթողիկոսութեան կոչուելով, հրաժարի և յանձն չառնու զայն. ատանձնել։ Եղան կաթողիկոսութենէ հրաժարողներ, բայց զայն վերցրէ և ակարութեան կամ դժուարութեան հանդիպելէ ետքը։ Մովսէսի յայտնած դժկամակութեան չուտով չեն համակերպած Մայրաթոռոյ միաբանները, վասն զի ալ դեղեմ, այլ եա եղէյա և եղէյա էրեալ են, և պահանջած յանձնառութիւնը, այլ Մովսէս ամփոփուս մնացած է իւր միտքին վրայ, և չնորհակալ ըլլալով իրեն հանդէպ յայտնուած սիրելութեան, վճռապէս պատասխանած է. Օ՛ն անգր է քաց գրէ+ է գաց չերց, զի այգ ալ է մեր գործ (ՏՑՈ. Բ. 50)։ Ինչ էր Մովսէսի դժկամակութեան ներքին պատճառը դժուար է ճշդել, զի ապիկար և գործէ փախչող մէկը չէր, և բազմաշխատ և բազմարդիւն անձ մը եղած էր Պարսկաստանի աթոռին վրայ։ Աղեքսանդրի իւր կտակով յայտնած վկայութիւնն ալ (§ 1916) մեծ

երաչխաւորութիւն մըն է, համբաւն ալ ամէն կողմ տարածուած էր, որ Յովհաննէս կոլոտ ալ պատուադիր և զոհասանական բացատրութիւններով անոր կը դիմէր երուսաղէմի գործին համար (ՏՀՈ·Բ·51)։ Տկարացած և անկարող դարձած ալ պիտի չըլսենք, զի Թուականէս հոգը տասը տարի ևս վաստակաւոր պաշտօնավարութիւն ունեցաւ Ջուղայի աթոռին վրայ մինչև 1725 մարտ 1'ը, որ է իւր մահուան թուականը։ Պէտք է ըսել թէ Մովսէս իւր գանուած վիճակէն գոհ, և Ջուղայի վանքին վրայ թափած աշխատութիւնը և ստացած արդիւնքները կիսաս թողուլ չուզելով, և բարձրագոյն աթոռի ծանրագոյն տաղտապանքներէ խորշելով, չէ ուզած իւր իսաղաղ դիրքը էջմիածնի խռովահալ դիրքին հետ փոխանակել։ Իւր ժամանակին երկու հպիսկոպոսներու և 17 նշանաւոր վարդապետներու անուններ կը տեսնին Ամենափրկչի վանքին մէջ, և 62 քահանաներու ներկայութիւնը կը վկայուի Ջուղայի 14 եկեղեցիներու համար (ՏՀՈ·Բ·51)։ Սակայն կարծես թէ բարեբաստիկ չեղաւ Մովսէսի ծանրագոյն տաղտապանքէ խուսափիլը, զի ոչ նուազ տագնապներ կրեց Ջուղայի մէջ Աֆղաններուն ապստամբելուն և Աւետեանի տիրապետելուն պատճառով։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԸՆՏՐՈՒԱԾ

1918· Երրոր Մովսէս վճռական կերպով բնաւրէնին հրաժարեցաւ, Մայրաթոռոյ միաբաններ պարտաւորուեցան ուրիշի վրայ դարձնել աչուընին, բայց նոքէն Ջուղայի միաբանութենէն չհետացան, և վերեւ յիշուած Ս. Ա. մինասիրեկչի միաբան երկու հպիսկոպոսներէն Աստուածատուրը (ՏՀՈ·Բ·51) յառաջ կոչեցին, հարկաւ նոյն իսկ Մովսէսի յանձնարարութեամբ, և ըստ այսմ անոր վրայ կատարուեցան պաշտօնական գործողութիւնները, և նա պետական հաստատութիւնն ալ ընդունելով էջմիածին եկաւ 1715 մայիս 7'ին (ՁԱՄ·Գ·768), որ է Յինանց երրորդ չաթաթ օրը՝ և գուցէ յետագայ օրն ալ կարմիր կիրակէին օծումը ստացաւ (ՇԱՀ·Ա·225)։ Աստուածատուր Համատանցիի նախընթացին վրայ բնաւ տեղեկութիւն չունինք, և պիտի չկարենանք արժանապէս ներկայել։ Իւր պաշտօնավարութեան ընթացքին մէջ՝ գրուած աթոռին անարժան չգտնուեցաւ։ Երեւանեցին կը յիշէ զայն իբր այր հեզաբարոյ և հոգեկէտ, ընդհակառակ և ջերկոտեաս, ջերմեռանդ և աղօտասէր, որ զբաղեալ բաբէբաստիկ եղեալ և զբաղեալ նեղսրտեալ և զաւազանս (ՁԱՄ·27)։ Իւր ձեռամբ կատարուած մայրաթաղարի նորոգութիւններէն կը յիշուին, իմման տեղւոյն մարմարեայ չինուիլը, որ կը ցուցնէ թէ այնպէս չէր եղիազարի նախնական չինութիւնը (§ 1810), աւագ խորանի նորոգութիւնը, եկեղեցւոյ սիւներուն վերաչինութիւնը, և գեանին սալայատակութիւնը, տընտեսատան չինութիւնը, և անոր մէջ ջրհոր բացուիլը, ինչպէս նաեւ կալուածներէն մի մասին պետական վաւերագիրներով ապահովուիլը (ՁԱՄ·28)։ Աստուածատուրի այդ չինարար գործերը կը գրաւեն նորա հայրապետութեան առաջին հինգ տարիները մինչեւ 1720, զի այնուհետեւ պատերազմական չփորները հնչեցին, և դրացի բանակներ իրարու դէմ ելան, և էջմիածին ալ նեղուեցաւ ու տառապեցաւ, ինչպէս հետզհետէ պիտի պատմենք։ Աստուածատուրի դատական ուղղութեան մասին ալ սովորական յանդիմդը կը կրկնուի, թէ 1717'ին պապին էբեց վրդ. հնազանդութեան երդ և գծ գովառանս տուբ եկեղեցւոյն Հոմայսական՝ այլ միայն մէկ մը այս յիշատակութիւնը կ'ընէ (ՊԼՃ·263), և ուրիշ հռոմէական գրիչներն ալ չեն համարձակիր կրկնել, որով կասկածելի կը դառնայ սոյն մէկին գրածը։ Պատճէնն ալ մէջտեղ չկայ՝ որ բուն պարունակութիւնը դիտնայինք, և եթէ գրած է, հաւանաբար Աղէքսանդրի գանգատին (§ 1897) կրկնութիւնն է Լատին քարոզիչներուն դէմ, և եթէ մէջը գովասանքի խօսքեր կան՝ դատանական նշանակութիւն չեն ունենար։ Իսկ հնազանդութիւն ըսուածն ալ՝ իւր անձր նուաստացնող և դիմացինը բարձրացնող խօսքեր կ'ըլլան, ինչպէս նման պատճէններու մէջ կը տեսնենք։ Կը գտնուի նաեւ 1718 յունիս 19'ին Աստուածատուրէ գրուած կոնդակ մը վէնետիկ գտնուող Ջուղայեցի և ուրիշ վաճառականներուն, որ էջմիածնի համար, դանէ ի քեռկանիկ, ըստ և այլ ըստ ելեկեան հոգան (ՏԱՇ·

1030), որուն մէջ բնաւ Հռոմի կամ Հռոմէականութեան պատկանող իսկ չկայ։ Դառնանք նորէն Կոստանդնուպոլիս։

ԼԱՏԻՆԱՄԻՏ ՋԱՆՔԵՐ

1919. Յովհաննէս Գանձակեցի պատրիարք ընտրուած էր 1714 մարտ 21'ին, Աղեքսանդրի մահուանէն 8 ամիս, իսկ Աստուածատուրի կաթողիկոսութենէն 14 ամիս առաջ, սակայն կամաւ անոր գործերուն մասին խօսիլը յետաձգեցինք (§ 1914), չսթայարեալ գործողութիւնները չընդհատելու համար։ Հազիւ թէ Գանձակեցին գործի ձեռնարկեց, երկու պարագաներ եկան կացութիւնը զայրացնել. մէկը Լատիններուն կողմէ իրենց հետեւողներու վրայ բռնապետութիւնը՝ Լատին եկեղեցի երթալու և Հայոց եկեղեցիներ չերթալու, և միւսը Օսմանեան կառավարութեան ցուցած Լատինաց հետ բարեկամութեանց և մերձութեանց դէմ խըստութիւնը, վենետկեցւոց հետ յարաբերութեանց խառնակելուն և մօտալուտ պատերազմի հաւանականութեան պատճառով։ Գանձակեցին խոհական կերպով նախապէս ալ որոշ նայած է յորդորեց ընոս չալ չեկեղեցի ի (ՁԱՄ. Գ. 757), որպէսզի կառավարութեան կասկածներուն տեղի չտան, քանի որ իրեն վրայ ալ ստիպում կ'ըլլար իր ժողովուրդին ընթացքին վրայ հսկել։ Անսացողներ եղան, բայց Լատին քարոզիչներ սկսան աւելի եւս աստկացնել իրենց արգելքը, խիղճերը պղտորել և բնտանիքները խռովել։ Կը կարծէին թէ Հայոց պատրիարքարանին վրայ կրնան յաղթութիւններ տանիլ դեսպանական հովանաւորութեամբ, զի Պէրիոլի յաջորդը Պետրոս Տէզալլէօր կոմսը (Pierre-Puchot comte Desalleurs), իր նախորդէն նուազ չէր կրծամոլ ընթացքին մէջ, թէպէտ անոր պէս մոլեգնութեան չէր հասներ։ Գանձակեցին Լատին եպիսկոպոսին ալ ղրկեց իր փոխանորդը, որպէսզի իր եկեղեցականները չափաւորութեան խրատէ, և կառավարութեան տրամադրութիւնները յիշեցնելով զգուշացուց տնաճոյ հետեւանքներէ։ Ընդհակառակն Լատին եպիսկոպոսը իր գլուխը կը ժողովէ Հայերուն մէջ հռոմէականութեամբ կրթուած կամ հռոմէականութեան չհասած եկեղեցականները, և անոնցմով որոշում կուտայ է ելոթ փոնել ղէրն, պատրիարքը պաշտօնէ ձգել, իրենցմէ մէկը պատրիարքութեան բարձրացնել, և այս նպատակով գաղտնի կերպով և խռովանահայրերու միջոցով իրենց հետեւողներէն ղրամ հաւաքել, պաշտօնական և անպաշտօն ծախքերու համար։ Լատին եպիսկոպոսին հրամանատարութեան ներքեւ՝ Հայոց պատրիարքարանին դէմ մաքառելու պատրաստուող խումբին կ'առաջնորդէր Մելքոն Թասպասեան եպիսկոպոսը (§ 1895), ոչ կարէ չի ինչ լինի առաջնորդ և պարբերաբ (ՁԱՄ. Գ. 758)։ Իրեն կը հետեւէին Յովհաննէս Նիկոմիդացի, և Սարգիս ու Երեմիա եպիսկոպոսներ, Յովսէփ Պէչիքթաչցի վարդապետ և Աստուածատուր Պարսկաստանցի քահանայ՝ իրրեւ չարժուհին գլխաւորներ։ Կառավարութիւնը տեղեկութիւն ստացաւ այդ եղելութեանց մասին, որոնց հանդէպ անտարբեր չէր կրնար ըլլալ, և թողուլ որ հպատակներէն ոմանք օտարի թելադրութեամբ և գլխաւորութեամբ իրեն հպատակ հասարակութեան դէմ գործեն։ Եպարքոսը պատրիարքին պատուիրեց որ ոտքի անել ինչ, և վերեւ յիշուած երեք եպիսկոպոսները ձերբակալել տալով, եր չանգնոյն փեղոջ ոտքի, էջ է բանէ։ Լատիններու հետ միաբանականներ՝ կարծելով թէ պատրիարքին գործն է երեք եպիսկոպոսներուն անյայտանալը, հարիւր հոգիի խումբ մը կազմեցին և եպարքոսին վրայ բողոքի ղրկեցին՝ պատրիարքը ամբաստանելու, չգիտնալով թէ եպարքոսն ինքն է խաղին հեղինակը (ՁԱՄ. Գ. 759)։

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆ

1920. Տամատ Ալի եպարքոս բողոքողները կ'ընդունի, կը լսէ բողոքը, և կ'ըսէ թէ գործը իմացած է, և թէ այն երեսաղէմի հայ չիւներու խնդիր մրն է՝ պատրիարքի և յիշեալ եպիսկոպոսներու հետ, որոնք երեք ընկեր եւս ունին եղեր, թող անոնք ալ բերեն որ դատը տեսնէ, և երաչխաւորութիւն առնելով բողոքողները կ'արձակէ։ Ամբոխը կը հաւանի, բայց միւս երեքը, զորս Լատին եպիսկոպոսը պահած էր, մէջտեղ չեն ելլար։ Այն ատեն սմբոխը Լատին եպիսկոպոսին կը դիմէ, կը սպառնայ որ զիրենք մէջտեղ

նետուց, և այժմ վտանգի կ'ենթարկէ. որով նա կը պարտաւորուի մէջտեղ հանել երկար պահուըտածները, զորս երաչխաւոր ամբոխը եպարքոսին կը ներկայացնէ, և անոնց հետ Ծովհան Նիկոմիդացի եպիսկոպոսն ալ, զի Սարգիս և Երեմիա լատինամիտ եպիսկոպոսներ բանտին մէջ իսլամութիւն ընդունելով դրծէն հրաժարած էին։ Պատրիարքն ալ ատեան կը կանչուի, ուր իւր գանգատը կը յայտնէ։ Բայց անիկայ՝ եպարքոսին յանիւրած պատճառանքին մանակից չէր, ուստի պարզապէս կը յայտարարէ թէ լատիններ մէջտեղ եւած են իւր ժողովուրդը օտարացնել, կ'արգիլուին Հայ եկեղեցին գալ, կը յորդորուին պատրիարքարանի տուրքերը չտալ, և կը սպիտին իրենց եկեղեցիները երթալ և տուրքերը իրենց վճարել։ Կ'աւելցնէ թէ այս չորսերն ալ անոնց դործակատարներն են։ Եպարքոսը միանդամուն դառնալով բացատրութիւն կը պահանջէ, և Թաւպասեան ամէնուն կողմէ պատասխանելով կը սկսի ըսել. Պաշեան, որ վան մէ՛ ալ ի՞նչ...։ Եպարքոսը խօսքը կ'ընդհատէ, և չներեր չարունակել, որովհետև ալ ի՞նչ յայտարարութիւներ՝ կատարեալ խոստովանութիւն կը նկատէ, և իրր օտարներու և կառավարութեան թշնամիներու ձեռնտուներու՝ քրէական յանցապարտութեան և թիապարտութեան վճիռ կ'արձակէ վրանին։ Այսպէս Մելքոն և Ծովհան եպիսկոպոսներ, Ծովսէփ վարդապետ և Աստուածատուր քահանայ, թիապարտներու բանտը կը փակուին 1714'ին վերջերը, գոնէ յայտնի ամբաստանութեամբ և դատական վճիռով, և ոչ Աւետիքի պէս նենգաւոր յարձակութեամբ և գողունի գործողութեամբ։ Թիապարտներէն վերջին երեքը՝ իրր հետեւողներ՝ դրամական միջոցներով ազատութիւն կը գտնեն, միայն Մելքոն եպիսկոպոս, իրր չարժուելին գլուխ՝ երկու տարիի չափ բանտը կը մնայ և հոն կը վախճանի։ Այդ միջոցին իրր գործակից դատապարտուած են նաեւ Մելտոն Պալաթցի և Զախախօղլու անուն անձեր, որոց առաջինը ուրացութեամբ և երկրորդը դրամով ազատութիւն են առած (ԶԱՄ. Գ. 761)։

1921. Այդ դատաստանն ու անոր երթը, և լատիններուն բռնած երկդիմի բնաթացքը, նոյն իսկ իրենց հետեւողներէն չատերը իրենցմէ պաղեցուց. եպարքոսական հրամաններն ալ կրկնուեան օտարասիրութեան առջեն առնելու համար. պատասխաններն ալ հրամաններ տուեցան այդ մասին հսկելու, և պլխաւորները դպելու։ Այդ առթիւ չատեր ձերբակալուեցան, որոնցմէ Աբրահամ Արծիւեանն եպիսկոպոսը (§ 1896) Բերիայէ կ-Պոլսոյ թիապարանը բերուեցաւ. իսկ Գրիգոր Եւդոկիայի վարդապետը, և քանի մը կարնեցի քահանաներ, տեղւոյն վրայ բանտարկուեցան, բայց տուգանքով ազատեցան (ԶԱՄ. Գ. 761)։ Արծիւեանի համար ալ կը պատմուի, թէ Հրեայ բանտակիցներու միջնորդութեամբ ազատութեան ճանապայ գտած ըլլայ (Դիթ. 44)։ Միայն հաւատալի չէ, որ Արծիւեանի 1717'ին պատրիարքական կոնդակով և պետական հրովարտակով եդեսիոյ առաջնորդ անուանելուն առթիւ, կաթոլիկութիւն քարոզելու ազատութիւն տրուած ըլլայ (ԿԱԹ. 45), ինչ որ իւր 1714'ին Տրապիզոնի առաջնորդութեան առթիւ ալ եղած կ'ըսեն (Դիթ. 38)։ Վասն զի Գանձակեցի պատրիարքին կաթոլիկութիւն զօրացնելու յանձնառութիւնը ենթադրելի իսկ չէ, և գործոց ընթացքը աւելի հաւանական կը ցուցնէ, Արծիւեան եպիսկոպոսին՝ պատրիարքարանի ընթացքին դոնէ երեսանց համակերպիլը, ինչ որ անսովոր չէր սրեւէ միջոցներով տոդոսկելու և հրապուրելու սահմանուած հոգեւոր պաշտօնէից վրայ։ Գաւառներու վրայ տարածուած գործողութիւնները 1714 տարւոյն մէջ սկսած, և յաջորդ տարին չարունակած էին։

ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՄԷՋ

1922. Թուականներու բաղդատութիւնը չատ մեծ նշանակութիւն ունի եղելութեանց կապակցութիւնը և նոքին չարժաւորի բացատրելու։ Արդ 1714'ին վերջերը վենետկեցիներու դէմ պատերազմը ծրագրուած և պատրաստուած էր. 1715 յունուարին պատերազմական նշանները կայսերական պալատան դուռը դրուեցան. ապրիլին սուլտան Ահմէտ Գ և Տամատ Ալի եպարքոս՝ մայրաքաղաքէն մեկնեցան, և նաւատորմիղը Թինոս կղզին

ՊԵՂՈՊՈՆԷՍԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

գրաւեց. յունիսին Օսմանեան բանակը Պե-
ղոպոնէս մտաւ. յուլիսին Կորնթոսի տիրա-
ցաւ, և հետզհետէ Նաուպլիա, Ռօմն, Նա-
վարին, և Մեթոն բերդաքաղաքները ցամաքի
վրայ, Չերիկօ և կրետէ կղզիներ ծովու
վրայ՝ Օսմանցիներէ գրաւուեցան, և 1715
նոյեմբերին Վինետկոյ հանրապետութեան
տիրապետութիւնը վերջացած էր Պելոպո-
նէսի կամ Մօռայի թերակղզւոյն և Արչիպե-
ղագոսի կամ Պարզ-Սկֆիտի կղզիներուն
վրայէն։ Ձիչդ այդ միջոցներուն էր որ Լա-
տիններ իրենց հետեւողներուն խիղճին վրայ
բռնանալով, և անոնց միտքը պղտորելով,
կառավարութեան գայրոյթը կը հրաւիրէին,
և այս կերպով իրենք իրենց պաշտպան-
ներուն հալածիչը կը դառնային։

1923. Միւնոյն միջոցներուն, այսինքն 1715'ին, գաղիկը ընդէն եղբը, որ կը հանդիպէր ապրիլ 17'ին,

ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐՔ

երուսաղէմէ կ-Պոլիս կուգար Յովհաննէս Կոլոտ վարդապետ, և բոլորա-
նուէր պինքն կու տար երուսաղէմի կացու-
թիւնը բարւոքելու։ Շարունակ ամէն տեղ
և ամէն առն, հրապարակաւ կամ առան-
ձինն, բեմէն կամ բազմոցէն, երուսաղէմի
նեղութիւնները կը պատմէր, վերջին կոր-
ծանման հասած ըլլալը կը բացատրէր, իր
յանձնառու եղած երաչխաւորութիւնը կը
յայտարարէր, և անմիջական դարմանի և
գուարթառատ օգնութեան պէտք կը զգա-
ցընէր։ Առնչմէ աւելի արմատական կար-
գադրութեան մը անհրաժեշտութիւնը կը
ցուցնէր, երուսաղէմը ազատել տիրող դիր-
քէն, անոր սեփական տէրն ու գլուխը տալ
ըստ առաջնոյն, կ-Պոլսոյ պատրիարքարա-
նին ուղղակի միջամտութիւնը խափանել,
մէկ խօսքով պատրիարքութեանց միա-
ւորութիւնը ջնջել, և կ-Պոլսոյ դէրը վերին
հակողութեան մէջ սահմանափակել։ Այդ
քարոզութիւնները և յորդորները կը խօս-
ուէին Յովհաննէս Դանձակեցի պատրիար-
քին աչքին ներքեւ, որ բնաւ արգելք և
դիտողութիւն չէր դիմադրեր։ Որչափ ալ
նա Յովհաննէս Պալըքէսիրցին երուսաղէմ
դրկելու սխալը գործած էր (§ 1914), սա-
կայն կ'երեւի թէ միամտաբար սխալած էր,
վասնզի այլեւս ոչ լրածը կը պաշտպանէր և
ոչ ալ Կոլոտին ձեռնարկին արգելք կը դնէր։
Կոլոտի յորդորները սկսան ժողովուրդին հա-
մակրութիւնը գրաւել, և մնծամնծներուն
մտադրութիւնը հրաւիրել, որոնք հետզհետէ
իրեն ձեռնտու ըլլալու հաճութիւնը տուին,
և որոնց մէջ յանուանէ կը յիշուին Ցարու-
թիւն Մուրատեան Ապուչխեցի, Ցարութիւն
Թէվէքէլեան Ապուչխեցի, Սարգիս Խալֆա
Կեսարացի, Իսրայէլ Կոստանդնուպոլսեցի, և
Լութվի, որոնք յայղեցան իրենց կողմը
ձգել նաեւ Սեղբեստրոս Երեւանենց Ակնե-
ցին (ՀՆն. 138), աւելի ծանօթ Սեղբոս
Ամիրա անունով, ամէնքն ալ ճանթէխ կո-
չումով պատուած անձեր, որ է ըսել երու-
սաղէմի ուխտը կատարած, և սիրտով երու-
սաղէմի սիրով տոգորուած։ Ասոնք հաւա-
նեցան Կոլոտի յայտնած պայմաններուն հա-
մակերպիլ. բայց ինչպէ՞ս ընել, որ կ-Պոլսոյ
պատրիարք գտնուող անձը անկեղծօրէն
ձեռք քաշէ երուսաղէմի պատրիարքութի-
նէն. ինչպէ՞ս ապահովել, որ կ-Պոլսոյ պատ-
րիարքը յարգէ Կոլոտի անձնական երաչխա-
ւորութիւնը (§ 1915). զո՞վ երուսաղէմի
պատրիարքութեան կոչել որ կ-Պոլսոյ պատ-
րիարքին հետ համերաչխ գործէ. և ինչպէ՞ս
վստահիլ որ հաւաքելի նպաստներ ամենայն
ճշդութեամբ երուսաղէմի պարտքերուն պի-
տի յատկացուին։ Այդ դժուարութեանց
լուծումը պատրաստելու համար՝ խորհեցան
նոյն ինքն Կոլոտը կ-Պոլսոյ պատրիարք ան-
ուանել, և երուսաղէմի պատրիարքի ընտրու-
թիւնն ալ անոր առաջարկութեան թողուլ։
Եկ, կ'ըսեն, դու լեր մեզ պատրիարք և առաջ-
նորդ Կոստանդնուպոլսոյ, և յետոյ ըլլն և կամք
քոյ ինչ պատրիարք ընտրեսցին, բայց միշտ
ի խոնարհութեամբ քոյում իշխանացս։ Կոլոտ տեսնելով
որ իւր կապած բեռը իւր ուսը կ'ուզեն
բեռցնել, սկսաւ խուսափիլ և պատճառիլ
ինչ ինչ. բայց գլխաւոր խնդիրը գործին
տեւողութիւնն էր, որովհետեւ մինչեւ
պատքերուն ջնջուելուն պայմանաժամ նը-
շանակուած չորս տարիներու լրանալը, շատ
փոփոխութիւններ կրնային տեղի ունենալ և
գործը խանգարել։ Ասոր ալ իշխանները
պատասխանեցին, թէ ի քնութ Աստծով
կամ է յոչն ոք ի օրնէ յեղլան այլ էրէ (ՀՆն
138), որ է ըսել, խոստացան բոլոր ուժով-
նին Կոլոտի պատրիարքութեան տեւողու-

թիւնը երաչխաւորել։ Կոլոտը պատրիարք ընտրելու միտքը՝ Գանձակեցիին պաշտօնէ դադարումը կը պահանջէր։ Գանձակեցիին իբր գովեստ, պէտք է դիտել տանք, որ նա չուզեց որ սովորական եղած կերպերով, դրամով կամ ամբաստանութեամբ գինքն պաշտօնանկ ընեն, այլ նախկին վեհանձն ճարտարութիւնը կրկնեց, զոր ցուցած էր ընտրութեան առթիւ (§ 1914), և խոստացաւ յօժարիլ պարբերաբար (ՁԱՄ. Գ. 772)։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՔՈՌԸ

1924. Այսպէս որոշուեցաւ Ծովհաննէս Կոլոտի պատրիարքութիւնը՝ միայն կ-Պոլսոյ աթոռին անունով, երբ տակաւին լոկ վարդապետ և 37 տարեկան էր (ԿՈՒ. 15)։ Ինքն՝ Կոլոտ ալ Երուսաղէմի պատրիարքութեան համար առաջարկեց Գրիգոր Եպիսկոպոս Շիրուանցին, իբր հոգեհարազատ և հայրապատիւ ընկերակիցը, որ Մշոյ Ս. Կարապետի առաջնորդն էր (§ 1910), և բնաւ անցուդարձէն տեղեկութիւն չունէր։ Ըստ այսմ ամենայն ինչ սիրով և համերաշխութեամբ հաստատուելէ ետքը, Յակոբեանց չաթաքահէն ուրբաթ օրը Կոլոտի պատրիարքութիւնը հռչակեցին և առժամայն Նոթոջէն յԲոլս Կոստանդնուպոլսոյ, և յաջորդ չաթաթ օրը, որ էր ծն տջեոյ Ցուրբեան և Գաղթողին, այսինքն Յակոբի նախընթաց նաւակատեաց օրը, տօնական պատարագին յիշատակութեան առեն, Կոլոտի տուած հրահանգին համեմատ, ժամարարը բաժանարար յիշեց Երուսաղէմի պատրիարք Գրիգորը և Կոստանդնուպոլսոյ պատրիարք Ծովհաննէսը. մինչ այն առեն սովորութիւն եղած էր Կոստանդնուպոլսոյ պատրիարքը երկու աթոռներով միանգամայն յիշել։ Այդ օրէն կը սկսի Երուսաղէմի պատրիարքներուն զատաբար Կ-Պոլսոյ պատրիարքութեան վիճակներուն մէջ յիշատակութիւը, որ ոչ իրաւունքի կամ իշխանութեան և ոչ ալ յատուկ պատուոյ նշանակութիւն ունի, այլ միայն պատմական հղելութեան մը հետեւանքն է. Երուսաղէմի աթոռին ալ Կոստանդնուպոլսոյ աթոռէն առաջ յիշուիլը՝ պարզապէս Կոլոտի կողմէն իւր հայրապատիւ ընկերակցին հանդէպ մնծարանքի յայտ մըն էր, ապա թէ ոչ իրաւասութեան կանոնով, տեղական իշխանութիւններ և ուղիղ գերիշխանութիւններ նախապատուութիւն կը վայելեն։ Բայց սկսուած սովորութիւն մը կը չարունակէ, և չարունակելով օրէնք կը դառնայ։ Այդ նչանաւոր հղելութեանց թուականը 1715 յիշուած է (ՍՐԳ.), իսկ ամսաթիւը Հաննա պատմագիր սեպտեմբեր 12, և սեպտեմբեր 13 կը դնէ (ՀՆՆ. 139). սակայն Հօթնեկի և տօնի օրերը 1715'ին սեպտեմբեր 9'ին և 10'ին կը պատասխանեն, և պատմագիրը կամ ընդօրինակիչը թիւրիմացութեան ինկած պիտի ըսենք։ Ուրիշի կողմէն ալ սեպտեմբեր 16'ին և 17'ին տանելու ուղղութիւնն ալ (ՁԱՄ. Գ. 772), տօնական յիշատակին չյարմարիր։ Պատրիարքութեանց բաժանումը խնդութեամբ ընդունուեցաւ ժողովուրդէն, որ երկու նոր ընտիրներուն ստանձնած ծանր բեռը նկատի առնելով կը մաղթէր. Տէր օգնեսցէ նոցա (ՀՆՆ. 139)։ Գանձակեցիի ընթացքին մասին հետեւեցանք Ջամչեանի և ուրիշներու գրածին (01 ՕՐԱ. 128), և կամաւ հրաժարիլը գրեցինք (§ 1923)։ Սակայն Երուսաղէմի նոր պատմագիրը, չենք գիտեր ուստի քաղելով կը գրէ, թէ Գանձակեցին Պարսկաստան փախած առեն ձերբակալուեցաւ և բանտարկուեցաւ, և Կ-Պոլսոյ պատրիարքութենէն զրկուեցաւ. բայց Երուսաղէմի պատրիարքութիւնը վրան մնաց, որով չբաժանեցաւ գաղթաց, եկեր և վախճանեցաւ գինեղ և գոտացուածոյ եկեղեցւոյ և վանօրէից, մինչեւ որ դարպասեցաւ ի պարիսպ պարսկաստանի (ԱՍՏ. Ա. 440)։ Մեր տեսութեամբ թիւրիմացութեան հետեւանք պէտք է ընել այս դարձուածը, որովհետեւ Հաննա որ ականատես և գործակից էր, այդպիսի պարագաներէ տեղեկութիւն չունի, Երուսաղէմի ինչքերուն նոր վատնող մը չճանչնար, քող որ անիմանալի է Կ-Պոլսոյ աթոռէն գահընկէց եղած և բանտարկուած պատրիարքին Երուսաղէմի աթոռը կարենալ պահելը և անով գեղծանիլը։ Ուստի անհնար կը տեսնենք կարեւորութիւն ընծայել այդ վերջին պատմութեան։

1925. Սակայն կատարուած գործողութիւնը և նոր պատրիարքներու հռչակուիլը ազգային չրջանակի մէջ եղած գործ էր, և դեռ իւր պաշտօնական և իրական լրումը

չունէր. ուստի պետական հաստատութիւն ստանալ պէտք էր, և Երուսաղէմի պատրիարք ընտրուած անձր գործին գլուխը անցընել։ Մինչեւ որ այս գործողութիւնները լրացան, ի տարի Ա–ԱՆ ամէն աւուն անցած է Հաննայի հաշուով (ՀՆՆ. 140)։

ՊԵՏԱԿԱՆ ՎԱՒԵՐԱՑՈՒՄ

Գրիգոր Շիրուանցին հաճեցնելու համար ալ նամակներ գրուեցան, և անոր դժկամակութիւնը յաղթելու համար հրովարտակին աւնուելէն ետքն իսկ Տարկ եղաւ Աստուածատուր կաթողիկոսին գրել, և ի յետ վերջապէս ին գիրերը յղել. և հազիւ թէ երբ կաթողիկոսը իւրով հրեշտանաւ հրամանաւ հրամայեցաւ, իսպառնեցաւ Գրիգոր, ինչ եղեւ զննահանջելի հրամարտութեանն յայտնի ստորագրեալ իւրոյ։ Սակայն այդ կերպով Գրիգորի յանձնառութիւնը երկու տարի ուշացաւ (ՀՆՆ. 143)։ Պայտոնական գործողութեանց, և երկու պատրիարքութիւնները իրարմէ բաժնելու, և նոր ձեւով հրովարտակներ պատրաստել տալու համար բաւական դժուարութիւններ եղան. բայց Հաննա իսկ չմանրամասներ, թէ ընդդէմ նեղութեան և անյուսութեան կրեցին, և ընդ դրամ չինեցաւ ցրուեցին՝ գործին վրայ կեցող իշխանաւորները։ Պէտք եղաւ որ Կոլոտ անձամբ Ադրիանուպոլիս երթայ, ուր էր սուլտան Ահմէտ Գ, և իրեն հետ գացին մեծամեծներէն Մելիտոն Արապօղլու կնասրացի, Յարութիւն Հովուհաննց, և միւս Յարութիւն Սեղբոսի բնակերը, և ուրիշներ, որոնց գործակից եղաւ Ադրիանուպոլսոյ առաջնորդ Յերունի Աբրահամ վարդապետ (ՀՆՆ. 140)։ Նիմ հրովարտակներուն ստացութեան ժամանակը Կոլոտի Երուսաղէմէ մեկնելէն 20 ամիս պիտի հաշուենք Հաննայի ցուցածին համեմատ (ՀՆՆ. 140), 1716 նոյեմբերին պիտի դնենք անոնց ստացութիւնը, և 1717 տարւոյ Յունուարի օրերուն կը նայ դեռահասէս Հանդիպ Մայր եկեղեցւոյն մէջ, զոր Կոլոտ հաւաքից Ադրիանուպոլսէ դառնալէն ետքը։ Անկէց ետքն է Աստուածատուր կաթողիկոսին եղած դիմումը, և Գրիգորի վերջնական համակերպիլը, և Մուչէ մեկնելով Կ-Պոլիս հասնիլը 1717'ին է յոյսով փոխ Վէրափոխման (ՀՆՆ. 143), ոգոստոս 18'ին։ Ինչպէս կը տեսնուի, չատ երկարաձգեալ եղաւ Կոլոտի յղացած խորհուրդին գործադրութիւնն ու աւարտը, և պարտքերուն վճարման համար պայմանաւորուած չորս տարիներէն երկուքկէսը ապարդիւն անցան։

ԳՐԻԳՈՐ ԵՂՔԱՑԱԿԻՐ

1926. Այդ յապաղումը ստիպեց երկու պատրիարքակից հին ընկերները ամենայն փութաջանութեամբ գործի ձեռնարկել, իրարու հետ մրցելով՝ սիրով և համերաշխութեամբ։ Սրբատաչարժ են Կոլոտի՝ Գրիգորը դիմաւորելու առեն խօսած ողջունի խօսքերը. Մվ. ասէր պեղեց պահպանէ, խոնարհեցաւ և նկէր, երես է հող և մոխիր, ճանապարհէդ ու նկէր, և այս խօսքերով ու արտասուելով ընդ ժամս անոր կը փարի ու կը համբուրէ (ՀՆՆ. 143)։ Գրիգոր որչափ առաջուց դժկամակ, նոյնչափ և աւելի բուռն եռանդութեամբ եղաւ ստանձնած պաշտօնին, և յանձն առած գործին, որ է Երուսաղէմը փրկանաւորել իւր պարտքերէն և զայն պայծառացնել նորանոր կարգադրութեամբ։ Իրրեւ նշանակ իւր անկեղծասէր անձնուիրութեան, եւ է պարծանք էր ընդ նոսա երկխիղճ բերել, և փակեաց զայն ազխի՛ մրափառնի՛, ասելով ընդ Աստուած, ոչ հանել զայն է պարտական էր, ինչ՛ այդ աստուած նայն ինչն պատապեցիլ ազգս Հայոց, և արքեան զբազում յանձնայն ազգ, և քարչել ընդ խոչին յազգս ժերմ, ընդունացուցանելով զնեռակոտակ քարգման ծովատրաս պարտաց (ՀՆՆ. 146)։ Գրիգորի իւր վիզը անցուցած երկաթեայ չղթայի անուրն է, որ անոր տուաւ Ղրիմայինը և այլազգօրէն Ջինճիրլի մականուանը, որով սկսաւ կոչուիլ ամէնէն, և որ իրեն վրայ իրրեւ հաստատուն մականուն մնացած է պատմութեան մէջ։ Գրիգորի պատրիարքութիւնը ստանձնելուն թուականը, իւր կնիքէն քաղելով պէտք է դնել 1717'ին (ԿՈՒ. 61), թէպէտ չատեր կը գրեն 1718'ին, որ թերեւս անուրը վիզն անցընելուն թուականն է, թէպէտ օրը չկարենանք ճշդել։ Գրիգոր անուրը վիզը անցընելով իւր վրայ կ'ուղէր անձնաւորել Երուսաղէմը, այսինքն Երուսաղէմի Հայ ազգը, որ լեռնակոտակ պարտաց ներքեւ ինկած (ՀՆՆ. 145), և բոլոր իւր ստացուածներովը պարտատէրներու երաշխաւորութեան մատ-

նուած, տիրապէս վաճառելով գերի մըն էր անոնց ձեռքը, և բոլոր իւր ազատութիւնը կորուսած։ Երուսաղէմի աթոռին այս գերութիւնը կը պատկերացնէր Շղթայակիրը իւր ֆեբէոբա անուրովը։ Գրուած չկնք գտներ թէ ինչ ծանրութեամբ և ինչ չափով օղակ մըն էր Գրիգորի իւր վիզին վրայ աղէտ ամբոխանէտ պնդած անուրը, զոր երկար տարիներ վիզէն չհանեց։ Ինչպէս օրինակով Երուսաղէմի աթոռին գերութիւնը անձնաւորած էր Գրիգոր, նոյն ոճով ալ կը խօսէր միշտ, և ոտն օրեր եկեղեցւոյ դրան առջեւ կանգնած, Երուսաղէմի բերնէն ողբագին կը կրկնէր. Ողբմեցուած, ողբմեցուած ինձ, հաւատացէլք Քրիստոսի, զի պատճիմ է եղեալ է, և զբէ՛ իմ հետացեալ են յինէն, և ես տապնեալ եմ է եբեսրիէն, ողբմեցուած ինձ (ԱՍՏ. Ա. 441)։ Երկու պատրիարքներուն ձեռք ձեռքի տուած քրանսական ճիգերը իրենց արդիւնքն ունեցան, դի երկուքին քարոզութիւնները, Գրիգորի անձնուիրութիւնը, Ոսկանեսի հովանաւորութիւնը, և մանաւանդ անոնց առաքինի և անձնուրաց օրինակը՝ ամէնքը վառեց Սուրբ Տեղեաց բարեպաշտութեան, և նպաստներ ու նուէրներ սկսան առատապէս տեղալ յօգուտ սրբոյ աթոռոյն։)

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՄԱՐ

1927. Գրիգոր պէտք չտեսաւ պատրիարքութիւնը ստանձնելուն պէս իր աթոռը երթալ, և հոն բանակարգութիւն հաստատել, վասնզի ամէնէն առաջ պէտք էր պարտքերը թեթեւցնել, կայուածներու և սպասներու և ինչքերու տէր դառնալ, և այդ նպատակին համար Երուսաղէմ գտնուիլը բնաւ օգուտ չունէր. նպաստներ ու նուէրներ ազգին հանրութենէն, և գլխաւորապէս մայրաքաղաքէն պիտի գային, ուստի անհրաժեշտ էր ազգային կեդրոնին մէջ մնալը։ Իսկ Երուսաղէմի մէջ կարող և հաւատարիմ փոխանորդի և մատակարարի մը պէտքը կար, ոչ նուազ պատկառելի մը կամ նազբի մը, այլ տիրապէս պատրիարքին փոխանորդին կամ աթոռակալին, և այդ պաշտօնին կոչուեցաւ երկու պատրիարքներուն կոնդակով Ոսկանես վարդապետ Երուսաղէմացի, կամ արաբացւոց լեզուաւ՝ Հէննէ վարդապետ կոչուած (ՀՆՆ. 145), և աւելի սովորաբար Հաննա հնչուած (ՀՆՆ. 2)։ Նա կոլոտի փոխանորդութեան օրէն անոր հաւատարիմ և անխոնջ գործակիցն էր եղած, և ատուկիս այդ պաշտօնին արժանաւոր անձն էր, և ինքն է այդ եղելութեանց մանրամասնութիւնները մեզի հասցնող պատմաբանը։ Նպաստները առատացնելու համար չրջաբերականներ և յորդորագիրներ ուղղուեցան ամէն կողմ, Ոսկանէս պատրիարքի անունով և մնծամծներու ձայնակցութեամբ, ոչ միայն Տաճկաստանի այլ և Պարսկաստանի վիճակները։ Անշուշտ Աստուածատուր կաթողիկոսի ալ դիմում եղաւ նպաստի համար, ինչպէս Գրիգորը համոզելու նպատակով եղած էր (§ 1825), և այս յայտնապէս կը քաղուի 1721 հոկտեմբեր 18'ին Աստուածատուրի գրած նամակէն, որով կը հաւանի կարմիր ետ քաշել էջմիածնի նուիրակ Մխիթար Գողթնացի վարդապետը, դի էրբ սոբբ փանդ յաքեցե, և ձեր չեթոյ լինիցի (ԱՍՏ. Բ. 8)։ Իսկ Պարսկաստանի առաջնորդ Մովսէս Ջուղայեցիի ուղղուած գիրին մէջ, որ Ոսկանէս պատրիարքի և 250 ականաւոր հոգեւորականներու և ժողովրդականներու կնիքները կը կրէր, կը յայտարարուի, թէ չեթ սրբազան կաթողիկոսին մերոյ հօրն հաւատացաւ, էյոյդ վհանդնուրեան առնէմ ձեզ հայր և քահանա և հեղինակ սա քաբեացն ջուէլ (ԱՃՍ. Բ52)։ Կաթողիկոսին անունը յիշելնին ալ, նախապէս անոր ալ դիմելնին կը ցուցնէ։ Ջուղայի և բոլոր Պարսկահայ քաղաքներու հաւատացեալները, որք ոչ նուազ ջերմեռանդ էին Սուրբ Տեղեաց, և կարողութեան տէր ալ էին, հարկաւ առատապէս մասնակցած են Երուսաղէմի պարտքերուն վճարման։ Երբոր այսպէս յաջող պարագաներու ներքեւ կը սկսէր Երուսաղէմի համար հանգանակութեան գործը, յանկարծահաս աղէտ մը վրիվայր չրջեց ամէնուն բարենպաստակ ջանքերը։ Միւնոյն 1718 տարին յունիս 5'ի չաթաթ կէսգիշերին, յոյս Հոգեգալստեան հինգերորդ կիրակիին, ահագին հրդեհ մը, որ 34 ժամ տեւեց, կ-Պոլսոյ մեծ մասը մոխրեաց (ՍՐԳ.), և մայրեկեղեցին և պատրիարքարանն ալ այրեցան, իրենց չրջականերով, ուր քազմաթիւ հայոց քնակէին,

որով էրէՒՒ էպտա յոտակոտ եվէլ լտն էրկոէՒն պեփն օրքալնէ (ՀՆՆ·146), զի մայրաքաղաքը կը պարտաւորուէր նախապէս իւր աղէտը դարմանել։ Սակայն մեծամեծ ներուն գլխաւորները չյուսահատեցան, և գլխաւորապէս Սեղբեստրոս, Մելտոն, Սարդիս և Յարութիւն իշխանաւորներ, որոնք արդէն յիշուեցան։ Նախապէս մայրեկեղեցւոյն և յարակից պատրիարքարանին չինուելուն հետուեցան, որ 1719'ին սկսաւ, և 70 օրուան մէջ աւարտեցաւ (01 ՕՐԱ·129), որուն ինչպէս էկ պեփն օրքալնէ, որպէս պիեփն հշալ է մէջ էայոյ և էրէ օրչպոէՒն։ Նոր չէնքին պայծառութիւնը եվս փառաւորէՒ էտ ղաաջՒՒն, և իլրանալ օրտին նաահոփեայ պեաանէրեան (ՀՆՆ·147), Շղթայակիրին նախագահութեամբ (01 ՕՐԱ·129), որ եպիսկոպոսական աստիճան ունէր։ Այսպէս մայրաքաղաքին աղէտը դարմանելէն ետքը կրկին ոյժով սկսան երուսաղէմի համար աշխատութիւնները, զորս առաջ ալ բարձի թողի բրած չէին։ Ջանացին որ հնարզնտէ պարտքերը վճարուին, գրաւի դրուած կալուածներ և ինչքեր և սուրբ անօթներ փրկանաւորուին, և միանգամայն մեծամեծ նորոգութեանց և ապագային ծախքերուն համար նոր գումարներ հայթայթուին։ Ուստի հանգանակութիւնները չարունակեցին, և հետզհետէ երուսաղէմ փոխադրեցին, որ Հաննա վարդապետի ձեռօք կարգադրուին՝ Շղթայակիրին հրահանգներուն և կոլոտի խորհուրդներուն համաձայն։ Այս է պատճառը որ Շղթայակիրին իւր աթոռն երթալը յապաղեցաւ մինչեւ 1721 (ՀՆՆ·148)։

ՆԵՂՈՒԹԵԱՆՑ ԴԷՄ ՁԻՑԵՐ

1928. Արեւելեան պատառներու մէջ տեղի ունեցող չարժումներուն մասին խօսեցանք մինչեւ Օրթի մար, 1711'ին (§ 1900), և յոյնք ալ թէ անոր գործին չարունակութեան կը հետեւէր Մինաս Տիգրանեան վարդապետը, և թէ երեք տարիէ ուելի Աստրախանի կողմերը դնգերեցաւ, Լուսաները Պարսիկներուն դէմ դրդռելու աշխատեցաւ՝ Հայաստանի ապահովութիւնը պատրաստելու նպատակով (§ 1902)։ Պետրոս Ռուսաց կայսրը, ոչ գործը լքանել ուզելով և ոչ անմիջական ձեռնարկի դիւրութիւն ունենալով, խնդիրը կը ձգձգէր, և չէր ալ կրնար հետեւիլ Մինասի առաջարկներուն, որոնք հաւանական նուիրեան նչաններ իսկ չէին ներկայեր (ԼԷՕ·Բ·285)։ Պետրոս երբոր 1715'ին Արաէմ վոլինսկին Պարսկաստանի դեսպանութեան կը ղրկէր (§ 1902), Մինասի ալ յանձնարարեց, որ ինչ Հայոցին գեղեցիկները հաւաքէ, և այս պաշտօնով Մինաս 1716 յունիսին Աստուածատուր կաթողիկոսին ներկայացաւ էջմիածին։ Եթէ Մինասի ներեալ էր իւր անհատական ձգտումներով չախտուրն և վստանգաւոր ձեռնարկներէ չքաշուիլ, կաթողիկոսի մը ներեալ չէր նոյն չանդըգնութեամբ գործել, և անկայուն ձեռնարկներով կացութիւնը վտանգել։ Թէպէտ Մինասը չվհատեցաւ և բերանացի քաջալերներ ալ չղլացաւ, բայց գործունեայ չարժումի չհամակերպեցաւ, որ կրնար Պարսիկներու վրէժինդրութիւնը դրգռել, առանց ապահովուած օժանդակութիւն տեսնելու. չքաշուեցաւ ալ պարզ նամակ մը գրել թէ վրթպոեթը ներկայացել է իրան, պարել է ոհն ինչ, և ընդոնոնել է ոչրով (ԼԷՕ·Բ·286)։ Մինաս էջմիածինէ Գանձասար անցաւ ներկայանալ Եսայի կաթողիկոսին, որ Օրթի հետեւած էր մինչեւ Աստրախան, անձամբ ձարին ներկայանալու համար (§ 1900)։ Եսայի լաւ ընդունելութիւն բրաւ Մինասի, ինչ որ նախատեսելի էր. սրբեպիսկոպոսութեան ալ բարձրացուց, և Պետրոսի ալ գրեց 1716 օգոստոս 10'ին, թէ ինչ պոբրաոթ եմ ընդ ոնալ ոս ըոթ իմոմ կոզալնէն, և ինչ նահանջէ ոլէովէ, ինձոհձովէ և իոսոմբէ, և ցոչամ կոմեցի հզըր և ոնձ ըսիոսրոնիէնդ ոճոզոբել ոյր կոմօն Աստուծոյ (ՆՉՆ·316)։ Եսայիի և Աստուածատուրի տարբեր ընթացքին պատճառը, ոչ միայն երկուքին տարբեր սեռութիւններն էին, այլ և երկուքին մէջ յարաբերութեանց պատկերը։ Աղեքսանդր կաթողիկոս Եսայիին պաշտպանած էր Աղուանից հակաթոռ կաթողիկոս Ներսէսի դէմ, այլ և յատուկ կոնդակով Շամախին ու Շիրվանը չրջականերով Եսայիի թեմ տուած էր. մինչ Աստուածատուր, թէպէտ Ներսէսի մերժումը պահած էր, բայց Եսայիի իրեն դէմ բռնած արհամարհական ձեւերէն ցաւած, նոր կոնդակ

կով մը Շահախին ու Շիրվանն ու Շաքին փեսան հնչակելով հանած էր Ադուանից աթոռին իրաւասութենէն (ՋԱՄ. 83)։ Մինչ 1716'ին այդ կացութիւնը կը տիրէր։ Միևնոյն Հայաստանէ դառնալուն զանազան նեղութեանց, մինչև իսկ բանտարկութեան հանդիպելուցս, և հազիւ 1717 մարտ 14'ին գինքը կը գտնենք Մոսկուա, ուր իր ուղեւորութեան մասին տեղեկութիւններ կը հաղորդէ Պետրոս կայսեր։ Վօլինսկին ալ կը դառնար նոյն տեղն, բայց չենք գիտեր ինչու. թէ Մինասի և թէ ընդհանրապէս Հայերու և Արեւելցի քրիստոնեաներու մասին նպաստաւոր չէին անոր տեսութիւնները, երբ Պարսից տէրութիւնը անկեալ և գրեթէ ոչնչացեալ կը յուսնէր, և կը հաղորդէր վրացիներուն չարժումի պատրաստ ըլլալը։ Ինչ ալ ըլլան իւրաքանչիւրին դիտումները, սոսկ է որ բոլոր այդ տեղեկութիւնները նպաստակ ունէին Պետրոսը դրդռել Պարսից դէմ երթալու և քրիստոնէից ապահովութիւնը իրագործելու։

ԱՂՈՒԱՆԻՑ ԳՈՐԾԵՐԸ

1929. Պարագաները կարծես թէ իրար կը մզէին։ Ճիշդ 1717'ին էր որ Աֆղանները չարժումը բուռն կատարած էին Կաքոզականի մէջ կ'ապրէին, և Մըր-Վէյս ոտքի Միր-Մահմուտի տակ, սոսկ մահակից իշխաններն ալ համախմբած, Պարսից վրայ կը յարձակէր, մինչ չորս Հիւսիսի մեզկացած և ապիկար կառավարութիւնը, իսկոյն կը ջանար արշաւանք մը ընել։ Թէպէտ և մահմետական կրօնքին մէջ տարբերութիւններ կ'ունենար, այլ իրաւունքի երկու ազանդներու միջև Տարտնակ կ'ընդարձակուէր։ Իրր Սիւննիներու մէկ ճիւղը՝ այսինքն Աֆղանիստանի և Պէլուճիստանի բնակիչները՝ Արեւելքին կը պատկին Շեի Պարսիկներու դէմ, Տարտնիկ ալ Քուրդեր, և հիւսիսէն Լէզգիները 1718'ին կ'արշաւէին Պարսկական գաւառները, և կ'ողողէին Սալմաստն ու Համատանը, ու բովանդակ Ատրպատ, և կը դիմէին դէպի Ասպահան։ Տարնապալից կը դառնար Հայերուն կացութիւնն ալ Էջմիածնի և Աղուանից կաթոլիկոսական վիճակներուն մէջ հաւատարմութիւն։ Նոյն, որ չարժումի դասակարներով վառուած էր, ինքն ալ զգաց որ արկածախնդիր կերպեր կրնան ինասասակար ըլլալ, ուստի մէկ կողմէն յատուկ պատուիրակով Մինասին կը յանձնարարէր դէպ Պետերբուրգ (Լէհ. Բ. 293), և միւս կողմէն 1719'ին անձամբ Էջմիածին գալով և խոհեմաբար լռելով ջանացաւ իր՝ Աստուածատուրի տեղ կը հաստատէր, և նորէն Շիրուանի նահանգին իրաւասութեան և իրաւունքներուն համար կաթոլիկոսական կոնդակ կ'ընդունէր Աստուածատուրէ։ Բայց այս անգամ Շիրուանցիները կը դժկամակէին յայտարարելով, թէ Ա. Էջմիածնի Եմ վիճակ, Գանձասար ալ անկմ ղպրոց (ՋԱՄ. 84)։ Նոյն 1720'ին կրկին Էջմիածին կը դառնայ այդ դժուարութիւնը վերջնելու, և Աստուածատուր երկրորդ կոնդակով առաջին որոշումը կը հաստատէ, և ժողովուրդին միտքը բաւեցնու համար կը հաւատայ, թէ նոյն վերջաբանն ալ ձեռ է նախագրուած, վասն որոյ և Ա. վերջանորոշեալ զկնի հայրական սէր ձեր։ Մանաւանդ թէ նկատի առնելով Գանձասարի աթոռին կարօտութիւնը, և ուզելով զայն զօրացնել Խաչէնի հակառակութեան նեղութեան դէմ, կենդանագոյն այսինքն Գանձակի վիճակն ալ նոյնի կը թողուր, և նախիջևանի, Ագուլիսի, Պափանի և Տիգրիսի վիճակներուն վրայ ալ ժողովարարութեան կոնդակ կու տար (ՋԱՄ. 84)։ Սակայն այս միջոցները բաւական չէին կացութիւնը բարւոքել։ Աղուանք ոտնակոխ եղած էին Լէզգիներուն անգութ արշաւանքին և անոնցմով յուզկանարութեանց երեսէն։ Ատչէն աւերակ կը դառնար, նոյնի Գանձասարը կը թողուր և ինք կը թաչուէր, Գանձակ ոտնակոխ կ'ըլլար, որչափ ալ վախճանագ վրայ իշխաններ իւր մասին, և Արցախի իշխաններ իրենց կողմերուն պաշտպանութեան միջոցներու ալ կը դիմէին։ Ատոնք գիրի մը մէջ կը պատմեն, թէ անեծք ձալով Յեսոսոսէ Դեղանց, 10 և 12 հազար մարդ Խոջալեանէ, պարեքաղ մարդ, և իրր հրամանատարներ կը յիշուին նոյն կաթոլիկոսը, Շիրուան Պարսկաստան կամ Պարտաւկին, Սարգիս Ջարպերդցի կամ Ջլաբերդցին, և Ծովինէի է Գանձասար կամ Գանձակեցին (ԱՉՆ. 341)։ Սակայն իրական արդիւնք մը յառաջ չգար, և երկրին աւերումը չդադարիր, դի զանազան կողմերէ Պարսիկներուն վրայ

յարձակողներ, թէեւ իրարու ոյժ կու տային իրենց համամիտ ուղղութեամբ, բայց իւրաքանչիւր ճիւղ առանձին փառնձին կը գործէր։

ԱՖՂԱՆՆԵՐՈՒ ՋՕՐԱՆԱԼԸ

1930. Զօրաւորագոյն կողմը Աֆղաններն էին։ Երբ Միր-Վէյս իշխանին մեռաւ, Միր-Ապտուլլահ եղբօրը կ'իյնար իշխանութիւնը, սակայն Միր-Մահմուտ հօրեղբայրը ապահովով իր յաջորդութիւնը ապահովից, և իսկոյն իրենները նոր պատերազմի քալցուց, և Կրմանի նահանգը գրաւեց 1721'ին։ Շիտակ Ասպահանի վրայ քալեց, և Կուլնապատի դաշտը բանակեցաւ, իսկ Հիւսէյին Քազաւոր Ասպահանի միջնաբերդը ապաւինեցաւ։ Այդ եղելութեան ամսաթիւ, կը ցուցուի Սոբբ խալն անցել՝ դա՝ ջոբոլն (ՏՅՈ. Ա. 226), զոր հայի երկրորդ չաթաթ օրուան վրայ մեկնելով կը դնենք 1721 սեպտեմբեր 30'ին։ Հայաբնակ Նոր-Ջուղան Ասպահանի պարսպապատ և ամրացած քաղաքէն դուրս կը մնար, և առաջին անգամ Աֆղաններէն ոտնակոխ ըլլալու սահմանուած էր։ Ջուղայեցիք կառավարութեան դիմեցին, որ զիրենք ալ Ասպահանի մէջ ընդունի, բայց մերժուեցան, զի պաշարեալ քաղաքին մէջ աւելորդ բերան աւելցնել կ'ըլլար, մանաւանդ որ նախապարսներ մտածելին, թէ Աֆղաններ սաղէխ են և ազի անոթ և վայրենի, որ աւելի աւարի հետամուտ են, և կրնան դէպ ի Ջուղայեցոց դառնալ (ՉԱՄ. Գ. 780)։ Այն օրերը մղուած Ջահրապատի ճակատամարտը ձախող եղաւ Պարսիկներուն, և Մահմուտ սկսաւ Ջուղայեցւոց սպառնալ։ Ջուղայի Պարսիկ կառավարիչն ալ փախաւ, և Հայեր յատուկ պատգամաւորութեամբ Մահմուտի գիմելեան դիմեցին առատ ընծաներով, և պատգամաւորութեան գլուխ էր Մարգար Բաղտասարեան Լղլորենց, հմուտ քաղաքական և մինչեւ Հնդկաստան ուղեւորած վաճառական։ Մահմուտ համեցաւ 70,000 թուման հարկի վճարման պայմանով, որուն կամայ ակամայ հնձարկուեցան Ջուղայեցիք (ՏՅՈ. Ա. 234)։ Ոմանք պատգամաւորութեան բանտարկուելուն և 40 տղիկ ալ տալուն պարագաները կ'աւելցնեն (ՉԱՄ. Գ. 781–782), սակայն սկզբնական պատմագիրներ այսպիսի պայմաններ չեն յիշեր։ Ջուղայեցիք թէպէտ ծանր բեռան ներքեւ մտած, բայց գոնէ ապատ մնացին այն սաստիկ սովէն որ Ասպահանի մէջ սիրեց, և 20,000 անձինք սովամահ մնան, և Շահ Հիւսէյին ալ վերջին նեղութեան մէջ ստիպուեցաւ անձնատուր ըլլալ, և իր ձեռքով արքունական նշանները իր գլուխէն հանելով Մահմուտին գլուխը դնել (ՏՅՈ. Ա. 232)։ Ասպահանի առումը նշանակուած է ժամանակակից Ստեփանոս յոսէբ Պէնոեկոփէ կէբլէն (ՏՅՈ. Ա. 234), որ կը հանդիպի 1722 մայիս 13'ին, և այդ ամսաթիւը կը նախապատանք օտարազգիներէ նշանակուած հոկտեմբեր 12 ամսաթիւին, որոնք 600,000 անձանց կոտորած ալ կը յիշեն (ՏՅՈ. Ա. 235)։ Մտոյգ է որ քանի մը ուրբաթներ մանաւանդ փոճկալին ընկել տուած է Մահմուտ Պարսիկներու վրայ, բայց ընդհանուր ջարդ եղած չէ։ Իսկ Ջուղայեցիք թէպէտ կոտորածէ զերծ մնացին, սակայն Աֆղաններուն հարստահարութիւններէն չազատեցան, որոնք չարունակ ղրմա, չկերակուր, զինի և ըղի և ըայլ բաղմ ինչ պահանջէին։ Պարսիկներուն թըշնամութիւնն ալ գրգռուած էր վրանին, իբր թէ Հայ հմախոհ ընդ Աֆղանից լինելով։ Հաոոյն ընծաներ ընաս երկրին Պարսից, և նոյն իսկ Լղլորենցի ձեռօք պայմանաւորեալ տուգանքին վճարումն ալ նորանոր նեղութեանց աւիթ ընծայեց, և հնգեակն անվերջանալի Հայոց նահատակութեան պատճառ եղաւ (ՏՅՈ. Ա. 240)։ Ծիշնալ հինգերը Ջուղայի գլխաւորներէն էին, և կը կոչուին Գալստան որդի Խաչիկի երեսնամեայ, Մանուկ որդի խոճա Մելքումի՝ որ 9 ամիս ալ չարչարանք կրեց, Սարգաթ Խալդարեան որդի Գրիգորի՝ որ նոյնպէս առաջ է չեռն գոհել ըզանձ, Փանոս կրտսեր որդի Խոջամալի, և Յարութիւն որդի բժիշկ Մինասի։ Հինգին ալ գերեզմանները կը տեսնուէին Ջուղայի եկեղեցիներուն մէջ (ՏՅՈ. Ա. 229—231), և թուականը ամէնուն ալ 1722 տարին է, իսկ ամսաթիւերը Ջուղայեցւոց տոմարով ցուցուած են. Փանոս՝ նախա 1'ին = յունհա 19'ին, Յարութիւն՝ նախա 24'ին = յուլիս 12'ին, Մանուկ և Սարգաթ դամա 18'ին = հոկտեմբեր 17'ին, իսկ Գալստանին ամսաթ-

թիւը յիշուած չէ։ Ասոնց տապանագիրներու վրայ իրարու նահապետ յիշատակուիլը կը ցուցնէ, թէ կրօնափոխութեան պայման ալ առաջարկուած է կեանքերնին ազատելու համար։

ՀԱՑԵՐՈՒՆ ԻՂՁԵՐԸ

1913. Մահմուտի յաղթութեամբ և Պարսից Թագաւոր հռչակուելովը խաղաղութիւն չհաստատուեցաւ։ Թահմասպ կամ Թահմազ, Հիւսէյինի որդին, հօրը գահը եւ հրաժարիլը լսելուն, զինքն Թագաւոր հռչակեց Մազանդարանի մէջ՝ ուր կը գտնուէր. և Աստրապատական անցաւ, Թավրէզի մէջ կեդրոնանալով Մահմուտի վրայ քալելու համար։ Այն տեղ՝ անգամ մըն ալ Պարսիկներ Հայերու դէմ գրգռուելով Թահմազը համոզած էին Հայերը կոտորել, իբրեւ Աֆղաններու օգնողներ, եթէ իր մտերիմն եզող Յովհաննէս ֆամիլով կամ ժամադործ, Թահմազին դիմելով կոտորածին առջեւը չառնէր։ Միայն թէ Թահմազ արքեպիսկոպոսէն փոխել էր զանոնք, և լուրջ ձեռնարկ մը չկրցաւ կարգադրել։ Ինքն աստուանդ կը դիտէր աւելի իրէնները ծանրանալով, ինչպէս Աստապատի մէջ հայազդի իշխանաւոր Աստուածատուրին, և Նախիջեւանի մէջ Հայոց կաթողիկոս Աստուածատուրին վրայ (ՁԱՄ. Գ. 782), իսկ երկիրը անտէրունջ խռովութեանց մատնուած էր։ Պատերը չատ յոյժող երեւցաւ Օսմանցոց՝ Պարսիկներուն վրայ զօրանալու և անոնցմէ մաս մը գաւառներ գրաւելու։ Շիրվանի Սիւնիի մահմետականներն ալ Լեզգիներուն արչաւանքներէն նեղուած (§ 1929), Շիի Պարսիկներուն անհնազանդ, Օսմանցոց դիմեր և զանոնք հրաւիրեր էին։ Սուլտան Ահմէտ Գ՛ի հրամանով և եպարքոս Տամատ Իպրահիմ փաչայի նախաձեռնութեամբ, Տավութ խան այն կողմերու զօրավար և կուսակալ նշանակուեցաւ, և Պարսից տէրութեան յարձակումները սկսան (ԺՈՒ. 330)։ Երբ Սիւնիի մահմետականներ Օսմանցոց կը դիմէին, Հայեր ալ Ռուսներուն դիմելու սկսած էին։ Աստրախանի Աֆղաններէ գրաւուելէն քիչ ետքը, 1722 դեկտեմբեր 20՛ին, Մինաս Փերվազեան, Հաղբատու առաջնորդ և վրաստանի արքեպիսկոպոս, ընդարձակ դրութեամբ մը Մինաս Տիգրանեան արքեպիսկոպոսին կը դիմէր, որ Պետրոս ձարը համոզէ Հայաստան արչաւել։ Շտապով և խռովով գրած նամակն Շամախի հասաւ, կը գրէր, դէպի Նոր անունն լինի, և ոչին պէտք հանի, հարիւր հազար Հայ ազէ զինուորէ առ ոչ նորա կոտ գամ։ Կը յաւելուր ևս, որ եթէ դինի է մտքի ունեն եկէ ու, ընդ ազէն քնաջինչ կ՛անեն, խզըլպաշն կոտ զբռնայ, ընդ ազին կոտ փլցնէ, և անհրաժեշտ կը նկատէր որ Եթեան չեռ բերեմ։ Արցախեցոց նախապատրաստութեանց և ձեռնարկութեանց ալ ակնարկելով յոյս կուտար, և կ՛ըսէր, Ղաբպաղան և խափանոս չերկիր դնաքանել Հայն քաջութեամբ կը կռուին, բայց գլուխ և պէտ կանէն, Ասպատ առաջնորդ որ ընտրուեր Շամախի հաստ (ՁՀՆ. 337)։ Տիգրանեան անհետեւանք չմոռաց Փերվազեանի նամակը, ինչպէս իր գրութիւնները կը վկայեն, և ահա եսայի կաթողիկոսն ալ 1723՝ին սկիզբները ուղղակի Պետրոսի կը գրէր, որ փութայ գալ իր բանակով, և մինչեւ որ ինքն հասնի, այն ըստ տրջկանց, զորս յիշեցինք (§ 1929), յաջող յաջող ընտրել և կռիւ չնորհէ, որով կ՛ըսէ, դէ է ըզրումեներ ասմէ առնասէ զջրումէն, կոպեմէ զրահ և զնամարթեմէ ընտրոյն (ՁՀՆ. 341)։ Յակէնի հակաթոռ ներսէսն ալ նմանօրինակ գիր կը գրէր 1723 մարտի առաջին օրը (ՁՀՆ. 344)։ Պետրոս ձար արդէն հանդարտած էր ուրիշ պատերազմներէն, առիթը յարմար էր, հրաւէրներն ալ նպաստաւոր էին, պէտք չէր ալ ապարէզը Օսմանցոց թողուլ. ուստի 1723 մայիս 3՛ին, Հայոց լարնկամական յայտարարութիւն մը ուղղելով (ՁՀՆ. 353), Ռուս բանակովը կը յառաջանար, հետզհետէ կը գրաւէր Թէրէք և Տէրպէնտ և Բաքու. բայց իրեն հետ պառնալէն ետքը Ռուսներ չը տարածուեցան դէպի Կիլան և Մազանդարան։ Այսպէսով Պարսկաստանի ներքին խռովութեանց վրայ արտաքին արչաւանքներն ալ աւելցան, մինչ ինքզինքին Պարսից չան անուանողներ, Մահմուտ և Թահմազ, աւելի իրարու՝ քան թէ օտարին դէմ կռուելու կը նայէին։

1932. Երկու տէրութեանց միանգամայն Պարսկաստանի վրայ յարձակիլը, երկուքին մէջ մրցումի և թշնամութեան վտանգ կը

ապառնար, սակայն գործը դիւանագիտական բանակցութեանց ենթարկուեցաւ, և

ՕՍՄԱՆՑԻՆԵՐ ԵՒ ՌՈՒՍԵՐ

Տամատ Իպրահիմ կպարտոս ու Ենթլուչֆ ուսական դեսպան կրցան հաստատել Օսմանեան կայսրութեան հետ, Գաղղիական դեսպան Պոննաք մարքիզին (Jean-Louis d'Usson, marquis de Bonnac) միջամտութեամբ։ Որոշուեցաւ որ երկու տէրութիւններ որոշակի չափով և սահմանով գաւառներ իւրացնեն, և Թահմազի ալ իբր օրինաւոր ժառանգի թագաւորութեան սահման մը թողուի, պայմանով որ մնացեալ հրաժարի, իսկ եթէ դժկամակի այդ պայմանը ընդունիլ, պայմանին հաւանող իշխան մը՝ թագաւոր անուանուի։ Այդ պայմանագիրը կնքուեցաւ 1724 յունիս 13/24ին, և Պետրոս ձար զայն վաւերացուց 1725 յունուարին, և կ-Պոլիս բերուեցաւ յատուկ պատգամաւորի միջոցաւ (ԺՈՒ· 330)։ Սակայն 1725 յունուար 17/28'ին Պետրոս կը մեռնէր 53 տարեկան, չարաչար աչխատանքներու և անողոք հիւանդութեանց ներքեւ, և կայսրութեան կը յաջորդէր կատարինէ Ա իւր այրին (ՇՕՐ· 243), որ պայմանագիրը կը հաստատէր։ Այդ դաշնագիրով Տէրպէնտ, Բաքու, Կիլան, Մազանդարան Բասրայ և Աստարապատ Ռուսիոյ, իսկ Երեւան և Թավրիզ իրենց նահանգներով կը մնային Օսմանցոց (ՇՕՐ· 289), որոնք իրենց թողուած մասերուն տիրապետութեանը հետեւելով, Երեւան քաղաքը գրաւած էին 1714'ին, և հետզհետէ գրաւեցին Քարապաղ, Մարագա, Ուրմիա, Մուգան, և վերջապէս 1725 յուլիս 21'ին Թավրէզ ալ իրենց անձնատուր կ'ըլլար (ԺՈՒ· 331)։ Իրաւ խնդրոյն լուծում կը տրուէր, բայց ոչ Հայոց բաղձացած և դիտած կերպով. անոնք քրիստոնեայ տիրապետի իշխանութեան ներքեւ մնալ կ'ուզէին, մինչ այժմ մէկ մասնատականէն միւս մահմետականին իշխանութեան ներքեւ կ'անցնէին, պի Արցախ և Երեւան և Ատրպատական, որ աւելի հայաչատ նահանգներն էին, Օսմանեան տիրապետութեան կը տրուէին։ Այդ միտքով մէլիքներէն իւր գլխաւորներ 1724 հոկտեմբեր 18'ին, տակաւին դաշնագիրը չվաւերացուած, Պետրոսի կը դիմեն, թէ Թուրքոց ընթացքէ զգոն են եւս Թուրվեղ, Նախջաւան, Եբեան, Թիֆլիս, Գորլաս, Ղազախ, ուսկից կ'աղաչեն որ վտան Գրիգորի էրոյն, և որքէ հալ խոնէն մեզ օգնութեան հասնի, և զնեզ ի նահանջ ներթեւ պահե (ՍԶՆ· 381)։ Սակայն Պետրոս նոյեմբեր 10'ին դաշնագիրը վաւերացնելուն առթիւ պատասխան կու տայ, որ երէք Օսմանցոց իշխանութեան ներքեւ չեն ուզեր մնալ, Ռուսական բաժին գաղթեն, և կիլան, Մազանդարան, Բաքու, և այլ ինչ փեղ որ երեսնց ընդունելի լինի, իրենց բնակութեան տեղ պիտի տրուի (ՍԶՆ· 393), և ըստ այսմ ալ կը հրամայէր այն կողմերու կուսակալին նոյն նոյեմբեր 10'ի պաշտօնագիրով (ՍԶՆ· 395)։ Արեւելեան գաւառներու մէջ և իշմիածնի չուրջը կատարուած եղելութիւնները, մեզ հասուցին մինչեւ 1725 տարին, որ Աստուածատուր կաթողիկոսի մահուան թուականն է, և այս չրջանը չփակած, պէտք է որ վերջին տարիներուն մէջ ուրիշ կողմեր կատարուած գործերն ու դիպուածները քաղենք, պատմական ժամանակագրութիւնը պահելու համար։

ՇՂԹԱՅԱԿԻՐ ՑԵՐՈՒՍԱՂԷՄ

1933. Ծորչափ Գրիգոր Շղթայակիր կ-Պոլիս կը մնար, Յովհաննէս Կոլոտի գործունէութիւնն ալ գլխաւորապէս Երուսաղէմի պարտքերուն և պէտքերուն չուրջը կը դառնար (§ 1927)։ Արդէն գրեցինք, թէ կ-Պոլսոյ և գաւառներու մէջ բացուած հանգանակութիւնները այնչափ բան արտադրած էին, որ թէ պարտքերը վճարելու կը բաւէին, և թէ նորոգութիւններ ընելու ու նոր կալուածներ գնելու կը նպաստէին, ուստի այլեւս Շղթայակիրին կ-Պոլիս մնալը անհրաժեշտ չէր, և պէտք էր որ աթոռին ներքին և արտաքին բարեկարգութեան ձեռնարկէր տեղւոյն վրայ աչխատելով։ Շղթայակիրին կ-Պոլսէ մեկնելուն ամսաթիւը ճշդուած չէ, բայց մերձաւորապար պէտք է դնել 1720 ամառուան մէջ, զի յանկարծ կը տեսնենք զայն Բերթիա հասած, ուր հոգեւորականը էրկի ընդունելութենէ ետք քաղաքացիներէ եւս վտան ըլլալ Ալէմայ։ Իսկ 1721 փետրուար 12'ին Երուսաղէմ կը մտնէ, ինչա ֆառւ և ընդունելութեամբ, իրեն տեղ ունենալով քաղաք պե-

բռնական ախտաւոր (ՀՆՆ. 148)։ Հնար չէ ըսել որ Կ-Պոլիսէ Բերթա անգործ և ապարդիւն անցած ըլլայ Շղթայակիրը՝ սուրհանդակի ոճով, և պէտք է ընդունիլ թէ հետզհետէ ճանպուն վրայ եղող քաղաքներ հանդիպելով, նպաստներ արդիւնաւորած է յօգուտ Երուսաղէմի։ Երիւղոր Շղթայակիրի իւր աթոռը հասնելէն ետքը առաջին հինգ տարիներու մէջ ցուցած գործունէութիւնը կրնանք նկատել իբր Երուսաղէմի կատարեալ վերակենդանութիւն, որուն մանրամասնութիւնները մեր պատմութեան չրջանէն դուրս կը մնան։ Նա բոլոր պարագաները վճարելով, ընթացէր Տէրունական պտոյտել գներ է Հռոմայեցւոյ, և այս կերպով բոլոր էրաս եղեալ էրաց ազատութիւնը կը հոգար, ոչ միայն չարժական կարասիները և սուրբ սպասները, այլ և անչարժ կալուածներ ալ, ինչպէս Յոպպէոյ Տալալայ, Ռէմլիոյ պատն, և ղազարեան և գներ է Հռոմ տրէպ (ՀՆՆ. 151)։ Այդ բոլոր գործողութեանց մէջ Շղթայակիրին օգնականներուն կարգին առաջին տեղը կը գրաւէ Յովհաննէս Երուսաղիմացի կամ Հաննա վարդապետ փոխանորդը. բայց յիշատակութեան արժանի են նաեւ Դաւիթ Ալարկերացի լուսարար և Յակոբ Ուռհայեցի վերակացու վարդապետները (ԱՍՏ. Բ. 7)։ Նչանաւոր նորոգութիւններ ալ կատարուեցան Ս. Յակոբայ մայրավանքին տաճարին մէջ՝ զորս մանրամասնօրէն կը յիշէ Հաննա (ՀՆՆ. 153), և վերջապէս 1725'ին կ'աւարտին Յոպպէի վանքին ու եկեղեցւոյն չինութիւնները, որպիսիներ Շղթայակիրին ամբողջ կեանքին մէջ չարունակեցին։ Իսկ նորքին բարեկարգութեանց մասին բաւական ըլլայ յիշատակել Շղթայակիրի յատուկ ջանքերը է կրթեսորել ղՀնդ Դաբան եղբօր, զոհոհոյ է նոգանէ ոյբով եբաբելով, և չկարենալ ըսի արքանոյն պատուհով (ՀՆՆ. 151)։

1934. Մինչև 1725 տանող հնգամեայ մէջ Յովհաննէս Կոլոտ պարբերաբար գործունէութեան ալ մէկ մասը նորէն Երուսաղէմի նուիրուած էր, չարունակելով անոր օգտին բարձած հանգանակութիւնները, և մանաւանդ քաջալերելով կարող և բարեպաշտ դասակարգին ուխտագնացութիւնը։ Կոլոտի այդ մասին ստացած յաջողութեան կարգին պիտի յիշենք Երուսաղէմի Ս. Յարութիւն տաճարին նորոգութեանց համար պետական արտօնութիւնը։ Առաջին քայլը Թագաւորական Պօննաք դեսպանն էր առած, արտօնութիւնը ստանալով Լատինացւոց մասին համար (ԺՈՒ. 329), որուն հետեւեցան Յոյներ և Եւ դրան յարտնոսա այլոց ազեց երեսոնէէց, այսինն Յառնաց և Լաբինացոց, իսկ Հայոց մասին համար բան մը ըսուած չէր։ Կոլոտ յաջողեցաւ յատուկ հրամանագիր ստանալ, որով կարենար կատարուիլ նորոգութիւնն քանէ ազեր դերց (ՀՆՆ. 146), և գործին ձեռնարկեց Հաննա՝ դեռ Շղթայակիրը չնասած։ Կոլոտ մայրաքաղաքի եկեղեցիներուն վրայ ալ յատուկ մտադրութիւն դարձուց, և հրկիզեալ մայրեկեղեցւոյն չինութենէն ետքը (§ 1927), ձեռք զարկաւ Սամաթիոյ Ս. Գէորգ, և Օրթաքէօյի Ս. Աստուածածին եկեղեցիներուն։ Բայց Կ-Պոլսոյ պատրիարք եղողին ժառանգական աշխատութիւնը՝ կաթոլիկական կուսակցութեան խնդիրն էր, որ գայթակղութիւն եղած էր և էր և պիտի ըլլար տակաւին Հայութեան ծոցը։ Կոլոտ ոչ բաւեն ընդդիմացող մըն էր Եփրեմի և Աւետիքի տեսակէն, և ոչ անձնական չահու տեսակէտէն զիջանող մը Գալուստի և Մարտիրոսի նման։ Նա կ'ընդունէր թէ լաւ բաներ կը գտնուին օտար եկեղեցիաց մօտ, մանաւանդ բարեկարգութեան և կարգապահութեան տեսակէտէն, զորս իւրացնել չէր խղճար (ԿՈՒ. 58)։ Բայց այս պատճառով չէր զիջաներ երբեք Հայադաւանութեան սկզբունքէն չեղիլ, և իւր եկեղեցին օտարին հպատակեցնել, և կը յուսար որ քաղցր կերպով և համոզիչ միջոցներ պիտի կարենան համաձայնութիւն գոյացնել։ Ուստի սկսաւ կաթոլիկական կուսակցութեան գլխաւորները իրեն մօտ հրաւիրել, անոնց ցուցնել իրենց օտարասիրութեան վտանգները, պետական չրջանակներուն կասկածները, յատուկ եկած և տակաւին հաւանական երեւցող հետեւանքները, որոնք ամէնքը հետեւանք էին իրենց ազգային ուղղափառ եկեղեցին առնարգելուն, և օտարազգի եկեղեցիներ յաճախելուն։ Իրրև առաջին գործնական

ԿՈԼՈՏԻ ՋԵՌՆԱՐԿՆԵՐԸ

քայլ կ'առաջարկէր, վի ֆռնէ յառաջ փծէց և կէբուկէց դ' ղանց ապաջին ֆալ չեկեղեցի Հայոց։ Հռոմական պատրիարքին իմաստուն խորհուրդները իրենց արդիւնքն ունեցան, զի հռոմէականներ ալ կը պատմեն թէ ազգ ֆայէնի խոսքացան չանչն առնալ զինքէր պատրիարքութիւն, ինչ որ խափանած կ'ըլլար զժգոհ պատահարները։ Սակայն կաթոլիկացեալներուն իսկապէս թշնամիները, զորս ֆռհանայի էրեանց կը կոչէ հռոմէական պատմագրողը, այսինքն են լատին եպիսկոպոսը, լատին արեղաններ, լատինաց մօտ կրթուած Հայազգիներ, և լատինէ չհասուած եկեղեցականներ չէին համակերպիր, և ազգայիններ ապեքէլալ լինէին ֆոպութել զհոգոտն (ՁԱՄ. Գ. 776)։ կ'արժէ անգամ մըն ալ դիտել տալ, թէ որոնք էին թշնամութեանց և հակառակութեանց և հալածանաց բուն սկզբնապատճառները։ կոլոտ իւր խոհականութեամբ տակաւին սպառէ պեռնել զկոպութն անհամաձայնութեանց, որոնք նոյնիսկ կաթոլիկամիտ կուսակցութեան ծոցը կը յուզուէին։ Երբ իւր խոհականութիւնը ակարութիւն կարծուելով, իրեն դէմ կը դրգռուէր նախանձայոյզ կողմը, նա նորէն կը յորդորէր սպասել՝ ինչէ ֆոցո՞ ասէ՝ ելը էրացդ ասանց վրդովման ազէն։ Յատուկ պատուիրակ մըն ալ կը յղէր Լատին եպիսկոպոսին որ զսպէ իրենները կրօնամոլ ընթացքը, բայց այդ միջոցն ալ անօգուտ կը դառնար (ՁԱՄ. Գ. 776)։

ԿՈԼՈՏԻ ԳՈՐԾԵՐԸ

1935. Սակայն երկայնամտութիւնն ալ իրեն չափ ունի, և կոլոտ ալ ստիպուեցաւ յայտարարել, թէ լաս արդ չէ ֆամանակն։ Երբ տեսաւ որ իւր խոհականութիւնը գայթակղութեան առիթ պիտի բլլար, և ինքն ալ պարտաւոր պիտի սեպուէր կառավարութեան աչքին, իբր օտարներու ձեռնտու և օտարասիրութեան հովանաւոր. երբ տեսաւ, կ'ըսենք, որ օտարամիտներէն ալ ոչ ոք ե որ լսէ նմա, և իրենները խմբովին բառնալ պատրաստ էին ֆոյթ, հարկադրուեցաւ պէտք եղած բացատրութիւնները տալ կառավարութեան, թէ կաթոլիկութեան հետամուտ եղողներ ունին էրեանց է ֆռհանալ առաջնորդ յղէր Ֆրանկոյ, և ներքին ընդմանեն մ, և նմա հնազանդին։ Այդ հիմամբ կառավարութիւնը հրամայեց այդ կուսակցութիւնը զսպել և ջնջել, գլխաւորները ստիպել և պատժել, մինչեւ իսկ ոստիկանական հսկողութիւն հրամայեց Լատին եկեղեցիներուն դուռները, հոն մտնողները քննելու, և գաւառներն ալ չրջաբերականով հրաման տուաւ կուսակալներուն՝ միեւնոյն զգուշաւորութիւնը ձեռք առնելու (ՁԱՄ. Գ. 776)։ Այդ եղելութեանց թուական կը ցուցուի 1720 տարին, որ է ըսել Շղթայակիրին կ-Պոլիսէ մեկնելու միջոցին, երբ ազգը երուսաղէմի տաղնապալից իրդիրէն չունչ առնելով, կրցաւ իւր ներքին գործերուն մտադրութիւն դարձնել։ Ժամանակակից յիշատակներ կ-Պոլսոյ մէջէն հալածուածներու կամ բանտարկուածներու կամ պատժուածներու անուններ յառաջ չեն բերեր, և մեր կարծիքով ասիկայ կը ցուցնէ թէ կոլոտ խստութեամբ չմղեց պետական հրամաններուն գործադրութիւնը մայրաքաղաքին մէջ, և այդ պարագային ալ գործնական կերպով փայլեցուց իւր ամրիչ և խոհական ընթացքը։ Հռոմէականք քանի մը եկեղեցականներու անուններ յառաջ կը բերեն, իբր այդ առթիւ բանտարկուած (ՁԱՄ. Գ. 777), բայց ամէնքն ալ գաւառներու կը պատկանին, և անոնց մէջ ալ տանջուածի կամ պատժապարտի յիշատակ չկայ, և բոլորն ալ աւելի կամ նուազ տուգանքով ազատուած են։ Վեց նշանաւոր Բերիացիք իբր թիւսպարտ կ-Պոլիս բերուելով, 4 օրէն տուգանքով մը ծողուած են։ Քառասունց կարնեցիք 2000 դահեկանով, և իբր հարիւր կարնեցիք ալ 2500 դահեկանով ազատած կ'ըսուին։ Երեք կարնեցի քահանաներու վրայ աւելի խըստութիւն ցուցուեր է, բայց վերջապէս անոնք ալ դրամով ծողուեր են։ Երկու հարիւր իննսունհնգեց Բասենցիներու նեղութիւն տրուեր է, մինչեւ որ 1200 դահեկան վճարեն։ Երկու Եւդոկիացի քահանաներու համար 1500 դահեկան վճարել հարկ եղեր է։ Նմանօրինակ եղելութիւններ կրկնուեր են Անկիւրիա, Ամիդ, Երզնկա, Բաբերդ և ուրիշ քաղաքներ, որոնք կը ցուցնեն թէ եպարքոսական հրամանը առիթ ընծայեր է կուսակալներուն քիչ մը դրամ չորթելու, որովհետեւ տուգանքի ենթարկուողներուն մէջ, ինչպէս ի կարին, կաթոլիկութեան

միտեալ չեղողներ ալ եղեր են։ Պահ մը ձերբակալութիւններ և տուգանքներ թուլցեր են, երբ կաթոլիկութեան միտեալներուն գլխաւորներ, այլեւս լատինական թեւադրութիւններուն չանսալու և օտարներու չհպատակելու համար կառավարութեան առջեւ յանձնառու եղեր են։ Բայց Լատին եկեղեցականներուն սադրանքները նորէն միտքերը կը պղտորեն, և պատրիարքարանի դէմ գրգռուելու առիթներ կը ստեղծեն, որով 1723'ին սկիզբները նորէն մանաւոր խըստութիւններ տեղի կ'ունենան (ՉԱՄ. Գ. 779)։ Ինչ ալ ըլլայ յառաջ բերուած պարագաներուն իսկութիւնը, յայտնի կերպով կը տեսնուին, մէկ կողմէն Կոլոտ պատրիարքին խոհական չափաւորութիւնը, և միւս կողմէն Լատին և լատինամիտ եկեղեցականներուն մոլեռանդ ջանքը, և նոյն իսկ իրենց հետեւողներուն վնասելու չափ առաջ նետուիլը։

ՄԽԻԹԱՐ Ի ՎԵՆԵՏԻԿ

1936. *Մխիթար Սեբաստացի վարդապետը, արդէն հռոմէականութեան հպատակած և արբանեայր կոչուած, Մխէռնի մէջ կը պտնուէր համեմատաբար խաղաղիկ վանականութեան մը գլուխը* (§ 1893), *որ տակաւին ուսումնականութեան հետեւող մարմին մը չէր կրնար ըսուիլ, քանի որ այդ նպատակին չէին նպաստեր ոչ Պետրոպոլէսի միջավայրը, և ոչ ալ իր հետեւողներուն յառաջացեալ տարիքը* (ՄԽԻ. 250)։ *Բայց այդ պիտի չըլլար Մխիթարի վերջնական դադարը, և անգամ մը դէպի Արեւմուտք քայլերը ուղղած, պիտի մղուէր մինչեւ անոնց կեդրոնը։ Օսմանեան բանակին արշաւանքին առաջին շրջանը չարժման մէջ դրաւ Մխիթարը, որ Օսմանեան երկրէն փախստական՝ չէր կրնար Օսմանցոց պաշտպանութեան վստահիլ։ Առաջին գործն եղաւ իրեն հետ եղող ինը գպիրները քահանայ օծել տալ Լատին եպիսկոպոսի ձեռնադրութեամբ* 1714 *դեկտեմբերին* (ՄԽԻ. 256), *և ետքէն վենետկեան կուսակալին հետ բանակցիլ վենետիկ փոխադրուելու միջոցներուն վրայ։ Իրենները վեցը՝ Ղազար Ակնեցի փոխարքայի գլխաւորութեամբ Մէռոն խողով, ինքն տասնեւմէկ ընկերներով* 1715 *մարտ* 1'*ին Մէռոնէ կը մեկնի՝ տակաւին Օսմանեան արշաւանքը չսկսած* (§ 1922), *և ծովագնաց ճանապարհորդութեամբ ապրիլի սկիզբը Վենետիկ կը հասնի, և արգելարանի քառասնօրեան լրացնելով մայիսի կէսին քաղաք կը մտնէ, և յատուկ վարձուած տուն մը կը հաստատուի* (ՄԽԻ. 272)։ *Վենետիկ չատնոց Հայ գաղթականութիւն մը ունէր՝ որուն գլուխը կը գտնուէր այն ատեն Խաչատուր Կարնեցի վարդապետը, նա ալ կ-Պոլիսէ փախստական։ Վենետիկ* 1512'է *սկսելով հայերէն տպագրութեանց տեղը եղած էր ընդհատ չարունակութեամբ. ուսումնական զարգացման միջոցները ունէր առատապէս՝ գարուն պահանջին համեմատ, Արեւելքի հետ յարաբերութեանց գլխաւոր կեդրոնն էր, և օտարներն ընդունելու և պաշտպանելու աւանդական զգացում մը կը տիրէր։ Վենետիկ ուրիշ լատագոյն միջավայրն էր, ուր ուսումնական զարգացման հետամուտ Արեւելցի մը, և իւր ազգին համար աշխատելու մտադիր Հայազգի մը, կրնար ամէն դիւրութիւններ գտնել իւր նպատակին հետեւելու համար։ Եթէ Մխիթարի ձեռնարկը այդ ճիւղին վրայ ամփոփնք, պէտք է ըսել, թէ այդ տեղափոխութեամբ իսկապէս նա իւր նպատակին ծառայած կ'ըլլար, և այդ վայրկեանէն Մխիթարի ուսումնական ձեռնարկը տիրապէս իւր հիման վրայ կը հաստատուէր։ Կ-Պոլիսէ և Զմիւռնիայէ փախուստներու առեն, Մխիթար վարանոտ և անորոշ էր տակաւին, իսկ Մէռոնի մէջ հաստատուիլը կարծես թէ իւր նպատակին ուրացումն էր։ Միւս կողմէն Արեւմտեան գետնին վրայ, և Լատին կրօնամոլութեան չրջանակին մէջ, հնար չէր անկախ դիրքով մը տեղական յարաբերութեանց հետ չփուիլ և անոնցմէ օգտուիլ, և պէտք էր ըստ ամենայնի առնոնց համակերպիլ. և Մխիթար՝ որ Մէռոնի մէջ լոկ անձնական պաշտպանութեան համար հռոմէականութեան հպատակած էր, այստեղ տեղական եկեղեցականութեան տարրերն ալ ստանձնելով, և գէնոփնէրս, կոչէնէրս և գլէոբընէրս նէրն ս յէօք անոնց նմանցնելով* (ՄԽԻ. 275), *ստիպողական պայման մը կը կատարէր, որուն արդարացումը միայն ուսումնական զարգացման փաստին*

վրայ կը կայանայ։ Մեքոն մեսցած հօմնեբէն մին Տոն վախճանած էր, երկուքը պաշարումէն առաջ հեռացած, և չորս Տաճկաց ձեռքը գերի իյնալով, Հայերու կողմէն փրկանքով ազատուած էին, և իրենց ներուն միացած։ Մխիթարի և ընկերներուն վիճակը Վինետիկի մէջ լաւ էր չնորհիւ այն արգահատանքին, զոր Պեզոպոնէսի արկածեալ Հայազգիները կր ներչնչէին, ոչ միայն իրենց համազգիներուն, այլ աւելի օտարազգիներուն, որոնք ամէն կերպով կը փութային անոնց պէտքերը հայթայթել։

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ ՎԱՆՔԸ

1937. Բայց գլխաւոր պէտքը հաստատուն բնակավայր մըն էր, վանական միաբանութեան և ուսումնական աշխատութեան յարմար տեղ մը, ուր կարենային ամփոփուիլ Մեքոնի փախստականները, և կրթական աչքերնին կերտուիլին և յաջողութիւն կապմել, և ուղղական հաստատութեան ձեռն առնել։ Այդ բանը մանաւանդ ձեռքով ըլլալու գործ չէր, Վինետկան հանրապետութեան իշխանութիւնը պէտք էր՝ որ թէ տեղը տար և թէ պետական հաստատութիւնը չնորհէր։ Երկու տարիէ աւելի պէտք եղաւ, որ այդ կնճիռը լուծուէր. ոչ միայն յարմար տեղ մը գտնուէր, այլեւ պետական օրէնքը յարգուէր, որ կ'արգիլէր քաղաքին մէջ նոր վանական հաստատութիւն մը աւելցնել։ Վինետիկ չհեռանալու նպատակով, սահպղական համակերպութիւն գտնելու քաղաքին չբնակիչներուն մէջ քարոզելու և խոստովանութիւններ ընդունելու, և անոնց մէջ տարածուելու և յարմարագոյն երեւոյթ Սուրբ Ղազար (San Lazzaro) անունը կրող փոքրիկ կղզեակ մը, քաղաքէն հեռու հինգ քանի ուրիչ կղզեակներ։ Այդ կղզեակը 810'էն առաջ անբնակ նկատուած, այն տարին տրուած էր Բենետիկտեան կրօնաւորներու, որոնք վերջապէս զայն լքած էին չատ մը անյարմարութիւններու համար, և 1182'ին նուիրած էին Լէոնե Պաոլինի (Leone Paolini) ազնուականի մը, որ մէկը եկեղեցի մը և ուրկանոց մը կր հաստատէր բորոտներու համար։ Այդ առիթէ է որ կղզեակը Սուրբ Ղազար անունը կր առնայ, աղքատ և բորոտ Ղազարոսին աւետարանական առակէն (Ղկ. ԺԶ. 19), որ Լատիններէն գոյութիւն ունեցող անձ մը և սուրբ մը նկատուած է, և Պաղեստինի Հիւրընկալ ասպետներուն ալ իր անունը տուած է։ Չորս դար ետքը, երբոր բորոտներ նուազեցան, մոռացիկներու բնակութեան յատկացուեցաւ, և 1660'ին կրետէէ փախչող Դոմինիկեաններուն տրուեցաւ, որոնք այլեւս փոխադրուելէ ետքն ալ իրենց ձեռքը պահած էին զայն, գրեթէ ամայի վիճակի մէջ։ Այդ կղզին է որ չատ մը օրինական քննութեանց և պայմանագրութեանց ենթարկուելէ ետքը 1717 օգոստոս 26'ի վճռով Վենետկոյ Ծերակոյտէն չնորհուեցաւ Մխիթարի Հայր Աբբահօր քահանայապետական օրական պատարագի մը մատուցման, և տարեկան ուխտը լիտր մոմի նուիրման պայմանով՝ յօգուտ Դոմինիկեանց (Մխի. 298)։ Մխիթար իրենցներով ստացութեան կր մտնէր 1717 սեպտեմբեր 8'ին (Մխի. 301), և պէտք եղած նորոգութիւններ կատարելով բնակութիւնն ալ հոն կր փոխադրէր 1718 ապրիլին վերջը (Մխե. 303)։ Այս է Սուրբ Ղազարի վանքին հաստատ սկզբնաւորութիւնը, որ հետզհետէ նորոգութիւններով և չինութիւններով վայելչացաւ, և ծանծաղուտները լեցնելով ընդարձակուեցաւ, բայց աւելի պայծառացաւ գրական արդիւնքներով։

ՄԽԻԹԱՐԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

1938. Մենք առիթ ունեցանք Մխիթար Աբբահօրին յայտնել իւրաքանչիւր իր հայրենակից եկեղեցւոյն սիրատար, բայց և ուսումնական կեանք զարգացման բուռն հետապնդող մը, որ երէկ առաջին կէտը երկրորդին կր գոնէր, բայց և ասկայսիկ գժուարին կացութեան մէջ կր գտնուէր, զի չէր կրնար առաջինին խիղճը արմատապէս սիրտէն քանդել։ Այդ է պատճառը, որ Մխիթար չատախտ կր տեսնուի ինքն իրեն հակասող դիրքերու մէջ, մերթ իր անկեղծ հոգեպատրան զգուած, և մերթ իր հայադաւան ամբաստանուած պապութեան առջեւ։ Անդառին սկիզբէն՝ երբ 1717 սեպտեմբեր 20'ին վենետիկ հաստատուելուն համար Հռոմի չնորհաւորութիւնները կ'ընդունէր (Մխի. 305), միւս կողմէն կ'ամբաստանուէր թէ իրենները ուղիղ հռոմէականութիւն չեն քարոզեր (Մխի.

304)։ ուստի կը պարտաւորուէր յարոզութենէ ձեռք քաշել, և ինչն անձամբ Հռոմ երթալ իւր անձը և իւր միաբաններր արդարացնելու համար։ Սուրբ Դազարի մէջ հաստատուելէն քիչ օր ետքը 1718 մայիս 7'ին վենետիկէ կը մեկնէր, և յունիս 2'ին Հռոմ կը մտնէր։ Դժուար չէր Հռոմի մէջ ուղուած արդարացումը պատրաստել բացարձակ համակերպութեամբ առաջարկուած պայմաններուն, և յօժարութեամբ արտայայտութիւններով յարգանաց և մեծարանաց, և Մխիթար զանց չըրաւ այդ միջոցները գործածել։ Մինդրոյ գլխաւոր նիւթ մըն էր այն առնն կաթոլիկութեան յարոզներուն Հայոց եկեղեցին դիմելու կամ երթալու խնդիրը, որ մինչեւ հիմայ տեղի ունեցած բոլոր եղեռնութեանց ալ սկզբնապատճառն էր։ Հայ կաթոլիկներ յատուկ եկեղեցի չունէին, և Լատիններուն երթալը կառավարութեան կասկածներուն տեղի կու տար։ Հայ կաթոլիկներ պատրիարքարան չունէին, և օրինական խորհրդակատարութիւններ՝ որոնք քաղաքական կամ կենցաղական նչանակութիւն ունէին ազգահամարի տեսակէտէն, ինչպէս են մկրտութիւն ու պսակ ու թաղում, իրենց կողմէ չէին կրնար կատարուիլ, և Լատինաց դիմելով օտար հպատակութեան ձեւ կը տանային։ Ըստ այսմ անհրաժեշտ պահանջ մը կը դառնար, որ գոնէ այդ առիթներուն Հայոց եկեղեցին դիմեն անկաշկանդ։ Լատիններ կ'ընդդիմանային բացարձակապէս, իսկ կաթոլիկ Հայեր հարկին հպատակելու պատրաստ էին, եթէ խղճերնին պղտորող չըլլար։ Մխիթար և Յակոբ պաշտպան կանգնեցան այդ միտքին, ինչպէս Մխիթարի վերագրեալ գըրուածքէն ալ կը տեսնուի (Մխի. 320)։ Մինդիրը Հռոմի առեանն ալ ելած էր, ուր պիջողութեան գաղափարը յաղթեց, անչուշտ կաթոլիկութեան հրապոյրը ընդարձակելու համար։ Մխիթար յաջողութեամբ իւր գործը վերջացնելով 1718 դեկտեմբեր 6'ին Հռոմէ մեկնեցաւ և 20'ին Վենետիկ հասաւ (Մխի. 323)։ Իսկ խնդիրին պաշտօնական որոշումը 1719 յունուար 12'ին տրուեցաւ Հռոմի հաւատաքննութեան առեանէն, թէ Հայոց եկեղեցիները երթալը կը ներուի, ջնջանալով սոսկ պաղնջի, իրեն միտքով՝ հայադաւան եկեղեցւոյն, յայտնապէս ջրթնելէ, և քայլակղզնիեան և հաւատքէ խոտորելու առնէրէ (Մխի. 321)։ Հռոմէական դարձուածներու պաշտօնական արտայայտութիւն մը, որ եթէ մէկ կողմէ գործնական լուծում մը կու տայ, միւս կողմէ կը դատապարտէ նախընթացաբար իւր Լատին քարոզիչներէն ցուցուած անհանդուրժողութիւնը, և անոնք պատասխանատու կը կացուցանէ կաթոլիկութեան պատճառով կատարուած սրկածներուն։ Մխիթարի վանական հաստատութեան մասին այլևս չատ ըսելիք չունինք, զի բուսելիքները անոր չարունակական ընդարձակման և զարգացման կը պատկանին, և նոր եղելութիւններ չեն ներկայեր։

ԱՆՏՈՆԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

1939. Հռոմէական կուսակցութեան այժ տուող ուրիշ ձեռնարկի մը վրայ ալ խօսանք իւր կարգին (§1894), որուն կեդրոնը դրուեցաւ Լիբանան լեռներու վրայ Մարոնիներու մէջ։ Անոր հիմնարկուներն եղած էին չորս աչխարհիկ հոգեսէր անձեր, որ երբ ուսումնասիրութիւններնին իրենց նպատակին ծառայեցնել կը փափաքէին, ստիպուեցան հալածեպ փախուստով գործերնին լքանել։ Այդ պարագան կը պատասխանէ Գանձակեցի պատրիարքին օրով տեղի ունեցած չարժումին, և Բերիոյ առաջնորդ Աբրահամ Արծիւեանի բանտարկութեան (§ 1920)։ Երբ պարագաները քիչ մը խաղաղացան, Մուրատեան եղբայրներ բարեդէպ առիթ սեպեցին Բերիոյ վաճառատան գործը վերջացնել, և իրենց ձեռնարկին նիւթական միջոցները հայթայթել։ Այդ նպատակով Աբրահամ և Յովհաննէս Բերիա եկան որ կարգադրեն։ Այնտեղ Ջահկեցի Ունիթորներէն Գրիգոր Կիւլլէրեան արեւելեան հանդիպելով, անոր կը յանձնեն կղեմէս ԺԱ. պապին ուղղուած աղերսագիր մը 1718 թուականով, և Մոսկուայ ուղեւ Աբրահամ, Յովհաննէս, Մինաս և Յակոբ ատորագրութեամբ, որով պապական օրհնութիւն, և իրենց ձեռնարկին հաստատութիւն, և Մարոնցոց ուղղուած յանձնարարագիր կը խնդրեն, որպէս զի անոնցմէ պարտուպատչան օժանդակութիւն գտնեն։ Իրենց ձեռնարկը կը բացատրեն, ինչպէս ուրիշ տեղ ալ յիչեցինք (§

1894), բանվով թէ կ'ուզէն չինել մէն ֆուրն անպատ, չէ անդ քնակիչին անպատասխ համայ է Հայոց պէքէն (ԱՆՏ.), ինչ որ մինչեւ այն վայրկեան պարզ վանականութեան նպատակի վրայ մնալնին կը ցուցնէ։ Մուրատեան եղբարց ուղղակի իրենց անունով դիմելը՝ և ուրիշ որեւէ անձի անուն չտալը կը ցուցնէ, թէ ձեռնարկին բուն հիմնադիրները իրենք են եղած, և ոչ Բերիոյ առաջնորդը, որ այդ միջոցներուն բանտէ ազատած, բայց Բերիա դառնալ չհամարձակելով, Տրապիզոն և Եդեսիա կը թափառէր։ իսկ Մուրատեան եղբայրներ, արդէն միաբանական կենաց սկզբնաւորութիւն ըրեր էին Ակքարի մէջ (§ 1894)։ Եթէ վերջէն Արծիւեան ինքզինքը իբր Անտոնեանց հիմնադիր ուզեց ցուցնել, պարզապէս վերջին պարագաներէ օգտուելով էր, որ համարձակեցաւ իւրացնել ուրիշներու ձեռնարկը (ԻԻԹ.101)։ Հռոմ ղրկուած նամակը Փրոփականտայի ժողովէն նկատողութեան կ'առնուի 1719 յունիս 19'ին, և վերոյիշեալ Կիւլէրեանէ և Հռոմ գտնուող Յովսէփ Աասէմանի և Գաբրիէլ Հավա Մարոնի վարդապետներէ ստացուած տեղեկութիւնից վրայ, Փրոփականտան իր հաւանութիւնը կու տայ Մուրատեան եղբարց ձեռնարկին, աւելցնելով դպրոցի և ուսումնական նպատակի պայմաններ։ Որոշուած ժամանակն է 1720 մարտ 8, որ փութով կը հաղորդուի Մարոնի պատրիարքին։ Այդ միջոցին Բերիա դարձած էր Աբրահամ Արծիւեանը, եւդոկիոյ կուսակալին Բերիա փոխադրուելէն օգտուելով (ԻԻԹ.49), և առիթէն օգտուեցան Մուրատեանք ալ եկեղեցական աստիճան առնելու. Յակոբ քահանայութեան, և Աբրահամ սարկաւագութեան, իսկ Յովհաննէս վախճանած էր Բերիա, և Մինաս լոկ կրօնաւորութեամբը կը չատնար։ Երկար մնացող եղբայրներուն վրայ չորրորդ ընկեր մը աւելցած էր՝ Անտոն Աատուածատուրեան Բերիացին։ Պապին կողմէն Մարոնի պատրիարքին յղուած գիրը իրեն արդիւնքը ունեցաւ, զի 1721 յուլիսին Մարոնի պատրիարքին կոնդակով՝ պանդուխտ Հայեր արտօնուեցան կանոնաւոր վանք հիմնել Մարոնցիներէ չբջափակուած գաւառին մէջ, ուր Խազնեան իշխանական տոհմին ալ մարտ ամիսէն անդառնալի չնորհած էր վանահիմնութեան գետինը (ԱՆՏ.)։

1940. Մուրատեան եղբարք, որ այլևս պաշտօնապէս Անտոնեան միաբաններ եղած էին, նոյն 1721'ին հիմնարկեցին իրենց վանքը Բերիայի մէջ, Ս. Փրկչի, և ակամայ հետզհետէ բազմանալ թէ աշակերտութեան և թէ ապաստանի դիմող նոր հետևորդներով։ Արծիւեան առաջնորդին Բերիա մնալը երկար չեղաւ, զի կոլոտի օրով տրուած նոր հրամանին հետևանօք, նա ալ 1720'ին աքսորուեցաւ Ավրատ կղզին (ԻԻԹ.54), զոր յիշեցինք Աւետիքի աքսորին առթիւ (§ 1866)։ Բայց այդ աքսորն ալ երկար չեղաւ, զի Սիւրիական Տրիպոլսոյ Գաղղիական փոխհիւպատոսն Դարպէ, եղանակը գտաւ իր երաշխաւորութեամբ Արծիւեանը իր մօտ պահելու, որ այդ առթիւ քաղաքին Մարոնի եկեղեցւոյն մէջ ձեռնադրութիւններ ալ կատարեց 1721 մայիսին, և քահանայութեան բարձրացուց Աբրահամ սարկաւագը, և Գէորգ Տէր-Բարսեղեան դպիրը որ Իսահակ կոչուեցաւ (ԱՆՏ.)։ Թէ Բերիացի Անտոնեան միաբանները իրենց առաջնորդին համար, և թէ Դարպէ փոխհիւպատոսը իր պաշտպանելային համար, դիմումներ կը տեղացնէին Կ-Պոլիս անոր բացարձակ ազատութիւնը ստանալու։ Գաղղիական դեսպանատունն ալ իր միջնորդութիւնը կը աստատացնէր, սակայն կոլոտ պատրիարք հաւանութիւն կու տար միայն Երուսաղէմի վանքը փոխադրուելուն։ Ասոր վրայ Արծիւեանի պաշտպանները՝ տեղական միջոցներով և ճարտար դարձուածներով կրցան զայն Երուսաղէմի վանքին տեղ Լիբանանի նորաչէն վանքը փոխադրել 1722 ապրիլին, ուր և մնաց այնուհետեւ երկար տարիներ։ Այդ պարագան է որուն վերագոյնդ կ'ակնարկէինք (§ 1939), թէ Արծիւեան վերջին և պատահական պարագաներէն օգտուելով կրցաւ ինքզինքը իբր Անտոնեանց միաբանութեան հիմնադիր կարծեցնել։ Եպիսկոպոսի մը և նոյն իսկ թեմակալ եպիսկոպոսի մը ներկայութիւնը՝ պիտի յորդորէր բարեմիտ կրօնաւորները զայն պատուել և յարգել, և անոր հանդէպ համակրութիւն և հնազանդութիւն

ցուցնել, ինչ որ կը քայլայերէր Արծիւեանի ձեռնարկու և մեծամիտ ընթացքը։ Արծիւեան իբրեւ Բերիոյ եպիսկոպոս, բայց Բերիայէ փախստական, հեռուէն կը կատարէր լատինամիտներու վրայ իւր հովուական հակողութիւնը՝ նոյն իսկ Անտոնեան միաբանութեան միջնորդութեամբ, և գլխաւորապէս Յակոբ Մուրատեան, կամ պապական կոչմամբ Յակոբ Յովսէփեան, և Իսահակ Տէր-Բարսեղեան կամ Բարսեղեան արեւտեաներուն ձեռքով։ Իսկ վանքին մէջ՝ եկեղեցական հպատակութեան պահանջները՝ հետզհետէ գերագոյն դիրք մը տուին Աբրահամ Արծիւեանի, թէպէտեւ վանքին մեծաւորը, կամ Մարտիրոսեան իւրացուցած կանոնադրութեան համեմատ, Հայ Անտոնեան միաբանութեան աբբահայրը՝ Աբրահամ Մուրատեանը կամ Աթթարեանն էր, և Արծիւեան իսկ ճանչցած էր անոր պաշտօնը, և իրր թեմական հաստատուած անոր իշխանութիւնը (ԱՆՏ.)։ Այս եղաւ պատճառը, որ ապագային խնդիրներու դուռ բացաւ Արծիւեանի յաջորդներուն և Անտոնեան միաբանութեան միջեւ (ԴԻՓ. 73)։ Լիբանանի մէջ հաստատուած Հայ վանք մը՝ ապաստանարան դարձաւ ամէն անոնց, մանաւանդ եկեղեցականներու, որոնք իրենց կաթոլիկութեան հակամիտութեամբը, կամ ուրիշ անձնական պատճառներով, Հայոց պատրիարքարանին առջեւ կասկածաւոր դառնալնուն համար՝ խոյս տալու և ապահով տեղ մը մնալու պէտքը կը զգային։ Կը յիշուի թէ Շղթայակիրը այդ պարագային մտադրութիւն դարձնելով, արգելած ըլլայ Քրէյմի վանքը նոյն իսկ ուխտագնացութեան անունով երթալը (ԱՆՏ.), ուզելով առաջն առնուլ կաթոլիկական հրապուրանաց, որք Հայ եկեղեցականն կարգաց հանդէպ իւուլութեան, և օրինաւոր Հայ իշխանութեանց դէմ ըմբոստութեան քայլերուն կ'ընծայէին։

ԴԱՒԻԹ ԲԷԳԻ ՇԱՐԺՈՒՄԸ

1941· Ժամանակակից ցրուեալ եղելութիւնները քաղելէ ետքը, դառնանք նորէն Մայրաթոռոյ անցքերը պատմել, որք կապուած են Հայաստան հողի վրայ երկաք տէրութեանց պատերազմներուն հետ (§ 1922)։ Հայեր՝ որ ամէն կողմէ յարձակումներու ենթարկուած էին, չփոթ և վարանոտ դիրք մը ունէին, չկարենալով երկու մահմետական տէրութեանց ալ գործակից, և չստանալով երրորդ քրիստոնեայ տէրութեան ազդու ձեռնտուութիւնը։ Օրիի ձեռքով ցանուած ազգային սպահովութեան հետապնդութիւնը՝ անպտուղ չէր մնացած, և անոր սերմերը բողբոջած էին, և Հայ խումբեր կազմուած էին զէնքի դիմելու և պատերազմներ մղելու հրոսակներու դէմ։ Արդէն յիշենք Աղուանից կաթողիկոս Եսայիի և Տրփղիսի առաջնորդ Մինասի ազդմաչունչ դիմումները, որոնք հարիւր հազարով զինեալ Հայեր կը խոստանային Ռուսական բանակին նիզակակից (§ 1931)։ Լեզգիներուն 1722'ին Գանձակի վրայ արշաւանքը, աւերածն ու կոտորածը, Հայոց չարժումին առաջին գրգիռ տուին, և Յովհաննէս Գուգարացին գլուխ կանգնեցաւ Ուտէացի և Գուգարացի խումբերուն, և թարթառ գեհոին մօտ Լեզգիներու դէմ ճակատելով, անոնք ետ դառնալու ստիպեց (ՋԱՄ. Գ. 784)։ Բայց այս չէր բաւեր երկրին խաղաղութեան, բոլոր յոյսը Պետրոս Մեծի հետ գալիք Ռուսական բանակին վրայ էր։ Վրացիք և Հայք չարժման մէջ էին, վրացւոց կ'առաջնորդէր Վախտանգ, Հայերուն կ'առաջնորդէր Եսայի կաթողիկոս, որ 10,000 բանակի մը գլուխ կանգնած կը հրճուէր, համբերելով նոր Նոյեան ջրհեղեղին Հայոց (ՋԱԼ. 48)։ և Վախտանգր կը քայլայերէր, թէ «Ահա հասել է ժամանակ էրկրները էրկոտնէից» (ՋԱԼ. 49)։ Բայց Ջօլաքի դաշտին ցնծութիւնը չուտով կը ճնշուէր, երբոր կը լսէին թէ Պետրոս կասպից կողմերը նուաճելէ ետքը ետ կը դառնար (ԼԷՕ. 311), Օսմանցոց հետ համաձայնութեան (§ 1932) հետեւոր տեսակէտէն յորդորուած։ Բայց անգամ մը որ ռազմիկ հոգին չարժուեր էր, Հայեր չկրցան չուտով հանդարտիլ։ Հին Սիւնիքի և Արցախի բնակիչներ ալ ոտին կանգնած, հրամանատարի մը պէտքը կը զգային, և Մոսէփանոս Շահումեան վրաց իշխանին դիմելով, անոր զօրագլուխներէն հայազգի Դաւիթը կը բերէր Ղափան 1722'ին, որ է նոյն ինքն հրեշակաւոր դարձած Դաւիթ Բէկը, կամ Դաւիթ Սիւնին, կամ Դաւիթ Հալիձորցին, որ բաւական տարիներ չարժման մէջ պահեց

իսլամական գունդերը։ Դաւիթ գլուխ կանգնելով ըմբոստացած Հայերուն, և չունենալով մեծ ձեռնարկի միջոցներ, պարտաւորուած փոքր խումբերով պիտի նեղէր թշնամին, և այդ ձեւին մէջ ցուցուց իր յաջողակութիւնը։ Իր առաջին ձեռնարկը կը սկսի 400 հոգիով, և այնչափով կ'ընկճէ 16,000 հոգւոյ բազմութիւն մը տեղացի այլազգիներէն կազմուած, Պարսիկ հովանաւորութեան ներքեւ։ Դաւիթի աջակից և օգնական էր Մխիթար Դափնցին, որուն միացան և Փարպադան Հալիձորեցի մելիքը, և փեսան Աւետիք Հալիձորեցի քահանան, պահ մը դժկամակ լլլալնէն ետքը, ինչպէս նաեւ Թորոս Ջավրնդուրեցին, Բայինտուր Դափնցին, Ստեփանոս Շահումեանը, Պաղն ու Պալին։ Ասոնցմէ իւրաքանչիւրը իր սեփական գունդով կիրճերու մէջ և սարերու վրայ յաջողութիւններ կը տանէին բազմաթիւ թշնամիներու վրայ. իսկ ամէնուն հոգին ու հրամանատարը և ձեռնարկները կարգադրողը Դաւիթն էր, իր հեռատեսութեամբը, արիութեամբը ու ժրութեամբը, և մանաւանդ հոգիակութեամբը ու կարգապահութեամբը նչանաւոր գլուխ մը։ Շատ նկարագրական է Տաթեւի մելիք ուրացեալ և մահնիչ Դաւիթը ձերբակալելէ ետքը, 12 օր ննջեցեալ դուռը չարունակ կրկնել տալը. Լ՚ոյն Լ՚ոսաւորչի հաւատոյն, վայ ոբոյոզ մարգոն, և անկէ ետքը գլխատել տալը (Լ՚Ը·Բ·366)։ Մենք մտադիր չենք այդ իրողութեանց բոլոր մանրամասնութիւնները պատմել, նպատակ ունինք միայն ժամանակին կացութիւնը պատկերացնել։

1942· Երբոր Հայաստանի հիւսիսակողմը կատարեալ ապստամբութեան ձեւ էր առած՝ Պարսկական բանակութեան տալնապին և դուրսէն խուժող հրոսակներուն պատճառով, և Վրաստան ու Ադուանք ու Միւնիք, իրարու հետամիտ, բայց ոչ իրարու ձեռնտու՝ գործեր կը կատարէին Պարսիկներու ձեռքը մնացած գաւառներու մէջ, Երեւան և Էջմիածին արդէն Օսմանեան արշաւանքին ենթարկուած էին։ Պարսիկները կը կասկածէին Աստուածատուր կաթողիկոսի վրայ թէ Ռուսներու հետ յարաբերութեան մէջ է. նամակ մըն ալ ձեռք անցուցեր էին, Սիւնիքի և Ադուանքի Հայ գունդերուն ուղղուած, որուն համար զայն քանտարկեցին ալ, և հազիւ 4000 ոսկւոյ տուգանքով արձակեցին։ Աստուածատուր չնայելով այդ տառապանքներուն՝ չդադարեցաւ Հայոց չարժումը քաջալերել, և Ռուսական պաշտպանութիւնը հրաւիրելու հետամուտ ըլլալ։ Պարսիկներ Աստուածատուրը ստիպեցին Դաւիթը յորդորել, որ դուրսի հրոսակները վանէ, իսկ տեղացիներու և Պարսիկներու չվնասէ. պարտաւորեցին նաեւ որ սոյն նպատակով Ադուանք և Վրաստան ալ երթայ։ Աստուածատուր գրեց ու գնաց, բայց իսկապէս Հայերը իրենց չարժումէն ետ կենալու չխրատեց։ Եթէ Աստուածատուր Պարսիկներուն կասկածելի էր, Օսմանցիներուն ալ վստահելի չէր, որոնք այս պատճառով արգիլեցին Հայերուն միւռոնօրհնէքի առթիւ Էջմիածին երթալ։ Ծատուկ պաշտօնեայ մըն ալ 1723'ին Էջմիածին գալով յանդիմանած էր Աստուածատուրը, թէ Ռուսաց օգնելու բանակ կը պատրաստէ, և սպառնալիքներ րրած։ Նոյն թուականէն սկսած էին Երեւանի նահանգին մէջ մղուած պատերազմները (§ 1941), և այն օրէն Աստուածատուր իր հանգիստը կորսնցուցած էր, և քաղաքական կը չրջէր նուազ վտանգաւոր կողմերը երթալով, կամ քաջալերութեան պէտք եղած տեղեր երեւնալով։ Նա այլեւս իսհականութեան հետեւողը չէր (§ 1928), զի ոչնչաս խորհուրդներու չրջանն էր, և պարագաներ գործերը գահավիժած էին։ Երեւանի և Էջմիածնի Օսմանցիներէ գրաւումը տեղի ունեցաւ 1724 տարւոյն երկրորդ կէսին սկիզբները, և մեծ ցոյցերով տօնուեցաւ Կ-Պոլսոյ մէջ (ԺՈՒ·331)։ Ասով աւելի եւս վտանգուեցաւ Աստուածատուրի դիրքը, որ հազիւ տարի մը եւս ապրեցաւ, միշտ երերալ և տատանիլ կացութեան մէջ, ատեպ խուսափելով Մայրաթոռէն, տիրապետողներու կեղեքումներէն ազատելու համար, և մերթ հոն հանդիպելով անհրաժեշտ կարգադրութիւնները ընելու համար (ՋԱՄ·Բ·43)։ Կը յիշուի թէ Սիմէոն վարդապետ Երեւանեցի, Կ-Պոլսոյ նուիրակ (ՋԱՄ. 29), կաթողիկոսին անունով յաջողեցաւ Էջմիածնի աթոռին և չորս վանքերուն հա-

ՄԱՅՐԱԹՈՌԻ ԿԱՑՈՒԹԻՒՆ

մար Ֆոլշֆօ-Ռեհան, այսինքն ապահարկութեան հրովարտակ ստանալ սուլտան Ահմէտէն (ՋԱՄ· 241), բայց այսչափը չէր բաւեր հարստահարութիւնները խափանելու, և պատերազմի աղէտները արգելելու։ Աստուածատուր կաթողիկոսի մահը տեղի ունեցաւ Օչականի մէջ, պատահական արկածով մը. զի 1725 հոկտեմբեր 10'ին, տանիքի մը վրայէն լուսինի խաւարումը դիտելու առթիւ, յանկարծ գլխիվայր կը գլորի, և գլուխէն ծանրապէս վիրաւորուելով չորս ժամէն կը վախճանի։ Թչնամաբար տանիքէն վար մղուած բլլալու կասկածը հիմնաւոր նկատուած չէ (ՋԱՄ· Գ· 801)։ Միայն քանի մը ամիս առաջ, մարտ 1'ին, վախճանած էր Մովսէս Ջուղայեցին ալ (ՏՃՈ· Բ· 50), որուն կաթողիկոսանալէ հրաժարելուն վրայ Աստուածատուր Համատանցին աթոռ էր բարձրացած (§ 1917)։ Մովսէս ալ բաւական նեղութիւն քաշած էր Ջուղայի մէջ Աֆղանները արշաւանքին պատճառով (§ 1930)։ Աստուածատուր թաղուեցաւ Ս. Հռիփսիմէի վկայարանին գաւիթը (ՋԱՄ· 28), իսկ Մովսէս իրեն վանքին եկեղեցւոյ հիւսիսային դրան սեմը (ՏՃՈ· Բ· 50)։

ԱԹՈՌՈՑ ՊԱՐԱՊՈՒԹԻՒՆ

1943· Անօրինակ և անկերպարան վիճակի մէջ կը թողուր Աստուածատուր Մայրաթոռը իւր մահուան պահուն, զի կատարեալ անիշխանութիւն կրնայ ըսուիլ տիրող կացութիւնը։ Որչափ ալ Օսմանցիք տիրած էին Երեւան քաղաքին և չրջակայից, և Ռուսներ հաճած էին որ այն կողմերուն վրայ իրենց տիրապետութիւնը հաստատեն (§ 1932), սակայն տակաւին պատերազմի վիճակն էր որ կը չարունակէր, և Օսմանցիք հետամուտ էին անդրագոյն եւս ընդարձակել իրենց տէրութիւնը, մինչեւ Սիւնիք և Աղուանք։ Պարսիկներ թէպէտ յաղթուած, և Մահմուտի ու Թահմազի մէջ երկպիղկած, սակայն բոլորովին ձեռք քաշած չէին իրենց սեփական գաւառներէն։ Հայերն ալ՝ որ ղէնքի դիմած էին, և ոչ միայն հրոսակներուն և Պարսիկներուն, այլեւ Օսմանցիներուն դիմադրելու ձեռնարկած էին, անխտիր միաւեսակ նկատելով բոլոր իսլամական գունդերը։ Մայրաթոռոյ միաբանութիւնը ցրուած և փախած, օրինական ընտրութիւն մը ընելու վիճակի մէջ ալ չէր գտնուեր։ Ջուղայեցիք ալ Աֆղաններուն բռնակալութեան ներքեւ հազիւ թէ իրենց կենսական խնդիրներուն կը բաւէին, և Մայրաթոռի հոգը ստանձնելու և աթոռի պարապութեան դարմանը նայելու միջոցներն իսկ չունէին։ Հարկաւ Աստուածատուր, իբրեւ խոհական և հոգածու անձ, նախատեսած պիտի բլլար այդ վիճակը, սակայն ուղելով ալ չէր կրնար ազդու դարման մը գտնել, և իրմէ ետքը կաթողիկոսական ընտրութեան մասին միտք յայտնել և հրահանգ տալ։ Գուցէ Մովսէս Ջուղայեցին բերելու խորհուրդ տուած բլլար, եթէ նա կանխաւ մեռած չբլլար. իսկ Դաւիթ Ջուղայեցին, որ Մովսէսի յաջորդած էր, իբր Ջուղայի վանքին առաջնորդ և վիճակին արքեպիսկոպոս, որչափ ալ ճգնաղէից և քրիստոսընեան նախանձախնդիր կը կոչուի (ՏՃՈ· Բ· 53), և իբր խմոփոան կը գովուի, սակայն իրեն վերագրուած բարեկարգութիւններն ալ, զորս պիտի յիշենք, կը ցուցնեն, թէ իսկապէս ըսթել դինել էր յաղնայնէ աչիւրհայէն խլրտոնց (ԽՁԿ· 9), և կենճռոտ ժամանակին պահանջած գործի մարդը չէր, որ Աստուածատուր անոր վրայ կարենար մտադրութիւն դարձնել։ Կ'երեւի թէ իւր չուրջն ալ ուշադրութիւն դրաւող մէկ մը չտեսաւ. և նոյն իսկ պատահական արկածով մը մեռնելը՝ առիթ չը ներկայեց Մայրաթոռին յաջորդութեան վրայ մտածելու։ Այսպէս թէ այնպէս, պարագաները դժուար կացութիւն մը կազմած էին, և հայրապետական աթոռին երկար առնն պարապ մնալը կը սպառնային։

Տ· ԿԱՐԱՊԵՏ Բ· ՈՒՆԵՑԻ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԱԽԸՆԹԱՑ

1944· Մայրաթոռին տարօրինակ պա-
բապութեան առնն Յովհաննէս Կոլոտ Կ-
Պոլսոյ պատրիարքը պէտք
կը դգայ բացառիկ կա-
ցութեան բացառիկ դար-
ման հոգալ, և Մայրաթո-
ռի միաբանութեան և Ջուղայի ժողովուրդին
մինչեւ այն առնն վարած ընտրողական
գործունէութիւնը՝ Կ-Պոլսոյ պատրիարքա-
րանին և Թուրքիոյ հայաբնակութեան վրայ
դարձնելով՝ նախաձեռնարկ ըլլալ կախողի-
կոսական ընտրութեան, և Կ-Պոլսոյ մէջ
ընտրել և օծել տալ նոր հայրապետը։ Այդ
գործողութեան համար պէտք եղած համա-
ռօտ ժամանակը կը ցուցնէ թէ Կոլոտ ընդ-
հանուր համամտութիւն գտաւ իրեն առա-
ջարկին համար, և գործառոր դիտողութեան
կամ ընդդիմութեան չհանդիպեցաւ։ Նա-
խորդ կաթողիկոսին 1725 հոկտեմբեր 10'ին
մահուան թուականէն՝ մինչեւ յաջորդին օ-
ծումը 1726 փետրուար 27'ին, միայն չորս
ու կէս ամսոյ միջոց մըն է, որուն մէջ պի-
տի հաշուենք մահուան գոյժին Էջմիածինէ
Կ-Պոլիս հասնիլը՝ ժամանակին տրամադրելի
միջոցներով, և նորընտիրին իր գաւառէն
Կ-Պոլիս գալը, և անօրինակ արարողութեան
համար պէտք եղած պատրաստութիւնները,
որոնք հարկաւ վերոյիշեալ չորսուկէս ա-
միսներուն մնծագոյն մասը գրաւած են։
Կոլոտի նոր առաջարկին փաստերն եղած են,
Էջմիածինի և Երեւանի՝ Օսմանցոց իշխանու-
թեան անցած ըլլալը, ընտրելիք կաթո-
ղիկոսին համար ոչ եւս Պարսից՝ այլ Օսման-
ցոց վճռապահէն հաստատութիւն ընդունե-
լու պէտքը, Պարսից թագաւորութեան Մահ-
մուտի և Թահմազի մրցակցութեամբ իրը
անգլուխ նկատուիլը, և ամէնէն աւելի՝ Ե-
րեւանի գաւառին չփոթը, Մայրաթոռի միա-
բանութեան տարտղնած ըլլալը, և այն կող-
մի Հայութեան կեդրոնը սեպուող Ջուղային՝
բնականաբար ներքեւ գտնուիլը։ Կ-Պոլ-
սոյ բարձրաստիճան եկեղեցականութիւնը,
քահանայական դասը, իշխանական դասա-
կարգը և բոլոր ժողովուրդը, համակամ հա-
ճութեամբ ընտրութիւնը կատարելու հաւա-
նեցան, և ուզելով ամէնուն կողմէ պատ-
կառելի ձանչցուած մէկ մը առջեւ անցընել,
առանց դժուարութեան և երկպառակու-
թեան համաձայնեցան Գաղատիոյ առաջնորդ
կարապետ Ուլնեցի եպիսկոպոսին վրայ։
Երեւանեցին կարապետը կը ներկայացնէ իբր
այր ծեր և անյնեայ, ծնողաբ և առաքինեան
(ՋԱՄ·28), որ գոնէ արտաքին ձիրքերուն
համար վկայութիւն մըն է· իսկ Ջամչեան՝
որ ժամանակով հեռու չէ, և այս միջոցէն
սկսելով կրնայ իրր բնագիր հեղինակ նկատ-
ուիլ, կը կոչէ զայն՝ այր ղեծ և խմաբան,
քաջագէտ անյմբ և իմաստուն, և սիրելի
յոլս ազնեցոաւն (ՋԱՄ·Դ·801)։ Կարապետ՝
Մծնէր մականունով յիշուած է ստէպ, ա-
ռանց իմացար կամ չարժառիթը բացատրե-
լու, և կ'երեւի թէ մանկութեան առնէն
ինացած յորջորջում մըն է։ Արդէն մակդիր
անուններու սովորութիւնը չատ ընդարձակ-
ուած կը տեսնենք այդ միջոցին։ Յատուկ
նշանակներ կը ղրկուին Անկիւրիա՝ կա-
բապետը մայրաքաղաք առաջնորդելու, և
պէտք եղած նախապատրաստութիւնները կը
կատարուին Ս· Աստուածածնի մայր եկե-
ղեցւոյ մէջ երբեք չտեսնուած, և նորէն
տեսնելու ալ հաւանականութիւն չունեցող
արարողութեան համար։ Պէտք եղած 12
եպիսկոպոսներու ներկայութիւնն ալ կը
հոգացուի, և 1726 փետրուար 27'ին Մեծ
պահոց երկրորդ կիրակէին՝ կարապետ կա-
թողիկոսական օծումը տեղի կ'ունենայ,
նախընթաց կիրակամուտէն սկսելով ծիսա-
կան կարգին կատարումը։ Չէ յիշուած թէ
ալ էր 12 օծող եպիսկոպոսներուն առաջին-
նր, որ հանդիսապէրն եղած է այդ նշանա-
կելի օրուան։ Կոլոտ դէռ եպիսկոպոս չէր
և չէր կրնար մասնակցիլ· Շղթայակիրն ալ
եկած չէր, թէպէտ յարմարագոյնն եղած
կ'ըլլար։ Կ'երեւի թէ հրաւէր ստանալով
ալ չէ կրցած գալ, որ իր կողմէն Կ-Պոլիս
ղրկած է Հաննա վարդապետը, որ Կ-Պոլիս

եկած կը գտնենք այդ օրերը։ Կարապետ Ուշնեցին, զոր մենք Կարապետ Բ անունք, ուրիշներէ Կարապետ Գ յառած է, Կարապետ կեղեցին երկուքի բաժնելուն համար (§ 1375),

ՍԻՄԷՈՆԻ ԿԱՐՄԻՔԸ

1945. Այդ ընդհանուր համաձայնութեան և հաւերաչխ գործակցութեան հանդէպ, մեկ մը միայն կը գտնենք ժժգոհ և տհաճ, և եղած գործողութիւնը մեղադրող ու դատապարտող, և այն է Սիմէոն Երեւանեցին, Էջմիածնի կաթողիկոսը, որ պատշաճից կանոնները ոտնակոխ ընելու չափ առջեւ կը քալէ իր յիշատակներուն մէջ։ Նա կը խղճէ ուղղակի ընտրեալին դէմ յարձակիլ, զոր կը կոչէ ծեր և պարզամիտ, և ամենեւին անբեղեակ օրէնսդրութեան պատուոյն և իշխանութեան սրտոյս կաթողիկոսութեան (ՋԱՄ·235)։ բայց բուռն կերպով կը յարձակի Կոլոտի դէմ, կոչելով զայն խորամանկ, ըմբռնող, ներգործուղ և խաբեպ, որպես բերէն է Բազէշը և այնց կոչմանց (ՋԱՄ·235)։ Ձեռնարկը չը պատասխանութեամբ եղած կ'ըսէ, և Կոլոտը չարութեան գործած կը դատէ (ՋԱՄ·29)։ Բայց Երեւանեցին անագան դատող մըն է, և գործին պարագաներուն ինքն մասնակից եղած չէ, գուցէ տեղեկութիւններ քաղած բլլայ նախկին Սիմէոն Երեւանեցիէն, որ այդ միջոցին Զմիւռնիոյ նուիրակ կը գտնուէր (Դիւ. Ա. հդ.)։ Երեւանեցի կաթողիկոսին բոլոր մեղադրանքը կը հիմնուի սա պարագային վրայ, որ Կոլոտ իր տեղեկագիրով հաղորդած է Օսմանեան կառավարութեան կարապետի ընտրութիւնը, և սոյն տեղեկագիրին զօրութեամբ ստացուած է կարապետի հաստատութեան հրովարտակը։ Զարմանք, կ'ըսէ, և ըլլալ ենթադրանք թէ անոնք կը հիմնուին այն տեղեկագիրին վրայ, զոր Կոլոտ իր տեղեկագիրով հաղորդած է Օսմանեան կառավարութեան կարապետի ընտրութիւնը, և սոյն տեղեկագիրին զօրութեամբ ստացուած է կարապետի հաստատութեան հրովարտակը։ Զարմանք, կ'ըսէ, և ըլլալ ենթադրանք թէ անոնք կը հիմնուին այն պարագային վրայ, որ

կրօնական և եկեղեցական փոխադարձ յարաբերութիւնները։ Հակառակ ձեւ մը անհնար էր գործածել, բայց եթէ Տաճկահպատակ Հայութիւնը երկուքի բաժնելով, կամ Տաճկահպատակ Հայութենէն պաշտօնական գլուխը ոչ եւս կ՚ողիսը՝ այլ էջմիածինը ճանչնալով։ Կոլոտի բռնած ընթացքը բացարձակապէս պետական յարաբերութեանց պահանջն էր։ Երեւանեցին է, որ ամենէն անթեղեակ կը գտնուի օրէնսդրութեան պատմութեան, և ոչ թէ կարապետը անգիտակ է, կամ կոլոտը դաւաճան է։ Եթէ Երեւանեցին այդ բաներու անտեղեակ ըսելով՝ եղելութեան կոդմէն արդարացնենք, սակայն կը դժուարանանք զայն արդարացընել, երբ քսութիւնն ձեւերու ալ կը դիմէ, և կարապետին է վճռելն Սբոյ, այսինքն պարզ ծննդեամբ Ջէյթունցի բլլալը կը յիշէ, զի այն նշանակութենէ զուրկ պարագայ մըն է, և ոչ երբեք կարապետի Սսոյ միաբան կամ Սսոյ աթոռէն եպիսկոպոսացած բլլալը կը ցուցնէ. ապաթէոչ յայտնապէս գրած կ՚բլլար զայդ, եթէ այնպէս եղած բլլար։ Իբր քսութիւն կը նկատենք նաեւ կաթողիկոսարանի յանկոյսէն կոչելը, լատինամիտ և կաթոլիկութեան հակամէտ ըսել ուզելով։ Կարապետի լատինամիտ բլլալուն ոչ մի փաստ չկայ մէջտեղ, որչափ ալ հռոմէականք ըսեն, թէ էրեց նամակ յօդուածէն և պատուհանէն սա օրհնեալ պապն (ՓԱՓ. 934)։ Գրուած նամակը, նոյն իսկ հռոմէականներու ըսելով, առաջարկ մըն էր միայն, որպէսզի պասլը իրողները խրատէ, և ինչպէ՞ս կրնայ երկուածութեան պէտք ունենալ, և դ՚ս՝ ծխեցին է հանապազորեայ պատարագ (ՁԱՄ. Պ. 803)։ Այս դիմումը պատմութենէ աւելի յանդիմանութիւն պէտք է ըսուի, ինչպէս եղած էր Աղեքսանդր Ջուղայեցիի նամակը (§ 1897)։ Իսկ յօդուածը՝ ազնիւ զգացման նշանակ է միայն, որ հակառակորդի հետ ալ կրնայ գործածուիլ։ Այսու հանդերձ գրուած նամակին պատճէնը հրատարակուած չէ, տեղ մը գտնուիլն ալ յիշուած չէ, և անհիմն չենք սեպեր այն կարծիքը, որ կը պնդէ թէ եպէտ սալջիոեցւոյ գրել, սակայն կաթողիկոսը ընծայելով իրեն եղած խնդրագրութիւններուն, գանոց բրաւ (01 ՕՐԱ. 131)։

1947. եղելութեան վրայ պէտք եղած տեղեկութիւնները պարզելէն ետքը, չէինք ուզեր հետազօտել, թէ ինչ պարագայ կրնար երեւանեցին յորդորել այդպէս դիմումի կոլոտին դէմ, որ թէպէտ նոր և բացառիկ քայլով մը, բայց բացառիկ պարագայէ ստիպուած, կը յաջողէր բացառիկ կերպով հայրապետական աթոռին յաջորդութիւնը ապահովել, և Հայ եկեղեցին երկարատեւ անգլուխ մնալու վտանգէն ազատել։ Մեր տեղեկութեամբ կըրնայ հնարաւորիլ, թէ երեւանեցի կաթողիկոսը նախանձայոյզ զգացումէ մղուած ըլլայ Մայրաթոռոյ բարձրութիւնն ու իրաւասութիւնը պաշտպանելու. սակայն այս տեղեկութիւնն ալ իրական և իսկական հիմ մը չունի, և յուղուելու առիթ չընծայեր, զի կոլոտ ոչ մի կերպով Մայրաթոռի իրաւունքները նուաճել ուզած չէր, և իր գործն ալ միշտորդի դերէն անդին չէր անցներ։ Աւելի հաւանական կը կարծենք ըսել, թէ երեւանեցին՝ կաթողիկոսական աթոռին վրայ գտնուելով, կը փափաքէր ամէն բան իր ձեռքը կեդրոնացնել, և ամէն գործ իր հրամանին ներքեւ առնուլ, ինչպէս իրեն տարապայման տարածեալ գործունէութենէն ալ կը գուշակուի։ Արդ՝ տեսնելով որ Տաճկաստանի գործերուն նկատմամբ իր ձգտումները արգելք կը գտնէին կ՚ողոտոյ պատրիարքներուն իրաւասութենէն, և կարծելով որ այդ դրութիւնը կոլոտի օրէն և կարապետի ընտրութենէն սկիզբն առած է, իր բոլոր ջայրոյթը թափած է արդէն վախճանած կոլոտի գլխուն, որով ընդդիմախօսի հանդիպելու վտանգէն ալ զերծ կը մնար։ Այդ տեսութեան կը նպաստէ դիտել, որ Սիմէոն չատ երկարօրէն կը խօսի նախորդ կաթողիկոսներու Օսմանեան վեհապետներու հետ ունդակի յարաբերութիւն պահելուն վրայ (ՁԱՄ. 234—238), ինչ որ իրեն հնար չեղաւ, թէպէտ չատ ձգտեցաւ այդ նպատակին, և մինչեւ իսկ ուզեց կ՚ողոտոյ մէջ կոնդակաւոր փոխանորդութեան հաստատել պատրիարքական իշխանութեան վրայ ուղղակի ազդեցութիւն բանեցնելու համար։ Սակայն պատրիարք և ժողովուրդ դէմ դրին, և Սիմէոնի խորհուրդը խափանեցաւ (ՁԱՄ.

Բ·49), և երբ պատրիարքական իշխանութիւնը իրեն դէմ գտաւ, ներկանները մոռնալով՝ Կոլոտի վրայ միտքը ուղեցնց, և Կոլոտի վրայ թափեց իւր ցասումը։ Այդ մեր խորհրդածութիւնները կը հաստատուին նոյն իսկ Կ-Պոլսոյ աթոռին դէմ խիստ ակնարկներովը։ Տաճկաստանի վիճակներուն ուղղակի պատրիարքութեան ներքեւ անցնելուն կէտն ալ չօչափելով, Սիմէոն կը գրէ, թէ «նոյն ընթացքն և սքեպտռանիլ յանդըր նոթոց առաջնորդն, ըստ և ընծեւորն կոնան, և առ յոյն արկանել զպաթէն հայրապետին. և թէ ի Պոլիս նոթոց խորհրդի կոչեցեալն, գնալով ի յամբարտաւանութիւնն և յամբարտաւանութիւն, և զիշխանութիւնն նորին, այսինքն Մայր աթոռին, ի չինութիւն գրաւելով, ձեռքեան ի ճանապարհն ճշմարտութեան» (ՋԱՄ·56)։ Մենք ուզեցինք Սիմէոն Երեւանցիի տարօրինակ տեսութեան, և Կոլոտի պէս կարող և արդիւնաւոր և արժանաւոր անձի մը վրայ յայտնած ձախող դաղափարին ուստր բացատրել, ապահովոչ ոչ մի հիմնական պէտք չունէինք կարապետի ընտրութեան վրայ ծանրանալու, կամ Կոլոտի նախաձեռնութիւնը չատագովելու, զի համարձակապէս օրինաւոր և օգտակար եղած կը դատենք բացառիկ պարագաներու ներքեւ կատարուած բացառիկ կարգադրութիւնը։

ԿԱՐԱՊԵՏԻ ԳՈՐԾԵՐԸ

1948· Կարապետի կաթողիկոսութեան հանդէսը կ'երեւի թէ այն տարին բոլորովին տարբեր կերպարան մը տուաւ Մեծպանքի օրինութեան։ Մեծպանքի կիրակի մըն էր երբ օծումը կատարուեցաւ 1726 փետրուար 27'ին, և զինք երէց ասացը, որ ըստ կ'ըլլայ, մարտ 2 չորեքշաբթի օր, եպիսկոպոսական ձեռնադրութիւն տեղի ունեցաւ, և Յովհաննէս Կոլոտ պատրիարք, տակաւին վարդապետ, եպիսկոպոսութեան բարձրացաւ Կարապետ կաթողիկոսի ձեռնադրութեամբ, Գումգապուի մայրեկեղեցւոյն մէջ։ Իսկ չեռ ասացը (ՋԱՄ.Գ·802) երկրորդ ձեռնադրութիւն մըն ալ տեղի ունեցաւ, և եպիսկոպոսութեան բարձրացան Յովհաննէս կամ Հաննա Երուսաղեմացին՝ Շղթայակիրին փոխանորդը, Մարտիրոս Կուտինայի առաջնորդը, և Թոմման՝ Կոլոտի աշակերտներուն երիցագոյնը (ԿՈՒ·27)։ Մենք հաւանական կը կարծենք այդ երեքներուն ձեռնադրութիւնը դնել անագան 1726 ամառուան մէջ, վասն զի Հաննա վարդապետը Երուսաղէմէ եկած էր կարապետի կաթողիկոսութիւնը չնորհաւորելու Շղթայակիրին կողմէն, և անոր նամակին փոխադարձ պատասխանը բերելու (ԱԱՏ·Բ·10), ինչ որ քանի մը ամիսներու կը կարօտէր։ Այդ ձեռնադրութիւնը տեւի ընծայած է մեծանանդէս տօնախմբութեան մը. իսկ Կոլոտի ձեռնադրութեան առանձինն և յուր օր մը կատարուած ըլլալը կը մեկնենք, իբր առանց հանդիսական ձեւակերպութեանց եղած գործ մը, պատրիարքի եպիսկոպոսանալը՝ իրեն համար ոչ այնչափ փառաւորութեան պայման, որչափ ետ ձգուած պայմանի մը լրացումն նկատելով։ Ուրիշ հանդիսական տօնախմբութեան մըն ալ տեւի ընծայից Վոսփորի վրայ գտնուող Օրթաքէօյ գիւղի հիմնադրակատար Ս. Աստուածածնին եկեղեցւոյն օծումը, որուն վերաչինութեան ձեռնարկած էր Կոլոտ՝ Շղթայակիրին մեկնելէն ետքը (§ 1934), Օծման կատարողը եղած է նոյնինքն Յովհաննէս եպիսկոպոս Կոլոտ, ինչպէս Հաննա կը գրէ, թէ նա ինքն «ըՔեֆըԹեֆեց եկեղեցին, ըՔեֆըյս ֆ-ռ-ռ-ռ»։ Իսկ կաթողիկոսին համար կը գրէ, թէ կոչ չոՔեալ չՔեկոլըն ըՔեյ քէՀն Հանդերձ ի-ր ֆռհռայոպեՔռկոն ղըՔռռ-ն (ՀՆՆ·156)։ Անշուշտ յարմարագոյն դատուած է, որ եպիսկոպոս պատրիարքն ինքն հանդիսադիր կանգնի իւրաչէն եկեղեցւոյն օծման, և տեւի ունենայ եպիսկոպոսական մեծ հանդէս մը կատարելու։ Օրթաքէօյի եկեղեցւոյն օծման թուականը միեւնոյն 1726 տարին է, իսկ ամսաթիւը յիշուած չէ։ Բայց հաւանական կը սեպենք զայն դնել օգոստոս 21'ին, վերափոխման ուխտերդ օրը, նկատելով որ մինչեւ ցարդ Վերափոխման ուխտօրէքը յատկապէս կը տօնուի Օրթաքէօյի մէջ իբրեւ օր տարեկանաց և տարեդարձ նաւակատեաց։ Նկատողութեան արժանի է եւս, որ հանդէսին օրը Հաննա իբր ձեռնադրեալ եպիսկոպոս կը մասնակցէր արարողութեանց։

1949· Օրթաքէօյի եկեղեցւոյն օծման հանդէսը մեծ հնչակ ունեցած է, նոյն օր հրատարակուած Երուսաղէմի պատրիարքու-

թեան պատկանող երեք կանոնադրութեանց համ առնմանադրութեանց համար, որք ժողովրդական խօսից մէջ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հաննայէ նղվնէը անուն կը յիշուին, բայց ոչ թէ Հաննա եպիսկոպոսը, այլ կարապետ կաթողիկոսն է անոնք արտասանողը, և Հաննա իբր պատմական հաստատած է մեզի անոնց յիշատակութիւնը։ Որչափ ալ կարապետ Դաղատիոյ առաջնորդութեան առնէն, ըմենայն ընտրեալ ի Երուսաղէմի պետանելով պետանէր, և ըստ ասոյելոյն Ի-ոբի, հայէր յանդիսոնս և մղէր (ՀՆՆ. 159), սակայն պէտք չենք դիտեր նոր նախաձեռնութեան վերագրել Երուսաղէմի աթոռին ապագային համար դրուած կանոնները, քանի որ կոլոտը կար մէջտեղ, Երուսաղէմի առաջին սրտացաւը և ամէն գործողութեանց հոգին, և քանի որ դեռ կ-Պոլիս էր Հաննա, կոլոտի և Շղթայակիրի միտքերուն արժանաւոր գործադիրը։ Հարկաւ Շղթայակիրին յատուկ հրահանգներով եկած էր Հաննա Երուսաղէմ, և Երուսաղէմի բարեկարգուելէն ետքը՝ անգամ մըն ալ չխանգարուելուն համար հայրապետական իշխանութեամբ հաստատուած կանոններու պէտքը ամէնուն ալ միտքին մօտ պիտի ըլլար։ Այդ կանոնադրութեան գլուխները և բացատրութիւնները անշուշտ ուշի ուշով ուսումնասիրուելուն՝ հանդիսական հրատարակութենէն առաջ, և ոչ միայն Երուսաղէմի պաշտպանները՝ կոլոտ և Հաննա պէտք եղածը գործեցին, այլեւ եկեղեցականութեան և աւագանիին համաձայնութիւնն ալ առնուեցան, որպէսզի արուեստիւ վճիռը ազգային օրէնք և աննահանջելի կանոնադրութիւն համարուի (ՀՆՆ. 159)։ Երեք կանոնները պաշտօնական ձեռ յատուկ կը բերէ Հաննա, և որովհետեւ կ'ըսէ թէ կաթողիկոսը անոնք ջրով Ի իր ինովն սահմանդրեց, ուստի ամենայն իրաւամբ կրնանք յատուկ բերուած պատճէնը, իբրեւ բնագիրին իսկականը ընդունիլ։ Այս նախապատրաստութենէն վերջ, Օրթաքէօյի եկեղեցւոյն օծման օրը, երբ նաւակատեաց կարգը լրացաւ և հանդիսաւոր պատրարքը կարգաց Սողոմոնի աղօթքը (ՄԱՇ. 185), և ուր մաշտոցի խորագիրը կ'ըսէ, թէ սրհիսկոպոսն եպիսկոպոսաց ելեալ յոթեան սրհնեցեք զքոյվրդան (ՄԱՇ. 187), կաթողիկոսն ինքն կանգնեցաւ բեմին վրայ, և պատչաճ առնաբանութեամբ խօսեցաւ յանձն ժողովրդոյ և ոճանայէց և վերջապէսց զերիս սահմանդրութիւնս (ՀՆՆ. 157)։ Այլ թէ ինչու, Օրթաքէօյի եկեղեցւոյն, և ոչ աթոռանիստ մայր եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ այսպիսի հանդիսաւոր և պաշտօնական գործողութիւնը, որոչակի ճշդուած չէ։ Գուցէ վերաշինեալ եկեղեցւոյն հանդէսին առաւելագոյն բազմութիւն մը ունենալ կը յուսացուէր, բայց աւելի հաւանաբար՝ գուցէ վերջնական որոչումը լրացած չէր նախընթաց կիրակէին, որ մայրեկեղեցւոյն ալ տարեկանաց օրն էր։

1950. Այդ երեք կանոնները կ'արժէր թերեւս Հաննայի տուած բնագրական ձեւովը յատուկ բերել (ՀՆՆ. 157), բայց մենք նախընտրած ենք բացատրական ոճով վերլուծել այդ տեսակ դրուածները։ Առաջին կանոնը կ'արգելէ որ պատրիարք կամ վէքիլ չկարենայ իրմէ եկոտա ոտ, և այդ կոչումին պարագաները մեկնելով, եկամուտ կը տեսէ այն որ, 1. ի ոտքէ ներոտաղեմ չէջէ անել. և 2. կոթողէտես Հին և Նոր կոթողոցաց պղծիչ եղել. և 3. ըմենայն վէր և ըմոտա օրէնն ներոտաղեմայ պոտան չէջէ իմացել, և 4. ըմեմա ժամանակս չէջէ վերծել յոմենայն փղծօրէնյ ներոտաղեմի։ Այդ չորս պարագաները այնպէս կը մեկնուին թէ Երուսաղէմի վանքին միաբան չեղողը պատրիարք չկրնար ընտրուիլ (ԱՍՏ. Բ. 11)։ Սակայն ի ոտքէ ներոտաղեմ անել բսելը Երուսաղէմի միաբան բսել չէ, մանաւանդ որ միւս երեքը պարզապէս Երուսաղէմի գործերուն հմտութիւն կ'ենթադրեն, որ առանց միաբան ըլլալու ալ կը տեսցուի։ Բացատական կողմէն կ'արգելուին մարդասպանները և անճոռնիները աղէտ եղած ընտրութիւնները, ըստ օրոոտ և ոմ ըստ ի ներոտոտ, որով ներոտոտ միաբան եղողներուն հետ հաւասար գիծի վրայ կը դրուին և ընտրելի կը նկատուին օրոոտոտ եղողներ, կամ միաբան չեղողներն ալ, ինչպէս էին Գրիգոր Շղթայակիրն ալ և իրեն յաջորդ ընտրուած Նալեանն ալ, որ Երուսաղէմի միաբան չէին, և հնար չէր

բացարձակապէս այնպիսի կանոն մը հաստատել, որով Շղթայակիրի իսկ հրաժարիլ պէտք կ'ըլլար։ Երկրորդ կանոնը կ'արգելէ Երուսաղէմի համար աշխարհական կամ կարգաւոր վիճակաւոր և ընդհանրապէս ամենէ, պապ և նազըր անուանելէ, և կամ այլ ինչ անուանակոչութեամբ։ Այս կանոնը եթէ չատ խստիւ իմացուէր, պիտի արգելէր կոստանդնուպոլսոյ պատրիարքարանէն քննիչ կամ այցելու կամ բարեկարգիչ ալ չղկել. սակայն Կ-Պոլսոյ աթոռը այդ իրաւունքը միշտ գործածեց, մինչեւ իսկ Մայրաքաղաքին Կառավարիչ ալ ղրկեց, իբրեւ առժամեայ պատրիարք և լիազօր իշխանութեամբ։ Որովհետեւ ուրիշ է բացառիկ պարագաներու ատեն ժամանակաւոր կարգադրութիւն մը, և ուրիշ է հաստատուն կերպով Երուսաղէմի մատակարարութիւնը Կ-Պոլսոյ պատրիարքութեան փոխանցելը, որ մինչեւ այսօր եղած չէ, և վերջին օրերը յղացուած միտքերը՝ կանոնիս անհամաձայն կը դատուին։ Ըստ այսմ երկրորդ կանոնին պարզապէս նպատակն է, Երուսաղէմի պատրիարքութիւնը Կ-Պոլսոյ պատրիարքութեան պաշտօնեաներու ձեռքով մատակարարելու դրութիւնը արգելել։ Այդ միտքն է որ բացարձակապէս կը յայտնուի երրորդ կանոնին մէջ, որ կ'արգելու ելել և ինքնագանել ղատրէարքութիւնն օրէնք Սալիմայ ընդ առաջնորդութեան Կոստանդնուպոլսոյ, կամ այլ ինչ պեղոյ առաջնորդութեան հետ պիտի չկցուի Երուսաղէմի աթոռը։ Եւ այս ընդարձակ առումին պատճառով՝ Կ-Պոլսոյ պատրիարքութիւնն ալ առաջնորդութեան անունով յիշուած է, և ոչ թէ երեւանեցիէն գործածուած նախատական ձեւով (§ 1947)։ Իսկ ընտրելի պատրիարքին վրայ աւելի կարեւոր պայման մը կը տեսնենք, Երուսաղէմի բնթացքին պիտակ և գործերուն վարժ եղած ըլլալ, և մարդահաճութեան և անձնասիրութեան աղէտ ընտրուած չըլլալ, քան թէ պարզապէս ի բաց ներելի անել, կամ թէ Երուսաղէմի միաբան եղած ըլլալ. զի գլխաւոր պայմաններուն յարմար չեղողը կը մերժուի յատկապէս, եթէ ներուած, այսինքն եթէ միաբան ալ եղած ըլլայ։ Երկու կանոններուն վերջը նշանակուած է յանգերգը կը կրկնուի. իսկ երրորդին ծայրը աւելի սաստկութեամբ կը դրուի, որ նշանակուած է էական հաստատուն (Հնն. 158)։ Այս ալ կը հաստատէ, թէ այս կէտն է, որ կանոններուն բուն նպատակը կը կազմէ։ Հանգամանք պատահիլ, այդ ամէնը յաւաջ բերելէ հարկ փոփոխութեամբ մը կ'աւելցնէ, թէ այս կանոններուն չարժատիպին էր, ոչ պարտէ նկատի եղելոյն, և ոչ պարտաւորէ ապագային եկելոյն, այլ դիտէ ըստ ընդհանրապէս։ Իսկ եթէ այդ կանոնները կազմելու արժանիքը կաթողիկոսին կը վերագրէ, պարզապէս պատճառից օրէնքի համակերպութիւն է բուածը, թէ ոչ անհնար է որ անոնց նախաձեռնութիւնը կոլոտէ և Հանգամանք սկսած չըլլայ (§ 1949)։ Թէպէտ Հանգամանք որոշակի չգրեր, սակայն յայտնի է թէ եպիսկոպոսութեամբ փառաւորուած, և այդ կանոններու հետեւակուելովը ուրախացած, նա ինչն Հանգամանք փութայ չուտով Երուսաղէմ տանել հաստատուած կանոնները, և Շղթայակիրն ալ ուրախացնել հղելութիւնները հաղորդելով։

ԲՈՒՆ ՆՊԱՏԱԿԸ

1951. Երեք պլուխները ամփոփելով բուն հիմնական և հաստատուն կանոն կը նկատենք, Երուսաղէմի պատրիարքութիւնը չիանալ Կ-Պոլսոյ կամ ուրիշ մէկ, զորօրինակ Սսոյ, աթոռին հետ կցելով, և Երուսաղէմը փոխանորդներու կամ մատակարարներու չի յանձնել։ Ըստ այսմ բուած է, որ ոչ միայն կոստանդնուպոլսոյ, այլեւ որեւէ այլ ինչ պեղոյ առաջնորդութեան հետ պիտի չկցուի

ԿԱՐԱՊԵՏ ԵՒ ԼԱՏԻՆՆԵՐ

1952. Կարապետ կաթողիկոս, Կոստանդնուպոլսոյ մէջ ընտրուած և օծուած, անհակառակ կերպով բնդունուեցաւ թէ Մայրաթոռոյ և թէ Պարսկաստանի Հայութեան կողմէն, և հրաւիրուեցաւ իսկ փութալ իր աթոռը հանդիլ։ Ինքն ալ համամիտ էր օր յաւաջ աթոռանիստին մէջ գտնուիլ, սակայն պա-

բազմաներ չատ աննպաստ էին, զի Օսմանցիք Երեւանի գաւառը գրաւելէն ետքը, դէպի Ղափան յարձակումներու ակսած էին, ուր ոչ միայն Գարսիկնները, այլեւ Դաւիթ բէգի հայազունդները իրենց դէմ կը պատերազմէին (§ 1943), ուստի դիւրին չէր եւ ոչ ալ խոհականութիւն էր էջմիածին երթալ։ Այս պատճառով պարտաւորուեցաւ միջոց մը կ–Պոլիս մնալ, բայց իւր օրերը անդործ անցընել չուզեց, և աչխատեցաւ հաւնեցուչխուքեան կերպերով բառնալ կաթողիկամիտ կուսակցութեան գայթակղութիւնը, իւրմանել Հայոց եկեղեցիներէն խորչելու վարանգաւոր դրութիւնը, և նաչտարար իւաղաղութիւն հաստատել Հայութեան մէջ։ Բանակցութիւններ եղան երկու կողմերու մէջ, և կարապետ կաթողիկոսի և իրեն գործակցող, թերեւս և առաջնորդող, Կոլոմ պատրիարքի կերպերը չինարար ազդեցութիւն գործեցին, և չատ աւելի մեբձաւորութիւն յայտնուեցաւ լատինամիտ կուսակցութեան կողմէն։ Անոնք ուզելով որ իրենք ալ պահանջի մը դոհացում ստացած երեւան, առաջարկեցին որ իւափանուին երեք սուրբ ժողովներուն տօներուն առիթ երգուած, Ոչ հրաչալի մանկունք չարականին ծայրի երեք Տէր է՝, և Աւետեաց, և Դիվցիկ տուները, որոնց մէջ նզովք կ'արձակուի Քաղկեդոնի ժողովին և Լեւոնի տոմարին դէմ։ կաթողիկոս և պատրիարք հաւանեցան այդ վերջին, երէ անով հնար ըլլար ցանկացեալ իւաղաղութիւնը հաստատել։ մանաւանդ որ այդ երեք տուները չարականին նախնական իմբագրութեան մաս չեն կազմեր, և յետոյ մուծուած կցկտուր յաւելուածներ են, ինչպէս որ պարունակութիւնն ալ կը ցուցնէ։ Շարականը Նիկիոյ և Կոստանդնուպոլսոյ և Եփեսոսի սուրբ ժողովներուն համար չինուած է, և անոնց որոչումները կը յիչատակուին, և բնաւ ատնոնց հետ կապ չունին ոչ Քիւոսկորոսի գումարած Եփեսոսի ժողովը, և ոչ Մարկիանոսի գումարած Քաղկեդոնի ժողովը, որոնք ժամանակով յետագայ են։ Լեզուն իսկ մանկաւել ոճ մը ունի՝ առջի հինգ տուներուն հետ բաղդատուած ատեն, և բնաւ Հայ եկեղեցւոյ կարգաց ու կանոնաց հակառակ չէր, երեք յաւելուածական տուները դնդչիլ, և ըստ այմ ալ հրամայեցին կաթողիկոսն ու պատրիարքը։

1953. Ասոր բաւական եղաւ որ լատինամիտ էչմածնեցւոց և Խզնաբերդ ակսան երթեւեկել յերկեզեայս Հայոց, և ԼԱՏԻՆԱԿԱՆ ԿՈՂՈՊԻԿՈՆԵՐ պայն յոբելեանի դէմ, և կը յայտնէին թագաւորի ընծայ (ՉԱՄ. Գ. 803)։ Նոյնինքն Լատին եպիսկոպոսն ալ 1727 ապրիլ 2'ին կարապետ կաթողիկոսին այցելութեան եկաւ, և Հայոց մայրեկեղեցին մտնելով աղօթեց, և կաթողիկոսին ու պատրիարքին հետ մտերմական տեսակցութիւն ունեցաւ թարգմանի միջոցաւ, ուսկից յետոյ կաթողիկոսն ալ այցելութիւնը փոխանակեց փոխանորդ Մանուէլ վարդապետը դրկելով։ Լատինական հնազանդութիւն մըն է, որ երբ դժուարութեան հանդիպին՝ քիչով գոհանան, և մնայեալին վրայ լռեն, նորէն անոնց վրայ անգրաղառնալու համար, երբ առաջին դժպհի տպաւորութիւնը անցնի։ Նոյնը գործածուած է այս անգամ ալ։ Հռոմէականք կ'ըսեն թէ Լատին եպիսկոպոսին առաջարկութեան վրայ կարապետ յանձն առաւ պահպանել նամակ մը դրել, և այս է թերեւս հռոմէականներուն նամակ կոչուածը, որ պատչաճ ոճով կը խնդրէր, որ կրճեն եկեղեցականներուն վերցուի, և պապին կ'առաջարկէր որ իրենց կրօնամոլ ձգտումները սանձէ, որ ազգը դ' եա գթածոյ է հանապազորեայ ազմուկը։ Լատինները իրենց սովորական ոճով պատուհր հասած կը կարծեն, որով անմիջապէս առջեւ կը նետուին այլ եւ այլ պայմանք վանդիմանելու։ Բայց որովհետեւ անոնք կաթողիկոսն և պատրիարքէն և հաւատարիմ հայդաւան ժողովուրդէն չէին կրնար ընդունելի, ուստի նամակը անպատասխանի կը թողուի։ Հռոմէականք ալ կը գրեն, թէ կարապետ այլեւս լուռ եղեւ (ՉԱՄ. Գ. 803), և այսչափիկ կը բաւէ հաւաստելու որ կարապետ, որչափ ալ խաղաղութեան ձգտումուտ, երբեք իւր եկեղեցւոյն հիմնական սկզբունքներէն հեռացող չէր, և ոչ ալ չոչնչացողի մըն էր (§ 1946)։

1954. Ապրիլ 2'էն ետքը, որ Լատին եպիսկոպոսին այցելութեան օրն էր, երկու ամիս եւս կարապետ կ–Պոլիս մնաց, և տեղ-

ՆԵՐՈՎ որ իրեն համար հոն ընելիք մնացած չէ, յուսին 7'ին կը մեկնի, հանգարտ ուղևորութեամբ դէպ Էջմիածին երթալու համար։ Նախ ամիս մը կը մնայ Պրուսա, անկէ կ'անցնի Ականիբրիա, ուր պէտք է աւելի ալ մնացած ըլլայ՝ իբր իւր նախկին աթոռը, և ուր կըրնար անձնական գործեր ալ ունեցած ըլլալ։ Ականիբրիայէ կ'ուղևորուի Եւդոկիա, իսկ անկէ անդին իւր հանդիպած տեղերը յիշուած չենք։ բայց անուշա չէ կրցած գոնց ընել Սեբաստիան, Երզնկան ու Կարինը, մինչեւ հասնէր Էջմիածին, ուր կը գտնուի 1728'ին սկիզբները, թէպէտ ամսաթիւը յիշուած չենք գտներ։ Ըստ այսմ ընտրութենէն երկու տարի ետքը կարապետ կաթողիկոս իւր աթոռը հասած կ'ըլլայ, իբր տարիւրէն կ-Պոլսոյ մէջ, և հոթը ուիր ամիս առաւ անդ առնէն անցընելէ ետքը։ Հարկաւ այդ միջոցին Մայրաթոռին մէջ եպիսկոպոս մը կար, որ իբր տեղակալ կամ փոխանորդ գործերու վարիչն էր. իսկ թէ ով էր, յիշատակներուն մէջ չենք գտներ։ Կանխաւ որոշուած տեղեկութեանց համեմատ կարապետ արդէն ծեր էր ընտրուած առնէն, թէպէտ ճիշդ տարիքը յիշուած չէ, բայց բաւական յառաջացեալ տարիք մը կ'ենթադրուի, որովհետեւ Էջմիածին հասնելէն ետքն ալ չատ չապրեցաւ, և յաջորդ տարւոյն վերջերը 1729 հոկտեմբեր 2'ին, վարագայ խաչին հինգշաբթի օրը, վախճանեցաւ Էջմիածնի մէջ (ՋԱՄ·Գ·805), և թաղուեցաւ Ս. Հռիփսիմէի վկայարանին գաւիթին ձախակողմը (ՋԱՄ·29)։ Էջմիածնի մէջ անցուցած ժամանակին կարճութիւնն ալ, և իբ ծերացեալ տարիքն ալ չէին ներեր կարապետ մեծ արդիւնքներ ունենալ, այսու հանդերձ գեղեցիկ յիշատակ մը թողած է Մայրաթաղարի խորանին կամարին մէջ նկարել տալով երկոտասան առաքելոց պատկերները, համաձայն հին եկեղեցիներու աւանդական ձեւին, նաև և հոգւոյով չքէնաօջաղաբ՝ երեւանեցիին բացատրութեամբ (ՋԱՄ·28), որով կ'իմանայ վաւերական կաղապարներ հին և նոր ստացութեանց համար։ Կարապետ չնկած չատ խառնակ և չիոք էր Երեւանի պատմին կացութիւնը, և թէպէտ յետոյ քիչուչատ կանոնաւոր ձեւի մտնելու կը սկսէր, սակայն Դաւթանի կողմերը յուզմունքներ և պատերազմական չփինդներ նորէն արծարծուեցան կարապետի պալէն ետքը։

ԿԱՐԱՊԵՏ ՅԷՋՄԻԱԾԻՆ

1955. Դաւիթ Սիւնին, ժողովուրդին Դաւիթ բէգր (§ 1941), վերջին պատերազմ մը մղած էր 1725'ին Դաւթան արչաւող Թիւրքմէն բազմութեան դէմ, անոտոյգ կռիւով, դի թէպէտ մասնաւոր յաղողութիւններ ստացած էին ինքն և իրենները, սակայն արդէն մնացած էին Թորոս Ջաւրնդուրցին և Փարսատան Հալիձորցին, գժտած էր Միխիթար Դաւթանցին, գերի ինկած էր Ստեփանոս Շահումեանը, վիրաւորուած էր Պալի Փարսատանեան. բայց գժտելը բարեկամացաւ, գերեալը ազատեցաւ, և վիրաւորեալը բժշկուեցաւ (ՋԱՄ·Գ·791), և Դաւիթ իւր կեդրոնը Շէնսէրէ Հալիձոր փոխադրելով, պատերը յարմար կը կարծէր հանդերձ կերպով կոթողելու զօրերը (ԼՂՕ·Բ·372)։ Ձմեռը խաղաղ անցաւ, բայց ահա 1726'ի սկիզբը նոր ապստամբ բացուեցաւ Դաւիթի առջեւը։ Օսմանեան բանակը արչաւեց Դաւթանի գաւառը գրաւելու, և Հայեր մեծամասնութեամբ անձնատուր լլլալու փութացին, Օսմանցիներու այնտեղ անունին տպաւորութիւնն ներքեւ։ Ար մը Դաւիթի ինքզինքը միայն 17 հոգիով մնացած գտաւ, բայց չուտով 453 զինեալներ տեսաւ նա իւր չուրջը Հալիձորի մէջ, ուր ապաւինեցան նաև երեք եպիսկոպոսներ, 13 քահանաներ, և 40 հաւատաւոր կուսաններ։ Դաւիթ մտածեց մի՛ գուցէ Աստուծոյ դէմ գործ մը և ամբարտաւանութեան ձեռնարկ մը նկատուի իւր դիմադրութիւնը, ուստի աղօթքով և հաղորդութեամբ ուղեց սիրտը հանդարտել։ Նոյնը ընել տուաւ իրեն հետ եղողներուն ալ, և ահա 1726 մարտ 5'ին, Մեծպահքի 13'րդ օրը, Հալիձորի առջեւ հասաւ 70,000'ի այլազգի բանակ մը, որուն մէջ կը գտնուէին նաեւ Նախիջեւանի, Ագուլիսի, Ջահուկի, Ջաւրնդուրի և Բարկուչատի անձնատուր Հայ գունդերը, չհաչուելով ծառայութեանց և բռնակրութեանց ստիպեալ գիւղացիներու բազմութիւնները (ՋԱՄ·Գ·793)։

Ցիշենք որ ճիշդ այդ չփոթ միջոցին կը կատարուէր Կ-Պոլսոյ մէջ կարապետի ընտրութիւնն ու օծումը (§ 1944)։ Դաւիթի իւր սակաւաթիւ գունդով՝ Օսմանցիներու բանակին վրայ տարած Հալիձորի յաղթութիւնը, Մելրիի գրաւումը, և Հալիձորի երկրորդ պատերազմը, առասպելական վէպերու կարգը պիտի անցնէին, եթէ ականատես Շահնուամեան չլինէր պատմողը։ Դաւիթ յարաբերութեան մտած էր Պարսից օրինաւոր թագաւոր կարծուած Թահմազի հետ, որ Դաւիթի քաջութիւնը տեսնելով, զայն ընդհանուր հրամանատար նշանակեց իւր գունդերուն, և այս անգամ Դաւիթ նոր դիրքով և նոր աչխոյժով կրկին գործի ձեռնարկեց 1727'ին, իբր ինքնագլուխ իշխան։ կարծես թէ Օրիի երազած Հայոց ազատագրութեան արշալոյսը կը ծագէր։ Դաւիթ յաջողութիւն ունեցաւ Մելրիի և Օրուսպատի վրայ, Ագուլիս ալ մտաւ, բայց Հայոց դաւաճանութեամբ թողուլ պարտաւորուեցաւ, թէպէտ յաղթական նահանջով մը։ Բայց Դաւիթի նոր դիրքը ճշմարիտ յաջողութեան առնաւատչէայ չեղաւ։ Պարսիկ գունդերը օգնութենէ աւելի չփոթութիւն կը բերէին։ Հայերու մէջ զօրացաւ նախանձն ու հակառակութիւնը, և չատերը գոհայուցիչ գտան Օսմանեան տիրապետութեան ներքեւ մնալը։ Դաւիթ ալ հիւանդացաւ անտանելի աչխատութեանց երեսէն, Հալիձոր դարձաւ, և 1728'ին սկիզբը մեռաւ այն տեղ, նոր տարուըն նոր գործունէութեան ձեռնարկելէ առաջ։ Այդ առ երեսս հանդարտութեան միջոցն է, ուսկից քաջալերուած կարապետ կաթողիկոս Էջմիածին կը դառնար (§ 1954)։

ՇԱՐԺՈՒՄԻՆ ՎԵՐՋԸ

1956. Դաւիթի յաջորդ նշանակուեցաւ Մխիթար, որ առաջ անոր տեղական ու սպարապետն էր, բայց Աւետիք Հալիձորեցի քահանային՝ պարզապէս Տէր-Աւետիք կոչուած զօրավարին նախանձը չարժուեցաւ, և ներքին գժտութեանց սերմեր բողբոջեցան Հալիձորի մէջ, որ տակաւին Օսմանեան բանակին դէմ կը դնէր։ Միւս տարին 1729'ին Օսմանեանք Հալիձորը պաչարեցին, և բնիդապահներէն մաս մը Տէր-Աւետիքի դլխաւորութեամբ անձնատուր բլլալու կողմն եղան, հակառակ Մխիթարի կարծիքին։ Երբոր Տէր-Աւետիք երկու ընկերով բանակցութեան գնաց, Մխիթար փախաւ. և Հալիձոր դուռները բացաւ, բայց հակառակ եղած խոստումներու՝ կոտորածի և գերութեան մատնուեցաւ, իսկ Տէր-Աւետիք ազատ թողուեցաւ։ Մխիթար կրցաւ նորէն գունդ մը կազմել և բաւական ներգործութիւն և վնաս հասցնել Օսմանեան բանակին 1729 տարուան մէջ, բայց երբ ներքին գործերուն մէջ ամրացած ձըմեռնային հանդարտութիւնը կ'անցընէր, իրեն դէմ ոտացած Հայեր, հրազէնով սպանեցին զինքը, և գլուխը կտրելով Օսմանեանց հրամանատարին ընծայ տարին մինչեւ Թավրէզ։ Այս վատ սպանութիւնը տեղի ունեցաւ 1730 տարուոյ սկիզբները։ Այդպէս վերջացաւ Օրիին մտածած, և Դաւիթին կազմակերպած Հայկական չարժումը, զի Մխիթարի յաջորդ չգտնուեցաւ, և Տէր-Աւետիք ալ արդէն Անկիւրիա քաչուած էր, անկէ ալ Հռոմ գացած կ'ըսուի (ՁԱՄ. Գ. 800), ինչպէս ամէն փորձանաւոր եկեղեցականներ, իրենք ապաստանի քաղաք հոն կը դիմէին։ Հռոմ ալ դաւանափոխութեան անհրաժեչտ պայմանով դիւրին պաչտպանութիւն մը կը չնորհէր հետեւաբար Արեւմուտքին մէջ։ Իսկ Մխիթարէ մնացած զինուորներ և անոնց գլխաւորներ քակտեցան ու ցրուեցան, ոմանք միւս Հայերու պէս կացութեան համակերպեցան, ուրիշներ Պարսիկ ծառայութեան մտան, ոմանք ալ Յովհաննէս Գուգարացիին մօտ գացին, զոր չարժումին սկիզբը յիչեցինք (§ 1941), և որ տակաւին ամիսի և խոհական կերպով իւր դիրքը կը պահէր, առանց արկածալից գործերու ձեռնարկելու։ Ղափանի չարժումին ջնջուելուն հետ Շիրվանի չարժումն ալ կը վերջանար։ Շիրվանի հայ գունդն ալ 1726'ին յաջողեր էր նահանջի ստիպել Ղաբաթաղ արչաւող Օսմանեան գունդը, բայց ասիկայ Եսայի կաթողիկոս-զօրավարին վերջին գործը կ'բլլար։ Օսմանցիներուն հետ համաձայնելով՝ Ռուսներուն հետ քաչուիլը, և վրայ հասնող Պետրոս Մեծին մահը, յուսահատեցուցին Շիրվանի չարժումին գլուխներըը (§ 1932), որոնք 1725 մարտ 10'ին տակաւին Պետրոս Ձարին կը դիմէին, անոր

մանը լսած չըլլալով (ԵՉՆ. 418)։ Եսայի հիասթափուած և յուսախաբուած ասպարէզէ քաշուեցաւ, և այլևս իր անունը գործի վրայ չլսուիր՝ թէպետև կը յիշուին Ռուս պաշտօնատարներու ըրած դիմումները (ԵՉՆ. 432), որոնք չարունակեցին մինչև իր մահը 1728'ին, նոյն այն տարին որ Դաւիթ ալ մեռաւ։ Աւան կարապետեան Ղարաբաղցի մելիքը գլուխ կեցաւ՝ տակաւին չարժումի հետեւող գլխաւորներուն, որոնք իւզբաշիներ կը կոչուէին. բայց բոլոր իր գործունէութիւնը Ռուսներէն օգնութիւն ստանալու ջանքին մէջ ամփոփուեցաւ, որուն բանագնացն էր իր եղբայր Թարխան մելիքը։ Սակայն Պետրոս Մեծի յաջորդները, կատարինէ Ա կայսրուհին 1725'ին, և Պետրոս Բ մանկահասակ կայսրը 1727'ին, անոր ոչ հոգին ունէին և ոչ ձիրքերը, որով անլսելի մնացին Հայերուն փափաքները ու առաջարկները, որոնք երկու տարի ետքն ալ 1730 մարտ 30'ին կը յայտարարէին, թէ 30,000 զինեալ Հայեր ցրուելու պարտաւորուած են, բայց պատրաստ են նորէն զինուիլ՝ եթէ Ռուսական բանակ մը առջևնին անցնի (ԵՉՆ. 447)։ Ղարաբաղի այդ կոթովի Հայերուն առաջարկուած ամենամեծ օգնութիւնը, իրենց բնագաւառէն դաղթելէն էր, որուն սակայն քիչեր համաձայնեցան։ Գլխաւորներէն քանիներ, ինչպէս Պետրոս Մարգիսեան և եղիազար Մաչատուրեան Ռուսական բանակին ծառայութեան մտան, Հայ հետեւակներու յատուկ վաշտին մէջ, և վերջինս զօրավարի աստիճանի ալ բարձրացաւ լազար Խրիստոփորով անունով, Ռուսահայ զօրապետներու անդրանիկը (ԼԷՕ. 397)։ Աւան մելիքն ալ նոյն ճանապարհն հետեւեցաւ հինգ ընկերներով, և Իվան Կարապետով գնդապետ եղաւ, որով 1730 թուականը Ղարաբաղի մէջ ալ հայկական չարժումին վերջնանալը տեսաւ (ԼԷՕ. 399), ինչպէս եղած էր Ղափանի մէջ Մխիթարի սպանութեամբը։ Այդ ամփոփ տեղեկութիւնները հարկ եղած կը սեպենք քաղել, քանի որ ազգային եկեղեցւոյ պատմութեան տեսակէտէն միշտ անհրաժեշտ է այդքի առջև ունենալ Հայութեան ազգային կացութիւնը։ Վերջին դէպքերը տեղի ունեցան կարապետ կաթողիկոսի մահուանէն ետքը Մայրաթոռոյ պարապութեան միջոցին։

1957. Կաթողիկոսի յաջորդին չանցած, պէտք կը սեպենք միւս աթոռներու մէջ կատարուած եղելութիւնները քաղել՝ ժամանակակից յարաբերութիւններուն զուգընթաց յառաջացնելու համար։ Կոստանդնուպոլսոյ աթոռին գործերուն մէկ մասը կոլոտի չինարար ձեռնարկներուն կը պատկանին, մնացածները կաթոլիկամիտ ձգտումներէ յառաջ եկած չփոթներու չարունակութիւններն են։ Իբրև չինարար ձեռնարկներ ունինք Իսկիւտարի Ս. կարապետ եկեղեցւոյն վերաշինութիւնը 1726'ին, անոր մերձաւոր երուսաղէմի հոգեւորականին նորոգութեան հետ. Յասքէօյի Ս. Սարգիսոս եկեղեցւոյն շինութիւնը 1729'ին, և վերջապէս Գալաթիի Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյն ձեռնարկը, որ 1729 յուլիս 16'ի մեծ հրդեհին այրած էր, Ցոյներու 13 եկեղեցիներուն հետ (ԿՈՒ. 30)։ Իսկ կաթոլիկական խնդիրը, որ պահ մը թուլցած էր, Լատին եպիսկոպոսին հետ կազմուած համերաշխութեան վրայ, կրկին արծարծեցաւ, երբոր կաթողիկոս և պատրիարք չանձն չառին այն նոր պայմանները, որք Հռոմէ առաջարկուեցան վան Ֆլոնեն (§ 1933)։ Լատին եպիսկոպոսը, որ նախապէս հաւանած էր իրեն հետեւողներուն Հայոց եկեղեցին երթալուն, և ինքն ալ անձամբ գացած և աղօթած էր, կրկին սկսաւ միտքերը պղտորել և նոր դրամաններ արձակել, որով օր ի բաց չկրնայինք Հայոց, օրըստ եղելոյ եղեն ի հրամանէ Լատին եպիսկոպոսին (ԶԱՄ. Գ. 804)։ Աւուր անգամ մըն ալ կը հաստատուի, նոյնիսկ Հռոմէականներու վկայութեամբ, թէ Լատիններու անձնահաճ կարգադրութիւնը, և առջի օրը օրինաւոր սնապուածը երկրորդ օրը ապօրէն հոչակելը, պատճառ է միամիտ ժողովուրդին մէջ սերմանուած գժտութիւններուն և մշակուած հակառակութիւններուն։ Հռոմէականաց վկայութեամբ կը հաստատուի նաեւ, թէ Յեսուան ուրիշն երկոտին կողմանէ մաքնել զընդեռնս յաթեան այլազգեաց, և ուրանել զերբեր ի գեղմեն գոնա (ԶԱՄ. Գ. 804)։ Այս ալ կը տեսնէ թէ կաթոլիկամիտներուն կողմէ հայագաւանները դէմ քստութիւններ ու զրպարտութիւն-

ներ եղած են, որոնց համար չեն կրնար պետական դատաստանի արդարացումը յառաջ բերել։ Մինչ միւս կողմէն Հայոց պատրիարքին վրայ կը ծանրանար պետական ստիպումը, թէ նայեցը է ժողովուրդ ոչ, չէ տեղին հպատակ լինին եւ, և զի հնազանդեալ չլինի ա՛ն (ԶԱՒՐ. Գ. 807)։ Այս ալ վկայողը նոյն իսկ իրենցմէ է։

ՂԵՒՈՆԱՑԱԿԻՐԻՆ ԱՆՈՒՐԸ

1958. *Երուսաղէմի աթոռին վրայ Ղեւոնդեան Շղթայակիր իւր գործունէութիւնը առջեւ կը տանէր, երբոր կ-Պոլսոյ մէջ հայկական ազգային հաստատութիւններ կը կազմուէին (§ 1948), և Երուսաղէմի կանոնադրութիւնները կը հաստատուէին (§ 1950)։ Շղթայակիրը տակաւին վիզին վրայ կը կրէր այն երկաթեայ անուրը, զոր 1718'ին անցուցած էր Երուսաղէմի եկեղեցական կացութիւնը չօշափելի կերպով պատկերացնելու համար (§ 1926)։ Ութը տարիներ անցեր էին այն օրէն, և կոստանդնուպոլսոյ մէջ Երուսաղէմի ազատութիւնը կը նշանակուէր Հաննայի բերած նպաստաւոր տեղեկութիւններով, և Երուսաղէմի ապագան ապահովող կանոններով։ Այլեւս անուրը իւր նշանակութիւնը չունէր, և ի դուր Շղթայակիրը փորձեր և փորձանքներ վտանգելով ջրի է պարունակ էրբէր (ՀՆՆ. 154), և այս մասին հարկաւ Հաննա ալ սրտաճմլիկ տեղեկութիւններ տուած էր։ Ասոր վրայ օրհնեալ կաթողիկոս և հնդապատիւ պատրիարքն որոշեցին Գրիգորը ստիպել երկաթը վիզէն հանելու, վասն որոյ ընտիկ ինչ մէյ փրեցին նմա, հանդերձ ոմանց ժողովրդապէտ, և քաշմալան ազերսանօք աղաչեցին, չի հանցե ջրկուին է պարունակ էրմէ։ Ջմռոցան այդ սաստիկ յատուկ նուիրատուութիւն մըն ալ յղել Երուսաղէմ, և նամակին հետ եղին արդիւնաւոր չէմպոփէս, և յայտարարեցին թէ քանի որ պարտքերը կը ջնջուին և աթոռը կը չքեղազարդուի, այլեւս ա՛ն է ճահ չի օրհնեցան այն՝ է մէջ այն երկրին ջրը չըլլայ (ՀՆՆ. 155)։ Նամակն ու նպաստը տովորաբար Հաննայի գրութեամբ Երուսաղէմ ղրկուած կ'ըսուի (ԱՍՏ. Բ. 10), սակայն մեր տեսութեամբ յարմարագոյն է Հաննայի ձեռօք տարուած ըսել, երբ Երուսաղէմ կը դառնար (§ 1951), և կարծես թէ ինքն Հաննա ալ իբր եղեւրութեան ներկայ և ականատես մը կը գրէ, թէ Շղթայակիրը հինգ երես ղէրէն ոչնչանի, բաղմ օրհասէ եհան ղերկրին է պարունակ էրմէ (ՀՆՆ. 155)։ Հարկաւ հանելու գործողութիւնն ալ նոր եղեւրութեան մը պատճառ եղած պիտի ըլլայ, ոչինչ ամբողջանալ փակուած, և ութը տարիէ իվեր քրտինքներով ժանգոտած օղակը բանալու և վերցնելու համար, ըստ ոչխարվ ընդ Աստուած անցուցած էր ալ հանել է պարունակէն էրմէ (ՀՆՆ. 145), և անչուշտ կատարեալ խղճմտութեամբ անչարժ պահած էր մինչեւ վերջին օրը։ Գրիգոր Շղթայակիր՝ երբ կաթողիկոսին և պատրիարքին և ժողովուրդին նամակին կը համակերպէր, գիր մըն ալ կը գրէր չի ընդհակառակ լինիցի։ Իսկ անցեղոյն յիշատակն ալ յաւերժացնելու համար, Սուրբ Գինա անունով սեղան մը կը կանգնէր Սուրբ Էջմիածին փոքրիկ եկեղեցւոյն մէջ, է չէզոք ոչխար Հայոց (ՀՆՆ. 156), և վիզին կրած անուրը կը դնուեցէր է ոչնա նոր (ԱՍՏ. Բ. 10)։ Շղթայակիրին անուրը օղակաւոր շղթայ մըն է եղած, բաւական ծանր, զոր ամրացուցած է վիզին չուրջը, և ետքէն դրած Սուրբ Սիոնա սեղանին ներքեւ եղած սիւնակին։ Այնտեղ մնացած է մինչեւ վերջին դարուն կէսերը, և այժմ իբր թանկագին մասունք մը կը պահուի Ս. Յակոբեանց տաճարին գանձարանը։*

ՅՈՒԱՉԱՏԻԿԻ ԽՆԴԻՐ

1959. *Շղթայակիրին նորանոր ձեռնարկներէն յիշատակութեան արժանի են Ս. Յակոբայ եկեղեցւոյն նորոգութիւնը, որուն հրամանագիրը կոլոտ պատրիարք 1727'ին ստացաւ, և Շղթայակիրին ղրկեց Սեղբեստրոս Երեւանեանց Ակնեցի իշխանին հետ, որ հրովարտակին ստացութեան ալ աշխատած էր (ՀՆՆ. 161), իբր թարգման Անգլիոյ դեսպանատան և իբր պալատական եպարքոսութեան (ԱՍՏ. Բ. 13)։ Սեղբեստրոս, որ եւ Սեղբոս ամիրա, նոյնչափ բարեպաշտ որչափ մեծահարուստ, մեծամեծ բարերարութիւններ կատարեց Երուսաղէմի մէջ, ուր իբրեւ երկու տարի մնաց և միշտ յօգուտ աթոռին աշխատեցաւ։ Ս. Փրկիչ վանքին չուրջի խնդիրն ալ մեծամեծ նեղութեանց պատճառ կ'ըլլար Հայերուն, որուն համար Գրիգոր*

պատրիարք չատ աչխատեցաւ, և արքունական հրաման ալ հանել տուաւ Կոլոտի ձեռքով, որով պահ մը կացուխիւնը մեղմացաւ (ԱՍՏ. Բ. 15)։ Ծառգատիկի տարբերութիւնը 1729'ին ալ տեղի պիտի ունենար, և կանուխէն սկսան Հայերուն և Յոյներուն բանակռիւնները, որոնք նորէն ձախող արկածներ գուշակել կու տային։ Շղթայակիրը ժամանակին բանակցութեան մրտաւ Յոյներուն փոխանորդ Մելետիոսի հետ, զի Քրիսանթոս պատրիարք Ուլահոց երկիրը կը գտնուէր։ Գրիգոր առաջարկեց կանուխէն կերպ մը մտածել որ Հայերուն և Յոյներուն չփուխները արգելուին գատկին առթիւ, և այս նպատակով յարմար դատեց, որ Յոյներուն գատկին Հայեր; և Հայերուն գատկին Յոյներ Ս. Յարութեան տաճարը մտնելէ արգելուին։ Առաջարկը ընդունելի դատուեցաւ, Քրիսանթոս պատրիարք ալ 1728 նոյեմբեր 8'ին Պուքրէշէ գրած նամակովը հաւանութիւն յայտնեց Կոլոտին (ԱՍՏ. Բ. 18), որուն դիմում եղած էր բանակցութիւնները լրացնելու Յոյներուն հետ, և Կ-Պոլսոյ պատրիարք Պայիսիոսի հետ ալ համաձայնութիւն հաստատել։ Առանց ալ հաւանութեամբ առաջարկը պետական հաստատութեան ներկայուեցաւ, և Կ-Պոլիսէ յատուկ պետական պաշտօնեայ ալ ղրկուեցաւ Երուսաղէմ, գործադրութեան հսկելու համար։ Այս նախանոգ գործութեանց չնորհիւ 1729 ապրիլ 6'ին Յունաց, և ապրիլ 13'ին Հայոց գատիկները, նախընթաց Զատկարանաց օրերն ու Ծրագալոյցի լուսահանութիւնը խաղաղ կատարուեցան և չէ՛ չէ՛ ինչ վճռ կամ խռովութիւն (ԱՍՏ. Բ. 24)։ Ուստի անհիմն զրոյցի արձագանգ է ոմանց գրիլը, թէ Եղեն դեղտեղ ազմուկ, և սպանան եղեւ է Հայոց, և եղեւ ես է Յունաց (ՉԱՄ. Գ. 804)։ Ամէն բան աւարտելէն ետքը, ուխտաւորութենէ դարձող Յոյներու թելադրութեամբ վէճեր տեղի ունեցած են Կ-Պոլսոյ մէջ, և Հայերու դէմ ամբաստանութիւններ եղած, և կառավարութեան միջամտութիւնը հրաւիրուած, և կնսարիոյ մէջ գրգռութիւններ յուզուած, և չրջակայ քաղաքները տարածուած։ Բայց Կոլոտի միջամտութեամբ և կառավարութենէ ստացած հրովարտակներով խնդիրները փակուեցան, և Հայեր ու Յոյներ սկսան նորէն լաւել սէրով և խաղաղութեամբ ընդ դմդան (ԱՍՏ. Բ. 28)։ Շղթայակիրը իր գիրերով և յորդորներով նպաստած է միջադէպին լուծուելուն, որ Երուսաղէմի մէջ մեծ ազդեցութիւն չունեցաւ, զի եղելութիւններ հոն յայտնի էին։ Շղթայակիրը Լատիններու հետ ալ վէճեր ունեցաւ Պատանատեղւոյն և Իւղաբերից սեղանին կիրառութեան և զարդերուն պատճառով, բայց յաջողեցաւ գատաստանով հաստատել տալ Հայոց իրաւունքները, և նորոգել սնփականութեանց և ստացութեանց վաւերագիրները (ԱՍՏ. Բ. 29)։ Այս խնդիրներն ալ տեղի ունեցան 1730'ին։

1960. ԿԻԼԻԿԻՈՅ ԱՔՈՈՐ *մտադրութեան արժանի եղելութիւններ չներկայուին, բաւական ատեն է, որ մեր տեսութենէն վրիպեցաւ։ Վերջին անգամ յիշեցինք Մատթէոս Սարիի կաթողիկոսալը* (§ 1829), *որ հօթը տարի աթոռը գրաւելէ ետքը լքած և Կ-Պոլիս եկած էր 1701'ին, զի Պետրոս Բերիացի կրցեր էր Բերիոյ մէջ Դաւիթ և Ազարիա կարկառելիները կազմած հակաթոռութիւնը վերանորոգել, և Մատթէոս Սսոյ մէջ մանակի կաթողիկոսութիւն վարելէ աւելի, հակաթոռը ընկճելու համար Կ-Պոլիս էր եկած* (§ 1856)։ Հոն նորանոր ձգտումներ յղացաւ և Կիլիկիան մոռցաւ, թէպէտև յաջողութիւն չգտաւ, և մինչև ութսունական տիպուեցաւ (§ 1887)։ Պետրոս Բերիացին, որ Պիծակ ալ կոչուած է, պահ մը ինքզինքը Կիլիկիոյ կաթողիկոս կարծեց Մատթէոսի հեռանալովը և Սսոյ աթոռին անտէրունչ մնալովը, սակայն երթոր Մատթէոսի բացակայութիւնը երկարեցաւ և դառնալուն յոյսը կտրուեցաւ, Սսոյ միաբանք և ժողովուրդը նոր կաթողիկոսի բնտրութեան ձեռնարկեցին, և 1705'ին Կիլիկիոյ օրինաւոր կաթողիկոս հռչակուեցաւ Յովհաննէս Հաճընցի, և Պետրոսի հակաթոռութիւնը աւելի չհնոտուեցաւ, միայն թէ նա չպատնակից Բերիոյ մէջ պաշտօնավարել։ Յովհաննէս զայն չկրցաւ ընկճել և անուղղակի կերպով վերանորոգուեցաւ Աչաւոսը Աբեղատայիի և Դաւիթ Կարկառեցիի ժամանակ տեղի ունեցած բախտումը (§ 1753)։ Որոչ չէ թէ

որչափ ատեն ետս չարունակեց Պետրոս Բերբիոյ աթոռին վրայ. մենք յիշեցինք որ 1708'ին Մելքոն Թասպասեանին (ԱՂՔ. Գ. 11), և 1710'ին Աբրահամ Արծիւեանին (ԱՂՔ. Գ. 57) եպիսկոպոսական աստիճան տուաւ, և ոմանք մինչեւ 1712 կը յերկարաձգեն ա-նոր ատենը, Բերբիոյ հակաթոռ կաթողիկո-սութեան մէջ (ԱՂՔ. Գ. 11)։ Իսկ ուրիշներ կը բաւականան անոր մահը յիշելով 1728'ին Երուսաղէմի մէջ (09 ՕՐԱ. 234), որ կը ցուցնէ թէ Յովհաննէս յաջողեցաւ զայն Բերբիայէ հեռացնել։ Եւ եթէ կաթոլիկ, կամ լաւ ետս կաթոլիկամիտ մըն ալ եղաւ երբեմն, ինչ-պէս հռոմէականք կը սիրեն պնդել, վերջէն իր հայադաւանութեան մէջ հաստատուած, և այնպէս մեռած կ'ըլլայ Երուսաղէմի վանքը, ուր հռոմէականութիւն չկրցաւ մուտ գտնել, և ուր միշտ վառ էին Լատիններու հետ մրցումն ու հակառակութիւնը։ Յով-հաննէս Հաճընցին իր աթոռը պահեց մին-չեւ իր մահը 1721 դեկտեմբեր (ՍԻՍ. 217), և կեզակարծ կը դառնայ ոմանց՝ Հա-ճընցին գահընկէց եղած կարծելը (ԴԻԹ. 54)։ Անոր անմիջապէս յաջորդեց Սսոյ մէջ Գրիգոր կեսարացին, մականուանեալ Ու-ղուրլու, որուն 1727'ին կը յաջորդէ Յով-հաննէս դարձեալ Հաճընցի, Տէր-Ադամ մա-կանուանեալ, որ մինչեւ 1731 առանձինն կը պահէ աթոռը, և անկէ ետքը իրեն ա-թոռակից մը կ'առնէ։ Այս վերջին կաթո-ղիկոսներու թուականները տարբեր կերպով նշանակողներ ալ կան, և Յովհաննէս Հա-ճընցին 1719'ին, Գրիգոր կեսարացին 1727'ին և Յովհաննէս Տէր-Ադամը 1730'ին պաշտօնի անցած կը ցուցնեն (ՍԻՍ. 219), բայց նա-խադասելի պիտի համարուի կիլիկեան աղ-բիւրներու վրայ վերջին աստիճաններ կազմուած ցուցակը (09 ՕՐԱ. 234)։ Մանաւանդ որ կե-սարացին 1727'ին աթոռ բարձրացած ըսուղն ալ, նախապէս յառաջ բերած է Հաճընցիին տապանագիրը, որուն մէջ 1721 դեկտեմբե-րին կը դրուի անոր մահը (ՍԻՍ. 217)։ Սսոյ մասին ուրիշ պատմական տեղեկութեանց պակասած ատեն, պիտի գոհանանք լոկ յա-ջորդութեանց կարգը յառաջ բերելով։

1961. Աւելի նուազ են Աղթամարի կա-թողիկոսութեան պատկանող լուրերը, և նոյնիսկ Հաւաքարանն ալ, որ անստոյգ բա-

ՍՂԹԱՄԱՐԻ ԱԹՈՌ

ներ ալ արձանագրելէ չքաշուիր, անուննե-րէ աւելի բան մը յառաջ չբերեր։ Վերջին անգամ յիշեցինք Թովմաս Հերիճցին, որ եղիազարի հայատակելէն ետքը՝ նա-հապետին դէմ էր եղած, և անկէ ձեռնադրուած Աւետիսը մերժած, և իր կենդանութեան Սահակ Արծկեցին յա-ջորդ օծած, որ Պարոնտէր ալ կոչուած է (§ 1828)։ Իրօք ալ Սահակ յաջորդութեան ան-ցաւ երբ Թովմաս վախճանեցաւ 1698'ին, և Աւետիսի ճիգերը օգուտ չունեցան։ Սահակ հազիւ թէ տարին բոլորեց, որ 1699'էն իբ-րեւ կաթողիկոս կը յիշատակուի Յովհաննէս Կայծակ, կամ տեղական հնչմամբ Կէծուկ, և անոր ալ 1705'ին կը յաջորդէ Հայրապետ Փայխեցի, Թովմասի քեռորդին, այրի երի-ցութենէ չուշտակ վարդապետութեան ան-ցած։ Հայրապետէ ետքը թուականներու յիշատակներն ալ կը պակսին, և Հաւաքա-րանը կը չատանայ լոկ անուններու ցանկ մը տալով, որք են Յովհաննէս Հայոցձորեցի, Գրիգոր Գուաչեցի, Ղազար Մոկացի՝ Առա-քինի կոչուած, Գրիգոր Խիզանցի՝ Ազնուա-զարմ ըսուած, և Պաղտասար Բաղիչեցի, որուն մահն ալ կը դնէ 1730'ին (00 ԲԻՋ. 1198), սակայն ուրիշներ կեանքը մինչեւ 1736 կ'երկարեն, և մինչեւ 1743 յիշատա-կութիւններ տեսած են (09 ՕՐԱ. 287), որոնք մեզի ծանօթ չլինելուն բաղդատելու և ըս-տուգելու միջոցը չունինք։ Աղթամարի կա-թողիկոսներուն տակաւնպատակ տահմանին մէջ գտնուիլը, և Թովմասի օրէն արձար-ծուած էջմիածնի դէմ հակառակութեան հոգին, դիւրութիւն կու տային անոնց, ի-րենց ազդեցութիւնը տարածել Վասպուրա-կանի և Աղձնիքի մէջ գտնուող վիճակներու վրայ, միշտ չարժուն ու ծփուն կացութեան մէջ, որով չարունակ փոփոխական կը դառ-նար Աղթամարի աթոռին իրաւասութեան տահմանը։ Օսմանեան մայրաքաղաքի հեռա-ւորութիւնն ու յարաբերութեանց դժուա-րութիւնը՝ Կոստանդնուպոլսոյ պատրիար-քութեան հետ ալ առնչութեան արգելք կ'ըլլային, այնպէս որ ոչ մի յիշատակ և ոչ մի դիպուած չենք գտներ, որ Կ-Պոլսոյ պատրիարքները Աղթամարով զբաղած ըլ-լան, մինչ չարունակ չփման մէջ էին Կիլի-

կիոյ հետ։ Այսպէս Աղթամար կղզիացեալ և մոռացեալ կացութիւն մը ունէր, և իւր իրաւասութեան գաւառներն ալ ոչ մի նպաստաւոր հանգամանք ներկայելուն, աթոռն ալ չարունակեալ անկման ճանապարհն մէջ կը յառաջէր։

1963. Այստեղ ալ, ինչպէս նախընթաց անգամներ, յիշենք այդ միջոցներուն կատարուած նահատակները, որոնք եկեղեցւոյ և հաւատոյ ոչ միայն պարծանք են, այլեւ անոր սրբութեան և ուղղութեան վկաներ։ Վերջին տարիներուն մէջ նուազ են մեզի հասած յիշատակները, այլ նուազ չենք կարծեր նահատակներուն թիւը, և ո՛րչափներ այդ գովելի վկայութիւնը տուին՝ Հայաստանի՝ վայրագ հրոսակներէ և անղուսպ բանակներէ ոտնակոխ եղած ժամանակները։ Սահակ, 17 տարեկան պատանի մը, բնիկ Գողթն գաւառի Բրուտ դիւղէն, որ Բեհրուտ կամ Բևխրուտ ալ կը գրուի (ՍԻՄ. 345), առեւտուրի նպատակով կու գայ Ազախ քաղաքը, որ է Ազովը, Տօնի կամ նախնեաց Տանայիսի գետաբերանը, ոչ շատ հեռի այժմեան Նոր-Նախիջեւանէն։ Պատահին գեղեցկութիւնը Թուրքերու կիրքը կը գրգռէ, և երբ չեն կրնար հրապուրել, բռնութեամբ կը մտածեն յաղթել, և սուտ վկաներով դատաւորին կ'ամբաստանեն, թէ խոստացաւ իսլամանալ, և այժմ կը դիմադրէ։ Այդ զրպարտութեամբ Սահակ 1715 հոկտեմբերի սկիզբները դատաւորին առջեւը կը հանուի, և զրպարտութիւնը մերժելուն և քրիստոնէութիւնը դաւանելուն համար կը բանտարկուի։ Երեք օր ետքը իշխանին առջեւը կը հանուի, ուր միեւնոյն հաստատամտութիւնը ցուցնելուն, նորէն կը բանտարկուի և երկրորդ օր անգամ կը խոշտանգուի, ամէն օր ահագնելու նոր միջոցներ գործածելով։ Վերջէն կը չարչարուի ալ (ՆՈՐ. 555), և առաւօտուն մեծ առեւտուրի կազմուելու ժամուն առջեւ, և հրապոյրներ ու ողոքանքներ ու սպառնալիքներ առանձին կը գործածուին, և վերջապէս գլխատման վճիռը կը տրուի, և դահիճը կը տիրանայ Սահակի։ Կը մերկացնէ, և ձեռներէն ետեւ կապած գլխատման տեղը կը տանի. բայց զգածուելով և յուզուելով անգամ մը Սահակի քիկունքին, անգամ մըն ալ ուսին կը զարնէ, և վերջապէս զօրավարին հրամանով ոչխարի պէս զայն կը զոհեն։ Նահատակութեան օրն է 1715 հոկտեմբեր 17, Յաչի վերջերորդ երկուշաբթին։ Մարմինը կը հրամայուի Տօն գետին մէջ նետել, բայց քրիստոնեայք կը յաջողին գո՞ս թաղեմ տալով թաղման արտօնութիւն ստանալ (ՆՈՐ. 557)։

1963. Սահակ Բրուտեցի նահատակէն զատ պիտի յիշենք նաեւ Սամուէլ Մանիսացին, եղիա քահանայի որդին, որին տապանագիրը կ'ըսէ թէ ՔԼՐՓ-ԱՆԴ հա-ՈՒՈՓՎ ԳԼԽՈՓԵՅՈ-Ձմիւռնիոյ մէջ (ՔՕՍ. Ա. 89), և ուրիշ պարագայ չյիշեր։ Տապանագիրը նահատակութեան օրը կը դնէ 1723 յուլիս 15 երեքշաբթի, որ տոմարով չարդարանար, և հարկաւ կամ փորագրողին կողմէ չփոթութիւն, և կամ արտատպողին կողմէ հայկական թուատառերու մասին թիւրիմացութիւն մը մտած է, զոր դիւրութեամբ ալ ուղղել չենք կրնար, զի նմանաձեւ տառերու դիմաց ալ չենք գտնուիր։ Ուստի կը բաւականանք 1723 յուլիս 15'ը պահելով, երկուշաբթի ըսել նահատակութեան օրը, գուցէ երեքշաբթին թաղման օրը ըլլալով չփոթութեան պատճառ տուաւ։ Սոյն միջոցին, 1730 և 1735 տարիներու մէջերը, դրած էին ոմանք Խանում Վաղարշակերտացիին վկայութիւնը (ՆՈՐ. 566), այլ ստուգագոյն աղբիւրներ 1755'ին դնելուն (ՆՈՐ. 562), ուրիչ առթի կը թողունք անոր յիշատակութիւնը։

ՍԱՀԱԿ ԲՐՈՒՏԵՑԻ

ՍԱՄՈՒԷԼ ՄԱՆԻՍԱՑԻ

Տ· ԱԲՐԱՀԱՄ Բ· ԽՈՇԱԲԵՑԻ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

1964· կարապետ կաթողիկոսի մահուան միջոցին Երեւանի նահանգին քաղաքական կացութիւնը բոլորովին հանդարտ չէր։ Իրաւ երկիրը Օսմանեան տիրապետութեան ներքեւ էր, բայց Պարսկական մրցումը դադարած չէր։ Մանաւանդ, Աֆղանի յաղթականը (§ 1930), իւր անգութ և բռնակալ իշխանութիւնը եղերական կերպով վերջացուցած էր։ Զորս տարի արիւնուչտ թագաւորութենէ ետքը, 1725'ին յանկարծ խղճահարելով, խիստ ապաշխարութեան ենթարկած էր վինքը, մութ քարայրի մը մէջ անասուալ խոշտանգանքներով, ուսկից 15 օր ետքը խելայեղեալ դուրս ելած էր կատաղի մոլեգնութեամբ, իւր միսերը ուտելու աստիճան։ Այնպէս որ իւր մայրն (ՏՊՒ· 360) և իւր եղբօրորդին էչրէֆ (ԺՈՒ· 331), զայն խեղդել տուած էին այդ կացութեան վերջ տալու համար։ Այսպէս 1725 ապրիլին էչրէֆ թագաւորութեան տիրացած էր Ապահանի մէջ, մինչ Թահմազ գաւառներու մէջ կը դեգերէր։ Իսկ Ռուսեր ու Օսմանցիներ պարսիկ գաւառները իրենց մէջ բաժնելու կ'աշխատէին (§ 1932)։ Թահմազ և էչրէֆ հաւասարապէս հետամուտ էին Օսմանցոց պաշտպանութիւնը ապահովել իրենց գաւառներուն դնովը, երբոր հրապարակի վրայ երեւցաւ նոր անձնաւորութիւն մը, Նատիր՝ Թիւրքմէններու Աֆշար ցեղէն, ստորին դասակարգի զաւակ, որ բախտին բերմամբ ալեւկոծ կեանք մը, և բարձրացումներ ու անկումներ ունենալէ ետքը, աւազակապետ մը եղած և ամէնուն վրայ անուսաբասի թողած, և անպարտելի մարդ մը ճանչցուած էր (ՏՊՒ· 361)։ Նատիր Թահմազի կողմը անցած էր 1726'ին, երբոր սա Խորասան գաւառը կը դեգերէր։ Աֆղաններուն դէմ ելլելով, ընկճած էր անոնց ոյժը, էչրէֆն ալ Ապահանէ փախուցած, և Թահմազը յայտնակով իւր հօրը մայրաքաղաքը դարձուցած, և անոր իշխանութիւնը ապահովուցած էր էչրէֆը սպաննելով, և Աֆղաններ կոտորելով և ցրուելով (ԺՈՒ· 332)։ Այդ պատերազմները բաւական երկար տեւեցին, և երբ Նատիր Աֆղանները կը հալածէր, Թահմազ ուրախ օրեր կ'անցընէր Ապահանի մէջ։ Իսկ սահմանագլուխները կը մնային միեւնոյն դիրքի մէջ, թէեւ երկու կողմէն ալ խլրտումներ անպակաս էին։ Ճիշդ այդ միջոցին կ'իյնար կարապետի մահը (§ 1954), երբ կը չարունակէր Օսմանեան տիրապետութիւնը Երեւանի և Էջմիածնի վրայ։

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

1965· Այս պատճառով նոր կաթողիկոսի ընտրութիւնը Օսմանեան հավանութեան ներքեւ կատարուեցաւ, բայց ոչեւս Կ-Պոլսոյ մէջ, ինչպէս եղած էր կարապետի ընտրութիւնը (§ 1944), այլ նոյնինքն Մայրաթոռի մէջ, ուր տարիներէ իվեր Օսմանեան կառավարութիւնը մնայուն վիճակ ստացած էր։ Չէ ըսուած թէ ինչ ազդեցութիւններ և ինչ թելադրութիւններ առաջնորդեցին ընտրութեան, բայց ընտրեալին վրայ դարձնելով դիտողութիւնները, դիւրաւ կը կարծենք պարզել այդ կէտը։ Ընտրեալն է Աբրահամ եպիսկոպոս, Մշոյ Ս· կարապետ վանքին առաջնորդը, որուն այդ պաշտօնը յանձնած էր Գրիգոր Շղթայակիրը՝ անկէ հեռանալուն առեն (§ 1924)։ Աբրահամ Գրիգորի եղբօրորդին և աշակերտն էր (ԱՍՏ· Բ· 104), կամ աւելի ճշդութեամբ՝ աշակերտակիցն էր, ուստի կամ կոլոտ և Շղթայակիր թելադրեցին անոր անունը, և կամ Մայրաթոռի ընտրողները մտածեցին կոլոտի և Շղթայակիրի հաւասակիր և սիրելի անձ մը յառաջ կոչել· բայց միշտ յայտնի կ'երեւի թէ Կ-Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքներուն համաձիտ ազդեցութիւնը տիրեց Աբրահամի ընտրութեան մէջ։ Աբրահամ ընկերակից Խոշաբեցի ըսուած է, վանայ հարաւակողմը Հայոցձորի սահմանակից գաւառին աւանէն, և գիտենք թէ Շղթայակիրն ալ Շերուանցի էր։ Աբրա-

համ ալ կը պատկանէր՝ վարդանի մահուանէ ետքը Ամթաղէ Գլակ փոխադրուող միաբաններուն, ինքն ալ աշխատած էր Ս. Կաթողիկէի համար, նուիրակութեան ելած էր (§ 1910), և Շղթայակիրէ ու կոլոտէ ետքը՝ վարդանի ընտրելագոյն հետեւողներէն նըկատուած էր, և Գլակայ առաջնորդութեան կոչուած էր։ Նա կը նկարագրուի իբր այր առաքինի և ճշդապէս, հեզ և քաղքեքաց, աղքատաբեր և փոնկոպաբ (ՋԱՄ·29)։ Իրրեւ գործունէութիւն ալ օգտակար եղած էր Գլակի, օգտակար ալ եղաւ Էջմիածինի։ Միայն թէ տարիքը առած էր, և երկար պաշտօնավարութիւն չունեցաւ. պարագաներն ալ չէին ներեր մեծամեծ ձեռնարկներու սկսիլ. բաւական էր որ խաղաղ վիճակ մը կարենար պահել, և չէն պահպանել Մայրաթոռը, ինչ որ իրօք ըրած է ներեւնեցիին վկայութեամբ (ՋԱՄ·30)։ Աբրահամի կաթողիկոսութիւնը կը դրուի 1730'ին, կաթողիկոսը մահուընէ քանի մը ամիս ետքը, սակայն թէ ընտրութեան և թէ Էջմիածին հասնելուն և օծուելուն ամսաթիւերը գըրուած չեն։ Նկատելով որ խոր ձմեռուան մէջ դիւրին չէր Մուշէ Էջմիածին ուղեւորիլ, հաւանական կը դատենք օծումը դնել 1730 մարտին, զատկին մօտերը, որ այն տարի մարտ 29'ին կ'իյնար։ Այս հաշիւը կ'արտաբանայ Աբրահամու կաթողիկոսութեան 4 տարի և իրր 9 ամիս տեւողութիւն նշանակուելէն մինչեւ իր մահը 1734 նոյեմբեր 11'ին (ՇԱՀ·Ա·226)։ Աբրահամ անխտիր կը կոչուի Խոչաբեցի՝ ծննդավայր գիւղէն, Քիւրտիստանցի՝ գաւառին կոչումէն (ՋԱՄ. Դ·805), և Մշեցի՝ իր առաջնորդական վիճակէն (ՋԱՄ·29), բայց նախադասելի է ծննդավայրէն մականուանել։ Շատ քիչ տեղեկութիւն ունինք իր գործունէութեան վրայ, հետեւաբար պիտի գոհանանք ժամանակակից դէպքերը յառաջ բերելով։

ՆԱՏԻՐԻ ԵՐԵԻՆԱԼԸ

1966. Ան միջոցին երբ տակաւին Նատիր Պարսկաստանի արեւելակողմը Աֆղաններու և ուրիշ ապստամբ ցեղերու դէմ պատերազմելու զբաղած էր (§ 1964), Թահմազ պատգամ ղրկեց Օսմանցոց, որ Պարսկաստանէ գրաւած պատառները ետ դարձնեն։ Սուլտան Ահմէտ Գ և նպարքոս Տամատ Իպրահիմ փաշա բանակցութեանց մտնելու կը միտէին, երբ ժողովրդական յուզումը պատերազմի կը պահանջէր անպատճառ։ Նպարքոսը ճանապարհ ելաւ, այսինքն Իւսկիւտար անցաւ 1730 օգոստոս 3'ին, և կը սպասէր որ սուլտանն ալ հետեւէր, բայց նա կը դանդաղէր, և այս պատճառով սեպտեմբեր 28'ին, եէնիչէրիներու ապստամբութիւնը սկսաւ՝ Բախրծնախալիլ պարզ սպայի մը գլխաւորութեամբ (ԺՈՒ·332), և գործը մինչեւ նպարքոսին սպանութիւնը և կայսեր գահընկեցութիւնը յառաջացաւ. Ահմէտ Գ բանտարկուեցաւ, և եղբօրորդին Մահմուտ Ա գահ բարձրացաւ։ Անմիջապէս Պարսից դէմ պատերազմը հրուչակուեցաւ, չորս սպարապետներ չորս կողմէն յարձակեցան։ Թահմազ որ անձնապէս գրգռած էր այդ պատերազմը, չարաչար յաղթուեցաւ, և 1732 յունուար 10'ին, հաշտութիւն ստորագրեց, որով Օսմանցիներ աւելի եւս կ'ընդարձակէին իրենց պետութիւնը (ԺՈՒ·336)։ Նատիր՝ Աֆղաններու դէմ յաղթութենէն դառնալով, և Թահմազի ինքնագլուխ պատերազմի կռլլելուն և յաղթուելուն զայրացած, Ասպահանի մէջ Թահմազը գահընկէց հռչակեց, և Խորասան աքսորուց իր բանտարկեալ, և Թահմազի ուխն ամսու որդին կայսր հռչակեց Աբաս Գ անունով, և իր խնամակալութեան ներքեւ (ՏՊՒ·362), կամ աւելի ճիշդ իշխանութիւնը ձեռք առաւ։ Նատիր, որչափ ալ Թահմազը մերժեց, բայց պահեց Թահմազ-Ղուլի անունը, որ է Թահմազի ծառայ, զոր իրր պատիւ իր վրան առած էր՝ Թահմազի պաշտպանութեան ելած առնելը։ Նատիր պատերազմ հռչակեց Օսմանցիներու դէմ, և առաջ դէպի Պաղտատի կողմերը արշաւեց, 1733 յուլիս 19'ին Տուլճէյլիքի ճակատամարտը կորնչուց (ԺՈՒ·338), բայց երեք ամիսէն վրէժը լուծեց։ Պաղտատի կողմէն Օսմանցոց արշաւանքը կասեցուց, և Երեւանի կողմերը դառնալով հետզհետէ հին Պարսկական պատառներու սկսաւ տիրանալ։ Բնական էր որ այդ պատահարներ պիտի դառնացնէին Աբրահամ կաթողիկոսի վերջին օրերը, մի 1734'ին Հայաստանի մէջ անդի կ'ունենային պատերազմի արհաւիրքները, որոնք մինչեւ յաջորդ 1735 տարին չդադրեցին։ Իսկ Աբ-

բանամ, ինչպէս յիշեցինք (§ 1965), 1734 Նոյեմբեր 11'ին կնքեց իւր կեանքը։

ՂԱԼԱՔԻՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

1967. Կոստանդնուպոլսոյ աթոռին գործերը իրենց սովորական ընթացքը կը պահէին Յովհաննէս Կոլոտի բարեկեցան աշխատութեանց չնորհիւ, որ տարօրինակ յաջողութեամբ, կամ լաւ եւս յաջողակութեամբ, բաւական տարիներէ իվեր անխափան կը մնար պատրիարքական աթոռին վրայ։ Մայրաքաղաքին մէջ սովորական հրդեհներէն մէկն ալ Գալաթիոյ թաղը աւերեց 1731'ին, և Յոյներու չորս եկեղեցիներու հետ Հայոց Ս. Լուսաւորիչն ալ այրեցաւ, և պարագայից բերմամբ, ներքին և արտաքին չփոթութեանց պատճառով, դժուար եղաւ վերաշինութեան հրամանը ստանալ։ Այս երեսէն Կոլոտ դէպ ի Նեղոպոնդոս և Ղրըմ ելաւ, և ի Եղիսաբեթ յաջորդեց (ՀՆՆ. 168)։ Բարեբախտութիւն մը եղաւ Հէքիմզատէ Ալի փաշային Եպարքոսութեան բարձրանալը, որ իւր ծանօթ Աղբերտոս Երեւանեանցը անուանեց Թոյրթէն վճռապէտ դրանն աբեռնախան, և սա իւր ազդեցութիւնը գործածեց (ՀՆՆ. 169), որով 1732 դեկտեմբեր 15'ին հրովարտակը ստացուեցաւ (ԿՈԼ. 32)։ Շինութիւնը ամենայն փութաջանութեամբ առաջ տարուեցաւ, այնպէս որ 1733 մարտ 10'ին, Գլխոր Լաւրենտիոս Մաշն է վերջին օրը, Կոլոտ արքեպիսկոպոս Եօթնեալ Եօթ նորաշէն եկեղեցին, որ է ըսել, երեք ամիսէ պակաս միջոցի մէջ. սակայն չենք կարծեր թէ բոլոր զարդերով լրացած ըլլայ այդ կարճ ատենի մէջ, զի Գլխաւոր Ճարտարապետն Սարգիս Խալֆան, հրաշալեաց յորինողն էեվլիյա Չելեպիի, ՀՆՆ. 170), և հարկաւ զարդի աշխատութիւնները չարունակեցին եկեղեցիին գործածելի ըլլալէն ետքն ալ։ Շինութեան գլխաւոր բարերարն եղաւ Աղբերտոս Երեւանեանցը, ազգայիններն ալ նպաստեցին դրամ ի յերկոց կողմանց (ՁԱՄ. Գ. 805), իմա՛ լատինամիտներն ալ մասնակցեցան։ Բայց այս մօտաւորութիւնը նորէն լատիններուն աչքին զարկաւ, և նոր հրամաններ ու մտաց պղտորումներ ցանուեցան լատին եպիսկոպոսին և քարոզիչներուն կողմէն, իրենց հետեւողները Հայոց եկեղեցիները հետացնելու համար։ Ասոնց սոսկալ համակերպութիւնը անգամ մըն ալ կառավարութեան մտադրութիւնը հրաւիրեց, որ չէր կրնար ներել օտարներու հետ մերձութիւնը և անոնց հպատակութիւնը, ուստի փոխադարձաբար նոր զգուշութիւններ և նոր արգելքներ հրամայեց, որով օտար եկեղեցի յաճախողները ձերբակալուեցան, բայց տուգանքով թողուեցան։ Լատիններ ալ Գաղղիական դեսպանին միջամտութիւնը գրգռեցին, որ էր Լուդովիկոս Վիլնէօվ մարքիզը (Louis-Sauveur marquis de Villeneuve)։ սա ալ Գերմանական դեսպանը ընկերակից առնելով, իբր թէ իրենց տէրութիւնները անարգուած ցուցուցին, Լատին եկեղեցիներուն դէմ դրուած արգելքով։ Կառավարութիւնը ստիպուել հրամաններդ մեղմացուց, և Կոլոտ առիթ գտաւ նորէն հաչտարար միջոցները ձեռք առնելու, և Լատին եպիսկոպոսին և Գաղղիական դեսպանին դիմից, որ իրենց կողմէ ալ Հայ եկեղեցիներու դէմ դրած արգելքին վերջ ընեն։ Անոնք չկրնալով բացէ բաց մերժել, երկդիմի յայտարարութիւններ ու պահանջներ հանեցին, նպատակ չարականին ծանօթ տուներուն խնդիրը բացին, որք արդէն պաշտօնապէս դադարած էին (§ 1952), և միայն իբր փոխադարձ հակառակութիւն ամանց կողմէն կ'երեւցուէին։ Այդ բանակցութիւնները թէպէտ վերջնական արդիւնք չունեցան, բայց անգամ մըն ալ մեղմացուցին մրցակից հակառակութիւնները։ Վերոյիշեալ ծանօթ տուներուն դադարումը կապակցեալ Ուլնեցիի կաթոլիկոսական իշխանութեամբը հրամայուած էր, և Կոլոտ Աբրահամ կաթողիկոսի ալ դիմած կ'ըսուի այդ մասին (ՁԱՄ. Գ. 806), թէպէտ որոշ յիշատակութիւն չենք գտներ։

ԵՐՈՒՍԱղԷՄԻ ԳՈՐԾԵՐ

1968. Երուսաղէմի գործերը թողուցինք 1729'ի ծռապատիկին, որ Շղթայակիրի հոգածութեամբ հանդիսաւոր անցած էր։ Ուրիշ տեղեր ծագած չփոթներուն արձագանգն ալ թեթեւ անցեր էր Երուսաղէմի մէջ (§ 1959), բայց Յոյներ սկսած էին նորանոր խնդիրներ յուզել, երբոր պատրիարքութեան անցաւ Մելիտոս, և փոխանորդ եղաւ կեսարիոս, և

կ'ուզէին Հայերը բոլոր իրաւունքներէ կապուտել, և նոյնիսկ Ս. Յակոբեանց վանքը գրաւել։ Գրիգոր Շղթայակիր, որ հաչտարար միջոցներով ծառազատիկի խնդիրը փակեր էր, աչխատեցաւ նոյն ձեւը գործածել։ Իրեն աջակիցն էր Հաննա վարդապետ, սակայն 1730'ին նա խօթացաւ (ԱՍՏ. Բ. 31), և Շղթայակիրն ալ ծերացած, գլուխ կ-Պոլիս, որ կոլոտ գայ և տէր լինի աթոռին, և կամ ղրկէ իւր աչակերտներէն Յակոբ վարդապետը, որ է Յակոբ Զիմառացին, ազգատոհմին անունով Նալօղլու կամ Նալեան կոչուածը։ Այսու հանդերձ Շղթայակիր իւր աչխատութիւնը չարունակեց, և Յոյներու հետ երդմամբ և ուխտով հաչտութիւն կընքուեցաւ, սակայն այդ հաշտութիւնն և եղբօրմէ Յոանաց, Ռովիլ ֆէ էր լեհաց Հայոց, օրհնել ընտ ի տէր ընծայիւն և անհոգութիւն, վանդի միւս կողմէն Յունաց պատրիարքը կը պատրաստուէր կ-Պոլիս երթալ և խնդիրներ յուզել, թէպէտ կը վստահացնէր Շղթայակիրը, թէ դ' անդր ի սէր տ ընէ ֆնամ ես նոտոյ, այլ ետն ֆօթոց նմոց (ԱՍՏ. Բ. 34)։ Այդ միջոցին, 1732'ին, Նալեան եպտւսաղէմ կու գար, և Շղթայակիրը զայն իրեն փոխանորդ նչանակելով կ-Պոլիս կը դարձնէր, որ Երուսաղէմի չաներուն հակ (ԱՍՏ. Բ. 31), զի միչտ կասկածով էր Յոյներուն վրայ։ Շղթայակիրին դժբախտութիւնէն քիչ ետքը 1733 յունիս 11'ին կը վախճանէր Հաննա, անոր աչքազուկը, աւելի քան աչակիցը, որ չատոնց խօթացեալ և տկարացեալ էր, և կը թաղուէր Ս. Փրկիչ վանքը (ԱՍՏ. Բ. 30)։ Շղթայակիր այլայլած և չփոթած կը մտածէ պատրիարքութիւնէ քաչուիլ, և այդ միտքով կ-Պոլիս ալ կը գրէ, որ իրեն յաջորդ մը հոգան։ Արդէն ես, կ'ըսէ, ի ֆոֆոլել ծերոթիւն հասած եմ (ԱՍՏ. Բ. 31), և սխալներ ալ կը գործեմ, ինչպէս որ ընդ ի ցոոոցել եւ վան հաշտութիւնս ղոր ոչխի ընդ Յոյն (ԱՍՏ. Բ. 32), իբր զի Յոյն պատրիարքը արդէն կ-Պոլիս հասած, և Հայերու դէմ խնդիրներ յուզել սկսած էր։ Բայց կոլոտ ուժգնակի պիտադրեց Յոյներու նենգութիւններուն, և օգտուելով Հէքիմզատէ Ալի փաչայի ուղղութենէն և խոհականութենէն (ԺՈՒ. 339), յաջողութիւն ունեցաւ, և Երկին Նոյեմբեր վճռել և ղրկել հոն արքունական հրամանն, զՐերբին լուցոցանելով, և զնոա հաւատհամոյոն ընել տալով (ՀՆՆ. 166)։ Այդ հրովարտակը և չատ ծանրագին ընծաներ և սպասներ Երուսաղէմ ղրկուեցան Նալեանի ձեռքով, որուն վրայ Շղթայակիրը բեղկեցոոս յոյժ։ Այդ եղելութիւնները տեղի կ'ունենային 1734 սեպտեմբերին, որ կը համեմատի Աբրահամ կաթողիկոսի վերջին օրերուն։ Ուրախալի և յաջող կացութիւնը երկարատեւ չեղաւ։ Հէքիմզատէ եպարքոսը ուզեց անձամբ Պարսից խնամակալ Նատիրին կողմէ բացուած պատերազմին երթալ (§ 1966), ինչ որ պալատական բանտարկութեանց դուռ բացաւ։ Եպարքոսը պաչտօնակ եղաւ, կիւրճի Իսմայիլ փաչա տեղն անցաւ, որ թէպէտ վեց չաբաթ միայն պաչտօնի վրայ մնաց (ԺՈՒ. 339), սակայն բաւական եղաւ Հայոց դիրքը խախտելու։ Մանրամասնութիւնները իրենց հետեւանքներով կը պատկանին յաջորդ կաթողիկոսին օրերուն։

1969. Աբրահամ Խոչաբեցի կաթողիկոսին գործունէութեան մասին ընդարձակ յիչատակութիւններ չկան հասած, ինչպէս ըսինք. միայն իւր վերջին օրերուն մասնաւորութիւնները կը գտնենք Աբրահամ Կրետացիի պատմագրութեան մէջ, և կ'ուզենք դնել անոնք քաղել իբր հետաքրքրական տեղեկութիւններ։ Աբրահամ Կրետացին, որ ասոնք կ'աւանդէ, ծննդեամբ Կրետացի էր, Գանտիա քաղաքէն, և ի յոյն ծէր (ՉԱՄ. Գ. 806)։ Անչուչտ Կրետէ չէր կրնար անոր Հայ եկեղեցական դաստիարակութիւն տալ, ուստի կանուխէն հաչատ կեդրոն մը փոխադրուած և հայկական ուսում առած պիտի ըլլայ. բայց ինքն ալ չյիչեր իւր աչակերտութիւնը, և ոչ իրեն վարդապետը եղած մէկուն մը անունը կու տայ։ Իւր հաչուով 1709'ին Թբիլիսի տաղտկն, որ է Ռոտոսթոյ կամ Թէքիրտաղ, աւանչորդ եղած է (ԿՐՆ. 1), և ըստ այսմ Աղեքսանդր Ջուղայեցիէ եպիսկոպոս ձեռնադրուած պիտի ըլլայ։ Ջարմանալի կը թուի որ ոչ ժամանակակից յիչատակներ, և ոչ ինքն ակնարկ մը չունին թէ ինչ դեր ունեցած է այն անվերջ խնդիրներու մէջ,

որոնք մայրաքաղաքի և չրջակայից մէջ կը յուզուէին կաթողիկութեան երեսէն, և պէտք կ'երլայ որ իրեն իբր արժանիք վերագրունք, եթէ իրօք կրցայ իւր վիճակը զերծ պահել այդ տեսակ չիոթութիւններէն։ Իւր առաջնորդութեան տասներորդ տարին, 1719'ին, երուսաղէմ ուխտի կ'երթայ, և երկու տարի կը մնայ այնտեղ, ճիշդ այն միջոցին որ զանազան ազգեր կ'աչխատէին Նոբեմբերեան ալէքսիոֆոմոբ պոճոբին Սբթոյ Յարութեան և անոնց սբթոց պնծրնակոնոց (ԿՐԵ·1)։ Ուխտատեղիներ պտտելու մեծ փափաքով մոտիր էր Հայաստանի վանքերը ու սրբավայրերը չրջիլ էջմիածինէ սկսելով, բայց առաջին ուխտագնացութիւնէն հազիւ 15 տարի ետքը կը յաջողի գործադրել, և 1734 ապրիլ 27'ին Ռոտոսթոյէ մեկնելով, 100 օրուան ուղեւորութեամբ նոյն տարուոյ օգոստոս 3'ին, չարաթ օր, ժամ առաւօտեան երեքին էջմիածին կը մտնէ (ԿՐԵ·2)։ Անչուչտ ցամաքի ճանապարհութեամբ ուղեւորած է, և ճանապարհն վրայ եղող քաղաքներ և վանքեր տեղն անցուցած է։ Կրետացիին միտքն էր էջմիածինի ուխտը ընելով, անցնիլ Տարոն, Գլակայ Ս. կարապետի վանքը· բայց Աբրահամ կաթողիկոս, որ էտեն ամէն ի վեր ունեցած փափաքին լրումը կը տեսնէր (ԿՐԵ·2), չկորզուց որ մեկնի, և միւս տարին միասին երթալու խոստումով մօտը պահեց, և կրետացիին ուղեկից Ռոտոսթոցի և Կոստանդնուպոլսեցի սարկաւագներ՝ առանց անոր մեկնելուն օգոստոս 24'ին, չարաթ օր, կաղզուանի առաջնորդ Յովհաննէս վարդապետի պլխաւորութեամբ (ԿՐԵ·3)։

1970· Օգոստոս 24'էն մինչեւ նոյեմբեր 11 անցնող երկուքուկէս ամիսներուն մէջ

ԿՐԵՏԱՑԻՆ
ՅԷՋՄԻԱԾԻՆ

երկու անուանակիցներ գրեթէ իրարմէ անբաժան կեանք մը անցուցին։ Ենթքչարթի օր, օգոստոս 27, միասին կը մեկնին չրջակայ վանքերը պտոյտ մը ընելու՝ տասնէ աւելի միաբան եպիսկոպոսներու և վարդապետներու ուղեկցութեամբ։ Առաջ կ'երթան Յովհաննավանք, ուր կաթողիկոսը նոր խորանի ու սեղանի մը օծումը կը կատարէ· ետեւէն կ'անցնին Սաղմոսավանք, ուր Լուսաւորչի անապատը կ'այցելեն· և հետզհետէ Ուչի, Փարպի, Կարբի, Մուղնի և Օշական հանդիպելով էջմիածին կը դառնան (ԿՐԵ·4)։ Կրետացին դիտել կուտայ, թէ կաթողիկոսն ճոպաթէ պառնալ է ոտքի ճամն, չէ եր ժամանուն խառնակ, և ալէկ ալէկ զբոյտ ըլլալն է լսելիս վիճին, վասն ըսելոփան թահմազ խանին, այսինքն է Թահմազզուլի Նատիրին, և ընծայել զբոյտ պոբսկային (ԿՐԵ·4), ինչպէս մենք ալ արդէն յիշեցինք (§ 1966)։ Կրետացին սակայն, էջմիածինի մէջ հիւր ըլլալով, ազատութիւն կ'ուզենայ պտտիլ· նորէն չարաթ մը կ'անցընէ Լուսաւորչի անապատը Սաղմոսավանքի մօտ, և հոկտեմբեր 16'ին նոր պտոյտ մըն ալ կը սկսի, երեւան, Խորվիրապ, Ակոռի, Հաւուցթառ, Այրիվանք, Գառնի, Նորք, և Զաքավանք, ուր կ'ընդունի կաթողիկոսէն չուտով ետ դառնալու հրամանը, վասն խօրոխեան պոպոհելոյ նմա, և չէ համայն խօրոցելել էին փոքանդ է ոտքի ալեռն։ Կրետացին կը հասնի նոյեմբեր 4'ին երեքչարթի օր (ԿՐԵ·6), և հոն հասած կը գտնէ Եւդոկիոյ, նուիրակ Աղեքսանդր վարդապետը, և Կոլոտի աչակերտներէն, և կեսարիոյ առաջնորդ, որ էջմիածին կու գար եպիսկոպոս ձեռնադրուելու (ԴԱԼ·157)։

1971· Կրետացին էջմիածին հասնելով կաթողիկոսը անկողին ինկած կը գտնէ երեք ոտքէ չոտաչ, այսինքն նոյեմբեր 2'ին, չարաթ օր։ Կ'ուզէ հիւանդութեան ինչ ըլլալը հասկընալ, սակայն ուրիչ պատասխան չկրնար առնել, բայց եթէ բերբ անդ չի չոտ, և ոչ էնթեմ ղոպոճան և զոտոն (ԿՐԵ·7)։ Սակայն դիտելով թէ համայն խօրոցելել էին փոքանդ է ոտքի ալեռն, էտ և է էնդեն, և թէ քաղաքէ դուռն, ինչպէս Սարգիս Թէքիրտաղցի և Զաքարիա Բաղիշեցի վարդապետները, ու կաթողիկոսի փոքրաւոր Աւետիքը, և այլ է հանգեսեաց, և է էնդեն չոլվի (ԿՐԵ·6), պէտք է հետեւցնել թէ վարակիչ համաճարակի մը դիմաց կը գտնուինք, թէպէտեւ ինչ տեսակ բլլալը որոշելու չափ նչանակներ տրուած չեն։

կրետացին իբրեւ կաթողիկոսին մտերիմ, գիշերներ կը լուսցնէր անոր անկողինին մօտ, հիւանդին և մօտը եղողներուն բռնադատութեամբ միայն հանգստանալու կ'երթար։ Կիրակի, նոյեմբեր 10'ին հիւանդին վիճակը կը ծանրանայ. շրթներ շմահճէն նոթելով վրդնէ, կը գրէ կրետացին, գիշերուան մինչեւ ժամը 5 նորէն կը հսկէ, մինչեւ որ ուրիշներ զինքը կը յորդորեն, ըն ինա պոէ ինա պեղ. բայց հազիւ երկու ժամ անցած, չեր հաստոլելոյ ֆէլէրոյն, կու գան զինքն արթնցնել, թէ հիւանդը այլեւայլ երեւի, և երբ կու գայ, կը տեսնէ որ է ա և է պատ ընդոյն էր է հոթեվըռ-ընեան։ Իրօք ալ առաւօտեան դէմ չինն կամ պատ ժամա ֆէլէրոյ, ըստ երկոյքին, հոգին կ'աւանդէ, 1734 նոյեմբեր 11 երկուշաբթին չլուսցած։ Կրետացին մահուան հետ և հանգիստ եղած րլլալը բացատրելու համար կը գրէ, թէ ասանկով շմտածէ հոգին իր է յետ հրեշտակի բարոյ այնպես, որպէս ըն ու հանցե ինչոր մ է ծոյց և պոյե քաբելոնին։ Թաղման կարգը չեն կրնար երկուշաբթի կատարել, զի նոյն օր Երեւանի կուսակալ Ալի փաշան ալ կը մեռնի յաջաւոթեան ճաշա ժամա, և թաղման հրամանագիրը կ'ուշանայ, մինչեւ որ կուսակալութեան գործերը կը սահանձնէ զինուորական հրամանատար Տէրէնտէցի Հիւսէյին փաշա։

երեքշաբթի ինքն կրետացին կը պատարագէ և կ'օծէ, բայց Ս. Գայիանէ չկրնար երթալ թաղելու, վասն ասոնկ ջերմն, որ պէնդեր օր ըստ ջի, և պատարագէն վերջ տենդը բռնելուն, կը պարտաւորուի անմիջապէս մահիճ մտնել։ բայց չորեքշաբթի այդր կը կատարէ գերեզմանին վրայ ջնալը ախոյ ասոյն միասին տանելով (ԿՊ։ 7)։ Այսպէս կը վերջանայ Աբրահամ Մոշաբեցիի կաթողիկոսութիւնը, երեք ընկերակից եկեղեցական պետերէն առաջին ինքն բաժնուելով աշխարհէն, և փակելով այն գեղեցիկ գուգադիպութիւնը, որով Վարդան Բաղիշեցիի երեք աշակերտները, Մոշաբեցին ու Շղթայակիրն ու Կոլոտ միեւնոյն աստեն երեք մեծ աթոռներուն վրայ կը գտնուէին։ Մոշաբեցին երեքներուն մէջ երիցագոյնն ու նախապատիւը եղած չերեւար, զի մէջերնէն Շղթայակիրը եղած էր առաջին անգամ Գլակայ առաջնորդ ընտրուողը (§ 1910), հետեւապէս չենք համարձակիր տարիքով ալ խոր ծերութեան հասած ըսել Մոշաբեցին։ Մահուան ալ համաճարակի մը առթիւ տեղի ունեցած րլլալը, չտիպեր այդ հնութադրութեան դիմել, և զարմանալի է որ կրետացին ալ, որ այնչափ մանրամասնութիւններ կը գրէ, հանգուցեալ կաթողիկոսին տարիքը չնշանակեր։

Տ. ԱԲՐԱՀԱՄ Գ. ԿՐԵՏԱՑԻ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ

1972. Քանիցս յիշեցինք թէ չփոթ ժամանակի մէջ կը պատահէր Մոշաբեցիին մահը, և արդէն չորեքշաբթի, 1734 նոյեմբեր 13'ին, Ս. Գայիանէ պարծող միաբաններ սեւան ղեղմոնրիէն ոչանց և կանանց, որ ֆոխոփեայ ֆայն, վանդի Պարսիկ բանակին մօտենալուն լուրը ամէնուն վրայ անուսարափ էր թողած։ Միաբաններուն խումբն ալ՝ կրետացիին հետ մինչեւ Փարաքար յառաջացած էին երեւանէ եկած բարապանին սուիլմամբ, և հազիւ քաղաք ազատնէ, և է յետ նոր հնէ ոչի դնելով, կրցան վանք դառնալ, չի դ ֆոխ է ֆալ ղբոյն Պոլսէն, ֆոխէյնի է ղէ բեբրէն նբեռանայ։ Տագնապալից ժամանակը կը ստիպէր անմիջապէս աթոռին գահակալ մը և միաբանութեան գլուխ մը տալ. և ամէնքը համամիտ գտնուեցան կաթողիկոս ընտրել նոյնինքն Աբրահամ կրետացին, որ իրաւ հազիւ երեք ամիսէ իվեր էջմիածին կը գտնուէր, բայց ժիր ու գործունեայ, պետական գործերու հմուտ, և տաճկական յարաբերութեանց փորձառու անձ մը կը սեւենուէր, և միակ կարողն էր՝ ներկայ պարագայից պահանջած խոհական և աջաղուրջ հայրապետական ըլլալ։ Այդ համամտութեան մէջ կրետացին միայն էր որ անհա-

մաձայն կը գտնուէր, և ոչ մի կերպով չէր ուզեր կաթողիկոսութեան լուծին ներքեւ մտնել։ Բայց միաբաններ իրենց որոշումը տուած էին, և մինչեւ իսկ Երեւանի կուսակալութեան հաղորդած էին, և չորեքշաբթի երեկոյէն յառաւկ բարապան մը կացած էր՝ պինդ կուսակալութեան մօտ առաջնորդել, որ պաշտօնական գործողութիւնները կատարուին։ Աննման էր պետական հրամանին անսասանել. հինգշաբթի առաւոտ կանուխ, յակոմայ կոմս+ +բբ+ծ պաբան յՆբեաան կրետացին, հինգ վեց վբդպեւոս+ թէպէտեւ տնդին օրն էր, բայց սաստիկ յուզմունքեր տենդի դարման են, և ինքն ալ կը դրէ, թէ յոբոմ ջերծայ ի նոյն օրն (ԿՐԵ·8)։ Երեւանի մէջ առաջ կուսակալութեան դիւանապետին առջեւ կ'ելլէ, և կը սկսի պատճառաբանքներ յառաջ բերել, թէ ոչ ոեանիմ կբոջոբիեան, թէ ջբբիպ և ոպոբ եմ, և թէ հբաման ոանիմ ոբ զիս անբբեն ի վիճակն իմ դաբցոոցանէ։ Դիւանապետը դժկամակութեան յաղթելու համար, ըզբ+եանն ի իբբոխական և ոպոանական կը դարձնէ, և փաշային առջեւ հանել կուտայ, որուն կրետացին կ'առաջարկէ, եթէ ծբ նախնի ովբբոբիեանն այն է, ոբ մահաոբ ոանեն Սպահան և Սթամպուլ։ Սակայն փաշան անողոք կը մնայ, և ամէն պատասխանատուութիւն իւր վրան կ'առնէ, պի ոահ, կ'ըսէ, եբէոոյ կոչմանց ջբբ և պոթբբոջմոանէ+ եբեային, և էջմիածին ի վերայ ծանապարհին է, ուստի պէտք է անմիջապէս գլուխ մը ունենայ։ Ասոր վրայ, կ'ըսէ կրետացին, +բբլեցին զիս ոբոո+ և բբեցին ըզոյբոլին ի էջմիածնայ միաբանութեան ուղղուած, թէ ոբվհեթե ընթբեցէ+ և կոմեցայ+ զբբ լինել յեղ էլոթ, ոահ հբամեցի, ըզբ օրենս և ոբբոըզոբոլին ոանէ+, կոթբբեցե+ (ԿՐԵ·9)։ Այսպէս կը լրանայ կրետացիին ընտրութեան գործը, նախորդին մահուան չորրորդ օրը, 1734 նոյեմբեր 14'ին։

1973. Սարգիս Սարաֆեանի ներբողականը կը գրէ, թէ նա ինքն եղաւ Աբրահամ կրետացին ընտրելի ցուցնողը, և թէ «Հանգուցեալ Սարգիս Սարաֆեան պատմաբանները ամէն հակառակ էին անոր ընտրութեան. բայց Սարգիս անոնց ընդդիմութիւնները յաղթեց, թէ ընթբոլեան ֆոլոցոցման պէտ+ը ցոյցոց, և թէ իւր վրան առաւ կոլոտի հաւանութիւնը առնել, և թէ ասոր վրայ կատարուեցաւ կրետացիին կաթողիկոսական օծումը (ԳԱԼ·22—23)։ Սակայն կրետացիին ինքնագիր պատմութիւնը, ոչ Սարգիսի անունը կուտայ, ոչ միաբաններու ընդդիմութիւնը կը յիշէ, և ոչ Սարգիսի երաշխաւորութեան խօսք կ'ընէ, որով ներբողաբանը՝ Սարաֆեանի ինքնագով տեղեկութիւններով կազմած պիտի ըլլայ իւր պատմութիւնը։ Եթէ միաբանութեան մէջ անհամաձայնութիւն գտնուէր, հնար չէր նորեկ Սարգիսին խօսքով՝ մէկ օրուան մէջ համաձայնութիւնը գոյացնել, դի Խոչաբեցին երկուշաբթիին մնացած էր, և չորեքշաբթիին կրետացիին ընտրութեան պետական գործողութիւնները կատարուած էին, և բարապանը ղրկուած էր էջմիածին։ Արդէն յուշարկաւորութեան նախագահութիւնն ալ կրետացիին թողուիլը, նախորդը չմնացած միաքերուն պատրաստուած ըլլալը կը ցուցնէ, մինչ Սարաֆեան՝ Խոչաբեցիին անկողին իյնալէն ետքը հասած էր, ինչպէս իւր ներբողաբանն ալ կ'ընդունի (ԳԱԼ·21)։ Պարակաստանի և Տաճկաստանի հաւանութեան չսպասելու որոշումը տուողը՝ առժամեայ կուսակալն էր, ուստի մեր կարծիքով հիմնական չեն երեւիր Սարաֆեան Սարգիսի փառաբանութեան համար ցուցուած պարագաները, և կրետացիին ընտրութիւնը Մայր աթոռի միաբանութեան միաձայն որոշման պէտք է վերագրել։ Երեւանէ դառնալէն ետքը տասն օր կ'անցնի, մինչեւ որ օծման պատրաստութիւններ կը կատարուին, եպիսկոպոսներ և վարդապետներ կը հաւաքուին, իշխաններ և դիւղաւագներ կը հրաւիրուին, և օծումը հանդիսապէս կը կատարուի 1734 նոյեմբեր 24'ին, ի Ցիսնակաց էջմիածին, այսինքն Ծիսնակաց բարեկենդանէ ետքը եկող առաջին կիրակին (ԿՐԵ·10)։ Անմիջապէս յաջորդ օրը, երկուշաբթի 25 նոյեմբեր, եպիսկոպոսական ձեռնադրութիւն տեղի կ'ունենայ, և Սարգիսի հետ (ԳԱԼ·24) անչուշտ ուրիշ ձեռնադրուողներ ալ կ'ըլլան։ Սակայն Սարգիս չմեկնիր, և մինչեւ 1735 գարուն էջմիածին կը մնայ (ԳԱԼ·25), ինչ որ պիտի չկարենար ընել, եթէ իրօք ինքն յանձնառու եղած էր կ-Պոլ-

սոյ պատրիարքին և ժողովուրդին հաւատնուիրելը փուխացնել։ Նորընտիր կաթողիկոսը նեղութեամբ կ'անցընէ ձմեռը, վասնզի ներսէն կը նեղուէր վան պակասութեան ֆոդէց, որ ալ էոյլ ունենալին. իսկ դուրսէն վրաստան չէր կացութեան վրայ։ Նատիր Գանձակը պաշարած էր, իսկ Օսմանցոց կողմէ սպարապետ Քէօրքիւլիւ Ալպուդլան փաշա, հզօր բանակով Ամիդէ ելած կը յառաջէր Գայազիտի և Կարսի ճանապով, և Երեւանի և Տփղիսի զօրավարներուն պաշարի ու պարէնի հրամաններ էր յղած (ԿՐԵ· 10)։ Նատիրի գործերը, որչափ ալ ուղղակի նկատեցական կերպարան չունենան, բայց որովհետեւ կաթողիկոսը անձամբ մասնակից եղած է, և ինքն մանրամասնօրէն գրած է, պատշաճ կը համարինք մենք ալ կարեւոր կէտերը համառօտիւ քաղել։

1974. Նատիրի արշաւանքին վերջնական արդիւնքը լրացաւ 1735 տարին։ Ապրիլի մէջ Նատիր սկսաւ Գանձակի կողմերէն Կարսի

ԿՐԵՏԱՑԻՆ ԵՒ ՆԱՏԻՐ

վրայ երթալ՝ Լօռիի և Դաղաիի վրայէն, բայց պարէնի և դարմանի պէտքը ստիպեց Ապարանի կողմը դառնալ և Արարատի պաշտն իջնել։ Այս առթիւ առաջին անգամ կաթողիկոսը պէտք զգաց Նատիրին դէմ գնալ։ Որչափ ալ Նատիր իբր թշնամի կու գար, սակայն դժուար չէր պատերազմին ելքը գուշակել, և Կրետացին նախատեսութեամբ կը պատրաստէր իւր ապագայ յաջողութիւնը։ Մայիս 27'ին Հոգեգալստեան կիրակիաթիին, էջմիածինէ կը մեկնի ընծայից և պաշտօնեից, վարդապետ և Նահապետ, Ծովհաննաւանք կը գիշերէ, չորեքշաբթի Նատիրին բանակուողը կը հասնի Ապարանի մօտ՝ Շիրաղալա կոչուած գիւղը, և միւս առտուն մայիս 29 հինգշաբթի, անոր կը ներկայանայ և սիրով կ'ընդունուի։ Բայց որովհետեւ Նատիր ալ պիտի մեկնէր, կաթողիկոսն ալ մէկտեղ կը տանի գինուորական պատիւներով, մինչեւ երրորդ օր քովը կը պահէ, սեղանակից կ'ընէ, և ուրբաթին կ'արձակէ, երբ ինքն ալ հետեւէն գալով մայիս 31'ին շաբաթ օր էջմիածնի մօտ կը բանակի (ԿՐԵ· 12)։ Կաթողիկոսը անմիջապէս դիմաւորելու միտք չունէր, և երկուշաբթի յունիս 2'ին կը ղրկէ Աղեքսանդր վարդապետ աթոռակալը, որ Նատիրը բարկացած կը գտնէ կաթողիկոսին անմիջապէս չգալուն համար, և չփոթած կը դառնայ։ Կաթողիկոս ալ կ'այլայլի, ասէ՝ պէհ-պէհ-յ, կը գրէ, Ե ի կենցաղս յոյսահատեցայ, Ե ահա ղթէպէն ոչինչ պատ. ասով մէկտեղ կ'որոշէ երթալ, առաջուընէ անկեալ սուրբ Իլմազ պեղոյն և հոգին Աստուծոյ յանձնելէ ետքը։ Լսեալ սրտէ Ե կնահե Նատիրին առջեւ կ'ելլայ, և ինքզինքը կ'արդարացնէ թէ տեղական սովորութեանց անգիտակ էր, ուրիշը յանցանք չունի, եթէ պատիժ կայ, իրեն տրուի։ Նատիր կը հանդարտի, անկեղծ յայտարարութեամբ կը մեղմանայ, նարկաւ առաջին տեսութեան ատեն ալ զննած ու կշռած էր կաթողիկոսին զգացումները, որովհետեւ հաստատած էր անոր կաթողիկոսութիւնը, և խնդիրներն ալ չնորհած։ Մինչ մահս սպասէ, խելացաց ինչ, կը գրէ կրետացին։ Նատիր կ'առաջարկէ որ երթայ միաբանութեամբ և հանդէսով դիմաւորէ, և ըստ այմ վանք գալով և եկեղեցական թափօր կազմելով Նատիրը վանք կ'առաջնորդէ, որ Մայրտաճար ալ կը մտնէ, բացատրութիւններ կ'ուզէ, և կը հրամայէ ժամ ասել։ Հանդիսապէս Հռիփսիմեանց եկեղեցիին կը կատարուի. կաթողիկոսը այլազգաց լեզուով բանախօսութիւն ալ կ'ընէ, և նոյն հանդէսով մինչեւ վանքին դուռը կ'առաջնորդէ Նատիրը, որ նուէր ալ կը թողու, և մեծ գոհունակութեամբ կը մեկնի (ԿՐԵ· 13), յիշելով միանգամայն թէ բանակին կողմէ վանքին արտերուն հասուցած վնասներն ալ պիտի հատուցանէ։ Միւս առտուն Նատիր աւագանին կը ղրկէ վանքը տեսնելու, ինքն ալ նորէն կը դառնայ և կը մեծարուի, և կաթողիկոսը կը քաջալերէ, որ մօտալուտ պատերազմներէն չվախնայ, այս օծաղ մէջ է, կ'ըսէ, Ե գո մէկ եթէչ ձեր մարդ է, գոնէ չեն լինի, կեցէք քովով։ Այս անգամ իւր վրանը փոխադրած էր Փարաքարի վրայ, և կաթողիկոսը զանց չըրաւ նոյն հինգշաբթի օր, յունիս 3'ի երեկոյին, չնորհակալութեան երթալ գնա ընծայից (ԿՐԵ· 15)։

1975. Ասոր վրայ դէպքերը իրար կը հալածեն։ Հինգշաբթի յունիս 5'ին Նատիր

լուր կ'առնէ, թէ Ապտուլլահ Քէօքրիւլիւն երեւանի պաշտպանութեան հասած է, անմիջապէս ղրկելոյն ձանրաթողն կոթոնին, որոնց հետ և ղոհէն, այսինքն կանանոցը կը հեռացնէ դէպի Թարվէզ, և իւր բանակը կը դնէ Ախիքէփէ։ Իրօք ալ Քէօքրիւլիւ չարաթ օր, յունիս 7'ին կ'իջնէ եղվարդի դաշտը, ուր յաջորդ կիրակի առտու, ժամ երկուքին պատերազմը կը խառնուի, և Նատիր՝ դիրքերէն օգտուելով, և թշնամին դժուարին տեղեր մղելով մեծ յաղթութիւն կը տանի, և 18,000 հոգիով 40,000 հոգի կը կոտորէ, որոնց մէջ նաեւ Քէօքրիւլիւ սպարապետը, Սարը Մուսթաֆա զօրավարը, և այլ երկու փաշաներ (ԿՐՑ. 18)։ Այս յաղթութեան օրը ուրիշներ յունիս 14 կը դնեն, և պատերազմին տեղը՝ Պաղավերտ և Ախիքէնտի կ'անուանեն (ԺՈՒ. 340)։ Անոնները չատ նապէս ազաւաղուած են, իսկ օրը նոր տոմարով ալ հաշուենք, 8/19 յունիս պէտք էր ըսուէր։ Կրետացիին օրագրութիւնը ականատեսի մանրամասնութիւն կ'ըլլալուն, իբր ստոյգ պէտք է ընդունուի։ Կաթողիկոսը, որ ինքզինքը՝ ես պրոտ Աբրահամ հոգեւոր պէտ կ'անուանէ, երկաբթի յունիս 10'ին յաղթականը չնորհաւորելու կ'երթայ եղվարդ, դաշտին երեսը սփռուած դիակներուն մէջէն անցնելով։ Կիսամեռ Հայու մը հանդիպելով, գրաստի վրայ բնաջընջել տալով Աչտարակ կը տանի և խնամել կու տայ, և երբ միւս օր էջմիածին կը դառնայ, չատ մը վիրաւորներ հոն եկած կը գտնէ, Թոթխ, Հայ, Հոռոմ, և ամէնուն ալ դեղ ու խնամք կը հրամայէ անխտիր (ԿՐՑ. 19)։ Նատիր յաղթութենէն ետքը երեւանը պաշարման ներքեւ առնելով, ինքն Գեղարդի և Ծաղկունաձորի բարձունքները կ'երթայ հանգստանալ, և եղվարդի կողմերը կը դառնայ Աստուածածնայ բարեկենդանին, որ կը հանդիպէր օգոստոս 10'ին։ Անմիջապէս մօտը կը կանչէ կաթողիկոսը, և իրեն մօտ կը պահէ ու սեղանակից կ'ընէ, բայց պահքին պատճառով կաթողիկոսը կը բաւականանայ ուտել միայն է հեղքեն և չայլոց ձուկերնոց։ Այդ պատճառով Նատիր իր առջի երթալ էլաւեն ոմն ի լեցնել տալով, ետ կու տայ տանելու (ԿՐՑ. 21), երբ Նախաթաց չէթէն ոչն, այսինքն Շողակաթի ոստնին, օգոստոս 16'ին, վանք կը դառնար։ Վերափոխման առտուն չեռ պատրաստի է եղեն վայելչին։ չէթէ-խօն Նատիրի, կը գրէ կրետացին, ըմպելով չքաժան չանուն նոթա (ԿՐՑ. 22)։ Երրոր Նատիր կարսի պաշարման կ'երթայ, Աբրահամ կը զբաղի Նատիրի չանձնարարութեամբ չիւտակի գմբէթ մը չինել տալ եղվարդի բլուրին վրայ, ուր Նատիրի վրանը զարնուած էր յաղթութեան օրը. չինութեան հսկող նշանակելով Սահականոս կարնեցի՝ Դալայչիօղլու մականուանեալ վարդապետը (ԿՐՑ. 22)։ Կարսի պաշարման աստիճութիւնը, և մանաւանդ Պարսիկ սպասատակները, որք մինչեւ կարին և Պայազիտ էանդրեցին չէրկէզ, այբեցին չչէնաձան և ճերեցին չմրջկէն և չանաստան (ԿՐՑ. 22), Օսմանցիները հաչտութիւն խնդրելու ստիպեցին, երեւանը յանձնելու պայմանով, և իրօք ալ 1735 սեպտեմբեր 22'ին, վարագայ պահոց երկուչարթին, Պարսիկներ երեւան կը մտնեն, և այսպէս էջմիածին իւր նահանգով նորէն Պարսիկ տիրապետութեան կ'անցնի, թէպէտ ամիսներ առաջ առանց գրաւքի ալ՝ վանքը Օսմանեան իչխանութեան ներքեւէն ելած էր։ Պատմուած պարագաները կը ցուցնեն թէ այդ մասին Աբրահամ Կրետացին համակիր և պատրաստակամ գործակցութիւն ընծայած է Պարսիկներուն, հակառակ որ ինքն Պարսիկներու հետ բնաւ յարաբերութիւն ունեցած չէր, բայց կ'երեւի թէ Օսմանեանց զօրութեան և տիրապետութեան մասին ալ նպաստաւոր ըմբռնում չունէր։

ՆԱՏԻՐ ՑԱՂԹԱԿԱՆ

1976. Չարմանալի ըլլալու չափ աճեցաւ Նատիրի և Աբրահամի մտերմութիւնը, ինչպէս երեւանեցին ալ կը գրէ, թէ կոչէ «էջեցոց և հիշ ա՛ չինէն պահէք, ըղ և հայր կոչէր, և շա՛ խոհոբդ և ա՛նելիս իւր ընդ ամ փնօրիներ, և ամ հաջաներ (ՋԱՄ. 30)։ Կարսի պաշարումը վերցնելէն և երեւանը գրաւելէն ետքը, Նատիր դէպի Տփղիս ուղեւորեցաւ, և նորէն կաթողիկոսը իրեն մօտ ուզեց, որ հոկտեմբեր 1'ին էջմիածին մեկնելով, 27'ին Տրփղիս կը հասնի, Նատիրէ, որ մը ետքը (ԿՐՑ.

ԷՋՄԻԱՄԻՆԻ ՀԱՄԱՐ

23)։ Այստեղ եղած գործերէն նչանակելի է Նատիրի Հայոց համար վկայելը, թէ ինչ լաթ-այ-ըն-ըն-ան ազգին տիեզմաբ; և ինչպ ազատագրելին յանդնայն ջըրնենէ և յանդնայն յանդնէ և ամենայն գիմա։. և կաթողիկոսին հրամայելը որ իրենները համար ինչ խրնդիր որ ունի՝ գիրով առաջարկէ, և թեթև, կ'ըսէ, ոք հրամայեմ։ Նա ալ այդ առթիւ հնգեփագան բախտ, այսինքն հրովարտակներ կ'ընդունի (ԿՐԵ·24), և յաջորդ օրերու մէջ ուրիշ նորեր ալ կը ստանայ, որով այն օրերու մէջ ահելի ան վերջանա և հինգ բախտ առած եղաւ։ Ասոնց կարգին յիշատակութիւնն արժանի է, աթոռապատկան եօթը գիւղերու սեփականութեան հաստատութիւնը, որք են, Իջմիածին, Մաստարա, Ծառանկանոց, Օշական, Քիրազլու, Տիպաքլու և Չէլէպիկըչլա (ԿՐԵ·26), վերջինս Չէլէպիքեանտ և Քէչիչքեանտ ալ կոչուած է (ՉԱՄ·120)։ Նչանաւոր են նաև Խորասան փոխադրուելիք 300 Տփղիսեցի տուներուն տեղերնին մնալը՝ դրամի և ցորենի վճարմամբ, և Խորասան փոխադրուելիք 300 Արարատցի տուներուն գոմիչներ և գումարներ չնորհուիլը (ԿՐԵ·25), ու Տաճկաստանէ ուխտի և առեւտուրի եկող Հայերուն անկոչ և անեղէն երթեւեկը, զոր յատուկ կոնդակներով հաղորդից կաթողիկոսը՝ Կարսի, Կարինի, Եւդոկիոյ, Պայազիտի, Վանի և Բաղէշի առաջնորդներուն (ԿՐԵ·27)։ Ընդհանրութեան դիւրութիւններուն ալ մտադրութիւն դարձուցած է կրետացին, և Երեւանի փողերանոցին բացուիլը ընդունած, չէ թէ կրէ յոյժ նոյնչ-ցա և տրչնցա։ Մինչեւ իսկ հրաման ստացաւ որ կառավարիչներ առանց կաթողիկոսին գիտութեան, չրջակայից ժողովուրդէն նոր տուրքեր չհաւաքեն, և ի վերայ ապտակ ծանրութիւններ չբարդեն (ԿՐԵ·26)։ Կրետացին այդ ուղեւորութիւնն ալ յաջողութեամբ աւարտելով, Մանահին, Հաղբատ, և Հազարծին հանդիպելով Երեւան և Էջմիածին կը դառնայ, և հազիւ թէ հանգստանալու չափ առիւն կ'ունենայ, զի Նատիրէն նոր հրաման կը հասնի, որ իրեն մատ դայ Մուղանու դաշտը, ուր ամէն կողմէն պետութեան և ազգութեանց աւագանին հրաւիրած էր Նատիր՝ կարեւոր խորհրդակցութեան համար, առանց հոգալու որ ժամանակը ձմեռնային էր, և Մուղանի դաշտին մէջ վրաններու և եղեգէ տաղաւարներու ներքեւ պիտի ապրէին հրաւիրեալները, պարտաւորեալ ալ ըլլալով մթերքն և անասնոց պէտքերը մէկտեղ տանիլ, չէ այն պէսչ եղաւ (ԿՐԵ·28)։

ԿՐԵՏԱՑԻՆ Ի ՄՈՒՂԱՆ

1977. Այդ մեծ համախմբութեան ներքին չարժառիթը պարսից կայսրութեան գահակալը որոշելն էր։ Թահմազ իւր աքսորին մէջ մնացած կամ սպանուած էր, նամանաւանդ Ապպաս մանուկն ալ մեռած (ՏՊԼ·362) կամ սպանուած էր (ՉԱՄ·30), և Նատիր միայն խնամակալի անուն կը կրէր, և գահը պարապ կը նկատուէր։ Հրաւիրեալներ ամէն կողմէ ճանապայ կ'ելլէին, և Մուղանու դաշտը հաւաքուած մեծամեծներուն և նետեւորդներուն, զինուորներուն և սպասաւորներուն թիւը հարիւր հազարէ աւելի կ'ըսուի (ՏՊԼ·362)։ Աբրահամ կրետացին ալ դեկտեմբեր 3'ին չորեքշաբթի օր Իջմիածինէ մեկնեցաւ 25 հետեւորդներով, վեց վաթդապետ, որք են Ստեփանոս Ղալայճիօղլու՝ ճանապարհի սթոռակալ, Բարսեղ՝ գաւազանակիր, Եղիա Քրդաստանցին՝ ախոռապետ, Մկրտիչ Տաթեւացի՝ կարաւանապետ, Յակոբ Ասպահանցի՝ օգնական, Սարգիս Կեսարացի՝ ժամասաց, 1 քահանայ՝ Թովմաս Ագուլեցի, 2 սարկաւագ, 1 գրագիր, 3 չաթիր, 3 սպասաւոր, 3 ուղտապան, 3 ձիապան, 3 ջորեպան, և փոխադրութենանց 10 ուղտ, 10 ջորի և 16 ձի (ԿՐԵ·28)։ Խորվիրապի, Աստապատի, Երնջակի, Ագուլիսի և Ղարադաղի ճանապով, և տեղտեղ հանդիստ բնեւլով 1736 յունուար 3'ին, Մննդեան պահոց չաբաթ օրը կը հասնի Մուղան, և իրեն ալ եղեգեայ տաղաւարի մէջ օթեւան կը տրուի։ Երեքշաբթի յունուար 6, իւր մեծ և փառաւոր վրանը զարնել տալով, և բոլոր լաթ-այ-ըն-ըն-ին ալ զէն կռնչել տալով, կը կատարէ զոն ննդեան առանց ժամագնդի և պատարագի, և երանելի վրայ ջրօրհնէք ալ կը կատարէ։ Ես այս էր ըսածս, կը յարէ կրետացին, չէ պատրիկն առնէն ի գնահատ ջրոյն և չանէն զերծ (ԿՐԵ·31)։ Զիւնէն նեղուելով յունուար 7'ին կ'ուզէ Տուզալ փոխադրուիլ, բայց Նատիրի հասնելուն

լուրը առնելով Մուղան կը դառնայ երկքչաբթի, յունուար 13'ին, և չորեքշաբթի կը ներկայանայ Նատիրին Երեւանի Հայ ու Պարսիկ մնծամնծներով, և յատուկ պատիւներ կը տեսնէ, և երիկոյին նորէն առանձինն իսորհրդակցութեան կը հրաւիրուի։ Այդ միջոցին կը հասնին օտարազգի պատգամաւորներ ալ, և Օսմանցոց կողմէն Անմէտ փաշա՝ սպարապետ, և կէնճ Ալի փաշա՝ դեսպան, Կարսի կուսակալը և ուրիշներ, և յունուար 22'ին հինգշաբթի օր հասաւ Նատիրին եղբայրը՝ Իպրահիմ խան, Քոչբահաւակ և յաղթանդամ, նման եղբօրն։ Նոյն օր կաթողիկոսը նուէր կը առնայ ջրկոս պոռոտկան եղիզան և մի կոնքեռ (ԿՐԵ·28), հաւանարար վրաստանէ ձեռք ձգուած, որոնց մէկուն մանրամասն նկարագրութիւնը կը գրէ (ԿՐԵ·36)։ Ասոր վրայ ամէնքը կաթողիկոսին մօտ կուգան ալէլոսել և ընդհառաջել, զարմանալով ընդ օրերս նշան դնելն (ԿՐԵ·37)։ Կիւրակին չատ մանրամասնութեամբ կը պատմէ պայրամին հանդէսները, որ տեղի ունեցան փետրուար 3'ին, երկքչաբթի օր, բացատրելով բոլոր արարողականն և պատուանիրական ձեւերը, զգեստներն ու զարդերը։ Իսկ երկրորդ օրը, փետրուար 4 չորեքշաբթի, երբ բոլոր բազմութիւնը բոլոր սովորութեան պացած էին ի հեղմ, Նատիրի կողմէն հօթը պատգամաւորներ կուգան բսել, որ ֆնացել ի դիք յերեսմ խորհեցիք ընդ դեռանս, թէ զվ խնդրէ յեղ և երկրի կառավարել. աւելցնելով, որ Նատիր ծերացեալ և վատկենալ, կամ ֆնալ ի խորտան, և ազնիլ (ԿՐԵ·51)։ Յայտնի էր թէ ամէնքը համակամ և համախոհուրդ Նատիրը պիտի ուզէին, և բուռ այամ ալ որոչեցին, և գաւառներու համեմատ խումբերու բաժնուելով, մէջերնէն պատասխանելու ալ անձեր նչանակեցին՝ իրրեւ տեղեկաբերներ։ Հայերուն կողմէն որոչուեցան կաթողիկոսը, և Երեւանի քալանթար Մելիքջանը, և մելիք Ծաղորջանը։ Այսպէս ալ պատասխանեցին երկոյեան դէմ, նոյն հօթը պատգամաւորներուն։ Հարկ եղաւ որ միւս օր փետրուար 5 հինգշաբթի, աւելի հանդիսապէս կրկնուի այդ հաւանութիւնը (ԿՐԵ·52), որուն հանդէպ Նատիրի կողմէն երիք պայմաններ առաջարկուեցան, որ ամէնքը լրումեր և անիծիւք խոստանան, որ երէք հին Շահներու ցեղէն որեւէ մարդ ոչխան չյոյնի, անոր կողմը չանցնին, որ իւր մահուանէ ետքը իշխէն և զաւակէն իշանդիսանան ընդեր, որ Միւննիներու հետ կրօնական հակառակութիւն չընեն, զի մարդերն դիանոյն է, նոյնպէս և Վաբան, զի է և նամազ (ԿՐԵ·53)։ Ամէնքը կը խոստանան և կ'երդնուն։ Միւնոյն բանը կրկնուեցաւ ուրբաթ 6 փետրուարին, Նատիրի ներկայութեան, ուր ինքն նորէն չընդունել ցուցուց, իրեն դէմ թշնամութիւն դրդռել կրցող պատճառները յիշեց, բայց վերջապէս բազմութեան պնդելուն վրայ հաւանիլ չանն առաջ բերելով։ Ասոր վրայ երէն կոչուցին ղիւրեն, և եւ, կը գրէ կրեատացին, ղեկոյ ձեռն է լսելիս (ԿՐԵ·55)։ Գրաւոր արձանագրութիւն ալ պատրաստեցին և ամէնուն կնքել տուին, և ջրկոս առաջ հղիս ին կոչուցին առաջել այդ գործը (ԿՐԵ·55)։

ԿՐԵՏԱՑԻՒՆ ՊԱՏԻՒՆԵՐ

1978. Ամէն աւուր բոլոր բազմութիւնը պէտք էր նոր թագաւորին ներկայանար իւր յարգանքը ընծայել, և հանդիսական բարեմաղթանքներ կրկնուէին։ Այդ առիթներուն մանաւանդ դիպուածներ ալ տեղի կ'ունենային, ինչպէս փետրուար 10'ին յատուկ բարեացակամութեան առարկայ եղաւ կաթողիկոսը, երբոր Նատիր յայտնեց թէ իւր եղբայրը Իպրահիմ՝ ընդհանուր կողմնակալ նչանակած է Ատրպատականի ու Հայաստանի ու Վրաստանի, և Հերաթի Մէհմէտ խանը Երեւանի կուսակալ, և անոնց հրաման տուած է նոր աոնէն առաջարկները անխափան կատարել։ Այդ հանդիսութեանց օրերը ոսանք նեվրոզի տօնին անունով կը յորջորջեն (ՏՊԷ·362), մինչ Կիւրակին յայտնապէս Ռամազան պայրամին անուններ կուտայ, անոր սրիֆէն ալ յիշելով (ԿՐԵ·45), և պէտք ալ է այսպէս իմանալ, զի նեվրուզը գիշերահաւասարին օրն է, որ փետրուար 3'ին չէր կրնար հանդիպիլ։ Փետրուար 26'ին ալ, իբր լուսնոյ 25 հաշուելը (ԿՐԵ·68), փետրուար 3'էն սկսելով Ռամազան պայրամին հաշիւը կ'արդարացնէ։ Փետրուար 10'էն սկսան նուէրներ և գումարներ բաշխուիլ գաւառներու կարգով։ Նուէրներու հետ կը տրուէին և

գերիներ, որոնցմէ 7000 բերած էին, վրացի և Հայ խառն, և ոմանց կին, ոմանց ալ մանչ կու տային։ Փետրուար 14'ին, օրն ըմբռն առաք Սարգիս փոնի, կը գրէ կրետացին, Եբեռանցոց և Նախիջեւանցոց կարգը եկաւ. բայց ոմնի չփոթ մը կայ, զի փետրուար 14'ին Տետանընդաւաջի ոմն կ'իյնայ, ինչպէս ինքն ալ կ'ուղղէ ուրիշ տեղ (ԿՊ. 99). իսկ Սուրբ Սարգիսը այն տարի փետրուար 21'ին կը հանդիպէր։ Կաթողիկոսին նուիրուեցան զգեստներու և գօտիի հետ, նաեւ մանրիլ ընէ, որ էրեմենէյն է վրոյ վերջին, որպես զգիւղ, ըսա ծէօ Պօրնոյ։ Միւս Հայերուն ալ նուէրներ տրուեցան, ըստ է էրէօցն, ըր ալ եռօր քրիստոնեաներուն (ԿՊ. 58)։ Ընծայ ընդունողներ փետրուար 15'ին Նատիրի ներկայանալով մաղթանքներ խօսեցան, և Ճիհանչահի պաշտօնական մը բանաստեղծութիւն մը արտասանեց (ԿՊ. 59), որուն վերջը սիրնքը անմահանալ ցնծութիւն են կարդացած, և եւ, կ'ըսէ, փառքմամբ յետոյ ասոյի վերջ որ չերկիւղ եւ (ԿՊ. 60)։ Նոյն օր կաթողիկոսը նորէն Նատիր չահէ կը պատուասիրուի, և նոր չնորհներ կը ստանայ, որոց ըստ պատճէնն, որ եր եօրն ասաղ, Սուրիան վարդապետ կ'երթայ կը բերէ երկուշաբթի առաւտ փետրուար 16'ին, և նոյն երեկոյին կրկին Նատիրէ կը հրաւիրուի ողջերթի հրամանին և ողջոյնին համար, նորանոր խոստումներով, թէ վանքդ ալ իմն է, թէ դուն ալ իմն ես, բնաւ նոգ մի ըներ, միայն աղօթք ըրէ (ԿՊ. 63)։

1979. Այլևս ընդհատուած էին Նատիրին և կաթողիկոսին յարաբերութիւնները, և հրաւիրեալներէն չատեր ալ սկսան իսկոյն մեկնիլ, թէպէտ փետրուար 26'ը, լուսնոյ 25'ր թագադրութեան օր նշանակուած էր, իրրեւ աստեղահմանողներէն նշանակուած ընտիօրէն և բարեբաստիկ օր։ Այսպէս կը գրէ կրետացին ճըշդելով (ԿՊ. 67), թէպէտ թագադրութեան օրը մարտ 10'ին դնողներ ալ կան, իրրեւ տարեգլուխ ազգին Պարսից (ԽԱՉ. 260), որ է Նէվրուզը։ Բայց կրետացին ականատես է և օրերու հաշիւը ճիշդ կը բռնէ։ Նատիր չուզեց բոլոր բազմութիւնը պահել, և մասնաւորապէս օտարազգիները ճանապհց, բնտանեկան ձեւ մը սալով թագադրութեան հանդէսին, կամ թէ, նկատելով որ ալ երէկ դէն է Մասըն եր նոսալըթեան հոցէ, այլ յաղնային պեղէ՝ Թաբվէլը և այլ. ուստի և երթալիքներուն կտրկին ղրկին (ԿՊ. 65)։ Կաթողիկոսն ալ պէտք էր մեկներ անմիջապէս փետրուար 16'էն հտքը, բայց չկրցաւ, զի չատ օգտակար ձեռնարկի մը կը հետեւէր։ Վերագոյնդ յիչեցինք թէ 7000 գերիներ բերուած էին Հայ և Վրացի, Պարսիկ մնծամծնեներուն ընծայ (§ 1976)։ Կաթողիկոսին աչքին տակ կատարուած այդ բաշխումը անոր զգացումները գրգռեց, և բոլոր տրամադրելի միջոցներով այդ գերիներու ազատութեան հետամուտ եղաւ։ Գէրչէ Բալօմ ըսփեցի, կը գրէ ինքը, ղոմանը ընկերքին, և ղոմանը ափանափէն, և ղոմանը չրէկոյն ալլկոնէ և մանկոնէ և պղայէ, վիզ, սրն և փան փոբէկան, և այլէ ծեծփեցն պղայն հընքեփսան և էան փոբէկան։ Վերջիններէ չատերուն փախուստին ալ օգնեց։ Նորածիններ ալ կային յղի կիներէն, յղացեալէ է պանդ և յօրանդ էօբէնդ, էանդէ եօրն ափս էր գերբաընէն նոցա, զորս մկրտել տուաւ Ագուլիսի աւագերէց Թոմմսն քահանային, որ իւր հետեւորդներէն էր։ Փրկանաւորած և ազատած գերիները խումբ խումբ ճանապայ հանած էր, մաս մը էջմիածին դարձով ուղտապաններուն հետ. մաս մը իւր ջորիներով յղած էր Ագուլիս և Սատ պատ՝ Աղուանից Ներսէս կաթողիկոսին խնամքին յանձնարարելով. մաս մը ճանապայ հանած էր չաթիր Մաղափիայի վերակացութեամբ, ուրիշ մաս մըն ալ ղրկած էր Սարգիս Աստապատցի և Եղիա Քրդաստանցի վարդապետներուն հետ մինչեւ Տուզախ, Մուղանէ հինգ ասոր ճանապարհ հետու, որ անկէ անդին Սարգիս տանի Ներսէս կաթողիկոսի ձեռնտուութեամբ, և իրեն ջորիները խոտակ բերչել պոչյոցէ Եկէ։ Երբոր մեկնելու հրամանը եղաւ բոլոր ջորիներ գացած էին, և եւ ծաղէ, կ'ըսէ, դէյն, էեղճ և ողբալի, դէյնակ է ձէկ գալէն, և պաշարնին ալ հատած ըլլալուն, չքնաղ դ և այլ ասելի, խոչընչել և խանձել ցօրեան կերան, սպասելով որ ջորիները գտնան և ուսուելիք բերեն։ Փետրուար 21'ին կը գտնայ Մկրտիչ Տաթեւացին և 22'ին Եղիա Քրդաստանցին, և կաթողիկոսը նորէն

ձիզ կ'ընէ գերիներու մասին։ Կ'ելլէ Ղափեցէ, կ'ըսէ, որ ան որ կոչողայ. ֆէֆ ոտկ ոռէ և ոռէ էլն էէրեցն (ԿՊ. 64—66)։ Փետրուար 23'ին, երկուշաբթի ինքն ալ Մուղանէ կը մեկնի՝ էջմիածին դառնալու համար։ Զարմանալի պէտք չէ երեւի վերջին օրեր կրած նեղութիւնը, զի Նատիր չահ զայն մեկնած կ'ենթադրէր, և ինքն ալ անձանօթ պէտք էր մնար ողջերթի հրամանէն ետքը։ Կաթողիկոսին մեկնելէն ետքը, փետրուար 26'ին հինգշաբթի, տեղի ունեցած է Նատիր չահի թագադրութիւնը, զոր Թովմաս քահանայէ լսելով նկարագրած է կրետացին (ԿՊ. 68)։ Հետեւապէս ուղիղ չէ կարծել՝ որ մարտ 1'ին հանդիսապէս Նատիրին սուրը օրհնած և մէջքը կապած ըլլայ (ՁԱՄ. Գ. 815)։

ՎԱՆՔԵՐՈՒ ՊՏՈՑԸ

1980. Աբրահամ կրետացիի հետ նկատելով փափաք մըն էր վանքեր և ուխտատեղիներ այցելել (§ 1969), և մինչ տեսանելիքն զինքն որ միշտ պատմաններով և դաղարներով կատարած է իր ուղեւորութիւնները, որ իր կաթողիկոսական գործունէութեան լրումը կը կազմեն։ Այս անգամ ալ փետրուար 23'ին Մուղանէ մեկնելով յունիս 12'ին էջմիածին կը մտնէ, մօտաւորապէս չորս ամիս չրջագայելով Հայաստանի հիւսիսակողմը, զոր օրովը և տեղերու անուններովը նչանակած է իր պատմութեան մէջ (ԿՊ. 73—79), բայց մենք պէտք չենք ղգար ամէնն ալ յիչել։ Տուղախի Հասրութի գիւղը կ'անցրնէ Բուն բարեկենդանը, մարտ 7'ին, Աղուանից Ներսէս կաթողիկոսի հետ, որուն հետ ընելիք մը պարբեր էր, կ'ըսէ, բայց պէտ էր ընդ դիեան ալ էլէ պեռեալ (ԿՊ. 73)։ Տաթեւի մէջ Քարահանջ գիւղը բանադրանքէ կ'արձակէ, և մարտ 16'ին, երկուշաբթի օր լուսնի խաւարումը կը տեսնէ (ԿՊ. 75)։ Սարգիս Գարճտէրի Մեծ-Անապատը (§ 1619) քանի մը օր կը մնայ. չատ մը գիւղեր և վանքեր այցելելէ ետքը ապրիլ 7'ին, Աւետման տօնին, Դաչտ գիւղը կը պատարագէ։ Զատիկը՝ ապրիլ 25'ին Ադուլիս կ'անցրնէ, ուր և Նոր կիրակիին, մայիս 2'ին, եպիսկոպոս կը ձեռնադրէ, ըսելէն Ափոլէոյ ղեր թոռան, իր ուղեկիցը, ոչքան ոռրք էջդիածնայ, որով նախապէս յանուն էջմիածնի վեղար տուած ըլլալը կը հասկցնէ։ Նախավկայի վանքը կը մնայ 9 օր (ԿՊ. 77). անկէ կ'անցնի Երընջակ, և չրջակաները պտտելէն ետքը նորէն Երնջակէ կը մեկնի Նախիջեւան և Աստապատ, ուր Մեծահրաչի կիրակէին, յունիս 6'ին եպիսկոպոս կը ձեռնադրէ Նոր-Ջուղայի միաբան Գէորգ Աւագհանցի, և էջմիածնի միաբան Մելքոն կաֆայեցի վարդապետները, և երրորդ մըն ալ Աղբակու Ս. Բարթողիմէոսի առաջնորդ, ըստ Խնդրոյ եղելքն և վիճակն այնմիկ։ Վերջապէս չրջանը լրացնելով յունիս 12'ին Հոգեգալստեան կիրակամուտին էջմիածին կը մտնէ, և Իլման տեղւոյն առջեւ կ'աղօթէ հաստատելով ֆահրընէ ղեռ ղէրեցոնէ յամենայն պատահարաց (ԿՊ. 79)։

ԿՐԵՏԱՑԻՆ Ի ԹԱՎՐԷԶ

1981. Աբրահամ կրետացի, իր պատմութեան մէջ չարունակ յոյժ ծերացեալ և տկարացեալ կը ներկայացուի (ԿՊ. 81), բայց հակառակ այդ ենթադրութեան միչտ չարժման, և ձմեռնային դժուարին և չարքաշ ուղեւորութեանց մէջ կը տեսնենք զինքը։ Մուղանի ուղեւորութիւնն ալ վերջինը չեղաւ. զի 1736 տարին չվերջացած ճանապորդութիւն մըն ալ ըրաւ Թավրէզ, չահին եղբօր և երկրին կողմնապահ Իպրահիմի մօտ։ Հրաւէր մը ստացած էր Մուղանէ դառնալէն քիչ ետքը, բայց պէտ է ենթադրել՝ որ պատրհ ըլլալուն համար չդմեղանք էր ներկայացուցած, և իր կողմանէ պատուիրակ ղրկած Թովմաս Ազուլեցի նոր ձեռնադրուած եպիսկոպոսը, որ պէտք եղածը կարգադրեր և կաթողիկոսին նոր բնծաներ ալ բերեր էր։ Այդ միջոցին էր որ Երեւանի մէջ կնքուած հաչտութիւնը, Օսմանեան և Պարսիկ տէրութիւնց մէջ պաչտօնական դաչնագիրով մը վաւերացաւ 1736 սեպտեմբերին, և երկուց տէրութիւնց սահմանագլուխները ճչդուեցան (ԺՈՒ. 340), ճիշդ ինչպէս էին Աֆղանները արչաւանքէն առաջ (ՏՊԷ. 362)։ Նոյն տառներ 1736 սեպտեմբերին Իպրահիմի հրաւէրը կրկնուեցաւ արքունական հրամանով, զոր Աբրահամ ստացաւ երբ չհնազթեանց համար Ծովհաննավանք գացած, և հոն խօրհցեալ էր չրջալ պենդէ (ԿՊ. 80)։

Գործին իսկութիւնը իմանալու համար երեւան կ'իջնէ, պատրաստութեան համար էջմիածին կու գայ, չաքաթէ մը երեւան կը դառնայ, և անկէ հանդարտ ուղեւորութեամբ, Աւտապատ և Մարանդ հանդիպելով Թավրէզ կը հասնի հոկտեմբերի կէսին։ Իպրահիմ խանէ մեծ պատիւներ կը տեսնէ, 20 օր կը մնայ, և 15 կտոր նոր հրամանագիրներ կը ստանայ վասն վանէ և կոթողաց և վասն երկրի, և այնպէս կը մեկնի էջմիածին դառնալ։ Հին-Ջուղա, և Նախիջեւան հանդիպելով նոյեմբեր 20'ին Ծիանա կաց բարեկենդանի կիրակամուտին կը մտնէ Աւտապատ, և անկէ ալ Մորվիրապ ուխտ ընելով միւս կիրակամուտին, նոյեմբեր 27'ին կը հասնի Մայրաթոռ։ Այս անգամ ալ կաթողիկոսական ճանապարհի խումբը 30 մարդ, և 32 ձի ու ջորի կը պարունակէ եղեր (ԿՐՆ·89)։ Նկատողութեան արժանի է որ նորէն ձմեռուան սկիզբը և եղանակին իանգարուելու միջոցին կատարուած է՝ ծեր և խօթագին կաթողիկոսին ուղեւորութիւնը։ Թավրէզի մէջ Իպրահիմ խան ալ դիտեր է որ ի հնանդրանէն գեղեցիկ և ընտրելի եղեր դէմքը (ԿՐՆ·85), և թէ գիշեր երեսուն սպես գեղեցիկ տեսեր է ի քաղմոքեայ պենգէն, և մինչեւ իսկ հրաւիրակը յանդիմաներ է, թէ վասն ինչ գեղեցիկ չէիք, սրովհետեւ հնդիկ էր (ԿՐՆ·81)։ Այսու հանդերձ ծեր ու հիւանդ հանդարտ չնայիր կաթողիկոսը, չարունակ չարժումի վրայ է, այնպէս որ երեւանեցին ալ իրաւունք կ'ունենայ գրելու, թէ գլխ ընդ ընդն լինէր (ՉԱՄ·30)։ Վերջին անգամ Մայրաթոռ դառնալէն ետքը, հազիւ հինգ ամիս ապրած է Աբրահամ կրետացի կաթողիկոսը. բայց մենք անոր մահուան վրայ չխօսած, իր օրով կատարուած միւս աշխատութիւնները դէպքերը պիտի պատմենք։ Կրետացիին վրայ ըսուելիքները այնպէս իրարու կապակցեալ էին, որ հնար չէր անոնք բնդհատել ուրիշ նեղութիւններ պատմելու համար։

1982. Կոստանդնուպոլսոյ աշխատին գործերը կրետացիին կաթողիկոսութեան միջոցին, նորէն մեզի կաթոլիկութեան երեսէն ծագած դժուարութիւնները կը ներկայանան, հակառակ կոլոտ պատրիարքի խոչնդոտ ջանքերուն։ Գան ատրի կ'ըլլար յորմէհետէ կոլոտ անօրինակ չարունակութեամբ պատրիարքական աշխատին վրայ կը մնար, ինչ որ իր իմաստուն կառավարութեան արդիւնք պէտք է ըսենք, զի երբ մէկ կողմէն հայադաւան եկեղեցւոյ իսկութիւնը կը պաշտպաներ, միւս կողմէն կ'աշխատէր բուռն միջոցներէ զգուշանալ, և միտքերը լուսաւորելով հաշտարարութիւն գոյացնել։ Սակայն նա երբ իր բարեմտութեան սկզբունքին կը հետեւէր, կ'երեւի թէ լատին քարոզիչներու չահադէտ ուղղութեան չէր թափանցեր։ Կնճիռին ամենէն մեծը Հայոց եկեղեցիներուն վրայ էր, ուր լատինամիտներ պաշտօնական պահանջներով պէտք էր դիմէին, և պետական ուսակէտով պէտք չէր խորչէին։ Այդ պատճառներով Հռոմն ալ չէր կրցած բացարձակ արգելք հռչակել, և երկդիմի պատգամով մէջէն ելլալ մտածած էր (§ 1938)։ Բայց լատին արեղաներու և իրենց եպիսկոպոսին չահը աւելին կը պահանջէր, իրենց հետեւորդներէն իրենք պէտք էր չահէին։ Եթէ կոլոտ բուռն միջոցներէ կը խորչէր, բոլոր ազգայիններ նոյն միտքէ չէին, և լատինամիտներու յոխորտանքէն կը գրգռուէին։ Անոնց գլխաւորներէն էր Շիրին Գալֆա, արքունի չինուածապետ, որ իւր դիրքէն օգտուելով Տպարքոս Էսպէիտ Մէհէմմէտ փաչան գրգռեց, և սա նոր հրաման ղրկեց կոլոտ պատրիարքին, իւր ժողովուրդին վրայ զգուշանալ, և իրեն անսաստողները ծանուցանել. բայց կոլոտ բաւականացաւ լատինամիտներու գլխաւորները կոչել ու խրատել, որոնք չէնթալ ղիպո պոբէյէրէն փոքյան խալալ-ընեմբ (ՉԱՄ·Գ·807)։ Սակայն լատին եպիսկոպոսն ու արեզաններր չէին նեղեր իրենցմէ հրապուրուածներուն՝ պատրիարքին մօտենալը։ Գաղղիական դեսպանը Վիլնէօվ՝ միտք կը յղանայ Հայ կաթոլիկական եկեղեցի մը կառուցանել սալ, որ մէկ կողմէն կաթոլիկ և միւս կողմէն Օսմանեան հպատակ նկատուի, և կաթոլիկութեան հրապուրուած Հայեր իրենց եկեղեցականներով ուզած հոգեւորական պաշտօնին կատարէն անոր մէջ։ Ասոնք կը հրաւիրուին ծախքերուն համար հանգանակութիւն բանալ, և դրամական գումարներ

և կանացի զարդեր բաւականաչափ կը յանձնուին դեսպանատան՝ լատինամիտ Հայերու կողմէ, ոմանք յօժարութեամբ և ոմանք ստիպմամբ, մինչեւ իսկ ընդդիմացողներուն մէջէն ոմանք ընդ բռնի եղեն, և ոմանք ղրկեցան չբյնկռնէ։ Հռոմէական պատմիչն է որ կը վկայէ սոյն լատինական ծայրայեղութեանց (ԶԱՄ. Գ. 807)։ Այդ բաները գաղտնի կը կատարուէին 1735 մայիսին մէջ։ Ծրագրուած խորհուրդը յաջողցնելու համար վիլնէօվ մտածած էր, որ լատինամիտներ, որչափ ալ առանձին եկեղեցւոյ մէջ հոգեւոր պաշտօն կատարեն, պարբերբէն Հայոց պոյեն ղեկեղեցական, այսինքն իրաւունքները վճարեն, ինչ որ կը նուազէր լատինամիտ եկեղեցականներուն օգուտը, և կը դադրեցնէր բուն լատիններուն հասոյթը։ Լատին արեղաներ հազիւ թէ կը տեղեկանային, ձայն կը բարձրացնեն, որ եղեւ ոոոոյն ոոանչինն եկեղեչ, և ոչ եկեոյեն է ծէօ, ծէ գաթոլ ծամ։ Նորէն հռոմէական պատմիչէն կը քաղենք այդ պարագաները, և աւելորդ կը դառնայ խորհրդածութիւն աւելցնել, թէ ինչ էր Լատին քարոզիչներուն նախանձայուզութեան մեծ չարժառիթը։ Ազգայիններն ալ կը գրգռուին, եւս առաւել պետութիւնը կը յուզուի իրեններուն օտար պետութեան հովանաւորութեան ներքեւ անցնելուն վրայ. հետազօտութիւններ կը կատարուին, քանի մը գլխաւորներ կը ձերբակալուին, կը բանտարկուին, և կը տուգանուին։ Դեսպանը իւր ծրագիրէն ետ կը քաշուի. Պարսից հետ պատերազմը իրր արգելք կը ցուցնէ, և գործը խաղաղութեան միջոցին կը թողու (ԶԱՄ. Գ. 808), բայց չէ ըսուած թէ հաւաքուած գումարները տէրերուն դարձուած ըլլան։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԳՈՐԾԵՐ

1983. Հայերուն ճակատագիրն էր կարծես, նոյն իսկ քրիստոնեայ ազգերէ խանգարուած տեսնել իւր ներքին խաղաղութիւնը, և անդադար մրցիլ ու ճգնիլ անոնց քաղաքականութեանց և գրգռութեանց դէմ։ Երբ Լատիններ մէկ կերպ գինքը կը յոգնեցնէին, ուրիշ կերպով մըն ալ Յոյներ ասպարէզ իջած էին։ Ասոնց ճիգերը Երուսաղէմի Հայոց սեփականութեանց և իրաւանց դէմ էր. կ'ուզէին Հայերը ամէն տեսակ իրաւունքներէ զրկել, ոչ միայն արարողական այլեւ կալուածական իրաւունքներէ կապտել, և նոյն իսկ Ս. Յակոբեանց մայրավանքն ալ իրենց ձեռքը անցընել։ Հէքիմպատէ Ալի եպարքոսին օրով յաջողութիւն չէին գտած, բայց կրցան չհանեցնելով չհիլ կիւրճի Իսմայիլ եպարքոսը (§ 1968)։ Յոյներուն աչքին փուչ եղած էր Հէքիմպատէի օրով կոլոտի առած նոր հրովարտակը, որով կը հաստատուէին Հայոց բոլոր իրաւունքները, սեփական սրբավայրերը, լուսահանութեան արարողութիւնը, և Աստուծոյ ու Եգիպտացոց ու Եթովպացոց՝ Հայերուն հետեւակ ըլլալը։ Երբ հաշտութեան խօսքեր կ'ըլլային, Յոյներ համարձակ կ'առաջարկէին, ըսյն հրովարտակ, ըր ոոէ է վերչէն ոոոոբ, այբեցէ է հոր ոոոչէ ոչց ծէրց (ԱՍՏ. Բ. 40)։ Կիւրճի Իսմայիլի եպարքոսութիւնը իրենց քաջելերութիւն տուաւ, զի զայն չատ դիւրամէտ գտան անձնական չահերու փասատին։ Երկու Յոյն պատրիարքներ, 18 մետրապոլիտներ, բազմաթիւ իշխանաւորներ, գրով դիմեցին, թէ ֆոոնէոոնիէն ոոոբէ պեղեց ոոանդեոլ է Յոոնց, թէ Հայերը եկամուտ են, Ս. Յակոբեանց վանքը Յոյներուն է, և Հայեր խաբէութեամբ իւրացուցած են, և թէ ոմեն ոզէ էրէոպոէէց յՏէոոոոչմ, պարբէն հեոչենդրէլ պարբէոբէն Յոոնց։ Այս գիրը չուտով ընդունելութեան արժանացաւ, և իրրեւ Հայոց խաբէութեան հեղինակ Սեղբոս և Մելիտոն ամիրաներ բանտարկուեցան։ Հայեր բողոքեցին, բայց Յոյներ աւելի բազմութեամբ և աղմուկով եպարքոսին դիմեցին։ Հայեր Մանմուտ սուլտանին դիմեցին, բայց գործը եպարքոսին թողուեցաւ, և թագաւորական հրաման եղաւ, Հայոց տրուած հրովարտակը ետ առնել. յաւուկ դինակիր ալ ճանպազ հանուեցաւ Երուսաղէմ որ հրովարտակը ետ առնէ և բերէ, և Յոյներուն պահանջները գործադրուին։ Մինչեւ իսկ Սեղբոսի և Մելիտոնի գլխապարտութեան լուրեր լսուեցան։ Հայեր դժուարին ճգնաժամին մէջ, ամէն տեսակ զոհողութեանց ենթարկուեցան. իրենք ալ կողմնակիցներ չահելու համար բանի մը չի խնայեցին. բայց թերեւս արդիւնք չունեցան, եթէ ներքինապետին և եպարքոսին մէջ ծագած գժտութեան հետեւանօք, կիւր-

ճի Իսմայիլ վեց չաբաթէն պաշտօնանկ չըլլար և չաքսորուէր, և անոր հետանալէն 16 օր ետքը Էսէյիտ Մէհէմմէտ փաշա եպարքոսութեան չկոչուէր։ Անոր առաջին գործերէն մին եղաւ, նոր գինակիր մը ճանպայ հանել, առաջինը ետ կոչելու, և Հայոց հրովարտակը իրենց ձեռքը թողլու (ԱՍՏ. Բ. 41—43), մինչեւ որ կատարեալ քննութեամբ պատչաճը տնօրինուի։ Այդ առթիւ բանտարկեալ ամիրաներն ալ արձակուեցան։ Թէպէտ առժամեայ հանդարտութիւն մը տիրեց, բայց հիմնական կարգադրութիւն չէր եղածը. Ցոյներ չէին կատած իրենց յաւակնութիւններէն, Հայեր չէին ազատած պաշտօնական ճիգերէն։

ՀԱՅԵՐ ԵՒ ԼԱՏԻՆՆԵՐ

1984. Առանց ուզելու այդ նչանաւոր վէճին մանրամասնութեանց մտնել, բաւական կը սեպենք գործին հոգին և գլխաւոր կէտերը բացատրել։ Կոլոմ կ-Պոլսոյ և Շղթայակիր Երուսաղէմի մէջ ամէն ճիգ կը թափէին Հայոց իրաւունքներուն չատագովութեան։ Կ-Պոլսոյ մէջ պէտք էր կատաւարութիւնը նպաստաւոր դարձնել, Երուսաղէմի մէջ պէտք էր զօրաւոր փաստեր կազմել հին հրովարտակներէ քաղելով։ Շղթայակիր իրեն մասը լիովին պատրաստեց, տեղական իշխանութիւններուն հաստատել տուաւ, բնիկներուն վկայութիւնները վաւերական գիրերու վերածեց. ուզեց ալ անձամբ կ-Պոլիս երթալ, բայց միաբանութիւնը չուզեց որ հեռանայ, ուստի չատացաւ կոլոտին յանձնարարութիւններ ընել, որ ինչպէս որ պէտք է պարտք ընէ և ծախսէ, վստահացնելով թէ վճարման համար պարբաս է Էքթոփն ոչնչել ղրկելոյն է պարտքը։ Այդ առթիւ Ցակոբ Նալեան նորէն կ-Պոլիս դարձած պիտի ըլլայ, Շղթայակիրին յանձնարարութիւնները կոլոտի հաղորդելու և գործակցելու։ Բայց աւելի նչանակելի օգնութիւն մը եկաւ Հայոց կողմը զօրացնել։ Ցոյներուն յաւակնութիւնն էր Երուսաղէմի սրբավայրերուն և պաշտամունց միակ տէրը դառնալ, ինչ որ Լատիններուն ալ դիրքը կը վտանգէր, թէպէտ անոնց անունը տրրուած չըլլար։ Լատինները զգացին իրողութիւնը, և կանխահոգ զգուշութեամբ պէտք տեսան Հայերուն միանալ և Հայերուն օգնել, որպէսզի անոնց ճգմուելէն ետքը կարգը իրենց չգայ։ Ասկէ յառաջ եկաւ պատրիարքին և դեսպանին միջեւ մերձաւորութիւն մը. պէտք եղաւ որ Լատիններ իրենց չահատէր մինամոլութեան ալ չափ դնեն, և իրենց հետեւողներուն ալ ոչխելն, չի մի եա խմբովին և համբյակ երկնչեն յեկեղեցի լատինացոց, և երբեմն ինա ցեն յեկեղեցի Հայոց։ Այդ մերձեցումները տեղի ունեցան 1736 տարւոյ սկիզբները (ՁԱՐ. Գ. 811), և կրօնապէս անհնար սեպուած բաներ, հնարաւոր դարձան, երբոր անձնական չահը խօսեցաւ։ Ինչչափ ալ այդ նպաստաւոր պատրաստութիւնները կրնային Հայոց կողմին վատահութիւն ներշնչել, սակայն կ-Պոլսոյ մէջ մտածեցին, որ անհրաժեշտ է Շղթայակիրին ներկայութիւնը, թէ իբր գործին տէրը, և թէ հեղինակութեամբը և արժանիքովը զօրաւոր ազդակ մը գործին վճռական յաջողութիւնը ձեռք բերելու։ Այդ նպատակով պատրիարքը ազգայիններու հետ գիր մը ուղղեց Շղթայակիրին ամենայն յարգանօք, որ թէպէտ ծերացած, բայց աթոռին սիրոյն յանձն առնու կ-Պոլիս գալ։ Նամակը 36 ստորագրութիւն կը կրէ, և պատրիարքին հետ ստորագրած են, 6 աւագերէցներ, 4 տիրացուներ, 2 եկեղեցականներ, 3 էլէպիներ, և 20 ազգային գլխաւորներ։ Նամակը դրողներ կը նախատեսեն թէ Շղթայակիր պիտի կարենայ առարկել, օրվէ՞ ի ծերոնէն իմ չենայելով հոգեցի՛ զիս քեզ այր, և կը պատասխանեն թէ զմի՛ այնպէս անխոհեմ և փութկոտ, և երկնէ հոգին չպահանջէր, զի ես ալ հոգիս վհատիմ (ՄԿՐ.)։ Նամակը 1736 տարեթիւ ունի, բայց ամսաթիւ չունի, միայն գատկին երկրորդ օրը, ապրիլ 26'ին, Երուսաղէմի եկեղեցւոյն մէջ կարդացուած ըլլալէն (ԱՍՏ. Բ. 48) կը հետեւի, թէ տարւոյն սկիզբները գրուած է։

ՇՂԹԱՑԱԿԻՐ Ի Կ-ՊՈԼԻՍ

1985. Այս նամակին վրայ Շղթայակիր որոշեց կ-Պոլիս երթալ, ինչպէս արդէն ալ յօժարած էր. իւր բացակայութեան միջոցին գործերուն հսկելու համար տեղապահ, փոխանորդ, գանձապետ և թարգման նչանակեց՝ կարողագոյն միաբաններէն (ԱՍՏ. Բ. 48), Գաբ-

բիէլ, Թէոդորոս, Յովհաննէս, և Պօղոս վարդապետները (ԱՍՏ·Բ·60—61)։ 1736 մայիս 6'ին, Նոր կիրակէի հինգշաբթին Ե-թուսաղէմէ մեկնեցաւ ուխտաւորներու բազմութեան հետ, և 15'ին Յոպպէէ նաւ մտաւ, Կիպրոս հանդիպեցաւ, բայց անկէ անդին փոթորիկ է տբլէ Յովհ և է պակասուէնէ ջոյ, պարտաւորուեցաւ ուղեկիցներուն հետ ցամաք ելլալ յունիս 5'ին, Ֆինիքէ (Phinéka) նաւահանգիստը, Աստալիայի արեւմտակողմը, և ցամաքէն յառաջել դէպի Կիպրոս։ Բունդարպաչի կոչուած տեղը տնդով հիւանդացաւ, և չատ նեղութեամբ կուտինա հասաւ, ուր 21 օր մնաց, և ուր նկան զինքն դիմաւորել և հոգալ, կոլոտէ յղուած իւր չորս յառաջադէմ աշակերտներէն՝ Յարութիւն Հէզանոգի, Յակոբ Նալեանն, Սահակ Ահագին և Յակոբ Պալաթցի վարդապետները։ Կուտինայի մէջ քիչ մը կազդուրուելով, և Պրուսայի մէջ առաջնորդ Ներսէս Պալաթցի եպիսկոպոսէն հիւրասիրուելով, այն որ պատրիարք եղած էր ժամանակին (§ 1867), ողջամբ կը հասնի Կիպրոս 1736 յուլիս 23'ին, Վարդավառի բարեկենդանին նախընթաց ուրբաթ օրը։ Անգամ մըն ալ կը նորոգուէր այն յուզումնալից տեսարանը, որ տեղի ունեցած էր Շղթայակիրին առաջին անգամ Կիպրոս եկած ատենը, երբ երկու սրտակից և սիրակցորդ եղբայրներ իրարու կը փարէին։ Կոլոտ, 21 տարիէ իվեր պատրիարք, խոնարհամիտ կը մնծարէր իւր հայրապատիւ ընկերակիցը (§ 1926)։ Շղթայակիրին գալուստը Լատինները կողմէ ալ գնահատուեցաւ, իրրեւ իրենց ալ նպաստաւոր պարագայ մը, և Վիլնէօվ դեսպան երկու լատին կրօնաւորներ յղեց յատկապէս անոր բարիգալուստ մաղթելու, որուն չնորհակալութիւն մատոյց Շղթայակիրը՝ յայտարարելով, թէ իբր հիւանդ՝ ապողջութիւն, և իբր նեղեալ՝ միխիթարութիւն գտնելու եկած է, և դեսպանին ալ աջակցութիւնը կը խնդրէ (ՁԱՄ·Գ·811)։ Արդէն Հայերու և Լատիններու յարաբերութիւնները քաղցրանալու երեւս կ'առնէին, և Կոլոտ յատուկ նամակներ ալ գրած կ'ըսուի Գաղղիոյ Լուդովիկոս ԺԵ թագաւորին և Հռոմի Կղեմէս ԺԲ պապին (ՁԱՄ·Գ·811), թէպէտ պատճէնները տեսնուած չեն։ Գրիգոր իջեւանած էր Իւակիւտար Երուսաղէմապատկան վանատունը, բայց անչուչա յաճախ էին երկու պատրիարքներուն տնտեսակցութիւնները, առջեւնին ունեցած մեծ գործը աւարտելու համար։ Իրաւ՝ տագնապալից վայրկեաններ անցած էին, և Յոյներ ալ՝ կարծես թէ հանդարտած, գոնէ անգործ էին, էսէլիտ Մէհէմմէտ եպարքոսին բռնած ուղղութենէն ցնցուած. բայց խնդիրը կը մնար, և միայն քնութենէն առքը վճռաբար պիտի վերջացուէր, և մինչեւ որ գործը չյարտնար, վստահիլ անկնար էր։ Սակայն առժամեայն ալ իբր վերջնական կը նկատուէր հասարակ ժողովուրդէն, այնպէս որ նորէն Հայի ու կաթոլիկի բանավէճերը կը սկսէին մէջտեղ գալ, և մանաւանդ ամավերջի հանդիսական օրերը առիթ կ'ընծայէին տարբեր տօնակատարութեանց և փոխադարձ մեղադրանաց։ Մինչեւ իսկ Լատիններէ ոմանք դեսպանին ականջը հասուցին՝ թէ Շղթայակիրը Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյն մէջ, ուր Աստուածայայտնութեան տօնին նախագահած էր, իբր թէ է խօսքէ խօսեր հայհոյեաց ղեպապէն Լատինաց (ԱՍՏ·Բ·49)։ Բայց Վիլնէօվ, այլ խոհեմ, և մանաւանդ Լատին կրօնաւորներուն քաջալերանց վարժ, և ծանրագոյն խնդիրներու կարգադրութեան հետամուտ, ոչ միայն այդ խօսքերուն կարեւորութիւն չտուաւ, այլեւ հանրութեան միտքը չինելու համար հացկերոյթ մը տուաւ դեսպանատան մէջ կիրակի օր, 1737 փետրուար 3'ին (ՁԱՄ·Գ·811), և հրաւիրեց Շղթայակիր և Կոլոտ պատրիարքները, էջմիածինի նուիրակ Պետրոս Հռոմկլայեցի վարդապետը, Քիւթիւր մականուանեալ, և Հայոց մնծամեծներէն քանիներ։ Փոխադարձ հաչտութեան խօսքեր եղան, պատրիարքներ առաջարկեցին Հայոց եկեղեցին երթալու արգելքը վերցնել տալ, դեսպանը խնդրեց նզովքի չարականին երեք տուները չերգել, և փոխադարձ հաւանութեամբ մեկնեցան (ՁԱՄ·Գ·811)։ Արդէն չարականի խնդիրը կարապետ կաթողիկոսի օրէն պաշտօնապէս կարգադրուած էր (§ 1953)։

1985· Գտիկ պարագաներ երթեմն մեծ խնդիրներու դուռ կը բանան, և ջնջին դէպքեր կարեւոր ստղնապ մը կը ստեղծեն.

բայց պէտք չէ կարծել թէ յանկարծ կը ծը-
նին։ Ֆիլիբիւբ նուիրակը, բնութեամբ ան-
հանգիստ, և ձգտումներ-
ՔԻՒՔԻՒՐԻ ՄԻՋԱԴԷՊԸ րով անյագ, անտարբեր աչքով. չէր կրնար տես-
նել Կոլոտի այդչափ ատեն պատրիարքական աթոռին վրայ մնալը, որ ուրիշներուն փափաքները կը խափանէր։ Առիթ մը, պատճառանք մը կը փնտռէր, և կարծեց զայն գտնել, զինքն անհիրաւուած ցուցնելով Կոլոտի երեսէն, որովհետեւ Վիլ-
նէօվ վերոյիշեալ հայկերոյթէն ետքը մէկ մէկ ծոցի ժամացոյց նուիրած էր երկու պատրիարքներուն, իսկ իրեն չէր տուած։ Այնպէս ուզեց մեկնիլ, իբր թէ Մայրաթոռը աբհամարհուած էր Կոլոտի սադրանօք, զի թէպէտ դեսպանին և Շղթայակիրին ալ մե-
ղադրանքներ կը խօսէր, սակայն գլխաւոր յարձակումը Կոլոտի դէմ էր, որուն իշխելէն կրնար օգտուիլ։ Ֆիլիբիւբ, էջմիածինի նուի-
րակ, կ'երեւի իւր նախորդէն՝ Սիմէոն Երե-
ւանեցիէն ժառանգութիւն ստացած էր Կո-
լոտի դէմ այդ սմբաստանութիւնն ընդու (§ 1945)։ Ինչպէս ալ ըլլայ, Մայրաթոռի անունով ուղղ հանուեց Ալեք-եյնի կոչուած մե-
ծամեծները (ՁԱՄ.Գ.812), որով կ'իմացուէին ներքին գաւառներու բնիկները, որոնք նո-
րէն առանձնայատուկ դիրք մը կազմած էին, զի իրենց նահանգը Երեւանով և էջմիածի-
նով Պարսիկ տիրապետութենէն անցած էր (§ 1975)։ Դեսպանն ալ Ֆիլիբիւբի լեզուա-
գարութիւնները լսելով Կոլոտէ կը պահան-
ջէր, զայն զսպել և կ-Պոլիսէ հեռացնել։ Ժողովուրդին մէջ ալ, ինչպէս բնական է, երկպառակութիւններ կ'առաջին, և Կոլոտը պատրիարքութենէ վար առնելու կողմնակ-
ցութիւն մը կը կազմուէր։ Շղթայակիրը տեսնելով որ գժտութիւնները կրնան ամէն գործերու համար ձախողութիւն յառաջ բե-
րել, չնայելով որ տկար ու հիւանդ էր Իւս-
կիւտարի վանատան մէջ, պէտք տեսաւ պատգարակով Մայրեկեղեցի իջնել։ Ժողո-
վուրդն ու մեծամեծները հաւաքեց, քարո-
զեց, յորդորեց, խրատեց, և երկուքնուն միատեղ քաշուելու ևնթադրութիւնը զգա-
ցուց, և վերջապէս յաղողեցաւ խաղաղու-
թիւնը հաստատել, Արեւելեցիներուն ալ սխալ քայլերնին զգացնել, և այդպէս փակուե-
ցաւ այդ ներքին միջադէպը, որ աննշան պարագայէ մը սկսելով կրնար մեծամեծ հե-
տեւանքներ ունենալ։ Ֆիլիբիւբ ալ իւր ձա-
խողիլը տեսնելով, ոչ լաւ, և կոլոտ կրցաւ դեսպանը համոզել, որ մի-
ջադէպին կարեւորութիւն չտայ, և հաճի Ֆիլիբիւբին ըրածը անգէտ առնել (ՁԱՄ.Գ. 812)։ Վիլնէօվ դեսպան գոհ մնաց միջադէ-
պին փակուելուն, որով Կոլոտի դիրքը կ'ամ-
րանար, և Երուսաղէմի խնդիրին մէջ լա-
տիններուն կողմն ալ կ'ապահովուէր Յոյնե-
րու յաւակնութեանց դէմ։ Դեսպանը 1737 մարտի սկիզբներն հանդիսաւոր կերպով Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին կ'այ-
ցելէր ընտանիքով, դեսպանատան պաշտօ-
նեաներով և լատին մեծամեծներով մէկտեղ, որպէսզի լատինամիտներ ալ Հայոց եկեղե-
ցիներէն չխորշին։ Այն տարի Բուն բարե-
կենդանը փետրուար 20'ին էր հանդիպած։ Աւագ ուրբաթի թափօրին, ապրիլ 8'ին, դեսպանը Ղալաթիա կ'իջնէր՝ Լատինաց Ս. Բենեդիկտոս (Saint-Bénoit) եկեղեցին, և փափաքելով Հայոց Ս. Լուսաւորչի թափօրը տեսնել, խնդրեց որ մինչեւ հոն գայ, և լատին եկեղեցականութեան կողմէն ջը-
պոտ և պռոտ և գալարափողով պատ-
ուասիրութիւն ընել կու տար։ Թէպէտ եր-
կու կողմերուն նախանձայոյզները, դեսպա-
նը Հայ և պատրիարքը Լատին եղած կ'ը-
սէին (ՁԱՄ.Գ.813), սակայն ընդհանուր տպաւորութիւնը նպաստաւոր էր։ Լատին-
ներ՝ և գլխաւորապէս դեսպանը, Հայոց գործակցութեամբ, Երուսաղէմի մէջ իրենց դիրքը ապահովել կ'աշխատէին, իսկ Հայեր, և գլխաւորապէս պատրիարքը, ներքին կու-
սակցութեանց ջնջումը կը նախատեսէին։

1987. Այդ միջոցին տիրող հաչտ ըն-
թացքը, երբ Կոլոտի տեսութեամբ ներքին
խաղաղութեան և հան-
ՄԽԻԹԱՐԵԱՆՑ դարտութեան պիտի ծա-
ՐՆԹԱՑՔԸ ռայէր, սակայն միւս կող-
մէն դիւրութիւն և քա-
ջալերութիւն կ'ընծայէր լատինականութեան հետեւող Հայ եկեղեցականներուն՝ իրենց գործունէութիւնը տարածելու Հայոց մէջ, և օգտուելով Հայոց պատրիարքարանի մեղմ ընթացքէն, և ազդայնոց՝ լատիններու չբե-
ռուելէն, և ուսման ու զարգացման հետեւե-

լու փափաքէն, հետզհետէ կ'ընդարձակէին իրենց գործունէութիւնը։ Այդ նպատակին աւելի կը ծառայէին Մխիթարեան և Անտոնեան նորակազմ միաբանութեանց անդամակիցները, որք անդատին այդ ժամանակէն մոլեռանդ լատինականութենէ տարբեր ուղղութիւն մը ընդգրկած էին, քարոզելով և բացատրելով թէ Հայոց եկեղեցին և հայադաւանութիւնը, Հռոմի եկեղեցիէն ու հռոմէականութենէ օտար չեն, և հիմնապէս միևնոյն են, միայն ինչինչ թիւրիմացութիւններ կան, որոնք Հռոմի դիտողութեան առիթ կու տան, և անոնք ուղղել և փոփոխելն ալ ոչ միայն հայադաւանութեան խոհութիւնը չխախտեր, այլև մեծապէս օգտակար կ'ըլլայ, պապութեան հզօր պաշտպանութիւնը և եւրոպական տէրութեանց հովանաւորութիւնը ապահովելով։ կ'աւելցնէին ևս թէ Հայութեան անկեալ և տապալեալ վիճակն ալ վերակենդանութիւն կը ստանայ, մտաւորական զարգացմամբ և նիւթական բարօրութեամբ։ Միխիթար կրկնակի միջոցներով այդ ուղղութեան կը ծառայէր։ Վենետիկի դիրքէն և դիւրութիւններէն օգտուելով հետզհետէ կաթոլիկամիտ հրատարակութիւններ կ'առատացնէր և աղգին մէջ կը ցրուէր, Մայրաթոռի հայրապետին անունն ալ անոնց ճակատը դրոշմելով, աւելի ընդունելի ցուցնելու համար։ Գիրքի կարօտ և ուսման ծարաւի Հայեր՝ մեծաւ փափաքանօք կը ստանային այդ հրատարակութիւնները, և անուղղակի կը հրապուրուէին։ Միւս կողմէն Միխիթար իւր աշակերտներէն քանիները Արեւելք կը ղրկէր, որ այդ միտքով քարոզութիւններ ընեն, ինչպէս եղան եղիա Մարտիրոսեան, Յովհաննէս Սիմոնեան, Մանուէլ Խուպիարեան, և Ստեփանոս Պետրոսեան միաբաններր կամ հայրերը, որոնք Կ-Պոլիս և գաւառներ չրջեցան։ Մինչեւ իսկ կը պատմուի թէ Գաբրիէլ Կարնեցին՝ Ջահկեցի Ունիթորներու դէմ վիճած ըլլայ, Հայ եկեղեցւոյ մէջ պաշտուած խորհուրդներուն վաւերականութիւնը պաշտպանելու (Միսի. 337)։ Այդ չրջանակէն դուրս կը թողունք Լեհական և Մասնաւական սահմաններուն մէջ կատարել տուած չրջագայութիւնները, զի այն գաղութներ Յովհաննեանէ հետը պաշտօնապէս անջատուած, և Արեւելքի հետ յարաբերութիւնին կտրած էին (§ 1819)։ Միխիթարեան միաբանութիւնը այս կերպով իւր նախաքայլերը կը հաստատէր ուսումնական և կրօնական ասպարէզներու մէջ։ Բայց տակաւին ուսումնականը՝ զուտ գրական և հայկաբանական չրջանակին մէջ չէր, այլ իրրեւ կրօնականին ձեռնտու միջոց մը կը դործածուէր։ Եթէ Վենետիկի մէջ Միխիթարի հոգածութեամբ մինչեւ 1737 հրատարակուած գիրքերուն ցուցակը զննենք, անոր մէջ աւելի կրօնական և հոգեւորական նիւթերու կը հանդիպինք (ՏՊԱ. 264—268), քան թէ այն ընտիր երկասիրութեանց, որոնք Հայ լեզուին և մատենագրութեան կեանք տուին ապագայ ժամանակներու մէջ։ Բացառիկ յիշատակութեան արժանի է Աստուածաչունչի պատկերազարդ և չքեղ տպագրութիւնը 1733'ին, բայց այն ալ Ոսկանեան օրինակն էր լատինականով աղաւաղուած (§ 1746), և ոչ նախնեաց ընտիր թարգմանութիւնը։

ԱՆՏՈՆԵԱՆՑ ԳՈՐԾԵՐԸ

1988. Անտոնեանք Արեւելքի մէջ սկսած ըլլալով աւելի մօտէն կը չփուէին Ժողովուրդին հետ, և առաւելապէս Ասորիքի, Միջագետքի և Կիլիկիոյ թեմերուն հետ, ուսկից էին իրենք ալ, և ուր լատինասիրութիւնը հին յիշատակներ կը պահէր Յուքինեանց կամ Լուսինեանց օրերէն։ Այդ նպատակին կը նպաստէր Աբրահամ Արծիւեան եպիսկոպոսին ներկայութիւնն ալ, զոր իրենց վանքը փոխադրած էին իրրեւ հիւր (§ 1940), բայց միանգամայն իրենց թեմական առաջնորդը կը ճանչնային, զի իրենք Բերիոյ վիճակէն էին, և նա Բերիոյ առաջնորդ կը սեպուէր։ Արծիւեան առաջնորդական իշխանութեամբ՝ Անտոնեաններէն քանիները կը ղրկէր [illegible] Բերիոյ լատինամիտներուն, ինչպէս ինքն կը գրէ 1727 սեպտեմբերին գրած նամակովը (ԱՆՏ.)։ Այդ ղրկուածներուն մէջ առաջնակարգ գործունէութիւն ունէին Յակոբ Յովսէփեան և Իսահակ Բարսեղեան հայրերը (§ 1940), որոնք իրենց կոչման մէջ կատարելագործուելու համար, 1730'ին նախ Հռոմ կ'երթային պապին բացատրելու՝ ժա-

մանակին նամակով հաղորդած ձեռնարկին (§ 1939), և անկէ վճռետիկ կ'անցնէին, Հաչատուր կարնեցի վարդապետին մօտ ուսանելու, և պէտք ունեցածնին համբարելէ ետքը 1732'ին հրաման կը ստանային Կ-Պոլիս անցնիլ, և անկէ ալ Անկիւրիա կը ղրկուէին, իբր հռոմէադաւանութեան քարոզիչներ։ Անկիւրիա ալ հասած էին կաթոլիկութեան ձայները, և հրապուրեալներ ալ կային, որոնք երբեմն ըզբօսանքի կը կարծուին, բայց չունէին իրենց ուղղութենէն քահանայ, և երբեք պատարագ մատուցանելու հանդիպէին ալ, գոնէ հինէ փոքի չվեր հռոմէադաւան քահանայի երես տեսած չէին (Մխի. 327)։ Այդ պէտքը լրացնելու նպատակով հայր Յակոբ և հայր Իսահակ՝ Լատին եպիսկոպոսին կարգադրութեամբ Կ-Պոլիսէ կ'երթային Անկիւրիա, 1733'ին առնուները, ուր կը մնային երեք տարի, Անկիւրիոյ կաթոլիկութեան թէ ոչ հիմնադիրները, գոնէ կազմակերպիչները ըլլալու (ԱՆՏ.)։ Առանց յաջողութեան պատճառները պիտի տեսնենք նախ այն հաչտարար ընթացքին մէջ որուն կը հետեւէր կոլոտ, անուղղակի ապաթէզ թողլով սպրդող քարոզիչներուն, և երկրորդ այն ձեւին մէջ, զոր որդեգրած էին Մխիթարեան և Անտոնեան միաբաններ, դիւրամատոյց ընծայելով հռոմէականութեան ընդունելութիւնը, և բաւականանալով թեթեւացած յայտարարութիւններով (§ 1987)։ Այդ երեւոյթներուն առջեւ Հայ եկեղեցականներ չէին դժուարիր իրենք ալ նոյն կերպ մատնելէնին յայտարարել, մանաւանդ եթէ դիւրահաւան և չատ խորունկը չթափանցող անձերու վրայ փորձէր յիշեալ կերպը։ Այս տեսակէն եղած կ'երեւի Մովսէս Շիրինեան եպիսկոպոս, Գաղատիոյ առաջնորդը, որ սիրով կ'ընդունէր Հռոմէ եկող և լատինական ուսման ձեւերով կերպաւորուած երկու եկեղեցականները, և ապատ կը թողուր անոնց գործունէութիւնը, և մինչեւ իսկ համամտութեան յայտարարութիւն կու տար (ՁԱՄ. Դ. 813)։ Անտոնեան երկու միաբաններուն տեսութեամբ՝ Մովսէս առաջնորդ և իրեն հետեւող եպիսկոպոս մը և չորս վարդապետներ, ընտրուած ընտանեաց լատինացուած տուած են (ԱՆՏ.), սակայն պատճէնը չունինք, և Մովսէս իր հռոմէն տարբեր բան մը յայտարարած չի կրնար ըլլալ։ Նա ոչ Հայ եկեղեցիէ զատուեցաւ, և ոչ իր վրայ դիտողութիւն հրաւիրեց, և իր աթոռին վրայ խաղաղութեամբ վախճանեցաւ և Հայոց կողմէն պատուով թաղուեցաւ 1735'ին (ՁԱՄ. Դ. 813)։ Անոր յաջորդ ուղուեցաւ Յակոբ Նալեան, բայց կոլոտ չուզելով զայն իրմէ հեռացնել, փոխանորդ նչանակուեցաւ Պետրոս Պանտուրեան վարդապետ, բնիկ Անկիւրիացի, բայց ուղղութիւնը միւնոյն չմնաց։ Եղիա Կիւլապեան Գաղատացի Ունիթորին հանած խնդիրները, խռովութեանց պատճառներ տուին, և Յակոբ ու Իսահակ Անկիւրիան թողուցին ու հեռացան 1736'ին։ Բայց որովհետեւ հռոմէադաւանութեան հետեւողներ բաւական բազմացած էին Անկիւրիոյ մէջ, ներքին կռիւներ ծագեցան, և ժողովուրդը բաժնելու ձեռնարկներ եղան, և Անկիւրիոյ եօթն եկեղեցիներէն չորսը հռոմէականներու ձեռքը անցան (ՁԱՄ. Դ. 814)։ Կոլոտ պատրիարք՝ նախ տելով Երուսաղէմի խնդիրով կազմուած հաւատաչրչական ձգտումները (§ 1986), եկեղեցիները ետ առնելու բուռն ձեռնարկներ չըրաւ, այլ Պանտուրեանի տկարութիւնը տեսնելով, և Նալեանի հեռացումն ալ չուզելով, Սարգիս Սարաֆեան եպիսկոպոսը յղից (§ 1973), որ կեսարիոյ առաջնորդութիւնը թողած Կ-Պոլիս կը դիզկերէր։ Սարաֆեան, զոր այդ ժամանակէն իրր յայտնի հռոմէադաւան եղած նչակել կ'ուզուի, հարկաւ հռոմէականներ զսպելու չէր ղրկուեր, եթէ այնպէս ճանչցուած ըլլար։ Ի զուր է իր ներքոզաբանին ըսելը թէ եկեղեցիներուն հռոմէականաց անցնիլը փաճ չէր Սրբոյն, քանի որ եկեղեցիները ետ առնելու պաչտօնը չընծայեցին (ԳԱԼ. 39)։

1989. Երբ այդ եղելութիւններ Տաճկաստանի մէջ կը կատարուէին, անդին Պարսկաստանի տիրապետութեան ներքեւ կը չարունակէին Աբրահամ կաթողիկոսին և Նաթեր չահին յարաբերութիւնները, որոնց վերջին արտայայտութիւնն եղաւ Աբրահամի Թավրէզ երթալը (§ 1981)։ Կրետացիին կաթողիկո-

ՀԱՑՈՑ
ԿԱՑՈՒԹԻՒՆ

սութեան ժամանակին դէպքերը քաղեցինք իւր իսկ թողած պատմագրութիւններէն, և նկատողութեան արժանի կը գտնենք, որ ինքն ալ, որ Տաճկահայ ծնած ու ապրած էր, և հանդիպմամբ միայն Պարսկահայ դարձած, բնաւ Տաճկահայերուն գործերով չէ զբաղած։ Կոնդակ մը միայն ունինք իրմէ, Մուղանի դաչտէն գրուած 1736 փետրուար 20'ին, և Ցարութիւն ու Սեդրոս, Աստուածատուր ու Պաղտասար ամիրաներուն ուղղուած (ԿՊ· 93), ուր Նաւերի մեծութեանց ու հարստութեանց և իւր առած նուէրներուն պատմութիւնով կը զբաղի, առանց ժողովուրդին վիճակովը հետաքրքրուելու։ Իւր գրելու սկսած պոմ-ՐՒՆ փերթին ալ Նիկողայոս Արմաչցի քահանային հետ կը ղրկէ Կոլոսին, որ-ոյ էմոյ հասցէով, և կանխապէս չէին և եղէ-էին նամակներ ալ գրած ըլլալը կը յիշէ, որոց պարունակութիւնը կ'երեւի թէ տարբեր չէր։ Կրետացին այնպէս գրաւուած էր իւր Նաւերով, որ անկէ դուրս բան չէր ուզներ աչխարհի վրայ, և ինչ աղէկութիւն ալ որ կը բաղձար իւր ազգին, և ինչ պաշտպանութիւն որ կը փնտուէր իւր եկեղեցւոյն, Նաւերին չնորհքներէն դուրս չէր յուսար և չէր որոներ։ Իրաւ իւր ժամանակը արդէն ջնջուած էր հայկական չարժումը (§ 1956), բայց կ'երեւի թէ յիչատակն ալ կորած էր, կամ թէ յիչելն ալ վտանգաւոր էր, որ Կրետացին Մուղանի ուղեւորութեան մէջ հայկական պատերազմներուն ասպարէզ ղղող ձորերէն ու գաչտերէն ալ անցնելով, բնաւ անոնց մասին միտք չդարձներ։ Հայ գունդերուն վերջին բեկորներ Ռուսական ծառայութեան դինուոր դարձած էին։ Լոկ Լազար Խրիստոփորով զօրավարին մասին յիչատակ մը կը գտնենք 1734 յունիս 26'ին (ՁՀՆ· 451)։ Նոյն Ռուսականին Իվան Կարապետով գնդապետն ալ՝ Հայերուն Ռուսաստանի մէջ հաստատուելուն և բազմանալուն հետամուտ, այդ միտքով խնդրանքներ կը ներկայէ Աննա կայսրուհւոյն, իրեն համար ալ զօրավարութեան աստիճան կը հայցէ, և այդ կերպով միւս տարին, 1735'ին, Ղըզլար քաղաքը կը հիմնուի Հայ գաղթականներու ձեռքով (ԼԷ0· Բ· 414)։ Մինաս Տիգրանեան եպիսկոպոսը, Օրիի գործակիցը, մոռցուած էր այլ եւս, ի նա Հայաստանի վերակենդանութեան հին գաղափարներով կը մնար տակաւին։ Իզուր 1736 մարտին ընդարձակ տեղեկագիր մը կը մատուցանէր հին գործերը և հին խոստումները յիչեցնելով (ՁՀՆ· 455), բայց ոչ Ռուսական կայսրութիւնը, և ոչ Ռուսական ծառայութեանը մոռած Հայերը՝ իրմով չեն հետաքրքրուիր։ Գոնէ Ռուսաստանի Հայոց առաջնորդ ճանչցուիլ կը փափաքի (ԼԷ0· Բ· 415), և չենք գիտեր թէ ինչու կրետացին այդչափին համար ալ չմիջնորդեր, և ծերացեալ աչխատաւորը, մինչեւ իսկ յունադաւան եկեղեցին անցնելու միտքեր կր յղանայ (ԼԷ0· Բ· 415), և յուսալքեալ կը կնքէ իւր վաստակաբեր կեանքը։ Անդին Ռուսական զօրավար դարձած Խրիստոփորիճ ու կարապետովը՝ աւելի երջանիկ կեանք կը վարեն օտարի ծառայութեան մէջ։ Կարապետով դեռ կենդանի է Եղիսաբեթ կայսրուհւոյն օրով, 1744'ին աւետեարը, որուն պատուոյ օրիորդ կ'անուանուի իւր թոռը (ԼԷ0· Բ· 414)։

ԿՐԵՏԱՑԻԻՆ ՄԱՀԸ

1990· Ըսինք արդէն թէ Կրետացին Աբրահամ՝ Թավրէզի ուղեւորութենէն դառնալէն ետքը հազիւ հինգ ամիս եւս ապրեցաւ (§ 1981)։ Այդ հինգ ամիսներուն մասին ոչ մի յիչատակ չունինք, և ինքն ալ բան մը չի գրեր, և կ'երեւի թէ մօտալուտ վախճանը նախատեսելով, ՝՝՝ԹՊ պոմ-ՐՒՆ խօսքով զայն կը փակէ (ԿՊ· 90)։ Երեւանեցին կը գրէ թէ էր ծէր և յեղ-՝՝՝ԹՒ և յ-՝՝՝ՓՐ է-ի (ՋԱՄ· 30), և վերջին ուղեւորութիւնը հիւանդութեան մէջ ըրած ըլլալը յիչեցինք (§ 1981), և պէտք կ'ըլլայ ըսել թէ ձմեռնային ուղեւորութեամբ Թավրէզ դառնալովը՝ բոլորովին տկարացաւ, և խօթագին անցուց ձմեռը, և գարնան բացուելուն, 1737 ապրիլ 18'ին (ՇԱՀ· Ա· 227), նոր կիրակիի երկուչաբթին, վախճանեցաւ, ու թաղուեցաւ Ս. Շողակաթի գաւիթին ձախակողմը։ Տարիքին վրայ ոչ իրմէ և ոչ ուրիչէ որոշ տեղեկութիւն չունինք, այլ բացատրութիւնները կշռելով կրնանք իրը ութսունամեայ մեռած ենթադրել։ Ջինքն միչտ Կրետացի կոչեցինք, իւր ծննդավայրէն առնելով, բայց չատերէ Թրակացի կամ Թէ-

քիրատացի կամ Ռոտոսթոցի ալ կոչուած է, իւր առաջնորդական վիճակէն առնելով, զոր 1709'էն մինչեւ 1734, 25 տարի կառավարեց, գովանի յիշատակ թողլով ետեւէն։ Իւր կաթողիկոսական գործունէութեան նկարագիրը տուած եղանք, Նատիրի մօտ անցուցած օրերուն պարագաները պատմելով, որոնք իւր 29 աւնական պաշտօնավարութեան մեծագոյն մասը գրաւեցին։ Առաջին կարճութիւնն ալ արգելք եղաւ ուրիշ գործի ձեռնարկել, և եթէ չինաւածը ինչ ալ ըլլայ առնել յորոշուելը, պատճառը այն եղաւ, որ ժամանակ եա ալ առնեցաւ, գի գլխ ընդ ըսկին լինէր։ Այսու հանդերձ երեւանեցին ալ կը խոստովանի, թէ ան ըսկինեցան առաել արբ ըթբոյ ընուայ և ագէր, և քալը երկէր գերայ (ՋԱՄ. 30)։ Աթոռին համար բրածը, անոր պաշտպանութիւնն էր, որ այնպիսի չփոթի և խռոված ժամանակներու մէջ, ամէն ստացուքիւնները և իրաւունքները և վայելքները անխափան պահպանուեցան, ոչ միայն չի վնասուեցան, այլ և նպաստներով և չնորհքներով բարգուեցան։ Իսկ ազգին համար բրածները քաղելով պէտք է յիշել, թէ գբաղամ ազաթաց է մահասանէ, գլաս էջայց է խաղանէ, գբաղմաց գալն և գանձնէն ազաթաց է բրելոյ և է հաստանելոյ, գանհամաբ երբէք ազաթաց, գբաղամ պատճյեալ չեպս պարյայց, գի անոր բան և խնդէր ի ալ անկանէ չերէլէ ասաչ այնպէսաս բանասարէն Նատիրի, և նոյն իսկ Պարսիկ աւագանին և պալատականներ անոր միջնորդութեան կը դիմէին, գի գհաթալս էրբանց հոթացէ Նատիրին մօտ։ Ուստի երեւանեցիին հետ մենք ալ կրնանք կրկնել, թէ անոր չէլաքան օրհասական եղէց (ՋԱՄ. 31)։ Զենք վարանիր արժանաւորապէս հայրապետներուն հետ յիշել նոյնանունը, իբրեւ էջմիածինի պայծառութեան համար գլխաւոր վաստակաւորներէն մին։

Տ. ՂԱԶԱՐ Ա. ՋԱՀԿեՑԻ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

1991. Մայրաթոռի միաբանութիւնը, հազիւ հանգուցեալ կաթողիկոսին թաղումը կատարած, յաջորդին ընտրութեան մասին հաւաքուեցաւ, բայց ընդհանուր համաձայնութիւն չկար։ Մեծամասնութեան միտքը Շղթայակիրին վրայ էր, որ Երուսաղէմը վերակենդանացուցած էր, և թէպէտ ծերացած էր, այլ տակաւին ժիր ու գործօն ու փորձառու ըլլալով՝ էջմիածինն ալ կրնար վերակենդանացնել։ Այդ առիններ ընտրական իրաւունքը գլխաւորապէս Մայրաթոռոյ միաբանութեան ձեռքն էր, այն պայմանով որ Պարսկահայ և Տաճկահայ կեդրոններն ալ, այսինքն Աստպահան և Կոստանդնուպոլիս ալ՝ հաւանութիւն տային, և երկու պետութեանց ալ հրովարտակները ստանային։ Շղթայակիրէն զատ կաթողիկոսական ընտրելի կը ցուցուէին երկու մեծ կեդրոնները գտնուող Մայրաթոռի նուիրակները, Պետրոս Հռոմկլայեցին Կ-Պոլսոյ և Ղազար Ջահկեցին Զմիւռնիոյ։ Տեղապահին ով ըլլալը յիշուած չէ, բայց ամենայն հաւանականութեամբ, հանգուցեալին աթոռակալ Աղեքսանդր եպիսկոպոսն էր (§ 1974), երբեմն Եւդոկիոյ նուիրակը (§ 1970)։ Մայրաթոռի կողմէն պատուիրակ նշանակուեցան Թովմաս ու Մկրտիչ վարդապետները (ԱՍՏ. Բ. 50), և Կ-Պոլիս եկան, նախապէս Գրիգոր Շղթայակիրը կաթողիկոսութեան կոչելու հրահանգով, և եթէ այն չհաւանի, Պետրոս և Ղազար նուիրակներէն մէկը որոշելու՝ Կ-Պոլսեցոց հետ համաձայնութեամբ։ Մասնաւոր նամակներ ալ կային՝ էջմիածինէ Կ-Պոլիս գրուած, այս վերջիններուն՝ և գլխաւորապէս Ղազարին պաշտպանութեան։ Պատուիրակները Կ-Պոլիս բերին նախորդին մահուան գոյժը ու յաջորդի ընտրութեան առաջարկները, երբ Կ-Պոլսոյ մէջ տաք կերպով համերաշխութեան ճիգեր կը թափուէին (§ 1985)։ Շղթայակիրին անձին վրայ՝ Մայրաթոռի միաբանութեան ցուցած նախադասութիւնը, ազգին մէջ պզացուած ընդհանուր յարգանքը, և Կոլոտի իր

հայրապատիւ ընկերակցին հետ ունեցած ներքին կապը, կասկածի տեղի թող չէին տար Կ-Պոլսոյ եկեղեցական և աչխարհական մեծամեծներուն միտքին վրայ, և առաջին գումարումով, Գրիգոր Շիրուանցի պատրիարքը, Երուսաղէմի Ղեթայակիրը, կաթողիկոս հռչակուեցաւ, բայց միայն ինքն դըժկամակ գտնուեցաւ։ Ըլլայ իւր յառաջացեալ տարիքը, ըլլայ Երուսաղէմէ չբաժնուելու ըզգայումը՝ կինսական խնդիրներուն չլուծուած միջոցին (§ 1985), ըլլայ միաբանութեան մէջ կատարեալ համաձայնութիւն չտիրելը, և ուրիշ ընտրելիներ առջեւ անցընելու համար ունանց ջանքերը (ԶԱՄ. Գ. 819), Շըղթայակիրը հեռացուցին կաթողիկոսական ընտրութենէն, և բացարձակապէս մերժեց զայն ընդունիլ. կոլոտի և ուրիշներու թախանձանքներն ալ չզօրեցին անոր հաստատամտութիւնը դրդուելէ։ Ինքն իւր յայտարարութեանց մէջ կը յիշէ՝ թէ ըն այս եղելութեամբ եղէ, որ զինքն կաթողիկոս ընտրել կ'ուզեն, որով կը տեսնուի թէ Ռուսներուն և Հոչաբերդին ընտրութեանց առեն ալ իրեն առաջարկներ եղած են, զի կրետացիին հապճեպ ընտրութեան առթիւ առաջարկի առեն չէ կրցած ըլլալ։ Իսկ իւր հրաժարելուն համար, պարզապէս անհնարին վրնասել ղէրն՝ հրաժարեցայ, կ'ըսէ, և այնպէս ալ Մայրեկեղեցւոյ մէջ յայտարարած է (ԱՍՏ. Բ. 50)։ Պետրոս Քիւրքիւր, մայրաքաղաքին մէջ ներկայ, ամէն ջանք թափեց իրեն համար, կողմնակից խումբ մըն ալ ճարեց, բայց անցեալին մէջ բռնած ստոր ընթացքը և անտեղի ձեռնարկները (§ 1986) մոռցուած չէին, և կոլոտի անհնար էր անոր ընտրելիութեան կողմն ըլլալ, և յաղթեց Ղազար Ջահկեցիին ընտրութեան կողմը, և կաթողիկոս հռչակուեցաւ 1737 յունիսին (ԶԱՄ. Բ. 45), և օգոստոս 7'ին իրեն գրուեցաւ (ԱՍՏ. Բ. 51)։ Նկատողութեան արժանի է որ կոլոտը կաթողիկոսացնելու խօսք չէ եղած, ինչ որ կրնանք վերագրել երեւանեցիին դրդումներուն, և կոլոտը Մայրաթոռին անհամակիր ցուցած ըլլալուն (§1945)։

ՋԱՀԿԵՑԻՆ Ի ԿԱՐԻՆ

1992. Ղազար, բնիկ Ջահուկ գեաւուէն, Ունիթորներու կեդրոնէն, բայց ոչ Ունիթորներու խումբէն, ընդհակառակն բուռն ընդդիմադրութիւն ուսծող մըն էր անոնց դէմ, և Դրօխ Յանկիւլէ գիրքը, զոր 1735'ին հրատարակած էր Կ-Պոլսոյ մէջ, հերքումագիր մըն էր հռոմէական վարդապետութեանց, և բացատրութիւն Հայ եկեղեցւոյ դաւանութեան, պատմութեան հետ խառն։ Նոյն միջոցներուն երդարան մըն ալ մամուլին յանձնած էր, որ 1737 օգոստոս 1'ին լոյս եկաւ։ Ղազար թէպէտ ուսումնականի և աստուածաբանի հանբաւ ունէր, բայց վարքով և բարքով նոյն հռչակը չէր վայելեր, և իրրեւ վանական ե ինքնավայել կենցաղ կը վարէր, վանզի հրապոյր ալ էր (ԶԱՄ. Բ. 46)։ Այսու հանդերձ նախադասուեցաւ թէ կոլոտէ և թէ Կ-Պոլսոյ մեծամեծներէն, իբր չատ մասերով պետրոսի վրայ գերազանց, և զի էվրենան և ծրագրելը, հանճարել և խոհեմութիւնով (ԶԱՄ. 31), կրնար զօրաւոր նեցուկ և զարգացուցիչ ըլլալ հայրապետական աթոռին։ Ղազար այդ բնաւորութեան նչանը տուաւ՝ իւր ընտրութեան լուրը առնելուն պէս։ Զսպասեց որ պետական հաստատութիւնները ստացուին, այլ վստահանալով թէ պատրիարքը զայն կը ճարէ և հետեւէն կը հասցընէ, փութաց իւր ուղեւորութեան պատրաստութիւնները տեսնել, հետեւորդներու և սպասաւորներու և սպասներու այնպիսի ճոխութեամբ, որուն նմանը չէր պեսել և ոչ իսկ լսեսել է կրեզիկոսաց Հայոց (ԶԱՄ. Գ. 819), և այս տեսակ հանդերձանքով Զմիւռնիայէ մեկնեցաւ, և ցամաքային ճանապով, և անչուշտ հանդիպած քաղաքներն ալ ցուցադրութիւններ ընելով կարին հասաւ 1737'ին վերջերը։ Կարին վերջին քաղաքն էր Օսմանեան տէրութեան, և անկէ պարսկական հողը պիտի մտնէր. ուստի կարնոյ կուսակալը առթիւ ունէր Ղազարի մասին տեղեկութիւններ առնել և պարտապատչաճը կարգադրել։ Դժբախտաբար անհամաձայնութիւն ինկաւ Ղազարի և կուսակալին միջեւ, և ասոր սկզբնապատճառ եղաւ Ղազարի ձին, խոյ և ալնէ՝ յոյժ, զոր կուսակալը ընծայ ուզեց, և Ղազար ընդդիմացաւ, և կուսակալը զինքն անարգուած կարծելով ուզեց վրէժ լուծել։ Իմանալով որ նա դէտ հրովարտակ չունի, զայն իբրեւ

խաբեբայ մը նկատել ուզից, և հրամայեց պահել ընե յօրինելոնս, իբրեւ պատուաւոր բանտարկութիւն, և միանգամայն կ-Պոլիս գրից ու ամբաստանից։ Ղազար նեղի մտած, և ազատութիւնը ձեռք բերելու և վտանգի չհանդիպելու ստիպուած, ձին տուաւ, ա-դամանդեայ մատանի մըն ալ վրան աւելցուց (ՋԱՄ·Գ·819)։ Ղազար իմացաւ միանգա-մայն, որ լատինամիտներու սադրանքով կուսակալը հրովարտակ չունենալուն լուրը առած էր, ուստի անոնց քսութենէն նեղ-ուած ըլլալուն, ինքն ալ ձեռնարկից ա-նոնցմէ իր վրէժը լուծել։ Անոնց ընթացքը և պետական հրամանները և գլխաւորնե-րուն անուննները կուսակալին ներկայից, որով չատեր ձերբակալուեցան և տուգանք-ներու դատապարտուեցան։ Այդ ձեռնարկ-ներուն առին Ղազարի հետ էին նաեւ Սա-հակ վարդապետ՝ Անագին մականուանեալ, կարնոյ առաջնորդը, և Անանիա վարդա-պետ՝ Քէլէհի մականուանեալ (ՋԱՄ·Գ·820)։

1993· Այդ միջոցին յանկարծ կը մեռնի կարնոյ կուսակալը, զոր տեղացի Տաճիկներ չարագուշակ կը մեկնեն։

ԿԱՐՆՈՅ ԴԷՊՔԵՐԸ

Իբր մի քաղաքին մէջ եր-դում բրած են եղեր այլ եւս կաթոլիկութեան իրն-դիր չյուզել, որով կուսակալին յանկարծա-կան մահը երդմնազանցութեան պատիժ կը նկատեն, և այդ պատճառով նոյն ինքն Ղա-զարի դէմ կ'ելլեն, իբր թէ պատճառ տուած ըլլայ։ Ղազար գիտցաւ զինքն արդարացնել, թէ ինքն տեղական գործերուն անտեղեակ էր, և թէ առաջնորդը հաղորդած էր այդ տեղեկութիւնները։ Նիւթական հնչուն փաս-տերն ալ աւելցուց, և ինքզինքը վերծու-ցանելով փութաց փետրուարի սկիզբը սան-մանագլուխը անցնիլ (ԱՍՏ·Բ·51), և կարսի ճանապով Պարսկական հողը մտնել։ Բարե-բախտաբար կրցած էր հեռանալ, որ քիչ օր ետքը յատուկ սուրհանդակ կը հասնէր կա-բին՝ եպարքոսական հրամանով, որ մեռած կուսակալին ամբաստանութեանց վրայ կը պատուիրէր Ղազարը անմիջապէս կ-Պոլիս դրկել հակոզութեան ներքեւ։ Կարնոյ Տա-ճիկներ իրենց ցասումը Սահակի վրայ դար-ձուցին, զոր Չէլ ըբոդոշ կը կոչէին, և խնդրակներ յղելով Բասէնի մէջ ձերբակա-լել տուին առաժամայ կուսակալութեան ձեռքով, և կարին բերելով չղթայակապ բանտարկեցին։ Սակայն Սահակ կրցաւ գա-նազան փաստերով և մանաւանդ նիւթա-կաններով՝ զինքն արդարացնել, և բանտէն ազատիլ։ Բայց հազիւ թէ ազատած, իբր արկածին պատճառ՝ Ղազարին եղած ըլլալը իմանալով, եկեղեցւոյ բեմէն անոր դէմ խո-սեցաւ բաղմամ ինչ, և բոլոր իւր վիճակին մէջ տրեխ ղրվէ-ւ, մ' չէլէ ղնոան նոբ։ Սակայն Ղազար արդէն էջմիածին հասած էր, և օծումն ալ ընդունելով հայրապետա-կան աթոռին տիրացած (ՋԱՄ·Գ·821)։ Ամ-ասիւր ոչ երեւանեցին (ՋԱՄ·31) և ոչ Շահխաթունեան (ՇԱՀ·Ա·227) կու տան, բաւականանալով 1738 տարեթիւը նչանա-կել, այլ փետրուար 2'ին կարինէ մեկնիլը հաչուելով (ԱՍՏ·Բ·51), իդէպ է օծումը դնել զատկին մօտ օրերը, որ այն տարի ապրիլ 2'ին կը հանդիպէր։ Ղազարի առա-ջին գործերէն մին եղաւ եպիսկոպոս ձեռ-նադրել իւր եղբայրը Մկրտիչ այրի քահա-նան, և չհաւաներ գործեր յանձնել միւս երե-կու եղբայրներուն, Անդրէաս և Յովսէփ Զահկեցի քահանաներուն։ Ամիսս քանի մը աշխատեցաւ առատ ընծաներ պատրաստել, և չուտով Ասպահան գնաց, և Նատիր չա-հէն իրեն կաթողիկոսութեան հաստատուե-լիւնը ընդունեցաւ և պատուասիրուեցաւ, ու էջմիածին դարձաւ 1738 ամառուան վեր-ջերը։ Հոն եկած էր նաեւ Պետրոս Քիւթիւր նուիրակը, որ կարինէ անցնելով այնտեղի գործերուն մասին տեղեկութիւններ քաղած էր, և Աղեքսանդր Բիւզանդացի վարդա-պետն ալ իրեն օգնական առնելով, չանպց Ղազարին սիրտը ցաւեցնել Սահակի մա-սին, և երկուքին մէջ հաչտութիւն գոյա-ցընել։ Ղազարի կողմէն վճարում մըն ալ կարգադրելով ինպատ Սահակի, բանտար-կութեան և ազատութեան առթիւ ըրած ծախքերուն փոխարէն (ՋԱՄ·Գ·821)։ Հա-ւանական կը կարծենք, բայց բացարձակ չենք կրնար պնդել, թէ Աղեքսանդր Բիւ-զանդացին, միեւնոյն եկեղեցւոյ նուիրակ (§ 1970), և կրետացիին աթոռակալ (§ 1974) Աղեքսանդր վարդապետն է, որ Բարաքայ ալ կոչուած է։

1994. Կ-Պոլսոյ մէջ 1737'ին եռանդուն էին համերաշխութեան ճիգերը (§ 1986), բայց ծայրայեղ չարժուած Կ-ՊՈԼՍՈՑ ՇՓՈԹՆԵՐԸ ներ դիւրաւ իրարու կը յաջորդէին։ Նոյն տարին յուլիսի մէջ տեղի ունեցած էր կաթողիկոսական ընտրութիւնը, և Քիւթիւր նորէն կոլոտի դէմ գրգռուած էր, որ անար երեսէն զինք զրկուած կը կարծէր կաթողիկոսական ընտրութենէն։ Ուստի կը սկսի նորէն յուզումներ չարժել անոր դէմ, և գրգռութեան առիթ կ'ընէր երկաթի տուներուն երգեցողութիւնը, որուն մասին Կոլոտ կրկին խոստում ըրած էր դեսպանին (§ 1995). սակայն Քիւթիւր զայն իբր կաթոլիկութեան հանդէպ ղիջում կը ներկայէր, և նախանձայոյզները կը գրգռէր, և կը յաջողէր մանաւանդ կեսարացիներուն մէջ։ Մօտալուտ էր Եփեսոսի ժողովին տօնը օգոստոս 6'ին, և ոչ 8'ին (ԱՍՏ. Բ. 52), և պէտք է այնօր հանդիսած ըսել Մայրեկեղեցւոյ մէջ պատահած չփոթութիւնը, երբ կեսարացիներ Քիւթիւրէ գրգռուած պատրիարքի վրայ յարձակեցան ծեծելու միտքով (ԶԱՄ. Բ. 46), և Կոլոտ փախչելով ազատեցաւ կատղած ամբոխին ձեռքէն։ Օգոստոս 12'ը իբր չփոթի օր նշանակելը Քիւրիմեցիութիւնն մըն է (ԶԱՄ. Բ. 87), որ պահոց ութքաթին կ'իյնայ, և չփոթի պատճառ մը չկրնար ընծայել, մինչ չատ յարմար կու գայ ժողովի տօնին օրը։ Քիւթիւրին պատրաստած աղմուկը հանդարտեցնելու աշխատեցան Յակոբ Նալեան և Սարգիս Սարաֆեան իր աշակերտները, որոնք կոլոտի համակիրները յորդորեցին եկեղեցւոյ մէջ ֆոռլ ծծ ազաչաս, ասելով՝ «ը ե պոպիս էն ըս լա, և ապառնալով՝ պոպոպ եմ ահա՝ հալածել ջիւխիւխը, որով կոլոտ փոռնայր ի չոխ ին ֆոռօտ, և էր ֆոհ (ԳԱԼ. 36)։ Հանդիսած չփոթը և ղազարի չարականին համար ժողովրդական ցոյցը՝ առիթ տուաւ Վիլնէօվ դեսպանին կառավարութեան բողոքել, թէ ղազար կոպտան ի վերայ ծծիս ծերայ, և ևպարքոսութիւնն ալ հարկադրուած՝ գլխաւոր պաշտօնեաներէն մէկը 40 բաստականներով պատրիարքին յղեց, որ Գաղղիոյ տէրութեան մեծին դէմ ղազար կարդալը արգիլէ, որուն կոլոտ կը պատասխանէ, թէ ի վերջոյ հեռի դոգբեցոցած ե։ Այդ պատգամաւորութիւնը կը դրուի երկոտորէ յոռոլ տան ղծծ վէրճոխոն (ԶԱՄ. Գ. 822), և կը հանդիպի օգոստոս 12'ին, պահոց ուրբաթին, և պէտք է ըստ այնմ հղկութեանց ամսաթիւերը ճշդել, ինչպէս որ մենք ալ ցուցուցինք։ Միտքերը տակաւին չէին հանդարտած, և յուզումները կը սպառնային կրկնուիլ Նիկիոյ ժողովին տօնին օրը, սեպտեմբեր 3'ին, և ոչ 5'ին (ԶԱՄ. Բ. 87), և իրօք ալ այն օր Իւսկիւտար (ԱՍՏ. Բ. 51) և ի թեղս թեղս (ԶԱՄ. Գ. 823), չարականին երկաթ տուները երգել տուողներ եղան, բայց մէջերնէն վեց հոգի ձերբակալուեցան և թիապարտութեամբ բանտարկուեցան (ԱՍՏ. Բ. 51), թէպէտ քանի մը ամիսէ միջնորդութեամբ ազատեցան (ԶԱՄ. Գ. 823)։ Այս հղկութեանց վրայ Քիւթիւր Կ-Պոլիսէ խոյս կու տայ, իրեն համար ալ վախնալով, և էջմիածին կը դառնայ, ուր հասած լինելը պատմեցինք արդէն (§ 1993)։ Սոյն միջոցին տեղի ունեցած էր Ղազարի նկատմամբ կաթողիկոսական ամբաստանութիւնը (§ 1992), որուն մասին կոլոտ ու Շղթայակիր Խաչատուր եվն. սակայն հպարքոսական հրամանը ետ չառնուեցաւ, և միայն հանդարտեցան, երբ լսեցին թէ Ղազար արդէն վերադարձած է Իսպահան (ԱՍՏ. Բ 51)։ Այդ միջոցին հպարքոսական իշխանութիւնը կը վարէր եէկէն Մէհմէտ փաշա, իբրեւ տեղակալ, որ հպարքոս Մուհսինզատէ Ասլան փաշա, Աւստրիացոց դէմ պատերազմի կը գտնուէր, և թէպէտ յաջողութեամբ դարձած, սակայն պալատական բանսարկութեամբ պաշտօնանկ եղած (ԺՈՒ.341), և Թեսսաղոնիկէ աքսորուեցաւ, և 1738 յունուար 20'ին իրեն յաջորդեց տեղակալ եէկէն Մէհմէտ փաշա, որ կը ներկայացուի իբր հակառակ քրիստոնէից (ԱՍՏ. Բ. 51)։

1995. Գրիգոր պատրիարք Կ-Պոլիս եկած էր Երուսաղէմի գործերուն վճռական լուծում մը տալու համար, և ԼԱՏԻՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ գրեթէ երկու տարի էր, որ Կ-Պոլիս կը դիզերէր, և գործը չէր վերջանար վերահաս եղելութեանց պատճառով։ Երկու պատրիարքներուն մեծ յոյսը Գաղղիոյ դեսպանին վրայ էր, որ թէ իբր սեփական լա-

տինական տեսակէտէն ալ Հայերուն դատին նպաստաւոր էր, և թէ կառավարութեան առջեւ ալ աղէկցիկ դիրք կը վայելէր։ Ցերկրորդ կէսին ապահովեր, 1738 փետրուար 19'ին, նոր դիմում մը ըրին դեսպանին՝ ջնջուիլ և յետնոյ ըլլալ խնդիրին կարգադրութեան, բայց անա մարտ 13'ին պատերազմի դրօշը մէջտեղ ելաւ, և եպարքոս եկեղեցի Մէհմէմէտ փաշա Աւստրիոյ դէմ պատերազմի մեկնեցաւ (ԱՍՏ. Բ. 51), և նորէն գործեր կաղալու սկսան։ Ժողովուրդին մէջ լատինական մերձեցումներ խնդիր չէին յուզեր Երուսաղէմի գործին սիրոյն, բայց երբոր այն ալ կը դանդաղէր, դժգոհները լուռ հանգչելու առիթ կու տար, և զատկին մօտենալուն, ապրիլ 2'ին, նորէն չուկներ բարձրացան, երբոր տեսան, թէ Ֆռանսայ կողմն, իմա կաթոլիկութեան համամիտները, եբեան ամբոխ չեկեղեցի լափնացաւ։ Սկսան կոլոտը ստիպել, նա ալ լատին եպիսկոպոսին մարդ ղրկեց, Գաղղիական դեսպանին անձամբ գնաց, որ եղած պայմանները յարգուին, և ժողովուրդին գանգատի առիթներ չտրուին (ՁԱՄ. Գ. 823)։ Այստեղ հռոմէական պատմագիրը կ'ըսէ թէ դեսպանը պատրիարքէն պահանջեց Ֆռանսայ գաղմատնիկան ա և յայտարարութիւն ազգմատնիկան հաստատն, և թէ պատրիարքն ալ ուզուած հռոմէական դաւանութիւնը տուաւ (ՁԱՄ. Գ. 823)։ Սակայն աղբիւրներու հետեւողութեամբ կը տեսնուի, թէ դեսպանը ուզեց միայն տեսնալ ջնջուած վաւերական բերան Հայոց իրենց իրաւունքներուն նկատմամբ, որ ըստ այնմ նոր հրովարտակ կազմել տալու աշխատի (ԱՍՏ. Բ. 53)։ Իրօք ալ ենթադրելի իսկ չէ, որ դեսպանը, կանուխէն Հայոց հետ համաձայնութիւն գոյացնելէնետքը, նորէն դաւանութիւն ուզէ։ Բայց սեւեռեալ գաղափարով գրողներուն վրայ՝ այս տեսակ այլայլութիւններ չատ տեսնուելու չէին։ Ինչ ալ ըլլան այդ պարագաները, դեսպանին միջամտութիւնը հանդարտեցուց չուկները, և լատինամիտներ սկսան Հայ եկեղեցիներու մէջ երեւալ։ Ցատուկ եկեղեցի մը ունենալու գաղափարը նորէն մէջտեղ հանեցին, սակայն կոլոտ խոհական կերպերով արգելեց, և ոչ երբէք ասոր նման բան (ՁԱՄ. Գ. 823)։ Այսու հանդերձ գործերը երկարեցին, և ամ ի ոչինչ նորէն պարապի անցաւ, պի նոյն ինքն Վիլնէօվ դեսպանը, որ իբր տէրութեան կողմէն Տաճկաց և Աւստրիացւոց մէջ հաշտութիւն գոյացնելու պաշտօն ստացաւ, պարտաւորուեցաւ պատերազմին տեղը երթալ, Սերպիոյ Պելկրատ քաղաքին առջեւը (ԺՈՒ. 342)։ Շղթայակիրը այդ պարապէն օգտուելու Իւսկիւտարի մէջ Երուսաղէմի վանքին այգին ընդարձակելու՝ երկար նոյնչափ մասեր աւելցնելով, մէջը վանատուն և մատուռ չինելու, և Մայր եկեղեցւոյ չրջափակին մէջ ալ Երուսաղէմի հոգեւոր տուն մը հաստատելու (ԱՍՏ. Բ. 52)։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԽՆԴԻՐԸ

1996. Տաճկաց և Աւստրիացւոց պատերազմին վերջը Տաճկաց նպաստաւոր դարձաւ, հաշտութեան փափաքներ տիրեցին, և ոչ բովհետեւ եկեղեցի Մէհմէտ հակառակ կը կենար, և պարքոսութենէ ինկաւ, և Իւստոս սքսորուեցաւ, և իրեն յաջորդեց Համի Մէհմէտ փաշա, Այվազ (ԱՍՏ. Բ. 52), կամ Էլիաս (ԺՈՒ. 342), կամ Էլվիաս (ՆՐՏ. Ա. 244) մականունեալ։ Խաղաղութեան սկզբունքները հաստատուեցան 1739 սեպտեմբեր 1'ին, և սեպտեմբեր 18'ին Պելկրատի դաշնագիրները կնքուեցան Աւստրիոյ և Ռուսիոյ հետ (ՆՐՏ. Ա. 67), Օսմանցոց նպաստաւոր պայմաններով, որով սահմանք Պելկրատի և Օրչօվայի կը տիրէին, Ուլահ և Պուղտան իրենց կ'անցնէր, Ազաֆի ղրկակը պիտի քանդուէր, Սեւ Ծովի Ռուսական տորմիղը պիտի ջնջուէր, և Ռուսներէ գրաւուած տեղեր ետ պիտի տրուէին (ԺՈՒ. 342)։ Վիլնէօվ դեսպան, որ յանուն Լուդովիկոս ԺԵ թագաւորի, խաղաղութեան միջնորդն էր եղած, մնծապէս կը բարձրանար Օսմանցոց աչքին, ըստ այնմ ալ կը զօրանար իր ազդեցութիւնը։ Շղթայակիր ու կոլոտ իրաւունք ունէին Գաղղիական պաշտպանութեան վրայ դնել յոյսերնին, և հնարաւոր պայմաններով անոր բարեացակամութիւնը մշակել, քանի որ գիտէին թէ Երուսաղէմի խնդիրներուն մէջ Հայոց ու Լատինաց չաները հաւասարչափ կ'ընթանային Ցունական ոտանգութենանց դէմ։ Ցոյներն ալ զգացին իրաց իսկութիւնը, և տեսնելով որ իրենց պահանջները բուռն ընդդիմութեան կը հանդիպին և յա-

ջողելու հաւանականութիւն չունին, սկսան հետզհետէ իրենց լեզուն փոխել, և Հայերուն մօտենալ, թերևս վախցան ալ՝ որ մի գուցէ Պաղդիական զօրաւոր և կրկին զօրացած ազդեցութիւնը իրենց դէմ գործէ, և չանելու տեղ կորուստ ալ ընեն։ Անշուշտ այդ տեսութիւնները պատճառ եղան, որով 1739 ապրիլ 7'ին, նոյն իսկ է Բենեդիկտոս, ֆոխտրէյ դաշնադրութիւնը մը գրուեցաւ, որ Բերդրութեամբ և ինչով պարբերաց և ելեւէջոց ոչինչ, և է Քրքուկ Իսպահանոյ (ԱՍՏ. Բ. 54), որ այն դարուն միջազգային լեզու էր։ Այդ դաշնագիրով երկու կողմերն ալ բացարձակ տէր կը մնային այն իրաւունքներուն և առաքելութիւններուն զոր կը վայելէին, Ասորիք և Եթովպացիք և Եգիպտացիք Հայերուն հետեւակ կը ճանչցուէին, և Հայեր ու Ցոյներ ընդհանուր իրաւունքներու մէջ հաւասար կ'ընդունուէին, Ցոյներու նախապատուութեամբ (ԱՍՏ. Բ. 55)։ Կոլոտ 1739 տարւոյն յունուար 1'ին յատուկ նամակ ալ գրած էր, Գաղղիոյ վարչապետ Անդրէաս Ֆլէօրի կարդինալին (André Fleury), հարկաւ Վինէօվի խորհրդով, որուն պատասխանը ստացաւ օգոստոս 31 թուականով (ԱՍՏ. Բ. 56), որ Հայոց համար մեծ համակրութիւն և անոնց իրաւունքին պաշտպանութիւն կը խոստանար Վինէօվի ձեռօք, իսկ դաւանական խնդիր չէր յուզեր բնաւ։ Պատասխանին ուշանալուն պատճառը անշուշտ Վինէօվի բացակայութիւնն էր, որ պէտք էր կ-Պոլիս դառնար, որպէսզի պէտք եղածը գործէր։ Ըստ այսմ ալ կարգադրուեցաւ, և Հայեր նոր հաւրիշէիֆ կամ նուիրական հրովարտակ ստացան Մահմուտ Ա սուլտանին կողմէն, որով վճռապէս կ'որոշուէր, որ ըստ ինչ առնէին քահանայութիւն, և որպէսի եկեղեցիք վերին դպրոցականաց և ըստ բանիւն հրեանց, անխափան պահեն այժմ և յապագայ, և այլեւս փոխադարձ վէճ և խռովութիւն չհանեն։ Հայերուն հետ Լատիններուն համար ալ նմանօրինակ հրովարտակ առնուած պիտի ըլլայ, որ Ցոյներ՝ իրենք ալ ստանալու համար Գաղղիոյ դեսպանին դիմեցին, և խնդրանքնին կատարուեցաւ (ԱՍՏ. Բ. 53), որով վառ էրէց ազգաց համահաւասար հրովարտակներ՝ ապագային երաշխաւորութիւն և հաստատուն օրինագիրք նկատուեցան։ Այս կերպով Ս. Յակոբեանց մայրավանքին դէմ Ցոյներուն յարուցած պահանջները հերքուեցան, միայն Ցոյներէ յափշտակուած վէճն Հոլէյէյ կամ Եթովպացոց՝ անոնց ձեռքը մնաց (ՁԱՄ. Գ. 824)։ Երուսաղէմի նոր պատմագիրը այդ նշանաւոր հրովարտակին թուականը նշանակել կը մոռնայ, որ 1740'ի հրովարտակի անունով ճանչցուած է։

ՇՂԹԱՑԱԿԻՐ ԳԵՐՈՒՍԱՂԷՄ

1997. Ահա այսպէս վախճան եղաւ այս առաջին յաղթանդ և խաւրենեան (ԱՍՏ. Բ. 54), և կ-Պոլսոյ մէջ փակուեցան խնդիրները, բայց անդին Երուսաղէմի մէջ նոր վէճ մը բացուած էր Հայոց և Լատինաց մէջ, Իւղաբերից սեղանի և Բեթղեհէմի եկեղեցւոյն պատճառաւ, հարկաւ վերջնական լուրը առած չըլլալնուն համար։ Որովհետեւ երբոր լուրը կ-Պոլիս եկաւ, անմիջապէս դեսպանին դիմում եղաւ, որ խստիւ գրուց իրենները հրովարտակներուն հիմամբ բնթանալ և վէճ չյարուցանել, և իւր նամակը Շղթայակիրին յանձնեց, որ 1940 մայիս 6'ի նամակով զայն իւր տեղապահ Գաբրիէլ վարդապետին ղրկեց, որ Լատիններուն յանձնէ. և յուշումունքներ դաղրեցան։ Շղթայակիր այդ նամակով քաղաք գալով Երուսաղէմ էրեց ղբեպանէն, և իրենները ալ իրար և յորդորական քահանայութեց, որ սէրով հաշտեցին և ջանան չոլ գեղ սաբելունեան (ԱՍՏ. Բ. 60)։ Շղթայակիրի մեծ հոգածութեան նիւթ եղաւ նաև մաքրել այն պարագները, որոց նորքեւ ինկաւ չորս տարի տեւող խնդիրին պատճառաւ։ Ինքն արդէն այդ գործին վարժ, կըրցաւ բարերարներու և բարեկիրներու ղազուումները չարժել և պէտք եղած դումարը ճարել, որով կրցաւ համարձակ գրել, թէ ըստ ինչ պարտ արաբ է Կոստանդնուպոլիս ղբեվանգարն հաւատոյ հանդերձ ըսնուղ, և ըստ պարտ է վերայ անուոյն։ Սակայն ստիպուեցաւ այդ պատճառով կ-Պոլիս մնալ Զատիկէն ետքն ալ, որ ապրիլ 6'ին կը հանդիպէր, և հազիւ օգոստոս 25'ին մեկնեցաւ ծովագնաց ճանապարհով։ Իւոտոսթոյի մէջ առաջնորդ Յովհաննէս վարդապետէ հիւրասիրուեցաւ և նուէրներ ալ հաւաքեց։ Տարտանելլի բերանը Պօղազհիսարին առջեւ նաւեր-

նին խրեցաւ և հազիւ ազատեցան։ Հոդոս հանդիպելէ ետքը նաւերնին ջուր առնել սկսաւ, և չորս օր գիշեր ու ցերեկ պարապեցաւ աշխատեցան։ Վերջապէս Խաչի բարձրացման տօնին կիրակամուտին սեպտեմբեր 6'ին, և ոչ 9'ին, Յոպպէ հասան, և Խաչվերացին օրը սեպտեմբեր 14'ին, և ոչ 15'ին, երուսաղէմ մտաւ Շղթայակիրը ուղեկից ուխտաւորներով մէկտեղ, 4 տարի ու 4 ամիսէ աւելի բացակայութենէ ետքը (ԱՍՏ· Բ· 61), սակայն յաջող վերջաւորութեամբ։ Շղթայակիրի բացակայութեան միջոցին խնդիրներ պակաս եղած չէին երուսաղէմի մէջ, սակայն Գաբրիէլ տէղապահ կրցած էր անվնաս անցընել միջադէպները, և ամենայն ինչ կանոնաւոր յանձնեց պատրիարքին։ Շղթայակիր թէպէտ ծերացեալ, սակայն ձեռքէն չհանեց աթոռին գործերը, միայն իրեն օգնական և իբր ապագայ յաջորդ նչանակեց Թէոդորոս եպիսկոպոս Խրնեցին, Տարոնի գաւառէն, ինչպէս կը գրէ երուսաղէմի պատմագիրը ստոյգ աղբիւրներու հետեւողութեամբ (ԱՍՏ· Բ· 75)։ և չարդարանար ուրիշներուն գրածը, թէ պատրիարքութեան գործերը փոխանցեց ի Յեռս Ցոբրիէն վըրտապետի, և վըրէբ կեան էբէ Ռեպեթ յաչէորհ (ՁԱՄ· Գ· 824)։

1988· երբոր Շղթայակիր մեկնեցաւ, կոլոտ արդէն պարտասած և ակարացած, և

ՈՂ ԿՈԼԱՏԻ ՄԱՀԸ

երկարատեւ և տագնապալից պատրիարքութենէն յոգնած, պէտք տեսաւ քիչ մը հանգիստ տալ իրեն, և ազգայիններու հաւանութեամբ իրեն փոխանորդ կարգեց՝ իր ընտրելագոյն աշակերտներէն Ցակոբ Նալեան եպիսկոպոսը, որ արդէն կ-Պոլիս կը մնար իբր կոլոտին օգնական։ Իսկ այս անգամ լիազօր իշխանութեամբ տեսակ մը տեղակալութեան դիրք կը ստանար։ Այդ առթիւ նոր պատմագիրը կ'աւելցնէ, թէ կոլոտ եաթ է մրէ, էբ-ըել յոեթ յայլ ե այլ թեղէս ե է Հոմ (ՁԱՄ· Գ· 824)։ Բայց նկատելով որ կոլոտ յոյժ ակարութեան համար գործէ քաշուիլ որոշած էր, հաւանական չերեւիր հետեւեալ ուխտագնացութենանց միաք ունենալը։ Անոր տկարութիւնը՝ իսթագին վչտակրութիւն եղած պիտի ըլլայ, զի Շղթայակիրին մեկնելէն հազիւ վեց ամիս ետքը կեանքը կը կնքէր, տակաւին խորին ծերութեան տարիք չունենալով։ Կոլոտ 37 տարեկան պատրիարք ընտրուած էր 1705'ին (§ 1923), և 26 տարիէ իվեր պաշտօնը կը վարէր, և 63 տարեկան էր տակաւին, որ ընդհանուր տեսակէտով գործէ քաշուելու տարիք չէ։ Այս ալ ծանր իսթութեան մը գոյութիւնը կը հաստատէ, թէպէտ յանուանէ յիշուած չէ։ Իրօք ալ գրուած կը գտնենք ըէ պոպէթըն խոխ էբ, և ախոն մահաւէբ էբ (ԳԱԼ· 42)։ Իւր վերջին օրերը ուր անցուցած ըլլալը չենք գիտեր, բայց հաւանաբար իրեն հանգըստարան ընտրած էր Իւսկիւտարի հովտաւան բարձանց վրայ Շղթայակիրէ չհնուած երուսաղէմական վանատունը, որուն իրաւունք ալ կրնար ունենալ, իբրեւ երուսաղէմի վերակենդանութեան սկզբնապատճառը։ Չի եթէ անուրանալի են Շղթայակիրին երուսաղէմի համար ունեցած երախտիքը, պէտք չէ մոռնալ թէ առաջին անգամ եբուսաղէմի համար աշխատողն ու ձայն բարձրացնողը (§ 1911), անոր պարտքերուն երաչխաւորութիւնն ստանձնողը (§ 1915), պատրիարքութենանց միացումը ջնջողն ու Շղթայակիրը հրաւիրողը (§ 1924), և բոլոր իւր պատրիարքութեանը միջոցին երուսաղէմի համար անձնուէր աշխատողը՝ կոլոտն էր եղած։ Կոլոտի մահը տեղի ունեցաւ 1741 փետրուար 13'ին, մեծպահոց առաջին ուրբաթ օրը· իսկ յուղարկաւորութիւնը յաջորդ չաբաթ օրը, Տեառնընդառաջին առնին, անչուչա Ղալաթիոյ Ս· Լուսաւորիչին մէջ, վասն զի եկեղեցւոյն գաւիթին մէջ ալ պատրաստուեցաւ իւր գերեզմանը։ Ցետ ժամանակաց 1888'ին, Ղալաթիոյ բակին մէջ եղած փոփոխութենանց առթիւ, գաւիթին քանդուելովը, գերեզմանը այժմ բացօթեայ մնացած է, եկեղեցւոյ աւագ դրան մօտ, մանուկին աջակողմը, և տապանագիրն ալ ագուցուած է եկեղեցւոյ պատին (ԿՈԼ· 77)։ Թաղման հանդիսապետը եղաւ ինքն Նալեան, որ արդէն գործնական կերպով պատրիարքութիւնը վարողն էր, և միաձայն հաւանութեամբ, և հանգուցեալին ալ թելադրութեամբ, իսկոյն պաշտօնապէս պատրիարք հռչակուեցաւ։ Թէեւ ի նմին ի՞ւ-ոոոբ թաղման՝ ղէեցոո կ'բուսի յոբոոնի

ջրան չէնօ էչեանոցեան (ՁԱՄ. Գ. 824), կամ ուրիշ բացատրութեամբ՝ մահուան երկրորդ օրն ալ հոգեհանգստական էլլան (ԿՈՂ. 76), սակայն ձեռագիր յիշատակարանը կը գրէ թէ փետրուար 15'ին նոյնս պոպէրէթ (ՍՐԳ.), որով արքունական հաստատութիւնը կիրակի օր տուղի ունեցած կ'ըլլայ։ Իրօք ալ անպատեհ էր միեւնոյն թաղման օրը այնպիսի հանդէս կատարել։

ԿՈԼՈՏԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

1999. Յովհաննէս պատրիարք Բաղիշեցի, մականուանեալ Կոլոտ, ոչ միայն իր դարուն, այլեւ չատ դարերուն համար կարկառուն դէմք մըն է. կարողութեամբ եւ արդեամբ մեծ, որ Սահակներու եւ Շնորհալիներու պէս հռչակ եւ պաշտամունք իսկ ունեցած կ'ըլլար, եթէ աւելի հին դարերու մէջ ապրած ըլլար։ Իր գործունէութիւնը մենք նկարագրեցինք իրողութիւնները պատմելով, եւ ոչ խորհրդածութիւններ ընելով, վասնզի գործերը ինքնին պերճախօս են ինքզինքնին գործողին։ Շատերուն կողմէ անոր մասին դովութիւններ գրուած են, եւ վերջերս գայն յատուկ հատորի նիւթ ըրաւ Կիւլէսէրեան Բարգէն վարդապետ, այժմ Հռիփսիմեան (ԿՈՂ.), ուր իվեր կը հանէ Կոլոտի ձիրքերը իբր վարդապետ եւ պատրիարք, իբր չինող եւ գործիչ, իբր գրասէր եւ բեմբասաց. սակայն մենք չենք կարող այդչափ մանրամասնութիւններու հետեւիլ։ Ինչ որ մեր նպատակին համար պէտք կը զգանք բացատրել, Կոլոտի տեսութիւններն ու գործողութիւնները են կաթոլիկ դրութեան հանդէպ, որուն ոմանք գինքն նպաստուոր, եւ միւնչեւ իսկ հետեւող կ'ուզեն ցուցնել. եւ այդ իմաստով ալ կը գրեն, թէ «ջոսոս ջէոսոսեան ընթացք եւ քրէ մահուամբ (ՁԱՄ. Գ. 824). միեւնոյն անդին զայն կաթոլիկներու հալածիչ ցուցնել ուզողներ ալ պակաս չեն (Մխի. 334—335), եւ անշուշտ երկու ծայրերն ալ միանգամայն ստոյգ չեն կրնար ըլլալ։ Բայց ասոնցմէ չատ աւելի հեռու կը պարզուի, եթէ մեզի իբր կանոն առնենք հայրապետական ուղղափառութեան ներողամիտ սկզբունքը, որուն ուղղամիտ գործադիրն եղաւ Կոլոտ։ Հայը իր դաւանութեան ուղղութիւնը գիտնալով ու պաշտպանելով եւ ուրիշ դաւանութիւններ հերքելով հանդերձ, ընդհանուր քրիստոնէական սկզբունքը գերիվերոյ կը դասէ, եւ յաւիտենական փրկութեան պայմաններու հետ չխառներ, եւ փրկութիւնը իրեն միայն սեփական իրաւունք չկարծեր, երբ ուրիշներու մօտ ալ տեսնէ քրիստոնէութեան սկզբնական եւ էական ճշմարտութեանց ներկայութիւնը։ Եղան ժամանակներ՝ յորս նահանձայուզութիւնը մեռնամոլութեան եւ հակառակութիւններն ընդդիմութեան առիթներ ընծայեցին, ինչպէս ամէն արարք՝ հակարարք կը գրգռեն. սակայն այն ոչ օրէնք էր եւ ոչ սկզբունք, եւ հանդարտ մրցում մը կրնար իրաց վիճակը ճշդել։ Ահա այս դրութեան հաւատարիմ հետեւող մը եղաւ Կոլոտը, հայադաւանութեան պաշտպան, հռոմէադաւանութեան ընդդիմաբան, բայց ոչ ամէն ինչ որ հայկական է, այդ պատճառով միայն՝ ընդունող եւ գովող, եւ ոչ ամէն ինչ որ հռոմէական է, այդ տեսութեամբ միայն՝ մերժող եւ անարգող։ Կոլոտ իւր օրով հրատարակուած Մխիթարի եւ ասոր նմանները գիրքերը պատուով ընդունած էր, բայց ոչ ամէն պարունակութիւնը հաւատարապէս ընդգրկած։ Աւելին ալ ըրած է։ Խարբերդցի Ղուկաս Աբրահամեան Գասպարեանց վարդապետին լատիներէնի եւ իտալերէնի համոզութենէն օգտուելով, տասը կտոր մեծահատոր, նոյնչափ ալ մանր գիրքեր հայերէնի թարգմանել տալով, կը յաւելուր է ֆոնյո էչոսոլիեան օբէյ էկեչցոյ, ինչպէս Հաննա կը գրէ (ՀՆՆ. 176)։ Բայց ոչ թէ այդ բոլոր գիրքերուն կատարելապէս համամիտ էր, զի ինքն իսկ կը յայտարարէ, թէ անոնց պարունակութիւնը է ՀՂ ԾՂՒՆՑ ՂԻՂԻՆ ՈՆՔ ԲՈՍՈՑԵԼ, Ե Է ՀՂ ՀՐՓՑ՝ ՂԱՆՈ ՆԷՔԵԼ Ե ՂՄՈՆ Է ՀԼՐՒՔԻՆՈՑ ՊՈՍՂ ԲՈՂՔՈՔԼ (ԿՈՂ. 48), և թէ այդ ծաղիկնեբուն վրայ իջած ցօղը ՐՒԵՈՑԵԼ ՕՅՔԲՈՒՀՑ հանդիպելուն փոխուած է, պէտք չէ զարմանալ թէ ցօղն է ՐՈՅՆ ՓԻԵՈՑՒ (ԿՈՂ. 49)։ Այդ յայտարարութենէ ետքը անհնար է այլեւս կասկածով վերաբերուիլ Կոլոտի ներքին համոզումներուն վրայ, և պէտք չէ ալ զարմանալ, եթէ Երուսաղէմի խնդիրին սիրոյն հռոմէականներուն կը մօտենայ, և դէպանին պատուով կը վերաբերուի, կամ եթէ Հայ եկեղեցիները անարգողներուն հետ

խստիւ կը վարուի, պետական իշխանութեան ստիպողական պահանջումները յարգելով։ Հանգամանք մը, գործին իսկութենէն գիտակից, նոյն այս սկզբունքով կը պաշտպանէ Կոլոտի ընթացքը, երբոր իր առաքինութիւն կը գրէ, թէ կրնան «ամէն ի մէյնոց դիտել տալ, թէ այս թարգմանուած յատիճական գիրքերուն մէջ ի՞նչքան «ամէն» ըրս ալ ընդունի՞մ ու Հայոց Հոստովանութիւնը ետքը թէ այսպիսի խօսքեր չէ՞ը ի՞նչ, անոնց թիւը ի՞նչ է հաշուէ, և կը պատասխանէ թէ չորցած ճիւղի մը համար ծառը արմատախիլ չեն ըներ, և մարգարիտի չարքէն մէկ հատ փտած ըլլալուն համար չարանը ամբողջ աղբիւս չեն նետեր. նոյնպէս գիրքի մը մէջէն սխալ մը գտնուելուն համար բոլոր գիրքը մերժել պէտք չէ։ Օրինակ կը բերէ Դաւիթ Անյաղթը, որ Արիստոտէլի պէս հեթանոսի և Պորփիւրի պէս ուրացեալի գիրքերն ալ թարգմանեց՝ հայելով «ամէնքդ ի ձեզմէ օգտուիք» նոյն, էն է ընս (ՀՆՆ. 177)։

2000. Կոլոտ, ուսմանց և գիտութեանց այդչափ հետաքրքրող, յատուկ երկասիրութիւն մը թողած չէ։

ԿՈԼՈՏԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Աւիկայ ոչ անկարողութեան, այլ պաշտօնական զբաղմանցը պիտի վերագրուի, զի իւր կեանքին ընտրելագոյն և արդիւնաւոր մասը պատրիարքական պաշտօնին նուիրեց, չարունակ տագնապներէ չըլսպատուած և կնճիռներէ, նեղուած։ Այդ մասին իրեն փոխանորդած պէտք է նկատենք իւր ընտրելագոյն աշակերտը, Յակոբ Նալեանը, որ բազմաթիւ երկասիրութիւններ թողած է՝ իւր վարդապետին յորդորանքով։ Կոլոտի արդիւնաւոր գործունէութեան պիտի վերագրենք իւր ժամանակին կ-Պոլսոյ մէջ տպագրուած գիրքերուն չատութիւնն ալ, որ մօտ երեսուն տարիներու մէջ 90'ի կը հասնի (ՏՊԱ. 263—270), և անկէ ետքիններն ալ Կոլոտէ նախընչուած եռանդին ու ջանքին պիտի վերագրուին։ Կոլոտ արդիւնաւոր եղած է նաև յատուկ դասատուն կամ դպրատուն հաստատելով, անդատին իւր վարդապետութեան սկիզբն, թէ Գլակի և թէ կ-Պոլսոյ մէջ, ինքն իսկ իբր ուսուցիչ աչխատելով աչակերտաց կրթութեան, որոնցմէ 27 եկեղեցականներու ցուցակը աւանդած է Սարգիս դպիր Սարթաֆ-Յովհաննէսեան իւր ձեռագիր յիչատակարաններու մէջ (ԿՈԼ. 70), բայց անոնցմէ դուրս ալ անուններու կը հանդիպինք (ԿՈԼ. 71), թող եկեղեցական աստիճանի չբարձրացող աչակերտները։ Վերջապէս պէտք չէ անյիչատակ թողունք ուսմանց և ուսումնականաց ինպատոյ Կոլոտով սկսած մատենադարանը Գումքաքուի մայրեկեղեցւոյն կից սենեակներուն մէջ, ուր սկսաւ հաւաքել իւր սեփականութիւնն եղող տպագիրները, իրեն թարգմանել տուած գիրքերը, և ձեռք ձգել կրցած գրչագիրները։ Որչ չենք կրնար ճչդել թէ քանի հատորի կըրնային հասնիլ իւր ատենը, զի իւր յաջորդներուն նուէրներով ու ջանքերով ալ մատենադարանը ճոխացաւ (ԿՈԼ. 103), և մեր ժամանակներու մէջ հաստատուած Ազգային մատենադարանին գլխաւոր և առաջին տարրները կազմեցին (ԿՈԼ. 105)։ Կոլոտի կերպարանին վրայ գրաւոր աւանդութիւն մը չգտանք, բայց Նշանեան Մեսրոպ վարդապետի հետազօտութեամբ Երուսաղէմի գրչագիրներէն 1717 թուականով քաղուած պատկեր մը, կը ցուցնէ զայն հասակով միջակ, դէմքով բոլորակ, մօրուքով քեթեւու կարճ, և աչքով վառվռուն, եկեղեցական զգեստով, և գլխաբաց նստած։ Անձնանաճութիւն չկարծուի աւելցնել, թէ չատեր նմանութիւն մը տեսան իմ իսկ կերպարանին հետ, միւս կողմէն կատարեալ հարիւրամեակ մը անցած է անոր մահուան 1741 փետրուար 13 թուականէն մինչեւ 1841 փետրուար 11, իմ ծննդեան օրը։ Այստեղ կը փակենք Կոլոտի վրայ ըսելիքնիս։

2001. Ծիչեցինք Անկիւրիոյ մէջ տեղի ունեցած չփոթը, և չորս եկեղեցիներուն հռոմէականներու ձեռք անցնիլը, և գործին կարգադրութեան համար Սարթաֆեանին ղրկուիլը (§ 1988)։ Երբոր Սարաֆեան մեղմ միջոցներով չկրցաւ գործը գլուխ հանել, պատրիարքարան պարտաւորուեցաւ կառավարական հրաման ղրկել տալ, որ «ըբս եկեղեցիները քանիները յանձնուին Սրտֆոլոս Սրբէն» եպսկոպոսին (ԳԱԼ. 182)։ Այդ հրամանին տըր-

ուիլը Յակոբ Նալեանի կը վերագրուի (ԳԱԼ. 181), բայց պէտք է համեմատել Նալեանի տեղակալութեան միջոցին (§ 1998), զի 1740'ին դեռ կոլոտ կենդանի էր, բայց խոթագին և գործէ քաչուած։ Պետական հրամանին զօրութեամբ կուսակալը 25 հոգի կաթոլիկներէն չղթայակապ բանտարկեց, և նոյն իսկ զատկի օրը, 1740 ապրիլ 6'ին, ոստիկաններով եկեղեցիները գրաւեց և քանալիները յանձնեց հրովարտակին համեմատ (ՁԱՄ. Գ. 825)։ Սարաֆեան առաջնորդ կը գտնուէր այդ գործին վրայ, բայց նկատելով որ Ալէն պէտք էր խոթոթէ, որթը լրանալէն ետքը կամացուկ մը Անկիւրիայէ մեկնեցաւ, և Կ-Պոլիս հասաւ 1741 տարւոյ սկիզբները, ուսկից ամիս մը ետքը կոլոտ պատրիարք վախճանեցաւ (ԳԱԼ. 42)։ Սարաֆեանի այդ մեղմիւ ընթացքն ալ կը հաստատէ, թէ յայտնի կերպով հռոմէականութեան յարող մը չէր, այլ պարզապէս բախտին հետեւող մը, և իր հանգստութեան և օգուտին յարմար գետին մը փնտռող։ Ջուարճալի պարագայ մը կը պատմուի Անկիւրիոյ կաթոլիկներուն մտաւորական աստիճանը արտայայտող, որոնք սկսեր են երգեր Արեւագալի երգին, Եբէ+ անյին+ և ֆ բնութիւն խօսքերը (ԺԱՄ. 314) սրբագրելով երգել, Եբէ+ անյին+, երկնք բնութիւն (ԳԱԼ. 40)։ Բայց պէտք չէ չատ զարմանալ, քանի որ հռոմէականք պաշտօնապէս ալ, Բկնո՜ֆ է Հօբ՝ ի դէմս Որդւոյ բացատրութիւնը, Բկնո՜ֆ է Հօբ և յՈրդոյ փոխած են (ԺՄԱ. 24)։ Սարգիս չուզեց Անկիւրիա դառնալ, հակառակ Նալեան պատրիարքին ստիպումներուն, և միայն յանձն առաւ Զմիւռնիոյ չրջանակին մէջ երուսաղէմի նուիրակութիւն կատարել՝ Շղթայակիրին կոնդակով։ Իբրեւ՝ ըմ՞ն երթ այդ պաշտօնը վարեց, Փոքր-Ասիոյ զանազան կողմերը չրջագայելով, և 1744'ին Կ-Պոլիս դառնալով արդիւնքը Նալեան պատրիարքին յանձնեց, որուն ձեռքով Շղթայակիրէն մոռնալ ֆայր վճռման։ Բայց ամէն կողմ ձայն էր ելած, թէ ֆոր Սարգիսի ներբողաբանը կ'ուզէ դրել Շղթայակիրէ ստացած վճարման մուրհակին փաստով (ԳԱԼ. 45)։ Սակայն այդ մուրհակը ստացուած գումարը կը ցուցնէր, մինչ ժողովրդական ձայնը հաւաքուած գումարին մասին ելած պիտի ըլլայ։ Գաղտնի գործերուն դառնալով, Սարգիսի հրաժարելէն ետքը, առաջնորդ կը ղրկուի Թովմաս վարդապետ Թամգաբաչեանը, և անկէ ետքը երբեմն իբր տեղակալ պաշտօնավարող Պետրոս վարդապետ Պահատուրեանը (§ 1988), պայմանով որ հաւատարիմ կերպով հետեւի Հայ ուղղափառ եկեղեցւոյ կանոններուն, առանց օտարամուտ ձեւեր խառնելու (ԳԱԼ. 171)։ Նոյն միջոցին անդ կը գտնուին Սիմոն եպիսկոպոս Տամատեան և Սուքիաս քահանայ մը լատին եպիսկոպոսի գործակատար, որոնք մասնաւոր պաշտպանութիւններ կը ճարեն պետական չրջանակներու մէջ, և արտաքին պաշտպանութեամբ պատրիարքարանի կը դիմադրեն մինչեւ 1744 (ԳԱԼ. 191)։ Ըսող մըն ալ կայ թէ հռոմէականք չալղած ըլլան չորս եկեղեցիները նորէն գրաւել, Պահատուրեանի տկարութեամբ կամ կամակցութեամբ (ՁԱՄ. Գ. 825), սակայն այդ բանին ուրիչ կողմէն հաստատութիւն չենք գտներ։

ԿԱԹՈԼԻԿ ՁԱՆՔԵՐ

2002. Նալեանի պատրիարքութեան ընկիզբը, Կ-Պոլսոյ մէջ ալ նորէն սկսան կաթոլիկական չարժումներ և եկեղեցիներ գրաւելու գրգռութիւններ։ Կաթոլիկներէն ոմանց պետական չրջանակներու մէջ ստացած դիրքէն և ճարած բարեկամութիւններէն օգտուելով, ձայներ հանեցին թէ կառավարութիւնը երկու եկեղեցիներ պիտի չնորհէ իրենց, Սամաթիոյ Ս. Գէորգը և Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչը, և այդ պատրուակով ձեռնարկեցին հաստէքեաղամ գրմա է ֆողվրդենէ։ Գործին գլուխ կանգնողները՝ հռոմէական պատմագիրէն ալ անտեսել ընդոծղ անձեր վերկայուէլէ ետքը (ՁԱՄ. Գ. 825), մեզի աւելորդ կը դառնայ այդ ձգտումներուն ներքին չարժառիթը բացատրել։ Կաթոլիկներ մինչեւ իսկ յիշեալ եկեղեցիներուն համար իրենց կողմէն մեծաւորներ կ'որոչեն, և 1742 յուլիս 25'ին, վարդավառի տօնին կը սպասեն ֆառնել և խառնիճել զնկեվցիօն։ Անշուշտ Հայոց պատրիարքարանը հաճութեամբ պիտի չլսէր այդ զրոյցները, և ոչ ալ անոնց իրականանալը պիտի թոյլատրէր։ Դիտողու-

թեան արժանի է, որ նոյն այն ընդ-ոդ կոչուած դրամ հաւաքողներ, և է դբա-ն-ծ-ծ ծախեց+ ըսելով դրամները իբա-ցնողներ, կը յանդգնին լուր տալ Նալհանի, թէ ահա կաթոլիկներ պատրաստուած են ա-ն-ո-լ ղ-կ-ղ-յ-: Պատրիարք և մեծա-մեծներ գործին էութիւնը կը հետազօտեն ու պետական չրջանակներէ ստուգել կ'աշ-խատին, և այս կերպով խնդիրը մէջտեղ կ'ելնէ: Կառավարութիւնը կը զայրանայ, զրոյց հանողները և կառավարութեան կող-մէն սուտ լուր տարածողները փնտռել կու տայ. չատեր կը ձերբակալուին, կը տա-ւ-նուին, կը պատժուին: Միւս կողմէն փո-խադարձ թշնամութիւններ ալ ասպարէզ կը գտնեն, և ֆ-պ-ն-ւ-ն+, ն-զ-ւ-ն+ և փ-ռ-պ-ն+ ազգին մէջ կը յաճախեն: Այս ալ անշուշտ իրր իրենց պէտ հալածանք ցու-ցնել կ'ուզեն հռոմէականները, սակայն չար-ժառիթը մէջտեղ ըլլալուն, անաչառ դատո-ղութիւնը կը յայտնէ դործին իսկութիւնը, թէ Հայոց կողմէն կարգադրուած դաւանա-կան հալածանք մը չէ: Հռոմէական պատ-մագիրն ալ կը վկայէ, թէ չէլեստ կոլմանց էին մատնութիւն բնողներն ու տառապանք պատճառողները (ՁԱՄ· Գ· 825): Եթէ յարա-կից պարագաներն ալ քննենք և ղղելու-թեանց առիթները ճշդենք, պէտք է նկա-տել որ արդէն 1741 տարիէն վիլնէօվ մար-քիզը, որ Վիլլանավօ ալ կոչուած է իտա-լական հնչմամբ (ԱՍՏ· Բ· 69), դեսպանու-թենէ ելած էր, և իրեն յաջորդած էր, Մի-քայէլ-Անգղոս Քասթէլլան կոմսը (Michel-Ange comte de Castellane), որ կերեւի թէ նոր ըլլալով չէր կրցած տարապարտ ձգտումներուն առջեւն առնել:

ԿԱԹՈԼԻԿ ԾԷՍԵՐ

2003. Պահ մը նորէն ձայները կտրուե-ցան, և կարծես թէ խաղաղութիւն տիրած էր, և ահա նորէն կաթո-լիկներու կողմէ պահանջ կը յարուցուի, իրենց յա-տուկ եկեղեցիներ ուզե-լու, այս անգամ ուղղակի Նալհան պատ-րիարքին դիմելով: Կ'երեւի թէ պետական պաշտպանութիւնէն յոյսերնին կտրած էին: Շատ դիւրաւ հասկնալի էր որ պատրիարք պիտի չկարենար իրենց պահանջին գոնա-ցում տալ, ուստի կը սպառնան որ լատին եկեղեցիներու մէջ պիտի կատարեն հայկա-կան ծէսերը: Անշուշտ այդ խորհուրդը ծա-գում առած էր լատիններուն գրգռութենէն, որոնք տեսնալով թէ իրենց Հայ հետեւորդ-ները փափաք կը յայտնեն հայածէս արարո-ղութիւններ ունենալ, և լատինածէս պաշ-տամունքներով չեն յագենար, անձերնին առած են իրենց եկեղեցիներուն մէջ հայա-ծէս հանդէսներ կատարել տալ ա-ն-ն-յ- ղ-ր-ի-+, երգով և սպասով, քչոցօք և ծընծ-ղայիւք, մինչ յառաջագոյն լատին զգես-տով պարզ կամ թիւ պատարագներ միայն կը կատարէին: Այդ լատին զգեստին կի-րառութենէն ծագում առած է՝ պոչը կոթ-ծ յօրջորջումը, իբր զի լատին պատարագիչ-ներուն չուրջառը կարճ է, և հազիւ մինչեւ ծունկերը կը հասնի: Ուրիշ լատին սովո-րութիւն մըն ալ է, առանին մատուռներ բանալ ընտանեկան բնակութեանց մէջ, և նոյն իսկ հասարակ սենեակներու մէ ու-րուէ սեղանի վրայ պզտիկ օծեալ վէմ մը դնելով, և երկու մոմակէն վառելով, վայր-կենական և պատահական մատուռներ կազ-մել: Լատիններ այդ միջոցները ձեռք ա-ռած են իրենց օգտին համար, և Հայ կա-թոլիկներ միամտութեամբ հետեւած են ա-նոնց առաջարկներուն, և այս կերպով ոչ միայն Դալաթիոյ Ս. Գէորգ և Ս. Պետրոս և Բերայի Ս. Անտոն լատին եկեղեցիներուն մէջ, այլ և նշանաւոր անձանց տուներուն, և Անկիւրացւոց կեդրոնն եղող Սօվճու խան չուկային մէջ եկեղեցական հանդիսաւոր պաշտամունք սկսած են կատարուիլ հայա-ծէս պայմաններով: Լատիններուն մտածած երկու կերպերն ալ պետական օրէնքներուն կ'ընդհարէին, զի հաւասարապէս արգիլեալ էր օտարազգիներու հովանաւորութեան ներքեւ մտնել, և անհրաման հոգեւորական

տարահպատակութեան արտօնութենէն օգտուելով անփորձ և անպատիժ կը մնային, և չէին խղճեր իրենց հետեւողները պետական օրէնքներու ցասումին մատնել։ Եւ որովհետեւ գործը պարզապէս օրինական էր, Նալեան պատրիարք անձամբ Քասթէլլան դեսպանին դիմեց, և գործը հասկցուց, և դեսպանը համոզեց ձեռք քաշել Յեհովա ընելոյ նոցա։ Ասոր վրայ Լատին եկեղեցականներ լուր հանեցին, թէ դեսպանը պատրիարքէն կաշառուած է, բայց Գաղղիոյ դեսպան մը կաշառելու պէտք եղած միջոցները՝ Հայոց պատրիարքին ձեռնհասութենէ վեր էին, և օրէնքին հասկացողութիւնն էր որ ազդեց դեսպանին միտքին վրայ։

ԱՆԿԻՒՐԻՈՑ ԴԷՊՔԵՐԸ

2004. Անկիւրիոյ մէջ ալ նմանօրինակ ձեռնարկներ սկսած էին, ուստի պէտք էր ազատել այնտեղ ալ կարեւոր հրամանները հասցնել, և զօրաւոր ու վստահելի առաջնորդ մըն ալ ղրկել։ ուստի Նալեան պատրիարք Նիկոմիդիայէ Անկիւրիա փոխադրեց Աթանաս Կոստանդնուպոլսեցի եպիսկոպոսը, որ իւր աշակերտներէն էր։ Զամչեան, որ Անկիւրիոյ չորս եկեղեցիները նորէն գրաւուած կ'ինթադրէ հռոմէականներէն, Աթանասի ձեռքով նորէն ետ առնուած կ'ըսէ (ՉԱՄ. Գ. 826)։ Բայց ուրիշներ այդ պարագան կ'անգիտանան (ԳԱԼ. 191), և միայն Պահատուրեանի և Տամատեանի ձեռօք եղած օրինազանց գործողութիւնները կը յիշեն։ Աթանաս պէյնէ-ըվ որ ինի մոլի մի ընէր, պարտաւորուեցաւ խստութեան դիմել, և հրովարտակին զօրութեամբ Անկիւրիայէ հեռացնել և Սամսոն աքսորել տուաւ Ումուտեան Սիմոն եպիսկոպոսը, Պահատուրեան Պետրոս և Մէհտէրեան Գէորգ վարդապետները, և Մուրատ Մելքոնեան, Յուպիար Մելքոնեան, Սրբին Իփրիմեան, Սահակ Վարդերեսեան, Սահակ Թասվիրճեան, ու Հաճի Ֆէրաշաթ գլխաւորները (ԳԱԼ. 191)։ Ասոնք երեք ամիս Սամսոն մնալէ ետքը կոստանդնուպոլսոյ թիւրանը փոխադրուեցան, և երեք ամիսէ ալ անկէ ազատեցան կաշառքով ու ուրանքով։ Սիմոն եպիսկոպոսը փութաց Հռոմ ապաւինիլ, Պահատուրեան և Մէհտէրեան վարդապետներ քիչ ետքը Կ-Պոլսոյ մէջ մեռան, իսկ աշխարհականներ իրենց քաղաքը դարձան (ՉԱՄ. Գ. 326)։ Ջատրճեան կարապետ վարդապետն ալ, թէպէտ ձերբակալուեցաւ, բայց խոյս տալով վենետիկ ապաւինեցաւ (ԳԱԼ. 192)։ Ինչպէս ամէն չարժումէ ետքը, այս անգամ ալ միջոց մը խնդրուեցան կաթոլիկական վէճերը, մինչև անոնց նորէն արծարծուիլը։

ԵՐՈՒսԱղԷՄԻ ԳՈՐԾԵՐ

2005. Երուսաղէմի մէջ Շղթայակիրին համար սոսկալի հարուած մը եղաւ կոլոտի մահուան գոյժը։ Վաստակաբեկ ծերունին անոր խօսքովը և անոր վստահանալով յանձն առած էր դժուարին պատրիարքութիւնը, և մինչև այն օրն ալ անկէ ստացած էր պէտք եղած օգնութիւնները, և իւր ծանրացեալ և ծերացեալ տարիքին մէջ այդ նեցուկէ զրկուիլը՝ իրեն համար անփոխարինելի կորուստ մըն էր։ Եթէ պարագայ մը կրցաւ զինքն սփոփել, կոլոտի մահուան գոյժին հետ Նալեանի պատրիարքութեան աւետիսին միասին հասնիլն էր։ Նալեան կատարելապէս կոլոտի հոգւոյն ժառանգն էր, և կարողութեամբը յայտնուած ու հռչակուած էր, Երուսաղէմ եղած և Երուսաղէմի գործերով զբաղած ըլլալով՝ կացութեան մօտէն տեղեակ էր, և պէտք եղածը հաղորդելու և իմացնելու համար Շղթայակիր յոգնելու պէտք չունէր։ Շնորհաւորեց Նալեանի պաշտօնը, խնդրեց որ Երուսաղէմ ղրկէ Կ-Պոլիս մնացած հրովարտակներուն քնագիրները, և Նալեանի չնորհեց կոլոտէ Երուսաղէմի կըտակուած հարուստ զգեստներն ու սպասները։ Սակայն Նալեան չընդունեցաւ, և անմիջապէս Երուսաղէմ ղրկեց Սեդրոս արմիրային հետ, որ կրկին անգամ ուխտի կ'երթար որդւովք և ընտանեօք, և աւանդները տարաւ Շղթայակիրին յանձնեց 1741 յունիս 18'ին (ԱՍՏ. Բ. 66)։ Նոյն միջոցին Ս. Փրկչի վանքը յարձակում կրեց Արաբացի յեղուզակներէ, որոնք պատերն ալ քանդած էին, սակայն ամենայն ինչ վերաշինուեցաւ դատաւորական քննութեամբ և վճիռով, որոնք կատարուեցան սիթոռակալ Գաբրիէլ և Թարգման Պօղոս վարդապետներու ջանքով։ Բայց աւելի մեծ խնդիրը յուզուեցաւ Լատիններուն կողմէն, որոնք Պատանատեղ-

ւոյն չուրջը աւլող Աբրահամ Ապտուլլահեան վարդապետին վրայ յայնժամ և գլուխը ճեղքած էին։ Գործը դատաւորական առեղծած եղաւ, երկար դատավարութիւն եղաւ, և Լատիններ պարտաւորուեցան, և Հայոց իրաւունքը գիրի առնուեցաւ։ Շղթայակիր պատրիարք Լատիններու հետ Կոլոտի և Վինէօվի օրով եղած յարաբերութիւնները յիշելով, և հին հաներաչխութիւնը պնդել ուզելով՝ յաւուկ գիրեր գրեց Գաղղիոյ Թագաւորին և վարչապետին, որ էր տակաւին նոյն Ժիւլէօրի կարդինալը (§ 1996), Հռոմի կարդինալաց ժողովին, և Կ-Պոլսոյ Գաղղիական դեսպանին, որոնցմէ այս վերջինին միայն պատճէնը կը գտնուի 1742 հոկտեմբեր 26 թուականով (ԱՍՏ. Բ. 69–72)։ Կ'երեւի թէ օգտակար եղան այդ գիրերը, վասնզի չնորոգուեցան Լատիններու ոտնձգութիւնները, և Շղթայակիրը իւր վերջին տարիները օգտակար ըրաւ՝ Ս. Յակոբեանց մայրավանքին և տաճարին չինութիւնները ընդարձակելով և բարեզարդելով, և երեք ազգերու համաձայն գործակցութեամբ զբաղելով Բեթղեհէմի չուրջը եղող Արաբացիներու վայրագ և հարստահարիչ բռնութիւնները (ԱՍՏ. Բ. 76)։ Զանց կ'ընենք այդ գործերուն մանրամասնութիւնները, որ երուսաղէմի յաւուրց պատմութեան կը պատկանին։ Շղթայակիրը, որ իւր երկու Ամբոխցի աշակերտակիցներէն երիցագոյն եղած կ'երեւի, աւելի երկարակեացն եղաւ, զի Աբրահամ Հոչաբեցի կաթողիկոսը և Յովհաննէս Բաղիշեցի պատրիարքը իրմէ չատ յառաջ կնքեցին իրենց կեանքը։ Թէպէտեւ խոր ծերութեան հասած, բայց գործունէութենէն դադարած չէր Շղթայակիրը, ինչափ ալ զօրաւոր օգնականներ էին Թէոդորոս փոխանորդ, Գաբրիէլ աթոռակալ, Պօղոս Թաթգման և Յովհաննէս գործակատար վարդապետները, որոնք արժանապէս փոխանակած էին Հաննայի կորուստը։

ԱՋԱՊԱՀԵԱՆ ՏՈՒՆ

2006. *Կիլիկիոյ աթոռին վրայ Թողուցինք Յովհաննէս Հաճընցին, Տէր-Ադամ կամ Տէր-Ադամեան* (ԴԻՒ. Դ. 720) *մականուանեալը, որ* 1727'ին *աթոռ բարձրացած էր Գրիգոր Կեսարացի, Ուղուրլու մականուանեալին յաջորդ* (§ 1960)։ *Յովհաննէս մինչեւ* 1734 *ապրած կը գրուի* (ԴԻՒ. Դ. 721), *սակայն* 1731'էն *իրր կաթողիկոս կը յիշատակուի Ղուկաս Աջապահեան* (09 ՕՐԱ. 284), *որ Աջապահեան և Աջապանեան ալ կը գրուի* (ՍԻՍ. 219), *ոչ իբրեւ հակաթոռ մը, այլ իբրեւ օրինաւոր կաթողիկոս Սսոյ մէջ, երբ Յովհաննէս կամովին քաշուած ու առանձնացած էր իւր հայրենիքը, Հաճընի Ս. Յակոբ վանքը։ Այդ կէտը չուտով կրնանք մեկնել աթոռակցութեան ձեւով, որ նորութիւն չէր մեր կաթողիկոսական աթոռներուն համար, և որ եւ է պատահական պատճառով մը կրնար գործադրուիլ։ Զենք կրնար ստուգել թէ ինչ մտածմունքով կամ թէ ինչ ստիպումով Յովհաննէս իրեն աթոռակից մը օծեց։ Բայց յիշատակարան մը կը պատմէ, թէ Կիլիկիոյ վերջին կաթողիկոսներ երբեմն փոփոխել չքնէին պեղծոց է պեղ, և ոչ կրնէին երկար ծալ աթոռին մէջ է ոչ փոխպանդն ըղ կրնէին յապոստմ բռնակալեցն, որով պահպանուիլն ի ոչ էր ամենեւին ի հնոյ ժամանակաց կը մնար* (ԴԻՒ. Դ. 720), *և աւելի հաւանական քահանայական սերունդի մը* (ՍԻՍ. 219), *որոց վերջինն էր Յուսիկ քահանայ Սսեցի, որ կոչեցաւ Աջապահ պէտ Յուսիկ, և վախճանեցաւ* 1748 *յունուարին* (ԴԻՒ. Դ. 720)։ *Այս տէր Յուսիկի որդին էր Ղուկաս, և Յովհաննէս անկէ յորդորուելով և ծերացած ալ ըլլալով, դիւրաւ համոզուած է Ղուկասը առջեւ քաշել, ինքը հանգիստ վայելել, և հոգերը ուրիշի յանձնել։ Այս բանը ըրած է մանաւանդ՝ երբ կացութիւնը դըժուարին էր, և գործերը խառնակ։ Ղուկասի անձն ալ հետաքրքրական դարձած է իւր ազգատոհմին պատճառով, զի Աջապահեանց տուն մը իրականութիւն է Սսոյ մէջ, և հռչակաւոր եղած է Սսոյ աթոռը դար մը և աւելի իւր սերունդին մէջ պահած ըլլալուն համար, այլ ծագումը առեղծուածական եղած է։ Եփրեմ կաթողիկոս Աջապահեանց տոհմէն՝ կ'ուզէ իրր նախահայր ցուցնել Հեթում Բ'ի եղբայր և Լեւոն Բ'ի որդի Յովհաննէս եպիսկոպոս մը* (ԱՋԱ. 54), *և անկէ սկսելով կը կազմէ Աջապահեան սերունդ մը, տէր Եղիազար, Յովհաննէս եպիսկոպոս, տէր Եղիազար, մահտեսի Մինաս, տէր Սահակ, տէր Եղիազար, տէր Յուսիկ,*

տէր Մարկոս, և վերջապէս տասներորդ Ակացիոս, ինքն Եփրեմ կաթողիկոս (ԱԶԱ. 64–77)։ Բայց արքայազարմ Յովհաննէս եպիսկոպոս մը, միայն Հէթում Ա՛ի ղեռայրը կայ, նա ալ կուսակրօն մնացած է (ՍԻՍ, 219), որով հիմէն կը խախտուի Ակացիոսեան Եփրեմի կարծիքը, և չկրնար ալ ընդունուիլ ենթադրեալ Յովհաննէսին թոռան թոռը կոչուած Մինասին գոյութիւնը (ՍԻՍ. 211)։ Ուրիշ դրութեամբ Ակացիոսեաններու սկզբնաւորութիւնը կը հասնի Մուսաբէգեանցի ժամանակին, երբ Լուսաւորչի աջին անյայտանալէն ետքը, առձեռն մնացած երկաթ աջերը, Վեղբեօրոյն, Վնիկողոսն և Պօտամոյն, և վանկայ Ս. Նշանը, կաթողիկոսին ձեռքէն կ'առնէին (ՍԻՍ. 539), և կը յանձնէին Հէթում Խազնոց անձի մը պահպանութեան, մականուանեալ Սպիտակ, որ յետոյ քահանայացած, և Սպիտակ Երէց անունով ճանչցուած է (ՍԻՍ. 540)։ Նոյնին կը յանձնուի կարապետ Եւդոկիացիին մէջտեղ հանած Լուսաւորչի աջն ալ (§ 1478)։ Շահնուարի արչաւանքին առթիւ Ակացիոսը այդ աջերը կոպիտաս կը փախցնէ 1468'ին, և միւս տարին Սիս կը դարձնէ (ՍԻՍ. 540), բայց տարիէ մը կը վախճանի 1470'ի ժանտամահէն (§ 1489)։ Դար մը և աւելի ետքը 1598'ին Սաուրճիի արչաւանքին առթիւ (ՍԻՍ. 228), կը յիշուին Ղազար քահանայ լաւագոյն ոսկեքանդ Ակէթցի և բարեպաշտ Մինաս մը, որ աջերը Աւանայ կը փախցնեն, ուսկից ետ կը բերուին 1601'ին Յովհաննէս Ակնթապցի կաթողիկոսին ձեռքով (ՍԻՍ. 540)։ Շատ հաւանական կ'երեւի որ այս վերջիններ վերոյիշեալ Սպիտակ Երէցին սերունդէն ըլլան, և Ակացիոսեան տոհմին չարունակութիւնը նկատուին, որուն յաջորդութիւնը գծուած չէ։ Միայն թէ Ղուկաս կաթողիկոս, որուն վրայ կը խօսինք, որդի է Յուսիկ քահանայի (ՍԻՍ. 216), զոր յիշեցինք արդէն, և կը կարծուի թոռն եղիազարի, որ թոռան թոռ կը սեպուի դարձեալ եղիազար քահանայի մը, ուսկից վեցերորդ ծնունդ կ'ըլլայ Ղուկաս (ՍԻՍ. 219), որ է չուրջ 120—130 տարուայ միջոց մը, այնպէս որ անհիմն չէր ըլլար Ակացիոսեան ծանօթ նախահայր՝ եղիազար քահանան նոյնացնել վերը յիշուած Ակէթցի Ղազար քահանայիին հետ, և այսպէս Ակացիոսեան տոհմին նախահայր ճանչնալ Սպիտակ Երէց կոչուած Խազնոց Հէթումի։ Եփրեմի ազգաբանութեան մէջ ալ կը յիշուին եղիազար և Յուսիկ քահանաներ, որով այդ անուններուն չուրջը աւանդական յիշատակ մը եղած ըլլալը կը հետեւի, միայն ինդիրը անորոշ կը մնայ Ակացիոսեան տան նախահօր ինքնութեան վրայ։ Այսչափ ինչ միջանկեալ կերպով Ակացիոսեանց ծագումին վրայ։

ՂՈՒԿԱՍ ԱԶԱՊԱՇԵԱՆ

2007. Ազգատոհմին հնութիւնը, անոր պաշտօնին նուիրականութիւնը, և մէջէն քահանաներ և եպիսկոպոսներ եղած ըլլալը, զօրաւոր ազդեցութիւն կու տային Ակացիոսեաններուն, այնպէս որ զարմանալի պէտք է երեւի, որ 1441'էն 1731, երեք դար ժամանակի մէջ, որոչ դէր մը խաղացած ըլլալնին պատմուած չէ, երբ կիլիկիոյ աթոռն ալ չարունակ չփոթութեանց և անկարգութեանց մատնուած էր։ Բայց վերջապէս առիթը կը ներկայանայ, թէպէտ չենք գիտեր թէ ինչ և ինչպէս, և Յուսիկ Ակացիոսեանի որդին Ղուկաս եպիսկոպոս՝ Յովհաննէս կաթողիկոսէ յառաջ կը կոչուի, կամ թէ Ղուկաս ինքն կաթողիկոսը կը պարտաւորցնէ, և աթոռակից կաթողիկոս կ'օծուի։ Կ-Պոլսէն-ը կը պատմուէ ըսինք, զի Յուսիկի ուխը զաւակներէն երեքը եկեղեցականութեան մէջ յառաջացած էին, և միւսներն ալ դիրքի տէր էին, և ազգատոհմը քաղաքին և վիճակին մէջ՝ թիւով և գործով ազդեցութիւն կը վայելէր։ Ղուկաս 1731'է 1734 իբր աթոռակից կը նկատուէր, թէպէտ Յովհաննէս Տէր-Ադամի գործէ քաչուած ըլլալովը, իբր բուն աթոռակալ կը գործէր, և անոր համար անխտիր թէ 1731 (09 ՕՐԱ. 274), և թէ 1734 տարին (ՍԻՍ. 219), իբրեւ Ղուկասի գահակալութեան թուականը կը նչանակուին։ Իւր գործունէութիւնէն պատմելիք չունինք, տեղեկութեանց պակասութեան պատճառով։ Ակացիոսեանք անգամ մը որ կաթողիկոսութիւնը ձեռք անցուցին, զայն այլեւս իրենց տոհմէն դուրս չհանելու համար մտածելին կանուխէն յաջորդին օծել։ Այսպէս Ղուկաս իւր եղբայր Միքայէլը աթոռակից օծեց իւր կենդանութեան,

որուն թուականը որոշ յիշուած չէ, այլ 1737'ին սկիզբները կամ քիչ առաջ կը կարծուի, զի նոյն տարին հոկտեմբեր 18'ին Միքայէլը իբր կաթողիկոս Կ-Պոլիս հասած կը գտնենք, և Իւսկիւտարի Երուսաղեմատան մէջ իջեւանած Շղթայակիրի մօտ (ԱՍՏ. Բ.53)։ Մեր տեսութեամբ պարզապէս կիլիկիոյ աթոռին գործերուն համար եկած կ'ըլլայ Միքայէլ, զի չենք կարծեր թէ էջմիածնական վիճակներէ մաս մը իւրացնելու միտքեր ունեցած ըլլան Ասեղիները, քանի որ ասիկայ իրենց հնար պիտի չըլլար կոլոտի պատրիարքութեան օրով։ Ղուկասի մահը հանդիպած է միւնոյն 1737 տարին, այլ տապանագիրին պատճէնին մէջ ամսոյն անունը անընթեռնելի մնացած է, միայն օր ՀՔՒՆ ԵՐԵՔ (ՍԻՍ. 216) կրնայ մեզ մեկնութեան մը առաջնորդել։ Հարկաւ մահը տարւոյն առաջին ամիսները չէր, թէ ոչ Միքայէլ չէր կրնար մնկնիլ, իսկ վերջին ամիսներուն մէջ ամսոյն ԵՐԵՔ, չաբաթ կը հանդիպի սեպտեմբերին և դեկտեմբերին, և սեպտեմբերն ալ դուրս կը թողունք, խոհելով որ հոկտեմբեր 18'ին Կ-Պոլսոյ մէջ լսուած պէտք էր ըլլար, և ամենայն հաւանականութեամբ 1737 դեկտեմբեր 3'ին չաբաթ օր կը դնենք Ղուկասի մահը, երբ եղբայրն ու կաթողիկոսակից յաջորդը Կ-Պոլիս կը գտնուէր։ Անշուշտ Միքայէլ փութացած է մեկնիլ և 1738'ին սկիզբները իբր աթոռը դառնալ, կաթողիկոսութեան տէր կանգնելու համար։

2008. Պատմութեանս կարգին յիշեցինք, թէ ինչպէս Երուսաղէմի խնդիրին առթիւ՝ Հայոց պատրիարքարանին և Դաղղիոյ դեսպանատան մէջ ստեղծուած մօտաւորութիւնը, երկկողմանի դիմողութեամբ միդմացուցած էր կաթոլիկական վէճերը, որով ևթէ մէկ կողմէն մեծ խնդիրը յաջողապէս վերջացաւ (§ 1996), միւս կողմէն ալ կաթոլիկներու դէմ հրամաններ և խստութիւններ չկրկնուեցան, և կուսակալներ ալ ազատութիւն ունեցան հաշտարար և խաղաղարար ձեւերու հետեւիլ։ Ձիշդ այդ պարագաներէն օգտուելով Բերիոյ մէջ կաթոլիկներ կուսակալի հրամանով եկեղեցի մը ձեռք ձգեցին (ԴԻԹ. 83) 1738 դեկտեմբեր 30'ին (ՄԽՒ. 463), և ազատաբար պաշտօն վարելու արտօնութեան, և մինչեւ իսկ Աբրահամ Արծիւեան եպիսկոպոսը, որ մինչեւ այն ատեն Անտոնեանց մօտ Բրէյմի Ս. Փրկիչ վանքը կ'ապրէր, Բերիա հրաւիրելու համարձակեցան։ Այդ չարժուններուն ատեն Բերիոյ կաթոլիկներուն գլուխը կը գտնուէր Տայր Յակոբ Յովսէփեան, Մուրատեան Եղբայրներէն մին, որ Անկիւրիայէ դառնալէն ետքը (§ 1988) Բերիա եկած էր իւր անբաժան ընկերին Տայր Իսահակ Բարսեղեանի հետ։ Անդին Լիւրանահի վանքին մէջ՝ հիմնադիր և արբահայր Աբրահամ Մուրատեան, իւր վաստակաբեկ կեանքը կը կնքէր 1738 յուլիս 15'ին 75 տարեկան (ԱՆՏ.)։ Թէպէտ յաջորդութիւնը ամենայն պատչաճողութեամբ իւր եղբօր՝ Տայր Յակոբի կ'իյնար, սակայն նա չատոնց վանական կեանքէ հեռու մնացած, ժողովուրդին մէջ կը դիզերէր, և յարմար չսեպեցին պայն վանք դարձնելով կաթոլիկական գործունէութիւնը սկսարացընել։ Վանքին մէջ յառաջադէմ դիրք ստացած էին Արծիւեանի երկու քեռորդիներ՝ Տայր Պետրոս և Տայր Գրիգոր Ներսէսեաններ, որոնք նիփօթ ալ կոչուած են, իբրեւ Արծիւեանի քեռորդիներ։ Աւագն երիցագոյնը Տայր Պետրոս՝ միաբանական ընտրութեամբ արբահայր Աբրահամի յաջորդ նչանակուեցաւ, անոր մահուանէ տարի մը ետքը, և Արծիւեան իբր թեմակալ առաջնորդ ընտրութիւնը Տաստատուց 1739 նոյեմբեր 1 պաշտօնագրով (ԴԻԹ. 85)։ Անցողակի յիշենք, թէ այդ միջոցին Անտոնեանք որոշեցին ժամանակաւոր աբբահայրներ ունենալ, իրենց որդեգրած Մարոնի Անտոնեաններու կանոնին համաձայն։ Աբբահամ հիմնադիրին յաջորդը Պետրոս՝ եռամեայ պայմանաժամով ընտրուեցաւ։ Արծիւեանի դառնալով, նա խնդութեամբ ստացաւ Բերիացւոց հրաւէրը և ցուցուած վստահութիւնը, և փութաց Բերիա հասնիլ 1739 դեկտեմբեր 4'ին (ԴԻԹ. 85), բայց միչտ գաղանի՝ և երկար ամիս թաքչած ապրելով, մինչեւ որ ամէն կողմէն ապահով ըլլար նորէն արկածի մը չի հանդիպելու համար (ԴԻԹ. 86)։

ԱՆՏՈՆԵԱՆՔ ԵՒ ԲԵՐԻԱ

2009. Արծիւեանի պաշտօնապէս կաթոլիկութեան յարիլը մինչեւ 1720 թուական

կրնանք բարձրացնել, համաձայն նախատատական երդի մը թուականին, որ գրուած է Սիմէոն վարդապետէ մը՝

ԱՐՄԻԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԱՑ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Հոգեպէս ցաւելով ձեզմէնէ կորսնցուցած ոչխարներուն, ինչ որ կը ցուցընէ, թէ անհիմն են Հաճընցին կաթոլիկ կարծեցնելու համար հռոմէականաց ջանքերը (Դիթ. 33)։ Աբրահամ կանուխէն սկսած էր գործնական գաղափարներ մշակել, Հայ կաթոլիկութեան ինքնուրոյն դիրք մը ստեղծելու, և սեփական կացութիւն հաստատելու համար։ Այդ մասին նախնական ներշնչումները ստացած էր իր իսկ վարդապետէն, Թաւպասեան Մելքոն եպիսկոպոսէն, որ առաջին անգամ այդ միտքը յղացած էր, վասն զի ըստ ասողաց (ՁԱՄ. Գ. 758)։ Հետեւաբար թէպէտ այդ միտքին համար իրական ձեռնարկը Բերիա գալէն քիչ ետքը փորձից, սակայն միտքը պէտք է կանուխէն պատրաստուած ըսել։ Կ-Պոլիս անցնիլ, և այնտեղ պատրիարքութիւն մը կազմել հնար չէր, մանաւանդ Կոլոտի մը պատրիարքութեան և Նալեանի մը փոխանորդութեան օրով։ Ինքն կիլիկիոյ կաթողիկոսական սահմանին մէջ կ'ապրէր, և մտածեց կիլիկիոյ կաթողիկոսութիւն մը կազմակերպել իր կամքով։ Բերիացիք արդէն վարժ էին հակաթոռներ տեսնել իրենց մէջ. Դաւիթի և Ազարիայի ձեռնարկը նորոգած էր Պետրոս, և անոր հետեւանքէ կամ մեռնելէ ետքը Բերիական հակաթոռութիւնը ընդհատուած էր, և Աբրահամ մտածեց այդ պարագային օգուտ քաղել, պատմական եղելութեանց մասին այլայլութիւններ խառնելով և կանոններու հակառակ կերպեր ալ գործածելով։ Առաջին յարմարցուցածը կիլիկիոյ աթոռին ենթադրեալ պարապութիւնն է, իբր թէ Ղուկաս Աջապահեան 1740 նոյեմբեր 26'էն հինգ ամսէ յառաջ վախճանելէ, և աթոռն ըստ ծագելու ըլլար վան ընթանալէն առաջ (ԱՂԲ. Ա. 15), ինչ որ իւր ձեռնարկին ձեւ մը տալու պիտի ծառայէր (Դիթ. 102)։ Մենք արդէն տպագրութիւրեր քաղելով ցուցուցինք Ղուկասի մահը 1737 դեկտեմբեր 3'ին, և անկէ առաջ իր յաջորդին Միքայէլի օծումը, և ասոր ալ 1740 նոյեմբերէ չատ կանուխ Կ-Պոլիսէ իւր աթոռը եկած ըլլալը (§ 2008)։ Եթէ վան ընթանալէն առաջ աթոռը թափուր մնացած էր, Աբրահամի հնար պիտի չըլլար իրեն կաթողիկոսութիւնը պատրաստել, քանի որ իրեն կամակից և գործակից ոչ մի առաջնորդ և ոչ մի եպիսկոպոս չունէր և չունեցաւ, ոչ Բերիոյ թեմերէն և ոչ կիլիկիոյ վիճակներէն։ Ինքն միայն էր Հայ կաթողիկոսէ ձեռնադրուած եպիսկոպոս մը, այն ալ հակաթոռ կաթողիկոսէ մը։ Անօրինակ յանդգնութեամբ և Հայ եկեղեցւոյ մէջ չլսուած ժպրհութեամբ, առանց ժողովի և առանց օրինական ընտրութեան, և լոկ քանի մը աթեղաներու և քահանաներու համաձայնութեամբ կաթողիկոսութիւն կը հրաւիրակէ, և երկու օտարածէս ընթերականերով և լատին եկեղեցւոյ մէջ 1740 մայիս 3'ին, չաբաթ օր, եպիսկոպոս կը ձեռնադրէ հայր Յակոբ Յովսէփեանը, իբր իրեն յաջորդ Բերիոյ վրայ։ Անկէ ետքը իւր ձեռնադրածին և օտարածէսի մը ընկերակցութեամբ յունիս 11'ին, չորեքշաբթի օր, կը ձեռնադրէ հայր Իսահակ Բարսեղեանը, իբր Զիլիսի եպիսկոպոս, և վերջէն նոյեմբեր 23'ին, կիրակի օր, իւր երկու ձեռնադրածներով, կը ձեռնադրէ Մելքոն Թումանեան վարդապետը, իբր Մամպոյ եպիսկոպոս։ Այսպէս կաթողիկոսանալու պէտք տեսած եպիսկոպոսները ինքն իրեն պատրաստելով, 1740 նոյեմբեր 26'ին, չորեքշաբթի օր, երեք եպիսկոպոսներով իւր օծման և կաթողիկոսացման ծիսակատարութիւնները կը լրացնէ (ԱՂԲ. Ա. 15, Դիթ. 87), ինչպէս կը յայտնուի Յետնոփրեցի վրդ. Կոլոտէն գրելէն (Մխի. 463)։ Ատոնք են պատմական պարագաները, և բաւական են գործին ապօրինութիւնը հաստատել։

2010. *Ուզեցինք մանրամասնաբար վերոյ եղելութիւնները պատմել, որպէսզի տեսնուի, թէ ինչ կերպով պատրաստուած է հռոմէականներու կարծեօք կազմուած Լուսաւորչին հարատեւ յաջորդութիւնը, և Հայաստանեայց եկեղեցւոյ օրինաւոր հայրապետութիւնը, և Ամենայն Հայոց ճշմարիտ կաթողիկոսութիւնը։ Հայաստանեայց հայրապետութեան հա-*

ԱՐՄԻԵԱՆ Ի ՀՌՈՄ

բազատ յաջորդութեան՝ այլեւս կիլիկիոյ աթոռին մէջ չըլլալը ապզովին ընդունուած ճշմարտութիւն էր և է։ Եթէ այնպէս ըլլար ալ, Աբրահամ կիլիկիոյ կաթողիկոս ալ չէ, այլ հակաթոռ կաթողիկոսէ մը ձեռնադրութիւն ստացած, ընտրողական պայմաններուն բոլորը ոտքի տակ առած, առանց կաթողիկոսութեան կաթողիկոսական գործեր կատարելու անկանոնութեան ներքեւ ինկած, և մանկական խաղ խաղալու պէս՝ ինքն իրեն երէք եպիսկոպոս չինած, և իր չինած եպիսկոպոսներէն կաթողիկոսութեան օծում և աստիճան ստացած, և պարզ անձնախաբութեամբ գոհունակութիւն զգացած մէկն է։ Խաղը ամբողջացնելու համար ալ՝ ինքն կիլիկիոյ աթոռին պարապութիւնը կեղծած է, իսկ հռոմէականներէն չատեր իրենց խիղճը հանդարտելու համար՝ պապէն ստացուած հաստատութեան փաստին կը դիմեն։ Այդ մասին իրենց ուրիշ բան չենք կրնար ըսել, բայց եթէ պապն ալ, իբր հայրապետ մը, կրնայ իր չրջանակին մէջ աթոռներ հաստատել կամ ջնջել, և իրեն պատակութեան ներքեւ հայածէն աթոռ մըն ալ ստեղծել որեւէ անունով կամ աստիճանով։ Միայն թէ այն ինքնաստեղծ աթոռը՝ ոչ հայկական աթոռի մը յաջորդութիւն է, ինչպէս կը կարծեն (Դիթ. 89), և ոչ ալ հայկական օրինաւորութեամբ կազմուած աթոռ մըն է, ինչպէս կը պատմեն (Դիթ. 90), այլ Հռոմի պապին ազատ կամքէն բղխած հռոմէական ստեղծագործութիւն մըն է։ Ապրահամ ինքն ալ յառաջ բերուած ճշմարտութեանց գիտակ եղած պիտի ըլլայ, որ կարծուած կաթողիկոսութենէն անմիջապէս վերջ 1740 դեկտեմբերին Բերբիայէ կը մեկնի Հռոմ երթալու միտքով (ԱՂՔ. Ա. 16), բայց դիւրութիւններ չգտնելո մտադրութիւնը անմիջապէս գործադրելու։ Միւս կողմէն իր ձեռնարկին լուրն ալ տարածուելուն վրայ՝ դժպհի հետեւութենէ և նոթանոր արկածէ վախնալով, կը փութայ նոթէն Անտոնեանց Ջրէյմի վանքին առանձնատանը ապաւինիլ՝ Մարոնիներու պաշտպանութեան ներքեւ։ Անտեղ կը մնայ Աբրահամ մինչեւ 1741 սեպտեմբեր 30, ուղեւորութեան կերպերը ու պէտքերը մտածելով։ Ծիչեալ օր կ'իջնէ Միւրիական Տրիպոլիս, ուր հիւրընկալութիւն գտած էր Ավբատ կղզիէ ապատուէրն ետքը (§ 1940)։ Նոյեմբեր 3'ին նաւ կը մտնէ, և 30'ին կիպրոս կը հասնի, ուր կը մնայ մինչեւ 1742 յունուար 7, և նորէն նաւագնացութեամբ ու ալեկոծ ծովով, և Մարտինիա կղզին հանդիպելով Մարսիլիա կը հասնի մարտ 10'ին։ Քառասնօրեայ մաքրարանը սպասելով ապրիլ 19'ին դուրս կ'ելլէ, և երկուքուկէս ամիսի չափ եւս այնտեղ անցընելով յուլիս 2'ին կը մեկնի նաւով, և Լիվոռնօ հանդիպելով, ու Անքոնա անցնելով (Դիթ. 94–96), Հռոմ կը մտնէ 1742 օգոստոս 11'ին (Դիթ. 97), կամ լաւ եւս 13'ին (ԱՂՔ. Ա. 16)։

ԱՆՏՈՆԵԱՆՔ ԵՒ ՄԽԻԹԱՐԵԱՆՔ

2011. Հռոմի մէջ կատարուած ձեւակերպութիւններուն չանցած, յառաջ բերինք Անտոնեանց և Մխիթարեանց միջեւ տեղի ունեցած յարաբերութիւնները։ Երկու միաբանութիւններ իրարու անծանօթ չէին, թէպէտ ծովով ու ցամաքով բաժնուած։ Մխիթար Բերբիա եղած էր (§ 1839), այնտեղ կաթոլիկութեան և կաթոլիկ վանականութեան հետ չփուած էր, Մուրատեան եղբայրներու հետ ծանօթութիւնն և յարաբերութիւն ալ անշուշտ ունեցած էր, և միաբանութիւն մը կազմելու նպատակին հետ Լիբանան քաշուելու խորհուրդն իսկ ունեցած էր կանուխէն (Մխի. 156), և պարզապէս հանդիպմամբ Արեւմուտք ինկած էր (§ 1860)։ Վերջին աստիճաններ երկու Անտոնեաններ ալ Յակոբ և Իսահակ հայրեր՝ երկու տարիէ աւելի վճռետիկ մնացած էին (§ 1988), և այս ամէնը Անտոնեանց և Մխիթարեանց մէջ փոխադարձ յարաբերութիւններու աւիշներ կը կազմէին։ Յակոբ և Իսահակ վարդապետներու Անկիւրիայէ Լիբանան գալերնուն առթիւ բերած գրաւիչ տեղեկութիւնները, Աբեւմուտքի հրապուրիչ անունը, և ամէն Հայ եղողի սիրտին մէջ բորբոքող զարգացման զգացումը, Անտոնեանց մէջ ալ փափաք ծնուցած էին, որ իրենք ալ այդ ուղղութեան դիմեն։ Ամէնէն գործնական ձեւը գտնուեցաւ երկու միաբանութիւնները ձուլել, նոյն իսկ Մխիթարի ձեռքին տակ, իբրեւ արեւմտեան գործերու փորձառու մեծաւոր մը։ Այդ միտքը իրականացնելու հա-

մար մտածեցին, փոխանակ Մարոնի Անտոնեաններու կանոնին՝ Մխիթարի կազմած կանոնագիրը ընդունիլ, վենետիկէ մէկ երկու միաբաններ Լիբանան բերել՝ նոյն կանոնին գործադրութեան հսկելու համար, և Քրէյմի վանքն ալ Մխիթարի բարձր իշխանութեան ենթարկել։ Այդ նպատակով երեք նամակներ կը գտնուին Մխիթարի ղրկուած։ Առաջինը կը գրէ 1741 յուլիս 18'ին, ուր առաջ իւր կրածները կը պատմէ ընդարձակօրէն, Անտոնեանց հաստատութիւնը իւր գործը կը ցուցնէ, և վրայ կը բերէ վերոյիշեալ առաջարկները (Մխի· 462)։ Յակոբ Յովսէփեան, Բերիոյ եպիսկոպոս եղած (§ 2010), կը գրէ յուլիս 22'ին իբր Մխիթարի անձնապէս ծանօթ մը (§ 1988), և իբր հիմնադիրներուն վերջին մնացորդը, զի Մինաս ալ վախճանած էր այն օրերը· հաւանութիւն կը յայտնէ միւնոյն առաջարկներուն, և անոնց ընդունելութիւնը կը յանձնարարէ (Մխի· 465)։ Աբբահայր Պետրոս Ներսէսեան, նորընտիր մեծաւորն ալ (§ 2009), կը գրէ սեպտեմբեր 3'ին, և միւնոյն կէտերը առջև կը դնէ, և թէպէտ Արծիւեանի ալ գրած ըլլալը կը յիշէ, բայց գործին իրը տէր կը ցուցնէ ինքզինքը, ըսելով դնել հաճեցնել և էջեցնել ըսելով (Մխի· 466)։ Արծիւեանի նամակէն կը քաղուի թէ վանքին մէջ 16 կարգաւորք կան, թէ 3 կարգաւորներ եպիսկոպոս եղած և հեռացած են, եպիսկոպոս մը ու քահանայ մը ու ղեբայր մը վախճանած են, և միայն երկու եպիսկոպոս կը մնան դուրսը (Մխի· 463), որ են Յակոբ Յովսէփեանը և Իսահակ Բարսեղեանը (§ 2010), իսկ երրորդ մնացող եպիսկոպոսի անունը անծանօթ կը մնայ։ Ներսէսեանի նամակին մէջ կը յիշուին 11 հայր քահանայ, 3 ղեբայր կրօնաւոր և 4 նորընծայ (Մխի· 466), ոչ նոր ընծայեալի, այլ ընծայացուի իմաստով։

ՄԽԻԹԱՐԻ ՄԵՐԺՈՒՄԸ

2012· Այդ նամակները յայտնի չէ թէ ով տարաւ Եւրոպա, զի Մխիթար 1742 փետրուար 9'ին միայն կը պատասխանէ Յովսէփեանի, և միանգամայն Արծիւեանի ալ գրած ըլլալը կը յիշէ, բայց այս գիրը տեսնուած չէ։ Մխիթար Անտոնեանց առաջարկը կը մերժէ պատճառելով, թէ իրենց կանոնը կը պահանջէ պոլսեցւոց հասկնալ մէջ եղող աչառ կէտեր առնել, կրթել և փորձել, և յետոյ միաբան ընդունիլ, և ոչ ըստ ըստ ինչ ժամանակաց։ Կ'աւելցնէ թէ իրենց միաբանները պէտք է նոթարեալ էջմիածնեան ունենան, և ուսանելով հասնին առ նոթարեալ էջմիածնեան, իսկ ինչ վնէյն Լիբանանու տարիքնին առած են, և ոչ ըստ ըստ ինչ է հասու առնել ընոս նոթարեալ էջմիածնեան (Մխի· 470)։ Մխիթարեանց ժառանգական մեծամտութեան արմատը կը տեսնուի Մխիթարի այս պատասխանին մէջ, ինքզինքնին նոթարեալ էջմիածնեան տիրապետած և ուրիշները ուսումէ զուրկ մնացած կարծելով։ Անտոնեանց առաջարկը ձուլումն էր երկու միաբանութեանց, և ոչ նորէն աշակերտութեան մտնել, և Մխիթար ինքն ալ, ոչ պզտիկ պատանիներով, այլ հասունցած անձերով, նոյն իսկ ձեռնադրուած վարդապետներով կազմած էր իւր նախնական խումբը։ Հետեւապէս արուեստակեալ ձեռնէր Մխիթարի պատասխանը, և խնդիրին հիմը այլայլելով, մերժումը կերպաւորել կ'ուզէր։ Արծիւեանի ուղղուած նամակն ալ անոր ձեռքը հասած է Հռոմ եղած ատենը (Մխի· 468), իսկ Ներսէսեանի նամակին պատասխանը մէջտեղ չէ եւեւցած, ուրիշ տեղ մըն ալ յիշուած չէ· և կը սիրենք ենթադրել թէ Անտոնեանց աբբահօր նամակը անպատասխանի թողլու չափ առջեւ գացած չէ Մխիթար։

ԱՐԾԻՒԵԱՆԻ ՀԱԱՍՏԱՏՈՒԻԼԸ

2013· Արծիւեան 1742 օգոստոս 13'ին Հռոմ հասնելուն (ԴԻԹ· 170), մեծ հոգածութեամբ և պատուասիրութեամբ ընդունուեցաւ պապէն, որ էր Բենեդիկտոս ԺԴ Լամպէրթինի (Lambertini), գիտնական և գործունեայ ճանչցուած անձ մը։ Արդեօք Արծիւեան կըրցա՞ւ իրօք Բենեդիկտոսը խաբել իւր ընտրութեան և աստիճանին օրինաւորութեան համար, կամ թէ Բենեդիկտոս կրցա՞ւ ներքնապէս համոզուիլ իրեն ներկայացուած պատգամներուն վրայ, չենք ուզեր խնդիրը նիւթ ընել· միայն յայտնի է թէ պապը ուզեց առիթէն օգուտ քաղել և պապութեան նոր յաղթանակ մը կազմել, Հայոց եկեղեց-

ւոյն կաթողիկոսին իրեն ոտքը գալէն և իր ոտքը համբուրելէն (ԴԻԹ. 175)։ Նաթուիլ ուզելուն կամ իրաց իսկութիւնը մէջտեղ չհանելուն ամէնէն մեծ նշանն է, որ Հռոմի սովորական եղող երկար քննութիւնները զանց եղան, և արագօրէն ընդունելութեան ձեւակերպութիւնները հրամայուեցան։ Դիժ- քախտաքար Աբրահամ հիւանդացաւ, հիւանդութիւնը ծանրացաւ և երկարեցաւ, և հարկաւ գեղեցիկ առիթին կորուստէն վախնալով՝ պապը ամէն խնամք հրամայեց, անձամբ ալ Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցւոյն կից Հայոց հիւրանոցը այցելեց։ Հազիւ թէ Աբրահամ հիւանդութենէն կազդուրուեցաւ, իւր պաշտօնական խնդրագիրը մատոյց (ԴԻԹ. 100), և Փիլիպպոս Մոնթի (Filippo Monti) Փրոփականտայի քարտուղարը իւր ամփոփումը պատրաստեց, որ սեպտեմբեր 9'ի գումարման մէջ Փրոփականտայի ժողովէն ընդունուեցաւ, 11'ին պապէն հաստատուեցաւ (ԴԻԹ. 171), և անոր վրայ Փրոփականտայի նախագահը իւր տեղեկագիրը կազմեց (ԴԻԹ. 172)։ Կարդինալական մասնաւոր ժողովին գումարման օր որոշուեցաւ նոյեմբեր 26, հին տոմարով 15, երկուշաբթի օր, որուն մէջ նախ Յովհաննէս Քաբբա (Giovanni Cappa), պապական բարձր աստիճանի փաստաբաններէն, պաշտօնական խնդրագիրը կարդաց, և Աբրահամ ծնկաչոք պապին ոտքը համբուրելով՝ իւր բերնով ու արաբերէն լեզուով անոր եղբայրացութիւնը արտայայտեց, զոր Յովսէփ Ասեմանի՝ Մարոնի վարդապետը թարգմանեց (ԴԻԹ. 177)։ Ասոր վրայ Աբրահամ նորէն արաբերէն լեզուով հաւատոյ դաւանութիւնը կարդաց, միշտ Ասեմանիի թարգմանչութեամբ (ԴԻԹ. 150)։ Պապը Աբրահամի պատրիարքական պաշտօնին վրայ տեղնաբանութիւն մը ըրաւ, կարդինալներ հաւանութիւնն յայտնեցին, և պապն ալ որոշեց պալլիումի տուուչութիւնը կատարել մօտ օրէն։ Այդ ձեւերը պապական դիւանի սովորականներն են, և միայն դիտողութեան առնել կրնայ տալ, Աբրահամի կողմէն, փոխանակ հայերէնի, արաբերէն լեզուն գործածուիլը, որ հաւանաբար հետեւանք է Հայերուն մէջ Ասեմանիէ վստահելի թարգմանի չգտնուելուն։ Այդ արարողութեան համար որոշուած էր Աստուածածնայ Յղութեան տօնը, դեկտեմբեր 8'ին, չաբաթ օր, և հանդէսը տեղի պիտի ունենար Ս. Աստուածածնայ Լիբերեան աւագ եկեղեցին (Santa Maria Maggiore), բայց տեղատարափ անձրեւներուն պատճառով, կուիրինալեան պալատին մատրան մէջ կատարուեցաւ, և Բենեդիկտոս անձամբ կատարեց պալլիումի զգեստաւորութիւնը (ԴԻԹ. 184), ուրիշ ընծաներ ալ տալով այս առթիւ (ԴԻԹ. 185)։ Պապական կոնդակն ալ տրուեցաւ 1742 նոյեմբեր 26 թուականով (ԴԻԹ. 190)։ Իսկ Աբրահամ ամէն գործ վերջացնելէ ետքն ալ Հռոմի մէջ մնաց, նպաստներ և չնորհներ ճարելու նպատակով, և Հռոմ գտնուող Հայազգիներու նկատմամբ քննութիւններ կատարելու յատուկ յանձնարարութեամբ (ԴԻԹ. 122)։

2014. Հռոմի մէջ կատարուած գործերը, քանի որ Հայոց եկեղեցւոյն հետ կապ մը չունին, կրնանք ձգել իրենց հաճութեան։ Միայն պիտի դիտել տանք թէ Բենեդիկտոսի յայտարարութիւնները չեն կրնար պատմական ճշմարտութիւններ այլայլել, ոչ ալ կը բաւեն Բերիոյ մէջ առանց օրինաւորութեան կաթողիկոս հռչակուողը, ինքզինքը Կիլիկիոյ դէմ հակաթոռ Պետրոս Պիծակին ժառանգ ճանչցողը։ Կիլիկիոյ կաթողիկոս Միքայէլին աթոռի վրայ գտնուած ատեն աթոռը դատարկ ցուցնողը, և աթոռին Սիսէ Էջմիածին փոխադրութեան պատմական ստուգութիւնը ուրացողը, Լուսաւորչի ուղիղ և օրինաւոր աթոռաժառանգ դարձնել։ Ուրիշ խնդիր մըն ալ՝ որ հռոմէականաց մէջ իսկ կը յուզուի, Աբրահամի իրաւասութեան սահմանն է։ Պապական պաշտօնագիրներուն մէջ Արծիւեան լոկ պարզաբար Կիլիկիոյ բառով կը կոչուի, և կաթողիկոս բառն իսկ չգործածուիր, մինչ Աբրահամ ինքզինքը Ամենայ Հայոց կաթողիկոս ցուցնել կը ճգնէր, իսկ Մխիթար ալ այդ կարծիքին անհիմն լինելը և Կիլիկիոյ սահմանէն դուրս իրաւասութիւն չունենալը իրեն կը զգացնէր (Մխ. 469)։ Գտիկ ծանօթութիւն մըն ալ Պետրոս կոչումին մասին, զոր Աբրահամ առաւ իւր վրան, և անկէ ետքն իրեն յաջորդներն

ալ սովորութիւն ըրին իրենց անունին աւելցնել։ Սովորութիւն է կարծել թէ այդ անունը իբր համակրութեան և պատուոյ նշան Բենեդիկտոս չնորհած ըլլայ Աբրահամին, կամ թէ Աբրահամ պապին հաւանութեամբ առանձնած ըլլայ Հռոմ եղած ատենէն։ Սակայն Աբրահամի ներբողաբանը կը գրէ յայտնապէս, թէ նա Պետրոս անունը առաւ ի յիշատակ Պետրոս Պիծակ պարբերչին (ԴԻԹ. 92)։ Աւելի կու գայ հաստատել անգամ մը եւս, թէ Աբրահամ ամենաւին յարաբերութիւն չկրնար ունենալ Սսոյ կաթողիկոսներուն հետ, և ոչ ալ անոնց յաջորդութեանը յաւակնիլ, այլ պարզապէս հակաթոռի մը յաջորդ հռչակած կ'ըլլայ ինքզինքը։ Թերևս այդ անունի փոփոխութիւնը պէտք եղած է՝ պատրաստ կնիք ունենցած ըլլալու համար, և ձեռքի տակ գտնուող Պետրոս Պիծակի կնիքը գործածելէն, զի Մխիթարի ուղղած նամակին մէջ ալ, պարզապէս Պետրոս Կոնդէլիոս վերտառութեամբ կնիք մը գործածուած է (ՄԽԻ. 464), և ներսէսեան ալ Աբրահամի անունը տալու համար, հօգեւոր տէրն ըլլ Պետրոս Կոնդէլիոն կը գրէ պարզապէս (ՄԽԻ. 466), Աբրահամ անունն ալ զեղչելով։ Այս տեսութիւնները թոյլ անգամ մըն ալ կը հաստատուի թէ Աբրահամու կաթողիկոսութիւնը, ոչ միայն Ամինայի Հայոց կաթողիկոսութիւնն չէ, այլ և ոչ Կիլիկիոյ կաթողիկոսութեան հետ օրինաւոր կապ մը կրնայ ունենալ։

2015. Աբրահամ վերջապէս Հռոմէ մեկնեցաւ 1743 յուլիս 11'ին, և 18'ին Լիվոռնօ հասաւ (ՄԽԻ. 467), և մի-

ԱՐՄԻԵԱՆ Ի ԼԻԲԱՆԱՆ

ջոց մըն ալ այն տեղ մընաց, զի ինչպէս օգոստոս 7'ին Մխիթարին կը գրէ, նաւ չէր գտներ փնովյոբէ, և ինչ ընելիքին վրայ ալ վարանոտ էր, Լիբանան թէ Կոստանդնուպոլիս կամ թէ Գաղղիա երթալ (ՄԽԻ. 467)։ Մխիթար օգոստոս 17'ին կը պատասխանէ, հեռացնելով Կոլիս երթալու գաղափարէն, և աւելի յորդորելով Գաղղիա երթալ, և թագաւորէն նպաստ և պաշտպանութիւն ձարել Կիլիկիոյ համար (ՄԽԻ. 469)։ Բայց Աբրահամ միշտ մտադիր էր Կոլիս անցնիլ, և հոն յատուկ պատրիարքութիւն մը կազմակերպել, Թաստասեանի հին խորհուրդին համաձայն (§ 2010)։ Սակայն Կոլիսէ ալ վստահելի լուրեր չէր առներ, զի իւր ձեռնարկը յուզում յառաջ բերած էր, և իւր հակաթոռ և հակադաւան ձգտումները պատրիարքարանը պաշտպանողական միջոցներու պարտաւորած էին։ Նալեան պատրիարքի միջնորդութեամբ նոր հրովարտակներ ստացուած էին, օտարներու ապաւինելով ազգային իշխանութեանց անսաստողներուն դէմ, և Միքայէլ Աղապահեան կաթողիկոսը երիցս Բերիա ինձած էր պարտուպատչաճը գործադրելու, և խռովութեանց պարագլուխները զսպելու։ Ասանկներու համար պետական հրաման կար Ատանայի բերդը բանտարկելու, և Ծակոր եպիսկոպոսն ալ նախ պահուըտելու և յետոյ Քրէյմ քաշուելու ստիպուած էր (ԱՆՏ.), և կաթոլիկներու ձեռք ձգած եկեղեցին ալ իրենցմէ ետ առնուած էր (ԴԻԹ. 119)։ Աբրահամ նոր դիմում ըրած էր Բենեդիկտոսի որ իրեն տուած յանձնարարականներէն զատ, նոր հրահանգներ տայ Կ-Պոլսոյ եւրոպական դեսպաններուն՝ զինքն պաշտպանել և իրեն պաշտօնական դիրք ստեղծել տալ. սակայն պապը 1743 օգոստոս 10 թուակիր նամակով, խոստումներ միայն կ'ընէր և նախախնամութեան վրայ յոյսը դնելու կը յորդորէր (ԴԻԹ. 135)։ Կարդինալներէ առած նամակներն ալ զգուշաւորութիւն կը յանձնարարէին, միանգամայն հայր Գրիգոր Ներսէսեանի նամակէն կը տեղեկանար թէ կառավարութիւնը ամէն կողմ հրամաններ տրւած է, որ ուր և հանդիպի ձերբակալուի, և Ատանայի բերդը տարուի (ԴԻԹ. 134)։ Այդ տպաւորութեանց ներքեւ օգոստոս 10'ին Լիվոռնոյէ մեկնեցաւ, սեպտեմբեր 15'ին Աղեքսանդրիա հասաւ, և հազիւ ցամաք ելած, ձեռք իյնալէ վախցաւ, և գիշերահասն նաւ դառնալով, Պէյրութ եկաւ, և հոն ալ զգուշաւորութեամբ ցամաք ելլելով չուտով Լիբանանի սահմանը մտաւ, և եկաւ իւր հնօրեայ ապաստանարանը, Ասոմնեանց Քրէյմի վանքը, ուր մտաւ 1743 հոկտեմբեր 6'ին (ԴԻԹ. 139), ուսկից վերջին անգամ մեկնած էր երկու տարի առաջ 1741 սեպտեմբեր 30'ին (§ 2011)։ Այդ ուղեւորութեան մէջ ալ Աբրահամ Ասոմնեանները օժանդակուած էր, իրեն ուղեկից առ-

նելով Իսահակ եպիսկոպոսը և հայր Նիկողայոս Միքոյեանը, որոնցմէ երկրորդը Լիվոռնօ մնաց, իսկ եպիսկոպոսը մէկտեղ դարձաւ, և եգիպտոսէ ալ իրեն ընկերացաւ հայր Յովսէփ Ստեփանեան կամ Այվազեան, ամէնքն ալ Անտոնեան միաբաններ։

ԱՐՇԻԻԵԱՆԻ ՁԳՏՈՒՄՆԵՐ

2016. Որչափ ալ ահուդողով Լիբանան փախած, Աբրահամ հրաժարած չէր Կ-Պոլսոյ մէջ Հայ-կաթոլիկ պատրիարքարան մը հիմնելու գաղափարէն, և Թուրքիոյ ամէն կողմ գտնուող կաթոլիկներու վրայ իշխանութիւն բանեցնելու ձգտումէն, թէպէտեւ պապական կոնդակով ալ լոկ կիլիկիոյ սահմանները նշանակուած էին իրեն իրաւասութեան։ Իւր Լիբանան քաշուելովը իրեն մասին հրամայուած զգուշաւորութիւնները լռեցին, և հազիւ թէ այդ բանը իմացաւ հայր Գրիգոր Ներսէսեանի և հայր Պօղոս Սամանճեանի նամակներէն, Կ-Պոլիս երթալու փափաքը նորոգուեցաւ։ Ըստ այսմ 1744 նոյեմբերին Պէյրութ կ'իջնէ նաւ փընտռել, և առաջին առիթով Աղեքսանդրիա կ'անցնի։ Հարկաւ չատ կանուխէն Կ-Պոլիս ալ լուր տուած պիտի ըլլայ, որ Գաղղիական դեսպանը և Լատին եպիսկոպոսը կը փութան արգելել անոր ուղեւորութիւնը, և լուր կը հասցնեն Աղեքսանդրիա որ Կ-Պոլիս չգայ։ Հարկաւ անոնք ալ կը նախատեսեն յանդուգն ձեռնարկին դժբախտ ելքը, և իրենց ալ պետական օրէնքներու հակառակ յայողելուն անհնարութիւնը (ԴԻԹ. 141)։ Սակայն ուրիշներ Լատին քարոզիչներու աֆահաւնէն, և Լատին եպիսկոպոսին չահախնդրութեան կը վերագրեն այդ քայլը, որոնց նիւթական օգուտները պիտի վտանգուէին, եթէ Հայ-կաթոլիկներ Լատին եկեղեցիներէ հեռանալով իրենց յատուկ եկեղեցիներն ու նուիրապետութիւնը ունենային (ԴԻԹ. 126)։ Լատին եպիսկոպոսին նամակը 1744 ապրիլ 30'ին գրուած էր (ԴԻԹ. 143), բայց Աբրահամ զայն Աղեքսանդրիոյ մէջ առաւ, և ատիպուեցաւ համակերպիլ ու ետ դառնալ։ Նաւով Ակքա եկաւ, և Դամասկոսէ անցնելով նորէն Քրէյմի վանքը ապաւինեցաւ 1745'ին սկիզբ-

ՆԱԼԵԱՆԻ ԸՆԹԱՑՔԸ

2017. Կ-Պոլիս և Երուսաղէմ նորութիւններ չէին ներկայեր մեզ այդ միջոցին, Նալեանի առաջին և Շըղթայակիրի վերջին տարիները սովորական գործունէութեամբ անցան։ Նալեանի ձեռնարկներէն յիշեցինք Արծիւեանի ոտնձգութիւններուն առջեւն առնելու համար ըրածները (§ 2015), առանց մեծամեծ խնդիրներ յուզելու։ Կաթոլիկութեան դէմ ձեռք առնուած միջոցները աւելի Բերիոյ կողմերուն վրայ գործածուեցան, և թէպէտ Արծիւեանի ձեռնարկը բոլորովին չխափանուեցաւ, բայց գոնէ պարտաւորուեցաւ Վիբանանի մէջ փակուիլ, և անկէ դուրս ալ՝ գողունի և ընդհատ կերպով կրնային գործել, իւր հրամանով աստեւանդ ղրկուած Անտոնեան միաբանները։

ԱՂԹԱՄԱՐԻ ԳՈՐԾԵՐ

2018. Աղթամարի աթոռին վրայ ալ պաղտասար Բաղիշեցիէ ետքը (§ 1963) կը յիշուին Սահակ Աղբակեցի, և Յակոբ Ամդեցի, և Նիկողայոս Սպարկերտցի, որ 1740'ին գրուած յիշատակարանի մէջ յիշուած է (00 ԲԻԶ.1119), թէպէտ ուրիշ տեղ 1743'ին կաթողիկոս և-

ղած կ'ըսուի, իւր նախորդին գահընկէցութեամբ վառն անյարմար կացուցնելանն, և վէ ըսառն է ոպա անչոցոյց, վերկեցեան դէքանն ցբաեց, և վիառաւ աշեարհանա բնակեցոյց է վանդն (ՋԱՄ·95)։ Նիկողայոս ալ նորոգեց վիճակներ գրաւելու փորձը, և Ազնքսանդր աթեղայի մը ձեռքով Օսմանեան կառավարութենէ հրովարտակ կր հանէ, վան, Բաղէշ, Մուշ և չրջակայ վիճակներ իւրացնելու, և անոր զօրութեամբ էջմիածինի նուիրակ Ցովհաննէս վարդապետն ալ կը վտարէ, հաւաքած արդիւնքն ալ ձեռքէն առնելով։ Ջահկեցին բողոքելուն վրայ՝ հակառակ հրովարտակ մը կը ստանայ Նալեան 1746'ին, և ոչ միայն վիճակները այլեւ արդիւնքները ետ կ'առնուն Նիկողայոսէ, և Ջահկեցին չնէ կոլայոն եաս քանպրէ։ Ասոր վրայ Աղթամարի վիճակայինք կը յուզուին, և քալոր վճռոէ, վանոէ և աչեարհանոէ, Նիկողայոսը էջմիածին կը դրկեն արձակում ստանալու, խոստանալով այնուհետեւ կրկղիսոէ և վճռոէ է հնազանդութեան օրէց էջմիածնի մնալ։ Ջահկեցին կը զիջանի, Նիկողայոսը կ'արձակէ և աթոռին կը դարձնէ, հրամայելով որ անկէ ետքը իրենք ղայ ոէ ի դնէցեն, այլ ընտրեալը է ոորբ աթոռն առաւեցին զի ծնի։ Նիկողայոս չեա ոմոց ինչ կը մնուին, և Աղթամարցիք նորէն ինքնագլուխ կ'ընտրեն յաջորդը, Գրիգոր մը, բայց Ջահկեցին յաջորդներ, պալըեցեալ է խառնակմանց ժամանակին մտադրութիւն չեն դարձներ, մինչեւ Գրիգորի մահը 1761'ին (ՋԱՄ·96)։

2019. Ազուանից աթոռին վրայ Եսայիի մահուանէ ետքը (§ 1956), ազատ մնաց հաաթոռ Ներսէսը (§ 1929), թէպէտ երբեմն էջմիածինէ բանադրուած, բայց կացութեան տէր կը դառնար։ կարապետ Ուլնեցի մտադրութիւն չէր դարձուցած, իսկ Յոչաբեցին ներկց անոր և թողուց որ պաչտօնը վարէ (ՋԱՄ·85)։ Կրետացին սէր ալ ցուցուց (§ 1900), և Ղազար գործը փննելով, թէպէտ Ներսէսին եա խոփալնիլ դանցան էր, բայց յետոյ ոչնկէ ընէ կոչէն, և խոստմնագիր առնելէ ետքը թէ ի եա ոպոմքէցէ, կոնդակով հաստատեց Ներսէսը իւր աթոռին վրայ, որ մինչեւ 1763 ապրեցաւ (ՋԱՄ·86)։

ԱՂՈՒԱՆԻՑ ԱԹՈՌԸ

2020. Պարսկաստանի աթոռին, կամ Ասպահանի մետրապոլտութեան և Ամենափրկչի առաջնորդութեան վրայ՝ վերջին անգամ յիչեցինք Դաւիթ Ջուղայեցին (§ 1943), ճչնպէիոց անձ մը, որ բոլոր իւր մտադրութիւնը դարձուցած էր եկեղեցական պաչտամանց մասին։ Իրմէ դրուած կանոններուն մէջ կը յիչուին, 1. Պատարագի օրեր երեք Ուղղեա ըսել, և մէկ հատով չչատանալ։ 2. Դիչերային ժամին անխափան ներկայ գըտնուիլ։ 3. Քահանաներ միչտ ընկեր քահանայով ժողովուրդի աուները երթալ։ 4. Քահանաներ չուկայ չելլալ և խանութները չնստիլ։ 5. Եկեղեցականներ ըչխոբ չհագնիլ։ 6. Հրեաբէմ, խոոթվանիմ և Մելչ աղօքները զանց չընել։ 7. Պահք թէ ուտիք ամէն լուր օրեր անպակաս Արեւագալի ըսել։ 8. Եկեղեցականներ քմահոտ չգործածել (ՏՃՈ·Բ·53-55)։ Այդ կանոնները բաւական են Դաւիթին անձնաւորութիւնը նկարագրել։ Իրեն պաչտօնը տեւած է 3 տարի, և 1728 դեկտեմբեր 18'ին վախճանելով իրեն յաջորդած է Աստուածատուր Քահրապատցի եպիսկոպոսը, մականուանեալ Աղաւնի, հեղինակ խոչոչոկ անձ մը, որ մինչեւ 1745 յունուար 17 ապրած է (ՏՃՈ·Բ·58), և բարի անուն թողած է ետեւէն։ Անոր յաջորդն է Պօղոս Ջուղայեցին։ Այսչափ համառօտիւ զանազան աթոռներու վրայ խօսելէ ետքը, անցնինք Մայրաթոռին, զոր պահ մը աչքէ հեռացուցինք։

ԱՍՊԱՀԱՆԻ ԱԹՈՌԸ

2021. Աբրահամ Կրետացի կաթողիկոսը, 1736 փետրուար 15'ին, երբոր իւր բոլոր իրավասութիւնները Նատիրի կ'ուղղէր (§ 1978), ըսած էր նաեւ, որ ինչպէս զայն Պարսկաստանի յաղթական կը տեսնէր, Աստուծով Ղանտահարի և Հնդկաստանի յաղթական ալ պիտի տեսնէր (ԿՐՆ·60)։ Նատիրին վրայ հիացողին գուչակութիւնները պարապի չելան, սակայն ինքը չտեսաւ, զի 1737'ին ամառուան վերջերը սկսաւ Նատիր չահ իւր արշաւանքը, երբ Կրետացին մեռած էր արդէն (§ 1990)։ Առաջին յարձակումը Ղանտահարի Աֆղաններուն վրայ ըրաւ, զի Հիւսէյին

ՆԱՏԻՐԻ ԸՆԹԱՑՔԸ

խան, չահ Մահմուտին (§ 1964) եղբայրը, չէր խոնարհեր Նատիրի ձեռաց ներքեւ, որ Աֆղաններըը Պարսկաստանէ հեռացուցած էր (ԽԱՉ· 261)։ Նատիր զօրացաւ, և Ղանտահարը ու Քապուլը նուաճելէն ետքը, Ինդոս գետը անցաւ և Հնդկաստան մտաւ, Մողոլեան կայսրութեան մայրաքաղաքը Տէլհին գրաւեց 1739'ին (ՏՊԼ· 363), Սինտն ալ նուաճեց, Հեթաթի մէջ յաղթութիւնը տօնախմբեց, Պուխարա մտաւ, Խարիզմը ընկճեց, Խօրասանի Մէյմէթ քաղաքը միջոց մը մնաց, և վերջապէս երբ հինգ տարի ետքը, 1742'ին Ասպահան դարձաւ, ընդարձակ Պարսկական կայսրութիւն մը կազմած էր, որուն սահմաններն էին Տիգրիս, Ինդոս, Ոքսոս և Կասպիականը (ՏՊԼ· 364)։ Բայց կրետացիին գոված օրինակելի վհատութիւնը այլափոխուած էր այլեւս, ու սոսկալի բռնաւոր մըն էր դարձած։ Հնդկաստանի աւարը անոր ախորժակը գրգռեց, և ամէն կերպերով հարստութիւն դիզելու հետամուտ եղաւ. բռնութիւնէ ու անիրաւութենէն չկասեցաւ, և ամէնուն առելի դառնալ սկսաւ։ Մեր նպատակէն դուրս կը նկատունք ատոնց մանրամասնութիւնները մտնել։ Նատիրին վրայ ազդեցութիւն գործած պարագաներուն կարգին կը պատմուի, իր դէմ եղած դաւաճանութիւնը, իր իսկ որդւոյն Ռիզաղուլիի գրգռութեամբ, ուսկից ազատեցաւ, բայց որդւոյն վերջն ալ իր ձեռքով (ԽԱՉ· 262)։ Կրօնական զգացումներու կողմէ ալ անտարբեր և թոյլ կը նկարագրուի Նատիր, որ իբր հետաքրքրութիւն կը հրամայէ պարսկերէնի թարգմանել հրէութեան, քրիստոնէութեան և իսլամութեան սուրբ գիրքերը։ Քրիստոնէութեան գիրքերուն համար Հայ վարդապետներու կը դիմէ, որոնք կը կատարեն հրամանը՝ Գէորգ Ջուղայեցի ասորաբանութեան և հանճարեղ բանաստեղծին գլխաւորութեամբ, որ թէեւ ասոնցմէ մէկ քանի տարի ետքը Ջուղայի յորջորջմամբ նշանակուած է (ԽԱՉ· 263), սակայն նա անագան 1754'ին այդ պաշտօնին բարձրացաւ (ՏՀՈ· Բ· 61)։ իսկ Նատիր չահ 1747'ին սպանուեցաւ, որով տրուած յորջորջումը ապագային պիտի յատկացուի։ Գէորգ և քահանայք և եկեղեցականք, որ անոր հետ էին, սկիզբն խիստ և իբր հրէից նման ընծայէ վարձատրուեցան (ԽԱՉ· 264)։

ՋԱՀԿԵՑԻՆ ԵՒ ԱԳՈՒԼԵՑԻՆ

2022· Նատիրէ ոչ տարբեր բռնաւոր մըն ալ դարձած էր Ղազար Մայրաթոռի մէջ, ուսկից թէպէտ չինարար ձեռնարկներ ունինք, սակայն անոնցմով չեն արդարանար իր բռնական գործերը։ Ղազարի յիշատակը չատ փառաւոր եղած կ'ըլլար իր չինած վհատարանով, և իր անունէն կոչուած Ղազարապատ հիւրանոցով (ՋԱՄ· 31), եթէ միւս կողմէն միաբանութեան վրայ գործած հարստահարութիւններով զայն աղտեղած չըլլար, մինչ ինքն ալ ազատ չէր Նատիրի հարստահարութիւններէն։ Իւր արկածները զանազան տարբեր պարագաներով պատմուելուն, պէտք է ըսենք թէ տարբեր գործեր են, և ոչ թէ տարբեր պարագաներով պատմուած են։ Նախ կը յիշուի թէ 1742'ին Նատիր 24,000 դահեկան պահանջեց Ղազարէն, պարզապէս այն պատճառով թէ չէ պոտ ւանանայալեթէց սթանալ գիանյ (ԽԱՉ· 265)։ Նատիր հարկաւ պահանջն ալ զանձած է, իսկ պահանջելուն առիթ փնտռել պէտք չէ, զի ունեցողէն ունեցածը առնել իրեն իրաւունք սեպած էր։ Հարկաւ չահելու և չահուելու նպատակով էր, որ Ղազար 1745'ին Նատիրի տէրութեան գացած էր Խորասանի Մէյմէթ մայրաքաղաքը (ՋԱՄ· Գ· 827), որ կը յարմարի Հնդկաստանի յաղթութենէ դառնալու միջոցին՝ հոն ժամանակ մը հանգստանալուն (§ 2021)։ Իրեն հետ կը գըտնուէին Պետրոս Ալնթապցի և Աղեքսանդր Բիւզանդացի վարդապետները, առիթ ծանօթ իրենց Քրիստիւ և Քարաքաշ մականուններով։ Այդ պարագային պէտք է կարդալ ուրիշ արկած մը, թէ Ղազար վանց յանցման իբր՝ քանէ և փոքանօ ընկերացրուաց (ՇԱՀ· Ա· 227), և թէ Մխիթարէ՝ տեղապահ ու Յովհաննէս Շիրազի՝ գործակալ վարդապետները, առիթ գտան Քրիստիւրն ու Քարաքաշը ամբաստանել, թէ երկուքն ալ ազգին ընդհանուրին առ նուազը չահ (ՋԱՄ· Գ· 828)։ Ինչ էր Ղազարի վրայ դրուած յանցանքը և ինչպէս գործադրուեցաւ գանակոծութիւնը՝ որոշակի գըրուած չունինք գոներ. բայց քանի որ տուս-

գանք ալ կը յիշուի, գոնէ ինչպէս ազատած ըլլալուն կերպը կը բացատրուի։ Իսկ աթոռազրկութիւնը լոկ թագաւորական հրաման մը ըլլալուն, ներքնապէս գործադրուած չէ, այլ արտաքին ձեւը յարգելով Ղազար գործէ քաշուած է, և Յովհաննէս Ագուլեցի՝ առաջնորդ Գողթան, իբրեւ փոխանորդ կամ տեղակալ գործերը վարելու սկսած է։ Այդ կացութիւնը հազիւ վեց ամիս կը տեւէ, դի նոյն ինքն Յովհաննէս տեղակալ և միաբաններ՝ օգուտ քաղելով Նատիրի թոռ Շահուհի երեւան և էջմիածին այցելելէն, անոր միջնորդութեամբ կ'ընդունին Ղազարի նորէն աթոռ դառնալուն չնորհը, ծանր տուգանքի պայմանով, և Յովհաննէս նորէն իր առաջնորդական վիճակը կը դառնայ (ՇԱՀ. Ա. 228)։ Ըստ այսմ կրնանք Յովհաննէս Ագուլեցիէն հեռացնել՝ հակաթոռ մը եղած ըլլալու ենթադրութիւնը։ Իսկ եղելութեան թուական կրնանք նշանակել 1745 տարին։

2023. Ղազար հազիւ իւր գիրքը գտած, կը սկսի Ջիւթիւրին և Խարաքաչին վրայ բռնանալ, հիմնուելով այն

ՋԻՒՋԻՒՐ ԵՒ ՔԱՐԱՔԱՉ

քսութեան վրայ, զոր տեղակակալ Միքայէլ և գործակալ Յովհաննէս հնաբան էին (§ 2022)։ Ջահկեցին կը խորհէր ընկճել և ստրնացնել այդ երկու վարդապետները, որոնց դիրքն ու արժանիքը իրեն աչքին փուշ եղած էին, և կերպով մը սանձ կը դնէին իւր յախուռն բերմունքներուն։ Ոչ միայն իրեն դէմ գրած ըլլալնուն բարոյականքը, այլ և իրեն նկատմամբ տարիներ առաջ ամէն մի ըսածնին կամ գրածնին՝ ամբաստանութեան նիւթ կազմելով, հարցափորձերու սկսաւ, հարուածներով խառն, և մինչեւ իսկ իբրեւ քաղաքական յանցաւորներ Թաւրէզի իշխանապետութեան մատնել սպառնացաւ։ Երկու վարդապետներուն հակառակ պատասխանները և իրեն ստութիւնները մէջտեղ դնելը՝ Ղազարը աւելի զայրացուցին, որ երկուքն ալ ֆալախայի հարուածներուն ենթարկեց, ուշաթափ ընել տալու չափ, և չղթայակապ բանտարկել տուաւ։ Երեսուն օր մնացին այնտեղ անխնամ, հազիւ ոգեպահիկով, և տանջանքներու սպառնալիքով, և չկրցան ելլել բայց եթէ բռնի պարտաւորեցնելով ստորագրելով։ Բայց այն ատեն ալ իրենց կրնքուած սենեակները կողոպտուեցան, և իրենք ալ արգելական պահուեցան յիսուն օր եւս (ՁԱՐ. Գ. 830)։ Ղազարի ատելութիւնը աւելի սաստիկ էր Ջիւթիւրին վրայ, անդատին ընտրութեան միջոցին իրեն հակառակ եղած ըլլալէն (§ 1991), ուստի Ջիւթիւր փութաց կարս փախչիլ, իսկ Ղազար անոր փոքրաւորներուն և արհեստներուն վրայ թափեց իւր զայրոյթը։ Բայց երբ օգուտ մը չքաղեց, ներգութեան դիմեց, և ամէն բան ետ դարձնելու և աւելի ալ բարձրացնելու հրապուրիչ խոստումներով Ջիւթիւրը համոզեց ետ գալ։ Բայց իսկոյն արգելական պահեց զայն՝ սենեակի մը մէջ բանտարկուած, և զայն ու փոքրաւորն ալ նեղեց ու տանջեց, որ պահծու եղածները յայտնեն, և ոչ իսկ ներեց սենեակէն ելնել զատկին օրը, 1746 մարտ 30'ին։ Զատկին չորրորդ օրը, ապրիլ 2'ին, կաթողիկոսարանի բարապանները, Ջիւթիւրը չապիկով մը կը մերկացնեն, և գետին տարածելով գլուխն ու մօրուքը կը գերծեն, և մէյ մէյ հանգիստ ի քաղաքն վրան նետելով Սեւան կը տանին, և ապրիլ 6'ին մութ նկուղ մը կը բանտարկեն, օրական չորցած հաց մը միայն տալու պայմանով, և բանտը երկու պահապաններու կը յանձնեն (ՁԱՐ. Գ. 832)։ Վեց ամիս մնաց Ջիւթիւր այդ վիճակին մէջ, և հազիւ 1746 սեպտեմբերին առեներները Սեւանի միաբաններու միջնորդութեամբ չղթաները քակելու, և վանքին մէջ ազատ չրջելու հրամանը առնուեցաւ Ղազարէ։ Ջիւթիւր վերջին յուսահատութեան մատնուած, ալեկոծութեան պահուն, և առանց թիակի լքուած նաւակով մը յաղողեցաւ ցամաք ելնել, և յանդանօթս ու տեսակ տեսակ դժուարութիւններով կրցաւ կարս հասնիլ, և անկէ ալ առանց ճանչցուելու կարին երթալ։ Ղազար զայն իմանալով, փորձեց երեւանի Պարսիկ կուսակալին ձեռքով և առատ կաշառքներով, Ջիւթիւրը ձերբակալել ու բերել տալ, սակայն կարնոյ կուսակալը պինդ կեցաւ, և չյանձնեց անձ մը՝ որ ապաքինել էր չէչէնիոն Օմանցոց, և Ջիւթիւրը յորդորեց կ-Պոլիս երթալ, և հոն իւր գործերը կարգադրել (ՁԱՐ. Գ. 834)։

2024. Ռիւթիւրին կ-Պոլիս հանդիպը կ'լլլնայ 1747'ին սկիզբները, և յայտնի է թէ ինչ պիտի ըլլային անոր պատմածները մայրաքաղաքին եկեղեցականներուն և մնծամծներուն առջեւ։ Ռիւթիւրին հետաքրքրուելու էլչիութեան հանդարտութիւն չի գտաւ, զի Ղազար շարունակ նորանոր գրգռութիւններ կը յուզէր իր վարմունքովը։ Ռարաքաշ չդիշուիր այդ միջոցին, և կ'երեւի թէ կոզմ մը քաշուած էր, իսկ Ղազար իր աստղութիւնը դարձուցած էր Յակոբ Շամախեցի և Յովհաննէս Շերազի վարդապետներուն վրայ (ՁԱՄ· Գ· 839), թէպէտ վերջինը Ռիւթիւրի և Ռարաքաշի դէմ քսութիւններ յօրինողն էր (§ 2023)։ Ղազար վանքէ դուրս ալ ազգային մնծամծներուն վրայ կը բռնանար, և գլխաւորապէս իրեն դէմ գրգռուած էին Յարովէն և Յակիպապ, երեւանի հասարակութեան գլխաւորները, առաջինը «ալեզոտ՝ որ է ազգապետ, և երկրորդը Ղէ՛՝ որ է գործակալ։ Սոյն միջոցին Պարսից տէրութիւնն ալ անիշխանութեան մատնուած էր։ Նատիր չահ իմանալով Պարսիկ մնծամծներուն իրեն դէմ ըլլալը, կը պատրաստուէր Աֆղաններու ձեռքով անոնք կատրել, երբ ասոնք կանխեցին և զինքն սպաննեցին 1747'ին։ Ասոր վրայ իրենները ժառանգութիւնը իրարմէ յափշտակելու կը սրցէին, Ալի-Ասխլ Ղարաղրդին Թավրէզի, և Շահռուհ Թուր Մէչէթի մէջ թագաւորեցին, և իրենց ազգականները սպաննել տալով, և գիրար տապալելով կ'ուզէին զօրանալ։ Լոռիատանի իշխան Ալի-Մէրատն ալ՝ Աօֆիներու ցեղէն Իսմայէլ անունով ութը տարեկան տղայ մը չահ հռչակել տալով, անոր անունով կը տիրապետէր Ախուսանան գաւառները։ Ուրիշ նահանգներու մէջ ալ կոզմնակալներ մէկ մէկ փոքրիկ վնաստներու ձեռ առած էին (ՏՊՀ· 366)։ Ղազար կարծելով պարագայէն օգտուիլ, Յարովէնին և Յակիպապին սպառնացաւ տէրութեան մատնել, որուն վրայ ասոնք կանխեցին զինքն մատնել Ալի-Ասխլի, որ Հայկական գաւառներու վրայ կ'իշխէր, թէ կարին փախած Մանուչար Հայ իշխանին 4000 թուման դրամները Ղազարի մօտ աւանդ ևն։ Ղազար թագաւորէն կանչուեցաւ, և աւանդը իրմէ պահանջուեցաւ, 1500 թուման ալ տուգանքի յաւելուածով։ Ղազար անճար մնալով զայն վճարել, աթոռին թանկագին իրերէն մաս մը վաճառելով և հարկապահանջները կաչառելով, հնարեցաւ կարին փախչիլ, մտածելով այն տեղ հայրապետանոց հաստատել, որուն չհաւանեցան կարնեցիները։ Ղազար բանի կերպով իւր նկատմամբ գոհանալութեան գիրեր ստորագրել տալով կ-Պոլիս և Տաճկաստանի ուրիշ կողմեր ղրկած էր, սակայն միաբաններ ճշմարտութիւնը յայտնող գիրեր հասուցած էին, և կ-Պոլսոյ ամբողջ Հայութիւնը, նպաստ պատրիարքին առաջնորդութեամբ, էչմիածինի մէջ կարգ ու սարք հաստատելու և անտէրութենանց հիմնական դարմանն ուսանելու պէտքը զգացեր էին։ Այնուհետ Ղազարի բռնագրաւիկ գիրերը ազդեցութիւն պիտի չկարենային գործել, քանի որ Ռիւթիւր ականատես վկայ և անձամբ փոքաւոր Պոլիս կը գտնուէր։ Ղազարի էչմիածինը թողլով կարին փախչիլը և այն տեղ հաստատուիլ ուզելը, արմատական միջոցներու պէտքը զգացուցին, և պատրիարքարանով ու ժողովուրդով որոշում տրուեցաւ, որ Պետրոս Ռիւթիւր ու Մահակ Անագին վարդապետներ էչմիածին դառնան, և միաբանութեան հետ պատշաճը մտածեն, և մինչեւ իսկ Ղազարը փախած նկատելով, նոր կաթողիկոս մը ընտրուին և նստեցնեն (ՁԱՄ· Գ· 839)։

2025. Երբոր Ղազար էչմիածինէ խոյս տուաւ, պետական հոգևորականները Մայրաքաղաքին ևս և միաբաններուն ներկայեցին ու տանջեցին Ղազարին պարտքին համար, և երբոր ուրիչ կերպով արդիւնք չունեցան, եկեղեցական ինչքերը և զարդերը գրաւեցին (ՁԱՄ· Գ· 838), և վեց ձիաբեռ ապրանք թագաւորին տարին։ Սակայն միաբաններ աղաչաւորներ և գիրեր հասուցին, թէ պարտքը վանքին և աթոռին չէ, այլ Ղազարին անձնապէս ստացած աւանդի մը երեսէն։ Թագաւորը իրաւունք տուաւ միաբաններուն, հարկահանն ալ պատժեց, ըսելով թէ զբօս Ղազարը պահանջէ և ոչ զանօթ վանքը, ու ապ-

բանքները ետ դարձուց, և Ղազարին մասին կարգադրութիւնը միաբանութեան թողուց (ՇԱՀ. Ա. 228)։ Երրոր հարկահաններր ապրանքներով մեկնեցան, Ղազար այդ լուրին վրայ պարտքը վճարուած սեպելով, էջմիածին դարձած էր, որ առեն Կ-Պոլիսէ ղրկուած վարդապետներն ալ հասան։ Որպէսզի իւր տապալման առջեւն առնէ, ասնոնց վրայ ամբաստանագիրներ մատոյց, թէ Կ-Պոլիսէ եկած լրթեւ են, և թէ ինքն Պարսից պետութեան հաւատարիմ է։ Սակայն Ղազարի անձը կասկածաւոր եղած և անունը կոտրած էր Պարսից կառավարութեան առջեւ, և ամբաստանութեան ականջ չի կախուեցաւ, այլ Թավրէզէ հրահանգ տրուեցաւ Երեւանի կուսակալութեան, որ միաբանութիւնը հարցաքննէ, և ըր ընթացքն նոյա, նա լեալ նոցա կ'ընդդիմ (ՉԱՄ. Գ. 838)։ Կուսակալը Երեւանի մէջ առեան կազմեց, Ղազար ալ հոն կոչուեցաւ, միաբանութեան դլխաւորներն ալ ներկայացան։ Քիւթիւր և Ահագին Տաճկաստանցոց կողմէ խօսեցան, և Ղազար պարտաւորուեցաւ, և պետական հրամանով պաշտօնանկ հռչակուեցաւ, և Սեւան կղզին աքսորուեցաւ, ուր ինքն Քիւթիւրը բանտարկած էր (§ 2023), և միաբանութեան հրաման տրուեցաւ էջմիածին դառնալ և ընտրութիւն կատարել (ՉԱՄ. Գ. 840)։ Պահ մը ուզուեցաւ Սահակ Ախալգինը, կոլոտի աչակերտութենէն, կաթողիկոսութեան բարձրացնել, իրրեւ էջմիածնի խորհուրդութիւններէն անմասն մէկ մը. բայց նա յանձնառու չեղաւ, և Քիւթիւրը յառաջ կոչեցին, անոր ալ դժկամակութեան յաղթելու համար խոստացան պաշտպան լինել նմա յանձնառու է վանքս, և այսպէս Պետրոս Ալինթապցի, մականուանեալ Քիւթիւր, կաթողիկոս օծուեցաւ մայրաքաղաքին մէջ 1748'ին ամառնիս անորոչ։ Միաբանութիւնը իւր գործին արդարացումը ապացուցանելու համար, ընդարձակ դրութիւն մը պատրաստեց, որուն մէջ բացատրեց ըսենան Ղազարու, և զայն է քաղաք պաշճենս ցրուեց ամէն գլխաւոր վիճակներ։ Այդ գիրին տակ գրագրած էին 21 եպիսկոպոսներ և 19 վարդապետներ, և 1748 մայիս 20 թուական կը կրէր։ Նկատելով որ այդ գիրը ամէն գործ վերջացնելէն ետքը գրուեցաւ, կարծել և Զմիւռնիոյ մէջ Ղազարու համակիրներուն ալ միտքը հանդարտեցնելու համար, և օծումը անկէ առաջ տեղի ունեցած էր (ՉԱՄ. Գ. 841), իդէպ է զատիկին մօտիկ կիրակիներէն մէկուն դնել օծման ամսաթիւը։ Զատիկը այն տարին ապրիլ 10'ին հանդիպած էր։

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

2026. Եղելութեան պատմական մասը ներկայացէն ետքը պէտք է նկատողութեան առնել թէ ինչ տեսութիւն պէտք է ունենալ Ղազարու պահընկէցութեան, և Պետրոսի կաթողիկոսութեանը վրայ։ Հնար է՞ արդեօք Ղազարը պաշտօնապէս և օրինաւորապէս դադարած ըսել, թէ ոչ Պետրոս հակաթոռ մը նկատել։ Գոյնէն օրինաւորութեան մասին չբաւեր որ Ղազար իւրօք անարժան և յանցապարտ մէկը ըլլայ, այլ պէտք է որ անոր պաշտօնանկութիւնն ալ օրինաւոր ձեւակերպութեամբ վճռուած ըլլայ։ Իրաւ է որ միաբանութիւնը իւր 40 անդամակիցներու միաձայնութեամբ անոր դատապարտութիւնը ստորագրեց, և Տաճկահայեր իրենց կողմէ լիազօր իշխանութեամբ պատգամաւորներ ղրկեցին, և Պարսկահայեր ալ ձայնակից և կամակից գտնուեցան տրուած որոշումին, սակայն այդ պարագաներ բաւական չեն նկատուիր եկեղեցական ժողովի մը գումարումը կայացնելու, որ միայն ձեռնհաս է կաթողիկոսի գահընկէցութեան վճիռը արձակելու։ Ամէն պարագայի մէջ իրական կը մնայ, թէ Ղազարի վտարումը Երեւանի կուսակալին առեանը վճռուեցաւ, ուր եկեղեցականներ աւելի վկայի՝ քան դատաւորի դերը կը վարէին։ Ըստ այսմ պէտք կ'ըլլայ ըսել թէ Ղազար եկեղեցական քննութեամբ և վճռով պաշտօնանկ եղած չէ։ Միւս կողմէն Պետրոս իւրովի և կամ քանի մի կամակիցներու ձեռքով աթոռը յափշտակող կամ գրաւելու յայտնող մը չէ. աթոռ դատարկ նկատուած առեն միաբանութեան ընտրութեամբ յառաջ կոչուած է, ինչպէս եղած էին ուրիշ օրինաւոր կաթողիկոսներն ալ, և ամէնուն հաւանութեամբ պաշտօնը ստանձնած է, և հետեւորներն ալ անհակառակ ընդունած և օրինաւոր ճանչցած են, և Յակոբ Նալեան պատրիարքն ալ

ըստ այնմ պաշտօնապէս հռչակած է, ևկեղեցւոյ բեմէն յայտարարելով և բացատրելով զոհնաչ ընտ Ղազարու, պատչաճաւոր վիլյոնիեմբ և քանի+ արժանահաւատ անձանց (ՁԱՄ. Գ. 840)։ Բայց ևթէ Քիւթիւրը հայրապետական աթոռին տէրը ճանչնանք, պէտք կ'ըլլայ վերջէն Ղազարը հակաթոռ ըսել, երբոր արքունի պաշտպանութեամբ և դրամի զօրութեամբ կրկին աթոռը ձեռք անցուց։ Խնդիրին մէջէն ելլալու համար, և միանգամայն գործին դժուարի ձեւ մը չտալու համար, մենք կը հաւանինք ըսել թէ Ղազար չկորնցուց իր կաթողիկոսական իրաւունքը, երբոր Պարսից կուսակալին վճռով, իսկ ազգին և ևկեղեցականութեան լոկ վըկայութեամբ՝ պաշտօնանկ հռչակուեցաւ, և թէ միայն պատահական պարագաներով պաշտօնը վարելէ արգիլուեցաւ։ Իսկ Պետրոս որ կանոնական ձեւակերպութեանց հետեւողութեամբ ընտրուեցաւ, հակաթոռի կերպարանքը չունեցաւ, այլ օրինաւոր ձեւով պաշտօնը վարելու կոչուեցաւ։ Այդ կերպով կաթողիկոսական պաշտօն վարողները մենք ալ ընդունինք, քանի անգամ որ պարզ բանութեամբ աթոռին տիրացած չէին, և նոյն ձեւով կը նկատանք Պետրոս Բ Ալենթապցի, Քիւրիւր մականուանեալ կաթողիկոսը։ Բայց ինչպէս ուրիշ աթոռակիցները, այն ալ կաթողիկոսներու չարաչարութեան չենք անցրներ, թէպէտ տալորական ցուցակներ անցուցած ըլլան (ԺԱՄ. 640)։ Երեւանցին և Շահխաթունեան ալ Պետրոսի անունը չարքէն դուրս թողած են (ՇԱՀ. Ա. 228)։

2027. *Մնդիրը նկատեցինք պարզապէս կանոնական ձեւակերպութեան տեսակէտէն, ապա թէ ոչ անհատական արժանաւորութեան տեսակէտէն, երկուքն ալ հաւասարապէս անձնահաճ և չահադէտ անձեր կը ներկայանան, վրէժխնդիր և անիրաւ, որք ոչ մի կերպով յանձնարարելի չէին կրնար ըլլալ։ Արդիւնաւորութեան տեսակէտէն, Ղազար, որչափ ալ բանաւոր և քննախնդիր, իր մրցակցին վրայ ուսումնական առաւելութիւնն ունի, գլխաւորապէս իր երկասիրած Իշխոց Յանկլէ գիրքով, ամբողջապէս հայագաւա-*

ԱՆՁԵՐՈՒ ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ

նութեան պաշտպանութեան նուիրուած, իրեն տրամադրելի և ժամանակին ծանօթ հրատարակութեանց փաստերով։ Հրատարակած է նաև Եզբաթն մը, և Ասողոցի-ն մը։ Իսկ չինարարութեանն տէր ընտիր նմոյշներ են Մայրաթոռոյ վիճարանը և Ղազարապատը, որ մինչեւ մեր օրերը կաթողիկոսարանի պէտքը լրացուցին, թէպէտ երկրորդը քանդուեցաւ արդէն, և առաջինն ալ նոյն բախտը պիտի ունենայ, երբ նորաշէնը աւարտի։ Պետրոս ընդհակառակն իր եանէն բան մը թողած չէ, և պէտք չէ միտքէ հանել այն տգեղ դերը զոր խաղայ Կոլոտի դէմ (§ 1986)։ Ուրիշ պարագաներու մէջ ալ բարձր և վեհ զգացումներու նշան մը չէ տուած, և բոլոր բրածն ու Ղազարի դէմ վարած դերը անհատական քշնամութեան կամ անձնական չահադիտութեան նկարագիրը կը կրեն (§ 1991)։ Պետրոս տեղ մը իբր կարեոր առաջնորդ կը յիշուի (ՇԱՀ. Ա. 228), սակայն ժամանակագրական հաշուով չենք գտներ տեղն մը, որ այդ պաշտօնը վարած ըլլայ։

ՔԻՒԹԻՒՐ ՏԱՊԱԼՈՒԱԾ

2028. *Պետրոս կաթողիկոսական աթոռը գրաւելով, որեւէ արդիւնաւորութիւն ցոյց տուած չէ, և Երեւանցին ու Շահխաթունեան բան մըն ալ չունին անոր գործունէութեան վրայ։ Միաբաններն ալ չահիլ պիտցած պիտի չըլլայ, որ անոր պաշտպանութեան համար չարժում մը չըրին, և Ղազարի վերադարձին համակերպեցան, գուցէ և նպաստեցին իսկ։ Այդ միջոցին Իպրահիմ Թավրէզի նոր կուսակալը, Նահիրի եղբօրորդին, և ոչ Նահիրի եղբայր Իպրահիմը (§ 1978), իր եղբօր Ալի-Ասխարին դէմ ելաւ, զայն ձերբակալեց ու կուրացուց, և անոր տեղը անցաւ (ՏՊՏ. 365)։ Թագաւորի փոփոխութեամբ՝ հրամանները ալ փոփոխութիւնը դիւրացուց, և Ղազարի եղբայր Յովսէփ քահանան (§ 1993) փութաց անոր մօտ երթալ, և պատչաճ ընծաներով ու միջնորդութիւններով յաջողեցաւ Ղազարի ազատութեան և կաթողիկոսութեան վերադառնալուն հրովարտակը առնել։ Ղազար հրովարտակին զօրութեամբ Մեւանի բանտարկութենէն ազատեցաւ, և յանկարծ իջմիածին հասնելով*

Պետրոսը ձերբակալուց, առանց անոր փախուստի միջոց թողուու։ Այս երկրորդ անգամ աւելի աստիճացած էր Ղազարի քինախնդիր դրութիւնը Պետրոսի դէմ, զայն չլըքթայի զարնել տուաւ, և ղրկեց ալ նոյն Սեւանը, կասկածելով անապատին միաբանները բարեկամութիւնէն և նորէն փախչելու հաւանականութենէն (§ 2023), այլ ոչքոտրեց Ջահուկ՝ իւր բնիկ գաւառը, անչուչտիրն եղբայրներուն ու մերձաւորներուն պահպանութեան վստահանալով, և հոն խիստ բանտարկութեան ենթարկեց։ Պետրոսի կաթողիկոսութիւն վարելու տիտղոսութիւնը ոչինչ գոն քաւած է հաւատարիմ ամենէն (ՋԱՄ· 31), և 1748 ապրիլէն հաշուելով, տապալումն ու բանտարկութիւնը կը հանդիպին 1749 փետրուարին։ Գատմիչներ չեն նշանակած թէ ինչչափ առեն մնաց Քիւթիւր Ջահուկի արգելանին մէջ, միայն յայտնի է թէ այլևս չազատուեցաւ և բանտին մէջ մեռաւ։ Ամէն պարագայի մէջ Ղազարէ առաջ մեռած կ'ըլլայ 1750'ին, թէ ոչ ազատութիւն ձեռք ձգած կ'ըլլար։ Մանուան կերպին վրայ ոմանք կը գրեն թէ Ղազարի եղբօր Յովսէփի երէցկինը՝ Խանում խաթուն զայն կը խնամէր, և երէցկինին մեռնելուն վրայ անհամ ճաշեալ վճռեցած է ուվի և մեռաւ (ՋԱՄ· Գ· 841)։ Բայց աւելի հաւանական է Յովսէփի Ջուղայեցի քահանային պատմածը, թէ Քիւթիւր վանքի մը մէջ փակուած էր, և վանքը կողոպտելու ելող աւազակներէն խոցել եղեր և վճռեցեր (ՇԱՀ· Ա· 229)։

2029· Պետրոսի տապալումէն 1749 տարին, Կ-Պոլսոյ մէջ ալ իւր արձականգն առնեցաւ։ Պատրիարքութեան աթոռին չուրջը դարձած էին մրցակիցներու պայքարները, և Կոլտոի 25 տարի անընդհատ պաշտօնավարութենէն յետոյ 8 տարի էր, որ Նալեան ալ պատրիարքութիւնը կը վարէր, երբ յանկարծ պարզ երկինքի վրայ գուացող որոտումի պէս պատրիարքական աթոռը յափշտակող մը երեւցաւ։ Խնդիրը և վէճ չկար հրապարակի վրայ, պատրիարքի դէմ ոճգոհութիւններ բարձրացած չէին, միայն Յակոբ պատրիարքին վաճ եղեռնօրինակ

եղեռնը չնդրէմնեցեալ քանի մը ազդեցիկ ընչեղներ կային, որոնք ուզեցին պատրիարքէն վրէժ լուծել։ Իրենց կամակից գտան Սրուսաղէմի միաբան, և քիչ առաջ անկէ եկած, Պրոխորոն վարդապետ մը Սիլիստրիայի, կամ ըստ այլոց Ռուսճուքցի, խոչեբ և կոպտաբարոյ անոր անունին հրովարտակ հանեցին, և 1749 մարտ 26, զատկի օրը (ՍՐԳ·), բազմութիւնամբ արքունի սպասաւորաց Մայր եկեղեցին բերին, երբ տակաւին եկեղեցին լեցուն էր, և Նալեան պատրիարքական աղտուղ։ Փողովուրդը և մեծամեծներու մեծամանութիւնը, անցուդարձէն անգիտակ, զայրացմամբ դիմադրեցին և Պրոխորոնը ներս առնել չուզեցին, սակայն արքունի բարապաններ և զինուորականներ բռնութեամբ ներս տարին, իսկ Նալեան խոնարհութիւն սկսեց խոյս տալ, և ապաւինել Սահաթճի Եուսուֆ ծանօթի մը տունը (ՋԱՄ· Գ· 862), որ նախահայրն է այժմեան Եուսուֆեանց բազմաճիւղ գերդաստանին։ Միւս օր մարտ 27, զատկի մեռելոցին առաւտուն, ժամերգութեան միջոցին Պրոխորոն եկեղեցի կ'իջնէ, և երբ սաղմոսէն չկնդ փեշը, ժողովուրդին կը դառնայ խօսելու և ձանձրոյթ ընելու միտքով։ Բայց դեռ բերանը չբացած, ժողովուրդէն մէկ մը, որուն հասմար վիայեցին էտ Պօղոսճի մը, պոռաց, վին ասիկ ըՅաքոբ պատրիարքն կ'ուզեն, և ժողովուրդը բոլոր մէկ բերան, նոյն ազաղակը կը կրկնէ, և Պրոխորոնին վրան կը խուժէ։ Ծանկարծ բացեալ եղեր պատանն պահարանին, և ելեն անոր ենիչէրէր և ըսաքաթար բաւական թուով, որոնցմէ ոմանք Պրոխորոնը ի պատրիարքարանն պոչին, և ուրիշներ բիրերով և մահակներով ժողովուրդին վրայ յարձակեցան, և անհնայ կերպով հարուածեցին, մինչեւ իսկ ոմանց ըսաքան պատառել էր, և ոմանց ընթան խոխթել, և խուճապին մէջ ոման ընկճել ի վերայ դիակաց, այնպիսի ողորմելի վիճակ մը, որ ականատեսը կը գոչէ, թէ քաղմութեան ցեղ այլ դ' եա ցոյց պոցե (ՍՐԳ·)։ Այդ խառնաչփոթութեան վրայ գործը կատարուեցան և մինչեւ իսկ սուլտան Մահմուտին հլալ, ազգին կամքին հակառակ ոմանց բանտարկութեան արդիւնք ըլլալն իմացուեցաւ, պատճառ եղողներ պատժուեցան (ՋԱՄ· Գ· 863), և Պրոխորոնն

ալ ապրիլ 2'ին, Նոր կիրակի օր. ՝ի՞նչ-ունի կեսրի՞կ ա՞ր-ին ի նա՝ ի՞ն. և Սամսոն ղրկեցին քերդարգել բանտարկութեան (ՍՐԳ.)։ Երբոր նոր պատրիարք ընտրելու հրամանը հկաւ, Նալեան այլեւս յանձնառու չեղաւ, և միաձայն հաւանութեամբ պատրիարք ընտրուեցաւ, Մինաս վարդապետ Ակնեցի, Գլակայ Ս. կարապետի առաջնորդ, որ այդ օրեր Կարին կը գտնուէր, և մինչեւ որ Կ-Պոլիս հասնի, տեղակալ նշանակուեցաւ Ծարութիւն վարդապետ Պալաթցի, կոլոտի աշակերտներէն (ՁԱՄ. Գ. 863), որ պէտք է ըլլայ աշակերտաց ցուցակին սկիզբը Հեզասոգի մականունամբ նշանակուածը (ԿՈԼ. 70), զոր և Իւլայեցին ի ՝ե՞լայ գ՞ո՞ն՞ն, ի Նյնո՞մ ը՞ք՞-ՐՒ ե՞ր՞ն (ՍՐԳ.), այսինքն 1749 ապրիլ 8'ին։ Իսկ Նալեան Կ-Պոլիս չմնաց, և Պրուսայի առաջնորդութիւնը ստանձնելով, փութաց երթալ իր պաշտօնատեղին։ Որոշակի չունինք թէ որ օր Մինաս հկաւ և աթոռը նստաւ, բայց մերձաւոր հաշուով հազիւ մայիսի վերջերը Կ-Պոլիս հասած կ'ըլլայ։

2030. Մինչդեռ օրերը կը հանդիպի Մխիթարեան միաբանութեան հիմնադիր Մխիթար աբբահայր մահը վիննահիկի մէջ, 1749 ապրիլ 27'ին, կամ հին տոմարով 16'ին, կիրակի օր։ Մխիթար երկար տարիներէ իվեր դալուկով կը տառապէր, որ է դէղնացաւ (ՄԽԻ. 409). 1739'ին տագնապ մը անցուցած էր, որ կրկնուելացաւ 1746'ին, և անկէ ետքը միշտ դէպ հի՞ան՞ք և դէպ ա՞ա՞ղ ապրելացաւ, իսկ 1749'ին Մեծպանքին մէջ հիւանդութիւնը ու տկարութիւնը սաստկացան, և ինքն ալ զգաց իր կենսական այժերուն սպառիլը։ Ապրիլ 4'ին, հին տոմարով մարտ 24'ին, աւագ ուրբաթ երկու տոմարներուն ալ, ցաւերը կը սաստկանան, գաւակին երկրորդ օրը թոշակ կ'ընդունի, և ցաւերով կ'անցընէ այլեւս երեք չաբաթներ, մինչեւ որ Հոգին կ'աւանդէ Ծիննաց չորրորդ կիրակին առաւօն, 1749 ապրիլ 16/27'ին, 74 տարեկան, և միւս օր յուղարկաւորութիւնը կատարուելով կը թաղուի Ս. Ղազարի Եկեղեցւոյն գ՞ո՞ն դէպ՝ թէզ (ՄԽԻ. 415)։ Միւս տարին վերստին կը փոխադրուի բեմին վրայ, յատուկ տապանագիրով մը, որ իմաստից բարձրութենէն աւելի՝ խրթին բառերու կուտակումով կազմուած է (ՄԽԻ. 417)։ Մխիթարի անձին վրայ գնահատումներ, այնչափ և այնպիսի ընդարձակութեամբ, և մինչեւ իսկ չափազանցութեամբ գրուած են իրենց ներէն, որ նոր տեսութիւն մը ընելու տեղ չէ մնացած։ Մենք իրրեւ պարզ պատմաբան, և ոչ իրրեւ ոգեւորեալ նկրտողաբան, եղելութիւնները յառաջ բերինք իրենց խակութեան մէջ, որպէսզի ընթերցողը կարենայ իր դատողութիւնն ընել խոհական չափաւորութեամբ։ Մխիթարի գործերը երկու ճիւղի կրնանք բաժնել, հոմէադաւանութեան տուած օգնութիւնը, և հայ գրականութեան տուած մղումը։ Անտարակոյս է որ հոմէադաւանութիւնը չատ բան կը պարտի Մխիթարին, որ իր անձնական աչխատութեամբ, և հիմնած միաբանութեամբ, և կատարած հրատարակութեամբ, ոչ միայն հոմէադաւանութեան տարածուելուն և կազմակերպուելուն նպաստեց, այլ և նոյն իսկ հայադաւանութեան մէջ չատ մը հոմէական միտքեր ներմուծելու առիթ տուաւ իր հրատարակած գիրքերով, զորս Մայրաթոռոյ կաթողիկոսին անունին մակագրութեամբ՝ յանդգնաբար ընդունելի կ'ընէր Հայերուն, իրրեւ անխառն Հայ ուղղափառութիւն։ Բայց մենք նորէն պիտի կրկնենք, թէ Մխիթար մոլեռանդ հոմէադաւանէ աւելի, նախանձայոյզ հայտարարի զգացումը ունեցող մըն էր։ Արեւմտեան կամ եւրոպական կամ աւելի ճիշդ՝ Լատինական ուսմանց և գործակցանց փայլէն չլացած, և անզուսպ ձգտումով անոնց հետեւելու ձեռնարկած, պատրաստ էր հայադաւանութենէ և նոյն իսկ Հայ ինքնութենէ բան մը զոհել, որպէսզի Լատինական ուսումէ բան մը առնելով Հայութեան կարենայ յերել։ Մեր այս տեսութեան ակնարկը փաստն է, այն ըմբռնումը, որով Լատիններու և մոլի լատինամիտներու մօտ Մխիթար անկեղծ և կատարեալ հոմէադաւան չկարծուեցաւ, և այդ ըմբռնումը իր միաբանութեան վրայ ալ տեւողապէս պահուեցաւ։ Իսկ Հայ գրականութեան համար ունեցած երախտիքը, աւելի պայծառ է։ Հայութիւնը փայլեցնելու համար, դաւանականը զոհած ատեն գրականին գործածուց իր այժր, երբ պարագա-

ներն ալ վինքը Արեւմուտքի կողմը նետուցին, երբ անձնական հալածանքի միտքէն չուսրած՝ Զմիւռնիոյ նաւահանգիստին մէջ առաջին գտած նաւը կը նետուէր։ Արեւմուտք իրեն առնելու դիւրութեան սրահներ մը բացաւ, որուն վրայ սկսաւ քալել։ Սակայն ինքն անձամբ չեղաւ հին դրականութեան երախտաւորը և նախնեաց մատենագրական գանձերը մէջ տեղ հանողը։ Իր հայկաբանութիւնը՝ ժամանակակից և Արեւելքի մէջ ծնացող ու այնտեղ դիրքեր գրող ու հրատարակողներէն բարձր չէ։ Իր մեծ արժանիքը եղաւ նպաստաւոր պարագաներու ներքեւ հիմնարկութիւն մը բնել, զոր իրմէ ետքը եկողներ յաջողապէս արդիւնաւորեցին։

2031. *Տարի մը կը յապաղի Մխիթարի յաջորդին կամ Մխիթարեան միաբանութեան*

ՄԽԻԹԱՐԻ ՅԱՋՈՐԴԸ

արբանեակ բնտրութիւնը, ինչ որ կը դուշնէ, թէ պաղափարնեերու և տնաւութիւններու անհամաձայնութիւններ տեղի ունեցած են։ Վերջին-վերջոյ ընտրութիւնը կը կեդրոնանայ, ոչ թէ Մխիթարի հին գործակիցներէն և արդիւնաւոր աշխատակիցներէն մէկուն վրայ, այլ վերջիններէն և միայն 1739 ապրիլին քահանայացած միաբանի մը վրայ, ինչպէս էր հայր Ստեփանոս Մելքոնեան, ծնիկ Կ-Պոլսեցի, տակաւին 33 տարեկան (ՅՈՒ.217)։ Մելքոնեան ընտրուեցաւ 1750 ապրիլ 6'ին, և պաշտօնի մտնելուն հետ մուտ գործեցին Ս. Ղազարի վանքը՝ հինի և նորի վէճերը, այսինքն է հին ուղղութեան պաշտպանները՝ և նոր ուղղութեան մը հետեւողները պայքարները։ Մելքոնեան, ինչպէս տարիքն ալ ու իր ընտրութիւնն ալ կը դուշնէին, անմիջապէս չեռնարկեց Մխիթարի կոչերը ֆոխել, և նոյնիսկ ընդունելով նոր կանոնադրութիւն մը կազմելու կը ձեռնարկէ, և տժգոհութիւնները այնչափ կը զօրանան, որ գործը մինչեւ միաբանութեան պառակտելուն, և մի մասին բաժնուելով նոր ճիւղ մը կազմելուն պատճառ կ'ըլլայ (ՁՇՐ.4), որուն վրայ իր կարգին։

2032. *Մեւնոյն 1749 տարւոյն մէջ մեւսու հայ-կաթոլիկ պատրիարքութեան կամ կաթողիկոսութեան հիմնադիր Աբրահամ Արծիւեանն ալ։ Վերջին անգամ Լիբանան դառնալէն ետքը 1745'ին (§ 2016), կ'աշխատէր այդ առանձնութեան մէջ իրեն յատուկ հայրապետանոց կազմել, զի անհնար էր Անտոնեանց վանքին մէջ մինչեւ վերջ հիւրընկալուիլ և միաբաններուն վրայ ծանրանալ, թէպէտեւ առանց անոնց՝ բան մըն ալ գործելու եղանակ չունէր, վասնզի անոնցմէ դուրս ալ պաշտօնեայ չունէր։ Իր իրաւասութեան սահմանները ընդարձակելու փափաքն ալ Աբրահամի զօրաւոր ձգտումներէն մէկն էր, սակայն մէկ կողմէն պապական կոնդակին բացատրութիւնը, միւս կողմէն Լատին եպիսկոպոսին արգելքը (§ 2016), և նոյն իսկ Կ-Պոլիս երթալու համարձակութիւն չունենալը, զինքն հիմնապէս կասեցուցին, և այլ եւս այդ խնդիրը չյուզուեցաւ, և վերիվերոյ կիլիկիոյ կաթողիկոսութեան սահմանները, նորաստեղծ հռոմէադաւան կաթողիկոսութեան սահման ճանչցուեցան։ Այդ տեսութեամբ, Մելքոն Թուխմանեան Մամպրոյ հռոմէական եպիսկոպոսը, թէպէտ Աբրահամէ առած էր իր ձեռնադրութիւնը և անոր ընտրութեան մասնակցած (§ 2009), բայց Աբրահամի հպատակութիւնը չուզեց ընդունիլ, հարկաւ հիմնուելով այն պարադային, որ Տիարպէքիր Մամպուտով մէկտեղ էջմիածինի՝ և ոչ Սսոյ աթոռին մնթարկեալ վիճակ էր. բայց Հռոմ Աբրահամի իրաւունք տուաւ (ԱՂՔ.Ա.18)։ Երբոր Աբրահամ ծերութեան և հիւանդութեան պատճառով հետզհետէ կը տկարանար, յաջորդութեան խնդիրը Բակոբ և Իսահակ եպիսկոպոսներուն հոգածութեան նիւթ եղաւ, և ասոնց առաջարկութեամբ երեք Անտոնեան միաբաններ եւս, Պետրոս Ներսէսեան՝ նախորդ արքայն, Յովսէփ Այվազեան՝ ներկայ աբբայն, և Պօղոս Սամանճեան վաստակաւոր վարդապետը, եպիսկոպոս ձեռնադրուեցան Քրէյմի Ս. Փրկիչ եկեղեցւոյն մէջ, 1749 յունիս 22'ին (ԱՆՏ.), Այնթապի և Եգեսիոյ և Դամասկոսի թեմերուն անուններով (ԱՂՔ.Ա.18)։ Միեւնոյն տարին բանակցութիւններ կը կատարուէին, Անտոնեանց վանքէն դուրս հայրապետանոցի համար տեղ մը ստանալու.*

և երբ դործը լուծման յանգելու մօտ էր, Աբրահամ Պետրոս Արծիւեան հռոմէականաց կաթողիկոսը վախճանեցաւ 70 տարեկան, Քրէյմի վանքին մէջ, 1749 Հոկտեմբեր 1'ին, Վարագայ խաչի կիրակին, և միւս օր թաղուեցաւ Ս. Փրկիչ եկեղեցւոյն մէջ։ Իւր օր ետքը Հոկտեմբեր 13'ին կնքուեցաւ հայրապետութեանց ըլլալու սահմանուած տեղւոյն, Գոմմաճի կամ Ջմմաճի բլուրին նուիրատուութեան մուրհակը, եպիսկոպոսներուն և հոդատէր Խազնեան իշխաններուն միջև (ԱՂՔ. Ա. 19)։ Յաջորդին ընտրութեան համար Հոկտեմբեր 14'ին գումարուեցան հինգ եպիսկոպոս եղող Անտոնեան միաբաններր, և ուրիշ վանքին մէջ գտնուողները, և կաթողիկոս հռչակեցին Յակոբ Յովսէփեան Բերիոյ եպիսկոպոսը, Անտոնեանց հիմնադիր Մուրատեան եղբարց վերջին մնացորդը, և եկեղեցական աչխատութեանց մէջ Արծիւեանի աջակիցը, որ կոչուեցաւ Յակոբ Պետրոս Բ (ԱՂՔ. Ա. 20)։ Դեկտեմբեր 22'ին կաթողիկոսօրհնէքի հանդէսը կատարուեցաւ, և ըստ այմ Բենեդիկտոս ԺԴ պապին ալ հաղորդուեցաւ, որ 1750 սեպտեմբեր 23'ի կարդինալական ժողովին մէջ նորընտիրին պաշտօնը հաստատեց։ Յովսէփ Ալվազեան աբբահօր եպիսկոպոս ձեռնադրութեամբ, Անտոնեանք ալ նոր ընտրութիւն կատարած էին Արծիւեանի մահէն առաջ, և հայր Գրիգոր Ներսէսեանը աբբահայր հռչակուած էր (ԱՆՏ.)։ Ցիշած բլլալով թէ հայր Գրիգոր և հայր Պօղոս Հռոմի մէջ վանք մը հաստատելու պաշտօնով կ-Պոլիս ուղևորած էին 1746'ին (§ 2016), աւելցնենք թէ պէտք եղած դիւրութիւնները չկրնալով ձեռք ձգել, 1748 յունիս 26'ին իրենց գրուած հրահանգին համեմատ, անմիջապէս Լիբանան դարձած էին (ԱՆՏ.)։

ՇՂԹԱՅԱԿԻՐԻ ՄԱՀԸ

2035. Երուսաղէմ ալ ունեցաւ միևնոյն 1749 տարւոյ մէջ, գինքն ցնցող պատահարը, դի նոյն տարին հոդին յանձնեց իւր բազմամեայ և բազմերախտ հայրապետը, որ 32 տարիէ իվեր անոր պետն ու հայրն էր եղած, Յաղիմական աթոռը իւր կործանմանմէն վերականգնած, և անոր փայլն ու պայծառութիւնը, ստացութիւնները և արտօնութիւնները պաչտպանած և ընդարձակած։ Իրժ բախտաբար մահուան ամսաթիւը տեղ մը նչանակուած չենք գտներ, բայց յիչատակը անմոռաց է Երուսաղէմի մէջ, ինչպէս և վայել էր ընել, և Տանտապազօրեայ պատարագին մէջ երբ յիչատակութիւն կ'ըլլայ հանգուցեալ բռնաւոպէպաց հոգւոց (ԺԱՒ. 593), յանուանէ կը յիչուին Երուսաղէմի փրկաւորող և փառաւորող Պարոնտէր և Շղթայակիր զոյգ Գրիգորները։ Յաջորդութեան մասին Շղթայակիրի կամքն էր եղած իրմէ ետքը աթոռը յանձնել Թէոդորոս Խորենացի եպիսկոպոսին (§ 1997), զոր փոխանորդ ալ ըրած էր կանուխէն, և Կ-Պոլսոյ պատրիարքութեան ալ ծանուցած, և Նալեան պատրիարքութեան ալ ծանուցած, և Նալեան պատրիարքաւ ալ հաստատած էր մակագրելով, թէ ինչ Յակոբ պարբերէ ընդունելի է (ԱՍՏ. Բ. 77)։ Այսպէս համոզուած էր ամբողջ միաբանութիւնն ալ, և ըստ այսմ հաստատութեան կը սպասէր։ Բայց խնդիրը հիմնովին այլափոխուեցաւ Կ-Պոլսոյ պատրիարքարանին մէջ։ Մինաս պատրիարք և մեծամեծներ Շղթայակիրին յաջորդելու արժանաւոր, կարող և զօրաւոր անձի մը անհրաժեշտութիւնը տեսնելով, մտածեցին այդ պաչտօնին կոչել Յակոբ Նալեան պատրիարքը, որ քիչ առաջ Կ-Պոլիսը թողած և Պրուսա էր գացած (§ 2029)։ Թէոդորոս ըստ բաւականին ծանօթ չէր, ուստի Համաձայնական Նալեանը երուսաղէմի պատրիարք բնտրել, իրեն հաւանութիւնն ալ առին, և ըստ այնմ հրամարտակը Նանել տուին, և Երուսաղէմ ուղևորեցին ամենայն փառաւորութեամբ, և միաբաններն ալ ընդունեցան ամենայն յօժարութեամբ, դի բախտ մըն էր իրենց՝ Նալեանի կարողութեամբ անձ մը իրենց դլուխ ունենալ։ Նալեանի Պրուսայի առաջնորդութիւն վարելը, հազիւ թէ քանի մը ամիս տեւողութիւն ունեցած կրնայ ըլլալ։ Այսուհդ պէտք է դիտել տանք թէ Նալեան Երուսաղէմի միաբան չէր, այլ իրր կղզւոյ աչակերտ Ամրտոլոս կամ Գլակայ միաբան կրնար սեպուիլ, և ոչ երբեք Երուսաղէմի, թէև ջանացաւ ել և մտաւ սրբոյն Երուսաղէմայ եկեղեցին, և յանձնաժողով սրբոյ Երուսաղէմ անել չեղող, և եկամտաւ անպատրաստ անձր (ՀՆՆ. 157), պարզապէս իրր միաբան չե-

զող պիտի իմանայինք, պէտք էր ըսել, որ կարապետ կաթողիկոսէ արուեստանուած նզովքին գօրութեամբ, Մինաս պատրիարք և կ-Պոլսոյ մեծամեծներ, և Երուսաղէմի միաբանութիւնը՝ նզովքի ներքեւ ինկած պիտի ըսուէին, և գլխաւորապէս ինքն Նալեան ալ, որ Երուսաղէմի կանոնները կազմուելուն և հաստակուելուն գործակից էր։ Այս պարագան ալ մեզի իրր փաստ կը ծառայէ, թէ Հաննայի կոչուած նզովքները չեն արդեօք միաբան չհզոլի մը Երուսաղէմի պատրիարք ընտրուիլը, բաւական է որ արժանաւորութեան պայմաններուն համապատասխանէ (§ 1950), իրր զի ամէնէն առաջ Նալեան լաւ տեղեակ պէտք էր ըլլար կանոններուն հարազատ իմաստին։

ՋԱՀԿԵՑԻՒ ՄԱՀԸ

2034. Ջանազան կողմեր կատարուած իրողութիւնները քաղելէ ետքը, նորէն պատանդ Մայրաթոռ, ուր 1747 փետրուարին վախճանած տեսանք Ղազար Ջահկեցին (§2028)։

Ղազար վերջնական յաղթութիւնը տանելէն ետքը, իւր բոլոր քինախնդրութիւնը Քիւթիւրի վրայ առիթիւով, ուրիշներու հանդարտ թողած կ'երեւի, զի նոր հայածանքներ և հարստահարութիւններ չեն յիշուիր այլեւս։ Իրր գործունէութեան արդիւնք ունինք Ղապաթապատր, որ այդ վերջին միջոցին մէջ չնուազած և լրացած է 1750'ին (ՇԱՀ. Ա. 91), մինչ վիճարանը՝ այն տունն պատրիարքարան կոչուած, 1741'ին, իւր կաթողիկոսութեան առաջին մասին մէջ լրացած էր (ՇԱՀ. Ա. 92)։ Կերդն ալ, պայծոյին ալ, որչափ ատաղիկ և բաւական ըլլան, հետզհետէ կը մեղմանան տարիքի բերմամբ։ Ետ այսմ Ջահկեցին ալ հանդարտութեամբ անցուց իւր վերջին օրերը, և խաղաղութեամբ կնքեց իւր այնկոծ և տագնապալից կեանքը 1751'ին, ամսաթիւը ապրոչ, բայց մերձաւոր հաշուով տարեդարձի սկիզբները, վասնզի յաջորդը՝ ընտրական գործողութիւններ ուսարուէին և կ-Պոլսէ իջմիածին գալէն ետքը, նոյն 1751 տարեդարձի սեպտեմբերին մայրաքաղաքին մէջ օծումը կ'ընդունէր։ Ղազարի գերեզմանը կը տեսնուի Ս. Գայիանէի վկայարանին բակին աջակողմը։ Բաւական խօսած կը գտնուինք Ջահկեցիին անձնաւորութեան նկատմամբ, և իրեն գործողութեանց վրայ գնահատումներ ալ րրած, այնպէս որ պէտք չենք զգար նոյն կէտերու վրայ անդրադառնալ։ Բոլոր կեանքին ընթացքին մէջ յայտնի կը տեսնուին անոր վրայ կարողութեան գովելի ձիրքեր, յաջողակութեան համար արթուն միտք, և ձեռնարկներու մէջ տեղուն չանք. սակայն գժբախտաբար ամենայն ինչ չափազանց էր անոր վրայ, և բուռն կիրքերով չաղախեալ էին անոր լաւ յատկութիւնները ալ։ Արժանապատուութեան զգացումը մինչեւ անափառութիւն մղուած, անձնապաշտպանութիւնը մինչեւ անգթութիւն հասած, ջանքը մինչեւ բռնութիւն, և համարձակութիւնը մինչեւ ապօրինութիւն յառաջացած։ Եթէ գիտցած ըլլար իւր ձիրքերը՝ կիրքերէ զերծ պահելով արդիւնաւորել, անչուշտ ուելի հանդարտ ու երջանիկ, և տագնապներէ տառապանքներէ զերծ կեանք վարած կ'ըլլար, և իւր անունը լաւագոյն կաթողիկոսներուն հետ կը դասուէր։ Մինչ այժմ իւր անտեղի գործերն են որ լաւ և ընտիր կողմերն ալ կը քօղարկեն և կ'աղաւաղեն, և իւր անունը փառաւոր յիշատակէ կը զրկեն։

Տ· ՄԻՆԱՍ Ա· ԱԿՆԵՑԻ

2035· *Մինասը չիչեցինք երբ Նալեանի տեղ Կ-Պոլսոյ պատրիարքութեան կոչուեցաւ* (§ 2029), *և անկէ առաջ Մշոյ Ս. կարապետի ա-*

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ

ռաջնորդ եղած ըլլալը դիտնինք, բայց աւելի կանուխ նախընթացին ինչ ըլլալը չենք գիտեր։ Նկատելով որ բաւական ծեր կը նկատուի բարձր աթոռներ եղած առնելը, անհաւանական չէր ըլլար նոյն իսկ Աբրահամ Եռաբերդցիի յաջորդ եղած կարծել Գլակի մէջ, երբոր նա 1730'ին կաթողիկոս կ'ընտրուէր (§ 1965), *որով սա ալ Ամրատցի Վարդանի կրոսերագոյն աշակերտներէն եղած կ'ըլլայ։ Մինաս 1749 գարունէն մինչև 1751 գարուն երկու տարի պատրիարքութիւն վարած էր, առանց չխոթի մը տեղի տալու, թէպէտև առանց յաւակ և նչանաւոր արդիւնաւորութեան մըն ալ ցուցնելու, որ ևթէ մեծ գործունէութեան նչան չէ, խոհական և կանոնաւոր անձնաւորութեան նկարագիրը կը ցուցնէ։ Այդ համբաւը հարկաւ յորդորեց էջմիածնի միաբանները որ Կ-Պոլսոյ պատրիարքը իրենց կաթողիկոս ուզեն, և Տաճկահայեր ալ չուտով համաձայնած են իրենց ճանչցած խոհական անձ մը Մայրաթոռին վրայ տեսնել, որ կարող էր դարմանել և բուժել այն պառակտումները ու թշնամութիւնները, զորս ցանած և աճեցուցած էր Ջահկեցիին բուռն և կրքոտ վարչութիւնը։ Նկատելի է որ վերջին կաթողիկոսներ, էջմիածինին Օսմանեանց տէրութեան ներքև իյնալէն իվեր, Տաճկահայութեան կողմէ կ'առնուէին, թէպէտև էջմիածին և Երեւանի նահանգը Պարսից իշխանութեան ներքև անցած էին։ Սաոր ներքին պատճառը պէտք է տեսնել Պարսկահայոց լինկած և նուազած վիճակին մէջ, որ ևթէ առաջ իբրև ազդեցիկ տարր իրենց հաճութեամբ կը տնօրինէին Մայրաթոռի բախտը և Ջուղայեցիներ կը բարձրացնէին հայրապետական աթոռին վրայ, այլևս ոչ իրենց ազդեցութիւնն էր մնացած, և ոչ արժանաւոր եկեղեցականներ կը հանէին Նոր-Ջուղայի վանքէն, կամ էջմիածնի Ջուղայեցի միաբաններէն։ Եւ ոչ միայն Տաճկահայեր էին որ Մայրաթոռին ընտրելիներ կու տային, այլև Պարսիկ կառավարութենէ աւելի Օսմանեան կառավարութեան պաշտպանութիւնը կը յարգուէր, և անոր հրովարտակն էր որ էջմիածնի գահակալին զօրութիւն և ազդեցութիւն կը պատրաստէր։ Մանաւանդ Ջահկեցիին մահուան թուականին՝ Պարսկաստան կատարեալ անիշխանութեան մէջ էր։ Ռուբյա խոպո, կը գրէ Երեւանցին, ընդհանրութեան պարծէց, և երկիր մտնեցաւ ի չեթա ինդնիշխանութ և աներկիւղ քնութ (ՋԱՄ· 32)։ *Մինաս պատրիարք՝ հմայնութեամբ դէպանէց էջմիածնի և կարանքնապոլսեցոց ընդհանրական կաթողիկոս, Օսմանեան կառավարութենէ ալ հրովարտակը ստանալով փութաց էջմիածին երթալ* (ՇԱՀ· Ա· 229), *և կաթողիկոսական օծումը ստացաւ* 1751 *սեպտեմբեր* 15'*ին, Խաչվերացի օրը* (ՋԱՄ· Գ· 864)։

2036· *Երբոր Մինաս՝ կաթողիկոսութիւնը հաստատուելով պատրիարքութենէ*

Կ-ՊՈԼՍՈՅ ԱՔՈՌԸ

ձեռք քաշեց, Ջանաց առնել անցընել իր իսկ փոխանորդը, Գէորգ Ղափանցի վարդապետը, և դժուարութիւն չունեցաւ մեծամեծներու հաւանեցնել, վասն ընդհանուր համակրութիւն վաստակած էր Ղափանցին, իբր փոքր-փաթ ուժ և տրտունջ, ողջմտի և լռինչ ունենալ (ՋԱՄ· Գ· 864)։ Ղափանցին կոպոյ հոգեւոր, այսինքն պաշտօնապէս պատրիարք նստած օրը նչանակուած է 1751 յունիս 15 (ՍՐԳ.) չաբաթ օր։ Ինքն բնիկ Սիւնեաց նահանգէն և Պարսկահայ երկիրներէն ըլլալով, էջմիածնի միաբան պէտք է ըլլայ, և էջմիածնի չատ միաբաններու նման նուիրակութեամբ եկած։ Յատկապէս Գաղատիոյ չրջանակին մէջ աչխատած էր, և Կ-Պոլիս անցնելով իր համեստ ընթացքովը պատրիարքին և ժողովրդական համակրութիւնը

գրաւած էր։ ԵՒ Դաւիտեանցին այդ կողմէ հաճելի եղաւ, բայց իբր գործունէութիւն մեծ արդիւնք ունեցած պիտի չըլլայ, որ մեծամեծներ աւելի կարող և աւելի յաջողակ անձի մը պէտքը զգացին, և Կոլոտի ու Նալևանի յիշատակները ամէնուն բերանը կը կըրկնուէին։ կարող պատրիարք մը ունենալու պատճառներուն կարգին կը յիշուի ևս, թէ փոքրիկ ախոռ ալանք ինչ անասուածական (ՍՐԳ.), առանց աւելի բացատրութեան, և թերևս բողոքականութեան ակնարկուի այս խօսքով։ Ժամանակին մեծամեծներուն աւելի ազդեցիկն էր Եաղուպ ամիրա, արքունի վաճառապետ, որ է պղէրլեհպալը, իբր հայկական անունով Յակոբ Յովհաննէսեան Ակնեցի, որ 1751'ին Երուսաղէմ ուխտի կ'երթայ իբր կնոջ Սողոմէի հետ, թանկագին ընծաներ կը տանի և Ս. Յարութեան տաճարին վերնատունը նորոգել կու տայ։ Նալևանի նախածանօթ ըլլալով արտասովոր կերպով կը պատուասիրուի Եաղուպ, և այն տեղ կը համաձայնին որ Նալևան նորէն Կ-Պոլսոյ պատրիարքութեան դառնայ։ Եաղուպ իբ վրան կ'առնէ զայն իրականացնելու հոգը, և Երուսաղէմէ դառնալուն Նալևանը իրեն հետ միատեղ Կ-Պոլիս կը բերէ։ Եաղուպ ուխտաւորութեան համար Երուսաղէմ գացած ըլլալով, ժամանակին սովորութեան համաձայն 1751'ին վերջերը աւազ տօներէն առաջ գացած կ'ըլլայ, և դարձած՝ զատիկը ընդունէն ետքը, որ այն տարի 1752 մարտ 29'ին կը հանդիպէր։ Եաղուպ Կ-Պոլիս հասնելուն կը հաղորդէ իբ որոշումը, և Դաւիտեանցին հրաման կ'ընէ աթոռէն հրաժարիլ, որ անհակառակ կը համակերպի, փոխարէն Պրուսայի առաջնորդութիւնը ընդունելով (ՉԱՄ. Գ. 864)։ Ըստ այսմ 1752՝ մայիս 16'ին տեղի կ'ունենայ Նալևանի երկրորդ անգամ պատրիարքական աթոռ ելլելը (01 ՕՐԱ. 141)։ Իսկ Եաղուպ ամիրա այս եղելութեան վրայ չատ չապրիր, զի քիչ ետքը 1752 յուլիս 9'ին (ՍՐԳ.), վարդավառի հինգշաբթին, արքունական հրամանով կը գըլխատուի։ Ոմանք նահատակութեան գոյն տուած են Եաղուպի գլխապարտութեան, այլ մեզ հաւանականագոյն կ'երեւի արկածին մեկնութիւնը տեսնել Ներքինապետ Պէքիրի անկումին մէջ, որ իբր հեղինակ բազմաթիւ զեղծումներու և ոճիրներու՝ ամբաստանուեցաւ դէնպէտէն ժողովրդական գանգատներու հետեւանօք, և գլխատուեցաւ։ Նոյն պատիժին ենթարկուած կ'ըսուին իբ երկու մեղսակիցները, որոնք Սիւլէյման Ներքինի և Հայ Յակոբ անունով կը յիշուին։ Անոնց կողոպուտը 45 միլիոն հնչուն դահեկան եղած կ'ըլլայ, առանց հաչուելու ոսկեղէն և գոնարեղէն զարդերը (ԺՈՒ. 343)։

2037. Նալևան իբր երկու տարի ու կէս մնացած էր Երուսաղէմի պատրիարքութեան վրայ։ Այդ միջոցին հոգ տարաւ Երուսաղէմի, Բեթղեհէմի, Ռէմլէի, Յոպպէի, Դամասկոսի, Եգիպտոսի և Բերիայի կալուածներուն նորոգութեան, պէտք եղած հրովարտակները ստանալով (ԱՍՏ. Բ. 78)։ Անձէտ Տէճէնէ անուն չէյխի մը դէմ գերեզմանատան ստացութեան դատը և ազգային իրաւունքը պաշտպանեց. միւս քրիստոնեաններու ալ օգնեց, և վանքը հարստացուց Եաղուպի բազմաթիւ և թանկագին ընծաներով, որոց ցուցակը տուած է Երուսաղէմի նոր պատմագիրը (ԱՍՏ. Բ. 79)։ Երբ Նալևան կը հեռանար, այլևս արգիլք մը չկար, որ Թէոդորոս Խոլինացին պատրիարքական աթոռ բարձրանար, Շղթայակիրի կամքին համեմատ։ Ուստի Նալևան, իբ պատրիարքութեան հաստատուելէն ետքը, կառավարութեան առաջարկից կամովին հրաժարիլը, և Թէոդորոսի իբեն յաջորդելը, և այսպէս Թէոդորոս Խոլինացի 1752'ին պետական հաստատութեամբ Երուսաղէմի պատրիարք հռչակուեցաւ։ Թէոդորոսի գործունէութեան նախընծայ արդիւնք եղաւ կանոնական բանտ մակագրութեամբ կարգադրութեան մը յօրինումը՝ է քարտ կառավարչին պուրսայ, որուն առաջին ծրագիրը էլեանաօղլ պէյին կազմեցին Նալևանի գլխաւորութեամբ, և Թէոդորոսի առաջեղէն, որուն վրայ նորընտիր պատրիարքն ալ յաւել ինչ ինչ, և Կ-Պոլիս հաղորդեց։ Աւար վրայ Յակոբ պատրիարք և գլխաւորք ազգին ոչխարաց յոյժ, և հաւանութիւննին տուին (ԱՍՏ. Բ. 81)։ Այս առաջին յիշատակութիւնն է Երուսաղէմի համար Կ-Պոլիսէ տրուած կանոնագիրի մը, և չատ հետաքրքրական գրուած պիտի ըլլար, եթէ պատ-

ձէնը պահուած և մուղի ծանօթացած ըլլար։

ԱՍՊԱՇԱՆԻ ԱՔՈՒ

2038. Թէպէտ մթին, բայց դիտողութեան արժանի պարագայ մը կը գտնենք պատմուած Նոր-Ջուղայի առաջնորդութեան վրայ, որուն կոչուած էր Պօղոս Ջուղայեցի, Աստուածատուր Ֆարաջաճեանցին յաջորդելով (§ 2019)։ Պօղոսի մասին կը դրուի, թէ սկիզբները առանց խովսէփեան պաշտօն վարելոյ, բայց 1752'ին, յորմէ ընդունէր իւր պաշտօնին՝ պարտաւորեցաւ հրաժարիլ, յաղթուելով անյնական փոփոխութենէ մը (ՏՃՈ. Ա. 59), որ ճշդուած չէ։ Իսկ ուրիշ տեղ ալ գրուած է, թէ ընկերակից լինելէ է պաշտօնեաներուն (ԽՉԿ. 10)։ Նախ տարեթիւին մասին դիտելի է որ նախ 1752'ին ընդունած տարին էր, ապա ընտրութիւնը 1748'ին եղած կ'ըլլայ, և նախորդը 1745'ին վախճանած լինելով (§ 2020), երեք տարի աթոռը տեղակալով կառավարուած պիտի ըսենք։ Իսկ փոփոխութենէ մը կամ անհրաժեշտ պատճառով ըսել կուտայ որևէ անառակութեան կամ չնութեան մէջ բռնուած ըլլալուն։ Վանքին հայկազունները, Պետրոս, Յակոբոս, Մովսէս և Զաքարիա, քննութեան և դատաստանի կը նստին, և Ջուղայեցոց թուականին 137 նախա 12'ին, կամ 1752 յունիս 30'ին, վճիռ կ'արձակեն, առաջնորդին վրայ նբէրեն ըսպասխութեան, արտաքին առեւանն ալ դործին կը միջամտէ և հազար թուման տուդանքի կ'ենթարկէ։ Պօղոս վանքէն կ'ելլէ և քնակի է պան էրոմ։ Այստեղ կոպտութեամբ և խոսովանութեամբ ապաշխարէ մինչեւ իւր կենաց վերջը, և ժէյ է վախճան կենաց արձակում կը ստանայ, և նորէն ընդհ նմա պոպխ եպիսկոպոսական ասդիճանին (ՏՃՈ. Ա. 57)։ Պատահարը թէպէտ մանաւոր և մարդկային, սակայն մեղի համար կարեւորութիւն ունի նկատել, որ վանական միաբանութիւնը, որուն 5 եպիսկոպոս, 5 վարդապետ, և 10 այրի քահանայ ունենալը ըսուած է (ՏՃՈ. Ա. 60), իւր առաջնորդը կը դատէ ու կը դատապարտէ, աստիճանէն կը զրկէ և ապաշխարութեան կ'ենթարկէ, և առաջնորդը ամենայն հնազանդի։ Կաթողիկոսի անունը չտրուիր, և այս լռութիւնը հնար է վերագրել ժամանակին Պարսկաստանի մէջ տիրող չփոթութեանց։ Բայց անհաւանական չէ ըսել, թէ կաթողիկոսական միջամտութեան պէտքն ալ զգացուած չէ, և միաբանութիւնը իւր իրաւասութեամբ գործած է։ Պօղոսի պաշտօնանկութենէ ետքը վանքին և վիճակին կառավարութիւնը կը սահանձնէ Զաքարիա եպիսկոպոս Տիղինեցի, իբրեւ առաջնորդ (ԽԱՉ. 285), թէպէտ սահանք տեղ մը չըլլար կոչուելէն, լոկ տեղակալ, և ոչ առաջնորդ ըլլալը կը հաստատեն (ՏՃՈ. Ա. 60), այլ ուրիշներ ուղղակի առաջնորդաց չարքին կ'անցընեն Զաքարիայի անունը (ԽՉԿ. 10)։ Երկու տարի ետքը 1754'ին առաջնորդ ընտրուած է Գէորգ Ջուղայեցի (ՏՃՈ. Ա. 61), զի Զաքարիա ալ իւր նախորդին համահանգէս ըլլալուն պատճառով ըմբէ չքաշէ անկան (ԽՉԿ. 10), և նոյն պատժոյն կ'ենթարկուի, որուն ինքն իւր նախորդը ենթարկած էր։

ՄԻՆԱՍԻ ՄԱՀԸ

2039. Մինաս կաթողիկոսի մահը վաղահաս եղաւ, զի և ոչ իսկ երկու տարին կրցաւ լրացնել աթոռին վրայ. օծուած էր 1751 սեպտեմբեր 15'ին, և վախճանեցաւ 1753 մայիս 12'ին (ՇԱՀ. Ա. 229)։ Պատճառը անչուշտ ծերութիւնն տարիքն է։ Մինասին ծերութիւնը պատճառ եղած պիտի ըլլայ, որ իւր դործունէութենէն բնաւ յիշատակութիւն չունինք, և ոմն չէրեան փոփոխեալն հոգեւոր՝ բացատրութեամբ կը լրացնէ Երեւանցին անոր կենսագրականը (ՋԱՄ. 32)։ Բայց ասկէ զատ իրմէ արդիւնք և գովութիւն պէտք է սեպուի էջմիածնի մէջ հաստատութիւն և հանդարտութիւն մտցնելը, և հակառակութեանց ու թշնամութեանց վերջ տալը։ Մարմինը թաղուած է Ս. Գայիանէի վկայարանին բակին ձախակողմը (ՇԱՀ. Ա. 229)։

Տ· ԱՂԵՔՍԱՆԴՐ Բ· ԲԻԶԱՆԴԱՑԻ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

2040· Էջմիածնի միաբանութիւնը Մինասի յաջորդին ընտրութեան համար հաւաքուելով, միևնոյն ոճին հետեւեցաւ, զոր նախընթաց պարագաներու մէջ ալ պահած էր, այսինքն է, Տաճկահայոց մէջ ամէնէն աչքառու դէմքը Մայրաթոռին վրայ բազմեցնել, և անոր փորձառութեամբ ու ազդեցութեամբ հայրապետութիւնը բարձրացնել։ Այդ տեսութեամբ ընտրութիւնը չատ դիւրին էր, և Յակոբ Նալեան պատրիարք անհակառակ կաթողիկոսութեան ընտրելին ընդունուեցաւ, և Տաճկահայոց համաձայնութիւնն ալ ստանալու, և պաշտօնական գործողութիւնները լրացնելու, և իհարկին պատշաճը կարգադրելու համար՝ պատգամաւորութիւն մը կազմուեցաւ, որ 1753 գարնան մէջ հասած կ'ըլլայ Կ-Պոլիս։ Նալեան ոչ մէկ կերպով յանձնառու եղաւ Կ-Պոլսոյ աթոռը թողուլ, որ իրեն իբրև ժառանգութիւն մնացած էր Կոլոսէն, և ուակից միջոց մը հետու մնալէ ետև, նորէն ձեռք անցուցած էր։ Մայրաթոռի հայրապետութիւնն ալ դինքն չհրապուրեց· և ատոնդիւ ալ յաջող և փառաւոր կացութիւն մը չունէր Էջմիածնին, երբ խռովութիւններ կը տիրէին Պարսկաստան, և ճիշդ այդ միջոցին էր որ Ալիմէրտան Լոռիստանի իշխան՝ Աստպահանը կը դրաւէր, երբ Շահռուհ ալ կը չարունակէր թագաւորել Մշէմի մէջ (ԽԱՉ·282)։ Երբոր Նալեան քաշուեցաւ, յառաջ եկող սահմանուններն էին Աղեքսանդր Բարաքաչը և Սահակ Անագինը, պահ մը Գէորգ Դաւիանցիի վրայ ալ խօսուեցաւ, բայց կոստանդնուպոլսոյ մնծամեծներուն և ժողովներուն առջև աւելի Անագինը եղաւ որ խօսեցաւ և յորդորեց, և 1753 յունիս 22'ի ժողովին մէջ բանադատեց Բարաքաչը յանձնառու ըլլալ կաթողիկոսութեան, և բոլոր ժողովականք ձայն և ձեռագիր զոյն կաթողիկոս ընդունեցան (ԴԻՒ·Դ·է)։ Աղեքսանդր Բարաքաչը առիթ ունեցանք յիշել, անդստին կրետացիին օրէն իբրև անոր փոխանորդը (§ 1973), և յետոյ Զահկեցիին օրով իբրև Քիւթիւրի ընկերակիցը նեղութեանց և խոչտանգանաց մէջ (§ 2023), որ վերջէն այլևս չյիշուեցաւ մէկ կողմ քաշուած պիտի ըլլայ՝ ըսինք (§ 2024), և այս անգամ զինքը կը գտնանք Կ-Պոլսոյ մէջ առանձնական կեանք վարող։ Զինք գիտեր թէ Զահկեցիին ձեռքէն խոյս տալով անմիջապէս Կ-Պոլիս եկած է, թէ ոչ ուրիշ տեղեր ալ եղած է, բայց ինչ ալ ըլլայ, վերջապէս Կ-Պոլիս իբր ծննդավայրը քաշուած է ծերութեան օրերը հանդարտ անցընելու համար։ Շատ տեղ Կոստանդնուպոլսեցի մակդիր անունով յիշուած է (ՋԱՄ· 32), բայց մենք նախադասեցինք Բիւզանդացի կոչել, հետեւելով իբր գերեզմանին մակագրութեան մէջ գործածուած յորջորջումին (ՇԱՀ· Ա·230)։ Իսկ Բարաքաչ մականունը որով յիշուած է ստէպ, հաւանականօրէն իրեն տրուած է սև և թաւ յօնքեր ունենալուն համար, թէպէտև կարծողներ ալ կան թէ գերդաստանի ազգանուն է, և Կ-Պոլսոյ մէջ բանասէր կարապետ Բարաքաչեանի ընտանիքն ալ, այժմ հռոմէադաւան, իր ցեղէն կարծած է Աղեքսանդր կաթողիկոսը։

ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՄԱՀԸ

2041· Ինչպէս նախընթացներն ալ կը ցուցնեն, ծերութեան տարիքն ունէր Աղեքսանդր, երբ հակառակ իր մերժելուն և դիմադրելուն ստիպուեցաւ կաթողիկոսական պաշտօնը ստանձնել, և Մայրաթոռին համար աշխատիլ, որուն ի մանուկ հասակէն ջերմեռանդ բաղձանք ըրած էր, գոլով որդի և քնիկ տունն ալեքսանդրեան։ Ինքն կը ներկայացուի իբր այր հեզաբարոյ և պարզամիտ և բազմալեզու (ՋԱՄ· 32), և եթէ տարիքին պատճառաւ հնար չէր իրմէ երկարատև և բազմարդիւն պաշտօնավարութիւն սպասել, գոնէ կաթողիկոսական աստիճանը արդար վարձատրութիւնն էր իր նախկին արդիւնաւորութեանց, և կրած տառապանաց ու տանջա-

նաց, և համեստ երկայնամտութեան՝ հակառակ Ֆիլիբիւրի արկածախնդիր գործունէութեան։ Աղեքսանդր ընտրութեան համաձայնելէ ետքը անմիջապէս Կ-Պոլսէն մեկնած չէ, թերեւս անձնական մի արգելքով, վասն զի առանց ձմեռուան խստութեան նայելու 1753 հոկտեմբեր 14'ին մեկնած է Կ-Պոլիսէ, և քաղաք փառապանծ ճանապարհէ, և ցամաքի ճանապով հասած է Էջմիածին 1754 մարտ 2'ին (Դիւ. Գ. Է.)։ Եւդոկիա հանդիպած տեղն հաստատած է Ծարութիւն Բասենցի եպիսկոպոսին առաջնորդութիւնը։ Էջմիածին հասնելէն քիչ օր ետքը օծուած է 1754 մարտ 6'ին (ՉԱՄ. Գ. 865), ինչպես կը գրեն աւէնքը (ՇԱՀ. Ա. 229), որ կը հանդիպի Տնտեսի կիրակիին։ Ըստ այսմ իւր յիշատակարանին մէջ Տրտէ ամենն Էօրն առաջն գրուած ըլլալը, չվոխուիլն սեպելու է, զի ինքն ալ կը յիշէ, թէ յաջորդ Տնտեսի կիրակին օծեցին, որով եղաւ գնտեղ Աբրահամ (Դիւ. Գ. Է.)։ Տարիւկէս ապրեցաւ Աղեքսանդր աթոռին վրայ, և կնանքը կնքեց միւս տարին, 1755'ին Հրեշտակապետաց չաբաթ օրը, որ կ'իյնար Նոյեմբեր 11'ին (ՇԱՀ. Ա. 230), և թաղուեցաւ Մայրտաճարին դրան մօտ, զանգակատան ներքև, հարաւակողմը, որուն հանդիպակաց հիւսիսակողմը թաղուած էր Աղեքսանդր Ա Ջուղայեցի, որ 41 տարի առաջ նոյն ամսուան մէջ վախճանած էր Նոյեմբեր 22'ին (ՇԱՀ. Ա. 224)։ Անպղակի յիշեմ, թէ 1888 մայիսին, երբոր Էջմիածինի ներքին բակին յատակը ցածցնելու պէղտումներ կը կատարուէին, Աղեքսանդրեանց գերեզմանները ալ աւելի խոր իջեցնելու պէտք տեսնուեցաւ, և Մակար կաթողիկոսի հրամանով, և Ներսէս Խուդավերդեան ու Մամբրէ Սանասարեան եպիսկոպոսներու հետ՝ ես ալ անձամբ աշխատեցայ անոնց ոսկորներուն օրինաւոր վերադրման և չորիմներուն կանոնաւորապէս փակուելուն։ Աղեքսանդր Բիւզանդացիին գործունէութեան գալով՝ գլխաւոր դիպուած կամ նշանաւոր չինուած մը չունինք յիշատակուած, և երեսանեցին ալ կը բաւականանայ ըսելով, թէ «ան և զբօնեաց հոգեպարել ի չքնաղ պրէզ պատուոյ» (ՉԱՄ. 32)։ Միջադէպ մը չպատմուիլը, իւր օրերուն Մայրաթոռի մէջ խաղաղութիւն տիրելուն նշան պիտի ընդունուի, և իրեն համար ալ, խոհական վարչութեան փաստ պիտի նկատենք այդ պարագան, ինչպէս իւր նախորդ Մինասին համար ալ ըսինք (§ 2039)։ Դժբախտաբար տարիքնին առած ծերունիներ սկսած էին դրաւել Մայրաթոռը, որոնք ոչ երկարատև պաշտօնավարութիւն կ'ունենային, և ոչ ժիր գործունէութիւն կը խոստանային։ Աղեքսանդրի կանոնաւոր վարչութեան նշան պէտք է սեպել, օծուելէն քիչ ետքը, 1754 ապրիլ 5'ին, որ զատկին երրորդ օրուան կը հանդիպի, յաւուրս տոմար մը հաստատելը՝ հասոյթներն ու ծախքերը գրելու, որ և ցարդ կը պահուի՝ իբրև առաջին նմոյշ Մայրաթոռի կանոնաւոր հաչուակալութեան (Դիւ. Գ. Է.)։

2042. ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Աղեքսանդրի մահուանէ ետքն ալ Մայրաթոռի միաբանութիւնը կրկնեց իւր առաջին վստահքը, հայրապետական աթոռի վրայ տեսնել Ցակոբ Նալեան պատրիարքը, թէ՛ կարողութեամբը և թէ՛ արդիւնաւորութեամբը յայտնի, և միանդամայն տակաւին 54 տարեկան, ժիր գործունէութեան տարիքին մէջ։ Այդ փափաքին իրականացման համար Կ-Պոլիս յղուած պատգամաւորութեան գլխաւորն էր Սիմէոն եպիսկոպոս Երեւանեցին։ Միաբանութիւնն աչքը Նալեանի վրայ էր դրած, բայց նեթէ նա նորէն մերժէր, երկրորդ ընտրելի ցուցուցած էին Սահակ Անադինը, միշտ նոյն տեսութեամբ, Տաճկահայերէն աւելի աչքառու անձը բերելու համար։ Սիմէոն Կ-Պոլիս հասաւ 1756'ին սկիզբները, և Նալեան միեւնոյն վերջնական և վճռական մերժումը՝ դիմադրեց, և ոչ մի կերպով յանձն չառաւ Կ-Պոլսոյ պատրիարքութիւնը Մայրաթոռոյ կաթողիկոսութեան հետ փոխանակել։ Կ-Պոլսեցիք ալ չատ վրայ տուած չեն երեւնար, Նալեանի պէս պատրիարք մը ձեռքէ հանած չըլլալու համար։ Պատրիարքը մեծամեծներու ժողովը հաւաքեց, որոնք կաթողիկոսութեան արժանաւոր նկատեցին Սահակ Անադինը, համաձայն Մայրաթոռոյ միաբանութեան որոշման, և 1756 վերադրուարին կաթողիկոս նչակուեցաւ (ՇԱՀ. Ա. 229),

թէպէտ Սահակ, որ ուրիշ անգամներ ալ հրաժարած էր, այս անգամ ալ ոչ մի յօժարութիւն չէր ցուցներ, և ակամայ կամօք հաւանութեան բռնադատուեցաւ։ Թէ՛ բուն Սահակը համոզելու ստիպողական պատճառներուն կարգին, նկատի առնուեցան Սիմէոն Երևանեցիին և Զմիւռնիոյ առաջնորդ Աբրահամ Աստապատցիին ձեռքի տակէն հանած դժուարութիւնները, որոնք մեծ համակրութիւն չէին գտած մայրաքաղաքին Հայութեան մէջ։ Այսպէս թէ այնպէս Սահակ վերջնապէս կաթողիկոս ճանչցուեցաւ, ըստ այսմ ալ էջմիածին ծանուցուեցաւ, ուր իրր տեղակալ գործի գլուխ կը մնար Շահախեցի Յակոբ եպիսկոպոսը, զոր յիշեցինք իբրև Զահկեցիին հալածուան անձերէն մին (§ 2024)։

2043. *Սահակ, բնիկ Խորձենացի կամ Կեղեցի, Կոլոտի յառաջադէմ աշակերտներէն էր, ցուցակին մէջ հինգե-*

ԱՇԱԳԻՆԻ ԸՆԹԱՑՔԸ

րորդ նչանակուած, Նալեանէն անմիջապէս ետքը և Ահէփէն մականուն ստացած ուժեղ ձայնին համար, սակս ահէփեպէ և փոլաբէթոս փոթղէլոյն ղեկն կ'ենոց (ՍՐԳ.)։ *Բայց տեսլեամբ և կազմով ալ անագին եղած պիտի ըլլայ, զի Պետրոս Տէր-Յովհաննէսեան Կարնեցի քահանան, որ կարնոյ Ս. Լուսաւորիչ վանքին նորոգութեան առթիւ, Սահակի գերեզմանը բանալու առիթ ունեցած էր, ինձ բերանացի վկայած է թէ սովորականէն մեծ են եղած անոր ոսկրները։ Սահակի գործունէութեանէն ինչ ինչ յիշուեցաւ պատմութեանս կարգին, և դէխաւորապէս Զահկեցին տապալելու համար կ-Պոլսէ պատուիրակ ղրկուելը* (§ 2024)։ *Էջմիածինէ ևրթ դառնալը յայտնի չէ, բայց 1754'ին դինքն Զմիւռնիոյ առաջնորդ կը տեսնենք* (ԴԱԼ. 260), *ուսկից 1755'ին կ-Պոլիս կու գայ* (ԴԱԼ. 276)։ *Սահակ որ թէ Զահկեցիին պարագային* (§ 2025) *և թէ Բիւզանդացիին ընտրութեան առնն* (§ 2040) *խոյս տուեր էր կաթողիկոսական աթոռէն, այս անգամ ալ կարծես թէ միևնոյն միտքին վրայ կը մնար, թէպէտ պաշտօնապէս յանձնառու կ'ըլլար կաթողիկոս ձանչցուիլ։ Ձեռնթե՛լ կ'ըսենք, զի արդեամբ և իրօք կաթողիկոս չեղաւ Սահակ, և ոչ ալ կաթողիկոսութիւն վարեց, զի օծումն ալ չընդունեցաւ։ Այս ու այն պատճառաբանքներով ուղեւորութիւնը ուշացուց, և տակաւին «մ ն և ոխս ննն կ-Պոլիս մնաց* (ՁԱՄ. Գ. 865), *որ է ըսել թէ այնտեղ կը գտնուէր մինչև 1757 տարւոյ վերջերը, իբր ընտրեալ կաթողիկոս, և ոչ տիրապէս կաթողիկոս, ոչ ալ պաշտօնական գործունէութիւն կատարելով։ Վերջապէս ամէն կողմէ եղած դիտողութեանց վրայ, և հրէշելի քաղաքին Հայոց կ-Պոլիսէ մեկնեցաւ, և անուշտ չտապեց, այլ քաղաքէ քաղաք հանդիսաւորէն հանդիստ առնելով հասաւ Կարին, և սահմանագլուխը անցնելու դանդաղելով տեղաւորուեցաւ կարնոյ Ս. Լուսաւորիչ վանքը՝ Մուտուրկա գիւղի բարձունքին վրայ։ Սահակի հոն հանդիլը իջեալ է դնել 1758 տարւոյ գարնան միջոցին, ուսկից այլևս չտեղացաւ. առնը անցուց կարնոյ Ս. Լուսաւորիչ և Հինձքի կարմիր վանքերու մէջ տարուբերելով իր բնակութիւնը։ Այսպէս տարիուկէս ևս այնտեղ մնաց, մինչև որ թէ էջմիածնի և թէ կ-Պոլիս անոր յամառ դանդաղկոտութիւնը տեսնելով, որ ոչ Մայրաթոռ երթալ յանձն կ'առնէր, և ոչ պաշտօնապէս ստանձնած աստիճանէն կը հրաժարէր, ստիպուեցան երկու կէզրոններ իրարու հետ բանակցութեան մանել, և համաձայնութիւն գոյացուցին Անագինէ ձեռք քաշել, երած ընտրութիւններն չեղեալ համարել, և նոր կաթողիկոսի ընտրութիւն կատարել։ Սահակի ընտրութիւնը կատարուած էր 1756 փետրուարին, իսկ նոր ընտրութիւնը տեղի ունեցաւ 1759 օգոստոսին, որով երեքուկէս տարի աթոռոյ պարապութիւն մը տեւեց, պարզապէս Սահակի անօրինակ ընթացքին համար։*

2044. *Իրաւ ալ պատմութեան մէջ անօրինակ է, որ բարձր պաշտօնի ընտրուած անձ մը, թէպէտ դժկամակութեամբ, բայց վերջապէս պաշտօնապէս իրեն*

ԵՆԹԱԴՐԵԱԼ ՇԱՐԺԱՈՒԹՆԵՐ

տրուած աստիճանն ու պաշտօնը յանձն առնելէն ետքը, տարիներով վրան պահէ այդ անունը, առանց անոր պայմանները լրացնելու, և առանց իսկ զայն պաշտօնապէս և վճռապէս վրայէն նետե-

լու. այլ անունը պահէ, գործն ալ կէսկատար կերպով կատարէ, և մանաւանդ անոր պատկանեալ հասոյթներն ալ գանձէ, առանց պաշտօնավայրը երթալու, և առանց պաշտօնին տէրը դառնալու։ Անմեկնելի հոգեբանական վիճակ մը կը տեսնուի Սահակի վրայ, և այնչափ աւելի մթին, որչափ իրեն վրայ խօսող ժամանակակիցներ որոշակի չեն բացատրեր, թէ ինչ էր Սահակի գաղտնի մտածմունքը կամ ծածուկ չարժառիթը, որով այսպիսի տարօրինակ ընթացքի մը կը հետեւէր։ Եթէ պաշտօնին պատասխանատուութեան երկիւղածութիւնն էր, վերջին անգամ ալ կրնար բացարձակապէս հրաժարիլ, ինչպէս երկու անգամ ըրած էր։ Եթէ Պարսկաստանի խռովեալ վիճակն էր, ինքն ալ կրնար պարագայէն օգտուելով էջմիածինի մէջ քաչուած դիրք մը ստեղծել, ինչպէս ըրած էին Մինաս և Աղբանդը։ Եթէ միաբաններուն հակառակութիւնէն կը խրթար, և գլխաւորապէս Սիմէոնի և Աբրահամի և անոնց հետեւողներուն ազդեցութենէն, կամ պէտք էր իսպառ հրաժարիլ, և կամ տեղւոյն վրայ անոնք ընկճել լիակատար իշխանութեամբ, և ոչ ինքզինքը անոնցմէ մերժուելու վտանգին ենթարկել, ինչ որ իրօք տեղի ունեցաւ։ Եթէ Սահակին նամակները գտնուէին կամ հրատարակուած ըլլային, հնար էր անոնց վրայ ուսումնասիրութիւն կատարել, բայց այդ աղբիւրն ալ չունինք ձեռնընխս։ Ջամչեան, որ ժամանակակից մըն է, տեղ մը կը յիշէ, «ըզհե յայո է ի ընդոց նոցա, Յակոբ Շամախեցիի նամակներուն ակնարկելով (ՋԱՄ. Գ. 865). բայց ասոնք ալ մենք չենք տեսած, և միայն Ջամչեանի վստահանալով չենք կրնար հաւաստել, թէ Շամախեցին Անագիսի գրած ըլլայ. «Մի՛ եկիցես այդ, իբր զի տեղական իշխանաւորներ վանքը կը նեղեն, և երբ եկիցես այժմ, սասեալ նեղեսցեն զքեզ և զեղբ» (ՋԱՄ. Գ. 865)։ Ճաիկա միտքերը գոհացնող մեկնութիւն մը չէ, մանաւանդ թէ պէտք էր որ Սահակ յորդորուէր, տեղւոյն վրայ հնարաւոր դարմանները հոգալու, քանի որ ինքն էր գործերուն պատասխանատուն։ Անձնական տակաւրութիւն ալ ենթադրելու տեղի չկայ, զի ընտրութենէն ետքը, հօթը տարի ևս ապրեցաւ, որ զոնէ ընտրութեան առնն տկարութիւն ունեցած չըլլալը կը ցուցնէ։ Ինչպէս կը տեսնուի, ենթադրելի պատճառներէն և ոչ մէկը հաւանական չըլլալով, ստուգապէս անբացատրելի կը մնայ Սահակի հոգեբանական վիճակը, և սեւեռեալ գաղափարէ կամ մելամաղձոտ վիճակէ տարբեր չարժառիթ մը դժուար է գտնել իր տարօրինակ ընթացքին։

2045՝ Դալով Սահակ Անագինի հայրապետական աթոռին հանդէպ ունեցած դիրքին, սովորական ցուցակներուն մէջ անոր անունը կը տեսնենք կաթողիկոսական շարքին անցած, Սահակ ե կղեցի կոչմամբ, իբրև օրինաւոր և իսկական կաթողիկոս (ԺԱՄ. 640)։ Սակայն մեր տեսութեամբ հնար չէ իբրև օրինաւոր կաթողիկոս ընդունիլ մէկ մը, որ ոչ օծում է ստացած և ոչ հայրապետական աթոռի վրայ բազմած, և ոչ ալ տիրապէս կաթողիկոսութիւն ըրած։ Այս մասին մեզի ձայնակից կը գտնենք երեւանեցին ալ, որ անոր անունով գլխակարգութիւն չկազմեր (ՋԱՄ. 32), և Շահխաթունեանը, որ անոր անունն իսկ ծանօթութեանց մէջ կը թողու (ՇԱՀ. Ա. 230)։ Սահակ ինքն ալ հայրապետական ոչ մի գործի ձեռնամուխ եղած չէ, եպիսկոպոս ձեռնադրած չէ. կ'երեւի թէ կոնդակ իսկ տուած չէ. միայն գոհացած է աստ անդ յանուն կաթողիկոսութեան եղած իրաւունքները և հասոյթները գանձել, թէպէտ էջմիածին անոր բան մը ղրկած չերեւիր։ Երբոր իր վրայէն ձեռք քաչելու և կաթողիկոս մը ընտրելու միտքը հաստատուեցաւ, Աստուածատին կարին ղրկուեցաւ որպէս զի «ասցէ ի Սահակայ զնշանն հասից կաթողիկոսութեանն» (ՋԱՄ. Գ. 686). այլ կ'երեւի միայն հաշիւը առնելու, և ոչ թէ գանձուած գումարները ետ պահանջելու համար. որպէս զի գիտնան թէ ինչ գանձուած է, և ինձ գանձելի կը մնայ, որպէս զի ըստ այմ կանոնաւորութիւն ապագային մէջ։ Սահակի վրայ հինգերորդ թուականարին կիրառութիւնն ալ աւելորդ կը սեպնենք, զի այդ թուարկութիւնը օրինաւոր կը գտնենք միայն գահակալներու և աթոռակիցներու վրայ. իսկ Անագին ոչ մէկն եղաւ և ոչ

միւսը։ Սովորութիւն է թուարկեալ համարը պահել ևս երբոր իսկապէս մէկէ մը գործածուած է, ըլլայ օրինաւոր ըլլայ ապօրինի կերպով. իսկ Սահակ Անագիկի ատեն թուարկութեան սովորութիւնը չկար, և կիրառութիւնն ալ չեղաւ, ուստի պէտք ալ չէ հինգերորդ թուահամարը լրացած և փակուած կարծել. և եթէ ապագային Սահակ մը ընտրուի, անոր կը մնայ Սահակ Ե կոչումը գործածել։ Այս սկզբունքով Աղեքսանդրի մահէն 1755 նոյեմբեր 11'էն (§ 2041), մինչև նոր կաթողիկոսին օծումը 1759 նոյեմբերին, աթոռոյ պարապութեան միջոց կը հաշուուի՝ չորս տարի կատարեալ, որ միջոցին տեղապահութիւնը վարից Ծակոր Շամախեցի եպիսկոպոսը (§ 2042)։ Իսկ մենք նոր կաթողիկոսին ընտրութեան չանցած, պէտք է յառաջ բերենք միւս աթոռներուն անցքերը՝ Աղեքսանդրի ընտրութեան ժամանակէն սկսելով։

ՍԱՐԱՖԵԱՆԻ ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐԸ

2046. Ծիշեցինք իր կարգին Սարաֆեան Սարգիս եպիսկոպոսը, կոլոտի աչակերտներէն (ՍՐԳ.), որ Գաղատիոյ առաջնորդութիւնն էտքը, երուսաղէմի նուիրակութիւն էր ըրած, և թէպէտ ամբաստանուած իր արդիւնքին անհաւատարիմ, սակայն Նալեանի չնորհիւ վճարած դումարին համար Շղթայակիրէ մուրհակ մը ստանալով (§ 2001), չիտակ Ջմիւռնիա էր դարձած, և աւելի ապահով սեպած Արեւմուտք երթալ Լատինները օգտուելու համար։ Սարգիս 1744'ին չիտակ վիւնետիկ կու գար (ԳԱԼ. 48), միւս տարին 1745'ին Հռոմ կ'անցնէր, և երկու տարի այնտեղ մնալէ ետքը, 1747'ին կրկին վիւնետիկ կը դառնար, և տպագրութեան ու հրատարակութեան ձեռնարկին կը հետեւէր, իրեն համար յատուկ տառեր ալ պատրաստել տալով (ԳԱԼ. 50)։ Սարաֆեան այդ ձեռնարկին մէջ անչուշտ նիւթական չահուն մտադրութենէն ալ հեռու չէր, և դէ յոյն ֆոթ՝ ինչ էր բռնած ըլլէր. նպաստներ գտնելու հետամուտ էր, բայց այն կամ նոր այլ յոյնէրէն (ԳԱԼ. 51)։ Արեւմուտք իր կարծած բախտը իրեն չէր տուած, անոր համար նորէն Հռոմ ու Լիվոռնօ հանդիպելով, 1754 գատիկէն ետքը կը դառնար Ջմիւռնիա, Սանակ Անագիկի առաջնորդութեան միջոցին (ԳԱԼ. 55)։ Սարաֆեանի ներքողաբանը հռոմէադաւանութեան դէմ, այսինքն քարոզիչ ըլլալու նպատակը կու տայ անոր Արեւելք դառնալուն (ԳԱԼ. 258), սակայն Սարաֆեանի ձեռնասունը, աւելի անկեղծ, կը խոստովանի, թէ պալբեալ ոսկեաց արծաթոյ սոփ, զոր ի պեսալ անդ ընդեան յերանոս, որոշէր ընդալ էոդս վիվինեցիկ, ըստալ ֆռանկ զհայբենաց բնիկ (ԳԱԼ. 53), այսինքն դրամի բախտը փնտռելու համար կը դառնար, և ոչ թէ ուրիշ նպատակով։ Սարգիս Ջմիւռնիայէ Պրուսա՝ և անկէ կ-Պոլիս եկաւ, մայրաքաղաքը աւելի յարմար գտնելով իր չահադէտ նպատակին. և նախ Նալեան պատրիարքը, իր հին ընկերակիցը չտեսնելով, որպէսզի իրեն կռուան մը կազմէ։ Բայց կարծել թէ Սրբէն՝ ճոխ պարբերութեամբ իր հռոմէական տարօրինակութիւնները (ԳԱԼ. 275), բոլորովին չը ճանչնալ է Նալեանի անձը, բանիւ և գրով հռոմէադաւանութեան դէմ մաքառողը, և հայադաւանութեան եռանդուն պաշտպանը, թէպէտ խոհական միջոցներով։ Նմանապէս Սարգիսի վրայ ծանր կասկածներ յուզուելէ, և նորա ֆռանկոլիեան և պատրիարքական աթոռի թեկնածութեան մասին զրոյցներ չրջելէ, և այդ մասին քննութիւններ կատարուելէ ետքը Սարգիսի պաշտօնի անցնելը, և պատրիարքական հաստատութեամբ Ռոտոսթոյի առաջնորդ երթալը (ԳԱԼ. 68), յայտնի կը ցուցնեն, թէ նորա վիւնետիկ և Հռոմ երթալով հռոմէադաւանութեան յարելէն ետքը, ետ դառնալով Նալեանի ձեռքին ներքեւ նորէն պատրիարքարանէ առաջնորդութիւն ընդունիլը, կրկին հայադաւանութեան համակերպելուն և հնազանդելուն արդիւնքն է։ Աւելի ուրիշ բան չցուցնեն, բայց եթէ Սարաֆեանի յեղյեղուկ ընթացքը, զի որ կողմէ բախտ մը կամ դիւրութիւն մը կը յուսար՝ այն կողմ կ'անցնէր։ Այդ բանը իրմէ զատ ուրիշ Հայ եկեղեցականներու վրայ ալ կը նշմարուէր այն աստն, երբոր իրենց ձգտումներուն կամ ակնկալութիւններուն յագուրդ չէին գտներ։ Սամուէլ Երզնկացի վարդապետ, Նալեանի փոխանորդը, միջնորդի դերը վարած է Սարաֆեանը Նալեանի հաճելի ընելու (ԳԱԼ.

59)։ Իսկ Սահակ Անագիմէ՝ Սարգիսի դէմ քննտական ընթացք կը վերագրուի, և չունք վարանիր վեզարակիցներու իրարու դէմ նախանձաբեկ քայլեր վարելնին ընդունելի, բայց այս պարագայով եւս քանզի եւս կը չեշտուի, թէ Նալեան հոռմէադաւանութեան մօտեցած չէ, այլ Սարգիս հայադաւանութեան գաղտնապէս օգտակարագոյն գտած է։

ՍԱՐԱՖԵԱՆԻ ԸՆԹԱՑՔԸ

2047. Սարգիս Սարաֆեան Իոռոսէոյի առաջնորդութեան անցնելով, ինքզինքը ապահով սեպեց նորէն գոյն փոխել, և համաբձակեցաւ իսկ խիստ ոճով նամակ մը գրել Յակոբ Նալեան պատրիարքին, որ այնպիսի պարտնակութիւն ունէր, լոյծ ի նախոյ էր, և որ ինչ ինչ ծանր էր (ԳԱԼ. 68), ինչպէս իր ձեռնասունն ալ կը խոստովանի։ Ասոր հետեւանքը կ'ըլլայ Սարգիսի համար աքսորի հրամանք, և կը ձերբակալուի կ-Պոլիս գալուն, սակայն կ'ուզէր իր ըրած սխալները դարմանել՝ սակայն չկրնար մտադրութիւնը իրականացնել։ կ-Պոլսոյ մէջ Սիմէոն Երեւանեցի վարդապետէ հերնակալութիւն գրաւնելն ալ (ԳԱԼ. 279), մեզի համար նչան է Սարգիսի անգամ մըն ալ հայադաւանութեան ծացը ապաւինելուն, որ ուրիշ կերպով հնար չէր Սիմէոնի միացքն ու համոզումներն ունեցողի մը՝ հոռմէադաւանութիւն քարոզողին պաշտպան կանգնիլ։ Միչտ Սարգիսի յաղթուկ ընթացքին նչաններն են, որ դիմացինս կ'ելլան։ Սարգիս ձերբակալուած և ձիու վրայ ուղերէն չդիմացուած Իոռոսէոյ, անկէ ալ նաւով Տարսոն նէդի նեղուցին վրայ Գազոզինար կը տարուի, ապասելով որ կիպրոսի Մաժաս ամբոցը տանող նաւ գտնուի։ Այդ միջոցին բարեկամներու և նիւթական նուէրներու և Սարգիսի մօր թախանձանքներուն չնորհիւ, հրաման կը տրուի ապստրակայրը Քիոս կղզին փոխել, և առանց բերդարգելուի հան գաղա քողուլ, ինչպէս ալ կը գործադրուի (ԳԱԼ. 283)։ Այդ եղելութիւնները պէտք է դնել 1756'ին, որ է Սիմէոն Երեւանեցիին կ-Պոլիս գալուն թուականը (§ 2042)։ Սարգիսի Քիոսի մէջ մնացած ժամանակը ձգտուած չէ, բայց երկար եղած պիտի չըլլայ, զի իրեն պաշտպաններ գտնուած են կ-Պոլսոյ մէջ, որ պատրիարքն ալ համոզուցած են զայն Եւդոկիոյ առաջնորդ անուանելով աքսորավայրէն ազատել, և այնպէս ալ եղած է։ Բայց Սարգիս նախ կ-Պոլիս գալով, հոն մնացած է (ԳԱԼ. 284)։ Այստեղ ալ աւելորդ չըլլայ դիտել տալ, թէ անշուշտ Սարգիս իր հայադաւանութեան համար յայտարարութիւններ ըրած և վաստհութիւն ներչնչած է, որ իրեն պաշտպան ամիրաններ գտնուած են, և Նալեան ալ նորէն զայն առաջնորդութեան կոչելու համած է։ Սարգիս տկարութիւն պատճառելով կ-Պոլիսէ մեկնած չէ, և Եւդոկիոյ առաջնորդութիւնը տարի մը փոխանորդով իր վրան պահած է, մինչեւ որ վերջնապէս հրաժարելով կ-Պոլսոյ մէջ հաստատուած է՝ եկեղեցիէ եկեղեցի փոխադրուելով քարոզչական պաշտօնով, ինչպէս Սամաթիոյ Ս. Գէորգը, Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչը (ԳԱԼ. 301), Գալաթու Ս. Հրեշտակապետը (ԳԱԼ. 305), դարձեալ Ղալաթիա (ԳԱԼ. 306), և նոյն իսկ վասփորի եկեղեցիները (ԳԱԼ. 301)։ Սարգիս չկրնար չատերուն համակրութիւնը գրաւել, որով իրեն նուիրուհուցան Յակոբ պատրիարքէ և Սիմէոն եւ պիսկոպոսէ ըրած փոխառութիւնները, մինչեւ իսկ աքսորի առթիւ ըրած ծախքերուն փոխարինութիւն տուցաւ (ԳԱԼ. 300)։ Առանց ուրիշ կերպով չէին կրնար իրականացնել, եթէ ոչ կրկին հայադաւան լինելը և բաչխաւորելով, և ոչ թէ ինքզինքը հոռմէադաւան ցուցնելով, ինչպէս իր ներքոզրաններն կ'ուզին ենթադրել։ Մանաւանդ չէին ալ պակսիր Սարգիսի վրայ կասկածով նայողներ, և անոր քարոզներուն հետեւողներ՝ հայադաւանութենէ օտար բան մը կամ խօսք գտնելու համար, որ կարենան զինքը բամբասել (ԳԱԼ. 304)։ Ու եթէ Սարգիս գիտէր ինքզինքը տարիներով վտանգէ ազատ պահել, ուրիմն հոռմէականութենէ ալ հեռու կը մնար այլևս, ցորչափ հայադաւանութիւնը իր չանպէտ ձգտումները կը գոհացնէր։

2048. Կոստանդնուպոլսոյ վրայ խօսած առնն, անհնար է լռութեամբ անցնիլ մայրաքաղաքին մեծամեծները, որոնք մեծ ազդեցութիւն և գրեթէ տիրապետութիւն կը վայելէին ազգային կեանքին և ազգային

դործերու վրայ։ Արդէն առիթ ունեցանք յիշատակել Սեղբեստրոս Երուսաղեմացին (§ 1947), Յակոբ Յովհաննէս Նէսեանը (§ 2036), կամ սովորական կոչմամբ Սեղբոս և Եղուպէ ամիրաները, որոնց երկրորդը սպրտալի մահ ունեցաւ, իսկ Սեղբոս խաղաղութեամբ վախճանեցաւ 1754 փետրուար 5'ին, Ս. Յակոբ Պարթևի չարաթ օրուան երեկոյին (ԱՍՏ. Ա. 82)։ Այդ մեծամեծներ, ոչ յատուկ ընտրութեամբ և ոչ պաշտօնական անուանումամբ կը վայելէին այդ իրաւունքը, այլ իրենց դիրքով և իրենց դրամական կարողութեամբ՝ ազդեցութեան տէր կը դառնային։ Տանիկ պաշտօնեաներ, մեծ նպարքոսէն ընտկելով, իւրաքանչիւրը իւր ներքին դործակատարը կ'ունենար, որ իրեն վաճառատեղ կամ սեղանաւորն էր, պէտք եղած առեն պահանջուած գումարները հայթայթելու կամ հրամայուած ծախքերը ընելու պաշտօնով, և փոխադարձաբար ամէն կերպերով իրենց գլխաւորին համար դրամ ճարելու իրաւունքներով։ Այդ իրաւունքները կարդ ու կանոն, չափ ու կոպար չունէին։ Արդարութիւնը ծամածռել, պաշտօնները վաճառել, պաշտպանութիւնը սակարկել, և նմանօրինակ դործեր՝ այդ վաճառապետներուն ձեռքով կը կատարուէին, որք ոչ միայն իրենց պաշտպանը կը հարստացնէին, այլեւ իրենք կ'օգտուէին, և երբ իրենց պաշտպանը բարձր դիրքի հասնէր, իրենք ալ ըստ այնմ ազդեցութեան և իշխանութեան տէր կը դառնային, և ազգային չրջանակի մէջ ալ իրենց կամքը կը քալցնէին։ Բայց որովհետեւ անհատատ էր պետական պաշտօնեաներուն դիրքը, և անոնց հետ տապալումներ և ոչնչացումներ սովորական էին, ազգային մեծամեծներն ալ նոյն բախտին ներքեւ կ'իյնային, և դանդատ չէին իրենց գլխով և գոյքով՝ իրենց գլխաւորին անխուսափելիները քաշող, և անոնց հետ տապալուող և ոչնչացող Հայրապետական օրինակները, ինչպէս Եղուպէի համար պատմեցինք (§ 2036)։ Ժամանակիս գլխաւորներուն մէջ կը յիշուին Ղազար Ակնեցի, և Պետրոս Ալեքսանեան՝ կամարակապի ընկերներ և նպարքոսական վաճառապետներ

ԱՄԻՐԱՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ

(ՊԱՍ. 10), Մաթոս Վքթ֊ոց ոսքֆոց, այսինքն սեղանաւորներու արհեստապետ (ԴԱԼ. 278), որ Նալեանի թիկունք էին. Աբրահամ Քուլէլեան, Միմէոն Աատուբեան, Մարտիրոս Զօպանեան կամ Հովսեան, Գասպար Մուրատեան և Պաղտասար Մուրատեան (ԴԱԼ. 70), որոնք իբրեւ մեղմ ընթացքի պաշտպաններ կը յիշուին. Պետրոս Պուռունսուզեան, Մուրատ Մուրատոդլու և Փիլիպպոս Մուրատեան, որ էջմիածինի հետ յարաբերութեան մէջ էին (01 ՕՐԱ. 143). Պաղտասար Սրմաքէշ և Միքայէլ Տիւզեան, հռոմէականութեան հակամէտներ ըլլալով մէկտեղ, խօսքով կը մերժէին իրր ղղզըփռնիչն ամբապանդլոց (ՉԱՄ. Գ. 868)։ Մենք հետամուտ չենք ատոնց իւրաքանչիւրին գործունէութիւնը առանձինն պատմել, միայն անունները քաղեցինք իրր յիշատակ։

2049. Երուսաղէմի պատրիարքութեան բարձրացած տեսանք Թէոդորոս Խորենացին 1752'ին (§ 2037)։ Իրեն օրով կատարուած իրողութեանց գլխաւորն է զանազան ազդերու մէջ յուզուած սեփականութեանց նոր վէճը։ Լատինները 1756'ին Գաղղիոյ դեսպանատան ձեռքով հրամանագիր մը ձեռք ձգեցին Աատուածածնայ եկեղեցին նորոգելու և սեփականելու համար։ Յոյները իսկոյն բողոքեցին, իրենց հին հրովարտակները ներկայացուցին, և լատինները ձեռք անցուցած տեղերնէն արտաքսելու նոր հրովարտակ առին 1757'ին, յատուկ պաշտօնեայ մըն ալ ղրկել տուին Կ-Պոլիսէ, որ Երուսաղէմ երթալով 1758'ին լատինները հանեց Ս. Աատուածածնայ և Ս. Յարութեան եկեղեցիներէն, և հոկտեմբեր 7'ին Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցիէն (ԱՍՏ. Բ. 84)։ Յոյներ ստացած հրովարտակնուն սահմանն անցնելով, յատուկ պաշտօնէին ձեռքով Հայերն ալ վերադարձին յիշեալ սրբավայրներուն, և պէտք եղաւ որ Թէոդորոս պաշտպանութեան ձեռնարկէ։ Կարեւոր փաստերը հաւաքելով և տեղական դատաւորէն տեղեկագիր առնելով, Կ-Պոլիս հաղորդեց։ Նալեան պատրիարք գործը ստանձնեց, և 1759'ին Մուսթաֆա Գ սուլտանէն նոր հրովարտակ ստացաւ Հայերու սեփականութեանց հա-

մար, և ըստ այնմ Հայերուն վերապարձուեցան իրենցմէ յափշտակուած տեղերը (ԱՍՏ. Ա. 87)։ Այդ յաջողութեան աշխատողներ եղան Ղազար Ակնեցի և Պետրոս Կամարակապցի ամիրաներ, և Գրիգոր վարդապետ Պասմաճեան Թոզդրոսի փոխանորդը Կ-Պոլսոյ մէջ (ՊԱՍ. 11)։ Իսկ վէմերը և չփոթները հինովին չվերջացան։ Դամասկոսի կուսակալները փոփոխակի Լատիններէ և Յոյներէ կաշառուելով խնդիրները չվերջացուցին. երուսաղէմացի Տաճիկներուն անհին պահանջումներուն կարեւորութիւն տուին, քրիստոնեաները նեղեցին, Հայերն ալ այդ երեսէն տագնապներ կրեցին, ծախքերու պարտաւորեւցան, պարտքերու ներքեւ ինկան, և կուսակալներու կողմէն բարդուած պարտքերուն հանդէպ անբաւական գտնուեցան։ Թէոդորոս պատրիարք երկարօրէն կը գրէ այդ ամէնը 1760 մայիս 13'ի ընդարձակ նամակով (ԱՍՏ. Բ. 91—96), և Կ-Պոլսոյ պատրիարքարանէն օգնութիւն և պաշտպանութիւն կը խնդրէ։ Կը յիշէ ևս երուսաղէմի գանձանակին էջմիածինի գանձանակէն տարբեր դասուած ըլլալը, որ վնաս կը բերէր Սուրբ Տեղեաց նպատակներուն, և կ'ազդարարէ ևս որ Երուսաղէմի մասին պատրիարք և խորհրդականներէ չկնքուած գրութեանց կարեւորութիւն չտան (ԱՍՏ. Բ. 96)։ Այդ պարագաներ գոնէ մեզի ցոյց կու տան ժամանակին տեղի ունեցող զեղծումները։

2050. Մեր ձեռքը գտնուած աղբիւրներ և յիշատակներ չատ աղքատ են միւս աթոռներու պատկանեալ տեղեկութեանց վրայ։ Պատմեցինք արդէն, թէ Միքայէլ Աղապահեան Կ-Պոլիս կը գտնուէր երբ իւր եղբայրը կը մեռնէր (§ 2008), և իբր արդէն օծեալ կաթողիկոսակից՝ կը փութար աթոռը գրաւել։ Միքայէլի կեանքէն կը յիշուի ուրիշ երկու անգամներ ալ 1749'ին և 1751'ին Կ-Պոլիս եկած ըլլալը (ՋԱՄ. 99), առիթ առնելով էջմիածինի սեփական և իրեն սահմանակից վիճակներուն խնդիրները, և ջանալով իւր իրաւասութիւնը ընդարձակել։ Այդ փորձերը կը պատասխանեն Պրոխորոսի յափշտակութիւնն (§ 2029), և Ղափանցիին պատրիարքութեան (§ 2036) թուականներուն, ինչ որ կը ցուցնէ թէ խորհած է աւիթնեւրէն օգտուիլ, և զգուշացած է Նալեանի պատրիարքութեան միջոցին այսպիսի խորհուրդներ մչակելէ։ Իբր 20 տարի պաշտօնի վրայ գտնուած է Միքայէլ. և բաւական արդիւնաւոր եղած պիտի ըլլայ, որ տապանագիրին մէջ դէն ընթերել և վեմքոյն վերաբերել դրուատիքներ արձանագրուած են (ՍԻՍ. 217)։ Որոշակի գրուած չենք գտներ, բայց իբր ստոյգ կը կարծենք ընդունիլ, որ ինչպէս Միքայէլ իւր երիցագոյն եղբօրմէն կաթողիկոսակից օծուած էր (§ 2008), անանկ ալ ինքն իւր կրտսեր բազոյն եղբայր Գաբրիէլը, կաթողիկոսակից և յաջորդ օծած ըլլայ, աթոռը Աղապահեան ազգատոհմին ձեռքէն չհանելու համար։ Մահը եղած է հանգոյն, ու և երկու ձ և ի թուականին, այսինքն է 1758'ին (ՍԻՍ. 217), իսկ ամսաթիւ յիշուած չէ։ Յաջորդութիւնը առանց միջադէպի կատարուած կը կարծենք նախորդին կենդանութեան տունն կարգադրուած ըլլալով։ Այսպէս երեք եղբայրներ, Ղուկաս ու Միքայէլ ու Գաբրիէլ իրարու յաջորդած են Կիլիկիոյ աթոռին վրայ, հազուադէպ պարագայ մը որուէ աթոռի մէջ։ Չմոռնանք յիշել, որ այդ միջոցներուն Թօզանօղլու տունը սկսած էր բռնապետել Կիլիկիոյ մէջ, և կաթողիկոսներն ալ մերթ անոնց պաշտպանութեանց և մերթ հարբուտահարութեանց կը հանդիպէին, ինչպէս որ բռնաւոր իշխաններուն չանը կամ հաճոյքը իրենց կը թելադրէր։ Կիլիկիոյ կողմերը բազմաթիւ էին կէս ինքնագլուխ ցեղապետներ, անուանական հպատակներ Կեսարիոյ Օսմանեան կուսակալին։ Ասոնց մէջէն Սիսի վրայ բռնացողը Լիւանօղլուն էր, որ ասիէ չինեցիներ լինել յաղթէ Լեռն ընթացուցին Հայոց։ Ասոր դէմ ելաւ Եուսուֆ Թօզանօղլու, անտունմիկ մարդ մը, որ Տէվէլու գաւառի ցեղապետին այրին հետ ամուսնանալով, նախ այն տեղ կը զօրանայ, և վերջէն Լիւանօղլուն ալ հալածելով էշխէ չոլուէն և սահմանացն Սսոյ, և մինչեւ իսկ Տորոսի լեռնաչղթային այդ մասը չտնօրէնէ Թուրքմէնլէր (ԴԻՒ. Դ. 730)։

2051. Նուազագոյն ևս են միւս աթոռներուն մասին գիտցածնիս։ Աղթամարայ կա-

թողիկոսութեան մէջ Նիկողայոս Սպարապետ կերեցիէ ետքը (§ 2018) կը յիշուի Գրիգոր կաթողիկոս մը, որ 1758'ին

ՈՒՐԻՇ ԱՔՈՐՆԵՐ

աքոռին վրայ կը գտնուի, բայց անկէ առնչի տեղեկութիւն չունինք (ՕՕ ԲԻՋ·1199)։ Ազուանից աքոռին վրայ կը յաջորդէ Ներսէս Գանձակեցին (§ 2009), որ մինչեւ 1763 ապրած է (ՋԱՄ·66)։ Իսկ Գարակաստանի աքոռին վրայ, Զաքարիա՝ երկամեայ առաջնորդութենէ կամ ըստ այլոց տեղեկալութենէ ետքը (§ 2038) պաշտօնէ կը հանուի (ԽԱՋ·285), և 1754'ին կ'ընտրուի Դէորգ Ջուղայեցի, այն որ յիշուեցաւ սուրբ գիրքերու պարսկերէնի թարգմանութեան առթիւ (§ 2021), և էր այր ապրածաշնչէ և դիւմոտ (ԽԱՋ·285)։ Բայց չկարենալով տոկալ Գարակաստանի անիշխանութեան երեսէն տեղի ունեցած թալատոպէի նեղութենէն և հալածանքներէն Ս. Ամենափրկչի վանքին քանկագին սպասները հաւաքելով, հանդիչէ էթէոլի փաշան կը քաշուի Գասրա քաղաքը, որ Գարակաստանի թեմ էր, և այն տեղէն լաւ ղալղած առաջնորդութիւն։ Վանքին մէջ մնացող Գևորգ և Բարսեղամ վարդապետներ 1760 սեպտեմբեր 20'ին կը թախանձեն որ դառնայ, յայտնելով թէ յոյսահատած հեցելանէ, գոնե գէթ չկոյ, բայց Գէորգ չվստահիր դառնալ, և Գասրա կը մնայ տակաւին մինչեւ 1763 (ՏՃՈ·Բ·61), մինչեւ որ Բէրիմ խան զօրանալով երկիրը քիչ մը կը խաղաղի։

2052. Ժամանակակից նահատակներուն յիշատակներէն գլխաւորն է Յովհաննէս

ՅՈՎՀՈՒՄ ՎԱՂԱՐՇԱԿԵՐՏՑԻ

քնիկ Բագրեւանդ կամ Ալաշկերտ գաւառի Թօփրաքքալէ աւանէն, տեսքով գեղեցիկ և նախշուն էր, և ձայնովը լսողները դմայլեցնող աղջիկ մը (ՆՈՐ·565)։ Ինչպէս և ինչու չենք գիտեր, Թուրք մահմետականութենէն կ'ընդառնէ, և աղջիկն ալ կ'ուզէ ընկերացնել. բայց Յովհաննէս խոյս կուտայ, Արածանիի մէջ կը նետուի, հետապնդողներ կ'ափեղէ դուրս կը հանեն, Անթափ գիւղի մէջ կազդուրելով մօրը կը յանձնեն, որ չէչխերու կը դիմէ։ Անոնք ալ խոստումներով չկրնալով չարիլ, ատեան կը հանեն, կը բռնանան, էլչիէ մի նէ ըսելութեան, և չկրնալով անոր միտքը փոխել տալ, մահուան կը դատապարտեն, իբրեւ իսլամութիւնը անարգող իր խիստ պատուախնդիրներով, ու գահինձներուն կը յանձնեն (ՆՈՐ·566)։ Նախ կողէն կը խոցեն, և վերջէն անդամ առ դամ կը յօշոտեն, իբրեւ կեր գազանաց (ՆՈՐ·564)։ բայց քրիստոնեայք հաւաքելով կը թաղեն գերեզմանատան մէջ, Եկեղեցւոյն և պիւրթին մէջտեղը, ուր խաչոյր մը միացեալ կը ցուցնէ նահատակ կոյսին գերեզմանը (ՆՈՐ·566)։ Նահատակութեան թուականն է 1755 մայիս 3, Նոր կիրակիին չորեքշաբթին (ՆՈՐ·562)։

2053. Ուրիշ նահատակի մըն ալ գերեզմանը կը տեսնուի Տաւրիկեան նահանգի

ՓՈՒԱՆԿՈՒԼ ԵՐՋԸՎԱՆՑԻ

կամ Խրիմի Ղարատուբաղար քաղաքի Ս. Աստուածածնին եկեղեցւոյ գաւիթին մէջ։ Անունը Փուանկուլ, Ալիպ ալէկի որդի, բնիկ Էյերլեն Ակէ-Ելիցէ Էյերլեն Շրջըվանց, որ պէտք է Ակարտաի գիւղերէն ըլլայ, թէպէտ չենք կրցած տեսնել։ Քանանասնայ երիտասարդ, որ վան հասած Էրմէնի մահմետ կոչուէր, այնքան կախաղան կը հանուի. սակայն առաջնորդերը ուրիշ պարագայ չտեսան, և ուրիշ կողմէ տեղեկութիւն չէ հասած։ Նահատակութեան թուականն է 1757 յունիս 1 (ՆՈՐ·567), որ կը հանդիպի Էջմիածնի տօնի կիրակիին։ Շատ հաւանական է որ Փուանկուլ Շրջըվանցցիին նահատակութեան պարագաները յար և նման ըլլան Սահակ Բրուտեցիին պարագաներուն, որ նոյնպէս Արեւելքէն գալով Խրիմի մէջ նահատակուեցաւ, նորահաս երիտասարդութեան տարիքին (§ 1962)։

2054. Այս տեղ աւելցնենք քանի մը նահատակներու անուններն ալ, որոնց կը

ՈՒՐԻՇ ՆԱՀԱՏԱԿՆԵՐ

հանդիպինք առ և անդ առանց պատմական պարագաները գիտնալու։ Սարգիս դպիր կը յիշէ Աստուածատուր Մալղարացին, նահատակուած 1710 յունուար 10'ին, երեքշաբթի օր (ՍՐԳ·), որ կը համեմատի Աստուածայայտնութեան հինգերորդ օրուան։ Նահատա-

կաթեան տեզը կ-Պոլիս եղած կ'երեւի, և պէտք-ս Պալատէն ըղծմունքին էրեալ է կ'ըսէ, բայց մենք չենք տեսած։ Բանկալիքի գերեզմանոցի մէջ բաւական թուով նահատակներու գերեզմաններ կը գտնուին, որոնց տապանագիրներէն միայն պէտք է քաղենք հակիրճ տեղեկութիւններ։ Հալէպ հոքիւ և ըստ տան, ընդ որս և ըստ յոբելեան, այսինքն 1735 թուականին նահատակուած է Յակոբ յաղնոզ այս տալըն, որ պէտ տանուկ եր և առաջ, բայց վերնոցին է առաքեց, եհեղ ըզքան վկայութիւն։ Կոմիտաս Պիէճիկցին ալ որդի Պէկօղլիցի Սատէքի, 1742'ին ինչ-որ կ'ըսուի պարզապէս, սակայն տապանաքարին վրայ կախուած մարմին մը քանդակուած է, որ նահատակութեան նշանակ է։

2055. Ընդարձակ տապանագիր մը ունի Յարութիւն նահատակ, որդի Թօփճիօղլու Սահակի, որուն հայրենիքը և ծննդավայրը չէ յիշուած, այլ կ-Պոլսոյ մէջ կատարուած է։ Տապանագիրը նահատակին բերնէն գրուած է, որով կը խոստովանի, թէ երեսնեւեր տարի շարէ հեռացէ, այսինքն է 33 տարեկան իսլամութիւն ընդունած է, և տան և ինչ տիւ ետքը պղտեցայ, այսինքն է դարձած է։ Այդ դժգոհութեամբ համարձակ իշխանութեան կը ներկայանայ. ինչի, կ'ըսէ, տէր հոգին իմ ինչ, ինչ չեղ, և պատուհրի առջեւ ելլալով Հոգոյ Խնդրեցի։ Այդ պատճառով իբր իսլամութենէ ետ դարձող, վճիռ կը տրուի որ էլեւոփեցի, սակայն է նեղութեան կը նահատակուի, ինչպէս տապանագրին քանդակն ալ կը ցուցնէ։ Թուականը ՉՂՉԱՄ թուին ցուցուած է, որ է 1748 հոկտեմբեր 27, և ըստ այսմ ուրացութիւնը հանդիպած կըլլայ 1747 նոյեմբերին։ Միւնոյն 1748 թուականին ուրիշ նահատակ մըն ալ կայ, միւնոյն պարագաներու մէջ վկայած, որուն տապանաքարը գլխատման քանդակ ունի, և նահատակի բերնէն գրուած է, թէ առաջ Հոգիս փոխեցի Քրիստի, բայց վերջէն Տեառն ըզքան իմ հեղի։ Սակայն տապանագիրին մէջ նահատակին անունն իսկ յիշուած չէ, գուցէ վերոյիշեալ Յարութիւնին ընկերակից մըն է։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓՕՓՃԻՕՂԼՈՒ

Տ. ՅԱԿՈԲ Ե. ՇԱՄԱԽԵՑԻ

2056. Սահակ Ահագինի տարօրինակ ընթացքը (§ 2043), ամէնուն վրայ տխուր տպաւորութիւն մը թողած էր, և եկեղեցին անգլուխ կացութեան ենթարկած էր։ Եթէ ամէն Հայ պէտք էր զգածուէր այդ պարագային, աւելի խոր զգածուելու իրաւունք ունէին Մայրաթոռի միաբաններըը, որոնք իրենց կարգն ու սարքը կորուսած, յայտնի չէր թէ կաթողիկոս ունէին կամ թէ ոչ, և չէին գիտեր թէ ինչ ուղղութեան պէտք էր հետեւէին։ Միաբաններուն մէջ ալ աւելի սրտացաւ ունէին երկուքը, որ գլխաւորներն էին, և Ահագինի ընտրութեան առեն պրծի վրայ գոհուած էին, և բնաւ կողմնակից ու համակիր չէին եղած այդ ընտրութեան, գուցէ Ահագինի տարտամ բնաւորութեան

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓՕՓՃԻՕՂԼՈՒ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՇՐՋԱԺԵՇՏ

գիտակ ըլլալով։ Բայց իրենց ձայնը այժ չէր ունեցած, և Ահագինի ընտրութիւնը մայրաքաղաքի մեծամեծներուն կամքով, անչուշտ Նալեանի ալ ազդեցութեամբ, կատարուած էր։ Այդ երկուքն էին Սիմէոն Երեւանեցին և Աբրահամ Աստապատցին (§ 2042)։ Առնք կանուխէն սկսան խօսիլ ու պնդել, համոզել ու տարածել, թէ պէտք է Սահակէն ձեռք քաշել, նա կաթողիկոսութիւն ընելիք չունի, Մայրաթոռը առանց կաթողիկոսի թողուլ հնար չէ, նոր կաթողիկոսի ընտրութիւն կատարել անհրաժեշտ է։ Երեւանեցիին և Աստապատցիին խօսքերը առջի բերան մեծ ազդեցութիւն չըրին, իրենց համար աչխատելնուն կասկածը կը տիրէր, բայց հետզհետէ պարագաները սկսան անոնց իրաւունք տալ, դի տարիներ կը լրանային և Ահագին տակաւին Էջմիած-

ծին գացող, օծում ընդունող, և գործի տիրութիւն ընող չէր։ Անչուչտ իրենց համախոհ էր Ծակոր Շամախեցին ալ, բայց նա մէջտեղ չերեւնալու խոհեմութիւնը կը պահէր, ինչ որ տեղակալի պաշտօնն ալ կը պահանջէր։ Նալեան պատրիարքն ալ, որ իւր ընկերակցին Սահակի պաշտպանն էր եղած, և կը չարունակէր ըլլալ, կամաց կամաց կը սկսնար Ահազինի պահանջից ու պատշաճից չափն անցընելը, և հարկաւ կը զգար անոր պատճառաւ տիրող անկերպարան վիճակը, և դարման մը հոգալու ստիպողականութիւնը։ Գրուած չունք գոներ, բայց անհնար է որ մտերմական նամակներ ալ փոխանակուած չըլլան Նալեանի և Ահազինի միջեւ, և գուցէ իւր յորդորներուն յարգուած չըլլալն էր, որ Նալեանի ալ միտքը փոխեց, և երեւանեցիին ու Աստապատցիին կողմն անցնելով հաւանեցաւ կաթողիկոսական խնդիրին համար մեծամեծ ներու ժողով գումարել։ Արդէն ատենց մեծագոյն մասը Ահագինէ իրաւամբ պաղած, և նոր կաթողիկոս ընտրելու կողմը դարձած էր։ Ընտրելիի անձին վրայ ալ մեծ խնդիրներ ու դժուարութիւններ չծագեցան։ Նալեան երկու անգամ, Աղէքսանդրի (§ 2040) և Սահակի (§ 2042) ընտրութեանց ատեն հրաժարած էր այդ պաշտօնէն, և երրորդ անգամ ընտրելի ըլլալու կամք չունէր, և իրմէ զատ ալ Տաճկահայերու մէջ կարկառուն դէմք մը մնացած չէր։ Երեւանեցին և Աստապատցին՝ Ահագինի դէմ ամենչափ մաքառելէ ետքը չէին կրնար անոր տեղը անցնիլ՝ առանց ինքզինքին մեղադրանքի ենթարկելու։ Կը մնար Շամախեցին որ չորս տարիներէ իվեր աթոռը կը կառավարէր առանց կաթողիկոսական աստիճանի և անունի, և իրեն վրայ դիտողութեան առիթ չէր տուած։

ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

2057. Կոստանդնուպոլսոյ մէջ կաթողիկոսութեան ընտրական ժողովը գումարուեցաւ 1759 օգոստոսին, հաւանաբար Աստուածածնայ ծոնին, որ օգոստոս 15'ին կը հանդիպէր, կամ ծոնին մօտ օր մը։ Սահակ կեղեցիի ընտրութիւնը չհաճալ նկատեցին, քան թէ ընկերին ընտրութիւնը հաստատել։ Ասոնք ալ պէտք եղած ատենը ուզեցին Սահակի հետ ընել, որ ինքզինքը ազատէ, և ինքն ալ ատոր համար ժամանակ ուզեց։ Ասոնք ալ ատոր համաձայնեցան

2058. *Երբոր Աստապատցին կարին հասաւ, այնտեղ գտաւ Շամախեցին ալ Սահակի այցելութեան եկած, ինչ որ կը ցուցնէ թէ արփոփէին ըրոյցէ չեն, որ Շամախեցին Սահակը յորդորէը՝ ֆոխլ ֆալ չէզիթէն* (ԶԱՄ·Գ·865)։ *Սահակը էջմիածին գալէ ետ ընելու համար, պէտք չէր զգացուէր անձամբ այցելութեան գալ չորս տարի ետքը։ Աստապատցին փութթաց կարնոյ եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր կերպով ծանուցանել և հրատարակել կ՚Պոլիս կատարուած ընտրութիւնը, Սահակի ընտրութեան ջնջումը, և Շամախեցիին կաթողիկոսութիւնը։ Սահակէ հաչիւ ալ պահանջեց, որովհետեւ չատ բան գանձած էր էջմիածինի հասոյթներէն, և ֆոթֆոռֆ նոխրախոնէն նմա փայն ղըրխնան և ղհալնան նոխրախան* (ՅԻԻ·Գ·30)։ *Հաչիւը ստացաւ յեռամբ բերելին, այսինքն կուսակալին, որ կը ցուցնէ թէ արքունական հրովարտակ ալ բերած էր, Սահակի դադարումը և Շամախեցիին ընտրութիւնը հաստատող։ Կուսակալին միջամտութեան դիմումը կը ցուցնէ, թէ Սահակ դժկամակութիւն ցուցած է իւրացուցած գումարներն ու հաչիւը տալու։ Վերջապէս գէչ ազէկ հաչուական գործն ալ կարգադրելէ ետքը և գումարներն ալ վճարելու խոստումի վրայ, Աստապատցին առջեւ կ՚անցնի և Շամախեցին էջմիածին կառաջնորդէ, և 1759 նոյեմբեր 24՚ին օծման հանդէսը կը կատարուի, ինչպէս Ջամչեան կը գրէ* (ԶԱՄ·Գ·866), *և Շահխաթունեան կը կրկնէ* (ՇԱՀ·Ա·230)։ *Ծիշտ թուականը Ծիրանակաց պահոց չորեքշաբթիին կ՚իյնայ, և հաւանական է որ գրչութեան սխալ մը տպրած ըլլայ ամսաթիւին մէջ, քանի որ հաւանական չէ լուր օր և պահոց օր այսպիսի հանդէս մը կատարելին, և յարմարագոյն կը թուի նոյեմբեր 28 կիրակիին յետաձգել։ Երեւանեցին որ գործունեայ դեր մը ունեցաւ Յակոբ ե Շամախեցին կաթողիկոսութեան բարձրացնելու մէջ, կը ներկայէ զայն իբր այր պէտքի և խորհրդական, խելօք և հանճարեղ յոմնոյն էջեր, էլեռան և ընդհանրապէս Մանկութենէն Մայրաթոռի մէջ մնած և ապրած, և բազմակողմանի ուսմամբ զարգացած էր, այնպէս որ ասէր թէ*

ՅԱԿՈԲԻ ՆԱԽՃՆԹԱՑԸ

ՄԱՆՈՒԷԼԵԱՆ ԽՄԲԱԿԸ

դէքանէյ զինչ և ինչբէյն։ Ինչ տեսակ գրութիւն ալ որ պէտք ըլլար, ինքն կը խմբագրէր և պոյ էջէջըն որ ընդօրինակէն, և այս ոչ միայն հայերէն, այլեւ պարսկերէն լեզուով, զի նա ինքն էր որ էջէր և հոֆոյ զէրոց ոչխանոյ և գոսպոդոլոնոց։ Երեւանեցին կ՚աւելցնէ թէ նաև ղըրդեռնոյ, այսինքն իւր առևնն ալ Շամախեցիին քողած պատճէնները կը պահուէին և կը գործածուէին իրրեւ պաշտօնական գրութեանց պատրաստ ձեւեր, յորոց էջէջէն առնան ղբինախ էջելէոց խոխանոց (ԶԱՄ·32)։ *Ինչպէս կը տեսնուի Շամախեցին Մայրաթոռին ներքին գործերուն նուիրուել անձ մը եղած է, և չատ չրջագայած չերեւիր։ Նա ալ ազատ չէր մնացած Ջահկեցիին բռնութիւններէն* (§ 2024), *իսկ Մինասի և Ադեքսանդրի օրով լաւ դիրք վայելած պիտի ըլլայ, իբր փոխանորդ և ընդհանուր գործակատար, որով վերջնոյս մահուընէ ետքը երկարատեւ տեղակալութիւն վարելու կոչուեցաւ։ Աւելի այդ առաջին ժամանակին պէտք է վերագրել Երեւանիցիին ըսելը, թէ առ ինձ ղանամոբ ֆոխէջոռնէխոռ է ոռոբ ոռոռոլ, վասն զի կաթողիկոսանալէ ետքը ծերացած էր, և առևն ալ չունեցաւ անհամոբ գործեր կատարելու։ Կը յիշուին միայն կալուածական պաշտօնագիրներու ստացութիւնը, և Երեւանի մէջ Ջորագիւղի անպատին նորոգութիւնը, զոր կազմակերպուց իրրեւ ղոռոռ հայջոպեռոխոռ* (ԶԱՄ·33)։

2059. *Կոստանդնուպոլսոյ կացութիւնը բաւական հանդարտ կ՚անցնէր Նալեանի պատրիարքութեան ներքեւ, որ իւր վարդապետին Կոլոտի ընթացքին հետեւելով, միջամտման իին ձեւ կը գործածէր համերաչխ հաչտութիւն պահելու համար բուն հայադաւան և մեղմ հռոմէադաւան տարրներուն մէջ։ Կոլոտ իւր անձնական հեղինակութեամբ կրցած էր զսպած պահել երկկողմանի ծայրայեղները, և այս կերպով առաջն առած էր բուռն վէճերու և ներհակընդդէմ պայքարներու։ Նալեան, թէպէտ հմուտ թեամբ և կարողութեամբ Կոլոտէ ետորին չէր, և իւր երկասիրութիւններով առաւելութիւն ալ ունէր, սակայն Պրոխորոնի չը-*

փոխը, և Պրուսա քաչուխը և Սրուսաղէմ երթալը խախտած էին իր դիրքը, և նաղուպի պաչտպանութեամբ դառնալէն ետքը, իր պաչտպանին եղերական վախճանը (§ 2036), պակասցուցած էր իրեն ներքին ոյժը, և առիթ կ'րնծայէր ժողովրդական չչուկնարու, և կախոլիկութեան հանդէպ թոյլ և զիջողական վարուդ մը կը կարծուէր։ Սակայն Նալևանի բռնած թոյլաուու և ներողամիտ րնթացքը՝ չէր այլայլած հրրևք ապոր ներքին համոզումները, և եթէ իրեն չուրջը գտնուողներ, և առաջին դիծին մէջ Սարգիս Սարաֆեան եպիսկոպոսը, կաթոլիկութեան միսումներ կը ցուցնէին, սակայն չէին կրնար իրենց հայադաւան ուղղութիւնը փոխած ըլլալ, քանի որ Նալևանի գործակից էին։ Հակառակ Նալևանի զգուչաւորութեանց՝ չփոթ մը յուզուեցաւ 1761 ամառուան վերջերը։ Գլխաւորն էր Մանուէլ Բալուկցի քահանան, կոթոմաճ (ԳԱԼ. 97) և սաղաղ (ԳԱԼ. 102) կոչուած, կ'ներեւի ամէն կողմին համար, իրեն ընկեր ունենալով ուրիչ քահանայ մըն ալ՝ Սարգիս Տիպաձեան (ՁԱՄ. Գ. 867), և աչխարհականներէն Յովհաննէս Սաիրիչ, Մովսէս Տիվրիկցի, և Մեծմաանեան կոչուած մէկ մը, և այլ ամբոխեն (ԳԱԼ. 97)։ Յովհաննէսի համար ըսուած է թէ բնիկ Ագուլեցի է եղեր, մանկութեան տարին լատինամիտ կրթութիւն առացած, քահանայ ըլլալէն ետքը սկսեր է ջղաբեռ ՀայաբաՆեայց սոբը նկնելով, սոր համար երեք անգամ պատժուեր է ի Բէրբէն, բայց վերջապէս միաբր յուսաւորուեր, և վերահաս եղեր է որ Հայոց եկեղեցին է ճշմարտական սղաքաս և անբիծ։ Սակայն վրայ Լաթինք փաբիւսանաց անունով գիրք մըն ալ չարադրել և տպագրել տուեր է (ԳԱԼ. 303), և Մանուէլ քահանայի միանալով՝ նախանձայոյզ պայքարող ալ դարձեր է։ Ասոր խումբը նախապէս Սարգիս Սարաֆեանի զէմ կ'ելլէ, առիթ առնելով անոր ինչինչ անպղտոյ խօսքերը քէ Թառնա ախտառ ալ բանայ գոռաւ արեւմտեան, կամ քէ՝ Լաթ է սոբել ըմբ՝ յաբաբ պահոց յամէն փոքր, տաւ բամբասել ընկեր ծբդբ. և անոնցմով ալ ըե յաբաբ ալբահոցէ, չէր է վերայ հեղոյր Թահէ (ԳԱԼ. 98), ինչ որ կը ցուցնէ քէ աւելի կոկորդի պիտուիներն են եղեր՝ կաթոլիկներու հրապուրիչ դրդիռները։ Մէջտեղ կը դնեն նաեւ Սրուսաղէմի Նուիրակութեան ժամանակէն դրամ իւրացուցած րլլալուն մասին տարածուած խօսքերը (§ 2001)։ Բայց Նալևան նորէն Ազգապետութիւնը կը պաչտպանէ Շղթայակիրին տուած ընկերական գիրին փաստովը, թէպետեւ ինչպէս ժամանակին դիտցինք, գումարի մը ընդհատգիրը հանգանակութեան քանակին փաստը չէ։ Իսկ ինեացեալ ամբաստանութիւնները Սարգիսեան ինքը կը ցրէ, որ է ըսել բացատձակ հայադաւանութեան յայտարարութիւն կու տայ։ Արդ երէկ սիրտով ալ տուած չէ, գոնէ պաչտօնական ձեւակերպութիւնը պատճած է, զի առանց այդ զգուչաւորութեան հնար չէր որ նորէն Գալաթիա (ԳԱԼ. 103) և Ղալաթիոյ (ԳԱԼ. 104) մէջ քարոզչութիւն ընէր, Մանուէլեան խմբակին հակողութեան և պրգուման ներքեւ։

2060. Մանուէլեան խմբակը իր գործունէութիւնը ալ սեւերի տակէ մղելով,

ԿԱԹՈԼԻԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ֆրանկացւոյ ներում ամբաստանագիր տուաւ հայն իակ առ աբէա, թէ օտար եկեղեցիներ կը յանձնին, և դէպանները պաչտպանութեամբ կը ճոխանան, և տեղական իչխանութիւնները կ'անարգեն։ Տրուած յայտարարութիւնը ստուգելու համար, կառավարութեան յատուկ պաչտօնեաներ ղրկուեցան կիրակի օր մը, 1761 նոյեմբեր 11'ին, Գալաթիոյ Ս. Պետրոս, Ս. Գէորգ, և Ս. Բենեդիկտոս լատին եկեղեցիները, որոնք հոն դիմող Հայերէն 52 հոգի ձերբակալելով նաւատեղեաց բանտը տարին։ Բռնի միջոցը Նալևան պատրիարքի հաճութեամբ չէր, ուստի գրժուար չեզաւ բանտարկեալոց ազատութիւն տանալ։ Մանուէլի խմբակը նոր ամբաստանագիր մատոյց կառավարութեան 1762'ին սկիզբները, և այս անգամ յանուանէ 24 հոգիներու անուններ տալով։ Նալևան եզերութիւնը իմանալով ինքն հոգ տարաւ որ ամբաստանեալներ մէջտեղ չերեւնան, և մէկ մը՝ գոնարաւճառ Յովհաննէս Թուամանեան ձերք ինկաւ, և հարցափորձի ենթարկուեցաւ։ Պէտք եղաւ պատրիարքի վկայութիւնը լսել, որ հաստատեց թէ ձերբակալեալը իր ժողովուրդէն Հայ մըն է, և

ամենէն աբձակուհցաւ. Նոյնպէս մինչ 23'նեւ-
րուն ձերբակալութեան հրամանն ալ նո
առնուհցաւ: Երբոր հալածքնար պատրիար-
քէն բացատրութիւն կը խնդրէր, թէ ինչո՞ւ
խոխ և խափ յոյզին վրան օրինաց չեղոց, և թէ
չի՞ըդ ալ պանիւ ֆայն անունց առնէնա առ-
նել, նախեան պատուաւորուհցաւ յայտնել,
թէ Մանուէլ քահանայ մը և Յովհաննէս
ապիրիկ մը առանց իւր հրամանագին գործե-
րու կը ձեռնարկեն: Անիկայ բաւական եղաւ
որ ձերբակալութեան հրաման հղլէ Մանուէլի
խոհրակին համար, որմնցմէ չատեր, ինչպէս
և Սարգիս Տիլաճեան քահանան պատրիար-
քին գիրութեան դիմեցին, իսկ Մանուէլ և
Յովհաննէս ինդրակներու ձեւք իյնալով
բանտարկուհցան և վերջէն ազատուհցան
(ՉԱՍ. Գ. 867-871):

2061. Նալեանի այդ ընթացքը կը հաս-
տատէ, թէ Հայոց պատրիարքարանը ներ-
դամիտ և թոյլատու ըն-
ԱՑՂ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆ թացք ունէր լատինամիտ-
ներու հանդէպ, քանի որ
անոնք իրենց խոհեխ և
նենգամիտ ընթացքով չէին զայրացներ ուղ-
դամիտ ժողովուրդը, չէին անարգեր ազգա-
յին եկեղեցին, և չէին զեղծաներ օտարաս-
տուածչ ձգտումներով: Զինք կարծեր որ
հաճոյութիւնեան պաշտպաներ, նալեանի
այդ ընթացքը տեսնելով, յանդգնին զայն
ալ կաթոլիկացած թսել, քանի որ անոր
գիրքերը մշտապարբատ կը քարոզեն իւր
հատատաուն համոզումները: Ակա կ'բանք,
որովհետեւ ատէպ կը տեսնենք որ առաջ-
նորդի մը մեզմ ընթացքը, և վարդապետի
մը չափաւոր խօսքը, կաթոլիկ պրոպոնեներու
ձեռք իրը հիմ կը ծառայեն զանոնք հոս-
մէտպատան հռչակելու: Նոյնպէս եպիսկո-
պոսի կամ վարդապետի մը նեղութենէ խու-
սափելու կամ չար ու նպատա մը ձեռք
ձգելու համար Աբեւմատք դիմելը, և հոն
ազգական պատանդից հաստակերպիլը, անոնց
գրիչին տակ հռոմէպատանութեան ձչմար-
տութիւնը հաստատող փաստեր կը դառնան:
Բայց ուզիղ տեսութեամբ իրենց դատ ա-
ւելի կը տկարացնեն, երբ այդպիսի վիճակն
և անարժէք փաստերով՝ զայն արդարացնե-
լու կ'աչխատին: Կաթոլիկ գիրքերու մէջ
առէպ կը տեսնուին, տակէ ու անկէ քաղ-
ուած և փաստի նպատակով՝ արկածախնդիր
վարդապետներու և եպիսկոպոսներու ա-
նունններով կազմուած ցուցակներ, բայց
ատոնք ոչ հայադաւանութեան վկայ, և ոչ
հռոմէպատանութեան օգուտ մը կրնան
պատճառել: Այդ պատճառով հետաքրքուտ
չենք այնպիսիներու անուններու քաղել,
քանի որ բնաւ կարեւորութիւն չունին:
Ամենուն տեղ բաւական ըլլայ Սարգիս Սա-
րաֆեանի կեանքին և գործունէութեան
վրայ առած տեղեկութիւններս, որ երբ
Աբեւմատքի հետապատակերը իւր չահագո-
ութիւնը կը գրգռէ, Իտալիա կ'անցնի և
հռոմէպատան կ'ըլլայ. իսկ երբ պալբեթել
գործոյ ոչ ըլլա, ըսել ու կը տանի անդ ինչեան
չեն գոռ (ԳԱԼ. 53), նորէն Աբեւելք կը
դառնայ և հայադաւան կ'ըլլայ, մինչեւ որ
այսուհդ ալ ակնկալութիւնները հասազելուն՝
նորէն Աբեւմատքի ճանապան բռնէ:

2062. Թէոդորոս Երուսաղէմի պատ-
րիարքը, որ 1752'էն աթոռի վրայ կը գըտ-
նուէր (§ 2049), հաւել
էր իւր ծերութիւնն պա-
ԵՊԻՍԿՊՈՍԻ ԱԹՈՌ բացիլ, և տեսլուած է
մահիճ, մինչև չկրնալ վա-
բել ընչյոն իշխանութեան խոյ: Ձեւուի պատ-
ատուրուհցաւ Յովհաննէս եպիսկոպոսի
յանձնել լիազօր փոխանորդութիւնը, մինչև
նոր ընտրութիւն (ԱՍՏ. Բ. 97), իսկ երբ յա-
յտնի յանձնարարուհց իւր ձեռնասուն կարա-
սկաս Գանձակեցի եպիսկոպոսը, որ հռու-
թակութեամբ Առաջնա կը գտնուէր (ԱՍՏ. Բ.
99): Թէոդորոս հոգ տարաւ կանդակով յայ-
տարարել և վաւերական կանդակով հաս-
տատել, թէ բոլոր իւր ունեցածները, գինե-
գյեցին պարմանան և վիրբոյս, աթոռին ան-
վիճականութիւն են, և ինքն անձնական սչինչ
չունի, որով իւր մերձաւորներէն ոչ ոք
կրնայ իրր ժառանգորդ բան մը պահանջել
(ԱՍՏ. Բ. 97): Թէոդորոսի այդ զգուշաւո-
րութիւնը օգտակար եղաւ՝ իւր ազգական-
ներէն ոմանց պահանջումները ցրելու,
որոնք անոր մահուընէն ետքը վանքէն ժա-
ռանգութիւն կը պահանջէին, և այդ առի-
թով հոգ տարուհցաւ արքունի հրովարտակ-
կով ալ հաստատել, թէ Երուսաղէմի միաբ-
անութեան ժառանգորդը միաբանութիւնն
է, և ոչ իրենց ազգականները (ԱՍՏ. Բ. 100):

Թէոդորոս ամենայն ինչ կարգադրելէն ետքը խաղաղութեամբ վախճանեցաւ 1761 դեկտեմբերի վերջի օրերը, և թաղուեցաւ Ս. Փրկիչ վանքը, ջորուն համար կանուխէն պետական հրամանն ալ առնուած ըլլալէ, Ցատաճիկներու կամայական արգելքներուն տեղի չտալու համար (ԱՍՏ. Բ. 98)։ Երուսաղէմի միաբանութիւնը Թէոդորոսի մահուան գոյժին հետ, կարապետի հաստատութիւնն ալ խնդրից կ-Պոլսոյ պատրիարքարանէն։ Սակայն ազգային մեծամեծներ որ արդէն 1762 յունուարին գոյժն ու առաջարկը ստացած էին (ՊԱՍ. 11), չուտով չհամակերպեցան, և կ'ուզէին պատրիարքութեան կոչել Գրիգոր Պասմաճեան վարդապետը, որ կ-Պոլիս կը գտնուէր իբր Երուսաղէմի փոխանորդ։ Բայց Գրիգոր ոչ մի կերպով յանձնառու չեղաւ։ Ինքն իբր հրաժեշտի պատճառներ գոյց կուտայ, իբր անարժանութենէն զատ, հանգուցելոյն կտակը, միաբանութեան կամքը, և կարապետին քան զինքն երէցօթոյն ըլլալը. թէպետև երկուքն ալ հաշտելոյ եղբայր, և դէպ հոգեւորի Թէոդորոսի անընդունելի ըլլալն (ՊԱՍ. 12)։ Զմռնեանք որ Գրիգոր դէռ եպիսկոպոսական ձեռնադրութիւն չունէր, և Պարսկաստանի ներքին յուզումները կը դժուարացնէին անմիջապէս Էջմիածին երթալը։ Վերջապէս ժողովն ու պատրիարքը հաստատեցին կարապետի ընտրութիւնը և հրովարտակն ալ ստացան, և կարապետ ալ կիլիկիոյ նուիրակութիւնը փակելով Երուսաղէմ հասաւ զատկէն ետքը, որ կ'իյնար 1762 ապրիլ 7'ին, և պաշտօնը ստանձնեց։ Կարապետ գործունեայ նախընթաց մը ունեցած էր։ Ինկէ Գանձակեցի արեւելեան գաւառներէն, 18 տարեկան եղած տանն Թէոդորոսի կը յարի Եւդոկիոյ մէջ, անոր նուիրակութեան միջոցին, և միասին Երուսաղէմ կու գայ 1734'ին, և ուսմանց ու աստիճաններու մէջ յառաջանալէն ետքը, նուիրակ կը ղրկուի Ակն ու Ռումկլի ու Ղրի՝ Շղթայակիրի հրամանով. Նալեան գայն կ-Պոլսոյ փոխանորդ կը նշանակէ 1750'ին, վեց տարի ետքը Երուսաղէմ կը ղրկուի Թէոդորոսի և միաբաններուն մէջ յուզուած վէճը հանդարտեցնելու։ Նորէն նուիրակութեան կ'երթայ 1760'ին, նախ Եւդոկիա, և անկէ Ատանա, ուր կը գտնուէր 1761'ին Թէոդորոսի մահուան միջոցին (ԱՍՏ. Բ. 98)։ Այս հաշուով չուրջ 50 տարեկան եղած կ'երեւայ պատրիարքական աթոռ բարձրացած թուականին։ Իրեւ Երուսաղէմի աթոռին պատկանելոյ կարեւոր տեղեկութիւն աւելցընենք, որ 1762 մայիս 11'ի կ-Պոլսոյ մեծ հրդեհին, Մայր եկեղեցւոյ չուրջի չէնքերը, և անոնց հետ Շղթայակիրին չինած հոգեւոր տունն ալ (§ 1996) այրելուն վրայ, որչափ ուշացաւ որ եկեղեցիին չուրջը ճոխ քարօրիներ և պարիսպ, ուստի Պասմաճեան փոխանորդն ալ՝ հնդիկ դրան Սարգիս Աթոռականի Մարգ երէցօյն, նոր բնակարան մը չինեց Երուսաղէմի միաբաններուն համար 1763'ին (ՊԱՍ. 13), որ է այժմեան Երուսաղէմական տեղը։

2063. Լիբանանի մէջ հաստատուած հռոմէականներուն, այսինքն Անտոնեան միաբանութեան և նորահաստատ կաթողիկոսութեան մասին չխօսեցանք Արծիւեանի մեռնելէն և Յովսէփեանի յաջորդելէն ետքը (§ 2032)։ Այն տեղ յիշեցինք կաթողիկոսարանի համար Զմմմաւի բլուրին ստացութիւնը, որուն վրայ Յակոբ Պետրոս Բ կաթողիկոսը փոյթ տարաւ, չինութիւն մը հիմնարկել իբր կաթողիկոսարան։ Բայց վրան արձանագրուած 1749 տարին (ԱՂԿ. Ա. 21) պէտք է իբր չինուածին սկզբնաւորութիւն նկատել և ոչ իբր աւարտման թուական, զի չէնքը անագան վերջացաւ 1771'ին (ԱՂԿ. Ա. 26)։ Յակոբ չինուածին բաւարար ձև մը տալէն ետքը, թողուց Քրէյմի վանքը, և Զմմմաւ հաստատուեցաւ 1750'ին, Անտոնեաններէն ալ քանի մը հոգի մէկտեղ առնելով։ Իսկ 1752 յունիս 30'ին «Նահապետական Թղթակցութեան» հաստատեց Մարոնի Անտոնեանց կանոնագիրին Հայազգի Անտոնեանց պատշաճեցուցած ձեւը, ըստ այնմ ալ պապական վաւերացման հնարաւորելու համար։ Նկատելի է որ այդ կանոնագիրին կոչուած էր Անտանեան կանոնագիրք կամ Անտանեան ալ, թէպետ այդ մտադրութիւնը գործադրութեան չանցաւ (ԱՆՏ.)։ Կաթողիկոսին Քրէյմի վանքէն հեռանալուն ժամանակակից է, Լիբանանի մէջ երկրորդ վանքի մը համար Անտոնեանց նոր տեղ ստանալը 1750'ին, որ է

Պէյթխաչպօ կոչուած բարձունքը, Ղազիր և Շնանէյիր գիւղերու մէջտեղ, գեղեցիկ և ծովահայեաց դիրքի մը վրայ։ Հայր Գրիգոր Ներսէսեան աբբահայր՝ Հրէշմի և Պէյթխաչպօյի մէջ ալ կարեւոր չինութիւններու ձեռնարկելէ ետքը, 1752'ին, իբր եռամեայ լրանալուն, դործը կը թողուր նորընտիր աբբահօր՝ Ղուկաս Աբրահամեանին, որ քիչ ետքը եպիսկոպոս կը ձեռնադրուէր հայր Բարսեղ Գէորգեանի հետ, և աբբայական պաշտօնը փոխանորդաբար կը վարէր հայր Յովհաննէս Կարապետեան։ Կանոնագիրը պապական հաստատութեան ենթարկելու համար Հռոմ կը դրկուէր հայր Գաբրիէլ Մատթէոսեան, իսկ հայր Գրիգոր Ներսէսեանի պաշտօն կը յանձնուէր Հռոմի մէջ ոեփական վանքի մը ստացութեան և կազմակերպութեան գործը ի գլուխ տանիլ։

ՀՌՈՄԷԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

2064. Ձիչդ այդ միջոցներուն կը վախճանի Յակոբ կաթողիկոսը, ըստ ումանց մայիս 15'ին (ԱՂՔ. Ա. 23), ըստ այլոց յունիս 10'ին (ԱՆՏ.), իսկ յիշատակուած Հոգեգալստեան օրը այն տարի կ'իյնար մայիս 30'ին, որ կը հաստատի նոր տոմարի յունիս 10'ին։ Յակոբ, Տօրնեական անունով՝ Մուրատեան, պապենական անունով՝ Յովսէփեան, իսկ կաթողիկոսական կոչմամբ Պետրոս Բ, չորսնամեայ յիշատակութենէ սկսելով Անտոնեանց սկզբնաւորութեան օրէն (§ 1894), և իբրեւ ամենանչանաւոր դէմք մը պէտք է նկատուի հայ հռոմէական տարեգրութեանց մէջ, իր համարձակ նախաձեռնութեամբ, անխոնջ գործունէութեամբ, և խոհական չափաւորութեամբ։ Չի նեմ երկու Աբրահամներ իբր հիմնարկիչներ կը նկատուին միաբանութեան և կաթողիկոսութեան, պէտք է բացարձակապէս յայտարարել, թէ երկուքն ալ իրենց ձեռնարկին մէջ պիտի չյաջողէին առանց Յակոբի աջակցութեան, որ արգելքներու դիմաց խիզախ և դժուարութեանց մէջ արիւն, կրկին նպատակներուն իրականացման գործադիրն եղաւ։ Ասոր հետ մէկտեղ պէտք է իրը գովեստ յիշել, թէ իր հռոմէականութեան մէջ ալ զգուշացաւ կծու պայքարներէ և անտեղի նախանձախնդրութիւններէ, որով իր վրայ ալ խիստ մտադրութիւններ չհրաւիրեց։ Յակոբ թէպէտ Զմմառի մէջ կը բնակէր իր կեանքին վերջին միջոցին, բայց գերազոյնը Հրէշմի վանքին մէջ եղաւ (ԱՂՔ. Ա. 23) որ է իր գործունէութեան առաջին օրրանը։ Երբոր Յակոբ, վերոյիշեալ Ղուկաս և Բարսեղ եպիսկոպոսները կը ձեռնադրէր (§ 2063), անոնց ընկերացնել ուզած էր ուրիչ Անտոնեան միաբան մըն ալ, հայր Միքայէլ Դասպարեանը, և զայն Կ-Պոլիսէ Լիբանան կոչած էր, այլ նա կը հասնէր Յակոբի մեռնելէն ետքը։ Եպիսկոպոսներ ընտրութիւնը լրացած տեսնելով, իրենք կը կատարեն ձեռնադրութիւնը, և իրենց ձեռնադրածը անմիջապէս կաթողիկոսական յաջորդութեան կը կոչեն 1753 յունիս 23'ին, և ընտրութիւնը պապական հաստատութեամբ կը վաւերացուի 1754 մայիս 6'ին։ Միքայէլ Պետրոս Գ թէպէտ Անտոնեան միաբանութենէ, այլ նուազ նպաստաւոր դրութեաւ հանդէպ միաբանութեան, նպատակ ունենալով իր կաթողիկոսական աթոռը զօրացնել, նոյն իսկ միաբանութեան յաւագոյն ոյժերը իրեն գործելով (ԱՆՏ.)։ Միանգամայն ձեռք առաւ Արծիւեանի մչակած գաղափարը, իր իրաւասութիւնը բոլոր Հայ կաթոլիկներուն վրայ տարածել՝ ուր ուրեք որ գտնուին, գոնէ Օսմանեան կայսերութեան մէջ, այլ ընդունելութիւն չգտաւ Հռոմի պապութեան կողմէն։ Այդ նպատակով 1758 ամառուան մէջ յատուկ ուղեւորութիւն մըն ալ ըրաւ ի Հռոմ, բայց 1759 ապրիլ 30'ի պապական վճռով, իրեն իրաւասութիւնը Կիլիկիոյ բնական սահմաններուն մէջ պարփակուեցաւ, այսինքն է Կիլիկիա և Ասորիք, Միջագետքի յանձնուածով (ԱՂՔ. Ա. 25)։

ՀՌՈՄԻ ՎԱՆՔԸ

2065. Իսկ Անտոնեանք կ'աշխատէին ինքզինքին գործածել, թէ Պէյթխաչպօն վերջնական և հաստատուն սեփականութիւն դարձնելով 1760 ապրիլ 12'ի վաւերագրով, և Ս. Անտոն անունով վանք մըն ալ կազմակերպելով, թէ Հռոմի կղերանոցներուն մէջ նորահաս միաբաններ վերտղելով ուսմանց մէջ զարգանալու համար, և թէ Հռոմի մէջ վանք մը ստանալու համար աշխատութիւնները

չարաբնակելով։ Այդ մասին աւելի աշխատողներն եղան՝ հայր Թադէոս Թումայեան երկու եռամեայ չրջան աբբայութեան վրայ գանուելով, և հայր Գրիգոր Ներսէսեան Հռոմի մէջ անխոնջ և անդուլ հետապնդութեամբ։ Ներսէսեան ոչ միայն Հռոմ այլեւ Նեապոլի և Անգոնա ալ չրջեցաւ յաւուրս տեղ մը գտնելու յոյսով, պահ մը Լէոպոլսոյ կամ Իլվովի մէջ հաստատուելու գաղափարն ալ նկատի առնուեցաւ, միանգամայն ստիպուեցաւ Հայ հռոմէականներու կողմէն յարուցուած արգելքներու դէմ ալ մաքառիլ։ Միքայէլ ալ Հռոմ եղած միջոցին երկար չորժանգակեց իրեն միաբանութեան ձեռնարկին, և այնպէս 1760'ին Լիբանան գաթաւ։ Ներսէսեան 1753'է սկսելով տասը տարիի մօտ ազգ նպաստակին աշխատեցաւ, և Հայ հռոմէականներէ հեռու մնալու համար Ս. Մարիամ Եգիպտացի (Santa Maria Egiziaca) եկեղեցւոյն յարակից հայ հիւրանոցին բնակութիւնն ալ թողլով, Ս. Գանտալէոն (San Pantaleo) լատին վանքը քաշուեցաւ։ Գէտք եղաւ որ պապական արտօնութիւնը ձեռք ձգելու համար՝ չատ մը ձեւակերպութիւններու ենթարկուի, բայց վերջապէս նպատակին հասնելու գոհունակութիւնն ունեցաւ, և 1762 յուլիս 15'ին նօտարական վաւերագրով գնեց Վատիկանի հրապարակին վրայ Ջէզի (Cesi) դուքսերուն ժառանգական տարածքը, յարակից այգիով ու պարտէզով, զոր Ս. Գրիգոր Լուսաւորիչ անունով վանքի փոխարկեց (ԱՆՏ.)։ Այդ գործին մէջ յիշուելու արժանի է նաեւ հայր Թադէոս Գալօտեան վարդապետը, որ քաղաքէ քաղաք նուիրակութեան պատուով հայթայթեց այդ ստացութեան համար պէտք եղած գումարը։ Միաբանութիւնն ալ՝ գործին աւելի փայլ տալու համար, վերջին 1761'ի եռամեայ ժողովին մէջ հայր Գրիգոր Ներսէսեանը, բացակայ մնալով ալ, նորէն աբբայական պաշտօնին բարձրացուցած էր, որով ոչ իրրեւ յոկ ներկայացուցիչ, այլեւ իրր գլուխ միաբանութեան ստացութիւնը կնքեց։ Անկէ ետքը Ներսէսեան պարտաւորուած փոփոխութեանց ձեռնարկեց, և 1766 օգոստոս 17'ին, նոյն ապարանքին մէկ թեւին մէջ ձեւակերպուած եկեղեցիին նուիրատուական կատարեց (ԱՆՏ.)։

2066. *Մայրաքոյր կացութիւնը ներկայելու դարձած ատենները, հնար էր քիչ մը աւելի տեղեկութիւն տալ*

ՅԱԿՈԲԻ ՊԱՐԱԿԱՏԱՆԻՆ ՆԵՐՔԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆԵՐԸՆ ՎՐԱՅ, ԵՒ ՆԵՐՀԱԿԸՆԳԵՂԷՄ ՄԱՔԱՌՈՂՆԵՐՈՒ ՅԻՇԵԼ, ԲԱՅՑ ԱՅԴ ՄԱՆՐԱՄԱՍՆԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԵՐ ՆպատակԷՆ ԴՈՒՐՍ ԿԸ ՆԿԱՏՈՒՆՔ։ ԲԱՒԱԿԱՆ ԸԼԼԱՅ ԸՆԼ, ԹԷ ԱՆՀՆԱՐ ԷՐ ԼՔՄԻԱԾԻՆԻՆ ՀԱՆԳԱՐՏ ՎԻՃԱԿ ՈՒՆՆԱՅ ԵՒ ԲԱԶՄԱԹԻՒ ԱԱՒԱՅԱՆՔՆԵՐԷ ԱՊԱՒԱ ՃԵՑԱԼ, ԵՐԲԵՔ ԵՐԿԻՐԸ ԱՆԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՌԱՒԱԾ ԷՐ, ԵՒ ԵՐԲԵՔ ԱՄԷՆ ԻՇԽԱՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻՆ ՎՐԱՅ ՅԱՌԱԾ ԷՐ ԻՒՐ ԱՉՔԸ՝ ԱՆՈՐ ԼՆԹԱՑՔԱԼ ՊԱՆԴԵՐԷՆ ՕԳՈՒՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ։ Այդ չփոթութեանց և նեղութեանց գլխաւոր ԼՆԹԱՐԿՈՒՈՂԸ Շամախեցին էր, նախ իւր տեղակալութեան և յետոյ պահակալութեան օրով։ Պարսիկ մրցակիցներուն մէջ ամէնէն կարկառուն դէմքն էր Ջէլիմ խան, Զմիւռնիոյ ցեղապետը։ Ալիմէրտան զայն իրեն օգնական և ազակից բռնած էր, և իւր սպանուելէն ետքը Ջէլիմ տեզը անցաւ, և Իսմայիլ աբգարեանց տղուն վրայ թագաւորի անունը պահելով (§ 2024), բացարձակապէս կ'իշխէր Վ+էլ կամ խնամակալ անունով (ՏՁԼ·366), և անոր անունով կը պատերազմէր ուրիշ մըրցակիցներու դէմ, մինչեւ որ 1761'ին Ասպահան քաղաքի և Պարսկաստանի արեւմտեան գաւառներուն բացարձակ տէրը գարձաւ։ Բայց պատերազմները չվերջացան, զի պարտաւորուեցաւ թէ արեւելեան գաւառներու մէջ բռնացողներուն, և թէ նաեւ գաւառներու մէջ նորէն ապստամբողներուն դէմ ելլալ։ Այդ պատճառներով արշաւանքներ անպակաս եղան նաեւ ի սահմանս Հայոց։ Պաղտատ պղծուհի (ԽԱՋ·318), որոնց մասնրամասնութիւնները չենք մտներ։ Բայց անյիշատակ չենք ուզեր թողուլ Ջաֆարլի խանին անունը, զոր Ջէլիմ սպանելով առաւ ամէն ոչխարներուն, ղրղ ոչխար մանուածք ի Դաբանա Տարեաց առաջ վանաց (ԽԱՋ·324)։ Ջէլիմ կը ներկայուի իրր ուզղութիւն ախթոզ, արդարութեան հետեւող, ժողովուրդին խնայող (ՏՁԼ·366), սակայն այդ չի խափանեց ներքին պատերազմները ու առաւպանքները՝ պլնիէ բոլոր իւր երկարա-

մեայ թագաւորութեան միջոցին մինչեւ 1779, այնպէս որ Շամախեցին չկրցաւ խաղաղ և հանգստաւէտ և վիշտերէ ազատ օր մը տեսնել։ Աթոռէն տարիքն առած ու աշխատութիւններէ և տագնապներէ յոգնած էր, և հազիւ երկուքուկէս տարի մեռաց կաթողիկոսական աթոռին վրայ, և վախճանեցաւ 1763 մարտ 21'ին, նոյն իսկ աւագ ուրբաթ օր, յիննիրորդ ամսոյ էլչիին, զոր իղէպ է իմանալ լոյս ուրբաթին։ Իսկ է յոլըդ — ոյն, այսինքն աւագ չաբաթ օրը թաղումը կատարեցին և ամփոփեցին Ս. Գայիանէի բակին աջակողմը (ՇԱՀ. Ա. 231)։ Էջմիածինի մէջ աւանդաբար կը պատմուի, թէ ծաղրածու հռչակուած Ահարոն վարդապետը, աւագ ուրբաթ օր մը, երեկոյեան ժամերգութեան վերջ Քրիստոսի թաղման նախատօնակը կատարուելէն ետքը, կաթողիկոսին նոյն օր մեռած ըլլալուն առիթու, օղի և գինի տանելով վանքին աղչեքրին գլուխը՝ կը սկսի սիրաքանդերը խմելու և գաւազանս — լա հրաւիրել, գոչելով թէ Քրիստոս մեռած է և կաթողիկոս ալ մեռած է, և թէ այսպիսի առիթ մը մէյ մըն ալ ձեռք չենք կրնար անցընել։ Անշուշտ Շամախեցիի մահուան պէտք կ'ըլլայ պատշաճեցնել այդ աւանդական պատմուածքը։

2067. Առանց փառաւոր գործունէութեան մը պատմած ըլլալու, և առանց փայլուն արդիւնաւորութեան

ՅԱԿՈԲԻ ՄԸ ցոյց տալու ալ, չենք ԱՐԺԱՆԻՔԸ վարանիր Յակոբ ե Շամախեցի կաթողիկոսին անունը արժանաւոր հայրապետներուն հետ դասել։ Մանկութենէ ակնելով վանքին ծառայելը, համեստ քայլ և օգտակար պաշտօններու մէջ աշխատելը, երկարատեւ ժուղակալութեամբ աթոռը պաշտպանելը, և ամենազժուարին պարագաներու ներքեւ անդրկուն յարատեւելը, իսկական արդիւնաւորութեան փաստեր են, և բաւական են իր անունին փառք ու փայլ աւելցնել։ Իրեն վարչական կանոնաւորութեան փաստ յիշենք Գաւազանագիրքը, զոր 1743'էն, Ջահկեցիին օրէն սկսելով կազմելու ձեռնարկած էր, Մայրաթոռի անցքերը արձանագրելու համար (ԳԻՒ. Գ. Ե.)։ Շամախեցին հետաքրքրական քաղաքականութենէն ալ հետեւցած չէ։ Այն ձեռնարկը զոր Օրի գինուորականը և Մինաս վարդապետը այնչափ խնամով մշակած էին, Իւսւսական պետութեան պաշտպանութեամբ Մայրաթոռը Գարսկական անտանելի դարձած լուծէն ազատելու, բաւական ժամանակէ իվեր մոռցուած էր, և կարապետ Ուլնեցիէ ասդին, ամէնքն ալ Տաճկաստանէ գացող կաթողիկոսներ, այլեւս դէպ հիւսիս աչք դարձուցած չէին (§ 1956)։ Շամախեցին է որ նորէն այդ գաղափարը կը նորոգէ, 1760 յունիս 20'ին Իւսւսիոյ Եղիսաբեթ կայսրուհւոյն գրած նամակովը, որով կը խնդրէ Հայոց ղբրմելի ժողովուրդին ա — Վրաց մասին հոգացողութիւն առնել (ԶԱՄ. Բ. 48)։ Շամախեցիին դիմումին առնն Իւսւսիոյ մէջ տեղի կ'ունենայ նոյնին այլակրօնները դէմ մղուած հալածանքները, այլ երբ ուրիշ եկեղեցիներ կը փակուէին, քաց Հայոց միայն Հայոյ Աստուածածնի եկեղեցին (ԶԱՄ. Բ. 51)։ Շամախեցիով նորոգուած այդ սկզբնաւորութիւնն է, որ յաջորդներուն օրով հետզհետէ մշակուեցաւ ու ամեցաւ, և վերջապէս արդիւնաւորուեցաւ, թէպետեւ 70 տարի հետաւորութեամբ։

2068. Շամախեցիին մահուանէ ճիշտ տասիս մը առաջ, 1763 փետրուար 22'ին, Մեծ պահոց երրորդ չաբաթ օրը վախճանած էր Կարնոյ ՍԱՀԱԿԻ ՄԱՀԸ մէջ, Սահակ Ահազին (ԱՍՏ. Բ. 99), տարօրինակ անձնաւորութիւնը, ընտրուած ու չնրաժարուած, բայց խուսափած ու մերժուած կաթողիկոսը։ Սահակ վախճանեցաւ էջմիածին (ԶԱՄ. Գ. 866), իբր զի չդիտեցուն է փանիէ կոչին, է կարմիրվանէն, պատահի նմա ցաւ սաստիկ, և առնէ զնա ոչխիկ, և կը վախճանի է նոյն էչէրէ (ԴԻՒ. Գ. 31), և կը թաղուի կարնոյ Ս. Լուսաւորիչ վանքին եկեղեցւոյն քովը։ Հանդիսադիրը կ'ըլլայ Սիմէոն Երեւանեցին (ՍՐԳ.), որ կ-Պոլսոյ նուիրակութենէն էջմիածին կը դառնար, և քիչ օր ետքն ալ Շամախեցիին թաղման պիտի գըտնուէր։ Սահակի վրայ նորէն չենք խօսիր, բաւական գրեցինք իր ընթացքին նկատմամբ (§ 2043), և նոր աւելցնելիք չունինք։ Ցաւալի է ապաքէն որ այդքան ղէմք մը, ինչպէս էր Սահակ, որ իր վրայ մեծամեծ

յուսադրութիւններ կը հրաւիրէր, և քանիցս հայրապետական բարձր աստիճանին արժանաւոր նկատուած էր, բոլորովին մոռացուած և ստրկացած վիճակին մէջ կը մնար, որուն իսկական պատճառը, ամանց հակառակութիւնէն աւելի, իր տատամսոտ և վարանոտ ընթացքն էր եղած։ Միւս կողմէն պէտք չէ հոս մոռնանք, որ դրամական գործին կարգադրութիւնն ալ զանց բաւ, և խոստմանը հակառակ (§ 2058) վճարումները չկատարեց։ Թէպէտ այս պատճառով Շամախեցիին և Անագիսի միջև ան- ։— խ—վ—ի՝ն ֆ֊ Ն վ֏, այլ կ-Գոլոյ մնծամեծներուն միջնորդութեամբ Շամախեցին է ֆ—ց ե՝ց ։ պ-հանջելոյ, և հազիւ ուրեմն հնար եղեւ խնդիրը փակել, և ։ ֆԸ եւիօ—ն՝ն ը՝—ը—ի՝ն հաստատել (Դիւ. Գ. 31)։

Տ. ՍԻՄԷՈՆ Ա. ԵՐԵՒԱՆԵՑԻ

2069. Յակոբի թաղումը և զատկի տօնը անցնելէն ետքը Մայրաթոռի միաբանութիւնը ըստ սովորութեան ձեռնարկեց նոր կաթողիկոսի ընտրութեան, բայց այս անգամ համաձայնութիւնը դժուար եղաւ, որովհետեւ չկար այնպիսի մէկ մը՝ որ իր աղդեցութեամբ և իր արդիւնաւորութեամբ կանուխէն ամէնուն միտքերը գրաւած ըլլար։ Նալեան ալ, ոչ միայն քանիցս հրաժարած էր, այլեւ վերջին երկողներ անոր ախտակիր և անկարացած ըլլալուն լուրը բերած էին։ Աւելի հռչակած անուններն էին, Յովհան Ամդեցի՝ Գլակայ առաջնորդ, Աբրահամ Աստապատցի՝ Զմիւռնիոյ նուիրակ, Սամուէլ Երզնկացի՝ Պրուսայի առաջնորդ, և Յարութիւն Բասենցի՝ նուիրակութենէ դարձած (ՉԱՄ. Գ. 869), բայց ոչ մէկուն վրայ որոշ մեծամասնութիւն մը չէր համաձայներ, և չորս գումարումներ առանց հետեւանքի մնացած էին, իսկ Սիմէոն Երեւանեցիին վրայ խօսող չի կար։ Անոր գործունէութիւնը ծանօթ էր, բայց բուռն բնաւորութեամբը սիրելի եղած պիտի չըլլար. Տաճկահայերուն ալ հաճելի չըլլալուն կասկածը կը տիրէր, բայց վերջապէս հինգերորդ գումարումին մէջ՝ անկէ զատ յարմարագոյն մը չկարենալով գտնել, միաբանութիւնը անոր անունին վրայ կը համաձայնի, և կ'ըսուի թէ Յարութիւն Բասենցին աւելի մաս ունեցած է այդ ընտրութիւնը յաջողցնելու մէջ (ՉԱՄ. Գ. 870)։ Հապա այդ համաձայնութիւնը գոյացուցած, իսկոյն օծումը կատարելու կը ձեռնարկեն, որ և տեղի կ'ունենայ 1763 ապրիլ 20'ին երեւման խաչի կիրակիին, առանց սպասելու կ-Գոլսէ և ուրիշ կողմէ հաւանութիւն ստանալու։ Գուցէ կը խիթային որ նոր արգելքի չհանդիպին, և Տաճկահայերն ալ լրբացեալ գործողութեան մը դիմաց դնել կը մտածէին։ Սիմէոն պատմութեանս համար անծանօթ դէմք մը չէ, չատ եղելութեանց մէջ անոր անունը յիշած ենք, և զանազան պարագաներու մէջ վարած դերը բացատրած։ Այսու հանդերձ, նկատելով անոր կաթողիկոսական ընդարձակ գործունէութիւնը, կ'արժէ որ նախընթացին վրայ աւելի վերջոյն տեղեկութիւններ տանք։

2070. Ոմանց կարծիքով, Սիմէոնի ծագումը ազնուական եղած է, թէպէտեւ Գոչնան իշխանազուններէն եղած ըլլալը, կամ Խուբկեանց տոհմին իշխանազուն ըլլալը պատմական ստուգութեանց կը կարօտին (Դիւ. Գ. ։-)։ Սիմէոն ծնած է Երեւանի ֆ֊ֆ֏ֆ֏, ծնողքն են կարապետ ու Գայիանէ, և եղբայրները Մելքիսեդեկ ու Յարութիւն ու Ղազար, իսկ ծննդեան թուականը, զոր ինքն ալ երբեք չէ յիշած, մերձաւորապէս 1710'ին կը հաշուուի (Դիւ. Գ. ։Ե.)։ Առաջին տարիքէն ուշիմութեան և յաջողակութեան համբաւ հանած է Մայրաթոռոյ դպրոցին մէջ, մինչեւ կոլոտի փափաքը չարժել զայն իր կողմը ձգելու համար, և պաշտօն յանձնել Անագիսի, որ Էջմիածին գտնուած միջոցին

պատանի Սիմէոնը հրապուրէ (ԴԻՒ. Գ. ԼԷ)։ Սիմէոն էջմիածնի դպրոցին ընթացքը կ'ուսարուէ, օգտուելով մանաւանդ Շամախեցիին ուսուցչութենէն, և անմիջապէս նոյն դպրոցին մէջ ուսուցչութեան կը կոչուի, և առաջիկային նչանաւոր հանդիսացող Մայր աթոռոյ միաբաններ, բոլորն ալ Սիմէոնի աշակերտած և Սիմէոնով զարգացած ըլլալենին պարծանօք կը յիշեն։ Սիմէոն տակաւին դպիր էր, երբ Յարութիւն Ջուղայեցի եպիսկոպոսին մօտ՝ Պայազիտի նուիրակութեան օգնական նչանակուեցաւ, և սարկաւագ եղած առեն նոյնէն իբր ընկեր պահանջուեցաւ Հնդկաստանի նուիրակ նչանակուելուն առթիւ. թէպէտև Ջահկեցի կաթողիկոս կը յորդորէր՝ ի բաց թողլ և ելլել չտալ տանիլ հետը, որպիսի չէր Սիմէոն, կերպարանքով ոչ գեղատեսիլ, և մօրուքով յոյժ աղքատ, որուն համար Քիշ մակդիր անուն ստացած էր, հայերէն՝ արու այծ, կամ տաճկերէն՝ էօթ բառին իմաստով։ Յարութիւն Ջուղայեցին Հնդկահայերու փափաքը լրացնելու համար պատրաստուած էր Սիմէոնի վրայ քահանայական ձեռնադրութեան և օծման հանդէս կատարել 1743 Յունվերացին, որ կը հանդիպէր սեպտեմբեր 11'ին, երբ տօնին նախընթաց օրը, սեպտեմբեր 9'ին, յանկարծումահ կը վախճանի, և տեղական քահանաներ կ'ամբաստանուին թէ նահատակեցին, վախնալով որ ձեռնադրութեան պատճառով չլինէն ներհակ օգիչ (ԴԻՒ. Գ. ԼԷ)։ Սիմէոն սարկաւագ մնալով ալ՝ Հնդկաստանի նուիրակութիւնը չարունակել եպիսկոպոսին փոխանորդելով, և երեքուկէս տարի Հնդկաստանի մէջ չքշեցաւ։ Ջուղայի կողմերն ալ պատերով էջմիածին կը դառնայ 1747'ին, երբ Դաղար Ջահկեցիի դէմ հակառակութիւններ զօրացած էին (§ 2024)։ Հնդկաստանցիք ինդրած էին կաթողիկոսէն որ Սիմէոնը վարդապետութեան բարձրացնելով նորէն իրենց դարձնէ. կաթողիկոսը ընդունեց առաջարկը, նկատի առնելով Սիմէոնի առաստ և կամակատար արդիւնաւորութիւնը, ինքն անձամբ ձեռնադրութիւնը կատարեց, բայց Հնդկաստան դարձնելու պայմանը չգործադրուեցաւ։ Սիմէոն յարեցաւ Ջահկեցիի դէմ ելլող միաբանութեան, և ինքն էր որ պէտք եղած գիրերն ու տեղեկագիրները կը պատրաստէր։ Քիւթիւրի կաթողիկոսանալուն ալ օգնեց 1748'ին (§ 2025)։ Հետեւաբար երբոր Դաղար վերադարձաւ 1749'ին (§ 2028), Սիմէոն կարին ապաւինեցաւ, և որովհետև Դաղար կ'աչխատէր կուսակալին ձեռքով Սիմէոնը իր ձեռք անցընել, և իրեն դէմ գրիչ չարժող էլլոս-ֆոփնէրը կոթել, Սիմէոն կ-Պոլիս անցաւ, ուր լաւ ընդունելութիւն ալ գտաւ, իր ուսումնական համբաւին համար (ԴԻՒ. Գ. հա.)։

2071. Սիմէոն կ-Պոլսոյ մէջ մնաց բաւական ժամանակ, և կը յիշուի քէ Պալաթի

Ս. Հրեշտակապետ եկեղեցիի էօթեայ խոսմ, այսինքն է կամարակապ սենեակին մէջ, հասակաւոր աշակերտներու Պորփիւրի և Անյաղթի իմաստասիրական գիրքերէն կը դասախօսէր։ Թէպէտ Դաղար Ջահկեցի 1751'ին մեռած էր (§ 2034), և Սիմէոնը հալածողը այլևս չկար, և Մինաս կաթողիկոսէ կասկածելու տեղի չունէր, բայց Սիմէոն կ-Պոլիսը չէր թողուր, թերևս յուսալով յաջող յառաջդիմութիւն գտնել այտեղ, ուր իրեն հովանաւոր ունէր հռչակաւոր և ազդեցիկ Եաղուպ ամիրան (§ 2036)։ Անոր ընկերացաւ ալ Երուսաղէմի ուխտաւորութեան առեն 1751'ին, և իր քաջաքարող առնաբանութեամբ Նալեան պատրիարքը պարմացուց, որ մինչև իսկ իր փիլոնը, մատանին ու գաւազանը նուիրեց Սիմէոնի (ԴԻՒ. Գ. հբ)։ Այդ առթիւ կը պատմուի Նալեանի հռչակաւոր խօսքը, որուն երբ ուխտաւորները կը դիմեն, որ յաղթանդամ և մեծ մօրուք Մովսէս վարդապետը իրենց քարոզելու պատճէ, Նալեան ընդհակառակն Սիմէոնը ցոյց կուտայ ըսելով. Քարոզ կ'ուզէ՝ Քէօթէ, մօրուք կ'ուզէ՝ Մօթէ (ԴԻՒ. Գ. հգ)։ Սիմէոն եաղուպի և Նալեանի հետ երուսաղէմ գարձաւ 1752'ին, բայց Նալեանի կ-Պոլսոյ պատրիարքութեան մէջ վերահաստատուելուն և եաղուպի գլխաւորելուն վրայ, Սիմէոն կ-Պոլիսը կը թողու և էջմիածին կը հասնի, ամենայն հաւանականութեամբ, Աղէքսանդր Բիւզանդացիին ընկերանալով 1754'ին սկիզբները (§ 2041), և անկէց ընդունած կ'ըլլայ եպիսկոպոսական

աստիճանն ալ, և միջոց մը Մայրաթոռոյ մէջ մնալէն ետքը, 1755'ին վերջերը կ-Պոլիս կը դառնայ, թէ նուիրակութեան պաշտօնով (Դիւ. Գ. հե.), և թէ կաթողիկոսական ընտրութեան պատգամաւորութեամբ։ Սակայն Սիմէոնի և Աբրահամի Ջանգերուն հակառակ, 1756 փետրուարին կաթողիկոս հրեչակուհցաւ Սահակ Անագինը (§ 2042)։ Այնուհետեւ կ-Պոլիս մնացած կը գտնենք Սիմէոնը, Սահակ Անագինի անուանական կաթողիկոսութեան և Յակոբ Շամախեցիի բուն կաթողիկոսութեան միջոցին, որ է ըսել 1755'է մինչև 1763, իրր ուխտմեայ միջոց մը փոքրիկ ընդհատումներով։ Գէթ մը Զմիւռնիա ալ գտնուած է Սահակ Անագինի կաթողիկոս հռչակուելէն ետքը (Դիւ. Գ. հը.) բայց չենք կարող ճշդել. թէ Զմիւռնիոյ չրջանակին նուիրակութեան անցնելով, թէ ոչ Զմիւռնիոյ փոխանորդութիւնը իրր յաւելուածական պաշտօն վարելով։ Այդ միջոցը մեծապէս նպաստած է Սիմէոնի Տաճկահայոց գործերն ու ընթացքը ուսումնասիրելու, և կատարելապէս անոնց մանրամասնութեանց հմտանալու, ինչպէս իր նամակներուն և Ջամբռին մէջ կրնեմնուի։ Թերևս այդ ներհուն հմտութիւնն ու ամէն մանրամասնութեանց գիտակցութիւնը ներշնչած է Սիմէոնի՝ կ-Պոլսոյ պատրիարքութեան հանդէպ բծախնդիր և հակակիր հոգի մը, զոր կը յայտնէ բուռն բացատրութիւններով, և որուն մասին ուսանձինն պէտք է անդրադառնանք յառաջիկային։

2072. Սիմէոնի կեանքին նուիրակական չրջանը աղարդիւն եղած չէ, և Մայրաթոռին համար օգտակար արդիւնք ուսած է, որ միանգամայն չատ մը վանքեր կորնչելէ ետքը համաձայնած է պահ կաթողիկոսական աթոռ բարձրացնել։ Բայց մինչ, այդ միջոցին վրայ ընդարձակ տեղեկութիւններ չունինք. և ինքն ալ՝ թէպէտ մտադիր իր կաթողիկոսական գործունէութեան մասին Ճչքոփոքրան կազմել, բայց նախընթաց ժամանակներուն վրայ ակնարկներն ազատած է։ Նոյն իսկ Անագինի կաթողիկոսութիւնը չեղեալ նկատելը, և Շամախեցին կաթողիկոսացնելու համար ճիգերը՝ իրմէ պատմուած չեն, և քանի մը բառով իրրեւ օտարի մի գործ նչանակած է պարզ կաթողիկոսներու համառօտ պատմութեան կարգին (ՋԱՄ. 32)։ Ծիշդ չեցինք որոշէր թէ Սիմէոն իրրեւ իր առաջինը կը ճանչնար Շամախեցին (§ 2070), որուն կաթողիկոսական օծման ներկայ ըլլալու հանգար յատկապէս կ-Պոլիսէ էջմիածին հիւս. 1759'ին (§ 2057), բայց նորէն կ-Պոլսոյ նուիրակութեան դարձաւ Շամախեցիին հրամանով. և իրաւ ալ անկէ յետոյ նորոգութիւնը չէր կրնար գոնուիլ՝ մայրաքաղաքին ամենահակարուր նուիրակութիւնը վարելու և արդիւնաւորելու։ Վերջապէս 1763'ին Սիմէոն նուիրակութիւնը վերջացուցած իսմ րնդհատած էջմիածին կը դառնար, երբ կարնոյ մէջ Սահակ Անագինին (§ 2068), և էջմիածնի մէջ Յակոբ Շամախեցիի յաջորդակարուրութեանց հանդիպելուս, և քիչ ար ետքը կաթողիկոս ընտրուելուս, ու ապրիլ 20'ին կաթողիկոսական օծում առնելուս (§ 2069)։

ԷՋՄԻԱԾԻՆ ԳԱՌՆԱԼԸ

2073. Սիմէոն լաւ գիտէր կ-Պոլսոյ ապահանին տրամադրութիւնը, որ կ'ուզէր վերջնական և վճռական ձայնն ունենալ կաթողիկոսական ընտրութեան մէջ, մինչ իր ընտրութիւնը առանց անոնց ձայնին եղած էր, և օծումն ալ չտապով կատարուած էր, անչուշտ իր ալ կամակցութեամբ։ Գէտք էր ուրեմն գործին յարմար ձեւ մը տալ, ոչ իր դիրքը խանգարել, և ոչ Տաճկահայոց միտքը գրգռել։ Նախապէս Երեւանի խռնէն իր հաստատութիւնը ապահովեց (Դիւ. Գ. յե.), և պէտք է գիտնալ, որ այդ միջոցին Գարսկատանի արքունի իշխանութիւնը տակաւ բացուած էր, և նահանգապետ խաներ՝ իրրեւ բացարձակ իշխաններ կը գործէին։ Այնուհետեւ կ-Պոլսոյ հետ յարաբերութեանց ձեռնարկեց։ Մայիս 19'ին, օծումէն ամիս մը ետքը, մեծ նուիրակներ ճանապարհ հանեւցան. Յարութիւն Բասէնցի՝ կ-Պոլսոյ, Աստուածատուր Թիւրանդացի՝ Գաղատիոյ, Գէորգ Զամիանցի՝ Երիմի, և Գեղրոս Գեղանցեցի՝ Կարնոյ չրջանակներուն վրայ (Դիւ. Գ. 6), և միւս կողմէն պաշտօնագիրներ պատրաստուեցան Մայրաթոռոյ միաբաններութեան, և Երեւանի ու Թիֆլիզի ու Նախիջեւանի քա-

ղաքներուն կողմէն (ԴԻԻ. Գ. 6), և կաթողիկոսին կողմէն ալ բազմաթիւ յանձնարարագիրներ գրուեցան Կ-Պոլսոյ գլխաւորներուն (ԴԻԻ. Գ. 12), և Զմիւռնիոյ նչանաւորներուն (ԴԻԻ. Գ. 13), որպէսզի Տաճկահայոց հաւանութիւնը դժուարութեան չբաղխի։ Այդ գիրերն ալ Գրիգոր Սանասնեցի վարդապետին ձեռքով նուիրակներուն հետ ճանապայ հանուեցան (ԴԻԻ. Գ. 7)։ Սիմէոնի Ծիչատակարանը այդ գիրերուն ամփոփումը չտար, վասնզի դեռ Սիմէոն Ծիչատակարանը կազմել սկսած չէր։ Բայց ուրիչ տեղէ կը ծանուցուի, իբր թէ Սիմէոն սիրտերը չինելու համար գրած ըլլայ, թէ ես ալ ինձ ինչ կ՚ուզէ՝ թող ըսէ, այլ չընդդիմանիր ինքնին (ՁԱՒՐ. Գ. 872), որ եթէ ուղիղ է՝ չատ տկար չքմեղանք մրն է, մինչեւ իսկ դժուար է Սիմէոնի բնաւորութեան պատչաճեցնել։ Ուղեւորներուն կարինէ հեռանալէն ետքը Սանասնեցի վարդապետը, պահ մը ետեւ մնալով և աւազակներու հանդիպելով կը թալանուի, որոնք համայն նախրականի և վան սրբազան վիճին ընդդէմ կռնգիկոսութեան՝ ջանիցեան պատահեր, և զոյրբ դառնայ ի թեղէ չկրնայ վճռաբեր, և հազիւ Սանասնեցին պատուհասներէն քիչ մը բան հաւաքելով, Ծարուքիւն Բասնցի նուիրակին կը յղէ, որ յառաջացած էր դէպի Եւդոկիա, և ինքն ետ կը դառնայ (ԴԻԻ. Գ. 7)։ Բայց Շամախեցիին մահուան գոյժը և նրեւանեցիին ընտրութեան լուրը պաշտօնագիրներէն առաջ Կ-Պոլիս կը հասնին, և աւագանէն մաս մը դիմադրութեան կը գրգռեն, Սիմէոնի անձնական հանգամանքներուն, և առանց իրենց հաւանութեան օծուած ըլլալուն պատրուակներով։ Սակայն մեծագոյն և խոհականագոյն մասը հաւանելու և ընդունելու կողմը կ՚ըլլայ. Նալեան պատրիարք ալ իր հեղինակաւոր ձայնը կը բարձրացնէ, և վարագայ խաչի կիրակէին 1763 սեպտեմբեր 28՝ին, ինքն Նալեան պատրիարք կայսերապետի տղաներէն, Ռոստոմ ղոստոք, չէզոյց ղրէզոսկ անուն Սիմէոն կաթողիկոսին, զոր ամենքը փեր և հայր և վեհ դիտեցած էին։ Իսկոյն չնորհաւորական պաշտօնագիրներ ալ պատրաստեցին և ճանապայ հանեցին, որոնք ի թեհրան հասան էջմիածին (ԴԻԻ. Գ. 12)։ Այսպէս Սիմէոն ընտրութենէն հազիւ ութը ամիս յետոյ կրցաւ հանդարտ սրտով իր կաթողիկոսութեան վրայ վստահիլ, և Տաճկահայոց հաստատութիւնը ընդունելով, ձեռնարկել իր համարձակ գործունէութեան։

2074. Բայց այդ միայն չէր Սիմէոնի կաթողիկոսութեան առջի օրերուն տագնապը։ Ընտրութեան վրայ երկու ամիս անցած չէր ասկաւին, որ Հիւսէյին-Ալի Երեւանի խանը լուր կ՚առնէ թէ Քէրիմ խան (§ 2066) իր վրայ կու գայ, ամէն կողմ աւերելով և աւարելով։ Ուստի պատգամ կը ղրկէ Սիմէոնի, որ թշնամւոյն ձեռքը չիյնալու համար, բոլոր թանկագին ստացուածներով և բաւական պաշարով Երեւան գայ, ուր բերդին մէջ ապահով ինայ։ Սակայն Հիւսէյին-Ալիի ներքին միտքը կասկածոտ էր կաթողիկոսին վրայ, թէ մի գուցէ Քէրիմին օգնէ. և Սիմէոն ալ բնաւ չէր ուզեր անոր ձեռքը յանձնուիլ, ուստի ամէնէն ժամանակ այդ անորոշութեանց մէջ վերջ կ՚ենթ կը ինար։ Բարեբախտաբար վրաց Հերակլ թագաւորին միջամտութեամբ, Հիւսէյին-Ալի իր առաջարկէն ետ կեցաւ, և հաւանեցաւ որ միաբանները էջմիածին ինան, և կաթողիկոսն ալ իր ապահովութեան համար Թեթ էլչուրթ Օսմանեան հողը անցնի, երթալ Նախիջեւան, որ է Բագրեւանդի Ս. Յովհաննու վանքը, ինչ որ մեծ ուրախութիւն պատճառեց. իբր զի յիշատակագիրին խօսքով, վերջէն էջմիածին, յայլ տեղիս ի քեզ։ Ըստ այմ Սիմէոն գլխաւոր միաբաններով պայազիտի կողմը անցաւ 1763 յուլիսի մէջ, և հոն լսեց Սանասնեցի Գրիգորի կողոպտուելուն և պաշտօնագիրներուն կորսուելուն գործը, և իսկոյն սկսաւ նորեր պատրաստելու հոգալ, և կարնոյ նուիրակ Գեւորս Գեանջեցիի ալ հրահանգներ տալ, թալանը ձեռք ձգելու համար։ Բայց աթուէն դուրս դիւրութիւններ կը պակսէին, և անա այս միջոցին լուր կը հասնի Հիւսէյին-Ալի խանէն, թէ ահա խաղաղ, և թէ փոքչէր յոնոտ եւ։ Ասոր վրայ Սիմէոն և ընկերները Իւչքիլիսէի վանքէն պայազիտ կու գան, կուսակալ Մանուճա

փայլայէ քանի մը օր կը պատուասիրուին, և սեպտեմբեր 20'ին Պայազիտէ մեկնելով, Ս. Գէորգայ կամ Վարագայ չաբաթապահքին բարեկենդանին, սեպտեմբեր 21'ին, էջմիածին կը մտնեն։ Սիմէոն իսկոյն կորսուած թուղթերուն պակասութիւնը լրացնելով, սեպտեմբեր 28'ին փայտկը ճանապայ կը հանէ՝ Յարութիւն Բասենցի նուիրակին հասցնելու Եւդոկիա։ Սիմէոն կը փութար որպէսզի օր առաջ կ-Պոլսոյ և Տաճկահայոց հաւանութեան գործը վերջանար, բայց բարեբախտաբար միևնոյն սեպտեմբեր 28'ին օրը ամենայն ինչ վերջացած էր կ-Պոլսոյ մէջ, ինչպէս տեսանք (§ 2073), բայց այն առեն օրը օրին լուր առնալու միջոցները կը պակսէին։ Նոյն իսկ երեւանի խանին պաշտօնական այցելութիւնը յետաձգած էր Սիմէոն կ-Պոլսոյ թուղթերուն հոգածութենէն, և փայտկը ճանապայ հանելէն ետքը, սեպտեմբեր 29'ին երկուշաբթի օր կ'երթայ ի քէրքն Երեւանի, ի տէս խանին (Դիւ. Գ. 20)։

ԴԻՒԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ

2075. Սիմէոն կաթողիկոս հազիւ Պայազիտի պանդխտութենէն դարձած, հիմնական կերպով կը ձեռնարկէ Մայրաթոռոյ մէջ կարգադարձ հաստատել, և իբր առաջին քայլ այժ կու տայ արձանագրութեանց և յիշատակագրութեանց, որք կը ծառայեն իբ պարծանքութեանց կանոնաւորութիւն տալու, և իբ հղկութեանց նպատակն ու յիշատակը պահպանելու։ Գրութեանց պակասութեան ձախորդ հետեւանքը մինք իսկ տեսանք, ամենակարեւոր խնդիրներու մասին ատուգապատում յիշատակներ չգտնելով։ Այս պարագան նոյն միջոցին ալ զգալի եղած էր, վասնզի ոչ միայն իրենցմէ առաջ յղուած թուղթերուն մասին՝ ո՞ւր և ե՞րբ և ինչ գրուած ըլլալը չէին գիտեր, այլև ոչինչ գիտէին ընդհանրապէս, ընդհանրապէս և զա՛ս որ էջերս կարդալով ընդոց, որք Սանահնեցիին վրայէն կողոպտուեցան, որպէս զի ըսա՛ այնմ նորեր գրէին (Դիւ. Գ. 10)։ Սիմէոնի այս առթիւ հաստատած արձանագրութիւնները եղան հետեւեալները։ Նախ Գաղաղանքէ մը, զոր կանոնէին հաստատած էր Շամախեցին (§ 2067), բայց ընդհատուած ըլլալուն համար Դուկիանոս Ակտարակեցի դպիրին պաշտօն տուաւ զայն շարունակել։ Առանձինն նուիրակութեանց մասին տեղեկութիւններ հաւաքելու գործը յանձնեց Երեմիա Նոտարին, որ նշանակէ իւրաքանչիւր թեմին նուիրակը, անոր արդիւնաւորութիւնը և զանազան խնդիրները։ Ցայտնի չենք գտներ թէ նուիրակութեանց կանոնագիր մըն ալ կազմած ըլլայ Սիմէոն, որ այդպիսի կարգապահութեանց նախանձայոյզ էր. գուցէ Եփրեմ Զորագեղցիի օրով կազմուած՝ Շաբաթօքէթալ ցոցոկ պաշտնէ և պաշտօնէութեանց անունով նուիրակաց կանոնագրութիւնը (Դիւ. Գ. 808-824), երեւանեցիէ մնացած սկզբնագիրի մը հետեւողութեամբ պատրաստուած ըլլայ։ Առնցմէ աւելի կարեւոր կրնայ նկատուիլ Ծովհաննէս Գեղամացի դպիրին ձեռքով պատրաստուած Ցիշատակարանը, որուն մէջ ժամանակի կարգով նշանակուած են ստացուած և գրուած թուղթերը, պատչաճ տեղեկութեանց և բացատրութեանց յաւելուածներով՝ որեւ վերջերս լոյս տեսաւ Գիւտ Ազանեան աւագ քահանայի հրատարակած՝ Ինքնագիր պատմութեան հաւաքածոյին կարգին։ Այս յիշատակարանին յարակից է Մեծ թեթ կոչուածը, որ յատուկ ցանկ Շամախեցւոյ կընդգրկէ։ Եւ որուն մէջ ամբողջապէս կ'ընդօրինակուէին կարեւորագոյն գիրերը։ Առաջին տոմարին աւարտէն ետքը սկսուած պիտի ըլլայ մեթ թեթ (Դիւ. Գ. 36), որ Բալըքէսէհմոթ թեթ ալ կոչուած է (Դիւ. Գ. 64)։ Այս վերջիններուն մասին տեղեկութիւն և ծանօթութիւն չունինք։ Ցիշուած արձանագրութիւնները սկսած են 1763 սեպտեմբերի վերջերը, Իւչքիլիսէ դառնալէն ետքը, և չարունակած են մինչեւ 1776 (Դիւ. Գ. և Դիւ. Ը.), և մենք ալ պիտի օգտուինք անոնցմէ։

ՋԱՄԲՌԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

2076. Երբոր Սիմէոն նոր և առօրեայ գործերուն արձանագրութիւնը իր պաշտօնեաներուն կը յանձնէր, կարեւորագոյն աշխատութիւնը իրեն կը պահէր, այն է հին պաշտօնագիրները հաւաքել և պրպտել, և Մայր աթոռին ստացութեանց և իրաւանց, կալուածոց և ընչից վիճակը ճշդել, անոնց վաւերական ցուցակը կազմել, և իրաքան-

չիւրին վրայ կարեւոր տեղեկութիւններ ու բացատրութիւններ տալ։ Այդ պրպտումները անմիջապէս սկսաւ Պայազիտէ դառնալէն ետքը, ծակուծուկէ դուրս հանել փոշիներու ներքեւ մոռցուած կոնդակներ և հրովարտակներ, մուրհակներ և կալուածագիրեր. զանոնք դասաւորել և յատուկ տոմարի անցընել տուաւ. և երբոր աւտազը պատրաստեց, սկսաւ գրել անոնց մասին բացատրական հատորը։ Այդ է Սիմէոն Երեւանեցիի Ջամբռ կոչուած գիրքը, որ է Ցիշատակարան արձանագրութեան, հայելի և պերճանաւոր քնարէց արդիւնեանց արքայ ազատ և իրոյ չքնաղեայ վանօրէիցն, համախոհվիցեալ և շարադրեցեալ է Սիմէոնէ յաճախ և վիպակ կոչեալ։ Այդ աշխատութեանց վրայ 1765 թուականն է դրուած, առանց ճշդելու թէ սկզբնաւորութեան, թէ ոչ աւարտման թուականն է. ամէն առթի մէջ չատ ուշացած չըսուիր, եթէ ամբողջ 1764 տարին պրպտումներու հետեւեցաւ։ Ջամբռ անունը, նոյնիսկ գաղղիերէն Chambre բառն է, որ կը նշանակէ սենեակ իր սովորական իմաստով, սակայն նախընթաց դարերու մէջ սենեակ կը կոչուէին Եւրոպիոյ պաշտօնական դիւանները, և դեռ այսօր ալ Camera apostolica, Առաքելական սենեակ կը կոչուի Հռոմի պապական դիւանը։ Սիմէոն հարկաւ այդ անունը լսած է Կ-Պոլիս գտնուած և Եւրոպացւոց հետ շփում ունեցած միջոցին, և իրրեւ Եւրոպական կառավարչագործեալ ձեռնարկ մը՝ այդ անունը տուած է իր աշխատութեան, որ պարզապէս Ինտենտիէր կամ Տիտանական արձանագիր մըն է։ Ջամբռը երկար տարիներ անյայտ մնացած ըլլալէ ետքը, 1873'ին հրատարակուեցաւ Էջմիածինի տպարանէն։ Սիմէոն իր գործին չարունակութիւնը կը յանձնարարէ իրեն յաջորդնեերուն, դի և զոտ զա չեօտ եղելոն է սա էրեալ է չէրտոնդէր պեղոզն արձանագոօղի (ՋԱՄ·4)։ Բայց Էջմիածինի դիւանը կը վկայէ, թէ ալ ոտ հոգացեալ է արձանագրել զէր ինչ (ՋԱՄ·ա·), ինչ որ Սիմէոնի գովեստը կը բարձրացնէ։ Միայն ցրիւ պատճէններ կը գտնուէին, մինչեւ որ Էջմիածինի մէջ մեսրոպեան Սիմեոնի հաստատուելովը, կանոնաւոր աւետագրութիւններ ալ սկսան, և կաթողիկոսական դիւան կազմուեցաւ։

2077. Սիմէոնի Ջամբռին առաջին երեք գլուխները չատ համառօտ ամփոփում մը կը պարունակեն Հայոց եկեղեցւոյ պատմութեան՝ մինչեւ Մովսէս Տաթեւացին (ՋԱՄ·6-20). իսկ չորրորդ գլուխին մէջ զատ զատ կը խօսի յաջորդնեերուն վրայ՝ Մովսէս Տաթեւացիէ մինչեւ Յակոբ Շամախեցի (ՋԱՄ·21-33), որուն վերջը համառօտութիւն մը կը դնէ կաթողիկոսներու թիւերուն և տարիներու տեւողութեան։ Կաթողիկոսներուն թիւը Լուսաւորչէ մինչեւ Բարսեղ Անեցի, կը դնէ 61, Գրիգոր Պահլաւունիէ մինչեւ Յովսէփ Սահցի 27, և Կիրակոս Վիրապեցիէ մինչեւ Յակոբ Շամախեցի 39, որ է բովանդակ 127։ Իսկ մեր դասակարգութեամբ Շամախեցին 114'րդն է չարքին մէջ, որովհետեւ քանիները ցուցակէ հանած ենք՝ իբր անստոյգ կամ աթոռակից կամ հակաթոռ։ Տարիներու տեւողութիւնն ալ Լուսաւորիչէ Բարսեղ Անեցի կը հաշուէ 812, Գրիգոր Պահլաւունիէ մինչեւ Յովսէփ Սահցի՝ 325, և Կիրակոս Վիրապեցիէ մինչեւ Յակոբ Շամախեցի՝ 322, բովանդակ 1459 տարի (ՋԱՄ·33)։ Լուսաւորիչի կաթողիկոսութիւնը և Մայրաթոռի հիմնարկութիւնը կը դնէ 305'ին (ՋԱՄ·6). մինչ մենք ձեռնադրութիւնը 302'ին (§ 63), և հիմնարկութիւնը 303'ին ցուցուցինք (§ 66)։ Յատուկ հատուած մը բացուած է՝ Վասն Սիմեոն կաթողիկոսի (ՋԱՄ·33-44), բայց այն պէտք չէ իր գրիչէն ելած ըլլայ։ Վասնզի նա որ յաւելաբանին մէջ կը խոստովանի թէ լուի և էն անօսմբ կաթողիկոս մըն է, յամենայն անբրէն և անպէս, որ չէ կրցած ինքն իրմէ ըմբռնաւոր գոթ ինչ յաւելացուցանել (ՋԱՄ·2), չէր կրնար իրեն համար գրել, թէ էր այր ընտրելագոյն, առաքինի, բնաշխարհ, լի խոհականութեամբ, լաւագոյն պեղեակ ձին և նոր կոակրանաց, վարդ նբերէց և արուեստն էրոց (ՋԱՄ·33), բարեսէր հեղ, պարզամիտ և համբերող, ներող և անչէզոր, կակղասիրտ և քնքշագոյն, ողորմած և առաքինեան, անընդունակ և ազատաբարոյ (ՋԱՄ·34), արհամարհող (ՋԱՄ·35), քաջերի, ահարկու, անուանի (ՋԱՄ·36), բազմահանճար (ՋԱՄ·28), և քաջենախանձ (ՋԱՄ·39), և դեռ ուրիշ չատ ձիրքերով ճոխացած։ Իրաւ ուրիշ տեղ մըն

ալ յիշատակութիւն մը կայ՝ «Ն ֆովլոյ, ընդհուպէյէ և պեջճխոպէ, փեռն Սխէն ասբոնթոքան վրդապէթէն եչեանցոյ (ՋԱՄ. 28), սակայն սա ուրիշ Սիմէոն Երեւանեցի մըն է (§ 1942), զոր պէտք չէ կաթողիկոսին հետ չփոթել (ԴԻՒ. Գ. հը.)։ Հետեւապէս պէտք է ըսել թէ Սիմէոնի մասին հատուածը ուրիշ գրիչէ Ջամբռին մէջ մուծուած է։

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԱՍԸ

2078. Պատմական մասը փակելով, Ջամբռ կը սկսի վիճակագրական ծանօթութիւններ տալ։ Հայաբնակ տեղերը կամ առաջնորդական վիճակները նուիրակական չրջանակներու բաժնուած են, որոնց քաղուածքը օգտակար կը սեպենք ժամանակին կացութեան վրայ գաղափար կազմելու համար։ Տաճկահայ վիճակներ 10 նուիրակութիւններու բաժնուած են, և են. 1. Կ-Պոլիս, մայրաքաղաքը իր չրջականերով։ 2. Ադրիանուպոլիս, որուն մէջ են Ադրիանուպոլսոյ, Ռոտոսթոյի, Պրուսայի, Պանտրմայի, Քէօթահեայի, Պիլէճիկի, Եալովայի և Նիկոմիդիոյ վիճակները։ 3. Սրիմ, որուն հետ են Բեսարաբիա, Վալաքիա, Մոլտաւիա և Պուլկարիա։ 4. Եւդոկիա, որուն մէջ կը մտնեն Արաբկիրի, Ակնայ, Սեբաստիոյ, Կեսարիոյ, Եօզղատի, Ամասիոյ և Ճանիկի վիճակները։ 5. Անկիւրիա, որ կը պարունակէ Աֆիոնգարահիսարի, Գոնիայի, Գարամանի և Պուրտուրի գաւառները։ 6. Կարին, և 7. Կարս, որոնց սահմանները որոշուած չէն Ջամբռի մէջ, այլ Ցիշատակարանին մէջ կը գտնենք, թէ Կարին կը պարունակէ, Բասենի, Դերջանի, Երզնկայի, Կամախի, Ղուղիջանի, Շապին-գարահիսարի, Թամզարայի, Տրապիզոնի, Սիւրմէնէի, Կիւմիւշխանէի, Սալերի, Ղղիի, Յոտորջուրի, Օլթիի, Նարմանի և Ալաչկերտի վիճակները։ Իսկ Կարսին ներքեւ են, Կաղզուան, Ախալցխա, Ախալքալաք, Արտանուճ, Արտահան, Արդուին, և Զրլսրը (ԴԻՒ. Գ. 800)։ 8. Պայազիտ, որուն սահմանները վերիվերոյ կը համեմատին այժմեան համանուն նահանգին։ 9. Վան, և 10. Տիարպէքիր, ասոնց ալ սահմանները ցուցուած չեն Ջամբռի մէջ, բայց Ցիշատակարանը Տիրապէքիրի ներքեւ կը դնէ, Բալու, Խարբերդ, Արղնի, Չարսանճաք, Չմշկածագ, Ջնգուչ, Սեւերեկ, Ուռհա, Կարմունջ, Մէրտին, Մուսուլ, Հղու և Էկիլ։ Իսկ Վանին ներքեւ կը դրուին, Բաղէշ, Մուշ, Խօշապ, Բերկրի, Արճէշ, Արծկէ, Խլաթ, Կարճկան, Նօրտուզ և Ապաղա (ԴԻՒ. Գ. 80)։ Ջամբռի մէջ պարունակուած տեղագրութիւնը՝ որոնց որ չրջանակը ցուցած է, գիւղերու անուններն ալ կ'աւելցնէ, որոնք օգտակար կ'ըլլան հայաբնակ տեղերը ուսումնասիրողին. զոր օրինակ միայն Պայազիտի ներքեւ 140 անուններ կը գտնենք նշանակուած։ Պարսկահայք 4 նուիրակութիւն կը կազմեն, Ասպահան, Դավրէժ, Նախիջեւան և Երեւան, բայց սահմանները գծուած չեն Ջամբռի մէջ, այլ Ցիշատակարանը կը մանրամասնէ, և կը յիշուին իւրաքանչիւր նահանգի ծանօթ չրջակաները (ԴԻՒ. Գ. 803)։ Նուիրակական չրջանակներէ ետքը առաջ բերուած են փերոէնէ վիճակներ, որոնց մէջ նուիրակութեան արդիւնքներու հետ առաջնորդութեան արդիւնքներն ալ Մայրաթոռի կը պատկանին, և են. 1. Ջմիւռնիոյ վիճակը Արշիպեղագոսի կղզիներով։ 2. Պղտտատի և Պասրայի վիճակը, Հնդկաստան ու Չինու երկիր, և Պաթաւիա ու Մանիլա միասին։ 3. Դիլանի երկիրը։ 4. Տփղիս, և բոլոր Վրաստան։ 5. Հաշտաչխան, որուն մէջ կը պարունակուին Պետրբուրգ, Մոսկուա, Մողդոկ, Նոր-Նախիջեւան և Օսմանցիներէ առնուած Ղրիմի մասը։ 6. Էջմիածինի յատուկ տէրունի գիւղեր, որք են, Վաղարչապատ, Եղուարդ, Օշական, Ալիբէկլու, Դողս, Փարաքար, Գէօկղումպէթ, Կաւակերտ, Արպաս, Քեսալարայ, Սուրմարի, Կողբ և Ակէթլու։ Նուիրակութեան արդիւնքները երեք տարին անգամ մը կը գանձուէին, բայց քանի մը տեղեր, դրամէ զատ իւրաքանչիւր տարի իւղ և պանիր և մատաղցու և ուրիշ պըտղիներ կու տան եղեր, և ասոնք ալ են, 1. Պայազիտ, 2. Վան, 3. Կարս, 4. Գեղարքունի, 5. Լօռի, 6. Տփղիս, 7. Նախիջեւան, 8. Դավրէժ և 9. Գեանջայ իրենց չրջանակներով։ Այս վիճակագրական տեղեկութիւնք կը կազմեն երեք գլուխներ հինգերորդէ սկսելով։ Յաջորդ երկու գլուխներն ալ նուիրուած են կաթողիկոսական իրաւունքներն և արտօնութիւնները բացատրելու, ինչ գինէ՞ է և ոչ՞. և այս

առթիւ խիստ ակնարկներ կան Երուսաղէմի և Կ–Պոլսոյ աթոռներուն՝ պապէութ անուն գործածելնուն դէմ։ Բացատրուած են եւս այցելութեանց և թղթակցութեանց մէջ կաթողիկոսին գործածելիք կամ անոր ուղղուելիք պատուադիր ձեւերը։ Վերջապէս տասներորդ գլուխէն սկսելով զատ զատ և պատմականօրէն խօսուած է Աղուանից, Աղթամարի և Կիլիկիոյ կաթողիկոսութեանց վրայ, միշտ անոնց սահմանափակ իրաւասութիւնը և Մայրաթոռոյ բարձր իշխանութիւնը ցուցնելու դիտմամբ։ Մենք առայժմ ատոնց մանրամասնութեանց չենք մտներ, պատմական ոճերնէս չհեռանալու համար։

ՀԱՍՈՑՔՆԵՐՈՒ ՄԱՍԸ

2079. Ջամբռի մնծագոյն մասը կը պարունակէ Մայրաթոռի հասոյթներու, կալուածներու, ինչքերու և ապահարկութեանց մասին ընդարձակ տեղեկութիւններ, որք և գործին բուն նպատակը կը կազմեն։ Երկքառասաներորդ գլուխին մէջ յառաջ կը բերուին տէրտէրք–ղբօյ, որոնցմէ Մայրաթոռը առնու ըմսուքը, այսինքն ղռասնորդս, և կը բացատրուին թէ օրպէս ոգացս ընտս։ Այդ գիւղերն են, 1. Վաղարշապատ, 2. Օշական, 3. Ֆռանկանոց, 4. Մաստարա, 5. Ջիրազլու, 6. Մուղնի, 7. Տիպակլու, 8. Քէչիշքեանտ, 9. Նորագեղ, 10. Նորք, 11. Եղուարդ, 12. Եայճի և Ամիրին, 13. Մելիքի, 14. Բաթռինջ, 15. Բախենիս, 16. Էսպանիս, 17. Ղարաղօյունլու, 18. Աչտարակ, 19. Աղաւնատուն, 20. Նորագաւիթ, 21. Բիւրական և 22. Համիլար։ Չորեքտասաներորդ գլուխը կը բացատրէ Խոջաֆռնիեան, այսինքն ալտոռնիեան, կամ լաւ եւս ապահարկութեան արտօնութիւնները։ Ճաջորդ գլուխին մէջ մի առ մի կը ցուցուին անոնց և հոգ ընելէ և օրօք անանց. ուրիշ գլուխ մըն ալ կը բացատրէ ղայթն, ղազրպեզը, ղայթեռեզը և ղայը այսպէս։ Ճատուկ գլուխի մը մէջ ալ ամփոփուած են ըսբօն, ատատն և ծովքն։ Նոր գլուխ մըն ալ կը բացատրէ թէ ո՞ր և ո՞ւր են փռանճն, խանատինն և ճրպտն և այլ այսպէսն։ Այդ ամէն տեղեկութիւնները ճոխացած են կարեւոր տեղեկութիւններով, և իւրաքանչիւր կէտի վրայ վաւերագիրներն ալ ցուցուած են, մնծ հատաքածոյին մէջէն էջերը նշանակելով։ Բսանեորդ գլուխէն սկսելով կը ցուցակագրուին պետական իշխանութենէ առնուած ոռղմտ, կամ պաշտօնագիրներ և հրովարտակներ և հրամանագիրներ, որոնց մասին կը ծանուցանէ թէ յօթաց հանելով էրեցէ, վանդի այն գիրերէն, զորս կը յուսայի, կ'ըսէ, դանել, ջեռլոմս և ջեռլոչն ոչ էին։ Այս գրութիւնները կը դասակարգէ, 1. Թագաւորաց Պարսից և բուն իշխողաց չհասպիսեաց, 2. Պարսկական խանից, չխիսլամաց, և այլոց այսպիսեաց գործակալաց, 3. Օսմանցւոց թագաւորաց, 4. Օսմանցւոց փաշայից և այլոց իշխողաց, և 5. Ղապալչ և վախտպնամա կոչուած գրութիւններ, որք են նուիրատուութենանց պաշտօնագիրներ զանազան լեզուներով։ Վերջին գլուխը նուիրուած է վնօրէնէ որ յերէրօլ նբեռանոռ, և այս կարգին կը յիշուին, 1. Գեղարդայ վանք, 2. Հաւուցքառ, 3. Խորվիրապ, 4. Աղջոց վանք, 5. Գետարգել, 6. Կարնոյ վանք, 7. Մաքենոց, 8. Խութաւանք, 9. Կեչառիս, 10. Հայրեվանք, 11. Շղուանք, 12. Սեւան, 13. Բջնի, 14. Դբէազ, 15. Թօշ, 16. Տեղեր, 17. Սաղմոսաւանք, 18. Ծոհաննաւանք, 19. Նիգ, 20. Մողնու, և 21. Անանիա առաքեալ։ Այսչափը բաւական ըլլայ փոքրիշատէ գաղափար մը տուած ըլլալու համար Սիմէոնի նշանաւոր աշխատութեան, որով նթէ մէկ կողմէն իր գործունէութիւնն ու արդիւնաւորութիւնը կը յայտնուի, միւս կողմէն ալ ժամանակին պարագաներուն և Մայրաթոռին կացութեան վրայ գաղափար մը կը կազմուի։

ՆԱԼԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

2080. Երբոր էջմիածնի մէջ Սիմէոնի հայրապետական գործունէութիւնը կը սկսէր, անդին Կ–Պոլսոյ մէջ Նալեանի պատրիարքական գործունէութիւնը կը փակուէր, թէպէտ տարաժամ, զի դեռ 62 տարեկան էր, և տակաւին արդիւնաւոր գործունէութեան տարիք ունէր։ Բայց ախտ մը չարաչար, Տալբօյան կոչուած ընդհանուր բառով (ԳԱԼ. 307), զայն կը հիւծէր, որ ժամանակակիցներէն արտաքին երեւոյթովը միայն բացատրուած է, թէ օր ի վերայ առաջ առաջնոյր ցաւն և նիհարանայր մարմնովն (ՊԱՍ. 12), որով յայտնի

չէ թէ թոքախտ էր կամ թէ սիրտի ախտ, և կամ սպիտակախտի հետեւանք։ Նալևան օրօրի այժերը կը կորնչնէր, և իզուր օգտա-փոխութիւամբ և զգուշաւորութիւամբ կ'աչխատէր կազդուրուիլ։ գործը չէր լքանիր, և Իւսկիւտարի Երուսաղէմատունը փոխադրուելով, երբեմն երբեմն յիւղ էրուէր զինոյր և ընծանոյր, վասն սաղմոսրնեան անյին էրոյ։ վերջին զատկի պատարագին, 1764 ապրիլ 11'ին, տեսնուելուցաւ որ հազիւ հազ կրցաւ զայն աւարտել ու կանգնելով երբեմ յոտին, և Գրիգոր վարդապետ Պասմաճեան կը վկայէ, թէ երեմն ըսբսրղօրնեան ըսնան մեռառնէ, չի ըսբ օրսմ սա մերչ էր էսւ վասն պատասխանեան։ Անկէ ետքն ալ՝ նորէն ձիավարելու դարմանին կը դիմէր, չունք իմանար ինչ և որո՞ւ խորհրդով, մինչեւ որ օր մը՝ ա՛լ ձիու վրան կենալ չկրնալուն, է վերայ ընծկերքի քերին է վանն և հանգոցին է ռչ հանճի (ՊԱՍ.14)։ Ասոր վրայ աւագանին ալ յուսահատուելուցաւ անոր կեանքին վերայ, և նոր պատրիարքի ընտրութեան պէտք զգայ։ Նալևանի առաջարկով, և նոյն ինն եւս հաճելուսս է խորհուրդս և չէլս է ևոս նոյին, և իրր իւր յաջորդ ցուցուց Սամուէլ երզնկացի եպիսկոպոսը, որ Պրուսայի առաջնորդ էր։ Բայց Սամուէլ ընդդիմեցաւ էրոյ, և ոչ մի կերպով չուզեց Պրուսայէ հեռանալ և պատրիարքական տագնապին մատնուիլ (ՊԱՍ.14)։ Սարգիս Սարաֆեանի ներբողաբանը կը յիշէ թէ Նալևան Սամուէլէ առաջ Սարգիսի առաջարկած էլլայ պատրիարքական յաջորդութիւնը, և Սարգիս զայն մերժած էլլայ (ԳԱԼ.106)։ Սակայն ներբողաբանը կրնար միայն Սարգիսի բերնէն լսած անձնագով յոխորտաբանութիւնները կրկնել, և ոչ իսկութիւնը պատմել։ Սարգիսի ալ Գաղղիոյ և Նէապոլսոյ դեսպանները վկայութեան կոչելը (ԳԱԼ.307), առաւելն հռոմէականաց ծածուկ դարձուածները կրնայ ցուցնել, և ոչ ազգին կամքը, որ կասկածաւոր նկատուած Սարգիսի վրայ երբեք չմտածեց, ինչպէս յայտնի կը տեսնուի Պասմաճեանի մանրամասն և ոչ կասկածելի յիշատակարանէն, ուր Սարգիսի անունն իսկ յիշուած չէ։ Սամուէլի մերժումէն ետքը, ապա չեր պնորէի դարձոցին ընթս և ընդհանուր էրբանց սա է ռանել է վերայ ներոյս պօղոսընեան, կը գրէ Պասմաճեան (ՊԱՍ.15), որ Երուսաղէմի փոխանորդն էր, և թէպէտ նա ալ կամեցաւ խոյս տալ, գլխաւորապէս դեռ եպիսկոպոս չըլլալուն, և կ-Պոլսոյ մէջ ալ 12 եպիսկոպոսներ գտնուելուն պատճառով (ՊԱՍ.105), սակայն վերջիվերջոյ հարկեցուցին ընդունել, յիշելով թէ 8ովհաննէս պատրիարքն Ամիրայէն ալ, որ է կոլոտը, է քաղամ ժամանակ սաանց եպիսկոպոսընեան արբ ընտրեբրեսընեան (ՊԱՍ.15)։

2081. Նոր ընտրութեան հանդիսական և վճռական ձեւ տալու համար, աւագանութեան խորհրդով մեծ ժողով մը հրաւիրուեցաւ պատրիարքական Մայր եկեղեցին, որ և գումարուեցաւ 1764 մայիս 13'ին, Երեւման խաչի հինգշաբթին, որուն ներկայ եղողներ էրբեմն սահել էին տան ընդհանուր անյին (ՊԱՍ.16)։ Ինքն Նալևան ալ Իւսկիւտարէ իջաւ և ներպատրոյ (ՁԱՄ.Դ.873), պերճախօս աստնաբանութեամբ յայտնեց իւր հիւանդութիւնը, և յօժարակամ հրաժարականը, և Գրիգոր վարդապետին ընտրութիւնը, և բազմութիւնը տուաւ իւր հաճութեան և ընդունելութեան յայտարարութիւնը։ Պասմաճեան բեմ առաջնորդուեցաւ, Նալևան ծերունին յաթոռ է յոհոռոչ, ընդ նմին և հաստատութեան, էրբեմն սրինել համբուրեցաւ, խրատական մրն ալ խօսեցաւ, իւր իսկ մատանին և գաւազանը յանձնեց, և մեկ ընդոստոչն էլլեն յերեց է վերայ, և նոյն տեղ իւր հրաժարման և Գրիգորի ընտրութեան պաշտօնագիրը էրբեմել և ընթերցել՝ նորընտիրին յանձնեց, և պատրիարքարանէն ելնելով Դումքապուի Երուսաղէմատունը բնակեցաւ։ Մայիս 14'ին պետական պաշտօնեաներ եկան Նալևանի հրաժարականը իւր բերնէն հաստատել, զի Մուսթաֆա Գ սուլտան, ընդմեմել կամաւոր հրաժարականին վրայ, կասկածած էր թէ մ' էոսեմ խաբէութեան քանի մ ընկնի է ռչ յայտ էրծոցընեան։ Մայիս 15'ին չաբաթ օր, Գրիգոր վարդապետ Պասմաճեան արքունի դուռը գնաց, ղէեղեային ղեկլեան արտոնեան, և մայիս 16'ին կիրակի առաւտ, Մայր եկեղեցի իջնելով իւր առաջին քարոզը խօսեցաւ, յայտնելով ընդհանութեան ի ծերոնէ հայր պարբերեն, և

օրհնելով բոլոր ազգը, և ջերմութիւն և շնորհաւորութիւն։ Երկուշաբթի մայիս 17'ին Նալեան ժողվիլ գնաց և գնդապետ, իբրև նվէն հանդերձ քնոց է յիսկզբան վրան, և մենք, կը գրէ Պատմաճեան, ալ գնի չենք յոյս ունեցած պարապել քրձով ժրով (ՊԱՍ. 16-18)։

ՆԱԼԵԱՆԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

2082. Երկու ամիս եւս ապրեցաւ Նալեան հրաժարականէն ետքը, և այդ օրերուն մէջ, հոգաց իւր ժառանգութիւնը բաժնել, և ընչ ինչ եկեղեցական ընդհանուր, բոլորն ալ յետոյ բովէ բալիեաց, ախոռաց, վանօրէից, եկեղեցեաց և ազգապաց։ Իւր դրամական կարողութիւնը հրամայեց որ չանհետանան, և վերջ եկեալ շահաց մի մասը յատկացնէն օրէ օրէ ազգին որ են ազգապէտ, առ ի հոգալ զդեպս և զդիմադրութիւնս սակս ամուսնութեան նոցին։ Շահերուն երկրորդ մասը յատկացուց ազգապ և օրէ ամենոյ պղտոյց, զի յետոյ ընդհատցոնէին, և երրորդ մասը վանն ազգիս ըստ բերելոյ իւրաքանչիւր տարի Նոր Քաղ կամ եչեմիածնէ կոչուած մասին համար, ինչ որ չհինուեցաւ յաջորդին հոգածութեամբ։ Բոլոր գիրքերը եւ պղծեցոյց Գումքապուի պապրէպտիկի եկեղեցոյն (ՊԱՍ. 18), որ կազմած է անչուշտ Մայրեկեղեցւոյ գրադարանին գլխաւոր հատուածները, վասնզի գիտենք որ հետամուտ էր գիրքեր հաւաքել, կարդալ, ուսումնասիրել, գրել ու հրատարակել։ Առանց վարանման կրնանք յայտարարել, թէ Նալեան Կ-Պոլսոյ պատրիարքական աթոռին վրայ գրական արդիւնաւորութեամբ և ուսումնական արժանիքով ամէնէն բարձր անձնաւորութիւնն եղած է, ոչ միայն իր հմտութեամբ և աչխատութեամբ, այլեւ ուսումը տարածելու համար թափած ջանքովը։ Չի ինքն էր որ հաստատեց Գումքապուի Մայր-Դպրատունը, որուն նախագահ եղաւ նախ՝ սա ինքն ինք բռնանալեան և ապաստաքան պապրէպտ Բիւզանդիոյ Ցոկոբ (ՏԱՇ. 118), որ և անձամբ նոյնին մէջ կը դասախոսէր։ Դպրոցին գլխաւոր վարիչն էր Պատրիարքական դպիր, որ Նալեանի համանուասար արդիւնք ունեցած է, կարող աչակերտներ հասցնելով, որոնց կարգէն է Սիմէոն Երեւանցի կաթողիկոսն ալ (ՍՐՅ. Ա. 77)։ Նալեանի թողած երկասիրութեանց մէջ չիշենք քանիները իրենց հրատարակութեան թուականներով։ Վէմ հաւատոյ 1733, Քրիստանէական 1737, Մեկնութիւն Նոբելի 1745, Հոգեշահ 1746, Ընդ Ճշմարտութիւն 1756, Զեն հոգեւոր 1757, Գանձարան ձանաչմանց 1758, Դիր պղծիչ 1760, Ցաւալիքան եղնիկի 1762, և տետրակ մը Զանազանութիւնք կենցաղոյս, մահուանէ ետքը հրատարակուած (01 ՕՐԱ. 145)։ Նալեանի ձեռնասուն աչակերտներուն կարգին յիշուած են՝ վարդապետներէն, Ամանաս, Ցովսէփ, Սահակ որ և Ղեւոնդ, կարապետ Պէպիւրօղլու, Մատիան Պէյօղլուցի, Ցովհաննէս Խոյեցի, Բարսեղ, Գրիգոր Տիվրիկցի, Սարգիս Կեսարացի, և Միքայէլ. իսկ սարկաւագներէն Գաբրիէլ՝ առաջ Պաղտասար, Միսիթար որ և Գէորգ, Մաղաք Պալաթցի՝ վերջէն Քոչակեցի եւ ղած, Մելքիսեդ Պալաթցի՝ վերջէն ըստ աշխոհի եղած, Ասպէն Լանկացի, և Գրիգոր Պալաթցի՝ եւդոկիա վախճանած (ՍՐԳ.)։

ՆԱԼԵԱՆԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

2083. Նկատողութեան արժանի կէտ մըն է Նալեանի ուղղութիւնը ժամանակին տիրող ինդիրներուն նկատմամբ։ Իւր օրով մեծ յուզումներ տեղի չունեցան, և կաթոլիկամիտներու դէմ կարծեցեալ հալածանքներ չեն յիշուիր։ Կոլոտէ ժառանգած խոհական ընթացքը Նալեան չփոխեց, և վայրապար խոստութիւններով կացութիւնը չզայրացուց։ Աւոր հետ մէկտեղ թոյլ և զիջողական ուղղութիւն ալ չունեցաւ, այլ մանաւանդ ջանաց անոնց ազդեցութիւնը կոտրել, և անոնց ծաւալողական քարոզութեանց արգասաւորութիւնը խափանել։ Նկատելով որ աւելի ուսումնական ձեւով է որ լատինամիտներ կը յաջողին, և դպրոցական նրբութիւններով միտքեր կը պղտորեն, և լատինական գիրքերու հետեւողութեամբ կամ թարգմանութեամբ հրատարակութիւններ կը տարածեն, ինքն ալ ջանաց նմանօրինակ գէնքերու ոյժով անոնց դէմ մաքառիլ, և գրեթէ բոլոր իւր երկասիրութիւնները հայադաւան վարդապետութիւնը պաշտպանելու կը ձգտին, սուրբ Գիրքէն և սուրբ Հայրերէն վկայութիւններ յառաջանելով, և յատինական պատճառաբանութեանց անհիմն կամ սխալ ըլլալը մէջտեղ դնելով։ Այս միջոցը չատ

աւելի ապդեցութիւն ունենայ լատինասիրտ ճիգերը ամրութեան դատապարտելու, զի ազգային ուղղափառ եկեղեցւոյն հաւատոյ բրիմ հաւատացեալներ ձեռնարկին փոփոխ ունենան, իրենց եկեղեցին մեղադրողներուն ու պախարակողներուն դիմադրել, և չպարեալ պատճառաբանութիւններէ չգայթակղիլ։ Այդ երեսէն չատ մեծ եղաւ Նալեանի արդիւնքը Հայ եկեղեցւոյ համար, և իրաւամբ արժանի է որ Որոտնեցիէ և Տաթեւացիէ ետքը՝ մեր ուղղափառ սուրբ եկեղեցւոյն բազմերախտ վարդապետներուն հետ յիշուի իր անունը։ Նալեան իր այդ ուղղութեամբը զօրացած չքաշուեցաւ մինչեւ իսկ չուրջը պահել Սարգիս Սարաֆեանի նման երկերես եկեղեցականներ, որոնք երբ արտաքնապէս և կատարելապէս հայադաւան պաշտօնէի գործերը կը կատարէին, ներքնապէս և ծածկապէս լատինական մերձաւորութեամբ չափել և չահեցնել կը ճգնէին։ Նալեան վախ չունէր այսպիսիներուն մերձաւորութենէն, ընդհակառակն զանոնք իրեն մօտ պահելով, անոնց գործունէութիւնը կը նուազեցնէր, և արտաքինով իրենց ներքինը ստել կուտար, և ժողովուրդին աչքին անազդեցիկ կը դարձնէր։ Սարգիս Սարաֆեան, որ վերջէն ինքզինքը կատարեալ հռոմէադաւան եղած ցուցնելու պէտք զգայ, մանրմունքեամբ կը յաճախէր Նալեանի մօտ, իբր զի պատրիարքարանի իշխանութեան ներքեւ Դալաթիոյ քարոզչութիւնը կը վարէր։ Իր գովաբանը կը սիրէ պատմել թէ Նալեանի հիւանդութեան միջոցին Սարաֆեան զայն հռոմէադաւանութեան յորդորած ըլլայ, որով նա հետացնէ ընդէնէ վռանէ իւրմէ կենէ (ԴԱԼ. 106)։ Սակայն այդ պատմութիւնը միայն յետ ժամանակաց Սարաֆեանի բրած խօսակցութեանց վրայ կը հիմնուի. իսկ ժամանակին անցքերը գրող Պատմաճեան այսպիսի բաներէ տեղեկութիւն չունի, և Պատմաճեանի վկայութիւնն ալ հռոմէադաւաններու համար պէտք չէ կասկածելի ըլլայ։ Մեզի բաւական է որ գովաբանն ալ կը խոստովանի, թէ Նալեան «անընդունելով պատուիրանէ պատճառելով (ԴԱԼ. 106), զոր երկրորդ գովաբանն ալ կ'երկրորդէ, թէ Սարգիս տեսաւ, որ Յակոբ ըսելէ որ այլեւս վռան խօսի, ու լռեց (ԴԱԼ. 306)։

2084. Նալեան անգամ մը Իւսկիւտարէ Կ-Պոլիս ինկած էր, թերեւս մօտալուտ վարդավառին առթիւ, որ յուլիս 18'ին կը հանդիպէր, ՆԱԼԵԱՆԻ ՄԱՀԸ «ոչայն այլ ոչ կրաց վիրաւորեալ ի ««պղծութենէ փըկրօնեան, և վարդավառի երկրորդ օրն, յուլիս 19'ին, երեկոյեան դէմ ժամ 11'ին, ««անդիտաց վնասէ ինչ, Գումքաբուի Ներսեսեան մատուռին մէջ։ Գերեզմանին վրայ դրուած տապանագիրը, որ կը գտնուի Բանկալթիի գերեզմանոցին մէջ, յուլիս 20 թուական կը դնէ, թաղման օրը նչանակելով, կամ թէ 19'ին արեւու մտնելէն՝ յաջորդ օրը ըսկսելով։ Գոյժը անմիջապէս տարածուեցաւ, և պատրաստութիւններ եղան մեծահանդէս յուղարկաւորութեան համար, որ կատարուեցաւ Մայրեկեղեցւոյ մէջ երեքշաբթի յուլիս 20'ին, իսկ մարմինը դէպ ««հանգչեցե և խոստ տէրեր» (ՊԱՒ. 18) փոխադրեցին Պէկօղլու թաղին գերեզմանատունը, և հանգուցին Ծակոր Դ Ջուղայեցի կաթողիկոսի գերեզմանին քովը (§ 1793), ուր կը գըտնուի ցարդ, վրան մեծ և փառաւոր գերեզմանաքար մըն ալ դրուած։ Գրիգոր պատրիարք պաշտօնին բերմամբ գլուխ կանգնած էր յուղարկաւորութեան հանդէսին, որուն մասնակցած են Կ-Պոլիս գտնուող 12 եպիսկոպոսները, և վարդապետ պատրիարքը անոնց թողած է եկեղեցական ծիսակատարութիւնները։ Ցարութիւն Բասմնցի նըւիրակ եպիսկոպոսը կատարած է օծումը, և Սարգիս Սարաֆեան եպիսկոպոսն ալ դամբանականը խօսած է Բերայի գերեզմանատան մէջ, եկեալ է վիրաւ դէպ քաղքէդոն էրեզմանատէն։ Այդ դամբանականի պէտքը զգացած է Պատմաճեան, տեսնելով որ քաղաքին անյանց էր խոփոյն կոչ քաղցր յոյժ, անոր համար հրաւիրած է Սարաֆեանը քարոզ մը խօսիլ, է նոյն պահն ինչպէս կոպրիւ կոչ ըսելն, գերեզմանին չուրջը հաւաքուիլ և հաւախմբել բազմութիւնը անօրօցանելոյ և ցրօնելոյ և հեռացոցանելոյ ազէտ (ՍՐԿ.)։ Այդ պարագային մէջ մենք գըլխաւորապէս կը դիտենք, ոչ Պատմաճեանի յարմար մտածմունքը, և ոչ ալ Սարաֆեանի քարոզի մէջ յաջողակութիւնը. այլ այն ներքողականները, զոր Սարաֆեան խօսեցաւ։

Նալեանը գովելու համար յառաջ բերաւ ա-նոր մնծամեծ ձիրքերը, բացառիկ արժանիքը, գովանի արդիւնաւորութիւնը, և ողբաց այն կորուստը՝ զոր ժողովուրդը կը կրէր զրկուելով յայնպէս հոգեւոր հօր և տաք հով-սեր, յաղթեալ վշտագին և նըքնդիր տրտմէն (ՍՐԳ.)։ Եթէ իւր հռոմէադաւան համոզ-մանց վրայ անկեղծ և հաստատուն մէկ մը եղած ըլլար Սարաֆեան, պիտի չկարենար գովաբան կանգնիլ Նալեանի մը, որ չարու-նակ հռոմէադաւանութեան դէմ մաքառող և հայադաւանութեան պաշտպան էր կանգ-նած։ Որ երբեք իւր ուղղութիւնը չէր ստած, և որուն հիւանդութեան անկողնին մէջ ալ՝ նոյն Սարաֆեանի, իւր խօսքով, երած յոր-դորներն արդիւնք չէին ունեցած, և զորս ան-ձը առնելով մերժած էր Նալեան։ Հետե-ւեալաբար եթէ առնէր Ս-ըէն է նոյն վայրէն՝ պէերէքէբ դիմելով նորէն, ապա իրաւունք չունէր վերջէն Նալեանը մեղադրել, իւր կենսագիրին թելադրելով անոր մասին, թէ եղած խրտնածէն, որ ըլլի ինչ-որ ալ-ըսէի, է վէր տակ տան դիտաւ երկնէ, ըլլի հալածկեալ օդեւ քաղ (ԳԱԼ.107)։ Բայց Սարաֆեանի յեղյեղուկ և երկերես և չահադէտ ընթաց-քը այլեւս նոր բացատրութեանց չկարօտիր։ Սարաֆեանէ ներշնչուած Նուրտինեանի գրի-չին տակ՝ Նալեան կը մեղադրուի իբր «Ո-ոյն ֆէրէ հաւան (ԳԱԼ.107), և կ'երեւի թէ Սարաֆեանի սիրտին ցաւ եղած էր Նալեանի պատրիարքութեան մէջ 23 տարի մնալը, որով իւր ակնկալութիւնները չէին իրագոր-ծուած, և է յաճելածոյ օրէ կազմած է՝ Նալ-եանի իրեն առաջարկելուն և իւր մերժելուն մուրացածոյ դարձուածքները (§ 2080)։

2085. Գրիգոր պատրիարք իւր պաշտօ-նավարութեան սկիզբը՝ Սիմէոն կաթողիկոսի հետ ընդհարման մէջ գտ-նուելու պարտաւորութե-ցաւ։ Սիմէոն կաթողիկոսի համոզումն էր, թէ բոլոր առաջնորդներ պէտք է Մայրաթոռէն ան-ուանուին, և ուղղակի անոր անսան, և թէ կ-Պոլիս ալ առաջնորդութենէ մը աւելի չէ։ Սիմէոնի կարծիքով, անբ նոթ ա-ՍԻՄԷՈՆԻ ՀԵՏ ՁԳՏՈՒՄՆԵՐ

ոլորդն միշտ գնալով է յամբոխա-ռանութենէն յամբոխա-ռանութեան, հեռացան է ճանապարհեն ճշմա-րտութեան, սկսան պետական հրամանով պաշ-տօն ստանձնել, և առանց Մայրաթոռի անուանման սպասելու պաշտօն վարել։ և որովհետեւ կառավարութիւնը սովոր էր ա-նոնք ֆրէրէլ անտանել, ասոր է հատարա-րենէ ֆրենհոց սովորութեան եղեր պարբերաբար կո-չել։ Թէ այդ դրութիւնը յառաջելով, կ-Պոլսոյ պատրիարքները ոչ միայն իրենք ընդվզե-ցին, այլեւ ուրիշ վիճակներն ալ, որոնց առաջնորդն ըստ օրէնի է արքայ էջմիածնի և է սա նոյնպէս կոնդակներն ներթեն, հետզհետէ իրենց իշխանութեան ներքեւ անցուցին, և սկսան իրենք առաջնորդներ անուանել, այնպէս որ վերջիվերջոյ երեսի դիմելու առա-ջնորդական վճիռներ, որ ընդ պերա-ներէն Օս-մանցոց, արքին է ներտոյ հրամանագրի Օսմանցոց, քաղ է յամանց պեղաց (ՋԱՄ.56), որոնք այն ատեն երկուք միայն մնացած էին, Զմիւռ-նիա և Պաղտատ (ՋԱՄ.48)։ Սիմէոնի այդ համոզումը, եթէ բացարձակ կերպով և հնա-զանդ սովորութեամբ կրնար արդարացի սեպուիլ, սակայն չէր արդարանար պարա-գաններու փոփոխութեան և Օսմանեան օրէ-նադրութեան հոգին ըմբռնելով։ Մահմե-տական պետութիւնը կ-Պոլսոյ տիրանալով պարտաւորուած էր քրիստոնէից կացութիւ-նը ճշդել օրէնքի առջեւ, և անոնց օրինա-կան կացութիւնը կանոնադրել իսլամական դրութեան հանդէպ։ Այս բանին լուծումը գտած էր, ազգապետական դրութիւնը ըս-տեղծելով, որով իւրաքանչիւր քրիստոնեայ ազգութեան հոգեւոր պետը գլուխ և պա-տասխանատու և կարգադրող կը ճանչցուէր՝ նոյն ազգութեան ներքին և կրնցաղական և կրօնական կեանքին, և հնար չէր դուրսէն օտար պետի մը ձեռնհասութիւնը ճանչնալ Օսմանեան հպատակ ազգութեան մը վրայ (§ 1486)։ Կ-Պոլսոյ Հայ պատրիարքութիւնը անհրաժեշտ հետեւանք էր այդ օրէնադրու-թեան, որ եթէ սկիզբէն աւելի ամփոփ էր, Օսմանեան պետութեան ընդարձակութիւնն ալ նուազ ըլլալուն, սակայն դրութիւնը պիտի ընդարձակուէր Օսմանեան տիրապե-տութեան տարածուելովը (§ 1487)։ Սիմէոն որ երկար ատեն Կ-Պոլիս կեցած էր, պէտք էր այդ անհրաժեշտ կացութիւնը լաւ ու-սումնասիրած ըլլար, և պէտք չէր որ հին ժամանակներու սովորութեան կառչելով, ներկային պահանջը անգիտանար. և երբ կը

պնդէր թէ Կ-Պոլսոյ առաջնորդը ոչ է պատրիարք, պիտի չյայտարարէր թէ «ըդեռ պոքչէ էին Արտազու և Տաթեւի և Բջնիի և Հաղբատի առաջնորդները (ՉԱՄ. 55)։ Սիմէոնի այդ կարծիքներուն մասին անգամ մըն ալ խօսած ենք կարապետ Ուլնեցիի յիշատուքեան առթիւ (§ 1947)։

2086. Սիմէոն միայն ներքին համոզմամբ չգոհացաւ, այլ կաթողիկոսական ա-

ՓՈԽԱՆՈՐԴԻ ԽՆԴԻՐ

թոռ բարձրանալէն, Տաճկահայոց հաւանութիւնը առնելէն (§ 2073), և 1764 փետրուար 12'ին, Օսմանեան կառավարութենէն իրեն համար Նալեանի ստացած հրովարտակն ալ ձեռք անցընելէ ետքը (ԻԻՒ. Դ. 55), ուզեց Կ-Պոլսոյ պատրիարքութիւնը պարզ առաջնորդութեան վերածել, և կաթողիկոսութիւնը Կ-Պոլսոյ մէջ ուղղակի գործող և ազգութիւնը վարող իշխանութիւն դարձնել։ Այդ նպատակով մտածեց Կ-Պոլսոյ մէջ կաթողիկոսական փոխանորդ մը դնել, նուիրակէն տարբեր, որ երբ նուիրակը լոկ հասոյթներով և նուէրներով զբաղի, փոխանորդը վարչութեան գլուխ կանգնի և պատրիարքին վրայ ալ իշխանութիւն գործածէ։ Այդ մասին իրեն համամիտ և գործադիր գտնուեցաւ Աբրահամ Ատուպատցի եպիսկոպոսը, որ Չմիւռնիոյ առաջնորդական պաշտօնին չրջանը լրացնելով Էջմիածին դառնալու համար Կ-Պոլիս եկած էր, բայց հեռանալ չէր սիրեր և Էջմիածին փակուիլ չէր յօժարեր։ Պատմիչ մը Ատուպատցիին կը վերագրէ Կ-Պոլսոյ մէջ կաթողիկոսական փոխանորդ հաստատելու գաղափարը (ՉԱՄ. Դ. 872), սակայն մենք գիտնալով Սիմէոնի միտքը, աւելորդ կը սեպնենք դուրսէ թելադրութիւն ենթադրելը, մանաւանդ որ Ատուպատցիին խորհուրդը աւելի ելեւմտական գործակալութիւն էր, Երուսաղէմի փոխանորդներուն նման, քան թէ Սիմէոնի խորհած իշխանական ներկայացուցչութիւնը։ Վերջապէս երկուքին միտքերը զիրար կը լրացնէին։ Սիմէոն իր միտքին գործադրութիւնը յապաղեց, նախ որ Յունիս 1764 փետրուարին ստացաւ սուլտանին հրովարտակը, և երկրորդ որ Նալեանի անձր պատկառանք կ'ազդէր իր վրայ ալ։ Բայց հազիւ թէ իմացաւ անոր մահացու հիւանդութիւնը և գործէ քաշուիլը, պէտք եղած պաշտօնագիրները պատրաստեց և Աբրահամին ղրկեց, և գիրերը հասցէին հասան Նալեանի թաղումէն անմիջապէս ետքը (ՉԱՄ. Դ. 874). միայն թէ այդ գիրերուն մասին ակնարկ չենք գտներ Սիմէոնի յիշատակարանին մէջ։ Գրիգոր պատրիարք պէտք զգաց ժողով գումարել, և Ատուպատցին հետամուտ եղաւ համամիտներ պատրաստել, և յայտնեցաւ Արեւելցիներ կոչուած մեծամեծներուն, այսինքն Պարսկահայ գաւառներէ գաղթած վաճառականներուն մէջ։ Սակայն բնիկ Կ-Պոլսեցիներ և Տաճկահայ ամիրաներ հակառակեցան, պատճառելով թէ այնհեփեբէյօ էլեխ ընի է Կոստանդնուպոլիս, և յայտարարելով թէ պատրիարքը բաւական է Մայրաթոռոյ իշխանութիւնը ներկայացընել։ Թէպէտ ժողովը լուծուեցաւ առանց որոշման, բայց փոխանորդութիւնը չընդունողներ, միանգամ և երկիցս և երիցս ստիպեցին Ատուպատցին, որ յօժարակամ մնկնի, և թէ իրենք կաթողիկոսին պէտք եղածը կը գրեն։ Երբոր Ատուպատցին կ'ընդդիմանար, և Արեւելցիներու խումբը չփութութիւններ կը գրգռէր, միւս խմբակը պատրիարքը ստիպեց Ատուպատցին հեռացընել, որ արքունի հրովարտակով Էջմիածին ղրկուեցաւ (ՉԱՄ. Դ. 875)։ Հեռացման թուականը նշանակուած է 1764 սեպտեմբեր 29'ին (ՊԱՍ. 19)։

2087. Ատուպատցիին հեռացուիլը մեծ նշանակութիւն ունեցաւ Պատմաճեանի անձին և գործունէութեան վրայ.

ՍԻՄԷՈՆԻ ՑԱՒԻԼԸ

ինքն իսկ զայն բոլոր իւր ձախորդութեանց սկզբնապատճառ կը նկատէ, և աւելորդ չենպուի, երէկ քիչ մը մանրամասնութեանց մտնանք եղելութեանց ներքինը բացատրելու համար։ Պատմաճեան, իւր յիշատակարանին մէջ Ատուպատցիին համար՝ միայն անցողակի կը գրէ, թէ վասն ամենայն պարտաւոր առաքեցաւ ի յոմնոսն էջմիածին. իսկ պատճառն բացատրութիւնը կը թողու պարզորէն էրէցեալ ազգասիրացն, միանգամայն յարելով թէ այս պատճառով եղեւ ոտնձգութիւն, խոչընդոտ և արհատն (ՊԱՍ. 19)։ Իրօք ալ մեծապէս սրտմտեցաւ

Սիմէոն, ոչ միայն իւր նպատակը մերժուած, այլեւ իւր փոխանորդ նշանակած անձը ապտարգուած, և պատրիարքական առաջարկով ու պետական հրամանով կ-Պոլսէ հեռացուած տեսնելով։ Ինչպէս ալ մինչեւ աստիճան մը իւր զայրոյթը զսպեց, և ծայրայեղ որոշումներու չձեռնարկեց, բայց երբեք չկրցաւ մոռնալ կրած ձախողուածը ու անարգանքը, ինչ որ Ջամբռի մէջ գործածուած բառն լեզուէն ալ կը յայտնուի (ՋԱՄ. 56)։ Աստապատցիին հեռանալէն ետքը, կ-Պոլսոյ մեծամեծներ առաջարկեցին որ ոչ թէ կաթոլիկոսական փոխանորդ մը, այլ պարզ կալուածոց հսկող կամ դ-Ռեվէլլի մը գանուի էջմիածինի կողմէ, և Սիմէոն ղիջաւ այդ պաշտօնին մէջ հաստատել Բարսեղ Ծերունի վարդապետը (01 ՕՐԱ. 150). սակայն կացութիւնը հիմնապէս չբարւոքեցաւ։ Պատմաճեան վերը ակնարկուած պարագային ալ նոյնպէս գրութեան մէջ, զոր ուղղած է ս. Լեհմարիթ ընթերցողը (ՊԱՍ. 98), իրեն անկման հեղինակ կը ցուցնէ ազդեցիկ ամիրա մը, զոր պերճաշուք և քաջերկոպիկ էշխանագլուխ էշխանաց և առաջորդ ազգին կ'անուանէ (ՊԱՍ. 103), և անունը չտար։ Բայց յիշատակարանին ուսումնասիրողը կը հաստատէ, թէ մահտեսի Գասպար ամիրա Մուրատեանն է ակնարկուած անձը (ՊԱՍ. 136)։ Պատմաճեան բողոքելով կը յայտարարէ. ղինէ նոյր է ինձ իմ և է ինձ Աբրահամ վարդապետին. և կը յաւելու թէ ամիրան ղինք առնելով գործէ յազգուրդ տուաւ էրէնախնդէր լինելոյն, որով կ'իմանայ Աստապատցիին գործունէութիւնը Ահագինը տապալելու մասին (§2056)։ Վասն զի Սահակ կ-Պոլսոյ ամիրաներուն պաշտպանեալն էր ազգ (§ 2042), որոնք կարծես թէ տակաւին չէին ներած երեւելիներուն և Աստապատցիին՝ Ահագինը հրաժարեցնելու համար բրած ջանքերնին (ՊԱՍ. 108), և Աստապատցին մերժելով երկուքէն միանգամայն վրէժ լուծել կը խորհէին։ Պատմաճեան մանրամասնելով ամիրային ազգի գործին մէջ ունեցած դերը կը պատմէ, թէ գիշեր մը ժամ 3'ին իրեն ճօտ եկած է ս. է զբօսնել աքսորման համար ղրկեցելոյ. ըսելն. թէ նա ինքն խորհուրդ տուած է հրովարտակը ստանալէն ետքը Աստապատցին ճայի հրաւիրել Իւսկիւտար, և աքսորին վերակացու չավուշն ալ հոն բերելով, ձեռքը յանձնել (ՊԱՍ. 107)։ Կեցցոյ և խղճոյ, ըսած է ամիրան, և ղինէ փոյ է յետս պահոյ (ՊԱՍ. 108)։ Պատմաճեան ալ միամտաբար գործադրած է իրեն տրուած հրահանգը, և կ'աչխատի այս կերպով պատասխանատուութիւնը իրմէ հեռացնել։

2088. Պատմաճեանի վրայ հնար չէ չարգահատել, տեսնելով՝ որ խարդախ հակառակորդներու ձեռք խաղալիք դարձած՝ բարեմտաբար և միամտաբար կը գործէ, և անոնց ձախող հրահանգները կը գործադրէ, և ինքն ալ իւր անկման և անարգման գործակից կը դառնայ։ Սակայն միւս կողմէն պէտք է նկատել, թէ ով որ բարձր և պատասխանատու պաշտօնի մը վրայ կը գանուի, պէտք է իւր անձին և իւր գործին իսկապէս տէրն ըլլայ, որպէսզի ոչ ղինքն անարգէ և ոչ գործը անարգէ. և չկրնար իւր պատասխանատուութիւնը վարկաբեկուղի պատճառանքներով թոթափել։ Բարեմտութիւնն գովելուտը չենք ուրանար, բայց պէտք չէ զայն մղել մինչեւ այն կէտը, որ ինքզինքը ցուցնէ է յոժարն ղոշմոց ընթացող և ըմբիշ, գոռոզ և խելօ, ինչպէս Պատմաճեան կը խոստովանի եղած ըլլալ։ Կը յարէ իսկ, թէ է յոժարն ցոլմանց ընթացս իմ առնէ զինծառն ընծայել, վերոյիշեալ ամիրային, որ ըստ էության ինքն ղինէ ղրկել ցանկացաւ առնել է յետին էութիւն (ՊԱՍ. 101)։ Աւելցուածային բլլալու չափ անբացատրելի կը դառնայ Պատմաճեանի պաշտօնավարութիւնը, երբոր կը տեսնենք, որ այնչափ ակար և երեսուն ըլլալով մէկտեղ, գրեթէ 10 տարի սխալմունք վրայ կը մնայ մինչեւ 1773. ոչ մեծամեծներ և ոչ ազգը կ'ուզեն զայն տապալել, և ոչ ինքը հաստատամիտ զգուանքով մը կը խորհի դժուարին կացութիւնէն դուրս ելլել։ Պատմաճեան չուզելով ալ ցուցուցած էր Սիմէոն կաթողիկոսը, սակայն բարեբաղդաբար Սիմէոն չուտով իմացաւ թէ Պատմաճեան իւր գործերուն նախապատճառը և անկախ հեղինակը չէր, և չուզեց իւր հակառակութիւնը յառաջ վարել մինչեւ վերջին ծայրը։ Պատմաճեանի կացութիւնը ակսրայնող պատճառներուն գլխա-

ւորներէն մէկն ալ եպիսկոպոսական աստիճանն էր, որով ստորնագոյն դիրք մը ունենալ կը նկատէր, բազմաթիւ եպիսկոպոսներու հանդէպ, որոնք մայրաքաղաքին մէջ կը գտնուէին։ Նոյնիսկ բնորոշման աւոնն այդ պարագան նկատի առնելով, Պատմաճեանի խոստացուած էր, ըսելէ հետո՝ «Ես կոչումս, որ անձնական հոգի մ'ունէր, ինչպէս ըսած եմ յաճախ ու ըսած եմ» (ՊԱՍ. 117). բայց երբոր Պատմաճեան էջմիածին հրթիռ ուղեց, ամիրան ընդդիմացաւ յայնմ իսկզբան, անպատշաճ ցուցնելով Օսմանեան պետութեան պատրիարքի մը օտար տէրութեան հրկիրն հրթիռ (ՊԱՍ. 117)։ Այս պատճառով մեծամեծներու բերնէն գրուեցաւ կաթողիկոսին ապիրատ, լինելիք և չհրկիւ ըսն է առաջ էջմիածնի ելք, յոյժանելով խոտոռանութիւն, վատ լինելոյն հրամանաւ և ֆերմանաթափուելն։ Սիմէոն նկատելով որ պատճառը չէր իսկ եւ իսկ (Դիւ. Գ. 404), 1765 սեպտեմբեր 10'ին, խաղաղութեան և հաշտութեան հրաւէր կարդալէ և սիրոյ հրամաններ տալէ ետքը, որովհետեւ, կ'ըսէ, պատրիարքը ձեր եղբայր է և սիրելի այսահեպես, պատ հրման ինձ գնել է ելանին, ինձ գնել է ժամ օրհնաբերձութեան պատրաստի, յաւելով թէ քոյ է պատրաստ վարդապետ չէզիրի ձեռն, այլ վարդապետ որ ին եպիսկոպոս՝ ըստնին հրման գնելոյ և է ձէր սրխնելոյ (ՊԱՍ. 45)։

2089. Պատմաճեան Սիմէոնի այդ բարեացակամութենէն քաջալերուած, առաջարկեց որ արտօնութիւն տայ կ-Պոլիս գտնուող եպիսկոպոսներուն ձեռքէն ձեռնադրութիւն ստանալ (Դիւ. Գ. 699), իբրեւ բացառիկ պարագայ մը. քանի որ Նիկիական կանոնով ալ վանական կը սեպուէր երեք եպիսկոպոսներու ձեռքով կատարուած ձեռնադրութիւնը։ Սակայն Սիմէոն բացէբաց մերժեց այդ առաջարկը, և իրաւամբ. վանդի օրինակ տուած և դուռ բացած պիտի ըլլար ապագային ալ, որեւէ պատճառանքով կամ պատրուակով առանց կաթողիկոսի ձեռնադրութիւն կատարելու։ Մենք ալ կ'ընդունինք թէ վանական կողմէն կրնայ հիմնուիլ Նիկիական կանոնին վրայ, և թէ ձեռնադրութիւն կատարելը մետրապոլտական է, և ոչ տիրապէս պատրիարքական իրաւունք մըն է։ Սակայն մեր եկեղեցւոյն մէջ հնազանդ, և գրեթէ նախնական սովորութեան և հաստատուն օրէնքի ոյժ ստացած է եպիսկոպոսական ձեռնադրութիւնը կաթողիկոսին վերապահելու կանոնը, և չէինք ուզեր որ այն որեւէ կերպով խախտուէր կամ վտանգուէր։ Մանաւանդ մեր ազգին ներկայ վայրավատին և գրուած վիճակին մէջ, միաւորնի օրհնութեան և եպիսկոպոսի ձեռնադրութեան կաթողիկոսին յատկացուած ըլլալը, զօրաւոր աղդակ մը կը կազմէ պարտաւորեալ յարաբերութեան և անբաժին միութեան, և պէտք է որ Հայերս գուրգուրանքով պահենք զայն ինչ ալ ըլլայ այդ մասին ուրիշ եկեղեցիներու տարբեր սովորութիւնը։ Սիմէոն այնչափ առջեւ գնաց իր պնդումին վրայ, որ Պատմաճեանի էջմիածին երթալուն անհնարութիւնը համակերպելով, յանձնառու եղաւ ինք ըսով և ինք քանի՞ ըսով (ՊԱՍ. 117), և յատկապէս ալ գրեց (Դիւ. Գ. 702), որ ինքն Օսմանեան կայսրութեան մէկ քաղաքը կամ նոյնիսկ կ-Պոլիս փոխադրուելով Պատմաճեանի ձեռնադրութիւնը կատարէ։ Սիմէոն երկարօրէն բացատրած էր իւր զլացումը, և միանգամայն հրամայած իւր գիրը ընդունելի ներկայացնելի էչմեածնի, չի և նուէրն ընդունելի (Դիւ. Գ. 703), բայց ստէպ յիշուած ամիրան, ուրիշներ ալ իրեն համաձայնեցնելով, այս անգամ ալ Սիմէոնի գալուստը արգելելու աշխատեցաւ, բերելով իր մէջ ընդդիմացնելի և ընդունելի պատճառ։ Այլ թէ այս դժուարութիւնները ինչ էին, բացատրուած չեն. միայն թէ Պատմաճեան՝ կարապետ Ուլնեցիի (§ 1944), և Թորոս Սեբաստիի օրինակները կը յիշեցնէ (ՊԱՍ. 117), ուստի կը հետեւցնենք, թէ Մայր աթոռէ դուրս ձեռնադրութեան պատճառանքը խօսուած պիտի ըլլայ։ Այլ թէ ինչ կերպով գրեցին և Սիմէոնի գալուստը արգելեցին, չենք գիտեր, միայն թէ անհնար եղաւ Պատմաճեանի զիւր ընթերնին դարմանել և եպիսկոպոսանալ, թէպետեւ կ'ըսէ, ես առաջել ձեզ խրկուս լինել, ըստ որում որ հրկաւոր ես էր լինելն ձեր, որվհետեւ քուրդ ազգին և Պօտպոլոս տալուն չ— քովով— պարբերաբար անառանել էին (ՊԱՍ. 117)։

ԶԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Այսուամենայնիւ Պասմաճեան, լոկ վարդապետութեամբ, ինր տարի պատրիարքութիւն վարեց, և պէտք է իրրեւ կոյր և փոքրոգի նկատենք իրեն դէմ եղած հակառակութիւնը, որ երբ գլխաւոր կէտին այսինքն պատրիարք մնալուն յանձնառու կ'ըլլար, եպիսկոպոսանալուն դէմ ահագին դիմադրութիւններ կը մղէր։ Եթէ Պասմաճեանի օրինակը կ'արդարացնէ եպիսկոպոս չըլլալով պատրիարք ըլլալու ենթադրութիւնը, սակայն անկէ ծագած անտեղութիւնները, միեւնոյն ատեն իրր ձախող և անյարմար կը ցուցնեն անոր կրկնումը. և իրաւամբ օրէնք եղած է այժմ՝ հարկաւ եպիսկոպոսական դասակարգէն առնել կ-Պոլսոյ պատրիարքը։

ԱԻՄԷՈՆԻ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

2090. Պահ մը Պասմաճեան պատրիարքը իրեն ալեկոծեալ և դժուարին կացութեան մէջ թողլով անցնինք Սիմէոնի գործունէութիւնն ու արդիւնաւորութիւնը բացատրել։ Այն որ նոյն իսկ Ջամբռին մէջ աւելցուցած է Սիմէոնի գովեստը՝ համարձակ կը վկայէ և կը հաւաստէ, թէ անոր օրով Մայրաթոռն էր լ ամենայնէ հոգեւորէ և մտածաւորէ, նէրսէսեան և աբգարեան, քնարական և լինեալ, և լինելք անաւնէ, քազմապարկ հան զառաջինն, և միաբանն հանդիսաց և ապահով յամենայնի (ՋԱՄ· 34), և ալ ոչ է Տաճկաց կը յանդգնէր միաբանները հայհոյել և բանել, և փանել յնբեսան, քանթել և փոփոխել (ՋԱՄ· 36)։ Այս ըսելէն կ'անցնինք անոր կաթողիկոսութեան օրով կատարուած չինութիւնները թուել, որոնց մէջէն գլխաւորները հարկ կը համարինք մինչ ալ յիշել։ Էջմիածնի վանքը և իրեն յարակից չէնքերը պարապապատ չըլլալուն համար, շատ գողութիւններ կը հանդիպին եղեր, և մանաւանդ ամառնները, երբ կաթողիկոսը երեւան կը պատսպարուի եղեր։ Սիմէոն թէ վանքը և թէ ղամնոյն անապատաձև պարսպով կը չրջապատէ ամբ և հաստատուն քրքոյ և բէրտոյ։ Վանքին վրայ կ'աւելցնէ ամռան սեղանատունը փալխոյ, մումասունը, դպրատուններն յետոյ և ամառն յապոյ յապոյ, վեհարանի հարաւակողմը ղէնէյէն գոյն մ' երկոյ, որ Ղազարապատ վեհարանը զննելու անպատեհութիւնն ալ խափանէ։ Ինքնին ջուրին ճանապարհ աւելցնելով ջուրը կը չատցնէ, և եկեղեցին ու խուցերը խոնաւութենէ կ'ազատէ։ Մայր տաճարին տանիքն ալ կը նորոգէ փալխոյ, Բերվանատայ կոչուած չէնքը կանոնաւոր չուկայի կը վերածէ, և վանքէն կը հեռացնէ նոյնիսկ էջմիածնի կամ վաղարշապատ գիւղն ալ, որ կէս և անկէ վեր և խառնիխուռն շինուածով չրջափակելէ վանքը, տուները քակելով հեռացոյց է պարսպէն, և նոր տուներ և գիւղի եկեղեցին չինել տուով արբեմէն (ՋԱՄ· 34–36)։ Ամառին կալուած գիւղերուն պաշտպանութեան և հաստութեան ալ մտադրութիւն դարձուց. Օշականը ազատեց Մուղանլու կոչուած Տաճիկներէն որ 20 տարիէ իվեր բռնի հոն նստած էին. Աչտարակն ու Եղուարդը ու Աղաւնատունն ալ ազատեց, որոնք Ջալալբէգեանի օրէն Տաճիկներու ձեռք անցած էին. նոյնպէս Մուղնին ու Ծառանկանոցը՝ զորս Շամախեցիին օրով Տաճիկներ գրաւած էին, թէպէտ վերջէն Ծառանկանոցը Բիւլբէվէի հետ փոխանակեց։ Խորվիրապի հողերն ալ ազատեց Բայատ կոչուած Տաճիկներու ոտնձգութենէն։ Բիւլբէվէի մօտ Այրըմլու բլուրին, և Ղօսուղ գիւղի մօտ Իճմըլի կոչուած տեղւոյն վրայ նոր Տաճիկ գիւղեր հաստատուիլը արգիլեց (ՋԱՄ· 37–38)։ Այս յաջողութիւնները կը կատարէր Սիմէոն զօրութեամբ հին կալուածագիրներու, զորս իր պրպտումներուն առիթ կը գտնէր (§ 2076), և որոնց այժ կու տար Հիւսէյին-Ալի խան իր իշխանութեամբ, որ քանիցս կաթողիկոսին միջնորդութեամբ դժուարին կացութենէ ազատուած էր։

ՔԱՂԱՋԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ

2091. Պարսկաստանի չփոթ կացութիւնը քանիցս յիշեցինք, որով իւրաքանչիւր նահանգի կուսակալութիւն կամ խանութիւն՝ անունով միայն Պարսիկ թագաւորութեան կը պատկանէր, իսկ իրօք աղիկամի պետութիւն մրն էր, իւրաքանչիւրը իրեն յատուկ չարաբարութիւններով։ Երեւանի խան Հիւսէյին-Ալին ալ անոնցմէ մէկն էր, որ իրեն դրացի ուզեր վրաց թագաւորութիւնը, և չկրնալով անոր դիմադրել, որոչ ընծայի կամ յատուկ հարկի վճարման պայմանով, անոր ինչնա-

մութենէն զերծ կը մնար։ Բայց իսլամ իշխանին ծանր կու գար քրիստոնէին ձեռքին տակ նկուն մնալ, և ստէպ վտարանդելու փորձեր կ'ընէր։ Ծարմար առիթ կարծելով 1764'ին չփոթութիւնները, Ղազախ գաւառի վրայ յարձակեր և չատ մնասներ հասուցեր էր բնակիչներուն։ Իսկոյն Հերակլ թագաւոր վրաց բանակը քալցուց, էջմիածնի մօտեցաւ, Սամադար գիւղը կանգ առաւ, և անկէ էջմիածին այցելեց, և Սիմէոնէ պատուասիրուեցաւ։ Հիւսէյին-Ալի նեղը մտած, դէսպաններ և ընծաներ փութացուց էջմիածին, Սիմէոնի միջնորդութիւնը հայցելով։ Հերակլ այնտեղ չուզեց ընդունիլ դէսպանները. բայց տեղի տուաւ միջնորդին, և յայտարարեց՝ Սբ-Աթոյէ Բաղ Նուէր լինին էջմիածնին (Դիի. Գ. ճյ.), և Սիմէոն հանդիսապէս իր չնորհակալութիւնը վկայեց։ Բայց դարձեալ ստիպուեցաւ Հերակլի և Եբեւանի մէջ բանագնաց պտտիլ, որպէսզի խանը համոզէ Հերակլի պայմանները ընդունելու, և Հերակլը համոզէ որ դրամական պահանջը չնորհէ, և այսպէս երկիրը աւերածէ և խանը տագնապէ ազատեց։ Սիմէոն առանձին միջնորդութիւն ալ ըրաւ, Հիւսէյին-Ալիի անունը՝ Սիւլէյման Քիւրդ պէյն ալ Հերակլի հետ հաչտեցնելու։ Սիւլէյման ալ իր կողմէն օգտակար եղաւ Սիմէոնի, երբոր Հիւսէյին-Ալի էջմիածնի հարկահանութիւնը Սիմէոնի վրայ դարձնելէն ետքը, վանքի մը տարեկանը կանխիկ կը պահանջէր, և այս պատճառով Սիմէոնի հետ խռովէր էր, պայն տեսնել չուզելու չափ։ Սիւլէյման իր փեսային ընթացքը պախարակեց, և Հիւսէյին-Ալի Սիմէոնի երախտիքը յիշելով, իր պաչտպանութիւնը ընդարձակեց (Դիի. Գ. ճյ.-ճյչ.)։ Բայց այս ընելով ինքն աւելի օգտուեցաւ, զի 1769'ին նորէն Հերակլի և Հիւսէյին-Ալիի միջեւ գրգռութիւններ նորոգուեցան, և կրկին այդ վերջինը Սիմէոնի միջնորդութենէն օգտուեցաւ, և խաղաղ ժամանակամիջոց մը անցուց մինչեւ 1779, երբ երրորդ անգամ մրն ալ Հերակլ զինու զօրութեամբ Հիւսէյին-Ալին ընկճելու ստիպուեցաւ։ Սիմէոն այդ յաջողութիւններովը քաղաքական աշխարհի մէջ ալ հմտրաւ և դիրք էր կազմած, և ուրիշ կողմերէ ալ իր միջնորդութիւնը փնտռուած էր՝ դժուարին կացութենէ դուրս ելլելու համար։ Իմէրէթի Սողոմոն թագաւորը, որ Բաչալխաց կամ Բացգլուխներու թագաւոր ալ կը կոչուի, Իմէրէթցիներուն գլխանոց չգործածելուն պատճառով, հրաման էր հանած, որ այլեւս իր հպատակները իրենց տղաքներն ու աղջիկները Օսմանցոց չվաճառեն, հինաւուրց չար սովորութեան համեմատ։ Ակից գրգռուած կարնոյ Ապտիւրրահմանի փաչան՝ պատերազմի ելաւ Իմէրէթցոց դէմ, որոնք Օսմանցի բանակը քիչ քիչ նեղելով թողուցին որ մինչեւ իրենց երկրին խորը մտնէ, և Ռիօնի կամուրջն ալ անցնի, ուակից ետքը կամուրջը փլցնելով Օսմանցիները կոտորեցին, և հազիւ հրամանատարը ժամանակին լուր առնելով կրցաւ ինքզինքը ազատել։ Օսմանցոց բանակէն անյայտացած էին նաև Գայազիտի փաչային որդին Ապտի պէյը և եղբօրորդին Մուսթաֆա պէյը. և կուսակալը իր Սիմէոնի նախնածանօթ (§ 2074), անոր միջնորդութեանը դիմեց կորսուածները գտնելու և ազատելու համար։ Սիմէոն յաջողութեամբ կատարեց անոր խնդրանքը, վրաց Հերակլ և Իմէրէթի Սողոմոն թագաւորներուն առջեւ ունեցած ազդեցութեամբը (Դիի. Գ. 76-82)։ Բագրեւանդի առաջնորդ Զաքարիա վարդապետն էր կուսակալին և կաթողիկոսին մէջտեղ երթեւեկողը, որ և աւելի զօրացաւ իր դիրքին մէջ, և Սիմէոնի 1764 մարտ 29'ի պաչտօնագրով իր պաչտօնին գլուխը վերադարձաւ (Դիի. Գ. 82)։

2092. ԱՂՈՒԱՆԻՑ ԱԲՈՒՐ

Սիմէոնի չինարար և քաղաքական յաջողութիւններէն աւելի ալ բարձր էր նորա իր եկեղեցական ձեռնարկները, որոնք գլխաւորապէս Մայրաթոռոյ հայրապետական իրաւունքներուն պաչտպանութեան չուրջը կը դառնան։ Ներսէս Գանձակեցին, որ բաւական սևեռած և չատ երկար տուն Աղուանից կաթողիկոսութիւնը վարեց մինչեւ 1763 (§ 2019), մեռաւ երբ տակաւին կենդանի էր Շամախեցին։ Անոր մահուընէ ետքը իր եղբօրորդին Իսրայէլ, է պղյոնեան եպիսկոպոս ոչխել, կաթողիկոս կ'օծուի Աղուանքի Պարսիկ խանին Շահվերտիի կամքով, առանց Հայոց կաթողիկոսին հաւանութեան և առանց բո-

լոր Աղուանից համակամաւնեան։ Իսրայէլ օծումէն ետքը Շամախեցիին կը դիմէ հաստատութիւն խնդրել, որ իբր պատասխան գրէ զԹուղթս Ղեղբլանա և յանդիմանեաս։ Բայց Շամախեցին նոյն օրեր կը վախճանի, և Իսրայէլ իւր համախոհներով Սիմէոնին կը դիմէ, որ նոյնպէս հաւանութիւնը կը զլանայ, պահանջելով որ Իսրայէլ անձամբ ներկայանայ և դիմադրող կողմերը հաճեցնելով գործը վերջացնէ։ Իսրայէլ չգար և Աղուաններուն այն կողմը, որուն Իսրայէլ հաճելի չէր, 50 հոգիէ բաղկացեալ պատգամաւորութիւն մը կը կազմէ, և խաներէ ոմանց ալ հաւանութեամբ, էջմիածին կը բերէ զոմն վրդապետ Յովհաննէս, որ կաթողիկոս ձեռնադրուի։ Սիմէոն ասոր ալ չհաւնիր, թախանձանաց և սպառնալեաց կը դիմադրէ, իսկ պատգամաւորները Գանձասար կը դառնան, և հոն Յովհաննէսը կաթողիկոս կը ձեռնադրեն։ Այդ բաժանումէ յառաջ եկած կնճռոտ խոովութիւն տեւեց, մինչեւ որ 1765'ին Սիմէոն Յովհաննէսը քաշուելու համոզեց, եթէ Իսրայէլ հնազանդի և Մայրաթոռ ներկայանայ։ Բայց Իսրայէլ՝ Շահվէրտիին ապաւինելով, միշտ ընդդիմացաւ, անարգելով Հերակլի ալ յորդորները և Տփղիսի առաջնորդ Զաքարիայի պատուիրակութիւնը։ Երբ Իսրայէլ վերջնապէս հեռացաւ, Սիմէոն եպիսկոպոսական ժողովով զայն աթոռէն զրկեց, կամ ինչպէս ինքը կ'ըսէ, լուծած է կոչեն և խոչեցած ըստ սրբանաց։ Յովհաննէսի ալ օրհնութեամբ և աղօթիք կաթողիկոսական աստիճանը վաւերացնելէ ետքը, պատշաճ պատուով և կոնդակներով և հրահանգներով յղեց Գանձասար, Տփղիսի Զաքարիա վարդապետն ալ ընկեր տալով, որ յանուն Մայրաթոռոյ պէտք եղածը գործէ։ Պաշտօնական գործողութեան թուականն ցուցուած է 1765 դեկտեմբեր 25 (ԶԱՄ·91), իսկ էջմիածինէ մեկնած են դեկտեմբեր 28'ին (ԴԻՒ·Գ·370), հարկաւ Ծննդեան տօնը Գանձասարի աթոռին մէջ կատարելու չատպով։ Իսրայէլ փորձեց Հերակլի պաշտպանութեան դիմել, բայց ընդունելութիւն չի գտնելով, ձեռնունայն Տփղիսէ Գանձակ դարձաւ, ուր քաշուած մնաց 11 տարի Թեոդորոսոյ Ղեբէոյ (ԴԻՒ·Գ·ծթ.), և Յովհաննէս չարունակեց կաթողիկոսութիւնը վարել։

2093. Էջմիածնի ուղղակի հպատակող և փերոնի կոչուած վիճակներուն կարգին յիշուեցաւ Հայտաբերան ալ (§ 2078), որ և Աժ-

ՌՈՒՍԻՈՅ ՎԻՃԱԿ

տէրեան կամ Աստրախան, որուն սահմանն էր բովանդակ Ռուսական կայսրութիւնը։ Վիճակին կազմութեան թուականը յայտնի յիշուած չէ, բայց վստահօրէն կրնանք հանել մինչեւ Մինաս Տիգրանեան եպիսկոպոսը, որ առաջ Իսրայէլ Օրիի ընկերացաւ (§ 1845), և վերջէն Աստրախանի մէջ հաստատուեցաւ (§ 1902), ուր Հայերու գործերով զբաղեցաւ (§ 1931), և հոն վախճանեցաւ։ Այսպէս գործնական կերպով հաստատուած կ'ըլլայ Ռուսիոյ առաջնորդութիւնը, թէպէտ Մինասի յաջորդներուն անունները չենք գտներ։ Ղազար Ջահկեցիի օրով այդ պաշտօնին վրայ կը գտնենք Բարսեղ Փառակեցի եպիսկոպոսը, որուն դիւանապետութեան գործերը վիճակայինները զգուեցուցին, և Ջահկեցիէ իրենց գանգատներուն ունկնդրութիւն չգտնելով, Փառակեցին հեռացուցին, և Աղուանից աթոռէն Ստեփանոս Անանեան եպիսկոպոսը իրենց առաջնորդ ընտրեցին, և նիւսաբէթ կայսրուհւոյն օրով պետական հաստատութիւն ալ ընդունեցան։ Պէտք չէ մոռնալ որ նոյն իսկ առաջին եպիսկոպոս Մինաս Տիգրանեան ալ, Աղուանից աթոռէն էր։ Իսկ այս անգամ Ռուսիոյ Հայերը պաշտօնապէս զատուած դիրք մը կազմեցին։ Այս զեղչութիւնը տեղի ունեցաւ 1749'ին (ԶԱՄ·39)։ Ջահկեցիին յաջորդները պատիւ չունեցան և կարեւորութիւն չտուին, և Գանձասարցի եպիսկոպոսին իրաւասութիւնը և Գանձասարի կաթողիկոսին յիշատակութիւնը տիրեց Ռուսիոյ մէջ, այնպէս որ էջմիածնեցի վարդապետ կամ եպիսկոպոս չէր կրնար այն կողմերը երթալ, բայց եթէ մանաւոր վրդապետ մի ֆնայր երթեւին, այն ալ ընդ թոյլտ Գանձասարցի առաջնորդին լինելով, և կամաւորապէս տրուած նպաստ միայն ձեռքէր, և ոչ թէ նուիրակութեան իրաւունք (ԶԱՄ·39)։ Սիմէոն իւր օրով ձեռնարկեց այդ գործն ալ կարգադրել, և նուիրակութեան պաշտօնով Ռուսիա ղրկեց Յովհաննէս Քանաքեռցի վարդապետը, բայց Գանձասարցոց ոյժը կատարեալ էր, և ժողո-

վուրդին էջմիածինէ պաղուքիւնը կը չա-
րունակէր, և Ազուանից երկու կաթողիկոս-
ներն ալ, Իսրայէլ և Յովհաննէս չէին ուզեր
ձեռքէ հանել իրենց աթոռին ստացած ըն-
դարձակութիւնը։ Քանաքեռցին ընդունե-
լութիւն չգտաւ, և ինաց անօթի և անգո-
հ անկեալ է գոմ անկեան, և չկրցաւ նուի-
րակութիւնը բանալ (ԴԻՒ. Գ. 497)։ Ասիկայ
մեծ ցաւ էր եղած Սիմէոնի, բայց չէր կըր-
ցած նոր ձեռնարկ մը բնել, մինչեւ որ Ազ-
ուանից աթոռին բմբոստութիւնը չմնչէր,
Յովհաննէսը հնազանդութեան բերելով, և
Իսրայէլը աթոռազրկութեամբ և բանադրա-
նօք տկարացնելով, ինչ որ իրականացաւ
1766 տարւոյ առաջին ամիսներուն մէջ (§
2092)։ Այն ատեն միայն կրցաւ Սիմէոն
հաստատուն վճռի վրայ քայլ մը առ-
նել, և ուղղակի Ռուսաց կայսրութեան դի-
մել Մայրաթոռոյ իրաւունքները վերահաս-
տատելու Ռուսիոյ Հայերուն վրայ, և նկա-
տի ունենալ Բ կայսրուհիի իշխանութեամբ օրի-
նական կացութիւն մը ստեղծել։ Պետեր-
բուրգ երթալու նշանակեց Դաւիթ Տփղի-
սեցի վարդապետը (ՋԱՄ. 40), այլ էնկիչկե-
պէմ, լայնօրէն և կրմրթիալ երեսօք, և ըն-
ծրնէ էին ճեալ տըրասէ, և զրճանկոր պա-
կերաս, յորմրոթով և քոլերքոյ քորաս (ԴԻՒ.
Գ. ճկը.)։ Սիմէոն այս արուեստին առաւել-
լութիւնները չունէր (§ 2070), բայց անոնց
օգտակարութեան մասին համոզում գոյա-
ցուցած կ'երեւի Դաւիթի ընտրութեան մէջ։

2094. Բայց այդչափով չգոհացաւ Սի-
մէոն, յաւ և պատճառաբանուած գիր մը
պատրաստել կայսրուհւոյն
ՌՈՒՍԻՈՅ և գահաժառանգ Պօղոսի
ՀԵՏ ուղղուած 1766 օգոստոս 1
թուականով (ԴԻՒ. Գ. ճկե.)
և հոգեւորական ընծաներ ալ պատրաստել,
զոհաւ ինչ իննէքոյ սրբոյ Կաթողիկէին, սրբոյն
Հռիփսիմեայ, սրբոյն Գէորգեայ, և է նոյնան
սրբոյ փոպանէն, զորս վճռեցաւ է Հռոմկլայէ
սրկել երէ սրթողնոյ։ Բազմաթիւ յանձ-
նարարականներ ալ գրել Ռուսաստան գրա-
նուող ազգայիններուն, որպէս զի կաթողի-
կոսական նուիրակին պատչաճ պատիւներ
ընծայեն, և կառավարութեան մօտ անոր
մուտքն ու յաջողութիւնը դիւրացնեն։ Այդ
դիրերուն առաջիններուն ուղղուած էին Աստ-
րախանի գլխաւորներուն, որոնք արդէն
դէպ էջմիածին մերձաւորութիւն սկսած էին
ցուցնել։ Ազուանից աթոռին ազդեցութեան
կոտորուելուն վրայ։ Ցիչատակութեան ար-
ժանի է Մովսէս Աստապատցիին եղած յանձ-
նարարութիւնը, որ առաջին անգամ թթե-
նիի սերմը և չերամի որդը Ռուսաստան
տարած, կայսերական գնահատման արժա-
նացած, Նախիջեւանէն հմտապատ ֆոռ ստա-
ցած էր (ԴԻՒ. Գ. ճկը.), և իւր խոտը ընդ-
նէլ էր Ռուսաց արքունիքին մէջ։ Յատուկ
կոնդակով իրմէ խնդրուեց Սիմէոն, օձանդակ
լինել իւր ողջոյն պատմաւոր Դաւիթ վար-
պետին։ Արդէն Աստրախանի աթոռին կա-
ցութիւնը Մովսէսի ալ հաճելի չէր (ԴԻՒ. Գ.
ճկե.)։ Ռուսաց արքունիքի առջև մեծ յարգ
ունէր, Յարութիւն, կամ աւելի ուղիղ Յով-
հաննէս Ջուղայեցի քահանան ալ (ԴԻՒ. Գ.
499), թէպէտ չենք գիտեր թէ ինչ էր իւր
արժանիքը։ Առեւտրական ազդեցիկ դիրք
ունէին Պետրբուրգի և Մոսկուայի մէջ՝ Եղիա-
զար, Դուկաս, Ներսէս և Յովհաննէս աղա-
ներ, ինչպէս նաև Բարթողիմէոս և Շամա-
խեցի Սարգիս առեւտրականները. Սիմէոն
ատոնց իւրաքանչիւրին զատ զատ յանձնա-
րարականներ կը գրէր։ Չէր մոռնար նոյն
իսկ Աստրախանի Ռուս մետրապոլիտ՝ Մէ-
ֆոդի կամ Մէթոտիոսի ալ գրել (ԴԻՒ. Գ.
499), մէկ խօսքով ամէն հնարաւոր միջոց
կը գործածէր, որպէս զի Ռուսիոյ վիճակը,
որ 17 (ԴԻՒ. Գ. 498) և ոչ 20 (ՋԱՄ. 39)
տարիներէ իվեր եղած էր Մայրաթոռի իրա-
ւասութիւնէն, նորէն իւր նախկին դիրքին
վերածուի։ Սիմէոնի ջանքերը յաջողու-
թեամբ պսակուեցան, և Ռուսիոյ եկատե-
րինէ Բ կայսրուհւոյն առջեւ ընդունելու-
թիւն գտաւ կաթողիկոսին առաջարկը։ Պատ-
մական պարագաներուն մատնութիւն դար-
ձնելով՝ պէտք է համոզունք, թէ արդէն
Սիմէոնի առաջարկը Ռուսական քաղաքա-
կանութեան առջեւ ընդունելի ըլլալու տան-
մանուած էր։ Վասնզի Հայաստանի կեդրոնը
գտնուող, և ընդհանուր Հայութեան գլուխ
ճանչցուած էջմիածնի աթոռին բաթեկա-
մութիւնը՝ չատ աւելի օգտակար պիտի ըլ-
լար Ռուսական ազդեցութեան և տիրապե-
տութեան ընդարձակուելուն, քան թէ ամ-
փոփ երկրի մը մէջ գտնուող, անձուկ վի-

ձակի վրայ իշխող, և Հայութեան վրայ ազդեցութիւն չունեցող Աղուանից աթոռոյ։ Սիմէոնի թուղթին պատճէնը չունինք առջեւնիս, որ տեսնենք թէ Սիմէոն ալ չոչափած է արդեօք այդ կէտերը։ Եկատերինէ կայսրուհին ինչինչ թանկագին՝ ընծաներէ զատ, 1768 յուլիս 30 թուականով (ԴԻՒ. Դ. ֆլ.) հրովարտակ մըն ալ տուաւ, որուն մէջ մեծ կարեւորութիւն կու տայ Հայոց կաթողիկոսին։ Անոր մէջ կը հրամայուի, որ բոլոր Ռուսիոյ մէջ գտնուող Հայ ժողովուրդը ամենապատուելի Սիմէոն պապրէարքին և նոր պապրէարքական աթոռի յաջորդներուն՝ էքսարքոսներուն ներքոյ ճանչցուի, նա կարենայ պաշտել իր գաւանութիւնը իր հոգեւորական կանոններով և ելեւէջական կերպերով, և առանց էջմիածնի պատրիարքական աթոռին գրաւոր վկայութեան, որեւէ Հայ հոգեւորական պաշտօնեայ չընդունուի Ռուսական տէրութեան մէջ։

2095. *Ռուսիայէ դուրս եղող Հայերու համար ալ կը խօսի կայսրուհիին հրովարտակը, և կը յայտարարէ, որ հեթեթելով մէր քաջչքոյն նախնիներէն, քրեհատճամ ինչ, Սիմէոն պատրիարքին և յաջորդներուն, նոյնպէս և իշխանիներէն և կառավարիչներէն և քալը հաստատիմ Հայոց ազգին պահպանել, մէր կայսերական աղերսանութեան և ընդհաց ներքոյ (ԴԻՒ. Դ. ֆլր.)։ Այս թուականը կրնանք նկատել իբր հիմն և արմատ այն ամբոխ յարաբերութեան, որ հաստատուեցաւ Հայոց կաթողիկոսութեան և Ռուսաց կայսրութեան մէջ, և որ յառաջանալով և ամէնով յանգեցաւ Ռուսական տիրապետութեան Հայաստանի մի լաւ մասին և Հայութեան մի լաւ կէսին վրայ, ինչպէս է այսօրուան կացութիւնը։ Գաղափարը Սիմէոնին գիւտ չէր. այն Օրիի և Մինասի օրէն օրօրուած գաղափար մըն էր (§ 1846), չատ ճիգեր ալ թափուած էին այդ մասին։ Պետրոս Մեծէ սկսելով Ռուս վեհապետներն ալ զանազան ձեռնարկներ ըրած էին, կաթողիկոսներէն քանիներ ալ գործին մղումը տուած էին, Պարսկական լուծին ազատելի հետեւանքներէն մղուած. բայց բաւական ժամանակ էր որ գրութիւ լքուած էր գաղափարը և թուղցած էին ձգտումները։ Սիմէոնի արդիւնքն եղաւ՝ գրութիւ մոռցուած ու դադարած ծրագիրը մը վերակենդանացնել, և անոր հաստատուն և պաշտօնական կերպարան մը տալ, և տակաւ զարգանալիք և յառաջանալիք ճանապարհ վրայ դնել։ Սիմէոն փութաց ստացած արտօնութիւնը գործադրել, Մինաս եպիսկոպոս մը առաջնորդ և նուիրակ նշանակելով (ՋԱՄ. 50), նոյնինքն Պայազիտի նախկին նուիրակը (ԴԻՒ. Դ. 324), որ եպիսկոպոս ձեռնադրուած էր, 1767 յունիս 8'ին (ԴԻՒ. Դ. 732)։ Յաջողութենէն ուրախացած գործին նուիրական ձեռ մըն ալ տուաւ Սիմէոն, եկեղեցական արարողութիւն ալ կազմելով 1771 յուլիս 10'ին հրատարակէն երեք տարի ետքը, զոր մակագրած է Գիրք հանդիսապրութեանց գրոց կայսերականաց, և յառաջաբանին մէջ կը յիշէ, թէ Սկսաք կայսրուհին, իրով ծեռքդ հրամանդ և անպճոխի ինձ, զրկաս ահնայն Հայոց զսոցբ Լջնիծին պահել ֆառաւորեաց, զպէս Հայոց իրոյ ահնապայծա ինֆառաւորութեան սէրելի և իրային աբյանաֆրեաց, և զանաժանութեանս մէր յոտոկ սիրոյ և ազբմասիրեան նշանաս Լիլայալրբեաց և գիլիսբեաց։ Այս չնորհներուն իրր երախտագիտական ֆիւրէն, մաղթողական կարգ մը չարադրեց վան գիտապայծա պանսիրեան նորին, և կը հրամայէ որ ցորչափ Հայերը ֆան ընդ օրհնել պերսիութեամբ նորին, կայսերական տօներուն օրերը Լիլայալրբեաց և ալիսրհանաց գիտահանդիսութեամբ կատարեցին զայս կրթ։ Նկատելով որ 1771'ին քանի մը հայազնակ գիւղեր միայն էին ընդ պերսիութեամբ Ռուսաց, կ'երեւի թէ Սիմէոն ուզած է ընդ հավանաբանութեամբ բանել, և ոչ ընդ պէրպէրութեամբ, որով Ռուսական պաշտպանութիւնը բոլոր Հայաստանի և Հայութեան վրայ տարածել։

2096. *Սիմէոնի հաստատած այդ կարգը, մինչև այսօր պահուած և գործածուած ըլլալով Մայրաթոռին մէջ, աւելորդ չենք սեպեր, վերլուծութիւնը տալ նոյն կարգին՝ որ Ռուսական բառով Մոլեբէն կը կոչուի։ Կարգը բաղկացած է ոչ քէ արդէն ծանօթ և գործածական Հայկական աղօթքներով և երգերով, այլ Սիմէոն ինքնին Ահնանդէզ Աճառած ակսւածով երեք տուն չարական մը չինած*

է, և Օբռնե՛լ ե՛ Հայը ունենա՛լ աղօթք մըն ալ յօրինած, ե՛ւ զոր Ղե՛ւ հանգիստով։ Անոնց վրայ աւելցուցած է Իսաղմոսէ 7 տուն, Առակէ, Ե՛սայիէ, Պետրոսէ ու Պօղոսէ, և Մատթէոսի աւետարանէն ընթերցուածներ, և անդաստանի ձեւով տեառնագրութիւն ու Պահպանե՛ ու Հայր Մե՛ր։ Առաջին տպագրութիւնը 1771'ին կատարուած է իւր օրով, երկրորդը 1823'ին Եփրեմի օրով, չորրորդը 1859'ին Մատթէոս Ա'ի օրով, և վերջին մըն ալ տեսած ենք 1877'ին Դէորգ Դ'ի օրով։ Առաջիններուն ամենայն ճշդութեամբ իրարու նման են եղած, սակայն վերջինին խորագիրները յապաւուած են, և գլխաւորապէս պակսած են աղօթքին առեն էլե՛ք-ը և է վերջ ծընեցաւ, և ալ նոթե՛լ է վերջ օրէց բառերը։ Սա կոյս յապաւումը կառավարական դիտողութեան առարկայ եղած ըլլալով, նորէն հին ձեւը գործադրութեան մտած է, ինչպէս մինչև այսօր ալ կը պահուի։ Թագաւորաց համար աղօթքը Հայ պաշտամունց մէջ ընդունուած էր, և չատ կտորներ ունինք այդ իմաստով, որոնցմէ կրնար օգտուիլ Սիմէոն, առանց իրմէ յօրինուած կտորներ մուծանելու, որոնց մէջ կը պակսին Հայ եկեղեցւոյ ծիսական աղօթքներուն և երգերուն յատուկ եղող լեզուի օծութիւնը և ոճի վեհութիւնը։ Հնար էր չափազանցուած ըսել Սիմէոնի կազմած ձեւերը, և Հայոց եկեղեցւոյն ծէսին հակառակ ըսել՝ եկեղեցւոյ մէջ վեղարը վար առնելու, կամ ծնրադիր աղօթելու կերպերը, և նոր յօրինուած աղօթքներուն և երգերուն մէջ ալ՝ արտաքին գովաբանութեանց նմանող բացատրութիւնները։ Բայց պէտք է դիտել Սիմէոնի և ժամանակակիցներուն հոգևբանական բորբոքումը, և դաղափարներու յանկարծական յուզումը, երբ չնորհիւ Ռուսական հովանաւորութեան զսպուած տեսան Պարսկական տիրապետութեան հարստահարութիւնները, և ինքզինքին ապահովութեան ներքեւ առնուած գտան քահանաց բռնութեանց դէմ։ Գալով Ռուսական յարաբերութեանց և հովանաւորութեանց խնդիրներուն, ատոյգ է որ նոյնիսկ Հայերու կամակցութեամբ և գործակցութեամբ, պաշտպանութիւնը հետզհետէ տիրապետութեան փոխուեցաւ, և տիրապետութիւնն ալ աստիճանաբար սեղմուիներու առաջնորդեց։ Սակայն եղելութիւնը իւր ամբողջութեան մէջ նկատի առնելով, պէտք է ընդունիլ, թէ լարաբաժին Հայաստանին զանազան մասերուն մէջ, լաւագոյն կացութիւնը ռուսական տիրապետութիւնը իրականացուց, և դիտողութեան ենթակայ եղող կէտերն ալ՝ աստիճանաբար դարմանուելու ակնկալութիւնը կ'աճեցնեն, քանի որ ազատութեան և հաւասարութեան հիմնական սկզբունքները՝ պաշտօնական և գործնական չրջանակին մէջ մտած են։ Այնպէս որ այսօր ոչ մի փաստ կամ առիթ չենք գտներ Սիմէոնի առած նշանաւոր քայլը մեղադրելու կամ քննադատելու։

2097. Սիմէոնի ձեռնարկներու կարգին գլխաւոր տեղ կը բռնէ Հայաստանեայց եկեղեցւոյ պաշտպանութեան համար թափած ջանքերը, և հռոմէադաւանութեան յառաջացման դէմ գործածած միջոցները։ Այդ ձեռնարկին իրը չարժառիթ կը ցուցուի կարմիրլանքի միաբաններէն Գէորգ Եւդոկիացի վարդապետը՝ 1760'ին Շամախեցիէն եպիսկոպոս ձեռնադրուած, և 1764'ին Ախալցխայի նուիրակութեան դրկուած, ուր «նոքա յայտնել ըզանդն ապիրատութեան, ինչպէս կը կոչուի հռոմէադաւանութեան հակամիտութիւնը։ Չէ ճշդուած թէ ե՛րբ Գէորգ այդ ուղղութիւնը ընդգրկեց, բայց յիշելը թէ Ախլցխա «զաղն չէաւն ամա յառաջ ապանեցեալ էր նոյն ազանդին, Գէորգի այն տեղ խմորուած ըլլալուն կ'ակնարկէ։ Գէորգ իր յանդգնութիւնը հետզհետէ առջեւ կը տանի, և մինչև իսկ եկեղեցւոյ բեմէն, ձեռքը սուրբ և վիճելոյն վարքին, և զանազան ֆէֆէին չիշէ, և ըսելը «այնպէս կը գործէ։ Աւար վրայ նոյն իսկ կարնեցիք քաղքինէ ընդով, կաթողիկոսին կը բողոքեն, և որովհետև Ախլցխա Օսմանեան երկիր էր, Սիմէոն կ-պոլիս կը գրէ, և Պասմաճեան պատրիարքին ձեռքով երեք հրովարտակներ հանել կուտայ, երէսուն յարակ է վերջ Ախլցխայ, և ինն է վերջ ունեայն թէ ոչ զոր ոչխէ Հայ ֆրանկացեալ էջէ՝ հնազանդեսցին էրեանց սրբոյն, և մ' եա ապաստն զֆրանկաբնէն, և ոչ ոչխէ Ֆրանկ էսնէ էջեն՝ վրեսցին յեկեղեցն

էրեանց։ Սիմէոն հրովարտակները ստանալով Տփղիսի առաջնորդ, Անկոթ մականուանեալ Մարտիրոս եպիսկոպոսը յատուկ պաշտօնով Ախալցխա կը ղրկէ 1769՝ին, բայց Գէորգ Եւդոկիացին, որոնց վրայ յանուանէ բանադրանք ալ հրատարակուած էր կաթողիկոսէն, կը չտապէ կ՚ոլիս փախչիլ և Բէյօղլի թաղի լատին վանքերէն միոյն կ՚ապաւինի, ուր և յետոյ կը մնայ։ Մարտիրոս եպիսկոպոս հրովարտակին զօրութեամբ, Պօղոս, Սթեփան և Յովհաննէս ածէրլէ-եփն և Յակոբ վերեցն էջմիածին կ՚աքսորէ, և հոս մէկականաց ձեռք անցած երիք եկեղեցիները ետ կը դարձնէ, նոյնպէս վերոյն ֆրանկաց կուսակալին ձեռքով ձերբակալել կու տայ, և աքսորել յերկիրն էրեանց (ՋԱՄ. 41)։ Ցիշեալ անձերուն ինքնութիւնը աւելի յատակօրէն ցուցնելու համար, աւելցնենք թէ էին Պօղոս Լևոնեան և Յովհաննէս Ծիկոնեան և Մտեփան Աւթանտիլեան վարդապետները, Հռոմի Մաւրոցի կամ Փրոփականտայի վարժարանին աշակերտներ, իսկ Յակոբ՝ Ախալցխայի ամուսնաւոր երէց մըն էր (ԴԱԼ. 293)։ Աքսորուած լատին կրօնաւորներէն ալ յանուանէ կը յիշուին Ալոիզիոս, Հերոնիմոս, Վիչէնցիոս, Ֆեաէրիկօ և Ֆօռթունատօ (ԴԻԻ.Ը.121)։ Ախալցխայի կուսակալը ատոնք իսկոյն աքսորելու տեղ, ի կալոն էր օբօեալ յափն Ծովուն ի փեղօջ կին (ԴԻԻ. Ը. 110), իրրև երկրին խոովարարներ։ Ասոր վրայ Գաղղիոյ դեսպանը, որ էր կիսևար Սէնբրիսթ կոմսը (Guignard comte de Saint-Priest) չրջաբերական գիր մը ուղղեց լատին կրօնաւորներուն չի ին տպուին ի մէջ Հայոց ծողովրդեան ոչ իսկ լինելին, և ի՞մ չեզչէլեցին զնոսա ի հասարակ էրեանց։ Այդ գիրը պատրիարքին միջնորդութեամբ, հաղորդուեցաւ Սիմէոնի, որ զբեղպանէն ընդհակառակ եղև, և լատին կրօնաւորները արձակել տուաւ։ Միանգամայն աւելցուց, որ յայնժամ լինին նոքա բերելոցդ ընդհակառակ, երբ ասոնք բէր են ի փեղն հանցե, որ իւր կրօնաւորները չ՚ոլոլեցեն զեղծուլ ազգս Հայոց, և չ՚հանցեն ի քնական առանձնութենց էրեանց (ԴԻԻ. Ը. 111)։ Երանի՛ թէ այդ խոհական թելադրութիւնները և դեսպանին առած խոհեմ քայլը՝ հռոմէադաւանութեան պետին և պաշտօնէից կողմանէ, ընդունելութիւն գտնային։ Այս կերպով չանդիտական ուղղութեամբ գրգռուած անտեղութիւնները՝ պատկաս եղած պիտի ըլլային վրայէն։

2098. Իսկ այն չորս եկեղեցականները որ էջմիածին տարուեցան, իրաւամբ կը նկատուէին իբր ըմբոստ-

ԽՆԴԻՐԻՆ ներ, զի Հայոց եկեղեցւոյ

ՓԱԿՈՒՄԸ պաշտօնէութեան կերպա-

րանին ներքև Հայոց եկեղեցւոյն դէմ դաւաճանել կը յանդգնէին, և այս պատճառով կրեցին ղեռ նեղութիւնս Մայրաթոռին մէջ, մինչև որ կը փութան և երկիցս անթամ հայերէն թէր կոտրան գաւանութիւն՝ վճռապէս և նզովէ, զի ոչ ևս գոյին ի նոյն ալանդն (ՋԱՄ. 42)։ Այլ և երբ Ախալցխացի հռոմէադաւաններուն կոլմէ կրկէ լըբութիւնամբ և ընդդիմութիւնամբ չի գիր մը հասաւ կաթողիկոսին, որով հռոմէադաւանութիւնը յատուկ քաշքշուք բացատրութիւններ կը կրկնէին իրենց ջատագովութեան համար, վերոյիշեալ չորսերը գոյնեցին ի նոյնն, երբեմն նոցա ոչ այս ընդդիմանութիւնն (ԴԻԻ. Ը. 96)։ Իսկ Սիմէոն բուսականացաւ պատասխանել, թէ ծանեաւ, զի ես ի չեղ գտաւորութիւն և անկատարութիւն, անոր համար վերցուցինք չեզ գոյնել ընդ չորերսոնս, զի բաւական համարեալ, որսն գիտէ ցայժմ ընդ ոչ ընդ անկե անպետս, ընդլայ ընդ ընդ և ընդարձակ պղտիկ (ԴԻԻ. Ը. 77)։ Էջմիածին աքսորուածներ տուած յայտարարութիւններուն կրճնելով, չարունակ իրենց արձակման հրամանը կը խնդրէին, բայց Սիմէոն կամաւ կը յապաղէր անոնց ներքին հաստատամտութեան վրայ վստահութիւն կազմելու համար, և այսպէս երկարեցաւ մինչև չոս երէս, մինչև որ Ռուսաց պատերազմին առթիւ, հրամանատար Մուսթաֆա փաչային միջնորդութեան դիմեցին Ախալցխացիները. փաչան ալ նախապէս եաթ էր է բերանց հեռագրեցն պահելոյ, զի ոչ ևս երբեմեսացն ի չինեանս ընդ պղտիմոյութեան, և զայն կաթողիկոսին ղրկեց, և սա ալ կոլիս գրելով եպ բերել ղբչնկան ֆերմանն, և չորսերը Ախալցխա դարձուց 1771՝ին (ՋԱՄ. 42)։ Անոնցմէ երկուքը, Լևոնեան և Աւթանտիլեան անմիջապէս հեռացան և Հռոմ գացին, և հոն եպիսկոպոսութեան պաշտօնի հասան (ԴԱԼ. 293), իսկ միւս երկուքը կ՚ե-

թեւի թէ Ախլցխա մնացին, ուր հռոմէադաւանութեան սերմերը բոլորովին չտպառնացան։ Իբր զի ամէն տեղ՝ ուր կրօնական անջատման մը սկզբնաւորութիւն կ'ըլլար, անհնար կը դառնար զայն արմատէն քանդել, և այսօր ալ Կովկասեան գաւառներուն մէջ Հայ հռոմէականութիւնն պլխաւոր տեղերէն մէկը՝ Ախլցխա է։ ✓

ՊԱՏԱՃԱՌԻ ՄԻՋԱԴԵՊԸ

2099. Ծիշդ ինք վերեւ թէ Օսմանեան կառավարութիւնէ առացուած հրովարտակներէն երրորդը ընդհանուր էր (§ 2097)։ Սիմէոն զայն գործածեց Բագրեւանդի վիճակին մէջ սկսած հռոմէադաւանութեան դէմ, և ուղղակի դիմեց Գայազիտի կուսակալ Ապտի փաշային, որ է նոյն ինքն Սիմէոնի միջնորդութեամբ ազատութիւն առացող Ապտի պէյը (§ 2091)։ Կուսակալը պետական հրամանին հպատակելով, նախապէս ձերբակալեց գլխաւորներէն երեքը հոգի, որք են, Գողոս՝ Ղարասու, Գրիգոր՝ Նաւիկ, Յաչատուր՝ Մօլլասիւլէյման, Յարութիւն՝ Միքանկ և Ղազար՝ Գարասան գիւղերու քահանաներ, Բրնձիք՝ Գարասանցի սարկաւագ, և Մաթէոս՝ աշխարհական (ՋԱՄ·42)։ Աւոնք յանձնուեցան Բագրեւանդի կամ Իչքիլիսէյի առաջնորդ Ջաքարիա վարդապետին Էջմիածին տարուելու համար, բայց սրսվհետեւ վարդապետը կը յապաղէր Էզդինեթու արշաւանքներէն վախնալով, Սիմէոն 1769 օգոստոս 16'ին կը գրէր Գոմիթասեանց Նելվ թէ վտանգ չկայ, ուստի անյապաղ թող գայ։ Ըստ այնմ ալ անմիջապէս բերաւ Ջաքարիա, և օգոստոս 18'ին չնորհակալութեան գիր գրուեցաւ Ապտի կուսակալին (ԴԻՒ·Ը·69)։ Եկողներ չտա յամաչ չհան իրենց միտքին վրայ. և չեռ Եչմիածնէ Գալմց գրչան է յանգլուխն, և էլէ Եա է-փան, ուստի Ջաքարիա վարդապետ, սեպտեմբեր 14'ին, Յաչվերացի երկրորդ օրը, Գրիգոր և Յաչատուր քահանաները միասին տանելով Էջմիածին մեկնեցաւ (ԴԻՒ·Ը·86)։ Մնացեալներ քիչ մը եւս մնացին Էջմիածին, բայց վերջապէս անոնք ալ ահաւոր Սիմէոն է պէյ Էրէանց (ՋԱՄ·42), զի ինչպէս ինքն ալ կը գրէր, ոչ վրէժխնդիր և ոչ հալածող հոգւով կը գործէր, այլ է Էր հոգեւոր օգտից շրջել կ'աշխատէր (ԴԻՒ·Ը·77), որ իրեն յանձնուած քրիստոնէական փարախին հետեւողներ զգաստանան, Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառ և ուղղադաւան հաւատքը անսխալած պահուի, և արտաքին դրդումներով իզուր բամանումներ և հակառակութիւններ չտարածուին Հայութեան մէջ։ Այդ մասին ոչ ոք կրնայ մեղադրել եկեղեցւոյ մը պետին ունեցած նախանձայուզութիւնը, զոր ամէն պետերու վրայ ալ յարգելէ չէինք քաչուիր, եթէ իրենցներուն պահպանութեան նուիրեին բոլոր ջանքերնին, և ոչ թէ ուրիշ եկեղեցիներու գործերուն խառնուէին, և արտաքին հրապոյրներով տիրապետութեան դիտումներ մչտակէին։

ՅՈՎՆԱՆ ԱՄԴԵՑԻ

2100. Սիմէոն միեւնոյն ուղղութեամբ վարուեցաւ եպիսկոպոսներէ և վարդապետներէ ոմանց հետ ալ, որոնք զանազան դիտումներէ մղուած հռոմէականութեան մէջ իրենց դիրքերը գոնել կարծեցին։ Այսպէս եղաւ Յովհան Ամդեցի՝ Գլակայ առաջնորդ, որուն անունը իբր կաթողիկոսական ընտրելի յիշուեցաւ Շամախեցիի մահուընէ ետքը (§ 2069)։ Բայց աւելի քան ընտրելի, ինքնին յափշտակիչ մը երեւցած էր, և մինչեւ իսկ Հոփեսոփ փէշ կոչում առնելու, ուհայրապետական ձեւեր գործածելու յանդրգնած էր (ԴԻՒ·Գ·271)։ Անչուշտ այդ նպատակին մէջ յուսախաբ մնալը պինդ դրդեց օտար ճանապարհ երթալ, և սկսաւ հռոմէական ուղղութեան չնորհիւ՝ Մայրաքաղաքի և Սիմէոնէ անկախութեան ճանապարհ փնտռել. առաջնորդներ կր փոփոխէր, ուխտաւորներ կր կաղապարէր. հայրապետական կոնդակներ կը դրէր. և չնորհներ բաչխելու կը յանդգնէր, եկեղեցական պանձեր և հաստատութիւններ կը գրաւէր (ԴԻՒ·Գ·ճիշ), նուիրակներ կը ղրկէր ամէն կողմ, Ս. Կաթողիկոսի անունը կը չահագործէր, և Ավետարանչական Մաքսուտ պէյ Թէրէզեանի կամ ուղղական բանապետը իրեն չահերուն համահաւատ ընելով՝ աղիկամի կը գործէր (ԴԻՒ·Գ·543)։ Սիմէոն ուժգին զինեցաւ անոր դէմ, և բոլոր անկարգութիւնները տապր որոչ գլուխներու վերագրելով, Էրէց

զբանտարանաց [ո]ւղի լուալը նղվից և անլոյծ կապանաց, և ձերկոցոյց ընա [ի] ընծրհե և [ի] կոչե (Դիի. Գ. 226)։ Հայրապետական սատը իրեն արդիւնքն ունեցաւ, զի Յունան չատ մը կարեւոր գլխաւորներ միջնորդ ձգելով, իջմիածին դիմից, Ակոռի գիւղը կաթողիկոսին հանդիպելով, ձեռա զղջմէ և կոտրեալ ձեղյե և յորտոռաց արտասուս ներում խնդրեց (Դիի. Գ. 286), և յետոյ Մայր տաճարին մէջ հանդիսաւոր խոստովանութեամբ և օրհնութեամբ ընկալաւ զնորընթան և զբյոհաճ (Դիի. Գ. 290), և կ-Պոլիս գնաց, անկէ ալ նորէն իւր առաջին առաջնորդութեան դարձաւ (Դիի. Գ. 754)։ Նմանօրինակ զգուշաւորութեան գործեր առիթ ունեցաւ կատարել Սիմէոն ուրիշ տեղերու, և գլխաւորապէս Կարսի, Արաբկիրի, Տիարպէքիրի, Արդուինի վիճակներուն վրայ ալ (Դիի. Գ. ֆԽԵ)։ բայց մենք զանց կ'ընենք, մանաւոր պարագաներով պատմութիւնիս չծանրաբեռնելու համար։

2101. Սիմէոն միւսոյն նախանձայուզութենէ ազդուած, և միանգամայն ծխական սովորութիւններուն մէջ ԼՈՒՍԱՒՈՐՉԱՑ ՏՕՆԵՐ ալ ակամբ կարծած բարեկարգութիւններու մուծանելու փափաքով, տօնականց կարգադրութեանց ալ ձեռնարկեց, մէկ կողմէն հաստատուն կանոններ, և միւս կողմէն պատշաճ փոփոխութիւններ մտցնելու միտքով։ Թէպէտ կանուխէն ալ ինքը այդպիսի դիտումներ ունէր, սակայն գործադրութեան չարժատիպ և քաջալերտ առաւ կ-Պոլսոյ պատրիարք Պատմաճեանը, ժողովուրդի անունով գրուած մէկ գիրով, որուն մէջ խնդիր և պէտք կը մատուցանէր. կրթել ըստ Ֆէոփ ևլիսոց օրէնն Գրիգորի Աբգարայ Լուսաւորչին՝ կէսկոչ։ կ-Պոլսոյ մէջ այդ փափաքին չարժանալուն ուրիշ առիթ չենք գտներ, բայց եթէ այսպիսի սովորութեան հռոմէադաւանութենէն կողմէ սկսուած լինելը, ինչպէս կրնայ քաղուիլ վենետիկի Միխիթարեանները օրացոյցներէն։ Հայոց եկեղեցիին ծխական կարգերը գնելով կը տեսնուի, որ անոր հնաւանդ կանոնները կիրակէներէն գուրս հրամայական տօն կամ կիրակէ պահելու օրէնք ունեցած չեն, մանաւանդ օրերոց տօներու համար։ Նոյն իսկ Աստուածայայտնութեան և Համբարձման տօներուն ալ կիւրակէին փոխադրութիւը, հնչտ կերպով կը քաղուի կրօնական և ծիսական պատշաճներէն, ինչպէս յարդ կ'ընենք պայծառակերպութեան ու վերափոխման ու Խաչվերացի տօներուն համար։ Այդ կէտին պարզաբանութիւնը մեզ դարուեղութեանց կրնայ տանիլ, ուստի բաւական ըլլայ գիտնալ, որ Լուսաւորչի չարաչի օրը կիւրակէ պահելու սովորութիւնը մինչև 1766 չկայ եղեր։ Շարխուան մէջ կիւրակէներ յունական և լատինական սովորութիւն են, և լատինամիտ Հայեր ալ՝ լատինական նմանողութեամբ և Հայ եկեղեցին իւր հռոմէադաւանացուցնելու կանխատածութեամբ, Գիւտնչխարացի օրը կիրակէ պահելու սովորութիւնը մտածած կ'ըլլան։ կ-Պոլսոյ Հայ ժողովուրդն ալ անոնցմէ վար չմնալու պատճառով նոյնն ընելու համար կաթողիկոսին դիմելու որոշումը կու տայ։ Սիմէոնի միտքն ալ այդ մասին նախապատրաստած պէտք է ընդունինք, որ ոչ միայն սրբոցբ-յոյժ օրհնոյ խնդիր կը գտնէ առաջարկը, այլ և սրբանէ առաքել [ո]ն զնդրէցեալն կոտրել (Դիի. Գ. 426)։ Ուստի իսկոյն [ի] յոյս ցնծացեալ, զնոցին էրեց ընդհանրապէս առ ամենայն ազգս Հայոց, ոչ միայն Լուսաւորչին տօնը մէկ օրով, այլ Հայոց յուսաւորութեան յիշատակը փառաւորել [ի] պարտէն հինգ առաքելոց, որք են Լուսաւորչի Մուտն [ի] վիրապէ՝ Մեծ պահոց հինգերորդ չարաչի օրը, ելն [ի] վիրապէն՝ Հոգեգալստեան առաջին չարաչի օրը, ու Գիւտնչխարացի՝ Հոգեգալստեան երրորդ չարաչի օրը, Թադէոսի և Սանդխտոյ տօնը վարդավառի առաջին չարաչի օրը, և Առաջին Լուսաւորչոյ Թադէոսի և Բարթողիմէոսի տօնը (Դիի. Գ. 427)։ Այդ ընդհանրականը գրուած պիտի լլլայ 1766 ապրիլէ առաջ, վասնզի անկէ ետքը կը յիշուին կաստանդնուպոլիս հասած թուղթերը յառաջ հրաշեալ Ցառնիեան Տէառն [ի] տօրէ զոփէն (Դիի. Գ. 428), որ այն տարին ապրիլ 23'ին կը հանդիպէր։

2012. Վերոյիշեալ հինգ տօներէն վերջինը, հիմակուան պէս՝ Առաջին լուսաւորչեան Հրոց Թադէոսի և Բարթողիմէոսի բացառութեամբ հին տօնացոյցին մէջ չէր գրանուներ (ՏՕՆ. 266), այլ միայն՝ Առաքելոցն Բար-

ՌՈՂԻՈՍ Ե ՑՈՓՅԻ ՏՕՆ ՄԻ ԿԱՐ ՑԻՒՆԱԿԱՑ ԵՐՐՈՐԴ ԵՒՔՉԱՐԹԻ ՕՐԸ՝ Ս. ՅԱԿՈԲՅ ՉԱԲԱԹԱՊԱՀՔԻՆ ՄԷՋ։ ՍԻՄԷՈՆ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱՒՈՐԻՉՔ

առաջնորդելով այն միտքն, թէ Հայոց լուսաւորիչ Թադէոսը՝ Յուդա-Թադէոս առաքեալն է (§ 7), Յուդա անունը Թադէոսի կը փոխէ։ Միանգամայն կը մտածէ թէ վայել չէ նչանաւոր տօն մը պահոց օրը թողուլ, և թէ յարմարագոյն է մեծ տաբերութեան նման է ըՔՆԵ ՓՈՒՔ ՆՈՅՆ, ուստի կը հրամայէ որ Բարթողիմէոսի և Թադէոսի տօնը փոխադրուի՝ ՑԻՆԵԼՈՑ ԵՐԷՐՔՈՒՈՅ ՀՔՆԵ ՀՔՆԵԼ ՈՒՈՒՔ (ԴԻՒ. Գ. 427), զոր այժմ ՑԻՆԱԿԻ առաջին չաբաթ կը նչուենք (ՏՕՆ. 266), և այն օր տօնուող Անդրէաս առաքեալը միացուի Փիլիպպոս առաքեալին հետ ՅԱՅԼ ԻՆՆԵՐՈՐԴ ՉԱԲԱԹ ՕՐը (ՏՕՆ. 257)։ Իսկ բաց մնացած՝ ՑԻՆԱԿԱՑ ԵՐՐՈՐԴ ԵՒՔՉԱՐԹԻ ՕՐՈՒԱՆ ԲԵՐՈՒԻ, ԿՈՒՆԵԼԻՈՍԻ ՈՒ ՇԱՒՈՒՆԻ ՈՒ ՓՕՂԻԿԱՐՊՈՍԻ ՏՕՆը (ՏՕՆ. 271) որ առաջ ԱԱՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՆՔ ԼՏՔը ԱԱՊԱՅԻՑ ԿԱՐԳՐ ԿՐ ՄՆԱՐ։ ԱՅս առթիւ հարկաւ մտածած կ'ըլլայ, որ Մուսէն ի վիրապի տօնն ալ յարմար չէր Մեծպահքին մէջ թողուլ, բայց չատ ծանօթ և ընդհանրացեալ օր ըլլալուն չհամարձակիր տեղափոխել, այլ կը գոհանայ հրամայելով, որ դէպն ԲՈՑՅՆ ՂՅՆ ԵՂԵՆ՝ ՅՐՕՄ ՅՅՆՄ ՈՒՈՒՐ ՂՂՈՓՐՔ ՀՅՆ ՓՈՓՈՅՆԵԼՑ, և ՅԲՐԵՒՅԻ ՈՒՐՔԻՆ ԴԵՒՀԱՆԳՉԵՒ ՂԻԱԽՈՓՈՒՆ ԱՐԲԵԼ, ՅՈՒՈՒՕՓՈՒ ՀԱՐԱԲՈՒՆ Է ՓԵ ՔՈՂՎՐՔԻՆ ՓՈՓՈՅՆԵՆ ՂՊՈՓՐՔՆ (ԴԻՒ. Գ. 427)։ Այդ կարգադրութիւնները Սիմէոնի նախափորձերը եղան տօնացոյցի մէջ փոփոխութիւններ մուծանելու, որոնք քիչ ետքը պաշտօնական և վերջնական կերպարան ստացան տօնացոյցի ամբողջական տպագրութիւնէն ետքը։ Չենք կրնար որոշակի ցուցնել թէ ինչ՞ի և ո՞ր տեղեր գործադրութեան մտաւ Սիմէոնի օրինադրած նորութիւնը, այն է տարեկան հինգ օր կիրակէանալ Հայոց լուսաւորութեան պատուոյն։ Ինչ որ մենք գիտենք այն է, թէ Կ-ՊՈԼՍՈՅ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ որ նախաձեռնութիւնն առած էր տարեկան օր մը միայն կիրակէանալու, իր առաջարկին վրայ հնացաւ, Դիւանչխարացը պահեց, իսկ միւս չորս օրերը չպահեց։ Այս կէտը կը տես-

տատուի Կ-ՊՈԼԻՍ հրատարակուած օրացոյցներով, որոնց մէջ առաջին անգամ 1890'ին երեւցան տօնական խաչանիշները ՆՇՆ-Ի-ՎԻՐԱՊԷՆ և ԱՌԱՋԻՆ-ԼՈՒՍԱՒՈՐՉԱՑ ՕՐԸՐը, որոնցմէ առաջինը խափանուեցաւ 1898'էն ետքը, և Գիւանչխարացին վրայ միայն Առաջին-Լուսաւորչաց տօնը աւելցած մնաց։ Իսկ օրերու փոփոխութիւնները կրցան գործադրուիլ նոր տօնացոյցի տպագրութենէն ետքը, այն ալ ոչ առանց խնդիրներու, ինչպէս պիտի տեսնանք։ Սիմէոնի տոյն ձեռնարկին վրայ դիտողութիւնիս կը պահենք ամբողջաբար ընել՝ տօնացոյցի տպագրութիւնը պատմելնիս ետքը։

ԵՒՍԿՈՊՈՍԱՑ ԿԱՆՈՆՆԵՐ

2103. Սիմէոնի բարեկարգական ձեռնարկներուն կարգին պիտի յիշենք նաեւ առաջնորդութեանց մասին դարձուցած մտադրութիւնը։ Ցաւով նկատած էր ԱՅԱԼՈՒՐՔ ՀԱՅՐԱՊԱՏԸ որ առաջնորդներէն քանիներ, ոչ-եպիսկոպոս կղերականներ յաճախ էջմիածինէ աստիճան և պաշտօն ստանալնէն ետքը, դարձեալ վերթռռ փոխադրեցան և ոչ-ոք անկէ, ոմանք յայտնի ըմբոստութեան սկսան՝ ինչպէս կարսի Աբրահամ եպիսկոպոսը, ուրիշներ դաւանութենէ հեռացան, ինչպէս Ախլցխայի Գէորգը (§ 2097), ուստի պէտք տեսաւ իրր նախազգուշական միջոց, եպիսկոպոսական ձեռնադրութեան կոչողներէ յատուկ ուխտագիր առնել ապագայ ընթացքներուն համար։ Առաջին գործադրութիւնն ըրաւ 1765 ապրիլ 3 զատկին օրը՝ եպիսկոպոս ձեռնադրուող կարնոյ առաջնորդ Գաղատասարի և Բասենի առաջնորդ Աւետիքի վրայ (ԴԻՒ. Գ. 154), որոնց ձեռնադրութեան մէջ ընկերացաւ Մայրաթոռոյ միաբաններէն Գրիգոր Ամանաննեցին, որ յիշուեցաւ Սիմէոնի ընտրութեան առթիւ (§ 2073)։ Նոր ձեռնադրուող առաջնորդներէն ուխտագիր առաւ հետեւեալ չորս պայմաններու վրայ։ 1. Մնալ ՅՕՐ ՄՀՈՒՆ Է ՎԱՆԱՅ ՕՐՈՅ ՎԲՐՈՅ ՅԵՆԱՊԲԻ։ 2. Անխափար կալ է հաւատ և յուղել ըստ ՈՒՆԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑԱՆԵՑՒՑ ՈՒՐՔ ԵՒԵՎՅՈՒՈՅ։ 3. Վարել հոգեշահութեամբ ընդ օրհոյ ոխերայն և ԲՈՐՅԱԼՈՒՑ ՆՈՐՆ։ 4. Մի՛ ՂԻ Է ՀԻՆԱՆԻ ԲՈՒՈՒՈՆՑ ընդունել և հաւանութեան և կամս ելեալ էլեւոր էլեանց և տհանոյիկ և խոշտիցս

յեռնոտբել իսկ իւր վիճակէն դուրս եղած առնն, կամ թէ ուրիշ վիճակէ մը իրեն եկած առնն, ո՛ւմէ+ պոլ չկոչէ է ինչ ասպիճանն ինչը ցեղին ասպիճանն: Նոյնպէս վանականութեան համար ալ, ասոնց էքսեըց չկոչ և չբաս, ո՛ւմէ+ պոլ չկոչէ ինչ կամ չվիշտ, մինչեւ որ նա ալ առնուցու չանչ ձալ է վանս է ինքնասիրէն և է հնազանդութեն: Այդ պայմաններուն դէմ անսասանած առնն, ուխտադիրներ յանձն կ'առնէին, ևս թարկուիլ հոգեւոր պատիժի ըստ օրէնքն վճռի պայծ, և պոլ չերկու հազար դրամ պատճառ՝ մերձաւոր քահանայի տեղւոյն, ուր որ գըտնուին: Այդ ուխտագիրի ձեւը արձանագրուեցաւ ալ յօրինակ ապ եկեղց (Ինի. Գ. 166): Այսպէս յիշենք թէ սովրութիւն էր եղած առաջնորդաց ել ամեն յոգեմ հայրապետին, մանաւանդ յօրհամ հայրապետի նոր յոհնա նոպցէ (Գիի. Գ. 22), և մինչեւ իսկ կարսի Աբրահամ եպիսկոպոսին զալ չուզելուն համար, Սիմէոն կոմէ ընդ քանի առնել զայն, որով նա ալ ապ զղջացեալ եկն (Ինի. Գ. 36): Վերոյիշեալ կարգադրութիւններէն Մայրաթոռ այցելելու պարտքը այժմ իսպառ մոռացութեան ինկած է, դաւանութեան և հաւատարմութեան ուխտերը, և ձեռնադրութեանց մասին կանոնները կը մնան, միայն աթոռը թողլու և հրաժարելու իմպիրը իւր նչանակութիւնը կորուսած է, քանի որ Ներսեհանցոց համար աթոռի անունով ձեռնադրութիւն ալ ջնջուած է: Իսկ Տաճկահայոց մէջ քաղաքական և ազգային պատահարներ, եկեղեցական պահանջներէ անկախաբար, ստէպ հրաժարելու կամ հրաժարեցնելու կը սովին: Եպիսկոպոսական ձեռնադրութեանց հաստատուն կերպով աթոռի մը հետ կապուելուն հնօրեայ կանոնը՝ իրեն ծագումն ունէր, եպիսկոպոսացուներուն անրաժեշտաբար նոյն վիճակին քահանայական դասէն առնուելէն, ինչ որ այժմ խափանուած է, և եպիսկոպոսներ կամ առաջնորդներ չատ անգամ հեռաւոր վանքերու միաբաններէն կ'առնուին: Միւս կողմէն վիճակներու կարեւորութեան և վիճակաւորներու փոթաւութեան պատճառներն ալ կը պահանջեն, որ առաջնորդներ նոյն համեմատութեամբ զարգանան: Ո՛չ անիորձներ կարեւոր վիճակներու նչանակուին և ո՛չ փոթաւուներ երկրորդական վիճակներու մէջ փակուին: Այդ տեսութիւններ ուրիշ եկեղեցիներու մէջ ալ դժ ստացած են, և Յոյն ու Լատին եկեղեցիներն ալ ընդունած են վիճակաւորները տասիճանաբար բարձրացնելու դրութիւնը: Միաբանի ձեռնարկներէն իւր վերջին տարիներուն մէջ տեղի ունեցածները՝ վերջէն գրելու պայմանով, քիչ մըն ալ ուրիշ աթոռներու մէջ այդ միջոցին տեղի ունեցած անցքերը քաղնենք:

2104. Կիլիկիոյ աթոռին մասին վերջին անգամ յիշեցինք Միքայէլ Ակապահեանի մահը, և իւր եղբօր Գաբրիէլի յաջորդելը 1758'ին (§ 2050), երբ Մայրաթոռ դատարկ էր, որով թէ Շամախեցիին առնն և թէ Երեւանցիին առջի տարիները Գաբրիէլն էր Սսոյ գահակալը: Գաբրիէլ հեռու մնաց այն ձգտումներէն զորս ունեցած էր Միքայէլ, իւր իրաւասութեան սահմանները ընդարձակելու, էջմիածնի հպատակ վիճակներէն մաս մը իրեն վրայ դարձնելով, մանաւանդ թէ բոլոր Տաճկահայոց կաթողիկոս ճանչցուիլ կ'ուզէր, պնդելով թէ ինչ վայել է առնել ըսա-երէր՝ որ ընդ էջմեռնէ-ընթ Օսմանցոց է, առ որով և ես և ընտա իմ կամ (ՋԱԱՐ. 99): Սակայն կաթողիկոս մնծամնծներ իրեն քաջալերութիւն չտուին, և մինչեւ իսկ պետական հրովարտակ հանին Միքայէլը ի տպատեն և ի վիճակէն էջմիածնի, և այս պատճառով Ներսեհանցիի գրիչին ներքեւ օրհնել էջմեռնէ մը կը կարդուին այս անգամ, մինչ ուրիշ պարագայի մէջ (§ 2085) համակիր եղած չէր կաթողիկոս ազգայնոց մասին: Սիմէոնի հակակիր գործունէութիւնը հետեւանք կը սեպենք մայրաքաղաքի եկեղեցականներուն և Նալեան պատրիարքին վրայ գրած մեղադրանքը, թէ Միքայէլի ձգտումներուն օգնեցին Յունաստանեցիներ ելեւէջներուն, և մանաւանդ Յունոց կաթողիկոս պետական հրովարտակով էր է կոստանդնուպոլիս, որովհետեւ եթէ Միքայէլ պետական հրովարտակ հեռացուեցաւ, անշուշտ պատրիարքն էր եղած հրովարտակը հանել տուողը: Իրաւ կաթողիկոս պատրիարքն ու եկեղեցականները մասնակցեցան Ջանկկեցիին դէմ եղած հակառակութեանց,

այլ ոչ երբեք Մայրաթոռին դէմ մրցելցան, ինչպէս և ծանրանայն սրբոյ Էջմիածնի՝ Ջահկեցիին դէմ խռովութիւն հանելը, երբեք իբր Սոյ աթոռին նպաստաւոր չարժուած մը չկրնար մնկնուիլ։ Անգամ մը որ Մխիթարեան ճիգերը անյաջող մնացին, Գաբրիէլ անոնք վերանորոգել չուզեց, և այս կողմէն հաչտ յարաբերութիւններ չարունակեցին, և ե-յոպես դնէ ցոյց, կը գրէ Սիմէոն իւր ժամանակին համար (ՋԱՄ. 99)։ Գաբրիէլի գործունէութենէն բան մը պիտի չկարենանք գրել առձեռն տեղեկութիւններ պակսելուն համար, բայց նչանաւոր արդիւնք մըն ալ ունեցած չերեւիր, դի ունենալու ալ դիւրութիւն չունէր՝ ընկճուած ըլլալով Թօզանօղլուներու տեղական բռնապետութեան ներքեւ։ Նոյնիսկ Գաբրիէլի կանոնը պոնուեցաւ այդ բռնութենէն, վասնզի Սոյ վանքին վրայ խուժող լեռնականները, պորս օբէնըօղլը գլուխ կը կոչէ յիշատակագիրը, կաթողիկոսին ալ չինայեցին, և գարնան սպասնելին 1770 սեպտեմբեր 10'ին, Հայլ չարաթապահքին ուրբաթ օրը։ Միւս օրը, չարաթ առաւօտ, հազիւ թէ վանքին մէջ ղողներ՝ սպասնալ կաթողիկոսը խաղալցին է գլխս դնեփոխեն, անոնք նոր յարձակում մը կրնեց Սոյ վանքը Թօզանօղլուի անասնձ վտռմակներէն, որոնք ըսյս ինչ պահանջելով կամ չէն, միաբաններր կը խոչտանգէին և կը կոչկռէին, այնպէս որ ալ պոլս դառնալ չէին համա ալիլել դան կենալ։ Տասն օրէն վերջ յարձակումը կրկնուեցաւ, և Թօզանօղլուն ասելի դան ղեռելիր սբ սբէկոյս և սբէնածորս կը դրկէ վանքին վրայ կողոպտելու և կոտորելու, բայց երբ միաբաններ ինքզինքնին արդէն դերեզմանի մօտ կը կարծէին, յարձակողներէն երեխէք սկսան պատար կուտան տապնային, և վանքին մէջ եղողներէն ոմանք տախի կը գտնեն, դուրս ելլել և Աստուած ապաստանիլ։ Փախչողներուն պետն էին Մարկոս քահանայ Ալջապան՝ վերջին երկու կաթողիկոսներուն եղբայրը, անոր որդին Եփրեմ եպիսկոպոս, այն որ չփոխր անցնելէն ետքր կաթողիկոս ընտրուեցաւ, և 1771 տարւոյն սկիզբներր Սիս պատնայով օծում տատացաւ (ՍԻՍ. 219), թէպէտ այլուր 1772 նչանակուած կը գտնենք (ՊԱՍ. 22), իսկ ինքն Եփրեմ իւր ազգատանութիւնր կը կազմէ առանց թուականներու։

ԱՂԹԱՄԱՐԻ ԱԹՈՌ

2105. Աղթամարի աթոռին վրայ թողուցինք Գրիգորը իւրայիններէն ընտրուած, որուն մասին դիտողութիւն չրրին կամ չկրցան ընել Մայրաթոռոյ գահակալները, և այսպէս խաղաղութեամբ վախճանեցաւ նա 1761'ին (§ 2018)։ Գրիգորի կը յաջորդէ Թովմաս, միշտ իւրայիններուն ընտրութեամբ և Ջահկեցիի օրով դրուած պայմանին հակառակ, սակայն Թովմաս պէտք կը գտայ Մայրաթոռոյ պաչտպանութեան, և հաստատութիւնր որոչմամբր մր, չէնք գիտեր ինչ է խղճի հարցը, երբ է քաշմերինէ պարտաց քանդարձեալ, կ'ելլայ անձամբ էջմիածին կու գայ, և ինքնայօժար պատրաստականութեամբ խոստանալ դէպի իւրեանց ընդ նղվիւ ղազարս կոնդակին։ Մինչեւ իսկ կիրակի օր մը ի ձեռ եկեղեցւոյ ի համ սարբ պատարագի, անկեալ ի գետին, և բացաս ելեւ, և ինչ անառակին օրհասս գալիս չարականը սկսելով, խնդրէ ընչակոծ։ Յակոբ Շամախեցի կաթողիկոս ընդոսնի սիրով Թովմասն ու իւր խաստատանութիւնը, և գայ ընչակոծ ի ձեռ հանդիսին, և հայրապետական կոնդակով կը հաստատէ Թովմասը իւր աթոռին վրայ, և կը վերանորոգէ գլխանս սահմանադրութիւնս և նղվիւ կանոնաց, որք Ղազարի և Նիկողայոսի օրով հաստատուած էին (§ 2018), և այլ ուրիչ պատասխ և կանոն կը հրամայէ, զի Աղթամարցիք ոչ ես գիցեն ինքնագլուխ գլխնդիրս ինձնից, և այսպէս պատասխ և խելչէ կը դարձնէ Թովմասը իւր աթոռը։ Երեւանցին կը վկայէ թէ ցորչափ Թովմաս Աղթամարի կաթողիկոս մնացած է, տասած ուխտը յարգած է, և թէ ինչպէս նախորդին՝ նոյնպէս իւր օրով ալ ղարսբ գահանն է սբեւ սիսոյն առել քաշմեր գիճելին իրեւ, Թէպէտ Թովմաս պէտք ունեցած առանձնութիւնը կը խնդրէր, չէ ինչ օրհնելի, սակայն էջմիածին օրհնել սարբ գահան կը դրկէր, և խնդիր չէր յուզուր (ՋԱՄ. 97)։ Թովմաս 1764 դեկտեմբերին նոր դիտուած մը կ'ընէ Սիմէոնի, գանգատելով Աբրահամ Մակացի վարդապետին դէմ, որ իրեն հակառակ գանելով Մարգարէ վարդապետ մըն

ալ, և իրեն հովանաւոր և պաշտպան ընտրելով Մոկաց Քուրդ մոնապետ Աւդուլլա խանը, հետամուտ էր չէ լինիցէ ինչ-ինչ նենգութեամբ կորուսանել։ Թովմաս կը խնդրէր որ Սիմէոն Աբրահամը բանադրէ, մինչ միւս կողմէն Աւդուլլա և Աբրահամ ալ յաւուրս գիրերով դիմում կ'ընէին, որ Մոկաց գաւառը զատէ և ուրիշ կաթուղիկոսութիւն ընէ, իբր զի երկիրս այս փոքրիկ է և յանդիմառս։ Սակայն Սիմէոն ամուր մնաց օրինականութիւնը պաշտպանելու, գրեց առ Աբրահամ և Մարկոս նախարհեպիսկոպոս, չէ կոչէին յոհանդամողունեն անդ։ Աւդուլլայի ալ գրեց իր առաջարկին հակառակ ըլլալը, և վանի առաջնորդին և նուիրակին ալ պաշտօն յանձնեց թուղթերը հասցնել և գործին հսկել (Դիւ. Գ. 116–119)։ Առաջին գիրերուն՝ որ 1765 յունուար 10'ին գրուած էին, ժամանակին տեղը հասած չըլլալուն, նորէր ղրկեց մարտ 14'ին (Դիւ. Գ. 152)։ Հրամաններն ու սահմանները իրենց ազդեցութիւնն ունեցած պիտի ըլլան, որ այլևս Աղթամարի խնդիր յուղուած չէ և Աբրահամ բանադրելու պէտք մնացած չէ։ Թովմայի վախճանը կը դրուի 1783'ին (09 ՕՐԱ. 288)։

2106. *Երուսաղէմի աթոռին պատմութիւնը տուած ենք մինչև կարապետ Գանձակեցիի պատրիարքութիւնը 1762'ին (§ 2062)։*

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱԹՈՌ

*Կարապետի օրերը վէճերով անցան Սուրբ Տեղեաց իրդիրներով՝ Յոյներու և Լատիններու և Երուսաղէմացիներու անհիմն պահանջմանց և ոտնձգութեանց պատճառով, որոնց եղքը միշտ յաղող եղաւ, կարապետի աչալուրջ գործունէութեան և Կ-Պոլսոյ աթոռէն ընձեռուած օգնութեանց չնորհիւ, որոնց մանրամասնութեան մանել զանց կ'ընենք։ Կարապետ իր պաշտօնավարութիւնը արդիւնաւորեց նաև կարևոր նորոգութիւններով, թէ Ս. Յակոբեան մայրավանքին և ազգային փոքր վանքերուն վրայ, և թէ Ս. Յարութեան տաճարին վրայ։ Սակայն ոտընձգութեանց դէմ մաքառումները և նորոգութեանց ծախքերը ստիպեցին զինքը անկանել ընդ պարտս, ուստի 1765 տարւոյ զատիկէն ետքը, որ ապրիլ 3'ին կը հանդիպէր, Յովակիմ Քանաքեռցի վարդապետը Կ-Պոլիս ղրկեց իրրև փոխանորդ, որ գինքն ու աթոռը պարտքերուն տագնապէն ազատելու աշխատի։ Սակայն Գրիգոր Պատմաճեան պատրիարք ցուած էր կարապետի դէմ, ամէն չարութիւնէ ետ չդար էթէ կրնար, ուստի մեծամեծաց ժողով ալ գումարեց, որուն մէջ պաշտօնապէս ծեղքրէնէն ղազարէթ Սրտասուէմի վան ինչ ինչ նեղութեան, և որոշեցին փոխառութեանց կնիքն ալ անոր ձեռքէն առնել։ Այդ ժողովին և որոշումին թուականը ցուցուած է 1765 օգոստոս 28 օրը։ Այսուհանդերձ կարապետ չարունակեց իր պաշտօնը վարել, մինչև իր մահը 1768 յունուար 24'ին, երբ նախընթացաբար ցուցուած հաշուով (§ 2062) դեռ 60 տարեկան իսկ եղած չըլլար, և իրրև սովորական բացատրութիւն մը միայն ըսուած կ'ըլլայ իրեն համար, թէ հասել չլլե ծերութեան հանգեաւ, հազիւ 6 տարի պատրիարքութենէ ետքը (ԱՍՏ. Բ. 103)։

2107. *Կարապետի յաջորդեց Պօղոս Վանեցի, միաբանութեան ընտրութեամբ և Կ-Պոլսոյ աթոռին և մեծաւ*

ՊՕՂՈՍ ՎԱՆԵՑԻ

մեծաց հաւանութեամբ, և հաստատուեցաւ 1768 ապրիլ 12'ի հրովարտակով։ Պօղոսի նախընթացին մասին իր ինքնագիր յիշատակարանէն քաղելով կը պատմուի, թէ տակաւին մանկահասակ Երուսաղէմ ևկած է Շղխայակիրին օրով, Արեւելքի ուխտաւորներու մեծ կարաւանի մը հետ, որուն մէջ կային իբրև 700 անձինք, Մշոյ առաջնորդ Աբրահամ Խոշաբեցին, Յակոբ Պալաթցի, Գաբրիէլ Պրուսացի և ուրիշ վարդապետներ, և Դամասկոսէ կարաւանին ուղած էր ընկերանալ կուսակալ Իսմայիլ փաշան ալ (ԱՍՏ. Բ. 104)։ Պօղոսի հայրը Մարգարտ՝ Աբրահամի և ուրիշներուն միջնորդութիւնը կը գործածէ, որ իր մանկահասակ որդին միաբանութեան մէջ ընդունել տայ, ինքն ալ վանքին պարտիզպանութեան կը մնայ։ Բայց երբ Մարգարտ կը մեռնի, Պօղոսի հօրեղբայրը կու գայ ու տղան վան կը դարձնէ, բայց Պօղոս եղանակը կը գտնէ նորէն Երուսաղէմի միաբանութեան դառնալու 1734'ին, որ առեն կրնանք գինքը մերձաւորապէս 20 տարեկան ըսել։ Ինչ եղաք

սարկաւագ, չորս տարիէ վարդապետ կը ձեռնադրուի։ Առաջին անգամ նուիրակութեան կ'երթայ 1744'ին, առաջ Վան, վերջէն Եւդոկիա և այլուր, մինչեւ եպիսկոպոս ձեռնադրուիլը 1752'ին Մինաս կաթողիկոսէ։ Թէոդորոս պատրիարքի օրով ալ նուիրակութեանց կը պտտի Սրիմ, Ռումէլի, Զմիւռնիա և Նիկոմիդիա, իսկ կարապետի օրով վանքին մէջ դարպասապահի պաշտօնը կը վարէ, մինչեւ անոր տեղը պատրիարք ընտրուիլը, իրեն առաջին պաշտօնը փոխանցելով Սարգիս Գերմանեան վարդապետին (ԱՍՏ. Բ. 105)։ Պօղոսի պատրիարքութիւնը տագնապներու և տառապանքներու հիւսուած մը եղաւ, իր բովանդակ օծմնամեայ տեւողութեան մէջ։ Մէկ կողմէն Եգիպտոսի բռնապետներէն Ալի պէկ Պաղեստինի վրայ յարձակեցաւ 1770'ին, Գազա և Ռամլէ գրաւեց ու աւարեց, Երուսաղէմը նեղեց, Յոպպէ ալ իրեն անձնատուր եղաւ 7 ամիս պաշարման դիմանալէ ետքը, և 1772 փետրուար 6'ին Ալի պէկ յաղթական քաղաք մտաւ և կողոպտեց զԼեռնջա։ Ալի պէկի օգնական էր Աքիայի բռնապետ, Օմար-Դահա չէյխը, որ Պաղեստինի գանազան կողմերը կ'ասպատակէր, և Յոպպէի պաշարման ալ օժանդակեց (ԱՍՏ. Բ. 106)։ Միւս կողմէն Օսմանցոց և Ռուսաց պատերազմները կր չարունակէին Տնիէսթէրի և Դանուբի ափերուն վրայ, երբ մի ճիւղն ալ Միջերկրականի մէջ փոխադրուեցաւ, ուր նկատ. սարսափ ազդել 1769 սեպտեմբերին՝ Նեվայի պետաբերանէն մեկնող Ռուսական տորմիղը։ Պէղոպոնէս և Ատտիկէ, Թեսալիա և Եպիրոս ալ Օսմանցոց դէմ ելան Ռուսական առաջին տորմիղին երեւնալուն, որուն երկրորդ մըն ալ աւելցաւ քիչ ետքը էլֆինսթօն (Elphinston) ծովակալին հրամանատարութեամբ։ Տարիներ տեւեցին, Արշիպելագոսի կղզիներուն և ցամաքի նաւահանգիստներուն վրայ եղող պատերազմները, որոնց մանրամասնութեանց չենք մտներ, և թեև բնաւ ալ չյիշէինք եթէ այդ պատերազմներուն երեսէն ծովագնացութիւնը արգելուած և Երուսաղէմի ծովաչու ուխտաւորութիւնները խափանուած չըլլային։ Երբոր մէկ կողմէ Երուսաղէմ հրոսակէ կր նեղուէր, միւս կողմէն իրեն պէտքերուն գըլխաւոր դարման եղող ուխտաւորներու արդիւնքէն ալ կը զրկուէր։ Սուլտան Մուսթաֆա Գ այդ չփոթութեանց մէջ մեռաւ 1774 յունուար 21'ին, և իր եղբայրը սուլտան Ապտիւլ-Համիտ Ա հազիւ կրցաւ տագնապներուն վերջ տալ՝ 1774 յուլիս 21'ին Քիւչիւք-Գայնարճըի դաշնագիրով, որով Օսմանեանք Ռուսներու հովանաւորութեան կը յանձնէին Ազախու և Գըլպուրնուի ամրոցները, և կը հաւանէին Ռուսներու ազատ ծովագնացութեան բոլոր Օսմանեան ջուրերու մէջ, բաւականանալով ետ առնուլ Պեսարապիան, Մոլտավիան, Վալաքիան և Արշիպելագոսի Ռուսներէն գրաւուած կղզիները (ՓՈՒ. 352–358)։ Պաղեստին որ պահ մը հանդարտած կր կարծուէր, կրկին վրդովուեցաւ Եգիպտացի Ապու Տահապի արշաւանքով, որ 1775'ին, Երեւման հայկին օրը, մայիս 10'ին, և ոչ 7'ին (ԱՍՏ. Բ. 106), Յոպպէ ալ մտաւ և [illegible] ջենկիչը նոքա, և բոլոր վանքերը աւերեց ու աւարեց։ Մինաս վարդապետ պատահագրած տուն գլխատուեցաւ, տեսուչ վարդապետ Յրէորի մէջ պահուրտած տեղը բռնուեցաւ, ուրիչ 6 միաբաններ և 6 ուխտաւորներ Յոպպէի մէջ նահատակուեցան։ Դոյժը Պօղոս պատրիարքը ցնցեց, և յանկարծ [illegible] ինչպէս տապանագիրին մէջ գրուած է, քանի մը օր ետքը մայիս 18'ին վախճանեցաւ։ Տրուած համառօտ տեղեկութիւնները բաւական են ցուցնել, թէ պատահարներուն ժամանակին ցաւերով չարունակ տանջուած, և բոլոր իր պատրիարքութեան միջոցը տառապած, դժբախտ պատրիարքը [illegible], անակնկալ մահուամբ կեանքն ալ կնքեց (ԱՍՏ. Բ. 107)։ Յաջորդին ընտրութեան վրայ առաջիկային պիտի խօսինք։

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ԲԱԺԱՆՈՒՄԸ

2108. Կաստանդնուպոլսոյ աթոռին վրայ երկար խօսելու ըլլալով, կը կանխենք քանի մը տրիւ տեղեկութիւնները քաղել։ կարեւոր եղելութիւն կը նկատենք Մխիթարեան միաբանութեան մէջ տեղի ունեցած պառակտումը, որ մինչեւ միաբանութեան երկուքի բաժնուելուն առաջնորդեց։ Վենետի-

կի միաբաններուն կողմէն հրատարակուած տեղեկութիւններ կը սիրէն լուսնկամբ կամ քօղարկմամբ անցնիլ այդ պարագաններուն վրայէն, և մինչեւ իսկ նորագոյն հրատարակութեանց մէջ կը բաւականանան ըսել, թէ Ս. Ղազարոս կոթողին վրայէն սեռնոյը մղել անցան, և նեղութեան պարագային տեղ մը ժամանակ մի խոնարհեցուցին անոր պայծառ հոգիին, բայց թէ այդ տարաձայնութիւնք Մխիթարայ առաքեալեան կեցուածքը մի՞ բացատրեցէն (ՅՈՐ. 51), այլ թէ ինչ էին այդ տարաձայնութիւնները, բացատրել չեն սիրեր, անշուշտ տհասակ մը զգուշաւորութեամբ: Գրեցինք արդէն թէ Ստեփանոս Մելքոնեան աբբահօր ընտրութեան օրէն գլուխ ուած էին ներքին անհամաձայնութիւնք (§ 2031), որոնք փոխանակ մեղմանալու՝ չարունակ աճած և ընդարձակած էին, 1750 ապրիլ 6'էն սկսելով, որ է Մելքոնեանի ընտրութեան օրը: Մնդրոյ նիւթ եղող կէտը վանական կանոնադրութիւնն է եղած, և Մելքոնեան կը մեղադրուի, իբր թէ Մխիթարի առհասնած կոթեթը փոխելէ կ'ուզէր, և իր նորոյթներով երիցս դէպի դէպի ետ դարձնել կ'ուզէր (ՅՇՐ. 4): Այլ թէ ինչ էին Մխիթարի կոթեթը, և ինչ Մելքոնեանի նորոյթները, պիտի չկարենանք ճշդել, որով տեղեկութիւններ չգտնելով. միայն յայտնի կը տեսնուի թէ Մխիթարի կոթեթը հաստատուն և որոշ հիմերու վրայ դրուած չեն եղեր, և միայն իր անձնական հեղինակութեամբ յառաջացեր է իր ձեռնարկը: Մելքոնեան 1765'ին ատենները Սահմանադրութիւն մը կը կազմէ, և կ'աշխատի իր պաշտօնին հետ այն ալ պապական իշխանութեամբ հաստատել տալ, առանց միաբանութեան հաւանութիւնն ունենալու: Ճօթը տարի չարունակ այդ դիտումին կը հետապնդէ իւրովի, և միաբանները անոր ընթացքէն ձանձրացած, 1772 մայիս 25'ին ժողովի կը գումարուին, և կը պահանջեն Մելքոնեանէ իր ձեռնարկէն ետ կեցնել, և հին Սահմանադրութիւն պահպանութիւնը չարունակել. և երբ չեն յաջողիր անոր հաւանութիւնը ստանալ, կ'որոշեն Մելտոնեանը վար առնել և նոր աբեմայէ ընտրութեան չհամաձայնիլ: Բայց Մելքոնեան, երբոր ներքին դժուարութիւնը կը կտրտնցնէ, արտաքինին պէտքը կը զգայ, տեղական Լատին արքեպիսկոպոսին պաշտպանութեան կը դիմէ, և անոր միջնորդութեամբ Վենետկոյ հանրապետութեան դիւանագործական յարմը Ս. Ղազար կը հրաւիրէ, և իբրև ըմբռստներու գլուխներ հայր Աստուածատուր Պապիկեան և հայր Մինաս Գասպարեան միաբաններր, բռնի վանքէն կը հանուին, և դիւանագործական հակազդեցութեամբ Վենետիկի հանրապետութեան սահմաններէն կ'արտաքսուին: Ասով պատակամոն նչանը կը տրուի, և վանքին մէջ եղող կամ վանքէ դուրս գտնուող միաբաններ այս ու այն կողմը կը սկսին յարիլ: Ան օր Մխիթարի աչակերտութիւնը կազմող միաբաններէն 13'ր միայն կը մնան Մելքոնեանի կողմը, իսկ 19'ը Պապիկեանի կողմը կը յարին, սակայն վանքը Մելքոնեանի ձեռք կը մնայ և բազմաթիւ հետացողներն են որ օտարացած կը սեպուին (ՅՇՐ. 4):

2109. Եղելութեան հոգին բացատրել և արժէքը գնահատել պէտք էր ստուգիւ, բայց հարկ եղած ներքին տեղեկութիւնները չունինք, թէպէտ երեւոյթները ալ կրնան նոյն նպատակին նպաստել: Մխիթարի սահմանած կանոններուն մէջ փոփոխութիւններ մուծանելու խնդիրին հետ (ՅՇՐ. 4), Հնդկահայոց մէջ հաւաքուած գումարի մը կիրառութեան խնդիրը կամ կերպն ալ խօսուած է (ՏԻՊ. 147). բայց անշուշտ, այս տհասակ ներքին ու մանաւոր ու պատահական պարագաներէն աւելի, կչիռ ունեցած է ուղղութեան խնդիրը, որ կրցած է այդչափ ծանր հետեւանքի պատճառ ըլլալ: Ապա թէ ոչ հարկ կ'ըլլար երկու կողմերուն վրայ ալ փոքրոգութեան և անլրջութեան արատը քսել: Իսկ ուղղութեան խնդիրն ալ անչուշտ մէկ կողմէն հռոմէականութեան և միւս կողմէն Հայութեան հանդէպ պահուելիք կեցուածքն էին, որ խնդրոյ նիւթ կը կազմէին այն ատեն: Միխիթարի անձնական ուղղութիւնը՝ հայասէր կողմ մը ունէր, բայց հռոմէականութեան մէջ փայլուն Հայութիւն մը կազմելու առեղծուածային գաղափարով կ'օրօրուէր (§ 2030): Եթէ այս էր Մելքոնեանի ալ դիտումը, հարկաւ որոչումը՝ անոր նր-

ԲԱԺԱՆՄԱՆ ՊԱՏՃԱՌԸ

պատասուր կողմը պէտք է հակի։ Բաժանումէ ետքն ալ Մխիթարի այդ ծածուկ ոգին չարունակեց Վենետիկի մէջ, և հայկական ուսումնիներ նոր զարկ մը առին։ Նչանակութեան արժանի է, որ երեք գլխաւոր և արդիւնաւոր անուններ, ինչպէս են՝ Վրթանէս Ակէրեան, Ստեփանոս Ագոնց և Միքայէլ Չամչեան վարդապետները, Մխլքոնեան բաժնին մէջ մնացին։ Ընդհակառակն Պապիկեանի հետ եղող բաժինը օր աւուր իրեն հռոմէականութիւնը դէպի լատինամոլութիւն տարաւ, և ոչ միայն հայականութիւնը չբարձրացուց, այլեւ վարդապետութեամբ և ուսուցմամբ, ընթացքով և ուղղութեամբ, և նոյն իսկ ծիսական կերպերով և ղեկտներով՝ կատարեալ լատինութեան կողմը քալլերեց և անոր հետեւեցաւ։ Իրաւ է որ վերջին ժամանակներս մէջ՝ կղմէս Սիպիլեանի, Ղուկաս Տէրտէրեանի և Արսէն Այտընեանի ընդգրկած ուղղութիւնը, քիչ մը փոփոխեց Պապիկեանով սկսած ճիւղին ընթացքը, սակայն մինչեւ ատոնց ատենը, որ է ըսել դար մը ամբողջ, բոլորովին նախանձայոյզ հռոմէադաւանութիւնն էր այդ ճիւղին մէջ տիրողը, մինչ Մխլքոնեանի հետ եղած ճիւղը հայասիրութեան իղձերուն և հայամօտութեան կերպերուն համար, նախանձայոյզներու հալածանքներուն և պատուիրանի խստութիւններուն ենթարկուեցաւ։ Վենետիկի մէջ Մխլքոնեանով մնացած բաժինը, իր աշխատութիւնները կրկնապատկեց, և ուսումնական արդիւնաւորութիւնը չատցուց։ Ս. Ղազար կղզեակին մէջ տպարան ալ հաստատուեցաւ 1789'ին, մինչ անկէ առաջ միաբաններուն աշխատութիւնները Վենետիկի Իտալացի տպագրիչներուն ձեռքով կը հրատարակուէին։ Բաժանման թուականէն ետքը ազգային երկասիրութիւններով ծանօթ միաբաններ ալ աւելցան Վենետիկի մէջ, և 1772'էն ետքը երեւցածներուն մէջէն, ազգովին գովութեամբ յիշատակուած անուններ են, Գաբրիէլ Աւետիքեան, Յակոբոս Սիւրմէլեան, Յովհաննէս Զոհրապեան, Ղուկաս Ինճիճեան, Մկրտիչ Աւգերեան, Իգնատիոս Փափազեան, և Մանուէլ Ջախջախեան (ՅՈՒ. 219), որոնց ձեռնադրութիւնները առաջ են քան 1799 հոկտեմբեր 4 թուականը (ՅՈՒ. 220), այսինքն Մխլքոնեանի մահուան թուականը (ՅՈՒ. 52)։

2110. Վենետիկ մնացող ճիւղին ուղղութիւնը յատկանշող, և կերպով մը բաժանման չարժառիթը մատնող պարագաներուն կարգին, կարեւոր կը սեպնենք յիշել նաեւ այն մեծ խնդիրը, որ այդ միջոցին հռոմէադաւանութեան Հայերուն մէջ կը յուզուէր, ու պապական աթոռին ալ ուշադրութիւնը դրաւած էր, և որուն մէջ Ս. Ղազարի միաբանութիւնը գլխաւոր դերն ունէր։ Անգամ մըն ալ կըրկնենք, թէ այն ատեն Հայ հռոմէականները տակաւին ինքնուրոյն կացութիւն չունէին, Հայ պատրիարքարանի մաս էին և անոր կը հպատակէին, և այդ պատճառով այն կրօնական գործողութիւնները և խորհուրդները, որ այդ կացութեան յատկանիշներն էին և վիճակագրական հետեւանք ունէին, պարտաւոր էին պատրիարքարանի պաշտօնեաներու ձեռքէն և պաշտօնական եկեղեցիներու մէջ ընդունիլ։ Այսպէս էին գլխաւորաբար մկրտութիւնը, ամուսնութիւնն ու թաղումը։ Լատին եկեղեցականներ և քարոզիչներ այդ ընթացքը իրր հերետիկոսներու հետ հոգեւոր հաղորդակցութիւն կ'անուանէին և կ'արգիլէին, մինչեւ իսկ ընդունուած խորհուրդները անվաւեր և ապօրէն կը հռչակէին։ Իսկ Հայ հռոմէական ազգային-ներ՝ ինքզինքին նոյն իսկ քաղաքականապէս՝ ստիպուած կը զգային, բայց Լատիններու և լատինամոլներու թելադրանքներու հանդէպ ալ խղճի խայթով կը տանջուէին։ Ուստի գաղտնի գործողութեամբ ստիպուելով, կամ Լատին եկեղեցիներ կը դիմէին, կամ տուներու մէջ գողունի խորհուրդներ կատարել կու տային հայ-հռոմէական եկեղեցականներու ձեռքով։ Այդ գողունի գործերն էին, որ պետական տեսութեամբ ալ ապօրինի կը նկատուէին, և անոնց դէմ եղած արգելքները՝ կամ անոնցմով զեղծանողներու դէմ ձեռք առնուած միջոցներն էին, որ Կոլոլեանց փեմ հալածանք անունով կը յիշուէին հռոմէականներու կողմէն, մինչ պարզապէս օրինականութեան բնական հետեւանք էին։ Վենետիկի միաբաններ յատկապէս այդ կէտին մտադրութիւն դարձուցած էին, հնաւանդով իրենց առաջնորդին

Մխիթարի կանուխէն ընդգրկած ուղղութեանը (§ 1938), և կը չանայինք ապացուցանել, թէ պէտք է ազատ թողուլ Հայ հռոմէականները, որ կարենան Հայ եկեղեցիներու մէջ հայադաւան քահանաներու ձեռքէն այդ խորհուրդները ընդունիլ։ Իբր այդ նպատակին ծառայող փաստ, արուեստակեալ ձեւեր ալ կը գործածէին, և քաչքչուկ վկայութիւններով ցուցնել կ'աչխատէին, թէ Հայոց եկեղեցւոյ դաւանութիւնը հռոմէական եկեղեցիէն տարբերութիւն չունի, թէ հռոմէականութեան անյարմար բացատրութիւններ ոմանց անհատական կարծիքներ են և նշանակութենէ զուրկ են, և թէ Հայոց եկեղեցին իր ամբողջութեամբը և պաշտօնական կերպով Հռոմէ զատուած կամ Հռոմէ դատապարտուած չէ։ Այդ դրութեան գլխաւոր դիտումն էր Լատին քարոզիչներուն միջամտութիւնը հեռացնելով, բնիկ Հայ կաթոլիկութիւն մը ստեղծել։ Այդ նպատակով պաշտօնական գիրեր ալ պատրաստուեցան, որոնց վրայ պիտի խօսինք։

ԹՐԻԷՍՏԻ ԲԱԺԻՆԸ

2111. Դառնալով այն երկու միաբաններուն որոնք գինուորական այժով Ս. Ղազարէ արտաքսուեցան (§ 2108), ասոնք ուղղակի Թրիէստ (Trieste) ապաւինեցան, որ է հին Տերգեստիա քաղաքը, որ երկար ատեն Վենետիկի հանրապետութեան ներքեւ գտնուելէ ետքը, 1382'ին անցած էր Աւստրիոյ կայսերութեան։ Այն ատենուան գահակալն էր Մարիա-Թերեզիա կայսրուհին, որ 1742'էն իր հօրը կարլոս Զ'ի ժառանգ ճանչցուած էր, և գործերու բուն վարիչն էր, թէպէտեւ միեւնոյն ժամանակ իբրեւ կայսր կը նկատուէին կարլոս Է 1742'էն 1745, անկէ ետքը Թերեզիայի ամուսինը Փրանկիսկոս Ա մինչեւ 1765, և անկէ ետքն ալ Թերեզիայի որդին Ցովսէփ Բ։ Պապիկեանի յարող միաբաններ Թրիէստի մէջ հաւաքուեցան առաջին անգամ 1773 մայիս 19'ին, և Թրիէստի մէջ առանձինն մարմին կազմելու որոչումը տուին, և այդ նպատակով կայսրուհիին ալ դիմեցին, որ ամենայն հեռանդով փարեցաւ իր սահմաններուն մէջ Արեւելեան համայնք մը և Հայկական միաբանութիւն մը կազմելու առաջարկին։ Իսկ 1775 մայիս 30'ին կայսերական արտօնագիր մըն ալ տուաւ զանազան առանձնաշնորհումներով, և գլխաւորապէս Ա.-ոգբիկեան հպատակ, կամ աւելի ճիշդ Ա.-ոգբիկան պաշտպանեալ նկատուելու հանգամանքով, և վանասիրութեան գլուխն ալ պարգեւելով։ Այսպէս Թրիէստեան Հայ կրօնաւորներու միաբանութիւն մը կը ստեղծուի, Վենետիկեան Հայ կրօնաւորներուն միաբանութենէն անջատ։ Իրրեւ պաշտօնական կոչում Վենետիկի մէջ Անտոնեան կամ Բենեդիկտեան, կամ Անտոնեան-Բենեդիկտեան անունները խառն գործածուած էին։ Թրիէստի ճիւղը կը պարծենայ առաջին եղած ըլլալ Մխիթարեան Դոքտորութեան անունը պաշտօնապէս գործածելու մէջ, թէպետեւ յաջկերոնեն Մխիթարյ Աբբայի կոչումը կանուխէն ալ Վենետիկի մէջ կը գործածուէր։ Ոչափ ալ Թրիէստեան ճիւղը իբր առանձինն կը կառավարուէր, բայց տակաւին վերջնապէս Վենետիկէ անջատուելու դադափարը զօրացած չէր. այլ աւելի Մելքոնեանի անձին դէմ եղած դրգռութիւնը կը տիրէր, և անոր մահուընէ ետքը նորէն միաւորուելու ակնկալութիւնը կորսուած չէր։ Ուստի մէկ կողմէն Թրիէստեան ճիւղն ալ ուսման և տպագրութեան, դաստիարակութեան և քարոզութեան գործողութիւններուն հետամուտ էր, Մխիթարի ձեռնարկին հետեւողութեամբ. իսկ միւս կողմէն առժամեայ վարչական կերպ մը կը պահէր՝ հռոմեայ պայմանաժամով ընտրուած վանահայրներով. մինչ Վենետիկի մէջ կը տիրէր ցկեանս աբբահայրութեան դրութիւնը։ Թրիէստեաններու նիւթական միջոցները, թէ հռոմէական ազգայիններու և թէ Աւստրիական պետութեան կողմէն՝ տակաւնուազեցան, 1773'ին լուծուած Յիսուսեանց միաբանութեան ինչքերէն դիւրացնոյ ստացութեանց փափաքը՝ պարտքերու ալ դուռ բացաւ, և պահ մը իրենց մէջ ալ վէճատուութիւն տիրելով՝ հեռացողներ և վենետիկ դարձողներ ալ գտնուեցան, բայց Թրիէստեան ճիւղը չյուսահատեցաւ, և կրցաւ իր բունակութիւնը պահել։ Այդ մասին մեծ աշխատութիւն և արդիւնաւորութիւն ունեցաւ Աստուածատուր Պապիկեան վարդապետը, որ դիտցաւ պետական և արքունական յարաբերութիւններն ալ մչակել։

2112. *Երբոր Մխիթարեան միաբանութիւնը չփոթի միջոց մը կ'անցկնէր վենետիկի մէջ, Անտոնեան միաբանութիւնն ալ ազատ չէր նմանօրինակ չփոթներէ, բայց ոչ բուն միաբանութեան մէջ, այլ աւելի բնիկ Անտոնեան միաբան՝ Միքայէլ Գասպարեան կաթողիկոսին երեսէն* (§ 2065)։ *Ա՛ս իբ Զմմառի հայրապետանոցը և անոր մէջ բացուած դպրանոցը ծաղկեցնելու փափաքով, Անտոնեանց զարգացման արգելքներ հանելու ալ չէր վարաներ, և միաբանութեան տէր դառնալու անտեղի պահանջումներու ալ կը ձեռնարկէր։ Գասպարեանն ալ Լիբանանի մէջ նմանօրինակ դեր մը կը վարէր, ինչ որ Մելքոնեան ունեցած էր վենետիկի մէջ* (§ 2108)։ *Անտոնեանք Հռոմի մէջ վանք մը կազմակերպելէ ետքը* (§ 2065), *աչակերտներու պզտիկ խումբ մը ուզեցին փոխադրել հոն՝ ուսումնական զարգացման համար, բայց Գասպարեանի դժուարութիւն հանելուն վրայ, պարտաւորուեցան ֆալըֆեպ և ֆաֆեպեան ճամբով Լիբանանէ հանել աչակերտները հայր կարապետ Հալաճեան միաբանի առաջնորդութեամբ։ Մեկնողներ դժուարին ուղեւորութեամբ, և Մարսիլիա ու Լիվոռնօ երկարատեւ դադարներով, հազիւ հօծին ամիսէ Հռոմ կը հասնին։ Նոյն միջոցին Անտոնեանք Մարոնիներու միաբանական կանոնին փոփոխութիւններով իրենց համար վաւերացուելուն հետամուտ էին պապութեան առջեւ։ Փրօփականտայի ժողովը ինչ ինչ բացատրութեանց համար Գասպարեանին կը գրէ, որ այդ առիթէն կ'օգտուի, իբ գաղափարը առաջ քչելու, որ էր Անտոնեանց յատուկ միաբանութիւնը խափանելով միակ Զմմառեան աչակերտութիւն մը հաստատել, զոր միաբանութիւն կ'անուանէր, և ըստ այմ իբ միտքին համեմատ բացատրութիւններ և տեղեկութիւններ կը հաղորդէր Հռոմ։ Բայց անոնք ընթացք չէին ուզեներ, և Անտոնեան միաբանութիւնը իբ դիրքը կը պահէր, թէպէտ առկախ ու առժամեայ ձեւով մը, համաձայն Հռոմի որոշման, որ Անտոնեանք ազատ ըլլան ցարդ գործածած կանոններուն համեմատ գործել մինչեւ որ Փրօփականտայի ժողովը վերջնականապէս որոշէ այդ խնդիրը* (ԱՆՏ.)։ *Գասպարեան չարունակ իբ նպատակին ծառայելով, 1776'ին գումարուած Անտոնեանց միաբանական ժողովին կ'ուզէր մասնակցիլ իբր բնիկ միաբան մը, բայց միաբանութեան կողմէ ընդդիմութեան հանդիպելուն, ժողովը անվաւեր հռչակելու, և իբրև թէ միաբանութիւնը օրինական դրութիւնը կորուսած ըլլար, իր կողմէն այցելու գլուխ մըն ալ նչանակելու կը ձեռնարկէր։ Բայց Յովհաննէս Պէտիկեան աբբահօր խոհական կերպերը, և տեղացի իչխանութիւնը միջամտութիւնը գինքը կասեցուցին։ Գասպարեան, որչափ դիւրաթորրոք իբ ձեռնարկներուն մէջ, նոյնչափ ալ դիւրափոփոխ էր պարագայից հանդէպ, ուստի իբ կեանքին վերջին օրերը 1779'ին, հաչտութիւն և խաղաղութիւն կը հաստատէր միաբանութեան հետ, սակայն երկկողմանի հիմնական որոչման մը յանգելու առնն չէր մնար, զի քիչ ետքը կը վախճանէր 1780 նոյեմբեր 5'ին, և կր թաղուէր Զմմառի կաթողիկոսարանը։ Իրմէն յաջորդեց Բարսեղ Ալքարեան, Բերիացի, սա ալ Անտոնեան միաբան, Յակոբ կաթողիկոսէ Ամասիոյ անունով եպիսկոպոս ձեռնադրուած։ Ընտրութիւնը կատարուեցաւ 1780 դեկտեմբեր 1'ին, երկք եպիսկոպոսներու ժողովով՝ ընտրեալն ալ մէկտեղ հաւրելով, և երկու եպիսկոպոսներ ալ բացակայ գտնուելով* (ԱՂԳ. Ա. 31), *իսկ պապական հաստատութիւնը ստացաւ 1781 յունիս 21'ին։*

2113. *Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան վրայ խօսելով նորէն պիտի չիշենք, թէ ալեկոծեալ և դժուարին կացութեան մէջ կը գտնուէր Գրիգոր Գասմաճեան վարդապետ պատրիարքը* (§ 2089)։ *Առեղծուածային կերպարան մը ունի այդ կացութիւնը, որուն մէջ Գասմաճեան ծանր հակառակութիւններու և աւելի ծանր ամբաստանութիւններու ներքեւ գտնուելով ալ՝ իբ պաչտօնին վրայ կը մնայ, թէպէտև յակամայից պաչտօնի կոչուած կը ցուցնէ ինքզինքը։ Ինչն չիմդուր ու չիմոթափեր պաչտօնը, և ոչ ալ իբ հակառակորդներր վերջնական կերպով պայն հնազանդելու չեն ձեռնարկեր, և ինր*

ԱՆՏՈՆԵԱՆՔ ԵՒ ԶԸՄՄԱՌ

Ա-ՊՈԼՍՈՑ ԱՔՈՌ

տարիներ կը չարունակէ այդ անվանելի կացութիւնը, մինչ չատ դիւրին էին թէ Պատմաճեանի իւրովի հեռանալը և թէ Պատմաճեանի բոնի հեռացուիլը։ Հակառակորդներու գլուխը կը դանուէր Գասպար Մուրատեան ամիրան (§ 2087), թէպետ չենք գիտեր թէ ինչ անձնական հակառակութիւնն պատճառ կը դանուէր մէջերնին, քանի որ Ահագինի խնդիրը այնչափ զօրաւոր գրգիռ մը պէտք չէր ըլլար այլևս, Ահագինին և Շամախեցիին մեռնելէն և գործին փակուելէն ետքը։ Պատմաճեան աւելի գործունեայ հակառակորդ մը աւելցաւ, Մանուէլ Բալուեցի քահանան, այն որ Նալեանի օրով ալ չփոթներու գլուխ էր կանգնած և պետական հրամանով աքսորուած (§ 2060)։ Մանուէլ չկրնալ սակաւ ժամանակ կիպրոսի աքսորավայրէն փախչելու հնարքը գտած էր, մօրուքը գերծելով և տարազը ծպտելով (ՊԱՍ· 113), և Կ-Պոլիս դալուն Սիմէոն աթիթայի միջնորդութեամբ աքսորի հրամանն ալ ջնջել տալ յաջողած էր, և պահ մը առանց քահանայագործելու մնալէն ետքը՝ այդ արտօնութիւնն ալ ձեռք ձգեր էր պատրիարքէն՝ Գասպար Մուրատեանին պահանջմամբ (ՊԱՍ· 114), և մինչեւ իսկ պատրիարքարանէն չաթախական ոճիկ ատանալու ակրասած էր (ԶԱՄ· Գ· 875), հարկաւ հանդարտ մը նալու պայմանով։ Սակայն Մանուէլ այդչափով վատկուելու մարդը չէր։ Նա յարմար և ինքնընծայ գործիք գտած Գասպարին ձեռքը, և Պատմաճեանը հալածելու ամենայարմար գործիչ մը։ Իր կողմը չահեցաւ և գործակից կազմեց Աբրահամ Ակնեցին, որ էր յաջողչէն է ծոյ և է ձաայօնիան պատրիարքին, իբր դրան գործակատար (ՊԱՍ· 114), և Սարգիս Տիպաճեան քահանան, Սամաթիոյ Ս. Գէորգի ծխատէրնեռըէն (ՊԱՍ· 21), այն որ հնուց ալ Մանուէլի ընկերակից էր եղած (§ 2060)։ Նորէն կազմուեցաւ Մանուէլեանց անհանդարտ խմբակը, հովանաւոր ունենալով Գասպար Մուրատեանը, այն որ պեծ ոչխար կը կոչուի Պատմաճեանէ (ՊԱՍ· 114)։ Մանուէլ սկսաւ ամէն կերպերով վատաբանել և զրպարտել, և պատրիարքը վարկաբեկ ընելով տապալելու աշխատիլ։ Մանուէլի վերադարձին, և Մանուէլեանց կազմակերպուելուն թուական ցուցուցած է 1766 տարին (ԶԱՄ· Գ· 875), որ է ըսել պատմաճեանի պատրիարքութենէ ելնելէն երկու տարի առաջ։

ՊԱՏՄԱՃԵԱՆԻ ԴԷՄ

2114. Անհաւատալի ըլլալու չափ անճոռնի են Պատմաճեանի դէմ յարուցուած ամբաստանութիւնները, և բոլորովին իսկ յիշատակելու հաժարձակութիւն չէինք ունենար, եթէ նոյն իսկ իւր գրչով նշանակուած չտեսնէինք։ 1. Թէ տղայութեան տարին է կրօնք Հաֆբացոց դիպել է, և իսլամութենէ քրիստոնէութեան դառնալով երուսաղէմ և ուրիշ տեղեր թափառած, և անցեալը մոռցնել տալով եկեղեցականութեան մտած և մինչեւ պատրիարքութիւն բարձրացած, կամ իբր պատրիարք նկոպել ին եղել է։ 2. Թէ ընկոպել է, և թէ պայս վկայած էր դէն է յայն երկոց, այսինքն կամ Մանուէլը կամ Աբրահամը, որ յայտնած կ'ըլլայ թէ իւր կինն ըսած է իրեն, թէ ես ինձէն անառաքս եմ է բազում անգամ և է բազում ժամանակս (ՊԱՍ· 53), առանց ճշդելու թէ երբ և ինչպէս։ 3. Թէ 800 քսակ գումար տալով Սարգիս Սարաֆեան և Սամուէլ Երզնկացի եպիսկոպոսները Արեւմուտք է ղրկած, որ դպրատուն բանան և տղաքներ ալ ղրկած է վան սահմանելոյ ղևորնեան։ 4. Թէ երկու երկոմեայ սրկը Նալեանէ մնացած, և սակս ընկերոց լեցուն, որոնք յարձակոն սիրտ տրուէին, հարկաւ իրենց տուրքերու վճարում, ինքն քաղաքել է, և ոչ հասկացել է յարձակն։ 5. Թէ զբօսել զգին և զինուելոցքս հնազանդեցացել է ճգին Հասմայ, և քաջալերած երթալ է յեկեղեցի Լուսին։ 6. Թէ հրամայած է տղօթել վան յաղթութենէն երկոնէն և վան պայծառութեան հաստոյ Լատինացւոց։ 7. Թէ Հայերուն մէջէն ընտրուելու փախուցած է Արեւմուտք, և ներած որ հոն պահեն ընտրեալ և ղերեզմանութեան տեղւոյն (ՊԱՍ· 54)։ 8. Թէ կր թողու ընկերացին առնել տղերս (ՊԱՍ.55)։ Պատմաճեան ինքն այդ կէտերը համրելով կը բաւականանայ, և ամէնն ալ առհասարակ բան զրպարտական անբծբեբեր և անընդ կը յայտարարէ (ՊԱՍ.53), որով միևնոյն ուժգնութեամբ հեռացուցած կ'ըլլայ իրմէ, թէ

յառաջէին ընդդէմ և թէ այժմ ֆրանկացիոյ ըլլալու կէտերը (ՊԱՍ. 55)։ Այդ ամէնը կառավարութեան դուռն ալ կը խօսէին հաւատակորդները, մինչեւ իսկ պոլիս դիմաքառնային (ՊԱՍ. 54), և կ'աշխատէին գինքը ցմահացուցանել։ Ասկէ զատ դիմաց ընդդիմանալ, և ըսած մըն ալ առձեռն պատրաստ պատճառով կ'բսէին, թէ երբ պատրիարքը փոխացուցանէմ, այսօր դիմաքարտ դիմաց դիմացուցանել և թէ այսօր պարտաւոր կ'ելլէ։ և վրայ կը բերէին, թէ չեք կրնար նորին՝ ի սոսկալի էրայ նորելոց և ըմպելոց եմ բարակ ուրախութեան (ՊԱՍ. 55)։ Որչափ ալ չափազանցուած երգիծանքներ ըլլան այդ խօսքերը, սակայն կը ցուցնեն հակառակորդներու լրբութեան աստիճանը, և անբացատրելի կը դարձնեն թէ ինչպէս տակաւին պատրիարքութեան աթոռին վրայ կը մնար, կամ թէ կը թողուին մնալ։

ՀՐԱԺԱՐԵԼՈՒ ՓՈՐՁ

2115. Իրրեւ հաւանական մեկնութիւն այս միայն կրնանք բսել, որ հակառակորդ խմբակին համակրած չէր հանրութիւնը՝ գոնէ ժողովուրդին մեծամասնութիւնը, և ասոնց համակրութեան և համաձայնութեան վրայ յենլով Պատմաձեան՝ իւր պաշտօնը յաւաջ կը վարէր, նեղուելով մէկտեղ լրբենի պրպարտութեանց երեսէն։ Այդ կարծիքներուս իրրեւ փաստ կը նկատենք որ երբ Պատմաձեան ընտրութենէն ութը տարի ետքը կը փորձէ գործէ քաշուիլ, ժողովրդական բուռն հոսանք մը կը գտնէ իրեն նպաստաւոր։ Ժողովուրդը ժողովի կը հրաւիրէ պատրիարքարանի յենկիցիոյ 1772 փետրուար 22'ին, և յաւուր ըրբէչքընոս, Վաւոնդեանց և Վարդանանց տօներուն միջանկեալ օրը, և կը հաւաքուին վից ճեմարանէ, այսինքն կ-Պոլսոյ վից թաղերու ժողովուրդը, տեղացի ու էչմեծին, և է քալը էանֆէց ձերսենէ և է խօսէց պերթ, սաելէ տան ղնաղը, որև կը յայտնէ գիմո և գերդնորդոս էր, այսինքն է ընթացրոմեն է փորձոյն։ Ժողովին ու ժողովուրդը երրոր լուան զայս քանս, ոչ լուան յայնէ ազգանոց պատրիարքին, և պնդեցին ու խոստացին որ մնայ է վերայ էրեանց, և է վերայ բնաղը ազգին պերե և պարբերութ, խոստանալով գերծինքերը բլլալ պնոցիկ՝ որ առնեն ընդհանրութեան և ընդհանրութեան իրեն դէմ, և գինքը ոչ ուրանալ բողոքել անոնց դէմ։ Այդ խոստումը գիրի կ'առնեն, և ներկաներէն սաելէ տան գերծինքս հարերք անձին կնիք կը զարնեն, և թուղթը Պատմաձեանին կը յանձնեն։ Ասոր վրայ Պատմաձեան կը քաջալերուի, և նոյնով քանիս և էրեանցի համագնացնել կը գիջանի, և յայտնուած կամքին կը հնազանդի՝ մնալ է վերայ էրեանց և է վերայ պաշտօնին (ՊԱՍ. 95)։ Դժբախտաբար իրեն որուած վստահութիւնը գործնական չըլլար, վասնզի գինք սակաւ ժամանակի ետքը նոյն ազգանոց գերծինքերը և գերծրմեն էրեանց, և նորէն Պատմաձեան իւր հակառակորդներուն ձեռքէն նեղութեանց մատնուեցաւ (ՊԱՍ. 96), որոնք մինչեւ կայսեր բողոք տուին, թէպէտ չյաջողեցան, և ակզեցիներու մէջ նորին ըսպառնալից ձգեցին։ Պատրիարքը ոգեւորութիւն առած, Մանուէլի համախոհներէն մէկը բանտարկել տուաւ, նոյնիսկ Մանուէլն ալ Աբրահամ ընկերին հետ Ամասիա աքսորել կուտայ (ՁԱՄ. Գ. 876), և դարձնելու համար միջնորդութիւններն ալ կը մերժէ (ՍՐԳ.)։ Բայց հակառակորդութիւնը չվերջանար, վասնզի միշտ գործի վրայ էր Պատպար, զոր խորհրդապէս կ'անուանէ Պատմաձեան, և կը յաւելու թէ կախուած գլխէն ամրայից է նմանէ էր (ՊԱՍ. 23)։

ՊԱՐՏՔԻ ԽՆԴԻՐ

2116. Գաւազար նոր առիթ մըն ալ կը ստեղծէ՝ պատրիարքը ձանձրացնելու, երբ ուսղէմի հայ իշխանները մէջտեղ հանելով, որով զայն ուրն հալոր ղբղվ պերթոյն էհան, որ էր Երուսաղէմի հայուէն՝ իւր պատրիարքական ընտրութեան առթիւ ծախսուած գումարը, որ ընդհանուր և պաշտօնական ծախք մըն էր, և ոչ թէ իւր անձնական պարտքը։ Այսու հանդերձ Գաւազարի բռնադատութեան վրայ, Պատմաձեան կը գիջանի, և Երուսաղէմի պատրիարք կարապետ անուան պարտագիր կը ստորագրէ, թէպէտ կարապետ մեռած էր արդէն, անոր համար գիտցողն նոյնպէս ստորագրեց յաւաջ և անցեալ ժամանակս կը դնէին։ Այս կերպով պարտապան ըլլալէ ետքը, պարտքը վճարելու համար կը պարտաւորուէր վաճառել ըմանս ըզգաս եկեղեցիոյնս, գինեվին և ոսկեվին և կերպասեղէնս, զորս պատրաստած էր ի չէշտոյ Սբքոյ Ա-

ՊԱՍՄԱՃԵԱՆԻ ՀՐԱԺԱՐԻԼԸ

2117. Ժողովական ցոյցը և Պասմաճեանի հրաժարականին մերժումը, փոխանակ Պասմաճեանը աւելի զօրացնելու, ընդհակառակն զայն տկարացուցած էր, զի ցոյցը արդիւնք հետեւանք չէր ունեցած։ Պասմաճեան այս տեսնելով, վերջնական կերպով քաչուելու մտադրութիւնը ունեցաւ, առաջին ցոյցէն տարի մը ետքը, որովհետեւ կը տեսնէր ղալաթացոց, և ըղձայ փալ ֆաթուրէն չունէցս անթամ, մինչեւ ֆաթուրէ յանդրանալ ընդ քալմուխան ուղայէն, և հրամայէր ղայլ ու պաղշեռաւ ընտրել (Դիի. Ը. 269)։ Բայց յաւալ չան զինջանէլ է պաշծնէն, բանակցութեան մտաւ մեծամեծներուն հետ, առաջարկելով ինձ քաւական ապրուստի ֆոփայ պեղալ ուրէ առնել զինուխրիշան. և մեծամեծներ ալ այս խորհուրդս հաճեցան և պաշնարէր եղին (ՊԱՍ. 111)։ Այդ պայմանագրութենէ ետքը, խորհրդակցութիւններ սկսան պատրիարքութեան ընտրելիներուն վրայ, և այսպէս խանց ամն ի (ՉԱՄ. Գ. 876), մինչև որ վերջապէս հաւանեցան և համաձայնեցան Էջմիածինի նուիրակ Զաքարիա եպիսկոպոսի վրայ, և Գրիգորի հրաժարականին և Զաքարիայի ընտրութեան պաշտօնագիրները միանգամայն ներկայացուցան կառավարութեան, և Պասմաճեան 1773'ին ի վերջն նոյեմբեր ամսոյ գործէ քաշուեցաւ (ՊԱՍ. 34), կամ աւելի ճշդութեամբ, նոյեմբեր 28'ին պատրիարքութիւնը թողուց և բնակեցաւ Իւսկիւտար (ՉԱՄ. Գ. 877), ուր էր Երուսաղէմի հին հոգեւորականը։ Նոր պատրիարքին անձին և գործին վրայ չխօսած, Պասմաճեանի մասին յիշենք, թէ Իւսկիւտար առանձնացեալ ապրեցաւ էքէ ամսան։ Սակայն այդ վիճակը հաստատուն չեղաւ, զի խորհրդական օրթօթոփ էլեանոց խումբը, ինչպէս ինքն հեգնարար կը գրէ, ալ ձայն ի վերայ խոսմանց և խօսից էրթանց, այլ սկան կոսթել ընալալ խոսքան (ՊԱՍ. 34)։ Ինքն չբացատրեր թէ ըրածներին ինչ էր, իսկ ուրիշ տեղէ կ'իմանանք թէ ձայներ սկսան հանել, թէ հանգերձեալ է յափշտակել ղազարեսթանոնը։ Գուցէ իւր կողմնակիցներուն, և գլխաւորապէս կաթոլիկամիտներու մէջ ձեռք հանելու վախէն ստիպուած։

նէքայ աթոռին, և է վերայ էրթալնէրոց էրեցոցեալ ալ էր։ Մուրնակը ստորագրելուն մէջ՝ պէտք է խոստովանիլ Պասմաճեանի տկարամտութիւնը, սակայն նա ինքզինքը կ'արդարացնէ, և ակնարկելով Գասպարին, ֆալան է, կ'ըսէ, որ ֆալի և էրթիկոյ կրճռելով ղարմանա, ով է որ ալ աթոռնոյ։ Ուստի կը յաւելու, ըսք ամենայն հնալանքեցալ վան անի նօք, որ ալ էրթէ էրացալ ասել քան ինչ ընդդիմ կամց նորն (ՊԱՍ. 24)։ Սակայն եղեւլութեանց կապր կը ցուցնէ, թէ պատրիարքութիւնը պահելու միտումն է, որ զինքը զիջողութեան յորդորած է։ Եղեւլութեան պարագանները բացատրելու համար կ'աւելցնէ, թէ ինքն ատենին յայտնած էր, որ ծախքերու կարողութիւն չունի, բայց Գասպար և միւս ամիրաներ ըսած էին, Ասոցած ողորմած է, ֆայն ինի գոս այժմ է յանկոք առ։ Ուստի կը սպասէր որ այն պարտքը իւր վրայ պիտի չծանրաբեռնէն, սակայն հակառակը ձեռնարկեցին ընել 1773'ին (ՊԱՍ. 23), ընտրութենէն իսը տարի ետքը։ Միւս կողմէն ալ կը յիշէ, թէ այս տեսակ ծախքեր միշտ աթոռին հաչոյն եղած են, և ոչ ընտրեալներուն անձնականին։ Ճանաւանք կը յիշէ Յովհաննէս կոլոտ պատրիարքը, որուն ղամեան պէս և ղալաթացոնէն հոգեյոյ Շղթայակիրը, ասուելով լեզե և ալ ճշդմամբ։ Ցակոբ Նալեան պատրիարքին ծախքերն ալ 20,000 ղուրուչ, Երուսաղէմ գրկած են՝ Սեդրոս ամիրային և Ղալաթիոյ աւագերէց Ջաֆխուն մականուանեալ Սահակ քահանային ձեռամբ։ Մինաս Ակնեցլի կ-Պոլսոյ պատրիարքութեան և Ցակոբ Նալեանի Երուսաղէմի պատրիարքութեան ծախքն ալ 40,000 ղուրուչ, է յաբթեանցն եբոսաղէմ փրեցեալ եղէ։ Ցակոբ Նալեան երկրորդ անգամ պատրիարք եղած աուեն 4000 ընչքանոն տուած է հրաժարելու հաւանող Գէորգ Ղազարանցին է ֆոլչն Երուսաղէմ։ Բերած օրինակները կը հաստատէ յաւելլով, թէ ակնաֆս և փեղկ եմ, և թէ դրամը քաչնել փոքոյ չեռոմբ ֆրով. և կը կնքէ գոչելով. Մէրէ՛ նոյս օրթէյ ալաթ էչն, և ֆէյ ֆայն օրթէյ օթոց և ֆռռայ է (ՊԱՍ. 25)։ Սակայն այդ գանգատները անագան կը գրէ, մինչ գործին ատեն ձայն իսկ հանած չէ, կամ սաստիկ տկարամտութեան՝ և կամ աթոռը

2117. Ժողովական ցոյցը և Պասմաճեանի հրաժարականին մերժումը, փոխանակ Պասմաճեանը աւելի զօրացնելու, ընդհակառակն զայն տկարացուցած էր, զի ցոյցը արդիւնք հետեւանք չէր ունեցած։ Պասմաճեան այս տեսնելով, վերջնական կերպով քաչուելու մտադրութիւնը ունեցաւ, առաջին ցոյցէն տարի մը ետքը, որովհետեւ կը տեսնէր ղալաթացոց, և ըղձայ փալ ֆաթուրէն չունէցս անթամ, մինչեւ ֆաթուրէ յանդրանալ ընդ քալմուխան ուղայէն, և հրամայէր ղայլ ու պաղշեռաւ ընտրել (Դիի. Ը. 269)։ Բայց յաւալ չան զինջանէլ է պաշծնէն, բանակցութեան մտաւ մեծամեծներուն հետ, առաջարկելով ինձ քաւական ապրուստի ֆոփայ պեղալ ուրէ առնել զինուխրիշան. և մեծամեծներ ալ այս խորհուրդս հաճեցան և պաշնարէր եղին (ՊԱՍ. 111)։ Այդ պայմանագրութենէ ետքը, խորհրդակցութիւններ սկսան պատրիարքութեան ընտրելիներուն վրայ, և այսպէս խանց ամն ի (ՉԱՄ. Գ. 876), մինչև որ վերջապէս հաւանեցան և համաձայնեցան Էջմիածինի նուիրակ Զաքարիա եպիսկոպոսի վրայ, և Գրիգորի հրաժարականին և Զաքարիայի ընտրութեան պաշտօնագիրները միանգամայն ներկայացուցան կառավարութեան, և Պասմաճեան 1773'ին ի վերջն նոյեմբեր ամսոյ գործէ քաշուեցաւ (ՊԱՍ. 34), կամ աւելի ճշդութեամբ, նոյեմբեր 28'ին պատրիարքութիւնը թողուց և բնակեցաւ Իւսկիւտար (ՉԱՄ. Գ. 877), ուր էր Երուսաղէմի հին հոգեւորականը։ Նոր պատրիարքին անձին և գործին վրայ չխօսած, Պասմաճեանի մասին յիշենք, թէ Իւսկիւտար առանձնացեալ ապրեցաւ էքէ ամսան։ Սակայն այդ վիճակը հաստատուն չեղաւ, զի խորհրդական օրթօթոփ էլեանոց խումբը, ինչպէս ինքն հեգնարար կը գրէ, ալ ձայն ի վերայ խոսմանց և խօսից էրթանց, այլ սկան կոսթել ընալալ խոսքան (ՊԱՍ. 34)։ Ինքն չբացատրեր թէ ըրածներին ինչ էր, իսկ ուրիշ տեղէ կ'իմանանք թէ ձայներ սկսան հանել, թէ հանգերձեալ է յափշտակել ղազարեսթանոնը։ Գուցէ իւր կողմնակիցներուն, և գլխաւորապէս կաթոլիկամիտներու մէջ

խլրտումներ ալ սկսան Զաքարիայի դէմ։ Ուստի մեծամեծներ ուզելով խափանել ըմբոստութիւնը, յորդորեցին Պասմաճեանը կոչել հեռանալ (ԶԱՄ. Գ. 877), թէպէտ ինքն իրեն կը վերագրէ, ելանելոյն ի տաղտէն և հեռանալոյն գիրքն և ելանելն մտածած ըլլալու նախանձառնութիւնը (ԴԱՍ. 34)։ Կ'երեւի թէ հեռանալու խրատը տուողներ՝ գործակցութեան կերպը իրեն են թողած. ինքն ալ մտածած է կիպրոսի առաջնորդութիւնը ստանձնել, ինչ որ իրեն կը տրուի, և մայրաքաղաքէ մեկնելով կիպրոս կը հասնի 1774 հոկտեմբեր 26'ին (ԶԱՄ. Գ. 877)։ Այն տեղ ալ մնացած է դարձեալ չբաւ ատելի, չբէ ըն առաջնորդ փերչն (ԴԱՍ. 34), բայց որչափ ալ յօժարակամ ընտրած էր, սակայն կիպրոս բաւական չէր Պասմաճեանի ձգտումները գոհացնելու, որ աւելի տակաւին քան համեստ, ընդարձակագոյն ասպարէզի և լաւագոյն բախտի ձգտումներով կ'օրօրուէր։ Միւս կողմանէ պատրիարքութեամբ ալ չյագուելէ հոգը, ազգային չրջանակի մէջ նոր յաղորդութեան յոյս չէր կրնար տածել, ուստի տարբեր չրջանակի մէջ նետուելու որոշումը կուտայ։ Ապդէն այն առենները բոլոր ազգային չրջանակի մէջ ձախողողներուն համար վերջին ապաւէնը այս եղած էր, ուստի ինքն ալ ասդիպած, կ'ըսէ, և հաստատեցած գիրս ի գլուխ գործ յաբեմասա (ԴԱՍ. 34), թէպէտև ոչ մի նոր գանգատի նիւթ կամ նոր հակառակութեան նչան չէ ունեցած կիպրոսի առաջնորդութեան միջոցին, զոր ինքն էր ուզած և ընդունած։ Ազգային չրջանակէն բոլորովին յուսահատած պէտք է ըլլայ, որ և ոչ իսկ համարձակած է էջմիածին դիմել, և գոնէ այնչափ փափաքած և հետամուտ եղած եպիսկոպոսութիւնը ստանալ։ Կիպրոսէ մեկնիլը նչանակուած է 1775 սեպտեմբերին (ԶԱՄ. Գ. 877), նաւագնացութիւնը եղած է ասկայնբէպէ դիպուածով, ըստ որում յիշեալին էր եղեռնն, և ուղիղ եկած է ի վենետիկ, մերձաւորապար դեկտեմբերին մէջ։ Այստեղ կը մնայ չբէ ասիս հինգ, ուսկից կը փոխադրուի Հռոմ 1776 ամառուան, և հոն կը մնայ չբէ ասիս չուն, և վերջապէս 1777 ապրիլին կը փոխադրուի Անքոնա (Ancona), փափաքելով առնել զինակոնքն ա՝ ծովեզերեայ պէտք (ԳԱՍ. 35), չենք գիտեր թէ օգին յարմարութեան համար, թէ ոչ Արեւելքի հետ ազատ յարաբերութիւն պահելու դիտմամբ։

2118. Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան համար Պասմաճեանի յաջորդ ընտրուած Զաքարիա եպիսկոպոսը, հռչակաւոր կաղզուանցին էր, բնիկ կարսեայ վիճակի կամ հին Թաւթեղեան գաւառի կաղզուան աւանէն, որդի մեծատուն Բարիրոյս Փօքուզեանի և Նազէնի, որ էր դուստր էլեասբէ Նայ փաստախ։ Ծնած է չուրջ 1720'ին, եկեղեցականութեան փափաքով Մայրաթոռի ժառանգաւորաց դպրոցին աշակերտած, 1755'ին վարդապետ ձեռնադրուած լուսարարապետ Եղիազար եպիսկոպոսէ, և եպիսկոպոսութեան բարձրացած Շամախեցիին ձեռնադրութեամբ։ Զաքարիայի արտաքին նկարագիրը կը տրուի, հասկան էջիան, փիմօն փեղիցի և ահելկիզի, լայներես և լայնաճակատ, և հեթանչ յոյժ (ԴԻՒ. ԺԵ. 215). և այս վերջին պատգան առիթ տուած է զայն մակդիր առնուամբ Գըլուճ քահնէ կոչելու (01 ՕՐԱ. 151)։ Իսկ ներքին նկարագրով կը ցուցուի իբրև կամքի և գործի տէր անձ, ազգին պատասուոյն և եկեղեցւոյ պայծառութեան նախանձախնդիր, ուսման նուիրեալ և դաստիարակութեան հետապնդող, և իւր նպատակին աչխատելու մէջ դժուարութենէ չընկճող և ուժգին միջոցներէ չխուսափող։ Մայր աթոռէն հեռանալուն առաջին պատճառը եղաւ Եւդոկիոյ չրջանակին նուիրակութիւնը Շամախեցիին հրամանով, զոր կը վարէր երբ Սիմէոն աթոռ բարձրացաւ, և նուիրակութեան տարիները լրացնելով էջմիածին դարձաւ 1764 մարտ 4'ին (ԴԻՒ. Գ. 67)։ Հոն մնաց մինչեւ 1767, մինչեւ որ Յարութիւն Բասենցի եպիսկոպոսը՝ կ'պոլսոյ նուիրակը, մայրաքաղաքին նուիրակութիւնը աւարտելով նոյն չրջանակի չորթոյն վիճակն էր եղած։ Այդ միջոցին նուիրակին գաւառ մայրաքաղաքի մէջ կը մնար ուրիշ վարդապետ մըն ալ Մաղաքիա, այսինքն Մելքիսեդեկ անունով, իբր կառավարիչ Մայր աթոռի ինչքերուն և կալուածներուն, և այս պաչտօնին կոչուած էր ծերունի բարո-

սեղ վարդապետը (§ 2087)։ Երբոր Բասենցին մայրաքաղաքէն հեռացաւ, Սիմէոն մտածեց նոր կարգադրութիւն մը ընել, որ կերպով մը փոխարինէր Կ-Պոլսոյ մէջ կաթողիկոսական փոխանորդ հաստատելու ձախողած խորհուրդը (§ 2086), և որուն տեղը չէր կրցած բռնել Միւքէվէլլիի պաշտօնը։ Այդ նպատակով Կ-Պոլսոյ չրջանին նուիրակութիւնը երկուքի բաժնեց, և մայրաքաղաքը յարակից վիճակներէն զատեց, Միւքէվէլլիի պաշտօնը ջնջեց, Բարսեղ վարդապետը արտօնեց որ ուր ուզէ բնակի, և Թոմանեցոց ղեկավարին իբ, և Կ-Պոլսոյ լոկ քաղաքին համար նուիրակ նշանակեց Զաքարիա կաղզուանցին, որ ընդ նոյնմնեան՝ օրէն և պէտէցին անդ հռիփսիէ, հռիփսիկ (Դիի. Գ. 749)։ Այդ նոր պաշտօնին մասին պէտք եղած պաշտօնագիրները 1767 սեպտեմբերին գրուած կը տեսնուին (Դիի. Գ. 761), որով հազիւ 1768'ին սկիզբները Զաքարիա Կ-Պոլիսի մէջ պաշտօնին ձեռնարկած կ'ըլլայ։ Զաքարիայի յանձնուած պաշտօնը՝ լոկ նուիրակութենէ աւելի ընդարձակ էր, և անուղղակի կերպով կանուխէն մտածուած կաթողիկոսական փոխանորդութիւնն էր։ Զաքարիա իր պաշտօնին պայմանաժամը լրացնելով, չէքև Կ-Պոլսոյ ոտքի տոնալ է ոտքի հռոմ փէրնիկ, վերադարձ եվ Կ-Պոլսոյ եկաւ է նայ ֆոթ (Դիի. ժ. 215), կամ որ նոյն է, երկերդացիոյ են էչմեածնեցեն նոյեմնեան է Կ-Պոլիսէն (ՍՐԳ.), այսինքն Զաքարիայի պաշտօնը կրկնուելուս, ինքն Կ-Պոլիսէ չհեռացած։ Ըստ այսմ չարդարանար ոմանց կարծիքը թէ Զաքարիա էջմիածնէն վերադարձած եր, և երկերդ անգամ ալ 1772'ին չէր նոյեմնեան է Պոլիս (01 ՕՐԱ. 152)։ Նոյն իսկ Սիմէոնէ թղթակցութենէն հասկացուին ալ, Կ-Պոլսոյ հետ յարաբերութիւնները անընդհատ կերպով Զաքարիայի հետ կը պահէ, և Կ-Պոլսոյ համար ուրիշ նուիրակի անուն չի յիշեր։

ԶԱՔԱՐԻԱ ՊԱՏՐԻԱՐՔ

2119. Հազիւ թէ Զաքարիա սկսած էր նորէն նուիրականան նուէրներուն հանգանակութեան, Սամաթիոյ Ս. Գէորգ թաղէն սկսելով, Կ-Պոլսոյ մէջ Պասմաճեանի դէմ հակառակութիւնները վտանգան, նոր պատրիարքի ընտրութեան բանակցութիւնները սկսան. ուստի ինքն ալ կաթողիկոսին կը գրէր, թէ յայս տանի օր քանի իւ ի կողմն է եղբերոց, և յայնժամ էրեցոց եմ ղկովինն (Դիի. Ը. 269)։ Հարկաւ անտեղեակ չէր իրեն անունին չուրջը դարձած խօսքերուն, բայց բան մը չէ ուզած գրել, նոյն իսկ ընտրութիւնը ըլլալէն ետքն ալ, թէպէտ Սիմէոնի գնդապետն ի եղբ պօղոսբէյանն Զաքարիա վերադարձին, բայց ինչն Զաքարիա վերադարձն ընդմանէ քան ինչ ոչ էրեր, և 1774 յունուարին դեռ իրմէ այդ մասին գիր հասած չէր էջմիածին (Դիի. Ը. 269), թէպէտ 1773 նոյեմբերի վերջին օրէն Զաքարիա պաշտօնին գլուխն անցած էր։ Ըստ այսմ ճիշդ չըլլար ըսել, թէ պաշտօնին համար դիմումի եղաւ կաթողիկոսին, և միայն իբրեւ են հրամանն հաճոյանն վիհոպէպին, որ Զաքարիա հաճելի ընկերն և եղբ պօղոսբէյ (Դիի. ժ. 216)։ Զաքարիա կաղզուանցի պատրիարքութեան մտնելուն օրը 1773 նոյեմբեր 28 ոբքոմի օր չկրնար ըսուիլ (01 ՕՐԱ. 151), զի 28'ը հինգշաբթի է. ուստի աւելի ճիշդ է նոյեմբեր 29 յոհաննէն ոբքոմ գրուածը (ՍՐԳ.)։ Միայն թէ կաղզուանցիին եղբօրորդին ու կենսագիրը, ի յեն նոյեմբերի ի փոխ Աւօլէն լոհաննէսեան կը դնէ (Դիի. ժ. 216), որ է ըսել նոյեմբեր 30, չաբաթ օր։ Իրարու մօտ, բայց սարբեր թուականները կրնանք համաձայնեցնել, 28'ին դնելով վերջնական հաստատութիւնը և պատմաճեանի մեկնիլը, 29'ին հետ ժողովէ յեկեղեցին ոբքոյ Աոհաննէսեանին հռչակուիլը (ՍՐԳ.), և 30'ին Բարձրագոյն Դուռ ներկայանալով հաստատուիլը։ Իսկ Սիմէոն միայն 1774 փետրուար 5'ին ստացած է Կ-Պոլսոյ մնծամնծաց յունուար 4'ին գրած գիրը (Դիի. Դ. 754), և ինքն ալ ապրիլ 5'ին կոնդակ մը կը գրէ Զաքարիայի պատրիարքութեան մասին (Դիի. Դ. 758)։ Սակայն այդ պարզ օրինութեան կոնդակ մը կը սեպուի, քանի որ կոնդակին հասնելուն արդէն վեց ամիսէ աւելի եղած կ'ըլլայ Զաքարիայի պաշտօնավարելը։ Հետաքրքրական են պատրիարքական պաշտօնավարութեան համար կոնդակին մէջ նշանակուած վեց կանոնները։ 1. Հայաստանեայց եկեղեցւոյ աւանդութեանց համեմատ հովուէ։ 2. Ցոխոմօրէն ֆոյլոյ և ի ռնջ հեռաց-

եւ ապականչացն լրնէ՝ ժողովուրդը զգուշացընէ։ 3. Խորհրդակցութենէ հեռացրէ՛ եւ խորհրդական իշխանաց գործէ։ 4. Զպարս սրծանաւորացն տայ, իսկ զքանաքոան եւ զհաւատացեալսն խաստէ, եւ դատէ եթէ խրատով չուղղուին։ 5. Առաջնորդ կարգէ այնպիսիներ՝ որ ի խոչնեալ էցեն ի հաւատս եւ ի կրօնս։ 6. Մայր աթոռին ապրաքեցնել եւ հրամանակատ եւ հնազանդ մնայ (Դիի. Ի. 753)։

ՀՌՈՄԷԱԿԱՆ ԿՂԵՐ

2120. *Զաքարիայի պատրիարքութեան առաջին տարիներէն նշանաւոր եղելութիւններ չեն պատմեր յիշատակագիրներ, և նոյն իսկ իւր գովաբան եղբօրորդին՝ Կաղզուանցի Գօղոս քահանան, իւր պատմագրութեան մէջ մեզի այդ մասին նիւթեր չմատակարարեր, և բոլոր գրածները աւելի ետքը կաթոլիկամիտներու դէմ մղուած պայքարին վրայ կը կեդրոնացնէ։ Սակայն մենք կը դիտենք, որ այդ միջոցին սկսան Զաքարիայի անունին ամէնէն աւելի պատիւ բերող ձեռնարկները, նպատակ ունենալով ազգին մէջ զարթուցանել ուսումնական զարգացումը, և Հայ դաստիարակութիւն մը կազմել, անկախաբար հռոմէադաւանութեան ազդեցութենէն։ Հռոմէական չարժումը ուսումնական զարգացման քօղին ներքեւ հետզհետէ իւր գետինը կ'ընդարձակէր, և այդ հրապուրիչ առաւելութեան չնորհիւ ազգին մէջ համակրութեան առարկայ կը դառնար։ Ստոյգ է որ հռոմէական եկեղեցիներու չփումը, Աբեւելքին մէջ պատրաստուող եկեղեցականներէն աւելի բանգէտ խումբ մը կ'արտադրէր, որուն կարողութիւնը՝ եթէ չափազանց բարձրացնել ալ չուզենք, սակաւին համեմատաբար չատ առաւելութիւններ ունէր, մանաւանդ օտար լեզուներու հմտութեամբ, օտար գիրքերու ծանօթութեամբ, և դասականներու նիւթերու ձեւաբանութեամբ։ Այս խումբը կազմող եկեղեցականներէն լաւ թիւ մը Հռոմի մէջ հիմնուած Մաւրոյի կամ Վան-Տարածման-Հաւատոյ (De Propaganda Fide) դպրոցէն կ'ելլէր, և դպրոցի իտալերէն անունէն (Collegio), Գօլէճիք կամ Գօլէճեանք, և Փրոփականտայի կամ Մաւրոյի աշակերտներ կը կոչուէին։ Ասոնք մէն ալ վճռակուռ կ'արտադրէր իւր միաբաններով, որոնք հայագիտութեան մէջ աւելի զօրաւոր էին, մինչ Գօլէճեանք չատ տկար էին այդ մասին, և միայն օտարադիտութեամբ կը ճոխանային։ Լիբանան հաստատուող Անտոնեան միաբանութիւնն ալ, և անուանակալ կաթողիկոսարանն ալ աչակերտներ կը հասցնէին, և Թրիէստի ճիւղն ալ իւր առաջին կազմակերպութեան արդիւնքները կ'ընծայէր։ Ասոնց գործակից էին Արեւելք հաստատուած բուն Լատին քարոզիչներ, որոնց մէջ քիչ ու չատ տեղական լեզուներու հմուտներ կը գտնուէին։ Հայն իրմէ զարգացման անյագ տենչացող, ուսման և գիտութեան հրապոյրին առջեւ դիւրաւ կը տկարանար, և ինչով որ օտարադաւանութեան աչակերտող Հայ եկեղեցականներ չահուած էին, նոյնով իրենց համազգիներն ալ չահելու դիւրութիւնը կը գտնէին։

ՋԱՔԱՐԻԱՑԻ ՋԱՆՔԵՐ

2121. *Հաւասար ջէնքերով պայքարելու համար, պէտք էր որ նոյնչափ և աւելի ալ ուսումնական դիւրութիւններ ունենալ և արդիւնքներ արտադրել, բայց այդ մասին երկու դժուարութիւններ կային, որոնց դէմ պէտք էր մեծ ճիգեր թափէին ուղղափառ հայադաւանները։ Մէկ մը որ Արեւելք ինքնիրմէ միջոցներ չէր ընձեռեր, միւսը որ Արեւմուտք առանց կրօնական զոհողութեան իւր ունեցածը չէր հաղորդեր։ Մեծ բարոյական կորովի, տոկուն ուղղամիտ կամքի, և զօրաւոր ու սրտոտ հոգիի պէտք կար՝ այդ պարագաներուն ներքեւ գործելու։ Ճշմարիտ ազգասիրութեամբ տոգորուած անձեր պէտք էին, որպիսի եղած էր արդէն Վարդան Բաղիշեցին, ներքին գաւառներու խորերուն մէջ։ Անոր գործին արդիւնաւոր զարկ տուեր էին Կոլոտն ու Նալեանը մայրաքաղաքին մէջ, բայց պահ մը թուլցեր էին այդ աչխատանքները՝ Նալեանի հիւանդութեան և տկարութեան պատճառով, որուն վրայ եկեր էր Պասմաճեանի յուզուած միջոցը։ Զաքարիա եղաւ, որ գործին նոր չարժում մը աղդեց։ Նա հոգեւին իւր եկեղեցւոյն յարած, և անոր նախանձայոյզ պաչտպանն եղած, զգաց թէ Հայ եկեղեցւոյ հակառակորդներուն դէմ մրցելու զօրաւորագոյն*

միջոցը դաստիարակութեան և զարգացման ջանքն է, ուստի անձամբ նուիրուեցաւ այդ աշխատութեան, և հազիւ Կ-Պոլիս մտաւ 1768'ին, իւր պաշտօնը մայրաքաղաքին մէջ ամփոփուած ըլլալով, կատարեալ դաստիարակի և ուսուցչի դերը ստանձնեց, և Նալեանի օրէն վերջ անցեալ տասը ամսուան ընդմիջումով, Նորոգեց Մայրեկեղեցւոյ կից եղող հին դրպրոցը, և ինքն ալ անոր մէջ ուսուցչի դերն ստանձնեց, և Նալեանի անձն ու գործը վերակենդանացուց։ Ժամանակակիցք այդ երկուքին նայած են իրր չեչոնա հոգեկից վարժապետ մայր-դպրոցան, ինչպէս կոչուած և ընդունուած են Յակոբ արհիպատի եպիսկոպոսն և Զաքարիա արհիպատիկ արքեպիսկոպոսն (ՏԱՇ. 118)։ Զաքարիա աւելի ձեռնհասութեամբ և աւելի հեղինակութեամբ ընդարձակեց և զարգացուց իւր ձեռնարկը՝ երբ պատրիարքական իշխանութեան բարձրացաւ, այնպէս որ իւր տապանագիրին մէջ ալ արձանագրուած է՝ թէ Ընայր ղօսուածն ճոխել ազգիս, և թէ Եղեւ ուղիղ մուտ դասախօսիդ։ Զաքարիայի այդ աշխատութեանց արդիւնք են իւր նշանաւոր աշակերտները՝ զորս հասոյց, վերնեկ եպիսկոպոս և ղրեթէն վերջապէս, որք են Յակոբոս, Բարթողիմէոս, Յովհաննէս, Յակոբ, Անդրէաս, Պօղոս ու Պետրոս եպիսկոպոսները, և Թովմաս, Թադէոս, կարապետ ու Աստուածատուր վարդապետներ։ Բայց աստի ճոխացոյց ըստ գոյութեան, յորս հասցոյց վերջապէս, և իսկապէս թաղային վարժարաններու հիմնադիրն եղաւ, զի անկէ առաջ ուսուցչութիւնն ալ իրրեւ իանութիւն կը կատարուէր։ Պատուելիներ կամ վարժապետներ չուկայի կամ իանի մը մէջ սենեակ վարձելով յաճախորդներու կարդալ ու գրել, լեզու ու հմտութիւն կը սորվեցնէին։ Զաքարիայի հիմնած թաղական վարժարաններուն անդրանիկը կը նկատուի Գումքաքու թաղի Ծիշրմր փողոցին մէջ բացուածը՝ Շնորհք ամիրայի առատաձեռնութեամբ, անկէ ետքը կը յիշուին Պալաթ, Բեզա, Սամաթիա, Օրթաքէօյ, Գումրուկչուխ և Իւսկիւտար թաղերու մէջ հետզհետէ բացուածները, որոց մէջ պաշտօնավարողներ հանգուցեալ անունով կը սիրէին կոչուիլ։ Այդ դասակարգին առաջիններէն յիշենք՝ Մարգիս Յովհաննէսեան, Մատթէոս Պալաթցի, Թագուոր Ալանեան, Յակատար Պատուելի, Մարտիրոս Սարկաւագ վարժապետները (01 ՕՐԱ. 159), զոնէ անուններն ապագային յարգանաց պահելու համար։ Վասնզի Զաքարիայով սկսած չարժուձին է, որ այլեւս չկասեցաւ, և օրօրէ յառաջանալով մեր ներկայ յառաջադիմութեան սկզբնաւորութիւնն եղաւ։ Զաքարիա կաղզուանցին իրաւամբ պիտի նչակուի, իրր մեր դարուն ազգային զարգացման մէջ առաջին վաստակաւորն ու երախտաւորը։ Այս տեսութեամբ էր որ Զաքարիայի պատրիարքութեան առաջին տարիները իրեն անունին ամենէն աւելի պատիւ բերող միջոցն ըսինք (§ 2120)։

2122. *Մայրաթոռէ դուրս կատարուած ազգային անցքերը որչափ հնար է ամփոփ կերպով քաղելէ ետքը, պէտք է նորէն Մայրաթոռ դառնանք, ուր Սիմէոն կաթողիկոս կը շարունակէր իւր տենդոտ գործունէութիւնը, ամէն բանի համար կարգուսարք հաստատելու, և նորանոր բարեկարգութիւններ աւելցնելու համար։ Այս նիւթերուն պարտուպատշաճ բացատրութիւնը կը տրիպէ մեզ ամենայն խստութեամբ ժամանակագրութեան չհետեւիլ, այլ նիւթերը իրենց նախընթաց և հետեւորդ պարագաներով դիւրըմբռնելի դարձնել։ Այս պատճառով տակաւին չխօսեցանք Մայրաթոռի մէջ բացուած տպարանի մասին։ Էջմիածինի գահակալներ քանի քանի անգամներ թէ նախաձեռնարկ և թէ օժանդակող եղան տպարանական հաստատութեանց, իրրեւ ազգային բարեկարգական և բարեգործական ձեռնարկ մը, ինչպէս բնդհանրապէս նկատուած էին տպարանները անցեալին մէջ. մինչ այժմ գրեթէ հազարակ իանութի կարգ անցած են։ Էջմիածինի դիւրքը չէր բնծայեր այն դիւրութիւնները որոնք տպարանի մը համար անհրաժեշտ էին, ուստի կաթողիկոսներ ստիպուած էին տպարանները Ակեւմուտքի քաղաքներու՝ Ամսդերտամի, Մարսիլիայի, Վենետիկի, Լիվոռնոյի, և նոյնիսկ Արեւելքի քաղաքներէն՝ Կ-Պոլիսի և Ասպահանի մէջ բանալ տալ, և ոչ վաղարշապատի։ Եթէ բացուած տպարանները Ս. Էջմիածնէ պոռբան ալ անուանելին, սակայն Էջմիածինի*

ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

Մայրաթոռին մէջ տպարան գոյութիւն չունեցաւ մինչեւ Սիմէոնի ժամանակը։ Այդ փափաքը Սիմէոնի միտքը կաթողիկոսանալէն ետքը չծագեցաւ, և ոչ ալ իբր հայրապետական մենծագործութեան նշանակ եղաւ. որովհետեւ նա այդ միտքը յղացած էր, երբ կաթողիկոսանալէն 20 տարի առաջ, տակաւին սարկաւագ Հնդկաստանի նուիրակութիւնը կը կատարէր (§ 2070)։ Այդ միտքը յաջողեր էր ներշնչել՝ Մատրաս բնակող Զուղայեցի մեծահարուստ վաճառականներէն Գրիգոր Մկրտչէվիչ Յօղաղեան Զաքիկեանցի՝ աւելի ծանօթ Զաքիկնց մականունով (Տիհ. Գ. 61), որ յանձն առեր էր պէտք եղած ծախքերը հոգալ, իբր իւր անձին և իւր գերդաստանին յիշատակ. բայց չենք գիտեր թէ ինչու Սիմէոնի վարդապետութեան և հայրապետութեան առեն նպատակը իրագործանելու ձեռնարկներ չեղան։ Հաւանաբար Զաքիկեան իւր վստահութիւնը անձնապէս Սիմէոնի վրայ դրած էր, իսկ Սիմէոն գրութիւն չարունակաբար Մայրաթոռէ դուրս կը գտնուէր։ Եթէ արտաքին պարագաներ Սիմէոնը ազգեցուցին իւր հնօրեայ փափաքը կատարել, սակայն միտքը չի փոխուեցաւ, և կաթողիկոսական աթոռը բարձրանալէն ետքը առաջին գործերէն մին եղաւ, տպարանի պէտք եղող տառեր ու գործիքներ ձարել, սակայն պատեհ առիթն ալ միասին էջմիածին փոխադրէ (Տիհ. Գ. 431)։ Սարգիս Սարաֆեան եպիսկոպոս ալ Վենետիկի մէջ պատրաստել տուած տառերը Կ-Պոլիս փոխադրած էր, Սիմէոն անոր ալ դրեց 1766'ին, և ինքնին գալ ըսելու էր՝ «Ես ոչ Աբգար, ոչ քեզ, ոչ է չէլոպակ հոգոյն էրոյ» (Տիհ. Գ. 551)։ Միւնհոյն տառեր չէր ըզած թէ Առաքելի և թէ Մարկոսի հետ սկսուած բանակցութիւնները (Տիհ. Գ. 552)։ Սակայն ատոնցմէ և ոչ մէկը յաջողեցաւ։ Առաքելի գիրերուն վաճառման Ամբոդերտամցի Հայեր արգելք դրին, կասկածելով թէ մի գուցէ Սիմէոն եկեղեցին և կալուածներն ալ վաճառելով բոլորովին իրենց գաղութը խափանէ (ՏՊԱ. 185)։ Մարկոս տպագրիչ չուզեց իւր սկսած և յառաջացուցած գործը խափանել։ Իսկ Սարգիս Սիմէոնի հետ բանակցութիւնները չվերջացած՝ տառերը վաճառեց Գէորգ Կեռատացի դպիրին, որ Կ-Պոլսոյ Վէգիրխանի մէջ տպարան բացաւ, և քիչ օր ետքը 1766 մայիս 11'ի երկրաշարժին օրը՝ խանի փլատակին ներքեւ մնաւ (ԳԱԼ. 250)։ Բայց Սիմէոն իւր նպատակէն ետ չկեցաւ. չենք կարող ըսել թէ տեղէ մը կրցած ըլլայ պատրաստ տառեր ճարել, զի Ռոփանոփ գիրերու խօսք կ'ընէ (Տիհ. Գ. 616.), ուսկից կը հետեւի թէ նորէն փորագրել և ձուլել տալ յաջողած է։ Տօնացոյցի յիշատակարանին մէջ ալ կը յիշուին Յարութիւն էջմիածնեցի փութղել և Հանդիսագիր, և Մկրտիչ Շողոքեցի եպիսկոպոս, որ նախկին հեղինակ եղեւ ան փութղելիներն ի պղպեղեայս (ՍԻՄ. 562)։ Ըստ այսմ տպարանը կը բացուի 1771'ին, ինչպէս կը վկայէ Զաքիկեանց Գրիգորի և ընտանիքին յիշատակին ձօնուած արձանագիրը, թէ ասնոր արդեամբ՝ հաստատեցաւ տպագրեալ ամենայն պատճէնք (Տիհ. Գ. 616.)։ Բայց 1771 թուականը տպարանական արուեստագործութեանց ալ բուն թուականը չերեւիր։ Գիրքի մը պէտք եղած առարկաներուն էջմիածնի բերուիլը ամենադժուարին գործերէն մէկն էր, նկատի առնելով երթեւեկի արգելքները, քաղաքական չխոչընդոտները և տեղւոյն հեռաւորութիւնը, և 1772'ին կրնայ նշանակուիլ Գէորգ Տաղաւարեցի հրատարակութիւնը, և 1773'ին Տաղաւարեցի տեառնընդառաջը, որոնք էջմիածնի առ-

պարանին նախընծայ արդիւնքներ կը նը-
կատուին։ Իսկ ինքն Սիմէոն կը յիշէ նախա-
պէս ըսանէ հաւ Սալմոս, և Էրէրոբոպէս չփո-
թէլ Էրէոն սըղնէց, որոց Էրէրոբոպէս կը յա-
ջորդէ Տօնացոյցը (ՍԻՄ·554)։ Գործին ար-
գելքներէն մին ալ թուղթ ճարելն էր, և
Սիմէոն 1771'էն Զաքիկեան բարերարին
հետ կը թղթակցէր, տպարանին մօտ թըղ-
թագործարան մըն ալ հաստատելու համար։
Աշխատին համաս գործակատներ գտնելու
ջանքն ալ բաւական ատեն խլեց։ Պարա-
կատառէտ եկողներ գոհացուցիչ չեղան,
Զաքիկեան Փարիզէ եկած ընկերն Ճո-
պեփ՝ Բէյսան և Տէսիօ Գաղղիացիներու հետ
պայմանաւորուեցաւ, որոնք կ-Գոլիսէ Իջ-
միածին եկան, բայց կարծես թէ միտք ու-
նէին որ Ֆոլիէը տանան ա- Ֆոխլին, մինչեւ
որ Սիմէոն պատրաստուեցաւ Ֆալխայէ և
առանձինն սպասնալիօք զանոնք գործի
ստիպել (ԴԻՒ·Գ·ՃԿԴ·), և թղթագործութիւնը
արդիւնաւորեցաւ 1776'ին՝ հակողութեամբ
Իսահակ Գեղամացի եպիսկոպոսին, որ է
նախինքն Յովհաննէս Գեղամացի դպիրը
(§2075)։ և երախայրիքը նուէր յղուեցաւ
բարերարին (ԴԻՒ·Գ·ՃԼ·)։ Շինուած թուղ-
թին վրայ ջրանկար փակագիրներ կային, Ս·
կ, և Գ· Մ· որոնք Սիմէոն կաթողիկոսի և
Գրիգոր Մխիթարեան Զաքիկեանի անուն-
ները կ'արտայայտէին (ԴԻՒ·Գ·ՃԼ)։

2124· Էջմիածինի տպարանէն ելած, Ջիւաթան և Ֆալաթան մանր արտադրութիւն-
ները, չատ ընտիր գործ
ՏՕՆԱՑՈՑՑԻ ՀԱՆԴԻՍ մը եղած պիտի չըլլան,
որ դիտմամբ մէջտեղէն
վերցուած, և 1777'ին նո-
րէն տպուած են (ՏՊԱ·119)։ Իսկ իրր ա-
ռաջնատպուղ կարեւոր գործ նկատուած է
Տօնացոյցը, որ 1774'ին սկսած է տպագրուիլ
(ՍԻՄ·1), և աւարտած 1775 ապրիլ 7'ին
(ՍԻՄ·561)։ Վերջաբանին մէջ ըսուած է թէ,
ահա ձինէ սա է չոր ալեսպիտ և փնիտ, զի
ըզհնօթա այս է յհան քերդող, և Տօնացոյցին
տպագրութիւնը նախընթացներէն հասաւ և
կոչեցեալ կը կոչուի (ՍԻՄ·554)։ Սակայն
Սիմէոնի տօնացոյցը տպագրութենէն աւելի,
իւր կազմութեամբը չատուկ մտադրութեան
առարկայ մըն է։ Ցայտնի է թէ Հայ եկե-
ղեցւոյ տօնակատարութեանց կարգը եօթ-
նեկեան դրութեան վրայ հիմնուած է,
որով ամէն տարի միեւնոյն ամսաթիւին նոյն
տօնը չհանդիպիր, ինչպէս ուրիշ եկեղեցի-
ներու սովորութիւնն է։ Զատիկի տօնին և
անոր չարակից Մեծապահոց և Ծիննանց մի-
ջոցներուն չարժականութիւնն ալ չատուկ
պահանջներ կը ստեղծէ։ Այդ ընդհանուր
չարժականութիւնը անհրաժեշտ կ'ընէր, որ
իւրաքանչիւր տարւոյ համար տօներու մաս-
նաւոր դասաւորութիւն մը կազմուէր. սա-
կայն այս ընելու համար հաստատուն ձեւը
կը պակսէր, և վիճակներ կրնային իրարմէ
տարբեր դասաւորութիւններ կազմել, գուցէ
քաղաք քաղաքէ ալ կը տարբերէր նոյն վի-
ճակին մէջ, մանաւանդ որ դասաւորելու
պէտք եղած հմտութիւնն ալ ամէնքը հա-
ւասարապէս չունէին։ Սիմէոն ինքն ալ կը
դիտէ, թէ ամանդ ըսյս փճն յայս ինչ օր փճնն,
և ամանդ յայլ օր, ամանդ ըսյս ինչ փճն՝ դիպ
առնեն և կամ ընդ այլոմ, և ամանդ ընդյն ընդ
այլոմ և կամ դիպ (ՍԻՄ·7)։ Աւիկայ չփո-
թութիւնից մեծ պատճառ մըն էր, և անոր
դարմանն եղող որեւէ ձեռնարկ հարկաւ լաւ
ընդունելութիւն պիտի գտնէր։ Ճատ այսմ
երբոր Վենետիկի Մխիթարեաններէն հայր
Յակոբոս Զամչեան 1757'ին Լոանցոյց, իսկ
1758'էն սկսելով Օգոստոս անունով տարեկան
տետրիկներ սկսաւ հրատարակել, իւրաքան-
չիւր տարւոյ ամսաթիւերը, լուսնի օրերը և
տօներու դասաւորութիւնը պարունակող,
ազգին մէջ մեծ ընդունելութիւն գտաւ, և
նոյն իսկ եկեղեցական տօնակատարութեանց
ալ աւելցնորդ դարձաւ։ Բայց քանի որ
հոռմէադաւանններու հրատարակութիւն մըն
էր, անոր մէջ կը պարունակուէին ոչ միայն
Լատին եկեղեցւոյ պատկանող տօներ, այլ և
Հայ տօնակատարութեանց մէջ մուծուած
լատինամիտ փոփոխութիւններ, որոնցմէ
յանզգաստս կը գայթակղէին հայադաւան
հաւատացեալներ և պաշտօնեաներ ալ, և
տեղի կը տրուէր անտեղութեանց՝ և Հայ
ծիսակատարութեան հակառակ պատահար-
ներու։ Ահա այս կ'ակնարկէ Սիմէոն իւր
տօնացոյցին յառաջաբանին մէջ, Վենետիկի
օրացոյցը՝ Թառնոցոյց կամ Թառնաբան կոչելով
(ՍԻՄ·15)։ Սիմէոն կանուխէն ալ մտադ-
րութիւն դարձուցած էր այդ եղելութեան,
և անոր դարմանը հոգալու համար, 1761'ին

կ-Պոլիս նուիրակ գտնուած ատեն՝ Տ-բէկեան ծրագրով մը տպագրել տուած էր, որուն մէջ կ'ըսէր, թէ պատրաստ ունի և ՀՆԱՑ ՓՕՆԱՑՈՅՑ Ի ՅԵՐՈՒՍԱՂԷՄ և ՅԵՑ ԷՐՑ, այսինքն տարեգրոց (ՄՏՆ· 722), սակայն ոչ այս մայր տօնացոյցը և ոչ յաջորդ տարիներու համար օրացոյցներ հրատարակուեցան։ Ինչ ետքը 1763'ին Սիմէոն կաթողիկոսցաւ, միշտ միտքին մէջ ունենալով տօնացոյցի և տօնակատարութեանց գործը, որուն յաջողութեան անհրաժեշտ էր ապագրական հրատարակութիւնը, իսկ Էջմիածնի մէջ տպարան ունենալու ձեռնարկն ալ հազիւ կաթողիկոսութենէն տասը տարի ետքը կրցաւ ամբողջանալ և կատարելագործուիլ 1774'ին.

2125. Այդ տասը տարիներու մէջ աշխատեցաւ անշուշտ Սիմէոն՝ տօնացոյցի մասին յղացած միտքերը գործադրել, և հետզհետէ իւր աշխատութիւնը լրացնել և յղկել, և հասցնել այն վիճակին՝ որուն մէջ մամուլի յանձնուեցաւ 1774'ին։ Այդ աշխատութիւնը երկու մասի կամ երկու հատորներու կը բաժնուի, որոնց երկրորդը տարեկան դասաւորութեանց ամէն պատահականութիւնները կը տայ, այսինքն 36 տարեգիրներու վրայ՝ նոյնչափ տնաշէն փոփոխութիւնները կը ցուցնէ, որք ծագում կ'առնեն զատկի տօնին մարտ 22'էն մինչև ապրիլ 25 տարբերելէն։ Իսկ նահանջ տարիներ կը դասաւորուին փետրուարի 28'էն ետքը նախընթաց տարեգիրին անցնելով, որով փետրուար 28'ի կրկնութիւնը փետրուար 29 կը դառնայ, և անոր վրայ կը քալէն տարւոյն մնացած տասը ամիսները։ Սիմէոնի աշխատութենան այս մասը յոյժ գնահատելի և օգտակար գործ մըն է, որով կանոնիէն ապահովուած է իւրաքանչիւր տարւոյ դասաւորութիւնը, և բոլոր Հայ եկեղեցիներ ուր ուրիք գտնուին աշխարհի որևէ կողմը, կրնան միևնոյն կերպով իրենց տօնակատարութիւնները ընել։ Ուր որ Սիմէոնի տօնացոյցը տարբեր կերպարան կը զգենու առաջին մասն է, այսինքն բուն տօնացոյցն է, որուն մէջ ուզած է նորութիւններ մուծանել, թէ ինչ ինչ տօներ տեղափոխելով, և թէ ծիսական կամ տօնական պայմանները այլայլելով։ Տօնական տեղափոխութենէն արդէն քանի մը հատ յիշեցինք, զորս յատուկ կոնդակով հրամայուած էր, Բարթողիմէոսի և Ծուդայի տօնը՝ Թադէոսի և Բարթողիմէոսի տօնի վերածելով, և տօնը Ցիսնակաց առջի չարաթի օրուան տանելով, պահանջուած տեղափոխութիւններով մէկտեղ (§ 2102)։ Բայց այդչափով չսահմանուեցան Սիմէոնի փոփոխութիւնները։ Ազգասիրական նախանձայուզութեամբ՝ ուզեց ազգային տօները նախապատուել չարաթ օրերու փոխադրելով, որոնք է ըստ ասոր և է պահ եղեալ էին, և ասանց հանգիսաւորութեան կը տօնուէին, զոր Սիմէոն յառաջ եկած կը կարծէ չանգրչնելնէ և կամ է ընդունելնէ և է ընդունելնէ ձեռնոց (ՍԻՄ· 9)։ Ըստ այսմ Ներսէսի և Խադայ տօնը Հոգեգալստեան չորրորդ երկուշաբթիէն երկրորդ չաբաթին բերաւ։ Տրդատայ և Աչխէնի և Խոսրովիդբխոյ տօնը՝ Հոգեգալստեան հինգերորդ երկուշաբթիէն չորրորդ չաբաթին փոխադրեց, Որդւոց և Թոռանց տօնը՝ Հոգեգալստեան հինգերորդ երկուշաբթիէն վարդավառի երկրորդ չաբաթին տարաւ, Մեսրոպի և Թարգմանչաց տօնը՝ վերափոխման չորրորդ երկուշաբթիէն Խաչին չորրորդ չաբաթին փոխադրեց։ Եւ Աբգարի տօնը Ադդէէն զատեց, և Ցիսնակաց չորրորդ հինգշաբթիէն հանելով չաբաթին դրաւ։ Այդ փոխադրութիւնները տեսկեցին ուրիշներ ալ ընել պարպուած օրերը լեցնելու, և տարուան օրերուն մէջ եղողները աեղաւորելու համար։ Աստուածածնայ Տուփին և Գօտիին յիշատակները, որոնք կամաւոր էին և չէին տօնուեր, հաստատուն կերպով զատեց Հոգեգալստեան հինգերորդ և վերափոխման երրորդ կիրակիներուն։ Յովհաննէս Օձնեցի, Յովհաննէս Որոտնեցի, և Գրիգոր Տաթեւացի վարդապետները Մեծապահոց երրորդ չաբաթ օրը տօնել հրամայեց, մինչ Աղեքսանդր Աղեքսանդրացին և Գրիգոր Ակրականդացին տօնացոյցէն հանեց։ Ըսողներ կան՝ թէ Յովհաննէս Օձնեցին կանոնխէն ալ տօնուած էր, և թէ Սիմէոն՝ այդ աեթիւ Մովսէս Տաթեւացին ալ տօնացոյցին անցուց (ՊԷՐ· 1), սակայն մենք այդ կէտերը ատուգող փաստ չենք գտած։

ՍԻՄԷՈՆԵԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ

2126. Միսական և տնական պատչաճներու գալով, Սիմէոնի գլխաւոր կարգադրութիւնը՝ կէտկէտ դհելոոոբց ցուցակ մը կազմուելն է (ՍԻՄ·321)։ Կանխեցինք ըսել (§ 2101) և կը կրկնենք, թէ մանրազնին հետազօտութիւնք կը ցուցնեն թէ Հայոց եկեղեցին խորշած է բնական կիրակիներէ դուրս չաբաթուան օրերուն մէջ կիրակէ կամ հրամայեալ տօն հաստատել։ Ասոր հետեւանքներն են աէրունի տօները՝ կիրակիի փոխադրելը, և մեծ սրբոց յիշատակները չաբաթ կատարելով կիրակիին տօնախմբելը, ինչպէս որ ցարդ ևս, օրինակ իմն, Ս. Լուսաւորչի կամ Ս. Գէորգի կամ Ս. Յակոբի անուններն նուիրուած եկեղեցիներ՝ կիրակի կը կատարեն իրենց տօնախմբութիւնները։ Աստուածայայտնութեան տօնին իսկ որոշ ամսաթուով կատարուիլը՝ հնաւանդ չերեւիր, և տնական պատչաճները կը ցուցնեն, թէ կիրակիի յարմարութեամբ կազմուած են։ Հին տօնացոյցներ Տեառընդառաջին, Աւետումին և Աստուածածնայ ծննդեան տօներուն կիրակիի փոխադրուելուն յիշատակներ կը պարունակեն։ Համբարձումին ալ հինգշաբթիի հին պատչաճը չատ թեթեւ է, նախատօնակ չունի, և անպատանը վերջամուտ է, և Երկրորդ Մալկազարդի կիրակին, իսկապէս Համբարձման տօնախմբութիւն է։ Մէսէրու վրայ խօսած ատենիս, մեր պատմական չրջանակին մէջ այսչափը բաւական կը սեպենք։ Կ'երեւի թէ Սիմէոն՝ հայկական հին սովորոյթը միւս եկեղեցւոց առջև ստորնութիւն կարծելով, Հայոց համար ալ չաբթուան մէջ կիրակէանալու օրեր կազմեց, ինչ որ իրմէ առաջ բնաւ տեղ մը հրամայուած չունք տեսներ։ Ասդէն տնացոյցի հրատարակութենէն առաջ՝ Լուսաւորիչներու պատուոյն տարեկան հինգ օրեր կիրակէանալու կոնդակ յղած էր ընդհանուր Հայութեան (§ 2101)։ Նոր Տնացոյցին մէջ ալ եւս հինգ տաղաւարներուն, Ծնունդի, Զատիկի, Վարդավառի, Աստուածածնի և Խաչի երկրորդ օրերը, և Զատիկի նաև երրորդ օրը, և Ծնունդի ութերորդ օրը, Տեառընդառաջի և Համբարձումի և Աւագ հինգշաբթիի, և Աստուածածնայ Աւետումի, Ծնունդի, Ընծայման և Ցղութեան օրերը, և Հրեշտակապետաց և Ամենայն-Սրբոց տօները, (ՍԻՄ·321)։ Աւելորդ չըլլայ դիտել, թէ Աւագ հինգշաբթին ու Զատկի երրորդ օրը ու Աստուածածնայ Ընծայումը ուրիշ եկեղեցիներէ ալ իբր կիրակէանալու տօն ընդունուած չէ։ Այսպէս Սիմէոնին կարգադրութեամբ տարին 21 կիրակէանալու օրեր մուծուեցան Հայ տնականատարութեանց մէջ։ Տնական պատչաճներու մէջ ալ Սիմէոն ինչ ինչ փոփոխութիւններ ներմուծեց, որոց մէջ իբր կարեւորագոյն պիտի յիշենք Մեծպահոց կիրակիներուն մէջ ցօղ-ՐՆ-ՆՆ չէշտոկ-ՐՆ-ՆԸ ՂՆՂԼԸ, և իբր ցօղ-ՐՆ-ՆՆ ակնկալ-ՐՆ-ՆՆ ձեւ մը տալը, Իւղաբերից աւետարանէն զեղչելով ցարութեան կտորը և միայն Թաղման կտոր թողլով, Զատիկ ցայելոյ քարոզը վերցնելով կամ կիսելով, Նոթափեղեալ երգը միայն առջի երկու տուներու վերածելով՝ որոնց մէջ ցարութիւն չյիշուիր, և Սբոյ Աստուած սրբազանութիւնէն ալ Ո՛չ յօթեր մասը արգիլելով, և Ո՛չ խելեցոյ ըսել հրամայելով։ Ցիշենք ևս Սուրփանոսի տնային յատուկ Այսօր գոտ երգը, չորս Աւագ տներուն և Լուսաւորիչներու հինգ տներուն տարածելը։

2127. Սիմէոնի կարգադրութեանց մասին խիստ դիտողութիւններ եղան ժամանակին, մինչև իսկ յայտարարուեցաւ թէ Դրիգոր վկայասէր քանոքեան յօթելոլ է վէցոյ՝ հրամայած ըլլայ, որ Ո՛չ էչեցոյ այլ ոտ՝ օգոբ ինչ համանել իրմէ հաստատուած տնացոյցին վրայ, որով իբր թէ Սիմէոն այդ վճիռին անաստած ըլլայ (ՊԼՐ·1)։ Մեր տեսութեամբ և իրաւական տեսակէտէն, ոչ մի՛ արգելք չկար որ Սիմէոն կաթողիկոս ալ ծիսական կանոն մը կարենար սահմանել, ինչպէս ըրած էին վկայասէրէ առաջ և վկայասէրէ ետքը եղող ուրիշ կաթողիկոսներ ալ։ Սիմէոն իւր մէջ զգացած է այդ իրաւասութիւնը, և առանց վարանման ուզած է զայն գործածել։ Միայն խնդիր է, թէ պատեհ էր արդեօք այդ իրաւասութիւնը գործածել, կամ թէ եղած կարգադրութիւնները պահանջուած կամ գնահատելի էին ասրապէս։ Մենք այնպէս կը կարծենք

թէ Սիմէոնի ներքին նպատակին մէջ կար, կերպով մը Հայ կաթոլիկները Հայ չրջանակէն դուրս թողուլ ծիսական տարբերութիւններով, և անոնց ազդեցութիւնը արգելել՝ անգործածական դարձնելով անոնց օրացոյցը։ Վասն զի կաթոլիկներ, և յատկապէս Մխիթարեան և Անտոնեան վանքեր և Ալիբանանի կաթողիկոսարանը, հին տօնացոյցը պահեցին և Սիմէոնեան փոփոխութեանց չհետեւեցան։ Այդ մասին մեր տեսութեամբ՝ օգտակարագոյն էր թերեւս կաթոլիկները նմանութեան մէջ պահել, քան թէ հեռացնել, որպէս զի տարբեր ինքնութեամբ յատուկ գոյութեան իրաւունք չըստանային, ինչ որ անոնց գլխաւոր դիտումն էր։ Սրբոց տօներու տեղափոխութիւնն ալ ղդալի նշանակութիւն մը չէր բերեր, և ազգային սուրբերը չարաթին բերելով իսկական առաւելութիւն մը չէր գոյացներ, քանի որ տօնախմբութիւններ կիրակիին կը կատարուէին, որ անմիջապէս կապուած էր երկուշաբթիին հետ. Հին տօնացոյցը նոյն օր զետեղած էր յիշեալ տօներէն չատերը։ Բոլոր փոփոխութեանց մէջէն տիրապէս գնահատելի կը գտնենք Առաջին Լուսաւորչաց տօնին կերպաւորութիւնը, իբրեւ չօչափելի նշանակ մը Հայ եկեղեցւոյ առաքելականութեան։ Իսկ Աբգարի տրուած պատիւը՝ պատմական տեսակէտէն խնդիրի նիւթ է. Մուտն ի վիրապը Մեծպահքի օրով փառաւորելը՝ յարմարութենէ զուրկ է, և երեք ազգային վարդապետները Մեծպահքի մէջ զետեղելը՝ առաւելութիւն մը չէ։ Մեծ պահոց կիրակիներուն մէջ մուծուած փոփոխութիւնն ալ նշանակալից չենք գտներ, զի եկեղեցին որեւէ առիթով կիրակիներու Ցարութեան յիշատակը նուազել չէ ուզած, բաւականանալով զարդերու հանդերձանքը նուազել։ Չէ՞ որ այսօր ալ կը չարունակենք Մեծպահքի առաջին կիրակիին գոչել. Փառք յարութիւն քո Տէր (ՇԱՐ. 134), և վերջերուդ կիրակէին կ'երգենք, Նորահրաշ գործոց քոց Տէր՝ շարհաբեցան փառք քո Տէր (ՇԱՐ. 230)։ Այդ տեսութիւնները կը յայտնենք մանաւանդ պարագայից նկատմամբ, թէ ոչ ընդհանուր կերպով չենք մեղադրեր Սիմէոնի համարձակ ձեռնարկը։ Մանաւանդ թէ կը փափաքէինք որ նոյն հոգւով զօրացած կաթողիկոս մըն ալ ազգային տեսակէտէն զօրացնէր մեր տօնացոյցը, անոր մէջ ընդունելով նախալուսաւորչեան չրջանի առաքելաչափ հայրապետները, յատուկ տօներ սահմանելով Որդւոց և Թոռանց և Թարգմանչաց իւրաքանչիւրին, և նոր յիշատակներ հաստատելով այն քաջարի նահատակներուն և նոր վկաներուն համար, զորս պատմութեանս կարգին յիշեցինք, և մեր ղզձերն ալ համարձակօրէն յայտարարեցինք։

2128. Երբոր Սիմէոն իւր տօնացոյցին տպագրութիւնը 1775'ին աւարտեց, սկսաւ զայն ամէն կողմ ցրուել

ՏՕՆԱՑՈՑՑԻ ԿԻՐԱՒՈՒԹԻՒՆ

1776 տարւոյ մէջ, և քրիստոնեայ ազգաց ի նշանակութիւն սրբոյ ապստամբելէն մեռոյս, և հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի ապստամբելոյ Աղբայն, և հրամանաւ հայրապետականի (ՍԻՄ. 17), պատուիրեց բոլոր Հայ ազգին, որ ի հանգիստ ի սիրոյն տեառն, որ է Մեսրոպ (ՍԻՄ. 21), այսինքն 1777 տարւոյ սկիզբէն, նախապէս զնահատոյցն ըստ անհնս առնել և խոթել խոտս, և երկրպագել ընդ փնտռոյտս ըստ առնելոն քերել, և սուտ վերս գրել այսոհետս (ՍԻՄ. 19)։ Էջմիածնի չուրջը և գաւառական պատրիարքական վիճակներու մէջ չատ դժուարութեանց չհանդիպեցաւ նոր տօնացոյցը, բայց ոչ նոյնպէս Տաճկահպատակ վիճակներու, և մանաւանդ մայրաքաղաքին մէջ։ Ասոր գլխաւոր պատճառներէն մէկն էր կաթոլիկամիտ չարժումը, որուն հետեւողները ծանր եկաւ Որոտնեցին և Տաթեւացին տօնելի սրբոց կարգը դասուած տեսնել, որ ուղղակի իրենց ընթացքին դատապարտութիւնն էր։ Զաքարիա պատրիարքն ալ հակիր չէր այդ փոփոխութեանց, բայց չէ թէ կաթոլիկամիտներու տեսակէտէն, քանի որ ամէն կասկածէ վեր էր իւր նախանձայոյզ հայազգաւանութիւնը. այլ պարզապէս իւր անձնահաճ արժանապատուութեան տեսակէտէն, քանի որ Զաքարիա կը զգար իւր ուսումնական և անձնական առաւելութիւնները և կ-Պոլսոյ պատրիարքութեան ազդեցիկ և տիրական դիրքը։ Ուստի իրեն ծանր եկաւ որ Սիմէոն առանց իրեն հետ խորհրդակցելու և իւր կարծիքն ալ առնելու, իւրովի ամէն բան լրացնելով, և կա-

թողիկոսական ճոխութեամբ հրամաններ կ՚արձակէր։ Միանգամայն կրնար Զաքարիա եղած կարգադրութեանց մասին ինչ ինչ դիտողութիւններ ալ ընել, ինչպէս մենք ալ յայտնեցինք։ Զաքարիա պահ մը ընդդիմանալու գաղափարն ալ ունեցած է, սակայն իր սիրտին մէջ յատուկ պատկառանք մը կը զգար Սիմէոնի հանդէպ, զոր իբր ուսուցիչ և իբր անվիճելի պետ մը ճանչցած էր իւր առաջին տարիներէն, ասոր ալեծածեալ յայնժամ է Սէֆեանն, վերջս կորոշ առնել զոր կոչէր (ՊԷՐ· 2), և 1777 տարեգլուխէն սկսելով Սիմէոնեան տօնացոյցը կ-Պոլսոյ մէջ ալ կիրառութեան մտաւ։

ԱԶԳԱՑԻՆ ԺՈՂՈՎ

2129. Պատմաճեանի օրերուն ներքին յուզումները ու պատրիարքարանի մեղմ ընթացքը, և Զաքարիայի պատրիարքութեան ըսկիզբները իւր նախանձայուզութեան ասպարէզ չտրուիլը, մնծապէս քաջալերած էին կաթոլիկամիտները, որ այնմ ժամանակէ կոչ հռոմէական ընդդէմ պատրիարքական էջմեածնին (Դիւ· ժ· 217), և մինչև իսկ սուլտանին կը դիմէին գրով, թէ պատրիարքն ասանդ իրասանդ պահանջ է մնջ տուս անվերս, և յոլ տալն վր ջայ՝ ներհակ վրէ ընդ վր և նեղ (Դիւ· ժ· 218)։ Իրենց բողոքին մատնութիւն ալ խառնելով կաթոլիկամիտները կը գրէին, թէ պատրիարքն վր Աճեմ է, և զմայրաքաղաքն կողպեալ զերանյ կատ, և յայ ասա Աճեմական՝ է զբաւոցաճ և է յօթնաւինն, ասա է յատացանել նոյն ինքասուրինն է վերայ տոյին պերաւինդ (ՍՐԳ·), ուստի կը խորհրէին որ պատրիարքին հրամայէ, զի մ՚ իսպառ նեղեցոյ զրել, և երբ հնար է անջատել զրել է նացանէ, և կրթեա վրէ յատուկ ելաւ է վերց կրթասուրց, վասն զի հմտ եւանաւինն նոցա (Դիւ· ժ· 218)։ Այդ ընթացքը ամէնուն մտադրութիւնը արթնցուցած և զայրոյթի պատճառ եղած էր, և անոր առջևը առնելու փափաքը ընդհանուր էր։ Զաքարիա ինքն ալ անտարբեր չէր կրնար մնալ, բայց իւրովի ալ նախաձեռնութիւն առնել չուզելով, ազգային մեծ ժողով մը հրաւիրեց 1778 փետրուար 21՚ին Մեծպասհոց առաջին չորեքշաբթի օրը, և գումարումը տեղի ունեցաւ Մայրեկեղեցին՝ հանդէպ էլեառոյ եպիսկոպոսի և վրդապետի, և այլ ոչ-մեծ էշխանի, և յոգնայնէց եանաֆէց էլեառոյ, Ալիը Ճեմայէլ կոչեցեալ, և այլեառոնեամբ հասարակ ժողովրդականի, էլեկելէյ և քանգէա մրջկան ֆառոյ (ՍՐԳ·), որ է այն ժամանակին սովորական ազգային ժողովի ձևը, ուր իբր հազար հոգի մը ներկայ կը գտնուէր (§ 2115)։ Զաքարիա ժողովը բանալով կացութիւնը բացատրեց, զգացուց թէ պէտք է վրաչյանաբինեա ապէս ոչ բառնալ է ոչնչ, զի եղբարտ եմ ասենեկին, և այս ոճով չարունակեց իւր առնաբանութիւնը, որ էր բովանդակ վրդապետական քան և խոս քաչյանի և ոչնչաբանի, աբաբաչնէլ հոգեառ ոչոյ (ՍՐԳ·)։ Ժողովը կատարեալ համաձայնութեամբ ընդունեց պատրիարքին տեսութիւնները, անոր յանձնեց ներքին միջոցներ գործածել կաթոլիկութեան յառաջացումը արգելելու, և բողոքովին իսկ ջնջելու համար. և որոշեց արքունական իշխանութեան հաղորդել իրաց վիճակը և անոր ձեռնտուութիւնն ալ հրաւիրել օտարազմութեան առջևն առնելու համար։ Այդ նպատակով կառավարութեան մատուցուելիք խնդրագիր կամ բողոքագիր մըն ալ պատրաստուեցաւ, և առաջնորդներուն կրնիքներովը ստորագրուեցաւ։ Կաթոլիկամիտներ՝ ազգն ու անոր պատրիարքը ամբաստանած էին իրբև Պարսիկները Օսմանցիներու դէմ գրգռող. ազգայինք գոհացան կաթոլիկամիտներու Եւրոպացւոց հետ յարաբերութիւնները առջև դնել, առանց չարամիտ թելադրութիւններ աւելցնելու, և միայն գրեցին, թէ փաստաբար և ծածուկ ելառոյ առնեն յեկելէյէ Ֆրանկաց, և չէ՚ներբայ պրեալ է պառնս էրեանց՝ չէրբս և չէնանս Ֆրանկաց համբյակ կոպրեն, և չառոնս եկելէյ արբրեալ՝ այլ յոճ հասար ծածկաբար է մէջ էրեանց արձաբեն (Դիւ· ժ·218)։

ՄԵՂՄ ԸՆԹԱՑՔ

2130. Այդ բողոքագիրը իսկոյն չտատուցուեցաւ, և Զաքարիա պատրիարք ձեռնարկեց միայն ներքին միջոցներով կաթոլիկութեան հետեւողներու դէմ պայքարիլ։ Նախ ուզեց իմանալ թէ ոյք և որքան են հետեալ ժողովրդեն, և քահանաներու հրամայեց անոնց ցուցակը յանուանէ գրել և բերել. և յետոյ

յանձնաբարեց որ անոնց տուները երթալով իրարեցին հաղորդեր բանէ, և այսպէս անցան Մեծապահոց օրերը։ Զատիկէն ետքը, որ ապրիլ 8'ին նանդիպած էր, հրամայեց որ քահանաներ անուղղաներուն գլանան խորհրդակատարութիւնները, չմկրտեն, չպատկեն և չթաղեն։ Բայց ամէնէն աւելի զդալի դարձաւ այդ վերջին պարագան, դի ոչ մէ նանէին է չեռամոգներ երթեն այնդի՝ անելու ծայնի՝ է պան անդր ծալով երեխ ոչ, ըլլա ոչ, և գնչե վեց յաոաջ։ Բայց որովհետեւ նոյն 1778 տարին ժանտախտը սկսած էր երեւնալ Կ-Պոլսոյ մէջ, և անթաղ դիակներ վտանգաւոր կրնային ըլլալ, ուստի Զաքարիա կրկին հրամայեց անչուք թաղել այնպիսիները, յաոաջ երթալով ըրէք տհանայ գ և եր։ Մահտարաժամը հետզհետէ այնչափ զայրացաւ, որ փոխադրելու իսկ չէին հաններ մեռելթաղերը։ Իսկ մեռոզներու չատուկիները հաչուելու համար բաւական ըլլայ յիչել, թէ միմիայն Պալաթու Ս. Հրեչտակապետաց եկեղեցին, և այն է Պալըոս կողմն և եր, մէջը չառնելով թաղին ուրիչ մասերը, երեք ամիսներու մէջ, Հայ ըլլալով հաղոր դեռել բառեցել են, և նոյն թաղին մէջ մէկ օրը մինչեւ տասն և չորս դեռել թաղուած են։ Ժանտախտը վերափոխման տօնէն՝ այսինքն օգոստոս 12'էն՝ սկսած է չէքնել և նուազել, իսկ Սրբոց Հրեչտակապետաց տօնին, նոյեմբեր 10'ին, ընդհանուր անուն ոչինչ, ինչպէս կը վկայէ ականատեսը (ՍՐԳ.)։ Այդ միջոցներուն Զաքարիա պատրիարք չատ չէր ըսիկեր պայքարը, ինչ որ համարձակութիւն տուաւ կաթոլիկամիտներուն իրենք դիմել կառավարութեան, պատրիարքարանին դէմ ամբաստանութիւնները կրկնելով և պնդելով, որով Զաքարիա ալ գրեթէ ստիպուեցաւ ժողովով ու ժողովուրդով պատրաստուած բողոքագիրը մատուցանել կայսեր յունիս 13'ին, ուրբաթ օր մը, երբոր Ապտիւլ-Համիտ կայսրը ներկայացնող նաւով կ'անցնէր ծոց յեղն Պէյնիրնալը պալատին։ Մեղադրիչները Սարգիս Հաճընցի վարդապետ, այլ ոմանք վերջապէս վերջերս, և փոխանորդ տեր Վարդան Պապայն այլ ներկայ տհանայէ, և տանի գ էչեռնէ Աւլիը ճեմարէն կոչեցեալ, երբեմն անդամ է ոռնոռն գոյ ներկայ (ՍՐԳ.) պատկառելի պատգամաւորութիւն մը։

ՀՌՈՄԷԱԿԱՆ ԵԱՐԺՈՒՄՆԵՐ

2131. Կաթոլիկամիտներուն դիմումները միչտ անհետեւանք մնացած էին, դի թէ Ապտիւլ-Համիտ կայսրն անձամբ՝ և թէ պետութեան աւագանին սկզբնամբ հակառակ էին օտար միջամտութեան, և կասկածաւոր աչքով կը նայէին եւրոպական ազդեցութեան իրենց հպատակներուն վրայ զօրանալը։ Ուստի Պոթքոթին հնազանդեցէ հրամանը չարունակ կը կրկնուէր օտարամոլներուն։ Պատրիարքարանի դիմումն ալ յուրջ նկատողութեան առնուեցաւ, և դարձեալ միեւնոյն հրամանը տրուեցաւ, որպէսզի օտար միջամտութիւններ խստիւ արգիլուին։ Արդէն սուլտան Ապտիւլ-Համիտէ 1774'ին տրուած՝ Զաքարիայի պաշտօնը հաստատող հրովարտակին մէջ ալ նչանակուած էր, որ բնաւ եկեղեցի մը կրնայէ անոռանել ըստ օրէնս (ֆոֆոլէրէ) չտրուի, և պատրիարքին կողմէ կրնայէ նոր եկեղեցի նախօրէնս ըստ օրէնս (տհոլչէ ըէօհնէրը էլէ ֆոնհիչ ֆոֆոլէրէն) վերայ դրուած տուգանքներուն՝ ուրիչի կողմէ արգելք չդրուի (Տիի. փ. 225)։ Զաքարիա ամէն միջոցները գործածած ըլլալու համար յունիս 26'ին, հինգչաբթի օր ժողովից ետանեցելոց գլխաւորները, և յորդորեց չյամառիլ, որպէս զի ինքն ալ ստիպուած չըլլայ ձեռք քաշել և թողուլ որ ինթարկուին է տրճեան բռնութիւնը այլեւէս, որոնք կառավարութեան կողմանէ իրենց վերայ պիտի հրամայուէին։ Անոնք պատճառելով թէ եղեռնն ետանեց է, և չենն կրնար ժողովուիլ և խորհիլ, պայմանաժամ խնդրեցին. և պատրիարքն նեբեթոց նոցա դնչե է պան օրհուհայ Աստուածածնին։ Վերափոխումն քանի մի օր ետքը ներկայացան օգոստոս 17'ին, և դեղ ոսոցին, բայց չնուչին ոչ ինեցին, և օգոստոս 20'ին, երկուչաբթի օր, կրկին եկեալ՝ հարցին չնոս էրեանց, ըե ըոտ ոմնայնէ հնազանդ եմ եկեղեցոյն Հայոց, բայց հեռացէ ոչ կրնեմ ոռել (ՍՐԳ.)։ Անչուչա լատիններէ հրահանգուած էին՝ բերանացի խոստումով վտանգն անցընել, բայց խղճով և օրէնքով յանձնառութիւն չկնքել։ Իսկ պատրիարքը ոչինչ չեր է չերոս չեր ոոցել՝ ոչյոկոց չէոչին չայն (ՍՐԳ.)։ Բայց հետեւանքը չյոզոզ չեղաւ, դի պետական

որոշումը, զոր կերպով մը արդելել ջանացած էր Զաքարիա, գործադրութեան դնել հրամայուեցաւ, խստանալով Արեւմուտքի յարաբերութիւնները մշակող և օտարին հետեւող դասակարգին դէմ։ Այդ մասին յատուկ հրովարտակներով խիստ հրահանգներ տրուեցան Ղալաթիոյ Վոյվոտային, որ Ռակեղջիւրի միւս կողմին, և օտարազգիներու կեդրոն եղող Ղալաթիոյ և Բերայի կառավարիչն էր (Դիի. ժ. 229), և եչնիչէրիներու Աղային կամ ընդհանուր զօրագլխին, որ գործադիր իշխանութեան գլխաւորն էր (Դիի. ժ. 239)։ Այս հրովարտակներուն թուականը իդէպ է դնել 1778 հոկտեմբերին սկիզբները, զի նոյն ամսոյ 24'ին, չորեքշաբթի օր, ձերբակալուեցաւ Բեթրօ Զաքարիա, կամ Պետրոս Զաքարեան, Հայ ժ դէպ պոլսկնեան յոյժ հռչակ (ՍՐԳ.) և եւրոպացան դեսպանատանց թարգման (Դիի. ժ. 263)։ Անոնցմէ ետքը 1778 դեկտեմբեր 21 թուականով նոր հրովարտակ մըն ալ յղուեցաւ Ղալաթիոյ դատաւորին, որուն մէջ ընդարձակօրէն կը բացատրուէին կաթոլիկ կուսակրօնաց անտեղի և ապօրինի ընթացքները, և կը հրամայուէր անոնց հետամուտ լինել և պատժել, աքսորել և բանտարկել, և ինչքերնին գրաւել, և այդ մասին մտիկ չընել դեսպաններու միջամտութեան, օրինադրելով որ «ըլլ Ի՛նչպէ՛ էլլցո՛ն՝ ոչ վան բոյոյէ է՝ ալ կոփոբէոյէ, և ժ՛ լէյէն ընդոնելէ ինդրան նոյն, միայն թէ ամբաստանութիւնները օրէնքով քննուին դատարանին առջեւ, և ինչ- ալ ոպղոպէ ննեոյէ, ժ՛ ոփ էչեոյէ ղոյոյն ոփոորել և կամ է Թերսխանէն յաչէլ (Դիի. ժ. 238)։

ՋԱՔԱՐԻԱՑԻ ԸՆԹԱՑՔԸ

2132. Ալլեա յայտնի գործունէութեան ասպարէզը բացուած էր, և Զաքարիա պատրիարքը որոշ և կորովի ընթացքի մէջ կը գտնուէր։ Զաքարիայի դէմ քննադատութիւններ չատ են, մանաւանդ այժմեան հռոմէադաւան գրողներու կողմէն, որոնք անգութ հալածիչի մը տիպարը կը ջանան ցուցնել անոր մէջ։ Սակայն պատմական տեղեկութեանց վրայ հիմնուելով պէտք է ընդունիլ, թէ Զաքարիա ժողովուրդին և պետութեան միջև միջնորդական դեր մը կը վարէր, մէկ կողմէն ժողովրդական յուզման և նախանձայուզութեան ճնշումը կը կրէր, և միւս կողմէն գործը պետութեան ներկայացնել ետքը, կառավարական խստութեանց կերպին և ատիճանին պատասխանատուութիւնը չէր կրեր։ Իրաւ ինքն իր մէջ նկատուած աանն՝ իւր եկեղեցւոյն և դաւանութեան նախանձայուզութիւն ունէր, մանաւանդ թէ իւր եկեղեցւոյն պաշտպանութեան պարտաւորութիւնն ալ կը զգար, բայց ամէն մանրամասնութեանց հեղինակն ինքը չէր։ Անցողակի յիշատակենք, որ Զաքարիայի և ուրիշ պատրիարքներու ընթացքը դատափետող հռոմէադաւանները, պէտք չէ մոռնան Հռոմի պապերուն հաւատաքննական հալածանքները։ Հայոց կողմէ եղածները ծանօթ քաղաքներ աքսորել, և ժամանակաւոր բանտարկութենէ, և գաւազանի քանի մը հարուածներէ անդին անցած չեն։ Անոնք պապերուն պէս բոցակէզ խարոյկներ չեն բորբոքած, քաւմնելի խոշտանգանքներ չեն գործածած, և նորանոր տանջարաններ չեն հնարած։ Եթէ կ'ընդունին թէ եկեղեցական պետերու ներուած է իրենց հաւատքը պաշտպանել, պէտք է խոստովանին որ Հայերէն մեզմ և չափաւոր պաշտպանողներ ալ չեն եղած։

ՄԻՋՈՑՆԵՐ

2133. Այդ միջոցին տեղի ունեցած պատահարները միտք չունինք չատ մանրամասնութեամբ չարադրել, թէպէտեւ բաւական նիւթ կրնային մեզ տալ Պօղոս քահանային և Սարգիս պէրբին յիշատակագրութիւնները, այլ պիտի սուպուէինք չատ աւելի երկարել մեր պատմութիւնը։ Մեղի մոտիկ ժամանակներ չատ մանրամասնութիւններ պահած են, և թերեւս հետաքրքրական ալ են, բայց մենք որոշ գիծէ մը անդին անցնիլ չենք ուզեր։ Պետական հրամանները կը տրամադրէին հետեւողները բանէ- և գանէ- իրարու, և անաստանները թիւապարտութեան ենթարկել կամ գաւառներ աքսորել, և միանգամայն ինչքերնին չարքունիս գրաւել։ Վերջին պայմաններ պետական պաշտօնեաներու աչալուրջ գործունէութեան կը յորդորէր։ Այսպիսի առիթներ անձնական կիրքեր և մանաւոր

վրէժինդրութիւններ ալ ասպարէզ կը գըտնեն իրենց ձգտումները յագեցնելու, ուստի ամենայն օրինաւորութեամբ սկսուած գործ մըն ալ կրնայ զեղծումներու առիթ ընծայել, որոց համար օրէն չէ պատասխանատուութեան ենթարկել օրինաւորութեան սահմանին մէջ գործի ձեռնարկողը։ Երբոր տեսաւ Զաքարիա, որ է յիւսոց անդեմ ճոհիլէց, ևերդ ևերդ խոչոռական արարքներ կը կատարուին կաթոլիկ մեուելներուն վրայ, և թշնամութիւններ կը գործուին հետաւալներուն դէմ, պարտք սեպեց աւագերէցներու ձեռքով խստիւ արգիլքներ հրատարակել ևկեղեցիներու մէջ, թէ գործը ինչ չանչեալ է, վասնոյ ես պոռթլեցայ եմ ընդ և ես պոկելոց, և յեղ ինչն հպոռկիլ և սէրով ընդ նոսա վերել պէտք է (ՍՐԴ.)։ Ձեռք առնուած խստութեանց երևսէն, երբ ալ է նոցանէն էլեսուցոյց, գոնէ չատեր է ինչոց և է ոչոր անչոց հնազանդութեան ցուցանէին (ՍՐԴ.)։ Սակայն անոնք ալ, որ խնդրէ եղեն չոյժ, հաստատամիտ չեղան, միայն պետոց ժամանակ ինչ չոչեալ, և ապա գոչյան անկրեն չոռոչէն (Դիի. ժ. 258)։ Ըմբոստութիւներ կամ դարձը՝ Հայոց ևկեղեցիներ չգալու կամ գալու, և անոնց պաշտօնեաներէն խորհրդակատարութիւն չընդունելու կամ ընդունելու մասին ըլլալով, չայտնի է թէ ետ դառնալնին՝ լատին կամ լատինացեալ պաշտօնեաներու միամիտ ժողովուրդին խիղճին վրայ բռնանալուն հետևանքն էր։ Եէնիչէրիներու աղային ուղղուած հրովարտակին մէջ իբր ելոչէ կը յիշուին 35 անձեր, ոմանչ վերջապէս և ոմանչ չոհոնոչ (Դիի. ժ. 243), սակայն չանուանէ չենք գիտեր թէ որոնք են այս թիւին մէջ մտնողները։ Հաւանաբար պատրիարքարանէ հաղորդուած հռոմէադաւան կարգաւորներու ցուցակի մը կ'ակնարկուի։

ԵՊԱՐՔՈՍՆԵՐՈՒ ՓՈՓՈԽՈՒՄ

2134. Սուլտան Ապտիւլ-Համիտ ներքին համոզմամբ և հաստատուն որոչմամբ կը պայքարէր օտարամոլութեան դէմ, և ժամանակին հպարտան ալ համամտութեամբ արձակած էր վերոյիչեալ հրովարտակները։ Կաթոլիկամիտներ՝ հուսանքր իրենց նպաստաւոր դարձած կարծելին, երբ հպարտութեան հասաւ Տէրէնտէլի Մէհմէտ փաչա, որուն պոլիչեռնոչէն կամ սեղանաւորն էր Սաֆվան նալպանտօղլու, իրենց խմբակէն։ Տէրէնտէլին նալպանտօղլուի թախտնձանաց վրայ ալ՝ համարձակեցաւ թագաւորէն հրովարտակներու հետ կոչուիլը խնդրել, այլ միայն Արաբկիրցի Նազարէթ Մուրատկեանց աղայի ձեռօք լուր ղրկեց Զաքարիայի, թէ չէր ըսեր ֆոչրչ նոռել սենեն ալմչ պոռոհոնոչ և տրիտրոչ ընոմ, միայն թէ չեռոչցչ է նեղելոչ ընոմ, ոչինչն չլոնլչեն (Դիի. ժ. 261)։ Առաջարկին հանդէպ Զաքարիայի յայտնած բացարձակ մերժումին վրայ, Տէրէնտէլին կայսեր կը դիմէ թէ ևմ ընչոչց պոռրիոչն ֆոնել պէռո և ևմ չէոնլչեն ոչոչ, և նա չէոչ պոռրիոչոնլչեն ոչոչ (Դիի. ժ. 263)։ Բայց Տէրէնտէլիին եպարքոսութիւնը չատ չտեւեց, և յաջորդեց Մէհմէտ Իւմմի փաչա՝ Ազափաչա մականուանեալ, որ գործին մտադրութիւն դարձնելու չափ ալ ատեն չունեցաւ, և պաշտօնի անցաւ արքունի գինակիրներէն Մէհմէտ Զիլիֆտար փաչա, Գարա-Վէզիր կոչուած, ոչ այնչափ խնդիրին կամ քաղաքականութեան, որչափ իւր չահուն և հաչուին հետամուտ անձ մը։ Անոր մօտ բաւական ընդունելութիւն գտան կաթոլիկամիտներր, հինգ հարիւր քսակ գումարի համար մուրհակ չանձնելով, երբ իրենց նպաստակը չյաջողցնէ, և 300 քսակը հետզհետէ վճարելով։ Բայց Տէրէնտէլիի և Իւմմիի եպարքոսութեան օրերուն ալ կաթոլիկամիտներու դէմ հրովարտակները իրենց կատարեալ ոյժը պահեցին։ Նալպանտօղլուն ալ չյաջողեցաւ իւր նպաստակին մէջ, և բոլորովին տկարացաւ Տէրէնտէլիին փոխուելուն վրայ։ Ֆրանչիսկաններ և բանտարկեալներ աւելի դիւրաւոր նկատուած անձերէ եղան, իբր ցոյց և իբր ապաւորութիւն սփռելու միջոց, որովհետեւ որևէ միջնորդութեան կամ համակերպութեան նչանի վրայ՝ իսկոյն ետ կը կոչուէին կամ բանտարկութենէ կ'ազատէին։

2135. Պետրոս Զաքարեան մեծանուն քարգմանին՝ աւագ հրաման եղած էր որ Տարտանէլ մնկնի, իւր բուն պաշտօնատե-

ղին, և միայն չերթալուն վրայ, նոյն տեղ բերդարգել ղրկուեցաւ (§ 2131), բայց նոյն ինքն Տէրէնտէլիին՝ Զաքարիայի մօտ ըրած միջնորդութեան վրայ, թէ նա չէր թոյլ է տալ ընդհանրապէս հաղորդուիլ ուրիշ ազգի մը հետ, Զաքարիա դիւրաւ զիջաւ, որ Գետրոս ազատուելով՝ կարենայ ատոր տեղ ուրիշ մը ղրկել (Դիւ. ժ. 264)։ Գլխաւորներէն մէկն էր նաև Գէնկլի Ռափայէլ, որ սակայն պահից վերջն էր, և հօրը տեղ որդին Անդրեասկլեցին և 1778 նոյեմբեր 5'ին աքսորեցին, բայց չեփ տալէ մի տարի ազատեցաւ վասն հրաժարելուն իւր ուղղութենէն (ՍՐԳ.)։ Գաղղիոյ դեսպանին միջնորդութեամբ ալ՝ տալէ մի ալեքհան ընդ երէս կրնտրելի թիապարտութենէ արձակուեցան (ՍՐԳ.)։ Այսպէս չարունակաբար խստութիւն և թուլութիւն իրարու յաջորդած էին, մի Զաքարիայի նպատակը, ոչ այլ ինչ էր տանել, երբ ոչ ձեւերը գործածել տալ գտնելոյ նոցա ի ընթ ճանապարհէ իւրեանց, և ոչ թէ վրէժխնդրական բռնութիւն վարել։ կրնանք իսկ աւելցնել, որ եթէ չատ յոյս ալ չունէր, որ հետևեալները քեզի ի գործ իւր, գոնէ կը հոգար որ չքաւն պահել մըթոցի՝ անխորտ ի յուշիկ պատրաստ (Դիւ. ժ. 265)։ Այդ միջոցին տեղի ունեցան կուտինա կամ Ջէօթանիա քաղաքի պատահարներն ալ, ուր կաթոլիկամիտներ տեղական իշխանութիւնը չհաւնելով, յանկարծական յաջողութիւն ունեցան Ս. Սարգիս եկեղեցին գրաւել հանգերձ ոստիկանաւն, և կոտրել զպաշտօնեան օտար։ Հազիւ թէ լսեց Զաքարիա, յատուկ պետական հրամանագրով հոն ղրկեց Յարութիւն կեսարացի վարդապետը։ կաթոլիկամիտներու գլխաւորներէն երկուքը միայն՝ Եսայի Տէր-Գալուստեան և Սարգիս Դաւիթեան աքսորուեցան իբրև օրինակ, եկեղեցին և ուսումնարանը նոր առնուեցան, և մնացեալներ իսկոյն հպատակեցան, վարդապետին ձեռք երդմնագիր տալով, որ եթէ երբեք նորէն ոչ հնազանդիմ պատրիարքարանին, եղեղէն ինչն մեր յօրտոնէ, և անյիշ մեր յօտոր և ի ծոցոյնքեն ինչ (Դիփ. ժ. 255)։ Այս քանի մը մանաւոր դիպուածները յիչեցինք, որպէս զի ընդհանուր կերպով եղելութենց ձևն ու կերպը ցուցուցած ըլլանք։ Պատրիարքին և ազգին կողմէն եղածը, պաշտպանողական պայքար մըն էր՝ դուրսէն եկող լատիններուն դէմ, որոնք կ'ուզէին հնազանդ քրիստոնեաները իրենց նորակազմ քրիստոնէութեան դարձնել, ուրիչ նպատակ չունենալով, բայց եթէ իրենց ազդեցութիւնն ու իշխանութիւնը ընդարձակել միամիտ և խղճմտ Արեւելցիներու վրայ։ Հարկաւ նոր ընդարձակութեան պէտք կը զգային, քանի իրենց իշխանութիւնն ու ազդեցութիւնը կը նուազէր Արեւմտեան ազգերու, մանաւանդ Գերմանական և Անգլիական տարրներու վրայ։ Իսկ Հայերուն մէջէն իրենց հրապոյրներուն հետեւողներէն մէկ մասը՝ ուսման և զարգացման փափաքէն մղուած՝ լատինական դաւանութեան համամտութիւնը իբրեւ անհրաժեշտ միջոց կը նկատէին. իսկ ուրիշ մաս մըն ալ արտաքին դիւրութենց և նպաստից և պաշտպանութեան բարիքը կը տեսնէին լատիններու մօտաւորութեան մէջ։ Սակայն ասոնցմէ աւելի բարձր պէտք էր ըմբռնել ճշմարիտ ազգասէր և ճշմարիտ կրօնասէր հոգին, որով կը գործէին պատրիարքն ու ազգը՝ հայրենասէր հնազանդ ուղղութենէ և հնազանդ ուղղափառութենէ չշեղմնալու համար։

ՀՄՈՄԷԱԿԱՆԱՑ ԳՈՐԾԵՐ

2136. Զիլիֆտարին կաշառակուրծ մուտքն օգտուելով և 500 քսակի խոստումով անոր մօտենալէն, յայտնի կերպով կը յատկանչէ լատինամիտներու ոյժն ալ դիտումն ալ։ Շատ ջանայաց խորհրդով Մէհմէտ Զիլիֆտար եպարքոսէն սպասածնին էր, չի շատել ազէ ինչ աբսոցէ յարակ պարբերութիւն և եկեղեցիս, որ եթէ յաղողէր, յանձն կ'առնէին եւս տասնոյն տակաւին ի խղճմտ ազատանալ (ՍՐԳ.)։ Այդ խորհուրդին, զոր ուրիշ տեղ ալ յիշեցինք, ձեռնտու էին լատին դեսպաններն ալ և գլխաւորապէս Գաղղիականը, որ իրեն ազդեցութեան համար յատուկ չրջանակ մը ունեցած պիտի ըլլար։ Զիլիֆտար դիւանագիտական տեսութիւններով Ապտիւլ-Համիտ կայսեր միտքը չփոթելու գործածեց, և մինչեւ իսկ ձեն տալ եթ պարբերութիւն ընդ հեռաբերացն անկանելն, ըսելով՝ իմ ժամանակս մի

առնել ըլլա կ՚ըսես. որովհետեւ չհամարձակեցաւ պաչտօնապէս ետ առնել տալ այն հրովարտակները, որ կանուխէն արձակուած էին օտարասէրներուն դէմ (§ 2131)։ Զաքարիա իսոնէմութիւն սեպեց իւր ձեռնարկը թուլցնել, այլ ոչ դադրեցնել, նախադասելով գեղջէն գործել, ուստի գերի տոլչել և գերի ըռլել ընդունայր, գինչ- ցիոնել ուզեր Զիլիֆտար վեզիրէն, որ 1779 առաջին ամիսներուն մէջ պաչտօնի անցած ըլլալով, 1781 փետրուար 8'ին մեռաւ է-ըսկի շեհր (ՍՐԳ.), որ է փայծաղնացաւը։

ՍԻՄԷՈՆԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

2037. Եղելութիւնք այդ վիճակի մէջ էին կ-Պոլսոյ մէջ 1780 տարուընն կէսերը, երբ յանկարծ անակնկալ գործ մը, և անհաճոյ գործ մը, բոլորովին ուրիշ կողմ դարձուց Զաքարիայի գործունեայ աչխոյժը։ Մայրաթոռոյ գահակալ Սիմէոն կաթողիկոս կը վախճանէր, և միաբանութիւնը կը չտապէր յաջորդն ալ ընտրել և օծել։ Սիմէոն կաթողիկոսի արդիւնաւոր գործունէութիւնէն վերջին անգամ պատմեցինք տպարանի հիմնարկութիւնը 1771'ին (§ 2122), քղթագործարանի հաստատութիւնը 1776'ին (§ 2123), և նոր տօնացոյցի հրատարակութիւնը 1775'ին (§2128), որուն կիրառութիւնն ալ սկսած էր՝ 1777 տարւոյ կաղանդէն։ Սիմէոնի կեանքէն և արդիւնքէն չատացանք գլխաւոր կէտերը յառաջ բերել, քանի որ մեզմէ չէր կրնար սպասուիլ՝ որ կատարեալ կենսագրութիւն մը տանք, որուն համար նիւթեր ալ չէին պակսիր, մանաւանդ իւր յիշատակարանին երկու հատորներով հրատարակուելէն ետքը Գիւտ Աղանեան աւագերէցին հոգածութեամբ (ԴԻՒ. Գ. և ԴԻՒ. Ը.)։ Սիմէոնի արդիւնքներուն գլուխը կրնայ դրուիլ կրթութեան համար հոգածութիւնը, որով էջմիածնի հաւաքից նալեանի և պաղտասարի այակերտութենէն ասդին եկողները, ինչպէս էին Յարութիւն Բասմնցի, Պետրոս Բնեռդումեան, Սահակ Անագին կրտսերը, Պետրոս Ղափանցին, Ներսէս Աչտարակեցին, որոնց հետ կրնան յիշուիլ, նաեւ Յովսէփ Արղութեան և Եփրեմ Զորագէղցին (ՍՐԳ. Ա. 77)։ Բայց ոչ միայն իրրեւ ուսուցիչ, այլ և իբրեւ չինարար, անտեսապետ, վարիչ, քաղաքագէտ, տպագրիչ, մատենագիր, չատ ընդարձակ և չատ բազմերեսայր արդիւնաւորութիւն ունեցաւ իւր կաթողիկոսութեան մէջ։ Նչանակելի է անոր ամէն կողմ տարածած հոգածութիւնը, և Ծիչատակարանին մէջ տեսնուած քղթակցութեանց ցանկը՝ լուսաւոր կերպով կը հաւաստէ թէ Հայ տարրին գտնուած ամէն անկիւնները, իւր մտադրութենէն վրիպած չէն, և ամէն տեղ հասած են իւր գիրերը՝ ուղղելու, խրատելու, յորդորելու և միխիթարելու համար։ Տպարանը պինքն երկասիրութեանց ալ հրապուրած էր, Տօնացոյցէն ետքը հրատարակեց Զքօսարան-Տաղարանի երկրորդ տպագրութիւնն ու Պարտավճառը։ Բայց չհասաւ տպագրել երկհատոր Քարոզագիրքը, և Պորփիւրի ու Աբխատոտէլի, Աչխարհքի ու Գրակղի նուահատոր լուծմունքը։ Իւր գործերէն միայն Ջամբռը հրատարակուեցաւ 1873'ին։ Բազմաթիւ են նաև եկեղեցական գործերու համար անոր կազմած կանոնները, որոնք երբէք Ծիչատակարանէն քաղուէին՝ կրնային կանոնագիրք մը կազմել։ Սիմէոնի գործունէութիւնը այնչափ աւելի զարմանալի կը դառնայ, որ ուժեղ ու տոկուն կազմութիւն ալ չունէր, նիհար էր մարմնով, ցաւագար և հիւանդկոտ, այնպէս որ 1778 գարունէն դէտ 68 տարեկան եղած ատեն, բժիչկներ տեսնալով անոր անկեալ և հիւծեալ վիճակը, անհրաժեչտ դատեցին, որ էջմիածնի աննպաստ օդէն հեռանայ, և Ագուաձի ստորոտը, հովասուն բարձունքներու վրայ հաստատէ իւր բնակութիւնը (ԴԻՒ. Գ. ճղբ)։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱԳՆԱՊ

2138. Բիւրակեան երթալէն հազիւ քէ ամիս մը անցած էր, որ Հերակլ վրաց թագաւոր մեծ զօրքով երեւանի կուսակալ Հիւսէյին խանին վրայ պատերազմի կուգար, վասնզի խոստացուած հարկը քանի տարիներէ իվեր անվճար մնացած էր։ Հիւսէյին սարսեցաւ երթալ վրաց բանակը եկաւ հաստատուիլ Համզաչիման գիւղը, և դեսպաններ հասուց Սիմէոնի, որ նորէն միջնորդութիւն ընէ Հերակլի առջեւ։ Սիմէոն մինչեւ իսկ ժամեցոյց վեր կենալ կոթող վէր, ուստի իւր կողմէն երկու արքեպիսկոպոսներ յղեց Հերակլի,

Մկրտիչ Շուռթեցի տեղապահը և Գալուստ Աչտարակեցի աթոռակալը (01 ՕՐԱ· 185), և Հիւսէյինի վճարելու պատրաստականութիւնը երաչխաւորելով, հազիւ կրցաւ Հերակլը իւր բանակով ետ դարձնել, և վտանգը հեռացնել։ Այդ պարագային կը կապուի տպագրական մամուլի մը նուէրը Սիմէոնի կողմէ Հերակլի արուած, որ վրացերէն տպագրութիւան սկզբնաւորութիւնն եղած կը նկատուի (ԴԻԻ· Գ· ճղթ·)։ Տարին բոլորեցաւ, Հիւսէյին խոստումը չկատարեց, և Հերակլ սաստիկ զայրացած, 1779 գարունին, նորէն իւր բանակին գլուխն անցած երեւանի վրայ կը քալէր։ Սիմէոն գարձեալ օգափոխութեան համար Օչական էր ղրկած։ Հոն հասան Հիւսէյինի դեսպանները, թախանձելով և ստիպելով երեւան երթալ, որ միասին հոգան՝ կուսակալը տագնապէն և երկիրը աւերածէ ազատել։ Սիմէոն հակառակ սաստիկ տկարութեան ստիպուեցաւ չարժուիլ, երեւան գալ, և նորէն միջնորդութիւն ընելու յանձնառու ըլլալ։ Կաթողիկոսն ու միաբաններր զգեստաւորուած և թափօր կազմած դիմաւորեցին Հերակլը, Աչտարակ գիւղի մօտերը. Սիմէոն խաչին վրայ երդուընցնելով ջանաց Հերակլը կատեցնել, որ դրամական գումարի մը համար մարդկան արիւն չթափէ և հայաբնակ երկրին խեղճութիւն չպատճառէ։ Անհնար եղաւ Հերակլին պայոյթը զիջուցանել, Հիւսէյինին խոստումներր խաբէական նկատուեցան, և Սիմէոնի երաչխաւորութիւնը անբաւական։ Երեւան վրացիներէ գրաւուեցաւ, աւարառութիւնը բոլոր Երեւանի դաշտին մէջ տարածուեցաւ, ուր բոլոր Հայ գիւղեր էին որ կողոպտուեցան ու կոտորուեցան, և եբեսունէ աւելի եկեղեցիներ քանդուեցան, բաւական թուով Հայ գերիներ տարուեցան, Էջմիածնի աթոռին ինսան ալ հարիւր հազարներու բարձրացաւ։ Սիմէոն արտասովոր գոհողութեանց ալ ենթարկուեցաւ, անագին բազմութիւն մը վանքի պարիսպին մէջ պատսպարելով և սնուցանելով, և խոշոր գումարներ փրկանք վճարելով (ԴԻԻ· Գ· ճղբ·)։ Մեղմ կաթողիկոսը խորապէս յուզուեցաւ և անմխիթար վշտացաւ, այնչափ տարիներու ճիգերն ու արդիւնքները չանհետացան և աւերն ու աւարը և կործանած գիւղերը նչմարելով, և անոնց խեղճութեանց լուրերը առնելով։ Ձմեռուան վերահաս ցուրտը և Իմէրէթի Սողոմոն թագաւորին դլուխ քաչելը ստիպեցին Հերակլը ետ դառնալ, և վրացի բանակը երկու ամիս մնալէ ետքը պարպեց Երեւանն ու գաւառը, երբ երկիրը անյոյս կործանման վիճակ էր առած։ Փախուստն ու խուճապը, և բռնադատուել գաղթականութիւնն ալ ամէն յոյս փճացուցուած էին։

ՍԻՄԷՈՆԻ ՄԱՀԸ

2139· Հոգւով ընկճուած, մարմնով հիւծուած, ցաւերով սուգուած, վշտագին օրեր անցուց Սիմէոն 1779–1780 ձմեռուան մէջ։ Սրտակէզ եռանդով կը ջանար բան մը ընել, աթոռին վնասները և ժողովուրդին թշուառութիւնները դարմանել, այլ կը պակսէին իրեն անձնական ոյժն ալ, պահանջուած միջոցներն ալ։ Ներքին և արտաքին ցաւերով չրջապատուած տակաւին կը տոկար. անտանելի վիճակի մէջ ձմեռն ու գարունը բոլորեց, և վերջապէս 70 տարեկան, բայց բոլորովին հիւծած հոգին աւանդեց, 1780 յուլիս 26, վարդավառի կիրակի օրը ժամը 4'ին կէսօրուան մօտ (ՇԱՀ· Ա· 231)։ Ծուղարկաւորութիւնը կատարուեցաւ մեռելոցի երկուշաբթին, և մարմինը թաղուեցաւ Ս. Գայիանէի գաւիթին հարաւակողմը։ Տապանագիրը իբր իր բերնէն գրուած է (ԴԻԻ· Գ· ճղչ.), և անհաւանական չէ որ կանխաւ իրմէ յօրինուած ըլլայ։ Սիմէոնի գործերուն և դիտումներուն մասին ինչինչ դիտողութիւններ ըրած էինք, գլխաւորապէս Կոլոտի նկատմամբ գրածներուն (§ 1946), կ-Պոլսոյ պատրիարքութեան չուրջը ունեցած կարծիքին (§ 2085), և տօնացուցականի կարգադրութեանց վրայ (§ 2127)։ Սակայն այդ չարգելեր որ չճանչնանք անոր վրայ այն վեհ և ընտիր հոգիներէն մին, որ իրենց արթուն միտքով, լուրջ չանքերով և անխոնջ աշխատութեամբ՝ տիպար գործիչը կը կազմեն, և իրենց ժամանակին տիրապետող դէմքը կը դառնան։ Իւր վրայ խօսած առիթներս չանացինք զանազան ճիւղերու մէջ չէն յիշել կարեւոր դիտելիքները, որպէսզի զգալի կերպով ցուցուի նորա բազմապիսի գործունէութիւնը, և այստեղ կրկին ամփո-

փելու պէտք չենք տեսներ։ Իրմէ մնացած յիշատակներէն ամենէն գլխաւորն է Մայր աթոռոյ վարչութեան և մատակարարութեան մէջ՝ կարգ ու կանոն և գիր ու արձանագիր մտցնելը, որ նոր ժամանակներու նկարագիրը կը կազմէ, և Սիմէոն գրեթէ անոր հիմնադիրը եղած կ'ըլլայ։ Ցիշատակելի է նաև վանական կամ միաբանական կառավարութեան մէջ իմաստութիւնը բրնութեան տեղ փոխանակելը։ Իր օրով դադարեցաւ խարազանին և գաւազանին իբրեւ խրատի և ուղղութեան միջոց գործածուիլը, որով իրմէ առաջ կը խոչտանգուէին ամենէն բարձրաստիճան և ամենէն պատկառելի եկեղեցականներն ալ (Դիւ. Գ. ճղբ.)։ Տէր ողբմ- սրտառուչ աղօթքները, Աբէ Ա- ոոած զգայուն երգը, և Ահնոոոբէ Եբրդրդոնէն սովորական դարձած մաղթանքը, Սիմէոնի հնդինակութիւն են, որ իր առեն իրրեւ կամաւոր աղօթք պատկ առիթներու մէջ կը գործածուէին, բայց այնչափ մեծ ընդունելութիւն գտան, որ այսօր պատարագներու և նկնեաններու և հոգեհանգստեան իբրև պարտաւորիչ մաս նկատուած են ու կը գործածուին այնպիսի մտադրութեամբ մը, որ կարծես թէ Լուսաւորիչ մնացած և անյիշատակ ժամանակներէն սրմանացած ըլլային։ Երբ կը դիտենք որ այս մաղթանքները անարուեստ յօրինուած մր չեն, կը տիպուածնք անոնց մէջ յայտնուած զգացումին վերագրել՝ այդպէս արտադրաւ եղած ըլլալը, և անոնց մէջ տեսնել Սիմէոնի եռանդուն և ազդասէր զգացումները։

2140. Սիմէոնի զգացումներուն մէջ նշանակելի կը գտնենք Հայ եկեղեցւոյ պահպանութեան մասին ունեցած նախանձայուզ ջանքերը, և անոր վարդապետութեան մասին րղզացած խորին համոզումը։ Եթէ նա իր գործունէութեան մէջ բուռն չեղաւ, և որչափ կրնար բուռն միջոցներէ խորշեցաւ, և կաթոլիկութեան միտեալ եկեղեցականներուն՝ Սարաֆեան Սարգիսի և Բասենեան Յարութիւնի և նմաններու հետ հաչտ և բարեկամական յարաբերութիւններ պահեց, արտաքին նպաստներ ալ ընձեռեց. այդ միմիայն չանեցողական ընթացքի հետեւանքն էր, և ոչ իրեն անոնց հանդիպիտ կամ հակառէտ ըլլալուն նչան, ինչպէս հռոմէադաւան գրիչներ կ'ուզեն մեկնել։ Կարծես թէ չեն կրնար ըմբռնել, թէ հնար ըլլայ տարբեր կարծիքի տէր եղողներու հետ ալ մարդասիրական և բարեկամական յարաբերութիւններ պահել։ Սիմէոնի ներքինին զեղուածը պէտք է տեսնել, իւր տպագրած տօնացոյցին յառաջաբանին մէջ (ՍԻՄ. 2), որուն մասին թէպէտ ինքն պոռոեր տուած էր, թէ տօնացոյցին բոլոր նոր տպագրութեանց մէջ ըոբց ոոելացոոցան և պակեցոոցան և ոոանց ընդոոման պղեալէ ընդ ֆբէոյ (ՍԻՄ. 556), սակայն սովորաբար զանց եղած է։ Սիմէոն, որ այնչափ սիրով տպագրական հրատարակութեանց նուիրեալ էր, զայրացմամբ կը բողոքէ այն հրատարակութեանց դէմ, որոնք Հռոմէ, Վենետիկէ և Թրիեստէ կը սփռուէին այն առեն, իբր զի կ'ըսէր, բոլոնան չէբեան հնափոռնէց ոբէց լոբդոպեթոց, և ոպակնեալ ալլալչն զնեռ հեչնակոց, և ըոռ ակոբժակոց խոբեռնց չնել և ոբպես կոչն, ֆբեն, պչեն և սֆբեն յալֆը մբ (ՍԻՄ. 547)։ Առով կ'ակնարկէ Հռոմի կողմանէ իբր թէ սրբագրութեամբ, այլ իսկապէս աղաւաղմամբ, հրատարակուած ծխական գիրքերուն, որոնց վենետիկի ու Թրիեստ ալ տիպուած էին տպատառիկ։ Խոսիւ կը զգուշացնէ ազգայիններ հետու մնալ այդպիսի հրատարակութեանց կիրառութենէ, որոնք գործ են կ'ըսէ Նօրեայ Լբնեբոնոց (ՍԻՄ. 16)։ Այս անունով կաթոլիկներուն կ'ակնարկէ, չուզելով թերեւս ուղղակի իրենց կշտամբ տալ, և իբրու խոստանալով հռոմէադաւանները և բողոքականները, այսինքն առհասարակ Հայ եկեղեցւոյն դէմ մաքառող Արեւմտեան քրիստոնեաները։ Սակայն առաջիններ Հայերուն դաւանութիւնը պակասաւոր կը գտնեն, մինչ երկրորդներ աւելորդով բեռնաւորուած կը կարծեն, և իրարու հաւասիտ չեն։ Անյարմար չէր ըլլար աւելցնել, թէ երկու ծայրերուն բաղդատմամբ՝ միջինը ապահով և ուղիղ պէտք է ընդունիլ, ծանօթ առածին համաձայն։ Սիմէոնի ներքին համոզման իբր կնիք յառաջ կը բերենք իւր հայրապետական վերջ յայտարարութիւնը, Հաոոն ոբ ոչ է հնոցեալ չի նորոքեոցի, և

ՂԱՒԱՆԱԿԱՆ ՋԳԱՑՈՒՄ

ոչ է ընդէմ՝ չէ լուծէ. այլ ընդհօտն Քրիստոսի ուռնիմ է սրբոյ Լուսաւորչին ժերմ և է նորին Շառաւիղացն չկոպտութիւ հասոպ, ըստ պատուհասին, և չկենչցին սանդրունին սրբոյ եկեղեցոյ, որ բաւական է մեղ է Քրիստոսին և է կեանս յաւիտենական ածել։ Որ և վկայ, և երբեք հատոր էի գնեմ չէս ասուլ Քրիստոսի և սրբոյ Լուսաւորչին ժերոյ է հանդերձելոճն, չէ երբ ոք ընդ այս հատորոյս և պատանութին, ըստ ուն եկեղեցիս Հայոպունեայց, ուն եցէ նաև չէործ քրէս ըսդ պատուիրանին Քրիստոսի, անիրծէ+ ծառանիելոց է չկեանս յաւիտենական (ՍԻՄ.551)։

2141. Այդ վանէ և ուղղութիւ զգուշութեանց հանդէպ, կարի կր նախանձան այնպիսիներ, որունք դէպ ՍԱՐԳԻՍ վան մարմնական հեշտութիւն ՍԱՐԱՖԵԱՆ ընդ և անոնդ սրբութիւնն ընդ էրեանց, ինչպէս կր գրէ Սիմէոն, յորին յայտնէ+ երևոնելոյ՝ որ+ պերճ են ընդհատութիւնբ և հարատութիւնբ, և ասդա+ է մարմնական պատութիւնդ յայտնական բռնութիւնդ, սակայն գացած անդերնին էքրև զիրքառնոցէ+ են համարելոլ, և յայս որոց մեղ արհամարելոլ+ (ՍԻՄ.545)։ Այդ տարագէպ ուղղութեան հետևողներուն առաջին կարգին մէջ ցուցուցինք Սարգիս Սարաֆեան եպիսկոպոսը, դոր վերջին անգամ սանդք նայևանի, բանիւ և գրով հռոմէական դէմ մաքառողի մր, լիաբերան գովասանները հիւսել (§ 2084), և մաղթողական հայցուածներով իր խօսքը կնքել, որ Աստուած ընդէր երանելոյ պարբերութէ այսրէի է լսելին իւրոնդ ընդ սրբոյ+ իւրոյ ժ-յէցոսոյ պեսութիւնբ է-իվ (ԳԱՀ.309)։ Սարաֆեան չարունակեց Ղալաթիոյ քարոզչութիւնը վարել Պատմաճեանի օրով ալ, ուր իր կատկածաւոր ընթացքը քահանայից մէջ դիտողութեան առիթ կու տայ 1766'ին, բայց իր ճարտար դարձուածով և Պատմաճեանի հաշտարար միջամտութեամբ միջադէպը կը փակուի (ԳԱՀ.110)։ Սակայն Սարաֆեան՝ Ծարութիւն Բասենեան նուիրակին Ղալաթիոյ նուիրահաւաքութեան ձեռնարկելէն օգտուելով, տեղը անոր կը թողու և ինքն Օրթաքէօյի եկեղեցին կը փոխադրուի, ուր կը մնայ մինչեւ 1772։ Սարաֆեանի աշակերտը, իր վարդապետէն առնելով կը պատմէ, թէ Սիմէոն ուզած ըլլայ 1771'ին, կարգել զայն ժեծ նահապետ է ընդ Պոլիս, բայց լաւ խորհած է աւելցնել, թէ Սիմէոն գրեր էր իւրոնդ ընտրեն (ԳԱՀ.115), որովհետեւ Սիմէոնի յիշատակարաններուն մէջ այսպիսի ակնարկ մր չկայ։ Ընդհակառակն 1767'էն իվեր Զաքարիա կաղզուանցին կը վարէր Կ-Պոլսոյ նուիրակութիւնը (§ 2118), և երբեք Սիմէոնի միաքէն անցած չէր զայն փոփոխել։ Պատմաճեանի ալեկոծ պատրիարքութեան առեն, թեպետ յուսացած է Սարաֆեան անոր անկումէն օգտուիլ, բայց հետզհետէ Զաքարիայի զօրանալը տեսնելով, և Օրթաքէօյի մէջ ալ իր ընթացքը քահանայական պատճառով նոր դիտողութեանց առիթ տալէն ապդուելով, Կ-Պոլիսէ հեռանալու որոշման կը գառնայ, և Ցարութիւն Պետահանեանի օգնութեամբ (ԳԱՀ.321), ճշդէ՛ բայց չէ+ (ԳԱՀ.117) մայրաքաղաքը կը թողու 1772 սեպտեմբեր 29'ին, և 24 օրուան նաւագնացութեամբ Մարսիլիա կը հասնի հոկտեմբեր 23'ին (ԳԱՀ.118)։ Իրր 40 օր հոն մնալէ ետքը Անթիպ, Գենուա և Բիզա (Antibes, Genova, Pisa) հանդիպելով դեկտեմբեր 18'ին կը հասնի Լիվոռնո, ուր ծանր և վտանգաւոր հիւանդութեամբ կը տառապի մինչեւ 1773 փետրուար։ Ամիսէ մը հիւանդութիւնը կը նորոգուի, բայց դարձեալ վտանգը կ'անցընէ, և թէպետ Հռոմ երթալ կը փափաքի, և Վենետիկէ Յովհաննէս Մեղրոսեանէ կը հրաւիրուի, սակայն ունեցած ախտին՝ չրջողորեան օդի չդիմանալուն վրայ (ԳԱՀ.124), կեանքէն յոյսը կը կտրէ, կտակը կը պատրաստէ, և սեփական գերեզման ալ կը չինէ, և 1773 հոկտեմբեր 2, առաւօտեան ժամը մէկին կը վախճանի և կը թաղուի հանդիսաւորութեամբ Աստուածածին միաբան հայր կարապետ Հալաճեանի, որ Հայոց պեղոյս ծողվրդապետ էր (ԳԱՀ.130)։ Սարաֆեանի յեղյեղուկ կեանքը բաւական է իր նկարագիրը ցուցնել, ուստի աւելորդ կը սեպնենք այդ կէտին վրայ անդրադառնալ։

2142. Կոստանդնուպոլսոյ մէջ տիրող չփոթ կացութեան միջոցին, մէկ կողմէն Արեւմուտքի հանգստութիւնը, և Արեւմուտք դիմողներուն նպաստաւորուելուն հրապոյրը, միւս կողմէն պաշտօնի մրցակիցներէն ոմանց անյաջողութեան մատնուիլը,

աւելցնենք լաւագոյն բախտի մը հանդիպելու ակնկալութիւնները, կողմնակիցներ չունենալու համար պապական քարոզիչներու եւ եւրոպական դեսպաններու թափած ճիգերը, եկեղեցականներէ ոմանց առիթ ընծայելին Արեւելքէ հեռանալ եւ չունչերնին Արեւմուտք առնել, ուր հաստատուած կամ ապաւինած ազգային-ներ դիւրակեաց վիճակ մը ունենալ կը կարծուէին։ Այդ չարժումին մէջ պէտք է զատել զարգացման նպատակով եւ դաստիարակութեան փափաքով գացող դեռահասները, որոնք հռոմէադաւան միաբանութեանց կամ վարժարանաց աչակերտութիւնը կը կազմէին, եւ մինչեւ մէկ աստիճան իրենց գործը գնդերեսելու պատրուակ կրնային գտնալ։ Հռոմէադաւան գրիչներ ասոնցմէ չատ աւելի կարեւորութիւն կ'ընծայեն՝ Հայ եկեղեցւոյ մէջ յառաջացող եպիսկոպոսներէ ոմանց, որոնք իրենց ընթացքին վերջերը Արեւմուտք անցնելու եւ այնտեղ ստիպուիլ հռոմէադաւանութեան հետեւելու հարկին ներքեւ գտնուած ևն։ Ասոնց գործը իբր հռոմէադաւան դատին ուղղութեան եւ ճշմարտութեանը փաստ կը ներկայացուի, սակայն մեր կարծիքը չատ տկարացած կը մնայ հռոմէադաւանութեան դատը, եթէ իր ոյժը այսպիսիներուն հեղինակութենէն պիտի ստանայ։ Ընտրելագոյն օրինակն է Սարաֆեանը, մերթ այս եւ մերթ այն կողմը դիմող, մերթ այս եւ մերթ այն եկեղեցւոյն ծառայող, մերթ այս եւ մերթ այն վարդապետութիւնը քարոզող։ Ուստի եթէ քանի մի տասնեակներ ալ կարենան համրել այսպիսի անուններէն, չենք կարծեր թէ զօրաւոր փաստ մը կազմած ըլլան իրենց ընդգրկած հռոմէադաւան դատին պաչտպանութեան։ Մենք, անկախաբար գործին տրուած նչանակութենէն, չենք ուզեր զանց ընել գոնէ գլխաւորներուն անունները, քանի որ պատմական եղելութեանց կարգը կը մըտնեն։

ԿԱԹՈԼԻԿ ԵՂՈՂՆԵՐ

2143. Նախ յիշենք Ծարութիւն եպիսկոպոս Բասենցին, կամ Բասենեան՝ ինչպէս ինքն կը ստորագրէ (ԳԱԼ. 323), որ 1767'ին Կ-Պոլսոյ մայրաքաղաքին նուիրակութիւնը փակելով, յաջորդէն վիճակն եղած (§ 2118), եւ աւելի Պրուսայի կողմերը զբաղած կ'երեւի։ Բասենցին համար գրուած է թէ 1771 օգոստոս 14'ին ի Թրեաս (ՊԼՐ. 435)։ Սակայն սա ալ միւսներու նման նորէն ետ եկած կ'երեւի, վասնզի 1775 յունուար 15'ին կը գտնենք, որ Բասենցին նորէն Պրուսա է, և Պրուսացիին, տան ջաղջղել, երկեցաւ էին էրեւելի կաթողիկոսին անոր դէմ, և թէ նա կրկին անպարեր է ի տալիս (ԴԻՒ. Ը. 315), և ըստ որում ինչ անդ, ինքն յանդիմանեն յանդիմանին ընդանայ (ԴԻՒ. Ը. 316)։ Կաթողիկոսը կը հրահանգէ որ ըստ կարծեաց եկեալ եկեցէ ի սուրբ սրտառ, բայց Բասենցին երկիւղ երթալ (ԴԻՒ. Ը. 315)։ Ակէ ետքն է որ կը լսուի, թէ ի տուն Տաճկի է անկեալ, սակայն կը ստուգուի, թէ ի տուն Լամայի էլլան, այսինքն Նէմցէի կամ Աւբստրիոյ դեսպանին էր անկեալ, հարկաւ Կ-Պոլիս գալէն ետքը, և յայնժամ ցուցեալ զհերյուածն և զսրացոնիկեան էր (ԴԻՒ. Ը. 511)։ Այդ լուրը 1776 հոկտեմբեր 11 թուականով է արձանագրուած. սակայն հղելութեան թուականը ճչդուած չէ։ Շփոթ են այդ թուականէն ետեւ Բասենցիին համար գրուած տեղեկութիւնները. 1773'ին փախչելու մտադիր կը ցուցուի (ԳԱԼ. 362), մինչ 1775'ին պաչտօնի վրայ է. 1776'ին օտար պաչտպանութեան կ'ապաւինի, մինչ կրկին փախուստի առիթ բաւական ատեն Հռոմ և Վենետիկ մնալէ ետքը, 1781 օգոստոսին Թրիեստ հասած կ'ըսուի (ԳԱԼ. 362), ուսկից ինչպէս չհետեւիր որ 1781'ին Կ-Պոլիս գտնուած ըլլայ, ինչպէս Բասենցիի պաչտպաններ կ'ուզեն ըսել (ԳԱԼ. 363), որպէս զի զայն արդարացնեն նուիրակութեան արդիւնքները և աթոռապատկան գումարները իւրացուցած և միաւորեալ տարած ըլլալու մեղադրանքէն (ԴԻՒ. Դ. 852)։ Բասենցին 1776'ին օտար պաչտպանութեան ապաւինած էր, և այն ատեն կենդանի էր Սիմէոն, և իրաւամբ կրնար դիմել Բասենցիին անձը հովանաւորող դեսպանին, որ գործին վրայ ալ չտարածէ իր պաչտպանութիւնը։ Դեսպանը, աւելի ուղղամիտ քան Բասենցիին գովաբանը, ընթացք կու տայ կաթո-

զիկոսին իրաւացի դիմումին։ Բասէնցիին մնացած կէսանքը անցած է Թրիէստի մէջ, ուր մնացած է երկեակ ոմն՝ վիճահարկէ անջատուած Մխիթարեաններու մօտ, 1781'է մինչեւ 1796, և հաբէ-բամնի վախճանած է 1796 մարտ 17'ին ըստ տապանագիրին (ԳԱԼ. 365), կամ մարտ 14'ին ժողովրդապետական արձանագրութեան համեմատ (ԳԱԼ. 366)։ Հայերէն տապանագիրին մէջ արքեպիսկոպոս էջմիածնիկոչ գրուածը (ԳԱԼ. 365), որ պարզապէս էջմիածինէ եպիսկոպոսութիւն առած ըլլալը կը ցուցնէ, չենք գիտեր ինչ հիմամբ արքեպիսկոպոս էջմիածնի կոչում, և իբր տիտղոս մնկնուած է (ԳԱԼ. 306), մինչ էջմիածին երբեք վիճակի կամ եպիսկոպոսական աթոռի տիտղոս եղած չէ, և տապանագիրին լատիներէնին մէջ ալ միայն Հայ archiepiscopo Armenio) ըսուած է, և յատուկ տիտղոս տրուած չէ։ Մեր պատմական նպատակին համար բաւական ըլլայ գիտնալ, թէ նուիրակութեան արդիւնքը սեփականելու պատճառով տեղի ունեցած է Բասէնցիին կաթոլիկանալը։

2144. Աւելի զրուցուածնիբէն մէկն ալ Սամուէլ Երզնկացի, Պրուսայի եպիսկոպոսն է։ Սամուէլ Կոլոտի կրօնաւորագոյն աշակերտներէն էր, 1706'ին ծնած (ԳԱԼ. 262)։ Նալեանի փոխանորդութիւնը վարելէն ետքը (ԳԱԼ. 59), գլխաւոր պաշտօնը եղաւ Պրուսայի առաջնորդութիւնը, ուր արդիւնաւոր գործունէութիւն ունեցաւ, այնպէս որ Նալեան վատառողջութեան համար քաշուելու ըստիպուած, Սամուէլը իբր յաջորդ առաջարկեց, բայց Սամուէլ յանձնառու չեղաւ պատրիարքական տապնապին մասնակիլ (§ 2080)։ Շամախեցիի մահուանէ ետքն ալ՝ կաթողիկոսութեան ընտրելիներուն կարգին Սամուէլ ալ նկատի առնուած էր (§ 2069) Աստապատցիին առաջարկութեամբ (ԻԻԻ. Գ. յ.)։ Սակայն ասոնք պարզ առաջարկներ էին և բուն ընտրութիւն չեն կրնար ըսուիլ։ Սամուէլ ոչ եւս երիտասարդ, 66 տարեկան էր, երբ ինքն ալ փորձուեցաւ Արեւմուտք անցնիլ հանգստութեան և բարօրութեան ակնկալութեամբ, և Սարաֆեանի հետեւողութեամբ, որ իւր աշակերտակիցն էր, և կ'երեւի թէ սա մնծամնծ բախտաւորութիւններ ցոլացուցած էր անոր աչքին առջեւ բոպական կենցաղին մէջ։ Սամուէլ կիպրոս քաշուելու պատրուակով Պրուսայէ կը մեկնի 1772 նոյեմբեր 3'ին, կ-Պոլսոյ մէջ իր գործերը կը կարգադրէ և Յարութիւն Պետանեանի ձեռքով նաւագնացութեան պէտքերը կը հոգայ, և դեկտեմբեր 4'ին Բուրուչէմէ Քրգքուլէ կ'անցնի, և անկէ նաւ մտնելով 18 օրէն Մալթա (Malta) կը հասնի, որ է ըսել դեկտեմբեր 22'ին ձմեռնային եղանակին մէջ (ԳԱԼ. 267)։ Անկէ անդին նաւագնացութիւնը կը դժուարանայ, երկու անգամ Մարսիլիա երթալու, և երկու անգամ ալ Իտալիա անցնելու համար նաւ կը մտնէ, բայց քիչ յառաջելէ ետքը՝ չորս անգամ ալ ետ կը դառնայ, և այս կերպով բաւական առնն կ'անցնի Մալթայի մէջ, մինչեւ որ վերջին անգամ 12 օրուան նաւագնացութեամբ Մալթայէ Զիվիթավէքքիա (Civitavecchia) կու գայ, և Հռոմ կը հասնի մայիս 12'ին (ԳԱԼ. 270) կամ 3'ին (ԳԱԼ. 272), որ տոմարներու տարբերութեամբ 2/12 կամ 3/13 պէտք է ըլլայ։ Սարգիսի և Սամուէլի իրարու հանդէն և գաղտնի կերպով կ-Պոլիսէ հեռանալն էր, որ Պատմաճեանի կամակցութեան վերագրուելով, անոր դէմ ամբաստանութեան կէտ մը կազմից (§ 2114)։ Հռոմ հասնելուն յուսախաբ մնացած կը տեսնուի Սամուէլ, և Սարգիսի գրելով կը յայտարարէ. Զինչ առնելս ոչ գիտեմ, ոչինչ ծոմանց ըսոբեալ կեմ, Աւետաց ոչինչալ է ընկոնս հասեալ օգնեցէ ինձ. Աւետաց պատ պահ ընդ է քայլակըրենէ (ԳԱԼ. 268)։ Վերջին խօսքը կը ցուցնէ թէ Սամուէլ հոգեւոր ատենութիւնը ընդունած չէր յառաջագոյն, փորձի համար եկած էր, և փորձին սկզբնաւորութիւնը յաջող չտեսնելով, դառնալու մէջ գթելէ կը զգուշանար։ Այս է Սամուէլի միտքին ուղիղ մեկնութիւնը, և ոչ թէ հայր Ներսէսեանի գրելուն չնորհ, թէ է քաղցր հետ լսեալ էի զբոր նորին, գրեթէ 30 ոչ է վեր, հետեւցնել թէ Սամուէլ 1743'էն իվեր հռոմէադաւան եղած ըլլայ (ԳԱԼ. 270)։ Ներսէսեանը Սամուէլի անունն է լսած իրրեւ նշանաւոր եպիսկոպոսի մը, դաւանութեան մասին ակնարկ չունի բնաւ։ Բայց անգամ մը որ Հռոմ հա-

կած էր, անոր չուրջը պատճին, որ գոհա-
ցընեն և վար դնեն։ Հանգչէին 40 օր ետքը
1773 յունիս 26'ին վիճակը տակաւին անո-
րոշ է, և Փրոփականտա կը յաջող կ'ըլլէ
դնել Պրուսայի եպիսկոպոսին փոխարէն։ Իսկ 1773
հոկտեմբեր 18'ին Վենետիկ կը գտնուի, ուր
փոքր աստիճաններու ձևնադրութիւն կը
կատարէ. վերջապէս 1774'ին Ումուտեան
Սիմոն եպիսկոպոսի մահուանէ ետքը անոր
կը յանձնեն Հռոմի մէջ ձևնադրիչ եպիս-
կոպոսի պաշտօնը (ԳԱԼ. 271)։ Սամուէլ ա-
ռաջին անգամ Հռոմ հասնելուն գրած էր,
թէ ի յԱբեթելը գտանէը ինչ անկրելի է (ԳԱԼ.
268), զի հարկաւ թեթևամտութիւն պիտի
սեպուէր իւր արարքը։ Բայց տարի անցնե-
լով, և յուսախաբութիւնը աճելով, և խիղճն
ալ պարտուելով, անկարելին իրական ըրած
է, զի 1778 հոկտեմբեր 6'ին, վինչև արդէն
կ-Պոլիս դարձած կը գտնենք (ԳԱԼ. 273)։
Զաքարիա պատրիարքի հռոմէադաւանութե-
ան դէմ 1778 փետրուար 21 ժողովով
սկսած չարժումին ակնարկելով (§ 2129) ըս-
ուած է, թէ եղեռ գրգռել և յորդորել է
չեզ գտնէն Սամուէլ (ԳԱԼ. 273), ինչ որ
կը ցուցնէ թէ 1778 տարւոյ սկիզբներէն
Սամուէլ արդէն կ-Պոլիս կը գտնուէր, և
միանգամայն հռոմէադաւանութեան դէմ
ազդու գործիչ մը եղած էր, հարկաւ Հռոմը
տեսնելէն և ուսումնասիրելէն ետքը՝ իսկու-
թեան վերադառնալ ըլլալուն պատճառով։
Սամուէլ կեանքին մնացորդը անցուցած է
Խասքէօյ թաղին մէջ, իբրեւ եկեղեցւոյն
քարոզիչ, ուր և վախճանած է 1786'ին 80
տարեկան, և գերեզմանը կը գտնուի Խաս-
քէօյի գերեզմանատան մէջ։ Այս է Սամուէլ
Երզնկացիի ընթացքը, որ աւելի աննպաստ
փաստ մը կը դառնայ հռոմէադաւանութեան
դատին։

2145. *Քաղենք նաև Գրիգոր Պասմա-
ճեանի կեանքին վերջին մասը, որուն նկատ-
մամբ խօսած ենք մինչեւ*

ՊԱՍՄԱՃԵԱՆԻ ՄԱՀԸ

*1777 ապրիլին Անքօնա
բնակութիւն հաստատելը
(§ 2117)։ Այդ թուական-
նէն մինչեւ 1782 Պասմաճեան Անքօնա կը
մնայ. բայց վերջէնվերջ կը ձանձրանայ,
վասն զի Լատին լեզուի նմուտ չըլլալով,
եկեղեցական պաշտամանց չկրնար հետեւիլ,
իսկ Հայոց եկեղեցին և քահանան ալ չատ
անչուք ըլլալով զինքն չեն գոհացներ (ՊԱՍ.
35)։ Պասմաճեան Վենետիկ կը հասնի 1782
ապրիլին, միջոց մը ասպնջականութիւն կը
վայելէ ի վանէեցւոց Հայոց (ՊԱՍ. 36), այսինքն
Ս. Ղազարու Մխիթարեան միաբաններէն,
և յետոյ կը հիւրասիրուի Ովհաննէս ալեայ Սեղ-
բոսեան կղերկեցւոյն կողմէ (ՊԱՍ. 36), որ է
նոյն ինքն Սեդրաս մարքիզը։ Վենետիկ մնա-
լուն տեւողութիւնը, ցուցուած է վեց եօթն
ամիս ըստ հրամանի սուրբ Ժողովոյն Փրոփական-
տայի (ՊԱՍ 132)։ Չկրնար հաստատուիլ որ
յետոյ նոր արտօնութեամբ կրցած ըլլայ այդ
պայմանաժամը երկարել։ Թէպէտ կը գրէ,
թէ չեմ երթար մեռ ժամանելուն պէս ոչ էր
ընտանին 1784 ի վրչ մարթի մեռ, բէպեցու-
ա մէչ անքէյելի և անյեղելի ցու էլըուածոյ,
որով երկու տարին Վենետիկ հասնելէն
հաշուիլ կ'երեւի, մանաւանդ որ ի ժամանակի
և ի յուսոյ փոխարինեան ընդունած գումարն
ու խնամքը Ս. Ղազարու միաբաններուն
կը վերագրէ, որոնց մօտ եղաւ Վենետիկ
հասնելուն առջի օրերը, և սակայն փոխա-
րէն ըսածը, ոչ իրաւածքին, այլ մասնա-
ւոր տկարութեան մը վրայ պէտք կ'ըլլայ
մեկնել։ Իսկ մեծ տկարութիւնը խնամուած
է ոչ Վենետիկի ասպնջականներէն, այլ
բժշկականներէն և նպաստաւորներէն բժշ
ժողովոյն Փրոփականտայի կողմէ (ՊԱՍ. 36)։
Ըստ այսմ հաւանական չէ մինչեւ 1789 Վե-
նետիկ մնացած ըլլալը (ԳԱԼ. 349), և հաւա-
նագոյն է 6-7 ամիսէն Անքօնա դարձած, և
հոն 1784'ին կաթուածահար ըլլալը (ՊԱՍ.
132)։ Անքօնայէ 1789'ին գրած նամակներէն
մէկուն մէջ ալ կ'ըսէ, թէ ահա մեռնիլ է ի
ընդել հնդից առաջ, որ պրպտ մեռելոյն փառա-
պէմ և ըրբըրէմ, որով ամբողջ հինգ տա-
րիներ չարունակ միեւնոյն տեղ մնացած ըլ-
լալ կը ցուցնէ։ Ծիչեալ 1789 տարւոյն մէջ
է, որ հարկաւ ինքզինքը քիչ մը կազդուր-
ուած զգալով յիշատակութիւններ կը գրէ,
և ամէն կողմ գիրեր կը տեղացնէ, վեր-
ջինը 1789 սեպտեմբեր 4'ին (ՊԱՍ. 129),
իւր անցեալը պատմելով, իւր ընթացքը
պաշտպանելով, և ուրիշներուն հետ բաղ-
դատութիւններ հաստատելով։ Այդ թուա-
կանէն ետքը տակաւին իբր տարեկէս ևս
կ'ապրի Պասմաճեան, և կը վախճանի 1791

յունիս 22'ին, բայց ոչ Անքօնայի, այլ Թրիէստի մէջ, ինչպէս կը քաղուի նոյն քաղաքին Հայազդի մկրտչից և պսակչից և ննջեցչից տումարէն (ՏԱՇ· 924), որուն մէջ յայտնապէս գրուած է վերոյիշեալ թուականով, թէ Վեհձանեցւոյ էբէզպոխ Գրիգոր Էպիսկոպոսն Ասծատրեանց, որ էր պատրիարք ամենայն Հայոց Կոստանդնուպոլսի, էջր 78 ամաց, և թէ թաղուեցաւ Ս. Ծուստոսի (San Giusto) մայր եկեղեցւոյն դրան առջեւ (ԳԱՀ· 357)։ Այլ թէ ե՞րբ և ինչպէ՞ս և ինչո՞ւ Անքօնայէ Թրիէստ փոխադրուեցաւ, բնաւ տեղ մը բացատրութիւն չունք գտնելու։ Եւս առաւել առանց բացատրութեան կը մնայ, թէ ինչպէս Պասմաճեանի ինքնագիր գրուածները, և անոր սեփական նութեան գիրքերը Անտոնեանց Հռումի՝ և անկէ Օրթաքէօյի վանքը կը գտնուին, մինչ յարմարագոյն էր Մխիթարեանց Վիէննայի վանքը գտնուիլը, քանի որ Թրիէստ մեռած ու թաղուած է։ Տապանագիրի մըն ալ պատճէնը, որ նոյնպէս Անտոնեանց գիւանին մէջ կը գտնուի, առանց մահուան թուականի, կ'երեւի նոյն իսկ Պասմաճեանէ կանուխէն պատրաստուած էր, բայց գործածուած չէ. ինչ պէնդեաէ յայտ տալէ բացատրութիւնը՝ Անքօնայի համար ըսուած է (ՊԱՍ· 129), ուր գրած առնն կը գտնուէր, և անկէ տեղափոխուելու միտքը չունէր։

2146. *Հետաքրքրական էր յատուկ և ընդարձակ ուսումնասիրութիւն մը ընել Պասմաճեանի ինքնագիր յիշատակարանին և նամակներուն վրայ, և գրուղին ներքին զգացմանց թափանցել, սակայն մեր մեղի սահմանած գիծերէն դուրս կը մնայ։ Բարգէն վարդապետ՝ այժմ եպիսկոպոս Կիւլէսէրեան, համառօտակի չօշափած է այդ կէտը, բնագիրները հրատարակած առնն, և այն եզրակացութեան կը յանգի, թէ Պասմաճեան ներելի չէր (ՊԱՍ. 135), և այդ կարծիքը կը քաղէ մանաւանդ այն բացատրութիւններէն, զորս նա գրուած է Սահմանոս Աբեթանտիլեան վարդապետի հարցումներուն (ՊԱՍ· 123) Հայ եկեղեցւոյ մասին (ՊԱՍ· 126), և չէ համաձայնած Հայ եկեղեցին դատապարտել (ՊԱՍ· 129)։ Իսկ Պասմաճեանի ձախողուածը կը վերագրէ լեզուին բարեբեխտ համբաւէ՝ ըսել և կարելի՞ է պարզապէս բնաւորութիւնը, որով դժուարին կացութեան և կնճռոտ խնդիրներու դիմաց գտնուելով, չէ կրցած ոչ որոշ ուղղութիւն մը պահել, և ոչ Կոլոտի ու Նալեանի ճարտարութիւնը ցուցնել, մէկ կողմէն հաչտարար և միւս կողմէն հաստատամիտ ընթացք մը պահելով, կաթոլիկութեան անունով և լատինականամիտներու կողմէ յուզուած խնդիրներու մէջ (ՊԱՍ· 134)։ Պասմաճեանի գլխաւոր գրուածներն են մեծ Ծիշատակարանը (ՊԱՍ. 9—56). որուն մէջ յաւալ կը բերէ իրեն նպաստաւոր քանի մը հին վկայագիրներ. և Ողբ-նոթիւ էբէ պոմոզբէն գրուածը (ՊԱՍ. 98-121), որուն լրացուցիչ կրնան սեպուիլ Ապբեցութեան պոմոզբէն (ՊԱՍ· 95-97), և Անուանոց բոլբէթ մակագրուածները (ՊԱՍ. 93-94), որոնք 1789 մարտ 30 Թուականը կը կրեն, իսկ առաջ յիշուած յիշատակարանն ու ողջունագիրը աւոնցմէ առաջ գրուած կ'երեւին։ Պասմաճեան ինքն ալ չուրանար, որ յամենայնի ամիրաներուն և գլխաւորապէս Գասպար Մուրատեանին կամակատար հպատակութիւն է ցոյց տուած, սակայն այսու ոչ թէ բան մը չանած է, այլ իւր տկար կողմերը ցուցադրած, և իւր նուր հոգեկան յանդիմանութիւններ կ'ուղղէ յաւելուածի ամբոյն և էլեանոց ազէն մերոյ (ՊԱՍ· 67-88), և դառն լեզուով կը վատաբանէ անոնց գործերուն դէմ։ Փոքրոգի զգացմանց արդիւնք են ամիրաներուն և ընդհանրապէս Հայերուն դէմ կազմած ամբաստանութիւնները, թէ Պօղիկեան աղանդաւորներ են, թէ Ճաչի և պատկերի դէմ կը խօսին, թէ ճիւղանամարը խիստ կը գտնեն, թէ մատաղի ոսկրներու վրայ թաղման կարգ կը կատարեն, թէ եկեղեցականները կը կողոպտեն, թէ աղքատաց դրամները կ'իւրացնեն, թէ եկեղեցւոյ գործերուն կը խառնուին, թէ պատրիարքները կ'անարգեն, թէ եկեղեցապանութեամբ ամիրայ կը դառնան (ՊԱՍ· 136)։ Եթէ ըսածներէն ոմանց մասին իրականութիւնն ալ ընդունինք, ամէն ժամանակի սովորական անտեղութիւններ են, և անոնք ըլլալով հանդերձ պայծառացան և փայլեցան իւր անհիչական նախորդները, և օրհնութեամբ կըն-

քեցին կեանքերնին։ Աւելորդ կը սեպենք քաղել ուրիշներու դէմ ալ եղած հալածանքները, զորս իրր իրեն արդարացում յառաջ կը բերէ, կամ ուրիշ պատրիարքներու ամբաստից հանդէպ ցուցած ղիջողութիւնները յիշել, որոնցմով իրր թէ ինքզինքը կը ջատագովէ. զի ատոնք իւր նպատակին չենն ծառայեր, և զինքն չենն արդարացներ, քանի որ հալածանք և պատնէշմունք՝ ամէն բարձր աստիճանաւորներու բաժին ևն, իսկ արժանիքը՝ չընկճուելու մէջն է։ Այսու հանդերձ խստիւ պիտի չմեղադրենք Պատմաճառանի բնաւորութեան տէր մէկու մը գործածած լեզուն, որ երկարամեայ ակամայ վտարանդութեան մէջ ձանձրացած, միտքին և խղճին հակառակ օտարազանութիւն կեղծելու ստիպուած, և տարիներով կաթուածահար վիճակէ նեղուած, մանաւոր գրութիւններով սրտին զեղուածը դուրս կուտայ, և անով ինքն իրեն միխիթարութիւն պատրաստել կը կարծէ։

2147 Պատմաճառանի և Սարաֆեանի, Բասէնցիի և Երզնկացիի, գլխաւոր դէմքերուն իակութիւնը փոքրիշատէ պարզելէն ետքը, աւելորդ կը դատենք յառաջ բերել ուրիշ կաթոլիկութեան յարող Հայ եկեղեցականներու անուններըը։ Ապա թէ ոչ պէտք էր այդ միտքին ծառայող բոլոր Միխիթարեան և Անտոնեան միաբաններըը, և Փրոփականտայի աշակերտներն ալ յիշել, և կենսագրութեանց երկար չարք մը կազմել, զոր և ոչ Հայ եկեղեցւոյ աստիճանաւորներուն համար րրած ենք։ Ինչ որ պատմութեանս ընթացքին համար պէտք է գիտնալ, այդ միջոցին կաթոլիկութեան առաւել ընդարձակութիւն ստանալն է, օգտուելով Միխիթարեան կրկին և Անտոնեան միաբանութեանց գործունէութենէն, լատինամիտ հրատարակութեանց յաճախելէն, Եւրոպական ազդեցութեանց Օսմանեան քաղաքական չրջանակին մէջ տարածուելէն, և պապական նպաստներու ու արտաքին ակնկալութիւններու առատանալէն։ Այդ կացութենէն յառաջ եկող միջադէպեր հետզհետէ պատմութեան կարգին դիմացնիս պիտի ելլեն, և մենք ալ պէտք եղած տեղն պարտուպատշաճ բացատրութիւնները պիտի տանք, չարունակելով մեր սովորական ոճը։

Տ· ՂՈՒԿԱՍ Ա· ԿԱՐՆԵՑԻ 1780 - 1799

2148· Սիմէոն Երեւանցի կաթողիկոսը 1780 յուլիս 26'ին կիրակի օր վախճանած, և յուլիս 27'ին երկուշաբթի թաղուած էր (§ 2139)։ ՊԱՐԱԳԱՆԵՐ Երեքշաբթի յուլիս 28'ին (Տիւ·Դ·լբ·), որ լսել է յեփ եբեց ---բց (ՄՍՐ·5), կամ մահուան երրորդ օրը, Մայրաթոռի մէջ ժողով գումարուեցաւ միաբանութեան անդամներով և յուղարկաւորութեան եկող երեւանի և չրջակայից երեւելիներով (Տիւ·Դ·լբ·), նոր կաթողիկոսի ընտրութեան խնդիրը յուզելու։ Վերջին առիւններու ընկալեալ սովորութիւն էր, որ միաբանութիւնը երկու կամ երիք ընտրելիներ կը ցուցնէր, և յետոյ ազգին կարծիքը առնելու հետամուտ կ'ըլլար, գլխաւորապէս Երեւանի, Ջուղայի և Տիգրիսի, և մանաւանդ կ-Պոլսոյ ազգայիններուն, և այնպէս ընտրուածը կ'օծուէր և աթոռ կը բարձրանար (Տիւ·Դ·լբ·)։ Բայց մենք տեսանք որ պարագայից ստիպմամբ միաբանութենէ և մօտաւորներէ կատարուած հապճեպ ընտրութիւններ և օծումներ ալ տեղի ունեցած են, զորս ազգը համակերպութեամբ ընդունած էր։ Ըստ այսմ այս անգամ ալ խնդիրի նիւթ եղաւ, թէ պէտք է՞ արդեօք ընտրութիւնը չտապել և աւարտել։ Ընդհանուր կարծիքը այն եղաւ թէ ժամանակը վրդովքել լինելով, ինչպէս որ Սիմէոնի վերջին օրերուն դէպքերն ալ կը ցուցնեն (§ 2138), և աթոռին անգլուխ մնալը վտանգաւոր նկատուելով՝ անհրաժեշտ է ընտրութիւնը փութացնել։ Այդ անհրաժեշտութիւնը ծանրացնող պարագանե-

բուն կարգին նկատողութեան առնուեցաւ, որ Իսրայէլ Աղուանից վաստակալ կաթողիկոսը (§ 2092), Տփղիսի մէջ վրաց արքունիքը չհաճած էր, և Երեւանի յաղթութեամբ (§ 2138) անոր ստացած դիրքէն օգտուելով, արդէն Սիմէոնի հիւանդութեան օրերէն սկսած էր խլրտիլ։ Մահուանէ երկու չաբաթ ալ առաջ, Տփղիսի մէջ սուտ լուր տարածելով, թէ հոգեւոր պէտն վախճանեցաւ, կաշառքներով և խաբկանքներով չարժուամ գոյացուցած էր, որ Հերակլի ազդեցութեամբ էջմիածինի աթոռը գրաւէ (ԴԻԻ.Դ. 32)։ Ուրիշ բոնի և ինքնընծայ թեկնածու մըն ալ կը ներկայանար Գալուստ Ներսէսեան եպիսկոպոս, որուն համար կ'ըսուէր թէ 300 Պօրչալուցի թաթարներ վարձած է, եթէ պէտք ըլլայ, բռնութեամբ ալ աթոռին տիրանալու. և այս կասկածով տեղապահ և գանձապետ Մկրտիչ եպիսկոպոսի կարգադրութեամբ իբր 200 երիտասարդներ հաւաքուած էին վանքին մէջ, Գէղարքունիի գաւառի զանազան գիւղերէն, հարկ եղած ատեն բռնութիւնը զօրութեամբ վանելու համար (ԴԻԻ.Դ.լբ.)։ Սիմէոնի հիւանդութեան օրեր, չրջակայ թուրքեր ալ սկսած էին էջմիածինի կալուածները իւրացնել, ղբէ՛ղ ի նշանաւոր յափշտակիչն, ղբէ՛ղ Գծաձէ այբէ՛ իւրացոյն, ակա՛ և ի գերդաստանէ քէղէ յիշատակ լինել, և շատ աւելի վնասներու սպառնալիքներ կ'ընէին (ԴԻԻ.Դ. 27), աթոռը անգլուխ տեսնելով։ Այս կասկածներէն աւելի միաբանութեան միտքին վրայ կ'ազդէր վախճանած և յարգուած կաթողիկոսին վերջին կամքը կամ կտակը, զոր քանիցս իւր կենդանութեան յայտնած էր, և վերջին անգամ ալ իւր խոստովանահօր՝ ծերունազարդ Մարկոս լուսաւարապետ եպիսկոպոսին յանձնարարած էր, որ աթոռը անյապաղ ղեմայ այս ընտրեալ թեկնածուն, և չուտով կաթողիկոս ընտրուի Ղուկաս կարնեցի եպիսկոպոսը (ԴԻԻ.Դ.լբ.)։ Ժողովին մեծամասնութեան միտքը հակած էր Ղուկասին, զոր Մայրաթոռի մէջ գործի վրայ ալ գնահատած էին քանի տարիներէ իվեր։ Բայց հակառակ կարծիք ունեցողներ ալ կային, որոնք կուսակից էին Կ-Պոլսոյ պատրիարք Զաքարիային, որ աւելի կարող և գործունեայ և երիցագոյն նկատուած էր, բայց աւելի չատեր կը խրտչէին անոր խիստ և բուռն բնաւորութենէն։ Զաքարիայի կողմը եղողներուն գլխաւորն էր Սահակ եպիսկոպոս Գեղամացի կոչուած հայրենական գաւառէն (ՄՍՐ.5), և Փառակեցի՝ ծննդավայրը եղող Փառականք գիւղին անունով (ԴԻԻ.Դ.լ.)։ Սա իւր միտքը յառաջ մղելու համար կը պնդէր, թէ անհրաժեշտ է Կ-Պոլսոյ ազգայիններու հաւանութեան դիմել, և առանց անոնց հաճութիւնը ստանալու ընտրութիւն չվերջացնել (ԴԻԻ.Ա.3)։

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԼՐՈՒՄԸ

2149. Ինդիրը այդ կէտին վրայ եղած ատեն, վիճաբանութիւնը սաստկացաւ մանաւանդ Մկրտիչ և Սահակ եպիսկոպոսներու միջև, և Սահակ սկսաւ Մկրտիչը նախատել թէ, Դո՜ նախ էկ ծառ ընչէ՞ւ ես պղպղէս։ Ժողովականներ Մկրտիչի կողմը եկան, որ չինչ յանկո՜ւցել ոնէ ընտրո՜ն ի՞ւրաքանչիւրոց, և Սահակի դէմ եկլալով սկսան հոգիանել ընդ, զոր հազիւ Ծովհաննէս Քէալ մեղքը ձեռուընկերնէն ազատելով՝ դուրս հանեց, և տարաւ իւր սենեակը հանդարտեցնել և նստեցնել։ Հազիւ թէ միջադէպը փակուեցաւ, նոյնինքն Գալուստ եպիսկոպոս, որուն վրայ կասկածոտ էին, երկոցուն որ մի գուցէ իրեն դէմ ալ նմանօրինակ բան մը փորձուի, տեղէն կ'եկլէ, և ի բաց ոտի ղվիղը ի՛ր, կ'երթայ Ղուկասի աջը համբուրել ասելով. Կեցցե՛ փէ՛ր մէ՛ր օրհնե՛ն։ Ներկաներ համամիտ կերպով կը ձայնակցին, և համաձայն հաւանութեան ձեւով կը հռչակուի Ղուկասի ընտրութիւնը։ Ղազար Աստապատցի եպիսկոպոսը, անմիջապէս Սո՜ւրբ խաչ՜ կ'ըսէ, և ժողովին նախագահող Մկրտիչ եպիսկոպոսն ալ Պահպանե՜ աղօթքը կ'արտասանէ, և ժողովը կը փակուի (01 ԱՐՐ.183)։ Գալուստ եպիսկոպոսի նախաձեռնութիւնը կը քաղենք ժամանակակից յիշատակարանէն (ԴԻԻ.Ա.3), և չեն արդարանար Մսերեանցի գրածները, թէպէտ ինքն կը պնդէ թէ գրեցի՝ ըստ հոլցի և լոյ և սպասելի ի հինաւուրց դպրանէ (ՄՍՐ.12), իբր թէ Սահակ եղած ըլլայ առաջին անգամ Ղուկասի համար մտածողը (ՄՍՐ.5), և ժողովին մէջ Ղուկասին անունը հռչակողը (ՄՍՐ.6)։ Կ'երեւի թէ Մսերեանց մոռացկոտ կամ կողմ-

նակցական աղբիւրներու հանդիպած է, զի տեսանք Սահակի ժողովէ հեռացուիլը. և վերջէն Սահակ ինքն ալ խոստովանած է Ղուկասի դէմ եղած ըլլալը (ԴԻՒ. Դ. 193)։ Նոյն ժողովին մէջ որոշում տրուեցաւ ընտրութիւնը անմիջապէս լրացնել և Ղուկասը աթոռ բարձրացնել. ուստի հապճեպով պատրաստութիւններ կը տեսնուին օծումն ալ կատարելու։ Ղուկաս բաւական կ'ընդդիմանայ, թէ վրդովեալ ժամանակին դժուարութիւններէն խոյս տալով, և թէ ներքին տարաձայնութիւններէն խիթալով. բայց ամէնքը միաբերան անհրաժեշտ պարագաներուն պահանջը առջեւ կը դնեն և զիջողութեան կը մտիկեն (ԴԻՒ. Դ. 28)։ Վարդավառի դիմացի կիրակէն, 1780 օգոստոս 2'ին, օծման կարգը կը կատարուի, և Ղուկաս կաթողիկոսական աթոռ՝ կը բազմի, Սիմէոնի մահուան ութերորդ օրը, և անմիջապէս կը սկսի աթոռին պաշտպանութիւնը հոգալ, զանազան կողմեր ղրկուելիք չրջաբերականները պատրաստել, և զանոնք տանող պատուիրակները, կամ ժամանակին բառով՝ մահաբերները վարդապետները ճանպայ հանել։

2150. Գործողութեանց մէջ չյառաջացած պէտք է ակնարկ մը ներտնենք Ղուկասի նախընթացին վրայ։ Ղուկաս ծնած կ'ըլլայ 1722'ին, երբ 77 տարեկան վախճանեցաւ 1799'ին (ԴԻՒ. Ա. 45)։ Ըստ այսմ երբ 1783 ապրիլ 4'ին կը գրէ, թէ 36 տարի առաջ Քիւթիւրի ժամանակ պէտ է որ գայ էր, պէտք չէ տղայական տարիքի վրայ առնել, զի արդէն 26 տարեկան եղած կ'ըլլայ, այլ պաշտօնական չրջանակէ դուրս և գործերու անհաղորդ ըլլալուն վրայ, ինչպէս ինքն ալ կ'ակնարկէ ըսելով, թէ այն ատեն դէռ ես խորհրդակից էի այդպիսի բաց (ԴԻՒ. Դ. 507)։ Ղուկաս կարնեցի կոչուած է սովորաբար, ոչ քաղաքաց, այլ [illegible] (ԴԻՒ. Դ. ի.), զի ծննդավայրն եղած է Կղզի կամ Քղի աւանը որ է հին Տորձեանը։ Մանկութենէ աշակերտած է Մայրաթոռին, և Սիմէոնէ առած է ուսմանց դասեր, իսկ քահանայական ձեռնադրութիւնը ընդունած է 1751'ին լուսաբարապետ Ղեւոնդեան եպիսկոպոսէն, օծակից ունենալով Զաքարիա կաղզուանցին։ Վարդապետութեան ատեն նուիրակ գացած է Ռումէլի և Երիմ։ Սիմէոն կաթողիկոս իր օծումէն միայն 58 օր ետքը, 1763 յունիս 17'ին, երեքշաբթի, Որդւոց և Թոռանց տօնին օրը (ԴԻՒ. Դ. իէ.), հին տօնացոյցի կարգով (ՏՆԱ. 228), եպիսկոպոսութեան օծում տուած է Ղուկասի և Եսայի Նախիջեւանցի և Պետրոս Բերթումեան վարդապետներու, բայց Ղուկաս նկատուած է անբռնելի և ընդհանին ըսած Սիմէոնի, որ քիչ ետքը զայն վանքէ դուրս պաշտօնի կուղեց, և 1764 մարտ 11'ին յղեց Զմիւռնիոյ առաջնորդութեան և նուիրակութեան (ԴԻՒ. Գ. 101)։ Ղուկաս այնտեղ մնաց մինչեւ 1775, զի մէկ կողմանէ չատ օգտակար կ'ըլլար զանազան յանձնակատարութեանց, և մանաւանդ տպարանի ձեռնարկին համար, և միւս կողմէն Զմիւռնացիք կը թախանձէին որ չփոխէ, և նոյն իսկ 1775'ին երբոր զայն Մայր աթոռ կը կոչէր՝ նոյն իսկ Ղուկասի խնդրանաց համեմատ, Զմիւռնացիք խնդրագիրներ կը տեղացնէին, որ օրպէս զՋուղայեցին Պետրոսոյն Քաղեցւոյն, զՂուկաս վերապէտ նա մեզ քաղեա (ԴԻՒ. Ը. 426). բայց Սիմէոն վճռեց՝ քաջսիրաց զինքը նոցին (ԴԻՒ. Ը. 440), զի թէ ինքն կ'ուզէր զայն իրեն մօտ ունենալ, և թէ Ղուկաս կրկին անհամոզելոյ էրեալ էր զբաղն վճռել զինքն (ԴԻՒ. Ը. 452)։ Այս պատճառով վերջապէս Եսայի վարդապետ յաջորդ նշանակուեցաւ, և 1775 յունիս 23'ին ճանպայ եկաւ (ԴԻՒ. Ը. 456). իսկ Ղուկաս հազիւ տարուընվերջերը կրնայ Մայրաթոռ դարձած ըլլալ։ Անկէ ետքը չարունակ էջմիածին մնաց, իբրեւ գլխաւոր գործակից և խորհրդական Սիմէոնի, որուն հիւանդագին վիճակը օրէ օր կը ծանրանար, և հաւատարիմ և կարող գործակցի մը պէտք ունէր, որպիսի ան ճանչցած և ընդունած էր նա իր անբռնելի և ընդհանին Ղուկասը։ Սիմէոնի այդ մեծ գնահատումը հիմնական երաչխաւորութիւնն մըն է Ղուկասի արժանիքին, հակառակ իր մասին ունեցած կողմէ կուտակուած ձախող դիտողութեանց (ՄՍՐ. 10)։ Նախընթաց գործունէութիւնը վկայուած է այս կերպով. իսկ կաթողիկոսական գործունէութեան մասին կը թողունք որ եղելութիւնները խո-

սին։ Ղուկաս կը ներկայացուի իբրեւ այր անյեղյ, խոհեմ, վարդապետ, ծանրաբարոյ, տպաւոր է ինքնագրեան, և վերջ է բերել ընթերցողը, որ հաւակիր չեղողի մը գրիչին ներքեւ (ՄՍՐ. 10) աւելի մեծ նշանակութիւն կը ստանայ։ Ուսումնական զարգացման կողմէն ալ յետամնաց պէտք չէ կարծուի, քանի որ Սիմէոնի յառաջադէմ աշակերտներէն էր, և հնար չէ զինքն անուսումն կամ ուսումնատեաց ըսել, պարզապէս ըսած ըլլալուն համար. Մեծ է պատճառը, ինչ մարդիկ հրկիզուած են ի կռապաշտութիւն, իմ ծնողաց երեք ամիսն էր ի կռապաշտութեան, եւ ես ինչ գիտեմ, եւ իմ ծնողքն ինչ գիտեն, եւ իմ ընկերքն ինչ գիտեն, եւ ես ընկերոջ ծնողքն ինչ գիտեն (ՄՍՐ. 12)։ Այդ խօսքերը պարզապէս աթոռին չինուածքեան և պահպանութեան նախանձաւոր ըլլալուն վկայութիւնն են, և գրեթէ կրկնութիւն են Սիմէոնի խօսքերուն թէ, Լաւ է ծերն՝ որ երբ հասցուն զվէշ իցէ և երբ վերացն պարկեշտ, քան զի՝ որ երբ հասցուն ընդէր իցէ և երբ վերացն անդարձ (Դիի. Գ. 754)։ Սիմէոնի մասին կասկածող չկայ, նոյն է Ղուկասի ալ միտքը, և երկուքն ալ կ'ակնարկեն լատինամոլ ուսումներով ազգային եկեղեցին անարգող խեղեւամիտներուն։

ՋԱՔԱՐԻԱ ԸՆԴՒՄԱԴԻՐ

2151. Ղուկասի ընտրութիւնը ծանուցանող պաշտօնագիրներուն կարգին, յատուկ մտադրութիւն դարձուցաւ կ-Պոլիս ղրկուելիքին, վասն զի որչափ ալ Մայրաթոռը Պարսից իշխանութեան ներքեւ էր, բայց սովորութեամբ պահանջ դարձած էր որ Օսմանեան կառավարութեան կողմանէ ալ հրովարտակ ստացուի, որպէս զի անով կաթողիկոսը կարենայ իշխանութիւն վարել Տաճկահպատակ վիճակներուն վրայ։ Օծումէն յետ էբեր-գոյ տաղնէց (Դիի. Ա. 3), որ է ըսել վերափոխման տօնը ընելէն ետքը, որ այն տարի օգոստոս 17'ին կը հանդիպէր, ճանապայ ելաւ կ-Պոլսոյ պաշտօնագիրը տանելու սահմանուած Պետրոս եպիսկոպոս Խոզաբածեան, որ Սէթ ալ կոչուած է, գուցէ աւազանի անունը ըլլալուն. սակայն նա կ-Պոլիս չհասած, լուրը եկած էր, որ իր անակնկալ գոյժ և անհաճոյ գործ ամէնուն ուշադրութիւնն իրեն գրաւեց (§ 2137)։ կ-Պոլսեցիք վչտացան որ կաթողիկոսական ընտրութեան մէջ իրենց ձայնը կ'անտարեր, և ճանչցուած իրաւունքնին ոտնակոխ կ'ըլլար. ուստի խորհուրդ տեսնելով, և խորհեցան եղելութեան ընդդիմանալ։ Բայց ազգայիններէն աւելի էր Զաքարիայի զայրոյթը, ոչ թէ լոկ իւր աթոռին պատիւը պաշտպանելու տեսակէտէն, այլ աւելի իւր անձնական զգացումին վրաւորուելուն համար, որովհետեւ իրեն իրաւունքը կը կարծէր կաթողիկոսական աթոռին յաջորդութիւնը. և զինքն Ղուկասէ և բոլոր Մայրաթոռոյ եպիսկոպոսներէն վեր կը դասէր արդիւնաւորութեամբ և արժանաւորութեամբ։ Զաքարիայի զայրոյթը եւս առաւել աստիճացաւ, երբ ձեռքը հասան Սահակ Փառակեցիի գիրերը, որ ընտրական ժողովին միջադէպէն (§ 2149) վերջ և արձնեղեալ, Զաքարիայի գրգռիչ տեղեկութիւններ էր հաղորդած, անոր ընտրութեան հաւանականութիւնը ցուցնելով և դիմադիրներ մատնանիշ ընելով, ինչպէս ինքն ալ վերջէն կը խոստովանէր, թէ երեխէ չիքաւ ղեռն վերածելոն է ծէն գալը, և թէ երեխէ ղոր ինչ և կամեցոյ (Դիի. Գ. 193)։ Զաքարիա Մծնա Մծնաց ժողով գումարեց, եղելութեան մասին խօսելցաւ ինչպէս որ իւր վիրաւորեալ անձնասիրութիւնը կը թելադրէր. և ամէնքը գրգռեց։ Խոզաբածեանի տուած բացատրութիւնները նկատի չառնուեցան, և որոշում տրուեցաւ եղած ընտրութիւնը չճանչնալ, նորընտիր կաթողիկոսին յիշատակութիւնը չընել, և կառավարութենէ հաստատութեան հրովարտակ չառնել։ Միանգամայն կաթողիկոսական ընտրութեան և ազգեցութեան իրդիրները հաստատուն ձեւի մը վերածելու համար, չորս կէտեր սահմանեցին և միաբանութեան կոզմէն ընդունելիը պահանջեցին, և յատուկ պատուիրակ մրն ալ որոշեցին կարապետ Ամդեցի՝ Տիգրանակերտի եպիսկոպոսը, որ էջմիածին երթալով առաջարկները ընդունել և Ղուկասի ընտրութիւնը ընդել տայ։ Զորս առաջարկներու պաշտօնագիրը չունենք, որ աւելի մանրամասնօրէն ուսումնասիրէինք։ Անոնք համառօտակի միայն նշանակուած կը գտնենք. 1. Լուսահոգւոյն փոքրաւորները ելանէին ի նբօ., 2. Վասն

ընդ-ունեան կ-ոչնչ-ի, 3. վասն կ-ոչ-ոչ-անելոյ պ-ոչ-ոչ-ոչ-ոչ-ոչ, 4. վասն հաս-ս-ս լ-ինելոյ հ-ա-շ-ոչ-ոչ-ոչ-ոչ-ոչ

պով պատասխանելէ ետքը, կ'անցնին Կ-Պոլսեցւոց առաջարկած չորս կանոններուն։ Առաջինին դիմաց տեղի կու տան, և Սիմէոնի ժամանակէն կաթողիկոսական յարկաբաժինի կամ վճռարանի մէջ նղող և Ներսէս կոչուածներ, յօժարակամ դուրս կ'ելլեն, անձնական խնդիր մղած չըլլալու համար։ Իբր թէ այս կերպով Ղուկասի մօտէն հակազաքարևանները հեռացած պիտի ըլլան. զի Զաքարիայի միտքին մէջ Սիմէոնի դէմ ալ բուռն հակառակութիւն մը գոյացած էր, Ղուկասի ընտրութեան անոր կամքին և կտակին արդիւնքը եղած ըլլալուն։ Իսկ միւս երեք կէտերուն միաբանութիւնը կ'ընդդիմանայ, խնդիրը օրինական ձևի վերածելով։ Իբրև սկզբունք կը հռչակեն, թէ Կանոնադիր օրէնք ընտրողներ հոգևոր հայրապետ չընտրեն և ոչ ժողովուրդ. ամէն կանոն հայրապետը թէ պարտի վերահաստատել իւրով կնիքը կընդօվ, անկէ ետքը, կ'ըսեն, և մէկ ղեռանցան ինչեցուած, որով եթէ այս կանոն առանց հայրապետական ինքոյ չընէջին, ի հարկէ անվաւեր լինին։ Այս սկզբունքի հիմնուելով կը հետևեցընեն, որ եթէ Կ-Պոլսեցիք Ղուկասի ընտրութիւնը չեն ընդունիր, անոր ջրհնութեան ետքը ընդդին ընտրին կընդունան, կանոն չկրնան, և կարղիօս անոան եւս արժանի լսանելով ընդբեղ յեր էրեն, և դէպրէր ինչն մեղբրեն, ինչպէ՞ս կը պահանջեն որ կաթողիկոսական աթոռէն կանոններ հաստատուին։ Եւ կ'ուզրակացնեն թէ այս անհերիք նկ է։ Թող ինքանեցին ընդ ինչեանց, և կացութիւնը պարզեն չկընդելով նանոան կաթողիկոսին, և զինքեանն և զմեռաբն մեր հոգացեալ սար չկնացեն, ապա և ասացեալ կանոն հանդերձ այլեւս կանոն էրեսցին կանքոյս և ինչով (Դիւի. Դ 194)։ Այդ տեսուելիւնները միաբանութիւնը յատուկ պաչտօնագիրի վերածելով՝ Կ-Պոլիս ղրկուելու համար ճանապայ կը հանեն 1781 ի մարտ ելն, և հաւանաբար կարապետ Ամդեցին ալ կը մեկնի Կ-Պոլիս դառնալու, և բերանացի բացատրութիւններ տալու։ Միաբանական դիրը կը ղրկուի Կ-Պոլիս գտնուող Պետրոս եպիսկոպոսին, և Կ-Պոլսոյ քաղաքին նոր նուիրակ Մինաս եպիսկոպոսին, և Կ-Պոլսոյ վիճակաց նուիրակ Գալուստ եպիսկոպոսին, որպէսզի ըստ այնմ աչխատին Կ-Պոլսոյ պատրիարքին և մնծամեծաց հետ գործերը կարգադրել։ Սակայն դժբախտաբար վերջերս ընդդին ի չեռ առաջոց էին անկեալ ի ճանապարհին յայնկոյս Կարնոյ, և մայիս 2'ին դեռ Կ-Պոլիս բան մը ստացուած չէր, և հարցում ուղղած էին էջմիածին, և անկէ ետքը նոյն գիրերը նորոգ էրեալ ղրկուեցան (Դիւի. Դ. 197), որով չատ ուշ ստացուեցաւ Կ-Պոլսոյ մէջ Միայրաթոռոյ միաբանութեան պատասխանը։ Այդ առթիւ չատ մը մասնաւոր գիրեր ալ ղրկուեցան Կ-Պոլիս միտքերը չինեալու, որոց մէջ նչանաւոր է նոյն իսկ Ղուկասու կողմէ 1780 սեպտեմբեր 7 թուականով (Դիւի. Դ. 30) սեղանաւորներու պետ Պալքափանցի Յարութիւն ամիրայի ուղղուած գիրը (Դիւի. Դ. 24), որ չատ ուշ և միաբանական գործողութենէն ետքը ճանապայ հանուած է, ինչպէս յաւելուած ծանօթութենէն կը քաղուի (Դիւի. Դ. 30)։ Կը յիշուի ևս թէ Ղուկաս՝ Զաքարիայի ալ գրած ըլլայ, թէ ի հարկէ ժամանակէ վիճակեցայ ես յայն պաշտօն, այլ էրեմ արժանաբանէք ման զէ-փեղ փալ, ինչն ըստ հանճեցէք ետ այր և զգանդրեցնս ղայս չանչն առնալ զըսթ (ՄՍՐ. 8)։ Ամէն առթի մէջ Զաքարիա պատրիարքութեանը առեն այդ գիրը առած չէ։

ՏԱՃԿԱՀԱՅՈՑ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

2154. Երբոր Զաքարիայի ազդեցութեամբ Կ-Պոլսոյ մէջ Ղուկասի ընտրութեան դէմ որոշումներ կը տրուէին (§ 2151), արդէն մնծամեծներէն մաս մը կար, որ սրտով կամակից չէր, և այդ խումբին ոյժ կու տային կաթոլիկամիտները ալ, որոնք Զաքարիայի համակիր չէին կրնար ըլլալ, անոր վերջին ձեռնարկներուն պատճառով (§ 2130)։ Էջմիածինէ եկող նուիրակ և պատգամաւոր եպիսկոպոսներն ալ համոզիչ բացատրութիւններով, վիշդուխեան կողմ եղողներուն թիւը օրըստօրէ կը չատցնէին, բայց չատ աւելի մեծ ազդեցութիւն գործեց Ղուկասի բռնած խոհեմ և հեզ ընթացքին լուրը, և Կ-Պոլսեցւոց դիմադրութեան առջեւ խոնարհելով, կաթողիկոսական ձեռերէն հրաժարիլը։ Ըստ այսմ թէպէտ կազմուած էր մնծամեծներու նչանաւոր թիւ մը, որ չէջնէին առնել զեռզեռ-ընէն, սակայն Զաքարիա անողոքելի էր, և կամ պարտիրէն և վերջապէս որոշ նորա՝ ճայր անհանգրեալ, մա-

նաւանդ որ նա զօրաւոր էր իր դիրքին մէջ, և մեծամեծներն ալ չկրնային ասել ինչ ե՞ւ կամ առնել ընդդէմ նորին կամաց (Դիո. Ա. 5)։ Այսպէս ատրտամ վիճակ մը կը տիրէր Կ-Պոլսոյ մէջ, և Ղուկասի կաթողիկոսութիւնն ալ ուրախ ձեւ մը ունէր, ոչ ընդունուած էր, և ոչ ալ բացարձակ մերժուած։ Նոր ընտրութեան ձեռնարկութիւն կար։ Միեւնոյն առկախ վիճակը էջմիածնի մէջ ալ կը տիրէր։ Ղուկաս կաթողիկոս էր, Մայրաթոռոյ վարչութիւնը ձեռք առած էր, պէտք եղած գործերը պաշտօնապէս կը կատարէր, բայց կաթողիկոսութեան արտաքին ձեւերը չէր գործածեր, ինչպէս բացատրեցինք (§ 2152). աւելի տեղապահի, քան թէ բուն կաթողիկոսի դիրքը կը պահէր։ Այդ կացութիւնը երկկողմանի կը չարունակէր 1781 գարնան միջոցին, երբ անակնկալ միջադէպ մը, այսինքն Զաքարիայի պատրիարքութենէն ելլելը, կացութիւնը այլափոխեց։

ԱՆԿԻՒՐԻՈՑ ԿԱԹՈԼԻԿՆԵՐԸ

2155. Պատմեցինք իր կարգին թէ Զիլիֆտար Մէհմէտ եպարքոսին օրով, Զաքարիա ստիպուած էր կաթոլիկներու հանդէպ ունեցած ընթացքը մեղմացընել (§ 2136)։ Ապդէն կաթողիկոսական խնդիրն ալ ամբողջովին գբաւած էր անոր մտադրութիւնը։ Այդ պատճառներով կաթողիկոսական խնդիրը թուղթեր էր, և պետն չէր գիտեր, ո՛չ միայն Կ-Պոլսոյ մէջ խորհրդակցել՝ այլ մանաւանդ Անկիւրիոյ մէջ տեղական իշխանութիւնները չհանելով չորս եկեղեցիներ գրաւել, և ըստ պետքին էրեանց կոտրել ու ջարդել (Դիո. ժ. 266)։ Գործը ակնյայտնի կերպով պատրիարքական իշխանութեան հակառակ ըլլալով, ժողով մը գումարեց Զաքարիա, և ժողովական որոշմամբ կառավարութեան դիմեց, և Զիլիֆտար եպարքոսն ալ ստիպուեցաւ հրովարտակ մը հանել տալ չորս եկեղեցիները նոր դարձնելու, հետեւեալներն ալ պատժելու հրամանով։ Զաքարիա հրովարտակը ստանալով անմիջապէս բուռն գործադրութիւնն չուզեց ընել, այլ առաջնորդ Ստեփանոս վարդապետին գրեց, որ ծանուցանէ հրամանը եւ հպատակելու հրաւիրէ հետեւեալները։ Անոնք չհամակերպեցան, զի տեղական իշխանութիւնները չհանած էին։ Նոյն օրեր Ստեփանոս վարդապետի մահուան վրայ, Աբրահամ վարդապետ ղրկուեցաւ նման հրահանգով, բայց անոր ալ չհնազանդուն, հարկ եղաւ հրովարտակի գործադրութիւնը պահանջել պետական զօրութեամբ, և այս նպատակով Անկիւրիա ղրկուեցաւ Պօղոս վարդապետ Պանտըրմայի առաջնորդը, իբրև կարողագոյն անձ մը։ Այդ միջոցին Զիլիֆտար կը մնար 1781 փետրուար 8'ին, և իշխանութիւնը տեղակալութեամբ կ'անցնէր Քաթըտաղ Հասան փաշային, զի եպարքոս անուանուող Իզզէթ Մէհմէտ փաշա կարին կը գտնուէր, և մինչև անոր հասնիլը տեղակալութեան պէտք զգացուած էր։ Պօղոս վարդապետ գլխաւոր հետեւեալներէն չորս հոգի ազատել կուտայ Սամսոն, որք են Եսայի Փէշտիմալճի օղլու, Պետրոս Զըպճըօղլու, Յովհաննէս Եուսուֆօղլու, և բժիշկ Պետրոս Քէօթահացի. բայց եկեղեցիներու խնդիրը տակաւին առկախ կը մնար, և որ ևս է, Պօղոսի դէմ դատաճանութեան լուրեր ալ կը լսուէին։ Պօղոս լուր կու տայ պատրիարքին, սա ալ կրկին ազգային ժողով կը գումարէ, և կ'որոշուի նոր դիմում ընել փոխ-եպարքոսին Անկիւրիոյ եկեղեցիներու մասին հրովարտակը գործադրելու, և միանգամայն տաստերկու հոգիներու անուններն կու տան Անկիւրիայէ հեռացուելու համար։ Սոյնք են. Մաղաքիա Էմիրզէօղլու, Աֆտոն Ճանէզօղլու, Պօղոս Տատվէրէնօղլու, Պետրոս Ուզունօղլու, Հայրապետ Տիւրկէրօղլու, Յովհաննէս Ինճէօղլու, Միքայէլ Զուռնաճիօղլու, Մաղաքիա Սամուէլօղլու, Հերոնիմոս Ճգնաւորօղլու, Յակոբ Սրվաճիօղլու, Յովհաննէս Գրլճըօղլու, և Յովհաննէս Եուսուֆօղլու, վերոյիշեալ համանուններէն տարբեր՝ անոր մէկ ազգականը։ Միեւնոյն առթիւ մայրաքաղաք գտնուողներէն ալ հեռացուելու համար քանի մը անուններ կը տրուին, որոնք են. Յարութիւն Ճանպազօղլու, Յովսէփ Թիւլպէնտճի, Քերոբէ Գուլումճեան, Յովհաննէս Սահաթճի, Սերոբէ Օթուքաքճի, վարդան Մանկավարժ, Լօրինցիոս Գափամճի, և Մինաս Կոյր մականուանեալ։ Սոյնց գործադրութիւնը կ'ըլլայ 1781 մարտին, վերջիններէն Քիարան կը բանտարկուին, առաջիններն Ամասիա կ'աքսորուին,

նաւանդ որ նա զօրաւոր էր իր դիրքին մէջ, և մեծամեծներն ալ չկրնային ասել ինչ ե՞ւ կամ առնել ընդդէմ նորին կամաց (Դիո. Ա. 5)։ Այսպէս ատրտամ վիճակ մը կը տիրէր Կ-Պոլսոյ մէջ, և Ղուկասի կաթողիկոսութիւնն ալ ուրախ ձեւ մը ունէր, ոչ ընդունուած էր, և ոչ ալ բացարձակ մերժուած։ Նոր ընտրութեան ձեռնարկութիւն կար։ Միեւնոյն առկախ վիճակը էջմիածնի մէջ ալ կը տիրէր։ Ղուկաս կաթողիկոս էր, Մայրաթոռոյ վարչութիւնը ձեռք առած էր, պէտք եղած գործերը պաշտօնապէս կը կատարէր, բայց կաթողիկոսութեան արտաքին ձեւերը չէր գործածեր, ինչպէս բացատրեցինք (§ 2152). աւելի տեղապահի, քան թէ բուն կաթողիկոսի դիրքը կը պահէր։ Այդ կացութիւնը երկկողմանի կը չարունակէր 1781 գարնան միջոցին, երբ անակնկալ միջադէպ մը, այսինքն Զաքարիայի պատրիարքութենէն ելլելը, կացութիւնը այլափոխեց։

2155. Պատմեցինք իր կարգին թէ Զիլիֆտար Մէհմէտ եպարքոսին օրով, Զաքարիա ստիպուած էր կաթոլիկներու հանդէպ ունեցած ընթացքը մեղմացընել (§ 2136)։ Ապդէն կաթողիկոսական խնդիրն ալ ամբողջովին գբաւած էր անոր մտադրութիւնը։ Այդ պատճառներով կաթողիկոսական խնդիրը թուղթեր էր, և պետն չէր գիտեր, ո՛չ միայն Կ-Պոլսոյ մէջ խորհրդակցել՝ այլ մանաւանդ Անկիւրիոյ մէջ տեղական իշխանութիւնները չհանելով չորս եկեղեցիներ գրաւել, և ըստ պետքին էրեանց կոտրել ու ջարդել (Դիո. ժ. 266)։ Գործը ակնյայտնի կերպով պատրիարքական իշխանութեան հակառակ ըլլալով, ժողով մը գումարեց Զաքարիա, և ժողովական որոշմամբ կառավարութեան դիմեց, և Զիլիֆտար եպարքոսն ալ ստիպուեցաւ հրովարտակ մը հանել տալ չորս եկեղեցիները նոր դարձնելու, հետեւեալներն ալ պատժելու հրամանով։ Զաքարիա հրովարտակը ստանալով անմիջապէս բուռն գործադրութիւնն չուզեց ընել, այլ առաջնորդ Ստեփանոս վարդապետին գրեց, որ ծանուցանէ հրամանը եւ հպատակելու հրաւիրէ հետեւեալները։ Անոնք չհամակերպեցան, զի տեղական իշխանութիւնները չհանած էին։ Նոյն օրեր Ստեփանոս վարդապետի մահուան վրայ, Աբրահամ վարդապետ ղրկուեցաւ նման հրահանգով, բայց անոր ալ չհնազանդուն, հարկ եղաւ հրովարտակի գործադրութիւնը պահանջել պետական զօրութեամբ, և այս նպատակով Անկիւրիա ղրկուեցաւ Պօղոս վարդապետ Պանտըրմայի առաջնորդը, իբրև կարողագոյն անձ մը։ Այդ միջոցին Զիլիֆտար կը մնար 1781 փետրուար 8'ին, և իշխանութիւնը տեղակալութեամբ կ'անցնէր Քաթըտաղ Հասան փաշային, զի եպարքոս անուանուող Իզզէթ Մէհմէտ փաշա կարին կը գտնուէր, և մինչև անոր հասնիլը տեղակալութեան պէտք զգացուած էր։ Պօղոս վարդապետ գլխաւոր հետեւեալներէն չորս հոգի ազատել կուտայ Սամսոն, որք են Եսայի Փէշտիմալճի օղլու, Պետրոս Զըպճըօղլու, Յովհաննէս Եուսուֆօղլու, և բժիշկ Պետրոս Քէօթահացի. բայց եկեղեցիներու խնդիրը տակաւին առկախ կը մնար, և որ ևս է, Պօղոսի դէմ դատաճանութեան լուրեր ալ կը լսուէին։ Պօղոս լուր կու տայ պատրիարքին, սա ալ կրկին ազգային ժողով կը գումարէ, և կ'որոշուի նոր դիմում ընել փոխ-եպարքոսին Անկիւրիոյ եկեղեցիներու մասին հրովարտակը գործադրելու, և միանգամայն տաստերկու հոգիներու անուններն կու տան Անկիւրիայէ հեռացուելու համար։ Սոյնք են. Մաղաքիա Էմիրզէօղլու, Աֆտոն Ճանէզօղլու, Պօղոս Տատվէրէնօղլու, Պետրոս Ուզունօղլու, Հայրապետ Տիւրկէրօղլու, Յովհաննէս Ինճէօղլու, Միքայէլ Զուռնաճիօղլու, Մաղաքիա Սամուէլօղլու, Հերոնիմոս Ճգնաւորօղլու, Յակոբ Սրվաճիօղլու, Յովհաննէս Գրլճըօղլու, և Յովհաննէս Եուսուֆօղլու, վերոյիշեալ համանուններէն տարբեր՝ անոր մէկ ազգականը։ Միեւնոյն առթիւ մայրաքաղաք գտնուողներէն ալ հեռացուելու համար քանի մը անուններ կը տրուին, որոնք են. Յարութիւն Ճանպազօղլու, Յովսէփ Թիւլպէնտճի, Քերոբէ Գուլումճեան, Յովհաննէս Սահաթճի, Սերոբէ Օթուքաքճի, վարդան Մանկավարժ, Լօրինցիոս Գափամճի, և Մինաս Կոյր մականուանեալ։ Սոյնց գործադրութիւնը կ'ըլլայ 1781 մարտին, վերջիններէն Քիարան կը բանտարկուին, առաջիններն Ամասիա կ'աքսորուին,

իսկ եկեղեցիներու խնդիրը, փոխ-եպարքոսը եպարքոսին կը թողու, որուն գալը մօտալուտ էր (ԴԻՒ. Ժ. 267-278), ինչպէս որ ալ կը հասնի ապրիլ 5'ին (ՍՐԳ.)։

ՆԱՄԱԿԻ ԽՆԴԻՐԸ

2156. Եպարքոս Իզզէթ Մէհմէտ փաշա իր պաշտօնավարութեանը ձեռնարկեց պատրիարքարանին պաշտպանութեամբ։ Անտեղի վարմունքի մէջ գտնուողներէն երիք հոգի եւս բանտարկեց, որոնք են Գէորգ և Աբիկ Սանտալճի եղբարք և Ծեվհաննէս Մինթճանճի։ Բանտարկեալներուն ազատութեանը համար իրեն դիմող կիներուն լեզուագարութեանը համար, անոնցմէ ալ չորս հատը բանտարկեց, թէպէտ յետոյ տուգանքով արձակեց։ Իսկ Անկիւրիոյ եկեղեցիներու գործն ալ նկատի առնելով որոշեց յատուկ պաշտօնեայ ղրկել հրովարտակին գործադրութեան համար, և այդ պաշտօնին որոշուեցաւ Քաթիճուպաչը Ուզուն Մէհմէտ, որ «Անէր ընդ ֆր վ[illegible] պատրարք» (ԴԻՒ. Ժ. 281-283)։ Այդ որոշումները եւսաքանզեւս գրգռեցին կաթոլիկութեան յարողները, որոնք եւրոպական դեսպաններու դիմելով Զաքարիայի տապալումը իրենց միակ միջոց ցուցուցին, և իրենք ալ այդ նպատակով ճիգերու ձեռք զարկին։ Քաթիճուպաչը Մէհմէտ դէմ ճանապայ չեղած կը լսէ, որ Ամասիա աքսորուածներէն Ծովհաննէս Գրլճըօղլու գաղտնաբար եկած է, ուստի իր պաշտօնէից ձեռքով բռնել ու բանտարկել կու տայ։ Ասոր վրայ կաթոլիկներուն մէջէն էսմա սուլտանուհւոյն ապարանքին հետ յարաբերութիւն ունեցողներ, անոր պաշտօնեաներէն գիր մը կ'առնեն, իբր թէ էսմա սուլտանուհիէն գրուած, և վերոյիշեալ Մէհմէտի ուղղուած, որ Գրլճըօղլուն թողու, զի իւր մարդն է. բայց Մէհմէտ կասկածելուն, ճարտար կերպով կը ստուգէ թէ սուլտանուհին անգիտակ է, ուստի գործը եպարքոսին կը հաղորդէ, և ոչ միայն Գրլճըօղլուն չթողուիր, այլ և եպարքոսը խարդաւանանքին վրայ զայրանալով աւելի խիստ հրահանգներ կու տայ Մէհմէտի։ Ասոր վրայ Մէհմէտ ճանապայ ելլելու համար 1781 մայիս 7 ուրբաթ օր Իւսկիւտար կ'անցնի։ Հոն իրեն կարաւանին հետ ճանապարհելու եկած կասկածաւոր մէկը կը տեսնէ, և կը հարցաքննէ, և անոր չփոթ պատասխաններուն վրայ խուզարկել կու տայ, և վրան չատ մը նամակներ կը գտնուին, մինչ սուրհանդակ ըլլալը ուրացած էր։ Նամակները եւրոպական լեզուով հասցէ ունէին, և մարդը կը խոստովանի թէ Անկիւրացի կաթոլիկներու կեդրոնն եղող Սոֆճի խան չուխային դռնապանն ու բեռնակիրը այդ գիրերը իրեն յանձնեցին Անկիւրիա տանելու համար։ Այդ խօսքերը Մէհմէտի կասկածը կը չատցընեն, եւրոպական լեզուի հմուտ մէկը գըտնել տալով մէկ հատը միայն բանալ և կարդալ կուտայ, և վերջէն բոլոր նամակները ու կասկածոտ մարդը, սեղանաւոր Միքայէլ ամիրային ձեռքով Զաքարիա պատրիարքին կը ղրկէ, որ նայի և գիտցածին պէս տնօրինէ։ Միքայէլ կ-Գոլիս անցնելով իւր սպասաւորին հետ թղթատարն ու թուղթերը պատրիարքին կը յղէ։ Իսկ նա ոչ կը բանայ և ոչ կ'ընդունի, այլ ետ կը ղրկէ Միքայէլին, թէ մեզի վերաբերեալ գիրեր չեն, առած տեղը դարձնէ։ Այսպէս կը գրէ Զաքարիայի յիշատակագիրը, վկայելով թէ «ևնոնոպես և ևնոնչլոսը եմ այս» (ԴԻՒ. Ժ. 286-289)։ Երկու օր ետքը Աւստրիոյ դեսպանատան թարգման մը կու գայ գանգատիլ, թէ դէպչին մը ըմբռնեալ է, և ի յեօթ նոքա առեալ զնոցին քացել և ընկերցեալ Զաքարիա կը հերքէ զպարտութիւնը, և Միքայէլն ալ կանչել տալով եղելութիւնը պատմել կու տայ։ Սակայն թակարդը կանուխէն պատրաստուած էր Զաքարիան տապալելու։ Դեսպանը բողոքագիր կու տայ եպարքոսին, և իբր հատուցում պատրիարքին պաշտօնանկութիւնը կը պահանջէ։ Իզզէթ եպարքոս իւր փոխանորդին կը յանձնէ գործը ստուգել, պաշտօնեայ մը կը ղրկուի պատրիարքին որ ձշմարտութիւնը կը բացատրէ, Միքայէլ սեղանաւորէն տեղեկութիւն կ'առնուի, թղթատարն ալ հարցուփորձի կ'ենթարկուի, և ամէնուն խօսքերը իրար կը հաստատեն (ԴԻՒ. Ժ. 290-294)։

2157. Իզզէթ եպարքոս այս տեղեկութեանց հիմնուելով, դեսպանին դիմումին ոյժ չտար, և դիտել կու տայ որ եթէ դեսպանատան գիրեր էին, այսպիսի աննշան մէկու մը չէին յանձնուեր։ Կասկածաւոր թըղ-

թատարն ալ արգելական կը պահէ խնդիրը աւելի պարզելու համար։ Ասոր վրայ Աւբուտրիոյ և Գաղղիոյ դեսպանները միացած ուղղակի սուլտանին կը բողոքեն, պարիարքին պաշտօնանկութիւնը պահանջելով, որ՝ կ՚ըսեն, վիրաւորած ենթրեն մը պոռթ, և կանոն մը առնօ վնաստաբերիչ։ Ապտիւլ Համիտ կայսր ալ կ՚ուզեր վերծանել ինդրանոց նոցա, պատրիարքի փոփոխութիւնը կը հրամայէ։ Թէպէտ եպարքոսը յոյժ ջանացաւ զոյ ֆոխաճ նօթ հնարել, սակայն անբաւական եղաւ թագաւորական հրամանը։ Ժողովուրդին դիմումներն ալ օգուտ չունեցան, զի խնդիրը քաղաքական գոյն էր առած, և դիւանագիտական կնճռոտութեանց դուռ կրնար բացուիլ։ Տուաճի Իսմայիլ էֆէնտիի պաշտօն տրուեցաւ կայսերական հրամանը գործադրել, որ զինուորներու ջոկատով մը պատրիարքարան ներկայացաւ 1781 մայիս 29 չարաթ օր. կայսերական հրամանագիրը կարդաց, որ կը հրամայէր Պրուսա երթալ, և հրաւիրեց անմիջապէս ճանապայ ելլել Քումգաբուի առջեւ պատրաստ կեցող նաւով։ Ժողովուրդը յուզը առած և խուռն լեցուած էր յարգանքի ցոյց մը ընելու, Զաքարիա ալ պատրաստութիւնները ըրած էր, ուստի խոյն խնայրէնալ չունի եաս խնդրանքէ, և Իսմայէլի հետ ուղեւորեցաւ դէպի ծովեզերքը՝ հազիւ կրնալով ճեղքել խուռն բազմութիւնը։ Ժամը երեկոյեան դէմ 10 էր, երբ նաւ մտան, և մինչեւ 12 սպասեցին սա է պոնիլ ղինը նօթ է նաեն։ Զաքարիա նաւին մէջը ուրքի վրայ կանգնելով «նօթ օրհնել ղպէն ամենայն, դէպէտն և ղիճաւորն, և այնպէս արձակեց ժողովուրդը միսիթարական խօսքերով։ Նա ոչ միայն իր վհատնած բնաւորութեամբը գիտէր ինքզինքը հանդարտ պահել ձախող պարագաներու մէջ ալ, այլ և նոյն պահուն յաղթուածէ աւելի յաղթականի զգացումն ունէր, զի նոյն մայիս 29'ի առտուն Իսմայէլի գալէն իբր երէք ժամ յառաջ, գիր հասած էր Անկիւրիայէ յաղթ առման էվէզեցոյն ընթցողոյ։ Ուզուն Մէհմէտ ստիպողական հրամանով փութացուցեր էր իր ուղեւորութիւնը, և անմիջական գործադրութեամբ, հաներ էր

ՋԱՔԱՐԻԱ ՊԱՇՏՕՆԱՆԿ

եկեղեցիները կաթոլիկներուն ձեռքէն, և առաջնորդ Պօղոս վարդապետին յանձնած։ Նոյն նաւին մէջ Զաքարիայի կ՚ընկերանային Տուաճի Իսմայիլ էֆէնտիէ զատ, իր աշակերտներէն Թովմաս և Պօղոս վարդապետներ, Յակոբոս սարկաւագ, Մեսրոպ և Պօղոս դպիրներ, վերջինը իր եղբօրորդին, և երիք ծառաներ։ Պաշտօնական պոռթով և խնամով փոքր աքսորական Զաքարիան, և բաղմամ ֆրէնտական բանէ-ֆէֆէր զայն, յայտարարելով նաև թէ իրեն հրահանգ տրուած էր, ֆազդրոնէմէթ փոքրիկ և մ՚ նէպիւթ ընե, չէ այս նմա է ընդ պոռանաճ եղէ։ կ-Պոլսէ 15 ժամ նաւագնացութեամբ կը հասնին Մուտանիա, և 2 ժամ եւքը անկէ մեկնելով, կիրակի 30 մայիս երեկոյեան ժամ 11'ին Պրուսա կը մտնեն, ժողովրդական և պետական փառաւոր ընդունելութեամբ (Դիւ. ժ. 295-301)։ Միւս օր Իսմայիլ էֆէնտի ետ կը դառնայ իրեն հետ բերելով Պրուսայի առաջնորդ Յովհաննէս Համատանցի եպիսկոպոսը, որ Զաքարիայի յաջորդելու նշանակուած էր, և յունիս 2'ին չորեքշաբթի օր հանդիսապէս պաշտօնին ձեռնարկեց (ՍՐԳ.)։

2158. Պատրիարքի փոփոխութիւնը կաթողիկոսական խնդիրին կերպարանը փոխեց։ Ծիշտ եւցաւ (§ 2153) թէ մայիս 2'ին դեռ կ-Պոլիս չէր հասած միաբանական ժողովին պաշտօնագիրը (Դիւ. Դ. 196), և թէ անկէ ետքը նոր գիրը (Դիւ. Դ. 197), որով մայիս 29'ին, Զաքարիայի պաշտօնանկութեան օրը կ-Պոլսոյ մէջ պաշտօնական գիրեր հասած չէին կրնար ըլլալ։ Անոնք Համատանցիին ձեռքը յանձնուեցան, որ կաթողիկոսական խնդիրին մասին Զաքարիայի զգացումները չունէր, և ժողովուրդին մէջ ալ Ղուկասի հանդէպ համակրութիւնը երթալով տարածուած էր (§ 2154)։ Զաքարիայի արկածն ալ իր նչանակութիւնն ունեցաւ, և տարադէպ զգացումներուն իրր ձախող հետեւանք մեկնուեցաւ, ուստի նոր պատրիարք և մեծամեծներ որոշեցին դիմադրութեան վերջ դնել։ Օսմանեան կառավարութեան դիմելով հոռոմտուրքեան հրովարտակը ստացան և փութացին

հասցէին ղրկել, օրհնութեան կոնդակները հրատարակուեցան, անունը եկեղեցական պաշտամունց մէջ սկսաւ յիշատակուիլ, և Ղուկասի կաթողիկոսութիւնը պաշտօնապէս և գործնականապէս ճանչցուեցաւ Տաճկահայոց կողմէն։ Անկէ ետքը միայն՝ Ղուկաս վերջ տուաւ իր քաշուած վիճակին, և երբ ընդհանուր ազգին կողմէ իր իշխանութիւնը ճանչցուեցաւ, նորէն սկսաւ Մայր տաճարին մէջ հայրապետական գահը բազմիլ, կարմիր կնիք գործածել, և ամէն կողմ օրհնութեան կոնդակներ ղրկել, առանց երբեք անցեալոյն վրայ վիշտ յայտնելու։ Ղուկասի քաշուած և կաթողիկոսական ձեռակերպութիւններէ հրաժարած միջոցը եղած է ՚ըն (Դիւի. Դ. լը.), կամ գոնէ ամբ (Դիւի. Ա. 5), և ոչ երբեք ըմ՚ա էջիոս (ՄՍՐ. 8), զի 1780 յունիսին վախճանած էր Սիմէոն, իսկ 1781 յունիսին հարկաւ հասած էր էջմիածին Կ-Պոլսոյ մէջ տեղի ունեցած փոփոխութեանց արդիւնքը։ Ղուկաս երբեք ձեռքէ հանած չէր աթոռին վարչութիւնը և վանքին մատակարարութիւնը, և միաբանութիւնը չրջապատած էր զայն համակրութեամբ և օժանդակութեամբ, բայց հարկաւ մեծ գոհունակութեամբ ընդունեցաւ Համատանցիի ձեռնտուութեամբ ստացուած եղքը, և աւելի ազատօրէն սկսան կարգադրուիլ պաշտօնական գործերը։

ՀԱՄԱՏԱՆՑԻԻՆ ԸՆԹԱՑՔԸ

2159. *Եթէ Համատանցիին պատրիարքութիւնը դիւրացոյց կաթողիկոսական խընդիրին լուծումը, բնաւ չի նպաստեց կաթոլիկական խնդիրին, որ կարծես չատ աւելի սաստիկ և բուռն վիճակ մը ստացաւ։ Համատանցին աւելի նախանձայոյզ երեւցաւ քան կաղզուանցին, և ոչ ալ գիտցաւ անոր ճարտար և մտացի կերպերը գործածել, այլ կատարելապէս անկներող վարմունք մը ձեռք առաւ։ Հրամայեց ղեռան նոցա տղեն լռանել, և զիրքոռւրիչն արբելոյ, գլխաւորներէն չատերը ի ՚նէտրլ բռնած յղեց (ՍՐԳ.), որոնց մէջ կը յիշուին Հանրմեան, Նալպանտեան, Հիւրմիզեան, Թրնկըրեան ընտանիքներու անուններն (01 ՕՐԱ. 155), և Վաղըռոզլը այլ տղեն, Տէրզլը՚ն ֆեռայ, հարուած անոռնէ (ՍՐԳ.)։ Ուրիչ խստութեանց վրայ նորօրինակ բան մըն ալ հնարեց, զի հեռեռլոյ դեռելոյն դերպէպէի կամ սանդուխի նման ծալ կամ դագաղ չլինել եռ, և պարտիզ կոպեռ ըզեռելն է վրայն տանիլ պատռէրեռց (ՍՐԳ.)։ Կաթոլիկները որ այնչափ ուրախութեամբ ողջունած էին իրենց նեղգամիտ դաւաճանութեան ելքը և Զաքարիայի պաշտօնանկութիւնը, սկսան իրենց ըրածին վրայ ղղլալ, կարծես թէ փնտռելով Զաքարիայի օրերը (Դիւի. ժ. 303)։ Համատանցին իրմէնէրն ալ զգուեցուց, և սկսաւ ազգին ապել և խոռել երեսնալ վան ֆռաղ բռռոցն, և յոռի և անպէտ նկատուիլ յաղթ ռեձբեռռրիեան ետռոմ, մանաւանդ երբ ընեռոդ պատրէրքն առնելով է ռեզ՝ բռռրեան բանէռ նանրացռոցանէր ղվռռակ նռռ (Դիւի. ժ. 303)։ Սակայն աքսորական և բռնի հեռացումը՝ աւելի եւս չատցուցած էր Զաքարիայի հանդէպ ընդհանուր համակրութիւնը, անմեղ զոհ մը նկատուելով գաղտնի և չարամիտ նենգութեանց։ Համատանցին չատ երկար չկրցաւ վայելել բախտովին ձեռք անցուցած պատրիարքութիւնը, վասնզի վեց ամիս ետքը, նոյն 1781 տարւոյ վերջերը, յոյնի ընդդիմութիւնները սկսան, և ընկենռլ չէչեռռռներն եռռ ճգնեցան։ Համատանցին այդ ընդդիմութեան դէմ դնելու համար, հրամանագիր հանել տուաւ թէ ով որ իր պատրիարքութիւնը չընդունի ըռռ կրնայ ռռռանց կրթեռց, և այս պատրուակով ռռնի ռ անչնռռ ռռռէեռց է ըլլ։ Ժողովուրդին մէջ զայրոյթը աւելցաւ, գինքռ ցանենալ նռռ ընդացան ցռռռցեռլն է նռ, և երբէք նռռ չէր ֆռեռռցեռլ և ձռձգէռլ է ռռռանի էկեղեցռոյն, թերեւս վտանգի մըն ալ հանդիպէր։ Աւտռ վրայ բերեռլ պահպանռռ է ղինռռռռց, նռռռյց է ռեզ եկեղեցռոյն, սակայն աւելի եւս գրգռուց կացութիւնը, և չհանդռռրժեռլ այնմ ապէն, խնդրեցին է նռռնի փռլ ընդռռբռլռն։ Յռռվուիւնը օրէօր եռռռռնզեռռ ռռռպռցռռ, և հանդրուիւռռ դիմումներ եղան սուլտանին և էպարքոսին, պատրիարքը հեռացնել և Զաքարիան բերել։ Ժողովուրդի մեծ գրգռուիւռռ պատճառներէն մէկն ալ այն եղաւ, որ լուր առնուեցաւ, թէ Համատանցին դիմումի ըրած է կառավարութեան՝ Զաքարիան պրուսայէ հեռացրնել և ի հեռռռռ ռռբեռ ռռռռեռլ։ Այսպէս պեռեռց այս եռռվռռիեռռ գինքռ երեռ ռռ-*

(Դիո. ժ. 304), և Համատանցին չկրցաւ խաղաղ պաչտօնավարութիւն ունենալ։

ՆՈՐԷՆ ՋԱՔԱՐԻԱ

2160. Այս միջոցին Զաքարիա հնուտէն հանդիսատես՝ անցած դարձած չփոթութիւնները կը դիտէր, և կը զբաղէր Պրուսայի առաջնորդութեան գործերով, ըստ կարի կարգադրելով տեղւոյն կացութիւնը, յանձանձելով ժողովուրդին պէտքերը, և համակրութիւն աճեցնելով իրեն չուրջը։ Միեւնոյն միջոցին մանրամասնական տեղեկութիւններ կը ստանար Ուզուն Մէհմէտի Անկիւրիոյ մէջ ունեցած գործունէութեան, և չորս եկեղեցիներուն կաթոլիկներէն առնուելուն վրայ, որուն առաջին լուրը լսած էր պատրիարքարանէ մեկնած ժամուն (§ 2157)։ Զորս եկեղեցիներ խաղաղութեամբ ազգային առաջնորդարանին ձեռքը կը մնային, 12 աքսորեալներէն Մաղաքիա Էմիրզէօղլու և Ծովհաննէս Գըլճըօղլու, որ վերջի անգամ կրկին ձերբակալուած էր (§ 2156), մեղայի գալով և ստորագրութիւն տալով ազատած էին, ընդ նոսա իննհարիւր տուն և ըղէ պոնդ ենթ, կաթոլիկութենէ ետ դարձած և տուգանքի յանձնառութեամբ ստորագրութիւն տուած էին։ Զաքարիա ասոնք լսելով յոյժ ուրախացաւ և ցնծագին բերկրեցաւ, զի գոնէ այն արկածին՝ որուն ենթարկուեցաւ, ըղձիանան եթե անյապաղ։ Անդին Կ. Պոլսոյ մէջ Համատանցիին դէմ հակառակութիւնը օրէօր սաստկացաւ, կառավարութիւնն ալ տեսաւ, որ այլեւս անհնար է անոր պաչտօնի վրայ մնալը, և մերձակայ զատկի տօնին առիթ անտեղութեանց առիթներ պիտի տրուին, ուստի 1782 մարտի կէսին տեղեկները, հրաման ըրաւ որ Համատանցին պատրիարքարանը թողու, և երթայ Գարթալ գիւղը նստի, Մարմարայի հանդիպակայ եզերքը, և ժողովուրդն ալ ազատօրէն իւր կամքը յայտնէ պատրիարքական խնդիրին մասին։ Համատանցին հնուացաւ, և ծողվաթալ քաղաքը ի դէպ հրամանէ փրկուելեան, բացարձակ միաձայնութեամբ Զաքարիայի ափսոսէ բերուիլը և նորէն պատրիարք ըլլալը խնդրեցին, և յայտարարեցին, որ ուրիշ մը, եթէ հրեշտակ եւս էղէ, չի ռեշ ընդունելի, և ոչ խուզուելու այս առնս պատրաստ։ Եպարքոս իզդէմիր Մէհմէտ, արդէն յակամայից Զաքարիայի պաչտօնանկութեան համակերպած էր (§ 2157), ուստի հաճութեամբ հաւանեցաւ, և կայսերական հրամանն ալ ստանալով, խնկոյն պաչտօնագիրը գրեց և Պրուսա յղեց, արքունական պաչտօնէի ձեռօք Զաքարիան մայրաքաղաք առաջնորդելու համար։ Գիրը Պրուսա հասաւ Զատկի կիրակի օրը արեւ մտնալէն ժամ մը ետքը, 1782 մարտ 27'ին, որ օր կը հանդիպէր զատիկը, և ոչ 25'ին, ինչպէս գրուած կը գտնենք ե և է թուատառերու չփոթութեամբ։ Պաչտօնեան կը ստիպէր միւս առտու ճանապայ ելլել, բայց Պրուսայի խոթոճիկոլը դէպ ուշն ընդդիմացաւ ըսելով, թէ պատիւ մը չըրած չիողուր, քանի որ Զաքարիա ցարդ չէր նոթել ինքն ոտոտ ոչ է ելլել, քայ է չեկեղեցի փնտռեն։ Անկէ ետքը զինուորական հետեւորդներով և ժողովրդական ուղեկիցներով Պրուսայէ մեկնեցան զատկի երեքշաբթի առտուն մարտ 29'ին, և այն գիշեր Ղարասախ գիւղը օթեւանեցան, և չորեքշաբթի 30 մարտ՝ Զէնկիլէր հանդիպելով իջան եալովա, և յատուկ բերուած նաւով ճանապայ ելան, բայց ալեկոծութեան հանդիպելով անմատդարնակ կղզի մը ապաւինեցան, և հոն գիչերեցին։ Կանուխ այն տեղէն մեկնելով Հարէմխակէլէսի նաւահանգիստը ելան հանգեղ տղոտէն դէպ, ուսկից եպարքոսական հրաւիրակ մը զիրենք պետական դուռը առաջնորդեց (Դիո. ժ. 305-307)։

ԳՈՐԾԻ ԿԸ ՍԿՍԻ

2161. Զաքարիա մայրաքաղաք ոտք կոխելուն անագին բազմութիւն խռնուած կը գտնէ դիմացը, ոչ միայն Հայ ազգայիններէն, և ժողովուրդին ամէն դասակարգերէն, այլեւ յոյլ ոմնայ ազգ, և չիտակ եպարքոսին կ'ելլէ, որ պարտուպատշաճ մեծարանօք և պատուասիրութեամբ կ'ընդունի, և յորդորական մըն ալ կը խօսի, թէ դու դ' ըսանար է դպոտ, այլ որտան յոտոլն էէր, տան զայն լէր խոնարհ և հեզ, և քարոտ կոտովարեցնէր զազէն տ, որպես դինչ յոյժ կոտովարեցեր (Դիո. ժ. 307), և զինի ըն էլոտ յոտեցոցանելոյ ոտխն լինէին որտային (ՍՐԳ.)։ Տեսակցութեան վերջը, զէեցոյց նմա զչխանոտնեան կոպան, և պատրիարքարան զրկեց պատուներով, ուր

ինդակցութեան ցոյցերը նորոգուեցան, և այսպէս 1782 մարտ 31 հինգշաբթի օր՝ հանդիսապէս մտաւ այն պատրիարքարանը, ուսկից մեկնած էր 10 ամիս առաջ 1781 մայիս 21'ին (§ 2157)։ Զաքարիա իրօք ալ մեղմ և խոհեմ ընթացք մը բռնեց, և ամէն կողմէն եղած համակրական ցոյցերուն մէջ նկատելի էր, որ նահե թողլոմ է հեռացեալ կու գային իրենց յարգանքը մատուցանել, և միանգամայն յայտարարել, թէ ալ մեղմ ըլլալ է (Դիի. ժ. 309-310), որով ոչ միայն կրօնական զգացումները կը վկայէին, այլեւ վերջին նենգամիտ դաւաճանութեան վրայ զղջումին կը յայտնէին։ Զաքարիա այսպէս վարուելով, երբեք իւր առաջին ուղղութենէն չեղած չէր, և կաթոլիկական չարժումը զսպելու միտքէն ետ կեցած չէր, միայն թէ կը փորձէր քաղցրութեամբ չահիլ, յօգուտ գործածելով ընդհանուր ժողովուրդէն ցուցուած խանդավառութիւնը, և համատանջին թողած տխուր տպաւորութիւնը հեռացնելով։ Իբրեւ նոր ուղղութեան հաւատիք, թիապարտութեան մէջ գտնուողներէն ոչ ըրբարձակել տուաւ, հաւանաբար Համատանջին բանտարկել տուածներէն։ Սակայն դիտողութիւններ եղան, թէ տեղի տալ սկսած է, և առանց հաւանութեան մեծամեծաց գործել կը փորձէ։ Զաքարիա գանգատներու աճելուն և զօրանալուն առիթ չտալու, և գործին խոհական ուղղութիւն և օգտակար արդիւնաւորութիւն և կանոնաւոր ընթացք տալու համար, ոչ թէ կոչ ժողով մը եղաւ Ասոտածածնի եկեղեցին Քումքաքուի, ներկայութեամբ գլխաւոր եկեղեցականաց, քոլոր տհանոյէց, քոբեպոլիս էլեանաց, և է մէջ քոլոր եանոֆլէց ընտրեալ վարդեպոց, և հետեւեալ հանդէպ բռնուելիք ընթացքին մասին, հետեւեալ կանոնները հաստատուեցան։ 1. եթէ մէկը հարկ ըլլայ պատժել, չէ որ եանոֆլեն եկեալ վկայեցին վասն նորա, իսկ պոպէին կամ արշակեն է պարծան է պարբերութեան ըլլայ։ 2. եթէ մէկուն արձակման համար էր եանոֆլեն ընդրան ըլլայ, պատրիարքը նախապէս քննութիւն ընէ է յեան տհանոյէց կամ է յեան արանց հաստատեալ։ 3. Պասկի համար պէտք է որ ամուսնացողները հաղորդեսցին չեկեղեցւոյ հայոպանեայց, և խաչ բռնող կնքահայրն ալ հեղինակող չըլլայ։ 4. Հետեւեալներու զանակները անարգել մկրտուին, միայն թէ կնքահայրն ալ հաղորդեսցի ընդ երեխային։ 5. Որ հետեւեալներուն մեռելներուն առջեւ դիմայն տհանոյ քնասցի, ասանց կոպրման կրելի։ Արգելուեցաւ միանգամայն որ ազգայիններ քրիստոս կամ կոքեսեր, իմա հայ կաթոլիկ կարգաւոր, է պոռնո երեխանց մ՛ պարգեն (Դիի. ժ. 313)։ Բայց այդ կարգադրութիւններուն օրինական ձեւով սահմանուիլը աւելի ծանր եկաւ կաթոլիկութեան հետեւողներուն, և անոնց մէջ ալ լուրջ խնդրոյ առարկայ դարձաւ գործը, թէ հնար չէ արդեօք այդ կարգադրութեանց համակերպիլ, առանց հռոմէադաւան ուղղութեան դէմ մեղանչած ըլլալու։

2162. Ցիշեալ խնդիրին բացատրութեան չանցած, հարեւանցի յիշենք Զաքարիայի դառնալուն, 1782 տարին պատահած աղէտալի հրդեհները։ Առաջինը հանդիպեցաւ Սամաթիա, յունիս 28'ին, վարդավառի պահոց երեքշաբթի օրը, և դիշերուան ժամ 5'ին սկսելով 15 ժամ տեւեց։ Ջիչ ետքը պատահեցաւ Պալաթի հրդեհը յուլիս 12'ին, վարդավառի երկրորդ երեքշաբթի օրը, և ցերեկուան ժամը 10'ին սկսելով 25 ժամ տեւեց։ Բայց աւելի ահռելի եղաւ երրորդը, որ օգոստոս 10'ին, Ասոտածածնայ պահոց չորեքշաբթի օրը, երեկոյեան ժամ 2'ին սկսելով, չարունակեց 66 ժամ մինչեւ չաբաթ ցերեկ ժամ 8։ Հրդեհը Ջիպալի թաղէն սկսելով, տարածուեցաւ Այազաբու, Քօսթքա, Վլանկա, Եէնիքաբու, Սամաթիա, Սիլիվրիքաբու ու Եէտիքուլէ թաղերը, և 30,000'է աւելի պոռնո և չինոսածո պոռոսկոնո յալինը քարչոյց, այնպէս որ Կ-Պոլսոյ մայրաքաղաքին մեծ կէսը անապատ ապրեցաւ։ Այդ աղէտները, որոնց մէջ ընդարձակ Հայ թաղաբաժիններ ալ կային, առիթ ընծայեցին Զաքարիայի նպաստամատոյց գործունէութեան ձեռնարկել։ Ապրեցուցեալ ընդ էջ եանոց և էչեանոպէքոց, և սկսաւ նշանաւոր դումարներ հաւաքելով ամէնուն պարէն և մնունդ բաչխել տալ, վրաններ պատրաստել տալով բացօթեաններու պատսպարել, և

ամէն արհեստաւոր խումբերու չրջաբերականներ գրել, և սրտաճմլիկ խօսքերով ամէնքը նուիրատուութեան և ողորմութեան յորդորել։ Արհեստաւորներու 72 խումբերէն կամ էնաֆներէն՝ 16 հոգիէ բաղկացեալ յանձնաժողով մըն ալ կազմեց, որ հաւաքուած նպաստները իղձի մոտք բաշխեն, որով ֆուէր ի ըէբէ-ացույ ըռռասպոնս հրկիզուած խեղճերուն (ԴԻԻ. ժ. 315–321)։ Էնաֆներու կամ արհեստաւորներու 72 խումբերէն 65'ին անունները կը յիշէ Պօղոս կաղզուանցի յիշատակագիրը (ԴԻԻ. ժ. 338), որ հետաքրքրական է այդ տեղեկութիւններով զբաղողներուն, բայց մեր նպատակէն դուրս է։

2163. Այդ միջանկեալ յիշատակութենէ ետքը, դառնանք կաթոլիկ կուսակցութեան մէջ յուզուած ներքին խնդիրին, որուն մասին ինչ ինչ ակնարկներ ըրած ենք արդէն (§ 2110)։

ԿԱԹՈԼԻԿՆԵՐՈՒ ԴԻՐՔԸ

Խնդիրը կաթոլիկութեան հետեւողներուն տանելի կացութիւն մը պատրաստելու վրայ էր, իրարու յարմարցնելով Հռոմի կրօնական պահանջները և Օսմանեան պետութեան տիրող օրէնքները։ Քանի որ Տաճկահպատակ քրիստոնէից դիրքը պատրիարքարաններով էր ճշդուած, և կենցաղական ամէն պարագաներ ու գործեր անոնց ձեռքով պիտի կատարուէին, պէտք էր որ կաթոլիկութեան հակամէտներն ալ իրենց կենցաղական գործերը Հայոց պատրիարքարանին իշխանութեամբ կատարէին։ Միջանկեալ կերպով յիշենք, թէ այն ատեն երկու պատրիարքարան միայն կը ճանչնար Օսմանեան կառավարութիւնը, Յոյնն ու Հայը։ Ինչչափ յունադաւան ազգութիւններ կային, Յոյն, Պուլկար, Սրբոյ, Առնաւուտ, Վալաք, Մոլտաւ, Ռումէն, Խրուադ, Գարամանցի, Ասորի, Մելքիտ կամ Արաբ, բոլոր Որդոդոքսները՝ որոնք Երկաբնակ դաւանութիւն ունէին՝ Յոյն պատրիարքարանին կը հնազանդէին։ Իսկ միացեալ արեւելեան քրիստոնեաներ, Հայ, Վրացի, Աղուան, Ասորի, Ղփտի, Հապէշ, Քաղդէացի, որոնք ընդհանրապէս Միաբնակ դաւանութիւն ունէին, Հայ պատրիարքարանին ներքեւ էին։ Լատին կաթոլիկներ իրենց օտարներ նկատուած էին, իսկ Արեւելցիներէն կաթոլիկութեան հետեւողներ իրենց ազգէն դուրս յատուկ համայնք չէին կազմեր, և պարտաւորուելով իրենց կենցաղական գործերը Հայ պատրիարքարանի իշխանութեամբ պիտի կատարէին։ Այսուհդ կը ծագէր տիրող կրնճիռը։ կաթոլիկութիւն տարածող Լատին քարոզիչներ և զայն պաշտպանող եւրոպական դեսպանատուններ, կը ջանային իրենց դաւանութեան յարող Հայերը, բոլորովին իրենց ազդեցութեան ներքեւ բերել և Հայ պատրիարքարանէ հեռացնել, և այս նպատակով կրօնքի և խիղճի կնճիռներ կը յարուցանէին, թէ այդ դիմումները հերձուածողներու կամ հերետիկոսներու հետ է հոգեւոր հաղորդակցութիւն եղած կ'ըլլան, և ներելի չեն։ Բուն Լատիններուն ձայնակից էին Փրոփականտայի Հայ աշակերտներ, և միեւնոյն սկզբունքը կը պնդէին, և ատոնք կը կազմէին Գալէֆեան կամ Գալէֆցի կոչուած խումբը։ Ատոնց հակառակ էին Մխիթարի աշակերտութենէն վճռեռիկ մնացողները, որոնք մէկ կողմէն զուտ հայկական կաթոլիկութիւն մը կազմել կ'ուզէին, և միւս կողմէն կաթոլիկութեան հետեւողներուն հանդարտ կացութիւն մը գտնել կը ճգնէին, Օսմանեան տիրող օրէնքներու համակերպութեամբ և ազգային կաթոլիկոսութեան և պատրիարքութեան հովանաւորութեամբ։ Արդէն էջմիածինի կաթողիկոսներուն անուններն ալ իրենց գիրքերուն ճակատը կը մակագրէին, որով անոնց իշխանութիւնը ճանչցած կ'ըլլային։ Ատոնք ալ Աբրահեան կամ Աբրացի անունով կը յիշուէին։ Երկու կողմերն ալ իրենց համակիրներն ունէին կաթոլիկութեան հետեւողներուն մէջ, բայց բնիկ Կ-Պոլսեցիներ կամ քաղաքացիներ՝ առաւելութեամբ Աբրացոց հետ էին, իսկ Անկիւրացիք կամ Գաղատացիք՝ Գալէֆցոց կը հետեւէին։ Հայ հռոմէական եկեղեցականութեան մէջ կային նաև Լիբանանի Անտոնեան միաբաններ, որոնք չատ որոշ և վերջնականապէս չեչտուած ուղղութիւն չէին յայտներ. Աբրացոց կը համակրէին, բայց բացարձակ գործակից կը խոհային։ Իսկ Թրիէստի Մխիթարեաններ յայտնի կերպով Գալէֆցոց կը գործակցէին, զի վճռեռիկ ճիւղին հետ

համընթանալ չէին սիրեր։ Ահա կաթոլիկ խումբին մէջ յուզուող ներքին խնդիրին բուն ոգին ու ծագումը։

ՉԱՄՉԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

2164. Վենետիկի Մխիթարեանց մէջ տիրող ուղղութիւնը իրենց մէջ ժառանգական կրնանք ըսել, անդրսէն իրենց հիմնադրին Մխիթարէ Սեբացած (§ 1987)։ Իրենց մէջ կանուխէն՝ այդ ուղղութեան մեծ չափազով մը եղած էր հայր Գէորգ Այնթապցին, իսկ անկէ ետքը աւելի գործունեայ պաշտպան երեւցած էր հայր Միքայէլ Չամչեան։ Սա պաշտպանողական գրուածներով ուզեց հաստատել, ինչ որ իւր միաբանութեան տեսութեանց հիմնաքարն էր, թէ հռոմէականութեան հետեւողներուն արգելել չկրնար ըլլալ Հայ եկեղեցիէ խորհուրդներ ընդունիլ, և մկրտութեան ու ամուսնութեան ու թաղման համար օրինաւորապէս նոյն եկեղեցիին դիմել, որովհետեւ Հայ եկեղեցին իւր վարդապետութեամբ հռոմէադաւանութենէ օտար եղած չէ, և երբեք իբրեւ հերձուածող կամ հերետիկոս Հռոմի պապութենէն դատապարտուած չէ։ Այդ նպատակին ծառայող Չամչեանի մեծ գործն է, Պատմութիւն Հայոց ըստ աշխարհագրական տեսութեան, հատոր ստուար հրատարակութիւնը, բովանդակ 2975 երես, և որ իւր ժամանակին դարագլուխ կազմած է, Հայոց ազգային պատմութեան ամբողջութիւն մը ներկայացնով է ինչպէս ալ ինչ ոճով 1784։ Առաջին հատորին տպագրութիւնը 1784 յունիս 15 թուական կը կրէ (ՉԱՄ. Ա. 1), իսկ երրորդը լրացած է 1786 ապրիլ 16'ին (ՉԱՄ. Գ. 1). սակայն չատ կանուխէն պէտք է դնել աշխատասիրութեան թուականը, ինչ որ նշան մըն է, թէ գաղափարին պաշտպանութիւնը կանուխէն յղացուած գաղափար մըն էր։ Չամչեանի պատմութիւնը, անկախաբար պատմական տեսակէտով ունեցած իւր արժանիքէն, կանխամտածուած և սեւեռեալ որոշ գաղափարի ծառայող գործ մըն է, ամէն առիթի մէջ Հայերը Հռոմի մօտ, Հռոմի հետեւող, Հռոմի հպատակող ցուցնելու համար, անխտիր ընդունելով կեղակարծ յիշատակներ, քմահաճ մեկնութիւններ, և թիւրիմաց տեսութիւններ։ Չամչեանի գրիչին տակ, հին դարերուն գործերը՝ երբ եկեղեցիներ իրարու հետ հաշտ էին, Հռոմի հնազանդութիւն կը դառնան։ Միջին դարու մէջ քաղաքական նպատակով յայտնուած զիջողութիւններ, կատարեալ հռոմէադաւանութեան կերպարան կ'առնեն։ Իսկ Հայոց եկեղեցւոյն ներողամիտ հոգին և ուրիշ եկեղեցիներու հետ յարաբերութիւններ պահելու պատրաստականութիւնը, հայադաւանութեան ուրացութիւն կը մեկնուին։ Նոյն իսկ մանաւանդ պատահական կամ քաղաքավարի խօսքերը, մինչեւ անգամ նամակի հասցէները, պաշտօնական դաւանութեան կը փոխարկուին։ Մեր նիւթին հետ կապ ունեցող տեսակէտն է միայն, զոր այստեղ ուզեցինք մատնանիշ ընել, թէ ոչ հնար էր Չամչեանի ժամանակագրական և քննադատական տեսութիւններուն վրայ ալ դիտողութիւններ ընել, սակայն կ'ընդունինք թէ իւր ժամանակին պատմական ուսումն ալ մեծ քայլեր առած չէր, որ ինքն ալ կարենար անոնց հետեւիլ և անոնցմէ օգտուիլ։

ՎԱՇԱՆ ՀԱՒԱՏՈՑ

2165. Չամչեանի Հայոց պատմութիւնը անուղղակի պաշտպանութիւն էր Վենետիկի ընդգրկած մեծ սկզբունքին, բայց ուղղակի ալ նոյն նպատակին ծառայող աշխատութեան մը պէտքը զգացուելով, միեւնոյն ժամանակ երկրորդ երկասիրութեան մը ձեռնարկած էր Չամչեան, Վահան Հաւատոյ անունին ներքեւ, յորում հաստատի ուղղափառութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ, ակնարկ ի սրբոյն Գրիգորէ Հայոց պահապետէ Լուսաւորչէ մինչեւ ցայսօր։ Ծիշտնք անգամ մըն ալ անցողակի կերպով, թէ Չամչեանի միտքով ուղղափառութիւն բառը հռոմէադաւանութիւն տեղ գործածուած է։ Այդ գործը սկսած է պատրաստել 1776'ին, որ է ըսել, միեւնոյն միջոցին որ պատմութիւնն ալ կը գրէր։ Այդ աշխատութիւնը ոչ միայն տպագրուած չէ, այլ և բոլորովին անծանօթ մնացած է, և իրաւ հետաքրքրական գործ մը կ'արժէ որ քիչ մը աւելի տեղեկութիւն տանք անոր մասին, աչքի առջեւ ունենալով այն հազուագիւտ գրչագիր օրինակը, որ Անտոնեանց մատենադարանին մէջ կը գըտ-

նուի։ Քառասնալ մեծութեամբ, և իւրաքանչիւր երեսը 40 տողով, 924 երես ստուար հատոր մըն է գործը։ Համառօտ յառաջաբանէ մը ետքը (ՁՄՁ· 1-5), խոհեկութեանց առաջին մասին մէջ կը բացատրուի, Վ֊ից Հայոցապետներէն եկեղեցւոյ յիշատակները (ՁՄՁ· 7-52), և երկրորդ մասով կը ներկայացուի, Բովանդակութիւն մեղրոնեան քրիստոնէից ի լուսաւորչէ մինչեւ ցայսմ ժամանակս (ՁՄՁ· 52-80)։ կարծեցեալ մոլորութիւններուն մէջէն տասը հատը կ'ընտրէ, և իւրաքանչիւրը ընդարձակօրէն կը բացատրէ և կը հերքէ, որք են. 1. Քաղկեդոնի ժողովին մերժումը (ՁՄՁ· 81-115)։ 2. Մէ քնութեան բացատրութիւնը (ՁՄՁ· 115-179)։ 3. Հոգւոյն սրբոյ ի Հօրէ բղխումը (ՁՄՁ· 179-194)։ 4. Հանդերձեալ կեանքի վարդապետութիւնը (ՁՄՁ· 195-270)։ 5. Սուրբ Ախոռոյն ի խոնէսցը (ՁՄՁ· 270-352)։ 6. Մինդեան տօնին օրը (ՁՄՁ· 353-373)։ 7. Անապակ բաժակը (ՁՄՁ· 374-709)։ 8. վերջին օծումը (ՁՄՁ· 709-737)։ 9. Ժառական օրէնքները (ՁՄՁ· 738-768), և 10. Հռոմի նախագահութիւնը (ՁՄՁ· 769-799)։ Ցաւելուածական գլուխ մը ունի։ 11. Ցաղթօ ազգ ընդ եկեղեցւոյն Հայոց ի հնումն եղեալ և ի հերձուածողութենէ (ՁՄՁ· 800-855), որուն կը կցէ մաս մըն ալ, Ցաղթօ տանէ մի անյանց, զորոց լսեսցեն ամանէ (ՁՄՁ· 856-886)։ և յատկապէս կը յիշէ Պարսամը, Օձնեցին, Որոտնեցին, Գրիգոր Տաթեւացին և Մովսէս Տաթեւացին։ Այդ աշխատութիւնը որուն ձակատը գրուած կը գտնենք, թէ պատրաստուած է ընդհանուր յօժարութեամբ և սիրայօժարութեամբ ժողովրդեան իւրոյ, իբր գաղտնիք պահուած էր, և հանրութենէն ծածուկ կը մնար, զի ոչ Զամչեան ինքն, և ոչ իւր միաբանութիւնը, չէին համարձակիր պաշտօնապէս ստանձնել խընդիր մը, որ ուրիշներէն կասկածաւոր կը դառնուէր, այլ կը ջանային անպաշտօն կերպերով գաղափարը տարածել։ Պատրաստուած վահան՝ պատշաճ պարագային պաշտպանութեան ասպար պիտի ըլլար, կամ լաւ եւս՝ իբրեւ պատրաստ ղէնքերու մթերանոց պիտի ծառայէր։

2166. Միւս կողմէն խնդիրը բախտին բերմանց թողուն ալ մուացի կերպ մը չէր, և չէր կրնար ապահովապէս դիտուած նպատակին հասցնել։ Այս երկճղի կացութեան մէջ ճարտար մտածմունք մը եղաւ՝ պատասխանատու անուն մը գըտնել, և այդ մասին մեծ եղաւ վենետիկ բնակող հայազգի Յովհաննէս Սեղբոսեանի օժանդակութիւնը, որ է վենետկեան ազնուականութեան մէջ ընդունուած հայազգին Յովհաննէս Սերբոս մարքիզ (Marchese Giovanni di Serpos) տիտղոսով։ Սա յանձնառու եղաւ իր անունով դիմումներ ընել Հռոմի պապութեան, և յայտնապէս անոր հաւանութեան ներքեւ կրնդիրի նիւթ եղող դրութիւնը, Փրոփականտայի ատեանին առջեւ զայն պաշտպանել, և յաջողցնելու համար պէտք եղած միջոցները գործածել։ Մէկ խօսքով ծախք ու աշխատանք չխնայել լատինական ազդեցութենէն անկախ հայ կաթոլիկութիւն մը կազմելու, որ հռոմէադաւան ըլլայ իւր ներքին համոզումներով և կարծիքներով, և հայադաւան եկեղեցիէ չզատուի իր հանրական և եկեղեցական յարաբերութիւններով։ Այս դրութեան արդիւնքը պիտի ըլլար Օսմանեան պետութեան կասկածները չզարթուցանել, և անոր կողմէն խիստ և բռնադատիչ միջոցներու առիթ չընծայել։ Ըստ այսմ Յովհաննէս Սեղբոսեան կամ Սերբոս մարքիզը, նախապէս մասնաւոր նամակներով Փրոփականտայի իմացուց հռոմէադաւան Հայերուն Թուրքիոյ մէջ ունեցած տառապագին վիճակը, տեղական օրէնքներով քրիստոնէից ունեցած կացութիւնը, Լատին քարոզիչներու մոլեռանդ պահանջկոտութենէն յառաջ եկած անտեղութիւնները, եւ հրաման խնդրել գործը պաշտօնապէս իրենց քննութեան ենթարկել (ՍԵՐ· VI)։ Առաջարկը ընդունուեցաւ և արտօնուեցաւ գրուածը պատրաստելու, և 1783 հոկտեմբեր 9'ին տպագրութեան հրամանն ալ ստացաւ (ՍԵՐ· XII), և հաւանաբար տպագրեալ օրինակով խնդիրը Հռոմի ներկայացուց։ Սեղբոսեան կը խոստովանի թէ ինքն օտար է դաւանական և աստուածաբանական ուսումներէն, և ըստ սրբէշներ էր յետոյն բանելով, էրն սաքնորդեցին ինդրոց ի եկեղեցինոց լբէյրնուն ջՁ (ՍԵՐ· VII)։ Ասով յայտնի կը ցուցընէ թէ վենետիկի միաբանութիւնն էր

ՑՈՎՀԱՆՆԷՍ ՍԵՂԲՈՍԵԱՆ

գործին հեղինակը և գրուածը պատրաստողը, հետեւելով այն ուսումնասիրութեանց, որոց վրայ Զամչեան անխոնջ աշխատութիւն էր թափած։ Ցառաջաբանին մէջ լռելեայն Լատին քարոզիչներուն կ'ակնարկուի, երբոր կը յիշուին անոնք, որ կամ ըղձալից պահանջողներ, և կամ մոլորեալներ նպատակներէ և պետութիւններէ տղաք, աշխատած են գինքհինի Հայոցն ծածկել հալածանքներուն ճշմարիտ պատճառները, որոնց մէջ ընդ մէջ թափուի պատմագրներով երեւցած է Աբեղայի Հայերուն կրօնական հաստատը (ՍԵՐ. IX)։ Կը խնդրուի միանգամայն, որ այդ մասին պատշաճ հրահանգները տրուին կ-Պոլսոյ պապական փոխանորդին և Լատին քարոզիչներուն (ՍԵՐ. X)։ Այդ յայտարարութիւնները ո՛չ միայն կը բացատրեն Աբբայեանց ընդգրկած դրութեան հոգին, այլև կ'արդարացնեն մեր քանիցս յայտնած ու կրկնած տեսութիւնը, թէ Լատին քարոզիչներու մոլեռանդ եռակռուութիւնն էր, որ իրենց հետեւողները խստութեանց ենթակայ կ'ընէր, ստիպելով զանոնք այնպիսի վարմունքներու՝ որոնք ոչ միայն ազգային կացութիւնը կը խանգարէին, այլև տէրութեան կասկածները կը զարթուցանէին,

ԵՐԿՈՒ ԽՆԴԻՐՆԵՐ

2167. Սեղբոսեանի անունով Հռոմի Փրօփականտային քննութեան և որոշման ենթարկուած երկու խընդիրները բացատրուած են հետեւեալ կերպով։ 1. Թէ նկատելով Թուրքիոյ կացութիւնը և եղելութիւնները, կրնո՞յ արդեօք Ներսէս Հայ կաթողիկոսը, որ կաթոլիկ երբեմն մնալ Հայ ազգին հեղինակած ըսուած եկեղեցին, և հոն ինչ ինչ կրօնական փոփոխութեանց մասնակցին, և պաշտօնապէս մըն ալ ընդունի, փոխ այս կերպով շատ մը ներսէսեաններէ պահանջել, և իրենց կաթոլիկութիւնը խաղցընել պահելու համար (ՍԵՐ. 2)։ 2. Թէ նոյներուն կրնայ արդեօք ներսէս Հայ կաթողիկոսը, փոխակերպութեանց համար համակերպիլ Հայ եկեղեցւոյ էութեան փոփոխելուն, նկատելով որ այդ փոփոխութիւնը նայելով նախկին Հայ սովորութեանց Հայերուն ընդունած փոփոխութիւն է (ՍԵՐ. 2)։ Երկու խնդիրներուն լուծումը տրուած է ստորագական կերպով՝ թէ կրնան, և ընդարձակ պատճառաբանութիւններով և ուսումնասիրութիւններով պաշտպանուած է ստորագական պատասխանը, զորս մենք պիտի չվերլուծենք, այլ միայն ըսենք թէ ամփոփումն է վերոյիշեալ Վահան Հասապոյ երկասիրութեան, և այն ալ ոչ չատ համառօտ, զի առաջինին լուծումը 182 երես (ՍԵՐ. 3—185), և երկրորդինը 70 երես (ՍԵՐ. 185—256) կը պարունակէ Սեղբոսեանի կողմէ ներկայուած գրուածին մէջ։ Սեղբոսեան նոյն գրուածին մէջ խոստացեր էր, Հայ պատմութիւն մըն ալ պատրաստել և ներկայել Փրօփականտային (ՍԵՐ. VI), եւ երեք տարի ետքը 1786ին, նոյն Սեղբոսեանի անունով Վիեննտիկի մէջ հրատարակուեցաւ եռահատոր իտալերէն Հայոց պատմութիւն մը, որուն համար կրնանք ըսել թէ Զամչեանի պատմութեան (§ 2164) ուղղութեամբ և պարունակութեամբ կազմուած է։ Միայն թէ ձեւն ու ոճը բոլորովին տարբեր է, եւ պարզ պատմականէ աւելի չատագովական ընթացք մը ունի, միշտ միևնոյն նպատակի ծառայելով, թէ Հայոց եկեղեցին Հռոմէականէն հեռացած չէ, և անկէ դատապարտուած չէ, և թէ Հայոց եկեղեցւոյն դէմ չարախօսներ՝ ստուգութենէ հեռացած և ճըշմարտութիւնը աղաւաղած են։ Այդ աշխատութիւնը վեց մասերու կամ գիրքերու բաժնուած է, որք են. 1. Հայաստանի աշխարհագրութիւնը (ՍԵՂ. Ա.1-105)։ 2. Հայաստանի հին և նոր քաղաքական վիճակը (ՍԵՂ. Ա.106-273)։ 3. Քրիստոնէութեան Հայաստանի մէջ սկսիլն ու զարգանալը (ՍԵՂ. Ա. 274-500). 4. Հայ կաթողիկոսներու չարքը (ՍԵՂ. Բ. 3-315)։ 5. Հայ եկեղեցւոյ ժողովները (ՍԵՂ. Բ. 316-486)։ 6. Հայ եկեղեցւոյ ծէսն ու սովորութիւնները (ՍԵՂ. Գ.3-622)։ Գործին մէջ ընդարձակ տեղի տրուած է կալանոսի տեսութիւնները և մեղադրութիւնները հերքելու։ Ինչպէս կը տեսնուի, այդ աշխատութեան մէջ պատմական մասէն զատ, վիճաբանական մաս մըն ալ կայ, ուր Զամչեանի պատմութենէն զատ Վահան Հասապոյ գիրքն ալ քաղուած է. իսկ անոնցմէ դուրս աւելցուած են պապական կոնդակներէ եւ Փրօփականտայի որոշումներէ զանազան կտորներ։

2168. Պէտք է ընդունիլ թէ մեծ աշխատութիւն թափած են Վիեննտիկի Մխիթարեանները, իրենց ընդգրկած ուղղութիւնը պաշտպանելու, և եթէ հնար ըլլար

տիրապետել տպոյ։ Իսկ Սեղբոսեան նոյն նպատակով մեծ ծախքերու ենթարկուած է, քան թէ գրական աշխատութիւն ունեցած, զի կրկին կը խոստովանի, թէ ինքն պէտք ունեցած է նշանաւոր քերթիչի մը հմայ էջիլն (ՍԵՂ.Ա. XVI), և թէ ինքն է խմբագրութեան և տպագրութեան ծախքերն ընողը, և թէ որչափ ալ գրութիւնը իրեն եղած չըլլայ, ինքը կ'ըստանձնէ անոնց հեղինակութեան պատասխանատուութիւնը (ՍԵՂ.Ա. XVII)։ Այլ թէ ինչ եղաւ այդչափ աշխատութեան արդիւնքը, խորունկ լռութիւն մը կը գտնենք իբր հետևանք։ Իրաւ գրուածները Հռոմէ չդատապարտուեցան և չմերժուեցան, որով հետև Հայութիւնը դէպի հռոմէականութիւն տանելու կը ծառայէին, բայց ընդունելութիւն ալ չգտան, զի Հայութիւն մը պահելու և պաշտպանելու կը միտէին։ Միւս կողմէն Լատիններ և Լատինամոլներ չդադրեցան իրենց պահանջկոտ և մոլեռանդ ուղղութիւնը չարունակել, իրենց հետևողներուն խիղճերը յուզել և միտքերը խանգարել, զանոնք հակազգային գործերու և հակաիտական արարքներու մղել, և ազգային պատրիարքարանի պաշտպանողական ջանքերուն և Օսմանեան պետութեան կասկածոտ որոշումներուն հետևանքները ենթարկել։ Հայոց պատրիարքարանին և կաթոլիկամիտ հատուածին մէջ խնդիրներ եւ միութիւններ, գժտութիւններ և հակառակութիւններ դադար չառին։ Իսկ կաթոլիկամիտ հատուածին մէջ Աբգարեանի և Գօլէճեանի տարբերութիւնը երթալով սաստկացաւ, և թող չի տուաւ որ գոնէ հատուածը ինքն իր մէջ խաղաղ վիճակ մը ունենար։ Այսպէս տեւեց և կը տեւէ տակաւին, և նոյնիսկ այս օրեր նոյն խնդիրները կը յուզուին։ Զաքարիա պատրիարքի հետևած ուղղութեան դառնալով, նա երկրորդ անգամ աթոռ բարձրանալէն ետքը՝ միտքը չփոխեց, բայց ոճը մեղմացուց. կաթոլիկութեան դէմ մրցումը՝ պարզապէս պաշտպանողականի վերածեց, աշխատելով Հայ եկեղեցին և Հայ ազգութիւնը ներքնապէս զօրացնել, կաթոլիկութենէ անկախաբար ուսում ու զարգացում քաջալերել, և ազգայնոց միտքէն հեռացնել

ԱՆԼՈՅՏ ԿԸ ՄՆԱՆ

կաթոլիկութեան ոյժով և միջոցներով զարգանալու հրապոյրը։

2169. Զաքարիայի պատրիարքութեան առաջին չրջանին մէջ գինքն յուզող խընդիրներէն մէկն ալ Ղուկասի կաթողիկոսութիւնն էր, որով մինչեւ էջմիածնի դէմ յայտնի մրցման և դիմադրութեան մղուած էր։ Երբոր աթոռ վերադարձաւ՝ Ղուկասը ճանչնալու կամ չճանչնալու խնդիրը փակուած էր, և այլևս ետ դառնալ անհնար էր, ուստի կամայ ա կամայ անոր համակերպիլ ստիպուած էր, բայց էջմիածնի անհամակիր զգացումը իր սիրտին մէջ մարած չէր։ Ակնարկեցինք արդէն թէ իւր հակակրութիւնը տարածած էր նաև հանգուցեալ Սիմէոն կաթողիկոսի վրայ, իմացած ըլլալով որ Սիմէոն էր որ Ղուկասը իրեն նախադասած և անոր կաթողիկոսանալը յանձնարարած էր (§ 2153)։ Ուստի աւելի բան մը չկարենալով ընել, և Սիմէոնի կարգադրած տօնացոյցին դէմ սկիզբէն յուզուած դիտողութիւնները պատճառանք ընելով (§ 2127), ազգային ժողով մը գումարեց 1784 յունուար 26'ին (ԴԻՒ.Ա.8) Ս. Սարգիսի չարաթ օրը, է պոթբէթսնէ Սոբ Ասթուածածնէ մայր եկեղեցւոջ, ուր ըստ սովորութեան հաւաքուեցան է քոլօբէ եկեղեցոց սոթբէրէցոնէ և սահաբոկ էհանայէ սբբոց եկեղեցոց, մոմբէվէլէ, եկեղեցպոնէ, էչխանափէ և էչխանէ և քոլը եանֆէ (ՏՆԱ.2), և որոշեցին հին տօնացոյցի կիրառութիւնը հաստատել՝ երկու պատճառներով. 1. վասն սբբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց անխափան ծաղոյ, և 2. վասն սէանվլատցոյ սբբոցն հայրապետաց մերոց կոթողբել տնտացոյցն անյայտելի պահելոյ, ուր հայրապետաց կարգը կը յիշեն Սարգիս Շնորհալին ալ, որ երբեք տօնացոյցի հետ գործ ունեցած չէ և հայրապետ ալ եղած չէ։ Սակայն կարծես թէ որոշման բուն հեղինակին խիղճն ալ հանդարտ չէր, թէ որոշման իսկական չարժառիթները ասոնք չեն. վասնզի անմիջապէս կ'աւելցնէ. Սինէ սէ է ռեամեցաց գինչ գխսէսան յայնսյալ գէս ընինացոյն, կամ քանի սրսոքէրէյն, չէրսէ ռեամեցս ռեղանվլով ռեղանվ (ՏՆԱ.389)։ Ըստ մեզ տեղն է առածը յիշելու, թէ ամբաստանութիւնը կանխող չքմեղանք, անձամբ

անձին է մեղադրանք։ Համաձայն տրուած որոշման, հին տօնացոյցը նորէն տպել սըրուեցաւ, ոչ թէ ամէն ինչ ի նէն Գալէս (ՏՆԱ. 4), եւ աւարտեցաւ 1785 օգոստոս 11'ին (ՏՆԱ. 1), և ըստ այնմ ալ սկըսան վարուիլ։ Սիմէոնեան տօնացոյցը 1777'ի տարեմուտէն գործածութեան մտած էր, նոյն իսկ Զաքարիայի հաւանութեամբ (§2128), և տօթը տարիէ ի վեր ամէն կողմ տարածուած էր. ուստի չենք կարծեր թէ նոր որոշմամբ անոր կիրառութիւնը ամէն տեղ և իսպառ խափանուած ըլլայ, և պէտք է ընդունել թէ տօնացոյցի մասին խառնակ և տարբեր գործածութիւններ տիրեցին Զաքարիայի պատրիարքութեան ատեն, որչափ ալ ժողովական հրամանով, «ոչ ոքէ ոեւ է ընդունոյց Սիմէոնէ, քեզէն ոա Զաքարէա պապէ», որ եղաւ ընդհանրացաւ ի հոգ (ՊԷՐ. 5)։ Այս կացութիւնը տեւեց տօթը տարի, մինչեւ որ Զաքարիայի մահուընէ ետքը, յաջորդին հրամանով Սիմէոնեան տօնացոյցի կիրառութիւնը հաստատուեցաւ, և անխափան կը շարունակէ մինչեւ ցայսօր։

2170. Ակնարկեցինք Զաքարիայի ուսումնական զարգացման մտադրութիւն դարձուցած ըլլալուն (§ 2168), ինչ որ գլխաւորապէս եկեղեցական դասակարգին համար անհրաժեշտ էր, Հայ հռոմէադաւան եկեղեցականներու հակակշռելու համար։ Արդէն կանուխէն Բակոր Նալեան և վերջէն Զաքարիա Փօքուզեան պատրիարքներ՝ անձամբ այդ նպատակին ծառայած էին (§ 2121), բայց վերջին անցուդարձեր այդ ձեռնարկն ալ խանգարեցին, ուստի հարկ եղաւ նորէն նոյն նպատակին ոյժ տալ։ Բայց այս անգամ մայրաքաղաքին մէջ պարզ դպրոցական ձեռնարկի մը տեղ, Զաքարիա մտածեց հնաւանդ ոճով վանական և ուսումնական հաստատութիւն մը, կամ հինէն նուիրագործեալ անունով Պզեւէնէ մը կազմակերպել, և այդ նպատակին միակ յարմար տեղը Արմաչի Զարիւափան տուբք Աստուածածնէ վանքն էր, մայրաքաղաքէ ոչ շատ հեռու, Նիկոմիդիա քաղաքին չրջանակին մէջ։ Արմաչի վանքին հիմնարկութիւնը պատմելնէս ետքը (§ 1639), նոր տուիք չունենանք անոր

ԱՐՄԱՇԻ ՎԱՆՔԸ

վրայ խօսելու, զի վանքն ալ յիշատակոյց արժանի կացութիւն մը չունեցաւ, և պարզապէս իրրեւ Նիկոմիդիոյ առաջնորդարան նկատուեցաւ, ուր հարկաւ անընդհատ չրուներակութեամբ առաջնորդներ գտնուեցան, թէպէտ ամբողջական չարքը յայտնի չըլլայ։ Արմաչ՝ առաջնորդարանէ զատ հռչակաւոր ուխտատեղի ալ դարձաւ, իբր ազգային բարեպաշտութեան կեդրոն, որ միչտ իրեն համար սրբավայր մը կը փնտռէ. իսկ Ասիոյ առաջակողման և Եւրոպիոյ սահմանակցութեան վիճակները՝ ուրիչ տեղ մը չունէին իրենց չնորհուանդութեան յաղուրդ տալու։ Աւելորդ կը սեպենք Արմաչու առաջնորդներուն մասին մեր կատարած հետազօտութեանց արդիւնքը այստեղ յաւաչ բերել, որ աւելի մենագրութեան մը նիւթ պէտք է ըլլայ։ Միայն յիչենք թէ անոր պահպանութեան և իրր ուխտատեղի պայծառութեան նպաստողներուն մէջ, Նալեան պատրիարքի անունին ալ կը հանդիպինք, և Զաքարիա վանեցի, Յարութիւն կրետացի, Աթանաս Կ-Պոլսեցի, և Պետրոս Ղափանցի եպիսկոպոսներու նման ծանօթ անուններ ալ կը գտնենք առաջնորդաց չարքին մէջ։ Պետրոս Ղափանցին վախճանեցաւ 1784 մարտ 20'ին, Նիկոմիդիա քաղաքը, յաւաչացած և գրեթէ զառամած ծերութեան մէջ, իրեն աչակերտ և օգնական ունենալով Յովակիմ եպիսկոպոս մը, բուռն բնաւորութեան՝ բայց և յաճառ գործունէութեան տէր անձ մը։ Նիկոմիդացիք Պետրոսի զառամութենէն և Յովակիմի բռնութենէն ձանձրացած՝ նոր առաջնորդ ուզած էին Զաքարիայէ՝ երբ տակաւին կենդանի էր Ղափանցին, և Զաքարիա 1781 փետրուար 17 թուակիր հրովարտակով մը կարգադրած էր Պետրոսի Պանտրմա փոխադրուիլը Յովակիմի տեղ, և իր ձեռնասունները Բարթողիմէոս եպիսկոպոսը նչանակած էր Արմաչի և Նիկոմիդիոյ համար։ Բայց Պետրոս չէր մեկնած օգուտ քաղելով անչուշտ մայրաքաղաքին չփոթներէն, և պատրիարքին փոխուելէն։ Զաքարիա պատրիարքութեան վերադառնալէն ետքը չէր ուզած իսկոյն բռնանալ, հաւանաբար տաղտուկ Ղափանցիին ծնրութիւնը յարգելով։ Մինչեւ որ Պետրոս կը վախճանէր, իսկ Յովակիմ իրր ժառանգա-

կան իրաւունք Պետրոսի յաջորդութիւնը իւրացնել կ'աշխատէր, կրթնելով խուժանական խումբին աղմուկներուն և չահուած պաշտօնեաներու պաշտպանութեան։ Բայց պէտք էր անգամ մը վերջ տալ այդպիսի անտեղի կացութեան, ուստի 1786 յունուար 8 թուակիր նոր և ազդու հրովարտակով զօրացած, Բարթողիմէոս Նիկոմիդիա եկաւ, Ծովակիւրը վտարեց, անոր կողմակիցներն ալ չահեցաւ կամ զսպեց, և վերջապէս Արմաշ ու Նիկոմիդիա հանդարտութիւն գտան, հնգամեայ չփոթութիւններէ ետքը։

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

2171. Բարթողիմէոս՝ կապուտիկ կամ կապուտիկեան մականունեալ կապոյտ աչքերուն համար, կ-Պոլսեցի էր բնիկ, 1749'ին ծնած, Ջաքարիայի աշակերտած, և աստիճանները անկէ ետացած, և 1775'ին եպիսկոպոսացած Սիմէոնի ձեռնադրութեամբ, Ջաքարիայի ընտրելագոյն աշակերտներէն մին եղած, և գրեթէ միշտ անոր հետ մնացած և գործակից եղած։ Ջաքարիա իւր սիրելի Բարթողիմէոսը կը ղրկէր Արմաշ, յանձնարարելով զայն կատարեալ վանական միաբանութեան և ուսումնական հաստատութեան վերածել։ Բայց Արմաշ աւեր ու խանգար էր վերջին պատահարներու պատճառով, որով Բարթողիմէոս, աւելի քան նորոգող, ի հիմանէ շէնող գործէն կ'ըլլար, և միանգամայն ձեռնամուխ կը լինէր կազմակերպելու վանքը։ Նոյնպէս յոյժ պայծառացէն, կրկին անանձն, ինչպէս կը խօսի տապանագիրը։ Սակայն դիւրին չեղաւ այդ արդիւնքները իսկոյն իրականացնել։ Նախանձոտ քաւներ զրոյց հանեցին թէ Բարթողիմէոսի չինածը 366 սենեակներով, ամուր պարիսպներով և զէնքերով լեցուն դղեակ մըն է։ Քսութիւնն ալ չուտով ընդունուեցաւ, զի Ռուսաց հետ պատերազմին միջոցն էր, և որչափ ալ կուսակալական քննութեամբ ստութիւնը յայտնուեցաւ, բայց խափանուած չինուածը չարունակելու համար նոր հրամանագիրի պէտք եղաւ, որուն ստացութիւնը ուշացաւ, և հազիւ 1797 սեպտեմբեր 13'ին Ծաչվերացի կիրակիին կրցաւ կատարուիլ նորաշէն տաճարին նաւակատիքը։ Բարթողիմէոս երբ նիւթական չէնքին հետամուտ էր, բարոյական չինութեան գործը զանց չէր ըրած, որ իւր վարդապետին մեծ յանձնարարութիւնն էր, և աշակերտաց խումբ մը կազմած էր Արմաշի մէջ, եւ անոնց դաստիարակութեամբ կը զբաղէր։ Արմաշեան աշակերտութեան այս նախընծայ դասակարգէն տասնի չափ անուններ ունինք մեզի հասած, որ օգտակար եղած են աւելի Նիկոմիդիոյ եւ Պրուսայի և չրջակայ վիճակներուն մէջ։

ԵՓՐԵՄ ԱՋԱՊԱՀԵԱՆ

2172. Երկու օծակից ընկերներուն՝ Ղուկաս կաթողիկոսի և Ջաքարիա պատրիարքի՝ (§ 2150) պաշտօնավարութիւնները՝ բաւական երկար եղան, եւ գրեթէ զոյգ վերջացան, զի իրարմէ իբր ինն ամիս տարբերութեամբ վախճանեցան 1799'ին։ Իրենց գործունէութեան մասին՝ ընդհանուր ակնարկներ են աւելի մեր գրուիքները, քան նշանաւոր եղելութիւններ. ուստի անոնց չմտած կ'ուզենք քաղել զանազան աթոռներու և հաստատութիւններու նկատմամբ ժամանակակից տեղեկութիւնները, պատմական գուգրնթացութիւնը պահած ըլլալու համար։ Կիլիկիոյ աթոռին պատահարները պատմեցինք մինչեւ Գաբրիէլ Աղապահեանի եղեռնական մահը (§ 2104)։ Սպանութիւնը տեղի ունեցած էր 1770 սեպտեմբեր 10'ին, եւ չփոթութեանց պատճառով միջոց մը աթոռը պարապ մնացած, մինչեւ որ Աղապահեան Մարկոս քահանայի որդին, և վերջին երեք կաթողիկոսներուն եղբօրորդին՝ Եփրեմ եպիսկոպոս, կրցաւ Ատանայի ապստամբանէն գալ և Սիսի մէջ աթոռը գրաւել 1771'ին, զի Ատանայէն դարձը՝ Գաբրիէլի սպանութենէն չեթ ոչ-ոքոյ տեղի ունեցած է (ՍԻՍ. 219)։ Պատմաճանէ նշանակուած 1772 թուականը (ՊԱՍ. 22), աւելի քան եփրեմի կաթողիկոսութեան, պէտք է պատչաճեցնել եղիազարի է չանկեա ոբէ էօվի կոնդէկոս հռչակուելուն։ Եղիազար ալ Աղապահան ըսուած է (ՊԱՍ. 22), բայց Ալիշան իւր ճիւղահամարին չէ անցուցած (ՍԻՍ. 219), որով չենք կրնար ճշդել թէ ինչ ազգակցութիւն ունէր Եփրեմի հետ, բայց հաւանաբար Մարկոս քահանայի միւս չորս եղբայրներէն մէկուն որդին էր, և նախորդ երեք կաթողիկոսներուն ուրիշ եղբօրորդի մը։

Եփրեմ կաթողիկոս՝ Սսոյ Աջապահեան տոհմին և նոյն տոհմէն եղող կաթողիկոսներուն պատմութիւնը գրած է, այլ հրատարակուած չէ, բացի ոտանաւոր քաղուածի մը կատրէն (ՍԻՍ. 220-221). իսկ Ներսէս Դանիէլեան եպիսկոպոսի կողմէն ստացած ձեռագիրին (ԱՋԱ.) անունները միայն ունի, իւ գործերէն ոչինչ կը պարունակէ: Պատմաձեռնէ կը տեղեկանանք թէ եղիազար Կ-Պոլիս եկած է վանը հաստատելու դիւանագործութեան նպատակով, թէ կիլիկիոյ մէջ երկպառակութիւնք տեղի ունեցած են, և Պօղոսեան+ Ասպրոսեան+ գտնուած են յայնմ ընդ, իսկ եփրեմեանք և եղիազարեանք, և թէ պատմաճեան պատրիարքին ալ բաղմանդրնեան+ պատճառած են, որովհետև ինքն ալ դիմադրած է եղիազարի ձգտումներուն, գիտնալով թէ օրինաւոր կաթողիկոս եփրեմն էր (ՊԱԱ. 22): Պիտի չկարենանք նաև ճշդել թէ ինչպէս վերջացաւ եղիազարի գրգռած հակաթռուցումը, միայն գիտնք թէ եփրեմի կաթողիկոսութիւնը տեւեց մինչև 1784, և ինքն ալ եղերական վախճան ունեցաւ սպանեալ է քահանայքն Սսոյ (ՍԻՍ. 219): Իսկ սպանութեան կերպը եղած է պէտ մանոյ արքունեալ յայլազգէ էլչեանն պեղոյն (ՊԼՐ. 5), այսինքն Գօզանօղլուներու ցեղապետէն: Սպանութեան ժամանակը յարմար է դնել 1784 տարւոյ յուլիսի վերջերը կամ օգոստոսի սկիզբները, զի սեպտեմբերին սկիզբը մեծ չտապով նոր ընտրութիւն կը կատարուի, որպէսզի չմնայ աթոռն այն առանց վերակացուի և առանց հովուի (ԴԻՒ. Ժ. 327):

2173. Եփրեմի յաջորդն ալ է ղեմէ Աջապահի էր, ինչպէս կ'ըսէ տապանագիրը (ՍԻՍ. 217), նոյն ազգատոհմէն

ԹԷՈԴՈՐՈՍ ՀԻՆԳԵՐորդ մը՝ Ղուկասէ,
ԱՋԱՊԱՀԵԱՆ Միքայէլէ, Գաբրիէլէ և Եփրեմէ հատը: Ընտրեալն էր Թէոդորոս, որ Կ-Պոլիս կը գտնուէր, չենք գիտեր ի՛նչ ճիւղահամարով կապուած նախորդին հետ, բայց հաւանաբար Եփրեմի հօրեղբօրորդի մը: Հարկաւ եղիազար հակաթռուցումի այլևս կենդանի չէր, որ սիմոնին թեկնածու չեղաւ: Ընտրութիւնը կատարուեցաւ Կ-Պոլսոյ մէջ, զի հոն կը գտնուէր Թէոդորոս, բայց միշտ համայնանրնեամբ բոլոր Կիլիկիոյ ընդ համայն թաղանայէց և խոշվերոյ (ԴԻՒ. Ժ. 325): Նշանակելի պարագայ մըն է կաթողիկոսական օծումին Կ-Պոլսոյ մէջ կատարուիլը: Այդ բացառութեան պատճառ պէտք է նկատուի՝ եփրեմի եղերական մահը, կիլիկիոյ աթոռին մէջ տիրող չփոթութիւնը, և աթոռին տիրանալու համար՝ ամէն պարագաներով զօրացած եւ եկեղեցական ու պետական պայմանները լրացուցած կաթողիկոս մը ղրկելու անհրաժեշտութիւնը, եւ ոչ թէ կաթողիկոսութեան տիրանալու համար անզօր ընտրելի մը: Նշանակութեան արժանի է նաև որ յատուկ մտադրութիւն կը գարձուի օծումին ալ ընթացք կատարել, լուր օր մը, Մայի բարեկենդանին նախընթաց ուրբաթը, 1784 սեպտեմբեր 6'ին, վանն ալ իմանալոյ պէտք է եկեղեցւոյ և յոգիէ ղեռամ (ԴԻՒ. Ժ. 327): Կաղզուանցի յիշատակագիրին նշանակած՝ բազմութեան գրոհ տալէն զգուշանալու պատճառը՝ չատ թեթև կ'երեւի մեզի. աւելի ծանր կասկածներ ծանրացած պիտի ըլլան պատրիարքին և ժողովականաց միտքին վրայ: Որչափ ալ լուր օր մը եւ գաղտնի կերպով, սակայն մաշտոցի ծիսական պահանջներուն յարմարիլ աշխատած են, և կաթողիկոսական օծման համար պահանջուած 12 եպիսկոպոսները պատրաստ չգըտնելով, եօթը վարդապետներ զգեստաւորած են՝ հինգ եպիսկոպոսներուն հետ թիւը լրացընելու համար: Հինգ ներկայ եպիսկոպոսներն եղած են, Սահակ Փառակեցին՝ էջմիածնի նուիրակ, Աւետիս՝ Երուսաղէմի փոխանորդ, Գէորգ Սսոյ միաբաններէն, Յովհաննէս Սեբաստացի և Յովհաննէս Տրապիզոնցի: Ջաքարիա պատրիարք օծումին նախագահած է, բայց ինքզինքը երկոտասանեներուն թիւէն դուրս է համրած: Արարողութիւնը տեղի ունեցած է Քումքաբուի Մայրեկեղեցւոյն մէջ: Թէոդորոս, որ կը նկատուի իբրև այր հմտագիտնաց, օրհնաբանութբ, քաղբեդոյ և ցանկալի, երբեք ալ առանց չանչ պարագաներուն դժուարութեան պատճառով. սակայն Ջաքարիա և ամենայն էլչեանն ապէն ստիպած են ընդդէմ, թէ մ' ընդունի և ի՛նայէր, և նա հնազանդեալ չունի (ԴԻՒ. Ժ. 326): Շտապով օծումին պէս չտապով ալ Թէոդորոս ճանապայ կը դրուի 12 օր ետքը (ՊԼՐ. 5), այսինքն 1784 սեպտեմբեր

18'ին։ Իւր պաշտօնավարութեան մասին մանրամասն տեղեկութիւն պիտի չկարենանք տալ, գոհանալով միայն պատմագիրին վկայութեամբ, թէ Քաղամ Ջան անչէն կալեալ Նոր-Ջուղան սրբոյ խաչիս, և քաւիլ վարս իւրոց կալեալ վախճանեցաւ 1791'ին (ՍԻՍ. 217)։ Թէոդորոսի մահը ուրիշ պատմութեանց մէջ կը յետաձգուի մինչև 1801, և սպանուած կ'ըսուի Մօզանօղլու բռնապետէն, յաջորդել անդամ անդամ, Սիսի պարիսպէն դուրս, գետին կամուրջին վրայ (ՊԷՐ. 38)։ Տարբեր պատմութիւններու մէջէն աւելի ստոյգ կը նկատունք տապանագիրին վկայութիւնը թուականին համար, և 1791'ին և ոչ 1801'ին կը դնենք Թէոդորոսի կաթողիկոսութեան վերջը։ Իսկ մահուան կերպին համար, կրնանք ընդունիլ բռնական սպանութիւնը, իբր զի տապանագիրին մէջ ալ բաց թողուած տող մը (ՍԻՍ. 217) կասկած կը զարթուցանէ, թէ չեն ուզած կամ չեն կրցած բացէն գրել տեղւոյն բռնապետին ոճրագործ արարքը։ Թէոդորոսի յաջորդը եղած է իր հղբօրորդին, Կիրակոս Աջապահեան, որուն գահակալութիւնն ալ պէտք կը զգանք դնել 1791'ին։ Բռնապետներ երբոր կաթողիկոսի մը կեանքին կը դաւաճանէին, արգելք չէին դներ ուրիշի մը յաջորդելուն, նոր որս մը պատրաստ ունենալու դիտմամբ։

ԱՂԹԱՄԱՐԱՑ ԱԹՈՌ

2174. Աղթամարի աթոռին յաջորդութիւնը չափօ կը ներկայանայ այդ միջոցին, և դժբախտաբար հեղինակաւոր աղբիւրներ չենք գտներ, խնդիրը լուծելու համար։ Թովմայի մահէն ետքը, որ 1783'ին կը դրուի (§2105), ոմանք կը յիշեն կարապետ Վանեցի 1783'ին, Մարկոս Շատախցի 1788'ին, Յովհաննէս Սպարկերտցի, անկէ ետքը Թէոդորոս 1792'ին, Մխիթար Վանեցի 1796'ին, և կարապետ Շատախցի, զոր կը հասցնեն մինչև 1803'ին (09 ՕՐԱ. 288)։ Հաւաքարանը այդ անուններէն կ'անգիտանայ, և 1783'էն 1804 միջոցին համար ունի միայն Մխիթար Վանեցի՝ յաջորդած Թովմասի, և կարապետ Վանեցի Դրամքեանց, որ Դանիէլի օծման կը գտնուի (00 ԲԻՋ. 1200)։ Մեր ձեռքը գտնուող վաւերագիրներէն ստուգապէս գիտենք, կարապետ կաթողիկոսի մը Դանիէլի օծման նախագահելը (ԴԻՒ. Ե. 236), սակայն որևէ մակդիրանուն յիշուած չէ, որ ստուգէինք թէ նոյն ինքն Վանեցին է, թէ ոչ միւս ցուցակին մէջ տեսնուած Շատախցին, ղի անոր համեմատ 1788'էն ետքը Վանեցին այլևս չկայ, և 1802'ին Շատախցին կը գտնուի աթոռի վրայ։ Առ այժմ մեզի նախադասելի կ'երեւի Հաւաքարանի գրութիւնը, քանի որ չենք տեսած միւս գրութեան նախնական աղբիւրները։ Դիտողութեան արժանի կը սեպնենք, որ 1783'էն սկսելով Աղթամարի կաթողիկոսներ տեղական ընտրութեամբ և օծմամբ աթոռ բարձրացած են, և Դուկաս չէ կրցած Աղթամարի գործերով զբաղիլ, եւ Ջահկեցիի ու Երեւանեցիի ատեն հաստատուած յարաբերութեանց պաշտպան կանգնիլ, և առանց Էջմիածինի հաւանութեան Աղթամարի կաթողիկոս չնստեցնելու պայմանը գործադրել տալ։ Ասոր պատճառ եղած են քաղաքական խառնակութիւնը եւ սահմանակից գաւառներու խռովութիւնը, որով խափանուած է երկու աթոռներուն հետ պայմանադրուած յարաբերութիւնը, որ հազիւ թէ Էջմիածինի կամատէր և Աղթամարի կամակատար կաթողիկոսներու ատեն կրցած էր գայթիգայթ սկզբնաւորութիւն մը ունենալ։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱԹՈՌ

2175. Երուսաղէմի մէջ 1775'ին յանկարծամահ եղած էր Պօղոս Վանեցի պատրիարքը՝ խռովութեանց միջոցի մը մէջ (§2107), այնպէս որ միաբանութիւնը կանոնաւորապէս հաւաքուելու և ընտրութիւն ընելու պատեհութիւնն ալ չգտաւ, և Կ-Պոլսոյ պաարիարքին և մեծամեծներուն յանձնեց արժանաւորն ընտրել և պետական հաստատութիւնն ալ հոգալ։ Այդ կերպով Երուսաղէմի պատրիարք ընտրուեցաւ Յովակիմ Քառնաքեցի եպիսկոպոսը, որ Կ-Պոլսոյ մէջ Երուսաղէմի փոխանորդ կը գտնուէր։ Եթէ ինքն Յովակիմ աչխատած չէ իր վրայ հրաւիրել ընտրողներուն մտադրութիւնը, գոնէ ատոնք յորդորուած են իրենց մտադրութիւնը դարձնել աչուընկերնուն ներքև գտնուող և իրենց ճանչցած մէկու մը վրայ։ Որն որ ըլլայ Յովակիմի ընտրուելուն չարժատիրքը, նորընտիրը պետական հաստատութիւն ստացաւ

1775 օգոստոսին, Երուսաղէմ հասաւ հոկտեմբեր 5'ին, և միաբանութիւնը իւր գոհունակութիւնը յայտնեց նոյեմբեր 24'ին գրութեամբ (ԱՍՏ. Բ. 107)։ Ծովակիմ 18 տարի պաշտօն վարեց մինչև 1793, սակայն խաղաղութիւն չվայելեց։ Առաջին օրեր նեղուեցաւ Լատիններուն ոտնձգութիւններէն, որոնք կը հետապնդէին յափշտակել ղմ ման ֆէրէճանոպան Հայոց, 65 կանգուն երկայն և 37 կանգուն լայն, կամ 2400 քառակուսի կանգուն գետին մը (ԱՍՏ. Բ. 108)։ Լատիններու պահանջկոտութեան փաստ կը կազմէր այնտեղ Լատիններէն ոմանց թաղուած ըլլալը, այն ժամանակէն որ Լատինաց գերեզմանատունը Անմէտ Տէճէնի չէյխէն գրաւուած էր իբր իւր սեփական ագարակը, և Հայեր հիւրասիրութեամբ իրենց գերեզմանոցը ընդունած էին Լատին մեռեալները։ Երկրորդ փաստ մըն ալ կը քաղէին բնիկ Հայ ընտանիքներէն ոմանց լատինացած ըլլալէն, որոնց մեռելները նոյն մասին մէջն էին (ԱՍՏ. Բ. 110)։ Հայերը քիչ չատ պաշտպանութիւն կը գտնէին Երուսաղէմի դատաւորէն, տեղացի իսլամ ծերերու վկայութեամբ, բայց Լատիններ իրենց կողմը կը չահէին Դամասիոսի կուսակալները, և կը զօրանային Գաղղիական դեսպանատան ազդու միջամտութեամբ, զոր չէր հասներ չեզոքացնել Զաքարիայի պատրիարքական ազդեցութիւնը։ Երկու կողմերէն փոխադարձաբար ելեւէջներ տեղի ունեցան, բայց վերջին որոշումը Լատիններուն նպաստաւոր եղաւ, և խնդիրի պատճառ տուող գերեզմաններուն մասը՝ վերջնականապէս Լատիններուն անցաւ 1777'ին, և այսօր ալ անոնց սեփականութիւնը կը մնայ (ԱՍՏ. Բ. 114)։ Լատիններ հետամուտ եղան նաև իրենց սեփականել Բեթղեհէմի գիւղէն դուրս Քոհանէյ այր կամ Կռնէն այր կոչուած մատուռը, որ երեք ազգերու հասարակ էր։ Այս կէտը դատաւորին ատեանին առջև տրուած ծերերու վկայութեամբ վաւերացաւ, և Լատիններուն ոտնձգութիւնը խափանուեցաւ 1776'ին (ԱՍՏ. Բ. 115)։

2176. Ծովակիմ ներքին խնդիրներ ալ ունեցաւ աթոռին վարչութեան և ընչից մատակարարութեան և սեփականութեանց պաշտպանութեան մասին, որոց արձագանգը մինչև Կ-Պոլիս հասաւ, և պատրիարքն ու պատրիարքարանն ալ զբաղեցուց։ Զաքարիա ուզելով հիմնական դարման մը հաստատել, կարեւոր նախապատրաստութիւններէ ետքը, հանդիպեցաւ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԿԱՆՈՆՆԵՐ

նէ՝ եւ ջրելէ հոսող ագիով ժողով մը գումարեց 1791 յունիս 23'ին, Լուսաւորչի պահոց երկուշաբթի օրը, և եօթը յօդուածներով կանոնագիր մը հաստատել տուաւ՝ ՚ՀՈՆ ՔԱՐԵԼԷ ՏՕՄԱՎՐՈՒԹԻՒՆ ՈՒՐՔ ԵՐՈՒՍԱՂԷՄ, ՈՒ Ի ՂԷԹՈՒՆԼՈՅ ՂԱՅ ՈՒՐՔ ԱՇՈՒՆ Է ՔԱՀՔԱՆԱՅ (ԱՍՏ. Բ. 115)։ Ասկէց կը տեսնուի, թէ չատ հին է Երուսաղէմի աթոռին մատակարարութեան մասին գանգատը, եւ թէ նոյնպէս հին է Կ-Պոլսոյ աթոռին անոր առջևն առնելու համար ջանքեր ընելն ու կանոններ հաստատելը։ Անկէ ասդին 120 տարիներ անցած են, եւ դժբախտաբար ոչ գանգատները վերջացած են, և ոչ նոր կանոններ հաստատելու պէտքը դադարած։ Զաքարիայի ձեռքով կազմուած անդրանիկ կանոնագիրին տրամադրութիւններն են՝ 1. ՊՈՒՐՔԱՐԴ ՂՎԵՑ ՆՈՂՔԸ ՈՒՆԵՑԵԼ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՕՐՆԱԿԱՆ, ամէն ելեւմուտք անոնց գիտակցութեամբ կատարուի, հաստոյքները երկաթ անտուկի մէջ պահուին, բանալին նաղըրներէն մէկուն մօտ մնայ, պատրիարք եւ նաղըրներէն մէկը զատ զատ հաչուատետր բռնեն, ծախքերու համար պէտք եղած գումարները գործակալներուն յանձնուին, նաղըրներ և գործակալներ միաբաններէն ըլլան, չինուիլիններն ալ նաղըրներու որոշմամբ կատարուին։ Աւելկայ յայտնապէս տնօրէն ժողովոյ նախատիպ կազմութիւնն է։ 2. ՉՈՒՐՃԻ կոչուած գործակալը տետրակ ունենայ, առածն ու տուածը գրէ, և առանց իւրաքանչիւր ճիւղի գործակալին գիտութեան մէկու մը բան չտայ։ Այս անունով նչանակուած գործակալը իբր ընդհանուր ծախսարարը կը ներկայացուի։ 3. Առանց նաղըրներու հաւանութեան միաբան չընդունուի և միաբան չարտաքսուի։ 4. Ամէն գործակալներ և նուիրակներ նաղըրներու հաւանութեամբ անուանուին։ 5. ՊՈՒՐՔԱՐԴ ՂԵՐԱՆ Ե ՂՀՈՍՐՆԱՆ Ի՛ ՈՐՇԵՑԷ, այսինքն առանձնաչնորհեալ միաբաններ չըլլան։ 6. վախճանեալ միաբաններուն ունեցածները

երբոր Ջուխաճիին կը դառնան, ալ ըսի հաճոյից էրթաց, այլ կամ՛ էրզրգռականաց տնօրինէ։ Եպիսկոպոսական կոչուածները վերը նոպէր ըսուածներն են։ 7. Պատրիարքը իւր կողմէ ըրած ծախքերը, տուած պարգեւները, գանձած կոնգակադրամները և ուրիշ նուէրները, անունով և տեղով նչանակէ, և նազրներու կողմէ ինոմիէն լչգէ փոխուց, և այնպէս կարգադրուի։ Պատրիարքը նոյնը պահանջէ գործակալներէն, և մ՛ ալ ընդդիմացէ պոքէրէն (ԱՍՏ. Բ. 116)։ Այս կանոնները կ-Պոլսոյ հկեղեցական և աչխարհական մեծամեծներէն կնքուեցան, երուսաղէմի պատրիարքին և միաբանութեան յորդորականներ ալ գրուեցան, խոստանալով կանոններուն պահպանութեան առթին, յամենայնի չեռնտա և օգնական լինել էրձաց առնուն։ Երկու ալ պատգամաւորներ ընտրեցին երուսաղէմ երթալու և կանոններուն գործադրութեան հսկելու։ Առաջին կանոնով յիչուած վեց նազրները, կամ մեր բառով՝ տնօրէն ժողովոյ անդամները, այս անգամ ուղղակի կ-Պոլիսէ նչանակուեցան, Սարգիս, Աւետիք, Զաքարիա, կարապետ, Պետրոս եպիսկոպոսներ և Մարտիրոս վարդապետ (ԱՍՏ. Բ. 115–117), որ ըսել է՝ թէ միաբանութեան երիցագոյնները առնուեցան։

2177. Ընտրուած պատգամաւորները նչանակուած չէն, բայց հաւանաբար եկեղեցականներ են։ Առանք երուսաղէմ հասնելով ամէն բան պարզեցին, միաբանութեան ժողով հաւաքեցին, և կանոններու ընդունելութեան և հպատակութեան գիր առին։ Վեց նչանակուած տնօրէններուն դործի ձեռնարկել տրին, երկաթի մնուկր հաստատեցին, և բանալին Մարտիրոս վարդապետի տուին իբրեւ դանձապետի. Պետրոս եպիսկոպոսը հաչուակալ նչանակեցին, գործակալները որոչեցին, և Ջուխաճիին հաչիւր տեսան ու տոմարները կարգադրեցին։ Բայց այսչափով խնդիրը չփակուեցաւ, դի փոքրագ մեծ էր դրամի պակասութեան կողմէն, և կանոնները դրամ չէին պատրաստեր։ Ակռոր պարտքեր ունէր, ըսհմանելու փոքրիկ փոքր այլոցէից վճարելու միջոցներ չունէր, և չեքոց պառնըխեան ժամանակէն ուխտաւորութիւններ և ուրիշ հասոյթի աղբիւրներ նուազած էին։ Տաճկահայերն ալ որչափ և խոստումներ ըրած, սակայն իրենք ալ երկրին տագնապներէն կը նեղուէին. ուստի հեռաւոր կողմեր, Ռուսաստանի և Վրաստանի բարեկեցիկ ազգայիններուն դարձուցին աչուրնին, և Ռուսիոյ կատարինէ կայսրուհւոյն և Վրաց Հերակլ թագաւորին յատուկ գիրեր գրուեցան Յովակիմ պատրիարքի կողմէն. հոգեւորական ընծաներ ալ պատրաստուեցան, և այնպէս յատուկ նուիրակներ ճանապայ հանուեցան այն կողմերուն համար (ԱՍՏ. Բ. 118)։ Այս գործերը կատարուած ատեն արդէն Յովակիմ պատրիարք ծերացած էր, և ըստ աւանդութեան նաեւ աչքն է փշանալ զրկուած էին, և քիչ ետքը 1793 սեպտեմբեր 25'ին, վարագայ խաչին կիրակի օրը կեանքը կնքեց։ Վչտալի և տագնապալի եղած էր Յովակիմի բոլոր կեանքը, մանուանէ ետքն ալ տագնապները չդադարեցան, զի թէպէտ երկուչաթի յուղարկաւորութեան կարգը կատարուեցաւ, բայց ըսհ սովրոնեան Ս. Փրկչի վանքը թաղելու համար դժուարութիւններ հանուեցան, և արգելքներ դրուեցան գատաւորին կողմէն, և հազիւ կրցին հաճել ընդհ նորա, ինն քսակ դրամ վճարելով, և այնպէս թաղումը կատարեցին (ԱՍՏ. Բ. 119–120)։

ՅՈՎԱԿԻՄ ՔԱՆԱՔԵՌՑԻ

2178. Յովակիմի մահուընէ ետքը միաբանութիւնը ինքն ձեռնարկեց յաջորդի ընտրութեան, իբրզի աչքին առջեւն ունէր յարմար ընտրելի մր, Պետրոս Եւդոկիացի եպիսկոպոսը, զոր իբր հաչուակալ յիչեցինք վերեւ (§ 2177), որ և միանգամայն Ս. Յակոբոյ փականակալ կամ լուսարարապետն էր։ Միաբանութիւնը՝ Սարգիս կուզիկեան եպիսկոպոսի գլխաւորութեամբ, և ծերունազարդ Մարտիրոս վարդապետին ազդեցութեամբ, որ բանգէտ և տաճկագէտ, և աթոռին գործերուն հմուտ և տեղեակ, և քանի պատրիարքներ տեսած, և ամէնուն յարգը գրաւած միաբանն էր, Պետրոսը բռնադատեց ընտրութեան հաւանիլ, և պաչտոնական գիրերը պատրաստելով Մելքոն վարդապետի ձեռքով կ-Պոլիս ղրկեց։ Զաքարիա և

ՊԵՏՐՈՍ ԵՒԴՈԿԻԱՑԻ

մեծամեծներ չուտով հաւանեցան, պետական հաստատութիւնը ստացան, և հրովարտակը յղեցին պատուիրակին ձեռքով, և 1794 փետրուար 14'ին, Տէտրընդառաջի տօնին կատարուեցաւ Պետրոսի աթոռ նրստելուն հանդէսը։ Առաջին գործերէն մին եղաւ կանուխ դրուած կանոնագիրին (§ 2176) վերստին հաստատութիւնը, և Պետրոս ինքն կանխեց և Կ-Պոլսոյ պատրիարքարանէն խնդրեց վեց խորհրդականները որոշել և լրացնել, զի ինքն պատրիարք եղած էր, ոմանք վախճանած էին, Մարտիրոս վարդապետ ալ անկարացած էր, բայց յիշուած չենք գտներ թէ որունք եղան նոր կազմութեան մէջ մտնողները։ Պետրոս ալ զանազան նեղութիւններ կրեց դրամական վճարմանց պատճառով, Ս. Յարութեան Տաճիկ դռնապաններուն, Դամասկոսի կուսակալին, Յոպպէի մաքսապետին, և Երուսաղէմցի այլազգիներուն՝ կերպակերպ քմահաճոյ պահանջմանց երեսէն։ Ինչպէս ալ Պետրոս թախտնձանօք Ջաքարիայի դիմեց, որ յատուկ հրամանագիր հանել տայ ⁂ է ղբօղել ղոէբաօօ-ՐԽ-ՆՆ նոց (ԱՍՏ· Բ· 123), սակայն տուգանքներէ բոլորովին զերծ մնալ աննման եղաւ։ Յատուկ ծախքի և մտահոգութեան պատճառ տուաւ Զմիւռնացի ուխտաւորներու նաւի մը՝ Սիւրիական Տրիպոլիսի առջեւ խորտակուիլը, որուն մէջ 8 հոգի խեղդուեցան, իսկ 52 ազատուածները Երուսաղէմ հասցնելու համար Պետրոս յատուկ մարդ ղրկեց, ժողվել ու բերել տուաւ, և մինչեւ իսկ տեղերնին դարձնելու համար ամէն պէտքերնին հոգաց։ Ս. Յարութեան տաճարը այրելու համար իսլամներու քրչնամութեամբ կրակ ձգուիլն ալ նոր ծախքի դուռ բացաւ, զի թէպէտ հրդեհը չուտով մարեցաւ, բայց հինցած փայտէ դուռներուն տեղ, երկաթէ նոր դուռներ դնել հարկ եղաւ երեք ազգերու համերաշխ ծախքով։

ԳԱՂՂԻԱՑԻՈՑ ԱՐՇԱԻԵԼԸ

2179. Աւելի տագնապալի եղաւ՝ Գաղղիացւոց Եգիպտական արշաւանքին հետեւանքը։ Եգիպտոս Օսմանեան նահանգ եղած էր 1517'ին, և սուլտան Սէլիմ խալիֆայութեան բարձրացած էր, այսինքն է իսլամութեան կրօնապետ ճանչցուած, իրր յաջորդ իրենց մարգարէին։ Եգիպտոս անկէ ետքն ալ կէս անկախաչխորհուրդ դիրք մը պահեց, և իր կուսակալներ աւելի ազատ վարչութիւն և աւելի ընդարձակ նախաձեռնութիւն պահեցին, տեղացւոց և օտարաց վրայ հաւասարապէս բռնութիւններ և հարստահարութիւններ ընելով։ Վերջին տեսիլներ Ապտիւլ-Համիտի սուլտանութեան օրով, Եգիպտոսի Շէյխէլպէլէտը կամ մեծ կուսակալը՝ Իսմայիլ պէյ մըն էր, որուն 1790'ին յաջորդեց Օսման պէյ Թապէլ, ապիկար մէկ մը, որ բոլոր գործերը յանձնեց Իպրահիմ պէյ և Մուրատ պէյ երկու բռնապետներու, որոնք բնիկները կեղեքելէ և կողոպտելէ ետքը՝ օտարականներու վրայ սկսան բռնանալ։ Այս պարագան Եւրոպայի մտադրութիւնը հրաւիրեց Եգիպտոսի վրայ։ Եւրոպայի դիւրիչքանը Նաբօլէոն Պոնապարթն էր (Napoleon Bonaparte), որ 1797 հոկտեմբեր 17'ի Քամբօֆօրմիօյի (Campo Formio) դաշնագրով՝ Գաղղիոյ աշխարհակալութիւնը ընդարձակած՝ և Աւստրիոյ կայսրութիւնը ընկճած՝ և դէպ Արեւելք տարածուելով Յոնիական կղզիներն ալ իւրացուցած էր։ Ասկէ ծագեցաւ իր մէջ Եգիպտոսի աշխարհակալութեան միտքը, և նպատակը ծածկելով մեծ պատրաստութիւններ կատարել սկսաւ Թուլօնի (Toulon) նաւահանգիստը, ուսկից 1798 մայիս 19'ին հարիւր առագաստանաւերու տորմիղ մը կը մեկնէր 10,000 նաւազներով և 40,000 զինուորներով, գիտնականներու գունդով մը և 400 բեռնարձ նաւերու հետեւորդով (ՌԻՄ· 1)։ Ճանապարհ վրայ յունիս 12'ին Մալթա կղզին գրաւեց Ասպետներուն ձեռքէն, և 19'ին նորէն ճանապարհ ելլելով, յուլիս 1'ին Եգիպտոս հասաւ, 2'ին բանակը ցամաք հանեց, և 3'ին Աղեքսանդրիա մտաւ (ՌԻՄ· 32)։ Ասորիք և Պաղեստին ցնցեցան ու դղրդեցան, Իսլակիրներու յիշատակները միտքերու մէջ արթնցան, Այլազգիներու միտքերը գրգռուեցան, և քրիստոնէից դէմ ատելութիւնը զայրացաւ, և կեղեքումներու նոր դուռ բացուեցաւ։ Երուսաղէմի մէջ ալ պաշտօնական անձեր և տեղացի մեծամեծներ խորհուրդներ կազմեցին, երեք ազգերու վրայ բռնանալ սկսան, նախ պատահմամբ գտնուող զէնքերը փնտռեցին և առին, վանքերու բանալիները ձեռք անցու-

ցին, պահպանութեան խումբեր դրին, և չկրնալ խափանել ամբոխն անպատիժ և անպէտել սպանէին և ելլանէին, և ամէն տեսակ կեղեքում և յափշտակութիւն համարձակ կը գործէին, յաճախակի կոտորածներ ալ բա-պառնալով (ԱՍՏ· Բ· 127)։ Երեք ազգերուն փոխանորդ ու թարգման վարդապետները ձերբակալելով բանտարկեցին՝ իբրեւ պա-տանդներ, բայց Եգիպտոսի արշաւանքին ստոյգ չլինելուն զրոյցը, միտքերը պահ մը հանդարտեցուց, և կարծես խաղաղութիւն վերահաստատուեցաւ։ Երուսաղէմի մէջ գործուածներուն նմանները միւս քաղաքնե-րուն մէջ ալ կը կրկնուէին, առաւելապէս Ծոպպէի մէջ։ Շուտով վերջացաւ անհիմն զրոյցէն յառաջ եկած հանդարտութիւնը, և նորէն սկսան հարստահարական բռնութիւն-ները, բարդուեցան ստիպաւ պահանջուած գումարները, և երեք ազգերու եկեղեցա-կաններէն 170 հոգի Ս. Յարութեան տաճա-րին մէջ բանտարկեցին, ուր չատեր հիւան-դացան։ Ուրիշ եկեղեցիներն ալ փակուե-ցան, և ամէն տեսակ բռնութիւններ չատ-ցան, մեռելները թաղելու իսկ արգելքներ դնելու չափ (ԱՍՏ· Բ· 128)։

2180· Նաբօլէոն Ալեքսանդրիայէն Գա-հիրէի վրայ ուղղեց իր արշաւանքը, ուր մտաւ յուլիս 24'ին։ Թէ-պէտ օգոստոս 1'ին իր նաւատորմը կորսնցուց Ա-պուքիրի առջեւ, Անգ-ղիացի ծովակալ Նելսընի հնարագիտու-թեամբ, բայց Եգիպտոսի տիրապետութիւնը ընդարձակեց և կարգաւորեց։ Մենք պիտի չհետեւինք Գաղիական տիրապետութեան և Նաբօլէոնի Եգիպտոսի մէջ ըրած կարգա-դրութեանց, և հիմնած գիտական հաստա-տութեանց· բաւական ըլլայ աւելցնել, թէ անոր յաջողութեանց հակահարուածը կը զգացուէր Պաղեստինի և Ասորիքի քրիս-տոնեաներուն վրայ, և յատկապէս Հայոց պատրիարքին և միաբանութեան վրայ, մինչեւ իսկ ասոնք յորդորելու որ երուսա-ղէմը թողուն և բոլորովին հեռանան։ Սակայն կ-Պոլսոյ կողմէ միշտ յորդորներ կը հաս-նէին չվողալ և չլսել զՃառնեղութիւն ազգին (ԱՍՏ· Բ· 130)։ Եգիպտոսի արշաւանքը Օս-մանեան տէրութիւնն ալ կը ստիպէր Գաղ-

ղիացիներու դէմ, որոնք կը կանխէին նոր արշաւանք մը կազմակերպել Ասորիքի կող-մը, զի տակաւին 30,000 զինուորի բանակ մը կը գտնուէր Նաբօլէոնի ձեռքը, և կը յուսար անով Եգիպտոսն ալ պահել, և Ա-սորիքն ալ գրաւել։ Սոյն արշաւանքը սկսաւ 1799 փետրուար 1'ին· 9'ին մտան Արիշ ա-ւանը, և Նաբօլէոնի ալ անձամբ հասնելէն ետքը՝ գրաւուեցաւ Արիշ բերդը 19'ին, ուս-կից յաղթականներ անցան Գազա, և մարտ 1'ին բանակեցան Էզտուտի հանդէպ, որ է հին Ազովտոսը։ Ռամլէ և Լիտտա դիմադ-րութիւն չըրին, նաֆթա կամ Ծոպպէ պատե-րազմով առնուեցաւ 7'ին, և աւարի և կո-տորածի մատնուեցաւ։ Երբ Պաղեստինի ա-մէն կողմէն՝ դիմադրութեան պատրաստու-թիւններ սկսան, Նաբօլէոն ժողովուրդը հանդարտեցնելու համար յայտարարութիւն-ներ ղրկեց Նապլուս, Երուսաղէմ և ուրիշ քաղաքներ, թէ ինքն միտք չունի անոնց դէմ գործել, միայն Մէմլուքներուն դէմ է կռիւը, և ոչ տեղացիներուն (ՌԻՄ· 108)։ Բայց այս կոչը Երուսաղէմացիները չհան-դարտեցուց, որոնք միշտ քրիստոնէից դէմ կասկածոտ, արդէն փետրուար 14/25'էն, 2000 հոգիէ աւելի բազմութիւն մը հաւա-քած և բանտարկած էին Ս. Յարութեան տաճարին մէջ, և հոն ալ հանդարտ չթող-լով կը նեղէին և կը նախատէին, և մինչեւ իսկ պատուհաններէն ներս զէնք կը պար-պէին (ԱՍՏ· Բ· 130)։ Նաբօլէոնի դիտումն էր Աքիան գրաւել, հիներուն Պտղոմայիսը, Եւրոպացիներէն Ակրայ Ս. Յովհաննէս կոչ-ուած բերդաքաղաքը, ուր ամրացած էր Ճէզար փաշա կուսակալը՝ Հայֆայէ ալ ետ քաշուելով։ Փանտամանը բաւական կորուստ պատճառած էր Գաղղիացւոց, Ապտուլլահ փաշա ալ Օսմանեան գունդերով անոնց դէմ կուգար, Նաբօլէոն փութաց Աքիան պա-շարել մարտ 7/18'ին (ՌԻՄ· 111)։ Այստեղ զինուց բախտը դարձաւ. Աքիան զօրաւոր ընդդիմութիւն ըրաւ· Ճէզար փաշա արդէն իւր բոլոր ոյժը կեդրոնացուցած էր հոն։ Անգղիացիք ծովէն իրեն օգնութիւններ կը հասցնէին, Ֆիլիբբօ (Philippeaux) անուն Գաղղիացի մը քաղաքին ամրութեան գոր-ծերուն կը հակէր, Նաբօլէոնի պզտիկ տոր-միդին բերած զէնքերը Անգղիական տորմի-

ղէն կր գրաւուէին, և ձէզարի կը յանձնուէին։ Նաբօլէոնի ոյժերը սպառեցան, թէ ամուր քաղաքին դէմ յարձակումներով, և թէ հետեւէն հկող Տաճկական գունդերուն դէմ պատերազմներով, և երկու ամիսէ աւելի Ակիայի դիմաց առեւն անցընելէն ետքը, մայիս 10/21'ին, ուրիչ կարեւորագոյն գործի պատրուակով, պաշարումը վերուց, և հկած ճանապէն ետ դառնալու սկսաւ, առանց նչանաւոր դժուարութեան հանդիպելու (ԻԻՄ· 127)։ Բայց Ծոպպէի վրայ նորէն զայրոյթի բռնութիւնները թափեց (ԱՍՏ·Բ· 131), անկէ Եգիպտոս գարձաւ, և յունիս 14'ին Գահիրէ մտաւ, յաղթական փառաւորութեամբ՝ Ասորիքի մէջ ունեցած յաջողութեանց յիչատակներով։ Մենք պէտք չունինք այլեւս Նաբօլէոնի գործերուն հետեւիլ, որ Օսմանեան գունդերուն վրայ յուլիս 25'ին Ապուքիրի մէջ նոր յաղթութիւն մըն ալ տանելէն ետքը, 1799 օգոստոս 24'ին Եգիպտոսէ մեկնեցաւ, նորէն Եւրոպիոյ պատերազմներուն դառնալու համար։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

2181. Մենք այս պատմական յիչատակները օգտակար սեպեցինք յառաջ բերել, որպէսզի յստակ և կատարեալ գաղափար մը տանք այն նեղութեանց, զորս այդ առթիւ կրեց Երուսաղէմի աթոռը, պատերազմի արհաւիրքներու մէջ պաշարուած, և տեղացոց մոլեգնութեան մատնուած։ Ասոնք՝ քրիստոնեայ գունդերու յարձակումներուն ներքեւ, ամէն քրիստոնեայ անխտիր անոնց բարեկամ և օգնական, և լրեւ և բանբեռոց սա հասարակեաց խրեանց սեպելով (ԱՍՏ·Բ· 130), ամէն միջոց օրինաւոր կը կարծէին քրիստոնեաները՝ և մանաւանդ վանքերը նեղելու և կողոպտելու, կեղեքելու և տանջելու։ Ոչ միայն այլազգիներէ, այլեւ արեւաւոր քրիստոնեաներէ ալ նեղուեցաւ Երուսաղէմի աթոռը, գի Ծոպպէի վրայ երկու անգամ կատարուած բռնութեանց կարգին, Հայերուն ալ տուներն ու միաբանոցները այրուեցան, վանք ու վանատուն ինաւուեցան, և յափշտակութիւններէ զատ 100 քսակի ալ տուգանք առնուեցաւ (ԱՍՏ·Բ· 131)։ Իէմլէի մէջ եղող միաբաններուն Ծոպպէ փախչելուն վրայ, լեռնական տեղացիներ՝ վանքին վրայ յարձակելով, կողոպտեցին և աւերեցին, և մինչեւ իսկ չինուածին երկաթները քակելով տարին։ Նոյն աւարառութք Երուսաղէմի վանքին վրայ ալ յարձակեցան, Ս. Փրկիչ եկեղեցին քարուքանդ ըրին, ձիթաստանն ու պարտէզները կոտորեցին, մայր վանքին բակերը իբրեւ բանակատեղ գործածեցին, և ամէն տեսակ ինաններ հասուցին (ԱՍՏ·Բ· 132)։ Օսմանեան զօրավարներ ալ, իբրեւ պատերազմի ծախք՝ բռնի գումարներ կորզեցին, և բոլոր վանականք և քաղաքին Հայազգիք նաւազեան է ըզբաղնել և անկան է կրճատնել, և Պետրոս պատրիարք յոգւոց հանելով կը հառաչէր, և մահուան կը փափաքէր, քէն քէց երանի հանելով ծեծելոց որ է Տէր ննջեցին (ԱՍՏ·Բ· 133)։ Այնչափ յուսահատ էր Պետրոսի կացութիւնը այդ տագնապներու մէջ, որ աթոռին մէջ ալ չկրնալով մնալ, Ծոպպէ իջաւ Օսմանեան զօրավար Քէօր մականուանեալ միականի եուսուֆ փաչայի մօտ, որպէսզի թեթեւութիւն ստանայ վանքէն պահանջուած պատերազմի ծախուց գումարին վրայ։ Պետրոս Ծոպպէ հասաւ 1800 մայիս 11'ին, այլ տագնապէն և նեղութիւններէն հոն հիւանդացաւ, և քիչ օր ետքը յունիս 18'ին վախճանեցաւ, և Ծոպպէի հասարակաց գերեզմաններուն թաղուեցաւ, ուսկից 1837'ին ոսկրները Ծոպպէի եկեղեցին գաւիթը փոխադրուած են (ԱՍՏ· Բ· 134)։ Այս կերպով ուրիչ տագնապներուն վրայ աւելցաւ աթոռի պարապութիւնն ալ, որ միջոց մըն ալ երկարեցաւ, մինչեւ որ ընտրութիւն կատարուէր և յանձնառու մէկ մը գտնուէր։ Պետրոս Եւդոկիացի պատրիարքին իրրեւ մեծ արժանիք պէտք է արձանագրենք, եթէ այդչափ տառապանքներու և արկածներու մէջ կրցաւ գոնէ աթոռի կացութիւնը անվտանգ պահպանել։

ԿԱԹՈԼԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐ

2182. Պատմական յիչատակները լրացընելու համար համառօտիւ քաղենք ԺԴ դարու վերջին քառորդին մէջ՝ Հայ Հռոմէական հատուածութեանց կացութիւնն ալ, որոնք թէեւ մտադրութեան արժանի պարագաներ չեն ներկայեր, այլ կարեւոր են ապագայ եղելութեանց կապակցութիւնը պահելու հա-

մար։ Լիբանանի մէջ կիլիկիոյ անունով կազմուած կաթողիկոսութիւնը հանդարտ օրեր անցուց Բարսեղ Պետրոս Դ Ավգատեանի օրով, որուն 1780'ին ընտրուած ըլլալը յիշեցինք (§ 2112), և ապրեցաւ մինչեւ 1788 փետրուար 5։ Անտոնեան միաբանութեան անդամակից էր, և կաթողիկոսութեան և միաբանութեան հաչտ յարաբերութիւնները պահեց (ԱՆՏ.)։ Իրեն հետեւող եղաւ իր յաջորդը Գրիգոր Պետրոս Ե Քիւրքէլեանը, բնիկ Քիլիսցի, Ատանայի առնունով եպիսկոպոս ձեռնադրուած Միքայէլէ, որ 1788 մայիս 11'ին ընտրուեցաւ՝ իրմով մէկտեղ երեք եպիսկոպոսներու ժողովէն, և պապական հաստատութիւն ստացաւ 1788 դեկտեմբեր 15'ին (ԱՂՔ. Ա. 34)։ Սա եւս ժամանակ մը Անտոնեանց աչակերտութեան մէջ գտնուած կ'ըսուի, և իր ընթացքն ալ Անտոնեանց հանդէպ հաչտ եղաւ իր բովանդակ պաշտօնավարութեան ժամանակ, որ երկարեցաւ մինչեւ 1812 յունիս 17 (ԱՂՔ. Ա. 37)։ Բայց իր մեծ ջանքն եղաւ Զրմմառի աթոռին և անոր ժառանգաւորաց վարժարանին ընդարձակուելուն և զարգանալուն աշխատիլ, նորանոր չինութիւններով և ներքին բարեկարգութիւններով զարգացնել, այնպէս որ Զրմմառեան աչակերտութիւնը զայն իբր իրեն հիմնադիրը կը պատուէ (ԱՂՔ. Ա. 36)։ Ծիչած ենք թէ Լիբանանի աթոռը չատ կ'աչխատէր իր իրաւասութիւնը ընդարձակել բոլոր հռոմէադաւան Հայոց վրայ, բայց վերջին ատիններ այլեւս ետ կեցաւ այդ ճիգերէ, Հռոմի կողմէ գտած չատ ընդդիմութեան առջեւ, որ կը նախընտրէր հեռուէն կ-Պոլիս նստող Լատին եպիսկոպոսներուն կամքին, որոնք օգտակար և չահաբեր կը գտնէին իրենց իրաւասութեան ներքեւ ունենալ Հայ կաթոլիկ տարրը։ Միւս կողմէն Հայութեան կերպարանին պահպանութիւնն ալ՝ հրապուրիչ ըլլալով հռոմէականութեան տարածուելուն, վերջին ատենները Հռոմ սկսած էր կ-Պոլսոյ Լատին եպիսկոպոսին մօտ հայածէս եպիսկոպոս մը աւելցնել իբր փախանորդ, կամ իտալերէն կոչմամբ՝ Վիքար (Vicario)։ Սոյն միջոցին այդ պաշտօնին վրայ կը գտնուէր Սահակ Սօֆեանեան, 1784'ին յաջորդած Անտոն Մրմրեան եպիսկոպոսին (ՀԱՍ. 523)։ Այսպէս թուրքիոյ Հայ կաթոլիկներ, երկու իրաւասութեանց վրայ բաչխուած կը գտնուէին, Կիլիկիա, Կապադովկիա, Ասորիք և Միջագետք Լիբանանի կաթողիկոսին կը հպատակէին, իսկ Փոքր-Ասիա և Մեծ-Հայք կ-Պոլսոյ Լատին եպիսկոպոսին։ Ըստ այսմ Փոքր-Հայք երկուքին վրայ բաժնուած կ'ըլլար, և երկու իրաւասութեանց մէջ սահմաններու վէճեր կը գրգռէր։ Պէտք չէ մտադրութենէ վրիպեցնել, թէ այդ իրաւասութիւններ և բաժանումներ, միայն իրենց մէջ և կամ Հռոմի առջեւ ոյժ ունէին, իսկ պետական տեսակէտէն գոյութեան իրաւունք իսկ չունէին, քանի որ հռոմէադաւան կաթողիկոսն ու եպիսկոպոսները ճանչցուած և հաստատուած չէին, և պետական օրէնքին առջեւ կաթոլիկներ՝ բացարձակապէս Հայ պատրիարքարանի հպատակ և Հայոց պատրիարքին ենթարկեալ անհատներ կը նկատուէին, ինչ որ առիթ կու տար այն խնդիրներու, որոնց վրայ ընդարձակօրէն խօսեցանք (§ 2163)։

ԱՆՏՈՆԵԱՆՑ ԳՈՐԾԵՐ

2183. Անտոնեանք սոյն միջոցին մէջ զանազան ձեռնարկներու կը հետեւէին, նպատակ ունենալով ընդարձակել իրենց անչչուկ գործունէութիւնը ինպատատ հռոմէականութեան։ Պետրոս Եղիազարեան Մամպոյ եպիսկոպոս և Անտոնեան միաբան, նախաձեռնութիւն առաւ Լիբանանի Անտոնեանց վանքին մէջ իր թեմականներուն համար յատուկ վարժարանական ճիւղ մը հաստատել։ Ուրիշ Անտոնեան միաբան մը, Պետրոս Փիրիմեան, կ-Պոլսոյ Լատին եպիսկոպոսին հետ բանակցութեամբ, նմանօրինակ ձեռնարկի մը ոյժ կու տար յօգուտ կարնեցի տղայոց։ Հռոմի վանքին մէջ ալ (§ 2065), ձեռնարկուած էր Անտոնեան միաբաններէն ուսումնական անդամներ հասցնել, սակայն բոլոր այդ ճիգեր տեւական արդիւնքներ չունեցան։ Եղիազարեանի փափաքը անձնական ձեռնարկ մնաց, և իր մահով վերջացաւ 1787'ին։ Լատին եպիսկոպոսի հետ եղած կարգադրութիւնը, սկզբնաւորութիւն մնաց՝ առանց չարունակութեան։ Հռոմի վանքին ուսումնական ձեռնարկն ալ ընդմիջեցաւ Գաղղիա-

կան արչաւանքներուն պատճառով, որք Իտալիան տակնուվրայ ըրին, և 1798'ին Հռոմն ալ ազատ հանրապետութեան վերածելին, և եկեղեցական ինչքերու գրաւման և եկեղեցականներու զինուորագրութեան օրէնքները հաստատեցին: Թէպէտեւ Օսմանեան հպատակներ և անոնց ստացուածքներն գրաւումէ ազատ ճնացին սուլտան Սէլիմ Գ կայսեր հովանաւորութեամբ, այլ դրամական տուրքերէ չկրցան ազատուիլ, որով ուրիշ ծախքերու չկրցան բաւական ըլլալ: Այդ ամէն անցքերուն մէջ Հռոմի վանքին և ստացուածոյ և անձանց պաշտպանութեան մէջ մնծապէս արդիւնաւոր եղաւ Աթանաս վարդապետ Սարաֆեան, 1795'ին եպիսկոպոս ձեռնադրուած, որ 1782'էն մինչեւ 1815 Հռոմի վանահայրութիւնը վարեց, և ամէն տեսակ արկածներու դէմ տոկաց, և ճարտար կերպերով վտանգներու դէմ մաքառեցաւ (ԱՆՏ.): Մխիթարեանց երկու ճիւղերուն, թէ վենետիկի (§ 2109), և թէ Թրիէստի (§ 2111) միաբաններուն գործունէութիւնը՝ հասուցած կը գտնուինք մինչեւ ԺԲ դարուն վերջերը, որով այստեղ նոր աւելցնելիք կէտ մը չենք ունենար: Այսպէս մանաւանդ ճիւղաւորմանց մասին ամփոփ տեղեկութիւններ տալէ ետքը, դառնանք երկու մեծ կեդրոններու՝ կ-Պոլսոյ և Իզմիրի անցքերը պատմել:

ՋԻՆՈՒՈՐ ԵՒ ՏՈՒՐՔ

2184. Ջաքարիայի պատրիարքութեան գործերէն վերջին անգամ յիշեցինք Սիմէոնեան տօնացոյցի մասին բածնները (§ 2040), և Արմաչի վանքին համար ուղղած հրաժարութիւնը (§ 2169): Բաւական աչխատութեան աւիթ տուաւ նաեւ Աւստրիոյ և Ռուսիոյ դէմ միանգամայն՝ 1787'ին Օսմանեանց բացած պատերազմը, Շուշտաց և Լեհաց և Անգղիացւոց օգնութեան վստահանալով, որոնք սակայն չիրականացան (ՓՈԻ. 360): Երբոր Օսմանեանց վիճակը ծանրացաւ, եպարքոս Եուսուֆ փաչա մտածեց՝ քրիստոնեայ տարրէն ալ օգտուիլ պատերազմական ոյժերու համար, բան մը, որ է յաւէտենից ալ էր եղեալ և ալ պէտեալ (ԴԻՒ. ԺԲ. 334): Ռուսաց և Հայոց պատրիարքարանէն պահանջեց, որ առաջինը 2000 և երկրորդը 1000 այր պատերազմական տան տարուէ տարի, Հայերը ցամաքի վրայ, և Յոյները նաւերու մէջ ծառայեցնելու համար: Պատրիարքներ և մեծամեծներ վրդովուեցան, աղաչանքի և պաղատանքի դիմեցին, բայց ուրիշ յաջողութիւն չունեցան, բայց եթէ թիւերը նուազեցնել, Յոյները 1800'է և Հայերը 500'է, և նոյնչափ այլ հզօր տուին տէրութեան չորս տարի չարունակ, պատերազմին տեւողութեան միջոցին: Իսկ չորս տարիներէ ետքը անձերու տեղ հաթուացնէին ղէրչ-հինգհարիւրոց, դրամ հինգ հազար Հայէ, նմանապէս և Յոյն ըսա այնմ հազարէ (ԴԻՒ. ԺԲ. 334): Թէպէտ որոշակի նշանակուած չէնք գտներ, բայց այդ պարագային սկսած կը կարծենք, քրիստոնէից վրայ ծանրացող պետական տուրքին սկզբնաւորութիւնը: Եուսուֆ եպարքոսը այսչափով ալ չգոհացաւ, այլ ոչխարներու ուրիշ ծանրութեան մըն ալ հնարեցաւ, որ տարուէ տարի Յոյները 5000, Հայերը 4000 և Հրէաները 3000 ոսկի կամ քաշ արծաթ մատակարարեն կառավարութեան է պարտաս դրամ, փոխարէն փողերանոցէն գինը առնելու պայմանով, դրամ գան ձրի հաշուով: Արծաթի հանքեր չունէին քրիստոնեաները, որ պահանջուած սակը վճարեն, և պէտք եղաւ որ տուներէն ու եկեղեցիներէն բոլոր արծաթեղէններու հաւաքեն, նաեւ բռնադատութեան միջոցով, այնպէս որ, ու կոբէմ, կը գրէ յիշատակագիրը, էլեալ կոնիել զ արծոնի կոեալ չեկեղեցի (ԴԻՒ. ԺԲ. 336-337): Ջաքարիա յատուկ դրծակալ մը կարգեց, Ասկերիչ Գրիգորի գլխաւորութեամբ, թէ արծաթը հաւաքելու, և թէ անոնց տեսակն ու աստիճանը ճշդելու պաշտօնով: Ինքն պատրիարքն ալ ամէնայն ասոր էրթայր և վերէր կան, և անդ նոթել յորդորէր, և ոսկիները քերել կու տար տուներէն, և ուս ոչ արծաթ գոս չեկեղեցի (ԴԻՒ. ԺԲ. 336): Այլ գիտէ որչափ թանկագին յիշատակներ ոչնչացան այդ աւթիւ, որ բարեբախտաբար չորս տարիէ աւելի չտեւեց, և դադարեցաւ հաշտութեան դաշինքներով, որ կնքուեցան Աւստրիոյ հետ, 1791 օգոստոս 4'ին, և 1792 յունուար 9'ին Ռուսիոյ հետ (ՓՈԻ. 364): Այդ չորեքամեայ միջոցին կէսերուն, 1789 ապրիլ 7'ին սուլտան Աբտիւլ-Համիտ մեռաւ,

և եղբօրորդին Ակլիմ Գ գահ բարձրացաւ, բայց իրողութիւնները միեւնոյն կերպով չարունակեցին մինչեւ հաչտութեանց կնքուիլը (ԺՈՒ. 361)։

2185. Մեծ տագնապը անցնելէն ետքը, հազիւ կրցաւ Զաքարիա ընթացք տալ իր ուրիշ մի ձգտումին, որ էր յատուկ չինութիւններով իւր անունը փառաւորել։ Իրեն անունն ու յիշատակը յաւերժացնող գլխաւոր չինութիւնը Վոսփորի վրայ Քուրուչէշմէ գիւղի եկեղեցին է, ուր ինքը ամառնային բնակութիւն ալ ունէր։ Եկեղեցին Ս. Նշան կոչուած էր, բայց յետոյ սովորաբար Ս. Խաչ անունով յիշուեցաւ, որուն չինութեան Զաքարիա իւր իսկ քսակէն 18,000 մարկիլ նուիրեց, և խաչափայտի նշանաւոր մասունքով մըն ալ օժտեց (ԴԻՒ. Փ. 341), և չինութիւնը փութացուց, և օծումը կատարեց 1798 փետրուար 28'ին (01 ՕՐԱ. 157), մեծապատիւ Տնտեսի կիրակիին։ Քումքապուի Մայրեկեղեցւոյ չրջափակն այ պարիսպով պատեց, և հրդեհներէ պահպանելու համար մեծաւոյն ջրհան հաստատեց, ջրանկիրներու խումբով մը, և պատրաստ ջուրի րնդարձակ աւազանով մը, իւր քսակէն ալ 20,000 դահեկան սահմանելով ծախքին համար։ Մայրաքաղաքին մէջ հիւանդաց երկու յարկ հաստատեց կ'րսէ տապանագիրը (ԴԻՒ. Թ. 347), կամ թէ երկու հիւանդանոց։ չինուեցան և յարդարուեցան իւր նախաձեռնութեամբ, ուր են այժմ Նաւլըքարուի Ս. Յովհաննէս և Բերայի Ս. Յարութիւն եկեղեցիները։ Այդ բարեգործական հաստատութեանց համար Զաքարիայի ձեռնտուն էր Մկրտիչ Միրիճանեան, Շնորհք ամիրայ կոչուած, որ Բերայինին հիմնադիրն եղաւ, իսկ Նաւլըքարուինը նորոգեց, մի մինչեւ 1751 կը հասնին անոր գոյութեան յիշատակները։ (ԱՐԼ. 6514)։ Զաքարիա բարեգործականներէն ետքը մտադրութիւն դարձուց դպրոցական հաստատութեանց, ինչպէս արդէն պատմեցինք (§ 2121), և իւր պատրիարքութեան առջի տարիներուն մէջ սկսած չանքերը, որոնք պահ մը թուլցած էին իւր պաշտօնանկութեամբ (§ 2157), և վրայ հասող պատերազմական տագնապներով (§ 2184), կրկին ձեռք առաւ իւր վերջին տարիներուն մէջ, և անոնց աւելի տեւական ձեւ մը տուաւ, այնպէս որ իրաւամբ կըրնանք Զաքարիայի վերագրել, վերջին դարերու ազգային կրթական կամ բարոյական ըղձոյման մէջ կրած ետք ունեցած ըլլալու պարծանքը (01 ՕՐԱ. 158)։ Մայրաքաղաքէն դուրս ալ Զաքարիայի չինարար ջանքերուն արդիւնքներն եղան գլխաւոր քաղաքներու մէջ եկեղեցիներու և վանքերու և վարժարաններու նորոգութիւնները կամ վերաշինութիւնները, որոնց արտօնութիւնները ինքն կը ստանար կառավարութենէն, ծախսուց կ'օգնէր քաջալերելով և մասնակցելով, և գործադրութիւնները գլուխ կը հանէր իւր աչակերտներով։ Այսպէս վերաշինուեցան Եւդոկիոյ երեք եկեղեցիները Ծակորոս եպիսկոպոսի հսկողութեամբ, Պրուսայի եկեղեցին ու առաջնորդարանը Պօղոս եպիսկոպոսի ջանքով, նոյնպէս Ակն քաղաքի և Թեմերուն զանազան եկեղեցիները, Ադրիանուպոլսոյ եկեղեցին, Մարսուանի վանքը, և ուրիշներ։ Զաքարիայի չինարար արդիւնքները պատկերու համար պակասեցաւ միայն Գալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վերաշինութիւնը։ Կոլոտի 1733'ին չինած տաճարը (§ 1967), միայն 38 տարի կեանք ունեցաւ և հրոյ ճարակ եղաւ 1771 փետրուար 7'ին, Պատմաճեանի պատրիարքութեան օրով, և դժբախտաբար այլ այնհետեւ ալ եղաւ հնարս չինելոյ (ՊԱՍ. 22)։ Մեզի ալ անբացատրելի կը մնայ, թէ ինչու Զաքարիա իւր մեծ հեղինակութեամբ չկրցաւ վերաշինել այդ կարեւոր եկեղեցին, մայրաքաղաքի Հայ եկեղեցիներուն անդրանիկը, որոյ պեսպիկեան պատասխանէն հասկնալի չենք, յամբան արհամարհալ և յետին դրդման եղելութենէն՝ է բացատրեայ յաւերժական, որ կը ցուցնէ թէ քարտուղիր մեսազորդը կը չարունակէր ժողովրդական բարեպաշտութեան ծառայել։ Ցիշատակագիրը կը գրէ, թէ այս տիեզերական լինելոյ անմոքհանութեան և երկպառակութեան ծաղրդոյ և տանջանաց էլեանաց պեղծոյն. իսկ իրր երկպառակութեան պատճառ կը ցուցնէ, թէ գէտնի պատրիարքական իշխանութեան (ՍԻՊ.), զոր մենք անբաւական բացատրութիւն կը նկատենք, վասնզի վերաշինու-

թիւնը հասոյթը կ'աւելցնէր։ Աւելի հաւանական կը կարծենք, թէ Ղալաթիոյ և Բերթայի կողմերը ազդեցութիւն ունէին կաթոլիկութեան յարողները, և անոնք աչխատած են չինուիլնը յետաձգել տալ, յուսալով թերեւս իրենք առջեւ անցնիլ և իրենց սեփականել զայն դեսպանատանց միջամտութեամբ։ Այդ դարձուածներու հանդէպ Զաքարիա ալ կրնար գործը չմղել, անակնկալ միջադէպներու առիթ տուած չըլլալու համար, թէ ոչ իրեն համար չատ դիւրին պիտի ըլլար եկեղեցական իշխանութեան հանած դժուարութիւնները լուծել և հարթել։

ՋԱՔԱՐԻԱՅԻ ԲՆՈՅԹԸ

2186. *Զաքարիայի գովանի արդիւնքները իրաւամբ կը բարձրացնեն իւր կարողութիւնները և ձիրքերը, մինչ իւր բնաւորութեան մասին պակաս չեն մեղադրողներ, վերագրելով խրոխտ ամբարտաւանութեան ոգի մը, խառն արտաքնայարդար ունայնասիրութեան հետ։ Մենք ալ չենք արդարացներ կաթողիկոսական խնդիրին մէջ բռնած ուղղութիւնը, թէպէտ խառն էին իւր աթոռին արժանապատուութեան պահանջներն ալ, բայց չենք ալ կրնար համաձայնիլ ինչինչ աւելորդ դիտողութիւններու։ Գրուած է, թէ էր խիստ ծանրակոյ և գժնահայեաց և յոյժ պարտաւոր, թէ չէր մօտնար հասարակաց և ֆահհակաց և համայն ժողովրդականաց, թէ դիմաց ալեւոր և հարգաց էր պետութիւնն, թէ է՛այնչը և է՛յ հնձել երբեք՝ ելանէն է չիպս ընկերանայր, և նորգին պարս առնելով, այնպէս որ էքթե- ոչխարայ չինել էր զ էր (ՍԱՊ.)։ Առանց մէջ եթէ ձեւակերպութեանց սէր մըն ալ ենթադրենք, բարոյական մեղադրանքի կէտ մը չենք նշմարեր, քանի որ գիտենք թէ բուռն կերպով ժողովուրդը պաշտպանելու և կարօտեալց օգնելու հետամուտ էր։ Իւր կերպարանն ալ կը մեղադրեն, թէ այնպէս է՛ ցոյց առնելով, չերեան մազլաց և բրդոտ և երկայնահատակ էր (ՍԱՊ.)։ Բայց ընդհակառակն կը պատմուի, թէ այնչափ վեհ և փառաւոր կերպարան մը ունէր, որ էսմա սուլտանուհին, զոր անգամ մը առիթ ունեցանք յիշել (§ 2156), անոր համբաւը լսելով, ուզած է անձամբ տեսնել, և ճանապարհէն դառնալուն օրն ու ժամը իմանալով, է կոչն ձովս նոթել սենեկի դռամ նաւակով անցնիլը դիտած, և հիացել ընդհելիկեպ պեսկէ նոթս, գոված է ասելվ, մաղլահ, Ալլահ էմանէր. և մինչեւ իսկ հետեւէն սաստիկ ղընձային էր սա նա ի պատրիարքարանն (ԴԻՒ. ժ. 285)։ Հետեւաբար այլեւս կ'ած եղած բսելու տեղի չմնար։ Իսկ խրոխտ վարմունքին մասին ալ հակառակ վկայութիւն կու տայ Պասմաճեանը, թէ Զաքարիա, էրով պարբէրական և եկեղեցական կրթութեն, յառնէր է վերայ ոթից և առնէր պատարիզոնին և զմասնաւորին (ՊԱՍ. 33), որ բնաւ խրոխտ ամբարտաւանութեան փաստ մը չէ, և չարդարացներ ուրիշներուն ըսածը, թէ չինեցնէ ալ ղրժել, այլ յայլոց յեռաւոր ղրժել լինէր (ՍԱՊ.)։ Աւելի արդարացի չերեւիր միւս մեղադրանքն ալ, թէ պարտէր արբ զբաղամ էիպոռն անյինս, և ասա է Պոլիս ալ ընդայր զբանաքեա վրդապետս (ՍԱՊ.), զի հղելութիւն մըն է՝ գիտուն և բանգէտ վարդապետներ հասցնելու համար անձնապէս աչխատած, և իրապէս հասուցած ըլլալը (§ 2121)։ Եթէ խնդիրը ծայրեցին նոթրակին Սահակայ՝ բազմիմաց առ հետացուելուն համար է (ՍԱՊ.), այս այն Սահակ Փառակեցին է, որ էջմիածնի ընտրողական ժողովէն դուրս հանուած էր իւր ըմբոստ վարմունքին համար (§ 2149), և Զաքարիայի հետ ալ ունեցած վիճաբանութեան միջոցին համաձակած էր պատրիարքը ապտակել (01 ՕՐԱ. 156)։ Հետացուելուն հրամանն ալ Ղուկաս կաթողիկոսէ բղխած է, որ եղածը լսելով փութացած է Սահակը Զմիւռնիա փոխադրել, և տեղը Մինաս եպիսկոպոսը կ-Պոլսոյ նուիրակութեան ղրկել։ Իսկ միւս հետացուածին՝ Թրակոյ Յոհաննէն առաքելոսական առն և երուսաղէմի նուիրակին համար (ՍԱՊ.), որոչ տեղեկութիւն չունինք, այլ հաւանական է անտեղի գործ մըն ալ անոր կողմէ կատարուած ըլլալը։ Զաքարիայի ըրածը՝ առաւաւելն պատրիարքութեան թեկնածու և կուսակցութիւններ կազմող եպիսկոպոսներու ասպարէզ տուած չըլլալն է։

2187. *Կ'երեւի չատ հին եղած է կ-Պոլիս գտնուղ եպիսկոպոսներու մէջ՝ երկարատեւ պատրիարքութիւն ընողներու*

դէմ զգացուած հակակրութիւնը։ Զաքարիա ալ նոյն կացութեան մէջ գտնուած է, զի ⸗ան֊ե֊ին֊է ա՛, երբ֊ ա֊ն֊ե֊ և ա֊ան֊է֊կ֊ի օր պատրիարքութիւն ըրած կ'ըսուի (ՍՐԳ.), իւր նախորդներուն բոլորէն աւելի, և գրեթէ կոլոտի հաւասար։ Սակայն տրուած չափը առաջին պատրիարքութենէն, 1773 նոյեմբեր 29'էն սկսելով հաշուուած է (§ 2119), և միջանկեալ պաշտօնանկութեան տասն ամիսները զեղչուած չեն (§ 2160), թէ ոչ բուն պաշտօնավարութիւնը, 24 տարի և հինգ ուկէս ամիս եղած կ'ըլլայ։ Զաքարիայի ազդեցիկ և ձեռներէց ձիրքերուն պիտի վերագրենք անշուշտ, եթէ կրցաւ այնչափ ատեն աթոռի վրայ մնալ խառնակ և չփոթ պարագաներու մէջ։ Տարիքն ալ արդէն լրացած էր, զի չուրջ 1720'ին ծնած ըլլալով (§ 2118), գրեթէ ութսնամեայ մը եղած էր, երբ դժնդակ հիւանդութիւն մըն ալ ունեցաւ, որ ⸗ն֊եր֊հ֊ա֊ն֊ բ֊ժ֊շ֊կ֊ս֊ ել֊ա֊ա֊ա֊ ա֊է (Դիի. ժ. 342), և ուրիշներէ լ֊ա֊ծ֊մ֊բ ո֊ւ֊վ֊ա֊յ֊ն֊ի֊ կը բացատրուի (ՍՐԳ.)։ Հիւանդութիւնը սկսաւ 1799 փետրուարի մէջ, այնպիսի սաստիկ կերպով, մինչ չի յ֊ա֊ա֊ր֊ ⸗ա֊ա֊ն֊է֊ն֊ ա֊չ ե֊չ֊ե֊ր֊ ի֊ն֊չ և ա֊չ ե֊ր֊բ֊, և բ֊ա֊մ֊ա֊ռ֊ա֊ղ֊ ժ֊ե֊ղ֊ե֊ր֊է֊ս֊ ալ ⸗ա֊չ֊ա֊հ֊ա֊ն֊ զ֊ե֊ր֊ չտեսնելով, հոգին աւանդեց 1799 մարտ 11'ին, մեծպահոց երկրորդ ուրբաթ օրը, առաւօտեան ժամ 3'ին, և յաջորդ չորեքթ օրը մեծահանդէս թաղում կատարուեցաւ Մայրեկեղեցւոյ մէջ։ Նախագահ հանդիսադիրն եղաւ Դանիէլ Սուրմաւեցի եպիսկոպոս, էջմիածնի նուիրակ, հանգուցեալին աշակերտներէն Յովհաննէս և Պետրոս եպիսկոպոսներու ընկերակցութեամբ, և բազմաթիւ վարդապետներու ու ⸗ա֊ր֊ի֊ա֊ք֊ա֊հ֊ա֊ն֊ա֊ն֊ե֊ր֊ու մասնակցութեամբ (Դիի. ժ. 343)։ Մարմինը Մայրեկեղեցիէն թափօրով Քումքապուի ծովեզերքը կ'ինջևցնեն, և նաւով Քուրուչէշմէ կը հանեն, և նաւամատոյցէն նորէն թափօր կազմելով կը տանին իւրաչէն եկեղեցին, զոր տարի մը առաջ օծած էր (§ 2185), և նորէն կարգ կատարելով, եկեղեցւոյ հարաւակողմը կը թաղեն, ուր տակաւին կը մնայ գերեզմանը փառաւոր տապանագիրով (Դիի. ժ. 347)։ Զաքարիայի

ՋԱՔԱՐԻԱՅԻ ՄԱՀԸ

վախճանը մեծպահքի մէջ տեղի ունեցած ըլլալով, երբ խորաններն փակ են, բացառիկ կարգադրութեամբ բոլոր մայրաքաղաքի եկեղեցիները երեք օր բաց պատարագ մատուցին, այսինքն կիրակի, երկուշաբթի և երեքշաբթի օրերը, իսկ Մայրեկեղեցին բաց պատարագը չարունակեց 40 օր (Դիի. ժ. 343), որ է ըսել ամբողջ Մեծպահքը մինչեւ Նոր կիրակի։ Այդպիսի պատուաւոր յիշատակութիւն մը անուրիշակ կը կարծենք եկեղեցական տարեգրութեանց մէջ, և զայն իբր փաստ կը նկատենք Զաքարիայի վայելած յարգանքին և գնահատման։ Արդէն Ա֊ղ֊ա֊ֆ֊ե֊ր կոչումը իրր մակդիր անուն սեփականուած էր Զաքարիայի, և այդ մասին յիշատակագիրին ըսելը, թէ ⸗ե֊ղ֊ե֊ց֊ա֊ զ֊ա֊ք֊ա֊ր֊է֊ վ֊ա֊ն֊ ⸗ն֊, չ֊ի ն֊ի֊ն֊ ղ֊ա֊ղ֊ն֊ ⸗է֊ր֊է֊, ⸗յ֊ս֊ ⸗ղ֊ն֊ ղ֊ի֊ն֊ ⸗է֊ր֊է֊ (ՍՐԳ.), մեր կարծիքով գրողին միտքին հակառակը կը հաստատէ, և Զաքարիայի զազգն սիրելը կը հաւաստէ։ Վասնզի անհնար է որ ազգը կամ ժողովուրդը մէկը սիրէ, եթէ նա առաջուընէ զինքն սիրած, իրեն համար աշխատած, և իրեն երախտաւոր եղած չըլլայ։ Անոնք որ Զաքարիայի յիշատակին անհպաստ ակնարկներ ունին, անձնասէր անկէ օգուտ չստացած անձեր եղած պիտի ըլլան, և այս կարգին մէջ կը դասենք Սարաֆ-Յովհաննէսեան Սարգիս դպիրն ալ՝ որ սիրած է արձագանգ ըլլալ Զաքարիայի հակակիրներուն։

2188. Զաքարիայի անունին արատ չենք սեպեր իւր թողած մեծահարուստ կալուածքներն ալ, զի այն ժամանակներ, նաեւ ամենայն զօշաքաղութեան, հնար էր եկեղեցականաց, մանաւանդ բարձրաստիճան եկեղեցականաց, դրամի տէր դառնալ, ինչպէս որ պատմութեան կարգին ալ տեսնուեցան անոնց բազմաթիւ օրինակները։ Ընդհակառակն Զաքարիայի գովեստի գլուխ մը պէտք է նկատուի, որ իւր կարողութիւնը բոլոր բարեգործական նպատակներու սահմանեց, և անտեղի կիրառութենէ զուրս չթացաւ։ Իրեն ժառանգութենէն 30,000 մարչիլ կամ դահեկան ⸗ե֊ր֊ի֊ե֊ն֊ է֊ա֊, 20,000 ալ իրեն յաջորդող պ֊ա֊տ֊ր֊ի֊ա֊ր֊ք֊ է֊ա֊, և մնացած 92,000

ՋԱՔԱՐԻԱՅԻ ԿՏԱԿԸ

դահեկանը զանազան նպաստներու յատկացուցած էր, կտակակատար նշանակելով Սիմէոն Տէր-Մովսէսեան, Զօպան Հովուեան, Յովհաննէս Տագէսեան, Յովհաննէս Լիմոնճեան և Յակոբ Կիւլլապեան սիրիանները։ Այս գումարին մէջ համրուեցան Քուրուչէշմէի եկեղեցւոյն 18,000 և Մայրեկեղեցւոյն 20,000 նպաստները, որոնք իրմէ ետքը վերջնապէս կարգադրուեցան, իսկ մնացեալ գումարը պիտի բաչխուէր հետեւեալ կերպով։ Տուրքի և պարտքի համար քանտարկուածներուն ազատման 5000, անտէր մեռելներու թաղումի ծախքերուն 5000, մնանկ աղքատներու 1500, մօրը հոգւոյն տարեկան երկու հոգեհանգիստ ընելու համար էջմիածինի միաբանութեան 5000, այրի երէցկիններուն աղջիկները ամուսնացնելու 2500, դպրատուններուն 1500, Հիւանդանոցին 3500, իսկ մնացեալ 10,000'ին տեղերը չեն նշանակուած։ Այս գումարէն զատ Մայրեկեղեցւոյ կտակած է ամբողջ ծաննապին զգեստ մը 35,000 դահեկանի արժողութեամբ։

2189. Թաղումին երրորդ օրը երեքշաբթի մարտ 15'ին յայտնի ընտրութեան համար, եպիսկոպոսներու և քահանաներու, իշխաններու և էնաֆներու ժողովը Մայրեկեղեցին գումարուեցաւ։ Ընտրելի առաջարկուեցան, Դանիէլ եպիսկոպոս՝ էջմիածինի նուիրակը, և Յովհաննէս ու Պետրոս եպիսկոպոսներ Զաքարիայի աշակերտներէն։ Ընտրութիւնը կայացաւ Դանիէլի վրայ, հանրագիրը պատրաստուեցաւ (ԴԻՒ.Ծ.346) և պետական հաստատութեամբ Դանիէլ պատրիարք աթոռ բարձրացաւ մարտ 17'ին (ՇԱՀ.Ա.233)։ Դանիէլ Սուրմառեցի էր լնիկ, համանուն գաւառին մէջ Սուրմառի կամ Սուրմալու կամ Սիւրմէլի աւանէն, որ սահմանակից է Պայազիտի, և թերեւս ասկէ կամ Պայազիտ վերաբնակեալ ըլլալէն Պայազիտցի ալ կոչուած է (ՉԱՄ.Բ.141)։ Իւր նախընթացը պատմուած չենք գտներ, և բնական կերպով կ'ենթադրենք Մայրաթոռի աշակերտած, և այնտեղ մինչև եպիսկոպոսութիւն բարձրացած ըլլալը Ղուկասի օրով։ Ինքն առաջին անգամ գործի վրայ կը տեսնուի, երբ 1796'ին Ղուկասէ կը ղրկուի Զմիւռնիոյ առաջնորդութեան և նուիրակութեան, սակայն այնտեղ հակառակութեանցը հանդիպի, այնպէս որ կաթողիկոսը կը պարտաւորուի չպնդել, երբոր Զաքարիայի ալ ջանքերը անօգուտ կը դառնան։ Մարտիրոս կեսարացի եպիսկոպոս Զմիւռնիա կ'երթայ, և Դանիէլ կ-Պոլիս կը դառնայ 1797 փետրուար 1'ին։ Զաքարիա պատրիարք Նախիջեւանէ ընդհատեալ թանթուխ (ՊԷՐ.6), ժողովուրդը չահիլ չկրնալուն համար. և Դանիէլ փութայ մեկնիլ Ռումելի, իւր նոր նուիրականան վիճակը, առանց գարունի բացուելուն սպասելու։ Այնտեղի պաչտօնավարութիւնը յայտնի եղաւ, և 1799'ին սկիզբները կ-Պոլիս եկաւ (01 ՕՐԱ.165), Մայրաթոռ դառնալու դիտաւորութեամբ։ Զաքարիա տկարացած էր արդէն, և Դանիէլ՝ այլ ևս հնձեմալըդ և գովելի վարուք, դառնայն և ընել կերպարանս (ՊԷՐ.5), կ-Պոլսեցոց համակրութիւնը գրաւեց, որոնք կամաւ անոր մեկնիլը ուշացուցին, մինչև որ քիչ ետքը Զաքարիա վախճանեցաւ, և քանի մը օրէն Դանիէլ յայտնուելու կոչուեցաւ։ Դանիէլ էջմիածինի վերմեռանդ և Զաքարիայի հակազուկաստան և հակասիմէոնեան զգացումներէն ազատ, իւր առաջին գործն ըրաւ տօնացոյցի տարբերութեամբ կաթողիկոսութեան և պատրիարքութեան մէջ հաստատուած խորը վերցնել (§ 2169), և ամէն կողմ հրամաններ ղրկեց, որ հին տօնացոյցի կիրառութիւնը դադրեցնեն, և Սիմէոնեան տօնացոյցին միայն հետեւին, որ ընդհանրացած էր արեւելեան գաւառներու կողմը, և չփոթ դործածութեանց պատճառ էր արեւմտեան կամ Տաճկահպատակ վիճակներու մէջ։ Այսպէս միանգամ ընդմիշտ փակուեցաւ տօնացոյցի խնդիրը, և այլևս այդ մասին գրոյց կամ դիտողութիւն տեղի չունեցաւ։

2190. Բարեպատեհ յայտնութիւն մը փառաւորեց Դանիէլի պատրիարքութեան սկզբնաւորութիւնը։ Ցիւղաթիոց եկեղեցին չեցինք արդէն թէ ինչպէս տարիներէ իվեր աւերակ կը մնար Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ հրկիզեալ եկեղեցին, և նոյն ինքն Զաքարիա՝ ձեռնարկեց և ազդեցիկ պատ-

*բիարքը չէր յաջողած անոր վերաշինութեան արտօնութիւնն ստանալ և գործին ձեռնարկել (§ 2185)։ Դանիէլ ալ կ'երեւի թէ դիմում ըրած էր իր պատրիարքութեան ըսկիզբը, բայց տակաւին սպասած արտօնութիւնը կը յապաղէր, և յաւուրկ արգելք մը և ձեռքի տակէն խարդաւանանք մը զայն կը խափանէր, ինչ որ ժողովուրդին մէջ մեծ գրգռութեան առիթ կ'ըլլար։ Բայց վերջապէս է յոբէ ապատն եղեալ յոբեան է վերայ խոստ առից սրկոց եւ ալօտերկից (ՍՐԳ. և ԿՈՀ. 114), և հրապարակային ցոյցի դիմեցին։ Անոնց հետ միացան ալ և կանայք, և դիմեցին Գումքաբուի պատրիարքարանը, անմիջական չինութիւնը պահանջելով, և սպառնալով՝ պղծել վեճան էլին գառնըրնեմք վճռել։ Պատրիարքը հազիւ կրցաւ ամբոխը հանդարտեցնել, յանձն առնելով իրենց հետ Ղալաթիա գալ և ընդ քաբեխոհ ալանց վէր էլոյն խոհել։ Իրօք ալ նոյնժամայն անցաւ Ղալաթիա, և օրն էր չարաթ, 1799 սեպտեմբեր 17։ Բայց Պատրիարքին հետ Ղալաթիա հասաւ հրամանն ալ և, ահապառ յաղթս չինան պաճարին։ Անյուշտ պատրիարքական դիմումներուն յապաղեալ պատասխանն էր, որ հապճեպ կերպով կը տրուէր՝ երբոր ժողովրդական յուզման և սպառնական չփոթի լուրը կ'առնուէր։ Ցիչենք թէ Նաբօլէոնի Եգիպտական արշաւանքին օրերն էին (§2180), և Օսմանեան բանակին Գաղղիական գունդերէն Ապուքիրի մէջ կրած պարտութեան գոյժն ալ նոյն օրերուն Կ-Պոլիս կը հասնէր (ԺՈՒ. 366)։ Հրամանին հասնելուն յաջորդ օրը, սեպտեմբեր 18 վարագայ խաչի բարեկենդանի կիրակին, Ղալաթիա կու գային պետական էշխան ճարտարապետ Մինաս Գալֆա, և տեղւոյն վրայ չինութեան չափերը կը հաստատէին, և երկուշաբթի սեպտեմբեր 19'ին, նախ ինքն Դանիէլ պատրիարք ձեռնարկ է չեռ օրհնութեամբ ղբղէլ էոյծ, հիմերուն պեղումը կը սկսէր, և ժողովուրդը նուէրն գործին վրայ կը թափուէր, և չեռ ալն չբեպնաց, այսինքն 56 օրէն, նոյն 1799 տարւոյ նոյեմբեր 13'ին, Ցիմնակաց բարեկենդանի նախընթաց կիրակին, Պատրիարքը եկեղեցւոյն օծման տօնախմբութիւնը կը կատարէր (ՍՐԳ. և ԿՈՀ. 115), Զաքարիայի աշակերտներէն Յովհաննէս և Պետրոս և Յակոբոս եպիսկոպոսներու ընկերակցութեամբ (ՊԼՐ. 8)։ Այս չինուածն է, որ դեռ այսօր կանգուն կը մնայ։ Շինուածը կը նկարագրուի, չէթէ և քառասոյր, հայեցոյ և չբմանալի, իմաստից չօրինեալ, կրմած ապիակ և պայծառ, ըստ ամենայնի էեղեցիկ։ (ՍՐԳ. և ԿՈՀ. 115)։ Որչափ ալ չինուածին նիւթերը պատրաստեղած, և ժողովուրդը խմբովին ցերեկ ու գիշեր չինութեան աչխատած ենթադրենք, տակաւին մեզի անհնարին կ'երեւի 56 օրուան մէջ Ղալաթիոյ երիցխորանեան կամ եռամանեայ եկեղեցւոյն չինութիւնը վերջանալը. և պէտք է ենթադրել, թէ չինութիւնն վերիվերոյ աւարտումը բաւական սեպուած է օծման համար, և հետզհետէ չարունակուած են ներքին յարդարումները և զարդերը։

ՏԱԳՆԱՊՆԵՐԸ

2191. *Այսուհ կ'ընդհատենք Կ-Պոլսոյ պատրիարքութեան գործերը, վասնզի եկեղեցւոյն օծումէն հազիւ ամիսուկէս առքը տեղի կ'ունենար Ղուկաս կաթողիկոսի վախճանը, և մենք տակաւին չենք խօսած անոր գործունէութեան և արդիւնաւորութեան վրայ։ Վերջին անգամ պատմեցինք Ղուկասի կաթողիկոսութեան Տաճկահայոց կողմէն ընդունուիլը, և անոր պաշտօնական և արտաքին ձեւակերպութիւններով գործը ստանձնելը (§ 2158)։ Իսկ անկէ ետքը էջմիածինէ դուրս տեղի ունեցած անցուդարձերով զբաղեցանք, որովհետեւ գրեթէ ընդհատուած էին մասնաւոր աթոռներուն Մայր աթոռոյ հետ յարաբերութիւնները, և մենք ալ կապակցութիւններ չունէինք պատմութիւնը զուգընթաց քալցնելու։ Ուստի պարտաւորեալ ետ պիտի դառնանք, և յաւուրկ կերպով Մայրաթոռոյ անցքերով պիտի զբաղինք։ Այդ ընդհատման կամ կղզիացման պատճառ եղած է Երկրին, այսինքն է Պարսկական Հայաստանին մէջ տիրապետող քաղաքական խռովութիւնը, զոր աւելի յարմար է բոլորովին անիշխանութիւն և տիրող պետութեան մը գործնականապէս անգոյութիւն անուանել, զի Պարսկաստան դադրած էր կանոնաւոր տէրութիւն մը ըլլալէ։*

Ամէն գաւառ ու նահանգ իրեն յատուկ աւատապետ խանը ունէր, որ բացարձակ տէրն էր, և սեփական յարաբերութիւններ կը պահէր և աղիկամի բռնութիւններ կը գործէր։ Անոնք իրարու հետ ալ կը պատերազմէին և իրարու ձեռքէ գաւառներ կը գրաւէին, և տիրապետութիւննին յաղթութեամբ կ'ընդարձակէին, կամ պարտութեամբ կ'ամփոփէին։ Ասոնցմէ մէկն ալ Երեւանի խանութիւնն էր, որուն ձեռքին ներքեւ կը հնձէր Էջմիածնի Մայրաթոռը։ Հիւսէյին-Ալի, Երեւանի նշանաւոր խանը մնռած էր Սիմէոնի վերջին օրերը տեղի ունեցած տագնապներու վրայ (§ 2138), և իրեն յաջորդած էր որդին Ղուլամ-Ալի խան, բայց 1785 գարունին Երեւանի մնծամեծները զայն սպաննեցին, և յաջորդ հռչակեցին աւնոր եղբայրը Մահմատ խանը՝ 12 տարեկան տղան, իրեն կին տալով չէլեպի աղջկան Խանին Ոլմայ, և զայն խնամակալուհի ճանչնալով, միատեղ բնակած ներքինիի մը հետ, այլ քանաոր և փոքրահնէայ (ԴԻՒ. Ա. 9)։ Շամախին աղա, Քուրդ ցեղապետը և Ղուլամի ու Մահմատի քեռին, ուզից ինքն ձեռք անցընել խնամակալութիւնը, բայց Ղուկաս կաթողիկոս էմաս է ձեզ նոցին, և համոզեալ հանդարտեցոյց, և պատրաստուած պատերազմը խափանեց։ Հիւսէյինի ժամանակ զօրաւոր՝ իսկ յետոյ զրկուած պաշտօնեանները՝ Այվազ և Մուզանլը Քասըմ պէկէր ալ զինու զօրութեամբ դիմադրութիւն կազմեցին և երկիրը չփոթութեան մատնեցին, գիւղեր աւերեցին և Մայրաթոռոյ կալուածները ալ ինասեցին։ Թէպէտ Հերակլ թագաւոր պատգամաւորով և Ղուկաս կաթողիկոս անձամբ միջամտեցին, բայց արդիւնք չունեցան, մինչև որ Որմիէ եկող ներքինին չսպանուեցաւ, և Այվազ ու Քասըմ Խոյ անդրէն է փոխ էրեանց (ԴԻՒ. Ա. 10)։ Եթէ ներքինը հանդարտեցաւ, արտաքինը չփոթութիւններէ ազատ չմնաց. վասնզի Հերակլ Վրաց թագաւորը և Ումման խան Լէզգիներու կամ Խազտնոց գաւառին պետը, և Մէվլեթ Տայոյ Հոփոլոյէ, որ է Օսմանեան սահմանակից կուսակալը, իրարու հետ չարունակ պատերազմի մէջ էին 1785 և 1786 տարիներու մէջ, և Հայաստան էր որ առնակոխ կ'ըլլար անոնց արչաւանքներուն պատճառով, Մայրաթոռն ալ ծանր վնասներ կը կրէր, որչափ ալ Ղուկաս՝ Վրաց թագաւորին ազդարարութեանց վրայ, չաներ հոփ ընել պոփոփոխութեանց՝ ոխերոտնելոյ չինեաս և ընկնելը երկրին (ԴԻՒ. Ա. 11)։

2192. Ժամանակին ամէնէն աւելի խօսուած անձերէն, կամ լաւ ևս բռնակալ խաներէն մէկն ալ Իբրահիմ խանն էր, որ կ'իշխէր Շուշիի նահանգը, հինեբուն Արցախը, Ղարաբաղ կամ Խամսա անուններով ալ յիշուած գաւառան գրութեանց մէջ։ Երբոր ուրիշ կողմեր փոխադարձ կռիւներ տեղի կ'ունենային, Իբրահիմ անտանելի բռնութեամբ կը նեղէր իր հպատակ քրիստոնեաները, Հայերն ու Աղուանները, որոնց տարբերութիւնն ալ կորած էր գրեթէ, և Աղուանից կաթողիկոսութիւնն ալ, Ամենայն Հայոց հայրապետութեան թեմ մը կամ վիճակ մը կը նկատուէր։ Գանձասարի աթոռին վրայ կը գտնուէր տակաւին Ծովհաննէս Հասան-Ջալալեան (§ 2092), և հակաթոռ Իսրայէլ Գանձակ քաշուած, Վրաց թագաւորութեան պաշտպանութեամբ կը յուսար նորէն աթոռ գրաւել։ Իբրահիմի բռնութիւնները այն աստիճան ծանրացան, որ քրիստոնեաներ ըստիպուեցան աչուընին դուրս գարձնել, մանաւանդ որ իրենց քայքայութեան կը հասնէր Ծովսէփ Արղութեան, Ռուսաստանի առաջնորդը, որ սերտ յարաբերութիւններ կրցած էր կազմել Ռուսիոյ կատարինէ կայսրուհւոյն արքունիքին հետ (ՄՈՎ. 317)։ Առաջին անգամ Ծովսէփի անունը կը յիշենք հանրային եղելութեանց մէջ, և տեղն է որ անոր նախընթացն ալ ցուցնենք։ Ծովսէփ ծնած էր Սանահին 1743 մայիս 23'ին, Շիրչ բէկի և Քեթեվանի տիկնոջ որդի։ Հայրը Սանահնի կալուածատէր և Վրաց արքունիքին պաշտօնեայ, տեսակ մը տոհմային ազնուականութեան հովիւ ունէր, զոր յետոյ որդին Ծովսէփ պաշտօնապէս իշխանութեան աստիճանին բարձրացուց, սերունդնին Զաքարէ և Իւանէ սպասալարներուն, անկէ ալ Արշակունիներուն, անկէ Պարսից Արտաշէս երկնաբազուկ թագաւորին բարձրացնելով, Քրիստոսէ հինգ դար առաջ (ԱՐՂ. 15)։ Ծովսէփ պատանին էջմիածնի

դպրանոցը մտաւ, Միմէոն երեւանեցիին ա-չակերտեցաւ, եկեղեցական աստիճաններ ստացաւ։ 1769'ին 26 տարեկան եպիսկո-պոս ձեռնադրուեցաւ, Տաճկահայոց մէջ էջ-միածինի չինութեանց համար ժողովարա-թիւն կատարեց, և 1773'ին, միչտ Միմէոն կաթողիկոսէ՝ Ռուսաստանի առաջնորդ նչա-նակուեցաւ։ Յովսէփ առաջնորդ՝ Մինաս Տիգրանեանի յաջորդութեան հետ անոր գաղափարներն ալ ժառանգեց, Հայկական վերակենդանութեան գաղափարը սկսաւ մչակել, իրեն ծրագիրը հիմնելով Ռուսա-կան կայսրութեան վրայ, որ ամէն միջոց-ներով կը ջանար դէպ հարաւ ընդարձակել իւր տիրապետութիւնը։ Այդ նպատակով Պարսկական և Օսմանեան իշխանութեանց ներքև գտնուող քրիստոնեաներուն ազգին ազատութեան յոյսերը կը ցոլացնէր «Դե-պրօկ խոստումներով, երբէք չէնթ քաշելով իրենց տիրապետներուն դէմ (ԱՐՂ.37)։ Ռուսաթուրք պատերազմ մը սկսած էր 1768'ին, և 1769'ին սկիզբը կատարին կայսրուհին նոյն միտքով կոչեր կ'ուղղէր՝ Վրաստան, Սերպիա, Զրնակորա, Վրաս-տան և Հայաստան։ Այդ նպատակով էր 1768 յուլիս 30'ին կայսրուհւոյն կողմէն Մի-մէոնի յղուած հրովարտակն ալ (§ 2094)։ Ահա թէ ինչ պարագաներու ներքև կա-տարուած էր Յովսէփի առաջնորդական ան-ուանումն ալ, իբրև առիթներէն օգտուե-լու և առիթները օգտակար ընելու կարող անձնաւորութիւն մը։

ՌՈՒՍԱՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐ

2193. Ժամանակին նչանաւոր անձնա-ւորութիւն մըն էր նաեւ Ջուղայեցի Աղա-զարը, 1747'ին Աստրա-խան և 1749 Մոսկուա եկած, և Ռուսաստանի մէջ բնաւիր դիպակի և կերպասի գործարաններու սկզբնաւորողն ե-ղած, որով մինչև կայսերական արքունի-քին պաչտպանութիւնն ու համակրանքը գրաւեց, և ազնուականութեան պատուոյ բարձրացաւ։ Սա ինքն է հռչակաւոր Կա-զարեան գերդաստանին նահապետը, որ ա-նունով ճանչցուեցան Աղազարի զաւակ-ները, ուղիղ անուամբ եղիազար, և Ռու-սական հնչմամբ Լազար կոչուած։ Աղա-զարի զաւակներն էին, Յովհաննէս, Մի-նաս, Ղազարոս և Յովակիմ, որ հօրենա-կան ձեռնարկները ծաղկեցուցին, և գոր-ծունները ընդարձակեցին, և ուսաբնակ Հայութեան գլուխներ ճանչցուեցան, իրենց կարողութեամբ և հարստութեամբ, նախա-ձեռնութեամբ և բարերարութեամբ։ Կա-զարեան զաւակներուն յաջողութիւնները քաջալերեցին Հայերուն դէպի Ռուսաստան գաղթականութիւնը. և կովկաս լեռներու հիւսիսակողմը հետզհետէ չէնցաւ հայա-բնակ քաղաքներով, մանաւանդ երբ Մի-մէոն յաջողեցաւ այն կողմերը Աղուանից աթոռին ոտնձգութիւններէն ազատել, և ուղղակի Մայրաթոռոյ իրաւասութեան ներ-քև մտցնել կայսերական հաստատութեամբ (§ 2094)։ Ռուսական կառավարութիւնն ալ ամէն կերպով կը քաջալերէր այդ գաղթա-կանութիւնները, մանաւանդ թէ զայն իր-բև զէնք գործածեց Սրիմի խանութեան տիրելու, և իւր տիրապետութիւնը Սև Ծովի վրայ տարածելու համար։ Առաջ 1774 յուլիս 21'ին Քիւչիւք-Գայնարճքի դաչնագիրով Սրիմի խանութեան անկա-խութիւն տրուեցաւ, և Օսմանեան գե-րիչխանութենէն հանուեցաւ (ԺՈՒ. 358), Շահին կէրայ՝ Ռուսիոյ համակիրը Օսմանեան համակիր եղող Տէվլէթ Կէրայի տեղ խան կամ իչխանապետ եղաւ (ԺՈՒ. 359), Հնարի-մացն կոմս Գրիգոր Պոտեմկին (Potemkin) հարաւային Ռուսիոյ կուսակալ անուանուե-ցաւ, և ամէն միջոց գործածեց Սրիմի քրիս-տոնեաները գաղթել տալու՝ որ խանու-թիւնը տկարացնէ։ Գաղթականութիւնը սկսաւ 1778 օգոստոսին (63 ԿԻՆ. 321), և 12,000'է աւելի Հայեր փոխադրուեցան Տօնի գետարերանը (ԱՐՂ. 54), ուր տարիէ աւելի վրանաբնակ անցրնելէ ետքը, 1779 նոյեմ-բեր 4'ի հրովարտակով Նոր-Նախիջեւանի տեղը ստացան, և 1780 յունուար 14'ին «Նոր Ղրիմ» շինել (63 ԿԻՆ. 323) Նոր-Նախիջեւան մէջ (63 ԿԻՆ. 324)։ Նոյն միջոցին Սրիմի մէջ ներքին խռովութիւններ գրգռուեցան, Ռու-սական բանակը Սրիմ մտաւ, Շահին կէրայ հրաժարիլ ստիպուեցաւ, և 1783'ի ապրի-լին Սրիմի թերակղզին և Քուպանի նա-հանգը Ռուսական գաւառ հռչակուեցան (ԺՈՒ. 359)։

ՅՈՎՍԷՓԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ

2194. Այդ եղելութեանց մէջ գլխաւոր դերակատար կը գտնուէր Արղութեան՝ Ռուսաստանի երիտասարդ ա-ռաջնորդը, որ գիտցած էր Հայ գաղթականութեան գլխաւորները չուր-ջը բոլորել, կոմս Պօտեմկինին անձնական բարեկամութիւնը չնչիլ (ԱՐՊ. 44), անոր միջնորդութեամբ արքունեաց հետ յարա-բերութիւն ունենալ, և Ռուսական քաղա-քականութեան ճարտար օգնականը ըլլալ։ Հարաւային գաւառներու մէջ հայաբնակու-թեանց փոփոխութիւններ՝ Սիմէոնը յոր-դորեցին այն կողմերն ալ Յովսէփի յանձ-նել, Խրիմու առաջնորդ Պետրոս վարդա-պետին 1779 յունուարին վախճանելուն վրայ։ Անկէ ետքն է որ նախիջեւանի հիմ-նարկութեան հրովարտակը ստացուեցաւ, երբ Յովսէփ Աստրախանէ Պետրբուրգ ան-ցաւ, եկեղեցւոյ օծման պատճառով, և մե-ծամեծներու հետ միանալով ղալբ մատոյց է յեան ալը Յովհաննէսին Եղիազար-եանց որ հօրը տեղը անցած էր, և ընդու-նեցաւ գլխաւորապէս իշխանէ, պատուի պեղ և գինակոչութեան, որ է է վերայ ֆեոդալ Տէրեր, և անասնեցած, կ'ըսէ, ստալին մեր Նախիջեւան (63 ԿԻՆ. 322)։ Ասոր վրայ 1780 փետրուար 18, երեքշաբթի, Սուքիասանց տօնին օրը, կ'օծէ Պետրբուրգի Ս. կատարինէ եկեղե-ցին, և կայսրուհիէն կը պատուուի ընդու-նելով ղալնակ և գեաղ պարանոցի յոյժ ըն-կէին։ Մարտ 10'ին կը տանայ Խրիմու ա-ռաջնորդութեան պայտօնագիրը (63 ԿԻՆ. 323), և մայիս 9'ին կայսրուհւոյն կը ներ-կայանայ։ Սիմէոնի մահուան վրայ, Ղու-կասէ նոր կոնդակ կը տանայ, և 1780 նո-յեմբեր 4'ին կու գայ է նորոշէն տալտս Նախի-ջեւան. 1781 ապրիլ 4'ին, Զատկի օրը կ'օծէ ղեպոեայ եկեղեցին Նախիջեւանա յանուն Խնդրակատար սուրբ Աստուածածնի. ապրիլ 21'ին թափօրով և անդաստանով կը դնէ ընդհանուրբնան է ըբս կոմնա տալտս. մայիս 9'ին Նախիջեւանի մէջ ընծեհեար գաբարան և ղեզեմ կանոն կը հաստատէ. և յունիս 6'ին կատարինեսլավ նոր քաղաքին մէջ Ս. Աստուածածնին եկեղեցին կը հիմնարկէ, և սեպտեմբեր 9'ին Մոսկուայի Ս. Հայչ եկե-ղեցին կ'օծէ (63 ԿԻՆ. 322-328)։ Այսպէս

ՌՈՒՍԻՈՅ ՄԵՐՁԵՑՈՒՄ

կը չարունակէ Յովսէփ զանազան քաղաք-ներու մէջ եկեղեցիներ հիմնարկելով և նուիրագործելով, որոց ցուցակը կազմած է ինքը, և որուն մէջ յատուկ յիչատակու-թեան արժանի կը սեպենք 1792 յուլիս 25'ին Գրիգորուպոլ քաղաքին հիմնարկէքի օրհնութիւնը (63 ԿԻՆ. 598)։

2195. Երբոր Ռուսաստանի մէջ Հայեր հանգիստ և բարեկեցիկ կեանքի կը սկսէին տիրանալ, և պետական հովանաւորութիւններ կը վայելէին, բնական էր որ Հայաստանի մէջ եղողնե-րուն տառապագին վիճակը, գիրենք ստի-պէր աչուընին դէպ հիւսիս դարձնել, ուս-տից կը սպասէին ամենատեսակ բարութիւն-ներ։ Միւս կողմէն ոչ նուազ մտադրու-թեամբ Ռուսներն ալ Հայերուն գործերով կը զբաղէին, և տեղեկութիւններ կը քաղէին անոնց կացութեան և ոյժերուն և տրա-մադրութեան վրայ, թէ պիտի կարենաՆ արդեօք օգտուիլ, կամ հիմնական օժան-դակութիւն գտնել այդ կողմէն։ Լուրջ բա-նակցութիւններու յիչատակներ կը գտնենք 1780 տարւոյ սկիզբները։ Ռուսական կող-մէն միջնորդը հռչակաւոր Աղեքսանդր Սու-վորոֆ (Souvorof) էր, իսկ Հայոց դատ ներկայացնողներ Արղութեան եպիսկոպոսը և Յովհաննէս Եղիազարեան։ Յովսէփ Աս-տրախանէ և Յովհաննէս Մոսկուայէ 1779 օգոստոս 5'ին Պետրբուրգ հասած էին, և-կեղեցւոյն օծման պատճառով (§ 2194), և նոյն օր հրաւէր ստանալով Պօտեմկինի կը ներկայանան, միւս օր օգոստո 6'ին Ռու-սաց եկեղեցւոյն մէջ Ալլակերպութեան տօ-նին արարողութեանց կը գտնուին, կայսրու-հիէն կը ճանչցուին, և հետզհետէ յարաբե-րութիւնները կ'ընդարձակին (63 ԿԻՆ. 509)։ Ռուսեր կասպից ծովեզերեայ կողմերը և Կովկասեան գաւառները գրաւելու համար Պարսից դէմ պատերազմ էին բացած, և 1780 յունուար 1'ին Իւան Գորիչ (Goric) զօրավար անձամբ Արղութեանին կու գար այն կողմերուն վրայ ծանօթութիւններ ստա-նալ։ Միւս որ Սուվորոֆ ինքն էր որ ոչ միայն անձամբ բազմ հարցմանս տրաբ, և գլխաւորներէն տրեայ ռուսաց տեղեկու-թիւններ խնդրեց, այլև յատատրուհիէն ա-

բոր յոյժ, որպես ինքն Նորօթելոց էջեն է ժղ էշխանութիւն ինչ։ Ցունուար 3'ին Յովսէփ և Յովհաննէս Պատրիկին կը ներկայանան, և տեղեկութիւն տալու կարգին կը համարձակին ըսել, Նորօթել է ժղ ղմանաւոր փերութիւն է ժէն Հայաստան է տալ Եգիպտոս, որուն Պատրիկին պայման կը դնէ, որ պարբերի, այսինքն էջմիածնի կաթողիկոսը, տանէ էշխանով ինդիջ է ծրթ ձէյեն (63 ԿՈՆ. 511)։ Յովհաննէս ժամանակ անցընել չուզելով, յունուար 10'ին տեղեկագիր մը կը ներկայէ, ուր Ռուսական հովանաւորութիւնը կը խնդրէ, որ Հայերը համարձակին իրենցմէ պետ մը որոշել, որուն չուրջը կրնան 20,000, և մինչև իսկ 60,000 պատերազմիկներ հաւաքել (ԱՐՂ. 111-114)։ Ցունուար 13'ին նոր տնօրկցութիւն, ուր Արցախի ցեղապետներու կամ մելիքներու անուններն ալ կը ներկայեն Սուվորօֆի, իրենց զինեալ մարդերու թուերով, որք են, Յովսէփ Գիւլստանի, Ադամ Ջրաբերդի, Եսայի Դիզակի և Շահնազար Վարանդայի, իւրաքանչիւրն հազարական, Միրզա ու Ալլահվէրտի Խաչէնի՝ միասին հազար։ Կը յիշեն ևս Իբրահիմ խանի բռնութեան ներքև ընկճուած՝ Աղուանից ու Սիսուանի ու Ղափանի քաջերը, որոնք կրնան պատերազմիկներ հանել եթէ չարժումը սկսի (63 ԿՈՆ. 512)։ Այդ բանակցութիւններէ անմիջական և գործնական արդիւնք մը յառաջ եկած ըլլալը չենք գտներ՝ իրաւ, բայց զրոյցներն ու չչուկներն ալ բաւական էին գրգռել Հայաստանի նեղեալները, որոնց արդէն ակնարկեցինք (§ 2192)։

2196. Արդուքեան իւր ձեռնարկներուն մասին փութաց տեղեկութիւններ հասցնել Ղարաբաղի իշխաններուն, և յատկապէս Աղուանից կաթողիկոս Յովհաննէսին, որ իւր դիրքովը և իւր նախորդներէն՝ Սիմէոնէ (§ 1845) և Եսայիէ (§ 1899) մնացած աւանդութեամբը, և չուրջը գտնուող Արցախեցի լեռնականներուն ազդեցութեամբը՝ միշտ չարժումի պատրաստակամ զգացումներ կը տածէր։ Գանձասարի աթոռանիստ վանքին մէջ մելիքներու ժողով կազմուեցաւ, և որոշում տրուեցաւ Շուշու խան Իբրահիմի ձեռքէն ազատելու համար ոտք ելնել, չարժումին սկզբնաւորութիւն տալ, և Ռուսական բանակին առիթ ընծայել՝ արեւմտեան կասպիական գաւառներէն դէպ յառաջ քալել, ինչպէս որ յուսադրութիւն յայտնած էին Արդուքեան և Լազարեան։ Այդ որոշման վրայ փութացին պատչաճ տեղեկութիւնները հասցնել Ռուսաստան, որպէսզի անոնք ալ գործը կայսրուհւոյն և իւր նախարարներուն և զօրավարներուն հաղորդեն (ՁԱՄ. Բ. 74)։ Բայց նորէն ներսէն սկսաւ Հայոց ձախողուածը։ Նոյնինքն Յովհաննէս կաթողիկոսի նղբայրը Ալլահվուլի կամ Աստուածատուր բէկն էր, որ իւր եղբօր և իշխաններուն խորհուրդը Իբրահիմ խանին կ'իմացնէր, երբ դեռ անոնք գործի ձեռնարկած չէին։ Ռուսաստան ղրկուելիք գրութիւնները տանող՝ Գրիգոր ժիր սուրհանդակն ալ, Իսրայէլ հակաթոռին միջոցով կը ձերբակալուէր Գանձակի մէջ (ՄՈՎ. 317), և Իբրահիմ իւր սովորական բռնութեանց վրայ վրէժխնդրութիւնն ալ կը բարդէր։ Ուստի գլխաւոր մելիքներ կը փութան Իբրահիմի սահմաններէն խոյս տալ, և Գանձակ ապաստանիլ (ՁԱՄ. Բ. 74), և միայն երկքը հրապուրուելով Իբրահիմի մօտ կու գան. Մէջլում և Աբով կը բանտարկուին, և Բուխտամ կ'աքսորուի (ԱՐՂ. 135)։ Աւելի դժբախտ եղաւ Յովհաննէս կաթողիկոսի վիճակը, որ բռնաւորին ձեռքը ինկաւ, և անխնայ գանակոծութեան ենթարկուեցաւ, մինչև որ նոյն իսկ մորակի հարուածներուն ներքև հոգին աւանդեց (ՄՈՎ. 318, ՁԱՄ. Բ. 74), թէպէտ ուրիշներ բանտի մէջ թունաւորուած կը կարծեն (ԱՐՂ. 135)։ Իսրայէլ փութացած էր Գանձակ գալ, իւր դաւաճանութեան վարձքը ստանալ, և Գանձասարի աթոռին տիրանալ, բայց նպատակին չհասաւ, զի ոչ ժողովուրդը և ոչ էջմիածնի աթոռը հանդուրժեցին անոր կաթողիկոսանալուն։ Ղուկաս գիտէր՝ որ իւր ընտրութենէն առաջ Իսրայէլ հետամուտ եղած էր էջմիածնի տիրանալ (ԴԻՒ. Դ. 32 և 124), բայց այսուհանդերձ չէր քաշուած անոր սիրալիր գիրեր ալ ուղղել, հանդարտ պահելու համար (ԴԻՒ. Դ. 17 և 39)։ Ասով մէկտեղ Ղուկաս չէր վարանած յայտարարել, թէ հոգեպոռն և անբաւական վճռակ

ընդով հրամայեալ է, սա է բառնալ զկաթողիկոսական անուն Իսրայելի յեկեղեցւոյ Դերոյ (Դիի. Ժ. 504)։ Գանձասարի վանքը, Յովհաննէսի սպանութեան պահուն աւարի և կողոպուտի մատնուած էր, և հազիւ թէ քիչ մը բան կրցած էր ազատել Սարգիս եպիսկոպոս, Յովհաննէսի միւս եղբայրը, և ամուր տեղեր պահած (ՄՈՎ. 318)։ Իսկ Աղուանից աթոռը անկերպարան վիճակ ունէր, ոչ իսկայեալ օրինաւորապէս ձանչցուած էր, և ոչ ուրիշ օրինաւոր կաթողիկոս անուանուած էր։ Այսպէս չարժումի դործը դէռ հրապարակ չնետուած՝ խանձարուրին մէջ խղդուեցաւ, թէպէտ Արղութեան չյուսահատեցաւ և նորէն չարժումը կ'ուզէր վերանորոգել, մինչեւ իսկ անձամբ տեղւոյն վրայ գործերը կարգադրելու յանձնառութեամբ (ԱՐՂ. 136)։ Հազիւ թէ 1787'ին Ռուսական գունդ մը վրացւոց օգնութեան եկաւ. մելիքներն ալ միացան, և Իրրահիմի զօրքերուն լրջոյթ տուին. բայց յանկարծ Ռուս գունդերը հետ դարձան, զի Օսմանեանց հետ պատերազմը կը պարտաւորէր այն կողմը զօրացընել (ԺՈՒ. 360)։ Մելիքներն ալ ստիպուեցան խոյս տալ վրաց և Ռուսաց կողմերը։ Իրրահիմ անոնց կալուածները գրաւեց, Արցախը իր կիսովի անկախութենէն զրկուեցաւ, մնացած ժողովուրդը ընկճուեցաւ, և անգամ մըն ալ ակնկալութիւններ յուսախաբութեան փոխուեցան (ԱՐՂ. 138)։

2197. Ղուկաս կաթողիկոսի անունը չի տուինք այդ եղելութեանց մէջ, այլ պէտք չէ հետեւցնել թէ նա կրըռցած ըլլայ անտարբեր մնալ կենսական խնդիրներու հանդէպ։ Երբոր Պոտեմկին՝ Արղութեանի և Լազարեանի առաջարկութեանց կը պատասխանէր, թէ պէտք է որ կաթողիկոսին կողմէն ալ Ռուսական պետութեան դիմում մը ըլլայ (§ 2195), Ղուկաս դիմումը գրեց, և աղաչեց որ ազատուին Պարսկական լուծէն (ԱՐՂ. 132), բայց չհամակերպեցաւ արկածախնդիր ձեռնարկներու մասնակցիլ։ Մանաւանդ, այսպէսքն ընդհանուր պատասխանատուութեան ենթարկուած չեղողներու համար, կրնան ներուիլ երբեմն յախուռն գործուիներ և յանդուգն ձեռնարկներ. բայց ոչ անոնց, որոնք

ՂՈՒԿԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

իրենց անձէն աւելի իրենց դիրքէն պէտք է ազդուին, և չեն կրնար իրենց անձնական գաղափարով պաշտօնական դիրքը վտանգել, որ հանրային չահ մըն է, և պաշտօնատարներ անոր սպասաւորն են, և ոչ անոր տէրը։ Ղուկաս ալ այդ սկզբունքին կը հետեւէր, և իր տեսութեանց յայտնի լուսաբանութիւն ունինք Մատրասի Հայազգիներէն Սուլթանուեան Շամիրի գրած նամակին մէջ։ Շամիր Ղուկասի մտադրութիւնը հրաւիրած էր վանի ազգաբնիկ ալեւորին ժերոյ և ազէի հոգ պանիլ. միանգամայն Ղուկասը գրեթէ մեղադրած էր գրելով, կ'երեւի թէ հաճէ ընդ ձեռայօրինէն այլազգիաց և ոչ սէրէ ղալպաճքին։ Ղուկաս կը պատասխանէ, թէ ձուկերն իսկ ցանցէն և թռչուններն ալ վարմէն ազատիլ կ'աշխատին, ինչ չիմայ էցե՞մ, որ է պատպանաց ընդձանիլ չկոխցնմ։ Միայն թէ, կը յաւելու, այժմյոյ կրէ պատասխանին է և վճռաբար յայտ, վասն որոյ երկուց չարեաց ղէտէն ընտրել պէտոյ է։ Զկայ, կ'ըսէ, Մովսէսը՝ որ փարաւոնէն ազատէ, ուստի հաստատապէս իմ՝, որ ոչ է հիւանդական վերադրենէն և ոչ յայնց՝ ուր այնքան կրէ լինել այժմ։ Արղութեանի և համախոհներուն ակնարկելով կը գրէ, թէ ոմանք ըստ հաճոյից խօսելով, ընդ յոյս ինչ և յոյն ինչ կողմանց չիներաստանութեան և օգնականութեան լինելոյ ձեղ, ետղացեալ են ընդդէմ. և այդպիսի յուսադրութեանց ապարդիւն լինելուն փաստն ալ կը յիշէ, որ է վերջին ձախող չարժումը, երբ Արցախեցւոյ չգիտեցան ստանութեան նոցա՝ է բառնալոյն ի բերանց, զինչ անդ անցին ընդ նոսա. զի՞ըդ մահացաս խղճալ ձովհաննէս կաթողիկոս, և որպէս ազատացաս. սուրբ Գանձասարա, և այժմ ո՞ր են ձեղէտղտեն, և զինչ կրեցին։ Ղուկաս գիտակցօրէն կը ջատագովէ իւր ընթացքը, և կը հաւատայ թէ չատեր իրեն գոհութեան և գովութեան գիրեր են յղած, թէ յայտ բարեաւ եր, որ ետուն ոչ ցոցէ ստ նոսա զնշան համակամութեան, և անկնա պահեցէ զսուրբ գոնդ (Դիի. Ա. 17-19)։ Ղուկասի իսկական ընթացքին նոր նշաններ ալ պիտի ունենանք, երբոր ազգային կրքերին չիշնենք անոր զգուշաւոր չանքերը։

2198. Ղուկաս չէր կրնար չտեսնել այն անկ տագնապները՝ որոնք Մայրաթոռին չուրջը բոլորած էին, և աւելի մեծեր ալ կը

սպառնային։ Հերակլ Վրաց թագաւոր 1787'ին Իբրահիմ խանին վրայ ելաւ, որովհետեւ իւր կողմէն Ղազախու և Շամչուլտէի իսլամ բնակիչներէն մաս մը Իբրահիմի կողմը գաղթած էր։ ԶԱՆԱԶԱՆ ԵՓՈՓՆԵՐ ընդհակառակն Իբրահիմի կողմի Հայերն ալ Վրաց կողմը անցնելու համար պաշտպանութիւն կ'ուզէին։ Հազիւ պատերազմը կը սկսի, Վրացիք կը պարտաւորուին հետ դառնալ, զի Ուման խան իրենց երկիրը մտած էր։ Ուման կը պարտաւորուի տուղտ տալ (ԴԻՒ. Ա. 12), և Վրացիք Իբրահիմի դէմ պատերազմը կը նորոգեն 1788 գարունին, և էքեթ-ափօ էրէօ, ղէեբէ և ղաբ կողպեքով հետ կը դառնան, առանց Գանձակ քաղաքը կարենալ նուաճելու։ Վրացւոց հետ կը գտնենք Հայազունդ մըն ալ Մէջլումի և Աբով մելիքներու հրամանատարութեամբ (ԴԻՒ. Ա. 13), որոնք յաջողած էին Իբրահիմի բանտէն ազատիլ (§ 2196)։ Բայց Իբրահիմ ասով չազատիր, նոր ոսոխ մը կ'ելլէ իրեն դէմ, Ջաֆարլի խան՝ նեբէյնէ Շահ անուանեալը, որ Վրացիներուն հետ դաշնակցելով կ'ուզէ Իբրահիմը ընկճել, և 1789'ին պատերազմը կը նորոգէ։ Գանձակի կառավարիչ խանը՝ Իբրահիմէ ապստամբելով դաշնակիցներուն կը հնազանդի, բայց Իբրահիմի բախտէն Ջաֆարլի կը մեռնի, և Իբրահիմ անդրէն ոտքերէն ղբօսքէ ղաբաղխան (ԴԻՒ. Ա. 14), և երկկողմանի աւերումներ կ'ընդարձակուին։ Ասոնց կը բարդուի Բագրեւանդի մեծ երկրաշարժն ալ, որ մինչեւ իսկ Ս. Ըովհաննու հոյակապ եկեղեցւոյն պատն ալ կը վնասէ (ԴԻՒ. Ա. 15)։ Նոյն միջոցին Երեւանի Մահմատ խանն ալ (§ 2191) հրապարակ կը նետուի, Հին Նախիջեւանը Իբրահիմի ձեռքէն կ'առնէ, և նոն իւր կողմէն նոր կառավարիչ կը հաստատէ։ Նա Պայազիտի կուսակալին բանակն ալ հետ կը վանէ, որ մինչեւ Երասխի եզերքը հասած էր, այլ Պայազիտի բերդին տիրել չկրնալով, Աբծաւին ու Ջօրուներ ու Մուսուներ այրելով և կողոպտելով հետ կը դառնայ։ Այդ կռիւներուն հետեւանքն եղող ընոտ և ասբօռնէն՝ էրեվէ ըսք ձեռ մաին եղեն է փոռոպեալ ոզբ Հայոց (ԴԻՒ. Ա. 17)։ Բայց կացութիւնը ալ աւելի աղետալի դարձաւ 1790 տարին։

2199. Երեւանի խանը վերահաս վտանգէն վախնալով, ղնանբօքին ըրբռ և ղինը ֆօ, Ծոյ քաղաքը յղած էր Հիւսէյին խանի հոգածուԶԱՑՈՑ ԱՐԿԱԾՆԵՐ թեան յանձնելով. բայց երբ ետ ուզեց՝ աւանդը զլացուեցաւ, և Մահմատ պարտաւորուեցաւ պատերազմով առնալ իւր ինչքը, և Հիւսէյինի եղբայրը Ջաֆարղուլի խանը պատանդ առնելով տեղը դառնալ։ Կարծելով թէ հին բարեկամութիւնը վերահաստատուած է, պատանդը կ'արձակէ, բայց նա Երեւանի զօրութեան վրայ քաղած տեղեկութիւններուն յենլով, պատերազմը կը նորոգէ 1790 գարունին, և մինչեւ Երեւան կը յառաջէ։ Մահմատ նեղի մտած, Երեւանի բերդին մէջ կ'ամրանայ, իրեններն ալ չըրջակայ մանաւանդ բերդերուն կ'ապաւինին, Էջմիածինի Մայրաթոռն ալ իւր պարիսպներով և աչտարակներով, իբրեւ ամրոց կը գործածուի և պատերազմի ամբոխով կը լեցուի։ Ղուկաս կաթողիկոս տագնապալից վիճակի կ'ենթարկուի, ոչ միայն նիւթական նեղութիւններով, այլեւ բռնելու ընթացքին կողմէն։ Մայրաթոռը Երեւանի խանին հպատակն էր, և Մահմատ ազդարարութիւն կը յղէր կաթողիկոսին, որ Քչնամիին դէմ դնէ, մ' ֆոցե հաղբրբոնէն ոբօջէ ընդ նոօ, և կամ ֆօջէ նոօ չկերլէ ինչ, այլ հոբջէ և է քօց վանեօջէ։ Միւս կողմէն Ջաֆարղուլի՝ կ'աչխատէր կաթողիկոսը իւր կողմը չանիլ, վստահացնելով թէ ոո չեղ հոոփոոն է ռբս քօբեկոմոնէն (ԴԻՒ. Ա. 21)։ Հիւսէյին խան ալ Ծոյէ կը հանէր, և եղբօրը հետ պատերազմը կը սաստկացնէր, ու Նորագաւիթ գիւղէ մեկնելով, ուր իրենց բանակատեղն էր, Փարաքար կու գար՝ հոբէ ձախելով հանդիպած գիւղերը։ Այս կերպով Հիւսէյին և Ջաֆարղուլի եղբայրներ Էջմիածնի մօտերքան, և չոոբէ ոոն ղբօմոնէն ոբօփոկնոցն ոնոոյն, կուսանաց երեք վկայարաններէն ալ ոոն չոոբէ ղբր ինչ ֆօքնն, և Ս. Գայիանէի վանքին հետեւէն անցնելով Բասապի եզերքը բանակեցան, և կաթողիկոսը տեսութեան հրաւիրեցին։ Ղուկաս վկայելով մէկտեղ, թէ ոբչ ռբր ընդ չեղ հոոփոոան է, հրաւէրին չգնաց, պատճառելով թէ ինչոնոնէն ոբրօջէ չէ է չեոո ռբր (ԴԻՒ.

Ա. 22)։ Երբոր Էջմիածինի մէջ մեծագոյն վտանգի վախով կը տագնապէին, Խոյեցիք յանկարծ պաշարումը վերցուցին, և հետզհետէ երասխի մօտ Զէյվէ գիւղը, Բլուր բերդը, և Օրթալուի անցքը դադարներ ընելով, դարձան իրենց երկիրը՝ Մակու գաւառը։ Արշաւանքին արդիւնքը երեւանի գաւառին Հայերուն ընդհանրապէս, և Մայր աթոռին մասնաւորապէս կրած վնասներն եղան, ոչ միայն է ընդհատ անոր, այլեւ չէրէրոյէ սալամաթ սրբիչներ։ Անոնց մեկնելէն ետքը, երեւանի Մահմատ խանը առիթ գտաւ Հին Նախիջեւանի կողմը յարձակիլ, և ինքն ալ իւր մասին նոր աւերածներով, կարծեց իրեն սահմանին մէջ եղածներուն վրէժը լուծել, այլ մանաւանդ Հայէրին, որ չէրէն այդ նեղութիւնները։ Ձի ինչպէս նոյնինքն Ղուկաս կը գրէ, քաղամ վնասայ և եկեղեցի կողոպտեցան և աւերեցան, և մանկոան նոցին ջերջեալ ցէրէցան եղէն, և որ ծացեալ են, այնուհի եա օրաոր կողոպին և սանակ լինին (Դիւր. Ա. 24)։ Այսուհանդերձ պահ մը Մայրաթոռին չուրջը պատերազմական արկածները դադրեցան, զի Պարսկաստանի մէջ դահակալութեան ներքին մրցումները գրաւած էին բոնապետ խաներուն գործունէութիւնը։

2200. Ծիշեցինք թէ Արզութեան և Վարդևան ձեռնթափ եղած չէրին Հայկական ինդիրը գրգռելէ (§ 2196),

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐ

և այդ մասին հետագրքրքրական գրուածներ կը հասատատեն մեր ըսածը։ Կրկին ծրագիրներ, փոխանակուած կը գըտնենք 1789'ին վերոյիշեալներուն՝ և Ռուսական կառավարութեան կողմէն իրենց հետ բանակցող Պոտեմկինի միջեւ (Դիւր. Դ. 731)։ Հայոց ծրագիրը 18 յօդուածներ ունի, որով ապագայ Հայոց թագաւորութեան և Ռուսաց կայսրութեան միջեւ յարաբերութիւնները կը գծուին, և կը վճռուի կոպկոպութեան երկոց ընդհատ անոր մեծ գործով Հայոց կրօնական յարաբերութիւններ կը հասատատուին երկու եկեղեցիներու մէջ. 5'րդ յօդուածով կ'ընդունուի Ռուսական բանակի մը Հայոց թագաւորութեան մէջ մնալը, և 6'րդ յօդուածով ալ Հայոց կողմէ հարկ վճարուիլը կ'հանգոց ոչ-ոչ և ոչնչով, և կ'ընդունուի պատերազմի ատեն իրարու զինու զօրութեամբ օգնելու պարտաւորութիւն։ Հայոց ընդհատը կայսրական կոմսով պիտի ընդունի, Էջմիածինի մէջ պիտի օծուի, և վազարշապատ կամ Անի, կամ Արարատի ուրիչ պատշաճաւոր քաղաք մը պիտի նստի։ Նոյեան Տապանի և Լուսաւորչի և Դաստատակի առաքելական չքանչաններ պիտի հաստատուին. ազգային գոյները պիտի ըլլան կարմիր և կանաչ և կապոյտ. զինանշանը արծիւ միագլխի և երկու առիւծ. հին նախարարութեանց սեռունդները իրր իշխանական տուներ պիտի ճանչցուին. գիւղեր կալուած պիտի ըլլան՝ բայց ոչ երբեք մարդիկը ստրուկ. կաթողիկոսն ալ Հայոց թագաւորին առաջարկութեամբ պիտի ընտրուի։ Վերջապէս երկու թագաւորութեանց մէջ առեւտրական պայմանագիր, և փախստականներու դաշնագիրներ պիտի հաստատուին։ Իսկ Ռուսաց կողմէն մատուցուած ծրագիրը, Հայոց իշխանութիւնը նախապատրաստէ կ'անուանէ, թէպէտ կը յաւելու թէ Ռուսիա զայն իբրեւ պահպանէ պիտի ճանչնայ։ Ռուսական 6000 մարդու բանակ մը Հայաստան պիտի մնայ մինչեւ տասը տարի, որ անկէ ետքը 4000'ի, և 15 տարիէն 2000'ի պիտի իջնայ, և 20 տարիէ բոլորովին պիտի քաշուի։ Այս բանակին համար Հայեր 60,000 թուման պիտի վճարեն. կէսը դրամ և կէսը պարէն, որ համեմատաբար պիտի նուազի՝ զունդերուն քաշուելովը։ Ինկ Հայաստանի զինուորութիւնը և ամրոցները Ռուսաց սպարապետին հրամանին ներքեւ պիտի ըլլան։ Հայեր իրր հարկ պիտի վճարեն 20 մղալ զուտ ոսկի, 3 ձի և 6 խոյ։ Ռուսաց բարեկամին բարեկամ և թշնամիին թշնամի պիտի ըլլան, և պատերազմի ատեն 6000 զօրք պիտի տան օգնութեան։ Եկեղեցական և առեւտրական և քաղաքական յարաբերութիւններ փոխադարձաբար ազատ պիտի ըլլան։ Երկրին հասոյթներէն պիտի հոգացուին թէ Ռուսական բանակին ծախքերը և թէ եկեղեցական և բարեգործական հաստատութեանց պէտքերը, և վերջապէս Գերմանիոյ կայսրը իրաւարար պիտի ճանչցուի երկու կողմերու միջեւ տեղի ունենալիք խնդիրներուն ատեն։ Այս ծրագիրը 20 յօդուած ունի, և 1779'ին

պատրաստուած և 1786'ին թարգմանուած կ'ըսուի (ԴԻՒ. Դ. 737), միայն թէ փոխանակութիւնը 1789'ին եղած է (ԴԻՒ. Դ. 731)։ Ուզեցինք ծրագիրները հաղել իրրեւ տնտեսքրքրական տեղեկութիւն, թէ ոչ գործնական արդիւնք մը ունեցած ըլլալնին տեսնուած չէ։

2201. Պարսկաստանի գործերուն դառնալով, պիտի կրկնենք թէ Ջէնտ տոհմին իշխանութիւնը աննչանակ դարձած էր, և կուսակալներ կամ ցեղապետներ անկախ իշխաններու պէս կը գործէին։ Միւս կողմէն հետզհետէ կը զօրանար Խաճարներու ցեղապետ Ագա Մահմատ խանը, ինչպէս կը գրուի մերոնք (ԴԻՒ. Ա. 25), կամ Ագա Մուհամմէտ խան, ինչպէս կը կոչեն օտարազգիք (ՏՊԼ. 368)։ Որդի էր նա ցեղապետ Մուհամմէտ-Հիւսէյինի, և Ալի-Ասիլ թագաւորին (§ 2024) հրամանով ներքինացած էր հազիւ 6 տարեկան եղած ատեն, իսկ հայրը Քէրիմի հրամանով սպանուած էր։ Այս երկու արկածները, վրէժխնդրութեան գրգռելին Մահմատը, երբոր չափահաս եղաւ, և անկէ ետքը ամէն ինչ, ճարտարութիւն և նենգութիւն, գիտութիւն և անգիտութիւն, խոհականութիւն և բռնութիւն անխտիր գործածեց, մինչեւ որ նախ իր հայրենական Մազանդարանի, և յետոյ բոլոր Պարսկաստանի կրցաւ տիրապետել, և 1794'ին Պարսից վեհապետ հռչակուեցաւ, թէպէտ շահ կամ շահնշահ անունը չառաւ, և թագադրութիւնն ալ տարի մը յապաղեց։ Իրեն մայրաքաղաք Թէհրանը, իր հայրենական երկրին մերձաւորութեան մէջ, իսկ Սպահանի և Շիրազի ամրութիւնները քանդել տուաւ (ՏՊԼ. 369)։ Այդ միջոցին կատարուած դաւնադան եղելութիւններ մեր նպատակէն դուրս կը մնան, և կը բաւականանանք յիշել թէ Մահմատ իր արշաւանքներր դէպի Հայաստան ալ ուղղեց, և անուանապատիր Հայրուն վրայ տիրեց։ Վրաստան տակաւին բնիկ թագաւորով կր կառավարուէր, բայց Պարսից գերիշխանութեան ենթարկուած էր։ Հերակլ, զոր քանիցս յիշեցինք, օգտուելով Պարսկաստանի անիշխանութենէն, Պարսից հետ յարաբերութիւնները խզած էր և Ռուսիոյ հովանաւորութիւնը ընդունած էր 1783 յուլիս 24'ի դաշնագիրով (ՖԱՄ. 30)։ Մահմատ երբոր իր իշխանութիւնը հաստատեն ամբացուց, բոլոր մրցակիցները՝ նոյնիսկ իր եղբայրներն ալ սպաննելով, մտադրութիւնը դարձուց Պարսկական գահուն նախկին զօրութիւնն ու ընդարձակութիւնը վերանորոգել, և այս ձեռնարկներէն մէկն ալ վրաց թագաւորութիւնը իր հպատակութեան դարձնել եղաւ։ Ծանր բանակով մեկնեցաւ Մահմատ 1795 գարունին, անուսապատի տարածելով ամէն կողմ, և ուղիղ քալեց դէպի Արցախ. Շուշին պաշարեց, գունդ մրն ալ Երեւանի վրայ ղրկեց (ԴԻՒ. Դ. 36)։ Երեւանի Մահմատ խանը իր բերդին մէջ ամրացաւ (ԴԻՒ. Ա. 27), իսկ Ղուկաս Մայր աթոռոյ գանձր 21 սայլով ճանապայ հանեց դէպի Տփղիս, այնտեղը ապահով կարծելով։ Գանձէն մաս մը, 6 սայլաբեռ, գանձին ընկերացող Տփղիսի առաջնորդ Անկոթ մականուն Մարտիրոս եպիսկոպոսին հետ, Մահմատի ձեռք ինկաւ, թէպէտեւ Ղուկաս ճեղքէն ընձեռնելով, և գրամներ ծրարելով յաջողած էր մայրաթոռը ազատ պահել Մահմատի աւարառութենէն (ԴԻՒ. Ա. 36)։ Տփղիսի վրայ արշաւանքը Մահմատի յաղթութեամբ փակուեցաւ, և յերկրորդ տարին Վրաց Հերակլ, այսինքն է 1795 սեպտեմբեր 18'ին, յԱ կո տարն, Պարսից բանակը Տփղիսը գրաւեց։ Անօրինակ կոտորածով մը գրեթէ ամէն այր չափահաս արու ճարակ եղաւ, եկեղեցիներ կործանուեցան, ամէն բան կողոպտուեցաւ, եկեղեցականներ բոլոր սպանուեցան, և 16,000 աղջիկներ և մանչեր գերի տարուեցան (ՏՊԼ. 372), իսկ Հերակլ հազիւ թէ ազատեցաւ Թելաւի լեռնակողմը ապաւինելով։ Ծիչատակագիր մը կը յաւելու, թէ ճէյ+ Մեկլոմ Հայոցն էլեան, որ ամենայն տրտմութեանց մաքց և ելից տալոյն հմուտ էր, իր տեղեկութիւններով դիւրացուցած է Մահմատի յաջողութիւնը (ԴԻՒ. Ա. 28)։ Ղուկաս ընդհակառակն ձեռքը մնացած միջոցներր գործածեց Հայ և վրացի գերիներ դնելու և ազատելու (ԴԻՒ. Դ. 36)։ Գերի տարուած Մարտիրոս եպիսկոպոսն ալ փրկանաւորուեցաւ Երեւանցի Ջաֆար խութլանց իշխանին կողմէն (ԴԻՒ. Ա. 36), և ճոխ+ճէլ և ճէյ աթոռ դարձաւ, բայց

— վշտակրօնքեանդ չեզուցէ ձեռս (ԴԻՒ. Պ. 669)։ Կ'իմանաս թէ Մարտիրոսի մահը յառաջ եկած է Ղուկասի դիտողութենանց վրայ զգացած յուզումէն (ԴԻՒ. Գ 36)։ Ղուկաս լսելով որ էջմիածինի յափշտակուած գոյքերը, և գլխաւորապէս Ղազար կաթողիկոսի թագն ու վկան ու չուրջառն ասոր անոր ձեռք անցած են, յանձնարարութիւնները գրեց վանազան կողմեր, որ դնեն և ազատեն և աթոռ դարձնեն։ Այդ կարգին գրած է եւս ա— աղէ՛ւ էէբելէն վը պոբն ձէ՛ Մեջբո՛ն (ԴԻՒ. Դ. 649), բայց կ'երեւի թէ Տփղիսի առման մէջ անոր խաղացած դերէն տեղեկութիւն չունէր, կամ թէ Մանմատի մօտ անոր գտած ընդունելութենէն օգտուիլ կ'ուզէր։

2202. *Մանմատ Տփղիսի աւարառութենէն և կոտորածէն ետքը ետ դարձած էր աւարով, իսկ Ղուկաս կը չարունակէր միչտ աւելի ծանր տագնապներու ներքեւ տառապիլ։ Ես անոնմիւս տարին յանկարծ լուր կ'առնուի, թէ Ռուսական բանակ մը Զապով (Zapow) զօրավարի հրամանատարութեամբ կը յառաջանայ, և իրեն հետ է նաև Յովսէփ Արղութեան եպիսկոպոս, որ յաղթական բանակին հետ Գանձակ կը մտնէ 1796 սեպտեմբերին։ Քրիստոնեայք կարծես թէ կը սկսին ոգեւորուիլ, և այլազգիք՝ և նոյն իսկ Մանմատ թագաւոր՝ չփոթութեան կը մատնուին, բայց այս անգամ ալ ակնկալութիւնք պարապի կ'ելլան։ Կատարինէ Բ կայսրուհին, այդ ձեռնարկներու հեղինակը, 1796 նոյեմբեր 16'ին կաթուածահար կ'ըլլար, և 37 ժամուան տագնապալից հոգեվարքէ ետքը կը մեռնէր միւս օրը (ՇՕՒ. 382)։ Ինչ օր ետքը Ռուսաց բանակը Գանձակ կը մտնէր, բայց կայսրուհւոյն մահուան լուրին հետ, որդւոյն Պօղոս Ա կայսեր հրամանն ալ կը հասնէր, որ ամէն կողմերէ արչաւանքները կը կասեցնէր, և Գանձակի բանակն ալ ետ կը քաչուէր, երկերը ընդհատ է չեա— նոյն ա—ջէն ա—եբլըցն (ԴԻՒ. Ա. 30)։ Ղուկաս ալ պահ մը ուրախացած ու ոգեւորուած էր, բայց խոհական զգուչաւորութեամբ ձեռնարկին աւարտման կը սպասէր, երբ տարաբախտ լուրը կ'առնէ, և միաժամանակ կը լսէ, որ Մանմատ նորէն Հայաստան կ'արչաւէ, ամէն կողմ կը նուաճէ և կը քանդէ, եղբայրը Ալիղուլին ալ Երեւանի վրայ կը դրկէ, որ Երեւանի կուսակալ Մանմատ խանը կը ձերբակալէ և կ'աքսորէ, և բռնութիւնները կ'ընդարձակէ։ Ղուկաս, այլ եւս յոյսերէն և ջիպշ, պարագաններէն կչուելով և մանաւանդ Արդութեանի Ռուսական բանակին մէջ գըտնուած բլլալը նկատի առնելով, կը փութայ Դաւիթ և Յովհաննէս վարդապետները ընծայել հանդերձ յղել ա— քաչաւոչն ւոջբո՛ն ձէ՛ Մեջբո՛ն, ուսկից ապահովութեան խոստումներ կ'ընդունի Տրվէրսկոյ Գամպօ-Ենկ (ԴԻՒ. Ա. 31)։ Մանմատ հետզհետէ կ'ընդարձակէ իր բռնական արչաւանքները, և 1797 մայիսի վերջին օրերը կը մտնէ Շուշի, ուսկից փախած էր Իբրահիմ դէպի Կովկասի լեռները։ Ութն օր միայն կ'անցնի Մանմատի Շուշի հասնելուն վրայ (ԴԻՒ Ա. 33), և սպանուելուն լուրը կը լսուի։ Օտարազգի պատմիչը կը գրէ թէ սպանողներն էին իր երկու սպասաւորներ, զորս նա մանուան դաստապարտած էր աննչան դիպուածի մը պատճառով (ՏՊԼ. 373)։ Արդութեան ալ հետուէն գրկով չէ՛ըց ձա—չէ՛ն խոչխոչեա—կ'լսէ, և յունիս 6'ը սպանման թուական կը նչանակէ (ԴԻՒ. Թ. 243)։ Բայց Հայ յիչատակագիրը գործը կը վերագրէ մէկիք Զուռչուտ Հայազգի իչխանին, որոյ է ա՛ն խոչ իջեւանած էր Մանմատ, բայց նոյն իսկ իր վանատուրը կողոպտելու էր ձեռնարկած։ Զուռչուտի խորհրդակից և գործակից էր Սատրգ խան՝ մեքէր հաբալա անչնապահ Մանմատի, որով կրցած էր Զուռչուտ ոբոխոչեղ ընել է մահճէ չմբրաեոչեղ բռնաա՛ն (ԴԻՒ. Ա. 32), որուն մասին օտարազգի պատմիչն ալ կը վկայէ, թէ անկէ անգութ բռնաւոր մը և անկէ ճարտար թագաւոր մը չէր նստած Պարսկաստանի գահին վրայ (ՏՊԼ. 373)։ Մանմատի յաջորդութիւնը նորէն մրցակիցներ ստեղծեց, որոց մէկն էր նաև վերը յիչուած Սատրգ խան, սակայն Հաճի Իբրահիմ խան, որ Մանմատի կողմէ Թէհրանի մէջ կառավարութեան գլուխն էր, նախատրիմ մնաց անոր յիչատակին, և նախընթացաբար անկէ յայտնուած կամքին համաձայն՝ եղբօրորդին Պապա խանը բերել

տուաւ Շիրազէն, և չան հռչակեց Ֆէթհալի անունով։ Մահմատի օրէն Թէհրանի մէջ հաւաքուած պատանդներու ներկայութիւնը, դիւրացոյց Ֆէթհալիի անհակառակ գահակալութիւնը (ՏՊԼ. 376)։

ԷՋՄԻԱԾԻՆԻ ՇՈՒՐՋԸ

2203. Ֆէթհալի, հակառակ իւր հօրեղբօր ընթացքին, խաղաղ կառավարութիւն սիրող յայտնուեցաւ, թող տալով որ իւրաքանչիւր նահանգի մէջ՝ բռնապետներ իբր կուսակալներ ըստ հաճոյս կառավարէն, միայն թէ ինքն ալ իւր կեդրոնին մէջ հանդարտ ապրի։ Երեւանի մէջ նստող Ալիղուլին, Մահմատի եղբայրը, քաղաքացիներու հակառակութիւնէն ստիպուեցաւ մնկնիլ. թերեւս եղբօրը յաջորդելու ալ ձգտումներ ունէր, բայց չյաջողեցաւ։ Մահմատ խան Երեւանի նախկին բռնապետը, որ աքսորուած էր (§ 2202), արտօնութիւն ստացաւ տեղը դառնալ. Իբրահիմ խան որ Կովկասի լեռները փախած էր, համարձակութիւն առաւ Շուշի վերադառնալ. և վշտաբեր և յիշատակելի օրներ նորոգուեցան, ինչպէս կը գրէ Ղուկաս. և ցաւագին չեչտով կը հառաչէ, թուրքացեալներէն թոյնեալ ֆելեցաւ, ակնարկելով Ռուսական բանակին քաշուելուն, անօգնականն ի՞նչ ըրեսցին առնել ղէմ (Դիի. Ա. 35)։ Ծիչատակագիրը 1797 հոկտեմբեր 29'ին գիշերը՝ Օչականի մէջ Յամանցի Յակոբ եպիսկոպոսի աւազակներէն սպանուիլը պատմելէն ետքը կը յարէ, թէ անօրէնն ինքն անպատիժ, ըստ որում և ժամանակաւորին կեն էին անօրէնք (Դիի. Ա. 37)։ Իսկ ընդհանուր կացութեան մասին Ղուկաս կը գրէ, թէ ի պետէ ձեռք թափառականներէն և ի սպրիկ սպանութենէ ի չեզին թշնամանել ևնք, և կամաձայն պատիժ վճռելոյ ընթերցիք ա՛ռ հատուկ (Դիի. Ա. 38)։ Բրուսնապետներու իրարու հետ պատերազմները չարունակեցին 1798 տարւոյ ընթացքին մէջ, և Դավրէժի և Խոյի և Երեւանի խաներուն միջեւ մղուած թշնամութեանց մէջ Մայրաթոռն ալ կրկին և կրկին ոտնակոխ եղաւ, մինչեւ իսկ Խոյի Ջաֆարղուլին 14 օր վանքին մէջ մնաց իւր մարդիկներով հանգերձ բաւական ընտրտ. և որովհետեւ պատերազմ էր ի ոտնանց անթէ Խոյու, իւր սեփական գաւառէն, պատանեալ պատերազմ էջմիածինի չրջակաները, Բարդոզ լեռան և Երասխաձորի կողմերը, մինչև որ հաստատուեցաւ Թալին, և իրենները սիրեց ղատրուվ Արեփած լերէն (Դիի. Ա. 40), հայաբնակութիւնն գլխուն նոր պատուհաս դառնալով։ Այսպէս 1798 տարին ալ ոչ Հայերուն դիւրութիւն և ոչ Ղուկասի հանդարտութիւն բերին, և միշտ միեւնոյն տառապանքին վիճակն էր, որ երկրին վրայ կը ծանրանար։ Ամէն դժբախտութիւնց վրայ ժանտախտն ալ սկսաւ Արցախի և Գանձակի կողմերը, և աւելի վրաց երկիրը, մինչեւ Թիֆլիս ներխուժելով տանէր քաղաքին Ղուկասի նոր պատրոն Գէորգի՝ ղատրի Գէղերդն, և կաթողիկոսն զիջաւ յղել զայն 1798 նոյեմբեր 3'ին Յովհաննէս վարդապետի ձեռօք, և ի ժամանելն, ինչպէս կը կարդանք, Աթոռոյս պորտրէթէն էբարեւ է ինձ (Դիի. Ա. 41)։ Վրաց նոր թագաւորը յիշեցինք, և աւելցնենք թէ Հերակլ, որուն 1795'ին Թելաւի կողմերը վախուստը պատմած ևնք (§ 2201), նոյնտեղ հիւանդացաւ և մնաց վեռ ղատրիարքն, մինչև որ մեռաւ 1797 փետրուարին, և իւր աւագ որդին իրեն յաջորդեց, և Ֆէթհալիէ հաստատութիւն ստացաւ նախատակութիւն խոստանալով, բայց Տփղիսի աւերածը և ժանտախտի վախը զինքն ստիպեցին կախեթի կողմերը մնալ (Դիի. Ա. 34-35)։

ՂՈՒԿԱՍԻ ՄԱՀԸ

2204. Մայրաթոռոյ արտաքին վիճակի ցաւալի պատմութիւնը, մեզ կը հասցնէ Ղուկասի կեանքին վերջին օրերուն։ Կացութիւնը բնաւ լաւանալու ակնկալութիւններ չէր ներչնչեր, մանաւանդ թէ կը վատթարանար, այնպէս որ Ղուկաս մահուանէ քիչ առաջ, 1799 ապրիլ 19'ին կը յայտարարէր, թէ երկիրն յաւէրժ թէռ, և թէ երկրէս քնակիչն ի նեղութենէ բնաւ պակասութեան չունին (Դիի. Ա. 42)։ Ղուկաս ինքն ալ իւր անձին վրայ կը կրէր տառապագին կեանքին հետեւանքները, և գրեթէ չարունակ հիւանդ էր, առանց սակայն լքանելու և գործերէ ձեռնթափ ըլլալու։ Այդ կացութիւնը պատճառ եղած էր անշուշտ, որ Ղուկաս ալ իւր վերջին օրերուն մէջ տակաւ իւր ուղղութիւնը կը բարեփոխէր,

և ինքն ալ իւր աչքը դէպ հիւսիս կը դարձընէր։ Ցիչեցինք թէ՝ ինչպէս վարանոտ վիճակ մը առած էր Ռուսաց վերջին արշաւանքէն ետ քաշուելովը, և պարտաւորուած՝ Պարսիկները չանհլու կը հետեւէր (§ 2202), սակայն անցաւոր էր այդ ըրածը։ Նա ամէն բան կշռելով կը զգար, թէ այլ եւս ոչ Պարսիկներէն լաւութիւն մը կրնար սպասել, և ոչ վթացիներէն օգնութիւն։ Այդ համոզմամբ 1797 յուլիսին, Պօղոս կամ Պաւել կայսեր գահակալութենէն իբր 8 ամիս ետքը, կ՚որոշէ անոր գահակալութիւնը չնորհաւորել, անոր պաշտպանութիւնը հայցել, և յատուկ հրովարտակ ալ խնդրել, ինչպէս կանուխ տրուած էր Միմէոն կաթողիկոսին (§ 2094)։ Կայսեր ուղղուած գիրը չենք տեսած, բայց կան այդ առթիւ նախարարապետ իշխան Աղեքսանդր Բէզպօրօտկինի, Յովսէփ Արղութեան եպիսկոպոսի, աղա Յովհաննէս Եղիազարեանի, և պարոն Մարգար Մանուչարեանցի ուղղած գիրերը (Դիւի. Թ. 218-232), որք բաւական են անոր տեսութիւնները և դիտումները պարզել։ Պօղոս կայսր, որչափ և արշաւանքէն ձեռնթափ, բայց հարաւային երկիրներու վրայ ազդեցութիւն պահելու մոտիւիր, Ղուկասի առաջարկներուն լաւ ընդունելութիւն ըրաւ, և խնդրուած պաշտպանութեան հրովարտակը գրուեցաւ 1798 փետրուարին (Դիւի. Դ. ֆԲ), և յանձնուեցաւ Արղութեանին, բայց Ղուկասի չղրկուեցաւ, զի հոկտեմբեր 18'ին միայն լուրը առնելով չնորհակալութիւն կը գրէ Արղութեանին և միւսներուն (Դիւի. Թ. 249), և 1799 փետրուար 12'ին տակաւին հրովարտակին և նախարարապետին նամակին պարզ պատճէնները կը խնդրէ, յետաձգել տալով յղել ղէն հրովարտակն կայսեր, և ընդունի ճեղքէն, և ղանակէն և գնդօրն, ինչպէս նաև Ղազար կաթողիկոսի թագն և ուրիշ զգեստները, զորս Արղութեան աւարէն ազատած էր (Դիւի. Թ. 262)։ Ասոր վրայ պատճէնները ստանալով, և մտածելով որ իսկը ընդունելու սպասելով անհամբեր չէնէր յետաձգեր (Դիւի. Թ. 289), 1799 հոկտեմբեր 15'ին ուղղակի կայսեր ուղղած կոնդակով մը իւր չնորհակալութիւնը կը յայտնէ (Դիւի. Թ. 283)։ Բայց միւս կողմէն Ղուկասի վիճակը օրըստօրէ կը ծանրանար, և մահուան վտանգը կը մօտենար։ Արդէն տարի առաջ 1798 դեկտեմբերին յայտնած էր, թէ հէնդրիքէն է ըղձահաւրիքենէ ամբայնոյ դէպ ի՝ տեսակցութիւն իւր վրայ և փոքրոգեցոյց զինք ի նայիմքերէ վերջին տեսութեան։ Թէպէտ այս անգամ աւուղջացաւ (Դիւի. Թ. 250), բայց միւս տարին աւելի ծանրացաւ հիւանդութիւնը, ուսկից չկրցաւ ազատիլ, և 1799 դեկտեմբեր 28 չորեքշաբթիի վրայ ևկող գիշերը, ժամը 8'ին որ է ըսել կէս գիշերէն ետքը հոգին տանդեց և հինգշաբթի առաւօտուն, դեկտեմբեր 29, Որդւոց Որոտման տօնին օրը յաղարկաւորութեան կարգը կատարուելով, մարմինը հանգուցին Ս. Գայիանէի գաւթին հարաւակողմը (ՇԱՀ. Ա. 232)։ Ցիշատակագիրներէն ոմանք դեկտեմբեր 27 կը գրեն Ղուկասի մահուան օրը, չենք գիտեր ինչ պարագայէ չփոթուելով, զի Որդւոց Որոտման տօնը զոր ամենքն ալ կը յիշեն, հինգշաբթի՝ դեկտեմբեր 29'ին հանդիպած է, և Ղուկաս նախընթաց գիշերը վախճանած է։ Ղուկաս ընտրուած և օծուած էր 1780 օգոստոս 2'ին (§ 2149), որով 19 տարի և 5 ամիս պաշտօն վարած կ՚ըլլայ (ՇԱՀ. Ա. 231), կամ աւելի ճշդելով, 19 տարի 4 ամիս և 26 օր։

2205. Պատահարներու չարքը չընդհատելու և ժամանակին կացութեան նկարագիրը ամբողջապէս տուած ըլլալու համար, զանոնք ըստ ԳՈՒԿԱՍ ԵՒ ՆԱՐԱՐՔ բինք Ղուկասու գործունէութեան յատուկ կէտերը լուսաբանել, որոց վրայ կը պարտաւորինք անդրադառնալ մանր պատմելէ ետքը, բայց այդ ձեւն ալ կրնայ իբր գնահատում ծառայել նորա արդիւնաւորութեան և արժանաւորութեան։ Մայրաթոռին կրած աղէտներուն և անընդհատ տեւող արկածներուն պատմութիւնը, անհաւատալի կը դարձնէն թէ Ղուկաս կրցած ըլլայ չինարար ձեռնարկներ կատարել, թէպէտև անոնց մեծագոյն մասը իւր առաջին տարիներու մէջ կատարուած են, որք համեմատաբար հանդարտ անցան։ Բայց միւս կողմէն ալ աւերածները նորոգութեանց սիրողականութիւն կը ստեղծէին, և իւր ազդեցութիւնն ու հեղինակութիւնը զօրաւոր

փաստ կ'ըլլար կարող ազգայիններդը յատուկ նուիրատուութեանց յորդորելու։ Այդ մասին բաւական ըլլայ կատարուած նորոգութիւններէն քանիները յիշել։ Մայր տաճարին դուրսէն նէթնալբեալ ըլլս կոթէ տբլին, որոնք այժմ այլևս չկան, նորոգուեցան կ-Պոլսոյ ամիրաներէն Ապուչխեցի Յարութիւն Աստուածատուրեանի ծախքով (ՇԱՀ. Ա. 35)։ Իսկ տաճարին չուրջը պատող սալայատակը չինուեցաւ Մուրաթի բնակիչ Գերաքեանց Յովհաննէսի ծախքով (ՇԱՀ. Ա. 36)։ Ամբարան սեղանատունը, համակ կոփածոյ սեղաններով և նստարաններով, և հայրապետական աթոռով կառուցուեցաւ Ջուղայեցի Խալդարենց Մարգարի ծախքով (ՇԱՀ. Ա. 102)։ Ձմերան սեղանատունը ընդարձակուեցաւ Պաչպազիրկեան Յովհաննէս ամիրայի ծախքով։ Սեղանատունին վրայի համբարանոցը չինուեցաւ Թոքաթցի Նիկողայոսի ծախքով (ՇԱՀ. Ա. 103)։ Սանահնի վանքը որ ի քաղաք մօց հեռի մոյցեալ կոչ, նորոգեալ պայծառացաւ, հաւանաբար Արղութեանց ծախքով։ Աւտնցմէ զատ Ղուկաս վանքին քանքանր կամ աղբիւրն ալ նորոգեց, վանքին գանազան մասերուն վերնայարկեր աւելցուց, սենեակներ ընդարձակեց և չատցուց, և ուրիշ մասեր ալ նորոգեց և ամրացուց։ Շինութեանց մի մասը 1784 և 1785 տարիներուն կատարած է իւր կաթողիկոսութեան սկիզբը, բայց մինչև վերջն ալ նոյն հոգւով չարունակած է, ինչպէս կը գրէ 1797'ին, թէ երբ իրենց կեանքին համար անյոյս ևն, ուր կը մնայ որ կարնան չինութիւններ ալ կատարել (Դիւ. Դ. ՃԲ-ՃԳ)։ Պէտք է դիտել տանք ևս, որ բարերարները հետու տեղերէ յաջողած է ճարել, զի Մայրաթոռի չրջակայից մէջ հնար չէր նուիրատուներ հայթայթել։

ՄԱՑՐՏԱՃԱՐԻ ՆՈՐՈԳՈՂ

2206. Բայց Ղուկասի չինարարութեան ամենամեծ արդիւնքը կաթողիկէի նորքինն է։ Մայր տաճարը վերջին անգամ նորոգութիւններ ստացած էր Աստուածատուր կաթողիկոսի օրով, երբ պատերն ալ պօռկէրօփրեցան և թեղիս թեղիս և անհետացան ծալիճան (01 ԱՐՐ. 327), բայց անկէ ետքը ամէն մասեր հետզհետէ խանգարուած և խաթարուած էին, մինչև իսկ կամարները վնասուած էին և անձրևը ներս կ'անցնէր։ Սիմէոն կաթողիկոս անհրաժեշտ դարմաններու ձեռնարկած էր Մահակ ճարտարապետի ձեռքով, բայց անյաջողացնած, և պեպես նեղացնած, և մանաւանդ ծանրտիչն վիշտ և հիւանդացնած արգելք եղած էին ձեռնարկը լրացնել (01 ԱՐՐ. 328)։ Հետևաբար չարունակութիւնը պարտք մնաց Ղուկասի վրայ, որ ընտրութենէն անմիջապէս ետքը գործի ձեռնարկեց Գասպար տէր Յովհաննէս եպիսկոպոսին ձեռքով, զի գրեթէ տաճարին կործանման վտանգ կը զգացուէր։ Յիշատակագիր մը այդ մասին մանրամասն տեղեկութիւններ տուած տանն կը գրէ, թէ աջակողման տանները ու մեծ սիւները խախտեցեալ և բեկբեկեալ էին (01 ԱՐՐ. 328) և նարկ էր անոնցմէ սկսելով տաճարին չինուածը ապահովել, ինչպէս որ ալ կատարուեցաւ, Ագուլեցի կարապետ Պապայեանի և կեսարացի Խրտրը Աբրահամեանի ծախքով (ՇԱՀ. Ա. 37)։ Երբոր ձեռք կը զարնէն եկեղեցւոյն կամարներն ու որմերը յարդարել, երեսէն կու գան ի վայելոց ժամանակաց տալեցեալ պեղէն, և հնոցէն բեկբեկեալ և ջախջախեալ տբլին, ու երկիւղալի փոխրինեն, այնպէս որ ճարտարապետն ալ ընդհատեալ կը չփոթի վասն երկիւղի մահուան, զի ծեծ կոխելիկ քրքեղն ի վերայ ըրելոց կոմբոցն էր չէնեցեալ, իսկ կամարները՝ գմբէթին ծանրութենէն էին քեկոխեալ, և կրնային վար գալով ներքեւը եղողները վտանգել։ Երբոր Ղուկասի լուր կը տրուի լուսարար Մարկոս եպիսկոպոսի ձեռքով, անձամբ կու գայ վնասները տեսնել, և մինչև իսկ ելլալ ի վեր ասանդեղն և լաստակներուն վրայ պատելով, ճարտարապետին պէտք եղած կերպերն ալ կը ցուցնէ խրով ատոնց ծանրութենչի հանճարին, առաջ կամարները ծեծնայէ նախապնդել, և յետոյ դիկ դիկ չէչբեալ տբլինն հանել, և տեղը ընդէր ընդէր կոմբոբտբլինն ըրբել (01 ԱՐՐ. 328)։ Եթէ ճարտարապետն ալ Ղուկասի կը դիմէր, պէտք է հետևցնել թէ Ղուկաս արուեստական տեսակէտէն ալ հմտութիւն ունէր, և իւր ձեռնարկներուն իսկապէս տէրն էր։ Այդպէս հետզհետէ տաճարին չինուածը ապահովելէն, և տանիքին և պատերուն և գմբէթին վրայ պահանջուած նորոգութիւնները

աւարտելէն ետքը, ներքինը պարզ ծեփով կը մնայ, զոր յետոփայլ և արձանագրէլ կ'անուանէ յիշատակագիրը (01 ԱՐՐ·329)։ Միւներու նորոգութեան թուական պիտի ընդունինք 1786 տարին, համաձայն սեղանոյն վրայ գրուած յիշատակարաններուն (ՇԱՀ·Ա·37)։ Մնացած նորոգութիւններն ալ միևնոյն տարին կատարուած պէտք է ըսուին։

ՆԵՐՔԻՆ ՆԿԱՐՆԵՐԸ

2207. Սակայն հնար չէր տաճարին ներքինը բոլորովին վիճակին մէջ անշուք պահել։ Ոչ միայն Ղուկասի արուեստական ճաշակը կը պահանջէր զայն զարդարել, այլև պարտք մըն էր վերանորոգել ինչ որ Աստուածածնայ տուբի ժամանակէն կար, և նոր չինութիւնք ստիպող էին ալ ընդլայնել նշմարան+ ինչ հնոցին գոյն գոճիկ և անհերիք ծալուածնէր, զի և ջահի մի հնոցին պարիսպ տեղերնէն վերուցած էին (01 ԱՐՐ·328)։ Ղուկասի ճաշակն և արուեստական հմտութիւնը չէր ներեր նորէն անհերիք ծաղկանիչներ և նկարներ դնել, ուստի որոշեց ժամանակին նշանաւորագոյն նկարիչին յանձնել գործը, որ էր Յովհաննէս Յովհաննեանեան, Տփղիսի արքունիքին արուեստագէտը, որդի Յակոբայ և թոռն Շահոթեցի Յովհաննէսի, աւելի ծանօթ Նաղաշ մականունովը իբրև նկարիչ, և ընտիր քերթուածներովը իբր աշուղ կամ երգիչ, և որ վախճանած էր 1722 հոկտեմբեր 28'ին (ՁՈՊ·113)։ Հերակլ թագաւոր հանեցաւ Յովհաննէսը դրկել էջմիածին, ուր նկաւ աշխէրժան հանդիպիլ։ Պետրոս և Գաբրիէլ հնոցին հետ ձեռքով, դէհնոյպաշ և փոխոխելով ընել տուաւ տաճարին ներքինը, և ըլլալիք գծագրութեանց ծրագիրները Ղուկասի գնահատման ենթարկեց, և ըստ հաճոյին և հաճոյին նորին գործի ձեռնարկեց։ Ինքն Ղուկաս ալ սիրով սրբեցաւն, ու դարբերը յերկնեցին առնելու, և ղէպ և ղնեա սկիզբ ձգելոց, ու խորհրդաւոր պահերուց գաղափարները ինձ յայտնէր, և ի հետ հանճարել իրատոյ և պատրաստ իւրոց չարունակ գործին կ'առաջնորդէր (01 ԱՐՐ·329)։ Երկարապատում եղած ըլլալ կը նկատէինք, եթէ Մայրաքաղաքի նկարներուն բացատրութիւնը տալ ուզէինք։ Բաւական ըլլայ ըսել, որ բոլոր տաճարը իր ամէն մասերով ծաղկած և նկարուած էր, և պատշաճ դասաւորութեամբ հին և նոր կտակարանէ և ազգային յիշատակներէ պատկերներ կային ամէն կողմ, որոնք էին ինովհ հոբիւրաւոր և այլ սեռէ+ (01 ԱՐՐ·330)։ Հետազննիններ դիտած են որ ծաղկանկարներուն մէջ աւելի պարսկական ոճը կը տիրէր, իսկ կենդանագիրներուն մէջ աւելի Իտալականը, բայց ոչ ոգեշունչը որ իրաւ էր, և ամենայն ինչ պաշճեցուած էր Հայ գլխաւորի և գիտնականի (ՁՈՊ·28)։ Այնպէս որ հնար էր համարձակօրէն՝ Հայութեան համար գեղարուեստական գանձ անուանել Յովհաննէսի և իր աշակերտներուն արտադրութիւնները (ՁՈՊ·26)։ Մենք ալ ժամանակին տեսած ենք Մայրաքաղաքը իր Ղուկասեան և Յովհաննեան չքեղութեան մէջ, և անկեղծօրէն զմայլած, Իտալական ոստանները աւուրս արուեստագիտական գանձերը տեսնելնէս ետքը։

ԴԱՐՁԵԱԼ ՆԿԱՐՆԵՐԸ

2208. Գործին մանրամասնութեանց մանելով պիտի աւելցնենք, թէ ծաղկանկարներ և զարդեր ընդհանրապէս որմանկարներ էին ծեփերուն վրայ գրծուած, և երբեմն ալ մարմարի վրայ, իսկ կենդանագիրները ի վերոյ կոտոր նկարագրուած ու չքեղազարդարուած էին (01 ԱՐՐ·330), և յարմար տեղեր զետեղուած։ Նկարներուն մասին խօսած ատեն Շահխաթունեան կը գրէ, թէ անոնց մէջ տոքախոս փայլն ընդհ+ յետոց դէմոնաւ վերապահին Աթէոնաւ Լեհացոյ, և տալ Նիւրնեցոյ՝ Յոհաննաս (ՇԱՀ·Ա·45)։ Արդ գիտենք թէ Ղուկասի ատեն չէին ապրիր այլևս ոչ Մատիսոնաս Լեհացին և ոչ Յովհաննէս՝ նկարիչին մեծ հայրը։ Ուստի պէտք է հետեւցնել, թէ անոնք մասնակցութիւն ունեցած էին Աստուածատուր ժամանակ կատարուած նկարներուն, և թէ վերջին Յովհաննէսն ալ ազդուած է անոնցմէ, գուցէ և ինչինչ ալ կտաւեայ կենդանագիրներէն, այն ժամանակէ մնացածներ են, զի յիշուած ալ կը գտնենք թէ պատկերներէն ըմանա՝ որ+ հնացեալ և անգեղացեալ էին, վերջին Յովհաննէս Նորգեալ պայծառացոյց (01 ԱՐՐ·330)։ Աւելցնենք թէ նկարիչ Յովհաննէս եկեղեց-

ւոյ նկարներէն զատ, աշխատած է խաչվառներուն նորոգութեան ալ, զորս Ղուկաս եփ չէզաչըրթել փոռնոփչի կերպոռթ (01 ԱՐՐ. 330)։ Մախքին հայթայթման համար Ղուկաս կը յայտնէ, թէ ինք փոյթ ոպոյեըվ է յօրհնել ծուչվրոց ծերց՝ ծալկիոցի հանգերէյ իրիրդոռոր պոպկերթ, որ ըսել է թէ յատուկ բարերար նուիրատու մը չէր զաւ, այլ ամէն կոզմերէ նուիրահաւաքութեամբ գլուխ հանուեցաւ բազմածախս ձեռնարկը։ Իսկ ժամանակին համար յատուկ արձանագիրը 1786 թուականը կը ցուցնէ (ՇԱՀ. Ա. 37). բայց յիշելով սիւներուն և կամարներուն նորոգութիւններուն ալ նոյն 1786 տարին կատարուած բլլալը (§ 2206), և նկատելով նկարներուն թիւն ու տարածութիւնը, անհնար կը գտնենք նոյն տարւոյն մէջ գործին աւարտումը, և ստիպուած ենք լոկ սկզբնաւորութիւնը դնել 1786'ին, իսկ աւարտիլը յետագիլ, զի յիշատակագիրն ալ գործը երկարած կ'ըսէ դնէլ ցհինգ և վց ամ (01 ԱՐՐ. 330), որ է ըսել մինչեւ 1791 կամ 1792։ Ըստ այսմ աշխատութիւնները չարունակած են տեղական բռնապետներու փոխադարձ կռիւներուն միջոցին (§ 2198), որք էջմիածինի վրայ չատ չծանրացան, իսկ աւարտած էին երբոր Մահմատ Հաճար Հայաստանի արչաւանքներուն ձեռնարկեց (§ 2162), և Ղուկասի վրայ բաւական ծանրացան չինուածն ու նկարուածն անեղծ պահելու տագնապները։ Սակայն ինչ որ այն ատեն աւերիչ ասպատակին ձեռքէն ազատեցաւ, դար մը միայն ապահով կեանք ունեցաւ, իսկ այժմ դժբախտաբար կորած ու ջնջուած է բոլորովին։ կաթողիկոսի մը անհոգնելի փոյթը նոյն չքնաղ զարդերը (ՉՈՊ. 26), այնպէս որ նոյն կաթողիկոսի, Մկրտիչ Խրիմեանի, հիացողներն ալ համարձակած են գրել, թէ նա ամէն բան փոխած և փճացուցած է անհատապուլ վնաստութեամբ (ՉՈՊ. 8)։ Որմանկարներէն ազատած է միայն գմբէթը, պեռբէռբէի ընդհանրական ընկերութեան ջայլակած ջնջտութեան ընծան (ՉՈՊ. 26)։ Իսկ կաւեայ պատկերներէն մի մասը ջնջուած և բոլորովին, մի մասն ալ աննշան բէռնէրու եկեղեցիներ ուղղուած (ՉՈՊ. 19), և 120 պատկերներէն տպրիւ 20 նոտ անհետ կերպով մնացեր են թանգարանին մէջ նետուած, բայց կը լսուի, թէ միաք կայ նորէն զետեղելու։

2209. Ղուկասի չինարարութեան մասին խօսելէն ետքը պէտք է անցնինք անոր ուղղամիտ գաւանութեան

ԴԱՒԱՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

կէտը լուսաբանել։ Այդ բացատրութեան կը ստիպուինք, Մուրատեան Մելքիսեդեկ եպիսկոպոսի մէկ անզգոյշ ակնարկէն, չուզելով ուրիշներուն հետ՝ զայն անհիմն ինալճըխ անուանել (ՄՈՎ. 312)։ Մուրատեան կը գրէ թէ Սարգիս Թէքիրտաղցի վարդապետին էջմիածին գալուն վրայ՝ Ղուկաս կամք ունեցած ըլլայ հոյսպոռնեայց եկեղեցին գործել հռոմայ եկեղեցւոյն հետ. և թէ իր վրայ կասկածը եբլուլով ոպոյէ կերպրան կ'առնոս, ոսոպէ և Ղուկասոպէկ կը խոշոնթոսէ էջմիածնի գործաններէն, և կ'ասորոսէ, ոսկայ յեռնդոսորնեմբ վրաց հերուկ կայսեր կ'ազաչէ, և գազաթնոց կը գրկէ ի Տփղիս, և անոր յանդոց (ՄՆԼ. 592)։ Ղուկասի ամբողջ կեանքը և գործունէութիւնը տուինք, և անոր ոչ մի մասին մէջ հնար չէ սղմելցնել այդպիսի տարօրինակ պատահար մը։ Ղուկասի թղթակցութեանց չարքը (ԴԻՒ. Դ.), և Արղութեանի հետ ունեցած յարաբերութիւնները (ԴԻՒ. Թ.), և կարեւոր յիշատակագրութիւններ (01 ԱՐՐ. 183), և իւր գերեզմանը (ՇԱՀ. Ա. 232), այսօր յայտնի են, և քայլ առ քայլ կը պատմեն Ղուկասի կեանքն ու վախճանը, և այս տեսակ՝ իրաւ անհերքելի ենթադրութիւնն իսկ կը մերժեն, որով մեզի հարկ չմնար պատճառաբանութեամբ անոր անհիմն ըլլալը ցուցնել, զոր ուրիշներ ալ կանխած են հերքել (ՄՈՎ. 313)։ Մուրատեանէ առաջ Փափազեան՝ լոկ կասկած մը քաշած էր Ղուկասի հայադաւանութեան ուղղափառութեան վրայ, գրելով թէ էր ոյշկէրթոռնեն ցրոռնէն ոչթեպէկոպոսի Բաբենցոյ, և չէ հմոտ էր ոպղաֆոռ ցհմրթոռնեան, գրողին միտքովը՝ հռոմէադաւանութեան, աշակերտելէ նորին Սաբէնց վրդապետ Թէոդորոցի՝ ինց ոռ նե է փոռնել հնոթ դեքռնոռնեան ազգին Հայոց ընդ եկեղեցւոյն Հռոմայ։ Իսկ ինչ որ անկէ ետքը կը գրուի, թէ չէորց է լռոռ ռռել չէչյ ոչրին, թէ խոչռանգութեցաւ ղմռ կէզ հինգ, և թէ Տփղիս և անկէ եորոպա փախաւ (ՓԱՓ. 936),

ոչ Ղուկասի այլ Սարգիսի համար ըսուած է Փափազնանէն, մինչ Մուրատեան պարզապէս անզգոյշ անմտադրութեամբ Ղուկաս կաթողիկոսին վրայ իմացած է։ Այդ պարագաներն ալ յապաւելով, երբեք չճշմարտուիր Ղուկասի հռոմէադաւանութեան միտած ըլլալը, վասնզի երէկ պահ մը Բասենցիին գործակից եղած էր, այն առենն Բասենցին ալ հռոմէադաւանութենէ հեռու էր։ Ղուկաս Սիմէոնի հարազատ աչակերտ էր, և միչտ Մայրաթոռի մէջ ուղղամիտ հայադաւանութեան պաչտպան եղած էր, իբր ընդհատակեայ քաղմեռանդ ղեկավար (01 ԱՐՐ. 183)։

2210. Նկատառութեան արժանի կէտ մըն է, որ Ղուկաս երբ հռոմէադաւանի մը կողմէ իբր իրենց հակառակ

ՍԱՐԳԻՍ ԹԷՔԻՐՏԱՂԻ

մէտ կը ցուցուի, ուրիչ հռոմէադաւանի կողմէ իբր անգութ հալածիչ կը մեղադրուի։ Սարգիս Թէքիրտաղցին, Բասենցիէ ձեռնադրութիւն առած անոր թրիէստ գտնուած ատեն, 1782'էն ետքը. և տեսակ մը նախանձայուզութեամբ մտադրած է էջմիածնի վրայ ազդեցութիւն գործելով, հռոմէադաւանութեան ընդարձակուելուն աչխատիլ, և աչխարհականի ու հայհոռոմ եկեղեցականի կերպարաններու ներքեւ էջմիածին հասնելով կաթողիկոսին ալ ներկայացած է, յորդորելով որ կաթոլիկութիւն ընդունի և պաթած։ Հռոմէադաւան պատմողն ալ կը վկայէ, թէ կաթողիկոսն ընդդիմացաւ և այս խալեփէրը անդրադարձի հալածիչ, միայն Սարգիսի անձին խնայելով խրատով ղրկել և երթալ։ Այլաչափն ալ բաւական էր հաւատալու թէ Ղուկաս ոչ մի միտում ունեցած չէ հռոմէական կողմը։ Ուրիչ պատմական աղաւաղում ալ գործուած է գրելով, թէ Ղուկասի վրայ եղած հռոմէականութեան կասկածը պատճառ եղած էր, որ կաթողիկոսը ընդունելուն առաջին պարբերը վրայ վրայ ճանչնալ (ԳԱԼ. 290)։ Վասնզի մինչ արդէն տեսանք, թէ էջմիածնի մէջ երբեք չընդունելու նչան չտուեցաւ (§ 2153), և թէ բոլոր հակառակութիւնը Զաքարիայի անձնական վիրաւորանքէն յառաջ եկած էր (§ 2151)։ Սարգիսին հետ ունեցած վարմունքին դառնալով, Ղուկաս զայն եպիսկոպոսաց ատեանին առջեւ կը հանէ։ Սարգիս կը ծեծուի, կը խոչտանգուի և կը փակուի, և վերջէն չղթայակապ մութ բանտ կը նետուի։ Թէպէտ 20 օր ետքը կը փախչի, բայց նորէն կը ձերբակալուի, և չղթայակապ կը բանտարկուի, իսկ հիւանդանալուն պատճառով առանձին խուց կը փոխադրուի։ Այդ բանտերը կը կատարուին 1788'է 1790 տարիներու միջոցին (ԳԱԼ. 291), որով Սարգիսի էջմիածին գալը 1787'ին վերջերը յարմար կ'ըլլայ նչանակել, երբ Արցախի չարժումին և Իբրայիմի հարստահարութիւններուն պատճառով (§ 2196), վտանգաւոր կը նկատուէին արտաքին յարաբերութեանց կասկածները։ Իսկ Սարգիս էջմիածնէն Սեւան կը փոխադրուի, և այդ աքսորին մէջ 3 տարի և 3 ամիս կը մնայ, և արտաքին միջնորդութեանց չնորհիւ նորէն էջմիածին կը բերուի, և թեթեւ բանտարկութեամբ տարի մը եւս կը մնայ, մինչեւ որ կը յաջողի փախչիլ, և տարի մը աստանդական քաւփառումներէ ետքը Կ-Պոլիս կը գտնուի, 1796 մայիս 13'ին (ԳԱԼ. 293)։ Փախուստը 1795'ին դնելով, Սարգիսի էջմիածնի կողմերը մնալը պէտք կ'ըլլայ իբր 7 տարի ըսել, և ոչ շատ էքր հինգ (ՓԱՓ. 936)։ Թէքիրտաղցի Սարգիսին քաչած նեղութիւնները, որոնք Ղուկասը հալածիչ ցուցնելու համար կը պատմուին, գոնէ հռոմէադաւանութեան հակամէտ չըլլալուն հաւաստիք մը կը դառնան։ Պատմութիւնը ներքին ազբիւրներէ քաղուած չըլլալուն, չենք կրնար Սարգիսի ընթացքին վրայ աւելի մանրամասնութիւններ տալ, և թէ ինչ անտեղի արարքներ իր վրայ հրաւիրեցին կաթողիկոսական և եպիսկոպոսական ատեանին խստութիւնները։ Ամէն առթի մէջ հռոմէականները, որք լատինական հաւատաքննութեան վտանգաւորներն են, չպիտի կարենան մեղադրել Հայ եկեղեցւոյ դաւանութեան և իշխանութեան դէմ եղողներուն մասին գործածուած խստութիւնները։

2211. Ղուկասի դաւանական հաստատամտութիւնը իբր անգութ հալածողութիւն ցուցնելու համար յառաջ կը բերուի, Ախլցխացի Սահակ քահանայի դէպքն ալ։ Սահակ իւր հայրենական հայադաւան եկե-

ղեցւոյն հաւատարիմ անձ մը եղած է սկիզբէն, Անկոթ Մարտիրոս եպիսկոպոսի աչակերտած, և անոր Ախալցխայի մէջ վարած պաշտօնին գործակցած (§ 2097), 1776'ին Ախալցխայի քահանայ ձեռնադրուած, միշտ կաթոլիկներուն դիմադրած, կաթոլիկոսէ նուիրակ ղրկուած, և իւր ուղղութեան համար Զաքարիա պատրիարքէ ալ սիրով ընդունուած: Սահակ 1785'ին առնուելու առաջին անգամ Կ-Պոլսոյ մէջ կաթոլիկներու հետ չփուռ կ'ունենայ, և իբր թէ Ներսէս կաթոլիկ կ'ըլլայ· բայց 1791'ի գատկէն ետքը, որ ապրիլ 13'ին կը հանդիպէր, Ախալցխայի մէջ օր մը պատարագի մէջ կաթողիկոսէ առաջ Հռոմի պապին անունը կը յիշէ (ԳԱԼ· 295), և անկէ կը ծագի Ախալցխայի մէջ կրօնական յուզում մը, ուր կանուխէն ալ կաթոլիկութեան սերմեր կը սնային (§ 2097): Կաթողիկոսը անյապաղ ֆոռլով կը գրէ Ներսէս Հոճէ Բաբ- վաճառականին (ԴԻՒ· Դ· 554), և նա ալ կուսակալին ձեռքով ղղեակոպ էջմիածին կը ղրկէ ըմբռնած քահանան (ԳԱԼ· 295): Թերեւս Սահակի բան մը չըսուէր, եթէ գատուէր և կաթոլիկ եկեղեցւոյ երթար, բայց Հայ եկեղեցւոյն մէջ իւր կաթողիկոսը նախատել, և օտար հայրապետի անունը տալ, կանոնազանց ըմբռնութիւն էր: Ապրովհետեւ պոռմէ վերէն՝ անհաճոյքի գտնուած էր որեւէ եկեղեցւոյ հերոս ողղեա պահանջել և կրճկել, մոռնեցաւ պահպանել և պոռթոց, լռած է կորչել, և խայտառակել եղաւ (ԴԻՒ· Դ· 555): Ուրիշներ կ'աւելցնեն, թէ թշնամանքներով սքեմը հանեցին, մօրուքը ածիլեցին, երեսը սեւցուցին, և իչու վրայ նստեցնելով ձաղանքի ենթարկեցին (ԳԱԼ· 295), որոնք ժամանակին սովորական գործածուած պատիժներն էին, և կրնան խայտառակել բացատրութեան իբր մանրամասնութիւններ առնուիլ: Անոր վրայ խիստ բանտի ալ կ'ենթարկուի, բայց միւս տարին, 1792'ին, Ախալցխայի կուսակալին զայն խնդրելուն պատճառով, կաթողիկոսը զայն դանակոծել և գլուխը գերծել տալէ ետքը, տաճկական զգեստ հագցնելով յանձնել կու տայ (ԳԱԼ· 296), Տաճիկներէ գտած պաշտպանութեան ակնարկելով: Սահակ՝ Ախլցխա էրեմէ ծոթեցած ատեն կը մեռնի, ընտանեօքովծէ նշանէրով (ԳԱԼ· 296): Արդ եթէ այս պարագան ստոյգ է, քանի որ Սահակ արդէն իթենեբուն յանձնուած էր, և չատ օրերէ իվեր էջմիածինէ հեռացած էր, զինքը տանողներ կամ Ախլցխայէ զինքը դիմաւորողներ պէտք է պատասխանատու սեպուին: Սահակ քահանային դիպուածը յայտնապէս Հայ եկեղեցւոյ նախատանաց և Հայոց հայրապետին դէմ ըմբոստութեան խնդիր է, և ըստ այնմ ալ պատժուած է: Նա ալ ըլ ղիբլէն ընդբելով հեռացա է ուրբ եկեղեցոյ մերմէ, այլ ցանկանալով հեղգոնեան լոյն կենաց՝ ախտաւորեցաւ, ընդեր էրէրը ղազղընեան գառանընեան և լրջնէց արբոյ եկեղեցոյն մերոյ, կը գրէ Ղուկաս կաթողիկոս (ԴԻՒ· Դ· 555), ակնարկելով Սահակի առաջին գործունէութեան և ուղղութեան:

ՂՈՒԿԱՍԻ ԸՄԲՌՆՈՒՄԸ

2212. Ղուկաս կաթողիկոսի մասին՝ Փափազեանի կեղծմտօրէն և Մուրատեանի միամտօրէն յարուցած կասկածը խափան փարատելու համար, աւելորդ չենք սեպեր, անոր յայտարարութիւնները քանի մը տողեր յառաջ բերել, քաղելով իւր գրած նամակներէն: Ըստ այսմ 1870 նոյեմբեր 1'ին Ափխազաց Մաքսիմոս կաթողիկոսին դրելով չնորհակալութիւն կը յայտնէ, որ հոգէ այրէ զոռ մըլոր ազիաբմայէց ոռռ կրէռռորց, և եզէ զկանան զոռռվճռականռ, ա՛յլ ալ ընդալ նոցա տռանել է կալռռած յեր (ԴԻՒ· Դ· 55): Ռուսիա գաղթած Հայերուն ուղղած և 1781 դեկտեմբերին գրած չրջաբերականով, երբ կը հրամայէ առանց հայրապետական կոնդակի ներկայացող էպիսկոպոսներէն և եկեղեցականներէն զգուշանալ, յատկապէս կը յիշէ անոնք, զորս ձեռնադրած ին՝ է զէռաքնակ անռռան լէքանանռռ ազիաբմայ ռռռռ կռնոզկէռռ կոչուածները, որոնք խռռզբալ են է յազանդն ազիաբմայռնեան, և զմլալ ազանդն էրբեանց սերմանէն (ԴԻՒ· Դ· 296): Նոյնպէս 1782'ին Բերբիացիներու ուղղած օրինութեան կոնդակով կը պատուիրէ կալ ուրէ ընդգբեմ ազ ընբմայէց, և զէռազանալ է նոցէն խմբոյ, և կալ ռռզէլ է հառռռ (ԴԻՒ· Դ·329): Նոյն միտքով գոհունակութիւն կը յայտնէ 1782 մա-

յիս 20'ին, վրայ Հերակլ թագաւորին, որ վերջինիդիր լինելով ճշմարտութեան, և ջանալով հերքել զանգն պղծմայութեան, հրամայած է ի յեկեղեցոյն վերթել քեռեկոթելն, որպէս զի խոստրելն է մելիկան ազանգն այն՝ ուղղութեան բերուին (ԴԻՒ. Փ. 383)։ Այդ քանի մը տողեր բաւական ըլլան հաստատել Ղուկասի բմբռնութիւնները հռոմէադաւանութեան մասին, և թէ որչափ հեռի էր նա հռոմէադաւանութեան հակամէտ ըլլալէ։

ԱՊԱՇՆՈՐՀ ՄԸ ՁԷՐ

2213. Ղուկասին վրայ անդադար խօսողներ կան նաև անկախաբար հռոմէականութենէն անոանկէտէն, և այսպէսներուն արձագանգ եղած է Մաղր Մաղրեան, գիրքի առնելով ինչ որ լսած է, կ'ըսէ, ի հինաւուրց ժամանակաց և յաթանաւոյ ձեռնադիր (ՄՍՐ. 12)։ Բայց քանի մեր օրերուն կը մօտենանք, այդ տեսակ զրոյցներ կամ գնահատութիւններ երթալով կը բազմապատկուին, և կը տեսնուի թէ անձնական տեսակէտներ տակաւին ջնջուած չեն։ Հետեւաբար դժուար և դժպհի կ'ըլլայ ժամանակակից և գրեթէ ժամանակակից անձերու վրայ համարձակօրէն խօսիլ։ Առաջ մէկտեղ մենք պատասխանութիւն կը տեսնենք դժուարութենէ չխուսափիլ, և մեր ստանձնած պատմագիրի պարտքը անաչառութեամբ կատարել։ Այդ նպատակով հարկ կ'ըլլայ ոչ այնչափ խօսողներուն կամ գրողներուն հինաւուրց կամ արձանահատակ լինելուն վրայ հիմնուիլ, որչափ իրողութիւնները կշռել իրենց իսկութեան մէջ, և կշռադատութեան դնել զուգընթաց պարագայից հետ։ Մաղրեանի յառաջ բերած մեղադրանքներուն առաջինն է ոչ ընդհանրութեան եւ երեխաւորս, և իբր հաստատութիւն կը յիշուի թէ Սահակ և Մկրտիչ եպիսկոպոսներուն հետ հաղորդութեամբ է վարուեր, որով ասոնք պարտաւորուելի են ֆոխել զբաղմունքեան իրենց ի վհատանէ ի դէպ ընդունողութեան, որ հաստատուն դիտուն էին քնարերգ (ՄՍՐ. 10)։ Բայց եթէ այս միայն է Ղուկասի ապաշնորհութեան փաստը, մենք համարձակօրէն պիտի եզրակացնենք, թէ յիշեալ երկու եպիսկոպոսներ, Մկրտիչ և Սահակ, որոնք Մաղրեանի պատմութեամբ գլխաւոր դերը վարած էին Ղուկասի բնատրութիւնը յաջողցնելու մէջ (§ 2149), յատկանութիւն ունեցած են առանձնաչնորհակալ դիրք մը վայելել ուրիշ միաբաններուն վրայ, նոյն իսկ հայրապետական վեհարանի մէջ բնակութիւն հաստատելով, ինչ որ Ղուկաս ուզած չէ ներթել, և անոնց պահանջը գոհացրնել։ Այս տեսութեամբ Ղուկաս աւելի յարգելի պէտք է նկատուի, եթէ առանձնաշնորհութեան պահանջողներուն դիմադրելու աղջմտութիւնը ունեցաւ։ Թող որ մենք արդէն անսանք թէ Սահակ Փառակեցին երբեք Ղուկասի պաշտպան եղած չէ (§ 2149), և միայն գործին վերջանալէն ետքը իրեն արժանիք սեփականելու ձգտումներ ունեցած է։ Սա նոյն այն Սահակն է, որ Զաքարիան ալ ապատակելու յանդգնեցաւ (§ 2186)։

ԱՐԾԱԹԱՍԷՐ ՄԸ ՁԷՐ

2214. Աւելի ծանր մեղադրանք մըն ալ կը յիշէ Մաղրեան, որ է սխալական արձանագրութիւն հանդերձ խլրտոցութեամբ։ Ասոր ալ իբր հաստատութիւն յառաջ կը բերէ, թէ ընդ եղեռն դիւրութեամբ զանձամբ խնդրոյ և արձանագրեալ, և մինչեւ ընդդէմ և ինձ պատասխանոյ (ՄՍՐ. 10)։ Թէ կարդագոյն միաբաններ սահմաներ նոյնպես, սահմանադրութեամբ և խորհրդութեամբ, որպէսզի լինի հանգիստ ընդհանրութեան։ Ասոնք թէպէտ հանդգնաբար ընդունուին, բայց և ընդհանուր և ընդհանուր ընդհանրութեան մեծացուցանել, և թէ ուրիշ միաբաններ ալ ծիծաղ եղեն ի՞նչ ընդունին, փոխանակ է դէպ սահմանական ընդդէմ և հանդիսաւոր վճռական վճռելոյ։ Վերջապէս ամբաստանութեան նիւթ կ'ընէ նաեւ, թէ աթոռոյ մեծամասն ընդհանուր լիութեամբ թողուց (ՄՍՐ. 11), զոր ուրիշներ հարիւր հազար թուման կը հաշուեն պատրաստ դրամ (75 ԱՐՐ. 93)։ Այդ կէտին մէջ ալ, պէտք է դիտել տանք, որ արծաթասիրութեան և չահասիրութեան մեղադրանքը կ'արդարանար, եթէ Ղուկաս հաւաքածներ ապարդիւն պահէր, կամ թէ անոնցմով յղփանար և կիրքերու կամ հաճոյքներու ծառայեցնէր։ Արդ այսպիսի ակնարկ մը չենք գտներ նոյնիսկ ամբաստանողներու մօտ. այլ ընդհակառակն կը տեսնենք որ բոլոր գումարները օգտակար չինութեանց և նորոգութեանց գործածուած են (§ 2205), և գլխաւորապէս Մայրաքաղաքին պահպանութեան և չքեղու-

թեան (§ 2207)։ Կ'երեւի թէ Ղուկասի դէմ ժժգոհութեան պատճառը՝ աթոռին հաստատները անաչխատ վայելելու զակատուած միաբանները յուսախաբ թողուլն եղած է։ Մենք կը պնդենք եւս թէ կաթողագոյն միաբանները նուիրակութեան յղելը՝ իմաստուն կարգադրութիւն եղած է, որ գացած տեղերնին ժողովուրդին հովուութեան ալ հոգ տանին, և ոչ թէ ապիկար հարկահաններ ըլլան, և ոչ ալ ժողովուրդէն մարմնաւորը կթեն՝ առանց հոգեւորը ընձեռելու։ Այդ կարգին յիշենք թէ իրօք արդիւնաւոր նուիրակներ եղան, Սահակ Փառակեցին և Մեսրոպ եպիսկոպոսները ի Կ-Պոլիս, Գրիգոր Օչականցին ի Կարին, Պետրոս Փերթումեան կամ Աղամալեան յԵդեսիա, Եփրեմ Զորագեղցին ի Հնդկաստան և Ռուսաստան (ՄՍՐ. 9), Դանիէլ Սուրմառեցին ի Ռումելի, (§ 2189), Գալուստ Զուղայեցին ի Նիկոմիդիա (ՄՍՐ. 19) և ուրիշներ ալ ուրիշ շրջանակներու մէջ։ Իսկ պատրաստ թողած գումարին՝ ապագային մէջ ազգով ազգաց ծառայած ըլլալը (ՄՍՐ. 13), չկրնար Ղուկասի վրայ մեղադրանք բերել, որ չէր կրնար նախատեսել՝ իր մահուանէ ետքը յաջորդութեան պատճառով յուզուած անտեղի և վնասաբեր վէճերը։ Ընդհանրապէս Ղուկասի վրայ կը փայլի մտաւորական անձի մը նկարագիրը, գանձելու մէջ յաջողակ և ծախսելու մէջ խոհական. որ եթէ մէկ կողմէն իր բնական ձգտումներուն և ձիրքերուն հետեւանքն էր, միւս կողմէն ժամանակին անհրաժեշտ պահանջն ալ էր. զի եթէ այն աղետալի արկածներուն և տագնապներուն մէջ, զորս պատմեցինք, անտրնտեսագէտ, և լոկ գիրի ու գիրքի հետամուտ կաթողիկոս մը գտնուէր, գուցէ Մայրաթաղն ալ կործանած, Մայրաթոռն ալ քանդուած և հայրապետութիւնն ալ վտանգուած ըլլար։

2215. Ղուկաս կը մեղադրուի նաեւ, որ իր օրով դադրեցան Սիմէոնի հիմնած տպարանը, և թուղթի գործարանը (ՄՍՐ. 11)։ Բայց մեղադրանքը կ'արդարտնար եթէ Ղուկաս ինքն վնասած կամ ինքն քանդած ըլլար այդ հաստատութիւնները։ Ընդհակառակն կը տեսնենք որ մինչեւ 1791, Ղուկասի խնամքով զանազան հրատարակութիւններ լոյս տեսած են Էջմիածնի տպարանէն (ԴԻՒ. Տ. 36), և միայն նոյն թուականէ ետքը դադրած են, երբոր Նոյի և Երեւանի բռնապետներուն միջեւ տեղի ունեցած պատերազմներուն պատճառով, Էջմիածին իրբեւ բերդ գործածուեցաւ, և զանազան մասեր սպրուեցան և քանդուեցան (§ 2199)։ Իսկ հետզհետէ տեղի ունեցած պայքարներ անհնար դարձուցին վերականգնել և արդիւնաւորել նոյն հաստատութիւնները, որոնք տեղական միջոցներով չէին կրնար կենդանանալ, և պէտք էր ամենայն ինչ դուրսէն հոգալ, իսկ դուրսի յարաբերութիւններ խափանուած էին իսպառ։ Բայց ինչ որ Էջմիածնի մէջ անհնար էր ընել, ուրիշ տեղ կազմակերպելու ջանքը չպակսեցաւ Ղուկասի վրայ, և իր քաջալերութիւնները իրենց արդիւնքն ունեցան Աղուէնեանի տպարանական հաստատութիւններով Նոր Նախիջեւանի և Աստրախանի մէջ, և Շիրազեցիին կամ Շմաւոնեանին տպարանով Մատրասի մէջ։ Մինչեւ իսկ Ղուկասի կը վերագրուի Շմաւոնեան Ցարութիւն քահանան յորդորած ըլլալը՝ Մատրասի մէջ հրատարակելու Ագաթօր ամսագիրը (ԴԻՒ. Գ. 32), որ 1794 յուլիսին սկսած և Հայ պարբերականներու անդրանիկն է։ Աւելի չենք ուզեր երկարել այդ կէտերու վրայ, զի նպատակիս Ղուկասի կատարածը գրել չէ, այլ իրբեւ անաչառ պատմագիր, եղելութիւնները իրենց իսկական նկարագիրին ներքեւ ներկայել։ Այստեղ յիշատակենք մասնաւոր դէպք մըն ալ, որ իր պարզութեան և առերեւոյթ փոքրկութեան մէջ ալ՝ լայնախոհ միտքի նշան կը դառնայ։ Երբոր Մահմատ Թագաւորեց, և Հղբայրը Ալիղուլի Երեւանի մէջ բռնացաւ (§ 2202), այս վերջինը ուզեց իր հաճոյքին համար Հայ աղջիկներ ժողվել տալ Երեւանի իշխանութեան սահմաններէն, բացատրութիւն ընելով արդէն ամուսնացեալներուն։ Հազիւ թէ այդ բանը լսուեցաւ, Ղուկաս հրամայեց որ Երեւանի և չրջակայից մէջ գտնուող, և յաղթեցնել և ի վեր եղող աղջիկները իսկոյն ամուսնացնեն, չնայելով որ կը գտնուէին յաւարտ պատ-

ՈՒՍՈՒՄՆԱՏԵԱՑ ՄԸ ՁԷՐ

ցէց, յոր արթնէլ են հոքանէ ըստ եկեղեցական կանանց (ՄՍՐ. 9)։ Ժամանակագրական հաշուով եղելութիւնը պէտք է դնել 1797 Մեծապահքին, որ տարին Բուն բարեկենդանը կ'իյնար փետրուար 15'ին։

ԽՈՐՀՐԴԱԿԱՆԱՑ ԺՈՂՈՎ

2216։ Երբոր Ղուկասի ընտրութիւնը ընդունելու խնդիրը Կ-Պոլսոյ մէջ կը յուզուէր, Տաճկահայոց կողմէ Մայր աթոռին առաջարկուած պայմաններէն մէկն էր, աթոռին մատակարարութեան համար կացուցանել վարդապետական (§ 2151)։ Իսկ Մայրաթոռոյ միաբանութիւնը դիտել տուած էր, թէ նոր օրէնք չէր կրնար դրուիլ առանց կաթողիկոսի, և թէ այդ կէտն ալ կրնար կարգադրուիլ Ղուկասի կաթողիկոսութիւնը ընդունելէն և հաստատուելէն ետքը (§ 2153)։ Այսպիսին ալ լռելեայն յանձնառութիւն մըն էր առաջարկուած պայմանը ժամանակին գործադրելու։ Ղուկասի մասին գտնուած յիշատակարաններ և իւր պաշտօնագիրներ՝ յայտնի չեն խօսիր, թէ ինչ որոշումի տրուեցաւ այդ մասին Ղուկասի կաթողիկոսութիւնը ընդունելէն և հաստատուելէն ետքը, որ տեղի ունեցաւ 1781'ին, Զաքարիայի պատրիարքութենէ դադարած միջոցին (§ 2158)։ Բայց գործին մոռցուած և բարձիթողի եղած չըլլալուն վկայութիւնը կ'ունենանք Ներսէս Ե Աչտարակեցի կաթողիկոսին գրուածներուն մէջ, որ կը հաւաստէ թէ 1783'ին, կոնդակոն և ամենայն արթեպիսկոպոս էջմիածնէ, պաթրիարքն և ամենայն հոգեւորական և քաղաքական Կոստանդնուպոլսոյ, հաստատել սրբազնագոյն ճաքոնոսին էջմիածնէ, արթեպիսկոպոս կամ եպիսկոպոս, չեցեն պակս ոտն զմէց (ՄՍՐ. 10)։ Աղանեան Գիւտ քահանան, Դիւան հաւաքածոյին հրատարակիչը, թերահաւատութեամբ կը վերաբերուի այդ վկայութեան վրայ, իր հաւաքածոյին մէջ այդ մասին «ինչ չէ՞ պոլսեցիներ չգտնելով (ԴիԻ. Բ. 201), սակայն մենք այլապէս պիտի վերաբերուինք։ Եթէ կանոնական ծրագիրով և գրաւոր հրահանգով կազմուած սինոդական մարմինի մը վրայ խօսուէր, կրնար իրաւունք սրբուիլ Աղանեանի։ Բայց խնդիրը պարզապէս կաթողիկոսին միանձնեան և աղիկամի մատակարարութիւնը դադարեցնելու և խորհրդակցութեամբ գործելու վրայ սահմանուած առնն, չատ յաւ կ'արդարանայ Աչտարակեցիին վկայութիւնը։ Այդ պայմանը կանոնախէն Զաքարիայի կողմէն առաջարկուած էր, բայց Ղուկասի ընդունելութիւնը կատարուեցաւ Համատանցիին օրով, երբ այն առնն նախկին պայմաններուն վրայ որոշակի միտք չէր դարձուած։ Բայց երբ Զաքարիա պատրիարքութեան դառնալով լրացնել գործի մը դիմաց գտնուեցաւ, անհնար էր որ գտնէ իւր նախապէս առաջարկած պայմաններուն վրայ չպնդէր, և Ղուկաս ալ անոնց չհամաձայնէր։ Ուստի անչուշտ վեց խորհրդականներու անուանումը կատարուած է Ղուկասի կողմէ, և այս ալ յստակ կերպով կը ճշդուի 1783 թուականով և գործադրութեան ձեւովը։ Զի ոչ միայն կոնդակոն և արթեպիսկոպոս էջմիածնէ եղան, որ հաստատել սրբազնագոյն, այլեւ պաթրիարքն և հոգեւորական և քաղաքական Կոստանդնուպոլսոյ. ուր յայտնապէս կը տեսնուի Զաքարիայի պնդելը և Ղուկասի համակերպիլը։ Հետեւապէս պէտք է Ղուկասի օրով դնել Մայրաթոռի խորհրդակցական կառավարութեան սկիզբը, բայց դէտ խորհրդականաբնեան նախնական և գրեթէ անկերպարան ձեւին մէջ, որ կատարեալ քաղ եղաւ Դանիէլ Սուրմառեցիի օրով 1808'ին, և օրինական Այնոթ հաստատուեցաւ Ծովհաննէս Կարբեցիի օրով 1836'ին։

ԱՂՈՒԱՆԻՑ ԱՔՈՌ

2217. Աղուանից կաթողիկոսական աթոռը չփոթ և անիշխանական կացութիւնն մէջ թողուցինք Ծովհաննէս Հասան-Ջալալեանի սպանութենէն ետքը (§ 2196)։ Իսրայէլ օրինաւոր կաթողիկոս չէր ճանչցուեր, բայց Ծովհաննէսի օրինաւոր յաջորդ մըն ալ չէր օծուած. Սարգիս ալ ազատած դոյքերով աստեանդամուր տեղեր թափառական կը չրջէր 1786'է մինչև 1792։ Վրաց թագաւորներ կ'ուզէին պաշտպան կանգնել Աղուանից աթոռին, բայց Հայոց աթոռին դէմ բռնութիւնն ալ չէին համարձակիր պաշտպանել։ Ուստի աւելի անձնական հովանաւորութիւն մը կը կատարէին ինքնակոչներու վրայ։ Այս կերպով Իսրայէլի ետք անդրէա-

ընթաց և ըմբռնողական լուսաւորութեան առնչահաւել, Գէորգի արքայորդին նստեցուցած էր զնա, իբր սրտեպիսկոպոս և առաջնորդ Հաղբատայ վանից, և Ղուկաս ալ հաւանութիւն յայտնած էր 1783'ին նամակովը (ԴԻԻ. Դ. 504), թէպէտ Իսրայէլ՝ կաթողիկոս կոչումը կը պահէր։ Իսկ Սարգիս, ուզելով յաջորդելու թեկնածու, Գանձակի Ջաւատ խանի պաշտպանութիւնը չհնչելով, 1792 դեկտեմբեր 8'ին Գանձասարի մէջ կաթողիկոս հռչակուեցաւ և օծուեցաւ, Իսրայէլին հակառակ։ Սարգիս Ղուկասի ալ դիմաց, 1795 հոկտեմբեր 22'ին աղերսարկու նամակով մը (ԴԻԻ. Դ. 648), բայց Ղուկաս չուզեց ճանչնալ ինքնընծայ կաթողիկոս, և դեկտեմբեր 15'ին պատասխանեց, թէ այնպէս նորայեւ չէ բան սրսրել, որ չգոց մէջ փեղէ խօսել (ԴԻԻ. Դ. 649)։ Այսուհանդերձ երկու ինքնակոչներն ալ կը կարծէին իրենց միտքը յաջողցնել, բայց Սարգիս տեսնելով որ ոչ Ջաւատ խանէ և ոչ մելիքներէ սպասած օգնութիւնը չգտներ, իւր Դանիէլ եղբօրը որդւոյն՝ Բաղդասար աբեղային հետ Տփղիս անցաւ 1796ին, Հերակլի պաշտպանութեամբ զօրանալու յուսով։ Բայց Հերակլ մեռաւ այն օրեր, և Գէորգի միջամտեց Ղուկասի մօտ, բայց ընդդիմութեան հանդիպեցաւ՝ Սարգիսի ինքնագլուխ կաթողիկոսացած ըլլալուն պատճառով։ Գէորգի այն առեն, մէկ կողմէն խաղաղութիւնը հաստատելու ձեւեր առաւ էջմիածինի նուիրակները իւր սահմաններուն մէջ արգիլել սպառնալով (ՄՈՎ. 319), միւս կողմէն Սարգիսը խոնարհեցուց ղանդա կաթողիկոսութեան և գլխովին ինքզինքը խափանել, և Ղուկաս հաւանեցաւ, որ Սարգիս եպիսկոպոսական պատուով լինի առաջնորդ Հաղբատայ տէրտէր վանից երկրին, և այս պայմանով ճանապայ դրաւ Սարգիսը, որ մինչեւ էջմիածին հասած էր. և ըստ այնմ ալ գրեց Գէորգիի 1797 օգոստոսին (ԴԻԻ. Դ. 678)։ Նոյն թղթով կը խնդրէր, որ այլևս էջմիածին դարձնէ Ս. Գևղարդը, որ Տփղիս ղրկուած էր ժանտահարի առթիւ, Ակնեցի Յովհաննէս վարդապետին հետ (§ 2203), և զոր վրաց արքունի մօտը կը պահէր իբր պատանդ կամ գրաւական, էջմիածինի վրայ ազդելու համար։ Գէորգի այս անգամ ալ Ս. Գևղարդը չդարձուց, և Ղուկաս ալ նորէն պնդելու և պահանջելու առեն ալ չունեցաւ, զի չատ չուշացաւ իւր մահը, որ ինչպէս գրեցինք տեղի ունեցաւ 1799 դեկտեմբեր 28'ին (§ 2204)։ Հոս կը փակենք Ղուկասի կաթողիկոսութեան չրջանը, որ իրաւամբ դեղչոպոկ հայրապետ կոչումով կը պատուուի կաթողիկոսաց չարքին մէջ (ԴԻԻ. Դ. 684)։

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԸՆՏՐԵԼԻՆԵՐ

2218. Մայրաթոռոյ միաբանութիւնը չտապեց յաջորդի ընտրութեամբ զբաղիլ, և նոյն իսկ Ղուկասի թաղման օրը, 1799 դեկտեմբեր 29'ին, ժողովի գումարուեցաւ, որ զանազան կողմերէ յաջորդութեան ցուցուածներէն յարմարագոյնը նշանակէ։ Մէկէ աւելի էին աչքի ինկողները, ըլլան միաբանութեան գնահատումով, ըլլան իրենց հետամուտ թեկնածութեամբ։ Նախևառաջ Մինաս եպիսկոպոսի խօսքը կ'ըլլար, բայց պարզապէս քաղաքավարական ձեւակերպութեամբ մը, իբր զի տեղապահ կը գտնուէր. բայց կաթողիկոս ըլլալն ալ անհնար էր, զի աչքի տեսութիւնը կորուսած էր (ՄՍՐ. 14)։ Իբր ամէնէն աւելի արժանաւոր և յարմարաւոր կը ներկայանար Դանիէլ Սուբմառեցին, որ վերջերը Կ-Պոլսոյ պատրիարք ընտրուած էր (§ 2189), և ամէնուն կողմէ յարգանք կը վայելէր։ Բայց անոր համար ալ կը կասկածէին թէ Կ-Պոլսոյ մեծամեծներ արգելք գնեն, չուզելով նորէն պատրիարքական տագնապի մատնուիլ, նոր պատրիարքցու գտնելու դժուարութեամբ (63 ԿՈՆ. 744)։ Այդ մտածումով իբրեւ աւելի յարմարաւոր եփրեմ Զորագեղցիին անունը կը տրուի, որ երբեմն Հնդկաստանի մէջ արդիւնաւոր նուիրակութիւն կատարած, և վերջերս 1799 փետրուար 12'ին Ռուսաստանի նուիրակութեան ղրկուած էր (ԴԻԻ. Թ. 265), և կարող էր կաթողիկոսական աթոռին մատակարարութիւնը վարել (63 ԿՈՆ. 744)։ Եփրեմի համար ալ դիտողութիւն ընող եղաւ, թէ ընդհանրապէս չէ հանել է յեռաց առեւծան (ՄՍՐ. 15), որով կ'իմանային Ռուսաստանի մէջ տիրապետող Արղութեանը, որ հարկաւ արգելք պիտի հանէր, իրեն ուզելով պահել աթոռը, և թերեւս աւելի յարմար կ'ըլլար զայն առաջ անցընել։ Բայց անոր մասին

ալ դիտողութիւն կ'ընէ Մինաս եպիսկոպոս, քեր-ել ի ձէ ղընաղան բանաոր պոփոս (ԴԻՒ. Բ. 46)։ Իսկ այս պատճառներն էին Յովսէփի Ռուսաց կառավարութեան գործիք նկատուիլը, և Ռուսաց բանակին հետ Պարսից և Օսմանցւոց դէմ պատերազմի մէջ գտնուած ըլլալը (ԴԻՒ. Դ. 687), մինչ ընտրութիւնը հաստատողներ Պարսիկ և Օսմանեան կառավարութիւնները պիտի ըլլային։ Այդ մտածմունքով ընտրելի առաջարկուեցաւ կեսարիոյ առաջնորդ Ստեփանոս Անաստասեցի եպիսկոպոսը, բայց անոր ալ հեռաոր և Մայրաթոռէ դուրս ըլլալը դիտողութեան տեղի տուաւ։ Իբր ոչ մի բանով պակս էն չչէշտակել եղիկոպոսանոր յիշուեցաւ նաեւ Դաւիթ Էնէգէթցի եպիսկոպոսը, Ղորղանեան ազգատոհմէն, որ աթոռակալ ալ էր (ՄՍՐ. 15), այսինքն է աթոռին տնտեսական կամ եկեմտական վարիչը (ՄՈՎ. 325)։ Դաւիթի անունին դէմ ալ դիտողութիւն ընողներ եղան, որոց դէմ սկսաւ գրգռուիլ Դաւիթ՝ որ ներկայ էր, և այդ առաջին ժողովը ցրուեցաւ ոչինչ և փոքոյնոընեմբ (ՄՍՐ. 15), չատ մը անուններ տալով, բայց որոշման չկրնալով յանգիլ։

2219. Միւս օրը դեկտեմբեր 30, և ոչ դեկտեմբեր 28 (ՄՍՐ. 15), նորէն կը գումարուին ի պոճաէն, և վերջապէս համաձայնութիւն կը գոյացնեն Դանիէլի և Եփրեմի անուններուն վրայ, առաջնութիւնը Դանիէլի տալով, և Եփրեմին ալ աւելցնելով՝ կ-Պոլսոյ մնծամնծներուն Դանիէլէ բաժնուիլ չուզելը ևնթադրելով։ Ըստ այսմ պաշտօնական գիրը կը պատրաստեն միաբանութեան անունով, որուն մէջ երկու ընտրելիներու անուններուն առնէզթ ծոլնւ և էնվէցիկ նկոբէ գրուած էին։ Գիրը կը ստորագրեն նաեւ Եքեան եղէ ժելէ և էղբեզիկ։ Երեւանի իշխող Մահմատ խանէն ալ յատուկ գիրեր կ'առնեն առքեալն Դանիէլ, և առ պէրոնէն Օսմանցոց (63 ԿԻՆ. 744)։ Միաբանութեան պաշտօնական գիրը կը կազմուի 1800 յունուար 2 թուականով, և պէտք եղած պատրաստութիւններով կ'անցնեն Մունդին տօնական օրերը։ Գիրերը կ-Պոլիս տանելու պատգամաւորի ընտրութիւնը մտածած ատենին, Դաւիթի ամէն միջոցներով կ'աշխատի որ ինքն իլլայ պատգամաւորը, և կը յաջողի ալ միջնորդութեամբ իւր Բարսեղ եղբօր, և ազդեցութեամբ անոր անեղոջ մելիք Աբրահամ Աղամալեանի, և էջմիածին կը մեկնի 1800 յունուար 16'ին (ԴԻՒ. Դ. 687), երկուշաբթի օր։ Միաբանութիւնը կը կարծէր գժուարին կացութեան մէջէն եղած, և մանաւանդ Յովսէփ Արղութեանի անունէն ծագելիք վտանգէն ազատուած ըլլալ, համոզուած ըլլալով թէ անոր պատճառով Հայ ժողովուրդը պէտք պէտ-ընէն վրէժխնդիր ըմ պիտի լինէր (ՄՈՎ. 324)։ Բայց ուրախութիւնները չատ կարճ եղաւ։ Աղանեան իւր ամփոփումին մէջ կը յիշէ, թէ Դաւիթ՝ Դանիէլի և Եփրեմի համար պաշտօնական գիրէն զատ (ԴԻՒ. Ե. 3), վկայական գիր մըն ալ ունէր ձոցօմ, որով միաբանութիւնը յաբմաթոյն ընտրելէ կը ցուցնէր Դաւիթը (ԴԻՒ. Է. ԺԲ)։ Բայց ոչ միայն վաւերական ալբիւրը ցուցուած չէ, այլեւ միաբանութեան համար նախատական պիտի սեպուէր այսպիսի խարդախ ընթացք մը։ Առաւաւելն կրնար քանի մը կուսակիցներու կողմէ մասնաւոր պրութիւն մը եղած ըլլալ։ Ցեր պէտան առ-ր յաղբչմն պատգամաւորին և պաշտօնագիրներուն (ԴԻՒ. Թ. 310), որ է ըսել յունուար 27'ին (ՄՍՐ. 17), ատիպողական գիրեր և լուրեր կը հասնէին Տփղիս, երբ Դաւիթ հազիւ թէ կարին հասած կ'ըլլար (63 ԿԻՆ. 745)։ Նա կը փութար չուտով հասնիլ կ-Պոլիս, և կ-Պոլսեցւոց կատարելիք ընտրութեան մասնակցիլ՝ երկգղի նպատակով, կամ ընտրութիւնը իւր վրայ դարձնել տալ, և կամ եթէ Դանիէլի վրայ կայանար, անոր պատրիարքութիւնը ձեռք ձգել։

2220. Էջմիածին Տփղիս չուտով հասած էր Ղուկասի մահուան գոյժը, և տեղւոյն հայաբնակութիւնն ալ և պետական չրջանակները ալ սկսած էին յաջորդի անձնաւորութեան վրայ խորհիլ, և համամտութիւն յայտնուած էր Յովսէփ Արղութեանի անունին վրայ։ Յովսէփ ծանօթ էր իրրև կարողագոյն անձնաւորութիւն մը, որ 1773'էն սկսելով (§ 2192), 27 տարիէ իվեր Ռուսաստանի առաջնորդ էր,

ՅՈՎՍԷՓԻ ՀԱՄԱՐ

ազդեցիկ դիրք կազմած էր, և Ռուսիոյ արքունեաց հետ մտերմական յարաբերութիւններ հաստատած էր։ Ոչ միայն կրնար Մայր աթոռի մէջ արդիւնաւոր պաշտօնավարութիւն ունենալ, այլեւ յարմարագոյն և գուցէ միակ միջնորդն էր, որ կրնար Ռուսական պաշտպանութեամբ Հայաստանի Հայութիւնը իւր տագնապալից վիճակէն ազատել։ Այդ գաղափարը պարզապէս ժողովուրդին կամ բարձր չրջանակներու մէջ կազմուած միտք չէր, այլ համարձակ կրնանք ըսել, թէ Ծովսէփ ինքն էր այդ նպատակը կազմողն ու մշակողը։ Ղուկասի կենդանութեան ատենէն՝ Էջմիածնի կաթողիկոսական տեղապահը գործածել սկսած էր (ՄՈՎ. 324), կաթողիկոսական աթոռին յաջորդելու միտքը բացարձակ յայտարարած էր, իւր ապագայ գործունէութեան արդիւնքներն ալ մատնանշելով, և նոյն իսկ Կ-Պոլսոյ մեծամեծներուն՝ այդ միտքը ջրաոդոզել յայտնել էր ի տանէ անթամ (ՁԱՄ. Բ. 142)։ Այնպէս որ Ղուկասի ականջն ալ հասած էր այդ ամէնը, և քանիցս կրկնած էր այն նշանաւոր խօսքը. Ինչ ինձ ձօշ այս աշխարհիս, որ տէր ինձ ձօշ, Ծովսէփ վարդապետ (ՄՈՎ. 324)։ Հետեւաբար Ծովսէփի յաջորդութեան գաղափարը՝ ծանօթ մի բան էր, և նոյն կէտը որ միաբանութիւնը զգուշաւորութեան կր յորդորէր, ուրիշները գործունէութեան կր մղէր։ Տփղիսի մէջ եղող Ծովսէփի ազգակիցներ և բարեկամներ անմիջապէս գործի սկսան, և ձեռք առին վրաց Գէորգի թագաւորն ալ (ՄՍՐ. 16), որ իրեն ալ նպաստաւոր արդիւնքներ կրնար ակնկալել Ծովսէփի դիրքէն և յարաբերութիւններէն։ Իրենց կողմ չանեցան նաեւ Տփղիսի մէջ Ռուսական զօրավար Լազարեվը (63 ԿԻՆ. 745), և դեսպան Պետր Իւանիչ կամ Պետրոս Ծովհաննէսեան կաւալիկկին (ԴԻԻ. Թ. 295)։ Գէորգի թագաւոր իրեն մօտ կանչեց Ծովհաննէս Ակնեցի եպիսկոպոսը, Գեղարդին պահապանը, որ Գեղարդակիր և կնունդանի-նահատակ մականուններով ալ յիշուած է, և որ Տփղիսի մէջ իբրեւ Մայրաթոռոյ ներկայացուցիչ կր նկատուէր։ Բայց արձակապէս հրամայեց, ըլե՛ա ա՛ռ ձեռնադիցդ ա՛ռ և ձանձ՛, չի չէ ընար այլոմ ա՛ռ լինել չեղ հայրապետ, քանզի ձոյն Ծովսէփոյ. պատճառելիքն ալ աւելցնելով վրան, ապ- րի չկրնար դարձեալ ընդդիմանալ ընդդէմ չեղբ (ՄՍՐ. 16)։ Գէորգի այս նպատակով գիր մրն ալ ուղղեց միաբանութեան, գիր մրն ալ իւր որդւոյն Դաւիթի անունով (ԴԻԻ. Թ. 297)։ Ծովհաննէս եպիսկոպոսն ալ գրեց, Տփղիսի Հայ մեծամեծներն ալ նոյն միտքով զատ գիր մր ուղղեցին Մայրաթոռոյ միաբանութեան 1800 յունուար 11 թուականով (ԴԻԻ. Թ. 293), և Ծովսէփ Մխիթարբաբայի իշխանազունը, և Տփղիսի աւագերէցներէն Մտեփան (ԴԻԻ. Թ. 294) կամ Առաքել (ԴԻԻ. Թ. 310) քահանան՝ իրր պատգամաւոր ճանապայ հանեցին, գիրերը էջմիածին տանիլ և միաբանութիւնը համոզել։ Կ'երեւի թէ եղած ընտրութեան (§ 2219) լուրը չէր հասած Տփղիս, վասնզի այդ մասին բնաւ ակնարկ չենք տեսներ վերոյիշեալ գրութեանց մէջ։

2221. Պատգամաւորները էջմիածին հասան յունուար 27'ին, և վերիվայր եղաւ միաբանութեան մտադրութիւնը։ Տփղիսի Հայութեան քահանան՝ վրաց թագաւորին կամքը, Ռուսական ներկայացուցիչին առաջարկը, Գեղարդը կորնցնելու սպառնալիքը, իրարու վրայ բարդուելով, միաբանութիւնը զիջողութեան ստիպեցին, որչափ ալ ակամայ և բռնադատեալ ըլլար իրենց հաւանութիւնը։ Հարկաւ ժողով մրն ալ տեղի ունեցաւ, և որոշուեցաւ որ ընտրելիներու անուններուն մէջ Ծովսէփի անունն ալ գրուի իբր երկրորդ, առանց բոլորովին չընդունելու Եփրեմի անունը, և Կ-Պոլսոյ մեծամեծաց հաղորդուի նոր թուղթով մր, անոնց թողլով ուզածնին ընտրել, և յայտարարելով, որ եթե ազգս մեր չյաջողեցաւ, մեզ կրնան ընդդիմանալ, չի չենք ընդունիլ ոչ ոքեւ և ապրանք մեր է նոցանէ է, և ինչ ազգն մեր կամեցեալ մեզ՝ զԾովսէփ արքեպիսկոպոսն հրաժարեալ առաքեցին, մեզ ընդունելի և յարթելի է (ԴԻԻ. Թ. 297)։ Միաբանութիւնը այս կերպով կր մտածէր դժուարութեան մէջէն ելած բլլալ, գործը բոլորովին Տաճկահայոց վրայ թողլով. գուցէ ալ կր յուսար թէ Տաճկահայք չեն հաւանիր կամ չեն համաձակիր Ռուսի մրտ եղողը կաթողիկոսու-

քեան բարձրացնել։ Մայրաքուղայ միաբանութիւնը ստիպողական պարագային առջեւ՝ երկարօրէն վարանած չէ, ի յունուար 27'ին հասած էին Տփղիսի պատգամաւորները, և 28'ին իրենց որոշումը կը գրէին Դաւիթ եպիսկոպոսին։ Գիրին մէջ կը պատմուին քէ ստիպումներ ստացած են Տփղիսէ, և որչափ ալ առաջ վան կ՚ուզեն պաշտօնապէս չէին համարձակած Յովսէփը իրը ընտրելի ցուցնել, բայց այժմ կ՚ըսեն, պաշտօնապէս այն ալ ներկայել նոր գրութեամբ մը, և անոր մէջ ընդ յոյժ պարծանօք Վանին եպիսկոպոսին՝ Տէրտէրոսին Յովսէփ արքեպիսկոպոսն դասելով։ Սակայն առջի գրութիւնին չեղեալ չէն համարիր, այլ կը յանձնարարեն, որ նէ առաջին հանդէր և նէ ձեռնադրէ հանդէր է միւսին տապասցնել ձեռնադրել։ Այս երկրորդ հանրագիրին չէին կրցած ամենքը ստորագրել՝ վան աղբիւրեան ժամանակ (Դիւի. Թ. 306), միանգամայն այն է վերջ հասարակ ըլլոյ և անպճոյճ լեզուով գրուած էր, որ նչան էր անհաղորդեան տաց ջրոցին՝ ըստ Յովսէփ արհոյն (63 Կին. 746)։ Այդ գիրերը ստիպաւ կարս յղուեցան, որ անկէ ալ Երեւան հասցնեն Դաւիթին՝ ուրեւիցէ (Դիւի. Թ. 306)։ Միւս օր, յունուար 29'ին, միաբանութիւնը փութաց իւր որոշումը հաղորդել թէ արքայազուն Դաւիթ իշխանին (Դիւի. Թ. 299), և թէ Ռուսիոյ դեսպան կաւալիցկինին (Դիւի. Թ. 295), երկարօրէն բացատրելով իրենց առաջին որոշման պատճառները, և չմոռնալով ալ կրկնել Ս. Գեղարդը դարձնելու խընդրանքը, քանի որ իրենք համակերպելով հպատակած էին իրենց եղած պահանջումին։ Հարկ կը սեպեն յատուկ և բացատրական նամակով մը եղելութիւնները և փոփոխութիւնները Եփրեմի ալ հաղորդել (Դիւի. Պ. 685)։ Այս նամակը գրուած է 1800 փետրուարին (Դիւի. Պ. 689), հարկաւ առջի օրերը, ի պէտք չէր յապաղել պարտուպատշաճ բացատրութիւնը։ Բայց Եփրեմ, բոլորովին հետու կաթողիկոսանալու փափաքէն կամ յաւակնութենէն, բնաւ ժպտունութիւն չզգաց եղած փոփոխութեան վրայ, արդէն ինքը կանխած էր կաթողիկոսութիւնը Յովսէփի առաջարկել (Դիւի. Թ. 303), և իւր ընթացքն ալ նոյնը հաստատուց, ինչպէս պիտի տեսնուի պատմութեան ընթացքին մէջ, և Եփրեմի կատարած ջանքերով։

2222. Պէտք էր որ այդ անցուդարձերուն վրայ Յովսէփի ալ քան մը գրուէր միաբանութեան կողմէն, և իրօք ալ կը գտնենք այս նպատակով անոր ուղղուած երկար նամակ մը (Դիւի. Թ. 307)։ Միայն թէ գրչագիրի կամ տպագիրի սխալմունք մը ապրդած է նամակին ներքեւ գրուած 1800 յունուար 20 Թուականին մէջ (Դիւի. Թ. 311), որովհետեւ նոյն նամակին մէջ յիշուած են, առաջին ընտրութեան և վերջին փոփոխութեան պարագաները, որք յունուար 27'էն ետքը տեղի ունեցան։ Հետեւապէս Յովսէփի ուղղուած նամակը՝ հազիւ յունուար 30'ին գրուած կրնայ ըլլալ։ Միւս նամակներուն մէջ պատմուած մանրամասնութիւններէն զատ՝ նկատողութեան արժանի են Յովսէփի անձին վրայ նկատուած արգելքին մասին ընդարձակ բացատրութիւնները, այնպէս որ աւելի Յովսէփը ընտրութենէն հրաժարելու, քան թէ կաթողիկոսութիւնը ընդունելու կը յորդորեն, և աղէկ տես և պատրաստութեամբ իրենց տեսութիւնները կը պարզեն։ Կը յիշեն թէ ինչպէս ինքն Յովսէփ Պատէմկինի բանակին հետ Օսմանեանց դէմ գտնուեցաւ՝ Բանտէր, Իսմայիլ, Եաչ և Սիլով, թէ նոյնպէս Զաքովի բանակին հետ Պարսից դէմ և կաւ Դարբանդ, Շամախի և Գեանջա. թէ ինչպէս ինքն Յովսէփ ալ այն տեղն չհամարձակեցաւ էջմիածին գալ, և թէ երկու անգամ Ղուկասէ հրաւիրուելով՝ չախորժեցաւ ճաշակել ընտանութեան խոտութեան այլագիտական իշխանութենէն։ Աւտր վրայ դիտել կու տան, թէ ազգն մեր ընդ ոեքի տալն է այժմ ընդ քաղաքա- պերութեան Օսմանցոց, և փաթաթոտ տան Հայոցման աշխարհի ընդ նոյն իշխանութեամբ Պարսից (Դիւի. Թ. 309)։ Ուստի կ՚ըսեն, երբ ընդ- կոտոր վտանգէ ոա ամենազօր անձն է, և ոա ոարբ պատճ, և ոա ազգ մեր, հրամայեցես եկեցես է ոարբ ընտա է կարողիկոսութեան, բայց կ՚ուզրա- կացնեն, որ երբ երկեցես է պաշտօնացն չեշտափելոց, ըե վտանգ լինիցի ընդհատ անձին, և արբոյ ընտայ, և ազգի մերոյ, և չկարեցես քալ. ոա այն ալ կարեւոր չեղ լինել մեզարբեր (Դիւի.

Թ. 311)։ Բայց Յովսէփ հետու էր այս տեսակ կասկածներէ և զգուշութիւններէ։ Նա տակաւին միաբանութեան գիրը չառած, և թերևս ալ բոլոր անցուդարձերուն կատարելապէս չտեղեկացած, փութացած էր կանխել և ամէն միջոցները գործածել, որ կանուխէն երազած և հետեւէհետու նախապատրաստած նպատակը իրագործուի, և առիթը ձեռքէ չվախցուի։ Անչուշտ Թուրքական արքունիքին հետ ալ՝պէտք եղած միջնորդութիւնները ձեռք առած էր։ Ապրիլն վերատուր 1'ին, միաբանութեան նամակին հասնելէն առաջ, յատուկ պրութեամբ կը դիմէր ամբոյշ, էչեծոց – էչեծոպեթց և Բոլոր Հայկազուն Ժողովրդականաց կ-Պոլսոյ (Թիւ. Թ. 301), և անոնց հաւանութիւնը կը իմնդրէր իրեն կաթողիկոսութեան համար։ Այդ պրութեամբ կը պատմէ, թէ վերջը Նոթպուկ թագաւորը՝ Գէորգի, որ 1797'ին հորը յաջորդեց (§ 2203), Ղուկասի ծերութեան և ակարութեան պատճառով, զինքն հրաւիրած էր գալ ի Թբիլիսի առանձին, որպէսզի կարենայ ի բերան ժամս բառնալ զլոծ հոգեբոյսներն Մայրաթոռոյ։ Բայց ինքն այն առնն Ջաքարիա պատրիարքին գրեր է, թէ չուզեր ի ներքուստ և ի կոյերց կոչուիլ, և ոչ ալ բառնալ զբեղեալ ապիճնին երևեալ (Թիւ. Թ 302)։ Բայց որովհետև այժմ ախոռը պարապ է, հարկաբերեալ է նոցանոր ձոյլ, կր դիմէ քնելոց մեծ մարտուղութ Կաթանքոզոլոյ և Դանիէլ պատրիարքի, որ երթ կալցի այս էղբ ի Տիւրնէ, և երթ լիցի հաւանութիւն և համակամ հաճութիւնն ասոնք երթալ ինքեանց և երեսելի անձանց, ինքն կր հնազանդի յղելոյ քեզմերնեն, և կր փութայ իջմիածին երթալ (Թիւ. Թ. 304։) Ասկէ ետեւի յայտնի կերպով քուէ մուրալու ադաչանք չէր կրնար ըլլալ։ Աղանեանի Թիւանին մէջ նոյն նամակը կրկին անգամ հրատարակուած կր գտնենք (Թիւ. Թ. 311), որ կր ցուցնէ թէ Յովսէփ իւր նամակը կրկին պատճէններով և տարբեր միջոցներով յղած է, որ անկորուստ հասնի և նպատակը ապահովուի։ Նոյն միտքով գրած է ևս իջմիածնի՝ անդրանիկ Մինաս եպիսկոպոսին (Թիւ. Թ. 315), Աստրախանի՝ նուիրակ Եփրեմ եպիսկոպոսին (Թիւ. Թ. 319), Տիգրիս՝ Տիգարդակիր Յովհաննէս եպիսկոպոսին (Թիւ. Թ. 322), և նոյնիսկ յատկապէս Դանիէլ պատրիարքին (Թիւ. Թ. 327), ամէնուն ալ իրեն ընտրութիւնը յանձնարարելով։

ՏԱՃԿԱԿԱԶԱՑՈՑ ՄԻՏՔԸ

2223. Կոստանդնուպոլսոյ մէջ Ղուկասի մահուան առաջին գոյժը առնուեցաւ 1800 փետրուար 7'ին։ Դանիէլ պատրիարք իւր աչակերտ Ներսէս վարդապետը, որ է Աչտարակեցի ապագայ կաթողիկոսը, ճանապայ տնտան էր իջմիածին՝ իւր նուիրակութեան հաշիւն ու արդիւնքը և բնծաները տանելու։ Ներսէս կարին հասած էր Ղուկասի մահուընէ 7 օր ետքը, այսինքն 1800 յունուար 4'ին, ուր արդէն գոյժը լսուած էր, ուստի յատուկ սուրհանդակ կր հանէ պատրիարքը տեղեակ ընելու։ Այսպէս կր գրէ ժամանակակից մր Կոստանդնուպոլսոյ մէջ, տեղական լուրերը և օրերը ճշդելով, մինչ այլուր կր տեսնենք թէ Ներսէս Ղուկասի մեռնելէն չորս օր առաջ իջմիածին հասած բլլայ (Թիւ. Ն. 9)։ Թերևս կարինէ ղրկուած սուրհանդակը Ղուկասի վատնգալուր վիճակին համար եղած էր, և թերևս ալ անստուգութեան պատճառով Դանիէլ անմիջապէս չէ հռչակած՝ վերջնական և պաշտօնական լուրին սպասելով։ Միայն փետրուար 17'ին կը հաղորդէ Զուղայեցի Գալուստ եպիսկոպոսին, որ Նիկոմիդիա կը գտնուէր նուիրակութեամբ, և Գալուստ փետրուար 22'ին կ-Պոլիս կր հասնի, որ յաջորդին մասին խորհրդակցին (ՊՏՄ.)։ Իսկ լուրը բերնէբերան ժողովուրդին մէջ տարածուած էր, և թէպէտ պաշտօնական պատգամաւոր չէր հասած, բայց մասնաւոր նամակներ եկած էին Մայրաթոռէն, որոնք ընտրական գործողութիւնները կ'իմացնէին, և Դանիէլի կաթողիկոսանալը կր թելադրէին։ Այդ պատգամից վրայ կր հասնի պատգամաւոր Դաւիթ եպիսկոպոս, որ ձմեռուան պատճառով ատեանդ դադարած էր, և պատրիարքարան կր մտնէ մարտ 18'ին, Մեծ պահոց Դատաւորի կիրակին, կէսօրին մօտ, երբ Մայրեկեղեցւոյ երեք եկեղեցիներու մէջ, Դանիէլ պատրիարք, Գալուստ նուիրակ, և Յակոբ Երուսաղէմի փոխանորդ՝ եօթնական քահանայ կր ձեռնադրէին։ Նոյն օր կր սկսին Ղուկասը իբր հանգուցեալ կա-

թողիկոս յիշատակել։ Դաւիթի ներկայութեամբ և բերած գիրերով՝ կաթողիկոսական ընտրութիւնը օրուան խնդիր դարձաւ մեծամեծներուն մէջ, մանաւանդ որ Դուքասի ընտրութեան միջադէպին վրայ (§ 2151), և Յովսէփի խնդիրին ազատելու համար (§ 2221), այս անգամ միաբանութիւնը՝ բոլորովին կ-Պոլսեցոց կամքին էր թողած ընտրութիւնը։ Դաւիթի հասնելէն երբ քանի օր հաքը, այսինքն է մարտ 28'ին, ամիրապետու ժողով կը գումարուէր Եէնիխանի մէջ պատրիարքի գլխաւորութեամբ (ՊՏՄ.), զանազան կարծիքները աւիրուելու համար։ Դաւիթ և Գալուստ հաւատարակէս Դանիէլի ընտրութիւնը կը պնդէին, իրրև միաբանութեան փափաք ու կամք, և միտքերը Յովսէփէ կը հետացնէին. բայց երկուքն ալ թաքուն միտք ունէին՝ իրարմէ անկախաբար, որ Դանիէլի տեղ պատրիարք ընտրուին, կամ եթէ կ-Պոլսեցիք Դանիէլը պահել ուզեն. կաթողիկոսութիւնը իրենց ձեռք։ Սակայն էջմիածնի եպիսկոպոսներէն մանաւոր նամակներ եկած էին, երկուքին ալ ընտրութիւնը արգելելու նպատակով (63 ԿԻՆ. 752)։ Իսկ Ստեփանոս Սերաստացւոյն ընտրութեան դէմ ելան կեսարացիները (63 ԿԻՆ. 753)։ Յովսէփի և Եփրեմի մասին կ-Պոլսեցիք նպաստաւոր չէղան, օտար երկիրէ, որ է լսել օտարի նպաստաւոր մարդ ընտրելով՝ կասկածի ներքեւ չիյնալու համար (63 ԿԻՆ. 750)։ Կը ձեռք Դանիէլ, բայց անոր մասին ալ մէկէ աւելի պատճառներ առջեւ կը բերէին պատրիարքական տաղնապ չյարուցանելու համար, մինչեւ որ դինքն ալ համոզեցին ընտրելիութենէ հրաժարիլ (63 ԿԻՆ. 749)։ Եւ այսպէս բոլոր խօսուածները մէկդի թողլով, նոր անձ մը պահելու հարկին մէջ ձեռնին, և պատրիարքի խնդրեցին որ յաջորդողին մէկ մը ներկայացնէ (ՊՏՄ.)։ Բայց այս կերպով ժողովուրդին մէջ տարաձայնութիւններ կը չառնային, վէճեր և յուզմունքներ կը տարածուէին, մանաւանդ որ Աւագ չաբաթու տօնական օրեր ալ էին։ Այնպէս որ կառավարութեան ալ մտադրութիւնը հրաւիրեցին, և ապրիլ 9'ին նպաստական հրաման մը պատրիարքին կ'ազդարարէր որ չորս օրէն ընտրութիւնը վերջացնէն, այսինքն մինչև ապրիլ 13։ Ապրիլ 9 այն տարի Զատկի մեռելոցն էր, և պէտք է հետեւցնել թէ նախընթաց Զատկի օրը ժողովրդական յուզումներ տեղի ունեցած են։

2224. Ընտրելիին վրայ վերջնական որոշումը տալու համար Զատկի չորեքշաբթին ապրիլ 11'ին, մեծամեծներ տուաւ թուրքական կառավարութեան նիստ մը կազմեցին, ուր Դաւիթի և Գալուստի հարցուցին, թէ Մայրաքաղաքի մէջ Դանիէլէ և Յովսէփէ և Եփրեմէ զատ ուրիշ արժանաւոր մէկ մը կայ արդեօք. անոնք յայտնեցին թէ չկան, և թէ Յովակիմ և Գրիգոր եպիսկոպոսներն ալ չատ ծեր են (ԴԻՒ. Ա. 51)։ Անոնք թերեւս անուղղակի ինքզինքին կը ներկայէին, բայց կ-Պոլսեցիք անոնց մասին աննպաստ գիրեր առած և աղգուած էին։ Այն առեն իշխանները որոշեցին իրենց ծանօթներէն և մեծաւորներէն մէկը ընտրել։ Ծիչուեցաւ Պրուսայի առաջնորդ Պօղոս Գարագօչեան եպիսկոպոսը (ՊՏՄ.), բայց համաձայնութիւն գոյացաւ Նիկոմիդիոյ և Արմաշու առաջնորդ Բարթողիմէոս կապուտիկեան եպիսկոպոսի վրայ (§ 2171), որուն համար Դանիէլ վկայեց, թէ [illegible] (63 ԿԻՆ. 753)։ Ասոր վրայ պատրիարքէ խընդրեցին, որ յաջորդ օրուան համար ընդհանուր ժողով հրաւիրէ Մայրեկեղեցին, և օրինական ձեւակերպութիւններ կատարուին. և միւս կողմէ ալ գիր և հրաւիրակ ղրկէ Նիկոմիդիա Բարթողիմէոսի կ-Պոլիս բերելու։ Համաձայն այդ որոշման հինգշաբթի, ապրիլ 12, ազգային ժողովը գումարուեցաւ Մայրեկեղեցին, նախագահութեամբ Դանիէլ պատրիարքի. և ներկայութեամբ վերոյիշեալ Գալուստ և Դաւիթ և Յակոբ և Շուշաւերցի Թադէոս, և Զաքարիայի աշակերտ՝ փոխանորդ Պետրոս և Յովհաննէս եպիսկոպոսներու, վարդապետներու և աւագերէցներու, բազմաթիւ իշխանաւորներու, եկեղեցպաններու, արհեստաւորաց պետերու, և խօսքէ վարպետներու, [illegible] (63 ԿԻՆ. 755)։ Առաջ վարդապետը բանալով, կոչնեցաւ յաջորդ

Հոգին Սուրբ և յօգնութիւն նոցին (ՊՏՄ.), և նորէն փակելով կարգացին էջմիածինէ բերուած գիրերը, և Սիմէոն Փափազեան ամիրան բացատրից անոնց առաջարկած անձերը ընտրելու անյարմարութիւնը, խօսեցաւ ուրիշ հնարաւոր ընտրելիներու վրայ, և յանգեցաւ Բարթողիմէոսի նկատմամբ, որուն համար դրեթէ միաձայնութիւն գոյացաւ։ Միայն Դաւիթ և Գալուստ հպիսկոպոսներ տժգոհ մնացին, զի իրենց թաղուն նպատակներէն և ոչ մէկը յաջողեցաւ։ Իրենց հետեւողներէն Սահիան Պասմաճի ծերունի մը, և Միքայէլ Քէվրանպաշի խոնարհ մը, ձայն բարձրացուցին, որ ըհ է յոռոց ալ լինի ոտ, ալ կոբ հոգոբ նոթլ (ՊՏՄ.)։ Բայց բաւական ձայնակիցներ չունեցան, և պատրիարքը ասոց վառ Բարթողիմէոս արէպիսկոպոսի ըմհոպանէն, և այնպէս ժողովը արձակուեցաւ, թէպէտ ոմանք ձայն հանողներ, թէ մ' կոբնէ ըհ կոռոբեցոռ այդ ընորոնէն (63 ԿԻՆ. 758)։ Այսուհանդերձ որուած որոշման համեմատ տեղեկութիւն հաղորդուեցաւ կառավարութեան, ապրիլ 13'ին, որ էր պայմանադրուել օրը։

2225. Դաւիթ և Գալուստ, որ յուսահատ մնացած էին, ձեռնարկեցին հնազանդութեամբ խափանել, աւաղելով թէ ասոբ ընոռ ի յեռաց ելնել երեւի, և թէ ասո ընոռ պռալել և վերջին չրջել կոին (ՊՏՄ.)։ Բայց տարբեր էին երկուքին բնաւորութիւնները։ Դաւիթ, արտաքինով՝ քաշվերատ և ծածուն, երկյնամտութեամբ և ընդոծիմ, իսկ ներքինով՝ խոժոռ և պռանոթ (ՊՀՐ. 8), կարող էր գալտնի հնարքներ լարել. մինչ Գալուստ՝ այր պռլամիտ և անխոհեմ (ՊՀՐ. 11) միայն ընդունակ էր գործիք դառնալ ուրիշի ձեռք։ Ապրիլ 12'ին գիշերը Դաւիթ գնացեալ է սենեակ նոախրակ Գալուստ եպիսկոպոսի, կը սկսի գայն գրգռել, թէ արժանաւորը դուն էիր, թէ օտարական մտցնել պէտք չէր Մայրաթաղը, թէ պէտք է առ ջևն ունել պայմակղութիւնն, թէ բնաբնայն ալ արժանաւոր մէկը չէ (63 ԿԻՆ. 759), և այս ասիթիւ կը յիշուի նաև, թէ նա էքլ գաչեաբհոկան ձեռնադրեալ և նոբեթլալոռ ընոռնոյ (ՊՀՐ. 11)։ Դաւիթ այնչափ կը խօսի, որ պռոբեալ ոլորելի Գալուստ սրհոյն՝ ի ներքոյ քանչ Դաւիթ եպիսկոպոսէ (63 ԿԻՆ. 759), միւս առտուն, ապրիլ 13 ուրբաթ օր, կանուխ Մայրեկեղեցին կ'իջնէ, և ի ժամս կեցոյին, բնաբան առնելով. Գողոսի խօսքերը. Զաւակ Աբրահամոս էջն, և ես, պլաճնեայ Քրիստոսէ էջն, ասասել ես ես ևայլն (Բ. ԿՈՆ. ԺԱ. 22-23), բերանը եկածը կը խօսի, զինքն գովելով և ուրիշները պարսաւելով, և իբր թէ հայրապետական աթոռին պատիւը պաշտպանելով (63 ԿԻՆ. 761)։ Առիթ առնելով ևս Զատկին օրը հռոմէադաւան Քէօչօղլի կամ կէօչէհան ընտանիքէն մէկուն հանդիսով թաղումը, և ետքէն՝ անոր հրաման տուած ըլլալուն պատասխանատուութիւնը պատրիարքարանի պաշտօնեաներուն իրարու վրայ նետելը, կը հետեւցնէ, թէ որ ասոբ խօսի՝ հայրն նոբ ասոռնոյ է։ Ասոր վրայ, ինքնիրեն սկսած հրամանաւ Ճէսոսի Քրիստոսի և Հոգով Սրբով, նզովել, կոփել և քանդբելոլ կը հռչակէ կաթողիկոս ընտրուած Բարթողիմէոս եպիսկոպոսը, պատրիարք Դանիէլ եպիսկոպոսը, փոխանորդ կարապետ վարդապետը, և իշխանապետներէն չորսը, որ պէտք է ըլլան այլուր յիշուած Սիմոն Փափազեան, Գասպար Ազնաւուրեան, Մուրատ Սուրէնեան, և Մարտիրոս Սարաֆլարքէհեասի (ՊՏՄ.)։ Այս կ'ըսէ ու եկեղեցիէն կ'ելլէ։ Որչափ ալ Գալուստի նզովքը նշանակութիւն չունէր, և ամէնքը կ'ըսէին թէ ղանէձ ասբին և ղբանոքրանս՝ ասա նախանձոս ելալ չընոռնէմ, սակայն ժողովրդական գայթակղութիւնը արգելել, և Գալուստի յանդգնութիւնը ճնշել ալ պէտք ըլլալով, ամէնքը պատրիարքին կը դիմեն, որ անմիջապէս հրաման հանէ գայն Աբրահամ վանդն էլել, և նուիրակութեան հայհոյները առնելով՝ ի վանս ղլէն աքսորել տալ։ Դանիէլ պատրիարք կը ստիպուի ընդհանուր գայթոյթին համակերպիլ, և ուզուած հրամանը կառավարութենէ խնդրել (ՊՏՄ.)։ Այդ չփոթներուն դրգռիչը Դաւիթն էր եղած, ինչպէս գրեցինք, թէպէտ ինքն մէջտեղ չէր երեւար, զի այդ խոռոմանի էր, և ասբեռ զնաճոնէն ցոցանէր (63 ԿԻՆ. 763)։ Պէրպէրեան պատմագիրն, թիւրիմացութեան

զոհ երթալով, գրգռութեան նկրինակ կը կարծէ Յովհաննէս Զամաչըրճեան Լպիսկոպոսը, Զաքարիայի աչակերտներէն, Բարթողիմէոսի ընկերակից, և Պալաթու քարոզիչ (ՊՀՐ. 11)։ Սակայն Պէրպէրեան անձնապէս գիտցածը չպատմեր, մինչ ժամանակակիցներ և ուրիշներ (63 ԿԻՆ. 759, ԴԻԻ. Ա. 57, ՄՍՐ. 20), Դաւիթին անունը կու տան իբրեւ Գալուստի գրգռիչ։ Նոյն ինքն Գալուստ ալ 1802 սեպտեմբեր 30'ին Դաւիթի գրած նամակին մէջ վկայութիւն տուած է վրան ֆռէռներէն և պրոթեսթանտներէն Թուրքին, և պարբերյն է (63 ԿԻՆ. 760)։ Ուստի նահատակ կընանք Յովհաննէսի վրայէն հեռացնել, Պէրպէրեանի յանդգնաստ քաած այդ կեղտը։

ԸՆՏՐԵԱԼԻՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

2226. Դանիէլ Բարթողիմէոսը Կ-Պոլիս հրաւիրած առեն, պատճառն ու նպատակը չէր յայտնած, ուստի երբ չաբաթ օր, ապրիլ 14'ին Քումքաբու կը հասնի, և պատրիարքարան կը մըտնէ, կը չփոթի ընդունելութենէն։ Թուրքերէն է՛ր, և Դանիէլի խորհրդով և կիսմիչխանացի Մանուէլ Ալթունեան վարդապետին առաջնորդութեամբ Իւսկիւտարի Ս. Նշան եկեղեցին կ'երթայ հոն։ Բարթողիմէոս յորմէհետէ Արմաչու և Նիկոմիդիոյ առաջնորդութիւնը կը վարէր (§ 2171), յաղոցած էր մէկ կողմէն վիճակին ժողովուրդը հայրաբար հովուել, և միւս կողմէն վանքը տեղական արգելքներու դէմ պաշտպանել, ամէն պարագաներով զօրացնել, նուիրատուութիւններով ճոխացնել, չինութիւններով բարեզարդել, և ուսմամբ ու բարեկարգութեամբ ծաղկեցնել, անոր վրայ հիմնելով իր աշխատութիւնն ու միխիթարութիւնը։ Նա, այդ ընդհատուէտ և փուքլ վրդ., խմոփոն և խոբախոնոյդ (ՊՀՐ. 10), բայց և Տամեան իր ձգտումներուն մէջ, չատ հեռու էր բարձրագահ աթոռներու փափաքէն, մանաւանդ երբ տեսաւ, թէ անագին խռովութեանց կռուածաղիկ դարձած է իր ընտրութիւնը։ Ուստի անմիջապէս չքնաղութեամբ է՛ր, անյամբ անչէն հրաժարել ուզաց, իր անկարողութիւնն ու ակարութիւնը տալն դնելով։ Մինչև իսկ կը յայտարարէր, որ նախ իր ընտրելիները, ազգին կամքին անձնատուր ընթան սեպուելով՝ կամ-թէ ղայլ պոչէն պոչուպեն, կը նախընտրէ առնոյ Տամակերպիլ, քան կաթողիկոսութիւնը ընդունիլ։ Իսկ նախ հաւանին իր վիճակը դարձնել, ինչպէս ընդհանուր կ'ըլլայ ամէնուն։ Բարթողիմէոսի այդ որոշակի և հաստատուն յայտարարութիւնը՝ Տամոպիչ կը պատնայ ամէնուն, և Տակառակը պնդել չէն Տամարձակիր, բայց բնորոշութեան գործը, և տէրութեան տուած հրամանն ալ անկատար կը մնան, Դաւիթի պրոթեսթանտներէն և Գալուստի խռովարարներէն պատճառով (63 ԿԻՆ. 763)։ Բարթողիմէոսի Տանդիսաւն Տետ, Գալուստի աքսորին հրամանն ալ նոյն չաբաթ օր, ապրիլ 14'ին ստացուած էր, բայց ինքն տեղեկութիւն չունէր, ուստի Նոր կիրակի առաւօտ, ապրիլ 15'ին, կը պատրաստուէր եկեղեցի իջնալ, երբ իրեն զգաստացին իրողութիւնը։ Ուստի զգուշացաւ և եկեղեցի չիջաւ, թէպետև եկեղեցական Յովհաննէս Լիմոնճեան ամիրային և ուրիշներուն չքաշուեցաւ ազդարարել, որ չըլլայ թէ իրեն բանտարկած Բարթողիմէոսին այցելեն, որպէսզի իրենք ալ ընդ Նմին բռնադրել չըլլան։ Բայց ուզեց անմիջապէս Տեռանալ, և չիտակ ինջաւ Պալաթ, Յովհաննէս եպիսկոպոսին Տանդիպելցաւ (ՊՏՄ.), և իսկոյն անցաւ Ռաբբէյ Մինաս Տարապիանեան ամիրային տունը։ Հոն ալ ինքզինքը ապահով չզգալով, դիմեց Ղալաթիա Գէորգ Ազայէկեանի տունը, որ Ազայէկով կը կոչուէր Ռուսաց գեսպանատան գործակատար ըլլալուն Տամար։ Աւոր խորհրդով գնաց պահուրտիլ Յակոբ Գալֆայի կամ արքունի ճարտարապետի տունը; Պէյլէրպէյի դիւղը (63 ԿԻՆ. 814), վատահանալով ներքին առ տունին անբռնութարելիութեանը (ԴԻԻ. Ա. 59)։ Այսպէս Գալուստ՝ ամէն ճիգ կը թափէր ա՛ր է պաշտպանել ղինի, թէպէտ Դանիէլ զայն Տալածելու Տետամուտ չէր, և գործակատարին ալ ապաքինել էր, թէ ըներ լէր (ՊՏՄ.)։

2227. Երրոր Բարթողիմէոս և Գալուստ գործէ կը Տեռանային, Դաւիթի աստարէզը կ'ընդարձակուէր, եղած բնորոշութիւնն ալ արդէն ոչնչացած կ'ըլլար, և նորէն պէտք էր կատարել։ Կաւավարութեան կողմանէ

ալ զգացուած էր այդ պէտքը, և կրկին հրահանգ կը տրուէր պատրիարքին, փութալ և գործը վերջացնել, որ գրգռութեանց ալ առիթն առնուի, որոնք աւելի աճած էին, և ամէն ոք իւր բերման համեմատ՝ մէկը կամ միւսը կը մեղադրէր։ Դաւիթ նորէն գործի վրայ էր, Դանիէլը կաթողիկոսացնելէն զատ ելք չկար, որով իրեն ալ պատրիարքութիւնը կ'ապահովուէր, զի ուրիշ մրցակից մնացած չէր։ Կ-Պոլսոյ մեծամեծներն ալ համոզուեցան, թէ ուրիշ ելք չունին. նոյնը սկսան Դանիէլի ալ թելադրել, հակառակ իրենց առաջին թելադրութեանց (§ 2223)։ Իսկ պատրիարքութեան համար ամէնուն առջեւ սկսաւ բարձրանալ Դաւիթը, իշխաններու աչքին՝ իբրեւ դժուարութեանց լուծող և կարող անձ մը, և Դանիէլի աչքին՝ իբրեւ իրեն բարձրացման հզօրատուր մը։ Այդ գաղափարը հետզհետէ զօրացաւ, Դանիէլ ալ իւր յանձնառութիւնը ստորագրեց Մայրաթոռի առաջին պաշտօնագիրին ներքեւ, ուր իւր և Եփրեմի անուններն էին գրուած, թէ խոնարհեցայ ի համակամ խնդիրս հաճոյիեան ձեռնադիցն սրբոյ աթոռոյն, և օրհնեալ էջմիածնոյ, էջմիածնայ և ժողովրդոց մայրաքաղաքիս Կոստանդնուպոլսոյ (63 ԿԻՆ. 806)։ Ասոր վրայ ապրիլ 26'ին, Աչխարհամատոյն հինգշաբթիին, պատարագական գումարումը տեղի ունեցաւ. Վէղիրխանը, Զօպան ամիրայի սենեակը, ուր Դանիէլի կաթողիկոսութիւնը որոշուեցաւ, և պատրիարքութեան համար երեք ընտրելիներ առաջարկուեցան, պատգամաւոր Դաւիթի, Կեսարիոյ Մանուկան և Պրուսայի Պօղոս եպիսկոպոսները, և չուտով նախադասուեցաւ Դաւիթը։ Երկու օր ետքը, ապրիլ 28, չաբաթ օր, ազգային ժողով գումարուեցաւ Մայրեկեղեցին առաջինէն աւելի մեծ բազմութեամբ, զի առաջ ան ղչբս հոգեւոր անչինս էին հաւաքուած։ Բարթողիմէոս ալ ներկաներուն հետ էր ամէնայն գոհունակութեամբ, իսկ Գալուստ իւր խաքտոյկն չէր համարձակած ելլել (63 ԿԻՆ. 808)։ Ժողովին մէջ գլխաւոր բանախօսը եղաւ Դաւիթ, Դանիէլի կաթողիկոսութիւնը առաջարկեց և փաստաբանեց, և ամէնքը հաւանութիւն յայտնեցին։ Այս առթիւ Դաւիթի

ԴԱՆԻԷԼԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

պատրիարքութեան համար ալ համամտութիւնը երաշխաւորուեցաւ։ Առաջին չնորհաւորութիւնները էտքը, ակնեցականներ պատրիարքարան եկան, և հանդիսաւոր թափօր կազմեցին չուրջառներով և ամէնայն զարդուք։ Դանիէլն ալ զգեստաւորեալ, վէղապէլաթ փաթաղանն ձեռքը և ամպհովանիի ներքեւ, առաջնորդուեցաւ լուսապարզուած ակնեցին չարականներով և սաղմոսներով. բեմ ելլելով օրհնութիւն տուաւ կեցո զէր զժողովուրդս և աղօթքով, և աթոռ բազմելով քարոզեց, Դաւիթի պատրիարքութիւնն ալ յոչակեց խորհրդոյնթեամբ պատուելի էջմիածնայ և փիլոսոփ վարդապետից (63 ԿԻՆ. 809), և ամէնուն համահաւանութեամբ և համահաճութեամբ։ Հանդէսը փակուեցաւ Քրիստոս Աստուած մեր մաղթանքով, և Ով ընտրեցեր աղօթքով (ՓԱՄ. 275–277), մէջը Դանիէլի անունը տալով (63 ԿԻՆ. 810)։ Միւս առտուն, ապրիլ 29, Քրիստոնց չորրորդ կիրակին, Մայրեկեղեցւոյն մէջ հանդէսները կրկնուեցան, իսկ երկուշաբթի, ապրիլ 30, կը սպասուէր որ նորընտիրները պաշտօնապէս Բարձրագոյն Դուռ երթան և հաստատութիւն ընդունին, և բազմութիւնն ալ այս յուսով խնամուած էր։ Բայց տեղի չունեցաւ։

2228. Ցապաղումը լաւ նշանակ մը չէր, և իրօք ալ նոր դարձուածքներ սկսած էին կացութիւնը խառնակելու։ Երկու տարբեր կողմերէ էին անոնք, բայց համաձայն գտնուեցան և զածր եղծանելու մէջ։ Գլխաւոր ներշնչութիւնը դուրսէն կու գար, Յովսէփի կողմէն։ Նա իր կաթողիկոսութիւնը յաջողցնելու համար Կ-Պոլսոյ մեծամեծաց ընտրութեան կամ հաւանութեան անհրաժեշտ ըլլալը գիտէր, և բան մը նմամ դիմումներ ալ բրած էր (§ 2222). բայց հարկաւ ականջը հասած էր, որ իրեն համար նպաստաւոր նշաններ չկային։ Ուստի աւելի կարուկ միջոցի պէտք տեսաւ։ Պօղոս կայսեր համաձայնութիւնը վաստակած ըլլալով, Թուրական կառավարութեան կողմէն գրել տուաւ Կ-Պոլսոյ դեսպանին, այլ նպաստակին հոգ տանիլ, և ամէն կերպով աշխատիլ որ Յովսէփի ընտրութիւնը իրականանայ։ Վասիլ Թամարով

ընդ զգացուած էր այդ պէտքը, և կրկին հրահանգ կը տրուէր պատրիարքին, փութալ և գործը վերջացնել, որ գրգռութեանց ալ առիթն առնուի, որոնք աւելի աճած էին, և ամէն ոք իւր բերման համեմատ՝ մէկը կամ միւսը կը մեղադրէր։ Դաւիթ նորէն գործի վրայ էր, Դանիէլը կաթողիկոսացնելէն զատ ելք չկար, որով իրեն ալ պատրիարքութիւնը կ'ապահովուէր, զի ուրիշ մրցակից մնացած չէր։ Կ-Պոլսոյ մեծամեծներն ալ համոզուեցան, թէ ուրիշ ելք չունին. նոյնը սկսան Դանիէլի ալ թելադրել, հակառակ իրենց առաջին թելադրութեանց (§ 2223)։ Իսկ պատրիարքութեան համար ամէնուն առջեւ սկսաւ բարձրանալ Դաւիթը, իշխաններու աչքին՝ իբրեւ դժուարութեանց լուծող և կարող անձ մը, և Դանիէլի աչքին՝ իբրեւ իրեն բարձրացման հզօրատուր մը։ Այդ գաղափարը հետզհետէ զօրացաւ, Դանիէլ ալ իւր յանձնառութիւնը ստորագրեց Մայրաթոռի առաջին պաշտօնագիրին ներքեւ, ուր իւր և Եփրեմի անուններն էին գրուած, թէ խոնարհեցայ ի համակամ խնդիրս հաճոյիեան ձեռնադիցն սրբոյ աթոռոյն, և օրհնեալ էջմիածնոյ, էջմիածնայ և ժողովրդոց մայրաքաղաքիս Կոստանդնուպոլսոյ (63 ԿԻՆ. 806)։ Ասոր վրայ ապրիլ 26'ին, Աչխարհամատոյն հինգշաբթիին, պատարագական գումարումը տեղի ունեցաւ. Վէղիրխանը, Զօպան ամիրայի սենեակը, ուր Դանիէլի կաթողիկոսութիւնը որոշուեցաւ, և պատրիարքութեան համար երեք ընտրելիներ առաջարկուեցան, պատգամաւոր Դաւիթի, Կեսարիոյ Մանուկան և Պրուսայի Պօղոս եպիսկոպոսները, և չուտով նախադասուեցաւ Դաւիթը։ Երկու օր ետքը, ապրիլ 28, չաբաթ օր, ազգային ժողով գումարուեցաւ Մայրեկեղեցին առաջինէն աւելի մեծ բազմութեամբ, զի առաջ ան ղչբս հոգեւոր անչինս էին հաւաքուած։ Բարթողիմէոս ալ ներկաներուն հետ էր ամէնայն գոհունակութեամբ, իսկ Գալուստ իւր խաքտոյկն չէր համարձակած ելլել (63 ԿԻՆ. 808)։ Ժողովին մէջ գլխաւոր բանախօսը եղաւ Դաւիթ, Դանիէլի կաթողիկոսութիւնը առաջարկեց և փաստաբանեց, և ամէնքը հաւանութիւն յայտնեցին։ Այս առթիւ Դաւիթի

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԴԻՐՆԵՐ

պատրիարքութեան համար ալ համամտութիւնը երաշխաւորուեցաւ։ Առաջին չնորհաւորութիւնները էտքը, ակնեցականներ պատրիարքարան եկան, և հանդիսաւոր թափօր կազմեցին չուրջառներով և ամէնայն զարդուք։ Դանիէլն ալ զգեստաւորեալ, վէղապէլաթ փաթաղանն ձեռքը և ամպհովանիի ներքեւ, առաջնորդուեցաւ լուսապարզուած ակնեցին չարականներով և սաղմոսներով. բեմ ելլելով օրհնութիւն տուաւ կեցո զէր զժողովուրդս և աղօթքով, և աթոռ բազմելով քարոզեց, Դաւիթի պատրիարքութիւնն ալ յոչակեց խորհրդոյնթեամբ պատուելի էջմիածնայ և փիլոսոփ վարդապետից (63 ԿԻՆ. 809), և ամէնուն համահաւանութեամբ և համահաճութեամբ։ Հանդէսը փակուեցաւ Քրիստոս Աստուած մեր մաղթանքով, և Ով ընտրեցեր աղօթքով (ՓԱՄ. 275–277), մէջը Դանիէլի անունը տալով (63 ԿԻՆ. 810)։ Միւս առտուն, ապրիլ 29, Քրիստոնց չորրորդ կիրակին, Մայրեկեղեցւոյն մէջ հանդէսները կրկնուեցան, իսկ երկուշաբթի, ապրիլ 30, կը սպասուէր որ նորընտիրները պաշտօնապէս Բարձրագոյն Դուռ երթան և հաստատութիւն ընդունին, և բազմութիւնն ալ այս յուսով խնամուած էր։ Բայց տեղի չունեցաւ։

2228. Ցապաղումը լաւ նշանակ մը չէր, և իրօք ալ նոր դարձուածքներ սկսած էին կացութիւնը խառնակելու։ Երկու տարբեր կողմերէ էին անոնք, բայց համաձայն գտնուեցան և զածր եղծանելու մէջ։ Գլխաւոր ներշնչութիւնը դուրսէն կու գար, Յովսէփի կողմէն։ Նա իր կաթողիկոսութիւնը յաջողցնելու համար Կ-Պոլսոյ մեծամեծաց ընտրութեան կամ հաւանութեան անհրաժեշտ ըլլալը գիտէր, և բան մը նմամ դիմումներ ալ բրած էր (§ 2222). բայց հարկաւ ականջը հասած էր, որ իրեն համար նպաստաւոր նշաններ չկային։ Ուստի աւելի կարուկ միջոցի պէտք տեսաւ։ Պօղոս կայսեր համաձայնութիւնը վաստակած ըլլալով, Թուրական կառավարութեան կողմէն գրել տուաւ Կ-Պոլսոյ դեսպանին, այլ նպաստակին հոգ տանիլ, և ամէն կերպով աշխատիլ որ Յովսէփի ընտրութիւնը իրականանայ։ Վասիլ Թամարով

դէսպան՝ Հրամանը ընդունելով, առնուազն մտադրութեամբ սկսած էր գործին հետեւիլ, և օգտուիլ այն երկպառակութիւններէն, որոնք Հայոց մէջ կը տիրէին։ Բարթողիմէոսի ընտրութիւնը ապարդիւն եղած էր, ընտրեալին հրաժարելովը, պէտք էր Դանիէլին ընտրութիւնն ալ անհետեւանք դարձնել։ Ռուսաց դէսպանին ձեռքն ալ լաւ գործիք մըն էր Գէորգ Ալայէկեան գործակատարը, որ ինքն ալ կաթարուած ընտրութեանց հակառակորդներէն էր, և արդէն Գալուստի ալ պաշտպանութիւն բրած էր (§ 2226)։ Թամարով ձեռնարկած միջամտութիւնը յառաջացնելով, սկսած էր Օսմանեան կառավարութիւնն մօտ պաշտպանել իր կառավարութեան ընտրելին։ Իսկ Ռուսիոյ նպատակը ուրիշ բան չէր, բայց եթէ իրեն հաւատարիմ գործակից մը ունենալ էջմիածնի աթոռին վրայ, այն կողմերուն մասին իր ապագայ դիտումները դիւրացնելու համար։ Կատարուած գործողութեանց հակառակողներէն մէկն ալ Բարթողիմէոս Եուսուֆեանն էր, արքունի ժամագործ, որ փոխանակ դուրսէ նոր եկած եպիսկոպոսի մը, իր ծանօթն ու համակիրը կ'ուզէր տեսնել պատրիարքական աթոռին վրայ, ինչպէս էր Պալաթի քարոզիչ Յովհաննէս Ջամաչըրճեան եպիսկոպոսը, բնիկ Բաբերդցի, Ջաքարիայի ընտրելագոյն աչակերտներէն, որ անոր մօտ փոխանորդութիւն ալ վարած էր։ Աւելորդ է ըսել, թէ Յովհաննէսի ալ անհաճոյ չէր այդ գաղափարը։ Եուսուֆեան կրցած էր թէ կառավարութեան չրջանակին մէջ պէտք եղած թելադրութիւններն ընել, և թէ ամիրայակից ընկերներու մէջ համամիտներ պատրաստել։ Յայտնի կը տեսնուի թէ Դաւիթի պատրիարքութիւնը, որչափ ալ պաշտօնապէս հռչակուած, իրեն դէմ բաւականաչափ և ազդեցիկ հակառակողներ ունէր։ Ահա այն ազդակները, որոնք կառավարութիւնը վարանման մատնեցին, երբոր Դանիէլի և Դաւիթի ընտրութիւնները հաղորդուեցան, և չուզեց իսկոյն հաստատութիւնը տալ, այլ պատրուակներու դիմաց յապաղելու համար։ Նախ պատճառեց թէ ընտրողական հանրապրներուն նկատմամբ կնքողներուն թիւը քիչ է, և յետոյ ալ պահանջեց որ Դանիէլի ընտրութեան մասին էջմիածնէ եկած առաջարկներուն պաշտօնագիրները իսկութեամբ հաղորդուին։ Յովսէփ ինքն ալ Թումարովի գրած էր (ՏԻՒ. ե. 38), իսկ Թումարով՝ Ազայէկեանի խորհրդով Գալուստի աքսորին յետոյ կոչումին կ'աշխատէր, իբր թի կրնար գործերը խաւնակելու յարմար գործիք ըլլալ։ Դանիէլի մօտ ալ նոյն նպատակով դիմումներ եղան, որուն նա չուտով համակերպեցաւ, զի աքսորի հրամանն ալ ստիպմամբ հանել տուած էր (63 ԿՒՆ. 762), և վերջին ժողովէն ալ առաջ, ըստ ըՅակիլ նմ չրչէլ յոյնապես (63 ԿՒՆ. 808), և գործակատարն ալ հրահանգած էր Գալուստին չհետապնդել (§ 2226)։

ԳԱԼՈՒՍՏԻ ԽՈՎՈՒԹԻՒՆԸ

2229. Դանիէլ ընտրեալ կաթողիկոս և Դաւիթ ընտրեալ պատրիարք, այդ առթիւ իրարու մտերիմ գործակիցներ, պատրիարքարանի մէջ կը սպասէին իրենց պաշտօնապէս ճանչցուելուն, իսկ պատրիարքարանի գործերը տակաւին Դանիէլի անունով կը չարուներ։ Միւս կողմէն Դանիէլ կ'ուզէր իր կարասին ամփոփել և Իւսկիւտար անցնիլ, որպէս զի անկէ դէպ էջմիածին կարենայ ուղեւորիլ, սակայն Գասպար Ազնաւուրեան և Յովհաննէս Լիմոնճեան ամիրաներ թելադրեցին քիչ մըն ալ սպասել մինչեւ խնդրոյն վերջանալը (ՊՏՄ.)։ Այսպէս անցաւ ապրիլ 28'ի ժողովին յաջորդող հօթնեակը, երբ մայիս 4'ին ուրբաթ օր, յանկարծ Գալուստ Քումքապու կու գայ, իր աքսորին չետս կոչուելուն հրամանը ստացած լլլալով Իւսկիւտարի դէսպանին միջամտութեամբ։ Նա իր ազատութեան հետ պատրիարքութեան յաւսադրութիւնն ալ ստացած էր Ազայէկեանէ, Դաւիթին ընտրութիւնը չնչել տալով, եթէ Դանիէլի ընտրութիւնն ալ չնչելով Յովսէփի կաթողիկոսութիւնը յաջողէր։ Դանիէլ և Դաւիթ, ինքզինքնին ուրախ կը ցուցնեն Գալուստի ազատութեան հանդէպ, և իրրև պատուելու ցոյց զինքն առաջնակայ կիրակի, երեւման խաչի տօնին առթիւ, Իւսկիւտարի Ս. Նշաչ եկեղեցին պատարագելու կը հրաւիրեն։ Իսկ Գալուստ ազատութեամբը և յաւսադրութեամբը խրոխտացած, պատասխան կը ղրկէ, ճանչնալ ղչէ անյոյ խրեանց

և լսել, ապրելդնելով թէ ոչ եռ ոնին իշ-խանութիւն հրամայել չէր վերջ, չի պրոնի հրամայել եկել ամ ասպ։ Գալուստ, որ իւր ասպնջական (§ 2226) Յակոբ ձարտա-րապետին ալ բաց պարտամուրհակ տուած էր, վճարել ըլլ ինչ գրամ էին գնալոց յոգնե-պորչութիւնն (Դիի. Ա. 68), արդէն ինք-զինքը պատրիարք եղած կը կարծէր։ Գա-լուստի այս խրոխտանքը յառաջ կու գար Աղայէկեանի և Տարապխանեանի թելադր-րութիւններէն, որոնք գիտակցութեամբ զայն ձեռք առած էին չփոթ ծագեցնելու համար, որով եղածը եղծանել, չի ոռնդ չունէր և ելեռոր պոռնոչ՝ տէրութեան հրամանով եղածը չեռ ընկենլը՝ եր ըռ ոռ-նայնէ անպոպան (63 ԿԻՆ. 813)։ կարծես թէ ճիշդ այդ նպատակով, Գալուստ մայիս 5 չաբաթ առաու կանուխ Մայրեկեղեցի կ'իջ-նէ, և կ'երթայ գրաւել նորընտիր Դաւիթի յատկացեալ աթոռը։ Ինչ ետքը Դաւիթ կու գայ, Գալուստ չչարժուիր, և Յակոբ Գանձակեցի վարդապետ, Դաւիթի հետե-ւորդներէն, կ'ելլէ ի քաղքէն չնորհ չ-նալոռ պրհին։ Սա ալ այն առնն վեղա-րով փիլոնով կ'երթայ կանգնիլ ի շր-ղովբեան, յուզում գրգռելու միտքով (ՊՏՄ.), և մինչեւ իսկ կ'ըսուի, թէ եկեղեցւոյ մի-ջին դրան առջեւ, գաւազանը ձեռքը գըր-գըռիչ ատենաբանութիւն ալ ըրած է (ՊԼՐ. 16)։ Բայց այն օր չփոթը չսկսիր, թէպէտ ժողովրդական խաւերու մէջ կը տարածուի. անշուշտ գրգռողներ ալ պակաս չէին եղած։ Մանուկ Գանթարեան մուչտակագործ մը, գլուխ կը նշանակուի (ՊՏՄ.), և չաբաթ օրուընէ 200 հոգիի խումբ մը կը պատ-րաստէ, որոնք կիրակի առաու, մայիս 6, Զաքրի՛ գոռ իմ երգին ատեն, Գալուստը տունէն կ'առնեն ու եկեղեցի կը տանին, Դաւիթը աթոռէն կը քաշեն, Գալուստը տեղը կը նստեցնեն, բեմ կը հանեն, քա-րոզ խօսեցնել կու տան, պատրիարքական գահը կը բարձրացնեն, պատարագին մէջ Գալուստ պատրիարքի անունը յիշել կու տան, Աթոռոյ ընթացքը ոչ ոքէ կ'աղաղա-կեն, և վերջէն ալ կը պատրաստուին բազ-մութեամբ կառավարական դուռը տանիլ, և պատրիարք հաստատել տալ։ Դաւիթ ալ ունէր իր կողմնակիցները, որոնք ընդդի-մանալ կ'աշխատէին։ Արդէն երկու կողմէն եկեղեցւոյ մէջ և դուրս սկսած էին կռիւ-հարել ընդհան և տրնել ղէրեռս, իրարոյն առնծաքոր և ֆռասյն վրոնղէն։ Բայց Գա-ւիթ խոյս տուած էր պատրիարքարան, իսկ Գալուստ, բերդրոնեամբ կը դիտէր իրենեն-րուն յաղթանակը, և բաղձացեալ պատ-րիարքութիւնը լրացած կը կարծէր (63 ԿԻՆ. 817)։ Իրաւ Գալուստ յուսախաբ պիտի մնար իւր յոյզողութեան մէջ, սակայն զինքը իրր գործիք գործածողներուն նպատակը ի-րականացած էր, զի այդպիսի չփոթի մը վրայ՝ նախընթաց ընտրութիւնը չնշուած կ'ըլլար։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՋՆՋՈՒԱԾ

2230. Մայրեկեղեցւոյ չփոթը զինուո-րական միջամտութիւն հրաւիրեց, և չու-տով եէնիչէրիներու ջո-կատ մը հասաւ, որուն առջեւ բազմութիւնը ցըր-ուեցաւ, բայց գլխաւոր-ներէն 64 (ՊՏՄ.) կամ 70 հոգի (63 ԿԻՆ. 819), որոնք Գալուստի սենեակը խմբուած էին, ձերբակալուեցան, Գալուստն ալ միա-սին, և տարուեցան եէնիչէրիներու հրամանա-տարին, անկէց ալ նպարքոսի տեղակալին, քննուելու և դատուելու համար։ Ոմանք Մանուէլ և Աստուածատուր վարդապետ-ները կ'ամբաստանեն, իբրեւ թէ Գալուստի կողմնակիցները եէնիչէրիներու ցուցուցած ըլլան (ՊՏՄ.), և մինչեւ իսկ ըսող կայ, թէ Աստուածատուր՝ Գալուստը հարուածելով վեղարը գլուխէն քաշած ըլլայ (ՊԼՐ. 17), սակայն ժամանակակիցը այս վերջին ծայ-րայեղութիւնը չյիշեր։ Հարցուփորձէ մը ետքը, նախ ամէնքը կը բանտարկուին. բայց ոչ ի նոճեղ (ՊԼՐ. 17), և վերջէն քանի մը հատը թիարան կը ղրկուին (63 ԿԻՆ. 819), մնացածներ ֆանէ- խրոխել կ'արձակուին, իսկ Գալուստ Իւսկիւտար՝ Աղասի ամիրայի տունը պահպանութեան կը յանձնուի (Դիի. Ա. 71)։ Մայիս 10'ին, Երեւման Աչէին հինգշաբթին, նոր խլրտում մը տեղի կ'ու-նենայ չուկային մէջ Գալուստի կողմնակից-ներուն կողմէն, և կառավարութեան կը դիմեն զայն պատրիարք ուզելու, բայց և-պարքոսին հրամանով չորս գլխաւորներ, կարապետ Հնավաճառ, և Սարգիս ու Իգնա-տիոս բեւեռագործներ, և Գէորգ Հիւան կը

բանտարկուին, և մնացածներ գանակոծ կը հալածուին (Գործ Ա. 71)։ Իսկ Գալուստ Ա. զասիին տունէն փախչելով, նորէն Պէլլէրոփէյի Ցակոր ճարտարապետին մօտ կ'ապաւինի։ Կառավարութիւնը տեսնելով, որ չփոթութեանց ատիթ տուողները հետացնելէ զատ ուրիշ միջոց չկայ, և անսալով Թամարով վեսպանին թելադրութեանց, որ այստեղի մրցակիցներէն դուրս իւր պաշտպանելին կաթողիկոսացումը իրրեւ արմատական գարման կը ցուցնէր, կ'որոչէ Դանիէլն ու Գալուստը աքսոր ղրկել։ Այս նպատակով մայիս 13'ին, կիրակի օր, Գալուստ խաբէական պատրուակով, իրրեւ թէ պատրիարք ըլլալու համար, Պէլլէրոփէյիէն եպարքոսարան կը տարուի, և անկէ ուղիղ կ'աքսորուի Լեմնոս կամ Իլիմնա կղզին։ Միեւնոյն առեն Մէհմէտ էֆէնտի, նպարքոսարանի աղօթատացը, պատրիարքարան կուգայ և Դանիէլի ներկայանալով կը յայտնէ թէ հրաման ստացած է, զինքն Թենեդոս կամ Պօխճա կղզին տանիլ։ Դանիէլ կը զգայ ու կը յայտարարէ, թէ պէտք ունենալով Թէօ-Ընէն, և առանց յանգանց և պատճառ պատիժին համակերպելով, իսկոյն պատուիրակին հետ կը մեկնի նշանակուած տեղը, մինչ չուրջը կը տեսնէ ղեղէլէ-Ընէն և ղեփոսոս ֆաթոլը ժողովուրդ (63 ԿԻՆ. 822), որք սիրելի պատրիարքէն կը բաժնուէին։ Կ-Պոլիսէ մեկնելէն երեք օր ետքը, մայիս 16'ին կը հասնէր Թենեդոս։ Գալուստի աքսորը դիւրին էր, զի անպաչտօն անձ էր, բայց նոյն կերպարանը Դանիէլի վրայ ալ նկատուեցաւ, զի ապրիլ 30'ին Հրեժբեանց ֆէէ էր մատուցած կառավարութեան, իսկ կաթողիկոսութիւնն ալ պաչտօնական հաստատութիւն չէր ստացած (63 ԿԻՆ. 820)։ Միեւնոյն առեն կառավարութեան կողմէն հրաման եղաւ ազգին մեծամեծներուն, որ իննդիրի առարկայ դարձած երեք անձերէ, այսինքն Դանիէլէ ու Գալուստէ ու Դաւիթէ դուրս պատրիարք մը ընտրեն և ներկայացնեն։ Այս կերպով կը լրանար Թամարովի հովանաւորութեամբ Ազայեկեանի կազմակերպած ծրագիրը, որով ջնջեալ և չեղեալ կը դառնար ապրիլ 28'ի ընտրութիւնը, և նոր ընտրութեան դուռ կը լայնուէր։ Ինքն Թամարով ալ լաւ գիտէր եղելութեանց նշանակութիւնը, և ըստ այնմ կը բացատրէր իւր բարեկամ Սարգիս Հաչըկարովին, ու մայիս 16'ին Պէօյիւքտէրէի առառանոցէն կը գրէր, թէ Դէր Հաւրօպոյ քաբեկամ յաբէելէ Ցովհէ աբէզպէկոդոն, այո', ընտրեալ լինելոյ է, և լինելոյ է պարբէաբէ էլդաձնէ (Գործ Թ. 334)։ Այդ պարագային մէջ ալ՝ պէտք չէ մտադրութենէ վրիպեցնել Դաւիթի չահադէտ հնարիմացութիւնը, որ կացութիւնը չփոթած տեսնելուն, ուղղութիւն և կարծիք փոխելով, Ցովսէփի պաչտպաններուն կողմ կ'անցնէր, և Ռուսական քաղաքականութեան պաչտպան ձեւանալով թէ ինքզինքը վտանգէն կ'ազատէր, և Դանիէլի ու Գալուստի արկածէն զերծ կը մնար, և թէ իւր ապագայ յաջողութեան յոյս դուռ կը թողուր։ Թիւրիմացութեան հետեւանք է կարծել թէ այս առթիւ Դաւիթ ալ աքսորուած ըլլայ, ինչպէս նաև Ցովհաննէսն ալ աքսորուած ըսելը (Գործ. Ի. ֆէ), որ Ռուսականներու չփոթութեան հետեւանքներ են։

ՑՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՏՐԻԱՐՔ

2231. Հրամայուած ընտրութեան համար ազգային ժողովը գումարուեցաւ մայիս 18'ին, Համբարձումին յաջորդող ուրբաթ օրը (ՊՏՄ.), և ընտրեալը Ցովհաննէս Զամաչեան, զոր արդէն յիչեցինք թէ Բարթողոմէոսի (§ 2225), և թէ Դանիէլի (§ 2228) ընտրութիւններուն առթիւ։ Բարթողոմէոսի դէմ պատրաստուած գրգռութեան հոդինակը՝ Ցովհաննէսին չըլլալը բացատրեցինք արդէն (§ 2225)։ Թէպէտ վերջին անգամ ալ՝ Դանիէլի և Դաւիթի ընտրութեանց հղծուելուն առթիւ՝ նորէն Ցովհաննէս գրգռիչ ըլլալ կը կարծուի, սակայն պատմական հղելութիւններ Ցովհաննէսի յատուկ դեր մը վարած ըլլալը չեն ցուցներ։ Կասկածին գլխաւոր պատճառներն են Նուստֆեանի հետ մտերմութիւնը (63 ԷԻՆ. 812), և վերջէն ինքն ընտրուած ըլլալը։ Զուգելով ալ ուրանալ, թէ գոնէ կամակցութիւն մը ունեցած ըլլայ, չատ կչիռ ունի իրեն մասին դրական գործ մը պատմուած չըլլալը, մանաւանդ որ իրր պատրիարքական ընտրելի, իրեն նախադասելի մէկը չկար մէջտեղ, որ բուռն մրցակցութիւն մղէր։ Միայն թէ իրեն հա-

մար յաջողութեան միջոց եղաւ՝ Ազայէկեան և Նուսուֆեան խմբակներուն իրարու մերձեցումը, անիկայ Յովհաննէսի պատրիարքութեանը և ասիկայ Յովսէփի կաթողիկոսութեանը հաստնելով, և այսպէս միացեալ զօրութեամբ կացութիւնը փոփոխելու կերպը գտնելով։ Հետեւապէս Մանուէլ վարդապետ, Դանիէլի եւանգելն անձնուէրը, միայն իւր սիրտին գաղտնած յայտնած կ'ըլլայ, երբոր Յովհաննէսը՝ պոռնիկ և հին և աշտարակաւոր և գազանէ և յայտնութեան խաղալիկ կը կարծէ (63 ԿԻՆ. 812)։ Իսկ Պէրպէրեան, բոլորովին հակառակութիւնները կ'այլայլէ, Յովհաննէսի պատրիարքութիւնը Դանիէլի աքսորէն առաջ գնելով, և Յովհաննէսը Դանիէլի աքսորին հեղինակ ցուցնելով (Պէր. 18)։ Մենք սկզբնական և ժամանակակից աղբիւրներէ քաղելով, գրեթէ օրագրական ձեւով պատմեցինք ամէն պարագաները։ Եւ երբէք քիչ մըն ալ մեր սովորական ոճէն աւելի երկարեցինք, կ'ուզէինք որ այդ հռչակուած ու հետաքրքրութիւն չարժած, և միանգամայն ոգեղ կերպարան առացած, Դաւիթ-Դանիէլեան կռուած, բայց սկզբնապէս Յովսէփեան եղած խնդիրը, իւր իսկական ճչդութեան մէջ ներկայացուէր։ Նոյն ձեւով պիտի չարունակենք պատմել այդ խնդիրին յետագայ մասերն ալ։

ՅՈՎՍԷՓԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

2232. Յովհաննէս մայիս 18'ին ընտրուելով, միւս օր չաբաթ, մայիս 19'ին, պետական հաստատութիւնը առացաւ, և ֆոռմայ հանդիսով եպարքոսին մօտէն Մայրեկեղեցի բերուելով, ու պատրիարքարան երթալով՝ պաշտօնին ձեռնարկեց, երբ Դանիէլ և Գալուստ իրենց աքսորավայրերը հասած էին։ Իրեն առջեւ ծանր աշխատութիւն մը ունէր նա, պառակտել և խռովել ժողովուրդը հանդարտութեան առաջնորդել։ Այդ նպատակին համար պէտք էր միանգամ ընդմիշտ վերջացնել կաթողիկոսական խընդիրը, որ կռուախնճոյր էր դարձած։ Այդէն կնճռոտ տակաւ լուծման մը կը յանգէր, քանի որ գլխաւոր ընտրելին Դանիէլ առպարէզէ դուրս էր հանուած, և դուրսէն ընտրելին Բարթողիմէոս ինքն առպարէզէ քաչուած էր։ Մնացած երկու աւելի խօսուածներուն, Յովսէփի և Եփրեմի մասին եղած գժուարութիւնը հաւասարապէս օտար հողի վրայ և օտար հովանաւորութեան ներքեւ գրանուելնին էր, և եթէ այդ պարագան նկատողութեան պիտի չառնուէր, հարկաւ նախադասելի էր Յովսէփ, որ իրեն հետ աւելի կարողութիւն և գործունէութիւն կ'բերէր, և Հայոց համար զօրաւոր պաշտպանութեան միջնորդ կրնար ըլլալ։ Գալով արդէն կազմուղ պետական պարագային, ազգ։ որեւէ պատասխանատուութենէ զերծ կ'ինար, քանի որ Իւսական դեսպանին ազդու միջամտութիւնը՝ Օսմանեան կառավարութեան վրայ ճնշում կը գործածէր։ Այդ մտածումները կ'արդարացնէին Յովհաննէսին մատդրութիւնը, երբոր Յովսէփ կաթողիկոսութիւնը յաջողցնելու յանձնառու կ'ըլլար, ինչպէս նաև ազգին մեծամեծներն և ազգային ժողովը, երբոր իրենք ալ այդ եղրակացութեան կու գային։ Յովհաննէս իրեն առաջին գործերէն մին ըրաւ խնդիրը վերջացնել, և Յովսէփի վրայ կաթողիկոսական ընտրութիւն կատարել տալ. առանց ազգն ու պատրիարքարանն ալ պատասխանատուութեան ներքեւ թողուլ։ Երբ Թամարով կառավարութեան վրայ ճնշում կը բանեցնէր, կառավարութիւնը պաշտօնապէս անոր առաջարկը կը հաղորդէր պատրիարքին, իսկ գաղտնապէս հակառակը կը թելադրէր։ Յովհաննէս այնպէս իմն դարձուց գործերը, որ վերջապէս կառավարութիւնը բացարձակապէս իւր հաւանութիւնը յայտնեց, և ասոր վրայ 1800 մայիս 31'ին, Հոգեգալստեան հինգշաբթի օրը, ազգային ժողով գումարուեցաւ, և թէպէտ մեծամեծներէն ոմանք գգուշացան ներկայանալ, բայց ժողովը օրինաւորապէս տեղի ունեցաւ. Յովհաննէս իրրեւ գործողութեան հիմն մէջտեղ դրաւ Մայրաթոռոյ միաբանութեան երկրորդ հանրագրութիւնը, Դանիէլի և Յովսէփի անուններով (§ 2221), և Դանիէլը ընտրելու անհնարութեան առջեւ, ամէնքը Յովսէփի անունին վրայ միացան, մանաւանդ որ անոր հակառակորդներուն գլխաւորին՝ Սիմէոն Փափազեանին ալ սպառնալիք եղած էր կառավարութեան կողմէ, և անոր ալ խոտոշեալ էր այլ կոյս, որ է

աքսորավայր, երբ եւ ազկեոցէ (ԴԻՒ. Թ. 334)։ Այսպէս ապրիլ 12'էն հաշուելով (§ 2224) 50 օրուան մէջ, երկաք կախողիկոսական ընտրութիւններ կատարուած եղան։ Մանուէլ, իւր Դանիէլեան անկոպար եռանդին մէջ, կը գրէ թէ Յովհաննէս ասանց ալ և անել նկատելոյ, դայն գէտաց և ընդունէ իւր խորհելոյ (63 ԿՈՆ. 824) վարուած ըլլայ այդ պարագային մէջ, սակայն անաչառ պատմութիւնը պէտք է ընդունի, թէ նա այլապէս գործել չէր կրնար, Դանիէլի աքսորէն, ժողովրդական յուզումէն, Իւսեական ճնշումէն, և Տաճկական համակերպութենէն առաջ։ Թէ ոչ անապատման ժամանակաւ աթոռը անտէրունջ և ազգը վրդովուած պիտի պահէր, որ հանրութեան տնտակէտէն ալ նախընտրելի կացութիւն մը չէր, որչափ ալ Դանիէլի անձնական օգուտին համաձայն ըլլար։ Պարագայից հանգամատ գիտցող, և առաւել լագոյն վնասին առջեւ մանաւոր պարագաներ անտեսող իշխանաւորներ, ասկի գնահատման արժանի պէտք է սեպուին, քան թէ մեղադրանաց ենթարկուին։

2233. Կատարուած ընտրութիւնը պատուհան հաղորդել, պաշտօնական ձեւակերպութիւնները լրացընել, և հաստատութեան հրովարտակը ընդունիլ, ինչպէս առեւ ուրիշ, կամ ինչ գործողութեանց տեղի տուին, ճշդուած չունինք. միայն գիտենք թէ օգոստոս 2'ին Կ-Պոլսէն կը մեկնէր Դաւիթ՝ ատացուած հրովարտակը Յովհէփին հասցնելու համար (63 ԿՈՆ. 911, ԴԻՒ. Ա. 77), ուսկից կը հետեւի թէ ամբողջ յունիս և յուլիս ամիսները այդ ատացութեան նուիրուեցան։ Իսկ կացութիւնը հանդարտեցաւ, և նոր միջադէպներու առիթ չտրուեցաւ։ Քանի որ Դաւիթ՝ Յովհէփի կախողիկոսութեան հրովարտակը տանողն էր, և ընտրութեան գործը լրացած էր, անհիմն կը դառնայ Պէրպէրեանին գրելը, թէ Յովհաննէս իշխանաւորները հաճեցոյց չընդունել Ղեւոնդ Եղիշէ-ոսկեանն ընդհանուր, և թէ այդ նպատակով Դաւիթը էջմիածին ասուեցաւ, ուր անդ գոցե վճռած և ընտրուած կախողիկոսանալու (ՊԷՐ. 18)։ Յովհէփին դառնալով, նա ամենայն պնդութեամբ և ամէն միջոցներով կախողիկոսանալու հանէն էր։ Արդէն 1800 ապրիլ 12'ին, որ է Բարթողիմէոսի Կ-Պոլսոյ մէջ ընտրուելուն օրը (§ 2224), երբ Յովսէփ հաղիւ թէ Մայրաթոռի միաբանութեան գիրը առած կրնար ըլլալ (§ 2222), նա արդէն Սբ. Էջմիածնի անուանեալ կոնդակները (ԴԻՒ. Ե. 39, ԴԻՒ. Թ. 333)։ Անհամոյ զգացում մը ազդելու չափ խրախուսած և յանձնապատուած է Յովսէփի վերան, երբոր Դանիէլի և ամիրայից գրելով, կ'ապացարել որպէսզի իմացնել ընդհանուր ժողովրդեան վեր և ընդդէմ-ընէն (ԴԻՒ. Ե. 33), և վճռակամ է վերայ հանդերձ ազգին, հաւատոյ և եկեղեցւոյն (ԴԻՒ. Ե. 34), համակերպին իրեն ընտրութեան, պատիւ համարելով աթոռ բարձրացնել է ցեղ Լուսաւորչին սրբոյ Գրիգորի, յորմէ եմ ինչ, կ'ըսէ վստահաբէն։ Միանգամայն կը սպառնայ, թէ իրմէ զատ ոմ և ընդդէմ՝ կոնդակիս լինել ոչ կարէ, և ոչ էնել է վերայ կոչնոյ, և այս պատճառաւ կը յաւելու, որ երբ ընդհանուր ժողով և սուրբ, զգաստեցուցել ոչ ընդդէմ ոք (ԴԻՒ. Ե. 35)։ Դանիէլի ալ ակնարկելով, որ միաբանութեան առաջին ընտրելին էր, կը գրէ թէ պոռ և ինչ համարեցի է ժամանակ իմ պարծելոյ ինչ էր (ԴԻՒ. Ե. 38)։ Իւր միաքը յայտնելու համար մինչեւ իսկ էդ կը յայտնէ է վերայ Պոլսոյ անցանել, այլ մտածելով, թէ յոյժ յոմն ինչ է ոչ ոք (ԴԻՒ. Ե. 39), իւր աչակերտ Նոր-Նախիջեւանցի կարապետ վարդապետը Կ-Պոլիս կը ղրկէ, բոլոր ամիրաներուն զատ զատ յանձնարարականներով, որոնցմէ 12 հոգի յանուանէ յիշուած են (ԴԻՒ. Ե. 38)։ Որչափ ալ յախորժանութիւն ըլլան Յովսէփի գրածները, սակայն անչուշտ Կ-Պոլսոյ վրայ իրենց ազդեցութիւնը կ'ունենային, նկատելով անոր Իւսեաց մայրաքաղաքին մէջ ատացած դիրքը, և Իւսեական դիւանատան ամէն կնճռոտ անոր օգտին ծառայելը։ Այս պարագաներն ալ կը ցուցնեն թէ ինչ զգուշութեամբ Յովհաննէս և Կ-Պոլսեցիք կը վիճանէին Յովսէփի ընտրութեան, և հրովարտակը առանալով կը յղէին անոր։ Յովսէփ հաղիւ թէ այդ հղկութենէն կրնէր արքունիք հասած տեղեկութիւններէն, և կ'ապատնուէր իւր կախողիկոսութեան վրայ, օգոստոս 4'ին Պետրոսբուրգ կը մեկնէր (ՆՐՅ.

Ա. 6)։ Նախ կու գար Մոսկուա, և Մոսկուայէ Նոր-Նախիջևան, և անկէ Աստրախան (ԴԻՒ. Թ. 342), ուր կը մտնէր սեպտեմբեր 12'ին, սպասելով հրովարտակին, զոր Դաւիթ Կոստանդնուպոլիսէ կը բերէր, իրեն ձեռքը հասցնելու համար։

ՅՈՎՍԷՓԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ

2234. Յովսէփ տակաւին Նոր-Նախիջևան եղած ատեն, օգոստոսի մէջ, Ցալթէֆ կոնսուլին վերատաւութեամբ և ստորագրութեամբ կոնդակ կը գրէ (ԴԻՒ. Թ. 334), իսկ սեպտեմբեր 12'ին Աստրախան հասած օրը՝ կը ստանայ Դաւիթի Կ-Պոլիսէ գրած նամակները։ Քանի մը օր ետքը Դաւիթի ուղղած նամակով լուր կու տայ, թէ ձեռքը հասած են հրովարտակին պատճէնն ու թարգմանութիւնը, դեսպանէն Պետրբուրգ ղրկուած և անկէ իրեն հաղորդուած։ Ուրախութիւն կը զգայ, որ իւր անունին յիշատակութիւնը սկսած է Կ-Պոլիս, Մոսկուա, Նոր-Նախիջևան, Թրիգորուպոլիս, և յայլ տեղս։ Բայց կը սպասէ Ռուսաց կայսեր քրիստոնեական հրովարտակին վրան ընդհանուր Հայոց ազգէն կոնդակներուն, զոր լսած է թէ պարբառելու են, և յայս տանէ օր կը յուսայ ստանալ։ Ռուսաստանի առաջնորդութիւնը փոխանցած է Եփրեմի, Էջմիածնի տեղապահութիւնը կը հաստատէ Մինասի վրայ, բայց և Դաւիթի իրաւունք կու տայ ղամենեան է կրկին պահել ընդ թեղապահին. և կը խոստանայ Յովհաննէսի օրհնութեան կոնդակ ղրկել չեռ ընկերան օձմամբ գընդրևռոբք Հոփոյն է ելոնին։ Դաւիթի ուղղուած այդ գրութեան (ԴԻՒ. Թ. 342-356) թուականը գրուած չէ, բայց սեպտեմբեր 12'էն չատ ետքը գրուած պիտի չըլլայ, վասնզի իրը կնդակին յիշուած Մինաս տեղապահը վախճանած է հոկտեմբեր 22'ին, ի ղբբրդբ ֆոռոյեբնկն (ԴԻՒ. Թ. 339), որով Դաւիթ զօրութեամբ վերոյիշեալ գրութեան ստացած կ'ըլլայ բուն տեղապահութիւնը։ Յովսէփ տակաւին Աստրախան կը մնայ, մինչեւ որ սպասածը կը ստանայ հոկտեմբեր 30'ին, նաեւ հրաման դինուորական ուղեկցութեամբ մինչեւ Էջմիածին երթալու, և ցման վայելելու կանուխ ունեցած 2000 ռուբլու ռոճիկը (ԵՐՑ. Ա. 10)։ Ինքն ալ միեւնոյն աստն Էջմիածնի մէջ բլլալիք պատրաստութիւնները կը հրահանգէ, և հազիւ դեկտեմբեր 12'ին Աստրախանէ կը մեկնի, և 17'ին կը հասնի Ղզլար։ Հոն կը սպասէ մինչեւ որ կնօքրին զօրավար, կովկասեան գաւառներու կոզմնակալը, ճանապարհ սպահովութեան պատրաստութիւնները լրացնէ։ Անկէ կը մեկնի Մոզդոկ, հոն ալ կը մնայ քանի մը օր, և սպա կ'ուղեւորի կովկասի լեռնաշղթան անցնելու, գնդապետի մը և հարիւր խազախ հեծեալներու ընկերակցութեամբ։ Հազիւ 1801 տարւոյ փետրուար 6'ին կը հասնի Դուշէթ, ուսկից փետրուար 11'ին, Մեծապահոց երկրորդ երկուշաբթին, մուտ կը գործէ Տփղիս, արտակարգ փառաւորութեամբ և հանդիսական ցոյցերով։ Նկատելի է որ բանական դանդաղաքայլ եղած է Պետրբուրգէ Տփղիս հասնիլը, վեց ամիս ամբողջ, օգոստոս 4'էն փետրուար 11։ Ատոր պատճառները մէջ երէք պիտի հաշուենք պաշտօնագիրներու սպասելը և եղանակին խստութիւնը, պէտք չէ զանց ընենք նաեւ Յովսէփի՝ փառքերու և ցոյցերու փափաքը, որպէսզի ամէն տեղ պատրաստութիւններ կատարուին ընդունելութիւնը չքեղ ընելու համար։

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՄՈՒՄԸ

2235. Յովսէփի այդ երկարատեւ ուղեւորութեան մէջոցին Էջմիածնի կացութիւնը, անհամբեր ակընկալութիւն էր։ Երբ վանուններն փարատեցան, և կամայ կամ ակամայ, բայց հարկաւորը կամաւոր ընելու խոհականութեամբ, միաբանութիւնը համակերպեցաւ Յովսէփի կաթողիկոսութեան, այժմ կը սպասէր քաղել՝ իրմէ խոստացուած, Ռուսական կառավարութենէ յուսադրուած, և երեւակայութեամբ ամեցուցուած գարիքները։ Հոկտեմբեր 31'ին գրութեամբ միաբանութիւնը Յովսէփէն կը խնդրէր ի եռանեանն չեռչէել, այլ ֆոռոցոցանել չբեր ֆելոռոն չէեղչռ ֆեռոյէբ, որովհետեւ տասն ամիս է, կ'ըսեն, որ աթոռը անթեռնէ է, ի ղէչ օչէց և կոչոց բնակել՝ ամէն կողմէն կը նեղուինք, չոբռոֆռոռ յոռֆէ պռնկ ի չէ ֆռեալ է ռոռբէ պռռնռ. Կ-Պոլսոյ նուիրակը Գալուստ աքսորուած է, Տաճկահայոց չորս չրջանակներ առանց նուիրակի մնացած են, և միւռոնը մեղի է ի ռոռռռռճ։

Միաբանութիւնը կը սպասէ որ դեկաեմբերի մէջ հարկաւ էջմիածին հասած ըլլայ (Դիւ. Թ. 340), բայց մինչ սեպտեմբեր Աստրախանէ կը մեկնէր՝ կարծես թէ այնչափ ճիգերով ու հնարքներով ու սոխակութիւններով ձեռք ձգուած կաթոլիկութեան գործունէութենէն աւելի՝ երեւոյթն էր Յովսէփը չահագրգռողը։

2236. Իսկ Կոստանդնուպոլսոյ մէջ Յովհաննէս պատրիարք ազգին մեծամեծներուն գործակցութեամբ, կ՚աշխատէր հին գժտութեանց բոլոր պատճառներն ու հետեւութիւնները ջնջել վերջացնել։ Կաթոլիկոսական ընտրութիւնը մայիս 31՚ին լրացած էր (§ 2232), բայց նուիրագործութիւն չէր առած ընտրեալին օծմամբը, և առկախ վիճակը կը չարունակէր։ Միտքեր տակաւին վրդովեալ էին, և եղածը եղծանելու ձգտումներ սրմատախիլ չէին. և երբորդէն ետքը չորրորդ ընտրութիւն մըն ալ պատրաստողներ կային, զըլխաւորապէս Դանիէլեան խմբակէն, քան թէ Դանիէլէն։ Մեր տեսութեամբ ալ Դանիէլին անխրաւիլ կ՚ըլլար՝ փառասէր թեկնածուութիւն վերագրելով իրեն, սակայն լուծիչն համակերպող մըն էր իրեն համակիրներուն ձեռքը։ Բացառիկ պէտքերու բացառիկ գործաններ կրնան արդարանալ, և Յովհաննէս այդ սկզբունքին հետեւած պիտի ըլլայ Յովսէփին կաթոլիկոսութեան՝ ծիսապետ կան նուիրագործում տալով։ Պատմած ենք Երուսաղէմի պատրիարք Պետրոս Եւդոկիացին մահը 1800 յունիս 18՚ին (§ 2181), կաթոլիկոսական պայքարին ամէնէն տաք միջոցին, Դանիէլի աքսորուելէն քիչ ետքը (§ 2230)։ Անյաւատ խառնակ ու չփոթ, խեղճ ու անկերպարան էր Պաղեստինի վիճակը՝ Պաղիացւոց արշաւանքին և Օսմանեանց պատերազմներուն պատճառով, որ Երուսաղէմի միաբանութիւնը՝ կ-Պոլսոյ պատրիարքին, զոր Դանիէլը կ՚ենթադրէր տակաւին, կը յանձնարարէր իւր ժողովով յարմար մէկը ընտրել և հաստատել տալ, իրեն կողմէ ալ փոխանորդ Յակոբ եպիսկոպոսին կը յանձնարարէր պատրիարքարանի գործակիցլ (ԱՍՏ. Բ. 135)։ Պարտուպաշած խորհրդակցութիւններէ ետքը, պատրիարք կ՚ընտրուէր Թէոդորոս վանեցի եպիսկոպոս, Երուսաղէմի դարպասբնակալը, և գործը լրացնել ճանչնալով անուանին յիշատակութիւնն ալ պիտի սկսէր յուլիս 14՚ին, վարդավառի նաւակատիքին կամ Ցատանակի առնին օրը։ Այդ նոր յիշատակութենէն կ՚օգտուէր Յովհաննէս էջմիածնի աթոռին համար ալ, փոխանակ հանգուցելոյն՝ նոր գամար ալ, փոխանակ հանգուցելոյն՝ նոր գահակալը յիշատակել տալ, և նոյն օր Յովսէփ ալ կը յիշուէր իբրեւ կաթողիկոս։ Այս է ահա այն բացառիկ դարմանը, զոր վերեւ յիշեցինք, որպէսզի միանգամընդմիշտ կաթոլիկոսական ընտրութիւնը լրացնել և վաւերացնել գործի կարգ անցնի, և ատենադպրութիւնը վերջանայ։ Բացառիկ անուանադրութիւնը վերջանայ։ Բացառիկ անուանադրութիւնը վերջանայ։ Բացառիկ անուանադ

2237. *Յովհաննէսի վրայ իրեւ մեղադրանք կը յիշուի նաեւ, որ պատրիարք ըլլալէն ետքը, չփութայ*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ԱՔՍՈՐՆԵՐ

անմիջապէս Դանիէլը ու Գալուստը ազատելէն դարձնել տալ, և մինչեւ իսկ այդ միտքով իրեն եղած դիմումներուն ականջ չկախեց (63 ԿԻՆ. 912)։ *Թերեւս խրնդիրը իւր բացարձակ և պարագաներէ անկախ տեսակէտէն առնելով, մենք ալ ձայնակցինք մեղադրողներուն. սակայն պէտք չէ դիտողութենէ վրիպեցնել, թէ մեղադրողները բոլոր իրենց միտքը Դանիէլի վրայ ամփոփողներն են, որոնք Դանիէլը մէջտեղ հանելով կ'ուզէին Յովսէփի վրայ եղած բնաւորութիւնը եղծանել, և նորէն Դանիէլի վրայ չորրորդ բնաւորութիւն մը կատարել, որչափ ալ պիտի չկարենար խաղաղ և վճռական իրականութիւն ունենալ։ Յովսէփի ունեցած դիրքը և գործածելիք պզտկութիւնները գիտնալով, յայտնի էր թէ հետեւանքը պիտի ըլլար, պահ մը ետ կարել ազգին ապարդիւն և աննպատակ վրդովմանց և երկպառակութեանց տեսութիւնը։ Յովհաննէս նթէ իւր բնաւորութենէն անմիջապէս ետքը ազատականներուն վրայ մոռացութիւն չդարձուց, սակայն այդ բանն ըրաւ անմիջապէս որ յունիս 14'ի յիշատակութիւնը հրամայից* (§ 2236), *և Յովսէփի Թուրաց կառավարութեան կողմէ հաստատուած ու պատուած, և դէպ էջմիածին ճանապարհ ելած ըլլալուն լուրը առաւ* (§ 2234)։ *Նա այլեւս վստահութիւն զգացուցած էր, թէ ամուլ պիտի մնային ապրուժամ ճիգերը։ Կիւմիւշխանացին կը գրէ, թէ Յովհաննէս մեծ դժուար պահանջած ըլլայ, և Մուրատ Սուլէյնեան ամիրան՝ պատրիարքէն անկախաբար և ձրի հանել տուած ըլլայ Դանիէլի ազատութեան հրամարտակը* (ԴԻՒ. Ա. 77)։ *Բայց անոնք որ պետական գործոց ձեւերուն տեղեակ են, լաւ կը հասկընան, թէ ամիրաներ կրնային ազդեցիկ միջնորդութիւն գործածել իրենց մտերիմ պաշտօնէից ձեռքով, բայց հնար չէր գործ վճարել, առանց պատրիարքի պաշտօնական խնդրագիրին և կնիքին։ Ուստի հնար չէ գործին իրականացումը Յովհաննէսէ բաժնել, զի Յովհաննէս հաւանած է գործել, երբ այլեւս գործին անվնաս լինելուն համոզում զգացուցած է։ Դանիէլի ազատութեան հրամարտակը կ'առնուի սեպտեմբեր 17'ին և Գալուստինը սեպտեմբեր 22'ին* (ԴԻՒ. Ա. 78)։ *Դանիէլ 26'ին Թէնեսոսէ մեկնելով, չիտակ կու գայ Ռոսոսթոյ, ուր կը գտնուի սեպտեմբեր 29'ին Վարագայ խաչին օրը։ Սակայն Բեւեհին ուխտ կատարելով նորէն կը դառնայ Պանտերմա անցնելու համար, բայց սաստիկ ալեկոծութեամբ, կ'իյնան Հէրէկ* (63 ԿԻՆ. 914), *որ պէտք է ըլլայ Էրեէք. և անկէ ցամաքի ճանապով կը հասնի Պանտերմա հոկտեմբեր 5'ին, ուսկից Պաղտասար փոքրաւորը կ-Պոլիս կը յղէ, իւր իրեղէնները հաւաքելու։ Այս առթիւ Յովհաննէս անոր համար Եւդոկիոյ առաջնորդութեան կոնդակ կը հանէ, և փոքրաւորին կը յանձնէ, որ Պանտերմա կը դառնայ նոյեմբեր 4'ին, և 13'ին Դանիէլ ճանապայ կ'ելլէ Եւդոկիա երթալու, բայց Մահտլը հանելով կը դադարի։ Իսկ Գալուստ Լեւմիոսէ դառնալով ազատութիւն կը առնայ Նիկոմիդիա երթալ, և ընդհատուած նախրակութեան չջանը լրացնել* (63 ԿԻՆ. 915)։

2238. *Կաթողիկոսական խնդիրին բնթացքը չարունակելով, պէտք է նորէն Տիգիս դառնանք, ուր Յովսէփ Յովսէփի հասած էր 1801 փետրուար 11'ին* (§2234),

ՅՈՎՍԷՓ Ի ՏՔՂԻՍ

ըստ հանրաճանաչութեամբ (ՄՍՐ. 32)։ *Բոլոր քաղաք դուրս էր թափուած, եկեղեցականութիւնը երկար թափօր էր կազմած, թնդանօթներ գալուստը կ'ողջունէին, ինքն ալ չուրջառով ու գաւազանով, և ամպհովանիի ներքեւ թափօրին հետեւելով, կը մտնար Վանքի եկեղեցի կոչուած Հայոց մայրեկեղեցին։ Աչեաղ կը քարոզէ, մաղթանքներ կ'ընէ Ռուսաց կայսեր համար, և ժողովուրդը կ'օրհնէ, ու կ'անցնի վրաց Ս. Սիոն մայրեկեղեցին, ուր առաւօտեան անթաղ կը մնար իւր մտերիմին ու պաշտպանին Գէորգի թագաւորին մարմինը։ Աչեաղ ալ կ'աղօթէ դագաղին փաթթուած, վրացերէն կը քարոզէ, Ռուսաց կայսեր կողմէ վախճանեալ թագաւորին ուղղուած գիրը կը կարդայ, հոգեհանգիստ կը կատարէ, և անկէ ետքը կ'երթայ Մոզ-*

նու թաղը իջեւանիլ իւր եղբօրորդւոյն՝ հա-
զարապետ Սողոմոն, Արզուխեան իշխանին
տունը։ Էջմիածինէ հրաւիրակ եկող չորս
գլխաւոր եպիսկոպոսները, ձիւնապատ ճան-
պաններէն արգելուելով, յաջորդ օրը՝ 12'ին
հասան, և էին Սիմէոն աթոռակալ, Թա-
դէոս ատենադպիրը, Անդրէաս գրագիր, և
Բարսեղ Աշտարակեցի եպիսկոպոսները։ Դա-
ւիթ Էջմիածին էր մնացեր իբր տեղապահ։
Յովսէփ քանի մը օր այցելութիւններով
զբաղեցաւ, մինչեւ որ Էջմիածին ուղեւորի,
ուր մտադիր էր մեկնիլ մարտ 1'ին, Մեծ-
պահոց չորրորդ ուրբաթ օրը, պատշաճ ա-
տենն օծումը լրացնելու, և մարտ 24'ին պա-
տիկը փառաւորապէս տօնախմբելու համար։
Այդ օրերուն մէջ կը կատարուէր՝ Վրաց
համար նշանակալից դիպուած մը, այն է
իրենց թագաւորութեան վերջանալը։ Իրաւ
այլեւս անուանական դարձած էր Վրաց թա-
գաւորութիւնը, Պարսիկ կուսակալներու
հարկատու ըլլալու չափ ստորնացած, և ա-
նոնց բռնութիւնէն ազատելու համար ան-
պայման Ռուսաց գիրկը ինկած, բայց վեր-
ջապէս ազգային քաղաքական իշխանու-
թեան ձեւը կը մնար։ Գէորգի և իւր որդին
Դաւիթ, իրենց կացութեան վրայ յուսա-
հատ, Ռուսական միջամտութիւնը ընդու-
նած և Ռուսական պաշտպանութիւնը խընդ-
րած և հաստատած էին իրենց երկրին ու
մայրաքաղաքին մէջ, և անպայման յանձ-
նուած էին Ռուսաց ձեռքը։ Գէորգիի վեր-
ջին հիւանդութեան օրերը, 1800 դեկտեմ-
բեր 22'ին, ստորագրուած էր Վրաստանը
Ռուսական մարզ դարձնելու հրովարտակը,
և դեկտեմբեր 28'ին կը հռնէր Գէորգի
(ԱՐՂ. 184), և որոշումը գործադրելու պա-
տիւը կը նորկայանար (ՖԱՒՐ. 30)։ Փետրուար
16'ին, երբ տակաւին Գէորգի չէր թաղ-
ուած, Ս. Սիոն մայրեկեղեցւոյն մէջ հրա-
տարակուեցաւ Պօղոս կայսեր յիշեալ հրո-
վարտակը, և Վրաստան պաշտօնապէս կայ-
սերութեան միացուեցաւ, և Ռուսական նա-
հանգ դարձաւ։ Նոյն հրովարտակը յաջորդ
փետրուար 17 կիրակի օրը Հայոց մայրեկե-
ղեցւոյն մէջ ալ կարդացուեցաւ, և Յով-
սէփ նախագահեց այդ հանդիսութեան (ԵՐՑ.
Ա. 14), գոնունակ ղպայտւոյ և արտա-
կարգ ցոյցերով. վանդի ինքն եղած էր
բանակցութեանց միջնորդը, և Ռուսական
ձգտումներուն ալ օգնականը։ Վրացիները
հանդոյած էր համակերպիլ Ռուսական նպա-
տակութեան (ԱՐՂ. 185), և կայսեր գրելով
վստահօրէն յայտարարած էր, թէ իր խոր-
հուրդներով Թագաւոր Ռուսաց հանդէպ
անհամակիր կեցուածքը և խռովարարները
(ԱՐՂ. 186)։ Ակէ հոգը կատարուեցաւ
Գէորգիի յուղարկաւորութիւնը Տփղիսի
Մծխիթա, տեւեցաւ 55 օր հոգը, փետ-
րուար 20'ին, որուն Յովսէփ ալ հանդի-
սապէս մասնակցեցաւ Տփղիսի մէջ։ Վրաց
թագաւորութեան ջնջուելովը, ջնջուած
կ'ըլլար նաև Հայոց թագաւորութեան մը
գաղափարը, որուն համար ծրագիր կազ-
մուած ըլլալը յիշեցինք (§ 2200)։ Որչափ
ալ պարզ փափաք մը եղած ըլլար այդ ծրա-
գիրը, սակայն նկատողութեան արժանի է,
որ նոյն Յովսէփ, որ անոր հետամուտ ե-
ղած էր, ինքն էր որ զայն կ'եղծանէր Վրաց
թագաւորութեան ջնջուելուն գործակցե-
լովը։ Ռուսական քաղաքականութեան ա-
ռաջին մտադրութիւնն էր Կովկասի վրայ
գերիշխանութեան ձեւով տիրել, ուստի
Վրաց նման դիրք մըն ալ Հայոց տալու
միտքը յղացուած էր։ Բայց Վրաց դիրքին
ջնջուելովը, Հայոց համար եղած միտքն ալ
նովին իսկ կը ջնջուէր։

2239. Յովսէփ Տփղիսէ չմեկնած ու-
զած էր անգամ մըն ալ քաղաքին հռչակա-
ւոր ջերմուկներուն մէջ
ՅՈՎՍԷՓԻ ԼՈՂԱՆԱԼ, ուստի Գէորգիի
ՄԱՀԸ այրին Մարիամ թագուհին
հրաւիրեց զայն արքու-
նական բաղանիքը, և Յովսէփ հաճութեամբ
գնաց փետրուար 27'ին, Մեծապահոց չորրորդ
շաբաթուան, և ջուրը դիւրական գալուն
չատ երկար մնաց ջերմուկի աւազանին մէջ։
Բաղանիքէն տուն եկաւ, բայց տունէն ան-
միջապէս թագուհիին գնաց չնորհակալու-
թիւն յայտնելու և հրաժեշտի ողջոյն տա-
լու. այնտեղ թէյ առնելու ալ մնաց, և ուշ
ատեն նորէն տուն եկաւ։ Նոյն դիշեր յան-
կարծ ապրումներ, աստիճ այլայլութիւն և
տկարութիւն զգայ, անկողին ինկաւ, ուս-
կից այլեւս չկրցաւ ելլալ։ Բաւական տա-
րածուած և մինչև աստիճան մը հաւանու-
թիւն գտած կարծիք է, թէ Յովսէփ թա-

գունին մօտ թէյ առնելու առթիւ թունաւորուած ըլլայ (ՄՍՐ. 33)։ Այդ կարծիքին չարժառիթը պէտք է փնտռել այն զգացումին մէջ, զոր ունէր Մարիամ թագուհին, ազգային իշխանութեան ջնջուելուն վրայ ամէնէն աւելի զայրոյթ ու ցասում զգացող կինը. որ մինչեւ իսկ զինքն Պետրոսբուրգ տանելու ներկայացող սպան դաչունահար սպաննելու համարձակեցաւ (ՖԱՄ. 30)։ Նէ կրնար միեւնոյն զգացումով դէղակուր ընել՝ նոյն ջնջումին միջնորդ եղող անձր։ Սակայն հաւանականագոյն է անհիմն նկատել այդ կասկածը, որովհետեւ Յովսէփ տասն օր եւս ապրեցաւ, և բժշկական զննութիւնք թոքատապ ըսին վերահաս հիւանդութիւնը, և հետեւանք բաղանիքի մէջ չափազանց տաքնալուն, և ցուրտ առնն կրկնուած երթեւեկներով տարաժամ մեռնելուն։ Տկարութիւնը օրէօր ծանրացաւ, բժշկական ջանքեր ապարդիւն մնացին, ինքն ալ զգաց իւր վտանգաւոր և յուսահատ կացութիւնը։ Մարտ 9'ին Մուտնիվիրապի չաբաթ օրը, վերջին վայրկեանը հասած զգալով, առաւօտուն իրեն մօտ կոչեց աթոռակալ կամ գործակալ Սիմէոն եպիսկոպոսը, խոստովանեցաւ ու հաղորդուեցաւ, և էջմիածին ղրկուելիք ու իւր ազգականներուն յանձնուելիք իրերուն մասին հրահանգներ տուաւ։ Ժամ 8'ին նորէն կոչեց Սիմէոնը, լեզուն ծանրացեալ էր, ասաց ես կը ձգտանիմ, իմ տեղն պարէտ է տեսնել էջմիածին, Սիմեոն կաթողիկոսի ներկայութեան մօտ ընդէտ (63 ԿԻՆ. 920)։ Ինչ ետքը մահը հասաւ, և հոգին աւանդեց մարտ 9'ին կէսլուսոյ մօտ, 10 ժամին (ԵՐՑ. Ա. 16), նոյն գիշերուան մէջ (ԱՐԶ. 225 յորմէ լուսանայր պատերազմն մարտի (63 ԿԻՆ. 921), որով պէտք կ'ըլլայ մահր նշանակել մարտ 9'էն 10 գիշերը, կէս գիշերին մօտ, մարտ 10'ին չմտած։

ՅՈՎՍԷՓԻ ԱՐԺԱՆԻՔԸ

2240. Այսպէս վերջացաւ Յովսէփ Արղութեանի կեանքը, իւր բազձանաց և ձգտմանց և փառաց լրանալու վայրկեանին, առանց կարենալու անոր յագուրդը զգալ, և լիակատար ստացուածքները վայելել։ Մենք չենք ուզեր կիւմիւշխանացիին գրգռեալ զգացումներով ըսել, թէ նա մեռաւ ալ ժամանելէ ի Բալամ ամոց հետէ քաշուածելոյն, և քանի՞մէ չուխաներ պատռուած (63 ԿԻՆ. 921), բայց չենք ալ կրնար աննշանակ պատահար մը նկատել, այդ անակնկալ և անսովոր վայրկեաններու մէջ տէղի ունեցած մահր։ Նա տակաւին 58 տարեկան էր, տկարացած և վատացած կազմ չունէր, տարիքով առյզ և մարմնով առողջ, կրնար իրեն երկարատեւ պաշտօնավարութիւն ալ խոստանալ, և հաւանարար նշանաւոր և արդիւնաւոր գործունէութիւն ալ ունենալ, որուն երաշխաւորութիւն կրնար ընծայել՝ Իւսաստանի առաջնորդութեան 29 տարիներու մէջ ցուցած արդիւնաւորութիւնը։ Նա իրեն համար ազդեցիկ դիրք մր կազմած էր, պաշտօնական և արքունական չրջանակներու մէջ բարձր տեղ մր գրաւած, անձամբ և ընտանեօք յառաջագահ ազնուականութեան բարձրացած, Հայութեան և հայաբնակութեան համար երախտիքներ ընծայած, եկեղեցիներ և վանքեր, և նոյն իսկ նոր Հայաքաղաքներ հաստատած, մեծ բախտի և մեծ հարստութեան տիրացած, և անոնցմով օգտակար և բարեգործ ձեռնարկներ կատարած. մէկ խօսքով հասարակ դասակարգէ վեր անձնաւորութիւն մր դարձած էր, թէ ձիրքերու և թէ արդիւնքներու տեսակէտէն։ Ինչ որ Արղութեանի այդչափ փայլին վրայ ստուերած կրնայ ձգել, իւր անյագ փառասիրութիւնն է. ոչ այն՝ որ լոկ արդիւնաւորութեան վրայ կը հիմնուի, այլ այն՝ որ արտաքին երեւոյթներու և պերճանքներու կր հետապնդէ։ Պատմուած պարագաները կը հաստատեն, որ իւր կաթողիկոսանալուն գաղափարը յղացողը, առաջարկը կազմողը, միջոցները պատրաստողը, արգելքներու դէմ մրցողը, ամէնը հպատակեցնողը, մրցակիցները ճնշողը, գործը յաջողութեան հասցնողը, ինքն եղած է. ինքը գրեթէ միանակ, թէ Մայրաթոռոյ միաբանութեան, և թէ Տաճկահայ տարրին անհամակրութեան հակառակ։ Եթէ Ռուսահայ տարրը հանակիր եղած է, այն ալ իւր ազդեցութեան ոյժովը կազմուած է։ Իւր յաղթանակին մէջ՝ ուղղակի իւր անձնական գործունէութիւնն է որ կը տեսնուի, և ինչ որ ուղղակի իրմէ չէ, անուղղակի իւր դիրքին և ազդեցութեան և ճնշող

ստիպման հետեւանքն է եղած, որովհետեւ իրեն ընդդիմանալու եւ յաղթելու անյուսութեան հանդէպ, նպաստաւոր դառնալը աւելի գործնական տեսնուած է։

ՅՈՎՍԷՓԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2241. Թերեւս իրենց արդարացում կարենայ յառաջ բերուիլ, թէ Յովսէփ իր կարողութեան եւ արդիւնաւորութեան գիտակցութեամբ, ինքզինքը առջեւ կը նետէր, որպէսզի իշխանութիւնը ձեռք անցընելով աղգին աւելի օգտակար ըլլար։ Բայց այդ պարագային մէջ ալ, մեր կարծիքով, ներելի չէ գրեթէ բանի ինքզինքը առջեւ մղել, այլ պէտք է թողուլ, որ ուրիշները իրեն արդիւնքը տեսնելով վինքը փնտռեն։ Թող որ իր ազգին եւ իր տարրին օգտակար ըլլալու համար, իշխանութիւն եւ աստիճան էական պայմաններ չեն։ Ամէն ոք որեւէ կացութեան եւ դիրքի մէջ իրենութեան օգտակար ըլլալու բաց ասպարէզ ունի, եւ Յովսէփ ինքն ալ՝ պարզ առաջնորդի աստիճանին մէջ կրցաւ այնպիսի արդիւնքներ ցուցնել, զորս թերեւս պիտի չկարենար արդարացնել կաթողիկոսական աթոռին վրայ։ Միւս կողմանէ յայտնի կը նշմարուի Յովսէփի վրայ, ուղիղ փառասիրութեան խառնուած՝ ուղղամտութեան ձգտում մը։ Կրնձ ազգաբանութեամբ ազնուականութեան ձրգտումները, արտաքին պերճանքը, արտաքնայարդար չքեղութեանց տունչանքը, ցուցամոլութեան մնայագ ծարաւը, յայտնի եղած են իր կեանքին ամէն պարագաներու մէջ։ Նոյնիսկ կաթողիկոսութիւնը ապահովելէն ետքը, երկար ամիսներով աթոռ երթալու եւ գործի ձեռնարկելու յապաղիլը, արտաքին չքեղութեանց հետապնդութենէն տարբեր պատճառ չէ ունեցած, ինչպէս արդէն ալ դիտեցինք (§ 2235)։ Կարծես թէ անհրեշտի ձեռք մը եկաւ իր կեանքին թելը խզել, երբ տակաւին Տփղիսի մէջ արտաքին փառքերու վայելումով կը յագենար, կաթողիկոսական օծմամբ բաղձալի դիրքին գագաթնակէտը հասնելու նախօրեակին։ Կը յիշուի որ էջմիածին ղրկած հրահանգներն ու հրամայած կարգադրութիւններն ալ՝ պերճանաց եւ չքեղութեանց, հանգստութեանց եւ վայելումնց պայմաններուն չուրջը կը դառնային, մինչ աթոռը իրմէ կենսական գործեր կ'ակնկալէր, (§ 2235)։ Այսչափ ճիգերէ ետք ձգտումները լրումը իրեն պակսեցաւ, զի իր անուններ չենք կրնար անցընել կաթողիկոսաց չարքին մէջ, եւ լոկ ընտրուածները, առանց միւռոնի նուիրագործման եւ առանց օծումի, կաթողիկոս չենք կրնար նշակել։ Ինքն այդ պայմանին ալ ականջ չկախելով, կանխեց կաթողիկոս հռչակուիլ, կաթողիկոս ստորագրել, կաթողիկոսական կոնդակներ արձակել, կաթողիկոսական գործունէութիւն յայտարարել, բայց այսչափ մեզի չթաւներ իր անունը կաթողիկոսաց գաւազանին մէջ արձանագրելու։ Ընտրեալը օծեալ մը չէ, եւ Օծեալ չհղողը կաթողիկոս չէ, այս է մեր եկեղեցւոյն կանոնը, եւ Մաշտոցին կանոնական կարգադրութիւնը (ԿԹՂ. 19)։ Ոմանք սովոր են Յովսէփը Էջմիածնի տիեղոսով անուանել (Տիի. Թ. եւ ԱՐՂ.)։ Կան նաեւ Յովսէփի Դ անունով ցուցակի անցընողներ, Յովսէփ Սակեցի երէցն ալ չարքի անցընելով (§ 1442), սակայն մենք չենք ուզեր հաստատուն կանոններէն չեղիլ, եւ ընտրեալ Յովսէփը՝ Յովսէփ կաթողիկոս ճանչնալ, ինչպէս որ նշանուածները՝ պակսած չենք ընդունիր։

ՎԵՐԱՀԱՍ ՎՏԱՆԳՆԵՐ

2242. Բայց կ'ընդունինք թէ Յովսէփի մահը նոր աղէտ մը եղաւ ազգին եւ նոր դժբախտութիւն մը եկեղեցւոյն։ Այսպէս թէ այնպէս, Յովսէփ կաթողիկոսական աթոռի վրայ անարժան կաթողիկոս մը պիտի չըլլար, եւ որ գլխաւորն է, ազգին մէջ պատակոտ մտները վերջացած, եւ նոր գրգռութեանց առջեւ առիթները փակուած պիտի ըլլային։ Հազիւ թէ Յովսէփի աչքերը փակուեցան, չթռիւթեանց դուռերը բացուեցան, կաթողիկոսական աթոռը դատարկ կը մնար, եւ մրցակիցներ եւ կողմնակիցներ նորէն աստիարէզ կը գտնէին հանդէս գալ, եւ ըսենք համարձակ, իրենց ամէն տեսակ՝ մաքուր թէ աղտոտ հնարքները գործածել անհաւիր։ Դանիէլեաններ կային արդէն, եւ ինչպէս յիշեցինք, Յովսէփի ընտրութենէն ետքն ալ յուսահատած չէին, եւ միայն ընտրութեան Ռուսական պաշտպանութեամբ լրաց-

ևալ գործ դառնալը, և լրացեալ գործին հանդէպ խնդիրները դադարեցնելու համար Յովհաննէսի հնարքը, անոնք լուսաբեան ատիպած էին։ Կացուբիւնը պարզուած կ՚ըլլար թերեւս եթէ Յովսէփի մեռնելովը, անոր կողմնակիցներն ալ Դանիէլի կողմը անցնէին, բայց անոնց մէջ կային հակադրնիէլեան հոգւով տոգորեալներ, և անձնական նպատակի ծառայողներ։ Յովսէփի անձնասուէր հետեւորդներէն էր Պրիգոր Զաքարեան Ակքիր-հանցի վարդապետը, անոր աչակերտն ու հաւատարիմ գործիքը, և ամէն գործերուն ուղեկիցը. այնպէս որ Սիմէոն եպիսկոպոսի յայտնած վերջին կամքին մէջ Յովսէփ ըսած էր. Իմ կեանք գոհութիւն Գրիգոր վարդապետն է, ի նմանէ տեղեկացեալ (63 ԿՒՆ. 920)։ Բայց Պրիգոր իրեն համար աշխատելու նպատակ չունէր, և այդ դերը վիճակեցաւ Դաւիթին, որ այլեւս Դանիէլի բարեկամութեամբ իրեն պատրիարքութիւնը պատրաստողը չէր (§ 2227)։ Երբոր Դանիէլ վտանգուեցաւ՝ Դաւիթ անկէ բաժնուած էր. երբոր Դանիէլ աքսորուեցաւ՝ Դաւիթ անոր հակառակ դաթձած էր (§ 2230). երբոր Յովսէփ Տաճկահայերէ ընտրուեցաւ Դաւիթ թղթատար ըլլալու ալ վիճած էր, անոր պաշտպանութիւնը վայելելու համար։ Իբր ատոյգ չենք ընդունիր Պէրպէրեանի գրածը, թէ Դաւիթ Յովհաննէսի թելադրութեամբ կաթողիկոսութիւն կ՚ուզէր (§ 2233). չենք ալ կարծեր որ նորէն կ-Պոլսոյ պատրիարքութեան ապաւէր, որուն անպամ մը ընտրուած էր (§ 2227). վի սկսած էր գոնանալ կ-Պոլսոյ կամ Զմիւռնիոյ նուիրակութեամբ, որուն համար Յովհաննէս իրեն միջնորդութիւն կը խոստանար (63 ԿՒՆ. 911)։ Բայց Դաւիթ իր ակնկալածէն լաւագոյն բախտի հանդիպած էր, վի Էջմիածինի մէջ պաշտօն ստացած էր, և Մինաս տեղապահի մահուամբ՝ Էջմիածնի վարիչը դարձած էր (§ 2234)։ Այս կերպով աւելի մօտեցած էր Յովսէփի, անոր մարդը եղած էր, անոր մտերիմներուն սիրելին եղած էր, և Պրիգորի հետ սերտ յարաբերութեան մտած էր։ Մէկ խօսքով Դաւիթ, ակիզբէն իվեր միտքին անցուցած, բայց չյայտնած գաղտնիքը այս անգամ բնական կերպով մը կր մօտենար, և Յովսէփի պարապ թողած, կամ թէ լեցնել չկրցած աթոռին ժառանգ կը նկատէր ինքզինքը, մանաւանդ որ Մայր աթոռին մէջ ալ առաջնակարգ դիրք կը վայելէր։ Ահա բուն Դաւիթ-Դանիէլեան խնդիրին սկզբնաւորութիւնը, Յովսէփեան հանգամանքէն անկախաբար։

ՅՈՎՍԷՓԻ ԿՏԱԿԸ

2243. Դաւիթի հակակիր միտք յայտնողներ, նախևառաջ էջմիածինի միաբանները եղան, որոնք կառնուխէն ալ Տաճկահայրբուն ազդարարներ էին Դաւիթին ու Գալուստը չընտրել (§ 2223)։ Զորս եպիսկոպոսներ որոնք հրաւիրակ եկած էին էջմիածինէ, ուղեցին դլուխ կանգնիլ և թաղման պարագաները իրենք կատգադրել և կատարել մարտ 10'ին, Գալատեան կիրակէին, Մուղնու եկեղեցւոյն մէջ. և Յովսէփի մարմինն ալ պատրաստել ու պատրաստել միաբին էջմիածին տանիլ, իբր վերջին կամքին համեմատ Ս. Գայիանէի բակը թաղելու համար (§ 2339)։ Բայց Գրիգոր կանխեց Ռուսական պաշտօնեաներու մօտ և պիսկոպոսները կասկածելի ընել, տիրացաւ մարմնոյն, կատգադրիչ եղաւ յուղարկաւորութեան, և Ռուսական պաշտօնէից բերնով արգելեց փոխադրութիւնն ընել, առանց Մողդոկ նստող կուսակալին արտօնութեան. և եպիսկոպոսներուն երթալուն ալ արգելք դնել տուաւ, որպէսզի էջմիածին դառնալով միաբանութիւնը չգօրացնեն (ԵՐՑ. Ա. 17)։ Սակայն եպիսկոպոսներ նայն օր նամակ գրեցին էջմիածնի միաբանութեան, որ ժողով ընեն, և նորէն ընտրութիւն կատարեն Դանիէլի վրայ։ Դեռ Յովսէփի մահուան վրայ արեւ չէր մտած, և ընտրական խլրտումներ զայրացած էին։ Գրիգոր Ակքիրմանցին, արդէն մտերմացած էր Դաւիթի հետ, Դաւիթ ալ համակերպած էր Յովսէփի տեսութեանց հետ, և այս կերպով Դաւիթի ընտրելիութեան ծրագիրը կազմուեցաւ երկուքին միջև։ Մէկը Տփղիսի մէջ և միւսը Երեւանի մէջ գործելու ական, աւելի արտաքին և բանական այժերուն վրայ կրթնելով, քան թէ նախքին ընտրութիւնը չանելու միտքով։ Գրիգոր Տփղիսի մէջ լուր առածնց թէ Յովսէփ կատկ ըրած է էջ-

միածինի Դաւիթը կամ Կ-Պոլսոյ Յովհաննէսը կաթողիկոս նատեցնել, ինչ որ հիմնովին սուտ էր: Անմիջապէս Սիմէոն եպիսկոպոս, որ Յովսէփի վերջին կամքերը լսող և ընդունող միակ անձն էր. այդ մասին գրաւոր յայտարարութիւն հրատարակեց, մարտ 12 թուականով, որուն մէջ այս տեսակ ակնարկ բնաւ չկար (63 ԿՈՆ. 920): Բայց Գրիգոր տիրացած էր Յովսէփի բոլոր ինչքերուն և դրամներուն, որոնք նշանաւոր գումար կը կազմէին, և զոր նա միատեղ առած էր էջմիածնայ մէջ դիւրակեաց կեանք պատրաստելու և մնծագործութեան արդիւնք ալ ցուցնելու համար: Գրիգոր այդ գումարներով յաջողեցաւ համամիաններ չահիլ, բայց աւելի զօրաւոր փաստ հղաւ քաղաքական տեսակէտը: Յովսէփի ռուսասիրութիւնը յայտնի, և Գրիգոր ալ անոր սրտակիցն ըլլալով, վերջինիս վկայութիւնները անպայման կերպով ընդունելի էին Ռուսական պաշտօնէութեան առջեւ: Արդ Գրիգոր կը վկայէր, թէ Դաւիթ միակն էր որ Յովսէփի ուղղութիւնը կրնար չարունակել, և Ռուսական ազդեցութիւնը տարածել Հայկական գաւառներու մէջ. և թէ Դանիէլ Ռուսական ազդեցութեան յայտնի հակառակորդ մըն էր, և Պարսկական ու Տաճկական ազդեցութեանց ներքև կը գործէր: Ռուսներուն դիւրին էր հետեւցնել թէ պէտք էր ամէն միջոցներով պաշտպանել Դաւիթը: Ցիշենք անցողաբար թէ Ռուսաց Պօղոս կայսրը, Յովսէփի պաշտպանը, դաւաճանութեամբ կը սպանուէր 1801 մարտ 11էն 12 գիշերը (ՇՕՐ. 400), Յովսէփէ 3 օր ետքը, և կը յաջորդէր որդին Ալեքսանդր Ա, բայց հաւանաբար Տիփլիսի մէջ լուրը չէր հասած, և Պօղոսի ազդեցութիւնն էր որ կը տիրէր:

ԴԱՆԻԷԼԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

2244. Գրիգոր օգուտ կը քաղէր նաեւ միաբանութեան բրածէն, որ Յովսէփի մահուան լուրը և չորս եպիսկոպոսներուն նամակը առնելով, ժողովի գումարուեցաւ մարտ 16'ին (ԴԻԻ. Ա. 86), Ղազարու յարութեան չաբաթ օրը, և համամիտ համաձայնութեամբ կրկին անգամ Դանիէլի ընտրութիւնը հաստակեց, որ նախապէս ալ՝ միաբանութեան առաջին ընտրելին եղած էր (§ 2219): Ժողովին համաձայնութեան դէմ դիտողութիւն ընողը միայն Դաւիթ եղաւ, պատճառ դնելով թէ առանց Երեւանի մնծամնծներուն օրէն չէ ընտրութիւն կատարել: Բայց իրեն պատասխանուեցաւ թէ եղածը նոր ընտրութիւն չէ, այլ առաջին ընտրութեան կրկնումը կամ վերանորոգումն է, որուն այն ատեն աչխարհական տարրը համաձայնեցաւ, ինքն Դաւիթ ալ ամէնուն կողմէն պատգամաւոր գնաց, և նոյն միաքով աչխատեցաւ, Տաճկահայերն ալ Դանիէլի ընտրութիւնը հաստակեցին, որով նոր դիմումի տարի չմնաց: Աւով մէկեալ խնդիրի տեղի չթողու համար, ութը եպիսկոպոսներ, Դաւիթին ալ միատեղ, Երեւան կու գան, մնծամնծները կը հաւաքուին ի Ներկայութեան Թանին էն, որ էր միչտ Ղուկասի օրէն յիչուած Մահմատը, ամէնքն ալ համամիտ կը գտնուին Դանիէլի ընտրութեան, և պաշտօնական հանրագրութիւնը կը պատրաստուի, և մարտ 20, աւագ չորեքչաբթի օրուան թուականով կը կնքուի 78 միաբաններէ և 41 իչխաններէ (ՄՍՐ. 37), և չուտով Դանիէլի հասցնելու համար պատգամաւորներ կը նչանակուին Յովհաննէս Պաուաեան և Ներսէս Աչտարակեցի վարդապետները, պայմանա վրնաա աաար ինքզի՝ ընտրեալը էջմիածին բերելու: Դաւիթ՝ որ ներքին ընտրութեամբ օգտուելէ յոյսը կըտրած էր, անհակառակ հանրագրութիւնը կը ստորագրէ, և յատուկ նամակ ալ կը գրէ Աատուծմէ ընտրեցեալն և յուխտեցեալն, յորդորելը ըլլալով որ հրամայէ և էջմիածին գայ՝ ի Ժողովրդեան և հանգստութեան հաքանչիս, և յոբելեանն Դաւիթ նոսաա եպիսկոպոս: Դաւիթ Յովսէփի մահն ալ իբրև նախանամական պատահար մը ընդունիլ կը ցուցընէ, երբոր կը գրէ, Աոգոաած է որ յաղողէ ղմինայն, և ո՞վ է որ Աոգոածայ կամացն կայցէ հակառակ (ԴԻԻ. Ա. 86-88):

ԴԱՒԻԹԻ ՃԻԳԵՐԸ

2245. Բայց Դաւիթ անկեղծ չէր այդ յայտարարութեանց մէջ. նա արտաքնապէս համակերպելով կ'ուզէր միաբանները քնացնել, որպէսզի ուրիչ ձեռնարկներու պէտք չզգան. զի ինչպէս գրեցինք, Գրիգոր-Դաւիթեան ծրա-

գիրը, ուղղակի արտաքին ճնշումի և բռնութեան վրայ հիմնուած էր։ Այդ միտքով կ'աչխատէր Գրիգոր Տփղիսի մէջ, իրեն կողմը ունենալով Ռուսական տիրապետութեան ներկայացուցիչները, զօրավար Լազարեվը, դևսպան Կաւալիցկին, և կուսակալ Կնօրինը, որոնք այլևս համոզուած էին թէ իրենց պետական չահր բացարձակապէս կը պահանջէ Դաւիթի կաթողիկոսութիւնը, որպեսզի էջմիածինի միաբանութեան հակառուս կարծուած ուղղութիւնը փոխուի։ Այդ միտքով Տփղիսէն պատգամաւորութիւն մը ղրկուեցաւ Երևան, զօրավար Լազարեվի, և վրաց անժառանգակալ թագաժառանգ Դաւիթի անունով, և Ծովսէփեան կողմնակից Տփղիսեցի մեծամեծներու յանձնարարութեամբ, որպեսզի մէկ կողմէն միաբանութիւնը հաճեցնէ Դաւիթի կաթողիկոսանալուն, իսկ միւս կողմէն Մահմատ խանը բռնադատէ, և Ծովսէփէ մնացած գանձերուն փաստով համոզէ, որպեսզի բոլոր իւր իշխանութեամբ միջամտէ և Դաւիթը կաթողիկոսութեան աթոռին վրայ հաստատէ։ Մահմատ նախապէս իւր ներկայութեամբ Դանիէլի ընտրութիւնը հաստատած էր, և յատուկ գրութեամբ ալ զայն հրաւիրած էր, որովհետև զայն իրեն կողմնակից կը ճանչնար. բայց Տփղիսէ ևկողներ, և Ռուսական քաղաքականութեան գործիք եղողներ, Մահմատի միտքը կը պղտորեն, թէ Ներսէս վարդապետ Ի՜՜՜ կ՜՜՜վ՜՜ր՜՜ն՝ ֆ՜ջ՜ն՜ է, և ֆ՜՜ա՜՜ց՜ել է Ի՜՜՜ց, ըն Ի՜ն՝ջ՜ելը կ՜ն՜ղ՜կ՜՜ա՜՜ն՜ալվ, նոց՝ ֆ՜՜ա՜՜փ՜ը պէտ է փ՜ը՜ց՜ա՜ն՜ե դեպ ևրեան (Դիի. Լ. ֆղ)։ Այսպէս ռուսասէրներ հակառուսականութիւն կը կեղծեն, խարպատանանքի գագաթնակէտը հասնելով։ Այսպէս թէ այնպէս Տփղիսէ ևկող պատգամաւորութեան թելադրութիւնները կամ յանձնարարութիւնները, և մանաւանդ առատաձեռն կաշառքը, Մահմատի միտքէն կը ջնջէին նախընթացաբար ըրածը, և զինքը Դաւիթի համար բուռն գործիչ մը կը դարձընէին։ Մահմատ իւր կողմէն ալ յանձնարարութիւններ կը սկսէր ընել միաբաններուն, որուն սոքա կը պատասխաննէն, թէ իրենք ուխտ ըրած են, և Ս. Գեղարդի վրայ երդումով Դանիէլի ընտրութիւնը հաստատած են, և չեն կրնար անկէ ետ դառնալ (Դիի. Ա. 89), և թէ ընտրեալը գալու վրայ է, և մօտ օրէն կը հասնի, պայմանադրեալ 60 օրերուն մէջ։ Ցիշենք անցողակի, որ դեռ Ծովսէփ Տփղիս չհասած, Ծովհաննէս Գեղարդակիր եպիսկոպոսը կրճած էր Ս. Գեղարդը գաղտնի կերպով Տըփղիսէ հանել, և անձայն անչչուկ էջմիածին հասցնել։ Միաբանութիւնն ալ Մայրաթաղարի մէջ հաւաքուելով և Ս. Գեղարդը մէջտեղ դնելով կատարած էր Դանիէլի ընտրութիւնը (Դիի. Ա. 88)։

2246. Դանիէլի մասին չխօսեցանք 1800 նոյեմբեր 13'ին Պանտրմայէ մեկնելէն ետքը (§ 2237)։ Նա Պանտրմայէ

ԴԱՆԻԷԼ ՅԵՒԴՈԿԻԱ

ետքը Մահալըճի մէջ դադարած էր տեղացւոց հիւրասիրութիւնը վայելելով, և այնտեղէն իւր յարաբերութիւնները ընդարձակելով, որ կրնար կասկած տալ նոր խլրտումներու, թէ ոչ իրմէ, գոնէ իւր չուրջը գտնուողներէն, որոց յախուռն գործունէութիւնը յայտնի էր։ Այս պատճառով Ծովհաննէս իրեն լուր կը հասցնէ, որ չատ չերկնցնէ ուղևորութիւնը, և օր առաջ նոդակիա հասնի, վասնզի Բէրսիկեան բոյլ հրամանատարէ կասկած էր, այսինքն է բռնադատուիլ կերպով. Բայց Ա՛ ազբառնօտրգելցօ՛, այսինքն կերպով մը երաշխաւոր կանգնեցանք. ուստի լաւ կը լինի աստեղանդ չդնգերիլ, չէ մ՛ նէյէն անպատասխանեն քեզի, որ տեղի կ'ունենար եթէ զինուորական հրամանով տարուէր (63 կին. 916)։ Կիւմիւչխանացին, իւր բորբոքեալ երևակայութեամբ, Ծովհաննէսի կողմէ դաւադանութեան դործ մը կը կարծէ տեսնել այդ ազդարարութեան մէջ, Ծովհաննէսի և Աղայէկեանի և Թամարովի ձեռքով լարուած, որուն առջևը կ'առնուի Մուրատ Սուրէնեանի ձեռքով, որ կառավարութենէն արտօնութիւն կը ստանայ, որպեսզի Դանիէլ ըսպ հաճոյեան էրայ հանդարտ ընդացիս երթայ նդոկիա։ Մենք կը կարծենք որ եթէ իրօք պատրիարք և Թամարով գործին մէջն էին, Մուրատ Սուրէնեան մը չէր կրնար անոնց հետ կչռուիլ։ Ուստի Ծովհաննէսի ազդարարութիւնը, որով ոչ նոր հրամանի մը, այլ կանխորոշ հրահանգի կ'ակնարկուի, պարզ զգուշաւորութիւն մըն էր, Դանիէլ-

*ետանց նոր խլրտումին առիթ չտալու համար։ Այդ անցուդարձերու միջոցին Դանիէլ Մահալըճ կը մնայ նոյեմբեր 13՝էն մինչեւ դեկտեմբերի վերջերը, և 1801 յունուար 5՝ին կը հասնի Պօլու։ Կիւմիւչխանացին բաւարար բացատրութիւն մը չտար մնգի, Դանիէլը 50 օր Մահալըճ մնալուն վրայ, ինչ որ մեր կարծիւօք աւելի Յովհաննէսը կ՝արդարացնէ, և ոչ թէ անոր վրայ ղաուն-ըլ-էն մգյն կը հաստատէ։ Յովհաննէսի համար կախողիկոսութեան խնդիրը փակուած էր Յովսէփի հաստատութեամբ, և այլևս Դանիէլեան համակրութիւնը անօգուտ և վնասակար էր։ Դանիէլ Մնունդի տօնը Պօլու կատարելով, Առաջաւորաց բարեկենդանին, այսինքն 1801 յունուար 13՝ին կը գտնուի Թօսիա, 19՝ին Ս. Յովհաննու կարապետի տօնը կը կատարէ Ամասիա, և 22՝ին, երեքշաբթի, Սուրբ Փրկչի տօնին կը մտնէ Եւդոկիա՝ իրեն նպատակակէտը (63 ԿԻՆ. 916), երբ տակաւին Յովսէփ Մողդոկ Տիգիս ուղեւորութեան մէջ կը գտնուէր (§ 2237)։ Եւդոկիա հասնելով փառաւոր ընդունելութիւն ունեցաւ Դանիէլ քաղաքացւոց կողմէն, բայց ինքն չուզեց պաշտօնապէս առաջնորդական դեր սանձնել, իբրեւ կը դժուարանար և կը խրտչէր, կամ աւելի ճիշդ իրենները զինքը կը խրտչեցնէին, իբրեւ ասոնք՝ որ «Յովսէփ փեղոյն՝ Յովհաննէս պատրիարքին որպէս պատուար լինել (63 ԿԻՆ. 915)։ Դանիէլ ըսած քնածէն քաղցնաց է-էց, ինչ որ անպայման մնինք ալ կ՝ընդունինք Դանիէլի վրայ, կը սպասէր որ Յովսէփ օծումեմբ լրացուցանէ զպաշ- կոնական-ութեան է-էց, որպէս զի ինքն ալ էջմիածին քաշուի, կալ և ճալ հասարակ գործական պաշտօն- (63 ԿԻՆ. 916)։

ԴԱՒԻԹԻ ԸՆԹԱՑՔԸ

2247. Բայց գործերը այլապէս կերպարանեցան, և երբ Դանիէլ հանդարտ կը մնար Եւդոկիա, անդին Տիգիսի մէջ կը վերջանար Յովսէփի կեանքը, և Դանիէլի միտքին գործադրութիւնը իր հիմնական պայմանը կը կորնչնէր։ Մայրաթոռոյ միաբանութիւնը մարտ 16՝ին ընտրութիւնը կատարած, և մարտ 20՝ին պարտուպատչան պաշտօնագիրը պատրաստած, իսկոյն ճանապայ հանած էր Յովհաննէս Պատաւեան և Նեռսէս Աչտարակեցի վարդապետները, որպէսզի 60 օրերու միջոցը չանցած, այսինքն մայիս 16՝էն առաջ, Դանիէլը Եւդոկիայէ էջմիածին հասցնեն (Տիի. Ա. 88)։ Երբոր Մանմատ Դաւիթի համար ստիպումները կը խստացնէ, միաբաններ իրենց ընտրութիւնը փոխելու անհնարութիւնը կը զգացնեն (§ 2245)։ իսկ միւս կողմէն ալ միջոցներ կը խորհին որ օր առաջ գործը լրացեալ վիճակի մէջ դնեն, և հետապնդութիւններուն առջեւն առնեն։ կը սկսին վանքին մէջ մանաւոր խորհրդակցութիւններ կատարել, Դաւիթէ գաղտնի, յարմար միջոցներ կարգադրելու համար։ Մանմատ կը նայի կերպով մը երկու կողմերն ալ չսիրել՝ որ երկու կողմերէ ալ չհանուի, և միաբաններէր կը յորդորէ, որպէսզի չհանան պայմանադրեալ 60 օրերը չանցած իրենց ընտրեալը հաստատել։ Այդ խորհուրդներու առեն, օր մը միաբաններուն Աստուածատուր եպիսկոպոսի անհնակը հաւաքուած առենին, Դաւիթ ինքնահաւէր վրայ կը հասնի, և կը սկսի գանգատիլ, ընդէ՞ր և ոչ ինչ առնէ էմոց յայտնէս. որուն խրատու կը պատասխանէ Յովհաննէս Գեղարդակիրը. «Վ-ս ե- գ-ս, որ հարկաւ լուր տալու պարտաւորութիւնք։ Դաւիթ մինչեւ այն առեն երկերես ընթացք կը պահէր, արտաքուստ միաբանութեան համակարծիք երեւնալով, և ձեռքի տակէն իրեն նպատակին հետեւելով։ Բայց Մանմատ եկած ազդարարութիւնը, ամէն բան պարզած էր միաբաններուն առջեւ, և անոր հետեւանքն էր Յովհաննէսի պատասխանը։ Դաւիթ ալ զգալով, որ իր գաղտնիքը յայտնուած է, բուռն զայրացմամբ կը պատասխանէ. Տեսէ՛ք ղինչ առնէմ առնել, և ֆէթուայէ երէ որպէսի ս-ս էջեմ։ Միաբաններ գործը չտապճղնելու պէտքը տեսնելով, անմիջապէս նոր պատուիրակներ կ՝որոշեն, Ղազար խոսրովեանահայր և Մատթէոս Քուչուբեան եպիսկոպոսները, և անմիջապէս ճանապայ կը հանեն ապրիլ 10՝ին։ Առաջին հրաւիրակները ապրիլ 7՝ին կը հասնէին Եւդոկիա, և էջմիածինի նուիրակ Գրիգոր Ամասեցի եպիսկոպոսէն ալ օգնութիւն գտնելով, հապճեպ պատրաստութեամբ ճանապայ կը հանէին Դանիէլը ապրիլ 11՝ին, Աչխարհամատոյն հիգչաթիին, և Կ-Պոլիս ալ բոլոր եղելութիւնները հաղոր-

դելով, կը յանձնարարէին ֆոթիոս հանել ընթերցուած հայրապետութեան նոյն (Դիի. Ա. 90)։ Բայց միաբանութեան բրած կարգադրութիւնները, և անոնց վրայ դրած յոյսերը պարապի ելան, երբ աւելի ջանքերնին կը չատցնէին, որպէսզի յաջողին արգելել Դաւիթի ոտնձգութիւնները, և աթոռը վտանգէ ազատել։

Տ. ԴԱՒԻԹ Ե. ԷՆԷԿԼԷԹՑԻ

ԴԱՒԻԹԻ ՕԹՈՒԼԸ

2248. Դաւիթ՝ միաբանութեան իրեն համամիտ չլինելուն զայրացած, ինքզինքը անոնց հասկցնելու սպառնալիքը ընելէն ետքը (§ 2247), միտքին մէջ հաստատեց որեւէ կերպով կաթողիկոսութեան տիրանալ, օգտուելով Մահմատի իրեն կողմը դարձած ըլլալուն պարագայէն, և գործածելով անոր բռնական իշխանութիւնը։ Արդէն այս միտքը հաղորդած էր Տիղիս՝ Գրիգոր Աքթիրմանցիին, որպէսզի պէտք եղածը ընէ, և գլխաւորապէս Մահմատը համոզելու նիւթական և հնչուն փաստերը հասցնէ։ Ինքն ալ էջմիածինէ երեւան եկաւ՝ անձամբ բանակցելու համար Մահմատի հետ, և անոր մօտ ամէն տեսակ միջոցներ գործածելու համար։ Ինչպէս կը տեսնուի, կանոնական միջոցներուն չէր վստահեր այլեւս, միաբանութիւնը չահիլ չէր յուսար, ոչ ալ վստահ էր որեւէ ընտրական ձեւ մը կատարել, կամ թէ ճրնչողական միջոցներով կանոնական պահանջը առերեսս լրացնել. այլ միտքը դրաւ բացարձակապէս Մահմատի բռնական իշխանութեամբը զօրանալ։ Մահմատ, որչափ ալ հնչուն փաստերով համոզուելու պատրաստ, տակաւին կ'ուզէր յարգել միաբաններուն հետ հաստատած հաւաձանութիւնը, և պահել Դանիէլի հաւնելուն համար տրուած 60 օրերու պայմանաժամը, որ կը լրանար մայիսի կէսին, և որուն գրեթէ ամիս մը առեր կար տակաւին։ Դաւիթ կը զգայ, որ պէտք է բոլոր ճարտարութիւնը ձեռք առնել, այդ դժուարութեան ալ յաղթելու, և Մահմատը համոզելու, որ իրեն դիմաւորական ոյժ տայ, ինքն ստանձնելով միւսացածը լրացնել և միաբանութիւնը բռնադատել։ Տեղ մը յիշուած կը գտնենք թէ Դաւիթ օգտուեցաւ նաեւ Զմիւրնոյ Ներսէս Մանասեան (ՄՍՐ. 39), որ եթէ ստոյգ է, կը ցուցնէ թէ մինչեւ ուր հասած են Դաւիթի հնարիմացութիւնները։ Նոյն օրեր Երեւան հասաւ Աքթիրմանցին ալ՝ Յովսէփի մարմինը Տիղիսէ բերելով, Ս. Գայիանէի մէջ թաղելու համար (ՄՍՐ. 39)։ Ինչ որ տեղի ունեցաւ յետոյ յունիս 8'ին (63 ԿԻՆ. 924)։ երկուքին ջանքերը Մահմատի վրայ կը զօրանան, և Դաւիթ երեւանէ էջմիածին կը դառնայ, պարսիկ պաշտօնեաներու և զօրականներու հետ։ Անոնց ձեռքով ամէն տեսակ բռնութիւն կը գործածուի միաբաններու վրայ, մինչեւ որ եպիսկոպոսները ֆանէ և խոշաբեան կը բռնադատուին (Դիի. Ե. 117), 60 օրերու պայմանաժամին լրանալէն 20 օր առաջ, ապրիլ 28'ին, Ծիննանց վեցերորդ կիրակիին, օծման կարգը կատարել Դաւիթի վրայ, որ այս կերպով կաթողիկոս կը հռչակուի և Մայրաթոռին կը տիրանայ։ Նոյն օր սկիզբ կը տրուի այն տխուր երկպառակութեանց և ներհակընդդէմ հակառակութեանց, որոնք այնչափ տաբիներ տեւեցին, կիրքերու ասպարէզ բացին, անտուղի գործեր դրգռեցին, և կ'արժէ որ մտադրութեամբ զննենք այդ եղելութեանց խակութիւնը, և Դաւիթ-Դանիէլեան խնդիրը իւր խակութեան մէջ ներկայացնենք։

ԿԱՆՈՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏԸ

2249. Ամէն անոնք որոնք այդ մասին կը գրեն, համամիտ են յայտարարել, թէ Դաւիթի կաթողիկոսութիւնը կանոնական ընտրութեամբ չեղաւ։ Միաբանութիւնը՝ Երեւանի մեծամեծներու ձայնակցութեամբ, Դանիէլը ընտրած էր, և իւր ընտրութեան վրայ կը պնդէր. Կ-Պոլսոյ պատրիարքարանը և ժո-

ղովը՝ ընտրութիւն կատարելու առիթ չէր ունեցած, իսկ Տփղիսի մէջ Դաւիթին համար աշխատողները, միայն վափաքներ յայտնած էին և հնարքներ գործածեցին, իսկ կանոնական ընտրութիւն չըրին, զի ընելու իրաւունք ալ չունէին: Իսկ Ռուսական պաշտօնէութիւնը և Երևանի խանութիւնը Հայոց կաթողիկոսութեան օրինական ընտրողները չէին: Յայտնի է ուրիշ մի որ Դաւիթի կաթողիկոսութիւնը ապրիլ 28'ի օծումէն առաջ, բնաւ կանոնական պայմաններ չունեցաւ, ըլլայ իսկ առաջուան կամ բռնադատեալ ձևի տակ: Իսկ օծումը՝ արտաքին բռնութեան ներքեւ կատարուած գործողութիւն մը եղաւ, ամէն գրողներու համաձայնութեամբ: Աստղ վկայութեան համեմատ, Դաւիթ օծուած է՝ ըզբացեալ բռնաւն ըզբոնիւթամբ խանին եբէանայ, և ահագոյեալ ըմբռնաւ այլազգի չինաորթ (ԴԻՒ. Ա. 93), կամ բռնացեալ է վիրայ ինքնակոչ յեղափոխութեամբ խանին եբէանայ (ՇԱՀ. Ա. 232): Դաւիթ կաթողիկոսացած է գանազանով պարհ և առիթ յօդուտ՝ յորում արձանով չինաց Պարսից էչմիածնին եբէանայ (ՄՍՐ. 39), և նշանաւոր խանին ըզբերբը և ըզբպերճութիւնը էջմիածնին բերել տալով (ԵՐՅ. Ա. 19). մէկ խօսքով, ոչ օրինօք, այլ խանի ըզբերբի պարտաւորութեամբ (ՋԱՄ. Բ. 146): Այս պարագաները հետազօտելով և քննելով վերջէն վերջ Աղէքսանդր կայսրն ալ համոզուած է, թէ Դաւիթի կաթողիկոս օծուիլը, էրա որ կատարեալ է բանաւորութեամբ և եբէանի խանի ջանքերով (ԵՐՅ. Ա. 20):

ՁՔՄԵՂԱՆՔԻ ԿԷՏԵՐ

2250. Դաւիթի ըրածին պաշտպան մը գտնուած է վերջին առիներ (ԴԻՒ. Ե. ՃԽ), որ ինչ ինչ պարագաներ ալ յառաջ կը բերէ անոր անկանոն օծումը արդարացնելու, գոնէ գեղեցկելու համար: Կ'ըսուի թէ էջմիածնին պարսիկ հրոսակներով չրջապատուած էր, թէ վանքը պարսիկ զինուորներով լեցուն էր, թէ վանքը կողոպտուած և քանի մը հազար դահեկանի կարօտ կը քաչէր, որոնք իբր թէ հապճեպ օծումը կ'արդարացնէին: Սակայն այդ իրողութիւնք 1801 ապրիլին չեն պատկանիր, ինչպէս պատմական պարագաներն ալ ցուցուցին, և ինքն Դաւիթ ալ կ'ըսէ թէ էջմիածնի վանքները եղած են ի խուզել ըզբոցն Պարսից յերկնէր յանցեալոն (ԴԻՒ. Զ. 37). և աւելի որոշակի ալ կը գրէ, թէ տեղի ունեցած են ի հերձանհետ, ի յորոցման ըզբոցն Պարսից, և յաւէտ եւս ի շահ կալչելոյն յայսոյս ժամանակի (ԴԻՒ. Զ. 33), որով կ'ակնարկէ հետաքրքրական Մահմատի արշաւանքներուն, զորս պատմած ենք իւր կարգին (§ 2202), և որ 15 տարի առաջ տեղի ունեցան: Կը յիշուի եւս Դանիէլի պայմանակալ առնելին չգալը, սակայն պայմանաժամը 60 օր էր, իսկ ապրիլ 10'ի երեւանի խանին նոր պնդումէն հաչուելով՝ ամիս մըն էր, հետեւաբար ապրիլ 28'ին պայմանաժամը լրացած չէր, և մինչեւ մայիսի կէսը Դանիէլ կրնար հասնիլ էջմիածին, ինչպէս մայիս 14'ին հասաւ Պայազիտ, ուղեւորութիւնը դանդաղելէն ետքը (ԴԻՒ. Ա. 91): Ըսուած է եւս թէ Դանիէլէ բնաւ լուր չկար, իսկ այդ ծանօթութիւնը գրողը Հաճի Բաբա է, որուն նամակը գրուած է կարինէ մայիս 1'ին (ԴԻՒ. Ե. 99), մինչ օծումը կատարուած էր ապրիլ 28'ին, և նամակը հազիւ մայիս 10'ին կրնար էջմիածին հասնիլ: Կը կրկնուի ու կը կրկնուի Ծովսէփի կատակը, որ ստուգութիւն չունի, և Գրիգորի մէկ կեղծիքն է, ինչպէս յիշեցինք (§ 2243), և նոյն իսկ Աղէքսանդր կայսր ալ վերջէն համոզուեցաւ, որ Ծովսէփի կոխը, որէ վրայ սկզբում հիմնուած էր Ռուսի ընդունելը, ի տօթոյ ժողովել զօրս և գալս, որ ամենեքին չէ եղած (ԵՐՅ. Ա 20): Բայց նմանէ եղած ալ ըլլար, կաթողիկոսի մը կտակը, առանց կանոնական ընտրութեան, իրաւունք մը չտեղծեր: Իսկ այն թէ պերճանութիւնը պալս էր ի հանդունութիւնը Ռուսին կոնդակս ճանչել (ԻԻՒ. Ի. ՃԸ), նախընթացաբար տրուած ընտրողական հաւանութիւն չէ: Դաւիթ ալ իւր օծումէն ետքը մայիսի մէջ ամէն կողմ գրած քանի չափ նամակներուն մէջ (ԴԻՒ. Զ. 1-36), որ միեւնոյն ոճով գրուած են, միշտ առաջ յիշուած է օծումը, և անկէ ետքը՝ պերճանք որեայ ցահիս և ժողովուրդք երկրիս զբազմինէ ընդդէմ երեցին (ԴԻՒ. Զ. 2), միշտ նախ ապրիլ 28'ի գործողութիւնը, և յետոյ ինքեան իւր մահաբեր ծանօթին՝ անգլուկութիւնը (ԴԻՒ. Զ. 10): Յիշատակագիրը յայտնապէս ալ կը գրէ, թէ զինչ օծումն

Դաւիթ պատրաստել կու տայ հանրագրութիւնները, և յակոբոս Ինէեցոցանէ ֆոքանէյն (ԴԻՒ. Ա. 95), և թէ եթ էրել քանոնիէմք՝ ֆոքանէյ (ՄՍՐ. 42)։ Հետեւաբար օրինաւորութեան և կանոնականութեան, ոչ իսկ արտաքնայարդար ձեւը պահուած է Դաւիթի կաթողիկոսանալուն գործողութեան մէջ, և յայտնի բռնութեան և յափշտակութեան հետեւանք եղած է անոր օծումն ու գահակալութիւնը։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏԸ

2251. Այդ ըլլալով հանդերձ պատմական պարագաներէն մեր քաղած եզրակացութիւնը, զարմանք պէտք չէ չարժէ, եթէ մենք անոր անունը օրինաւոր կաթողիկոսաց չարքը կը դասենք, և անոր անունով կը մակագրենք այդ տարիներուն պատմութիւնը։ Նախապէս դիտել կու տանք, թէ Դաւիթի օծուած օրը ուրիշ օրինաւոր կաթողիկոս չկար, որուն հակառակիծոս նկատուէր Դաւիթ, զի Յովհաննէսի ընտրութիւնն ալ լրացած և վաւերացում ստացած չէր։ Առաջին ընտրութիւնը արդէն ոչնչացած էր Յովսէփի ընտրուելովը և ընդունուելովը, իսկ երկրորդը՝ միաբանութեան կողմէն կատարուած, պէտք էր կ-Պոլսոյ պատրիարքութեան և ժողովուրդին կողմանէ ալ հաստատուէր, և այս կամ այն կառավարութեան կողմէն վաւերացուէր, և բան այնմ ալ ծիսական օծումը կատարուէր։ Արդ այս պայմաններէն կատարուած չէին, որով Յովհաննէս լոկ ներկայացուած էր, բայց հաստատուած, օծուած և աթոռ նստած կաթողիկոս չէր։ Այս պարագաներ իրաւունք կու տան ըսելու, թէ դեռ տրամադրելի էր կաթողիկոսական աթոռը։ Դաւիթ յաջողեցաւ գայն ձեռք անցընել, և անոր վրայ հաստատուիլ իրապէս, թէ ոչ իրաւապէս, և իր իրական կաթողիկոսութիւնը, որ արդէն իրեն համակիր հաստատած մը ունէր Երեւանի և Տփղիսի մէջ, վերջապէս միաբանութենէն ալ գործնականապէս ընդունուեցաւ, և հարկ չենք տեսներ այլեւս ընդունելուն ինչպէս պըրպտիլ, բաւական տեսնելով որ իրապէս ընդունուեցաւ։ Կ-Պոլսոյ պատրիարքութիւնն ալ ետքէն յարեցաւ այդ ընդունելութեան, և Դաւիթը կաթողիկոս ճանչցաւ, յիշատակութիւնը սկսաւ, և Օսմանեան կառավարութենէ հրովարտակն ալ խնդրեց և առաւ։ Արդէն տեղական պարսիկ կառավարութիւնը կամակից գտնուած էր, բռնութեան գործակից ըլլալով իսկ։ Ըստ այսմ կրնանք ըսել, թէ այս ալ այն բացառիկ պատահարներէն մէկն է, երբ որեւէ գործողութիւն մը, որ ապօրինի կերպով կը սկսի, հանգամանքներուն փոփոխուելովը ու ատոնց անցնելով, կը հաստատուի, կ'ընդունուի, և կերպով մը կ'օրինաւորանայ։ Եթէ չուզենք այդ եզրակացութիւնը ընդունիլ, պարտաւորեալ պիտի ըլլայինք, Հայոց ևկեղեցին վեց տարի, անգլխութեան և անհաստատութեան վիճակի մէջ դնել, եղած գործողութիւնները անվաւեր և ձեռնադրութիւնները ապօրինի ընել, և խառնակ ու չփոթ կացութիւն մը կազմել։ Ասով չենք ուզեր ոչ Դաւիթը արդարացնել, և ոչ եղելութիւնը կանոնական կարծել տալ, միայն իրական կացութիւն մը կազմել, իրաւականութիւնը զարմանելով։

ԴԱՒԻԹԻ ԱՆՁԸ

2252. Դաւիթի անձին վրայ խօսելով, պէտք է ճանչնանք անոր վրայ կարողութեան և գործունէութեան և ճարտարութեան արժանիքը, որ եթէ նեղգութեան և բռնութեան խառնուրդով խանգարուած չըլլար, պատմութեան մէջ նշանաւոր անձնաւորութիւն մը պատկերացնելու հանգամանքները վայելած կ'ըլլար։ Մենք դիտքը գործի վրայ տեսանք Ղուկասի մահուան վայրկենէն սկսելով, դժուարին պարագաներէն ճարտարութեամբ դուրս ելլալն ալ յիշեցինք, միայն թէ չբռնակ գոյն ու կերպ փոխելով, մէկէն միւս ուղղութիւնը կ'անցնէր վայրկենական ոստումներով, միակ նպատակ ունենալով իր անձը և իր բարձրացումը։ Այդ մասին Յովսէփի գգացումներուն հետ համաձայն էր, բայց չունեցաւ Յովսէփի հնարիմաց հանդարտութիւնը, և փոխանակ անոր պէս տարիներ իրեն նպաստաւոր ընելով բարձրանալու, և ամէնուն կամքով յառաջ անցնելու, պարտաւորուեցաւ յափշտակութեան դիմելու, և դէնքով ու բռնութեամբ աթոռին տիրանալու, և ետով ու սարսափով գայն պահպանելու, մինչեւ որ ստիպուե-

ցաւ ունեցածը ձեռքէ հանել՝ նոյն կերպով որ ձեռք ձգած էր։ Եթէ ձեռք ձգելուն և պահելուն կերպերը նկատի չառնենք, բոլորովին ապիկար և ապարդիւն չեզան իւր օրերը, թէպէտև միշտ ստիպակալ էր ուղղի դիրքը պահելու պայքարով զբաղիլ, քան թէ պաշտօնը արդիւնաւորել։ Մենք անաչառ պատմագիրի պարտքը ճանչնալով, ոչ Դաւիթի ջատագովութիւնը պիտի ընենք, և ոչ ալ Դանիէլի. այլ եղելութիւնները իրենց պարզ իսկութեան մէջ ներկայացնելով, անոնց հանգամանքներուն վրայ անկաչկանդ գնահատումնիս պիտի յայտնենք։ Ուսած պէտք չէ մեզ ինքիր հակասող կարծել, եթէ երկուքին մասին ալ լաւն ու վատը, օրինաւորն ու ապօրինին գրենք անխտիր։

ՄԻԱԲԱՆՈՑ ԸՆԹԱՑՔԸ

2253. Մայրաթոռոյ միաբանները, եթէ պահ մը բռնադատեալ օծումը կատարեցին, սակայն սիրտով Դաւիթի կողմը չդարձան, և միտքերնուն մէջ հաստատուն մնաց թէ կանուխէն Դաւիթի դէմ զգացած հակակրութիւններն, և թէ վերջին անգամ կրած բռնադատութիւնները դժկամակութիւնը։ Երբոր միաբաններու վրայ կը խօսինք, անոնց մեծամասնութեան և աւելի յարգելի անդամներուն կ'ակնարկենք, որովհետև Դաւիթի ալ անհնար չէր ոգոքով կամ հրապոյրով, չահելով կամ բռնանալով իրեն կողմնակիցներ ստանալ, թէպէտ և այս կերպերով ալ միայն չորս անձ չհնած լինելը կը հաւաստուի (Դիւի. ե. 218)։ Նշանակալից է 5 եպիսկոպոսներու և 11 վարդապետներու ստորագրութեամբ 1802 մայիս 20'ին գրուած և Կ-Պոլսեցւոց ուղղուած նամակը, ուր Դաւիթի մէկ տարուան իշխանութեան նկարագիրը կու տան, և իրենց կացութիւնը կը նկարագրեն։ Դաւիթի համար կ'ըսեն, թէ յոյսը բռնաւորութեան էրոյ քաջքաջոս այս ղեղեաց և ազաւաղեաց ղմեռնայն քաբեկոքոնեան, և թէ ապաքինել է խանն և է ինաբս ղբոնեան՝ առնէ լքքաբ ղոր ինչ և առնէ, և թէ գիրեր կը պատրաստէ և բռնաւորեմբ ինթել կու տայ, սպառնալով, որ եթէ ոթ է ինչ, խուխֆայէ՝ ինչպէս Պարսիկներ կ'անուանեն կաթողիկոսը, հրամանն ղանոս յանձն կոտրել, ըմբոս նոր ֆերթցեն, և խանին հաքեր ընոման պատչեցի, և եթէ ոթ ֆոխէցե, նոր է սենեն եղեալ ինչն՝ խոնին եղեցի բաղբովին (Դիւի. ե. 210)։ Ուրիշ գիր մըն ալ կը գտնենք Աստուածատուր և Բարսեղ եպիսկոպոսներէ ստորագրուած, որով կը յայտնեն, թէ Դանիէլի և Եփրեմի ոչ ընաղի ֆրեմտ առ նոսա, և ինոցանէ ընաղի ոչ առնոմտ, և հակառակ պարագային հինէ հաքեր ընոման պալոց լինիմտ խանին (Դիւի. ե. 202), և այս գիրին ալ բռնի առնուած բլալը վկայուած է (Դիւի. ե. 216)։ Վերոյիշեալ նամակագիրները կը յայտնեն ևս, թէ դեքան ոմենեթան, բաց է ղբիչ անյոց, իրենց համախոհ են, այլ առ երկիւղի չկարացին դնել ինթ (Դիւի. ե. 218)։ Իրենց համար ալ կ'ըսեն, թէ Դաւիթ իրեն դէմ եղողներուն մասին բանադրանքի նոր գիր մը առաջարկած է ստորագրել, զոր չեն ուզեր կնքել, բայց եթէ ստիպակալ կնքենք, կ'ըսեն, ակոմայ և բռնաւորեմբ ինթեալ համբերչիթ (Դիւի. ե. 216), և ըստ ինոմ ոչր ինթեալ ընաղեան մբ՝ ոսոք և առնայնոնիկեան սեպէք (Դիւի. ե. 217)։ Այս բացատրութիւնները չատ իսկ են յայտնել, թէ ինչ էր Դաւիթի գործածած կերպը, ձեռք անցուցած իշխանութիւնը պահել կարենալու համար։ Նկատողութեան արժանի է տուգանքները խանին վճարուելու պայմանը, որ ակներեւ կը ցուցնէ, թէ ուր հաստատած էր Դաւիթ իւր ոյժը, այսինքն խանին սրտաքին բռնութեան վրայ։ Ասոնց տեսութիւններով է որ Դաւիթ միաբանութեան կողմէ նկատուած էր։ 1. Իբր մերթեալ յաղթէն, և ընկճեալ չէշխանոնընեն։ 2. Իբր օրհոպէզ և սիմոնական։ 3. Իբր երկիցս նզովեալ ի դեքանոսընեն՝ ջնորհոսընեմբ օրհոց մասոնց։ 4. Իբր առ նախանձոս և վան սխալն էրոյ գործող։ 5. Իբր բարբարոս մը, որոյ ըրածները պարտ է համբել սխոտոր մտոց ալճաթեալ ձնոնք, և չբերեալ ջնջելշմանս մոլեգնելոց (Դիւի. ե. 217)։

ԴԱՒԻԹԻ ՁԱՆՁՈՒԻԼԸ

2254. Հակառակ այդ ձգտելու կացութեան, որ կը տիրէր Դաւիթի և միաբանութեան միջև, Դաւիթ ամէն միջոց կը գործածէր իւր իշխանութիւնը օրինաւոր և կանոնաւոր վիճակի մէջ ցուցնել, և մտադրութիւն դար-

Արեալ աթոռին մատակարարութեան առօրեայ պէտքերուն և ընթացիկ գործերուն։ Իր առաջին գործերէն մին եղաւ Եպիսկոպոս ձեռնադրել Դրիգոր Աբգարեանցին և կարապետ Նորնախիջեւանցին, Յովսէփի ձեռնասուններր, որոնք անոր մահուանէ ետքր Դաւիթը լրած էին իրենց պաշտպանեալը, որպէսզի փոխադարձաբար նա ալ իրենց պաշտպանն ըլլար։ Դրիգորը Ռուսիոյ առաջնորդ նչանակեց, որպէսզի Ռուսական կառավարութեան առջեւ պէտք եղածը գործադրէ իրեն համար, ինչպէս որ արդէն յաջողցուցած էր իր կաթողիկոսանալը։ Իսկ կարապետն ալ Կ-Պոլիս ղրկեց, միաբանութեան բռնի ստորագրել տրուած նանրագրութեամբ, որպէսզի Յովհաննէս պատրիարքի միջնորդութեամբ արքունի հրովարտակը ստացուի։ Կ-Պոլսոյ մէջ ալ՝ Դաւիթ իր յոյսր Ռուսական պաշտպանութեան վրայ դրած էր, որով զօրացած էր իր առաջին քայլին մէջ, և ստուգիւ ալ թամարով դեսպան, Գէորգ Աղայէկեանի միջնորդութեամբ, իր անպայման պաշտպանութիւնը նուիրեց Դաւիթի։ Յովհաննէս պատրիարք ալ չուտով այն կողմր հակեցաւ, և պատրիարքական ազդեցութեամբ Դաւիթի պաշտպան կանգնեցաւ։ Դանիէլեան կողմնակիցներ չատ խիստ են Յովհաննէսր դատապարտելու, իբր անձնասէր և չհնազանդ դիտումներէ մղուելով Դաւիթը պաշտպանող մր։ Այլ մեր տեսութեամբ Յովհաննէս ունէր գործնական միտքի հետեւող մր կ'երեւի, հետու չատ մր վերացական կամ ձեւակերպական տեսութիւններէ, կատարեալ իրողութեանց համակերպող մր, և գաղափարական նպատակներու համար վրդովումներ չյարուցանող մր։ Յովհաննէս կը տեսնէր Դաւիթը օծուած, պարսիկ և Ռուս կառավարութիւններէ պաշտպանուած, նոյնիսկ Կ-Պոլսոյ մէջ ալ Ռուսական դեսպանատունէն հովանաւորուած։ Կր մտածէր որ Դաւիթ կերպով մրն ալ չարունակութիւն կր սեպուէր արդէն ընդունուած Յովսէփի կաթողիկոսութեան (§ 2232)։ Յովհաննէս այդ պարագաներր նկատի առնելով չէր ուզեր կատարուած իրողութեան դէմ գնալ, նորէն վրդովումներ ստեղծել, պարզապէս Դանիէլի պաշտպանութիւնը ըրած ըլլալու համար։ Դանիէլեանք Յովհաննէսր կր մեղադրեն, թէ ցաւած էր Դանիէլի դէմ, իրեն կաթողիկոս ընտրուած ատենր՝ Դաւիթը և ոչ զինքը պատրիարքութեան անցընելուն համար (§ 2227), և թէ այդ բանին վրէժը լուծելու համար Դաւիթի կողմը կր բռնէր (Դիւ. Ա. 95)։ Բայց այս կէտեր աւելի յարմարութեամբ մտածուած բաներ են, քան թէ իսկական իրողութիւն, ապա թէ ոչ միեւնոյն գրգռութեամբ պէտք չէր որ Դաւիթի ալ նպաստաւոր ըլլար։ Հետեւաբար աւելի պատմական կր կարծենք Յովհաննէսի գործնական ուղղութեան վերագրել Դաւիթի յաջողիլը, որով Օսմանեան կայսրութեան հրովարտակը ստացուեցաւ 1801 յունիս 14'ին (Դիւ. Ա. 98), կարապետ Նոր-Նախիջեւանցին ալ զայն առնելով օգոստոս 19'ին Կ-Պոլիսէ մեկնեցաւ, և կարնոյ ճանապով նոյեմբեր 10'ին, կիրակի օր, Էջմիածին հասաւ, կամ թէ նոյեմբեր 9'ին, եթէ պինդ պիտի բռնենք չաբաթ օր հասած ըլլալը (Դիւ. Ա. 96), Հրեչտակապետաց տօնին օրը։

2255. Դանիէլը ձգեցինք Եւդոկիոյ մէջ ուր հասաւ 1801 յունուար 22'ին (§ 2246), և ուր մնաց 80 օր, իբրեւ

ԴԱՆԻԷԼ Ի ՊԱՑԱԶԻՏ

հիւր և ոչ իբրեւ առաջնորդ, և ապրիլ 11'ին մեկնեցաւ իր հետեւորդներով և Էջմիածինէ եկող առաջին երկու հրաւիրակներով, որք էին Յովհաննէս Պաուաւեան և Ներսէս Աչտարակեցի վարդապետները (§ 2247)։ Դանիէլ, ինչպէս ուրիշ անգամներ, այս անգամ ալ հանդարտաբայլ կր յառաջէր։ Սեբաստիոյ և Ակնայ մէջ քանի մր օրեր կ'անցընէ, և կապանմատէնի մէջ հիւր կր մնայ Փիլիպպոս Արփիարեան ամիրային, և հոն եղած ատեն կր ստանայ, Էջմիածինի երկրորդ հրաւիրակներուն՝ Ղազար և Մանթիանոս եպիսկոպոսներու կարինէ գրած նամակը, որով կ'առաջարկէին ուղեւորութիւնը փութացնել (ՄՍՐ. 39)։ Իսկոյն յաջորդ առտուն ճանապայ կ'ելլէ (ՄՍՐ. 40), և մայիս 7'ին, Շուռվերէն անունով գիւղը հասած օրր, լուր կ'առնէ ապրիլ 28'ին կատարուած օծումին մասին (§ 2248), և ամենքն ալ ապչած կր մնան. զի և ուշ

ընդելուզ ինչ խորթաբեղ (ՄՍՐ. 40)։ Դանիէլի Մչոյ Ս. կարապետը հանդիպած ըլլալն ալ գիտենք (ՄՍՐ. 40). բայց միջոցը ճշդելու համար հարկ կ'ըլլար նչանաւոր դարձած Շուվերէն գիւղի դիրքը գիտնալ։ Այս տեղի հասնելէն երկու օր ետքը մայիս 14'ին, Հոգեւորականաց երեքշաբթիին, կը հասնին Պայազիտ, հրաժարելով կարնոյ վրայէն էջմիածին երթալէ, քանի որ Դաւիթ օծուած և աթոռին սիրապետած էր։ Շատ անգամ ամենամանր պարագաներ են՝ որ ամենածանր հետեւանքներ կ'ունենան. այդ պարագային այլ հնար չէ չդիտել, որ եթէ Դանիէլ ապրիլ 11'ին եւդոկիայէ մեկնելէ ետքը՝ այստեղ այնտեղ չմնար, և ուղղակի կարնոյ վրայէն էջմիածին երթար, ապրիլ 28'էն առաջ հասած կ'ըլլար. և ազգն ու եկեղեցին անեղ տագնապի մը չէր ենթարկուեր։ Եթէ Դանիէլ, իր ուղիղ և ընտիր բնաւորութեան չափ՝ գործունեայ և ճարտար ձիրքերով ալ փայլէր, կամ եթէ Դաւիթ իր գործունեայ և ճարտար ձիրքերուն չափ՝ ուղիղ և ընտիր ընթացք ալ ունենար։ Բայց մենք եղելութեանց հետեւինք։

ՄԱՆՈՒԷԼ ՊԱՅԱԶԻՏԱԿ

2256. Վերջին ղրկուած հրաւիրակներ, Ղազար և Ստեփան եպիսկոպոսներ ալ կարծրնէ Պայազիտ եկան, և Դանիէլի առաջին հրաւիրակներուն հետ միանալով սկսան ինչ ընելիքնին կարգադրել։ Որովհետեւ էջմիածին սիրապետել էր և միաբանութիւնը բռնադատեալ, և Պարսիկ ու Ռուս կառավարութիւնները ալ չհաւնած էին, Դանիէլեանք աչուընին Տաճկահայոց վրայ դարձուցին, և այնտեղէ օգնութիւն և պաշտպանութիւն գտնելու համար ճանապայ հանեցին Դանիէլի հետեւորդներէն Մանուէլ Կիւմիւչխանացի վարդապետը, որ Ալթունեան (63 կին.741), և Շահինեան (ՄՍՐ. 41) կը կոչուի անխտիր, որ և մայիս 21'ին ճանապայ ելլալով յունիս 2'ին կ-Պոլիս կը մտնէր հապճեպ ուղեւորութեամբ (ՄՍՐ. 43)։ Բայց չէր կրնար արգելել դեսպանատունին և պատրիարքարանին համամտութեամբ կազմուած՝ Դաւիթի նպաստաւոր հռչանքը, որ արդէն յառաջացած էր, և քիչ օր ետքը յունիս 14'ին կատարուէր Դաւիթի կաթողիկոսութիւնը հաստատող արքունի հրովարտակը (§ 2254)։ Այսու հանդերձ Մանուէլ անգործ չէր, և ղածը ղղծանելու և Դանիէլի նպաստաւոր չարժում մը գոյացնելու ջանքեր չխնայեց. բայց չկրցաւ Յովհաննէս պատրիարքի վրայ ազդել, որ Դաւիթի կաթողիկոսութիւնը լրացնող գործ կը նկատէր, և Դանիէլի համար ըլլալիք ճիգերը իրենց նոր չափութեանց աղբիւր կը դառնէր։ Յովհաննէս միանգամընդմիշտ խնդիրը փակելու համար, յուլիս 20'ին, չաբաթ օր, աւագանւոյ ժողովով մրն ալ գումարեց, և Դաւիթի նպաստաւոր որոչում մը կայացուց, և միաբանութենէն կորզուած հանրագիրին ներքեւ իրն ու մեծամեծներուն կնիքներն ալ աւելցուց և կարապետ Նորնախիջեւանցիին յանձնեց, որ հրովարտակին հետ Դաւիթին հասցրնէ (ՄՍՐ. 44), և օգոստոս 19'ին զայն ճանպայ հանուց (§ 2254)։ Ժողովէն օր մը առաջ, յուլիս 19'ին, կ-Պոլիս կը հասնէր Ներսէս Աշտարակեցի վարդապետն ալ (ՄՍՐ. 44), Մանուէլի հետ աշխատակցելու. բայց չատ ուշ էր և Յովհաննէսի կարգադրութիւնները եղած էին։ Ներսէս յոյսը չկտրեց, այլ աւելի մեծ ճիգերու ձեռնարկեց, որպէս զի ընդգրկած դատը պաշտպանէ, և Դանիէլի կաթողիկոսութիւնը հաստատել տայ, Դաւիթը տապալելով, եթէ հարկ ըլլար՝ Յովհաննէսն ալ միասին, եթէ մինչեւ վերջ իրենց կողմը դառնալու ընդդիմանար։

ՆԵՐՍԷՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

2257. Առաջին անգամը չէ որ Ներսէս Աշտարակեցի վարդապետի անունը կուտանք, և զոր օր մը կաթողիկոսական աթոռին վրայ պիտի տեսնանք, ուստի պէտք է կանխենք, և անոր նախընթացին վրայ կարեւոր բացատրութիւններ տանք։ Ներսէս Արագածոտն գաւառի Աշտարակ գիւղէն էր, 1770'ին ծնած, որով 1801'ին իր ընդարձակ գործունէութեան սկիզբը, 31 տարեկան ժիրաժիր գործիչ մըն էր։ Հայրը գիւղին տէր Յարութիւն քահանան էր, Ջրաղացպանութենէ եկած, աղքատ դասակարգի կը պատկանէր, և իր երկու զաւակները, Ներսէսն ու կարապետը, Գալուստ եպիսկոպոսին մօտ դրած էր իբրեւ սպասաւոր կամ փոքրաւոր

(ԴԻՒ.Ի։ԼԲ)։ Ներսէսի բնտանիքը Շահապիզեան մականունով ճանչցուած է, կամսարական տոհմին ազգական վկայուած է, թէպէտ ըսողներ կան, թէ վկայականը ապառնալւով էր վերջրէլ Դանիէլի ձեռքէն (ԴԻՒ.Է։Լ)։ Բայց եթէ այդպէս ալ ըլլար, Ներսէս աւելի յանցաւոր չէր ըլլար իր անտոհմիկ ազնուականութեան փափաքովը, քան Յովսէփ իր Արդութեան երկայնաբազուկ իշխանազուն և լուսաւորչեան և արքայական յեղէ ըլլալուն կեղակարծ ազգաբանութեամբը։ Ներսէս իր պատանեկութենէն էջմիածնի գպրանոցին կ'աչակերտի, և իր ուշիմ աչակերտ Դանիէլ Սուրմառեցի եպիսկոպոսին պաշտպանութեանը կ'արժանանայ, անոր ձեռքին ներքեւ կը կազմուի և կը յառաջէ, և Դանիէլի հետ միասին էջմիածինէ Զմիռնիա կու գայ անոր նուիրակ ղրկուած տարին 1796'ին (§ 2182)։ Ներսէս մեղադրուած է, թէ իրեն պատճառով Եղբ ձերոնէ Դանիելը Զմիռնիոյ առաքելական աթոռոյն (ԴԻՒ.Ի։ԼԲ), սակայն չենք գիտեր թէ ինչ պարագայով, և ինչչափ ստուգութեամբ, քանի որ պատմուած յիշատակ չենք գտներ։ Անկէ ակսելով Ներսէս անբաժան մնաց Դանիէլէ՝ Հուսիկի նուիրակութեան և անկէ կ-Պոլիս դառնալուն ատեն, մինչեւ որ Դանիէլ՝ 1799'ին պատրիարք ընտրուելէն ետքը, զայն էջմիածին ճանապայ հանեց, իր հաշիւներն ու ընծաները Ղուկաս կաթողիկոսին տանելու համար (§ 2223)։ Անկէ ետքը Ներսէս էջմիածին մնաց՝ իբր երկու տարի, և Ղուկասի մահուանէ ետքը տեղի ունեցած անցուդարձերուն մասնակցեցաւ, մինչեւ որ 1801 մարտ 20'ին Յովհաննէս Պառաւեան վարդապետի հետ հրաւիրակ նշանակուեցաւ Դանիէլը ետդոկիայէ էջմիածին բերելու (§ 2244)։ Արդէն յիշեցինք, միասին եւդոկիայէ Պայազիտ ուղեւորիլը (§ 2255), և Պայազիտէ կ-Պոլիս պատգամաւոր դալը (§ 2256)։ Ներսէս հասակով և կազմով մանր մարդ մը եղած է, թէպէտ հոգւով ու սիրտով՝ մեծամիտներու ձգտող, և գործունէութեամբ՝ չափ ու կոպար չգիտցող։ Բայց մենք չենք ուզեր այդ մասին մեր կ'նահատումը կանխել, թողլով որ եղելութիւնք անոր նկարագիրը լուսաբանեն։

2258. Երբոր Ներսէս կ-Պոլսոյ մէջ բուռն ճիգեր կ'ընէր Դանիէլի կաթողիկոսութիւնը իրականացնելու, գործը աւելի յաջող պաշտպան մը կ'ունենար՝ Հուսիոյ առաջնորդ Եփրեմ եպիսկոպոսով։ Եփրեմ ալ ժամանակին նշանաւոր դէմքերէն է, և նա ալ կաթողիկոսական աթոռ բարձրացած է։ Հայրը բնիկ էր Զմիւռնիոյ նահանգին Մաղնիսա քաղաքէն, բայց ինքն ծնած էր 1748'ին Զորագէղ գիւղը, որ այժմ երեւան քաղաքի թաղ կը սեպուի. և Մայրաթոռոյ աչակերտութեան մէջ յառաջացած էր հետզհետէ մինչեւ եպիսկոպոսական աստիճան։ Իր կեանքին գլխաւոր գործն եղած էր Հնդկաստանի արդիւնաչատ նուիրակութիւնը, ուսկից ետքը 1799'ին փոխադրուած էր Հուսաստանի նուիրակութեան Ղուկասի կարգադրութեամբ (§ 2218), որ կ'ուզէր կնպռով մը Արդութեանի բացարձակ տիրապետութեան չափ մը դնել։ Միաբանութիւնը առաջին անգամէն ղինքն կաթողիկոսութեան արժանի դատած էր (§ 2219), թէպէտ Եփրեմ հեռու էր այդ ձրգտումներէն, և յօժարակամ մէջտեղ դրած էր Յովսէփի ընտրելիութիւնը (§ 2221), և ըստ ամենայն ձեռնտու եղած էր անոր յաջողելուն։ Միայն թէ հաչտ չէր Դաւիթի անձին հետ, որուն ներքին բնաւորութիւնն ու կիրքերը իրեն լաւ ծանօթ էին, և չկըրցաւ հպատակիլ անոր կաթողիկոսութեան, բայց ոչ երբեք իր անձին վրայ դարձնելու դիտմամբ, այլ միաբանութեան ընտրած և իր ընտիր բնաւորութեամբը նախադասուած Դանիէլը պաշտպանելով։ Դաւիթ գիտնալով Եփրեմի հեղինակութիւնը, կը ջանար գայն իր կողմն ունենալ կէս ողոքական և կէս սպառնական խօսքերով։ Սէրբէլէր, կը գրէր, խըճդառնաւոր եմ և քաբեհամբոյր, և ընէ չէ-ըոլէն ինչ և քան սերըզական է ինն ելանիցէ, և օգոտ մի ոչ երբեմն, յեզոյ տըրըջանալոց եմ և խըճահարելոց (ԴԻՒ.Զ.8), և կը խրատէր, չէ չէլոտ ես մի պայցես է չքաղմանս և է վնճ, այլ հանգարտութեամբ վարեսցես ջանչնելը ինչ էրծ (ԴԻՒ.Զ.9)։ Դաւիթ երկրորդական նպատակ ալ ունէր Եփրեմը չանելու, վասնզի Յովսէփի Հուսաստանէ չմեկնած Հուսիոյ առաջնորդութիւնը փոխանցած էր

Եփրեմի (§ 2234), իսկ Դաւիթ Գրիգորի հետ պայմանաւորեալ էր Ռուսաստանի առաջնորդութիւնը անոր տալ իբրեւ վարձ (§ 2254)։ Դաւիթ կ'ուզէր Եփրեմը հեռացնել, բայց Ռուսիոյ Հայերը երբեք յանձն չառին Գրիգորը առաջնորդ ունենալ, սպառնալով իսկ որ եթէ գայ՝ խոչոռակ. և Եփրեմի յայտարարելով, թէ դու ես մեր առաջնորդ (ԴԻԻ. Ա. 93)։ Այս պատճառով Գրիգոր չկրցաւ Ռուսաստանի մէջ առաջնորդ ճանչցուիլ, այլ քաշուեցաւ Քիչնեւ քաղաքը, ուր չորս ընդհանուր պաշտօնէից, կամ մեր բացատրութեամբ՝ իբր կաթողիկոսական փոխանորդ, և ալին կոչուէր, և ոչ ինչ ունէր ընդ ձեռն գոհ էր (ԴԻԻ. Ա. 93)։

ԵՓՐԵՄ Ի ՄՈՍԿՈՒԱ

2259. Եփրեմ չգոհացաւ վերապահեալ դիմադրութեամբ, այլ յայտնապէս գործի ձեռնարկեց, Դաւիթը տապալեցնելով ճիշդ այն կողմէն, որով նա զօրացեր էր, այսինքն Ռուսաց պաշտպանութիւնը իրմէ խլելով։ Լսելեացն պատրաստեց իւր հակառակութեան ծրագիրը, յարաբերութիւն պահեց Դաւիթի հակառակորդ միաբանութեան գլխաւորներուն հետ, և անոնց թելադրեց պէտք եղած ամբաստանութիւնները հաւաքել Դաւիթի վրայ, և հաղորդել ուղղակի Լազարեանց տունին պետ Յովհաննէսի, և անոր Մինաս և Յովսէփ եղբայրներուն, որոնցմէ առաջինը Պետրբուրգ կը մնար, իսկ վերջինները Մոսկուա էին։ Դանիէլի ալ ազդարարեց որ ուղղակի Ռուսաց կայսեր դիմում ընէ իւր իրաւունքը հաստատելով, և իրեն դէմ եղած անիրաւութիւնները բացատրելով։ Ինքն ալ Ռուսաստանի Հայերէն, և գլխաւորաբար Աստրախանի ու Մողդոկի ու Ղըզլարի հասարակութիւններէն իրեն նպաստաւոր, և Դաւիթէն նշանակուած Գրիգորի դէմ գրութիւններ պատրաստել տուաւ (ՄՍՐ. 45), միանգամայն Կ-Պոլսոյ հետ ալ յարաբերութիւնները մշակեց, և պէտք եղած հրահանգները ներքսէսի կուտար, և անկէ լուրեր կը ստանար (ՄՍՐ. 46)։ Եփրեմի նպատակն էր Աղեքսանդր Ա'ի օծման հանդէսին ներկայ գտնուիլ. որ պիտի կատարուէր Մոսկուայի մէջ 1801 սեպտեմբեր 15'ին կիրակի օր. հետեւաբար նախապէս պէտք էր Մողդոկի Ռուս կուսակալին հաւանութիւնն ու պաշտպանութիւնն ապահովել, և այս նպատակով իվեր հանել Դաւիթի գործերուն ապօրինութիւնները, Յովսէփի կտակին սրտութիւնը, Դաւիթի զինուորներու բռնութեամբ օծուիլը, Էչմիածինի մէջ սիրող հակառակութիւնը, Կոստանդնուպոլսոյ մէջ տեղի ունեցած անհամաձայնութիւնները, Դաւիթի կեղծուպատիր ուղղութիւնը, Ռուսական չհներէն ասելի երեւանի խանութեան նպաստաւոր ըլլալը, և այլ սոյնպիսի պարագաները, որոնք ազդեցին կուսակալին վրայ, և Եփրեմը արտօնեց Մոսկուա երթալ, յանդիման լինել կայսեր, մերկել ղազրոսակ ճշմարտութեան, և խնդրել էրտառնս։ Այդ առաջին յաջողութեամբ ոգեւորուած, Եփրեմ մայիս 15'ին Կ-Պոլսեցոց կը գրէր, թէ Մոսկուա կ'երթայ ձանձացնել շնորհանիւն Դրէզդէն և Դաւիթ, և կը սրատապնդէր բսելով, զոհ ի վերայ ճշմարտութեան հաստատուն կայէ (ՄՍՐ. 47)։ Դաւիթի անկարգ ընթացքն ալ կրնար իբր փաստ ծառայել, և անշուշտ Եփրեմ զանց չըրաւ Մայր աթոռին մէջ Դաւիթի գործած բռնութիւններն ալ պատմել կուսակալին և որոց որ պէտք էր, իբր իւր ստանձնած գործին նպաստաւոր փաստեր։

ԱՂԵՔՍԱՆԴՐ ԿԱՑՍՐ

2260. Եփրեմ իւր նախապատրաստութիւնները աւարտելով 1801 օգոստոս 27'ին, երեքշաբթի օր կը հասնէր Մոսկուա, կը հասնէին նաեւ իւր թելադրած գրութիւնները (§ 2259). և Յովհաննէս Լազարեան կատարեալ հեռանդով գործին կը փարէր։ Ինքն Պետրբուրգի կառավարական շրջանակներու մէջ կը յաջողէր Եփրեմի առաջնորդութիւնը հաստատել տալ, և Դաւիթի մասին աննպաստ հոսանքը կը զօրացնէր. Եղբայրներուն ալ կը յանձնարարէր, որ Մոսկուայի մէջ պէտք եղածը հոգան։ Եփրեմ պաշտօնապէս ներկայ կը գտնուէր սեպտեմբեր 15'ին, Աղեքսանդրի թագադրութեան և օծման հանդէսին, կայսեր մօտ ալ ընդունելութիւն գրաւելով, Դանիէլի իրաւունքը կը բացատրէր, և կայսրը կը համոզէր. ոչ միայն իւր առաջնորդութիւնը կը ճանչցուէր և պահակ կրելու արտօնութեամբ կը պատուուէր

(ՄՍՐ· 47), այլ և կը ստանար սեպտեմբեր 26'ի նշանաւոր հրովարտակը, որով կայսրը դևսպան Թամարովի կը հրամայէ ուղղութիւնը փոխել, Դաւիթի համար եղած պաշտպանութիւնը դադարեցնել, Դանիէլի կաթողիկոսութիւնը պաշտպանել, յիշելով Դաւիթի ներգութիւնները, ինչպէս իւր կարգին ակնարկեցինք (§ 2250)· և կ'եզրակացնէր այդ գերազանց յայտարարութեամբ, թէ որչափ ալ առաջ գործուածը Ռուֆոյ համար օգտաւէտ համարուի, ես սէյլ լաս էմ համարամ այս անգամ զոհել այդ օգուտները, քան ընդհարուիլ ժողովրդական յայնը, և յետոյ լինել ճշմարտութիւնը խնդրելու (ՍՐՅ· Ա· 20)· Միևնոյն հրահանգը կը տրուէր Կովկասի կողմանց կուսակալ Կսօրինի, և յանկարծ հիմնապէս կը փոխուէր Ռուս պաշտօնէութեան ուղղութիւնը· Ասոր պատճառն էր Աղեքսանդր Ա կայսեր լուսամիտ որոշումը, որ չէր վարաներ թիւրիմացութեամբ սկսած գործէն ետ դառնալ, երբոր ճշմարտութեան կը հանդիպէր (ՍՐՅ· Ա· 21)· Իրաւամբ արտաքիններն ալ՝ էյ ... արդար և խոշոր հռչակած են Աղեքսանդրը (ՇՕՐ· 413)· Անոնք որ Դաւիթին ընթացքը չքմեղելու նպատակն ունին, Դանիէլը և Դանիէլեանները կը մեղադրեն, թէ Ռուսական պաշտպանութեան գիրկը ինկան, և Ռուսներուն դէպ Հայաստան ընդարձակուելուն օգնեցին, իբր թէ ուզէին ըսել, թէ ապօրինի և անտեղի միջոցով զօրացան· Սակայն կը մոռնան յիշել, որ Ծովսէփի յաջողութեան հիմը Ռուսական պաշտպանութիւնն էր եղած, և իրենք Ծովսէփը օգտակար ուղղութեան հեղինակ կ'ընդունին· Զեն յիշեր թէ Դաւիթ ինքզինքը իբրև Ծովսէփի ուղղութեան չարունակող ներկայեց Աքքիրմանցիին հովանաւորութեամբ, և անով իր նախաքայլը առաւ· Միտքերնին չեն ուզեր բերել, թէ երեւանի խանը առաջ Դանիէլի պաշտպանութեան միտեալ էր, և միայն Ռուսական հրահանգներու ազդեցութեամբ միտում և ընթացք փոխեց, և Դաւիթի պաշտպան դարձաւ· Հետեւաբար երկուքին ընթացքները իրարու մօտեցնելով, կամ պէտք է Դանիէլը արդարացնէն Դաւիթի հետ բաղդատութեամբ, իսկ եթէ Դանիէլը պիտի մեղադրէն, անկէ առաջ Դաւիթը մեղադրանքի պէտք է ենթարկեն, և գատապարտեն անոր կաթողիկոսանալը· Մեր տեսութեամբ Ռուսական պաշտպանութիւնը՝ Պարսկական տիրապետութեան նախադատողները կ'արդարանան, և առանց երկար պատճառաբանութեանց մանելու, բաւական սեպուի 1801'ի Պարսկական Հայաստանը բաղդատել այժմեան Ռուսական Հայաստանի հետ· Եթէ չի մեղադրուիր Դաւիթը Ռուսական հովանաւորութեան դիմելուն համար, պէտք չէ որ Դանիէլը կամ եփրեմը մեղադրուին, նոյն գէնքը Դաւիթի դէմ գործածած ըլլալնուն համար·

2261· Երբոր եփրեմ Ռուսիոյ կողմէն Դանիէլի պաշտպանութիւնը կը պատրաստէր, Դաւիթ այն կողմէ

Կ-ՊՈԼՍՈՅ հովանաւորութիւն գըտնելէ յոյսը կտրելով, Տաճկական պաշտպանութեան

ևուէէ կ'ըլլար, ուր Ծովհաննէս պատրիարքի ազդեցութիւնը՝ և իր անուան ստացուած հրովարտակը իրեն համար կարեւոր ոյժեր էին· Միւս կողմանէ Դաւիթ, որ պաշտօնեաներ չտեղով ձեռքի տակէն գործեր կատարել տալու հմուտ էր, կ'աշխատէր Պայազիտի Օսմանեան կուսակալին օգնութեամբ Դանիէլը թակարդի մէջ թողուլ, և իրեն ձեռքին ներքեւ առնելով, զայն ընկճել, և այսպէս հակառակութիւնը հիմէն քանդել և կործանել· Բայց գաղտնիքը երեւան ելաւ, և Դանիէլ զայն հաղորդեց Կ-Պոլիս, ուր էին իր հաւատարիմները՝ Մանուէլ և Ներսէս, անոնք ալ չարժուին դրին իրենց համախոհ ամիրաները, որոնք բարեկամ աւագանիին միջնորդութեամբ յաջողեցան տարկ եղած հրահանգները ղրկել տալ Պայազիտ և կարին, որով Դանիէլ կրցաւ Պայազիտէ կարին փոխադրուիլ, և տեղական կուսակալին հովանաւորութեան ներքեւ, Դաւիթի լարած ծուղակին մէջ իյնալէ զերծ մնալ· Կ-Պոլիսէ ղրկուած հրամանին թուական կը ցուցուի 1801 հոկտեմբեր 8 (ՄՍՐ· 48), Մոսկուայի մէջ ստացուած յաջողութենէն քիչ օր ետքը· Թերեւս Ռուսիոյ արձագանգը, և եթէ եղելութիւնը ոչ՝ գոնէ եփրեմի վըստահացուցիչ նամակին ազդեցութիւնը (§ 2259), ոգեւորած էր Կ-Պոլսոյ Դանիէլեանները, ժրութեամբ գործել իրենց նպաստա-

կին իրականացման համար։ Առաջին յայտ քայլին վրայ քիչ օր անցաւ, և նոր այժ ստացան Դանիէլեանք Եփրեմ եպիսկոպոսի սեպտեմբեր 19'ին գրած նամակով (ՊԷՐ. 30-37), որ կ-Պոլիս հասաւ հոկտեմբեր 17'ին (ՄՍՐ. 48)։ Նամակը ուղղուած էր Յովհաննէս պատրիարքին, և մայրաքաղաքի իշխանաց, ամիրայից, էնաֆից, արհեստաւորաց և ժողովրդականաց (ՊԷՐ. 30), որով պատրիարքին հնար չեղաւ զայն ծածուկ պահել։ Եփրեմ ազդու և սթափեցուցիչ ոճով գրած էր իւր նամակը. Զարմէր Պալեոր (ՊԷՐ. 30), և Աւաղ կորսո՛ է վերայ անյնոր, ով Պալեոր լեհալ (ՊԷՐ. 31) բարառնութիւններով, և մեղադրելով որ Դանիէլը՝ կ-Պոլսեցոց ընտրեալը լինելով՝ չեն պաշտպաններ։ Յովսէփի կաթողիկոսութիւնը յիշելով, կը դիտէր, որ նա ոչ միայն հնոփոյն արխեպիսկոպոս էր, և հոծ փաթաւ էր յաչս կայսերն Պոլսոյ, այլև չյանդգնեցաւ կաթողիկոս հրուչակուիլ և էջմիածին երթալ, այլ սպասէր ընծհաւորելոն կ-Պոլսոյ (ՊԷՐ. 31)։ Ասոր կը հակադրէ Դաւիթը, որ առանց կ-Պոլսոյ հաւանութեան, արտաքին բռնութեամբ օծուեցաւ, զի է ժամ ըօծման, Մահմետական ընաօրէ՝ արվէ և մրճվէ և այլ հոգեցնչական փոքթեօ սաս սալով՝ օծել տուած են (ՊԷՐ. 35)։ Կը յիշէ Դաւիթի բռնութիւններն ալ, զոր չկրնայինս կ'անուանէ, կը հրաւիրէ որ Դանիէլը հռչակեն, և կը թելադրէ որ գրեն Դանիէլին փնալ յԻսպիւնս, որ է Բագրեւանդայ Ս. Յովհաննէսը, և անդ օծանիլ (ՊԷՐ. 35)։ Կը պատմէ Ռուսաց կայսեր խոստացած պաշտպանութիւնը, Թամարովի տրուած հրահանգը, և ժողովրդական ընտրութեան պաշտօնագիրին սպասուիլը, որ Ռուսաց կայսրէն Դանիէլի անունին հրովարտակ ալ տրուի (ՊԷՐ. 36)։

2262. Եփրեմի նամակին ազդած ոգևորութենէն անմասն մնաց միայն Յովհաննէս պատրիարք, զոր աւելի քան Դաւիթի անձին, ընդհանուր հանդարտութեան կուսակից, և աւելորդ խնդիրներէ զգուշացող ցուցուցինք (§ 2256)։ Սակայն գոնէ այս անգամ պէտք էր որ իւր նախընտրած ուղղութենէն հեռանար, քանի որ մեծ էր Դանիէլեան համակրութիւնը, և զօրաւոր զայն կաթողիկոսացնելու եռանդը, և աւելի զօրաւոր Դաւիթի բռնական ընթացքին զղուանքը։ Չենք գիտեր, թէ Դանիէլեան ոգևորութեան վրայ մեծ վստահութիւն չունենալէն, թէ ոչ մտած ճանպէն ետ չդառնալու յամառութենէն, կամ թէ որևէ անձնական օգուտի մը սպասկէտէն, Յովհաննէս ձեռք չթողուց Դաւիթի պաշտպանութիւնը, և իրեն վրայ հրաւիրից հանրային հակակրութիւնը, որով Դանիէլեանք Դաւիթէ առաջ Յովհաննէսը տապալել որոչեցին։ Այդպիսի առիթներու մէջ Տաճկական պաշտօնեաներու համոզելու համար գործածուած ազդեցիկ և հնչուն փաստերը ձեռք առնուեցան, և քիչ օրուան մէջ Յովհաննէսի պաշտօնանկութեան արքունի հրամանը ստացուեցաւ, և նամակին հասնելէն 12 օր ետքը, 1801 հոկտեմբեր 29'ին (ՊԷՐ. 39), Յովհաննէս կ-Պոլիսէ կը հեռացուէր, Եւդոկիա քաղաք աթոռ տարուելու համար, ուր ղրկուած էր Դանիէլ 1800'ին առաջնորդի անունով, և հոն հաստած էր 1801 յունուար 22'ին (§ 2246)։ Հաւանական է որ առաջնորդի անունը տրուած ըլլայ Յովհաննէսի ալ, թէպէտ յայտնի գրուած չէ։ Յաջորդի ընտրութեան համար պայման էր այնպիսի մէկը ընտրել, որ չկրնայ Դանիէլէ ըստացօղ, և չկոչուէր նորին նստճեցի, և Դանիէլեանց ուսվիրաները Մանուէլ և Ներսէս վարդապետներ, իրենց ձայնակից ունենալով կաղզուանցի Պօղոս քահանան, Զաքարիա պատրիարքի եղբօրորդին (ՊԷՐ. 37), թելադրեցին Գրիգոր Խամսեցի եպիսկոպոսի անունը, որ իրենց ուսուցիչն էր եղած (ՉԱՄ. Բ. 147), Եւդոկիոյ մէջ իրենց օգնած էր Դանիէլը ճանպայ հանած ատեններին (§ 2247), և որ տակաւին Եւդոկիոյ չրչանակին նուիրակութիւնը կը կատարէր (ՊԷՐ. 37)։ Մինչեւ Խամսեցիին հասնիլը անդապահ նչանակուեցաւ Յակոբ եպիսկոպոս (ՄՍՐ. 48), երուսաղէմի փոխանորդ (ԴԻՒ. Ա. 112), և Ստուածատուր կ-Պոլսեցի վարդապետ հրաւիրակ յղուեցաւ, թերեւս Յովհաննէսի ալ ընկերացաւ Եւդոկիա, և այնտեղէն Խամսեցիին առաջնորդից, որ մայրաքաղաք հասնելով, կառավարութեան ներկայացաւ 1801 դեկտեմբեր 19'ին, հինգշաբթի օր, և

ղէլշ յօշոնօօ չքեցս (ԴԻԻ. Ա. 115), և պաշտօնին ձեռնարկեց, իրեն փոխանորդ առնելով Ռումէլիի նուիրակ Գէորգ Եպիսկոպոսը (ՊԼՐ. 38)։

ԴԱՒԻԹ ԵՒ ՄԻԱԲԱՆՔ

2263. Դանիէլեանց այդ առաջին յաղթանակը, ճանապայ կը բանար իրենց բուն նպատակին հասնելու, որ էր Դաւիթը տապալել, և Դանիէլը կաթողիկոսական աթոռ բարձրացնել, սակայն քաղաքական հանգամանքներ՝ դժուարութիւններ կը ներկայացնէին։ Դանիէլեանց մեծ զօրութիւնը Տաճկական չրջանակին մէջն էր, հովանաւորութիւնն ալ Ռուսական չրջանակէն կու գար, մինչ Մայրաթոռն և անոր տիրապետող Դաւիթը՝ Պարսկական չրջանակին մէջ էին, որով դժուար կ'ըլլար ուղղակի Դաւիթին վրայ ազդեցութիւն կամ ատիպում կամ բռնադատութիւն բանեցնել։ Միւս կողմէն Երեւանի Մահմատ խանը ամուր կը պահէր այն պաշտպանութիւնը, զոր վերջին անգամ սկսած էր ցուցնել Դաւիթին (§ 2245), մանաւանդ որ Դաւիթ գիտէր պատշաճ կերպերով, և պահանջուած միջոցներով մչակել Մահմատի բարեացակամութիւնը, և ոչ մի զոհողութեան առջև կանգ չառնել՝ Մահմատը իրեն պաշտպան պահելու համար, որ իր միակ հովանաւորը կը մնար։ Բայց Ռուսական քաղաքականութեան փոփոխութիւնը, և Յովհաննէսի պատրիարքութենէ հանուիլը՝ էջմիածնի մէջ իրենց արձագանգը ունեցած էին. միաբանութիւնը համարձակութիւն առած էր Դաւիթի հանդէպ դիմադրութիւն և ժխտողութիւն յայտնելու։ Իսկ Դաւիթ պէտք տեսած էր միաբանութիւնը բռնութեամբ ճնշել, և միւս կողմէն իր նիւթական առաջադիմութենց ապահովութիւնը հոգալ։ Այդ միջոցին 1801 տարւոյ վերջին օրերը, մնաուկ մը էջմիածնէ Երեւան կը ղրկուէր Դաւիթի կողմէն, իր թանկագին իրերը պարունակող, որպէս զի վտանգէ ազատ մնան իր եղբօր և անոր աներոջ պահպանութեան ներքեւ։ Միաբանութեան մէջ ղրոյց կը չրջի, թէ Գեղարդն ալ փոխադրուած է այն մնաուկով։ Երեւանի մէջ մնաուկը կը դրաւուի, և կնիքի ներքեւ էջմիածին կը դարձուի։ Դաւիթ մնաուկը միաբանութեան առջև կը բանայ Մինուդի գիչերը, 1802 յունուար 5'ին, որպէսզի միաբանութիւնը վստահացնէ թէ ինքն Գեղարդը փախուցած չէ (ԴԻԻ. Է. 1)։ Բայց որպէսզի ցուցմունքը կատարեալ ըլլար, պէտք էր մնաուկը չկոտրած և չբացուած՝ Գեղարդը իր տեղը Մայրաթաթարին մէջ մնացած ցուցնել, և ոչ թէ մնաուկին գալէն և բացուելէն ետքը մէջը չգտնուիլը ցուցմունք համարիլ։ Դաւիթ ինքն կը գտնգատէր, թէ ընծայ էր յանձնելու է ճանապարհին, և բացել պիտի հանել են զանձնայն եղելան է նմա, որով մնաուկին էջմիածնի մէջ կրկին բացուիլը՝ ոչ մի նշանակութիւն չէր ունենար։ Դաւիթ գրած էր ևս, որ Մահմատ խանին վրայ գրած է իր վստահութիւնը, և թէ յուսացել է քեզ և յիշեցուցին ձեր, ցանկամ այդը ընել զանձնայն ջոյ պիտոյս։ Ասով աթոռապատկան ստացութիւնները գանձարանէն հանած ըլլալը կը հաստատէր, և անոնք կաշառակերին ձեռք իբր աւանդ յանձնելը՝ իր գաղտնի միտքը կը մատնանչէր։ Դաւիթ կը խոստովանէր ևս՝ թէ Ութան և Ութան, իմա Տաճիկն, ընծայ են իրեն, և միայն Մահմատի պաշտպանութիւնն է որուն կը վստահի (ԴԻԻ. Է. 2), որ ըսել կ'ըլլայ թէ պարտաւոր էր զայն գոհացնել։

ՊԱՏԻՒՈՒ ՏՈՒՆԵՆ

2264. Դաւիթ իրաւունք ունէր Ռուսական և Օսմանեան կայսերութեանց պաշտպանութենէն չոյսը կտրել, քանի որ երկուքն ալ փոխած էին իրենց առաջին ուղղութիւնը։ Ռուսական պաշտպանութիւնը վերջնականապէս իրեն դարձուած էր (§ 2260), իսկ Օսմանեան կառավարութիւնը, նոր պատրիարքի պաշտօնական դիմումին վրայ, դադարեցուցած էր կանոնական տուած հրովարտակը (§ 2254), և նոր հրովարտակ տուած էր Դանիէլի անունով։ Նոր հրովարտակին իբր թուական ցուցուած է 1801 նոյեմբեր 23 տարեթիւը (ՄՍՐ. 48), և ըսուած է ևս, թէ նոյեմբեր 10'ին խնդրուեցաւ տեղապահ Յակոբ Եպիսկոպոսէն (ԴԻԻ. Ա. 111), որով տեղի չմնար թուականի սխալմունք ենթադրել, հիմնուելով ուրիչ կողմէ տրուած տեղեկութեան, թէ նամակին առաւ հրովարտակը (ՊԼՐ.

39)։ Մանաւանդ որ այդ մասին Էջմիածնի միաբաններուն գրուած նամակն ալ 1802 յունուար 8'ին յղուած է (ՄՍՐ.48), և չենք իմանար թէ ինչու 45 օր յապաղած են յայտնութեան լուրը բարեկամներուն հաղորդելու։ Ինչ ալ ըլլայ թուականի խնդիրը, հասած տեղեկութիւնները հարկաւ պիտի ոգեւորէին միաբանութիւնը, յայտնապէս Դաւիթին դէմ ելնելու, սակայն պատեհ մը պէտք էր զայն յայտնելու և ահա թէ ինչպէս ստեղծուեցաւ։ Թեղարդակիր կոչուած Յովհաննէս Ակնեցի եպիսկոպոս, բան կ'ըլլայ երբեմն, թէ ինքը երկու մատերով օձած է Դաւիթին գագաթը, ետքէն անոնցմով անոր աչքերը հանելու համար։ Խօսքը Դաւիթին ականջը կը հասնի, Յովհաննէս կը սկսի վախնալ, կը փորձէ փախչիլ, ըրքեխոնիմբ ձեռք կ'իյնայ, և ոչնակոչէ երկնչիւ կը բանտարկուի։ Այնատեն Յովհաննէս ոչ ուստեք օգնութիւն գտնելով, կը պարտաւորուի խոնարհիլ, զղջում յայտնել, հնազանդութիւն խոստանալ և բանտարկութենէն ազատուիլ (ՄՍՐ.41)։ Դաւիթ Յովհաննէսի վրայ հետզհետէ վստահութիւն զգալով, 1802 աւագ չաբթուն մէջ զինքն երեւան կը ղրկէ — ֆրջայ էրէ (պէ՛ր. 25), որ ուրիշ տեղ ցուցուած է՝ Դաւիթի եղբօրորդւոյն կնքահայրութիւնն ընել (ՄՍՐ. 42)։ Թեղարդակիրը, որ մինչեւ այն ատեն կրցեր էր կեղծել, առիթէն կ'օգտուի էջմիածին չդառնալ, և Տփղիս անցնելով հաղաւութեան կուսակցութեան գլուխն անցնիլ։ Դաւիթ փութաց 1802 ապրիլ 12'ին աւագ չաբաթ օր դէպի կ-Պոլիս ճանապայ հանել Ստեփանոս Քուչուբեան եպիսկոպոսը, և Ղազար Վեցիկեան վարդապետը, կ-Պոլսեցիները չանելու համար. մինչ միւս կողմէ իւր զայրոյթը կը թափէր Թեղարդակիրին մտերիմներուն վրայ։ Զատկի մեռելոցի օրը, ապրիլ 14'ին, ծերունի Ղազար խոստովանահայր եպիսկոպոսը կը դնէ է քանդ խաչբայէն, կարապետ նորընծայ արեղան չօլոմ քանդէ, Յակոբ Պոլսեցի վարդապետը եւս չօլոմ քանդէ, երկրէն ալ չղմայի զարնուած, և ուրիշներուն վրայ ալ սպառնալիքներ կը տեղայ է ֆէլեքէ քանդէ ընելու համար։ Միաբանները բոլոր ոսք կ'ելլեն, տրէխ և ֆայրէ կը դիմեն է վեհարանն, բանտարկեալները կ'ազատեն, անկէ բազմութեամբ տաճար կը հաւաքուին, և կը վրճռեն թէ Դաւիթ է խանգրէլ քրեէկրքոնեան ազգին և ասելէ սրբոյ աթոռոյս, և իրեն ալ գիր կը գրեն. Վասն զանազան անկարգութեանց և քրիստոսական հրամոյ տոյ՝ ոչ ընդունելմ ղէդ, և ուխտիւք և նզովիւք որոշումնին կը հաստատեն (պէ՛ր. 26)։

ԴԱՐՁԵԱԼ ԲՈՆՈՒԹԻՒՆՔ

2265. *Միաբաններ կը մտածեն միանդամընդմիշտ Դաւիթի բռնութենէն ազատիլ, և կ'որոչեն խանին դիմել, ուստի Զատկի և րևքչաբթի աւտուն, 1802 ապրիլ 15'ին, վանքին դուռը փակեալ գտնելնուն, հիւսիսային պատէն ծակ մը կը բանան, և բազմութեամբ Երեւան խանին կը դիմեն գոչելով. Բոչ է ղէլոց ղրդ ղԴողէրն ղայն, և քէր ղբրնաւոր հայրապետն մէր, և կամ սպան ղնել ղսրենէն (պէ՛ր. 26)։ Մանմատ կը չուարի, բայց վրայ կը հասնի Աղամալեան մելիքը, Դաւիթի եղբօր աներն ու անոր հզօր պաշտպանը, և տրամադրելի գումարներով և ընծաներով խանին միտքը կը չահի։ Երեւան դիմողներէն Աստուածատուր և Բարսեղ և Աւետիս եպիսկոպոսները կը բանտարկուին և կը տուգանուին, մնացեալներն ալ հնձեալներու առջեւ ձգուելով, ֆանելով և հարկանելով, գլխէքոց և քոկոն մինչեւ էջմիածին կը քշուին, և Դաւիթի կը յանձնուին, որ ամէնքն ալ սենեակներու մէջ խիստ բանտարկութեան կ'ենթարկէ, չներելով ոչ մի պէտքի կամ կարիքի համար դուրս ելնել։ Յայտարարութիւն մըն ալ կը պատրաստէ, որով ստորագրողները պիտի խոստանան Դաւիթի հնազանդիլ, և երէկ հետտուն 100 թուման տուժել խանին։ Արժան է դիտել հին երեւոյթին կրկնումը, որ կը հաստատէ Դաւիթի և Մանմատի չահակցութեան և գործակցութեան գաղտնիքը։ Շատեր կը ստորագրեն և արգելարանէ կ'ազատին, բայց գլխաւորներուն դէմ կը խըստանայ Դաւիթ, և աւելի երկար ատեն բանտարկեալ կը թողու. Աբրահամ Աժտարխանցի վարդապետը է բանտ խաչբայէն, Փիլիպպոս Նէդոկիացի վարդապետը չմբաւն ֆրջայ, Յակոբ Պոլսեցի վարդապետը է Ղազարոպոլ, Ղազար խոստովանահայր եպիս-

կոպոսր չէ-բա-մ «ԷՆԷԿ», Մատփանոս և Ռեթէոս վարդապետները, կարապետ աբեղան, Եփրեմ սարկաւագը և Իգնատիոս տիրացուն զանազան արգելարաններ, իսկ Աստուածատուր ու Բարսեղ ու Յովհաննէս ու Աւետիս եպիսկոպոսները երեւանի բանտը (ՊԷՐ. 28), մինչեւ իսկ ՂԻԷՐՔ ԵՊԻՇԿՈՊՈՍ ՍՎՄԱՀ ԱՐԲ ԱՆՔ Է ԲԱՆՔԻՆ (ՊԷՐ. 50)։ Միաբանութեան վրայ ճնշումը կատարեալ ընելու համար, երեւանէ վերեւէլ Տ-ՃԷՂ բերել կուտայ, որպէսզի յանուն Մահմատի բանութիւնները խստացնէն։ Միաբաններէն ոմանք այդ եղելութեանց մասին գիրեր կը գրեն մայիս 20'ին, և գաղտնի միջոցներով Կ-Պոլիս և Մոսկուա կը հասցնեն (ՄՍՐ. 51), ինդրելով որ ՉԱՆԱՆ ՍՂՈՓԵԼ ՂԼՈՒՈՆ Ե ՂԻՂ Է ՅԵՒՈՒԵ ԲՈՐԲՈՔԻ ՈՂՒՒ (ՊԷՐ. 29)։

2266. Բայց Կ-Պոլսոյ պատրիարքը և Դանիէլեանք ալ անպոյծ չէին։ Դանիէլի անունին ստացուած կաթողիկոսութեան հրովարտակը, և երեք բազմակնիք գրութիւններ, Դանիէլին, Միաբանութեան և Մահմատ խանին ուղղուած։ ՃԱՆԱՊԱՅ ԿՐ ՀԱՆԻՆ 1802 ՅՈՒՆՈՒԱՐ 8'ԻՆ ԵՐԵՍԷՆ ԱՂՈՒԱՐԱԿԵՑԻ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՁԵՌՔՈՎ, ԿԱՐԻՆ ՏԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՈՐ ԿՐ ՀԱՍՆԻ ՆԱ ՓԵՏՐՈՒԱՐ 21'ԻՆ, և կուսակալին ձեռքով Միաբանութեան և Մահմատի ուղղուած գիրերը կը ղրկէ Երեւան, և Դանիէլն ալ մարտ 9'ին ճանապայ կը հանէ դառնալ Պայազիտ (ԴԻԻ. Ա. 112-124), ՉԻ ՏՐԱՀԱՆԳ ՏՐՈՒԱԾ ԷՐ ԻՐԵՆ, ՈՐՒԵՒ ՄԻՋՈՑՈՎ ԴԱՆԻԷԼԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸՆ ՀՈՂԱԿԼ և ծիսական կարգադրութիւնները լրացնել, որպէսզի Դաւիթի դիրքն ալ խախտի, և իրեն դիմադրող կաթողիկոս մը գտնուի, և ազգային կացութիւնը անգլուխ չներկայացուի։ Արդէն Եփրեմ թելադրած էր, որ նախ անհնար ըլլայ Դաւիթը էջմիածինէ հեռացնել և Դանիէլը այնտեղ բազմեցնել, Պարսկական պաշտպանութեան պատճառով, Բագրեւանդայ տաճարին մէջ կաթողիկոսական օծում կատարուի (§ 2261), և այս առաջարկը հաւանութիւն գտած էր Կ-Պոլսոյ մէջ, և ըստ այմ հրահանգ կը տրուէր Ներսէսի, կարին ուղեւորած ատեն (ՊԷՐ. 39)։ Նոյնիսկ էջմիածնի միաբաններն ալ մայիս 20'ի նամակով, որուն ստորագրած էին 5 եպիսկոպոսներ և 12 վարդապետներ, կը հաւանէին որ Դանիէլ, էջմիածինէ դուրս է ԳԵՐՔԱՅՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՔԷՔԱՆ ՊԱՏՀԱՍՏԱՒԷ, ՕՃԻՆ Ե ՆԱԳՈՅ ԱՆՔ, Ե ՂԷՐՔ ՀԱՅԲԱՊԱՏՈՒԹԵԱՆ ԻՐԵՆ ԿՈՓԵՐԵՑԻ ՍՐՔԱՓՐՃԵԼՎ ՂՐՈՒԱՆՆ Լ-ՅԼՆ (ԴԻԻ. Ե. 218)։ Այս նպատակով պէտք էր ծիսական պահանջից համեմատ եպիսկոպոսներ ունենալ, և գործին կարեւորութիւն տալու չափ եկեղեցականներ և իշխանաւորներ հաւաքել, ուստի պէտք եղած հրաւիրագիրներ ցրուեցան, և պատուիրակներ հանուեցան։ Այդ պարագաներուն մէջ նշանակելի է Աչտարակեցի Ներսէսի գործունէութիւնը, ի գաղափարը իրենը չէր, և գործին գլխաւորութիւնն ալ Դանիէլի կը պատկանէր, բայց գործադրութիւնը Ներսէսի ՁԱՆՔԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔ ԵՂԱՒ։ Պայազիտ գալերնին ալ, Բագրեւանդի վանքին մօտ գտնուելու, և պատրաստութեանց հսկելու համար էր։ Հանդէսին առաւելագոյն փայլ, և ազգային համերաշխութեան հաւաստիք աւելցնելու համար, յատկապէս հրաւիրուեցաւ Աղթամարայ կարապետ կաթողիկոսն ալ (§ 2174), օծող եպիսկոպոսներու նախագահելու։ Եպիսկոպոսներու կանոնական 12 թիւն ալ աւելիով լրացաւ ՉԻ ՓԱՌՆԵՎԷՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՒԱՔՈՒԵՑԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՎ ՄԷԿՏԷՂ, (ԴԻԻ. Ե. 236), և ԱՅՆ, ԳԷՈՐԳ՝ ԱՐՏԱԶՈՒ, ԽԱՉԱՏՈՒՐ՝ ԱՂԲԱԿԻՔ, ԳՐԻԳՈՐ՝ ՍԵԲԱՍՏԻՈՅ, ԳՐԻԳՈՐ՝ ԲԱԼՈՒՍՑԻ, ՅՈՎՀԱՆՆԷՍ՝ ՄՇՈՅ Ս. ԱՒԱՔԵԼՈՑ, ՅՈՎՀԱՆՆԷՍ՝ ՄՇՈՅ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ, ՓԻԼԻՊՊՈՍ՝ ԽԱՐԲԵՐԴԻ, ԱՒԱՏՈՒ՝ ՄԱՆԱԶԿԵՐՏԻ, ԳՐԻԳՈՐ՝ ԲԱՂԷՇԻ, ԱԲՐԱՀԱՄ՝ ԴԵՐՋԱՆԻ, ԿԱՐԱՊԵՏ՝ ԿԵՍԱՐԻՈՅ, ՄԱՆՈՒԷԼ՝ ՎԱՐԴԻՀՈՐ ՎԱՆԱՑ, ԱԲՐԱՀԱՄ՝ ԼՈՒՍԱՒԱՓՈՒՂ ՎԱՆԱՑ, ՄԱՐՏԻՐՈՍ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆ (ԴԻԻ. Ե. 234), և ՄԷԿԸ ՄԻԱՅՆ ԱՆԾԱՆՕԹ ԿԸ ՄՆԱՅ։ Ներկայ վարդապետներուն թիւը նշանակուած է ԵՐԵՍՈՒՆԵՔՆ, որոնցմէ 22 հատի ստորագրութիւններ կը կարդացուին։ Անապատաւորք և աբեղայք և քահանայք եղած են 102, որոնցմէ 35 ստորագրած են յայտնելով, ԹԷ ՉԵ ՅՈՂՔ ՀՈՓԵՐՈՒԹԵՒՆՑ ՆՎԷԼՎ ԲԱՒԱԿԱՆՑՈՎ (ԴԻԻ. Ե. 236)։ Աչխարհական իշխանք և ժողովուրդք եղած են ԱՒԵԼՔ ՔԱՆ ԵՐԵՔ ՀԱՐՅՐ, սակայն ասոնց մէջէն անունով յիշատակուածներ չու-

նինք։ Այդ միջոցին Երիւմ եպիսկոպոս կ'աշխատէր Դանիէլի անունին հրովարտակ հանել տալ Ռուսաց կայսրէն ալ, որուն թամարով դեսպան հասուցած էր Օամանեան հրովարտակին պատճէնը։ Իրօք ալ կը յաջողէր գայն ստանալ մայիս 19 թուականով (ԴԻԻ. Ե. 213), ուր յայտնապէս կ'արտօնուի Դանիէլ իւր կբէտպրօնեան ի Ներսէս ունել բոլոր Ռուսաստանի Հայերը։ Հրովարտակին հետ հարուստ չուրջառուս մըն ալ ընծայ կը յղուէր կայսրէն, պէտք եղած երիզներով և ծոպերով (ԴԻԻ. Ա. 134)։ Ամէն պատրաստութիւնները լրացնելով, կաթողիկոսական օծման հանդէսը կը կատարուի 1802 մայիս 25, երկրորդ Մաղկազարդի կիրակիին (ԴԻԻ. Ա. 153)։ Ակից հետքը միւռոնօրհնէքը ալ կատարուեցաւ վիճակներու ցրուելու համար, և չորս վարդապետներու ալ եպիսկոպոսական ձեռնադրութիւն տրուեցաւ (ՄՍՐ. 52)։ Այս կերպով կը կարծէին ամէնքը թէ խընդիրը լուծուած և հակառակութիւնները ջնջած եղան, մինչ հետեւանքը հակառակն եղաւ, և երկպառակութիւններ և գայթակղութիւններ աւելի սաստկացան։

2267. Դանիէլի օծումը կատարողներ, իրենց գործին ջատագովութիւնը ըրած են,

ՎՃԻՌ ՍԻՒՆՀՈՌՈՍԻ

Պոլսոյ մակագրութեամբ ընդարձակ գրուածով մը (ԴԻԻ. Ե. 219–236), որ կանուխ պատրաստուած էր անշուշտ, թէպէտ մայիս 27 թուական կը կրէ (ԴԻԻ. Ե. 234), օծումէն երկու օր ետքը լրացած և աւորագրուած ըլլալուն համար, ուսկից ամիսփունիներ ալ կազմուած են (ՊԷՒ. 39–44), Քաղաքական Հանգամանաց վճռոյն մակագրութեամբ (ՄՍՐ. 53)։ Ամենայն հաւանականութեամբ նոյնինքն Ներսէս Աշտարակեցին է որ գրած կ'ըլլայ այդ վճիռը խմբագրողը, որ ինքն ալ աւորագրած է, վարդապետաց կարգին 11'րդ տեղը, իբր Ներսէս Վրդապետ, ինքան ասոր էջնեցնէ (ԴԻԻ. Ե. 235)։ Այդ գրուածը հինգ հատուածներու բաժնուած է, որ Բան կը կոչուին։ Առաջին բանը, կը յայտնէ թէ ժողովի գումարուած են Տրդատի մկրտութեան տեղը (§ 68), և քընութեան հնութեան հնութեան են Դաւիթի խնդիրը, և վճռած են գայն՝ ինչպէս ընդ պատպատպատպատ եղեղեցոյ, և անվաեր օծումն նը (ԴԻԻ. Ե. 220)։ Վճիռին փաստերուն անցնելով երկրորդ բանին մէջ, առջեւ կը բերուին կաթողիկոսական օծման կանոնէ հատուած մը, ուր ըսուած է թէ հանապատ եպիսկոպոսը չ' լեզի անկընծայ, և ընդբեալ պրծումով է յեան կ-ըլսոց այլազգի եղեռնաց, զի պէշ է այնպիսին ա՛սպջի Աստուծոյ և քահանայութեան կոչ է։ Նմանապէս Շնորհալիի Հնդհանրականէն առջեւ կը բերուին Դաւիթ Թուռնիկեանի հակաթոռ կաթողիկոսութեան մասին ըսուածները, և անոր դատապարտութիւնը և մերժումը Սեաւլերան ժողովին կողմէ (§ 929)։ Բաղդատութեան համար չատ յարմար եկած է Թուռնիկեանին և Էնէգէթցիին ալ համանուն կերպով Դաւիթ կոչուիլը։ Երրորդ բանին մէջ յառաջ կը բերուին Էջմիածնի միաբանութեան Դաւիթի կաթողիկոսութիւնը մերժելուն մասին յայտարարութիւնները, երկուքը 1801 ապրիլ 8'ին Երեւանի Մանուկ խանին և վրաց Դաւիթ խանին ուղղուած, և չորսը 1802 մայիս 20'ին գրուած, համեմատ կերպով, որոնցմէ կ-Պոլիս ղրկուածը իւր ամբողջութեամբ կ'արտագրեն (ԴԻԻ. Ե. 221–227)։ Չորրորդ բանին մէջ, կը յիշեն թէ ուրիշ թուղթեր ալ տեսած են, և Դաւիթի ընթացքն ալ քննած, և կը յայտնուն, պատպատպրեցաւ ընդ ինէն Դաւիթ և ընդնայն համախոհ իւր պատպատպրօնեանէն եկեղեցոյ, ինչքան ղղջացեալ ապաչխարեցին, և փնտել յաջս օրհնաւոր սրբազանին Ջոջեն ալպատրիարքն (ԴԻԻ. Ե. 228)։ Հինգերորդ բանը կը բացատրէ Դանիէլի կոչումն է ընտրել ժամանակ, և ապացուցանել օծումն, ուր պատմական ոճով քաղուած են Դուկասի մանուկէ հետքը տեղի ունեցած գործերը կաթողիկոսական ընտրութեան մասին, որոնցմէ կը հետեւի թէ Դանիէլ օրինաւորապէս ընտրեալ մըն է, և Դաւիթ աթոռի յափշտակիչ մը, ուստի Դանիէլը օրինաւորապէս օծած են այս անգամ, և Դաւիթին ու իրենները դատապարտած։ Անոր ձեռնադրած եպիսկոպոսները կը հռչակեն անընդունակ եկեղեցոյ սրբոյ և քալը ազէկ ըլլալ, որով առանց անունին յիշուելու կը մատնանշուին Գրիգոր Ալբիրմանեանին և կաթողիկոս Նոր-Նախիջեւանցին։ Դանիէլ կոչուած է հոգեընդէր, կայսերեալ և ազ-

ֆահրաեբ օբեալն կոնոլիկս Ափնայն Հայոց, և Դաւիթ ու Դաւիթեանք կը հրաւիրուին անոր դիմել որ նզովքէ արձակուին (ԴԻԻ. Ե. 228–234)։ Ինչպէս յիշեցինք 72 եկեղեցականներ ստորագրած են այդ վճիռին, թէպէտ ներկաներէ եղած են 157 ընդամէնին։ Բագրեւանդի տաճարին տրուած կարեւորութիւնը բացատրելու համար, Տրդատի մկրտութենէն, ինչպէս նաեւ Սահակի այնտեղ ձգելէն (§ 228), և հնօրեայ նշանաւոր տաճար մը ըլլալէն զատ, կրնանք դիտել հանգանուանութեան պարագայ մը, զի Թուրք և Պարսիկ տիրապետողներու սովորութեամբ, Իջմիածինի և Բագրեւանդի տաճարները հաւասարապէս Իւչքիլիսէ, կամ երեք-եկեղեցի կը կոչուէին, որ ժողովական վճռագիրը (ԴԻԻ. Ե. 234) և Դանիէլի անդրանիկ կոնդակը (ԴԻԻ. Ա. 154) երեք-վանք կը թարգմանեն, և ուրիշներ Սբե-հո-ըն կը վերածեն (ՇԱՀ. Ա. 234)։

ԿԱՆՈՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏԸ

2268. Ակս է Բագրեւանդի մէջ կատարուած օծութեան մասին, օծողներուն և օծեալին տեսութիւնը, որոնք ամենայն օրինաւորութեամբ և ամենայն իմաստութեամբ գործ մը կատարած ըլլալու համոզումը կ'արտայայտեն։ Ինչ մը վերը ակնարկեցինք թէ կատարուած եղելութիւնը իր նպատակին չհասաւ, զի երկպառակութիւնը չվերջացուց, մանաւանդ թէ նորանոր արկածներու առիթ տուաւ։ Իսկ օրինաւորութեան մասին կարծիք մը յայտնելու համար, պէտք է չատ կէտեր միանգամայն նկատի առնել։ Ստոյգ է թէ Դանիէլ իրաւապէս ընտրեալ մըն էր, ամէն կողմէ պէտք եղած պայմանները լրացած էին, Մայրաթոռոյ միաբանութեան կամքը, Տաճկահայոց հաւանութիւնը, Օսմանեան և Ռուսական կայսերութեանց հաստատութիւնները կատարուած էին, բայց իրապէս իր իրաւունքին վայելման մնած չէր։ Ստոյգ է նոյնպէս որ Դաւիթ իրաւապէս ընտրութեան պայմաններր չէր վայելեր, առանց կանոնական ընտրութեան իրովի բարձրացած էր, արտաքին բանութեան չնորհիւ աթոռին տիրացած էր, տիրանալէն ետքր բանի կերպով հաւանութեան յայտարարութիւններ ձեռք ձգած էր, իր դիրքր պահելու համար ալ՝ միայն բանութեան և կաչառքի ոյժերով կր զօրանար։ Բայց իրապէս աթոռի տէր դարձած էր, երբ տակաւին ուրիչ մր անոր տիրացած չէր։ Մենք արդէն յայտնած ենք մեր կարծիքը, թէ ինչպէս լոկ իրապէս կատարուած մի բան՝ իրաւապէս եղած ըլլալու կերպարանքը կր զգենու (§ 2250)։ և փոխադարձաբար իրաւապէս եղած մի բան, իրապէս չեղած առթին իւր զօրութենէն կ'իյնայ։ Մենք կրնանք ընդունիլ, թէ Դաւիթը բանի ստացուած դիրքէն հալածելու համար եղած ձեռնարկները՝ մեղադրելի չէին կրնար սեպուիլ, զի անիրաւ ստացութեան դէմ ճիգեր չեն կրնար երբեք արգելուիլ։ Բայց այդ պէտք էր ընել նոյնիսկ Դաւիթի դիրքը խախտելով, և զինքը էջմիածինէ հալածելով։ Հետեւապէս ոչ ճարտար և ոչ արդիւնաւոր ձեռնարկ կը դատենք իւր տեղը թողուլ մէկ մը, որ դիրքին տիրացած է, և անոր իւր դիրքին մէջ կեցած առեն, նոր դիրք մը ստեղծել՝ օրինական պաշտօնատեղիէն դուրս, իբրեւ թէ նոր աթոռ մը և նոր իշխանութիւն մը կազմուէր ազգին մէջ։ Արդէն իսկ աթոռէն դուրս, և անպատրաստ գետնի վրայ կազմուած կաթողիկոսութիւնը, չատ պակասներ ունէր իւր գոյութիւնը հաստատելու, մինչ հակառակորդը կը պահէր բուն աթոռին տիրապետութիւնը։ Ազգն ալ միայն հաւանածով մը կը մասնակցէր ձեռնարկին, մինչ անդին հակառակորդն ալ, այսպէս թէ այնպէս, ոչ արհամարհելի հատուած մը ունէր իրեն հետ. հետեւապէս Բագրեւանդի գործիչները անհաւասար մրցման մը դուռ կը բանային իրենք իրենց։ Մեր տեսութեամբ չատ աւելի ճարտար, և թերեւս աւելի յաջող եղած կ'ըլլար Դանիէլեանց ձեռնարկը, եթէ Օսմանեան և Ռուսական պետութեանց հովանաւորութեամբ, տժգոհ և ընդդիմադիր միաբանութեան ձեռնհասութեամբ, կ-Պոլսոյ պատրիարքարանի պաշտպանութեամբ, և խումբ մը ազդեցիկ առաջնորդներու և վիճակներու ձայնակցութեամբ, ուղղակի էջմիածինի մէջ Դաւիթի դէմ բանային պայքարը, և զայն հալածելէ ետքր բերէին Դանիէլը, և Մայր տաճարին մէջ տային անոր կաթողիկոսական օծումր։ Դաւիթը իսկապէս տապալած կ'ըլլային այն ատեն, և նպատակին իրագոր-

ֆահրաեբ օբեալն կոնոլիկս Ափնայն Հայոց, և Դաւիթ ու Դաւիթեանք կը հրաւիրուին անոր դիմել որ նզովքէ արձակուին (ԴԻԻ. Ե. 228–234)։ Ինչպէս յիշեցինք 72 եկեղեցականներ ստորագրած են այդ վճիռին, թէպէտ ներկաներէ եղած են 157 ընդամէնին։ Բագրեւանդի տաճարին տրուած կարեւորութիւնը բացատրելու համար, Տրդատի մկրտութենէն, ինչպէս նաեւ Սահակի այնտեղ ձգելէն (§ 228), և հնօրեայ նշանաւոր տաճար մը ըլլալէն զատ, կրնանք դիտել հանգանուանութեան պարագայ մը, զի Թուրք և Պարսիկ տիրապետողներու սովորութեամբ, Իջմիածինի և Բագրեւանդի տաճարները հաւասարապէս Իւչքիլիսէ, կամ երեք-եկեղեցի կը կոչուէին, որ ժողովական վճռագիրը (ԴԻԻ. Ե. 234) և Դանիէլի անդրանիկ կոնդակը (ԴԻԻ. Ա. 154) երեք-վանք կը թարգմանեն, և ուրիշներ Սբե-հո-ըն կը վերածեն (ՇԱՀ. Ա. 234)։

ԿԱՆՈՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏԸ

2268. Ակս է Բագրեւանդի մէջ կատարուած օծութեան մասին, օծողներուն և օծեալին տեսութիւնը, որոնք ամենայն օրինաւորութեամբ և ամենայն իմաստութեամբ գործ մը կատարած ըլլալու համոզումը կ'արտայայտեն։ Ինչ մը վերը ակնարկեցինք թէ կատարուած եղելութիւնը իր նպատակին չհասաւ, զի երկպառակութիւնը չվերջացուց, մանաւանդ թէ նորանոր արկածներու առիթ տուաւ։ Իսկ օրինաւորութեան մասին կարծիք մը յայտնելու համար, պէտք է չատ կէտեր միանգամայն նկատի առնել։ Ստոյգ է թէ Դանիէլ իրաւապէս ընտրեալ մըն էր, ամէն կողմէ պէտք եղած պայմանները լրացած էին, Մայրաթոռոյ միաբանութեան կամքը, Տաճկահայոց հաւանութիւնը, Օսմանեան և Ռուսական կայսերութեանց հաստատութիւնները կատարուած էին, բայց իրապէս իր իրաւունքին վայելման մնած չէր։ Ստոյգ է նոյնպէս որ Դաւիթ իրաւապէս ընտրութեան պայմանները չէր վայելեր, առանց կանոնական ընտրութեան իրովի բարձրացած էր, արտաքին բանութեան չնորհիւ աթոռին տիրացած էր, տիրանալէն ետքր բանի կերպով հաւանութեան յայտարարութիւններ ձեռք ձգած էր, իր դիրքր պահելու համար ալ՝ միայն բանութեան և կաչառքի ոյժերով կր զօրանար։ Բայց իրապէս աթոռի տէր դարձած էր, երբ տակաւին ուրիչ մր անոր տիրացած չէր։ Մենք արդէն յայտնած ենք մեր կարծիքը, թէ ինչպէս լոկ իրապէս կատարուած մի բան՝ իրաւապէս եղած ըլլալու կերպարանքը կր զգենու (§ 2250)։ և փոխադարձաբար իրաւապէս եղած մի բան, իրապէս չեղած առթին իւր զօրութենէն կ'իյնայ։ Մենք կրնանք ընդունիլ, թէ Դաւիթը բանի ստացուած դիրքէն հալածելու համար եղած ձեռնարկները՝ մեղադրելի չէին կրնար սեպուիլ, զի անիրաւ ստացութեան դէմ ճիգեր չեն կրնար երբեք արգելուիլ։ Բայց այդ պէտք էր ընել նոյնիսկ Դաւիթի դիրքը խախտելով, և զինքը էջմիածինէ հալածելով։ Հետեւապէս ոչ ճարտար և ոչ արդիւնաւոր ձեռնարկ կը դատենք իւր տեղը թողուլ մէկ մը, որ դիրքին տիրացած է, և անոր իւր դիրքին մէջ կեցած առեն, նոր դիրք մը ստեղծել՝ օրինական պաշտօնատեղիէն դուրս, իբրեւ թէ նոր աթոռ մը և նոր իշխանութիւն մը կազմուէր ազգին մէջ։ Արդէն իսկ աթոռէն դուրս, և անպատրաստ գետնի վրայ կազմուած կաթողիկոսութիւնը, չատ պակասներ ունէր իւր գոյութիւնը հաստատելու, մինչ հակառակորդը կը պահէր բուն աթոռին տիրապետութիւնը։ Ազգն ալ միայն հաւանածով մը կը մասնակցէր ձեռնարկին, մինչ անդին հակառակորդն ալ, այսպէս թէ այնպէս, ոչ արհամարհելի հատուած մը ունէր իրեն հետ. հետեւապէս Բագրեւանդի գործիչները անհաւասար մրցման մը դուռ կը բանային իրենք իրենց։ Մեր տեսութեամբ չատ աւելի ճարտար, և թերեւս աւելի յաջող եղած կ'ըլլար Դանիէլեանց ձեռնարկը, եթէ Օսմանեան և Ռուսական պետութեանց հովանաւորութեամբ, տժգոհ և ընդդիմադիր միաբանութեան ձեռնհասութեամբ, կ-Պոլսոյ պատրիարքարանի պաշտպանութեամբ, և խումբ մը ազդեցիկ առաջնորդներու և վիճակներու ձայնակցութեամբ, ուղղակի էջմիածինի մէջ Դաւիթի դէմ բանային պայքարը, և զայն հալածելէ ետքր բերէին Դանիէլը, և Մայր տաճարին մէջ տային անոր կաթողիկոսական օծումր։ Դաւիթը իսկապէս տապալած կ'ըլլային այն ատեն, և նպատակին իրագոր-

ծած, ազգին և ևկեղեցւոյն մէջէն ալ գայթակղութիւնը հեռացուցած ու խաղաղութիւնը հաստատած. մինչ իրենց գործով խռովութիւնը և պառակտումը չաճցուցած եղան։

ԳՈՐԾԻՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ

2269. Կը մնայ ձեռնարկին պատասխանատուութիւնը ճշդել, Լեւիտութեանց մասին տեսութիւնները ամբողջացնելու համար։ Ինչ որ հնգիրէ դուրս պէտք է նկատել, Դանիէլի անձն է, որ գլխաւոր դերը և ձեռնարկին վայելումը ունենալով մէկտեղ, կրնանք ըսել թէ ամէնէն անմեղն էր այդ ձեռնարկին մէջ։ Դանիէլ բնութեամբ հեզ, ուղղութեամբ բարեմիտ, և ձգտումներով համեստ անձ մը վկայուած է ամէնէն, և Թոնդ Դաւիթեանները ալ անոր անձը դատափետելու չեն յանդգնած։ Եթէ մեղադրելի բան մը պիտի դիտուի Դանիէլի վրայ, վերջին աստիճանի կրաւորական դիրք մը պահելն է, զինքն բոլորովին յանձնած ուրիշներու ձիրքերուն և ուրիշներու կիրքերուն միանգամայն։ Ինքն իւր գործին վրայ իշխելու կարողութիւնը չունենալ, և ներելց որ իրեն անունով գործուին այնպիսի բաներ, որուն վատ հետևանքները իրեն վրայ պիտի ծանրանային։ Սովորութիւն է իրրեւ գործին վարիչն ու տէրը, և հետեւաբար իրր տիրապէս պատասխանատուն նկատել Ներսէս վարդապետ Աչտարակեցին, տակաւին 32 տարեկան երիտասարդ եկեղեցականը (§ 2257), որ ոչ յատուկ պաշտօն ունէր, և ոչ առանձին դիրք մը կը վայելէր, և բոլոր իւր արժանիքը՝ իւր ժիր գործունէութիւնն էր, և գլխաւոր պաշտօնը՝ ասոնց կամ անոնց կողմէն պատուիրակ նշանակուիլն էր։ Հետեւապէս Ներսէս գործի գլուխ ըլլալու բնաւ կերպարան չունէր։ Իրեն արդիւնքը չէր, երբ առաջին անգամ Մայրաթոռի մէջ Դանիէլ կաթողիկոսութեան կ'ընտրուէր, և ոչ ալ գործին տէրն էր, երբոր Տաճկահայք Դանիէլի ընտրութիւնը կը վաւերացնէին։ Եթէ վերջին անգամ Կ-Պոլսոյ մէջ կրնար ազդեցութիւն բանեցնել Յովհաննէսի պաշտօնանկութեան և Թրիգորի ընտրութեան մէջ, սակայն հակադաւիթեան մեծ չարժումը էջմիածնի մէջ արդէն արծարծուած էր, ուր Ներսէս ներկայ չէր։ Հետեւապէս աւելի ընդարձակ չրջանակի մէջ պէտք է փնտռել վերջին ձեռնարկներուն պատասխանատուն, ոչ այս կամ այն անձը անհատաբար մեղադրելով, այլ գործին բնութեան մէջ տեսնելով եղելութեան սկզբնապատճառը։ Էջմիածին և Կոստանդնուպոլիս հաւասարապէս իրենց ընտրողական իրաւունքը, և իրենց կատարած ընտրութեան պաշտպանութեան համար կը պայքարէին, և մանաւանդ կը դրգռուէին Դաւիթին անհամբոյր բնաւորութենէն, և բռնական գործունէութենէն։ Այդ չարժումները ինքնաբերաբար կազմուած էին, առանց Ներսէսի թելադրութեան. Ներսէս միայն ճարտար և յաջող յանձնակատարի դերը կը վարէր, և անգամ մը որ պայքարը սկսած էր, չէր թողուր որ այն մարեր ու դադարեր, իրեն յորդորող և գրգռող ունենալով ամբողջ կուսակցութիւն մը, կազմ և պատրաստ կուսակցութիւն մը, որուն ինքն կը ծառայէր, և ոչ թէ զայն իրեն կը ծառայեցնէր։ Ասոր համար մենք չենք կրնար Ներսէսի վրայ բեռցնել գործին պատասխանատուութիւնը, այլ կրնանք իրեն պատչաճեցնել կանուխէն և ուրիշներէն սկսուած գործի մը ժիր գործադիր, անխոնջ աչխատող, և աննկուն հետեւող եղած ըլլալու դերը, մինչեւ իսկ գործին տէրն ու ներկան եղող՝ Դանիէլի ցուցած տկարութեանց դէմ մարտնչելով։ Բագրեւանդի մէջ կատարուած իրողութեան մասին պէտք եղած տեսութիւնները փակելով, եղելութեանց չարունակութեան դառնանք։

ԴԱՒԻԹԻ ԱՐԱՐՔԸ

2270. Դաւիթի ընթացքն ու գործունէութիւնը էջմիածինի մէջ բաւական կրնան ուռուցիկ երեւոյթներ կը ներկայացնել, երբոր նկատի առնենք իրեն ծոխ քրիստոնեական կրօնքը, և բաղդատենք իւր մասին պատմուածներուն հետ, որոնցմէ ինչինչ յիչեցինք արդէն (§ 2263–2265)։ Դաւիթ երբ մէկ կողմէն սասիկ բռնութեան գործերէն չէր կասեր՝ Մայրաթոռին ներքին վարչութեան մէջ և միաբանութեան հանդէպ, արտաքիններուն աչքին անչահասէր և խաղաղասէր անձի երեւոյթները կ'ուզէր ցուցնել անհանգստացնող քրիստոնեական խղճմտանքի յուզումներով, համակիրներ քաջալերելու

և հակակիրները չհնչելու նպատակէն մղուած։ Ջնայելով որ Ռուսական պաշտպանութիւնը իրմէ վերցած էր, ինքն չէր դադարեր կովկասի կողմերը գտնուող Ռուս պաշտօնականներուն հետ թղթակցիլ, և զանոնք իրեն կողմը անցընելու միջոցները գործածել. ասով դուրսիններուն ալ Ռուսաց հետ սերտ յարաբերութիւնից մէջ բլլալը կ'ուզէր ցուցադրել։ Այս մասին յոյժ չանգրգիռ և կատարելապէս հոգևրանական ուսումնասիրութիւն մը եղած կ'ըլլար, եթէ իր գրուածներուն մասին (Դիի. Զ.) կատարեալ աչխատութիւն մը կատարուէր, բայց մենք չենք կրնար այդչափ երկարել։ Միայն պիտի դիտենք որ հրատարակուած հաւաքածոյին մէջ երեւցող, և միաբանութենան կողմէն գրուած Դաւիթի նպաստաւոր նամակները, բնաւ չեն յարմարիր Դաւիթի դէմ յայտնուած չարժումներուն հետ. որով յայտնապէս կը հետեւի, թէ անոնք Դաւիթ պատրաստուած, և հրապուրանօք կամ բռնութեամբ քանիներու ստորագրել տրուած գրութիւններ են։ Մինչեւ իսկ այդ դիրերէն չատերուն առանց ճիշդ թուականի գտնուիլը, անոնց պատրաստուած, բայց չստորագրուած ու չղրկուած բլլալնուն նչան կրնայ նկատուիլ։ Ամէնէն աւելի Դաւիթի մտահոգութիւն պատճառող պարագան Յամանցիին պատրիարքութիւնն էր, ուստի իրեն մտերիմներուն գրած առեն ամէն անարգանք և նախատինք կը թափէր անոր վրայ, և Աս ընդհանուր ոչխն ուղղուած յատուկ չրջաբերական ով ալ՝ փոքրէ և կոպիտ և ապահամեցիէ կը կոչէ զայն (Դիի. Զ. 268), և կը յայտնէ, թէ չէ պատրիարք, այլ պէտ և ելոտի ըսելոց. կը հրամայէ, ալ պատրիարք ճանչնալ զայն իբրև չնորհազուրկ ոչխն, այլ հրաժարելով հրաժարելէ նմանի իբրև է կոպտի գալանի և ելեւէջասէր, և համարձակ ընդ ելեւոյր հերետիկոսաց և ընդհանուր հերձուածողաց, ընդ Նեսթորէի, ընդ Մակեդոնի և ընդ Արեւսի (Դիի. Զ. 567). և կը վերջացնէ, թէ հայրապետական էնեանութենամբ ձերով, կոպեցաւ անլոյծ կոպանօք և բանադրեցաւ ընդհանուր յԱսիոնածոյ ղէտ և ղեկղծ Գրիգոր ըղծարբուսն Պոլսոյ է յերկինս և է յերկրի (Դիի. Զ. 569)։ Այդ լեզուն և այդ ընթացքը չարդարացներ հեզութեան և անձնուիրութեան կերպարանք, զոր յաճախ կը յեղյեղէ իր գրութիւնց մէջ, մանաւանդ երբէ յիչնք Մայրաթոռոյ միաբաններուն վրայ գործածած բռնութիւնները (§ 2265)։

2271. Բանադրանքի և անէծքի զէնքը, Դանիէլի դէմ ալ գործածեց Դաւիթ, ինչպէս կը յիչէ 1802 մայիս 24'ին գրած մէկ թուղթին մէջ (Դիի. Զ. 397). Թէ հայրապետական բռնութենանէ բանադրեցաւ ընդ և կոպեցաւ հոգեւոր կոպանօք յերկինս և յերկրի, զինէն և ընտանեօք (Դիի. Զ. 396)։ Նկատողութեան արժանի է այդ գրութեան մայիս 24 թուականը, որ մէկ օրով առաջ է մայիս 25'ին Բագրեւանդի մէջ կատարուած օծումէն (§ 2266), և չորս օր յետոյ է մայիս 20'ի միաբանութեան բողոքագիրէն (§ 2265), որուն մէջ յիչուած է, թէ Դաւիթ եւ ելել է ընտրոյ ժողովոյն ընտրեցելոց վասն Դանիէլի, բայց դէտ հրաժարեցաւ է ընդունել, ալ ելեւոյ զինքն օրհնօք (ՄՍՐ. 51)։ Այդ մերձեցումները կը յայտնեն, թէ Դաւիթ Բագրեւանդի վանքին մէջ կատարուելիք օծումին լուրը առնելով, ուզած է ինքն կանխել, և ըստ այնմ ձայն հանած է, բայց գործադրութիւնը չէ կանխած. վասնզի գրուած է, թէ բանադրանքը արձակած է, ինմանալվ իր ընտրեալ եհմանած բանադրանօք (ԵՐՅ. Ա. 25)։ Անկէ ետքն է որ միաբանները ժողովելով (ՄՍՐ. 55) անէծք կարդացած է Դանիէլի դէմ։ Մենք չենք ուզեր կարեւորութիւն տալ այդ բանադրանքներուն, որ երկու կողմերէն ալ կիրքի արդիւնք էին, և ոչ օրէնքի, և կ'հաւատան թէ ժամանակակիցներն ալ նոյնպէս կը մտածէին, որ ոչ մի կողմը բանադրանքի երկիւղածութենամբ իր միտքէն ետ չէր մնար։ Երիզոր պատրիարք Կ-Պոլսոյ մէջ եպիսկոպոսներով և վարդապետներով և իշխաններով ժողով կը գումարէր, և Սեբաստիոյ Երիզոր եպիսկոպոսի ձեռքով բերուած Դանիէլի անդրանիկ կոնդակը (Դիի. Ա. 151) հանդիսապէս կը հրատարակէր (ՊԻՐ. 46)։ Տիզիսի մէջ ալ արտաստվոր հանդիսաւորութենամբ, յուլիս 13'ին, վարդավառի բարեկենդանի կիրակիին, կը կարդացուէին Ռուսաց կայսերական հրովարտակը երեք լեզուով, և Դանիէլի հայրապետական գիրը (ԵՐՅ. Ա. 27)։ Ներհակընդդէմ պայքարին

մէջ՝ երկու կողմերն ալ միայն դրամի և աղդեցութեան զօրութեամբ գործը առջեւ կը մղէին։ Դաւիթ կ'ամբաստանէր Դանիէլը թէ պայազիտի մէջ մնացած Մայրաթոռոյ սպասներն ու ապրանքները՝ կաշառքի գործածած է (ԴԻԻ. Զ. 393), բայց միեւնոյն բանը իրեն համար ալ ըրուցուած է. և իր մտերիմը, Գէորգ Ազայէկեան, յայտնապէս կը խրատէր, թէ «ոչ ֆող ուղիս՝ վէնայես, յետ քոց լէր (ԴԻԻ. Ե. 289)։ Դաւիթ այդ միջոցները թէ Ռուսական և թէ Տաճկական արքունիքներուն մօտ ալ կը գործածէր, բայց իւր գլխաւոր ոյժը Երեւանի խանն էր, որուն Պարսկական արքունիքին կ'անսար, և ազատօրէն Դաւիթէ կը չահուէր և Դաւիթը կը չահեցնէր։ Նա համարձակութիւն ունեցաւ Ռուսական կառավարութեան Դանիէլի համար միջնորդութիւնն ալ մերժել, զի երբ Ռուսաց ձեռ էլլէ էին յիշեալ խանն, քացառեան ջոջդ էս խանն (ԴԻԻ. Զ. 396)։ Միւս կողմէն Դաւիթ կ'աշխատէր Կ-Պոլսոյ կառավարութեան մօտ ալ զօրանալ, քանի որ Դանիէլ անոր հողին վրայ էր և անոր հովանաւորութեամբ կը գործէր, և պէտք էր նախապէս այդ պաշտպանութենէն զրկել Դանիէլը։ Ուստի այս նպատակին գործածեց, բոլոր տրամադրելի նիւթական և բարոյական իւր միջոցները, և իրօք՝ անով կրցաւ ապահովել իւր երկրորդ յաջողութիւնը։

ԽԱՄՍԵՑԻՆ ՊԱՇՏՕՆԱՆԿ

2272. Դանիէլեանք իրենց նպատակին հասնելու համար աշխատած էին Յովհաննէս պատրիարքը տապալել, որ Դաւիթը զօրացնէն. նոյն կերպով Դաւիթեանք ալ ձեռնարկեցին Գրիգորը տապալել, որ Դաւիթը զօրացնէն։ կարծես թէ Գրիգոր ինքն ալ առիթ առաւ իրեն տապալման, իւր տարապայման խստութիւններով և աննպատակ հակառակութիւններով։ Նոյնիսկ Դանիէլի կուսակիցներ կը խոստովանին, թէ ըստ անհեմ բարուց էրց, նոր և չէր արհնէր ի հոգն քրքռտել, և թէ սկսա բանքաբ խոշտանգել ղիւրիեանս, և չյիշելոցն բանէ նախատել ի բերոյ։ Մինչեւ իսկ Դանիէլեանները կը խոստովանին, որ Գրիգոր ունէր իր յատկանշական ուժեղ կողմերը, ինչպէս ըսինք, ազգասիրութիւն, ազգին համար տառապելու ոգի, ազգին համար ամէն զոհողութեան պատրաստ ըլլալ, ազգին համար ամէն ինչ ընելու կամք։ Ասոնք ամէնքն ալ ունէր Գրիգոր, և ասոնք ամէնքն ալ կը ներշնչէին ժողովուրդին։ Ասոնք ամէնքն ալ կը պակսէին Դանիէլեանց։ Ասոնք ամէնքն ալ կը պակսէին Դաւիթ Ե. Էնէգէթցիին։ Ասոնք ամէնքն ալ կը պակսէին Յովհաննէս Պատրիարքին։ Ասոնք ամէնքն ալ կը պակսէին Գրիգոր Ե. Պալեկեցի

օր պահուրտիլ, և առաջին առիթով նոյեմբեր 2'ին Կ-Պոլիսէ հեռանալ, և ապաւինիլ Ղրիմի կողմերը (Թիւ. Ա. 156), նպատակ ունենալով այնտեղ գործել Եփրեմի օգնականութեամբ, և Կ-Պոլսոյ դեսպանական անձերէ ստացած յանձնարարականներու զօրութեամբ (Թիւ. Ե. 293)։ Նոր պատրիարքը բերելու գացող հրաբիրակներ, փութացին իրենց պաշտօնը կատարել, և Ցովհաննէս ընտրութենէն 40 օր ետքը դեկտեմբեր 1'ին Կ-Պոլիս հասաւ (Թիւ. Ե. 294), և 3'ին չորեքշաբթի օր, ղեկցորդ վիպոյ և պաշտօնի ձեռնարկեց (ՊԼՐ. 49)։

2273. Նկատողութեան արժանի կը դառնանք քալել այստեղ, Դաւիթի ուղղուած Կ-Պոլսեցւոց նոր հանրագրութիւնը, զոր Ցովհաննէս փութացած է կազմել տալ մայրաքաղաք հասնելէն քիչ օր ետքը, վասնզի 1802 տարւոյ դեկտեմբերէ թուականը կը կրէ (ԷԶՄ. Բ. 53)։ Մեծ ժողով մը կը գումարուի առ դրան արքունական Ախոռածածինն մայր եկեղեցւոյ, որուն ներկաներուն թիւը յիշուած չէ, բայց հազարի մօտ պէտք է ըսել, երբէ 588 ստորագրութիւններ դրուած են հանրագրութեան ներքեւ, ընդարձակ թուղթի մը վրայ, երկու ու քառորդ մէթր երկայնութեամբ (ԷԶՄ. Բ. 50)։ Եկեղեցական և աշխարհական ամէն դասակարգերէ անձեր կը գտնուին ստորագրութեանց կարգին, որ կը ցուցնէ թէ Ցովհաննէս կրցած է ընդհանուր համակրութեան չարժել Դաւիթի համար։ Սուրբ Գիրքէ վկայութիւններով զարդարուած և չորգործող ըսելու չափ չքնդ նախաբանէ մը ետքը, Դաւիթ կը հռչակուի հոգեւոր հօր պէտքընդունելէ արքունական ստորագրութեանց կարգին, որ Գրիգորի օրով իրեն դէմ եղած ցոյցերուն ըստ ինքնոյ համբերատարութեամբ տարաւ և ընդունելեն, բայց որպէս ասիկ տեսաւ և ընդէր էրաւ։ Կը յաւելուն, թէ ընդհակառակը երբէք ստորագրութիւն Դաւիթի արքունական ընդհանուր եկեղեցւոյ դերոյ քակտելէ և ճանչնալէ, և համաձայն հանգանակութեամբ ընդունելէ զանոնք իբրեւ հայրապետ։ Իսկ ինչ որ յայտ մեկ տարուան դէպքերէն պարզուի, տեսնենք։ Իրեք ստորագրութիւնները, որոնք կը ներկայանան իբրեւ ներկայացուցիչ ընդդէմ Դաւիթի, իրարմէ անկախ կերպով ստորագրած են, և ոչ միայն ստորագրած, այլ և ամէնքն ալ ձեռագիր նամակներով Դաւիթի հաղորդած են իրենց ստորագրութիւնը։ Ասոնցմէ առաջինը Ցովհաննէս Ամիրայ Ղազարեան է, որ Կ-Պոլսոյ մէջ ազգային գործերու մէջ մեծ դեր կը խաղար, և Դաւիթի հետ ալ ունեցած է յարաբերութիւններ, որոնց մասին ետքը պիտի խօսինք։ Երկրորդը Ցովհաննէս Ամիրայ Ղազարեանի որդին Գրիգոր է, որ հօրմէ ետք ազգային գործերու մէջ մտած է, և Դաւիթի հետ ալ նամակագրութիւն ունեցած է։ Երրորդը Ցովհաննէս Ամիրայ Ղազարեանի թոռնորդին Ցովհաննէս է, որ ալ Դաւիթի հետ նամակագրութիւն ունեցած է։ Ասոնք ամէնքն ալ ազգային գործերու մէջ մտած են, և ազգային գործերու մէջ մտած ատեննին ալ, ինչպէս ետքը պիտի տեսնենք, Դաւիթի հետ նամակագրութիւն ունեցած են։ Ասոնք ամէնքն ալ ազգային գործերու մէջ մտած ատեննին ալ, ինչպէս ետքը պիտի տեսնենք, Դաւիթի հետ նամակագրութիւն ունեցած են։

2274. Դանիէլ այդ միջոցին կը մնար Բագրեւանդ կամ Ալաչկերտ գաւառը, Իւչքիլիսէ կամ Ս. Ցովհաննէս վանքը, ուր հաստատած էր իւր հայրապետանոցը, միասին ունենալով եպիսկոպոսներ և վարդապետներ, և գլխաւորապէս Ներսէս Աչտարակեցի վարդապետ՝ անխոնջ գործիչը։ Իւչքիլիսէի դիրքը տեղական գործունէութեան դիւրութիւն չէր ընծայեր, գլխաւոր գործերնին էր

թղթակցութիւններով ամէն կողմերու հետ յարաբերութիւններ կազմել, ոչ միայն ազգային, այլեւ պետական չրջանակներու հետ։ Կ'աշխատէին վառ պահել Ռուսական արքունիքին համակիր պաշտպանութիւնը, չահիլ՝ եթէ հնար ըլլար՝ երկրանի խանը, քաջալերել Կ-Պոլսոյ պատրիարքութիւնը եւ Տաճկահայոց վիճակները, սրտապնդել Մայր աթոռոյ միաբանութեան Դաւիթի դէմ հատուածը, լուրեր տալ եւ լուրեր առնել Ռուսիոյ եւ Թուրքիոյ մէջ կատարուած նպաստաւոր ճիգերուն վրայ։ Բազմաթիւ թղթակցութիւններ լոյս տեսան վերջին տունները (ԴԻՒ. Ե. 240-289), որ այդ յարաբերութեանց մանրամասնութիւնները կու տան։ Ծիչեցինք արդէն թէ Դաւիթեանց գործունէութեան նպատակն էր Դանիէլն ու Գրիգորը էջմիածին փոխադրել եւ Դաւիթին իշխանութեան ներքեւ դնել, գուցէ եւ ճարտարութեամբ մը մէջտեղէն վերցնել։ Եւ այս պէտք եղածը սկսած էր գործադրել Անդրէաս՝ դէտ Յովհաննէսը չեկած, եւ պէտք եղած հրամանները հաղորդուած էին Պայազիտի փաչային, ուր փոխադրուած էր եւ Յաճախցին, Դանիէլի հետ աքսորուելու համար։ Դաւիթ որ եղածներէն լուր առած էր նոյեմբեր 10'ին (ԴԻՒ. Է. 6), Գրիգորի տապալուելուն եւ Դանիէլի մերժուելուն լուրը ստացած, փութաց Պայազիտ ղրկել Շիրայի պէկ անուն իշխանը՝ երեւանայ Մահմատի, և Քօլեան Աբրահամ Տաթեւացի եպիսկոպոսը՝ իր կողմէն, որ Դանիէլը բերեն, Օսմանեան կառավարութենէ տրուած հրամանին համեմատ (ԴԻՒ. Ա. 156)։ Ասոնք նախ Պայազիտ կը հանդիպին, և փաչան հաճելոյացեալ՝ առնոն հրաման, և Իւչքիլիսէի վանքը գալով, լընդոյացեալ բերէ ժամ մի, Դանիէլը ճանապայ կը հանեն էրզրումէն հանդերձ (ԴԻՒ. Ա. 157)։ Հազիւ Դանիէլ իննդրագիր մը կը պատրաստէ Աղէքսանդր կայսեր ուղղուած 1802 նոյեմբեր 23 թուականով, ուր կ'ըսէ թէ նոյն օր Պայազիտի քեթխուդան՝ քնոց քնով վոճառել ղրկէ՝ մոտնէոց կապանօք ձեռքերուն ձեռքը, հանդերձ ընդ իս եղեալ հոգեւորականօք և մարմնաւորականօք (ԴԻՒ. Ե. 293), ուր թէպէտ յիշուած է Գրիգոր պարբերաբար ալ (ԴԻՒ. Ե. 292), սակայն այլուր գրուած է, թէ նա այն օրերը հիւանդացած կարս կը մնար, և է յաւղլանալ քալոց է (ԴԻՒ. Է. 7)։ Այստեղ կապանօք բառը, բռնադատեմք պիտի իմանանք, զի չղթայի յիշատակութիւնք չենք գտներ, մանաւանդ թէ Քօլեանի հրահանգ տրուած էր անդր և պարտաւ վարուիլ Դանիէլի հետ, մինչեւ իսկ խոստանալով յանձնել նմա ղեկտան հայրապետական, եթէ ինն յօժարեսցէ (ՄՍՐ. 56)։ Վանքէն ելած օրերնին գիշերը կ'օթեւանին Արծափ, միւս գիշեր Հազուէխ, ուր պիսաւորելու կուգայ Սիմէոն եպիսկոպոս աթոռակալ բաղդ ղինակրա է ղեռալընկեն։ Երրորդ օր էջմիածնի մօտ Քիւլթափէ կոչուած տեղը կը դիմաւորեն Անդրէաս և Յովհաննէս եպիսկոպոսներ և Սահակ Դարբինեան վարդապետ, և լըելեաչ բերեալ մտանեն է Ղալբագաթ, և Դանիէլը իր հետեւորդներէն զատելով՝ մտաբեալ է ներսէ Ղալբագաթ վրան ունեցածները կը գրաւեն, և ամէն հաղորդակցութիւնէ աբբեալ, կացուցեալ պահապան վիճակի չրիչն Պալըգլեան. և այսպէս կը մնայ յաւարտ երեսունևերկուս այսինքն նոյեմբեր 25'էն, որ է էջմիածին մտնելնուն օրը (ԴԻՒ. Ա. 157), մինչեւ դեկտեմբեր 26։ Էջմիածին հասնելնուն օրը ուրիշ տեղ նոյեմբեր 27 գրուած ըլլալը (ԴԻՒ. Զ. 680), ե և է թուտաւորու չփոթութեան պիտի վերագրենք։

2275. Երբ Դաւիթ խիստ պահպանութեան ներքեւ կը պահէր Դանիէլը, միւս կողմէն անձամբ ներսի Ղալաբապատ երթալով և անոյչ խօսքերով կ'ուզէր զայն իրեն հնազանդեցնել,

ԴԱՆԻԷԼ
ԲՌՆԱԴԱՏԵԱԼ

որպէսզի նա ձեռնթափ լինի, և ինքն ապահովուի։ Իրաւ ալ կրնար այդ միտքին յաջողիլը յուսալ, զի Դանիէլ ինքնիրեն մնացած ատեն զոհողութեանց յանձնառու ըլլալու չափ զիջող էր, հանդուրժելէն և երկնչելէն վիճակեալ էր բուրյէց (ՄՍՐ. 57), և բոլորովին հեռու էր ամէն ձգտումներէ։ Նոյնիսկ իւր արգելական կացութեան վրայ ձայն հանող չէր, և ուրիշներն էին որ բողոքի կը համարձակէին։ Քօլեան գլխաւորապէս՝ որ Դաւիթի կողմանէ մէր և պարկեր էր խոստացած, կը բողոքէր թէ սոսկ փոխնիմ է բան իմ և ամբաղձեցոյ (ՄՍՐ. 56)։ Երեւանի մնծամեծներ նոյնիսկ խանին դիմելով, անոր կողմէ Դաւիթի գրել տուին, որ

Դանիէլը հանեալ յոբելեանէ պատուով պահէ ի կոչս դեռանից։ Դաւիթ եղիցի և եղիցի ընդդէմ եկաց այս միջամտութեանց, և վերջապէս պայման դրաւ, որ Դանիէլ գրաւոր կերպով հրաժարի կաթողիկոսութեան անունէ, դատապարտէ իւր ընթացքը, անվաւեր և ապօրինաւոր խոստովանի իւր օծումը, զղջում յայտնէ իւր ըրածին վրայ (Դիւ. Ա. 158)։ Դանիէլ այդ ալ յանձնառու եղաւ կատարել, և 1802 դեկտեմբեր 31 թուականով հրատարփեր մը ստորագրեց, որ աւելի ծեղուփէր կրնայ ըսուիլ, վանդի եղելութիւնները յիշելէ ետքը կը յայտնու, թէ զղջացեալ ընդ հակառակ սրտին ձեր, կոտրեալ զղջմամբ. դիմեցաւ է առաքել էջմիածին է հաստիայր Քրիստոսակոչ սրբոյ պեղոյն և մատուցանել պետուն Դաւիթ եպիսկոպոսին կողմանէ հանդերձ ձեղոյն (Դիւ. Ե. 298)։ մինչ յայտնի է որ կամովին եկած չէր, այլ բռնի բերուած էր (§ 2273)։ Սոյն ոճով կըրկին և կրկին կը հերքէ, կը դատապարտէ, կը նզովէ իւր ըրածները, և կը փակէ յայտարարելով, թէ կոտրեալ զղջմամբ ասեմ ձեղոյ Աստուծոյ և սրբոյ էջմիածնի է ձեռքիս եղբայնկոտ ապստամբելոյ սրբոցն կոչողիսկոպոսի Ամենայն Հայոց, և ինչքան ինչ ընդունած է նոցանէ տալոյքս ղրկելոց, վճռորութեամբ սկսելոյ եպիսկոպոսից։ Եւ իրօք 12 եպիսկոպոսներու ստորագրութիւններ ղրրուած են նոյն գիրին ներքեւ, որք են աթոռակալ Սիմէոն, ժամօրհնող Ալեքսիանոս, գրագիր Անդրէաս, Յովակիմ, Ստեփանոս, Աստուածատուր, Բարսեղ, միւս Ստեփանոս, Յովհաննէս, Աբրահամ, միւս Աբրահամ և Գէորգ եպիսկոպոսներ (Դիւ. Ե. 299)։ Այդ գրութեան վրայ 1813 տարուոյ առջի օրէն, սկսան դիւրութիւններ ընծայուիլ Դանիէլի, դասին մէջ՝ տեղ, ոմանց երթեւեկի արտօնութիւն, երբեմն Դաւիթի սեղանակից, բայց ազատ բնակութիւն չտուեցաւ, և Մեծ Ղազարապատին մէջ փակուած մնաց (Դիւ. Ա. 161)։ Ասոր ալ պատճառ կրնանք ընդունիլ, Դաւիթի ինքզինքը բոլորովին ապահով չզգալը, զի եթէ Դանիէլ համակերպեցաւ, այլ Դանիէլականք ոչ, որոնք բնաւ կարեւորութիւն չտուին Դանիէլի հրաժարագիրին, որ պարզապէս բանտարկեալ անձէ մը բռնադատութեամբ առնուած ստորագրութիւն էր, և այնպէս ալ նկատուեցաւ։ Իրօք ալ յայտարարութեան մէջ գործածուած տարապայման և տարօրինակ ոճը, Դաւիթի կողմանէ պատրաստուած գրութիւն մը ըլլալը կը մատնէ։

2276. Դանիէլի պաշտպաններուն և անոր անունով գործողներուն գլուխը կը դառնուէին Եփրեմ եպիսկոպոս Ռուսիոյ առաջնորդ, և Յովհաննէս Գեղարդակիր Տփղիսի առաջնորդ։ Մանուէլ կիւմիւշխանացին ալ (§ 2272) Եփրեմի մօտ կը գտնուէր Նոր-Նախիջեւանի մէջ, ուր եկած էր Կ-Պոլիսէ՝ մէկտեղ բերելով կարեւոր վաւերագիրներն ալ։ Առանց հովանաւոր և օգնական էին էազարեան եղբայրներ, Մինաս և Յովակիմ, Ռուսաց արքունիքին առջեւ ազդեցութիւն վայելող իշխանաւորներ։ Ամենքն ալ, իրենց ջանքերը դադարեցուցած չէին երբոր էջմիածնի մէջ հրաժարագիրի մնցքերը կը կատարուէին։ Աղեքսանդր կայսերէ ալ հրահանգ տրուած էր կովկասեան գաւառաց կուսակալութեան, պէտք եղած դիմումներն ընելու Երեւանի խանին մօտ, որպէսզի Դաւիթ հեռացուի և Դանիէլ կաթողիկոս հաստատուի։ Դաւիթ ալ անգործ չէր, և Դանիէլի վրայ նոր բռնութեան առիթ ստեղծելու համար՝ տեղեկութիւն տուած էր խանին, թէ պարտաւորուած է Դանիէլէ հաշիւ պահանջել այն գումարներու և գոյքերու համար՝ զորս գանձած և իւրացուցած և ծախսած էր իբր կաթողիկոս, մինչ անոնք էջմիածնի իրաւունքն էին։ Դաւիթի հետ խառնած էր Ներսէսի ալ անունը, իբր էբեթէ այս ամենուն պարոյներեն և պարտաբերութեան աթոռոյն։ Դաւիթի այդ ջանքերը իմացան Երեւանի Հայ իշխանաւորներ, և նուէրներ կամ կառավարական գործակատարին միջնորդութեամբ աղաչանքներ ու ընծաներ ու գումարներ մատուցանելով խանին, յաջողեցան համոզել, որ Դաւիթին գրէ թէ բանականութիւն պահանջէ էջմիածնի իշխանութենէն։ Ձիշդ այս օրերուն 1803 յունուար 5'ին, Ծրագալոյցի օրը, Երեւան կը հասնի (Դիւ. Ա. 163) Թէմուրազ Վրացի իշխան, Օրբելեանց Վրացի ճիւղէն, Թէմիրիզ Էչիկաղասի իշխանին որդին, որ Ռուս կու-

ՌՈՒՍԻԱ
ՄԻՋՆՈՐԴ

սակալին և վրայի իշխանաւորներուն անու-նով Մանմատի առաջարկեց, չ՚ընկեցեալ՚ի-ւէր յերեսաց՝ նոյնացեի՚ի՚անել (ՄՄՐ.57)։ Մանմատ չկրցաւ նոյնիսկ նոյն առաջարկը մերժել, որ Իուսական կառավարութեան ազդեցութեամբ կը ներկայացուէր, և չկրնալով Դաւիթէ և անկէ առացած և առա-նալիք չահերէն ալ հրաժարիլ, իբր երկից միջոց փոխադարձ առաջարկեց, որ Իուս-ները հաւանին և օգնեն որպէսզի նորէն իրեն պաշտօնին մէջ հաստատուի կարող բլլալ Շէրիֆ փաչա (Դիի.Ա.164), որ դա-փնտռել է մահ յՕսմանեան Իրահե, և Ախըլց-խայէ ֆոխոթոյ ապաւինած էր Մանմատին մօտ։ Շէրիֆ նկատած էր իրր Իուսաց ոխերիմ թշնամի (ՍՐՅ.Ա.31), ասով մէկտեղ դեսպանը յուսադրութիւն յայտնեց, գործը Իուս կառավարիչին հաւանութեան ներքա-կելու, և դէնչ ցաւագր հնչեփաան պատաս-խանը տալու ալ խոստում տուաւ։ Մանմատ այդ միջոցին Դաւիթին ու Դանիէլը Երեւան բերել տուաւ, և էջմիածնի մէջ Դաւիթի անհնակները կնքել տուաւ, որպէսզի փո-խանցումը դիւրացնէ։ Պայմանեալ օրերը լեցուեցան, բայց Իուս կառավարիչէն ոչ պատասխան հասաւ, և ոչ զինուորական օգնութիւն։ Մանմատ ալ մտածեց, թէ ոչ-նենթոխոփ են նոխա և խոքեքեայ, ուստի մեր-ժեց դեսպանին առաջարկը, և Դաւիթը ար-տօնեց վերի ըսել ըսո ահաչնչն վեր էչեանուներն։ Դեսպանն ալ ստիպուեցաւ Տփղիս դառնալ, որ գործին ընթացքը բացատրէ, և պէտք եղած կարգադրութիւնները փութացնէ (ՄՄՐ. 58)։

2277. Դանիէլի հետ Երեւան եկած էին Յամանցին Գրիգոր և Աչտարակեցին Ներ-սէս, որոնք Դաւիթէ՝ էչ-նալէ Խոմեցէ Գրէգորն և ԱՊԱՐԴԻԻՆ ԵԼՔ լիոյ Նեբոեան կոչուած էն (Դիի.Ի.47)։ Առանք մատ-ծեցին, դեսպանին հետ Տփղիս դառնալ, և Իուսական կառավարիչին հետ գործին յա-ջողութեան աչխատիլ, Դանիէլին ալ նոյնը թելադրեցին, որով թէ գործը պիտի դիւ-րանար և թէ Դաւիթի ձեռքէն ազատած պիտի բլլար։ Երկուքն ալ յորդորէին և ոչ-պէին վերանալ, բայց ի վերոյ նոր յանձն՝ որոշեցին իրենք գնալ ընդ դեսպանն։ Ոմանք այնպէս դատած էն, թէ Յամանցին և Աչ-տարակեցին ալին իջեցէն դնել և հետևանալ Դանիէլի մօտէն, հոգալով ի ճոլտրոճ ան-յանց ֆոխալ (ՄՄՐ.59)։ Սակայն պարագա-ները յաւ գննելով անհին կը նկատենք այդ միջադրանքը, և յարմարագոյն կը սե-պենք ըսել նախնական չիչատակագիրին հետ, թէ որոշեցին երթալ ի դիմաց Դանիէլի, էբբե- յորդորել ոո կոոակալն՝ կոոբրան խըզ-բոյ խանին Եբեոանոյ, որով պիտի ապահով-ուէր Դանիէլի կաթողիկոսութիւնը (Դիի.Ա. 165)։ Դաւիթ ալ կը գրէ, թէ Դանիէլ ՀԲէ-ֆոն և վներբոեան յոոլբլեոյ ի Թէֆլիզ, ոո ի լցոոյոնել վէոոոմոլ ընէր կոմ ֆոր (Դիի.Ի. 47), իբր թէ ինքն փառամոլ չբլլար, մա-նաւանդ թէ փառամոլութիւնը բռնաւորու-թեան հասուցած չբլլար։ Դանիէլի երթալ չուզելուն պատճառ կրնանք նկատել քիչ մը առաջ տուած հրաժարագիրին հաւատարիմ մնալու խիղճը· բայց կրնայ ալ բլլալ որ Մանմատ Դաւիթէ գրգռուելով ներած չբլ-լայ որսը ձեռքէն փախցնել։ Արդէն Դաւի-թի պայքարող ուղղութիւնը՝ իւր խակ գի-տերէն կը յայտնուի։ Որն և բլլայ բուն պատճառը, 1803 յունուարի վերջին օրերը Յամանցին և Աչտարակեցին դեսպանին հետ Երեւանէ մեկնեցան, 31՚ին Տփղիս մտան, և փետրուար 1՚ին ներկայ գտնուեցան իշխան Պօղոս Դեմետրեան կամ Պաւել Դիմիտրիչ Ցի-ցիանով մեծ կուսակալին հանդիսական մուտ-քին։ Դեղարդակիրի գլխաւորութեամբ ա-նոր ներկայացան, հղկելութիւնները բացա-տրեցին, և պատասխան ստացան, թէ ընդ-հէ- ֆեձոչր կոյոեբ էոոՒվ ոոնՒ կոոբրել վինգէբ չեբ, յոլբրբեցոոյոնելվ վՒոնէլեն յո-նոո կոՒոպկոոոՒեն (Դիի.Ա.165)։ Գործին աւելի ոյժ տալու համար Աչտարակեցին ան-ցաւ Նոր-Նախիջևան՝ եփրեմի և Մանուէլի գործակցելու, մինչ Յամանցին Տփղիս մնաց Դեղարդակիրին մօտ (ՄՄՐ.59)։ Դաւիթ քիչ մը ևս Երեւանի մէջ ուշացաւ, Մանմատի հետ իւր դիրքը ապահովելու համար։ Իւր գրգռութեամբ խանն ըսելոցել է վերոյ Դա-նիէլի, կլլելը եր զայն է ֆէչ բերբէն է էբ-պոնջ (Դիի.Ի.76), վասնզի Թիմուրազ երկ-րորդ անգամ եկած էր Դանիէլին կաթողի-կոսութիւնը պահանջել, զլանալով մէկտեղ Շէրիֆին օգնելու պայմանը։ Իսկ խանը

կրկին մերժից պատճառելով, թէ գոյ օրվ-հեթօ չկոհցայ է ելեւէթ քեբել ղեօղչկօ-ղիւնն մէջ, մէյ եա չէմ հաճելոց կոպրել չկոմ յնէ. աւելցնելով ալ՝ թէ Դաւիթի պաշտօնանկութիւնը հակառակ կ'ըլլայ Պարսից չահին և Օսմանցւոց սուլտանին հրովարտակներուն (Դիի. Է. 84)։ Այսպէս Դաւիթ Մահմատի պաշտպանութեամբ զօրացած, պարսկական նէվրուզն ալ Երեւանի մէջ կատարելէն ետքը, 1803 մարտի վերջերը էջմիածին դարձաւ, ապրիլ 5'ին զատիկը տօնելու։ Իսկ Դանիէլը, կը գրէ ինքն, խանն գոհել է յեօ մէջ, գոգօելեց ըսի կոմ ասնել ընէ նմա, և գոգհել չէրէզ և ֆէսեմ։ Ասոր վրայ Դաւիթ ղէլլանն և ղմգանէն ասել Դանիէլէն, և կրքընկէց արբեալ, կը փակէ է գօմ սենեկն էքը է գէղոհով, և զայս կը կոչէ քնկան գօմ (Դիի. Է. 104), երբ կը սպասնայ ալ, որ եթէ ոչ հանգրգիցօցե չ'է թիֆլիզ եվել սեսֆլօխան էր գինվե է գան և հինէ օր, անէ չրկել է ծէրասցն և գասհել ղոյժ (Դիի. Է. 114)։

2278. Որչափ և Դաւիթ կաթողիկոսութեան տիրացած էր, սակայն հանդարտութիւն չունէր, զի Դանիէլեան գործիչներ, եփրեմ և Յովհաննէս և Գրիգոր և Մանուէլ և Ներսէս՝ չէին դադարէր Ռուսական կառավարութեան մօտ աշխատիլ, որպէսզի Աղեքսանդր կայսերէ կաթողիկոս ճանչցուած Դանիէլը, իրօք ատեռին տիրանայ։ Դաւիթ այնպէս կը կարծէր, կամ գոնէ կարծել կը ցուցնէր, թէ անոնք Դանիէլի հրահանգով կը չարժին, թէպէտ լաւ պէտք էր գիտնար թէ Դանիէլ, եթէ իրեն մնար, շատ հեռու էր այդ գործունէութենէ. և եթէ ուզեր ալ բան մը ընել, անհնարութեան մէջ էր, ամրապէս փակուած և խիստ հսկողութեան ներքեւ ամէն յարաբերութենէ զրկուած ըլլալով։ Ուստի միայն ձեւակերպութիւն էր 15 օրուան պայմանաժամով պահանջել, որ վերոյիշեալ գործիչները արգիլէ, և բուն նպատակն էր Դանիէլի անձին վրայ բռնանալու առիթ սպասել, ինչպէս որ ալ կատարից։ Վանգի մայիս 25'ին, Հոգեգալստեան երկուշաբթի օրը, խստիւ անարգելէ և նախատել, և յայն պոռ ղբոց Ռոսաց չոգնոլիւն ելէ՝ խօսքերով հեգնելէ ետքը, հրապարակաւ նախ խոսել, յետոյ գերծել կու տայ Դանիէլի մօրուքը, և աւելի խիստ բանտարկութեան կ'ենթարկէ (ՄՍՐ. 59), զոր ինքն է պահեսք հանգիսոց կոցոլեմբ ապրիլ կը կոչէ, և մեծանձնութիւն կ'ուզէ ցուցնել 15 օրուան պայմանաժամը մինչեւ 60 և 70 օր յապազած ըլլալը (Դիի. Է. 200)։ Դաւիթ այդ աւթիւ ոտնակապ ֆոլեխ և գաւազան ալ պատրաստել տուած էր Դանիէլը տանջելու. այլ չհամարձակեցաւ գործադրել, տեսնելով որ ամենուն խոհեմ գէմ է պերոլէց պեսրանէն (ՄՍՐ. 60)։ Հետեւապէս լոկ կեղծիք պէտք է ըսուին կարծեցեալ զղջումի ձեւերը, և քաղցրութեան վարմունքները, զորս ոմանք կ'ուզեն բարձրացրնել (Դիի. Ա. 173)։ Որովհետեւ այդ միտքը ոչ մի կերպով չարդարանար Դաւիթի պրոթիւններէն, որոնց մէջ երբեք առանց նախատալից մի բառի չտրուիր Դանիէլի անունը. զորօրինակ ֆանգֆօսօ (Դիի. Է. 87), սեսմօլ (Դիի. Է. 88), նենգօսր, խոբգոբիլ (Դիի. Է. 104), սֆքոբգասան (Դիի. Է. 113) և նմանները։ Անխտիր կը բռնանայ Դանիէլի համակիր կարծուածներու վրայ, հետեւորներու ալ բանադրանքներ կը տեղացնէ չափազանց մոլեգնելով ոճով մը, ինչպէս Աղբակի (Դիի. Է. 114), և Ս. կարապետի (Դիի. Է. 148), և Բալուայ (Դիի. Է. 170), և Մշոյ (Դիի. Է. 174), և ուրիշ վիճակներու առաջնորդներուն։ Դաւիթ միւնոյն ատեն չարունակ Ռուսաց կայսեր և կուսակալին և պաշտօնէից կը դիմէր իր կարծեցեալ իրաւունքը պաշտպանելու, և իր միաբանութեան անունով գրուած նամակներ կը տեղացնէր. մինչեւ իսկ պան մը Աղեքսանդր կայսրն ալ ծիցիանովէ լեսլի պեղեկոլիաններ կ'ուզէր, թէ արդեօք Դանիէլ պատրիարքը էրս Հայոց ազգին անհրաժեշտ է, կամ թէ զայն հայրապետական գահէ վար պահելը երկբէ համոզ նշանաւոր անյարմարութիւններ պիտի յառաջացնէ (ԵՐՅ. Ա. 29)։

2279. Ռուսական կառավարութիւնը երբոր Հայոց կաթողիկոսութեան խնդիրով կը զբաղէր, աւելի ընդարձակ նպատակ ուներ, Հայաստանի գաւառներուն մէջ իր տիրապետութիւնը ընդարձակել, ինչպէս արդէն վրաստանի գաւառները իւրացուցած

էր։ Բայց պէտք է ընդունիլ, թէ այնպիսի անկարգ և անտանելի վիճակի հասած էր Պարսկական իշխանութիւնը, կամ լաւ ևս խանևրու անիշխանութիւնը, որ մեծ բախտ պիտի լլար կանոնաւոր տիրապետութեան փոխանցուիլը, և երկրին բնակչութիւնն ալ իրր նախախնամութիւն կը նկատէր անոր իրագործումը։ Դաւիթ Պարսիկ խանէն պաշտպանուած, և Դանիէլ Ռուսական կայսրէն հովանաւորուած, այդ զգացումներուն անձնաւորութիւններն էին դարձած։ Օրիի ջանքերը (§ 1846) և Սիմէոնի ձգտումները (§ 2096), չատոնց տրմատ ձգած էին Հայ սիրտերու մէջ։ Ռուսական ծրագիրը ընդարձակ էր, և իւր նախապատրաստութիւնները կը պահանջէր, ուստի Ցիլիանով, որ անոր գործադրութեան համար ղրկուած էր, հանդարտօրէն կը գործէր. 1803 տարին ուրիշ միջադէպներ տեղի չունեցան, և միայն 1804 տարեմուտին սկսան գինուորական չարժումները։ Յունուար 3'ին Ցիլիանով գրաւեց Գանձակ կամ Կէնջէ քաղաքը (Դիի. Ա. 174), և հոն թողուց Գեղարդակիրը, որ իրեն կ'ընկերանար։ Անկէ մեծ պատրաստութեամբ գնաց լեռնաբնակ Լէզգիներուն վրայ, սասանեցոյց ջարնայն սահմանակից խանաթներն. անցաւ Գօրու և Իմէրէթու կողմերը, Դատիանու երկիրին մէջ Ռուս գունդեր թողուց, և մայիս 5'ին Տփղիս դարձաւ, Երեւանի կողմը արչաւելու համար (Դիի. Ա. 175)։ Մահմատ անարեւկած դէսպաններ յղած էր, և Ռուսաց հովանաւորութեան ներքեւ անցնիլ յանձնառու եղած, եթէ գինքն պաշտպանեն Պարսից Ցէթհալի չահին դէմ, որ Երեւանի վրայ կը քալէր. ըմբոստ խաներ նուաճելու և թշնամի Ռուսները վանելու կրկին նպատակով։ Ցիլիանով Մահմատէ իրր նչան անկեղծութեան պահանջած էր, որ Երեւանի բերդը իրեն յանձնուի, և ինքն քաղաքէն ելնէ, ինչ որ Մահմատ չէր կատարած։ Ուստի Ցիլիանով լեռնականներու պատերազմելէ ետքը մայիս 5'ին Տփղիս դառնալով, 28'ին բանակը Երեւանի կողմը ճանպայ հանեց, և ինքն ալ հետեւէն ուղեւորեցաւ դէպի Ալարատեան դաշտը։ Մահմատ ամրացած էր արդէն Երեւանի մէջ ռազմամթերքով և առատ պաշարով, դաշտը պարպած էր բնակչութենէ, Դաւիթն ալ էջմիածինի միաբաններով և հարստութիւններով Երեւանի բերդը փոխադրած, Դանիէլն ալ միսահն առնելով։ Պարսիկ յառաջապահ գունդը Աբաս Միրզա արքայորդւոյն հրամանատարութեամբ Թաւրիզէ մեկնելով՝ յունիս 1'ին Զաւրաւոր այգեստանը բանակեցաւ, Երեւանի բերդին վրայ յարձակեցաւ առանց յաջողութեան, երբ գումարտակ մըն ալ էջմիածինի վրայ կը քալէր։ Վանքին պահպանութեան մնացած սակաւաւոր միաբաններ, աթոռին պաշտպանութեան համար կանուխէն ուսուցուած արքունի հրովարտակը արքայորդւոյն կը ներկայացնեն Զաքարիա վարդապետին ձեռքով, և 600 հոգւոյ Պարսիկ գունդ մը պահապան կը հաստատուի էջմիածինի մէջ։ Նոյն միջոցին Ցիլիանով Ախարանի կողմէն կ'իջնէ։ Մահմատ իրրեւ նչան բարեկամութեան Ղասիմ պէկը կը ղրկէ, որ Ռուսները առաջնորդէ, որոնք Եղիվարդ և Օչականի գիւղերու ճանպով կու գան բանակիլ Շրէչ կամ Շռէժ բլուրին վրայ, յունիս 20'ին Հռիփսիմեանց տօնին օրը (Դիի. Ա. 177)։

2280. Ռուսաց և Պարսից պատերազմը կը սկսի նոյն օրը Ղարիբանոց կոչուած տեղը, էջմիածինի և Հռիփսիմեանց տաճարներուն միջեւ տարածուող դաշտին վրայ, և կը չարունակէ երկրորդ ու երրորդ, յունիս 21 և 22 օրերն ալ, մինչեւ որ արքայորդին կը պարտաւորուի ետ քաչուիլ մինչեւ Երասխի գետակերքը, և Ռուսներ կը տիրանան էջմիածինի։ Ռուսական բանակին հետ էին Դանիէլեան գործիչներ, Գեղարդակիրը և Խամսեցին և Աչտարակեցին՝ հետեւորդ եկեղեցականներով, որոնցմէ Յակոբ Մաչկերցի վարդապետ և Տրդատ Աւտրախանցի սարկաւագ պատերազմի մէջ սպանուեցան (Դիի. Ա. 178)։ Դանիէլեաններ և Ցիլիանով անչուշտ մտադրած էին, էջմիածինը գրաւելով աթոռին տիրանալ և Դանիէլը նստեցնել, բայց Դանիէլ կալանաւոր վակուած էր Երեւանի բերդը (Դիի. Ա. 179)։ Ռուսաց կողմէ, Դաւիթին հրաւէր կը կարդացուի Երեւանէ դուրս գալ և իրենց հպատակիլ, Դաւիթ

մերժել կը ցուցնէ, թէպէտեւ ձեռուընին ունինք Ռուսաց համակիր նամակի մը պատճէնը (Դիի. է. 426)։ Պաշտօնական մերժումին վրայ Ռուսներ Էջմիածինի մէջ գտնուած մխիթարին կը տիրանան, և սպասաւորն ալ հաւատքովը միասին կը փոխադրեն, որ կոյսը ինչ ուղեմ է ըսել անէ (Դիի. է. լբ)։ Այդ գործին մէջ Ռուսներուն կը գործակցին Աչտարակեցին և ընկերները։ Կողոպուտին մասին չատ խիստ գոյներով խօսած են Դաւիթ և Դաւիթեանք, իբր այն թէ անագին հարստութիւններէ մերկացած էջմիածինը Դանիէլեանց ձեռքով (Դիի. է. լբ)։ Սակայն իրենք իրենց կը հակասեն, քանի որ յառաջագոյն ըսած էին, թէ ոխակալ ժողովուրդն անօթներէն Դաւիթ ժողովից և տարաւ Երեւանի քեղդը, ու էջմիածինը բոլորովին դատարկ ձգեցին (Դիի. է. լբ)։ Հետեւապէս էջմիածինի ստացուքեանց լաւագոյն մասը Դաւիթեաններէ և ոչ Դանիէլեաններէ հարկ կ'ըլլայ փնտռել, և իրենց տարաժամ ողբերը, ըրածնին ծածկելու աղաղակներ եղած կ'ըլլան։

ՌՈՒՍՆԵՐ ԿԸ ՔԱՇՈՒԻՆ

2281. Շուչիի ճակատամարտին ելքը Պարսիկները սթափեցուց, և արքայորդին ու բանակ տեսան, որ իրենց հակառակութենէն չհողը Ռուսը պիտի ըլլայ, և իրենք միշտ պիտի վնասուին. ուստի գաղտնի կերպով սկսան իրարու մօտենալ և իրաւախոհութեամբ բանակցիլ։ Խաբէական դերը կատարողը եղաւ Մահմատ, որ երբ մէկ կողմէն արքայորդւոյն հետ կը բանակցէր, միւս կողմէն Ցիցիանովը կը յորդորէր, նախապէս արքայորդիին բանակը հեռացնել, որ ինքն ալ իրենց հետ ըլլայ։ Ռուսներ յունիս 25'ին էջմիածինէ կ'ելլեն, Փարաքարի մօտ Պարսիկները կը վանեն, և կաւակերտ կ'իջնեն։ Աքսա Միրզա 27'ին Քանաքիռ կու գայ, Ցիցիանով վրան կը յարձակի, և Պարսիկներ կը փախչին դէպի Նորվիրապ, և Ռուսներ բանակատեղը կը գրաւեն. յուլիս 2'ին Երեւանի քաղաքն ալ կը մտնեն, ու բերդը կը պաշարեն, և կը պահանջեն որ Դաւիթ և Դանիէլ և էջմիածինի գոյքեր իրենց յանձնուին։ Դաւիթ իւր կողմէն նենգամիտ յարաբերութեան կ'ուզէ մտնել, բայց չընդունուիր իւր առաջարկը։ Յուլիս 15'ին նոր ընդհարում Պարսիկներու հետ Ազատ գետի եղերքը. 25'ին կրկին պատերազմ մը Պարսկաստանէ Ֆէթհալի չահին հրամանատարութեամբ նոր հասնող մեծ բանակին հետ, Հրազդանի հովիտին մէջ։ Պատերազմներուն ելքը թէպէտ Ռուսաց նպաստաւոր, բայց չընկճեր Պարսից դիմադրութիւնը։ Ցիցիանով մէկ կողմէն կը սպասէ որ Մահմատ բերդը պիտի յանձնէ, իսկ միւս կողմէն Մահմատ իրրեւ պայման կը պահանջէ Պարսիկ բանակին իսպառ հեռացումը, որուն դաղտ կ'օգնէր ալ, և որ միշտ կը զօրանար նոր ոյժերով, և մեծ ճակատամարտէ խուսափելով Ռուս բանակը կը նեղէր և անոր պարենաւորումը կը դժուարացնէր։ Ամառը կ'անցնի չարունակ փոքրիկ ընդհարումներով։ Մինչեւ որ սեպտեմբեր 4'ին Ցիցիանով ընդհանուր յարձակում մը կ'ընէ Երեւանի բերդին վրայ, և կը յաջողի պատառկալներ կը խորհէին յաղթել անյաղթը (Դիի. Ա. 185)։ Այլ յանկարծական ինն որոշմամբ՝ գիշերայն Ռուս զօրքը ետ կը քաշուի, և միւս օր 5'ին դէպ էջմիածին կը մեկնի, և 6'ին էջմիածինն ալ կը թողու և կը հեռանայ։ Մէկտեղ կ'երթան Դանիէլեան գործիչներն ալ, նաեւ վանքի մէջ եղողներէն անոնք որ Դաւիթի վրէժխնդրութենէն կը վախնային, և այս առթիւ միասին կը տանին արդէն հաւաքուած իրեղէնները, թերեւս մաս մըն ալ նորէն վրան աւելցնելով։ Ռուսներուն յանկարծ հեռանալը գաղտնիք մը մնացած է պատմութեան մէջ. ոմանք կայսեր կողմէ հնած խորհրդաւոր հրահանգի մը, ուրիշներ Ռուսաց բանակին պաշարը պակսելուն, ոմանք բանակին մէջ վարակիչ հիւանդութեան ճարակ ելլուն, և ուրիշներ Ռուս բանակին ետեւէ կողմէ պաշարումը վախին կը վերագրեն։ Ամէն առթի մէջ ժամանակակիցներու գնահատութեամբ, Ցիցիանով այդ յանկարծական որոշմամբ՝ ստոյգ յաջողութիւնը ձեռքէն հանած է (ՄՍՐ. 61)։

2282. Հազիւ թէ Ռուսները կը մեկնին, որ Պարսիկներ էջմիածինը կը գրաւեն, և թալանի կու տան ինչ որ կը գտնեն, նոյն իսկ մատենադարանի գիրքերն ալ կը

ցրուէն, կամ իբր կողոպուտ կը վերցնէն։ Այստեղ ալ դարձեալ էջմիածինի կորուստներուն պատասխանատուութիւնը Դանիէլ Դանիէլեանց և Յուսաց վրայ կը նետուի Դաւիթէ և Դաւիթեանները։ Սակայն չատ աւելի հաւանական է Պարսիկ հրոսակին վայրագութիւնը, քան Յուս զօրականին կատաղութիւնը. և իրր փաստ կրնանք յիշատակել, թէ էջմիածինի պղնձեղէններ և հանդերձները և գիրքերը բեռներով և հազարներով վաճառուելու հանած են Թավրէզի հրապարակին վրայ (ԴԻՒ. Ա. 186 և ԴԻՒ. Ե. 424). ուր ընդհակառակն Յուսներու հետ տարուածները Տփղիսի մէջ է պահեստի էին ընդ ֆանյոցն կայսերական, մասնաւոր աթոռեալ նշան առ նշան (ԴԻՒ. Ե. 451)։ Ստոյգ է որ երբ Դաւիթ իւրոններով, կալանաւոր Դանիէլն ալ մէկտեղ, երեւանէ էջմիածին եկած է, չատ տխուր վիճակի մէջ գտած է վանքն ու տաճարը, սակայն վերատուց պատասխանատուութեան մեծագոյն մասը իրեն վրայ կը ծանրանայ, որ լոկ կամահաճ բռնութեամբ առթուրին տիրանալով, իրեն յոյսը հաստատած է անիշխանական կառավարութեան մը վրայ, և իւր զօրութիւնը փնտռած է վայրագ հրոսակին և անյագ կաշառակերներուն պաշտպանութեան մէջ։ Դաւիթին ետեւէն Ֆէթհալի չհն ալ էջմիածին եկաւ, տաճարին յարգանք ունէր ընծայեց, Դաւիթին օգնութիւն և պաշտպանութիւն խոստացաւ, և իւր յաջողութեամբը ճոխանալով անոր հակառակորդները ընկճելու ամէն պատրաստակամութիւն յայտնեց։ Դաւիթ պարագային օգտուեցաւ Դանիէլի վրայ ամբաստանութիւններ կուտել, իբրեւ Յուսաց պաշտպանեալ, Յուսները գրգռող, Յուսները Պարսից դէմ հանող, և ամէն միասուն պարտական։ Շահը գրգռուած Դանիէլը կչտամբեց, իսկ սա ամենայն հնդարտութեամբ և հեզութեամբ կը պատասխանէ, թէ մտածելու իսկ բան չէ, որ ընթացքնիր երթալ ընդհատուելով և հրամանով կատարվելու. զի եթէ ձարը իւր խորհրդով կը գործէ, ապա չհն ալ Դաւիթի խորհրդով գործած կ'ըլլայ։ Ֆէթհալի կը տպաւորուի այդ պատասխանէն (ԴԻՒ. Է. 17)։ Բայց Դաւիթ վրայ կը հասնի նորէն գրգռել, և Դանիէլը աքսորելու առաջարկ կ'ընէ, որուն Ֆէթհալի կը համակերպի, թերևս չուզեր ալ զայն Դաւիթին ձեռքին և կիրքին ներքեւ թողուլ։ Այսպէս սեպտեմբեր 12'ին Դանիէլ ճանապայ կը հանուի դէպի Թավրիզ, ուր կը հասնի 19'ին, և Մահտեսի Յովհաննէս անուն Հայի մը տունը հիւր կը տրուի (ԴԻՒ. Ա. 188 և Ե. 423)։ Դանիէլի հասնելէն երկու օր ետքը չհն ալ կը հասնի Թավրիզ, և իրեն հետեւորդներէն ուրացեալ Վրացի Գէորգի պէյ, Դաւիթի մտերիմ և գործիք, կը սկսի դարձեալ չհին միտքը պղտորել Դանիէլի վրայ, և չհանդարտիր, մինչեւ որ հրաման հանել կու տայ Թավրիզէն հանել և Մարաղա աքսորել, յանձնելով տեղւոյն Ահմէտ, ըստ այլոց Մէհմէտ խանին, պատուիրելով իրեն հետ տանիլ և զգուշութեամբ պահել։ Ըստայմ միևնոյն 1804 սեպտեմբերին վերջերը յարմար կ'ըլլայ դնել Դանիէլի աքսորը։ Մարաղացի իշխանը սկիզբները խոփփոյնս վերբեր իւր կալանաւորին հետ, բայց հետզհետէ տեսնալով թէ ֆէթհալիէն ոչ է նա և աղերսէր, բանտարկութեան խստութիւնը դադրեցուց, և ըսել եկաւ ընդդէմ է պահ իւրամ (ՄՍՐ. 62)։

2283. Դանիէլի աքսորական կեանքը Մարաղայի մէջ երկարեցաւ մինչեւ 1807 մայիս, որ է ըսել երկու քառորդ տարի աւելի, և Դաւիթ կարծեց, որ կրնայ այլևս թէ ոչ կատարեալ հանդարտութեամբ, գոնէ բաւական ապահովութեամբ իւր աթոռը պահել մինչեւ վերջ։ Դաւիթեանց և Դանիէլեանց ներհակընդդէմ պայքարները չմարեցան, բայց երեսնց սուր վիճակը չունեցան, և արկածալից երևւէյթները դադարեցան, և կացութիւնը գործնականապէս կայուն կերպարան ստացաւ։ Դանիէլը իրրեւ կաթողիկոս ճանչցողներ և անոր անունով գործողներ պակաս չէղան, Դանիէլ ալ Ընդհանուր կոչումը չէր թողած (ԴԻՒ. Ե. 478), թէպետ երբեմն պարզ Արեւելեան անունով ալ կը գրէր (ԴԻՒ. Ե. 477), բայց աւելի կոպեալ Ընդհանուր կոչումը կը գործածէր (ԴԻՒ. Ե. 494), աւելցնելով թէ կոպեալ եմ գերել ի յԱռաքելոց հետէ (ԴԻՒ. Ե. 492)։ Միևնոյն ատեն

ԴԱՆԻԷԼ ԱՔՍՈՐԻԱԾ

պաշտօնական հրամաններ տալէ և կարգադրութիւններ ընդէէ չէր քաշուեր, սակայն միշտ ամիրսի չրջանակի մէջ, զի ընդհանուր գործերը Դաւիթի անունով և իշխանութեամբ կը կատարուէին։ Այդ կացութեան կը նպաստէր Յովհաննէս Բաբերդցիի կ-Պոլսոյ պատրիարքական աթոռին վրայ մնալը, ուր վերադարձած էր նա 1802 հոկտեմբերին, և իշխանութիւնը պահեց մինչև 1813 սեպտեմբեր, և գիտենք թէ գործաւոր պաշտպան մրն էր Դաւիթի կաթողիկոսութեան։ Դաւիթի վրայ խօսելով, երբեք չծածկեցինք մենք անոր անխոնջ և ժիր աշխատութիւնը, յաւելով միայն որ մինչև բռնութիւն և բռնական տիրապետութիւն մղեց իր գործունեութիւնը։ Ներկայ պարագային մէջ ալ, Մայրաթոռին անագին տագնապէն և չարաչար աւերումէն ետքը, Դաւիթ անօգուտ չհղաւ Էջմիածնի վերանորոգման գործին համար, և իր բոլոր կարողութիւնը գործածեց աւերակ վիճակը դարմանելու, թէպետև մեծ բան չկրցաւ իրականացնել։ Ինքն կ'ուզէր արդիւնքներ ցուցնելով համակրութիւն չունի, յաւ գիտնալով թէ ազգին ընդհանրութեան մէջ չէր վայելեր պէտք եղած սէրն ու յարգանքը. և միայն իր տիրապետութեան այմն և չաւերուն տագնապներէ իսոյս տալու փոյթն էր, որ տանելի րլան իր կաթողիկոսական իշխանութիւնը։ Նոյնինքն Մայրաթոռոյ միաբանութիւնը, որ աւելի ընկճած՝ քան հանդարտած կը մնար Դաւիթի ձեռքին տակ, չէր քաշուեր միւնոյն ատեն պաշտօնապէս դիմել Ռուսաց Ալեքսանդր կայսեր, զի ազատէսցէ ի ձեռաց ընդհանուր ոսոխոյն պատրիարքն Ներսէս (ԴԻԻ. Ե. 481), և նոյն նպատակով Յիսուսեանց միաբանութիւնը կը խնդրէր, որպէսզի ազատութիւն ի ներքինեանն, ըստ անդրմբոր յօրելեայ Գանձ անձնաբեր և անընդհատ ընծայ (ԴԻԻ. Ե. 483)։

2284. Միաբաններ այդ համարձակութիւնը կը ստանային անշուշտ Ռուսաց կողմէ Էջմիածնի մասին ցուցուած մտադրութենէն, զի Յիսուսեանց անգամ մը ևս անգլիացի ընթացքը Դաւիթի ընդհատելն ետքը, միւս տարին 1805ին նոր գունդ կը ղրկէր Էջմիածնի կողմերը՝ Նիվիտասյվ զօրավարի գլխաւորութեամբ, որ Շաքիի և Ղարաբաղի խանութիւնները նուաճելէ կը դառնար (ՍՐՖ. Ա. 34), ուր ֆոլօէրթ և ուիլեաթսոն ամենայն Հայն Ակրցախեցիք, մասնակցած Լին այլազգիներու դէմ յաղթանակին (ԴԻԻ. Ե. 457)։ Ռուս զօրավարը ուղղակի Դաւիթին առաջարկեց մայիս 5'ին՝ Պարսիկ իշխանութենէն ձեռք քաշել, և իր կաթողիկոսութիւնը փոխանակել Ռուսաց պաշտպանութեան ներքեւ հանգիստ ու ապահով վիճակի հետ. սակայն Դաւիթ բացէյայտ մերժեց առաջարկը, և վտանգի չենթարկուելու համար, նորէն Երեւան գընաց Մահմատ խանի պաշտպանութեան ներքեւ, և ամրացեալ բերդին մէջ փակուեցաւ, մինչեւ որ Նիվիտասյվ առանց նոր պատերազմի մտնելու, ետ դարձաւ (ԴԻԻ. Ե. 445), և նորէն Էջմիածնի գոյքերէն մաս մը հետը Տփղիս փոխադրեց, գ-բ-ՆԷՆԵԷ կ-ա-յ-կ-ան-ՆԵ-ան զի չ-ն-ե-ն-ե-ս հա-մ-ա-ր (ՄՈՎ. 333)։ Կը հաւաստուի թէ այս առթիւ միաբանին տարուած են Դաւիթին սեփական գոյքերն ալ, զորս նա վերջին հապճեպ փախուստին՝ չէր կրցած միասին Երեւան փոխադրել։ Այդ գոյքեր, որոնց մասին Գեղարդակիր վկայած է թէ զգուշութեամբ կը պահուէին, յետոյ մասամբ միայն ետ բերուած են Էջմիածին։ Իսկ Էջմիածնի նիւթական կորուստը երկու կողմերու ալ հաւասարապէս պէտք է վերագրենք, որոնք չքաշուեցան անոնցմէ օգտուիլ, քանի որ առանց դրամական զոհողութեանց չէին կրնար իշխանութիւնները իրենց կողմը չահիլ։ Նիվիտասյվի ետ դառնալէն ետքը, նորէն Դաւիթ եկաւ Էջմիածին, և միշտ աւելի տխուր և աւելի աւեր գտաւ վանքին կացութիւնը, որուն վրայ ինքն ալ յուսահատած կ'երեւի, զի իր գործունէութիւնը նուազեցուցած է, մինչեւ իսկ իր տիրապետական ձգտումներուն մէջ յոգնած ու տկարացած, և բռնազբօսիկ կաթողիկոսութենէն ձանձրացած ըլլալու երեւոյթն ունեցած է։ Մեզի հասած յիշատակներ, 1805 մայիսէն մինչեւ 1807 մայիսը, երկու տարուան միջոցի մէջ, գրեթէ անգործ կեանք մը կր ներկայացնէ Դաւիթի մասին։ Նա տակաւ Երեւանի մէջ ալ ապրած է, Ամենայն անունով ծանօթ վանքին մէջ, որ կաթողի-

կոմներու քաղաքամիջի օթարանն էր, և քանիներու ձեռօք նորոգութիւններ և յարդարումներ տեսած էր։ Դաւիթ փոփոխակի կը գանուէր Էջմիածին և Երեւան, իւր վըստահութիւնը ամուր հաստատած Պարսկաստանի պաշտպանութեան վրայ, զոր միայն կաշառքի և վաճառքի ոյժով կրնար իրեն նպաստաւոր պահել, զի քաղաքական ուղղութեան փաստը նչանակութիւն չունէր Պարսկական իշխանութեանց աչքին։ Այդ մասին գուշակական հղաւ Դանիէլեաններուն ակնկալութիւնը, որոնք Դաւիթի Պարսիկներուն վստահացած րլլալը յիշելով կը գրէին. Ցառատ ըն որվ էնէ գեղնէ ոտ, նվիմք և փանջեոյէ (Դիի. ե. 455). զի վերջին վերջ Պարսիկներն էին հղան Դաւիթը տապալողներն ալ։ Անոր ձախողութիւնը սկսաւ երբոր Ֆէթհալի շահ, որ Մահմատի ինքնիշխանութեան ձգտումները չէր կրնար մոռնալ, զայն Երեւանէ հեռացուց, և տեղը նշանակեց Մէհտիզուլի անուն իշխան մը (Դիի. ե. 463), և միւս տարին 1806'ին այն ալ փոխեց, և Երեւանը յանձնեց Մարաղայի իշխան Ահմէտ խանին (ՄՍՐ. 66), նոյն այն Ահմէտը՝ որուն պահպանութեան յանձնուած էր Դանիէլ, և որ երթալով աւելի համակրանք և յարգանք տածած էր անոր վրայ, մանաւանդ իւր որդւոյն՝ Դանիէլի ազօթելէն ետքը հիւանդութենէ բժշկուելուն վրայ։

ԴԱՆԻԷԼԵԱՆՑ ՋԱՆՔԵՐԸ

2285. Ահմէտ խանի այդ ընթացքն էր անչուշտ, որ դիւրութիւն կ'ընծայէր Դանիէլեանց՝ Դանիէլի հետ յարաբերութեան մէջ մնալ, և հեռուէ հեռու կարեւոր գործառնութեանց ալ ձեռք զարնել։ Որոչ չենք գիտեր թէ Դանիէլ զով ունէր իրեն հետ, ամէն առթի մէջ նչանաւոր օգնական մը ունեցած պիտի չըլլայ իւր մօտը, զի գլխաւորներ, հեռու էին, և Թուաստանի կողմերը՝ Տփղիսի և Նորնախիջեւանի մէջ կը գործէին. իսկ Մոսկուա և Պետրբուրգ՝ լազարեաններն էին Դանիէլի պաշտպանները, որոց գերդաստանին գլուխը կը գտնուէր Մինաս իշխան։ Այդ յարաբերութեանց մէջ աւելի կասկած ունեցած կ'երեւին ազգայիններէն քան Պարսիկներէն, գլխաւորապէս Դաւիթի արբանեակներէն, վասնզի պէտք զգացած էին թղթակցիլ ֆաղնաձածոյ խճ և Նոբանար Նշանեթովէ (ՄՍՐ. 65), որոնք ուրիշ բան չէին, բայց եթէ կամայական նոր ձեւեր հայկական այբուբէնի տառերը փոխանակող, որպէսզի թուղթերը ձեռք ինկած առնն ալ պարունակութիւնը չհասկցուի։ Անշուշտ այդ թղթակցութեանց մէջ գլխաւոր նպատակին էր իրարու վրայ ծանօթութիւն ստանալ, և միանգամայն ազատութեան ձեռնարկներ և հնարքներ մտածել. սակայն մենք այդ կէտերով պիտի չզբաղինք, որ մեզ չատ մանրամասնութեանց կրնան տանիլ, և մասամբ ալ գաղտնի կը մնան ֆաղնաձածոյ նչանագիրներու ներքեւ, թէպէտեւ անոնց ընթերցումը լուծելու հետամուտներ, և փոքրիչատէ յաջողութիւն ունեցողներ ալ եղան։ Մենք զբաղինք հանրութեան պատկառող խնդիրներով, որոնց գլխաւորն էր Էջմիածնի մէջ Սիւնոզի մը կազմութեան գաղափարը։

ՍԻՒՆՈԴԻ ԳԱՂԱՓԱՐ

2286. Էջմիածնի մէջ Սիւնոդ ունենալու առաջին գաղափարը ծագած էր Կ-Պոլսոյ աւագանւոյն կողմէն Զաքարիա կաղզուանցիի թելադրութեամբ, երբոր Ղուկաս կաթողիկոսի ընտրութեան խնդիրին մէջ վերջերպանը կոյսոյանելոյ միտքը յայտնեցին (§ 2151)։ Մենք իւր կարգին բացատրեցինք թէ այդ առաջարկը չմոռցուեցաւ երբոր Ղուկասի ընտրութիւնը Զաքարիայի կողմն ալ ընդունուեցաւ, և ընդդիմութեան խնդիր րլլալ դադարեցաւ, ինչպէս Աչտարակեցիին վկայութիւնն ալ հաստատած է (§ 2216). թէպէտեւ այն առնն ոչ սիւնոդի անունն էր խօսուած, և ոչ խորհրդականներուն պաշտօնը ճշդուած։ կ'ընդունինք նէս, որ եթէ Ղուկասի օրով խորհրդականներու կիսակատար ժողով մըն ալ կազմուեցաւ, յետոյ աւելի նոր գոյութիւնը խափանուեցաւ, երբոր Մայրաթոռ երկարաւոր անտէրնջութեան մատնուեցաւ, ընտրողական պայքարներու ներքեւ, որոնց վերջ չկրցաւ դնել Յովսէփի ընտրութիւնը, և զոր բոլորովին խանգարեց Դաւիթի բռնի տիրապետութիւնը, և կամաւոր կամակոր կառավարութիւնը։ Դանիէլի և Դանիէլեանց կողմին նպաստաւոր միտք

մըն էր, կ-Պոլսեցիներէ ծագումառած այդ գաղափարը արծարծել, և իրենց ունենալիք կառավարութեան մասին կանխիկ և հաստատուն երաչխաւորութիւն ընծայել, կաթողիկոսին վարկիք մատակարարութիւնը խորհրդականներու գործակցութեան ենթարկելով։ Այդ կէտը անչուշտ խօսուած էր կանուխէն ալ, թէպէտ Դանիէլի օծման առթիւ պատրաստուած գրութեանց մէջ յիշատակուած չենք տեսներ։ Իսկզբր ձեռք առնուած կը գտնենք Մարաղայի աքսորանքի միջոցին, իբրեւ նախապատրաստական ոյժ մը կամ իբրեւ ապագային երաչխաւորութիւն մը։ Առաջին յիշատակութիւնը կը գտնենք 1805 օգոստոս 16'ին Յովհաննէս և Գրիգոր և Բարսեղ եպիսկոպոսներէ և Ներսէս վարդապետէ՝ իշխան Մինաս եղիազարեանին կամ Լազարեանին ուղղուած գիրին մէջ, ուր այդպիսի հաստատութեան համար անոր աջակցութիւնը կը խնդրեն, և հարկաւ կանուխէն Դանիէլի միտքն ալ չօշափած էին։ Իրենց նպատակն է, որ «հանդիսպէս առանց քաշմունեան եպէսկոպոսաց, և եպէսկոպոսս առանց դիմանց և առանց «հանդիսպէ՝ ի՛նչ էլեւոցին դիպակ և առանչինն կոմս ետնել չեկեղեցոջ» (Դիւ. ե. 460)։ Այդ կանոնին իբրեւ փաստ կը յիշեն Թադէոս առաքեալը, Նիկիոյ ժողովը, Անտիոքայ ժողովը և Գրիգոր Աստուածաբանը առանց վկայութիւնները առջեւ բերելու, և քիչ ետքը կ'աւելցնեն եւս զնդրէս Կոստանդնուպոլսոյ էլեանոցն Հայոց (Դիւ. ե. 461), որով յայտնապէս կ'ակնարկեն Ղուկասի ընտրութեան առթիւ առաջարկուած կէտերուն (§ 2151)։ Սուրբ Գրքին ալ դիմելով առջեւ կը բերեն ժողովոդին գրածը. Զի երբէ էլրէցէ դնի՝ կանգնեսցէ ընա ընկեր իւր, և վա՛յ դառն երբէ էլրէցէ, և ալ ետոցէ դո՝ որ չոբոցանէցէ ընա (ԺՈՂ. Դ. 10)։ Նամակը գրողներ կը յայտարարեն իշխան Մինասի, թէ խորհուրդ տեսեալ ձեզ զհօրհուրդ սրբոյ ընծայեալ (Դիւ. ե. 462), որով կ'ակնարկեն անոր յուլիս 20'ին գրած նամակին (Դիւ. ե. 459), և կը յանձնարարեն որ նոյն խորհուրդը յիշեցնէ առաքելապէս հօր դերամ եպրեմ արեգնոցոք (Դիւ. ե. 463)։ Այսպէս կը սկսի Իջմիածնի Մինոդին ծագումը, թէպէտ տակաւին այդ անունը չունի։

2287. *Իջմիածնայ մէջ սինոդ մը կազմելու մտածմունքին հետզհետէ առած ձեւերուն, ոչ մանրամասն*

ԴԱՆԻԷԼԻ ԿՈՆԴԱԿԸ

նութիւնները ունինք և ոչ ալ կը սիրենք հետազօտութիւններով գրութիւնիս ճապաղել. ուստի մէկէն կ'անցնինք 1806 *յուլիս* 10*'ին Դանիէլի Մարաղայէ արձակած հայրապետական կոնդակին, որ խորհրդարանական ձեւին հիմնագիրն ու հիմնագիծը կրնայ նկատուիլ։ Կոնդակին առաջին մասը ընդարձակ քարոզութիւն մըն է Սուրբ Գրոց օծութեամբ և հոգեչունչ յայտարարութիւններով ճոխացած, որուն մէջ ինքնիշխան և աղիկամի վարչութեան հետեւանքները կը նշանակուին, և եկեղեցական մարմնոյն միաբան խորհրդակցութեամբ գործելու ձեւը իբրեւ սկզբունք կ'ընդունուի, համաձայն կղեմայ հայրապետին* 32*'րդ կանոնին. Եպիսկոպոսապետն ընդ եպիսկոպոսաց, և եպիսկոպոսք ընդ եպիսկոպոսապետի չմիջնայ ինչ խորհրդով և ոչ յայնոսկիմբ արուցին (Դիւ. Բ. 210), որ է երկրորդ Առաքելականաց* 32*'րդ կանոնը։ Եպիսկոպոսք իրաւանէիր ազգի էիցեն պարտին չիրենց առաջինն, և համարել պարտին իբրեւ զլուսոր, և ոչ ինչ առելորդ առնել առանց նորա կամց, այլ և ալ նմա առանց նոցա կամց առնել ինչ (Կան. 13)։ Դանիէլ կը խոստովանի կաթողիկոսութիւնն վարողներուն անտեղի ընթացքը, որոնք յանդգնեցան ընդդէմ սեպհական և վայելուչ կրթոց՝ գեղեցիկ և ապաստաձահաճոյ, անզգամաբնիմբ մոռնանալ զջրեղս ի Սիւն (Դիւ Բ. 206), ուստի ինքն ալ, որ կոչուած է սրբել փէր հոգեւոր և ծայրագոյն սրբեպիսկոպոսապետ և ընդհանրական լուսավոր և լրիսոլիս, ես, կ'ըսէ, սկիզբն չիւնն սրսրեալ, առաջի առնէմ ձեզ, զի ես քալսրեալ կամս իմով չծանրեալ եմ և սիրծէմ, զի խորտակեալ եղիցի կրօսլոնիկեան քանաոբական չարիսյն էլեանոնիւնէ իմմէ, և պահեսցին ինչ հերիանոսցն պարշճեալ չանգոսն ոսիգնոնիւնս (Դիւ. Բ. 208)։ Այդ նպատակով խորհրդակից մարմին մը կը հաստատէ, որուն անդամները կը կոչուին՝ Պատասխրսլ սրքազան սիանոգոսի (Դիւ. Բ. 212), որոնք պիտի ժողովին չարիսյն առաջ, մէջտեղը պիտի դրուին առաքն խաչն և Աւետարանն Քրիսոսի, և էէր օրինաց և կանանաց սրքոց Հարցն,

և անոնցմէ ներչնչուելով պիտի քննեն, որոշեն և դատեն ամէն խնդիր, գանգատ և բողոք, և երբ չկրնան որոշել խնդիրը ինչ, պիտի զրպարին այն կէտերով, որ պայծառացուցին զանգացեալ Մայր սուրբ սիրոն մէջ Էջմիածնի, և զգէտ և զկնի Հայոց պահպանելոյ զամենայն բարեպաշտութիւնս քոյոյ սուրբ Էջմիածնի, և յամենայն ազգս և յեկեղեցիս Լուսաւորչիւթամ հաստատելոյ, և քահանայից պէտս ներպղծելոյ է նոսին յաջմէ (Դիի. Բ. 213)։ Հետեւապէս կազմուելիք սինոդին իշխանութիւնը պիտի տարածուի, կանոնական և դատական, բարեկարգական և մատակարարական ճիւղերու վրայ հաւասարապէս։

ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՁԵՒԵՐ

2288. Դանիէլ Մարաղայի մէջ, է քանի տարի ճերմակեան (Դիի. Բ. 206), այլ մէկուն չունէր իր խորհուրդը գործադրել. ուստի իր կռմանէ լիազօրներ կը նչանակէ խորհուրդը իրականացնելու, և են, Հուսաստանի առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսը՝ որ է Զորաւիղցին, նախորդ պատրիարք Գրիգոր արքեպիսկոպոսը՝ որ է Յամանկեցին, Դաւիթի դէմ մաքառումովը քաւեհամբառեալ (§ 2265) Բարեղ արքեպիսկոպոսը՝ որ է Ալտարակեցին, և Վրաստանի առաջնորդ Յովհաննէս արքեպիսկոպոսը՝ որ է Գելաթդակիրը։ Սակայն վերոյիշեալ ձեւով, խաչ և աւետարան և կանոնագիրք մէջտեղ դնելով, պիտի ընտրեն չեպէսկոպոս և է վերջապէս արժանաւորները, որ եղիցին տարաւորք սրբոյն աթանաս (Դիի. Բ. 211)։ Սակայ կը նեւեւի թէ ուշեալ չորսերը տարբեր տեղեր ըլլանուն՝ Էջմիածին նստող մնայուն ժողովին անդամ չէին կրնար ըլլալ. ուստի միայն ընտրելու պաշտօնը կը ստանային։ Իրեն համար ալ խօսելով կը յայտնէր Դանիէլ, որ երբ ցնորս ընդարձակեսցի ինչ է կոպան իմ, պիտի ըլլամ և այլեւս նպաստաւորսյց. և երբ աղաթեսցէ խոցս՝ պիտի աշխատիմ գնալ է տան իմ ծգնել. իմ երբ ալ, այսինքն ևթէ մինչեւ ցման ազատուելս մնայ, դէպ ընդ օբանուրեանց և ազգիկ իմոց, կ'ըսէ, ըլլս ընդամա այնչ ինչ արդեան յաւիտենական (Դիի. Բ. 213)։

նչանակուած չորս ընտրողները տարբեր տեղեր գանուելնուն, ամինքը մէկտեղ ըներլու և գործադրութեան սկսելու պաշտօնը կը յանձնէ Եփրեմի, միեւնոյն յուլիս 10'ին գրուած թղթով մը, ուր յիշելով թէ ընդ էս և չնել էին ընդրեալ է կաթողիկոսութեան Հայոց, կը վկայէ սնոր էրէնն ծերպժանաւորութեան, և անոր կը յանձնարարէ, ալ որպես ծախանդրքն և պարկեշտ, այլ որպես նոյն իսկ էսկան անձին իրոյ, սիւնհոդոսը կազմել տալ, իր կոնդակը հրատարակել և տարածել, և Միանաս իշխանին հետ խորհրդակցելով հաղորդել զայն սուրբ և որոյ արժան էջէ. որով կ'իմանայ Ռուսական կայսեր գիտակցութեան և հաւանութեան ենթարկել, որպէսզի գործը աւելի հաստատութիւն ստանայ։ Մինաս լազարեանը պաշտօնապէս կ'անուանէ ծխանդրդ ձեր է պրանն պղրմանեան (Դիի. Ե. 493), որ Ռուսական արքունիքին մօտ մնայուն գործակատարութեան մը գոյութիւնը կը ցուցնէ։ Համաձայն այդ հրահանգի Միանաս պիտի ջանար կայսերական հաւանութեամբ զօրացնել նոր հաստատուելիք մարմինը. ուստի Եփրեմի խորհրդով նախապէս այդ բանին հետամուտ եղաւ։ Օրեր կը սահէին, ակնկալելով քրիստոնեան հաւանութեան պատալ՝ այդպէս մ կոչ և կանոն տպագրելու սուրբ (Դիի. Բ. 217), բայց պետական դրութեամբ հնար չէր. զի Երեւան և Էջմիածին Ռուսական մարզ չէին։ Նոյն իսկ Դանիէլ և իրենները ալ, երբ այդ տեսակ կարեւոր ձեռնարկներու կը հետեւէին, պէտք էր նկատի առնէին թէ Էջմիածին իրենց իշխանութեան ներքեւ չէր, և Դաւիթ էր որ հոն կ'իշխէր, և միտքի մօտ չէր որ Դանիէլեան ծրագիր մը Դաւիթեան վարչութեան ատեն իրականանար։ Միայն թէ, ինչպէս ակնարկեցինք, Դաւիթին ազդեցութիւնը չատ կոտրած էր, մանաւանդ Մարաղացի Աշմէտին, Դանիէլի բարեկամին, երեւանի իշխան կամ կուսակալ անուանուելէն ետքը. և միաբանութիւնը համարձակ իր ժողովութիւնը և դիմադրութիւնը կը յայտնէր Դաւիթի դէմ. և ասիկայ Դանիէլի և Դանիէլեանց համարձակութիւն կու տար Էջմիածնի մասին կարգադրութիւններ մտածել և գործադրութիւններ փորձել, թէպէտ Էջմիածին իրենց ձեռքը չէր։ Սակայն Էջ-

միածինէ դուրս ալ միաբանական մարմին մը կար, զի մօտ 65 հոգի կին էջմիածինէ փախստական միաբաններէն (ԴԻՒ. Ի. Ե), որոնք Տփղիսի մէջ ազատօրէն յանուն ընդհանուր միաքանութեան Դաւիթի դէմ կը մաքառէին, և Դանիէլը կաթողիկոս կը ճանչնային։

2289. Ռուսական պաշտպանութիւնն ալ հետզհետէ կը զօրանար, քանի Ռուսները կ'ընդարձակէին իրենց այս ՊԱՐՍԻԿ ԱՐՔՈՒՆԻՔԸ խարհակալութիւնը Կովկասեան գաւառներու վրայ։ Կուսակալ իշխան Պօղոս Ծիցիանով, գաւառանութեամբ սպանուած էր 1806 փետրուարին, Բաքու քաղաքը գրաւած միջոցին. բայց ոչ նուազ բարեկամ մըն էր իր յաջորդը Յովհաննէս Վասիլեան, կամ Իվան Վասիլիչ Գուտովիչ, որ Դանիէլի նպաստաւոր տեղեկութիւն կուտար Պետերբուրգ, երբ այնտեղէն հարցում կ'ուղղուէր իրեն, թէ երբ կ'ընդունէ՞ Աբել արքեպ. կոչն է հաւատաք Հայոց ազգը, և ինչ փոփոխութիւն է վերջ գալ գործոց (ԻՐՑ. Ա. 34)։ Գուտովիչ երբ պէտք զգաց Պարսիկ արքունիքին հետ ալ խաղաղութիւն հաստատել, պայմաններու կարգը կը մտցնէր Դանիէլի վերահաստատութիւնը։ Գուտովիչ ոչ նուազ Դանիէլի պաշտպան մըն էր Անմէտ խան, որ չտնին առջեւ իբր Պարսկական պետութեան նպաստաւոր գործ կը ներկայացնէր Դանիէլի վերահաստատուիլը, քանի որ Դաւիթ զղուելի եղած էր, և անկէ փախչելու համար եկեղեցականներ և իշխանաւորներ Ռուսական տիրապետութեան, սահմաններէն կ'անցնէին, ժողովուրդն ալ անոնց կը հետեւէր, և ամայի կը դառնային պարսկահպատակ գաւառները։ Անմէտ կը վերադրուի ուրիշ ճարտարութիւն մըն ալ, Դաւիթը անգործութեան մատնելով իր նպատակը առջեւ տանելու։ Անմէտ լուր կը տանէ և Դաւիթի ալ կը հաղորդէ, թէ ձեզ այն վրդովեց, որ իրեն յանձնուած էր, վախճանեցաւ ազբարէլն Մարաղայի մէջ (ՄՍՐ. 66)։ Ասով Դաւիթ, արդէն յոգնած իր ճիգերը կը թուլցնէ։ Բայց անկախաբար այդ զրոյցէն ալ, երկկողմանի պաշտպանութիւնները Յէքհալիի վրայ ազդեցին, որուն համար անտարբեր էր այս կամ այն Հայ եկեղեցականին անձը, և սկսաւ համակերպիլ կուսակալին աւելարկին և Ռուսական պահանջին։ Անշուշտ այդ կացութեան տեսանելանքն էր, որ այն առիթներ Դանիէլ Մարաղայէ Մարանդ փոխադրեցաւ, էջմիածին տարուելու նպատակաւ, բայց կրկին Մարաղա դարձուեցաւ, զի նոյն օրերը Անմէտ խանն ալ եղեր չնչեւանոյ, և չկրցաւ Դանիէլը էջմիածին տանիլ, ինչպէս կը գրէ նոյնինքն Դանիէլ 1806 դեկտեմբեր 17'ին։ «Դանիէլ միջոց մը եւս չարունակեց մնալ չոհաջէն քնակոխանն է փոն Անմէտ խանէն, վայելելով Օրտու խանի հոգածութիւնը, որ Անմէտի կողմէն իրեն խնամածուն էր եղած. կիրակիները եկեղեցին կ'երթար, և նորէն իր տեղը կը դառնար (ԴԻՒ. Լ. 502)։ Անմէտ ալ ըլլալէն կամ պաշտօնէ եղլալէնետքն ալ, որ իր կամքով տեղի ունեցաւ Երեւանի օդին դիմանալ չկրնալուն համար, չարուեստակից Դանիէլի համար միջնորդել, իրեն ձայնակից ունենալով Երեւանի նոր կուսակալ Հիւսէյին Սարտարը, և այս միջնորդութիւններով 1807 ապրիլին ստացուեցաւ ընդլ, որ կ արքունական հրովարտակը, Դանիէլը իբր կաթողիկոս էջմիածին նստեցնելու։ Ըստ սովորութեան պաշտօնական էլլ և ուրիշ ընծաներն ալ տրուեցան անոր, և հրաման եղաւ զայն պատուով և հանդէսով Երեւան առաջնորդել։ Այսպէս Դաւիթի տապալումը պատրաստուեցաւ նոյն իսկ Պարսիկներուն կողմէն, որոց վրայ դրած էր նա իր բոլոր յոյսը, և անոնք չտնելու համար ծախսած էր՝ իր և եղբօրը անձնական և էջմիածնի աթոռական ստացութիւններէն ու հարստութիւններէն մնծամեծ գումարներ։

Տ· ԴԱՆԻԷԼ, Ա· ՍՈՒՐՄԱՊԵՑԻ

2290· *Արքունի հրամանին գործադրութիւնը յաւուրց պաշտօնէի մը յանձնարարուեցաւ, որ 500 հնձեալ*

ԴԱՆԻԷԼԻ ԳԱՇԱԿԱԼԵԼԸ

*ներու գլուխ անցած, Դանիէլը Մարապայէ Թավրէզ և Թավրէզէ Երեւան առաջնորդից հանդիսաւոր կերպով։ Ապրիլին մէջ ստացած էր հրովարտակը, և մայիս 14'ին (ՄՄՐ· 68), Երեւանի խաչին երկչաթին, Դանիէլ հասած էր Երեւանի մօտ Նորագաւիթ գիւղը, և Հիւսէյին Սարտար նոր կուսակալը՝ պատրաստութիւններ կը կարգադրէր՝ պաշտօնապէս իչխանութիւնը Դաւիթէ Դանիէլի փոխանցելու։ Պաշտօնական գործողութիւնը կատարուեցաւ կուսակալին ապարանքին մէջ։ Դանիէլ առիթն հանդերձանօք Նորագաւիթէ եկաւ, Հիւսէյինէ ընդունուեցաւ, և անոր աջ կողմը նստեցաւ, գլխուն վրայ կրելով արքունական հրովարտակը (ՄՄՐ· 70), որ է ընթացքն հրամանը ելլոյս վրայ բացատրութեան՝ նիւթական և չօչափելի պատկերացումը։ Իչխանութեան մերձաւորներու բազմութիւն մը, Նորագաւիթ եկած և անկէ Երեւան ընկերացած էր Դանիէլի, գլխաւորին ունենալով Դաւազ Վերդիկեան, Սահակ Դարբինեան, Յովհաննէս Գայլակերեան, և գրագիր Անդրէաս եպիսկոպոսները։ Դաւիթ իւր վերջին առիթներու առաքելական հոմանեցաւ կը գտնուէր Երեւանի Առաջատար, և բանական վրդովում ղգացած էր, քաղաքին մէջ տեղի ունեցող չարժումներէն։ Անհնար էր որ արքունի հրամանը անգիտանար, բայց կ'երեւի թէ իւր սովորական միջոցներէն վատահութիւնը վերուցած չէր, զի իւր ձեռքին տակ պատրաստ կը պահէր պարէ չորս հազար հեծեալ, որոց մեծ մեծ առել տան չընչաչք երկոյնրիւն էր (ՄՄՐ· 71)։ Նոյն միջոցին իրեն ալ հրաւէր կու գայ Սարտարէն՝ թղթակցութեամբ Մելիք-Մինասեանի ձեռքով, և կաթողիկոսական ամենայն հանդերձանօք կուսակալին կը ներկայանայ, բայց կաթողիկոսի յաւուրց բարձին վրայ Դանիէլը նստած տեսնելով, հոն կը դառնայ ու գործս կ'ելլայ։ Կառավարական պաշտօնեաներ և առեւէն հասնելով կը գրաւեն ղեկավարն ազատ և ղեղրդս կրթողական եկեղեցիներ, հիւանդարը, խաչելեմը, գաւազանը, ու չորքերը (ՄՄՐ· 71)։ Դաւիթ կը պարտաւորուի Անապատ պատնալ իրրեւ տակական մը։ Դանիէլ հանեւէն կու գայ նոյն Անապատը, իրրեւ կաթողիկոսներու յաւուրց իչխան, կաթողիկոսական չքախումբի առիթն պարագաներով, և բազմաթիւ հետեւորդներով միաբանութիւնէն և կառավարական պաշտօնեաներէն։ Հիւսէյին Սարտար պաշտօնապէս հաչտական էր արքունի հրամանը· Դաւիթի իչխանութիւնն դադարիլը, և Դանիէլի իչխանութեան սիրանալը, և ամէնուն հրամայած այսուհետեւ Դանիէլի հնազանդելու պարտաւորութիւններն։

2291· Այսպէս վերջացաւ Դաւիթ ե Լինդլէյցիի կաթողիկոսութիւնը, որ 1801

ԱՅԴ ՄԱՍԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ապրիլ 28'ին պարսիկ իանի ձեռքով աթոռին սիրացած էր (§ 2118), և 6 տարի ու 16 օր հաքր, 1807 մայիս 14'ին, աթոռէն կը զրկուէր նոյնպէս Պարսիկ իանի ձեռքով, և կ'արգարանար քան գրոյն, ըե ուրվ էրէ ժեղանչէ ոե, նովէմբ և ռանջեսոյ (Դիւ· ե· 455)։ Պարսիկ կառավարութեան պաշտպանութեամբ ստացած կաթողիկոսութիւնը, Պարսիկ կառավարութեան հրամանով կը կորնչէր։ Այսպէս Դաւիթ իւր միակ ոյժը կը կորնչցնէր, զի իւր իչխանութիւնը ոչ կանոնական ընտրութեան վրայ հիմնուած էր, ոչ ընդհանուր համակրութեամբ զօրացած էր, ոչ ալ քրիստոնեայ պետութեան հովանաւորութեան ներքեւ կը գտնուէր· այլ միմիայն Պարսիկ կառավարութեան արտաքին բազուկն էր իւր ոյժը, և անոր պաշտօնէից անյագ ընչաքաղցութեան պարարուճն ալ՝ իւր միակ միջոցն էր։ Երբոր այս ալ իրմէ կապտուեցաւ, և քաղաքական տեսակէտներ Պարսիկ կառավարութեան վրայ ազ-

դեցին, զգաց թէ իրեն այլեւս յոյսի նչոյլ չէ մնացած, և ամէն ձգտումներէ մերկանալով, ու նոյնգամիտ հնարագիտութեան կերպ մը չգտնելով, այն քանի մը օրերուն մէջ, որ Դանիէլի հետ միասին մնաց երեւանի Անապատը, անձամբ եկաւ և անոր յանձնեց էջմիածնի կաթողիկոսարանին բանալիները, ըսելով. Ա՛ղյուսէկ, կ՚ուզէ՞ս եղբայր, յոլոց ըն ես ղահեցայ ինձ, ղահեցի՛ և դո՛ (ՄՍՐ. 71)։ Այսպէս ինքնաբերաբար կը խոստովանէր Դաւիթ թէ երբեք վայելք մը կամ օգուտ մը չչահեցաւ իր բռնազբօսիկ կաթողիկոսութենէն։ Գործին իսկութեան գալով, տարկ կը զգանք դիտել որ երբ Դաւիթի աթոռազրկութիւնը Պարսիկ կառավարութեան կը վերագրենք, Դանիէլի աթոռակալութիւնն ալ նոյնին վերագրելով, կրնար ըսուիլ, թէ ուրեմն Դանիէլի կաթողիկոսութիւնն ալ կանոնական և եկեղեցական պայմաններէն զուրկ կը մնայ, ինչպէս որ Դաւիթին համար գրեցինք (§ 2249), և պարզապէս գործնական տեսակէտով արդարացնել կաթողիկոսութիւն մը կը դառնայ, ինչպէս Դաւիթինը որակեցինք (§ 2251)։ Մեր տեսութիւնը բացայայտ կերպով ճշդելու համար, պէտք է յիշել տանք, թէ Դանիէլ կանուխէն օրինապէս ընտրեալ մրն էր, թէ Մայրաթոռոյ միաբանութենէն (§ 2219), և թէ Տաճկահայոց պատրիարքութենէն (§ 2227), երբ վրայ հասաւ Յովսէփի կաթողիկոսութիւնը (§ 2232)։ Եթէ այս կերպով առաջին ընտրութիւնը իր ոյժը կորուսած ըսենք, երկրորդ ընտրութիւն մրն ալ ունինք (§ 2244), կանոնական կերպով կատարուած, որ միեւնոյն կացութիւնը կը վերանորոգէր, և որ իբր ոյժը կորուսած չէր կրնար ըսուիլ՝ Դաւիթի առանց նախընթաց և կանոնական պայմանի, յոկ սրտաքին և կառավարական բռնի ոյժով օծուելովը (§ 2249)։ Մենք գովաբան չեղանք Դանիէլի տարաժամ օծուելուն (§ 2268), և պիտի ուզէինք, որ Դանիէլի իրաւունքը պաշտպանելով մէկտեղ, անոր օծումը Մայր տաճարին մէջ կատարուէր, երբ կառավարական ոյժով կանոնական իրաւունքը կը պաշտպանուէր։ Այդ արարողութիւնը այս անգամ տեղի չունեցաւ, և 1802 մայիս 25'ին կատարուած Բագրեւանդի օծումը վերական սեպուեցաւ, և Դանիէլ իբրեւ հինգ տարիէ իվեր ստացուած իրաւունքի տէր, կաթողիկոսական աթոռը բազմեցաւ էջմիածինի մէջ, ուր բաւական ատեն մնացած էր իբրեւ կալանաւոր և կարգալոյծ, և ուր մօրուքը գերծուելուն նախատանաց ալ ենթարկուած էր։

2292. Դանիէլ և Դաւիթ քանի մը օր միասին բնակեցան Անապատը. Հիւանին խան պարտուպատշաճ հրամանատարը ներդ տուաւ երկուքին ալ, Դաւիթին որ միամբ տօրէն հնազանդի, և Դանիէլի որ վհատնէօրէն սիրաշահի, և միաբանութեան ալ՝ որ հակառակութիւնները վերջացնէ. և այսպէս մայիս 20'ին, Ծիանց վեցերորդ երկուշաբթի օրը, ամէնքը միասին երեւանէ էջմիածին եկան չքեղ հանդիսութեամբ։ Ղուսի այգիի, կամ Ս. Հռիփսիմէի վանքին մօտ. էջմիածնի միաբաններ և վաղարշապատի բնակիչներ ուրախութեամբ դիմաւորեցին եկաւորները, յարգանաց նշաններ ցուցնելով Դաւիթի ալ, որ կը մերժէր անոնց ցոյցերը, թէ ահա, ըսե՞ր չէրոյ ոչ յոլղէցո՞ էրէ (ՄՍՐ. 72), որ յոռելայն խոստովանութիւն էր թէ ինքն հանրութեան համակրութիւնը չէր վայելած։ Հաւանական է որ մայիս 23'ին Համբարձման օրը՝ իւր առաջին հայրապետական հանդիսադրութիւնը կատարած ըլլայ Դանիէլ Մայրաթաղարին մէջ, թէպէտ որոշակի նշանակուած չենք գտներ։ Դանիէլ չատ աւելր ու քանդուած գտաւ Մայր աթոռը, որուն մասին Դաւիթ վերջին երկու տարիներու մէջ անփոյթ և անհոգ էր դարձած, և կարծես նախատեսելով, որ այլեւս պիտի չկարենայ վայելել, բոլորովին ձեռքէ թողած էր իւր առաջին գործունէութիւնը, և Մայրաթոռին ու Մայրաթաղարին համար անտարբեր դիրք մը առած, աւելի երեւանի մէջ կ՚անցընէր իւր օրերը։ Դանիէլ իւր գործունէութեան մէջ իրեն հետ չունէր իրեն հզօր պաշտպանները, Եփրեմ ու Յովհաննէս, Գրիգոր ու Բարսեղ եպիսկոպոսները, և Մանուէլ ու Ներսէս վարդապետները, որոնք գործօն դեր մը չունեցան վերջին եղելութեանց մէջ, և ոչ ալ տեղերնէն չարժուեցան երբոր Դանիէլի էջմիածին մըտ-

նելը իմացան, այլ իրենց պաշտօններուն կամ զբաղումներուն վրայ մնացին։ Նոյն ինքն Ներսէս Աշտարակեցին ալ հազիւ 1808 մարտ 8'ին Գրիգորուպոլիսէ Էջմիածին եկաւ (ԶԱՒՐ. Բ. 150), Դանիէլի նստելէն 10 ամիս ետքը, որով չարդարանար ոմանց խորհրդածութիւնը, թէ եփրեմ Ներսէսի ներկայութենէն ազատելու համար, Դանիէլի գահակալելը պատճառանք ընելով, փութացուցած ըլլայ զայն իրեն քովէն հեռացնել (ԴԻՒ. Է. ըԲ)։ Ընդհակառակն եփրեմ ու Ներսէս, Լազարեան Մինաս իշխանի միջնորդութեամբ, ջանացած են Իւսւսական կայսրութեան մօտ Դանիէլի դիրքը ուժովցնել և նպաստաւոր օգնութիւններ ձեռք ձգել. ինչպէս եղած են, Սուրբ Աննայի ասպետութեան առաջին կարգի չքանշանը (ԴԻՒ. Ե. 547), և թանկագին ընծաներ։ Ներսէս այդ միջոցին զանազան խնդիրներ կարգադրելու համար՝ պտտած է եաչ (ԴԻՒ. Ե. 525) և Մոլդովիոյ և ուրիշ քաղաքներ, որով կը տեսնուի թէ հազիւ վազք ալ ունեցած չէ դէպ էջմիածին՝ եպիսկոպոսանալու մնչնաչնօք (ԴԻՒ. Է. ըԲ), որ իրեն համար արդարացի վարձատրութիւն էր Դանիէլի կողմէն. այլ կատարուեցաւ իր էջմիածին դառնալէն ետքը, այսինքն Դանիէլի աթոռ բազմելէն տարի մը ետքը։ Այդ տարւոյն մէջ Դանիէլ աշխատեցաւ ցրուիլ միաբաններուը հաւաքել, տարուած գոյքերը դարձնել, վանական բարեկարգութիւն հաստատել, միջոցներուն ներելուն չափ նորոգութիւններ ընել, միշտ իրեն գործակից ունենալով ներկայ միաբանները, որոնց գլուխը կը յիշուի Բարսեղ եպիսկոպոս Աշտարակեցին, որ Դանիէլեան գործիչներէն մին էր Տփղիսի մէջ, և առաջին դարձողներէն մին եղած է։ Ամենէն Գրիգորին գործունէութիւնը այլ եւս յիշուած չենք գտներ, բայց և ոչ մանուան տեղւոյն և ժամանակին վրայ, ճիշդ տեղեկութիւն ունինք։ Ընդհանրապէս Տրապիզոնի մէջ մնաց ի'ըսուի (01 ՕՐԱ. 172), բայց 1808 օգոստոս 23'ին տակաւին իրրեւ կենդանի կը յիշուի Դանիէլի նամակներուն մէջ (ԴԻՒ. Ե. 584)։

2293. Երրոր էջմիածինի մէջ այդ մեծ փոփոխութիւնը տեղի կ'ունենար, Կ-Պոլսոյ պատրիարքական աթոռին վրայ կը գտնուէր Յովհաննէս Բաբերդցին, զոր զանազան առիթներու մէջ Դաւիթի իբր յայտնի պաշտպան ճանչցանք (§ 2262, 2272)։ Մայրաքաղաքի միաբանութիւնը Դանիէլի գահակալութիւնը աւետող պաշտօնագիրը յղած էր Կ-Պոլիս, Յովհաննէս վարդապետի մը ձեռօք, որ Գայլակերեանն եղած Կ'ըսուի (ՊԼՓ. 54), որ փութացած էր չուտով հասնիլ մայրաքաղաքը, ուստից յուլիս 27'ին կը գրէ, թէ չնորհիւ կարապետ Ազնաւուրեան և այլ ամիրաներու սիրով ընդունուեցաւ, և ասպետական բանը ձեռ է բերէն կատարեցաւ, ասանց այլևայլ ներհակաց ընդդիմութեան. և թէ Դանիէլ կաթողիկոսի անունը սկսաւ յիշուիլ յուլիս 13'ին, վարդավառի բարեկենդանին նախընթաց Առաքելոց տօնին օրը. և թէ պինդն ալ Մայրեկեղեցին պատարագելու հրաւիրեցին վարդավառին օրը, յուլիս 21'ին։ Մանեբեբէ, այսինքն միաբանութեան հանրագիրը բերող Յովհաննէս վարդապետը, կը գրէ եւս, թէ ընդհ ասնէմ է պարբէար հօրէն, զոր բազմահանճար արհի ալ կը կոչէ (ԴԻՒ. Ե. 529), և այսու կը վկայէ, թէ Յովհաննէս Դանիէլի աննպաստ կամ Դաւիթի նպաստաւոր ոչ մի նչան տուած չէ, և լրացած եղելութեան անհակառակ համակերպած է, և գրած ալ է բոլոր ասպետ Եա չէպարհէլ Դանիէլի անունը։ Այդ աւթիւ կը յիշուի Յովհաննէսի հրաւէրով ազգային ժողով ալ գումարուած ըլլալը, Դանիէլի համար Օսմանեան կառավարութենէ հրովարտակ առացուիլը, Աստուածատուր Կոստանդնուպոլսեցի վարդապետին ձեռօք էջմիածին դրկուիլը, պատուիրակին և անոր ընկերակցին երեմիա Կոստանդնուպոլսեցի վարդապետին եպիսկոպոս ձեռնադրուիլը, և ի գարձին Դանիէլէ օրհնութեան կոնդակ բերելնին (ՊԼՓ. 55)։ Յովհաննէսի ընթացքը լիովին ի'սրդարացընէ՝ կասեւսլէն անոր մասին մեր յայտնած կարծիքը, թէ նա Դաւիթի մոլեռանդ հետեւող կամ չհնազանդ կողմնակից մը չէր, այլ պարզապէս լրացուած եղելութեանց համակերպող, և անձերու կամ ձեւակերպութիւններու բծախնդրութեամբ խնդիրներ յուզելէ խուսափող մին էր (§ 2236)։ Ասով Դաւիթ-Դանիէլեան վէճերը միանգամ

ընդմիշտ կը փակուէին, երկու կաթողիկոսներու վրայ պատակառումները կը դադարէին, և 1801 ապրիլ 28'ին սկսած, և վեց տարիէ աւելի տեւող, կիլիկիոյ ճարակ տուող, և ազգին վնասներ հասցնող վէճերն ու կռիւները վճռապէս կը վերջանային 1807 յուլիս 13'ին. այլեւս Դաւիթեանները չէին մնար, և Դանիէլ հաւատարիմ ամէնէն օրինաւոր կաթողիկոս կը ճանչցուէր։

ՍԻՆՈԴԻ ԿԱԶՄՈՒԻԼԸ

2294. Դանիէլի Մարաղայէ գրած կոնդակով ծրագրուած էր Մայրաթոռոյ կառավարութիւնը և որոշուած էր, կաթողիկոսի անձնական իշխանութիւնը խորհրդակցական ձեւի փոխել, Մնայուն Սինոդի մը կազմութեամբ (§ 2286), զոր մենք մեր այժմեան ճշդութեամբ կրօնական ժողով կամ կաթողիկոսական Խորհուրդ կրնայինք կոչել։ Դանիէլ խոստացած էր որ իւր ազատութիւնը ստացած վայրկեանէն ըստ այնմ պիտի վարուէր, սակայն իւր էջմիածին դառնալէն տարի մը անցած էր, և դեռ օրինական գործադրութիւն չէր եղած, թէպէտ ինքն առանց խորհրդակցութեան ձեռնարկներ բռնել չէր սիրեր։ Անշուշտ կը սպասէր, որ Ռուսիոյ մէջ այդ նպատակին աշխատողներ Եփրեմ եպիսկոպոս, Ներսէս վարդապետ և Մինաս իշխան յաջողին Ռուսական կառավարութեան որոշումը ստանալ, որուն համար 1806 դեկտեմբեր 17'ին պաշտօնական դիմում ալ բրած էր Եփրեմ եպիսկոպոս։ Բայց Ռուս կառավարութիւնը քաղաքական տեսակէտով չէր կրնար գործին պաշտօնական ընթացք տալ, քանի որ Երեւան ու էջմիածին իւր իշխանութեան ներքեւ չէին (ՉԱԱՐ. Բ. 149)։ Այդ վերջնական որոշումին լուր նախքան բերուիլը, երբոր էջմիածին հասաւ 1808 մարտին, և ուղղակի իրենց կողմէ գործադրելու տիրապետականութիւնը պահպանուց, և եպիսկոպոս ձեռնադրելով, ու իրրեւ գրպիր կամ առնադպիր՝ հայրապետական գործունէութեան գլուխ կանգնելով, ձեռնարկեց սէտք եղածը նախապատրաստել։ Մինչդեր միաբանութեան հաղորդուելու պաշտօնապէս, և միաբանութիւնը 1808 ապրիլ 25'ին յատուկ հանրագրութեամբ, ոչ պարզ հաւանութեան, այլ ընդհակառակն մէկ մատոյց կաթողիկոսին, հաստատուելիք կարգադրութեան մասին։ Ամիս մը եւս անցաւ անոր վրայ, մինչեւ որ պարտաւորեալ գրութիւններ ու ծրագիրներ և ուրիշ պատրաստութիւններ լրանան, և մայիս 25'ին, Հոգեգալստեան երկուշաբթի օրը հրատարակութիւնը կատարուեցաւ Մայրաթաղի մէջ հանդիսաւոր արարողութեամբ։ Խորհրդաւոր էր նշանակուած օրը, դի ճիշդ հինգ տարի առաջ 1803'ին, օրը օրին և ժամը ժամին, մայիս 25'ին և Հոգեգալստեան երկուշաբթիին էր, որ Դաւիթ՝ Դանիէլին մօրուքը գերծելու նախատակաւ բռնութիւնը կատարած էր (§ 2277)։ Մայիս 25'ին էր կատարած Բագրեւանդի օծումն ալ վեց տարի առաջ, բայց Տօթնեկի օրն ու ժամը տարբեր (§ 2266)։ Նախ կոնդակաձեւ գրութիւն մը կարդացուեցաւ, որուն մակագիրն էր. Բան յաղթ վերահաստատութեան քրիստոսանուէր հաւատոյ սուրբ Էջմիածնի յԱրտաշէս եբեթն հնոյն Ասինայ Հայոց, ի կոնդակէ Եփեզեայ սուրբ Էջմիածին (Դիւի. Բ. 222)։ Անոր մէջ կը կրկնուէին Մարաղայէ տրուած, 1806 յուլիս 10'ի կոնդակին միտքերը, և Դանիէլ յանդիման սրբոյ քրիստոսի սեղանոյն կը յայտարարէր, հնազանդիլ օրինաց և պատուիրանաց սրբոց՝ ընդհանրական ժամոց և ծրագրոց իւրոց, և ժամակոչ մօտ կը չնորհէր ժողովոյն՝ ազաւորին և անքնաքոյ խորհիլ վասն ամենայն հրամանաց քրիստոսանուէրնեանց (Դիւի. Բ. 223)։ Գործին աւելի նշանակութիւն աւելցնելու համար՝ Մայրաթաղին մէջ իսկական ստորագրութեամբ երդմնագիր մըն ալ կ'արտասանէր և կը յանձնէր ժողովին, որուն մէջ ընդարձակ կերպով բացատրուած էր իւր բռնելիք ընթացքը, վարելիք իշխանութիւնը և ժողովին որոշումներուն հաստակերպութիւնը (Դիւի. Բ. 223)։ Կաթողիկոսէ հետքը երդուընցան քրիստոսանուէր խորհրդականի վեց նորահաստատ անդամները (Դիւի. Բ. 226), հաւատարմութեամբ և արդարութեամբ պաշտօնին վարելու համար. և ամէնէն վերջը երդուընցան միաբանութեան անդամները, 7 եպիսկոպոս և 15 վարդապետ, խղճի մրտօք յարգելու և հպատակելու կաթողիկոսին և ժողովին, հաստատուած կանոններուն և արուելիք որոշումներուն (Դիւի. Բ. 228)։

Քանի մը քահանաներ ալ մանակցեան երդումին, իբր ներկայացուցիչք քահանայական դասուն։

2295. Ժողովականներուն թիւին համար նախատեսուած էր որ վեց պակս չէջ (Դիի. Բ. 201), և այս առաջին անգամ ալ մայիս 25'ին վեց անդամներ յիշուած կը գտնենք (Դիի. Բ. 226), առանց անուններուն տալու։ Սակայն քիչ ետքը սեպտեմբեր 5'ին է Բոլոնիոյ խորհրդարան գրուած պաշտօնագիրի մը ներքեւ 7 անուններ կը կարդանք, և են Բարսեղ, Յովակիմ, Յովհաննէս, Ստեփանոս, Ալեքսան, Ներսէս և Ռեթէոս եպիսկոպոսներ (Դիի. Ե. 618). որոնցմէ մէկը, հաւանաբար վերջինը, մայիս 25'էն ետքը աւելցուած պիտի ըլլայ։ Սուրբ Ժողովին, կամ Կառավարիչ Ժողովին, կամ Բարձրագոյն Խորհրդարանին, կամ Սրբազան Միւնհոդոսին, և աւելի ճշդութեամբ՝ Կաթողիկոսական Խորհուրդին անդամներուն թիւը կանոնագիրին մէջ որոշուած չէր, ուստի պարագաներու համեմատ աւելցաւ կամ նուազեցաւ, և մինչեւ 11 ալ եղաւ երբեմն։ Առաջին ներքին կանոնագիր մը կազմուեցաւ 22 յօդուածներով, որուն մէջ պաշտօնական կոչում կ'որոշուի Սուրբ Ժողով, և Սուրբ Ժողովի անդամներ, և կը հրամայուի միշտ Խաչն ու Աւետարանը ու կանոնագիրքը մէջտեղ ունենալ։ Նիստերը ամէնօրեայ պիտի ըլլան, բացի կիրակիներէ մանաւանդ տէրունիներէ, սրբոց մեծ տօներէ, նաւակատիքներէ, մեծ բարեկենդանէ ու այլ այսպիսի օրերէ։ Անդամներուն կարգը պիտի ըլլայ ինչպէս եկեղեցին կը կանոնին։ Իսկ կանոններուն մեծագոյն մասը, 6'րդէն մինչեւ վերջինը, խօսելու և վիճելու ձեւերով կը զբաղի, որպէսզի սուրբ Ժողովը օրէնսդիրէ Ժողովի նման չդառնայ (Դիի. Բ. 228-232)։ Ժողովին գործունէութենէն յիշատակներ չունինք ձեռքնիս, և կ'անգիտանանք ալ, թէ Մայրաթոռի դիւանը այդ առաջին սկզբնաւորութեան ժամանակէն ատենագրութիւններ պահուած ունի՞ արդեօք։ Ամէն աթոռի մէջ Ժողովը Դանիէլի օրով երկար պաշտօնավարութիւն չերցաւ ունենալ, ըլլալով կազմութենէն քանի մը ամիս ետքը Ռուսաց և Պարսից պատերազմները վերսկսան, էջմիածին չփոթութեանց մատնուեցաւ, և Դանիէլ ալ բռնադատեալ երեւան փոխադրուեցաւ, ուր և վախճանեցաւ նոյն 1808 տարին, Հոկտեմբեր 9'ին (ՇԱՀ. Ա. 234)։

2296. Երբոր Մայրաթոռի մէջ խորհրդարանի մը հաստատութեամբ՝ վերջ կը տրուէր կաթողիկոսին անձնական և անձնահաճ իշխանութեան, բնական էր որ պիտի ընդարձակուէր խորհուրդի անդամներուն գործունէութիւնը։ Միւս կողմէն հնար չէր, և երբեք ալ եղած չէ, որ համահաւասար գործունէութիւն յայտնուի իւրաքանչիւր անդամի կողմէն, և բնական էր որ աչխոյժով ու կարողութեամբ առաւելութիւն ունեցողներ, առաւելապէս դեր վարէին, և աւելի աչքի զարնէին։ Նորահաստատ Ժողովին անդամներէն աւելի զրուցասէրներն են երկու Աշտարակեցիները, Բարսեղ և Ներսէս, առաջինը իբր երիցագոյն և նախանգամ, և երկրորդը իբր երիտասարդագոյն և արտասովոր թափով գործունեայ։ Դաւիթի չատագովներ կը մեղադրէին և կը մեղադրուն այդ երկուքը՝ և կը պնդին, թէ Ներսէսը ինքնիշխանաբար կոտրեցաւ բռնազեղ գործեց, թէ Դանիէլ անուանուեցաւ էր գոյն կաթողիկոս, թէ և զած էր որպես իրաւունքով՝ Ներսէսէ և Բարսեղէ չեռագիր խաղալիք, զի Ներսէսին այժ էր պալ և Բարսեղ (Դիի. Ի. 18)։ Բայց այդ խիստ դատաստանը ինքնին կը ցնդի, երբոր դիտնանք, թէ Դանիէլի պաշտօնավարութեան առաջին 10 ամիսներուն Ներսէս էջմիածնէ բացակայ էր, թէ գալէն երկու ամիս ետքը Ժողովը կազմուեցաւ, և թէ կազմուելէն ետքը նազիւ չորս ամիս կրցաւ գործել Ժողովը Դանիէլի առեն, պատերազմի չփոթ օրերն ալ մէջը ըլլալով։ Հետեւաբար չատ պիտակ բռնաւորութիւն մը եղած կ'ըլլար Ներսէսի վարած բռնապետութիւնը։ Բարսեղի անունն ալ կցելը, արդարացում կը դառնայ Ներսէսի, զի Բարսեղ նախանգամ էր, և կաթողիկոսի տկարութեան և հիւանդութեան պատճառով, օրինաւորապէս իբր գործադիր իշխանութեան ատենապահ կը ներկայանար, և Ներսէս օրինաւորութեան սահմա-

նին մէջ կը մնար Բաբելոնի հետ գործելով։ Թալով կայսրեան, անկարգ և խառնակ և չափէ վիճակի մէջ էր Իշմիածին, երբոր գործի աէր կը դառնար Դանիէլ. բացառիկ պարագաներ բացառիկ միջոցներ կը պահանջէին, և նոր բան մը չէր ըլլար, եթէ կաթողիկոս և ժողով բացառիկ և ուժգին միջոցներու դիմէին կարգաւարք, ձեւական վերահաստատելու համար։ Եթէ այդ պարագաներու մէջ Ներսէս աւելի գործունէութիւն ցուցուց, պարզապէս իր անձնական կարողութեան և անխոնջ աշխատասիրութեան հետեւանքն էր։ Ձրի կը նկատունք նաեւ միւս մեղադրանքը, թէ այդ քանի մը ամիսներու միջոցին, և ոչ երկար ընթացքով անքաղաքականն ու անկրթունները անհետացան (Պիւր. Լ։)։ Դի ոչ միայն դիւրին չէր քանի մը ամիսներու չափէ կացութեան միջոցին՝ մեծ արդիւնաւորութիւն ունենալ, այլ այս բաղձանք խոստմանած կ'ըլլան, թէ Դաւիթ իւր վեցամեայ պաշտօնավարութեամբ, միայն անքաղաքականն և անկրթունները թողած է իր նախընթաց։ Թող որ անարգելի բաներ չեզան, միաբանութիւնն ու գոյքերը հաւաքել և ամփոփելը, միաբանական կեանքը վերանորոգելը, և որ աւելին է՝ խորհրդակցական կամ ժողովական կառավարութիւն հաստատելը, որուն համար օրէն չէ ըսել, թէ եկեղեցւոյ շահերէն վեր եղաւ, վասն դի եկեղեցւոյ հետեւանք կանոններուն հակառակ էր. և ոչ ալ հայրապետական իրաւունքներէ սահմանափակումը նախատեց (Պիւր. Լ։)։ դի Հայոց եկեղեցին չընդունիր հայրապետներու անկոպար և անկատար, բացարձակ և անձնական պաշտօնավարութիւնը։ Եթէ սահմանափակ նախընթաց ըսելով՝ 1836'ի պետական կանոնագրութիւնն կ'ակնարկեն, որ միաբանական չէ երեւնար առաջին հեղբ եղած իրազութիւն մը, երեւան ետքի ետաղուան գործիչներուն վրայ բեւռցրնել։ Այդ կէտը կը թողունք իր կարգին քննութեան։

2297. Միակ պատմական պարագայ մը, որ ծանրածանր մեղադրանքներու իրր փաստ յառաջ կը բերուի, Դաւիթի վրայ օր մը կատարուած բռնական գործն է։ Բայց նախապէս պէտք է յիշենք, թէ Դանիէլ և Դանիէլեանք մինչեւ այն օրը, ոչ մի կերպով Դաւիթի անձին դէմ հակառակութեան կամ նեղութեան գործ մը րրած

ԴԱՒԻԹԻ չէին, եթէ բռնի ձեռք
ՀԱՆԴԷՊ ձգուած և բռնութեամբ պահուած կաթողիկոսութեան՝ բռնի ձեռքէն ազատելը, անիրաւութիւն րսող կամ կարծող չգտնուի։ Կը պատմուի, թէ երբոր Դանիէլ փառաւորութեամբ երեւանէ Իշմիածին պիտի գար, Հիւսէին Սարտար՝ պաշտօնի փոխանցումին օրը Դաւիթէն կրած անարգանքին վրայ բարկացած (§ 2290), հրամայած ըլլայ զայն բռնել և բացը ելլով ընծացուցանել չաուշ էրէվէրէն գնալ ցկշռիչէն (Պկր. 54)։ Պատմուածքին ստուգութիւնը չենք երաչխաւորեր, դի ականատես մը չէ պատմողը, բայց այս ինչ ստոյգ է, թէ Դանիէլ ուզեց և կարգադրեց որ Դաւիթ համապատիժ չեզնութեամբ իրեն ուղեկցի, և ուրիշներէ ալ յարգուի, ինչպէս յիշեցինք (§ 2292)։ Իշմիածնի մէջ ալ թողուց միւս եպիսկոպոսներու կարգին հաւասարակ և ազատ կեանք վայելել, և ապրիլ ինչպէս որ ուզէ, ոչ ներսի Ղազարապատ փակեց, ոչ յարաբերութիւններէ զրկեց, և ոչ չաթրներու պահպանութեան ենթարկեց, որ կերպով Դաւիթ իրեն հետ վարուած էր (§ 2273)։ Դանիէլ այդչափ ազատութիւն ներելուն համար՝ պարտաւոր եղած էր միաբաններուն զայրոյթն ալ զսպել, և քինախնդրութիւններին սանձել, դի անոնցմէ ամէն մէկը դեռ չէր մոռցած Դաւիթէ կրած խոշտանգանքները և հալածանքները, բանտարկութիւնները և դանարքութիւնները։ Եթէ մէկն ալ կար որ նուազ դանգատելու ու զայրանալու պատճառ ունէր, Ներսէսն էր, որ Դաւիթի բռնութիւններէ ազատ մնացած էր. բայց ան ալ իւր բնակարանին զգայունութեան մասնակից էր, և անոնց փափաքները տեղը տանելու ձարպիկութիւնն ունէր։ Դաւիթին գլուխը փորձանք մը բերելու, և իրենց կրել տուածները՝ անոր ալ կրել տալու ձգտումը բնդհանուր էր միաբաններուն մէջ. միայն Դանիէլի անյիշաչար բարեսրտութիւնը՝ և իրեն հանդէպ տիրող պատկառանքն էր, որ ամէնքը կը կասեցնէր, և 1807 մայիսէն մինչեւ 1808 սեպտեմբեր, Դաւիթ

բանէ մը ցաւելու կամ պրկումի մը համար դանգատելու առիթ չէր ունեցած, մինչեւ իսկ իւր սեռնակին, հանդերձանքին, կերակուրին և սպասարկութեան յատուկ մտադրութիւն կը դարձուէր։ Բայց կ'երեւի թէ որչափ ալ Դաւիթ հանդարտ կ'երեւէր, ներքին զգացումները բոլորովին հանդարտած չէին, և Դանիէլի դէմ դժկամակ մտայնութիւնը իւր սիրտին մէջ կը տիրէր տակաւին։ Պատահական առիթ մը մէջտեղ հանեց այդ տրամադրութիւնը։

2298. Դանիէլ չարունակ հիւանդկոտ և տկար էր, և ամէնն ալ այն միտքը ունէին, թէ՝ Աստուած ջիւթ ոչնչացնել անդ զսա սրբասցնէն և զբեղն նորա(Դիի. ե. 621)։ Ուզած գիրքը Ամիրտօլվաթի բժշկարանն էր, որ Դաւիթի քով գտնուելուն (ՄՍՐ. 73), Գրիգոր վարդապետը կը պրկեն ուզել (Դիի. ե. 621)։ Դաւիթ կը զլանայ գիրքը յանձնել։ Պէտքին ստիպողականութիւնը և Դաւիթին տմարդի զգացումը, կիրքերը կը գրգռեն, և սանձուած զայրոյթին պոռթկալու առիթ կու տան։ Երկրորդ անգամ գիրքը կ'ուզեն ջիւթիւ կամ գործակալ Գրիգոր եպիսկոպոսի ձեռքով, և երբ անոր ալ կը զլանայ, գործին օրինական ձեւ տալու համար, ժողովը հօրքը ստորագրութիւններով (§ 2295) հրամանագիր մը կ'ուղղէ Դաւիթին. Սուրբ ժողովը քաջալերական խորհրդոքանի յայնմ ձերոյ սրբասնեան, զի Բժշկարանն սրբոյ ասնոյն որ առ ձեզ է, առաքեցէք ընդ այն ջրաբերչի, զանգ վասն առողջանեան մեր սրբազնակատար պետան հարկաւոր է այժմի (Դիի. ե. 618)։ Դիրը 1808 սեպտեմբեր 5 Թուական կը կրէ (Դիի. ե. 619), որ կը ճշդէ պատահարին օրը, և կը պատասխանէ Այնի բարեկենդանին նախընթաց չաբաթ օրուան։ Գրութեան մէջ սպառնալիք չկար, և դարձեալ ելէ գիրքը Դաւիթի և

ՔԺՇԿԱՐԱՆԻ ՄԻՋԱԴԷՊԸ

ոչ Մայրաթոռի սեփականութիւն ալ ըլլար, ինչպէս Դաւիթի ձատագոյները կը թելադրէրն, մարդկային ամենատարրական զգացումը պիտի չներէր, ուրիշի մը առողջութեան պարագային՝ այսպիսի բծախնդրութեանց դիմել, որք իսկապէս տեղի ալ չունէին։ Նորէն Դաւիթին գացողը Գրիգոր Եպիսկոպոսն է, բայց Դաւիթ նորէն կը զլանայ, ժողովին հրամանագիրը կը պատռէ, Ներսէսի դէմ ալ կը զայրանայ՝ Անէծաւ լինիս հայհոյութեամբ, ժողովն ալ կ'անարգէ ըսելով. Մի տանի նվ քաղցեցրել ես այնքեղ, և ինչ որ գրած է, նոյա սպառաքրած են (Դիի. ե. 6)։ Կաթողիկոսի հիւանդութեան հանդէպ քչնամական ընթացքը, հայհոյալից խօսքերը, ժողովին նախատուիլը, և հազիւ զսպուած հին ցասումը, կը բորբոքին և միաբանները կը զայրացնեն, եպիսկոպոս և վարդապետ, հրացանակիր և սպասաւոր, Դաւիթին սեռնակը կը խուժեն, Ներսէսին տուած հարուածը՝ Դաւիթը կը գլորէ (Դիի. ե. 6), Ստեփանոս Ինոքեան եպիսկոպոս, ժողովականներէն մին, անոր առատ մօրուքը կը խուզէ, մինչեւ յետնայն ընդոստ կոչուած սեռնակը բռնի կը տանին, մօրուքը սափրիչին գլխուն կու տան, և պոպէքոպան խոցը կը փակին, Մելքոն Ղարաբաղցի հրացանակիրին պահպանութեան ներքեւ, որ յատուկ կիրք ալ ունէր Դաւիթի դէմ. զի ժամակին իւր կինը լկել տուած էր, ենոքեանը էջմիածինէ փախուցած ըլլալուն համար (ՄՍՐ. 74)։ Դաւիթի սեռնակը խուզարկուելով Բժշկարանը կը գտնուի և բժիշկին կը յանձնուի (ՊԻՐ. 65)։ Դանիէլ եղածը լսելով կը ցաւի, և միաբանները կը յանդիմանէ, անկողինին մէջէն Դաւիթը ազատելու հրամաններ կու տայ, բայց կ'երեւի թէ չեն գործադրուած, զի ութ օր ետքը Դաւիթ արգելարանին մէջ, զրկումներ ալ կրելով, որոց մէջ չղթաներ և զգուելի կերակուրներ ալ կը յիշուին (Դիի. ե. 6)։ Մենք ոչ մի կերպով պիտի արդարացնենք Դաւիթի վրայ գործածուած բռնական արարքը, որչափ ալ դատապարտելի ըլլայ անոր տմարդի և անխիղճ զայրումը։ Սակայն այն մեղադրանքը զոր կը յայտնենք Դանիէլեանց վրայ, կրկին և եռակրկին աստիճանութեամբ կը գտնայ Դաւիթ

քին վրայ, զի իւր վրայ գործուածը՝ մէկ տաճկերօրդն իսկ չէր, այն ամէն խոչտանգանքներուն՝ զոր Դանիէլի (§ 2274, 2277) և միաբաններուն (§ 2264, 2265) վրայ կատարած էր ինքն երկար տարիներով։

ԴԱՒԻԹԻ ԸՆԹԱՑՔԸ

2299. Երբոր Դաւիթի արկածին լուրը Երեւան հասաւ, Բարսեղ եղբայրը և անոր Աբրահամ անները՝ եղելութիւնը մեկնելու համար, իրենց անասատուքին անոր հրամանատարութեան դէմ (§ 2292)։ Սարտարն փութացաց անձամբ իջմիածին գալ սեպտեմբեր 6'ին, իբր է պէս օրհնելէն Դանիէլի (Դիի. ե. 621)։ Հոն հանդիպելով, ուրիշ օրէն (Դիի. ի. է.) Դաւիթը արգելարանէն հանել կու տայ, նախապէս ապահովելով Դաւիթի խոստացած ֆէլկէշէն (Դիի. ե. 621), մօրուքը ածիլողները պատժելու համար քննութիւն ալ կ'ուզէ բանալ, բայց կը հանդարտի երբոր եղելութեան կաթողիկոսին հրամանով եղած ըլլալը իրեն կը հաւաստեն, և Դանիէլն ալ զայն կը հաստատէ։ Այսուհանդերձ Դանիէլեանք ալ կը ստիպուին գալ Սբ. Էջմիածին և հոն ներողութիւն խնդրել։ Այս միջոցին նորէն սկսած էին Թուանեցւոց և Պարսիկներու պատերազմները։ Աղեքսանդր Ա Թուսիոյ կայսրը, 1807 յուլիս 8'ին Գաղղիոյ Նաբօլէոն կայսեր հետ հաչտութիւն կնքելուն վրայ, պահանջ գտած էր իւր տիրապետութիւնը ընդարձակել Հիւսիսէն Շուէտներու և Տարաւէն Պարսիկներու դէմ, և 1808 սեպտեմբեր 15/27'ին ալ Էրֆուրթ (Erfurt) կը հանդիպէր Նաբօլէոնի հետ անձամբ տեսակցելով երկկողմանի ձեռնարկներու ծրագիրը ընդարձակելու։ Թուականը ճշդիւ կը համապատասխանէ Էջմիածնի մէջ տեղի ունեցած Դաւիթի արկածին, և Երեւան փոխադրուելուն։ Ապպաս Միրզա արքայորդին, Աւտրպատականի և Հայաստանի զաւառներուն կողմնակալ և բանակին հրամանատար, նոյն օրեր կը հասնէր Երեւան պաշտպանելու Թուանեցւոն դէմ, որք Գուտովիչի զօրապետութեամբ քաղաքին դէմ կը յառաջէին։ Դաւիթ հասնելու Երեւան եկած, կը փութայ երթալ Ռուսվիրապի դաչտը, ուր հասած էր Գարսից բանակը, և Ապպաս Միրզայի առջեւ Դանիէլն ու Ներսէսը կ'ամբաստանէ, իբրեւ թէ անոնք են փրփուլն Ռուսոց և ածողն ի վերայ Գուրջ։ Հետեւանքը կ'ըլլայ որ Ապպասի հրամանով և Հիւսէյինի ձեռքով, Դանիէլ իբրեւ կաթողիկոսուր կը փոխադրուի ի Բէրդն Նբհանոյ՝ հետապնդին անյայտ, իսկ Ներսէս Գարսից բանակը կը տարուի, ուր Ապպաս զայն հարցուփորձի կ'ենթարկէ ղազախոսոց խլրտութեան Ռուսոց, և կը յայտնէ չեղօտանն Դաւիթ (ՄՍՐ. 75)։

ՑԱՋՈՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ

2300. Այդ ամէն չփոթութեանց մէջ միաբանութիւն տկտած էր մտահոգ ըլլալ, թէ որչափ ալ Դանիէլ աթոռին տիրացած էր, սակայն անոր տկար և հիւանդագին վիճակը նախատեսել կու տար, թէ երկար պիտի չկրնայ աջորիլ, և աթոռի մօտալուտ պարապութեան պատրաստային, կրնար ըլլալ որ Դաւիթ, իբրեւ արդէն օծեալ կաթողիկոս, նորէն աթոռին տիրանար. մանաւանդ եթէ անդամ մըն ալ իւր քաղաքական վարմունքը փոփոխելով, Ռուսական հովանաւորութեան ապաւինէր, ինչպէս առաջին անգամ ալ օգտուած էր (§ 2245)։ Միաբանութեան մէջ այդ մտածումները հետզհետէ կը զօրանային Դանիէլի վերջին հիւանդութեան վրայ։ Այդ տեսութեամբ 1808 սեպտեմբեր 5 օրը, ինքնին ժողովել էին և էջ օրհնել կը պատրաստէին կաթողիկոսին ուղղուած, որ Սէբաստիոյ կոնդակին չհնազանդելու համար, Ռուսաստանի կայսեր հետ հաչտութեան միջոցին էր, որ խոպան ընկնէր, որ երբեմն ֆոմ Տրտ ֆնաց, և Դանիէլն Թէլիջանն չորսս (Դիի. ի. 621)։ Ասոր վրայ հանդիպածը արդէն պատմեցինք (§ 2298). և զուգադիպութիւնը լաւ կը բացատրէ միաբանական զայրոյթին բորբոքումն ու սաստկութիւնը։ Գիրին պատճէնը ունինք (Դիի. ի. 619), որուն ներքեւ ստորագրած են 5 եպիսկոպոսներ, Ստեփանոս, Մարտիրոս, Յովհաննէս, Գրիգոր և Յակոբ, և 17 վարդապետներ, իսկ հօթը ժողովական եպիսկոպոսները՝ իրենց

գործադիր իշխանութիւն դուրս մնացած են։ Միաբաններ ընդարձակօրէն չնորհակալութիւն կը յայտնեն արքայորդի Ապպասի և կուսակալ Հիւսէյինի, որ Դաւիթը հեռացուցին և Դանիէլը նատեցուցին, բայց տեսնելով որ օրըստօրէ փերդ մը կ'հաստատուի կայ, որչափ ալ կը յաւելուն թէ պոյ Տէր չէ երկրեցին առաջ չէ, այլ ըստ օրում է մահկանացու վիճակ ամենեւեան, կ'առաջարկեն որ չեռ չէր մը կոխուէկոն՝ նէբեմ օրըստըն լինէր, ինչպէս որ կանուխէն ալ ընտրուած ու ծանուցուած էր։ Եւ կը խնդրեն որ հաստատուի քրով Շահզատայն և Հէսէյին Սէրտարին գործունէութեան սրուի իրենց, որպէսզի Դաւիթ գործ անքամ ամենեւին չկինէր իշխանութեան կոխուէկոան (ԴԻՒ. Է. 620)։ Յայտնի է թէ Դանիէլի համար ասկէ ընդունելի առաջարկ չէր կրնար ըլլալ, մինչեւ անգամ կ'երազէր իր չեռով ջնել նէբեմին, ու քանը նրան յանձնելով, ապա հանգիստ կեանք ապրիլ (ՍՊՅ. Ա. 41)։ Սակայն նոյն օրը տեղի ունեցաւ Դաւիթի պատահարը, որուն յաջորդեցին Դաւիթի հեռանալը, ու Պարսից արքայորդւոյն դիմելը, և Դանիէլի երեւանի բերդը փակուիլը (§ 2298), զոր պէտք է դնել չուրջ սեպտեմբեր 20'ին։ Սոյն օրերն էր որ Ներսէս ալ հարցափորձի կ'ենթարկուէր Ապպաս Միրզա արքայորդւոյն վրանին մէջ, Խորվիրապի մօտերը։

ՆԵՐՍԷՍ ԱՐԴԱՐԱՑԵԱԼ

2301. Ներսէս հանդարտութեամբ լսեց Դաւիթի կողմէն իրենց դէմ եղած ամբաստանութիւնը, իբրեթ Ռուսերը Պարսից դէմ գրգռող ըլլային. հերքեց եղած զրպարտութիւնը, և երկու ժամի պայմանաժամ խնդրեց ու առաջ՝ իրենց արդարացման փաստը ներկայելու։ Իսկոյն գարձաւ էջմիածին, գտաւ 1804'ին Դաւիթէ Ծիցիանովի գրուած նամակը, և փութաց դառնալ և Ապպասի ներկայացնել եղրակացնելով, թէ Տեսէ՞ք հմտութիւն Ռուսաց, է՞, ըստ որում Դաւիթ (ՄՍՐ. 75)։ Հաւանաբար այդ միեւնոյն 1804 յունիսին Ծիցիանովի գրուած նամակն է (§ 2280), որուն թէպէտ ամսաթիւը չկայ (ԴԻՒ. Է. 428), սակայն յունիսի վերջերը պիտի հաշուուի, զի 20'ին էր Ծիցիանովի Շրէչ հասնիլը (§ 2278)։ Այդ գիրով Դաւիթ կը յայտարարէր, թէ Ռուսին եմ չեմ և ցնծաց և զօրքերուդ ըսա նէրթին պատրաստեան հոգւոյ և աներեսայրի ըղձութեան կոմոց, ըստ ցանկի և փրկութենագործ եկաւորութեան չեր, և ըստ պէրպարբէս յաղթութեան, և կը յաւելուր, Ալէ մը և ամենեցուն հաստատելոց եղիջի է լոյս, և ուրնեալ և խնկաւորեալ է քրիստոնեութեամբ մաս չեր չերկիր (ԴԻՒ. Է. 427)։ Այդ յայտնութիւնը զայրացուց արքայորդին, վասնզի կը մերկացնէր թէ Դաւիթ զիրենք կը խաբէր նոյնիսկ այն միջոցին, երբ զինքն իրենց անձնուէր և Ռուսաց ոխերիմ կը ցուցնէր։ Ներսէս այդ յայտնութեամբ Դաւիթի կործանման վճռական հարուածը տուած եղաւ, զի այլեւս Դաւիթ չկրցաւ Պարսից պաշտպանութենէն օգտուիլ։ Ապպաս այնչափ զայրացաւ Դաւիթի դէմ, որ Ներսէսը արտօնեց զի վրէժ ըստ նմա օրէնս և կոխուէ։ բայց Ներսէս չուզեց առիթէն օգտուելով նոր նեղութիւն տալ Դաւիթի, որ կ'երեւի թէ Ապպասի ներկայութեան ալ եղած էր, և չէր կրցած իր գրածը ուրանալ, զի կ'ըսուի, թէ Ներսէս ըսել եր Դաւիթ գնալ նոքին է պան եղբօրն չերեսաւ։ Ներսէս յօգուտ գործածելով Ապպասի առջեւ վաստկած վստահութիւնը, անոր ներկայեց եփրեմի յաջորդութեան խնդիրը (ՄՍՐ. 75), միաբանութեան կամքին համեմատ (§ 2300), և հաւանութիւնը ստացաւ, հրաբերոց ել ալ ձեռք ձգեց յանուն եպիսկոպոսը՝ ժողովականներէն մին, հարկաւ ժողովական որոշմամբ, ճանապայ հանեց դէպի Ռուսաստան, որ Ապպասի պաշտօնագիրին զօրութեամբ օր առաջ եփրեմը էջմիածին առաջնորդէ (ՄՍՐ. 75), և յաջորդութեան խնդիրը լրացնել գործողութեան կարգ անցնի։

ԴԱՆԻԷԼԻ ՄԱՀԸ

2302. Պէտք է ենթադրել, թէ Ներսէս արտօնութիւն ալ ստացած ըլլայ Դանիէլը երեւանի բերդին արգելեանէն ազատելու, բայց Դանիէլ հիւանդագին վիճակի մէջ Մայրաթոռէն բերդ տարուած ու փակուած ըլլալով, դժբախտաբար վիճակը հետզհետէ ուժգնացած էր արգելարանին մէջ, և հոն մնալէն առքը հազիւ երկու չաբաթ եւս կրցաւ ապրիլ անյոյս վիճակի մէջ, և կեանքը կրն-

քեց 1808 հոկտեմբեր 9'ին (ՇԱՀ.Ա.234), որ կ'իյնար Հայի չորրորդ Յօթնեկի ուրբաթին։ Երեւանի մէջ գտնուող միաբաններ և ուխտաւորներ յուղարկաւորութեան կարգը կատարեցին, բայց թաղել չուզեցին, այլ ժամելով պահեցին է պապանէի, պատճառ բերելով և ըսելով (ՊԻՐ.65), որպէսզի կաթուղիկոսական առաջին առթիւ էջմիածին տանիլ և Մայրատաճարին հովանւոյն ներքեւ հանգուցանել։ Դանիէլի մահուան օրերը դեռեւս Երեւան պաշարուած էր Ռուսներէն, և հնար չէր հանգուցեալին մարմինին փոխադրութիւնը կատարել։ Դանիէլի կաթողիկոսութիւնը 1807 մայիս 14'էն համրելով, միայն 17 ամիս տեւած կ'ըլլայ. իսկ 1802 մայիս 25'ի Բագրեւանդի օծումէն համրելով վեց ու կէս տարի, թէպէտ մենք առաջին հաշուով միայն անցուցինք զայն կաթողիկոսաց գաւազանին, իրաւական տեսակէտէն աւելի, իրականին և գործնականին հետեւելով։

2303. Դանիէլի անձին վրայ մեր դիտողութիւնը յայտնել ուզելով, նախեւառաջ պիտի յիշենք, թէ բոլոր իր վրայ գրողներ, համակիրներ և հակակիրներ, համամիտ կերպով կը հաստատեն նորա բարեսէր և բարեսիրտ բնաւորութիւնը։ Եթէ իր անունով և իրեն համար եղած ձախող գործեր ու պարագաներ ալ պատմեն, համաձայն են զինքն արդարացնելու և հաւաստելու, թէ առանց իր կամաց գործուեցան, և իրեն վրայ մեղադրանք կամ պատասխանատուութիւն չեն բերեր։ Այդ համամիտ վկայութիւնը մեծագոյն գովեստն է Դանիէլին համար, անհատապէս նկատուած ատեն, և չատ նշանակելի կէտ մըն է այնպիսի մէկու մը համար, որուն անձն ու անունը ճշմարիտ կուսակրօնական դարձած էր ընդհանուր Հայութեան մէջ։ Անոնք որ կերպով մը նուազել կ'ուզեն Դանիէլի անունին վայելած համակրանքը, բոլոր անցուդարձերը Ներսէսի վրայ կը բեռցնեն, և Դանիէլն ալ անոր ձեռքը ապիկար և գրեթէ անզգայ գործիք մը կը դարձնեն, զուրկ ամէն արժանիքէ։ Սակայն պատմական պարագաներ, զորս մանրամասնօրէն յառաջ բերինք, Ներսէսը կը ներկայեն, ոչ իբրեւ գործին տէր, այլ իբրեւ գործին միջնորդ, զի Դանիէլեան կուսակցութեան գլուխը գտնուողներ, Եփրեմ Զորագեղցին, Գրիգոր Ղամսեցին, Յովհաննէս Դեղարդակիրը, Բարսեղ Աչտարակեցին, Յովհաննէս և Մինաս Լազարեաններ, և ուրիշներ, Ներսէսը վարելու կարող, և ոչ Ներսէսէ վարուելու զիջող անձեր էին։ Նոյն իսկ այն մանրավէպերը զորս խնամով հաւաքած են, իբրեւ Ներսէսի ու Յովհաննէսի (ԴԻՒ.Ի.ԸՂ.), և Ներսէսի ու Եփրեմի (ՄՍՐ.79) միջեւ անհամաձայնութեան նշաններ, մեր ըսածը կը հաստատեն, թէ անոնք Ներսէսի ձեռքը խաղալիք դարձած խրտուիլակներ չէին։ Հետեւապէս պէտք է ընդունիլ, թէ վերոյիշեալ գլխաւորներ ուղղակի Դանիէլի անձին յարած էին, և եթէ Դանիէլի անձին այնչափ ուժգնութեամբ համակրութիւն կը տածէին, ապա ուրեմն անոր վրայ արժանիք մը տեսած էին։ Իսկ եթէ այդ արժանիքը՝ բարձր կարողութիւն չէր, ուրեմն գերազանց բարութիւնն էր որ ամէնքը իրեն գրաւած էր, և իրեն մէջ ուղղամիտ և ճշմարիտ հայրապետի տիպարը կը կազմէր։

ԴԱՆԻԷԼԻ ԱՆՁԸ

2304. Ասոր հետ մէկտեղ Դանիէլի ընթացքին վրայ կատարուած մանրազնին դիտողութիւններով կը տեսնուի, թէ իրաւացի ալ չէ իր կատարեալ ապիկար մը ներկայել Դանիէլը։ Ռուսական կառավարութիւնը՝ որ անպայման վստահութիւն դրած էր Դանիէլի վրայ, հնար չէր որ Ներսէսի մը կամ Եփրեմի մը վկայութեամբ կազմէր իր համոզումը, քանի որ ունէր իր կնօրիններըը, Ծիծիանովները, Դուսովիչները, որոնք իսկութիւնը իրեն կ'իմացնէին, և անմիջական չփմամբ կազմած գաղափարին կը հաղորդէին։ Վերջին պարագային ալ Պարսից արքունիքը՝ իր ուղղութիւնը փոփոխելով և Դանիէլը պաշտպանելով (§ 2290), Դանիէլի անձին համար նպաստաւոր վկայութիւն տուած կ'ըլլար, հաւաքած լինելով, որ նոքա ինքնաբերաբար ելով կ'ընդունէին Ռուսներէն, և Պարսից կառավարութիւնը անով կը նպաստաւորուի. որով Դանիէլ տալտական ինքնագլուխ կանանալ կը ստանար երկու տերութեանց ալ (ՀՐՑ.Ա.37)։ Դանիէլի նամակագրու-

թիւնները, և յատկապէս անոնք զորս գրած է Ներսէսին իրեն մօտ չեզած առեններուը, հանդարտ և կշռադատ միտքի արտայայտութիւններ են։ Դանիէլի վարչագէտ տեսութեանց իբր փաստ կը նկատենք այն չրջահայեաց արթնութիւնը, որով Պարսից և Ռուսաց կառավարութիւններուն հետ ալ յարաբերութիւններ կը մչակէր Հայ ազգին և Հայ եկեղեցւոյն պաշտպանութեան համար։ Յատուկ գիրեր է ուղղած Գաղղիոյ կայսր Նաբօլէոնի (ԴԻԻ. ե. 522), և նախապար Փորթալիսի (Joseph Portalis), զոր ինչպէս հասարակ և օրինաց կը կոչէ (ԴԻԻ. ե. 554), նոյնպէս Գերմանիոյ կայսեր հետ (ԴԻԻ. ե. 556), որ էր Փրանկիսկոս Բ (Franz II)։ Նաբոլէոնի գրելով չնորհակալութիւն կը յայտնէ Ժամպաթիստ Բուասօ (Jean-Baptiste Boisseau) դեսպանը էջմիածին յղած ըլլալուն, և կը խնդրէ, չի սր և փոքածեցի ազգմոնիէն ինոյ չերոյ կայսերական ինձոնիեն, եղէցի հավանի ապէի և եկեղեցոյ Հայոց պանեայց (ԴԻԻ. է. 553)։ Իսկ Ֆրանցի կը յանձնարարէ Սչով (Suczava) քաղաքը բնակող ղազին Հայոց, որ կը գտնուի Նեբոյ Աբտոփեան ինոյ կոնոզկոսին Ամենայն Հայոց՝ հոգեւորական կանոնօ և եկեղեցական կարգօ։ կը յիշէ եւս, թէ Գրիգոր անոն սսօ եպիսկոպոս ի 1807 օգոստոսին այնտեղ անհամաձայնութիւն սերմանած է, որով կ'ակնարկէ Գրիգոր Աքքիրմանցիին, և կը խնդրէ որ այլեւս սանց վիայական էրոյ կոնոզկոսին Աբտոփեան ինոյ, հոգեւորականներ չընդունուին կայսերական սահմաններուն մէջ (ԴԻԻ. է. 559)։ Այդ նամակները գրուած են 1808 յունիսին մէջ։ Դանիէլի համար ուրեմն կրնանք համարձակ ըսել, թէ ամէն հնարաւոր միջոցներով ջանաց հոգ պանել տանգաստ ինոյ ղոոյը վերանգնելու (ԵՐՅ. Ա. 36), և պէտք է քաջեկլոպոկ հայրապետներու չարքին մէջ արձանագրել իր անունը։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՏՐԻԱՐՔ

2305. *Կաթողիկոսական աթոռին յաջորդութեանց գործերը, մեզ ստիպեցին պահ մը աչքէ վրիպեցնել Տաճկահայ հանրութեան գործերը, գոհանալով պարագաներու յարմարութեամբ յիշել միայն կաթողիկոսական ընտրութեանց մէջ ունեցած մասնակցութիւնին* (§ 2223—2232), *և պատրիարքներ փոփոխելնին, Յովհաննէս Բաբերդցիի պաչտօնէ դադարիլը* (§ 2262), *և վերստին պաչտօնի դառնալը* (§ 2272)։ *Բայց ատոնցմէ դուրս ալ բաւական պատահարներ ունինք, որոնք Տաճկահայ կեանքին համար հետաքրքրական և մեզի համար գիտցուելու արժանի դէպքեր են։ Յովհաննէսի երկրորդ պատրիարքութիւնը տասնամեայէ աւելի տեւողութիւն ունեցաւ, որ եթէ մէկ կողմէն ժողովուրդին յարափոփոխ յուզումներէն յոգնած ըլլալուն հետեւանքն էր, սակայն հնար չէ Յովհաննէսի խոհական և չրջահայեաց վարչականութեան արժանիքն ալ չյիչել։ Հակառակ որ բոլոր աչխարհ ամէն կողմէն խռովութեանց և պատերազմաց մէջ էր ժթ դարուն սկիզբները, և նոյն իսկ Տաճկաստան անկայուն վիճակ մը ունէր՝ Ռուսաց հետ պատերազմներուն, և Ռուսաց հակառակորդ Նաբօլէոնի հետ բարեկամութիւն հաստատելուն պատճառով, ասով մէկտեղ Յովհաննէսի չրջանը, մայրաքաղաքի Հայութեան համար օգտակար ձեռնարկներու ժամանակամիջոց մը եղած է։ Այդ միջոցէն յառնանէ կը յիչուին Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյն վերաչինութիւնը և Գասբմփաչայի Ս. Յակոբ եկեղեցւոյն առաջին չինութիւնը, Նարլըքապուի Ս. Յովհաննէս և Բերայի Ս. Յարութիւն հիւանդանոցներուն վերանորոգութիւնները, իրենց յարակից փոքրիկ եկեղեցիներով* (01 ՕՐԱ.175), *և չատ մըն ալ թաղական վարժարաններու սկզբնաւորութիւններ կամ բարեկարգութիւններ. զորօրինակ Գումքապու, Սամաթիա, Դալաթիա, Բերա, Գարթալ, Պէյքօզ, այնպէս որ այդ միջոցին գրեթէ ամէն թաղ իր վարժարանն ունեցաւ* (01 ՕՐԱ.176)։ *Ատոնց մէջ պաչտօնավարող ուսուցիչներն ալ՝ անուն և հռչակ և գրական արդիւնքներ թողուցող անձեր եղած են, ինչպէս Մեսրոպ Կարնեցի աւագերէց, Թագուր Ալանեան և Յակոբոս Սամաթիացի վարժապետներ, Մատթէոս Զալիր և Պօղոս Յովհաննէսեան տպարանատէրներ, որոնց հետ պէտք է յիչուի և Մարգար առաջին գրավաճառ՝ Քիթապճի մականուն ստացած* (01 ՕՐԱ.177)։ *Այդ ընդհանուր չարժումը, աչխատասիրներու ձեռնարկութեան և նուիրատուներու քաջալերութեան*

հետ, պատրիարքին ընծայած հովանաւորութեան ալ պիտի վերագրուի։ Ծովհաննէս այդ ընթացքին մէջ, հաւատարիմ և աւանդապահ հետեւող մըն էր իւր վարդապետին, Կաղզուանցի Զաքարիա պատրիարքին (§ 2185)։

ԲԵՐԱՅԻ ՔԱՂԸ

2306. Այստեղ ներքի քանի մը տող աւելցնել յատկապէս Բերայի թաղին վրայ, որուն կազմակերպութիւնն ալ Ծովհաննէսի ժամանակ տեղի ունեցած է։ Կոստանդնուպոլսոյ պարսպապատ քաղաքին հանդէպ, պարսպապատ Գալաթիա մը կար Ծունական տիրապետութեան ժամանակէն, Գենուայի Իտալական հանրապետութեան հովանաւորութեան ներքեւ։ Ըստ այսմ Իտալացիներէն մնացած կ'երեւի տեղւոյն անունն ալ, զի մինչեւ այսօր Գալաթա (Galata) կը կոչուին Լիգուրիոյ նահանգիսականներուն ծովափնեայ մասերը կամ քարափները։ Հայոց յատուկ եկեղեցի ալ կար սոյն մասին մէջ Օսմանեան տիրապետութենէն առաջ (§ 1484)։ Մայրաքաղաքին մէջ հետզհետէ չատցող Հայութիւնը՝ իրեն գլխաւոր կեդրոններէն մին ըրած էր Գալաթիան, որ նախկին եւրոպական կազմակերպութենէն մնացորդ նշաններ կը պահէր, և առեւտրական ձեռնարկներու աւելի յարմարութիւններ ունէր։ Մենք տեսանք որ ԺԷ դարու վերջերը և ԺՀ դարու սկիզբները տեղի ունեցած ազգային չփոթներու մէջ՝ Գալաթիա մեծ նշանակութիւն ունէր, և Գալաթիոյ եկեղեցին ալ կերպով մը Մայր եկեղեցւոյ մրցակից դիրք կը պահէր։ Քանի չատցաւ Գալաթիոյ բնակչութիւնը, պարբերապատուէն դուրս ելլելով տարածուեցաւ Բերայի կամ Պէօյի, այսինքն է Կոստանդնուպոլսոյ հանդիպակաց բարձունքներուն վրայ, և տեղացի Ծոյներէն և Հայերէն աւելի՝ այդ կողմերուն կարեւորութիւն տուին եւրոպական դեսպանութիւններ, և Լատինական միաբանութիւններ, իրենց Տաճկական կերպաւորութիւններէ ազատ արուարձան մը։ Այդ պարագան Բերան նախադասելի երեւցուց՝ կաթոլիկութեան միտող կամ յարող Հայերուն, և անոնցմէ մաս մը սիրեց այդ կողմերը անցնիլ. բայց անհիմն կ'ըլլար հետեւցնել թէ Բերայաբնակ Հայութիւնը կաթոլիկ եղած ըլլայ, կամ թէ բոլոր կաթոլիկամիտներ՝ Բերայաբնակ եղած ըլլան։ Գալաթիան հայադաւան կեդրոն էր, և Ս. Յարութիւն հիւանդանոցը և Թաքսիմէ անդին եղող գերեզմանոցը սկիզբէն իրենն էին, թող որ կաթոլիկամիտ Հայութիւնը որոշ մարմին չէր և որոշ կացութիւն չունէր, այլ Հայ պատրիարքութեան հպատակ և Հայ ժողովուրդի կամ հաստարակութեան մաս էր, իբր հայադաւան տարրին անդամ, ինչ ալ ըլլար իւր հետացնել միտքը կամ հետեւակ ընթացքը։ Հայերուն հետզհետէ այդ արուարձանին մէջ չատնալը, և պարսպապատ քաղաքներուն գիշերները դռները փակ մնալուն սովորութիւնը, և դուքսի և դողներուն հոգեւորական պէտքերուն պահանջը, այդ արուարձանի մէջ ալ եկեղեցի մը ունենալու պէտքը չեշտեցին։ Առաջին անգամ Ծոյներ 1804 օգոստոս 15'ին, Կալինիկոս Ե պատրիարքին ջանքով եկեղեցի մը հիմնարկեցին, որ է իրենց Ս. Աստուածածնայ նուիրեալ եկեղեցին Բերայի հին Գալըքթազարի չուկային մօտ։ Աւոր վրայ Հայերն ալ քաղաքերուցման նոյնն ընել, և 1805'ին, Դրիգոր Մահտեսի-Գէորգեան կամ Զարաղլեան ամիրա, Գալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն դ-ԻՆՎԼԻԱՆ, որ է վաթիչ իշխանապետ, 6000 կանգուն տարածութեամբ բանջարանոց մը գնեց Ծոյներուն եկեղեցիէն ոչ չատ հեռու, և ետքը չամնայն անյնէ գոտ գործել մահալափ ճգնեցաւ, և գրգռելով գործել զմինայն վանէ ի քաց արհամարհից, մինչեւ որ չորեքտասնեայ փայտաչէն եկեղեցի մը կառուցանել գնուած գետնին մէջտեղը, որ 1807 մայիս 31'ին Հոգեգալստեան նախընթաց ուրբաթ օրը օծուեցաւ Ռումէլիի նուիրակ Ալեքսան արքեպիսկոպոսի ձեռքով։ Իսկ յետմանէ չեմ ինչ ասաջ չորոշ, այսինքն Հոգեգալստեան դիմացի կիրակիին, յունիս 9'ին, Ըն ասք զինանէ ասաջ գոտ ճկեցաւ, այսինքն առաջին պատարագը կը մատուցուի։ Քանի որ չիշատակարանին մէջ այլեւս Ալեքսան եպիսկոպոս չյիշուիր, իզէպ է հետեւցնել, թէ գալշտրոզ կրթասեալ ասքասածքան պոքրէպէն Ծովհաննէս եղած կ'ըլլայ առաջին պատարագը մատուցանողը (ԵՐՐ.1)։ Կ'երեւի թէ պատրաստութիւնները չեն կրցած լրա-

ցընել, որ օծումէ երկու օր ետքը Հոգեգալստեան տօնին առաջին պատարագ չէ մատուցուէր. բայց Հոգեգալուստը եղած է միշտ եկեղեցւոյն տարեդարձի օրը, ինչպէս նոյն տօնին ալ՝ 1907 յունիս 10'ին, կատարուեցաւ եկեղեցւոյն հարիւրամեակի տօնախմբութիւնը: Փայտաշէն եկեղեցին հազիւ երեք տարի կեանք ունեցաւ և Բերայի մեծ հրդեհին հրով եղաւ ոչընչ: Պէրպէրեան զայն կը դնէ ապրիլ 7'ին (ՊԼՐ.448), յիշատակարանը կը դնէ ըբ-ե-ն յոթ-ամ Վ-ոլ-ոց ղ-ր-ե-ա-ն, որ կ'իյնայ ապրիլ 9'ին, և կ'ներեւի թէ երկու երեք օր տեւած է հրդեհը: Բայց քանի մը օրուան մէջ հապճեպ կարգի դնելով ազատած քարուկիր մասը, Մեծէ ոբ-բ-ե-ն օրը, այսինքն ապրիլ 15'ին, ե-ղ-ե-լ պե-ա-, կը գրուի, ղ-ա-ֆ պեղն յոթ-ից (ԵՐՐ.2), զի կրցած են այնտեղ տօնները կատարել: Այս վիճակը տեւած է, մինչեւ վերաշինութիւնը 1836'ին, տակաւառակ վերաշինութեան համար թափուած ջանքերուն: Այդ միջոցին Բերայի խարխուլ եկեղեցին, Ղալաթիոյ եկեղեցւոյն յարակից նկատուած էր և նոյն եկեղեցապանութեան ձեռքը կը մնար:

ԹԷՈԴՈՐՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ

2307· Ցովհաննէսի պատրիարքութեան գլխաւոր հոգածութիւններէն մին ալ երուսաղէմի եղաւ, որ կարծես թէ երբեք չէ դադարած կ-Պոլսոյ աթոռը զբաղեցընել, երբեմն արտաքին հակառակութեանց և երբեմն ներքին երկպառակութեանց երեսէն: Երուսաղէմի գործերը թողած ևնք Պետրոս Եւդոկիացի պատրիարքին մահուան, և յաջորդի ընտրութեան երկարձգումն պարագային (§ 2181), որ է ըսել 1800 տարւոյ կիսուն Ցովհաննէսի առաջին անգամ պատրիարքութեան բարձրացած օրերը (§ 2231): Պետրոս կարօտութեան և դրամական նեղութեան պատճառով Ցոպպէ եկած էր, և հազիւ քանի մը հազար դահեկան կը մնար աթոռին արկղը, ծանրածանր պարտքերու դիմաց, մինչ ևպարքոսը ուժգին կը պնդէր, հազար քսակ դրամ տալ և անմիջապէս ոտքէ վեր բառնալէն (ԱՍՏ.Բ.134): Անհնարին տագնապին մէջ միաբանութիւնը պարտաւորուեցաւ ուներ ցածէն մերկանալ և ժողովուրդին վրայ ծանրանալ, և հազիւ պահանջուած գումարին կէսը հայթայթել: Այսպիսի կացութեան մէջ, միաբաններու մէջ պատրիարքութեան բարձրանալու փափաքն իսկ մարած էր, և կ-Պոլսոյ պատրիարքին դիմեցին, որ ազգովին որեւէ մէկը իրենք նչանակին միաբանութեան մէջէն, և պաշտօնական պահանջները լրացնելով հաղորդէն. և այս միտքերնին երուսաղէմայ փոխանորդ Յակոբ եպիսկոպոսին ալ իմացուցին: Այնչափ էր միաբանութեան յուսահատութիւնը, որ մինչեւ իսկ կը մտածէին ընդհ-ա-ն-ր-ա-պ-ե-տ-ո-ւ-թ-ի-ւ-ն յարմար դատուելու Թէոդորոս վանեցի եպիսկոպոս, և իրեն ծանուցուեցաւ երուսաղէմ, բայց նա յանձն չառաւ: Միաբանութիւնն ալ չկրցաւ պնդել, և Պետրոս ու կարապետ եպիսկոպոսներն ու Ստեփանոս վարդապետը ձանպազ հանեց կ-Պոլսեցոց իմացնելու իր ցրուելու խորհուրդը, ևթէ ե-ր-է-ւ-է ոչ-ի-ն չ-ե-ն-ա-ս- չ-ը-լ-ա-ն, որ ա-ղ-ա-ֆ-ո-յ-ե-ն ղ-ա-ր-բ ա-ն-ո-ւ-ն է պ-ա-ր-ա-տ-ո-ց (ԱՍՏ.Բ. 137): Երուսաղէմի մէջ կը չարունակէին դրամ կորզելու համար սպառնալիքներն ու բռնութիւնները. կ-Պոլսոյ մէջ չէին վերջացներ ընտրողական վարանումները, մինչեւ որ 1802 փետրուարին, ազգային ժողովը կրկին կը պնդէ Թէոդորոսի ընտրութիւնը, և այս միտքով ետ կը դարձնէ երուսաղէմէ եկող պատուիրակները: Վերջապէս 1802 ապրիլ 10'ին, Աւագհինգշաբթի օրը, Թէոդորոս կը զիջանի առժամեայ կերպով գործերը հոգալ. իսկ յուլիս 11'ին, վարդավառի նախատօնակին, կրնան զինքը աթոռ ալ նստեցնել (ԱՍՏ.Բ.141), Պետրոսի մահուընէ երկու տարի և ամիս մը ետքը (§ 2181): Այսպէս աթոռն իր գահակալն ունեցաւ, բայց տագնապներ չվերեւցան: Ցոպպէի մէջ ապստամբ Մէհմէտ փաշա չարաչար տանջանքներով քրիստոնեաներէն կը կողոպտէր, և Հայոց տեսուչ Ղազար վարդապետը կը չարչարէր: Ճէզար փաշա և օգնականները Իսմայիլ և Սիւլէյման՝ ապստամբը ընկճելու նպատակով ժողովուրդը կը կողոպտէին: Ապտուլլան փաշա նոր կուսակալ, նորանոր պահանջներ կը չատցնէր, իսկ Թէոդորոսի կ-Պոլիս դիմելէ զատ միջոց չէր մնար. բայց հոն ալ Դաւիթ-Դանիէլեան խնդիրներու կը բաղխէր, զի Յամանցին՝ Դանիէլէն յատուկ

գիր չառնող նուիրակները կը հալածէր։ Կիւլիկիոյ կաթողիկոս կիրակոսին ալ (§ 2133), 1803 տարւոյ Տեառնպառաւէն Յատիկ՝ Երուսաղէմի մէջ մնալը նորանոր ծախքերու ենթարկեց պատրիարքարանը (ԱՍՏ.Բ.143), այնպէս որ ամէն կողմէն տկարացած և նեղուած կը մնար Երուսաղէմի աթոռը, և մօտալուտ յոյներ ալ չէին տեւնուներ։

2308. Վերոհաս տագնապներէն մի մաս հասարակ էր միւս քրիստոնեայ ազգերուն ալ, բայց անոնք իրենց ազգայիններուն՝ Յոյներուն և Լատիններուն օժանդակութեամբ դիրքերնին կրնային պահպանել, մինչ Հայերը արտաքնապէս տագնապի և տուգանքի մատնուած, ներքնապէս ալ Դաւիթի և Դանիէլի խնդիրներով պառակտած, դիրքերնին խախտած և ամէն միջոցէ զրկուած ու յուսահատ վիճակ մը ունէին։ Այդ կացութիւնը հարմարակութիւն կու տար Յոյներուն և Լատիններուն, և մանաւանդ առաջիններուն, համարձակ Հայոց իրաւունքները անարգել, մինչեւ իսկ անոնց պատրիարքարանին տիրանալու ձգտիլ, և Հայերը իսպառ վտարել Սուրբ Տեղեաց մասնակցութենէն։ Մայրաքաղաքին մէջ մեծ էր Ցունական ազդեցութիւնը այդ ժամանակին, և իրենց իշխանաւորները կրնային կամակատար գործիքներ դարձնել պետական պաշտօնեաները, քանի որ հնչուն փաստերու տէր էին։ Մեր նպատակը չէ մանրամասնութեանց մտնելով պատմութիւնիս ձգտաղել, միայն ներկայ ընթացքը կ'ուզենք անցողակի ակնարկել առայժմ։ Այն առիւններ բաւական էր որեւէ փաստաթուղթ ստրատանութեամբ առիթ մը ստեղծել, և դրամական ազդեցութեամբ մեծամեծները չհիլ, որ նորանոր հրամանագիրներ ստացուէին չարունակաբար։ Ըստ այսմ կը յիշուի 1802'ին Յոյներէ առնուած հրովարտակ մը, իբր թէ Հայեր ոտնձգութիւններ ըրած ըլլան Յոյներու իրաւունքներուն (ԱՍՏ.Բ.149). հրովարտակ մըն ալ 1804'ին առնուած, որով սուլտանը Յոանոց «եկեղեցին ընդհանուր սուրբ գերեզմանոցը (ԱՍՏ.Բ.149), Հայերուն թողլով միայն ուխտի երթալու ազատութիւն։ Բայց այս հրովարտակներ ծածուկ կը պահուէին, և հազիւ 1806'ին, անոնց մասին զրոյցներ սկսան պտտիլ (ԱՍՏ.Բ.159)։ Այդ գաղտնապահ յապաղման պատճառ կրնանք նկատել՝ այն բուռն խռովութիւնները, որք Օսմանեան մայրաքաղաքին մէջ կր տիրէին, ապստամբ փայանները և ըմբոստ եէնիչէրիներու երեսէն, և գործադրութեանց արգելք կ'ըլլային։ Սէլիմ Գ գահընկէց կ'ըլլար 1807 մայիսին (ԺՈՒ.373), և կը սպանուէր 1808 յուլիս 28'ին, և սոյն օր գահընկէց կ'ըլլար իրեն յաջորդող Մուստաֆա Գ, և գահ կր բարձրանար Մահմուտ Բ, Մուստաֆա ալ կր սպանուէր նոյեմբեր 15'ին (ՊԷՐ.447)։ Բայց Յոյներու ձեռք ձգած հրովարտակներուն զրոյցն ալ չլսուած, Հայեր կրցած էին տեղեկութիւններ քաղել, և փոխանորդ Յակոբ եպիսկոպոս ազդարարած էր Երուսաղէմ՝ «Նել է պոբոսոք ընին և վհասոքոսն հրովբոքո» (ԱՍՏ.Բ.149)։ Բայց որովհետեւ երկու կողմեր իրարու դէմ երեսած չէին, արտաքին ձեւով գործակցութիւններ ալ կրնային կազմակերպել։ Այսպէս եղաւ երբ 1806'ին երկք ազգեր համաձայնեցան Երուսաղէմը Դամասկոսի կուսակալութենէն պահելու աչխատիլ, և մի մի վարդապետներ որոշելով՝ կ-Պոլիս պատուիրակ յղեցին (ԱՍՏ.Բ.158)։ Բայց այսպիսի պարագաներ ներքին հակառակութիւնները չէին ջնջեր, և ոչ ալ Յոյները իրենց վերջնական դիտումէն ետ կը կասեցնէին, որոնք քիչ ետքը բուռն կերպով մէջտեղ ելան, ինչպէս իրենց կարգին պիտի պատմենք։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԽՆԴԻՐ

ԱԶԳԱՊԱՏՈՒՄԻ ԵՐԿՐՈՒԹ ՄԱՍԻՆ ՄԻՋՔ

ՅԻՇՈՒԱԾ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

ԱԲԼ. *Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնագրութեամբք. աշխ. Աբել արքեպ. Մխիթարեանց. Վաղարշապատ. տպ. Էջմիածնի. 1874. 8°. եր. 150։*

ԱԳԹ. *Ագաթանգեղեայ պատմութիւն Հայոց. հրտ. Գալուստ Տէր-Մկրտչեան և Մեսրոպ Կանայեանց. Տփղիս. տպ. Մ. Մարտիրոսեանց. 1909. 4°. եր. 2+474։*

ԱԶԱ. Ecclesiae Armenae traditio de Romani pontificis primatu jurisdictionis et inerrabili magisterio. *աշխ.* Stephanus Azarian (*Ստեփանոս վարդ. Ազարեան*). Romae. *տպ.* De Propaganda fide. 1870. 8°. *եր.* 175։

ԱՂԹ. *Գրիգորիս Աղթամարցին և իւր տաղերը. հրտ. Կարապետ Կոստանեանց. Թիֆլիս. տպ. Շարաձևի. 1898. 16°. եր. 126։*

ԱՂՔ. *Անդրէաս գերապայծառ Աղեքսանդրեանի 3 պրակք. 16°։ Ա. Համառօտ պատմութիւն երկոտասան կաթողիկոսաց Կիլիկիոյ. Վենետիկ, տպ. Մ. Ղազար, 1906. եր. 70. — Բ. Համառօտ պատմութիւն եպիսկոպոսական աթոռոց ի պատրիարքութեան Կիլիկիոյ. Վենետիկ, տպ. Մ. Ղազար, 1906. եր. 49. — Գ.* Histoire abrégé des siéges archiépiscopaux et épiscopaux du patriarcat de Cilicie. Beyrouth, *տպ.* Catholique. 1908. *եր.* 92։

ԱՄԴ. *Մինաս վարդապետի Ամդեցւոյ, Ազգաբանութիւն Հայոց. Վաղարշապատ. տպ. Էջմիածնի. 1970. 24°. եր. 144։*

ԱՄՍ. *Հանդէս Ամսօրեայ, հայագիտական և արուեստագիտական ուսումնասիրութեանց. Վիէննա. տպ. Մխիթարեան. սկսեալ 1890. չափ 4°. եր. 384 տարեկան։*

ԱՆԱ. *Վասն վանօրէից որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. աշխ. Անաստաս վարդապետ Հայոց. Վենետիկ. տպ. Մ. Ղազար. 1896. 16°. եր. 42։*

ԱՆՏ *Պատմութիւն Անտոնեան միաբանութեան. աշխ. Ռափայէլ աբբահայր Միսաէլեան. Կ. Պոլիս. ձեռագիր. 1904. 4°. եր. 195։ Սեփականութիւն Անտոնեան մատենադարանի։*

ԱՋԱ. *Եփրեմայ Աջապահեան կաթողիկոսի կիլիկիոյ, ազգաբանութիւն Աջապահեանց, և թուղթ Սիմէոնի Սերաստացւոյ. Նօտրգիր. Կիպրոս. 1783. 24°. եր. 78. սեփականութիւն Ներսէս եպիս. Դանիէլեանի։*

ԱՌԿ *Գիրք Առակաց Սողոմոնի։*

ԱՍՏ. *Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի. աշխ. Աստուածատուր եպիս. Տէր-Յովհաննէսեան. Երուսաղէմ. տպ. Ս. Յակոբեանց. 1890. 8°. հատ. 2. եր. 464+560։*

ԱՐԱ *Արարատ, բնաչխարհ Հայաստանեայց. տեղագրութիւն. աշխ. Հ. Ղեւոնդ վարդ. Ալիշան. Վենետիկ. տպ. Ս. Ղազար. 1890. 4°. եր. 590։*

ԱՐԵ. *Արեւելեան Մամուլ, չաբաթաթերթ. սկսաւ հալ 1870. աշխ. Մատթէոս Մաղուրեան. Զմիւռնիա. տպ. Մամուրեան. 8°. եր. 1278 իւրաքանչիւրը։*

ԱՐԼ. *Արեւելք, լրագիր ազգային և քաղաքական, սկսած 1884 յունուար. Կոստանդնուպոլիս. տպ. սեփական. անծալ։*

ԱՐՂ. *Յովսէփ կաթողիկոս Արղութեան. աշխ. Լէօ (Առաքել Բաբախանեան). Թիֆլիս. տպ. Մ. Ռօտինեանց. 1902. 16. եր. 228։*

ԱՐՐ *Արարատ, պաշտօնական ամսագիր Հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի. սկսեալ 1867. Վաղարշապատ. տպ. Մայրաթոռոյ. 8°. և 4°. եր. տարբեր։*

ԲԱՌ. *Յաջորդութիւն պատրիարքացն Երուսաղէմի, մինչեւ ցմեր ժամանակ. աշխ. Բառնաբաս վարդ. Յովսէփեան. Կ. Պոլիս. տպ. Յ. Գալֆեան 1872. 8°. եր. 106։*

ԲԱՍ. *Լեւոն Ե Լուսինեան, վերջին թագաւոր Հայոց. աշխ. կաթողիկոս. Յ. Բասմաջեան. Պարիս. տպ. Տողրամաճեան. 1908. 4°. եր. 167։*

ԲՋՆ. *Փաւստոսի Բուզանդացւոյ, Պատմութիւն Հայոց ի չորս գպրութիւնս. Վենետիկ. տպ. Ս. Ղազար. 1889. 8°. եր. 289։*

ԲԺՇ. *Ձանապարհորդութիւն ի Լեհաստան. աչխ. Հ. Մինաս վարդ. Բժշկեանց. Վենետիկ. տպ. Ս. Ղազար. 1830. 8°. եր. 424։*

ԲԻԶ. *Բիւզանդիոն, ամենօրեայ հայաթերթ. սկըսեալ 1896 նոյեմբեր. աչխ. Բիւզանդ Քէչեան. Կոստանդնուպոլիս. տպ. սեփական. անծալ։*

ԲՆԱ. *Բանասէր, հանդէս հնախօսական, պատմական, լեզուաբանական և քննական. աչխ. կարապետ Բասմաջեան. Փարիզ. սկսեալ 1899. 8°. եր. 200—400 տարեկան։*

ԲՌՆ. *Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռոմայ. Թրգ. և հրտ. կարապետ Եզեանց. Պետերբուրգ. տպ. Կրաեվրսկայ. 1884. 8°. եր. լը+279։*

ԲՐԳ. *Վարք և վարդապետութիւն տեառն տէր Միքայէլ գերահռչակ քահանայիս. ձեռագիր. 24°. եր. 24։ Սեփականութիւն Անտոնեան մատենադարանի։*

ԳԱԼ. *կենսագրութիւն Սարգիս արքեպիսկոպոսի Սարաֆեան, և ժամանակին Հայ կաթողիկեայք. աչխ. Հ. Գրիգորիս վարդ. Գալէմքեարեան. Վիէննա. տպ. Մխիթարեան. 1909. 12°. եր. 433։*

ԳՈՎ. *Հայք չեղիսաբերեալք Դրանսիլուանիոյ. աչխ. Հ. Գրիգոր վարդ. Գովրիկեան. Վիէննա. տպ. Մխիթարեան. 1893—1908. 12°. հատ. 3. եր. 533+554+658։*

ԴԱՇ. *Դաչանց Թղթոյ քննութիւնն ու հերքումը. աչխ. կարապետ վարդ. Շահնազարեանց. Պարիս. Կ. Վ. Շահնազարեանց. 1862. 24°. եր. 144։*

ԴԱՎ. *Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ. Վաղարչապատ. տպ. Ս. Էջմիածնի. 1884. 4°. եր. 524։*

ԴԱՐ. *Ցովհաննու Դարդէլի ժամանակագրութիւն Հայոց. Թրգ. և հրտ. կարապետ Եզեանց. Պետրբուրգ. տպ. Սկօրօխօտովի. 1391. 8°. եր. ՋԼ+294։*

ԴԻՒ. *Դիւան Հայոց պատմութեան. հրտ. Գիւտ Ա. քահ. Աղանեանց. Տփղիս. 4°. հատորք 10. — Ա. Պատմութիւն. 1780—1802. տպ. Շարածէ. 1893. էջ 190։— Բ. Սիւնհոդոս 1706—1834. տպ. Շարածէ. 1893. էջ 136։ — Գ. Սիմէոն. տպ. Շարածէ. 1874. էջ ճղ+892։— Դ. Ղուկաս. տպ. Շարածէ, 1899. էջ ն+804։— Ե. Դանիէլ. տպ. Ռոտինեանց. 1902. էջ նչ+684։— Զ. Դաւիթ. տպ. Ռոտինեանց. 1909. էջ 752— Է. Դաւիթ. տպ. Ռոտինեանց. 1909. էջ խչ+562— Ը. Սիմէոն. տպ. Աղանեանց. 1908. էջ 664։— Թ. Ցովսէփ. տպ. Աղանեանց. 1911. էջ 556։— Ժ. Մանր մատենագիրք. տպ. Աղանեանց. 1912. էջ ֆե+664։*

ԴՐՆ. *Գրիգոր Դարանագեցի վարդապետին իրեն համար գրած Աստուածաչունչին յիչատակարանները. Գրչագիր. իմ սեփականութիւն։*

ԴԻԲ. Biografia di sua beatitudine Abramo Pietro I patriarca di Cilicia e catolicos degli Armeni. *աչխ.* Serafino Davidian (*Սերովբէ վարդ. Դաւիթեան*), Cairo. *տպ.* Cambo, 1861. 16°. *եր.* 192։

ԵԶՆ. *Հաւաքածոյ վաւերագրոց յարաբերութեանց Հայոց ընդ Մեծին Պետրոսի. աչխ. Կարապետ Եզեանց. Պետերբուրգ, տպ. Ակադեմիոյ. 1898. 4°. եր. CXLIX+512։*

ԵՄԱ. *Մարգարէութիւն Եսայեայ։*

ԵՐՋ. *Ցովհաննու Երզնկացւոյ, Մեկնութիւն քերականի. գրչագիր վանաց Զարեհափան Ս. Աստուածածնի յԱնկիւրիա Գաղատիոյ։*

ԵՐՐ. *Ամենասուրբ Երրորդութիւն եկեղեցւոյս Քրիստոսի սեպհականեալ սպասուց գումարն ի սմա յայտնի լինի յիչատակաւ. 1807—1814. Կ-Պոլիս. 4°. Նօտրգիր. երես 19։*

ԵՐՑ. *Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և կովկասի Հայք. աչխ. Ալէքսանդր Երիցեանց. Թիֆլիս. տպ. Շարածէ և Մարտիրոսեան. 1894-1895. 4°. հատ. 2. եր. 658-592։*

ԵՓՐ. *Պատկերազարդ քնաչխարհիկ բառարան. աչխ. Հ. Մուքիաս վարդ. Եփրիկեան. Վենետիկ. տպ. Ս. Ղազար. 1898. 4°. հատոր Ա. երես 806։*

ՋԱՄ. *Հայոց եկեղեցւոյ պատմութիւն. աչխ. Աբրահամ Ջամիմեան. Նոր-Նախիջեւան. տպ. Ս. Աւագեան. 1808. 8°. հատ. 2. եր. 294+239։*

ՋԱՔ. *Ջաքարիա սարկաւագի պատմագրութիւն. Վաղարչապատ. տպ. Էջմիածնի. 1870. 8°. հատոր 3. երես 87+143+46։*

ԷՋՄ. *Պատկերացոյց հաւաքածոյ մանաւանդ հնութեանց Մայրաթոռոյ Ս. Էջմիածնի և չրջակայից. աչխ. Սահակ վարդ. Աստուածատուրեան. 4°. Պրակ Ա. Վաղարչապատ.*

տպ. Ս. Էջմիածնի. 1910. եր. 53։ Պրակ Բ. Երուսաղէմ. տպ. Ս. Յակոբեանց. 1913. երես 59։

ԷՔՍ. Աբրահամեան գովասանութիւն և չնորհակալութիւն սուրբ Աստուածածնի. աչխ. Յարութիւն Էքսէրճեան Բիւզանդացի սարկաւագ. բնագիր ձեռագիր. 24°. երես 257։ Սկիզբն՝ Սկիզբն իմ։

ԸՍՏ. եկեղեցական պատմութիւն, հանդերձ ազգային եկեղեցական պատմութեամբ. աչխ. Հ. Վարդան վարդ. Ըստակարեան. Վիէննա. տտ. Մխիթարեան. 1872. 8°. եր. ԽԲ+483։

ԹԷՈ. Ամենուն Տարեցոյցը, սկսեալ 1907. աչխ. Թէոդիկ (Լաբճինճեան). Կ. Պոլիս. տպ. Տէր-Ներսէսեան. 16°. երես իբր 400 իւրաքանչիւրը։

ԹԼԿ. Յովհաննէս Թլկուրանցին և իւր տաղերը. հրտ. Կարապետ Կոստանեանց. Թիֆլիս. տպ. Մարտիրոսեանց. 1892. 16°. եր. 59։

ԹՂԲ. Գիրք թղթոց. մատենագրութիւն նախնեաց. Թիֆլիս. տպ. Ռօտինեանց. 1901. 8°. երես 584։

ԹՈՐ. Թորոս Աղբար կամ Հայաստանի ճամբորդ. աչխ. Գաբրիէլին վարդ. Սրուանձտեանց. Կ. Պոլիս. տպ. Տնտեսեան. 1879. 12°. Հատոր 2. երես 341+488։

ԹՕՐ. երկաթէ դիմակով մարդը, Հայոց Աւետիք պատրիարքը. աչխ. Մարիուս Թօբէն. թրգ. Կարապետ Իւթիւճեան. Կ. Պոլիս. տպ. Մասիսի. 1870. 24°. երես 143։

ԺԱՄ. Ժամագիրք Հայաստանեայց ոսրբ եկեղեցւոյ. Կոստանդնուպոլիս. տպ. Յ. Գալֆեան. 1874. 12°. երես 650։

ԺՄԱ. Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցւոյ. Վենետիկ. տպ. Ս. Ղազար. 1860. 24°. երես 449։

ԺՄԳ. Աւետան ժամագիրք, սաղմոս և տօնացոյց. Նոր-Ջուղայ. տպ. Ամենափրկչի. 1642. 4°. երես 694։

ԺՈՂ. Բանք ժողովինկամ էկլիսիաստէս գիրք։

ԺՈՒ. Turquie, par J. M. Jouannin et par Jules Van-Gauer. Paris. տպ. Firmin-Didot. 1850, 8°. եր. 464։

ԼԷՕ. Հայկական տպագրութիւն, աչխ. Լէօ (Առաքել Բաբախանեանց), Թիֆլիս, տպ. Վրաց հրատ. ընկերութեան, 1901, 12°. հատ. 2, եր. 451+610։

ԼՈՅ. Լոյս, չարաթաթերթ եկեղեցապիտականք. աչխ. Բարգէն վարդ. Կիւլէսէրեան. Կ-Պոլիս. տպ. Վ. Մինասեան. 1905—1906. 4°. երես 1200 տարեկան։

ԼՈՒ. Լուսոյ, գրական հանդէս. աչխ. Գիւտ աւագ քահ. Աղանեանց. սկսեալ 1896. Տրփղիս. 8°. տպ. և երես տարբեր։

ԼՊԱ. Asie Mineure depuis les temps les plus anciens, par Ph. Le Bas. terminée par M. Cheron. Paris. տպ. Firmin-Dedot. 1863. 8°. երես 530։

ԽԱՋ. Խաչատուր արեղայի Ջուղայեցւոյ, Պատմութիւն Պարսից. հրտ. Բարգէն վարդ. Աղաւելեանց. Վաղարշապատ. տպ. Էջմիածնի. 1905. 8°. եր. 372։

ԽՋԿ. Գաւազանագիրք նախապատիւ և վերջագաս եպիսկոպոսաց, որք առաջնորդական պատուով նստեալ յաթոռ Ամենափրկչեան վանաց Նոր-Ջուղայ. աչխ. Յովհաննէս Ա. քահ. Խաչկեան. Կալկաթա. տպ. Խաչկեան. 1876. 8°. երես 136։

ԿԱԹ. Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս, և միութիւն նոցա ընդ Հռոմէական եկեղեցւոյ. աչխ. Աղեքսանդր արքեպ. Պալճեան. Վիէննա. տպ. Մխիթարեան. 1878. 8°. երես 334։

ԿԱԼ. Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռոմայ. աչխ. Կղեմէն վարդ. Կալանոս ի կարգէ Թէադինոսաց. հատոր Ա. պատմական. Romae. տպ. De Propaganda fide. 1690. 2°. երես 531։

ԿԱՄ. Կամենից. տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումինիոյ՝ հաւատչեայ յաւելուածովք. աչխ. Հ. Ղեւոնդ վարդ. Ալիշան. Վենետիկ. տպ. Ս. Ղազար. 1896. 4°. երես 276։

ԿԱՆ. Գիրք կանոնաց և դատաստանի, վերստին գաղափարեալ զգուչաւոր բաղդատութեամբ. գրչագիր Թղթեայ. Կ-Պոլիս. 1831. 2°. երես 373։ Սկիզբն Ս. Խաչ եկեղեցւոյ Իւսկիւտարի։

ԿԲՂ. Կանոն ձեռնադրութեան և օծման կաթողիկոսի. Վաղարշապատ. տպ. Ս. Էջմիածնի. 1870. 4°. եր. 21։

ԿԻՐ. Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, Համառօտ պատմութիւն. Վենետիկ. տպ. Մխիթարեան. 1865. 8°. երես 265։

ԿՈԼ. Կոլոտ Յովհաննէս պատրիարք. պատմական և բանասիրական ուսումնասիրութիւն. աչխ. Բարգէն վարդ. Կիւլէսէրեան. Վիէննա.

տպ. Մխիթարեան. 1904. 12⁰. երես 226։

ԿՈՍ. Թովմաս Մեծոփեցու յիշատակարանը. հրտ. կարապետ Կոստանեանց. Թիֆլիս. տպագ. Մարտիրոսեանց. 1892. 16⁰. եր. 88։

ԿՈՆ. Կոնսկ Հայոց աչխարհի, հանդէս ամսօրեայ ազգային և բարոյական լուսաւորութեան, սկսեալ 1860. աչխ. Մարկոս Աղաբէգեան. Տփղիս. տպ. Էնֆիաճեանց. 8⁰. երես իբր 900 տարեկան։

ԿՐԵ. Աբրահամ կաթողիկոսի կրեատցւոյ, պատմագրութիւն անձին իւրոյ և նատր չահին Պարսից. վաղարշապատ. տպ. Էջմիածնի. 1870. 8⁰. երես 129։

ԿՐԿ. Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ. Թիֆլիս. տպ. Ն Աղանեանց. 1909. 12⁰. երես 420։

ՀԱՑ. Հայապատում, պատմիչք և պատմութիւնք Հայոց. աչխ. Հ. Ղևոնդ վարդ. Ալիչան. Վենետիկ. տպ. Ս. Ղազարու. 1901. 4⁰. մասն 2. երես 142+652։

ՀԱՍ. Հասունեան քաղաքականութիւն, կրկնահինգամեայ պատմութիւն (աչխ. Հ. Գօղոս վարդ. Գօխճուէյրեան), հրտ. Ց. Ակէրեան. Տփղիս. տպ. Հ. Էնֆիաճեանց. 1868. 16⁰. եր. 528։

ՀԴՊ. Պատմութիւն հայերէն դպրութեան. նոր մատենագրութիւն. աչխ. Հ. Գարեգին վարդապետ Զարբհանալեան. Վենետիկ. տպ. Մխիթարեանց. 1905. 12⁰. երես 412։

ՀԷԹ. Հեթում պատմիչ Թաթարաց, և ժամանակագրութիւնք պարոն Հեթմոյ. Վենետիկ. տպ. Ս. Ղազար. 1842. 8⁰. երես 91։

ՀԻՆ. Հայկական հին դպրութեան պատմութիւն. Դ—ԺԳ դար. աչխ. Հ. Գարեգին վարդ. Զարբհանէլեան. Վենետիկ. տպ. Մխիթարեան. 1897. 12⁰. երես կԱ+822։

ՀՆՆ. Գիրզ պատմութեան սրբոյ և մեծի քաղաքին Աստուծոյ՝ Երուսաղէմի, և սրբոց տնօրինականաց տեղեաց. աչխ. Ծովհաննէս Հաննա վարդ. Գործակալ վերաձայնեալ. Կոստանդնուպոլիս. տպ. Աստուածատուրոյ. 1731. 8⁰. երես 376։

ՀՌՄ. Թուղթ Պօղոսի առ Հռոմայեցիս։

ՂԱՋ. Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան Հայ կեանքի. աչխ. Հ. Ադոնց վարդ. Ղազիկեան. Վենետիկ. տպ. Ս. Ղազար. 1909—1912. հատոր Ա. 4⁰. էջ 2080։

ՂԿՍ. Աւետարան ըստ Ղուկասու։

ՂՐՄ. Ոտանաւոր Մարտիրոս Ղրիմեցիի. գրչագիր. 1652—1656. սեփականութիւն Անկիւրիոյ կարմիր վանքին. Բաթգէն եպիս. կիւլէսէրեանէ հաղորդուած։

ՃԱՀ. Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ Ճանկալի. աչխ. Ղազար վարդ. Ճահկեցի (Ջահկեցի). Կոստանդնուպոլիս. տպ. Մխ. Աստուածատուրոյ. 1734. 4⁰. երես 304։

ՃԱՇ. Ճաշոց գիրք Հայաստանեայց առաքելական Ս. եկեղեցւոյ. Երուսաղէմ. տպ. Ս. Ցակոբեանց. 1873. անծալ։ հատոր 2. երես 418+398։

ՃՆՏ. Առձեռն ընդհանուր ժամանակագրութիւն հին ու նոր տէրութեանց. աչխ. Հ. Ներսէս վարդ. Ճնտոյեան. Վենետիկ. տպ. Մխիթարեան. 1880. 16⁰. երես 116։

ՄԱՂ. Մազաքեայ արեղայի, Պատմութիւն վանց ազգին Նետողաց. Պետրբուրգ. տպ. Կայսերական Ճեմարանի. 1870. 8⁰. երես 64։

ՄԱՇ. Գիրք՝ Մեծ Մաչտոց կոչեցեալ. Կոստանդնուպոլիս Քիւրքճիեան. տպ. Գ. Ծովհաննէսեան. 1807. 4⁰. երես 426։

ՄԱՏ. Աւետարան ըստ Մատթէոսի։

ՄԱՐ. Աւետարան ըստ Մարկոսի։

ՄԵԼ. Պատմութիւն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ. աչխ. Մելքիսեդեկ վարդ. Մուրատեան. Երուսաղէմ. տպ. Ս. Ցակոբեանց. 1872. 12⁰. եր. 640։

ՄԵՄ. Պատմութիւն Լանկթամուրայ և յաջորդաց իւրոց. արարեալ Թովմա վարդապետի Մեծոփեցւոյ. հրտ. Կարապետ վարդ. Շահնազարեան. Փարիզ. տպ. Կ. Վ. Շահնազարեան. 1860. 16⁰. երես 134։

ՄԻԽ. Ժամանակագրութիւն Միխայէլի Ասորւոց պատրիարքի. Երուսաղէմ. տպ. Ս. Ցակոբեանց. 1871. 16⁰. երես 526։

ՄԽՒ. Վարք Մխիթարայ աբբայի Սեբաստացւոյ. աչխ. Հ. Ծովհաննէս վարդ. Թորոսեան. Վենետիկ. տպ. Ս. Ղազարու. 1901. 8⁰. եր. 489։

ՄԿՐ. Պարսպայք հին և նոր գրուածոց Հայոց. հաւաքեաց Ծովհաննէս Ա. քահ. Մկրտեան. Զեռագիր. 4⁰. եր. 200. սեփականութիւն Մկրտեան մատենադարանին։

ՄՆՍ. Sacrorum conciliorum nova et amplissima collectio. վերջին հրտ. Joannes Dominicns Mansi. Venetiis. տպ. A. Zatta. 1770—85. անծալ. հատոր 30. էջ իբր 1300 իւրաքանչիւր։

ՄՈՎ. Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ պատմութիւն. աչխ. Ծուսիկ վարդ. Մովսիսեան. Վաղարշապատ. տպ. Էջմիածնի. 1884. 8°. եր. էդ+381։

ՄՍՐ. Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմէոնէ մինչեւ ցՈվհաննէս Ը. աչխ. Մսեր մագիստրոս Մսերեանց. Մոսկուա. տպ. Հ. Մսերեանց. 1876. 8°. եր. 306։

ՄՏՆ. Հայկական մատենագիտութիւն. աչխ. Հ. Գարագին վարդ. Զարբհանէլեան. Վենետիկ. տպ. Մխիթարեան. 1883. 12°. երես 754։

ՅԱԿ. Յակոբոս առաքելոյ Թուղթ կաթողիկեայց։

ՅԱՁ. Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, Յաճախապատում ճառք և աղօթք. Վենետիկ. տպ. Ս. Ղազար. 1838. 8°. երես 723։

ՅԱՅ. Գիրք որ կոչի Յայսմաւուրք. Կոստանդնուպոլիս. տպ. Մկ. Մարսուանցի. 1730. անծալ. երես 723։

ՅԱՍ. Յայսմաւուրք ըստ օրինակի Տէր Իսրայէլի. Կոստանդնուպոլիս. տպ. Պ. Աբրահեան. 1834. անծալ. հատոր 2. երես 291+332։

ՅԻՇ. Յիշատակարան, Հայ երեւելիներու կենսագրութիւնները, լուսանկարները ևայլն. 1512—1912. աչխ. Վահան Զարդարեան. Կ-Պոլիս. տպ. Պապիկեան. 1910—11. հատոր 2. երես 376։

ՅՅՏ. Գիրք Յայտնութեան Ովհաննու։

ՅՇԿ. Ծուչիկ Հայրենեաց Հայոց. աչխ Հ. Ղեւոնդ վարդ. Ալիշան. Վենետիկ. տպ. Ս. Ղազար. 1869—70. 16°. հատ. 2. երես 537+573։

ՅՇՏ. Յիշատակարան ճաշոցին. գրեալ յԱբրահկիր ի Մինաս սարկաւագէ ի 1446. բոլորգիր և մեծագիր, և նուիրեալ տէր կարապետ կաթողիկոսին Սսոյ։ Մեփհականութիւն Անտոնեան մատենադարանին։

ՅՇՐ. Ծուշարձան, գրական ժողովածոյ առթիւ հարիւրամեայ յոբելեանի Մխիթարեան միաբանութեան ի Վիէննա, և քսանևհինգամեայ հայ չրջանի Հանդէս Ամսօրեայ ուսումնասիրութեր. Վիէննա. տպ. Մխիթարեան. 1911. 4°. եր. 435։

ՅՈԲ. Մխիթարեան յոբելեան. Վենետիկ. տպ. Ս. Ղազար. 1901. 8°. եր. 232։

ՅՈՀ. Աւետարան ըստ Ովհաննու։

ՆԱՂ Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը, հրտ. Կարապետ Կոստանեանց. Վաղարշապատ. տպ. Էջմիածնի. 1878. 12°. երես ծ+57։

ՆՈՐ. Հայոց նոր վկաներք. 1155—1843. գիտական հրատարակութիւն. աչխ. Ծ. Մանանդեան և Հ. Ածառեան. Վաղարշապատ. տպ. Ս. Էջմիածնի. 1903. 8°. էդ+800։

ՆՐՏ. Recueil d'actes internationaux de l'empire Ottoman. աչխ. Gabriel effendi Noradounghian. Paris. տպ. Cotillon. 1897-1903. հատ. 4. եր. 413+513+577+659։

ՇԱԿ. Շիրակ, տեղագրութիւն պատկերացոյց. աչխ. Հ. Ղեւոնդ վարդ. Ալիշան. Վենետիկ. տպ. Ս. Ղազար. 1881. 4°. երես 192։

ՇԱՀ. Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառաց Այրարատոյ. աչխ. Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեանց. Էջմիածին. տպ. Ս. կաթողիկէի. 1842. 8°. հատ. 2. երես 293+410։

ՇԱՐ. Շարակնոց. Ամսեղոտամ. տպ. Մ. Վանանդեցի. 1685. 17°. երես 778։

ՇՀՊ. Գրաւոր վկայութիւն Տ, Յովհաննէս Շահպազեան Ծերունի աւագերիցուն Սամաթիոյ. 1909 Հոկտեմբեր 31։ Մեփհականութիւն իմ։

ՇՐԿ. Շարական հոգեւոր երգոց սուրբ և ուղղափառ եկեղեցւոյս Հայաստանեայց. Կոստանդնուպոլիս. տպ. Ծ. Միհէնտիսեան. 1853. 16°. երես 879։

ՇՕՓ. Russie, par M. Chopin, Paris. տպ. Firmin-Didot. 1841. 8°. եր. 673։

ՈԽՍ. Ուխտանէսի Եպիսկոպոսի, պատմութիւն Հայրապետաց և Թագաւորացն Հայոց և բաժանման Վրաց. Վաղարշապատ. տպ. Էջմիածնի. 1871. 8°. հատ. 2. եր. 257 բովանդակ։

ՈՒՌ. Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ, և շարունակութիւն Գրիգորի Երիցու. Երուսաղէմ. տպ. Ս. Յակոբեանց. 1869. 16°. երես 597։

ՉՍՄ. Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աչխարհի մինչեւ ցամին 1784. աչխ. Հ. Միքայէլ վարդապետ Չամչեանց. Վենետիկ, տպ. Վ. Վազվազեանց. 1784—86. 4°. հատոր 3. երես 2975 բովանդակ։

ՉԷԼ. Երեմիա Չէլէպիի Քէօմիւրճեան, Ստամպօլայ պատմութիւն. հրտ. տօքթ. Վահրամ Ծ. Թորգոմեան. Վիէննա. տպ. Մխիթարեան 1913. 12°. եր. 412։

ՉՄՉ. Վահան Հաւատոյ, յորում հաստատի ուղղափառութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ, սկսեալ ի սրբոյն Գրիգորէ Հայաստանեայց Լուսաւորչէ մինչեւ ցայսօր. աչխ. Հ. Մի-

քայէլ վարդ. Ջամչեան. յամին 1776. գրբ-չագիր նօտրգիր. կ-Պոլիս 1816. 4°. եր. 924։ Մխիթարեանց մատենադարանի Անտոնեանց։

ՁՕՊ. Նաղաշ Յովնաթան աշուղը, և Յովնաթան Յովնաթանեան նկարիչը. աչխ. Արշակ Զօ-պանեան. Փարիզ. տպ. Ներսէսեան. 1910. 8°. եր. 128։

ՊԱՍ. Ճիշատակարան Պատմաճեան Գրիգոր պատրիարքի. հրտ. Բարգէն ծ. վարդ. Կիւլէ-սէրեան. Պարիս. տպ. Բանասէրի, 1908. 8°. եր. 149։

ՊԷԼ. Dictionnaire universel et complet des conciles généraux et particuliers. par l'abbé Ad.-Ch. Peltier. Paris. տպ. Migne. 1847. 4°. հատոր 2. էջ 2755 բովանդակ։

ՊԷՆ. Dictionnaire de géographie saerée et ecclésiastique. par M. Benoist. Paris. տպ. Migne. 1854—1862. 4°. հատոր 3. երես 3772 բովանդակ։

ՊԷՐ. Պատմութիւն Հայոց. աչխ. Աւետիս վարժապետ Պէրպէրեան. Կոստանդնուպոլիս. տպ. Պ. Քիրիչճեան. 1871. 4°. եր. 611։

ՊԼՃ. Աթոռ սրբոյն Պետրոսի առաքելապետք. աչխ. Թովմաս Դուլիէլմաս Ակայս. Քրգ. Հ. Ալէքսանդր վարդ. Պալճեան. Վիէննա. տպ. Պաչտպան Ս. Ատտուածածնի. 1853. 8°. երես 288։

ՊՏՄ. Ճաղագս ի Կոստանդնուպոլիս եղեալ չփոթի և խռովութեան ի թուին Հայոց ՌՄԽԹ պատմութիւն. նօտրգիր. Կոստանդնուպոլիս. 1800. 16°. եր. 64։ Նուէր Գրիգոր քահանայի Ճէպէճեան։

ՊՐԹ. Dictionnaire universel historique et comparatif de toutes les religions du monde. par l'abbé Bertrand. Paris. տպ. Migne. 1848. 4°. հատոր 4. էջ 5176 բովանդակ։

ՋԱԼ. Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի. աչխ. Եսայի Աղուանից կաթողիկոս Հասան-Ջալալեանց. Երուսաղէմ. տպ. Ս. Յակոբ-եանց. 1867. 24°. երես ֆբ+58։

ՋԱՄ. Ջամբռ գիրք, որ կոչի Ճիշատակարան արձանագուցիչ. աչխ. Սիմէոն կաթողիկոս Երևանեցի. Վաղարչապատ. տպ. Ս. էջմիածին. 1873. 8°. եր. 304։

ՌԱՄ. Հետազօտութիւնք նախնեաց ամկօրէնի վրայ. աչխ. Հ. Ղեւոնդ վարդ. Յովհաննեան, Վիէննա, տպ. Մխիթարեան, 1897, 12°. եր. 522։

ՌԻՄ. Egypte moderne, période de la domination francaise, par Amédée Ryme. Paris. տպ. Firmin-Didot. 1872. 8°. երես 215։

ՍԱՂ. Գիրք Սաղմոսաց Դաւթի։

ՍԱՄ. Սամուէլի քահանայի Անեցւոյ, հատուածմունք ի գրոց պատմագրաց. հրտ. Արշակ Տէր-Մի-քէլեան, Վաղարչապատ, տպ. էջմիածնի, 1893. 8°. երես լ+301։

ՍԵՂ. Compeudio storico di memorie cronologiche, concerneuti la religione e la morale della nazione Armena, suddita dell' impero Ottomano, աչխ. marchese Giovanni di Serpos. Venezia, տպ. Palese, 1766—1780. 8°. հատ. 3. եր. 509+494+629։

ՍԵՎ. Dictiounaire de patrologie, ou répertoire des écrivains des douze premiers siècles de l'Eglise, par l'bbé A. Sevestre. Paris. տպ. Migne. 1855, 4°. հատ. 4, էջ 6216։

ՍԵՐ. Dissertazione polemico-critica sopra due dubbi di coscienza concernenti gli Armeni cattolici sudditi dell' impero Ottomano, presentati alla saera congregazione di Propaganda. աչխ. marchese Giovanni di Serpos. Venezia, տպ. Palese. 1783. 4°. եր. 256։

ՍԻՄ. Տօնացոյց նախապէս կարգեալ սրբոյն Սահակայ, արդէն վերստին նորոգմամբ յերկուս հատորս բաժանեցեալ. աչխ. Սիմէոն կաթողիկոս Երեւանեցի. էջմիածին. տպ. Ս. Գ. Լուսաւորչի. 1774. 16°. եր. 564։

ՍԻՆ. Սիսական, տեղեկագրութիւն Սիւնեաց աչխարհի. աչխ. Հ. Ղեւոնդ վարդ. Ալիշան, Վե-նետիկ, տպ. Ս. Ղազար, 1893, 4°. եր. 362։

ՍԻՍ. Սիսուան, համագրութիւն Հայկական կի-լիկիոյ, աչխ. Ղեւոնդ վարդ. Ալիշան, Վե-նետիկ, տպ. Ս. Ղազար, 1855, 4°. եր. 592։

ՍԿԵ. Պատասխանիք Մխիթարայ քահանայի Սկեւ-ռացւոյ, յաղագս համապատուութեան եր-կոտասան առաքելոց. Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1865, 16°. երես 88։

ՍՄԲ. Տարեգիրք արարեալ Սմբատայ սպարապե-տի Հայոց, որդւոյ Կոստանդնի կոմսին Կո-ռիկոսայ. հրտ. Կարապետ վարդ. Շահնա-զարեանց, Փարիզ, տպ. Կ. Վ. Շահնազար-եան, 1859, 16°. երես 180։

ՍՈՓ. Սոփերք Հայկականք, հատուածոյ մատե-նագրութեանց նախնեաց. Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 1853—62. 32°. հատ. 22։

ՍՏՈ. *Համառօտ պատմութիւն երուսաղէմի և ստորագրութիւն սրբազան տեղեաց. աչխ. Խորէն վարդ. Մխիթարեան. Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1867, 16⁰. երես 245։*

ՍՐԳ. *Սարգիս դպրի Սարաֆ-Յովհաննէսեան. Հաւաքածոյ գրութիւնք. բնագիր ձեռագիր. 16⁰. հատ. 4. եր. իբր 350 իւրաքանչիւրը։ Մխիթարեանութիւն Վահրամ Ց. Թորգոմեան բժշկապետի։*

ՎԱՀ. *Վահրամայ բարեունւոյ ոտանաւոր պատմութիւն Ռուբինեանց. Փարիզ, տպ. Կ. Վ. Շահնազարեան, 1859, 16⁰ երես 68։*

ՎԱՂ. *կաթողիկէ մայր եկեղեցի Վաղարշապատայ, ընդ չորից վանօրէից նորին. Վաղարշապատ, տպ. Էջմիածնի, 1875, 8⁰. երես 56։*

ՎԱՐ. *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, յուսաբանեալ, Վենետիկ, տպ. Ս. Ղազար. 1862, 8⁰. երես 184։*

ՎԵՆ. *Հայ-Վենետ, կամ յարբունչութիւնք Հայոց և Վենետաց. աչխ. Հ. Ղեւոնդ վարդ. Ալիշան, Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 1896, 16⁰. երես 555։*

ՎԵՐ. Arabie. par Noël des Vergers. Paris. *տպ.* Firmin-Didot. 1847, 8⁰. *երես* 624։

ՎՐՔ. *Լիակատար վարք և վկայաբանութիւնք սրբոց. աչխ. Հ. Մկրտիչ վարդ. Աւգերեան, Վենետիկ, տպ. Ս. Ղազար. 1810—1815, 16⁰. հատոր 12, երես 6102 բովանդակ։*

ՏԱԹ. *Գիրք հարցմանց սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն. Կոստանդնուպոլիս, տպ. Մհ. Աստուածատրոյ, 1729, 4⁰. երես 806։*

ՏԱՃ. *Տաճար, ժողովրդային չարաթաթերթ, կօնսնական, ազգային և գրական. աչխ. Զարմայր քահ. Կէզիւրեան, սկսեալ 1910, Կ-Պոլիս, 4⁰. երես իբր 500 տարեկան։*

ՏԱՇ. *Ծուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիէննա. աչխ. Հ. Յակովբոս վարդ. Տաչեան, Վիէննա, տպ. Մխիթարեան, 1895, 4⁰. երես 1163։*

ՏԵՂ. *Տեղեկագիր Հայոց Մեծաց, աչխ. Հ. Ղեւոնդ վարդ. Ալիշանեան, Վենետիկ, տպ. Ս. Ղազար. 1855, 4⁰. երես 105։*

ՏԻՊ. *Տիպ ու տառ, աչխ. Թէոդիկ (Լաբճինճեան), Կ-Պոլիս, տպ. Վ. և Հ. Տէր-Ներսէսեան, 1912, 8⁰. երես 193։*

ՏԻՒ. Tartarie, Beloutchistan, Boutan et Népal, par M, Dubeux et V. Valmont. Prris. *տպ.* Firmin-Didot. 1848, 8⁰. *եր.* 388։

ՏՅՈ. *Պատմութիւն Նոր-Ջուղայու որ յԱսպահան. աչխ. Յարութիւն Թ. Տէր-Յովհաննէսեանց. Նոր-Ջուղա. տպ. Ամենափրկչեան. 1880—1881. 8⁰. հատ. 2. եր. 497+317։*

ՏՆԱ. *Գիրք որ կոչի տօնացոյց. Կոստանդնուպոլիս. տպ. Յովհաննէսի և Պօղոսի. 1785. 16⁰. եր. 389։*

ՏՊԱ. *Պատմութիւն հայկական տպագրութեան, սկզբնաւորութենէն մինչև առ մեզ. Վենետիկ տպ. Մխիթարեան. 1895. 12⁰. երես 284։*

ՏՊԷ. La Perse, par Louis Dubeux. Paris. *տպ.* Firmin-Didot· 1841. 8⁰. *եր.* 491։

ՏՕՆ. *Տօնացոյց ըստ կարգադրութեան Սիմէոնի կաթողիկոսի. Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1868, 16⁰. հատոր 2, երես 534։*

ՓԱՓ. *Պատմութիւն եկեղեցական հաւաքեալ յարժանահաւատ մատենագրաց. աչխ. Հ. Իգնատիոս արքեպ. Փափազեան. Վենետիկ. տպ. Ս. Ղազար. 1848. 8⁰. եր. 1015։*

ՓԵԲ. Dictionnaire hagiographique, par l'abbé Pétin. Paris. *տպ.* Migne. 1850, 4⁰. *հատոր* 2, *էջ* 3160 *բովանդակ։*

ՓԻՐ. *Նօտարք Հայոց, հրտ. Ղեւոնդ վարդ. Փիրղալէմեան, Կ-Պոլիս, տպ. Ն. Պէրպէրեան, 1888, 8⁰. երես 232։*

ՔՅՀ. *Միխայէլի Ասորւոց պատրիարքի, Յաղագս քահանայութեան. Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1871, 16⁰. երես 45։*

ՔՕՍ. *Հայք ի Զմիւռնիա և ի չրջակայս. աչխ. Հ. Յակոբ վարդ. Քօսեան, Վիէննա, տպ. Մխիթարեան. 1891, 12⁰. հատոր 2, երես 372+165։*

ՕԶՆ. *Յովհաննէս Իմաստասիրի Օձնեցւոյ, մատենագրութիւնք. Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 1833, 8⁰. երես 194։*

ՕՐՍ. *Ընդարձակ Օրացոյց ազգային Հիւանդանոցի, սկսեալ 1900, Կ-Պոլիս, տպ. Մատթէոսեան, 16⁰. երես իբր 450 իւրաքանչիւրը։*

ՕՐՓ. *Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց. Փարիզ, տպ. Կ. Վ. Շահնազարեանց, 1859, 16⁰. հատ. 2, եր. 346+371։*

ՖԱՄ. Région Caucasienne. par César Famin. Paris. *տպ.* Firmin-Didot. 1862. 8⁰. *եր.* 48։

ԱՋԳԱՊԱՏՈՒՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ

ՆԻԿԵՐԻՈՒ ՅՈՒՆԱԿԸ

8. ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. ՈՍԿԵՐԵՐԻՑԻ
(1221—1267)

1101. Ընտրութիւն և նախընթաց.
1102. Փիլիպպոսի թագաւորելը.
1103. Թաթարներ և վկաներ.
1104. Փիլիպպոս գահազուրկ.
1105. Հեթումի թագաւորելը.
1106. Առաջին ջանքերը.
1107. Զապէլի ընթացքը.
1108. Զապէլի նկարագիրը.
1109. Լամբրոնացւոց խլրտումը.
1110. Աթոռական խնդիրը.
1111. Յոյներու հետ.
1112. Բելլովակեցիին գրածները.
1113. Թաթարական արչաւանքներ.
1114. Վանականի գերութիւնը.
1115. Հեթում և Թաթարներ.
1116. Հեթում և Սելճուքներ.
1117. կաթողիկոս և Վարդան.
1118. Սիսի գումարումը.
1119. Կանոնական գլուխներ.
1120. Բարեկարգական գլուխներ.
1121. Բարոյական գլուխներ.
1122. Քահանայից գլուխներ.
1123. Ձիջողական գլուխներ.
1124. Վարդան նուիրակ.
1125. Մբռատ պատգամաւոր.
1126. Յովսէփ Արտազեցի.
1127. Դաւիթ Մարեցի.
1128. Հոգւոյն Սրբոյ խնդիրը.
1129. Դաւանական գրուած մը.
1130. Հայոց կարծիքը.
1131. Յարաբերական կացութիւն.
1132. Հեթում խաչին մօտ.
1133. Ուղեւորիլը և դարձը.
1134. Խաչին չնորհները.
1135. Ցունաց հետ բանակցութիւն.
1136. Հեթում ի Հայաստան.
1137. Հեթում ի Կիլիկիա.
1138. Հեթում ի Միջագետք.
1139. Զանազան դիպուածներ.
1140. Պապին նուիրակը.
1141. Վարդան խաչին մօտ.
1142. Մաւխի պատերազմը.
1143. կաթողիկոսին մահը.
1144. Իւր ուղղութիւնը.
1145. Վանական վարդապետ.
1146. Վանականի աչակերտներ.
1147. Մխիթար Սկեւռացի.
1148. Երկը Յովհաննէսներ.
1149. Ստեփանոս Տէրյուսկանորդի.
1150. Հասան Ջալալ.
1151. Ուրիշ նահատակներ։

8. ՅԱԿՈԲ Ա. ԿԱԹՈՒԿՑԻ
(1268—1286)

1152. Ընտրութիւն ու նախընթաց.
1153. Արդիւնք և արժանիք.
1154. Լեւոնի գերեզարձը.
1155. Հեթումի մահը.
1156. Լեւոնի օծումը.
1157. Քաղաքական կացութիւն.
1158. Լուզդունի ժողովը.
1159. Օրբելեանք և Տարսայիճ.
1160. Եգիպտացւոց արչաւանքը.
1161. Յակոբի ընթացքը.
1162. Լեւոն ու Տաթեւ.
1163. Յակոբի մահը.
1164. Ստեփանոս Օրբելեան.
1165. Սիւնեաց ախոռներ.
1166. Մբռատ ու Վահրամ.
1167. Ուրիշ մատենագիրներ։

8. ԿՈՍՏԱՆԴԻՆ Ե. ԿԱԹՈՒԿՑԻ
(1286—1289)

1168. Ընտրութեան պարագաները.
1169. Կեսարացիէն տարբեր է.
1170. Կոստանդինի ուղղութիւնը.
1171. Ստեփանոսին պատիւներ.
1172. Տաթեւ և Նորավանք.
1173. Ստեփանոսի նեղութիւնք.
1174. Ստեփանոսի յաջողութիւնք.
1175. Օրբելեանց գործեր.
1176. Հեթում վանական.

1177. Փրանկիսկոս Ասիզացի.
1178. Փրանկիսկեան միաբանու թիւն.
1179. Դոմինիկոս և Դոմինիկեանք.
1180. Նիկողայոսի թուղթերը.
1181. Կատուկեցին և Հեթում.
1182. Կատուկեցին՝ գահընկէց.
1183. Ժողովի պատուիրակներ.
1184. Կաթողիկոսին համակերպիլը.
1185. Արեւելեայց ընթացք։

8. ՍՏԵՓԱՆՈՍ Գ. ՀՈՒՐԿԱԼԱՑԻ
(1290—1293)

1186. Ընտրութեան պարագաները.
1187. Լատիններու հետանալը.
1188. Օրթելեանք և Թաթարներ.
1189. Թաթարաց հետ.
1190. Ստեփանոսի ընթացքը.
1191. Մռազատիկի խնդիրը.
1192. Հռոմկլայի առումը.
1193. Գերութիւնք և աղէտք.
1194. Արկածին չուրջը.
1195. Ստեփանոսի մահը։

8. ԳՐԻԳՈՐ Է. ԱՆԱՒԱՐՉԱՑԻ
(1293—1307)

1196. Կաթողիկոս ըլլալը.
1197. Անձնական հանգամանք.
1198. Ալ՛ին դարձը.
1199. Կատուկեցին և սրբարաններ.
1200. Կատուկեցին և Սկեւռա.
1201. Հեթումի կրօնաւորիլը.
1202. Անաւարզեցին ծրագիրը.
1203. Աղթամարի արձակումը.
1204. Առաջին քայլերը.
1205. Զանազան կէտեր.
1206. Շարականներ և ասներ.
1207. Գործադրելու ջանքեր.
1208. Կիլիկիոյ արքունիքը.
1209. Կաթողիկոս և թագաւոր.
1210. Սմբատ թագաւոր.
1211. Ամուսնական խնդիր մը.
1212. Կոստանդին և Սմբատ.
1213. Հեթումի նկարագիրը.
1214. Լեւոն Գ թագաւոր.
1215. Անաւարզեցին և Արեւելեայք.
1216. Կոստանդին կեռարացի.
1217. Սիւնեցոց խորհուրդը.
1218. Օրթելեանի նամակը.
1219. Անընդունելի կէտեր.
1220. Օրթելեանի ընթացքը.
1221. Օրթելեանի մահը.
1222. Անաւարզեցիի նամակը.
1223. Յովհաննէս և Զաքարիա.
1224. Բաժակին ջուրը.
1225. Նամակին միացորդը.
1226. Նամակին՝ զօրութիւնը.
1227. Իւչինչ դիպուածներ.
1228. Օամանեանց ակիզբը.
1229. Անաւարզեցիին մահը.
1230. Ասոյ ժողովականք.
1231. Եպիսկոպոսաց թիւը.
1232. Վարդապետք և իշխանք.
1233. Ասոյ որոշումները.
1234. Ժողովին նպատակը.
1235. Ժողովին անզօրութիւնը.
1236. Ընդդիմադիր չարժում.
1237. Արքայազուն եկեղեցականք.
1238. Մատենագիր վարդապետներ.
1239. Ներսէս Մեծի նչխարքը.
1240. Յովհաննէս Երզնկացի.
1241. Եսայի Նչեցի.
1242. Ստեփանոս Օրթելեան.
1243. Գրիգոր Բալուեցի.
1244. Կիրակոս Շատիկցի։

8. ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ. ԿՕՍԱՐԱՑԻ
(1307—1322)

1245. Կեսարացին կատուկեցի չէ.
1246. Կեսարացիին ուղղութիւնը.
1247. Հեթում և Լեւոն.
1248. Հեթումի նկարագիրը.
1249. Օշին և Ալինախ.
1250. Օշինի ընթացքը.
1251. Օշինի ջանքերը.
1252. Ժամանակին դէպքերը.
1253. Ատանայի ժողովը.
1254. Ժողովին ներկաները.
1255. Բաժակին ջուրը.
1256. Ուրիչ որոշումներ.
1257. Ժողովին նչանակութիւնը.
1258. Տարեգրութիւններ միացած.
1259. Յովհաննա և Ալինախ.
1260. Եւրոպացւոց դիմումներ.
1261. Երուսաղէմի աթոռը.
1262. Երուսաղէմի պատրիարքներ.
1263. Առաջին գործերը.
1264. Կոտորածներ և աւերածներ.
1265. Օշինի մահը.
1266. Օշին խնամակալ.

1267. *Կոստանդինի մահը.*
1268. *Գրիգոր կարնեցի։*

8. ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ. ԼԱՄՐՈՆԱՑԻ
(1323—1326)

1269. *Նախընթացն ու միտումները.*
1270. *Կաթողիկոս և խնամակալ.*
1271. *Կաթողիկոսին մահը։*

8. ՅԱԿՈԲ Բ. ԱՆԱՒԱՐՉԱՑԻ
(1327—1341)

1272. *Նախընթացն ու միտումները.*
1273. *Յովհաննէս Քռնեցի.*
1274. *Ունիթոր միաբաններ.*
1275. *Հակառակ ջանքերը.*
1276. *Լեւոնի ձեռնարկները.*
1277. *Լատինամոլ ձգտումներ.*
1278. *Քռնեցիին ցուցակը.*
1279. *Պաղտն և Պէկ ունիթորներ.*
1280. *Հայեգիպտական հաչտութիւն.*
1281. *Աղթամարի աթոռը.*
1282. *Ունիթորներ և երուսաղէմ.*
1283. *Յակոբի հրաժարիլը.*
1284. *Հրաժարելուն պարագաները.*
1285. *Ամենաւազ Դերջանցի.*
1286. *Մխիթար Սասունցի։*

8. ՄԽԻԹԱՐ Ա. ԿԻՒՆԻՐՑԻ
(1341—1355)

1287. *Նախընթացն ու նպատակը.*
1288. *Մոլորութեանց ցուցակ մը.*
1289. *Լեւոնի մահը.*
1290. *Լուսինեանց թագաւորելը.*
1291. *Սսոյ գումարումը.*
1292. *Գրութեան ոճը.*
1293. *Առարկութիւնք* 1—5.
1294. » » 6—12.
1295. » » 13—19.
1296. » » 20—33.
1297. » » 34—44.
1298. » » 45—56.
1299. » » 57—65.
1300. » » 66—74.
1301. » » 75—78.
1302. » » 79—87.
1303. » » 88—89.
1304. » » 90—99.
1305. » » 100—109.
1306. » » 110.
1307. » » 111—117.
1308. *Ընդհանուր տեսութիւն.*
1309. *Գուիտոն և Ջիւան.*
1310. *Գուիտոնի ընթացքը.*
1311. *Նոր պարագաներ.*
1312. *Քննութիւն և խոստում.*
1313. *Լեւոն Ջիւանեան.*
1314. *Մխիթարի նոր ձիգերը.*
1315. *Մխիթարի մահը։*

8. ՅԱԿՈԲ Բ. (դարձեալ)
(1355—1359)

1316. *Նորէն կաթողիկոս.*
1317. *Իւր ուղղութիւնը.*
1318. *Ունիթորներ վերակազմուած.*
1319. *Յակոբի մահը.*
1320. *Կիրակոս և Սարգիս։*

8. ՄԵՍՐՈՊ Ա. ԱՐՏԱՋԵՑԻ
(1359—1372)

1321. *Ընտրութիւնն ու ընթացքը.*
1322. *Սսոյ նոր ժողովը.*
1323. *Կոստանդին Բաղդինեան.*
1324. *Կոստանդին Հեթումեան.*
1325. *Քաղաքական դարձուածներ.*
1326. *Նորէն դիմումներ.*
1327. *Մեսրոպի մահը.*
1328. *Մեսրոպի օրով։*

8. ԿՈՍՏԱՆԴԻՆ Ե. ՍՍԵՑԻ
(1372—1374

1329. *Ընտրութեան պարագաներ.*
1330. *Լեւոնի հրաւէր.*
1331. *Հեթումեան սպանուած.*
1332. *Լեւոն թագաւոր.*
1333. *Տեղակալներու ատեն.*
1334. *Լեւոնի գալուստը.*
1335. *Կոստանդինի մահը։*

8. ՊՕՂՈՍ Ա. ՍՍԵՑԻ
(1374—1382)

1336. *Ընտրութիւն և ծագում.*
1337. *Լեւոնի հաւնիլը.*
1338. *Օձումի խնդիրը.*
1339. *Նոր յարձակումներ.*
1340. *Հայոց դիմադրութիւնը.*
1341. *Լատիններու դաւը.*
1342. *Սիսը անձնատուր.*
1343. *Լեւոն անձնատուր.*
1344. *Հայերու ընթացքը.*
1345. *Քաղաքական տեսութիւն.*
1346. *Գերիներ և գերեզմարձ.*
1347. *Թագաւորի աղօթքը.*
1348. *Նոր կացութիւն.*

1349. Երկրին վիճակը.
1350. Ունիթորներու դէմ.
1351. Յովհաննէս Որոտնեցի.
1352. Սարգիս Ապրակունեցի..
1353. Մաղաքիա Դրիմեցի։

8. ԹԷՈԴՈՐՈՍ Ա. ԿԻԼԻՆԵՑԻ
(1382—1392)

1354. Ընտրութեան հաստատութիւն.
1355. Լեւոնի համար ջանքեր.
1356. Լեւոն ազատ.
1357. Նոր վանքեր.
1358. Լենկթիմուրի արշաւանքը.
1359. Դրիմեցիի մահը.
1360. Դարձեալ Լենկթիմուր.
1361. Ծուազատիկ չեղաւ.
1362. Լենկթիմուրի յաղթութիւը.
1363. Մշեցի Քաջունին.
1364. Ստեփանոս Սերաստացի.
1365. Վասպուրականի կոտորածը.
1366. Որոտնեցիի մահը.
1367. Տաթեւացին կը յաջորդէ.
1368. Սուխարու վանքը.
1369. Ուրիշ վարդապետներ.
1370. Աւազ Բաղիշեցի.
1371. Եղիսաբեթ Խառաբաստեցի.
1372. Հոմէական միութիներ.
1373. Թէոդորոսի սպանութիւնը։

8. ԳԱԲՐԻԷՑ Ա. ԿԻԼԻՆԵՑԻ
(1393—1404)

1374. Նախընթացն ու պաշտօնը.
1375. Կարապետները երկու չեն.
1376. Զաքարիա Աղթամարցի.
1377. Լեւոնի մահը.
1378. Ուղղափառ վարդապետներ.
1379. Տաթեւացիին գործերը.
1380. Ապրակունեցիին մահը.
1381. Վարդան Հոդոցեցի.
1382. Յովհաննէս Մեծոփեցի.
1383. Ալաթեցին և ուրիշներ.
1384. Թախտարներ և Թիւրքմէնները.
1385. Լենկթիմուր կը յառաջէ.
1386. Օսմանեանք և Հայեր.
1387. Ասեղտոց գաղթելը.
1388. Կարապետ մահը.
1389. Թամար Մոկացի.
1390. Երկու վանեցիք.
1391. Յովհաննէս Զմկածագցի.
1392. Ստեփան և Միւսէֆիր.

1393. Աղթամար և երուսաղէմ.
1394. Ունիթորներու ընթացքը։

8. ՅԱԿՈԲ Գ. ՍԱՍՑԻ
(1404—1411)

1395. Պաշտօն ու ժամանակ.
1396. Վասպուրական և Միւնիք.
1397. Տաթեւացին Մեծոփ կու գայ.
1398. Աղթամարի կապանքը.
1399. Աղթամարի արձակումը.
1400. Տաթեւացին կը դառնայ.
1401. Տաթեւացիին մահը.
1402. Տաթեւացիին արդիւնքը.
1403. Վարդապետական աստիճաններր.
1404. Տաթեւացիէն ետքը.
1405. Կաթողիկոսին մահր.
1406. Եուսուֆ և Իսքէնտէր.
1407. Իսահակ Յուսուֆ։

8. ԳՐԻԳՈՐ Ը. ԽԱՆԶՈՂԱՑ
(1411—1418)

1408. Պաշտօն ու ժամանակ.
1409. Կիլիկեցւոց զնդծումները.
1410. Խանձողատ գահընկէց.
1411. Կանոնական տեսութիւն.
1412. Քաղաքական կացութիւն։

8. ՊՕՂՈՍ Ա. ԳԱՒԱՌՆՑԻ
(1418—1430)

1413. Պաշտօնն ու ձեռնարկը.
1414. Շինութիւնք և կանոնք.
1415. Միսէն նոր գաղութ.
1416. Իսքէնտէրի արշաւանքները.
1417. Հաւատափոխ Հայեր.
1418. Ցիմար վանեցի.
1419. Վասպուրականցի նահատակներ.
1420. Բաղէշի հալածանքը.
1421. Սորբեցի վկաներ.
1422. Գրիգոր Ալաթեցի.
1423. Վարդապետներ և կոյս մը.
1424. Աղթամարի չփոթներ.
1425. Երուսաղէմի գործեր.
1426. Պօղոսի մահը։

8. ՄՈՍԷՍ Գ. ՎԱՀԱՒՈՒՆԻ
(1430—1439)

1427. Վահկացի և Նաղաշ.
1428. Իսքէնտէր և Ջիհանշահ.
1429. Պելգին Օրբելեան.
1430. Վրաց Նուաճումը.
1431. Արեւմտեան Տերճուածը.
1432. Բասիլիոյ ժողովը.

1433. Փլորենտիոյ ժողովը.
1434. Փլորենտիոյ վճիռը.
1435. Գենուացիները և Հայեր.
1436. Պապական հրաւէրը.
1437. Հայ պատուիրակները.
1438. Փլորենտիա կը հասնին.
1439. Հրահանգ առ Հայս.
1440. Կանոնական տեսութիւն.
1441. Վախկացիին մահը.
1442. Ծովսէփի չփոթներ.
1443. Ծովհաննէս Իլաթեցի։

8. ԴՐՈՒԹԻՒՆ Թ. ՊՈՒՍԱԼՊՆԱՆՑ
(1439—1441)

1444. Աթոռը կը գրաւէ.
1445. Հերմոնեցի և Մեծոփեցի.
1446. Շարժումին չուրջը.
1447. Մեծոփեցին և կիլիկեցիք.
1448. Մուսաբէգեանց և պապը.
1449. Ազին անյայտացումը.
1450. Ժողովէն առաջ.
1451. Փոխագրութեան արդարացումը։
1452. Համընթաց պարագաներ.
1453. Ժողովին ներկաները.
1454. Դիրով հաւանողներ.
1455. Դուշակական պարագաներ.
1456. Ազը յայտնուած։

8. ՆԻԿԱԿՈՍ Ա. ՎԻՐԱՊՑԻ
(1441—1443)

1457. Մրցակից ընտրելիներ.
1458. Ժողովի գումարումը.
1459. Կիրակոսի նախընթացը.
1460. Ընտրութեան պարագաներ.
1461. Միւռոն և օրհնագիրներ.
1462. Կիլիկիոյ դիրքը.
1463. Սսոյ աթոռին վիճակը.
1464. Սանցոյ կարծիքը.
1465. Ակնկալեալ օգուտներ.
1466. Գրգռութեանց սկիզբը.
1467. Կիրակոսի դէմ.
1468. Կիրակոս գահընկէց.
1469. Կիրակոս յանձնաուռ։

8. ԴՐՈՒԹԻՒՆ Ժ. ՋԱՒԱԼՍՊՆԱՆՑ
1443—1465)

1470. Ընտրութիւնն ու նախընթացը.
1471. Վաստուրականցիք և Սիւնեցիք.
1472. Կիրակոսի դիրքը.
1473. Թովմաս Մեծոփեցի.
1474. Արեւելակողման պետութիւններ.
1475. Արեւմտակողման պետութիւններ.
1476. Աղթամարի խզումը.
1477. Կիլիկիոյ աթոռը.
1478. Ազկերու խնդիրը.
1479. Կարապետ Եւդոկիացի.
1480. Բաժանմանց հանդէպ.
1481. Արիստակէս աթոռակից.
1482. Աթոռակցաց դիրքը.
1483. Կոստանդնուպոլսոյ Հայեր.
1484. Ղալաթիոյ եկեղեցին.
1485. Բրիստոնէից կացութիւնը.
1486. Պատրիարքական դրութիւն.
1487. Հայոց պատրիարքութիւն.
1488. Պատրիարքական ձեռնհասութիւն.
1489. Սսոյ պատահարներ.
1490. Զաքարիա և Սարգիս.
1491. Զաքարիա յիշմիածին.
1492. Կանոնական տեսակէտ.
1493. Իշմիածինէ փախուստ.
1494. Աղթամար դառնալը.
1495. Սարգիս աթոռակից.
1496. Գրիգորի մահը.
1497. Զաքարիայի մահը.
1498. Ծովհաննէս Տարոնեցի.
1499. Ուրիշ վկաներ։

8. ԱՐԻՍՏԱԿԷՍ Ե. ԱՓՈՈՒԱԿԱՒ
(1465—1469)

1500. Յաջորդելն ու դիրքը.
1501. Մտեփանոս Աղթամարցի.
1502. Լեհաստանի Հայեր.
1503. Արիստակէսի մահը։

8. ՍԱՐԳԻՍ Ե. Ս.ՋԱՑԱՑԻ
(1469—1474)

1504. Սարգիս և Օծոպեցին.
1505. Աթոռակիցն ու մահը.
1506. Երուսաղէմի դործեր։

8. ԾՈՎՀԱՆՆԷՍ Իշ. ԱՋԱԿԵՑԻ
(1474—1484)

1507. Ծովհաննէսի ինքնութիւնը.
1508. Կոստանդնուպոլսոյ Հայեր.
1509. Կոստանդնուպոլսոյ պատրիարքներ.
1510. Ամիրտուվաթ բժշկապետ.
1511. Ազին վերադարձը.
1512. Վրթանէս Օծոպեցի.
1513. Ծովհաննէսի քաչուիլը.
1514. Ծովհաննէս նահատակ.
1515. Նոր վկաներ.
1516. Մտեփանոս Տաթեւացի։

Ա. ՍԱՐԳԻՍ Բ. ՄԵԾԱՑԻ
(1484—1515)

1517. Յաջորդելոյն պարագայն.
1518. Զորս աթոռակիցներ.
1519. Կարծեցեալ աթոռակիցներ.
1520. Ժամանակին ամլութիւնը.
1521. Սէֆիներու զօրանալը.
1522. Սարգիսի տէրութիւնը.
1523. Տաճամկայ միջոց.
1524. Սուլ կաթողիկոսներ.
1525. Յովհաննէս Թլկուրանցի.
1526. Ազթամարի կաթողիկոսներ.
1527. Հայ տպագրութիւն.
1528. Մուրատ վանեցի.
1529. Մխիթար Թաւրիզեցի.
1530. Աստուածատուր Կաֆացի.
1531. Շնորհատուր Խլաթեցի.
1532. Յովհաննէս և Աւետիք։

Ա. ՋԱՔԱՐԻԱՅ Ե. ՎԱՂԱՐՇԱՊԱՏՑԻ
(1515—1520)

1533. Յաջորդելոյն պարագաները.
1534. Երուսաղէմ և Ալէմ.
1535. Զաքարիայի մահը.
1536. Խաչատուր Կողբացի.
1537. Աստուածատուր Խթայեցի։

Ա. ՍԱՐԳԻՍ Բ. ՎԻՐԱՊԵԱՆ
(1520—1536)

1538. Յաջորդելոյն պարագաները.
1539. Կոստանդնուպոլիս և Սիս.
1540. Սարգիսի մահը.
1541. Բարսեղ Ամիդեցի.
1542. Ուրիշ վկաներ.
1543. Գերմանիա բողոքական.
1544. Բողոքական երկիրներ։

Ա. ԴՐԻԳՈՐ ԺԱ. ՈՒՌՋԱՆԵՑԻ
(1536—1545)

1545. Նախընթացն և աթոռակիցը.
1546. Նոր ծառպատիկ.
1547. Երուսաղէմի գործեր.
1548. Մանկամոգովի դադարումը։

Ա. ՍՏԵՓԱՆՈՍ Ե. ՍԱՀԱՐԱՑՑԻ
(1545—1567)

1549. Յաջորդեն ու աթոռակիցը.
1550. Բողոքական պատահարներ.
1551. Սալմաստեցին ի Հռոմ.
1552. Երիմաւան պարագաները.
1553. Էջմիածին գաւառը.
1554. Ժամանակի պատահարներ.
1555. Ստեփանոսի տէրութիւնը.
1556. Ազթամար և Աղուանք.
1557. Աբգար Եւդոկիացի.
1558. Աբգար ի Հռոմ.
1559. Երիմաւան նշանակութիւնը.
1560. Աբգարի դաւանագիրը.
1561. Աբգարի արդիւնքը.
1562. Ստեփանոսի մահը.
1563. Միւս աթոռներ.
1564. Զաքարեանց առաջիններ.
1565. Ժամանակակից վկաներ։

Ա. ՄԻՔԱՅԷԼ Ա. ՍԵՒԱՍՏԱՑԻ
(1567—1576)

1566. Զանազան աթոռակիցներ.
1567. Զանազան դէպքեր.
1568. Աբգարի վերջը։

Ա. ԳՐԻԳՈՐ ԺԲ. ՎԱՂԱՐՇԱՊԱՏՑԻ
(1576—1590)

1569. Տէրութիւն և աթոռակիցներ.
1570. Օսմանցիներ և Պարսիկներ.
1571. Սուլթանչահի ձգտումները.
1572. Նոր տոմարի կազմութիւը.
1573. Հայոց դպրատուն.
1574. Հայոց մասին գործեր.
1575. Լէոնարդոս պատուիրակ.
1576. Ազարիայի նամակները.
1577. Ազարիայի դաւանագիրը.
1578. Ազարիայի կացութիւնը.
1579. Կոստանդնուպոլսոյ աթոռը.
1580. Գրիգորի վախճանը։

Ա. ԳԱԼՈՒՍՏ Բ. ՎԱՂԱՐՇԱՊԱՏՑԻ
(1590—1629)

1581. Մելքիսեդեկ աթոռակից.
1582. Աւետիս աթոռակից.
1583. Շահաբասի ընթացքը.
1584. Սրապիոն աթոռակից.
1585. Շահաբաս և Սրապիոն.
1586. Սրապիոնի վախճանը.
1587. Բանի գաղութը.
1588. Գաղութին գեհենը.
1589. Ջուղայի գաղութը.
1590. Շահաբաս և Հայերը.
1591. Գաղութի արկածներ.
1592. Պատերազմ և Հաշտութիւն.
1593. Ռէլալի յեղուզակներ.
1594. Անռևի սովը.
1595. Ռէլալիներու զտումը.
1596. Մրցակից գոքծիչներ.

1597. Կեսարացին և Յուլը.
1598. Էջմիածին և Մելքիսեդեկ.
1599. Հռիփսիմէի նշխարքը.
1600. Նշխարաց յայտնութիւը.
1601. Մելքիսեդեկ և լատիններ.
1602. Գրիգոր Դարանաղցի.
1603. Երուսաղէմի գործեր.
1604. Պատրիարքական բաժիններ.
1605. Էջմիածնի գործեր.
1606. Մրցակից կաթողիկոսներ.
1607. Շահաբաս և Էջմիածին.
1608. Մելքիսեդեկի արկածները.
1609. Մելքիսեդեկ և Դաւիթ.
1610. Էջմիածնի քարերը.
1611. Փութկայ արկածները.
1612. Փութկայի միւս բաժինը.
1613. Շահաբաս և Դաւիթ.
1614. Անդրէաս Ագուլեցի.
1615. Մովսէս և Պօղոս.
1616. Տուգանքի վճարում.
1617. Մելքիսեդեկ Տարկհան.
1618. Աւետիսի վախճանը.
1619. Սարգիս Պարոնտէր.
1620. Մեծ-Անապատի գործիչներ.
1621. Մեծ-Անապատին կանոնները.
1622. Գործիչներու մահը.
1623. Պօղոս Մոկացի.
1624. Կեսարացին և Մելքիսեդեկ.
1625. Կեսարացիին գիրը.
1626. Կաթողիկ չարժուիներ.
1627. Կաթողիկ առուներ.
1628. Ախոռի ձգտուիներ.
1629. Առաջին թեմակալներ.
1630. Կոստանդնուպոլսոյ չփոթներ.
1631. Մելքիսեդեկ և Մովսէս.
1632. Մովսէսի գործերը.
1633. Սահակ Դաւնեցի.
1634. Մելքիսեդեկ ի Կոստանդնուպոլիս.
1635. Արմաչի վանքը.
1636. Թադէոս հիմնադիրը.
1637. Կոստանդնուպոլսոյ անցուդարձը.
1638. Մելքիսեդեկ և Նիկոլ.
1639. Մելքիսեդեկի մահը.
1640. Պալաթու եկեղեցին.
1641. Կեսարացին և Նիկոլ.
1642. Կոստանդնուպոլսոյ մրցակիցներ.
1643. Սահակի ընթացքը.
1644. Մովսէսի ձեռնարկները.
1645. Էջմիածնի նորոգութիւն.
1646. Գործակիցներ և նպաստողներ.
1647. Սահակի փախուստը.
1648. Հարկին վերջանալը.
1649. Վարդապետներ և Աղթամար.
1650. Երուսաղէմի գործեր.
1651. Նոր վկաներ.
1652. Փարիզիք և Արփայեցին։

8. ՄՈՎՍԷՍ Գ. ՏԱՏԵՒԱՑԻ
(1629—1632)

1653. Մովսէս կաթողիկոս.
1654. Գահակալի իրաւունք.
1655. Սահակի չարժումը.
1656. Սահակի ձախողիլը.
1657. Մովսէսի գործերը.
1658. Ջաղուած չարականները.
1659. Հռոմի հետ.
1660. Լեհահայոց համար.
1661. Նիկոլ կաթոլիկ.
1662. Նիկոլի բռնութիւնները.
1663. Նիկոլ և Յուլը.
1664. Մովսէսի ուղղութիւնը.
1665. Մովսէսի մահը։

8. ՓԻԼԻՊՊՈՍ Ա. ԱՂԹԱՄԱՑԻ
(1633—1655)

1666. Փիլիպպոսի ընտրութիւն.
1667. Փիլիպպոսի նախընթացը.
1668. Դաւիթի մահը.
1669. Յուլին մահը.
1670. Սահակի խեղճութիւն.
1671. Ծռազատիկի անցքերը.
1672. Կեսարացիին մահը.
1673. Պատերազմ և չինութիւն.
1674. Աջին վերապարձը.
1675. Պաղտատի առումը.
1676. Փիրօմալլիի ընթացքը.
1677. Լեհահայեր և Փիլիպպոս.
1678. Նիկոլի զեղծումները.
1679. Սահակի մահը.
1680. Խաղաղութեան միջոց.
1681. Կիլիկիոյ խնդիրը.
1682. Սիմէոնի նամակը.
1683. Դաթեւալ նամակը.
1684. Մեղապրանքի խօսքեր.
1685. Նամակին փակումը,
1686. Սիմէոն և Ներսէս.
1687. Փիլիպպոս յերուսաղէմ.
1688. Երուսաղէմի գումարումը.

1689. Դումարման գործեր.
1690. Հաստատուած կանոններ.
1691. Կանոններու բացատրութիւն.
1692. Դաւիթ Արեւելցի.
1693. Կիրակոս Երեւանեցի.
1694. Կալանոսի ջանքերը.
1695. Հայ տաւր Սերաստացի.
1696. Կալանոսի հեռանալը.
1697. Կոստանդնուպոլսոյ գործեր.
1698. Ռումքաբուի հրդեհը.
1699. Տեղակալներու ժամանակը.
1700. Փիլիպպոս ի Կոստանդնուպոլիս.
1701. Լեհահայերու ընթացքը.
1702. Նիկոլ ի Կոստանդնուպոլիս.
1703. Լեհահայերու հաչտութիւնը.
1704. Վկայարաններու նորոգութիւնը.
1705. Գայիանէի նչխարքը.
1706. Հռիփսիմէի նչխարքը.
1707. Փիլիպպոսի դառնալը.
1708. Փիլիպպոսի մահը.
1709. Փիլիպպոսի թաղումը.
1710. Բաղէշի ուսումնարանը.
1711. Ամորդւոյ վարդապետներ.
1712. Իլվաացի և Դավրիժեցի.
1713. Շինարար վարդապետներ.
1714. Դարանաղեցիին մահը.
1715. Սարուխան Միգանցի.
1716. Կոտէացիք և Ղրղլար.
1717. Գալուստ Արախատցի.
1718. Նիկողայոս Տիգրանակերտցի.
1719. Հայ տաւր Տիգրանակերտցի.
1720. Սիրուն Գնունի.
1721. Վարագայ Ս. Նչաններ.
1722. Ս. կարապետի մատունքները։

8. ԳԱԿՈԲ Գ. ՋՈՒԿԱԿԱՑԻ
(1655—1680)

1723. Ընտրութիւն և ծագում.
1724. Դաչտեցիներ տեղափոխուած.
1725. Ասպահանցիք տեղափոխուած.
1726. Ջանգակատան չինութիւնը.
1727. Տպագրութեան համար.
1728. Շինութիւնք և կալուածք.
1729. Երուսաղէմ և Կոստանդնուպոլիս.
1730. Ս. Յակոբայ բանալիները.
1731. Կոստանդնուպոլիս և Սիս.
1732. Ս. Յակոբ Յոյներուն.
1733. Տեղակալներ և Թովմաս.
1734. Թովմասի վախճանը.
1735. Պարտքերու խնդիրներ.
1736. Եղիազար բանտարկուած.
1737. Մարտիրոս պատրիարք.
1738. Մնացորդ պարտքը.
1739. Ս. Յակոբ նոր առնուած.
1740. Դազար պատրիարք.
1741. Յովհաննէս Թիլֆիւնճի.
1742. Նուիրակներու ընթացքը.
1743. Նիկոլ և Կալանոս.
1744. Բռնադատիչ ձեռնարկներ.
1745. Ոսկան Երեւանեցի.
1746. Ոսկանեան Աստուածաչունչ.
1747. Ոսկանի ջանքերը.
1748. Ոսկանի մահը.
1749. Ոսկան վիճակագիր.
1750. Վիճակներու քաղուածը.
1751. Եղիազարի նպատակը.
1752. Եղիազարի ծրագիրը.
1753. Եղիազարի ձեռնարկը.
1754. Եղիազար հակաթոռ.
1755. Սարգիս Թէքիրտաղցի.
1756. Հակաթոռին դիմադրողներ.
1757. Կոստանդնուպոլսոյ կացութիւնը.
1758. Եղիազար թափառական.
1759. Յակոբ Յերուսաղէմ.
1760. Եղիազար ի Կոստանդնուպոլիս.
1761. Եղիազարի յաջողիլը.
1762. Եղիազարի մխիթարը.
1763. Յակոբի յաջողիլը.
1764. Յակոբ Կոստանդնուպոլսոյ մէջ.
1765. Մարտիրոս Յերուսաղէմ.
1766. Եղիազար և Մարտիրոս.
1767. Եղիազարի հաստատուիլը.
1768. Յակոբ յԷջմիածին.
1769. Մնովրիոս Երեւանեցի.
1770. Պարսկական խստութիւնք.
1771. Լատինացւոց ընթացքը.
1772. Լատինական գրգիռներ.
1773. Օգնութիւնն յոյներ.
1774. Քաղաքական տեսակէտներ.
1775. Աղթամարի աթոռը.
1776. Աղթամարի կաթողիկոսներ.
1777. Կիլիկիա և Երուսաղէմ.
1778. Լեհահայոց գործերը.
1779. Փիլոսի տեսչութիւնը.
1780. Նիկոլ Հռոմ կոչուած.
1781. Թէոդորոս Վարդանեան.
1782. Հռոմի ձեռնարկները.

1783. Նիկոլի վերադարձը.
1784. Նիկոլի մահը.
1785. Մեղրևցին և յաջորդներ.
1786. Անդրէաս և Կրպոյ.
1787. Երուսաղէմի առաջնորդ.
1788. Դժուարին կացութիւն.
1789. Յակոբի դիտումը.
1790. Էջմիածնի խորհուրդը.
1791. Յակոբ ի Կոստանդնուպոլիս.
1792. Յակոբի դիմումները.
1793. Յակոբի մահը.
1794. Մահուան ճիշդ օրը.
1795. Վերագրուած գրութիւներ.
1796. Մահուանէ ետքը.
1797. Յաջորդութեան խնդիրը.
1798. կարծեցեալ կաթողիկոս մը.
1799. Մխիթար Վանեցի.
1800. Աւետիս Ոստանցի.
1801. Գաբրիէլ Ղալաթիացի.
1802. Պատուական Արփայեցի.
1803. Բաղդասար Եւդոկիացի.
1804. Կարնեցի վկաներ.
1805. Գրիգոր Տաթեւացի.
1806. Դաւիթ Սեբաստացի.
1807. Տպագրութեան աչխատողներ.

8. ԵՂԻԱԶԱՐ Ա. ԱԾՆԻԿԱՑԻ
((1682—1691)

1808. Մայրաթոռէն ընտրուիլը.
1809. Նամակին հաղորդութիլը.
1810. Ընթացքն ու գործերը.
1811. Երուսաղէմի գործերը.
1812. Կոստանդնուպոլսոյ գործերը.
1813. Կաթողիկներու գործերը.
1814. Հայոց զգացումները.
1815. Ներքին պատակաւոր.
1816. Սոյլ աթոռը.
1817. Աղթամար և Էջմիածին.
1818. Վարդան Ծունանեան.
1819. Լեհահայոց անջատումը.
1820. Հունգարահայ գաղութը.
1821. Դաւիթ Ջուղայեցի.
1822. Յովհան Շեխ-Մուսին.
1823. Յովհաննէս Մրքուզ.
1824. Եղիազարի ուղղութիւնը.
1825. Եղիազարի մահը։

8. ՆԱՀԱՊԵՏ Ա. ԵՊԵՍԱՑԻ
(1691—1705)

1826. Ընտրութիւն ու նկարագիր.

1827. Շինարար արդիւնք.
1828. Աղթամարի խզումը.
1829. Մատթէոս և Եփրեմ։
1830. Երեմիա Քէօմիւրճեան.
1831. կաթոլիկական ճիգեր.
1832. Նահապետ և պապութիւն.
1833. Նահապետէ ժժգոհներ.
1834. Ստեփանոս Ջուղայեցի.
1835. Նահապետի վերադարձը.
1836. Ստեփանոսի մահը.
1837. Մխիթար Սեբաստացի.
1838. Աւետիք Եւդոկիացի.
1839. Մխիթարի պատմութիւնը.
1840. Շիտիթ ակնարկ.
1841. Եփրեմ Ղափանցի.
1842. Մխիթար ի Կոստանդնուպոլիս.
1843. Իսրայէլ Օրի.
1844. Նահապետ և Օրի.
1845. Օրիի ձեռնարկները.
1846. Օրի ի Ռուսիա.
1847. Լատիններ ի Կոստանդնուպոլիս.
1848. Մուպէի և յաջորդը.
1849. Գալուստ և Մինաս.
1850. Մխիթար ի կարին.
1851. Եփրեմի ճիգերը.
1852. Եփրեմ պատրիարք.
1853. Ֆէրիոլ դեսպան.
1854. Մխիթար ի Կոստանդնուպոլիս.
1855. Աւետիք պատրիարք.
1856. Աւետիքի ընթացքը.
1857. Երուսաղէմի միացումը.
1858. Երուսաղէմի կացութիւնը.
1859. Աւետիքի չանքերը.
1860. Մխիթարի փախուստը.
1861. Մարոնիներու մօտ.
1862. Ներքին չփոթներ.
1863. Յառնակ գործեր.
1864. Քաղաքական վիճակ.
1865. Աւետիք պաշտօնանկ.
1866. Աւետիք աքսորեալ.
1867. Գալուստ և Ներսէս.
1868. Դարձեալ Աւետիք.
1869. Պարտքի խնդիրը.
1870. Աւետիքի գործերը.
1871. Նահապետի մահը.
1872. Ընտրութեան յապաղումը.
1873. Աւետիքի թշնամիներ.
1874. Աւետիք ի Թիֆլիս

1875. Քիւլհանճին եպիսկոպոս.
1876. Աւետիք ի Մէնինա.
1877. Կոստանդնուպոլսոյ յուղումները.
1878. Աւետիք ի Գաղղիա.
1879. Կատարեալ Գողթնացի.
1880. Պօղոս Սղերդցի.
1881. Սարգիս Կարսեցի.
1882. Նիկողայոս Պրուսացի.
1883. Գրիգոր Ջուղայեցի։

8. ԱՊՏԱՍԱՆԴՈՒ Ա. ՋՈՒՂԱՑՑԻ (1706—1714)

1884. Ընտրութեան պարագաները.
1885. Կոստանդնուպոլսոյ դիմումը.
1886. Յովհաննէս Չմիւռնիացին.
1887. Տաներուն գատաստանը.
1888. Կոմիտաս Բէօմիւրճեան.
1889. Կոմիտաս Նահատակ.
1890. Միքայէլ Բրգնիկցի.
1891. Հանդարտ միջոց.
1892. Մխիթար ի Մեթոն.
1893. Մխիթարի գործերը.
1894. Անտոնեանց սկիզբը.
1895. Մելքոն Թասպասեան.
1896. Աբրահամ Արծիւեան.
1897. Աղեքսանդրի նամակը.
1898. Աղեքսանդրի ուղղութիւնը.
1899. Օրի գնդապան.
1900. Օրիի մահը.
1901. Գործին գնահատումը.
1902. Մինաս Տիգրանեան.
1903. Աւետիքի վիշտերը.
1904. Պատիւլլի մէջ.
1905. Աւետիքի գրուածները.
1906. Աւետիքի յիշատակարանը.
1907. Աւետիքի մահը.
1908. Աւետիքի նկարագիրը.
1909. Երուսաղէմի կացութիւնը.
1910. Ամրօլի ուսումնարան.
1911. Կոլոտ յԵրուսաղէմ.
1912. Սահակ պաշտօնանկ.
1913. Ուխտաւորաց վտանգը.
1914. Յովհաննէս Գանձակեցի.
1915. Կոլոտ երաչխաւոր.
1916. Աղեքսանդրի մահը։

8. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Ա. ՀԱՄԱՍՏԱՆՑԻ (1715—1725)

1917. Մովսէս Ջուղայեցի.
1918. Աստուածատուր ընտրուած.
1919. Լատինամիտ ջանքեր.
1920. Պետական պատաստան.
1921. Գաւառներու մէջ.
1922. Պեղոպոննէսի պատերազմը.
1923. Կոլոտ պատրիարք.
1924. Երուսաղէմի աթոռը.
1925. Պետական վաւերագիր.
1926. Գրիգոր Շղթայակիր.
1927. Երուսաղէմի համար.
1928. Նեղութեանց դէմ ճիգեր.
1929. Աղջանից գործերը.
1930. Աֆղաններու զօրանալը.
1931. Հայերուն իղձերը.
1932. Օսմանցիներ և Թուաներ.
1933. Շղթայակիր յԵրուսաղէմ.
1934. Կոլոտի ձեռնարկները.
1935. Կոլոտի գործերը.
1936. Մխիթար ի Վենետիկ.
1937. Սուրբ Ղազար վանքը.
1938. Մխիթարի ուղղութիւնը.
1939. Անտոնեան Միաբանութիւն.
1940. Անտոնեանք և Արծիւեան.
1941. Դաւիթ բէգի չարժումը.
1942. Մայրաթոռի կացութիւն.
1943. Աթոռոյ պարապութիւն։

8. ԿԱՐԱՊԵՏ Ա. ՈՒԼՆԵՑԻ (1726—1729)

1944. Ընտրութիւն և նախընթաց.
1945. Սիմէոնի կարծիքը.
1946. Կարծիքին հերքումը.
1947. Կարծիքին չարժառիթը.
1948. Կարապետի գործերը.
1949. Երուսաղէմի կանոնները.
1950. Կանոններուն վերլուծումը.
1951. Բուն նպատակը.
1952. Կարապետ և Լատիններ.
1953. Լատինական առաջարկներ.
1954. Կարապետ յԷջմիածին.
1955. Դաւիթ Բէգի գործերը.
1956. Շարժումին վերջը.
1957. Կոստանդնուպոլսոյ գործեր.
1958. Շղթայակիրին անուրը.
1959. Ծառազատիկի խնդիր.
1960. Կիլիկիոյ աթոռ.
1961. Աղթամարի աթոռ.
1962. Սահակ Բրուսեցի.
1963. Սամուէլ Մանիսացի։

8. ԱՄՊԱՀԱՒԱՐ Ե. ԽՈՇԱՒՆՑԻ
(1730—1734)

1964. Պարսկաստանի վիճակը.
1965. կաթողիկոսի ընտրութիւն.
1966. Նատիրի երեւնալը.
1967. Դալաքիոյ եկեղեցին.
1968. Երուսաղէմի գործեր.
1969. Աբրահամ կրետացի.
1970. կրետացին յէջմիածին.
1971. Խոչաբեցիի մահը։

8. ԱՄՊԱՀԱՒԱՐ Գ. ԿՐՆՑԱՑԻ
(1734—1737)

1972. Ընտրութեան պարագաներ.
1973. Սարգիս Սարաֆեան.
1974. կրետացին և Նատիր.
1975. Նատիր յաղթական.
1976. Էջմիածինի համար.
1977. կրետացին ի Մուղան.
1978. կրետացիին պատիւներ.
1979. Մուղանէ մեկնիլը.
1980. վանքերու պտոյտը.
1981. կրետացին ի Թավրէզ.
1982. կոստանդնուպոլսոյ գործեր.
1983. Երուսաղէմի գործեր.
1984. Հայեր և լատիններ.
1985. Շղթայակիր ի կոստանդնուպոլիս.
1986. Քիւթիւրի միջնդէպը.
1987. Մխիթարեանց ընթացքը.
1988. Անտոնեանց գործերը.
1989. Հայոց կացութիւն.
1990. կրետացիին մահը։

8. ԴԱՆԻԷԼ Ե. ՋԱՀԿՆՑԻ
(1737—1751)

1991. Ընտրութեան պարագաները.
1992. Ջահկեցին ի կարին.
1993. կարնոյ դէպքերը.
1994. կոստանդնուպոլսոյ չփոթները.
1995. Լատինական խնդիրներ.
1996. Երուսաղէմի խնդիրը.
1997. Շղթայակիր յԵրուսաղէմ.
1998. կոլոտի մահը.
1999. կոլոտի ուղղութիւնը.
2000. կոլոտի արդիւնքները.
2001. Անկիւրիոյ չփոթները.
2002. կաթոլիկ ջանքեր.
2003. կաթոլիկ ծէսեր.
2004. Անկիւրիոյ դէպքերը.
2005. Երուսաղէմի գործեր.
2006. Ալթապաշեան տուն.
2007. Դուկաս Ալթապաշեան.
2008. Անտոնեանք ի Բերիա.
2009. Արծիւեան կաթողիկոս.
2010. Արծիւեան ի Հռոմ.
2011. Անտոնեանք և Մխիթարեանք.
2012. Մխիթարի մերժումը.
2013. Արծիւեանի հաստատութիւը.
2014. Ինչ ինչ դիտողութիւն.
2015. Արծիւեան ի Լիբանան.
2016. Արծիւեանի ձգտումներ.
2017. Նալեանի ընթացքը.
2018. Աղթամարի գործեր.
2019. Աղուանից աթոռ.
2020. Աստպանեան աթոռ.
2021. Նատիրի ընթացքը.
2022. Ջահկեցին և Ագուլեցին.
2023. Քիւթիւր և Բարաքայ.
2024. Ջահկեցին փախստական.
2025. Քիւթիւր կաթողիկոս.
2026. Կանոնական դիտողութիւն.
2027. Անձևրու բաղդատութիւն.
2028. Քիւթիւր տապալուած.
2029. Պրոխորոնի չփոթը.
2030. Մխիթարի մահը.
2031. Մխիթարի յաջորդը.
2032. Արծիւեանի մահը.
2033. Շղթայակիրի մահը.
2034. Ջահկեցիի մահը։

8. ՄԻՆԱՍ Ե. ԱՆՆՑԻ
(1751—1753)

2035. Ընտրութեան պարագաներ.
2036. Կոստանդնուպոլսոյ աթոռը.
2037. Երուսաղէմի աթոռ.
2038. Աստպանեի աթոռ.
2039. Մինասի մահը։

8. ԱՊԻՍԿՈՍԿՈՊՈՍ Ե. ՍԻՒՋԱՆԴԱՒՑԻ
(1753—1755)

2040. Ընտրութեան պարագաները
2041. Ալեքսանդրի մահը.
2042. Նոր ընտրութիւն.
2043. Անագինի ընթացքը.
2044. Եռթադրեալ չարժառիթներ.
2045. Կանոնական տեսութիւն.
2046. Սարաֆեանի թափառումները.
2047. Սարաֆեանի ընթացքը.
2048. Ամիրաներու գործերը.
2049. Երուսաղէմի աթոռ.

2050. Կիլիկիոյ աթոռ.
2051. Ուրիշ աթոռներ.
2052. Յանուամ վաղարշակերտցի.
2053. Փառանկուլ Շրջըվանցցի.
2054. Ուրիշ նահատակներ.
2055. Յարութիւն Թօփճիօղլու։

8. ՅԱԿՈԲ Ե. ՇԱՄԱԽԵՑԻ
(1759—1763)

2056. Ընտրութիւնը անդրաժեչտ.
2057. Նոր ընտրութիւն.
2058. Յակոբի նախընթացը.
2059. Մանուէլեան խմբակը.
2060. Կաթոլիկական խնդիրներ.
2061. Այդ մասին դիտողութիւն.
2062. Երուսաղէմի աթոռ.
2063. Պէյթխաչպօ և Զրմմառ.
2064. Հռոմէական կաթողիկոսներ.
2065. Հռոմի վանքը.
2066. Յակոբի մահը.
2067. Յակոբի արժանիքը.
2068. Սահակի մահը։

8. ՍԻՄԷՈՆ Ա., ԵՊՍԻԱՆՑԻ
(1763—1780)

2069. Ընտրութիւն և օծում.
2070. Առաջին կանոքը.
2071. Կոստանդնուպոլսոյ մէջ.
2072. Էջմիածին դառնալը.
2073. Տաճկահայոց հաւանիլը.
2074. Բագրեւանդ քաչուիլը.
2075. Դիւանական կարգեր.
2076. Ջամբռի կազմութիւն.
2077. Պատմական մասը.
2078. Վիճակագրական մասը.
2079. Հասոյքներու մասը.
2080. Նալեանի վերջին օրերը.
2081. Գրիգոր Պատմաճեան.
2082. Նալեանի արդիւնքները.
2083. Նալեանի ուղղութիւնը.
2084. Նալեանի մահը.
2085. Սիմէոնի ձգտումները.
2086. Փոխանորդի խնդիր.
2087. Սիմէոնի ցաւիլը.
2088. Սիմէոն և Գրիգոր.
2089. Ձեռնադրութեան խնդիր.
2090. Սիմէոնի չինութիւնները.
2091. Քաղաքական աղետ ութիւն.
2092. Աղուանից աթոռը.
2093. Ռուսիոյ վիճակ.
2094. Ռուսիոյ հետ.
2095. Ռուսիա պաշտպան.
2096. Կայսերական մաղթանք.
2097. Ախլցխայի խնդիրը.
2098. Խնդիրին փակումը.
2099. Պայազիտի միջադէպը.
2100. Յովհան Ամդեցի.
2101. Լուսաւորչաց տօներ.
2102. Առաջին Լուսաւորիչք.
2103. Եպիսկոպոսաց կանոններ.
2104. Կիլիկիոյ աթոռ.
2105. Աղթամարայ աթոռ.
2106. Երուսաղէմի աթոռ.
2107. Պօղոս Վանեցի.
2108. Միխիթարեանց բաժանումը.
2109. Բաժանման պատճառը.
2110. Վենետիկի բաժինը.
2111. Թրիէստի բաժինը.
2112. Անտոնեանք և Զրմմառ.
2113. Կոստանդնուպոլսոյ աթոռ.
2114. Պատմաճեանի դէմ.
2115. Հրաժարելու փորձ.
2116. Պարտքի խնդիր.
2117. Պատմաճեանի հրաժարիլը.
2118. Զաքարիա Կաղզուանցի.
2119. Զաքարիա պատրիարք.
2120. Հռոմէական կղեր.
2121. Զաքարիայի ջանքեր.
2122. Էջմիածինի տպարան.
2123. Սմիէոնի ջանքեր.
2124. Տօնացոյցի խնդիր.
2125. Սիմէոնեան տօնացոյց.
2126. Միսական պատչաճներ.
2127. Այդ մասին դիտողութիւնք.
2128. Տօնացոյցի կիրառութիւն.
2129. Ազգային ժողով.
2130. Մեղմ ընթացք.
2131. Հռոմէականաց չարժում.
2132. Զաքարիայի ընթացքը.
2133. Գործածուած միջոցներ.
2134. Եպարքոսներու փոփոխում.
2135. Հռոմէականաց գործեր.
2136. Դաղարի միջոց.
2137. Սիմէոնի արդիւնքներ.
2138. Քաղաքական տագնապ.
2139. Սիմէոնի մահը.
2140. Դաւանական զգայումը.
2141. Սարգիս Սարաֆեան.

2142. կաթոլիկ եղողներ.
2143. Ցարութիւն Բասէնցի.
2144. Սամուէլ Երզնկացի.
2145. Պաստաճեանի մահը.
2146. Պաստաճեանի գրուածներ.
2147. Զանազան հոռմէականք։

8. ԴԱՒԹԱՍ Ա. ԿԱՐՆԵՑԻ
(1780—1799)

2148. Ժամանակին պարագաներ.
2149. Ընտրութեան լրումը.
2150. Դաւթի նախընթացը.
2151. Զաքարիա ընդդիմադիր.
2152. Դաւթի քաչուիլը.
2153. Միաբանութեան դերը.
2154. Տաճկահայոց կարծիքը.
2155. Անկիւրիոյ կաթոլիկները.
2156. Նամակի խնդիրը.
2157. Զաքարիա պաշտօնանկ.
2158. Դաւիթ ընդունուած.
2159. Համատանցիին ընթացքը.
2160. Նորէն Զաքարիա.
2161. Գործի կը սկսի.
2162. Ահագին հրդեհներ.
2163. կաթոլիկներու դիրքը.
2164. Զամչեան պատմութիւն.
2165. Վահան Հաւատոյ.
2166. Յովհաննէս Սեդրաքեան.
2167. Երկու խնդիրներ.
2168. Անլոյծ կը մնան.
2169. Հին և նոր տօնացոյցներ.
2170. Արմաչի վանքը.
2171. Բարթողիմէոս Կապուտիկեան.
2172. Եփրեմ Աջապահեան.
2173. Թէոդորոս Աջապահեան.
2174. Աղթամարայ աթոռ.
2175. Երուսաղէմի աթոռ.
2176. Երուսաղէմի կանոնները.
2177. Յովակիմ Բանաքեռցի.
2178. Պետրոս Եւդոկիացի.
2179. Դաղղիացւոց արշաւիլը.
2180. Պաղեստին Նամնիլը.
2181. Երուսաղէմի կացութիւնը.
2182. կաթոլիկներու գործերը.
2183. Անտոնեանց գործերը.
2184. Զինուոր և տուրք.
2185. Զաքարիա չինարար.
2186. Զաքարիայի բնոյթը.
2187. Զաքարիայի մահը.
2188. Զաքարիայի կտակը.
2189. Դանիէլ պատրիարք.
2190. Դալաթիոյ եկեղեցին.
2191. Էջմիածինի տագնապները.
2192. Արցախեցիք և Յովսէփ.
2193. Ռուսահայ գաղութներ.
2194. Յովսէփի ձեռնարկները.
2195. Ռուսիոյ մերձեցում.
2196. Արցախի չարժումը.
2197. Դուկասի ընթացքը.
2198. Զանազան չփոթներ.
2199. Հայոց արկածները.
2200. Ռուսական դաշնագիր.
2201. Մահմատ Խաճար.
2202. Մահմատի արշաւանքը.
2203. Էջմիածինի չուրջը.
2204. Դուկասի մահը.
2205. Դուկաս չինարար.
2206. Մայրաթաղի նորոգող.
2207. Ներքին նկարները.
2208. Դարձեալ նկարները.
2209. Դաւանական ուղղութիւն.
2210. Սարգիս Թէքիրտաղցի.
2211. Սահակ Ախլցխացի.
2212. Դուկասի ըմբռնումը.
2213. Ապաշնորհ մը չէր.
2214. Արծաթասէր մը չէր.
2215. Ուսումնատենաց մը չէր.
2216. Հորդրդականաց ժողով.
2217. Աղուանից աթոռ.
2218. Էջմիածինի ընտրելիները.
2219. Դանիէլ և Եփրեմ.
2220. Յովսէփի համար.
2221. Դանիէլ և Յովսէփ.
2222. Յովսէփի ճիգը.
2223. Տաճկահայոց միտքը.
2224. Բարթողիմէոսի ընտրութիւնը.
2225. Ընտրութեան դիմադիրներ.
2226. Ընտրելին հրաժարականը.
2227. Դանիէլի ընտրութիւնը.
2228. Ընտրութեան դիմադիրներ.
2229. Գալուստի խռովութիւնը.
2230. Ընտրութիւն Ջնջուած.
2231. Յովհաննէս պատրիարք.
2232. Յովսէփի ընտրութիւնը.
2233. Յովսէփի նոր ճիգերը.
2234. Յովսէփի ձեռնարկները.
2235. Միաբանութեան դիմումը.

2236. Յովհաննէսի ընթացքը.
2237. Յովհաննէս և աքսորեալք.
2238. Յովսէփ ի Տփղիս.
2239. Յովսէփի մահը.
2240. Յովսէփի արժանիքը.
2241. Յովսէփի նկարագիրը.
2242. Վերահաս վտանգներ.
2243. Յովսէփի կտակը.
2244. Դանիէլի ընտրութիւնը.
2245. Դաւիթի ճիգերը.
2246. Դանիէլ յԷդեսիա.
2247. Դաւիթի ընթացքը։

8. ԹԱԼԻԹՓ Ե. ԻՆՆԻՆԻՑԻՑ (1801—1807)

2248. Դաւիթի օծումը.
2249. Կանոնական տեսակէտը.
2250. Զքմեղանքի կէտերը.
2251. Գործնական տեսակէտը.
2252. Դաւիթի անձը.
2253. Միաբանից ընթացքը.
2254. Դաւիթի ճանչցումը.
2255. Դանիէլ ի Պայազիտ.
2256. Մանուէլ պատուիրակ.
2257. Ներսէս Աչտարակեցի.
2258. Եփրեմ Զորագեղցի.
2259. Եփրեմ ի Մոսկուա.
2260. Աղեքսանդր կայսր.
2261. Կոստանդնուպոլսոյ մէջ.
2262. Յովհաննէս պաշտօնանկ.
2263. Դաւիթ և միաբանք.
2264. Դաւիթի բռնութիւնք.
2265. Դարձեալ բռնութիւնք.
2266. Դանիէլի օծումը.
2267. Վճիռ սինհոդոսի.
2268. Կանոնական տեսակէտը.
2269. Գործին հետեւանքը.
2270. Դաւիթի արարքը.
2271. Էմմինդէմ ճիգեր.
2272. Յաջորդին պաշտօնանկ.
2273. Նոր հանրագրութիւն.
2274. Դանիէլ յԷջմիածին.
2275. Դանիէլ բռնադատեալ.
2276. Ռուսիա միջնորդ.
2277. Ապարդիւն ելք.
2278. Դանիէլ նախատեալ.
2279. Ռուսք և Պարսիկք.
2280. Էջմիածինի կացութիւն.
2281. Հռուաներ կը քաչուին.
2282. Դանիէլ աքսորուած.
2283. Դանիէլի հաւար.
2284. Դաւիթի ընթացքը.
2285. Դանիէլեանց ջանքերը.
2286. Սինոդի գաղափար.
2287. Դանիէլի կոնդակը.
2288. Կազմութեան ձեւեր.
2289. Պարսիկ արքունիքը։

8. ԹԱԼԻԹՓ Զ. ՍԱՒՐՄԱԿՈՑԻՑ (1807—1808)

2290. Դանիէլի գահակալելը.
2291. Ակդ մասին տեսութիւն.
2292. Էջմիածինի մէջ.
2293. Կոստանդնուպոլսոյ մէջ.
2294. Սինոդի կազմուիլը.
2295. Գործելու պայմաններ.
2296. Սինոդի արդիւնքը.
2297. Դաւիթի հանդէպ.
2298. Բժշկարանի միջադէպը.
2299. Դաւիթի ընթացքը.
2300. Յաջորդի որոշում.
2301. Ներսէս արդարացնել.
2202. Դանիէլի մահը.
2303. Դանիէլի անձը.
2304. Դանիէլի արժանիքը.
2305. Յովհաննէս պատրիարք.
2306. Բերայի թաղը.
2307. Թէոդորոս պատրիարք.
2308. Երուսաղէմի խնդիր։

Վ՚ՐԻՊԱԿՆԵՐՈՒ ՅՈՒՅԱԿ

Այս անգամ զանց կ՚ընեմք վրիպակներու ցուցակ ատելցնել. վասնզի թեպետ գիտեմք թէ բաւական վրիպակներ սպրդած են հապճեպ տպագրութեան պատճառով, սակայն ընդհանուրապէս ճանաչուած տառերու փոխանակութիւններ են, զորս ընթերցողն իւրմէ կ՚ուզղէ առանց սղիւսակին դիմելու, եւ գամ նոյն իսկ խօսից ընթացքը մատնանիշ կ՚ընէ տեղի ունեցած տառի կամ բառի կամ թուաձաձի շփոթութիւնը: